Բաժատառ. ռէի. աւ. այ. օք: || զբաժանս առնող. որպիսի է մաքսաւորն. և այլք նըմանք, որք առնուն զմուտս և զհասս 'ի վաճառականաց:

Բաժին. բաժնի. իէ. եց. իւք. կամ նեաց. եօք: || մասն: ռամկ՞. հայ: Թուոց. 18. 20: Մերթ և նշանակէ զբաժանումն: 1. Մնաց. 26. 19: և Ղուկ. 12. 51: և 1. Կորն. 12. 4: Իւր մերթ վիճակեալն. կամ զանգն բնակութեան: Յեսու. 13. 14: և 19. 9: Իսկ մերթ պէտաւորութիւն, և զատուցումն: 2. Օրին. 9. 26: Եզեկ. 37. 11:

Բալ. ի. իէ. եց. օք: || պտուղ ինչ թթուամ նման կեռասի: ռամկ՞. վիշնէ: Մերթ և նշանակէ զխաւարն, կամ զմութն գիշերին:

Բալասան. ի. աւ. այ. օք: || է ազգ մի ծառոյ, որ և կոչի մեռանի ծառ. բուսանի յԵգիպտոս. և նման է փշատի ծառոյ. արմատ և էգ լինի: 'ի տերևս նորին իւղ կաթէ. և մերթ երկաթով ձեղքեն զկեղևն, և հոսէ իւղ ինչ պատուական՝ և անուշահոտ, որ և կոչի յանուն ծառոյն՝ բալասան:

Բաղադիր. դրի. ով. ոյ. ովք. կամ դրէ. իէ. եց. օք: || է ազգ մի խոյթօղ կենդանւոյ.

Բաղանիք. նեաց. եօք: (անեզական.) || Բաղնիք՝ ուր մարմինն մաքրիցի՝ տա՛ի լուանալ: Եզեկ. 23. 40: Մերթ եւ մինչ մի իրիք [illegible] ջերմացեալ ջրով՝ եւ խառնով լուանալ [illegible], առնի բաղանիս տանել նմա:

Բաղանեպան. ի. աւ. աց. օք: || բաղնեպան. կամ որք 'ի բաղանիսն սպասաւորեն. եւ կմ որք են 'ի բաղանիսն տա՛ի լուանալ:

Բաղարկեմ. եցի. եա. ել: (ներգործ.) || Ժողովել. կամ հաւաքել. կամ գումարել. կամ 'ի միասին դնել. եւ բաղադրել:

Բաղարկացեմ. ացի. եա. ել: (ներգործ.) 'ի մի հաւաքել. կմ բաղադրել. կամ 'ի միասին դնել: Մերթ եւ բաղկացուցանել. եւ կմ՝ համանկացուցանել: [illegible] արարերութիւն [illegible] իցէ իրաց, որ բաղկացուցանէ զնոյն, եւ 'ի գոյն համանկացուցանէ, առի բաղարկացել զնա 'ի գոյն: Այնպէս մինչ [illegible] արարերութիւն դնի 'ի միասին ընդ [illegible] 'ի [illegible] առի բաղարկացել ընդ նմա 'ի [illegible]:

Բաղարջ. ի. իւ. իւ. իւք: կամ ոյ. ով. ոց. ովք: || հաց, որ 'ի յոչ խմորեցեալ զանգուածոյ է եփեցեալ. [illegible] մայրացի: Ելից. 29. 23: Ղեւտ. 8. 2: եւ 2. Մնաց. 8. 13:

Բաղարջակեր. ի. աւ. աց. օք: || ուտօղ բաղարջ: Բայց 'ի մի գիրս նշանակէ զուտումն բաղարջի. կամ զտօնն յորում հրէայքն զբաղարջ ուտէին. եւ ըստ այսմ մանաւանդ յոգնակիանաբար 'ի գործածի: Ելից. 23. 15: եւ 1. Եզր. 1. 10: եւ Մարկ. 14. 1: եւ Մատթ. 26. 17:

Բաղարջընծայ. ի. իւ. իւ. իւք: || զբաղարջ ընծայօղ: Մերթ եւ նշանակէ զընծայն՝ որ 'ի բաղարջն. կամ զբաղարջական ընծայն: Նարեկ. գէ:

Բաղբաղոյք. ալից. իւք: (անեզական.) պատճառանք. կամ [illegible] եւ [illegible], եւ պատճառք. կամ բարբառանք. եւ կամ մեղադրութիւնք: Իմաստ. 6. 4:

Բաղբաղեմ. եցի. եա. ել: (ներգործ.) || բարբառել. կամ տատանել 'ի վերայ [illegible] զպատճառանութի. կամ յարաբերել զնոն 'ի մի բերանս: Եւ մերթ [illegible] յօդել. եւ կամ զընդդիմոյն պատճառս [illegible] յառաջ բերել, տա՛ի արդարացուցանել զանձն. կամ տա՛ի յառաջացուցանել զխնդիր իւր. եւ այլն: Լամբրոն:

Բաղբաղանական. ի. աւ. աց. օք: || [illegible]. կամ [illegible]: Իսկ երբեմն է անուանեալ ինչ շաղփաղփ. որ կոչի [illegible]. կամ [illegible]. որպէս [illegible] են [illegible]: [illegible] եւ այլն:

Բաղբաղանք. անաց. օք: (անեզական.) || բաղբաղմունք. կամ պատճառանք. կամ շաղփաղփութիւնք. կամ տատանելութիւնք. կամ սնոտիք բանք: [illegible] 1. [illegible]:

Բաղբաղեմ. եցի. եա. ել: (չէզոք.) || բարբաջել. կամ սնոտի բանս խօսել. կամ տատանելութանել. կամ շաղփաղփել: Խորէն. [illegible]. 31:

Բաղդ. ի. իւ. իւ. իւք: || տե՛ս Բախտ:

Բաղդատութիւն. թեան: || շարադատութիւն. կամ շարադրութիւն. եւ կամ կարգաւորութիւն բանի, եւ կամ կարգուածն, եւ յօրինուածն բանի. որպէս հանդիպի 'ի շարադրելն զբանս:

Բաղդատ. ի. իւ. իւ. իւք: || համեմատ. կմ նման. կամ հանդէտ:

Բաղդատաբար. (մակբայ որակական.) || համեմատաբար, կամ բաղդատմամբ:

Բաղդատական. ի. աւ. աց. օք: || համեմատական: Իսկ 'ի քերականութեան առեալ լինի զանուանէ, որ զառաւելութիւն ցուցանէ. որպէս. մինչ ասի, բարի, է դրական անուն. բայց եթէ ասիցի բարեգոյն, նշանակի առաւել բարի. եւ այսու ասի սա՝ բաղդատական անուն:

Բաղդատեմ. եցի. եա. ել: (ներգործ.) || համեմատել. կամ զերկուս. կամ զերկուս իրս մերձ իրերաց դնել՝ եւ մտօք դատել, թէ որն 'ի նոցանէ լաւագոյն, կամ յոռեգոյն իցէ քան զմիւսն: Խորէն. [illegible]. գլ. 12:

Բաղդատութիւն. թեան: || համեմատութիւն. կամ դրութիւն երկուց իրաց հանդէպ իրերաց՝ եւ ննթադատումն, թէ որն յայնց իցէ առաւել ազնիւ, կամ առաւել վատթար: Լամբրոն:

Բաղեղ. եղի. իւ. եց. իւք. կամ աւ. աց. օք: || է տունկ մի բուսոյ, որ բուսանել ընդ ծառովք, եւ զանխլովք, պատատանի զնոքօք. եւ մշտադալար լինի նա. զի օրըստօրէ աճի, եւ ընդ ծառոյն 'ի վեր սողայ, եւ յորժամ հասանի 'ի ծայրսն՝ շրջացուցանէ ընդ նոսա: Եւ ունի զկնադոյն ծաղիկս. եւ է բնութեամբ ջերմ եւ չոր: Բայց սոյնս 'ի վերոհոցս: 'ի գլ. թ. 'ի բանն նեղունի գրի բաղեղն՝ որ է սխալ. զի այնտեղ է գրել՝ բաղեղ. ուր դնի 'ի ձեռագիրսն:

Բաղեմ. եցի. եա. ել: (ներգործ.) || կցել. կամ յօդել. կամ բարդել:

Բաճխատր. ճխատեր. տերբ. տերց. տերբք. կամ բաճխատրի. աւ. աց. օք: || է բառ յունական. եւ նշանակէ զայն [illegible], որ կարէ ձգել 'ի հեռաւորս տա՛ի հարկանել՝ կամ քանդել. կամ խոցել. կամ սպանանել: Որով մերթ խմանի՝ նետն: Եզեկ. 9. 8: Իսկ մերթ աղեղն, կամ տէգն. եւ կամ պարսատիկ [illegible]: Եւ մերթ քարն. կամ կապարեայ գնդակն, եւ այլք բազումք՝ թէ երկայնաձիգք լինին, եւ թէ գնտակաձեւ. եւ կամ այլով ձեւով: Եւ այսմ համեմատ [illegible] զբաժս զայս՝ ռումբ. կամ ըռումբ. յորմէ ելանէ ռմբաձիգն. եւ ռմբաձգութն. զորս տեսցես 'ի տեղիս իւրեանց: Մերթ եւ բառս՝ բաճխատր՝ նշանակէ զմեքենան ինչ պատերազմական, որով 'ի հնումն ձգէին զքարինս մեծամեծս ընդդէմ պարսպաց տա՛ի քանդել՝ եւ կործանել. որ եւ կոչի՝ քարընկէց. եւ [illegible] բաղբաղ. որ [illegible] 'ի մէ

րոյ. տե՛ս անդ: 1. Մակ. 6. 51:

Բաղխեմ. եցի. եա՛. եալ: (Ներգործ.) || Հարկանել. ռամկօր՝ զարնել. որ առաւել ըղ բաղխմանէ գրած, կամ կրծոյն, և այլոց նմանեաց. բայց ոչ առաւ բաղխել զդր. փոխանակ առ դրան հարկանել: Մատթ. 7. 8: Գործ. 12. 13: Ղուկ. 23. 48: Իսկ մինչ ասէ, ընդ միմեանս բաղխել. խմանք 'ի դիմի հարկանել. ռամկօրէն իրար զարնել: 1. Մակ. 7. 42:

Բաղխոհական. ի. աց. աց. օք: || Է. անուն միոյն յերից փաստաբանական սեռից Ճարտասանութեան. զոր կոչեն ոմանք՝ արտամակչռական սեռ. ուր և զայլ երկուսն. այս ցուցադրականն. և գործադրականն. կոչեն դատողական. և առաջացուցական: Արդ՝ գործ բաղխոհականին է մտանել զանձնագիրն 'ի հաւանութիւն բարւոյն. և խորշեցուցանել զնա 'ի միամանէ չարին. որ միշտ դատապարտից հանդիսի:

Բաղկակից. կցի. աց. աց. օք: || կցորդ. կամ շարակից. կամ յարակից. կամ յօդակից: Լամբրոն:

Բաղկակցեմ. եցայ. եա՛. իլ: (Հայցական.) || կցորդիլ. կամ շարակցիլ. կամ յարակցիլ. կամ յօդակցիլ. Լամբրոն:

Բաղկանամ. ացայ. ցի՛ր. ալ: (Ընդ միջ.) || 'ի բազում մասանց 'ի մի եկեղից բաղադրելով գոյանալ, և կոյանալ. և ըստ այսմ ասեմք զմարդն 'ի հոգւոյ և 'ի մարմնոյ բաղկանալ. և զնիւթական իրս 'ի չորից տարերց. և այլն: Յհարկ: Իսկ մերթ նշանակէ կազմիլ. կամ կերտիլ, կմ յօրինիլ: Նարեկ. ղթ:

Բաղկացական. ի. աց. աց. օք: || բաղկացող. կամ 'ի միասին կացող: Եւ մերթ բաղկացութեան, կամ բաղկացուցիչ. և ըստ այսմ նիւթ և տեսակ ասին բաղկացական մասունք մարմնոյ:

Բաղկացու. ցուի. աւ. աց. օք: || բաղկացող. կամ բաղկացեալ: Իսկ մերթ նշանակէ 'ի միասին կացող. և ըստ այսմ ասի 'ի Վարս հարց. Ժ՛Զ. 'ի բանն ներքուի. հրեշտակք բաղկացուք լինին մեզ յաղօթս. այս 'ի միասին, կամ խառն ընդ մեզ կացողք լինին:

Բաղկացութիւն. թեան: || բաղկացայութիւն. կամ բաղադրական կազմութիւն. և կամ 'ի բազմաց մասանց 'ի մի համաքերելոց. կայացութիւն. կամ գոյացութիւն: Իսկ մերթ նշանակէ՝ Է այլում 'ի միասին կացութիւն:

Բաղկացուցանեմ. ցուցի. ցո՛. եալ: (Անցող.) || 'ի բազմաց մասանց բաղադրելով զինչ՝ գոյացուցանել, կամ 'ի գոյն կացուցանել: և կամ կազմել. կամ յօրինել. կամ կերտել. և կամ կառուցանել: Նարեկ. հէ:

Բաղկացուցիչ. ցուցչի. աց. աց. օք: || որ զերկու. կամ զբազում իրս միաւորէ 'ի մի, ուր 'ի մարմնաւորս՝ բնեան. կամ ասինձն, որ զկտորս տախտակաց միաւորէ 'ի մի ամբող, կամ 'ի մի տուփ, կոչի բաղկացուցիչ: Մերթ եւս մասունքն, որք 'ի միասին եկեալ կազմեն զմի բոլոր. ասին բաղկացուցիչ մասունք բոլորին. այս հոգին և մարմինն ասին բաղկացուցիչ մասունք մարդոյ:

Բաղհիւսական. ի. աց. աց. օք: || շարակցական. կամ բաղակցական. կամ 'ի միասին հիւսող, և միաւորող. ուստի և շաղկապն, որ զզանազան բանս նոյնոյ գիտաւորութեան հիւսէ, և շարակցէ ընդ իրերաց, ասի բաղհիւսական. որպիսիք են սոքա. և. նաև. եւս. և այլն:

Բաղհիւսեմ. եցի. եա՛. եալ: (Ներգործ.) || շարահիւսել զանանս իրս. կամ 'ի միում իրի շարայօդել. և համայնադրել. կամ միաւորել. ռամկօրէն. զմի իրն հետ միւսոյն հիւսել:

Բաղձալից. (Նախդրիւ հոլովի.) || լի բաղձանօք. կամ լի ըղձիւք:

Բաղձամ. ացի. ա՛. ալ: (չէզոք:) || ըղձալ. կամ տենչալ. կամ փափաքել իրի իմիք:

Բաղձանք. ձանաց. օք: (անեզական.) || ցանկութիւն. կամ իղձ. կամ փափաք. կամ տարփումն:

Բաղձումն. ձման. մանէ. մանց. մամբք: || բաղձացումն. կամ տենչ. կամ բաղձանք. կամ փափաք: Լամբրոն:

Բաղմաս. ի. իւ.ից. իւք: կամ աց. օք: || Է տեսակ ինչ շաղկապի, որ այժմ կոչի անկատարական. զի որում բանի յարի, միշտ ցուցանէ զնա զօղ անկատար, և պահանջել զայլ բան, զի կատարեսցի. ուստի ասի բաղմաս, իբր թէ մասնացանող, և բաղակցող: և այսպիսիք են սոքա. թէ. թէպէտ. զի թէպէտ. թէև. և այլն:

Բաղյօդ. ի. իւ. ից. իւք: || դերանունն, և կմ այլ բառ, որ տրամախալեալ է; և բաղադրեցեալ յօդիւ, այս դիմորոշական տառիւ, ասի բաղյօդ. իբր թէ՝ բաղադրեալ յօդիւ, որպէս. մըն, կեանքդ, դուք, իմս, նոցայն, և այլն: տե՛ս և Անբաղյօդն:

Բաղշտակ. ի. աւ. աց. օք. || Է ալխտակ և թեթև տախտակ ինչ, որ բռնանի 'ի ձեռս, կամ 'ի վերայ և 'ի ճիգարք տեղիս, որոյ լաւն է այն, որ լի և թանձր, և քաղցրահամ լինի. բնութիւն է հով, և խոնաւ: Այլն կոչի եւ Ակեր:

Բաղօտ. կամ բաղօդ. ի. իւ. ից. իւք: || պատուհաս, յորմէ բաղադրի, կամ բաղկանայ և յօդի իմն, ուստի ասի բաղօդ, իբր թէ բաղադրող և յօդող: Իսկ մերթ նշանակէ զբաղադրեալն. կամ զբաղկացեալն, որպիսիք են ենթալուսնական մարմինք. և այլք նմանք, որք 'ի բազում մասանց բաղկանան:

Բածկան. ի. աւ. աց. օք: || մերթ խմանի ն և կցէ հանդերձ մարդոյ: Եսայ. 22. 26: Մերթ եւ խմանի կապայ. կամ վերարկու, կամ 'ի վր շապկի զգեցեալ զգեստն. որ ռամկօրէն ասի՝ վերարկու: 4. Թագ. 9. 13: Մարկ. 5. 40:

Բամ. (Թարգմանաբ. շաղկապ.) || Նշանակէ՝ թէ. կամ բաւ: Ամբ. 3. 54: և Եզեկ. 35. 15:

Բամբ. ի. իւ. եց. իւք: || հաստ, որ ասի զձայնէ երգոյ. կամ քնարի, մինչ հաստատաբար հնչեցուցանի: Մերթ եւ զօրաւորին երգոյ, կամ լարին քնարին, որ զհաստ ձայն արտահանչէ, ասի բամբ:

Բամբակ. ի. աւ. աց. օք: || է աղխատակ բերք ինչ բուսոյ. զոր երբեմն մանեալ, եւ ոլորեալ՝ 'ի գործածեն առ զանազան պէտս: ռամկօրէն բամպակ:

Բամբասանք. անաց. օք: (անեզական.) || զրոյց, կամ խօսք, որ լինի զպակասութենէ ուրուք՝ առ այլ ոք, որ ոչ է դատաւոր. կամ չարախօսութիւն զընկերէն. կամ տըրտունջ. կամ մեղադրութիւն: Իմաստ. 1. 11: Ելից. 17. 7: λοιδορία, λοιδόρησις

Բամբասասէր. սիրի. աւ. աց. օք: || սիրող լսելոյ զբանս բամբասանաց. կամ յօժարեալ առ 'ի բամբասել զոք. եւ կամ ըղձ բամբասողական բարս ունող: Նարեկ:

Բամբասաւոր. ի. աւ. աց. օք: || բամբասող. կամ բամբասեալն. եւ կամ բամբասողական. եւ ըստ այսմ ասի 'ի Նարեկ. խմ: բամբասաւորօք զինեմօրեալ նետիւք:

Բամբասեմ. եցի. եա. եալ: (ներգործ.) || դատելով զընկերին զպակասութիւն նորին խօսիլ. կամ պատմել այլոց. կամ մեղադրել. կամ չարախօսել զումեքէ. կամ տըրտնջել չարաբանելով. կամ գանգատել հայհոյական, եւ նախատական բանիւք: կամ զրպարտել. կամ վատաբանել. կամ պարսաւել: Ելից. 17. 2: եւ 21. 17: եւ 22. 28: եւ Թուոց. 12. 1. եւ 8: եւ Մարկ. 7. 2: եւ այլն: Եւ մերթ խոտել. կամ անարգանել. եւ քամահել: Եբր. 8. 8: Իսկ մերթ արտականել զանուանս ուրուք, կամ վատահամբաւել զոք: Ղևտ. 21. 9:

Բամբիշ. բշի. աւ. աց. օք: || մերթ նշանակէ զտիկինն, որ ռամկօրէն ասի խաթուն: Իսկ մերթ նշանակէ զտիկնաց տիկինն. այսինքն զթագուհին: Մծբն. գ:

Բամբիռն. կամ բամբիռան. բամբռան. աւ. անց. անք: || զել. որ է երկու փոքրիկ բոլորակ, եւ փառորակ գործիք խաղալեաց. շինեցեալ 'ի պղնձոյ. կամ յայլոց հրահալ լինելեաց, որոց զմինն անցուցեալ 'ի բոյթ մատին, իսկ զմիւսն 'ի միջնամատն. եւ սորա հարուածով զմիմեանս բարբախելով՝ հնչեցանեն. եւ խաղան երկուքեան բաղխօք 'ի հարսանիս. եւ կամ յայլ ուրախութիւնս, եւ 'ի ցնծութիւնս: ռամիկ՝ չալչարայ: Խորէն. ա. գլ. 5: եւ Նարեկ. գէ:

Բայ. (թարգմանաբար չաղկապ.) || բայց. թէ: [?] 3. 24: եւ [?] 2. 14: Եւ այս չաղկապս երբեմն նաեւ թարց չիք 'ի գործածի. որպէս 'ի վեր անդր երգա. եւ առ որ զնիր չիք, [illegible]:

Բայ. ի. իւ. եց. իւք: || է այն մասն բանի, որ նշանակէ զառնել, կամ զկրել էութեան ժամանակաւ. որպիսիք են բառքս այսպիսիք. հատանել. բարդել. այրել. ծածկել. եւ այլն: Բայց չէ առանց յայսմ նշանակութեան հնչի. զի առանց բայի է մասն բանի. եւ այլն: Եւ բառս այս երբեմն մերթ 'ի յոմանս գրեանս 'ի գործածի փոխանակ բառի. կամ անուան: Իսկ Խորենացին դնէ զսա փոխանակ բառնից այնոցիկ՝ անուան. կամ թարգմանաբար. եւ կամ անօգուտ. քանզի ասէ 'ի հարցումն. ա. գլ. 21: Զի 'ի բայ բանից՝ եւ անոտ իմն յաղագս հայկայ՝ կակաղէ. այս է անոտի բանիւք թօթովախօսէ:

Բայածական. ի. աւ. աց. օք: || անունն այն՝ որ 'ի բայէ ածանցի՝ եւ ելանէ, ասի՝ բայածական: որպէս 'ի բայէս յայտնանէ զուշակել. ածանցի եւ ելանէ. անունս այս՝ գուշակութիւն:

Բայց. (չաղկապ բացառողական.) || իսկ. կամ սակայն: եւ այս՝ մերթ դնի փոխանակ բառիս, եթէ ոչ: որպէս 3. Թագ. 8. 9. ուր ասի: Եւ ոչինչ գոյր 'ի տապանակին. բայց երկու տախտակք քարեղէնք, այս է. եթէ ոչ՝ երկու տախտակք քարեղէնք. ըստ այսմ է եւ Թուոց. 26. 65: եւ 4. Թագ. 4. 3: Եւ մերթ դնի վասն նախադրութեանն բաց 'ի. ըստ այնմ. մի ուրեք պարտական գտանիցէք, բայց զմիմեանս սիրելոյ. այս է բաց 'ի սիրելոյ զմիմեանս: ըստ այսմ է եւ յայլ բազում տեղիս:

Բայց եթէ: (չաղկապ բացառողական.) || իսկ եթէ. կամ սակայն եթէ: մերթ եւ նշանակէ՝ եթէ ոչ. որպէս Թուոց. 22. 38: եւ Դանի. 2. 11: եւ 1. Տիմ. 5. 19: Իսկ 1. Կորն. 15. 2: եւ 2. Կորն. 13. 5. նշանակէ՝ ապաթէ ոչ:

Բայց միայն. (չաղկապ բացառողական.) || միայն թէ. կամ սակայն միայն. կամ բայցակայն: Իսկ մերթ նշանակէ՝ բաց 'ի. ըստ այնմ. Յուդիթ. 8. 6. բայց միայն զօր շաբաթուն, եւ զամսամտից. այս է բաց 'ի յօրէ շաբաթուն, եւ ամսամտից: ըստ այսմ է եւ 3. Թագ. 12. 20: Իսկ մերթ նշանակէ՝ եթէ ոչ: Ծննդ. 39. 6: Թուոց. 11. 6: Մարկ. 2. 26: Ղուկ. 4. 26: եւ յայլ բազում տեղիս:

Բայցակայն. (չաղկապ բացառողական.) || այլ սակայն. եւ սակայն:

Բան. ի. իւ.ից. իւք: || խօսք. կամ զրոյց: Ծննդ. 4. 23: 1. Թագ. 17. 29: Մերթ նշանակէ զօրանաբանութիւն, եւ զխելքն: Եւ ըստ քերթականաց՝ բանն է շարամանութիւն բառից յարմարող տրամախոհութեան մտաց: Մերթ եւ նշանակէ զհրամանն վերնագունին. 3. Թագ. 13. 21: եւ Ղևտ. 10. 7: Մերթ եւս առեալ լինի փոխանակ անձին որդւոյն Այ. որ է իսկական բան հօր: Յովհ. 1. 1: Մերթ եւս նշանակէ զիրն, կամ զգործն: Ծննդ. 18. 25: եւ Ղուկ. 1. 37: Իսկ Գործ. 12. 20. ուր ասի՝ 'ի բանի արարեալ. իմանի՝ համոզեալ. եւ կամ միջնորդ ինքեանց արարեալ: Եւ մինչ ասի՝ ընդ բանիւ առնել. իմանի՝ բանադրել:

Բանագետ. գիտի. իւ. աց. օք: || գիտող զբանն: Մերթ եւս նշանակէ զհռետորագէտն. կամ զքարոզ աւետարանի բանից, եւ կամ զխելամուտս եւ զբանիբունն: Առակ. 26. 26:

Բանագիր. գրի. իւ. աց. օք: || գրող եւ շա-

Digitized by Google

բագրող բանի. կամ յօրինող ասացուա-
ծոց. կամ վիպասան. և կամ բանաստեղծ,
Նարեկ. ծզ։

Բանագիւտ. գիւտի. իւ. ից. իւք։ || գտա-
նող, և հնարող զբան. կամ բանաստեղծ։

Բանագնաց։ || ոչ հոլովի, այլ ընդ բայի շա-
րակցի այսպէս. բանագնաց լինել. և նը-
շանակէ բարբառել. և կամ անուշութեամբ
խօսել. զի բանագնաց ասի, որ բանիւ,
կամ անոյշ խօսիւք գնայ, ք վարի, և խօսի։
1. Մակ. 2. 33։

Բանագովութիւն. թեան։ || գովաբանութիւն.
կամ գովեստաբանութիւն. և կամ գովասա-
նական բան, և գրուած։ Նարեկ. 'ի Գո-
վեստ կուսին։

Բանագրութիւն. թեան։ || գրութիւն բանի.
և կամ ճարտասանական, և բանաստեղծա-
կան շարադրութիւն։ Նարեկ. խէ։

Բանադրանք. նաց. օք։ (անեզական.) ||
'ի ձեռն բանից վերնագունին կապումն
ստորնագունից. կամ արգելումն վայրա-
գունից. 'ի ձեռն բանից վերնագունից 'ի
պաշտօնէ, և 'ի մասնակցութենէ հոգևոր
իրաց։ և այս լինի միշտ 'ի մէջ հաւատա-
ցելոց քրիստոնէից։

Բանադրեմ. եցի. եա. եալ։ (Ներգործ.)
|| 'ի ձեռն բանից արգելուլ զոք 'ի հոգևոր
պաշտօնէ. և կամ կապել, և արգելուլ
զոք 'ի մասնակցութենէ հոգևոր իրաց, և
յընկերաց։

Բանալի. ւոյ. եաւ. եաց. եօք։ || գործի
ինչ երկաթեայ, որով բացեալ լինի կուպղ
դրան. կամ տապանակի. և այլոց իրաց։
ռամկ". քուլլի։ Յայտ. Զ. 1։

Բանախոյզ. խուզի. իւ. ից. իւք։ || խուզող,
և քննող բանի. կամ հետազօտօղ, և որո-
նող բանի։

Բանախօսութիւն. թեան։ || ատենաբանու-
թիւն. կամ հրապարակախօսութիւն. և կամ
քարոզութիւն, և վարդապետութիւն բանի։
Կիւրղ. Եղէգ. ժէ։

Բանակ. ի. աւ. աց. օք։ || Մերթ նշանա-
կէ զգունդն, և զամբոխն. կամ ճակատն։
Ծնն. 32. 10։ Մերթ իջեվանեալ, և բա-
նակեալ զօրքն, որք նստին՝ ասին բանակք։
ռամկ". օրթու։ Ելից. 14. 20։ Մերթ և
տեղին, ուր իջեվանեալք են զօրք, ասի՛
բանակ։ Ծնն. 32. 21։ Եւ ոչ միայն մինչ
'ի բացօթեայ տեղւոջ իջեանեն զօրքն՝ է-
ջեան նոյին, և կամ զամբոխն՝ ասի բա-
նակ. այլ մերթ նաև կերտեցեալ իջեանք,
և բնակարանք զինուորաց, ասին բանակ։
Գործ. 21. 37։

Բանական. ի. աւ. աց։ || բանաւոր. որով
իմանի ուղղոյն զբան. ք զիմացութիւն, և
զխելս. և կամ զտրամաբանութիւն։ Խորէն.
ա. գր. 2։

Բանակարգ. ի. իւ. ից. իւք։ || զբանս կար-
գող, և յօրինող։ Իսկ մերթ նշանակէ բա-
նիւ կարգեցեալ. և յօրինեցեալ։ Նա-
րեկ. ղզ։

Բանակարգութիւն. թեան։ || կարգումն, և
յօրինումն բանի. կամ կարգաւորեալ
բան։ Նարեկ. ղթ։

Բանակետեղ. ետեղ. եղք. կետեղաց. օք։ || բա-
նակելոյ տեղ. ք տեղի, կամ իջեվան, ուր
բանակին. և իջեվանին զօրք. և կամ տա-
ղաւ մեծ։ Թուոց. 33. 2։ Ելից. 15. 13։

Բանակիմ. եցայ. եայ. իլ։ (ձայնակր.)
|| բանակ հարկանել. կամ իջեվանել զօրաց
ուրեք. կամ բնակ լինել. ք զանեղի տա-
նուլ, և բնակել։ Թուոց. 25. 1։ 1. Մակ. 3. 40։

Բանակից. կցի. աւ. աց. օք։ || կցորդ բա-
նի. կամ հաղորդ բանականութեան, որպէս
մեք են մարդիկ, որք նկատմամբ միմեանց՝
բանակիցք. կամ բանականակիցք ասին։
Ոսկէ. 1. հար. ժդ։

Բանակռուիւ. ուէի. ու. աց. օք։ || այսպէս
հոլովեցեալ՝ նշանակէ զկռուօղն բանիւ։
2. Տիմ. 2. 14։

Բանակռուիւ. ռուոյ. ով. ոց. ովք։ || այս-
պէս հոլովեցեալ՝ նշանակէ զբանակռուու-
թիւն. ք ընդ բանիւ տուանց հարկանելոյ
զիրեարս՝ կռուելն։

Բանակռուեմ. եցայ. եա. իլ։ (ձայնակր.)
|| կռուել բանիւ. կամ վիճել. և կամ կա-
գել, և գժտել։

Բանակրկին. (Նախադրիւ հոլովի.) || բա-
նախոյզ. կամ բանաքննիչ. որով իմանի
հետաքրքրիրն՝ որ խուզէ և քննէ զբանս։
Մծբն. ժթ։

Բանահիւս. ի. իւ. ից. իւք։ կամ աց. օք։
|| հիւսող և յօրինող բանի. և կամ բանա-
ստեղծ։ Նարեկ. 'ի Գովեստ կուսին։

Բանաճարակ. ի. աւ. աց. օք։ || զբանս ճա-
րակող, ք, զբանս մտածող, և քննող. և
'ի միտ առօղ։ Նարեկ. ղզ։

Բանամ. բացի. բաց. բանալ։ (Ներգործ.)
|| զծածկեցեալ՝ կամ զփակեցեալ իրն՝ մերկ
կամ բաց առնել։ Մերթ և նշանակէ
յայտնել, կամ բացատրել։ Ղուկ. 24. 32։
Բայց գիտելի է. զի առաս կրաւորականի
բղձականն, և ստորադասականն երբեմն 'ի
հնումն այլապէս ընթերցեալ. զի փոխա-
նակ ասելոյ, բանիցիմ. բանիցիս. և այլն.
ասէին. բանայցիմ. բանայցիս. և այլն։
Ծնն. 3. 5։ և Յոբ. 38. 17։

Բանապաճոյճ. պաճուճի. իւ. ից. իւք։ ||
զբանս հռետորականս, կամ բանաստեղ-
ծականս՝ արուեստիւ պաճուճօղ և զար-
դարօղ։ Իսկ մերթ նշանակէ զբան՝ որ է
բանիւ, կամ բանականութեամբ պաճուճեցեալ
և զարդարեցեալ. որպիսիք են մարդիկ։
Նարեկ. հզ։

Բանառէճ. ռէճի. իւ. ից. իւք։ || բանա-
վէճ. կամ բանակռուիւ. կամ 'ի վէճ բանի
իրիք վիճօղ և տրամաբանօղ։

Բանասէր. սիրի. աւ. աց. օք։ || սիրող բա-
նի. որով իմանի նա՝ որ պարապի հետ-
տազօտական՝ և իմաստասիրական բանից. և
կամ իմաստասէր։ Նարեկ. 'ի [illegible]։

Բանաստեղծ. ի. իւ. ից. իւք։ || ստեղծօղ
և հնարօղ հանդերձական նորանոր ար-
ուեստաբանութեանց. և կամ յօրինօղ և հը-

նարօղ ճարտասանական ճառից՝ և բանից: Խորհն. Ժ. գլ. 50: Եւ կամ յօրինօղ և հնարօղ նորաձևու առակաւոր բանից. որպէս սէք են նք՝ որք զառասպելս յօրինեն ըզ բառս, զնենգաւենս, և զայլոց նմանեաց:

Բանաստեղծութիւն. թեան: || Հնարումն, կամ գիտ՝ այերճաբանական բանից. և կմ հեթանոսական առասպելաց. Նոննէ. ԴԺ:

Բանավէճող. վիճօղի. իէ. էց. կամ աց. ոք: || վիճօղ և պատմօղ զբանս. և կամ պատմաբան:

Բանատու. տուէի. ուէ. աց. ոք: || բանատուօղ, Յ. ճառատացօղ ուսմք տանել զիր ինչ: ուսմ. իօտ փոծօղ:

Բանարարութիւն. թեան: || յօրինումն, կմ արտադրութիւն բանի. կամ բանաստեղծութիւն: Լամբրն:

Բանաւոր. ի. ու. աց. ոք: || բանական, կամ մտաւոր. կամ ունօղ զիմացականութիւն, և զանձնիշխան կամս:

Բանաւորութիւն. թեան: || բանականութիւն. կամ իմացականութիւն:

Բանաքաղ. ի. իէ. էց. իւք: || քաղօղ ըզ բանս. Յ. ժողովօղ. և այս առ ի զհետաքննել անձանց՝ որք առնի և անտի հետաքննութեամբ խուզէն՝ և ժողովեն զնորա ըւր բանս, և զբոյցս: Մծբն. ԺԹ:

Բանդագուշանք. շանաց. գք: || յիմարաբանութիւն. կամ աղճատանք. կամ շաղփաղփութիւնք. կամ անմտութիւն. կամ յիմարութիւն. կամ խելագարութիւն: Իսկ մերթ նշանակէ զգանգատանս. Յ. յոյժ և յահեակ դժեկով գնալն. և կամ այսր և անդր սայթաքումն. այլ հանդիսալի կուրաց. կամ արբեցելոց:

Բանդագուշեմ. կամ բանդագուշեմ. եցի. եա. էլ: (չէզոք.) || խօթանքս. կամ անխելամտ լինել. կամ յիմարել. կամ խելացնորել. կամ մտաթափ լինել. և կամ խելագարել: Նոննէ. ԺԶ: Իսկ մերթ նշանակէ շաղփաղփել. կամ բարբանջել. կմ յիմարաբան լինել: Մերթ ևս նշանակէ՝ գանգատել. Յ. յոյժ և յահեակ գթել. կմ դողդոջելով՝ այսր և անդր տատանել. այլ հանդիսալի կուրաց, և արբեցելոց:

Բանդեմ. կամ բանտեմ. եցի. եա. էլ: (Ներգործ.) || 'ի բանտս արկանել. կամ 'ի բանտի արգելուլ. և կամ 'ի բանտի դնել:

Բանդիկան. բանդական. ակք. անց. ամբք: || տե՛ս զԲանտիկան: Խորհն. Ա. գլ. 23:

Բանդրոնա. ի. իէ. էց. իւք: || որ զբանս իւր զբուծանէ և զարգարէ. և կամ որ յօրինէ զբանս գեղեցկութեամբ: Մերթ ևս նշանակէ բան գեղեցկութեան, կամ գեղեցկութիւն:

Բանեկ. է. իէ. էց. իւք: || առատաբան. կամ ճոխաբան. կամ քաղցրաբան. կամ ճառ... 'ի վերս հարց. Ժ:

Բանեմ. եցի. եա. էլ: (Ներգործ.) || առնել. կամ զբանս 'ի մէջ բանից կարկել, և բարգել:

Բանիբուն: (Նախադրիւն հոլովի.) || կատարեալ գիտուն. կամ ըստ ամի հմուտ գըրոց. կամ խելամուտ բանի և գիտութեանց:

Բանիմաստ. ի. իէ. էց. իւք: || բանիմաց, Յ. զբանս իմացօղ՝ և 'ի միտս առօղ:

Բանից գլուխ: || տե՛ս Գլուխ:

Բանջար. ոյ. ով. ոց. ովք: կամ աց. ոք: || ամ և կցէ խոտեղէն, որ կարէ լինել կերակուր կենդանեաց: Ծննդ. 3. 18: Մատթ. 13. 32: և այլն:

Բանջարաճաշակ. ի. աւ. աց. ոք: || զբանջարս ճաշակօղ և կերօղ. կամ խոտաճաշակ. և կամ խոտակեր:

Բանտատու. տուէի. աւ. աց. ոք: || զբանս 'ի բերանոյ ուրուք առնլով խօսօղ: Լամբրն:

Բանտարկեմ. եցի. եա. էլ: (Ներգործ.) || ընդդիմաբանել. կամ չարախօսել. կմ թանձրանալ. կամ վատաբանել. կամ պարաւել. և կամ ընդ դարձական բանիւք արկանելոյք: Նոննէի իԺ. և ԾԶ: Իսկ մերթ նշանակէ զբսութիւն և զբանտարկութիւն տանել:

Բանտարկու. կուէի. աւ. աց. ոք: || նշանակէ մերթ նա՝ որ 'ի մէջ արկանէ զբան ինչ անզգոնապէս. կամ անմիտս. և որքան առ այս նշանակութիւն ոչ 'ի գործ ածի այնքան: Մերթ ևս նշանակէ նա՝ որ 'ի մէջ ընկերաց արկանէ զբանս այնպիսիս, յորմէ ծագէ խռովութիւն: Առակ. 26. 21: Իսկ մերթ նշանակէ զբանսարկու, կամ ըզ գեհն՝ որ կոչի բանսարկու վն գոլոյն հակառակաւէր, և նախանձօղ խռովութեան: Յոբայ. 1. 9: Իմաստ. 2. 24: Մերթ ևս այն՝ որ խաչընդական լինի ուրուք, կմ արգել լէ՝ առնի բանսարկու. Յ. ընդդէմ կացօղ՝ և հակառակօղ. և ըստ այսմ իմանի զդեսպանն: Թուոց. 22. 22:

Բանսարկութիւն. թեան: || ընդդիմակութիւն. կամ հակառակութիւն. կամ ընդդիմակացութիւն: Թուոց. 22. 32: Մերթ ևս նշանակէ զբսութիւն. որով ոք զբանս միոյն տանի առ միւսն, յորմէ խռովութիւն ծագի:

Բանտ. կամ բանդ. ի. իէ. էց. իւք: || տեղի կալանաց. Յ. անձուկ, կամ մթայրին տեղի՝ ուր արգելեալ լինին պատժապարտքն, որ և առնի՝ զնդանն: Մատթ. 11. 2:

Բանտակալ. ի. աւ. աց. ոք: || այն, որ կալնու, և կապանօք զբանտն, առնի բանտակալ. որպիսի է բանտապետն: Իսկ մերթ առնի այս զկապանաց. ըստ որում 'ի բանտի կալնու, և արգելու զոք:

Բանտական. ի. աւ. աց. ոք: || բանտարկեալ. և կամ 'ի բանտի արգելեալ: Եւ մերթ այն, որ պատկանի բանտին:

Բանտամնաս. մնաի. աւ. աց. ոք: || 'ի բանտն մնացօղ. կամ բանտարկեալ:

Բանտապան. ի. աւ. աց. ոք: || բանտապահ. կամ պահապան բանտի:

Բանտապետ. ի. աւ. աց. ոք: || վերակացու բանտի. կմ բանտարկեցելոց: Ծնն. 39. 21:

Բանտարգել. ոյ. ով. ոց. ովք: || արգե֊լեալ ՚ի բանտի. կամ կալանաւոր. և կամ ՚ի բանտ արկեցեալ: Սա ըստ մեծի մա֊սին ը. բայի շարակցի այսպէս, բանտար֊գել առնել. և նշանակէ՝ արգելուլ զոք ՚ի բանտի: Գործ. 26. 10: և կամ այսպէս՝ բանտարգել լինել. և նշանակէ՝ արգելե֊ցեալ լինել ՚ի բանտի:

Բանտարգելեալ. ելոյ. ով. ոց. ովք: || ՚ի բանտի արգելեալ. և կամ ՚ի տեղւոջ իմիք իբրև ՚ի բանտի կալեալ և կաշկանդեալ: Իմաստ. 17. 15:

Բանտարկեալ. ելոյ. ով. ոց. ովք: || ՚ի բան֊տի եդեալ. կամ ՚ի բանտ արկեցեալ:

Բանտաւոր. ի. աւ. աց. օք: || բանտար֊կեալ. կմ արգելեալ ՚ի բանտի: Ածէն. ժԹ:

Բանտեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || տե՛ս զԲանդել:

Բաշ. ի. իւ. ից. իւք: || վարսք, կամ հերք գլխոյ, և պարանոցաց երիվարաց. կամ ջորւոց. և այլոց նմանեաց անբանից կեն֊դանեաց: ռամկ. ֆէռլէմ յէլէ, կամ չ-լ... և այլն:

Բաշխ. ի. իւ. ից. իւք: || մերթ իմանի պար֊գեւ, կամ ընծայն. կամ տուրքն. և կամ հաւն: Խորէն. բ. գլ. 63: և գ. գլ. 65: մերթ և իմանի տեղին, յորում բաշխին՝ և բա֊ժանեալ տարածին բաշխում երակք. կամ բաղում ճանապարհք. և կամ ջուրք, և այլք նմանք: Իսկ մերթ նշանակէ զբաշ֊խումն. և ըստ այսմ. Մաղաք. 1. 3. ուր ասի, կարգեցի զժառանգութիւնս ՚ի բաշխ անապատի, ցուցանի, թէ ժառանգութիւն եսաւայ եղև ՚ի բաժին, կամ ՚ի բաշխումն գազանացն անապատի:

Բաշխեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || մերթ իմանի ձրիաբար տալով բաժանել զինչ ՚ի բաղումս. զի բաշխելն է բաժանե֊լով պարգևել: Իմաստ. 7. 13: Իսկ մերթ իմա֊նի բաժանել զոք և իւէ իր: ռամկօրէն, ... անել: Ղուկ. 11. 22:

Բաշխոյք. խոյից. խոյիւք: (անեզական.) || սա ելանէ ՚ի բայէն բաշխեմ. և նշանա֊կէ զբաշխումն, և զտուրս: Ըստ որում և տուրքն, կամ պարգևքն, որք տրին և բաշ֊խին կաքաւչաց, ասին, բաշխոյք կաքաւ֊չաց: 2. Մակ. 4. 14:

Բաշխութիւն. թեան: || բաժանումն. կամ բաշխումն: Նարեկ. ղը:

Բաջաղանք. անաց. օք: (անեզական.) || ընդվայր շատախօսութիւն. կամ շաղփաղ֊փութիւն, կամ խեղկատակական զրոյցք. կմ յիմարաբանութիւն. և կամ բարբանջմունք: 4. Թագ. 9. 11:

Բաջաղեմ. եցի. եա. ել: (չէզոք.) || վայ֊րապանել. կամ ընդ վայր շատախօսել. կամ սնոտիաբանել. կամ խեղկատակա֊բար խօսել. կամ շաղփաղփել. կամ բար֊բանջել: Խորէն. բ. գլ. 35:

Բաջաղկոտ. ի. իւ. ից. իւք: կամ աւ. աց. օք: || շատախօս. կամ վայրաբանօղ. կամ յիմարաբան. և կամ շաղփաղփօղ. կամ բարբանջօղ:

Բաջաղմունք. մանց. մամբք: (անեզական.) || բարբանջմունք. կամ սնոտիաբանու֊թիւն. կամ շաղփաղփութիւն. կամ վայրա֊բանութիւն: Խորէն. բ. գլ. 7:

Բառ. ի. իւ. ից. իւք: || է ձայն նշանա֊կան. այն է ձայն ինչ, որ՝ կամ նշանակէ զիրն, կամ զգործողութիւն իրին, և կամ զպարագայս նորին. որգոն. մարդ. տե֊սանել. ընդ. սակայն, և այլն:

Բառակցութիւն. թեան: || կցորդական բառ. այսինքն բառ, որ զկցորդութիւն ը. ու֊մեք նշանակէ, որպիսիք են առքս. կենա֊կից. աղօթակից. գնացակից. և այլն. որք միշտ զկցորդութիւն ընդ ումեք՝ ցուցա֊նեն: Կիւրղի պարապմանց. իե:

Բառանջեմ. եցի. եա. ել: (չէզոք.) || գոչել. կամ գոռալ եզանց. ռամկ. պօռալ:

Բառանջիւն. (Նախդրիւ հոլովի.) || գո֊չումն, կամ գոռացումն եզին. և այլոց նմանեաց:

Բառաչ. (Նախդրիւ հոլովի.) || գոչումն, կամ պոռացումն անասնոց. և կմ մայումն խաշանց: Նարեկ. ժԵ:

Բառաչեմ. եցի. եա. ել: (չէզոք.) || պո֊ռալ, կամ գոչելն անասնոց. և կմ մայելն խաշանց: Յոբ. 1. հատ. է:

Բառացի. (Նախդրիւ հոլովի.) || հաշակա֊ճոր. կամ աշխարհալուր. կմ գերաշանց. կամ անուանի. կամ չընաշխարհիկ: Նա֊րեկ. ղէ:

Բառգիրք. գրոց. ովք: (անեզական.) || գիրք ինչ, յորում բացատրին նշանակու֊թիւնք, և զօրութիւնք բառից. որպիսի է այս գիրք:

Բառնամ. բարձի. բարձ. նալ: (Ներգործ.) || մերթ նշանակի՝ ՚ի բաց առնուլ զիր ինչ ՚ի տեղւոջէ իմիքէ, մինչ զկնի հայցական֊նի խնդրոյն առնու զբացառական զօրու֊թիւ, կամ ներգործութիւ, որգոն բար֊ձէք զչարն ՚ի միջոյ: 1. Կորն. 5. 13: և ըստ այսմ է Ես. 31. 7: և Նաում. 1. 2: մերթ նշանակի բեռնաւորելն. կամ ՚ի վր իր նշանակի... կամ ՚ի վր իր... առնուլն. որգոն բառնալ զխաչն, և հե֊տևել Յիսի: Մերթ ևս նշանակէ՝ վերա֊ցուցանել. կամ բարձրացուցանել. ուր մինչ ասի՝ ձայն բառնալ. յդ բարձրացու֊ցանել զձայն: Ծննդ. 21. 16: Իսկ գիտե֊լի է. զի սորա կրաւորականի ըղձականն, և սորակցականն երբեմն ՚ի հնումն այ֊լապէս ընդդիմար. զի փոխանակ ասելոյ բառնիցիմ. բառնիցիս. և այլն. ասիւր. բառնայցիմ. բառնայցիս. և այլն: Թուոց. 4. 27: և 36. 3. և 4: Ղևտ...

Բառնամ թողում. բարձի թողի. բարձ թող. բառնալ թողուլ: (Ներգործ.) || լքանել. կամ լինքնագլուխ թողուլ. կամ յերեսէ ձգել. կամ թողլ տալ առնել զը կամաց: Սաղ. 80. 13: և Նարեկ. խե:

Բառնալի. լոյ. եաւ. եաց. եօք. || մերթ նշանակի իրն, որ պարտի բառնիլ: մերթ ևս նշանակի՝ գործին այն, որով բառնե֊

ցեալ լինին երբ. որպիսիք էին լծակքն. ք ձողքն տապանակի նոն: 2. Մնաց. 5. 8. և 9: Բայց 2. Մնաց. 4. 16: Նշանակէ զսկաւառակն. ք զԹասպախն. և կամ զաս_պակն, 'ի վր որոյ դնի իր ինչ: Ը այսմ և այլք երբ, որք բառնան զինն, կոչին բառնալիք:

Բառր. (Նախդրիւ հոլովի.) || է արմատ բառբեալ բային. և Նշանակէ Նախատինք. կամ դարձ. կամ մեղադրութն. և կամ պարսաւ: Նարէկ. Ն:

Բառա. ի. իւ. եց. իւք: || բաղդ. կամ դաշն՝ որ դնի 'ի մէջ երկուց մարդկանց՝ զերոց կարծեցականաց. ոմ զի որոյ կար_ծիքն ճշմարտեսցի, առցէ զինն 'ի միւսոյն: ռամկօր. պէս:

Բառբանք. նանց. գք: (անեզական.) || մե_ղադրութիւնք. կամ պարսաւանք: և մերթ պատճառանք:

Բառբեմ. եցի. եա. եւ: (Ներգործ.) || պատճառել. կամ զսուտ պատճառանս գը_տանել: Մերթ եւ Նախատել. կմ դարձ_վել. և կամ մեղադրել. կամ պարսաւել. և ըստ այսմ է. Խորէն. ꙟ. պր. 21:

Բառբելի. լւոյ. եաւ. եաց. եօք: || մեղադրե_լի. կամ պարսաւելի: Նարէկ. ղա:

Բառաւոյ. ի. աւ. աց. օք: || պատուաստն. կամ խորշ, որ լինի յորմս տան առ 'ի դնել անդ զիր ինչ. ռամկօր". հէւճնոցն. կամ թէրէէ:

Բարակ. ի. աւ. աց. օք: || Նուրբ. կամ ա_նօսր: Բայց ըստ այսմ առանց բարգեց_մանն մանաւանդ 'ի գործ ածի յաշխար_հաբառ լեզուով: Իսկ Երեմ. 2. 22. աս_ասի՝ եԹէ լուասցես բարակաւ, պարս 'ի խմանել բորակաւ. զի հինքն զբորակն բաղ_միցս գրեին բարակ, յորմէ սխալմամբ գրչաց կործանեալ էբեն տառն, եղեալ է բարակ: Իսկ թէ զինչ իցէ բորակն, տե՛ս 'ի տեղւոջ իւրում:

Բարակամահ. ի. իւ. եց. իւք: || մահով ըղ_թելս բարակս. կամ որ անկանէ՝ և յօրինէ ղթելս բարակս առ 'ի կազմել զազնուագոյն հանդերձս: Եսայ. 19. 9: Մերթ եւ թելն նուրբ մանեցեալ՝ ասի բարականման. ք բարակ մանեցեալ:

Բարակաշուրթն. (Նախդրիւ հոլովի.) || զբարակ շրթունս ունօղ:

Բարաշխ. ի. իւ. եց. իւք: || կանոն. կմ փուխ. կամ գիւրաւ մխելի: ռամկ. ղա_րիֆ. կամ նարին:

Բարապան. ի. աւ. աց. օք: || դռնապան. ք պահապան դրան: 2. Թագ. 4. 6: 4. Թագ. 7. 11: Յոբ. 38. 17: Մերթ եւ պա_հապանք որանից, և այլոց նմանեաց՝ ասին բարապանք: Երեմ. 52. 24:

Բարապետ. ի. աւ. աց. օք: || բարապան. ք դռնապան: Մծբն. ժԹ:

Բարբանատար. (մակբայ որակական.) || բարբառութբ. կամ գիմառնութբ. ք 'ի գիմաց անբանից՝ կամ և 'ի գիմաց բանաւո_րաց խօսելով: Յմ ոսկի:

Բարբառական. ի. աւ. աց. գք: || գիմառ_նական. կամ դերանձնական. ք. խօսք, կամ բան՝ որով խօսի ոք 'ի դիմաց անկեն դանեաց. կամ անբանից: Իսկ մերթ ասի զհռետորական ձևոյն, յորում զբարս ու_րուք բանաստեղծօրէն ցուցանեմք, զոր տեսցես 'ի մեկնութե բարբառութեան բառիս:

Բարբառութիւն. թեան: || հռետորական աւացուածք. կամ ձև, յորում զբարս, և զորպիսութն ուրուք՝ թէ բանականի, և թէ անբանի բանաստեղծական պերճա_բանութբ իբրու առաջի աչաց նկարեալ՝ պարսաւելի, կամ գովելի ցուցանեմք: Ուստի և այսպիսի եղանակաւ յօրինեալ գովեստն. կամ պարսաւանքն բարբառու_թիւն ասի: Նարէկ. ղէ. և ղՋ: Մերթ եւ նշանակէ զդիմառնութին. որ է խօսակ_ցութն 'ի դիմաց անբանից: Իսկ մերթ եւ դնի փոխանակ այլաբանութե. կմ անդ_րադարձական առացուածոց. և ըստ այսմ է 'ի գիրս լամբրոնացւոյն:

Բարբացուցական. ի. աւ. աց. գք: || երաժշ_տական երգն, կամ նուագարանն, որ մն արուեստաւոր հնչման զուննկնգիրս իւր շարժէ 'ի յոգս, կամ 'ի ցնծութն, և կամ յայլս կիրս՝ ասի բարբացուցական. զի ըղ_բարս՝ և զներքին կիրս մարդկան ցուցա_նէ. ոմ որք որոտմական ունին զբարս, 'ի լսելն զողբերգական նուագն. առժամայն յարտասուս հարկեալ ողբան: Ուստի պատմի՝ թէ 'ինուագելն որփեոսի պատե_րազմաշարժ եղանակաւ առաջի կայսերն աղեքսանդրու, խնդոյն յարեաւ աղեքսանդր 'ի խրախճանաց. և 'ի ղէն ընթացեալ՝ 'ի պատերազմ խրախուսէր. յայտ արարեալ զպատերազմասէր բարս իւր: Նարէկ. ղէ:

Բարաւոր. ի. աւ. աց. գք: || վերնատեմն դրան. ք դրան վերի շեմն: Ելից. 12. 7:

Բարբանջք. ջից. իւք: (անեզական.) || շաղփաղփութիւնք. կամ աղճատանք. կամ վայրաբանութն. կամ յիմարաբանութն. կամ առասպելաբանութն. կամ կարկա_չումն: Ովսէ. 1. հոփ. Ը:

Բարբանջանք. ջանաց. գք: (անեզական.) || Նոյն է ընդ վերնոյն: Ովսէ. 1. հոփ. ըա:

Բարբանջեմ. եցի. եա. եւ: (չէզոք.) || վատթարաբար շատախօսել. կամ անկարգաբար խօսել. կամ շաղփաղփել. կամ վայրաբանել: Կիւրղի Եէփ. ֆ:

Բարբանջմունք. մանց. մամբք. (սորա եզա կանն ոչ 'ի գործ ածի.) || շաղփաղփութն. կամ առասպելաբանութն. կամ վայրաբա_նութն. և այլն: Նարէկ. խԸ:

Բարբանջողական. ի. աւ. աց. գք: || շաղ_փաղփական. կամ առասպելական. և այլն: Մերթ եւ նշանակէ՝ ըղանջական. կամ կարկաչողական, որպիսիք են ձայնք ամանց Թռչնոց:

Բարբառ. ոյ. ով. ոց. ովք: || ձայն մար_դոյ նշանական. կամ խօսք. կամ բան. կմ պատգամ. կամ արտաբերութն բանից: Թուոց. 3. 16: Աղաւ. 8. 4: Երգ. 2. 14:

իսկ մերթ նշանակի հնչիւն. կամ աղաղակ. և կամ ձայն՝ փողոյ, որոտման, հողմոյ, անասնոց, կամ մարդկանց՝ և այլոց ձև իցէ իրաց. թէ՛ նշանակութիւք իցեն, և թէ՛ աննշանք: Ելից. 9. 23: և 28. 35: Ղևտ. 25. 9: Իմաստ. 17. 17: Եսայ. 40. 3: Իսկ մերթ նշանակէ զերգումն աղբերց, որովք 'ի մեծամեծս որոտին: Կոչթ. 2. 8. և 21. 40: Յայտ. 9. 11:

Բարբառիմ. եցայ. եալ. իլ: (ձայնաւոր.) ‖ խօսիլ. կամ ասել. կամ ճառել. կամ արտաբերել զբանս, կամ զբառս: Աղաղ. 8. 6: Իմաստ. 8. 12: 2. Պետր. 2. 16. և 18: Իսկ մերթ նշանակէ՝ բարձր ձայնիւ խօսել. կամ ձայնել. կամ մեծամեծս կարդալ. կամ դոչել. կմ աղաղակել: Թագաւ. 20. 8: 1. Մնաց. 26. 14: 2. Մնաց. 15. 2: Ղուկ. 8. 55:

Բարբաջիմ. եցայ. եալ. իլ: (ձայնաւոր.) ‖ վարանիլ. կամ պատաղել. կամ պապչարել. կամ լքանիլ: Եւ Փիլիպ. 4. 10. ուր ասի, բայց բարբաջէիք իմիք. իմանի այսպէս. բայց պատառելայլէիք իմաստ. կամ պաշարեցեալ էիք իմիք կերպիւ. կամ ոչ ունէիք զդիպաւորութիւն. կամ չէիք ձեռնհաս:

Բարբարիկոն. ի. ու. աց. օք: ‖ բարբարոսական. կամ խուժականն:

Բարբարոս. ի. ու. աց. օք: ‖ գռեհիկ. կմ խուժադուժ. կամ ազգ՝ որ զուրկ է 'ի քաղաքավարութենէ, և է անմօրդի, և խառնակեցու. կամ անդութ, և անողորմ: Հռով. 1. 14:

Բարբիտոն. տոնի. իւ. ից. իւք. կամ օք: ‖ է բառ յունական. և նշանակէ՝ նուագարան. կամ երաժշտական գործիք, որպիսի է քնարն, և այլք նմանք:

Բարգաւաճ. ի. իւ. ից. իւք: ‖ բարեօք աճեցեալ. կամ փարթամ. կամ փառօք պայծառ. կամ փառաւոր. կամ հաջողակոր. կամ արգասաւոր: 2. Օրին. 26. 19: և Նարեկ. խը:

Բարգաւաճական. ի. ու. աց. օք: ‖ արգասաւորական. կամ փառաւորական. կամ հաջողական: Նարեկ. 'ի գովեստ առաքելոց:

Բարգաւաճանուն. անուան. ամբ. անց. ամբք: ‖ ունող զփառաւոր անուն. կամ հռչակեցեալ անուամբ. կամ բարեհամբաւ:

Բարգաւաճանք. անաց. օք: (անեզական.) ‖ փառաւորութիւն. կամ արգասաւորութիւն. կամ ճոխութիւն. Խորէն. ա. գլ. 13:

Բարգաւաճիմ. ճեցայ. ճեալ. ճիլ: (ձայնաւոր.) ‖ առատ պտղովք կամ ստացուածովք և կամ այլովք բարեօք աճիլ. կամ փառաւորիլ. և պատուաւոր լինիլ. կամ բողբոջիլ և ուռճանալ. և կամ ճոխանալ: Նարեկ. ժէ: և 'ի գովեստ առաքելոց:

Բարդ. ի. իւ. ից. իւք: ‖ մերթ նշանակէ զբարդութիւն. կամ, զբազմաբարդեցեալն 'ի միասին: և բառ այսմ ասի զերկուց անուանց յօդեցելոց՝ թէ են բարդք, որպիսի է այս, բարեմիտ: Մերթ և 'ի գիզեալ, կմ 'ի մի վայր կուտեցեալ. ունի մինչ 'ի հնձելն զարտորայի զխրձունս կապեցեալս դնելով 'ի վր միմեանց՝ առնեն զմեծ դէզ, նոյնն ասի, բարդ. Ըստ այնմ. որ Դատ. 15. 5. ասի. 'ի բարդից մինչև ցկանգնեալսն. և, 'ի գիզեցելոց մինչև 'ի կանգուն մնացեալ հասկոն, որք հնձելիք էին:

Բարդեմ. եցի. եալ. ել: (ներգործ.) ‖ գիզել. կամ 'ի վր իրի իրիք զայլ ինչ յաւելուլ. կամ զբազումս 'ի միասին յօդել. կամ կուտել. և կամ բաղադրել: Լմբրն: Մտօք և քերականօքն՝ մինչ զմի բառն ընդ այլում բառի շարակցեն. ասին բարդել:

Բարդութիւն. թեան: ‖ բարդումն. կամ դիզումն. կամ շեղջակուտումն. կամ յարակցութիւն. և կամ բաղադրութիւն. և այլն:

Բարեատեաց. ատեցի. ու. աց. օք: ‖ ատող զբարին, և զուղիղն, և զարդարն. կամ չարասէր: Նարէկ. ծե:

Բարեացապարտ. ի. իւ. ից. իւք: ‖ բարեաց արժանաւոր. կամ բարեաց փոխատուութեան, և գովութեան արժանաւոր: Խորէն. գ. գլ. 40:

Բարեաւ մնալ: ‖ ոչ հոմանիշ, այլ ընդ բայի շարակցի այսպէս. բարեաւ մնալ ասել: և նշանակէ՝ զհրաժարականն ողջոյն տալ: ուանջ'. կեցէք բարով ասել: Եւ մերթ նշանակէ զմ և իցէ հրաժարելն, կամ հեռանալն յիմիքէ. ըստ այնմ. թէ կենցաղական հոգոց՝ բարեաւ մնալ ասել:

Բարեբախտ. կամ բարեբաստ. ի. իւ. ից. իւք: ‖ ունող զբարի դիպուածս. կամ երջանիկ. և կամ ունող յաջող հանգիտցին իրականութեանն. կամ բախտաւոր: Նարէկ. ծա:

Բարեբախտիմ. եցայ. եալ. իլ: (ձայնաւոր.) ‖ զյաջողութիւն ընդունիլ. կամ ունիլ ըզ բարի դիպուած. կամ երջանիկ լինիլ: Բայց Սիրաք. 3. 32. ուր ասի, բարեբախտ դեալ ունիցի, պարտի իմանալ, զբարեբախտութիւն ունիցի:

Բարեբախտիկ. (նախադրիւ հոլովի.) ‖ բարեբաստիկ. կմ զբարի բաղդս ունող. կմ երջանիկ, և երանելի: Խորէն. գ. գլ. 48

Բարեբախտութիւն. թեան: ‖ բարեբաստութիւն. կամ բարեյաջողութիւն. կամ երջանկութիւն: Խորէն. ա. գլ. 12:

Բարեբաղդ. ի. իւ. ից. իւք: ‖ տե՛ս զԲարեբախտ:

Բարեբան. ի. իւ. ից. իւք: ‖ բարեբանօղ. կամ օրհնաբանօղ. և մինչ ասի՝ բարեբան գովութիւն, իմանի՝ բարեբանական գովութիւն: Նարէկ. ղջ:

Բարեբանեմ. եցի. եալ. ել: (ներգործ.) ‖ գովել. կամ օրհնել. կամ փառաւորել:

Բարեբանութիւն. թեան: ‖ օրհնաբանութիւն. կամ գովաբանութիւն. և կամ բան օրհնութեան, և գովութեան:

Բարեբաշխ. ի. իւ. ից. իւք: ‖ զբարին՝ և զպարգևս բաշխօղ: Եւ մերթ նշանակէ

Digitized by Google

զբարս բաշխեցելոյն, և զբաժանեցելոյն։ Նարեկ. ղէ։

Բարեբաշխութիւն. Թեան։ || բաշխումն պարգևաց. կամ առատաձեռնութիւն բարեաց. կամ բարերարութիւն։ Նարեկ. կէ։

Բարեբաստ. ի. իւ. ից. իւք։ || շնորհաւոր. կամ բարեբախտ. կմ՝ ունօղ զբարի թէսութիւն. կամ երջանիկ. կամ բարեյաջող։ Լմբրն։

Բարեբաստիկ. (Նախդրիւ հոլովի.) || նոյն ընդ Բարեբաստիկ։

Բարեբաստութիւն. Թեան։ || բարեբաղդութիւն. կամ բարեյաջողութիւն. կմ՝ բարեգլխութիւն. կամ բարեմասնութիւն. կամ երջանկութիւն։ Նարեկ. խը. և կե։

Բարեբարոյ. ի. իւ. ից. իւք։ || ունօղ զբարի բարս. կամ բարեձև. կամ համեստաբարոյ. կամ քաղցրաբարոյ. կմ՝ պարկեշտ։ Լմբրն։

Բարեբարք։ (Նախդրիւ հոլովի.) || նոյն է ընդ վերնոյն։

Բարեբերք. (Նախդրիւ հոլովի.) || բարեբոյս. կամ զբարիս բերօղ. կմ՝ որոյ բերքն են բարիք. կամ բարեպտուղ։

Բարեբողբոջ. ի. իւ. ից. իւք։ || որ ունի զբարի ընձիւղ. կամ զշիւղ. կամ զբարւոք ոստս, և զշառաւիղ։ Նարեկ. ղէ։

Բարեբոյս. բուսոյ. ով. ոց. ովք։ կամ ից. իւք։ || զբարի բոյս ունօղ, կամ զբարի պտուղս բուսուցանօղ։ Նարեկ. 'ի գովեստ առաքելոց։

Բարեբուղխ. (Նախդրիւ հոլովի.) || զբարիս բղխօղ. և կամ բարւոք, և վայելչապէս բղխեցեալ։ Նարեկ. ղէ։

Բարեբուն. (Նախդրիւ հոլովի.) || այն՝ որոյ բնութիւն է բարի. և կամ որ է բնութեամբ բարի. և կամ որ է բուն բարին, ասի՝ բարեբուն։

Բարեգեղ. (Նախդրիւ հոլովի.) || զբարի և վայելուչ գեղս ունօղ. կամ գեղեցկատեսիլ. կմ՝ չքնաղագեղ։ Խորէն. [illegible] գլ. 11։

Բարեգնաց. ի. իւ. ից. իւք։ || զբարի գնացս ունօղ. և կամ որոյ գնացքն, և ընթացքն վայելուչք, և անսայթաքելիք են. և այս մերթ ասի զմարդոյ. իսկ մերթ զգետոց. և զբղխմանց աղբերաց։ Խորէն. [illegible] գլ. 15։

Բարեգործ. ի. իւ. աց. օք։ || բարերարիչ. կամ ունօղ զբարի գործս, կամ առնօղ զգործս բարեաց. և կամ որ առնէ այլոց զբարիս. որ և ասի բարերար։ Ղուկ. 23. 50։

Բարեգործեմ. եցի. եա. ել։ (Չէզոք.) || գործել, և առնել զգործս բարեաց. և մերթ նշանակէ առնել զբարիս այլոց՝ կմ՝ բարերարել։ Նարեկ. Հ։

Բարեգութ. գթոյ. ով. ից. ովք։ || յոյժ գթած. կամ բարողորմած. կամ ունօղ զգութ և զխնամ 'ի վր ուրուք։

Բարեգլխաւորութիւն. Թեան։ || բարեյաջողութիւն. կամ բարեբախտութիւն։ Սե- [illegible] 3. 28։

Բարեգեղ. (Նախդրիւ հոլովի.) || զբարի, և գեղեցիկ գեղս. կամ զձևս ունօղ. և կամ գեղեցկատեսիլ. և այս ասի զքաղաքէ, զպտղեանց. զգլխոց, զհասակէ մարդոյ. և զայլոց նմանեաց։

Բարեզան. (Նախդրիւ հոլովի.) || բարեզարմ. կամ բարեշնորհ. կամ որ զբարի որպիսութիւն ունի 'ի հոգւոջ. կամ 'ի մարմնոջ. և կամ շնորհազարդ։

Բարեզարդ. ի. իւ. ից. իւք։ || բարի, և գեղեցիկ զարդուք զարդարեցեալ. և կամ բարւոք զարդարեցեալ. կմ՝ շնորհազարդ. կամ գեղեցկազարդ։

Բարեզարդեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) || բարւոք՝ և յարմարապէս զարդարել. կամ գեղեցկազարդել. կամ շնորհազարդել։ Նարեկ. 'ի գովեստ առաքելոց։

Բարեզարդութիւն. Թեան։ || գեղեցկազարդութիւն. կամ շնորհազարդութիւն. կմ՝ բարեկարգութիւն. Նարեկ. ղէ։

Բարեզարմ. ի. իւ. ից. իւք։ || բարետոհմ. կամ ազնուազարմ։

Բարեզգեաց. (Նախդրիւ հոլովի.) || զբարիս զգեցօղ. զի զբարիս յանձն լինի կրօղ. կամ բարեկիր։

Բարեզգեստ. ի. իւ. ից. իւք։ || ունօղ զբարի և զվայելուչ զգեստս. կամ գեղեցկահանդերձ. և կամ բարեզգեցիկ։

Բարեզեկոյց. կուցի. իւ. ից. իւք։ || զեկուցանօղ բարւոյ. կամ աւետաւորօղ զբարեաց։ Նարեկ. ղե։

Բարեընկալ. ի. իւ. ից. օք։ || ընդունօղ բարութեան. կամ բարեպէս ընդունօղ։

Բարեժամ. (Նախդրիւ հոլովի.) || դիպուկ ժամ. կամ պատշաճ, և յաջող ժամ. և մերթ այն՝ որ 'ի բարի և 'ի յարմար ժամանակի լինի, ասի՝ բարեժամ։ Իւ կամ ունօղ զբարի ժամ և զժամանակ։

Բարելից. լցի. աւ. աց. օք։ || բարելի. զի լցեալ՝ և ճոխացեալ բարեօք։

Բարելութիւն. Թեան։ || բարեկատարումն. կամ լիութիւն բարեաց։ Նարեկ. ղէ։

Բարեխառն. (Նախդրիւ հոլովի.) || միջակաւոր. կամ որ ոչ աւելորդաբար է, և ոչ պակասաբար. զի ամ լր, որ բարեպէս կարգաւորեալ, և կանոնաւորեցեալ է. և կամ բարւոք որակեցեալ, և խառնեցեալ՝ խորշելով յերկուց ծայրից. զի յաւելորդութենէ, և 'ի պակասութենէ, ասի՝ բարեխառն. այսէ՝ բարեպէս խառնեցեալ. որ պէսէ օդն, կամ երկիրն, յորժամ ոչ կարի ջերմ է, և ոչ կարի ցուրտ։ և կամ յորժամ է քաղցրախառն, և օդաւէտ։ Խորէն. ա. գլ. 6։ Իւ կա՛ այսու անուամբ կոչին նոքա՝ որ ունին զառաքինութիւն բարեխառնութեան. որ է միջին 'ի չորից կարգի նախականաց առաքինութեանց.

Բարեխառնեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) || յերկուց ներհակաց ծայրից միջակաւոր առնել. և յայս մինչ որ զսաստիկ ջերմն, կամ զսաստիկ ցուրտն. և կամ զսաստիկ դառն համն՝ միջակօրէն զովացուցանել, կամ քաղցրացուցանել. և կամ դիւրացուցանել. ասի բարեխառնել։ Իւ այս առ [illegible]

զպտղոց բարոյականաց, թէ զւանից, և թէ զիրաց։

Բարեխառնութիւն. թեան։ || միջակաւորութիւն. կամ քաղցրախառնութիւն. և կամ բարեյարմարութիւն. կամ բարւոք որպիսութիւն։ Եւ այս առի զօդոց, և զայլոց նմանեաց։ Խորէն. Բ. գլ. 15։ Մերթ եւս նշանակէ զմինն 'ի չորից կարդինալականաց առաջինութեանց, որով չափ դնի 'ի յըմբռման հեշտութեանց մարմնականաց՝ 'ի ճաշակելիս, և 'ի շօշափելիս։

Բարեխնամ. ի. իւ. եց. իւք։ կամ այ. օք։ || բարւոք, կամ քաջ խնամօղ. կամ բարեգութ. կամ նախախնամօղ 'ի բարիս. և կամ զմեծ, և զբարի հոգ՝ և զխնամ ունօղ 'ի վրա ուրուք։ Նարեկ. ձդ։

Բարեխնամեմ. եցի. եա́. ել։ (Ներգործ.) || բարւուք խնամել. կամ գթութբ հոգածել. կամ խնամարկել։

Բարեխոհ. ի. իւ. եց. իւք։ || զգաստ խորհօղ, կամ բարեխորհուրդ. կամ բարեմիտ։

Բարեխորհ։ (Նախդրիւ հոլովի.) || Նոյն է ընդ վերնոյն։

Բարեխրատ. ի. իւ. եց. իւք։ || բարեպէս խրատօղ. կամ զբարի խրատս տուօղ. և կամ զբարի իրս ուսուցանօղ։ Տիտ. 2. 3։

Բարեխօս. ի. իւ. եց. իւք։ || միջնորդ, կամ աղաչօղ վն ուրուք առաջի վերնագունին. և կամ զումեքէ զբարիս խօսօղ առաջի մեծագունին։ 2. Մակ. 13. 3։ Իսկ մերթ նշանակէ զ[illegible]. կամ զփառատաբանն. կամ զթարգմանն, և զբացատրիչն խնդրուածոց ուրուք։ Հռովմ. 8. 26։

Բարեխօսեմ. եցի. եա́. ել։ (չէզոք.) || միջնորդ լինել, և աղաչել զվերնագոյնն վն բարւոյ վայրագունին. և կամ խօսել զբարիս վն վայրագունին առաջի վերնագունին։

Բարեխօսութիւն. թեան։ || միջնորդութիւն ուրուք վն այլոյ առաջի վերնագունին։ Մերթ եւս նշանակէ զյորդորումն. ուստի 2. Կորն. 5. 20. ուր ասի, որպէս և Այ բարեխօսութբ մեօք, խնդրեմք այսպէս. որպէս կամ իբրու 'ի յորդորելն Այ զձեզ 'ի ձեռն մեր։

Բարեկամ. ի. աւ. աց. օք։ || համարեալ սիրելի, կամ ծանօթ, որ ըստ մտի կամի զբարիս այնմ որում է սիրելի. և կամ ունօղ զբարի կամս բարերարելոյ այլոց։ Յոհ. 11. 11։

Բարեկամանամ. ացայ. ացիր. նալ։ (ընդ միջ.) || բարեկամ լինել. այսինքն բարի կամեցօղ ումեք, կամ ծանօթ և սիրելի լինել։

Բարեկամութիւն. թեան։ || սիրելութիւն. կմ ընտանութի. կամ բարեաց բարեկամին ուրախութբ հաճութիւն։ Իմաստ. 7. 14։

Բարեկարգ. ի. աւ. աց. օք։ || ունօղ զբարի կարգաւորութի. կամ բարի կարգաւ կարգաւորեցեալ։

Բարեկարգեմ. եցի. եա́. ել։ (Ներգործ.) || բարեպէս կարգաւորել. կամ գեղեցիկ կարգաւորութբ յարմարել. և կամ գեղեց կազմարդել։

Բարեկարգութիւն. թեան։ || բարւոք կարգաւորութիւն. կամ բարեզարդութիւն։ Խորէն. Բ. գլ. 7։

Բարեկեաց. կեցի. աւ. աց. օք։ || բարեպէս կեցօղ. կամ բարեկեցիկ։

Բարեկենդան. ի. իւ. եց. իւք։ կամ աց. օք։ || օրն՝ յորում վարեմք զկեանս մեր 'ի բարութե. կամ յուրախութե, առ բարեկենդան։ Մերթ եւս օրն այն՝ որում հեռւին բազում աւուրք պահոց՝ կոչի բարեկենդան, այնու՝ զի ուրախութբ անցուցանի։

Բարեկենդանութիւն. թեան։ || յղփութիւն և յագեցութի 'ի բարեկեցութե. և կամ վարուցն կենաց 'ի բարութե. կամ բարեյաջողութիւն. կամ խրախճանութի։ Սաղ. 29. 7։ և Խորէն. Գ. գլ. 32։

Բարեկերպութիւն. թեան։ || բարեձեւութի. կամ գեղեցկատեսութիւն զգեստուց, կամ զինուց. և այլոց նմանեաց։ Նարեկ. ձգ։

Բարեկեցիկ. (Նախդրիւ հոլովի.) || յղփացեալ. կամ ճոխ. կամ որ ունի զինչս բազումս, որով լաւապէս ապրի, և կեայ. կամ երջանիկ. և բարեյաջող. կամ բարեբաստիկ։ Յոբ. 21. 23։ Եսայ. 32. 11։

Բարեկիր. կրի. աւ. աց. օք։ || ունօղ յինքեան զբարութի, կամ զբարի վարս. կմ բարեբարոյ, և բարեմիտ. կամ բարեկրօն։ 2. Մակ. 3. 31։

Բարեկիրթ. կրթի. աւ. աց. օք։ || բարւոք կրթեցեալ. կամ բարեսովոր. կամ քաջավարժ. կամ յոյժ վարժ և կիրթ։

Բարեկրութիւն. թեան. || բարեբաստութի. կամ բարեյաջողութի. կամ բարեբաղդութի. կամ երջանկութի։ Լամբրոն։

Բարեկրօն։ ի. իւ. եց. իւք։ || բարեկեցիկ. կմ. բարւոք կարգաւ և օրինօք վարօղ. կմ զբարի վարս ունօղ. կամ բարեպաշտ։ Նարեկ. լէ։

Բարեկրօնութիւն. թեան։ || բարեպաշտութիւն. կամ բարւոք և ըստ օրինի կարգաւ վարումն. կամ բարեկեցութիւն։ Լամբրոն։

Բարեհաճոյ. ի. իւ. եց. իւք։ || առ բարին հաճօղ, և յօժարօղ. կամ բարեհաճ. և կմ յոյժ հաճելի՝ և ախորժելի։ Լամբրոն։

Բարեհաճոյանամ. ացայ. ացիր. նալ։ || բարեհաճոյ լինել. կամ յոյժ բարւոք հաճոյ և ընդունելի լինել։

Բարեհաճութիւն. թեան. || հաւանութիւն յօժարութի առ բարին. կամ հաճումն բարեաց. և կամ բարի կամք։

Բարեհամ. ի. իւ. եց. իւք։ || քաղցրահամ. կամ քաղցրաճաշակ. և կմ յոյժ համեղ։

Բարեհամբաւ. ի. իւ. եց. իւք։ || զբարի անուն ունօղ. կամ մեծահամբաւ. կամ հռչակաւոր. և կամ անուանի։ 2. Մակ. 14. 37։

Բարեհամբաւեմ. եցի. եա́. ել։ (Ներգործ.) || բարեհամբաւ առնել. կամ բարեհռչակ առնել.

Digitized by Google

տանել. կամ գերահռչակել. կամ դրուատել ։

Բարեհամբաւութիւն. թեան ։ || բարեհռչակութիւն. կամ գերահռչակութիւն. կամ հռչակումն և համբաւումն անուանն ուրուք 'ի բարիս ։

Բարեհամբոյր. բուրի. իւ. ից. իւք ։ || բարեհաճոյ. կամ բարեսէր. կամ բարեշնորհ. կամ բարետենչ. կամ բարեյօրդոր. կամ յոյժ վայելուչ և սիրելի ։ Էր այս սուր զմարդոյ, զհոգւոյ, զհասակէ, զնչոյ, ըստ բանէ, և զայլոց բազմաց ։ Նարեկ. ղ ։

Բարեհանճար. ի. իւ. ից. իւք ։ կամ աց. օք ։ || բարեխորհուրդ. կամ յոյժ հանճարեղ. կամ բարեիմաստ ։ Նարեկ. հե ։

Բարեհասակ. ի. աւ. աց. օք ։ || գեղեցկահասակ. կամ վայելուչ հասակաւ ։

Բարեհնար. ի. իւ. ից. իւք ։ || քաջահնար. կամ ճարտարահնար. կմ հնարօղ բարեաց. և կամ յոյժ հմուտ 'ի հնարել, և 'ի գլուխ հանել զնին ։ Նարեկ. ծզ ։

Բարեհռչակ. ի. աւ. աց. օք ։ || անուանի, և համբաւաւոր 'ի բարիս. կամ բարեհամբաւ ։ Լամբրօն ։ Իսկ մերթ նշանակէ զնա, որ հռչակէ, և ամենից յայտ առնէ զբարութիւն ուրուք ։

Բարեհռչակեմ. եցի. եա. ել ։ (Ներգործ.) || բարեհռչակ առնել. կամ զբարի անուն զումեքէ հռչակել. կամ բարեհամբաւ առնել ։ Նարեկ. ծթ. և կ ։

Բարեհրաման. ի. աւ. աց. օք ։ || զբարի հրաման տուօղ. կամ զբարիս հրամայօղ ։ Նարեկ. հն ։

Բարեհրաւէր. աւիրի. աւ. աց. օք ։ || հրաւիրօղ առ բարիս. կամ բարեյորդոր ։ Նարեկ. ծա ։

Բարեձև. ի. իւ. ից. իւք ։ || զբարի և զազնիւ ձև ունօղ. կամ գեղեցկատեսիլ. կմ գեղեցկադէմ. և կամ բարետեսիլ ։ Խորէն. բ. գլ. 54 ։

Բարեձևութիւն. թեան ։ || բարեկերպութիւն. կամ գեղեցկատեսութիւն. կամ բարեկարգութիւն ։ Նարեկ. ղդ ։

Բարեձիր. ձրի. իւ. ից. իւք ։ || զբարի ձիրս և զպարգևս տուօղ. և կամ բարի պարգևք ։ Իսկ մերթ՝ պարգևեցեալ բարի իրն, սոյն՝ բարեձիր ։

Բարեմատն. տին. տամբ. տանց. տամբք ։ || բարեմիջնորդ. կամ բարեժառանգ. կամ բարեաց մատնակից ։

Բարեմատնեալ. եղոյ. ով. ոց. ովք ։ || բարեաց միջնորդեցեալ. կամ հանդիպեցեալ. կամ բարեժառանգ եղեալ. կամ բարեօք երջանկացեալ. կամ բարեբաստիկ եղեալ ։

Բարեմատնութիւն. թեան ։ || բարեբաստութիւն. կամ բարեբաղդութիւն. կամ բարեմիջնորդութիւն. կամ յաջողութիւն բարեաց. և կամ երջանկութիւն ։ Նարեկ. Ժ. և կա ։

Բարեմատոյց. տուցի. ցաւ. ցաց. ցօք ։ || ըստ պարգևս բարեաց տուօղ և կարկառօղ. կամ առատապարգև ։ Նարեկ. հզ ։

Բարեմարդաբիկ ։ || ոչ հոլովի. այլ ըստ բայի չարակցի այսպէս. բարեմարդաբիկ լինել ։ և նշանակէ հաճոյ երևել, կամ ը հաճոյութեան այլոց վարել ։ ուսմն. ... ։ Գաղատ. 6. 12 ։

Բարեմարդութիւն. թեան ։ || մարդահաճութիւն ։ Իսկ Սոփե. 2. հատ. ժդ. ուր ասի. ըստ բարեմարդութեան 'ի բաց ձգելով, իմանի զմարդկային բարեբարոյութին, կմ զմարդկային համեստութին ։

Բարեմիտ. մտի. մտաւ. կամ իւ. աց. օք ։ || անխարդախ. կամ զուղիղ միտս ունօղ. կամ բարեսէր. կամ զուարթամիտ. կամ հանդարտամիտ. և կամ բարեբարոյ ։ 2. Մակ. 7. 19 ։

Բարեմիջն ։ (Նախդրիւ հոլովի.) || մանկամբ՝ ծոյն՝ նշանակէ՝ բողբոջ. կամ փափուկ և զուարթ. կամ քաջ և ազնիւ. ուստի բարեմիջնն՝ նշանակէ զբարեբողբոջն. կամ զբարեզուարթն. կամ զբարեփափուկն. ը զյոյժ փափուկն և ընկալեալն. կամ զյոյժ առողջն, և զզուարթն ։ Աղամ. 17. 22 ։

Բարեմտութիւն. թեան ։ || բարեբարոյութին. կամ առաքինասիրութիւն. կմ զուարթամտութիւն. կամ բարեհաճութիւն. կամ ողջամտութիւն ։ Սոփե. 1. հատ. իզ ։

Բարեյաղթ. ի. իւ. ից. իւք ։ || քաջայաղթ. կամ մեծայաղթ. կամ յոյժ յաղթօղ ։

Բարեյարմար. ի. իւ. ից. իւք ։ || քաջայարմար. կամ բարեյօդ. կամ բարեզոյգ. ը, որ ազնիւ կերպիւ յօրինեցեալ և կազմեցեալ է. կամ բարեկազմ, և վայելուչ. և կամ բարւոք յարմարեցեալ. և կարգաւորեցեալ ։ Նարեկ. ղդ ։ Խորէն. բ. գլ. 62 ։ Մերթ և նշանակէ զբարեպէս յարմարօղն ։

Բարեյոյս. (Նախդրիւ հոլովի.) || ունօղ զյոյս բարի. կամ յուսացօղ ընդունել զբարիս. և կամ մեծայոյս ։ Իմաստ. 12. 19 ։

Բարեյորդոր. (Նախդրիւ հոլովի.) || բարեյօժար. կամ յոյժ պատրաստ և յօժար 'ի բարին ։ Իսկ մերթ նշանակէ զյորդորօղն 'ի բարիս.

Բարեյօդ. ի. իւ. ից. իւք ։ || բարեձև. կմ բարեկարգ. կամ բարեկազմ. կամ որոյ ձևն, և դիրքն գեղեցիկ են ։

Բարեյօժար. (Նախդրիւ հոլովի.) || քաջայօժար. ը յոյժ բարւոք յօժար, և պատրաստ. կամ յօժարամիտ առ բարին ։ Լամբրօն ։

Բարենախանձ. (Նախդրիւ հոլովի.) || ունօղ զբարի նախանձ. կամ ջանացօղ առ 'ի հետևել բարեաց ։

Բարենշան. ի. աւ. աց. օք ։ || ունօղ զբարի նշան. կամ նորահրաշ. կամ նշանաւոր. և կամ երևելի ։ 2. Մակ. 10. 28. և 14. 37 ։

Բարենշմար. ի. իւ. ից. իւք ։ || բարենկատ. կամ բարեձև. և կամ գեղեցիկ տեսս ունօղ ։ Նարեկ. ղդ ։

Բարեշաւիղ. (Նախդրիւ հոլովի.) || բարեգնաց. կամ որոյ շաւիղն, ը ճանապարհն վարուց՝ ընդ որ գնայ, է բարի. և հաճոյ

այլոց.

...յլոց. և կամ է այլոց բարի օրինակ. Նո-
նէլ. ՚Ի Գողիլոս առաքելոց։

[Բա]րեչէն. չինի. ին. ից. իւք։ || Մերթ նշա-
նակէ բարեպէս չինօղն զիր ինչ. կամ չէն
պահօղ։ Մերթ և նշանակէ բարեպէս չի-
նեցեալն, և չէն մնացեալն. կամ բարե-
յաջողն։ Ե այնմ Մաղաք. 3. 15. բարե-
չէնք են ամենեքեան. (՚ի) բարեպէս չէն
կացեալք են, և ՚ի յաջողութեան են։

[Բա]րեշնորհ. ի. ին. ից. իւք։ կամ աց.
օք։ || զբարի շնորհս առօղ. կամ բարե-
պարգև։ Իսկ մերթ նշանակէ զշնորհալին,
և զգեղեցիկն. կամ զշնորհազարդն։ Նո-
նէլ. Ը. և կա։

[Բա]րեշունչ. (Նախդրիւ հոլովի.) || Մերթ
նշանակէ զբարւոք շնչեցեալն. կամ ազ-
դեցեալն. և կամ բարբառեցեալն։ Մերթ
և նշանակէ զբարւոք շնչօղն. կամ զքաղց-
րաշունչն. որպիսիք են քաղցրաշունչ հոտ-
մունքն։

[Բա]րեշուք. (Նախդրիւ հոլովի։) || գեղե-
ցիկ. կամ ազնիւ. կամ փառաւոր. կամ
մեծապատիւ. և կմ՛ մեծափառ. Նոնէլ. Թ։

[Բա]րեշփութիւն. Թեան. || բարեյօգութիւն.
կամ բարեկարգութիւն. կամ բարեյարմա-
րութիւն. կամ բարւոք չափակցութիւն. և
համեմատութիւն. Լամբրոն. ՚Ի Ներբողեան։

[Բա]րեպաշտ. ի. ին. ից. կամ աց. օք։ || Հե-
տևօղ բարեաց գործոց. և ծառայիւն պաշտ-
ումն իրանց. կամ վարօղ Ե բարւոյ կանո-
նի. ծառայութեան, և աստուածութեան. կամ
արդար. և կմ՛ ծառայասէր։ Ղուկ. 12. 12։

[Բա]րեպաշտի. (Նախդրիւ հոլովի.) || ըղ
բարեպաշտութիւն ունօղ. կամ բարեպաշ-
տօն. կամ ծառայասէր։

[Բա]րեպաշտեմ. տեցի. եմ. եւ։ (չէզոք.)
|| ունել զբարեպաշտութիւն, կամ զծա-
ռայութիւն, և զգործս բարեաց։ Նոնէլ. Հա։

[Բա]րեպաշտութիւն. ւոյ. եաւ. եաց. եօք։
|| բարեպաշտ. կամ ծառայասէր. կմ՛ աստ-
քինի կին։

[Բա]րեպաշտօն. ի. ին, ից. իւք։ || բարե-
պաշտ. կամ բարեսէր. կամ բարեաց հե-
տևօղ. և կամ բարեկրօն։ Առակ. 31. 30։
և Գործ. 10. 2։

[Բա]րեպատեհ. ի. ին. ից. իւք։ || բարեպատ-
կան. կամ բարեյարմար. կամ բարեպատ-
շաճ։ Նոնէլ. ԻԷ։

[Բա]րեպարիշտ. րշտի. ին. ից. իւք։ || բարե-
պաշտ. կամ բարեկրօն. կամ բարեպաշ-
տօն։ Նոնէլ. Դ. և ՂԴ։

[Բա]րեսերմութիւն. Թեան։ || բարի սերմա-
նումն. կամ բարի սերմն. Նոնէլ. ՃԳ։ Իսկ
մերթ նշանակէ զբարեզարմութիւն, կամ
զբարետոհմութիւն։

[Բա]րեսէր. սիրի. աւ. աց. օք։ || սիրօղ գոր-
ծոց բարեաց. կամ առաքինասէր. կամ
բարեբարոյ. կամ գթած։ Տիտ. 1. 8։ Իսկ
մերթ նշանակէ զնա՝ որ սիրէ զբարութիւնս
այլոց. և կամ որ յօժարի առնել զբարիս
այլոց։ Իմաստ. 7. 22։ և Եբր. 16. 16։

[Բա]րեսնունդ. սննդի. ին. ից. իւք։ կամ
օք։ || բարեպէս սնեալ. կամ ուսուցեալ՝
և վարժեցեալ ՚ի բանս՝ և ՚ի գործս բարիս։

Բարեվայելուչ. (Նախդրիւ հոլովի.) ||
յոյժ վայելուչ. կամ բարեյարմար. կամ
բարեկարգ։

Բարեվայելչութիւն. Թեան։ || յոյժ ազնուու-
թիւն. կամ գեղեցկութիւն. կամ բարեյար-
մարութիւն։ Իսկ մերթ բարւոք վայելումն.
կամ բարեզուարճութիւն. Խորէն. Ա. ԿԲ. 15։

Բարեվիճակ. ի. ու. աց. օք։ || բարեաց վի-
ճակեցուցանօղ. կամ բարեաց վիճակե-
ցեալ. և կամ բարեկարգ. կամ բարեյար-
մար։ Նոնէլ. ԺԵ։

Բարետանիղ. (Նախդրիւ հոլովի.) || ըղ
բարենք, և զներդաշնակաւորեալ ձայն հա-
նօղ. որպիսի է տաւիղն. կամ քնարն, կմ՛
սամբուկն, և այլք նմանք, որք երբեմն
ողբերգական եղանակաւ հարկանէին. և
երբեմն ուրախականաւ։ Նոնէլ. ԿԵ։

Բարետես. ի. ին. ից. իւք։ || Մերթ իմա-
նի սրատես. կամ քաջըրահայեաց, որ
սաստիկ զմարդոյ. կամ զաչաց։ Մերթ ու-
նօղն զբարւոք տեսս. (՚ի) գեղեցկատեսիլն։
Մերթ և տեսօղն բարեաց, (՚ի) որ ՚ի յայլս
միշտ զբարիս՝ զոր ունին, տեսանէ. և ոչ
զչարիսն։

Բարետեսակ. ի. ու. աց. օք։ || բարետես.
կամ գեղեցկատեսիլ։

Բարետեսիլ. (Նախդրիւ հոլովի.) || Նոյն է
ընդ վերնոյն։ Նոնէլ. ՀԵ։

Բարետիպ. տպի. ին. ից. իւք։ || բարետես.
կամ բարետեսիլ. և կամ բարեպէս տպե-
ցեալ ՚ի նախագաղափարէն. կամ յոյժ
բարւոք նմանեալ նախագաղափարին, կմ՛
պատճառի իւրում։ Իսկ ըստ այսմ առէ ՚ի
Նոնէին. ՂԶ. քաղցրածաղիկ ծառայն՝ բա-
րետիպ պտուղ։

Բարետոհմ. ի. ին. ից. իւք։ || այն որ է ՚ի
բարւոյ զարմէ. կամ յազնիւ տոհմէ. և կմ՛
ազնուազարմ։

Բարետոհմիկ. (Նախդրիւ հոլովի.) || Նոյն
է ընդ վերնոյն։

Բարետոհմութիւն. Թեան։ || բարեզարմութիւն.
կամ ազնուազարմութիւն. կամ քաջատոհ-
մութիւն։ Լամբրոն։

Բարետուութիւն. Թեան։ || Շնորհատուութիւն.
կամ պարգևատուութիւն։

Գէտ ․ գիտի ․ աւ ․ աց ․ օք ։ ‖ է արմատ գիտել բային , և նշանակէ զգիտունն ․ կամ զգիտօղն առնել ՚ի ձեռն կախարդութեան զիր ինչ ․ կմ զկախարդն ․ կմ զերազահանն ։ Ղեւտ ․ 19 ․ 31 ։ և 1 ․ Թագ ․ 28 ․ 3 ։

Գէր ․ գիրի ․ աւ ․ աց ․ օք ։ ‖ պարարտ ․ կամ լի ճարպաւոր մսով ։ Յովբ ․ 18 ․ 14 ։

Գ Թ

Գթած ․ ի ․ իւ ․ եց ․ իւք ։ ‖ ողորմած ․ կմ քաղցրաբարոյ առ այլս ։ Ելից ․ 34 ․ 6 ։

Գթածահայեաց ․ եցի ․ աւ ․ աց ․ օք ։ ‖ քաղցրաբար , կմ գթածաբար հայօղ ՚ի նոսա՝ որք ունին զկարօտութիւն ։

Գթածութիւն ․ թեան ։ ‖ գթութիւն ․ կմ խնամածութիւն ․ կմ ողորմածութիւն ։

Գթամ ․ ացայ ․ ա ․ ալ ։ (Ընդմիջա ․) ‖ ՚ի գութ շարժիլ ․ կամ քաղցրանալ ․ կամ ողորմիլ ։

Գթասէր ․ սիրի ․ աւ ․ աց ․ օք ։ ‖ սիրօղ գթութեան , կմ ողորմածութեան ․ կմ գթած , և ողորմած ․ և կամ ողորմասիրտ ․ կամ գորովագութ ։ Լամբրոն ։

Գթասիրեմ ․ եցի ․ եա ․ ել ։ (Չէզոք ․) ‖ սիրելով գթալ ․ կմ գթութեամբ սիրել ․ կամ ողորմիլ , և գթալ ։ Նարէկ ․ ձ ։

Գթեմ ․ եցի ․ եա ․ ել ։ (Չէզոք ․) ‖ գայթել ․ կամ գայթակղիլ ․ ցդ զոտն հարկանելով յեր ինչ՝ գլորիլ մերձ յանկումն ․ և կմ ՚ի ծանրութենէ բեռին գլորիլ ․ որպէս բաղդիցս պատահի երիվարաց ․ 1 ․ Թագ ․ 17 ․ 39 ։ Հռոմ ․ 9 ․ 32 ։ Իսկ մերթ նշանակէ՝ սխալել ․ կմ վրիպիլ ։

Գթութիւն ․ թեան ։ ‖ քաղցրութիւն սրտի ՚ի վէր տառապելոցն՝ որով յօժարի բառնալ ՚ի նոցանէ զտառապանս ․ կմ ողորմածութիւն առ նոսա՝ որք են ողորմելիք ։

Գթումն. գթման: || գլորումն. կմ՛ գայթակղութիւն: Սիրաք. 39. 29:

Գթոտ. ի. իւ. ից. իւք: || գթառատ. կմ՛ յաճախ գայթակղող՝ և սահող, և այսպէս զերկիւղածս. և կմ՛ զմարդոյ. և զայլոց նմանեաց, որք յընթացս իւրեանց յաճախ սահին: Իսկ մերթ սխալող. կմ՛ վրիպող: Մերթ ևս նշանակէ ունօղն զգութ, այսինքն գթածն:

Գ. Ժ.

Գժգմիլ. եցայ. եա՛ց. իլ: (Ձայնաւոր.) || խռժոտիլ. կմ՛ ցաւիլ. կմ՛ դժուարիլ. կմ՛ ծանր թուիլ ումեք իրքինչ. կամ տրտմիլ: 2. Մակ. 4. 37:

Գժգմութիւն. թեան: || խռժոտութիւն. կամ դժուարութիւն. կմ՛ ծանր թուիլն: Նորէլ. խե:

Գժտիւ. գժտոյ. ով. ոց. ովք: || հակառակ. կմ՛ խիստ. կմ՛ դաժան, և գժնդակ:

Գժտիլ. եցայ. եա՛ց. իլ: (Ձայնաւոր.) || տարաձայնիլ. կմ՛ կռուիլ. կմ՛ հակառակիլ. կամ կագել:

Գժտութիւն. թեան: || տարաձայնութիւն՝ ՚ի մէջ երկուց. կմ՛ բազմաց: 2. Մակ. 4. 50: մերթ ևս մինչ զնոյնս իրէ լինելին զանազան կարծիք ՚ի մէջ ոմանց՝ առանց թշնամութեան, ասի լինել գժտութիւն ՚ի մէջ նոցին: և ըստ այսմ է, Գործ. 15. 39:

Գ. Ի.

Գիի. գիոյ. ով. ոց. ովք: || է ծառ ինչ մշտադալար, որ ունի զբուն ստուար և անհարթ: փայտ նորա է անփուտ, կարծր, և աղնիւ. յորմէ բազում անգամ գերանս հատանեալ ՚ի գործ ածեն յաղնիւ շինուածս: Ունի զտերև նեղ և երկայն՝ և սուր իբրև զփուշ: բերէ զպտուղ կարծր՝ ըստ մեծութեան կաղնոյ. կմ՛ ընկուզի. որոց ոմանք են բոլորակաձև, և ոմանք երկայնաձև: Ունի զարմատս ցանցառս, և զերեսօք երկրի տարածեալս: բազում անգամ զհիւթս ցօղէ յոստոց իւրոց իբրև զարտասուս: Յաճախ բուսանի ՚ի քարոտս և յաւազուտ տեղիս: 3. Թագ. 6. 31: և Եսայ. 41. 19:

Գիլ. գլի. աւ. աց. աւք: || քար զոր ՚ի գործ ածէին ՚ի հնումն ՚ի պատերազմի, կմ՛ ձեռամբ ձգելով, և կմ՛ ՚ի ձեռն ոմանց գործեաց: 1. Մակ. 2. 36:

Գիծ. գծի. իւ. ից. իւք: կամ օք: || խազ և կմ՛ երկայնութիւն ինչ՝ որ առանց լայնութեան և խորութեան մտածի: Մերթ ևս նշանակէ զգիրն, կամ զտառն:

Գիհի. հւոյ. հեաւ. եաց. եօք: || է տեսակ ինչ վայրենի ծառոյ, որոյ ձևն, տերևն, և պտուղն՝ է ամենևին նման նոճի, այսինքն, սէլվիի: Բայց ըստ բարձրութեան փոքր լինի քան զնա: Ունի զփայտ կարծր, և երկարատև: ռամկօրէն կոչի արդուճ:

Գիճագոյն. գունի. իւ. ից. իւք: || խառնագոյն. այսինքն, խիստ թխայ: Ծն. 29. 17. ուր ասի, աչք Լիայի էին գիճագոյնք. իմանի՝ ունօղք զխոնաւութիւն, որով ոչ կարէր համարձակապէս հայիլ առ արեգակն. և կամ զի խոնաւութիւն իջանէր յաչացն. և մի այսպիսիկ ասացան գիճագոյն:

Գիճագործ. ի. իւ. աց. օք: || զգիճութիւն պատճառօղ. կմ՛ խոնաւացուցիչ: և մերթ նշանակէ զգիճայինն, կամ զգիճացեալն:

Գիճական. կան. ամբ. անց. ամբք: || զգիճային աչս ունօղ. որպիսիք են բժոց տկարացեալքն. յորոց աչացն միշտ հոսին գիճութիւնք, և խոնաւութիւնք:

Գիճանամ. կամ գիջանամ. ացայ. ցիր. անալ: (ընդ. միջ.) || խոնաւանալ. կմ՛ գէճ լինիլ: Եւ մերթ նշանակէ բղջախոհութեամբ վարիլ. կմ՛ աղծիլ գիճութեամբ մարմնոյ: ՚Ի վերս հարց. ժ:

Գիճին. (նախդրիւ հոլովի.) || գիճային. կամ խոնաւային. և կմ՛ խոնաւաւէտ: Խորէն. բ. գլ. 6:

Գիճութիւն. կմ՛ գիջութիւն. թեան: || մերթ նշանակէ՝ խոնաւութիւն: Եզեկ. 21. 7: Իսկ մերթ աղծութիւն չար ցանկութեան. ՚ի ձեռն անբնահոսութեան. կամ գիճական վաւաշոտութեան: Մարկ. 7. 22: Գաղատ. 5. 19: և 2. Պետր. 2. 7:

Գին. գնոյ. ով. ոց. ովք: || արժողութիւն իրաց. կամ այն՝ զոր տան փոխանակ գնեցելոյ իրին, կմ՛ առնուն փոխանակ իրին վաճառեցելոյ: Իսկ մերթ նշանակէ զգնեցեալ իրն. և ըստ այսմ իմանի՝ մինչ ասի առ Քս, զգինս արեան քո, մի՛ անտես առներ. այսինքն, զգնեցեալս արեամբ քով: Իսկ մերթ ընդ բայի շարակցի այսպէս. գնոյ առնուլ. և նշանակէ՝ գնել: Կողոս. 4. 5: կամ այսպէս. գնոց գնել. և նշանակէ՝ թանկագին գնել: ռամկ. սուղ գնել: 1. Կորնթ. 6. 20: և 7. 23: Եւ կամ այսպէս. գին հատանել. կմ՛ գինս արկանել. և նշանակէ՝ գին բացորոշել, կմ՛ գին դնել: ռամկ. գին կտրել: Ղևտ. 27. 8: Իսկ ՚ի յողբս Երեմիայի. 4. ուր ասի. զՋուրս մեր գնոյ արբաք. իմանի, գնելով արբաք: Մերթ ևս բառս գին. ըստ հնոց ոմանց՝ նշանակէ զգինին. և ըստ այսմ է ևս յառակ անուն մատուռականին վաղարշակայ. որ ոչ գործով էր մատակարար գինւոյ, այլպէս և անուամբ կոչէր գին, այսինքն, գինի: և սերեալքն ՚ի նմանէ՝ գնունիք անուանեցան. որ ասել կամի, գինունիք, այսինքն, գինի ունիք: Խորէն. բ. գլ. 7:

Գինարբու. կամ գինեարբու. բուի. բուաւ. բուաց. բուօք: || մերթ իմանի ըմպօղն գինւոյ, և կամ արբեցօղն և գինեմոլն: Խորէն. գ. գլ. 68: Մերթ ևս նշանակէ՝ արբումն գինւոյ. կմ՛ արբեցութիւն. և կամ խրախճան. և ցայնժամ է անեզական: Եսթեր. 7. 1: և 14. 17: Յովէլ. 13. 2: Առակ. 23. 30:

Գինդ. (նախդրիւ հոլովի.) || տես Գինտ:

Գինեզէն. զինեի. աւ. աց. կամ եւ. օք: || գինեաւ զինեցեալ. այսինքն, ՚ի ձեռն արբեցման գինւոյ վառեալ և կատաղեցուցեալ առ՚ի

պատե-

Digitized by Google

պատերազմելոյ զօրացելոյ : 3. Մակ. 5. 1. և 5 :

Գինեհարբուս. եցայ. եաց. ել: (Յոյնաբար.) || գինեաւ հարբեալ. զի պատրաստել 'ի բռն_ նել մինչև 'ի պատերազմ. կամ գինւոյ տալ զինչ. ռամկ. ծխախոտ ըմպել. Երեմ. 56. 12:

Գինեհարութիւն. Թեան: || արբեցութիւն տա_ ռապել քան զշափն. կամ մոլեգնութիւն 'ի պատրաստելն գինւոյն՝ այնպէս, մինչ զի զը_ ննանոցն կարէ զատել զինքն 'ի յըմպե_ լոյ. ռամկ. ծխախոտութիւն: 1. Պետ. 4. 3:

Գինեմոլ. ի. իմ. եց. եաց: կամ ու. ոյ. ոք: || վատաթար սովորութիւն մոլեալ առ 'ի ըմպել զգինի: ռամկ. պէտով: Տիտ. 2. 3:

Գինեսէր. սիրի. ու. ոյ. ոք: || սիրող գինւոյ, կամ արբեցութեան. 1. Տիմ. 3. 8.

Գինեհեղ. հեղի. ու. ոյ. ոք: || երկիր, կամ տեղի, յորում բազում, և առատ գինի լինի: Խորէն. Ա. գլ. 29:

Գինեբեր. ի. ան. ոյ. ոք: || այն որ բնաւո բեալ է; զառատ գինի բերել. կամ յորմէ առատ գինի արտադրի. առի գինեբեր. որպիսիք են գինեհեղ այգիք. զի զառատ գինի տուող այգիքն: Խորէն. Ա. գլ. 15:

Գինեձան. ի. ու. ոյ. ոք: || արբեցող. կամ արբշիռ. կամ գինեմոլ:

Գինեվաճառ. ի. ու. ոյ. ոք: || վաճառող գինւոյ: ռամկ. գինեվաճառ:

Գինետուն. տան. տամբ. տանց. տամբք: || մառան, զի տեղի; կամ տուն՝ ուր պահի գինի:

Գինի. նւոյ. եան. եաց. եօք: || օշարակ խա ղողոյ ճմլեցելոյ, որ և ռամկ. առի գինի: Եւ մինչ առի Է գինի մատուցեր, և կամ 'ի գինւոջ էր. իմանի՝ պարապեալ էր յըմ_ պելն գինւոյ. և կամ ուտէր և ըմպէր: 3. Թագ. 20. 12. և 16:

Գինձ. գնձոյ. ով. ոց. ովք: || փոքրիկ սերմն կլորակ, և հոտաւէտ, որ է համեմ համեմի: ռամկ. քիշնիշ, զոր բաղձելով շաքարով պա_ տեն, և ուտեն: Ելից. 16. 14: Եւ մերթ նաև խոտն, կամ բոյսն այսորիկ սերմն, զի համեմն՝ առի գինձ: Ելից. 16. 31: և Թուոց. 11. 7:

Գինս. կամ գինք. գնոց. ան. ոց. ոք: || ոչ զոր 'ի յականջս գնեն կանայք. նաև մերթ ապք, և այս մինտանանց 'ի հնումն: Ծննդ. 24. 22: Դատ. 8. 24. և 26: Մերթ և զը նեն 'ի քիթն. և ըստ այսմ է. Առակ. 11. 22: և Եզեկ. 16. 12: Իսկ Ծննդ. 38. 18. և 25. եղեալ լինի փոխարինակ մատանեկան. օղի, որ դնի 'ի բազուկսն. և կամ փոխանակ մատնեկի, որ դնի 'ի պարանոցն:

Գիշադէշ. (մակբայ:) || անս զԳիշադէշն: Մծբն. ժԹ:

Գիշախանձ. ի. իմ. եց. եաց: || գիշակեր. կամ շաղղակեր. կամ որ սովորեալ և մոլեալ է ուտել զդէշ. որպիսիք են մակեր գազանք:

Գիշակեր. ի. ու. ոյ. ոք: || զդէշ, զի զմիս մեռելոյ ուտող: ռամկ. լէշ ուտող:

Գիշամուխ. (նախադրեն հոլովի.) || այն՝ որ մտի, կամ յարձակի 'ի մի գիշեր առ 'ի տա_ նել. և կամ գիշակեր:

Գիշատեմ. եցի. եա. ել: (նորադարձ.) ||

ապատառակել. կամ ծամանել զմարմինն կեն դանւոյ, և այնու սպանանել: Նաւէն. ժԷ:

Գիշատեսակ. ի. ու. ոյ. ոք: || զազրատե_ սակ. կամ զազրատեսիլ: կամ դարշելի եր րև զդէշ:

Գիշեր. ի. ու. ոյ. ոք: կամ ոյ. ով: || այն մասն աւուր, յորում արեգակն մնալով 'ի ներքոյ կիսագնտին մերոյ, և պակասի լոյսն արեգական 'ի մէնջ: Իսկ մերթ նը շանակէ զի և իցէ մութ և խաւար: մերթ և գիշեր առի՝ ժամանակն այն, յորում ոչ կարէ գործել բարի. զի յետ մահուն: Յով. 9. 4: Եւ բառս գիշեր՝ առուգաբանի 'ի մեզ, գէշ Եր. մի զի պակասի 'ի նմա լոյսն առնելեան, որ է բարի:

Գիշերադնաց. ի. իմ. եց. եաց: || 'ի գիշերի գնացօղ. կամ գիշերային յուղի անկանօղ:

Գիշերախառն. (մակբայ ժամանակական.) || ռամկօրէն, յմնջաղան. կամ լոյսոյ դէմ. կամ գիշերով: 2. Մակ. 12. 9: և 3. Մակ. 5. 10:

Գիշերական. ի. ու. ոյ. ոք: || գիշերային. կամ որ 'ի գիշերի լինի: Յոբ. 4. 13:

Գիշերակերպ. ի. իմ. եց. եաց: || գիշերա_ նման. որով իմանի՝ խաւարային. կամ մը թային: Կիւրղ. Եղեկ. Ը:

Գիշերահաւ. ու. ու. ոց. ուք: || հաւ, կամ թռչուն փոքրիկ, որ 'ի գիշերի թռչի. որ և առի չղջիկն. ռամկօրէն. կէճեղուշի:

Գիշերահաւասար. ի. իմ. եց. եաց: || է շըր ջանակ ինչ որ մտածի յաստեղաբաշխից դերեւոք երկնից, որ և անուանի հասա_ րակած. և ձևէ զբոլոր գունտն երկնից յերկուս հաւասար մասունս՝ և ինքն հա_ ւասարապէս տարակայի յերկուց բևեռաց երկնից. Արդ՝ առի սա գիշերահաւասար, զի մինչ արեգակն հասանէ 'ի շրջանակս յայս՝ տիւ և գիշեր հաւասար լինին. որ հանդիպի 'ի 21. մարտի. և 'ի 22. սեպ_ տեմբերի:

Գիշերամարտ. ի. իմ. եց. եաց: || 'ի գիշերի մարտնչօղ. կամ 'ի գիշերի Է ումեք մաքա_ ռօղ: Նարեկ. ԿԹ:

Գիշերայն: (մակբայ որակական.) || գիշե_ րով. կամ 'ի գիշերի: Ելից. 12. 30:

Գիշերանամ. ացայ. ցեր. անալ: (Է մի Չ.) || գիշեր լինել. կամ խաւարանալ. կամ մթանալ:

Գիշերապահ. ի. իմ. կամ ու. ոյ. ոք: || պահա պան գիշերոյ. զի նա՝ որ պահէ զինքն 'ի գիշերի: 3. Մակ. 5. 2. և 2. Մակ. 13. 15. ուր առի. կոստ քեր զգիշերապահ գունդապահն. զի, զգիշե րապահսն պահապանութ զգօն բանակին: Դիմել՝ գիշերապահ կոչի այն, որ լինի 'ի գիշերային պահպանութ. և Է այսմ առի գիշերապահ զգուշութ. կամ պահ: 3. Մակ. 5. 3:

Գիշերավար. ի. ու. ոյ. ոք: || է մին 'ի յօթանց մոլորականաց աստեղաց, որ կո չի արուսեակ. և այլով անուամբ՝ լուսա բեր. զի ունի զկերպն ծագմանն. քանզի երբեմն երևի յարևելս՝ յառաջ քան զծա գել արեգական. և ըստ այսմ կոչի լու_ սաբեր: Իսկ երբեմն երևի յարևմը_

տեան կողմն, ընդ երեկոյս՝ զկնի մտանելոյ արեգական. և ըստ այսմ անուանի գիշերավար. ելեր՝ զի վարէ, և ածէ զգիշերն. Յոբ. 9. 9: և 38. 32: Եւ այս բառ գիշերավար՝ մերթ նմանութբ առեալ, առի զատագայելէն. ոչ եւարուսեակն: Նարեկ. ըէ:

Գիշերավարժ. ի. իէ. ից. իւք: || 'ի գիշերի վարժօղ. այսինքն 'ի գիշերի առնօղ զգործ ինչ. և կմ 'ի գիշերի պարապօղ 'ի գործ ինչ, և 'ի կրթութի: Իսկ մինչ ասի՝ գիշերավարժ ջանիլ. կմ գիշերավարժ ջանութի. իմանի, 'ի գիշերի գործելով ջանիլն:

Գիշերի. (մակբայ ժամանակական.) || գիշերայն, այսինքն գիշերով. կմ 'ի գիշերի: Ծննդ. 19. 5: և Յօհ. 3. 2:

Գիշերուոյն. կամ գիշերոյն. (մակբայ ժամանակական.) || գիշերայն. այսինքն, գիշերով. 4. Թագ. 8. 21:

Գիջաթոր. ի. իէ. ից. իւք: || այն՝ յորմէ թօրի միշտ գիջութի, և խոնաւութի. և ըստ այսմ ասի գիջաթոր աչք:

Գիջին. գիջնոյ. ով. ոց. ովք: || տես զԳիճին:

Գիջութի. թեան: || տես զԳիճութի:

Գիսախուիւ. խուէոյ. ով. ոց. ովք: || խըուիւն ըստ որում է արմատ խուէելոյն, նշանակէ զաղտեղին, կամ զապականածն. և կամ զշփոթեալն և զխառնափնդորն: Ուստի գիսախուիւն՝ նշանակէ զունօղն ըզգէսս աղտեղիս, և ընդ միմեանս անցանելով խառնափնդոր եղեալս, և վայրենացեալս. և կմ նշանակէ զաղտեղի, և զխառնափնդոր հերս: Նարեկ. ժը:

Գիսակ. ի. աւ. աց. օք: || մազ երկայնացուցեալ և հիւսեցեալ. կամ ճերմակ հիւսեցեալ 'ի բազում ճիւղս: Դատ. 16. 19:

Գիսաւոր. ի. աւ. աց. օք: || վարսաւոր. կմ որ ունի զմազ երկայնացուցեալ. որպիսիք են կանայք: 1. Կորնթ. 11. 14: Եւ մինչ ասի՝ գիսաւոր աստղ, իմանի գոլորշի ինչ. որ վերացեալ յերկրէ, մերձենայ հրոյ կամարին՝ և վառեցեալ բորբոքի. և երևի իբրև զաստղ. և տևեալ առ ժամանակ ինչ՝ դադարի 'ի գոլոյ: և ասի գիսաւոր, վն զի 'ի միոյ կուսէ արձակէ զլուսեղէն ճաճանչս իբրև զքաշս և զհերս: ռամկօրէն կոչի պոչով աստղ:

Գիտակ. ի. աւ. աց. օք: || գիտօղ. կմ ճանաչօղ, և տեղեակ. Գործ. 26. 3: 2. Պետր. 1. 12:

Գիտակակից. կակցի. աւ. աց. օք: || գիտացակից. այսինքն, ընկեր 'ի գիտութե և 'ի տեղեկութե ընդ ումեք, որպիսիքեն երկուանձինքն՝ որք զնոյն իրն գիտեն:

Գիտակցիմ. ցեցայ. եաց. իլ: (Հայնակր.) || հաղորդիլ 'ի գիտութե ը ումեք. կամ զնոյն իրն գիտել ընդ ումեք:

Գիտակցութի. թեան: || խղճմտանք. կամ ստգտանք. կամ գիտակութի որով ոք գիտէ զանձնէ իւրմէ արարեալ զիր ինչ. կմ հաւանեալ իմիք, զոր ոչ էր պարտ առնել, կմ հաւանիլ: Լամբր.:

Գիտահարց. ի. իէ. ից. իւք: || զգէստ, և զգեստուկս հարցանօղ՝ վն ապագայից գիտա-

ուէածոց: Մծբն. ժը:

Գիտացուցանեմ. ցուցի. ցո՛. ցուցանել: (անցող.) || ծանուցանել. կմ տեղեկացուցանել. կամ իմացուցանել: Ոսկէ. 1. կոր. ժթ:

Գիտելի. լւոյ. եաւ. եաց. եօք: || որ կարէ ճանաչիլ. և իմանիլ. կամ որ պարտի գիտիլ:

Գիտեմ. գիտացի. եա՛. ել: (Նեղդորդ.) || մերթ իմանի՝ զիր ինչ ճանաչել 'ի ձեռն պատճառաց. կամ իսկապէս իմանալ: Իսկ երբեմն մինչ ասի՝ գիտել զկին, կմ զայր, իմանի՝ մարմնաւորապէս զուգիլն: Մատթ. 1. 25: Ղուկ. 1. 34: 3. Թագ. 1. 4: Իսկ Ծննդ. 19. 5. ուր ասի, գիտասցուք զնս, իմանի՝ չար ցանկութբ վարեսցուք ընդ նս: ըստ այսմ է և Դատ. 19. 22: Իսկ մինչ ասի՝ գիտեն գիրք վն անշնչից այսպէս առել, նըշանակի՝ առնորք են: Ոսկէ. 1. կոր. իե:

Գիտնական. ի. աւ. աց. օք: || գիտօղ. կմ գիտնաւոր. կամ գիտուն. և կմ որ ունի զգիտութի:

Գիտնաւոր. ի. աւ. աց. օք: || գիտուն. կմ գիտնական. կմ ունօղ զգիտութե. կամ տեղեակ գրոց. կամ իմաստուն:

Գիտուն. գիտնոյ. ով. ոց. ովք: || որ 'ի ձեռն պարագայից և պատճառաց գիտէ զիրս. կմ իմաստուն. կմ տեղեակ գիտութեց: Եւ բառս այս գիտուն, ստուգաբանի ունօղ գիտութե: Իսկ 1. Եզր. 2. 18. ուր ասի, գիտուն լիցի. իմանի գիտութի լիցի. կմ գիտելի լիցի. այսինքն յայտ լիցի:

Գիտութի. թեան: || է ճանաչումն իրաց 'ի ձեռն պատճառաց: Մերթ եւս իմաստութի. կմ ծանօթութե: Փիլիպ. 1. 9: Իսկ 2. Եզր. 4. 13. և 5. 8. յորս ասի գիտութի լիցի. իմանի՝ յայտ լիցի:

Գիր. գրոյ. ով. գիրք. գրոց. ովք. կմ գըրեանք. եանց. եամբք: || մատեան, կամ գրուած ինչ, յորում լինին ճառք, և վիպասանութիւք զխրաց եղելոց. և կմ յորում են գրեցեալ բանք բազմազանք. կմ ընձեռուած զիրէ իմիքէ 'ի բազում գլուխս բաժանեալ: Եւ ըստ այսմ մանաւանդ սուրբ յօդնականն 'ի գործ ածի: Ծննդ. 2. 4: Մատթ. 1. 1: Եւ մերթ երևելի, և գլխաւոր մասունք միոյ մատենի կոչին գիրք: Մերթ եւս գիտութիւն, կամ բանքն իմաստութե, որք գտանին 'ի գրուածս, ասին գիրք. ուստի մինչ ասի ոք գրոց տեղեակ, կմ աշակերտ, իմանի՝ իմաստից և գիտութեց գրուածոց տեղեակ, կմ աշակերտ: Մերթ եւս նշանակէ զմեծաշունչ գիրն. ը այսմ 1. Պետր. 2. 6. ուր ասի. կայ իսկ 'ի գրի. այսինքն 'ի յամենաշունչ գիրն: ըստ այսմ է և Յօհ. 7. 42: Եւ մերթ 'ի յեզականն նըշանակէ զքարտէզն. կմ զթուղթն զոր գըրեն մարդիկ վն առաքելոյ յայլուր. կամ վն այլ ինչ իրաց: Եւ երբեմն նշանակէ զգիծս որք են նշանք տառից. որպիսիքեն, ա. բ. և այլն: Եւ Եսայ. 25. 7. ուր ասի, ակամբ գրոյ. իմանիլն ակաւնք. 'ի վն որոց

Digitized by Google

կարեն քանդակել, և փորագրել նշանա_գիծք տառից ։ Երբ միայն ասի՝ Է գրով տա_կանել, խմանի գրել ։

Գիրանամ. ացայ. ցիր. նալ ։ (ընդ.միջ.) ‖ գիր լինել. կամ պատմիծիմանալ ։ տամկ՝ գիրնալ ։ 2. Օրին. 32. 15 ։

Գիրապարար. ի. իւ. եց. իւք ։ կմ ալ. օք ։ ‖ գէր, և պարարտ ։ Երբ միայն գիծող ասի, նշանակէ արգաւանդն, կմ պարարտն, և բերրին ։ Դոդէ. գՂ ։

Գիրգ. գրգի. աւ. աց. օք ։ ‖ պարարտ. կմ փափուկ. կմ կակուղ. կմ փափկակեաց. կմ փափկասէր ։ տամկ՝ նազլի ։ 2. Օրին. 28. 54 ։ և 1. Տիմ. 5. 6 ։

Գիրկ. գրկի. աւ. աց. օք ։ ‖ տարածեալ բազուկք առ՝ի գրկել զոք. կմ առ՝ի ընդունել զիմն յիւրքն ։ Սաղմ. 128. 7 ։ և Ղուկ. 2. 28 ։ Երբ մերթ նշանակէ չափն. որ է ըստ երկայնութեան հասակի հասարակ մարդոյ. կամ ըստ երկայնութեան ուղղակի տարածելոց բազկաց 'ի ծայրէն միջամատին միոյ ձեռինն՝ մինչև 'ի ծայր միջամատին միւսոյ ձեռինն ։ տամկ. ղուլաճ ։ և ըԲ. այսմ է Գործոց. 27. 28 ։ Իսկ միայն ասի՝ ընդ գիրկս մտանել, խմանի սաստիկ քարշել զայլերն. զի որ սաստիկ լարէ զայլերն, գրեթէ ինքն 'ի գիրկս նոցա մտանէ. տ 'ի մէջ բազկացն ։ 4. Թագ. 9. 24 ։ և Ովսէ. 2. 4 ։

Գիրկ ընդ խառնել ։ ‖ ոչ հաղորդ, այլ Է բայի շարակցի այսպէս. գիրկ ընդ խառն լինել. և նշանակէ գիրկս արկանելով փարել ։

Գիրկ ընդ աղեղն ։ ‖ ոչ հաւաքեալ, այլ ընդ բայի շինեցեալ այսպէս՝ գիրկ Է աղեղն լինել. և նշանակէ՝ Է գիրկս մտանել աղեղանց. որով խմացեալ լինի սաստիկ քարշելն զաղեղն, առ 'ի ուժգին հարկանել զնետակայն. ուր աւանեն քաջ աղեղնաւորք ։

Գիր կանգնել ։ ‖ նշան արձանեալ սեաւ 'ի վր միրաթոյ՝ ծածկանելով տաղաւար, կմ այլով իւիք գործեաւ. զորմէ անցեալ 'ի բայն կը աւել. տամկ. նիշան. կմ հաճի. Ղևտ. 19. 28 ։

Գիրկս արկանել. արկի. արկ. ալ ։ (ընդ.) ‖ փարել. կմ գրկել. Ծննդ. 33. 4 ։ մերթ և նշանակէ ըղձել, և սիրով զեր ինչ յինքն ընդունել. կմ փարել անձնջամբ զերով իւիք ։ Փիլ. 3. 5 ։

Գիրութիւն. թեան ։ ‖ պարարտութիւն. և կմ գէր լինելն ։

Գիրք. գրոց. ովք. (անեզական.) ‖ տե՛ս զԳիր ։

Գիւղ. կմ գեօղ. գեղջ. գիւղիւ. եց. զք ։ ‖ մերթ խմանի շէն, յորում գան տունք. և բնակիչն գիւղականք՝ որք գործեն զեր_կիր ։ Մատ. 10. 11 ։ Երբ մերթ ագարակ. և կմ անդաստան. տ արտ ։ Գործ. 1. 18 ։ և 4. 34 ։

Գիւղական. ի. աւ. աց. օք ։ ‖ գեղացի. կմ գեղէհկ. կմ գեղջուկ ։

Գիւղաքաղաք. ի. աւ. աց. օք ։ ‖ մեծ գիւղ նման փոքրիկ քաղաքի ։ տամկ. խասապայ ։ Մարկ. 1. 38 ։

Գիւղօրէք. րէից. իւք ։ (անեզական.) ‖ բազում գիւղք ։

Գիւտ. ի. իւ. եց. իւք ։ ‖ գտուած ։ Երեմ. 38. 2 ։ և 39. 18 ։ Իսկ մերթ՝ հնարք. կմ հնարումն ։ Մերթ և չարահնարութիւն ։ տամկ. Ֆէնդ ։ Սիրաք. 40. 2 ։ և 4. Եզր. 6. 5 ։

ԳԼ

Գլան. ի. ու. աց. օք ։ ‖ փոքրիկ սիւն. կմ սիւնաձև գործի, որ գլորի և թաւա_լի, որպիսի է լող քարին 'ի վերայ տանեաց. որով լողեն զտանիս ։

Գլանամ. ացայ. ցիր. անալ ։ (ընդ.միջ.) ‖ բթանալ. կմ 'ի սրութենէ պակասել, որ ա_սի զգայանակէ, զմտաց ։ և զայլոց նմանեաց ։

Գլեմ. եցի. եա. ել ։ (ներգործ.) ‖ գլո_րել. կմ թաւալել. կմ հոլովել. կմ մղե_լով և դարձուցանելով յառաջ տանել ըղ ծանր իրն ։ Առակ. 26. 27 ։ Խորէն. Գ. գլ. 45 ։

Գլխագար. ի. իւ. եց. իւք ։ ‖ ունօղ զցաւ գլխոյ. կմ որոյ գլուխն է ախտացեալ ։ Իսկ մերթ նշանակէ զխելացնորն. և կամ ըղ խելագարն ։

Գլխագարութիւն. թեան ։ ‖ ցաւագարութիւն. կմ ախտ գլխոյ. կմ գլխացաւութիւն ։ Ոսկէ. 1. հաւ. իա ։ Իսկ մերթ նշանակէ զխելագարութիւն. կամ զխելացնորութիւն ։ Ոս_կէ. 1. հաւ. Դ ։

Գլխագիր. գրի. աւ. աց. օք ։ ‖ տանդլուխ գիր, որ 'ի սկզբունս տանց գրեանց դնի ։

Գլխադիր. դրի. աւ. աց. օք ։ ‖ գլխարկ. տ դաակ. որ դնի 'ի գլուխն. կմ արկանի ըղ գլխովն, որպիսի է լաչակն կանանց, զոր ըղ գլխով արկանեն ։ Եզեկ. 13. 18 ։ Մերթ և սնարքն. կմ բարձն՝ ուր դնի գլուխ, տ գլխադիր ։

Գլխադրութիւն. թեան ։ ‖ գլխաւորականութիւն բանից. կամ սահմանադրութիւն ։ Լամբրոն ։

Գլխակարգեմ. եցի. եա. ել ։ (ներգործ.) ‖ կարգաւորել զգլուխս գրոց. և կամ 'ի կարգի դնել զբանս գրուածոց. կամ կար_գադրել. և կմ սահմանադրել ։ Լամբրոն ։

Գլխակարգութիւն. թեան ։ ‖ սահմանադրու_թիւն. և կամ կարգադրութիւն բանից և գլը_խոց գրուածոց ։

Գլխակոր. ի. իւ. եց. իւք ։ ‖ այն՝ որ վասն երկիւղ պակասութեան իւրոյ տանի թեքեալ զգլուխն 'ի վայր. և զի ամօթալից ոչ հայի 'ի վեր ։

Գլխակորեալ. եալ. ոյ. ով. ովք ։ ‖ գլխի_կոր եղեալ. կմ զգլուխն 'ի վայր կորացու_ցեալ ։ Ոսկէ. 7. հաւ. Ժդ ։

Գլխահար. ի. աւ. աց. օք ։ ‖ զգլուխն ու_րուք հարկանօղ ։ Երբ մերթ բանաւոր՝ օրն. կամ իշխանն, որ անողորմաբար սպանեալ տառապեալսն իւրոց. ընդ լծով նուաճէ, և ընկճէ, ասի՝ գլխահար ։ Ոսկէ. 1. հաւ. Ի ։

Գլխահարկ. ի. իւ. աց. օք ։ ‖ հարկ թագա_ւորական, զոր տայ իւրաքանչիւրոք ըԲ գլը_խոյ իւրոյ. տ մէջ անձին. տամկ. խարաճ ։

Գլխանոց. ի. աւ. աց. օք ։ ‖ գլխարկ. կամ փակեղ. կմ դաակ. կմ սաղաւարտ. և այլք նմանք, որք դնին 'ի գլուխն ։ Խորէն. Ա. գլ. 10 ։

Digitized by Google

Գլխաշուք. շքի. իէ. ից. իւք: || ծածկոյթն՝ որով կանայք ծածկէին, և շուքգնէին գլխոյ իւրեանց, որպիսի է ղիւրուկն. կմ՝ լաչակն: Նարէկ. լԷ:

Գլխապատ. ի. իէ. ից. իւք: կամ ոյ. օք: || այն ինչ, որ պատէ զգլուխն մարդոյ՝ ասի գլխապատ. և այսու իմանի՝ խոյրն, կամ թագն. կմ՝ գլխարկն. կամ սաղաւարտն. կամ [illegible]. և այլն:

Գլխապարտ. ի. ուէ. ոյ. օք: || պարտաւոր, կմ՝ արժանի՝ հատման գլխոյ: Դանի. 1. 10:

Գլխատ. ի. իէ. ից. իւք: || գլխատեցեալ. կմ՝ որոյ գլուխն հատեալ, և պակասեալ է:

Գլխատեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || անգլուխ առնել. այսինքն զգլուխն կտրել: Մարկ. 6. 27:

Գլխարկ. ի. աւ. աց. օք: || ծածկոց գլխոյ. կամ ո՛և իցէ իր, որ դնի 'ի գլուխն առ 'ի պահպանել 'ի տապոյ, և 'ի ցրտոյ: Սիր. 34. 19:

Գլխարկեալ. ելոյ. ովլ. ոց. ովք: || զգլուխն 'ի վայր արկեալ. կամ գլխիկոր եղեալ: Եսթէր. 6. 12:

Գլխաւոր. ի. աւ. աց. օք: || Նա՝ որ երևելի է 'ի մէջ մարդկանց, և նախապետական ոք, կմ՝ իշխող: 2. Թագ. 4. 2: և Ղուկ. 19. 47: Նմանապէս և այլք իրք մեծամեծք, և նշանաւորք, երևելիք, և բարձրաբերձք, ասին գլխաւորք. որպիսիք են լերինք, քաղաքք, կենդանիք, և այլք նմանք: Ա[illegible]. 8. 2: Նարէկ. ղԹ:

Գլխաւորեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || կատարել. կմ՝ 'ի գլուխ հանել զսկսեալ իրն. կմ՝ աւարտել. կմ՝ լրացուցանել: Նարէկ. խԶ. հԶ: Մերթ ևս նշանակէ գլխակարգել. կմ՝ գլխադրելով կարգաւորել զբանն: Իսկ մերթ նշանակէ բովանդակել զբազում բանս, և 'ի մի գլուխ հաւաքել: Նարէկ. ղԹ:

Գլխաւորութիւն. թեան: || Նախապետականութիւն. կմ՝ առաջին լինել 'ի մէջ այլոց. կմ՝ իշխանութիւն. կամ իշխան լինել. 1. Մնաց. 26. 10:

Գլխափոխան. ի. աւ. աց. օք: || փոխանորդ գլխոյ. այսինքն փոխանորդ անձին մեծի ուրուք կացուցեալ. և կամ գլխաւորի փոխանորդ: Որպիսի է դեսպանն. կամ նուիրակն, և այլք նմանք:

Գլխեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || գըլխաւորել. կմ՝ 'ի գլուխ հանել. կմ՝ բովանդակել. կմ՝ կատարել: Լամբրոն: Իսկ 'ի գիրս Սոփ. 2. հատ. 'ի Ճառն. ԽԹ. ուր ասի. 'ի նոյն առ բանն գլխէ վերստին. իմանի՝ դառնալ վերստին:

Գլխիվայր. (Նախդրիւ հոլովի.) || մինչ կախի ոք յոտից, և գլուխն լինի դէպ 'ի վայր, ասի գլխիվայր: Մերթ ևս մինչ ասի՝ լիցի գլխիվայր; իմանի՝ կործանեալ լիցի: Ընդ այսմ ասի և զայլոց իրաց, որոց վերին ծայրն 'ի վայր, և ստորինն 'ի վեր լինի դարձուցեալ: Նարէկ. 'Ի մեկնութ. Երգոց:

Գլխովին. (Մակբայ որակական.) || ընդ ամի. կմ՝ կատարելապէս՝ և անթերի. կմ՝ բոլորովին. կմ՝ ողջոյն. կմ՝ ամբողջ: Հռոմ. 16. 2:

2. Մակ. 2. 13:

Գլորեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || թաւալեցուցանել. կմ՝ հոլովել. որպէս յորժամ զքար ինչ, կմ՝ զփայտ գլորէ ոք առ 'ի տանել ուրեք:

Գլորիմ. եցայ. եաց. իլ: (Ձայնակր.) || սահելով անկանել. կմ՝ գթելով կործանել: Սաղմ. 117. 13: Փ[illegible]. 4. 10:

Գլուխ. գլխոյ. ով. ոց. ովք: || մերթ իմանի գլուխն կենդանեաց, յորում փայլեն զգայութիւնք: Մերթ ևս նմանութեամբ ասի զայլոց իրաց, և ըստ պէսպէսութեան նոցին ունի զպէսպէս նշանակութիւնս. զի մերթ ասի զմայր դրամոց, որով նշանակի ամբողջ գումարն դրամոյ՝ որ դնի ուրեք առ 'ի պտղաւորել. և որքան առ այս՝ ասի Ղևտ. 6. 5. տուժեսցի զգլուխն. այսինքն զամբողջ դրամն, զորմէ երդուեալ սուտ: Եւ Գործ. 22. 28. ուր ասի. ես բազում գլխոց զքաղաքացութիւնս զայս ստացայ, իմանի այսպէս. 'ի ձեռն բազմաց գլխոց. այսինքն բազմաց գումարից դրամոց ստացայ զքաղաքացութիւն. այսինքն, զգոլն քաղաքացի, այս է, հռոմայեցի: Իսկ երբեմն ասի զգետոց. և նշանակի սկիզբն, կամ ակնն, և կմ՝ բովանդակութիւն բանին: Սաղմ. 39. 8: Եւ մերթ ասի զբանէ, զամսոյ, զանկեանց, զճանապարհէ, և զայլոց նմանեաց. և նշանակէ զսկիզբն: 3. Մակ. 7. 9: Սաղմ. 8. 4: և Եզեկ. 16. 25: Իսկ երբեմն ասի զլերանց, և զպարսպաց, և զնմանեաց սոցին. և նշանակէ զկատարն, կամ զգագաթն, կմ՝ զվերին ծայրն: Ելից. 17. 9: և Ա[illegible]. 1. 21: Եւ ըստ այսմ նաև եզրն, և վերին ծայրն կողմանց իրին՝ գլուխ ասի: Եսայ. 37. 8: Դարձեալ. բառս՝ գլուխ, նշանակէ ևս զբովանդակութիւն զգումարն բանից, կմ՝ զվերջին գլխաւոր [illegible] վախճան բանին, կմ՝ ասացուածոց: Եբր. 8. 1: և 1. Պետ. 3. 8: Իսկ մերթ նշանակէ զառաջակայն, կամ զիշխանն, կամ զառաջնորդն: Սաղմ. 17. 44: և 1. Մակ. 14. 47: Մերթ ևս դնի փոխանակ անձին, կամ իւրաքանչիւր մարդոյ: ըստ այնմ. Թուոց. 3. 47: Առցես հինգ սիկղ ըստ գլխոյ. այսինքն. ըստ իւրաքանչիւր մարդոյ, կամ անձին: ըստ այսմ է և Թուոց. 1. 2: և Ելից. 16. 16: Իսկ 4. Թագ. 2. 3. ուր ասի. առնու տէր զտէրդ 'ի գլխոյ քումմէ. իմանի 'ի քէն. կմ՝ զտէրդ որ վերակացու քո է, առնու 'ի քէն: Մերթ ևս նշանակէ, զողջոյնն, կամ զամբողջն, կմ՝ զբոլորն, ըստ այնմ. 2. Մակ. 2. 12. առնէր զայն ութ օրն 'ի գլուխ, այսինքն. զութ օրն ամբողջ:

'Ի Գլուխ ելանեմ. ելի. ել. ելանել: || սա յորժամ վարի իբրև զ[illegible] բայ, նշանակէ՝ աւարտել. կամ կատարել. և կմ՝ վերջանալ: Լամբրոն: Իսկ յորժամ վարի որպէս զ[illegible] բայ, նշանակէ, 'ի գլուխ հանել, այսինքն, կատարել, կամ լրացուցանել. կմ՝ վերջացուցանել: Ռ. 2. հատ. Է:

'ի Գլխովին համեմ. համեր. համ. ենել. (Ներգործ.) || համարել. կամ վերջացուցանել. կամ ամփոփել։ 3. Մագ. 5. 15. և Ղևտ. 6. 12։

Գլուխ ատամ. եառ. աւուր. աղբ։ || եղերել. կամ յառաջտ համառօտել. կամ վերջացուցանել. կամ համառօտել. և ըստ այսմ ասէ 'ի գլուխ տանել զգործոյն։ Սիրէ. 1. երգ. ծէ։

'ի գլխովին ամփոփել. ամբողջ. ամէն. ամփոփել։ || վերջացուցանել. կամ յառաջտ համառօտել. կամ եղերել։ Եսայ. 13. 3։

Գ Խ

Գլխաւոր. իւ. աւ. աց. օք։ կամ իւ. եց. իւք։ || Է կամ միաբանութեան պատուով ինչ՝ նման այլոց 'ի ներքս յաւագ. զոր նախապատիւք 'ի գլխաւորն։ աւագ. ծերք։

Գ Ծ

Գծագրել. գրի. ու. աց. օք։ || գծագրել, որ գիծ քարշելով նկարեցաւ. կամ գրչաւ և գետով ձևացուցեալ։ Լամբրոն։ Իսկ միրթ նշանակէ զգիրս և զզ մասն այբուբենից։ և ըստ այսմ է անն զական։ Նարեկ. զէ։ Մերթ և նշանակէ զգրուածս և զգիրս։ և միրթ զգծագրողն։

Գծագրեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) || գիծ քարշել. կամ գծել։ Նարեկ. զա։ Իսկ միրթ նշանակէ զգիրս գրել։ Յոհաննէս։ Մերթ և նշանակէ նկարագրել. կամ գծելով նկարել. որպէս տանէն պատկերահանք։ Լամբրոն։ Իսկ երբեմն նշանակէ ձևացուցանել. կամ սահմանել։ Նարեկ. զէ։

Գծագրութիւն. թեան։ || գրուած, կամ գրուածս պատմութեանց, և նմանեաց։ Նարեկ. զէ։ Իսկ միրթ նշանակէ սահմանութիւն, կամ կերպարանութիւն. և կամ ձևակերպութիւն։ Նարեկ. կէ։ Եւ երբեմն նշանակէ զնկարագրութիւն պատկերաց, և նմանեաց։ Լամբրոն։ Գրագիտաւ. բառս՝ գծագրութիւն, նշանակէ զգիծս, և զգիրս այբուբենից։ Խորենացի. գ. գլ. 52։

Գծաւոր. ի. աւ. աց. օք։ || ունող զգիծ. կամ ունող զգիրս. կամ նկարեցեալ։

Գծաւորութիւն. թեան։ || գիծք երեսաց. կամ նկարագրութիւն և կերպ ձևոյ գրելոց։ միրթ և նշանակէ զգծումն. կամ զգծագրութիւն։

Գծեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) || միրթ խմանալ զգիծ ինչ քարշել։ և միրթ նշանակէ գրել զգիրս, կամ զնուրբեակս, և զայլս նմանս։ Նարեկ. գ։ Մերթ և խմանալ ներ ածել, կամ զնշանել ինչ տանել մշտ մահ. որ միջոց նմանն. կամ այլ ինչ նման նկարագրութեան 'ի կարգի նոյն ինչ, որ, 'ի վեր հանեն, և տանէ 'ի նմին գծերոյ զնշանն ինչ. ասէ գծերոյ նմանն 'ի վահանին։ Եւ միջոց այնպիսի վահանն էլէ, 'ի յոր նկատեցաւ զնշանն, ծանօթան տանէ, ասէ նմանն. ոչ գծէր 'ի նմա. որ, ոչ տանէր զնշան ինչ 'ի նմա։ ըստ այսմ ասէ և զգիծս, և զայ-

լոց նմանեաց, յորժամ մուրճն, և կամ այլազգ թի գիծ ինչ ոչ տանէ 'ի նմա։ Խորենա. գ. գլ. 82։ և Նարեկ. զէ։

Գծծութիւն. թեան։ || ծուլութիւն. կամ չքաւորութիւն. կամ անկարութիւն. կամ անաւարութիւն։

Գծուծ. գծծոյ. ով. ոց. ովք։ || ծուլամտ. կամ անհոգաստ. կամ անդամալոյծ. կամ անպարտ. կամ զարդիր. կամ փամանալի. կամ յուսի։ և այս ասի զհանգերձից, զպատմուճանից, զգիսնոց մազոյ. և զայլոց նմանեաց։ Նարեկ. է։ Սիրաք. 35. 10։

Գ Ձ

Գձուձ. ձձոյ. ով. ոց. ովք. || Խորենա. բ. գլ. 60։ Նոյն է ընդ վերինոյն։

Գ Ղ

Գղջեր. երի. իւ. երք. աց. օք։ || Է բառ. յու նականն. և թարգմանի ժառանգաւոր. և նշանակէ զեկեղեցականն. և կամ զուխտի մանկանց, որք սոխրահանցն։

Գ Ճ

Գճեցուցանեմ. եցուցի. ցն. ել։ (ան ցող.) || 'ի ծուխն խեղդեցուցանելով կորա ցուցանել զոք. կամ կծկեցուցանել։

Գճիմ. եցայ. եաց. իլ։ (Չեզոք.) || թեքել. կամ կորանալ. կամ կծկել։

Գճկեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) || թեքել. կամ կորացուցանել. կամ 'ի վայր խոնարհեցուցանել։ Սիրաք. 38. 33։

Գ Մ

Գմբեթ. կամ գմբէթ. եթի. իւ. աց. օք։ || կամարաձև. կամ կաթուղիկէ ձևով շինեցեալ ծածք տան. կամ եկեղեցւոյ. կամ ապարանից. և այլն։ Նարեկ. զէ։

Գմբեթայարկ. ի. իւ. եց. իւք։ || գմբեթիւ. կամ գմբեթաձև ձևով զարդարեցեալ. որպիսիք են պալատք, կամ եկեղեցիք։ և այլն։

Գմբեթաձև. (Նախադրիւ հոլովի.) || գըմբեթականաց. կամ գմբեթեայ ձևով շինեցեալ։

Գմբեթայարկ. ի. աւ. աց. օք։ || գմբեթեայ, կամ գմբեթաձև յարկ. կամ պալատ։ և կամ այլ ինչ։

Գմբեթաձև. չինի. աւ. աց. օք։ || տե՛ս ըզ Գմբեթաձև։

Գմբեթեայ. (Նախադրիւ հոլովի.) || գմբեթաձև. որպէս է տաճարն. որոյ առաստաղն է քարեայ՝ և գնտաձև 'ի վեր բարձրացեալ։ Ղեւտ. 1. 4։ Մերթ և տաճարն՝ որոյ առաստաղն է ոսկեզօծ և զարդարուն 'ի ձևոյ գմբեթաձև նկարեաց, ասի տաճար գըմբեթեայ.

Գ Ն

Գնաճառ. ի. իւ. ից. իւք։ || որ վաճառէ ըզ գինս խրաց։ ռամկ. գին. կտրօղ։

Գնահատեմ. եցի. եա. եալ։ (Ներգործ.) || զգին կարգել իրի իմիք։

Գնամ. ացի. ա. ալ։ (Չէզոք։) || քայլել. կամ երթալ. կմ̃ շրջել։ Իսկ Ղևտ. 11. 20. և 27. ուր ասէ՝ որ գնայցէ ՚ի չորս, իմանի այն, որ քայլիցէ չորս ոտիւք. որպիսիք են տմանք ՚ի կենդանեաց, և ՚ի թռչնոց. և ՚ի 27, համարն այսորիկ գլխոյ՝ ուր ասէ՝ որ գնայ ցէ ՚ի ձեռս, իմանի՝ որ գնայ ՚ի վր̃ ձեռաց, որոյ առաջին ոտքն է ոմ̃ զձեռս. որպի-սի է կապիկն։

Գնայուն. (Նախդրիւ հոլովի.) || գնացա-կան. կմ̃ գնացօղ. կմ̃ հոսանուտ. և կամ անցաւոր. ուստի առասցուածքն, կմ̃ իրչքն, որք ոչ մնան կայուն, այլ գան, և եր-թան, որպիսիք են դրամք. կամ վաճառք վաճառականաց, և այլք նման ք, ասին՝ գնայունք։ որոց ներհակքն. որպիսիք են տունք, կմ̃ ագարակք, և այեստ̃ կալուածք, և այլք նմանք, ասին կայունք։

Գնաց. ի. գնացք. ցից. իւք։ || առաս եղա-կանն հաղիւ երբեք ՚ի գործ ածի, և իբր ՚ի բազմաւո վարի իբրև անեզական։ մերթ նշա-նակէ ընթացք ոտից. կմ̃ գետոց. կմ̃ ջուրց։ Յեսու. 1. 3։ Սաղմ. 45. 5։ և մերթ տեղին՝ ուր լինի քայլել. կմ̃ տեղին ճեմելոյ, և զգնա լոյ. կամ ճեմարան։ Եզեկ. 42. 4. և 10։ Մերթ ևս ճանապարհ. զր̃ սօխակ՝ Է. որ գնան մարդիք։ 1. Մակ. 1. 58։ Եւ մերթ սովորութիւն. կմ̃ վարք. կմ̃ կենցաղավա-րութիւն, կմ̃ վարուամն։ Ղևտ. 18. 3։ 1. Տիմ. 4. 12։ և 1. Պետ. 3. 1։

Գնացական. ի. աւ. աց. օք։ || գնացօղ։ Մերթ և ս փոխառական. զր̃ փախչօղ. 1. Թագ. 25. 10։

Գնացուցանեմ. ցուցի. ցա. եալ։ (անցող.) || ընթացուցանել. կմ̃ ածել. զի գնայցէ ոք։ Երեմ. 43. 19։

Գնդածաղիկ. ղկի. իւ. կց. իւք։ || է ազգ մի բուսոյ, որ կոչի ՚բացմենեկ, և յոմանց պա պունիճ. և լինի մեծ և փոքր. որ ունի զծաղիկ. անուշահոտ. և դեղնագոյն. և ոմանք սպիտակագոյն, և է բնութր̃ ջերմ. և չոր. և ունի զպէսպէս օգտութիս ՚ի բժշկ կանութիւն.

Գնդաձև. ի. իւ. ից. իւք։ || գնտակաձև. կմ̃ բոլորակաձև. որպիսիք են երկինք։

Գնդապետ. ի. աւ. աց. օք։ || պետ գնդի զօրաց. կմ̃ զօրապետ։

Գնեմ եցի. եա. եալ։ (Ներգործ.) || տալ տմնք զդրամ, և կմ̃ զդրամարժէքն ինչ, և առնուլ ՚ի նմանէ զիր ինչ, որ ինքեան. պիտոյ է. որ և ռամկօրէն ասի՝ գնել։

Գնուածու. (Նախդրիւ հոլովի.) || արծա-թագին. զր̃ արծաթով գնեցեալ, որպի-սիք են գերիք։

Գնունիք. եաց. եօք։ || է տոհմ ինչ հայոց. յառաջացեալ ՚ի մատուռանէ վաղարշա-կայ արքային, որոյ անուանն էր գին. կամ գինի՝ ուստի և զարմն նր̃ անուանեցաւ գնունիք. որ ըստ ուղղականի՝ գինի ասի. Խորեն. Բ. գլ. 7։

Գնչաս. ի. իւ. ից. իւք։ || տես ՚ի ներքոյ ըզ գնչու բառն. զի նոյն է ընդ նմա։

Գնչու. չուի. աւ. աց. օք։ || Թշուառ, և թա-թռվ լեզուաւ, կմ̃ թիւր և եղծեալ ար տաքերութր̃ խօսօղ. կմ̃ կրճատելով և ծը ռելով զբառս և զձայնաւ ռս արտաբերօղ զբանս. որպիսիք են ծռալեզուք. կմ̃ ռա-միկ գիւղականք և բօշայք։

Գնտակ. կամ գնդակ. ի. աւ. աց. օք։ || գնդեղէն. զր̃ կլորակ. որպիսի է խնձորն. և այլք նմանք։ Եսայ. 25. 31։ և կամ ՚ի փայ տէ և յայլմէ նիւթոյ շինեցեալ գունդն՝ որով խաղան մանկունք։ Խորէն. Գ. գլ. 55։ Մերթ ևս նշանակէ գունտ խմորոյ, կմ̃ նմանւոյ զանգուածոյ։ Դատ. 14. 26։ այլ Ծննդ. 49. 11. բառիւս՝ գնտակ, իմանի գնտակաձեւան ոստն, որ լինի ՚ի վր̃ որթոյն. յորմէ ելանէ, և բողբոջի ճիւղ։

Գնօղ. նողի. աւ. աց. օք։ || զիր ինչ ստացօղ ՚ի ձեռն գնոյ։ Երեմ. 23. 3։

Գ Ո

Գող. ոյ. ով. ոց. ովք։ || մերթ նշանակէ զծոց մարդոյ։ և մերթ ծոցաւոր փեշն՝ որ լինի վերացուցմամբ առաջոյ հանդերձին՝ առ ՚ի ընդունել անդ զիր ինչ։ Յոբ. 31. 34։ Ղուկ. 6. 38։ Իսկ Ղուկ. 16. 22. ուր աս ի. տանիլ ՚ի գոգն աբրահամու. իմանի մերձ, կամ հուպ աբրահամու նստիլ ՚ի յփմբասն հարցն սբց, յորում էր և աբրա-համ։ Մերթ ևս նշանակէ զգիրկն, ՚ի յոր ընդունին մարք զմանկունս իւրեանց։ Թուոց. 11. 12։ և մերթ նմանութր̃ առնուլ նշանակէ զծոցն ծովու. ուր նաւքն մտ-անեն ապաստանիլն։ Գործ. 27. 39։ մերթ ևս խորշքն, կմ̃ խարափլուքն լերանց գոգ կոչին։ Իսկ մերթ, տաշտն նաւին. զր̃ բեգնեն, կոչի գոգ։ Նորէկ. իհ։ Իսկ Գու-ղտ. 2. 11. ուր ասի զի գոգ իբրև բա-ցատեալ իմն էր. իմանի զի գրեթէ, կամ զի համարեաթէ իբրև մեզադրելի իմն էր. և ըստ այսմ նշանակութե ոչ հոլովի. քանզի է ոմ̃ զհրամայական, որ ելանէ ՚ի բայէն գոգեմ, ոմ̃ և գրեթէն ՚ի բայէն գրեմ։

Գոգած. ի. աւ. ալ. ալ. աց. օք։ || ծոցաւորութե կմ̃ փորուած. կմ̃ ընդարձակութի և տա-րածութի միջոցի խորութե իրի ուրուք։ Եզեկ. 43. 13։

Գոգաւոր. ի. աւ. աց. օք։ || ծոցաւոր. կմ̃ խորշաւոր. որպիսիք են ոմանք շինուածք կմ̃ տեղիք։ Խորէն. Գ. գլ. 59։

Գոգեալ. եւոյ. ով. ոց. ովք։ || ամ̃ մինչ ե-լանէ ՚ի գոգեմ բայէն. որ ընդոծին իբրև զուեսանեմն. նշանակէ՝ առաջեալ. կամ փարկեալ։ Եւ մինչ ելանէ ՚ի միւս գո-գեմ բայէն՝ որ ընդոծին իբրև զմեկնն

նշանակէ՝ ծոցասորելով, և կամ գոգա_ձևեալ 'ի ձեռն զարդուցարմանս. քանզի մինչ չէին ներհանած սանք այդպիսիք, և կամ մե_ծամեծ անօթք խեցեղէնք, մերթ 'ի ներ_քուստ կուռէ շուրջանակի՝ գոգաձևէ գօ_տին. զի յարմարագէս կուռէ տառուցեալ այն զգօտի շրջապատեսցէ զկապմունսն՝ առ 'ի հաստատութեն. և մերթ միայն յարտա_քուստ կուռէ շուրջանակի տառուցմամբ իբ_րև գօտեւոր շրջապատելին՝ առկա հաստատուն է. Եւ 3. Թագ. 4. 7. 23. Ուր ասի զգաղձեան ծո_վուն. Եւ գոգաւորեալք. երեսուն և երկուք կանգնովք պատէին զնա շուրջանակի. իմա_նի այսպէս. և ձևացուցեալ գօտիքն՝ երե_սուն և երկուք կանգնով պատէին զնա շուր_ջանակի:

Գոգեմ. գոգցես. գոգ. կմ գոգջիր. գոգ_ցուք. և այլն: || առ ընդունել իբրև զան_սանեան, այս և երկիր. բայց միայն կատա_րեալն. պահպանէ. և նշանակէ՝ ածել. տր, տալ: 1. Մակ. 8. 31: Եսայ. 40. 6: Երեմ. 4. 5: Մերթ և նշանակէ՝ վարկել. կամ համարել:

Գոգեմ. եցի. եա. եալ: (Ներգործ.) || փո_սորակել. կմ ծոցասոր առնել: ռամկօր՝. ... առնել: Մերթ և նշանակէ՝ պա_րունակել. կմ պարփակել. կմ ժողովել. կմ 'ի դուռն իւր ամփոփել: Սիրաք. Ի. Ե:

Գոգցես. (մակբայ երկբայական.) || Եւա_նէ սա 'ի գոգեմ բայէն, որ նշանակէ, ածել, կմ համարել: Ուստի՝ գոգցեսն նշա_նակէ. համարեալ թէ. կմ գրեթէ. կամ իբրթէ: Խորէն. Ա. գլ. 11: և Բ. գլ. 28. և 39:

Գոդգոս. ի. իւ: (անյողդողական.) || է յա_տուկ անուն առն միոյ չարաբարոյի, որ գործեաց զմեծամեծ չարիս: և 'ի կիր առ_նանի 'ի վ(րա) ո և իցէ առն մոլեկանի և ան_գութ եղեռնագործի, առ 'ի ցուցանել զչափազանցութիւն նորին:

Գոդի. գեայ. եաւ. եաց. եօք: || զգաստ գո_գութն ունողն, որ է անբժշկելի բորո_տութիւն:

Գոդութիւն. Թեան: || ուրուկութիւն. որ է ան_բժշկելի բորոտութիւն. որ ռամկօրէն ասի ֆրէնկ ... . որ և այլով լեզուաւ կոչի նլէփանդական ախտ:

Գող. ի. իւ. իւ. իւք: || 'ի միջէ յառաջա_ցեալ թրացութիւն. և կամ մէզ. որ է ջեր_մաթն:

Գողացաւութիւն. Թեան: || ցաւ. կմ ցաւա_գարութիւն պատճառեցեալ 'ի յառաջադոյ_թէ ճանապարհի միզին. կմ է միզարգե_լութիւն:

Գոլ: || է աներևոյթն գոմ բային, և նշանա_կէ լինել: Մերթ և վարի իբրև զանուն, և հոլովի. գոլ. ոյ. ով. ոց. ովք. և նշա_նակէ զգոյութիւն: Մերթ և նշանակէ զգոյն. կմ զառայն:

Գոլախառն: (Նախդիրիւ հոլովի.) || տարա_խառն. կմ տարազացուցիչ. և կիզող.

Գոլորշացեալ. ի. աւ. աց. օք: || գոլորշա_կերպ. կմ հանգոյն գոլորշեաց:

Գոլորշիք. կմ գոլորշիք. եաց. եօք: (անեզա_կան.) || շոգի. կմ խոնաւութիւն լուծեալ 'ի ծուխ ջերմութեան հրոյ. կմ արեգական: ռամկօրէն պուղ: Մերթ և տապ հրոյ: Նարեկ. Կ:

Գոհ. (Նախդիրիւ հոլովի.) || գոհացօղ. կմ շնորհակալ. կմ շատացեալ. կմ հաճեալ. որոյ ներհակն է տրտունջօղն: Եւ այս 'ի գործ ածի ընդ բայի շաղակցելով այսպէս: գոհ լինել:

Գոհաբան. ի. իւ. իւ. իւք: || գոհացօղ բանիւ. կամ շնորհակալու. և կամ գո_վաբանող. կամ օրհնաբանող. Նարեկ. զա. և զէ:

Գոհաբանեմ. եցի. եա. եալ: (Ներգործ.) || գոհացօղ լինել. կամ շնորհակալ լինել. և կամ գովել բանիւք, և մեծացուցանել զոք: Նարեկ. 'ի Գովեստ Խաչին: Ն Լամբրոն:

Գոհաբանութիւն. Թեան: || շնորհակալութիւն. կմ գոհացողութիւն. և կմ բարեբանութիւն. կմ օրհնաբանութիւն:

Գոհանամ. ացայ. ցիր. նալ: (ընդմիջ.) || ընդունելով բարիս ճանաչելով շնորհակալ լինել տուողին: Սաղմ. 9. 2:

Գոհար. կմ գուհար. ի. աւ. աց. օք: || պատուական, կմ ազնիւ: Եւ այս մերթ ասի զմեծագին ականց. որ ռամկ. կոչի ճէվահիր: և Ա այսմ մինչ ասի՝ ամենագոհար ակն, իմանի ամենապատուական քար: Խորէն. 'ի յաշխարհագրութէ: Իսկ մերթ ասի զծաղկանց, և զայլոց նմանեաց. և ըստ այսմ ասի 'ի մեղեդիսն. գոհար վարդն վառ_եալ. Գ պատուական, կմ ազնիւ վարդն փայլփայլեալ: Իսկ մերթ նշանակէ զոր և իցէ ազնիւ և զպատուական իրս. և կամ ազգս իրաց. և ըստ այսմ ասի, գոհարք մարգարտաց. գոհարք ծաղկանց. գոհարք խնկոց. և կմ գոհարք հալուէից. և այլն: Խորէն. յաշխարհագրութէ:

Գոհարութիւն. Թեան: || պատուականութիւն, կմ ազնուութիւն ականց, կմ ծաղկանց, և կմ ազգի. և այլոց նմանեաց: Ուստի մինչ ասի՝ վատ գոհարութիւն զարմի, նշանակի վատազգութիւն. կամ անտոհմութիւն: Ոս_կէ. 2. հարցմ է:

Գոհութիւն. Թեան: || շնորհակալութիւն յաղագս բարեաց, զորս ընկալեալ է ոք:

Գոհունակ. ի. աւ. աց. օք: || գոհացօղ. կմ շնորհակալու:

Գոհունակիմ. եցայ. եաց. իլ: (ձայնակր.) || գոհացօղ լինել. կմ գոհանալ. և կմ շնորհակալ լինել:

Գող. ոյ. ով. ոց. ովք: || գաղտաբար առօղ զօտարական իրս ընդդէմ կամաց տն:

Գողակից. կցի. աւ. աց. օք: || ընկեր գողոց. կմ ճանապարհ ցուցանօղ. կմ խորհրդա_տու գողոց: ռամկ՝ շէրիք: Եսայ. 1. 23:

Գողամիտ. (Նախդիրիւ հոլովի.) || յօժա_րեալ. և հակեալ 'ի գողութիւն. կմ սիրօղ գողութեան: Նարեկ. ծղ:

Գողային. այնոյ. ով. յոց. ովք: || գողօնի. կմ գողանեցեալ: Ծննդ. 31. 39:

Digitized by Google

Գողանամ. ացայ. ցիր. ալ: (ներգործ.) || առնուլ զինչ օտարական գաղտ 'ի նմանէ: Իսկ Ծննդ. 31. 20. ուր ասի՝ գողացաւ յակոբ զսիրտ լաբանայ, է ոճ ինչ առանց եբրայեցւոյ, որք փոխանակ ասելոյ ինչ ետ զառիթ մնայ նր գիտել, ասեն գողացաւ զսիրտ նր: ըստ այսմ է և 'ի 26. համարն:

Գողանք. անաց. նօք: (անեզական.) || գողունիք. կմ գողանեցեալ իրք: Լամբրօն:

Գողեալ: (վարի իբրև զմակբայ.) || գաղտագողի. կմ գաղտուկ. ըստ այսմ, 'ի ճառ հարց. Ժ: Եւ գնայր գողեալ:

Գողուղի. ղւոյ. եաւ. եաց. եօք: || ծածուկ ճանապարհ. կմ գաղտ ճանապարհ, ընդ որ ոմն ոք ոչ գիտէ գնալ: 1. Մակ. 10. 82:

Գողուն. (նախդրիւ հոլովի.) || գողութեամբ ունեցեալ ինչ. կմ գողունի: Ծննդ. 30. 33:

Գողունի. նւոյ. եաւ. եաց. եօք: || գողութեամբ ունեցեալ. կմ գողանեցեալ: Տօբ. 2. 21:

Գողար. գողարեր. երբ. երց. երբք: կամ գողարի. իւ. ից. իւք: || քաղցր և կակուղ. կմ փափուկ. և թարմ: ռամկ. նազիկ:

Գողարական. ի. աւ. աց. օք: || փափկական. կմ կակղական. կմ քաղցրական: Նարէկ. խզ:

Գողարիկ. րիկի. աւ. աց. օք: || քաղցր և ազնիւ. կմ փափուկ և կակուղ:

Գողօն. ի. իւ. ից. իւք: || գողունի. կամ գողացեալ իրն: Ելից. 22. 4: Բայց Երեմ. 48. 27. նշանակէ զգողութիւն:

Գողօնի. ւոյ. եաւ. եաց. եօք: || գողանեցեալ իր. կմ գողունի ինչ: Ծննդ. 31. 39:

Գոճաղմ. ի. իւ. ից. օք: || է ակն ինչ պատուական դեղնագոյն նման բազմագունի ական. յն [illegible]. որ յունարէն կոչի՝ լիգուրիոն: Սա գոյանայ 'ի մէզէ լինքս առացեալ կենդանւոյ. յառաջագոյն է կակուղ, և յետոյ 'ի մէջ աւազոյ քարացեալ կարծրանայ. և ունի զզօրութիւն քարշելոյ յինքն զյարդս: Ելից. 28. 19: և 39. 12: և Եզեկ. 28. 13:

Գոլ. գոս. գոյ. եղէ. լեր. գոլ: || լինել. կմ եղանիլ. կմ կալ. ռամկ. ըլլալ. կմ կենալ: Ուստի Մատթ. 27. 10. ուր ասի՝ եթէ ոչ գուցեն, իմանի, եթէ ոչ կայցեն. և կմ իցեն: ըստ այսմ և Ղուկ. 7. 42. ուր ասի՝ ոչ գոյր, իմանի՝ ոչ կայր:

Գոմ. ի. իւ. ից. իւք: || փարախ. կմ ախոռ, և բնակարան, ուր պահին և դարմանին ոչխարք. կմ խաշինք. և կամ այլք անասունք: ռամկ. ախըռ: 2. Մնաց. 32. 28: Յովէլ. 2. 16: Սոփոն. 2. 6: Մերթ և նշանակէ զբնակարանն, որ լինի 'ի քարայրս, և յանձաւս, ուր ապաստանեալ բնակին մարդիկ. զի ապահով լիցին 'ի թշնամեաց: Դատ. 6. 2: 1. Թագ. 13. 6:

Գոմէշ. գոմիշոյ. ով. ոյ. ովք: || մեծ, և ուժեղ, և յաղթանդամ անասուն եղջերաւոր իբրև զեզն, որ լծեցեալ 'ի սայլն՝ տանի զմեծամեծ բեռինս, որ և ռամկ. ասի՝ գոմէշ: 2. Օրին. 14. 5:

Գոյ. ի. իւ. ից. իւք: || է. կմ էակ. կմ իր. կմ որ ունի զգոլ. և կմ որ գոյ: Հռօմ. 4. 17: իսկ մերթ նշանակէ զգոյութիւն. և ըստ այսմ առեալ առ Ած, որ 'ի չգոյէ 'ի գոյ ածեր զմեզ արարածս: Եւ այսպէս երբեմն 'ի յոգնականում, նշանակէ զինչս և զստացուածս: Սիրաք. 41. 1: Իսկ Մարկ. 12. 44. ուր ասի՝ եարկ գոյիւ չափ. իմանի՝ եարկ ըստ չափու ունեցածին. կամ եարկ զամ, որչափ գոյր. և կամ զորչափ ինչ ունէր: ըստ այսմ և 2. Կորն. 8. 11. ուր ասի՝ ըստ գոյին. իմանի՝ ըստ ունեցածին. կամ ըստ կեցածին:

Գոյակ. ի. աւ. աց. օք: || էակ. կամ որ ունի զգոլ. և կմ որ է գոյացեալ: Նարէկ. 'ի գովեստ խաչին:

Գոյական. ի. աւ. աց. օք: || էական. կամ գոյացական. և կմ այն՝ որ ոչ է ըստ պատահման: Եւ 'ի քերականաց 'ի կիր առնանի զայնց անուանց, որք զգոյացական իրս նշանակեն. և կամ 'ի բանի՝ և 'ի զրուցատրութեան ըստ ինքեանց կայանան. որպիսիք են այսոքիկ անուանք. մարդ. առիւծ. քար. և այլն:

Գոյակից. կցի. աւ. աց. օք: || կցորդ և հաղորդ 'ի գոյացութեան ընդ ումեք: Եւ այս ասի զաստուածոց, որք 'ի նոյն գոյացութեան հաղորդին իրերաց. բայց 'ի տեսակի զանազանին. և ըստ այսմ ասի 'ի Նարէկ. հէ: Մարմին նիւթական՝ քարի և հողոյ գոյակից: Իսկ մերթ նշանակէ զանստեղծ գոյակիցն. այսինքն զնա՝ որ գոյութեամբ ըստ ամի նոյն է ընդ այնմ, որում ասի գոյակից: և ըստ այսմ որդին այ, ասի գոյակից հօր, ոչ նմանութեամբ, այլ նոյնութեամբ:

Գոյանամ. ացայ. ցիր. անալ: (ընդմիջա.) || զգոյութիւն ստանալով բաղկանալ. կամ զգոլ ստանալ. կմ էանալ. կմ 'ի գոյ ելանել. կմ եղանիլ. կմ լինիլ: Խորէն. Բ. գլ. 86: և Նարէկ. խզ:

Գոյացուցանեմ. ցուցի. ցո. ել: (անցող.) || 'ի գոյ ածել. կմ տալ զգոլ և զգոյացութիւն. և կմ էացուցանել. կմ ստեղծանել: Իսկ մերթ առնել, կամ հնարել զեր ինչ: Նարէկ. իա:

Գոյապէս. (մակբայ որակական.) || գոյացաբար: Իսկ մերթ՝ գոյիւ չափ. կմ ըստ ամի. և կմ բոլորովին: Ոսկէ. 1. հատ. Ժա:

Գոյարան. ի. աւ. աց. օք: || գոյանալոյ տեղի: Իսկ մերթ նշանակէ՝ գոյացուցիչ. կմ էացուցիչ. կամ ստեղծօղ. և կամ հաստիչ: Նարէկ. ձգ:

Գոյացական. ի. աւ. աց. օք: || էութենական. կամ այն՝ որ վերաբերի առ գոյացութիւն, և էութիւն, որոյ ներհակն է պատահականն:

Գոյացողական. ի. աւ. աց. օք: || նոյն է ընդ վերնոյն:

Գոյացութիւն. թեան: || 'ի փիլիսոփայութեան, իմանի՝ էակն, այն՝ որ ըստ ինքեան ենթակայանայ. և ոչ յայլում յենու. և կամ այն՝ որ գոյ ենթ պատահմանց: Իսկ որ առաջոյ փիլիսոփայութեան, դնի եւ փոխանակ գոյակի. կամ գոյացեալ իրաց. և

կամ էից։

Գոյացուցիչ. ցուցչի. աւ. աց. օք։ || 'ի գոյ ածօղ. կմ՛ հացուցիչ. կմ՛ ստեղծօղ. և կմ՛ արարիչ։

Գոյաւոր. ի. աւ. աց. օք։ || զգոյութիւն ունօղ. կմ՛ գոյացեալ։ Իսկ մերթ նշանա կէ զգոյս ընչից ունօղ. կմ՛ ընչեղ. և կամ փարթամ։ Ոսկե. 2. հատ. լէ։

Գոյաւորութիւն. թեան։ || գոյացութիւն. կմ՛ գոյութիւն. և կամ գոյք, որ առ էութիւնն պատկանի։ Իսկ Իմաստ. 16. 21. ուր ասի՝ զի քո գոյաւորութիւնդ առ քոյ որդիս ե ցոյց զքաղցրութիւն. իմանի ասել. քո գոյա ցուցեալ կերդ. որ էր մանանայն, զորմէ խօսի անդ։

Գոյափոխութիւն. թեան։ || գոյացափոխու թիւն. յն գոյացական փոփոխումն. կմ՛ ըստ գոյացութեան այլայլութիւն. որպիսի է փո փոխութիւն տարերաց, և այլոց մարմնակա նաց իրաց. որոց միոյն փոխարկի 'ի միւսն։

Գոյեղ. ի. իւ. աց. օք։ || այն ամ՛, որ գոյա ցական, կմ՛ էութենական է իրին. և կմ՛ էական մասն նը։ և ըստ այսմ նիւթ և տեսակ, և տարբերութիւն մարմնաւորաց իրաց՝ գոյեղ ասին։ Այսպէս և այն ամ՛, որ էութենական է պատահմանց. և կամ էութենաբար ստորոգի զնոցանէ, կոչի գոյեղ։ Եւ ներհակաբար այն ամ՛, որ ոչ է էական գոյացութե, և կամ գոյացական իրաց, այլ՝ հանդիպեալ նը. որպէս հան դիպլին պատահմունք. և կմ՛ որք յէութե իրին բղխին. որպիսիք են ոմանք յատկու թիւք, անուանին մակագոյեղ. իբր թէ յե ցեալք 'ի վ՛ր գոյեղաց։ Եւ բառս այս գոյեղ կոչի և գոյեղուտ. որ հոլովի. գոյեղոտի, իւ. ից. իւք։

Գոյեղաբար. (մակբայ որակական.) || գոյա ցաբար. կմ՛ էութենաբար. և կմ՛ էապէս։

Գոյժ. գուժի. իւ. ից. իւք։ || ձայնք և աղա ղակք ողբոց. կմ՛ մեծաձայն լացք. կամ կական. և կամ բարձրաձայն ողբ և կոծ։ 3. Մակ. 4. 3. և 5։ Եսայ. 65. 19։ Եւ ըստ այսմ միշտ ասի՝ գոյժ առեալ. իմանի ողբս ա ռեալ, կամ մեծակական ձայնիւ ողբա ցեալ։ 3. Մակ. 4. 6։ Իսկ մերթ նշանակէ զողբալի և զտրտմական լուրն. որ և ասի բօթ։ ռամկ՝ նոր խապար։ 4. Թագ. 19. 7։ 1. Մակ. 5. 14։

Գոյլրուակ. ի. աւ. աց. օք։ || է անուշա հոտ ծխանելի ինչ՝ որ լինի 'ի յաշխարհն հնդկաց։ Խորէն. 'ի յաշխարհագրութե։

Գոյն. գունոյ. ով. ոց. ովք։ կմ՛ ի. իւ. ից. իւք։ || է մարմնաւոր որակութիւն, որով զգալիք գոյնաւորքն, և այնու ըստ տեսու թե անկանին, և տեսանին. որգոն սպի տակութիւն. կարմրութի. և այլն։ Իսկ մերթ նշանակէ ներկն, որով նկարի, կամ ներ կի իր ինչ։ Իմաստ. 15. 4։ և Խորէն. ա. գլ. 15։ Եւ երբեմն նշանակէ այսու բառիւ գա լուկն 'ի գեղնագունութե, որ է տխուր ինչ. որով երեսք տխրադէմքն դեղնանան և գու նաթափին։ 2. Օրէն. 28. 22։

Գոյնագոյն. (նախդրիւ հոլովի.) || գոյն զգոյն. կամ պէսպէս գունով։ Եսթ. 1. 6։ և 3. Մակ. 7. 11։

Գոյնաւոր. ի. աւ. աց. օք։ || ունօղ զգոյն. որպիսիք են այնք մարմինք որք ըստ տե սութե անկանին։ Իսկ օդն թէպէտ է մարմին. բայց ոչ ունելով զգոյն՝ ոչ ասի գոյնաւոր։

Գո՛յշ թէ. (մակբայ երկբայական.) || մի՛ գուցէ. կմ՛ մի՛ արդեօք։ ռամկ. էօլմասըն։ Մծբն. ժը։

Գոյութիւն. թեան։ || մերթ իմանի էութի. կմ՛ բնութի։ Նարեկ. 'ի գոհ. խօսքն։ և մերթ լինե լութի. կմ՛ եղանութիւն։ Նարեկ. 'ի գոհ. խօսքն։ մերթ և՝ գոյացութի, և կմ՛ էակութի, և կմ՛ գոյացեալ իրն։ Ոսկե. 1. հատ. իա։ Իսկ ըստ փիլիսոփայից, գոյութիւն նշանակէ զներ գործութիւն զոյն, որով իրն, կմ՛ էութիւն իրին գնի արտաքոյ պատճառին իւրոյ։

Գոյք. գուլից. իւք։ (անեզական.) || ինչք. կմ՛ ապրանք. կմ՛ ունեցեալ դրամք։

Գոնեայ. կմ՛ գոնեա։ (շաղկապ վարանա կան.) || գէթ. կամ փարթար. կմ՛ լինի թէ։ ռամկ. բարի։ 1. Պետ. 1. 12։

Գոնէ. (շաղկապ վարանական.) || նոյն է ը̃ վերնոյն։ Գործ. 5. 15։

Գոնջ. ի. իւ. ից. իւք։ || գօսացեալ անդա մօք. կմ՛ խեղ. կմ՛ միակողմանի։ Իսկ մերթ նշանակէ զգօդին, և զուրուկն։

Գոնջանամ. ացայ. ցիր. անալ։ (ընդմիջ.) || խեղ, կամ հաշմ լինել անդամօք. կամ գօսանալ։ Իսկ մերթ նշանակէ՝ գօդի՝ կմ՛ ուրուկ լինել։ Աճգաբ։

Գոնջութիւն. թեան։ || խեղութիւն. կմ՛ գօսա ցումն անդամոց։ և մերթ նշանակէ զգօ դութիւն. կմ՛ զուրուկութիւն։

Գոչեմ. եցի. եա. ել։ (չէզոք.) || աղաղա կել։ Մերթ և՝ բարձր ձայնիւ կարդալ՝ զաղօթութիւն խնդրելով։ 1. Մնաց. 5. 20։ և մերթ՝ բարձր և ահագին ձայնս արձա կել. կմ՛ գոռալ. կմ՛ պոռալ։ Յոբ. 39. 6։ և Իմաստ. 17. 18։

Գոչեցուցանեմ. ցուցի. ցի. անել։ (անցող.) || հնչեցուցանել. և կմ՛ առնել՝ զի իր ինչ հանցէ զմեծագոյն և զահագին ձայն։ Եսայ. 51. 15։

Գոչիւն. (նախդրիւ հոլովի.) || ահեղ ձայն. կմ՛ խիստ ձայն. կամ բարձրաձայն աղա ղակ, թէ մարդոյ իցէ, թէ առիւծու, և թէ փողոյ 1. Թագ. 9. 16։ Յոբ. 4. 10։ և 2. Մակ. 15. 25։

Գոչումն. ման. մամբ. մանց. մամբք։ || նոյն է ընդ վերնոյն։

Գոռ. ի. իւ. ից. իւք։ || քինախնդիր. կամ խեռ. կմ՛ հակառակ. կմ՛ թշնամութե սի րօղ, և չարայոյզ. կամ խռովասիրօղ. և կմ՛ խլրտօղ։ 2. Թագ. 8. 10։ Իսկ մերթ նշա նակէ զթշնամութի, զպատերազմ. կամ զաղմուկ պատերազմի։ Խորէն. բ. գլ. 5։

Գոռամ. ացի. ա. ալ։ (չէզոք.) || մերթ նշանակէ որոտալն ամպոց. կմ՛ գոչել կեն դանեաց։ և մերթ խռովել. կամ բե-

նալ, և ախտակալել. կմ՛ թշնամանել. կմ՛ հա
կառակել։ 1. Մակ. 11. 40։ Իսկ մերթ մատ
նել. կմ՛ պատերազմել։ Խորէն. Բ. գլ. 8։

Գռեհիկ. կմ՛ գռեհ. ի. ու. աց. օք։ || Խառ
նաղ կենդանիք. որպիսիք են մժեխք, կմ՛
ցեծեակք. և կմ՛ այնք մեղուք, որք ոչ եր
բեք չլինին զմեղր, բայց պատերազմեալ ըզ
մեղուաչէն մեղուաց, ջանան յափշտակել
զմեղրն նց։ 'Ի Ճշմ. հարց. Իզ։

Գռաւ. ի. ու. ւոյ. օք. || մերթ նշանակէ՝
մեղսացեալ. կմ՛ հպարտ։ Իսկ մերթ տրու_
թիւ մեծացեալ բանաւորին։ Նարեկ. Ղ։

Գռոզաբանել. ացայ. ցէր. ածել։ (ընդ. միջ.)
|| հպարտանալ. կմ՛ ամբարտաւանել։

Գռոզութիւն. թեան։ || հպարտութիւն. կամ
ամբարտաւանութիւն. կամ բռնաւորութիւն։
Եսայ. 14. 25։ Իսկ մերթ նշանակէ՝ բռնու
թիւն, և իշխանութիւն։ Նարեկ. Գ։

Գռռութիւն. թեան։ || քինախնդրութիւն. կմ՛
հակառակութիւն. կմ՛ չարայուզութիւն. կմ՛
ախտակալութիւն. և կամ գռռումն ձայնի, և
մռնչումն։ Իմաստ. 11. 19։

Գով. (Նախդրիւ հոլովի։) || գովութիւն.
կմ՛ գովեստ. կմ՛ գովասանք. որոյ ներհակն
է պարսաւ. Ոսկ. 1. Կոր. ԻԶ։

Գովաբան. ի. իւ. ից. իւք։ || օրհնաբան. կմ՛
գովութիւն բան տօղ. և կմ՛ գովօղ։

Գովաբանեմ. եցի. եմ. ել։ (Ներգործ.)
|| տալ զբան գովութեան զումեքէ. կամ
բարեբանել. կամ գովել. և կամ օրհ_
նաբանել։

Գովաբանութիւն. թեան։ || բան գովութեան
զումեքէ. կմ՛ օրհնաբանութիւն։

Գովազդակ. ի. աւ. աց. օք։ || է ազգ մի ծխա
խնկելեաց, կամ խնկոց. որ լինի յաշխարհն
հնդկաց։ Խորէն. յաշխարհագրութեան։

Գովանի. ւոյ. եաւ. եաց. եօք։ || գովելի.
կմ՛ գովութեան արժանի։

Գովասան. ի. ու. աց. օք։ կամ ից. իւք։ ||
գովասանօղ. կմ՛ դրուատօղ. կմ՛ գովիչ.
Լամբրոն։

Գովասանք. անաց. օք։ (անեզական։) || գո
վութիւն. կամ գովեստ. կամ երանութիւն։

Գովասանական. ի. աւ. աց. օք։ || գովողա
կան. կմ՛ բարեբանական. կմ՛ օրհնաբա_
նական։

Գովասանեմ. եցի. եմ. ել։ (Ներգործ.) ||
զգովութիւն տալ. կմ՛ գովել. կմ՛ դրուա_
տել։ Լամբրոն։

Գովասանութիւն. թեան։ || գովութիւն. կամ
դրուատութիւն. կմ՛ գովեստ։ Լամբրոն։

Գովեմ. եցի. եմ. ել։ (Ներգործ.) || բա
րեհամբաւել. կմ՛ զկատարելութիւն ուրուք
խօսել. և կմ՛ դրուատել։

Գովեստ. ի. իւ. ից. իւք։ || գովութիւն. կմ՛
դրուատութիւն։ Եփես. 1. 6։

Գովեստաբանեմ. եցի. եմ. ել։ (Ներգործ.)
|| գովեստ տալով դրուատել. կմ՛ գովա_
բանել։

Գովիչ. գովչի. աւ. աց. օք։ || գովօղ. կմ՛ օր
հնօղ։ Բայց Սաղմ. 67. 26. ուր ասի, 'ի մէջ
կուսանաց, և գովչաց, իմանի 'ի մէջ կու_

սանաց, և թմբկահար դաւլօղաց զԱԾ։

Գովք. ի. իւ. ից. իւք։ || կարգեալ. կմ՛ խայծ։

Գորդագք. գորդէից. իւք։ (անեզական.)
|| կորճանալեղուք. կմ՛ ծառայեղուք. և կամ
այնք, որք թիւր ըմբռնմամբ խաբէին Եւտի
սու. անմտամբ անմտանեցելոցն ընկերն քա
հեհիք գահանախն; որ կոչէին գորդայ. վն
կորդայ լերինն որ 'ի Նինուէ։ Եւ եւն. սոքա
յաղագս հայոց. որք զմի մեծ գոլոյն մաս
լոյց և աստուածոյ՝ յայծ թիւրեալ անէին
զնեղութիւն խորհրդոց. ուստի և աստուածակոր
ծանելեղուք։ Եւ յայսմանէ սովորութիւն եղև
գորդայս կոչել զնոմ ուսմին դիւթականս,
և զգեղջուկ անձինս, որք թիւր ըմբռնա
խօսին։

Գործ. ոյ. ով. ոց. ովք։ || արարք. կմ՛ արար
մունք. կամ գործողութիւն։ Մերթ և զի
նսցեալ իրն յումեքէ՝ ասէ գործ նր։ մերթ
և նշանակէ զգործումն։ 3. Թագ. 7. 28։
Իսկ Ղևտաց. 20. 6. ուր ասի, գործէ գռա
նել. իմանի՝ աշխատանք է. կմ՛ դժուարին
իմն է։ Իսկ 1. Թագ. 20. 19. ուր ասի՝ յա_
ւուր գործոյ, իմանի լուր օրն, յորում
օրէն է գործել։ Իսկ երբեմն ընդ բայի
շարակցի այսպէս, 'ի գործ արկանել. և
նշանակէ՝ ներգործութիւն առնել. կմ՛ գոր
ծով կատարել։ 2. Մակ. 10. 29։ և կմ՛ 'ի կիր
առնուլ։ 1. Կոր. 9. 15։ Իսկ Երեմ. 18. 22.
ուր ասի. բանս 'ի գործ նորարկին առնել
զիս, իմանի՝ զխօսս եդին 'ի մէջ ինքեանց
առ 'ի կալնուլ զիս։

Գործած. ոյ. ով. ոց. ովք. || շինուած. կմ՛
գործ. կմ՛ կերտուած. կմ՛ շէնք։ Ծնն.
24. 10։ 1. Մակ. 13. 48։ Ղևտաց. 20. 12։

Գործակալ. ի. աւ. աց. օք։ || վերակացու
գործոյ. կմ՛ որ ունի զգործ արքունի յան
ձնեալ ինքեան յարքայէ, զի կատարիցէ.
և կմ՛ Նախարար։ Ծննդ. 41. 34։ կմ՛ տեղա
կալ. կամ հրամանատար 'ի վր գործոց։
1. Եզր. 6. 7։ Դանի. 3. 2։

Գործակալութիւն. թեան. || վերակացուի.
կմ՛ պաշտօնատարութիւն իշխանութեան. կմ՛
կառավարութիւն արքունի իրաց։ Խորէն.
Գ. գլ. 65։

Գործականեմ. եցի. եմ. ել։ (Ներգործ.)
|| գործել. կմ՛ կազմել. կմ՛ առնել։

Գործականութիւն. թեան։ || գործողութիւն.
կմ՛ գործաւորութիւն. կմ՛ գործառնութիւն.
Նարեկ. ԿԶ։

Գործակից. կցի. աւ. աց. օք։ || կցորդ, և
ընկեր. և կմ՛ օգնիչ գործոյ ուրուք. կմ՛
'ի միասին առնօղ ըզ այլում զգործ ինչ։
Ղևտաց. 31. 12։ և 2. Կորնթ. 6. 1։ Մերթ և
նշանակէ՝ հաղորդ. կմ՛ կցորդ։ 3. Յովհ. 8։

Գործակցութիւն. թեան։ || հաղորդակցութիւն
գործոյ. և կմ՛ օգնութիւն, և նպաստութիւն
գործոյ։ Մարկ. 16. 20։

Գործառնութիւն. թեան։ || առնելն զգործ
ինչ. կամ 'ի գործածութիւն. կամ գործո_
ղութիւն. և կմ՛ պաշտօնատարութիւն։ Խո_
րէն. Ա. գլ. 2։

Գործաւոր. ւորի. աւ. աց. օք։ || ասօղ ըզ

գործելն. կամ գործունեայ. կամ ժրաջան:

Գործանկրութիւն. թեան: || անէր գործելոյ. կամ գործունէութիւն. կամ ժրաջանութիւն:

Գործավար. ի. աւ. աց. օք: || պետ, կամ վերակացու 'ի վերայ գործաւորաց և աշխատաւորաց. կամ մշակաց: Ելից. 1. 11:

Գործատեաց. եցի. աւ. աց. օք: || ատող ըզ գործս աշխատանաց. կամ' զատապարկանակեաց: Առակ. 19. 15:

Գործատուն. տան. տամբ. անց. տամբք: || տուն. կամ տեղի 'ի յոր լինի գործ ստոյնանկութեան, և կամ այլ գործ: Իսկ 'ի շարականս հարցից' վերջին երեք տունքն ասին գործատունք, զի առացեալ լինի 'ի նս, օրհնեցէք զամ գործըք տն զտր օրհնեցէք:

Գործարան. ի. աւ. աց. օք: || մերթ նշանակէ զտեղին, ուր լինի գործ. որպիսի է խանութն արհեստաւորաց: Իսկ մերթ նշանակէ զգործօղն, և կամ զառնօղն. ըստ այնմ. Յն ուղղի. չարք որ չարեացն են գործարան. զն գործօղ: Եւ երբեմն նշանակէ զգործիքն, որով գործեցեալ լինի իր ինչ: Խորէն. 'ի յաշխարհագրութեն: Ըստ այսմ նշանակութեն է և այն, որ ասի զխօսքն. գործարան մահու: Իսկ 'ի գիրս Խորենացւոյ, գ. գլ. 53. ուր ասի' այլ 'ի սրտին գործարանի երևութացեալ. նշանակէ զերևակայութիւն, ուր ձևք. կամ տեսակք իրաց ընկալեալք լինին:

Գործարար. ի. աւ. աց. օք: || գործ առնօղ. կամ զգործն յառաջացուցանօղ. և կամ գործօղ:

Գործարարութիւն. թեան: || գործողութիւն. կամ ներգործութիւն. կամ գործառնութիւն:

Գործաւոր. ի. աւ. աց. օք: || ունօղ և առնօղ զգործ. կամ գործօղ զգործ ինչ, որպէս ոփ և իցէ. և կամ շինօղ: Ելից. 36. 8: և 4. Թագ. 12. 15:

Գործաւորութիւն. թեան: || գործողութիւն. կամ գործ: 2. Եզր. 2. 69: կամ գործունէութիւն. և կամ գործումն երկրի, և այլոց նմանեաց: Խորէն. գ. գլ. 62:

Գործելի. ւոյ. եաւ. լիք. եաց. եօք: || առնելի. կամ իրակելի: Բայց մերթ' մինչ ասի գործելիք, նշանակին գործօղք. կամ առնօղք. ըստ 4. Թագ. 12. 11. ուր ասի' գործելեաց գործոյն, իմանի' գործողաց զգործն: ըստ այսմ է և Հռոմ. 1. 32: Իսկ 'ի յաշխարհաբար լեզուով բառս գործելի' նշանակէ զածուխն. որ այլազգօրէն ասի' փէօմիւր:

Գործեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || առնել. կամ իրակել. կամ պատճառել. կամ ներգործել: Մերթ և յործամ ասի զերկրէ, իմանի' հերկել. և կամ բրել: Ծննդ. 3. 23: Իսկ մինչ ասի զկտաւոյ, իմանի' հիւսել. կամ անկանել: Ելից. 35. 35:

Գործեստեղ. եստեղ. եղք. աց. օք: || տեղի գործոյ. կամ գործարան:

Գործի. ծւոյ. եաւ. եաց. եօք: || անօթ. կամ կահ. կամ ո՛ և իցէ իր, որով առնեմք զիր ինչ. ուստի մերթ կաղամածն' որով մար

Դառնացօղ . ողի . աւ . աց . օք : || դառն լինօղ . կամ ժանտացօղ . կմ խստացօղ . կմ դառնաբարոյ : Մերթ և դառնացուցանօղ . կմ բարկացուցանօղ : Եզեկ . 3 . 9 :

Դառնէկեր . ի . իւ . ից . իւք : || Ճանապարհ . կմ զբանկուն ՚ի մէջ քերթող . կմ որոյ ստեղն է անախորժ . և կամ դաժան :

Դառնիճ . նճի . աւ . աց . օք : կամ ոյ . ով . ոց . ովք : || դառնիկ . դդ դառնացուցիչ . որով նշանակի ծ և ինչ դառն խոտոյ . կմ բանջարին . և ըստ այսմ երևի , զոր աւանէին հրէայքն ՚ի զատկին ընդ բաղարջին , որ էր դառն բանջար ինչ , դառնիճ կոչի . և ըստ այսմ ասի , դառնճով ուտել զբաղարջն : Մերթ և նշանակէ զդառնահամն . և ըստ այսմ ասի՝ դառնիճ դեղձ . դառնիճ խաղող՝ դառնիճ դեղ . և այլն : Աւգամ :

Դառնատնեանն : (Նախդրիւ հոլովի .) || առնօղ զդառնաբեր տանս . կմ զդառնապատուղ ծիւղս : Նարեկ . Է :

Դառնորակ . ի . աւ . աց . օք : || զդառն որակութիւն ունօղ . կամ դառնութիւն և վատթարութիւն որակացեալ : Յն [illegible] :

Դառնութիւն . թեան : || լեղութիւն . կմ դառն լինելն : Եւէթ . 15 . 23 : Մերթ և նշանակէ դաժանութիւն . կմ դժնեայութիւն . և կմ ժանտութիւն : Եփես . 4 . 18 : Իսկ երբեմն նեղութիւն . կմ վիշտ . կմ տառապանք . կմ ցաւ . կմ սուգ և տրտմութիւն : Յոբ . 7 . 11 : և 9 . 18 : Եսայ . 38 . 15 : Երբեմն և սաստկութիւն . կմ խստութիւն հարուածոց . կմ մահու . և այլոց նմանեաց : 2 . Մակ . 9 . 5 : Մերթ և բանս դառնութեան դնի մի դառնացուցիչ իրի . և ըստ այսմ ասի՝ Ողբ . 3 . 15 : Արբեցոյց զիս դառնութեամբ : Այսպէս և Յայտ . 8 . 11 . ուր ասի՝ Եւ էր անուն աստեղն դառնութիւն . իմանի՝ դառնացուցիչ . զի անկեալ յերկնից դառնացոյց զջուրս գետոց , և աղբերաց . ուստի և յայլ թարգմանութեան դնի փոխանակ սորա՝ աբսինթոս . որ է խոտ ինչ յոյժ դառն . զոր հայերէնն կոչեմք օշինդր :

Դաս . ու . ու . ուց . ուք : || կարգ . կմ խումբ . կամ ջոկ : Սաղմ . 67 . 31 : Իսկ 1 . Թագ . 4 . 10 . ուր ասի , երեսուն հազար դասուց , իմանի՝ երեսուն հազար հետևակաց . կմ [illegible] : Մերթ և վարդապետութեամբ և ուսուցմունք՝ որք ՚ի վարդապետեանն ընթերցեն առ աշակերտսն՝ ասին դասս :

Դասակ . ի . աւ . աց . օք : || երամակ . կամ խումբ . կմ ջոկ : Նարեկ . կԵ :

Դասակեալ . ի . աւ . աց . օք : || կարգաւորեալ և դաս դաս եղեալ . կմ դասաւորեցեալ : Եւ մերթ զորքն ժողովեալք . և կարգաւորեալք՝ կոչին դասակարգք . որպիսիք են հետևակազօրքն . զորս առաւել ժողովել դասաւորելով : 1 . Թագ . 15 . 4 :

Դասակարգ . ի . իւ . ից . իւք : || դասն կարգաւորօղ . իսկ մերթ դասակարգութիւն . կմ կարգաւորեալ դաս : Նարեկ . ղէ : ուստի և Ղուկ . 1 . 5 . ուր ասի ՚ի դասակարգեան աբիայ . իմանի ՚ի կարգէ քահանայութեան . կմ ՚ի դասակարգութեան աբիայ . քանզի դաւիթ կարգեաց զքահանայս ՚ի քսան և չորս դասակարգութիւն , որք յաջորդաբար ծառայէին ՚ի տաճարին վիճակաւ . 1 . Մնաց . 24 . 3 . և 10 : և ութերորդ դասակարգութիւն էր աբիայ : Իսկ զաքարիա էր յորդւոցն աբիայ . և մի այսորիկ դնի ՚ի դասակարգեցէն , որ ՚ի դասակարգութենէն աբիայ :

Դասակարգեմ . եցի . եա՛ . ել : (Ներգործ .)

|| դաս

|| դաս դաս կարգաւորել. կամ դասակից առնել զոք:

Դասակարգութիւն. թեան: || կարգաւորութիւն դասուց, կամ աստիճանաց. կամ դասաւորեալ կարգ. ուստի և գայք հրեշտակաց՝ որք սքանչելի կարգաւ դասաւորեցեալ, և կարգաւորեցեալ են 'ի մէջ իւրեանց, ասին դասակարգութիւնք: Լամբրոն:

Դասակից. կցի. աւ. աց. օք: || կցորդ դասու ուրուք. ուստի և այնք, որք են 'ի նոյնոյ դասէ, ասին դասակիցք իւրերաց:

Դասակցիմ. եցայ. եսցի. իլ: (հայնակր:) || դասակից լինել:

Դասակցութիւն. թեան: || կցորդութիւն բազմաց 'ի միում դասու. կամ պարակցութիւն: Նարեկ. 'ի գովէստ առաքելոց:

Դասապետ. ի. աւ. աց. օք: || պետ և գլուխ դասու. կամ առաջնորդ պարու: Նարեկ. ղզ:

Դասապետութիւն. թեան: || պետութիւն, կամ գլխաւորութիւն դասու: Լամբրոն.

Դասասաց. ի. իւ. աց. օք: || Նա որ տայ ըղ դաս աշակերտաց. կամ դասատու: մերթ ևս մինչ ոմանք վարդապետք նստեալ յաթոռ ատեան ումեք ընթեռնուլ զգիրք ինչ, և յայնմանէ զնիւթ առեալ քարոզեն ժողովրդեան, ասին դասասացք:

Դասատու. տուի. աւ. աց. օք: || Նոյն է ընդ վերնոյն:

Դասատուն. տան. տամբ. տանց. տամբք: || տուն. կամ տեղի դաս տալոյ, կամ դաս առնլոյ, և կամ ուսանելոյ:

Դասաւորեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || կարգաւորել. կամ դաս դաս առնել. և կամ զոք 'ի դասս ուրուք կարգել:

Դասաւորութիւն. թեան: || դասակարգութիւն. կամ դասաւորեալ կարգաւորութիւն: Լամբրոն:

Դաս դաս. (մակբայ ժողովական.) || խումբ խումբ. կամ երամ երամ. Մարկ. 6. 40:

Դասեմ. եցի. եա. ել: (Ներգործ:) || կարգաւորել. կամ 'ի դասս և 'ի կարգս ուրուք դնել:

Դասեցուցանեմ. եցուցի. եցո. ել: (Ներգործ.) || դասել. կամ դասաւորել. կամ դասակարգել: Եւ յայսմիկ բայի սոյ վանկն է առ 'ի զարդ:

Դաստ. ի. աւ. աց. օք: || ձեռք. կամ թաթ ձեռաց:

Դաստակ. ի. աւ. աց. օք: || յօդք ձեռաց. է այն մասն ձեռին, ուր ոսկր բազկին, և թաթք ձեռացն ընդ միմեանս յօդին, և կցին. ուր և ապարանջան դնի. ռամկ՝ պիլէկ: և ըստ այսմ է 'ի Նարեկ. ե. ուր ասի, Ոչ խորտակեցեր զդաստակ բազկիս, որ անմաքրապէս առ քեզ ամբառնայր: Ըստ այսմ և այն մասն սրոյ, ուր երկաթն և կոթն յօդին ընդ միմեանս, նմանութեամբ ասի դաստակ սրոյ: Մերթ ևս նշանակէ զթաթն ձեռաց. և ըստ այսմ է 1. Թագ. 5. 4. ուր ասի. Եւ երկոքին դաստակք ձեռաց նորա անկեալք զսեմօքն:

Դաստակերտ. ի. աւ. աց. օք: կամ կց. կւք: || ձեռակերտ. կամ գործք ձեռաց. և այսու մերթ իմանին երևելի շինուածք. և կերտուածք՝ զորս առնէ ոք ձեռօք. և ըստ այսմ ստեղծուածք՝ ասին դաստակերտք Ա. Յ: Կիւրղի եղեմ. ժա: Իսկ մերթ ևս լիցէ մեծամեծ շինուածք ապարանից. կամ այլոց նմանեաց ասին դաստակերտ: մերթ ևս նշանակի շէնն, կամ աւանն, որ լինի արտաքոյ քաղաքին առ 'ի գնալ անդ վասն զբօսանաց, շուրջ զորով են և անդաստանք, և այգիք: Աստուծ. 24. 5: Խորէն. Գ. գլ. 7:

Դաստառակ. ի. աւ. աց. օք: || կտոր կտաւոյ 'ի պէտս իրաց ինչ. կամ վարշամակ. և կամ թաշկինակ. ռամկ՝ մահրամայ. կամ ֆէսլէր: Եւ ասի դաստառակ, զի առեալ լինի 'ի դաստն, որ է ձեռք: ուստի և թաշկինակն այն, զոր եարկ քն զերեսօքն՝ յորում պատկերն իւր տպեցաւ, ասի դաստառակ:

Դաստիարակ. ի. աւ. աց. օք: || վարժօղ մանկանց. կամ խնամակալու. և հոգաբարձու մանկանց. որ իբրու թէ զդաստակէ նոցին կալեալ՝ միշտ շրջելով ընդ նոսին՝ առաջնորդէ նոցա 'ի բարին. և յար խրատիւք և ուսմամբ զարգացուցանէ զնոսին: 1. Կորն. 4. 15: Գաղ. 3. 24:

Դաստիարակարան. ի. աւ. աց. օք: || վարժարան. կամ կրթարան: Իսկ մերթ նշանակէ զդաստիարակօղն. կամ զվարժօղն. և կամ զկրթիչն: Նարեկ. զզ:

Դաստիարակեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || առաջնորդել. կամ ուսուցանել. և կամ վարժելով զարգացուցանել զոք. կամ կրթել, և կառավարել զհամբակս: Նարեկ. ղթ:

Դաստիարակութիւն. թեան: || կրթութիւն. կամ կառավարութիւն: Լամբրոն:

Դատ. (Նախդրիւ հոլովի.) || դատաստան. կամ դատողութիւն. կամ դատումն: Ծննդ. 16. 5: Եսայ. 3. 14: Եւ մերթ իրաւունք: ուստի մինչ ասի, դատ արա ինձ, իմանի, իրաւունս արա ինձ: Սաղմ. 25. 1: Ղուկ. 18. 3: Իսկ երբեմն նշանակի. փաստ. կամ պատճառ: Ռուսի. 2. Մակ. 4. 47. ուր ասի՝ դատ վարէին. իմանի՝ զփաստս յառաջ բերէին. և կամ զպատճառս տային: Եւ մինչ ասի՝ դատ գնել ընդ ումեք. իմանի՝ 'ի դատաստան մտանել: Նարեկ. ա:

Դատախազ. ի. իւ. ից. իւք: || ոսոխ. կամ 'ի դատաստան քարշօղ. կամ ամբաստանօղ. ռամկ. փուսէնի: Գործ. 25. 16:

Դատախազեմ. եցի. եա. ել: (չէզոք.) || դատել զոք իբրու սխալեալ. կամ ոսոխ լինել ընդդէմ ումեք. և ըստ իւր կարծեաց զիրաւունս և զդատաստան պահանջել. կամ ամբաստան լինել. և կամ բողոք բառնալ: ռամկ. փուսէնի ըլլալ: Նարեկ. հթ: Սիրաք. 8. 17: Եւ մերթ հակառակելով վիճել, և ընդդէմ կալ: 'ի Վարդ. բղ:

Դատախազութիւն. թեան: || հակառակութիւն. կամ ամբաստանութիւն. և կամ բողոքումն: Լամբրոն:

Դատակնիք • կնքոյ • ով • ոց • ովք • կմ կնքի • աց • օք ։ ‖ վճիռն՝ որ լինի 'ի դատաստա֊նի զկնի դատելոյն ։ Եւ առի դատակնիք, խրթութէ կնքումն և բացորոշումն եղելոյ դատաստանի ։ Եւ մերթ ու և խիստ հաստա֊տումն վճռի • կմ սահմանադրութիւն բանի, զոր ոք վճռէ՝ և սահմանէ ։ և ըստ այսմ առի, 'ի Նարեկ • ժէ • Շնորհեա ինձ՝ ով դատակնիք բանին քոյ վճռեաց ։ Մերթ ևս թուղթն գրեցեալ, և կնքեցեալ, յորում ծանուցանի վճիռ դատաւորին, առի դատակնիք ։

Դատակնքեմ • եցի • եալ • ել ։ (Ներգործ •) ‖ կնքել դատաստանաւ • կմ վճռել • կամ սորագրելով հաստատել • կմ զվճիռ դատապարտութե տալ • և կմ դատապարտել ։

Դատանք • նաց • օք ։ (անեզական •) ‖ դատաստան • կմ դատումն • և կմ իրաւունք ։ 2 • Մնաց • 20 • 12 • և Ողբ • 3 • 59 ։

Դատապարտ ։ ‖ Մերթ նախդրիւ հոլովի • և նշանակէ՝ դատապարտեցեալ • կմ իբ֊րև զպարտաւոր դատեցեալ ։ Յովբ • 1 • հոփ • իէ ։ Իսկ մերթ ընդ բայի շարակցի այս֊պէս • դատապարտ լինել • և նշանակէ՝ դատաստանի, կամ դատապարտութե պար֊տական լինել, և 'ի ներքոյ դատաստանի անկանել • կամ դատապարտել ։ Աղթ • 1 • 23 • Հռոմ • 3 • 19 ։ Եւ կամ այսպէս • դատապարտ առնել • և նշանակէ՝ դատապար֊տել • որ է 'ի ներքոյ դատաստանի • կամ դատապարտութե ձգել ։ կմ պարտաւորել զոք ։ Հռոմ • 8 • 34 ։

Դատապարտարան • ի • աւ • աց • օք ։ ‖ տեղի դատապարտութե • որպիսի է բանտն • կմ դժոխքն • և այլք նմանք ։ Նարեկ • իթ ։

Դատապարտեմ • եցի • եալ • ել ։ (Ներգործ •) ‖ 'ի ներքոյ պատժոյ, կամ պարտաւորութե արկանել զոք • և կմ զվճիռ հատանելով մատնել զոք 'ի մահ ։

Դատաստան • ի • աւ • աց • օք ։ ‖ դատումն • կմ դատողութի 'ի ձեռն իրաւանց և բա֊նի • կամ ընտրութի առ 'ի բացորոշել զիր ինչ ըստ իրաւանց, և ըստ ուղիղ բանի ։ Մերթ ևս նշանակի՝ վէճ, կմ հակառա֊կութիւն ։ 1 • Կորնթ • 6 • 7 ։ Մերթ ևս նշանակէ զդատապարտութիւն ։ Հռոմ • 3 • 8 ։ 1 ։ Տիմ • 5 • 12 ։ Եւ մինչ առի • դատաստան տալ • իմանի՝ դատիլ, կամ պատժիլ դատաստանաւ ։ Յովբ • 2 • հոփ • իը • և լէ ։ ով և մինչ առի, վրէժս տալ • իմանի կրել զպատիժ 'ի վրէժխնդրողէն ։ 2 • Թես • 1 • 9 ։

Դատաստանագիրք • գրոց • ովք ։ (անեզական •) ‖ գիրք դատաստանաց • կմ գիրք, ըստ կանոնի որոյ դատաւորն առնէ զդատաստան ։

Դատավճիռ • ճռոյ • ով • ոց • ովք ։ ‖ վճիռն դատաստանի, կմ բացորոշումն եղելոյ դատաստանի ։ Եւ մերթ յայտնի և բացորո֊շեալ վճիռ • և կմ սահմանադրութի բանի ։ Մծբն • ժբ ։

Դատարան • ի • աւ • աց • օք ։ ‖ դատաստա֊նարան • կմ տեղի՝ ուր լինի դատաստան • կամ ուր լինի ատեան ։ Լամբր ։

Դատարկ • ի • աւ • աց • օք ։ ‖ ունայն • կամ թափուր • կամ պարապ • կամ անօգուտ • կամ անպտուղ • և կմ անգործ, այսինքն, որ ոչ ու֊նող զգործ ինչ ։ Մատթ • 12 • 36 ։ և 1 • Տիմ • 5 • 13 ։

Դատարկաբան • ի • իւ • ից • իւք ։ ‖ զրնդու֊նայն, և զանօգուտ բանս խօսօղ • կամ վայրաբան ։

Դատարկաբանեմ • եցի • եալ • ել ։ (չէզոք •) ‖ վայրախօսել • կամ զրնդունայն և զանօ֊գուտ բանս խօսել • և կամ դատարկաբա֊նութիւն առնել ։

Դատարկաբանութիւն • թեան ։ ‖ ունայնա֊բանութիւն • կմ՝ վայրախօսութիւն • և կմ զուր և անօգուտ բան ։

Դատարկակաց • ի • իւ • ից • իւք ։ ‖ դատարկ և պարապ կացօղ • կմ հեղգ • և կմ ծոյլ 'ի գործել ։ Խորէն • գ • գլ • 68 ։

Դատարկաձեռն • (նախդրիւ հոլովի •) ‖ նշանակէ զնա, որ դատարկ է ձեռօք • այսինքն, որ ոչ ունի 'ի ձեռս իւր զընծայ առ 'ի մատուցանել յորժամ պնայ առ արժանաւոր ոք, որում պարտական է տանել զընծայ ինչ ։ Ելից • 23 • 15 ։

Դատարկամիտ • մտի • աւ • աց • օք ։ ‖ միտօղ, և հակօղ 'ի դատարկութի • կմ զդատարկ միտս ունօղ 'ի բարեաց խորհրդոց • և կմ դատարկասէր ։ Յովբ • 1 • հոփ • ա ։

Դատարկանամ • ացայ • ցիր • անալ ։ (չէզ֊միջա •) ‖ դատարկ և ունայն լինիլ ։ Իսկ մերթ անգործ լինիլ • ռամկ • բանիլ չընէնալ • կամ պարապ ըլլալ ։ Ելից • 5 • 8 ։ Իսկ երբեմն դադարել • կամ պակասել • կմ անպիտան լինիլ ։ Իմաստ • 15 • 15 ։ և 2 • Պետր • 2 • 3 ։ Իսկ Հռոմ • 7 • 6 ։ իմանի՝ ազատ լինիլ 'ի պար֊տաւորութենէ ։

Դատարկանձն • ձին • ամբ • անք • անց • ամբք ։ ‖ այն, որ է դատարկակեաց, և ոչ ունի զգործ ինչ յատուկ • և վասն այնր դեգերի 'ի յայնս՝ որք կամ ոչ վերաբե֊րին առ ինքն • և կամ են անպատշաճք ։ 1 • Տիմ • 5 • 13 ։

Դատարկապորտ • ի • իւ • ից • օք ։ ‖ Թոյլ և յոյլ պորտ ունօղ • այսինքն, նա՝ որ ո՛չ զպէտ զինքն 'ի կերակրոյ • այլ միշտ պարապի 'ի լնուլ զորովայնն ով զխող • և որքան ու֊տէ, նոյնչափ ծախէ • և միշտ իբրու դա֊տարկ ունի զփոր իւր որպէս զմարախ ։ Տիտ • 1 • 12 ։

Դատարկասուն • սնի • իւ • ից • օք ։ ‖ դատարկութեամբ սնեալ • կմ դատարկութե վարօղ զկեանս ։ Աշխար ։

Դատարկացուցանեմ • ցուցի • ցո • անել ։ (անցող •) ‖ դատարկել • կամ ունայն և թափուր առնել ։

Դատարկեմ • եցի • եալ • ել ։ (Ներգործ •) ‖ դատարկ առնել ։ ռամկ" պարպել • կամ պարպէլ ։

Դատարկութիւն • թեան • ‖ ունայնութիւն • կմ պարապութիւն • կմ դադարումն 'ի գործոյ ։ Ժողով • 10 • 18 ։

Դատաւոր. ի. աւ. աց. օք: || Նա՝ որ ունի զիշխանութիւն դատելոյ, և վճիռ հատանե- լոյ 'ի վ/ր մեղապարտաց, և կմ. որ ունի զի- րաւունս առնելոյ զդատաստան:

Դատաւորանոց. ի. աւ. աց. օք: || տեղի՝ կմ. ատեան, ուր նստեալ դատաւորք՝ զդատաս- տան առնեն. կմ. դատաստանարան: Ոսկէ. 2. կոր. ժէ:

Դատափետ. (ոչ հոլովի, այլ ընդ բայի առնելոյ այսպէս՝ դատափետ առնել.) || և նշանակէ՝ պէսպէս նախատական բա- նիւք, կամ բազմազան դատաստանօք փե- տել. ք. չարչարել, և տառապեցուցանել, և կամ դատապարտ առնել. Ծննդ. 49. 23:

Դատափետեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || 'ի ներքոյ պէսպէս դատաստանաց արկա- նելով փետել, ք. նեղել, և վշտացուցա- նել. կմ. պէսպէս դատաստանօք դատե- լով դատապարտել, և իբր թէ գզել, և տա- ռապել զոք: Երեմ. 15. 10:

Դատեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || դատ առնել. կմ. դատաստան առնել 'ի վ/ր ու- րուք, թէ արդեօք իցէ մեղապարտ, թէ ոչ. կմ. թէ զինչ է իրաւունք նորա. որպ առնեն օրինաւոր դատաւորքն: Ելից. 18. 26: Իմաս. 9. 3: Եզեկ. 34. 22: Մերթ ևս նշանակէ՝ քըն- նել, և վճռել. կմ. բացորոշել զիրէ իմի- քէ, թէ որպիսի է. կամ ընտրել 'ի մէջ երկուց՝ թէ որն իցէ իրաւացին. կմ. ար- դարել: Ղուկ. 7. 43: Իսկ երբեմն նշանակէ մտօք, կամ բանիւ զմեղապարտութիւն, կմ. ըղ- մեղս դնել 'ի վ/ր ընկերին, կմ. մեղապարտ առնել զոք 'ի միտս իւր: Մատթ. 7. 1. և 2: Երբեմն ևս նշանակէ դատապարտել, կմ. դատապարտելի ցուցանել: Եբր. 11. 7: Մերթ ևս նշանակէ 'ի դատաստան մտա- նել. կմ. դատաստանօք խօսիլ ընդ միմեանս. կմ. վիճել. և կմ. հակառակիլ: Յոբ. 9. 3: Ժողով. 6. 10: Երեմ. 2. 9: Ովս. 2. 2: Բայց Մատթ. 5. 40. նշանակէ՝ բանադատելով քար- շել զոք 'ի դատաստան: Իսկ մինչ ասի հը- րով դատել, իմանի՝ հրով կիզել. կմ. այրե- լով կորուսանել: 1. Մակ. 7. 35: և Սաղմ. 77. 48: Եւ այսպէս մինչ ասի՝ սրով դատել, իմա- նի սրով սպանանել, կմ. կորուսանել: Խա- րէն. Գաղ. 7: Սոյնպէս և 'ի Նարէկ. խը. ուր ասի՝ Յոբի դատեցաւ զայլն տանելի, նշանակի՝ ընդ հոգւոյն սպանանելն. կմ. կորուսանելն: Բայց գիտելի է, զի բայս այս Դատել, բա- զում անգամ վարի իբրև չէզոքական բայ, որ կրաւորական ձայնիւ ներգործաբար նշա- նակէ. որպ երևի 'ի բազում տեղիս յայտ- նելի մերում, և յայլս գրեանս: և ըստ այսմ Եզեկ. 11. 10. ասի՝ 'ի վ/ր լերանց իսրայէլի դատեցայց զձեզ: Եւ Եսայ. 1. 24: դատաս- տանօք դատեցայց զթշնամիս իմ: Սոյն- պէս է և Երեմ. 51. 36. և 2. Պետ. 2. 6: և յայլ բազում տեղիս: և ըստ այսմ էին բա- զումք 'ի վկայութեանս, որք 'ի վերոյ եդան:

Դար. ու. ու. ուց: կամ ի. իւ.ից. օք: || Մերթ նշանակէ զյաւիտեան մի. ք. զբազ- մութիւն ամաց անցելոյ՝ յորմէ նշանաւո- րէ իրէ եղելոյ մինչև ցմիւսն: և այսպիսի դարք աշխարհի՝ են եօթն. որք համեմա- տին եօթանց աւուրց արարչութեան: Առաջինն է յադամայ մինչև ցնոյ: Երկ- րորդն՝ 'ի նոյէ մինչև ցաբրահամ: Եր- րորդն՝ յաբրահամէ մինչև ցմովսէս: Չոր- րորդն 'ի մովսիսէ մինչև ցգերութիւն բա- բելացւոց: Հինգերորդն 'ի գերութենէ բա- բելացւոց մինչև 'ի քս: Վեցերորդն 'ի քսէ մինչև 'ի կատարած աշխարհի: Իսկ եօթ- ներորդն 'ի կատարածէ աշխարհի մինչև յաւիտեան, որ է դար հանդերձեալն: Նա- րէկ. ղէ: Բայց դարքս այսոքիկ այլազգէս ևս կարեն թուիլ. որպ թուեն ոմանք: Մերթ ևս դարն՝ նշանակէ զմիջոց ժա- մանակին, յորում մի ծնունդն ակնեալ վեր ջանայ. և ըստ այսմ 'ի հաւ պապէն մինչև 'ի չորրորդ ծնունդն որ է թոռին թոռն, ասի չորս դար. և ըստ այսմ իմանի: Երեմ. 32. 18: ուր ասի. Առնես զողորմութիւն 'ի հազար դարս: Սոյնպ և 1. Մակ. 2. 51. ուր ասի. զոր ինչ քաջութիւնս արարին 'ի դարս իւրաքան- չիւր: և ըստ այսոցիկ նշանակութեանց՝ հո- լովի. դար. դարու: Մերթ ևս դարն՝ նը- շանակէ զայն՝ որ ոչ է հարթ, այլ զառ 'ի վեր, և նոյն. ըստ որում ասի՝ դար և փոս: ուս- տի և ալիք ջրոց, որք կոհակ առ կոհակ ըն- թանալով, դար և փոս եղեալ դնան զառ 'ի վայր՝ ասին, դարիւ և դարիւ ընթանալ. որպ հանդիպի ևս ջուրց գետոց յորժամ սաստիկ յորդեալ ընթանան: Յեսու. 3. 15: Սոյնպ և բարձր տեղիք, կամ բլուրք, և գահք, ասին դարք: Դատ. 7. 23: Մատթ. 8. 32: Մերթ ևս նշանակէ զզոյգ թիւն, որ յերկուս հա- ւասար մասունս կարէ բաժանիլ. որպի- սի է, չորսն, վեցն, ութն, և այլն: ռամկ. ջուխտ: Եւ սորա ներհակն՝ անուանի կո- ճատ, ք. անզոյգ. որ ոչ կարէ յերկուս հա- ւասար մասունս անջատիլ. որպիսի է հինգն, եօթն. և այլն: ռամկ. թէք: Ուստի մինչ ասի դար և կոճատ խաղալ, իմանի՝ ջուխտ և թաք խաղալ. որպ առնեն մանկունք 'ի խաղալն կոճով եղջեր: և ըստ այսոցիկ նը- շանակութեանց հոլովի դար, դարի: Եւ յաշ- խարհաբառ լեզուին նշանակէ զփորձանս:

Դարակ. ի. աւ. աց. օք: || փոքր դար. կմ. փոքր բլուր. կամ բլրիկ:

Դարակեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || Ճանաչել. կամ մտօք տեսանել. կմ. ուշա- դրաբար, և զգուշութեամբ զննել, և քաջա- պէս իմանալ զիրն:

Դարաւանդ. ի. իւ. ից. իւք: || 'ի դարէ. կմ. 'ի գահէ, ք. 'ի բարձր տեղւոջէ՝ 'ի վայր հոսեցեալ:

Դարան. ի. աւ. աց. օք. || դարանի տեղի, ուր լինի թագուստ պատերազմողաց, և այլոց նմանեաց, զի յանկարծ ելեալ ան- գուստ, հարցեն և սպանցեն զթշնամիս. և կամ կալցեն, կմ. կողոպտեսցեն. և կմ. զայլս ինչ հասուցեն: Յեսու. 8. 7: և ըստ այսմ երբեմն ընդ բայի նստելոյ. զոր օրինակ. 'ի դարան մտանել. և նշա- նակէ թագչել 'ի դարանի. և կմ. դարանիլ:

Ղուկ. 9. 43: Եփ. 4. 16: Մերթ եւ նշանակէ զմեծութիւն. կամ զզաւրն, որ է ծածուկ հնարումն չարեաց, զոր աւանեն ոմանք ընդդէմ ուժոյ առ 'ի մեռանել: Եւ թէ այսմ է բայն չորքակցի այսմ, դարան գործել: Գործ. 23. 21: Մերթ եւ նշանակէ զապաստանարանն. եւ կմ զամուր տեղին. ուր մտեալ ամրանան մարդիկ յերկիւղէ թշնամեաց: Նաւէկ. ձթ: Եւ Մծբն. ժգ: Երբեմն եւ դարանք ասին պահպանանք խորք, եւ կմ ծածուկք, յորս պահէին զանձս, եւ կմ ինչս՝ յերկիւղէ թշնամեաց կամ աւազակաց:

Դարանադարձ. ի. աւ. աց. օք: || դարձող ուժոյ զդարան, եւ զնենգութեան առ 'ի մեռանել. եւ կմ զօրութեամբ նենգութեան լարող ուժոյ:

Դարանակալ. ի. աւ. աց. օք: || դարան կալեալ. որ այն՝ որ նենգութեամբ նստի 'ի դարանի, որ 'ի ծածուկ տեղւոջ. կմ 'ի մորւոջ յետեւոյս ծառոց. զի յանկարծ 'ի վերայ յարձակեալ մեռուցանէ ուժոյ, կմ կողոպտիցէ զոք: Իմաստ. 2. 12: Բայց այս բառ Իմաստ. 9. 4. նշանակէ զմեթերականացն. կամ զդրան զիմաստակացն. որ զայն, որ առաջի մեծի ուրուք պատրաստականն կայցեալ է:

Դարանակալեմ. եցայ. եայ. էլ: (ձայնակր.) || 'ի դարանի նստել առ 'ի որսալ զոք. կմ առ 'ի մեռանել ուժոյ. Սաղմ. 27. 31:

Դարանամուտ. մտի. իւ. ից. իւք: || մտանող 'ի դարան, որ 'ի ծածուկ տեղի՝ առ 'ի յանկարծ յառնել 'ի վերայ թշնամեացն: Յեսու. 8. 2: Դատ. 21. 20: Բայց 2. Մակ. 14. 22: ուր ասէ՝ դարանամուտ լինել, նշանակէ՝ զզգուշութեամբ կալ 'ի ծածուկ տեղւոջ. եւ կմ ծածկեալ 'ի պատրաստի լինել:

Դարանայայտ. յուղի. իւ. ից. իւք: || մերթ նշանակին անձինքն, որք յուղին զդարան. այսինքն՝ պահեն, եւ դատեն զդարանն, եւ զգուշանան թշնամեաց, եւ յանկարծ պաշարեն զնա, եւ սպանանեն. եւ կմ խնամն զձանապարհ երկան նոցին. եւ բառ այսմ հոլովի բառս այս բառ միաբանեալ կերպին: Բայց մերթ եւ նշանակի այսու բառիւն նա, որոյ դարանն քննեցաւ. եւ 'ի յայտ եկեալ է. եւ թէ այսմ ոչ հոլովի, այլ ընդ բայի չորքակցի այսպէս. դարանայայտ եղեւ այն ոք. որ դարան նորին յայտ նեցաւ, եւ այնուհետեւ ոչ կարէ առնել զինչ, զի զգուշանան հակառակորդն իւր: Եւ կամ դարանայայտ արար նա զնա. որ նա զնորին դարանն ծանեաւ, եւ 'ի յայտ եբեր. եւ այսու զգուշանայ 'ի նմանէ, եւ ոչ խաբի: Գ. Թագ. 6. 10:

Դարանեմ. եցայ. եայ. էլ: (ձայնակր.) || 'ի դարան մտանել. որ նենգութեամբ 'ի ծածուկ տեղւոջ դադել, զի յանկարծ ելեալ կալցէ զոք. կմ սպանցէ. եւ կմ մեռուցէ ուժոյ. եւ այլն: Սաղմ. 10. 8: եւ 16. 12:

Դարապան. ի. աւ. աց. օք: || բարապան. կմ դռնապան. որ պահապան դրան: 1. Մնաց. 26. 19:

Դարապետ. ի. աւ. աց. օք: || դարապան. որ դռնապան. կամ պահապան դրան: Մծբն. ժթ:

Դարապարզեղ. եղի. աւ. աց. օք: || է երկայն ազդեղն, որ նախ կանեալ է, եւ յետոյ կար մրանեալ. եւ է ընտրութեամբ ջերմ եւ չոր. որ ռամկօրէն ասի՝ դանձ:

Դարաստ. ի. իւ. ից. իւք: || դրախտ. կմ պարտէզ. եւ կմ ծառաստան:

Դարաստան. ի. աւ. աց. օք: || դրախտ. կմ պարտէզ: Նաւէկ. խգ. եւ զդ: կամ ծառաստան. որ տեղի, ուր են բազմութիւնք ազնիւ, եւ բազմաձիւղ ծառոց: Եզեկ. 19. 11:

Դարաւանդ. կամ դարաւանդ. ի. աւ. աց. օք: || դար բարձր. որ բարձրաբերձ զառ 'ի վեր տեղի. որ եւ կոչի գահաւանդ. որպիսիք են բարձր բլուրք. կմ բարձր տեղիք 'ի լերինս. կմ յափունս գետոց. եւ այլն: Խորէն. բ. գլ. 39. եւ 47: Իսկ մերթ նշանակէ զառախապահականն յօրինուածն, որ լինի զառաստաղք տան: Եւ կմ նշանակէ զդ հեծանաձգութիւն. որ ձգարեցեալ գերանս ծածքի տանն, զորս հանդէպ իրերաց կացուցեալ՝ զվերին ծայրն նց բեւեռն է միմեանս. իսկ զստորին ծայրն հաստատեն յերկոսին որմունս տան: Եւ կոչեցան սոքա դարաւանդ, զի իբրեւ զառ 'ի վեր դար սարածեալ կան 'ի վր տան: ռամկ. ձախաւլամայ: Երգ. 1. 16: Իսկ երբեմն նշանակի տափան 'ի վր աչաց կացեալ դարաւանդ զառ 'ի վայր տեղին, ուր հերքք յոնիցն կամարաձեւ սարածին: Եւ թէ այսմ առ Խորէն. բ. գլ. 39: Արդարեւ գեղապանծ յոնից դարաւանդաց:

Դարափն. (Նախադրիւ հոլովի.) || դար եւ բարձր տեղի՝ որ լինի յափն գետոյ. եւ կամ գետափին:

Դարափոր. ի. իւ. ից. իւք: || խորափիտ տեղի. կմ գետանափոր տեղի. եւ կմ ծերպք. եւ խորշք որք են 'ի դարս եւ 'ի բլուրս լերանց:

Դարբաս. ի. իւ. ից. իւք: || տուն դ'ռար պաս:

Դարբին. բնի. աւ. աց. օք: || երկաթագործ, որ գործող երկաթեղինաց. ռամկ. փէմիրճի. կամ չիլինկիր: Ծննդ. 4. 22: 1. Թագ. 13. 19: Իսկ մերթ նշանակէ զոսկեձագործն. որ զոսկերչապետն, որ կազմէ զոսկեձեղէն անօթս. ռամկօրէն խույումճի: Եսայ. 54. 16: 2. Տիմ. 4. 14:

Դարբնատուն. ի. իւ. ից. իւք: || տուն դարբնաց, 'ի վր որոյ ծեծեն զերկաթ: ռամկօրէն քօրա:

Դարբնեմ. եցի. եալ. ել: (չէզոք.) || զգործ դարբնի առնել. կամ զդարբնութիւն առնել: 'Ի Ճառս հոգւ. իգ:

Դարբնոց. ի. աւ. աց. օք: || տեղի. կմ խանութ՝ ուր գործեն դարբինքն:

Դարբսուկ. բկի. աւ. աց. օք: || տապաստ. կմ դար եւ փոս. եւ կմ տապառաժուտ. կմ քարաժեռ: Մծբն. ժէ:

Դարդիճ. դճի. աւ. աց. օք: || մենհճճ.

կամ պատգամաւորակ :

Դարպասաւորակալ. ի. աւ. աց. օք : || մերթ նշանակէ զնա, որ զդարպասն, կամ զպաշտօնարանն, և զմեծփառն կալնու. կմ բանակալ . որով խմանի տալն մեծերի, և կմ անձինքն որք բանան զպատգամաւորակս : Իսկ մերթ նշանակէ զբանակեցեալն, կմ զընկալեալն 'ի պատգամաւորակս . և ըստ այսմ առի, դարպասակալ հիւրանոց : Կիւրղ. եՆԴ. ժԵ :

Դարպասաձև . ի. իւ. ից. իւք : || մեծաձև . կմ ըստ ձևոյ պատգամաւորակի, և կմ տախտակի մեծի :

Դարեմ. եցի. եալ. ել : (չէզոք .) || դադարել . կմ զեղոյ տանել . և կմ մնալ ուրեք :

Դարեւանդ . ի . աւ . աց . օք : || տես զԴիւրաւանդ :

Դարժանագոյն . գոյնի . իւ . ից . իւք : || դժ ժանագոյն . կմ դժնէագոյն . կմ ժանտագոյն . և կամ չարագոյն :

Դարժանութիւն . թեան : || դառնութիւն . կմ դժնէութիւն . և կմ ժանտութիւն : Լամբրօն .

Դարխնակ . ի . աւ . աց . օք : || գործիք ինչ արծաթագործաց . որ է անօթ ինչ թուջելի՝ լցեալ աւազովմբ կաւով . 'ի յոր տպեալ զգաղափարն . հեղուն ընդ բերանն նր զհալեալ ոսկի, կմ զարծաթ . և ըստ նմանութեան գաղափարին՝ ձուլեն զձուլելիս : տաճկ. [illegible] է :

Դարչենի . ենւոյ . եաւ . եաց . եօք : || է ծառ ինչ, մեծութբ նման ձիթենւոյ, որոյ տերևքն են նման լեմնենի տերևոյն . և կեղևն թբ նման տերևոց դարձի ծառոյն : ունի զօդեւորակ ծաղիկ . իսկ զպտուղ սեւ, և բոլորակաձև, որ է մեծութբ նման փըշտոյ : Առջ' ծառս այս ունի զկրկին կեղև . որոյ ներքինն է անուշահոտ, զոր 'ի կիր ածանելք 'ի կերակուրս , և 'ի դեղորայս . որ տաճկ. կոչի տարչին : Սա կոչի և կինամոմն . որ է բառ ասորական :

Դարձ . ի . իւ . ից . իւք : || դարձումն . կամ դարձուած : 3 . Թագ. 20 . 22 : և Սաղմ. 59 . 2 . և 130 . 2 : Իսկ 2 . Մակ. 12 . 7 . ուր ասի . 'ի դարձն , իմանի 'ի դարձեալն , կմ 'ի դառնալն : Եւ 3 . Մակ. 1 . 11 . ուր ասի . առանց դարձ դարձի . նշանակէ՝ առանց յետս դառնալոյ : Եւ մինչ ասի . զդարձ փոխարինին տանել . իմանի՝ զհանդերձադարձն , կմ զհատուցումն առնել նորա մինչ նոյն մերժել զոք . կմ զինչ , սկսանիլ սիրով փարիլ ընդ նմա , և բարեբարել : Երեմ. 16 . 9 : Իսկ Հռոմ. 1 . 27 . ուր ասի . զդարձ փոխարինին յանձինս իւրեանց ընդունել . իմանի այսինքն . զհանդերձապարձական վճարումն, զոր արար անձին իւրեանց ընդունելն . զի էին գիտելք ևս 'ի ճշմարիտ զարդարել 'ի կիր արկանել, և այնու վճարեցին : մերթ ևս բառս 'դարձ . ընդ բայի շարակցի այսպէս . դարձ առնել : և նշանակէ՝ դառնալ : Ծննդ. 31 . 55 . և 2 . Մակ. 13 . 26 :

Դարձադարձ : || ընդ բայի շարակցի այսպէս . դարձադարձ առնել . զի , բազում

անգամ դառնալ . կամ յաճախակի դառնալ . և կամ դառնալով դառնալ : 'Ի Հուր. հարց. իջ :

Դարձասէր . սիրի . աւ . աց . օք : || զանդրէն դառնալն սիրօղ . կամ այն , որ յօժարի բազմիցս դառնալ ուրեք : 'Ի Հուր. հարց. Ջ :

Դարձաւորութիւն . թեան : || դարձումն . կմ դարձ : Նարեկ . Հ :

Դարձեալ : || Մերթ է շաղկապ բազմիցս կան . և նշանակէ , բայց յայսմանէ . կամ ևևս : Իմաստ. 14 . 1 : և Մատ. 13 . 45 . և 47 : Իսկ մերթ է մակբայ կրկնական . և նշանակէ՝ վերստին . կմ միւսանգամ : Հռոմ. 15 . 10 : և 2 . Կորն. 13 . 2 : Մերթ ևս է անցեալն ընդունելութեան՝ դառնամ բայիս : Ծննդ. 18 . 22 : և Ղուկ. 7 . 44 :

Դարձընթաց : || ընդ բայի շարակցի այսպէս . դարձընթաց լինել . և նշանակէ . յետս դարձօղ լինել յընթացից . կամ անդրէն յետս ընթանալ : Կիւրղ. եղէկ. ժզ :

Դարձուած . ոյ . ով . ոց . ովք : || դարձ . կմ դարձումն : և ըստ այսմ Եզեկ. 16 . 53 . ուր ասի , Դարձուցից զդարձուածս . իմանի դարձն դերութեան : Մերթ ևս նշանակէ զանդրադարձն , կմ զփոխարէնն . և կամ զհատուցումն : Յն որդի : Իսկ երբեմն մինչ ասի, դարձուած բանից . [illegible] մեկնութե բանից . կմ զօրութե նշանակութե նոցին . Աբակ. 1 . 3 : Իմաստ. 8 . 8 :

Դարձուցանեմ . ձուցի . ձն . անել : (անցող .) || տանել զինչ վերստին անդր՝ ուր էր . կմ բերել զինչ անդ, ուստի էր տարեալ : 1 . Թագ. 6 . 21 : 1 . Մնաց. 21 . 27 : և Սաղմ. 52 . 7 : Իսկ մերթ նշանակէ յետս կոյս շրջել զինչ . կամ 'ի թիկունս կոյս բերել . և ըստ այսմ առի՝ դարձուցանել զերեսս իւր . և այլն : 3 . Թագ. 8 . 14 : Մերթ ևս նշանակէ յետս տալ . կամ հատուցանել : Իսկ երբեմն նշանակէ փոխարկել . կմ փոխել . և ըստ այսմ առի՝ յարիւն դարձուցանել . կմ զսուգն յուրախութիւն դարձուցանել . և այլն : Սաղմ. 29 . 12 : և 104 . 29 : և 2 . Պետր. 2 . 6 :

Դարման . ոյ . ով . ոց . ովք : || դարմանումն . կմ հոգ . կմ խնամ : տաճկ. [illegible] : Սաղմ. 79 . 16 : Ղուկ. 10 . 35 : Աբակ. 3 . 8 : Մերթ ևս ապրեստ, կամ կերակուր . ուստի և յարդն զոր տան անասնոց , կոչի դարման նոցին . զի նովաւ դարմանին, և կերակրին : Յն որդի : Եւ մերթ և կցէ ալիւրոյ մարգոյ : 1 . Եզր. 4 . 54 : և Իուբէն. Զ . գլ. 57 :

Դարմանաւոր . ի . աւ . աց . օք : || զդարմանս ցի զխնամս ընդունօղ յումեքէ . կամ դարմանեցեալ : Մերթ ևս նշանակէ զդարմանիչն . կամ զխնամածուն . և կմ զսնօղն զդարման 'ի վր սորուք :

Դարմանեմ . եցի . եալ . ել : (Ներգործ .) || հոգ տանել . կմ խնամ ածել . կմ հոգալ պէտսն . կմ սնուցանել . կմ սածել , և կմ կերակրել : տաճկ. [illegible] . կմ [illegible] : Ղուկ. 10 . 34 : Եփես. 5 . 29 . Մերթ ևս նշանակէ կազմակերպել . կմ նախապատրաստել :

curam habeo

Յուդիթ. 8. 7: և 16. 25: Իմաստ. 8. 1: և 15. 1: Իսկ մերթ նշանակէ յօրինել. կամ կազմել. կամ յարդարել, և մաքրել: 2. Թագ. 19. 24:

Դաշունակալ. ի. աւ. աց. օք: || դաշունակալ. կամ դաշունի կրօղ. կամ սուսերակիր. և կամ սուսերաբարձ. որպիսիք են դահճիք: Մծբն. ժթ: Եւ որպէս ընդ սառն ը հնոյ [illegible] է եղեալ. այդ և բանս այս բաժին, մերթ դրի բարձին: սակայն բաւ ուղէ դրել բաժին, քան բարձին: և դրել դաշունակալ քան գաւազանակալ, թէ և 'ի հնումն գրեցեալն պահեսցի անխախտ մնասցէ 'ի յայժմուս գիրս:

Դարան. ոյ. աւ. աց. օք: || մուտ. կամ ծակ. կամ եղր. և կամ սահման: Նոննս. ղէ:

Դարպաս. ի. իւ. ից. իւք: || ապարանք. կամ պալատ: Ավետ. [illegible]:

Դաւ. ոյ. ով. ոց. կամ ից. ովք: || նենգութիւն. կամ գաղտ հնարումն չարի. և դաւաճանութիւն կամ խարդախութիւն. և կամ խաբէութիւն: Գործ. 20. 3: 2. Մակ. 3. 32. և 5. 5:

Դաւադրօղ. ողի. աւ. աց. օք: || դաւելով դրօղ. կամ նենգաւոր. կամ դաւաճանօղ. և կամ նենգօղ՝ և խաբօղ:

Դաւաճան. ի. աւ. աց. օք: || նենգօղ. կամ խարդախօղ. կամ գաղտ հնարօղ չար ընդդէմ ումեք: Ղուկ. 20. 20:

Դաւաճանեմ. եցի. եաւ. ել: (Ներգործ.) || դաւել. կամ նենգել. կամ խաբել. ուստի յորժամ ոք դաւով հանէ զինչ յումեքէ. կամ խաբելով կողոպտէ զնա, ասի դաւաճանել: Եւ [illegible] 3. 22:

Դաւաճանութիւն. թեան. || նենգութիւն. կամ հնարիւք խաբէութիւն. կամ պատրողութիւն. կամ խարդախութիւն: Գործ. 23. 16. 4. Թագ. 12. 20:

Դաւանահաւաքույր? . բուրի. աւ. աց. օք: || դաւանակից. կամ զնոյն դաւանութիւն ունօղ. և կամ միաբանեալ 'ի միում դաւանութեան: Նոննս. 'ի գործս առաքելոց:

Դաւանակից. ի. աւ. աց. օք: || ունօղ դաւանակից. և կամ ունօղ դաւանութեան հաւատոյ. որպիսին է եկեղեցին. և այլք նմանք: Նոննս. ղթ:

Դաւանաւոր. ի. աւ. աց. օք: || ունօղ ըղղ դաւանութիւն հաւատոյ. կամ դաւանօղ ըղղ հաւատոյ դաւանութիւն: Նոննս. ղթ:

Դաւանիմ. եցայ. կամ եցի. եայ. իլ: (Հաստատական.) || հաւատալ. կամ ճշմարտել. կամ խոստովանիլ բերանով զոյն՝ զոր հաւատայ սրտիւ: 1. Տիմ. 6. 12: Եբր. 44. 25:

Դաւանութիւն. թեան: || խոստովանութիւն հաւատոյ: 1. Տիմ. 6. 12: Եբր. 44. 26:

Դաւանք. անաց. օք: (անեզական.) || դաւ. կամ դաւաճանութիւն. կամ խաբէութիւն. և կամ նենգութիւն:

Դաւեմ. եցի. եաւ. ել: (Ներգործ.) || նենգել. կամ 'ի ծածուկ հնարել չար ընդդէմ ումեք. կամ խարդախել: Եզեկ. 12. 6:

Դափ. ոյ. ով. ոց. ովք: || Թմբուկ, որ է մաշկաձև գործիք ինչ խաղալկաց՝ կազմեցեալ 'ի բարակ մաշկէ. զոր 'ի ձեռս կալեալ հարկանեն երգելով: Սաղմ. ՃԽԹ:

Դափինն. (Նախդրիւ հոլովի.) || արմաւենաւոր. և ուրախակիցն թմբկահարութեան. կամ ծափողծափի հարկանումն. և այլք այն պիսիք, որք 'ի Թատերս, և 'ի կոկէստ ընդ[illegible] նին: Եւ այս երրեմն անդրադարձաբար ա[illegible] ոի զարուեստական բանից. և զարդա[illegible] բերութեց հեռաւորաց: Ոսկէ. 'ի Նախնիքն:

Դափր: || ընդ. բայի շարակցի այսպէս. դափր հատանել. և նշանակէ՝ խրախտալով, և կատակելով յանդգնաբար քերել զգետինն ոտամբ. որպէս առնեն երիվարք: Յոբ. 39. 21:

Դ Դ

Դդմիան. (Նախդրիւ հոլովի.) || տե՛ս ըղ Դդմութիւն:

Դդմաճ. ի. իւ. ից. օք: || խմորեղէն կերակուր. կամ խմոր բաղադրեցուցեալ՝ մանրեցեալ և չորացուցեալ 'ի պէտս կերակրոց:

Դդմենի. ենւոյ. եաւ. եաց. եօք: || է բոյս ինչ ջրասէր, լայնատերև, և գեղաթառամ. որ աճեցեալ, և երկայնացեալ՝ փաթաթի ընդ ծառովք, և զորմովք. և զայլովք նը մանեօք. և պտղաբերէ դդում: Յովն. 4. 6:

Դդում. դդմի. աւ. ոց. օք: || է բերք դդմենւոյն, որոց ոմանք դեղին լինին. և ոմանք սպիտակ. և քաղցր. որք լինին կերակուրք մարդկան: Իսկ ոմանք ոչ ուտին. այլ 'ի գործ ածին 'ի զանազան պէտս իբրև զա[illegible] նօթ, զի միջին մասն լուլեանց է դատարկ:

Դ Ե

Դեգեր. ի. իւ. ից. իւք: || դեգերումն. կամ դեգերանք: Եւ մերթ նշանակէ ըղ դեգերեալն. և կամ զդեգերօղն:

Դեգերանք. անաց. օք: (անեզական.) || դանդաղումն. կամ հեղգաբար յամեցումն. և կամ յամելով կալ և մնալն, և սպասելն. և կամ պարապելով յինչ յամենալն: Հռովմ. 12. 11: Մերթ և նշանակէ զվարանումն. կամ զտարակուսանս: 'Ի Հարց. [illegible]:

Դեգերիմ. եցայ. եցաւ. իլ: (Ձայնակր.) || դանդաղիլ. կամ հեղգալով յամել: Սաղմ. [illegible]: Եւ կամ պարապելով գործոյ ինչ՝ յերկար յամենալ: Նոննս. ժը: Իսկ մերթ նշանակէ կալ մնալ, և սպասել. և կամ ակնունել: Իմաստ. 6. 15: և Լամբրոն: Երբեմն և նշանակէ վարանել. կամ տարակուսելով հոգալ 'ի միտս:

Դեգեւիմ. եցայ. եաւ կամ եայ. իլ: (Ձայնակր.) կամ Դեգեւեմ. եցի. եաւ. ել: (Չէզոք.) || դողդողալ. կամ դողդողել. կամ երերիլ. կամ դանդաչել. և կամ սայթաքել: Նոննս. ձէ: Իսկ մերթ դնի փոխանակ երկբայելոյ. կամ տարակուսելոյ: Ոսկէ. 1. հատոր:

Դեկան. ի. աւ. աց. օք: || տասնից. գլ

այն դրամն, որ է տասն սափնոյ. կամ տասն փոքրամնոյ. կամ տասն թախմնոյ, ասէ դե կան, ըստ առնլորութեան երկրին. եւ ժամա նակին։

Դեկանամիր. ի. իւ։ || է անուն ամսոյն հա. մայեցւոց. որ է երկոտասաներորդն՝ սկսել ՚ի յունվարէ։

Դեղ. ոյ. ով. ոց. ովք։ || մերթ նշանակի սերմանիս. կամ բժշկական դարմանն։ Երեմ. 46. 11։ Յայտ. 3. 18։ մերթ եւ թոյնն, ՚ի շնէր։ 2. Մակ. 10. 13։ Երբ մերթ մինչ դեղ գեղ դալար, խմանի խոտ դալար. ՚ի կանաչ։ 2. Օրին. 29. 23։ Եսայ. 15. 6։ մերթ եւ նշանակէ զթանաքն, որով թացեալ գրիչն՝ գրեմք զգիր։ տամկ. մուրեքքեպ։ 2. Յով. 1. 12։ 3. Յով. 1. 13։ Մերթ եւ նշանակէ զներկն. կամ զանգոյն. կամ զծարիրն. եւ զայլս, որովք պաճուճեն զերեսս. եւ կամ զնկարս ասղնեն։ Խորէն. ա. գլ. 10։

Դեղագործ. ի. աւ. աց. օք։ || զդեղս գործօղ. եւ կամ զդեղս կազմօղ եւ պատրաստօղ։ Իսկ մերթ նշանակէ՝ դեղով. կամ նկարել՚ով գործօղ. կամ շինօղ զիր ինչ։

Դեղադիր. դրի. աւ. աց. օք։ || զդեղ դնօղ ՚ի վէր վիրաց. եւ կամ դնումն դեղոյ։

Դեղակապ. || ընդ բայի շարակցի այսպէս. դեղակապ լինել. եւ նշանակէ՝ զդեղ մահու ընդունել. կամ մահացու թունով թունաւորել. եւ կամ զմահաբեր դեղ ուտել։ Խորէն. բ. գլ. 84։ Եւ կամ այսպէս. դեղակապ կորուսանել. ՚ի, զդեղ մահու, կամ զթոյն տալով կորուսանել։

Դեղահատ. ի. իւ. ից. իւք։ || հատ. կամ թաշկինակ, կամ բուրդ, եւ այլք նմանք, որք թունաւոր հատով ատպարեալ են, ասին դեղահատք. որովք դեղատուքն զոքեն զմարդիկ ՚ի կենաց։

Դեղանկար. ի. աւ. աց. օք։ || դեղով նկարեցեալ. կամ ներկիւ պաճուճեցեալ. որպիսիք են նկարկեալ պատկերք, եւ այլք նման։ Նարեկ. ձէ։

Դեղավաճառ. ի. աւ. աց. օք։ || վաճառօղ դեղորէից։ կամ մանուածոց դեղոց նկարչաց եւ կամ փոշեաց զանազանից. եւ այլոց նմանեաց։

Դեղատու. տուի. աւ. աց. օք։ || մերթ նշանակի տուօղն բժշկական դեղոյ։ եւ մերթ տուօղն մահադեղի. եւ կամ թունաւոր կախարդ։ Սաղմ. 57. 6։ Յայտ. 21. 8։

Դեղատուութիւն. թեան։ || մերթ նշանակէ զտուումն բժշկական դեղոյ։ Նարեկ. խէ։ Իսկ մերթ նշանակէ զտուումն մահադեղի։ Յայտ. 9. 21։

Դեղարան. ի. աւ. աց. օք։ || տեղի՝ կամ խանութ, ուր դնին, կամ շինին, եւ վաճառին դեղք։

Դեղեմ. եցի. եա. եալ։ (Ներգործ.) || Թունաւորել. կամ զդեղ մահու արբուցանել։ Իսկ մինչ ասի. դեղեալ երկաթ. կամ նետ. խմանի՝ թունաւոր ջրով ջրար առեալ։ ՚ի Վարս հարց. գ։

Դեղընձայու. պտղի. աւ. աց. օք։ || ընձայօղ, եւ Ճաշակօղ բժշկական դեղոց։

Դեղթափ. ի. իւ. ից. իւք։ || այն դեղն, որ թափէ զթոյնն կերեալ. եւ բժշկէ յա եւ իցէ թունից։ եւ ըստ այսմ հաւ բժշկա րար խոտք, եւ արմատք բուսոց, եւ այլք նը մանք՝ որք բնականաբար օգնեն առ բժշ կութիւն հիւանդաց. կոչին դեղթափք։ Սոյնպէս եւ սրբազան իրք, որք տան ըստ հաւատոյ՝ զբժշկութիւն հիւանդացն։ Բայց մերթ ՚ի յիմարաց կոչին դեղթափք՝ ՚ի պա տուական առատացեալ հնարեալ սկաւառքն, եւ բաժակքն ագնձեայք, զորոց առասպե լեն, թէ ըմպօղքն անտի զերծ բժշկին։

Դեղին. ղնոյ. ով. ոց. ովք։ || է տեսակ ինչ գունոյ. որպիսի է գոյնն ոսկւոյ. եւ այ լոց նմանեաց. որ եւ տամկօր. ասի՝ դեղին։ Իսկ մերթ նշանակի ածօղն զայսպիսի գոյն։

Դեղիչ. ղչի. աւ. աց. օք։ || դեղատու. կամ թունիչ. կամ թունաւոր կախարդ։

Դեղձ. ի. իւ. ից. իւք։ կամ ոյ. ով. ոց. ովք։ || պտուղ ինչ կարմիր՝ եւ դեղին՝ նման ծի րանի, որ ունի զկորիզ. ՚ի զկուտ խոռո չաւոր, որոյ միջին է լեղեհամ. տամկօրէն շէֆթալի։

Դեղնագոյն. գունի. իւ. ից. իւք։ || այս պէս հոլովեցեալ. է բաղդատական անուն. եւ նշանակէ զառաւել դեղինն։

Դեղնագոյն. գունոյ. ով. ոց. ովք։ || այս պէս հոլովեցեալ՝ է բարդեցեալ անուն, եւ նշանակէ զայն՝ որ ունի զդեղին գոյն։

Դեղնաշորթ. ի. աւ. աց. օք։ կամ իւ. ից. իւք։ || դեղնագոյն. կամ խարտեաշագոյն. զի բառս շորթ, նշանակէ զգոյնն։

Դեղնուց. նուցի. աւ. աց. օք։ || է դեղնա գոյն հիւթն, որ ՚ի մէջ ձուոյն, որ եւ տամկ. ասի՝ դեղնոյ։ ըստ այսմ կարէ ասիլ եւ զայ լոց դեղին հիւթոց, որք նման դեղնուցի ձուոյ՝ են յիրում իմիք։

Դեղտա. ի. իւ. ից. իւք։ || Թխնոտ. կամ թխնաւոր. տամկ. շէհիրլի։ Ռոժէ. ՚ինո խէրգանէ։

Դեղորայք. որէից. իւք։ (անեզական.) || բժշկական դեղք. կամ սպեղանիք։

Դեղոց. ի. աւ. աց. օք։ || տե՛ս զԴեղարան։

Դեմսա. ի. աւ. աց. օք։ || դաւառ. կամ նահանգ։

Դեմետր. տրի. իւ։ (անյորդնական.) || է անուն մարդոյ։ Իսկ ՚ի Նարեկի. ղթ. տառ. Զթանձրութիւն գեմետրի եղերձ, նշանակէ՝ զերկիրն, կամ զգետինն։

Դեն. ի. ին. իւ. իւք։ || հաւատ. կամ կրօն, զոր դաւանի ոք։ Խորէն. գ. գլ. 34. եւ 55։

Դենակորոյս. ուսի. աւ. աց. օք։ || հաւա տակորոյս. կամ ուրացօղ։

Դենար. ի. աւ. աց. օք։ կամ իւ. ից. իւք։ || է անուն դրամոյ. որոյ ծանրութիւն է մի տրամ։ Իսկ արժողութիւն՝ եթէ իցէ արծաթեայ՝ է 22. ասակ։ Յով. 12. 6։ եւ Յայտ. 6. 6։ Իսկ եթէ իցէ ոսկեայ, է յոյժ աւելի։

Դեռ. (մակբայ ժամանակական.) || տա կաւին։ Ծննդ. 8. 9։ եւ 1. Կորն. 3. 2։ Մերթ

եւ նշանակէ՝ նորոգ · կամ նորապէս · կմ այժմ իսկ: 'Ի Հոր. հարց. իզ: Եւ ըստ այսմ նշանակութեան եղանեն 'ի սմանէ բազում բարդութիւնք՝ զորս տեսցես զկնի:

Դեռաբոյս · բուսի · ից · իւք: || Նորաբողբոջ · կմ նորածին · կմ մատաղ: Լամբրօն:

Դեռաբուսիկ · (Նախադրիւ հոլովի:) || նոյն է ընդ վերինոյն:

Դեռածին · ծնի · ին · աց · օք · || Նորածին · կամ նորաբողբոջ: Լամբրօն: Մերթ եւ նշանակէ զմայրն, որ նորապէս ծնեալ է զորդին: Լամբրօն:

Դեռակիրթ: (Նախադրիւ հոլովի:) || Նորակիրթ · այսինքն, որ նորապէս է կրթեցեալ · և կամ դեռ եւս 'ի վարժման և 'ի կրթութեան է:

Դեռահասակ · ի · աւ · աց · օք: || Նորահասակ · և կմ այն՝ որ զդեռաբողբոջ հասակս ունի · որպիսիք են նորածին մանկունք: Լամբրօն:

Դեռահաւատ · ի · ից · իւք: || Նորահաւատ · այսինքն նորոգ եկեալ 'ի հաւատ · կամ նորապէս հաւատացեալ · որ և ասի՝ մատաղատունկ: Խորէն. ը. դր. 88:

Դեռավարժ · ի · ին · ից · իւք: || Նորավարժ · այսինքն նորապէս վարժեցեալ · կմ որ դեռ 'ի վարժման է:

Դեռեկ · եկի · աւ · աց · օք: || Նորեկ · կամ նորոգ եկեալ · որով իմանի այն՝ որ նորապէս է եկեալ 'ի հաւատ · կմ 'ի կրօնաւորութիւն · և կամ 'ի տեղի ինչ:

Դեռեւս: (մակբայ ժամանակական ·) || տակաւին: ռամկ. փոհա: Ծննդ. 49 · 27: մերթ եւ նշանակէ նորոգ · կմ նորապէս · կամ այժմ իսկ: Յուդիթ. 4 · 2:

Դեռ ընդ դեռ: (մակբայ ժամանակական ·) || Նորոգ · կմ նորապէս:

Դեսպան · ի · աւ · աց · օք: || յարքայէ առաքեցեալ միջնորդ առ այլ ոմն թագաւոր · և կմ առ ծերակոյտ ինչ · կմ հրեշտակ, որ ռամկօրէն ասի՝ էլչի: Մերթ եւ նշանակէ զփոխանորդն արքայի · կմ քահանայապետի, որք նստին յիմիք թագաւորութեան՝ առ 'ի նախահոգալ վերայ արքունականաց, կամ քահանայապետականաց:

Դեսպանութիւն · թեան: || Հրեշտակութիւն · այսինքն էլչիլիք:

Դեր · || է մասնիկ բաղադրական, որ 'ի բաղադրելն ընդ բառից, նշանակէ՝ փոխ · կմ հակ · այսինքն հակառակ · կմ ներհակ · զորս տեսցես յառաջիկայդ:

Դերամտանեմ · մտի · դերամուտ · անել: (չէ գրք ·) || փոխանակ ուրուք մտանել՝ 'ի գործ ինչ · կմ 'ի պաշտօն · և կամ 'ի տեղի:

Դերային · այնոյ · ով · ոց · ովք: || փոխանական · կամ հակակայական:

Դերանուն · անուան · ամբ · անց · ամբք: || փոխանուն, և է այն մասն բանի, որ զբացորոշեցեալ դէմս իրաց նշանակէ · և փոխանակ անուան դնի 'ի բանի: Քանզի փոխանակ ասելոյ պետրոս, ասեմք, սա · կմ դա · և այլն:

Դերանուանեմ · եցի · եա · ել: (Ներգործ ·) || փոխանակ յատուկ անուան զայլ անուն դնելով՝ անուանել զոք:

Դերասան · ի · աւ · աց · օք: || որ 'ի դիմաց այլոց, և կմ փոխանակ այլոյ ուրուք՝ առնէ զնմին առասպելաբանելով · կմ կատակերգու, որ զսուտ, և զխնոճածու բանս · կմ զառասպելս խօսի 'ի հրապարակի առ 'ի շահել զդեհնարս: ռամկ. ղօախօն · կմ լարբաղուն: Մերթ նաև նշանակէ զխաղարկուսն, որք 'ի խաղս՝ 'ի կերպարանս թագաւորի, և այլոց մարդկանց մտեալ, 'ի դիմաց նց խօսին զզարմանալիս, կմ զծիծաղականս:

Դերարկեմ · եցի · եա · ել: (Ներգործ ·) || փոխարկել:

Դերաքն · ի · ին: || Նեռն: և ասի դերաքն · իբր թէ հակաքն · զի ըստ ամի հակառակ Քի լինելոց է, և յանդգնեալ՝ զԱծական պաշտօն յանձն իւր ձգել կամելոց, և յետ իւր ջանալոց է ստութ նմանիլ Քնի ճն մերոյ: Նարեկ. զա:

Դերբուկ · բկի · աւ · աց · օք: || տես ընդ Դարբուկն:

Դերև: || Նախադրիւ հոլովի այսպէս · 'ի դերև · կամ զդերև · կմ 'ի դերևս: և նշանակէ 'ի բացեայ · կմ հեռի · Եւ մերթ սուտ · կամ ընդունայն, և կմ անօգուտ · ուստի կորդացեալ, և խոպան երկիրն՝ դերև ասի: Լամբրօն: Իսկ երբեմն ընդ բայի շարակցի այսպէս · դերև առնել · այսինքն ընդունայն, կմ անպտուղ առնել · կմ 'ի բացեայ առնել: Լամբրօն: Եւ կամ այսպէս · 'ի դերև եղանել · այսինքն սուտ եղանել · կմ ընդունայն լինել · կմ անօգուտ, և ընդ վայր լինել:

Դերևական · ի · աց · աց · օք: || ընդունայնական · կմ սնոտի · և կմ անօգուտ:

Դերհատուցական · ի · աւ · աց · օք · || փոխհատուցական · կմ փոխարինական · ուստի և մակբայք այսոքիկ՝ որչափ · այսչափ · և այլն · 'ի հնումն դերհատուցականք կոչէին · զի 'ի բանի զփոխարինութիւն ցուցանեն · որգոն, որչափ փառաւորեաց զինքն, այնչափ հատուցէք դմա զտանջանս:

Դերհիւսիսական · ի · աւ · աց · օք: || հակհիւսիսական, այսինքն հակակայ հիւսիսականին, որով իմանի հարաւային · որպիսի է հակարջային բևեռն:

Դերձիկ · ձկի · աւ · աց · օք: || շփոթք · կմ աղմուկ, կմ վրդովք, և կմ խռովք: մերթ եւ նշանակէ զհանդերձ կարօղն · այսինքն ռմկ. տէրզին:

Դեւ · դիւի · աւ · աց · օք: || այս պիղծ · կմ ոգի պիղծ · որ ասի զանմարմին գոյացութեց զայնցանէ, որք յառաջագոյն էին հրեշտակք · զի անմեղ ստեղծան յայ՝ որպ և այլք հրեշտակք: Բայց սոքա ապստամբեալք յայ, հանդերձ սադայելիւ՝ թօթափեցան յերկնից, ընդունելով յանձինս իւրեանց զյաւիտենական դատապարտութիւն · որոց ոմանք իսկոյն սուզեցան 'ի դժոխս · իսկ ոմանք ըստ կարգաւորմանն այ մնացին 'ի յօդս · զի ըստ թոյլտւութեան այ փորձեսցեն զմարդիկ · որք և միշտ ընդ իւրեանս ունին զտանջանս իւրեանց: Եւ երբեմն 'ի մարմինս մարդկան մտեալ՝ լլկեն, և չար

չարեն:

Digitized by Google

չարէն: Տօբ. 6. 8: և Սաղմ. 90. 6: և Մակ. 8. 31. և 9. 34: Իսկ մերթ կուռքն հեթանոսաց, ըստ որում լինէին գործիք պաշտաման, և տեղի բնակութեան դիւաց, կոչին դևք: Սաղմ. 95. 5:

Դևկալիոն. ի. աւ.: || Է յատուկ անուն որդւոյ պրոմեթեայ. զորմէ առասպելաբանէին հեթանոսք զբազում բանս: Արդ՝ յառասպելաբանութեց յայնցանէ առիթ առեալ, մոլորեցան բազումք՝ զսա փոխանակ Նոյի համարելով և զյարմարադրութեան տապանին սորին լինել վարկանելով. ոչ յիշէ նարեկացին 'ի բանն. ըԹ. ուր ասէ. քանզի և յայլ ոմն խուժական հեթանոսօրէն փոխաբերին ուրուճապէս դևկալիոն ընդ Նոյի ասել. որ և զտապանին յարմարադրութեան սադրեցին սովիմբ եղանել:

Դ Է

Դէզ. դիզի. իւ. ից. իւք: կամ դիզոյ. ով. ոց. ովք: || կոյտ դիզելի իրաց. որգոն. քարի. փայտի. կամ այլոց նմանեաց:

Դէմ. դիմի. աւ. աց. օք: կամ դէմք. դիմաց իբրև անեզական: || մերթ նշանակէ զերեսս. կամ զկերպարանս երեսաց մարդոյ: ըստ այնմ. Երգ. 2. 14: դէմք քո գեղեցիկ: ուստի մինչ ասի՝ դէմ յանդիման, իմանի՝ երես առ երես: Ելից. 33. 11: Իսկ մերթ նշանակէ զանձն, որ է բանականի բնութեան անհատ գոյացութիւն: Իսկ 'ի քերականութեան, յորում դնին դէմք բայից, և դերանուանց, առեալ լինի բառս դէմ, փոխանակ անձին. քանզի յորմէ լինի բանն, ասի առաջին դէմ, որգոն. ես խօսիմ: առ որ լինի բանն՝ ասի երկրորդ դէմ, որգոն, դու խօսիս: և վն որոյ լինի բանն՝ ասի երրորդ դէմ, որգոն նա խօսի: Մերթ ևս նշանակէ զկերպն. կամ զօրինակն. և կամ զեղանակն. և ըստ այսմ ասի պատշաճ դիմօք խօսել. այսինքն յարմար կերպիւ: սոյնպէս իմանի, մինչ ասի. դէմք բանի. դէմք խօսից. և այլն: Նարեկ. ղԹ: և ըստ այսմ նշանակութեան եղանին 'ի նմանէ բառքս այսոքիկ: բազմադէմ, և բազմադիմի, որք նշանակեն զբազմակերպն: Մերթ ևս նշանակէ ըզ հանդէպն. ըստ այնմ. 4. Թագ. 23. 13: որ 'ի դիմաց երուսաղէմի. այսինքն 'ի հանդիպոյն: Մերթ ևս նշանակէ զդիտումն. կամ զմիմացուճածս, և զդիտաւորութիւն: Ողբ. 1. հատ. լԹ: Եւ ըստ այսմ մերթ ընդ բայի շարակցի. զոր օրինակ՝ դէմ եդեալ. և նշանակէ զդիտաւորութիւն դնել. կամ դիտել. և կամ դնել 'ի միտ: Ղուկ. 9. 53: Խորէն. Գ. գլ. 62: Եւ կամ դիմել: Խորէն. Գ. գլ. 25:

Զդէմ կալնում. կալայ. կալ. նուլ: (չէզոք.) || ընդդիմանալ. կամ ընդդէմ կալ: Եսայ. 63. 5:

Զդէմունիմ. զդէմ ունիլ. և այլն: || ընդդէմ կալ. կամ ընդդիմանալ. և կամ հակառակիլ: 1. Մակ. 10. 73: Գործ. 6. 10:

'ի Դիմի հարկանիմ. հարայ. իլ: (ձայնակր.) || ընդդէմ Թշնամեաց վազել, և դիպիլ նոցա պատերազմաւ. և կամ 'ի վերայ յարձակելով պատերազմ տալ ընդ Թշնամիս. կամ սկիզբն առնել մարտի պատերազմի. 1. Մակ. 4. 34: և 12. 25: 3. Մակ. 6. 15: Իսկ մերթ նշանակէ՝ դիմադարձ լինել. կամ հակառակիլ: ռամկ. դէմ դնել: Աղուէս. 21. 29: և Եփէս. 6. 13: Երբեմն ևս մինչ հողմն. կամ այլ ինչ նման հարկանի 'ի դէմս ուրուք, և կամ հարկանէ զոք, ասի 'ի դիմի հարկանել: Իմաստ. 5. 24:

Դէմընդդէմ. (Նախադրութիւն. որ պահանջէ զհոլովն տրական:) || դէմ յանդիման, կամ հանդէպ միմեանց. ռամկօր. մէկըմէկու-դէմ: Ծննդ. 15. 10: Ելից. 26. 5: 1. Մակ. 13. 28:

Դէմ յանդիման: (Նախադրութիւն որ պահանջէ զհոլովն սեռական. և մերթ տրական.) || հանդէպ. կամ ընդդէմ. կամ յանդիման. Ելից. 14. 2: 2. Մնաց. 34. 4: Յուդիթ. 16. 24: Մերթ ևս է մակբայ յայտնական. և նշանակէ, երես առ երես. կամ յայտնապէս: և ըստ այսմ ասի՝ դէմ յանդիման խօսել:

Դէն. դենի. իւ. ից. իւք: || տես զԴեն: Խորէն. Գ. գլ. 36:

Դէպ. դիպի. աւ. աց. օք: || պատշաճ. կամ յարմար. կամ պատկան. կամ մարթ. և կամ դիպուկ: Խորէն. Ա. գլ. 30. Ուստի և իրն՝ յորժամ 'ի պատկանաւոր ժամանակի լինի, ասի լինել 'ի դէպ ժամանակի: Յոբ. 19. 4: Սաղմ. 9. 10: Եւ ըստ այսմ նշանակութեան փոխանակ ասելոյ՝ դէպ էր, ասի 'ի դէպ էր: ըստ այնմ Գործ. 18. 14. 'ի դէպ էր ինձ անսալ ձեզ. այսինքն պատշաճ էր. և այլն: Մերթ ևս նշանակէ զդիպուածն. կամ զպատահարն. և կամ զհանդիպումն: 1. Թագ. 20. 26: և Մծբն. ժԹ: Մերթ ևս ընդ բայի շարակցի այսպէս. դէպ լինել. և նշանակէ, դիպիլ. կամ հանդիպիլ. և կամ պատահիլ: Ծննդ. 42. 38: Ղուկ. 10. 31: Գործ. 21. 35: Եւ կամ այսպէս. 'ի դէպ գալ. այսինքն, յարմար և համեմատ գալ. կամ դիպուկ գալ. և կամ դիպիլ: 2. Պետ. 2. 22: Սոյնպէս մինչ ասի. Խորէն. Ա. գլ. 9. ուր պատահմունք 'ի դէպ եղանէին. իմանի՝ յարմար գային, կամ յաջողէին: Եւ կամ այսպէս. դէպ տալ. այսինքն, յարմար և պատկան լինել. կամ յաջողել: 1. Մակ. 8. 30: և Ողբ. 2. հատ. Ը:

Դէպ. (Նախադրութիւն, որ խնդրէ զհոլովն տրական.) || և նշանակէ, առ. կամ 'ի. զոր օրինակ. դէպ ձեզ եմ առաքեալ. այսինքն, առ ձեզ: 1. Կորնթ. 9. 2: Իսկ Գործ. 16. 11. ուր ասի. դէպ ուղիղ գնացաք 'ի սամոթրակէ. իմանի ասել՝ ուղիղ գնացաք դէպ 'ի սամոթրակէ: Մերթ ևս նշանակէ՝ հանդէպ. ըստ այնմ Խորէն. Ա. գլ. 10: Փախեան իւրաքանչիւր դէպ երեսաց իւրեանց. այսինքն հանդէպ երեսաց իւրեանց:

Դէպ և դէպ: (Նախդրիւ հոլովի. և մերթ իբրև զմակբայ վարի:) || պատշաճագոյն. կամ կարի դէպ. կամ պատեհագոյն և կամ յարմարագոյն: Կիւրղէ Եղծ. Է:

Դէպ ու դէպ: || ընդ բայի շարակցի այս-

ղէս . դէպ ու դէպ նկատել . և նշանակէ դէտակն կալեալ նկատել . կմ զաչս իւր սևեռեալ ուրեք՝ ուշադրութ՛բ նկատել : Ոսկ . 1 . հատ . ա :

Դիտել . դիտէի . ու . աց . ըք : || դիտող, և նկատող . որ տեղի զայնմանէ, որ՝ ի բարձր տեղւոջ կացեալ՝ հայի և դիտէ զերթևեկսն, կմ զպահպանութիւն թշնամեաց ՝ի հեռուստ, և զայլս նմանս, զի ազդ արասցէ, և ծանուսցէ քաղաքապահացն : 2 . Թագ . 13 . 34 : և 4 . Թագ . 9 . 17 : Իսկ մերթ նշանակէ զլրտեսն, որ գնացեալ ՝ի կողմն թշնամեաց . կամ ՝ի տեղի ինչ, դիտէ և հետազօտէ զդիպուածս նց : 1 . Մակ . 12 . 26 : Իսկ մերթ նշանակէ զառաջնորդս . կմ զվարդապետս, և զայլս, որք են տեսուչք կարգեալք ՝ի վր ժողովրդեան : Եսայ . 21 . 6 : և Եզեկ . 3 . 17 : Մերթ ևս նշանակէ զմարգարէսն, առ որ լինի հայեցումն, և դիտումն : և ըստ այսմ է : Յօբ . 16 . 13 : Իսկ Եսայ . 41 . 9 . ասէ . ՝ի դիտաց . իմանի՝ ՝ի քարանձաւաց . կմ ՝ի բարձրագահ տեղւոջէ . և կմ ՝ի դիտաւորաց նոցա : Իսկ 2 . Մակ . 10 . 30 . ասէ . դէտ կալեալ . իմանի՝ հայեցեալ . կամ դիտեալ :

Դէտակն . (նախդրիւ հոլովի .) || դիտող ակն . կամ աչք, որ դիտէ, և հայի : ըստ այնմ . Դէտակն ՝ի վր նոցին կալեալ, տեսանէր անդ խառն յարաբարբառեալ : Յուդթ : մերթ ևս նշանակէ զեղեգնեայ աշտանոցն, որ առեալ . ասէ փոխաբերն :

Դէտակն կալնում . կալայ . կալ . կալնուլ : կամ Դէտակն ունիմ . ունէի . դէտակն ունիլ . և այլն : (չէզոք .) || ուշադրութեամբ դիտել . կամ աչնուլ . կամ զաչս ՝ի վր կալնուլ՝ և սևեռել ուրեք . կմ ուշադիր աչօք նկատել : Եզեկ . 33 . 8 : Դատ . 5 . 28 : Ողբ . 4 . 17 : Իսկ մերթ նշանակէ՝ ակնունել . կմ սպասել : և այսու կերպիւ, մանաւանդ դէտակն ունիլն վարի, ըստ դրի . 3 . Մակ . 5 . 12 . և 14 : Եւ զայսմանէ տես և զբառն՝ Դիտակն :

ԴՐ

Դրգչումն : (նախդրիւ հոլովի) || տես՝ ՝ի ներքոյ զԴրդչումն :

Դրդչումն . չման . ամբ . մանց . մամբք : || խռովութիւն . կամ կարկաչահոսութիւն, կամ ձայն, և աղաղակ հոսմանց ջուրց գետոց, և նմանեաց . ըստ այնմ . Խորէն . ա . գլ . 11 . Ուր գետն երասխ անցանէ ընդ խոխոմս ձիգս, և նեղուց ահագին դրդչմամբ իջանէ ՝ի դաշտ մի :

ԴԺ

Դժբաղդ . կամ դժբախտ . ի . իւ . եց . իւք : || անբաղդ . կմ տարաբաղդ : ռամկ . բախտսըզ :

Դժգամիմ . եցայ . եայց . իլ : (ձայնակր .) || դժուարիլ . կմ խոժոռիլ . կամ վշտանալ . կամ զայրանալ . և կամ դժգամնիլ : Խոր . բ . գլ . 69 :

Դժգամնիմ . եցայ . եայց . նիլ : (ձայնակր .) || վշտանալ . կմ տժգոհիլ . կմ դժուարիլ . կմ խոժոռիլ . և կմ զայրանալ . Լամբր :

Դժգոհեմ . եցի . եա . ել : (չէզոք .) կամ դժգոհիմ . եցայ . եայց . իլ : (ձայնակր .) || տրտնջել . կամ դժուարիլ, և անգոհ լինիլ :

Դժգոյն . գունի . իւ . ից . իւք : || այլագունեալ . կմ վատթարացեալ գունով . կամ տգեղ . կմ զազրատեսիլ . և կմ զդժնեայ տեսս ունող :

Դժգունիմ . եցայ . եայց . իլ : (ձայնակր .) || այլագունիլ . կամ փոխել զբնական գոյն իւր ՝ի վատթար գոյն . կամ տգեղանալ գունով երեսաց . և կմ զազրատեսիլ լինիլ :

Դժխեմ . դժխմի . իւ . եց . իւք : || արհամարհող . կամ անհաւան . կամ կամակոր . կմ խստապարանոց . և անզգամ : Մծբն . ժա . և ժէ : Եւ սակայն այս բառ, ՝ի յաշխարհաբառ լեզուոջ է՝ բայ, և նշանակէ գանել . կը ծեծել զոք :

Դժխմեմ . եցի . եայց . ել : (չէզոք .) || խստող, և անզգամ լինիլ . կմ խստապարանոցութ՛բ անհաւան լինիլ . կամ կամակորել . և կմ անզգամ լինիլ :

Դժխմութիւն . թեան : || կամակորութիւն . կմ անզգամութիւն . կամ անհաւանութիւն . և կմ խստապարանոցութիւն : Մծբն . ժթ :

Դժկամակ . ի . աւ . աց . օք : || խոժոռող . կմ չկամեցող . կամ դժուարող . կմ ձանձա_ ցեալ . կամ զայրացող . կմ ոչ անսացող . և կամ խեռ : Ոսկ . . 1 . հատ . իզ : Իսկ մինչ ասի՝ դժկամակ ձայն, կմ դոչիւն . կամ բան . և այլն . նշանակի՝ անախորժ . կմ անհաճոյ, և կամ զզուելի : Ոսկ . ՝ի նախեր փանփն : Մերթ ևս բառս այս՝ Ը բայի շարակցի այսպէս . դժկամակ լինիլ . և նշանակի խոժոռիլ . կմ դժուարիլ . և կամ զայրանալ : 2 . Թագ . 19 . 42 :

Դժկամակեմ . եցի . եա . ել : (չէզոք .) կամ դժկամակիմ . եցայ . եա . կմ եայց . իլ : (ձայնակր .) || դժուարիլ . կմ խոժոռիլ . կամ զայրանալ . կամ դժգամնիլ . և կամ դառնանալ : ՝Ի Վարս հարց . ժէ :

Դժկամակութիւն . թեան : || խոժոռումն . կամ անհաւանութիւն . կմ զայրագնութիւն . կմ խեռութիւն . կմ դառնութիւն կամաց . և կմ անհնազանդութիւն : Մծբն . ժէ :

Դժմիտ . մտի . աւ . աց . օք : || անհաւան, կմ չարամիտ . կամ խեռաբարոյ . և կամ անզգամ :

Դժնաբարոյ . բարւոյ . աւ . աց . օք : || չարաբարոյ . կմ վատթարաբարոյ . կմ մոլեխոտ : Նարեկ :

Դժնահայեաց . եցի . աւ . աց . օք : || Ըդ դժ_ նեայ հայեցուածս ունող . կամ որոյ հայեցուածն աչաց է դժնդակ, և դաժան . կմ ժանտահայեաց : Խորէն . բ . գլ . 7 :

Դժնդակ . ի . աւ . աց . օք : || դաժան, կամ խիստ . կմ դաժան . կմ ժանտ . կմ չար . կմ դժնեայ, և անգութ : Եբրայեց . 13 . 4 : և

Ղուկ. ժա։ Եւ մինչ ասի՝ դժնդակ տան_ջանք, կամ պատիժ, իմանի՝ սաստիկ. կմ՛ չարաչար. և կամ յոյժ ծանր։ Իսկ մինչ ասի՝ դժնդակ օդ. իմանի՝ դառնա_շունչ օդ։

Դժնդակագոյն. գունի. իւ. իւք։ || Չարագոյն. կմ՛ դառնագոյն. կմ՛ ժանտագոյն. և կամ խստագոյն։

Դժնդականամ. ացայ. ացիր. անալ։ (Ընդ. միջ.) || Դառնանալ. կամ խստանալ. կմ՛ չարանալ. կամ ժանտանալ. կամ դաժա_նանալ. և կամ անտանելի լինիլ։

Դժնդակատեսգ. տիգի. աւ. աց. օք։ || Նման դժնդակ տեսլի. կամ դժնդականման. Ցր դժնդակատեսս, և չարաչար միտեցեալ, որ_պիսիք էին բևեռքն, որք մխեցան 'ի ձեռս իմ։ Նարեկ. ղղ։

Դժնդակութիւն. թեան։ || Դառնութիւն. կմ՛ խստութիւն. կմ՛ դաժանութիւն. կմ՛ չարութիւն. և կամ ժանտութիւն։

Դժնեայ. նէի. իւ. եց. իւք։ || Դժնդակ. կամ ժանտ. կմ՛ չար. կմ՛ անօրէն. կամ ապիրատ. և կմ՛ դաժան։ Իսկ մինչ ասի՝ դժնեայ հայեցուածք. Նշանակէ զթիւնա_ւորն, որպիսիք են հայեցուածք չարակ_նէից. որք և զապականեն հերձեն։ Խոս_րէն. ՟Է. գլ. 7։

Դժնէատեսիլ. (Նախադրիւ հոլովի.) || Չարատեսիլ. կմ՛ ժանտատեսիլ. կմ՛ զազրա_տեսիլ. կմ՛ ահեղադէմ։

Դժնէութիւն. թեան։ || Ժանտութիւն. կամ չարութիւն. կամ դաժանութիւն։ Իսկ մինչ ասի՝ դժնէութիւն հայեցուածոյ, իմանի՝ չարակնութիւն՝ որով չարակնեայքն թունա_ւորեն և վնասեն նոյ՝ յորս հային։ Խոսրէն. ՟Բ. գլ. 39։

Դժնիկ. դժնկի. աւ. աց. օք։ կամ դժընկան. անք. անց. անւք։ || Է տեսակ իմն փշոյ, որ ունի զծաղիկս սպիտակս և կեռս, որով զայնս զորս շօշափէ՝ կալնու և ոչ թողու։ Սա մինչ չորանայ, գիւղացւոց բորբոքեալ բոցակիզի, նաև զշրջակայ ծառատունկս բոցակիզէ։ Դատ. 9. 15։ Համեմատի բար_կացողաց, յորոց բորբոքի հուր, և կեն_դանեայն կիզէ զինքեանս, և զմերձակայսն. Ըստ այսմ։ Սաղմ. 57. 10։ մինչ դժնիկ բարկու_թիւ կենդանւոյն կլանցէ զձեզ։

Դժնիմ. եցայ. եաց. իլ։ (ձայնակր.) || Դըժ_նեայ լինիլ. կամ ժանտանալ. կմ՛ խստա_նալ. կմ՛ դառնանալ. և կմ՛ դժնդականալ։

Դժոխք. խոց. ովք։ (անեզական.) || Խորին գոյն անդունդ երկրի, որով միթէ իմանի տարտարոսն. կմ՛ սանդարամետն անդն_դոց, որ է 'ի միջին կէտն երկրի, ուր գոյ հուր անշէջ. և տանջանք անտանելի. և տմ՛ տեղի չարեաց, ուր յաւիտենական յաւէր անձինք տանջին դևք, և ամ՛ մարդիկք դա_տապարտեցեալք։ Մատ. 11. 23։ Ղուկ. 16. 23։ Յայտ. 1. 18։ Իսկ մերթ իմանի լիմպոս հարցն մեր, որ էր տեղի հնոց 'ի խորս եր_կրի, ուր նախահարքն մեր արդարքն մե_ղաց արգելեալ կային 'ի դժոխս։ Եւ այս էր դժոխքն, ուր էջ Քն հոգւովն զինի մահուանն իւրոյ. ո՜ր ասի 'ի հանգանակին առաքելոց. և աղատեաց անտի զհոգիս հարցն մեր՝ քակելով զայն։ Երբեմն և իմանի լիմպոսն երեխայից, որք առանց մկրտութեան մեռան. կմ՛ մեռանին։ Մերթ և բառս դժոխք նշանակէ զգերեզմանն։ Ծննդ. 37. 35։ և 42. 38։ Երբեմն և բառս այս նշանակէ զդժուարինն, կմ՛ զդառն, և զդժնդակն. և այս 'ի բարդութիւն. որպէս երեւեսցի 'ի հետևեալ բառս։

Դժոխաբնակ. ի. աւ. աց. օք։ || 'Ի դժոխս. կմ՛ 'ի սանդարամետս բնակող։

Դժոխագնեայ. նէի. իւ. եց. իւք։ || Դժո_խագնի. կմ՛ դժոխային. և կամ այն՝ որ մերձաւորի առ դժոխս։ Նարեկ. ծզ։

Դժոխալուր. (Նախադրիւ հոլովի.) || Դըժ_ուարալուր. կամ ծանրալուր. կմ՛ անա_խորժ և զզուելի առ 'ի լսել։

Դժոխամարտ. ի. իւ. եց. իւք։ || Դժուա_րամարտ. կմ՛ դժուարաւ մարտնչելի։ Իսկ մերթ ընդ դժոխայնոց մարտնչօղ։ Եւ եր_բեմն անեղին, ուր դժոխայինն մարտ լի_նին. և կմ՛ ՟Է դժոխայնոց մարտուցեալ լինի. ասի դժոխամարտ։ Նարեկ. 'ի գո_վեստ առաքելոց։

Դժոխային. այնոյ. ով. ոց. ովք։ || Դժոխա_կան. կամ այն՝ որ պատկանի դժոխոց։

Դժոխամարմին։ (Նախադրիւ հոլովի։) || Ընդ դժոխային, կամ զչար և զժահն՝ և զդժ_նեայ մարմին ունօղ։ Նարեկ. ծզ։

Դժոխելանելի. (Նախադրիւ հոլովի.) || Դը_ժուարաւ ելանելի. որպիսիք են աշխա_րհք. կամ բարձրաբերձ պարիսպք. և կմ՛ դժուարամատոյց բերդք, և սանդուղք՝ յորս դժուարին է ելանել. և կմ՛ արհես_տիւ շինեցեալ տեղիք. յորս մտանող դը_ժուարաւ կարէ ելանել արտաքս։ Խոսրէն. ՟Ա. գլ. 15։

Դժոխերասան. ի. աւ. աց. օք։ || Դժուարա_սանձ. կամ դժուարագլուխ. կմ՛ խստե_րախ. որպիսիք են ամեհի երիվարք։

Դժոխերես։ (Նախադրիւ հոլովի։) || Ժա_ռադէմ. կամ խոժոռադէմ. կմ՛ ժանտա_հայեաց։ Ոսկէ. 1. Կոր. իզ։

Դժոխըմբեր. (Նախադրիւ հոլովի։) || Դը_ժուարաւ ըմբերելի. կամ դժուարաւ տա_նելի. կամ դժուարակիր։

Դժոխորովայն. ի. իւ. եց. իւք։ || Դժոխոց նման զանյագ որովայն ունօղ. որպիսիք են շատակերք գազանք. և որկորամոլեալ մար_դիկ։ Նարեկ. Ժ։ Բայց այս բառս 'ի տպա_գրեալ Նարեկին մեկնութեան երեւեալ է դժրօղ որովայն. որ է անյագ մարդ։

Դժուար. ոյ. աւ. աց. օք։ || Աշխատալի. կմ՛ զդժուարութիւն ունօղ. և կմ՛ որ դիւրաւ ոչ լինի։ ռամկ. [illegible]։ Իսկ մերթ նշա_նակէ զժպատեհ. կմ՛ դժնդակ. կմ՛ դառն. կմ՛ ծանր. և կամ անտանելի. և ըստ այսմ ասի. Խոսրէն. ՟Է. գլ. 48. դժուար վարկա_ցեալ զանտանելինոյնն լինել։ Իսկ մինչ ասի լերինք դժուարք՝ իմանի լերինք առա_

ստամբութեամբ։ Խորէն. յաշխարհագրութեան։

Դժուարաբարձ. ի. իւ. ից. իւք։ || զդժուարին, և զծանրութիւն բառնալ կարող։ Իսկ մերթ նշանակէ զդժուարին բառնալն։ Յոբ. 1. հատ. ...

Դժուարաբարբառելի. (Նախադրիւ հոլովի.) || որ դժուարութեամբ կարէ բարբառել լինել։ կամ դժուարախօս։ Եզեկ. 27. 3.

Դժուարաբարոյ. ի. իւ. ից. իւք։ || Ժանտաբարոյ, կամ չարաբարոյ. կամ խստաբարոյ։

Դժուարագիւտ. ի. իւ. ից. իւք։ || դժուարաւ գտանելի. կամ սակաւագիւտ։ Լամբրոն։

Դժուարաթարգմանելի. (Նախադրիւ հոլովի.) || դժուարաւ թարգմանելի. կամ դժուարաւ մեկնելի. և կամ դժուարաւ այլափոխելի։

Դժուարաժայռ. ի. իւ. ից. իւք։ || Ունող զդժուարին ժայռս. կամ որ է քարուտ, և ապառաժուտ, ընդ որ դժուարին է գնալ. որպիսիք են ոմանք անտառք, կամ լերինք։

Դժուարալուծ. (Նախադրիւ հոլովի.) || դժուարաւ լուծանելի. կամ դժուարաւ քակելի. և այս մերթ առի գիտութիւնս. և մերթ վասն բանականութեանց, և գիտնոց։

Դժուարալուր. (Նախադրիւ հոլովի.) || դժուարաւ լսող. կամ դժուարաւ անսացող, և հնազանդող. կամ անլուր, և անհնազանդ։ Լամբրոն։ Իսկ մերթ նշանակէ զծանրալսութիւն. կամ զդանդաղութիւն. և կամ որ դժուարաւ կարէ լսել, և համոզեալ լինել։ Լամբրոն։

Դժուարախիլ. (Նախադրիւ հոլովի.) || դժուարաւ խլելի. կամ դժուարաւ քանդելի. կամ որ դժուարաւ կարէ կորզել, և՛ ի բաց բառնալ։ Յոբ. 1. հատ. ...

Դժուարածին. (Նախադրիւ հոլովի.) || դժուարութիւն, և մեծամեծ ներգութիւն ծննդոց։ Ծննդ. 35. 17. Իսկ մերթ նշանակէ դժուարութիւն ծնեցելոյն։

Դժուարակամ. ի. ա. աց. օք։ || դժուարին. կամ վշտակամ. կամ ... կամ նեղացուցիչ։ Յոբ. 2. հատ. ...

Դժուարակեղ. կլեղի. իւ. ից. օք։ || դժուարաւ այրելի, կամ կեղելի։

Դժուարակիր. կրի. աւ. աց. կամ ից. օք։ || դժուարութեամբ տանելի. կամ անտանելի. և կամ դժուարաբառնալի։ Մատթ. 23. 4.

Դժուարակոխ. (Նախադրիւ հոլովի.) || դժուարաւ ընթանալի, և քայլելի. և կամ դժուարաւ կոխելի. որպիսիք են քարուտ տեղիք. և այլք նման։ Նոյեմբ. ...

Դժուարակտուր. (Նախադրիւ հոլովի.) || դժուարաւ կթելի. կամ դժուարաւ քաղելի. և կամ դժուարաւ ժողովելի։ ...

Դժուարակուռ. (Նախադրիւ հոլովի.) || դժուարայաղթ. կամ այնպիսի ոք՝ զոր դժուար է մարտնչիլ։

Դժուարահայեաց. եցի. աւ. աց. օք։ || այն՝ որ ոչ կարէ համարձակ հայել. այլ դժուարաւ, և խորշի՛ ի հայելն. որպիսիք են աչք ոմանց։

Դժուարահաս. ի. իւ. ից. իւք։ || դժուարաւ հասանելի. և կամ դժուարաւ ըմբռնելի, կամ հասկանալի։ Խորէն. յաշխարհագր.

Դժուարահաւան. ի. իւ. ից. իւք։ || դժուարաւ հաւանող. կամ անհաւան. կամ խստապարանոց։ Յոբ. 1. հատ. ...

Դժուարահաւատ. ի. իւ. ից. կամ աց. օք։ || դժուարաւ հաւատացող, և սակաւամիտ. կամ դժուարահաւանելի։ Խորէն. ...

Դժուարահուն. ի. իւ. ից. իւք։ || դժուարին, զդժուարին անցս ունող. որպիսիք են քարաժեռ ճանապարհք. կամ դժուարին անցք գետոց։

Դժուարաձեռն. (Նախադրիւ հոլովի.) || դժուարաւ ձեռնարկելի. կամ դժուարաւ ձեռնամուխ լինելի. կամ դժուարաւ կատարելի. և կամ դժուարին։

Դժուարաճան. ի. իւ. ից. օք։ || դժուարաւ բացատրելի. կամ դժուարին մեկնութեան. կամ դժուարաւ ճանաչելի, և բացատրելի։ Լամբրոն։

Դժուարամատոյց. տուցի. իւ. ից. իւք։ || դժուարութեամբ մատչելի. կամ դժուարաւ մերձենալի. որպիսիք են քարաժեռ. կամ բարձրաբերձ տեղիք. և այլք նման։ 2. Մակ. 12. 21.

Դժուարամիտ. (Նախադրիւ հոլովի.) || դժուարահաւան. կամ դժուարաւ միտ՝ ի հաւանութիւն. կամ անհաւան. և կամ ունող զդժկամակ, և զդանդաղեցեալ միտս։ Մեծին Ժամ. և Ժէ.

Դժուարամուտ. մտի. իւ. ից. իւք։ || դժուարաւ մտանելի. կամ որ զդժուարին մուտս ունի. որպիսիք են ոմանք շինուածք կամ գրունք, որք ծածուկք, և դժուարամատոյցք են։ Խորէն. ա. գլ. 15.

Դժուարամոռելի. (Նախադրիւ հոլովի.) || դժուարաւ մոռանալի, կամ անմոռանալի, կամ համբերելի, կամ հասանելի. և կամ որ ոչ զիջանի քաղցր բանիւք։ Նոյեմբ. ...

Դժուարանամ. ացայ. ցիր. անալ։ (Ընդ. միջ.) || Նեղիլ. կամ վշտանալ. կամ խոժոռիլ. կամ դժուարիլ։ Յոբ. 1. հատ. ...։ Եւ մերթ զդժուարութիւն կրել։ Յոբ. 1. հատ. ...

Դժուարաշարժ. ի. իւ. ից. իւք։ || դժուարաւ շարժելի. կամ յամրաշարժ։

Դժուարապատում. (Նախադրիւ հոլովի.) || դժուարաւ մեկնելի. կամ դժուարին առ ի բացատրել, և ճառել։ Եբր. 5. 11.

Դժուարաստեղ. ի. իւ. ից. իւք։ || ունող զդժուարին ստեպս, կամ զդժուարաւ անցանելի ժայռս, կամ զապառաժուտս. որպիսիք են ոմանք լերինք, կամ վէմք։

Դժուարավայր. ի. իւ. ից. իւք։ || ունող զքարաժայռ, և զդժուարամատոյց տեղիս. որպիսիք են ոմանք լերինք. կամ տեղիք. և այլն։ Խորէն. ի յաշխարհագրութեան։

Դժուարավաստակ. ի. ա. աց. օք։ || դժուարութեամբ աշխատող։ Իսկ մերթ դժուարաւ գործելի, և դժուարաւ մշակելի. որպիսի է կորդացեալ երկիրն, որ դժուարաւ կարէ վարիլ, և սերմանիլ։ Յոբ. 1. հատ. ...

Digitized by Google

Դժուարամատոյց. ի. ու. աց. օք։ || դժուարաւ մատչելի, յոր մտանելի, կմ՝ հաղորդելի, և կամ կրելի։

Դժուարըմբռնելի. ի. ից. իւք. կմ՝ աց. օք։ || դժուարաւ ըմբռնելով. կամ՝ ըմբռնելով։ և կամ որ է դժուարաւ ըմբռնելի։

Դժուարընթանալ. կմ՝ դժուարընթանալ. ի. ու. աց. օք։ || այն, որում դժուարաւ ընթանալ, կմ՝ ծանրաթանալ, կամ՝ մերձենալ մարդկի։ և ըստ այսմ ասի, դժուարընթաց գատաստանաւ. կմ՝ ուսուցիչ. կմ՝ խաչ, և չարչարանք. և այլն։ Նարեկ. ՚ի գովս խաչին։

Դժուարիմ. եցայ. եայց. իլ։ (Հայհոյիր.) || խոժոռիլ. կմ՝ վշտանալ. կամ՝ նեղիլ. կմ՝ ահանձիլ. և կամ՝ զայրանալ։ Նարեկ Հէ։ Եւ ՚ի գիրս Լամբրոն. ուր ասի. Զորս դը-ժուարի բանս թուէլ. խմնեն զդժուարութիւն կրել բանս. և կամ՝ ոչ է բանա-կան բանս։

Դժուարխնդաց. ի. իմ. իւ. իւք։ || դժուա-րաւ խնդալով. կամ դժուարահաւանելով։ 2. Պետր. 3. 16։

Դժուարին. (Նախդրիւ հոլովի.) || աշխա-տաւոր. կմ՝ աշխատանական. կմ՝ այն՝ որ նե-ղութեամբ, և մեծաւ դժուարութեամբ լինի։ և երբեմն նշանակէ՝ վշտալի, կամ՝ ցաւալի. կմ՝ տաղտկալի, և ձանձրացուցիչ։ Ծննդ. 47. 9։

Դժուարութիւն. թեան։ || նեղութիւն. կամ՝ վիշտ. կմ՝ աշխատութիւն. կմ՝ ծանրութիւն. և կմ՝ խստութիւն։

Դժուարուտ. (Նախդրիւ հոլովի.) || դը-ժուարին. կմ՝ աշխատաժուտ. կամ՝ քա-րուտ. կմ՝ աստուտ. և կամ՝ քարաժայռ։ ՚Ի ճառ հաւց. ինչ։

Դժուարք. րաց. օք։ (անեզական.) || քա-րաժայռ, և աշխատաժուտ տեղիք, կամ՝ անցք. և կամ՝ դժուարագնացք ճանապարհք լերանց. կամ՝ ճանապարհաց. և այլոց նը-մանեաց։ և ըստ այսմ ասի՝ դժուարք լե-րանց. արամ. ռոտոխ փեղ. կմ՝ ոտոխ ճանկոյ. և այլն։ Խորէն. ա. գլ. 83։ և Է. գլ. 9։ Նա-րեկ. Ծ։

Դժպահպանելի. գունի. ի. իւ. իւք։ || անձ-կաւ պահելի. կմ՝ նեղագոյն. և կմ՝ դժուարին։

Դժպաշտութիւն. թեան։ || անպաշտութիւն. կմ՝ անբարեպաշտութիւն. և կմ՝ ամբարշտու-թիւն։ Կիւրղ. Եղեկ. Ժ։

Դժպատեհ. ի. իւ. իւք։ || անպատեհ. կմ՝ անյարմար. և կմ՝ անպատշաճ։ Գործ. 27. 12։

Դժպարտեցուցանեմ. ուցի. ցո. անել։ (ան-ցող.) || չարաչար պարտեցուցանել. կամ՝ զծնողսն՝ և զաւանն առնութեան, և խայտա-ռակութեամբ յաղթահարել. կամ՝ պարտել։ Մծբն. ԺԹ։

Դժպհի. դժպհի. իւ. իւ. իւք։ || անպա-տեհ. կմ՝ դժխմարամ. կմ՝ անհաւան. կմ՝ դաժան. կամ՝ դառն և չար. կմ՝ զզուելի. և կամ՝ մեղանչել։ 3. Թագ. 5. 22։

Դժպնդի. ապհի. եաւ. եաց. եօք։ || դժպա-տեհ. կմ՝ մերժատար. կմ՝ դժխմարամ. կմ՝ հակառակ կացող. կմ՝ անմիաբան ընդ այ-լում. կմ՝ անհաւան. և դառն, և դժնեայ։ Խնոփ. 2. 12։ Երեմ. 3. 10։

Դժպհիմ. եցայ. եայց. իլ։ (Հայհոյիր.) || դժխմարամիլ. կմ՝ հակառակիլ. կմ՝ դժկա-մակ և անհնազանդ լինել. կամ՝ ծանրա-նալ ուսոք։ Եւ մերթ նշանակէ խոժո-ռիլ. կամ՝ զայրացեալ գրգիռ լինել։ Յոբ. 1. Կոչ. ԻԶ։

Դժպհութիւն. թեան։ || դժնէութիւն. կամ՝ դառնութիւն. կամ՝ հակառակութիւն. կամ՝ դժխմարամութիւն. կամ՝ անհաւանութիւն։ Մծբն. ԺԶ։

Դժրամիտ. (Նախդրիւ հոլովի.) || նեն-գամիտ. կմ՝ զխարդախ բարս ունօղ։ Եւ մերթ նշանակէ զչարամիտն, կմ՝ զչարա-կամն. կմ՝ զդժրեալ՝ և զպատրեալ՝ և զան հաւան միտս ունօղ։ Մծբն. ԺԶ։

Դժրատուութիւն. թեան։ || հաւատագր-ժութիւն. կմ՝ դժրութիւն, և նենգութիւն. կմ՝ խաբէութիւն ՚ի դաշինս։

Դժրեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) || ժըխ-տել. և կամ՝ ստել զերդումն. կմ՝ զուխտն և զդաշն. կամ՝ նենգութեամբ դաշնադրել ընդ ումեք զխաղաղութ ոչ պահելով զդաշն։ Մերթ և նշանակէ նենգել. կամ՝ խա-բել. կմ՝ խարդախել։ Լամբրոն։ Մերթ և նենգութեամբ մատնել. և ըստ այսմ ասի՝ ՚ի մահ դժրել։

Դժրողութիւն. թեան։ || ժխտումն. կամ՝ խարդախութիւն. կմ՝ պատրանք. կմ՝ դաւա-ճանութիւն. կամ՝ խաբէութիւն. կամ՝ ուրա-ցումն ուխտի, և դաշանց. և կամ՝ նեն-գաւոր մատնողութիւն։ Նարեկ. ԽԷ. և ԽԷ։

Դժրումն. րման. մամբ. մանց. մամբք։ || նոյն է Է վերինոյն։

Դժրօղ. րողի. ու. աց. օք։ || խաբօղ. կմ՝ նեն-գօղ. կամ՝ դաւօղ. կամ՝ ուրացօղ. կմ՝ դա-ւաճանօղ. և կամ՝ նենգաւոր մատնիչ։ Խորէն. Բ. գլ. 85։

Դ Ի

Դի. ոյ. ով. ոց. ովք։ || մարմին մեռելոյ. կմ՝ դէշ. ռամկ. լէշ։

Դիադող. ոյ. ով. ոց. ովք։ || դողացօղ դիոց. կամ՝ դող դիականց մեռելոց։

Դիակէղ. ի. իւ. ից. իւք։ || գեղ և կոյտ դիոց. յա մարմնոց մեռելոց։

Դիազարդ. ի. ու. աց. օք։ || պատօղ և զար-դարօղ մարմնոյ մեռելոյ. կմ՝ որք զփաթա-թեն մարմնոյ մեռելոյն համեմն՝ և ՚ի վերայ մի ոմանսուել այնց՝ ընտիր զխունկս և զմուռս առ ՚ի պահել զայն ապականութեան առ-ժամանակ ինչ։ Ծննդ. 50. 2։

Դիազերծ. ի. իւ. ից. իւք։ || զերծակապութ. որ, կողոպտօղ զզգեստուց մեռելոց. խակ մինչ ասի դիազերծ առնել. խմնէ՝ կողոպտել. կմ՝ մերկացուցանել զհանդերձս ՚ի մահ մի-բառնալեցելոց, կմ՝ մեռելոց. և կամ՝ Թըլ-նամեաց սպանեցելոց ՚ի պատերազմի։ 2. Մակ. 8. 27։

Դիաթաւալ. կամ՝ դիթաւալ. (ոչ հոլովի)

ւալ կացուցանել:) || և նշանակէ՝ կատար մամբ առ յերկիր կործանելով զթշնամին թաւալեցուցանել մարմնով առ և անդ: Եւ զի որ այսու կերպիւ մեռանի՝ յերկիր անկեալ թաւալի. վն այսորիկ փոխանակ ասելոյ՝ սպանանել. և ապաստան արկանել, առաւել դիաթաւալ կացուցանել: 1. Մակ. 3. 24: և 5. 34: և 2. Մակ. 5. 26: Եզեկ. 6. 5: Եւ մերթ ասի և դիաթաւալ արկանել, և զնոյն նշանակէ: Մծբն. ԺԹ:

Դիալեկտիկական. ի. աւ. աց. օք: || է բառ յունական, որ թարգմանի՝ վիճաբանական, կամ տրամաբանական, և ասի զորս մասնաւորութիւն, որ է վիճաբանական գիտութիւն. զի ուսուցանող զկերպ վիճաբանելոյ. նաև զամ ինչ՝ որ վերաբերի առ տրամաբանութիւն. ասի դիալեկտիկական:

Դիալօգ. ի. իւ. ից. իւք: || է բառ յունական. և նշանակէ զրուցաբանութիւն. կմ զրուցախօսութիւն. և կմ զվիճաբանութիւն:

Դիակապուտ. պտի. իւ. ից. օք: || կողոպտող հանդերձից մեռելոց. որպէս պատահի՛ ի պատերազմի, զի յաղթօղքն գնացեալ՛ ի բանակս յաղթեցելոց՝ կողոպտեն զզգեստս անկելոցն ՛ի պատերազմի: Խորէն. Ա. գլ. 14: Այնպէս և գերեզմանահատ գողքն, որք բացեալ զգերեզմանս կողոպտեն զզգեստս մեռելոց, ասին դիակապուտ: Կիւրղ. Եզեկ. ԺԲ:

Դիակիր. կրի. աւ. աց. օք: || կրող և բարձող դիոց. ՛յ մարմնոց մեռելոց. որպիսիք են գագաղք, և կմ մարդիկ՝ որք բարձեալ տանին զդի մեռելոց:

Դիակն. դիական. ամբ. դիականք. անց. ամբք: || դի, կմ դէշ, ՛յ մարմին մեռելոյ: ռամկ. լէշ: 1. Թագ. 31. 8: 3. Թագ. 14. 11: Տօբ. 1. 21:

Դիակողոպուտ. պտի. աւ. աց. օք: || տե՛ս զԴիակապուտ:

Դիակոյտ. կուտի. իւ. ից. իւք: || կոյտ դիոց, որ հանդիպի ՛ի պատերազմի, ուր դիակունքն, ՛յ [illegible] մերձ իրերաց անկանելով կուտեցեալ լինին:

Դիակոն. ի. իւ. ից. իւք: || է բառ յունական, որ թարգմանի՝ սպասաւոր. որ է սարկաւագ: Լմբրն:

Դիանամ. ացայ. ցիր. անալ: (ընդմիջև.) || դիել. կմ զկաթն ծծել: ՛ի վարս հարց. ԺԶ:

Դիապատեմ. եցի. եա. ել: (ներգործ.) || զմարմինն մեռելոյ պատել կտաւով, և զնմ պիտոյս նմ հոգալ. և թաղել:

Դիապատիկ. պատկի. աւ. աց. օք: || տե՛ս զԴիապատ[illegible]: Ծննդ. 50. 3:

Դիապատութիւն. թեան: || հանդերձաւոր պատրաստութիւն թաղելոյ զդիս մեռելոց. որով իմանի պատանն. խնկանելն. և այլք նմանք. և կամ անմիջապէս մեռելոց՝ փաթութելով. և պատելով. և զայլ պէտսն հոգալով: Ոսկ. Է. 2: հատ. ԼԹ:

Դիացիկ. ցկի. աւ. աց. օք: || Ովս. 4. 4: տե՛ս զԴիեցիկ:

Դիդրաքմայ. ի. իւ. ից. իւք: || է բառ յունական. և նշանակէ զերկդրամ. զի դին է երկու. և դրաքմայն է դրամ. և մի դրաքմայն թէ ոսկի էր, և թէ արծաթ, ունէր զծանրութիւն միոյ տրամոյ, որ է չորրորդ մասն միոյ սկեղ. և երկու դրաքմայն է մի երկդրամ. որ էր երկու տրամ ոսկի, կամ արծաթ: 2. Եզր. 2. 69:

Դիեմ. եցի. եա. ել: (ներգործ.) || ծիծ ծծել. կամ կաթամբ սնանիլ: Յոբ. 3. 12:

Դիեցիկ. կմ դիացիկ. ցկի. աւ. աց. օք: || դիեցող. կմ ստնդիայ. ՛յ ծիծ ծծօղ. կամ կաթնակեր: և այս ասի զերեխայից, որք տակաւին դիեն զստինս մարց: 3. Մակ. 3. 17: Ովս. 4. 4: Իսկ մերթ զգառանց. կմ զորթուց, և զայլոց նմանեաց, որք դեռ կաթնկերք են: 1. Թագ. 7. 9: 2. Թագ. 17. 29: Աղ[illegible]. 6. 4:

Դիեցումն. ցման. մամբ. մանց. մամբք: || դիումն. կամ ծծելն զկաթն: Խորէն. Բ. գլ. 67:

Դիեցուցանեմ. ցուցի. եցո. ել: (անցող.) || ծիծ տալ. և կմ կաթամբ սնուցանել: 3. Թագ. 3. 21:

Դիզաբարդեմ. եցի. եա. ել: (ներգործ.) || դիզել և բարդել. կամ զմի իր ՛ի վր միւսոյն կուտել:

Դիզադէզ. (նախդրիւ հոլովի. իսկ մերթ վարի իբրև զմակբայ ժողովական.) || շեղջ շեղջ. կմ կոյտ կոյտ. կամ դէզ դէզ: Մծբն. ԺԶ:

Դիզանամ. ացայ. ցիր. ալ: (ընդմիջ.) || կուտելով, կմ ՛ի վր միմեանց բարդելով բարձրանալ, և դէզ լինել. որպէս հանդիսի հողոյ. ձեան. փոշւոյ. ամպոյ. ծխոյ. և այլն: 2. Մակ. 7. 5: Եզեկ. 8. 11: Իսկ մերթ խռնիլ. ՛յ կուտիլ. կմ խիտ ժողովիլ. և հաւաքիլ. և ը այսմ ասի՝ դիզանալ ամբոխից. կամ ժողովրդոց. և այլն: Ղուկ. 11. 29:

Դիզանեմ. դիզի. եդէզ. դէզ. ել: (ներգործ.) || կուտել. կամ զբազում իրս ՛ի վր միմեանց դնելով բարձրացուցանել. և կմ բարդել. և ըստ այսմ ասի՝ դիզանել զփայտս: 3. Թագ. 18. 33:

Դիզանիմ. այ. եայց. իլ: (ձայնակրաւ.) || կուտիլ. կմ բարդիլով՛ ՛ի վր միմեանց բարձրանալ. և դիզանալ. որպէս լինի ձիւնն, կմ փոփուրն. և կմ ծուխն. և այլք նմանք: ուստի. 1. Մակ. 4. 20. ասի. ծուխն որ դիզանիւր. իմանի՝ ծուխն որ ամբացեալ բարձրանայր: Իսկ մինչ ասի դիզանիլ հերաց. նշանակէ զկանգնիլ. ՛յ զփուշփուշ լինելն հերաց վր զարհուրելոյն. և սասկալոյն:

Դիզեմ. եցի. եա. ել: (ներգործ.) || տե՛ս զԴիզանեմ:

Դիթաւալ: || տե՛ս զԴիաթաւալ:

Դիմաքանեմ. եցի. եա. ել: (չէզոք.) || ընդդիմանալ խօսիւք, և բանիւք. կմ հակառակիլ:

Digitized by Google

Դիմադրաւ. ի. իւ. ից. իւք. կմ՝ աց. օք: || զդէմս իւր դրաւօղ. որ անձամբ զանձն դնօղ, և յառաջ մատուցանօղ. որպէս մերթ իմանի նախահատակն. որ քաջ և արի մարտիկն, որ ինքնին դնէ զանձն ՚ի մերձաւոր վտանգս մահու. և կամ վն այլ յօժարութբ տայ զանձն իւր ՚ի մահ: 2. Մակ. 6. 28: Մերթ և իմանի այն, որ քաջութբ և համարձակութբ զանձն իւր յառաջ մատուցանէ առ ՚ի ճառագայթել զոք. և կամ առ այլ գործս: Ոսկէ. 2. հռվ. ժա: Երբեմն և նշանակէ սոխալ յանդուգն, և լիրբն: [illegible]:

Դիմադրաւեմ. եցի. եա. ել: (չէզոք.) || անձնատուր լինել. կմ զանձն իւր յօժարութբ յառաջ մատուցանել. կմ յառաջադէմ լինել. և կմ նախահատակել: Իսկ ՚ի գիրս. Խորէն. բ. գլ. 34. ուր ասի. Զոր ոչըք դիմադրաւեաց առնութն. իմանի. զոր ոչ ոք ՚ի դէմս իւր դրաւեաց. որ յանձն իւր ձգեաց, կամ եառ՝ առ ՚ի լինել նմա այր: Բայց ՚ի ձեռագիրն գրի այսպէս. Զոր ոչըք դիմադրաւեաց առնուլ կնութն. որ ոչ ոք զանձն իւր մատոյց՝ առնուլ զնա կնութե:

Դիմադրաւութիւն. թեան: || նախահատակութի. կամ յառաջադիմութի. կամ վտանգութի. և կամ համարձակութի: Նոննի. կ:

Դիմադարձ. ի. իւ. ից. իւք: || ընդդիմացօղ. կամ հակառակօղ. կամ ոչ անսացօղ. Յուդթ. 2. 15:

Դիմադարձեմ. եցի. եա. ել: (չէզոք.) || դիմադարձ լինել. կամ ընդդէմ դառնալ. կամ հակառակել: Նոննի. հէ:

Դիմադարձութիւն. թեան: || ընդդիմութի. կամ հակառակութի. կամ անհնազանդութի: Ղևտ. 24. 26:

Դիմադրեմ. եցի. եա. ել: (չէզոք.) || ընդդիմանալ. կամ դիմադարձ լինել. ռամկ. դէմ դնել: Մերթ և ընդդէմ իրի իմիք դնել զինքն:

Դիմադրութիւն. թեան: || ընդդիմադրութի. կմ ներհակութի. կամ դիմամարտութի. կամ ընդդիմակայութի: Նոննի. է:

Դիմաըմբոստեմ. եցի. եա. ել: (չէզոք.) || ըմբոստանալով ընդդիմանալ. կամ խանգարել զլինելն իրին. և կամ հակառակել, զի մի լինիցի:

Դիմաըմբոստութիւն. թեան: || ըմբոստանալով ընդդիմացումն. և կամ խափանումն իրի. կամ գործոյ իմիք:

Դիմափոխեմ. եցի. եա. ել: (չէզոք.) || ընդդիմաբանել. կմ հակառակել. և կմ ընդդէմ դառնալ:

Դիմակ. ի. աւ. աց. օք: || ընդդիմացօղ. կմ հակառակօղ. և կամ ներհակ: Իսկ մերթ նշանակէ զդէմս. կմ զպատկերս, կմ զկերպարանս, և կմ զկերպարան: Նոննի. ղզ. և ղթ: Եւ ՚ի Նոննի. ըթ. ուր ասի՝ բաղդքեր դիմակս զդիմակս, կերպակ կերպակս, իմանի՝ զանազան զանազանս. կմ ազգս ազգս կերպից կերպից: Մերթ և նշանակէ զդէմս ռական քօղն. կամ զպաստառածակն. զոր իբրև զդէմս մարդոյ կազմեն և արկանեն ամենք զերեսօք. ռամկ. մասքա. կամ ծածկոցոյ: Ոսկէ. ՚ի Նախերգ. Ն. 1. հռվ. բ:

Դիմակալ. || ընդ. բայի չարակցի այսպէս. դիմակալ լինել. և նշանակէ ընդդէմ կալ. կամ ՚ի պատերազմի զօրաւոր լինել, և յաղթել: 1. Մակ. 5. 40:

Դիմակայ. ի. իւ. ից. իւք: || ընդդիմակայ. կամ ընդդէմ կացօղ. կմ հակառակօղ. և կմ դիմադարձ:

Դիմակաց. ի. իւ. ից. իւք: || ընդդէմ կացօղ. կամ ոչ հնազանդօղ. և կամ հակառակօղ: Յուդթ. 2. 4:

Դիմակերպութիւն. թեան: || բաղդատութի. կամ համեմատութի. և կամ նմանակերպութի: Նոննի. ղդ:

Դիմակիսեան. (հագնէ հոլովի:) || որդի դիմակիսի. այսինքն, զկէս դէմս ունողի: Էր այսու անուամբ անուանեցաւ ներսէս որդին գիսակայ. վասն զի զկէսն դիմաց հօր իւրոյ գիսակայ՝ առն քաջի՝ ՚ի բաց ընկեցին սուսերաւ ՚ի պատերազմի: Խորէն. բ. գլ. 44:

Դիմակցեմ. կցեցայ. եայ. իլ: (ձայնակր.) || ընդդիմանալ, կմ ընդդիմակաց լինել. և կամ հակառակել: ՚Ի վարս հարց. ժբ:

Դիմակցութիւն. թեան: || ընդդիմամարտութի. կամ ներհակութի. կամ ընդդիմադրութի. և կմ հակառակութի: Նոննի. իե:

Դիմահար. ի. աւ. աց. օք: || տե՛ս զԸնդդիմահարն:

Դիմամարտ. ի. իւ. ից. իւք: || դէմ առ դէմ մարտնչօղ. կմ ընդդիմամարտօղ. կմ հակառակամարտ. և կամ ընդդիմաբան: Նոննի. կզ:

Դիմամարտիկ. տկի. աւ. աց. օք: || Նոյն է ը վերնոյն: Նոննի. լդ:

Դիմամարտութիւն. թեան: || ընդդիմամարտութի. կմ հակառակութի. և կմ հակամարտութի:

Դիմայլակ. ի. աւ. աց. օք: || այլանդակ պատկեր ինչ իբրև զդէմս մարդոյ՝ զոր դընեն մարդիկ զերեսօք առ ՚ի ոչ ճանաչել. ռամկ. ծածկոյթ. կամ մասքա:

Դիմառական. ի. աւ. աց. օք: || յանձնառական: և մերթ բանն, կամ գործն՝ զոր ոք ՚ի դէմս իւր բերելով, կամ յանձն իւր առնելով, կմ ՚ի դիմաց իւրոց խօսելով պատմէ, ասի դիմառական: [illegible]:

Դիմառնութիւն. թեան: || է ձև ինչ ճարտասանական, որով անշունչ և անբան իրաց՝ բանաստեղծական սասցուածովք՝ զդէմս առաւրեալք՝ ՚ի դիմաց նց խօսելով. իբրև ՚ի դիմաց բանաւորաց և դիմաւորաց. և կմ զլամբ այլոց՝ ՚ի դէմս մեր առնուլ խօսելք. որ առաւելն դիմաւ խօսիլք, որև կոչի յունարէն՝ [illegible]:

Դիմառութիւն. թեան: || յանձն և ՚ի դէմս իւր առումն. կմ վերաբերումն գործոյ, և կմ առութն ուրուք: Իսկ երբեմն առնուլ լինի ՚ի տեղի փոխաբերութե, որով

զերն՝

ղերն՝ անդրադարձական կոչմամբ անուանեալք · որպէս փոխանակ գծուածոյն կոչելոյ ղիրս խորթ ինս, և ղխորհրդածութիւս, յորդոր ջեալք՝ խաւարք, և մութն · Նոր էկ· ղբ:

Գլխաւոր · ի · աւ · աց · օք: || որ ունի ըղ գէմս · կմ՝ անձնաւոր: Նոր էկ· ղթ:

Գլխեմ · եցի · եա · եալ: (չէզոք ·) || մերթ նշանակէ՝ յառաջ կոյս ուղիղ ընթանալ · կմ՝ վազել 'ի վ(այ)ր · կամ յարձակիլ: Եսայ · 63 · 1: Մատթ · 8 · 32: Գործ · 7 · 56: Իսկ մերթ նշանակէ, ապաւինիլ · կմ՝ ապաստանիլ:

Գլխեցուած · եցման · ածք · անց · ածիւք: || յարձակումն · կմ՝ վերադարձութիւն: Նոր էկ · ժե:

Գլխոս · ի · աւ · աց · օք: || հաս · կամ հարկ · կամ տուրք արքունի: Աղգաթ: Իսկ մերթ նշանակէ զպղնձի նմանաս փողն · կամ զպատրուսակ դրամն՝ որով ոք տայր · որ տիսնիք էն օր ըստ օրէ առացեալ փողերքն ապ քաղաքաց, որովք գնեալ զկերակուր՝ ամ րին զայն օր: Մոխ · 2 · հոփ · ժդ:

Գլխոսական հարկ · ի · աւ · աց · օք: || գլխոս հարկ · կամ հարկ արքունի՝ զոր տայ իւրաքանչիւրոք վ(ասն) անձին, կմ՝ վ(ասն) տան իւրոյ: ռամկ · խարաճ · կամ սոլէան:

Գլխայնակ · ի · աւ · աց · օք: || յապրշմեղէն նիւթոյ յօրինեցեալ զգեստ · զոր ընդելուզէն և գործեն կրկին մանեցեալ և ոլորե ցեալ ասկեթելիւ · ուստի և երբեմն կոչի՝ ասկեհուռն գլխայնակ: ռամկ · սէրասէր · որ է հասփ փլայս: Եւ գլխայնակ անուանի՝ թէ զոր ծեցեալ նիւթն, յորմէ զհանդերձ կար մեն · և թէ հանդերձն՝ որ յայսպիսւոյ նիւթոյ կարմի: Եսայ · 3 · 21: Եզեկ · 27 · 7:

Գլխայնակազգեստ · ի · իւ · եց · իւք: || զգեցող զհանդերձ կազմեցեալ 'ի գլխայնակէ · և կմ՝ զգեցող զոսկեհուռն հանդերձ, 'ի ձեռս հարց · ժդ:

Գլխայնակակերտուած · ի · իւ · եց · իւք: կմ՝ ոյ · ով · ոց · օք: || 'ի ծաղկած և 'ի նախշած գլիւայնէ կազմեցեալ · կամ յապրշմեղէն յաս կեհուռն նիւթոյ նախշիւ յօրինեցեալ: Նոր էկ · ըէ:

Գլխայնոց · || բառս այս է ներգոյական հո լով, որոյ ուղղ(ակ)ք հոլովքն պակասեն · և 'ի գործ ածի նախդրիւ այսպէս · 'ի գլխայնոց · որով նշանակի ասել՝ 'ի կայանաւորութեան, կմ՝ 'ի կայարանս, կմ՝ յարգելանս, և կամ 'ի պահեստս բանտի: վ(ասն) զի թագա ւորք, կմ՝ իշխանք, յորժամ պահէին զոք առ ինքեանս ոչ զգքաւ՝ մինչև կատարեսցի այն զոր կամին, նոյն պահեցեալն ասի՝ պատանդ, մինչ ոչ է 'ի կայարանս, կամ 'ի բանտի · բայց երբ դնի նաև 'ի բանտի, և պահի՝ ասի լինել 'ի գլխայնոց: Ծննդ · 42 · 16:

Գլխայադեղն · ղեղան · անք · ունք · անց · անիւք: || պատուհասականն · որ · այն, որոյ ձեռքն պատուհասեցաւ, կամ յարմարեցեալ է, և կմ՝ երկաթ և յանձագ 'ի վարել զառկեղն, և կամ ձգել ապերասանն ձիոյ · և անուանեալ գլիմեցուցանել 'ի նապաստակն: Խորհրդ · 23:

Գլխայան : (նախդրիւ հոլովի ·) || յարմար ·

կամ պատշաճ · կամ պատահ · և կմ՝ պատշաճաւոր · և այս մանաւանդ ասի զտեղ ւոյ · որպէս · 'ի գլխայան տեղւոջ · կամ 'ի գլխայան վայրի: 1 · Մակ · 4 · 46: և 11 · 37:

Գլխայաւոր · ի · աւ · աց · օք: || պատշաճաւոր · կամ պատահականաւոր · կմ՝ գլխայուկ · և կամ յարմարական:

Գլխայաւորիմ · եցայ · եայց · իլ: (հայեակր ·) || յարմարիլ · կամ պատշաճիլ:

Գլխայաւորութիւն · թեան: || պատշաճաւորութիւն · կամ յարմարութիւն · և կամ գլիպողութիւն:

Գլխայեցուցանեմ · ցուցի · ցո · ել: (անցող ·) || հանդիպեցուցանել · կամ զարկուցանել ղեկար՝ և զայլ ինչ նման՝ 'ի տեղի ինչ · և կմ՝ հարկանել զնետան 'ի նշանս, կամ 'ի սերտ ուրուք · ռամկօրէն դիպցնել: Խորհրդ · ղբ · 10:

Գլխայիմ · եցայ · եայց · իլ: (հայեակր ·) || հանդիպիլ · կամ պատահիլ · և կամ ընդառաջ ելանել: Ծննդ · 33 · 8: 2 · Մակ · 4 · 3: Եզեկ · 51 · 31: Իսկ մերթ միաբանիլ: Առակ · 30 · 23: և Խնդր · 8 · 19:

Գլխայողադոյն · գունի · իւ · եց · իւք: || պատշաճագոյն · կամ յարմարագոյն · և կամ վայելչագոյն · և կամ գլխայուկագոյն:

Գլխայուած · ոյ · ով · ոց · ովք · || հանդիպումն · կամ պատահումն իրաց · որպէս, հիւանդութեանց, կամ այլ իրաց այլոց իրաց: Փիլիպ · 2 · 14:

Գլխայուկ · (նախդրիւ հոլովի ·) || պատկան, կմ՝ յարմար · կմ՝ պատահ · կամ պատշաճ · և այս մանաւանդ ասի զժամանակէ · որպէս, 'ի գլխայուկ ժամու · կամ 'ի գլխայուկ պահու, և այլն:

Գլխայումն · պման · մամբ · մանց · մամբք: || հանդիպումն · կմ՝ առ միմեանս բաղխումն · ռամկ · դպչիլ: Նոր էկ · կբ:

Գլխաօղ · (նախդրիւ հոլովի ·) || պատշաճ · կամ յարմար · կամ պատահականաւոր · և կմ՝ գլխայուկ: Առակ · 15 · 23: և Գործ · 13 · 15:

Գլխատակ · ի · աւ · աց · օք: || մերթ նշանակէ տեղին գլխատելոյ · դ(ա)ր գլխատանոյն · կամ գլիտարանն, յոր եղեալ դէմն՝ գլխէ · և բառ այսմ խաչն՝ յոր երբ 'ի գլխարանն ելեալ բարձրացաւ Տ(է)րն մեր՝ կոչի գլխատակ: Նոր էկ · ղդ: Եւ կամ նշանակէ 'ի գլուխ սեան նաւին եղեալ աւազանն, կամ տեղին, ուր նստեալ գլխէն, և հայլին: Նոր էկ · իէ: Եւ մերթ նշանակի իւր՝ [illegible] գլխեցեալ լինել՝ Ք(րիստո)ս նախատակն 'ի յոր նկատմամբ գլխէ: Երբեմն և գնատակքն պատուոց, որք ցցեալ կան յատաս ծառոց, և կնիւս են քաղեցեալք · որպիսի է գնատակն ծիրանոյ · գեղ ձի · Թզոյ · և այլոց նմանեաց: Եւ ասացան գլխատակ · զի ի(ւ)րա(քանչիւ)ր ղնդացապան ցցեալ յատան, գլխեալ լինին: Ովս · 9 · 10: և Նաւում · 3 · 12: Մերթ և նշանակի գլխոցն կմ՝ նկատօղն, և տեսանօղն: Նոր էկ · 'ի Գով · առաք: Երբեմն և նշանակէ զանեսել գլխոց · կմ՝ զկերպարանն՝ կմ՝ զդէմս · և զհերս մար դոյ · և այլոց նմանեաց: Նոր էկ · կէ:

Գիտակն ։ (Նախադրիւ հոլովի .) || Ամէն . կամ ամբողջ, որ գիտէ և հայի . և ըստ այսմ է . [illegible] 43 . [illegible]

Գիտակաւորելութիւն . [illegible]

Գիտանոց . [illegible]

Գիտապաստ . [illegible]

Գիտապետ . [illegible]

Գիտապետական . [illegible]

Գիտարան . [illegible]

Գիտաւորութիւն . [illegible]

Գիտել . [illegible]

Գիտումն . [illegible]

Գիտումն . [illegible]

Գիտող . [illegible]

Գիր . ([illegible]

[illegible]

Digitized by Google

ցեալ իբրեւ զդեւ։ Իսկ մերթ առեալ ըմպի փոխանակ մոլեգնի, և կատաղի բարուցս, և ըստ այսմ առնի. դիւադէն գազանն։ 3. Մակ. 5. 25։

Դիւագնիմ. եցայ. եայ. իլ։ (Ձայնակր.) || Ըմբռնիլ՝ ի դիւէն. կմ՝ դիւահարիլ։ Եւ մերթ առնանի փոխանակ կատաղելոյ. կամ մոլեգնելոյ։

Դիւագունդ. գնդի. գնդաւ. աց. օք։ || Դիւ համախումբ. կմ՝ դիւական գունդ. և կամ գունդ որ դիւօք է խմբեցեալ, և գումարեցեալ։ Նարէկ. ձթ։

Դիւազգի. զգւոյ. եաւ. եաց. եօք։ || Դիւազնեայ. կմ՝ որ է իբրու յազգէ դիւաց. և այս առնի վասն գլխագրոյ մի նախատանելոյ զնա։ Խորէն. Գ. գլ. 55։

Դիւաժողով. ի. իւ. ից. իւք։ || Զդեւս՝ ի մի իւր ժողովօղ, կամ՝ հաւաքօղ. որպիսիք են կախարդք. և կամ չար ոգւոյք, առ որս գան հաւաքքն։ Եւ մերթ նշանակէ զայնս, որք՝ ի դիւաց են ժողովեցեալք։

Դիւալլուկ. ըլկի. աւ. աց. կմ՝ կց. օք։ || Չար չարեցեալ և ըլկեցեալ՝ ի դիւէն. և կամ դիւահար։ Նարէկ. ժը։

Դիւախրոխտ. ի. իւ, ից. իւք։ || Դիւանման խրոխտացօղ. կմ՝ իբրեւ զդեւս սպառնացօղ. և կամ դիւակերպ կատաղելով յանդգնօղ, և բարկացօղ։

Դիւական. ի. աւ. աց. օք։ || Դիւային. կմ՝ սատանայական։ Իսկ մերթ դիւահարա_կան. կմ՝ կատաղական, և կամ մոլեգնա_կան։ Խորէն. Ա. գլ. 16։

Դիւահար. ի. աւ. աց. օք։ || Այսահար. այսինքն որ՝ ի դիւաց հարկանի, և ըմբռնի. և կմ՝ ունի՝ ի մարմնի իւրում զդեւ։ Մատ. 4. 24։

Դիւահարիմ. եցայ. եայ. իլ։ (Ձայնակր.) || Ըմբռնիլ և չարչարիլ՝ ի դիւէն։ Եւ մերթ կատաղիլ. կմ՝ մոլեգնիլ։

Դիւաձոյլ. ձուլի. իւ. ից. իւք։ || Այն՝ որ ձուլեցեալ է՝ ի պատիւ դիւաց. կմ՝ այն՝ որ է ձուլածոյ դիւաց. և ըստ այսմ առնի դիւաձոյլ պատկեր. և այլն։

Դիւաճենճեր. ի. իւ. աց. օք։ || Ճենճերօղ զզոհն՝ ի պատիւ դիւաց. կմ՝ տեղի, ուր լինի այսպիսի ճենճերումն։ Նարէկ. ծա։

Դիւամիտ. մտի. իւ. աց. օք։ || Դիւաբա_րոյ. կամ դիւասիրտ. կմ՝ կատաղի իբրեւ զդեւ. և կմ՝ դիւանման մոլեգնեալ։ Սոկր. 1. հատ. Ը։

Դիւամոլ. ի. իւ. ից. իւք։ || Դիւանման մո_լեալ. կամ մոլեալ՝ ի պաշտօն դիւաց. և կամ սիրօղ դիւաց. որպիսիք են դիւա_պաշտքն։

Դիւան. ի. աւ. աց. օք։ || Ատեան. կմ՝ հանդի_սաւոր հրապարակ. ուր դատաստան լի_նի, և վճիռ հատանի։ Ռամկ. դիվան։ Նա_րէկ. լէ։ և Լամբրոն։ Ըստ այսմ և տունն. կամ մեծ սենեակն արքայի, կմ՝ հազարա_պետի, կամ դպրապետի, և այլոց նմա_նեաց, ուր ժողովեալ մեծամեծաց՝ խօսին զիր ինչ. կամ առնեն զխորհուրդ. և կամ հոգան վերատեսչականն իրաց, կոչի դի_ւան։ Ռամկ. դիվանխանայ։ Եսթ. 22. 15։ Երեմ. 36. 12։ Մերթ և նշանակէ զհրապարա_կական տեղին՝ կարգեալ՝ ի քաղաքի. կամ ՚ի յուսումնարան, ուր պարապին իմաս_տասէրք. կամ դպրոց աշակերտացն ՚ի յու_սումն. և այսպիսի էր դիւանն տիւրա_նեայ, ուր հանապազօր կացեալ խօսէր պօ_ղոս։ Գործ. 19. 9։ Երբեմն և նշանակէ զարքունական գրքատունն. և կմ՝ զտեղին, ուր ամբարեալ պահին ամ գիրք յիշատա_կարանաց. կամ դատաստանական մատե_նից. կմ՝ ժամանակագրութեանց. և կամ հաշուեաց, և այլոց նմանեաց։ Խորէն. Ա. գլ. 8. և Բ. գլ. 33։ Իսկ մերթ նշանակէ զար_քունական արձանագիրսն. այսինքն զմատեանսն, ուր գրին հարկաւոր իրք թագաւորութե։ Ռամկ. տէֆթէր։ Խորէն. Բ. գլ. 9։ և Գ. գլ. 48. և 51։

Դիւանագիր. գրի. աւ. աց. օք։ || Արքու_նական պատմութեանց գրօղ. կմ՝ հրապա_րակական իրաց ձեռագրօղ. և կամ ար_քունական պատմագիրք։ Խորէն. Ա. գլ. 2։

Դիւանադպիր. դպրի. աւ. աց. օք։ || Ա_տենադպիր. որ է յարքունական ատենի գրօղ արքունի հրովարտակաց. և կամ ընթերցօղ յարքունական ատենի։ Ռամկ. դիվան էֆէնտիսի։

Դիւանապան. ի. աւ. աց. օք։ || Վերակա_ցու, և պետ դիւանի. այսինքն դրքապահ. և կամ դրքապետ, որ է վերակացու, երկրա_մատոյց կարգեալ ՚ի վե՛ր արքունական դը_րեանց, և մատենից։ Կիւրղի Եղիկ. Գ։

Դիւանապետ. ի. աւ. աց. օք։ || Վերակա_ցու. կամ իշխան յարկաց, և սենեկաց ար_քայի. կամ մեծամեծաց իշխանաց։ Մերթ և նշանակի պետն. կամ բերանն հաւա_քեցելոց անձանց ՚ի դիւանի, առ ՚ի խօ_սիլ. որ զբանսն խօսելի յառաջ բերէ՝ և ա_ռաջադրէ մեծամեծաց. և լինի զամենից խօսելեաց առաւել տեղեակ գոլով՝ բա_ցատրէ զայնց ամենից։ Նարէկ. ծը։

Դիւանապետութի. թեան։ || Իշխանութի վերակացութե յարկի. կամ ապարանից թագաւորի, կամ մեծամեծաց։

Դիւանուէր. նուիրի. աւ. աց. օք։ || Դիւաց նուիրեցեալ. կմ՝ ՚ի պաշտօն դիւաց ըն_ծայեցեալ, որպիսիք են կուռք, և այլք նմանք։ Նարէկ. Ծ։ Իսկ մերթ նշանակէ դի_ւաց նուիրօղ, կամ ընծայօղ։

Դիւաշունչ. շնչի. իւ. ից. օք։ || Ի դիւաց շըն_չեցեալ. կմ՝ ՚ի դիւէն յուզեցեալ. և կամ դիւական։ և կմ՝ ունօղ զշնչումն ՚ի դիւաց։

Դիւապաշտ. ի. իւ. ից. իւք։ || Պաշտօղ զդեւ. կամ կռապաշտ. և կամ պաշտօնեայ դիւաց։

Դիւապատիր. (Նախդրիւ հոլովի.) || Դի_ւախաբ. կմ՝ ՚ի դիւաց պատրեցեալ. և կմ՝ այն, որ պատրանօք դիւաց է հնարեցեալ։ և կմ՝ որ է պատրանք դիւաց։ Նարէկ. ՀԵ։

Դիւասարսուռ. (Նախդրիւ հոլովի.) || ՚Ի դիւաց սարսռեցուցեալ, այսինքն, դողացու_ցեալ. կմ՝ դողացուցմամբ ըլկեցեալ։ Մերթ

ևս նշանակէ՝ գործակցութիւն և ազդեցութիւն դիւաց առաւելեցուցանող. որպիսի է այն ախտն ջերման, որ պատահէր ՚ի դիւ֊հաց: Նոյեմբ. իը:

Դիւաստանք. ի. իւ. ից. օք: || ՚ի դիւաց ատեանս ջերցեալ. կամ ըմբռնեալ. որպիսիք են դիւահարք:

Դիւատեսակ. ի. աւ. աց. օք: || դիւակերպ. կմ դիւանմանն. և կամ զկերպարան և զնմանութիւն դիւաց ունող:

Դիւթ. ի. իւ. ից. օք: || դիւթող. կամ հմայող. և կամ փորձող ՚ի ձեռն ամանց գործողութեանց չարաց ոգւոց՝ առ ՚ի գիտել և ծանուցանել այլոց. կմ կախարդ: տաճկ. [illegible]: 2. Մնաց. 35. 19:

Դիւթեմ. եցի. եա. ել: (չէզոք.) || առնել զգործ դիւթութեան, առնելով. կամ առնելով զամենայն բանս դիւահնարս, ոչ զի ընկեցի իր ինչ, զոր կամի գնացողն առ դիւթս՝ և վհուկս: 1. Թագ. 28. 8: և 4. Թագ. 17. 17:

Դիւթութիւն. թեան: || կախարդութիւն. կմ հմայութիւն. և կամ փորձելութիւն ՚ի ձեռն ամանց բանից և գործողութեանց՝ չարաց՝ որք ծանուցեալ են ՚ի նոցանէ՝ որք խնդրեն ըզ դիւթութիւն: Եսայ. 47. 9:

Դիւութիւն. թեան: || դիւաբարոյութիւն. կամ նմանութիւն, և հաղորդակցութիւն ընդ դիւաց. կամ դիւայինն, և չարիր գործողութիւն. և կմ պաշտօնատարութիւն դիւաց: Ոսկէ. ՚ի Նախնեաց. Ն ՚ի վերս հաղ. ժթ:

Դիւր. այ. աւ. ից. օք: || մերթ նշանակի հարթ և դիւր տեղի. կմ դաշտավայր: 3. Թագ. 20. 23. և 25: Մերթ ևս նշանակի հանգիստ, և դիւրութիւն: 1. Թագ. 16. 16: Փիլիպ. 2. 19: Եւ մերթ՝ դիւրին. կամ հեշտ: Լամբրոն:

Դիւրաբեկ. ի. իւ. ից. իւք: || դիւրաւ բեկանելի. որպիսի է խեցեղէն, կամ ապակեղէն անօթն: Իմաստ. 15. 13:

Դիւրագայթ. ի. իւ. ից. իւք: || դիւրասահ. կմ դիւրաւ գայթակղող. և կամ դիւրա կործան: Լամբրոն:

Դիւրագայթոտ. ի. ան. այ. օք: || Նոյն է ը վերինոյն: Լամբրոն:

Դիւրագթելի. լոյ. եաւ. եաց. եօք: || դիւրաւ գթելի. կմ դիւրահաս: Լամբրոն:

Դիւրագին. գնի. իւ. ից. իւք: || այսպէս հոլովեցել՝ նշանակէ զիրն, որ ունի զաժանագին. կմ որ աժան գնով գնի: տաճկ. ուճուզ:

Դիւրագին. գնոյ. ով. ոյ. ովք: || այսպէս հոլովեցեալ, է ածականական անուն. և նշանակէ զդիւրագնութիւն, կամ զդիւրագոյնն:

Դիւրագիտ. ի. իւ. ից. օք: || դիւրաւ դը֊տանելի. կմ որ յաճախ, և առատ գտանի: Նոյեմբ. զդ:

Դիւրագլոր. ի. իւ. ից. իւք: || դիւրահաս. կմ դիւրակործան. կմ որ դիւրաւ գլորի:

Դիւրագոյն. գունի. իւ. ից. իւք: || առաւել դիւրին, կմ հեշտագոյն. կմ հանգստագոյն. և կմ անդորրագոյն:

Դիւրագորով. ի. իւ. ից. իւք: || դիւրագութ. իւ, այն՝ որ պատրաստ, և յօժար է ՚ի գթալ, և յողորմել. կմ որ զգթած, և զդիւրալուր սիրտ ունի:

Դիւրադարձ. ի. իւ. ից. իւք: || դիւրաշարժ. կմ որ դիւրաւ դառնայ, և յեղյեղի. և կամ դիւրափոփոխ:

Դիւրադաւ. ի. իւ. ից. իւք: || դիւրաւ խաբելի. կմ դիւրաւ դաւելի և դաւաճանելի:

Դիւրազգած. ի. իւ. ից. իւք: || դիւրաւ զգածող, կամ դիւրաւ զգածեցեալ. կմ դիւրաւ ախտանալի, կմ ախտացեալ հրեւք իմիք: և մերթ ախորժելի իմն, որով դիւ֊րաւ զգածի ոք:

Դիւրաթառամ. ի. իւ. ից. իւք: || դիւրա֊թարշամ. կամ որ դիւրաւ թարշամի, և թառամի, կմ ապականի. Ոսկէ. 1. հատ. ըա:

Դիւրաթաւալ. ի. իւ. ից. օք: || դիւրա֊հոլով. կամ դիւրագլոր. և կմ դիւրաւ թաւալելի:

Դիւրալուր. լրի. իւ. ից. օք: || դիւրաւ լսող. որով մերթ նշանակին սուր լսողքն ականջք, կմ դիւրաւ հասկացողքն: Եւ մերթ դիւրաւ անսացողն, կամ հնազանդողն. և կմ որ դիւրաւ զիջանի: Լամբրոն: Մերթ ևս դիւրաւ լսելի. որով երբեմն իմանի դիւրաւ հասկանալին, կմ դիւրաւ ըմբռնելին. որպիսիք են պարզ վարդա֊պետութիւնք: Լամբրոն: և մերթ դիւրա֊հաւանելին, և դիւրաւ ընդունելին: Ոսկէ. 1. հատ. ըը: Իսկ մերթ նշանակէ զհեշտալուրն, կմ զքաղցրալուրն, որպիսիք են քաղցր երգք, զորս ՚ի լսելն դիւրանան ականջքն: Լամբրոն:

Դիւրախորտակ. ի. աւ. աց. օք: || դիւրաւ խորտակելի. կամ դիւրաբեկ: Իսկ մերթ անդրդուելաբար ասի զկամաց մարդոյ, որով իմանի դիւրափոփոխն, կմ յեղեղուկ, և անհաստատն: Ոսկէ. 1. հատ. խը:

Դիւրածախ. ի. իւ. ից. իւք: || դիւրաւ ծախելի. կմ վաճառելի. կմ սպառելի. կամ սպառելի. Իմաստ. 19. 20:

Դիւրածեմ. ծի. ած. ել: (Ներգործ.) || դիւրաւ ածել. կմ բերել. և կմ դիւրաւ յառաջածել, և առաջնորդել զինչ: և ըստ այսմ, ասացեալ և յղփացեալ երկիրն առատ տալով հացն ջուրբք գետոց՝ ասի դիւրածել ըզ այնպէս բերս արդեանց: Եւ մերթ նշա֊նակէ զիր ինչ յինքեան տեղւոյն դիւրաւ ածել և բերել յայլ տեղ: Խորէն. Գ. գլ. 62:

Դիւրակոճոյ. ի. իւ. ից. իւք: || դիւրաւ կոճոյելի. փթ. դիւրաւ փշրելի. կամ դիւրաւ կոտրելի. որպիսիք են խեժք ծառոց: Խորէն. յաշխարհագրութեան:

Դիւրակործան. ի. իւ. ից. իւք: || դիւրաւ կործանելի. կամ դիւրահաս. կմ դիւրա֊փոփոխ: Նոյեմբ. զդ:

Դիւրահալ. ի. իւ. ից. իւք: || դիւրաւ հալելի. կմ որ դիւրաւ ջերմի՝ և հալի ը մեր֊ձենալ ջերմութեան. Իմաստ. 19. 20:

Դիւրահաս. ի. իւ. ից. իւք: || դիւրաւ հասանող. կմ ժամանող ուրեք. կմ երագա

հաս։ Նորէկ. ղ. Իսկ մերթ նշանակէ ըզ դիւրահասկանալին, կմ զդիւրաւ ըմբռնելն։ Լամբրոն։

Դիւրահասոյց։ (Նախադրիւ հոլովի.) ‖ դիւրաւ հասուցանող. կմ դիւրաւ ժամանակացուցանող. և կմ դիւրաւ հասուն առնող, և խելամտեցուցանող։ Ագաթ։

Դիւրահաւան. ի. իւ. ից. իւք։ ‖ դիւրաւ հաւանող. ըստ անսայող։ Յակոբ. 3. 17։ Իսկ մերթ նշանակէ զդիւրաւ հաւանելին։ Լամբրոն։

Դիւրահեղծ. ի. իւ. ից. իւք։ ‖ դիւրաւ հեղծելի. կմ դիւրածախ. կմ դիւրաւ եղծանելի. և կմ դիւրալոյծ։ Լամբրոն։

Դիւրահնար. ի. իւ. ից. իւք։ ‖ դիւրաւ գտանող զհնարս իրաց։ Իսկ մերթ նշանակէ զդիւրաւ հնարելին, կմ որ է յոյժ հնարաւոր, և կարելի։ Խորէն. բ. գլ. 71։

Դիւրամեռ. ի. իւ. ից. իւք։ ‖ դիւրաւ մեռանող. կմ դիւրամահ։ Նորէկ. է։

Դիւրամիտ. մտի. աւ. աց. օք։ ‖ դիւրաւ մտօղ, և հակող յիր ինչ. կամ դիւրահաւան. և ըստ այսմ ասի՝ բնութ͞ն մարդկայինն է դիւրամիտ ՚ի չարն։

Դիւրամուտ. մտի. իւ. ից. իւք։ ‖ դիւրամուխ. ըստ դիւրաւ մտանող. կմ որ դիւրաւ մտի, և մտանէ ՚ի ներքս ինչ. որպէս թշնամին ՚ի քաղաքն անամրութեան։ Խորէն. ա. գլ. 30։

Դիւրամորթելի. լւոյ. եաւ. եաց. եօք։ ‖ դիւրաւ մորթելի. կմ քաղցրամորթ. և կամ քաղցրաճաշակ։ Նորէկ. ղզ։

Դիւրայոյս։ (Նախադրիւ հոլովի.) ‖ բարեյոյս. կմ քաջայոյս. կմ մեծայոյս. կամ յոյժ յուսացող. և կմ դիւրաւ շարժող ՚ի յուսալ։

Դիւրայրեաց. եցի. աւ. աց. օք։ ‖ դիւրաւ այրելի. կմ դիւրակէզ։

Դիւրանամ. ացայ. ացիր. նալ։ (ընդ միշ.) ‖ դիւր լինիլ։ Եւ մերթ հանդարտանալ. կամ հեշտանալ։

Դիւրանց. ի. իւ. ից. իւք։ ‖ դիւրաւ անցանող, կամ անցանելի. և որ շուտով ապականի և անցանէ։

Դիւրանցուկ։ (Նախադրիւ հոլովի.) ‖ դիւրաւ անցանող. որ ասի զջրոյ. զգետոյ. ըզ մարդոյ. զփորձութէ. և այլն։ Իսկ մերթ նշանակէ զդիւրաւ ապականելին, և եղծանելին։

Դիւրաշարժ. ի. իւ. ից. իւք։ ‖ դիւրաւ շարժող. կմ դիւրաշարժելի. և կմ արագաշարժ։ Իմաստ. 7. 22։

Դիւրապատիր։ (Նախադրիւ հոլովի.) ‖ դիւրախաբ. կմ դիւրաւ պատրելի և խաբելի։ Նորէկ. խը։

Դիւրապատրաստ. (Նախադրիւ հոլովի.) ‖ առաձեռն պատրաստ. կամ յոյժ պատրաստագոյն. կմ ամենապատրաստ։ Նորէկ. ժզ։

Դիւրաւուկ. (Նախադրիւ հոլովի։) ‖ այն՝ որ կարէ դիւրաւ առեալ լինել՝ ՚ի թշնամեաց. և ըստ այսմ ասի դիւրաւուկ քաղաք. կմ բերդ. և այլն։

Դիւրասահ։ (Նախադրիւ հոլովի.) ‖ դիւրաւ սահող. կմ դայթակղող. և կմ դիւրակործան։

Դիւրասխալ։ (Նախադրիւ հոլովի.) ‖ դիւրաւ սխալող. կմ բազմասխալ։

Դիւրասնունդ. նուցի. իւ. ից. իւք։ ‖ որ դիւրութ͞ սնուցանէ զոք. և կմ որ դիւրութ͞ սնուցանի։ Մերթ և նշանակէ հեշտութ͞, և փափկութ͞ սնուցանողն. կմ սնեալն։

Դիւրասուն. սնի. կմ սնոյ. իւ. ից. իւք։ ‖ որ դիւրութ͞ սնանի. և կամ որ սակաւ իրօք կերակրի, և սնանի։ Մերթ և նշանակէ նա, որ սնեալ է հեշտութ͞, և գրգանօք։

Դիւրարհամարհ։ (Նախադրիւ հոլովի.) ‖ դիւրաւ արհամարհելի. կմ յոյժ խոտան. կմ չնչին, և անարգ։ Ոսկէ. 1. Կոր. խդ։

Դիւրաւաչ. ի. աւ. աց. օք։ ‖ դիւրաւ աւաչելի. ըստ դիւրաւ, և քաղցրապէս հնչելի. կմ դիւրաբար արտաբերելի. որպիսիքեն մեղմաձայն, և քաղցրահնչիւն բառք. կմ ասացուածք։ տե՛ս և զԱձայն։

Դիւրաւոր. ի. աւ. աց. օք։ ‖ դիւրական. կմ հեշտական. և կամ հանդարտացուցիչ։ Նորէկ. ղ։

Դիւրափշրելի. լւոյ. եաւ. եաց. եօք։ ‖ դիւրաւ փշրելի. կամ դիւրաւ մանրելի։ Նորէկ. հզ։

Դիւրափոփոխ. ի. իւ. ից. իւք։ ‖ որ դիւրաւ փոփոխի. կմ փոփոխական. և կմ որ զայլայլական, և զյեղեղուկ բարս ունի։

Դիւրաքակ. ի. իւ. ից. իւք։ ‖ դիւրալոյծ. կմ դիւրաւ քակտելի. կմ քայքայելի. կմ դիւրաւ լուծանելի, կմ ապականելի։

Դիւրեաւ։ (մակբայ որակական.) ‖ դիւրաւ. կմ դիւրութ͞. և կմ հանդարտութ͞։

Դիւրեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) ‖ մերթ նշանակէ տալն զհանգիստ, և զդիւրութ͞. ըստ հանդարտացուցանել։ Եսայ. 36. 16։ և Իմաստ. 16. 2։ Մերթ և նշանակէ հարթել կմ հորդել զճանապարհ. ըստ տաշել։ Եսայ. 26. 7։ Իսկ մերթ նշանակէ դիւրացուցանել. կմ դիւրին առնել։ Ոսկէ. 1. Կոր. է։

Դիւրերասան. ի. աւ. աց. օք։ ‖ դիւրասանձ. ըստ որ դիւրաւ սանձի, և նուաճի, և ՚ի հնազանդութ͞ն գայ. որոյ ներհակն է ապերասանն. կմ խստերախն. և այլն։ ՚ի ձորս հարց. Ե։

Դիւրընթաց. ի. իւ. ից. իւք։ ‖ դիւրաւ ընթացող. կմ երագընթաց։

Դիւրընկալ. ի. իւ. ից. իւք։ ‖ դիւրաւ ընկալնելի. կմ դիւրաւ ընդունելի. կմ դիւրաւ ըմբռնելի, և հասկանալի։ Լամբրոն։ Իսկ մերթ դիւրաւ ընդունող։

Դիւրիմ. եցայ. եաց. իլ։ (Ձայնակր.) ‖ հանդարտանալ. կմ անդորրանալ. կմ հեշտանալ։ Լամբրոն։

Դիւրիմաց. ի. իւ. ից. իւք։ ‖ դիւրաւ իմանալի. կմ հասկանալի, և ըմբռնելի։

Դիւրին. (Նախադրիւ հոլովի.) ‖ այն՝ որ ոչ է դժուարին։ Եւ մերթ հեշտ. կամ

Digitized by Google

անզօրը, կմ՛ հանդարտական ։ Առակ. 2. 20 ։

Դիւրիչ. դիւրչի. աւ. աց. օք ։ ‖ հանդարտացուցիչ. կմ՛ ամոքիչ. կամ անզօրիչ. և կմ՛ հարթիչ, և ուղղիչ ։ Եղէկ. 7. 26 ։

Դիւրութիւն. թեան ։ ‖ մերթ նշանակէ զանդժուարութիւն ։ ռամկ. խօլայութիւն ։ Իսկ մերթ նշանակէ զհանդարտութիւն. կմ՛ զհեշտութի. և կամ զանզօրութիւն ։ Ելից. 8. 15 ։ և Առակ. 30. 32 ։

Դիւց ։ ‖ է սեռական անուն դիք բառին. յորմէ ելանէ դիւցազն. զոր տեսցես 'ի ներքոյ. անս և զԴիք ։ Խորէն. Գ. գլ. 62 ։

Դիւցազն. ազին. ամբ. անց. ամբք ։ ‖ ազն. կմ՛ ազգ դիից. քի չաստուածոց. և կմ՛ դիւցազարմ. քի այն որ է յազգէ, կմ՛ 'ի զարմէ դիցն ։ Զի 'ի հնումն բազմաստուածեան հեթանոսքն զդիւցուհիս 'ի քաջս, և 'ի հռչակաւոր անձանց համարէին 'ի խառնմանէ դիցն ծնանիլ. ուստի և վարկանէին զնս հաղորդս անմահութե. մեծս, և երանելիս. և նմ փառօք լցեալս. և յետոյ զազգն, կմ՛ զզարմն նց կոչէին դիւցազն, և իբր մեծական փառաց վիճակաւոր՝ երանելիս կարգային զնս՝ և զծնեալսն 'ի նոցանէ ։ Մերթ և վն պատուոյ՝ զքաջ և զգեղեցիկ այր նմանագարդ անձինս, և զառնեմս նց անուանէին դիւցազն ։ Խորէն. Ա. գլ. 10. և 25 ։ և Բ. գլ. 47 ։ Եւ յայսմանէ ստորութե եղև նաև առ ժամանակաք քրիստոնէութե. զի և իցէ մեծազգի, իշխանազուն, և քաջ անձինս, կմ՛ փոցին զարմն. դիւցազն կոչել. և ը այսմ առնու Նարեկացին 'ի Ճառն խաչին, ուր ասէ. քանզի այրք ոմանք երևելիք 'ի սոհենացին պայազատութենց, 'ի ցեղէ վեհից, 'ի զարմէ դիւցազանց, և այլն ։

Դիւցազնաբար. (մակբայ որակական.) ‖ ը նմանութե դիւցազանց. կմ՛ իբր դիւցազունս. կմ՛ քաջաբար. և կամ ազնուաբար ։

Դիւցազնական. ի. աւ. աց. օք ։ ‖ դիւցազանց պատկանեալ իր. կմ՛ հռչակաւոր. կամ յոյժ անուանի. կմ՛ փառաւոր. կմ՛ վեհմ. կմ՛ գերազանց. և կմ՛ յոյժ ազնիւ և պատուական ։ Եւ ը այսմ առի դիւցազնական պալատ. կմ՛ հանդերձ. կամ փառք. կմ՛ կերակուր. կմ՛ ըմպելիք. և այլն ։

Դիւցազնացեալ. ցելոյ. ով. ոց. ովք ։ ‖ դիւցազն եղեալ. կմ՛ զդիւցական զարմ ստացեալ. կմ՛ դիւցանման եղեալ, և սաստիկ ազնուացեալ ։ Խորէն. Ա. գլ. 23 ։

Դիւցազնեալ. ելոյ. ով. ոց. ովք ։ ‖ նոյն է ընդ վերինոյն ։ Յն օրէ ։

Դիւցախառն. (նախդրիւ հոլովի.) ‖ դիւցազարմ. կմ՛ դիւցատոհմ. որպիսիք են նոքա, որք 'ի խառնմանէ դիցն են յառաջեկեալք, և կմ՛ որք Է դիւն կենդանագրեալ բուքն, կմ՛ պաշտօնատարութե են խառնեալ ։

Դիւցախելոր. կմ՛ դիւցախելառ. ի. իւ. ից. իւք ։ ‖ դիցամօլ. կամ խելագարեալ 'ի սէր և 'ի պաշտօն դիցն ։ Ագաթ. ։

Դիւցապաշտ. ի. իւ. ից. իւք ։ ‖ դիցապաշտ. կմ՛ կռապաշտ. կմ՛ պաշտօնեայ չաստուածոց ։ Իսկ 'ի Նոննեայ՝ ուր ասէ 'ի սատամ բանի զուռողութե դիւցապաշտ ինքնակալութեն, նշանակէ զդիւցապաշտական, կմ՛ զկռապաշտական ։

Դիւցընկէց. (նախդրիւ հոլովի.) ‖ է անուն լերին միոյ, որ այժմ կոչի ողիմպոս ։ Խորէն. Ա. գլ. 5 ։

Դիք. դից. կմ՛ դիւց. դիօք ։ (անեզական.) ‖ չաստուածք ։ Եւ գիտելի է, զի անունս դիք. է բառ այլազգական, և առեալ զկնաց ը տուեալ կռապաշտաքն համարէին 'ի նոսին բնակել զմտս բազումս. և զոլով միշտ 'ի բազմաստուածն մոլորութե, ոչ ունէին զերկական անուն զայս, այլ միշտ յոգնականաբար ասէին դիք. քի ամբք ։ Իսկ կուռք անունն՝ նշանակէր զպատկերին արձանն, կմ՛ պատկերն շինեցեալ և կանգնեցեալ 'ի պատիւ նց ։ և բազում անգամ զայսպիսի արձանս կոչէին դիս, և իբրև զաստուածս մեծս համարեալ երկիր պագանէին նց ։ Ա. Թագ. 6. 5. և 17. և 43 ։ և Դան. 3. 12. և 14 ։ Եւ ըստ այսմ յոյժ վայելուչ ստուգաբանի 'ի մեզ բառս այս. զի դիք կոչեցան. վն զի էին անշարժ և անկենդան իբրև զդի. քի իբրև զդեղ մեռելոյ ։ զի բառս դի, 'ի մերս բարբառ նշանակէ զդեղ ։

Դ Լ

Դլփին. ըմի. իմ. ից. իւք ։ ‖ է կէտ ձուկն ։ որ և կոչի յոմանց խոզ ծովային. զի նման է գլուխ նորա խոզի, որոյ և ներքին գունդն է կարճ քան զվերինն ։ ընդ մէջ դագաղթան, և ունայցն ունի զծակ ինչ, Է որ զջուր փչէ, և զփրփուր հանէ. ունի զմի մորդաշափ մեծութե. և ոմանք ասեն, կամ սակաւ ինչ պակաս ։ պարարտ է մարմնով որպէս զխոզ. բայց միս նորա է կարծր և զզուելի ։ որսասէր է յոյժ և արագընթաց այնչափ, մինչ զի ըստ արիստոտելի. գերազանցէ արագութ, քան զամ կենդանիս. Է լուղելն 'ի ծովու բազում անգամ ձախոր առնելով ընթանայ. քի 'ի վեր բոյն 'ի վեր տանելով, և անդրէն 'ի նոյն սուզելով. ռամկօրէն եօնուս ։

Դ Խ

Դխխին. (նախդրիւ հոլովի.) ‖ դժուարին. կամ սաստանելի. կմ՛ վշտագին. կամ տառապելի ։

Դ Ղ

Դղամ. ացի. դղիմ. աւ ։ (չեզոք.) ‖ հանգիստ առնուլ. կմ՛ միջոց առնուլ 'ի մէջ գործոյն. կմ՛ հանգչիլ և դադարել ։ 2. Մակ. 12. 2 ։ Եւ 'ի սմանէ ելանէ բառս՝ դադար, որ է հանգիստ. կմ՛ դադար ։

Դղեակ. ղեկի. աւ. աց. ղք ։ ‖ բերդ. կամ ամրոց 'ի քաղաքամիջի. և կմ՛ արքայական քաղաքի, 'ի յոր ապաստանեալ բնակին մեր

դիք: 2. Մակ. 4. 27: Խորէն. Բ. գլ. 12: Մերթ ևս գիւղաքաղաքն պարսպաւոր՝ ասի դղեակ:

Դղրդեմ. եցի. եա՛. ել: (Ներգործ.) || դղրդիւնս յարուցանել. կմ՝ վրդովել. կամ խռովել. կմ՝ աղմկել զքաղաք. կամ զամբոխ, յորմէ հնչէին ձայնք և աղաղակք: Լամբրոն:

Դղրդեցուցանեմ. ցուցի. ցո՛. ել: (անցողակ.) || դղրդմամբ և աղմկաւ ընուլ. կմ՝ խռովեցուցանել. կամ տատանեցուցանել զքաղաքութիւն ինչ. կմ՝ վրդովել, և շփոթել: Դատ. 8. 12:

Դղրդիւն. (Նախդրիւ հոլովի.) || Թնդիւն կմ՝ շարժումն. կմ՝ վրդովումն. կմ՝ խռովութիւն. կմ՝ ամբոխումն: Խորէն. Ա. գլ. 10:

Դղրդումն. դման. մամբ. մանց. մամբք: || Նոյն է ընդ վերնոյն:

Դ Մ

Դմակ. ի. աւ. այ. օք: || Լայն պոչ ոչխարի, որ յետոյս նո՛ր Թանձրութեա՛ն և ծանրութեա՛ն խոյով կախեալ կայ: Ելից. 29. 22:

Դմին իրի. (Շաղկապ պատճառական.) || վա՛ այդորիկ. կմ՝ վա՛ այդորիկ իրի: Եփես. 6. 22: Կողոս. 4. 8:

Դ Ն

Դնեմ. եդի. դիր. դնել: (Ներգործ.) || զիր ինչ զետեղել ուրեք. կմ՝ տեղաւորել. կմ՝ 'ի վայր իջուցանել, և հանգուցանել ուրեք. կմ՝ 'ի վե՛ր դնել. կմ՝ յաւելուլ: Եւ մինչ ասի մարտ դնել, նմանի մարտնչիլ. կմ՝ զպատերազմ յարուցանել: Եւ 'ի սախլն՝ պատիւ դնել ումեք, նմանի պատուել:

Դ Շ

Դշխոյ. ի. իւ. ից. իւք: || Թագուհի. կմ՝ տիկնաց տիկին. կմ՝ կին Թագաւորի. և կամ մայր արքայի: Մատթ. 12. 42: Պ. XLIV. 10.

Դ Ո

Դոդեմ. եցի, եա՛. ել: (Ներգործ:) || Նենգել. կմ՝ խարդախել:

Դող. (Նախդրիւ հոլովի.) || դողումն. կմ՝ սարսափումն:

Դողամ. ացի. կամ ացայ. ա՛. ալ: (Չէզոք.) || դողդոջալ. կմ՝ սարսափիլ. կմ՝ սասանիլ 'ի ցրտոյ. կմ՝ 'ի տենդէ. կամ յերկիւղէ: և այլն:

Զ'Դողանի հարկանիմ. հարայ. հա՛ր. իլ: (Ձայնակր.) || դողալ. կմ՝ դողալով շարժիլ. ո՛չ հանդիպելի սրտի. կմ՝ երկկամանց մարդոյ. և այլն: 1. Մակ. 2. 24:

Դողդոջ. ի. իւ. ից. իւք: || երերուն. կամ դողդողան. ո՛րպ ծերք, որոց ձեռքն, կամ գլուխն դողդոջեն, սաւին ունիլ զձեռն, կմ՝ զգլուխ դողդոջ:

Դողդոջամ. ացի. ա՛. ալ: (ընդմէջ.) || տե՛ս զԴողդոջեմ:

Դողդոջեմ. կամ դողդոչեմ. եցի. եա՛. ել: (Չէզոք.) || դողդողալ. կամ երերիլ. և կմ՝ տատանիլն ձեռաց, կմ՝ գլխոյ. և այլոց մասանց: Սիրաք. 37. 16: Իսկ մերթ անդրադարձաբար նշանակէ զերկբայիլն. կմ՝ զտարակուսիլն 'ի խօսիլն: Ոսկէ. 1. հատ. Ա:

Դողդոջուն. կամ դողդոչուն. (Նախդրիւ հոլովի.) || դողդողացող. կամ երերուն. կամ անհաստատ. կմ՝ անկայուն: Ոսկէ. 1. հատ. Ա. և Բ:

Դողութիւն. Թեան: || դողումն. կամ սարսափումն. կմ՝ սոսկումն: Սաղմ. 65. 9:

Դողումն. ղման. մամբ. մանց. մամբք: || Նոյն է ընդ վերնոյն: Ելից. 15. 15:

Դոյզն: (Նախդրիւ հոլովի.) || դոյն ինչ. կամ խուն, փո՛, սակաւ. կամ նուազ: Իմաստ. 14. 5: և 16. 27: Եւ մերթ փոքրիկ. Երեմ. 9. 2:

Դոյլ. դուլի. լիւ. լից. օք: || Ջրհան. որ է անօթ ինչ փայտեայ. կմ՝ կաշեայ. որով հանեն զջուր 'ի ջրհորոյ: ռամկ. քօւ. Եսայ. 40. 15: Յովհ. 4. 11:

Դոյն. դոյնոյ. ով. ոց. ովք: (դերանուն ցուցական.) || այդ: ռամկ. աս: 3. Մակ. 1. 13: 1. Տիմ. 4. 15:

Դոյն. (Նախդրիւ հոլովի.) || սակաւ. կմ՝ խուն:

Դոյն ինչ: (Նախդրիւ հոլովի.) || դոյզն ինչ. կմ՝ սակաւիկ ինչ: ռամկօր. քիչ մ: Նարէկ. ՂԶ:

Դոյնչափ. (մակբայ քանակական.) || այդչափ. կամ այդքան: 2. Կորնթ. 12. 8:

Դոյնպէս. (մակբայ որակական:) || այդպէս կամ ըստ դմին օրինակի: Խորէն. Բ. գլ. 60:

Դոյնպիսի. պիսւոյ. եաւ. եաց. եօք: || այդպիսի. կամ այդու կերպիւ:

Դոյնօրինակ. (մակբայ որակական.) || դոյնպէս, կամ այդպէս: Իսկ մերթ վարի իբրև գոյական. և նշանակէ դոյնպիսի. կմ՝ այդպիսի:

Դոն. ի. իւ. ից. իւք: || է տեսակ ինչ ձկան. որ հասանի 'ի չափ կանգնոյ միոյ, և կամ փոքր ինչ աւելի. կմ՝ պակաս. և է յոյժ արժանաւոր. զոր բազմիցս 'ի յաղն դնելով՝ չորէքտասան կազմեն 'ի նմանէ: ռամկ. Բալամութ: Մերթ ևս նշանակէ զտեսակ ինչ փոքրիկ հացի, զոր 'ի հնումն եփէին 'ի վանորայս մե՛ կրօնաւորաց. և կոչէին զնա՝ դոն. զի Ժ ձեւոյ փոքրիկ դոն ձկան կազմէին: ուստի ոմանք անուանեցին զսա ձկնաձև հաց: և զայս բազմիցս չորացուցեալ 'ի փռան առնէին պաքսիմատս: բայց յետոյ սովորութիւն եղեալ՝ դոն կոչէին զմ՚ և իցէ պաքսիմատ՝ զորս ուտէին կրօնաւորքն, կմ՝ միայնակեացքն:

Դորակ. ի. աւ. աց. օք: || է չափ հեղեղուկ իրաց. փ, խաղու, կմ՝ գինւոյ, և այլոց նմանեաց. որ տանի իբրու զորս հօխայ և կէս: Ղևտ. 23. 13: Թուոց. 15. 4: Եզեկ. 4. 11:

Digitized by Google

Դու. քոյ. քեզ. զքեզ. 'ի քէն. քև: դուք. ձեր. ձեզ. զձեզ. 'ի ձէնջ. ձեօք: || Է դերանուն դէմական. որ ցուցանէ զերկրորդ դէմս. որ և ասի կ". տես դու:

Դուճար. կամ տուճար. ի. աւ. աց. օք: || Հօրան ոչխարաց. կամ Չոկ անասնոց: Եւ 'ի սմանէ ելանէ՝ տուճարածականն:

Դուզեմ. եցի. եա. եր: (չէզոք.) || Թռչիլ. կամ վերաթռչել. կամ օդագնաց լինիլ:

Դուզնաքանեմ. եցի. եա. եր: (չէզոք.) || զանխաւ և զգուշն բանս խօսիլ. կամ համառօտաբանել:

Դուզնաքեայ. քեի. իւ. եց. իւք: կամ եայց. եօք: || դոյզն. կամ սակաւ. կամ թե թև ինչ, կամ փոքր: Նորէկ. ըԶ: Եւ մերթ նուաստ. կամ փառնաքի. և կամ չնչին: Կիւրղ. եղէգ. Ժ:

Դուզնաքեան. քենի. իւ. եց. իւք: || Նոյն է ընդ վերնոյն: Կիւրղ. եղէգ. ԺԳ:

Դուժ. (նախդրիւ հոլովի.) || Նշանակէ զայն՝ զոր նշանակէ բառս՝ խուժ: աստի երբեմն 'ի միասին 'ի գործ ածի. այսպէս. խուժ դուժ. կամ խուժադուժ. որով նշանակի բարբարոսն, ք, վայրենի և գազանաբարոյ ազգն. կամ որ է անգութ, դժնեայ, և ամարդի. և ունի զխառնխուռն և զայլանդակ լեզու. կամ որոյ բարբառն է բիրտ, և դժուարահասկանալի, որպիսիք են ազգքն՝ որք յերկիրն բարբարոսաց բնակեն: Կողոս. 3. 11: Եւ յայսմանէ առնուլ, նք որք օտար և անհասկանալի լեզուաւ խօսին է միմեանս, և ոչ կարեն ըմբռնել զբանս միմեանց, ասէին լինիլ իրերաց՝ խուժ. կամ դուժ: և ըստ այսմ է 1. Կորնթ. 14. 11:

Դուլ. (նախդրիւ հոլովի.) || Հանդիստ. կամ դադար: 2. Թագ. 17. 8: Երեմ. 23. 13: Ողբ. 2. 18:

Դուկան. ի. աւ. աց. օք: || գերան. կամ հեծան:

Դուն. (նախդրիւ հոլովի.) || սակաւ. կամ խուն. կամ փոքր. կամ սուղ:

Դուն ինչ. (նախդրիւ հոլովի.) || սակաւ ինչ. կամ սուղ ինչ. կամ փոքր ինչ: Նորէկ. ըԹ: և Լամբրոն:

Դուն ուրեք: (մակբայ տեղական.) || ուրեք ուրեք. կամ հազիւ ուրեք. կամ սակաւ ուրեք. և կամ ցանցառակի: Լամբրոն:

Դուռն. դրան. ամբ. անց. ամբք: || է այն մասն քաղաքի. կամ տան, կամ սենեկի, և այլոց նմանեաց. ընդ որ լինի ելանել և մտանել, կամ մուծանել զիմն 'ի ներքս, և հանել. և այլն. որ և ասի կ. տես դուռն: Մերթ և առնուլ լինի փոխանակ ապարանից Թագաւորի, կամ կայսեր. և ըստ այսմ՝ ասի. 2. Մակ. 4. 28. Երկոքին 'ի միասին 'ի դուռն կոչեցան: Ըստ այսմ և 'ի գիրս. Խորէն. գ. գլ. 57. ուր ասի. Առաքեցի 'ի դուռն արքունի. իմանի արքունական պալատն: Իսկ երբեմն նմանութ՝ եկեղեցւոյ իրաց՝ դուռն ասէին: և ըստ այսմ քերականութիւն կոչի դուռն իմաստից: Այսպէս է և Նորէկ. ԻԶ. ուր ասի. Զառդրունս հեշտականաց. որով իմանին այնք մեղք, որք 'ի սկզբան յիշեցուցման գիւին գրգռմամբ մարմնոյ լինին: Բայց գիտելի է, զի երբեմն յոգնականն սորա ձևանայ այսպէս. դուրք. դրաց. և այլն. զոր տեսցես 'ի տեղւոջ իւրում:

Դուստր. դստեր. երբ. երց. երբք: կամ աց. օք: || էգ զաւակ: Մատ. 9. 18: Սակայն 'ի Ս. գիրս՝ երբեմն գիւղքն՝ որք են ընթ քաղաքի, անուամբ դստեր նշանագրին. քանզի որպէս մայրն զդստերս շուրջ զիւրև ունի. այսպէս և քաղաքն զգիւղօրէս ընդ հովանեաւ իւրով ունի: Յեսու. 17. 11: և 2. Մնաց. 13. 19: և 'ի յայլ բազում տեղիս:

Դուր. դրոյ. ով. ոց. ովք: || երկաթեայ գործիք ինչ հիւսան, որով փորէ զփայտ, կամ հարթէ: Եսայ. 44. 12: Մերթ և նշանակէ զպատուհանշանն. որ է գիծ ինչ նման տառից՝ ~. որ դնի 'ի վերայ համառօտեալ բառից այսպէս. նր:

Դուրգն. դրգան. ամբ. դրգունք. անց. ամբք: || է գործիք բրտի. որ է փայտ ինչ կլօրակ, 'ի վր որոյ դնէ բրուտն զկաւն, և ձևակերպէ զանօթն: ասի և. չարխ: Իմաստ. 15. 7: Բայց անդէն՝ բառս այս՝ ուր գրի՝ դրգան, է 'ի սեռականի հոլովոջ, ոչ 'ի նախադրութենէն յայտ է, զի ասի, դնէ 'ի վր դրգան:

Դուրք. դրաց. 'ի դուրս. 'ի դրաց. դրօք: և այլն: || բառս այս՝ յոգնական ձայնիւ է եզական, ոչ առեալ 'ի սորիւ: Առդ՝ նշանակէ զոր և իցէ դուռն, թէ մեծ իցէ, և թէ փոքր. թէ երկփեղկեան իցէ, և թէ միափեղկեան: Ծննդ. 6. 16: 3. Թագ. 6. 31: Յովհ. 14. 17: Ղուկ. 11. 7: Իսկ Գործ. 12. 13. ուր ասի. 'ի բաղխել զդուրս դրան. նշանակէ՝ բաղխել զփոքր դուռն, որ լինի 'ի մէջ երկփեղկեան դրան: և կամ նշանակէ բաղխել զարտաքին դուռն, ը որ լինի մտանել նախ 'ի բակն տան. և ապա այլով դրամբ 'ի ներքս տան: Իսկ մերթ՝ մինչ ասի 'ի դուրս. կամ դուրս. վարի իբրև զմակբայ. և նշանակէ՝ արտաքս, կամ 'ի բաց. ըստ այնմ. Սաղմ. 67. 23. 'ի միջոյ ժանեաց զայն 'ի դուրս հորդեցից. ք, 'ի բաց կամ արտաքս: Սոյնպէս մինչ ասի 'ի դուրս տալ, իմանի՝ արտաքս տալ, կամ 'ի բաց տալ. կամ՝ անդրէն հատուցանել: Եսայ. 42. 22: 1. Մակ. 15. 30: 3. Մակ. 7. 15: Ըստ այսմ է և 2. Մակ. 13. 6. ուր ասէ՝ դուրս քարշել 'ի ներքսակողմանէն. ք արտաքս քարշել: Իսկ երբեմն մինչ ասի՝ 'ի դուրս մերձեալ, կամ հասեալ, կամ մերձ է 'ի դուրս, կամ առ դուրս. և այլն. իմանի՝ սաստիկ մերձ լինելն. կամ յոյժ մերձակայ գոլն: Մատթ. 24. 33: Մարկ. 13. 29:

Դուքս. դքսի. իւ. եց. իւք: || մերթ նշանակէ պետն միոյ թագաւորութե. և կամ իշխանն: 'Ի ճառ հարց. ժդ: Իսկ մերթ նշանակէ ընդհանրական զօրագլուխ զօրաց ծխականն. Լամբրոն: Մերթ և հազարա-

ոտանաց զօրաց : Եւ մերթ նշանակէ տապա ծոյն և տապաշխարհողոյն : և ըստ այսմ է 4 . Եզր . 16 . 76 :

Դոփեմ . եցի . եա . ել : (չէզոք .) || հարկանել ոտիւք զգետին , և այնու առնել ըզ դղրդումն : Եւ կմ զոտն յերկիր հարկանել 'ի պարելն , և 'ի խաղալն . և կամ ոտիւք ցաթկանելով խաղալ : Եզեկ . 6 . 11 : և 25 . 6 :

Դոփիւն : (Նախդրիւ հոլովի :) || դղրդիւն . կմ բաղխումն . կմ բոմբիւն , և այս ասի՝ զձայնէ , կմ զթնդմանէ , որ ելանէ 'ի հարկանելոյ ոտիւք զերկիր . և զայլոց նմանեաց :

Դ Պ

Դպիր . դպրի . աւ . աց . օք : || մերթ նշանակէ զուծողն զիրողը աշակերտանս կարգին : Լամբրոն : Մերթ եւ գիտողն գրոց , և կմ տեղեակն օրինաց՝ և իրաւանց . և Է այսմ է յաւետարանի 'ի բազում տեղիս , յորս յիշին դպիրք և փարիսեցիք : Մատթ . 12 . 38 : և 23 . 2 : և այլն : Մերթ գրագիրն արքունական , որ զվճիռ և զհրաման արքայի գրէ : Եսթեր . 3 . 12 : Մերթ եւ իմանի ն և լեզէ ընթերցող և գրագիր : Սաղմ . 44 . 2 :

Դպրանոց . ի . աւ . աց . օք : || դպրոց . կմ դպրատուն . և կմ ուսումնարան , ուր ուսանողքն պարապին յուսումն : Յոհէ . 2 . հարց . ժե :

Դպրապետ . ի . աւ . աց . օք : || գլուխ . կմ պետ դպրաց . և կամ ատենադպիր , որ 'ի յատենի ընթեռնու զթուղթս , նաև գրէ զհրամանս , և է տեղեակ գրոց : ռամկ . փէճթփէրտար : 2 . Թագ . 8 . 17 : և 1 . Մնաց . 27 . 32 :

Դպրատուն . տան . տամբ . տանց . տամբք : || դասատուն . կմ տեղի՝ ուր ուսանին աշակերտք . կմ տուն դպրութե , որ ուսման :

Դպրոց . ի . աւ . աց . օք : || տեղի՝ ուր լինի ուսումն դպրութե . կամ դպրատուն :

Դպրոցակից . կցի . աւ . աց . օք : || ուսումնակից . կմ այնք , որք 'ի միում դպրոցի ուսանին :

Դպրութիւն . թեան : || մերթ նշանակէ գիտութիւն և ծանօթութիւն իրաց . կմ տեղեկութիւն գրոց : Սաղմ . 70 . 15 : Գործ . 4 . 13 : և 26 . 24 : Մերթ եւ նշանակէ գիրք , և մատեանք , յորս պարունակին գիտութիւնք , և ծանօթութիւնք : Ելից . 32 . 32 : և Դան . 7 . 10 : Սաղմ . 68 . 29 : Եւ մերթ գրուած կմ գիր : Խորէն . Ա . գլ . 4 : Մերթ եւ նշանակէ ընթերցուլութիւն . որ գիտելն զկարդալ , և գրել : Եսայ . 29 . 12 :

Դ Ռ

Դռնապահ . ու . կամ ի . իւ . իւ . օք : || պահող դրան . կամ դռնապան . կմ պահող տեղին , Է որ լինի մուտն : 2 . Մակ . 13 . 15 :

Դռնապան . ի . աւ . աց . օք : || պահապան դրան . կմ որ դրան կացող , զի ելողաց , և գնացողաց զհոգն ունիցի : Մարկ . 13 . 34 :

Դռնափակ . ի . աւ . աց . օք : || Նիգ . որ երկաթեայ , կմ փայտեայ ձող , որով փակեն զդրունս . և մանաւանդ Նիգք դրանց քաղաքաց , որք են երկաթեայք , ասին դռնափակք : 2 . Օրին . 3 . 5 :

Դռոյթ . կամ դռութ . ութի . իւ . իւ . իւք : || դրոհ . կամ խուռներնթաց արշաւանք , և արագական 'ի վր յարձակումն . կամ դիմեցումն : Եւ առ մերթ ընդ բայի շարակցի այսպէս . դռոյթ տալ . և նշանակէ դրոհ տալ . կամ խուռներնթաց 'ի վերայ յարձակել :

Դռութեմ . եցի . եաց . ել : (չէզոք .) || 'ի վր դիմել . կամ 'ի վր յարձակել . և կամ դրոհ տալ :

Դ Ս

Դստիկոն . ի . աւ . աց . օք : || վերնատուն . կամ վերնայարկ . որ վերին յարկ . կամ տունն՝ շինեցեալ 'ի վր յարկին առաջնոյ , կամ երկրորդի . և այլն : Եւ քանզի են տունք , որք 'ի վր երկրորդի վերնատան ունին զերրորդ վերնատուն . և վս այսո րիկ ասի Գործ . 20 . 9 . անկաւ յերրորդ դստիկոնէն . որ յերրորդ վերնատանէն . այս է՝ յերրորդ դաճէն : ըստ այսմ և Գործ . 9 . 37 . ուր ասի , եդին 'ի դստիկոնի . իմանի 'ի վերնատան :

Դսրով . ի . իւ . լոյ . լաւք : || պարսաւանք . կմ արհամարհանք . կամ անարգանք . և կամ եպերանք : Նարեկ . ծզ :

Դսրովանք . անաց . օք : (անեզական .) || Լամբրոն : նոյն է ընդ վերնոյն :

Դսրովական . ի . աւ . աց . օք : || եպերական . կամ պարսաւական . կամ բամբասական . Նարեկ . Ծ :

Դսրովեմ . եցի . եա . ել : (ներգործ .) || պարսաւել . կամ եպերել . կամ բամբասել : Յոբ . 31 . 30 :

Դ Ր

Դրադէմ . դիմի . աւ . աց . օք : || այնք ժամանակք բայից , որք բղխեն 'ի յընդունելութէ անցելոյ , և դիմաւորին , յարելով Է էական բայի , և կոչին անցեալ յարակատար . կմ գերակատար , ասին դրադէմք , որգոն . նստեալ եմ , նստեալես , նստեալէ . նստեալէի , նստեալէիր , նստեալէր և այլն :

Եպիսկոպոսակից. կցի. աւ. աց. օք: || կցորդ պաշտօնի եպիսկոպոսութեան ընդ այլում եպիսկոպոսի: Եւ մերթ քահանայն՝ որ է մերձաւոր և կցորդ եպիսկոպոսին, ասի եպիսկոպոսակից: Ոսկեփ. փիլիպ. 1. 1. ուր ասի՝ եպիսկոպոսակցօք. իմանի քահանայիւք, որք են ընդ, կմ կցորդ եպիսկոպոսին:

Եպիսկոպոսապետ. ի. աւ. աց. օք: || արք եպիսկոպոս. կմ պետ եպիսկոպոսաց:

Եպիսկոպոսարան. ի. աւ. աց. օք: || աթոռն, կմ տեղին, ուր եպիսկոպոսն նստի. կամ թեմն նորին:

Ե Ռ

Եռ. ի. իւ. իւ. իւք: || երեք: Բայց սա գրեթէ միշտ ընդ այլում բառի, կամ ձայնկի յօդի, և այնպէս 'ի գործ ածի, զոր օրինակ. եռեակ. կմ եռահիւսեակ. և այլն:

Եռաթիւնեալ. ելոյ. ով. ոց. ովք: || եռապատիկ հրոյ թիւնաւորեալ. և կմ երիցս թունաւորեալ. որով իմանի սաստիկ թունաւորեալն. որպիսի է ալաքն նեռին մեռեալ թիւնաւոր չրով: Յմուէ:

Եռալուսեան. ենի. իւ. իւ. իւք: || երեք լուսեան. այս է երրորդ լոյս տնօղ: Նարեկ. հե:

Եռակի. (Նախդրիւ հոլովի.) || երեակի. կամ երրեակ:

Եռահիւսեակ. եկի. իւ. իւ. կմ աց. օք: || յերից իրաց հիւսեցեալ, և բաղկացեալ. և կմ եռեակ իրօք, կմ բանիւք յօրինեալ, և կազմեալ. և ըստ այսմ երեքսրբեան երգն, այս ածն, ըստ որում 'ի նմա բառս՝ որ երիցս կրկնի, հիւսի՝ և կազմի. և երիցս անգամ ասի, կոչի եռահիւսեակ: վն որոյ և առ ամենայն երրորդութեան ասիլ պատշաճի:

Եռահիւսեմ. եցի. եա. ել: || շարահիւսել. կմ շաղկապելով հիւսել: Մերթ և զերիս բանս, կմ զթելս 'ի միասին հիւսել:

Եռաձեղն: (Նախդրիւ հոլովի.) || եռայարկեան. այս է ունօղ զերիս ձեղուս:

Եռամ. ացայ. ցիր. ալ: (Ընդմիջ.) || յ[illegible]ուել ջերմութեան 'ի վեր բորբոքիլ, կմ շարժիլ. և կամ եփիլն ջրոյ, և քաղցրոյ՝ և այլոց նմանեաց: ռամկ. խայնամիշ ըլլալ. կմ պղպջալ: Յոբ. 32. 19: Եզեկ. 24. 5: Ըստ այսմ

Digitized by Google

և այլք խօսք, յորժամ յառաջատուութիւն տրեան, կմ. ՚ի սատակութիւն ջերմութեան, կմ. սիրոյ, և այլոց նմանեաց՝ արտաքս մղին, և շարժումն լինին, կամ բորբոքին, եռալ ասին ։ Հռով. 12. 11 ։ Սոյնպէս յորժամ յերի խմիք որդունք գոյացեալ բղխեն, և շարժին, և զեռան, ասին եռալ ։ տամկ. Քիփալ ։ Եզեկ. 16. 20 ։ Իսկ երբեմն նշանակէ զշառաչալիլն, և զփռփռալն ը մխեալս երկաթեղինաց, կմ. հրահալելեաց ՚ի ձեռն հրոյ, որով խոր թէ եփին, և մի լինին ։

Եռամանակ. ակի. աւ. աց. օք ։ || զերիս ամանակս ունօղ. և այս ասի զբառից՝ որոց ձայնաւորքն ունին զերիս ամանակս. ցք զերիս հնչմունս անկեալս ընդ ժամանակաւ. որպէսի բառիս այծ՝ ասի երկամանակ, և ինքն միամանակ. և այսպէս բառս՝ գունքի, լինի եռամանակ ։

Եռամասն. (Նախդրիւ հոլովի.) || եռամասնեայ. ցք որ ունի յինքեան զերիս մասունս ։ Նոյէլ. ՚ի գովէստ ձուոյն ։

Եռամասնեայ. նէի. իւ. իւց. իւք ։ || երեքմասնեայ. ցք որ ունի զերիս մասունս յինքեան. որպիսի է հոգին բանական, որ ունի զբան, զցասումն, և զցանկութիւն ։ Լամբրոն ։

Եռամեան. մենի. իւ. իւց. իւք ։ || երեքամեան. կմ. երեմեան. ցք որ է երից ամաց. կմ. որ ունի զանտողութիւն երից ամաց ։ Նոյէլ. ձա ։

Եռամեծ. ի. աւ. աց. օք ։ || երիցս մեծ. և կմ. մեծազունեղ. կմ. որ երրեակ կատարելութիւ է մեծ ։

Եռանդ. եռանդի. յեռանդէ. յեռանդն ։ || է բառ բարդեցեալ. զի ասի եռանդ, իբր թէ եռ օր անդ. որով նշանակի՝ երեկեան աւուր նախընթաց օրն, որ նկատմամբ այսր աւուր՝ է երրորդ օր ։ Եւ ըստ այսմ փոխանակ ասելոյ իբրև զերեկ և զեռանդ օրն, ասի իբրև զերեկ և զեռանդն. կմ. զյեռանդն ։ 1. Մակ. 9. 44 ։ փոխանակ ասելոյ՝ երեկին և միւսոյ աւուր. ասի՝ երեկին և եռանդի ։ Յեսու. 3. 4 ։ փոխանակ ասելոյ, յերէկէ և ՚ի միւսոյ օրէ. ասի՝ յերէկէ և յեռանդէ ։ Ելից. 4. 10 ։ 1. Թագ. 21. 5 ։ Եւ փոխանակ ասելոյ. յերեկ և ՚ի միւսում աւուր. ասի՝ յերեկ և յեռանդ. կմ. յեռանդն ։ Ծննդ. 31. 2 ։ Ելից. 21. 29 ։ և 2. Օրին. 4. 42 ։

Եռանդն. եռանդեան. կմ. եռանդման. եռանդեանց. եռանդք. կամ ի. իւ. իւց. իւք ։ || եռացումն. կմ. բորբոքումն. և կմ. եփումն ջրոյ. և այլոց նմանեաց պատճառեցեալ ՚ի ջերմութէ ։ Եսայ. 1. 25 ։ Երեմ. 1. 13 ։ Եւ յայլմանէ առեալ՝ երբեմն բորբոքումն և տապն հրոյ, եռանդն ասի. և ըստ այսմ է ։ 1. Պետ. 4. 12. ուր ասի. մի օտարոտի համարիք զեռանդն ինչ. ցք, մի իբր զօտար ինչ համարիք զբորբոքումն՝ կմ. զտապն նեղութեց, որք լինին ձեզ ի փ. և զհուր, որ փորձէ զոսկի ։ Եւ այսմ և տապն. կմ. կիզումն տոթոյ, որ պատճառի ՚ի սաստիկ տրամութէ, կամ ՚ի բարկոյ, և այլոց նմանեաց, եռանդն ասի ։ 3. Մակ. 4. 2 ։ Իսկ երբեմն բորբոքեալ խղճն, կմ. վառումն սրտի, և սաստիկ ջերմեռանդութիւն առ գործ ինչ, ասի եռանդն ։ 2. Մակ. 4. 13 ։ Նոյէլ. խոս. մերթ ևս մինչ գոյանան ուրեք որդունք յայդմ, և զեռացեալ արտաքս հանին, եռացեալք և բղխմունք նշ եռանդն ասին ։ 2. Մակ. 9. 9 ։

Եռանդեան ։ (Նախդրիւ հոլովի.) || մերթ նշանակի եռանդոտն. կմ. եռացօղն ։ Իսկ մերթ նշանակի՝ երեք աւուրբք յառաջ եղեալ իրն. իբր թէ՝ եռանդական ։

Եռանդնասէր. սիրի. աւ. աց. օք ։ || եռաբորբոք. կմ. ջերմեռանդ. կամ սաստիկ եռանդնոտ ։

Եռանդնոտ. ի. աւ. աց. օք ։ || եռանդաւոր. կմ. ջերմեռանդ. կմ. զմեծ եռանդն ունօղ ։ Ոսկ. 2. հատ. ժդ ։

Եռանդոտ. ի. իւ. ից. իւք ։ || նոյն է ընդ վերնոյն ։

Եռանդուն ։ (Նախդրիւ հոլովի.) || նոյն է ընդ վերնոյն ։

Եռանկիւնի. ւոյ. եաւ. եայ. եօք ։ || երեք անկիւնի. ցք որ ունի զերիս անկիւնս ։

Եռանձնեայ. նէի. իւ ։ || երեք անձնեայ. ցք ունօղ զերիս անձինս. և այս ասի զԱՅ միայն, որ է մի. որոյ զմիութիւն ՚ի յերրորդութեան պատուեմք. և զերրորդութիւն ՚ի միութեան ։

Եռանուն. անուան. ամբ. անց. ամբք ։ || ունօղ զերիս անուանս. կմ. երիւք անուամբք անուանեցեալ. որպիսի է պետրոս առաքեալն, որ կոչի սիմոն. պետրոս. և կեփաս ։

Եռապատիկ. տկի. աւ. կմ. իւ. աց. օք ։ || է կրկնական անուն թուոց. և նշանակէ զերեքպատիկն. ցք ՚ի վ̄ր̄ միոյն երիցս յոդնապատկեալն. կմ. քան զլին երեք առաւելանուն աճեալն ։

Եռավանք. կամ եռավանդ. ի. իւ. ից. իւք ։ || ունօղ զերիս վանկս. կմ. որ բաղադրեցեալ է յերից վանկից, որպիսիք են բառքս այսորիկ. ներբողեան. արտասուք. և այլն ։

Եռատրոհ. ի. իւ. ից. իւք ։ || երրեակ տրոհումն. կամ երրակի տրոհմամբ բաժանեցեալ ։ Յն. որդի ։

Եռացումն. ցման. մամբ. մանց. մամբք ։ || բորբոքումն. կմ. եռանդն. ցք եռալն ։

Եռացուցանեմ. ցուցի. ցո. ել ։ (ներգոր.) || եռացեալ առնել. ցք եռացումն տալ ջրոյ. կմ. այլ ինչ հեղեղուկ նիւթոյ ։ Յոբ. 41. 22 ։ Մերթ ևս նշանակէ ջերմացուցանել ուժգին. կմ. բորբոքելով շարժել. կմ. գրգռել ։ 2. Մակ. 1. 11 ։ Իսկ մերթ նշանակէ գոյացուցանելով բղխեցուցանել. կմ. հանել զորդունս, զգորտունս, զմկունս, և զայլս նմանս ։ 1. Թագ. 5. 6 ։ Երբեմն ևս նշանակէ զհրահալելս ՚ի ձեռն շաղկապիչ նիւթոյ ը մխեալս հրով շաղկապել, և միացուցանել ։ տամկ. խայնատմագ. կմ. [illegible] ։

Եռափափաք. (Նախդրիւ հոլովի.) || զեռացեալ փափաք ունօղ. կմ. սաստիկ եռանդիւ փափաքօղ ։ Եւ մերթ մինչ ասի եռափափաք սէր. իմանի՝ կարի բորբոքեցեալ սէր ։

Եռեակ. եռեկի. աւ. կմ. իւ. աց. օք ։ || է զա

տական անուն Թուոց. և նշանակէ զերեքն զատարաբար: Իսկ մերթ նշանակէ զեր֊րեակն. դ. զերեքաւորսն:

Եռահարիւրակ. ի. ու. ոյ. օք: || է զատական անուն Թուոց. և նշանակէ զերեք հարիւրն զատարաբար:

Եռամա. ի. իւ. ից. իւք. կմ այ. օք: || է բառ յունական. և նշանակէ զբաղդրանուաց, և զներդաշնակաւոր երգն. և կմ զերա֊ժշտական նուագս. որպիսի է մեղեդին. և այլք նմանք: 'ի Հլւս հարց. ը:

Եռորդ. ի. ով. ոյ. օք: || երրորդ. կմ երե֊քերորդ:

Եռօրեայ. րէից. էից. ից. իւք: || երեքօրեայ. դ. որ է երից աւուրց. կմ որ ունի զտեւողու֊թիւն երից աւուրց: Նորէկ. լդ:

Ե Ս

Եսան. ի. իւ. ից. իւք: || տես զՅեսանն:
Եսանեմ. եցի. եա. եղ: (Ներգործ.) || սրոց քարիւ սրել զդանակ. կմ զսուր. և զայլս նմանս: Նորէկ. ղէ:

Եսցէ: || է վերջին դէմն ապառնւոյ. էմ. բայիս. և նշանակէ եղիցի. կմ լիցի. ըստ այնմ զոր ասէ շնորհալին. ոչ իմ կամաւ. այլ քոյդ եսցէ. դ. այլ քոյդ եղիցի:

Ե Տ

Ետեղակալ. ի. ու. ոյ. օք: || կողմնօղ. և ունօղ զտեղի, և կմ զաթոռ, և զիշխա֊նութիւն ուրուք այլ փոխանորդ: Իսկ մերթ նշանակէ զայն, որ զտեղի կալնու ուրուք, և բնակի: և ըստ այսմ է. Երեմ. 48. 18: Իսկ երկրեքին առնուլ լինի սա իբրև զմե֊քացեալ. և յայնժամ նշանակէ զտեղակա֊լութիւն. կմ զիշխանութիւն, և զաթոռն, զոր կալնու ոք փոխանակ անցելոյ իշխա֊նին. կմ Թագաւորին. և ը այսմ է 'ի գիրս Խորէն. գ. գլ. 56:

Ետեղափոխութիւն. Թեան: || տեղափոխումն. կմ փոխանորդութիւն. և կմ յաջորդութիւն: Խորէն. գ. գլ. 67:

Ետող. ետեղ. եղք. ետեղաց. եղբք. կմ եղօք: || տեղի. կմ վայր: 1. Մակ. 4. 15: և 12. 29: ուստի մինչ ասի, զետող առնուլ. իմանի զտեղի առնուլ. կմ զկայ առնուլ: Կիւրղ. Եղեկ. թ: Եւ 'ի սմանէ բղխի բայս զետե֊ղել. որ է տեղաւորել:

Ե Ր

Եր: || բառս այս մերթ է հրամայական էական բայիս էմ. և նշանակէ լեր. ը այնմ. ողջ եր Թագաւոր հրէից. դ. ողջ լեր. և այլն: Մատ. 27. 29: Մերթ ևս է անուն. և նշանակէ ոյր. կմ որոյ: ուստի Յոբ. 38. 6. ուր ասի, յեր վր հաստատեցան. իմա֊նի յոյր վր. կմ յորոյ վր: Եւ այս բառ դրի ևս էր. և զնոյն նշանակութիւն ունի. զոր. օրինակ. էր վր. կմ էր աղագաւ. դ. ոյր վր. կամ ոյր աղագաւ:

Երագ. ի. աւ. երագք. կմ ագունք. ոյ. օք: || արագ. կմ փոյթ. կմ շուտ: Հռոմ. 3. 15: Իսկ մերթ վարի իբրև զմակբայ. և նշանակէ. արագապէս. կամ վաղվաղ. և կամ փութանակի:

Երագագող. ի. իւ. ից. իւք. կմ այ. օք: || խրա֊խոյս. կմ քաջալերութիւն. կմ յորդորումն: Եւ սա ընդ բայի շարակցի այսպէս. երա֊գող առնել. և նշանակէ յորդորումն առնել. կմ խրախոյս բարձել: Ագաթ:

Երագախաղաց. (Նախդրիւ հոլովի.) || ե֊րագաշարժ. կմ երագընթաց. կմ երագա֊գնաց: Մծբն. ժէ:

Երագահաս. ի. իւ. ից. իւք: || արագապէս հասանօղ. կամ վաղվաղակի ժամանօղ: 2. Պետ. 2. 1:

Երագամիտ. մտի. իւ. աց. օք: || սրամիտ. կմ նրբամիտ. կմ Ճարտարամիտ. կմ զձար֊ պիկ միտս ունօղ: Նորէկ. ղզ:

Երագաշարժ. ի. իւ. ից. իւք: || արագա֊շարժ. կմ փութով շարժօղ:

Երագաւեր. (Նախդրիւ հոլովի.) || երագ աւերեալ. կմ վաղ աւերեալ. կմ որ չևևս հասեալ 'ի կատարումն՝ աւերի. որպիսի էր աշտարակն բաբելոնի:

Երագափոյթ. (Նախդրիւ հոլովի.) || Երագ և փոյթ, կմ սաստիկ երագ. կմ սաստիկ փութաջոյն. կմ երագաշարժ: Մծբն. ժէ:

Երագաքայլ. ի. իւ. ից. իւք: || սրընթաց. կմ երագ երագ քայլօղ:

Երագեմ. եցի. եա. եղ: (չէզոք.) || փութալ. կմ վաղվաղել: Եսայ. 34. 8:

Երագերագ. (մակբայ կրկնդական.) || արագ արագ. կմ փոյթ ընդ փոյթ:

Երագընթաց. ի. իւ. ից. իւք: || արագ ըն֊թացօղ. կմ վազօղ: 1. Եզր. 4. 34: Եւ կմ որ երագ է յընթացս բանից. և յայլս իրս: Լամբրոն:

Երազ. ոյ. ով. ոց. ովք: || տեսիլ քնոյ. կամ երևակայութիւնք, որք հանդիպին մարդոյ մինչ ննջէ. և այս երբեմն լինի 'ի բնական շարժմանց հիւթոյն, և երբեմն 'ի ներգոր֊ծութեանց դիւաց. որք շարժեն զհիւթն, և տան երևակայել զիրս անպատշաճս. կմ զոմանս ապագայ լինելոցս ստաբար. ոմ հանդիպիւր 'ի հնումն սուտ մարգա֊րէից: Երեմ. 23. 25: Մերթ ևս լինի յայ յորժամ այ կամի յայտնել ոմանց յերա֊զոջ զիրաց ոմանց՝ որք լինելոցք են: Ծն֊նդ. 37. 5:

Երազահան. ի. իւ. ից. իւք. կմ աւ. ոյ. օք: || մեկնօղ զտեսեալ երազոյն: Ծննդ. 41. 8: և 2. Օրին. 13. 1:

Երազահանութիւն. Թեան: || հմայութիւն կմ դիւթութիւն 'ի ձեռն երազոց:

Երազանամ. կմ յերազանամ. երազացայ. ցիր. ացաւ: (ընդ միջ.) || զերազ տեսանել. կմ յերազի զտեսիլ ինչ տեսանել զապա֊գայից իրաց: և այս մերթ լինի յայ. ոմ հանդիպիւր արանց սրբոց. և սրբոց մարգա֊րէից: Յովէլ. 2. 28: Գործ. 2. 17: Իսկ մերթ

'ի դիւաց. կմ 'ի սուտ երևակայմանց, ոչ հանդիպեր 'ի հնումն սուտ մարգարէից: Եսայ. 56. 10:

Երազայոյզ. յուզի. իմ. իղ. իւք: || քննօղ և յուզօղ երազոց. կամ երազովք քննեալ և յուզեալ:

Երազապատում. (Նախդրիւ հոլովի.) || պատմօղ. կամ մեկնիչ երազոց:

Երազատես. ի. իմ. ից. իւք: || զերազ տեսանօղ. որ երբեմն լինի յայ: Ծննդ. 37. 19: Երբեմն 'ի բնութենէ. և երբեմն 'ի դիւաց: Մխիթ. 3. 7:

Երազացոյց. ցուցի. իմ. եց. իւք: || պատմօղ, և ցուցանօղ երազոց. կամ երազահան: Աճգոփ:

Երազափորձ. ի. իմ. ից. իւք. || փորձեալ յերազի ցանկութիւն մարմնոյ. կմ հեղմամբ սերման:

Երաժիշտ. ժշտի. աւ. աց. օք: || գիտօղ զարհեստ երգելոյ. և կմ խաղացող. կմ երգեցիկ. կմ որ գիտէ երգել զերգս արուեստաւորս:

Երաժշտական. ի. աւ. աց. օք: || այն ամ, որ լինի ըստ արուեստի երաժշտաց. կմ որ առ երաժիշտս վերաբերի, և կմ քաղցր եղանակաւ, և արուեստիւ երգեցեալ լինի: Յայսմ. 18. 22:

Երաժշտականութիւն. թեան: || արհեստն երաժշտութեան:

Երաժշտութիւն. թեան: || արհեստ երգելոյ զերգս արուեստականս:

Երախ. ի. աւ. աց. օք: || բերան. կմ վերին և ստորին ծնօտքն հանդերձ ատամամբք, որ ռամկ. ասի՝ [illegible]: 1. Մակ. 9. 55:

Երախակալ. ի. աւ. աց. օք: || այն, որ կալնու՝ կմ փակէ զերախն, այս է զբերան մարդոյ, կամ այլոց կենդանեաց: Իսկ մերթ նշանակէ զլմբռնեալ սրոյ. այս է զկոթն. որ առի երախակալ. զի նովաւ կալեալ լինի երախն. այս է բերանն պատենի սրոյն. Դատ. 3. 22:

Երախայ. կամ երեխայ. ի. իմ. եց. իւք: || մերթ նշանակէ զկաթնակեր, կմ զնորածին տղայն: Երեմ. 19. 11: Մերթ ևս երախայ ասին այնոքիկ, որք են մկրտեալք. և կմ ունին զկամս ընդունելոյ զնա մկրտութեան, և են 'ի կրթութիւն հաւատոյ: Նարեկ. ՃՁ: Եւ որքան առ տկարախօս ասի՝ 'ի պատարագին. մի ոք յերեխայից. և այլն.

Երախայանամ. կմ երեխայանամ. ացայ. ացեր. անալ: (ընդմէջ.) || մերթ նշանակէ տղայանալ. կմ տղայ զերեխայ լինել: մերթ ևս երախայանալ ասի այնմ, որ գալով առ հաւատս, գրանցեալ 'ի թիւ հաւատոյն. և կամի մկրտիլ: և առ այս եդեալ լինի 'ի յուսումն խորհրդոց հաւատոյն քրիստոնէի. և որքան տևէ յայնմիկ ուսման, կոչի երեխայ, կմ երախայացեալ: Իսկ յորժամ մկրտի՝ անուանի քրիստոնեայ:

Երախայրի. կմ երեխայրի. րւոյ. եաւ. եաց. եօք: || առաջին պտուղք անդաստանաց, և կամ ծառոց, որք նուիրեցեալք լինէին այ 'ի հնումն. կմ նաւէրք, և զոհք, որք տուեալ լինէին այ 'ի յարմտեաց. և 'ի պտղոց ծառոց, առ 'ի լինել կերակուր քահանայից, և ղևտացւոց: 2. Օրին. 18. 1: Դան. 3. 38: Մերթ ևս երախայրի ասի վաղահաս պտուղն, այս է, առաջին հասունացեալ պտուղն 'ի ծառոյ 'ի նմին տարւոյ: ռամկ. Նուրֆան փայ: Եւ բառս երեխայրի՝ ստուգաբանի՝ առաջին պտուղ. զի վանկս՝ եր, կմ երէ, նշանակէ նախ, կմ առաջին. իսկ խայրի, նշանակէ պտուղ:

Երախան. ի. աւ. աց. օք: || խումբ. կմ ջոկ մարդկանց բազմեցելոց առ 'ի յուտել զկերակուր: Մարկ. 6. 39: Իսկ մերթ նշանակէ զխումբս, և զժողովս լալականաց, կմ ողբացողաց և կոծողաց, և այլոց նմանեաց: Նարեկ. ԻԶ: Մերթ ևս նշանակէ ըզ խրախճանն, ուր բազմեալք 'ի միասին նըստեալ քեն 'ի սեղան: Երեմ. 31. 17:

Երախճանարձակ. ի. աւ. աց. օք: || ունօղ զանձարձակ երախ, այս է, բերան. որով իմանի ցոփաբանն, կմ անզուսպն լեզուաւ. այս որոյ լեզուն ոչ զսպի 'ի խօսելոյ:

Երախտագէտ. գիտի. աւ. աց. օք: || ճանաչօղ երախտեաց. այս է բարերարութեանց 'ի վերայ իւր եղելոց. և կմ շնորհակալութ վն ընկալեալ բարերարութեանցն:

Երախտագիտաբար. (Նախդրիւ հոլովի.) || զերախտիս գիտանօղ. կմ ընդունօղ զբարերարութիւնս յումեքէ: Ոսկէ. 1. հատ. ԺԱ:

Երախտագործ. ի. իմ. աց. օք: || զերախտիս գործօղ. կմ բարերարօղ: Լամբրօն:

Երախտակորոյս. րուսի. աւ. աց. օք: || երախտամոռաց. կմ մոռացօղ բարերարութեանց. և կմ ապերախտ: Ոսկէ. 1. հատ. Թ:

Երախտահատոյց. տուցի. աւ. աց. օք: || վերահատուցանօղ զբարիս, կմ զշնորհակալութիւն՝ վն ընկալեալ բարերարութեանց:

Երախտամոռաց. ի. իմ. եց. իւք: || մոռացօղ երախտեաց, և բարերարութեանց. կմ ապերախտ:

Երախտանք. անաց. օք: (անեզական.) || երախտութիւն. այս յառաջբերութիւն և յիշումն բարերարութեանց իւրոց առաջի նր, որում արարեալ է զբարերարութիւն: Լամբրօն: տես և զերախտեմն:

Երախտաւոր. ի. աւ. աց. օք: || բարերարօղ. || կմ զերախտիս և զբարերարութիւնս առնօղ ումեք: Եսթ. 16. 13: Իսկ մերթ նշանակէ զշնորհակալութիւն վն ընկալեալ երախտեացն:

Երախտաւորիմ. եցայ. եաց. իլ: (ձայնակր.) || զբարերարութիւն ընդունիլ. կմ բարերարուիլ. կամ զբարիս յումեքէ ընդունիլ: Իմաստ. 11. 14:

Երախտեմ. եցի. եա. ել: (չէզոք.) || զարարեալ բարերարութիւն ումեք յառաջ բերել և այնու յանդիմանել զընդունօղն բարեաց. և կմ պահանջել 'ի նմանէ զփոխարէն գոհութեան, և զծառայութիւն իւր. և կամ վն արարեալ բարերարութեանցն՝ պարծիլ և մեծաբանել առաջի ընդունողին զբարերարութիւն: ռամկօր. մինէթ գօյ: Լամբրօն:

Երախտիք. տեաց. եօք: (անեզական) || բարերարութիւն, կմ շնորհք, կմ բարի՝ զոր առնէ ոք ումեք: Իմաստ. 14. 26: Գործ. 4. 9: Իսկ մերթ նշանակէ զշնորհակալութիւն, կմ զհատուցումն բարեաց, և կամ զվարձատրութիւն, զոր ընդունողքն երախտեաց՝ անդրէն դարձուցանեն առ բարերարսն: 1. Մակ. 14. 25: Իսկ 1. Պետ. 2. 20. ուր ասի, զինչ երախտիք իցեն. իմանի՝ զինչ շնորհք, կմ փառք, և մեծութիւն իցեն:

Երակ. ի. աւ. աց. օք: || խողովակ արեան, յորս շրջաբերի արիւն կենդանեաց: ռամկ. դամար: Մերթ ևս երակ ասին ճանապարհքն՝ որք են ՚ի ներքոյ հողոյ, ընդ որս անցանէ ջուր, և բղխէ ուրեք ուրեք աղբիւր: Ովս. 13. 15: Եւ մինչ ասի՝ երակ հատանել. իմանի՝ արիւն առնուլ յերակաց:

Երակահատ. ի. իւ. աց. օք: || զերակն կենդանւոյ հատանելով զարիւն հանօղ. որպէս [illegible] են ճեռահերն:

Երակաձև. ի. աւ. եց. օք: || իբրև զերակ. կամ հանգոյն երակի. կամ երակաձևման ձևացեալ:

Երամ. ոյ. ով. ոց. ովք: || ժողով. կմ ջոկ. կմ հօյլք. կմ դաս: ռամկ. սիւրիւ:

Երամակ. ի. աւ. աց. օք: || ջոկ. կմ ժողով խոզից, ուղտուց, այծից, և այլոց նմանեաց: Մատ. 8. 30:

Երամակապան. ի. աւ. աց. օք: || պահապան երամակաց խոզից, այծից, և այլոց նմանեաց:

Երամ երամ: (մակբայ ժողովական.) || ջոկ ջոկ. կմ խումբ խումբ. կմ դաս դաս: 3. Մակ. 6. 12:

Երամովին: (մակբայ ժողովական.) || ժողովաբար. կմ համօրէն երամով. կմ խումբ բիւր: Եսայ. 60. 8:

Երայ. ի. իւ. այք. եց. իւք: || երէ. կամ վայրի անասուն:

Երանագոյն. գունի. իւ. եց. իւք: || յոյժ երանելի. կմ յոյժ երջանիկ:

Երանական. ի. աւ. աց. օք: || այն ինչ՝ որ պատկանի առ երանութիւն. կմ երանելի. կամ երանաւոր:

Երանանամ. ացայ. ացեր. անալ: (ընդ.միջ.) || երանելի լինել. կմ երջանկանալ:

Երանաշնորհ. (նախդրիւ հոլովի.) || լի երանութեամբ, և շնորհօք. կմ զերանացուցիչ շնորհս ունօղ. և կմ երանեալ, և շնորհալի:

Երանատուր. (նախդրիւ հոլովի.) || երանի տուօղ. կմ երանօղ:

Երանաւէտ. աւէտի. իւ. եց. իւք: || լի երանութեամբ. կմ երանական. և կմ յոյժ երանելի:

Երանաւէտեալ. ելոյ. ով. ոց. ովք: || երանաւէտ եղեալ. կմ երանութեամբ լցեալ: Իսկ մերթ երանաւորեալ. և կմ զերանի ընկալեալ. և ըստ այսմ է ՚ի շարականի, ուր ասի. Երանաւէտեալք ՚ի հոգեղէն զուարթնոց:

Երանաւոր. ի. աւ. աց. օք: || զերանութիւն ունօղ. կմ երանեալ. կմ երանաւէտ. կմ երանելի: Նարէկ. ղը:

Երանգ. ոյ. ով. ոց. ովք. կմ աւ. աց. օք: || գոյն. կմ որակութիւն գունոյ: ռամկ. րէնկ: Դատ. 5. 30: Նարէկ. ղէ:

Երանգախայտ. ի. իւ. ից. իւք: || բազմագոյն. կմ պէսպէս երանգով խայտ. կմ խայտաճամուկ: ռամկ. [illegible]. կմ ալաճայ:

Երանգ երանգ. (մակբայ որակական.) || երփն երփն. կամ գոյն գոյն. կամ պէսպէս:

Երանելի. լւոյ. եաւ. եաց. եօք: || երջանիկ. կմ երանութեամբ և տմ բարութեամբ լի. կմ ունօղ զամ բարի՝ որ ինքեանն է բաւական. կմ երանեալ. կմ բարեբաստիկ: Ծննդ. 30. 13: և 2. Մակ. 7. 24:

Երանեմ. եցի. եա. ել: (ներգործ.) || զերանի տալ ումեք. կամ տմ բարութեամբ լի հռչակել. և կմ երանելի կարդալ զոք: Իմաստ. 2. 16: Ղուկ. 1. 48:

Երանի. (միջարկութիւն երանական.) || վա՜յ: ռամկ. նէնէ:

Երանի: (է՛ անուն անհոլով.) || մերթ նշանակէ զերանութիւն, որ է լիութիւն տմ բարեաց: Աւետ. Մատթ. 5. 3. ուր ասի. երանի աղքատաց. իմանի՝ երանութիւն աղքատաց: ըստ այսմ և ՚ի յայլ բազում տեղիս: Մերթ ևս նշանակէ զերանելին. կմ զերանեցեալն ի զլցեալն տմ բարեօք: ևս տի Սաղմ. 40. 2. ուր ասի, Երանի որ խորհի, իմանի՝ երանելի՝ կմ երանեցեալ է նա որ խորհի: ըստ այսմ է և Սաղմ. 64. 5:

Երանութիւն. թեան: || երջանկութիւն. կամ բարեբաստութիւն. և կմ պարառութիւն տմ բարեաց՝ բոլորին միանգամայն:

Երանուհի. հւոյ. եաւ. եաց. եօք: || է իգական անուն. զի ասի զկանանց որով նշանակի երջանիկն, կամ երանեալն, և կամ բարեբաստիկն: Նարէկ. ղէ:

Երանք. երանաց. օք: (անեզական.) || մասն այն մարմնոյ, որ ՚ի միջացն սկսեալ՝ մինչև ՚ի բարձն ժամանէ: և այսպէս՝ մերթ նշանակի այսու մէջքն, կմ ստորին մասն միջաց: Եզեկ. 44. 18: և 21. 7: ըստ այսմ է և Ծննդ. 24. 2: ՚ի մէջ որոյ եդ զձեռն ծառայն [illegible], և երդուաւ. որ էր երդնուլ ՚ի քն, ը որում էր ՚ի յաբրահամ ը մարմնոյ: Եւ ուր ասի՝ յերանաց նր. կմ մինչ էր յերանս նր. և այլք նմանք. իմանի ՚ի մէջս նր, և կմ ՚ի ստորին մասն միջաց. ուր է ծայրին մեծի ոսկեր բարձին: Եւ [illegible] այս ասին զաւակքն ՚ի յերանս հարց [illegible], և կամ յերանացն յառաջագայիլ, զի [illegible] րական ուժգնութիւն ներգործական [illegible] կարէ ոք ծնանել զզաւակ, յայնմիկ մասին առաւել զօրանայ: Ծննդ. 49. 10: Եբր. 7. 10: Իսկ մերթ նշանակի բարձն մարդոյ. որ ռամկ. ասի [illegible], և ը այսմ է Եզեկ. 47. 4. ուր ասի, Հարկանէր ջուրն մինչև յերանս. ը. մինչև ցբարձս: Սոյնպէս է Ծննդ. 50. 22. ուր ասի. ծնան յերանս յովսեփայ. իմանի՝ ՚ի մէջ երանաց. ը. ՚ի մէջ բարձիցն յովսեփայ. որ թէ ասէ. ը ծնաւ նոյն մարդկայ զորդւոյն, [illegible] կամ [illegible]

յունէփ 'ի վիճ բարձից իւրոց . առ'ի նշան որդեգրութեան :

Երաշխաւոր . ի . աւ . աց . օք : || Նա՛ որ խոստանայ մի այլոյ ուրուք՝ թէ ինքն վճարէ զայն ինչ իր, եթէ նա որ 'ի փոխ եառ՝ ոչ վճարիցէ . կամ նա՛ որ բանիւ և արդեամբք և կամ ընչիւք իւրովք ապահով առնէ զոք այնպէս, զի թէ այն ինչ անձն ոչ գայցէ, ինքն բերցէ զնա, կամ փոխանակ նը պարտաւորեսցի, և այլն . ռամկ. +էֆիլ : Առակ. 6. 1 : և 17. 18 : Մերթ և նա, որ ապահով առնէ զայլ ոք ասելով նմա զայս . ես առաւ րից՝ զի այն ինչ պարգև տացի քեզ 'ի թագաւորէն, ասի երաշխաւոր լինել պարգևմանն . զի ապահով առնէ զպայմանն պարգևաց . և բառ այսմ է այն՝ որ ասի զքնէ լինել երաշխաւոր . դաշանց մշտնջենաւոր քահանայապետ, որոյ արդեամբքն առնումք 'ի հօրէ զշնորհս արդարանալոյ, եթէ ապաշխարեսցեմք : Եբր. 7. 22 :

Երաշխաւորեմ . եցի . եա . եալ : (չեզոք .) || երաշխաւոր լինել, կամ զպարտաւորութիւն ուրուք յանձն իւր առնլով՝ զերծուցանել զպարտաւորն 'ի դատաւորէն, կամ յոստ_խիցն . որ լինի մերթ խոստմամբ . և մերթ իրօք : և կամ վկայ լինելով հաւատարիմ առնել զինն . կամ հաւատարմացուցանել : Խորէն. Ա. գլ. 9 : Իսկ 'ի Նորէն . կԶ . ասի, Որ զնորոգութիւն ինձ երաշխաւորէ, իմա_նի՝ խոստմանս հաստատապէս . կամ ապա_հով առնէ :

Երաշխաւորութիւն . թեան : || երաշխաւոր լի_նելն, որ է զինելն զանձն փոխանակ պար_տաւորին՝ յանձն առնլով խոստմամբ ըզ_պարտաւորութիւն նը . զի թէ զինչ՝ զորս եառ ոչ տացէ, ինքն հատուսցէ . և կամ եթէ փախիցէ, ինքն փոխանակ նը պար_տաւորեսցի . և այլն : ռամկ՛. +էֆիլլիքն : Առակ. 22. 26 :

Երաշխեպ . կամ երաշխեպ . եպի . իմ . ից . իւք : || չարչարանք . կամ կիրք . և կամ մնչութ չար_չարանաց : Նորէն. զԶ : 'Ի Գողթնոյ Կոմին :

Երաշխի . (ոչ հոլովի՝ այլ է բայի չարականի այսպէս . յերաշխի առնուլ :) || Նշանակէ երաշխաւոր լինել . կամ զանձն իւր փոխա_նակ ուրուք պարտաւորելով առնուլ զնա առ ինքն . որ +էֆիլ լինելով ասեմք՝ առնուլ զնա առ ինքն առ ժամանակ ինչ : Ծննդ. 43. 9 : Առակ. 6. 3 : Գործ. 28. 7 :

Երաշտ . ի . իմ . իւ . իւք : || ցամաքութիւն և չորութիւն պատճառեցեալ 'ի պակասութենէ անձրևաց և ջուրց . յորժամ հեռանի ցամա_քել և չորանալ բուսոց . Խորէն. Գ. գլ. 62 :

Երաշտանամ . ացայ . ցիր . անալ : (ընդմիջ .) || 'ի խոնաւութենէ պակասել . կամ չորանալ, և ցամաքել . կամ անջրդի լինել . և կամ պա_քել և պապակել . և այս ասի զերկրէ, հողոյ, և զերանակէ տարալոյն, յորժամ ան_ջուր լինին : Խորէն. Գ. գլ. 68 :

Երաշտութիւն . թեան : || առաւելն ցամաքութիւն և չորութիւն պատճառեցեալ 'ի պակասու_թենէ անձրևաց . կամ ջուրց . յորժամ պատճա_ռի չորութեան երկրի, օդոյ, բուսոց, և այ_լոց նմանեաց : Եզեկ. 14. 1 և 17. 8 : և Նա_ւում. 1. 10 :

Երաստան . ի . աւ . աց . օք : || պախուրց ձիոյ կամ էշոյ : Եւ կամ կաշեայ կապճեցեալ երեսնոց ձիոյ . և ջորւոյ, որ դնի 'ի գլուխս նց, և ընդ այն կապի չոմանս, կամ փոկ, որով ընդամեմիցին ատամ և անդ : Մերթ նաև առնէն, զի լանի՝ որ ունի առակցեալ ը ին քեան զկապմեցեալ կաշեայ փոկս՝ որով ան_ցուցանի 'ի գլուխս երիվարաց, և դնի 'ի բերանս նոցին, ասի երաստան : Նորէն. կԲ : և հն : մն որոյ զանձինս՝ որք գնան առա_հակս՝ և ոչ սանձքն կանոնաւ, ասեմք գոլ ապերասանս . որ առանց երաստանի, և ան_սանձ : և սա գրի և Երասանակ :

Երասանակ . կամ Երեսանակ . ի . աւ . աց . օք : || սանձ ձիոյ, որ ունի զփոկս շուրջ զերե_սօք երիվարաց : Առ.Յակ. 3. 14 : և կամ փոկ սանձից, զոր 'ի ձեռս կալեալ ուղղեն ըզ_ձին 'ի յընթացս . ռամկ. խալար : Նաւում. 2. 3 : Խորէն. Գ. գլ. 68 : Եւ կոչեցաւ երասանակ . կամ երեսանակ . զի զերեսօք ձիոյ ածի : Եւ սա գրի և երասան . կամ երեսան :

Երասանակալ . ի . աւ . աց . օք : || զերասան ձիոյն . որ դիւլուրն կալնող, և կառավարող . և յայսմանէ առեալ երբեմն նշանակէ զի և իցէ կառավար, կամ ուղղիչ՝ որ իբրև ե_րասանաւ կառավարէ զայլս : Նորէն. լԲ :

Երասանակալ . ի . աւ . աց . օք : || Նոյն է ը վեր նոյն : Ոսկէ. 2. հատ. ժԲ :

Երատ . ի . իմ . իւ . իւք : || հրապարակ . կամ լուան բազմութիւն . կամ հոծ խումբ . և կամ ժողով : Եւ մերթ նշանակէ զասեւանն, կամ զանեղին զրուցատրութեանց, կամ բանախօ_սութեանց :

Երատտան . ի . աւ . ոց . օք : || Նստոյ անեղին մարդոյ . և կամ այն մասն ընդ որ մաքրի ս_րովայնն : 1. Թագ. 5. 6. և 9. և 12 : Եւ առա գիտելի է . զի գեթացիք հարան 'ի տէնէ 'ի յերատտանս փտութեամբ մսոյ երատտանաց իւ_րեանց . և մի սատակութեան մկրացն ոչ կա_րէին նստիլ . և առ այս արարին մի իւ_րեանց զաթոռս մաշկեղէնս . որ 'ի կակուղ մորթոց ուր կարիցէին նստիլ : Ուստի յիններորդումն ամսն՝ ուր 'ի վերջն ասի, ա_րարին գեթացիքն իւրեանց, երատտանս, իմանի՝ արարին մի իւրեանց նստարանս, կամ աթոռս : Եւ գիտելի է . զի յայսմիկ առն՝ երկիցս յիշի բառս այս . երատտան, որոց առաջինն մեկնեցաւ 'ի վերանգր . և երկ_րորդն առաէն :

Երատտոյ . ի . իմ . իւ . իւք : || տե՛ս զԱրատտոյ :

Երբ . (մակբայ ժամանակական . կամ հարցա_կան .) || Նշանակէ յորժամ : Դարձեալ բառս այս երբ, է մինն 'ի տասանց ստո_րոգութեանց, որ է պատասխանի ինչ, հան_դիպեալ իրաց՝ և ցուցանէ զգոլն 'ի ժա_մանակի . որոյ տարբերութիւնք է ներկայն, անցեալն, և ապառնին :

Երբեմն . (մակբայ ժամանակական .) || մերթ . ռամկ. ՚նէօհնճէ . կամ պազըէվէյէ : Իսկ մերթ

Digitized by Google

վարի քերթ զանազան, և յայնժամ նշանա_
կէ սասել ժամանակ ինչ. և ըստ այսմ իմանի՝
մինչ սաս, էր երբեմն, յորում ոչ էր. ցը էր
ժամանակ ինչ, յորում ոչ գոյր: այնպէս
նշանակէ մինչ սաս, եղև երբեմնցի գնաց.
ցը եղև ժամանակ ինչ: և այլն:

Երբէք. (մակբայ ժամանակական.) || մերթ
նշանակէ՝ երբեմն. ոչ երբեք Մատ. 17. 14:
Հռով. 1. 10: և 2. Մակ. 10. 4: Եւ մերթ նը
շանակէ սասել բնաւ. և այսպիսի յայնժամ. մինչ
բառս ոչ, կամ մի, նախադրի նմա այսպէս.
ոչ երբէք. կամ մի երբէք. ցը ոչ բնաւ.
կամ մի բնաւ:

Երբուծ. բծոյ. ով. ոց. օվք: || երկոքին կող
մունք կրծոց կենդանեացն. որ ասի. տափ՝
փէօշ: Ղևտ. 7. 30: և 8. 29: և յայլս տեղիս:

Երգ. ոյ. ով. ոց. օվք: || նուագ. կամ ձայ_
նիւ, և եղանակաւ ասացեալ բան. կամ
գովեստ. կամ օրհնաբանութիւն: Սաղմ. 66. 1:
Եւ մինչ սաս՝ երգս ասել. իմանի՝ եր_
գել, կամ օրհնաբանել:

Երգաբ. ի. աւ. իւ. իւք: || Ի Թագ. 20. 19:
տես զԱրգաբ:

Երգաբան. ի. իւ. ից. իւք: || երգով օրհնա
բանող. կամ երգասանող. և կամ զերգս յօրի
նելով ասող. կամ երգող: Եւ մերթ նշանա
կէ զերգաբանականն. կամ զգովաբանա_
կանն: Նարեկ. 'ի փոխէնափ կասին:

Երգաբանեմ. եցի. եա. ել: (չէզոք.) || եր_
գելով ասել. կամ երգելով բարեբանել.
և կամ օրհնաբանել:

Երգաբանութիւն. թեան: || երգեցողութիւն.
կամ օրհնաբանութիւն:

Երգագիր. գրի. րէ. րից. կամ աց. օք: || այն,
որ է երգելոյ և եղանակելոյ գիրք, և կամ
երգաբանական, և գովաբանական գիրք.
որպիսի է երգերգոցն: և մերթ նաև գիրքն
իմաստութեան կոչի երգագիր: Նարեկ. ղէ:
Եւ մերթ գրող զերգս:

Երգագրեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) ||
երգելով. կամ օրհնաբանելով գրել. կամ
երգաբանական ճառիւք գրել: Նարեկ. ղէ:

Երգագրութիւն. թեան: || գրուած երգաբա
նական, կամ օրհնաբանական բանից: Նա_
րէկ. 'ի փոխէնափ կասին:

Երգակից. կցի. աւ. աց. օք: || ձայնակից յեր
գելն. և կամ 'ի միասին երգող. և կամ փառա
բանակից:

Երգակցութիւն. թեան: || ձայնակցութիւն. կամ
համերգակցութիւն. կամ միաբանութիւն եր_
գողաց: Նարեկ. ղէ:

Երգաձայն. ի. իւ. ից. իւք: || ձայն և հնչումն
երգոց. կամ երգաբանական ձայն:

Երգաձայնութիւն. թեան: || երգաբանութիւն.
կամ ձայն և նուագ երգոց: Նարեկ. ղէ:

Երգարան. ի. աւ. աց. օք: || տեղի. կամ
գիրք, ուր երգին. և կամ գործին բանք եր_
գոց: Մերթ ևս նշանակէ զնուագարանն,
կամ զգործին երգելոյ, որպիսի է երգե_
հոնն, ծնծղայն. քնարն. և այլք նմանք:
Խորէն. ա. գր. 2:

Երգեհոն. ի. աւ. աց. օք. կամ ից. իւք: || նուա
գարան ինչ. որ ունի զբազում եղե_
գունս անհաւասարս, որոց ոմանք երկայնք
են, և ոմանք կարճք, և ոմանք միջակք,
զորս կից միմեանց ուղիղ կանգնեցուցանեն,
և փչելով շարժեալ զօդն 'ի յեղեգունսն,
հարկանեն մատամբք զփայտեայ լեզուս,
որք 'ի վայր կայս երգարանին կազմին. և
վասն բազմազան կերպիւ շարժելոյ օդոյն,
արձակեն եղեգունքն զազգաւսի քաղցրա_
ձայն հնչմունս եղանակաւորս:

Երգեցիկ. ցկի. աւ. աց. օք: || երգող. կամ
նուագող. կամ երաժիշտ: 2. Եզր. 7. 7: և
Ժողով. 2. 8:

Երգեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || նուա
գել. կամ եղանակել. կամ ձայնիւ և եղա_
նակաւ զգովաբանութիւն ինչ մատուցանել.
կամ գովաբանել: Ելից. 15. 1:

Երգեցող. ողի. ին. աց. օք: || երգող. կամ
նուագող: 3. Թագ. 10. 12: և 1. Մնաց. 6. 31:

Երգիծանեմ. երգիծի. ել: (Ներգործ.) ||
մեղադրել. կամ պախարակել. կամ նախատել.
կամ կշտամբել. կամ առ ոտն հարկանել. կամ
կսկծեցուցանել: Նարեկ. կէ: և Լամբրոն:

Երգիծանիչ. ծանչի. աւ. աց. օք: || վշտացու
ցիչ. կամ կսկծեցուցիչ. կամ պախարակիչ. և
կամ մեղադրիչ: Լամբրոն:

Երգիծանութիւն. թեան: || մեղադրութիւն.
կամ պարսաւանք. կամ կշտամբանք. կամ կսկ
ծացումն. և կամ ախտացուցումն: Նարեկ. ղէ:

Երգիծիմ. եցայ. եաց. կամ եա. իլ: (Կրա_
ւորական.) || զկծեցուցանիլ. կամ զայրանալ.
կամ նախանձաբեկ լինելով աղեկտուր լի_
նել. կամ դառնանալ սրտիւ, և սաստիկ
դժուարիլ: Մծբն. ժե:

Երգիծումն. ծման. մամբ. մանց. մամբք: ||
կսկծեցուցումն. կամ զկծեցուցումն. կամ
նուաստումն. կամ տագնապ. և պայթումն
սրտի: Մծբն. ժթ: Իսկ Եզեկ. 30. 16. ասէ
սա, Եղիցի քաղաքն Դիոսպոլացւոց յեր_
գիծումն. իմանի 'ի հերձումն. կամ 'ի պա
տառումն:

Երգիծուցանեմ. ծուցի. ծա. ել: (անցող.) ||
կսկծեցուցանել. կամ զկծեցուցանել. կամ
խռովեցուցանել. կամ նուաղեցուցանել
զսիրտն. կամ աղեխորով առնել: Իսկ մերթ
նշանակէ՝ պատառոտել. կամ գիջատել. որ
առնեն կատաղի գազանք: Մատ. 7. 6:

Երգոպաբարբառ. (Նախդրիւ հոլովի.) ||
երգողական բարբառ. կամ այն՝ որ լինի եր
գողական բարբառով. կամ օրհնաբանական
ձայնիւ: Նարեկ. ղէ:

Երգութիւն. թեան: || երգումն. կամ երգա_
բանութիւն. և կամ օրհնաբանութիւն: Նարեկ. ղէ:

Երգունեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || գե
ղեցկացուցանել. կամ զարդարել. կամ
պճնել:

Երդ. ոյ. ով. ոց. օվք: || երդիկ տան. որ ծակ է
տանն, որ ոչ է կղմինդրօք ծածկեցեալ, այլ
'ի մէջ տախտակամած գերանաց հող լու
ցեալ, և ամրացուցեալ լռելով հող քա
րիւ. և դատարկ ծակ մի յարմարապէս
թողեալ անդ՝ զի լուսանցոյց լինիցի տանն.

ուստի Ելից. 12. 3. ուր ասի, ոչխար ըստ երդ. իմանի ոչխար ը երդի տան. կմ ը տան. ը այսպէս է և 'ի Նուէ. Ժը. ուր ա֊ սի. Մնացորդաց քո անուանեսցի զլուսանցոյց երդ յարկիս։

Երդափեղկ. կցի. ուէ. այց. ոք։ || Նա՛ որոյ տան երդն, այս ծածքն՝ կցեալ է ը տան այլում մերձաւորի. և կմ դրացի։ Եզեկ. 3. 22։

Երդմնազանց. ի. իւէ. ից. իւք։ || որ երդնու֊ անել զեր ինչ, որ ոչ է չար. և զանցանէ առ 'ի կատարել. և կմ որ խոստանայ զինչ երդմամբ. և ոչ կատարէ։

Երդմնազանցութիւն. թեան։ || տե՛ս զԵրդմնա֊ հարութիւն։

Երդմնակոտ. (Նախդրիւէ հոլովի.) || երդ֊ մամբ կապեալ. կմ երդմամբ հաստատեալ։

Երդմնախօս. ի. աւ. աց. օք։ || երդմնախօս. որ խօսօղ զերդումն. կմ ասօղ երդման. կմ երդմնազանց։ Յն օրէ.

Երդմնահարեմ. եցայ. եայ. իլ։ (Հայնակք.) || ասել զերդումն, կամ ընդդէմ երդման առնել զեր ինչ. որով գրեթէ հարկանի 'ի յերդումն։

Երդմնահարութիւն. թեան։ || երդմնազանցութիւն. կմ գժրումն երդման. կմ ասել զերդումն։ Նաւէլ. կա։

Երդմնաստու. (Նախդրիւէ հոլովի.) || ասօղ երդման. կամ երդմնահար. կմ սուտ երդնօղ։

Երդմնասոր. ի. աւ. աց. օք։ || երդնօղ. կմ զերդումն առնօղ։

Երդմնեալք. լեաց. եօք։ (անեզական.) || երդն այնոքիկ, 'ի յորս լինի երդումն, կոչին երդ֊ մնեալք։ Իմաստ. 14. 31։

Երդմնեցուցանեմ. ցուցի. եցի. ել։ (անցո֊ ղա.) || առնել՝ զի երդնուցու ոք։ ռամկ. Երդմնել։ Եբրայ. 8. 4։

Երդմնեցուցիչ. ցուցչի. աւ. աց. օք։ || Նա որ տայ ումեք երդնուլ։ ռամկ. Երդմնօղ։ Մերթ ևս ունօղն զերրորդ աստիճան կար֊ գին ասի երդմնեցուցիչ։ Մերթ ևս Նոքա որք են հալածօղք գինեաց 'ի մարմնոյ մարդ֊ կանց, ասին երդմնեցուցիչք, զի երդմնե֊ ցուցանելով հալածեն զդևս։ Գործ. 19. 13։

Երդմնի. || երդմնասոր. կմ երդնօղ։ Բայց ոչ հոլովի, այլ ընդ բայի շարադրի այս֊ պէս, երդմնի լինել, և ըստ այսմ է. 1. Մակ. 7. 15. ուր ասի՝ երդմնի եղև. այս եր֊ դնօղ եղև. որ է առնել, երդնուլ։ Իսկ մերթ Նշանակէ զերդումն։ և ը այսմ է. 2. Մակ. 13. 23. ուր ասի՝ ուխտ եդ, երդ֊ մնի արար. այս երդումն արար. որ է առնել երդնուլ։ ըստ այսմ և 'ի գիրս Մծբնայ. ա֊ սի զերդմնիւքն յոմանց։ Եւ զանհեցին զերդմնինն. այս զերդմունսն։

Երդմնութիւն. թեան։ || երդմնահարութիւն. կամ ստերդմնութիւն։ Իմաստ. 14. 25։

Երդնում. երդուայ. իր. նուլ։ (ընդմիջ.) || երդմամբ հաստատել զինչ. այս զանունն Այ, և սրբոց, կմ' սրբազան իրաց, կոչել 'ի վկայութիւն, և 'ի հաստատութիւն իւր իրիք ներկայի, կմ անցելոյ, և կմ՝ ապագայի. 1. Թագ. 24. 22. և 23։ Բայց մինչ զԱյ ասի եր֊ դնուլ՝ իմանի անուանմբ իւրով յանձն իւր երդնուլ. որով հետև 'ի վերքան զինքն այլ ոք ոչ գոյ։ Ծննդ. 22. 16։ Եբր. 6. 13։ Յայտ. 10. 6։

Երդուամարդ. ի. ւէ. ոյ. ոք։ || տուն և մարդ. զի ըստ երդ՝ մերթ նշանակէ զտունն. և ըստ այսմ ասի 'ի հին պատմագիրս, բազ֊ մութիւն երդուամարդաց. այս բազմութիւն տանց և մարդկանց։

Երդումն. երդման. ման. մանց. մամբք։ || կոչումն անուանն Այ, կամ սրբոց, և կամ սրբազան իրաց՝ 'ի վկայութիւն, կամ 'ի հաս֊ տատութիւն ասացելոց, կմ խոստացելոց ի֊ րաց։ Ցեսան. 2. 19։

Երեամ. (Նախդրիւէ հոլովի.) || երեք ամ։ Բայց սա բաղկացեալ կարի երբեմն զմակբայ ժա֊ մանակական հանդերձ Նախդրիւէ այսոք. զե֊ րեամ. յերեամ. և նշանակէ՝ զերիս ամս։ Ղևտ. 19. 23։ 3. Թագ. 10. 22։ Եւ կմ յերիս ամս միանգամ։ 3. Թագ. 22. 1։ Մերթ ևս նշանակէ՝ երից ամաց. և ըստ այսմ իմա֊ նի, մինչ ասի. Ցեռ երեամ ժամանակի. այս, յետ ժամանակի երից ամաց։

Երեզուեալ։ (Նախդրիւէ հոլովի.) || ապառա֊ ժուտ. կմ քարուտ. և կամ ահեղակօշ, և քարամբք լցեալ։

Երեխայ. ի. իւէ. ից. իւք։ || տե՛ս զԵրախայ։

Երեխայանամ. ացայ. ացեր. նալ։ (ընդմիջ.) || տե՛ս զԵրախայանամ։

Երեխայրի. րայ. եաւ. եայ. եօք։ || տե՛ս զԵրախայրի։

Երեխան. ի. աւ. աց. օք։ || տե՛ս զԵրախան։

Երեկ. (Նախդրիւէ հոլովի.) || մերթ նշանա֊ կէ զերեկոյն. ուստի գրի Դատ. 19. 9։ և Յոբ. 7. 4։ և ըստ այսմ 'ի ժամագիրքի, ուր ասի. Զերեկս մերձեալ խաղաղութ անցուցանել իմանի, զերեկոյս։ Եւ յայսմանէ ծագի մակ֊ բայս այս՝ առ երեկս, կմ ընդ երեկս. որ է առնել, իրիկնաժամուն։ Ծննդ. 3. 8. և 49. 27։ 1. Թագ. 23. 24։ Եւ մերթ է մակբայ ժամա֊ նակական. և նշանակէ առնել. յերեկեան աւուրն։ Ծննդ. 31. 29։ և 4. Թագ. 9. 26։ և ը այսմ նշանակութիւն, մերթ գրի ևս, ե֊ րէկ։ Ծննդ. 31. 42։ Եբրայ. 13. 8։

Երեկանամ. ացայ. ացեր. անալ։ (ընդմիջ.) || մինչև ցերեկոյ աւել. կմ յամել ուրեք, կմ յեմիք։ Ղուկաս Եսայ. 5. 11. ուր ասի. Երեկանան 'ի նմին. իմանի, յամեսցեն մինչև ցերեկոյ լինելն ը ցքուոյն, և ը գինւոյն։

Երեկեան. (Նախդրիւէ հոլովի.) || երեկա֊ կան. այս երեկի աւուր։ Եւ այս ասի զգոր֊ ծոյ, և զայլոց իրաց, որք ոչ այսօր, այլ յերեկ են եղեալ։ և ըստ այսմ է Յոբ. 8. 9. ուր ասի. Երեկեանք եմք և ոչ գիտեմք. այս, յերեկեան աւուր եմք ծնեալ. կմ ե֊ ղեալ. որով իմանի առնել, սակաւ ժամա֊ նակէ, յորմէ հետէ եղեալք եմք։

Երեկեմ. եցի. եա. ել։ (չէզոք.) || օթիլ. կմ օթեվանիլ. կմ ագանիլ. և կմ յամել և մնալ ուրեք զօր մի, կամ զգաղջնամ ա֊ ռաւօտ. և կամ զընդերեկոյ ժամանակս։ և

թ այսմ աւուր . երեկեալ ուրեք զաւուրս եր-կուս, կամ զաւուրս երեքն . եւ այլն ։ Մնն. 2. հտր. ժզ ։ եւ 'ի Հին կտակ. Ի.

Երեկոյ . ի . իւ . էից . իւք ։ || Երեկորեան ատեն . կէս վերջին մասն աւուրն ։ որպէս մերձ է յամփոփել լուսոյն . ռամկ. իրիկուն ։ Ծննդոց 1. 5 ։ եւ Սաղմ. 54. 18 ։ մերթ եւ բառս երեկոյ, նշանակէ զվերջին չորրորդ մասն աւուր, որ սկսանի 'ի յիններորդ ժամէ աւուրն մին-չեւ ցերեկոյ . մինչ արեւ եւ զկնի նորա հասա-նալ ։ Մրկ. 15. 42.

Երեկոյանայ . այանայ . ացաւ . անալ ։ (գխնա-գործ .) || երեկոյ լինել . կամ վերջանալն լուսոյ աւուր ։ Մրկ. 11. 11 ։

Երեկոյին . (Նախադրիւ հոլովի .) || Երե-կոյեան . կամ երեկոյանալն . կամ որ լինի յերեկոյի ։ 4. Թագ. 16. 15 ։ եւ 1. Մնաց. 16. 40 ։

Երեկորեայ . զերեկորեայ . յերեկորեայ . ե-րեկորեայք . եայց . եւ այլն ։ || Երեկոյ . կամ երեկոյեան ժամանակ ։ Ղևտ. 23. 5 ։ Իսկ մինչ աւուր յերեկորեայ . մերթ նշանակէ յե-րեկոյի . կամ ը երեկոյ ։ Եզեկ. 24. 18 ։ եւ Ակ. 8. 4 ։ եւ Մրկ. 13. 35 ։ Եւ մերթ յերեկոյէ . կամ յերեկոյեան ժամանակէ ։ եւ թ այսմ է Եզեկ. 27. 21 ։ Թագ. 9. 21 ։ Յոբ. 7. 4 ։ եւ այլն ։

Երեկորի . րեայ . եաւ . րեք . եայց . եօք ։ || Երե-կոյ ։ ռամկ. իրիկուն ։ Երեմ. 6. 4 ։

Երեկորին . (Նախադրիւ հոլովի .) || Երե-կոյեան . կամ որ լինի յերեկոյին ։ Եզեկ. 30. 9 ։ 2. Մնաց. 2. 4 ։ Դանիէլ 8. 26 . եւ 'ի յայլ բա-զում տեղիս ։

Երեկորինական . ի . աւ . այ . աք ։ || Երեկոյա-կան . կամ երեկոյեան ։

Երեկօթոյ . ի . իւ . էից . իւք ։ || օթեւանումն . կամ հանգիստն որ լինի մնալեալ զկնի կէս աւուր մինչեւ ը երեկոյ ։ Կիւրղ. Եզեկ. Է ։

Երեկօթք . թից . իւք ։ (անեզ.) || օթեւանն . կամ իջեւանն . եւ կամ օթեւանումն ։ Խորէն. Բ. գլ. 63 ։ Եւ նա բազում անգամ Ը բայի չարաչարեալ այսպէս . Երեկօթս առնել . եւ նշանակէ օթեւանս առնել ուրեք զօր մի, կամ զաւուրս բազումս . եւ կամ երեկոյ ։ Եւ առաջասց երեկօթս առնել . զի որ զյա-զում աւուրս օթի ուրեք, զերեկոյս առ-նէ անդ ։

Երեքամեայ . մէի . իւ . եաց . իւք ։ || երից ամաց . կամ երեքամեայ ։

Երեքեան . մենի . աւ . կամ իւ . եաց . իւք ։ || եռամեան . կամ երից ամաց . կամ երեքա-մեայ ։ Ծննդ. 15. 9 ։ եւ 2. Մնաց. 31. 16 ։

Երեմենի . նայ . եաւ . եաց . եօք ։ || եռա-մեայ . այ, երից ամաց . ուստի եւ երեմենին նշանակէ երկուց ամաց ։ 1. Թագ. 1. 24 ։

Երես . ոյ . ով . աց . օք ։ || դէմք . կամ առջեւ եւ կերպարան գլխոյ կենդանեաց՝ յորում փայլեն զգայութիւնք . որ եւ է առաջին ան-դամ 'ի կենդանիս՝ առ որ նախ զինէ հայեցուածն աչաց ։ Ծննդոց 33. 10 . եւ 2. Մակ. 7. 7 ։ Մերթ եւս նշանակէ զմակերեւ-ոյթն, այս, զառաջադրութիւն իրաց 'ի լոյս, եւ յերկոյսն առանց խորութեան մտածելոյ ։

Ծննդոց 7. 4 ։ եւ 4. Թագ. 9. 37 ։ Եւ մերթ ա-ռաջին կողմն ծ եւ իցէ իրաց ։ Եզեկ. 28. 37 ։ թ այսմ է եւ Թագ. 20. 6 ։ ուր առի, Սմին յերեսաց ժողովրդեանն 'ի գաւառն խոյա-նին . այս, ժողովրդեան առաջնեն ։ Մերթ եւս առնեալ լինի փոխաբերաբ բաղդի անձին ։ բառ առնել . 2. Թագ. 17. 11 . ուր առի . Եւ քո երեսք երթիցեն . այս, եւ դու անձամբ երթիցես ։ թ այսմ է եւ Սաղմ. 41. 6 ։ եւ Ովս. 4. 20 ։ Եւ մերթ մինչ առի յերեսաց . առնի զնշանակութիւն առաջեւ 'ի, կամ յ . որք են նախադիր բայառական հոլովոյ ։ Ղևտ. 26. 10 ։ Գործ. 5. 41 ։ Իսկ մերթ նշանակէ զէ ։ 3. Թագ. 5. 3 ։ Սաղմ. 37. 4 ։ Իսկ մինչ առի . Երեսօք խոսել . խօսելն, գէմ յանդիման . կամ յայտնապէս խօսել ։ Թագ. 12. 8 ։ Իսկ Ղուկ. 9. 51 . ուր առի, զերեսս հաստատեալ խօսելն՝ զյարատեւութիւն . կամ զհաստատ առաւելիւ ։ Եւ մինչ առի հաց երեսաց . խօսելն հաց առաջաւորութեան ։ Եզեկ. 25. 30 ։ եւ 1. Թագ. 21. 6 ։

Երեսուն . ի . աւ . այց . աք ։ || տես զերեսանն ։ Նուէ. Է ։

Երեսնամեակ . ի . աւ . ացն . աք ։ || տես զերեսա-մեակ . Խորէն. Գ. գլ. 68 ։

Երեսնամենակ . ի . աւ . աց . աք ։ || տես զերե-սնամենակ ։ Լաստիվ.

Երեսնապատիկ . ի . աւ . ացն . աք ։ || զերեսուն անգամ այն զատած կաղապարել, եւ կտաւակալով զերեսուն . որպէս է ձեւակալութիւն . կամ կտաւակալով ։ Մնն. 1. հտր. Լ ։ եւ 2. հտր. ճձգ ։ Եւ երեսնի առնեալ լինի փոխաբերաբ, ն եւ իցէ կտաւակալ չի, եւ այլն ։

Երեսաւոր . ի . աւ . աց . աք ։ || գեղեցկադէմ . կամ զուարթադէմ եւ զեղյայտնող երեսօք . Խորէն. Բ. գլ. 20 ։ Իսկ 'ի գիրս Խոսրովայ . ի . գլ. 20 ։ ուր առի . 'ի մարմնոյ երեսաւոր . խօսելն 'ի մարմնոյ էր երեւելի . կամ բաղձալիս 'ի գե-մի հայեցուածոց ։

Երեսնակ . ի . աւ . աց . աք ։ || է՝ խառն ինչ, որ ունի զմի թղթաչափ երկայնութ . եւ 'ի ծայրն փոքր ունի զթիւն ծաղիկ . եւ լինի 'ի կող մասն եղեւնիայ զաւառին ։

Երեսնապատակ . պատակի . աւ . կամ իւ . աց . աց ։ || երեսուն աստիճանեան առնել քան զմին ։ ռամկ. երեսուն զան էնէ ։

Երեսներակ . նեկի . աւ . աց . աց ։ || է զարա-կան անուն թուոց . եւ նշանակէ զերեսունն զատարար ։ Իսկ մերթ նշանակէ զերեսա-ւորն . այս, զգաղափարականօքն երեսնից ։

Երեսներորդ . ի . աւ . աց . աք ։ || է դասական անուն թուոց . եւ նշանակէ զերրորդն ըլ թիւն երեսուն 'ի կարգի . եւ կամ վերջին երեսուն թուոյն ։

Երեսներեկեան . Նեցուն . Նեքումը . ունց . ունքը ։ || է անձնելրական անուն թուոց . որ վարի զոյգականութեամբ . եւ նշանակէ զեւ-րաքանչիւրն երեսնից ։

Երեսուն . եանի . իւ . եաց . իւք ։ || է բացար-ձակ անուն թուոց . որով նշանակի թիւն բաղկացեալ յերեքեակ տասանց . եւ կամ ն և ռամկօրէն չանակէ զերեքս տասն . որ եւ ռամկօրէն

ասէ հրեշտակն ։

Երկապաշտութիւն. թեան ։ || Մարդադաւանու_թիւն. կամ մարդերկրպագութիւն. զի, խոստովանին զՔս ումեք զնա առ՚ի հաւրն լինել նմա. կամ առ երկուս գոլ նմա ։ Եւ մերթ գոլել, կամ պարտաւել զայն առ՚ի հաւրն լինել_այնմ, առաջի որոյ գոլէ, կամ պարտաւէ ։

Երկիր. ի. իւ. ից. իւք ։ || Երկրութիւն. կամ շարժութիւն ։ Երեմ. 4. 24 ։ Իսկ մերթ նշա_նակէ զերկրեալն. և ըստ այսմ ասի երկր և տատան լինել. զի երկրեալ և տատանեալ լինել ։ Մծբ. է. և թ ։

Երկրածփութ. ծփի. իւ. ից. իւք ։ || Երկ_րչել և ծփել. կամ երերեալ ծփանօք. կամ տատանեալ և ալէկոծեալ ։

Երերեալ. ելոյ. ելոց. ելք ։ || Նա՛ որ ոչ դադարի, և ոչ միայն կայուն ՚ի միում տեղ_ւոջ, կամ ՚ի միում դիտաւորութեան, կամ ՚ի միում կացութեան, այլ աստ և անդ տարա_բերի. կամ դեգերեալ, և տատանեալ ։ Ծննդ. 4. 12 ։

Երերիմ. երերեցայ. եցաք. իլ ։ (Ձայնակր.) || Երերեալ լինել. կամ աստ և անդ տարա_բերել. կամ դողդողջել. կամ սասանել և դո_ղալ ։ Դանիէլ. Է ։

Երերումն. (Նախդրիւ հոլովի.) || Երերեալ. կամ դողդողումն. կամ տատանեալ ։ Մծբ. Ժթ ։

Երեւակ. ի. աւ. աց. աւք ։ || Է մինն ՚ի յեօթանց մոլորակաց աստեղաց. որ է բնութե՛ ցուրտ, և չոր. յորդորէ առ տրամական միամ_մտութ ։ Եւ մեղանչողաց ։ և ՚ի մէջ հրա հալեալ պատճառէ զայրմն ։ Եւ ասա_ցեալ լինի. թէ մեծագոյն է քան զերկիր հինգ և մի անգամ ։ է բարձրագոյն քան զամ մոլորակս, զի է առաջինն. և կատարէ զշրջանն ընթացս իւր ՚ի յերեսուն ամս ։ Եւ մերթ՝ բառս երեւակ, նշանակէ զզու_ցակն, կամ զերեւոյթն, կամ զպատկերն, և զնմանութիւն. և կամ զտեսիլն ։ Դանիէլ. Կե. և Զ ։

Երեւակայեմ. եցի. եա. եալ ։ (Ներգործ.) || Երեւակերպել. զի կերպարանել զիր ինչ ՚ի ներքին զգայութեան, որ երեւակայութիւն ասի ։

Երեւակայութիւն. թեան ։ || Է երկրորդ ներ_քին զգայութիւն որով երեւակերպեմք զի_րաց անցելոց. ներկայից. և ապագայից ։ Եւ կամ է զօրութիւն իմացականն. յո_րում պահին նմանութիւնք զգալի իրողու_թեանց. որով և երեւակայեմք զհեռաւոր իրս. և իբրև զներկայս ընդունիմք ։

Երեւելի. լւոյ. լեաւ. լեաց. լեաւք ։ || Այն որ ա_չօք տեսանել կարէ. կամ որ Է մարմնաւոր տեսութեան առարկայ. որպիսիք են գոյնա_ւոր մարմինք ։ Իսկ մարմինն՝ որ ոչ է գու_նաւոր, որպիսի է օդն, ոչ է երեւելի, այլ միայն շօշափելի ։ Մերթ եւս բառս երեւե_լի. նշանակէ զանուանին և զհռչակաւորն, և կամ զյայտնին և զյայտնաւորն ։ 2. Մակ. 15. 34 ։ Մատթ. 1. 14 ։ Մարկ. 12. 38 ։ Եւ մերթ նշանակէ մեծարոյ և պատուաւոր ։ Ես. 30. 34 ։ Եւ Ա. Կորնթ. 5. 22. ըստ այսմ. յերեւե_լի փրկութեանց. նշանակէ հանդիսական պատարագն, որ էր փրկութեան. և խաչա_գութեն մատուցանէին ինչ ։ Իսկ Գործ. 12. 21. ըստ ասի, յաւուր միում յերեւելւոջ. իմանի ՚ի միում հանդիսաւոր աւուր ։ Իսկ թէ զինչ նշանակէ մինչ ասի, երեւելի լու_սնոյ, տես ՚ի բառն Լուսնոյ ։

Երեւեցուցանեմ. ցուցի. ցի. ցուցանել ։ (Ան_ցողակ.) || Երեւելի. կամ տեսանելի առնել. կամ յայտնել. կամ ցուցանել ։ Սաղմ. 66. 2 ։ և Ղուկ. 10. 1 ։

Երեւիլ. (Նախդրիւ հոլովի.) || Կենդանի փոքրիկ իբրև զմուն, կամ իբրև զմրջիւն, որ հալածէ երեւի աչաց. և մնացեալ բուսոց, զի մինչ նստի ՚ի վերայ դալար խոտոյ՝ չորա_ցուցանէ զնա ։ Եւ կամ է ժանգն, և փտու_թիւն՝ որ լինի ՚ի բոյսս. և սա կոչի եւս մնի_նայ ։ Ամով. 5. 7 ։ և Յովէլ. 1. 4 ։

Երեւիմ. եցայ. եւց. իլ ։ (Ձայնակր.) || Տե_սանիլ. կամ ՚ի յայտ գալ. կամ յանդիմանն լինել. կամ ընդ տեսութեամբ աչաց ան_կանիլ ։ Իսկ յորժամ վարի իբրև դդիմա_ղուրկ, և ասի երեւի. նշանակէ թուէր ։

Երեւոյթ. ութի. իւ. ից. իւք ։ || Մերթ նշա_նակէ զերեւումն. կամ զցոյցն. կամ զտեսիլն ։ 2. Մակ. 3. 24 ։ Մերթ եւս նշանակէ զպատ_կերն, կամ զկերպարանս, կամ զձեւ, և զնմա_նութիւն ։ Աշխար. 2. 18 ։ Եւ մերթ նշանա_կէ զծանօթելի տեսիլն, կամ զտեսարան ծա_ղուն. և կամ զնշանակն ։ և ըստ այսմ ասի Եզեկ. 5. 15 ։ Եւ եղիցիս ծաղր և երեւոյթ ՚ի մէջ ազգաց ։ Իսկ մերթ նշանակէ զե_րեւելին աչաց, կամ զտեսանելին ։ Իմաստ. 1. հատ. Գ. և Դ ։ Մերթ եւս նշանակէ զերեւա_կայականս, կամ զառաջօք տեսիլն, կամ զխեղ_ծեալ տեսութիւն ։

Երեւեցեմ. եցի. եա. եալ ։ (Ներգործ.) || Ցու_ցանել. կամ երեւեցուցանել. կամ յայտ_նել, և բացերեւել ։

Երեւութանամ. ացայ. ցիր. անալ ։ (Ընդմի_ջակ.) || Երեւիլ. կամ ցուցանիլ, և յայտ_նիլ ։ Եւ այս ասի մանաւանդ զերեւակայա_կան, կամ զմտաւորական երեւմանց. որք ՚ի յերեւակայութեան մարդոյն ձեւանան ։ Խո_րէն. Բ. գլ. 80 ։ և Գ. գլ. 53. և 66 ։

Երեւութին. թեան ։ || Երեւումն. կամ երեւոյթ. կամ ցոյցք ։ Խորէն. Գ. գլ. 59 ։

Երեւումն. ման. մամբ. մանց. մամբք ։ || Տե_սանելին. կամ աչօք ըմբռնելին ։ Իսկ մերթ նշանակէ զերեւակայութիւն. կամ զտեսաւորա_կերպարանութիւն, որ լինի յերեւակայութե ։ Իմաստ. 2. հատ. ԺԷ ։

Երեք. երից. երիւք ։ (Անեզական.) || Է բա_ցարձակ անուն թուոց. որով նշանակի, Գ. կամ երրեակ ։ Տեսլ. Ծնն. ։

Երեքպալեան. (Նախդրիւ հոլովի.) || Ալէկո_ծութիւն. կամ ամբոխումն, որ երեք ալեօք ուռուցեալք. և զկնի միմեանց եկեալք փոխանակ զմարդն. ասի երեքպալեան ։ Եւ այս նմանութեամբ ասի զերեք ազգ փորձու_թեց, որք խռովեն զմարդիկ. որ է փոր_ձութիւն մարմնոյ, աշխարհի և սատանայի. և կամ ամբոխութիւն բանից, ցանկութեանց, և ցանկականաց ։ Դանիէլ. Ի. և Լուծմ. ։

Երեքանկիւնի. (Նախդրբ. հոլովի.) || Եռանկիւնի. Ք. ունող զերիս անկիւնս: Խորէն. Ա. դր. 10:

Երեքարձէն. ձենի. նեաց. նից. նիւք: կմ երեքարձի. ձայեաւ. եայց. եօք: || երեքժանի. Ք. որ ունի զերիս ճիւղս. կամ զմատունս երկաթիս սրեալս. և այս ասի զոխգաց. և զգեղարդեանց. և զայլոց նմանեաց. որք իբրև զհոսելիս կազմին: 'Ի ճառս հարց. Ժթ:

Երեքեան. կամ երեքին. երեցունց. քումբք: (անեզական.) || Է անուն անձներական թուոց որ զերիսն 'ի միասին ենթ միոյ թուոյ իւրաքանչիւրաբար նշանակէ. զի պատուեթս այս երեքեան, հաւասար է այս մեկ, եթէ ասիցէ, իւրաքանչիւրն երից: ռամկ. Իրեքն ալ: Նոյնով բանիւ իմա. և զբառն երկոքեան, կամ երկոքին. և զայլս նմանս:

Երեքթևեան. (Նախդրբ. հոլովի.) || զերիս թևս ունող. և կմ երեք թևօք թռչօղ. և այսու մերթ նշանակի նետն, վն ունելոյն 'ի ծայրն իւր յերից կողմանցն զերիս փետուրս հաստատեալս. որովք իբրու թևովք ուղղի յընթանալն. Ք այսմ Խորէն. Ա. դր. 10. չի քարշէ պինտ զաղեղնալիճն. դիպեցուցանէ զերեքթևեանն կրծից տախտակին:

Երեքժանի. նւոյ. եաւ. եայց. եօք: || ունող զերիս ժանիս. Ք. զերիս մատունս կեռս, և երկայնացեալս. և այս ասի զմահան գործեաց, որք ունին զերիս մատունս երկաթիս. 1. Թագ. 2. 13: ըստ այսմ և պատառաքաղն, Ք չաթալն, որով զկերակուր առնուն, յորժամ կազմի յերից մատանց, կոչի երեքժանի:

Երեքլուսեան: (Նախդրբ. հոլովի.) || Եռալուսեան. Ք. որ է երրեակ լուսով. կամ որ ունի զերիս ճաճանչս. և կմ որ է առաւել լուսաւոր. կամ որ ունի զերիս ազնուագոյն յատկութիս:

Երեքկանգնեան. (Նախդրբ. հոլովի.) || ունող զտարածութի երից կանգնոց: 3. Թագ. 6. 36:

Երեքկարգեան. (Նախդրբ. հոլովի.) || Նշանակէ զայն, որ ունի զերիս կարգս՝ թէ շինուած իցէ. և թէ այլ ինչ իր: 3. Թագ. 7. 12:

Երեքկին. (Նախդրբ. հոլովի.) || Եռապատիկ. ռամկ. Իրեքղաթ: 3. Թագ. 7. 4. և 5: Եւ մերթ է մակբայ. և նշանակէ եռապատկաբար. Առակ. 22. 20. ըստ այսմ և Եզեկ. 41. 16. ուր ասի՝ պատուհանք բացեալք երեքկին, իմանի՝ թէ պատուհանքն բացեալ լինէին եռապատկաբար. զի ունէին զերիս ծածկոցս. Ք զփեղկ. զվանդակ, և զվարագոյր, զորս բանային առ 'ի հայիլ:

Երեքյարկ. ի. աւ. աց. օք: || Տունն, որ ունի զերիս յարկս մի 'ի վր միոյ շինեցեալ: ռամկ. Իրեք ղաթ տուն:

Երեքկնեմ. եցի. եա. ել. (Ներգործ.) || Երիցս կրկնել. կմ երեք անգամ յաւելուլ կամ եռապատկել: 1. Թագ. 20. 20: և 3. Թագ. 18. 34: Մերթ և նշանակէ երեքկուղի առնել զչուան. կմ զայլ ինչ նման. ռամկ. Իրեքխաթ անել: 'Ի ճառս հարց. Ժթ:

Երեքկուղի. ղւոյ. եաւ. եք. եայց. եօք: || երեքտակեան. ռամկ. Իրեքղաթ: Ժողով. 4. 12. ուր ասի՝ առասան երեքկուղի. իմանի՝ չուան իրեք ղաթ: վն զի կուղն նշանակէ ղաթն:

Երեքկուսի. (Նախդրբ. հոլովի.) || երեքկողմեան. կմ եռանկիւնի. Ք զերիս անկիւնս. կամ կողմունս ունող:

Երեքմասնեան. (Նախդրբ. հոլովի.) || Եռամասնեան. Ք զերիս մասունս ունող. կմ յերից մասանց բաղկացեալ: Իսկ 'ի Նարեկն. Հ. ուր ասի. որ զերեքմասնեան հարուածն. նշանակէ զերեքազգին. կամ զերեքկերպեանն. ռամկ. Իրեք բիոլլ:

Երեքպայրի. րւոյ. ւով. կմ եաւ. եաց. եօք: || Եռապայրի. Ք որ ունի զերիս բերանս. որպիսի է այն սուրն, որ յերից կողմանց հատանէ:

Երեքսրահեան. (Նախդրբ. հոլովի.) || զերիս սրահս ունող: Եզեկ. 42. 3:

Երեքսրբեան. սրբենի. ւոյ. ից. իւք. || երգն, կամ բանն, կմ ձայնն, յորում երիցս Սբ ասի. և այնու ամենասբ երրորդութիւն օրհնաբանի: Եւ մինչ ասի՝ երեքսրբեան տէրութի, իմանի երիցս Սբ ասելով օրհնաբանելի. կմ օրհնաբանեալ տէրութի:

Երեքվտակեան. (Նախդրբ. հոլովի.) || զերիս վտակս. կամ առաջս ջուրց ունող. որպիսի է այն գետն, որ յերիս ճիւղս անջատի:

Երեքտակեան. (Նախդրբ. հոլովի.) || Երեքկուղի. Ք. այն՝ որ է երեք կուղ. Իրեքղաթ. կմ որ է երիցս կրկնեալ, կմ եռապատկեալ: Եւ ըստ այսմ, յորժամ երեք շարոցք մարգարտի յիրեարս կցին. և առ'ի զարդ՝ իբրև զվարսակալ զգլխով ածին. կմ դնին 'ի պարանոցն, և կմ 'ի բազուկն, կոչին երեքտակեան: ռամկ. Իրեք փէշ: Խորէն. Բ. դր. 7: Այնպէս մինչ երեք յարկք 'ի վր միմեանց շինին. կմ երեք պարիսպք մի զկնի միոյ զքաղաքաւ կանգնին. կամ երեք տերևք ծաղկանց 'ի վր միմեանց բարդին, երեքտակեան ասին: ռամկ. Իրեք ղաթըն. կմ Իրեքղաթ:

Երեքտասան. ից. իւք: (անեզական.) || Է թիւ բացարձակ, որով նշանակի տասն և երեքն. որ բաղկանայ յեօթանց, և 'ի վեցից. ռամկ. փոն-իրեք:

Երեքտասանամեայ. կմ երեքտասանամենայ: (Նախդրբ. հոլովի.) || Նա՝ որ է երեքտասան ամաց: Ծննդ. 17. 25:

Երեքփառաւորեան. (Նախդրբ. հոլովի.) || երիւք փառաւորութբ բարեբանեցեալ. կմ երրեակ փառաւորութբ փառաւորելի. որպիսի է ամենասբ երրորդութին: Նարեկ. ԺԲ:

Երեքքաղաքեան. (Նախդրբ. հոլովի.) || Երեք քաղաքն է անուն միոյ ծովեզերեայ քաղաքի, որ յունարէն ասի տրիպոլիս. որոյ նաւահանգիստն կոչի երեքքաղա-

քեան

քեան նաւահանգիստ: 2. Մակ. 14. 1: Եւ զայսմանէ տե՛ս ևս 'ի բառարանի յատուկ անուանց:

Երեքբարբառն. (Նախադրիւ հոլովի.) || Ե-րիւք բարբառովք կազմեալ. կամ երիւք բա-ռամբք հաստատեցեալ. որպիսիք են չին-ուածք, որք երիւք սեամբք կանգնին: և այլն: Խորէն. Գ. գլ. 33:

Երեքօրեայ. րէի. իւ. ից. իւք: || երից ա-ւուրց. կմ որ ունի զտեւողութիւն երից ա-ւուրց. կմ որ 'ի յերիս աւուրս կարէ եղե-րիլ. որպիսիք են ճանապարհքն, որք ըն-թացիւք երից աւուրց աւարտին: Եւէդ. 8. 27: Խորէն. Ա. գլ. 11:

Երեքօրիմ. եցայ. եա՛ց. իլ: (Ձայնակր.) || զերիս աւուրս յամել ուրեք. և կամ զե-րիս աւուրս կալ և մնալ, և անսուաղանիլ: 1. Թագ. 20. 19:

Երէ. ոյ. ով. ոց. ովք: || Ղեւ. 17. 13: Սաղմ. 49. 10: Եսայ. 27. 10: տե՛ս զէրէ:

Երէկ. երեկի. յերէկն. 'յերեկէ: || երեկեան օրն. որով իմանի այսր աւուր անմիջապէս անցեալ օրն: Եւէդ. 4. 10: և Յեսու. 3. 4: և 1. Թագ. 21. 5: և Սաղմ. 89. 4: և յայլ բա-զում տեղիս:

Երէց. երիցու. յերիցուէ. կմ յերիցու. ե-րիցամբ. երիցունք. անց. ամբք: || մեծ, և աւագ. կմ առաջին ծննդեամբ: Ծննդ. 24. 2: և 27. 15: ըստ այսմ և այլ ևս իցէ մեծ առաւելագոյն անձն; որ բարձրութեամբ այլոց է մեծ, ասի երէց: ուստի և քահա-նայքն՝ որք բարձրութեամբ աշխարհակա-նաց՝ են 'ի մեծի կարգի, երիցունք կոչին: Սաղմ. 131. 9: և 1. Տիմ. 5. 19:

Երթ. (Նախադրիւ հոլովի.) || է արմատ եր-թամ բային. և նշանակէ զերթալն, կամ զգնալն: Խորէն. Գ. գլ. 51. և 60: Նաև մերթ է հրամայական երթամ բային:

Երթամ. երթ. ալ: (ընդմիջակ. և արտաքի.) որոյ կատարեալն լինի՝ չոգայ. չոգար. չո-գաւ. և այլն: || և նշանակէ՝ գնալ: որ և ռամկօրէն ասի էրթալ:

Երթեալ. թելոյ. ով. ոց. ովք: || է ընդու-նելութիւն երթամ բային. և նշանակէ գնա-ցեալ. կմ գնացող: Թուոց. 31. 28:

Երթևեկ. ի. աւ. աց. օք: || գնացող և եկող: Ծննդ. 42. 5: և Եզր. 1. 4: և Եզեկ. 27. 15: Մերթ ևս մինչ ասի՝ երթևեկս առնել. իմանի երթևեկութիւն առնել. կմ երթալ և գալ:

Երթևեկութիւն. թեան: || գնալ և գալ. կմ գնացումն և եկումն: Նարեկ. ղզ:

Երթումն. թման. մամբ. մանց. մամբք: || գնացումն. կմ գնացք, և ընթացք: Նա-րեկ. ղզ:

Երի. րեայ. եաւ. եայ. եօք: || միոյն թիկանց կենդանեաց համդերձ ոսկերբ. որ ռամկ. կոչի [illegible]: Եւէդ. 29. 27: Ղեւ. 8. 26: և յայլ բազում տեղիս: Իսկ Ղեւ. 8. 25: և յայլս տեղիս, յորս գրի երիս, նա առանց փոխա-նակ գրելոյ [illegible] գնի: Իսկ երբեմն նը-շանակէ զկողմն աշխարհաց. կմ գաւա-

ռաց. և այլոց նմանեաց. ոչ ասէ Խորէն՝ յաշխարհ[illegible]. իտալիա առ երի կայ. կամ առ երի է գաւառացիոյ 'ի հիւսիսոյ կուսէ. Ցր իտալիոյ կայ 'ի կողմանէ գաւառացիոյ. ռամկ. [illegible] ըստ այսմ ասի և զայլոց նմանեաց, յորժամ առընթեր կան միմեանց:

Երիզ. ի. աւ. աց. օք: || երկայն բարակ կը-տաւ. Ցր երկայն և նեղ կտաւ, որով պա-տի և փաթաթի իր ինչ:

Երիզապատ. ի. իւ. աց. օք: || երկայն բարակ կտաւով պատեցեալ և փաթաթեցեալ. ուստի և զաւհոյքն, կամ մահիճն; որ պա-տի կտաւով շուրջանակի, ասի երիզապատ: Առակ. 7. 16:

Երիզապինդ. կամ երիզապնդիկ. պնդի. աւ. աց. օք: || երկայն բարակ կտաւով պնդե-ցեալ, որպիսի է գլխն մեռելոյ, զոր պա-տոր են երկայն բարակ կտաւով փաթաթու-թել, և պնդել. Ըստ այսմ և ձեռք, և կմ այլք ինչ պատեալք պատուհաս կտաւով, ասին երիզապնդեալք: Յովհ. 11. 44:

Երիզապնդեմ. եցի. եա՛. ել: (Ներգործ.) || երիզօք պնդել. Ցր երկայն բարակ կտա-ւով փաթաթութել, և պրկել զինչ: Նարեկ. ծը:

Երիզուա. (Նախադրիւ հոլովի.) || տե՛ս Ե-րեզուա:

Երիթանամ. ացայ. ացիր. նալ: (ընդմիջ.) || ցամաքիլ. կմ խոնաւագուրկ լինիլ. և կմ չորանալ: Սիրաք. 37. 3: և 39. 28: Նարեկ. իժ:

Երիկամն. կմ երիկամունք. մանց. մամբք: || են երկու ներքին մասունք կենդանեաց թա-ղեալք 'ի ճարպս. որք 'ի մօտոյ մասին ո-րովայնի յաջմէ և յահեկէ զետեղեալ կան. որք 'ի յամենայն կենդանիս են բնացածև. և 'ի յամենայն այլով ձևով. ռամկօրէն էրիկամ. կմ պէօպրէկ: Եւէդ. 29. 13. Եւ այս՝ 'ի սուրբ գիրս մանաւանդ 'ի սաղմոսի բազմիցս յիշեցեալ լինի. և նշանակէ զխիղճս. կմ զախորժակս, և կմ զգաղտնի յօժարութիւն հոգւոյն: Սաղմ. 7. 10: Իմաստ. 1. 6:

Երիկայք. երիկայց. զերիկայս: և այլն: || վա-ղնջականք, կմ վաղեմիք. կամ հինք և ան-ցեալք. Ըստ այնմ Խորէն. Բ. գլ. 2: ոչ՝ յերի-կայն պատմութեանց հերովդիանեայ է ուսանիլ:

Երիկեան. (Նախադրիւ հոլովի.) || տե՛ս զէ-րեկեան:

Երիփսոն. (Նախադրիւ հոլովի.) || է բառ յունական. և թարգմանի քահանայ. կմ երէց: Լամբրոն.

Երինջ. երնջոյ. կմ երնջու. ով. ոց. ովք: || էգ. հորթ մեծացեալ, կամ նորահասա-կով. որ նորաւղէս է սկսեալ ծնանիլ զը-հորթ: Թուոց. 19. 6: և 1. Թագ. 6. 7:

Երիվար. ի. աւ. աց. օք: || ձի. կմ ազնիւ ձի, որ 'ի կառս լծի. կմ որ հեծեալ լի-նի. և կամ որ 'ի պատերազմի մղի. և այլն: Եւէդ. 15. 1: Յեսու. 11. 4:

Երիվարիկ. (Նախադրիւ հոլովի.) || յառաջա-գոյն վարժեցեալ. ուստի 1. Մակ. 6. 30. ուր ասի՝ երեսուն և երկու հազար վա-րեալք երիվարիկք. իմանի՝ երեսուն և

երկու փեղկք մանուածոյ՝ յատաղձագործն մաց ճեղքեալք 'ի պատուհանս։

Երեքտասնորդ. ի. աւ. աց. օք։ ‖ այն՝ որ հասեալ է 'ի չորրորդ հատուածն մարդոյ. որ սկսանի 'ի քսան և եօթն ամէն՝ և երկրորդ մին չև 'ի յիսուն ամն, յորում հասանեն մարդիկ ՛ին զօրեղք, կայտառք, և գործունեայք. Բայց համառօտագոյն ասեալ՝ երեքտասնորդ ասի նա, որ է երեսուն ամաց. կամ անկանի ինչ ասելի, կամ նուազ. ուստի ասի երեքտասնորդ. իբրև թէ յերիս տասն է որդ. զի որդն է երից տասանց ամաց։ ասմի. կոչեն։ Ցէստս. 2. 1։ Գործ. 5. 6։

Երեքտասնորդական. ի. աւ. աց. օք։ ‖ ամեղին, որք ժողովրդին չափահասակ մանկանցն, և երեքտասնորդք առ 'ի ուսանելոյ զանկարգելեշտ խաղս, և մարմնոյ 'ի նոսին։ 2. Մակ. 4. 12։ որոյ փոխանակ 'ի 9. համարն, գնի կրկէս։

Երեքտասնորդութիւն. հեայ. աւ. եաց. եօք. կմ բուք։ ‖ երեքտասնորդ կեն. կամ մանկագոյն կեն. կմ օրինորդ։ ասմի". կեան կեն։ Խոսրէն. ա. պր. 11։

Երեք. (նախադրիւ հոլովի.) ‖ և նշանակէ՝ երրորդ. ը այնմ. և յերիր աւուր յարիցէ, զի յերրորդ աւուր։ Մարկ. 8. 31։ և 2. Թագ. 18. 2։ Մերթ և է մակբայ դասական, և նշանակէ՝ երրորդապատ. կմ եռորդ։ Խոսրէն. գ. պր. 48։

Երեքագոյն. գունոյ. իւ. լց. իւք։ ‖ մեհագոյն. կմ մեծագոյն. կմ գերագոյն. կամ առաւելագոյն. և կմ նախկինագոյն։

Երիցակից. կցի. աւ. աց. օք։ ‖ մեծութե կցորդ. կմ հաւասարդ. կմ հաւասարակից. և կմ կցորդ ուսիւք 'ի պաշտօնի քահանայութե։ 1. Պետր. 5. 1։

Երիցացուցանեմ. ցուցի. ցո. եւ։ (անցող.) ‖ մեծացուցանել. կմ մեծագոյն, և նախապատիւ առնել. կամ առաջագոյն առնել. և կամ յերիցութեան հանել։ Խոսրէն. բ. պր. 89։

Երիցութիւն. թեան։ ‖ մեծութիւն. կմ առաջութիւն։ Ծննդ. 43. 33։ Եւ կմ քահանայութիւն։ 1. Տիմ. 4. 14։

Երիցս։ (մակբայ քանակական.) ‖ երեք անգամ։ Իսկ մերթ յարի 'ի սկզբունս բառից ոմանց. զոր օրինակ՝ երիցս ասելի. կամ երիցս երանեալ. և այլն։ և յայնժամ է փոխանակ գերադրական մասնկանցս այսոցիկ՝ ամէն. կմ գոյնէշ. զի նոյն է ասելն երիցս երանեալ. և ասելն երանագոյնեղ. կմ ամենաերանեալ։ Նարեկ. իԷ։

Երիցս անգամ։ (մակբայ քանակական.) ‖ երեք անգամ։ Թագ. 22. 28։

Երիւր. ի. իւ. եց. օք։ կմ ոյ. ով. ոց. ովք։ ‖ նշանակէ զհարիւրն. ուստի յորժամ ասի երկերիւր, նշանակէ երկուս հարիւրն։ Թուոց. 3. 46։

Երկբերեմ. եցի. եա. ել։ (ներգործ.) ‖ յօդել. կմ կերպարանել շրթամբք, և լեզուաւ. կմ յարմարել. կմ հնչել. կմ զյօդելի ձայն հանել. Լատիւն։ Իսկ մերթ նշանակէ ձայնաւորս առնել. կամ ձայնաւորարկել։ մերթ ուղղել. և կարգաւորել։

Երկրպագութիւն. երկրպագման. ամբ. անց. ամբք։ ‖ յօդաւորութիւն. կմ կերպարանութիւն ձայնի, և կամ յօդելի հնչումն. և այլն։

Երկանուանակ. ի. աւ. աց. օք։ ‖ զերկուս բնութիւնս ունող. կմ յերկուս մեծքս բնակող։ Իսկ երբեմն առեալ լինի բառս այս 'ի յամանց զնոցանէ, որք զերկուս բնութիւնս, զի. զմեծայինն և զմարդկայինն՝ անշփոթ միաւորութբ դաւանեին 'ի Քն՝ 'ի միութիւն անձին։ Եւ այս է ուղիղ հաւատոյ դաւանութիւն, մինչ ոչ այլ ինչ իցէ ասելն զայս, եթէ ոչ՝ հաւատալ զՔն կատարեալ Ած, և կատարեալ մարդ. և կմ պահել զայս, թէ քն ունի զկատարեալ Աստուածութիւն, և զկատարեալ մարդկութիւն։ Իսկ մերթ ևս ասին երկաբնակ նոքա, որք զերկուս բր նութիւնս ասեն 'ի Քն՝ հանդերձ երկու դիմօք և անձամբք. և այսպիսիքս են նեստորականք։

Երկաղնեմ. եցի. եա. եւ։ (ներգործ.) ‖ որոշել. կմ յերկուս բաժանել. կմ անջատել։ Եւ ասի երկաղնել, իբրութե յերկուս ազգս որոշել։

Երկաթ. ոյ. ով. ոց. ովք։ ‖ է կարծր հանք ինչ ելեալ յերկրէ. զոր հրով կակղացուցեալ կռանեն. և 'ի նմանէ կազմեն զզ բաներս, զէնս, և զայլ բազում իրս։ որ և ռամկօրէն ասի Եէլիզ։ Մերթ և առնանի փոխանակ ածելւոյ, կամ սրոյ։ Դատ. 13. 5։ և Յոբէլի. 9. 11։

Երկաթագամ. ի. աւ. աց. օք։ ‖ երկաթեղէն գամ. կմ երկաթեայ բևեռ. և կամ զերկաթեայ գամ ունող։ և 'ի Խոսրէն. բ. պր. 87. ուր ասի. Զոր որձաքար և կոփածոյ վիմօք, երկաթագամ և կապարաւ մածուցեալ. նշանակէ՝ երկաթեայ բևեռօք։

Երկաթագիր. գրի. աւ. աց. օք։ ‖ գլխագիր բոլոր գրոյ, որպիսի է այս. Մ։ Եւ ասի երկաթագիր, զի 'ի հնումն գրեին զայսպիսի գիրս՝ կարծր գրչաւ իբրու երկաթեաւ. նա և այսպիսի գիրս զօրով 'ի մի մածուցանել, երկաթագոյն երևիր։

Երկաթագործ. ի. աւ. աց. օք։ ‖ դարբին, որ չինէ զերկաթեղէնս։

Երկաթակապ. ի. իւ. լց. իւք։ ‖ երկաթեղէն շղթայիւք կապեցեալ։ 3. Մակ. 4. 8։ Իսկ մերթ այնք՝ որք երկաթի կապիւք պնդին, հաստատին, և շաղկապին, երկաթակապ կոչին։

Երկաթակուռ. (նախադրիւ հոլովի.) Մ 'ի կուռ երկաթոյ. զի. 'ի կարծր. 'ի ամուր, և 'ի հաստատուն երկաթոյ կազմեցեալ իր ինչ։ և ը այսմ ասի երկաթակուռ զրահ. կմ երկաթակուռ սաղաւարտ և այլն։

Երկաթակարութիւն. թեան։ ‖ կարութիւն երկաթոյ։ Եւ մերթ հանք. կամ մասն երկաթոյ, ուստի կարեն և հանեն զերկաթն։ Խոսրէն. յաղ խորհրդոց։

Երկաթապատ. ի. իւ. աց. օք։ ‖ երկաթով պատեցեալ։ Դանի. 4. 12։

Երկաթի. թեաւ. թեօք։ (և այլ և հոլովք պակասին։) ‖ երկաթեղէն. կամ երկաթեայ։

Թեսաղ. Եբրէ. 1. 18: և Սաղմ. 2. 9:

Երկախումբ: (Նախադրիւ հոլովի.) || մերթ նշանակէ երկու խումբ զօրաց. կամ ժողովրդոց: Իսկ մերթ իմանի երկուց խմբից. կամ կողմանց՝ ՚ի մի հաւաքումն:

Երկակենդան. (Նախադրիւ հոլովի.) || տես ՚ի ներքոյ զԵրկակենդանացն: Կիւրղի եղծ. Թ.

Երկակենդանեայ. ի. իւ. եց. իւք: || կեցօղ և ապրօղ յերկուս տեղիս, յօ ՚ի ծովու. կամ ՚ի գետս, և ՚ի վերայ երկրի. որպիսի է կոկորդիլոսն. և այլք ոմանք կենդանիք: Խորէն. աշխարհագրութ.:

Երկակի: || մերթ է մակբայ քանակական. և նշանակէ՝ կրկնակի. կամ երկիցս: Իսկ մերթ է անուն, և Նախադրիւ հոլովի. և նշանակէ զկրկինն. կամ զերկեակն: Նարեկ. ժբ. և ի...

Երկակին. կնոջ. կանանց. անց. ամբք: || այր որ ունի զերկուս կանայս: Իսկ մերթ նշանակէ զայրն, որ յետ մեռանելոյ առաջին կնոջն. վերստին առեալ է զկին. որպիսիք են երկկեցս ամուսնացեալքն:

Երկակեզիա. կշռի. աւ. այ. օք: || ունօղ զերկուս որակութիւնս հակադրեցելոյս այլում. որպիսիք են չորս տարերքն. որոց իւրաքանչիւն երկոքումբ որակութեք հակադրի միոյն զի

հուրն է ջերմութք ջերմ և չոր.
Ջուրն ցուրտ և խոնաւ.
օդն ջերմ և խոնաւ.
հողն ցուրտ և չոր.

Ուստի հուրն հակադրի. և ընդդիմանայ ջրոյ՝ ջերմութեամբ և չորութեամբ: Իսկ ջուրն հրոյ ցրտութեամբ և խոնաւութեամբ: Օդն հակադրի. հողոյ՝ ջերմութեամբ և խոնաւութեամբ: Իսկ հողն օդոյ՝ ցրտութեամբ և չորութեամբ: Եւ այսպէս երկակեզիւքն իւրաքանչիւրքն. յօ. հակառակապէս երկոքումբք հակադրեցեալք: Եւ զայս տամ պատճառ անտեղի ը կարգաւորմանն այլ: Եւ ը այսմ իմանի այն որ ասի ՚ի Նարեկ. գՃ: Առող առաջնանիւ երկակեզիա տարրութեանց: Բայց ոմանք զայս բան այլպէս մեկնեն. զի տառք բանն խմանան զարերգականն. իսկ երկակեզիա տարրութիւնքն՝ իմանան զերկուս հակադրեցեալս. յօ զամառն, և զձմեռն. զաշին, և զգարուն:

Երկամ. (Նախադրիւ հոլովի.) || երկու ամ. կամ ամօղութիւն երկուց ամաց. զի մինչ ասի երկ զերկամ մի. իմանի զերկու ամն. կամ զժամանակս երկուց ամաց. Գործ. 19. 10: ը այսմ է և 28. 30:

Երկամեանակ. ի. աւ. այ. օք: || զերկուս ժամանակս ունօղ. կամ անկեալ ը ամօղութեամբ երկին ժամանակի. և այս ասի զառաւելս. որք ունին զկրկնատեսակ հնչումն. որ ժամանակաւ չափի. որպիսիք են առաքն, որք ը պահանջման տեղւոյն երբեմն երկարին հնչմամբ. և երբեմն սղին. որպիսիք են ա. ե. ի. ո. Եւ կամ որոց հնչումն ը պարականն է շեշտ, և ը ամանակին միջակ. այն այսու: Եւ կամ ը պարականն պարզոյ. և ը ամանակին երկար. ա. ե. ի. և այլն:

Երկայն. ի. իւ. եց. իւք: || ունօղ զերկայնութիւն ըստ քանակին. որոյ ներհակն է կարճ: Իսկ մերթ նշանակէ զերկայն ըստ ժամանակին. և ըստ այսմ ասի երկայն բան. կամ օր. և այլն:

Երկայնաբան. ի. իւ. եց. իւք: || երկարաբան. կամ երկարօք զբանն. կամ ը երկար խօսօղ: Իսկ մերթ նշանակէ զընդերկար բանն. և կամ զերկարաբանութիւն: Սեբ. 1. հատ. ժգ:

Երկայնագագ. ի. իւ. եց. իւք: || այն որ ունի զերկայնաձիգ գագաթ. կամ զերկայնատարած խարշ, և գծոյս. որպիսիք են ոմանք լերինք. կամ աշտարակք, և կամ ծառք. և այլք նմանք:

Երկայնագոյն: (մակբայ յաճախական.) || կարի երկարապէս. կամ կարի առաւել: Իմաստ. 12. 24:

Երկայնադէզ. դիզի. աւ. այ. օք: || երկայնաչափ. կամ յոյժ երկայն և բարձր. և կամ այն որ սաստիկ աճեցեալ և բարձրացեալ լինելով՝ իբրու գիզացեալ. և լեռնացեալ է. որպիսիք էին անճառնի հասակք հսկայից. որք ասին երկայնադէզ հասակք: Խորէն. ա. գլ. Ժ:

Երկայնակեաց. եցի. իւ. աց. օք: || ը երկար ժամանակ ապրօղ. կամ զկատարեալ ամս ապրօղ: Ելից. 20. 12:

Երկայնաձև. (Նախադրիւ հոլովի.) || այն որ ունի զերկայն ձև. կամ որոյ դէմքն է ը երկայն ձգեալ. և ըստ այսմ ասի երկայնաձև բլուր. կամ քարայր: և այլն: Խորէն. ա. գլ. Ժ:

Երկայնաձիգ: (Նախադրիւ հոլովի.) || երկայնատարած. կամ երկայնաձգեալ. կամ որ ունի զերկայնաձև դէմս. և կամ ընդերկայն ձգեալ և տարածեալ. և այս ասի զլերանց. գետոց և գլխոց. և զայլոց նմանեաց: Խորէ. Ժ. գլ. 6:

Երկայնամիտ. մտի. աւ. աց. օք: || համբերօղ. կամ ընդ երկար ժամանակ սպասօղ. կամ ը երկար հանդուրժօղ: Ելից. 34. 6: Սաղմ. 18. 29:

Երկայնամտեմ. եցի. եա. ել: (չէզոք.) || երկայնամիտ լինել. կամ համբերել. կամ ը երկար ժամանակ սպասել: 3. Եզր. 9. 30:

Երկայնանիստ. նստի. իւ. ից. օք: || որոյ նստուածն. կամ դիրքն երկայն է. կամ ը երկայն ձգեալ, և տարածեալ. և կամ որ զերկայն ձև ունի. որպիսի է լեռանն. որոյ նիստն է տարածեալ ը երկայնութիւն: Խորէն. ա. գլ. 9: և Նարեկ. ՚ի գանձս. տառ:

Երկայնատարած. ի. իւ. եց. իւք: || երկայնաձիգ. յօ երկայն տարածեալ. կամ զերկայն տարածութիւն ունօղ: Եզեկ. 17. 3:

Երկայնաքիթ. քթի. իւ. աց. օք: || զերկայն քիթ ունօղ:

Երկայնեմ. եցի. եա. ել: (չէզոք.) || երկայնացուցանել. կամ տարածել ընդ երկայնութիւն: Եսայ. 54. 2: Սաղմ. 23. 5: Իսկ մերթ երկարել զբանն. և զձայն, և զայլս նմանս: 2. Մակ. 2. 33: Գործ. 20. 7:

Երկայնեմ. եցայ. եայ. իլ: (Ձայնակր.) || Երկայն լինիլ. կամ երկայնանալ. և կամ ը̅ երկայն տարածել. 1. Մակ. 6. 40: Իսկ մերթ երկարել. կմ ը̅ երկար տևել: Խորհրդ. տր. 28:

Երկայնմտութիւն. թեան: || համբերութի. կմ ընդ երկար տևողութի. և սպասումն սպառնեալ բարկին, առանց փութալոյ ՚ի ձեռն կարճմտութեան: Հռովմ. 2. 4: 2. Կորն. 6. 6: և այլն:

Երկայնօր. աւուր. ուրբ. ուրց. ուրբք: || երկար օր. կմ երկար ժամանակ: Սաղ. 90. 16:

Երկայնօրեայ. (Նախադրիւ հոլովի.) || ըստ բազում աւուրս. կմ ընդ բազում ժամանակս ապրող. կմ երկայնակեաց: 2. Օրէն. 5. 33:

Երկայր. երկաւն. արամբ. երկարք. արանց. ամբք: || կին՝ որ յետ մահուան առաջնոյ առն՝ զերկրորդ այր կալեալ է: Մերթ ևս նշանակէ զերկուս այր միանգամ: Կիւրղ. Եղեկ. ժ:

Երկան. ի. աւ. աց. աք: || աղօրիք, որ աղալու գործիք, զոր ձեռամբ շարժեն, և աղան ցորեն, և այլոց ընդե ղինաց: ռամկ. Ըրկանք. կմ փէյիրմէն: Թուոց. 11. 8: Երեմ. 25. 10: Մատթ. 24. 41: Իսկ մերթ նշանակէ զքարն աղօրեաց, թէ ներքին իցէ, և թէ վերին, որ և կոչի երկանաքար: 2. Օրէն. 24. 6: Դատ. 9. 53: Յայտ. 18. 21: Իսկ յորժամ ասի՝ երկան իշոյ. իմանի մեծ երկանաքարն, զոր էշն [illegible]ուցանէ: ռամկ. Էշէնէնի թաշ: Մատթ. 18. 6: Մարկ. 9. 41:

Երկանաքար. ի. իւ. աց. աք: || քար երկանի. որ քար փէյիրմէնի: Ղուկ. 17. 2: Մերթ ևս նշանակէ զայնպիսի վէմն, կամ զարձանն. յորմէ զերկանաքարն կազմեն. և ըստ այսմ ասի՝ Խորէն. ը̅. գլ. 8: Ջրօղորդ տեղ. Նիղակն նստոյց յերկանաքար արձանի:

Երկանուն. անուան. ամբ. անց. ամբք: || զերկուս անուանս ունօղ. կմ երկակի անուամբք յորջորջեցեալ. որպէս նոյն անձն կոչի միով անուամբ քրիստոնէայ, և այլով անուամբ սանիփաննոս. և այլն. և կմ որ կոչի պետրոս, և սիմոն: և այլն: Նարեկ. ղդ:

Երկասէր. սիրի. իւ. աց. աք: || աշխատասէր. կմ սիրով աշխատօղ. և կմ ժրաջան:

Երկասիրեմ. եցի. եալ. ել: (չէզոք.) || աշխատասիրել. կմ ջանիւ պարապիլ ՚ի գործ ինչ՝ յանձն առնլով սիրով զաշխատանս գործոյն:

Երկասիրութիւն. թեան: || աշխատասիրութի. կամ ժրաջան աշխատութիւն: Լամբրօն:

Երկավանկ. կմ երկավանգ. ի. իւ. իւ. աց: || բառ որ ունի զերկուս վանկս. կմ որ յեր կուց վանկից է բաղադրեցեալ. որպիսի է բառս այս մարմին:

Երկատեմ. եցի. եալ. ել: (Ներգործ.) || յեր կուս բաժանել. կամ յերկուս հատանել. կամ արոհել:

Երկատեակ. ի. աւ. աց. աք: || կրկնատեսակ. կամ երկակի. և կամ կրկին կերպիւ: Նարեկ. ղթ:

Երկատեսակութիւն. թեան: || կրկնատեսակութի. կմ կրկնակերպութիւն: Լամբրօն:

Երկատութիւն. թեան: || յերկուս բաժանումն. կամ արոհումն. կմ յերկուս որոշումն:

Երկար. ի. իւ. եց. իւք: || երկայն. կմ ձիգ: Մերթ ևս նշանակէ զայնս տառս, որք եր կարապէս հնչին, որպէս սոքա. է. օ: Նաև նշանն սոյա՝ երկար կոչի:

Երկարախորհուրդ. (Նախադրիւ հոլովի.) || ընդ երկար խորհօղ. կմ լայնախորհուրդ. կամ լայնամիտ. կամ մեծախորհուրդ: Խորէն. գ. գլ. 67:

Երկարաձգեմ. եցի. եալ. ել: (Ներգործ.) || ը̅ երկար ձգել. կմ ընդերկարել. կմ ընդ երկար ժամանակ տևողացուցանել: Լամբրօն:

Երկարաձգութիւն. թեան: || ընդ երկարու թի. կամ ը̅ երկար ձգումն. կմ ը̅ երկար տևողութիւն: Նարեկ. ծբ:

Երկարաձիգ. ձգի. աւ. աց. գք: || երկայնա ձիգ. կամ ը̅ երկար ձգեալ և տարածեալ:

Երկարապատում. (Նախդրիւ հոլովի.) || երկարաճառ. կմ երկար բանիւ պատմեալ. և կմ երկարաբանօղ:

Երկարավէպ. վիպի. աւ. աց. գք: || երկարա պատում. կամ որ զպատմութիւն երկարէ. և կամ երկարաբան:

Երկարաւոր. ի. աւ. աց. աք: || զերկարութի ունօղ. կմ զերկար միջոց ունօղ. կմ հեռա ւոր: Նարեկ. ին:

Երկարեմ. եցի. եալ. ել: (Ներգործ.) || եր կար առնել: ռամկ. Ըրկնցնել: Մակ. 23. 14:

Երկարութիւն. թեան: || երկայնութի. կամ ընդերկարումն. կամ երկարատևութիւն:

Երկաւոր. ի. աւ. աց. աք: || երկեակ. կամ ունօղ, և պարունակօղ երկուս: Դարձեալ է անուն երրորդի կենդանակերպի երկ նայնոյ, որ բաղկանայ ՚ի բազմաց աստ ղոց ՚ի յոր մտանէ արեգակն ը̅ յառուկ ըն թացից իւրոց ՚ի քաան և մի երրորդ աւուր մայիսի, և տևէ անդ մինչև ՚ի քսան և մի երրորդ օրն յունիսի:

Երկաքանչիւր. ոյ. ով. ոց. ովք: || իւրաքան չիւրն յերկուց. կամ երկոքեանն: ռամկ. Էրկուսինալ:

Երկբայ. ի. իւ. եց. իւք: || տարակոյս. կմ որ հայէ յերկուս կողմանս իրաց. և ոչ բա ցորոշէ զինքն առմին, կմ առ միւսն. և կամ երկմիտ: Իսկ մերթ ՚ի յագնականնէ նշանակէ զերկբայութիւն. և ըստ այսմ ասի յերկբայս են. կմ յերկբայս անկանիլ. կամ յերկբայս մտանել. և այլն: Լամբրօն:

Երկբայանամ. ացայ. ացիր. նալ: (ընդմիջ.) || երկբայիլ. կմ տարակուսիլ. կմ երկմտիլ:

Երկբայիմ. եցայ. եայ. իլ: (Ձայնակր.) || տարակուսիլ. կմ երկմտիլ. կմ կասկածիլ:

Երկբայութիւն. թեան: || տարակուսութի. կամ անհաստատութիւն ՚ի կարծիս:


Երկբան. ի. իւ. եց. իւք: || երկլեզու. կմ խաբեբայ, և անհաստատ ՚ի բանս. կամ զմի բանն հակառակ միւսոյ բանի խօսօղ. և կամ որ վասն երեսպաշտութե զմի բանն, զոր միում խօսի՝ միւսում այլապէս խօ սի:

երկրաչափական գնի 'ի մէջ ըն... փոխանակ սիկեղ : և այս յայտ է այսու. զի սիկղն Թուոց 18. 16. ասի գոլ՝ քսան դանկ. նաև Ելից 30. 13 : երկրաչափականն ևս ասի գոլ քսան դանկ. որով երևի, թէ առաջին երկրաչափականն առաւել լինի քան սիկեղ, որ է չորս տրամ:

Երկեակ : (Նախադրիւ հոլով.) ‖ երկակի. կամ կրկնակ. կամ կրկին. և կամ երկաւոր. ըս

կի. և փոխադարձութիւն ոչ պահեն զերկրաւ. այլ են 'ի պարունակին առաւ. յընդարձակութիւն նր, և հոլովմն զնովաւ. այլ աստնես 'ի պատահերգ : Ութերորդն է երկրին առաջակից. կամ հատուածաւոր. որ պարունակէ զմերձակայութեան, և ձգէ յառաջնոյ շարժումէն յարևելից յարևմուտս: Իններորդն է առաջին շարժականն, որ պա

77



…րկատեմ. եցի. եա. եւ: (Ներգործ.) || յեր կուս բաժանել. կամ յերկուս հատանել. կամ արօհել:

…րկատեսակ. ի. աւ. այ. օք: || կրկնատեսակ. կամ երկակի. և կամ կրկին կերպիւ: Նոբէլ. զԹ:

…րկատեսակութիւն. Թեան: || կրկնատեսա_ կութիւն. կմ կրկնակերպութիւն: Լամբրօն:

տարակուսիլ. կմ երկմտիլ. կմ կասկածիլ:

Երկբայութիւն. Թեան: || տարակուսութիւն. կամ անհաստատութիւն 'ի կարծիս:

Երկբան. ի. իւ. եց. իւք: || երկլեզու. կմ խաբեբայ, և անհաստատ 'ի բանս. կամ զմի բանն հակառակ միւսոյ բանին խօսօղ. և կամ որ վասն երեսպաշտութե զմի բանն, զոր միում խօսի միւսում այլապէս խօ_

սի:

սի ։ 1. Տիմ. 3. 8։

Երկբայնութիւն. թեան ։ ‖ երկլեզուութիւն. կմ երկդիմութիւն. կմ երկխօսութիւն ։ Լամբրոն։

Երկբարբառ. ի. ով. աց. օք ։ ‖ զերկու բարբառս, կմ զձայնս ունօղ ։ Իսկ մերթ երկբարբառ կոչի վանկն, որ միով հնչմամբ զերկուս ձայնս երկուց ձայնաւորաց տառից իբրև զմի ձայն հնչէ. որպիսի են՝ եօթն. կեանք. և այլն։

Երկբացիկ. ցկի. ով. աց. օք ։ ‖ երկփեղկեան, ք զերկու փեղկս ունօղ, որպիսիք են ոմանք դրունք, կմ պատուհանք ։ ռամկ. Էրքիա խանափ ունօղ ։ և կոչին սոքա երկբացիկ. զի յերկուս կողմանս բացեալ լինին ։ Սոյնպէս և մեծ դուռն, որ 'ի մէջ իւր ունի և զփոքր դուռս, ասի երկբացիկ, զի բացեալ լինի երկպատիկ. և ըստ այսմ է 3. Թագ. 6. 34։ Բայց 'ի մեզ այս առումն երևի փոքր ինչ 'ի սխալմանց կենտագրութեանց գրչաց խանգարեալ. որ ըստ Հելլենաց թարգմանութեան ունի այսպէս ։ Ե՛ Էրէնոցանոյ դրանցն քոյցը մոյշս ։ Երէքագրէ ծի ծի դռան. և ծղխնէ նայո. և Էրէքագրէ դռան Էրէքյոց ։ Ըղխանձա դրօշէալ 'ի նմա. և այլն ։

Երկբերան ։ (Նախդրիւ հոլովի.) ‖ զերկուս բերանս ունօղ ։ և այս մերթ ասի զգեստոց, որք զերկուս ծիւղս, կմ առաջս ունին ։ Իսկ մերթ զերկսայրի սրոյ. կմ զտապարէ, և զնմանեաց ։ Խորէն. Գ. գլ. 28։

Երկգլխի. խւոյ. եավ. եաց. եօք ։ ‖ երկգլխանի. ք ունօղ զերկուս գլուխս ։

Երկգնդեմ. եցայ. եաց. իլ ։ (ձայնակ.) ‖ երկու գունդ. կմ խումբ լինիլ ։ 3. Թագ. 20. 27։

Երկդիմակ. ի. ու. աց. օք ։ ‖ տե՛ս Երկդիմի ։

Երկդիմի ։ (Նախդր. հոլ.) ‖ զերկուս դէմս ունօղ. որպիսիք են ոմանք ցուցանքաւոր կենդանիք ։ Խորէն. յաշխարհագր ։ Մերթ և նա՝ որ 'ի մէջ երկուց հակառակ անձանց՝ ընդ որում և խօսի, 'ի կողմն նորա խօսի, և ընդ միւսն վատաբանէ ։ ռամկ. Էրքիա Էրեօէն ։ Իսկ մերթ երկատեսակ. կմ կրկնակի. կմ կրկին ։ Նար. իա. Խոր. Յ. գ. 36. Սոյնպէս մինչ ասի՝ ձորձ երկդիմի, իմանի զգեստն 'ի յերկուց տեսակաց նիւթոց գործեցեալ, ք 'ի բամբակէ և 'ի բրդոյ. կմ 'ի բրդոյ և 'ի վշոյ ։ Ղևտ. 19. 19։ Բայց մինչ ասի՝ երկդիմի բան, նշանակէ զերկու ներհական միտս ունօղ. կմ կրկնակի նշանակօղ ։

Երկդրամեան. մենի. իւ. ից. իւք ։ ‖ է անուն դրամոյ, որ ըստ ծանրութեան էր երկու տրամ, ո՛չ և ձայնն իսկ հնչէ ։ Իսկ ըստ արժողութեան՝ եթէ լցէր արծաթեայ, էր խո՛. սաակ ։ Մատ. 17. 23։ Բայց Ելից. 30. 13։ և Ղևտ. 27. 3։ և Յես. 7. 21. և յայլ տեղիս, քառա երկդրամեան դնի 'ի մեզ ըստ Հելլ. փոխանակ սիկղ ։ և այս յայտ է այսու. զի սիկղն Թուոց. 18. 16. ասի դող՝ քսան դանկ. իսկ Ելից. 30. 13։ երկդրամեանն և ասի դող քսան դանկ. որով երևի, թէ առաջն երկդրամեանն առեալ լինի փոխ սիկղ, որ է չորս տրամ։

Երկեակ ։ (Նախդրիւ հոլով.) ‖ երկակի. կմ կրկնակ. կամ կրկին. և կմ երկաւոր, ք պարունակօղ յինքեան զերկուս ։

Երկեամ ։ (Նախդր. հոլ.) ‖ երկամ, ք երկու ամ. և ըստ այսմ ասի՝ կալ տարեք զերկեամ մի. ք զերկուս ամս ։ Եւ կմ այն՝ որ ունի զանազանութիւն երկուց ամաց. և ըստ այսմ ասի՝ յետ երկեամ ժամանակի. ք յետ ժամանակի երկուց ամաց ։ 2. Մակ. 10. 3։

Երկեղ ։ ‖ տե՛ս զԵրկիւղ. Առակ. 29. 16։

Երկեղուկ ։ (Նախդրիւ հոլովի.) ‖ երկիւղ. կմ ահ, և կմ սոսկումն ։ Իսկ մինչ ասի երկեղուկս արկանել, իմանի երկեցուցանել ։

Երկեղոտ ։ (Նախդր. հոլ.) ‖ երկիւղալի. կմ զարհուրելի. կմ սոսկալի ։ 'ի ճառս հայց. Ը։

Երկեմեան. մենի. իւ. ից. իւք ։ ‖ երկամենի. ք նա, որ է երկուց ամաց ։ Մատ. 2. 16։

Երկերիւր. ոյ. ով. ոց. ովք ։ կմ ի. իւ. ից. օք ։ ‖ երկու հարիւր ։ զի եղանէ 'ի Երէոր բառէս, որ է հարիւր ։ Թուոց. 3. 46։

Երկեցուցանեմ. եցուցի. ցի. ել ։ (անցող.) ‖ ահացուցանել. կմ զարհուրեցուցանել ։ ռամկ. վախցնել ։ Նաւում. 2. 11։

Երկեւան. ի. ով. աց. օք ։ ‖ երկբայելի. կմ կասկածական ։ և մերթ երկբայութիւն. կմ կասկած ։ Մերթ և արատ. կմ բիծ ։

Երկեւանութիւն. թեան ։ ‖ երկբայութիւն. կմ կասկածանք, կմ երկիւղ, և կմ զանգիտութիւն ։ Նար. ժա. Իսկ 'ի Նար. ղդ. ուր ասի, երկեւանութիւն ինչ վարկանիցի, իմանի երկուանալի. կմ կասկածելի ինչ. և կմ խարդախութիւն և կեղծումն ինչ ։ Մերթ և արատաւորութիւն, կմ բծաւորութիւն ։

Երկթևեան ։ (Նախդր. հոլ.) ‖ զերկու թևս ունօղ, որպիսիք են թռչունք ։ Նարեկ. զը։ Եւ մերթ նմանութիւն ասի և զայլոց իրաց։

Երկին. երկնի. կմ երկինք. կնից. իւք ։ ‖ այն համատարած միւսն օդի, որ 'ի կամարէն շուրջ սկսեալ՝ եզերէ մինչև 'ի հորիզոն երկինն ։ Եւ է մարմին բաղկացեալ 'ի նիւթոյ և 'ի տեսակէ. բայց անապական. և թափանցիկ ։ և ունի զանչափ մեծութիւն, մինչ զի բոլոր երկրագունդ համեմատեալ ընդ նմա, իբրև կէտ մի է ։ Սա ըստ բազմաց փիլիսոփայից՝ բաժանի 'ի տասն պարունակս, կմ կամարս. որք երկինք անուանին. զորս տե՛ս 'ի հանգիտակաց պատկերդ ։ Եօթն երկինք առաջինք են եօթանց մոլորակաց. որք ըստ յառաջ շարժմանց ձըգին յարևմտից յարևելս. իսկ 'ի շարժմանէ առաջնոյ շարժունի [illegible] ամէնր բերեն յարևելից յարևմուտս ։ և սակայն սոցա հինգերն. ք պարունակն երևակի, լուսնթագի, հրատի, արեգական, և լուսնի՝ պարունակեն զերկիր. և պատեն զնովաւ ։ Իսկ պարունակն արուսեկի. և փայլածուի՝ ոչ պատեն զերկրաւ. այլ են 'ի պարունակն արևու յենգարձակութեան նո, և հոլովին զնովաւ. որպէս տեսանես 'ի պատկերդ ։ Ութերորդն է երկինն աստղալից. կմ հաստատութիւն. որ պարունակէ զվերոյասացեալսն. և ձգէ յառաջնոյ շարժունէն յարևելից յարևմուտս ։ Իններորդն է առաջին շարժունն, որ պա

րութեամբ զամենեսեան, և շարժմամբ իւրով շարժէ զնա, որ 'ի ծոց իւր, և ձգի յարևելից յարևմուտս: Եւ սորա առաջին մասն կոչի ապակեղէն երկին, զոր ոմանք զանազանեն 'ի նմանէ, վասն և զկամարան թուեն ժդ: Իսկ տասներորդն է հրեղէն երկինն, որ պարունակէ զամ երկինս, որք շարժին. և ինքն է անշարժ քառակուսի խորանարդ. և է աթոռ այ, և բնակարան հրեշտակաց, և ամ սրբց երանելեաց: Եւ սա այնչափ մեծ է, մինչ զի բովանդակ ծաւալ երկնից հանդերձ է իբրու կէտ մի համեմատ ընդ նմ. ուստի և տը գիրք յիրաւի կոչեն զնա երկինք երկնից: Ծնն. 1.1: Սաղ. 148.4: Դրախտ երկինք կոչի և վերին մասն օդոյ. ըստ այնմ զան. 3.80. օրհնեցէք թռչունք երկնից:

Երկիր. կրկ. ոչ. աց. օք: ‖ Է գունտն հողոյ ջրովք հանդերձ, որ է 'ի միջին կէտն ա՛ի, և համեմատեալ մեծութե երկնից՝ է իբրև կէտ մի անբաժանելի: Արդ՝ բաժանի եր կիրս նախ 'ի ծով և 'ի ցամաք: Երկր՝ 'ի հինգ գօտիս, կմ գաւառս. որոց առաջինն կոչի այրեցած՝ վն յանձախելոյ անդ տապոյ արեւուն. և սկսանի յարևադարձէ խեցգետնին, և վերջանայ յարևադարձ այծեղջեր. և անդ առ հասարակած գօտեւոյն՝ ունին և գիշերն հաւասար է 'ի բովանդակ տարին: Երկրդն և երրրդն կոչին բարեխառն, և են յարմարք բնակութե. և կան 'ի մէջ երկուց արևադարձից, և ցրտային գօտեաց: Չորրորդն և հինգերրդն կոչին ցրտային գօտիք՝ վն յանձախելոյ անդ սաստիկ ցրտոյ. և կմ բևեռային շրջանակք՝ յաղագս հուպ լինելոյ բևեռաց: Եւ 'ի գօտեաց տասի մինչ 'ի բևեռան խաւար և մութ է շարունակ 'ի ձմեռան, բայց տիւ և լոյս է յամառան: Նաև ծովն բաժանի յովկիանոս, 'ի միջերկրականն, 'ի սեաւ ծովն, 'ի կասպից. 'ի կարմիրն, և այլն: Իսկ ցամաքն, որ և յատկապէս երկիր կոչի, բաժանի նախ 'ի ծանօթ, և յանծանօթ: Ծանօթն. կմ ծանուցեալն է, յորում բնակիմք, և զոր գաւին և տեսին մ՛ք իսկ. իսկ անծանօթ է, զոր դեռ չեն տեսեալ մարդիկ. և անկանի մանաւանդ ընդ բևեռօք՝ կս առաւել ընդ հարաւային բևեռաւն: Իսկ ծանօթն բաժանի 'ի չորս մասունս, այսինքն յասիա, յափրիկէ, յեւրոպա, և յամերիկա: Եւրոպէ անկանի յարևմտեան կողմն ա՛իս, և են 'ի նմ սպանիա, գալլիա, գերմանիա, իտալիա, յունաստան, և այլն: Ասիա կայ յարևելեան կողմն ա՛իս, և են 'ի նմ հայաստան, պարսկաստան, տաճիկք, պարսիկք, հնդիկք, և այլն: Եւ անդ 'ի հնդկաստան 'ի սպառնաւած եղեր ա՛իս կղզիք բազումք և մեծամեծք: Ափրիկէ կայ ընդ հարաւ կողմն ա՛իս. և են 'ի նմ եգիպտոս, եթով պիա. թունիզա. և այլն: Ամերիկա է 'ի ներքին կիսագունտն մեր, և պատի յամեն նուաստ ահագին ծովովն ովկիանոսի: Զայս ամ անկանի ցուցանեն հանգիտակաց պատկերք: Յորում խորին գեհեն միջին է ծիրն հաստատեալ: ողջ խաւար գեհեն խոստ

րեալ կիսով չափ ը հիւսիս, և կիսով չափ ը հարաւ, զշաւիղս արեգական և մոլորակաց ցուցանէ, որ և ծիր զոդիակոսի անուանի: Իսկ շուրջանակի գիծն խայտ՝ զչափս տասն հաւասար անցանէ յանդիմանս: այլ վանդակաձև գիծքն բարակք ցուցանեն զաստիճանս երկայն յծագաց 'ի վր երկրի: յորոց որք ձգին 'ի բևեռաց 'ի բևեռ, կոչին աստիճանք երկայնութե. և որք յարևելից յարևմուտս՝ աստիճանք լայնութե: Դրախտ բառս երկիր, նշանակէ զհողն: Ծնն. 3.19: և մերթ զցամաքն. Ծննդ. 1. 10: Գործ. 27. 24: և երբեմն զբնակիչս նորա, կմ զՏն մեր թագաւորութե: Սաղմ. 18. 5: Իսկ մերթ առեալ լինի փոխանակ մարմնոյ երկրի: 1. Թագ. 9. 2: և 27. 8: ըստ այնմ է և այն, որ ասի Սաղմ. 65. 4. ամ երկիր երկիր պագցեն քեզ: Արդ՝ բառս այս՝ ըստ որում նշանակէ զգունտն հողոյ՝ յոյժ բարւոք առնու զառաւել, զի ասի երկիր. իբրթէ երկու-իր. զի պարունակէ 'ի նմա հող և ջուր: և կմ ասի երկիր. իբրթէ եռ իր. ըստ զառաւելութե զերեքանգամ կրօղ, որում յոյժ յարմարի:

Երկիր: (միջյ գաւառական.) ‖ Երկրորդ. կմ երկրորդաբար: ըստ այսմ է և երիրն, չորիրն, և այլն, որով քննիկի երրորդն, և չորրորդն:

Երկիրպագանեմ. պագի. պագ. եր: (նեբրդ.) ‖ 'ի վր երեսաց անկեալ՝ համբուրել զերկիրն առաջի ուրուք 'ի պատիւ և 'ի յարգութե նր. կմ 'ի պատիւ ուրուք խոնարհեցուցանել զգլուխն մինչև յերկիր: Եւ այսպիսի երկրպագութն՝ մինչ լինի պաշտամբ, միայն այ տրի, և ոչ ստեղծուածոց: Ծնն. 24.26: Մատ. 4.10: Իսկ մինչ լինի՝ ոչ պաշտամբ, այլ առ 'ի պատուելոյ. տրի և մարդկան, ըստ որում են փոխանորդք այ. կմ զպար գև ինչ ընկալեալ 'ի նմանէ. և այլն: Ծնն. 22.7: 3. Թագ. 1.16: Իսկ եթէ արիցի կռոց, է գործ կռապաշտութե, և անօրէնութե մեծ: Ելից. 32.8: 3. Թագ. 16.31: Եւ բայս այս՝ եր բեմն այլազգ 'ի գործ ածի. զի պագանելն նախադրի երկրեն այսպէս. պագանեմ երկիր. պագի երկիր: Ելից. 34.14: 1. Թագ. 1.28:

Երկիցս: (միջյ քանակ.) ‖ երկու անգամ: Յովբ. 13. 10:

Երկիւղ. ի. իւ. ից. իւք: ‖ ահ. կմ զարհուրանք. կմ տագնապ. ռամկ. Վախ: Առակ. 1. 7: Եւ մինչ ասի՝ զերկիւղն հարկանել, խմա նի երկնչել. կմ զարհուրել: 'ի Ղուկ. ե:


Երկիւղագին: (նախդրիւ հոլովի.) ‖ ահագին. կմ ահեղ. կմ սաստիկ երկիւղալի: Եւ մերթ սաստիկ երկնչօղ: Նաւէն. ղէ:

Երկիւղալից: (նախդրիւ հոլովի.) ‖ լցեալ ահիւ և երկիւղիւ. կմ երկիւղագին:

Երկիւղախառն: (նախդրիւ հոլովի.) ‖ խառն ընդ երկիւղի. կմ 'ի միասին ընդ երկիւղի:

Երկիւղած. ի. իւ. կմ ու. աց. օք: ‖ Նա՝ որ ունի զերկիւղն այ 'ի սրտի, կմ որ երկնչի յայ, որ է յատուկ բարեպաշտից: Սաղմ. 33. 8:

Երկիւղածութի. թե: ‖ ունելն զերկիւղն այ 'ի սրտի. կմ երկիւղախառն պատկառանք, զոր ունին բարեպաշտքն առ այ: Եւ մերթ բարեպաշտութի. կմ այ պաշտութի:




կաս ձևով:

ամեն գնդերաս [illegible] [illegible] իւր՝ [illegible] [illegible], [illegible] երկնային, [illegible] [illegible]: [illegible] [illegible] և [illegible]. կի՛ [illegible]. որ յերկնաս [illegible] [illegible] [illegible] 'ի յերկնաս ձևով, [illegible] երկնային: [illegible] [illegible] գունդէ: Իսկ [illegible] երկնային [illegible] յեր-

[illegible] ուղղանկիւնաւոր [illegible]. կի՛ եր- կնային գունդը: Նմին:

Երկնանկերաց. [illegible]. [illegible]. [illegible]. [illegible]: || [illegible] կերող. կի՛ Է երկնային կենդանագոտիով: ԱՀզոն.

Երկնանկերոցայ. [illegible]. [illegible]. [illegible]. [illegible]: || Երկնա- կերայ. կի՛ Ը երկնային կենդանագոտիով



[illegible]
պէտս, Թունիքը․ և այլն ։ Ամերիկան է ՚ի ներքին կիսագունտն մեր, և պատի յամենուստ ահագին ծովուն ովկիանոսին ։ Զայս ամ ակներև ցուցանէ հանգիտակաց պատկերդ ։ Յորում խայս գիծն միջին է ծիրն հասարակած ։ աղեղն․ և խայս գիծն խաւ

[illegible] ող երկիւղի ։
[illegible] օք ։ Նա՝ որ ունի զերկիւղն այ ՚ի սրտի, կմ որ երկնչի յայ, որ է յատուկ բարեպաշտից ։ Սաղմ․ 33․ 8։
Երկիւղածութիւն․ Թէ ։ Ունիլն զերկիւղն այ ՚ի սրտի․ կմ երկիւղախառն պատկառանք, զոր ունին բարեպաշտքն առ այ ։ Եւ մերթ բարեպաշտութիւն․ կմ ածպաշտութիւն ։

Երկիր

Երկիւղորէն ։ (մակբայ որակական ։) ‖ Երկիւղածութեամբ ։ կմ երկնչելով ։

Երկլեզու ։ զուի ։ աւ ։ աց ։ օք ։ ‖ երկխօս ։ կմ նենգաւոր ։ կամ խաբեբայ ։ կմ խարդախ 'ի բանս ։ և կամ նենգութեամբ խօսօղ ընդ իւրաքանչիւրոց ըստ հաճութեն նոցին թէև ներհակեցին խօսեցեալքն ։ և կամ որ նենգութեամբ ընդ միում զայս ինչ, և ընդ միւսոյն զայլ ինչ խօսի ։ Առակ. 8. 13 ։

Երկլուսնեայ ։ (նախդիրէ հոլովի ։) ‖ զանազանութեն երկուց լրմանց լուսնոյ ասօղ ։ և կամ անօղ յերկուս լրմանս լուսնոյ ։ ուստի մինչ ասէ, գաղղիարէն առ գետովք երկլուսնեայ ասացու ։ իմանի զերկուս ամիսս, որք են ասացեալ լրման երկուց լուսնոց ։ Խորէն. ա. գլ. 5 ։

Երկխօս ։ ի ։ իւ ։ ից ։ իւք ։ ‖ Նա՛ որ զբանս իւր երկմտելի առնէ նենգութեամբ ։ այնպէս՝ զի զայն, զոր խօսի, այլապէս հասկանալացէ լսօղն ։ և կամ որ երկայրաբանութեամբ, կամ կեղծելով և նենգութեամբ խօսի ։ Առակ. 11. 13 ։

Երկծով ։ ու ։ ու ։ ուց ։ ուք ։ ‖ 'ի մէջ ծովու եղեալ առաջուստ աւազին ծածկեցեալ մակերևոյթ, որ ըստ զեղուն երկայնացեալ է ածելով յաջմէ և յահեկէ զխորոց ջրոց, կոչի երկծով ։ 'ի յոր մինչ երկի նաւն՝ բակայն բեկանի, և խորտակի ։ Գործ. 27. 41 ։

Երկհարսանեայ ։ նեայ ։ նեաւ ։ նեաց ։ նեօք ։ ‖ այն՝ որ յետ մեռանելոյ առաջին կնոջն, ամուսնացեալ է վերստին առնելով զայլ կին, այսինքն երկհարսանեայ ։

Երկկերպարան ։ (նախդիրէ հոլովի ։) ‖ երկատեսակ ։ կմ երկակերպ ։ կմ կրկնաձև ։ և կմ զերկուս ձևս՝ և զկերպարանս ունօղ ։ Նարէկ. ղէ ։

Երկկին ։ կնոջ ։ կանամբք ։ անց ։ ամբք ։ ‖ այն՝ որ ունի զերկու կին ։ կամ նա որ ընդ երկուց կանանց է ամուսնացեալ ։

Երկհազարեակ ։ եկի ։ աւ ։ աց ։ օք ։ ‖ է զանազան անուն թուոյ, որ նշանակէ զերկու հազարն զատաբար ։ և կամ զերկու հազարաւորսն ։

Երկձայն ։ ի ։ իւ ։ ից ։ իւք ։ ‖ տե՛ս զԵրկբայր բառն ։

Երկձի ։ ոյ ։ ով ։ ոց ։ ովք ։ ‖ ունօղ զերկուս ձիս ։ կմ կառք լծեալ երկորեակ ձիովք ։ Ըստ որում Եսայ. 21. 9. ուր ասի՝ հեծեալ երկձի ։ իմանի՝ հեծեալ 'ի յերկձի կառս ։

Երկճիղ ։ ճղի ։ իւ ։ ից ։ իւք ։ ‖ ունօղ զերկուս ճիւղս ։ որպիսիք են չորթաւու փայտք ։ և այլք նմանք ։ Յեզեկ. 8. 29.

Երկճիւղ ։ ճղի ։ իւ ։ ից ։ իւք ։ ‖ տե՛ս 'ի ներքոյ զԵրկճղին ։

Երկճղի ։ ղայ ։ եաւ ։ եաց ։ օք ։ ‖ ունօղ զերկուս ճիւղս ։ Ըստ որում և բանին փայտի, որ ունի զերկուս ճիւղս 'ի ծայրն իւր՝ իբրև զերկուս թևս, ասի երկճղի, ... ։ Ըստ այսմ և գերանն ։ կմ ծառն ։ որ յերկուս ասաղս բաժանի իբրև 'ի յերկուս ճիւղս, կոչի երկճղի ։ Խորէն. ... ։ Իսկ երբեմն երկճղի ասի՝ յերկուս ճիւղս բաժանեալ, և պատառեցեալ իրն ։ զի իբրև 'ի յերկուս ճիւղս անջատի ։

Երկմիտ ։ մտի ։ աւ ։ աց ։ օք ։ ‖ երկբայ ։ կամ անհաստատ ։ և կամ տարակոյս 'ի առնելն զայս ինչ, կամ զայն ինչ ։ և կմ որ է կասկածոտ, և ոչ գիտէ միամտութեամբ ։ Եբր. 10. 38 ։

Երկմտեմ ։ եցի ։ եա ։ ել ։ (ներգործ ։) ‖ երկմտեցուցանել ։ կմ յերկբայութեն առնել զոք ։ զի բայս այս է զօրութեամբ անցողական ։ Իսկ երբեմն վարի սա իբրև չէզոքական, և յայնժամ նշանակէ՝ երկմտել ։ ազդ երկէ, Մատթ. 14. 31 ։ Հռով. 4. 20 ։ Յակոբ. 1. 6 ։

Երկմտեցուցանեմ ։ ցուցի ։ ցո ։ ել ։ (անցող ։) ‖ երկբայեցուցանել ։ կմ երկմիտ առնել ։

Երկմտիմ ։ տեցայ ։ եաց ։ իլ ։ (ձայնակր ։) ‖ երկբայել ։ կամ տարակուսել ։ կմ երկուանալ ։ Առ Տիմ. 2. 4 ։ Մարկ. 11. 13 ։

Երկն ։ երկան ։ կամբ ։ կունք ։ անց ։ ամբք ։ ‖ ցաւն՝ զոր կրէ կինն 'ի ծնանելն ։ Յոբ. 2. 9 ։ և Սաղմ. 47. 8 ։ և Ա. Թեսաղ. 5. 3 ։ Եւ երբեմն գնի փոխանակ ցաւոց, և աշխատութեանց, և կմ մեծագոյն երկիւղի ։ ըստ այնմ երկունք կալան զնա ։ զ ցաւք, և երկիւղք ։ Ելից. 15. 14 ։

Երկնաբերձ ։ (նախդիրէ հոլովի ։) ‖ մինչև յերկինս բարձրացեալ ։ կմ երկնաչափ ։ կմ երկնաձեմ ։ կմ երկնային ։ կմ յոյժ բարձրաբերձ ։ կամ վերամբարձեալ ։ Նարէկ. ղէ ։

Երկնաբնակ ։ ի ։ աւ ։ աց ։ օք ։ ‖ յերկինս բնակօղ ։ կմ վերնաբնակ ։ կմ քաղաքացի երկնից ։ Նարէկ. 'ի գովեստ առաքելոց ։

Երկնագնաց ։ ի ։ իւ ։ ից ։ իւք ։ ‖ 'ի յերկինս գնացօղ ։ կմ յերկինս չուօղ, և ձեմօղ ։

Երկնագոյն ։ գունի ։ իւ ։ ից ։ իւք ։ ‖ կապուտակ ։ կմ կապուտագոյն ։ Եւ մերթ նշանակէ զկապոյտ զգեստն ։ Եսայ. 3. 23 ։ և Եզեկ. 16. 10 ։

Երկնագումար ։ ի ։ աւ ։ աց ։ օք ։ ‖ յերկինս գումարեալ ։ կմ որ է երկնային գումար ։ կմ երկնային խումբ ։ Նարէկ. ժը ։

Երկնաթռիչ ։ (նախդիրէ հոլովի ։) ‖ յերկինս սլացօղ ։ կամ 'ի բարձունս թռչօղ ։ Նարէկ. ղէ ։

Երկնաթևեմ ։ եցի ։ եա ։ ել ։ (չէզոք ։) ‖ յերկինս թռչել ։ կմ վերաթևել ։ կամ օդապարել ։

Երկնաժառանգ ։ ի ։ իւ ։ ից ։ իւք ։ ‖ զերկինս ժառանգօղ ։ կմ ժառանգորդ երկնից ։ և կմ այն՝ որ ունի զերկինս իբրև ժառանգութիւն իւրեան ։ Նարէկ. ղթ ։

Երկնալիր ։ (նախդիրէ հոլովի ։) ‖ երկնալի ։ կմ երկնային իրօք լցեալ ։ կմ յորում լցեալ իրն է երկնային ։ Նարէկ. ղն ։

Երկնախումբ ։ խմբի ։ իւ ։ ից ։ իւք ։ ‖ այն՝ որ է երկնային խումբ ։ կամ երկնային և անմարմին զօրութեամբ խմբեցեալ ժողով ։ կմ երկնային գումար ։ Լամբրօն ։

Երկնակեաց ։ կեցի ։ աւ ։ աց ։ օք ։ ‖ յերկինս կեցօղ ։ կմ ըստ երկնայնոց կենցաղավարօղ ։ Ագաթ.

Երկնակենցաղ ։ ի ։ իւ ։ ից ։ իւք ։ ‖ երկնակեաց ։ կմ ըստ երկնայնոց կենցաղավարօղ

'յերկիր · կամ այն՝ որոյ կենցաղավարու-
թիւն յերկինս է ։ Նորէն․ 'ի գովէլիքս տօնից ։

Երկնակերպ · ի · իւ · ից · իւք ։ ‖ երկնանման · կմ երկնատեսակ · կմ երկնաձև · կմ երկնագոյն ։ Նորէն․ զՁ ։

Երկնակրօն · ի · իւ · ից · իւք ։ ‖ երկնակեն- ցաղ · կամ զերկնային և զվսեմ վարս ու- նօղ · կմ ըստ երկնայնոցն կենցաղավարօղ ։ Նորէն․ ծՁ ։

Երկնահանդէտ · գիտի · աւ · աց · օք ։ ‖ երկ- նից նման · կամ հաւասար երկնից · կամ երկնահանգոյն ։

Երկնահանգոյն · գունի · իւ · ից · իւք ։ ‖ նման երկնից · կմ երկնանման · կամ երկնաձև ։ Նորէն․ զՁ ։

Երկնահանդէս · գիսի · իւ · ից · իւք ։ ‖ երկնա կրօն վարուք հանդիսացեալ · կմ երկնակեն ցաղ, կմ զհանդէս երկնայնոց յինքն բե- րօղ · կմ վանականն ։ 'Ի շարականոջ ։

Երկնահանճար · ի · իւ · ից · իւք ։ ‖ զերկնային հանճար ունօղ · կմ երկնային հանճարով, և իմաստութեան լցեալ ։ Իսկ մերթ նշանա կէ զայն, որ է երկնային, և ածային հան ճար ։ Նորէն․ 'ի գովէլիքս նորին ։

Երկնահար · հարի · հարաւ · աց · օք ։ ‖ յերկ նից հարեալ · և՛ այս առասպելաբար ասի զոմանց չարարածոց հեթանոսաց յերկ- նուստ հարուածեցելոց · որպիսի էր եւ Կորղագոնոս եղբայր մակեդոնացւոց երկրորդ թագ · զորմէ ասէին մոլորեալ հեթա- նոսք, թէ կայծակնահար եղեալ 'ի վեր- նուստ 'ի մէջն բարձաւ ։ Կիւրղի եղանա- կին․ ժԶ ։

Երկնահասան · ի · աւ · աց · օք ։ ‖ յերկնից հա սեցեալ · կմ երկնածորան ։

Երկնաձև · (Նախդրիւ հոլովի ·) ‖ երկնա- նման · կմ երկնակերպ · կմ ըստ ձևոյ երկ նից զկամարակապ դիրս, և զձևս ունօղ ։ Նորէն․ զՁ ։

Երկնաձիր · (Նախդրիւ հոլովի ·) ‖ յերկնից պարգևեցեալ · կմ յերկնուստ շնորհեցեալ ։ Նորէն․ զՁ ։

Երկնաճեմ · ի · իւ · ից · իւք ։ ‖ երկնագնաց · կամ յերկինս ճեմօղ · կմ երկնաշու · և կմ յերկինս ածօղ ։ Նորէն․ ըՁ ։ Իսկ մերթ նը շանակէ զերկնայինն · կմ զերկնաւորն · և ըստ այսմ՝ ասի · երկնաճեմ առաքեալ ։ Ջի մանուկս, ճչչ երբեմն 'ի գործածի 'ի նախնեաց փոխանակ ակին · կամ այլն · կմ Եղեն · և կամ առ մանկանցս · զի փոխա նակ ասելոյ՝ լուսեղէն բնակարան · ասի՝ լուսաճեմ բնակարան · և այլն ։ Ըստ այսմ և ս ասի՝ աստարկղաճեմ դրութիւն, փոխա նակ ասելոյ աստարկղական դրութիւն ։

Երկնային · նայնոյ · ով · ոց · ովք ։ ‖ երկնե- ղէն · կմ երկնաւոր ։ Եւ մերթ նշանակէ զվսեմականն · կամ զբարձրագոյնն · և կմ զգերագոյնն ։

Երկնանման · (Նախդրիւ հոլովի ·) ‖ երկ- նահանդէտ · կամ նման երկնից · կմ երկ նակերպ ։

Երկնաշնորհ · (Նախդրիւ հոլովի ·) ‖ զերկ- նային, և զածային շնորհս ունօղ · կամ երկնային պարգևօք զարդարեցեալ ։ Իսկ մերթ նշանակէ՝ յերկնից շնորհեցեալն · կամ երկնաձիրն ։ Նորէն․ զՁ ։

Երկնաշտապ · (Նախդրիւ հոլովի ·) ‖ յերկրէ մինչև յերկինս հասեալ · կամ ունօղ զչափ բարձրութե երկնից · որպիսի էր սանդուղքն յակոբայ · որոյ մի ծայրն յերկրի էր, և միւսն յերկինս հասանէր ։

Երկնաշու · (Նախդրիւ հոլովի ·) ‖ երկնա- գնաց · կամ երկնաթռիչ · որ յերկինս գը- նացօղ, և վերաթեւօղ ։ Եւ մինչ ասի · երկ նաշու Հանապարհ · կամ երկնաշու սան- դուղք, իմանի յերկինս չուեցուցանօղ · կամ տանօղ ։ Նորէն․ ղե ։

Երկնապարգև · ի · աւ · աց · օք ։ ‖ երկնա- շնորհ · կամ երկնաձիր · կմ յերկնից պար- գևեցեալ ։

Երկնառատ ։ (Նախդրիւ հոլովի ·) ‖ երկնա լիր · կամ երկնաճոխ · կմ յերկնուստ յոր- դեալ · և առատացեալ · և ըստ այսմ ասի 'ի շարականոջ · երկնառատ ճառագայթիւք ։

Երկնառաք · (Նախդրիւ հոլովի ։) ‖ յերկ- նուստ առաքեցեալ · կմ յերկնից յղեցեալ ։

Երկնասահան · ի · աւ · աց · օք ։ ‖ յերկնուստ սահեալ, և հոսեալ · կմ որ է երկնային սա հան · որ երկնային հոսումն ։

Երկնասլեղծ · ի · իւ ։ ‖ զերկինս ստեղծօղ · կմ արարիչ երկնից ։ Նորէն․ ձը ։

Երկնատեղաց ։ (Նախդրիւ հոլովի ·) ‖ յեր կնից տեղացեալ · կմ յերկնից անձրևեալ · և իջեալ ։ Նորէն․ հա ։

Երկնատեսակ · ի · աւ · աց · օք ։ ‖ երկնա- կերպ · կամ երկնանման · կամ երկնային ։ Նորէն․ զՁ ։

Երկնաւոր · ի · աւ · աց · օք ։ ‖ երկնային · կմ որ յերկինս լինի · կմ որ յերկինս է · և կմ որ յերկնից գայ · կամ այն ամ՝ որ պատ- կանի երկնից ։ Մերթ ևս նշանակէ զվսեմն, և զգերազանցն ։

Երկնաքաղաքացի · ւոյ · եաւ · եաց · եօք ։ ‖ քաղաքացի երկնից · կմ երկնակենցաղ · կմ զերկնային վարս ունօղ ։

Երկնաքատակ · ի · աւ · աց · օք ։ ‖ երկնահան- դէտ · կմ նման երկնից, կմ երկնայնոց ։

Երկնեմ · երկնեցի · եա · եալ ։ (Ներգործ ·) ‖ ցաւօք ծնանիլ · կամ կրել զցաւ 'ի ծնա- նիլն · կամ ցաւով և աշխատութեամբ յառաջ ածել զինչ ։ Երգ․ 8․ 5 ։ Եսայ․ 23․ 4 ։ և 26․ 17 ։ Գաղատ․ 4․ 19 ։

Երկնընթաց · ի · իւ · ից · իւք ։ ‖ յերկինս գը- նացօղ · կմ երկնաշու · կմ երկնաճեմ ։ Նո րէն․ 'ի գովէլիքս առաքելոց ։

Երկնուղէշ · ղէշի · իւ · ից · իւք ։ ‖ զերկնա յերկն ուղեշ ունօղ · որ ունօղ զոտս և ըղ ձիւք կարի բարձրացեալս, և խորհ յեր կինս ժամանեալս · ըստ այսմ Նորէն․ 'ի գով նորին ։ Եւ ծառ երկնուղէշ՝ անթարշամ խնծորին ։

Երկնուստ ։ ‖ յերկնից, կմ 'ի վերուստ · բայց սա 'ի գործածի նախդրիւ, այսպէս՝ 'յերկ նուստ ։

Երկնչիմ. երկեայ. կեր. չել: (ձայնակ.) || զանգիտել. կմ զարհուրել. և կմ յերկիւղի լինել: ռամկ. վախնալ: Մարգ. 17. 6:

Երկնօրէն. (մակբայ որակական.) || երկնանման. կմ երկնանկերպ. կմ երկնատեսակ: Նարեկ. ղզ:

Երկոտասան. ից. իւք: || է թիւ բացարձակ, որով նշանակի տասն և երկու. կմ երեքս չորս. որ է թիւ խորհրդաւոր. ոսկ և յիշեացի 'ի բառն՝ Երրորդութիւն:

Երկոտասանամեայ. կմ երկոտասանեմեայ: (Նախդրիւ հոլովի.) || այն՝ որ է երկոտասան ամաց. կամ որ ունի զաւտողութիւն երկոտասան տարւոյ: ռամկ. տասնըերկու տարուան:

Երկորական. ի. աւ. աց. օք: || երկոյական. կմ երկրորդական. ք, այն՝ որ առ երկուն վերաբերի:

Երկորեակ. եկի. աւ. աց. օք: || նշանակէ ըզզոյգ գիծն, որ դնիլ սովոր է 'ի վր բառից առ'ի բառնալ զձայնաւոր տառս. որգոն. ք'' հ'ն''յ: Մերթ ևս այլ ո և իցէ զոյգ իր՝ կոչի երկորեակ:

Երկու. կամ երկուք. երկուց. երկոքումբք: || է բացարձակ անուն թուոյ. որով նշանակի կէսն չորից: Եւ գիտելի է, զի սովոր գործիականն, որ փոխառեցեալ է 'ի գործիականէ երկոքեան բառին. մերթ ոչ 'ի գործածի այն վն սորա. այլ դնի փոխանակ գործիականի սորա, երկուք. և ըստ այսմ է Եսայ. 6. 2. ուր ասի՝ երկուքն ծածկէին. որով իմանի՝ երկոքումբքն ծածկէին: Այսպէս է և 1. Տիմ. 5. 19: և Եբր. 10. 28:

Երկուական. ի. աւ. աց. օք: || տես Երկորական:

Երկուանամ, ացայ. ցեր. անալ: (ընդմիջ.) || երկմտել. կամ երկբայել. կամ երկմտութբ կասկածել: Մատթ. 28. 17:

Երկուանք. անաց. օք: (աներզական.) || երկբայութիւնք. կամ տարակուսանք: Ոսկէ. 1. հոգ. լէ:

Երկուացուցանեմ. ցուցի. ցո. անել: (անցող.) || երկբայեցուցանել. կամ երկմտեցուցանել:

Երկուորական. ի. աւ. աց. օք: || երկոյական. կմ երկական. կմ երկաւորական: Իսկ մինչ ասի երկուորական անուն, կմ թիւ, իմանի այն, որ ոչ եզական է, և ոչ յոգնական. այլ միայն զերկուսն նշանակէ: Եւ այսպիսի անուն, կմ թիւ՝ 'ի յոյն և 'ի յարաբացի լեզուօքն գոյ, և ոչ 'ի մեզ:

Երկուորեակ. եկի. աւ. աց. օք: || զոյգ ծնեալ 'ի մօրէ. ռամկ. էկիզ: Ծնն. 11. 16. և 20:

Երկուորիք. րեաց. եօք: (աներզական.) || Ձմուանք մարդոյ. կմ այլոյ կենդանւոյ. որ և ասի ամորձիք: 2. Օրին. 25. 11: Իսկ մերթ նշանակէ զզոյգ զաւակս ծնանօղ. կմ ըզզոյգ ծնեալ զաւակս ունօղ. և ըստ այսմ ասի՝ Երգ. 4. 2. և 6. 5. Ամենեքեան երկուորիք են, և անորդի ոչ գոյ 'ի նս: ռամկ. էկիզ ծնանօղ: Մերթ ևս նշանակէ զզոյգ ծնեալսն 'ի մօրէ: ռամկ. էկիզ: Երգ. 7. 3: Իսկ մերթ նշանակէ զզոյգն եղանց՝ կմ ձիոց. կմ թռչնոց. և այլոց նմանեաց: Նարեկ. ծզ:

Երկուքեան. կամ քին. կոյուն. կմ ցուանց. քումբ. կամ քումբք: (աներզական.) || է անձնեքական անուն թուոց, որ վարի զոյականաւ. և նշանակէ զերկուսն իւրաքանչիւրաբար. կմ զիւրաքանչիւրն յերկուց: Ելից. 22. 11:

Երկչոտ. ի. իւ. ից. կամ աց. իւք: || վատասիրտ. կամ երկնչօղ. ք այն՝ որ յո և իցէ թեթև իրս երկնչի: Իմաստ. 17. 10: Եւ մինչ ասի՝ երկչոտ խիղճ միտաց ունօղ՝ իմանի նա՝ որ 'ի վս այնց իրաց, որք ոչ են մեղք, երկնչի և կասկածի. և կմ յորժամ թեթև ագունեղք են մեղքն զորս գործեալ է, համարի յոյժ մեծագոյն, և սաստիկ երկնչի:

Երկչոտիմ. եցայ. եայ. իլ: (ձայնակր.) || երկչոտ լինել. կամ երկնչիլ:

Երկչոտութիւն. թեան: || վախկոտութիւն. կմ կրումն երկիւղի:

Երկպառակ. ի. աւ. աց. օք: || երկպառակեալ. կամ երկպառակօղ. ք այն, որ փեռեկտի և հերձանի յայլոց տարաձայնութբ. կամ այն, որ ունելով զտարաձայն միտս անմիաբան է ընդ այլոց: Իսկ մինչ ասի վս երկպառակ կարծեաց, իմանի տարաձայնական. կմ անմիաբանական կարծեաց:

Երկպառակիմ. եցայ. եա. իլ: (ձայնակր.) || փեռեկտիլ. կմ հերձանիլ, և անջատիլ 'ի միմեանց առելութբ. կմ կռուով. և այլովք նմանեօք. և կամ տարաձայնել. կմ հակառակիլ. կամ անմիաբան լինել:

Երկպառակութիւն. թեան: || յերկուս հատծիս պատառումն բաղմաց. կամ տարաձայնութիւն. կամ անմիաբանութիւն, և հակառակութիւն: 1. Մակ. 3. 29: Գաղատ. 5. 20:

Երկպատիկ. պատկի. աւ. աց. օք: || կրկնապատիկ: ռամկ. [illegible]: Յայտ. 18. 6:

Երկպատկութիւն. թեան: || կրկնապատկութիւն. կամ կրկնումն:

Երկպարսպեան. ենի. իւ. ից. իւք: || զերկուս պարիսպս ունօղ. կմ երկոքումբ պարսպօք պարսպեցեալ:

Երկսայրի. ւոյ. եաւ. եաց. եօք: || այն՝ որ յերկուց կողմանց ևս ունի զսայրան, և կտրէ. կմ որ յերկուց կողմանց ևս է սրեալ. որպիսի է երկսայրեան սուրն: Սաղմ. 149. 7: Եբր. 4. 12: Յայտ. 1. 16:

Երկվերարկու. կուի. աւ. աց. օք: || զերկուս վերարկուս ունօղ. կամ կրկնակի ծածկութիւ ծածկեցեալ: Նարեկ. ղզ:

Երկրաբնակ. ի. աւ. աց. օք: || յերկրի բնակօղ. կմ յերկրի զբնակութիւն ունօղ:

Երկրաբուղխ. բղխի. իւ. ից. օք: || յերկրէ բղխեալ. կամ յերկրէ բուսեալ և արտադրեալ:

Երկրաբուսակ. ի. աւ. աց. օք: || յերկրէ բուսեալ. կմ յերկրէ վերընձիւղեալ, և բողբոջեալ:

Երկրագնաց. ի. իւ. ից. իւք: || 'ի վր երկրի գնացօղ, կամ քայլօղ:

Երկրագործ. ի. աւ. աց. օք: || մշակ. կամ հողագործ: ռամկ. չիֆթճի. կամ էքինճի:

1. Մնաց. 27. 26:

Երկրագործեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || գործել զերկիր. կմ մշակել: Լամբրոն:

Երկրագործութիւն. թեան: || գործումն երկրի հերկելով, և սերմանելով. կմ մշակելով:

Երկրագումար. ի. աւ. աց. օք: || յերկրի գումարեալ, և խմբեալ. կմ որ է երկրաւոր գումար: Նարէկ. ղէ:

Երկրագրութիւն. թեան: || գրումն զերկրէ, և զաշխարհէ:

Երկրադիր. դրի. աւ. աց. օք: || երկրաձև. կամ զձիրս երկրի ունող: Իսկ մերթ նը շանակէ զայն, որ յերկրի է եդեալ:

Երկրազննեայ. նէի. իւ. ից. իւք: || երկրածին. կամ որ է ՚ի զարմէ, և յազգէ երկրաւորաց:

Երկրալիր. լրի. իւ. ից. իւք: || զերկիր լցուցանող. որպիսի էր վէմն, զոր ետես դանիէլ: Նարէկ. ՚ի գովէստ խաչին:

Երկրածին. ծնի. աւ. աց. օք: || ՚ի յերկրի ծնեալ. կմ ՚ի յերկրէ և ՚ի հողոյ գոյացեալ և եղեալ: Աղթաւ. 2. 18: և 9. 18:

Երկրածուփ. ծփ. ի. աւ. աց. օք: || զերկիրս ծփանօք հարկանող և ամբոխող. և կամ այն որ է երկրային և կենցաղական ծփանք և վրդովմունք: Նարէկ. ՚ի գովէստ առաքելոց:

Երկրակալ. ի. աւ. աց. օք: || ունող և կառավարող երկրի. կամ աշխարհակալ: Նարէկ. ղզ:

Երկրակեաց. կեցի. աւ. աց. օք: || երկրակենցաղ. կամ յերկրի կեցող. կմ երկրաւոր: Ագաթ:

Երկրակենսուկ: (Նախդրիւ հոլովի.) || երկրաքարշ. ծ. այն՝ որ զերկրաւոր կեանս վարէ. և կամ միշտ ընդ երկիր սողալով կեայ: Եւ այս մերթ ասի զերկրասէր մարդկանց. իսկ մերթ զսողնոց, և զնմանեաց:

Երկրակենցաղ. ի. աւ. աց. օք: || երկրակեաց. կմ յերկրի կեցող և կենցաղավարող. կամ երկրաւոր, և կենցաղական: Նարէկ. հէ:

Երկրակշռութիւն. թեան: || երկրաչափութիւն. կմ կշռումն և չափումն երկրի. կմ սահմանաւորումն երկրի: Նարէկ. ՚ի տաղն խաչին:

Երկրակոխ. ի. իւ. ից. օք: || զերկիր կոխող, կմ զերկիրն կոխելով քայլող: Խորէն. բ. դր. 59: Իսկ մերթ՝ երկրաւոր. և երկրակենցաղ: Նարէկ. ղթ:

Երկրակործան: (Նախդրիւ հոլովի.) || զերկիր կործանող. կմ քանդիչ և ապականիչ երկրի: Նարէկ. ժե:

Երկրահնայ. ի. իւ. ից. իւք: || հնայօղ, և դիւթօղ ՚ի ձեռն երկրի. կամ հողոյ:

Երկրային. այնոյ. ով. ոյ. ովք: || երկրաւոր. կամ երկրական:

Երկրաչափ. ի. իւ. ից. իւք: || մերթ նշանակէ զնա, որ գիտէ զարհեստն, կմ զգիտութիւն երկրաչափութեան: Եւ մերթ զնա, որ չափէ զերկիր: Իսկ մերթ զայն՝ որով չափին երկիր: և ըստ այսմ ասի Զաքար. 2. 1: Եւ ՚ի ձեռին իւրում ունէր չար երկրաչափ:

Երկրաչափութիւն. թեան: || մերթ նշանակէ զչափումն երկրի: Եւ մերթ նշանակէ զարհեստն երկրաչափական:

Երկրապարար. ի. իւ. ից. կմ աց. օք: || զերկիր պարարող. կմ պարարտացուցիչ երկրի:

Երկրապարփակ. ի. աւ. աց. օք: || զերկիր պարփակող. կմ պարունակող, և շրջապատող երկրի: Նարէկ. ղէ: Մերթ և ա յերկրէ պարփակեցեալ:

Երկրասէր. սիրի. աւ. աց. օք: || սիրող զերկիր, և զերկրաւորս. կմ զհեշտութիւն մարմնոյ:

Երկրասնունդ: (Նախդրիւ հոլովի.) || յերկրի սնեալ. կմ երկրակենցաղ. կամ զերկրաւոր սնունդ, և զկենցաղավարութիւն ունող: Նարէկ. ՚ի գովէստ առաքելոց:

Երկրաստեղծ. ի. իւ. ից. իւք: || զերկիր ստեղծող. կմ ՚ի նիւթոյ երկրի ձևակերպող, և կազմող: Նարէկ. հը: Իսկ մերթ նշանակի յերկրաւոր նիւթոյ ձևակերպեցեալն. կամ կազմեցեալն: Նարէկ. ՚ի գովէստ առաքելոց:

Երկրավաստակ. (Նախդրիւ հոլովի.) || վաստակող, և աշխատող ՚ի վերայ երկրի. և կմ աշխատող ՚ի գործելն զերկիր:

Երկրավտարեմ. եցայ. եայ. իլ: (Ձայնակր.) || յերկրէ յերկիր փոփոխել, և վտարել, ծ. թափառական շրջել: 4. Եզր. 5. 8:

Երկրատարած. ի. իւ. ից. իւք: || ՚ի վերայ երկրի տարածեցեալ. կմ աշխարհատարած: Նարէկ. հե:

Երկրաւոր. ի. աւ. աց. օք: || երկրային. կմ երկրական: Իսկ մերթ երկրասէր. կամ երկրակենցաղ:

Երկրաքարշ. (Նախդրիւ հոլովի.) || ծ. երկիր քարշեցեալ. կամ սողնաքարշ. կամ երկրահակ. կմ երկրասէր: կմ դիրկս արկանող երկրաւորաց: Լամբրոն:

Երկրաքարշութիւն. թեան: || ընդ երկիր քարշումն. կմ սողնահակութիւն. կմ երկրաւորութիւն. կմ երկրասիրութիւն. կմ սէր, և յօժարութիւն երկրաւորաց: Նարէկ. ե:

Երկրեղէն. ղինի. աւ. աց. օք: || երկրաւոր. կմ երկրային. կմ հողեղէն. և կմ այն, որ է կազմեցեալ ՚ի նիւթոյ երկրի. կմ ՚ի հողոյ:

Երկրորդ. ի. աւ. աց. օք: || է դասական անուն թուոց. որով նշանակի վերջին դասեալն երկուց: Իսկ մերթ վարի մակբայօրէն. և նշանակէ՝ երկրորդաբար:

Երկրորդեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || կրկնել. կամ կրկին յաւելուլ. կմ վերստին ասել. կմ վերստին առնել զնոյն իրն:

Երկրորդութիւն. թեան: || կրկնումն. կամ կրկնապատկութիւն. կմ երկրորդումն: Նարէկ. հե. և ղդ:

Երկրպագեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || տե՛ս զերկիրպագանել:

Երկրպագու. գուի. աւ. աց. օք: || երկիրպագանող: Յոհ. 4. 23:

Երկրպատեան: (Նախդրիւ հոլովի.) || զերկիր պատող. կմ երկրապատ: Իսկ մերթ նշանակէ զայն, որ է երկրաւոր պատիչ.

կմ

Digitized by Google

կմ որ է հողեղէն պատապարան. որպէս է գերեզմանն, որ ի բրև զվերարկու երկրեղէն պատէ, և պարփակէ զմարմին մեռելոց: Նարեկ. ղՁ:

Երկփեղկեմ. եցի. եա. եալ: (Ներգործ.) || յերկուս փեղկս, կմ ծուէնս բաժանել. կմ յերկուս անջատել. կմ փեռեկտել. և կամ պատառել:

Երկք. երկոց. երկովք. (անեզական.) || վաստակք. կմ ջանք. և աշխատանք: Յօբ. 2.9: Եզեկ. 23.29:

Երկօթիմ. եցայ. եայ. իլ: (Հոյնակր.) || զերկուս աւուրս օթեվանիլ ուրեք. կամ զերկուս աւուրս յամել, և մնալ ուրեք: Ոսկե. 2. հատ. ժզ:

Երկօր. աւուր. ուրբ. աւուրց. աւուրբք: || երկու օր:

Երկօրեայ. րէի. իւ. եց. իւք: || երկուց աւուրց. կամ ունող զժամանակ, և զտևողութիւն երկուց աւուրց: Իսկ Գործ. 28. 13. ուր ասի, երկօրեայք եկաք 'ի պատիոլոս. իմանի՝ յերկրորդում աւուր եկաք:

Երմոս. ի. իւ. եց. իւք: || տես զՀռմոսն: 'Ի Հնոց հարց. Ե:

Երնեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || զցորեանն՝ որ է խառն ընդ յարդի՝ հողմոյն տալով յստակել, և որոշել 'ի յարդէն. որ և ասի հոսել:

Երպր. երուրի. իւ. եց. իւք: || ճանապարհ. կամ ուղի:

Երում. (մակբայ հարցական.) || վն էր. կմ յոյր սակս. կմ ընդէր. կմ վն որոյ:

Երջանիկ. անկի. աւ. աց. օք: || երանելի. կմ երանեալ. կմ բարեբաստ. և կմ լի ամ բարեօք. և ազատ յամ չարեաց, և թշուառութեանց:

Երջանկազարմեան: (Նախադրիւ հոլովի.) || զերջանիկ զարմ ունող. կմ երջանիկ, և բարեբաստիկ տոհմի սերունդ. կամ յազնիւ զարմէ յառաջացեալ: Նարեկ. ղԶ:

Երջանկակրօն. ի. իւ. եց. իւք: || երջանկակեաց. կմ բարեկեաց. կմ զբարեբաստիկ կենցաղավարութիւն, և զպաշտօն ունող. կմ բարեպաշտօն: Նարեկ. Դ:

Երջանկանամ. ացայ. ցիր. նալ: (Ընդմիջ.) || երջանիկ, և երանելի լինիլ. կմ ունիլ ապահովութի զայն ամ, որ ինքեան է բաւական, և յարմար: Եւ այս մերթ ասի զծշմարիտ երջանկութէ. իսկ մերթ զսուտ: Երեմ. 12.1:

Երջանկափառ: (Նախադրիւ հոլովի.) || զերջանիկ, և զերանելի փառս ունող. կամ երջանկացեալ փառօք. կամ հրաշափառ. կմ սքանչելափառ: Նարեկ. ԼԴ:

Երր. (Նախադրիւ հոլովի.) || փառութիւն. կմ նեխութիւն. կմ որդնոտութիւն. կմ ապականութիւն. և կմ բորբոսումն: Եւ այս ասի զփտութէ փայտի, պտղոց, մարմնոց կենդանեաց, և այլոց նմանեաց, որք 'ի ներքուստ սկսանին փտիլ, և ապականիլ: Յօբ. 17.14: և 21.26: և 25.6: Սիրաք. 19.3: Մերթ և բառս այս՝ երր, նշանակէ երիր. այսինքն, երրորդ. կմ երեք. և կմ երիցս. ըստ այնմ՝ Նարեկ. ղԶ. 'ի զարդս պայծառս՝ և երր երգելիս. այսինքն, երիցս երգելիս. այս է, երիցս գովելի. որ է ամենագովելի:

Եռրադարձ. ի. իւ. եց. իւք: || երիցս դարձող. կմ երիցս կրկնեալ. և կմ երրորդել: ուստի ալիքն՝ որք երիցս մի զկնի միոյ եկեալ հարկանեն զնաւն, ասին երրադարձ: Սոյնպէս և ալէկոծութիւն՝ որ այսպիսի ալեօք վտանգէ զնաւն, կոչի երրադարձ: Եւ այս է կերպ ինչ՝ որով ցուցանի գերագրական սաստկութիւն ալէկոծութե. ոչ մինչ ասի՝ երիցս երանեալ, նշանակի՝ ամեն երանեալ: 'Ի Հնոց հարց. Դ. և ԺԲ:

Երրակի: (Նախադրիւ հոլովի.) || եռակն. կմ երեքաՀոր. կմ երրեակ. կմ եռապատիկ: Եւ մերթ վարի մակբայապէս. և նշանակէ՝ երեք կերպիւ, կմ երիցս:

Երրեակ: (Նախադրիւ հոլովի.) || եռեակ. այսինքն, երեքաՀոր. կմ երեքին. կմ եռակն. կամ եռաթիւ: Նարեկ. ԺԴ:

Երրորդ. ի. աւ. աց. օք: || է դասական անուն թուոց. և նշանակէ զայն, յորում եղերի թիւն երեք՝ 'ի կարգի դասաւորման. և կմ զվերջինն յերից: Իսկ 1. Մակ. 10.29. ուր ասի՝ փոխանակ երրորդաց սերման. իմանի՝ փոխանակ երրորդի մասին սերմանց: զի մինչ զերիս քառս ցորենոյ սերմանեալքեին, 'ի ժամանակի հնձոց զմի քառորդն տալ թագաւորին: Իսկ եթէ զերեսուն քառս սերմանէին, զտասն քառս պարտէին տալ:

Երրորդութիւն. թեան: || է անուն ինչ յաստուածաբանական, և կմ ցուցեալ առ՛ ինշանակել զերիս անձինս միոյ էութե. այսինքն զՀայր. զՈրդի. և զՍուրբ Հոգի: որք թէպէտ անձամբք զանազանին. սակայն էութը և բնութբ ըստ ամի նոյն են. վն որոյ ասացեալ լինի. երեք անձինք և մի էծ. կմ երրորդութիւն, և մի էծութիւն: Բայց գիտելի է. զի ոչ բառս երրորդութիւն. և բառքս Հայր, որդի. Հոգի. զնոյն նշանակեն. այսինքն զերիս անձինս միոյ և նոյնոյ էութեան, սոյնպէս և բաղկանան 'ի մերում լեզուի՝ 'ի նոյնքանեաց տառից. զի ոչ բառս երրորդութիւն բաղկանայ յերկոտասանից տառից. նոյնպէս և բառքս այսքիկ. Հայր. որդի. Հոգի. որոց իւրաքանչիւրն է չորս տառ, բաղկանան յերկոտասանից տառից, որ է թիւ խորհրդաւոր, և պատուելի. ուստի և առաքեալքն ըստ կարգաւորմանն այսպիսւոյ թուոյ վիճակեցան: Եւ զայս ամ ցուցանէ Նարեկացին 'ի գովեստն առաքելոց, 'ի բանն՝ որ սկսանի. քանզի 'ի սողոբայս երից քառորդաց. և այլն. յիշելով անդ և զայլ բազմազան երկոտասանս խորհրդաւորս:

Երփն. երփնի. իւ. եց. իւք: || գոյն. կամ երանգ. Նարեկ. Հա. և ղԴ: Իսկ մերթ նշանակէ զորակութիւն գունոյ. կմ զորպիսութիւն և զկերպն: Նարեկ. ղԶ: և Ոսկե. 1. հատ. ԺԴ:

Երփնագեղ: (Նախադրիւ հոլովի:) || զգեղեցիկ երփն ունող. կմ գեղեցկագոյն. կմ գեղեցիկ երանգով վայելչացեալ: Նարեկ.

'ի Գուղէնոփ աստուծոց:

Երփնագոյն. գունի. իւ. ից. իւք: || գունագոյն. կամ երփն երփն. կմ գոյն զգոյն: Մծբն. ժԹ:

Երփնաներկ. ի. իւ. ից. օք: || գունագոյն երանգօք ներկեալ. կմ գունագոյն ներկ: Մծբն. ժԹ:

Երփնափայլ. ի. իւ. ից. իւք: || գեղեցիկ գունով փայլեալ. կմ գեղափայլ. կմ պայծառափայլ: Նորէն. զԴ:

Երփներանգ. ի. աւ. աց. օք: || գոյն զգոյն. կմ երփն երփն. կմ զբաղում գոյնս ունող:

Երփն երփն. (նախդրիւ հոլովի. և է անյոդնական.) || և նշանակէ՝ գոյն զգոյն. կամ գունակս գունակս. կամ բազմագունակ. կմ պէսպէս. և կմ բազմազան: Եզեկ. 23. 15: և Մծբն. ժԹ: Իսկ մերթ նշանակէ ըզ բազմագունակութիւն, կմ զպէսպիսութիւն. և կմ զբազմազանութիւն. Եզեկ. 27. 16. և 24: Եւ մինչ ասի՝ երփն երփն հարկանել. խմանի՝ գոյն զգոյն, կմ պէսպէս կերպիւ փայլել:

Երփներակ. ի. աւ. աց. օք: || գոյն զգոյն. կամ բազմերակ. կամ պէսպէս տեսակաւ, և գունով:

ԵՒ

Եւ. (շաղկապ բաղհիւսական.) || որ զմի բառն, կմ զբանն յօդէ ը այլում. զոր օրինակ, զշնորհս և զփառս տացէ տր: և ռամկ. ասի ու: Իսկ մերթ նշանակէ՝ ևս. կմ նաև, զորօրինակ. և ձեզ վայ օրինակս նացդ. ք նաև ձեզ. կմ ձեզ ևս: Ղուկ. 11. 46: Եւ գիտելի է զի 'ի բնաւս գրուածս տանց բանից՝ ուր պիտոյանայ շաղկապս՝ և, փոխանակ սորա դնի տառս ու շարակցեալ ը տառիս ւ. և այնու հնչի որպ. զև: Բայց 'ի մէջ տանց բանից՝ ուր պիտոյանայ շաղկապս՝ և. ոչ դնի ու և ւ. այլ դնի և. որպ և յայտ է:

Եւեթ. (մակբայ զատական.) || միայն. կմ միայնակ. ռամկ. տալը: Ծննդ. 3. 11: և Մարկ. 14. 60:

Եւևս: (շաղկապ բաղհիւսական.) || այլ ևս: Սաղմ. 82. 5: Մերթ ևս նշանակէ՝ առաւել ևս. կմ անդր ևս. ը այնմ Եսայ. 15. 18: որ թագաւորէ յաւիտեան, և յաւիտեան ևևս: ը այսմ է և Դանիէլ. 12. 3: Իսկ մերթ նշանակէ՝ նաև. կմ դարձեալ: Եւ մինչ ասի. և ևս խաղաղութե զձեր աղաչեցուք. խմանի՝ նաև վս խաղաղութե զձեր աղաչեցուք. կմ դարձեալ՝ վս խաղաղութե զձեր աղաչեցուք:

Եւղ. իւղոյ. ով. ոց. ովք: || Եսայ. 25. 6: տես զիւղն. զի են նոյն. որպ աղբեւրն, և աղբիւրն:

Եւս: || Մերթ է անուն. և նախդրիւ հոլովի. և նշանակէ առաւել. ը այնմ, 'ի Նորէն. 'ի Գուղէնոփ հատուէն. Յայսքանս, և 'ի յևս ընտրելագոյն երգս բասոյնպխսա, և 'ի հետևելոց: Բայց գիտելի է, զի սա ըստ այսմ նշանակութե բազմիցս յարի անուանց դրականաց, և առնէ զնս բաղդատականս. որգոն. Երանելի ևսէ. թէ այնպէս կայցէ. ք, երանելագոյն է: 1. Կորնթ. 7. 40: Այնպէս է և 'ի 38. ուր ասի. Եւ որ ոչ ամուսնացուցանէ, լաւ ևս առնէ. ք լաւագոյն առնէ: Իսկ երբեմն յարի բաղդատականաց, և առնէ զնս գերադրականս, զոր օրինակ և'ս բարեգոյն. և'ս կրտսերագոյն. ք, բարեգունեղ. կրտսերագունեղ. և այլն: Լամբրոն: Սեսոսի փոխանակ առելու, քաջ. քաջագոյն. քաջագունեղ. ասի, քաջ. քաջագոյն. և'ս քաջագոյն: Դարձեալ. երբեմն ևսէ սա շաղկապ բաղհիւսական. և նշանակէ այլ ևս: Ղուկ. 16. 2:

Եւսքան զևս: (մակբայ յաճախական.) || առաւել քան զառաւել. կմ յոյժ սաստիկ. կմ առաւել ևս: Ծննդ. 43. 1:

Եւրակիկլոն. ի. իւ: || է հողմ ինչ ուսուցիկ, և մրրկաբեր, և հնչէ 'ի գծէն, որ է 'ի մէջ արևելից, և հիւսիսոյ: Գործ. 27. 14:

Եւրանոտոս. ի. իւ: || է մինն յերից հարաւային հողմոց, որք անուանին՝ Եւրանոտոս. Նոտոս. և Լիբանոտոս. կմ Լիւանոտոս: Նոտոս է գլխաւոր հողմ, որ ուղղակի հնչէ 'ի գծէ հարաւային բևեռին. որ և ասի սաւզական բևեռ: Իսկ Եւրանոտոսն հնչէ ընդ աջմէ Նոտոս հողմոյն, և անկանի 'ի կողմն արևելից. և է առընթեր Եւրոս հողմոյն. և այսպէս հնչէ մերձ այնմ կողման, ուստի արեգակն ծագի 'ի ձմերան: Բայց Լիբանոտոսն ներհակաբար հնչէ 'ի ձախմէ Նոտոս հողմոյն, և անկանի 'ի կողմն արևմտից. և է առընթեր Լիբս հողմոյն. և այսպէս հնչէ մերձ այնմ կողման, ընդ որ արեգակն 'ի մայրն մտանէ 'ի ձմեռան: և սոքա երեքեան ևս հասարակ անուամբ անուանին Նոտոս:

Եւրոպիա. պիոյ. աւ: (անյոդնական.) || է մինն 'ի չորից մասանց աշխարհի. որ 'ի հիւսիսոյ և յարևմտից կողմանէ սահմանի ովկիանոսիւ. 'ի հարաւոյ ունի զծովն միջերկրական. իսկ յարևելից կուսէ ուղիղ գծիւ բաժանի յասիոյ՝ 'ի տանայիս գետոյ մինչև 'ի հիւսիսային ովկիանոսն: Սա թէպէտ է փոքր քան զայլս մասունս աշխարհի. բայց է բազմամարդ, և ունի զբազում թագաւորութիւնս:

Եւրոս. ի. իւ: || է մինն 'ի յերից արևելեան հողմոց. որք են սոքա. Կեկիաս. Ապելիոտ. և Եւրոս: Ապելիոտն է գլխաւոր հողմ, որ ուղղակի հնչէ յարևելից 'ի գիշերահաւասար գծէն: Իսկ Կեկիասն հնչէ 'ի յաջմէ Ապելիոտին. և անկանի 'ի կողմն հիւսիսոյ. և գրեթէ հնչէ յայնմանէ գծէ, ուստի արևն ելանէ յամառան: Բայց Եւրոսն ներհակաբար հնչէ 'ի ձախմէ Ապելիոտ հողմոյն, և անկանի 'ի կողմն հարաւոյ. և գրեթէ յայնմանէ գծէ հնչէ, ուստի ելանէ արևն 'ի ձմերան: Եւ սոքա երեքեան ևս հասարակ անուամբ կոչին Եւրոս:

Digitized by Google

Եփ

Եփական. ի. ու. աց. ազ. || անկի որ է եփելի կերակուր. որոյ մերթ խմանի ոանն, կամ կաթսայն, յորում եփի կերակուր հրով վառարանին: Իսկ մերթ ստամոքսն յորում եփի և մարսի կերակուրն 'ի ձեռն բնականի ջերմութեան:

Եփեմ. եցի. եա. եալ: (Նորգործ.) || Հրով հասուցանել զկերակուրս. և զայլս եփել. լի. որ և ասի. աւր Եփել:

Եփոց. ի. իւ. ից. իւք: || եփեցեալ կերակուր. կմ եփումն. կմ ուտելի: 4. Թագ. 4. 38. և 40:

Եփուտ. ի. իւ. ից. իւք: || է բառ եբրայական. և թարգմանի 'ի մեզ՝ վակաս: Ելից. 25. 7: և 28. 6: Եւ է անուն միոյ 'ի զարդուց քահանայապետական զգեստուց հին օրինացն, որ ունէր զձև բաճկոնի. այսինքն զկրտոնի. զի պատեալ յամենայն կողմանէ զանձն զգեցողին՝ իջանէր մինչև 'ի ծունկս, կամ ցերանս. որ և ունէր զերկու մասունս բաժանեալ 'ի կողմանէ ուսոց քահանային, որ զգենոյր. զորմէ լինայոյն ասացեալ 'ի մեկնութեան բառիս. Վակաս: Արդ՝ էր սա երկատեալ, միոյն բեհեզեայ՝ անզարդ, և հասարակ ամ քահանայից: Իսկ միւսն էր զարդարուն՝ և նկարակերպ գործեալ միայն վն քահանայապետին: Եւ առանց սորա ոչ լինէր քահանայագործութիւն ինչ: Զայսպիսի եփուտ առար գեդէոն 'ի տան իւրում յաւարացն մադիանացւոց: Դատ. 8. 27: Նոյնպէս և միքայ ը ձուլածոյն արար և զեփուտ որ էր ապօրինաւոր: Դատ. 17. 5: Զայսն արկեալ էր զիւրև սամուէլ առաջի տն: 1. Թագ. 2. 18: Եւ սովոր միայն լինէր հարցանել 'ի տնէ յայտնել զբան ինչ գաղտնի, կմ ցուցանել զճանապարհ, թէ ուր պարտ է առնել: 1. Թագ. 14. 18: և 30. 7:

Եօ

Եօթանասնեակ. նեկի. ու. աց. ազ. || է զասակարգական անուն թուոց. և նշանակէ զեօթանասունն զատաբար: Իսկ մերթ նշանակէ զեօթանասնաւորն. կմ զայն, որ պարունակէ զեօթանասուն թիւ:

Եօթանասնեկի. կմ եօթանասնեկին: (մակբայ բանակական.) || մերթ նշանակէ՝ եօթանասնիցս: և ըստ այսմ է Ծննդ. 4. 24. ուր ասի. եօթանասնեկի եօթն. այ, եօթանասնիցս եօթն, կմ եօթանասուն անգամ եօթն. որ առնէ՝ չորս հարիւր իննսուն: Սոյնպէս և Մատթ. 18. 22: Իսկ մերթ նշանակէ զեօթանասնեակն, կմ զեօթանասունն. և ըստ այսմ է 'ի Նոր. 'ի գործոց. ուր ասի. եօթանասնեկի երկիցս լեզուաց. և այլն:

Եօթանասներորդ. ի. ու. աց. ազ. || է դասական անուն թուոց, և նշանակէ զվերջին կարգեալն եօթանասուն թուոց:

Եօթանասներեան. կմ եքսնեկեցունց. քսանմէք: || է անձներական անուն թուոց. և նշանակէ ասել՝ իւրաքանչիւրն եօթանասնից:

Եօթանասուն. նասնից. իւք: || է բնդարձակական թիւ. և նշանակէ զեօթնիցս տասն. այ զեօթն անգամ տասն:

Եօթանեքեան. կմ եօթնեքեան. կմ քեն. նեցունց. նեքումբք: || է անձներական թիւ, և նշանակէ ասել՝ իւրաքանչիւրն եօթանց: Մարկ. 12. 22:

Եօթն. եօթանց. ամբք. կմ եօթեանց. կամ եօթնից. եամբք: || է բացարձակ թիւ. և նշանակէ զայն, որ է երիւք պակաս 'ի տասնէն. ասմկ. ... բայց երբեմն առեալ լինի սա փոխանակ բազում բառին. ըստ այսմ Առակ. 26. 25. եօթն չարիք կան 'ի սրտի նր. այ բազում: Ըստ այսմ է և եօթնամեանն բառն, որ ծառայի 'ի նմանէ. զոր տեսցես զկնի: Դարձեալ. թիւս այս՝ եօթն, որ և ասի՝ եօթնեակ, 'ի թուականաց կոչի կոյս. և ըստ այսմ ասի 'ի Նորէին. լա. այս թիւ պանծալի, որում ոչ է կէտ կցորդ. և ոչ ստորոտեալ վախճանի, այլ կոյս անէ է, և այլն: Եւ այս վն այնորիկ ասի՝ զի զծնունդ ոչ ունի. քանզի 'ի ներքոյ տասանեկին ոչ յայլմէ թուոյ ծնեալ լինի, և ոչ զայլս ծնանի՝ բազմացուցանելով զինքն. կմ զայլ թիւ. որոյ ներհակք են այլք թիւք, որք են ը տասնեկաւ. քանզի կմ ծնեալ լինին յայլմէ թուոյ. և կամ ծնանին զայլ թիւ: որպես.

Երկուն բազմացուցեալ զինքն, ծնանի զչորս: զի երկիցս երկուն է չորս:

Զերեքն բազմացուցեալ՝ ծնանի զինն.

Զչորսն բազմացուցեալ՝ ծնանի զութն.

Իսկ զհինգն բազմացուցեալ՝ ծնանի զտասն:

Երեքն՝ թէպէտ ինքն ոչ ծնանի յայլմէ թուոյ. բայց կարէ ծնանել զայլս.

վն զի զինքն բազմացուցեալ՝ ծնանի զինն.

Իսկ զերկուսն բազմացուցեալ՝ ծնանի զվեցն:

Չորսն բազմացուցեալ զերկուսն՝ ծնանի զութն:

Հինգն՝ թէպէտ ինքն ոչ ծնանի յայլմէ թուոյ, սակայն ծնանի զայլ թիւ. զի բազմացուցեալ զերկուսն՝ ծնանի զտասն:

Բայց վեցն թէպէտ ոչ ծնանի զայլ թիւ 'ի ներքոյ տասնեկին. սակայն ինքն ծնեալ լինի 'ի յերիցս երկուց. նոյնպէս և ութն, և ինն, և տասն՝ թէպէտ ոչ ծնանին զայլս, սակայն ծնեալ լինին յայլոց. ոնպ տրգէն տեսցես:

Բայց՝ եօթն, ըստ այսմ կանոնի ոչ կարէ ծնանիլ զթիւ ինչ. և ոչ կարէ ծնեալ լինիլ յիմեքէ թուոյ: վասն որոյ և 'ի թուականաց՝ նմանութիւ կուսութեան կոյս. այ, անծնունդ 'ի տասնեկին:

Եօթնաթիւ. թուոյ. ով. ոց. ովք: || զեօթն թիւս ունօղ յինքեան. կմ որ է եօթնակի թուով. որպիսի է անունս այս քն. որ վն եօթն տառիցն՝ զոր ունի, կոչի եօթնաթիւ: և ըստ այսմ է 'ի Նորէին 'ի գործ տասներկուց. ուր ասի զգեղասած. քանզի անուանի՝ եօթնաթիւ դաւանութիւ յարմարադրեալ. այ, քրիստոսական դաւանութիւ. զի դաւանեցաւ զՅՍ գոլ քն. որ եօթն տառիւք է յարմարադրեցեալ:

Եօթնաղաղս. (Նախադրիւ հոլովի.) || Եօթնա

ջահեան. կամ եօթնաճաճանչ. կմ՛ զեօթն ճառագայթս լուսոյ արձակօղ. որպիսի է եօթնաջահեան աշտանակն. և այլն. և կմ՛ եօթնարփեան: Յն՛ ուղղ:

Եօթնածին. ծնի. ին. ից. գք || զեօթն զաւակս ծնանօղ: Եւ սա մերթ առեալ լինի փոխանակ բազմածին բառիս. և ՟Ի այսմ է Երեմ. 15. 9:

Եօթնակի: (Նախդրիւ հոլովի.) || եօթնեակ. կմ՛ եօթնաւոր. կամ եօթնաթիւ: Յն՛ ուղղ: Իսկ մերթ վարի մակբայաբար. և նշանակի՝ եօթնիցս:

Եօթնաձոր. ի. ին: || Եսայ. 11. 15: զայսմանէ տե՛ս 'ի բառարանի յատուկ անուանց զԵօթնաձորն:

Եօթնամասնեայ: (Նախդրիւ հոլովի.) || ունօղ զեօթն մասունս. կմ՛ յեօթն մասանց բաղկացեալ. կմ՛ յեօթն բաժինս անջատեալ: Նուրէն. ՂԷ:

Եօթնանշոյլ. շուլի. ին. ից. իւք: || եօթնալոյս. կմ՛ եօթնաջահեան. կմ՛ եօթնաճաճանչ. ՟Ի, զեօթն ճառագայթս ունօղ:

Եօթնապատիկ. տկի. աւ. աց. օք: || տե՛ս զԵօթնպատիկ:

Եօթնաջահեան. (Նախդրիւ հոլովի.) || յեօթն ջահից բաղկացեալ. կմ՛ զեօթն ջահս ունօղ 'ի վե՛ր իւր. կմ՛ եօթնաճաճանչ. որպիսի էր աշտանակն՝ զոր ետես զաքարիա մարգարէն:

Եօթնաստեղեան: (Նախդրիւ հոլովի.) || յեօթն աստեղանց. կմ՛ 'ի յեօթն ճիւղոց բաղկացեալ. կմ՛ զեօթն ոստս ունօղ: Եւ երբեմն նմանութեա՛ եօթնասփիւնեայ շինուածոյ՝ ասի եօթնաստեղեան: Նորէն. 'Ի խորանն Էլեղեզարոյ: մերթ և նշանակէ զեօթն աստեղս ունօղ. որպիսիք են կամարքն մոլորակաց: Մերթ ևս արքայութեն երկնից վս եօթնալոյս շնորհաց հոգւոյն սրբոյ՝ ասի եօթնաստեղեան:

Եօթնաստես. ի. ին. ից. իւք: || եօթն աչօք տեսօղ. կմ՛ զեօթն աչս ունօղ. որով ք տեսանէ: Նորէն. ՂԷ: Եւ այս ասի զվիմէն, զորմէ գրի Զաքա. 3. 9:

Եօթնարփեան. փենի. ենին. ենից. իւք: || եօթնալուսեան. կմ՛ եօթնաճաճանչ, ՟Ի, զեօթնեակ ճառագայթս լուսոյ ունօղ. կմ՛ զեօթն ճառագայթս արձակօղ: Եւ այս ասի նմանութեա՛ զեօթն պարգևաց. կամ զշնորհաց հոգւոյն սրբոյ, որք համեմատին լուսոյ, կմ՛ ճառագայթաց. ոպ յիշի: Յայտ. 4. 5:

Եօթնեակ. եկի. աւ. աց. օք: || եօթնաւոր. կմ՛ եօթն. կմ՛ եօթնակի: Նորէն. ՂԹ: Իսկ մերթ նշանակէ զմի շաբաթն, որ ունի զաւուրս եօթն: 'Ի վարս հարց. ՟Է:

Եօթնեկին. կմ՛ եօթնեկի: (միջ քանակակ.) || եօթնիցս. ՟Ի եօթնանգամ: Ղեւտ. 25. 8: Իսկ մերթ վարի իբրև զանուն. և նշանակէ եօթնաւոր. կամ եօթնեակ. կմ՛ եօթնպատիկ:

Եօթներեակ. երեկի. աւ. աց. օք: || Նշանակէ զեօթնեակն. ՟Ի զմի շաբաթն, որ ունի զաւուրս եօթն: Դարձեալ՝ բառս եօթներեակ 'ի ստոմարական արուեստի առնանի վս այնց նշանաց. ՟Ի տառից, որք ցուցանեն 'ի բոլոր տարւոջ զօր կիւրակէին, որովք իմա-

նին այլք աւուրք շաբաթուն:

Եօթներորդ. ի. աւ. աց. օք: || է թիւ դասական, և նշանակէ զվերջինն եօթանց դասաւորեցելոց: Իսկ մերթ՝ զշաբաթ մի. քան զի մի շաբաթն երբեմն եօթներորդ ասի. ոպ յայտ է Ելից. 34. 22: ուստի և Դանի. 9. 24. ուր ասի. եօթանասուն եօթներորդ. իմանի՝ եօթանասուն շաբաթ:

Եօթներորդեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || զեօթներորդ մասն իրի իմիք առնուլ. ոպ մինչ ասի. հինգերորդել զարմտիս. իմանի զհինգերորդ մասն արմտեաց առնուլ. ոպ գրի Ծննդ. 41. 34: Իսկ մերթ նշանակէ եօթնիցս կրկնել: բայց մինչ ասի՝ եօթներորդել զեօթներորդս, իմանի՝ առնել եօթնիցս եօթն, որ է քառասուննեւինն: Ուստի Եզեկ. 21. 23. ուր ասի՝ եօթներորդեսցէ նզ զեօթներորդս, ՟Ի թարգմանութն քաղդէացւոց ասի. քառասուննեւինն անգամ. որով իմանի թէ Նաբուգոդոնոսոր զգաւազանն քառասուննեւինն անգամ ձգեաց 'ի վեր առ 'ի հըմայել, թէ արդեօք 'ի վր երուսաղէմի գնայ ցէ, որ էր յաջակողմն, թէ 'ի վր ռաբաթայ որ էր 'ի ձախակողմն. ոպ գրի Եզեկ. 21. 20. և 21: Բայց սակայն յաջակողմն անկաւ. ուստի գնաց 'ի վր եղէմի:

Եօթնեքեան. կմ՛ եօթնեքին. նեցունց. նեքումբք: || տե՛ս զԵօթանեքեանն:

Եօթնևտասն. տասանց. անբք: || տե՛ս զԵօթնուտասն:

Եօթնևտասնամեայ. (Նախդրիւ հոլովի.) || եօթն և տասն ամաց: Ծննդ. 37. 2:

Եօթնուտասն. կմ՛ եօթուտասն. տասանց. տասամբք: || է բացորձակ անուն թուոյ. և նշանակէ զտասն և եօթն: 3. Թագ. 14. 21: և 2. Մնաց. 12. 13:

Եօթնուտասներորդ. ի. աւ. աց. օք: || է դասական անուն թուոյ. և նշանակէ զեօթն և տասներորդ. որ է վերջինն եօթուտասն թուոյ դասաւորեցելոյ: 3. Թագ. 22. 52:

Եօթնպատիկ. պատկի. աւ. աց. օք: || է կրկնական անուն թուոց. որ մերթ վարի իբրև զանուն: Իսկ մերթ իբրև զմակբ. և նշանակէ՝ փոխանակ միոյն՝ եօթն. կմ՛ եօթն պատիճանս աւելի քան զմինն: և ՟Ի այսմ, յորժամ ոք փոխանակ տասին տայ եօթանասուն, ասի եօթնպատիկ հատուցանել: Ղեւտ. 26. 21: Առակ. 11. 7: բայց սա բազմիցս 'ի գործ ածի փոխանակ բազմապատիկ բառիս:

Եօթնպարսպեան. (Նախդրիւ հոլովի.) || ունօղ զեօթն պարիսպս. կմ՛ եօթն պարսպօք շրջապատեցեալ: Խորէն. ՟Ա. գլ. 84:

Եօթնատակեան. (Նախդրիւ հոլովի.) || եօթնակուղեան. ՟Ի, որ ունի զեօթն կուղս. այս է, ղոզս. կմ՛ որ է եօթնապատկեալ. որպիսիք են եօթնապարսպեան քաղաքք. կմ՛ եօթնայարկ շինուածք. կմ՛ եօթնատերև ծաղկունք. և այլք բազումք: ռամկ. օխթ ղաթլը: Ըստ այսմ է և երեքտակեանն. որ 'ի վերոյ գրեցաւ:

Եօթնօրեայ. րէի. ին. ից. իւք: || եօթն աւուր: 3. Մակ. 6. 25:

Զ.

Զ. է տառ բաղաձայն. զի բաղադրելով ընդ ձայնաւոր տառի, առաւել հնչի համարձակ, և զձայն ելուզանէ: Բայց ՚ի մէջ բաղաձայնից՝ կոչի սա կիսաձայն. որպէս և տառքս այսոքիկ. ժ. խ. շ. ս. և այլն. վն զի ինքնին կերպիւ նաև առանց ձայնաւորի կարէ սկզբնաւորել զձայն ինչ ՚ի մէջ տառամանց:

Արդ՝ տառս այս՝ զ. զոր կոչեմք զայ. ՚ի յառաջանական արուեստի ըստ հաւաքագին է սոսկաձայն, կամ նրբաձայն, զի ունի զնուրբ հնչումն. ոպ և տառքս այսոքիկ. ծ. մ. շ. ս. տ. ր. և այլն:

Դարձեալ, տառս այս կոչի նաև ընդորդատառ. զի ունի զընդորդութիւն, կամ զընդակցութիւն. կմ զմերձաւորութիւն ձայնի ընդ ոմանց տառից որգոն ընդ սէի, և ընդ ձայի. կմ ընդ ծայի, և այլն, ուստի երբեմն փոխադրի ընդ նոսա. զի ասեմք՝ սքօղել, և զքօղել. սփածանիլ. և զփածանիլ. զկռտալ, և ձգռտալ. և այլն: Սոյնպէս և ՚ի յայլազգական բառս դնի փոխանակ ծայի, զի փոխանակ ասելոյ, ծեփիւռ, ծաքարիա ծաբուղոն. ծաքէոս, ծեբեդէոս, և այլն. ասեմք՝ զեփիւռ, զաքարիա, զաբուղոն, զաքէոս, զեբեդէոս: և այլն:

Դարձեալ, է սա նաև նշան համարողական, որ ունելով ՚ի վերայ իւր զպատիւ այսպէս, զ՟, նշանակէ զվեցն, որ է թիւ նշանաւոր. զի ՚ի մէջ այլոց թուոց սա միայն է, որ ՚ի մասանց իւրոց բաղկանայ:

Դարձեալ. տառս այս՝ զ. է նաև նախդիր հոլովակերտ, որ երբեմն կազմէ զհոլովն հայցական. զոր օրինակ. Զհարսս դաւանց՝ և զարիւն ցլուց ոչ կամիմ: Եսայ. 1. 11: Սակայն բազում անգամ ՚ի կազմելն զայս հոլով, ներգործութիւն ոչ դնի, այլ զօրութիւն, որգոն, մնացի, զի բերցէ ինձ խաղող. և եբեր փուշ. կամ զի բերցէ ինձ զխաղող, և եբեր զփուշ: Եսայ. 5. 4: Եցոյց ինձ տր երկուս կողովս թզոյ. կամ զերկուս կողովս: Երեմ. 24. 1: ըստ այսմ են և այլք բազումք:

Իսկ երբեմն ներհակաբար յաճախի նախդիրս այս. զի ոչ միայն ներգործութիւն դնի հայցական անուանն, այլ և յաւելեալ լինի ՚ի նորին յառակացուցիչն, կմ յածականն, և կմ յայլս մասունս բանի, որք վերաբերին՝ առ հայցական անուանն, թէ սակաւք իցեն, և թէ բազումք: Եւ երբեմն այսոքիկ գտանին յառաջ անցեալք քան ըզ հայցականն. զոր օրինակ, որք միշտ փըրփրեն զիւրեանց զանձանց զամօթ. կամ զամօթ անձանց իւրեանց: Յուդայ. 13: զատանէին զիւրեանց զեղբարց զգլխակոյս. կամ զգլխակոյս եղբարց իւրեանց: 2. Մակ. 12. 40: Զժամանակս զմահաբեր զօրհասի զժամանակն զանցուցեալ. կամ զժամանակն մահաբեր օրհասին անցուցեալ: 3. Մակ. 5. 7: ըստ այսմ են և այլք բազումք:

Իսկ երբեմն հետևեին հայցական անուանն, զոր օրինակ. Եւ տացուք զպտուղս զառաջաւորութեանց երկրի մերոյ. կամ զպտուղս առաջաւորութեանց: 3. Եզր. 10. 35: Զլեզուն հրամայեաց զանօրինին նիկանորայ հատանել. կամ զլեզուն անօրինին նիկանորայ: 2. Մակ. 15. 33: Եւ զսակ զաղխասարկին արկէք ՚ի վերայ նց. կամ զսակ աղխասարկին: Ելից. 5. 8: Եցոյց նց զտունս գանձուց, և զխնկոց. և զեղոց. և զոսկւոյ, և զարծաթոյ. կամ զտունս գանձուց, խնկոց, իւղոց. և այլն. Եսայ. 39. 2: ըստ այսմ գտանին և այլք բազումք:

Բայց երբեմն նախդիրս այս բառնի ՚ի հայցական անուանէն, և դնի միայն նր յառակացուցչին, կմ ածականին, և այլոց նմանեաց. որգոն. Ետուն նմա գիրս զեսայեայ. կամ զգիրս եսայեայ: Ղուկ. 4. 17: Հաց զմեր կերիցուք. և հանդերձ զմեր զգեցցուք. կամ զհաց մեր. զհանդերձ մեր. և այլն: Եսայ. 4. 1: ըստ այսմ են և սոքա. Ճանապարհ զարքունի գնասցուք: Թուոց. 20. 17: Առնուցուք պտուղ զգեղեցիկ ծառոց. կամ զպտուղ գեղեցիկ ծառոց: Ղեւտ. 23. 40: ըստ այսմ իմա և զայլոց բազմաց: Մերթ և դնի դոյականին, որ է զկնի. և ոչ ածականին, որ է յառաջ անցեալ. զոր օրինակ. Եւ յայտնի զհաճոյս պատմէ արդարն. կամ զյայտնի հաւատս: Առակ. 12. 17: Յաձել զհողս, և խառնակ զանասունս. կամ և զխառնակ անասունս: 1. Մակ. 1. 50: Սոյնպէս է և այս. որ զինչ խորհեցաւ. կամ որ զինչ ասիցէ. կամ զոր ինչ խորհեցաւ. կմ զոր ինչ ասիցէ: 1. Մակ. 3. 34: Յով. 2. 5:

Դարձեալ՝ երբեմն յարի նախդիրս զ. ստացական անուանց. և ցուցանէ զօրութիւն զստացականս բառս. զայն՝ որ. զոր օրինակ. տուք զկայսերն կայսեր. և զայն այ. կամ զայն՝ որ է կայսեր, տուք կայսեր, և զայն՝ որ է այ, տուք այ. և այլն: Մատթ. 22. 21: Մի ոք զանձն և եթ խնդրեսցէ, այլ և զընկերին, կամ զայն, որ է անձին իւրոյ. այլ և զայն որ է ընկերին, և այլն: 1. Կորն. 10. 24: ըստ այսմ իմանի՝ մինչ ասի զվասն մեղացն. կամ զայն, որ վն մեղաց: Ղեւտ. 4. 29: և 5. 8:

Իսկ երբեմն կազմէ նախդիրս այս. զ. զհոլովն պատմական. և յայնժամ մերթ ունի զզօրութիւն նախադրութեանս այսոքիկ. վն. զոր օրինակ. Արար նաւս թարսսացիս երթալ յովփիր զոսկւոյ. կամ վն ոսկւոյ: 3. Թագ. 22. 49:

Ցրեցէք զշուշանայ դասերէ · ք՛ վ՛ր շուշա-
նայ դասեր ։ Մրանի · 13 · 29 ։ Առաքեցին
զՍիոյ · ք՛ վ՛ր Սիոյ ։ Երեմ · 14 · 3 ։ Զի առա-
քեաց առ իս զուստերաց , և զդստերաց
իմոց · ք՛ վ՛ր ուստերաց · և այլն ։ 3 · Թագ ·
20 · 7 ։ Մերթ և ունի զզօրութիւն նախա-
դասութեան այսորիկ՝ ՚ի վ՛ր · և ըստ այսմ
իմանի , մինչ ասի · սեռն սորբազ՟ի զանսակէ ։
Իսկ երբեմն կերպէ սա զհոլովն պարառա-
կան · և յայնժամ նշանակէ շուրջ · զոր
օրինակ · Եւ որք զնովաւն էին · ք՛ շուրջ
զնովաւ ։ 2 · Մակ · 8 · 33 ։ տուռունք մեղաց
պատեցան զինև · ք՛ շուրջ զինև ։ Սաղմ ·
118 · 61 ։ ըստ այսմ են և սոքա · որ միզիցէ
զորմով · 3 · Թագ · 21 · 21 ։ Ցայտեցաւ յա-
րենէ նորա զորմովն , և զձիովքն · 4 · Թագ · 9 ·
33 ։ ըստ այսմ իմա և զայլոց բազմաց ։ Իսկ
մերթ նշանակէ ՚ի վ՛ր · որգոն · Արկին զնո
քօք ձորձս · ք՛ , ՚ի վ՛ր նց ։ Մատթ · 21 · 7 ։
Արկանել զինև զբարկութիւն ժողովրդեանս ·
ք՛ , ՚ի վ՛ր իմ ։ Թւոց · 11 · 11 ։ Մերթ և նը-
շանակէ · քան · զոր օրինակ · Անցուցեր
զամենեքումբք · ք՛ գերազանցեցեր քան զա-
մենեսեան ։ Առակ · 31 · 29 ։ ՚ի պատւիւ զմի-
մեամբք եւանել · ք՛ ՚ի պատուելն քան զմի-
մեանս գերազանցել · կամ յառաջել ։ Հռով ·
12 · 10 ։ Իսկ մինչ ասի ածել զոք զգլխով ,
իմանի հրով բոցակիզել · կամ ընդ հուր ան-
ցուցանելով այրել ։ 2 · Օրին · 18 · 10 ։
Դարձեալ · տառս այս՝ զ , գնի փոխանակ
նախդրացս այսոցիկ , առ , ընդ՝ ՚ի , յ ։ Եւ զի
սոքա կազմեն զհոլովն նախդրիւ տրական ·
բացառական , և ներգոյական · սոյնպէս և
տառս՝ զ ։ Արդ՝ կազմէ զտրական · զորօրի-
նակ · Եւ առաքեաց նաբուգոդոնոսոր ըղ-
բնակիչս կիլիկեցւոց , և զդամասկոսի , և
զլիբանանու · ք՛ , առ բնակիչս կիլիկեցւոց ,
դամասկոսի , և լիբանանու ։ Յուդիթ · 1 · 7 ։
ըստ այսմ է , և ՚ի 8 · ՚ի 9 · և ՚ի 10 · համարսն
այսորիկ գլխոյ ։ Դնտեցան արքն զինի նց
զճանապարհն յորդանանու · ք՛ , ը ճանա-
պարհն յորդանանու ։ Յեսու · 2 · 7 ։ Եհարկա-
ցին զճանապարհն արևելից · ք՛ , ը ճանա-
պարհն ։ 2 · Թագ · 4 · 7 ։ ըստ այսմ իմանի ,
մինչ ասի՝ անցանել զյորդանանւ · և այլք
նմանք ։ Սոյնպէս երբեմն կերպէ զբացա-
ռական · զոր օրինակ ։ Եւ ահա խոյ մի կա-
խեալ կայր զծառոյն սաբեկայ զեղջերացն ·
ք՛ , ՚ի ծառոյն սաբեկայ յեղջերացն ։ Ծննդ ·
22 · 13 ։ Եւ կախեսցէ զքեզ զփայտէ · ք՛ ՚ի
փայտէ · Ծննդ · 40 · 19 ։ Եւ նա ոգին կախեալ
կայ զդորա յոգւոյ , ք՛ ՚ի դորա յոգւոյ ։
Ծննդ · 44 · 30 ։ Կախեալ կայցէ զբնակութենէ ,
ք՛ ՚ի բնակութենէ ։ Ովս · 11 · 7 ։ ՚ի զառաջաւոր
հացէն · ք՛ ՚ի յառաջաւոր հացէն ։ 1 · Թագ ·
21 · 6 ։ Զչորեքունց տանոց · ք՛ ՚ի չորեքունց ։
Գործ · 10 · 11 ։ և այլն ։
Իսկ երբեմն կերպէ զներգոյական · որգոն ·
զձմեռուրս , զորս էր տուեալ նմ ՚ի սելով · ք՛ ·
յորս էր · Դատ · 18 · 31 ։ Զնոյն ժամանակս ,
զոր եղև անապատ · ք՛ յորս եղև անապատ ·
[illegible] 1 · 58 ։ ըստ այսմ է և այն , որ ասի
՚ի շարաքնոջն · ՚ի հարցաքանն խնդնոն ։ Զերեք-
բարեբանեմք զԹափոր լերին · ք՛ ՚ի Թա-
փոր լերին ։ ըստ այսմ ոճի է երբ կազմէ
զմակբայս ժամանակականս · կամ երբ նախ-
դիր լինի անուանց , որք զչափ աւուրց և
ժամանակաց նշանակեն · որգոն · զցայգ և
զցերեկ · ք՛ ՚ի գիշերի · և ՚ի ցերեկի ։ Ղուկ ·
2 · 37 ։ Զտիւ և զգիշեր մի դադարեսցեն · ք՛
՚ի տուընջեան , և ՚ի գիշերի ։ Ծննդ · 8 · 22 ։ Եւ
եղև զերկամ մի բովանդակ իւրով վար-
ձու · ք՛ յերկուս ամս ։ Գործ · 28 · 30 ։ Եւ
եղև Թիւ աւուրց զորս նստաւ · ք՛ յորս
նստաւ · 1 · Թագ · 27 · 7 ։ Եւ զոյն օր լուռ
լինէր · ք՛ յայնմ աւուր · 2 · Մակ · 14 · 4 · ըստ
այսմ են և Սաղմ · 139 · 3 ։ Առակ · 21 · 26 ։ Զաք ·
14 · 8 ։ Գործ · 13 · 27 ։ և յայլ բազում տեղիս ։
Բայց գիտելի է , զի տառս այս երբեմն յայս
միկ ոճի գործածական տանէ զբառն , յոր յա-
րի · զոր օրինակ · գրեցին Թուղթ զայս
օրինակ , ք՛ այսու օրինակաւ ։ 1 · Եզր · 2 · 16 ։
երբև առաջինն զօրինակ զայս յաշխարհէ փո-
խեցաւ · ք՛ այսու օրինակաւ · կամ այսու կեր-
պիւ ։ 2 · Մակ · 7 · 7 ։ Մի և ձեզ զնոյն օրինակ
գնալ · ք՛ նովին օրինակաւ ։ Եփես · 4 · 17 ։
Սոյնպէս նշանակեն և արմատք բայից չէ-
զոքականաց , կամ ձայնակրականաց , և կամ
ներգործականաց , յորժամ այսու նախ-
դրիւ խնդիր լինին բայից ինքեանց · զոր
օրինակ · սէրն , զոր սիրեցեր զիս , ք՛ որով
սիրեցեր ։ Յովհ · 17 · 26 ։ Աճէ զաճումն , ք՛
աճէ աճմամբ · կամ աճելով աճէ ։ Կող · 2 · 19 ։
Անդ երկիցեն զերկիւղ , ք՛ երկիւղիւ ։ Սաղ ·
13 · 5 ։ Զթաղումն իշոյ թաղեսցի · ք՛ թաղ-
մամբ իշոյ ։ Երեմ · 22 · 19 ։ Եւ ըստ այսմ իմա-
նի , մինչ ասի · վէրքն · զորս վիրաւորեցայ ·
ք՛ որովք վիրաւորեցայ ։ Զաք · 13 · 6 ։ Ար
համարձակեն զարհամարհանս ։ Երեմ · 12 · 1 ։
Ադաւէ զադաւութիւն · Երեմ · 8 · 10 ։ Սոյն-
պէս է և Երեմ · 13 · 19 ։ և 23 · 31 ։ Առակ · 1 · 5 ։
և յայլ բազում տեղիս ։
Իսկ յորժամ ասի , զքարի , կամ զփայտի հար-
կանել · և կամ զգետնի զարկանել , իմացել
լինի , հարկանել ՚ի քար , կամ ՚ի փայտ · և
կամ ՚ի գետին ։ Սաղ · 136 · 9 ։ և 90 · 12 ։ Առակ ·
Երեմ · 13 ։ Յովհ · 18 · 6 ։ Սոյնպէս մինչ ասի ,
զամօթի հարկանել , նշանակէ , ՚ի յամօթ
հարկանել , որ է կարի ամաչել ։ Եզեկ · 7 · 8 ։
ըստ այսմ մինչ ասի , Զահի հարկանել ,
իմանի · ՚ի յահն հարկանել , որ է ահաբե-
կել ։ Ղուկ · 24 · 5 ։ Եբր · 11 · 7 ։ Սոյնպէս մինչ
ասի , զդողման հարկանել , նշանակէ , ՚ի դո-
ղումն հարկանել · որ է սաստիկ դողալ ։
1 · Մակ · 2 · 24 ։
Դարձեալ տառս այս , զ . երբեմն մատնէ
՚ի սկզբանս բառից ոմանց · փոխանակ յ
տառիս · զի փոխանակ ասելոյ , յօդ · յօդ-
ւել , յօդուած · և այլն · երբեմն ասի , զօդ ·
Կող 3 · 14 ։ զօդել · 3 · Թագ · 7 · 6 ։ Զօդուած ·
Ովսէ · 1 · հոփ · լիգ ։ Սոյնպէս փոխանակ ասե-
լոյ յանցումն , ասի , զանցումն ։
Դարձեալ տառս այս երբեմն յարէ նախ
՚ի բայս · և յայնժամ այլայլէ զնշանակու-

Թիւ

թիւոց ; և կմ յանելու ՚ի նոյն զառածեալսն, կմ զստակութիւն, և զյարմարութիւն ներգոր-ծութեանց նոյ : և կմ գնի առ ՚ի զօրդ · զի՛ր օրի-նակ · Զերդաւել, զհատուցանել · զեղծանել · զընկենուլ · զգենուլ · զիջուցանել · զիջանել · զելանել · զականել, զանցանել · զտրտմել · զգածել · և այլք բազումք, զորս տեսցես ՚ի վայր ՚ի ստորիս բառիսանց :

Բայց երբեմն յաւելու ՚ի սկզբունս ոմանց ան-ուանց, առ ՚ի զարդ · զի ասեմք արտաւելի, և զարտաւելի · աչացու, և զաչացու · անա-նութ, և զանանութ · ոստ յայս լիցի զինի : Իսկ մինչ ասի, որմ զօրինակս շրջել, իմանի յորմնոյ յորմն շրջել · Կնշու Եղէն · բ : Իսկ յարժամ ասի, զճանապարհօքն · իմանի · ՚ի ճանապարհին : Ղուկ · 24 · 32 · և 35 : Մարկ · 9 · 32 : Եւ կմ իմանի՝ ընդ ճանապարհն : Թուոց · 21 · 22 : 2 · Օրին · 2 · 27 :

ԶԱ

Զազիր · զրի · րւ · րց · րւք : || վատթար · կմ ագեղ · կմ գարշելի · կմ աղտեղի · Ծննդ · 41 · 3 :

Զազրաբերան · ի · իւ · ից · իւք · կմ օք : || զզազիր բերան ունօղ · կմ պղծախօսութեան · կամ պղծախօս բերան :

Զազրագործ · ի · աւ · աց · օք : || գործօղ զիրս գարշելիս, և կմ զհեշտասիրական և զխա-ռնակական գործս, կմ պղծագործ :

Զազրադէմ · դիմի · աւ · աց · օք : || ագեղ տես-լեամբ, կմ գարշելի դիմօք · կամ գարշա-տեսիլ :

Զազրաթորմի · մւոյ · եաւ · միք · եաց · եօք : || Եղանէ սա ՚ի թարմ բառէն · որ է ար-մատ թրմել բային, և նշանակէ թրջել, կմ խոնաւ իրօք կակղացուցանել և շաղել : որպիսի է և դառնաթորմին, և խաղաթորմին : Աստի զազրաթորմին նշանակէ զազրութեամբ լցեալ, կամ աղտեղութեամբ, և պղծութեամբ շաղեալ, և թրմեալ · որպիսիք են քրտնա-ծին ոջիլք, ճճիք, և որդունք, և այլք · որք յառաջականութեամբ յառաջանան, կմ զազ-րութեամբ լցեալ : Նարէկ · կթ, և Լամբրօն :

Զազրալի · լւոյ · եաւ · եաց · եօք : || լի զազ-րութեամբ · կմ գարշելի :

Զազրալուր · լրոյ · ով · ոց · ովք : || այսպէս հոլովեցեալ նշանակէ զզազիր, և զգարշելի բանն ; որ լսեցեալ լինի :

Զազրալուր · լրի · իւ · ից · օք : || այսպէս հո-լովեցեալ նշանակէ զլուրն զազիր լրոց և բանից :

Զազրաձայնակաչ : (Նախդրիւ հոլովի ·) || զա-զիր ձայնիւ կարկաչօղ · կմ զզուելի ձայ-նիւ ճչենօղ :

Զազրահոտ · ի · իւ · ից · իւք : || զգարշելի, և զզուելի հոտ ունօղ · կմ ժահահոտ :

Զազրանամ · ացայ · ացիր · ալ : (Ընդմէջ ·) || գարշանալ · կմ գարշելի լինել · կմ աղ-տեղանալ :

Զազրապատում · տմի · իւ · ից · իւք : || զզազիր, և զգարշելի բանս պատմօղ :

Զազրատեսակ · ի · աւ · աց · օք : || զազրատե-սիլ, կմ գարշատես · կմ ագեղ կերպարա-նօք · կմ գարշադէմ :

Զազրատեսիլ : (Նախդրիւ հոլովի ·) || ու-նօղ զտեսիլ գարշելի · կմ ունօղ զաղտեղի, և զզուելի կերպարանս :

Զազրացուցանեմ · ցուցի · ցի · ել : (անցողա-կան ·) || զզուելի առնել · կմ աղտեղել · կամ գարշեցուցանել · կամ ապականել : Ժողով · 10 · 1 :

Զազրոտ · տոյ · եաւ · կմ ով · եաց · եօք : || շաղախեցեալ զազրութեամբ, կմ պիղծ · կմ պղծալից · որ երբեմն ասի գիտոյ, զի կոչե-լոց զնա անարգական անուամբ : 3 · Թագ · 11 · 33 :

Զազրութիւն · թեան : || գարշութիւն · կմ աղ-տեղութիւն · և կամ ագեղութիւն · կմ պղծու-թիւն : Եզեկ · 5 · 4 :

Զածած · ի · իւ · ից · իւք : || զաւակ, կմ ծը-նունդ · կմ փոքրիկ մանուկ, կամ տղայ : և երբեմն փոքրիկ, կամ սակաւաւոր : Եսայ · 41 · 14 :

Զակածանեմ · կածի · եա · ել : (Ներգործ ·) || տածել, կմ սնուցանել · կմ բուծանել :

Զականեմ · եցի · եա · ել : (Ներգործ ·) || տեսանել · կմ նշմարել · կամ նկատել : Յոբ · 24 · 15 :

Զակատիմ · եցի · եայ · իլ : (Ձայնակր ·) || կա-տակել · և ծաղր լինել · կամ մոլորել, և վարանել · կմ յիմարել · և կմ մոլել : Նա-րէկ · ճ : Իսկ երբեմն առեալ լինի փոխաբանաւ սաստիկ ցանկալոյ · կամ առփալոյ, որով երբ թէ յիմարի ոք և մոլի : Խորէն · ա · յա-ռաջաբանութ :

Զահիհարկանիմ · զահի հարայ · հարիր · իլ : (Ձայնակրական ·) || երկնչել · կամ զարհուրե-լ · կմ ահիւ հարկանիլ : Ծննդ · 20 · 8 : և 28 · 17 :

Զառփառփումն : (Նախդրիւ հոլովի ·) || ան-կայուն · կմ անհաստատ · կմ խախուտ · կմ դիւրաշարժ · կամ անցաւոր · և կմ շուղին : Իմաստ · 4 · 4 : և 9 · 14 :

Զամբիւղ · կմ զամբիղ · ոյ · ով · ոց · ովք : կամ իւ · ից : || անօթ ինչ հիւսեալ ՚ի տե-րևոց արմաւենեաց · կմ ՚ի պրտուեաց · և յայլոց նմանեաց · ռամկ · զէնպիլ : Մարկ · 8 · 20 :

Զայգոյ · (մակբայ ժամանակական ·) || նշանակէ ՚ի հեռանալ օրն · կմ ՚ի վաղորեան առաւօտուն · ասասի մինչ անխզայգոյ զառ-կին, իմանի ընդ առաւօտն հեռանալ ա-ռաւօտն զառկին : Թուոց · 33 · 3 : և Ցետուց · 5 · 11 : Եւ ասասա է, զի յայգի մերում մինչ ՚ի հեռանալ օրն մահահանաւն տրուք մի հոգւոյ մեռելոյն տուն զանման ուտելիս աղ-քատաց, կոչեն այգոյ :

Զայրագին · գնի · իւ · ից · իւք : || լի զայրաց մամբ, կմ բարկացեալ սրտիւ ՚ի ներքուստ : 2 · Մակ · 14 · 45 : Իսկ երբեմն նշանակէ արա-մագին · կմ վշտագին · կմ ցասագին : Ղուկ · 6 · 10 : և Տօբ · 3 · 1 :

Զայրագնիմ · եցայ · եայ · իլ : (Ձայնակր ·) || բարկանալ, և սրամտել · և կմ ՚ի ստամբու-

թէ բարկութեան զգեստ իւր երեւեցուցանել իբրեւ զգոյն հրոյ։ Գործ. 4. 2։

Զայրանամ. ացայ. ցի՛ր. անալ։ (Ընդ. միջ.) || բարկանալ. կամ կռուելի։ Ծննդ. 45. 24։ Եւ մերթ կատաղել. կամ մոլեգնիլ։ Ովս. 7. 5։ մերթ եւս սաստկանալն ցաւոյն։ ռամկ. աղեկեալ։ Եւ մերթ մի՛ վշտանալոյ սրտին, յագենալ հանել. կամ ցաւիլ եւ նեղիլ։ Մարկ. 8. 12։

Զայրացեալ. ցելոյ. ով. ոց. ովք։ || բարկացեալ, կամ կատաղեալ։ Իսկ մերթ նշանակէ տռուել զօրացեալն, կամ սաստկացեալն՝ որ սաւ զցաւոց. կամ զախտից. եւ զհիւանդութեանց. որպէս Մարկ. 5. 26։ ռամկ. աղէկ եղած։

Զայրացութիւն. թեան։ || զայրացուցումն. կամ բարկացուցումն. եւ կամ գրգռումն։ 4. Թագ. 23. 26։

Զայրացուցանեմ. ցուցի. ցո՛. անել։ (Անցողակ.) || բարկացուցանել. կամ վշտացուցանել. կամ գրգռել։ 1. Կորն. 8. 12։

Զայրոյթ. ութի. իւ. եց. իւք։ կամ օք։ || զայրացուցումն. կամ բարկութիւն. կամ սրտմտութիւն։ Իսկ մերթ նշանակէ զբորբոքումն, կամ զեռացումն. կամ զսաստկացումն ախտից. կամ վիրաց։ Ղեւտ.։

Զայրոյց. ի. աւ. աց. օք։ || զայրացումն. կամ ցասումն։ եւ մերթ նշանակէ զսաստկացումն, կամ զբորբոքումն ցաւոց եւ ախտից։

Զանազան. ի. իւ. եց. իւք։ || այլազգս. կամ կերպ կերպ. եւ կամ այլ եւ այլ։

Զանազանակ. ի. աւ. աց. օք։ || զանազան, կամ այլազգս. կամ այլ եւ այլ։ Նարեկ. ԶԷ։

Զանազանեմ. եցի. եա՛. ել։ (Ներգործ.) || այլափոխացուցանել։ եւ մերթ բաժանել. կամ որոշել. կամ տարորոշել։

Զանազանութիւն. թեան։ || այլափոխութիւն. կամ այլեւայլութիւն. կամ տարբերութիւն։

Զանալութ. լութոյ. ով. ոց. ովք։ || տե՛ս Անալութ։ Խորէն. յուղարկագրութ.։

Զանգակ. ի. աւ. ագ. օք։ || է ծոցաւոր եւ խոր կերտուած ինչ թուճեղէն. որ ունի ՚ի մէջ իւր կախեալ զլեզուակ ինչ, որով հնչեցուցանի, եւ յայսպիսեաց ոմանք են մեծք. զորս պարզապէս քարշեն եւ հարկանեն։ Իսկ ոմանք փոքրիկ՝ զորս գաւիրքն մեծամեծք հնչեցուցանեն յեկեղեցւոջ։ Իսկ մերթ նշանակէ զփոքրիկ բոժոժանման զանգակիկն. եւ կամ զբոժոժն. որ ռամկ.՚ կոչի չընկըրաղ։ Ելից. 28. 33։ եւ 39. 23։ եւ 2. Մնաց. 4. 13։

Զանգակագանչ. ի. իւ. եց. իւք։ || զանգակաւ ձայն հանող. կամ զզանգակ հնչեցուցանող։ Իսկ մերթ նշանակէ զգանչումն զանգակի. կամ զհնչումն. եւ զձայն զանգակին։ եւ մերթ զաւազանի զձայն եւ զհնչումն զանգակի։ Նարեկ. ԶԷ։

Զանգակատուն. տան. տամբ. տանց. տամբք։ || շինուած ինչ աշտարակաձեւ, յորում կախել պարզապէս զզանգակս, հնչեցուցանելն։

Զանգանեմ. եցի. եա՛. ել։ (Ներգործ.) || զանգել, որ է զջուրն ընդ ալեր խառնելով թրել. ռամկ. շաղել։ Իսկ մերթ առեալ լինի փոխանակ խառնելոյ եւ շփոթելոյ զոր եւ իցէ իրս։

Զանգեմ. կամ զանկեմ. եցի. եա՛. ել։ (Ներգործ.) || խառնել. կամ շաղել. եւ ՚ի այսմ զանգել ասի՝ զալիւրն ընդ ջրոյ խառնելն, եւ թրելն. եւ զայլս խմորեղէնս իւղով խառնելն, եւ տոգորելն. կամ իւղով բաղադրելն. եւ յօրինելն։ Ելից. 29. 2։ Ղեւտ. 2. 4. եւ 5։ Թուոց. 7. 13։ եւ 15. 4։ ըստ այսմ երբեմն զոր եւ իցէ իր ՚ի միմեա[նս] [խառ]նելն, եւ շփոթելն, զանգել կոչի. ՚ի այսմ Նարեկ. ԿԷ։ Քրտամբք յաւելի արեամբն զանգեալ. ՚ի խառնեալ։ Իսկ մերթ նշանակէ շաղել. կամ մածել. կամ կցել. եւ բեւեռել զոք ՚ի մոլութիւն ինչ. կամ ՚ի սէր աշխարհի. եւ այլն։ Ողբ. 1. հատ. Ը։

Զանգիչ. (Նախադրիւ հոլովի.) || զանգող, ՚ի զջուր ընդ ալեր խառնող. ռամկ. շաղող։ Իսկ մերթ նշանակէ զայն, որ առնէ զոր եւ իցէ զանգուածս, կամ զխառնուածս, եւ զբաղադրութիւնս։

Զանգիտանամ. ացայ. ցի՛ր. անալ։ (Ընդմիջակ.) || երկնչիլ. կամ զարհուրիլ. կամ ահաբեկ լինիլ։ Խորէն. Գ. գլ. 37։

Զանգիտեմ. եցի. եա՛. ել։ (Չեզոք.) || երկնչիլ, կամ սրտաբեկ լինիլ. եւ կամ զարհուրիլ։ Ելից. 13. 17։ եւ Յոհ. 14. 27։ եւ 2. Պետ. 2. 10։

Զանգիտեցուցանեմ. ցուցի. ցո՛. ել։ (Անցողական.) || երկեցուցանել. կամ զարհուրեցուցանել։ 2. Օրէն. 20. 8։

Զանգիտութիւն. թեան։ || երկչոտութիւն. կամ երկիւղ. կամ զարհուրումն. կամ վախենալն։

Զանգիտող. ողի. իւ. աց. օք։ || երկչոտ. կամ վախկոտ։ Իմաստ. 9. 14։

Զանգուած. կամ զանկուած. ոյ. ով. ոց. ովք։ || ո՛ եւ իցէ խառնուած, որ ՚ի բազմաց նիւթոց բաղադրեցեալ՝ լինի գունդ ինչ. եւ կամ թանձր մարմին իմն. եւ ՚ի այսմ զանգուած ասի ալեւրն ընդ ջրոյ խառնեալ եւ թրեալ։ Ելից. 12. 34։ 1. Կորն. 5. 6։ Սոյնպէս զանգուած կոչի կաւն ընդ ջրոյ խառնեալ. եւ գունդ ինչ եղեալ, յորմէ անօթ բրուտի կազմի։ Հռոմ. 9. 21։ ըստ այսմ եւ մարմին մարդոյ, ըստ որում ՚ի բազմաց [illegible] բաղադրեցեալ զմի ինչ կացուցանէ՝ զանգուած ասի։ Նարեկ. ՂԸ։ եւ ՚ի գովեստ Խաչին։ եւ Ղեւտոն։ Սոյնպէս եւ այլ ո՛ եւ իցէ խառնուած, ՚ի խառնեցեալ իր. յորմէ մի ինչ ելանէ՝ զանգուած կոչի։ Հռոմ. 11. 16։ Իսկ մերթ զանգուած ասի մեծ մարմին ինչ երկաթոյ կամ գունդ ինչ արծաթոյ, եւ այլոց հրահալելեաց։ ռամկ. [illegible]։ Սիրաք. 22. 18։

Զանգիկ. զանգակի. աւ. ագ. օք։ || ծառայ. կամ սպասաւոր։ Իսկ ՚ի գիրս Մծբն. ՚ի ճառն [illegible] ասի առ հաստուցումն մանկանց՝ զանգիկ [illegible] նշանակէ առել. առ հաստուցումն մանկանց՝ ծառայական աղանդին. որով [illegible] մանկունս [illegible], որ թագաւորին ծառայօղ. կամ ծառայութե հետեւող։ Արդ [illegible]

կարասս, և 'ի Հրէորս մանկանցն առ 'ի քննել զգնութիւն ատամնղաց . և պահոց , և ծամածք ծախէին զկերակուրս , զի բարերդէս ծառայեացն աստեղագիտութեան . և զի գե րեալ էին զանձինս կերակրոց 'ի ծառայու թե արքայական սեղանոյ , մի այսուհետև կա լցուն մանկունքն . զի ծառայականք . կմ ծառայողք :

Զանխլաբար : (մակբայ ծածկական .) || ծածկապէս . կմ լռելեայն . կմ գաղտուկ . կամ առանց գիտացուցանելոյ : Խորէն . Գ . գլ . 38 :

Զանխլանամ . ացայ . ացիր . նալ : (ընդ.միջ.) || ծածկիլ . կմ գաղիլ . կմ ղօղիլ . կմ թաքչիլ . և կմ անյայտ լինիլ : Լամբրօն : Իսկ մերթ նշանակէ զանմտանալն . կմ զանգիտանալն : Կիւրղի պարապ .

Զանխլացուցանեմ . ցուցի . ցո . նել : (ան ցող .) || գաղել . կմ թաքուցանել . կամ ղօղել : Լամբրօն :

Զանխլիմ . եցայ . եաց . իլ : (ձայնակր .) || տե՛ս զԶանխլանալ :

Զանխլութիւն . թեան : || գաղտնութիւն . կամ թաքուստ . և կմ ղօղումն : Լամբրօն :

Զանխուլ . (նախադրբէ հոլովի .) || ծածուկ . կմ անյայտ . կմ գաղտնի . կամ թաքուն . Նարեկ . 'ի Գովեստ Խաչին : Եւ 1 . Թագ . 25 . 20 . ուր ասի՝ իջանել զանխուլ լերինն . իմա նի՝ իջանել ընդ ծածուկ . և անյայտ ճա նապարհ լերինն : Իսկ մերթ վարի մակ բայապէս , և նշանակէ զանխլաբար . զի 'ի ծածուկ . կմ ծածկապէս : Խորէն . Գ . գլ . 24 :

Զանկապան . ի . աւ . աց . օք : || սանձապան . զի ապանելիք , որով զգետատճորի և պահ պանի սրունգն . և այսու խնամի զուլարայն . զի լորայն . և կմ փոխասայոցն . և այլք նմանք : Դանի . 3 . 21 :

Զանկեմ . եցի . եա . ել : կամ Զանկանեմ . զանկի . զանկ . ել : (ներգործ .) || տե՛ս զԶանգելն : Մծբն . ժա :

Զանկուած . ոյ . ով . ոց . ովք : || տե՛ս զԶան գուածն : Նարեկ . ղէ :

Զանց : || անցումն . կմ անցք : Եւ սա ընդ բայի շարակցի այսպէս . առնել զանց . կմ զանց առնել . և նշանակէ անփոյթ լինել . կմ անտես առնել : Եսայ . 33 . 21 : Եւ կմ այսպէս , զանց լինել . և նշանակէ վրիպել : ըստ այնմ : Եբրէր . 10 . 5 . Զի ոչ զանց ե ղև 'ի նոցանէ բանն մի :

Զանցանեմ . զանցի . զանց . ել : (չէզոք .) || անցանել . ռամկ . անցնիլ և ըստ այսմ ասի՝ զան ցանել զերամբք . կմ զանցանել ը ցանցս . կմ զանցանել ժամանակի . և այլն : Լամբրօն : Իսկ մերթ յանդգնիլ . կմ քան զչափն անցա նել : 1 . Թեսաղ . 4 . 6 : Մերթ և նշանակէ գերա զանցել . կմ յաղթօղ լինել . կմ վերամբառ նալ : 2 . Մակ . 4 . 24 : մերթ և նշանակէ յառա ջել . կմ յառաջ անցանել : 2 . Մակ . 12 . 31 : Իսկ անցիք զանցիք բառն՝ տե՛ս 'ի բառն Անցա նել : Մերթ և նշանակէ զանց առնել զիրք ինչ . կմ յանցանել զօրէնք : մերթ և նշանակէ՝ վրիպել . կմ խռովել . և ըստ այնմ ասի . զուցէ ինչ զձեռք զանցա նիցէ . զի վրիպեսցէ 'ի ձեռն : Ոսկէ . 1 . հատ . Գ :

Զանց առնեմ . արարի . արա . նել : (չէզոք .) || անփոյթ լինել . կմ անհոգանալ . կամ անտես առնել . զի 'ի տեսանելն զգործ ինչ առնելի , ոչ առնել . կմ անհոգ լինելով , և 'ի բաց թողլով յառաջ անցանել , և զը նալ : Եւլեւ . 23 . 5 : Իմաստ . 10 . 8 : Մատ . 6 . 48 : Մերթ և ներել : Մեխ . 7 . 18 :

Զանցառու . ուի . աւ . աց . օք : || զանց առ նօղ . կմ անփոյթ լինող զիրք՝ որք առնե լիք են :

Զանցառութիւն . թեան : || անփոյթ լինել . կմ տեսանել զիրս առնելի , և ոչ առնել . կմ անհոգութիւն :

Զանցումն . ցման . մամբ . մանց . մամբք : || զանցառութիւն . կմ յանցումն . կմ անփոյթ լինելով 'ի բաց թողումն :

Զանցուցանեմ . ցուցի . ցո . նել : (անցող .) || անցուցանել . ռամկ . անցնել : 3 . Մակ . 5 . 7 : Իսկ մերթ նշանակէ ոչնչացուցանել . կմ եղծանել զօրէնս . կմ զխափանումն . կմ ապա զանց առնել : Թուոց . 30 . 13 . և 14 . և 16 : Մերթ և նշանակէ՝ աւաւելացուցանել . և ը այսմ է Եզեկ . 23 . 11 . ուր ասի՝ զանցոյց զպարծանկութիւն ապականութեան քերոյ :

Զաշացու . ցուի . աւ . աց . օք : || նա՝ որ կաշ ռառէ , և զիրն 'ի հետուստ ոչ կարէ տե սանել . կմ զխացեալ աչս ունող . կմ զկուրա ացաց ունօղ . կմ կոյր : 2 . Պետր . 1 . 9 :

Զառածանեմ . ածի . եա . ել : (ներգործ .) || Թիւրել . կմ խոտորեցուցանել . կմ վրի պեցուցանել . կամ յետս դարձուցանել . կմ յետս ընկրկել . կմ յետս նահանջել : 3 . Մակ . 5 . 15 : և Տիմ . 1 . 14 : Իսկ մերթ նշա նակէ զանցուցանել . կմ ոչնչացուցանել : 'ի Հարց հաւր . իղ : Մերթ և նշանակէ յի մարեցուցանել . կմ մոլորեցուցանել :

Զառածեալ . ելոյ . ով . ոց . ովք : || խոտո րեալ . կմ թիւրեալ . կմ վրիպեալ . կմ մոլորեալ . կմ յետս ընկրկեալ : Նարեկ . Է . և կդ : Իսկ մերթ նշանակէ զյիմարեալն , և զափշեալն :

Զառամանամ . ացայ . ացիր . նալ : (ընդ.միջ.) || 'ի խորին ծերութիւն հասանիլ . կմ առա ւելի ծերանալով լքանիլ . և անկանիլ միտ միով , և ցնդիլ մտօք : ռամկ . խոժիլ : Լամբր :

Զառամութիւն . թեան : || խորին ծերութիւն . յորում պակասեալ միտքն 'ի խոնաւու թէ , և 'ի հիւթոյ , տկարանայ , և լուծա նի . և ամանց պատահի ցնդիլ մտօք . և այս առի հասակ վեցերորդ . որ սկսանի 'ի ութսներորդ ամէն , և անէ մինչև ցմահ :

Զառանցանք . անաց . օք : (անեզական .) || տե՛ս զԶառայանցանքն :

Զառանցեալ . ցելոյ . ով . ոց . ովք : || առան ցեալ . կմ փոփոխեցեալ : Սաղմ . 44 . 1 : և 59 . 1 . 'ի խորագիրսն :

Զառանցեմ . եցի . եա . ել : (չէզոք .) || Թիւ րել . կմ մոլորիլ . կմ խոտորիլ : Ոսկէ . 2 . հատ . լէ : Իսկ մերթ նշանակէ յիմարել . կմ ապշել . կմ թմրել . կմ ցնդիլ մտօք .

Digitized by Google

կամ շնորհք · այդ հանդերձ զառամեալ ծե-
րոց · կամ աղքատաց · և այլոց նմանեաց ։
Ոսկէ · 2 · հատ · Ժ · և ԺԷ ։

Զառանցուցանեմ · ցուցի · ցո · նել ։ (ան-
ցող ·) || խոտորել · կամ մոլորեցուցանել · կամ
պատրել ։ Կողոս · 2 · 4 ։

Զառաջինն ։ (մակբայ դասական ·) || նախ ·
կամ 'ի սկզբանն · կամ յառաջագոյն · և կամ
նախ քան զամ ։ Ծննդ · 13 · 3 ։ Յեսուայ · 5 · 7 ։
1 · Մակ · 1 · 24 ։

Զառեկ · ի · աւ · աց · օք ։ || տարրակ թղթացու-
ցեալ ոսկւ ոսկւոյ , կամ արծաթոյ ։ ռամկ ·
վարակ ։

Զառիթափ · ի · իւ · եց · իւք ։ || հակեցեալ
դէպ 'ի վայր · կամ զառ 'ի վայր ։ ռամկ · ենիշ ։
Եւ այս մերթ առի զձանապարհէ · և մերթ
զայլոց իրաց , որք տես 'ի վար են ։ 3 · Թագ · 7 ·
29 ։ և Եզեկ · 48 · 1 ։

Զառիկ · կի · աւ · աց · օք ։ || է ներկ ինչ որ
երևանէ յերկրէ՝ ընդ ոսկերան · և է իբրև ըղ-
քար , զոր լուծեալ 'ի գործ ածեն 'ի ներկարս ·
որոյ երեք են տեսակք · կարմիր · սպիտակ ·
և դեղին · և ազնիւն ոսկեգոյն լինի , և փայ-
լուն , յորմէ ելանէ հոտ ծծմբոյ · և է ընու-
թբ թիւնաւոր , և զնասարեր , մանաւանդ
սպիտակն , զոր բարեխառնեալ չիրիկ ձի-
թով · ոչ շռայլութեամբ 'ի գործածեն բժիշկք ։
Եւ կոչի սա 'ի պարսից , և յարաբացւոց՝
զռնեխ · և յոմանց զառնիխ ։

Զառ 'ի հրոյն ։ || տես Առ 'ի հրոյն ։

Զառ 'ի վայր · ի · իւ · լց · լւք ։ կամ ակ · օք ։ ||
դէպ 'ի վայր հակեալ տեղի · կամ դար 'ի վար
ճանապարհ ։ ռամկ · ենիշ ։ Յեսու · 10 · 10 · և
11 ։ 2 · Մնաց · 20 · 16 ։ և Ղուկ · 19 · 37 ։

Զառ 'ի վեր · զառ 'ի վերի · իւ · եց · իւք ։ կամ
աց · օք ։ || դէպ 'ի վեր ընկողմանեալ տե-
ղի · կամ ճանապարհ · ռամկ · դըշըլըք · կամ եօ-
խուշ ։ Յեսու · 18 · 18 ։ 4 · Թագ · 9 · 27 ։

Զառյանցանք · անաց · օք ։ (անեզական ·)
|| յիմար խօսք · կամ խելագարական բան ·
կամ յիմարաբանութիւն · կամ աղճատանք · կամ
շաղփաղփութիւն · կամ առասպելաբանութիւն ·
կամ անմտութիւն · և կամ խելացնորութիւն ։
Ոսկէ · 2 · հատ · ԻԳ · և ԻԷ ։

Զառնաւուխտ · ի · իւ · եց · իւք ։ || պատմու-
ճան , կամ զգեստ նկարակերպ , կամ ծաղկեալ
ոչ պէսպէս նկարուք նախշեցեալ ։ Եւ կամ
զգեստ գործեցեալ , և նկարեցեալ կրկ-
նապատկեալ ոսկեթելիւ · ռամկ · զէրպաֆ ։
Եզեկ · 16 · 13 ։

Զատ · (նախդրիւ հոլովի ·) || որոշեալ · կամ
զատեալ · կամ մեկնեալ ։ Իսկ մերթ է նա-
խադրութիւն , որ խնդրէ զհոլովն բացառա-
կան · զոր օրինակ · զատ 'ի նոցունց · և նշա
նակէ 'ի բացեայ · կամ մեկուսի ։

Զատակեմ · եցայ · եալ · ել ։ (ձայնակր ·) ||
յիմարիլ · կամ ափշիլ · կամ մոլորիլ · կամ կա-
տաղիլ , և ծաղր լինիլ ։ Նաւէն · ԽԷ ։

Զատանեմ · զատի · եա · ել ։ (ներգործ ·) ||
բաժանել , կամ զատել · կամ մեկնել · կամ զա-
նազանել · կամ որոշել ։ Ղևտ · 14 · 46 ։ Գաղ · 2 · 12 ։

Զատեմ · եցի · եա · ել ։ || նոյն է ընդ վերինս ։

Զատիկ · տկի · իւ · կամ աւ · աց · օք ։ || բառ
եբրայեցւոց ասի , պասեք , որ թարգմա-
նի , անցք · կամ ելք ։ այդ և 'ի մեզ առաջա
բանի , զատուցմն ։ քանզի յայնմ աւուր ե-
լին և զատեցան որդիքն իսրայէլի յեգիպ
տոսէ ։ Ելից · 12 · 11 ։ Եւ հետևաբար նշա-
նակէ զատնն աստուածադրական եղեալն ի
բայէլի յեգիպտոսէ ։ Ղևտ · 23 · 5 ։ որպէս
և այժմ քրիստոնեայք այսու բառիւ իմա
նան զապրեցարձական տօնն յարութեան
ՔՆ ։ Եւ մերթ նշանակէ զգառն զատկա-
կան , զոր ուտէին հրեայքն ։ Մատ · 26 · 17 ։

Զատնում · զատայ · ուցեալ · նուլ ։ (չէզ-
ոքն ։) || զատիլ · կամ որոշիլ · կամ բաժանիլ ·
կամ մեկնիլ · կամ զանազանիլ · կամ տարրե-
րիլ ։ Իսկ մերթ նշանակէ , մեկուսանալ ·
կամ առանձնանալ ։ Ողբ · 1 · 1 ։

Զատուցանեմ · տուցի · ու · ել ։ (անցող ·)
|| բաժանել · կամ զատանել · կամ անջատել , և
կամ 'ի բաց որոշել ։ Ելից · 13 · 12 ։ և Աւետ ·
8 · 27 ։ Իսկ Կոր · 1 · 19 · նշանակէ՝ արգե-
լուլ ։

Զատուցեալ · ցելոյ · ով · ոց · ովք ։ || է ընդ-
ունելութիւն զատուցանել բային · որով նը
շանակի , բաժանեցեալ , կամ որոշեցեալ ։
Իսկ մերթ ԶԷ առանձին ածաշունչ գրոց նշա
նակէ զգիւղն այսորիկ քաղաքին · կամ
զաւանն · և կամ զշէնն , որ է բացատ 'ի
քաղաքէն ։ Ղևտ · 25 · 34 ։ Թուոց · 35 · 3 ։ Յեսու ·
14 · 4 ։ 1 · Մնաց · 6 · 55 ։ Իսկ 1 · Մնաց · 27 · 14 · և
15 ։ յորս ասի 'ի զատուցեալս նորա իմանի
'ի մասն բաժնի նորա ։ Բայց Թուոց 32 · 12 ·
ուր ասի 'ի մեզ ԶԷ եօթանասնից · քանզի
որդին յեփոնեայ զատուցեալն · ԶԷ ամենց
է մակաբնուն քանզեբայ , որ ոչ համաձայնե
լով տասանց ընկերաց , այլ միայն ԶԷ յե-
սուեայ , կոչեցաւ զատուցեալ · ոչ 'ի հար-
ծեաց տասանց ընկերացն որոշեալ ։

Զատչիմ · զատեայ · ուցեալ · չիլ ։ (ձայնակր ·)
|| նոյն է ընդ զատանուլ բային · այդ և փախ-
չիլն , և փախնուլն · պակչիլն · և պակնուլն ։
Խորէն · Բ · գլ · 77 ։ և Գ · գլ · 48 ։

Զարգանամ · ացայ · ցիր · անալ ։ (չէզոքն ·)
|| յառաջանալ · կամ աճիլ · կամ յառաջադի-
մել յոյժ եւ լցել իրս ։ Փիլիպ · 1 · 25 ։ Իսկ մերթ
զօրանալ ։

Զարդ · ու · 'ի զարդուէ · ու · ուց · ուք ։ || զար
դարանք · կամ պաճուճանք ։ Իսկ մինչ ասի
զարդ երկնից՝ իմանին աստեղքն · և լու-
սին , և արեգակն ։ 2 · Օրին · 17 · 3 ։ Իսկ մինչ
ասի զարդ առակաց , իմանի , զօրութիւն ·
կամ ուժգնութիւն առակաւոր բանից ։ Ժողով ·
12 · 9 ։

Զարդախօս · ի · աւ · աց · օք ։ || պաճուճա-
բան · կամ գեղեցկախօս ։ Իսկ մերթ նշա
նակէ զնա՝ որ կեղծմամբ պաճուճեալ և
զարդարեալ զբան իւր խօսի ննգութեամբ ·
կամ զարդարուն և պատիր բանիւք խօսող ։
Մծբն · ԺԹ ։

Զարդապաճոյճ · ճուճի · իւ · եց · իւք ։ ||
պէսպէս զարդուք պաճուճեցեալ · կամ գե-
ղեցկապաճոյճ · կամ զարդարուն ։

Զարդասէր. սիրի. աւ. աց. օք: ‖ սիրող զարդուց. կամ սիրող պճնեցմանց. և զարդարանաց:

Զարդարեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) ‖ զարդուք յօրինել. կմ պճնել. կմ պաճուճել. կմ գեղազարդել. կամ զարդարութ առնել: ornο, κοσμέω.

Զարդարուն. (Նախդրիւ հոլովի.) ‖ ունօղ զզարդարանս. կմ զարդարեցեալ. և կամ պճնեցեալ և պաճուճեցեալ:

Զարդիս. (մակբայ ժամանակական.) ‖ այժմ. կմ 'ի ներկայումս: Գործ. 5. 38: տե՛ս զԱրդի:

Զարթնանամ. ացայ. ցիր. ալ: (ընդ.միջ.) ‖ զարթնուլ: ռամկ. արթըննալ: Նարեկ. ճդ:

Զարթնում. թեայ. իր. նուլ: (ընդ.միջ.) ‖ արթնանալ. ի քնոյ յառնել: ռամկ. արթըննալ. Մատթ. 1. 24: Մերթ և նշանակէ շարժիլ. կամ դրդիլ:

Զարթնչիմ. կմ զարթչիմ. եայ. չիր. չել: (Հայնակր.) ‖ զարթնուլ. կմ արթնանալ: ռամկ. արթըննալ. Խորէն. ա. գլ. 31:

Զարթուցանեմ. թուցի. թո. անել: (անցողակ.) ‖ յարուցանել 'ի քնոյ. ռամկօր. արթնցնել: Երգ. 8. 4: Եւ մերթ շարժել. կմ դրդել. կմ յորդորել: 2. Մնաց. 36. 22:

Զարկ. կի. իւ. ից. իւք: կմ աց. օք: ‖ է առ մեզ զարկանեմ բային, և նշանակէ զարկումն. կմ զսաստիկ հարուածն: Իսկ մերթ և նշանակէ զմեծ երակն բազկին, զոր կալնուն բժիշկքն առ 'ի ճանաչել այնու զորպիսութիւն հիւանդին: ռամկ. շահ թամար: մերթ և է առ նուագարանի միոյ շրականի, որ ունի զայս ձև, ̂ :

Զարկանեմ. զարկի. զարկ. անել: (Ներգործ.) ‖ հարկանել զգետնի, կմ զքարի. կմ զոսկոյ. և այլն: ռամկ. զարնել: Խորէն. Գ. գլ. 18: ուստի և Յօհ. 18. 6. ուր ասի, զարկան զգետնի. իմանի՝ հարան զգետնի. ռամկ. գետինը զարնուեցան:

Զարկուած. ոյ. ով. ոց. ովք: ‖ բաղխումն. կմ հարուած. կմ զարկումն. Նարեկ. զե: Կա այսմ և հարուածն, որ 'ի յարաբերմանց ստեղծաց հանդիպի: երբեմն զարկուած կոչի: 4. Թագ. 15. 44:

Զարկումն. կման. ման. մանց. մամբք: ‖ նոյն է ընդ վերնոյն: Նարեկ. ղա:

Զարկուցանեմ. կուցի. կո. ել: ‖ հարկանել զգետնի, կմ զքարի, և այլն: Մարկ. 1. 26: Եւ մերթ զմիմեանս բաղխել: Նարեկ. ղե:

Զարհուրագին. (Նախդրիւ հոլովի.) ‖ երկիւղագին. կմ ահագին. կմ սաստիկ զարհուրելի. կամ սարսափելի:

Զարհուրանք. անաց. օք: (անեզական.) ‖ արհաւիրք, կմ ահաբեկութիւն, կմ զահի հարկանութիւն, կմ սասանումն, այլ մերթ հանդիպի 'ի գիշերի. և կմ 'ի տեսանելոյ զինչ զարհուրեցուցիչս: Առակ. 3. 25: և Երգ. 3. 8:

Զարհուրատեսակ. ի. աւ. աց. օք: ‖ զարհուրատեսիլ. կմ զզարհուրելի կերպարանս, և զդէմս ունօղ. կամ ահագնատեսիլ: Նարեկ. ղզ:

Զարհուրիմ. եցայ. եցիր. րիլ: (Հայնակր.) ‖ զահի հարկանիլ. կմ սաստկագոյն յուզեալ. կամ սասանիլ. կամ պակուցանել:

Զարմ. մի. իւ. ից. իւք: ‖ ազգ. կմ ցեղ. կմ սերունդ. կմ ազգ: Եսայ. 14. 22: և Նարեկ. 'ի գովեստ առաքելոց:

Զարմազան. ի. աւ. աց. օք: ‖ զանազան. կմ կերպ կերպ. կմ ցեղ ցեղ. կմ այլ և այլ. կամ պէսպէս. կամ ազգի ազգի:

Զարմազանութիւն. թեան: ‖ պէսպիսութիւն. կամ զանազանութիւն. կմ այլ և այլութիւն:

Զարմանագոյն. գունի. իւ. ից. իւք: ‖ յոյժ զարմանալի. կամ սաստիկ հիանալի. կամ հրաշափառագոյն:

Զարմանագործ. ի. աւ. աց. օք: ‖ սքանչելագործ. կմ նշանագործ. կամ հրաշագործ. կամ հրաշակերտ:

Զարմանագործեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) ‖ սքանչելագործել. կամ հրաշագործել: Իսկ մերթ նշանակէ՝ զարմանալի կերպիւ գործել. կամ շինել զինչ: Նարեկ. ղլ:

Զարմանագործութիւն. թեան: ‖ հրաշագործութիւն, կամ սքանչելագործութիւն. կամ զարմանալի գործողութիւն: Նարեկ. ղլ:

Զարմանագրեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) ‖ զարմանալի կերպիւ գրել. կամ զզարմանալիս գրել: Նարեկ. ղզ:

Զարմանադրեմ. դրեցի. եա. ել: (Ներգործ.) ‖ զարմանալի կերպիւ դնել. և զետեղել: Նարեկ. 'ի տօնին եկեղեցւոյ:

Զարմանազան. ի. իւ. ից. իւք: ‖ աւանել. կամ յոյժ զարմանալի, և կամ պէսպէս և զարմանալի. կամ հրաշազան: 1. Եզր. 1. 10: և Նարեկ. հե:

Զարմանալիք. լեաց. եօք: (անեզական.) ‖ մերթ զարմանալի, և հիանալի. կամ ակնչելի իրք, որք լինին բնականաբար. քանզի պատճառն է անյայտ: և մերթ սքանչելիք. կամ հրաշք. որք եղանին գերբնաբար: Ելից. 34. 10:

Զարմանակերտ. ի. իւ. ից. իւք: ‖ զարմանալի կերպիւ կերտեցեալ. կամ հրաշակերտ: Լամբր.:

Զարմանահրաշ. ի. իւ. ից. իւք: ‖ յոյժ սքանչելի. կամ զարմանալի և հրաշալի. կամ սքանչելահրաշ. կմ զարմանազանիւք: Նար. ղդ:

Զարմանամ. ացայ. ացիր. անալ: (ընդ.միջ.) ‖ մերթ հիանալ. կամ սքանչանալ 'ի վերայ իրի իմիք, որոյ պատճառն է անյայտ: Յօհ. 7. 21: Մերթ և ապշիլ, կմ մոլոր վերանալ. կմ 'ի զարմացման լինել: Սաղ. 30. 23:

Զարմանապանծ. ի. իւ. ից. իւք: ‖ տե՛ս զԶարմանահրաշ:

Զարմանատեսակ. ի. աւ. աց. օք: ‖ հրաշատեսիլ. կմ զզարմանալի տեսակ, և զձև ունօղ:

Զարմանաւոր. ի. աւ. աց. օք: ‖ զարմանալի. կմ սքանչելի. կմ հրաշալի: Նարեկ. հե:

Զարմանուհի. հւոյ. հեաւ. հեաց. հեօք: ‖ զարմանալի. կմ սքանչելի: Եւ առ մեզ իգական նշանակէ, զի միայն զիգացս ասի: Նարեկ 'ի տօնին եկեղեցւոյ:

Զարմանութիւն. թեան: ‖ զարմացումն, կմ

expavesco

զարհուրեցուցանէմ, expavefacere facio, Ezech. 26. 17.

սքանչացումն · կմ՟ զարմանք ։ Նարեկ· խմ ։

Զարմանք ։ (Նախդրիւ հոլովի ·) ‖ զարմացումն, կմ՟ հիացումն ։ Յոբ· 17· 8։ Եւ մինչ ասի, զարմանալ զարմանս, իմանի զարմանալով զարմանալ · կմ՟ հիացմամբ զարմանալ ։ Ամբակ· 1· 5։

Զարմացումն · ցման · ման · մանց · մամբք ։ ‖ հիացումն · կամ սքանչացումն ։ Եւ մերթ ափշումն, կմ՟ վերացումն մտաց ։ Գործ· 10· 10։

Զարտուղեցուցանեմ · ցուցի · ցո · ել ։ (անցող ·) ‖ մոլորեցուցանել · կմ՟ սխալել · կմ՟ ատերիւրել · կամ խոտորեցուցանել, և թիւրել ։

Զարտուղի · ղւոյ · եաւ · եաց · եօք ։ ‖ թիւրեալ, կմ՟ վրիպեալ, կմ՟ սխալեալ · կմ՟ մոլար · կմ՟ հեռացեալ ։ Լոմբրօ ։ Իսկ մերթ է բայի շարակցի այսպէս, զարտուղի հանել ։ ՟ի խոտորեցուցանել · կմ՟ վրիպեցուցանել ։ Եւ կամ այսպէս՝ զարտուղի գնալ · ՟ի խոտորիլ, կմ՟ ատերիւրիլ, կմ՟ հեռանալ · կամ ընդ թիւր ճանապարհն գնալ ։ Լոմբրօ ։ Է այսմ և 'ի Նարեկ· ճ· ուր ասի, զարտուղի սխալեալ, իմանի՝ ընդ թիւր ճանապարհն խոտորեալ, կամ ընդ մոլար ճանապարհ գնացեալ ։

Զարտուղիմ · եցայ · եա՛ց · իլ ։ (ձայնակր ·) ‖ խոտորիլ 'ի ճանապարհէ, կամ թիւրիլ · կամ հեռանալ · կամ ատերիւրիլ ։

Զաւակ · կի · աւ · աց · օք ։ ‖ անուն հասարակ, որ նշանակէ զծնունդն թէ արու իցէ, և թէ էգ ։ Ծննդ· 16· 10 ։

Զաւեշտարար · ի · աւ · աց · օք ։ ‖ կատակերգու · կմ՟ ծաղրածու ։

ԶԲ

Զբաղական · ի · աւ · աց · օք ։ ‖ զբաղելի · ՟ի այն, 'ի յոր լինի զբաղումն ։

Զբաղանք · անաց · օք ։ (անեզական ·) ‖ զբաղումն · կմ՟ հոգովք պարապումն 'ի գործ ինչ · կմ՟ պատաղումն ։

Զբաղասէր · սիրի · աւ · աց · օք ։ ‖ սիրող ըզբաղանաց, և հոգոց · կմ՟ զբաղեալ և պատաղեալ սիրով 'ի գործ ինչ ։ Ոսկէ· 'ի նախերգ ։

Զբաղեցուցանեմ · ցուցի · ցո · ել ։ (անցող ·) ‖ 'ի զբաղմունս արկանել · կմ՟ պատաղեցուցանել · և կմ՟ տարացնդել զմիտս յիրս ունայնս ։ Յակ· 1· 26 ։

Զբաղիմ · եցայ · եա՛ց · իլ ։ (ձայնակր ·) ‖ պատաղիլ · ՟ի 'ի գործ ինչ տարածել զմիտ իւր, և կամ սաստիկ հոգովք պարապիլ 'ի գործ ինչ ։ Եւ մերթ ցրուիլ մտօք աստ և անդ 'ի տագնապէ ։ Յուդիթ· 15· 3։ Եւ կմ՟ դեգերիլ, և տարացնդիլ մտօք, որպէս առնեն մանկունք ։ Իմաստ· 2· 6 ։

Զբաղնում · եցայ · ել · նուլ ։ (ընդմիջ ·) ‖ պատաղիլ · կամ ջանիւ պարապիլ 'ի գործ ինչ · կմ՟ զհոգս ունիլ զամանց իրաց, յորմէ կարի աշխատի միտքն ։ Ղուկ· 12· 29։ Սորին ներկայն, և որք հետևին նմին, է ոչ զբայն պակնուլ ։ Իսկ անցեալն, և որք հետևին, ընդունին ոչ զբայն առնել ։

Զբաղումն · ղման · ման · մանց · մամբք ։ ‖ պարապումն 'ի գործ ինչ հոգովք · կմ՟ պատաղումն ։ և կմ՟ տատանումն մտաց · կամ շփոթական հոգածութիւն ։ Յոբ· 33· 15 ։

Զբօսնիմ · զբօսայ · իր · անիլ ։ (ձայնակր ·) ‖ զբօսնուլ · կմ՟ 'ի զուարճութիւն պարապիլ · և կամ պատաղիլ 'ի գործ ինչ ։ 'Ի վերա հարց · իզ ։

Զբօսանք · անաց · օք ։ (անեզական ·) ‖ պարապումն 'ի զուարճալի իրս · որպիսի է վն՟ սրտաբացութեան շրջագայիլն 'ի պարտէզս, և 'ի դաշտս · և այլն ։ Մերթ ևս նշանակէ զզբաղմունս, և զհոգս 'ի վ՟ր գործոց ։ 3· Թագ· 18· 27 ։ Ըստ այսմ իմանի և այն, որ ասի 'ի ժամագրքի, որ արարեր զմեզ 'ի զբօսանս բարեգործութեան · իբր թէ 'ի պատաղմունս, կմ՟ 'ի պարապմունս բարեգործութեան ։ Մերթ ևս նշանակէ զբարձրութիւն ջուրց, կամ զփքացմունս, ՟ի զուռուցմունս ալեաց · և կմ՟ զալիս ջուրց ։ Սաղմ· 41· 8 ։ և 87· 8։ և 92· 4։ և Քոհղ· 2· 2։ և Յովնան· 2· 4։ Իսկ Դատ· 1· 15 · ուր ասի, զբօսանս ջրոց, իմանին ջրարբի, և պտղաբեր տեղիք · որ եբրայեցերէն ասի, գուլաթմային ։ Է որում գրի · Յեսու· 15· 19։ և քանզի այսպիսի ջրարբի տեղիք էին 'ի վայրս դաշտայինս, և լեռնայինս, վն՟ այնորիկ ասացան, զբօսանք բարձանց, և զբօսանք հովտաց, որ և ասի, գուլաթ վերին, և գուլաթ ներքին ։

Զբօսախնդութիւն · թեան ։ ‖ սէր զբօսանաց և զուարճութեց · կմ՟ զուարճախնդութիւն ։ 'Ի վերա հարց · ՟է ։

Զբօսեալ · սելոյ · ով · ոց ·ովք ։ ‖ մերթ նշանակէ 'ի զբօսանս պարապեալ · իսկ մերթ վրդովեալ, կմ՟ խռովեալ ։ Լոմբրօ ։ ըստ այսմ, մինչ ասի անզբօս, իմանի անխռով, և անվրդով ։

Զբօսնում · սայ · սիր · նուլ ։ (ընդմիջ ·) ‖ պարապիլ 'ի զուարճալի իրս · և կմ՟ վն՟ սրտաբացութեան շրջագայիլ 'ի դաշտս, և 'ի պարտէզս ։ Ծննդ· 24· 63 ։ և կմ՟ զուարճանալ, և զուարթանալ ։ Դատ· 19· 8 ։ Մերթ ևս նշանակէ ուռնուլ, կմ՟ փքանալ · կմ՟ ամբառնանիլ բարձրայօնութ՟ք ։ Սաղմ· 130· 1։

ԶԳ

Զգալի · լւոյ · եաւ · եաց · եօք ։ ‖ որ ինչ ընդ հնգիւք զգայութիւք անկանի · որով իմանի, երևելին · շօշափելին · հոտոտելին · լսելին · և ճաշակելին · ՟ի այնք, որք երևին, շօշափին, հոտոտին, լսին, և ճաշակին ։

Զգածիմ · եցայ · եա՛ց · իլ ։ (ձայնակր ·) ‖ ախտանալ · կմ՟ կրել հոգւով · կմ՟ տողորիլ ախտիւ իւիք · կմ՟ լցեալ լինել կրիւք ։ Յոբ· 22· 12։ 1· Կորնթ· 8· 10։ Եբր· 5· 2։ Իսկ մերթ նշանակէ մածիլ · կմ՟ պարուրիլ · կմ՟ շրջապատիլ ՟ի և իցէ իրօք ։ Յոբ· 29· 5։ մերթ ևս արկանել զիւրև · կամ զգենուլ ։ 3· Մակ· 7· 3։

Զգածումն. ծման. մամբ. մանց. մամբք: || տագնապումն. կամ ախտանալն կրից: Իսկ մերթ զգեցումն. կամ շքեղապատումն: Եսայ. 22. 12:

Զգամ. ացի. ա. ալ: (Ներգործ.) || 'ի ձեռն զգայութեանց ըմբռնել զիր ինչ: Մերթ եւս նշանակէ իմանալ: Մատ. 6. 33: Իսկ 2. Մակ. 3. 35: և 13. 12. յորս առի՝ անձին զգալ, է նմանի զգաստանալ:

Զգայարանք. կամ զգայարանուրք. զրկի. իւ. իւ. իւք. կմ ազ. օք: || զօրութեան. կմ տրամադրեալ 'ի զգայութենէ. կմ յիմացմանէ. Նորէլ. հբ:

Զգայարկիմ. եցայ. եաց. իլ. (Ձայնակր.) || զկեալ 'ի զգայութենէ, և յիմացմանէ:

Զգայական. ի. աւ. աց. օք: || զգայուն. կմ զգացօղ: Նորէլ. իա: Եւ մերթ զգալի: Նորէլ. ղէ:

Զգայակից. կցի. աւ. աց. օք: || կցորդ զգայութեան. կամ կցորդ զգացման:

Զգայարան. ի. աւ. աց. օք: || կազմածն՝ յորում է զգայութիւն, և կարողութիւն զգալ լոյ. որգան. աչք. ականջք. և այլն:

Զգայաւոր. ի. աւ. աց. օք: || զգայուն. կմ զգացօղ. կմ զգայութիւն ունօղ. և կամ իմացօղ:

Զգայութիւն. թեան: || զօրութիւն զգալոյ հնգից զգայարանաց, որք են մարմնեղէն կազմուածք: Իսկ մերթ նշանակէ զզգայարանսն հանդերձ զգայական զօրութեամբ: Նորէլ. ղէ: Մերթ եւս նշանակէ զզգացումն, կմ իմացումն: Նորէլ. ա: Եւ մինչ առի՝ զգայութիւն առնուլ չարեաց. կմ վշտաց. և այլն, իմանի՝ զգալ զպատիժս. և այլն: Ոսկէ. 2. համ. ժբ. և լա:

Զգայուն. զգայնոյ. ով. ոց. ովք: || զգացօղ. կմ ունօղ զզգայութիւն, որպէս զգայ: Իսկ մերթ զգաստ, կմ իմացօղ: 'Ի ճառս հայց. բ:

Զգայնեմ. եցի. եա. ել: (Ներգործական.) || փախել. կմ ժայթքել. կմ 'ի ներքուստ 'ի դուրս ելանել զգաղտնեալն իրս: Լամբրօն: Իսկ մերթ նշանակէ փքալ. տրտմալ. կմ շնչել. կմ փչալ 'ի դէմս. և յերեսս ուրուք: 'Ի ճառս հայց. լէ:

Զգաստ. ի. իւ. իւ. իւք: || լուրջ. կմ ըզգոյշ. կմ արթուն միտօք, և ոչ թմբրեալ: Տիտ. 2. 2: Իսկ մերթ նշանակէ զհամեստն, կմ զծանրակայցն. կմ զազնիւն. կմ զպարկեշտն. և կմ զողջախոհութիւն: Տիտ. 6. 12: և Գործ. 13. 50: Իսկ մերթ նշանակէ զզգօնն, և զխոհեմութիւն: Իսկ 2. Մակ. 12. 5. ուր առի՝ զգաստ եղև, իմանի՝ զգացօղ եղև. կմ իմացաւ. կմ գիտաց:

Զգաստախօս. ի. աւ. աց. իւք: || համեստախօս. կմ զգաստութեամբ, և խոհեմութեամբ խօսօղ. կմ զգոյշ 'ի բանս, և 'ի խօսս:

Զգաստանամ. ացայ. ցիր. անալ: (Ընդմիջ.) || զգօնանալ. կամ արթուն և զգաստ լինել. կամ զուարթ 'ի մէջ իւր ածել: 2. Կորն. 5. 13: Մատթ. 5. 15: Իսկ մերթ պարկեշտանալ. կամ համեստանալ. և կմ զգացօղ և խոհաջող լինել. կմ զգօնանալ:

Զգաստասէր. սիրի. աւ. աց. օք: || սիրօղ զգաստութեան. կամ սիրօղ պարկեշտ և համեստ վարուց:

Զգաստութիւն. թեան: || լրջութիւն. կմ արթնութիւն մտաց. կմ համեստութիւն. և կմ պարկեշտութիւն: Տիտ. 2. 12: Իսկ մերթ զգօնութիւն:

Զգացումն. ցման. մամբ. մանց. մամբք: || մերթ նշանակէ զզգալն զգայութեան մարմնոյ. և մերթ զիմացումն, կամ զմիտս: Սիրաք. 3. 25:

Զգացուցանեմ. ցուցի. ցո. անել: (Անցողակ.) || ծանուցանել. կամ ազդ առնել. կամ յայտնի առնել: Գործ. 23. 15: և Գաղատ. 2. 2:

Զգենում. զգեցայ. ցիր. նուլ: (Ներգործ.) || ագանիլ զզգեստ. կմ արկանել զիւրև զհանդերձ. ռամկ. հագնիլ: Իսկ մերթ նմանութեամբ գնի փոխանակ զգածելոյ. կամ յինքն ընդունելոյ. կմ կրելոյ զշնորհ ինչ. կմ զզօրութիւն: և այլն: 2. Մնաց. 24. 20: 1. Կորն. 15. 53:

ἐνδύω

Զգեստ. ու. ու. ուց. ուք: || հանդերձ. կմ ձորձ. և կմ ծածկոյթ մարմնոյ: Եւ՛ առասցաւ զգեստ, զի զգեցեալ լինի:

Զգեստաւորեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || զգեցուցանել. կամ զգեստ ագուցանել. կամ զգեստով ծածկել: Նորէլ. ղթ:

Զգետնեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || ըզգետնի հարկանել: ռամկ. գետինը զարնել: Ղուկ. 4. 35:

Զգեցուցանեմ. ցուցի. ցո. անել: (Անցող.) տես զԶգեստաւորեմն:

Զգնամ. զգնացի. զգնա. ալ: (Չէզոք.) || շրջել. կմ շրջելով գնալ. ռամկ. [illegible]: Ծննդ. 3. 8: և Մ. 4. 18:

Զգոյշ. գուշի. իւ. իւ. իւք: || շրջահայեաց. կմ զգաստ. կմ արթուն. ռամկ. [illegible]: Առակ. 22. 29. Իսկ մերթ նշանակէ ապահով, կմ անքոյթ. կմ անվտանգ:

Զգուշագոյն. գունի. իւ. իւ. իւք: || յոյժ շրջահայեաց, կմ զգաստագոյն. կմ յոյժ արթուն և նկատօղ զպարագայս իրաց: Ղևտ. 15. 31: Իսկ մերթ նշանակէ զապահովագոյնն. կմ զանքոյթագոյնն:

Զգուշալի. (Նախադրիւ հոլովի.) || զգուշութեան լի. կմ զգուշանալի. և կմ զգուշութեամբ պահելի: Փիլիպ. 3. 1: Իսկ մերթ ապահովութեան լի. կմ ապահովագոյն. կամ յոյժ անքոյթ և անվտանգ: Ոսկէ. 1. հոմ. ժե:

Զգուշակից. կցի. աւ. աց. օք: || այնք՝ որք ընկերքեն 'ի զգուշութեան. կամ 'ի միասին զգուշանան իրք իմիք:

Զգուշանամ. ացայ. ցիր. անալ: (Ընդմիջ.) || զգոյշ. և շրջահայեաց լինել. և կամ ըզգուշութեամբ պահպանել: Իմաստ. 4. 17: և Առակ. 2. 11: Իսկ Մաղաք. 2. 7. ուր առի՝ զգուշասցին գիտութեան, իմանի՝ զգոյշ լիցին առ 'ի ունել զգիտութիւն. և կմ պահպանեսցեն զգիտութիւն:

φυλάσσομαι

Զգուշացուցանեմ. ցուցի. ցո. նել: (Անցողակ.) || զգոյշ առնել. կմ զգաստացուցանել. կմ ապահով և անքոյթ առնել:

Զգուշաւոր. ի. աւ. աց. օք: || ունօղ զգուշութիւն. կմ շրջահայեաց. և կմ զգուշացօղ: Եւ մերթ ապահով. կամ անվտանգ. կմ աներկիւղ: Իմաստ. 7. 23: և 14. 3:

Զգուշեղաբար: (մակբայ որակական.) || առաւել զգուշութեամբ. կամ յոյժ շրջահայեցաբար:

Զգուշութիւն. թեան: || շրջահայեցութիւն. կմ զգաստութիւն: Եւ 1. Մակ. 13. 12. ուր ասի՝ ի զգուշութիւն պահպանութեան, իմանի զգոյշ կամ զգուշաւոր պահպանութեամբ: Իսկ մերթ նշանակէ ապահովութիւն. կմ աներկիւղութիւն: Առակ. 11. 15: Իսկ Տօբ. 6. 5. ուր ասի՝ դի՛ր ՚ի զգուշութեան. իմանի՝ դի՛ր ՚ի յապահով, և յանքոյթ տեղւոջ. կմ դի՛ր ՚ի պահեստի:

Զգրգռեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || դրդելով դրդել. կմ գրգռել. այս շարժել զոք ՚ի բարկութիւն. կմ յոյզ կռիւ. և կամ շարժել զպատերազմ ընդդէմ ումեք: 2. Օրին. 2. 24:

Զգօն. ի. իւ. ից. իւք: || իմաստուն. կամ հանճարեղ. կմ խոհեմ. կամ ուշիմ. կամ խելամուտ. կամ զգաստ:

Զգօնանամ. ացայ. ցիր. անալ: (ընդմիջ.) || իմաստնանալ. կամ խոհեմանալ. կմ հանճարեղանալ:

Զգօնացուցանեմ. ցուցի. ցո. անել: (անցողակ.) || իմաստնացուցանել. կմ հանճարեղ առնել. կմ խոհեմացուցանել. և կմ խելամուտ առնել: Եւ մերթ զգաստացուցանել. կամ հանդարտեցուցանել: Ոսկէ. 1. հատ. իէ:

Զգօնութիւն. թեան: || իմաստութիւն. կմ հանճարեղութիւն. կամ ուշիմութիւն. կմ խոհեմութիւն. և կմ խելամտութիւն: Սաղմ. 110. 10: և 2. Պետ. 2. 22:

ԶԵ

Զ եղանեմ. եղի. եղ. անել: (չէզոք.) || Զառաջս եղանել՝ ի պարաւանդութէ. կմ ազատ լինել՝ ի կանոնաց, և ՚ի բեռանց. և կամ դէր ՚ի վերոյ լինել. ըստ այնմ Ոսկէ. 1. հատ. ժը: Եւ անհնարին զմարմնաւոր զօրինօքն զեղանէին:

Զեխութիւն. թեան: || տե՛ս զԶեղխութիւն:

Զեկուցանեմ. ուցի. զեկո. անել: (անցող.) || ծանուցանել. կմ ազդ առնել: Դատ. 25. 14:

Զեղանիմ. զեղայ. նիլ: || է սա կրաւորականն զեղուլ բային. և բազմիցս վարի իբրև զձայնակրական. զոր տեսցես ՚ի Զեղում բային: Յոբ. 36. 27: և 41. 14:

Ժամատու. տուի. ած. աց. օք։ || զժամ, և զժամանակ զգաստանալոյ կոչնօղ. և կմ աղղօրար ժամանակի յորում պարտի ոք առնել զգործ ինչ, որպիսի է ձայն աղ. քեցութեան. և այլք նմանք։

Ժամատունն. տան. տանց. տամբք։ || ժամ առնելոյ տեղի. կմ եկեղեցի։

Ժամարար. ի. աւ. աց. օք։ || քահանայ, որ է կարգն մատուցանելոյ զպատարագն։

Ժամացոյց. ցուցի. իւ. ից. իւք։ || արուեստաւոր կազմած ինչ, որ ցուցանէ զժամս աւուրն. ռամկօրէն սահաթ։

Ժամերգութիւն. թեան։ || երգելն. և ասելն զժամս. գի զսղմոս աղօթս և զերգս, որ կարգեցեալ են առ 'ի ասել ըստ պաշտաման աւուրն. յառաւօտու, 'ի միջօրէի, և երեկոյի. և այլն։

Ժամոյք. ոյից. իւք։ (անեզական.) || ժամք, կմ մասունք ժամանակի. և կմ ժամանակ. գի մասնիկս՝ այժ. բաղկացեալ մասունք յան ուրանն՝ 'ի տեղի յոգնականացուցել է։ ...և յայլ ուր՝ փոխանակ ասելոյ բաշխք. և բարք. առի՝ բաշխոյք, և բարոյք։

Ժամս ընդ ժամս։ (մակբայ ժամանակական.) || երբեմն երբեմն։ 'Ի ճառս հաց. Ժ։

Ժայթքեմ. եցի. եալ. ել։ (Ներգործ.) || ...խել. կմ զգայունել. կմ զկլեալն 'ի ... նոյն արտաքս ձգել. կմ արտաքս թ... Յա ուղէ։

Ժայռ. ի. իւ. ից. իւք։ || քարաժեռ. գի խորտուբորտ քարուտ տեղի. կմ ապառաժուտ լեառն. կմ անհարթ, և գժուարանցանելի տեղի։ 1. Թագ. 14. 5։

Ժայռաւոր. ի. աւ. աց. օք։ || ունօղ զժայռ. գի զապառաժ քարինս բլրակն քարձրացեալս. կմ խորտուբորտս, և սուրս. որ ցխոխալեն ոտանք լերինք, կմ տեղիք։ Ոստ և աշտարակն, որ ունի 'ի շինուածս իւր շուրջանակի զքարինս երկն զժայռ...

արտաքոյ եկեղեցւոյ՝ նմանեն շանց նաւեղաց , ատենի ժողովոյ . և ըստ այսմ աստ՝ ՚ի գիրս մեկնչին Ծ. գլ. 99. Ըմբռնեալ զոչացուցանելոյ ռամկօրէն , ինքն զեանգատուեալ ։

Ժանգ · ոյ · ով · ոց · ովք ։ || կանաչագոյն · կամ թխագոյն վատթար հիւթն , որ լինի ՚ի վերայ երկաթեղինաց , պղնձեղինաց , և արծաթեղինաց ։ Եզեկ. 24. 6. և 11։ Յակ. 5. 3։

Ժանգահար · ի · աւ · աց · աւք ։ || հարեալ ՚ի ժանգոյ . զի ժանգոտեցեալ ։ Յակ. 5. 3։

Ժանգահարիմ · եցայ · եայ · իլ ։ (Ճայնակիր ·) || ժանգով հարկանիլ , լինել ։ ռամկօրէն ժան_ գոտիլ ։

Ժանգառու · ի · աւ · աց · աւք ։ || զժանգ առօղ · կամ ժանգահար · կամ որդնահար · կամ ապականեալ ՚ի ժանգոյ · և կամ փտեալ . Աճառ. իսկ մերթ նշանակէ զկանաչագոյն ներկն գոյն · որ է իբրև զժանգ հրահալեալ պղնձոյ ։ ռամկօրէն ճինկիար ։

Ժանգեմ · եցայ · եալ · իլ ։ (Ճայնակերպ ·) || ժանգահարել · կամ ծածկոտել · կամ ապականել , և լուծանել ՚ի ժանգոյ ։

Ժանգ · ի · իւ · ից · իւք ։ || տե՛ս զժանտ ։

Ժանգագործ · ի · աւ · աց · աւք ։ || տե՛ս զժանտագործ ։

Ժանգատեսիլ ։ (Նախադրիւ հոլովի ·) || զժանտ տեսիլն ունող , կամ դժնէատեսիլ · կամ որ զզուած , և դժնեայ երևոյթս ունի ։

Ժանգացուցանեմ · ցուցի · ացո · նել ։ (ան_ ցողակ ·) || չարացուցանել · կամ վատթա_ րացուցանել · կամ դառնացուցանել · կամ դժնդակ , և դժնեայ առնել ։ իսկ մերթ ժանգահար առնել · և կամ փտեցուցանել ։ Ոսկեբ. 1. հաղբ. ԻԵ ։

Ժանգափուշ · փշոյ · ով · ոց · ովք ։ || է անուանի փուշ ; որ ունի ժանգ , և դժնդակ գոյլոյն և չարաչար խայթելոյն՝ կոչի ժանգափուշ ։ Աճառ ։

Ժանգութիւն · թեան ։ || դառնութիւն · կամ վատթարութիւն · կամ չարութիւն · կամ ապականութիւն · կամ դժնդակութիւն ։

Ժանիք · նեաց · եաւք ։ (անեզական ·) || են վերջին , և սուրին շարքն ատամանց գազանաց հանդերձ ծնօտիւքն · և կամ ատամունք նոց ։ 3. Թագ. 10. 22։ Սաղմ. 67. 23։ Դանիէ. 7. 5։

Ժանիկ · այ · ով · ոց · ովք ։ || փոքրիկ կենդա_ նի մի · որ հանգոյն ցեցոյ , և որդանց զծառս , կամ զպտուղս կրծէ · և մերթ յարմտաց կա_ րէ զայնս , և ապականէ ։ Նորէն. իա ։ Եւ մերթ ժանիկ աստ նաև փտութիւն այն · որ հանդիպի պտղոց , կամ բուսոց ՚ի յապականա_ նութէ օդոյն ։ 3. Թագ. 8. 37։ և Սաղմ. 77. 46։ Նաև ժանիկ · կամ ժանգ աստ՝ մտաւոր_ կար , կամ մանկաբեր հիւթն , որ երբեմն լի_ նի ՚ի պղնձեղէն անօթս · և կամ յայլ իրս ։ և ըստ այսմ երբեմն թոյնն՝ ժանիկ կոչի ։ Ոսկէ. 1. հաղբ. ԺԷ ։

Ժանիկաբեր · ի · աւ · աց · աւք ։ || մտաւորակար · կամ մանկաբեր · կամ ապականիչ · որպիսիք են թունաբեր բոյսք , և վարդապետու_ թիւք հերձուածողաց · և կամ հիւթք ոմանք ։

Ժանիկալից · լցի · իւ · ից · իւք ։ || լի ժանիկով · կամ ապականեալ ժանիկահար ։ Մեծոփեց ։

Ժանիկախառն ։ (Նախադրիւ հոլովի ·) || խառ_ նեալ ժանիկաւ · կամ թունաւորեալ · և կամ ապականեալ հիւթով խառնեալ ։

Ժանիկակեր · ի · իւ · աց · աւք ։ || ՚ի ժանկոյ կե_ րեալ և ապականեալ ։

Ժանիկահար · ի · աւ · կամ իւ · աց · աւք ։ || որդ_ նահար · կամ ապականեալ ՚ի ժանկոյ · և ՚ի փտութէ ։

Ժանիկահարիմ · եցայ · եայ · իլ ։ (Ճայնակիր ·) || հարկանիլ ՚ի ժանկոյ · կամ ապականիլ ՚ի ժանկոյ ։

Ժանիկոտութիւն · կամ ժանգոտութիւն · թեան ։ || որդնահարութիւն · կամ ժանգահարութիւն · կամ ապականութիւն պատճառեցեալ ՚ի ժան կոյ ։ Աճառ ։

Ժանիկոտոր · ի · աւ · ոց · օք ։ || ժանիկահար · կամ ժանիկոտեալ · կամ թունաւոր և մա_ հացուցիչ ։

Ժանտ · կամ ժանդ · ի · իւ · ից · իւք ։ կամ աց · աւք ։ || վատթար · կամ չար բարուք · կամ դժ նեայ · կամ դարշելի · կամ յոռեգոյն զլոր · կամ դաժան · կամ դառն ։ 1. Թագ. 2. 12։ Եզեկ. 15. 21։ և 24. 3։

Ժանտաբարոյ · ի · իւ · ից · իւք ։ || չարաբա_ րոյ · կամ եղեռնագործ · կամ զժանտ և զդժ_ նեայ բարս ունող ։

Ժանտաբեր · ի · աւ · աց · աւք ։ || մահաբեր · կամ մահատակար · կամ թունաբեր · և կամ ապա_ կանիչ , և մահացուցիչ ։

Ժանտագործ · կամ ժանդագործ · ի · աւ · աց · աւք ։ || չարագործ · կամ եղեռնագործ · կամ պղծագործ ։ Սիր. 7. 5։ Աճառ. 24. 9։ և Եսայ. 5. 14։ κακοῦργος

Ժանտաթզենի · նւոյ · եաւ · եաց · եօք ։ || է ծառ ինչ · որ նաև կոչի մոլաթզենի · որ է ամօթ պտուղ նման թզոյ , և ունի զարմ_ րև նման թթենւոյ · որոյ պտուղն մերթ կոչի անհամ · կամ ժանտ թուզ ։ 3. Թագ. 10. 27։ Ղուկ. 19. 4։

Ժանտածուռ ։ (Նախադրիւ հոլովի ·) || ժան_ տից ժանտ · կամ վատթարաց վատթար · կամ ասացեալ չարաչար · կամ յոյժ ժանտ և դժնեայ ։ 2. Մակ. 15. 5։

Ժանտախորհուրդ · հրդի · իւ · ից · իւք ։ || զչա_ րիս , կամ զդարշելիս խորհօղ · կամ զվատթար իրս խորհօղ ։

Ժանտախտ · ի · իւ · ից · իւք ։ || մահատակար և մահացուցիչ ախտ · և կամ թունաւորող , և ապականիչ ախտ · որպիսի է ժանտամահն , և այլք նմանք ։ Ոսկէ. 2. հաղբ. ԺԶ ։

Ժանտահամ · ի · իւ · ից · իւք ։ || դառնահամ · կամ վատթարահամ ։ Եզեկ. 24. 2։

Ժանտահամբոյր ։ (Նախադրիւ հոլովի ·) || ժան_ տաբեր · կամ ժանտաբան · կամ մահաբեր · կամ ժանտ թունովք լցեալ · և կամ ժանտութ յարօղ ՚ի մարդն · և ապականօղ ։

Ժանտահայեաց ։ (Նախադրիւ հոլովի ·) || ըզ ժանտ և դժնեայ · կամ զմոլեկան հայե ցուածս ունօղ · կամ դաժանահայեաց ։

Ժանտահոտ · ի · իւ · ից · իւք ։ || գարշահոտ · կամ ժահահոտ և կամ զզուահոտ ։ Ոսկէ. 2. հաղբ. ԻԷ ։

Ժանտահոտութիւն. թեան: || գարշահոտութիւն. կմ զազրահոտութիւն. կմ ժահահոտութիւն. և կամ թխմութեան չարահոտութիւն. և կամ մեռելոտեաց հոտ: Խորէն. Գ. գլ. 8:

Ժանտամահ. ու. ուանք. ուց. օք: || տես ըզ ժանտամահութիւն:

Ժանտանամ. ացայ. ցիր. անալ: (Չեզոք.) || Ժանտ լինել. կմ դառնանալ. կմ քաջ ասիրտ լինել. կմ չարանալ. կմ գժնէանալ: 2. Մակ. 16. 10: Աղաւ. 19. 19:

Ժանտացաւ. ոյ. ով. ոց. ովք: || դառն ցաւ, և 'ի միոյն 'ի միւսն փոփոխօղ. որ կարէ ա- սել զհիւանդութիւն. նաև զայլամեծ ցաւոյ. որ կոչի մահ. որոյ հատեալ մինչ սատամբ, սպա նանէ զմարդումն:

Ժանտացուցանեմ. ցուցի. ցի. անել: (Ներ- գործ.) || վատթարացուցանել. կմ չարա- ցուցանել. կմ կամակոր առնել. կմ դառ- նացուցանել. կմ ապականել: Աղաւ. 18. 9:

Ժանտութիւն. թեան: || դառնութիւն. կամ չարութիւն. կամ դաժանութիւն. կմ վատթա- րութիւն. կմ գժնդակութիւն. և կմ գազան- կամութիւն: Եզեկ. 29. 17:

Ժապաւէն. Էնի. աւ. կմ եաւ. աց. օք: || երիզ օձեաց. դր ճաճանչին. կմ փոստեն. որ շրջապատէ զպատմուճան, կամ զպճղանն: և այն երիզս, կմ շղթայով լինի. կամ գինդերով. և կամ շերտով: Ելից 39. 30. և Յոբ. 30. 18: Որպէս երիզն ասել լինի փողպատակ ղոյլանի. կմ շերտ. կմ փողպա- տակ ն և եղէ զինդերի.

Ժապաւինեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || փաթութել. կմ շրջապատել զերիզն, ժա- պաւինեալ դր [illegible] կմ շերտով. կմ այ- րել թելիւք. և կամ ոսկեթելիւք անփոր- ցուցանել: Ելից. 39. 6:

Ժառանգ. ի. աւ. աց. օք: || բաժանորդ. կմ մասնակից. կամ սեփականող և վայելող. ստացուածոց, որ յաջորդէ հօրն. և սաս- նայ զիրութեան 'ի վր ընչից նր. և սեփակա- նէ զնա. կոչի ժառանգ: Գաղ. 4. 1:

Ժառանգակալ. ի. աւ. աց. օք: || կալնող զժառանգութիւն. դր ունող զիրաւունս ժա- ռանգելոյ զինչս հօրն. կմ յաջորդ լինելոյ հօրն. և կմ ժառանգորդ: 2. Թագ. 14. 7: Եւ այսմ երկրին ո և եղէ ժառանգօղ երկիք ժա- ռանգութէ, ժառանգակալ ասի. Մծբն. ժէ:

Ժառանգակից. կցի. աւ. աց. օք: || ժառան- գութէ կցորդ. կմ ժառանգելի իրացն մաս- նակից: Հռով. 8. 17: Եբր. 11. 9:

Ժառանգահատեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || զրկել 'ի ժառանգութենէ, կամ 'ի ժա- ռանգ գոլոյ լուծացուցանել:

Ժառանգատեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || նոյն է ընդ վերնոյն:

Ժառանգատու. տուի. աւ. աց. օք: || զժա- ռանգութիւն, կմ զվիճակ ընչից՝ կմ սատա- ծնողաց տուօղ: Լամբրոն:

Ժառանգաւոր. ի. աւ. աց. օք: || ժառան- գորդ. կամ ստացօղ զժառանգութիւն. կմ ստացօղ զիրաւունս ժառանգելոյ. և կամ ժառանգօղ: Սաղմ. 5. և Եբր. 6. 17: և Յոհ. 2. 5: Իսկ մերթ նշանակէ զեկեղեցականս, կմ զպաշտօնեայս եկեղեցւոյ, ըստ որում զժառանգութիւնս, և զվիճակս եկեղեցա- կանս կալնուն. որ յունարէն կոչի կղերի կոս: Լամբրոն:

Ժառանգեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || կալնուլ զժառանգութիւն. կմ սեփականել. կամ ունել զիրաւունս յինչս գրաւե- լոյ զինչս հօր. և կմ յաջորդ լինել հօրն, և ունել զիրաւունս 'ի վր նմ ստացուա- ծոց նր: Ծննդ. 15. 4: կմ խլացուցանել և վայելել զի և եղէ իրս: Իսկ Ծննդ. 47. 27. ուր ասէ՝ որդիքն Իէլի ժառանգեցան 'ի նմա, իմանի, ստացան զժառանգութիւն, և ստացուածս 'ի նմա:

Ժառանգորդ. ի. աւ. աց. օք: || ժառանգա- կից. կմ ժառանգօղ. կմ ժառանգակալ:

Ժառանգութիւն. թեան: || սեփականութիւն հայ րենական ընչից. կմ իրաւունք ունելոյ զիր ինչս. կամ խլացուցանելն. և վայելումն ն և եղէ իրաց: Իսկ մերթ նշանակէ զժառան- գելի իրն. այն գրի: Թուոց. 18. 23:

Ժառատ. ի. իւ. ից. իւք: || խանդատանք, դր է մագնիս քար. որ քարշէ զերկաթ: տսն. Վեխ [illegible] բառը:

Ժ Ե

Ժեռաւոր. ի. աւ. աց. օք: || անբաշխելի խեժ ինչ, որ լինի 'ի հնդիկս, զոր և այ- լազգականն բառիւ կոչեմք ռաշին, զոր առեալ 'ի նմ սառն: Խորէն. յաշխարհ.

Ժ Ժ

Ժմակ. ի. աւ. աց. օք: || տես զժի- մանկն. զի են նոյն: Բայց միայն ժի- մակն ասի զմիոյ. իսկ ժմունքն զբազմաց:

Ժմունք. մնաց. մամբք: (Անեզական.) || ծովայինն, կմ աղմայինն. և կմ լճայինն ըզ- տաւնք. սողունք. և որդունք, և այլք կեն- դանիք մանունք:

Ժ Ի

Ժիր. ժրի. աւ. աց. օք: || արի. կամ ըն- դաստ. կմ քաջ. կմ հզօր. կամ զօրեղ. կմ քաջագործ. կմ քաջայայն. կմ գործու- նեայ: 1. Մակ. 5. 32: Աղաւ. 10. 4:

Ժիրաժիր: (Նախդրիւ հոլովի.) || է անուն կրկնեալ 'ի բառէս՝ ժիր. որ եղական ձայ նիւ ասի զյորդուեց, և նշանակէ՝ առաւել ժիր. կամ յոյժ քաջագոյն. կմ ժրաջան: 2. Մակ. 4. 12:

Ժ Լ

Ժլատ. ի. իւ. ից. իւք: || ագահ. կամ ա- գահ. կմ խնայօղ յինչս: ռամկ. [illegible]: Խորէն. Գ. գլ. 68:

Ժլատութիւն. թեան: || ընչասիրութիւն. կմ ա- գահութիւն. կամ Ագահութիւն: ռամիկ. [illegible]:

Ժ Խ

Ժխոր. ի. իւ. ից. իւք: || պղտորութիւն. կմ վրդովումն. կմ ամբոխութիւն. կմ աղմուկ ո՛ և իցէ իրաց:

Ժխորեմ. եցի. եալ. ել: (Ներգործ.) || ամբոխել. կմ պղտորել, կմ աղմկել. կամ շփոթել. և կամ վրդովել զո՛ և իցէ իրս: Լամբրօն:

Ժխորումն. ման. մանն. մամբ. մանց. մամբք: || ամբոխումն. կմ վրդովումն. կմ պղտորումն. կմ խառնակութիւն. կմ աղմուկ ժողովրդեան, և այլոց նմանեաց:

Ժխորանեմ. եցի. եալ. ել: (Ներգործ.) || ժխորելով ժխորել. կմ սաստիկ աղմկել. կամ սաստիկ խառնակել:

Ժխտեմ. եցի. եալ. ել: (Չէզոք.) || ուրանալ. կմ բացասել. կմ ասել: ռամկօրէն ինքեար ընել: Ծննդ. 18. 15: Ղևտ. 6. 3: Իսկ մերթ նշանակէ՝ բացասելով ընդդիմանալ. կմ հակառակիլ. Ը այնմ՝ Լամբրօն. զի ժխտեցաք պատուէրանին, որ աւանդէ մեզ Թողլոյն զթողութիւն գտանել:

Ժխտութիւն. Թեան: || ուրացութիւն. կմ բացասութիւն. կամ յամառութիւն. կամ հակառակութիւն:

Ժխտօղ. տողի. աւ. աց. օք: || ուրացօղ, կմ բացասօղ, կմ յամառօղ. կմ հակառակօղ: Իսկ մերթ նշանակէ զխափանեալն, կմ զսուտ կերպարանեալն, և կմ զկեղծաւորեալն: Յհ. ոսկ:

Ժ Ո

Ժողխեալ. ելոյ. ով. ոց. ովք: || հարեալ ցաւովք, և պէսպէս ախտիւք. կմ խռովեալ և խառնակեալ, կմ ապականեալ. կմ հոտեալ. և նեխեալ. Նարեկ. հզ:

Ժողով. ոյ. ով. ոց. ովք: || հաւաքումն, կմ գումարումն, կմ կուտումն բազմաց մարդկանց առ գործ ինչ. կմ կոյտ ո՛ և իցէ իրաց: Թուոց. 32. 14: Իսկ մերթ նշանակէ [illegible], Ը զժողովումն հայրապետաց 'ի հերքումն մոլորութեանց:

Ժողովածու. ծուի. աւ. աց. օք: || ժողովական. կամ ժողովեալ, և կամ հաւաքեցեալ:

Ժողովարան. ի. աւ. աց. օք: || տեղի ժողովելոյ:

Ժողովեմ. եցի. եալ. ել: (Ներգործ.) || հաւաքել. կմ քաղել. կմ զգումարել իրս 'ի մի վայր բերել: և կմ 'ի ներքս 'ի տուն իւր առնուլ զօտարս և զպանդուխտս, և ընդունիլ: Դատ. 19. 15: Եւ մերթ ամփոփել: 4. Թագ. 22. 20:

Ժողովեալ. եալի. եալք. եալոց. եալքք. կմ եալք: || ժողովրդանոց: Գործ. 18. 7: Եւ երբեմն նշանակէ զո՛ և իցէ ժողովման տեղին:

Ժողովուրդ. վրդոյ. ով. ոց. ովք: կամ վրդեան. եամբ. եամբք: || բազմութիւն մարդկանց 'ի մի վայր եկեալ, և մի գումար եղեալ գոլով ընդ միոյ իշխանութեամբ, կմ գլխոյ: Եւ ըստ այսմ բազմութիւնք քրիստոնէից, որք են 'ի մի գումար եկեալ՝ ունելով զնոյն հաւատ ընդ միոյ գլխոյ 'ի քնէ կացուցելոյ՝ ասին ժողովուրդ քնի: Իսկ Յօհ. 6. 60: Մատթ. 12. 9: և Ղուկ. 4. 16: և 6. 6: և յայլ բազում տեղիս, բառս այս դնի փոխանակ ժողովրդանոցի:

Ժողովրդական. ի. աւ. աց. օք: || այն՝ որ պատկանի առ ժողովուրդն: Բայց յատկապէս նշանակէ զիւրաքանչիւր՝ անձինս ժողովրդեան եկեղեցւոյ. կամ քաղաքի. ուր և հաւաքումն նոյն կոչի ժողովուրդ: Խորէն. Է. պր. 68:

Ժողովրդանոց. ի. աւ. աց. օք: || տեղի, ուր ժողովուրդք, կմ բազմութիւնք մարդկանց հաւաքին, առ 'ի լսել զձայնին բան, կմ զքարոզս. և այլն: Ղուկ. 7. 5: և 13. 10:

Ժողովրդապետ. ի. աւ. աց. օք: || պետ և գլուխ ժողովրդեան. կմ ժողովրդանոցի միոյ: Մարկ. 5. 22: ուստի և այժմ աւագ երիցունք. կամ ծխատէր քահանայք՝ ժողովրդապետք կոչին:

Ժողովրդավար. ի. աւ. աց. օք: || ժողովրդապետ, որ ըստ որում կառավարէ զժողովուրդն՝ ասի ժողովրդավար. կամ ժողովրդակալ:

Ժոյժ: || ոչ հոլովի՝ այլ ընդ բայի շարադրի պէսպէս. ժոյժ ունել. և նշանակէ ժուժել. կմ հանդուրժել. կմ զսպել զինքն. կմ ցուցանել զինքն 'ի տանելոյ զիր ինչ: կմ տանել ցաւոց. և համբերել. կմ գթանալ. և կմ տևել: Ծննդ. 45. 1: 1. Կորն. 7. 9:

Ժուժամ. ացի. եալ. ալ: (Չէզոք.) || տե՛ս ըղ ժուժել: 1. Եզր. 9. 11:

Ժուժեմ. եցի. եալ. ել: (Չէզոք.) || զժոյժ ունիլ. կմ հանդուրժել. կմ զսպել զինքն. կմ տանել ցաւոց, կմ համբերել: Տօբ. 11. 13:

Ժուժկալ. ի. իւ. ից. ալք: || զժոյժ կալնօղ. կմ զսպօղ զինքն յիմէքէ ընձեռելոյ Ը մարմնոյ, կամ համբերօղ. կամ հանդուրժօղ. կամ տանօղ նեղութեան. կմ պարկեշտ. կմ ողջախոհ: 1. Կորն. 9. 25: Իմաստ. 8. 21:

Ժուժկալեմ. եցի. եալ. ել: (Չէզոք.) || զժոյժ կալնուլ. Ը զգաստութիւն և զհամբերութիւն ունիլ. կամ տևել. կմ տանիլ և գթանալ, և ոչ ընկճիլ. այլ քաջանալ: Ծննդ. 32. 28: Ովս. 12. 4:

Ժուժկալութիւն. Թեան: || հանդուրժումն, կմ զսպումն ցանկութեան մարմնոյ. և [illegible]. կմ տևումն: Գործ. 24. 25: և Գաղ. 5. 23: Եւ մերթ համբերութիւն:

Ժ Պ

Ժպիտ: (Նախադրիւթ հոլովի.) || է արմատ ժպտել բային, և նշանակէ զժպտումն:

Ժպիրհ. պրհի. իւ. ից. կմ աց. օք: || լիրբ. կամ անամօթ. կամ յանդուգն: 1. Թագ. 2. 29: Երեմ. 6. 23: 2. Օրին. 28. 50: Դան. 8. 23:

Ժպտիմ. եցայ. եալ. իլ: (Ձայնակր.) || 'ի

դէմս իւր ցուցանել զծիծաղ · կամ զուարթ թագէմ ցուցանել զինքն · կամ անկատարապէս առանց ձայնի ծիծաղել ։ ռամկօր · +ծիծաղ [illegible] ։ Նարէկ. ծա ։

Ժպտումն · տման · ամբ · անց · ամբք ։ || անկատար ծիծաղ · կմ զուարթութիւն դիմաց · և կամ մեղմ ծիծաղ ։ ռամկօրէն +ծիծաղ ։ Խորէն. գ. գլ. 68 ։

Ժպրհիմ · եցայ · եաց · իլ ։ (ձայնակրաւ ·) || յանդգնիլ · կամ լրբանալ · կամ 'ի չարիս վստահանալ · կամ համարձակիլ ։ Յուդայ. 9 ։ Նարէկ. կ ։

Ժպրհութիւն · թեան ։ || յանդգնութիւն · կամ լրբութիւն , կամ անամօթութիւն · կամ վստահութիւն և համարձակութիւն 'ի չարիս ։ 3 · Մակ. 3 · 14 ։

Ժ Տ

Ժտանք · անաց · օք ։ (անեզ ·) || թախանձական խնդրուած · կմ հայցուած · կամ պաղատանք ։ Լամբրոն ։

Ժտեմ · եցի · եա · ել ։ (ներգործ ·) || հայցել թախանձանօք · կամ ստիպել թախանձական բանիւք · և կմ խնդրել ։ Սաղմ. 36 · 4 ։

Ժտիմ · եցայ · եա · իլ ։ (ձայնակր ·) || պաղատիլ · կամ աղերսել · կամ աղաչել · կամ մաղթել ։ Լամբրոն ։ Իսկ մերթ նշանակէ · ստիպել , կամ բռնադատել · կամ թախանձել ։ 1 · Թագ. 13 · 12 ։ Մերթ ևս նշանակէ՝ յանդգնիլ · կամ համարձակիլ · կմ իշխել ։ Ելից. 19 · 24 ։ և 2 · Օրին. 12 · 17 ։ և 16 · 5 ։

Ժտութիւն · թեան ։ || սաստիկ թախանձումն · կմ ստէպ խնդրուած ։ Ղուկ. 11 · 8 ։

Ժ Ր

Ժրագլուխ · գլխի · աւ · աց · օք ։ || արի , կամ քաջ , կմ ժրաջան · կամ քաջաջան ։ Առակ. 12 · 4 ։ և 31 · 10 ։

Ժրանամ · ացայ · ացիր · ալ ։ (ընդմիջ ·) || ժիր լինել · կմ զօրեղանալ · կամ քաջանալ · կմ արիանալ ։ 2 · Թագ. 10 · 12 ։ 1 · Կորնթ. 16 · 13 ։

Ժրաջան · ի · իւ · ից · իւք ։ || ժրութեամբ ջանացող · կամ արի և քաջ · կամ անվեհեր աշխատող ։

Ժրեմ · եցի · եա · ել ։ (ներգործ ·) || ամրացուցանել · կմ պնդել · կամ հաստատել ։ իսկ մերթ նշանակէ , ժիր լինել · կամ քաջանալ · կմ ժրանալ ։ Լամբրոն ։

Ժրութիւն · թեան ։ || քաջութիւն · կամ արիութիւն · կամ շուտափութութիւն ։

Ժ Օ

Ժօռատ · ի · իւ · ից · իւք ։ || ատամնատ · կմ ատամնաթափ · և կամ պակասեալ 'ի յատամանց ։

Ի

Ի · է միոյն 'ի յեօթանց ձայնաւորաց տառից , որ առանց յօդելոյ ընդ այլոց տառից կարէ ելուզանել զձայն , և բացարձակաբար արտաբերիլ 'ի բերանոյ՝ և զօրէն բաղխել · ոմ և այլք ձայնաւորք ։

Արդ՝ զտառս զայս Ի , գրեմք և անուանեմք՝ ինի · բայց երբեմն յոմանց անուանի՝ ին , և ըստ այսմ դնէ շնորհալին 'ի յոտանաւորսն , որ 'ի դիմաց այբուբենից · զոր օրինակ ,

Ինն 'ի ցասմանէ դու 'ի բաց լեր ,
Եւ մի՛ ըղքեղ՝ ասէ այրեր ։
Եւ դարձեալ ,
Ինն 'ի նանրութեց՝ ասէ դարձիր ,
Եւ սուտ խաղօք՝ մի՛ զբաղիր ։

Այլ սա 'ի յարուեստի առոգանութե , ըստ ոլորակին՝ է չեշտ · ոմն և տառքս այսոքիկ · ա · ե · վն զի 'ի յարտաբերելն՝ ձայն նոցա ուղիղ 'ի վեր սաստի · բայց ըստ ամանակին է միջակ · ոմն և տառքս այսոքիկ · ա · ը · վն զի ձայն նոցա ոչ է երկարաձիգ իբրև զհնչումն տառիցս այսոցիկ՝ է · և օ · և ոչ սուղ իբրև զձայն սոցա · ե° · ո° · այլ միջասահման է յերկարութե , և 'ի սղութե ։

Դարձեալ , տառս այս՝ ի , կոչի երկամանակ · զի հնչումն նորա ըստ պահանջման տառիցն , ընդ որոց յարի , երբեմն երկարի , և երբեմն կարճի · իսկ երկարութն և կարճութն ընդ ամանակաւ անկանին · և այսպէս ինի տառն լինի երկամանակ ։ Եւ կմ վն զի տառս այս ունի զերկատեսակ հնչումն · զի ըստ ոլորակին՝ է չեշտաձայն · իսկ ըստ ամանակին լերկաձայն · այլ ըստ հնչումն ժամանակաւ չափի , և ընդ ժամանակաւ անկանի , և ըստ այսմ ևս ինի տառս լինի երկամանակ ։

Դարձեալ , տառս այս բազում անգամ յօդելով ընդ ւ-իւն տառին , տայ նմա զզօրութիւն ձայնաւորի , և ընդ նմա կազմէ ըղձանկս , կմ զբառս երկբարբառս · ըստ զբարբառ և զձայն երկուց ձայնաւորաց ունելով , զոր օրինակ ·
բիւր · դիւր · թիւր · ծիւր · հիւր · փիւր · կմ այսպէս , դիւթ · հիւթ · ձիւթ · նիւթ · և այլն ։

Դարձեալ , տառս այս է նաև նշան համարողականի , զի ընդ գրելն պատուով , այսպէս՝ Ի , նշանակէ զքսանն ։

Դարձեալ , տառս՝ 'ի , է նաև նախդիր հոլովակերտ , որ 'ի գործածելի փոխանակ նախ

դրացս այսոցիկ, յ, ց, ու. ընդ. և այլն։
Բայց սա յարի այնց անուանց, որոց ըս_կզբնատառն է բաղաձայն. զոր օրինակ. Լուր եղև՝ եթէ ՚ի տան է։ Մարկ. 2. 2։

Արդ՝ սա երբեմն կերպէ զնախդրիւն տրական. և յայնժամ ցուցանէ զմօտեցումն ինչ, և դրեթէ ունի զզօրութիւն նախադրու_թեան դէպ՚ի. զոր օրինակ. Բազում չարիս էր ցուցեալ նա ՚ի սեղան անդր, այսինքն դէպ՚ի սեղանն։ 2. Մակ. 13. 8։ Դարձաւ տէր՝ և հայեցաւ ՚ի պետրոս. այսինքն դէպ՚ի պետրոս։ Ղուկ. 22. 61։ Եւ կամ ունի զզօրութիւն բառին՝ մինչև ՚ի, զոր օրինակ, Դարձարուք դրանէ ՚ի դուռն. այսինքն ՚ի միոյ դրանէ մինչև ՚ի միւս դուռն։ Ելից. 32. 27։ ՚ի մէջ սեանցն ՚ի կողմանէ ՚ի կողմն. այսինքն ՚ի միոյ կողմանէ մինչև ՚ի միւսն։ Ելից. 36. 33։ Եւ մերթ ՚ի վերայ. զոր օրինակ. Եւ տէր տեղաց ՚ի սոդոմ, և ՚ի գո_մոր ծծումբ և հուր. այսինքն ՚ի վերայ սոդոմայ և գոմորայ։ Ծննդ. 19. 24։ Երիս խանս նաշհոյ ունէի ՚ի գլուխ իմ. այսինքն ՚ի վերայ գլխոյս։ Ծննդ. 40. 16։ Իսկ երբեմն ունի զզօրութիւն նա_խադրութեա այսորիկ. ըստ. զոր օրինակ։ Եւ արար Ած զմարդն ՚ի պատկեր իւր, այսինքն ըստ պատկերի իւրում։ Ծննդ. 1. 27։ ըստ այսմ է և 9. 6։ Երբեմն ևս ընդդէմ. կամ հակառակ. զոր օրինակ, Ձեռք նորա յամենեսին, և ձեռք ամենեցուն ՚ի նա. այսինքն ձեռք նորա ընդդէմ ամենեցուն. և ձեռք ամենեցուն ընդդէմ նորա։ Ծննդ. 16. 12։ Եւ դառնա_ցաւ ՚ի նոսա մովսէս. այսինքն ընդդէմ նոցա։ Ելից. 16. 20։ Ամ անօթ զինուորեալ ՚ի քեզ ոչ յաջողես_ցի. այսինքն ընդդէմ քեզ. կամ հակառակ քեզ։ Եսայ. 54. 17։ Եւ կամ հանդէպ. զոր օրինակ. Եւ յաղօթս կացցեն ՚ի ճանապարհ երկրիս այսորիկ. այսինքն հանդէպ ճանապարհի։ 2. Մնաց. 6. 38։ ըստ այսմ է և ՚ի 34, համարն, ուր դնի ՚ի ներգոյական հոլովոյ։ Երբեմն ևս ունի զզօրութիւն նախադրութեան վն. կամ յաղագս. զոր օրինակ. Քանզի ՚ի փրկութիւն առաքեաց զիս Ած. այսինքն վն փրկութեան. կամ վն փրկելոյ։ Ծննդ. 45. 5։ Եղիցին ՚ի նշա_նակ որդւոցն իէլի. այսինքն վն նշանակի։ Թուոց. 16. 38։ Եւ բառնայցէ ահարոն զանուանս որդւոցն իէլի ՚ի յիշատակ վն նց. այսինքն յա_ղագս յիշատակի։ Ելից. 28. 12։ ՚ի մեղս մարգարէիցն իւրեանց. և ՚ի մեղս քահանայիցն իւրեանց. այսինքն վն մեղաց մարգարէից, և քահանայից։ Ողբ. 4. 13։ Եւ մերթ անուանն, որում յարի, տայ զզօրութիւն բառին իւրա_քանչիւր. զոր օրինակ։ Եւ բաշխեաց Ած իէլի յաւուրն մինչև ցկին ՚ի մարդ, հաց մի ՚ի հացարարացն. այսինքն յաւուր մինչև ցկին իւրաքանչիւր մարդոյ [illegible]։ 1. Մնաց. 16. 3։ Իսկ երբեմն կերպէ զբացառական, և յայնժամ ցուցանէ զհեռացումն. կամ զելումն ինչ յանուանէն, յոր յարի. զոր օրինակ. Իսկ որ ելանէ ՚ի բերանոյ, ՚ի սրտէ անտի գայ։ Մատթ. 15. 18։ և այլք նմանք։ սակայն մերթ մինչ կերպէ զբացառականն նշանակէ, վն. կամ յաղագս. զոր օրինակ. Եւ ձորձք մեր, և կօշիկք մաշեցան ՚ի բազում երկայն ճանապարհէն. այսինքն վն երկայնութեան ճանապարհին։ Յեսու. 9. 13։ Եւ ոչ անսացին նմա ՚ի կարծրութենէ, և ՚ի խիստ գործոյն. այսինքն վն կարծրութեան. և այլն։ Ելից. 6. 9։ Ոչ կարէր տեսանել ՚ի բազմութենէն. այսինքն վն բազմութեան։ Ղուկ. 19. 3։ Իսկ մերթ՝ ընդ_դէմ, որգոն, օգնական լինելով արքայի ՚ի հակառակորդացն. այսինքն ընդդէմ հակառակորդացն։ 2. Մնաց. 26. 13։ Նախատինս ՚ի մերձաւորաց ոչ առնու. այսինքն ընդդէմ. կամ հա_կառակ մերձաւորաց ոչ առնու. այսինքն ոչ հա_ճի, և ոչ ընդունի։ Սաղմ. 14. 3։

Բայց երբեմն ՚ի կերպէն զբացառական, տայ անուանն զզօրութիւն գործիականի. զոր օրինակ. Եւ շիջցի արտաքոյ ՚ի ցպոյ. այսինքն ցպով։ Ելից. 21. 19։ Բայց ՚ի բորոտուց խըժդժագոյն ևս էր. այսինքն բորոտ։ 2. Մակ. 5. 22։ Որով եկեալ անդ՝ ՚ի հասարակաց հաւա_նութենէն. այսինքն հասարակաց հաւանութեամբ. 3. Մակ. 7. 12։

Իսկ մերթ տայ զզօրութիւն ներգոյականի, զոր օրինակ. Որ է ՚ի ձախմէ դամասկոսի, այսինքն ՚ի ձախ կողմանն։ Ծննդ. 14. 15։ ՚ի ծովակողմն կուսէ արտասցես վեց սիւն. այսինքն ՚ի ծովակողմն կոյս։ Ելից. 26. 22։ և 36. 23։ Եւ դիցես ՚ի չորեցունց կողմանց նորա. այսինքն ՚ի չորեսին կողմունս նորա։ երկուս օղամանեակս ՚ի միոջէ կողմանէ. և երկուս ՚ի միւսմէ կողմանէ. այսինքն ՚ի մի կողմանն և ՚ի միւս կողմանն։ Ելից. 25. 12։ Ըստ այսմ իմանի և այս. Ոչ պակասէր սիւն ամպոյն ՚ի տուէ. այսինքն ՚ի տուընջեան։ Ելից. 13. 22։ Մերթ ևս կազմէ զներգոյական, և յայնժամ նշանակէ ներ. կամ ՚ի ներքս. և կամ ՚ի մէջ. որգոն. մանուկ իմ անկեալ կայ ՚ի տան. այսինքն ներ տան. կամ ՚ի մէջ տան։ Մատթ. 8. 6։ Եւ էր ՚ի տեղւոջ անդ աշտարակ մի. և այլն. այսինքն ներ տեղւոջն, և այլն։ 2. Մակ. 13. 5։

Բայց գիտելի է, զի նախդիրս այս բա_ղում անգամ կազմէ զուղղականավերջ ներգոյական. որգոն. Զի սքանչելիս արար զողորմութիւն իւր ՚ի քաղաք ամուր. այսինքն յա_մուր քաղաքի։ Սաղմ. 30. 22։ և 47. 2։ Եւ յայսմիկ ոճի բազմիցս յարելով յանուանս ամանս առնէ զնա գործիականս. զոր օրի_նակ։ Եւ զբազում թագաւորս ՚ի սուր սուսերի իւրոյ սատակէր. այսինքն սրով սուսե_րի։ 1. Մակ. 1. 2։ Հարին զմեղաւորս ՚ի զօրութիւն բարկութեան իւրեանց. այսինքն զօրութ բարկութեան։ 1. Մակ. 2. 44։ Եւ հարին զնա ՚ի հարուածս մեծամեծս. այսինքն մեծամեծ հարուածովք։ 1. Մակ. 8. 4։ ՚ի ձայն բարբա_ռոյ ողոքանաց սկսան աղաղակել. այսինքն ձայնիւ բարբառոյ։ 1. Մակ. 11. 49։ և 2. Մակ. 3. 26։ ըստ այսմ իմանի և Երեմ. 31. 3. ուր ասի. ՚ի սէր յաւիտենական սիրեցի զքեզ. այսինքն յաւիտենական սիրով։ Սոյնպէս իմանի և Եսայ. 11. 3. ուր ասի. Ոչ ՚ի կարծ դա_տեսցէ. այսինքն ոչ կարծեօք դատեսցէ. կամ ըստ կարծեաց։

Դարձեալ գիտելի է, զի բազում անգամ նախդիրս այս. ՚ի. յաճախի ՚ի վերայ զանա_

զան անուանց վերաբերեցելոց առ նոյն բան. զոր օրինակ. Մխիթարեցան 'ի բանից անտի յուդայի 'ի զօրեղ. և 'ի գեղեցիկ. յ. 'ի զօրեղ. և 'ի գեղեցիկ բանից անտի: 2. Մակ. 15. 17: 'Ի ձեռացս միայն 'ի Թշնամեաց փրկեաւ զմեզ. յ. միայն 'ի ձեռաց Թշնամեաց: 3. Մակ. 6. 9: Ել պետրոս մինչդեռ էր 'ի խոնարհ 'ի գաւիթին. յ. 'ի խոնարհ գաւթին: Մարկ. 14. 66: Ըստ այսմ է և այն, որ ասի 'ի շարականացի. 'ի քոյ յանձն առնու բնակել յորովայնի. յ. 'ի քոյ որովայնի յանձն առնու բնակել:

Իսկ մերթ ներհակաբար և եղեալն բառանի. զոր օրինակ. Դարձարուք դրանէ 'ի դուռն. յ. 'ի դրանէ 'ի դուռն: Ելից. 32. 27: Կենաց 'ի կեանս դարձուցանէ. յ. 'ի կենաց 'ի կեանս: 2. Մակ. 7. 9: Ըստ այսմ իմանի մինչ ասի. Տարուսջէ 'ի տարի: 3. Մակ. 1. 7: Ժամէ 'ի ժամ: Եզեկ. 4. 10. և 11: Շաբաթուց 'ի շաբաթս. Թագ. 28. 10: Տանէ 'ի տուն: 1. Տիմ. 5. 13: Սենեակ 'ի սենեկէ. յ. 'ի սենեկէ 'ի սենեակ: 3. Թագ. 20. 30: Ամ յամէ. ամիս յամսոյ, և շաբաթ 'ի շաբաթէ. յ. յամէ յամ. յամսոյ յամիս. և 'ի շաբաթէ 'ի շաբաթ, որ է ասել. յիւրաքանչիւրում ամսեան, և շաբաթու: 1. Մակ. 10. 40: Եսայ. 66. 23: Իսկ 3. Մակ. 5. 13. ուր ասի, և հրէայքն ժամ 'ի ժամ անցեալ զօրհասաւն. իմանի 'ի ժամէ 'ի ժամ:

Այլ երբեմն բառնի 'ի բառէն որոյ է նախդիր, և դնի նոյ յառաջացուցչին, կամ խընդրոյն, կամ ածականին, և այլոց նմանեաց որք պատկանին առ նա. զոր օրինակ. 'Ի նորա ձեռանէ. յ. 'ի ձեռանէ նր: 1. Մակ. 14. 42: Եհ յաւելուր բարիս 'ի բարեաց վր. յ. բարիս 'ի վր բարեաց: 1. Մակ. 14. 4: 'Ի տն մերոյ Յսի Քսի գիտութենն. յ. 'ի գիտութե տն մերոյ Յսի Քսի: 2. Պետ. 1. 8: 'Ի նորոց կտակարանաց միջնորդն Յս. յ. 'ի միջնորդն նորոց. և այլն: Եբր. 12. 24: Ըստ այսմ իմա և զայլոց բազմաց:

Դարձեալ նախդիրս այս 'Ի, երբեմն յարելով 'ի բառս ոմանս, մակբայացուցանէ զնոսա. որգոն. 'ի բացուստ. 'ի դերև. 'ի դէպ. 'ի հարևանցի. 'ի հետևակաց. 'ի մերկուց. 'ի նանիր. 'ի միասին. 'ի վաղորդայն. 'ի սուտ, և այլք բազումք. զորս տեսցես զկնի:

Իսկ մերթ կազմէ զնախադրութիւս. զոր օրինակ. 'ի ձախմէ. 'ի ձեռն. 'ի մէջ. 'ի միջոյ. 'ի պատճառս. 'ի սորա. 'ի սորէ. և այլն:

Դարձեալ տառս այս 'Ի է նաև մասնիկ ածանցականականերու, որ յարելով 'ի վերջս անուանց, դնի փոխանակ մասնկանս. եայ. կամ եղէն. զոր օրինակ: Զորձ ասուէի. յ. ասուեայ. կամ ասուեղէն: Ղևտ. 13. 47. և 48: Խոյակ արծաթի. յ. արծաթեայ. կամ արծաթեղէն: Ելից. 27. 17: Ծննդ. 44. 2: Պատմուճան կտաւէի. յ. կտաւեայ. կամ կտաւեղէն: Ղևտ. 6. 10: Ըստ այսմ է և 1. Թագ. 22. 18: և Եզեկ. 44. 18: Այսպէս այս նշանակեն և բառքս այսոքիկ. պղնձի. երկաթի. և այլն: Ելից. 26. 11: 2. Օրէ. 28. 48:

Իսկ մերթ յարի 'ի վերջս անուանց՝ միայն առ 'ի զարդ. և ոչ իբր բազմիցս փոխանակ ասելոյ արծիւ. ասեն՝ արծուէի: Եսայ. 40. 31: Մտթ. 24. 28: և այլն: Փոխանակ ասելոյ հիւսիսատուէ հիւսիսի: Թուոց. 2. 25: Ղևտ. 1. 11: Եզեկ. 40. 44: և այլն: Այսինքն փոխանակ ասելոյ՝ տակառ. ասի՝ տակառի: Ելից. 22. 25: Մտթ. 25. 27: Փոխանակ ասելոյ լորամարգ, ասի լորամարգի: Ելից. 16. 13: Սաղմ. 104. 40: որք առ հնևէին զնոյն նշանակեն:

Դարձեալ՝ գլխաւոր է. զի նախդիրս այս բազում անգամ 'ի գործածի հանդերձ 'յ նախդրիւս. այսպէս. 'Ի. և յայնժամ դնի միայն այնց անուանց, որոց սկզբնատառն է ձայնաւոր. զոր օրինակ. 'ի յերկնից զայս ծագեցեր ընդ ամ աշխարհս:

Ի Բ

'Ի բաց: (մակբայ զատական.) || Հեռի. կամ 'ի զատ. կամ 'ի սար. կամ յետս. կամ արտաքս, կամ անդր: Սաղմ. 6. 9: Աւետ. 27. 11: և 9. 18: Ղուկ. 5. 8: Բայց բազում անգամ մակբայս այս յարի բայից ոմանց առ 'ի զարդ. կամ առ 'ի ցուցանել զատակութե ներգործութե, կամ կրից. և ըստ այսմ իմանի, մինչ ասի. 'ի բաց ապականել. 'ի բաց խափանել. և այլն. 2. Մակ. 10. 36: 1. Կոր. 13. 11: և այլն: Իսկ Ելից. 19. 19. ուր ասի 'ի բաց յառաջացեալք. իմանի 'ի հեռագոյն տեղիս յառաջացեալք. յ. յառաջ գնացեալք: Եւ 2. Մնաց. 16. 5. ուր ասի. 'ի բաց արձակեաց ոչ ևս շինել. իմանի 'ի բաց եթող զշինելն. կամ դադարեաց 'ի շինելոյ: Մերթ ևս բառս 'ի բաց. նշանակէ բացայայտ, կամ յայտնի: և ըստ այսմ իմանի. մինչ ասի 'ի բաց երևեցուցանել զնա յ. բաց և յայտնի ցուցանել: Յոբ. 1. հոփ. լմէ:

'Ի բացեայ: (մկբ տեղակ.) || 'ի բաց. կամ հեռի. կամ 'ի զատ: ուստի Սաղմ. 21. 12. ուր ասի. մի 'ի բացեայ առներ յինէն. իմանի մի հեռի լինիր, կամ մի հեռանար յինէն:

'Ի բացէ: (մակբայ տեղական.) || մերթ նշանակէ 'ի բացուստ, կամ 'ի հեռաստանէ: Ծննդ. 21. 16: Իսկ մերթ 'ի բաց. կամ 'ի բացեայ, կամ հեռի, կամ 'ի զատ: 2. Մակ. 12. 29: Սաղմ. 17. 23: և 34. 22: Ամով. 5. 3: և այլն: Մերթ ևս նշանակէ՝ 'ի բացի. յ. 'ի բաց տեղւոջ, կամ 'ի դաշտի. և կամ յանապատի՝ ուր ոչ գոյ ծածք: Ելից. 22. 31:

'Ի բացէ 'ի բաց. կամ բացէ 'ի բաց: (մակբայ տեղական.) || կարի 'ի բաց. կամ առաւել հեռագոյն. կամ կարի հեռի: Սաղմ. 100. 5:

'Ի բաց ընկեցիկ: (նախդրիւ հոլովի.) || 'ի բաց ընկեցեալ. կամ 'ի բաց ձգեալ. կամ 'ի բաց մերժեալ: Իսկ մերթ՝ խոտան. կամ արհամարհեալ, կամ կորեան եղեալ. և կամ անպիտան: Խորէն. Փ. պր. 68: և Լամբրոն:

'Ի բացի: (մակբայ տեղական.) || 'ի բաց տեղւոջ. կամ յանդարձ վայրի. կամ 'ի դաշտի. կամ յանապատի. և կամ 'ի վայրի տեղւոջ.

Digitized by Google

ռամկօրէն փուշ փէղ ։ Եզեկ. 22. 31 ։ 2. Թագ. 11. 11։ և Ղուկ. 12. 28։ Մերթ եւ՝ հեռի ։

'Ի բացուստ ։ (մակբայ տեղական .) || 'ի հեռուստ. կամ 'ի հեռաստանէ ։ Յօբ. 2. 12։ Երեմ. 10. 17։

'Ի բաց տար ։ (մակբայ բացասական .) || քաւ լիցի. կմ՛ օն անդր. կամ մի՛ լիցի ։ Ոսկէ. 1. հատ. ԽԹ ։ և Լամբրօն ։

Իբր ։ (Նախադրութիւն որ առնու զհոլովս հայցական .) || նշանակէ՝ որպ. կմ՛ իբրև ։ Նոր բռ. Ա. և Բ ։ Իսկ մերթ է մակբայ ժամանակական. և նշանակէ՝ իբրև. կմ՛ յորժամ ։ 2. Մակ. 1. 14։ և 14. 11։ Եւ մերթ է հարցական. և նշանակէ՝ որպ. կմ՛ զիա՛րդ ։ Նոր բռ. Է. և Թ ։

Իբրանդամ ։ (մակբայ ժամանակական .) || երբեմն ։ ռամկօր՝ փոխել անգամ ։ կամ մի անգամ ։

Իբրև ։ (մակբայ ժամանակական .) || յորժամ. կմ՛ մինչ ։ Սաղմ. 47. 4։ Մերթ եւս է նախադրութիւն, որ առնու զհոլովս հայցական. և նշանակէ որպ ։ Ծննդ. 3. 22 ։ Իսկ երբեմն առնու զնոյն խնդրոյ բայից, որոյ յարի. որգոն. իբրև 'ի միջէ բերանոյ օրհնէին ։ Դանիէ. 3. 51 ։ Իբրև յորդոր մատուցեալ է 'ի ձեռն ձեռ ։ Եբր. 11. 7։ ըստ այսմ իմա և զայլոց նմանեաց ։

Իբրեւզի ։ (մակբայ քանակական .) || որքան. կամ որչափ ։ Սաղմ. 72. 1։ և 83. 2։ Թագաւոր. 24. 5։ Եսայ. 52. 7։ և Հռովմ. 10. 15։ Մերթ եւս է շաղկապ. և նշանակէ՝ որպ զի. կամ որպ թէ. կմ՛ իբր թէ ։ Եւ 2. Տիմ. 1. 3. նշանակէ՝ զի. կմ՛ որպ ։

Իբրզի ։ (շաղկապ.) || որպ թէ. կմ՛ իբր թէ ։ Մերթ նշանակէ՝ որպ զի ։ Խորէն. Գ. գլ. 67։ Մերթ եւ՝ որով հետև. կմ՛ վասն զի ։ Խորէն. Բ. գլ. 86։

Իբրթէ ։ (շաղկապ մեկնական.) || որպ թէ. կամ այսինքն ։

Իբրու ։ (Նախադրութիւն.) || իբրև. կմ՛ որպ ։

Իբրու զաղափարաւ ։ (շաղկապ մեկնական.) || զոր օրինակ. կմ՛ օրինակի աղագաւ ։

Իբրութէ ։ (շաղկապ մեկնական.) || որպ թէ. կմ՛ իբր թէ ։ 2. Կորն. 11. 11։

Ի Գ

Իգական. ի. աւ. աց. օք ։ || գործ. կմ՛ պատկեր, կմ՛ այլ ինչ՝ որ վերաբերի առ էգն, կամ առ ցեղն կանանց ։ 2. Օրին. 4. 16։

Իգամոլ. ի. իւ. աց. ոք ։ || իգասէր. կմ՛ մոլեալ 'ի սէր կանանց. և կամ վաւաշոտ ։

Իգանամ. ացայ. ցիր. անալ. (ընդմիջ.) || մեղկանալ. կմ՛ լուծանիլ. կամ փափկանալ. և կամ կանացի լինիլ ։ Իսկ մերթ նշանակէ զարուելն ենթակայ լինիլն իբրև էգ՝ պղծագործութե արուագիտին, որ ասի սոդոմական մեղք ։

Իգասէր. սիրի. աւ. աց. օք ։ || սիրօղ իգաց. կմ՛ սիրահարեալ առ կին. կմ՛ սիրօղ հեշտախտութե ։ 3. Թագ. 11. 1։

Իգացեալ. ցելոյ. ով. ոց. ովք ։ || արու՝ որ որպ զէգ ենթարկի ցանկութե արուագիտին. և կմ՛ ամբարշտաբար առնէ զկամաւոր հոսումն ձեռօք իւրովք. և այնու ինքն ինքեան լինի որպ զէգ ։ 1. Կորն. 6. 10։

Իգացուցանեմ. ցուցի. ցն. նել ։ (անցող.) || իգացեալ առնել զոք ։ Իսկ մերթ մեղկացուցանել. կամ կանացի առնել. կմ՛ լքուցանել զոգին. և կամ լուծանել ։

Իգութի. թեան ։ || կանացի բարք. կմ՛ կանացի բնութի ։ Ուստի 2. Մակ. 7. 21. ուր ասի. Զմիտսն իգութե առնապէս վառեալ, իմանի՝ զմիտս կանացի բարուց, կմ՛ բնութե. և այլն ։ Եւ մերթ՝ մեղկութի. կամ կանացութի ։

Ի Դ

'Իդերև. կամ 'ի դերևս ։ (մակբայ անպարտական) || ընդունայն. կմ՛ ընդվայր. կմ՛ վայրապար. և մերթ 'ի բացեայ. կամ 'ի բաց. և կմ՛ 'ի զատ ։ Լամբրօն ։ Եւ սա գրեթէ միշտ լինի մէջ՝ բայիս այսմիկ. ելանել. այսպ. 'ի դերև ելանել. կմ՛ 'ի դերևս ելանել. որով մերթ իմանի ընդունայն լինիլն ։ ռամկ. [illegible] ։ Եւ մերթ 'ի բաց լինիլն ։ Եւ կմ՛ ընդ բայիս այսմիկ հանել. այսպէս՝ 'ի դերևս կմ՛ 'ի դերև հանել. և նշանակէ, ընդունայն առնել ։

'Իդէպ ։ || յարմար. կմ՛ պատշաճ. կմ՛ վայելուչ ։ Գործ. 18. 14։ և 1. Պետ. 2. 22։

'Ի դուրս ։ (մակբայ տեղական.) || արտաքս. կմ՛ 'ի բաց ։ ըստ այսմ Սաղմ. 67. 23։ Եւ 'ի միջոյ ժանեաց զայն 'ի դուրս կորզեցից ։

Ի Զ

'Իզատ. (մակբայ զատական.) || 'ի բացեայ. կմ՛ հեռի. կմ՛ 'ի բաց. կմ՛ բացատ ։

'Ի զուր ։ (մակբայ անպարտական.) || տարապարտուց. կմ՛ առանց իրաւանց. կամ առանց պատճառի, կմ՛ ընդվայր. ռամկ. պօշպէշը ։ Եւ 1. Թագ. 13. 13. ուր ասի՝ 'ի զուր է քեզ, իմանի՝ ընդունայն. կմ՛ ընդվայր են գործք, և ջանք քո, զոր արարեր ։

Ի Թ

'Իթիկանս կոյս ։ (մակբայ տեղական.) || 'ի կողմն թիկանց. կմ՛ յետ կոյս ։ Յօհան. 20. 14։

'Ի թօթափել ական ։ (մակբայ ժամանակական.) || յական թօթափելն. ա՛յ 'ի թարթելն աչաց. որով նշանակի՝ խակոյն. կմ՛ նոյնժամայն ։ Ոսկէ. 1. հատ. ԼԲ ։

Ի Ժ

Իժ. ի. իւ. ից. իւք ։ || է տեսակ մի օձի, որոյ թոյնն է յոյժ սաստիկ, և չար. զի ըզ կնի երից. կամ չորից ժամուց սպանանէ զմարդն. զոր խայթէ ։ Եւ պատմի զմանէ, թէ զարգանալն մօրն ծակելով ելանէ արտաքս. և ոչ որպ զայլս օձս 'ի ծնանց

ἐχίδνα

արտա_

արտադրի: Մատթ. 3. 7: և Գործ. 28. 3:

Իժաթոյն. թունի. իւ. ից. իւք: || զթոյն իժի ունող. կմ իբրև զիժ թունաւորող:

Ի Լ

Իլուլ. իլուլի. իւ. ից. իւք: || է անուն վեցերորդի ամսոյն եբրայեցւոց. որ պատասխանէ օգոստոսի ամսոյն հռոմայեցւոց: 3. Եզր. 6. 15:

Ի Խ

'Ի խոնարհ: (մակբայ տեղական.) || 'ի ստորև. կամ 'ի ներքոյ. կմ 'ի վայր:

'Ի խոնարհուստ: (մակբայ տեղական.) || 'ի ստորուստ. կամ ներքուստ:

Ի Ծ

'Ի ծածուկ. (մակբայ ծածկական.) || ծածկապէս. կամ լռելեայն. կամ գաղտ: Սաղմ. 138. 15:

Ի Կ

'Ի կարճոյ: (մակբայ խնդրական, կմ եղանակական.) || կարճառօտաբար. կամ կարճ 'ի կարճոյ. կամ համառօտապէս: Իւ մերթ վաղվաղակի. կմ փութով. կմ ոչ շատ երկար տևելով: Իմաս. 14. 14:

'Ի կիր արկանեմ. արկի. արկ. եալ: (Ներգոր.) || 'ի գործածել. կամ 'ի գործ դնել. կամ 'ի կիր առնուլ: Նարեկ. կա. և ղդ:

Ի Հ

'Ի հարևանցի: (մակբայ ժամանակական.) || 'ի միջոցի սակաւ ժամանակի. կամ վեր 'ի վերոյ. կամ անցողապէս: 1. Կորն. 16. 7: տես զայսմանէ և զբառն հարևանցի:

'Ի հարկէ: (մակբայ բռնադատական.) || 'ի հարկաւորութենէ. կմ հարկաւորապէս. կամ ակամայ, կմ բռնութեամբ: Փիլիմ. 14: Յոհէ. 2. հատ. իթ:

'Ի հ: (միջարկութիւն հեգնական.) || ահ. հէհ. վահ. կամ ոհ. ով:

'Ի հեռաստանէ. (մակբայ տեղական.) || 'ի հեռաւոր տեղւոջէ. կմ 'ի բացուստ: ռամկ. հէռուճանց: Սաղմ. 138. 3:

'Ի հեռուստ: (մակբայ տեղական.) || 'ի հեռաստանէ: ռամկ. հէռուճանց: 2. Կորն. 13. 10: Իսկ մերթ վարի իբրև զանուն, և նշանակէ զհեռաւորն. և ըստ այսմ է. 2. Եզր. 3. 13. ուր ասի. Եւ լսելի լինէր ձայնն մինչև 'ի հեռաւոր տեղիս. այսինքն մինչև 'ի հեռաւոր, կամ 'ի հեռաւորին տեղիս:

'Ի հետևակաց: (մակբայ որակական.) || հետևակ գոլով. կամ հետիոտն գոլով. կամ հետևակաբար: Խորէն. գ. գլ. 8:

'Ի հերուն հետէ: (մակբայ ժամանակական.) յանցեալ ամէ և այսր: ռամկ. հէրուճանց 'ի վեր: կամ 'ի վաղ ժամանակաց և այսր. կմ 'ի վաղուց հետէ. ռամկ. շատոնցմէ: 2. Կորն. 8. 10: և 9. 2:

Ի Ձ

'Ի ձախ կոյս: (մակբայ տեղական.) || 'ի ձախ կողմն: ռամկ. սօլ դին:

'Ի ձախմէ: (նախադրութիւն.) || 'ի ձախոյ կողմանէ. կամ 'ի ձախ կողմն: Ծննդ. 14. 15:

'Ի ձեռն: || նախադրութիւն, որ պահանջէ զհոլովս սեռական, և նշանակէ ասել միջնորդութեամբ. զոր օրինակ. օրէնքն 'ի ձեռն մովսէսի տուան. այսինքն միջնորդութեամբ մովսէսի. և այլն: Յոհ. 1. 17: ոչ խոստացաւ 'ի ձեռն կատակարանաց: 2. Մակ. 2. 18: ըստ այսմ են և Ովսէ. 3. 1: և Գործ. 15. 12. և այլն: Իւ մերթ յորժամ խնդիրն առաջադասէ քան զինքն, նախդիրն իւր բարձեալ լինի, և գնի խնդրոյն. որգոն. յոյր ձեռն գայցէ գայթակղութիւն. այսինքն 'ի ձեռն որոյ. և այլն: Մատթ. 18. 7: և Ղուկ. 17. 1: Բայց գիտելի է. զի նախադրութիւս այս, անուանն՝ ունել յարի ասայ զզօրութիւն գործիականի. զի նոյն է ասելն, 'ի ձեռն շնորհացն իւր, և ասելն՝ շնորհօքն իւր: ուստի բազում անգամ 'ի բաց թողեալ զնախադրութիւս զայս՝ 'ի ձեռն. վարին գործիականաւ, մանաւանդ յայնս անուանս՝ որք զանկենդան իրս նշանակեն. որգոն. քարամբ քարկոծեցին. և սրով սպանին: և այլն:

Ի Ղ

Իղձ. ըղձի. իւ. ից. իւք: || մերթ նշանակի բաղձանք. կամ փափաք. կամ տենչ. կմ ցանկութիւն: Խորէն. ա. գլ. 17: Իւ մերթ նշանակէ զկախարդն, որ ըստ ըղձից և յօժարութեանց իւրոց, և հարցողացն պատմէ զապագայից: 1. Թագ. 6. 2: և Դանի. 2. 27: և Միքի. 3. 7:

Ի Ճ

'Ի ճահ: || յարմար. կամ պատշաճաւոր. կամ վայելուչ. և կամ յարմարապէս. կամ պատշաճապէս. և այլն: Նարեկ. ղէ: և 'ի գովեստ խաչին:

Ի Մ

Իմ. իմոյ. ով. ոց. ովք: || է ստացական դերանուն. և նշանակէ իմայինն: իսկ 'ի շարականի ուր ասի՝ ներգործեալ իմովս իմանալի մարդկային մարմնովս. կմ մարդկային բնութեամբս:

Իմայն. (նախդրիւ հոլովի.) || իմայինն. կմ որ իմ է:

Իմանալի. լւոյ. եաւ. եաց. եօք: || այն իրն, որ մտօք միայն կարէ իմանալ, և ոչ ըմբռնել 'ի ձեռն զգայարանաց. որպիսի է

էակն

Digitized by Google

էակն անմարմին. կամ հոգևոր: Եւ բազ միցս բառս իմանալի, դնի փոխանակ իմա ցողի. որգոն. որ արարեր յոգիս իմանա լի զհրեշտակս քո. թ. արարեր յոգիս ի մացողս:

իմանամ. ացայ. ցիր. անալ: (ներգործ.) || հասկանալ. կմ 'ի միտ առնուլ. կմ ըմ բռնել, և բովանդակել միտք: Մատթ. 13. 51:

իմաստ. ի. իւ. ից. իւք: || մերթ նշանակէ զատոյգ իմացուածն. կմ զատոյգ իմացումն. Նարեկ. ծզ: Եւ մերթ զիմաստութիւն. կմ զհանճարեղութիւն. կմ զհնարն: Նարեկ. 'ի գովեստ խաչին: Եւ 'ի տօրոյն խաչին: Եւ սորա մանաւանդ յոգնականն 'ի գործ ածի:

իմաստագործ: (նախդրիւ հոլովի.) || իմաս տուն գործող. կմ իմաստութբ գործող: Նարեկ. 'ի տօրոյն Եկեղեցւոյ:

իմաստազեղ. ի. իւ. ից. իւք: || առատացեալ, և լցեալ իմաստութբ. կմ յոգնահանճար: 'ի Ճառս հարց. բ:

իմաստակ. ի. աւ. աց. օք: || կերպարանեալ իմաստուն. կմ ձևով միայն իմաստուն. և կմ այն, որ 'ի ձեւն ոմանց բանից, կմ ճար տարախօսութե զինքն իմաստուն երևե ցուցանէ. բայց 'ի ճշմարտութե՛ նա է թա փուր: Եւ երբեմն 'ի հնումն առացեալ լինէին իմաստակք, որք զսուտ հաւաքա բանութիւ հնարէին, զորոց զստութին կատարեալ իմաստունքն միայն ճանաչէին: Սիրաք. 37. 23: Իսկ մերթ նշանակէ զիմաս տասէրն. և կմ զիմաստունն. և այս առի զարտաքին փիլիսոփայից. և թ այսմ է. Նարեկ. ծե. և ղե:

իմաստական. ի. աւ. աց. օք: || իմաստասի րական. կմ իմաստնական. կմ զգօնական. կմ իմացողական: Նարեկ. ղթ:

իմաստակիր. կրի. աւ. աց. օք: || զիմաստու թի կրող յինքն. կմ ընդունակ իմաստութե. որպիսի է միտքն: Աճգոբ:

իմաստայեղց. կմ իմաստայեղծ. ի. իւ. ից. իւք: || տես 'ի ներքոյ զիմաստայորդ. զի նոյն է ընդ նմա: Լամբրօն:

իմաստայորդ. յորդի. իւ. ից. իւք: || իմաս տալից. կմ իմաստալիր. թ, լցեալ, կմ առո գեալ իմաստութբ. կմ հանճարեղ. կմ յոգնահանճար: Լամբրօն:

իմաստապատում: (նախդրիւ հոլովի.) || պատմող զիմաստութեց. կմ իմաստութբ պատմեալ, և ասացեալ: Նարեկ. ղէ:

իմաստապէս: (մակբայ որակական.) || խո հեմապէս. կամ հանճարեղաբար. և կամ զգօնաբար: Նարեկ. ղթ:

իմաստասէր. սիրի. աւ. աց. օք: || պարա պող ուսումնասիրութե բնական գիտու թեց. կմ հետամուտ քննող բնութեց ի րաց. և կմ բնախօս: Արդ կոչեցան այս պիսիս իմաստասէր. ոչ և յունարէն փի լիսոփայ. որ թարգմանի սիրող իմաստից, մն սիրով պարապելոյն իմաստութե բնա կան իրաց, և կամ մն սիրելոյն զիմաստու թի և զգիտութի բնական իրողութեց: Խորէն. գ. գլ. 62: և Լամբրօն: Իսկ մերթ առեալ լինի փոխանակ ո և իցէ իմաստուն զգօն և հանճարեղ մարդոյ, որ յամ գործս իւր իմաստնաբար և բարեպաշտօրէն վա րի: Յովհ. 1. հատ. խբ: և 2. հատ. խե: և այլն:

իմաստասիրաբար. կամ իմաստասիրապէս. (մակբայ որակական.) || փիլիսոփայաբար. կմ հանճարեղապէս. և կմ խոհեմաբար: Նարեկ. ղթ: և Լամբրօն:

իմաստասիրեմ. եցի. եա. ել: (չէզոքակ.) || զգործ իմաստասիրի առնել. կմ պարա պիլ ուսման իմաստից. կամ ուսումնասի րել. կամ հետամուտ լինիլ բնական մա կացութեց. և կմ ջանիւ և սիրով պարա պիլ և աշխատիլ 'ի յուսումն գիտութե: Խորէն. ա. գլ. 1: Մերթ ևս նշանակէ՝ իմա նալ. կմ մակաբերել: Նարեկ. գ: և Լամբրօն: Եւ մերթ իմաստնապէս և հանճարեղաբար ասել. կմ պատմել, և ճառել: Նարեկ. 'ի գովասանս: և Խորէն. գ. գլ. 68: Իսկ մերթ առեալ լինի փոխանակ ո և իցէ ներգոր ծութե՝ սրով զգօնաբար, կմ ուշիմութբ խօսիմք. կմ ուսուցանեմք. կմ զմտաւ ա ծեմք. կմ քննեմք. և կմ գործեմք և վա րիմք. և այլն: Յովհ. 2. հատ. ժզ. և լէ: և Լամբրօն:

իմաստասիրութիւն. թեան: || փիլիսոփայու թի. կամ բնական իրաց մակացութի. և կմ պարապումն ուսման իմաստից: Իսկ մերթ՝ իմաստասիրական. կմ խոհեմական բան. և գործ: Լամբրօն:

իմաստատառ: (նախդրիւ հոլովի.) || պատ ռեալ և պակասեալ յիմաստից. կամ կո րուսեալ զիմաստութի և զզգօնութի. և կամ զրկեալ 'ի հանճարոյ և 'ի գիտութէ: Նարեկ. իբ:

իմաստատեաց: (նախդրիւ հոլովի.) || ա տող իմաստութե. կամ ոչ սիրող զիմաս տութի:

իմաստարան. ի. աւ. աց. օք: || տեղի իմաս տութե, որ է միտքն, կմ իմացութիւն, և կմ գլուխն, յորում մն գոլոյ գործեաց զգայականաց որք ծառայեն առ ստացումն իմաստից, և գիտութեց, իմաստարան կո չի: Նարեկ. կ:

իմաստնաբար. կմ իմաստաբար: (մակբայ որակական.) || իմաստութբ. կմ զգօնա բար. կմ հանճարեղապէս. և այլն: Ռամկ. խելօքութ: 2. Մակ. 13. 26:

իմաստնախոհ. ի. իւ. ից. իւք: || իմաստուն և խոհեմ. կամ խոհական. կմ հանճա րեղ և զգօն. և կմ զիմաստալից միտս ունող:

իմաստնանամ. ացայ. ցիր. նալ: (ընդմիջ.) || իմաստուն լինիլ. կմ հանճարեղանալ. կմ զգօնանալ. կմ խոհեմանալ. և կմ իմաս տից և հանճարոյ հասու լինիլ. կմ զգաս տանալ միտք: Նարեկ. ղթ:

իմաստնապէս: (մակբայ որակական.) || տես զիմաստնաբար:

իմաստնացուցանեմ. ցուցի. ցո. ել: (անցո ղակ.) || իմաստուն առնել. կմ զգօնա ցուցանել. կմ խոհեմ և հանճարեղ առնել: Նարեկ. ղէ:

Digitized by Google

Իմաստութիւն. թեան: || գցօնութիւն. որ է ճանաչումն իրին 'ի ձեռն բարձրագունից պատճառաց. և կամ ծանօթութիւն գերագոյն և վսեմագոյն պատճառաց իրին: Եւ այս սակս մերթ զանազան իմաստութիւն. և մերթ գործնականն. որ առ բարի վարս, և կամ առ ճարտարապետական արհեստս պատկանի. որով իմանի խոհեմութիւն. ուշիմութիւն. խելացութիւն. հնարագիտութիւն. խորագիտութիւն. կամ ճարտարութիւն, և այլն: Իմաստ. 1. 4: Եսայ. 11. 2: և Ելից. 31. 3: և 36. 2: Իսկ մերթ նշանակէ զիմացումն. կամ զիմացողութիւն. և կամ զհասկացումն, և 'ի միտ առնումն: Առակ. 31. 1: և 41. 1: և այլն:

Իմաստուն. տնոյ. ով. ոց. ովք: || ունօղ զիմաստս, կամ զիմաստութիւն. և կամ որ ճանաչէ զիրս ճանաչմամբ գերագոյն և վսեմագոյն պատճառաց նոցա. կամ գցօն. կամ հանճարեղ. կամ խորագէտ. կամ հնարագէտ. կամ խոհեմ. կամ յոյժ ճարտար և հմուտ 'ի գործս և յարուեստս. և այլն: Ելից. 36. 1. և 4: Մատթ. 16. 20. և 23. և այլն: Իսկ մերթ նշանակէ զիմացօղն, և զհասկացօղն, և զմիտ առնօղն ընթերցօղն: Առակ. 13. 2:

Իմացական. ի. աւ. աց. աք: || իմացողական. կամ մտաւորական. կամ հոգևորական. և կամ իմանալի: Կոչէի. ղջ: Եւ կամ իմացող և ընթերցօղ. որպիսին է միտքն: Լամբրոն:

Իմացեալ. ոյ. ով. ոց. ովք: || իմացումն. կամ իմացողութիւն. կամ միտք: Խորէն. Ա. 'ի յառաջաբանութեան: Մերթ և նշանակէ զմիտս և զիմացումն բանից:

Իմացութիւն. թեան: || իմացողական զօրութիւն, որ է գերագանց կարողութիւն հոգւոյ: Մերթ և իմացումն, կամ ընթերցումն զինչութեան իրին, կամ գործոյն. և կամ հասկացումն: Լամբրոն:

Իմացումն. ցման. ման. մանց. մունք: || ընթեռնումն զինչութեան. կամ հասկացումն. և կամ իմացութիւն մտաց: Կոչէի. 'ի Գովս. Կարապետի: Եւ կամ միտք և կարծիք զոր ունի ոք զիմքէ: Խորէն. Գ. գլ. 61:

Իմացօղ: (Նախորդիւ հոլովի.) || իմացօղ. կամ 'ի միտ առօղ. կամ հասկացօղ: Սիրաք. 3. 32: և Լամբրոն:

Իմացուցանել. ցուցի. ցի. ցուցանել: (անցող.) || ազդ առնել. կամ ծանուցանել. կամ տեղեկացուցանել. կամ ուսուցանել: Ղևտ. 10. 11: և Դանիէ. 8. 16:

Իմացք. իմացից. իւք: (անեզական.) || տես զԻմացուած:

'Ի մերկուց: (մակբայ որակական.) || մերկապէս. կամ մերկութեամբ. կամ մերկ գոլով. կամ 'ի վերայ մերկ իրին. զոր օրինակ. Այր կերպ զհետ երթայր զկտաւ մի 'ի մերկուց. այսինքն, զգեցեալ զկտաւ մի 'ի վերայ մերկ մարմնոյ իւրոյ: Մարկ. 14. 51: Ըստ այսմ մինչ ասի, 'Ի վարս հարց. Է: Պատատեալ ընդ սրունս քո 'ի մերկուց, իմանի պատատեալ 'ի մերկ սրունս քո, և այլն:

'Ի մերձ: (մակբայ տեղական.) || Է հուպ. կամ մերձ. որգոն, 'ի մերձ կանգնեցաւ:

'Ի մերձուստ: (մակբայ տեղական.) 'ի մօտոյ. կամ հուպ ընդ հուպ:

'Ի մէջ: (Նախադրութիւն.) || մերթ նշանակէ 'ի միջին տեղւոջ տանն. կամ պարտիզի, կամ այլ ինչ իրի: Մարկ. 3. 3: Եւ մերթ նշանակէ, ներ. կամ 'ի ներքս տան, կամ պարտիզի, կամ այլոյ իրի. թէ 'ի միջին տեղւոջ իցէ, և թէ 'ի մի կողմն: Մատթ. 13. 22: Իսկ մինչ ասի, խորհուրդ 'ի մէջ առնուլ. իմանի ընդ միմեանս խորհրդակցել. կամ խորհել: Ծննդ. 37. 18: Եւ մինչ ասի զփոյթ 'ի մէջ առնուլ. նշանակէ զփոյթ յանձինս բերելոց ունել: 2. Պետ. 1. 5:

'Ի միասին: (մակբայ ժողովական.) || զոյգ ընդ միմեանս. կամ զոյգ Է բազմաց. կամ միանգամայն: տեսակ. մէկտեղ: Սաղմ. 13. 3: Յօբ. 20. 4:

'Ի միջի. || Նախադրութիւն, որ պահանջէ զհոլովն սեռական. զոր օրինակ. 'ի միջի նց: և նշանակէ 'ի մէջ, կամ 'ի միջին տեղւոջ: Եւ սա մերթ ոչ վարի իբրև նախադրութիւն, այլ է գոյական անուն, որոյ և ածականն է նմին հոլովի. զոր օրինակ. բայց ես եմ 'ի միջի ձերում իբրև սպասաւոր: Ղուկ. 22. 27:

'Ի միջոյ: || Նախադրութիւն, որ առնու զսեռական. զոր օրինակ, 'ի միջոյ նց. և նշանակէ 'ի միջին տեղւոջէ. տեսակ. միջէն: Իսկ մերթ վարի իբր զանուն գոյական Է ածականի իւրում. զոր օրինակ. բարձջիք զչարն 'ի միջոյ ձերմէ: 1. Կորն. 5. 13:

Ին. իւրք. իմք. յիմքէ. իւիք. յիմիք: Է անուն մասնական, և անյոգնական: || ինչ. կամ իր ինչ: Ղուկ. 5. 4: և այս սակս զանկեանգան իրաց. որգոն, քար ինն: Սա երբեմն յարի անուանց հոլովեցելոց, և ինքն մնայ անհոլով. զոր օրինակ. աղնուական ինն ցանկացեալ են. այսինքն աղնուականի իմիք: Եբր. 11. 16: բնակութիւն ինն. այսինքն բնակութիւն իւիք: 2. Մակ. 1. 14: Թիւով ինն. այսինքն թւով իւիք: Կոչէի. կթ: Եւ մերթ դնի առ 'ի զարդ. կամ փոխանակ մակբայից, որպէս թէ. կամ իսկ. զոր օրինակ. մտադիր ինն ներեայցէք: 2. Կորն. 11. 19: Կամեցին ինն թէ. այսինքն կամեցին արդարև թէ: 1. Մակ. 11. 63: Բիւրապատիկ ինն էին. այսինքն բիւրապատիկ իսկ էին. 3. Մակ. 1. 11: Իսկ Եփես. 1. 22. ուր ասի, զնա ետ գլուխ 'ի վր ամ իրիք եկեղեցւոյ, իմանի այսպէս. ետ զնա 'ի վեր քան զամ ինչ՝ գլուխ եկեղեցւոյ:

Իննապէս: (մակբայ որակական.) || Թ իմք. կամ կերպիւ իւիք:

Ին ին. (անհոլով.) || այսպէս. կամ զանազան. կամ այլ և այլ: Աղվան: և Ոսկ. 1. Կոր. իթ:

Իմովսանն: || ելանէ սա 'ի բառէս՝ իմ, և 'ի բառէս՝ սանն, որ է զօրութիւն, կամ կարողութիւն. ուստի իմովսանն նշանակէ, ըստ իմոյ կարողութեան, կամ զօրութեան, և կամ իմ զօրութեամբս, և կարողութեամբս. և Է այսմ իմանի: Հռոմ. 1. 15. ուր ասի, Իմաստնոց և անմտից պարտապան եմ, այնպէս. որ-

ցասն իմաստանն, զի որչափ է իմ զօրութիւն, եւ կարողութիւն, որով խմանի մանեմ. որչափ խեմ հնար է. և կամ 'ի կողմանէ իմմէ որչափ կարելի է:

'Ի մօտոյ: (մակբայ ժամանակական.) || մօտ ժամանակի. կամ մերձաւորապէս. կամ 'ի մեր ձաւուս. կամ յետ սակաւ միոյ: Թուոց. 24. 17: Եզեկ. 7. 8: և 1. Կորն. 5. 3:

'Ի մօտաւոր: (մակբայ.) || 'ի մերձաւորս. կամ 'ի մօտոյ:

Ի Ն

Ինախնումն: (մակբայ, դիտաւորական.) || յա ռաջագոյն. կամ կանխագոյն. կամ վաղ_ ուցենն. կամ 'ի նախկին ժամանակս:

'Ի նանիր: (մակբայ անպարտական.) || առ բարպաւորունց. կամ ընդվայր. կամ 'ի զուր, կամ 'ի սնոտիս. կամ վայրապար: ռամկ. պօշպէշը: Սաղմ. 34. 7:

Ինդրէ. ի. իւ. եց. իւք: || է ազգ ինչ հաւ_ ուկեաց. կամ ծխամնէլեաց և խնկոց, որ լինի յաշխարհն հնդկաց: Խորէն. յաշխարհագր:

'Ի ներս կոյս: (մակբայ տեղական.) || 'ի ներ քին կողմն:

'Ի ներքոյ: (նախադրութիւն որ առնու զտե_ ղական:) || 'ի ստորև. կամ ներք. ռամկօր. նէրքիւը: Եւ երբեմն առանձին առնու զմակ_ բայ. և յայնժամ նշանակէ, 'ի ներքուստ. որպէս. Պատեաց զնա 'ի ներքոյ, և ար_ տաքոյ. այսինքն 'ի ներքուստ, և արտաքուստ: ռամկ. նէրօնտէն: Ելից. 37. 10 այսպէս և 2. Կորն. 7. 5. և յայլ տեղիս. իսկ մերթ նշա նակէ 'ի ներքին, կամ 'ի ստորին կողմանէ: ռամկ. նէրտէն: 2. Թագ. 18. 9:

'Ի ներքուստ: (մակբայ տեղական.) || 'ի ներքին կողմանէ: ռամկ. նէրտէն: 2. Մնաց. 3. 4: Ղեւտ. 11. 7: Եւ Ելից. 18. 10: և 4. Թագ. 8. 20. յորս ասի, 'ի ներքուստ ձեռին, ի_ մանի՝ ձեռաց ներքեւէն:

'Ի ներքս: || Նախադրութիւն, որ պահանջէ զը_ ղային սեռականն. և նշանակէ 'ի ներքին կողմն, կամ 'ի ներքին տեղւոջ: ռամկ. նէրս: և ըստ այսմ ասի 'ի ներքս տան. կամ տա_ ճարին. և այլն: իսկ մերթ լինի նա_ խև զմակբայ բայի. և զնոյն նշանակէ. զոր օրինակ. մտեալ 'ի ներքս: Մարկ. 16. 5:

Ինձ. ընձու. ու. ինձք. ընձուց. ձօք: || է գազան ինչ գծաւոր, և պատառող: ձեւով նման է կատուի, բայց մարմնովն է յոյժ մեծագոյն քան զնա. ունի զմորթ խայտաբղ_ ղէտ. զի խատուտիկ: ռամկ. ղաբլան: Երգ. 4. 8: Երեմ. 13. 23:

Ինձէն: (մակբայ ոչակական.) || յինէն. կամ ես ինքնին. և կամ ես ինքեամբ: Սաղմ. 50. 5:

Ինն. ընն. իւ. ինունք. ինանց. կամ ինուց. կամ ըննեց. ըննեւք. կամ ինամբք: || է բացար ձակ անուն թուոց, որով նշանակի. երից երեքն. կամ տասնէն մի պակասն: և կամ իններակ: Ղուկ. 17. 17:

Իննակնեան: (Նախդրիւ հոլովի.) || զինն ա_ կունաւոր: զի զինն աղբիւրս ունէր: և այսու անուամբ անուանեցաւ դշխոյ վանքն, որ 'ի Հայաստան. նաև տեղիք սահմանացն, ուր է վանքս այս, զի են առ_ ուք քիմնաղբերականք, որք բղխեն զջուրս բարեհամս: Եւ նախ առա գոյին մեհեանք դից, զորս առաջթիւք կործանեաց ոք հայրն մեր գրիգոր լուսաւորիչ. և անդ եդ առար, 'ի ձեռս ուսեալ զոք խաչին. և զահ պարզ կարապետին. և յոյժ մեծ տեղւոյն շինեաց զվանս: 'Ի լուսաւորչեան:

Իններակ. ներկի. ներկաւ. աց. օք: || է զատա_ կան անուն թուոց. և նշանակէ զինն_ երորդ, զի զինն թիւ ունող, որպիսիք են իններակ դասք հրեշտակաց:

Իններեակ. րեկի. աւ. աց. օք: || իններակ. կամ իննաւոր. այս է, ինն թուոց պարու_ նակող: Նարեկ. 'ի չարչարանացն:

Իններորդ. ի. աւ. կամ իւ. աց. օք: || է դա սական անուն թուոց. որով նշանակի մեր ձին ընդ գաստարակեցելոյ: 3. Թագ. 11. 1:

Իններեքեան. ներեքեան. կամ ներեքանց. ներեքումբք: || իւրաքանչիւրն յիննանց. կամ իննաքանչիւրն: Ծննդ. 14. 2:

Իննուտասան. տասանց. տամբք: || իննեւտասն. ռամկ. ... մերթ և նշանակէ զինն և տասներորդն: և ... այսպէս է. 4. Թագ. 25. 8: և Երեմ. 52. 12:

Իննուտասներորդ. մերի. իւ. եց. եւք: || իննուտասան ամենայն. կամ իննուտասներորդն: Ծննդոց. 17. 17: 2. Մակ. 6. 24:

Իննսնամեակ. նեկի. աւ. կամ իւ. ոց. օք: || է զա սական անուն թուոց, և նշանակէ զիննսուն թիւ ունողն, կամ պարունակողն. իննսու նամենեան և տասնեւմնացեալ:

Իննսներորդ. ի. աւ. կամ իւ. աց. օք: || է դա սական անուն թուոց. և նշանակէ զմեր ձին գաստարակն իննսուն թուոյն:

Իննսուն. իննսնից. իւ. եց. օք: || է բացար ձակ անուն թուոց. և նշանակէ զինն տասնեակս:

Ինչ: (մասնական անուն անհոլով.) || իմն: Ղեւտ. 5. 4: Յոհ. 1. 18: Եւ կամ իբր իմն. կամ բան իմն: Սաղմ. 22. 1: Ղուկ. 7. 40: Այդ սա մերթ 'ի գործ ածի բացարձակ. իսկ մերթ յարի անուանց յետ հոլովման նց, և լինի ոչ երբեք հոլովի. զոր օրինակ. եթէ մնասեւ ցէ ինչ ընկերի իւրում. այսինքն եթէ մնասեւ ցէ իւիք: Ղեւտ. 6. 2: Ոչ եթէ ունիմք՝ ա_ ռաւելութեամբ ինչ, այսինքն իւիք: 1. Կորն. 8. 8: և 3. Մակ. 7. 6: Ոչ եթէ իմով ինչ շնորհօք. այսինքն իմով իւիք: Տօբ. 12. 18: Յետ աւուրց ինչ. այսինքն յետ աւուրց սակաւուց: Գործ. 24. 24: Ե_ ղեն 'ի ժամանակս աւուրս ինչ. այսինքն աւուրս սակաւս: Գործ. 9. 19: և 25. 13: 'Ի միջէ ինչ երկիւղէ. այսինքն 'ի միոյ իմիքէ երկիւղէ: 1. Պետ. 3. 6: Իսկ մերթ գնի սա 'ի չարաշահու թիւն բանից, առ 'ի զարդ. կամ փոխանակ՝ տրզալու, բառնաս: որպէս. եթէ զմարգարէն ինչ վկայութիւն ընկալեալ: 1. Յոհ. 5. 9: Ըստ այսմ է և յայլ բազում տեղիս: Իսկ մինչ ասի. զամենայն յինչ ածել. իմանի՝

ղանդոյն 'ի գդյ ածել. Թ. գոյացուցանել։ Եւ մերթ նշանակէ, որ. կմ՛ որպիսի. որ գոն. Յինչ օրէնս. յինչ կամս, կմ՛ յինչ խորհուրդս կամ ընդ մեզ. Թ. յո՛ր, կամ յորպիսի օրէնս, և 'ի կամս, և 'ի խորհուրդս։ 2. Մակ. 14. 5։ Յինչ պէտս կոչեցիք զիս. Թ. յոր պէտս։ Գործ. 10. 29։ Յինչ և իցէ յանցանս. Թ. յոր և իցէ. կմ՛ յորպիսի և իցէ։ Գաղ. 6. 1։

Ինչ գունակ։ (մակբայ հարցական.) || որ-գունակ. կմ՛ որպէս. կմ՛ որով օրինակաւ։

Ինչ ինչ։ (անհոլով.) || ոմանք իրք։ Ը ոչնչ. Լամբրոն։ Ինչ ինչ և յասորւոց ընկալան։ Թ. զոմանս իրս։ ըստ այսմ է և 2. Մակ. 2. 13. ուր ասի. Եւ զայլ հրամայեաց 'ի Թագաւորաց, որ վն ինչ ինչ, Թ. որ վն ոմանց իրաց. և կամ որ զոմանց իրաց։ Բայց ստուեն զկնի ինչ ինչ բառս, պարտի դնել ստորակէտ, կմ՛ բութ՝ զի իմանիցի բանն։ Եւ մինչ ասի. զինչ ինչ պարտ էր առնել. նշանակէ, զինչ իր. կմ՛ զո՛ր իր։ Եսայ. 5. 4։

Ինչք. ընչից. ընչիւք։ (անեզակ.) || ստացուածք. կմ՛ գոյք, և կմ՛ իրքն զորս ունիցիք։ Ծննդ. 36. 7։ Ղուկ. 12. 15։ Գիտելի է, զի սա հասարակօրէն անեզականաբար վարի, սակայն երբեմն ուրեք ուրեք 'ի գործ ածի նաև Ը եզականին. ոչ գրի Ղուկ. 14. 30։ Ը ընչին, զոր եգիտ 'ի ձեռին իւրում. Թ. ըստ կարողութե, կմ՛ ըստ ունեցեալ ընչիցն, որ գտանի 'ի ձեռին իւրում։ Ը այսմ է և 2. Օրին. 16. 10։ Ի Թուոց. 16. 26։

Ինքն. ինքեան. եամբ. եանց. եամբք։ || է դերանունն էական. որ նշանակէ [illegible] դէմ ինչ։ լատին. իփսէ։ Այլ 'ստ մինչ առանձին՝ Թարց յարելոյ ընդ այլում դերանուան 'ի գործ ածի, յատկացուցանէ զերեան զերրորդ դէմն. զոր օրինակ. ինքն իսկ խօսեսցի վն իւր։ Յովհ. 9. 21։ և կամ. Այլ ինքն գիտէր զինչ առնելոց էր։ Յովհ. 6. 6։ և այլն։ Իսկ մինչ յարի այլում դերանուան՝ հասարակ է երից դիմաց. զոր օրինակ. ես ինքն. դու ինքն. նա ինքն։

Ինքնաբանական. ի. աւ. աց. օք։ || Նախաւինքն. կմ՛ գոյութիւն. և կմ՛ վկայութիւն, և այլք նմանք, զորս ոք բերանով իւրով առ իւր ինքն խօսի, և առ ինքն վերաբերէ։ Նարեկ. հը։

Ինքնաբաւ։ (Նախդրիւ հոլովի.) || ինքն ինքեան բաւական, կամ անկարօտ այլում. կամ ինքեամբ կարող, և բաւական առ իր ինչ։

Ինքնաբերական. ի. աւ. աց. օք։ || այն ամ որ ինքնին, կամ ըստ ինքեան բերեալ լինի, կմ՛ արտադրի, և կամ գոյանայ. որպիսիք են շարժմունք ոմանք. կմ՛ բոյսքն՝ զորս երկիրն ինքնին բերէ, և կմ՛ որդունք և ճճիք որք ինքնին և բնականաբար յորովայնի լինին։ Նարեկ. կթ։

Ինքնաբոյս. բուսի. իւ. ից. իւք։ || ինքնին յերկրէ առանց սերմանելոյ բուսեալ. որ և ասի՝ ինքնեկ։ Խորէն. յաշխարհագրութն։ Իսկ մերթ նշանակէ՝ ինքնաբուն. կմ՛ ընդաբոյս. և կմ՛ բնածին։ և ըստ այսմ ասի՝ ինքնաբոյս ժամանութե։ Մերթ և նշանակէ զիս, որ է ինքն բուսուցանօղն. կմ՛ ինքնաբուն պատճառ իրին. և Ը այսմ ասի զքէն. Այլ ինքն է արմատ, և ինքնաբոյս ամ բարեաց։ Ոսկէ. 1. հարց. ժզ։

Ինքնաբուն։ (Նախդրիւ հոլովի.) || ինքնագոյ. կամ ինքնին բնութբ. կմ՛ ինքնին 'ի բնէ. և կմ՛ բնութբ։ և ըստ այսմ ասի զԱյ. ինքնաբուն բարի, զի բնութբ է բարի, և ոչ ըստ մեզ հաղորդութբ ունի զբարութի։ Նարեկ. գ։ Մերթ և նշանակէ. բնական. կմ՛ ընդաբոյս. կմ՛ բնածին. և կամ արմատացեալ յումեք, և իբր թէ բուն եղեալ։ Նարեկ. ձա։

Ինքնագիր. գրի. իւ. աց. օք։ || իւրագիր. Թ. յիւրմէ ինքենէ շարադրեցեալ. կմ՛ ձեռամբ իւրով գրեցեալ. և կմ՛ վն իւր գրեալ և ասացեալ։ 'ի Խորագիրն սաղմոսին. [illegible] ես յեղեսեալ, որ է 'ի Սէրքն։ և Նարեկ. գթ։

Լօղիկ · լօղկի · իւ · կց · իւք ։ || մերարկու · ... · փեղկանդ · կամ վերջին լաւաշ ։ Ի · Թագ · 18 · 4 · և 24 · 5 ։

Լօղակ · ի · աւ · աց · օք ։ || անուն զինուորի ։

Լօշ · ի · իւ · կց · իւք ։ || բարակ հնոցը հաց, որոյ զգանգուածն ՚ի կողմն թոնրի հարկանելով հարկանելով և միանգամայն եփեն։

Լօշտակ · կամ լօշտակ · ի · աւ · ագ · ք ։ || է թաւ արմատ ինչ խոտոյ · համեմ բանն, և ունի զձև կերպարանաց մարդոյ, զոր ըլ ժէնշէն ՚ի գործ ածեն ՚ի դեղորայս ։

Լօռ · ի · իւ · ից · իւք ։ || մանրուկ · որ է կանաչ խոտ ինչ երկու զլուշոյ՝ որ բուսանի ՚ի ծովափն · կամ յեղերս նոյ ՚ի մէջ քարանց, կամ յաւ փոխարկելոյ, և կամ ՚ի գետս և ՚ի խոնաւ տեղիս, և զկերակուր ծառոց, և մերթ զաղբերաց ։ ասեն · Քերթողականք ։ Աշխարհ ։ և ՚ի վերջ հատ · ։

Լօռամարգ · ի · աւ · աց · օք ։ || անուն առ գետ ու կամ ուր լօռն է · և կամ գետին, և խոտոյ նուաճեալ վայր ուր բուսանի լօռ ։ կանաչ խոտ երկու զլուշոյ ։ Եսայ · 19 · 6 ։

Լօռաճէար · ճէարի · աւ · աց · օք ։ || անուն առա ... կամ լցեալ բազմութեամբ լօռից · և կամ ուր յաճախ և առատ բուսանի լօռ խոտն։ Խորէն · Ե · գլ · 6 ։

Լօրայ · ի · իւ · կց · իւք ։ || խորշակ, կամ խաւ, որ ամենայն միայնակեցաց զոր ՚ի հնումն ընակէին միայնակեացքն ՚ի լերինս։ Իսկ էր որ երբեմն առ իւր, և էր ուր զանն, և էր ուր յետ այն, կամ հայրենեաց խորշակ շինեցեալ լինէր · և ՚ի յերուսաղեմ առանձին բնակէին միայնակեացքն ։ ՚ի վարս հարց · Թ ։

Խ

Խ. է տառ բաղաձայն, որ հան գոյն այլոց բաղաձայնից, միայնակ ոչ կարէ գձայն ելուզանել, այլ միշտ բաղակցելով ընդ այլոց տառից. զոր օրինակ. խոր. խուլթ. խուժ: Բայց տակայն ոչ է ամենևին անձայն, զի թէև ոչ յօդեսցի ընդ այլոց տառից, տակաւին կարէ խիստկան հնչմամբ զնուճայ և զկիսաձայն ինչ սկզբնաւորել. և վն այսորիկ կոչի կիսաձայն տառ, որպիսիք են և տառքս այսոքիկ. պ. ժ. ղ. շ. և այլն:

Արդ՝ զտառս զայս՝ խ, անուանեմք, խէ, որ հնչի շարժմամբ շնչոյն ընդ փողն արտաբերողին, և ելուզանէ զձայն տոռճար. ուստի 'ի յարուճեստի առոգանութե, յորում քննի որպիսութիւն հնչմանց տառից, բստ հաւասարին թաւաձայն կոչի. այս զհաստաձայն ունօղ. որպիսիք են և տառքս այսոքիկ. թ. չ. ջ. ռ. ց. փ. ք: և այլն:

Դարձեալ. տառս այս կոչի նաև լծորդ. զի ունի զլծորդութիւն. այս զփոխանակութիւն ձայնի, կամ արտաբերութե՝ ընդ ումանց տառից. որպիսիք են տառքս այսոքիկ, ղ. և հ: ուստի և բազմիցս փոխադրի ընդ նս, զի ասեմք, բաղդ, և բախտ. վախճան, և վաղճան. սանդուղք, և սանդուխք. անուղղալ, և անխալ. և այլն: ըստ այսմ նաև ընդ տառին՝ հ. զոր օրինակ. նահապետ, և նախապետ. հարամանի, և խարամանի. խաւ, և խախ. հեռալ, և խեռալ. հոյ. և խոյ. հոյակապ, և խոյակապ. հուպուպիք, և խուպուպիք. ուահար, և ուախար. և այլն:

Դարձեալ, տառս այս՝ է նաև նշան համարողական. այս թուական, զի յորժամ 'ի գործ ածի համադերձ պատուճանշանաւ, այսպէս, խ, նշանակէ զքառասուն թիւն, որ 'ի մէջ թուոց բաղկանայ 'ի չորից տասանց:

ԽԱ.

Խաբանք. անաց. օք: (անեզական.) || խաբէութիւն. կմ նենգութի. և կմ պատրանք. կամ հնարք ինչ որով խաբի ոեաօղն, կմ լսօղն, և այլն: 4. Թագ. 10. 19: Յուդիթ. 9. 15:

Խաբարար. ի. աւ. աց. օք: || խաբէութիւն առնօղ. կմ խարդախ. կմ խորամանկ. կմ խաբեբայ:

Խաբեբայք. խաբէից. իւք: (անեզական.) || խաբէութիւն. կմ պատրանք. և կմ նենգութի:

Խաբեբայ. ի. իւ. ից. իւք: || նենգաւոր. կմ պատրօղ. կմ խաբօղ: Եսայ. 3. 4:

Խաբեմ. եցի. եա. ել: (ներգործ.) || պատրել. կամ դաւաճանել: Ծննդ. 27. 36:

Խաբեպատիր: (նախդրիւ հոլովի.) || խաբօղ և պատրօղ. կմ խաբեբայ: Եւ կմ սուտ և պատիր. և սասպաճոյճ. որպիսիք են կուռք հեթանոսաց: Մծբն. ժե:

Խաբէութի. թեան: || նենգութի. կմ պատրանք: Սաղմ. 40. 10:

Խաբկանք. անաց. օք: (անեզական.) || խաբէութի. կմ պատրանք. կմ նենգութի. և կամ խաբէական հնարք: Խորէն. գ. գլ. 17. և 63:

Խաբկեանք: (նախդրիւ հոլովի.) || նոյն է ընդ վերնոյն: Խորէն. բ. գլ. 12:

Խաբշիկ. շկի. աւ. աց. օք: || տե՛ս զԽափշիկն:

Խաբուսիկ: (նախդրիւ հոլովի.) || խաբօղ կամ պատրօղ. կամ նենգօղ. և կմ խորամանկ: Կիւրղ. Եղեմ. է:

Խաբք. բից. իւք: (անեզական.) || խաբէութի. կամ պատրանք. կամ նենգութի, և ըստ այսմ մինչ ասի՝ ընդ խաբս դնանել զոք, իմանի խաբէութբ դնանել: Խորէն. բ. գլ. 35: Եւ կամ սխալումն, կմ վրիպումն. և ըստ այսմ իմանի՝ Ծննդ. 43. 12. ուր ասի՝ գուցէ ընդ խաբս ինչ իցէ. այս գուցէ սխալմամբ, կամ վրիպմամբ իցէ: Ըստ այսմ է և 'ի Խորէն. գ. գլ. 23:

Խաղ. ի. իւ. ից. իւք: || գիծ: Մերթ ևս ձևացուցեալ նշանքն երգոց շարականին՝ ասին խաղ: Իսկ մերթ նշանակէ զխաղն, կամ զտհաւն, որ մերթ ասի զպառղոց, և մերթ զոզայոց:

Խաղաքաղ. ի. իւ. ից. իւք: || խաղկաքաղ. կմ խաղախութ. այս զխաղ պտուղ քաղօղ և կթօղ: Իսկ մերթ նշանակէ զխաղ քաղեցեալն. և ըստ այսմ ասի, խաղաքաղ պտուղ. և այլն:

Խաղմ. ի. իւ. ից. օք: || մարտ. կմ պատերազմ. կմ կռիւ. կմ խռովութի. կմ ամբոխումն: Խորէն. ա. գլ. 14. և 28:

Խաղմուղ. մղոյ. ով. ոց. ովք: || քաղցու. որ է նորապէս քամեցեալ գինի: ռամկ. շիրէ: ուստի մինչ ասի՝ խաղմղով լցեալ, իմանի՝ քաղցուճալեաւն, որ է արբեցեալն: Կիւրղ. Եղեմ. ժե: Արդ՝ եղանէ ևս 'ի խաղ բառէն, որ է խակ, կամ տհաս. և 'ի ծաղ բառէն, որ է արմատ մզել բային. որով իմանի մզեալն, և քամեցեալն, ուստի քաղցուն, որ է քամեցեալ օշարակ խաղողոյ, և խակ և տհաս գինի, ասի վայելչաբար խաղմուղ: Եւ այսու բառիւ՝ կարէ ևս իմանիլ այլ ևս իցէ նորապէս քամեցեալ՝ և մզեցեալ օշարակն:

Խաղուր. ղրոյ. ով. կամ իւ. ից. օք: || տե՛ս զՋուրայ. զի նոյն է ընդ նմա:

Խաթարեմ. եցի. եա. ել: (ներգործ.) || եղծանել. կմ խանգարել. կամ աւերել. կմ քանդել: 1. Մակ. 4. 38: և Նարէկ. իե:

Խաժ. ի. իւ. ից. իւք: || տոռճար. կամ թաւածայն տառ: Եւ այս մերթ ասի զտառից.

որք հաստատեալ են 'ի մէջ լերկածայն տառից․ որպէս է տասն ՃԸ, 'ի մէջ փոնի և դոյժ ։ Իսկ մերթ նշանակէ զերկնագոյնն կամ զկապոյտն կապուտակ, որ անկանի 'ի կողմն կանաչոյ, որպէս է գոյն աչաց ոմանց մարդկանց․ կամ կենդանեաց ։

Խաժակն․ ի․ ին․ կց․ իւք ։ ‖ ունօղ զխաժ ակն, ՚ի զկապուտակագոյն աչս ։ Իսկ մերթ նշանակէ զխաժ աչսն ։

Խաժակնութիւն․ թեան ։ ‖ խաժակն լինելն․ կամ կապուտակութիւն աչաց ։

Խաժամուժ ․ (Նախդրիւ հոլովի․) ‖ խառնիճաղանճ․ կամ խառնիխուռն․ կամ ռամիկ․ և կամ թանձրամբոխ․ և այս աւր զան կարգ ժողովրդոց․ կամ ամբոխից ։ Յովհ․ 7․ 49 ։

Խալամ․ ի․ ին․ ից․ իւք ։ ‖ գլուխ մեռելոյ խոզոյ․ կամ ձկան․ և այլոց կենդանեաց ան բանից ։ 4․ Թագ․ 6․ 25 ։ Յոբ․ 40․ 26 ։

Խալանձ․ ի․ ին․ ից․ կամ աց․ օք ։ ‖ է ծառ ինչ, որ բարձրանայ յերկրէ ըստ երկայնութեան մարդոյ․ որոյ տերեւն է նման վայրի մոշայի․ և ունի զմանր և զկարմիր ծաղիկ, յորում է պարենաման կակուղ համ ինչ․ զորոյ ծաղիկն՝ ախորժանի առնեն բժիշկքն, և բուժեն զգաղանահարս ։

Խալար․ ի․ աւ․ աց․ օք ։ ‖ է տեսակ ինչ ծաղկան․ որ լինի յերկրանիկն արաբիայ ։ Խորէն․ աշխարհագրութիւն ։

Խախ․ ի․ ին․ ից․ իւք ։ ‖ տես զԽահ ։

Խախալ․ ի․ ին․ ից․ իւք ։ ‖ մաղ․ որով զցորեան և զայլս նմանս մաղեն․ կմ խարբալ ։ Սիրաք․ 27․ 5 ։

Խախակ․ ի․ աւ․ աց․ օք ։ ‖ է աղք ինչ ծաղկան՝ որ գտանի յերկրանիկն արաբիայ ։ Խորէն․ աշխարհագրութիւն ։

Խախաց․ ի․ աւ․ աց․ օք ։ ‖ մակարդ՝ որով մակարդեն զկաթն, և առնեն պանիր․ ռամկ․ պանրի մայա․ որ է տակառակ հիւթ ինչ եղեալ 'ի խախացոյց գառանց․ զոր ըհաղէս տեսցես 'ի մեկնութիւն խախացոց բառին ։ Շնորհալին ։

Խախացոց․ ի․ աւ․ աց․ օք ։ ‖ պարկ ստամոքսին․ ՚ի․ քսակաձև մաշկեղէն անօթն, որ 'ի ներքոյ կրծոց կենդանեացն ընդ մէջ լերդին և փայծեղան կախեալ կայ․ ուր իջեալ կերակուրն ընդ կոկորդ կենդանեացն եփի, և մարսի ։ Արդ՝ կոչեցաւ սա՝ խախացոց, զի է անօթ խախացին․ վն զի 'ի դիեալն զատլինս կաթնկեր գառանց՝ դիեցեալ կաթն իջանէ 'ի պարկս յայս․ և յորժամ եփի ըստ օրինի՝ ներքսագոյն մասունք նր սփռելին ը բոլոր մարմինն առ 'ի սնունդ․ իսկ խոշորագոյնքն մնան 'ի յատակս պարկին ոչ զանեալորդս․ որք են հիւթ ինչ սակաւ իբրև զթանձրացեալ կաթն ։ Արդ՝ հիւթս այս կոչի խախաց՝ զոր հանեալ առնեն մակարդ պանրոյ․ սակայն ը որում պարկ ստամոքսին պարունակէ զսա իբրև զանօթ ինչ՝ սա խախացոց․ որ ռամկօրէն կոչի կծիկ․ քանզի յորժամ գառնարկ է 'ի կերակրոց, ստղծի և 'ի յինքն ժողովի, և լինի իբրև զկծիկ․ ըստ չափու բառին ։ 2․ Օրին․ 18․ 3 ։

Խախուտ ։ (Նախդրիւ հոլովի․) ‖ այն՝ որ ոչ է հաստատապէս անշարժ․ կամ այն որ է խախտեալ․ կամ դիւրաշարժ․ կմ ան հաստատ․ և անկայուն ։ Իմաստ․ 4․ 3 ։

Խախտեմ․ եցի․ եա․ ել ։ (Ներգործ․) ‖ դղրդել․ կմ վրդովել․ կմ շարժել զիր ինչ, կմ զուռն 'ի տեղւոջէ իւրմէ, կմ 'ի բարւոք կացութենէ ։ 2․ Թագ․ 15․ 19 ։ և Եսայ․ 54․ 11 ։ Իսկ մերթ՝ խախտել՝ և փլուզեալ առնել․ կմ քակտել ։ Մերթ ևս՝ նշանակէ աւերել․ կամ տապալել ։ և ը այսմ աւր զկուսանաց․ յորժամ բարձեալ լինի կուսութի նոց ։ Եզեկ․ 16․ 8 ։

Խածալ․ ի․ ին․ ից․ իւք ։ ‖ խածխած ցորեան՝ զոր ուտեն սանիք․ և մերթ աղան զայն, և խառնեալ զայլիւր նր ը մեղր՝ ուտեն, և կոչեն զայն փոխինդ ։

Խածանեմ․ խածի․ խած․ ել ։ (Ներգործ․) ‖ ատամամբք սեղմել․ կամ կծել․ կմ խայթել ։ ռամկ․ խածնել ։ 2․ Օրին․ 8․ 15 ։ Միք․ 3․ 5 ։ Մերթ ևս՝ նմանութեամբ առեալ՝ նշանակէ խածատել զոք բանիւ․ և այլն ։

Խածատեմ․ եցի․ եա․ ել ։ (Ներգործ․) ‖ բազում անգամ խածանել․ կմ կծել․ կմ խածանելով խածանել ։ Իսկ մերթ նմանութեամբ առեալ՝ նշանակէ՝ բամբասանօք և խոցոտիչ բանիւք խայթել զոք ։ Գաղ․ 5․ 15 ։

Խածիք․ ծեաց․ եօք ։ (անեզական․) ‖ խածանելոյ և ուտելոյ գործիք ։ և այսու մերթ իմանին ատամունքն կենդանեաց ։ Իսկ մերթ բերանն՝ կմ կտուցն թռչնոց, որով խածանեն, և ուտեն ։

Խածղեմ․ եցի․ եա․ ել ։ (Ներգործ․) ‖ խարկել զցորեանն, կմ զայլս ընդեղէնս 'ի յերկաթեղէն անօթոյ ։ Իսկ մերթ խածղել ասի կիզելն խորշակին զբոյսս ։

Խածուցեալ․ ոյ․ ով․ ոց․ ովք ։ ‖ խայթուած․ կամ խածեցեալ և խայթեցեալ տեղին․ և կամ խոցուած ։ Նարէկ․ կե․ և ձէ ։

Խածուածն․ ծման․ ամբ․ անց․ ամբք ։ ‖ խածատուածն․ կմ խայթուածն․ և կմ խածուած ։ Նարէկ․ իզ ։

Խակ․ ի․ ին․ ից․ կմ աց․ օք ։ ‖ տհաս․ կամ ոչ հասունացեալ․ ռամկ․ ճահամ․ կմ խամ․ և այս աւր զպտղոց ։ Եսթերն ։ Իսկ մերթ զմև իցէ տհաս՝ կամ անկատար իրաց ։ Նարէկ․ 'ի Գովէստ սուրբ խաչին ։ Մերթ ևս նշանակէ խիստ․ կմ դժնեայ․ կմ դառնաբարոյ․ և կամ ոչ ունօղ զքաղցր բարս ։ Ու․ կե․ 1․ հարց․ լթ ։

Խակախորհրդութիւն․ թեան ։ ‖ խակ, կմ անկատար խորհուրդ․ կամ տխմարական և յիմարական խորհուրդք ։ Նարէկ․ ղէ ։

Խակակութ․ կթի․ ին․ կց․ իւք ։ ‖ խակ կթեցեալ, ՚ի․ քաղեցեալ․ որպէս է պտուղն ծառոց՝ կամ այգւոյ․ որ տակաւին ոչ է հասեալ և քաղեն զնոսա ։ Յոբ․ 15․ 33 ։ Սակայն Եզեկ․ 27․ 20 ։ և Ղեւտ․ 24․ 2 ։ բառս՝ խակակութ, նշանակէ զիւղն նորաստիկ կթեցեալ․ կմ մզեցեալ և քամեցեալ 'ի պտղոց

ձիթե․

ձիթենեաց։ Իսկ 'ի Նորէլ. ծզ. ուր ասի, Անտաղերք խայծակութ, խմանի՝ Նորածլին երեխայն, որ ոչ է աղէցեալ։

Խածկամիտ. մտի. իւ. աց. օք։ || դոհաս և զան կատար միտս ունող. կամ տկարամիտ. և կամ տխմար մտօք։

Խածկամտութիւն. թեան։ || խածկախորհութիւն. կմ տկարամտութիւն. կմ տխմարական խոր հուրդ և մտածութիւն։ Նորէլ. խզ. և ղչ։

Խածկութիւն. թեան։ || տհասութիւն. կմ անկա տարութիւն պտղոյ, կմ մանկանց. և այլոց նմանեաց։ Խորէն. ա. գլ. 31։ և Նորէլ. ղշ։ Մերթ՝ կատարութիւն. կամ տմարդութիւն. կմ անգթութիւն. կմ աննողորմութիւն. կամ դժնէութիւն. կմ՝ դժնդակութիւն։ 2. Մակ. 12. 5։ և Նորէլ. ղդ։

Խահ. ի. իւ. իւ. իւք։ || խորտիկ. կմ ու և եղէ կազմեցեալ կերակուր։

Խահագործեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) || զկերակուրս, կամ զխորտիկս կազմել՝ կմ յօրինել. կմ խոհակերութիւն առնել։ Իսկ մերթ նմանութեա առեալ՝ նշանակէ յօրի նել և կազմել զբանս։ Իսկ մերթ՝ անան ակել. կմ մատակարարել։

Խահակեր. ի. աւ. աց. օք։ || խահարար. կմ խոհակեր։ ռամկ. աշճի։ Եւ ասաէն մա նիկս՝ էր. գնէ փոխանակ ամօղ, կամ արատոր բառխս. ոչ և յեցեալ 'ի բառն Աչողենէր։

Խահակերութիւն. թեան։ || խահարարութիւն. կամ խոհակերութիւն. ռամկ. աշճութիւն։ Իսկ մերթ նշանակէ՝ խորտակակերութիւն. և կմ ուտումն անուշահամ կերակրոց. 'ի Հայր հարց. ժա։

Խահանոց. ի. աւ. աց. օք։ || խոհակերոց, որ է տեղի, ուր եփին, և պատրաստին կերա կուրք, և խորտիկք։ ռամկ. աշխանոց։ 'ի Հայր հարց. իզ։

Խահարանոց. ի. աւ. աց. օք։ || Նոյն է ընդ վերինոյն։

Խահարար. ի. աւ. աց. օք։ || խորտակարար. կամ խոհակեր. որ է կազմող և եփող կե րակրոյ։ ռամկ. աշճի։ Ռուֆ. 1. հատ. լ։

Խահարարապետ. ի. աւ. աց. օք։ || պետ, և գլուխ խահարարաց։ Իսկ մերթ նշանա կէ, իշխան և պետ թագաւորական անօթ ոց. դ. Հէօր խահարարց։

Խահարարութիւն. թեան։ || խոհակերութիւն. կամ խորտակարարութիւն. կմ համեղերամեք համադամ կերակրոց։ Լամբրոն։ և 'ի Հայր հարց. ջ։

Խահրեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) || եղ ծանել. կմ ապականել. կամ խանգարել կամ աւերել. և կամ քանդել։ Եւ այս մերթ ասի զկերակրոց. իսկ մերթ զբանաւոց, կմ զպարտիզաց, յորժամ 'ի խաղեր. և կամ յայլոց պատահարաց մնասին։ Ըստ այսմ ասի և զապաշխարութիւն. կամ զաղ բոց, և զարտասուաց, և զնմանեաց։ 'Ի Հայր հարց. դ։

Խայլ. ի. իւ. իւ. իւք։ կմ ու. ուա. ուց. ուք. կմ օք։ || խայտաբղէտութիւն. կմ խայտալի, որով

խայտան մարդիկ վն զուարճութեան։ Խորէն. գ. գլ. 40։ ըստ այսմ նաև խայտացումն, ո րով ոք պէսպէս կերպիւ պատմելով. կմ համաձայնելով զոք, խայտալիկ առնէ ին քեան, խաղ կոչի. որպիսի էր պատմե լով խայտալն ող ընդ փարաւոնի, և ընդ եգիպտացիս։ Իմաստ. 12. 26։ Աչքեալ. 1. 12։ Մերթ ևս նշանակէ զխատակն. կմ զծաղրա բանութիւն. զոր առնեն մարդիկ վն զուար ճանալոյ։ ռամկ. շախայ։ 'Ի Հայր հարց. իզ։ Եւ ըստ այսմ նշանակութեան երբեմն ընդ բայի շարակցի այսպէս՝ զխաղ առնել. և նշա նակէ վն ծաղու. կմ ծաղրաբանութեան առ նել։ ռամկ. շախայով ընել։ Աչատ. 26. 19։ Իսկ մերթ նշանակէ ծաղր. կամ խայտա ռակ. կամ ծանակելի։ Ծննդ. 39. 14։ Թուոց. 22. 29։ Իմաստ. 15. 14։ և ըստ այսմ երբեմն ընդ բայի շարակցի այսպէս՝ ընդ խաղ արկանել. և նշանակէ, կատակելով. կամ վասն ծանակելոյ արկանել. կամ առա քել։ Իմաստ. 12. 25։ Եւ կմ այսպէս. ընդ խաղ արկանել. և նշանակէ՝ ծաղր առնել. կամ այպանել։ ռամկ. մասխարայ ընել։ Գործ. 2. 13։ Մերթ ևս նշանակէ զշրջապտոյտ տե ղին. կամ զպարսան, որ յեղը գետոյն. և կմ զպտոյտս տեղին, ուր ջուր գետոյն զանգի առնելով՝ իբրև զլիճ է եղեալ։ և կմ փոքրիկ ձիւղ գետոյ, ուր եղեբի ջուրն։ Ծննդ. 41. 2։ Եսայ. 2. 3։ Եսայ. 35. 7։

Խաղալիկ. խաղալկի. աւ. աց. օք։ || մերթ նշանակէ զխաղացողն՝ պարելով. կմ խեղ կատակելով. և կամ այլով շարժմամբ։ 1. Թագ. 18. 7։ Երեմ. 30. 19։ և 31. 4։ և 2. Մակ. 4. 19։ Մերթ ևս նշանակէ զգործին խաղա լոյ. կմ զխաղալի իրն. և կամ զծաղր առ նելին։ ռամկ. խաղալիք։ և ըստ այսմ է. Յոբ. 40. 14։ և 41. 24։ և Աչքեալ. 1. 10։

Խաղալիք. լեաց. եօք։ (անեզական.) || յօ դուածք մարմնոյ, որով մասունք մարմնոյ կցեալ են առ իրեարս, խաղամբ և շարժին. ուստի և խաղալիք կոչեցան։ Եփես. 4. 16։ Կողոս. 2. 19։ Իսկ մերթ նշանակէ զխաղալի իրս, որովք մանկունք, կմ այլք խաղա ցողք՝ խաղան։ Նորէլ. ծէ։

Խաղախ. ոյ. ով. կամ իւ. ից. իւք։ կմ աց. օք։ || կաշի՝ կմ մորթ անասնոց։ և 'ի սմա նէ եկանէ բառս խաղախորդ։

Խաղախորդ. ի. աւ. աց. օք։ || կաշեգործ. կմ մորթեգործ. որով մերթ իմանի զկաշին քերողն, և բանողն. ռամկ. Թապախ։ Գործ. 9. 43։ և 10. 6։ Իսկ մերթ կօշկակարն։ և մերթ մուշտակակարն. որ, մուշտակ կարողն և կազմողն։ ռամկ. քիւրքճի։

Խաղաղ. ի. իւ. ից. իւք։ || խաղաղացեալ. կմ հանդարտ. կմ անվրդով։

Խաղաղական. ի. աւ. աց. օք։ || հանդարտա կան. կմ մեղմական. կամ խաղաղարարա կան. կմ հաշտարարական. կմ հանդարտա միտ, և խաղաղասէր։ 1. Մնաց. 12. 38։ Եւ մերթ նշանակէ զզոհս փրկութեան, որ մա տուցանէին վն խաղաղութեան, և առողջու թեան. և այլն։ 3. Թագ. 9. 25։ Մերթ ևս նը

շահեակէ զանեղին խաղաղացելոյ և զաղաղակելոյ : և ըստ այսմ առէ Նոննէ 'ի խաղաղականն խօսի : 'Ի Հոռս հայոց · Ե̅ : Երբ մինչ առ' խաղաղական ժամ · խնամնի ժամանացութին , որ լինին զինի երեկոյեան ժամուն :

Խաղաղականոյ · կան · ին · կց · կւք : || սակերքն խաղաղացելոց · յք հանդարտեցելոց , որք կուսոյին , և գեղջնն , առն խաղաղականոյ : Երբ կամ նշանակէ զխաղաղեցեալն , և զխաղաղացեալն , յք զհանդարտ , և զան շարժ կացեալն , որպիսիք էին առկերքն , զորս եմուս եղեներկ մարգարէն : Մծբն · Ը̅ : Կիւրղ · Եղծծ · ԺԷ :

Խաղաղամարտ · ի · ին · կց · կւք : || զխաղաղութիւն ամբոխող , և վրդովող · կմ խռովարար : Մծբն · ԺԹ :

Խաղաղանամ · ացայ · ացիր · նալ : (ըստ գ. մ.) || խաղաղիլ · կմ հանդարտիլ · կմ խաղաղ և հանդարտ մնալ :

Խաղաղասէր · սիրի · ան · աց · օք : || սիրող խաղաղութե · կամ խաղաղարար :

Խաղաղասիգ : (Նախդրիւ հոլովի ·) || խաղաղաշունչ · յք հանդարտ , և մեղմ շնչող · կամ փչող : Երբ ըստ այսմ առէ' խաղաղասիգ օդ :

Խաղաղարար · ի · ան · աց · օք : || խաղաղացուցիչ · կմ առնող զխաղաղութի : Մատթ · 5 · 9 :

Խաղաղացուցանեմ · կմ խաղաղեցուցանեմ · ցուցի · ացի · անել : (անցող ·) || խաղաղ առնել · կամ հանդարտեցուցանել · կմ 'ի վրդովմանց ազատ առնել · կմ դադարեցուցանել :

Խաղաղաւէտ · էւէտի · ան · աց · օք : || խաղաղութե լցեալ , և առատացեալ · կմ յոյժ խաղաղական :

Խաղաղեմ · եցի · եամ · ել : (Ներգործ ·) || խաղաղեցուցանել · կամ հանդարտեցուցանել · և կմ զիջուցանել : Յոբ · 1 · հարց · ԻԲ :

Խաղաղուտ : (Նախդրիւ հոլովի ·) || խաղաղական · կամ հանդարտական · կմ ունող զխաղաղութի , և զհանդարտութի :

Խաղամ · ացի · աց · ալ : (չեզոք ·) || մերթ նշանակէ զխաղարկութի ինչ առնել , պարելով կամ կաքաւելով , և կմ զխաղալիս իրս 'ի գործ ածելով · և այլն : Ելից · 32 · 6 : 3 · Թագ · 6 · 22 : Երբ մերթ ծաղր առնելով , կմ զիշխողութի ինչ ցուցանելով խաղարկութի առնել ընդ ումեք : Ծննդ · 21 · 9 : Իսկ մերթ նշանակէ զուգիլ և խառնակիլ ը̅ մեղկանս պոռնկաց , կմ շնացողաց : Առակ · 7 · 18 : Բայց Ծննդ · 26 · 8 · ուր առէ զԻսահակայ , խաղալ ը̅ Ռեբեկայ , իմանի այնու համարձակութ ը̅ վարիլ ընդ նմա · որով վարի այր ը̅ կնոջ իւրում : Մերթ և նշանակէ խաղալիկ առնել զոք և ծաղր ձանալ · և կամ հարկանելով , և ապտակս հանելով · և կամ այլով եղանակաւ ծաղր առնելով խայտառակել զոք : Դատ · 16 · 25 : 1 · Թագ · 31 · 4 : Մերթ և նշանակէ գնալ , կմ յառաջշարժիլ · կմ յառաջ դիմել : Ծննդ · 11 · 2 : 1 · Մակ · 1 · 1 : և 5 · 49 : Մի քի · 1 · 3 : Մատ · 7 · 25 : Երբ մերթ նշանակէ ,

յառաջխաղացել · կմ գնալ , և կամ հասել ջուրց յանկարծակի : և այլն : Մերթ և երկրել · կմ առաջնորդել : Իսկ մերթ կորուսել կամ եռալ · կմ շարժիլ գոգանալ · կամ այլով եղանակաւ · Նոննէ · ԿԹ :

Խաղամծիմ · եցայ · եաց · իլ : (Հայ.) || արամել · կամ տրտմել · կմ Թախծել · և կմ խռովիլ :

Խաղամունք · մծի · ան · աց · օք : || արտամ · կամ տխուր · կմ Թախծեալ · և կամ խռովեալ :

Խաղաղապաշտեմ · եցայ · եաց · իլ : (Հայ.) || աղերսական · կամ ողորմական շարժմամբ գիրկս արկանել , կմ փարիլ :

Խաղաղաքարշեմ · եցի · եամ · ել : (Ներգործ ·) || յայսկոյս և յայնկոյս շրջմոլեցել · կմ խաղացուցանել և պարածուցանել զերեսն · կմ զգլուխն , որպէս առնեն մանկունքն 'ի գերկամսոց 'ի խաղալիկն խաղալոց : 'Ի Հոռս հայ · ԺԷ : ըստ այսմ առէ և զոյլոց կրուց , որք շրջաբերեալ արար ասեալ խաղացուցանեն :

Խաղարկու · կուէ · ան · աց · օք : || խաղացօղ · կմ զխաղարկութի առնող :

Խաղարկութի · Թեան : || խաղ · կմ խաղացումն :

Խաղացումն · ցման · մանք · մանց · մամբք : || խաղարկութի : Իսկ մերթ յառաջ շարժումն · կմ յառաջագայութի · կմ ըղխումն ջուրց · կմ շնորհաց · և այլն : Խոր · Ե̅ · յառաջխաղացութե :

Խաղացուցանեմ · ուցի · ցի · ել : (անցող ·) || յառաջ շարժել · կամ յառաջ շարժելով տանել : Եզեկ · 40 · 1 : և Գաղատ · 5 · 4 :

Խաղաւարտ · ի · ին · ից · իւք : || ասաց ինչ բուշտ բուշտ այսուցեալ 'ի մորմոջն , որ Թարգմի խոնաւութի , կմ Թարախ · և առ ուխկ կակղեցուցանելով և զեռոյ պատճառելով · յոյժ նեղէ և չարչարէ : Ելից · 9 · 9 և 10 : Ղուկ · ԿԹ : Երբ մերթ ռև եղէ ռուոց' որ պատճառ յարակայնութե արեան · և կմ յայրեցմանէ , և յայլոց նմանեաց' խաղաւարտ կոչի : 'Ի Հոռս հայց · ԺԵ :

Խաղաւարտիմ · եցայ · եաց · իլ : (Հայ.) || բշտիլ · կմ այտնուլ · և կմ ուռիլ · որպ հանդիպի ձեռաց յորժամ եռացեալ ջուր արկանեն 'ի մերայն նը̅ :

Խաղեալ · եալք կմ եալի · ալեաց · եօք · կմ եալ դաց · եալեօք · կմ եալօք : || եալ խաղաց , յք ատեղի խաղալոյ :

Խաղող · ոյ · ով · ոց · ովք : || պտուղ որթոյ յորմէ լինի գինի : ռամկ · առ · հայ · կմ խաղող : Թուոց · 13 · 24 :

Խաղողագեան : (Նախդրիւ հոլովի ·) || այն որ ունի զգաւանահամ , և զծածկ խաղող որպիսիք են սմանք այգիք · կամ որթք : Մծբն · ԺԹ :

Խաղորդեմ · եցի · եամ · ել : (չեզոք ·) || խաղալ · կամ զխաղարկութի առնել :

Խաղտեմ · եցի · եամ · ել : (Ներգործ ·) || յօդել · կմ կցել · կմ շաղկապել · կամ շարահիւսել : տես և զխառնամախակել :

Խաղտիք · տեաց · եօք : (անեզ ·) || [illegible]

ցինք. որք էին տղայք թիւրք և բարբարոսացք: 2. Մակ. 4. 47:

Խամրանամ. ացայ. ացիր. անալ: (ընդ. չէզ.) || Եղծանիլ. կամ խանգարիլ. և կմ աղաւաղանիլ: Եւ այս մերթ առի զծաղկանց. կամ զգունոց. և նշանակէ թառամիլ. կմ թարշամիլ. կմ չորանալ: Իսկ մերթ զմարմնոյ. և կմ զմտաց, և զպարարտութեան՝ և զաստուածոց, և նշանակէ. ցամաքիլ. կամ նուաղիլ. և կմ նիհարանալ: Իսկ երբեմն զհոգոյ կմ զհնոյն է, և զխմանեաց. և նշանակէ չքմանիլ. և կամ զրկիլ՝ ի բարեգործութենէ, և ՝ի սուրբ սիրոյ. ըստ այսմ խմոն և զայլոց նմանեաց: Լամբրօն:

Խամրեցուցանեմ. եցի. եա. ել: (ներգործ.) || Եղծանել, կմ խանգարել. կմ աղաւաղանել: Իսկ մերթ թառամեցուցանել. կմ չորացուցանել: Եւ երբեմն ցամաքեցուցանել. կմ նուաղեցուցանել: Նարեկ. ՝ի Գլխաւորէ երգոյ:

Խամրիմ. եցայ. եայ. իլ: (ձայնակիր.) || անձն զխամրանալ: Ողբ. 2. համ. ՃԸ:

Խամրութիւն. թեան: || Եղծումն. կամ խանգարումն, կամ աղաւաղանութիւն: Եւ կամ թառամումն, և չորանալն: Եւ մերթ նուաղութիւն, կամ պակասութիւն:

Խամրումն: (Նախդրիւ հոլովի.) || Խամրացումն. գր եղծումն. կամ խանգարումն. կմ դօսացումն. և կամ թարշամումն:

Խայթ. ի. իւ. ից. իւք: || Գործի խայթելոյ. կմ խթան. գր խթիչ. ռամկ. ծօթաղ: 2. Կոր. 12. 7: Եւ մերթ նշանակէ զխայթօղ կիճն զեռնոց, կամ սողնոց:

Խայթահար. ի. աւ. աց. օք: || Այն՝ որ է խայթեցեալ և հարեալ ՝ի թունաւորաց: Մերթ եւս նշանակէ զանեալ մի խայթող փշոյ: Աճգոր:

Խայթեմ. եցի. եա. ել: (ներգործ.) || Խածանել. կամ կճել. կամ խածանելով խոցել զն սողնոց, կմ թունաւորաց: Ժողով. 9. 3:

Խայթոց. ի. աւ. աց. օք: || Խայթելոյ գործիք. կամ կիճն սողնոց, կամ զեռնոց, որով խայթեն: Ովս. 13. 14: և Յայտ. 9. 3:

Խայթումն. մոյ. մամբ. մց. մամբք: || Խայթումն օձի. կամ այլոց սողնոց. կմ խայթեցեալ տեղին:

Խայծ. ի. իւ. ից. իւք: || Խածանելիք. կամ կեր ձկանց, և կմ թռչնոց, զոր որսորդքն դնեն ՝ի ծայրս կարթից. կամ ՝ի ծուղակս. ռամկօրէն էյմ:

Խայծեմ. եցայ. եաւ. իլ: (ձայնակիր.) || սկսանիլ հասունանալն խաղողոյ. կմ յորժամ աղօխն խայտ լինի, և մերձ է առ ՝ի լինել խաղող: Ժողով. 9. 13:

Խայծումն. ոյ. ով. ոց. ովք: || Սկիզբն հասունացման, և կամ խայծիլն խաղողոյն: Որպէս մինչ սակս, առուրք խայծմանց խաղողոյ. իմանի աւուրք, յորս սկսանին խայծիլ խաղողն: Թուոց. 13. 21:

Խայտ. ի. իւ. ից. իւք: || զանազանս գունով զարդարեալ. կմ գունագոյն: ռամկ. խաջարին: կամ ալաճայ: Ծննդ. 30. 33: Իսկ մերթ նշանակէ զխայտառակն:

Խայտաբղետ. ղետի. իւ. ից. իւք: || Խայտախարիւ. կմ խայտափիսո. կամ զխայտացաւոր. կմ որ պէսպէս պիսակ խայտիւք է զարկացեալ. որպէս է լինցն. կմ մարթ նոյ: ռամկ. խալխալի. կմ ալաճայ: Նարեկ. ՝ի ձեռն. երգոյ:

Խայտաբղետութիւն. կմ խայտաբղետութիւն. թեան: || Խայտից. կմ երփն երփն գոյն: ռամկ. խալխալլըխ: Նարեկ. ղչ:

Խայտախարիւ. (որոց յոգնականն լինի) խայտախարիւք: (Նախդրիւ հոլովի.) || պէսպէս գունով որակեցեալ. կմ խայտափիսո. կմ խայտաբղետ. ռամկ. ալաճայ. պալաճայ: Ծննդ. 30. 32: և 31. 10:

Խայտականն. ական. իւ. ից. իւք: || Զգեստաւորութեան, և զգեստու պաճուճեալ սուրբ ռմնոց: Խորէն. Թ. գլ. 9. և 10:

Խայտաճամուկ. ճկի. ուկ. ւոյ. ուք: || Խայտախարիւ. կմ խայտափիսո. ռամկ. խալխալի: կամ ալաճայ:

Խայտամ. ացի. ա. ալ: (չէզոք.) || Ուրախանալ հանդերձ զուարթութ շարժմամբ մարմնոյ, կմ անդամոց. և կմ ցնծալ: Երեմ. 50. 11: Յոբայ. 18. 7: 4. Թագ. 19. 28: Իսկ 1. Տիմ. 5. 11. ուր ասի. խայտան զքրիստ. իմանի բերկրիլ, և ցնծալ ըստ մարմնոյ ենթ անուանն Քի. կամ ամբարտաւան լինել. և կմ ուռել, և ընդդեմ զդարծանել: Իսկ մերթ նշանակէ զուրախանալ խաղալն երինջուց. կամ երինջոց. կամ զատանց ՝ի նշան ուրախութե: Յովէլ. 1. 17: Նարեկ. ղէ: Իսկ մերթ ասի զձկանց. և նշանակէ՝ կայտառալ:

Խայտառակ. ի. աւ. աց. օք: || Նշաւակ. կմ ծանակ. կմ ծաղր. կամ նախատելի. կամ լցեալ ամօթով. ռամկօրէն խաբէ: Եսայ. 16. 7:

Խայտառակամահ: (Նախդրիւ հոլովի.) || Խայտառակ կերպիւ մեռեալ. կամ մահացեալ: Իսկ մերթ ընդ բայի շարադրեալ այսպէս. խայտառակամահ առնել. կամ խայտառակամահ սատակել. և նշանակէ՝ խայտառակ մահուամբ չարաչար սպանանել:

Խայտառականք. անաց. օք: (անեզական.) || Խայտառակութիւն. կամ ծանականք. և կմ ամօթալի գործք. և կմ ամօթոյք:

Խայտառակեմ. եցի. եա. ել: (ներգործ.) || Ծանակել. կամ նշաւակել. կմ յամօթ առնել. կամ ծաղր առնել. կամ նախատինս դնել: ռամկ. խաբէ անել: 3. Մակ. 2. 3: և Եբր. 6. 6: Մերթ եւս նշանակէ առականել զկանայս: Եսայ. 13. 16: Եւ մերթ զամօթոյս. կամ զամօթալի իրս ուրուք յայտնել: Երեմ. 13. 22:

Խայտացուցանեմ. ցուցի. ցոյ. ել: (անցող.) || Ուրախացուցանել. կմ ցնծութե լնուլ. կամ կայտառացուցանել: Իսկ Խորէն. Թ. գլ. 20. ուր ասի՝ խայտացուցանէ բարեկամս. իմանի՝ շարժէ. կմ առնէ խոզերան բարեկամս:

Խայտափիսո. փսոյ. իւ. ից. իւք: || Անձն ըղ

Խայտա_

Digitized by Google

զԽայտախարիճ. կամ զԽայտաբղէտ:

Խայտուց. ուցի. ից. իւք. կամ աց. օք: || խայտաբղետութի. այն խատուտիկ գոյնն, կամ խատուտիկութի. որպիսի է խայտ գոյնն ընձու: Երեմ. 13. 23:

Խայր. ի. ին. իւ. իւք: || պտուղ. կամ որդանք, կամ արդիւնք բուսոյ: Յհ. ոսկ:

Խայրաբեր. ի. աւ. աց. օք: կամ ին. ից: || պտղաբեր. կամ պտղատու:

Խայրիք. րեաց. եօք: (անեզական.) || Նո րէլ. լՖ: տես զԽայր: Եւ. 'ի սոցանէ եւս է բառս՝ երեխայրի, որ նշանակէ զառաջին պտուղն:

Խան. ի. ին. իւ. իւք: || սկուտղ. որ մերթ լինի 'ի պղնձոյ. կմ 'ի փայտէ. կմ յայլմէ նիւթոյ. ռամկ. սինի. կմ ձեծ թէփսի. և կմ փեշքուր: Եւ մերթ հիւսեցեալ լինի 'ի պրտուոյ, և յայլոց նմանեաց. որ ռամկ. կոչի սէլէ: Ծննդ. 40. 16: Ելից. 29. 3: Դւոց. 6. 19:

Խանգարեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || եղծանել. կմ աւերել. կմ ապականել. կմ քանդել. կմ կործանել և ջնջել զբարեկարգութիւն: Լամբրոն:

Խանգարիչ. րչի. աւ. աց. օք: || եղծիչ. կմ ապականիչ. կմ քանդիչ. կմ կործանօղ, և ջնջօղ բարեկարգութե, կմ խաղաղութե ու և լցէ իրաց: 3. Թագ. 18. 17:

Խանգարութի. թեան: || եղծումն. կամ աւերումն. կամ ապականութի. կմ կորուստ բարեկարգութե՝ և բարեխառնութե:

Խանդ. ի. ին. իւ. իւք: || եռանդ, կմ գորով. կմ գութ աղեաց. կմ խանդաղատումն. կմ աղէխարշումն:

Խանդակաթ. ի. ին. իւ. իւք: || ըղձակաթ. կամ սիրակաթ. կամ կաթոգին. որովք իմանի սաստիկ վառեալն 'ի սէր ուրուք, որոյ խանդն, այն եռանդն, իբր թէ վս առաւելութե կաթէ. և կամ իբրութէ սիրոյն հալի: Երգ. 2. 5:

Խանդակաթիմ. եցայ. եա. իլ: (Ձայնակ.) || խանդակաթ եղանիլ. կմ ըղձակաթ լինիլ. և կմ սիրով ուրուք այնպէս զգածիլ և վառիլ. որով իբր թէ սիրոյն խանդաղատելով հալի և կաթէ: Յհ. ոսկ:

Խանդամ. ացայ. ա. ալ: (ընդմիջ.) || Նախանձիլ. կամ մախալ. կմ զչարել: Խորէն. Է. գր. 21. և 23:

Խանդաղատական. ի. աւ. աց. օք. || գորովական. կմ աղէխորովական. և կմ սաստիկ գթալի:

Խանդաղատանք. անաց. օք: (անեզական.) || խանդաղատումն. կամ սաստիկ գութ և գորով. կամ խանդակաթութի. և կմ բորբոքումն ըղձի և սիրոյ: Խորէն. Ա. գր. 19:

Խանդաղատեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || 'ի գութ և 'ի գորով շարժել զոք. կամ խանդաղատեցուցանել. կամ 'ի սէր և 'ի գութ շարժելով աղէխորով առնել. և կմ ջերմեցուցանել զսիրտն: Լամբրոն:

Խանդաղատիմ. եցայ. եա. իլ: (Ձայնակրաւ.) || գորովանօք, և գթով զգածիլ. կմ աղէխարշիլ. կմ գալարիլ աղեօք: Եսէա. 2. 6: և 3. Մակ. 5. 27:

Խանդամանդ. ի. ին. իւ. իւք: || երկաթաքարշ քար. որ և կոչի մագնիս: ռամկօրէն ճէլիպտէ:

Խանդանք. անաց. օք: (անեզական.) || մախանք. կամ նախանձ: Ողբ. 2. հատ. ին:

Խանդիմ. եցայ. եաց. իլ: (Ձայնակրաւ.) || խանդիւն. այն գթով. կմ գորովին զգածիլ. կմ աղէխորով լինիլ. և կմ գալարիլ աղեօք:

Խանդութի. թեան: || խանդացումն. կամ մախացումն. և կամ նախանձ: Բայց ըստ որում է վերացեալն խանդ բառին, նշանակէ զգթութին. կամ զգորով. կմ զխանդաղատութին:

Խանձ: (Նախդրիճ հոլովի.) || է արմատ խանձեցուցանել, և խանձիլ բայից. ենք նշանակէ զմոլեալն, և զատորեալն առ 'ի անյագաբար լափել, ուտել, և ըմպել: Եւ ըստ այսմ յարի անուանց ոմանց այսպէս. մարդախանձ. գիշախանձ, այն մարդակեր. գիշակեր:

Խանձական. ի. աւ. աց. օք: || բորբոքական. կմ վառեալ և մոլեալ առ 'ի առնել զիր ինչ:

Խանձամ. ացայ. ա. ալ: (ընդմիջ.) || պանծալ. կմ պարծիլ. և կմ մեծաբանել:

Խանձատեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || խանձելով խանձել. կամ այրել. կմ տոչորել. Դանի. 3. 94: 2. Մակ. 6. 11:

Խանձարուր. ձարրոյ. ով. ոց. ովք: || փաթթոց. կամ երկայն և նեղ կտաւ, որով փաթթուեն զնորածին մանկունս: Իմաս. 7. 4: և Ղուկ. 2. 7: Իսկ մերթ առեալ լինի փոխանակ ս և իցէ ծածկութի. կամ պատանաց. որով իր ինչ պատի, կմ ծածկի: Յոբ. 38. 9: և Նարեկ. ղԶ:

Խանձարրապատ. ի. ան. աց. օք: || խանձարրօք պատեցեալ. այն երկայն և նեղ կտաւօք, որպիսիքեն նորածին մանկունք:

Խանձեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || շուրջանակի այրել և կիզել. կամ խանձատել:

Խանձեցուցանեմ. ցուցի. ցի. ել: (անցող.) || բորբոքեցուցանել. կմ սովորեցուցանել և հետամուտ առնել զոք զկնի ուրուք առ 'ի լափել, ուտել և ծախել զնա: ռամկ. փափանտըրմիշ էնէլ: 2. Օրին. 28. 21:

Խանձիմ. եցայ. եաց. իլ: (Ձայնակր.) || բորբոքիլ. կամ սովորիլ և մոլիլ առ 'ի լափել ուտել, և ըմպել:

Խանձող. ողի. աւ. աց. օք: || խանձեցեալ, և կիսայրեաց փայտ, կամ շերտք փայտից, և այլք նմանք, որք 'ի հրոյ 'ի բաց առեալք, տակաւին այրին, և ծուխս հանեն: Ամովս. 4. 11: և Զաք. 3. 2: և Եսայ. 7. 4:

Խանձողեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || խանձատել. կամ խանձել և այրել. ռամկ. տըչէլ մըլէլ. և ըստ այսմ իմանի այն, որ ասի զմիթ հօրէն մերմէ Գրիգորէ Լուսաւորչէն. Խանձողեցան նշխարք քո սէ ու կերպացդ: 'ի Շարականոցի:

Խանձրախառն. ի. ին. ից. իւք. || խանձրախառնոր. այն սևութբ և զազրութբ լցեալ. կամ աղծութբ. և աղտեղութբ մածեալ.

եւ կամ սեաւ եւ թանձրամած. որպիսի է ծուխն, որ ՚ի յայրեցածոյ պղծալից իրաց ելեալ՝ մածեալ թանձրանայ: Ագաթ:

Խանութ. ութի. կմ՛ խանթի. իւ. ից. օք: || կրպակ. որ է գործարան արուեստաւո-րաց: Նոնն. Է: Իսկ մերթ նշանակէ զգան ձառանն. կմ՛ զգանձարանն:

Խանչ. ի. իւ. ից. իւք: || Ճչումն, կմ՛ արձա կումն ձայնի ոմանց կենդանեաց. որք խո զից. կմ՛ ցռուց, եւ այլոց նմանեաց:

Խանչամ. ացայ. ցէր. ալ: (Ընդմիջ.) || մե-ծաբանելով հպարտանալ. կմ՛ գոռոզանալ:

Խանչեմ. եցի. եա. ել: (Չէզոք.) || Ճչալ, կմ՛ ձայն արձակել խոզից. կմ՛ ցռուց, եւ այլոց ոմանց կենդանեաց: Յոբ. 6. 5:

Խանչիւն: (Նախդրբիւ հոլովի.) || Ճչումն խո զից. կմ՛ ցռուց, եւ այլոց նմանեաց:

Խանչումն. չման. մամբ. մանց. մամբք: || մերթ նշանակէ զխանչիւն: Իսկ մերթ զգոռո-զումն. կմ՛ մեծաբանելով հպարտանալն:

Խանտամ. ացայ. ցէր. ալ: (Ընդմիջ.) || ահս զխանդալ: Խորէն. Բ. գլ. 60:

Խանտի. տւոյ. ով. իք. եաց. եօք: || կարօ-տեալ, կամ նեղեալ, եւ կմ՛ տառապեալ: Խորէն. Գ. գլ. 68:

Խաշն. խաշին. շամբ. խաշինք. անց. ամբք: || է հասարակ անուն ինչ. որով նշանակին փոքր անասունք, այսինքն ոչխարք, եւ այծք: Ծնն. 12. 16: Թուոց. 32. 1: Սաղմ. 8. 8:

Խաշնադարման. ի. աւ. աց. օք: || հօտից ոչ-խարաց, կմ՛ այծից դարմանող. կմ՛ հովիւ ոչխարաց, եւ այծից: Ծննդ. 46. 32. եւ 34:

Խաշնասէր. սիրի. աւ. աց. օք: || սիրող խա շանց. կմ՛ ոչխարասէր:

Խաշնարած. ի. աւ. աց. օք: || արածող. կմ՛ հովիւ խաշանց: Ծնն. 4. 20:

Խաշնարօտ. ի. իւ. ից. իւք: || արածող խա-շանց. կմ՛ խաշնարած. կմ՛ խաշնադարման: Մծբն. ժա: Իսկ մերթ նշանակէ զարածե ցեալ խաշն: զի ռամկաբար ասէ. մինչ յարի ոմանց անուանց՝ մերթ նշանակէ արածող. եւ ըստ այսմ ասի, տարապարտարօտ. այսինքն տարապարտ արածող: եւ մերթ արածե-ցեալ. որպիսի է բառս՝ մարգարօտ, որ նշ անակէ ՚ի մարգի արածեցեալ:

Խաշնդեղ. ի. իւ. ից. իւք: || անվանդ, որ է դեղնագոյն արմատ բուսոյ իրիք՝ որ կոչի գարծիլ. եւ է բնութեամբ ջերմ եւ չոր. եւ ունի զբազում օգտութիւնս ՚ի դեղագործայս. եւ բնու-թեամբ է լուծողական. ուստի բազում անգամ կարգեն ՚ի նմանէ զմաքրողական դեղ որո վայնի:

Խաշու. ուէի. ուաւ. խաշուք. ուէից. իւք: || արգանակ. այսինքն խաշած մսոյ ջուր: ռամկ. Բերրիթ:

Խաշումն. շման. մամբ. մանց. մամբք: || հա շումն. կամ մաշումն. եւ կամ ծիւրումն: Մծբն. ժթ:

Խաչ. ի. իւ. ից. իւք: || բառս այս յատկա-պէս առեալ, նշանակէ զգաղանակերպ չար չարանս, կմ՛ զփիշաս, կամ զտառապանս, զորս կրէ ոք: Մատ. 16. 24: Եւ յայսմանէ առեալ՝ մերթ նշանակէ զքառաթեւ գոր-ծին չարչարանաց, յորում զձեռս, եւ զոտս ուրուք բեւեռեալ պնդէին, ուր սատակա-կսկիծ տանջանօք վճարէր զկեանս. որպի-սի էր խաչափայտն՝ յորում Քս տրն մեր զանտանելի չարչարանս կրեալ՝ մեռաւ: Մատ. 27. 32: Եւ մերթ խաչ կոչին նաեւ այնք կազմուածք, զորս շինեն քրիստո-նեայք ՚ի փայտէ. կամ ՚ի հրահալելեաց իբ-րեւ զպատկեր խաչին Քսի, որում երկիր պագանեմք:

Խաչագլուխ. գլխոյ. ով. ոց. ովք: || զխաչաձեւ գլուխ ունող, որպիսի է գաւազանն ոմանց եկեղեցականաց: Լամբր:

Խաչազգեաց. եցի. իւ. ից. իւք: || խաչիւ զգեստաւորեալ, որով իմանի՝ խաչակիրն, կամ զխաչ եւ զչարչարանս յանձնառօղն: ՚Ի շարակնոցի:

Խաչակիր. կրի. աւ. աց. օք: || կրող եւ բար-ձող խաչի. կմ՛ զխաչ եւ զչարչարանս յանձն առօղ, կամ խաչակրօն: Նոնն. զԷ: Եւ ՚ի փարողն խաչին:

Խաչակից. կցի. կցաւ. աց. օք: || կցորդ խա չի. կմ՛ չարչարանաց: Հռոմ. 6. 6:

Խաչակրօն. ի. իւ. ից. իւք: || խաչակիր. կմ՛ զխաչանշեր վարս, եւ զկրօնս ունող. կամ խաչակրօն: Եւ մինչ ասի՝ խաչակրօն յի-շատակ. կամ սաղմոսերգութիւն, իմանի՝ խա չակրօնական:

Խաչահանու. նէի. աւ. աց. օք: || ՚ի խաչ հանօղ. կմ՛ խաչօղ: Լամբր:

Խաչաձեւ. ի. իւ. ից. իւք: || զձեւ, կմ՛ զնմա նութիւն խաչի ունող. կմ՛ խաչակերպ:

Խաչամահ: (Նախդրբիւ հոլովի.) || չարչա-րանօք խաչի մահացեալ, կմ՛ մեռեալ: Իսկ մինչ ասի՝ խաչամահ սպանանել, իմանի՝ մահուամբ խաչի սպանանել: Ոսկ. 1. Կորն. Թ:

Խաչանիշ. (Նախդրբիւ հոլովի.) || խաչաձեւ. կմ՛ խաչանշան. կամ զօրինակ՝ եւ զձեւ խաչի ունող: Նոնն. զԷ:

Խաչանկար. ի. աւ. աց. օք: || ձեւով խաչի նկա րեցեալ. կամ խաչանիշ. կմ՛ ՚ի վերայ իւր զձեւ խաչի ունող: Լամբր:

Խաչանման. ի. իւ. ից. իւք: || խաչակերպ. կամ խաչաձեւ:

Խաչանշան. ի. իւ. ից. իւք: || խաչիւ նշանե ցեալ. կամ խաչանիշ:

Խաչաչարչար. ի. իւ. ից. իւք: || խաչիւ չար չարեցեալ. կմ՛ չարչարանօք խաչի տանջե-ցեալ. կմ՛ դառնակսկիծ չարչարանօք խաչ տանջեցեալ: Իսկ մինչ ասի՝ խաչաչարչար չարչարանօք. իմանի՝ սաստիկ տանջողական չարչարանօք:

Խաչապէս: (Մակբայ որակական.) || իբրեւ զխաչ. կամ խաչակերպ. կմ՛ ըստ նմանութեան խաչի: Նոնն. Հէ:

Խաչապսակ. ի. աւ. աց. օք: || խաչիւ պսա կեցեալ. կամ ունող պսակ խաչի. եւ չար-չարանաց. կմ՛ խաչազարդ: Նոնն. զԷ:

Խաչափայտ. ի. իւ. ից. իւք: || փայտ խա-չին՝ ՚ի վն որոյ տրն մեր խաչեցաւ: 1. Պետ. 2. 24:

2. 24: ըստ այսմ երբեմն խաչափայտիւք ան֊ուանին և այլք փայտեայ խաչք՝ զորս շի֊նեն քրիստոնեայքն իբրև զպատկերս խա֊կակաւն խաչին Քի:

Խաչափառ. կմ՝ խեչափառ. ի. իւ. ից. իւք: || է խեցեմորթ և ճանկաւոր կենդանի ինչ ջրային, զոր և կոչեմք խեցգետին:

Խաչգիւտ. ի. իւ: || գտումն խաչին Քսի. կամ ժամանակ տօնախմբութեան այսպիսւոյ գիւտի:

Խաչելութիւն. թեան: || 'ի խաչ ելումն. կմ խաչիլն. և կամ չարչարանք խաչի: Ներբ. ՂԶ:

Խաչունակ. ի. աւ. աց. օք: || ունօղ յինքեան զխաչ. կամ խաչակիր: Ներբ. ՂԶ:

Խաչվառ. ի. աւ. աց. օք: || դրօշն եկեղեցականաց. զոր 'ի թափօր ելանելն բարձեալ տանին. որոյ յերկոսին կողմունսն նկարեալ կան սրբազան պատկերք:

Խաչորհնէք: (Նախդրիւ հոլովի.) || օրհնութիւն խաչի:

Խառան. ի. աւ. աց. օք: || անուր՝ կմ շղթայ. զոր արկանեն 'ի պարանոց պատժապարտից: Աճգոր: Մերթ է յատուկ անուն տեղւոյ, զոր տեսցես 'ի բառարանի յատուկ անուանց:

Խառատեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || քակտել. կամ քանդել. կամ քայքայել. և կամ խառնելով խառել, որ սաստիկ ո֊լորելով և քարշելով 'ի բաց կորզել. կամ 'ի բաց լուծել. և ըստ այսմ առի, խառատել զգլուխս թռչնոց յուլանէ նոցա. կմ զեղջիւրս անասնոց 'ի գլխոյ նց. կամ զգա֊րինս յօրինից. և այլն:

Խառատումն. ման. մամբ. մանց. մամբք: || քակտումն. կամ քանդումն. կամ քայ֊քայումն. կամ խռռումն. կամ փշրումն. և կամ խառնելով խառումն. որ քարշելով 'ի բաց լուծումն, որպէս խառատեն և 'ի բաց կոր զեն զեղջիւրս 'ի գլխոց անասնոց: զգա֊րինս 'ի շինուածոց: և այլն:

Խառեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || ոլո֊րելով և քարշելով 'ի բաց կորզել. կամ յետս դարձուցանելով 'ի բնաւորեալ տեղ֊ւոյն 'ի բաց լուծել. որպէս առնեն թռչնոց, յորժամ զգլուխ նց առանց զենլոյ, միայն 'ի ձեռն ոլորման և քարշման յուլանէ նց 'ի բաց կորզեն: ռամկօրէն [illegible]: Ղեւ. 1. 15: և 5. 8:

Խառն. նի. իւ. ից. իւք: || խառնումն. կամ խառնուած և բաղադրութիւն և լցեալ իրաց: Նորէկ. ԺԵ. և ՂԶ. Երբ մերթ նշանակէ ըզ խառնակութիւն, որ զմարմնաւոր զուգումն. և կամ զշաղաշարութիւն: Ծննդ. 30. 41: և Յն որդի: և ըստ այսոցիկ նշանակութեանց՝ առաւ յոգնականն 'ի գործ ածի: Մերթ և նշանակէ զխառնակն. կմ զպիղծն, և կամ զաղտեղին: ըստ այսմ է Հռով. 13. 13. ուր ասի. Եւ մի խառն անկողնօք. որ մի խառնակ, և պիղծ զուգմամբք: Իսկ մերթ վարի մակբայաբար. և նշանակէ 'ի միասին. կմ միանգամայն. կմ առհասարակ: Եսայ.

11. 7: Իմաստ. 5. 21: 2. Մակ. 12. 23:

Խառնաբան. ի. իւ. ից. իւք: || խառն և շփոթ խօսօղ. կմ որ յայտնի և բացորոշ ոչ խօ֊սի: Իսկ մերթ նշանակէ զայն, որ ոչ ա֊ռի յատկապէս և ըստ բուն նշանակութե. այլ՝ ըստ նմանութեան, որպէս զբողբոջս ու֊ռոյն կոչեմք աչք: Կիւրղի Եղիկ. ԺԹ:

Խառնադնաց. ի. իւ. ից. իւք: || զխառնակ գնացս ունօղ. որ պիղծ վարուք կենցա֊ղավարօղ. կմ անառակ. կմ զեղխ վարուք. կմ պղծագործ. և կմ եղեռնագործ. կմ ժանտաժուտ, և չարաբարոյ: Եզեկ. 18. 10:

Խառնախաղացեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || Երանէ սա 'ի բառէս՝ խառն. որ նշանա֊կէ 'ի միասին. կմ բաղ: և 'ի խաղալ բայէն, որ է յօդել, կամ կցել, կմ շաղկապել. և այլն: Ուստի խառնախաղացելն է, 'ի միա֊սին յօդել, կմ շաղկապել. կամ բաղկա֊ցել. և կամ բաղադրանել: և ըստ այսմ բա[illegible] զազանութիւն. կամ 'ի միասին [illegible] աստեղայ՝ ըստ զանազան հայեց[illegible] դրից, ըստ որոյ գործեն 'ի յե[illegible]նեալս, կոչի խառնախաղացել աստեղաց: Կիւրղի Եղիկ. Ճ: տես և զխաղացելն:

Խառնախորթ. ի. իւ. ից. կամ աց. օք: || խառն և խորթ. որ անկարգ, և անհարա֊զատ. կամ խառնափնդոր. կամ խառնի֊խուռն. և կմ ունայն. և սնոտի: ռամկօր. [illegible]: Նորէկ. ՂԶ:

Խառնախուռն. խուռնի. աւ. աց. օք: || խառ֊նափնդոր. կմ խառնաշփոթ. կմ շփոթօղ և ամբոխօղ. և կմ խառնակ և աղտեղի: Նորէկ. ԾԳ: Երբ ելանէ սա 'ի բայէն խա֊ռնել. որոյ արմատն է խառն. զոր տեսցես [illegible]: տես և զ[illegible]:

Խառնակ. ի. աւ. աց. օք: || պիղծ. կմ [illegible] դժ. կամ անմաքուր. կմ անլուայ: 1. Մակ. 1. 50: և Մարկ. 7. 2: Իսկ մերթ նշանակէ ըզ խառնեալն, կամ զխառն. և կամ զխառ֊նափնդորն: Մծբն. ԺԹ:

Խառնակեաց. կեցի. աւ. աց. օք: || [illegible] կամ 'ի միասին Ը այլոց կեցօղ: Երբ մերթ նշանակէ, խառնադնաց:

Խառնակեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || Ը միմեանս խառնել. կմ շփոթել: Ծնն. 11. 7:

Խառնակերպ. ի. իւ. ից. իւք: || այն՝ որոյ կերպարանքն է խառնեալ 'ի զանազան ձե֊ւոց. որպիսիք են ցուցանքաւոր կենդանիքն. որք ըստ մասին են նման այս ինչ կեն֊դանւոյ, և Ը մասին, այն ինչ կենդանւոյ. և որպէս ջորին. որ ըստ մասին է նման ձիոյ. և ըստ մասին նման իշոյ:

Խառնակիմ. եցայ. եաւ. իլ: (Չէզոք.) || ընդ միմեանս խառնիլ, կմ շփոթիլ: Եզեկ. 22. 18: Իսկ մերթ նշանակէ մամնակցել. կմ հաղորդել ուրեք կենցաղավարութե: Յօհ. 4. 9: և Աճգոր. 11. 15: Երբեմն նշա֊նակէ շաղաշարել. կմ զուգել Ը միմեանս արուէն և իգէն: Ելից. 22. 19:

Խառնակօս. ի. իւ. ից. իւք: || պղծախօս. որ 'ի պղծոց կոխեցեալ. որպիսի է տեղին, կամ յատակն, զոր կոխեն խառնադնացք.

և ալիւր անձնիւքն, կամ հեթանոսաց. 3. Մակ. 2. 8:

Խառնակութիւն. թեան: || մերթ նշանակէ զխառնումն, և զշփոթութիւն: Ծննդ. 11. 9: և մերթ զշաղաղշտութիւն և զշռայլակեցութիւն առնէի, և խղի ը մարմնոյ. և կամ զամուսնանալն ը ազգի օտարի. 2. Մակ. 14. 3: Որպէս և 4. Թագ. 14. 14: և 2. Մնաց. 25. 24. յորս ասի. Զորդիս խառնակութեց, իմանի՝ զոր դիւս այնոց որդւոց էին յառաջ որդիք իւր. այսինքն խառնակ. որ՝ ի հեթանոս հօրէն և՝ ի հրեայ մօրէ. կամ՝ ի հրեայ հօրէ, և՝ ի հեթանոս մօրէ:

Խառնակրօն. ի. իւ. ից. իւք: || զխառն սովորութիւ, կամ զկրօն ունօղ. կամ խառնակրօնս: Իսկ մերթ նշանակէ՝ զհաւատացեալ, և զգահեհկական կեանս վարօղ, որպիսիք էին սամարիացիք: Նորէկ. հա:

Խառնաձայն. ի. իւ. ից. իւք: || ունօղ ըզ խառն և զշփոթ ձայն. կամ որ առանց կարգի և անբացորոշ նշանակութեամբ հանէ ըզ ձայն, և զաղաղակ: Բայց 1. Կորնթ. 14. 8. ուր ասի. Եթէ խառնաձայն արձակեսցի փողն. իմանի, եթէ խառն և աննշան ձայնիւ գոչեսցէ. կամ եթէ շփոթ և զաննշան ձայն հանիցէ:

Խառնաձեւ. (Նախդրիւ հոլովի.) || խառն ձեւեցեալ. որ՝ ի միասին կազմեցեալ և քարշեցեալ. և կամ խառն ընդ միմեանս ագուցեալ. կամ ուժգին կազմեցեալ, և բնաւ յառաջ վարեալ: 3. Մակ. 4. 7:

Խառնաղանճ. կամ խառնաղանջ. ի. իւ. ից. իւք: || խառնիխուռն. Երբ ասէ մերթ իմանի. ռամիկն կամ գռեհիկն, և կամ խաժամուժ ամբոխն: Եւ մերթ խառնիխուռն, և [illegible] աղխամախաց, կամ կանայք և կարաւօք: Եզեկ. 27. 27. և 30. 5: և Խորէն. եա. գլ. 15:

Խառնամայր. ի. իւ. ից. իւք: || այն կին, որ՝ խառնակեցաւ՝ և՝ ի մերձեցեալ իւրոց եղանէ, իբրև զխառնակ և զանառակ յաւելուած. որպիսիք էին կոչողքն, որք եղանեն ՝ի քուրմայքն հաւլոյոց, և կամ ՝ի կանայս բըր ուոյ. և յայլոց նմանեաց: Կիւրղ. Եզեկ. ժդ:

Խառնամանան: (Նախդրիւ հոլովի.) || խառնակ. կամ անմաքուր. կամ անմիք. և կամ պիղծ: Կիւրղ. Եզեկ. ժե:

Խառնամբոխ. ի. իւ. ից. իւք: || խառնիխուռն ամբոխ. կամ խառնիճաղանճ բազմութիւն: Իսկ մինչ ասի. խառնամբոխս եղանել ՝ի պատերազմ. իմանի՝ խառնիխուռն ամբոխիւք, կամ խառն ընդ ամբոխից գնալ ՝ի պատերազմ: Աճառ.

Խառնապատմօղ: (Նախդրիւ հոլովի.) || խառն խուռն պատմօղ. կամ խառն և ՝ի միասին պատմեցեալ. Աճառ.

Խառնավար: || ոչ հոլովի, այլ ը բայի շարակցի այսպ. խառնավար առնել. և նշանակէ՝ խառնակ, կամ անառակ և անկարգ կերպիւ վարել. կամ ՝ի գործ ածել. և կամ չարաչար ՝ի կիր արկանել: Կիւրղ. Եզեկ. ժգ:

Խառնարան. ի. աւ. աց. օք: || անօթ, յորում խառնեն զգինին ը ջրոյ: և այսու մերթ իմանի իմաստն նման ամն թասի. կամ գուրակն, [illegible] ըմպելի այսպիսի խառնուածոյ: և մերթ բաժակն. կամ ըմպանակն, որով ըմպեն զգինի: Առակ. 9. 2: Մերթ և նշանակէ զո և լցէ անօթ, կամ տեղի՝ ուր գինի իր ինչ խառնեցեալ ՝ի զանազանից իրաց. և կամ ուր լինի այսպիսի խառնումն:

Խառնափնդոր. ի. իւ. ից. իւք: || խառնիխուռն եղեալ. կամ խառնակեալ՝ և շփոթեցեալ. կամ խառնակ և անկարգ: ՝ի վերս հարց. իզ:

Խառնափնդորեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || խառնափնդոր առնել. կամ խառնակել և շփոթել. և կամ շփոթութեամբ և անկարգութեամբ լնուլ: Շնորհալին:

Խառնելիք. լեաց. եօք: (անեզական.) || մերթ նշանակէ զանօթ ինչ որպէս զաղեխին գինւոյ. կամ ոսկ զինծ թաս. կամ գաւաթ, ուր լցեալ լինի հեղեղուկ իւր: Ելից. 24. 6: և Առակ. 9. 3: Բայց Գործ. 27. 40. նշանակէ զյօդուած. կամ զծղխնէին. յը զուեղէն. և կամ զպարանն, որով զեկին նաւին շարժի. ուստի ասի անդ. Թուլացուցին զխառնելիս թեւոցն. յը զյօդուածս ղեկին: Իսկ Եսայ. 65. 11. ուր ասի. խառնելիք խառնելիս. իմանի՝ զխառնելի, և զըմպելի հեղեղուկ իրս. յը զգինի. զօղի. կամ զգքի. և զայլս սոյնպիսիս խառնելիք. յը բազմազան հանդերձանօք բաղադրելիք, և կազմելիք, և լցեալ ՝ի խառնարանս՝ մատուցանելիք չաստուծոց:

Խառնեմ. եցի. եա. ել: (Ներգործակ.) || խառնակել. կամ ընդ միմեանս շփոթել. որպէս զջուրն ընդ ալեր. կամ ընդ գինւոյ. և կամ զոսկին ը արծաթոյ. և այլն: Սաղ. 101. 10: Իսկ մերթ նշանակէ՝ բարեխառնել. կամ բաղադրել. կամ բարեկարգել. և կամ պատկանաւոր կերպիւ զետեղել: 2. Մակ. 15. 40: Առակ. 9. 2: 1. Կորն. 12. 24: մերթ ևս նշանակէ՝ յօդել. կամ շաղկապել. և կամ ընդ միմեանս ագուցանել: Ելից. 26. 3: և 5. և 6. և 9. և 11: Կող. 2. 19: և յայլ բազում տեղիս:

Խառնիխուռն: (Նախդրիւ հոլովի.) || խառնեալ, և շփոթեալ. և կամ խառնափնդոր. ռամկօրէն [illegible] կամ խառնամխառն. Իմաստ. 14. 25:

Խառնիճ. նճի. աւ. աց. օք: || է մարախ ինչ նման որդան, որ ոչ ունի զթեւս, այլ ոտիւքն ստտոտէ, և ուտէ զբոյսս: և սա կոչի ևս Ջորեակ: Սաղմ. 104. 34:

Խառնիճաղանճ. կամ խառնիճաղանջ. ի. իւ. ից. իւք: || ռամիկ. կամ խաժամուժ ամբոխ. կամ խառնիխուռն ժողովուրդ: Ելից. 12. 38: և Երեմ. 50. 37:

Խառնուած. ոյ. ով. ոց. ովք: || խառնումն. կամ բաղադրութիւն. կամ զանգուած. և կամ բարեխառնութիւն: Նորէկ. ղզ: Խորէն. գ. գլ. 62: Իսկ մերթ նշանակէ զշաղկապումն բաղդից ընդ միմեանս հիւսելով, կամ կարելով. և կամ ագուցանելով. և այլն. կամ յօդուած. և կամ կապ, որով բաղկացեալ են յօդուածք ը միմեանս յօդին, և կցին: Ելից. 26. 4. և 5. և 10: և 28. 32: և 36. 12: և այլն:

 ԽԱ

Խառնուածոյ : (Նախդրիւ հոլովի .) || 'ի զանազան նիւթոց, կմ 'ի պէսպէս անուշահոտ իրաց խառնեցեալ . և բաղադրեցեալ . կամ յօրինեալ . որպիսիքեն անուշահոտ իւղք . կմ խունկք : և ըստ այսմ ասի . 2 . Մնաց . 13 . 11 . Եւ զխունկսն խառնուածոյս :

Խառնութիւն . թեան : || մերթ նշանակէ՝ խառնումն . կմ բաղադրութիւն . և կամ խառնուած : Նորէնք . 'ի գողէնտ խառնին : իսկ մերթ նշանակէ զշաղկապումն, և զյօդումն : Նորէնք . կէ : Մերթ ևս նշանակէ զխառնակութիւն, և զշփոթումն :

Խառնումն . նման . մանք . մանց . մամբք : || տե՛ս զԽառնութիւն :

Խառնուրդ : (Նախդրիւ հոլովի .) || խառնումն . կամ խառնուած : իսկ մերթ յօդումն . և կամ հիւսուած ո՛ և իցէ իրաց : իսկ երբեմն՝ խառնակութիւն . և կմ շփոթութիւն : Ագաթ :

Խար . ի . իւ . ից . իւք . կմ աց . օք : || որ ըստ օրական կերլի . կմ դարման կերակրոյ գըրաստուց : ռամկ . ֆիւռ եէմ : Ագաթ :

Խարագուլ . գլի . իւ . լից . կամ աց . օք : || է մինն 'ի չորից տեսակաց մարախոյ, զորս օրէնն էր հրէից ուտել . որոց առաջինն, կոչի չորեակ, կամ խառնիճ . որ է մարախ ինչ նման որդան . որ ոստոստէ, և ոչ թռչի . զի ոչ ունի զթև : Երկրորդն անուանի խարագուլ . կմ գրուէին, և է փոքրիկ մարախ ինչ . որ ունի զայնչափ փոքր, և զնուրբ թևս, մինչ զի նոքօք ոչ կարէ թռչել . այլ միայն յառաջ շարժէ զինքն . և ոստոստելով ուտէ, և ծախէ զդալարիս : Իսկ երրորդն հասարակ անուանեալ կոչի մարախ, որ է մեծ, և թևաւոր, որ կարէ թռչել, և ոստոստել : Բայց չորրորդն յորջորջի օձամարտ . որ է թևաւոր մարախ ինչ մեծագոյն մարմնով, և զօրաւոր ուժով . որ և բազմիցս մարտնչի ընդ օձից . յաղթէ և անուանեցաւ օձամարտ : Ղևտ . 11 . 22 :

Խարազայ . ի . իւ . ից . իւք : || է նիւթ ինչ իբրև զքար, որ գոյանայ 'ի մէջ լեղւոյ ոմանց ոսկաւոր եզանց . և ունի զմեծութիւն կաղնին պտղոյ . ըս Փնոխի, զոր 'ի գործ ածեն 'ի բազում իրս :

Խարազան . ի . աւ . աց . օք : || ձաղկիչ արարեալ 'ի չուանէ . կմ 'ի փոկէ . կմ 'ի մազեղէն նիւթոյ . և կմ յայլմէ նմանւոյ՝ ոլորելով ըստ զթուրայ : Յօհ . 2 . 15 : Եւ մերթ նշանակէ զմտրակն, կմ զխարիշն, որովք վարեն զանասունս : 'Ի ճառս հարց . ժզ :

Խարազանեմ . եցի . եա՛ . ել : (Ներգործ .) || խարազանաւ հարկանել, կմ գանել : իսկ մերթ նշանակէ խարազանաւ, կմ խթանաւ զանասունս խթել, և վարել :

Խարազն . ազնի . իւ . ից . իւք : || քուրձ . կմ խորգ . կմ խոշոր, և հաստ մազեղէն . զոր զգենուն կրօնաւորք վս ճգնութեան, կամ ապաշխարութեան : ռամկօր . խուրար : 'Ի ճառս հարց . Է :

Խարազնազգեաց . գեցի . իւ . ից . իւք : || քուրձ զգեցող . կմ զխոշոր մազեղէնս ագանող : ռամկ . խուրար հագնող : Եւ մինչ առ սե՛ խարազնազգեաց ճգնուէ . իմանի՝ խարազնազգեցական ճգնութիւն :

Խարազնազգեստ . ի . իւ . ից . իւք : || խորգով, կմ քրձով զգեստաւորեալ, կմ պատեալ . կմ զխարազն զգեցող : ռամկ . խուրար հագնող : Խորէն . գ . գլ . 31 . և 49 :

Խարակեմ . եցի . եա՛ . ել : (Ներգործ .) || խածել : ռամկ . խուրճէլ . կմ բուրէլ : Իսկ մերթ կիզել . կմ այրել . կմ սաստիկ տապացուցանելով տոչորել :

Խարակիչ . կչի . աւ . աց . օք : || խածող : ռամկ . խուրիճ : Եւ մերթ նշանակէ՝ կիզիչ . կամ այրիչ . կմ տոչորող : Ագաթ :

Խարամաղ . ի . իւ . ից . իւք : || է ազգ մի ծաղկան, որոյ ձևն, հոտն, և խոտն են նըման զխամնակաւ ծաղկան . բայց գոյնն առաւել հակի 'ի կանաչ :

Խարամանի . նւոյ . եաւ . եաց . եօք : || է տեսակ մի ժանտ օձի . որ 'ի խայթելն զոք՝ ապուշ և թմրեալ առնէ, և զբովանդակ մարմինն նը ուռուցեալ՝ անհնարին ջերմութե տապացուցանէ՝ և այրէ, Եւ վս այսորիկ կոչեցաւ սա յոմանց՝ օձ հրային . ոմ և 'ի մեզ ասացաւ խարամանի . իբրթէ մանիլով խարող . ըս պատառելով ապող և այրող : Եւ 'ի խայթեցեալն պատճառէ զայնպիսի ծարաւ, և զմորմոքումն, այսինքն զեռք, որով անհնարին չարչարի . և սակաւուիկ մի ապրեալ՝ տանջանօք մեռանի : Եւ այսպիսիք էին օձքն կատաղիչք . զորս առաքեաց ած որդւոցն իսրլի յանապատին 'ի պատիժ : Եւ բառս այս գրի ևս հարամանի . որպէս գնի 'ի գիրս : Մծբնայ . ժթ :

Խարան . ի . աւ . աց . օք : || խարումն . կամ տապումն . ըս հրացեալ երկաթով կիզումն մարմնոյ . զոր մերթ առնեն վս բժշկելոյ զխոցս . կմ վս բանալոյ զվէրս . և կմ վս խասելոյ ուժք : Եւ մերթ վս նշանելոյ զոք, զի ուրացեալ յայլոց . ոմ առնեն ձիոց : և կմ զի վաստահամբաւ գողն ուրուք ցուցցի . ոմ առնեն ոմանց մարդկանց մինչ շանթիւ դրոշմեն զճակատս նց : ըս այսմ խմա և զայլոց նմանեաց : Ելից . 21 . 25 : և Նորէնք . ջ : և Լամբրոն : Մերթ ևս նշանակէ սաղեցեալ տեղին . և կմ բացեալ վէրքն : Նորէնք . ձէ . և ղը : Եւ մերթ ընդ բայի շարակցի այսպէս . խարանս արկանել . և նշանակէ՝ խարել . ըս հրացեալ երկաթով կիզել . կմ զվէրս բանալ : Ոսկե . 1 . հատ . լէ :

Խարբ . ի . իւ . ից . իւք : || սուսեր . կմ թուր . կմ սուր . և կմ վաղակաւոր :

Խարբալ . ի . իւ . ից . իւք : || մաղ . որով մաղեն ցորեան . կմ ալիւր . և այլն :

Խարբալեմ . եցի . եա՛ . ել : (Ներգործ .) || մաղել զցորեան . կմ զալիւր . և այլն : Իսկ մինչ զդիւէին ասի՝ խարբալել զոք իբրև ըզցորեան, նշանակէ փորձելով խախտել զոք 'ի հաւատոյ . կամ 'ի հոգևոր կործանումն ինչ արկանել : Ղուկ . 22 . 31 :

Digitized by Google

Խարբալիլ. եցայ. եաց. իլ։ (Ձայնակր.) ‖ ամբոխիլ. կմ վրդովիլ. կմ աղմկիլ. կամ շփոթիլ. և կմ դղրդմամբ ցնցիլ. 'ի ձեռն հաղց. ՃԵ։

Խարբալումն. լման. մամբ. մանց. մամբք։ ‖ մաղումն. կմ մաղելն։ Իսկ մերթ նշանակէ՝ ամբոխումն. կամ վրդովումն։ Ուստի և փոփոխութիւն դիմին, որով վրդովէ զխաղաղութիւն հոգւոյ մարդոյն, կոչի խարբալումն։ 'ի ձեռն հաղց. Գ։

Խարբուղ. բուղի. իւ. եց. ւք։ ‖ է եղջերաւոր անասուն ինչ վայրի. կերպարանօք ամենեւին նման այծու, և եղջերուի. բայց մարմնովն է սոսկար, և զօրաւոր. ունի զբաշ թաւ զպարանոցաւն. կողմն քամակին է մոխրագոյն. իսկ կողմն որովայնին թխագոյն։ 2. Օրին. 14. 5։

Խարդախ. ի. իւ. եց. իւք։ ‖ խաբեբայ. կմ կեղծօղ. կամ նենգաւոր։ ռամկ. հիլէ կոչ։ Իսկ մերթ նշանակէ՝ խարդախեալ. կամ նենգեցեալ։

Խարդախեմ. եցի. եա. եալ։ (Ներգործ.) ‖ նենգել. կմ պատրել. կամ խորամանկել. կամ դաւել. կմ դաւաճանել։ ռամկ. հիլէ խառնել։ 1. Թագ. 12. 25։ 2. Մնաց. 23. 13։ Իսկ մերթ կեղծաւորել. կմ կեղծաւորութ ցուցանել։ 'ի ձեռն հաղց. Ճզ։

Խարդախութիւն. թեան։ ‖ նենգութիւն. կմ դաւաճանութիւն. կմ խորամանկութիւն. կմ խարդախական, և պատիր բան. կմ կեղծաւորութիւն։ ռամկ. հիլէքեարլըգ։ Թուոց. 35. 20։ և 1. Տիմ. 6. 5։

Խարդաւան. ի. իւ. եց. իւք։ ‖ նենգաւոր. կմ դաւաճան. կմ խարդախօղ. կմ կեղծաւոր. կամ չարաճնար։

Խարդաւանակ. ի. աւ. աց. օք։ ‖ խարդաւանօղ. թ նենգօղ. կամ դաւաճանօղ։ Իսկ մերթ խարդաւանութիւն. կմ նենգութիւն։ Խորէն. ա. դր. 29։

Խարդաւանական. ի. աւ. աց. օք։ ‖ նենգաւորական. կմ դաւաճանական. կմ խարդախական։

Խարդաւանեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) ‖ նենգել. կամ դաւաճանել. կմ պատրել. կամ խորամանկել։ Նարէկ. ԽԶ։ և Լամբրոն։ Իսկ մերթ նշանակէ՝ խաբէութեամբ լլկել. կամ տապականել զկին. կմ ապականել, և կորուսանել զոք։ Մերթ և նշանակէ՝ կործանել. կմ գլորել. կմ 'ի բարձանց 'ի վայր արկանել. և ըստ այսմ ասի 'ի շարականս ցի. Գաւազանէն ցնդմամբ խարդաւանեալ 'ի վերն։

Խարդաւանք. ւանաց. օք։ (անեզական.) ‖ նենգութիւն. կամ պատրանք. կամ խարդախութիւն. կամ խորամանկութիւն. կմ դաւաճանութիւն։ Նարէկ. կ։

Խարդաւանութիւն. թեան։ ‖ նոյն է ը վեր նոյն։ Լամբրոն։

Խարդաւանօղ. նօղի. աւ. աց. օք։ ‖ նենգօղ. կմ դաւաճանօղ. կմ խարդախօղ. կամ խորամանկ. կամ կեղծաւոր։ Նարէկ. ղէ։

Խարկեմ. եցի. եաց. եալ։ (Ներգործ.) ‖ Հրա-ցեալ երկաթով կիզել զմարմին, առ 'ի բուժել զնոյն. կամ առ 'ի բանալ զվէրս, և կամ առ 'ի փտասել։ Երբեմն մերթ առ 'ի նշանաւորել զոք, զի որոշեսցի յայլոց. որպէս հանդիսականք երիվարաց. և կամ առ 'ի ցուցանել զվատահամբաւ գոլն ուրուք. որպէս առնեն ոմանց պատժապարտից՝ չանթիւ դրոշմելով զճակատս նց։ Լամբրոն։ Ը այսմ իմանի և այն, որ ասի՝ 1. Տիմ. 4. 2. զկեղծաւորաց. խարկելոց խղճիւ մտաց. թ տաղեցելովք. զի ցուցանեն զինքեանս սուրբս, բայց խիղճ մտաց նց բծիւ անսրբութեան իբրև չանթիւ անջնջելի դրոշմեցեալ է. որով յայտյանդիման ցուցանին գոլ անսուրբք։

Խարիսխ. խարսխի. աւ. աց. օք։ ‖ պատուանդան գոյն սեան. որ է 'ի ներքոյ սեան եդեալ գեղեցկաշէն քարն, որ իբրև զհիմն կալնու 'ի վր իւր զսիւնն։ Երբեմն այսպիսի պատուանդանս երբեմն եւս չինի 'ի պղնձոյ, կմ յարծաթոյ, կմ 'ի փայտից, և կամ յայլոց նիւթոց։ Ելից. 27. 17։ և 36. 36։ Մերթ և առեալ լինի փոխանակ խոյակի, թ վերնախարսխի։ Իսկ մերթ նշանակէ զճանկաւոր երկաթն նաւին, որ ձգի 'ի ծով, առ 'ի հաստատուն և անշարժ պահել զնաւն։ Գործ. 27. 29։ և Եբր. 6. 19։ Իսկ Երգ. 3. 10. բառիւս խարիսխ, իմացեալ լինի սիւնոցն. կամ բարձն, որ դնի 'ի նստարանի աթոռոյն. կամ գահին։ և ըստ որում այսպիսի սիւնոցս ենթակայ լինի նստօղին, որպէս խարիսխն սեան՝ անուանեցաւ խարիսխ։

Խարխալիմ. լեցայ. եաց. իլ։ (Ձայնակր.) ‖ քայքայիլ. կամ փլփլիլ. և կմ այնպէս հնանալ ը ամ մասանց՝ մինչ զի իցէ մերձ 'ի կործանումն. և ը այսմ ասի զշինուածոց։ Նարէկ. կէ. և ձէ. Երբեմն յայտմանէ առեալ բազում անգամ ասի զայլոց իրաց. և նշանակէ՝ աւերիլ. կամ եղծանիլ. կամ ապականիլ. կամ քանդիլ։ Ոսկէ. 1. հռվ. ԽԸ։ և 2. հռվ. Ճ։

Խարխաշեմ. կամ խարբաշեմ. եցի. եա. ել։ (Ներգործակ.) ‖ նուաղեցուցանել. կամ լքուցանել. կամ թալկացուցանել. և այս ասի զաչաց, յորժամ լուծեալ թուլլով զայնս՝ խփխփեմք ոտք զթալկացեալ։ 'ի ձեռն հաղց. դ։

Խարխափ. ի. իւ. եց. իւք։ ‖ խարխափումն։ որով մերթ իմանի շարժումն ձեռաց։ Իսկ մերթ՝ կուրականաց շօշափումն, կամ ընթացումն։ Երբեմն առ բազում անգամ յարելով նախդրիւ այսմիկ՝ առ, վարի իբրև ըղմակբայ այսպէս, առ խարխափ գնալ, կմ շրջիլ. և նշանակէ՝ խարխափմամբ. կամ խարխափելով շրջիլ։ ռամկ. գարգարալ. Ոսկէ. 1. հռվ. Թ։ և Կիւրղի Եղիշ. Ա։

Խարխափանք. անաց. օք։ (անեզական.) ‖ խարխափումն. թ շարժումն ձեռաց։ և կամ կուրականաց շօշափումն. կամ ընթացումն կենդանեաց։ Նարէկ. ժէ։

Խարխափեմ. և մերթ խարխափեմ. եցի.

եա՛, եր։ (Չէզոք.) || Շարժիլ 'ի մէջ օդոյն երերեալք, որպ. լինին տերեւք ծառոց շարժեալք 'ի հողմոց։ Ղեւտ. 26. 36. Իսկ մերթ նշանակէ՝ խարխ. գնալ զոր մթութեան շօշափելով, կամ գնալ խաւ. ձեռն տալ ... ընթանալ, կամ զինչ որոնել եւ խնդրել. որպէս առնեն 'ի խաւարի շնշմարելն։ 2. Օրէ. 28. 29։ Տօբ. 11. 10։ եւ Յօբ. 5. 14։

Խարխատել։ (Նախադրբե՛ հոլովի.) || Խարխատել. կամ քայքայել. կամ խախտել. կամ աւերել. կամ քանդել։ Նարէկ. խը։ Ալէք. 1. հոգ. ժամ.

Խարշատեմ. եցի. եա. եր։ (Ներգործ.) || Խարշելով այրել. կամ տապակել. եւ կամ խարշելով խաշել։ Եւ այս մերթ լինի առանց հրով. մերթ տապով արեգական. եւ մերթ եռացեալ ջրով. եւ այլն։ Նարէկ. ժէ։

Խարշատիմ. ատեցայ. եայց. եալ։ (Կրաւորական.) || Այրելով խարշիլ։ Եւ մերթ մինչ առ խարշատիլ ծարաւով, խմանի սաստիկապէս պապակիլ։ 'Ի Ղուկ. Հարց. ղ։ Իսկ մերթ մինչ առ՝ խարշատիլ գորովով, նշանակէ՝ աղէխարշ լինել, եւ կամ սաստիկ մորմոքել, եւ զկսկիծ սրտի կրել։ Լամբրոն։

Խարշափուն. ի. իւ. ից. իւք։ կամ խարշափնոյ. ով. ոց. ովք։ || Խառն ինչ որ յուռառեն կոչի՝ ալիւրոյ. եւ է աղէհամ, որ կերբե զհաց յաւելուցանէ զաւտոցն. եւ լինի 'ի քարամէ տեղիս։ Յոբ. 30. 4։

Խարշեմ. եցի. եա. եր։ (Ներգործ.) || Եռացեալ ջրով եփել զմիս, կամ զխոտաղէնս. կամ խարշատել զձեռս ջերմացեալ ջրով։ Ռամկ. խաշել։ Մերթ եւ նշանակէ՝ այրել. կամ կիզել. կամ տապակել։ Յոբ. 16. 17։ Աղամ. 6. 28։ Եսայ. 33. 12։

Խարոյկ. րուկի. աւ. աց. օք։ || Հրատ. ք, հուր մեծ բորբոքեալ բազում, զոր լուցանեն դիզելով զփայտս. կամ զխռիւ։ 1. Մակ. 12. 28։ եւ 2. Մակ. 10. 36։ Եսայ. 44. 16։ եւ Գործ. 28. 2։ Իսկ մերթ նշանակէ զկայծակունս հրոյ, կամ զհրացեալ գործեալն, կմ. զկրակն։ Եւ մինչ առ՝ խարոյկ արկանել, խմանի հուր լուցանել դիզելով ըղ փայտս. կամ զգործելիս։ Յոհ. 18. 18։

Խարուկածին. ծնի. իւ. ազ. օք։ || Հրածին. կամ բոցածին. կամ լուսածին։ Իսկ մերթ նշանակէ 'ի խարուկէ ծնեալն, յն արտադրեցեալն, կամ ծագեցեալն. եւ կամ 'ի լուսաւոր երից յառաջացեալն. եւ ի այսմ բոցք Ճառագայթից աստեղաց՝ կոչին խարուկածինք։ Իմաստ. 17. 5։

Խարուկեմ. եցի. եա. եր։ (Ներգործ.) || Այրել. կամ տապակել. կամ հրդեհել. կամ բոցակիզել։ Նարէկ. 'ի գովս խաչին. եւ Լամբրոն։

Խարումն. խարման. ամբ. անց. ամբք։ || Խարումն. որ է հրացեալ երկաթով կիզումն մարմնոց։ Նարէկ. խդ։

Խարսխաձեւ. ի. իւ. ից. օք։ || Ձեւ. եւ զնմանութիւն խարսխի ունօղ։

Խարսխեմ. եցի. եա. եր։ (Ներգործ.) || Մերթ նշանակէ 'ի վ՟ր խարսխի դնելով ըզ սիւնն. կամ զայլ ինչ, ամրացնել. եւ կմ. խարսխ. խարսխաւ առնել։ Իսկ մերթ նշանակէ սոսկ հաստատել. կամ ամրացել. կամ ամրացուցանել. կամ հիմնել. եւ կամ արձանացուցանել. յն հաստատուն կացուցանել։ Խորէնաց. գ. գլ. 66։ եւ Նարէկ. ղզ։

Խարտ. ի. իւ. ից. իւք։ || Է տեսակ խարտեալ քարին. եւ նշանակէ զխարտումն. որ է խարտոցաւ մանրեալն զխարտելի իրս. որպէս. զոսկի. զարծաթ. եւ այլն։

Խարտեաշ. կամ խարտէշ. եշի. իւ. ից. իւք։ || Շէկ. կամ դեղին հակեալ 'ի կարմիրութիւն։ Եւ այս առն մերթ զմազոյ ... մերթ զհերաց, եւ զայլոց նմանեաց ... ունին զշէկ գոյն։ Ղեւտ. 13. 36. եւ 1. Թագ. 17. 42։

Խարտեմ. եցի. եա. եր։ (Ներգործ.) || Խարտոցաւ մանրել զոսկի, կամ զարծաթ, կամ զպղինձ, եւ զայլս նման. եւ կամ մանր փշրել զկարծր իրս։ Ելից. 32. 20։ Իսկ մերթ նշանակէ՝ խարտոցաւ քերել. կամ սղոցել։ Եւ մերթ՝ սրել, կամ ծայրասուր առնել։ Կիւրղի Եղեմ. ժէ։

Խարտեշագեղ. ի. աւ. աց. օք։ || Խարտեաշ եւ գեղեցիկ. կամ խարտեաշ հերով գեղեցկացեալ։

Խարտեշանամ. ացայ. ացեր. անալ։ (Չէզ. միջ։) || Խարտեաշ լինել. կամ շիկանալ։ Ղեւտ. 13. 30։

Խարտէշ։ || Տե՛ս զխարտեաշ։ Ցն վեր։

Խարտոց. ի. աւ. աց. օք։ || Գործիք խարտելոյ զհրահալելիս, կամ զայլ կարծր իրս։ Ռամկ. էյէ։

Խաւար. ի. աւ։ (Անյոգնական.) || Է զրկութիւն լուսոյ։ Մերթ եւ խաւարամած օդն՝ որ է պակասեալ 'ի լուսոյ. կմ. մէգն, կմ. մութն, առին խաւար։ Ծննդ. 1. 2։ եւ Դան. 3. 72։ Եւ մերթ մեղքն, կամ տգիտութիւնք, կամ մոլորութիւնք, եւ այլք նմանք. որք պակասեն 'ի լուսոյ ճշմարտութեան, կամ ուղղութեան, կոչին խաւար։ Ժող. 2. 14։ Յոհ. 1. 5։

Խաւարաբնակ. ի. աւ. աց. օք։ || Խաւարի բնակօղ. կամ 'ի մթին տեղւոջ զբնակութիւն ունօղ։

Խաւարաբորբ. ի. իւ. ից. իւք։ || Խաւարապատ. կմ. խաւարամած. կամ խաւարային եւ մթային։

Խաւարադգած. ի. իւ. ից. իւք։ || Խաւարազգեաց. կամ խաւարամած. կամ խաւարապատ։

Խաւարակուլ։ (Նախադրբե՛ հոլովի.) || Զխաւարն կլանօղ. յն հալածօղ. եւ աներեւոյթ առնօղ. որպիսի է լոյսն արեգական։ Աղէ. գոհ.։ Իսկ մերթ նշանակէ զնա՝ որ կլեալ է 'ի խաւարին մեղաց. կամ տգիտութեան։

Խաւարահողմ. ի. իւ. ից. իւք։ || Խաւարաշունչ. կամ զխաւար փչօղ. որով լինի խաւարեցուցիչն. կամ խաւարամած առնօղն զոք մարմնաւորապէս, կմ. հոգեւորապէս։ Նարէկ. զդ։

Խաւարամած. ի. իւ. ից. իւք։ || Խաւարապատեցեալ խաւարով. կմ. յոյժ խաւարային։

Խաւարամտիլոյ. ի. իւ. ից. իւք ‖ Խաւարամտութեամբ մոլորեալ. կամ ապաշնորհեալ։ Իսկ մինչ ասէ՝ խաւարամտելոյ չարաչարդեան. խնդրի՝ տղային այն՝ որ կամ խաւարեալ են մտօք. չինելոյն մոլորութեան լինել։ ՚Ի չորս հարց. ժէ։

Խաւարապատեան. պատեան. ոց. ովք։ ‖ Խաւարապատ. կամ խաւարապատեալ. կամ խաւարով պատեալ։

Խաւարանամ. ցայ. ցեր. անալ։ (չէզ.) ‖ խաւարաւ պատել. կամ մթանալ. կամ նսեմանալ։

Խաւարասէր. սիրի. աւ. աց. օք։ ‖ սիրող խաւարի, կամ գիշերոյ, և կամ խաւարային տեղեաց. և կամ սիրող մեղաց, կամ մոլորութեան, որք կոչին խաւար։ Նարեկ. կժ. և ղա։

Խաւարասնունդ։ (Նախդրիւ հոլովի.) ‖ սնեալ ՚ի խաւարին տեղւոջ, կամ սնանող ՚ի խաւարի մեղաց, և մոլորութեան։ Նարեկ. իէ. և ղթ։

Խաւարասոյզ. սուզի. իւ. ից. իւք։ ‖ սուզեալ և ընկղմեալ ՚ի խորս խաւարի։ Իսկ մինչ ասէ՝ խաւարասոյզ խորք, խնդրի՝ յանդունդս խաւարի սուզեալ և ընկղմեալ խորք, որով նշանակի տառապանք մթին և խաւարայինն։ ՚Ի չորս հարց. ը։

Խաւարասովոր. ի. իւ. ից. իւք։ ‖ այն՝ որ սովոր է գործել ՚ի խաւարի. կամ որ սովորեալ է ընդ խաւար գնալ։ Աճառ։

Խաւարատեսակ. ի. աւ. աց. օք։ ‖ խաւարանման. կամ խաւարատեսիլ. կամ խաւարային և մթային. կամ յոյժ սևագոյն։

Խաւարարգել. ի. իւ. ից. իւք ‖ ՚ի խաւարի արգելեալ և պահեալ. որպիսի են փորձեալ մահն, և այլք նմանք։ Նարեկ. կը։

Խաւարաքող. ի. իւ. ից. իւք։ ‖ խաւարաքողարկեալ. այսինքն չլուսաւորեալ և ծածկեցեալ։

Խաւարեցուցանեմ. եցուցի. ցո. ել։ (ներգոր.) ‖ մթացուցանել. կամ նսեմացուցանել. և կամ խաւարային առնել։

Խաւարիմ. եցայ. եայ. իլ։ (Կրաւորակ.) ‖ խաւարանալ. կամ խաւարամած լինել. կամ մթանալ. կամ պակասիլ ՚ի հոգւոյն կամ ՚ի մաքրութենէ լուսոյ։ Աճառ. Յ. 9։ Ղուկ. 23. 44։ Հռով. 1. 21։

Խաւարին։ (Նախդրիւ հոլովի.) ‖ խաւարային. կամ մթային։ Ծննդ. 15. 12։ և Յոբ. 10. 21։

Խաւարուտ։ Յ այս մերթ ՚ի գործ ածի իբրև ընդունակ տեղական, ընդ նախդրիւս այս, է, այսպէս. ՚ի խաւարուտ, և նշանակէ, ՚ի խաւարային տեղւոջ է. կամ ՚ի խաւարի։ Իսկ մերթ վարի իբրև գոյական անուանեալ. այսպէս. ՚ի խաւարուտ վայրի. և նշանակէ զխաւարուտն, կամ զխաւարային տեղին։ Յոբ. 1. հարց ԺԷ։ ըստ այսմ է և բանն, ՚ի Հերակլէա, զոր ասացեալ ՚ի յատուկն իւրում։

Խաւարուտ։ (Նախդրիւ հոլովին) ‖ խաւարային վայր. կամ խաւարային տեղի։ 1. Եզր. 4. 24։

Խաւարչտան. չտի. իւ. ից. իւք ‖ խաւարային. կամ մթին. կամ նսեմական։ Նարեկ. ղդ։

Խաւարչտական. ի. աւ. աց. օք ‖ խաւարային կամ մթային։ Աճառ։

Խաւարչտին։ (Նախդրիւ հոլովի.) ‖ խաւարչտային. կամ խաւարային. կամ մթային։ 2. Պետ. 1. 19. և Լամբրոն։

Խաւարտ. ի. իւ. ից. իւք ‖ է հասարակ անուն ամ բանջարեղինաց, կամ խոտեղինաց. զոր խարշելով, կամ առանց խարշելոյ ուտեն մարդիկ, որպիսի է ազատնաստիթն, և կամ այլք որք ասին կոչին, ձերեկին, ձողաճեան, և այլք նմանք։ Ասին՝ դաղանջ կամ դանդալումբ։ Խորէն. Ա. գլ. 29։ Ըստ այսմ խնդրի և այն, որ ասի ՚ի չորս հարց. իէ. որ խաւարտս. կամ մի թերթ խաւարտ է տերև, կամ մի մեծ տերև անուանեալ բանջարոյ ընդ ուղի։

Խաւէղ. Հղի. իւ. աց. օք ‖ գրաւոր. կամ դարաւատան. կամ բաղրաւատան։

Խափ. ի. իւ. ից. իւք ‖ խափան, կամ որգել։ Եւ ՚ի սմանէ եղանէ բայն խափանել. յորմէ ծագի խափանեցանելն։

Խափան։ (Նախդրիւ հոլովի.) ‖ արգելք, կամ խափանմունք։ 1. Մակ. 1. 38։ Եբր. 13. 4։ և 1. Պետր. 3. 7։ Եւ մերթ խափանումն. կամ արգելումն. և ըստ այսմ ասի խափան առնել ումեք։ Իսկ մերթ՝ խափանել. կամ արգելել։

Խափանեալ. եալ. ոյ. ոց. ովք ‖ մերթ նշանակէ զխափանեցեալն։ Իսկ մերթ զխափանումն, որ է արգելումն, կամ դադարումն ՚ի գործոց. կամ ՚ի շահու, և յայլոց նմանեաց։ Աստի Եսայ. 21. 19. ասի ասէ, Զխափանածոյ նորա և զզարշութիւնս սատանայի. խնդրի՝ զխափանմանն նորա. այս է, զզօրութիւն՝ զոր ՚ի գործոյ խափանելով հարկանեցեալն կրեաց՝ մերժեացէ։ Ըստ այսմ և 1. Մակ. 15. 31. նշանակէ զխափանումն հարկաց։

Խափանածոյ. ոյի. իւ. ից. իւք ‖ նոյն է ինչ վերինոյն։ Յոբ. 1. հարց. Ժ։

Խափանեմ. եցի. եալ. ել։ (Ներգործ.) ‖ արգելուլ, կամ դադարեցուցանել զոք ՚ի գործոյ. կամ զգործ ինչ լռեցուցանել. կամ ոչ թողուլ առնել։ Թուոց. 30. 13։

Խափշիկ. շկի. աւ. աց. օք ‖ հապշիկ. այս հապեշտանացի, որով իմանին եթովպացիքն, այսինքն հնդիկքն. որք ասին. սևամորթ կոչին։ ՚Ի չորս հարց. ԺԷ։

Խափուցանեմ. ուցի. փա. ել։ (Ներգործ.) ‖ խափանել. կամ արգելուլ. և կամ դադարեցուցանել ՚ի գործոյ, և յայլոց նմանեաց։ Նարեկ. կէ։ Եւ առաւել վանկս ոչ գտանի ՚ի զարդ. այլ և փոխանակ առնելոյ ազատել, առէ ազատեցուցանել։

Խ Բ

Խբնդրեայ. դէի. իւ. ից. իւք ‖ սուսփ, կամ սկսոյ նման անօթ. որ ունի բեր խուփ, և խփի։ 1. Եզր. 2. 13։

Խ Ե

Խեթեմ. կմ խեթեւամ. եցայ. ացիր. կմ ա. ալ: (ընդ.մէջ.) || զխեթ առնել. կմ խոժռիլ ընդ ումեք. կմ միրտուորիլ որ. ուրէ յումեքէ: Բայց 'ի Նորէն. իգ. ուր ասի՝ եթէ յապաւէնն տապաստանեցայց, յորմէ խեթեացայ. իմանի, յորմէ խեթիւէ, կամ խոռովելով հրաժարեցայ. կմ 'ի բաց հեռացայ: Մերթ ևս նշանակէ ոխալ. կմ մախալ. և կմ նախանձիլ. 'ի Հզր. հարց. ժա: Իսկ երբեմն նշանակէ կասկածիլ. կամ զանգիտել. և ըստ այսմ գրի ևս խիթալ, որք ելանեն 'ի խեթ բառէն, որ առեալ 'ի յառողջ 'ի տեղւոջ խորում:

Խեթկեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || եղջերօք հարկանել. կմ եղջերօք խթել և մերժել. ոչ առնէ խոյն, կմ ցուլն. և այլք նմանիք: Եւ այս մերթ նմանութիւ ասի զմարդկանց, որք հարկանեն, կմ նեղեն, և չարչարեն զմնացեալսն, կմ զթշնամիս. և այլն: 2. Օրին. 33. 17: և 3. Թագ. 22. 11: և Եզեկ. 34. 21:

Խեթկիչ. կչի. աւ. աց. օք: || խեթկող: Եւ այս մերթ ասի զանասնոց, որք եղջերօք հարկանեն. խթեն, և մերժեն զհրեսս: Իսկ մերթ ասի զեղջերաց նց. որք գործիք լինին խեթկելոյ: Նորէն. զէ. և ղդէ:

Խելաբերեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || զխելս. և զուշս 'ի վր իւր բերելով զգաստացուցանել զինքն. կմ զխելս, և զուշս այլոց 'ի վր նր բերելով զգաստացուցանել զնա: 'ի Հզր հարց. ժդ:

Խելագար. ի. աւ. աց. օք: || խելացնոր. կմ որոյ խելքն է խանգարեցեալ. կմ յիմար, և անմիտ: ռամկօրէն խենթ. կամ խեւ: Նարէկ. իը. և կզ:

Խելագարանք. անաց. օք. (անեզական.) || խելագարութիւն. կամ խելացնորութիւն. և կմ յիմարութիւն: Խորէնա. ը. որ. 58:

Խելագարիմ. եցայ. եաց. իլ: (Ձայնակր.) || խելացնորիլ. կմ անմտանալ. կամ յիմարիլ: ռամկ. խենթիլ. կամ խեւնալ:

Խելագարութիւն. թեան: || խելացնորութիւն. կամ խանգարումն, և աւերումն խելաց. կամ յիմարութիւն. և կամ անմտութիւն: Նարէկ. խը:

Խելաժէտ. ժէտի. իւ. ից. իւք: կամ աց. օք: || պակասեալ 'ի խելաց. կամ խելագար. կամ յիմարեալ միտք. կամ զխանգարումն խելաց ունող:

Խելամուտ. մտի. աւ. աց. օք: || վերահասու. կամ խելահաս. կամ բարւոք հասկացող. և գիտող. և կամ քաջ իմացող. և 'ի միտ առող զհանգամանս, կամ զպարագայս իրին. կմ հմուտ, և տեղեակ. կմ իմաստուն, և հանճարեղ. և կմ սրամիտ: Եւ տասցէ խելամուտ, զի որ հասու լինի, և տեղեակ, խելօք և միօք 'ի խորս գիտելի իրին մտանէ: Իմաստ. 1. 4: Բայց սա բազում անգամ ընդ բայի շարակցի այսպէս, խելամուտ առնել. զի խելահաս առնել. կամ հասկացուցանել. և այլն: Առակ. 4. 11: և 2. Օրին. 4. 9: Եւ կմ այսպէս. խելամուտ լինել: Տօբ. 5. 7: և Յոբ. 23. 5: և Ղուկ. 2. 19:

Խելամտանեմ. եցի. եա. ել: (չէզոք.) || խելօք, և հանճարեղութեամբ վերահասու լինել իրի իմիք, կմ հնարել զիր ինչ: Ե. ւնթ. 35. 33:

Խելամտեցուցանեմ. ցուցի. եցի. ել: (անցող.) || խելամուտ առնել. զի 'ի խելս. և 'ի միտս ուրուք մուծանել զգործ իմացական, կամ զինչ իր ինչ. կամ խելահաս առնել. կմ հասկացուցանել. կմ տեղեկացուցանել. և կամ հաւանեցուցանել: Պորփ. 9. 22:

Խելամտութիւն. թեան: || հասկացողութիւն. կմ իմացողութիւն. կմ հասողութիւն մտաց. կմ հանճարեղութիւն. կմ սրամտութիւն. կմ հմտութիւն. և տեղեկութիւն: Առակ. 27. 23: Իմաստ. 7. 16: Եւ մինչ ասի, ամբ խելամտութիւն ազգաց. իմանի. ամբ խելահասութիւն. կմ բանականութիւն:

Խելայեղ. ի. իւ. ից. իւք: || խելափոխ. կմ փոփոխեալմիտ. կմ այնպիսի թեթևամիտ, որոյ միտքն ոչ մնան հաստատ 'ի վր իրի իմիք. այլ՝ տեղւոյ տեղւոյ յեղյեղի, և փոփոխի. կմ յիմար. և կմ խելագար: Նարէկ. կա:

Խելապատակ. ի. աւ. աց. օք: || խելաց տուն. զի անօթ ուղղոյն, որ իբրև զփոքրիկ ունկանակ 'ի ծոցաւէտրութեն իւրում գոտեղեալ պատէ զխելս. զի զուղեղն: Իսկ մերթ առեալ լինի վն բոլոր գլխոյն, յորում են ուղեղք: Եւ մերթ վասն բոլոր ուղղոյ գլխոյն, որք գործիք միտոց լինելով, իբրթէ պարունակեն զխելս. զի ըղ միտս: Նարէկ. 'ի մեկն. եւգոց:

Խելառ. ի. իւ. ից. իւք: || ուշաթափ. կմ խելացնոր. կմ խելագար. և կամ յիմար. ռամկ. խեւ. կմ խենթ:

Խելացնոր. ի. իւ. ից. իւք: || ցնորեալ խելօք, կամ միօք. կմ ուշաթափ. և կամ խելագար:

Խելացնորիմ. եցայ. եաց. իլ: (Ձայնակր.) || ուշաթափիլ. կամ խելագարիլ. կամ խելաժէտ լինիլ: Իսկ մերթ ուշագնաց լինիլ. ոչ հանդիպել թալկացողաց, և այլոց նմանեաց: 'ի Հզր հարց. ժէ:

Խելք. լաց. օք: (անեզական.) || միտք. կմ ուշ. և ըստ այսմ իմանի. 2. Մակ. 13. 3. ուր ասի՝ 'ի խելս կերպարանեալս. զի 'ի միտս կեղծաւորեալս: Իսկ մերթ նշանակէ հանճար. կմ հնարք. կամ խորագիտութիւն. և կամ խորամանկութիւն: 2. Մակ. 13. 18: 2. Կորնթ. 12. 16: Ըստ այսմ է և 3. Մակ. 4. 15. ուր ասի՝ իբրև զայն ինչ խելս մեքենայից խառնել. զի խորամանկութեամբ հնարից: Մերթ ևս նշանակէ զուղեղն գլխոյ կենդանեաց: Առգաբ: Եւ ըստ այսմ ելանէ 'ի սմանէ խելապատակն, և այլ բազում բարդութիւնք, որք եղան 'ի վերոյ: Իսկ մերթ նշանակէ զյետին կողմն նաւին, ուր ղեկն է, և նաւավարն նստի. ռամկ.

թէւ։ Մարկ. 4. 38։ Մերթ և ս գլուխք կամրջաց, և այլոց նմանեաց, խելք կոչին։ Ագաթ. Իսկ երբեմն նշանակէ զնաւաւորաց նաւակաց, կմ որբունակաւն նաւուց, որք են ըէթփիէլէ. ուր նստեալ քարշեն զթի։ և կամ զայնս գոտխ նաւուն, որք յաջմէ, և յահեկէ 'ի ներքոյ շրթանց նաւին՝ ընդ տախտակամած յատակաւն զկողիւք նորա սեռին, յորս կարեն կապել չուանք. կմ պարանք։ 3. Մակ. 4. 8։ և Նաւէլ. իէ։

Խեղ. ի. իւ. ից. իւք։ || արատաւոր անդամք. որով իմանի այն՝ որոյ մի անդամն պակասեալ է. կմ հատեալ. և կամ թիւրեալ. և խանգարեալ. որպիսի է միականին. կմ ականջատն. կմ պնչատն. կմ միաձեռանին. և այլք նմանք։ 2. Մակ. 8. 24։ Մարկ. 9. 42։ և Ղուկ. 14. 13։ Եւ 'ի սմանէ եւ լանէ խեղաթիւրն. և խեղկատակն։

Խեղաբարոյութիւն. թեան։ || խեղաթիւրութիւն. կամ թիւրութիւն բարուց։

Խեղաթիւր. ի. իւ. ից. իւք։ || խեղ և թիւր. կմ ծուռ և թիւր։ Եւ այս մերթ առի ըղ պէյտէ, որ է ծռամամոռ։ Իմաստ. 13. 13։ Իսկ մերթ զմարդոյ, որով երբեմն նշանակի զխեղ և զթիւր, կմ զայլանդակ անդամս ունօղն. տ ցուցանքաւորն։ Իսկ երբեմն անուղղայն. կամ անզգամն. կմ հեստօղն 'ի բանէ, և 'ի կանոնէ. կմ խոտորապարանոցն։ Փիլիպ. 2. 15։

Խեղաթիւրութիւն. թեան։ || խեղութիւն և թիւրութիւն. կմ ծռութիւն և թիւրութիւն։ Եւ մերթ խեռաբարոյութիւն. և կմ կամակորութիւն։

Խեղախեռ. ի. իւ. ից. իւք։ || խեռաբարոյ. կմ խստերախ. կմ ամեհի. կմ խստապարանոց. և կմ ստահակ։ Ոսկէ. 1. հատ. լը։

Խեղդ. ի. իւ. ից. իւք։ || է արմատ խեղդել բային. և նշանակէ զխեղդումն. կամ ըղ հեղձուցումն։ Լամբրոն։ Իսկ մերթ նշանակէ զաւիշատն, որ 'ի պարանոցս անբանից անկեալ խեղդէ. կամ զխեղդիչ չուանն, զոր 'ի պարանոցն ուրուք արկեալ խեղդեն քարշելով. կմ կախելով։ ռամկ. իշխէ. 2. Թագ. 17. 23։ Առակ. 22. 25։ Իսկ մերթ նմանութեամբ առեալ նշանակէ զստանուկ ստիպումն, որով ոք 'ի նեղն լծի. և իբրութե խեղդի։ 1. Կորն. 7. 35։ Ըստ այսմ երբեմն խեղդ կոչին պատրողական բանքն, որով ոք իբր խեղդիւք ածի 'ի կորուստ։ Առակ. 7. 21։

Խեղդամահ. ի. իւ. ից. իւք։ || խեղդեցմամբ մեռեալ. կմ մահացեալ։ Իսկ մերթ ընդ բայի շարակցի այսպէս՝ խեղդամահ առնել. և նշանակէ՝ խեղդելով մահացուցանել. կմ սպանանել։ Խորէն. գ. ղբ. 14։

Խեղդեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) || հեղձուցանել. կմ խեղդամահ առնել։ և այս մերթ լինի ընկղմելով 'ի ջուրս։ մերթ արգելլով 'ի նեղ տեղւոջ։ և մերթ խեղդ արկանելով 'ի պարանոցն, և կախելով զոք. և կամ զինքն, որպէս յուդա իսկարիովտացի. ըստ այսմ իմա և զայլոց նմանեաց։ Մատթ. 27. 5։ Իսկ մերթ նմանութեամբ առեալ նշանակէ՝ ստատիկ ստիպել. կմ 'ի նեղն ածել զոք, որով իբրութէ խեղդէ։ Մատթ. 18. 28։

Խեղեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) || պակասեցուցանել զոք յանդամոց իւրոց. որգոն, ձեռն, կամ ոտն առնել. և կմ բեկանել, և խանգարել զանդամս ուրուք։ Ղեւ. 24. 19։

Խեղկատակ. ի. աւ. աց. օք։ || զանդամս իւր խեղաթիւրելով, կամ զաղտեղի և պիղծ բանս արտաբերելով՝ կատակօղ. տ զծաղրաբանութիւն առնօղ, և 'ի ծիծաղ շարժօղ։ Յս. որդի։

Խեղկատակեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) || խեղաթիւրելով զանդամս մարմնոյն, և զաղտեղի, կմ զանհամեստ բանս բարբառելով կատակել. տ ծաղրաբանութիւն առնել, և ծիծաղեցուցանել։ Լամբրոն։

Խեղկատակութիւն. թեան։ || կատակերգութիւն. տ անհամեստ արարողութիւն, և աղտեղի բանիւք կատակումն. կամ ծաղրաբանութիւն, և 'ի ծիծաղ շարժումն։ Եփես. 5. 4։ Կողոս. 3. 8։

Խեղութիւն. թեան։ || արատաւորութիւն. կմ պակասութիւն անդամոց. որպիսի է միաձեռնութիւն. կամ պնչատութիւն. կմ ոտնատութիւն. և այլք նմանք։ Ղեւ. 22. 25։ և 24. 20։

Խենեշաբար։ (մակբայ որակական.) || անպարկեշտաբար. կմ անհամեստօրէն։

Խենեշանամ. ացայ. ացիր. նալ։ (չէզոք.) || անպարկեշտանալ. կմ անհամեստանալ. կամ անառակել. և կմ ցոփանալ 'ի զարդս. կամ 'ի կենցաղավարութիւն. կմ զեղխել 'ի կերակուրս. կմ լուծանել 'ի հեշտութիւն, և 'ի փափկութիւն մարմնոյ. կամ թուլամորթիլ։ Նաւէլ. կթ։ և Յս. որդի։

Խենեշացուցանեմ. ցուցի. ացո. ել։ (անցող.) || անհամեստացուցանել. կմ խենեշ առնել զոք 'ի զարդս. 'ի կերակուրս. և յայլս հեշտութիւնս մարմնոյ։

Խենեշութիւն. թեան։ || անպարկեշտութիւն. կամ փափկասիրութիւն. կամ զեղխութիւն. կմ ցոփութիւն. և կամ թուլամորթութիւն. որով մերթ իմանի մեղկութիւն 'ի հեշտութիւնս մարմնոյ. և մերթ վատասրտութիւն. կմ անարիութիւն. և կամ կանացութիւն։ Նաւէլ. ղե։

Խենեշ. եշի. իւ. ից. իւք։ || աղտեղասէր. կամ անառակ. կամ հեշտասէր. կմ ցոփ. կմ զեղխ. կմ մեղկեալ 'ի հեշտութիւն զարդարանաց. կմ կերակրոց. կմ փափկութե մարմնոյ։ և կմ թուլամորթ. տ անարի, և վատասիրտ. կմ զկանացի սիրտ ունօղ։

Խեչակ. ի. աւ. աց. օք։ || տես զԽեչակ։

Խեռ. ի. իւ. ից. իւք։ || ապստամբ. կմ գիմադարձ. կամ ստահակ. կամ անհնազանդ. կամ կամակոր. և կամ անզգուսպ։ 2. Օրինաց. 21. 20։ Իսկ յորժամ է արմատ խեռալ բային, նշանակէ զխեռացումն. տ զքինալն. կմ զմախանս.

կամ զզուելութիւն. և կամ զնախանձն։

Խեռաբարոյ. ոյի. իւ. եօ. իւք։ || զխեռ բարս ունօղ. կմ դժնեայ. կմ սատամբակող. կամ խստաբարոյ. կմ դդժնդակութե սիրօղ։ Եւ սա մերթ առի զերկմտրաց. և նշանակէ՝ կատաղի, կամ ամեհի. կամ անզուսպ. և կամ խստերախ։ Ոսկէ. 1. հռ. իե։

Խեռամ. ացի. ա. ալ։ (չէզոք.) || հեռալ. որ քինալ. կամ մախալ. կմ նախանձել. կամ ոխալ. և կմ զչարել. որ՚ ի նախանձու, կամ ՚ի վրէժխնդրութէ շարժեալ դժուարել. կամ զայրանալ։ ՚ի ճառս հաւր. ժե։

Խեռանամ. ացայ. ացեր. նալ։ (ընդմիջ.) || առ՚ս զխեռել։

Խեռիմ. եցայ. եայ. իլ։ (ձայնակրաւ.) || խեռ, կամ անհաւան լինել. կմ ապստամբել. կամ հակառակել. կամ ստահակել. կմ դիմադարձել։ 3. Մաղ. 2. 14։ և Խորէն. գ. գլ. 26։

Խեռութիւն. թեան։ || ընդդիմութի. կամ կամակորութի. կամ դիմադարձութի. կմ ստահակութի. կամ անհաւանութի։ 2. Օրէն. 9. 7։

Խերբեկէշ. ի. իւ. եօ. իւք։ || լամայ. կմ բնիան, որ է չորրորդ մասն միոյ փողոյ. որ տառկի. ռամկ. ձաւոլը. կմ կռաիրաղ։ Լամբրոն։ Ոսկէ. 2. հռոմ. լդ։

Խեց. ի. իւ. եօ. իւք։ || կարծրանիւթ թուղն կրիայի. որ կարծր կեղեւն, յորում զետեղի մարմինն կրիայի։ ՚ի ճառս հաւր. է։

Խեցագործ. ի. աւ. աց. օք։ || զխեցեղէն առնօղ գործօղ, զոր և կոչեմք բրուտ։ ռամկ. չէօմլէքճի։ Եւ կամ կաւագործ, որ գործէ ՚ի կաւոյ զկղմինտր, կմ զաղիւս, և թրծէ ՚ի հնոցի։ ռամկ. քէրէմիթճի։ Կիւրղ. եղէմ. ժդ։

Խեցակարկառ. ի. իւ. եօ. իւք։ կամ աց. օք։ || կարկառ՝ և կոյտ խեցեաց։ Իսկ մերթ նշանակէ՝ ՚ի խեցեաց, որ ՚ի թրծեալ աղիւսոց շինեալ բարդեցեալն, և բարձրացեալն. որպիսիք էր աշտարակն բաբելոնի։ Աճգոռ։

Խեցակոյտ. կուտի. իւ. եօ. իւք։ || նոյն է ը վերնոյն։

Խեցբեկ. ի. աւ. աց. օք։ || խոշոր. կամ թանձր. կմ բիրտ. և կմ թոթով. և թըլաւատ. որ զբառն բեկբեկէ. և թերատ առտաբերէ։

Խեցբեկագոյն. գունի. իւ. եօ. իւք։ || խոշորագոյն. կմ թանձրագոյն. կմ բրտագոյն. որ ոչ կարէ ճկել, կամ հակել։ Եւ այս մերթ առի զխժդժագոյն, և զբրտագոյն ազգաց. և կամ զբիրտ բարուց նց։ Աճգոռ։ Իսկ մերթ զբիրտ, և զխանգարեալ լեզուէ, կամ բարբառոյ՝ որ թաւ հնչէ. և զբառն ՚ի մէջ ատամանց, կամ բերանոյ բեկբեկէ։ Խորէն. գ. գլ. 54։ Եւ ը այսմ կոչի և այսպիսի լեզուս խեցբեկոր բարբառ։

Խեցբեկոր. ի. իւ. եօ. իւք։ || նոյն է ընդ վերնոյն։

Խեցգետին. տնոյ. ով. ոց. ովք։ կամ տնի. իւ. եօ. իւք։ || խաչափառ. որ է ճանկաւոր, կամ մկրատաւոր խեցեմորթ կենդանի ծովու. կամ գետոյ։ ռամկ. ընգանխօս։ Դարձեալ՝ բառս խեցգետին է անուն միոյ ՚ի կենդանակերպիցն. ՚ի յոր մտանէ արեգակն ըստ յատուկ ընթացից իւրոց ՚ի քըսան և երկուերորդում ամսոյ յունիսի. և տեւէ մինչև ՚ի քսան և երկուերորդ օրն յուլիսի։

Խեցեղէն. ղինի. աւ. աց. օք։ || այն՝ որ է կազմեցեալ ՚ի խեցւոյ. որ ՚ի կաւեղէն նիւթոյ թրծեցելոյ. որպիսիք են ՚ի կաւոյ կազմեալ փարչքն. պայտքն. սափորքն. սկաւառակքն. և այլք նմանք։ 2. Տիմ. 2. 20։

Խեցեմորթ. ի. աւ. աց. օք։ || կենդանի. կամ զեռուն, որ ունի զմորթ խեցեղէն, կամ կարծրանիւթ իբրև զոսկր, թէ ջրային իցէ, և թէ ցամաքային. թէ շարժուն իցէ. և թէ անշարժ. որպիսիք են կրիայն, ոստրէքն. միդիայն. և այլք նըմանք։

Խեցի. ցւոյ. եաւ. եաց. եօք։ || մերթ նշանակէ զխեցեղէնն. որ զկաւեղէն անօթն թրծեալ հրով։ Սաղմ. 21. 16։ Աղաւթ. 26. 23։ Եւ կամ զկղմինտր, և զաղիւսն հրով թրծեալ։ Աճգոռ։ Իսկ մերթ նշանակէ զբեկտորս խեցեղինաց. որ զկոտորս սափորոց. կամ պնակի. և այլոց նմանեաց։ Յոբ. 2. 8։ Մերթ ևս նշանակէ զխեցեղէն նիւթն, որ զթրծեալ կաւն. և ըստ այսմ առի Դանի. 2. 33. Եւ ոտքն կէս յերկաթոյ, և կէս ՚ի խեցւոյ։ Երբեմն ևս այսու բառիւ խեցի, նշանակին խեցեմորթքն. որպիսիք են ոստրէք. կմ աշխլատեղք՝ և այլք նմանք։ Իսկ մերթ կարծր կեղեւանք այսպիսեաց խեցեմորթից։ Երբեմն ևս է մասնաւոր անուն խեցեմորթ գազանի միոյ գետայնոյ. կամ ծովայնոյ. որ և կոչի. խայթ։ ՚ի ճառս հաւր. ժե։

Խ Զ

Խզեմ. եցի. եա. ել։ (ներգործ.) || կըտրել. կամ հատանել. կամ պատառել. կամ պատառոտել. և կմ խզզատել։ ռամկ. խոփէլ. կամ կօբէլ։ Սաղմ. 2. 3։ Եզեկ. 23. 34։ Եսայ. 33. 20։ Եւ մերթ խուզել. կամ փետել զհեր։ Երեմ. 16. 6։

Խզումն. զման. մամբ. մանց. մամբք։ || կըտրումն. կամ հատանումն. կմ պատառումն. կամ պատառոտումն. և կամ խզզատումն։ Իսկ մերթ խուզումն. կամ փետումն հերաց։ Միք. 1. 16։

Խզզատեմ. եցի. եա. ել։ (ներգործ.) || ծուէնատել. կամ պատառոտել զհանդերձս սղոցով. կամ սրով, և կամ ատամամբ։

Խ Է

Խէթ. խեթի. կամ խիթի. իւ. եօ. իւք. կամ խիթոյ. ով. ոց. ովք։ || է սրտմտութիւն, ոխ և խիթն. և խութն. և խթել բային. որ նշանակէ խթիչ. կմ խութ. որ խայծ. կմ արգելք. և կամ ոտնառու. և ըստ այսմ

առի

տան՝ խէթ և խռովութիւն ընդ ումեք անկանիլ. իբր խոչ և արգելք ։ Աւգոստ.։ ըստ այսմ է և 'ի Նարեկ. կզ. և հէ. ուր տես. Զխէթս 'ի բաց ընկենուլ. կմ բարձեալ խէթ. իբր արգելք. կմ խոչ։ Սոյնպէս և նա, որ իբրև զխեթան, և զփուշ եղեալ ումեք՝ խայթէ, և չարչարէ զնա, խէթ կոչի ։ Խորէն. ա. պր. 23։ Իսկ մերթ նշանակէ զխայթումն սրտի. կմ խղճի մտաց. և նմանեաց ։ Նարեկ. իզ. խէ. և կղ։ Մերթ ևս նշանակէ զխիթն. իբր զցաւն որովայնի. աղեաց. սրտի. կշտի. և այլն. որք խթելով ցաւեցուցանեն ։ տաճկ. խօսպով ։ 2. Օրէն. 28. 22։ Նարեկ. զ։ Յայտնանէ առեալ երբեմն նշանակէ զմ և խցէ ցաւս. կմ վիշտս. կմ զազէտս. և այլն ։ Նարեկ. իզ ։ Իսկ մերթ նշանակէ զախ. կամ զառակլութին. և կմ զխառվութին, զոր ունի ոք ընդ ումեք. կամ զվիրաւորումն սրտի ։ տաճկ. խաթըր ճաղ ։ Մատթ. 5. 23։ Մերթ ևս նշանակէ կասկածանք. կմ սաստիկ երկիւղ զապագայ չարեն, որով բառնի հանգստութին ։ Նարեկ. հա ։ Խորէն. բ. պր. 35 ։ և ա. պր. 25։ Իսկ երբեմն նշանակէ նենգութին. կմ դաւաճանութին. որք լինին մարդոյ իբրև թակարդ ոտից ։ Նարեկ. ղե ։ Իսկ մինչ տան՝ խէթ իւէ հայիլ. կմ խէթիւէ տեսանել. նշանակէ՝ դժնեայ աչօք. կամ խառադոյն ակամբ նայիլ. այլ աչանեն նախանձոտք. կմ բարկացօղք ։ տաճկ. խուլար աչօք նայիլ։ Խորէն. գ. պր. 43։ Նարեկ. իէ ։ ըստ այսմ իմանի և Երգոց. 1. 5. ուր տես, խէթիւէ հայեցաւ յիս արեգակն. իբր խոլոր աչօք. որով նշանակի տապով իւրով կիզելն, և սեացուցանելն ։

Խեժ. խեժի. իւէ. եց. իւք ։ || տե'ս զԽիժ ։

Խեչ. խեչի. իւէ. եց. իւք ։ || խեչակ. իբր նեցուկ, որ գնի 'ի ներքոյ ոտից. կմ պատղալիր ստուգ ծառոց, զի 'ի վեր կալցին ։ և ըստ այսմ առնուլին ևս կոչի՝ խեչ. ըստ որում է վերուհող ոտից ։ Սոյնպէս և այլք նեցուկք, որք 'ի վեր կալնուն զինչ. խեչք տանն ։ տաճկ. փայան ։ 'ի Հայս հարց. Ժ ։

Խեչակ. ի. աւ. աց. օք. || նոյն է ընդ վերինոյն ։

Խեչափառ. ի. իւէ. եց. իւք ։ || տե'ս զԽաչափառն ։

Խեծրեւեշ. եշի. իւէ. եց. իւք ։ || տե'ս զԽերեւեշ ։

Խ Ը

Խըլխայթ. ի. իւէ. եց. իւք ։ || տե'ս ըզ Խղխայթ ։

Խ Թ

Խթան. ի. աւէ. աց. օք ։ || գործի խթելոյ զգրաստն. կմ զեզինս, և կմ զայլս կենդանիս՝ առ 'ի արագագնացս ընթանալ ։ տաճկ. մխագ, կամ Յաննաղ. որ է խթան սեաւեցեալ 'ի կրունկս կօշկաց ։ Առակ. 26. 3 ։ Գործ. 9. 5։ և Ժողով. 12. 11։ Մերթ ևս առեալ լինի փոխանակ. ի և եղէ գործեաց, որք խթեն. կմ զարթուցանեն. կմ յառաջ շարժեն ։ Նարեկ. ղե ։

Խթեմ. եցի. եա. եւ։ (Ներգործ.) || խթանել ըզք մատամբ. կմ ձեռօք, և կմ խթանաւ առ 'ի առնել զգործ ինչ. կմ առ 'ի զարթուցանել. և այլն ։ տաճկ. Տըրթէլ. կամ Տըրթէլ։ 3. Մակ. 5. 8։ Գործ. 12. 7։

Խ Ժ

Խժդժաբար ։ (մակբայ որակական.) || իբրև զխուժադուժ ոք. կամ բարբարոսաբար. կմ կամակորութբ. կմ անգթաբար. և կմ դժնէաբար ։ 2. Մակ. 15. 2։

Խժական. ի. աւ. աց. օք ։ || խուժադուժ. կամ բարբարոսական. կմ ըիրտ. կմ վայրենի. կմ վայրագ. կմ դժնդակ. և կմ ժըպիրհ ։ Եւ այս տես զմարդոյ. կմ զկեղուէ. և զայլոց բաղմաց ։ Խորէն. ա. պր. 5։ և բ. պր. 60։ և գ. պր. 54։

Խժդժագոյն. գունի. իւէ. եց. իւք ։ || սաստիկ խուժադուժ. կմ բարբարոս. և կմ առաւել անագորոյն. կմ անողորմ. կմ դժնէագոյն ։ 2. Մակ. 5. 22 ։

Խ Ի

Խիզախեմ. եցի. եա. եւ ։ (չէզոք.) || խըրոխտալ. կմ գոռոզութբ անհացուցանել։ Իսկ մերթ նշանակէ՝ խրախոյս բառնալ. կամ բարձրաձայն բարբառով քաջալերել. կամ մեծաւ վստահութբ, և դոչմամբ 'ի վր յարձակիլ։ Իսկ մերթ վստահանալ. կամ համարձակիլ. կմ յանդգնիլ։ Նարեկ. կը ։ և ղթ ։

Խիզախութին. թեան ։ || խրոխտացումն. կմ գոռոզանալով, և անհացուցանելով 'ի վր յարձակումն. կամ խրախոյս. կմ վստահութին. և կամ համարձակութբ գիմումն առ ոք ։ 'ի Հայս հարց. Է ։

Խիզար. ի. աւ. աց. օք ։ կամ իւէ. իւք ։ || սղոց. որ է աստամնաւոր գործիք առ 'ի հատանել զփայտ ։ տաճկ. խըզար ։

Խիթ. խիթի. իւէ. եց. իւք ։ կամ աց. օք ։ || է արմատ խթել բային. այլ և խէթն. և նըշանակէ զերկուսն, կամ զցաւ որովայնի, աղեաց, սրտի, կշտի, և այլոց նմանեաց ։ Եւ առաջաւ՝ խիթ, իբրթէ խթումն. կմ խթիչ. զի խթելով և խայթելով ցաւեցուցանէ ։ տաճկ. խօսպով ։ 2. Մակ. 9. 5։ և Նարեկ. իզ ։ Մերթ ևս նշանակէ զկասկածանս, կամ զերկիւղ ապագայ չարեն. և ըստ այսմ է արմատ խիթալ բային ։ Իսկ երբեմն խիթ կոչի՝ մարդակեր գազան մի դժնեայ. որ լինի 'ի մեծամեծ գետս. կմ հեղեղատս կողմանցն եգիպտացւոց, որ երբեմն արտաքս ելեալ՝ յարձակի 'ի վերայ մարդկանց, և գիշատէ ։ 'ի Հայս հարց. ԺԵ. և ԺԷ ։

Խիթամ. ացի. ա. ալ ։ (չէզոք.) || երկնչիլ. կամ կասկածիլ։ Յոբ. 3. 25։ և Նարեկ. ԺԷ ։ Եւ եղանէ սա 'ի խէթ բառէն. ըստ

որում նշանակէ զկասկածն ։ Իսկ մերթ նշանակէ դայթակղիլ. կմ՛ սահիլ ։ Նոյեմբ. է ։ Եւ ըստ այսմ եւս նշանէ 'ի խէթ բառէն. ըստ որում նշանակէ զգայթակղութիւն ոտից. կամ զոտնահարումն ։

Խիթումն. խիթման. մամբ. մանց. մամբք ։ ‖ խայթումն. կամ կրծումն ։ Երբ մերթ կասկածանք. կամ երկիւղ. կամ սաստիկ հոգ եւ վարանումն մտաց. որ հալէ, եւ մաշէ զմարդն ։ Նոյեմբ. իա. եւ ծգ ։

Խիժ. խժի. ժէ. ից. իւք ։ կամ աց. օք ։ ‖ խէժ. որ է պարարտ եւ կպչուն հիւթ, եւ կաթէ 'ի ծառոց ։ Խորէն. աշխարհագրութիւն ։

Խիլայ. ի. ին. ից. իւք ։ ‖ պարգեւ. որ է փառաւոր կապայ, կմ՛ այլ ինչ նման սմին պարգեւեալ 'ի մեծէ ումեքէ ։

Խիլայեմ. եցի. եա. ել ։ (Ներգործ.) ‖ մեծագին զգեստուք զգեստաւորելով զոք մեծարել. կմ՛ փառաւորել վն մեծի յաղթութեան, կամ վն երեւելի գործոյ իրիք. ոճ առնեն Թագաւորք ։ ռամկօրէն կոչեն հագցնել ։

Խիղք. խղքի. քէ. ից. օք ։ ‖ ճանկ. կմ՛ բուռն ։ Եւ սա ընդ բայի շարակցի այսպէս. խիղքս արկանել. Եւ նշանակէ՝ բուռն հարկանել զինչ եւ պինդ ունել ։ Ոսկէ. 1. հատ. ժ ։

Խիղճ. խղճի. ճէ. ից. իւք ։ ‖ խղճումն. կմ՛ խղճմտութիւն. կամ կասկած խղճի մտաց. կմ՛ խղճահարութիւն ։ Հռոմ. 14. 1 ։ Եւ Նոյեմբ. կէ ։

Խիղճ մտաց. խղճի մտաց. խղճիւ մտաց ։ ‖ բնական ունակութիւն ինչ մտաց, որ ծանուցանէ մարդոյ՝ թէ 'ի յառնելիս՝ որն իցէ բարի. եւ որն չար. եւ կմ՛ զորն պարտ է առնել, եւ յորմէ հրաժարիլ. որ եւ վկայէ ըղ բարւոյ, եւ ստանջէ ընդդէմ չարին ։ 1. Կորն. 8. 7. եւ 10 ։ Եբր. 9. 14 ։ Բայց երբեմն խիղճ մտաց կոչի ներգործութիւն այսպիսւոյ ունակութեան. այն՝ խայթումն խղճի, կմ՛ յանդիմանութիւն սրտին, որով ոք յանդիմանի յինքենէ զինչ գործոյ՝ զոր չարաչար գործեաց. եւ կամ զորմէ կասկածի չարաչար գործեալ ։ 1. Մակ. 4. 45 ։ 2. Մակ. 6. 25 ։ Իմաստ. 17. 10 ։ Հռոմ. 13. 5 ։

Խղճմտութիւն. թեան ։ ‖ տես զԽղճմտանք ։ Լամբրոն ։

Խիճ. խճի. ճէ. ից. իւք ։ ‖ մանր քարինք որք են 'ի մէջ աւազոյ, եւ կմ՛ առ ափին գետոց, եւ ծովու. եւ կմ՛ յայլուր ։ 1. Մակ. 10. 73 ։ Եւ Յոբ. 21. 33 ։

Խիստ. խստի. տէ. ից. կմ՛ աց. օք ։ ‖ պինդ. կամ կարծր ։ Երբ այս մերթ ասի զմարդոյ. եւ նշանակէ խստասիրտ. կմ՛ կամակոր. կմ՛ ապստամբ. կմ՛ անողորմ եւ անգութ. եւ կմ՛ դժնեայ ։ Թուոց. 16. 26 ։ Դատաւ. 3. 32 ։ Եւ Մատթ. 25. 24 ։ Երբ մերթ զգործոց. եւ նշանակէ՝ ծանր. կմ՛ դժուարին, կամ անտանելի ։ Ելից. 6. 9 ։ Եւ Գործ. 9. 5 ։ Իսկ մերթ ասի զբանից. եւ նշանակէ դառն. կամ կսկծեցուցիչ. կամ կշտամբողական. կամ գռոզական. կամ անկարգ. կամ չար ։ Յուդայի. 15 ։ Մերթ եւս ասի ըղ տեղւոյ. եւ նշանակէ՝ ապառաժուտ. կմ՛ քարուտ. եւ կմ՛ դժուարագնացելի ։ Գործ. 27. 29 ։

Խիտ ։ (Նախդրիւ հոլովի.) ‖ հոծ. կամ խուռն. որով իմանի՝ սաստիկ միմեանց կից, կմ՛ հուպն. յորմէ հետեւի թանձրութիւն, կմ՛ թաւութիւն. կամ լիութիւն. եւ ըստ այսմ ասի՝ խիտ հերք. կմ՛ խիտ տերեւովք, կամ ոստովք. եւ այլն ։ ռամկ. սըխ. Եզեկ. 31. 3 ։ Խորէն. բ. գլ. 39 ։

Խիտառխիտ ։ (մակբայ որակական.) ‖ հուպ ընդ հուպ. կմ՛ մերձ ընդ մերձ. որով իմանի՝ կից առկից. կմ՛ սաստիկ միմեանց մերձ ։ 1. Մակ. 12. 28 ։ Իսկ մերթ՝ ստէպ ստէպ. կամ յաճախակի ։ ռամկ. սըխ սըխ ։ Լամբրոն ։

Խիտ ընդ խիտ ։ (մակբայ որակական.) ‖ Նոյն է ընդ վերինոյն ։ 'Ի Ճառս հարց. ժէ ։

Խիրտ ։ (Նախդրիւ հոլովի.) ‖ է արմատ խրտնուլ բային. եւ նշանակէ՝ խրտումն ։ Երբ մերթ դնի վն երկիւղի եւ կասկածանաց ։ Իսկ մինչ ասի, խիրտս խիրտս ընթանալ. կամ խիրտս խիրտս վարդապետել. իմանի՝ խրտնելով. կմ՛ երկնչելով, եւ կասկածելով ։

Խից ։ (Նախդրիւ հոլովի.) ‖ է արմատ խըցեմ բային. եւ նշանակէ՝ խցումն. եւ կամ խցօղ. եւ արգելք. որք արկանին ընդդէմ դրանց առ 'ի խափանել զմուտն. եւ կամ ընդդէմ ջուրց՝ առ 'ի արգելուլ զընթացս նց ։ ուստի մինչ ասի. խիցս արկանել. իմանի՝ արգելս դնելով խնուլ. կմ՛ արգելուլ. եւ խափանել ։ Ղեւտ. 21. 22 ։ Եւ 31. 15 ։ Իսկ մերթ բառս խից՝ է հրամայական խընում բային. եւ նշանակէ խցեա ։

Խիւս. ոյ. ով. ոց. ովք ։ կամ իւ. ից ։ ‖ յունէրէ կազմեցեալ. եւ կմ՛ 'ի խմորեղինաց յօրինեալ փափուկ կերակուր. որով մերթ իմանի խաւիծն կազմեալ իւղով եւ մեղրով. եւ մերթ փոխինդն ։ Իսկ երբեմն կարկանդակ, կմ՛ քաքար. զոր եփեն 'ի տապակի ։ 2. Թագ. 13. 5 ։ Իսկ մերթ նշանակէ զոյն իցէ կերակուր, որով սնանի ոք. եւ ըստ այսմ ասի 'ի գիրս Լամբրոն. Յորժամ չառնուցու խիւս մարմինն՝ մեռանի ։ Իսկ Ովսէ. 8. 7. ուր ասի, որոյ. նց ոչ արասցէ զօրութիւն խիւսոյ. իմանի՝ զզօրութիւն ալեր ։ յորմէ կազմի կերակուր ։

Խ Լ

Խլայ. ի. ին. ից. իւք ։ ‖ վերարկու. եւ կմ՛ ծածկոյթ գլխոց կանանց ։ ռամկ. [illegible] ։ Երգ. 5. 7 ։

Խլանամ. ացայ. ացիր. անալ. (Ընդմիջ.) ‖ խուլ լինել. կամ զլսողութիւն կորուսանել ։ ռամկ. խլնալ ։ Եսայ. 44. 11 ։

Խլեմ. եցի. եա. ել ։ (Ներգործ.) ‖ 'ի բաց հանել զինչ 'ի տեղւոջէն՝ յորում արմատացեալ, կամ հաստատեալ եւ բնաւորեալ է. կամ արմատախիլ առնել. կմ՛ 'ի բաց կորզել. եւ այս յատկապէս ասի զտնկոց ։ Ղուկ. 17. 6 ։ Իսկ երբեմն նմանութեամբ զմարդոյ, կամ զաչաց, յորժամ բրելով հանեն

գնա ։ ըստ այսմ իմա և զայլոց նմանեաց ։ Սաղմ. 43. 3։ Աղաղ. 30. 17։ Իսկ մերթ՝ քակտել. կամ քանդել. և կմ յատակել ։ Ոսկէ. 2. հոմ. ժը ։

Խլխլական. ի. աւ. աց. օք ։ || մերթ նշանակէ խարխուլն, կամ անհաստատն ։ Իսկ մերթ՝ կեղծական. կամ պատրուճակական, և կամ պատճառողական. որպիսի է բանն զոր խօսի ոք՝ զանկարգ գործս իւր. կամ զասացուածս՝ պէսպէս ստայօդ բանիւք այլայլելով, կամ ջատագովելով. և այլն ։

Խլխլեմ. եցի. եալ. ել ։ (Ներգործ.) || զասացեալ. կմ զարարեցեալ անկարգ բան ինչ. կամ գործ՝ մոլորի և ունայն բանիւք, կամ անհաստատ և կեղծական պատճառանօք ծածկել. և թագուցանել, և իբրթէ կարկատել ։ Ոսկ. 10. 13։ և Ոսկէ. 1. հոմ. դ ։

Խլուրդ. խլըդի. ւէ. ւց. ւք ։ կմ խլուրդն. խլըդան. ամբ. անց. ամբք ։ || է կենդանի ինչ նման մկան, որ բնակի ընդ հողով. և վն այսորիկ կոչի պեսնի մուկն. որոյ առաջին ոտքն են կարճք և լայնք իբրև զոտս կրիայի, որով փորէ զհողն, և առնէ իւրեան ճանապարհ ։ որ և ասի կոյր. զի ունի զաչս յոյժ փոքրիկս, և զայն փակեցեալս. բայց յորժամ ելանէ 'ի վն գետնոյ, սակաւ ինչ բացեալք լինին, որովք տեսանէ ։ Ղեւ. 11. 30։

Խլրդենի. ենւոյ. եաւ. եաց. եօք ։ || է ախտ ինչ անբժշկելի իբրև զքաղցկեղ. որ դիպի նայ 'ի մարմնի 'ինչ դարմանելոյն փութով զվէրս՝ զոր ունի ոք, և կամ 'ի յապականութէ արեան. որ և 'ի միոյ տեղւոջէ սողացեալ 'ի միւսն, ապականէ զբոլոր մարմինն ։ Եւ կոչեցաւ սա խլրդենի, զի որպս զխլուրդն ընթանայ և վազէ ընդ մարմինն ։ Մծբն. Ն ։

Խլրտացուցանեմ. կմ խլրտեցուցանեմ. ցուցի. ցի. ցանել ։ (անցողա.) || շարժեցուցանել. կամ դրդուել. և կամ զխլրտումն պատճառել ումեք ։ տես զԽլրտելն ։

Խլրտիմ. կմ խլրդիմ. եցայ. եաց. իլ ։ (Ձայնակր.) || մեղմ շարժմամբ շարժիլ. կամ շարժելով դրդուիլ. և այս ասի զկենդանեաց. յորժամ շարժին 'ի ննջելն. կմ 'ի սկսանիլն 'ի գնալ. և այլն ։ Յոբ. 41. 14. և 16։ Իսկ մերթ զմանկանէ, յորժամ ըղշարժումն ինչ առնէ յորովայնի մօրն ։ Ոսկէ. 1. հոմ. ժա ։ Սոյնպէս և նա՝ որ այնպէս ընդ ծանրութբ իւիք անկեալ կայ, մինչ զի ոչ կարէ կողմանէ 'ի կողմն դառնալ, կամ փոքր ինչ շարժիլ, ասի ոչ կարել խլրտիլ ։ Ոսբ. 3. 7։ Իսկ մերթ ասի զայն ցանէ, որք դուզնաքեայ ինչ ծառայութբ նուաճեալ, սկսանին շարժիլ յապստամբութի ։ 1. Մակ. 8. 11։ Մերթ ևս ասի զախտից, յորժամ սկիզբն առնուն զարթնուլ և դրդուիլ ։

Խլրտումն. ման. մամբ. մունք. մանց. մամբք ։ || շարժումն կենդանեաց, զոր առնեն 'ի տեղւոջ իւրեանց. կամ 'ի ննջելն. կամ առ 'ի սկիզբն առնել գնալոյ. և կմ առ 'ի դիւր ութն իւրեանց ։ Իսկ մերթ դնի վասն շարժման և դրդման ախտից ։ Նարէկ. Հ. և Է ։

Խ Խ

Խխնջամ. ացի. ացիր. ալ ։ (չէզոք.) || տես զխխնջեմ ։ Սիրաք. 33. 6։

Խխնջեմ. ջեցի. եալ. ել ։ (չէզոք.) || խխնջալ, որ է դուզնամբ ձայն արձակելն ձիոց, կմ երիվարաց ։ Երեմ. 8. 6։ Իսկ մերթ նըմանութբ առեալ՝ ասի նաև զմարդոյ, և նշանակէ մեծաձայն կարդալ. կամ գոչել. և կամ աղաղակել ։ Եսայ. 10. 30։

Խխնջիւն. կամ խղխնջիւն. (Նախդրիւ հոլովի.) || խխնջումն, գյ արձակումն ձայնի երիվարաց. կմ ձիոց. որ երբեմն պատճառի 'ի շարժմանէ ցանկութե. և երբեմն վն վրէժխնդրութե. կամ վասն բորբոքման սրտին ։ Իսկ երբեմն վն ցնծութե ։ և այլն ։ Ամոս. 6. 7։

Խ Ծ

Խծրիծ. խծբծի. աւ. աց. օք ։ || յուզումն. կմ խնդիր. կամ քննութն ։ Նարէկ. խը ։

Խծբծեմ. եցի. եալ. ել ։ (Ներգործ.) || ստէպ և անդ խնդրել, կմ որոնել ։ Մերթ ևս այլայլել. կամ փոփոխել. Իսկ մերթ աստ և անդ տարաբերել. կամ աստանդական առնել ։

Խծուծ. խծծոյ. ով. ոց. ովք ։ || քուղ ։ որ ռամկ. ասի ֆիթիլ, որ է սանտրուք քթանի որ մերթ լինի և լուցիկ, գյ բռնիցնելի ։ Դատ. 15. 14։ և Սիրաք. 21. 10։

Խ Ղ

Խղիկ. ղկի. աւ. աց. օք ։ || փոքրիկ սենեակ. կամ բնակարան ։ Սիրաք. 14. 25։

Խղխայթ. ի. իւ. ից. իւք ։ || է արմատ խղխայթել բային, և նշանակէ՝ զ'ողխայթումն վիրաց ։ Մերթ ևս զխղխայթեալ վէրս. գյ զշարաւալիցն, և զնեխեալն ։ Իսկ մերթ զխղխայթօղն, գյ զստատիկ վիրաւորօղն, Եւ մերթ նշնէ զորդունս՝ որք տկար խլրտմամբ զեռան. և զարմատս խոտոց՝ կմ տնկոց կրծելով չորացուցանեն, և ապականեն զնս ։ Նարէկ. Է. և ղթ ։ Ըստ այսմ և ցեցք և ուտիճք, որք ապականեն զն և լցէ իրս, ասին՝ խղխայթք ։

Խղխայթեալ. ելոյ. ով. ոց. ովք ։ || կարի վիրաւորեալ. և կամ փտեցեալ. և որդնալից և շարաւալից եղեալ. որպիսիք են չարացեալ վէրքն ։ Եսայ. 1. 6։

Խղխայթիմ. եցայ. եաց. իլ ։ (Ձայնակր.) || չարաչար վիրաւորիլ. կամ փտիլ, և ապականիլ. և կամ թարախով և որդամբք լցեալ լինել. որպս հանդիպի ումանց վիրաց ։ Լամբրօն ։

Խղխնջիւն ։ (Նախդրիւ հոլովի.) || Ամոս. 6. 7։ տես զԽխնջիւնն ։

Digitized by Google

Խղճական. ի. աւ. աց. զք: || խղճօղ. կմ խըղճահար: Իսկ մերթ նշանակէ զատաւածեալն: ուամկ. խղճօտ: Լամբրօն:

Խղճահար. ի. աւ. աց. օք: || 'ի խղճէ մտաց հարեալ. քս. խայթեցեալ և չարչարեալ. և կմ այն, որ ունի զատատեկ երկչոտ խիղճ մտաց, որով նաև 'ի թեթև և յունայն իրս երկնչի, և 'ի խղճէն չարչարի:

Խղճեմ. եցի. եա. ել: (չէզոք.) || հարկանիլ 'ի խղճէ մտաց. կմ խիղճ առնել. կմ մեղադրել ինքեան զիմեքէ գործոյ՝ թէ ոչ բարւոք արարի, և այլն: ուամկ. խղճմտանք բռնել: 2. Թագ. 19. 7: Յոբ. 2. 4: Մերթ և նշանակէ կասկածել. կմ երկնչել յիմեքէ գործոյ, թէ մի գուցէ առնելով զայն, մեղիցէ, կամ զվնաս ինչ կրիցէ: Գործ. 10. 20: Իսկ մերթ նշանակէ գարշել, կամ զզուելով խորշել յումեքէ, զի մի գուցէ հաղորդակցելով պղծեսցի. կամ մեղիցէ: Գործ. 11. 2: Ը այսմ և 2. Կորն. 8. 20. ուր ասի, բայց զայս խղճէաք, իմանի, բայց յայսմանէ խորշէաք, կմ զգուշանայաք: Մերթ և նշանակէ խղճալ 'ի վ՞ր ուրուք. կմ համարելով զնա թշուառ՝ և խեղճ, աղէխորով լինել: 2. Մակ. 6. 12:

Խղճմտանք. անաց. օք: (անեզական.) || խիղճ մտաց, կամ բաղխումն խղճի մտաց, որով ոք համարի զինքն գոլ մեղք. և կմ վնաս, և կմ մեղադրութիւն ինքեան: և այլն:

Խղճմտիմ. եցայ. եայց. իլ: (ձայնակր.) || հարկանիլ 'ի խղճէ մտաց. կմ խղճմտանք առնել. կամ խղճահար լինիլ:

Խղճմտութիւն. թեան: || տես. զԽղճմտանքն: Լամբրօն:

ԽՃ

Խճճեմ. եցի. եա. ել: (ներգործ.) || սաստիկ լնուլ իրօք ինչ զինչ. և այս մինչ ասի զորովայնէ, իմանի՝ լնուլ զորովայնն բազմազան կերակրովք, և ըմպելեօք մինչև 'ի պարպատումն: Իսկ մերթ նշանակէ խիճ քարամբք լնուլ զծերպս որմոյն, և զայլս նման:

Խճողեմ. եցի. եա. ել: (ներգործ.) || լնուլ. կամ լիացուցանել. կմ 'ի ներքս մղել. կմ կոխել: և այս մերթ ասի զորովայնէ: և մերթ զքերծոյ. կմ զքաղաքէ, և զայլոց նմանեաց: ուամկ. փլնել անել: Յ[illegible]:

ԽՄ

Խմբագործեմ. եցի. եա. ել: (ներգործ.) || համաժողովել. կմ համահաւաքել. կմ բովանդակել. կամ զխումբ և զհանդէս առնել:

Խմբակից. կցի. աւ. աց. օք: || դասակից. կմ կցորդ ընդ ումեք 'ի նոյն խմբի և դասու:

Խմբակցութիւն. թեան: || դասակցութիւն. կմ գումարակցութիւն: Նարեկ. ղթ: Իսկ մերթ նշանակէ՝ զհամախառնումն. կամ զքաղաքադրութիւն իւրոց, կամ ծառայից. և այլոց նմանեաց: Նարեկ. ղդ:

Խմբարան. ի. աւ. աց. զք: || տեղի, ուր լինի խմբումն. քս. ժողովումն. կմ ժողովարան: Նարեկ. 'ի փառսն Եկեղեցւոյ:

Խմբաւորեմ. եցի. եա. ել: (ներգործ.) || խումբ կազմել. կմ գումարել զզօրս:

Խմբեմ. եցի. եա. ել: (ներգործ.) || ժողովել զբազմութիւն 'ի մի խումբ. կամ հաւաքել. կամ գումարել: 1. Թագ. 4. 2: Դատ. 11. 25:

Խմոր. ոյ. ով. ոց. ովք: || թթուեալ զանգուած. քս. ալիւր ընդ ջրոյ խառնեցեալ՝ թրեցեալ՝ և թթուեցուցեալ, որով խմորեն զայլ զանգուածս, և առնեն հաց: ուամկ. մայայ: Մատթ. 13. 33: 1. Կորն. 5. 6:

Խմորեալ. ելոյ. ով. ոց. ովք: || խմորով թթուեցուցեալ. կմ խմորուն. քս. խմորով եփեալ և կազմեալ: Ելից. 12. 15. և 20:

Խմորիմ. եցայ. եայց. իլ: (ձայնակր.) || թթուիլն զանգուածոյ ալեր՝ յորժամ լինի խմորուն հաց: ուամկ. մայալանմիշ ըլլալ: Ելից. 12. 34. և 39: Ովս. 7. 4:

Խմորուն: (նախադրիճ հոլովի.) || ունօղ ըզխմոր. կամ խմորաւոր. և կամ խմորեալ. Իբր. այս ասի զզանգուածոյ ալեր. կմ ըղ հացէ, և կմ զայլոց խմորեղինաց, յորժամ են խմորով կազմեալ, կմ եփեալ, որոյ ներհակն կոչի բաղարջ. կմ անխմոր: Ելից. 13. 3. և 7: Ղեւտ. 2. 11: 2. Օրին. 16. 3:

ԽՆ

Խնամ. ոյ. ով. ոց. ովք: || հոգունակութիւն. կմ հոգածութիւն. կմ հոգ: Ծնն. 6. 5: և Իմաստ. 5. 16: կամ գութ, և գորով. կամ խնամակալութիւն: 2. Մակ. 11. 26: Եւ. մինչ ասի՝ խնամ տանիլ, կմ խնամ ածել, իմանի՝ խնամել. կմ հոգ տանիլ: 1. Տիմ. 5. 8:

Խնամազգութ. գթոյ. ով. ոց. ովք: || գորովազգութ. կմ բազմագութ. կմ յոյժ խնամօղ և գթացօղ: Մծբն. ժթ:

Խնամածու. ուի. աւ. աց. օք: || հոգածու. կմ զգութ ածօղ. կմ խնամ տանօղ:

Խնամածութիւն. թեան: || հոգածութիւն. կմ խնամատարութիւն:

Խնամակալ. ի. աւ. աց. օք: || խնամածու. կամ ունօղ զխնամ և զհոգ, կմ զգութ 'ի վ՞ր ուրուք. կմ պաշտպանօղ. կմ խնամ տանօղ: Եբր. 6. 10: և 1. Տիմ. 3. 5:

Խնամակալեմ. եցի. կալեա. ել: (չէզոք.) || խնամակալ լինիլ. կմ հոգ տանիլ և նախախնամութիւն առնել: Խորէն. Թ. գր. 14:

Խնամակալու. լուի. աւ. աց. օք: || զխնամ տանօղ՝ և զհոգ ունօղ. կմ խնամածու. կմ հոգածու: Լամբրօն:

Խնամակալութիւն. թեան: || հոգածութիւն. կամ խնամատարութիւն. կմ նախախնամութիւն. կամ պաշտպանութիւն. և կամ նպաստութիւն: 2. Մնաց. 28. 15: և Առակ. 28. 25:

Խնամանամ. ացայ. ացիր. նալ: (ընդ միջ.) || խնամի լինիլ արենակցաց փեսային ընդ արենակցաց հարսին, պատճառաւ ամուսնութեան

Digitized by Google

նութեան երկոցունցն ։ Խորէն․ Ժ․ ղբ․ 55 ։ և 86 ։

Խնամատար․ ի․ աւ․ աց․ օք ։ || զխնամ տանող․ կամ հոգածու․ կամ նախախնամող ։ և պաշտպանող ։

Խնամատարութիւն․ թեան ։ || հոգածութիւն․ կամ խնամակալութիւն․ կամ հոգաբարձութիւն․ կամ նախախնամութիւն ։ Ողբէ․ 2․ հատ․ Լ ։

Խնամարար․ ի․ աւ․ աց․ օք ։ || զխնամ տանող 'ի մէջ ուրուք․ կամ հոգածու․ կամ նախախնամող ։ Նարէկ․ ղթ ։

Խնամարկեմ․ կեցի․ եալ․ ել ։ (Ներգործ․) || զհոգ տանել 'ի մէջ ուրուք․ կմ գթութ, և զխնամ ածել 'ի մէջ ուրուք․ կմ խնամել ։ Ծնն․ 44․ 21 ։

Խնամարկու․ կուի․ աւ․ աց․ օք ։ || խնամարկող․ կամ խնամածու ։

Խնամաւորութիւն․ թեան ։ || խնամի լինելն․ կամ խնամութիւն ծագեցեալ 'ի մէջ օտարաց պատճառաւ ամուսնութեան որդւոյ միոյն ԸՆ դստեր միւսոյն ։ Խորէն․ Ը․ ղբ․ 55 ։

Խնամեմ․ եցի․ եալ․ ել ։ (Ներգործ․) || հոգ ածել․ կամ գթութ ունել 'ի մէջ ուրուք․ կմ նախախնամել ։ 1․ Մակ․ 16․ 14 ։

Խնամեխօս․ կամ խնամախօս․ ի․ իւ․ եց․ իւք ։ || միջնորդ հարսնախօսութեան․ Տը միջնորդ նշանելոյ զդուստր ուրուք ԸՆ որդւոյ ուրումն ։ Եւ տացուն այսպիսիքս խնամեխօս․ զի 'ի խօսելոյն նց հետեւի նշանիլն․ և խնամութիւն ։

Խնամի․ մւոյ․ եաւ․ եաց․ եօք ։ || արենակիցքն հարսին, և փեսային, որք պատճառաւ ամուսնութեան երկոցունցն՝ զխնամութիւն առնեն ընդ միմեանս․ և ըստ այսմ արենակիցք հարսին՝ զարենակիցս փեսային, կոչեն ինքեանց խնամիս․ և հակադարձաբար ։ Խորէն․ Ժ․ ղբ․ 18 ։ Եւ գիտելի է․ զի հարսն արենակցաց փեսային, և փեսայն արենակցաց հարսին ոչ ասի խնամի․ այլ ազգական․ զի հարսն և փեսայն գոլով մի մարմին, ազգականն միոյն է եւ ազգական միւսոյն ։

Խնամողօրէն ։ (մակբայ որակական․) || խընամակալութբ․ կամ խնամածութբ ։ Իսկ մերթ վարի իբրև գոյական․ և նշանակէ ըզ խնամողականն․ կմ զխնամածականն․ Ըստ այսմ․ Նարէկ․ ԺԵ․ խնամողօրէն անսպառութբ կամաց հոգւոյն կոչեցար ։

Խնամոտ ։ (Նախադրբիւն հոլովի․) || հոգածու․ կամ խնամող․ կամ սաստիկ գթութ ունող 'ի մէջ ուրուք ։ 2․ Մակ․ 14․ 37 ։

Խնամութիւն․ թեան ։ || խնամականն ազգականութիւն, որ լինի 'ի մէջ օտարաց․ Տը 'ի մէջ արենակցաց, կամ ազգականաց առն և կընոջ միջնորդութբ ամուսնութե երկոցունցն ։ Ծննդ․ 34․ 9 ։ 2․ Օրին․ 7․ 3 ։

Խնայեմ․ եցի․ եալ․ ել ։ || մերթ վարի չէզոքականապէս․ և նշանակէ անխայել․ Տը ափսոսալ․ կամ գթալ յիր ինչ, կամ յանձն ոք, զի մի վնասեսցի, կամ անկցի 'ի վտանգ ինչ․ և կամ ոչ թողուլ տալ ինչք կորնչել․ կամ վնասել․ կամ ջնջել՝ և այլն ։ ռամկ․ ղըյմիշ ըլմէլ ։ Ծննդ․ 22․ 12 ։ և 19․ 16 ։ և 2․ Թագ․ 12․ 4 ։ և 21․ 7 ։ Իսկ մերթ վարի ներգործականապէս․ և նշանակէ՝ ափսոսալով, կամ գթալով ոչ թողուլ տալ ումեք անկանել 'ի չար ինչ․ կամ արգելուլ, և հրաժարեցուցանել զմ և եկեալ իր յիմեքէ չարէ․ կամ վնասու․ և ըստ այսմ ասի․ խնայել զանձն 'ի մահուանէ․ կամ զըներգոյ իւր 'ի բամբասանաց․ և այլն ։ Յոբ․ 33․ 18 ։ և Իմաստ․ 1․ 11 ։

Խնայութիւն․ թեան ։ || անխայութիւն․ կամ ափսոսալութիւն․ կամ գութ․ կամ ճշգութիւն․ Իմաստ․ 12․ 18 ։

Խնդագին ։ (Նախադրբիւն հոլովի․) || ուրախագոյն․ կմ զուարճագոյն․ կմ յոյժ ուրախ ։

Խնդալից․ (Նախադրբիւն հոլովի․) || խնդութբ, և ուրախութբ լցեալ․ կամ զուարճալի ։ Նարէկ․ ձա ։ Եւ մերթ ընդ բային շարակցի այսպէս՝ խնդալից լինել․ և նըշանակէ՝ խնդութբ լցեալ լինել, կամ սաստիկ խնդալ ։ Յոբ․ 3․ 22 ։

Խնդակից․ կցի․ աւ․ աց․ օք ։ || կցորդ և ընկեր խնդութեան․ կամ ուրախակից ։

Խնդամ․ ացի․ ա․ ալ ։ (չէզոք․) || ուրախանալ․ կամ բերկրել․ կամ զուարճանալ․ կամ ցնծալ ։ Ծննդ․ 24․ 26 ։ 3․ Մակ․ 1․ 5 ։ Իսկ երբեմն աներևոյթն բային այսօրինակ յորժամ դնի 'ի սկզբան ողջունագրաց, նըշանակէ զողջոյնն․ ըստ այնմ․ Խորէն․ յառաջաբանութեան․ Մովսէս Խորենացի Սահակայ բագրատունւոյ խնդալ․ Տը ողջոյն ։ Ըն այսմ է և Ը․ ղբ․ 30 ։

Խնդամիտ․ մտի․ իւ․ աց․ օք ։ || զուարթամիտս․ կամ զմիտս ունող․ կամ զուարթամիտ․ և կամ ուրախ, և զուարթ․ և կամ զուարճալից ։ Խորէն․ Գ․ ղբ․ 68 ։

Խնդամտիմ․ եցայ․ եալ․ իլ ։ (ձայնակր․) || խնդամիտ լինել․ կամ 'ի միտս խնդալ, կամ 'ի խնդութիւն մտանել ։ Նարէկ․ ԼԶ ։

Խնդրուանք․ րուանից․ օք ։ (անեզակ․) || ծակոտիք․ կամ ձեղք․ և կամ փոս և խորշաւոր տեղիք փայտից․ կամ քարանց․ և այլոց նմանեաց․ որովք գրեթէ արտաքսանողեցեալք են ։ Իմաստ․ 13․ 14 ։ Իսկ մերթ նշանակէ ունայն․ կամ անոսր․ կամ անարգ․ կամ նուաստ․ և կամ չնչին․ և Ը այսմ վարի եւ եղականաբար ։ Ողբէ․ 1․ հատ․ Թ ։

Խնդիր․ դրոյ․ ով․ ոց․ ովք ։ || է արմատ խնդրել բային․ որով նշանակի՝ խնդրուածն․ կամ աղաչանս ։ Ողբ․ 1․ 11 ։ Իսկ մերթ խնդրուած․ կամ հայցուած․ զոր խնդրէ ոք յումեքէ ։ 3․ Թագ․ 2․ 16 ։ Եւ մերթ նշանակի հետաղօտութիւն․ կամ հարցաքննութիւն, և կամ հետաքրքրութիւն, զոր առնեն միջնորդքն․ կամ ատենակալքն 'ի մէջ բանից դիմակցաց ։ 1․ Տիմ․ 1․ 4 ։ Իսկ երբեմն ընդ բային շարակցի այսպէս․ խնդիր առնել, կամ 'ի խնդիր ելանել․ և նշանակէ՝ խնդրել․ և որոնել․ կամ հետաղօտել ։ Խորէն․ Ը․ ղբ․ 30 ։ Ըստ այսմ և Մատթ․ 2․ 13․ ասէ․ 'ի խնդիր է․ խմանի՝ ակնեալ է խընդրել․ և որոնել․ կամ խնդրէ․ և որոնէ ։

Խնդամտեալ. ելոյ. ով. ոց. ովք: || ուրախա_ցեալ. կմ խնդամիտ եղեալ. և կամ զուարթասիրտ լեալ:

Խնդամտութիւն. թեան: || ուրախամտութիւն. կմ ուրախասրտութիւն. կմ զուարթութիւն: Լամբրոն:

Խնդութիւն. թեան: || ուրախութիւն. կմ բերկրութիւն. կմ ցնծութիւն: 1. Պետր. 1. 8:

Խնդրակ. ի. աւ. աց. օք: || խնդրող. կմ որոնող. կմ խուզող. Յեսու. 2. 7: և Յուդթ. 9. 16:

Խնդրանք. անաց. օք: (անեզական.) || խնդրուած. կմ հայցուած. և կամ խնդրումն, և որոնումն. կամ խնդիրք իմաստասիրականք, որ է հետազօտութիւն. կմ հարցաքննութիւն: Նարեկ. ղԶ:

Խնդրեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || հայցել. կմ մաղթել: Մատթ. 7. 9: Իսկ մերթ որոնել. կմ խուզել: ռամկօրէն ֆնտռել: 1. Թագ. 10. 21:

Խնդրուած. ոյ. ով. ոց. ովք. կմ աց. օք: || խնդրումն. կմ հայցուած. կմ աղաչանք հայցումն. կմ մաղթանք: 1. Մակ. 7. 37: Սաղմ. 27. 2: Փիլիպ. 1. 19:

Խնծոր: || տես զԽնձոր:

Խնկաբեր. ի. աւ. աց. օք: կամ ից. իւք: || ծառ՝ որ բերէ զխունկ. կմ տեղի՝ ուր լինի խունկ: Երգ. 2. 17: և 8. 14: Իսկ մերթ նշանակէ զնա, որ բերէ, և տանի զխունկս. իբ զզմուռս, և զհալուէ, և զայլս:

Խնկաբուղխ. բղխի. իւ. ից. իւք: || բղխող յինքենէ զհիւթս խնկոց, և անուշահոտ իրաց. որպիսիք են ոմանք 'ի ծառոց:

Խնկազգեաց. գեցի. աւ. աց. օք: || խնկակիր. կմ զխունկս բարձող, և բերող. որպիսիք էին Իւղաբեր կանայքն:

Խնկազգեստ. ի. իւ. ից. իւք: || Նոյն է ընդ վերնոյն: Նարեկ:

Խնկալի: (Նախդրիւ հոլովի.) || խնկալից. իբ լի խնկօք: Իսկ մերթ նշանակէ զխնկելին. իբ զպատուելին. և կմ զփառաւորելին: Նարեկ. ղԳ:

Խնկալիր: (Նախդրիւ հոլովի.) || Նոյն է ը̅ վերնոյն: Նարեկ. ղԳ:

Խնկալից. լցի. աւ. աց. օք: || լցեալ խնկօք: Եւ մերթ նշանակէ զարբեցեալն զանազան ջերմ նիւթով. իբ զանազան խնկով. կմ [illegible]: 3. Մակ. 5. 1. և 5:

Խնկածուխ. ծխոյ. ով. ոց. ովք: || Մերթ նշանակէ զծուխն. կմ զգոլորումն խնկոց: Իսկ մերթ զխունկ ծխօղն:

Խնկակալ. ի. աւ. աց. օք: || կալնող, և պահօղ խնկոց. և այս մերթ առի զմարդոյ, որ 'ի ձեռս իւր կալնու զխունկս խնկանոցաւ: Իսկ մերթ զափոյ՝ յորում դնի, և պահի խունկ: Եւ երբեմն զսեղանոյ, 'ի վր որոյ եդեալ լինի խունկ անօթով համբերձ. և իբ այսմ առի՝ սեղան խնկակալ: Ելից. 30. 1:

Խնկահոտ. ի. իւ. ից. իւք: || հոտ, կմ անոյշ բուրումն խնկոց:

Խնկաղաց. ի. իւ. ից. իւք: || անօթ ինչ՝ ուր խունկն աղացեալ լինի, կմ լօսի, որպիսի է անկանն, կմ ձեռաց աղօրիքն: Եւ կմ նշանակէ զխնկանոցն, ուր եդեալ պահին անուշահոտ խունկք պէսպէս. կերպիւ աղացեալք. կմ բազմազան հանդերձանք խառնեալք, և կազմեալք: Ելից. 25. 29: և 37. 16: և 1. Մակ. 1. 23:

Խնկաման. ոյ. ով. ոց. ովք: || աման. կմ անօթ խնկոց: 2. Մնաց. 4. 22:

Խնկանման. ի. իւ. ից. իւք: || զնմանութիւն խնկոյ ունօղ. կմ խնկանկերպ:

Խնկանոց. ի. աւ. աց. օք: || անօթ՝ ուր դնի խունկ. կմ բուրվառ: Յայտ. 8. 3. 4. 5:

Խնկանուէր. նուէրի. աւ. աց. օք. || զխունկ նուիրօղ և ընծայօղ. կամ խնկարկօղ: Եւ մերթ նշանակէ զայն՝ որ նուէրի՝ և ընծայի խնկօք, և ջերմեռանդ բղձիւ և սիրով: և ըստ այսմ իմանի՝ մինչ ասի. խնկանուէր հայցմամբ, կմ աղօթիւք: Նարեկ. Ձ:

Խնկապատար. ի. իւ. ից. իւք: || լի խնկով. կմ լցեալ անուշահոտ բուրմամբ խնկոց. և կմ խնկաւոր: Նարեկ. ղԳ:

Խնկատուփ. տփի. իւ. ից. իւք: կմ տփոյ. ով. ոց. ովք: || տուփ խնկոյ. և կմ խնկանոց: ռամկ. խնկի ղութի. կմ խնկի աման:

Խնկարան. ի. աւ. աց. օք: || անօթ խնկոց, և այլոց անուշահոտ իրաց: 2. Մնաց. 24. 14:

Խնկարկեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || բուրվառաւ խունկ արկանել. կմ խունկ ծխել. կմ խնկել:

Խնկարկու. կուի. աւ. աց. օք: || բուրվառաւ խունկ արկանօղ. իբ խունկ ծխօղ, կմ խունկ մատուցանօղ: 4. Թագ. 23. 5:

Խնկաւոր. ի. աւ. աց. օք: || խնկալի. կմ զանուշահոտ բուրումն խնկոց ունօղ. կմ որ ունի զխունկս և ծխէ: Իսկ մերթ նշանակէ՝ օրհնեալ. կմ գովեալ. կմ պատուելի, և մեծարելի. Նարեկ. ԼԹ. և ղԹ:

Խնկաւորեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || խնկաւոր առնել. կմ խնկով լնուլ. և կմ խնկել: Իսկ մերթ նշանակէ պատուել. կմ փառաբանել. և կամ օրհնել: Նարեկ. Ձ. և ՁԷ:

Խնկաւորութիւն. թեան: || խնկումն. կմ բուրումն անուշահոտ խնկոց: Իսկ մերթ յարգութիւն. կմ օրհնաբանութիւն. Նարեկ. ղԴ:

Խնկելի. լւոյ. եաւ. եաց. օք: || խնկարկելի. կմ խունկ մատուցանելի. և կմ խնկով օծանելի: Իսկ մերթ նշանակէ՝ յարգելի. կմ պատուելի. կամ օրհնելի և գովելի: Նարեկ. Գ. և ղԹ:

Խնկեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || խունկս արկանել. կմ զխունկ մատուցանել. կամ խնկարկել: Լամբրոն: Մերթ ևս նշանակէ՝ առ 'ի տալ զջերմացուցիչ նիւթս պազանաց առ 'ի կատարելացուցանել զնա: 3. Մակ. 5. 25: Եւ մերթ նշանակէ՝ զանազան և անուշահոտ խնկօք օծանել զմարմինս: Մարկ. 14. 8:

Խնկեփեաց. փեցի. աւ. աց. օք: || զանուշահոտ օծանելիս եփօղ և կազմօղ. կմ իւղեփեաց: 'Ի Հարց հարց. Բ:

Խնձոր. կմ խնծոր. ոյ. ով. ոց. ովք: || պտուղ խնձորենւոյ. որ և ռամկօրէն ասի՝ խնձոր:

Երգ. 2. 5: և 7. 8: Եւ մերթ կարէ առնուլ նաև զոմանց գնտակաձև պտղոց, որք ունին զնմանութիւն խնձորոյ: ուստի Ծննդ. 30. 14. ուր ասի. խնդրեա մանդրագորայ. իմանի՝ խնձորաձև պտուղ մանդրագորայ: Այլ և մերթ առեալ լինի փոխանակ խնձորենւոյ. ուստի ասի Երգ. 8. 5. 'ի ներքոյ խնձորոյ զարթուցի զքեզ:

խնձորենի. նւոյ. եաւ. եաց. եօք: || ծառ խնձորոյ:

խնծոյք. կամ խնջոյք. ջոյից. իւք: (անեզական.) || մերթ նշանակէ զմեծահանդէս ուրախութիւն, յորում պարուք և երգովք, և այլսայլս խաղովք՝ ցնծութիւն լինի. և կամ զուրախալի հանդէսն այլսայլս պարուց՝ հարսանեաց, խրախճանաց, և երևելի խաղուց: Ղուկ. ժե. և հն: և Լամբրոն: Իսկ մերթ նշանակէ զմեծահանդէս խրախճանն՝ յորում պարեն. և կաքաւեն, և այլսայլս երգովք և քմահաճութեամբ՝ ցնծութիւն և խրախութիւն առնեն: ռամկ. մէճլիս: 3. Մակ. 6. 22: և Խորէն. Գ. գլ. 55: Մերթ ևս նշանակէ խումբ. կամ գումար: Աղթոր:

խնուլ. խցի. խից. ուլ: (ներգործ.) || խցել, կամ փակել զբերան, կամ զծակս, կամ զաղբերս, կամ զճանապարհս, և կամ զխրամս, ռմ. զխենփել. և այլն: 3. Թագ. 11. 27: և 2. Մնաց. 32. 3: Ովս. 3. 9: և Դանիէ. 6. 18. և 22:

խնջոյք: || տես խնծոյք:

Խ Շ

Խշշոց. ի. ած. ոց. օք: || ձայն ջրոյ. կամ ձայն շարժման տերևոց ծառոց, և այլոց նմանեաց:

Խշուր. խշրի. րէ. րց. րւք: կամ խշրոյ. ով. ոց. ովք: || փշրուք. կամ մանրուք ու և իցէ իրի:

Խշաբ. ուոյ. ուով. եաց. եօք: || տեղի ընկողմանելոյ և ննջելոյ, կամ դադարելոյ և հանգչելոյ: և այսու եթէ մարդոյ իցէ, իմանի անկողինն, ուր ննջէ: Նարէկ. ժդ: Իսկ եթէ անասնոց. կամ գազանաց իցէ. իմանին այրք. կամ խորշք լերանց, և փապարք. կամ որջք նց: Յոբ. 37. 8: և 38. 40: Երեմ. 51. 39:

Խշրեմ. եցի. եա. ել: (ներգործ.) || փշրել. կամ մանրել. կամ լուծել:

Խ Ո

Խոզ. ի. իւ. ից. իւք: կամ ոց. օք: || է աղ մանէր, և պարարտ կենդանի, որ և ռամկ. ասի խոզ: Մատթ. 7. 6: և 8. 30:

խոզագնաց. ի. իւ. ից. իւք: || զաղծասէր, և զանկարգ գնացս, կամ զվարս ունող. և կամ խոզաբարոյ:

Խոզան. ի. աւ. աց. օք: || հնձեցեալ ցորենոյ՝ կամ գարւոյ եղեգունքն, որք զկնի հնձման ցցեալ մնան 'ի մէջ երկրի: Եւ ասի խոզան, իբրու զի խուզեալ են, կամ կարեալ են անտի զհասկն ցորենոյ. կամ գարւոյ: Եսայ. 17. 6: Իսկ մերթ նշանակէ զխոզայինն. որպիսիք են մազքն խոզից. որք ցից ցից բուսեալ քեն զմարմնովք նց. և ըստ այսմ ասի 'ի գիրս Աղթարբանգէզուի. Եւ խոզան սանն թաւացեալ զամ մարմնոյն:

Խոզանակեր. ի. աւ. աց. օք: || ուտող զխոզանն գարւոյ, կամ ցորենոյ, և կամ այլոց նմանեաց:

Խոզանանամ. ացայ. ացեր. ալ: (ընդ. միջ.) || իբրև զխոզան լինել. ցից ցից անկել. կամ ցից մնալ. և կամ խոզայինն լինել. որպիսիք են մազքն, որք բուսանին զմարմնովք խոզից. և այլոց նմանեաց. ուստի ասի, խոզանացեալ մազով: Աղթոր:

Խոզարած. ի. աւ. աց. օք: || արածող ըզ խոզս. կամ հովիւ խոզից:

Խոզեան: (նախդրիւ հոլովի.) || խոզից երամակ. կամ խոզք. զի մասնիկս եան, երբեմն փոխանակ յոգնականի դնի. որպէս յիշեցաւ 'ի բառն գրեանք: Ղուկ. 8. 33:

Խոզենի. նւոյ. եաւ. եաց. եօք: || խոզայինն. և կամ խոզի միս: 2. Մակ. 6. 18: և Եսայ. 65. 4:

Խոզերամակ. ի. աւ. աց. օք: || խոզայինն երամակ. կամ երամ խոզից:

Խոզիւ: (նախդրիւ հոլովի.) || գարշ. կամ ղաղիր. կամ աղտեղի. կամ պիղծ:

Խոզք. զից. իւք: (անեզական.) || ուռուց ինչ թարախալիք և արեանալից, որ պատահեն 'ի սաստիկ ջերմութենէ արեան՝ որ 'ի փայծեղն: և ելանէ սա յաճախակի 'ի պարանոցն իբրև զմեծամեծ խուլս. և երբեմն լինի 'ի յանութասակն. և 'ի յաճուկն մարդոյ. և մերթ 'ի կուշտն: Եւ կոչեցաւ սա խոզք, վասն զի խոզից յատուկ է յաճախակի այսպիսի ախտիւ ախտանալ:

Խոզքորակ. ի. աւ. աց. օք: || խոզու քուռակ. կամ խոզու ձագ: Եւ մերթ դրի սա խոչքորակ. սակայն թուի սխալմամբ սովորութեն եղեալ:

Խոժոռ. ի. իւ. ից. իւք. կամ ու. աց. օք: || է արմատ խոժոռիլ բային. և նշանակէ ըզ խոժոռեալն. կամ զդառնադէմն. կամ զզայրագին և զախուր դէմս ունողն:

Խոժոռաբարոյ. ի. իւ. ից. իւք: || զխոժոռ բարս ունող. և կամ սիրող զխոժոռութիւն դիմաց. կամ դառնադէմ. և կամ դաժանահայեաց:

Խոժոռադէգ. ի. իւ. ից. իւք: || գարշատեսիլ. կամ զազրադէմ. կամ դառնադէմ. և կամ զխոժոռեալ դէմս ունող: Խորէն. Բ. գլ. 7:

Խոժոռադէմ. դիմի. աւ. աց. օք: || դառնադէմ. կամ ունող զխոժոռեալ, կամ զայլանդակ և զախուր դէմս: Իմաստ. 17. 4:

Խոժոռիմ. եցայ. եա. իլ: (ձայնակր.) || ըզ դէմս իւր այլայլել դառնադիմութեամբ, կամ տրտմութեամբ, կամ բարկութեամբ. կամ անհաճիլ. կամ դժուարիլ: 1. Թագ. 29. 4: Մակ. 10. 22:

Խոժոռութիւն. թեան: || խոժոռումն. կամ դառնադիմութիւն: Իսկ մերթ նշանակէ ըզ խորտուփորտութիւն տեղւոյն:

Խոլխեցդեսի. ուոյ. ուով. եաց. ուովք: || է ապք ինչ կերպ. կամ խոցեր, որ պատահէ 'ի սաստիկ ջերմացմանէ աւաւ մաղձին. և կամ արեանն՝ որ 'ի փայծեղն. և ճարակ գտեալ տարածի ընդ բոլոր մարմ

մինն․ և փախուցանիցեալ ապականեն։ Երբեմն զրուցս անգամ եղանէ սա 'ի ասելիս կանանց, յորժամ ամենակեան հոմանիք ոչ սրբին․ և վաստակէ յոյժ զնա։ Այդ՝ կոչեցաւ սա խոչընդոտ [illegible] խոչ [illegible] խնդացուցանելի․ և այս՝ կմ մն յամբառաշարժ գոլոյն երբեմ զնեղ գետոյն․ կամ մն ամենայն զնէ խնդացեալ [illegible] և կամ մանաւանդ մն հասարակութիւն յարբեցոյն զաւակամբք, և զայլովք մասամբք մարմնոյն հանդերձեալ խնդացելոյ։ 'Ի վերս հարց․ Եւ ասէ 'ի ձեռագրին․ մն զի 'ի սպա գրեցաւն սխալմամբ եղեալ է՝ խոչընդոտելոյ։

Խոխոմ․ ի․ իմ․ եց․ իւք։ || ձոր․ կմ խորաձոր․ ցխորին ձոր։ և սա մանաւանդ յոգնականապար 'ի գործ ածի։ Խորէն․ Ա․ գլ․ 11։

Խոխոմեմ եցի․ եամ․ եալ։ (Ներգործ․) || առա զանել․ կամ ջրել․ կամ առատին թրջել։ ռամկօրէն խոխել։

Խոխոմնջիւն։ (Նախդրիւ հոլովի․) || ձայն և աղաղակ շարժման և ընթացման յորդեալ ջուրց։ 'Ի վերս հարց․ Հ։

Խոխոջեմ․ եցի․ եամ․ եալ։ (չէզոք․) || ձայն հանել, կմ ձայն հանելով ընթանալն յոր դաշտաց ջուրց՝ գետոց, և կմ հեղեղաց, և նմանեաց։

Խոխոջք․ ջից․ իւք։ (անեզական․) || մեծ ձայն ընթացման ջուրց․ կմ աղաւաղ ձայնիւ գնալն ջուրց։

Խոխոտեմ․ եցի․ եամ․ եալ։ (չէզոք․) || խոր հել․ կմ զմտաւ ածել․ կմ նիւթել 'ի սրտի․ և կմ յօժարել և կամիլ։

Խոկամ․ ացի․ ոյ․ ալ։ (Ներգործ․) || զմտաւ ածել․ կմ խորհիլ․ կմ պարապագոյնիւք և մտա դրութեամբ մտածել։ Յոբ․ 6․ 30։ և Առակ․ 8․ 7։

Խոկումն․ խոկման․ մանք․ մանց․ մանցք։ || խորհումն․ կմ մտածումն։

Խոհական․ ի․ աւ․ աց․ օք։ || խոհեմական․ կմ խորհրդական․ կմ խելացի․ կմ խորա գէտ․ կմ՝ դիտաւոր․ կմ իմաստուն․ կմ համ բերող։ Առակ․ 24․ 6։ և Նորէկ․ ղդ։

Խոհականութիւն․ թեան։ || խոհեմութիւն․ կմ մտախոհութիւն․ կմ խորհրդականութիւն․ կմ համբերողութիւն․ և կամ խորագիտութիւն։ Խորէն․ Ա․ գլ․ 23․ և 24։

Խոհակեր․ ի․ աւ․ ագ․ օք։ || խոհարար․ որ զկերակուր եփող և պատրաստող։ ռամկ․ աշճի։ 1․ Թագ․ 9․ 23։ և Երեմ․ 46․ 24։ Եւ կմ զմիսն յօշատող և կոտորատող՝ առ 'ի եփել, և կազմել 'ի նմանէ զկերակուրս։ Ծն․ 2․ 20։

Խոհակերեմ․ եցի․ եամ․ եալ։ (Ներգործ․) || զխոհակերութիւն առնել․ կամ զկերակուր եփել և պատրաստել։ և կամ յօշատել և կոտորատել զմիսն եփելոյ և կերլոյ։ Ծն․ 2․ 21։

Խոհակերութիւն։ || տես 'ի ներքոյ զխոհակերոց։

Խոհակերոց․ ի․ աւ․ աց․ օք։ || խոհանոց․ որ տեղի՝ ուր եփին և պատրաստին կերակուրք։ ռամկ․ աշխանայ։ Երեմ․ 46․ 23։

Խոհակիր․ կրի․ աւ․ աց․ օք։ || տես զխոհակեր։

Խոհանոց․ ի․ աւ․ աց․ օք։ || տես զխոհակերոց։ 'Ի վերս հարց․ Ը։

Խոհարան․ ի․ աւ․ աց․ օք։ || տես զխոհա- կերոց։

Խոհարար․ ի․ աւ․ աց․ օք։ || խոհարար․ կմ խոհակեր։ ռամկ․ աշճի։ Բարսղ․ Խորէն․ Բ․ գլ․ 30․ ուր ասէ՝ խոհարար անն մեծատուն զորմն, պարտէր իմանիլ՝ խոհարարար անն, և այլն, զի սխալմամբ եղեալ է խոհարար, զոր տեսցես 'ի խոհարարար բառն։

Խոհեմ․ ի․ իմ․ եց․ իւք։ || զգաստականութիւն խոհեմութեան ունող․ կամ 'ի գործս և 'ի բանս իւր զգուշացեալ իրքն մտածող և խոհակող․ կմ խորագէտ․ կմ համբերող։ ռամկ․ խելօք։ Խորէն․ Ա․ գլ․ 10։

Խոհեմանամ․ ացայ․ ցեր․ անալ։ (ընդ․միջ․) || խոհեմ լինել․ կմ իմաստնանալ․ կմ խորագէտ լինել․ կմ ուշիմ և համբերող լինել։

Խոհեմաբար․ մակ․ աւ․ աց․ օք։ || զխոհեմ և զուշիմ մտօք ունող․ կամ համբերող․ կմ մտացի։

Խոհեմագիտութիւն․ ի․ իմ․ եց․ իւք։ || խոհեմա- բար, և իմաստնաբար ընթացող․ կմ համ- բերաբար։ Նորէկ․ 'ի Փիլիպ տառ․ Հց։

Խոհեմութիւն․ թեան։ || իմաստութիւն․ կամ համբերողութիւն․ կամ խորագիտութիւն․ կմ ուշիմութիւն․ կամ խոհականութիւն։ Նորէկ․ ղը։ Եւ խոհեմութիւն մանաւանդ պատուակա- նագոյն, է առաջին մին 'ի չորից առաքի- նութեանց կարդինալականաց, որ բառ արիս տոտէլի՝ ասհմանի, ուղիղ բան առնելեաց․ այսինքն է իմաստութիւն գործոց․ որով 'ի մտաւոր իրս ընտրեմք և գործեմք զուղիղն, և զպատ- շաճաւորն։

Խոհեր․ ի․ աւ․ աց․ կմ երց․ օք։ || գաղտնահաս միտք․ կմ ցնոր․ կմ մօր։ Խորէն․ Բ․ գլ․ 24։ և Մովս․ 1․ հատ․ Է։ Իսկ մերթ նշանակէ զի և լինէ պղծութիւն, կամ աղտեղութիւն․ կմ զազրութիւն․ կմ զզուանս իր․ կմ զազրալի գործ։ Նորէկ․ խն։ Մերթ ևս նշանակէ միտք․ կմ զաղէր․ կմ աղտեղի․ և ըստ այսմ առի 'ի խոհեր բանից, կմ գործոց։ Կիւրղի Եղիշ․ Ղ։

Խոհերական․ ի․ աւ․ աց․ օք։ || ազգային, կմ աղտաշաղախ․ և կմ պիղծ․ կմ զազիր․ կմ պղծաշաղախ․ կմ աղտեղասէր։ Նորէկ․ Ը։

Խոհերանամ․ ացայ․ ցեր․ նալ։ (ընդ․միջ․) || աղտեղանալ․ կմ զազրանալ․ կմ աղտանիլ և ցեխոտիլ։

Խողխողեմ․ եցի․ եամ․ եալ։ (Ներգործ․) || սպա նանել սրով․ կմ զենուլ․ կմ չարչարանօք, և կմ կոտորելով մահացուցանել։ 1․ Մակ․ 9․ 61։ 2․ Մակ․ 4․ 34։

Խողխողումն․ ղման․ մանք․ մանց․ մանցք։ || սրով սպանումն․ կամ սրով կոտորելով․ կմ զենելով մահացուցումն։ Խորէն․ Բ․ գլ․ 71։

Խողխողջանիմ․ ջեցայ․ եաց․ իլ։ (ձայնակ․) || մեծաւ ձայնիւ, կամ աղաղակաւ ընթա նալ՝ կամ վազել ջուրց․ կամ 'ի վը հեղա- նիլ։ Կիւրղի Եղիշ․ ԺՆ։

Խողխողջեմ․ եցի․ եամ․ եալ։ (չէզոք․) || տես զխոխոջեմն։ Առգօշ։

Խողովակ․ ի․ աւ․ աց․ օք։ || փողրանկ՝ ընդ որ անցանէ ջուրն։ ռամկ․ լուլայ․ կմ օլուխ։ Յոբ ԽԱ․ Եւ մերթ նշանակէ առու, ընդ

որ անցանէ հեղեղուկ էր: Եզեկ. 40. 40.

Խուճիճ. ճճի. ու. աց. օք: || խրտուիլակ. ՚ի օգուտ, զոր դնեն ՚ի պարտէզս առ ՚ի երկեցուցանել զթռչունս:

Խոյ. ոյ. ով. ոց. ովք: կամ ի. իւ. եց. օք: || արու ոչխար ոչ կռտեցեալ, զոր պահեն ՚ի հօտս ոչխարաց. զի յառաջընթաց և առաջնորդ լինիցի հօտին. նաև պատճառ [illegible] զյղացումն ոչխարաց: ռամկ. խոչ: Ղևտ. 5. 16: Սաղմ. 64. 14: Դարձեալ՝ է անուն առաջնոյն երկոտասանից կենդանակերպից. որք ՚ի զօդիակոս կոչեցեալ շրջանակն զետեղին. ընդ որս շրջի արեգակն ըստ յատուկ ընթացից, անելով ՚ի յիւրաքանչիւրն զմի ամիս, սկսանելով նախ ՚ի խոյէն, ՚ի յոր մտանէ ՚ի քսան և մէկն մարտի. յորում սկսանի գարնանային եղանակն: Դարձեալ նշանակէ զպատերազմական մեքենայ ինչ, զորոյ զնշանակութիւն տեսցես ՚ի բառն Հոյ:

Խոյակ. ի. ու. աց. օք: || վերնախարիսխ. ՚ի խարիսխ ՚ի վերայ գլխոյ սեան եդեալ. ռամկօրէն պաշլըխ: Ելից. 26. 24. և 32: և 27. 17: և 36. 36:

Խոյակապ. ի. իւ. ից. իւք: || տես զՀոյակապ:

Խոյանամ. ացայ. ացիր. անալ: (ընդ միջ.) || ելանէ առ ՚ի խոյ բառէն. և առի խոյանալ. իբր թէ խոյ լինել. և այսու նշանակի իբրև զխոյ մեծաւ յարձակմամբ գիմել, և մխել յերասն ինչ. և կմ սլանալով յարձակել: Եւ այս առի զործոյ, յորժամ որընթաց յարձակմամբ սլացեալ մխի յերամս հաւուց ՚ի յափշտակել, և ՚ի գիշատել: Իսկ մերթ՝ զզօրաց կամ զքաջ նահատակաց, որք իբրև զարծուի յարձակին ընդդէմ թշնամեաց: 2. Օրին. 28. 49: Խորէն. բ. գր. 43: Իսկ մերթ զերկնարդաց, և երբեմն զնորահրդոց սրտի, և զայլոց նմանեաց. որք արծուանման սլանան: Մծբն. ժթ:

Խոյզ. խուզի. իւ. ից. իւք: || է արմատ խուզել բային, և նշանակէ խուզումն. կամ որոնումն. կմ քննումն. և կամ հետազօտումն: Նարեկ. իգ: և Խորէն. ա. գր. 2:

Խոյթ. խութի. իւ. աց. օք: || է խեցեմորթ գազան ինչ ծովու. կամ գետոյ. որ և կոչի խեցի ծովու: Եւ առ գրի ևս խոյթի. ՚ի Վարդ. հարց. ժէ:

Խոյլ. խուլի. աւ. աց. օք: || խուլ. ՚ի ուռուց ինչ ձուաձևանման, որ է կարծրացեալ մսոյ իբրև զկուճուկ, որ գոյանայ ՚ի մարմնի մարդոյ ՚ի վատթար հիւթոց, և երբեմն ուռուցեալ արտաքս՝ կախի զպարանոցէ. և կմ զերեսաց, և սակաւ առ սակաւ աճեցեալ լինի իբրև զփչեցեալ բուշտ: ռամկ. ուր:

Խոյս. || է արմատ խուսել բային. որ ՚ի գործածի շարակցելով ընդ բայի այսպէս. խոյս տալ: և նշանակէ՝ խուսել. կամ խուսափել. կամ ՚ի բաց խոտորիլ. կամ ՚ի բաց մեկնիլ. կմ տեղի տալ. կմ փախչիլ: 1. Թագ. 18. 11: և 1. Մակ. 11. 46: Յոբ. 14. 2: և Յես. 5. 13:

Խոյր. խուրի. իւ. ից. օք: || գլխարկ, զոր դնէին ՚ի գլուխս իւրեանց քահանայքն հնոյ օրինի, որ ունէր զձև եկեղեցական տաղաւարի. և էր գործեալ շերտ շերտ իբրև զսեխ: Եւ էր կրկին. մինն քահանայապետից, որ էր կարճ քան զպարզ քահանայիցն, և ունէր զերև բոլորեալ զկապս ոսկեզարդս իբրև զպսակս, և յառաջոյ կողմանէ եդեալ ունէր զթիթեղն ոսկի. ՚ի վերայ որոյ թերթ ոսկւոյ, յորում գրեալ կայր անունն Տն: Իսկ միւսն էր հասարակ քահանայից, որ էր բարձրագոյն քան զքահանայապետացն. բայց ոչ ունէր զթիթեղն. այլ միայն զբեհեզեայ կապս, զորս արուեստիւ փաթութէին զխուրիւ, և լինէր նմ այն առ ՚ի զարդ: Ելից. 28. 4. և 37. և 40: Ղևտ. 8. 9. և 13: Եւ այսպիսի գեղեցկազարդ կապքս խուրին, կոչեցեալ լինէին ապարօշ: Ելից. 39. 26: Բայց ըստ ոմանց խոյրս այս՝ էր լուսնաձև, զոր կազմէին ՚ի բեհեզոյ. կմ ՚ի կտաւոյ. և ՚ի տաճարին մինչ ՚ի պաշտաման կային, դնէին ՚ի գլուխս իւրեանց: Իսկ մերթ զայսպիսի խոյրս յօրինէին ՚ի հնումն ոսկեզարդ անկուածով, և եդեալ զնոքօք պսակս, կամ թագս՝ դնէին թագաւորք ՚ի գլուխս իւրեանց: Եզեկ. 21. 26: Խորէն. բ. գր. 31: Մերթ ևս բառս խոյր՝ նշանակէ զայն կամարն, զոր կազմեալ արուեստիւ ՚ի բեհեզոյ, կամ ՚ի պատուական մետաքսէ, և արարեալ իբրև զթագ՝ կամ պսակ, կապէին թագաւորք սպարսից ՚ի ճակատս իւրեանց, ՚ի նշանակ վեհափառութեան, կմ պատուոյ: 1. Եզր. 3. 6: Եւ այս կամար յաճախապէս կոչի ապարօշ. զոր բազմիցս ոսկիաւոր, և մարգարտայեաւ յօրինեալ կապէին կանայք ՚ի ճակատս իւրեանց, որպիսի էր ապարօշն յուդիթայ: Յուդիթ. 10. 3: Մերթ ևս նշանակէ զարքայական թագն. և կամ զպսակն: Յայտ. 12. 3: Իսկ մերթ խոյր կոչի եպիսկոպոսական թագն. և մերթ տաղաւարն եկեղեցական: Մերթ ևս գլխարկն, որ ունի զփակեղ. ՚ի ղաւուխն. և կամ որ մորթով կազմի. ՚ի ղալփախն կոչին խոյր: Եւ ելանէ ՚ի սմանէ բառս արտախուրակ, որ ՚ի տեղւոջ իւրում առցաւ:

Խոյրագիր. գրի. ու. աց. օք: || դնող զխոյր ՚ի գլուխ ուրուք, կմ կրող ՚ի գլուխ իւր զխոյր. կմ թագադիր: [illegible]:

Խոյրարար. ի. աւ. աց. օք: || զխոյր առնող. ՚ի զգլխարկ, կմ զթագ կազմող, և յօրինող ՚ի բեհեզոյ, կմ ՚ի մետաքսէ, և յայլոց նիւթոց: ՚Ի այնմ Խորէն. բ. գր. 30. Զխոյրարար ոմն մետաքսագործ մկրտեալ. ՚ի զմետաքսեայ խոյր կազմող: Բայց ըստ սխալմամբ գրչաց փոխանակ խոյրարարին՝ դնի խոհարար. որ ոչ է այնպէս, որպէս յայտ է ՚ի ձեռագրէն. նաև ՚ի բանից 31. գլխոյն նորին գրոց. ուր զանանէ գրի կազմել զխոյր:

Խոյող. ողի. իւ. ից. իւք: || շրջապատող զարդ ինչ. կմ գրուագ. որ շուրջ զգլխով սեանն

'ի վ(ե)ր խոյակին գնի, որոց հայեցուածքն են գէպ 'ի վայր, և ձևն իբրև զձարմանդ. ӄ իբրև զօղաձև զուլք: Ելից. 38. 17. և 19. և 28:

Խոնարհ. ի. աւ. աց. օք: || մերթ նշանակի նուաստ. կմ՛ վայրագոյն. կմ՛ ցածագոյն. կմ՛ ստորին: Մարկ. 14. 66: մերթ եւս 'ի վայր: Ելից. 34. 8: Ծննդ. 42. 6: Մատ. 2. 16: մերթ եւս նշանակէ զայր առաքինի, որ խոկալով ճանաչելով զիւր նուաստութիւն, միշտ 'ի նուաստութեան ունի զինքն, և նուաստ զոլ ճանաչէ. և որքան բանք կատարելութեան աստացին յայլոց զինքենէ՝ միշտ ունի 'ի մտի զայս, թէ նոքա մի կատարելութեան իւրեանց ասեն, և կմ՛ ոչ գիտելով. և ինքն խոկալով գիտէ զինքն, և ճանաչէ զոլ աղքատ յամ՛ կատարելութեց. և լցեալ ամ՛ պակասութբք, և այսու 'ի նախատինս ոչ վրդովի:

Խոնարհագոյն. գունի. իւ. ից. իւք: || նուաստագոյն. կմ՛ ցածագոյն. կմ՛ վայրագոյն. կմ՛ ստորնագոյն: Իսկ մերթ նշանակէ զայն, որ յոյժ նուաստ և չնչին համարի զինքն:

Խոնարհաձիգ. (Նախդրիւ հոլովի.) || զինքն 'ի խոնարհ և 'ի ստորին տեղիս ձգօղ. ӄ քարշօղ: Իսկ մերթ նշանակէ զայն, որ 'ի նմը ուժաւ տեղիս անկեալ. կմ՛ եղեալ կայ: Աճգուր:

Խոնարհամիտ. մտի. աւ. աց. օք: || զխոնարհ միտս. կմ՛ զմիտս ունօղ. կմ՛ խոնարհսրտա֊ րոյ: Մծբն. ժժ:

Խոնարհամտութիւն. թեան: || խոնարհասր֊ տութիւն. կմ՛ խոնարհաբարոյութիւն. կմ՛ խո֊ նարհութիւն: Սիր. 2. հատ. իէ:

ταπεινόω

Խոնարհեցուցանեմ. ցուցի. ցոյ. ել: (անցող.) || ցածուցանել. կմ՛ կորացուցանել. կամ նուաստացուցանել. կմ՛ 'ի ներքոյ իրութե նուաճել, կմ՛ նկուն առնել: Մատթ. 23. 12:

Խոնարհիմ. եցայ. եա՛ց. լի՛: (ձայնակ.) || ցածնալ. կմ՛ թեքիլ. կմ՛ 'ի վայր կորանալ. կմ՛ զիջանիլ. կամ հակիլ: Գաղ. 2. 13: Եւ կամ համարելով զինքն նուաստ՝ միշտ ստորադրել զինքն այլոց: Իսկ մինչ ասի զքայլից խոնարհիլ. իմանի լծորդիլն. կմ՛ լծորդամամբ ելանելն և իջանելն:

Խոնարհութիւն. թեան: || նուաստութիւն. կմ՛ ցածութիւն: Իսկ մերթ նշանակէ զառաքինութիւն ինչ, որով մարդն իւր ոչ լցեալ կատարելութբ՝ և արդութբ, ճանաչէ զինքն խոկալով լցեալ ամ՛ պակասութբ, և մե֊ ղօք: և կմ՛ է ունակութիւն ինչ, որով որք ոչ ունին զայս միտս առ 'ի տեսանել յինքեանն զմասն ինչ կատարելութեան. և 'ի յընկերին զմասն ինչ անկատարութեան. այլ՝ ունին զայս միտս յոյժ սրտանց առ պակասութիւնս իւր, և առ կատարելութիւնս այլոց:

Խոնարհուստ: || մակբայ տեղական, որ 'ի գործ ածի նախդրիւ այսպէս. 'ի խոնարհուստ. և նշանակէ՝ 'ի ստորուստ. ӄ 'ի ստորին, և 'ի ցածագոյն տեղւոջէ. կմ՛ 'ի ներքուստ:

Խոնաւ. ի. իւ. ից. իւք. կմ՛ աց. օք: || գէճ. կմ՛ թաց. կմ՛ ջրոտ. կմ՛ հիւթաւոր: ռամկ. նէմլի: Եւ մերթ նշանակէ զխոնաւութիւն, կմ՛ զգիճութիւն: Խորէն. ժ. պր. 62:

Խոնաւութիւն. թեան: || թացութիւն. կմ՛ գի֊ ճութիւն. կմ՛ խոնաւ հիւթ: ռամկ. նէմ: Յոբ. 8. 16: Եզեկ. 7. 17:

Խոնաւուտ: (Նախդրիւ հոլովի.) || խոնաւ֊ նաւոր. ӄ զխոնաւութիւն ունօղ. կմ՛ խոնաւ, և գէճ. որպիսիք են թաց և ջրոտ տեղիք:

Խոնջ. ի. իւ. ից. իւք: || խոնջեցեալ. ӄ վաս֊ տակեալ. կամ աշխատեցեալ: ռամկ. յոգ֊ նած. Յուդիթ. 13. 2: Իսկ մերթ նշանակէ զխոնջումն. կմ՛ զաշխատանս:

Խոնջիմ. եցայ. եա՛. ել: (ձայնակր.) || վաս֊ տակիլ. կամ աշխատիլ: ռամկ. յոգնիլ: Ո֊ կէ. 1. հատ. ը:

Խոշոշեմ. եցի. եա՛. ել: (Ներգործ.) || տպա֊ նանել. կամ խոզխողել: և 'ի տմանէ ելանէ բառս մարդախոշոշ. որ է մարդասպան. ստ՛ գնի 2. Մակ. 9. 28:

Խոշոտ. ի. իւ. ից. իւք: || չորացեալ խաւիւ. կմ՛ յարդ. կամ փայտ. և այլք նմանք, որք լինին նիւթ՝ և բորբոքիչ հրոյ:

Խոշոր. ի. իւ. ից. իւք: || հաստ. կմ՛ կարծր. կամ խիստ. կմ՛ բիրտ. կմ՛ թանձր. կմ՛ կո֊ պիտ: և այս ասի զզգեստուց. զձայնէ. ըղ կերակրոյ. զհերաց. և զնմանեաց: Դանիէլ. իզ: Իսկ մերթ նշանակէ՝ զծանր. կմ՛ ըղ դժուարաբառնալին. և կամ զդժնդակն: Նարէկ. դէ:

Խոշորաբեղ. ի. իւ. ից. իւք: || խուժա֊ դէմ. կմ՛ զազրադէմ. կմ՛ դարշատեսիլ. կմ՛ դաժանադէմ: Խորէն. ը. պր. 34:

Խոշորագոյն. գունի. իւ. ից. իւք: || կարծրա֊ գոյն. կմ՛ հաստագոյն. կմ՛ խստագոյն. կմ՛ յոյժ բիրտ. և այս ասի զզգեստուց, զկերա֊ կրոյ, և զայլոց նմանեաց: Լամբրոն:

Խոշորազգեաց. գեցի. իւ. աց. օք: || տես զԽոշորազգեստ:

Խոշորազգեստ. ի. իւ. ից. իւք: || խոշոր, կմ՛ կարծր, և հաստ հանդերձիւք զգեստաւո֊ րեալ. կմ՛ զխոշոր զգեցօղ:

Խոշորակեաց. կեցի. աւ. աց. օք: || զխոշոր կեանս 'ի գործ ածելով կեցօղ, որպիսիք են նոքա, որք խոշոր անկողինս, կմ՛ կերակ֊ րովք, և կամ հանդերձիւք շատանան:

Խոշորահեր. ի. աւ. աց. օք: || զհաստ, և ըղ կարծր հերս ունօղ:

Խոշորաճաշակ. ի. աւ. աց. օք: || զդժնդակա֊ կան, կամ զհաստ կերակուր ուտօղ. որպի֊ սիք են նոքա. որք զաղքատիկ, կամ զըն֊ դեղէնս, և կամ զբանջարեղէնս ճաշակեն:

Խոշորացոյց. ցուցի. իւ. ից. իւք: || ակնոց. կամ արհեստաւոր շինեցեալ ապակի, որ զման֊ րունս իբր խոշորագոյն ցուցանէ:

Խոշորութիւն. թեան: || կարծրութիւն. կմ՛ խըս֊ տութիւն. կամ թանձրութիւն. կմ՛ հաստութիւն. կամ կոպտութիւն. և կամ բրտութիւն:

Խոշտամ. տացայ. խոշտա՛. ալ: (չէզոք.) || կաղալ. կամ հաշմ ոտիւք լինել: Կիւրղ. եզեկ. ը:

Խոշտանգանք. կամ խոշտանկանք. անաց. օք: (անեզական.) || չարչարանք. կամ տան֊ ջանք. կամ վիշտք. կամ նեղութիւն. կամ

Digitized by Google

տառապանք։ 2. Մակ. 7. 1։

Խռշտանգեմ։ || տե՛ս 'ի ներքոյ զԽռշտանկել։ Խորէն. Բ. գլ. 13։

Խռշտանկեմ. կմ խռշտանգեմ. եցի. եա՛. ել։ (Ներգործ.) || տանջել. կմ չարչարել. կմ տառապեցուցանել. կամ նեղել. կմ վշտացուցանել։ 1. Թագ. 6. 32։ և 8. 27։ Իմաստ. 2. 19։ և Սաղմ. 72. 14։

Խոչ. ի. ին. ից. իւք։ || խութ. կմ արգելք. կամ ընդդէմ անկանօղ ընթացից. կմ գայթակղեցուցիչ ոտից. և կմ այն՝ որ լեռն զփուշ, և զբևեռ մնեալ ուրեք վշտացուցանէ զոք. և կամ խափանէ յիմեքէ գործոյ։ Եւ այս երբեմն ընդ խութ բառիս 'ի միասին 'ի գործածի այսպէս. 'ի բաց առնել զխոչ և զխութ. կամ խոչ և խութ լինել. և զնոյն նշանակէ։ Թուոց. 33. 55։ 2. Օրին. 7. 16։ Յեսու. 23. 13։ Եսայ. 57. 14։ և Եզեկ. 28. 24։

Խոչընդակն։ (Նախդրիւ հոլովի։) || խոչ ընդ ակն. յդ արգելք 'ի յաչս. որպիսի է փուշն, կամ բևեռն, և կամ նետն, որք մխին յաչս, և այսու իմանի այն ամ, որ գայթակղեցուցիչ լինի ումեք, և կմ առ գել, և խափան յիմիք գործոյ. կմ սաս տիկ ցաւեցուցիչ։ Դատ. 11. 35։ ըստ այսմ ոճի է և խոչընդոտն, զոր տեսցես զկնի։

Խոչընդոտն։ (Նախդրիւ հոլովի.) || խոչ. կմ արգելք ոտից, կմ ոտնատու, որ գայթակղեցուցանէ զոք 'ի յընթացս։ և այս մերթ առեալ լինի փոխանակ այնր ամի, որ արգել, և խափան լինի ումեք յինչ և իցէ գործս։ Կիւրղի Եզեկ. Դ։

Խոչքար։ || տե՛ս զԽոզքարակ։

Խոչքարակ. կամ խոչկարակ. ի. աՆ. աց. աք։ || տե՛ս զԽոզքարակ։

Խոպամ. ացայ. խոպա՛. ալ։ (Ընդմիջ.) || խնդալ. կամ ուրախանալ. կմ ցնծալ. և կմ խայտալ։

Խոպան. ի. աՆ. աց. օք։ || անգործ. կմ անհերկ երկիր. կմ փշաբեր. կմ կորդ. կամ անպտղացեալ։ Եսայ. 5. 6։ և 7. 25։ մերթ եւս առնանի փոխանակ այնր իրի, որ կար գեցեալ է առ բարի ինչ. և ոչ ժամանէ առ այն։ Իսկ մերթ նշանակէ զխանգարեալն. կամ զեղծեալն՝ և զանկարգացեալն։

Խոպանանամ. ացայ. ացիր. նալ։ (Ընդմիջ.) || անպտղանալ. կամ անբեր, կմ փշաբեր լինել. կամ կորդանալ. կամ վայրենանալ. կամ աներակ, և անպիտան լինել։ Իմաստ. 4. 19։ և 10. 7։ Եսայ. 7. 23։ Երեմ. 2. 31։ և Նաւում. 1. 10։ Մերթ եւս նմանութբ առեալ, նշանակէ՝ խանգարել. կամ ապականել. կմ եղծանել. կամ անկարգանալ։ Նարեկ. ԿԴ։ Սոփ. 2. հատ. ԺԹ։

Խոպանացուցանեմ. ցուցի. ացի. ել։ (Անցող.) || անպտղացուցանել. կամ կորդ, և վայրենի առնել. և կամ անգործ, և փշաբեր առնել զերկիր ինչ։ Իսկ մերթ առեալ լինի վն աղարտելոյ, կամ խանգարելոյ. և կամ ապականելոյ։

Խոպոպիք. պեաց. եօք։ (անեզական.) || 'ի վր վարսից կանանց ձևացեալ կնճիռքն առ 'ի զարդ. կամ յայլոց նիւթոց եղեալ զարդք հիւսեալք ընդ մազին 'ի վր վարսից. և ըստ այսմ է 'ի գիրս Խորէն. Բ. գլ. 60. ուր ասի։ Եւ զվարսիցն փետտել զխոպոպիս, հրամայէ քարշել. և այլն։

Խոռապետ. ի. աՆ. աց. օք։ || առաջին փո խանորդ արքայի. կմ մեծ, և նախապետ կան 'ի պալատի արքայի. և կմ առաջին իշ խան։ 2. Թագ. 8. 18։

Խոռնոզեմ. եցի. եա՛. ել։ (Ներգործ.) || ըր բախողխող առնել. կամ անդամահատ առ նել. և կամ կտրատել. և խոռել զանդամս ուրուք։

Խոռոչ. կամ խորոճ. ի. աՆ. աց. օք։ || փա պար. կամ խորափիտ. յդ ծոցաւոր դա տարկութիւն, որ 'ի խորս երկրի. կամ 'ի լե րինս. կմ 'ի մեծամեծ վէմս։ ըստ այսմ ասի և զայլոց իրաց, որք ունին զծոցաւոր փոսս, թէ մեծ իցէ, և թէ փոքր։ 'Ի Հայս հարց. ինն. և իզ։ Իսկ մերթ նշանակէ ըզ փապարուտն. կամ զլայն, և զխոր դա տարկութիւն ունօղն. և կամ զծոցաւորն, և ըստ այսմ ասի, 'ի Հայս հարց. իզ. Եւ ներքուստ լայնացեալ խորոշ էր գուբն։

Խոռոչակ. ի. ին. ից. իւք։ || նոյն է ընդ վերնոյն։

Խոռոչանամ. ացայ. ացիր. նալ։ (Ընդմիջ.) || տե՛ս 'ի ներքոյ զԽոռոչել։

Խոռոչիմ. եցայ. եա՛ց. իլ։ (Ձայնակր.) || խո ռոչաւոր լինել. յդ ունել զծոցաւոր դա տարկութիւն. կմ խորանալ, և ծոցաւոր լի նել. և ըստ այսմ՝ յորժամ ջուրք ծովու, կամ գետոց, պատյա առեալ խորափոս լի նին, ասին խոռոչիլ։ Աշգաբ։

Խոստանամ. ացայ. ցիր. նալ։ (Ներգործ.) || խոստումն առնել. յդ տալ ումեք զյոյս առնելոյ, կամ տալոյ նմա զիր ինչ. կամ ասել զիրէ իմեքէ՝ թէ առնեմ։ Թուոց. 10. 29։ Տիտ. 1. 2։

Խոստովան։ || ոչ հոլովի. այլ ընդ բայի շա րակցի այսպէս. խոստովան լինել. կմ խոս տովան առնել. և նշանակէ՝ խոստովանել. յդ դաւանել. կմ՛ առել բերանով զայն՝ զոր կրէ յինքեան. կամ զոր գիտէ. և այլն։ ռամկ. իխրար ընէլ։ Յոհ. 1. 20։ Եւ կմ զմեղս և զպակասութիւնս իւր ասել և յայտնել ու մեք։ Ղուկ. 5. 5։ Մատթ. 3. 6։ Մերթ եւս նը շանակէ զգոհութիւն, և զկատարելութիւն ուրուք հռչակել, կմ օրհնել, և բարձրա ցուցանել զոք, և գոհանալ զնմանէ։ և ըստ այսմ այս բառ գրեթէ միշտ առի զայ։ Սաղմ. 6. 6։ և 73. 19։ և 144. 10։

Խոստովանակից. կցի. աՆ. աց. օք։ || կցորդ և ընկեր ումեք 'ի նոյնում խոստովանու թեան, կմ սրբութեան, և կմ դաւանութեան։

Խոստովանահայր. հօր. հարք. հարց. հարբք։ || խոստովանեցուցիչ հայր. որ ասի զքահանայէ, որ լսէ զխոստովանութիւնս ժողովրդեան։

Խոստովանիմ. եցայ. եա՛. կամ եա՛ց. իլ։ (Հա

սարակ

Digitized by Google

տարած բայ․) || Ընկրկեալ առնել զոյն՝ զոր հաճեալ տայր․ և կմ դաւանել։ Ղուկ․ 12․8։ Մերթ ևս նշանակէ սատարանել զոյն զոր տացեալ է, կամ գործեալ․ և կմ զոր ունի և կամ յինքեան ։ ռամկ․ ըճըրը ընել։ Եւ մերթ նշանակէ՝ պատմել զմեղս իւր քահանային, որով կատարի խորհուրդ ապաշխարութեան ։

Խոստովանողական․ ի․ աւ․ աց․ օք։ || այն ամ՝, որ վերաբերի առ խոստովանօղն․ ցի առ դաւանօղն, և կամ առ վկայօղն զճշմարտութիւն հաւատոյ։ Խորէն․ ꞵ․ գլ․ 86։

Խոստովանութիւն․ թեան։ || դաւանութիւն․ կամ սատարութիւն, որով ոք առնէ զայն՝ զոր ընդունի, կամ հաւատայ. բանիւ զայն՝ զոր այլք ասեն․ և այլն։ ռամկօք․ ըճըրը ։ Մերթ ևս նշանակէ՝ զպատմութիւն մեղաց հանդերձ ամբաստանութեամբ անձին ։ Իսկ մերթ նշանակէ՝ զհռչակումն կատարելութեցն Այ․ կամ օրհնութիւն և գովութիւն, որ առնեալ լինի Այ ։ Սաղ․ 103․ 1։ Իսկ Ղեւ․ 22․18․ և 21․ նշանակի՝ խոստումն, կմ ասել, ընկրկանօք առնել․ կամ մատուցանել ումեք զինչ․ և այլն ։

Խոստովանօղ․ նողի․ աւ․ աց․ օք ։ || դաւանօղ․ կամ սատարօղ ։ Բայց ՚ի հնումն՝ այս առ անուանմբ անուանեալին զմարտիրոսս, որք խոստովանեալ զՔս Այ, և կմ զինքեանս դոլ քրիստոնեայս, մեռանէին ։ Մերթ ևս խոստովանող ասիւր նա՝ որ վս խոստովանելոյն զՔն, կրէր զբազմազան չարչարանս և զտանջանս յանհաւատից, թէև ոչ մեռանիցէր․ և ըստ այսմ. նոյն հայրն մեր Գրիգոր Լուսաւորիչն, կոչի խոստովանող։

Խոստովանօղ վայելի․ այնոյ․ ով․ ոց․ ովք։ || խոստովանական․ ցի որ վերաբերի առ խոստովանիլն ։ Իսկ մերթ է անուն խաղի երաժշտական երգոց, որ ունի ։ զայս ձև ։ ⁀

Խոստովնդրանխտ․ դխտոյ․ ով։ (անյոգնական․) || դուստր խոստովնդրոյ․ որ է քոյր սերն տորդատայ արքային հայոց ։ Խորէն․ ꞵ․ գլ․ 79․ և 87 ։ Քանզի վասնկս դուխտ, յարելով ՚ի յատուկ անուանս, նշանակէ զեգ դստակն, ունողին զնոյն անուն ․ ուստի փոխանակ ասելոյ՝ դուստր սանատրկոյ, ասի՝ սանատրուխտ ։ Խորէն․ ꞵ․ գլ․ 31․ և 33 ։ Սոյնպէս փոխանակ ասելոյ՝ դուստր որմզդոյ՝ ասի որմզդուխտ ։ Խորէն․ ꞵ․ գլ․ 36։

Խոտ․ ոյ․ ով․ ոց․ ովք։ || է հասարակ անուն՝ ինչ, որով իմանի ո՛և իցէ դալարի․ կամ բանջարեղէն․ կամ սէզ․ որք կերակուր լի նին կենդանեաց․ որ և ռամկ․ ասի խոտ ։

Խոտաբուտ․ բտի․ իւ․ ից․ իւք։ || խոտով բուծեալ, կամ կերակրեցեալ։ Մերթ ևս նշանակէ զխոտեղէնն, որպ ասի․ 2․ Մակ․ 5․27․ խոտաբուտ կերակրով կերակրեալ․ ցի խոտեղէն կերակրով ։

Խոտակեր․ ի․ իւ․ աց․ օք։ || զխոտ ուտօղ․ կամ խոտաճարակ ։ Սաղմ․ 105․20։

Խոտաճարակ․ ի․ աւ․ աց․ օք ։ || զխոտ ճարակօղ․ ցի ուտօղ․ կամ խոտով սնուցօղ․ Նոր բէկ․ ՚ի գովեստ աստուծոյ ։ Եւ մինչ ասի․ խոտաճարակ շրջել․ իմանի՝ զխոտ ճարակելով, կմ ուտելով շրջել ։ և անցուցանել զկեանս ։ 2․ Մակ․ 10․6։

Խոտաճարակիմ․ եցայ․ եալ․ իլ։ (ձայնակիր․) || զխոտ ճարակել․ կամ խոտով սնիլ․ և կմ զխոտ ուտել։ Յոբ․ 40․10։

Խոտան․ ի․ իւ․ ից․ իւք ։ || խոտելի․ կմ անպիտան․ կամ անարգ․ կմ վատթար․ կմ յոռի․ կմ ՚ի բաց ձգելի․ և ՚ի բաց մերժելի իբրև զոչինչ։ Իմաստ․ 9․4։ և 13․12․ Երեմ․ 6․30։ Մատթ․ 13․48։ 1․ Տիմ․ 4․4։

Խոտաճէտ․ ճետի․ իւ․ ից․ իւք ։ || լցեալ խոտով․ կամ առատացեալ դալարեօք․ որպէս են խոտաւէտ դաշտք․ կմ տեղիք ։ Խորէն․ ꞵ․ գլ․ 6։

Խոտեմ․ եցի․ եալ․ ել։ (ներգործ․) || քամահել․ կամ անարգել․ կմ անգոսնել․ կմ ոչինչ համարել․ կմ արհամարհել․ և կմ մերժել իբրև զոչինչ։ 3․ Մակ․ 3․15։ Յոբ․ 42․6։

Խոտորագոյն․ գունի․ իւ․ ից․ իւք։ || առաւել խոտորեալ․ կմ յոյժ թիւրեալ․ կամ կարի թեքեալ․ կմ մոլորական։ Յոբ․ 4․18։

Խոտորեմ․ եցի․ եալ․ ել։ (ներգործ․) || առ ՚ի ներքոյ զխոտորեցուցանեմ․ զի նոյն է ընդ նմա։ Եւ այս բայ՝ զօրութեամբ է անցողական ։ Եւլեւ․ 23․6։

Խոտորեցուցանեմ․ եցուցի․ ցի․ ել։ (անցողակ․) || խուսափեցուցանել․ կամ յետս դարձուցանել․ կամ թիւրել․ կմ ծռել․ կամ շեղեցուցանել․ կմ մոլորեցուցանել։ Թուոց․ 32․7։

Խոտորիմ․ եցայ․ եալ․ իլ։ (ձայնակիր․) || խոյս տալ․ կամ խուսափել․ կամ հրաժարիլ․ կամ ՚ի բաց կալ․ կամ թեքիլ․ կամ շեղիլ․ կմ թիւրիլ․ և կամ դառնալ։ Ծնն․ 19․3։ 2․ Թագ․ 2․21։ և Սաղմ․ 36․27։

Խոտորնակ․ ի․ աւ․ աց․ օք ։ || խոտորեալ յուղղութենէ․ կամ թիւր և մոլար․ կամ խեղաթիւր․ կամ ներհակ և հակառակ։ Եւ ըստ այսմ ասի՝ խոտորնակ միտք։ խոտորնակ ճանապարհ․ և այլն ։ Եզեկ․ 16․5։ Մծբն․ ժգ։ Նարեկ․ ծզ։ Եւ յատկապէս խոտորնակ ասի, որ կողմնակի է, կմ շեղ։ և կմ որ ՚ի դնիլն իւրեք ընդ երկայնութիւն, ինքն ը լայնութիւն դնի ։ ռամկ․ չէօրէկ։ Եւ ըստ այսմ թէպ խաչին՝ ըստ որում ընդ հակառակս դնին բնոյ փայտերն՝ որ ուղիղ կանգնեալ կայ, կոչին խոտորնակ ։ Նարեկ․ զզ։ Սոյնպէս և այն՝ որ ՚ի յընթանալն ուղիղ յարաժամ ոչ, ինքն ՚ի հիւսիսոյ ՚ի հարաւ ընթանայ, ասի խոտորնակս ընթանալ։ Եւ յայսմանէ առեալ, ո՛և իցէ անձն՝ որ ը հակառակս երթայ, կամ ներհակարար ընթանայ, ասի խոտորնակս գնալ։ Ղեւ․ 26․21․ և 24․ և 40։

Խոտորնական․ ի․ աւ․ աց․ օք ։ || խոտորնակ եղեալ․ կամ խոտորօղ։

Խոտորնակի։ (մակբայ որակական․) || խոտորնակս․ ցի խոտորնակաբար․ կամ ներհակաբար․ կամ ը հակառակս ։ Իսկ մերթ վարի իբրև գանուն․ և նշանակէ՝ խոտորնակ․ կմ ներհակ․ կամ հակադարձ․ կմ հակա-

Digitized by Google

հանկարծակին։ Եզեկ. 16. 34։

Խոտորնակիմ. եցայ. եայց. իլ։ (ձայնակր.) || խոտորնակ լինել. կմ՝ խոտորիլ. կմ՝ թիւրիլ. կամ շեղիլ. կամ խոտորնակի ընթանալ. կամ ներհակ գնալ. կամ ընդդիմանալ. և կամ հակառակիլ։ Ոսկէ. ի. հռով. ա։

Խոտորումն. տորման. մամբ. մանց. մամբք։ || խոտորեցումն. կմ՝ շեղումն. կամ թիւրութիւն. կամ մոլորութիւն։ Եզեկ. 28. 16։

Խոր. ոյ. ով. ոց. ովք։ || մերթ վարի տարածականաբար. և նշանակէ խորին. կամ որ տարածեալ 'ի խորս է, իջեալ. ռամկօրէն խորունկ։ Յոբ. 11. 8։ Առակ. 22. 14։ Իսկ մերթ նշանակէ զծոցաւորն. կամ որ 'ի մէջ իւր ունի զգաստարկութիւն իբրև զփոսորակ անօթս։ և ըստ այսմ առի Եսայ. 27. 8. զբին նեցեալ սեղանոյն. խոր տախտակամած արասցես զնա։ Երբեմն ևս նշանակէ ըղ տատանկին. կմ՝ զտանուելագոյնն։ և ըստ այսմ առի, խոր մտածութիւն. կամ աղքատութիւն, կամ ծերութիւն, կամ տխրութիւն. և այլն։ Իմաստ. 16. 11։ Ըստ այսմ ևս իմանի մինչ առի. 'ի խոր խոցանել։ Նորէկ. զէ։ Մերթ ևս նշանակէ զխրթինս. կամ զդժուարիմացն, և զգաղտնիսն։ և ըստ այսմ առի. խոր իմաստութիւն. կմ՝ բան. կմ՝ խորհուրդ. և այլն։ Սաղմ. 91. 6։ Իսկ երբեմն վարի գոյականաբար. և յայնժամ ըստ մեծի մասին 'ի գործ առի իբրև զանեզական. և նշանակէ զխորութիւն, կամ զանդունդս երկրի, կամ ծովու, կամ գետոյ։ Եսայ. 15. 5։ Յոբ. 28. 11։ Սաղմ. 77. 15։ կամ սրտի, կմ՝ գաղտնի խորհրդոց, կմ՝ իմաստութեան, և այլոց նմանեաց։ Հռոմ. 11. 33։

Խորաբանութիւն. թեան։ || խորին արուեստաբանութիւն. կմ՝ ճարտարաբանութիւն. զի ճարտասանական արուեստիւ խորին զրոյց. կմ՝ հնարագիտական բան։ Կիւրղի Եղէն. դ։

Խորագէտ. գիտի. աւ. ալ. օք։ || հնարագէտ. կամ ճարտար մարդ. կմ՝ իմաստուն. կամ խոհեմ. կամ որոյ միտքն և գիտութիւնն են արթուն, և ոչ խափանի իբրև զսիմարս, կմ՝ զմիամիտս։ Եւ առաջալ խորագէտ, իբր թէ, զխորս գիտող. զի այնպիսին զխորին խորհուրդս իրաց, կմ՝ զգաղտնիս արուեստութեան և զդարանագոյն նորա, որք ծածկեն 'ի մարդկանէ՝ գիտէ, և ըստ այնմ գործէ, և զգուշանայ։ ռամկ. շարպիկ։ և այս մերթ առի գովելոյ, և մերթ զխորամանկ կենդանեաց։ Առակ. 12. 16։ և 14. 8։ և 28. 2։ Մատթ. 10. 16։ և 2. Կորնթ. 12. 16։

Խորագիտագոյն. գունի. իւ. եց. իւք։ || յոյժ խորագէտ. կամ յոյժ հնարագէտ, և ճարտար. կամ իմաստնագոյն. կամ խոհեմագոյն. որ զխորին և զծածուկ խորհուրդս երկնի, կամ զորպիսութիւն գիտէ։ Առակ. 19. 25։ և 21. 11։

Խորագիտութիւն. թեան։ || հնարագիտութիւն. կամ ճարտարութիւն. կամ խորամանկութիւն. կամ հանճարեղ գիտութիւն. և կմ՝ խոհեմութիւն։ 2. Մակ. 2. 31։ Առակ. 1. 4։ 1. Կորնթ. 3. 19։

Խորադիր. դրի. աւ. աց. օք։ || ցուցակ ինչ. կամ գրուած ինչ համառօտ, որ դնի 'ի սկզբան գլխոց գրոց. որով ցուցանի թէ զորմէ՞ իրէ խօսեցեալ լինի յայնմիկ գլխոջ։

Խորագոյն. գունի. իւ. եց. իւք։ || առաւել խոր. կամ ցածագոյն. և կամ վայրագոյն։ Ղևտ. 13. 20։

Խորախորհուրդ։ (Նախադրբիւ հոլովի.) || ըղ խորին և զգաղտնի խորհուրդս ունօղ։ Նորէկ. զթ։

Խորախօս. խի. իւ. եց. իւք։ || զխորինս, և ըղ խրթինս խօսող. կամ զխորքն իրաց վարդապետող։ Բարսղ. Եղէն. 3. 5. նշանակէ զխորաբարբառն. զի որոյ խօսքն դժուարաւ հասկացեալ լինին։

Խորակն. ակնի. իւ. լոց. իւք։ || ունօղ զխոր ակն. զի այն որոյ աչքն է փոսորակ. կամ 'ի ներքս խորացեալ։ ռամկ. խոր աչք ունօղ։ Խորէն. Ժ. պր. 7։

Խորաձոր. ոյ. ով. ոց. ովք։ || խորին ձոր։ ռամկօրէն խորունկ ձոր։ Եսայ. 57. 5։ Խորէն. Գ. պր. 45։

Խորամանկ. ի. իւ. եց. իւք։ կամ աց. օք։ || հնարագէտ 'ի չարիս. կամ նենգաւոր. կմ՝ խորագիտութիւն նիւթօղ չարեաց՝ կամ դաւաճանօղ՝ և խաբօղ։ Եւ առաջալ խորամանկ. զի այնպիսին՝ խորին և ծածուկ հնարիւք մանէ. զի նիւթէ այլոց չարիս։ Յոբ. 5. 12։ Առակ. 16. 28։

Խորամանկեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) || խորամանկութիւն անել. կմ՝ զնենգութիւն գործել։ 1. Թագ. 23. 22։ 3. Մակ. 3. 11։ կմ՝ դաւաճանել. կամ նենգել. կամ հնարիւք զրկել՝ կամ պատրել։ 3. Մակ. 7. 6։ Իսկ մերթ նիւթել, կամ հնարել չարիս։ 2. Մակ. 7. 31։ կամ խորամանկութեամբ խորհել զինչ, կամ անել։ Սաղմ. 82. 4։

Խորամանկութիւն. թեան։ || հնարագիտութիւն չարեաց. կամ նենգութիւն. կամ դաւաճանութիւն. կամ նենգաւորութիւն. կամ ծածուկ հնարիւք խաբէութիւն. և կամ խարդախութիւն։ Մատ. 22. 18։ Գործ. 13. 10։ և Եփես. 4. 14։

Խորայատակ. ի. աւ. ալ. օք։ || ունօղ զխոր յատակ. որպիսիք են խոր ծովքն, կամ գետքն։ Խորէն. Ա. պր. 76։

Խորայոյզ. յուզի. իւ. եց. իւք։ || զխորս յուզօղ. որով մերթ իմանի այն, որ 'ի խորս ծովու և ջուրց յուզէ և որսայ զինչ. կմ՝ զխորս ջրոց յուզէ, և շարժէ, և ամբոխէ, և այս առի զձկնորսաց, ըստ որում գործ նց է ընդ ջրոյ։ Ոսկէ. 'ի Նախերգանին։ Իսկ մերթ իմանի նա՝ որ զխորս գիտասցէ, կամ գաղտնի խորհրդոց քննէ՝ և որոնէ։

Խորան. ի. աւ. աց. օք։ || վրան. կամ տաղաւար. յորում 'ի բացի օթեվանօղքն բնակին. ռամկօր. չադր։ Ծննդ. 12. 8։ և 18. 9։ Ելից. 1. 4։ Եբր. 11. 9։ Եւ երբեմն բառս խորան, առնանի փոխաբերակ մեծի տաղաւարին, զոր շինեաց մովսէս բազմազան յօրինուածովք հրամանաւ այն։ Եսայ. 26. 1։ Թագաւ. 16. 18. և 42։ Մերթ ևս կամարքն

Digitized by Google

երկնից խորան կոչէին ։ Ա. Եզր. 4. 34 ։ Իսկ երբեմն առնանի փոխանակ եկեղեցւոյ. կմ տաճարի ։ Եւ մերթ փոխանակ սրբոյ սեղանոյն. ուր քն պատարագի ։ Մերթ ևս նշանակէ զքառանկիւնի միջոցս տօմարական աղիւսակի, որք գծիւ որոշին 'ի միմեանց ։

Խորանակալ. ի. իւ. աց. օք ։ || կարօղ և կալող զխորան. որ զվրան ։ ռամկօր. չադըրճի ։ Գործ. 18. 3 ։

Խորանակցութիւն. թեան ։ || ընկերութիւն, կմ հաղորդակցութիւն բնակութեան բազմաց 'ի նոյնում խորանի. և ըստ այսմ բնակակցութիւն սրբոց 'ի կամարն երկնից արքայութեան կոչի խորանակցութիւն ։ Լամբրոն ։

Խորանամ. ացայ. ցիր. անալ ։ (ընդմիջակ.) || խոր լինիլ. կմ 'ի խորս իջանել ։ կմ փոսորակ լինիլ, և կամ ծոցաւոր եղանիլ ։ Խորէն. ա. գլ. 6 ։

Խորանայար. ի. աւ. աց. օք ։ || յարմարօղ զխորանն, որ կազմօղ և յօրինօղ խորանի, և ըստ այսմ շինօղն եկեղեցւոյ, կմ տաճարի, որք խորան կոչին, ասի՝ խորանայար ։ ըստ այնմ. Յն ործի.

Ղամբարափայլ շինել տաճար.

Այս սողոմոն խորանայար ։

Խորանայարկ. ի. աւ. աց. օք ։ || խորանաձև. կմ խորանակերպ. որ ունօղ զնմանութիւն և զձև խորանի. և կամ որ է խորանաձևման յարկ ։

Խորանանման. ի. իւ. ից. իւք ։ || խորանաձև. կմ գմբեթաձև. և կամ կամարաձև ։

Խորանաշէն. շինի. իւ. ից. իւք ։ || շինօղ խորանի ։ Իսկ մերթ նշանակէ զվրանակերպ, կամ զգմբեթաձև շինեցեալն, կմ կազմեցեալն ։

Խորանարդ. ի. աւ. աց. օք ։ կմ իւ. ից. իւք ։ || խորանաձև. կմ վրանաձև. և կմ գմբեթաձև. որպիսիք են պարունակքն երկնից. որք 'ի վր մեր իբրև զվրան գմբեթաձև տարածին ։ Աճառ ։ Իսկ մերթ նշանակէ զհամակողմեան քառակուսին. որ զայն, որ 'ի վեց կողմանցն ևս է քառակուսի. որպիսի է զարն, զոր ձգելով խաղան. և կամ ոմանք խարիսխք սեանց ։ Եւ ըստ այսմ է Յոբ. 38. 38. զի ասի. մածուցի ըզնա իբրև վիմաւ խորանարդ. որ իբրև ըզվէմ խորանարդ, զի խօսի զերկրէ. որ թէ պէտ յինքեանէ իբրև զփոշի, սակայն ած զնա այնպէս մածոյց, և հաստատեաց, մինչ զի իբրև զվէմ համակողմեան քառակուսի անշարժ և հաստատուն կայ ։ և ըստ այսմ եղանէ սա 'ի խորան բառէն, ըստ որում նշանակէ զքառակուսին ։

Խորանաւոր. ի. աւ. աց. օք ։ || խորանաբընակ. կմ վրանաւոր. որ 'ի վրանս բնակօղ ։ Խորէն. գ. գլ. 37 ։

Խորանափեղկ. ի. աւ. աց. օք ։ || փեղկ խորանի. որ երկայն թերթ, կամ կտաւ մորթոյ, կամ կտաւոյ վեղջինի, կամ առէեղջինի, որոց բաղուածք առ իրեարս առակցեցեալք, կազմի 'ի նոյանէ խորան ։ Ելից. 10. 20 ։

Խորապատոյատ. պատուածի. իւ. ից. իւք ։ || զխորբին պատոյատ առնօղ. կմ որ ունի զխորապըտոյտս. որպիսիք են խորացեալ շրջանք գետոց. կամ ծովու ։ Իսկ մերթ նշանակէ զխորբին պատոյտս. և զշրջանս ջուրց. և ըստ այսմ ասի 'ի խորապատոյատ անկեալ ։

Խորասոյզ. սուզի. իւ. ից. իւք ։ || 'ի խորս ջուրց, կմ 'ի խորս երկրի սուզեալ, որ իջեալ և ընկղմեցեալ ։ ռամկ. դըրին իւղած ։ Խորէն. ա. գլ. 58 ։

Խորասուզեմ. եցի. եա. ել ։ (ներգործ.) || 'ի խորս ջուրց սուզել, և ընկղմել. կամ 'ի խորս երկրի իջուցանել ։

Խորափիտ. փտի. իւ. ից. իւք ։ || խորք երկրի, կմ խոռոչք գբոց. կմ անդնդոց. կմ վիհ մեծ. կմ խորխորատ. որ խորունկ չուր ։ Յն ործի ։ Սիրաք. 12. 15 ։ Իսկ մերթ վարի ածականաբար, և նշանակէ զաստեղկ խորն. և ըստ այսմ ասի՝ խորափիտ ձոր. կամ խորափիտ վիհ. և այլն ։

Խորափոս. ի. իւ. ից. իւք ։ || խորին փոս. կմ խորին վիհ. Խորէն. գ. գլ. 59 ։

Խորդ. ոյ. ով. ոց. ովք ։ || քուրձ. կմ խարազն. որ է հաստ և խոշոր մազեղէն, յոր մի բաղմիցս կազմեն զզգեստ. և զգենուն 'ի վր մերկ մարմնոյ վն ճգնութեան, և կամ վասն ապաշխարելոյ ։ Դան. 9. 3 ։ Յովէլ. 1. 13 ։ Մատ. 11. 21 ։ Իսկ մերթ խորդ կոչի նաև մեծ պարկն կազմեցեալ 'ի մազեղէն նիւթոյ. ռամկօր. չուվալ ։ Մերթ ևս խարազանն. որ շուանն ոլորեցեալ 'ի մազից, խորդ ասի՝ յորմէ կազմեն ձաղկելս ։ և ըստ այսմ ասի՝ խորդով հարկանել ։

Խորդ. կամ խորթ. ոյ. ով. ոց. ովք ։ || անհարազատ. կամ անբնական. և այս ասի զորդւոյ ուրուք, որ ոչ է ծնեալ յինքենէ. և ըստ այսմ որդի կնոջ ուրուք 'ի նախկնոյ առնէն, ասի խորդ որդի երկրորդի առն ։ Նոյնպէս և որդի առն ուրուք 'ի նախկնոյ կնոջէ՝ ասի խորդ որդի երկրորդի կնոջն ։ Եբր. 12. 8 ։ Խորէն. գ. գլ. 68 ։ Եւ յայսմանէ առեալ և այլ ևս իցէ անբնական, կամ անհարազատ՝ և կամ սուտ իր՝ խորթ կոչի ։ Մերթ ևս բառս խորթ, կմ խորդ, նշանակէ զկռունկն. որ է թռչուն ինչ երկայնավիզ, և երկայնասրունգն իբրև զարագիլ ։ Խորէն. յաղխարհագրութեան ։ Աճառ ։

Խորդնահայեաց. եցի. աւ. աց. օք ։ || զխոժոռեալ և զդաժան հայեցուածս, կամ տեսիլս ունօղ ։ Յն ործի ։

Խորեմ. եցի. եա. ել ։ (ներգործ.) || մերթ նշանակէ փորելով խորացուցանել. որ խորանել զերկիր. և զայլս նմանս ։ ռամկօր. խորունցնել ։ Երեմ. 49. 30 ։ Ղուկ. 6. 48 ։ Իսկ մերթ նշանակէ փորելով զերկիր՝ թաքուցանել զարծաթ. կամ զոսկի, և զայլս նըմանս ։ Մատթ. 2. Ֆ. գլ. ։ Եւ մերթ նշանակէ խոռել. որ զմասն ինչ յիմնէ 'ի բաց առնուլ. որով կորնչի ամբողջութիւն իրին. և ըստ այսմ այն, որ զմասն ինչ յիրէ իմեքէ գողանայ, կամ գողանալով պահէ, ասի խորել ։ և ըստ այսմ է Գործ. 5. 2 ։ Եւ յայս

մանէ. առնելով՝ երբեմն ի և լիցէ կերպիւ գո֊
ղանալով՝ խորհել առ ի : 'Ի Ճառս հայր · Ը :

Խորթ : || տես զԽորդ :

Խորթաբարոյ · ի · իւ · ից · իւք : || Օտարաբա֊
րոյ · Ք այն՝ որ այլասամբութեամբ , կմ խեթ֊
թիւ և առնելութեամբ , և այլովք նմանեօք նե֊
ղացեալ օտարանայ յուսմէքն · կմ իբրև ըղ
խորթ թշնամացեալ քանզի 'ի սիրոյ , և 'ի
միաբանութենէ : Նարեկ · Ը · և ԿԵ :

Խորթանամ · ացայ · ցիր · անալ : (Ընդ միջ ·)
|| Օտարանալ · կմ մերժիլ 'ի սիրոյ և 'ի միա֊
բանութենէ · և կմ իբրև զխորթ եղեալ հե֊
ռանալ յումեքէ : Նարեկ · ԻԷ · ԾԹ · ԿԵ :

Խորիմաց · ի · իւ · ից · իւք : || զխորին և ըղ
նուրբ , կմ զդաղտնի իմացուածս ունող ·
որպիսիք էին իրքն առաքելք , և նմանօրինա֊
նութիւնք : Ագաթ ·

Խորին : (Նախադրիւ հոլովի ·) || խոր · ստորնա֊
խորան : Իսկ մերթ նշանակէ զխորութիւնն ·
կմ զդժուարիմացն · և կմ զայն , որ զդաղտ֊
նի , և զխորագոյն իմացուածս ունի , և ըստ
այսմ իմանի մինչ առ ի , խորին բանք · կմ
խորին խորհուրդք , և այլն : Ագաթ · 1 · 6 :
Իսկ մերթ նշանակէ զստորինն · կմ զստոր֊
ներևագոյնն · և ըստ այսմ առ ի , խորին ծե֊
րութիւն · կմ խորին խոնարհութիւն , և այլն :
Նարեկ · ԼԶ :

Խորխախ · ոխի · խաւ · ից · իւք : կմ ախ · ոյ · ով :
կամ ոյ · ով : || Սպան մեղու · Ք մեղուքն ըս֊
ցեալ զնստեալն այն՝ զոր կարծէ մեղուն 'ի
փեթակին , յորմէ երբեմն հանեալ զնա
բլիթ բլիթ · Ք գոլորշեայ պղպջակ , վանձառելն ·
և կամ մնան մնան արարեալ՝ ունին , և
զերծին , որ է մոմն · 'ի բաց հանեն : Իսկ այս
բլիթ յորժամ է առանց մեղրի , կոչի մոմ ,
իսկ յորժամ է ընդ մեղրոյ , ասի խորխախ
մեղու · և մերթ սակ խորխախ : 1 · Թագ ·
14 · 27 : Սաղմ 18 · 11 : Առակ · 24 · 13 : և 27 · 7 :
Ղուկ · 24 · 42 : Իսկ մերթ նշանակէ զխմելի֊
ղէն սպանն , կաղամեցեալ իւղով և մեղրով ·
որպիսի է խորխախն որ դնի 'ի մէջ գա֊
թայից · և այլք նմանիք : և ըստ այսմ ասի
խորխախ իւղոյ և մեղու : Ելից · 16 · 31 : և
Թուոց · 11 · 8 :

Խորխ · ի · ու · ոյ · ով : || Հերձեալ մորթ ,
կմ մաշկ օձի , զոր ընդ նեղ ծակս մտանե֊
լով և սպրդելով , յինքենէ 'ի բաց մերկա֊
նայ : Առակ · Ճծս · շարքի : Եւ այս մերթ ասի
նաև զմորթոյ · և զմաշկաց այլոց կենդա֊
նեաց · զորս 'ի բաց մերկանան յինքեանց
իբրև զօձս : Ուստի խառացեալ մորթն խո֊
րխ , զոր նք սրբոյն արդար 'ի բաց մերկա֊
ցաւ յանձնէ իւրմէ 'ի բժշկելն իւր , խորխ
կոչեցաւ : Ագաթ :

Խորխանամ · ացայ · ացիր · ալ : (Ընդ միջ ·) ||
Լինել իբրև զխորխ · Ք իբրև զհերձեալ ,
և 'ի բաց մերկացեալ մաշկ օձի · որպիսի
էր մորթն խաղի , զոր 'ի բաց մերկացաւ
յանձնէ արքայն 'ի բժշկելն իւր :
Ագաթ :

Խորխորատ · ի · ին · ից · իւք : || Խորին փոս ,
որ ունի զխորխորատ · կմ խորափոսոր · կմ վիհ :
1 · Թագ · 13 · 6 : Մատթ · 12 · 11 : Ղուկ · 6 · 39 :

Խորխորատաւոր : (Նախադրիւ հոլովի ·) || Լը֊
ցեալ խորխորատօք , որպիսի է Ճանապարհն ,
կամ տեղին , ուր գոն բազում գուբք , և
խորխորատք :

Խորխորին : (Նախադրիւ հոլովի ·) || սաստիկ
խորին · կմ յոյժ խորագոյն : 3 · Մակ · 5 · 6 :

Խորհիմ · եցայ · եաւ · իլ : (Հասարակ բայ ·) ||
Միտածել · կամ խոկալ · կամ զմտաւ ածել :
Ղուկ 12 · 17 :

διαλογίζομαι

Խորհուրդ · հրդոյ · ով · ոց · ովք : կամ խորհր֊
դեան · եանց · եամբք : || Եղանէ սա 'ի խոր֊
հիլ բայէն , որ է խառնուրդն 'ի խառնել
բայէն : և նշանակէ խորհումն · կմ խոկա֊
ցումն · և կմ մտածութիւն , զոր ոք խորհի
'ի միտս · կամ զոր խորհին բազումք զերաց
առնելեաց , և զպարապագայից նոցին : 3 · Թագ ·
12 · 14 : Յոբայ · 11 · 7 : Առակ · 31 · 3 : Եւ ըստ
այսմ երբեմն ընդ բայի շարակցի այսպէս ,
խորհուրդ կալնուլ · կմ խորհուրդ 'ի մէջ
առնուլ · և նշանակէ խորհուրդ խորհիլ
և կամ խոկալ ընդ միմեանս : Ծննդ · 37 · 18 :
1 · Մակ · 4 · 44 : Մերթ ևս նշանակէ զկարծիս
զոր առ ոք ունիք : Իսկ մերթ նշանակէ
զդաղտնի գիտակցութիւն , զոր ոք խոր֊
հեալ , և գիտելն է · և ծանուցանէ ու֊
մեք , զի պահեսցէ · և կմ ծածուկ , և թա֊
քուն բանս : Տոբ · 12 · 7 : Առակ · 20 · 19 : և 1 ·
Կորն · 15 · 51 : Մերթ ևս նշանակէ զխորհր֊
դաւոր իրս · կմ զդաղտնի նշանակութիւնս
խորհրդաւոր իրաց : Մատթ · 13 · 11 : 1 · Կորնթ ·
2 · 7 : Եփես · 6 · 19 : Երբեմն ևս նշանակէ
զեօթն խորհուրդսն եկեղեցւոյ , որք են ·
մկրտութիւն · դրոշմ · հաղորդութիւն · ապաշ֊
խարութիւն · վերջին օծումն · կարգ քահա֊
նայութեան · և պսակ :

Խորհրդադէտ · դիտի · տաւ · աց · օք : || Գիտող
զդաղտնի խորհրդոց · կամ սրտագէտ :

Խորհրդազգած · ի · ին · ից · իւք : || Զգածեալ
խորհրդովք · որով իմանի այն , որ կրէ յին֊
քեան զդաղտնի խորհուրդս , կմ որ տե֊
ղեակ , և գիտակ է ծածուկ խորհրդոց ,
կմ խորհրդաւոր իրաց : Լամբրոն : և Յհ ոսկի :

Խորհրդազգաց · ի · իւ · ից · իւք : || Զխորհուրդն
զգացող , կամ իմացող · և կմ տեղեակ խոր֊
հրդոց : Լամբրոն :

Խորհրդազգեաց · զգեցի · ած · աց · օք : || Նոյն
է ընդ վերինոյն : Լամբրոն :

Խորհրդածեմ · եցի · եալ · ել : (Ներգործ ·)
|| Զմտաւ ածել · կամ խորհիլ 'ի սրտի :
Յհ ոսկի : Իսկ մերթ նշանակէ խորհուրդ
առնուլ ընդ միմեանս · կմ խորհրդակցիլ :
Մերթ ևս մատակարարել , կմ կատարել
զեկեղեցական խորհուրդս · կմ զոյ և իցէ
սրբազան իրս , որք առ նա վերաբերերին ·
որպիսի է պատարագելն զխորհուրդ պատարա֊
գի և հաղորդութեան · կմ վարդապետելն
զմատանց հանգստեանց · կմ ուսուցանելն զօ֊
րհնութիւն ... · և այլն : Լամբրոն : ըստ այսմ և
քննելով բացատրելն , կմ յառաջ բերել֊
լով յայտնելն զխորհրդաւոր իրս · և զխոր֊
հուրդս նց , ասի խորհրդածել : Լամբրոն :

Digitized by Google

իսկ 'ի Նոփրեւեւնեղ. ուր ասի. Առ եկեղե-
ցի քեւ խորհրդածի. խմանի՝ քեւ լինել մտա-
ծի. կամ քեւ կատարի։

Խորհրդածու. ծուի. աւ. ալ. օք։ || զմտաւ-
ածօղ. կմ խորհօղ զիմեքէ. կմ զխորհուրդս
իւրին քննօղ։ 'Ի Վարս հարց. Թ։ իսկ մերթ
նշանակէ՝ զխորհրդականն. կմ զխորհուրդ-
առնօղն։ Մերթ եւս նշանակէ զմտատակա-
րողն. կամ զպաշտօնեայն սրբազան իրաց.
կամ ածային գործոց։ եւ ըստ այսմ ասի
զեկեղեցականաց. խորհրդածութք խորոցն ՃԱ։
եւ կամ զմարգարէից. Ածային անձամբ խոր-
հրդոյն խորհրդածութք։ ըստ այսմ եւ պաշ-
տօնքն եկեղեցական խորհրդոց, խորհր-
դածութք կոչին. որպիսի է պատարագիչ
քահանայն. եւ կմ եպիսկոպոսն։ Լմբրօն։
Սոյնպէս եւ հովիւքն՝ որք ծառայեցին. յերկ
նից զծնունդ տն՝ քարոզք էղեն նր, կոչին
խորհրդածութք Յիսի Քսի փրկչին մերոյ։
Խոսրէն. ր. գր. 88։

Խորհրդածութիւն. թեան։ || մտածութիւն.
կմ խորհումն. եւ կմ խոկումն. Նարեկ. գլ։
Եւ մերթ նշանակէ՝ զխորհուրդ առնելն.
կմ զխորհրդակցութիւն։ Մերթ եւս նշա-
նակէ՝ զխորհուրդս գաղտնի իրաց. կամ
զխորհրդածումն իւր. Նարեկ. գլ։ եւ Լմբրօն։
իսկ երբեմն զմատակարարութիւն. կմ զկը
կատարումն եկեղեցական խորհրդոց. կմ
ձ եւ իւրէ սրբազան իրաց. որպիսի է պա-
տարագելն. կմ զածային բանս քարոզելն.
Նարեկ. 'ի Գովեստ առաքելոց։ եւ Լմբրօն։

Խորհրդակալ. ի. աւ. ալ. օք։ || խորհրդա-
կից. կմ կցորդ նոյնոց խորհրդոց։ Եւ տա-
ցաւ խորհրդակալ, ըստ որում զնոյն խոր-
հուրդ կալեալ, կմ ունի ընդ ումեք։

Խորհրդական. ի. աւ. ալ. օք։ || Նա՝ որ ունի
զգաղջ խորհուրդ. կմ խորհրդատու. կմ խոր-
հուրդ տուօղ։ Եսայ. 3. 3։ Թագաւ. 16. 2։ 3.
Մակ. 6. 17։ Մերթ եւս նշանակէ զհամաձա-
յնեալն. կամ զգզօնն, եւ զխոհեմութիւն. եւ կմ
զիմաստուն։ Ծննդ. 41. 33։ 1. Մակ. 2. 65։ իսկ
մերթ նշանակէ զխարի խորհրդական, որ զա-
ռակս, կմ զծածուկ իրս, կմ զգաղտնի իմացն
սրբութեան իւրով կարէ իմանալ։ եւ ըստ
այսմ է. Դան. 8. 23։ Երբեմն եւս նշանա-
կէ զայն՝ որ վերաբերի առ եօթն խոր-
հուրդս եկեղեցւոյ։ եւ ըստ այսմ իմանի՝
մինչ ասի խորհրդական խոստովանութիւն։
իսկ մերթ նշանակէ զխորհրդաւորն. կմ,
զայն՝ որ պարունակէ յինքեան զխոր-
հուրդս, կմ ունի զծածուկ նշանակութիւն.
որպիսի է գործն, յորում 'ի ձեռն արտա-
քին նշանաց՝ ծանուցանի ներքին նշանա-
կութիւն ինչ։ եւ ըստ այսմ կը ընկալեալ կա
պաշտօնից զարիւն մարդոյ, յորժամ գաշնա-
դիր լինէին ընդ միմեանս։ վը զի այնու
ծանուցեալ լինէր. թէ որ անցցէ զդաշն,
հեղցի արիւն նր։

Խորհրդականութիւն. թեան։ || խորհրդական
լինելն. կմ խորհրդատուութիւն. եւ կմ խոր
հուրդ. զոր առնեն բազումք ը միմեանս.
եւ կամ զոր տայ ոք ումեք։ Խոսրէն. ա. գր.

25. եւ ր. գր. 7։ ըստ այսմ եւ եկեղեցական
խորհուրդքն՝ մերթ կոչին խորհրդականու-
թիւն. ըստ այնմ որ ասի 'ի խորհրդատետրս
Առաքելական զառ 'ի խորհրդականութիւն մկրտ-
ման եւ արեան քոյ։

Խորհրդակատար. ի. աւ. ալ. օք։ || կատա-
րօղ խորհրդոց. որպիսի է այն, որ զխոր-
հրդեցեալ իրս՝ 'ի գլուխ հանէ, կմ գործով
կատարէ։ եւ կամ քահանայն, որ զը
խորհուրդս եկեղեցւոյ մատակարարէ. վ
իսկ մերթ առեղծ, ուր կատարելն խոր-
հուրդք, որպիսի է եկեղեցին. եւ այլք ըստ
մինը. ասի խորհրդակատար. ըստ այնմ
Նարեկ. ձը. 'ի վերնայարկին սրահէ խորհր-
դակատարն վերայ։

Խորհրդակեր. կրի. աւ. ալ. օք։ || կերօղ յին
քեան զխորհուրդս, կմ զխոկմունս եւ զմտա
ծութիւնս։ Նարեկ. ա։

Խորհրդակից. կցի. աւ. ալ. օք։ || կցորդ
խորհրդոյ. կմ ընկեր խորհուրդ առնելոյ.
կմ համախոհ։ 1. Մնաց. 27. 32։

Խորհրդակորոյս. կորուսի. իէ. եց. եաք։ ||
զմտածութիւն եւ զխորհուրդն կորուսանօղ.
կմ մտօք ցնորեալ. կմ զուղղամիտ խոր-
հելն կորուսեալ. կմ անմիտ. եւ կմ անհան
ճար։ 2. Օրէն. 32. 28։

Խորհրդակցիմ. կցեցայ. եա. իլ։ (ձայնակը)
|| խորհրդակից լինել. կամ խորհել ը ու-
մեք զինչ. Լմբրօն։

Խորհրդակցութիւն. թեան։ || կցորդութիւն.
կամ ընկերութիւն ընդ ումեք 'ի նոյնում
խորհրդեան։ Եւ մերթ՝ խորհրդատուու-
թիւն։ Լմբրօն։

Խորհրդանոց. ի. աւ. ալ. օք։ || խորհրդա-
րան. որում մերթ իմանի տեղին. ուր բա-
զումք 'ի միասին նստեալ առնեն զխոր-
հուրդ։ իսկ մերթ՝ եկեղեցին, եւ այլք ըստ
մինը. ուր կատարին եկեղեցական խոր-
հուրդք։ եւ երբեմն միայն, որում խորհելոյ
զինչ։ Նարեկ. ձր. եւ 'ի Գովեստ առաքելոց։

Խորհրդապետ. տի. իէ. եց. օք։ || տեսչ.
կամ գլուխ. յորում պարունակին բանք. եւ
աղօթք սրբոց պատարագին. որ մատուցա-
նի 'ի քահանայէն։

Խորհրդատու. տուի. աւ. ալ. օք։ || խոր-
հուրդ տուօղ. կմ խորհրդական։

Խորհրդարան. ի. աւ. ալ. օք։ || տեղի՝ ուր
առնեն զխորհուրդ, կմ տեղի՝ ուր կատա-
րին սրբազան խորհուրդք։ եւ ըստ այսմ
եկեղեցին կոչի խորհրդարան։ Սոյնպէս եւ
խուցն՝ յորում կատարեցաւ խորհուրդ մը
կութեան մերոյ, ասի խորհրդարան։ Նարե-
կէ. եւ գլ։

Խորհրդաւոր. ի. աւ. ալ. օք։ || պարունա-
կօղ յինքեան զգաղտնի խորհուրդս, կամ
զծածուկ նշանակութիւնս. որպիսի կը ան
այնձի, 'ի յոր հայցօղն ածեցին։ Յօհ. Եւ
Եւ կամ առնելն Քսի առ հրեայս. Քակե
ցէք զտաճարդ զայդ, եւ զերիս աւուրս
կանգնեցից զդա։ Յօհ. 2. 19։ Եւ մերթ
խորհրդաւոր կոչի իմն. որ ասի զանձնէ
ոչ ըստ խակական նշանակութեան, այլ ըստ

նմանութիւն երկնի, կամ ըստ խորհրդոյ․ ոմն ածածին կոյսն․ առի խորհրդաւոր խորան բանին։

Խորձուձ․ ձնձոյ․ ով․ ոց․ ովք։ || շոր․ կամ ձորձ, կամ կտաւեղէն․ որպիսի է շորն աղա հարկց։ 'ի Հայր հարց․ ժա։

Խորշ․ ի․ իւ․ից․ իւք։ || անկիւն․ կամ քունջ․ ռամկ․ պուճախ։ Յօհան․ 1․5․ Իսկ մերթ նը շանակէ զկողմն, կամ զառանձնական և ընդ ծայր տեղին աշխարհաց, կամ լերանց, և կամ քաղաքաց։ Խորէն․ ա․ գլ․ 11։ և դ․ գլ․ 20։ Կիւրղ Եզեկ․ ժ։ ըստ այսմ և զառեալ միջոցն և ընդարձակութիւն երկք տեղւոյ՝ խորշ կոչի։ Եզեկ․ 41․ 13․ և 14․ և 15։ և 42․ 1․ և 10։ Մերթ ևս նշանակէ զգոգ ծովու․ այն է զծոցաւոր տեղին յափունս ծովու, ուր երբեմն մնեալ նաւուց ապաստանին։ Խորէն․ յաշխարհագրութեան։ Իսկ մերթ զծոց լերանց․ այն է զփապարս, և զխոռոչս։ Մերթ ևս նշանակէ զայնս տեղիս շինուածոց, որք իբրև զսենեակ 'ի ներքսակոյս ծոցաւորին։ Խորէն․ գ․ գլ․ 59։ Ըստ այսմ նաև գոգաւորել, և փապարակել տեղեաց, զորս գոգեն 'ի մէջ արձանեղինաց, կամ պղնձեղինաց․ և կամ քարեղինաց․ և այլոց նմանեաց, յորս կարեն պէսպէս ձևք քանդակել, կամ պատկերք զետեղել, խորշ կոչին։ 3․ Թագ․ 7․ 28․ և 29։ Մերթ ևս նշանակէ զփոքրիկ խուղն․ կամ զբոյնն կենդանեաց։ Ծննդ․ 6․ 14։ Իսկ երբեմն զխորշումն, կամ զխուսափումն, և կամ զերկիւղն որով ոք զգանի իւր՝ խորշելով և պէսպէս կերպիւ պատրուակելով խօսի։ և ըստ այսմ ելանէ 'ի սմանէ խորշիլ բայն։ Սոփ․ 1․ հատ․ ժբ։ Մերթ ևս նշանակէ զկաքիչն, այն է զկանգնումն երեսաց կամ ձախասուն, ոչ հանդիպելի ծերոց։ և ըստ այսմ է աս արմատ խորշոմիլ բային։ Կիւրղ Եզեկ․ դ։ Լամբրօն։ Մերթ և՝ խխտաւախտ ծալուածք կտաւեղինաց՝ խորշ կոչին։ ռամ կօրէն ֆօլ․

Խորշակ․ ի․ աւ․ աց․ օք։ || սաստիկ տապ․ կամ տապախառն հողմ, որ խարշէ զբոյսս, և զմարդիկ, և չխանէ։ Յովնան․ 8․ 3։ Յոբ․ 27․ 21։ Երեմ․ 51․ 1։ և Ղուկ․ 12․ 55։

Խորշակաբեր․ ի․ աւ․ աց․ օք։ || բերող զխորշակ․ որով իմանի պատճառօղն զխորշակաւոր տապս․ որպիսիք են տմանք հողմունք։

Խորշակահար․ ի․ աւ․ աց․ օք։ || 'ի խորշակէ հարեալ․ այն է 'ի տապախառն հողմոյ․ և կամ 'ի սաստիկ տապոյ կիզեցեալ․ կամ խանձեալ և ապականեալ։ Ծննդ․ 41․ 6․ և 23։ Աղաւ․ 10․ 5։ Եսայ․ 49․ 10։ Յովէլ․ 1․ 17։ Իսկ մերթ ընդ բայի չարակցի այսպէս․ խորշակահար առնել․ և նշանակէ՝ խորշակաւ, կամ սաստիկ տապով արեգական, կամ հրոյ՝ կիզել և ապականել։ Յայտ․ 16․ 9։ Եւ կամ այսպէս․ խորշակահար ցամաքիլ․ և նշանակէ, 'ի խորշակէ կիզեալ և խանձեալ լինելով ցամաքիլ։ Եսայ․ 19․ 7։

Խորշակահարութիւն․ թեան։ || հարկանումն խորշակի․ յորմէ պատճառի մերթ հիւանդութիւն։ և մերթ չորութիւն բուսոց։

2․ Մնաց․ 6․ 28։

Խորշանք․ նաց․ օք։ (անեզական․) || խորշումն․ կամ խուսափումն։ Եւ մերթ երկիւղախառն պատկառանք, որով ոք խորշի, և ոչ խօսի զինչ համարձակապէս։ Սոփ․ 2․ հատ․ իէ։

Խորշեղէն․ ղինի․ աւ․ աց․ օք․ || խորշաւոր․ այն է ծոցաւոր․ կամ գոգաւոր․ և կամ ծոցանըման․ այն է հանդոյն փապարակեալ ծոցոյ ջրոց․ կամ այլոց իրաց։ Մծբն․ ժդ։

Խորշիմ․ շեցայ․ եայց․ իլ։ (ձայնակր․) || խոյս տալ․ կամ խուսափել․ կամ 'ի բաց կալ․ կամ 'ի բաց խտտրիլ․ կամ հեռանալ․ կամ մեկուսանալ․ կամ զգուշանալ։ 1․ Մակ․ 7․ 30։ 3․ Մակ․ 2․ 17։ Իմաստ․ 18․ 25։ Մերթ ևս նշանակէ յերկիւղէ, և կամ 'ի պատկառանացն հրաժարիլ․ կամ յետս քաշիլ։ Ելից․ 2․ 18։ 2․ Թագ․ 19․ 3։ Իմաստ․ 2․ 10։

Խորշիւն․ կամ խոշիւն։ (Նախդրիւ հոլովի․) || դղրդիւն․ կամ շառաչիւն․ և կամ գոչիւն․ կամ գուռացումն։

Խորշոմիմ․ եցայ․ եա․ իլ։ (ձայնակր․) || Թառամիլ․ կամ թարշամիլ․ կամ խանաւարութ լինելով կնճիլ․ այն է կնճռիլ, ոչ հանդիպի երեսաց ծերոց։ 2․ Օրին․ 34․ 7։

Խորոչ․ կամ խորոշ․ ի․ աւ․ աց․ օք։ || տե՛ս ընդ Խոռոչ։ 'ի Հայր հարց․ կա․ և կէ։

Խորովեմ․ եցի․ եա․ ել։ (Ներգործ․) || հրով շուրջանակի տոչորել․ և կամ տոչորելով եփել զմիս անասնոց․ կամ զձուկն, և այլն։ ռամկ․ քէպապ անել։ Ելից․ 12․ 8։ 1․ Եզր․ 1․ 12։ Տոբիթ․ 6․ 6։ Ղուկ․ 24․ 42։

Խորովիմ․ եցայ․ եայ․ իլ։ (ձայնակր․) || տապիլ․ կամ խարշիլ․ կամ այրեկիզիլ․ կամ զմեծամեծ կսկիծս կրել։

Խորոփիք․ փեաց․ եօք։ (անեզական․) || խոռոչեալ՝ և ծոցաւոր մարմինք, որպիսի է ռաշտն․ կամ կոնքն․ և կամ ներքին կողմն երկնից, և պտղեթաձև յարկաց՝ և այլոց նըմանեաց, որք ունին զծոցաւոր գատարկութիւն։ որոյ ներհակն կողմն, որ գնդաձև ուռուցեալ է՝ կորնթիք կոչի։ Ուստի և մակերևոյթն այսպիսեաց՝ կոչի մակերևոյթ ըստ խորոփեաց, և կորնթեաց․ այլ և մակերևոյթն հարթահաւասար, կոչի մակարդակ։ Իսկ երբեմն բառս խորոփիք, նշանակէ զխոռոչաւոր տեղիս, որպիսիք են վիհք, կամ խորափիտք ձորոց․ կամ խորոց։

Խորտաբորտ․ ի․ իւ․ ից․ իւք։ կամ աց․ օք։ || առապար․ այն է գար և փոս անհարթ տեղիք․ որք արգելուն զընթացս, ըստ այնմ Խորէն․ դ․ գլ․ 55․ Յանդգնաբար արշաւել ընդ խորտաբորտս, և ը վիմուտ տեղիս։ ռամկ․ խորթուբորթ։

Խորտակեմ․ եցի․ եա․ ել։ (Ներգործ․) || փշրել․ կամ բեկանել․ կամ մանրել․ կամ ջախջախել․ կամ կործանել․ կամ աւերել։ Ելից․ 15․ 3։ և 32․ 19։ 2․ Օրին․ 9․ 21։ և 28․ 7։

confringo

et 33.11.

Խորտիկ․ տկի․ աւ․ աց․ օք։ || անուշահամ և ազնիւ կերակուր եփեցեալ հրով․ և այս թէ մսեղէն իցէ, թէ խմորեղէն․ և թէ յայլմէ նիւթոյ կազմեցեալ։ Ծննդ․ 27․ 4։

Digitized by Google

2. Թագ. 13. 10: 3. Թագ. 10. 5: Տօբ. 2. 2: Ի-մաստ. 19. 11:

Խարտաշարար . ի . աւ . աց . օք : || խածարար . կամ խածանիչք . և ասացեալ խարտաշարար , զի կազմէ և յօրինէ զխարտոցս : ստորև . աւծի : 1. Թագ. 8. 13:

Խարտաշեփեաց . եցի . աւ . աց . օք : || նոյն է Ը մերենոյն :

Խոց . ի . իւ . եց . իւք : || Է արմատ խոցել բային , որոյ մերթ նշանակէ վէրքն . որ մերթ լինի ՚ի սրոյ , և մերթ ինքնին ելա-նէ ՚ի մարմնոյն : ստորև . Եսայ : Իսկ մերթ նշանակէ խոցեալն . կամ վիրաւորեցեալն : և ըստ այսմ է. 1. Մակ. 16. 9. ուր ասէ , Յովհաննէս խոց միայն և յուդայ . ՚ի խոցեալ միայն . կամ վիրաւորիւր : ըստ այսմ է և 2. Մակ. 8. 24: և 11. 12: Իսկ մինչ ասի՝ խոց դնել՝ իմանի խոցոտել . կամ վիրաւորել : Յոբ. 2. հատ. Ժ :

Խոցահարեմ . եցի . եա . ել : (Ներգործ .) || խոցոտել . կամ վիրաւորել : Յոբ. 2. հատ. Ը:

Խոցեմ . եցի . եա . ել : (Ներգործ .) || վիրա-ւորել . կամ հարկանել զոք սրով : Յով. 19. 37: Եւ մերթ կսկծեցուցանել բանիւք զսիրտ ուրուք . կամ ցաւեցուցանել :

Խոցոտեմ . եցի . եա . ել : (Ներգործ .) || վի-րաւորել . կամ խոցելով խոցել . կամ զբա-զում վէրս ՚ի վերայ դնել : Եզեկ. 19. 13: Յօբ. 16. 14: Իսկ մերթ՝ բանիւք կսկծեցուցանել:

Խոցոտիչ . ոտչի . աւ . աց . օք : || վիրաւորիչ . և կամ որ զբազում վէրս դնէ ՚ի վերայ ու-րուք : Եզեկ. 9. 8:

Խոցումն . ոյ . ով . ոց . ովք : || խոցեալ , կամ վիրաւորեցեալ մասն մարմնոյ , կամ վէրք :

Խուեմ . եցի . եա . ել : (Ներգործ .) || վշտա-ցուցանել . կամ նեղել . և կամ բռնութեամբ ա-նելով տառապեցուցանել . կամ չարչարել . որպ. ամենեւին անձկարկիչ զօրականքն : ստորև . Ընծայեցին անձինս 1. Թագ. 25. 7: և Ղուկ. 3. 14:

Խուզարկու . կուի . աւ . աց . օք : || խուզող , կամ որոնող . կամ քննող լրտես : ստորև . Ընծայեցին : Յոբ. 5. 14:

Խուզեմ . եցի . եա . ել : (Ներգործ .) || քննել . կամ որոնել . կամ խնդրել : Ծննդ. 43. 18: Իսկ մերթ նշանակէ հատանել . կամ կտրել զհերս : ՚ի վերս հարց . ԽԶ:

Խուզումն . զման . մանց . մանց . մամբք : || քննու-թիւն . կամ որոնումն . կամ հետազօտութիւն : Իսկ մերթ նշանակէ զկտրումն , կամ զհա-տումն հերաց :

Խութ . խթոյ . ով . ոց . ովք : || Է արմատ խթել բային . որ և խէթ . և նշանակէ զխոչ , որ արգել լինի ոտից . կամ խթէ և գայթակղեցուցանէ . որ ըստ այսմ մեկ-նեցաւ ՚ի խոչ բառն . տես անդ : Եւ այս բառ գրեթէ միշտ Ը խոչ , կամ Ը խէթ բա-ռիւ ՚ի գործ ածի այսպէս . ՚ի բաց առնել զխոչ և զխութ : Եսայ. 57. 14: կամ խութ , և խոչ լինել : և կամ այսպէս , խէթ և խութ ընդ ոտն անկանել . և այլն : Աչգոնէ :

Խուժ . խուժի . աւ . աց . օք : || դուժ . որ բար-բարոս . կամ վայրենի . կամ բիրտ և անմար-դի . կամ ռամիկ . կամ դատարկ , և ժանտ , կամ անողորմ . կամ խստասիրտ : Խորէն . Բ . գլ. 63: Իսկ մերթ նշանակէ զբարբարոս , և զանզգամաբարոյ ազգս . կամ զհեթանոս , որք վայրենաբարոյք էին և տմարդիք . ՚ի զխստութիւն և զոյլ անդգամ լեզուաց , նոյն . որպէսզի էին ազգքն , որք ՚ի խուժա-դուժ . կամ յերկիրն բարբարոսաց բնակին : Նարեկ . ղԳ . և ղԲ : և ՚ի գործս առաքելոց : Եւ յայսմանէ առեալ՝ որք անհասկանալի և օտար լեզուաւ խօսին ընդ միմեանս . և ոչ կարեն իմանալ զբանս միմեանց , ասին լինել երկրաց . խուժ կամ դուժ : 1. Կորնթ. 14. 11: Իսկ մերթ ըստ այսոցիկ նշանա-կութեանց բառս խուժ , ՚ի գործ ածի ՚ի միա-սին ընդ բառիս դուժ , այսպէս , խուժ դուժ . կամ դուժ և խուժ : 2. Մակ. 2. 22: 3. Մակ. 7. 3: Կողոս. 3. 11:

Խուժադուժ : (Նախադրեալ հոլովի .) || խուժ դուժ . որ բարբարոս . կամ վայրենաբա-րոյ . կամ վայրագ . կամ անհլու . կամ ժանտ . կամ անողորմ . կամ բիրտ . կամ տմարդի . և այլն : և ըստ այսմ ասի , խուժադուժ ազգ . կամ խուժադուժ հեթանոս , և այլն : 2. Մակ. 10. 4: Նարեկ. Կ: Իսկ մերթ դժն-դակ . կամ դժնեայ . կամ այլանդակ . կամ խու-ժական : և ըստ այսմ ասի՝ խուժադուժ տեսանելով . որ. տեսլեամբ : խուժադուժ երկիր : 2. բարբառով . կամ խուժադուժ երկիր : 2. Մակ. 4. 40: ՚ի ձեռս հարց . ԻԶ: ԱՀգոնէ:

Խուժականն . ի . աւ . աց . օք : || խուժայինն . որ խուժադուժ . կամ բարբարոսական . կամ վայրենական . կամ ռամկական . կամ դժնեա վայրենական . կամ հեթանոսական : Նարեկ. ղԲ . և ղԹ:

Խուժամուժ . ի . իւ . ից . իւք : || խառնամուժ . որ խուժադուժ . կամ խառնիխուռն . կամ ռամիկ . կամ խառնիճաղանճ : և ըստ այսմ ասի՝ խուժամուժ մարդիկ . կամ ամբոխ . և այլն : ԱՀգոնէ:

Խուժային . այնոյ . ով . ոց . ովք : || նոյն ըն խուժական . Նարեկ. ղԹ :

Խուժան . ի . աւ . աց . օք : || խառնամուժ ամ-բոխ . կամ խառնիխուռն և ռամիկ ժողովուրդ . կամ խուռն բազմութիւն : Թուոց. 16. 40: 4. Թագ. 25. 11: Եւ մերթ նշանակէ՝ աղմուկ . կամ շփոթ . կամ վրդովմունք արտաքոյ կամ ներքոյ , կամ ամբոխիցն , և այլոց նմանեաց : Ը այսմ խուժան կոչին նաև այնպիսի զբաղմունք իրաւունս գործոց , որք միանգամայն կուտին ՚ի վերայ ուրուք . և յոյժ զբաղեցու-ցանեն , և նեղեն : ստորև . պաղատանաց : 2. Կորնթ. 11. 28:

Խուժաստան . ի . աւ : || Երկիր , կամ աշխարհ խուժադուժ ազգաց . կամ բարբարոսաց : Խորէն. Գ . գլ. 35:

Խուժեմ . եցի . եա . ել : (չէզոք .) || խառնի խուռն ընթացմամբ յարձակել . կամ խուռն ՚ի վերայ դիմեցմամբ գրոհ տալ . կամ ՚ի վերայ դիմել , և խռնիլ . որպ. առնեն ամբոխք ամ-բարտաւանաց : 2. Մակ. 14. 43:

Խուլ . խլի . իւ . ից . իւք : || այն որ կարա-սեալ է զլսողութիւն . կամ որոյ ականջն ոչ լսեն .

լսէ, Թէպէտ ունիցի զխնամածութիւն լսե֊լոյ։ Մարկ. 7. 37։

Խուխ. խխոյ. ով. եց. ովք։ || Թուք թանձ֊րացեալ. կմ՝ ատղամն. ռամկ. պալղամ։ 'ի վերջ հտր. Է։

Խուղ. խղի. իւ. եց. օք։ || Խուց. կմ՝ խրճիթ. կամ բնակարան փոքրիկ, ուր աղքատք. կմ՝ կրօնաւորք բնակին։ 'ի վերջ հտր. Ը։ Իսկ մերթ նշանակէ զհիւղն. յն զստղաւարն մրգաստանաց. կմ՝ վրանաձորայ. և այլոց նմանեաց։ Կիւրղի Եղէնի. ժը։

Խուճան. ի. աւ. աց. օք։ || տես զԽուժան. զի նոյն է ընդ նմա։

Խուճապ. ի. իւ. եց. իւք։ || Է արմատ խու֊ճապել բային. որով մերթ նշանակի խու֊ճապումն. յն շտապումն. կմ՝ արհաւիրք. և կամ սաստիկ տագնապ պատճառեցեալ 'ի յանկարծահաս փորձանաց. կմ՝ վտան֊գից. կմ՝ 'ի զարհուրելի տեսլեանց, և ցնո֊րից. և այլոց նմանեաց։ Իմաստ. 17. 3։ Իսկ մերթ խուճապեալն. յն շտապելով, և եր֊կիւղիւ փախուցեալն, կամ սաստիկ տագ֊նապեալն, և զարհուրեալն։ Եւ մերթ փութացօղն. կմ՝ շուտն, և արագն։ 'ի վերջ հտր. ժա։

Խուճապական. ի. աւ. աց. օք։ || շտապա֊կան. կմ՝ տագնապաղական. կմ՝ փութացօ֊ղական։ Իսկ մինչ ասի՝ խուճապական սփ֊ռել. իմանի՝ խուճապելով. կամ սաստիկ շտապելով սփռել, և տարածել։ Աճգար։

Խուճապանք. անաց. օք։ (անեզական.) || խուճապումն. յն փութացումն. և երկիւ֊ղիւ փախուստ։ Իսկ մերթ շտապումն. կմ՝ սաստիկ փութացումն։ Մերթ ևս սաս֊տիկ տախպումն. կմ՝ տագնապ. կմ՝ երկիւղ. և կմ՝ արհաւիրք։ Խորէն. Բ. գլ. 14։ Իսկ մերթ հոգք և զբաղմունք բազմազան իրաց։

Խուճապեմ. եցի. եա. ել։ (ներգործ.) || տագնապեցուցանել. կմ՝ սաստիկ շտապե֊ցուցանել. կմ՝ տագնապեալ, և ահաբեկութե֊ամբ երկեցուցանել. կամ վրդովել։ Իմաստ. 4. 12. և 16. 18. Իսկ մերթ տագնապեալ, և շտապով փախուցանել. կամ խառնակութե֊ամբ ընկնել 'ի փախուստ մղել։

Խուճապիմ. եցայ. եայց. իլ։ (ձայնակր.) || երկիւղիւ, և վրդովմամբ շտապիլ. կամ տագնապեալ, և երկիւղիւ փութալ, և փախ֊չիլ։ 4. Թագ. 7. 15։ Իսկ մերթ խառնիլ. կմ՝ զարհուրիլ. կմ՝ տագնապիլ. և կմ՝ հո֊գալ շփոթմամբ։ Իմաստ. 17. 9։ և Լամբրոն։

Խուճապումն. պման. ման. մանց. մամբք. || տես զԽուճապանք։

Խումն։ (Նախդրիւ հոլովի.) || Է գիծ ինչ խազից երաժշտական երգոց. որ ունի զայս ձև. ═։

Խումար. ի. աւ. աց. օք։ || Նա՝ որ յետ սթա֊փելոյն յարբեցութենէ՝ ակար, և տրտում ան֊կանի. կամ դժգոհ մնայ, և ցցեալ լինի զը֊զուանօք սրտի։ ռամկ. Խմհման։

Խումարութիւն. Թեան։ || տրտմութիւն և մեղ֊կութիւն մարմնոյ հանդերձ զզուեցմամբ սր֊տի. որ հանդիպի մարդոյ զկնի Թափե֊լոյ զարբեցութենէն։ ռամկօր. Խմհմարութիւն։

Խումբ. խմբի. իւ. եւ. իւք։ || Ժողով. կամ ամբոխ. կմ՝ գումար. կմ՝ հանդէս. և կամ գունդ զօրաց։ 2. Թագ. 18. 29։ 3. Թագ. 16. 20։ Եւ մինչ ասի՝ խումբ առնել. կամ խումբ առնուլ. նշանակէ՝ խմբիլ. կմ՝ 'ի մի գունդ ժողովիլ։ 2. Մակ. 10. 17։

Խուն։ (Նախդրիւ հոլովի.) || սակաւ. կմ՝ նուազ. կմ՝ դոյզն. կմ՝ փոքր. կմ՝ նուազատ, և չնչին։ Նարեկ. ԿԲ։ Բայց սա բազում անգամ 'ի գործ ածի հանդերձ բառիւքս այսոքիւք. մի. կամ ինչ. այսպէս. խուն մի. կամ խուն ինչ. որ է սակաւ մի. և այլն։ Նարեկ. Հ. և ՀԸ։

Խունկերգմնական. ի. աւ. աց. օք։ || Է ան֊ուանք ինչ մակբայի, որ և կոչի դեղերգմնա֊կան. որով հաստատի իր ինչ տարրաւորութ֊իւնք, իբր թէ կիսատ և փոքրիկ երգմամբ. որպիսիքն են սոքա. ոն և ոն. կմ՝ այո. և այլն։

Խունկ. կմ՝ խունգ. խնկոյ. ով. ոց. ովք։ || Է սպիտակ խէժ ինչ, որ կաթէ 'ի խնկա֊բեր ծառոյ. զոր բազմիցս 'ի բուրվառս ար֊կեալ ծխեմք։ ռամկ. ևս ասի՝ խունկ։ Ծննդ. 43. 11։ Թուոց. 16. 7։ Ղուկ. 1. 9։ Իսկ մերթ նշանակէ զամ և իցէ անուշահոտ ծխանելի. կմ՝ օծանելի. զորս բազմիցս պէսպէս խառն֊ուածովք և արուեստիւ բաղադրեալ կազ֊մեն։ ռամկ. պուխուր. Ելից. 30. 34։ 2. Մնաց. 16. 14։ և 32. 27։ Երգ. 2. 12։ և Առակ. 27. 9։

θυμίαμα

Խունկեղէգն. եղեգան. ամբ. անց. ամբք։ || Է անուանք ինչ ազնիւ և անուշահոտ եղե֊գան. զոր բազմիցս 'ի գործածեն 'ի պէս֊պէս խառնուածս ծխանելեաց, կմ՝ օծանե֊լեաց. որ վա բուրելոյն զհոտ անուշութեն խնկոյ՝ կոչեցաւ խունկեղէգն։ Ելից. 30. 23։ Եւ այս 'ի Նարեկ. ՂԲ. կոչի եղեգնա֊խունկ։

Κάλαμος εὐώδης

Խունձ. խնձոյ. ով. ոց. ովք։ || Է գիծ ինչ. կամ խազ ինչ երաժշտական երգոց այսու ձևով. ~։

Խուռն։ (Նախդրիւ հոլովի.) || Է արմատ խռնել բային, որ մինչ վարի ածականա֊բար, նշանակէ զխռնեալն. կմ՝ զբազում, և զխիտ։ և ըստ այսմ ասի՝ խուռն կո֊ճառք. կամ խուռն ախտք. և այլն։ Աճգար։ Եւ ըստ այսմ երբեմն վարի իբրև զմակ֊բայ. զոր օրինակ, խուռն ընթանալ. յն զմիմեանս սեղմելով խիտ ընթանալ։ Մարկ. 6. 33։ Եւ կմ՝ խուռն յարձակիլ. յն խիտ և միանգամայն։ Աճգար։ Իսկ յորժամ վարի գոյականաբար, հոլովի. խռան. խռանի. և է անյոգնական. և նշանակէ խռնումն. յն սաստիկ խիտ ժողովումն. կմ՝ ժողով մարդկան խռնեալն. և զմիմեանս սեղմելն։ և ըստ այսմ է 4. Թագ. 7. 17. և 21. ուր ասի. Կոխեաց զնա ժողովուրդն 'ի խռանին. յն 'ի խռնեցմանն։ Եւ մերթ նշանակէ զխ֊խռնեալ, և զխիտ ամբոխն, կմ՝ բազմու֊թիւն։ Խորէն. Ա. գլ. 10։ Իսկ երբեմն նշա֊նակի՝ խռովութիւն. կմ՝ յուզմութիւն. կամ բազմութիւն. և կամ առատութիւն. և ըստ այսմ է. 2. Մակ. 2. 25. ուր ասի. Հայեցաք

մեք

մեջ 'ի խուռն մեծամեծութիւն համբարոց. այ 'ի յոլովութիւն. և այլն: Իսկ մերթ նշանակէ նմին առաւելութք, կամ վերջավորութիւնք. կամ ընդհանուրութիւն. և կամ յաւելուածք պատմութեան. կամ ամփոփեալք. և այլոց նմանեաց: Խորհրդ. Ա. այբ. 5.

Խուռներամ. ի. իւ. ից. օք: || համախմբութիւն. կամ բազմամբոխ գունդ. և առաւ գումարտակ. յու. րանս են խառնեալ բազմութիւնք մարդկանց. 'ի միում տեղւոջ ընթացողքն ամփոփեալ զօրաւորաց գնդին:

Խուռնընթաց: (Նախադրութիւն հոլովի.) || խուռն ընթացող. այ խիտ, և առողջն ընթացող: Իսկ մինչ առաւ. խուռնընթացս 'ի վերայ դի. մել. խմբովին խուռն ընթացեալքն. կամ միա խուռն 'ի վերայ գիմել: Ողոմ. 'ի Նախարարագամութեն:

Խուսափանք. անաց. օք: (անեզական.) || խուսափումն. կամ խոյս տուութիւն. կամ փախուստ. կամ խորշումն. կամ 'ի մի կողմն խոտորումն: Երեմ. 17. 21:

Խուսափեմ. եցի. եաւ. ել: (չէզոք.) || խոյս տալ. կամ խուսել. կամ 'ի մի կողմն խոտորիլ. կամ խորշել: առաւել. փախչել ասածումդ առ. նել: Թագ. 22. 33: 2. Մակ. 8. 13: Սաղ. 108. 23:

Խուսեմ. եցի. եաւ. ել: (չէզոք.) || խոյս տալ. կամ խուսափել. կամ խոտորիլ 'ի մի կողմն. կամ փախչել: առաւել. փախչել խուսել. կամ առ ձեռն ընդ: Թագ. 22. 23. և 26: Յովբ. 4. 28: Եւ մերթ մեկնել ուրեք առաւանձինն: Ղուկ. 9. 10:

Խուրձ. խրձոյ. ով. ոց. ովք. կամ խրձունք. խրձանց. կամ խրձունց. ամբք: || կապոց եղերդանց. կամ խոտոց, և բանջարեղինաց. կամ հնձելեաց ցորենոյ: Մատթ. 13. 30: Եւ կամ կապոց կտաւոյ: Յեսու. 2. 6:

Խուց. խցի. իւ. ից. իւք: || խուղ. կամ անձուկ փոքրիկ. կամ փոքր բնակարան:

Խուփ. խփոյ. ով. ոց. ովք: || կափարիչ. կամ խփիչ. այ ծածկոյթ ամանոյ. և կամ յայլոց նիւթոց. որով խփեն, կամ ծածկեն զբե. րան ամանոյ. կամ դրան. կամ պատուհանի. և կամ այլոց նմանեաց: առաւել. խուփ խուփ: 2. Թագ. 17. 19:

Խուփ. ի. կամ ոյ. իւ. ից. իւք: || երկաթեղէն գործի ինչ հաստ, և ծայրասուր, որ անուանեալ 'ի ծայրն հարօրին, որով պատառեն, և հերկեն երկիրն: 1. Թագ. 13. 21: և Եսայ. 2. 4:

ԽՌ

Խռնամ. ացի. ա. ալ: (չէզոք.) || խոնարհալ. առաւել. խոնալ:

Խռանն: || է սա անուանական խուռն բառիս, որ դրգանելն գուարդն բառին, առաւել. անուն խուռան:

Խռիւխ. խռուճոյ. ով. ոց. ովք: || մանր և չոր փայտ, կամ տաշեղ. կամ բարակ փայտն, և չորացեալ ճիւղք ծառոց. որթոյ. և այլոց բուսոց. և կամ չոր և հողմաւրք եղեգունք, որք նիւթ լինին հրոյ. առաւել. չոր. կամ ճռճռան: Գործ. 28. 3: Եսայ. 40. 24: և Ոսէ. 10. 7: Որպէսզի ասէ՝ բառս խռիւ. բառ որում է արմատ խռուճիւ բառին, նշանակէ՝ զխառնաշփոթութիւն, և զգիճութիւն. կամ զաղտեղին. և զխառնակն. կամ զանարգն. և զանպիտանն. և բառ այսմ նշանակեն 'ի մաս նեն՝ բառոյս սպառողին. զխորտակումն. փշրան. խուփն. և այլն. ցրուտ անցեալ 'ի աղբեր եր. ևանց:

Խռնեմ. եցի. եաւ. ել: (Ներգործ.) || ժողովել. կամ գումարել. կամ յաճախել: Արած. 13. 11:

Խռնիմ. եցի. եաւ. եալ: (Ներգործ.) || խիտ ժողովել. կամ 'ի մի վայր գումարել. և կամ միախուռն առնել: 3. Մակ. 7. 2: և Նորէն. ղջ: Իսկ մերթ նշանակէ խառնացուցա. նել. կամ խուռն և խիտ բազմութիւն լինել:

Խռնիմ. նեցայ. եաւ. իլ: (Հոլովակ.) || 'ի մի վայր ժողովիլ բազմութեան մարդկանց զմիմեանս ներգեալ. կամ խիտ հաւաքիլ. կամ զմիմեանց կոխել. և կամ գումարիլ: Մակ. 3. 10: Գործ. 2. 6: Իսկ մերթ նշանակէ խառնանալ. կամ խուռն բազմութեան մարդ. կանց և բնակարանաց գտանել ընդ: Եսայ. 62. 4:

Խռնտամ. ացի. ա. ալ: (չէզոք.) || խռխռ ձայն հանել. այ զձայն խռխռալոյ արձա. կել, որպ հանգուցեալ. յորժամ երկու կարծր իրք շփին առ իրեարս. կամ յորժամ խարա. ցուա խարխափի երկաթեղէն ինչ. և կամ յոր ժամ առատանայ ծառի կարծր ուռենի ինչ:

Խռով: (Նախադրութիւն հոլովի.) || վրդովեալ. կամ խռովեալ. կամ անհանգիստ. և կամ չխաղաղական: Մծբն. Ն: Մերթ և նշանակէ խռովութիւն, կամ վրդովմունս. և կամ անհանգստ. կամ աղմուկ: 3. Մակ. 1. 12: Ովս. 5. 12: և բառ այսմ երրորդն ընդ բայի շա. րակցի այսպէս. խռով հարկանել. և նշանակէ՝ զխռովութիւն և զշփոթ արկանել. կամ խռովեցուցանել: Յովհան. 14. 3:

Խռովայոյզ. յուզի. իւ. ից. իւք: || զխռովութիւն յուզող. այ զաղմուկ յարուցանող. կամ խռովարար. կամ դրդռող զկռիւ: Մծբն. ժզ:

Խռովաբեր. բերի. աւ. աց. օք: || բերող խռովութիւն, կամ վրդովմունս:

Խռովարար. ի. աւ. աց. օք: || զխռովութիւն առնող. կամ խռովիչ. կամ վրդովիչ. կամ աղմկարար: Լամբրոն:

Խռովարկու. կուի. աւ. աց. օք: || արկանող խռովութեան. կամ խռովարար. կամ խռո. վիչ: Մծբն. Ժթ:

Խռովեմ. եցի. եաւ. եալ: (Ներգործ.) || խռո վեցուցանել. կամ աղմկել. կամ վրդովել. և կամ անհանգստել. և շփոթել: Եւեր. 14. 24:

Խռովեցուցանեմ. ցուցի. եցո՛. եալ: (անցող.) || նոյն է ընդ վերինոյն: Սաղմ. 64. 8:

Խռովիմ. վեցայ. եցաւ. իլ: (Հոլովակ.) || ան հանգստիլ. կամ վրդովիլ. կամ աղմկիլ. կամ երկնչիլ. կամ խանգարիլ: Ծննդ. 19. 16: Սաղմ. 2. 2:

Խռովութիւն. թեան: || անհանգստութիւն. կամ վրդո վմունս. կամ աղմուկ. և կամ կռիւ: Առակ. 23. 19: 2. Կորն. 12. 20: 5 ⍺ 613

Խռոճացեալ. ցելոյ. ով. ոց. ովք: || չորացեալ. կմ̃ ցամաքեցեալ 'ի խոնաւութենէ. և ապականեալ. որպիսիք են չոր խոտք, կամ խռիճքն, որոյ ներհակն է' դալարացեալ: Մերթ ևս նշանակէ' չփոթեալ. կամ ընդ միմեանս խառնեալ. կամ աղտեղեալ և ապականեալ. և կամ անարգ և խոտան եղեալ:

Խռոճիլ. խռոճեցայ. եայ. իլ: (ձայնակր.) || չորանալ. կմ̃ ցամաքիլ, 'ի խոնաւութենէ: Իսկ մերթ նշանակէ' խառնափնդոր լինել. կամ չփոթիլ ընդ միմեանս. և կամ աղտեղի և անարգ լինել. և կամ ապականիլ: Եւ արմատ բայիս այսորիկ' լինի խռուճ. որ յիշեցաք 'ի վերոյ:

Խուշակ. ի. աւ. աց. օք: || խուշափողն, որ է կուճկաւոր փողն կենդանւոյն 'ի ներքոյ պարանոցին. ռամկ. խըռթըլախ:

Խուշափող. ոյ. ով. ոց. ովք: || նոյն է ընդ վերնոյն:

Խ Ս

Խստաբան. ի. իւ. եց. իւք: || խօսօղ զխիստ և զկանդուգն բանս, կամ զբիրտ և ըզ ծանր խօսս:

Խստաբեռն: (Նախդրիւ հոլովի.) || ծանրաբեռն. այն' որ է ծանր բեռն. կմ̃ դըժուարաբառնալի, և դժուարակիր: մերթ ևս նշանակէ զկրօղն և զբարձօղն ծանր բեռին:

Խստագոյն. գունի. իւ. եց. իւք: || առաւել խիստ. կամ կարծր. կմ̃ յոյժ պինդ: Եւ մերթ նշանակէ կարի կամակոր, կամ անգութ: Մերթ ևս' ծանրագոյն. կմ̃ դըժուարագոյն. և կամ սաստկագոյն. կմ̃ դառնագոյն: Իսկ մերթ վարի իբրև զմակբայ, այսպէս. խստագոյնս խօսիլ, կմ̃ պատուհասել: և նշանակէ' կարի սաստկութբ. կմ̃ կարի սաստիկ: Ծնն. 42. 7: և 3. Մակ. 7. 4:

Խստակրօն. ի. իւ. եց. իւք: || ունօղ զխստագոյն կանոնս' և զկացութիւնս. կամ ըզ վարս և զկրօնս. և կմ̃ խստութբ և սաստիկ ճգնութբ վարօղ զկեանս:

Խստամբակ. ի. աւ. աց. օք: || ստամբակ. կամ խստասիրտ. կմ̃ խստապարանոց. կմ̃ կամակոր: 'Ի Հարց հարց. Է:

Խստամբեր. ի. իւ. եց. իւք: || խստութեանց և դժուարութեանց համբերօղ. կմ̃ խստակրօն. կմ̃ դժուարակիր. և ըստ այսմ ասի' խստամբեր վարք:

Խստամբերութիւն. թեան: || համբերութիւն, կմ̃ տանութիւն խստութեանց. կմ̃ խստակրօնութիւն. կմ̃ դժուարակրութիւն: Աշխտ:

Խստանամ. ացայ. ացիր. անալ: (ընդ միջ.) || կարծրանալ. կամ դառնանալ. կմ̃ պնդանալ. կամ յամառիլ, և անշարժ մնալ 'ի կարծիս' և 'ի բանս իւր: Ելից. 7. 22:

Խստաշունչ: (Նախդրիւ հոլովի.) || խիստ և դժնդակ շնչօղ. կմ̃ դառնաշունչ. և ըստ այսմ ասի խստաշունչ օդք ձմերայնոյ: Խորէն. գ. գլ. 30:

Խստապարանոց. ի. աւ. աց. օք: || անհնազանդ. կմ̃ բիրտ. կմ̃ անհաւան, որ զպարանոց հոգւոյ իւրոյ դժուարամ̃, կամ ոչ երբէք խոնարհեցուցանէ այլում. կմ̃ ապստամբ. և կամ կամակոր. զի 'ի կամս իւր կորացեալ և սևեռեալ: Ելից. 32. 9: Բարուք. 2. 30: և Գործ. 7. 51:

Խստապինդ. պնդի. իւ. եց. օք: || խիստ. և պինդ. կամ սաստիկ կարծր: Նարէկ. ղշ:

Խստասիրտ. սրտի. իւ. եց. իւք. կամ աց. օք: || զխիստ և զկարծր սիրտ ունօղ. որով իմանի խստապարանոցն, կմ̃ յամառեալն 'ի կարծիս իւր. կմ̃ կամակորն. կամ անհաւանն և անհնազանդն. և կմ̃ անգութ և անողորմ, որոյ սիրտն ոչ ձմլի 'ի վր̃ թըշուառութեան ողորմելեաց: Սաղմ. 3: Աշխարհ. 14. 14: Եսայ. 19. 4: և այլն:

Խստասրտութիւն. թեան: || խստութիւն սրտի. կամ կամակորութիւն. կմ̃ անհաւանութիւն. կմ̃ անգթութիւն: 2. Օրին. 10. 16: Մատթ. 19. 8:

Խստավիզ. վզի. աւ. աց. օք. || տես զխստապարանոցն:

Խստացուցանեմ. ցուցի. ցո. ել: (անցող.) || խիստ և պինդ առնել. կամ կարծրացուցանել. կամ քարացուցանել. կամ յամառեցուցանել, և 'ի կարծիս իւր սևեռել. և կամ սաստիկ կամակոր առնել. և այլն: 2. Օրին. 10. 16: Սաղմ. 94. 8:

σκληρύνει

Խստաքար. ի. աւ. աց. օք: || այն որ է խիստ և կարծր քար. կամ որձաքար: և ըստ այսմ ասի' ապառաժ խստաքար: Մծբն. ժթ:

Խստերախ. ի. իւ. եց. իւք: || ելանէ սա 'ի յերախ բառէն, որ է բերան. ուստի խստերախն նշանակէ զխիստ և զանսանձ բերան ունօղ. կամ ամեհի. կմ̃ անզուսպ. և կմ̃ կատաղի. որ ոչ հնազանդի սանձի. և այսպէս ասի զերիվարաց: Խրատ. 1. հատ. ին: և Համբրօն: Իսկ մերթ նմանութբ առեալ' ասի զմարդկանց. և նշանակէ զխստապարանոցն. կամ զկամակորն, և զապստամբն. և կամ զխեռն և զանհնազանդն: Յովբ:

Խստիւ: (մակբայ որակական.) || խստութբ. կմ̃ սաստկութբ. կամ սաստիկ բռնութբ և ուժով. կամ խիստ և դառն բանիւք: Եսայ. 28. 27: 1. Թագ. 20. 7. և 10:

Խստոր. ոյ. ով. ոց. ովք: || է կճու և պճեղաւոր արմատ բուսոյ իրեք իբրև զսոխ, որ ռամկ. ասի սխտոր: Թուոց. 11. 5:

Խստութիւն. թեան: || պնդութիւն. կամ կարծրութիւն: Իսկ մերթ' խստասրտութիւն. կամ կամակորութիւն. կմ̃ անգթութիւն: 2. Օրին. 9. 27: և Հռով. 2. 5: Մերթ ևս' ծանրութիւն. կամ դժուարութիւն. կմ̃ սաստկութիւն. և կամ դառնութիւն

σκληρότης

Խ Տ

Խտածառ. կամ խտտածառ. ի. իւ. եց. օք: || խիտ ծառովք լցեալ տեղի. կամ բազմութբ խիտ ծառոց սաստատեալ:

Խտանամ. կամ խտտանամ. ացայ. ցիր. նալ: (ընդ միջ.) || խիտ լինել. կամ թանձրանալ. կմ̃ մածիլ և կարծրանալ. կմ̃ թանձրանալ:

Խտիր: (Նախդրիւ հոլովի.) || է արմատ իւր բայերն, որով նշանակի խտրութիւն. կամ տարբերութիւն. կամ զանազանութիւն. և կամ տարբեր համարումն 'ի մէջ երկուց իրաց, գտանելով զմինն վնասակար, և զմիւսն օգտակար. կամ զմինն ընտրելի, և զմիւսն խոտելի. կամ զմինն բարի, և զմիւսն չար. և այլն: Ղևտ. 27. 33: և 1. Մակ. 3. 18: Հռովմ. 3. 22: և Գաղ. 3. 27:

Խտղտանք. անաց. օք: (անեզական.) || գրգռումն և շարժումն մարմնոյ, կամ սրտի, կամ արեան, և կամ մտաց՝ 'ի ցանկութիւն, կամ 'ի հեշտութիւն, և 'ի ցոփութիւն. և այլն: Նարեկ. 'ի Մեկնութե Երգոց:

Խտղտեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || տես զԽտտղեմ: Լամբրոն:

Խտղտումն. տման. մամբ. մանց. մամբք: || տես զԽտտղանք: Լամբրոն: և 'ի Վարս հարց. իզ:

Խտտանամ. ացայ. ացիր. անալ: || տես ըղ Խտանամ:

Խտտղանք. անաց. օք: (անեզական.) || խտղտումն սրտի, կամ արեան 'ի ցանկութիւն. և այլն: Իսկ մերթ խտղտումն աչաց 'ի ճառագայթից արեգական, կամ 'ի փայլ մանէ ճառագայթաւոր իրաց:

Խտտղեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || գրգռել և շարժել զոք, կամ զմարմին ուրուք, կամ զսիրտ, կամ զարիւն, և կամ ըզ միտս 'ի ցանկութիւն, կամ 'ի տռփանս. և այլն: Մծբն. ժթ: Իսկ մերթ նշանակէ՝ խտղտել զաչս ճառագայթիւք, կամ սաստիկ պայծառութե լուսաւոր մարմնոյ. և այլն:

Խտտղտիմ. եցայ. եաց. իլ: (Հայնակր.) || խտղտելով խտղտիլ. կամ գրգռիլ և շարժիլ սրտիւ և արեամբ, և կամ միտօք, և այլն: Մծբն. ժթ: Իսկ մերթ՝ սաստիկ խտղտիլ աչաց 'ի ճառագայթից, և 'ի պայծառութեանց. և այլն:

Խտտութի. կմ Խտութի. թե: || թանձրութի. կամ հոծութի. կամ մածիլն և կարծրանալն. և կամ խիտ լինիլն:

Խտրագիտմայ. ի. իւ. եց. իւք: || 'ի տեսութէ գիտաց, կամ կերպարանաց ուրուք իր տրոզ, թ հմայելով գուշակող. կամ այն՝ որով լինի այսպիսի գուշակումն: Եւ կմ բնագիննին, որ հայելով 'ի դէմս, և 'ի կերպարանս ուրուք գուշակէ զորպիսութի նր. որգոն՝ արդեօք առ զգօնութի իցէ բնաւորեալ, թէ առ յիմարութի. և կամ արդեօք առ այս ինչ առաքինութի իցէ յօժարեալ, թէ առ այն ինչ ախտ. և կմ 'ի կեանս իւր առ որպիսի վտանգաւոր, կամ բարեբաղդական իրս է հանդիպելոց. և այլն: Եւ այս ամ իմանի որքան առ ձըղտումն բնութե, որում եթէ կամքն հետևեսցին՝ կարէ գուշակումն ճշմարտիլ: Նարեկ. ղթ:

Խտրական. ի. աւ. աց. օք: || այն ամ, որ վերաբերի առ խտրանս. որպիսիք էին խտրական արարողութիւնքն, կամ կանոնք հնոյ օրինին, որով խտրէին ուտել զխոզն. կամ զեփեցեալ կերակուրն այլոց ազգաց. և այլք նմանք:

Խտրանք. անաց. օք: (անեզական.) || խտրութի. թ տարորոշումն. կամ զանազանութի. կամ տարբերութի. և կամ ընտրութի, որով համարեցեալ լինի այս ինչ իր լաւ, և այն ինչ վատ. կամ այս ինչ իր նշան այն ինչ իրի, կամ այն ինչ իր նշան այս ինչ իրի. և այլն: Ղևտ. 17. 20: և Ոսկ. 2. հատ. իբ:

Խտրեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || առնել զխտրութի, կմ զորոշումն և զզատուցումն, կամ զընտրութի 'ի մէջ երկուց. կամ տարբերութի դնել զիրէ իմեքէ 'ի ձեռն խղճի մտաց. և կամ յերկուց իրաց զմինն 'ի բաց մերժել, և զմիւսն ընտրել. և կամ զիր ինչ վատ համարելով՝ զայլ իմն առնել: Փիլ. 11. 4: 1. Կորն. 10. 25: Գաղ. 4. 10:

Խտրոց. ի. աւ. աց. օք: || անջրպետ. թ այն իրն՝ որ անկեալ ընդ մէջ երկուց իրաց՝ որոշէ և բաժանէ զմինն 'ի միւսոյն. որպիսի է միջնորմն, կամ ցանգն այգեաց. կամ վարագոյրն. և այլք բազումք: Նարեկ. ը. և ղդ: և Լամբրոն: ըստ այսմ և նա, որ 'ի յարձակիլն թշնամւոյն 'ի վր ուրուք, ընդդէմ վազէ, և խափանէ զգալուստն նր, խտրոց կոչի. ըստ այնմ. Խորէն. ա. գլ. 25. Եւ աժդահակ խտրոց ը մէջ անկեալ, թ խտրոց և խափանիչ եղեալ: Երբեմն և նշանակէ զտարբերութիւն՝ կամ զզանազանութիւն, որ լինի 'ի մէջ երկուց անձանց, կամ ժողովրդոց. և այլն: Ես. 8. 23: Ոսկէ. 2. հատ. իզ. և իժ:

Խտրոցեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || անջրպետել. կամ խտրոց արկանելով բաժանել զմինն 'ի միւսոյն. կամ որոշել: Եւ մերթ զանազանել. կամ տարբերել:

Խտրութի. թեան: || խտրումն. կամ խտրանք: Մերթ և՝ տարորոշումն և զանազանութին, զոր առնեն քերթօղքն 'ի ստուգաբանելն զբառ ինչ՝ զայս ինչ վանկ յայն ինչ բառէ, և զայն ինչ վանկ յայս ինչ բառէ հանելով, խտրութի կոչի: Նարեկ. ղզ:

Խ Ր

Խրախ. ի. իւ. եց. իւք: || ուրախ, կամ բերկրեալ. և կմ հրճուեալ. կմ զուարճ: 3. Մակ. 7. 1: 2. Կորն. 13. 9: Փիլիպ. 1. 25:

Խրախակից. կցի. աւ. աց. օք: || կցորդ ումեք 'ի խրախութե. կամ ուրախակից. կամ խնդակից: Նարեկ. 'ի Գով. Խաչին:

Խրախամիտ: (Նախդրիւ հոլովի.) || ուրախամիտ. կամ զուարթամիտ. կամ ցնծացեալ. կամ զուարճացեալ. կամ յոյժ բերկրեալ սրտիւ: 2. Մակ. 11. 26: 3. Մակ. 7. 14: Իմաստ. 18. 6:

Խրախամտիմ. եցայ. եաց. իլ: (Հայնակր.) || խրախամիտ լինիլ. կամ ուրախ և զուարճ լինիլ:

Խրախանամ. ացայ. ցէր. անալ: (Չեզոք.) || ուրախանալ. կմ զուարճանալ. կամ հրճուիլ. կամ բերկրիլ: Նարեկ. 'ի Գով. Խաչին:

Խրախարան. ի. աւ. աց. օք: || տեղի խրախճանաց. կմ խրախութե. և կմ ուրախութե. և ցնծութե: Յմ ծրդի:

Խրախարար. ի. աւ. աց. օք: || խրախացուցիչ. կմ ուրախացուցիչ. կմ զուարթարար: Նարէկ. ղզ:

Խրախճան. ի. աւ. աց. օք: || խրախութի. կմ կոչունք. և կմ մեծածախ սեղան լցեալ բազմազան կերակրովք, յորում լինի ուրախութի: Մերթ և նշանակէ զխրախացօղն. և կամ զուրախացօղն, և զհրճուօղն: Եսայ. 24. 7: և Երեմ. 7. 34: զի մասնիկս ճան, երբեմն է փոխանակ օղ մասնկանս. որպէս յայտ է 'ի բառէս յայսմանէ' գինեճան. որ է արբեցօղ. կմ մոլեգնութ ըմպօղ զգինի:

Խրախճանագոյն. գունի. ին. ից. իւք: || խրախագոյն. կմ ուրախագոյն. և կմ զուարճագոյն. և այլն:

Խրախճանակից. կցի. աւ. աց. օք: || կցորդ խրախճանութե. կմ խրախութե և ցնծութե. և կմ կցորդ խրախճանի: 2. Պետ. 2. 13:

Խրախճանամ. այայ. ցիր. անալ: (ընդմէջ.) || խրախանալ: կմ ուրախանալ. կմ զուարճանալ. կամ հրճուելով: Յմ ծրդի:

Խրախճանարան. ի. աւ. աց. օք: || տեղի խրախճանաց, կմ խրախճանութե, և կամ տեղի խրախութե, և զուարճութե: Նարէկ. հե:

Խրախճանաւոր. ի. աւ. աց. օք: || 'ի խրախճանս բազմօղ. կմ զխրախճան ուտօղ: Իսկ մերթ խրախացօղ. կմ ուրախացօղ. և կմ զուարճացօղ:

Խրախճանութի. թեան: || մեծահանդէսն ուրախութի, որ լինի 'ի խրախճանի. և կմ մեծածախ խրախճան: Խորէն. ա. դր. 12: և Նարէկ. 'ի գովեստ խաչին: Իսկ մերթ նշանակէ զու և լցէ ուրախութի. կամ ցնծութի. կմ բերկրութի. և կամ զուարճութի: Բարսղ. 4. 34: Նարէկ. լա. և ղզ:

Խրախոյս. խուսի. իւ. ից. իւք: || է արմատ խրախուսել բային, որով նշանակի' քաջալերութի. կամ յորդորութի. կամ զօրացուցութի սրտի, զոր տայ ոք ումեք բանիւ, կամ աղաղակաւ: Նարէկ. կէ: և 'ի փառըն խաչին: Եւ ըստ այսմ երբեմն ընդ բային շարակցի այսպէս, խրախոյս բառնալ. և նշանակէ' խրախուսել. այսինքն, կմ ձայն բառնալով քաջալերել. կմ յորդորել. կմ զօրացուցանել, որպէս առնեն զօրապետքն 'ի պատերազմի. և այլն: 1. Մակ. 5. 33: 2. Մակ. 11. 9: և 12. 37: Եսայ. 44. 5: Եւ կամ այսպէս, խրախոյս տալ, կամ խրախոյս ձայնել. և նոյնպէս նշանակէ' քաջալերել. կամ յորդորել զոք 'ի գործ ինչ. և այլն: Նարէկ. ղզ: և Լամբրոն: Մերթ և' բառս խրախոյս, նշանակէ զխրախուսօղն. և ըստ այսմ առէ 'ի Նարէկ. 'ի գովեստ առաքելոց: Արքայ խրախոյսք ընտրականն կրօնից:

Խրախութի. թեան: || մերթ նշանակի խրախճանն. կմ մեծահանդէս սեղանն: ռամկ. զիաֆէթ: 2. Թագ. 13. 27: 1. Եզր. 3. 1. Յոբ. 1. 4: Իսկ մերթ նշանակի' ուրախութի. կմ ցնծութի. կմ բերկրութի. կամ հրճուանք: Նարէկ. 'ի գովեստ խաչին:

Խրախունք: (նախադրիւ հոլովի.) || խրախուն. կամ խրախճան. կամ սեղան ուրախութե: ռամկ. զիաֆէթ. և ըստ այսմ առէ խրախունս առնել: 3. Մակ. 5. 9:

Խրախուսեմ. եցի. եա. ել: (չէզոք.) || խրախոյս բառնալ. կամ քաջալերել ապաստան առնելով զոք 'ի զօրութի ուրուք: Եսայ. 48. 2: Եւ կամ մեծաձայն կարդալով յորդորել զոք 'ի մարտ. կամ յաղթութի. և կմ 'ի գործ ինչ քաջութե: 2. Թագ. 20. 1: Ովս. 7. 11:

Խրամ. ի. իւ. ից. իւք: կամ ոյ. ով. ոց. ովք: || խրամատեալ տեղի, որով մերթ նշանակի խենդէկն. այն մեծ և խոր առուն' իբրև զխորին և զլայն ձոր. զոր շինեն շուրջ զպարսպաւ. կամ 'ի մի կողմն քաղաքին, զի մի կարասցէ թշնամին գտանել զմուտ 'ի քաղաքն. և կամ զի անջրպետեսցի այս ինչ տեղի յայն ինչ տեղւոյ. և ըստ այսմ էր խրամն քաղաքին դաւթի, որ էր ընդ մէջ սիոնի, և եղեմի. զայս խրամ ելից Սողոմոն, և զանջրպետութիւն եբարձ: 3. Թագ. 9. 15: և 11. 27: Իսկ մերթ նշանակի միջահատեալ և խոռ տեղի պարսպին. կմ ցանկոյն. կմ տան. և այլոց նմանեաց, ընդ որ կարէ թշնամին 'ի ներքս մտանել: Ո-նէ. 1. հոռ. Է: Մերթ և բառս' խրամ, նշանակէ զխրամատութի. այն զպատառուածն. կամ զձեղքուածն, և զհերձուածն. և կամ զբաժանումն: Յոբ. 28. 4: Միքիայ. 2. 12:

Խրամակարկատ. ի. իւ. ից. իւք. կամ աց. օք: || Նա' որ կարկատէ. կամ նորոգէ. և կամ միաւորէ զպատառուած ցանկոյ, կմ պարսպի. և կամ խրամից. այն խէնտէկի: Եսայ. 58. 12: և Նարէկ. ղթ: Եւ մերթ ընդ բային շարակցի այսպէս, խրամակարկատ առնել. և նշանակէ' կարկատել և խնուլ զպատառուած, կմ զձեղքուած պարսպի. տաճարի, և այլոց նմանեաց: 1. Մակ. 9. 62.

Խրամապահ. ի. իւ. ից. իւք: || պահապան խրամից քաղաքին. այն խէնտէկին. և կամ խրամատեալ և վտանգաւոր տեղեաց, ըստ որոյ կարէ թշնամին 'ի ներքս մտանել: 3. Մակ. 5. 24.

Խրամատ. ի. իւ. ից. իւք: || է արմատ խրամատել բային, որով նշանակի' պատառուած. կամ ձեղքուածն. կամ խրամատութի: 2. Թագ. 5. 20: Իսկ մերթ խրամատեալ. այն պատառեցեալ. կմ ձեղքեցեալ, կամ խոցեցեալ: Մծբն. Է:

Խրամատեմ. եցի. եա. ել: (ներգործ.) || պատառել. կամ ձեղքել. կամ հերձանել. կմ պատառուածս առնելով բաժանել: Եւ այս առէ զպղնձաթիթեղաց պատառուածոց, որք լինին 'ի ձեռն խոցելեան. կամ միջահատութե. որպ հանդերձի ցանկոյ. կամ պարսպաց, ընդ որ մտանէ թշնամին 'ի ներքս: Ծննդ. 38. 29: 4. Թագ. 25. 4: Երեմ. 52. 7: Եւ կամ որպ պատառածի ջրոց. կամ թշնամեաց.

և բազմութեան մարդկան. և այլն: 2. Թագ. 5. 20: 1. Մնաց. 13. 11: Միք. 2. 13: Իսկ մինչ ասի. խրամատել զօրէնս, իմանի՝ զանց առնել զօրինօք. կամ քակտել և խոռել զայն: Լամբրօն:

Խրամատութիւն. թեան: || պատառումն. կմ ճեղքումն. կամ բաժանումն, որ լինի ՚ի ձեռն խոռեցման. կմ բացման միջոցի. կմ ճանապարհի. և այլն: 2. Թագ. 6. 8: և Սաղ. 143. 14: Դատ. 21. 15:

Խրատ. խրատու. ՚ի խրատու. կամ ՚ի խրատ ուէ. ու. ուց. օք. կամ իւք: || մերթ նշանակէ զուսուցումն, կամ զպզդումն բարի, վն բարեպէս կելոյ, և ոչ առնելոյ ըզ մխատակարս: Առակ. 4. 13: Եւ մերթ ՚ի բազում տեղիս ՚ի սբ գիրս նշանակէ ըզ վիշտս. կամ զնեղութիւնս, զորս ած առաքէ. նաև զգանս, և զյանդիմանութիւնս. կամ զպատիժս: Եսայ. 53. 5: Եբր. 12. 11: Եփես. 6. 4: Իսկ մերթ նշանակէ զխորհուրդն, զոր տայ ոք ումեք: Յոբ. 18. 14:

Խրատատու: || տե՛ս զԽրատատու:

Խրատեմ. եցի. եա՛. ել: (Ներգործ.) || ուսուցանել. կամ կրթել. կամ վարժել. ՚ի Վարս հարց. իզ: Իսկ մերթ խրատ տալով զգուշացուցանել ՚ի մխատակարաց, և յորդորել առ բարին: Մերթ ևս նշանակէ՝ յանդիմանել. կամ պատժել. և գանակոծ առնել: Ղուկ. 23. 16:

Խրատուկ: (Նախադրիճ հոլովի.) || խրատօղ. կամ խրատատու. և կմ խորհրդատու: Մծբն. ժթ:

Խրատատու. կմ խրատատու. տուի. ու. աց. օք: || մերթ նշանակէ զուսուցիչն. կմ ըզ տածօղն բարի խրատուց. որպիսիք են հոգևոր հարքն, որք խրատեն զհնազանդեալս իւրեանց: Առակ. 5. 13: Եսայ. 33. 18: մերթ ևս նշանակէ զնա, որ տայ զպատիժ՝ և ըզ յանդիմանութիւն. զձաղանս. և այլն: Իսկ մերթ նշանակէ զխորհրդատուն: 1. Կորն. 2. 16:

Խրատտուութիւն. թեան: || ուսուցումն. կմ տալն ումեք զբարի խրատ: Եւ մերթ յանդիմանութիւն. կմ կշտամբութիւն. կմ սաստ: Յոբ. 34. 30:

Խրաց. ի. իւ. ից. իւք: || կապ կօշկի. կամ տրեխի, և այլոց նմանեաց: Ծննդ. 14. 23: Մարկ. 1. 7:

Խրացեմ. եցի. եա՛. ել: (Ներգործ.) || կապել զխրացս կօշկաց. կամ կօշկաւորել. կմ ագուցանել զոտս կօշկօք: ՚Ի Վարս հարց. ժա:

Խրթին. խրթնոյ. ով. ոց. ովք: || դժուարիմաց. կմ խորին. կմ ծածուկ. կմ անյայտ: Մերթ ևս նշանակէ՝ մթին, կմ տգեղ:

Խրթնաբանութիւն. թեան: || խրթին և խորին բան. որպիսիք են այլաբանական զրոյցք. կմ դժուարիմաց առակք:

Խրթնածածկոյթ. կութի. իւ. ից. իւք: || այն՝ որ է խրթնութբ ծածկեցեալ, կմ մթին եղեալ: Իսկ մերթ նշանակէ՝ մթութբ և խաւարաւ ծածկօղն. և կմ այն՝ որ է տեսական և արտաքին ծածկոյթ: Նարեկ. ղզ:

Խրթնածածուկ. ծկի. իւ. աց. օք: || խրթին և ծածուկ. և կմ դժուարիմաց. և կմ դըժուարաւ հասկանալի: Նարեկ. ՚Ի գոհ. տառ.:

Խրթնանամ. ացայ. ցիր. նալ: (Ընդմիջ.) || խրթին և դժուարիմաց լինել: Իսկ մերթ մթանալ. կմ սևանալ. կմ ՚ի պայծառութէ պակասել. կամ ծածկիլ. կմ տգեղանալ: Խորէն. Գ. գլ. 68: Նարեկ. ՀԵ:

Խրթնատեսակ. ի. աւ. աց. օք: || զմթին և զսևային տեսիլս ունօղ. կմ որոյ տեսութին, կմ երևոյթն է տգեղ. կմ զզուելի: Շնորհալին:

Խրթնի: (Նախադրիճ հոլովի.) || խրթին. կմ դժուարին. կմ մթին. կմ սևացեալ. և կմ տխրադէմն. կմ անվայելուչ. կամ տգեղ: Նարեկ. ղբ:

Խրիմ. եցայ. եա՛ց. իլ: (Ձայնակրաւ.) || ՚ի տիղմն, և կմ յաւազուտ տեղի ինչ մխիլ: Գործ. 27. 41:

Խրխնջամ. ացի. ա՛. ալ: (Չեզոք.) || խխնջալ, որ է ձայն արձակելն ձիոց, և երիվարաց: ՚Ի Վարս հարց. Ե:

Խրխնջեմ. եցի. եա՛. ել: (Չեզոք.) || Նոյն է ընդ վերնոյն:

Խրճիթ. ճթի. իւ. կմ աւ. աց. օք: || խուց փոքրիկ. կմ խուղ՝ ուր ճգնաւորք բնակին: Խորէն. Գ. գլ. 20: ըստ այսմ և սենեկին՝ ուր բնակի պարտիզպանն, խրճիթ կոչի:

Խրոխտ. ի. իւ. ից. կմ աց. իւք: || է արմատ խրոխտալ բային. որով մերթ նշանակի գոռոզն, և ամբարտաւանն. կմ սաստիկ փքացեալն. կմ ահարկութբ գազանացեալն. կմ մեծաբանն, և յանդուգն: Իսկ մերթ ահաւորն. կմ սաստիկ գերապանծն. կամ ահեղակերպն. կամ մեծափառութբ վստահացեալն: և ըստ այսմ ասի նաև զբարեաց. ոմ դնի ՚ի Նարեկ. ղե: և ՚ի գովասանս: Մերթ ևս նշանակի խրոխտացումն. կմ գոռոզութիւն. կմ ահարկութիւն. կմ մեծաբանութիւն:

Խրոխտամ. տացի. տա՛. ալ: (Չեզոք:) || գոռոզանալ. կմ փքանալ. կմ խիզախել. կմ գազանանալ. կմ ահարկու լինել. կմ յանդգնիլ. և կմ գոռոզութբ մեծաբանել: Խորէն. Ա. գլ. 9: և Գ. գլ. 9. և 21:

Խրոխտական. ի. աւ. աց. օք: || գոռոզական. կմ ամբարտաւանական. կմ ահաւորական. կմ յանդգնական. և կամ գազանական: Նարեկ. ղդ:

Խրոխտահնչական. ի. աւ. աց. օք: || սաստկահնչական. կամ որ սաստիկ և ուժգին կարէ թնդալ և հնչել. որպիսի է թմբուկն՝ և կմ զարն ականջաց, որ թնդայ ՚ի լսելն. և այլն: Նարեկ. ղդ:

Խրոխտաձայն. ի. իւ. ից. իւք: || ունօղ ըզ խրոխտ ձայն. կմ խրոխտալով և գոռոզութբ խօսօղ, և կմ մեծաբանօղ: Նարեկ. հդ:

Խրոխտանամ. ացայ. ացիր. անալ: (Ընդմիջ.) || տե՛ս զԽրոխտալ: Լամբրօն:

Խրոխտապանծ: (Նախադրիճ հոլովի.) || խրոխտացմամբ և գոռոզութբ պանծացօղ. և կմ ամբարտաւանութբ մեծաբանօղ:

Խրոխտումն. տման. ման. մանց. մամբք: || գոռոզութիւն. կմ խիզախումն. կմ ամբարտաւանութիւն. կմ ահարկութիւն. կմ յանդգնու

παιδεύω, corripio.

թն․ կմ մեծարանութիւն ։ Խորէն․ գ․ գլ․ 50 ։

Խրտուռ․ խրտուրյ․ իր․ ով ։ (ընդ․ միջ․) || երկնչելով յերս ընդոտանու․ կմ սոսկալով յերս ընկրկել և փախչել ։ և այս առի գշնոց, կմ զշտաց, և գնմաննեաց ։ ատամկ․ Խորէն․ կմ Խորէնին ԸԼԼ։

Խրտուիլ ։ (Նախդրիւ հոլովի․) || խրտուիլակ, որ է կեղծական կազմուած ինչ խրտեցուցիչ, և զարհուրեցուցիչ թռչնոց․ որ պէս է կերպարանեալ մարդն՝ զոր դնեն պարտիզպանքն ՛ի պարտիզի, կմ այգեգործքն յայգւոջ առ ՛ի խրտեցուցանել և փախուցանել զթռչունս՝ զի մի կերիցեն զսերմանեալն, կմ զպտուղս․ և այլն ։ ապահովութեան ։ Եւ այս մերթ նմանութ առեալ՝ նշանակէ զմ և լցէ երկեցուցիչ իր, կմ կերպարանեալ, յորմէ մարդիք երբեմն ՛ի խրտուիլակէ խրտնուն և զարհուրին, կմ ՛ի փախուստ դառնան ։ Երեմ․ 19․ 17 ։ Բար․ 3․ 9 ։ Ըստ այսմ է և ՛ի Նարեկ․ կդ ։

Խրտուիլակ․ ի․ աւ․ աց․ օք ։ || եղանէ առ ՛ի խրտուիլ բառէն․ ոճ և որդեակն ՛ի որդի բառէն․ և նշանակէ զնոյն, զոր ինչ խրտուիլն ։

Խրտուցումն․ ցման․ ամբ․ անց․ ամբք ։ || զարհուրելով յերս նահանջումն, կամ փախուստ․ կմ երկնչելով ՛ի վեր ընդոստումն․ ոճ հանդիպի ձիոյ, կմ մարդոյ, յորժամ ՛ի յանկարծ բաղխման սոսկացեալ ՛ի վեր ոստնու․ կմ փշաքաղի մարմնով ։ Նարէկ․ ղե ։

Խրտուչիմ․ խրտեցայ․ իր․ չիլ ։ (ձայնականք․) || առ ՛ս զխրտուիլ՛ զի նոյն է Ը նմա ։ ոճ և փախչելն Ը փախչել բային ։ Խորէն․ գ․ գլ․ 55 ։

ԽՑ

Խցանեմ․ խցի․ խեց․ ել ։ (Ներգործ․) || փակել․ կմ խցել․ կմ խնուլ․ որ մերթ առի զծակոաց մերթ զանցից, կամ զձանձապարհաց ։ Իսկ մերթ զբերանոյ, և զպլլոց նմանեաց ։ Յովէ․ 2․ հատ․ ԼԲ ։

Խցաւոր․ ի․ աւ․ աց․ օք ։ || անձկաւոր․ կամ ՛ի խցի բնակող ։ ՛ի Ճառ հոգ․ իդ ։

Խցիկ․ խցկան․ կամբ․ խցկանք․ անց․ ամբք ։ || փոքրիկ խուց․ կմ փոքրիկ խուղ ։

ԽՓ

Խփան․ ի․ աւ․ աց․ օք ։ || խուփ, որով ծածկեն զբերան սպասուն, կմ ջրհորոյ, և այլոց նմանեաց ։

Խփանեմ․ խփեցի․ եա․ անել ։ (Ներգործ․) (որպս կատարեալն, և որք բղխին յայնմանէ, փոխառեալ լինին ՛ի խփեմ բայէն, ոճ և եդաւ ։) || խփով ծածկել․ կմ կափուցանել․ կամ զխուփն ՛ի վր բերանոյ հորոյ, կմ անօթոյ դնելով փակել ։ Ելից․ 21․ 33 ։

Խփեմ․ եցի․ եա․ ել ։ (Ներգործ․) || խփով ծածկել․ կմ փակել․ կամ կափուցանել ։ Թուոց 19․ 15 ։ և Ղուկ․ 4․ 20 ։

ԽՕ

Խօթ․ ի․ իւ․ ից․ իւք ։ || հիւանդ․ կմ տկար․ կամ ախտացեալ ։ 1․ Թագ․ 19․ 14 ։

Խօթամիտ․ մտի․ իւ․ աց․ օք ։ || հիւանդամիտ․ կամ տկարամիտ․ յոր մի տկարութե մտաց, ոչ կարէ ըմբռնել զեր ինչ․ կմ բթամիտ ։ Եբր․ 5․ 11 ։

Խօթանամ․ ացայ․ ացիր․ անալ ։ (ընդ․ միջ․) || հիւանդանալ․ կամ տկարանալ, կամ ցաւով ախտանալ ։ 4․ Թագ․ 1․ 2 ։ Դան․ 8․ 27 ։ Փիլիպ․ 2․ 27 ։

Խօթասիրտ․ սրտի․ իւ․ ից․ իւք․ կամ աց․ օք ։ || հիւանդասիրտ․ այն, որ լքեալ է ձեռօք և սրտիւ․ կմ որոյ սիրտն հեղգութ թմրեալ է․ և կմ տարտամ և ծոյլ․ որ ոչ զխորհրդածելոյ փոյթ ունի, և ոչ հոգայ, թէ զինչ պտուղ է առնել ։ Առակ․ 12․ 8 ։ և 22․ 29 ։

Խօլ․ ի․ իւ․ կամ աւ․ աց․ օք ։ || յիմար, կմ անմիտ․ կմ մոլեգնեալ ։ Իսկ մերթ բանաւոր պատերազմականքն, և կամ ուժով պերճացեալ հսկայքն, որք իւր արբեալք զօրութե անձանց իւրեանց՝ մոլեգնութ, և կատաղութ բորբոքին ՛ի մարտ պատերազմի․ խօլք կոչին ։ Ը այնմ Խորէն․ ա․ գլ․ 9․ ՛ի մէջ բազմակոյտ հսկայից, անհուն խօլաց, և ուժաւորաց ։

Խօլագնացութիւն․ թեան ։ || յիմարուն մտաց, կամ անմտութիւն, և կմ անմիտ գնացառան սրտի, որպիսի է յիմար ենթադրառութի փառամոլից, կմ սնափառաց, որք զմարդկայինն փառս և զգոյութեան մեծ ինչ վարկանելով՝ զուր տարապարտուց կորուսանեն զկեանս իւրեանց, յիմարութ մոլելով ։ Ռուբէն․ 1․ հատ․ Է ։

Խօլական․ ի․ աւ․ աց․ օք ։ || յիմարական․ կմ խելագարական․ կամ մոլեգնական, և կամ խելաժեռական ։ Նարեկ․ ժէ ։

Խօշխուն ։ (Նախդրիւ հոլովի․) || հնչիւն․ կամ դոչիւն․ կմ թնդիւն․ կմ ձայնք և բարբառք պատերազմի․ կմ որոտման, կամ ուժգին և ահաւոր բաղխմանց․ և այլն ։

Խօսական․ ի․ աւ․ աց․ օք ։ || այն՝ որ ունի զկարողութի խօսելոյ․ կմ խօսող և բարբառող․ որպիսիք են մարդիկ ։ Նարէկ․ լէ ։

Խօսակից․ կցի․ աւ․ աց․ օք ։ || կցորդ խօսից, և կմ խօսակցող Ը ումեք ։ Առակ․ 6․ 22 ։

Խօսակցիմ․ եցայ․ եաց․ իլ ։ (ձայնակք․) || խօսիլ Ը ումեք․ կամ խօսից արուք կցորդ լինիլ՝ ինքն ևս խօսելով․ կամ առնել ԸԴ խօսակցութի ։

Խօսակցութիւն․ թեան ։ || կցորդութիւն խօսից, կամ ընկերակցութի ընդ ումեք ՛ի խօսս ։ Եւ կամ կցորդութի, և միութի բարբառոյ, կամ լեզուի ։ Նարէկ․ ՛ի գով․ առաքելոց ։

Խօսարան․ ի․ աւ․ աց․ օք ։ || տեղի խօսելոյ ։ Իսկ մերթ նշանակէ զգործին խօսելոյ, կմ տրամաբանելոյ, որպիսի է լեզուն․ կամ բերանն ։

Խօսելիք․ լեաց․ եօք ։ (անեզ․) || մերթ նշանակէ զխօսօղն, կամ զբարբառօղն ։ 3․ Թագ․ 10․ 7 ։ Եւ մերթ զայնս՝ զորս խօսելոց է ոք ։

Խօսիմ․ եցայ․ եաց․ իլ ։ (հասարակ բայս) || բարբառել․ կամ ասել․ որ և ռամկօրէն ասի՝ խօսիլ ։ Մատթ․ 9․ 33 ։ Ղուկ․ 12․ 12 ։ Մերթ ևս

նշանակէ՝ զձայն արձակելն խօսնակին ։ Մատթ. 26. 74։ Իսկ մերթ նշանակէ դաշնագիր քինելով յատկացուցանել զկին ոք ուրուք, զի 'ի պայմանեալ ժամանակի ամուսնասցին ընդ միմեանս. ռամկօրէն նշանել։ 2. Օրէն. 22. 23. և 27. և 28։ 2. Կորն. 11. 2։ Իսկ մերթ՝ մինչ ասի խօսիլ զկին, ոչ նշանակէ զնշանելն, այլ զնշանիլն ընդ նմա ։ ռամկ. նշանուիլ։ 2. Օրէն. 20. 7։ 1. Մակ. 3. 56։ Բայց երբեմն 'ի յածաշունչ գիրս՝ մինչ ասի՝ խօսիլ զկին. կմ՝ խօսեցեալ առն. և այլն. համանգամայն նշանակէ՝ զնշանելն և զպսակելն առանց գալոյ առ իրեարս մարմնաւոր զուգմամբ, և Թ այսմ է Մատթ. 1. 18։ Ղուկ. 1. 27։ և 2. 5։ Բայց գիտելի է, զի անցեալ ժամանակքն այսորիկ բային՝ ոչ միայն կրաւորականք. այլ և ներգործականքն բազմիցս համդերձ եդ վանկիւ կերպաւորին. զոր օրինակ խօսեցեալ զբանն ՟ՌՆ. Գործ. 14. 24։ Եթէ մեծ ինչ բան խօսեցեալ էր քեզ մարգարէին ։ 4. Թագ. 5. 13։ ըստ այսմ է և 1. Կորն. 14. 9. ուր ասի՝ Ձի լինիցիք այնուհետև իբրև ընդ օդս խօսեցեալք. ՞Փ իբրև ընդ օդս խօսօղք. Թ այսմ է և յայլ բազում տեղիս ։

Խօսնակ. ի. աւ. աց. օք ։ || խօսօղ. կամ բարբառօղ ։ Իսկ մերթ նշանակէ զբարեխօսն. կմ՝ զպաշտպանն. և կմ՝ զմիջնորդն ։ և ըստ այսմ ասի զխաչէն Քնի. 'ի Նարեկ.ղէ. Օրհնեալ ես փայտ կենաց, պարարշին խօսնակ, միջնորդ համարձակ, և այլն։ Սոյնպէս ասի և զառաքելոցն, 'ի գովեստն նց. Զորեքձագեան մասանց եակաց անպատկառ խօսնակք. ՞Փ ընդհանուր աշխարհի բարեխօսք, և պաշտպանք։ Իսկ մերթ նըշանակէ զպաքաղաղն, որ ընդ պահս պահսխօսի. ռամկ. խօրօղ ։ և ըստ այսմ ասի՝ 'ի Նոռէկ. 'Ի գոհէսփ հոգւոյն. գիշերային մԹոյն խօսնակ բերկրանաց ։

Խօսնական. ի. աւ. աց. օք ։ || խօսողական. կմ՝ խօսօղ. և կամ խօսելով միջնորդօղ ։

Խօսումն. սման. ման. մանց. մամբք ։ || բարբառումն. կմ՝ ասուԹն ։ Իսկ մերթ նշանակէ զնշանումն արուՀին ը իգին ։ Եւ Թ այսմ Մծբն.Հ. ուր ասի՝ զկուսանաց 'ի խօսման կան քնի, լինին՝ նշանեցեալք են քն։

Խօսսան. ի. ին. ից. իւք ։ || խօսօղ. կմ՝ այն. որ կարէ խօսիլ։ Եւ մերթ բանաւոր. կմ՝ համաձայն բանի. կմ՝ մտաւոր. և կմ՝ մտաւորական։ Յոբ. 38. 14։ Հռոմ. 12. 1։ 1. Պետ. 2. 2։

Խօսք. սից. իւք. (անեզական.) || բանք, կմ՝ ձայնք. կմ՝ բարբառ ։ Եւ մերթ մտածուԹն. կմ՝ խորհուրդն, որ 'ի սրտի ։ Ծննդ. 24. 15։ Իսկ մերթ նշանակէ զձառս բանից. կամ զարտասանուԹն և զվէպս պէսպէս զրուցաց ։ Խորէն. Բ. գլ. 72։

Խօսօղ. սողի. աւ. աց. օք ։ || Նա՝ որ խօսի, կմ՝ վարդապետէ ։ Խորէն. Բ. գլ. 89։ Եւ մերթ նշանակի Ճարտասանաբան, և պարզապէս խօսօղ. կմ՝ յստակ լեզուաւ արտաբերօղ ըզբան։ Եւսեբ. 6. 72։

Ծ

Ծ. է միոյն 'ի բաղաձայն տառից, որ միայնակ ոչ կարէ զձայն եղանել, այլ՝ միշտ պահանջէ յօդիլ և բաղակցիլ ը այլոց տառից, զի կարասցէ հնչել. որգոն. Ծագ. Ծակ. Ծորակ. Ծորան. և այլն ։ Բայց 'ի մէջ բաղաձայնից կոչի սա կրկնակ. վն զի ունի զզօրուԹն և զոյժ երկուց տառից բաղաձայնից, որպիսիքեն և տառքս այսոքիկ. Լ. Ձ. Ճ. Ջ. Ց. և այլն։

Արդ՝ զտառս զայս՝ Ծ, անուանեմք Ծայ. որ ունի զնոյն հնչումն. վն որոյ և արտաբերի ծայրիւ լեզուին, ուր և յայտ է։ Ուստի և յառօգանական արուեստի ըստ հագագին կոչի սուկ. ՞Փ նուրբ. որպիսիք են և տառքս այսոքիկ. Զ. Կ. Մ. Ն. Տ. Ր. և այլն։ Դարձեալ տառս այս՝ է և միոյն 'ի լծորդ տառից. վն զի ունի զլծորդուԹ. ՞Փ զկցորդուԹն ձայնի ը տառից այսոցիկ. Ձ. և Ց. ուստի բազում անգամ փոխադրի ընդ նն մանաւանդ ը ձայնն, որում յոյժ մերձաւոր է հնչմամբ. վն զի գրեմք գծուծ, և գձուձ. Նարեկ.Է։ Խորէն. Բ. գլ. 60։ խնծոր. և խնձոր։ Երգ. 2. 5։ և 7. 8։ խնծ. և խնձ ։ Եսայ. 11. 6։ Երգ. 4. 8։ գերապանծ. և գերապանձ ։ Ծգնաել. և ձգնաել. և այլք բազումք ։

Դարձեալ. է սա նաև Թուական նշան. քանզի յորժամ գրի պատուով այսպէս. Ծ. նշանակէ զյիսունն ։

ԾԱ

Ծագ. ի. իւ. աց. օք ։ || է արմատ ծագել բային, որով մերթ նշանակի ծագումն ։ Իսկ մերթ ծայր. կմ՝ գլուխ. կամ սկիզբն. կամ եզր. կմ՝ վերջ. և ըստ այսմ ասի ծագ գաւառանի. կամ մառին ։ 1. Թագ. 14. 27։ Ղուկ. 16. 24։ Եբր. 11. 21։ Եւ կամ ծագք աշխարհի. կմ՝ ծագք երկրի. և այլն ։ Ծննդ. 47. 21։ 2. Օրէն. 13. 7։ Սաղ. 18. 5։ Իսկ Գործ. 15. 11. նշանակէ զծերպն. կմ՝ զփապարն, որ է մեծ ծակ վիմաց. կմ՝ լերանց, և կամ ծառոց ։

Ծագեմ. եցի. եա. եւ ։ || մերթ վարի սա ներգործականաբար, և նշանակէ ծագեցուցանել. կամ ծագիլ տալ. և ըստ այսմ ասի՝ ծագել զարեգակն ։ 2. Թագ. 23. 4։ Մատ. 5. 45 ։ և մերթ ծաւալել. կմ՝ սփռել.

ռել. կմ ցայտել. և ըստ այսմ առի ծա-
գել զլոյս: Մերթ ևս բղխեցուցանել. կմ
հանել. կամ յառաջ ածել: Սաղմ. 131. 17:
Իսկ մերթ վարի չէզոքականաբար. և նշա-
նակէ ծագիլ. իբր ելանել. կմ շառաւիղել.
կամ ճառագայթել. և ըստ այսմ առի,
ծագեաց արեգակն. կմ 'ի ծագել արևուն.
կամ ծագեսցէ առաւօտն յակոբայ. և այլն:
Ծննդ. 19. 23: Թուոց. 24. 17: 4. Թագ. 3. 22:
Մարկ. 13. 6: Իսկ մերթ նմանութեամբ առեալ
նշանակէ զելանելն, կմ զբղխելն, և կամ
զյառաջգալն, և զարտադրելն ևս լցէ ի-
րաց: Եբր. 7. 14:

Ծագիմ. եցայ. եա՛. կմ եա՛ց. իլ: (Ձայնակր.)
|| տե՛ս զծագելն, ըստ որում վարի չէզո-
քականաբար: Ծննդ. 32. 31: Եսթեր. 8. 16:
Սաղմ. 103. 22: Եսայ. 9. 2:

Ծագումն. գման. մամբ. անց. ամբք: || Մերթ
նշանակէ զներգործութիւն ծագելոյ. իբր ըղ
ծագիլն. և ըստ այսմ խմացեալ լինի, մինչ
առի ծագումն արեգական, կմ առաւօտուց:
Իսկ մերթ նշանակէ զծագեցեալն. կամ
զյառաջեկեալ իրն. և ըստ այսմ որդին
միածին ըստ որում ծագի 'ի հօրէ 'ի յաւէ-
տենից. և 'ի մօրէ, կամ 'ի նախահարց ժա-
մանակաւորաբար, կոչի ծագումն: Զաքար.
3. 8: Եւ մերթ նշանակէ զսկզբնաւորութիւն.
կմ զբղխումն, կմ զարտադրութիւն իրիք:

Ծալք: (Նախդրիւ հոլովի. և է անեզական.)
|| կրկնուած կտաւեղինաց. կմ փաթոյթ.
կմ ծրար: որ և ռամկօրէն առի ծալք:

Ծալեմ. եցի. եա՛. ել: (Ներգործ.) || կրկնել.
կմ զմասունս կտաւեղինաց 'ի վր միմեանց
կրկնելով ժողովել. կամ փաթութել. որ
ռամկօրէն առի ծալել: 4. Թագ. 2. 8:
Յովհ. 20. 7:

Ծալելիք. լեաց. եօք: (անեզակ.) || այն՝ որ
կարէ ծալիլ. և կրկնիլ: Սակի և յօդ-
ուածք անդամոց կենդանեաց՝ որք կրկնին,
և դարձեալ ուղղին՝ ծալելիք կոչին. և այս
մանաւանդ առի զյօդուածոց ծնկան:

Ծալովի: (մակբայ որակական.) || ծալելով,
կմ կրկնելով:

Ծախ. ու. ու. ուց. ուք: կամ իզ. իւք: || է
արմատ ծախել բային. որով մերթ նշա-
նակի վաճառումն. կամ սպառումն. կմ մա-
շումն. կմ կորուստ. կմ կատարումն: 2. Օրէ.
28. 20: 3. Մակ. 6. 28: Եզեկ. 15. 4: Իսկ մերթ
նշանակի ծախումն դրամոյ. կմ ծախելի
դրամն 'ի պէտս ինչ. իբր 'ի շինուածս. կմ
'ի կերակուրս. և 'ի զգեստս. և յայլս նմանս:
ռամկօրէն խարճ: 2. Եզր. 6. 8: 1. Մակ. 10.
39. և 44: Ղուկ. 14. 28: Իսկ մերթ նշանա-
կի տուրքն. կմ տուգանքն: ռամկ. ճէրիմէ:
1. Եզր. 1. 36:

Ծախեմ. եցի. եա՛. ել: (Ներգործ.) || մա-
խել. կմ վաճառել. կամ սպառել. կմ մա-
շել. կմ պակասեցուցանել. կմ կորուսա-
նել: ռամկ. ղաւ ընէլ. կմ խարճէլ: Եզեկ. 9. 4:
և 24. 11: Ղուկ. 8. 43: 2. Կորն. 12. 15:

Ծախիչ. խչի. աւ. աց. օք: || վաճառող. կմ մա-
շող. կամ սպառող. և կամ կորուսանող:

Եբր. 12. 29:

Ծածանիմ. եցայ. եա՛ց. իլ: (Ձայնակր.) || ե-
րերիլ. կամ շարժիլ. և կամ ծփծփալ հան-
դարտաբար. և այս առի զջրոյ, ըստ այնմ,
զոր առէ Շնորհալին յողբոն Եդեսիոյ. ծովն
'ի միջի իմ ծածանէր. քաղցրիկ օդովն ծի
ծաղէր:

Ծածկաբար: (մակբայ ծածկական.) || ծած-
կապէս. կամ գաղտնաբար: Իսկ մերթ նը-
շանակէ ծածկողաբար. կմ պարագրելով,
և ըստ այսմ առի 'ի շարականոյն զորօքէից,
Զոր սերովբէքն ծածկաբար ընդունիլ ու-
բանէին:

Ծածկագէտ. գիտի. իւ. աց. օք: || գիտող
զծածուկս. կմ զթագուն իրս. և այս առի
զայ վս գիտելոյ նր զգաղտնի խորհուրդս
սրտի: Դանի. 13. 42:

Ծածկաթագոյց. գուցի. իւ. աց. օք: || ծած-
կող, և թագուցանող. կմ ծածկելով թա-
գուցանող: Իսկ մերթ նշանակէ զծա-
ծուկն, և զթագուն. կմ զծածկապէս թա-
գուցեալն. և ըստ այսմ առի գանձք ծած-
կաթագոյցք: Մծբն. ժթ:

Ծածկախոյզ: (Նախդրիւ հոլովի.) || ծած-
կախոյզ. իբր 'ի ծածուկ խուզող. որպիսիք են
քուրք. կմ բամբասողք, որք բամբասաւոր
թանիւք իբր գաղտնի նետիւքն ա՛ 'ի մահ խո-
ցեն զայլս: Մծբն. ժթ: Եւ սոյս յիշատա-
կի ըստ հնոյ սովորութեան. որպիսիք են և
բառքս այսոքիկ. արարատ. գառագեղ.
որք երբեմն գրէին 'ի հնոց. այրարատ. գայ-
ռագեղ:

Ծածկապէս: (մակբայ ծածկական.) || տե՛ս
զծածկաբարն:

Ծածկատես. ի. աւ. աց. օք: || տեսող, կմ
իմացող զծածուկս, և զգաղտնիս: Ե-
սայ. 29. 10:

Ծածկարան. ի. աւ. աց. օք: || տեղի՝ ուր
կարէ ինչ ծածկիլ, և թագուցանիլ. և
ըստ այսմ պատսպարանն, ուր փախու-
ցեալ ոք ապաստանի՝ ծածկարան կոչի.
ուստի առի 'ի Նարեկ. լէ. զայս, ծածկարան
փախուցելոց: Իսկ մերթ նշանակէ զծած-
կոցն. և ըստ այսմ ծածկոյթ անկողնոյն,
և այլոց նմանեաց՝ ծածկարան կոչի:
Նարեկ. ժզ:

Ծածկեմ. եցի. եա՛. ել: (Ներգործ.) || ծած-
կութիւ իմիք պօղել զբացեալ, կմ զմերկ
իրս. իբր զմարմին. զգլուխս. զերեսս. կամ
զտուն ինչ. և այլն: 3. Թագ. 19. 13: Եզեկ.
1. 23: Եւ ըստ այսմ ալիք ծովուն յորժամ
բարձրացեալ՝ լնու զնաւն մերձ ընկղմիլ՝
առի ծածկել զնաւն: Մատթ. 8. 24: Իսկ մերթ
նշանակէ գաղել. կմ թագուցանել: 2. Օրէ.
13. 8: Աւակ. 7. 1: Մերթ ևս պաշտպանել:
Սաղմ. 63. 3: Իսկ մերթ նշանակէ աներևոյթ
առնել. և ըստ այսմ խմանի մինչ առի, ծած-
կիլ յաչաց:

Ծածկելիք. լեաց. եօք: (անեզական.) ||
ծածկոյթ. և կմ այն, որով ծածկի ինչ:
ռամկ. ծածկոց: Ելից. 26. 14:

Ծածկիչ: (Նախդրիւ հոլովի.) || ծածկող.

կամ այն՝ որ ծածկէ զինն. և ըստ այսմ եր կաթեղէն, կամ պղնձեղէն գործիքն. կամ խուփն, որով ծածկի բերան տաշտի, կամ այլոյ անօթոյ՝ ծածկիչ կոչի: Թուոց. 4. 14:

Ծածկոյթ. ութի. իւ. իւց. իւք: || Ծածկութն. կամ ծածկող իր. և ըստ այսմ վարագոյրն. քօղն. սփռոցն. վերարկուն. ըզգեստն. և այլք բազումք. որք ծածկեն զինն, ծածկոյթ կոչին: ռամկ. ծածկոց: 2. Օրին. 33. 27: Սաղմ. 17. 12:

Ծածկութիւն. թեան: || Ծածկումն. կամ ծածկոյթ. կամ ծածկիչ: Յոբ. 22. 14: և Եսայ. 4. 6:

Ծածուկ. ծկի. աւ. աւց. օք: || Գաղտնի. կամ թաքուն. կամ անյայտ:

Ծածուկ: (մակբայ ծածկաբար.) || Ծածկապէս. կամ գաղտ: 3. Մակ. 1. 2:

Ծակ. ու. ու. ուց. օք. կամ իւք: || Ծակեալ տեղի տախտակի, կամ որմոյ. կամ կտաւոյ. կամ ասղան, և այլոց բազմաց, որ և ռամկ. ասի ծակ: Եզէկ. 8. 7: Մատթ. 19. 24: Իսկ մերթ ծակ կոչին ծերպք. կամ փապարք. կամ անձաւք. կամ որջք, և այլք նմանք, որք գտանին 'ի լերինս. կամ 'ի վէմս: 1. Թագ. 14. 11: Յոբ. 30. 6: Եսայ. 2. 21: Երեմ. 16. 16: Իսկ մերթ է ածական. և նշանակէ զծակեալ. կամ զծակեցեալն: Առակ. 23. 27:

Ծակախիթ: || ոչ հոլովի, այլ ընդ բային չարակցի այսպէս. ծակախիթ լինել. և նշանակէ՝ 'ի ծակս. կամ 'ի փապարս և 'ի ծերպս լերանց մտել, և վարել զինքն, կամ մնանել, և ամրանալ: Ագաթ.:

Ծակամուտ. մտի. աւ. աց. օք: || Մտանող 'ի ծակս, կամ 'ի ծերպս վիմաց, և այլոց նմանեաց: Երեմ. 49. 16:

Ծակեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || Զծակս առնել յիրի իմիք. որ և ռամկ. ասի ծակել: 2. Օրին. 15. 17: Եզէկ. 12. 5:

Ծակոյկ. ուկէ. աւ. աց. օք: || Է նուազական անուն, և նշանակէ զփոքրիկ ծակն որմոյ, կամ պատուհանի. և այլոց նմանեաց: Երգ. 5. 4:

Ծակոտ. ի. իւ. իւց. իւք: || Այն՝ որ ունի ըզ բազում ծակս: ռամկ. ծոկծկոտ. կամ ծակծակ: Երեմ. 2. 13:

Ծակոտեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || Ծակծակ առնել. կամ բազում ծակօք լնուլ: ռամկ. ծակծկել. Անգէեայ. 1. 6:

Ծակոտկէն. կէնի. իւ. ից. իւք: || Ծակոտեալ. կամ զբազում ծակս ունող. և կամ խիտ ծակօք լցեալ. և ըստ այսմ ասի՝ գուպ ծակոտկէն. քար ծակոտկէն. հանդերձ ծակոտկէն, և այլք բազումք: ռամկօր. ծոկծկոտ. կամ ծակծակ: Իսկ մերթ նշանակէ զփոքրիկ խեցեմորթ ինչ. որ ունի զձև, և զգոյն եղնգան մարդոյ. և վն այն երբեմն կոչի եղունգն, որպ Ելից. 30. 34: Սա ծնանի յաշխարհն Հնդկաց 'ի նարդոսաբեր, և 'ի ծաղկալից լիճս: Սնանի անուշահոտ ծաղկամբք նարդոսից. ուստի և ինքն է յոյժ անուշահոտ. և 'ի ցամաքիլ լճին ժողովեն զայսպիսի խեցեմորթս. որոց զխե

ցեն վն անուշահոտութե նց 'ի գործ ածեն իբրև զայլ անուշահոտ ծխանելիս, և խունկս: Խորէն. յաշխարհագրութե:

Ծակոտուած. ոյ. ով. ոց. ովք: || Ծակոտումն. կամ ծակոտեալ տեղի: Նարեկ. Է:

Ծակուկ. ուկի. աւ. աց. օք: || Ծակոյկ. կամ ծակ: Իսկ մերթ ծերպ, կամ փապար վիմաց, կամ լերանց. և կամ այլ ինչ իրի: Յոբ. 39. 28:

Ծակտի. տւոյ. եաւ. եաց. եօք: || Բազում ծակք. որ ռամկ. ասի՝ ծոկփէ: Վն զի վանկս՝ տի, բազում անգամ յարեալք յանուանս, ասայ նց եզական ձայնիւ նշանակել զբազումս. որպ և մինչ ասի՝ մանկտի, իմանի՝ մանկունք:

Ծաղածանակ. ի. աւ. աց. օք: || Ծիծաղելի, և ծանակելի. կամ սաստիկ խայտառակ: Ագաթ.:

Ծաղեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || Տես զԾաղրել:

Ծաղիկ. ղկան. անբ. անց. անբք: կամ ծաղիկ. ծաղկի. իւ. աց. օք: || Է անուն հասարակ. որ ասի զվարդոյ, զշուշանէ, ըզ մանուշակէ, զծաղկանց ծառոց, կամ խոտոց. և զայլոց բազմաց: ռամկ. ևս ասի ծաղիկ: Իմաստ. 2. 7: Յոբ. 15. 33: Յակ. 1. 10: Բայց երբեմն նշանակէ զնախապէս յառաջ եկեալ իրս ազնիւս. որպ և առաջին կաթիլն, որ կաթէ 'ի զմռսենեայ, վն ազնուէնութե ասի՝ ծաղիկ. ըստ որում գրի՝ Ելից. 30. 23: Իսկ մերթ է սա արմատ ծաղկել բային, և նշանակէ զծաղկումն. կամ զբողբոջիլն. և ըստ այսմ մինչ ասի՝ Անդէն 'ի ծաղկի խլեալ զարմատ չարին. իմանի՝ 'ի ծաղկիլն. կամ 'ի բողբոջիլն: Կիւրղ. Եղէմ.:

Ծաղիկընձիւղ. կամ ծաղիկընծիւղ: (Նախդրիւ հոլովի.) || Զծաղիկ ընձիւղող. իմ բուսուցանող. կամ բողբոջող: Նարեկ. ղէ:

Ծաղկաբեր. ի. իւ. ից. իւք: կամ աց. օք: || Զծաղիկ բերող. որով մերթ իմանի այն, որ բերէ ուրեք զծաղկունս: Իսկ մերթ այն, որ արտադրէ, կամ բուսուցանէ ըզ ծաղիկս: և ըստ այսմ ասի. գաւառ ծաղկաբեր, և այլք նմանք: Իմաստ. 19. 7:

Ծաղկագիր. գրի. աւ. աց. օք. || Փառագիր. կամ մեծ գլխագիր, որ 'ի սկզբունս փառաքեց, կամ գլխոց գրի. և ասի ծաղկագիր, զի ըստ ձևոյ. և ըստ գունոյ զանազանեց ծաղկանց նկարի:

Ծաղկազարդ. ի. իւ. ից. իւք: || Ծաղկօք զարդարեցեալ. կամ ծաղկափթիթ. իմ ծաղկօք փթթեցեալ, և կամ այն, որ վերաբերի առ ծաղկօք զարդարիցեալն. և ըստ այսմ ասի. ծաղկազարդ վայելչութիւնք: Իսկ մասնաւորապէս առեալ՝ նշանակէ զողոգոմեան կիրակէն. որ է նախընթաց կիրակէ՝ կիրակէի զատկին. և կոչեցաւ սա ծաղկազարդ, զի յայսմ աւուր պէսպէս ծաղկամբք. կամ թաւ ոստովք լինին զարդարանք, և տօնք ցնծութե 'ի յիշատակ գալստեան տն յերէմ, յորում աւուր ոստովք ձիթենեաց, և արմաւենեաց ընդ

առաւօտ երկին անուշահոտ մերոյ:

Ծաղկազարդեմ. եցի. եա՛. ել: (Ներգործ.) ‖ Ծաղկօք զարդարել՝ և վայելչացուցանել:

Ծաղկաղէն: (Նախադրիւ հոլովի:) ‖ Նոյն է ընդ հետևեցելոյն:

Ծաղկալից. լցի. իւ. եց. իւք: ‖ լցեալ ծաղկօք. որ ասի զծառոց, կամ զպարտիզաց, և ըզ նմանեաց սոցին:

Ծաղկածին. ծնի. իւ. աց. օք: ‖ Ծնանօղ. այ բուսուցանօղ, և բերօղ, կամ արտադրօղ ծաղկանց, որպիսիքեն ծաղկաբեր գաւառք, և հովիտք: Նորէնէ. կ. և զկ:

Ծաղկակալ. ի. աւ. կամ իւ. աց. օք: ‖ Ծաղ կակիր. այ այն, որ կալնու, և կրէ յինքեան զծաղիկս. որպիսի է սկուտղն. կամ անօթն. յորոյ մէջ ծաղկունք դնին: Խորհրդ. ԺԲ. գլ. 60: Ը այսպէս և մարդն, որ կալեալ ունի 'ի ձեռս իւր զծաղիկ՝ կոչի ծաղկակալ:

Ծաղկահոտ. ի. իւ. եց. իւք: ‖ այն, որ ու նի, և բուրէ զհոտ ծաղկան, ուստի և որ հեստիւ կոչեցեալ գինիքն, որք ունին ըզ այեստես, և զազնիւ բուրմունս անուշահոտ ծաղկանց, կամ խնկոց, կոչին ծաղկահոտ գի նիք: 'ի Վարս հարց. Ժ. և Ժա:

Ծաղկաձև. ի. իւ. եց. իւք: ‖ Ծաղկակերպ. կամ այն, որ ունի զձև՝ և զնմանութիւն ծաղ կան. և կամ որ է հանգոյն ծաղկան գեղե ցիկ, և ազնիւ: Աշգամ:

Ծաղկայօրինաւորեալ: (Նախադրիւ հոլովի.) ‖ Ծաղկամբք յօրինեցեալ. կամ զյօրինուած ծաղկի ունօղ. և կամ ծաղկանմանն կազմե ցեալ, և զարդարեցեալ: Նորէնէ. զկ:

Ծաղկաւէտեմ. եցի. եա՛. ել: (Ներգործ.) ‖ Ծաղկօք լի առնել. կամ ծաղկօք զարդա րել, և վայելչացուցանել. կամ իբրև ըզ ծաղիկ բողբոջեցուցանելով գեղեցկացու ցանել:

Ծաղկաւէտ. հետի. իւ. եց. իւք: ‖ լի ծաղ կօք. կամ զբազմաւ ծաղկօք բուսուցանօղ. կամ յոյժ առատացեալ ծաղկամբ: Նորէնէ. զկ: Խորհրդ. Թ. գլ. 15:

Ծաղկափթիթ: (Նախադրիւ հոլովի.) ‖ Ծաղ կօք փթթեցեալ. կամ իբրև զծաղիկ բող բոջեցեալ, և զարդարեցեալ:

Ծաղկաքաղ. ի. իւ. եց. իւք: ‖ քաղօղ ծաղ կանց. այ նա, որ ժողովէ զծաղիկս: Մերթ և ասի զգործաւորաց. որոց բանիքն ժողո վեցեալք, և քաղեցեալք են յայլոց գրոց: Բայց այս մանաւանդ ծաղկաքաղ ասի. քան ծաղկաքաղ:

Ծաղկեայ. կէի. կամ կեայ. իւ. եց. կամ եայց. եիւք: ‖ Ծաղկաւոր. կամ բազմաղան ծաղ կամբք լցեալ: և Ը այսպէս ասի, ծաղկեայ դաշտակ՝ ծաղկեայ վայր. կամ լեառն, և այլն: Իսկ մերթ նշանակէ զծաղկեալն. այ գը րեալն և զարդարեցեալն գեղեցիկ ձևով գոյնզգոյն ծաղկանց. կամ զնկարակերպն. կամ զխայտաբղետն: Ծննդ. 37. 3. և 23:

Ծաղկեմ. եցի. եա. ել:(Ներգործ.) ‖ Ծաղ կեցուցանել. կամ ծաղկամբ զարդարել: Եւ մերթ զծաղիկս արտաքս երևեցուցանել. կամ յինքեանէ արտաքս բղխել. կամ ընձե ռել: Թուոց. 17: 8: Իսկ մերթ ծաղկակերպ յօրինել. կամ ըստ ձևոյ, և ըստ որպիսու թեան ծաղկանց կազմել, և վայելչացուցա նել: Ելից. 28. 14: և 39. 22:

Ծաղկերանգ. ի. աւ. աց. օք: ‖ զգոյն ծաղ կան ունօղ. կամ գոյնզգոյն ծաղկամբք զար դարեցեալ: Իսկ մերթ նշանակէ՝ ծաղկա կերպ. կամ ծաղկանման. և ըստ այսմ ա սէ 'ի Ցնորդն.

Զանազանեալ վարսք նոցին.
և ծաղկերանգ քեղ ընծայեն:

Ծաղկեցուցանեմ. ցուցի. եցի. ել: (անցող.) ‖ Ծաղկամբք զարդարել. կամ զծաղկունս բղխեցուցանել. կամ արտաքս երևեցուցա նել. և կամ բողբոջեցուցանել: Եսայ. 61. 11:

Ծաղկիմ. եցայ. եայց. իլ: (Հայնական.) ‖ բու սուցանել. կամ արտաքս երևեցուցանել. կամ արտադրել զծաղիկ. և կամ ծաղկօք զար դարիլ: Թուոց. 17. 5: Երգ. 6. 10: Մերթ և ա նմանութեամբ առեալ՝ նշանակէ զպայծառա նալն հերաց գլխոյ, և մօրուաց: Դան. 7. 9:

Ծաղկոց. ի. աւ. աց. օք. կամ իւք: ‖ բու րաստան. կամ տեղի, ուր բուսանին ծաղ կունք. և կամ ուր դնին անօթք՝ յորս ան կեալք են ծաղկունք: Երգ. 7. 7: Ասածի և երբեմն այսպիսի անօթքս ծաղկանց, որք կազմին 'ի կաւոյ, կամ յապակենւոյ, ծաղ կոց կոչին: ռամկ. սախսի:

Ծաղր. ծաղու. ու. ուց. ուք: կամ ծաղր. ծաղեր. երք. երց. երբք: ‖ Ծիծաղ. կամ ուրախական ժպտումն. կամ զուարճումն, և զուարթութիւն գիմաց: Ժողով. 2. 2: և 7. 4: Յոբ. 8. 21: Եւ մերթ նշանակէ՝ ուրա խական բանիւք ծիծաղեցուցանելն. կամ զուարճացուցանելն: Ժող. 7. 7: Մերթ և ա նշանակէ զխաղն. կամ զկատակն. զոր առնէ ոք. կամ զծաղրածանութիւն: ռամկ. շաքայ. կամ մասխարայութիւն: Ծննդ. 19. 14: Իսկ մերթ նշ նշանակէ՝ խայտառակ. կամ ծանակելի. կամ ծիծաղելի. կամ ամօթալի: ռամկօր. խօսք: Ծննդ. 38. 23: Ժող. 10. 19:

Ծաղրաբան. ի. իւ. եց. իւք: ‖ ան'ս զծաղ րածու:

Ծաղրալից. լցի. իւ. եց. իւք: ‖ լի ծաղու. կամ ամօթալից. կամ ծիծաղելի. կամ ծաղ րական: Իմաստ. 17. 8:

Ծաղրածու. ծուի. աւ. աց. օք: ‖ այն՝ որ խեղկատակելով. կամ զծաղրածանութիւն առնելով 'ի ծաղր շարժէ, և ծիծաղեցու ցանէ զոք: Յճ որդի. և 'ի Վարս հարց. ԻԷ:

Ծաղրեմ. եցի. եա. ել: (Ներգործական.) ‖ ծաղր առնել. կամ կատակել: ռամկօրէն փնաղ անել: որ և մերթ ասի ձաղել: Խո րէն. Թ. գլ. 17:

Ծաղրետող. ետեղ. եղք. եղաց. զք: ‖ տեղի ծաղու, կամ ծաղրածանութեան, կամ կատա կերգութեանց, և կամ ծիծաղանաց:

Ծաղրերես: (Նախադրիւ հոլովի:) ‖ ուրա խադէմ. կամ ծիծաղերես. կամ այն՝ որ զուարճ ունի զերեսս իւր:

Ծամ. ոյ. ով. ոց. ովք: կամ եց. իւք: ‖ գէս. կամ հեր. կամ մազ. կամ վարս:

Ծամակալ. ի. աւ. կմ իւ. աց. օք: || մազ կապ կանանց. ցի կապ, որով կապեն և կալ նուն կանայք զծամս, կմ զգէսն. և այս էր քէշ ածի և պատի զհերովք գլխոյ մն հա ւաքեցեալ պահելոյ զգէսս, որք կախեալ կան 'ի յետ կոյս գլխոյ նց: Իսկ մերթ թոյլ տան զայն կախիլ և իջանել 'ի վայր ընդ թիկնամէջս իւրեանց, և զայս առ նեն սակ մո զարդու, քանզի յօրինեն, և հիւսեն զայն, և ընդելուզեն ոսկեովք. և մարգարտովք և այլապէս արծաթեղէն զարդուք և յօրինուածովք. որոց ոմանք են կարճք. իսկ ոմանք երկայնք, որք իջանեն 'ի վայր քան զմէջս, 'ի ծայրս որոց գան կա խեցեալք նաև արծաթեղէն, կամ ոսկե ղէն կազմուածք ոմանք, որք ծանրութի իւրեանց 'ի վայր հակեցուցանեն զհերսն՝ զի մի կնճռեսցին: ռամկ. ուլպուլ: Եսայ. 35. 22: Երգ. 3. 19:

Ծամել. լեայ. եաւ. եաց. եօք: || է ածական անուն. որով նշանակի այն՝ որ կարէ ծա մել, կմ ուտել. և կմ ծամկել:

Ծամելիք. լեաց. եօք: (անեզական.) || ստ կերք ծնօտին հանդերձ ատամամբք և մր սովք. և զի այսոքիւք մասամբք ծամեցեալ լինի կերակուրն. վն այնր կոչեցան ծա մելիք, իբր թէ ծամելոյ գործիք: Եւ մերթ առեալ լինի փոխանակ վերին կողման այ սոցիկ մասանց, որ անկանի ընդ մէջ յօ նից՝ և ականջաց, որ է սակաւ ինչ փոսո րակ. ուր և եզերբ ծայր մօրուաց. և 'ի ծա մելն զկերակուր, տեսանի շարժումն ինչ. և այս մասն էր, ընդ որ եհար յայէլ՝ ըզ ցիցն: Դատ. 4. 21:

Ծամեմ. եցի. եա. եալ: (Ներգործ.) || ծաս կել. ցի զիր ինչ 'ի բերան առեալ ատա մամբքն տրորել. կմ տրորելով ուտել: որ և ռամկօրէն ասի՝ ծամել: Յոբ. 30. 5: Յայտ. 16. 10:

Ծամկալ. ի. իւ. ից. իւք: || տես զծա մակալն:

Ծայթ. ի. իւ. ից. իւք: || մանր. կմ փոքր. կմ նուազ: Իսկ մերթ այսու բառիւ նշա նակի այն, որ նուազեալ է 'ի հաւատս. կամ որ է թերահաւատ. կմ հերձուածող:

Ծայթական. ի. աւ. աց. օք: || այն՝ որ է փոքր՝ կմ մանր, կմ նուազեալ. կմ պակասեալ. և մն այնորիկ հերձուածողքն՝ ըստ որում ունին զնուազութի, կմ զպակասութիւն յայնս, որք պատկանին հաւատոյ՝ ասին ծայթականք 'ի հաւատս:

Ծայր. ի. իւ. ից. իւք: || սպառուած. կամ ծագ. կամ գագաթ. կմ եզր. կմ վերջ: ռամկ. ծար: Եսայ. 28. 23: և 2. Մնաց. 25. 12:

Ծայրագոյն. գունի. իւ. ից. իւք: || գերա գոյն. կմ բարձրագոյն. կմ կատարելա գոյն. կմ յոյժ վսեմագոյն. կմ այն՝ որ գե րազանցագոյն է յիւրաքանչիւրում սեռի: Լամբր.:

Ծայրազննող. նողի. աւ. ից. օք: || մանրա զննին. կամ մանրազննին. ցի նա՝ որ ման րամասնաբար զննէ, և հետազօտէ:

Ծայրալիր: (Նախդրիւ հոլովի.) || 'ի ծայրա գոյն աստիճանի լցեալ՝ և պարարտացեալ. կմ յոյժ առատ և լիալիր: Մծբն. գ:

Ծայրածեմ. եցի. եա. եալ: (Ներգործ.) || 'ի գլուխ ածել. կամ 'ի գլուխ հանել. կմ աւարտել:

Ծայրակարմիր: (Նախդրիւ հոլովի.) || այն՝ որոյ ծայրն է կարմիր. որպիսի է արեգակն յելանելն իւր. քանզի ընդ այգանալ ա ռաւօտուն մինչ սկսանի ծագել, և ծայրս արձակել, երևի կարմիր և վարդագոյն: և ըստ այսմ ասի. 2. Մակ. 10. 28. Այն ինչ վարդագոյն ծայրակարմիր արեգակն ընդ երկիր ծաւալել կամէր:

Ծայրակոտոր. ի. իւ. ից. իւք: || այն՝ որոյ ծայրքն կոտորեցեալք, և ջարդեցեալք են: և ըստ այսմ նոյն է սա ընդ բառիս ծայրա քաղ: Իսկ մերթ նշանակէ զծայրս իւրն կոտորող, և ջարդող: Եւ մերթ զայն՝ որ ծայ րագոյն սաստկութ կոտորէ և ջարդէ. կմ մեռանէ, և ապականէ. որպիսիք են մա սակար և չար խորհուրդքն, յորժամ կա տարեալ հաւանութ ընկալեալ լինին. և ըստ այսմ է 'ի Նարեկ. լա. ուր ասի. Զառ դրուժս հեշտականացն, թէ զծայրակոտոր մահասակարութեցն:

Ծայրակտուր: (Նախդրիւ հոլովի.) || ծայ րաքաղ. ցի այն՝ որոյ ծայրն է կտրեցեալ. կմ 'ի բաց հատեալ: և այս մերթ ասի ըզ ձեռաց, կմ զոտից, որոց մասանց ծայրքն են կտրատեցեալք: Իսկ մերթ զմարդոյ, որ ունի զձեռս և զոտս ծայրատ. և ը այսմ ասի. Դատ. 1. 7: Եօթանասուն թա գաւորք ծայրակտուրք ձեռօք և ոտիւք էին:

Ծայրանամ. ացայ. ացիր. անալ: (ընդմէջ.) || ծայրագոյն լինել. կմ յոյժ բարձր և գե րազանց լինել. կմ վսեմանալ. կամ դե րակայել:

Ծայրասուր: (Նախդրիւ հոլովի.) || այն՝ որոյ ծայրն սուր և հատու է. կմ սրեցեալ է:

Ծայրատ. ի. իւ. ից. իւք: || այն՝ որոյ ծայրն է հատեցեալ. կամ կտրեցեալ. և ը այսմ ձեռք. կմ ոտք՝ յորժամ ծայրակտուր լի նին, ծայրատ կոչին. ըստ այսմ իմն և զայ լոց նմանեաց: Իսկ մերթ նշանակէ զթե րատն. կամ զպակասն:

Ծայրատեմ. եցի. եա. եալ: (Ներգործ.) || ծայրատ առնել. կմ զծայրն հատանել:

Ծայրատութի. թեան: || հատումն, կմ կըտ րումն ծայրից մասանց, կմ ոտից. և այ լոց իրաց: Նարեկ. հդ:

Ծայրարձակութի. թեան: || արձակումն. և տարածումն ծայրի: Նարեկ. զդ:

Ծայրաքաղ: (Նախդրիւ հոլովի.) || այն, որոյ ծայրքն են կտրեցեալք. կմ ծայրատ: Եւ մերթ ընդ բայի շարակցի այսպէս, ծայրաքաղ առնել. և նշանակէ զծայրն կտրել. կմ ծայրատ առնել: և այս ասի մանաւանդ զձեռաց. և զոտից, յորժամ զծայրս մասանց նց կտրեն: 2. Մակ. 7. 4: Իսկ մերթ նշանակէ՝ յերկար և յընդարձակ բանից՝ միայն զգլխաւորս, կամ զպիտանի

բանս քաղելով, համառօտել. պատասցուցանս, և կմ կարճ 'ի կարճոյ յիշելով զիմն պատմելով համառօտիւ, կմ համառօտակ բանիւք: Խորէն. Բ. գլ. 31: Աշգամ: Միխայէլ Եղէնի. Ֆ:

Ծանակ. ի. աւ. աց. օք: || խայտառակ. կմ ծաղր. կամ նշաւակ: ռամիկ. ծաղրողայ: Յա. ---:

Ծանակագոյն. գունի. իւ. իւ. իւք: || առաւել ծանակ. կմ ծաղր. կմ յոյժ խայտառակ. և կատակելի: Յոբ. 1. հատ. Զ:

Ծանականք. անաց. օք: (անեղական.) || խայտառակութիւն. կամ կատականք: կմ այպանութիւն. կմ անօթնալի իր: Յոբ. 1. հատ. Զ: և 2. հատ. ԼԶ: Ակամն և անօթութիւն, կմ տաս կանչք՝ բառ որում պատահումն զանոթ, ծանականք կոչին: Ամբ. 2. Ե:

Ծանակեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || խայտառակել. կմ ծաղր առնել. կմ կատակել. կամ այպն առնել. ռամիկ. ծաղրողայ առնել: Սիրաք. ԾԶ:

Ծանակութիւն. թեան: || ծանականք. կամ խայտառակութիւն. կամ կատականք: Յոբ. 1. հատ. Զ:

Ծանեայ. ծանուցեալ. ծանիր. և այլն: || է բայ պակասաւոր, որոյ առհամանականն ներկայն, անկատարն, նաև աներևոյթն պակասին: և նշանակէ, ճանաչել. կմ գիտել: Սաղ. 4. 4: Դանի. 3. 45:

Ծանծաղ. ի. իւ. իւ. կմ աց. օք: || անօսր. կամ այն որ ունի զանակաւ խորութիւն. կմ որ ոչ է առատ 'ի խորս իջեալ. որպիսի է այն ջուրն ծովու, որ հարթեալ ծածկել է զերեսս երկրի: ռամիկ. յանծան. կմ սըղ: Եւ յայտնակէ երկանէ ծանծաղամիտն, զոր ասացեալ զինի:

Ծանծաղամիտ. մտի. իւ. աց. օք: || ունող զծանծաղ միտս. որով իմանի թեթևամիտն. կմ պակասամիտն. կմ յիմարն. կմ անխելքն: 3. Մակ. 2. 16:

Ծանուն: (մակբայ որակական.) || ծանրապէս. կամ դժուարապէս: Եսայ. 6. 10: և Մատ. 13. 15:

Ծանուցանեմ. ուցի. նոյ. ել: (Ներգործ.) || յայտնել. կմ իմացուցանել. կամ ազդ առնել: Եսթ. 2. 25:

Ծանր. ներ. երբ. երց. երբք: կամ ծանու. 'ի ծանուէ. ծանուք. նուաց: || մերթ նշանակէ զայն, որ ունի զծանրութիւն. կմ զծանր քարշ: Առակ. 27. 3: Իսկ մերթ ըզ դժուարինն, կամ զդժուարատանելին. կմ զանդիմադրելին. և զանհանդուրժելին: Իմաս. 17. 20: և 2. Կորն. 10. 10: Եւ մերթ նշանակէ զբազմութիւն, յորժամ ասի զզօրաց. կմ զամբոխից. զոր օրինակ. եւ ընդ դէմ նց ծանր ամբոխիւ, զօ բազում ամբոխիւ: Թուոց. 20. 20: կամ զօրու ծանու. զօ բազում զօրօք: 4. Թագ. 18. 17: Մերթ ևս նը շանակէ զհանդարտն, և զծանրակացն, և զոչ փութացողն 'ի խօսիլ, և 'ի բարկանալ: Յակոբ. 1. 19: Իսկ մինչ ասի, թէ ծանր թուեցաւ նմա, իմանի խիստ թուեցաւ. որ ռամիկ. ասի, դժուար գալ սրտին: Ծանրա-

48. 17: և Իմաս. 2. 15: Եւ երբեմն ասի զծանր ծանր օրինացն՝ իմանի՝ զծանրագոյնսն, և զմեծագոյնսն պատուիրանաց: Մատ. 23. 23:

Ծանր: (մակբայ որակական.) || ծանրապէս. կամ դժուարապէս: Գործ. 28. 27:

Ծանրաբեռն. բեռին. ամբ. ինք. անց. ամբք: || այն՝ որ յայտ ծանրանայ 'ի վ՟ր բարձողին. կմ դժուարատանելի. կամ այն, որ վ՟ս ծանրութեն դժուարաւ կարէ տարեալ լինել. կամ անտանելի. և կամ անհանդուրժելի: 2. Օրին. 30. 11: Իսկ մերթ նը շանակէ զծանրաբեռնեալն, զօ զնա, որ ծանր և դժուարակիր բեռամբ բեռնաւորեալ է: Լամբրոն:

Ծանրաբեռնեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || զծանր բեռն դնել 'ի վ՟ր ուրուք. կամ ծանր բեռամբ բեռնաւորել: Լամբրոն:

Ծանրագին. գնի. իւ. իւ. իւք. կամ գնոյ. ով. ովք: || է բարդեալ բառ, զի նշանակէ զայն, որ ունի զմեծ գին. կմ որ է գնով. կամ ազնուագին. կմ մեծագին. և կմ թանկագին. ռամիկ. պաղ: Մատթ. 26. 7:

Ծանրագոյն. գնոյ. գնիւ. իւ. իւք. կմ ովք: || է անուն ածականն, որով նշանակի ծանրագոյնն, կամ կարի ծանրն:

Ծանրագործ. ի. աւ. աց. օք: || այն, որ ըզ ծանր, և զխիստ. կմ զգժնդակ գործս գործէ. կմ չարագործ: Աշգոյ:

Ծանրալեզու. զուի. աւ. աց. օք: || դժուարախօս. կամ դժուարաւ արտաբերող ըզ բառս. և կամ յամրախօս: Ելից. 4. 10: Եզեկ. 3. 5:

Ծանրալուր. լրի. աւ. աց. օք: || այն, որ վ՟ս ծանրութեն ականջացն դժուարաւ լսէ. և կմ այն՝ որ դժուարաւ անսայ ումեք. կմ զիջանի յաղաչանս նր: Լամբրոն: Իսկ մերթ նշանակէ զայն բանն՝ որ դժուարաւ կարէ լսիլ. կամ որ ատելութեան զբ 'ի լսիլն: և զօ այսմ ասի՝ ծանրալուր առնել զբանն:

Ծանրախօս. ի. աւ. աց. օք: || դժուարաւ արտաբերող. կամ յամրապէս խօսող. կմ թոթովախօս: Եսայ. 35. 6:

Ծանրակիր. կրի. աւ. աց. օք: || դժուարակիր. կամ դժուարատանելի. կմ որ դժուարաւ կարէ տարեալ լինել: Նաւ. ԺԶ:

Ծանրակշիռ: (Նախադրիւ հոլովի.) || այն՝ որոյ կշիռն, և չափն է ծանր, կամ մեծ. կմ որ համեմատի մեծամեծ և ազնիւ իրաց: Սիրաք. 26. 20:

Ծանրաձայն. ի. իւ. իւ. իւք: || ծանրախօս. կամ ծանրաբարբառ. կամ ծանրալեզու. կամ թոթովախօս: Եսայ. 33. 19:

Ծանրամտեմ. եցայ. եա. իլ: (Հայնակր.) || դժուարիլ մտօք. կամ նեղանալ. կմ չկոթելով հոգալ 'ի միտս իւր. կմ խստասիրտ լինել:

Ծանրանամ. ացայ. ցեր. նալ: (Ընդ-միջ.) || ծանր լինել. կամ ծանրութեամբ 'ի վայր հակիլ. կամ դժուարատանելի լինել: Սաղմ. 37. 5: Իսկ մերթ խստանալ. կամ կարծ-

րանալ։ Եբր. 7. 14։ Եւ մերթ պժգալից լի նալ. կամ անտանելի, և անհանդուրժելի լինել։ Եբր. 5. 9։ Իսկ մերթ սաստկանալ. կամ սաստիկ զօրանալ 'ի վ[ե]րա ուրուք. և ըստ այսմ ասի՛ ծանրացաւ պատերազմն 'ի վ[ե]րա սաւուղայ։ 1. Թագ. 31. 3։ և 1. Մնաց. 10. 3։ Այսպէս յորժամ ձեռն ուրուք պատժելով, կմ՛ հարկանելով, և կմ՛ նեղելով առաւելի և խիստ լինի իբրև ումեք, ասի՛ ծանրանալ 'ի վ[ե]րա նր[ա]։ Դատ. 1. 35։ Սաղ. 31. 4։ մերթ և բեռն, և ծանրութիւն լինել ումեք։ 1. Թես. 2. 9։ Իսկ մինչ ասի՛ ծանրանալ աչաց, ի՛մանի վատթարելն նր[ա] 'ի տեսանելոյ. և կամ կորուսանելն զտեսութիւն, որպ[էս] հանդիպի ծերոց։ Ծննդ. 48. 10։

Ծանրանուէրեմ. եցի. եա. ել։ (չէզոք.) || ծանր նուէլ. որով նշանակի՝ յամրաբերս, կամ դժուարութ[եամ]բ նաւարկել. ի գնալ նաւուք։ Գործ. 27. 7։

Ծանրատիրտ. սրտի. իւ. իւք. կամ աց. իւք։ || խստասիրտ. կամ խստապարանոց. կամ կամակոր. և կմ՛ այն՝ որ ոչ անսայ խրատու։ Խորհրդ. Բ. պր. 89։

Ծանրատաղտուկ։ (նախդրիւ հոլովի.) || սաստիկ տաղտկալի. կամ յոյժ զզուելի. և կամ ծանր և անհանդուրժականն։ Յովհ. 2. հարփ. իա։ և Լամբրոն։

Ծանրացաւութիւն։ || ոչ հոլովի. այլ Է բայի չարակցի այսպէս. ծանրացաւութիւն լինել. և նշանակէ, կարի ցաւնուլ և բարկանալ. կմ՛ յոյժ զայրանալ. կամ սաստիկ դժուարել։ Թագ. 16. 15։ և 3. Թագ. 11. 25։

Ծանրացուցանեմ. ցուցի. ցի. ել։ (անցող.) || ծանր, կմ՛ դժուարակիր առնել։ 3. Թագ. 12. 4։ Իսկ մերթ խստացուցանել. կամ կարծրացուցանել։ Եբր. 8. 32։ Մերթ և 'ի վայր հակեցուցանել. կմ՛ ծանրանալով 'ի վ[ե]րա ուրուք 'ի վայր մղել։ Իմաստ. 9. 15։

Ծանրիմ. եցայ. եայց. իլ։ (ձայնակիր.) || ծանրանալ. կամ 'ի վայր հակել պատճառաւ ծանրութեան։ Եբր. 17. 12։

Ծանրոց. ի. աւ. աց. օք։ || կշիռք, և կշռոց. կամ ինչ ք՛ զօրս բարձեալ տանին ոք։ և ասացաւ ծանրոց, ըստ որում ծանրութիւն է բարձողին։ որ և ռամկ. ասի ծանրոց։

Ծանօթ. ի. իւ. իւ. իւք։ || ծանուցեալ. կմ՛ յայտնի. կմ՛ բացայայտ։ Բարուք. 4. 4։ Իսկ մերթ Ճանաչօղ. կմ՛ տեղեակ. կամ հասու։ Աշխարհ։ մերթ և նշանակէ զայնս, որք ճանաչեն զմիմեանս. և կմ՛ բարեկամքեն իրերաց։ ռամկ. Ճանչւոր. կմ՛ ազնիւ։ Սաղմ. 54. 14։ Աղաւ. 7. 4։ Եւ մինչ ասի՛ ծանօթս տալ, իմանի՛ ծանօթութիւն տալ, կմ՛ ծանուցանել զինքն, և կմ՛ զայլ ոք. Թէ ով է։ Ծննդ. 45. 1։ Հռովմ. 3. 3։ Ղուկ. 24. 35։

Ծանօթանամ. ացայ. ցիր. ալ։ (ընդմիջ.) || ծանօթ լինել. կամ բարեկամանալ։ Եւ մերթ հմտանալ. կամ տեղեկանալ։

Ծանօթութիւն. թեան։ || Ճանաչումն. կամ յայտնութիւն. կմ՛ տեղեկութիւն։ Նորէ. պէ։ Իսկ մերթ նշանակէ զծանօթ լինելն միմեանց. և կմ՛ զբարեկամութիւն. ռամկօրէն աշնայութիւն։ Խորհրդ. Գ. պր. 36։

Ծառ. ոյ. ով. ոց. ովք։ || մեծ տունկ, որ ունի զբուն հաստատուն, և զոստս բազումս. որպիսի է սօսն. կաղնին. ձանձ կին. և այլք բազումք. որ և ռամկ. ասի ծառ։ Ծննդ. 3. 8։

Ծառախիտ։ || ոչ հոլովի, այլ ընդ բայի չարակցի այսպէս. ծառախիտ լինել. և նշանակէ՝ փախչելով մտանել յանտառս ծառոց, և անդ թաքչել. որպ[էս] հանդիպեցաւ աղաւնոյ, և եւայի։ Աշխարհ։ Իսկ մերթ ասի զանեղոյ, ուր գոյ խիտ բազմութիւն ծառոց։

Ծառայ. ի. իւ. իւ. իւք։ || սպասաւոր. կմ՛ պաշտօնեայ. կամ սպասաւորեալ, որ ծառայէ տն։ Թագ. 12. 7։ և 2. Օրին. 15. 15։ Եւ մերթ առնանի վ[ա]ս նր[ա], որք գնեցեալ են գրամօք վ[ա]ս ծառայութ[եա]ն։ Յովէլ. 4. 9։ Մերթ և առնանի վ[ա]ս այնոցիկ, որք նուաճեալք են ընդ իշխանութ[եամ]բ ուրուք թագաւորի կամ զօրքին։ որ ռամկօր. ասի տակն։ Եբր. 5. 15։

Ծառայազուն. ազնի. իւ. իւ. օք։ || այն՝ որ է 'ի ծառայական ազգէ՝ կմ՛ տոհմէ ծնեալ. կմ՛ որ է 'ի ծառայական կարգի, և ծառայ։ Յովէլ. 1. հարփ. Թ։

Ծառայածին. ծնի. իւ. աց. օք։ || ծնեալ 'ի ծառայէ. կմ՛ որ է ծնունդ, և որդի ծառայի։ Ղուկէ. դ։

Ծառայակից. կցի. աւ. աց. օք։ || ընկեր ծառայի. կմ՛ կցորդ ումեք 'ի ծառայութ[եա]ն։ Մատթ. 18. 28։ Յայտ. 19. 10։

Ծառայասպանի. ի. իւ. իւ. օք։ || այն՝ որ է 'ի առնելի ծառայի. կմ՛ որ է 'ի ծառայական զարմէ ծնեալ։ Աշխարհ.

Ծառայեցուցանել. ցելոյ. ով. ոց. ովք։ || ծառայ եղեալ. կամ 'ի ծառայութ[եա]ն մտանել։

Ծառայեմ. եցի. եա. եալ։ (չէզոք.) || սպասաւորել. կամ ծառայ, և պաշտօնեայ լինել. կամ մտանել ընդ լծով ծառայութ[եա]ն ուրուք թագաւորի. կամ իշխանի. և կամ ստրուկ լինել։ Ծննդ. 15. 14։ և 29. 15։ 3. Թագ. 12. 4։

Ծառայութիւն. թեան։ || սպասաւորութիւն. կամ պաշտօնէութիւն. կմ՛ հպատակութիւն. կամ ստրկութիւն. կմ՛ ծառայական գործ. կմ՛ աշխատութիւն։ Ծննդ. 14. 4։ Եբր. 6. 6։

Ծառանամ. ացայ. ցիր. նալ։ (ընդմիջ.) || ծառ լինել։ Իսկ մերթ նշանակէ ամբարտակ բարձրանալ։ 2. Մակ. 7. 5։

Ծառանոց. ի. աւ. աց. օք։ || ծառաստան. կմ՛ տեղի՝ ուր գտնի բազմութիւն ծառոց։

Ծառաստանք. անեաց. ով. աց. ովք։ || առանձինն ծառոց. կմ՛ անկեցեալ ծառք։ Ծնն. 23. 17։ Թագ. 13. 21։ 2. Օրին. 20. 19։ Եսայ. 16. 9։ Իսկ 1. Մակ. 14. 8. ուր ասի. Եւ փայտ անկեցեալ ծառաստանք. իմանի, ամ՛ փայտ անկեցեալ ծառոց։

Ծառացուցանեմ. ցուցի. ցի. նել։ (անցողակ.) || ծառ առնել. կմ՛ կանգնեցուցանել կամ բարձրացուցանել։

Ծառաւ. ո. ծարաւի. իւ. իւ. իւք։ || տենչ, ուր

գոն բազմամ ծառոց. և կմ՝ ամփոփեալ կամ բաղ մութիւք ծառոց.

Ծամեմ. կամ Ծամծեմ. եցի. եաւ. ել։ (Ներգործ.) || ծամելով լինել. կմ՝ աղորել. կմ՝ մանրել, և կակղացուցանել ատամամբք։

Ծամումն. քման. ման. մանց. մամբք։ || Ծամելով լինելն. կամ մանրումն ատամամբք։ Նուէլ. 'ի Գործոց խօսին։

Ծարաւ. ոյ. ով. ոց. ովք։ || Ծարաւութիւն. կամ փափաք ըմպելոյ ջրոյ, որ պատճառի 'ի ջերմութենէ. կամ 'ի ցամաքութենէ խոնաւութեան։ Ելից. 17. 3։ Յոբ. 7. 9։ Իմաստ. 11. 9։ ըստ այսմ է և 2. Օրին. 8. 15. ծարաւոյ. || Որ զՆեզ խածանէր. և կարիճ. և ծարաւ, և ոչ գոյր ջուր. իբր թէ ասէ՝ յայնմ անապատին օձն, և կարիճն խայթէր. նաև պատճառէր սաստիկ ծարաւ, և ջուր ոչ գտանիւր։ Բայց ոմանք 'ի թարգմանչաց՝ փոխանակ բառիս ծարաւ՝ գրեն զանուանէ ինչ օձի, որ յունարէն կոչի՝ տիփսաս, և ելանէ 'ի ծարաւ բառէն. քանզի 'ի յոյն բարբառ՝ ծարաւն տիփսա ասի։ Արդ՝ օձս այս կոչեցաւ այսպէս՝ վն ներգործութեան իւրոյ. քանզի է սա տեսակ ինչ փոքրիկ և ժանտ օձի, որ ընդ աւազով թագուցեալ ծածկի, որոյ թոյնն ունի զայնչափ չարութիւն, մինչ զի զոր խայթէ պատճառէ 'ի նմանէ զանհնարին չորութիւն, և զծարաւ. յորմէ տոչորեալ անդադար ըմպեն զջուր, և ոչ երբեք զովանան. և իբրև կարի յաճախեն զըմպելն, ուռուցեալ հերձին ընդ մէջ. և չարաչար մեռանին։ Արդ՝ թարգմանիչքն մեր եդին՝ ծարաւ. վն զի առ եօթանասնականն ... յոյն գրոյն, յորմէ թարգմանեցին՝ դնի տիփսա, որ է ծարաւ. և ոչ տիփսաս, որ է օձն։

Ծարաւի. ւոյ. ւով. ւոց. ւովք։ || ծարաւող. կամ ունող զծարաւ, և կմ՝ զփափաք ջրոյ։ Դատաւ. 4. 19։ Առակ. 25. 21։ Եսայ. 55. 1։ Մերթ եւս առնի զնոցանէ, որք ունին զսաստիկ փափաքումն առ ի և եցէ իր։ Սաղմ. 41. 3։ Մատթ. 5. 6։ Մերթ և ս նշանակէ զխոնաւ աւարութիւն. և կմ՝ զանջրդին. և ըստ այսմ ասի. Երկիր ծարաւի.

Ծարաւիմ. եցայ. եաց. իլ։ (Ձայնակր.) || ծարաւել. կամ ունել զփափաք ըմպելոյ ըղ ջուր։ Ելից. 17. 3։ Դատաւ. 15. 18։ Եւ մերթ առնուի լինել սաստիկ վն փափաքելոյ. կամ ցանկալոյ։ Սաղմ. 62. 2։

Ծարաւուտ։ (Նախդրիւ հոլովի.) || անջրդի. կմ՝ անջուր, և կամ խոնաւութեան. և այս ասի զերկրէ, որ յոյժ կարօտ է ջրոյ. և կմ՝ յոյժ չոր, և ցամաք է։ Սաղմ. 106. 33։ ... և Եսայ. 32. 2։

Ծարիր. ծարրոյ. ով. ոց. ովք։ || ծարիր, որ է սևագոյն դեղ ինչ, զոր 'ի յաչս քարշեն ոմանք 'ի կանանց առ 'ի գեղեցկացուցանել զարտևանունսն, և զաչսն։ որ ռամկօրէն ասի՝ ծարոյր. կամ սիւրմէ։ Երեմ. 4. 30։ և Եզեկ. 23. 40։

Ծարոյր. ուրի. րէ. րոց. րօք։ || Նոյն է ընդ վերինոյն։

Ծարրեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) || քարշել 'ի յաչս զծարիր. որ զնիւղէ։ 4. Թագ. 9. 30։

Ծաւալ։ (Նախդրիւ հոլովի.) || է արմատ ծաւալիլ բային. որով մերթ նշանակի՝ ծաւալեալ. որ տարածեալ և սփռեալ։ Իսկ մերթ նշանակի՝ ծաւալումն. որ տարածումն և սփռումն. կմ՝ ցրուումն։ Նուէլ. հա. և Յն ոգւ։

Ծաւալեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) || սփռել. կմ՝ տարածել. կմ՝ ճապաղել։ 2. Մակ. 10. 28։

Ծափ. ափ. փէ. փց. փք։ || ափ ձեռաց. կամ հարումն ափից ձեռաց ընդ միմեանս։ Բայց սա գրեթէ միշտ ընդ բայի՝ չարակցի այսպէս. ծափս հարկանել. կմ՝ ծափ զծափի հարկանել. և նշանակէ զափս ձեռաց ընդ իրերարս բաղխել. որ և ասի՝ ծափել. ռամկ. ծափ զարնել։ և այս մերթ լինի 'ի նշան ուրախութեան, և ցնծութեան. և մերթ 'ի նշան զարմացման. իսկ մերթ 'ի նշան զայրացման։ Թուոց 24. 10։ Յոբ. 27. 23։ Սաղմ. 46. 2։ Եզեկ. 6. 31։ Իսկ երբեմն ասի սա զանկենդանեաց. և այս առ 'ի ցուցանել զցնծութիւն և զուրախութիւն նց։ Սաղմ. 97. 8։

Ծափեմ. եցի. եա. ել։ (Չէզոք.) || ծափս հարկանել. որ զափս ձեռաց ընդ միմեանս հարկանել։ ռամկօր. ծափ զարնել։ 'ի ձայ հարց. ժա.

ԾԳ

Ծգտանեմ. եցի. եա. ել։ (Չէզոք.) || տես զՁգտանել։

Ծգտտումն. տման. ման. մանց. մամբք։ || տես զՁգտտումն։

ԾԵ

Ծեծած. ի. իւ. ից. իւք։ || ծեծեցեալ և լսեցեալ իր. և ըստ այսմ յորժամ ցորեանն լցեալ 'ի սանդ, և սխոյն տորկեալ յանկանմն ծեծին, և լոսին, կոչին ծեծած ցորենոյ. կամ ծեծած սխուան։ Այնպէս յորժամ քաղեցեալ բոյսն վշոյ, կմ՝ կեղևք նր չորացուցանին. և յետոյ թակիւ ծեծին, և ջախջախեալ լուծին, զի թելքն վշոյն զատցին 'ի յարդիցն և 'ի մըղերաց. կոչին ծեծած վշոյ։ ըստ այսմ խմա և զայլոց նմանեաց։ Եսայ. 1. 31։

Ծեծեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) || ձաղկել. կմ՝ սաստիկ բաղխել. կմ՝ հարկանել. և ըստ այսմ ասի՝ ծեծել եղեգամբ զգլուխ. և այլն։ Մատթ. 27. 30։ Իսկ մերթ ծեծել ասի՝ յորժամ զդանկնն, կամ զայլ ինչ նըման՝ դաւաղանաւ հարկանելով թօթափեն. և կմ՝ զցորեանն 'ի սանդս եդեալ՝ հարկանեն առ 'ի որոշել զթեփսն 'ի ցորենոյն։ Դատաւ. 6. 11։

Ծեր. ոյ. ով. ոց. ովք։ || ալևոր. կմ՝ հին աւուրց. կամ հնացեալ ժամանակաւ. կամ բազմաժամանակեայ։ Եւ այս ասի զնոցանէ. որք հասեալք են 'ի հնդերորդ հա-

սամն․ որ ակսանի 'ի յիմներորդ ամին, և եղեալ մինչև 'ի յեօթանասունն․ կմ՝ յեօթանասուն և ութն ։ Յոբ․ 32․ 9։ Իմաստ․ 2․ 10։ Ղուկ․ 1․ 18։ Իսկ մերթ ծեր առի նաև որ է այր կատարեալ․ կմ՝ առաջ․ կմ՝ խոր հրդականն․ կամ դատաւոր․ կամ իշխան․ և այլն․ թէ հին աւուրց իցէ․ և թէ ոչ։ Ղևտ․ 19․ 32։ Թուոց․ 11․ 24։ և Գործ․ 11․ 30։ Իսկ 'ի վերայ հարանց․ 'ի բազում տեղիս բառս ծեր, պատճառ լինի փոխանակ հասուն և կատարեալ կրօնաւորի ։ Իսկ Յոբ․ 38․ 7․ ասէ՝ յորժամ եղեն աստեղք ծերք․ բառս ծեր, նշանակէ զփառաւորն և զատուրածեալն․ քանզի գրեթէ ասէ․ յորժամ եղեն աստեղք յինէն սփռեցեալք և դասաւորեցեալք բարւոք կարգաւ 'ի տեղիս իւրեանց՝ օրհնեցին զիս․ այս հրեշտակք․ և այլն․ Եւ թէ այսմ բառս ծեր, է արմատ ծերինք բային, որ զփտիլն, և զծառայելն նշանակէ ։

Ծերագոյն․ դունի․ ին․ ից․ իւք ։ ‖ առաւել ծեր․ կամ աւագագոյն․ կամ երիցագոյն․ կմ՝ աւագագոյն․ կմ՝ առաւել նախամեծար ոք ։ Յոբ․ 32․ 6։

Ծերակից․ կցի․ աւ․ աց․ օք ։ ‖ կցորդ ընկերք 'ի ծերութեան․ կմ՝ յերիցութեան ։

Ծերակոյտ․ կուտի․ ին․ ից․ իւք ։ ‖ կոյտ ծերոց․ որով մերթ նշանակի բազմութիւն ծեր և աւագ մարդկանց․ կամ գումարեցեալն յայրապետաց ։ 3․ Մակ․ 4․ 5։ Իսկ մերթ ժողովն մեծամեծաց, կմ՝ իշխանաց, և կամ իմաստնոց, որք ժողովին 'ի միասին առ 'ի առնել զխորհուրդ․ կմ՝ դատաստան ։ Եւ Եփեսացւոց 3․ 16։ Թուոց․ 22․ 4։ Ղուկ․ 22․ 66։ Իսկ մերթ նշանակէ զծերակուտականն․ և ըստ այսմ ասի՝ ծերակոյտ ժողովուրդ․ կմ՝ ծերակոյտ բազմութիւն ։ 1․ Մակ․ 11․ 23։ և 2․ Մակ․ 14․ 37։ Իսկ մերթ նշանակի ժողովն երիցագոյն կրօնաւորաց ։ 'ի վերայ հարց․ ն։

Ծերանամ․ ացայ․ ցիր․ անալ ։ (չեզոք․) ‖ ալևորիլ․ կամ անցանել զաւուրբք․ կամ բազմամեայ լինել․ կամ 'ի կատարած ժամանակի կենաց լինել մերձենալ ։ Ծննդ․ 18․ 11։ 2․ Մակ․ 6․ 18։

Ծերանոց․ ի․ ա․ աց․ օք ։ ‖ բնակարան ծերոց․ և կմ՝ մեծամեծաց․ կամ կրօնաւորաց ։ 'ի վերայ հարց․ իղ։

Ծերատանամ․ ացայ․ ցիր․ անալ ։ (չեզոք․) ‖ 'ի ծանրութէ ծերութեան թեթևանալ․ և իբր թէ զծերութիւն յանձնէ 'ի բաց մերկանալ․ ոչ հանդիսաւ ծերոց․ յորժամ 'ի ծերութեան [illegible] զանձն զհանգիստ, և զդիւրութիւն ։ Յդ․ որդւոց ։

Ծերիմ․ եցայ․ եա․ կմ՝ եաց․ իլ ։ (չեզոք) ‖ ստորիլ․ կմ՝ տարածիլ․ կամ ծառայիլ․ և կամ ձապաղիլ ։

Ծերութիւն․ թեան ։ ‖ ալևորութիւն․ կամ հնութիւն ժամանակի, և հասակի, յորում հերք մարդոյ սպիտականան․ և այս է հինգերորդ հասակն մարդոյ․ զորմէ ասացաւ 'ի բառս ծեր․ տես անդ ։ 2․ Մակ․ 15․ 13։ Ղուկ․ 1․ 36։ Իսկ մերթ երիցութիւն․ կամ աւագութիւն․ և գահերիցութիւն ։

Ծերուհի․ հւոյ․ եաւ․ եաց․ եօք ։ ‖ ծերացեալ կին․ կամ պառաւ ։

Ծերունի․ նւոյ․ աւ․ եաց․ եօք ։ ‖ ծերացեալ․ կամ ալևոր․ կմ՝ հնաւուրց․ կմ՝ հասեալ 'ի ծերութեան․ կամ ծեր ։ Ծննդ․ 43․ 27։ և 2․ Մակ․ 6․ 1։

Ծերպ․ ի․ ին․ ից․ իւք ։ ‖ փապար․ կմ՝ պատառուած․ կմ՝ ձեղք․ կմ՝ ծակ վիմաց, կմ՝ լերանց, և այլոց նմանեաց ։ ռամկ․ ղռխուռ․ կամ խոռոչ ։ Ելից․ 33․ 22։ և Երգ․ 2․ 19։ և Յոբ․ 6․ 15։

Ծեփ․ ոյ․ ով․ ոց․ ովք ։ ‖ ծեփումն․ կմ՝ ծեփեցեալ կիրն, և այլինչ նման, որ տարածեալ մածեալ կայ զորմովք․ և զայլովք իրօք ։ ռամկ․ սուաղ ։ Յոբ․ 33․ 25։ Մէթէ․ 7․ 11։

Ծեփեմ․ եցի․ եա․ ել ։ (ներգործ ։) ‖ բռել․ զ․ զկիր՝ կմ՝ զաղաղ․ և կմ՝ զկաւ դնելով 'ի վր որմոյն՝ և կմ՝ այլոյ իրի՝ տարածել զայն․ որով մածի, և պատեալ կոխի ծեփեցեալն ։ ռամկ․ և ս ասի ծեփել ։ 2․ Մակ․ 2․ 30։ Իմաստ․ 13․ 14։ Եզեկ․ 13․ 10։ և Յես․ 9․ 6։ Եւ մերթ օծանել զինքն նաւթիւ․ կմ՝ կպրպիլովով․ և կմ՝ գեղով իւիք ։ Ծննդ․ 6․ 14։ Ելից․ 2․ 3։ Երեմ․ 22․ 14։ [illegible]

Ծեքական․ ի․ աւ․ աց․ օք ։ ‖ մշտական․ կամ թիւր․ և այս մանաւանդ ասի զեղ ունէ, կմ՝ զգաւոլից, յորս լինի կոճատ, կմ՝ թիւր արտադրութիւն․ ոչ առնեն ծռալեղումն ։

Ծեքեմ․ եցի․ եա․ եալ ։ (ներգործ․) ‖ թիւրել․ կմ՝ ծռել․ և այսպէս մանաւանդ զարկել․ կմ՝ ասպարեզութիւն, որով թիւրեն 'ի խօսելն ըղ տադրութիւն, կմ՝ զձայնս ։ Եւ կմ՝ զբանից, զորս բառս, կմ՝ զձայնս ։ Եւ կմ՝ զբանից ։ զորս ոք 'ի թիւր կողմն մեկնէ․ և կմ՝ թիւր իմանայ ։ Լաւրեանց ։

ԾԽ

Ծխաւ․ ծխոյ․ ով․ ից․ իւք ։ ‖ արարողութիւն․ կմ՝ սովորութիւն քաղաքական․ կմ՝ եկեղեցական, որով վարին 'ի քաղաքի․ կմ՝ յեկեղեցական պաշտամունս ։ ռամկ․ ադէթ ։

ԾԻ

Ծիածան․ ի․ աւ․ աց․ օք ։ ‖ բազմերանգ և գեղեցկանշոյլ կամարն այն, որ 'ի գալն անձրևաց, երբեմն երևի 'ի յանդիման արևու․ հանդէպ արեգականն․ որ և ասի աստուածային հանդէս․ զոր Եղ. տե 'ի յամպս 'ի նշան հաշտութեան ։ Եւ ասացաւ ծիածան, իբր թէ ծիրածան․ այս է՝ ծիր ածող․ զի զի ածէ զերեսօք երկնից զծիր, որ է ոչ գիծս, բոլորակ գիծ․ կամ կամարաձև շրջանակ ։ ռամկ․ ծիրանի գօտի․ կմ՝ կանանչ կարմիր գօտի ։ Յայտ․ 10․ 1։

Ծիածանաձեւ․ ի․ աւ․ աց․ օք ։ ‖ զ․ ծիածան ձևացեալ․ այս է իբրև զծիածան ծաւալեալ․ և տարածեալ գեղեցիկ գունով ։

Ծիծառն ։ (նախդրիւ հոլովի․) ‖ ուրախական ժպտումն կմ՝ զուարթութիւն, և զուարթու թիւն դիմաց․ և կմ՝ ծաղր ։

Ծիծաղաշնաց. ի. իւ. ից. իւք: || այն, որ ծիծաղեցուցանէ զնա յ: Եւ այս մերթ առի ըզ Ջուրց գետոց, որք յորդախաղաց, և զուարճալի գնացիւք ընթանան:

Ծիծաղական. ի. աւ. աց. օք: || ծիծաղող, կամ այն՝ որ ունի զկարողութիւն և զընդունակութիւն ծիծաղելոյ. որպիսիք են մարդիկ: Իսկ մերթ նշանակէ զայն, որ վերաբերի առ ծիծաղս. կմ առ ուրախութիւն, և առ հրճուանս: Յն օրէ: Եւ մերթ նշանակէ զծիծաղելին. կմ զծաղրականն, և կամ զկատակելին:

Ծիծաղիմ. եցայ. եա՛ց. իլ: (ձայնակր.) || ձայնիւ ժպտիլ, կմ՝ 'ի ծիծաղս անկանիլ. կամ զուարթանալ, և զուարճանալ դիմօք որ լինի 'ի բազում պատճառէ 'ի զուարճացմանէ: ռամկ. ևս ասի ծիծաղիլ: Ծննդ. 17. 17; և 18. 12: Առակ. 15. 13: Ղուկ. 6. 25: Իսկ մերթ նշանակէ ծաղր առնել. կամ կատակել. կմ ծիծաղմամբ այպն առնել. և ըստ այսմ առնու ըստ զպարառական խնդիր՝ այսպէս. ծիծաղիլ զնովաք. և այլն: Յոբ. 30. 1: Սաղմ. 24. 3: և 58. 9:

Ծիծառն. ծիծռան. ամբ. անց. ամբք: || է փոքրիկ թռչուն ինչ սրաթռիչ, և բազմաճիչ, որ եկեալ առ մեզ 'ի ժամանակս գարնան գնէ զբոյն յառաստաղս տանց: ռամկ. ծիծեռնիկ: Եսայ. 38. 14: Երեմ. 8. 7:

Ծիծեռն. ծիծռան. ամբ. անց. ամբք: || Նոյն է ընդ վերնոյն:

Ծիղ. կամ Ծիւղ. ծղոյ. ով. ոց. ովք: || է ղեղն ցորենոյ. կամ գարւոյ. կմ սիզոյ, և այլոց նմանեաց խոտոց:

Ծին. ծնոյ. 'ի ծնէ. իւ. ից. իւք: || է արմատ ծնանելոյ բայիս. որով մերթ նշանակի ծնունդն. և ըստ այսմ իմանի՝ մինչ ասի՝ կոյր 'ի ծնէ. այս է՝ 'ի ծննդենէ: Յովհ. 9. 1: Իսկ մերթ նշանակի ծնանողն. կամ ծնեալն. և ըստ այսմ 'ի գործածի միայն 'ի բարդութիւն բառից. զի մինչ ասի բազմածին, իմանի զբազում ծնանօղն: Իսկ մինչ ասի՝ առաջնածին՝ իմանի ծնեալն յամօլայ: Մերթ ևս նշանակէ զողան երեխային. կմ զմաշկն անօթն, յորում պարունակի մարմին երեխային, մինչ ծնանի: Իսկ 'ի գիրս Յոբայ. Խ. գլ. 11. ուր ասի՝ ծնիւք լեռամբք, և եղերօք դաշտին: իմանի ծնօտիւք լերանց, կմ կողմամբք լերանց:

Ծիտ. ծտի. իւ. ից. ոք: || փոքրիկ թռչուն. կամ ճնճղուկ:

Ծիր. ծրի. իւ. ից. իւք: || գիծ բոլորակաձև. կամ կամարաձև, թէ մեծ լիցի, և թէ փոքր: Նարեկ. 'ի գովեստ խաչին. և Խորէն. բ. գլ. 39: Եւ ըստ այսմ կամարն ծիածանին ծիր կոչի: Իսկ մերթ նշանակէ զբոլորս. կմ զշրջանակ. և կամ զշրջապատեալ գնտակաձև, կմ կամարաձև մարմնոյ: Յոբ. 22. 14: Եսայ. 40. 22: Մերթ ևս նշանակէ զծայրս. կամ զվայրս. և ըստ այսմ ասի 'ի Նարեկ. ղթ. 'ի ծիրս աստեղաց: Երբեմն ևս նշանակի ամփոփ ծագ. կմ եզր. կմ աւարտ. կմ վերջ: Նարեկ. ղէ. և ղթ: Իսկ երբեմն ծիր ասի և լինի գիծ. կմ գիր: Նարեկ. ղթ. և ըստ այսմ եղանի 'ի նմանէ բայս այս ծրել, որ է գծել. կմ գրել:

Ծիրան. ոյ. ով. ոց. ովք: || է պտուղ ինչ փափուկ և համեղ, որ ունի զգոյն դեղին, և է ձևով նման դեղձի. բայց կուտն իւր է կակ. և միջին քաղցր իբրև զնուշ: ռամկ. կորէկն զալխի:

Ծիրանազգեաց. գեցի. իւ. աց. օք: || զծիրանի զգեստս զգեցօղ. կամ որ արկեալ ունի զիւրև զծիրանիս:

Ծիրանազգեստ. ի. իւ. ից. իւք: || զգեստաւորեալ ծիրանի հանդերձիւ. կմ զգեցեալ զծիրանագոյն զգեստս. կմ զգեցօղ ծիրանեաց: Խորէն. ա. գլ. 25:

Ծիրանածայր. ի. իւ. ից. իւք: || ունօղ ըզ ծայր կարմիր իբրև զծիրանի. կամ որոյ ծայրքն են ծիրանեգոյն: Նարեկ. 'ի գովեստ առաքելոց:

Ծիրանածաւալ. ի. իւ. ից. իւք: || իբրև ըզ ծիրանի ծաւալեալ և սփռեալ: Իսկ մերթ ծաւալօղ և տարածօղ ծիրանեաց. որով երբեմն իմանի սփռօղն ծիրանի զգեստուց: Իսկ երբեմն այն՝ յորմէ հանեալ ծաւալի ծիրանի ներկն. որպիսի է ծովն տիւրոսի, որ է 'ի ծոցն միջերկրական ծովուն. և ըստ այսմ ասի 'ի Նարեկ. ղէ. Խիտ Է ծիրանածաւալ ծովային ծոցոյն աստապարէզ:

Ծիրանածին. ծնի. իւ. աց. օք: || զծիրանիս ծնանօղ, կմ արտադրօղ: Իսկ մերթ նշանակէ զծնեալն, և զսնեալն 'ի ծիրանի հանդերձս:

Ծիրանածնունդ: (Նախադրիւ հոլովի.) || Նոյն է ընդ վերնոյն:

Ծիրանածուէն: (Նախադրիւ հոլովի.) || այն՝ որ է ծուէն. կմ կտոր ծիրանւոյ. կմ մասն ինչ կտաւոյ ներկեցելոյ ծիրանի գունով: Նարեկ. ղէ:

Ծիրանաւոր. կրի. իւ. աց. օք: || կրօղ 'ի վերայ իւր զծիրանի զգեստ. կմ ծիրանազգեաց: Մծբն. ժթ:

Ծիրանավաճառ. ի. աւ. աց. օք: || վաճառօղ ծիրանւոյ: ռամկ. զպյէխի ծախօղ:

Ծիրանատեսիլ: (Նախադրիւ հոլովի.) || ունօղ զտեսիլ, և զգոյն ծիրանւոյ. կմ կարմրագոյն:

Ծիրանափառ. կամ ծիրանեփառ: (Նախադրիւ հոլովի.) || զփառս. կամ զպայծառութիւն, և զգեղեցկութիւն ծիրանւոյ ունօղ. կմ զգեցմամբ ծիրանի հանդերձից փառաւորեցեալ, և պայծառացեալ:

Ծիրանենի. նւոյ. եաւ. եաց. եօք: || ծառ ծիրանոյ. կամ տունկ, որ տայ զծիրան. յն զղայխի:

Ծիրանեվաճառ. ի. իւ. ոց. օք: || վաճառօղ ծիրանեաց. կամ ծիրանագոյն զգեստուց: Գործ. 16. 14:

Ծիրանեկիր. կրի. իւ. աց. օք: || Կիւրղ Եղէծ. ժա: տես զծիրանաւոր:

Ծիրանի. նւոյ. եաւ. եաց. եօք: || է գոյն ինչ, կմ ներկ կարմրերփեան. պայծառ և ազնիւ քան զամ կարմիրս. և է իբրև զի

մրգ, և Թանգագին։ Աբոք՝ սա է հիւթ ինչ կարմրագոյն․ որ գտանի 'ի կակորդն խեցեմորթ կենդանւոյ իբրև ծովայնոյ՝ սա բունակեալ 'ի ապխտակ երակի իբրև զպ_քիւն, որով ներկէին մեծագին հանդերձս, կամ արքունական պատմուճանս։ Եւ խեցեմորթս այս յարմար գտանի 'ի ծովն տիւրոսի, որ և յանուն հիւթոյն խորայկոչի ծիրանի։ Եւ ըստ որում գոյնս այս ելանէ 'ի ծովէ, ինքն՝ և ներկեցեալքն նովաւ կոչին՝ ծովաւ ծիրանի, ամ դնի՝ 1․ Մակ․ 4․ 23։ Իսկ մերթ բառիս ծիրանի նշանակին լուրջքն․ կամ մանածքն ներկեցեալք այս պխտեաւ գունով։ Ելից․ 25․ 4։ և 26․ 1։ և 27․ 16։ 2․ Մնաց․ 2․ 7։ և 3․ 14։ Մերթ ևս նըշանակի հանդերձն, կմ․ զգեստն ներկեալ ծիրանի գունով, զոր զգենուին թագաւորք․ և այլք մեծամեծք։ 1․ Մակ․ 8․ 14։ Առակ․ 31․ 22։ Երգ․ 7․ 5։ Երեմ․ 10․ 5։ Իսկ մերթ ածականաբար առեալ նշանակի ծիրանենեղէնն, որ կազմեցեալն 'ի ծիրանւոյ, և որ այսմ սակս ըստ ծիրանի․ խալխալ ծիրանի․ հանդերձ ծիրանի, և այլք բազումք։ Թուոց․ 4․ 7։ Եսթեր․ 1․ 6։ Երգ․ 3․ 10։ Եզեկ․ 23․ 12։ Մերթ ևս անյատկապէս առեալ՝ ծիրանի ասին այնք, որք ունին զգոյն նման ծիրանւոյ․ և կամ են կարմիր իբրև զծիրանի։

Ծիրտ․ ծրտի․ ից․ ից․ իւք։ || աղբ թռչնոյ, կմ․ փոքունց կենդանեաց․ որպ․ հաւու․ լորոյ․ և այլն։

Ծիւղ․ ծղոյ․ ով․ ոց․ ովք։ || տե՛ս շիւղն։

Ծիւրական․ ի․ աւ․ աց․ օք։ || նիհարական․ կամ հիւծողական․ կամ մաշողական։ Ուստի մինչ ասի՝ ախտ ծիւրական․ իմանին այնք ցաւք․ կմ․ ախտաժետութիւնք, որք ըզ մարդն սաստիկ հիւանդոտ առնելով՝ ծիւրեն․ և նիհարացուցանեն․ կամ հաշելով և մաշելով ածեն 'ի վը՛ զչարաչար մահ․ որպիսի է ախտն այն, որ ռամկ․ կոչի հէքտիգ, որ պատճառելով զսաստիկ ջերմութիւն․ չարաչար լուծանէ զօրութիւնն, և սաստիկ հիւծելով, և մաշելով սպառնանէ զմարդն։ Այնպէս և վարդապետքն․ և այլ ո՛ և իցէ ախտաժետութիւնք ծիւրողք, և մաշողք՝ ասին ախտ ծիւրական, իբր թէ ախտ ծիւրեցուցիչ։ Երեմ․ 14․ 15։

Ծիւրեալ․ ելոյ․ ով․ ոց․ ովք։ || հաշեալ․ և մաշեալ․ կամ նիհարացեալ։ Իսկ մինչ ասի ծիւրեալ ախտ, իմանի ծիւրեցուցիչ ախտաժետութիւն, որ և ասի՝ ծիւրական ախտ, որ մեռանեցաւ 'ի մերոյ։ տե՛ս անդ։ Երեմ․ 16․ 4։

Ծիւրիմ․ եցայ․ եալ․ իլ։ (Համբաւոր․) || մաշիլ․ կմ․ վատթարիլ․ կմ․ նիհարանալ․ կմ․ հիւծիլ․ կմ․ հաշելով, և մաշելով նուաղիլ․ և վը՛ ոսկորաւքն թաղկանալ։ 2․ Թագ․ 13․ 4։

Ծ Խ

Ծխալից․ լի․ ով․ ոց․ օք։ || լցեալ ծըխով․ կամ լի ծխանման վառաթար գոլորշեօք։ Նորէ․ ծղ։

Ծխախառն։ (Նախադրիմ հոլովի․) || խառնեալ ծխով․ կամ ծխանման գոլորշեօք։ Նորէ․ ծէ

Ծխախոտ․ ի․ իւ․ ից․ իւք։ || է այն խոտն, զոր մարգիք շաղացուցեալ մանրեն, և հըրով լուցեալ՝ զծուխն քարշեն 'ի բերան իւրեանց։ ռամկ․ Թիւթիւն։

Ծխամած․ ի․ իւ․ ից․ օք։ || ծխով մածեալ․ կմ․ թանձրացեալ․ և կմ․ պատեալ։ Նորէն։

Ծխանելի․ լւոյ․ եաւ․ եաց․ եօք։ || այն նիւթ որ կարէ ծխիլ․ և զի և իցէ հոտ բուրել․ բայց յատկապէս նշանակի ուտելի խունկ․ կմ․ կնդրուկ․ և կմ․ այլ ո՛ և իցէ անուշահոտ իր, որ կարէ ծխիլ, և զանուշահոտութիւն բուրել։

Ծխանման։ (Նախադրիմ հոլովի․) || տե՛ս ըղ ծխատեսակ։

Ծխաշունչ․ շնչի․ իւ․ ից․ օք։ || զծուխ վառաթար գոլորշեաց շնչօղ․ կամ իբրև ըզ ծուխ, և զվառաթար գոլորշիս շնչեցեալ։ Ոսկէ․ 1․ հոմ․ [illegible]

Ծխատեսակ․ ի․ աւ․ աց․ օք։ || ծխակերպ․ որ ըստ կերպի, և ըստ նմանութեան ծխոյ․ և կամ ծխանման։

Ծխեալ․ ելոյ․ ով․ ոց․ ովք։ || այրելով 'ի ծուխ փոխարկեալ․ կմ․ զծուխ ելուզեալ կամ հանեալ։ Ելից․ 20․ 18։ Իսկ մինչ ասի՝ պղինձ ծխեալ․ նշանակի՝ արոյրն, որ է․ ըստ կէսգոյն պղինձն․ ռամկ․ և կոչի սպեղղինձ, որ յորժամ ըստ արուեստի գործի, և կոկի․ ոսկւոյ նման փայլի․ վը՛ որոյ և երբեմն կոչի՝ պղինձ փայլուն․ ոմ դնի 3․ Թագ․ 7․ 45։ ռամկ․ ասէ սա՛ դեղին պղինձ։ Յայտ․ 1․ 15։ և 2․ 18։

Ծխեմ․ եցի․ եա․ եալ։ (Ներգործ․) || այրելով․ կմ․ 'ի հուր արկանելով զինչ 'ի ծուխ փոխարկել․ կմ․ հանել զծուխ նը․ և ըստ այսմ խունկ մատուցանելն բուրվառաւ․ և կամ խունկ արկանելն․ կոչի, ծխել ըղ խունկս։ 1․ Մնաց․ 6․ 49։ և 23․ 13։ 2․ Մնաց․ 2․ 4։ և 26․ 16։

Ծխիմ․ եցայ․ եալ․ իլ։ (Համբաւոր․) || այրելով 'ի ծուխ փոխարկիլ․ կամ յինքենէ ըղ ծուխ ելուզանել․ կամ զծուխ արձակել։ և ըստ այսմ իմանի՝ մինչ ասի զՍինայէ․ կմ․ զլերանց ծխիլ։ Ծննդ․ 15․ 17։ Ելից․ 19․ 18։ Սաղմ․ 103․ 32։ և 143․ 5։ ըստ այսմ է և իմաստ․ 10․ 7․ ուր ասի զհնգքաղաքեան գաւառաց․ [illegible] որ 'ի վկայութիւն չարութեան ծխեալ կայ․ [illegible] զծուխ ելուզանէ։

Ծխնելոյզ․ լուզի․ իւ․ աց․ օք։ || զծուխ ելուզանող, կամ զծուխս հանող․ բայց այս յատկապէս առեալ նշանակէ զխողովակն զայն՝ որ բրգաձև շինի 'ի վը՛ վառարանաց, ընդ որ ծուխն նը՛ ելանէ, և ցրուի յարտաքս․ սակս ասի ծխնելոյզ․ իբր թէ զծուխն վառարանի ելուզանող։ ռամկ․ Պուխարի․ կամ Բուխէրի։

Ծխոտիմ․ եցայ․ եալ․ իլ։ (Համբաւոր․) || ծըխոտ լինիլ․ կամ ծխով մածիլ․ կամ ապականիլ։

Ծ Ծ

Ծծեմ. եցի. եաւ. ել: (Ներգործ.) || Բե-րանով և շրթամբք յինքն քարշելով յի-րէ իմեքէ զհիւթ ինչ, կամ զօդն՝ կլանել: որ և ռամկ. ասի ծծել: Երեմ. 14. 6: Մծբն. ԺԹ: Իսկ մերթ նմանութիւն առեալ՝ ասի զայնմանէ ամե, որք իբրև զհիւթս քար-շեն, և 'ի բաց հանեն յումեքէ. Յոբ. 5. 5: և 6. 4: և 20. 16:

Ծծումբ. ծծմբոյ. ով. ոց. ովք: || Է հանք ինչ գետնաբոյս, որ երևի յերկիրս իբրև դեղին երկիր. կամ իբրև զներկս գեղա-փչութիւն. մասունք նը են հրթայինք: յոր ժամ 'ի հուր մերձի՝ վառեալ բոր-բոքի. և հանէ զհոտ. դառնութի, և զբոց զոր չառնեմ: ուստի բազում անգամ մարմին առլաւ զթէս պատահեցելոց. և առնէն լուցկիս ձրագի. ... . Եւ հանքս այս ռամկ. կոչի, ... : Ծննդ. 19. 24: Յոբ. 18. 15: Յայտ. 9. 17: և 19. 20:

Ծ Կ

Ծկոյթ. ութի. իւ. եց. եաց: || Փոքր մատն, որ և ասի ձկոյթ: 3. Թագ. 12. 10:

Ծկռտեմ. կամ ծգռտեմ. եցի. եա. ել: (Չէ-զոք.) || Տես զՁգռտեմ:

Ծկռտումն. կամ ծգռտումն. ման. մամբ. մունք: || Տես զՁգռտումն:

Ծ Պ

Ծղօտ: (Մակբայ որակական.) || Երևե-լով 'ի բաներս ծղօտ, որ է քաղցր. կամ ձեռն. ուստի բառս՝ ծղօտի, նշանակէ բաղ-կել. իբ քաղցր կերով. կամ ձեռամբ խո-րով: և ըստ այսմ ասի՝ ծղօտի հաւաքանել. կամ քարշել:

Ծղինի. կամ ծիղնի. ւոյ. ւով. հւոյ. եաց: || Եր-կաթ եղէն ասեղ ինչ, որ զփեղկս դրանց, կամ պատուհանից ընդ երկուց սեմոցն 'ի վերուստ և 'ի ներքուստ. յորդ և կցէ. յորոյ վր շրջին արդարև փեղկք: ռամկ. դրան ... . կամ մեղք: Առակ. 26. 14: Ըստ այսմ է և 3. Թագ. 6. 34. ուր ասի. Եւ ծղնինք նոյ երկրացեակ. զայսմանէ տես 'ի Ակնութի երկրացեակ բառին. ուր լիովին ասացաւ:

Ծղին. նույ. ւով. եաց. եօք: || Նոյն է ընդ վերինս:

Ծղոտ. ղօտի. ով. ոց. օք: || Է փոքրիկ կեռ դանակ մի թեւաւոր, որ գոյանայ 'ի փայտէ. կամ յաղէսէ զատանի 'ի ծառատանս ...ման վաճառականաց. ... և 'ի գրչե-րէ ... . կամ զծղոթ նախ ձայնս արձակէ:

Ծղունկ. կամ ծղնկի. ծղկի. ու. ոց. ոք: || Բա-զուկ. կամ ձեռն. կամ ոլոք:

Ծղօտ. կամ ծղոտ. ի. իւ. եց. եաց: || Խարա-զանինք, ... եղեգանց, և այլոց ե-ղեգնածնուն բուսոց. որք յերկրէ ուղիղ 'ի վեր բարձրանան: և ըստ այսմ ասի՝

Շարժել ցնցեալն իբրև զծղօտ մի եղե-գան: Շարականն:

Ծ Մ

Ծմակ. ի. աւ. աց. օք: || Անկիւն ուր ա-րև ոչ ծագէ, այլ միշտ շուք է. և կամ ստուար հանդիպակ արև. յորմէ հեռու ինքեան և խոնաւ լինի: Իսկ 'ի Մառ. 12. 37. ուր ասէ՝ 'ի ծմակեն կողմանէ, խմանի, չարեհելից կողմանէ: և զի յայնմ տեղւոջ մի ընդդէմ անկանելոյ լերանց, կամ շինուածոց սա-կաւ ծագէր արև, մի այնորիկ կոչեցաւ 'ի մեզ ծմակ:

Ծմակեցուցանեմ. ցուցի. ցի. անել: (Ան-ցող.) || Պատճառել ծմակութիւն, և ըզ պակասութիւն լուսոյ. կամ ծագման արեգա-կան. և կամ ստուերաւ, և մթով լինել:

Ծմակեցուցիչ. ցուցչի. աւ. աց. օք: || Այն՝ որ պատճառէ զծմակութիւն, կամ զպակասու-թիւն ծագման լուսոյ: Լամբրոն.

Ծմակութիւն. թեան: || Պակասութիւն ծագ-ման արեգականն 'ի տեղւոջ իմիք. յորմէ հե-ռանի ստուեր՝ և խոնաւութիւն:

Ծմրիմ. եցայ. եայց. իլ: (Համանունք.) || Սա-րսել. կամ շուարել. կամ 'ի նեղութեան և 'ի մա-րութեան հալել, և ծերանալ:

Ծ Ն

Ծնանիմ. ծնայ. եաւ. եալ. եաց. եալք: || Այն ինչ՝ որ հարկէ ծնեալ լինել. կամ որ հան-գամանէ զի ծնեալ լիցի: Իսկ մերթ նըշանակէ զծնանողն. և ըստ այսմ է 4. Թագ. 19. 3. ուր ասի, Չիք զօրութիւն 'ի ծնանել լոյ. այս 'ի ծնանողս:

Ծնանիմ. ծնայ. ծնիր. իլ: (Համաբարբառ.) || Յառաջ գալ. կամ արտադրել կենդանւ-ւոյ զկենդանի նման ինքեան ըստ բնութե. որպէս մայրն զմարդ. առիւծն զառիւծ. և այլն: Ծննդ. 4. 1: Դեւտ. 22. 27: Մատթ. 1. 2: Իսկ մերթ նմանութիւն առեալ՝ ծնանել ասի և իցէ ... արտադրելն. կամ 'ի լոյս ածելն զինչ. և ըստ այսմ ասի. ծնա-նել զերկիր զօդս. կամ զեղեանս. կամ զար-գասիս այգեաց. կամ զձուկս. կամ զձուկն ինչ 'ի ծովաց. և այլն: Յոբ. 38. 28. և 29: Եսայ. 6. 7: Այլ նոյնպէս յարմարի 'ի հայեցւող ծնա-նութեն գիտնոց մարդոց առաւոտի և երեկոյ. և իբր թէ արտադրելոյ ծնանիլ ասի: Յա-կոբ. 1. 23:

Ծննդաբեր. ական. աւ. ոց. օք: || Երևմեն սա 'ի ծննդեան ... որ նշանակէ՝ ծնանել. կամ ... , և այլն. ... նշանա-կէ զափրոյն ... , կամ զայն, որ ... , և ... , և կամ է ... , որպիսիք են ... , որք գեռ են ... ... և ... զին ... և ... . և ըստ այսմ է 3. Մակ. 4. 6. ուր ասի. Եւ ... ծննդաբեր հայր

սուինքն վարսս մերկացուցեալ. և այլն ։

Ծնդրիմ. կմ ծնկրիմ. եցայ. եալ. իլ։ (ձայնակր.) ‖ հեծիլ. կմ մաշիլ. կմ ճնշիլ. կմ նուաղիլ. կամ 'ի նեղութենէ պահոց, և հիւանդութեանց լուծեալ անկանիլ։ Նարեկ. ՁԵ։ և Լամբրոն։

Ծնեբեկ. ի. ու. աց. օք։ ‖ Է բոյս ինչ, որ իբրև զմատն մարդոյ ուղիղ բարձրանայ յերկրէ. զոր մինչչև է աճեցեալ՝ և սերմնաւորեալ, հատանեն, և վաճառեն, և գնեալ զնա խարշեն, և քացախով, և ձիթով ուտեն իբրև զաղցան։ Արդ՝ ասացաւ սա ծնեբեկ՝ զի ընդ ծնանելն, այ ընդ բուսանելն յերկրէ՝ հատանեն, և բեկանեն. որ և ռամկօր. ասի ծնէբէկ։ Խորէն. ցուղխորհրդագրութեան։

Ծնելութիւն. թեան։ ‖ ծնանումն. կամ ծընունդ. կմ ծնողութիւն։ Նարեկ. 'ի գովխօս։

'ի Ծնէ։ ‖ այ 'ի ծննդենէ. կամ 'ի բնութենէ։ Յօհ. 9. 1։ տես զԾին։

Ծնծղայ. ի. իւ. ից. իւք։ ‖ է գործիք ինչ երգարանաց. զոր կազմեն 'ի պղնձոյ. կմ յայլոց հրահալեաց բոլորակ ձևով ըստ կերպի տափարակ սկաւառակի սանց մեծի թանձրութեան. որ ունի 'ի մէջն զուռուց ինչ, զոր ծակեալ անցուցանեն ընդ այն զժապաւէն, յորմէ կալնուն հարկանօղքն զըծնծղայս. և են սոքա երկու. զորոյ զմինն կալեալ 'ի մի ձեռն, ևսկ զմիւսն 'ի միւս ձեռն, արհեստական շարժմամբ բաղխեն զնո առ իրեարս ըստ եղանակի երգոցն, որք երգին յեկեղեցական հանդէսս. զոր և 'ի հնումն յաճախ 'ի գործածէին որդիքն իսրայէլի հանդերձ թմբկօք. բայց կազմէին զնա իբրև զծոցաւոր սկաւառակս։ Եւ սա ռամկ. կոչի ցնծղայ. կմ ցնծան։ 1. Թագ. 18. 6։ 2. Թագ. 6. 5։ Յուդիթ. 3. 10։ 1. Կորնթ. 13. 1։

Ծնկիմ. եցայ. եալ. իլ։ (ձայնակր.) ‖ տես զԾնդրիմ։

Ծնկներ. ի. ու. աց. օք։ ‖ է խաղ ինչ երաժշտական երգոց, որ ունի զայս ձև, ɔɔ։

Ծնկոտ. կմ ծնգոտ. ի. ու. աց. օք։ ‖ հեծեալ և մաշեալ. կմ նիհարացեալ. և կմ լուծեալ և անկեալ։ Իսկ մերթ նշանակէ ըզթուլամորթն. կմ զփափկակեացն։

Ծննդաբանեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) ‖ խօսիլ և պատմել զծննդենէ ուրուք. կմ զծնունդն ուրուք ցուցանելով՝ պատմել զնմանէ։ Խորէն. յառաջաբանութեան։

Ծննդաբանութիւն. թեան։ ‖ խօսք և բան ըզ ծննդենէ ուրուք. և կմ ազգաբանութիւն. յորում ցուցանի կարգաւ ծնունդ միոյն 'ի միւսոյն։ Նարեկ. ՂԵ։ և Խորէն. Ա. գլ. 18։

Ծննդական. ի. ու. աց. օք։ ‖ Է անուն ածանցական, որով նշանակի ծնանօղն. կմ երկնօղն։ Եսայ. 13. 8։ և 21. 3։ Երեմ. 6. 24։ Միքի. 5. 3։ Իսկ մերթ նշանակէ այն, որ կարէ ծնանիլ. և ոչ է ամուլ. կամ այն՝ որ է յաճախածին. այ ունի զբեղմնաւոր արգանդ, որով յաճախ ծնանի։ Եսայ. 66. 9։ Մերթ ևս նշանակէ այն, որ պատկանի ծննդեան. և կմ 'ի ձեռն որոյ լինի ծընունդն. և ըստ այսմ իմանի, մինչ ասի ծննդական անդամ։ Իսկ մինչ ասի զուարթ գոլ ծննդական մտօք, նշանակէ զնա, որ յոյժ ճոխաբար՝ և դիւրասէս կարէ յառաջ բերել զիմն 'ի մտաց. և կմ որ է յոյժ բեղմնաւոր մտօք. և ըստ այսմ ասի զմեծէն մեծօրայ։ Խորէն. Գ. գլ. 67. Զի գոյր տեսչեանն հրեշտակական. մտօք ծննդական. բանիւ պայծառ. և այլն։

Ծննդականութիւն. թեան։ ‖ կարողութիւն ծնանելոյ. կմ ծնանողութիւն. և կմ ծնելութիւն։ Աճգոփ։ Իսկ մինչ ասի ծննդականութիւն մտաց, նշանակի բեղմնաւորութիւն, որով ոք դիւրաւ և ճոխաբար յառաջբերէ զիմն 'ի մտաց։ Խորէն. Ա. գլ. 2։

Ծննդարար. ի. ու. աց. օք։ ‖ առնօղ և պատճառօղ զծնունդ։

Ծնողութիւն. թեան։ ‖ ծնանողութիւն. կամ ծնելութիւն. և կամ որով ոք ծնօղ լինի ումեք. որպիսի է հայրութիւն. կմ մայրութիւն։ Նարեկ. Ձ։

Ծնունդ. ծննդեան. ամբ. ոց. ովք։ ‖ է անուն բայածական. զի ածանցի 'ի ծնանիլ բայէն։ Սաստի մերթ առեալ լինի ներգործաբար. և նշանակէ զծնանումն. կմ զծնանիլն. որ է արտադրութիւն. կմ յառաջ ածումն կենդանւոյն զկենդանիս ըստ նմանութեան բնութեան. և ըստ այսմ իմանի՝ մինչ ասի, այս են ծնունդք Նոյի. կմ սեմայ. և այլն։ Ծննդ. 6. 9։ և 11. 10։ այսպէս է ևս Ծննդ. 30. 9։ և 35. 17։ յորս ասի՝ եկաց 'ի ծննդենէ. կմ դժուարածին եղև 'ի ծննդեանն. այ 'ի ծնանելն զորդի։ Իսկ մերթ առեալ լինի կրաւորաբար. և նշանակէ ըզծնեցումն. կմ զծնեալ լինիլն. որ է ծագումն, կամ յառաջեկումն կենդանւոյն 'ի կենդանւոյ ըստ նոյնոյ բնութեան. և ըստ այսմ իմանի, մինչ ասի, գիրք ծննդեան Յիսուսի Քրիստոսի. այ գիրք ծնեցման։ Մատթ. 1. 1։ Այսպէս է ևս մինչ ասի՝ օր ծննդոց էր փարաւոնի. կմ ընթրիս արար հերովդէս յաւուր ծննդոց իւրոց. այ յաւուր ծնեցման իւրոյ։ Ծննդ. 40. 20։ Մարկ. 6. 21։ Իսկ մերթ բառս ծնունդ՝ նշանակէ զծնեալսն յումեքէ. կամ զզաւակն. և կմ զորդիսն. Ծննդ. 48. 6։ Ղևտ. 22. 28։ Առակ. 30. 11. և 12. և 13։ Իսկ մերթ նմանութեամբ առեալ, նշանակէ զմտօք հնարեալսն իրս, կմ զբանս։ Նարեկ. ՂԹ։

Ծնուցանեմ. ուցի. ծնո. ել։ (անցողակ.) ‖ պատճառել զծնունդ. կմ տալ ծնանիլ։

Ծնուցիչ. ցչի. աւ. աց. օք։ ‖ մանկաբարձ. այ նա, որ ծնուցանէ զզաւակն ծառայելով, և օգնելով կանանց 'ի ժամանակի ծննդեան։ ռամկ. դայեկ։ Ծննդ. 35. 17։ և 38. 27։ Ելից. 1. 15։

Ծնրադրական. ի. ու. աց. օք։ ‖ այն որ վերաբերի առ ծնրադրութիւն. կմ առ ծունր կրկնելն։ Նարեկ. ՀԷ։

Ծնրադրութիւն. թեան։ ‖ դնումն ծնգան 'ի վ[եր]այ երկրի առ 'ի երկրպագել նմա. կամ առ 'ի աղօթել. և կմ յաճախ ծունր կրկ-

նելն 'ի պատիւ ուրուք: Նաւէլ. կէ:

Ծնօտ. ի. իւ. ից. իւք: || Ծամելեաց վերին և ստորին մասունքն, յորս շարեալ, և սեւեռեալ կան պարք ատամանց: Եւ մինն 'ի սոցանէ բաղկացուցանէ զվերին մասն բերանոյն, և երեսաց. իսկ միւսն զստորին մասն, որ շարժի վեր 'ի վայր 'ի յուտելն զկերակուր: և սա ռամկօր. չէնէ ասի: 2. Օրէն. 18. 3: Եզեկ. 5. 13: Մերթ ևս ծնօտ ասի միայն արտաքին կողմն այտացեկ մասանց, ուր բուսանի մօրուք. և հարկանի ապտակ: Յոբ. 21. 5: 3. Թագ. 22. 24: Ողբ. 3. 30: Մատթ. 5. 39: Իսկ երբեմն նշանակէ զլեկ ոսկրն այտացեկ մասանց. մանաւանդ զկզակն, որ է ստորին ծնօտն, որով եհար սամփսոն զայլազգիս: Դատ. 15. 15. և 16: Երբեմն ևս նմանութիւ առեալ նշանակէ զարտաքս ելեալ շրթունս ամանց շինուածոց, որք պարարտերեալ կան զեղերօք նոյ: Ելից. 25. 11. և 24. և 25: և 37. 2: Եզեկ. 40. 43: և 43. 13: σιαγών, gena, mala, maxilla.

ԾՈ

Ծոթրին. ընի. աւ. աց. օք: || տես ըզ Զոպայ:

Ծոծրակ. ի. աւ. աց. օք: || յետին կողմն պարանոցին և ստորին մասին գլխոյ մարդոյն: որ ռամկ. ևս ասի՝ ծոծրակ. կամ էնսէ: Բայց սա գրի ևս ծործակ, որ գտնի 'ի բազում տեղիս 'ի գիրս Աստուածաշնչեղաւ:

Ծողակ. կամ ծուղակ. ի. աւ. աց. օք: || որոգայթ. կամ թակարդ. կամ ակնատ, որով որսան զթռչունս: ռամկ. փախկան, որ պիտի է դափանձայն, և այլք նմանք: Առակ. 7. 23: և Ժողով. 9. 12:

Ծոմ. ոյ. ով. ոց. ովք: || Նա, որ ոչ է կերեալ տակաւին զեր ինչ ասի ծոմ: Բայց մերթ նշանակէ զծոմապահութիւն. կամ զպահս, որով միանգամ միայն կերեալ լինի կերակուր 'ի յաւուրն. իսկ մերթ զպահս ամբողջ՝ յորում ոչինչ ճաշակեալ լինի: 1. Մակ. 3. 47:

Ծոմակաց. ի. իւ. ից. օք: || ծոմ կացող. այսինքն այն, որ է բոլոր օրն ոչ ճաշակէ զինչ:

Ծոմապահ. ի. իւ. ից. իւք: || այսպէս հոլովեցեալ՝ ցուցանէ զնա, որ պահէ զծոմ:

Ծոմապահ. ոյ. ով. ոց. ովք: || այսպէս հոլովեցեալ, նշանակէ՝ զծոմապահութիւն:

Ծոյլ. ուլի. իւ. ից. կամ աց. իւք: || պղերգ. կամ հեղգ. կամ յոյլ. կամ դանդաղկոտ. և կամ դժուարաշարժ առ գործ ինչ: ռամկ. թէմպէլ: Յայտ. 21. 8:

Ծոպ. ի. իւ. ից. իւք: || Ծայր, կամ եզր կըտաւեղինաց կազմեալ 'ի բազմութենէ թելեց, յորում թելքն միայն ըստ վերին ծայրեցն միանան ընդ միմեանս. իսկ ըստ ստորին ծայրեցն 'ի կախ կան: Եւ զայս մերթ կազմեն՝ զթելսն 'ի միասին հաւաքելով, և բոլորակ փունջ առնելով. որ ռամկօր. ասի՝ փիսկիւլ: Իսկ մերթ զթելսն ուղղակի, և շարունակաբար տարածելով. որպէսզի էն ծայրք ոմանց դօտեաց, կամ կըտաւոց: ռամկ. սաչախ: Եւ ըստ օրինացն զայսպիսի սաչախ, կամ փիսկիւլս առնէին 'ի հնումն հրէայքն 'ի ծայրս քղանցից զգեստուց, որք զատորոտից կախեալ կային: Թուոց. 15. 38: և 39: և 2. Օրէն. 22. 12:

Ծով. ու. 'ի ծովէ. ու. կամ ով. ուց. ուք: || Ժողով մեծի բազմութեան աղեհամ ջուրց, որք են ակիզըն, և ընդունարան գետոց. որոց գլխաւորն, և իբր թէ մայրն է ովկիանոս, որ իբրև զգօտի շրջապատեալ ունի զբոլոր երկիրս: Եւ յետ սորա են ծովն միջերկրական. սեաւ ծովն. կարմիր ծովն. կասպից ծովն. և այլք բազումք. որոց ոմանք կից են ընդ ովկիանոսին ըստ միոյ ծայրին, որպէս միջերկրականն. և ոմանք խորոց ունին. որպէս կասպիցն. և այլք նըմանք: Ծննդ. 1. 10: և 9. 2: Ելից. 10. 19: Իսկ մերթ ծով կոչի նաև փոքրիկ ժողովն ջուրց. թէ աղի իցէ, և թէ ոչ. և ըստ այսմ 'ի կանոնն քառասնից՝ լճակն սեբաստիոյ անուանի ծով: Իսկ 3. Թագ. 7. 23: և 2. Մնաց. 4. 2. բառս ծով՝ նշանակէ զլայնատարած, և զընդարձակ աւազանն, զոր շինեաց սողոմոն 'ի տաճարին բոլորակ ձուլածու, և զի դոլովնա յոյժ մեծ, և ծաւալոր՝ ընդունէր յինքն զմեծ բազմութիւն ջուրց, վասն այնորիկ ծով անուանեցաւ: Մերթ ևս բառս ծով 'ի սբ գիրս առեալ լինի փոխանակ արևմտից, կամ արևմտեան կողման. և այս վասն այնորիկ. զի իէլեալ բնակելով 'ի պաղեստին, զմիջերկրական ծովն ունէին 'ի կողմն արևմտից. ուստի փոխանակ ասելոյ արևմուտք, կամ յարևմտից, և այլն. ասէին՝ ծով. կամ 'ի ծովէ. և ըստ այսմ է Ծննդ. 13. 14: և 3. Թագ. 7. 25: Դան. 8. 4: և յայլ բազում տեղիս: Իսկ մերթ առեալ լինի փոխանակ հարաւոյ. և այս վասն մեծաւ ծովուն, կամ վասն մեծի ծովուն ովկիանոսի, որք անկանին 'ի հարաւակողմն պաղեստինոյ: և ըստ այսմ է Սաղմ. 106. 3. ուր ասի. ժողովեաց զնոսա յարևելից, և յարևմտից, 'ի հիւսիսոյ, և 'ի ծովէ. այսինքն և 'ի հարաւոյ:

Ծովագնաց. ի. իւ. ից. իւք: || ընդ ծովն գնացող. կամ ընդ ծովն երթալով անցանող: Խորէն. Է. գլ. 12:

Ծովագոյն. գունի. իւ. ից. իւք: || այն, որ ունի զգոյն ծովու, որով նշանակի կապուտագոյնն, կամ կապուտակն: Դան. 10. 6:

Ծովաթաղանդ. ի. աւ. աց. օք: || ծովային բոյսք, որք ջրային լինին իբրև զմաշկ, և ըզ թաղանդ. որպիսի է սպունգն, և այլք բազումք: Կիւրղի Եզեկ. Ժբ:

Ծովաթաց: (նախդրիւ հոլովի.) || Թացեալ ջուրբ ծովու. կամ ողողեալ, և հեղեղեալ 'ի ջուրց ծովու: 3. Մակ. 6. 3:

Ծովախոր. ոյ. ով. ոց. ովք: || խորք ծովու. կամ տեղի, որ ունի զծովային խորութիւն: Առակ. Ը:

Ծովածաւալ. ի. իւ. ից. իւք: || իբրև զծով ծաւալեալ, և տարածեալ: Իսկ մերթ նը

շանակէ զայն՝ որ տարածեալ կայ զեզերբ ծովու. որպիսիք են ծովեզերեայ քաղաքքն: Նարեկ. ձԶ:

Ծովածին. ծնի. ին. աց. ազ: || ծնեալ 'ի ծովու. կամ տատանեցեալ 'ի ծովէ:

Ծովածոց. ի. ին. ից. ոց: || ծոց ծովու, որ է գոգն, ուր մտեալ նաւքն ապաստանին իբր 'ի նաւահանգստի:

Ծովածուփ. ծփի. ին. ից. իւք: || մերթ նշանակէ զծփեցեալն, և զալէկոծեալն 'ի ծովու. որպէս նաւն. և կամ այլ ինչ այնպիսիս: Իսկ մերթ նշանակէ զծփացօղն, և զալէկոծեալն համայն ծովու. որպէս յորժամ ասէ ծովածուփ կենցաղ: Իսկ մերթ նշանակէ, զծփանս յարուցանօղն 'ի ծովու. որպիսիք են հողմակոծեալ ալիքն: Նարեկ. 'ի գովեստ առաքելոց:

Ծովակ. ի. աւ. աց. ազ: || փոքրիկ ծով. կամ լիճ: 2. Մակ. 12. 16: Ղուկ. 5. 1:

Ծովակոծ. ի. ին. ից. իւք: || մերթ նշանակէ զհողմ որ զծովն կոծէ. այն է հարկանէ, և ալեկոծէ, և խռովեցուցանէ. որպիսիք են ոմանք մրրկայոյզ հողմունք: Իսկ մերթ զնաւ, որ կոծի, և հարկանի յալեաց ծովու, և կամ պալէկոծեալն:

Ծովակողմն: (Նախդրիւ հոլովի:) || ծովակողմ. այն է կողմն ծովու. և կամ այն որ անկանի 'ի ծովային կողմն, և կամ դառնայ 'ի կողմն ծովու: 1. Մակ. 15. 14: Իսկ մերթ 'ի նը գ. գիրս առեալ լինի փոխանակ արևմտեան կողման. վա զի հրէայքն զմիջերկրական ծովն ունէին 'ի կողմն արևմտից. և վս այնորիկ փոխանակ ասելոյ՝ արևմտեան կողմն, ասէին՝ ծովակողմն: և ըստ այսմ է Ծննդ. 28. 14: Ելից. 26. 22: Թուոց. 2. 18: 1. Մնաց. 9. 24:

Ծովակուտակ. ի. աւ. աց. ազ: || 'ի ծովէ կուտակօղ, կամ ժողովօղ: Իսկ մերթ նշանակէ զկուտակեցեալն, և զժողովեցեալն 'ի մէջ ծովու: Աճգոյ:

Ծովակուր: (Նախդրիւ հոլովի.) || կերակուր եղեալ ծովու. որով իմանի նա, որ 'ի ծով անկեալ խեղդի, և իբր թէ կեր նր լինի: Նարեկ. ծզ:

Ծովահայեաց. եցի. աւ. աց. օք: || 'ի ծովն հայեցօղ: Իսկ մերթ նշանակէ զայն, որ ունի զդիրս իւր ընդ ծովակողմն. կամ որոյ հայեցուած դրէչն է առ ծով. որպիսիք են ծովափնեայ քաղաքք. կամ տունք:

Ծովահեղձ. ի. ին. ից. իւք: || հեղձեալ, կամ խեղդեցեալ 'ի մէջ ծովու. կամ հեղձուցանօղ և խեղդօղ 'ի ծովն:

Ծովահերձ. ի. ին. ից. իւք: || հերձօղ և բաժանօղ զծովն: Իսկ մերթ հերձեալ 'ի ծովու:

Ծովամարտիկ. տկի. աւ. աց. ազ: || 'ի ծովու մարտնչօղ. կամ 'ի ծովուն պատերազմօղ ը թշնամիս:

Ծովամոյն: (Նախդրիւ հոլովի.) || ծովաթաղօղ. որ թաղեցեալ. և ընկղմեալ 'ի ծովէ: Իսկ մերթ նշանակէ զծովակուրն. որ խեղդեցեալն 'ի ծովու. և ըստ այսմ փոխանակ ասելոյ՝ հեղձուցանել զք 'ի ծովու, ասէ ծովամոյն առնել:

Ծովային. այնոյ. ով. ոց. ովք: || այն ամ որ 'ի ծովու լինի. կամ 'ի ծովէ ելանէ, և կամ առ ծովն պատկանի:

Ծովանկամ. ացայ. ցէր. անալ: (Բնաշխ.) || իբրև զծով լինել. կամ ծովանման հեղեղել: Աճգոյ:

Ծովապատիժ: (Նախդրիւ հոլովի.) || ջուրբ ծովու պատժօղ. կամ հեղձուցանելով 'ի ջուրս ծովու պատուհասօղ: Աճգոյ:

Ծովաջուր. ջրոյ. ով. ոյ. ովք: || ծովային ջուր. կամ ջուր ծովու:

Ծովասոյզ. սուզի. ին. ից. իւք: || սուզեցեալ, և ընկղմեցեալ 'ի ծովու. կամ որ սուզէ և ընկղմէ զոք 'ի ջուրս ծովու: Իսկ մերթ նշանակէ զայն՝ որ սուզեցեալ կայ 'ի յատակս ծովու. որպիսիք են քարինք ոմանք. և այլք նմանք:

Ծովավար. ի. աւ. աց. ազ: || վարեալ 'ի ծովէ մինչ ալէկոծութն, կամ հատանք ծովու տանի զիր ինչ ուրեք. և կամ վարօղ զնաւն 'ի ծովու:

Ծովատար. ի. աւ. աց. ազ: || վարեալ և տարեալ 'ի ծովէ. որ 'ի յալեաց ծովու տարցեալ ուրեք:

Ծովացուցանեմ. ցուցի. ցն. անել: (Անցող.) || ծովանման առնել. կամ իբրև զծով առատացուցանել:

Ծովափն: (Նախդրիւ հոլովի.) || տե՛ս զծովեզրն:

Ծովափնեայ: (յեզակականըն Նախդրիւ հոլովի. իսկ 'ի յոգնականըն հոլովի. ծովափնեայք. եայց:) || տե՛ս զծովեզերեայ: Երեմ. 19. 5:

Ծովեայք. կամ ծովեաք. եից. եիւք: (անեզական.) || ծովայինք. կամ այնք, որք պատկանին ծովու, թէ 'ի ծոց նր իցեն. և թէ առ եզր նր: Խորէն. Է. տր. 62:

Ծովեզերեայ: ('ի յեզակականըն Նախդրիւ հոլովի. իսկ 'ի յոգնականըն հոլովի. ծովեզերեայք. եայց:) || ծովափնեայ. այն ամ, որ գտանի յափունս ծովու. կամ է յեզերս ծովու. և ըստ այսմ ասի քաղաք ծովեզերեայ. տուն ծովեզերեայ. և այլն: 1. Մակ. 7. 1: Իսկ մերթ 'ի յոգնականըն առեալ լինի իբրու գոյականաբար. և նշանակէ զքաղաքս. կամ զկողմունս. կամ զբնակիչս, որք առ եզեր ծովու: Յեսու. 11. 2. և 3: Յուդթ. 1. 7: Երեմ. 47. 7: ըստ այսմ ևս պարտի իմանել այն, որ ասի. Եզեկ. 25. 16: Ի՛ կորուսից զմնացորդս ծովեզերայց. այսինքն ծովեզերեայցս:

Ծովեզր. եզերի. եզր. երաց. երբք. կամ երօք: || մերթ նշանակէ զեզրն ծովու, որ և ասի ծովափն. ուստի. ըստ Մատթ. 4. 13: և 13. 1: Իսկ մերթ նշանակէ զծովեզերեայսն. և ըստ այսմ է. 2. Մակ. 8. 11. ուր ասէ՝ Հրամանատար շուրջ զծովեզերօքն. այսինքն շուրջ զքաղաքօքն ծովեզերեայց:

Ծոր. ոյ. ով. ոց. ովք: || մանր պտուղ ինչ վայրի՝ կարմրագոյն, և թթուաշ բուսականձև նման փոքրիկ սխտորին: որ և ռամկաւ ասի ծորս:

Digitized by Google

Ծորակ. ի. աւ. աց. օք: || Ծորող. ի բերան աղբեր, և այլոց նմանեաց, ընդ որս ծորի և հոսի ջուրն. կամ այլ ինչ հեղեղուկ: ռամկ. աղբերի սիւղ. կամ ճուռի լուլայ:

Ծորան. ի. աւ. աց. օք: || հանանք. կամ հոսումն. կամ բղխումն. կամ թորումն. և կամ կաթուած ինչ հեղեղուկ՝ որ ծորի և կաթէ յանօթոյ խեկէ. որպէս սերմն 'ի բռնռէ: իսկ մերթ ծորող. կամ հոսական. և կամ հոսանուտ: Կիւրղ եղէի. թ:

Ծորեմ. եցի. եա. եալ: (Ներգործ.) || տես զծորեցուցանել:

Ծորենի. նայ. նաւ. նք. նաց. նօք: || է մանուկն, կամ թուփն ծորոց:

Ծորեցուցանեմ. ցուցի. ցի. եալ: (անցող.) || հեղուլ. կամ բղխել. կամ թորել. կամ հոսել. կամ սորեցուցանել. որպէս ծորի ջուրն յաղբերէ. կամ լորձունքն 'ի բերանոյ. և այլն. 1. Թագ. 21. 13:

Ծորիմ. եցայ. եա. կամ եայ. իլ: (ձայնակր.) || հեղանիլ. կամ բղխիլ. կամ թորիլ. կամ հոսիլ. կամ սորիլ. կամ 'ի խառնուածէն սահիլ. և գնալ իբրև զջուր: Խմաս. 16. 29: Յոբ. 37. 1: և 38. 30: Զաք. 14. 12: իսկ մերթ նշանակէ՝ հալիլ, կամ ծփուրիլ. կամ լուծանիլ, և անցանել: Նորբի. կե. և զէ:

Ծործակ: || տես զծործրակ:

Ծործոր. ոյ. ով. ոց. ովք: || ձոր 'ի մէջ լերանց. կամ ընդարձակ և մեծ փոս՝ շրջապատեալ լերամբ. կամ խորաձոր. կամ հեղեղատ. կամ խորափիտ: Ծննդ. 37. 14: Յուդիթ. 2. 5: և Սաղմ. 103. 10:

Ծորումն. րման. մամբ. մանց. մամբք: || բղխումն. կամ հոսումն. կամ թորումն: Ղևտ. 15. 2: Նորոք. լէ:

Ծով. ոյ. ով. ոց. ովք: || մերթ նշանակէ զմի ջրոյն զգոյն, որ է ընդ մէջ կրծոցն՝ և պատմուճանին, որ պատէ զկուրծս, և զկողս, ուր սովորեն մարդիկ դնել զձեռս. կամ զքսակս. և կամ թագուցանել զիր ինչ. որ և ռամկ. ասի ծոց: Ելից. 4. 6. և 7: Սաղմ. 73. 11: իսկ մերթ նշանակէ զգոգն. կամ զգիրկս, ուր պարփակի. կամ ընկալեալ լինի իր ինչ իբրև 'ի ծոցի: Եսայ. 40. 11: ըստ այսմ յոր ժամ մեռեալ ոք 'ի գիրկս ուրուք ննջէ ը. նմա 'ի միասին անկողնի. որպէս որդեկն որդին 'ի գիրկս հօր. կամ մօր. ասի ննջել 'ի ծոց նր. 2. Օրին. 13. 6: 2. Թագ. 12. 3: և 3. Թագ. 3. 20: իսկ Յոհ. 1. 18. ուր ասի զքանէն Ա. Յ. միածինն որդի, որ է 'ի ծոց հօր. բառ ծոց, խմանի միաբանն կցորդութիւն, զոր ունի որդին ը. հօր. որով ամ ծածուկքն հօր յայտնի են նմա: Եւ այս կցորդութիւն ոչ այլ ինչ է, եթէ ոչ միութի նոյնագոյ բնութե և զօրութե. որով ամ ինչ, զոր ունի հայր՝ է որդւոյ. բաց 'ի հայրութեէ, որ է անհաղորդ հան հաւասարութե: Դարձեալ. բառս ծոց՝ երբեմն նշանակէ զգոգաւոր և զծոցաւոր մէջոցն իրաց. որպէս կառաց. նաւուց. և այլոց նմանեաց: 3. Թագ. 22. 35: Նորբի. զը: ըստ այսմ ծոց կոչին նաև խոռոչաւորք տեղիք լերանց. որպէս փապարք. անձաւք. և այլք նը մանք: Եւ կամ խորշք, և ծոցաւոր տեղիք ծով

ծոց, ընդ որ մտեալ նաւքն, ամրանան իբրև 'ի նաւահանգստի: Խորէն. յաշխարհագր: Մերթ և ս բառս ծոց՝ նմանութ ասեի զնի փոխանակ սրտի. կամ մտաց. կամ հոգւոյ. յորս ընկալեալ լինի. կամ թագուցանի իմն իւր 'ի ծոցի: Յոբ. 23. 12: Սաղմ. 34. 13: և 78. 12: Առակ. 16. 33: Ժողով. 7. 10: և յայլ տեղիս:

Ծոցածին. ծնի. ին: || ծնեալ 'ի ծոցոյ. կամ այն. որ է ծնունդ ծոցոյ. և այս ասի զորդւոյն միածնէ, ըստ որում է ծնունդ մտաց հօր, որ նմանութի ծոց կոչի. և կամ ըստ որում է 'ի ծոց հօր, և բնութենակից նմա. քանզի ունի զմի և զնոյն բնութի ընդ հօր. և միայն անձամբ զանազանեալ 'ի նմանէ:

Ծոցաւոր. ի. աւ. աց. օք: || գոգաւոր, կամ խորշաւոր, քանզի այն ամ, որ ունի զծոց. և զգոգ. կամ որ ունի զփոսորակեալ և զխոռոչաւոր միջոցս, կամ տեղիս. և ըստ այսմ ասացեալ, կամ չինուածքն, 'ի ներքս կոյս փոսորակեալք. կամ անձաւաւոր լերինքն. կամ զգոգ ունող ծովեզերքն, կամ նաւքն, և այլք նը մանք, կոչին ծոցաւորք:

Ծուատ. ի. իւ.ից. իւք: || է արմատ ծուատել բային, որով մերթ նշանակի ծուատումն, կամ զզումն: իսկ մերթ ծուատեցեալն. կամ զզեցեալն: և ըստ այսմ ծիւ ծիւ արարեալ և զզեալ մասունքն կտաւեղինաց՝ կոչին ծուատ կտաւոյ. յորս դրեթէ ամ թելքն քակին 'ի միմեանց, և լինին փափուկք և կակուղք, որով բազում անգամ սրբեն զվէրս, կամ խցեն զբերան վիրաց: ռամկօրէն Բ.Իֆ.Փ.Ի.Ի:

Ծուատեմ. եցի. եա. եալ: (Ներգործ.) || պատառոտել. կամ ծիւ ծիւ առնել. կամ չառաչար զզել: ռամկ. ...:

Ծուէնք: (Նախդրիւ հոլովի.) || կտորեալք կը տաւեղինաց. կամ մասն. կամ կտոր պատառեալ յեղյ հանդերձի. կամ կտաւոյ. և այլն. 4. Թագ. 2. 12: և Նորբի. խե:

Ծուլալից: (Նախդրիւ հոլովի.) || լի ծուլութեամբ. կամ լցեալ ախտիւ ալղերգութե: Մծբն. ժթ:

Ծուլամ. ացայ. ցիր. ալ: (ընդմիջ.) || տես զծուլանալն: Յոբէ. 2. հատ. լթ: և Լամբրոն:

Ծուլամտութիւն. թեան: || հեղգամտութի. կամ ծուլական յօժարութի. կամ յուլութի: Մծբն. ժթ:

Ծուլանամ. ացայ. ցիր. ալ: (ընդմիջ.) || ծոյլ լինել. կամ հեղգալ. կամ ալղերգանալ. կամ յուլանալ: ռամկ. ...:

Ծուլութիւն. թեան: || յուլութի. կամ ալղերգութի. կամ հեղգութի: ռամկ. ...:

Ծուխ. ծխոյ. ով. ոց. ովք: || ոսամ զոլորշիքն, որք ելանեն 'ի փայտէ. կամ 'ի խնկոց. և յայլոց բազմաց. յորժամ հրով այրին, որք և բարձրացեալ 'ի վեր, ծաւալեալ, և յետոյ ցնդին յօդս: Եւ բազում անգամ մը տեալ 'ի յաչս՝ խթեն, և կսկծեցուցանեն զնս, և տան հեղուլ զարտասուս. ուստի և ռամկ. կոչի՝ ծուխ. զի մխէ յաչս: Առակ. 10. 26: Յեսայ. 8. 20: Սաղմ. 67. 3: ըստ այսմ է և Եզեկ. 3. 6. ուր ասի՝ ելանէ իբրև զաւերն

ծխոյ խնկեալ. զի երբեւ զանուշահոտ ծուխ խնկոց. որ երբեւ զաստեղն. զի երբեւ զծխեալ ծառոյ՝ ուղիղ 'ի վեր բարձրանայ:

Ծուծ. ծծոյ. ով. ոց. ովք: || է արմատ ծծել բային. որով մերթ նշանակի փափուկ հիւթն այն, որ գտանի 'ի մէջ ոսկերաց կենդանեաց. եւ ըստ այսմ առ առաւել յաշխարհաբար ըերդերով 'ի գործ ածի. մինչեւ գրոց ըերգուածի կոչի ուղեղ. ոպ Եբր. 4. 12: Իսկ մերթ նշանակէ զծծեցեալն. եւ ըստ այսմ մերթ 'ի գործ ածի 'ի բարգաւաճս բանից. մինչեւ մանաւանդ առել զուղերն ծծել. առեալ, ուղ վածուծ ասնել: Թու. 24. 8:

Ծուլանամ. ացայ. ա. ալ: (Չեզոք.) || յամենալ. կամ պնդել. կամ ձգձգել. եւ կամ ներկրել: Եւ ըստ այսմ է 3. Մակ. 1. 8. ուր ասի. Նա ծուլ կայր, ոչինչ լծուլանայր. զի յամառեալ եւ պնդեալ կայր, եւ ոչ լծուլանայր 'ի կամաց իւրոց: Բայց առաւել փոխանակ ծուլայր բառիս՝ գնի ծուլայի. որ ոչ է այնպէս. քանզի 'ի օրինակմանէ գրչաց, կամ տառաճնոյ աղաւաղութեան, առաւ ք, եղեալ է՝ ի:

Ծուղակ. ի. աց. աց. օք: Ն Նորէ. խրթ. եւ տե՛ս զծուղակ:

Ծունգն. կամ ծունկն. ծնգան. անք. ծունգք կամ ծունկք. ծնգաց. անց. կամ օք. կամ ովք: || ծունր, որ է գնդաձեւ յօդուածն այն, յորում յօդին եւ միաւորին ընդ միմեանս սրունքք եւ բարձքն մարդոյ. որով եւ լինի ծնրադրութիւն. որ եւ ռամկ. կոչի ծունկ: Դատ. 7. 5: 2. Մնաց. 6. 13: Յոբ. 4. 4: Սաղմ. 108. 24: Իսկ մերթ առեալ լինի առ փոխանակ բարձից մարդոյ. ուր կացուցեալ զմանկունս գգուէին. կամ ննջեցուցանէին: Ծննդ. 30. 3: եւ 48. 12: 4. Թագ. 4. 20: Եսայ. 66. 12:

Ծունկ. ծնկոյ. ով. ոց. ովք: || է խաղ ինչ երաժշտական երգոց, որոց ձեւն է այս ՞:

Ծունկնի. ծնկան. եւ այլն: || տե՛ս զծունգն:

Ծունր: (Նախդրիւ հոլովի.) || ծունգն. կամ ծունկն. բայց առ բառ այսմ նշանակութեան գրեթէ միշտ ը բայի շարադրի այսպէս. ծունր դնել. կամ ծունր կրկնել. կամ 'ի ծունր իջանել. եւ այլն. եւ նշանակէ 'ի վեր ծնգաց անկանել. կամ զծունգն 'ի վեր գետնոյ դնել առ 'ի երկրպագանել. կամ առ 'ի աղօթել. եւ կամ առ 'ի պատիւ ուրուք. եւ այլն: 3. Թագ. 19. 18: Մատթ. 27. 29: Գործ. 7. 59: Փիլիպ. 2. 10: Իսկ մերթ մինչ ասի ծունր եղեգան, նշանակէ զյօդս եղեգանց, եւ ըստ եղեգանման բուսոց. այլքն կոչեն հանգոյցս եւ թիզ առ թիզ շարեալ կան ը երկայնութեան նը. ռամկ. պօղում: Եւ այսու կերպիւ յօդաւորելն այսպիսեաց բուսոց. ասի՝ ծունր կապել. ոպ գնի 'ի գիրս Աղթարմագետից: Եւ Կիւրղի Եղեն. Թ:

Ծուփ. կամ ծուփք: (Նախդրիւ հոլովի.) || ծփումն ալեաց ջուրց. կամ ալեկոծութիւն. կամ ամբոխումն ծովու. կամ հողմոց: Նորէն. ծփ: Իսկ մերթ առեալ լինի փոխանակ եւ եղէ աղմկարար իրաց. կամ խռովութեանց. կամ շփոթմանց. եւ կամ հոգոց: Ոսկէ. 2. հատ. Է: Մծբն. ժԹ: Լամբրոն:

Ծ Պ

Ծպտեալ: (Նախդրիւ հոլովի.) || է արմատ ծպտել բային. եւ նշանակէ զծպտումն. զի զայլափոխութիւն կերպարանաց. կամ հանդերձից. եւ կամ զայլաձեւութիւն: ռամկ. Բէդ փէլ ըլըմը: Իսկ մերթ նշանակէ զծպտեալն. զի զայլաձեւեալն. կամ զայլակերպեալն կերպարանօք. կամ հանդերձիւք:

Ծպտեմ. եցի. եա. եալ: (Ներգործ.) || կցել. կամ մածել. կամ պնդել. կամ զոդել: Եւ ըստ այսմ է 2. Թագ. 20. 8. ուր ասի. Եւ 'ի վը նը առասր ը մէջ ծպտեալ առ միջովն պատենիւքն հանդերձ. զի առասրն, որ էր ը մէջ ածեալ. կցեալ եւ մածեալ կայր 'ի վը միջոյն նը հանդերձ պատենիւքն. բայց այն էր թերաքաղեալ. զի ը պատենանն պնդապէս ոչ էր հաստատեալ. ուստի 'ի ննմանէ դիւրաւ. եւ իբր թէ ինքնին ելանէր:

Ծպտիմ. եցայ. եաց. իլ: (Հայնակր.) || այլափոխիլ. կամ այլանդակիլ հանդերձիւք. կամ ձեւափոխիլ. կամ այլակերպս լինիլ: ռամկ. Բէդփէլ ըլմագ: 1. Թագ. 28. 8:

Ծ Ռ

Ծռեմ. եցի. եա. եալ: (Ներգործ.) || ծուռ առնել. կամ թիւրել. կամ շեղել. կամ խոտորել. որ եւ ռամկ. առի ծուել: Ոսկէ. 2. հատ. Թ:

Ծռութիւն. թեան: || թիւրութիւն. կամ խոտորումն. կամ շեղումն. կամ խեղաթիւրութիւն. որ եւ ռամկ. առի ծռութիւն: Աղ. 8. 8:

Ծ Ր

Ծրագիր. գրի. աւ. աց. օք: || ծրագրող. զի ծրելով. եւ գծելով գրող. կամ գծագրող. կամ զգիր գրող: Իսկ մերթ նշանակէ զծրագրեցեալն. կամ զգծագրեցեալն. եւ կամ զգրեցեալն 'ի գիրս: Աղթար:

Ծրագրեմ. եցի. եա. եալ: (Ներգործ.) || գծելով գրել. կամ գծագրել. եւ կամ գրել զգիրս:

Ծրար. ի. իւ. ից. իւք: || փաթոյթ. կամ պատառոյ. կամ կապոց: ռամկ. ծրարոց. կամ ըոխըն: Ծննդ. 42. 27: եւ Երգ. 1. 12:

Ծրարաքանութիւն. թեան: || իրթնաքանութիւն. զի խոյզ. կամ քնին, յորում ոք զհմացուած իրին, եւ կամ զգիտաւորութիւնս հոգաբանական թագուցանէ. եւ իբր թէ ծրարէ, եւ գաղտէ:

Ծրարեմ. եցի. եա. եալ: (Ներգործ.) || պատառել. կամ փաթութելով զինս 'ի կապել դէն նիւթ ինչ կապել, ոպ զդրամս 'ի մարշամակի: Ելից. 12. 34: Եզեկ. 5. 3: Դատ. 19. 20: Եւ յայսմանէ առեալ երբեմն նշանակէ զքան ինչ. կամ զխորհուրդ ինչ թագուցանելով պահել. եւ կամ կնքել, եւ հաստատել: Աղթար:

Ծրարուն: (Նախդրիւ հոլովի.) || ունօղ ըզ ծրարս. կամ ծրարեցեալ. եւ փաթութեցեալ:

Ծրգեմ. եցի. եա. եալ: (Ներգործ.) || ողողել. կամ շաղախել. կամ ներկել. կամ առ գործել: Երեմ. 2. 22: Նորէն. Է:

Ծրեմ. եցի. եա. եալ: (Ներգործ.) || գծել. կամ գծել. կամ զգիծ քարշել:

Ծրտեմ. եցի. եա. եալ: (Չեզոք.) || արկա-

նելն թռչնոց զողբս խուրեանց յերկիր. որ և ռամկ. ասի ծրփել: Տօբ. 2. 18:

ԾՓ

Ծփական. ի. աւ. աց. օք: || այն՝ որ պատկանի առ ծփմունս, և ալէկոծութիւնս, և կմ առ վրդովմունս, և ամբոխմունս. կմ առ հոգս, և զբաղմունս: Նորէկ. ժե:

Ծփալ. ացի. ա. ալ: (չէզոք.) || ծփանօք հարկանիլ. կմ ծփիլ. կմ ալէկոծիլ: Իսկ մերթ նշանակէ ամբոխիլ. կամ վրդովիլ. կմ տառապիլ զբաղմանօք և հոգօք: Լամբրոն:

Կանաչանամ. ացայ. ցիր. նալ ։ (Ընդ.միջ.) ‖ կանաչ լինել. կմ ունել զկանաչ գոյն ։ ռամկ. կանչընել ։ Ղևտ. 13. 49։ Եւ մերթ նշանակէ զդալարանալն. կմ զբողբոջիլն, և զզուարթանալն բուսոց ։ Յոբ. 8. 11։

Կանաչիմ. եցայ. եայց. իլ ։ (Ձայնակր.) ‖ Նոյն է ընդ վերնոյն ։

Կանացական. ‖ տես զԿանանցականն ։

Կանացանամ. ացայ. ցիր. նալ ։ (Ընդ.միջ.) ‖ կանացի լինել. կամ զկանացական բարս ստանալ ։

Կանացի. ցւոյ. ւով. եաց. եօք ։ ‖ կանացա կան. կամ այն, որ կնոջ է, կմ առ կանայս վերաբերի. և ըստ այսմ ասի. գործ կանա ցի. զգեստ կանացի. ձայն կանացի, և այլն ։ Ղևտ. 20. 13։ և 2. Օրին. 22. 5։ Եւ մերթ նը շանակէ զնա, որ ունի զբարս, և զյատուկս կնոջ. գոլով երկչոտ, և փափկասէր, և կմ թուլամորթ, և այլն ։

Կանգառ. կամ կանգառ. ի. աւ. աց. աք ։ ‖ Է բոյս ինչ վայրի, և փշաւոր. որ ունի ըղ նմանութիւն կուռ բուսոյն. բայց կարծր լի նի քան զնա, և ճաղաղ բուսանի, արձակե լով ՚ի միոյ արմատոյ զբազում ճիւղս. որոյ տերևքն և բունն են նման ...; բայց լինի մեծ քան զնա. և գլուխն, զոր կա ... իբրև զենկինար՝ է բաց ըստ վերնոյ մասին. որոյ և բողբոջն ՚ի նորին ընձիւ ղելն հատանի, և սրկանի ՚ի մէջ կերակրոյ իբրև զայլ բանջարս ։ Իսկ մինչ զտերևսն ՚ի բաց թօթափին, գտանեն ՚ի միջին մա սին զայսպիսի նիւթ ինչ, զոր ուտեն ։ ռամկօրէն կանկառ ։

կանգնաւոր. ի. աւ. աց. օք: || ունող զչափ միոյ կանգնոյ: Մերթ եւ նշանակէ զկանգուն կացօղն. կմ՝ զուղիղ կանգնեալն, թէ մարդ իցէ. թէ փայտ. թէ սիւն. թէ հանկ. եւ թէ այլ ինչ: Ելից. 26. 16: եւ 36. 20: եւ Դատ. 15. 5:

կանգնեմ. եցի. եա՛. եալ: (ներգործ.) || զանկեալն, կմ՝ զգլորեալն յարուցանել. կամ յոտն կացուցանել. կմ՝ ի վեր ուղղել: 1. Մակ. 3. 43: Սաղմ. 144. 14: Գործ. 10. 26: Իսկ մերթ կանգնեցուցանել ուրեք զորձանս. եւ կմ՝ զպատկերս կռոց. եւ զայլս նըմանս: Ծննդ. 28. 18: Դանիէ. 3. 18: Մերթ եւ նշանակէ, կազմել. կմ՝ կառուցանել. եւ կմ՝ զմատուռս շինուածոյ երեք առ երեսս բերելով յոտն կացուցանել զնա: ռամկ. [illegible]: Ելից. 26. 30: 4. Թագ. 21. 3: Յօհ. 2. 20: Իսկ մերթ նշանակէ՝ արձանս յուցանել. կմ՝ հաստատել. եւ ը այսմ իմանի՝ մինչ ասի՝ կանգնել զբան իւր: 3. Թագ. 8. 20: 2. Մնաց. 6. 10: ἀνίστημι.

կանգնիմ. եցայ. եա՛. կմ՝ եայ. իլ: (ձայնակրաւ.) || կանգուն կալ. կամ յոտն կալ. կմ՝ յառնել: Ղուկ. 7. 15:

կանգուն. գնոյ. ով. կամ ա՛. ոց. ովք: || չափ, որով չափին կտաւ. կամ այլ ինչ նըման: ռամկ. արշըն: Բայց յատկապէս կանգունն նշանակէ զընդարձակութիւն զայն, որ ձգի յարմնկանէ մինչեւ ի ծայրն միջամատին: Արդ՝ այսպիսի կանգունս պարունակէ զքսան եւ չորս երկրաչափական մատունս. իսկ զերկու բնական թիզս. Ծննդ. 6. 15: Ելից. 25. 10: Թուոց. 35. 4: Յեսու. 3. 4: Բայց գիտելի է, զի ի մէջ եբրայեցւոց կրկին էր կանգունն, մինն կոչիւր սրբազան, կամ օրինական. եւ միւսն հասարակ: Հասարակն էր այն, զորմէ ասացաք: Իսկ սրբազանն էր մեծագոյն քան զհասարակն միով ուղկաւ. այսինքն լայնութեամբ չորից մատանց. եւ ըստ այսմ առեալ լինի Եզեկ. 43. 13. ուր ասի. Կանգուն մի ի կանգնոց, եւ կանգուն մի՝ եւ ուղուկ: Զորմէ չիով տեսցես ի մեկնութեան բառին՝ Ուղուկ. Դարձեալ, երբեմն՝ բառս կանգուն նշանակէ զկանգնեալն. կամ զուղղորդ կացեալն. եւ ը այսմ ասի. կանգուն մնալ: Ի Հօրս հարց. ը: Խորէն. գ. գլ. 65: Այնպէս յորժամ ընկողմանեալ ոք, յառնէ, եւ նստի ուղիղ, ասի կանգուն նստիլ: Գործ. 9. 40: Իսկ մինչ ասի. կանգնաւ յայսմ կողմանէ, եւ կանգնաւ յայնմ կողմանէ. իմանի՝ միով կանգնաւ յայսմ կողմանէ. եւ միով կանգնաւ յայնմ կողմանէ: Ելից. 26. 13: եւ 30. 2:

կանգաղեմ. եցի. եա՛. եալ: (ներգործ.) || հաստատել. կմ՝ պնդել. կմ՝ ամրացուցանել. եւ կմ՝ կայուն, եւ արմատացեալ առնել: Ոստի Իմաստ. 4. 4. ուր ասի. Զաղփաղփուն կանգաղեալն ի հողմոյ շարժեսցի. իմացեալ լինի. խախուտ հաստատեալն. կամ անկայուն պնդեցեալն:

կանեփ. ոյ. ով. ից. իւք. կմ՝ ովք: || տեսակ ինչ հաստ, եւ թուխ վշոյ, յորմէ կազմեն զչուանս. եւ կմ՝ զպարանս. եւ զայլս նմանս: Եւ այսու մերթ նշանակի բոյսն, որ առ կաւին ոչ է ծեծեցեալ. եւ մերթ ի բուսոյն ելեալ վուշն: ռամկօրէն կանափ:

կանեփեայ. փէի. իւ. իւ. իւք: || կանեփեղէն. իբ զգեստ, կմ՝ ձորձ, կմ՝ վերարկու, կմ՝ այլ ինչ նման՝ գործեալ ի կանեփոյ:

կանթ. ի. իւ. ից. իւք: || ըմբռնելոյ. եւ կմ՝ ունկն, որ սեւեռեալ, եւ հաստատեալ կայ յանօթս, ուստի կալեալ ձեռօք դնեմք աստ եւ անդ զնա: ռամկ. խուլփ:

կանթեղ. ի. աւ. աց. օք: կմ՝ իւ. ից: || ճրագարան, յոր արկեալ զիւղ՝ եւ եդեալ զպատրոյգ, լուցանեն զճրագ, եւ կախեն զբարձր տեղւոջէ առ ի լուսատու լինել: եւ զայս նաեւ ստուգաբանութիւն ցուցանէ, զի ասացեալ կանթեղ, իբր թէ, կայ անդ եղ, որ է իւղ: ռամկ. եւ ասի՝ կանդեղ: Նարեկ. ի գովեստ առաքելոց:

կանթեղաբորբոք: (նախդրիւ հոլովի.) || նա՝ որ լուցանելով զկանթեղն, բորբոքէ զպատրուգն հրով: Իսկ մերթ նշանակէ ըզ վառեցեալն եւ զբորբոքեցեալն իբրեւ զկանթեղ: Նարեկ. ղվ:

կանխաբանեմ. եցի. եա՛. եալ: (ներգործ.) || յառաջաբանել. կմ՝ նախքան զխօսիլն ըզ բանս իւր, առնել զյառաջաբանութի: Իսկ մերթ յառաջագոյն ասել, կմ՝ նախապատմել. եւ կմ՝ նախագուշակել:

կանխաբանութի. թեան: || յառաջաբանութի. կմ՝ նախաբանութի. կմ՝ կանխասացութի. կմ՝ նախագուշակումն: Նարեկ. ծէ:

կանխագէտ. գիտի. աւ. աց. օք: || կանուխ ժամանակաւ գիտող. իբ այն՝ որ յառաջագոյն գիտէ զիրս ապագայս. կմ՝ յառաջատես. կամ նախագէտ: Յուդիթ. 9. 5: եւ 2. Պետր. 3. 17:

կանխագիտութի. թեան: || նախագիտութի. կմ՝ յառաջատեսութի. կամ կանուխ ժամանակաւ գիտելն զապագայս, կմ՝ ըզ հանդերձեալս: Գործ. 2. 23:

կանխագոյ. ի. իւ. ից. իւք: || այն՝ որ կանխաւ գոյ. կմ՝ ի վաղուց հետէ գոյ. եւ կմ՝ որ գոյացեալ կայ ի վաղ ժամանակաց:

կանխագուշակ. ի. իւ. ից. իւք: || կանխաւ գուշակող զապագայս. կմ՝ ազդօղ. եւ ծանուցանող զապագայս: Իսկ մերթ նշանակի՝ կանխաւ գուշակեցեալն: Լամբրոն:

կանխագրեմ. եցի. եա՛. եալ: (ներգործ.) || կանուխ ժամանակաւ գրել զինչ. կամ նախապատում լինել գրելով: Նարեկ. ձ:

կանխազեկոյց: (նախդրիւ հոլովի.) || կանխաւ զեկուցանող եւ ազդօղ զինչ: Իսկ մերթ նշանակի՝ կանխաւ զեկուցեալն, կմ՝ յառաջագոյն ծանուցեալն: Նարեկ. հթ:

կանխակառոյց. ուցի. աւ. աց. օք: || կանխաւ կառուցանող եւ կազմող: Իսկ մերթ կանխաւ կառուցեալ եւ շինեցեալ: Նարեկ. ի գովեստ առաքելոց:

կանխակործան. բառի. իւ. ից. իւք: || կանխաւ կործանող. կամ յառաջագոյն ի կո

բուստ մատնօղ։ Նարեկ. ղէ։ Իսկ մերթ նը շանակէ, կանխաւ կորուսեալ, և՛ ի կորուստ յուղարկեալ։

Կանխահանդէս. գիսի. իւ. իւ. օք։ ‖ կա-նուխ ժամանակաւ հանդիսացեալ. կմ ժո ղովեալ, և գումարեալ. կմ կանխապէս ատ նախմբեցեալ։ Նարեկ. ղէ։

Կանխահաս. ի. իւ. ից. իւք։ ‖ կանուխ հա սեալ. կամ որ յառաջագոյն հասանի։ Եւ այս յատկապէս առի զպտղոց, որք կանխեն քան զայլս ՚ի հասունանալն. կմ որք յառա ջագոյն հասունանան. ռամկ. Թուրֆանդա։ Բայց յորժամ ըթզըս ասի, յայնժամ բաց ՚ի նշանակելոյն զթուրֆանտայն, նշանակէ նաև զհասանացեալն յառաջնում նոհա-գի. վասն զի ամանք ՚ի թզենեաց երկիցս պտղաբերեն ՚ի տարւոջն. միանգամ յամա ռան, և միւսանգամ ՚ի սկսանելն աշնան. այլ յամառան պտղաբերեցեալ թուզքն են մեծագոյնք. պարարտագոյնք. և քաղց-րագոյնք. ուստի նկատմամբ աշնանայնոցն կոչին կանխահաս։ Երեմ. 24. 2։

Կանխահիւս։ (նախադրիւ հոլովի.) ‖ կան-խաւ հիւսօղ. կմ յառաջագոյն հիւսեալ և զարմացեալ։ Իսկ մերթ նշանակէ զկան խահիւսականն. և է այսմ առի ՚ի Նարեկ. կէ. Ըստ գրոյն երջանկութեն կանխահիւսցն զարմացման։

Կանխաձայն. ի. իւ. ից. իւք։ ‖ մերթ նշա նակէ զնախաձայնօղն. կմ զնա, որ կանուխ ժամանակաւ զինչ քարոզէ. կմ գուշակէ։ Իսկ մերթ զկանխաձայնեցեալն, այս զկա-նուխ ժամանակաւ պատմեցեալն, կմ զնա խագուշակեցեալն։

Կանխաձայնեմ. եցի. եա. ել։ (ներգործ.) ‖ նախաձայնել. այս կանուխ ժամանակաւ բարբառել. կամ ասել. կմ նախագուշա-կել. կմ նախապատմել։

Կանխամեծար։ (նախադրիւ հոլովի.) ‖ յա-ռաջագոյն մեծարօղ. կմ պատուօղ։ Իսկ մերթ կանուխ ժամանակաւ մեծարեցեալ. և յարգեցեալ։ Նարեկ. ՚ի Գովէստ առաքելոց։

Կանխապատում։ (նախադրիւ հոլովի.) ‖ նա խապատում. կմ կանխաւ պատմօղ, և ա սօղ։ Եւ մերթ կանխապէս պատմեցեալ. և ասացեալ։

Կանխասաց. ի. իւ. ից. իւք։ ‖ յառաջագոյն պատմօղ. կմ նախապէս ասօղ, և գուշակօղ։ Աճտոր։ Իսկ մերթ նախապէս ասացեալ. կամ յառաջ գուշակեցեալ։ Յովսէփ. 17։ և Նարեկ. ղթ։

Կանխարկ. ի. իւ. ից. իւք։ ‖ կանխաւ ար-կանօղ. կմ նախ ընկեցօղ։ Իսկ մերթ նշա նակէ զկանուխ արկեալն. կմ զնախ ընկե ցեալն. կմ զանկեալն։ Ուստի և ցօղք վա ղորդայնոյ՝ ըստ որում ընդ առաւօտն կա նուխ իջանեն յերկիր, կոչին՝ կանխարկ։ Միծբն. ժը։

Կանխաւ։ (մակբայ ժամանակ։) ‖ կանուխ ժա մանակաւ. կմ յառաջագոյն. կմ ՚ի վաղուց. և կմ ՚ի վաղնջուց։ Եբր. 1. 1։

Կանխեմ. եցի. եա. ել։ (չէզոք.) ‖ յառա-ջել քան զոք. կմ յառաջագոյն ժամանել. կմ աճապարել. կմ վաղագոյն գնալ։ Սաղ. 58. 11։ և 67. 26։ Իսկ մերթ կանխաւ յառ նել ընդ առաւօտն. և կմ յառաջել քան զավորական ժամանակն, առ ՚ի աղօթել. և կմ առ ՚ի առնել զգործ ինչ։ Ծննդ. 20. 8։ Սաղմ. 118. 147։ Իմաստ. 16. 28։

Կանխերգ. ի. իւ. ից. իւք։ ‖ կանխաւ եր-գօղ. կմ յառաջագոյն սաղմոսօղ. կմ կան խասաց։ Իսկ մերթ կանուխ ժամանակաւ երգեցեալն. կմ ասացեալն. և կամ գու-շակեցեալն։

Կանխեցուցանեմ. ցուցի. ցո. ել։ (անցող.) ‖ վաղ ժամանեցուցանել. կմ յառաջագոյն ՚ի մի հասուցանել, այն որ ՚ի ժամանակս մանկութեն ուրուք ՚ի մի ածէ նմա զծե րութն, այս՝ կանխեցուցանել զծերութն ՚ի տղայութե։ Նարեկ. ղթ։

Կանխոյ. կմ Կանխոց։ ‖ են սեռականք ի կա նուխ բառիս։ Ուստի թէ զինչ նշանակէ՝ մինչ ասի՝ յամենայնի կանխոյ, կմ կանխոց, տես ՚ի Կանուխ բառն։

Կանխուսեալ. եալ. ով. ոց. ովք։ ‖ կանխա պէս ուսեալ. կմ յառաջագոյն տեղեկա-ցեալ և գիտացեալ։ Լամբր։

Կանխօրինակ. ի. աւ. աց. օք։ ‖ նախատիպ. կմ նախագաղափար։ Իսկ մերթ վարի իբ րև զմակբայ. և նշանակէ կանխապէս. կմ նախապէս։ Լամբր։

Կանոն. կմ կանօն. ի. աւ. աց. օք։ ‖ սահմանք. կմ սահմանադրութի. կմ կարգ. կմ կար-գեալ, և կանոնեալ օրէնք. կմ օրինակ. կմ նախատիպ. և կամ կերպ։ 2. Կորն. 10. 15. և 16։ Գաղտ. 6. 16։ Փիլիպ. 3. 16։ Իսկ ՚ի խո րագիրս շարականաց բառս՝ կանոն, նշանակէ զկանոնեալ, և զկարգեալ երգն։ Բայց մինչ ասի՝ կանոն մի սաղմոս, նշանակէ ըղ մինն յութից հատուածոց սաղմոսարանին դաւթի, որոց իւրաքանչիւրքն պարունա կեն զբազում գումարս։ Դարձեալ բառս՝ կանոն, ըստ որում է բառ յունական, եր բեմն և ս գրի քանօն. կմ քանուն, որպէս ցես ՚ի տեղւոջ իւրում։ Արդ՝ որպէս բառք ՚ի այսպիսիք նշանակեն երբեմն զգործիսն, ՚ի ձեռն որոց ուղիղ գիծք քարշին։ և կմ նշա նակեն զսիւնս՝ և զգերանս, որպէս գրի՝ Յո-ւդթ. 13. 8։ Սոյնպէս և բառս կանոն եր-բեմն նշանակէ զգործիս գծից։ Իսկ եր-բեմն զսիւն. որպէս գրի՝ Միք. 7. 4։ Եւ հա նից զբարութն նոց իբրև զցեց, որ ուտէ և շիջի ՚ի մէջ կանոնի. այս ՚ի մէջ սեան, կամ գերանի։

Կանոնագէտ. գիտի. իւ. աց. օք։ ‖ կանո-նաց, կամ սահմանադրութեց գիտօղ և տեղեակ։

Կանոնագիր. գրի. աւ. աց. օք։ ‖ գրօղ. կմ սահմանադ-րով աւանդօղ կանոնաց և սահմանադ-րութեց. որպիսիք էին ն֊ք հայրապետքն նիկիոյ ժողովոյն, որք գրով աւանդեցին զկանոն հաւատոյ։ Նարեկ. ղթ։

Կանոնագիրք. գրոց. ովք։ (անեզական.) ‖ գիրք կանոնաց և սահմանադրութեց։

Digitized by Google

Կանոնագլուխ. գլխոյ. ով. ոց. ովք: || սաղմոսք, առեալք 'ի միասին և 'ի վերջէ եօթներորդ գուբայից սաղմոսաց, որք յեկեղեցւոջ զկնի քարոզաց զաղմամ՝ երգեցեալք լինին ըստ ձայնի աւուրն, որպիսին է՝ Պառաւոր տեամ որն. Ողորմեա. և այլն: Արդ՝ կոչեցան սոքա կանոնագլուխ. զի 'ի գլուխ եւանեն երկուց կանոնաց սաղմոսարանին, երգեցեալք լինին:

Կանոնագիր. գրի. իւ. աց. օք: || գրող զկանոնս, կմ սահմանող զկարգս. և կմ օրինադիր: Նարեկ. կը:

Կանոնագրութիւն. թեան: || սահմանումն կանոնաց. կմ սահմանադրութիւն. կմ օրինադրութիւն: Լամբրոն:

Կանոնական. կմ կանոնական. ի. աւ. աց. օք: || այն, որ պատկանի կանոնաց, և սահմանադրութեց. կմ կարգեալ և կանոնեալ: Խորէն. գ. գլ. 20:

Կանոնաւոր. ի. աւ. աց. օք: || ունող զկանոնս. կմ կալնող զսահմանադրութիւն: Իսկ մերթ կանոնեալ. կմ սահմանադրեալ. և կամ օրինաւոր:

Կանոնաւորեմ. եցի. եալ. ել: (Ներգործ.) || կանոնաւ ուղղել. կմ տալ ումեք զկանոն. կամ կարգաւորել. կմ 'ի կարգի դնել:

Կանոնափակ: (Նախդրիւ հոլովի.) || կանոնաւ փակող և պարսաւանդօղ: Իսկ մերթ կանոնաւ փակեցեալ և պարսաւորեալ. և կմ կանոնաւախականն: Նարեկ. ղէ:

Կանոնափակեմ. եցի. եալ. ել: (Ներգործ.) || փակել. և ամրացուցանել կանոնաւ, կմ սահմանադրութբ:

Կանոնեմ. կմ կանոնեմ. եցի. եալ. ել: (Ներգործ.) || սահմանել. կմ սահմանադրել. կամ օրինադրել. կմ կարգել. և կմ չափակարգել, և կանոնաւորել: Խորէն. ա. գլ. 21: Նարեկ. ձէ:

Կանուխ. կանխոյ. աւ. ոց. ովք: || յառաջ. կմ յառաջագոյն. կմ վաղ. կմ վաղնջական: Իսկ մինչ ասի՝ անձրև կանուխ, և անագան, իմանի անձրևն աշնան. որով պարարտանան սերմանեալքն, և անձրևն գարնան, որով բուսանին, և բողբոջին սերմանեալքն. և աճեցեալ հասունանան այրուղք նց: Եւ զի ըստ այսմ աշնանային անձրևքն յառաջագոյն են ժամանակաւ քան զգարնանայինն՝ վասն այնորիկ կոչին անձրև կանուխ: և ներհակաբար գարնանայինքն են յետնագոյն, և առ այն անուանին անձրև անագան. 2. Օրին. 11. 14: Ովս. 6. 3: ըստ այսմ և բայք աշնան, և գարնան, կանուխ և անագան ասին: Յակոբ. 5. 7: Իսկ Ելից. 13. 4: և 23. 15: և 34. 18: 2. Օրին. 16. 1: յորս ասի, յամսեանն կանխոց, կմ կանխոց. իմանի՝ Նիսան ամիսն, որ է առաջին ամիսն եբրայեցւոց. որ պատասխանէ մարտի ամսոյ հռոմայեցւոց: Եւ այս ամիս վն երկուց կոչեցաւ այսպէս. Նախ զի կանխէ քան զայլ ամիս՝ գոլովն առաջին բառեր բայեցւոց: Եւ երկրորդ, զի յայնմիկ ամսեան, վն ջերմութե գաւառին, կանխեալին յերկրին աւետեաց հասունանալ արմտիքն. ՞թ ցորեան, գարի, և այլն. ո՛րպ և մինչև ցայսօր տեսանի յերկրին յայնմիկ:

Կանուխ: (մակբայ երրորդական.) || կանխագոյն. կմ վաղագոյն:

Կանչ. ոյ. ով. ից. օք: || է արմատ կանչել բային, որով նշանակի՝ կանչումն. ՞թ ոսկի աղաղակ. կմ գոչումն:

Կանչիւն: (Նախդրիւ հոլովի.) || կանչումն. կմ գոչումն. կմ աղաղակ. կմ հնչիւն ուգին ձայնից:

Կանոն: || տես զկանոնն:

Կանոնական: || տես զկանոնականն:

Կանոնեմ: || տես զկանոնեմն:

Կաշառ. ի. աւ. աց. օք: կմ ոյ. ով. ոց. ովք: || տուրք ինչ՝ զոր տան իշխանի, կմ դատաւորի ումեք. որպ զի 'ի կողմն իւրեանց լինիցի 'ի դատաստանի. կմ ջատագով լիցի իւրեանց: ռամկ. ըռըշուէթ: Ելից. 23. 7: Առակ. 25. 10: Եսայ. 33. 15:

Կաշառազեղ. ի. իւ. իւ. իւք: || 'ի կաշառաց բեկեցեալ. ՞թ զեղծանեցեալ. որով իմանի նա՝ որ առնլով զկաշառս՝ թիւրէ զիրաւունս և զարդարութիւն. և այնու զեղծանի և կորնչի ՞ի հոգւոյն: 3. Մակ. 4. 15:

Կաշառագնաց: || ոչ հոլովի, այլ ընդ բայի շարակցի այսպէս, կաշառագնաց լինել, և նշանակէ կաշառօք վարիլ. որով իմանի՝ կաշառակրութիւն առնել. կմ կաշառասէր լինել: 2. Մակ. 10. 20:

Կաշառակուրծ. կրծի. իւ. իւ. օք: || կրծող, և ուտող զկաշառս, որով իմանի կաշառասէրն. ՞թ կաշառ առօղն 'ի դատաստանի: Լամբրոն:

Կաշառակրութիւն. թեան: || կրծումն, և ուտումն կաշառաց. որով նշանակի կաշառասէրութիւն. կմ մոլութիւն առնլոյ զկաշառս 'ի դատաստանի: Յոբ. 1. հատ. ՟Է:

Կաշառաձգութիւն. թեան: || կաշառօք ձըգելն, և քարշելն զոք առ 'ի թիւրել զիրաւունս. կմ կաշառատուութիւն: Եւ կմ կաշառօք ձգելն՝ առ 'ի թիւրել զարդարութիւն. Նարեկ. լէ:

Կաշառանք. անաց. օք: (անեզական.) || կաշառումն. ՞թ կաշառս տալով հաճեցուցանելն զոք առ 'ի լինել 'ի կողմն իւր՝ և կատարել զհաճոյս նորա: Շնորհալին:

Կաշառատու. ուի. աւ. աց. օք: || զկաշառս տուող 'ի դատաստանի: Յոբ. 15. 34: և Առակ. 15. 27:

Կաշառեմ. եցի. եալ. ել: (Ներգործ.) || կաշառ, կամ ընծայ տալով հաճեցուցանել զոք. կմ զհաճութիւն նր որսալ՝ առ 'ի կատարել զխնդրուածս կաշառատուին:

Կաշի. շւոյ. ւով. եաց. եօք: || մորթ կենդանեաց. որ և ռամկօրէն ասի կաշի: Ղևտ. 8. 17: և 9. 11:

Կաշկանդեմ. եցի. եալ. ել: (Ներգործ.) || կապանօք պատելով պնդել. կմ յամ կողմանէ կապել. կմ պրկել: Յոբ. 17. 2: Նարեկ. ԿԳ:

Կաչաղակ. ի. աւ. աց. օք: || է թռչուն ինչ խայտաբղետ, որ ունի զնմանութիւն վայ

[illegible]

նակի կռապաշտութեան նուիրեալ չաստուածոյն գիսայ, ուր յաճախէին 'ի հնումն կռապաշտ թագաւորք, և կայսերք հռոմայ 'ի պաշտօն չաստուածոյ. ուր և բազում ան գամ ածեալ զքրիստոնեայս՝ ստիպէին յանձն առնուլ զպաշտամունս կռոց: Եւ տեղիս այս յառաջագոյն կոչէր գղեակ տապէյեան. այլ զի 'ի փորելն զհիմունս նր՝ գտաւ գլուխ տղէանի ուրումն, որ էր այր հռչակաւոր. վասն այն կոչեցաւ կապիտողին. յն գլուխ տղէնի, վն զի մանիկս՝ կապը, որ է քաղքութն, նշանակէ զգլուխն:

Կապերտ. ի. իւ. ից. իւք: ‖ կտոր կտաւոյ, կմ չուխայի. և կմ այլոց նմանեաց. և կմ հոր ինչ: Եռք. 14. 16: 3. Թագ. 11. 30: Մտթ. 9. 16: Իսկ Յոբ. 6. 12. ուր ասի՝ կապերտ այծեաց, իմանի՝ խորգն գործեցեալ 'ի մազէ այծեաց, որ լինի սեաւ: Իսկ մերթ նշանակէ զզգեստն. կմ զծործն. և կմ ըղ վերարկուն: 'Ի Հրմ հարց. ԺԵ:

Կապէնք. պենից. կմ աց. օք: (անեզական.) ‖ վարձ. կմ գին, զոր առնուն կանայք 'ի նոցանէ, ը որոց շնան. կմ պոռնկին: 2. Օրէն. 23. 18: Եզէկ. 16. 31: և Միք. 1. 7:

Կապիկ. պկի. աւ. աց. օք: ‖ է կենդանի ինչ քառոտանի, մեծագոյն քան զկատու. որոյ կերպարանն գրեթէ է նման մարդոյ. բայց գիմօք է տգեղ. և գարշատեսիլ: և զամ շարժմունս մարդկան, զորս տեսանէ՝ յոյժ դիւրաւ օրինակէ, և զշարժմունս իւր նմանեցուցանէ նց: Եւ տեսակք երկու են տեսակք. որոց մինն է առանց տտան. իսկ միւսն ունի զտուտ, ռամկ. Տոջ ման. կմ Հէպէ: 3. Թագ. 10. 22: 2. Մնաց. 9. 21:

Կապիճ. պճի. աւ. աց. օք: ‖ է անուն ինչ այնպիսւոյ չափու, կամ ամօթոյ ցորենոյ, և այլոց ընդեղինաց, որ տանի զմեց հարիւր քսան և չորս տրամ, որ է հօխայ և կէս, և փոքր ինչ աւելի: Եւ այսպէս չորրորդ մասն կապճի՝ է հարիւր յիսուն և վեց տրամ: 4. Թագ. 6. 25: Եզէկ. 45. 10: Յայտ. 6. 6: Մերթ ևս կապիճն նշանակէ զծակն, կմ զբոյնն աչաց՝ որ և ասի ակնակապիճ: Զաքար. 14. 12: Իսկ մերթ նշանակէ զգործիս տանջանաց, զոր 'ի հնումն կազմէին յերկաթոյ իբրև զշնձ կօշկի, կամ իբրև զանյատակ գրիչ: Եւ զայն ագուցեալ 'ի ծունկս, կամ 'ի բարձս պատժապարտից՝ հարկանէին 'ինա զսեպս սուրս. ը ըղ հաստ ընթր, զի ճմլեսցին, և յօշոտեսցին ծունկքն 'ի բնութեն սեպոյն: Եւ այսպէս սեք էին երկաթի կապիճքն, որովք տան ջեցաւ բազմաչարչար վկայն Քի նր հայրն մեր Գրիգոր լուսաւորիչն: Ագաթ. և 'Ի Շարակնոցի:

Կապինդեղ. ոյ. ով. ոց. ովք: ‖ է բոյս ինչ որ բուսանի 'ի բարձրաբերձ լերինս, որոյ տերևն, և այլ բազում յատկութիւքն են նման սամիթ բուսոյ: Ունի զհոտ անոյշ. և ունդ նր և արմատն են բնութբ ջերմացուցիչ, որքև զկերակուրն տան դիւրաւ մարսել:

Կապոյտ. պուտոյ. ով. ոց. ովք: ‖ մերթ նր շանակէ զկապուտակ գոյնն, որպիսի է գոյնն երկնից, կմ ծովու: Իսկ մերթ զը րակացեալն կապոյտ գունով. կմ զուհօղն զկապոյտ գոյն: ռամկ. Կէօք: Նորէկ. ՂՂ: Բայց Ծննդ. 30. 35. նշանակէ զպուտ պուտ կապոյտ նշան ունօղն:

Կապուած. ոյ. ով. ոց. ովք: ‖ կապումն. կմ կապով պնդումն. կմ կապիլն. և կմ կապ:

Կապուտ: (նախդրիւ հոլովի.) ‖ աւար. կմ կողոպուտ. ը ինչք, կմ ստացուածք, զորս յափշտակեն յաղթօղքն 'ի յաղթեցելոյն 'ի պատերազմի: ռամկ. Եաղմա: Թուոց. 31. 11: Դատ. 5. 30: Յուդիթ. 15. 8: Եւ սա բազմիցս 'ի միասին ը կողոպուտ բառիս 'ի գործ ածի իբրև զնոյնանշան այսպէս, կապուտ կողոպուտ: 1. Մակ. 4. 23: և ըստ այսմ մերթ ը բայի շարակցի այսպէս, կապուտ կողոպուտ առնել. կմ կապուտ կողոպուտ թողուլ. ը կապտել և կողոպտել: 2. Մակ. 9. 16: Կիւրղէ Եղծն. Է. և Ե:

Կապուտակ. ի. աւ. աց. օք: ‖ մերթ վարի ստ իբրու գոյականաբար, և նշանակէ՝ ըղ կապոյտ գունով ներկեցեալ իրն, որով իմանի՝ կապուտագոյն սարն. կմ մանածն, կմ հանդերձն: Ելից. 25. 4: և Երեմ. 10. 5: Իսկ մերթ վարի ածականաբար. և նշանակէ զկապոյտն. կմ զերկնագոյնն. կմ ըղ մանուշակագոյնն. և ը այսմ ասի՝ կապուտակ նռնարտան. կմ հանդերձ. կմ աղանի. կմ մաշկ. կամ աչք. և այլն: Թուոց. 4. 6: Աղոթ. 23. 29:

Կապուտակատիպ. տպի. իւ. ից. օք: ‖ զտիպ և զորակութիւն կապուտակ գունոյ ունօղ: կմ կապուտակեալ. կմ կապոյտ գունով տպաւորեալ և ներկեալ: Նորէկ. ՂՂ:

Կապուտակեալ. ելոյ. ով. ոց. ովք: ‖ կապոյտ գունով ներկեցեալ. կմ ըստ գունոյ երկնից գունաւորեալ. կմ կապուտակ: Ելից. 25. 5:

Կապուտակեայ. կէի. իւ. ից. իւք: ‖ 'ի կապուտակէ կազմեցեալ. կմ 'ի կապուտագոյն նիւթոյ յօրինեցեալ. կմ կապոյտ գունով ոռակացեալ: Ելից. 26. 4: Թուոց. 4. 25:

Կապուտանամ. ացայ. ցիր. աւ: (ընդմիջ.) ‖ կապուտակ լինել. կմ կապոյտ գունով ոռականալ: ռամկ. կէօգօրմաղ:

Կապպաթոյ. ի. իւ: ‖ է բառ եբրայեցւոց. և նշանակէ զքարայատակն, կմ զգետինն. որ է ազնիւ քարամբք զարդարեցեալ: Յոհ. 19. 13:

Կապպար. ի. աւ. աց. օք: ‖ տես զմեկնութն որա 'ի բառն Կապար:

Կապտեմ. եցի. եա. ել: (ներգործ.) ‖ կողոպտել. կմ աւարել. կմ յափշտակելով առնուլ. ռամկ. Եաղմալէլ. Եսայ. 8. 3:

Կառ. ի. իւ. ից. իւք: ‖ է բոյս ինչ փշաւոր, որ ուղիղ բարձրացեալ յերկրէ՝ հասանէ 'ի չափ միոյ կանգնոյ. և կմ փոքր ինչ աւելի: Եւ 'ի յաճախն կապէ զգլուխ իբրև զբուռն, որոյ տերևքն, գլուխն, և բոլոր ոպխուներն է նման բուսոյն այնմիկ,

որ ասի . կոչի ջնջնուկ . ուստի ոմանք կոչեն զսա վայրի էնկինաւ :

Կառաբոյս . բուսի . ով . լից . ովք : || այնք ժողովուրդ ծովու, որք միջանկք են 'ի մէջ կենդանեաց և բուսոց . զի որք խ'եք կերպիւ կենդանիք էն, և խ'իք կերպիւ բոյսք . ուստի և երբեմն կոչին կենդանաբոյս . զի կենդանի և բոյս : Արդ՝ սոքա հաղորդին բուսոց աճմամբ և սնընդեամբ : Իսկ կենդանեաց՝ միայն ըստ զգալոյ շօշափականին . վասն զի բաց 'ի շօշափականէն զայլ զգայութիւն ոչ ունին : Արդ՝ ոմանք 'ի կառաբուսոյ կարծրամորթք են . իսկ ոմանք կակուղք . ոմանք միշտ կպչին 'ի քարինս և 'ի ցիցս, որք են 'ի ծովու, և կմ՝ խրեալ կան 'ի յատակս նորա : Դարձեալ ոմանք տափարակք են, և ոմանք գնտակակերպք . ոմանք ատնձաձևք, ոմանք փշատեսիլք . իսկ ոմանք ծաղկանմանք, և իբր խոտ բուսեալք . ըստ այսմ խմօ և զայլոց նմանեաց :

Կառամարտիկ . տկի . աւ . աց . օք : || սպառազինեալ կառօք մարտնչօղ 'ի պատերազմի : Իսկ մերթ նշանակէ զկառավար մարտիկն, որ բանութեամբ բազկի իւրոյ մարտնչէր ընդ կառս, արգելլով զնա յընթացից . կմ՝ յետս նահանջելով :

Կառամուտ . մտի . աւ . աց . օք : || 'ի կառս մըտանօղ . որով մերթ իմանի նա՝ որ մտեալ նստի 'ի կառս առ 'ի գնալ ուրեք : Իսկ մերթ այն՝ որ մտանէ 'ի կառս՝ լծեալ լինելով . որպիսիք են ձիք, կմ՝ երիվարք, որք քարշեն զկառս . և ըստ այսմ է . 3 . Թագ . 4 . 28 . ուր ասի, Գարի և յարդ երիվարացն՝ և կառամտաց . զի երիվարացն՝ յորս հեծանէին . և ձիոց, որք լծեալ լինէին 'ի կառս :

Կառան . ի . աւ . աց . օք : || հաստ և երկայն չուան, կամ պարան նաւու . ռամկ . հալաթ : 'Ի Վարս հարց . Ա . և ԺԱ :

Կառանշան . ի . աւ . աց . օք : || կառանման . կամ կառակերպ . կամ կառաձևաւ, կմ՝ որ ունի զձև, և զնշան կառաց :

Կառանչ . ոյ . ով . ոյ . ովք : || կառանչումն . զի բարձրաձայն բարբառ . կամ աղաղակ . կմ՝ ճչումն . կմ՝ ձայն ողբոյ :

Կառաչ : || նոյն է ընդ վերնոյն :

Կառաչեմ . եցի . եա . ել : (չէզոք .) || գոչել ձայնիւ . կամ աղաղակել . կմ՝ բարձրաձայն կարդալ . կամ ճչել . կամ ողբաձայն կարդալ առ ոք : Լամբրոն :

Կառաչիւն : (նախդրիւ հոլովի .) || տե՛ս ընդ Կառանչն :

Կառաչումն . չման . մանէ . մանց . մամբք : || նոյն է ընդ վերնոյն :

Կառապետ . ի . աւ . աց . օք : || իշխան և պետ վարողաց զկառս . և կմ՝ պետ 'ի կառս եղեալ զօրացն : 3 . Թագ . 22 . 31 :

Կառավար . ի . աւ . աց . օք : || վարօղ կառաց . որով մերթ իմանի ձին, կամ երիվարն, որ զկառս քարշելով վարէ . զի յառաջ տանի . Յոբ . 9 . 9 : Իսկ մերթ վերակացուն, որ տայ ձիոյն վարել զկառս, կամ որ յառաջ կոյս կառացն նստի, և ուղղէ որէ զերիվարսն, որք քարշեն զկառսն : 1 . Թագ . 8 . 11 : և 2 . Մակ . 9 . 4 : Մերթ ևս նշանակէ զուղղօրօղն և զկարգաւորօղն քաղաքի . կմ՝ զօրաց . և կամ տան . կամ զնաւավարն . և և կամ զհոգածուն : Լամբրոն :

Կառավարեմ . եցի . եա . ել : (ներգործ .) || վարել զկառս, կամ ուղղաւորելով և մըղելով զերիվարս՝ զ՞ օրինի յառաջ խաղացուցանել զկառսն : Խորէն . բ . գլ . 76 : Իսկ մերթ նշանակէ՝ յառաջ տանիլ զինն . կմ՝ յառաջ ընթացուցանել . և ըստ այսմ ասի 'ի Նարեկ . կե . Որ զանշարժն իբր ընթացօղ կառավարես : Մերթ ևս նշանակէ նախախնամել . կմ՝ դարմանել . կմ՝ ուղղորդել, կամ կարգաւորել զզօրս, կմ՝ զանձինս հասարակութե . և կմ՝ զքաղաք . և զայլս նմանս : Յուդիթ . 3 . 6 : և Լամբրոն :

Կառավարութիւն . թեան : || վարումն կառաց . կմ՝ ուղղորդումն երիվարաց առ 'ի բարւոք քարշել զկառս : Իսկ մերթ նշանակէ զնախախնամութիւն . կմ՝ զդարմանումն . կմ՝ զուղղորդումն . կամ զկարգաւորութիւն, զոր առնէ կառավարողք յա և իւր իրս : Նարեկ 'ի Տաղսն Եկեղեցւոյ :

Կառափ . կամ կառափն . ոյ . ով . ունք . լից . լաւք . կամ ովք : || գլուխ մարդոյ : ռամկ . քէլլէ : 2 . Մակ . 1 . 16 : և 4 . 38 : և Եսայ . 66 . 3 :

Կառափեմ . եցի . եա . ել : (ներգործ .) || գլխատել . զի զգլուխն հատանել : Մտթ . 27 . 33 :

Կառափետղ . ետեղ . ետեղք . աց . օք : || տեղի կառափելոյ . կամ տեղի գլխատմանն մահապարտից :

Կառափիչ . փչի . աւ . աց . օք : || գլխատօղ . կմ՝ զգլուխն ուրուք հատանօղ : Նարեկ . ձը :

Կառափնատ . ի . իւ . ից . իւք : || այն՝ որոյ գըլուխն է հարեալ . կամ վիրաւորեցեալ : 2 . Մակ . 4 . 42 :

Կառափնատեմ . եցի . եա . ել : (ներգործ .) || զգլուխն ուրուք հարկանել . և վիրաւորել : Մարկ . 12 . 4 :

Կառափումն . ման . մամբ . մանց . մամբք : || գլխատումն :

Կառուցանեմ . ուցի . ուի . ել : (անցող .) || Ելանէ սա 'ի կանչիմ բայէն . ոչ փոխեցանելոմն 'ի փոխչիլ բայէն . ուստի կառուցանելն նշանակէ արձանացուցանել . կմ՝ անշարժ և իբր սևեռեալ պահել զինն ուրեք . կամ հիմնել . կմ՝ ամրացուցանել . կմ՝ հաստատել : Նարեկ . ձդ . և կէ : Իսկ մերթ նշանակէ կազմել . կամ յօրինել . կամ բաղկացուցանել . և կամ յարմարել : Խորէն . գ . գլ . 62 : Նարեկ . ղէ : Այլ մինչ ասի, կառուցանել զկաթսայն . կմ՝ զսանն . նշանակէ պատրաստելով դնել 'ի վր հրոյ . 4 . Թագ . 4 . 38 : Եզեկ . 24 . 3 :

Կառուցումն . ցման . մամբ . մանց . մամբք : || հաստատութի . կմ՝ ամրացուցումն . կմ՝ կազմութի . կմ՝ յօրինումն . կմ՝ շինումն : և այլն :

Կառչիմ . կառեցայ . եաւ . կառեալ . կառիր . չիլ : (ձայնակր .) || անշարժ արգելեալ մնալ . կամ իբրև զբևեռեալ կալ ուրեք . և ըստ այսմ յարժամ երիվարն, կմ՝ ջուր

գետոյ զկայ առեալ՝ ամենևին անշարժ մնայ, առ ի կառեալ կալլոյ: Այնպէս յոր ժամ լոյս ինչ. կամ նշան ինչ 'ի վ(եր)այ իրիք անշարժ կացեալ կայցէ, առ՝ կառեալ կալ: Մերթ ևս յորժամ կուտեցեն ինչ՝ կամ այլ ինչ նման՝ ամփոփեալ 'ի նեղ տեղի ինչ, կամ ընդունեալ 'ի խոյզ խնդրէ՝ մնայ անդ, առ՝ կառչիլ: ռամկ. ... և ըստ այսմ առ 'ի ... Կառեալ փիլոն իմ 'ի դուռն եկեղեցւոյն. ...:

Կառք. ռաց. օք: (անեզական.) || այլ փառաւոր. որ է անուաւոր կազմուած ինչ սեննկաձև. յորում նստեալ լինին երկվարք առ 'ի քարշել, և ընթացուցանել զնա առաջի 'ի տեղի 'ի ձեռն ուղղևորման կառավարին՝ որ 'ի վ(եր)այ ն(ո)րա է. ռամկ. ղօչու: Ծնն. 46. 29: Եզեկ. 1. 8: Գործ. 8. 28:

Կասեմ. եցի. եա. եալ: || սա մերթ է չէզոքական բայ, և յայնժամ նշանակէ զկալ առ նուլ. կամ դադարիլ. կամ յետս կալ. կմ՝ լռանիլ յընթացս, կմ՝ 'ի գործս: 1. Մակ. 5. 34: Երեմ. 8. 6: Խորէն. Գ. գլ. 55. և 66: Նարեկ. Է: Իսկ երբեմն է ներգործական. և յայնժամ մերթ նշանակէ՝ դադարեցուցանել, կմ՝ յամեցուցանել. և կամ յետս նահանջել: Նարեկ. խԸ: Իսկ մերթ նշանակէ կասուլ. զոր տեսցես զկնի: Եսայ. 41. 15:

Կասեցուցանեմ. ցուցի. եցի. եալ: (անցող.) || արգելուլ. կմ՝ դադարեցուցանել. կամ յետս նահանջել: Ցար. 5. 7: և Խորէն. Բ. գլ. 89:

Կասկայ. ի. յիւ. կամ կասեայ. եց. իւք: || է անուշահամ, և աղնիւ կեղև փոքրիկ ծառոյ իրիք երբև զկնիւմոն. զոր բազում անգամ 'ի գործ ածեն ընդ պէսպէս ծըխանելեաց, և անուշահոտ իւղոց, որոյ և ծառն կոչի կասիայ, որ է նման ծառոյն կինամոնի. զորմէ առացաւ ընդարձակ 'ի մեկնութեան գաղիանոսի բառին. սե՛ս անդ: Սաղ. 44. 9: Եզեկ. 27. 17: Մերթ ևս նշանակէ զբլխարծախալը. և զնոյնազան պտուղ ինչ եղեգնանման. որ հասանի 'ի չափ երրաերկուց թզոց, և 'ի մէջն իւրում պարունակէ զնեա, և զթանձր հիւթ ինչ քաղցրահամ. զոր 'ի գործ ածեն 'ի դեղորայս: ռամկ. խիյարշէնպէ:

Կասիմ. եցայ. եա. իլ: (ձայնակր.) || յետս կալ. կամ զկայ առնուլ. կմ՝ դադարիլ. կմ՝ արգելանիլ: 1. Մակ. 4. 21: Երեմ. 51. 30: 3. Մակ. 3. 10:

Կասիմոն. ի. իւ. եց. իւք: || է տեսակ ինչ անուշահոտ խնկոց: Խորէն. յաղ. խորհրդոց.:

Կասկած. ի. իւ. եց. իւք: || կասկածումն. կամ երկիւղիւ վարանումն. կմ՝ աչիւ տարակուսանք. կամ կարծիք ապագայ վտանգաց: 2. Մակ. 12. 4: Յօբ. 4. 6: Եսայ. 28. 19: Իսկ մերթ նշանակէ զկասկածոտն. կամ զկասկածոտն. և ըստ այսմ առ 'ի գիրս Մծբն. ժԹ. Հովիւք կասկածք և կաղակարծք: Իսկ մերթ ընդ բայի շարակցի այսպէս. կասկած առնուլ. և նշանակէ՝ կասկածել: Խորէն. Բ. գլ. 16:

Կասկածանք. անաց. օք: (անեզական.) || նոյն է ըստ միոյն թ(ո)ւոյ՝ ... նշանակութեն:

Կասկածաւոր. ի. աւ. աց. օք: || զկասկածանս ունօղ. կամ կասկածօղ, և կամ կասկածելի: Նարեկ:

Կասկածափորձ. ի. իւ. եց. իւք: || կասկածանօք, և երկբայութ(եամ)բ զփորձ առօղ ինքէ. և կմ՝ որ 'ի փորձելն, և քննարելն, կմ՝ 'ի վճռելն, ոչ կարէ յայտնապէս, և հաստատուն միտք առնել. այլ միշտ կասկածի, և յերկբայս մնայ: Նարեկ. ղԹ: Իսկ մերթ նշանակէ զայն, որ է փորձեցեալ և կրթեցեալ հանդերձ կասկածանօք. կմ՝ որոյ փորձ գոյն. և կրթութիւն է կասկածելի. կմ՝ երկիւղալի: Նարեկ. զԶ:

Կասկածեմ. եցի. եա. եալ: (չէզոք.) || առնու զկասկածիմ: Եսայ. 7. 16:

Կասկածիմ. եցայ. եայ. իլ: (ձայնակր.) || կարծիս ունելով զանգիտել յապագայ վտանգէն. կմ՝ վարանելով երկնչել. կամ 'ի կասկածանս անկանիլ. կամ խիթալ: 2. Եզր. 3. 3: և Երեմ. 42. 16:

Կասկածոտ. ի. իւ. եց. իւք: || վարանելով երկնչօղ. կմ՝ կասկածօղ. կամ կարծիս ունօղ վտանգաց չարէ. և կամ կասկածաւոր, և այս մերթ առ ի զմարդոյ. և մերթ զմտաց ն(ո)ր: 2. Մակ. 4. 34:

Կասկամ. ի. իւ. եց. իւք: || է տեսակ ինչ բուսոյ. Գ. պոյղպուշ. որ ունի զմեծ և զգնտաձև գլուխ. և զփոքրիկ կառոց: զխոտն է դարչատեսիլ, և զզգալի. ունի զբազում տրամակտուն. և զձայնս ողորկակտանս. զի թափառական շրջեալ ընդ աւերակ և ընդ անապատացեալ տեղիս վայր միշտ: Եւ 'ի գլխէրի միով ստամբակեալ զձիւղս ծառոյ 'ի կախ մնայ: Զորմէ պատմեն, թէ 'ի վ(եր)այ դալար խոտոյ. կամ ոչ երբէք նստի, և կամ յոյժ սակաւաւ. որ և ռամկօրէն կոչի կոնկոս:

Կասկարայ. ի. իւ. եց. իւք: || երկաթեղէն շինուած ինչ սո(ւղ)ն զլանգակ. Գ. ձաղ, 'ի վ(եր)այ որոյ խորովեն զմիս. կմ՝ զձուկն. և կմ՝ եփեն զայլ ինչ: ռամկ. ըզգարայ: Ղեւտ. 2. 7: և 7. 9: և 2. Թագ. 6. 19: և 1. Մնաց. 16. 3: Իսկ մերթ նշանակէ զեկեղեցէն, կամ զկաւեղէն վառարանն. Գ. զօճաղն, որ առկայ ինչ բարձրանալ յերկրէ իբրև զսան. և 'ի միջնում մասին ունի հաստատեալ զերկաթեայ վանդակս. Գ. զձաղս. 'ի մէջ որոյ վառեալ զհուր, դնեն զպղինձն 'ի վ(եր)այ ն(ո)ր, և եփեն զկերակուր: ռամկ. ըճճագ օճաղը: Ղեւտ. 11. 35: Եւ մերթ նշանակէ զհնոտ ինչ երկաթեայ կազմուածն, զոր դնեն 'ի վ(եր)այ հրոյ, և լինի իբրև զվառարան, յորոյ վ(եր)այ եդեալ զպղինձն, կմ՝ զսանն, եփեն զկերակուր: ռամկ. սաճայակ: 2. Մնաց. 4. 11. և 16:

Կասում. կասի. կսա. սել: (ներգործ.) || կամնել. Գ. չարդել, և մանրել զտարածեալ որոյայն 'ի կալ, առ 'ի որոշել զցորեանն 'ի յարդէն: Եւ այս մերթ լինի շր ջեցուցանելով զկամնաայսն 'ի վ(եր)այ որոյայն. իսկ մերթ ուժգին ծեծելով զորայն: 1.

Մնաց. 21. 20: 1. Կոր. 9. 10: Մերթ ևս ՚ի մանութիւն առեալ կատուլ առ՝ աւերելն. կամ քանդելն զքաղաքս, կամ զպարիսպս, և զայլս նմանս: Երեմ. 5. 17: Միք. 4. 13:

Կատապահեմ. եցի. եա՛. ել: (ներգործ.) || կապտուրել, կամ հաստատել զսիրտ ուրուք. կմ՝ սփոփել. կամ քաջալերել. կմ՝ զօրացուցանել:

Կատապտխ. գսի. իմ. իս. իւք. կամ օք: || է բառ յունական, որով նշանակի մորիւն. կմ՝ փոթորիկն: Բայց յատկապէս առեալ նշանակէ զայն մորիկն, կմ՝ մորիկալի հողմն, որ ՚ի վերուստ յարձակեալ յանկարծակի բաղխէ և հարկանէ:

Կատակ. ի. աւ. աց. օք: || է արմատ կատակել բային, որով մերթ նշանակի կատակումն. կմ՝ կատականքն, կմ՝ այպանումն. կամ ծաղրաբարութիւն, որ լինի այլանդակելով զշարժմունս անդամոց. և կամ հեգնելով: Իսկ մերթ նշանակէ զծաղրածութիւն. կամ զծաղրաբանութիւն, զոր առնեն մարդիկ վս՝ ծիծաղելոյ. կմ՝ վս՝ զուարճութեան սրտի: ռամկ. շախայ: Մերթ ևս նշանակէ զկատակօղն. կամ զայպանօղն. կմ՝ զկատակերգուն, և զծաղրածուն: ռամկ. շախածի. կամ մասխարէնսի անօղ: Երբեմն ևս նշանակէ զկատակեցեալն. կամ զծանակեալն: Իսկ երբեմն ընդ բայի շարակցի այսպէս. այպն և կատակ առնել. և նշանակէ՝ այպանել, և կատակել. կմ՝ ծաղր առնել: Յոբ. 1. հատ. լզ: Իսկ երբեմն բառս կատակ՝ նշանակէ զաւեսակ ինչ հաւուց, որ յաճախ գտանի յաշխարհն հայաստանեայց: Խորէն. յաշխարհագրութ:

Կատականք. անաց. օք: (անեզական.) || կատակումն. կամ ծանականք. կամ ծաղրածութիւն. կամ այպանումն: Սաղմ. 43. 14: և Յօբ. 12. 4:

Կատակեմ. եցի. եա՛. ել: (ներգործ.) || ծաղր առնել. կամ ծանակել. կմ՝ այպն առնել: կամ խաղ առնել: ռամկ. մասխարայ անել: Երեմ. 51. 58: Զաքար. 12. 3: 1. Եզր. 1. 51: Մատթ. 27. 29:

Կատակերգ. ի. աւ. աց. օք: || մերթ նշանակէ զկատակերգութիւն. և մերթ զկատակերգուն, զորս տեսցես զկնի:

Կատակերգակ. ի. աւ. աց. օք: || զկատակերգութիւն առնօղ. կամ կատակաբան. կամ ծաղրաբան, որ ծիծաղական բանիւք շարժէ զունկնդիրսն ՚ի ծաղր. կմ՝ ՚ի ցոփութիւն: ՚Ի Վարս հարց. իզ:

Կատակերգական. ի. աւ. աց. օք: || այն, որ պատկանի առ կատակերգութիւն. կմ՝ որ կատակերգութեան լինի. որպիսիք են ծիծաղեցուցիչ բանքն: Նարէկ. խէ:

Կատակերգու. գուի. աւ. աց. օք: || ծաղրաբան. կամ կատակախօս. կմ՝ ծաղրածու, կմ՝ նա, որ կատակական բանիւք, կամ երգովք գրգռէ զմարդիկ ՚ի ծաղր. կմ՝ ՚ի ծիծաղ. ռամկ. խողճէր. կամ մասխարլըղ անօղ:

Կատակերգութիւն. թեան: || ծաղրածութիւն. կմ՝ կատակախօսութիւն. կմ՝ ծաղրաբանութիւն, կմ՝ ծիծաղեցուցիչ երգ: ռամկ. մասխարլըղ: Խորէն. գ. գլ. 68: Նարէկ. լթ:

Կատակութիւն. թեան: || կատակումն. կամ կատակերգութիւն. կամ ծաղրաբանութիւն: ռամկ մասխարայութիւն: Աղաւ. 7. 9: Միք. 1. 10:

Կատաղի. ղւոյ. եաւ. եաց. եօք: || այն՝ որ է մոլեգնեալ բարկութեամբ և ցասմամբ. կմ՝ գազանաբար զայրացօղ. և ցասնօղ. որ վս՝ սաստկութեան ցասմանն յիմարի. և մոլի: ռամկօրէն կուդուդ:

Կատաղութիւն. թեան: || մոլեգնութիւն բարկացողութեան. կամ կատաղի ցասումն, որով ոք յիմարի:

Կատաւխունենք. եաց. եօք: (անեզական.) || է բառ այլազգական. և նշանակէ զբարձրաւանդակ տեղին յեկեղեցւոջ. կմ՝ զվերնատունն, ուր կանայքն մեկուսացեալք յարանց՝ աղօթեն. կմ՝ տեսանեն զպատարագ, և այլն:

Կատար. ի. իւ. ից. իւք: || գագաթն. կամ գլուխ լերանց, և այլոց ՚ի և իցէ բարձրաւանդակ տեղեաց: Թագ. 21. 20: և 23. 14: և 2. Օրին. 3. 27: Իսկ մերթ նշանակէ զեզր, կմ՝ զծայր, կմ՝ զկատարած. կմ՝ զվախճան ՚ի և իցէ իրաց: Խորէն. բ. գլ. 87: Յոբ. 1. հատ. խդ: Իսկ մերթ նշանակէ զթագն գլխոյ աքաղաղի՝ և այլ ևս հաւուց, որք նմանքեն նմա: ռամկ. ճղաւ. կամ իպիկ:

Կատարագործեմ. եցի. եա՛. եւ: (ներգործ.) գործել և կատարել. կմ՝ կատարեալ առնել. կմ՝ կատարելագործել: Նարէկ. հե:

Կատարած. ի. իւ. ից. իւք: || կատարումն. կմ՝ վերջ. կմ՝ վախճան. կմ՝ սպառումն. կմ՝ լրումն. կմ՝ ծայր: 2. Մակ. 13. 8: 3. Մակ. 4. 12: Եզեկ. 11. 13: Մատ. 28. 20: Ասի ՚ի խորագիրս սաղմոսաց բազմաց, յորս առ՝ ՚ի կատարած, իմանի՝ մինչև ՚ի վերջն. կամ մինչև իսպառ:

Կատարեալ. ելոյ. ով. ոց. ովք: || եղերեալ. կմ՝ աւարտեալ. կմ՝ լրացեալ. և կմ՝ վճարեալ: Իսկ մերթ նշանակի ամբողջն. կմ՝ լրացեալն ամ՝ պատկանաւոր պարագայիւք. կմ՝ զարգարեալն ամ՝ բարեօք, որք պատշաճին ինքեան: Յովհ. 11. 4: Մատ. 5. 48:

Կատարելագործ. ի. աւ. աց. օք: || կատարեալ առնօղ. կմ՝ զկատարեալ գործս առնօղ. և կամ գործօղ և կատարօղ. կմ՝ յոյժ կատարեալ: Լամբրոն:

Կատարելագործեմ. եցի. եա՛. ել: (ներգործ.) || կատարեալ առնել. կմ՝ առնել և կատարել. և կամ ամ՝ պարագայիւք լրացուցանել:

Կատարելամիտ. մտի. իմ. աց. օք: || նա՝ որոյ միտքն է կատարեալ. կմ՝ իմաստութեամբ և հանճարով հաստատեալ. և հաստ բանիւ կելէ: Ագաթ:

Կատարելի. ւոյ. եաւ. եաց. եօք: || այն՝ որ կարէ կատարիլ. կմ՝ պարտի եղերիլ, կմ՝ աւարտիլ: Բայց 2. Մակ. 2. 9. ուր առ՝ կատարելեաց տաճարին, իմանի՝ կատարման. կմ՝ աւարտման տաճարին:

Կատարելութիւն. թեան: || ընծականն. կմ՝ ա-

առաքինական իրաց, կամ գործոց լրումն. կամ եզերումն: Երբ մերթ բարի ներգործութիւք մարդոյն, որք նմ պարագայիւք պահանջեցելովք յառաջնման՝ ասին կատարելութիւք մարդոյն:

Կատարեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || եզերել. կամ վերջացուցանել. կմ աւարտել: Ծննդ. 2. 1: Մատթ. 7. 28: Իսկ մերթ լրացուցանել. կմ լնացուցանել. ուստի Երեմ. 6. 11. ուր ասի՝ կատարեալ աւուրբք. իմանի՝ լի աւուրբք. կամ լցեալ ժամանակաւ: Մերթ ևս նշանակէ առնել. կմ գործել. Ելից. 32. 6: Ղևտ. 13. 32: Գաղատ. 5. 16: Իսկ մերթ՝ 'ի գործ ածել. կմ 'ի գործ դնել. և ըստ այսմ ասի 'ի Շարականս՝ զխաչէն. Դու և յածայինան կատարիս խորհուրդ. յն յածային խորհուրդս 'ի գործ ածիս. զի միշտ խաչակնքելով կատարեմք զխորհուրդս եկեղեցւոյ: Բայց մինչ ասի 'ի սբ գիրս՝ կատարել զձեռս, իմանի՝ լնլով. կամ օծանելով զձեռս՝ սրբացուցանել զոք 'ի քահանայս: Ելից. 29. 9: Ղևտ. 4. 5: և 16. 32: և յայլ բազում տեղիս: Իսկ Տօբ. 14. 13. ուր ասի՝ կատարեաց զհոգին, իմանի՝ աւանդեաց զհոգին: Երբ ըն այսմ բազմիցս մինչ ասի զմկոյից՝ կատարեցաւ, իմացել լինի՝ նահատակեցաւ: 2. Մակ. 7. 41:

Կատարիչ. րչի. աւ. աց. օք: || եզերող. կամ աւարտող: Երբ մերթ լրացուցանող. կմ գործով կատարող. և կամ կատարելագործող: Եբր. 12. 2:

Կատարողապետ. ի. աւ. կամ իւ. աց. օք: || գլուխ և պետ կատարողաց. կմ գլխաւոր և առաջակայ կատարող: Իսկ մերթ նշանակէ զերէցն, որ կատարէ զխորհուրդս պատարագին, և կամ զքահանայագործութիւն առհօղն: Լամբրոն:

Կատարողապետութիւն. թեան: || պետութիւն. կամ գլխաւորութիւն 'ի վր կատարողացն զեր ինչ: Իսկ մերթ նշանակէ զկատարողութիւն խորհրդոյ պատարագին. կմ զքահանայագործութիւն. և կամ զիշխանութիւն երիցութեան, որով կատարի սբ խորհուրդն: Շնորհալին:

Կատարումն. ման. մամբ. մանց. ամբք: || եզերումն. կմ վերջացուցումն. կմ կատարած. կամ վախճան: Մերթ ևս նշանակէ լրումն, և զկատարելութիւն: Կողոս. 3. 14: Եբր. 6. 1: և Երեմ. 2. 2: Իսկ Ելից. 29. 31. ուր ասի. Առցես զխոյն կատարման. իմանի՝ խոյն սրբացուցման քահանայից. յն որ մատուցանիւր 'ի սրբացուցանելն. կմ 'ի կացուցանելն զքահանայս: ըստ այսմ է և Ղևտ. 7. 37:

Կատարուն: (Նախդրիւ հոլովի.) || կատարեալ. կմ լիակատար. կմ ամենևին լրացեալ. կմ պատարուն. կմ լնալի: Լամբրոն:

Կատարունական. ի. աւ. աց. օք: || կատարելական. կմ լիակատարական. կմ լրական: Իսկ մերթ աւարտողական. կմ վախճանական:

Կատարօնութիւն. թեան: || կատարունութիւն. յն կատարելութիւն. կամ լիակատարութիւն. կամ ամբողջութիւն:

Կատու. ուի. իւ. աց. օք: || է կենդանի ինչ քառոտանի. որ բնութբ դարձի յաղտեղութեց մարմնոյն, և մորթոյն. թշնամի է յոյժ մկանց. որոց հետամուտ լեալ ըմբռնէ, զորս մերթ ուտէ, և մերթ սպանանէ, և թողու: և 'ի սոցանէ ոմանք են վայրենիք. իսկ ոմանք ընտանիք: որ և ռամկօրէն ասի՝ կատու:

Կատսայ: || տե՛ս զկաթսայ:

Կար. ոյ. ով. ոց. ովք. կմ իւք: || լար. կամ առասան. կմ չուան. և կմ փոկ: Դատ. 15. 13: և 16. 11: Խորեն. գ. գլ. 45:

Կար. ի. իւ. կարք.ից. իւք. կամ օք: և կմ կարիք. եաց. եօք: || կարողութիւն. կամ զօրութիւն. կամ ոյժ: Ծննդ. 33. 14: 3. Թագ. 5. 5: և Սաղմ. 38. 6: և 138. 15: և Մատթ. 25. 15: 1. Կորն. 10. 13: Իսկ Ղևտ. 27. 8. ուր ասի, Որչափ ինչ 'ի կարի իցէ. իմանի՝ որչափ ինչ կարիցէ, կամ որչափ կարողութիւն ունիցի: Երբ մերթ բառս կար՝ ընդ բային շարակցի այսպէս, կար է. կամ կար էր. կմ կար իցէ. և այլն: և նշանակէ՝ կարելի լինել. կամ հնար լինել: Կիւրղի եզեկ. ժ: Իսկ մերթ նշանակէ զկարիս. յն զկիրս. որպիսի է երկիւղն. ցաւն, քաղցն. և ծարաւն: ուստի 'ի Շարականս, մինչ ասի՝ բուծին զկար մարմնոյ՝ իմանի յաղթահարեցին զկիրս մարմնոյ: Մերթ ևս նշանակէ զկարանն. կամ զկարումն հանդերձի:

Կարակի: (մակբայ յաճախական:) || կարի. կամ յոյժ. կամ սաստիկ:

Կարակն. ակնի. իւ.ից. իւք: || գործիք ինչ որ կոչի կարկին, որով չափեն զգիծս. կմ գծեն զծիրս. և կմ քարշեն զբոլորակ գիծս, ռամկ. Ճէրճէլ: Իսկ մերթ նշանակէ զեռանկիւնի գործին որմնադրաց, կմ հիւսանց, որոյ 'ի միջնոյ կեանէ վերնոյ մասին կախեալ կայ լարիւ փոքրիկ գնտակ ինչ քարեայ. կամ կապարեայ, որով կշռեն. յն քննեն զուղղութիւն քարանց. կամ գերանաց եդելոց 'ի յորմն: Երբ սոյնս ռամկօր. 'ի հիւսանց կոչի՝ Թէրազի: Մերթ ևս նշանակէ զկամարաձև կազմուածս, որք 'ի միջին տեղւոջ գագաթան իւրեանց ունին զքար ինչ յատկապէս շինեալ, որ իբրև զկապ շաղկապէ ընդ միմեանս զմասունս իւրաքանչիւրոյ կողման:

Կարակում: (Նախդրիւ հոլովի.) || գէճ, և նեխեալ: կամ պարշահոտ և աղտեղի: և ըն այսմ ասի, կարակում տիղմ: Ագաթ: Իսկ մերթ նշանակէ զնեխեալ գինուութիւն. կմ զզազիր և զպարշահոտ հիւթս այլոց. և այլոց նմանեաց. և ըն այսմ ասի 'ի Նարեկ. ծդ. զարեգակնէ. Երբ զկարակումն մօրեց ցամաքեցուցանէ: Բայց այսէ 'ի ձեռագիր նարեկս. վն զի 'ի տպագրեալսն որ խալմամբ եդեալ կայ՝ կարումն մօրեց, որ ոչ է ուղիղ:

Կարան. ի. աւ. աց. օք: || կարն հանդերձի՝ կմ կարուածոյն թելով. և կամ կարումն:

Յոհ. 19. 23։

Կարանամ. ացայ. ցի՛ր. ալ։ (ընդ. մէջ.) || կարողանալ. կամ զօրանալ. կամ զօրել։

Կարապ. կամ կարափ. ոյ. ով. լից. օք։ || է թռչուն ինչ բաջորոյնին ազնուակ. մարմինն նորին է մեծագոյն քան զսագ, ունի զպարանոց փոքր և կեռացեալ, որոյ մի ծայրն է շառագոյն, և խարտեաշ. պարանոց նորա է յոյժ երկայն. և ոտքն են խայտք զանազան գունովք. որոց ճիրանքն կցեալք են ընդ միմեանս մաշկէն մաշկաւ։ երկակենցաղ է, բայց առաւել սիրէ զջուրս։ Վայրենիքն արագ թռչին. իսկ ընտանիքն ի վեր ծանրութե մարմնոյ յամրաթռիչք են. ունին զձայն անախորժելի, որք մինչ ամ Ը. արշալուսնաւուր յափունս ծովու սովոր են երգել. զոր եւ առաւել առնեն՝ ի մերձենալն մահուան իւրեանց։ Իսկ այլոց յատկութիւ և կերակուրս նոցա ամենևին են նման սագի ի ջուրս։ ռամկ. խուխու։ և տաճկերէն, Քուղու Քուշու։ Ղեւտ. 11. 18։

Կարապետ. ի. աւ. կամ իմ. աց. օք։ || յառաջընթաց. կամ նախընթաց. այն որ ընթանայ առաջի թագաւորի, և այլոց մեծամեծաց առ ՚ի պատրաստել զճանապարհ. կմ. զանեղի։ Առակ. 24. 34։ Եւ յայսմանէ առեալ երգեցին նշանակէ զմ և լինել նախընթաց, որ յառաջ քան զայլս ընթանայ. կամ դնայ ուրեք առ ՚ի գործել ինչ. կամ ցուցանել զճանապարհ. և այլն։ Ի. Յոհ. 12. 8։ Եբր. 6. 20։

Կարապետեմ. եցի. եմ. ել։ (չէզոք.) || կարապետ լինել ումեք. կմ. առաջնորդել. կմ. ճանապարհ պատրաստել։ Նարեկ. Ե. և ղէ։

Կարապետութիւն. թեան։ || կարապետ լինելն. կմ. յառաջընթացութիւն. կամ առաջնորդումն։

Կարաս. ոյ. ով. ից. օք։ || է աման ինչ մեծ՝ խոր և լայնափոր՝ շինեալ ՚ի կաւոյ. ՚ի յոր դնեն զգինի. կամ զձէթ, որ և ռամկ. ասի քուբ, կամ հում։ Առակ. 23. 27։

Կարասի. սւոյ. եաւ. կմ. ով. եաց. եօք։ || կահ. այս ինքն ամենայն զարդք, կմ. ինչք, կամ անօթք. կմ. աղխք տան. կմ. նաւու, կամ մարդոյ. և այլոց նմանեաց՝ յորմէ՞ նիւթոյ և լինեն. ռամկ. աւադանդ. կմ. [illegible]։ Ծննդ. 34. 29։ Ղեւտ. 8. 16։ Գործ. 27. 18։ Իսկ մերթ նշանակէ զգործիս, կմ. զկազմածս արուեստաւորաց. կմ. պատերազմողաց. որ ասին զէնք. կմ. զգանձս. և այլս զգեստս. և զարդս։ 1. Թագ. 31. 10։ Յուդիթ. 7. 10։

Կարաւան. ի. աւ. աց. օք։ || գունդ. կամ խումբ զօրաց. կմ. գումար բազմութեան պատերազմողաց, որք միաբանեալ դնան ՚ի մարտ պատերազմի։ Խորէն. Գ. պր. 51։ Եւ յայսմանէ առեալ՝ նաև բազմութիւնք վաճառականաց, և այլոց ճանապարհորդաց, որք ՚ի մի վայր կուտեալք, խումբ կազմեն, և ընթանան, և վաճառոք, այս վաճառականք երթեալ գնան քաղաքէ ՚ի քաղաք, կարաւան կոչին։ ռամկօրէն քէրվան,

Կարաւանդ. ի. աւ. աց. օք։ || յօդ զրահից. այս, այն մասն, ուր երկաթեայ թերթքն զրահին յօդին, և կապին ընդ միմեանս, և այնու շարժին, և խաղան իբրև զանդամս մարդոյ։ Ուստի և կոչեցաւ կարաւանդ, զի այնպիսի յօդքն են իբրև զկար նր։ Եւ երևելին յայսպիսի յօդուածս՝ է այն, որ զմանեակս, կմ. զմէջս զրահաւորին շրջապատէ։ Ուստի եթէ զէն ինչ հանդիպեսցի պատահմամբ՝ զի Ը այն կարն մնալ է ՚ի ներքս առ ՚ի մահ վիրաւորել. որ հանդիպեցաւ սաւուղայ. վն զի ՚ի ձգելն աղեղնաւորացն այլազգեաց զնետս կորովութեամբ ՚ի վր սաւուղայ, մինն բռնութեամբ եմուտ ընդ այն կարն զրահին ՚ի ներքս, և չարաչար վիրաւորեաց զնա։ 1. Թագ. 31. 3։

Կարափ։ || տես զԿարապ։

Կարգ. ի. աւ. աց. օք։ || կարգաւորութիւն. կմ. բարեկարգութիւն. կամ համեմատութիւն կարգաւորեալ իրաց. կմ. չափակցութիւն։ 2. Մակ. 15. 39։ 1. Կորնթ. 14. 40։ Իսկ մերթ դասաւորութիւն. կմ. դասակարգութիւն. կմ. դաս։ Մերթ և նշանակէ զաստիճանն եկեղեցական, որպիսի է քահանայութիւն, և այլն։ Իսկ մերթ նշանակէ զեպիսկոպոսութիւն. կմ. զիշխանութիւն եպիսկոպոսական։ Գործ. 1. 20։ Մերթ և կարգ ասին կրօնք, զոր կացուցեալք են հեղինակք կրօնաւորաց. և ըստ այսմ իմանի մինչ ասի՝ այս անուն կրօնաւոր է ՚ի կարգէ սրբոյն Անտոնի աբբային։ Իսկ մինչ ասի. և որ ՚ի կարգի, իմանի և այլն, որ զկնի։ Ոսկ. 2. հաց. իզ։ և ՚ի վարս հարց. իզ։

Կարգաբանութիւն. թեան։ || գեղեցիկ կարգաւ խօսելութիւն. կմ. գեղեցկաբանութիւն յորում ոք յոյժ կարգաւ և համեմատութ խօսի. և կմ. կարգ բանից։ Նարեկ. ղէ։

Կարգադիր. դրի. իւ. աց. օք։ || դնօղ ըղ կարգ. կմ. կարգաւորօղ. կմ. կանոնադիր։

Կարգադրեմ. եցի. եա. ել։ (ներգործ.) || կարգաւորել. կմ. ՚ի կարգի դնել կամ ուղղել։

Կարգադրութիւն. թեան։ || դնումն ՚ի կարգի. կմ. կարգաւորութիւն. կմ. կանոնադրութիւն. կմ. կանոնաւորութիւն։ Նարեկ. կա. և ղե։

Կարգաթող. ի. իւ. ից. իւք։ || այն, որ ըղ կարգ կրօնաւորութեան. կմ. սրբոյ աստիճանի. կմ. քահանայութեան ՚ի բաց թողու. և յանձն առնու զաշխարհական կացութիւն։

Կարգակից. կցի. իւ. աց. օք։ || կցորդ կարգի ումեք. կմ. զնոյն կարգ, և զկրօն ունօղ ընդ ումեք. և ըստ այսմ երկու կրօնաւորք ասին միմեանց կարգակից։ Ի վարս հարց. ձ։

Կարգապետ. ի. աւ. աց. օք։ || պետ և գլուխ կարգի. կամ կարգաւորման։

Կարգաւոր. ի. աւ. աց. օք։ || ունօղ զկարգ. կմ. կարգաւորեալ. կմ. օրինաւոր։ Լամբրօն։

Կարգաւորեմ. եցի. եա. ել։ (ներգործ.) || կարգաւորեալ առնել. կմ. կարգադրել. և կմ. ՚ի կարգի դնել։

Կարգաւորութիւն. թեան։ || կարգադրութիւն. կմ. չափակարգութիւն. կմ. բարեկարգութիւն. կամ կարգաւորումն։ Իսկ մերթ նշանակէ զկարգն, և զկանոնսն՝ ըստ որոց պարտ

մարմնոյ բազմութիւն ինչ. և ըստ այսմ խմա-
նի՝ մինչ ասի. կարգաւորութիւն աղօթից մեզ
երարդ. կամ քննութեան ժամուց. և այլն։

Կարգեմ. եցի. եալ. ել։ (Ներգործ.) || դը-
նել՝ ի կարգի. կամ կարգաւորել. կամ կա-
ցուցանել. կամ սահմանել. կամ դասել։
Գործ. 13. 48։ և Հռով. 13. 1։

Կարգընկեց. կեցի. իւ. եց. ալ։ || զեղջեալ քա-
հանայութիւն, կամ կրօնաւորութիւն ՚ի բաց
ընկեցող. և զաշխարհականութիւն յանձն ա-
ռօղ։ Իսկ մերթ նշանակէ զնա՝ որ ՚ի կար-
գէ քահանայութեան, կամ կրօնաւորութենէ է
՚ի բաց ընկեցեալ. և ըստ այսմ առի կարգ
ընկեց ասել զոք։

Կարգամ. ացի. ա. ալ։ (չէզոք. և երբեմն
ներգործական.) || մերթ նշանակէ ընթեռ-
նուլ. մանաւանդ յարժամ ընթեռնուլն է
բարձրաձայն։ Եսթեր. 8. 13։ 1. Եզր. 2. 26։
և 3. 13։ Մերթ և նշանակէ կոչել զոք առ-
ինքն, կամ կոչել զոք ՚ի յօգնութիւն, և այլն։
աղաչ. խնդրել։ Յոբ. 14. 5։ Ծննդ. 13. 4։
Ղուկ. 7. 32։ Իսկ մերթ նշանակէ աղաղա-
կել. կամ գոչել. կամ ձայն բառնալ։ Սաղ.
3. 5։ և 17. 7։ և 33. 18։ Իսկ մերթ անուա-
նել. կամ յորջորջել։ 2. Մակ. 1. 36։ և 14. 37։
Նաւէ. զէ։

Կարգենար. կամ կարգենալ. ի. աւ. աց. ք։
|| է բառ քաղդէական. որ թարգմանի
ծղինականն։ Եւ այսպէս անուանի ինչ հոգա-
պատուութիւն, որ տանէր ընդ իւր զաւհերի-
ցանցն հռոմայ. որք հրամանաւ պապին
կալնուն զիշխանութիւն եկեղեցական. և
յիշեցէնք զպապէն կարգեցեալ քեն խորհր-
դատուք ինքեան, և հոգաբարձու, և խնա-
մակալ հոգևորաց պիտոյից եկեղեցւոյ.
Եւ են անուանեալք ծերակոյտքեայ, ՚ի նը-
մին պատուաստանաւորութիւն հեղեայ զարդին
մաւնն առաքինական հաւատոյ։ Արդ՝ կոչի
ցանեալ ՚ի ծախաւորաց, զի օրինաւոր պատին
խորհեցայիւք ընդ նոյ զերող բարձրագունից՝
ամէն ՚ի իւր. զարդէս զանան ՚ի մերոյ ծղին
նեաց։

Կարգինալական. է. աւ. աց. ք։ || գործն.
կամ զդեստն. կամ պատիւն. և այլք նման,
որք կարգինալաց պատկանին, ասին կար-
գինալական։ Բայց մինչ ասի կարգինա-
լական աստիճանն, նշանակէ լինել ընդ
քահանայական աստիճանութիւն, որք են խո-
նհմութիւն. աղքատութիւն. աղքնութիւն, և
քաղաքավարութիւն։ Արդ՝ կոչեցան այսպէս
կարգինալականք. զի ծախաւորք. զի ա-
նձն ՚ի քահանայական պետութիւն ինչ ծղին-
նեաց։ Կամ զի յորժամ կենաց մարդայոյ
զութիւն մարդ. զի ՚ի մի չորից անկիւ-
նութիւնս պայազեկ. որ զանան ՚ի մերոյ
ծղինեաց։

Կարկեկից. ցի. աւ. կամ իւ. աց. ոք։ || նշող-
կարկեաց, կամ կոչից. կամ ցանկալից. կամ
[illegible]. կամ դառնալից։ Շմուելեան։

Կարկեղեցական (մասնաւոր պաշտօնէական.) || [illegible]

[illegible]

Կարեկցեմ. եցի. եալ. ել։ (Ներգործ.) || կա-
րեկից և ցաւակից առնել. և կամ խառնել
զոք ՚ի մխիթար այլոց։

Կարեկցիմ. եցայ. եցաւ. իլ. կամ ել։ (Համբեր-
ական.) || կարեկից լինել. կամ ախտակից
և ցաւակից գտնել. կամ մշտանալ ը. ուսմէ։
Նորին. ժը. և ղը։

Կարեկցութիւն. թեան։ || ախտակցութիւն. կամ
ցաւակցութիւն. և կամ մշտակցութիւն։ Ա-
կե. 2. հատ. ըթ։

Կարեմ. կարեցի. եալ. ել։ (Ներգործ.) || առ
խառնելով. կամ թելիւ կցել ընդ միմեանս
զկտաւերկենս. կամ զայլ ինչ նման, առ ՚ի
կազմել ՚ի նոյանէ զզգեստս. կամ զբարձս,
և զայլս. որ և ասկոր. առի կարել։ Ծննդ.
3. 7։ Յոբ. 16. 16։ Եզեկ. 13. 18։

Կարեմ. կարացի. րացիր. ել։ (չէզոք.) || կա-
րող լինել առ իր ինչ. կամ զօրել. կամ ձեռն
հաս լինել։ Ծննդ. 19. 19։ և 45. 3։ Մատթ.
6. 24։ Իսկ 1. Թագ. 25. 8. ուր առի կարե-
լոյ. ընմանի կարողաց. կամ կատարելոյ։

Կարեւոր. ւորի. աւ. աց. օք։ || զկարօտ, և ըղ-
ձելոյ ախորժ. կամ անհրաժեշտ. կամ ախորժ ախ-
տից, և մոլութեանց։ Մծբն. ժթ։

Կարեվէր. կամ կարեվէր։ (մակբայ յաճախ-
խմական.) || կարի յոյժ. կամ յոյժ սաս-
տիկ. կամ յոյժ չարաչար. և ըստ այսմ առի
կարեվէր խոցել. կամ կարեվէր վիրաւո-
րել։ Յոբ. Ա. Իսկ երբեմն մարդ իբրև
զաւանն անհոգուն, և նշանակէ՝ զաստուա-
ծային. կամ զչարաչարն. և ըստ այսմ առի
կարեվէր խոցք. կամ կարեվէր խոցումն։
Լաւիթ.։

Կարկառ. ի. աւ. աց. օք։ || հարկաւոր. կամ
պիտանի։ Իմաստ. 16. 3։ 1. Կորնթ. 12. 22։ և
Փիլիպ. 1. 24։ և Տիտ. 3. 14։ կամ օգտակա-
րագոյն. և մեծագին։ Եբր. 11. 26։ մերթ
և ս կենդանագին, կամ սաստկագին. և կամ
որ յարատև մտաւոր ինչ կայ մնալով՝ անհնա-
րին առաւելութեամբ, և նեղէ. որպիսիք
են անանք ցաւք. կամ ՚ի մէջ հասեալ չա-
րիք։ 2. Օրին. 28. 59։ 1. Մակ. 1. 12։ Իսկ
Եբր. 12. 1. ուր առի. ՚ի բաց ընկեցուցուք
զհպարտութիւն զամ, և զմեղս կարկառոր, որ
նշանակէ զդիւրաւորական, որպիսին է ախտն
ցանկութեան։

Կարկառորապէս (մակբայ որակական.) || հար-
կաւորապէս. կամ ՚ի հարկէ. կամ ախտայապար։

Կարկառորագոյն. գունի. իւ. ից. իւք։ || հար-
կաւորագոյն. կամ պիտանագոյն։ Խորհրդ.
Ա. պր. 20։

Կարծր. ի. իւ. ից. իւք։ || Թանձր. կեղեւ.
որ է երկարեղէն կամ զործի ինչ, զոր առա-
ջակաւ խոցելիմ զգենուն. առիմ. Ղու-
կաս. և այսպէս մերթ խնդրէ երկաթէ. հան
զերձ. լանջիւն. և մերթ առանց նոյն։ Յոբ.
40. 20։ Եփես. 1. 15։ Մատթ. 17. 26։ Եւ այսմ
և այն կիս. երկաթին, զոր զնեն ՚ի քլիթս
զօրականաց, և այլոց նմանեաց առ ՚ի զրահել
զնն, կարծր կոչի։ 4. Թագ. 19. 28։ Արդ-
արեւ ի և նման կիս. կամ երկաթեղ զործեալ-
ով ընկալեր իր ինչ. կամ քարշել, և ձգել

հանի․ կարթ ասի։ Յն օրէ։ Իսկ մերթ նշանակէ զջիլն, որ 'ի ներքին կողմն սրնգան կենդանւոյն․ կմ զջլանմանն սրունգն, զոր ունիցին ոտնին մորախն, որով կարեն ոստոստել։ Ղևտ. 11. 21։ Իսկ մերթ առեալ լինի փոխանակ ծ և եցէ սրնգան, և ըստ այսմ ասի 'ի Յն օրէն, զսրնգացն Լուսաւորչին։ Նորին կարթիցն գել ոլորեալ․ նաև զծունկսն յօշատեալ։

Կարթակոտոր․ի․իւ․ից․իւք։ || ջլակոտոր․ կամ որոյ ջիլն, և կարթն ծնկան, կմ սրնգան կոտորեալ է, և ջարդեցեալ։ Ծննդ. 49. 6։ 2. Օրին. 21. 4։ Դատ. 5. 22։ և Յեսու. 11. 6։

Կարթահարեմ․ եցի․ եա․ել։ (Ներգործ․) || ջարդելով զջիլս ծնգան և զծունգս, ըս պանանել զկենդանիս։ 2. Օրին. 21. 6։

Կարթեմ․ եցի․ եա․ ել։ (Ներգործ։) || որսալ կարթիւ․ կամ ձգելով զկարթն ըմբռնել զորս ինչ։ Եւ այս մերթ ասի նմանութբ զգիւէ, որ կարթիւ չար ագահ մանց իւրոց միշտ ջանայ որսալ զմարդիկ 'ի մահ։ Նարեկ. ղա։ Իսկ 2. Մակ. 12. 10. ուր ասի՝ կարթեցին․ պարտի իմանալ կրթեցին․ զօր անսցեն 'ի բանն կրթիւ։

Կարթընկեց․ կեցի․ աւ․ աց։ կամ իւ․ ից․ օք։ || արկանօղ զկարթն․ եթ զօլթայն 'ի ծով․ կամ 'ի գետն առ 'ի որսալ զձուկն։ Ռամկ. օլթայ յիօղ։ Եսայ. 19. 8։

Կարժ․ի․իւ․ից․իւք։ || մանեցեալ թելն մետքսոյ․ կամ բամբակի, յորժամ 'ի վր կարժառոյն փաթութեցեալ լինի, և կազմի իբրև զմեծ և զհաստ օղ ինչ՝ կարժ կոչի։

Կարժառ․ի․իւ․ից․օք։ || գործին այն 'ի վր որոյ մանեցեալ թելքն առեալ լինին, կմ փաթութին․ որպիսի է այն, որ ռամկ. կոչի էլէմէյ․ և կամ չուրճուր։

Կարի։ (մակբայ յաճախական․) || յոյժ․ կմ առաւել․ կմ սաստիկ։ Եզեկ. 36. 5։ 2. Թագ. 14. 26։ Իսկ մերթ վարի իբրև զանուն, և նշանակէ զառաւելագոյնն, կամ զսաստկագոյնն։ Յուդիթ. 5. 27։

Կարիճ․ կարճի․ աւ․ աց․ օք։ || խայթօղ, և թունաւոր կենդանի ինչ փոքրիկ, որ ունի զձև խեցգետնոյ․ որ և ռամկ. ասի կորիճ․ 2. Օրէ. 8. 15։ Յայտ. 9. 3։ Իսկ 2. Մնաց. 10. 11. ուր ասի, խրատեցից զձեզ կարճօք՝ նշանակէ՝ միշտալից գանիւն․ կամ կեռ ունօղ մտրակն․ եթ ղամչին․ որ 'ի ծայրս իւր ունի զերկաթեայ խայթս․ և զի սոքա իբրև զկարիճ խայթեն զմարմին զանեցելոյն վն այնորիկ կոչին կարիճ․ մանաւանդ յեբրայական լեզուին, յորում բառս՝ կարիճ, համանգամայն և զփուշս նշանակէ։ Դարձեալ՝ բառս կարիճ է անուն միոյ 'ի յերկոտասան կենդանակերպից․ 'ի յոր մտանէ արեգակն Ը յասուկ ընթացիցն 'ի քսան և մի երրորդ աւուրն հոկտեմբերի․ և անդէ անդ մինչև 'ի քսան և մի երրորդ օրն նոյեմբերի։

Կարի յոյժ․ (մակբայ յաճախական․) || սաստիկ առաւել․ կմ յոյժ յոյժ․ 1. Մակ. 9. 22։

Կարիք․ կարեաց․ եօք։ (անեզական․) || հարկ․ կամ պէտք․ կամ կարօտութի․ Ոսկ. 1. կոփ. խա։ Եւ Եսա. 14. 16. ուր ասի․ դու գիտես զիր զկարիս իմ, իմանի՝ զհարկաւորելն իմ։ Իսկ մերթ նշանակէ զկիրս բնութե․ ոյք քաղց․ ծարաւ․ երկիւղ․ ցաւ․ մահ․ և այլք նմանք․ զորս բնականաբար կրեմք։ Գործ. 14. 14։ Եւ մերթ զմոլեկան ախտս․ կամ զմոլութիւ․ որպիսի է վավաշոտութիւն․ բարկութին․ նախանձն․ և այլք նմանք։ Հռոմ. 1. 26։ և 7. 5։ և Գաղ. 5. 24։ Իսկ մերթ նշանակէ զցաւս․ կամ զսուգ և զտրտմութի․ և կամ զողբ․ և ըստ այսմ Ծննդ. 27. 41. ուր ասի․ մերձեսցին աւուրք կարեաց հօր իմոյ․ իմանի․ աւուրք սգոյ և տրտմութե՝ որ վն մահուան հօր իմոյ։ Եւ այսու առմամբ երբեմն ըստ բայիցս բայկցի այսպէս․ կարիս առնել․ և նշանակէ՝ սգալ․ կամ ցաւիլ, և զկսկիծ կրել։ 2. Մակ. 4. 35։ Իսկ մերթ նշանակէ կարիքն զչարչարանս, և զտանջանս զորս կրէ ոք։ Մծբն. ժը։ Եւ մերթ զկարողութին․ կմ զզօրութին․ և ըստ այսմ իմանի՝ մինչ ասի՝ արարէ ըստ կարեաց իմոց։ Իսկ Սաղ. 54. 19. ուր ասի՝ կարեօք հասին 'ի վր իմ․ իմանի՝ կարի յաճախութբ․ կամ բազմութբ․ կամ նմ զօրութբ։ Իսկ մինչ ասի կարիք որովայնի․ կամ մարմնոյ․ իմանին աւելորդքն որովայնին՝ որք արտաքս ձգին։ 'ի ճառս հացց․ ը․ Թ․ ժը։

Կարծ։ || տես զկարծք։

Կարծեալ․ ելոյ․ ոց։ || համարեալ․ [illegible] Գաղ. 2. 2. ուր ասի՝ որք կարծեցեալքն էին ինչ ինն․ որք համարեցեալքն էին սիւնք, եթ երևելի պետք եկեղեցւոյ․ ոսկ. գծ․ 'ի 9. համարն։

Կարծեմ․ եցի․ եա․ ել։ (Ներգործ․) || համարել, կմ վարկանել․ կամ ենթադրել։ Եսա. 9. 12։ 3. Մակ. 1. 14։ և Յոհ. 21. 25։

Կարծեցեալ․ ելոյ․ ով․ ոց․ ովք։ || համարեցեալ․ կամ հաշուեցեալ․ կմ վարկեցեալ։ Իսկ մերթ նշանակէ կարծրացեալ․ կամ սեղմեալ․ ըստ այսմ Նարեկ. կդ․ 'ի կարծեցեալս մերոց անբեկ անդաստան։ Այսպէս ասի և 'ի շարականին զկապչն․ լուծանէ ժողովեալ զջուր զկարծեցեալ ճանճին․ եթ արձակէ և սփռէ զճանապարհն զոր յինքն ժողովեալ ունի․ և իբրթէ պնդեալ և սեղմեալ պահէ։ ըստ այսմ և ասի 'ի գիրս Լամբրօնացւոյն։ 'ի կարծեցեալ յանցս տօնար 'ի ճանապարհէ․ եթ 'ի կարծրացեալ․ կամ 'ի պնդեալ յոյնաբար անցս, որ է տօնար 'ի հասարակաց ճանապարհէն։

Կարծեցուցանեմ․ ցուցի․ ցո․ անել։ (անցող․) || տալ համարել․ կամ տալ վարկանել։ Նարեկ. ծզ։ Իսկ մերթ նշանակէ՝ կարծրացուցանել․ կմ սեղմել․ կմ պնդել։

Կարծէ 'ի կարծ․ կմ կարծ 'ի կարծ։ (մակբայ երկբայական․) || կարծելով․ կամ կասկածելով․ կամ տարակուսելով։ Իսկ մերթ վարի իբրև զանուն․ մանաւանդ՝ կարծ 'ի կարծն․ և նշանակէ զկարծեցեալն․ կամ զերկբայականն․ և կմ զտարակուսօղն։

Կարծի։ (գիտականութե բայ․) || համարի, կմ

վարկի․

Digitized by Google

վարկեցեալ լինի. կամ երեւի. կամ թուի:

Կարծիք. ծեաց. եօք: (անեզական.) || Համարումն, եւ վարկումն. կամ ճանաչումն իրի ինչ երկբայութեամբ. կամ գիտութիւն իրի ուրուք հանդերձ կասկածանօք. եւ կամ անհաստատ ճանաչումն: 2. Մակ. 15. 19: 1. Տիմ. 6. 4:

Կարծիքական: || տե՛ս զկարծողական:

Կարծողական. ի. աւ. աց. օք: || կարծիքական. կամ համարողական. եւ կամ որ պատկանի առ կարծիքն, եւ առ համարումն: Նարէկ. ժէ: Իսկ մինչ ասի՝ կարծողական զօրութիւն, իմանի՝ միոյն 'ի ներքին զգայութեանց կենդանական, որ ընդունելով յինքեան ըզտեսակ ինչ՝ եւ լուծանէ 'ի նմանէ զգիտաւորութիւն՝ որք յարտաքին զգայութեանց ոչ կարեն ըմբռնել. որպէս կարծողականն ոչխարին ընդ երեւելն գայլոյն հանէ զայս գիտումն՝ թէ է վնասակար եւ խորշելի. ուստի ոչխարն իսկոյն փախչի:

Կուրծ. կրծի. իւ. իւ. իւք: || է արմատ կրծել բային. որով նշանակի կրծօղն. կամ 'ի գործածի միայն 'ի ուտօղն. և ըստ այսմ 'ի գործածի միայն կուրծ. բարդութիւն բառից. որգոն. կաշառակուրծ. բարդութեան բառից. որպէս զկաշառս, որ ասի զկա ը կրծօղ և ուտօղ զկաշառս, որ ասի զկա շառառուաց: Իսկ մերթ նշանակէ զկուրծ կաղամբի. ը զի-թն լոհանոյն. և այլոց նմանեաց. զոր բաղում անգամ կրծելով ուտեն: ռամկ. գոչան: Եւ ըստ այսմ ասի ըղ մեծ էն մնկարայ. 'Ի Հար. Հարց. Եզ. Կաղամբի կուրծ ուտէր. զորմէ 'ի յայսմաւուրս ասացեալ լինի. թէ ուտէր զկուրծ մի կաղամբի:

Կուրծք. կրծոց. կմ ից. օք: (անեզակ.) || վերին մասն լանջաց. որ սկսեալ 'ի պարանոցէն իջանէ մինչև 'ի ստամոքս. կմ մինչև ցստորին մասն ստեանց, ուստի ոք վերջնոյ տափարակութեան կրծոց. յորում ծայրք կողից հաստատեալ կան: և առ ռամկ. կա կոչի կուրծք: Ղուկ. 18. 13: և 23. 48: Իսկ մերթ առեալ լինի փոխանակ սրտի. կմ մտաց. և ըստ այսմ ընդ բայի շարակցի պա-

պէս • ուշ 'ի կուրծս անկեալ • կմ ուշ 'ի կուրծս արարեալ • և նշանակէ , ուշադրեալ • կմ 'ի միտս եդեալ • կմ զմտաւածեալ • կմ յիշեալ : Խորէն• Գ• գլ• 4:

Կուրութի • թեան : || պակասութի տեսութեան • որով ոք կոյր լինի : Ծննդ• 19• 11 : Զաքար• 12• 4: Իսկ մերթ առի զմտաց , կմ զսրտի՝ որով նշանակի՝ տգիտութիւն • կմ թանձրամտութիւն • և կամ պակասութիւն իմացողութե : Մարկ• 3• 5: և Եփեսաց• 4• 18:

Կուց • կցոյ • ով • աց • ովք : || կիցք ձեռաց • այն երկոքին ակքն ձեռաց • յորժամ 'ի միասին կցեալ՝ լինի բուռն մի , որով առնումք զցորեան • կմ զալիւր • կմ զջուր • և այլն :

Կուք • կքոյ • ով • ոց • ովք : || է արմատ կքել բային , որով նշանակի կքեալն , այն կորացեալն • կմ թեքեալն • և կմ խոնարհեալն :

Կոփածոյ • ոյի • կմ ուի • իւ • ից • իւք : || կռանաւ կոփեցեալ • այն երկաթեայ չեքիճով տաշեցեալ , և հարթեցեալ • կմ կոկ եղեալ : Ելից• 20• 25: 4• Թագ• 22• 6: Իսկ Թուոց• 21• 20: և 23• 14• և յայլ տեղիս , յորս առի՝ կատար կոփածոյին • կմ կոփածուին • իմանի՝ գագաթ լերին նաբաւայ • ուր եւ մովսէս հրամանաւն այ , և ետես զերկիրն աւետեաց , և անդ վախճանեցաւ : Այրդ՝ կոչեցաւ սա կոփածոյ • կմ կոփածու , վն զի գոլ բնականաբար քարանց նր կոփեալ • այն հատեալ և տաշեալ • և իբր թէ կռանաւ հարթեցեալ : Եւ կմ զի որ այլք ասեն , էր անդ յառաջ արձան ինչ կռոց կոփելով շինեցեալ • ուստի զտեղին անուանմբ պարունակելոյն յորջորջելով , կոչեցին կոփածոյ : Մերթ և բառս կոփածոյ նշանակէ զկռածոյն • այն զայն՝ զոր շինեալ են՝ կռանաւ փորելով , և կոփելով • որպիսի էր գերեզման տն : Կիւրղ• Եղեն• Ժէ :

Կոփածու • ուի • ու • աց • օք : || Նոյն է ընդ վերնոյն : Թուոց• 21• 20: Յեսուի• 1• 2:

Կոփեմ • եցի • եա • ել : (Ներգործ •) || կռանաւ , կմ այլովք գործեօք հարկանելով տաշել • կմ հարթել , և կոկել • և կամ տաշելով շինել • և ըստ այսմ առի՝ կոփել ըզքար • կմ զփայտ • կամ կոփել զպատկեր ինչ • և այլք նմանք : Ելից• 34• 1: Եսայ• 40• 19: Իսկ մերթ նշանակէ սոսկ հարկանել • կամ բաղխել• ոտս զկռանն ընդ սալն • ըզթակն ընդ կոճղ ինչ • զսաս ընդ դետինն • և այլք նմանք : Եսայ• 41• 7:

Կոփիչ • փչի • աւ • աց • օք : || գործի • որով կոփի , և հարկանի ինչ • որպիսի է ուռն քարահատաց • կամ թակն :

Կոփիւն : (Նախդրիւ հոլովի •) || կոփումն • այն կռանաւ , կմ այլովք գործեօք տաշումն , և հարթումն քարանց • կմ փայտից , և այլոց նմանեաց : Իսկ մերթ նշանակէ հարումն , կամ բաղխումն միոյ կարծր իրի ընդ միւսն : Մերթ և նմանութբ առեալ նըշանակէ զդխալիլն ընդ միմեանս կռուողաց • կամ մրցակցողաց , յորմէ հետևին ձայնք , և աղաղակք , դոփիւնք ոտից , կայթմունք ձեռաց : և այլն : Ոսկէ• 'ի Նախնէրգմունս :

ԿՊ

Կպրաձիւթ • ձիւթոյ • ով • ոց • ովք : || է տեսակ ինչ կպրոյ , հեղեղուկ հանգոյն ձիւթոյ • այն ղաթրանի • ուստի առի կպրաձիւթ • իբր թէ կուպր իբրև զձիւթ • զոր մե առաջաւ 'ի մեկնութե կուպր բառին : Իմանի և սովաւ կարծր կուպրն հալեալ և խառնեալ ձիւթով • այն ղաթրանով • որով առաւել լոյծ եղեալ դիւրաւ մածեալ լինի , և խնու զձեղգս՝ և զծակտիս իրին • զոր ծեփեն : և ըստ այսմ ասացաւ կպրաձիւթ • իբր թէ կուպր և ձիւթ : Ելից• 2• 3:

Կպրաշաղախ • ի • իւ • ից • իւք : || կպրով շաղախեցեալ • կմ այն՝ որոյ շինուածոյ շաղախն է կուպր • որպիսի էր աշտարակն բաբիլոնի : ԱՀգոփ :

Կպրեմ • եցի • եա • ել : (Ներգործ •) || կպրով օծանել • կմ ծեփել : ռամկ• սծփնել•

ԿՌ

Կռած • ոյ • ով • ոց • ովք : || կերտուած արարեցեալ կռելով , այն կռանելով • կմ կոփելով • որպիսիք էին կուռքն հեթանոսաց , զորս կազմէին 'ի քարանց , կմ յոսկւոյ և յարծաթոյ՝ կերպարանելով զնմ 'ի ձև մարդոյ • և յայլոց նմանեաց : Ամբակ• 2• 19:

Կռածագ : (Նախդրիւ հոլովի •) || կեռածայր • այն այն՝ որոյ ծագն , կմ ծայրն է կեռ , և ոլոր • որպիսիք են կտուցք ոմանց թռչնոց • կմ խայթոցք ոմանց զեռնոց : Նարեկ• կԹ :

Կռածոյ • ոյի • իւ • ից • իւք : || կռանաւ կերտեցեալ • կմ ուռամբ շինեցեալ • որպիսիք են արծաթեղէն • կմ ոսկեղէն կանթեղք • վահանք • փողք • կմ տափարակ տախտակք թիթեղանց • և այլք նմանք • որք յառաջագոյն են հատոր ինչ արծաթոյ • կամ ոսկւոյ • զորս յետոյ պէսպիսեաւ կերպիւ կռանելով , ձևացուցանեն անօթս պիտանիս : Թուոց• 10• 2: և 16• 38: 3• Թագ• 10• 16: և 2• Մնաց• 9• 15• և 16: ըստ այսմ է և Երգոց• 5• 11• ուր առի՝ վարսք նր կռածոյք • այն կռանաւ ձևացեալք • վն զի նախ զգլուխն նմանեցուցանէ ոսկւոյ՝ ասելով • գլուխ նր յոսկւոյ կեփազեայ • ուստի յետոյ ըզ վարսան կոչէ կռանաւ կազմեալ : և այս ըստ եօթանասնից : Սակայն ոմանք 'ի թարգմանչաց զնեն ասաէն զանգուր • որ է գըռուզն • ռամկ• ղըըշըմըշ : և վն այսորիկ ոմանք զբառս զայս կռածոյ՝ համարեցան նշանակել զգանգուրն : Իսկ մերթ բառս կռածոյ նշանակէ զկոփածոյն • կմ զփորուածոյն • այն զայն՝ զոր շինեալ են կռանաւ հարկանելով և փորելով • որպիսի էր գերեզման տն մերոյ • որ էր փորեալ 'ի վիմէ : Ղուկ• 23• 53:

Կռամոլ • ի • իւ • ից • իւք : || մոլեալ 'ի պաշտօն կռոց • կմ պնդեալ զհետ կռապաշտութե • կամ որ ջերմեռանդ սրտիւ պաշտէ

զկուռս ։ Իսկ մերթ մինչ ասի կռամոլ ախտ՝ նշանակէ կռապաշտական ախտն, որով իմա-նի մոլութիւն ագահութե, որ կոչի կռա-պաշտութիւն ։ Եփ. ե ։

Կռամոլութիւն. թեան ։ || Մոլութիւն պաշտելոյ զկուռս. կմ՛ կռապաշտութիւն ։ Նարեկ. ՀԵ ։

Կռան. ի. աւ. աց. օք ։ || Ուռն. կմ՛ մուրճ. այսինքն գործիք ինչ որ ունի զփողրիկ երկաթե-զէն թակ. յոր անցուցեալ զկոթ՝ 'ի գործ ածեն ։ և կոչեցեալ կռան. իբր թէ կռօղ. զի նովաւ կռեն և հարկանեն հրահալելիք. կմ՛ քարինք - ռամկ. չէքիճ ։ Լամբր. ։

Կռանագործ. ի. աւ. աց. օք ։ || գործօղ կռա-նաւ. կմ՛ 'ի գործածօղ զկռանս ։ Ագաթ. ։ Իսկ մերթ նշանակէ զգործեցեալն, և զշի-նեցեալն կռանաւ ։ Մերթ ևս նշանակէ զշինօղն կռանին ։

Կռանահար. ի. աւ. աց. օք ։ || զկռան հար-կանօղ. կմ՛ կռանաւ ծեծօղ զինչ ։ Իսկ մերթ նշանակէ՝ զհարեալն, և զծեծեցեալն կը-ռանաւ ։

Կռանահարութիւն. թեան ։ || հարումն կռա-նի. կմ՛ կռանումն ։ Խորէն. Բ. գլ. 58 ։

Կռանեմ. եցի. եա. ել ։ (Ներգործ.) || կռա-նաւ հարկանել. կմ՛ կռանաւ կոփել. կմ՛ տաշել. կամ փոս փոս առնել զքարինս ։ ռամկօրէն չէքիճլէմէք անել ։

Կռաշուրթն. (Նախադրիւ հոլովի.) || զկեռա-շուրթն ունօղ. որպիսիք են արծուէք. և այլք նմանք, որոց կտուցքն, որք են իբրու շրթունք նց, կորացեալ. և կեռացեալ են ։

Կռապաշտ. ի. իւ. ից. իւք ։ || պաշտօղ ըզ-կուռս. կամ ծառայօղ կռոց ։ Յայտ. 21. 8 ։

Կռապաշտութիւն. թեան ։ || պաշտումն դից. կմ՛ ծառայութիւն կռոց ։ 1. Կորնթ. 10. 14 ։

Կռապարիշտ. րշտի. իւ. ից. իւք ։ || Ելանէ սա 'ի բառէս կուռք, և 'ի մասնկանէս պարիշտ, որ է պաշտ. ուստի կռապարիշտն նշանակէ զկռապաշտն. այսինքն զայն. որ զԱծայինն պաշ-տօն մատուցանէ կռոց ; ծառայելով նց իբրև աստուածոց ։ 1. Կորն. 5. 10 ։ և 6. 9 ։ Եփես. 5. 5 ։ Մերթ ևս կամապաշտքն նմանու-թե կոչին կռապարիշտք ։

Կռատ ։ || տես զկեռատ ։

Կռեմ. եցի. եա. ել ։ (Ներգործ.) || զկռան հարկանել. կմ՛ կռանաւ ծեծել զհրահալե-լիս. կմ՛ կոփել զքարինս. և զայլ ինչ նը-մանս ։ Եսայ. 41. 7 ։ Խորէն. Բ. գլ. 62 ։ Իսկ մերթ նշանակէ կռանելով շինել զինչ ։ և ըստ այսմ իմանի՝ մինչ ասի. կռել զկուռս. ուստի և կռածոյ պատկերքն կոչին՝ կռեալք. այսինքն կռանաւ շինեալք ։ Ագաթ. ։ Իսկ մերթ նշանակէ ամրել. կմ՛ հաստատել. կմ՛ ա-մուր և կայուն առնել. և ըստ այսմ ասի. կռեալ. և անդրեալ յամբարշտութե ։ Այլ ևս փոփոխանակ ասելոյ. դաշինս հաստա-տել. ասի՝ դաշինս կռել ։ 1. Մակ. 1. 12 ։ 2. Մակ. 11. 26 ։ Իմաստ. 1. 16 ։

Կռինչ. կռնչի. իւ. ից. իւք ։ || է արմատ կռն-չել բային. որով մերթ նշանակի կռնչիւնն. այսինքն նուագ ձայն հանելոյ հաւուց. կամ կենդանեաց. որպիսի է ձիոյն. կռկռա-ցումն. մռնչումն. շշնջումն. և այլք նմանք ։ Իսկ մերթ նշանակէ զկռնչօղն. այսինքն զձայն հանօղն. և ըստ այսմ է և խցն փող-րիկ. կմ՛ նուագաւոր կենդանի թռչուն զկան-չիւն հանէ՝ կռինչ կոչի ։ և ըստ այսմ է Եսայ. 9. 4. ուր ասի. Եւ ոչ ծախեսցի յամ որդ-ւոյն իէլի կռինչն ։

Կռինչ ։ (Նախադրիւ հոլովի.) || Նոյն է ընդ վերինոյն ։

Կռիւ. կռուոյ. ով. ոց. ովք ։ || կագ. կմ՛ հա-կառակութիւն. կմ՛ վէճ, զոր առնեն մար-դիկ յարուցանելով զաղմուկս, և զխռովու-թիւս, որ և ռամկ. ասի՝ կավղա ։ Առակ. 15. 18 ։ Տիտ. 3. 9 ։ Իսկ մերթ պատերազմ. կմ՛ մարտ, որ լինի 'ի մէջ բազմութե զօրաց ։ ռամկ. ճէնկ ։ Յեսու. 4. 13 ։ Եբր. 11. 6 ։ Իմաստ. 18. 21 ։ Իսկ մինչ ասի 'ի կռիւ կալ. իմանի ընդդէմ կալ ումեք առ 'ի կռուելոյ և մարտնչելոյ. կմ՛ 'ի մարտ ելանել ։ Յովէլ. 7. 9 ։ Մերթ ևս բառս կռիւ, նշանակէ տեղին, ուր կա-րէ որ ինչ կռուել. այսինքն կռուելի. կմ՛ կալ մնալ և ոչ սահել. և ըստ այսմ կայարանն, ուր կա-րէ կալ ոտքն, կոչի կռիւ ոտից ։ ըստ այսմ 1. Մակ. 10. 72. Ոչ գոյ ձեզ ոտից կռիւ ա-ռաջի մեր ։ Եւ այսպիսի կայարանս ոտից երբեմն կոչի՝ ոտնկռիւ ։

Կռկռամ. ացի. ա. ալ ։ (Չէզոք.) || կռկռ ձայն հանել. որպիսի է կռնչելն ագռաւուց. և կռնկանց ։ Բայց սա մանաւանդ յաշխար-հաբառ լեզուիս 'ի գործ ածի ։

Կռձեմ. եցի. եա. ել ։ (Ներգործ.) || բախ-խել. կմ՛ հարկանել ափ զուռն 'ի տախտակն կոչնակին. կմ՛ զգաւազանն 'ի գետին. և այլն ։ ռամկ. վուրմագ ։

Կռձումն. կռձման. մամբ. մանց. մամբք ։ || բաղխումն. կմ՛ հարումն. որպիսի է հար-կանել զգաւազանն 'ի գետին. կմ՛ զուռն ընդ տախտակն կոչնակին. և ըստ այսմ է 'ի Նարեկ. ղէ. ուր ասի. Կարկառ կռձ-մամբ զանբժշկելի հարուածոց օձին թարգ-մանեցեր. այսինքն կարկառողական և վէրամ-բարձ հարուածովք ։ Զի հարկանողքն զտախ-տակ կոչնակին՝ մինչ ուռամբ հարկանեն. այսինքն զձեռս իւրեանց սոսկալ կարկառեն. այսինքն բաւանան, և 'ի կոչնակին ածեն ։

Կռնչամ. ացի. ա. ալ ։ (Չէզոք.) || տես 'ի ներքոյ զկռնչել ։

Կռնչեմ. եցի. եա. ել ։ (Չէզոք.) || կռինչ ար-ձակել. որով իմանի զնուագ ձայն հանելն սևացեալ թռչնոց. կմ՛ կենդանեաց. և ըստ այսմ կռնչել ասի՝ ձիոյ հանելն. կռկռալն. շշնջելն լեզուաւ. մռմռալն. վնկվնկալն. և այլն ։ Եսայ. 11. 7 ։ Յեր. 10. 21 ։

Կռնչիւն. (Նախադրիւ հոլովի.) || տես զայս 'ի բառն Կռինչ, ըստ առաջին նշանակութե ։

Կռուակից. կցի. իւ. աց. օք ։ || այն՝ որ կցորդ է ընդ ումեք 'ի կռիւս. կմ՛ 'ի վէճս. և կմ՛ լինի մարտակից ։ Լամբր. ։

Կռուարան. ի. աւ. աց. օք ։ || տեղի կռուոյ. կմ՛ պատերազմի, և կմ՛ մարտի ։ Նարեկ. ղբ ։

Կռուարար. ի. աւ. աց. օք ։ || առնօղ զկռիւս. կամ կռուօղ. կամ միշտ յարուցանօղ ըզ-

Digitized by Google

կող, և զերծիլ։

Կռուիմ. եցայ. եա. իլ. կամ ել։ (ձայնակր.) || զերծիլ առնել. կամ կապել. կամ հակառակիլ. կամ ընդդիմամարտիլ. կամ մարտնչիլ։ Ծննդ. 32. 25։ Երկր. 21. 22։ Յես. 10. 42։ Իսկ մերթ նշանակէ մածանիլ զիրեար. կամ կցիլ. և կամ յարիլ յեր ինչ. որպէս փոշին յոտս և՛ ի ձեռս, ձիւթն և խէժն յոտս. ժանիքն ՛ի հրահանգէ լերս. ատամն ՛ի յորմս. և այլն։ ասմկ. կպչիլ։ 2. Օրին. 13. 17։ Աղաւ. 30. 28։ Ղուկ. 10. 11։ Խորէն. յաշխարհագրութեան. Ողբ. 1. հատ. իէ։

Կռունկն. կռնկան. անք. անց. անբք։ || է թռչուն ինչ երամաւորին ըզշօղ. որ ունի զմիզ երկայն, և զորուանդ երկայնաձիգ. իբրև զարագիլ. բայց մարմնով է սատնար քան ըզնա։ Որ յամենայն ատարաւոր ՛ի գարնան, և յաշնան փոխէ զդաւառան, յորում է։ Երասացեալ սորա կռունկն. զի կանչէն. և կռկռան յընթանալն իւրեանց։ ասմկ. կռանն։

Կռուփ. կռփոյ. ով. կամ կռուփք. փից. ովք. կամ օք։ || է արմատ կռփել բային, որով նշանակի կռփանքն. այն ափով ձեռաց, կամ բռնցով հարուածս գլխոյ մարդոյն. և ըստ այսմ երբեմն ըստ բայի շարակցի այսպէս կռուփս հանել, և նշանակէ կռփել, զոր տեսցես ՛ի ներքոյ։ Աւգոս։ Մերթ ևս նըմանութեամբ առեալ նշանակէ զզատսափիտ ոտն. կամ զկոտսակուսս. և կամ զճոխատոնս։ Լամբրոն։

Կռչաձայն. ի. իւ. իւ. ից. իւք։ || կանչելով ձայն հանող. կամ կռնչող։ Իսկ մերթ նշանակի այն, որ է կռնչողական, կամ կռկռացողական ձայն, որպիսի է ագռաւուն կռնկանց։ Աւգոս։

Կռչեմ։ || տե՛ս զկռնչել։

Կռփահարեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) || ափով ձեռաց. կամ բռնցի զգլուխն ուրուք հարկանել։ 1. Կորնթ. 4. 11։

Կռփահարութիւն. թեան։ || կռփումն և հարումն. կամ կռփանք. որով հարկանի զգլուխն ուրուք. և կամ որով կատակի, և այպանի ոք։ Աւգոս։

Կռփանք. անաց. օք։ (անեզական.) || կռփումն, այն հարկանումն գլխոյ ափով ձեռաց. կամ կռփահարութիւն։ Իսկ մերթ առ համարհանք, կամ կատականք, կամ նախատինք։ Սօփոն. 2. 8։

Կռփեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) || բռնցով. կամ ափով ձեռաց հարկանել զգլուխն։ Եսայ. 58. 4։ Աղձեղ. 2. 7։ Մատթ. 26. 67։ Իսկ մերթ նմանութեամբ առեալ նշանակէ հարստահարել. կամ նեղել. կամ անարգել և նախատական առնել. որով իբրթէ կռփահարի ոք։ Յակոբ. 16. 9։ Մաղ. 3. 5։ 2. Կորնթ. 12. 7։

Կռօնոս. ի. իւ։ || է բառ յունական, որով նըշանակի առաջին մոլորակին, որ հայերէն կոչի երևակ։ Մերթ ևս նշանակի սովոր վաղեմի կուռք ինչ հեթանոսաց։ և զի բառս կռօնոս, յունարէն ատուգաբանի ժամանակ, վա այսորիկ բաղդանիք ՛ի հեթանոսաց զկռաւոդայս կոչէին նոյն ժամանակաց։

ԿՍ

Կսկիծ. կծի. իւ. ից. իւք։ || խայթողական և կիզողական ցաւ սրտի. կամ վիրաց, կամ մարմնոյ, և նմանեաց. կամ մորմոքումն. կամ աղէտ։ ասմկ. ևս առի խիծ։ Նարէկ. իէ։

Կսկծագին։ (Նախադրիւ հոլովի.) || սաստիկ կսկծեցուցիչ. կամ յոյժ ցաւագին։ Իսկ մերթ վարի մակբայօրէն, և նշանակէ սաստիկ կսկծելով. կամ յոյժ ցաւելով։ Յն. ոսկէ։

Կսկծակիծ։ (Նախադրիւ հոլովի.) || կսկծեցուցանելով կծող. այն խայթող, որով իմանի սաստիկ կսկծեցուցիչն. կամ ցաւեցուցիչն։ Իսկ մերթ ընդ բայի շարակցի այսպէս. կսկծակիծ առնել, և նշանակէ սաստիկ կսկծեցուցանել. կամ կսկծագին ցաւովք զգածել։ Ողբ. 1. հատ. իը։

Կսկծակից. կցի. իւ. աց. օք։ || կցորդ և ընկեր ընդ ումեք ՛ի կսկիծս, և ՛ի ցաւս. կամ յոյժ ցաւակից. և վշտակից։

Կսկծելի. լւոյ. եաւ. եաց. եօք։ || ցաւելի. կամ մորմոքելի։ Իսկ մերթ նշանակէ կսկծեցուցիչ. կամ ցաւեցուցիչ։ 2. Մակ. 10. 34։ և 12. 14։

Կսկծեցուցանեմ. ցուցի. ցի. ել։ (Անցող.) || խայթելով. կամ կիզելով ցաւեցուցանել. կամ մորմոքեցուցանել. ասմկօր. խծծել։ Տօբ. 11. 8։ Եսայ. 58. 3։

Կսկծեցուցանողական. ի. աւ. աց. օք։ || այն որ վերաբերի առ կսկծեցուցանօղն. և կամ կսկծեցուցիչ։ Նարէկ. իը։

Կսկծեցուցիչ. ցուցչի. աւ. աց. օք։ || կսկծեցուցանող. կամ զկսկիծ պատճառօղ. կամ սաստիկ ցաւեցուցիչ. և կամ մորմոքեցուցիչ։ Լամբրոն։

Կսկծիմ. եցայ. եայ. իլ։ (ձայնակր.) || ցաւիլ. կամ մորմոքիլ. կամ զկսկիծ կրել։

ԿՏ

Կտամ. ացայ. ա. ալ։ (ընդմիջ.) || գթել. կամ սայթաքել. կամ գայթել։

Կտակ. ի. աւ. աց. օք։ || գրուած ինչ անդարձ հրամանի, զոր առնէ ոք վիրաց իւրոց, որք մնան յետ մահուան իւրոյ, բացատրելով ՛ի նմին, թէ ո՛ ընկալցի ժառանգ նոցա իւրոց. կամ ո՛ զինչ առնուցու։ Եբրայ. 9. 16։ Երբ մերթ առնուանի փոխանակ նոային գրոց. կամ օրինաց։ 2. Մնաց. 34. 30։ Իսկ մերթ փոխանակ ո՛ և իցէ գրոյ ուխտից. կամ դաշանց. և ըստ այսմ գիրք վաճառականաց, յորս գրին զդաշանս. կամ զառևտրոց, կոչին կտակք վաճառաց. որպէս 1. Մակ. 13. 42. սկսաւ ժողովուրդն գրել ՛ի կտակս վաճառաց իւրեանց. ասմկ. փէքիթէր։ Մերթ ևս բառս կտակ առնանի փոխանակ ուխտի. կամ դաշանց. կամ հաստատուն խոստմանց։ 1. Մակ. 2. 54։ Գաղ. 3. 17։

Կտակագիր. գրի. աւ. աց. օք։ || այսպէս հաւաստեցեալ, նշանակէ զնա, որ առնէ զկտակ

Digitized by Google

ղընչից իւրոց: Եբր. 9. 16. և 17:

Կտակագիր. գրոյ. ով. ոց. ովք: || այսպէս հոլովեցաւ, նշանակէ զգիրն կտակի: 'Ի ճառ. հայր. Է: և Ոսկ. 1. կոր. ԺԵ:

Կտակագրեան: (նախդրիւ հոլովի.) || կտակագրական. ցի այն ամ, որ վերաբերի առ կտակագիրս. կմ առ կտակս: և ըստ այսմ առի 'ի Ն ոսկի. կոնդակ կտակագրեան:

Կտակարան. ի. աւ. աց. օք: || գիրք, կմ տախտակն, և կմ բանս, յորում պարունակի կտակն, կմ պատգամքն նորա. թէ կտակն. ցի օրէնք, կմ պատգամքն Այ. թէ հինն իցէ, և թէ նորն: Եւիփ. 31. 7: և Սաղմ. 24. 14: Գաղ. 4. 24: Մերթ եւս տապանակն ուխտի առի կտակարան. ըստ որում տախտակքն կտակի. ցի օրինաց 'ի նմին պահիւր: Սաղմ. 131. 8:

Կտաւ. ի. ոյ. ով. ով. ովք: || մերթ նշանակէ կտաւ. ոյ. ով. ոց. ովք: ո և իցէ շաքարեղէն, կմ անուշեղէն կերակուր, կմ պատուղք և միրգք շաքարաւ կմ մեղերբ յօրինեալք և համեմեալք. որպիսիք են այնոքիկ, որք 'ի վերջն խրախճանաց մեծամեծաց բերեալ լինին 'ի սեղան: ռամկօրէն ...: կմ Աւետի Ովս. 3. 1. սէր առն սիրեն անուշեղէնս: կտապս չամչեղէնս, իմացեալ լինին այսպիսի անուշեղէն կերակուրք կազմեալք 'ի չամչոյ պէսպէս հանդերձանօք և համեմօք:

Կտաւ. ոյ. ով. ոց. ովք: || մերթ նշանակէ զբոյսն վշոյ. որոյ 'ի կեղևն թել թել պատրոյգ ... ցի քթանն. զոր չորացուցեալ ծեծեն և լուեն թակիւ առ 'ի մանուածել զթելսն 'ի յարդից, և 'ի մէջն նիւթողաց: և այսպէս թէ քաղեցեալ և 'ի խրձունս կապեցեալ իցէ, և թէ ոչ՝ կտաւ կոչի: Եւիփ. 9. 31: և Յեսու. 2. 6: Իսկ մերթ վուշն զատեցեալ 'ի յարդէն. և կմ վշեղէն թելքն՝ կտաւ կոչին. ռամկօր. ...: Ղևտ. 13. 53: Առակ. 31. 13: Մերթ եւս կտաւ առի՝ գործեցեալն և կազմեցեալն 'ի վշեղէն թելից: որպիսիք են պատմուճանք. և այլք նմանք: Առակ. 31. 24: Ովս. 2. 9: Մատ. 27. 59:

Կտաւագործ. ի. աւ. աց. օք: || գործող ըզկտաւս. ցի գործող զվշեղէնս. այս է՝ ըզքթանեղէնս: Եսայ. 19. 9:

Կտաւատ. ի. իւ. ից. իւք: || կտաւոյ հատ. ցի կտաւոյ ունդ, յորմէ հանեցեալ լինի ձէթն այն, որ ռամկ. կոչի՝ ...:

Կտաւի. ւոյ. ւով. իք. եաց. եօք: || կտաւեղէն. կմ վշեղէն՝ և կմ այն, որ է կազմեցեալ 'ի կտաւոյ, կմ 'ի վշոյ: ռամկ. ...: Եւիփ. 28. 42: Ղևտ. 13. 51: և Երեմ. 13. 1:

Կտաւուտեակ. եկի. աւ. աց. օք: || կտաւեղէն զգեստ. կմ կտաւեայ ձորձ. որպիսի է շապիկն, ղենջակն, գաստառակն. և այլք նմանք, որք կազմին 'ի կտաւոյ: Կիւրղ. Եղեկ. ԺԲ:

Կտեմ. եցի. եա. եւ: (ներգործ.) || ատամամբ կամ դրոշմել յիմիք զպէսպէս նիշս. կմ կէտս, և գիծս՝ խայթելով կմ կոցելով. կմ սաղաւարտ առնելով. և այլն. և ըստ այսմ կէտ կէտ նշանն. կմ տիպն, որ տպաւորի 'ի մարմինի ուրուք 'ի խայթուածոյ բորոյ. կմ 'ի սլաքաւոր գործեաց՝ կոչի կտեղ խածուած: Նոյեմ. ԺԷ: Ուստի և գրուածն, կմ նկարն, զոր առնեն ոմանք 'ի բազուկս կմ յայլս անդամս իւրեանց՝ սեաւ ինչ գեղով ծակոտելով, կմ տպելով զմարմինս իւրեանց երկաթեղէն գործեաւ, կոչի գիր կտեալ. զոր 'ի հնումն բազում անգամ առնէին հեթանոսք 'ի պատիւ կռոց. որ յօրինացն մովսէսի սաստիւ արգելանիւր. գի ասէ. Ղևտ. 19. 28. Եւ վէրս 'ի վ ... մի առնիցէք 'ի մարմինս ձեր. և գիր կտեալ մի առնիցէք 'ի ձեզ: ռամկ. ...: Իսկ մերթ նշանակէ խթել. կմ բաղխել. և ըստ այսմ յաձախ դիպուածն, ցի ...ն ուրումն է տախտակ ժամահարին, կտեալ կոչի. իբր թէ կտողական: ըստ այսմ. Նոյեմ. ԺԵ. Ջկտեալ դիպուածս այս փայտի զարկման: և այլն: Մերթ եւս նշանակի սակաւ երկաքումնիք մատամբք ոլորելով սեղմելն. կմ ձմլելն զմարմին ուրուք: ռամկ. ...: կմ ... ...:

Կտկտեմ. եցի. եա. եւ: (ներգործ.) || է սա յաճախականն կտել բային. այլ վասն վազելն, վազել բայեն: ուստի կտկտելն, նշանակէ կտելով կտել. կմ յաճախ կտել. որով մերթ իմանի պէսպէս խայթուածովք. կմ հարուածովք տպաւորել զբազում նիշս. կմ զգիծս. կմ կէտ կէտ առնել ուրեք: Իսկ մերթ իմացեալ լինի՝ խթելով խթել. կմ հարուածելով հարուածել. կմ յաճախ բաղխել: և ըստ այսմ նա՝ որ պէսպէս բամբասաւոր, և պարսաւական բանիւք նախատակոծ եղեալ գատափետ լինի, կամ խոցոտեալ, կամ հարուածի, ծանակի. և իբր թէ՝ խթի և հարուածի, կտկտիլ ասի: Ոսկ. 1. կոր. Թ:

Կտնառք. առից. իւք: (անեզական.) || մաղկեղէն պարկն հաճուց՝ որ է 'ի կուրծս նորա, և ուր կերեալ հատքն, իջանեն և պահին. և ապա հետևաբար մարսին, և սիաւին 'ի յիւրաքանչիւր անդամս նր:

Կտոռած. ոյ. ով. ոց. ովք: || կտոռումն. ցի մասրումն. կմ յատակումն 'ի խճից. կամ 'ի քարանց. կմ 'ի կեղևանաց. և յայլոց նմանեաց:

Կտոռեմ. եցի. եա. եւ: (ներգործ.) || սրբել. կմ մաքրել. և կմ յատակել. այլ զայգին 'ի ... կմ զպատուղ քարանց. զցորեանն 'ի խճից. կմ զպտուղ 'ի կեղևոց. որ է կեղևել. ըստ այսմ իմն և զայլոց նմանեաց: Մծբն. ԺԶ:

Կտուր. կտրոյ. ով. ոց. ովք: || է արմատ կըտրել բային, որով մերթ նշանակի կտրուածն ... և իցէ իրաց: Լամբրոն. Իսկ մերթ կմ կտրուածն ... և կտրումն. ցի խուզումն բրդոյ խաշանց. և ըստ այսմ վարի առբ յոգնականն: Ծննդ. 31. 19: և 38. 12: 1. Թագ. 25. 2: 2. Թագ. 13. 23: Իսկ մերթ նշանակի կտրեցեալ և խուզեցեալ գեղմն. կմ բուրդն: 2. Օրին. 18. 4: Յոբ. 31. 20: Իսկ երբեմն ընդ բային շարակցի այսպէս. կտուր լինել. և նշանակէ. կըտրել. կմ բաժանել. կմ 'ի բաց մեկնել: Եւ մերթ 'ի բարդութիւն բառից 'ի գործածի. զոր օրինակ. միջակտուր. կիսակտուր. և նշանակէ սոսկ զկտրեցեալն:

Կտուց. կտցի. կմ կտուցի. ու. աց. օք: || Է երկայնութիւն և սրութիւն բերան թռչնոց. որով կտցեն, կմ ուտեն զընդեղէնս. որ և ռամկօ. ասի կտուց: Եւ այս մերթ նմանութեամբ առեալ. ասի նաև զբերանոյ, կմ զխոյթոցէ այլոց կենդանեաց, որք ունին զնմանութիւն ինչ կտուցի հաւուց: Նորէկ. կթ:

Կտտամահ. ի. իւ. ից. իւք: || կտտելով մահացուցեալ. որով իմանի այն՝ որ չարաչար և աղիողորմ տանջանօք, և լլկանօք սպանեալ լինի: Իսկ մերթ վարի իբրև զմկբ. այսպէս. կտտամահ սպանանել. կմ կորուսանել. որով նշանակի՝ չարաչար տանջանօք մահացուցանել: Ագաթ:

Կտտանք. անաց. օք: (անեզական.) || մանր մանր հատուածս. կմ մանր կտրատուածս. կմ լուսուածս: Եւ յայսմանէ առեալ, երբեմն նշանակէ զչարաչար և զաղիողորմ տանջանս, կմ զչարչարանս. կմ զլլկանս, որով ոք չարչարի: Սոսա և աղցի աղցի բամբասանքն. կմ կսկծելի յանդիմանութիւնքն, կմ թշնամանքն, որովք ոք իբր թէ գիշատի կտտանք կոչի: Լամբրոն:

Կտտեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || մանր մանր հատանել. կմ 'ի մանր մասունս բաժանել: և ը այսմ յորժամ ոք զբան ինչ յոյժ մանրամասնաբար քննէ, ասի կտտել զայն. ըստ այնմ. Նորէկ 'ի Մեկն. Երգոց. Զոր այլք վարդապետք մանր կտտեն, ես համառօտեմ: Եւ յայսմանէ առեալ՝ բազում անգամ նշանակէ չարաչար և դառն տանջանօք չարչարել. որպէս զմարմինն պատառատելով. զմորթն քերթելով. զձեռսն, և զոտսն ծայրատակ առնելով. և այլովք նմանեօք: Յօբ. 6. 4: Խորէն. Գ. գլ. 67: Ագաթ. 'ի բազում տեղիս:

Կտրատեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || կտոր կտոր առնել. կմ 'ի բազում մասունս անջատել. կմ խզխզատել. կմ պատառատել. 'Ի Հար. հարց. Ժզ:

Կտրեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || հատանել. կմ բաժանել: Իմաս. 5. 12: Եւ մերթ նշանակէ խուզել զբուրդ խաշանց. և ը այսմ իմանի՝ մինչ ասի, կտրել զխաշինս: Ծննդ. 38. 13: ըստ այսմ և Երգ. 4. 2: և 6. 5. յորս ասի՝ իբրև զերամակս կտրելոց. իմանի՝ խուզելոց:

Կտրիչ. կտրչի. ու. աց. օք: || կտրող. կմ հատանող: Իսկ մերթ մասնաւորապէս առեալ՝ նշանակէ զխուզօղն խաշանց. և ը այսմ իմանի: Եսայ. 53. 7. ուր ասի. իբրև որոջ առաջի կտրչի անմռունչ կայ:

Կտրոց. ի. ու. աց. օք: || կտրող, և հատանող գործի, որով մերթ իմանի դանակն. կմ զմկլինն: Իսկ մերթ մկրատն. որով կտրեն բուրդ ոչխարաց. և կմ հերք գլխոյ մարդոյ: Առակ. 30. 14. և Լամբրոն:

Կտրօղ. ի. ու. աց. օք: || հատանող. և կմ խուզօղ զոչխարս: 1. Թագ. 25. 11:

Կտրօն. ի. իւ. ից. իւք: || Եղանէ ստ 'ի կտրել բայէն. որ է գործօնն 'ի գաղղական բայէն. ուստի բառս կտրօն. մերթ նշանակէ զկտրումն. կմ զհատումն: Իսկ երբեմն զկտրեցեալ, և զհատեցեալ իրն. և ըստ այսմ կտրօն կոչի հատս ծիւղն, կմ ոստն ծառոյ զորոյ զծայրն. կմ զկէս մասն հատեալ քեն. յորմէ երբեմն արձակին բազում շառաւիղք: և ըստ այսմ է Յօբ. 15. 32: Սոսա և 'ի հին պատմագիրս ասի զուամնէ. թէ 'ի փախչելն ընդ անտառն՝ կտրօն փայտի դիպեալ 'ի սիրտն եանց ը լեարդն:

Կտցաւոր. ի. ու. աց. օք: || ունօղ զկտուց. որ է սրածայր բերանն հաւուց: ուստի և մուրճք, և այլք նմանք՝ որոց բերանն կազմի իբրև զկտուց թռչնոց, ասին կտցաւոր. Խորէն. Գ. գլ. 28:

ԿՐ

Կրակ. ի. ու. աց. օք: || հուր. կմ խարոյկ: կմ հրացեալ գործելի: որ և ռամկօ. ասի՝ կրակ: Տօբ. 6. 18: Եսայ. 44. 16: Ղուկ. 22. 55:

Կրակաբեր. ի. ու. աց. օք: || բերօղ ուրեք զկրակ առ 'ի վառել զհուր. կմ առ 'ի եփել զկերակուր: [illegible] 1. 18: Իսկ մերթ նշանակէ զկրակակիրն. զի զայն որ պարունակէ յինքեան զկրակ. և ըստ այսմ ասի՝ կրակաբեր աման, զի յինքեան զկրակ պարունակօղ աման: Ագաթ:

Կրակապաշտ. ի. իւ. ից. իւք: || պաշտօղ ըզ կրակն՝ իբրև զԱծ. որպիսիք էին 'ի հնումն պարսիկք:

Կրակարան. ի. աւ. աց. օք: || տեղի, ուր դընի կրակ. որով մերթ իմանի վառարանն. զի օճախն. և մերթ թաղարին. կմ այլ ինչ նման, ուր 'ի ժամանակի ձմերան եդեալ լինի հուր առ 'ի ջեռնանալ: Առակ. 26. 21: Երեմ. 36. 22. և 23: Իսկ մերթ նշանակի ամանն, որով բարձեալ և տարեալ լինի կրակն: Ելից. 27. 3:

Կրակետեղ. եաղ. եղք. եղաց. եղօք: || կրակի տեղ. զի տեղի. ուր եդեալ կան կրակք, կմ կայծակունք՝ հրոյ: և ը այսմ ու և իցէ կրակարան. կմ վառարան. կրակետեղ կոչի: Սոսա Յովհ. 21. 9. ուր ասի՝ կրակետեղ կայ ծականց, իմանի տեղի, ուր դոյին կայծակունք հրոյ իբրև 'ի կրակարանի:

Կրակից. կցի. իւ. աց. օք: || կցորդ և հաղորդ կրից ուրուք, այս հոգւոյն մարմնոյ. կմ բարեկամն բարեկամին: Յհ. Որոտ:

Կրայ. ի. իւ. ից. իւք: || կրիայ. որ է յամրաշարժ կենդանի ինչ խեցեմորթ, և ունի պատուասակարկս, և զգլուխ նման դոդոշու. զոր 'ի խորանալն յինքն ամփոփէ, և աներեւոյթ առնէ: Եւ է սորա կրկին տեսակ. միոյն ցամաքային. իսկ միւսն Ջրային ռամկօ. բօղադաղ. Ղեւ. 12. 11:

Կրոսս: || Է բառ լատինական. որ թարգմանի 'ի վաղիւն, կմ 'ի վաղուէեան աւուր: 'Ի Հար. հարց. Ժթ:

Կրաւորական. ի. ու. աց. օք: || կրողական. զի այն, որ կարէ կրել զինչ. և կմ է կրող: Նորէկ. գԹ: Սոսա և բայքն, որք հակառակն

ներգործականին, կրաւորական կոչին. ըստ որում միշտ ցուցանեն զկիրս. այսինքն զկրումն յայլմէ, որպիսիք են ասքս. տիրեմ. սիրեմ. սիրեցայց. եւ այլն:

Կրել. լւոյ. եաւ. եաց. եօք: || բեռնակիր. կամ տանելի. Թուոց. 4. 47: Իսկ մերթ նշանակէ զկրողն. կամ զբարձօղն. եւ կամ զտանօղն. եւ ըստ այսմ է Ղեւտ. 3. 13. ուր ասի, կրեւ լեաց զտապանակին ուխտին, այսինքն կրողաց. կամ բարձողաց: Այսպէս է եւ Եզեկ. 10. 5. եւ Ա.Մնաց. 17. 21:

Կրեմ. եցի. եաւ. ել: (Ներգործ.) || բառնալ. կամ տանել ՚ի միոյ տեղւոջէ ՚ի միւսն. կամ բարձեալ բերել: Յես. 3. 15: Իսկ մերթ յանձին բարում ունել. կամ միշտ ՚ի վ՟ր ի վերայ տանել: Բ. Թագ. 22. 18: Ա.Մնաց. 16. 23. Այսպէս է եւ Յոհ. 2. 25. ուր ասի, Զի ինքն իսկ գիտէր, զինչ կրէր ՚ի մարդն, այսինքն, որ ինչ կըրէր, կամ գոյր ՚ի մարդն. այս է՝ որպիսի խորհուրդ, կամ դիտաւորութիւն կայր ՚ի նմա. եւ այլն: Իսկ մերթ նշանակէ զկիրս ինչ ընդունել. կամ զգալ իւրք կրելով. եւ ըստ այսմ երբեմն չարչարիլն, կամ տանջիլն՝ կրել ասի: Այնպէս եւ ՚ի Հռովմէ ՚ի ինքն զարգացութիւն հոգւոյն որդւոյ կոչի կրել: 2. Պետ. 1. 21: Դարձեալ՝ բայս կրել է մինն ՚ի տասանց ստորոգութեանց. ՚ի ձեռն որոյ նըշանակի պատահումն ինչ. որով ենթակայն իմն ասի կրել յումեքէ առնողէ. որպէս ջերմացեալն կրէ զջերմութիւն ՚ի ջերմացուցանողէն:

Կրթականութիւն. թեան: || կրթութիւն. կամ վարժութիւն. եւ կամ կիրթ եւ վարժ գոլն յաւրինակի իմիք: Նոբէլ. խտ. եւ դդ:

Կրթանք. անաց. օք: || տես զԿրթութիւն:

Կրթավարժ. ի. իւ. իւ. իւք: || կիրթ եւ վարժ. կամ կրթեցեալ եւ վարժեցեալ: Իսկ մերթ կրթօղ եւ վարժօղ:

Կրթարան. ի. աւ. աց. օք: || վարժարան. այսինքն տեղի կրթելոյ, եւ վարժելոյ յուսումն գիտութեան. կամ քաղաքավարութեան. եւ կամ արհեստի իրիք:

Կրթեմ. եցի. եաւ. ել: (Ներգործ.) || վարժել. կամ հրահանգել. կամ սովորեցուցանել. կամ ընտելացուցանել: Ա. Տիմ. 4. 7: Իսկ մերթ նշանակէ ՚ի գործ արկանել. կամ վարել. կամ յանձն իւր ձգել: Ողբ. 1. հատ. ծ. եւ խդ: Իւ ըստ այսմ բազմիցս ՚ի գործ ածի ՚ի բառս այսմիկ՝ ապուշ, այսպէս, յապուշ կրթել. եւ նշանակէ, յապշութիւն արկանել. կամ ապշեցուցանել: Ողբ. 2. հատ. ժթ.

Կրթիմ. եցայ. եալ. իլ: (Հայնակր.) || մերթ նշանակէ կիրթ եւ վարժ լինել. կամ ընտելանալ: Իսկ մերթ սահիլ. կամ սայթաքիլ: Դատ. Ոսկեբ. եւ ըստ այսմ յորժամ օձն մըտեալ ՚ի ներքնագոյն ծերպս որմոց. կամ այլոց տեղեաց սահեցուցանէ զինքն ընդունէ ՚ի մեկնեալ զհնացեալ մաշկն, ասի՝ կրթել ընդ այն ծակն: Արփոս: Մերթ եւս դլորել. կամ կործանել. կամ անկանել: Նոբէլ. Ողբ. 2. հատ. ժե: Լամբրօն: եւ ըստ այսմ երբեմն ՚ի գործ ածի ընդ անուանս ապա-

մին ապուշ, այսպէս, յապուշ կրթել. եւ նշանակէ՝ յապշութիւն անկանել. կամ ապշել: Ողբ. 2. հատ. իա: Մերթ եւս ՚ի կիր արկանի ընդ նախադրութեան այսմիկ զհետ, այսպէս, զհետ կրթել. եւ նշանակէ զհետ ամէ դիլ. կամ հետամուտ լինել. ուստի. Եփեսի. նեցին. Խորէն. Գ. գլ. 17. եւ 18. եւ 25: Մերթ եւս նշանակէ գնալ. կամ չու առնել. եւ ըստ այսմ ասի. դիմէր. կրթէր. անցանէր. այսինքն. կամ չու առնէր: Այսպէս է եւ 2. Մակ. 12. 10. ուր ասի. Անտի կրթեցին երբեմն ՚ի վտառաւանաւ, որ անուն գնայցին: Բայց քաջ է ՚ի սխալմանէ գրչաց բառն կրթեցին ասել ՚ի ներքեւ կարթեցին: Իսկ մինչ ասի. յաւելուլ կամ կրթել ՚ի բացեաց բանիցս կրթի արդարութեան, խմանի յառաջ գայ, կամ հեռանալ: Ողբ. 1. հատ. եզ:

Կրթութիւն. թեան: || վարժութիւն. կամ հմտութիւն. կամ ուսումն. կամ գործածութիւն: Եբրա. 8. 18: 1. Տիմ. 4. 8:

Կրիայ. ի. իւ. իւ. իւք: || տես զԿրիայ ՚ի հարց. է. եւ իզ:

Կրկուխ. սի. սւ. սց. օք: || է բառ յունա-կան. որով նշանակի՝ դատաստան. կամ գաւառ. կամ մենաստան: ՚ի Հարց հարց. Ժ:

Կրծեմ. եցի. եաւ. ել: (Ներգործ.) || ատամամբ խածատելով քարշել եւ կոտրել. կամ ուտել. ուստի. կործէլ: 1. Թագ. 9. 24:

Կրծիլ: (Նախդրիւ Հոլովի.) || ելանէ սա ՚ի Կրծեմ բայէն, որ կերլին ՚ի բայէն ուտեմ. եւ զենլին ՚ի բայէն զենում: Ուստի կրծելին նշանակէ զկրծելին: Իսկ մերթ ըզկրծօղն. եւ զուտօղն. եւ ըստ այսմ չար եւ կծծի իշխանք, որք միշտ կրծեն եւ ուտեն ըզկեանս աղքատաց կեղեքելով զնա. կոչին կրծիլք. այսինքն կրծօղք. ըստ այսմ. Խորէն. Գ. գլ. 68. իշխանք ապստամբք զաղակից գողոց. կծծիք կրծիլք. եւ այլն:

Կրծկալ. ի. իւ. եց. օք: || կալնօղ կրծոց. որով նշանակի քատակումն հանգերձեղէն, ինչ. զոր արկանեն զկրծովք երեխայից. եւ այլոց ոմանց՝ պնդելով զնա կապովք, զորս հաստատեալ ունի ՚ի վ՟ր իւր: Ամենա-կեցիկ:

Կրկէս. կիսի. աւ. աց. օք: || Թէատրոն. կամ ասպարէզ, այսինքն մեծ եւ ընդարձակ տեղի ՚ի բաց բաց, ուր առնէին զաշխարհական խաղս. կամ, որ կոչէին զամենայն ապականութիւն. կամ ձիովք արշաւանս առնել. զանգիւք մրցիլ. ըմբշամարտութեամբ մաքառել. կամ զօրութիւնս ցուցանել: Եւ այլն: Եզր. որդ. եւ Արփ. դատ. Բ. հատ. Ձ: Բայց ՚ի գիրս Խորէն. Բ. գլ. 76. ՚ի սխալմանէ փոխանակ. գրելոյ կրկեսին. ՚ի Ձեռագրեալ է կարկեմին, այսպէս է ՚ի ձեռագրեն. նաեւ ՚ի շնորհալւոյն, որ ՚ի շարակնոցն դպրեն. նաեւ՝ զայնմանէ ասէ. Զկրկեսին մեծաշքարհիկ ձերոյն թեցցեն կոտորածեալ: Այնպէս կրկէս խաղին եւ այլք տունք, կամ վարժարանք խաղուն. եւ այլք տոնք, կամ վարժարանք խաղուց. զորս շինեն առ ՚ի խաղալ ՚ի նոսա ըզոսկի զի ՚ի զամենայն անկեալ աշխարհական եւ անմարդ-կային կենաց կամ ուսանելի զայնպիսիս. եւ ըստ այսմ էր կրկեսն, որ յիշի 2. Մակ. 4. 9. ուր սաղմոսական նշանակեալ զամենայն հանդիսական կըրկեսն հրէից ՚ի հեթանոսական աղանդութիւն պատճառաւ՝ կամ՝ այսպէս

նոսաց կրթեալ և վարժեալ լինելին՝ ի մրցած խաղարկութեան, և՝ ի մրցմանս: Եւ այս ան- գիւ՝ ի 12. համարն ասորէ՛ն Գեղոց կոչի երկ- տասարդանաց:

Կրկին · կրկնոյ · ով · ոց · ովք: Կրկնապատիկ · կամ երկպատիկ · որով մերթ իմանի աւել, փոխանակ միոյն երկու · կմ երկու առաւ- ձանուս աւելի քան զմին: Յոբ. 42. 10: Իսկ մերթ իմանի երկկուսի · ռամկ · Էրջուոյն · կմ էրջու զաթ: Եւեց. 39. 9: Աղաւ. 31. 21: Իսկ մերթ նշանակէ զերկեակն · յս զերկուսն · և ը այսմ իմանի · Ծննդ. 23. 9. և 25. 9. յորս ասի՝ այր կրկին · վն զի քարանձաւն այն ու- նէր զերկեակ փապարս · կմ ծերպս իբրև զերկու սենեակս: Մերթ ևս նշանակէ եր- կու · և ը այսմ է Գործ. 12. 6. ուր ասի՝ կապեալ կրկին շղթայիւք · յս երկոքումբք շղթայիւք: Իսկ Եւեց. 4: և 35. 6. յորս ասի · կարմիր կրկին · իմանի երկիցս ներ- կեցեալն · վն զի կարմիրն այն միանգամ ներկեալ՝ մինչդեռ բուրդ էր · և միւսան- գամ, յորժամ մանեալ և ոլորեալ լինէր: Ըստ այսմ ևս իմանի յորժամ ասի · կարմիր կրկնեալ · այս գնի · Եւեց. 26. 1:

Կրկին: (մակբայ կրկնական ·) || վերստին · կմ միւսանգամ: Նարէկ. լղ:

Կրկնա · կրկնոյ · իւ · աց · ցք: || է արմատ կրկ- նել բային, որով նշանակէ՝ կրկնութիւն · յս բերելով, և փոխելով արտնութիւն · կմ քրքրութիւն: Բայց սա գրեթէ միշտ ընդ այլս բառի շարակցի այսպէս · բանակրկնա · գերեզման- նակրկնա · մանրակրկնա · և այլն · զորս տես- ցես 'ի տեղիս իւրեանց:

Կրկնաբանեմ · եցի · եա · եալ: (ներգործ ·) || վերստին կրկնել զայն՝ զոր ասացն միան- գամ · և կմ երկրորդել զբանս: Լամբրոն:

Կրկնաբանութիւն · թեան: || կրկնութիւն յառա- ջագոյն ասացելոցն · կմ երկրորդութիւն միան- գամ ասացելոցն: Լամբրոն:

Կրկնաբաշխ · ի · իւ · եց · իւք: || կրկին բաշ- խօղ · կմ այն՝ որ յերկուս մասունս անջա- տի · և կմ երկուց առնեալ լինի:

Կրկնաբարձ: (Նախադրիւ հոլովի ·) || կրկին կերպիւ բարձօղ · կմ կրկին անգամ բար- ձեալ: Իսկ մերթ նշանակէ զկրկնակ բար- ձօղն · որպիսիքեն երկոքին թևք թռչնոց · կմ երկոքին բազուկք մարդկանց, որովք բարձեալ լինի իմն ինչ երկոքումբք գոր- ծեօք: Նարէկ. խդ:

Կրկնագրեմ · եցի · եա · եալ: (Ներգործ ·) || կր- կին անգամ գրել · կմ երկրորդել զգրելն: Խորէն. Բ. գլ. 65:

Կրկնադատ · ի · իւ · եց · իւք · կմ ցք: || կրկին անգամ · կմ կրկին կերպիւ դատօղ: Իսկ մերթ նշանակէ զայն, որ կրկին կերպիւ · կմ կրկին անգամ է դատեցեալ · կմ դա- տապարտեցեալ: Նարէկ. իզ:

Կրկնակ · ի · աւ · աց · ցք: || կրկին · կմ երկեակ · կմ երկպատիկ · կմ կրկնապատիկ: Լամբրոն: Իսկ մինչ ասի՝ կրկնակ գիր · կմ՝ տառ · նը- շանակէ զայնս բաղաձայնս, որք ունին ըզ զօրութիւն երկուց բաղաձայնից: որպիսիք են սոքա · ծ · ձ · ջ · ց · և այլն:

Կրկնակապէն · պենի · աւ · աց · ցք: || այն՝ որ է կրկնակի կապէն · յս կրկնակի չար գլին, կմ չար վարձ: և ը այսմ կաշառածգութին, որով հրէայքն կրկին անգամ առին զկա- պէնս, յս զչար վարձ, միանգամ յուդայի, առ՝ ի մատնել զՔրն · իսկ միւսանգամ զի- նուորացն, առ՝ ի յոչ խոստովանել զյարու- թիւնն, կոչեցաւ կրկնակապէն: Նարէկ. լդ:

Կրկնակական: (Նախադրիւ հոլովի ·) || կրկին անգամ կականօղ · յս մեծաձայն ողբացօղ · կմ այն՝ որ կրկին անգամ ողբացեալ լի- նի · և կմ այն՝ որ պատականի առ կրկին ան- գամ ողբացումն · և ը այսմ ասի՝ կրկնակա- կան ձայն · կմ կրկնակական եղերերգութի: Նարէկ. խէ:

Կրկնական · ի · աւ · աց · ցք: || այն՝ որ վերա բերի առ կրկնութիւն: Նաստի և մակբայք, որք նշանակեն զկրկին անգամ լինելն իրի իմիք, ասին կրկնականք · որպիսիք են սոքա · վերս տին · միւսանգամ · և այլն:

Կրկնակի: || մերթ վարի իբրև գոյական, և հոլովի նախդրիւ · և նշանակէ կրկին · կմ երկեակ · կմ երկու: և ըստ այսմ ասի՝ կրկ- նակի շարիղ · կմ ծնունդ: Լամբրոն: Եւ մերթ նշանակէ կրկնապատիկ · կմ երկպա- տիկ: Իսկ մերթ վարի իբրև զմակբայ · և նշանակէ կրկին կերպիւ: Խորէն. Ա. գլ. 3: Իսկ մերթ նշանակէ երկիցս: Նարէկ. հէ: Ը այսմ է և Յեսու. 5. 2. ուր ասի, Թլփա- տեսջես զորդիսն իսրայէլի կրկնակի, այս է՝ զկէսն ժողովրդեանն նախ, զի մնացեալքն ընդդէմ Թշնամեաց վառեալ կացցեն · և ապա 'ի յառաջնմանալն նց՝ զմիւս կէսն: Մերթ ևս բառս կրկնակի · նշանակէ՝ միւս անգամ · կմ վերստին: Նարէկ. ծդ:

Կրկնաձիր: (Նախդրիւ հոլովի ·) || կրկին ան- գամ ձրօղ · յս պարգևօղ · կմ տուօղ · կմ կրկին անգամ ձրեալ · յս պարգևեցեալ՝ և տուեալ · և կմ այն՝ որ երկուց իրաց պար- գևեալ լինի · որպիսի է առողջութին, որ հոգւոյ և մարմնոյ պարգևի: Նարէկ. դ. և զէ:

Կրկնամանածեալ · ելոյ · ով · ոց · ովք: || կրկնա- կի մանածեալ · և կմ կրկնապատկեալ:

Կրկնամեռ: (Նախդրիւ հոլովի ·) || երկրորդ անգամ մեռեալ · կմ երկիցս մահացեալ · որպիսի է այն, որ նախ միանգամ մեռա- նի, և յետոյ կենդանացեալ՝ դարձեալ մե- ռանի: Եւ կմ նա՝ որ նախ այնպէս հար- ուածեալ լինի, մինչ զի 'ի յետին շնչոյն հա- սանի · և յետոյ սատակագոյն ևս հարուած 'ի վր եկեալ՝ խաղաղ կորնչի: Իսկ մերթ նշանակէ զկրկին կերպիւ մեռեալն · որպի- սի է նա՝ որ ը հոգւոյ, և ը մարմնոյ մե- ռանի: Բայց մինչ զծառոյ ասի՝ նշանակէ զբոլորովին դառացեալն · և կամ զայն, որ նախ չորանայ · և յետոյ արմատաքի խլի: Յուդայ. 12:

Կրկնայարկ · ի · իւ · աց · օք: || տուն · կմ պա- լատ, որ ունի զկրկին յարկս մի 'ի վր միոյ կառուցեալ · ռամկ · էջկու ղաթ տուն: Խոր- էն. Բ. գլ. 15:

Կրկնածախսաւոր։ (Նախդրիւ հոլովի.) || կրկնակի ծախսատու, կամ ծախսաւորեցեալ. և կմ այն, որում ոք կրկին կերպիւ ծախսատու. և ըստ այսմ առնի, կրկնածախսաւոր կշտամբութեան։ Նորէն. ծդ։

Կրկնաշահ։ (Նախդրիւ հոլովի.) || կրկնապատիկ շահեցուցեալ. կմ շահելով կրկնապատկեալ։ և ըստ այսմ առնի կրկնաշահ քանքար։ 'ի շահաւորութիւն։ Իսկ մերթ նշանակէ ըզ կրկին լիով շահօղն։

Կրկնապատիկ. ակի. աւ. կամ իւ. աց. օք։ || երկպատիկ. կմ փոխանակ միոյն երկու. և կմ կրկին։ Նորէն. հէ։

Կրկնապատկեմ. եցի. եալ. ել։ (Ներգործ.) || երկպատիկ առնել. կմ փոխանակ միոյն, յաւելուլ զերկուս։

Կրկնապարտ։ (Նախդրիւ հոլովի.) || կրկնեալ, և պարտաւորեալ. ըստ բաղդատութեան կորացեալ. կմ կեռացեալ. որպիսիք են կտուցք ոմանց թռչնոց. և կմ խայթոցք ոմանց գեռնոց. և այլն։ Նորէն. կլծ։

Կրկնապղտոր։ (Նախդրիւ հոլովի.) || կրկնակի պղտորող. կմ կրկին կերպիւ պղտորեցեալ. և կմ վերստին անդրադարձեալ և պղտոր եղեալ։ Նորէն. խե։

Կրկնավտակ. ի. աւ. աց. օք։ || այն՝ որ ունի զկրկին վտակս. կմ կրկին վտակօք հոսի, յի մէջ տեղւոյն. որպիսի է ջուրն՝ որ բղխեալ յականէ յերկուս առաջս անջատի։ տեսանի և աղբիւր անդադրոյ կողին Քրիստոսի. յորմէ արիւն և ջուր յերկուս վտակս անջատեալ հոսեցան՝ կրկնավտակ կոչի։

Կրկնատեղ։ (Նախդրիւ հոլովի.) || կրկնապատիկ աւելի տեղի. կմ յոյժ տեղեդա- դոյն. կմ յոյժ զազիր և գարշելի։ Նոր. ղէ։

Կրկնատեսակ. ի. աւ. աց. օք։ || տես զերկ- կատեսակ։

Կրկնեմ. եցի. եալ. ել։ (Ներգործ.) || կրկին անգամ առնել. կմ վերստին առնել զայն, զոր միանգամ արար. և կմ երկրորդել։ Յօբ. 9. 1։ և 10. 16։ Եզեկ. 21. 14։ Մերթ և նշանակէ երկկուղի առնել. ուստի. Էրկոա- ղութ անել. և ըստ այսմ յորժամ զմի փետրին 'ի վր. միւսոյն դարձուցանեմք. ասի կրկնել զփետուրն։ Ելից. 26. 9։ Իսկ մերթ նշանէ ձկել. կմ թեքել. կմ կորացուցանել. և ըստ այսմ յոր ժամ զփայտ ինչ յետս թիքեցեմք. կմ զուղիղ երկաթ ինչ թեքեմք. և կմ ուսմեք ըզ ծունր խոնարհեցուցանեմք, ասի կրկնել։ 3. Թագ. 19. 18։ Խոր. ճ. ճառ. 37։ Մերթ և 'ի կրաւորականումն նշանակէ՝ յետս դառ նալ. կմ անդրէն դարձ առնել։ Թագ. 21. 33։ Յօբ. 39. 4։ ըստ այսմ և բարբառն. ծպ ձայնն՝ յորժամ դառնայ անդրէն յետս՝ ասի կրկնեալ. ծպ հանդիպել 'ի լերինս. կմ 'ի քարայրս. և յայլ սոյնին նման տեղիս. յորս մինչ ոք ուժգին գոչէ, անդրադար- ձի ձայնն։ 3. Մակ. 6. 13։ Իսկ թէ զինչ նը շանակէ՝ յորժամ ասի կարմիր կրկնեալ. տե՛ս 'ի բառն Կրկին, ուր լիաճ մեկնեցաւ։

Կրկնեռանց։ (Նախդրիւ հոլովի.) || կրկին ե- ռացուցանող. կմ եռացուցեալ. և կմ կրկին անգամ եռացեալ։ Նորէն. զդ։

Կրկնոց. ի. աւ. աց. օք։ || վերարկու. կամ արտաքին զգեստ. որ մինչև 'ի կրունկն հա սանի, և պատէ զզգեցօղն բոլոր։ Իսկ աստ կրկնոց. քան որում զգեցեալ լինի 'ի վր նախկինոյ զգեստու. այլ 'ի վր կապայից առեալ լինի վերարկուն. կմ փիլոնն. և կմ չուխայն։ 1. Թագ. 2. 19։ և 15. 27։ Յօբ. 29. 14։ Սաղմ. 108. 29։ Մերթ և ա նշանակէ զայն ձորձն. կմ մազեղէնն, որ է իբրև զեր կայն փեղկ ինչ կտաւոյ, և 'ի միջին մա սին ունի զծակ ինչ իբրև զօձիք՝ ընդ որ անցուցեալ զնա 'ի պարանոցն՝ կրկնեն. ծպ զկէս մասն նը առկանեն 'ի յառաջին կողմն իւ րեանց. և զկէսն յետին կողմն. զորպիսիս կրեն այժմ կրօնաւորք ոմանց կարգաց։

Կրկնուած. ոյ. ով. ոց. ովք։ || կրկնումն. կմ կրկնապատկութիւն։ Իսկ մերթ նշանա կէ զյօդս անդամոց կենդանեաց, որովք անդամքն կրկնին. և ձկին։

Կրկունք. կանց. կամբք։ || կրնկունք. կմ գար շապարք։ և ըստ այսմ է Երեմ. 13. 22. ասա- ցի՝ խայտառակել զկրկունս քո. ծպ մերկա- ցուցանել զկրնկունս քո. քանզի առաւ նակ լով զքեզ 'ի ճանապարհ իբրև զիբրև ըզ գանձ կանայս, որով խայտառակ և նշա ւակ լինիս։

Կրկուռ. կրկռի. իւ. իւ. իւք։ || մանր փայտ ուր կոտոր. կմ խազիւ. կմ չորացեալ և յեր կիր անկեալ ձիթենոյ ծառոց։ 3. Թագ. 17. 12։ Նորէն. հ։

Կրկտակերտ. ի. իւ. աց. օք։ || կերտեցեալ 'ի կրկտէ. ծպ 'ի խռուճոյ. կմ 'ի բրածոյ. և 'ի չորացեալ ձիւթոյ. որպիսիք են բոյնք թռչնոց։ Աճգամ. ։

Կրկռեմ. եցի. եալ. ել։ (Ներգործ.) || բրդ լով, և փշրելով աղանել. կմ քքքել. և ըստ այսմ ելանէ 'ի սմանէ զերկզմնակրկռու թիւն մեկնեցաւ 'ի տեղւոջ իւրում։ Իսկ յայս մանէ, առեալ երբեմն նշանակէ զաւն ինչ. կմ զատակ ինչ հեռացուցանել. կմ մանրա մասնաբար քննել. առ 'ի հասու լինել ըզ բուն թէ ոչ. և ըստ այսմ ասի 'ի գիրս. Ո- կէս ճանապարհ. եթէ ըստ բանի կամեցեր զառաջինն քննել, և մանր կրկռել։

Կրճատ. ի. իւ. ից. իւք. կմ օք։ || ծայրատ. ծպ այն. որ հատեալ ունի զծայրն իւր. և կմ որոյ ծայրն պակասի. և ըստ այսմ յա պաւեալն, կամ թլփատեալն կրճատ կոչի։ Այսպիսիքն կրճատ ասի և անդամատ։ և ըստ այսմ կենդանին. որոյ ալօճն է հատեալ. և կմ որ ոչ ունի զայրս՝ կրճատ կոչի. որ ասի՝ Ղևտ. 22. 23։ Ջարդամ և զաչեռ կանթեղաւ. կմ զկրճատ. ծպ պաշար։

Կրճատական. ի. աւ. աց. օք։ || այն՝ որ պատ կանի առ կրճատն. կմ կրճատեցեալ. կմ յապաւեցեալ. և կամ թլփատեցեալ։ Կոչ ղի Եղէգ. ժբ։

Կրճատեալ. ելոյ. ով. ոց. ովք։ || կրճատ. և ղեալ. ծպ ծայրատեալ. կմ անդամատեալ. և կմ թլ փատեցեալ։ Նորէն. խիդ։ Ուստի և նա՝ որոյ առնացեալ անդամն հատեցեալ է՝ կրճատեալ

Digitized by Google

կոչի, որպէս գնի 2. Օրին. 23. 1:

Կրձատեմ. եցի. եա. եալ: (Ներգործ.) || ծայրատել, ի՛ հատել՝ կամ հատանել զծայրս իրին. և ըստ այսմ յարմարելն, կամ թլփատելն կրձատել ասի, և թլփատեալն կրձատեալ կոչի: Կիւրղի Եղէկ. ժբ: Մերթ և նշանակէ անդամատ առնել, ի՛ բաց հատանել զանդամս կենդանւոյ ուրուք, ի՛ զոտս, կամ զձեռս, և կամ զպոչն. և այլն: Աստի և կոտորելն զվերջինս, կամ զյետնամնացս զօրաց, կամ ժողովրդեան՝ ըստ որում են իբրև զպոչ նց, կրձատել կոչի: 2. Օրին. 25. 18: 1. Մակ. 7. 46:

Կրձատութիւն. թեան: || ծայրատութիւն. կամ անդամատութիւն. ի՛ կտրումն ծայրի անդամոյ: և ըստ այսմ թլփատութիւն, ըստ որում է հատումն մորթոյ ծածուկ անդամոյ առն. կոչի կրձատութիւն: Փիլիպ. 3. 2:

Կրճեմ. եցի. եա. եալ: (Ներգործ.) || զատամունս կափուցանելով, և սեղմելով սաստ և անդ շարժել, և զձայն և զշառաչիւն հանել. որ հանդիպի 'ի բարկութենէ. կամ 'ի նախանձու. և կամ 'ի սաստիկ ցրտոյ, և 'ի սառեցմանէ: ռամկօրէն տիշլէրը գըճըրտէր: Մատթ. 8. 12: և 22. 13:

Կրճիմն: (Նախդրիւ հոլովի.) || խարոց. կամ անջրպետ. ի՛ այն իրն, որ 'ի մէջ անկեալ խափանէ զհաղորդակցութիւն միոյն ընդ միւսոյն. և կամ զմինն 'ի միւսոյն անջրպետէ. և ըստ այսմ կրճիմն ասի ցանկն. միջնորմն. կախեալ վարագոյրն. առուն, կամ գետն, որ 'ի մէջ երկուց սահմանաց. և այլք նմանք: Լամբրոն: Եթէ յայսմանէ առեալ երբեմն ո՛ և իցէ արգելք, կամ խոչ, և կամ խափանիչ, կրճիմն կոչի: Լամբրոն: Աստի և մեղքն ադամայ. և կամ բանքն անիծադրութեան ըստ որում իբրև զանվանելի խոչ և խափան լինէին մինչև արքայութե, կրճիմն կոչեցան: Մերթ և նշանակէ ո՛ և իցէ խառնութիւն. կամ տարբերութիւն. և կամ զանազանութիւն, որ լինի 'ի մէջ երկուց. կամ 'ի մէջ բազմաց, որով տարբերին յիրերաց: Ոսկէ. 1. հատ. ժդ:

Կրճումն. կամ կրճտումն. ճման. մամբ. մանց. մամբք: || կափուցանելով և սեղմելով զատամունս սաստ և անդ շարժելն զնն հանդերձ շառաչմամբ. ոք հանդիպի 'ի սաստիկ կատաղմանէ. կամ 'ի ցրտոյ. և այլն: Նարեկ. հթ: Ոսկէ. 1. հատ. ժա:

Կրճտեմ. եցի. եա. եալ: (Ներգործակ.) || Եղանէ սա 'ի կրճեմ բայէն իբրև զյաճախական նր. և նշանակէ կրճելով կրճել. կամ սաստիկ կրճել: ռամկ. տիշլէրը գըճըրտէր: Յոբ. 16. 10: Սաղմ. 34. 16: Գործ. 7. 54:

Կրմուղ. կրմղի. իւ. լից. կամ աւ. աց. օք: || Նոյն է սա ընդ բառիս՝ տրմուղ, որ նշանակէ զանվարժն, և զանկիրթն 'ի կրել զբեռինս, կամ 'ի վարել զերկիր. որպիսի է նորահաս զուարակն, կամ նորահաս էշն. և այլք գրաստք. ուստի երբեմն 'ի միասին 'ի գործածին այսպէս. տրմուղ կրմուղ. ըստ այնմ, Կիւրղի Եղէկ. ժբ. Թագաւորն Յն նստաւ 'ի վր տրմղի կրմղի յաւանակի:

Կրնապան. ի. աւ. աց. օք: || տես զԱրակապան:

Կրունկն. կրնկան. ամբ. ունք. անց. ամբք: || գարշապար, որ է յետին մասն ոտից մարդոյն, և է կարծր. որ ռամկ. ասի [illegible]: Եւ սա մերթ ընդ բայի շարակցի այսպէս. ը կրունկն. կամ ը կրունկ դարձեալ. և նշանակէ՝ 'ի կողմն կրնկան դառնալ. կամ յետս դառնալ: 2. Թագ. 11. 15: և Նարեկ. հա:

Կրպակ. ի. աւ. աց. օք: || գործարան արուեստաւորաց. ի՛ տեղի՝ ուր արուեստագէտքն գործեն. կամ ուր նստեալ վաճառականքն՝ վաճառեն զվաճառելիսն. ռամկ. խանութ: Լամբրոն: Իսկ մերթ նշանակէ զպանդոկն. կամ զիջեվանն, ուր պատրաստեն, և վաճառեն զկերակուր, և զըմպելի: Գործ. 28. 15:

Կրպականոց. ի. աւ. աց. օք: || տեղի կրպակաց. կամ տեղի՝ ուր կրպակաւորքն զվաճառականութիւն առնեն: ռամկօրէն չարշը: Լամբրոն:

Կրպակամուտ. մտի. իւ. ից. իւք: || մտանող 'ի կրպակս. ի՛ 'ի պանդոկս գինեվաճառաց: Իսկ մինչ ասի. կրպակամուտ պղծութիւն. իմանի աղտեղութիւն այն, որ հետևի 'ի մտանելն 'ի գինեվաճառանոցս. կամ 'ի պանդոկս: Կիւրղի Եղէկ. դ:

Կրպակաւոր. ի. աւ. աց. օք: || ունող զկրպակ. և կամ 'ի կրպակի նստող, և վաճառող: Լամբրոն. և 'ի Հարց. ը: Իսկ մերթ նշանակէ զպանդոկապետն. ի՛ զնա, որ 'ի պանդոկի վաճառէ զգինի:

Կրսեր: || Նոյն է սա ընդ կրտսեր բառին. որպիսիք են և այլք բազումք անուանք, որք երբեմն առանց տիւնի, և երբեմն տիւնիւ գրին, առ 'ի ցուցանել զյաճախութիւն ինչ: Խորէն. բ. գլ. 7. և 48. և 77: և 'ի Յն օրհն:

Կրսերագոյն: || տես զԿրտսերագոյն: Խորէն. գ. գլ. 51: Ոսկէ. 1. հատ. գ:

Կրսերադաս. ի. իւ. լից. իւք: || վերջադասեալ. ի՛ 'ի վերջին. կամ 'ի ստորին տեղւոջ դասեցեալ. կամ եղեալ:

Կրտսեր. ոյ. ով. ոց. ովք: կամ աւ. աց. օք: || նա, որ փոքր է 'ի մէջ եղբարց. կամ կարգաւ ծննդեան յետոյ է եղեալ քան զայլս: Ծննդ. 25. 23: 3. Թագ. 16. 34: Իսկ մերթ նշանակէ զո՛ և իցէ վայրագոյնն. կամ ըղ նուաստն, որ նկատմամբ վերնագունին ասի կրտսեր: Եսայ. 60. 22: 1. Թագ. 9. 21: Մարկ. 2. 6:

Կրտսերագոյն. գունի. իւ. լից. իւք: || առաւել կրտսեր. կամ փոքրագոյն. կամ նուաստագոյն: 1. Մնաց. 24. 31: և 2. Մնաց. 21. 17:

Կրօն. ի. իւ. կամ կրօնք. ից. իւք: || մերթ նշանակէ օրէնք. կամ սահմանադրութիւն. կամ սովորութիւն, որով վարին մարդիկ. կամ պաշտօն. և կամ պաշտամունք: Դատ. 11. 39: 4. Թագ. 17. 8. և 26: Իմաստ. 14. 23: Գործ. 21. 21: Իսկ մերթ նշանակէ վարք. կամ կենցաղավարութիւն. կամ քաղաքավարութիւն: Նարեկ. հա. և ղբ. և ղթ: Իսկ մերթ մանաւորապէս առեալ նշանակէ զառաքինութիւն ինչ, որով լինի ճգնաւորութիւն. կամ որով արժանաւոր պաշտօն մատուցանի

եայ։ Եւ մերթ կրօն ասի կարգն կրօնաւորաց, յորում վարին կրօնաւորքն նոյնով կանոնաւ, և նոյնով համադերձիւ ըստ իշխանութեան միոյ մեծաւորի նոյնոյ կրօնի։

Կրօնազօր ։ (Նախդրիւ հոլովի ․) ‖ զօրացեալ ՚ի կրօնս և ՚ի կարգս․ և կմ՝ որ զօրաւոր է կրօնիւք, և օրէնսդրութեամբ․ կմ՝ բարեկարգութեամբ։ Նարեկ․ ՚ի գովեստ առաքելոց։

Կրօնակից․ կցի․ աւ․ կմ՝ իւ․ աց․ օք։ ‖ կցորդ․ կմ՝ ընկեր ուրեք ՚ի նոյնում կրօնի․ կմ՝ պաշտօնակից․ կմ՝ կենցաղավարակից․ և կմ՝ կենակից ուրեք ։ Լամբրօն ։

Կրօնասէր․ սիրի․ աւ․ աց․ օք։ ‖ սիրող կրօնից․ կմ՝ պաշտօնասէր․ կամ կարգասէր ։

Կրօնատուն․ ի․ աւ․ աց․ օք։ ‖ տեղի՝ ուր լինին կարգք և կրօնք, և կմ՝ կրօնաւորաստան, ֆ տեղի՝ ուր բնակին կրօնաւորք ։ Նարեկ․ հէ։ և Լամբրօն։

Կրօնաւոր․ ի․ աւ․ աց․ օք։ ‖ ունող զկրօնս ածպաշտութեան․ կմ՝ անարատ կենօք քաղաքավարող․ կմ՝ բարեպաշտ․ կմ՝ բարեկրօն․ կմ՝ ածպաշտ։ Յակ․ 1․ 26։ Իսկ մերթ ճըգնաւոր․ կմ՝ ճգնազգեաց․ կմ՝ խստակրօն։ Նարեկ․ ղթ։ Մերթ և մանաւորապէս առեալ՝ նշանակէ զմիայնակեացս․ կմ՝ զաբեղայս, որք առնելով զերիս ուխտս, ֆ աղքատութեան, ողջախոհութեան, և հնազանդութեան, բնակին յառանձնութեան․ կամ ՚ի վանս, և ՚ի մենաստանս։ Խորէն․ գ․ գլ․ 49․ և 67։

Կրօնաւորական․ ի․ աւ․ աց․ օք։ ‖ այն՝ որ պատկանի առ կրօնաւորն․ և կմ՝ բարեպաշտական․ կամ բարեկրօնական ։

Կրօնաւորաստան ։ ‖ տե՛ս զԿրօնատուն ։ Լամբրօն ։

Կրօնաւորացու․ ցուի․ աւ․ աց․ օք։ ‖ այն՝ որ համդերձեալ է լինել կրօնաւոր․ կմ՝ որ պահի ՚ի կրօնի վն լինելոյ կրօնաւոր ։

Կրօնաւորիմ․ եցայ․ եալ․ իլ։ (Ձայնակր․) ‖ մերթ նշանակէ՝ կրօնաւոր, և միայնակեաց լինել ՚ի վանս մտանելով։ Խ․ ըէն․ թ․ գլ․ 77։ Իսկ մերթ վարիլ ըստ սովորութեան, և ըստ կանոնաց կրօնին՝ յորում է․ կմ՝ կենցաղավարիլ․ և կմ՝ ճգնութեամբ իւրք վարիլ։ Աձգոն։ Մերթ և նշանակէ ունիլ զկրօնս, կմ՝ զօրէնսդրութիւն ուրուք օրէնսդրի։ Ըստ Կողոս․ 2․ 20․ ուր ասի․ Զի՞նչ աստէն կրօնաւորիք, իմանի, զի՞ և կալնուք զկրօնս, կմ՝ զաղանդ փիլիսոփայից, որք ըստ մարմնոյ գնան․ և ոչ ըստ ած ։

Կրօնաւորութիւն․ թեան։ ‖ միայնակեցութիւն․ կմ՝ ճգնաւորութիւն։ Իսկ մերթ ունիլն ըզ բարեպաշտական կրօն ինչ․ կմ՝ բարեպաշտութիւն․ և կամ Աստուածպաշտութիւն ։ Յակ․ 1․ 27։

ԿՑ

Կցանկ․ ի․ աւ․ աց․ օք։ ‖ կցորդ․ կմ՝ հաղորդ ։ Իսկ մերթ նշանակէ զկցեալսն ՚ի միասին․ և կմ՝ զզոյգն, որպիսիք են երկուհացք կցեալք ընդ միմեանս ։ Լամբրօն ։

Կցայօն․ ի․ իւ․ ից․ իւք։ ‖ այն, որոյ երկոքին յօնքն կցեալք են ընդ միմեանս ։

Կցացեմ․ եցի․ եա․ ել։ (Ներգործ․) ‖ կիցս ընկենուլ․ կամ աքացել․ կամ աքացի հարկանել․ զի ելանէ ՚ի բառէս կիցք, որ նշանակէ զաքացի։ ռամկ․ ըէ+մէ ․․․ ․ կմ՝ ․․․փել։ Ոսկե․ 1․ հատ․ ժգ։

Կցեմ․ եցի․ եա․ ել։ (Ներգործ․) ‖ միաւորել․ կամ շարակցել․ կամ ընդ միմեանս մածել․ կամ յօդել․ կամ յարել։ Ելից․ 26․ 3։ 2․ Մակ․ 1․ 23։ և Յոբ․ 41․ 7։

Կցիմ․ եցայ․ եալ․ իլ։ (Ձայնակր․) ‖ յարիլ․ կամ միաւորիլ․ կամ միանալ․ կամ յօդիլ․ կամ հպիլ։ Ղևտ․ 19․ 34։ Տոբ․ 6․ 22։ Սաղմ․ 10․ 6։ Առակ․ 23․ 3։

Կցկտուր։ (Նախդրիւ հոլովի․) ‖ եկամուտ․ կամ յետոյ ՚ի վերայ եկեալ․ կմ՝ հանդիպեալ․ կամ պատահական․ որոյ ներհակն կոչի ըզնական ։ Եւ ասացաւ կցկտուր․ զի երբեմն կտուր և մասն կցի և յարի յայնս՝ որոց հանդիպի։ Ոսկե․ 1․ հատ․ ժ ։

Կցկցեմ․ եցի․ եա․ ել։ (Ներգործ․) ‖ ը մ․ մեանս կցել․ կմ՝ յարել․ կամ կարկատել․ կամ յօդել․ կամ պատշաճառել․ և ըստ այսմ ասի՝ կցկցել զձորձս․ կմ՝ զպատմուճանս և այլն ։ Ոսկեղ․ եղէն․ ժբ ։ և ՚ի ճառ հատ․ ժդ ։

Կցստեմ․ եցի․ եա․ ել։ (Ներգործ․) ‖ նոյն է ընդ վերնոյն ։ ՚ի ճառս հատ․ է ։

Կցորդ․ ի․ աւ․ աց․ օք։ ‖ մասնակից․ կամ հաղորդ ։ Սաղմ․ 24․ 21 ։ և 140․ 4։ և Փիլիպ․ 4․ 14։ Իսկ մերթ նշանակէ զհաւասարակիցն․ կամ զմասնակիցն։ Նարեկ․ զԹ․ Եւ մինչ ասի կցորդ կենաց ուրուք․ իմանի՝ կենակից ուրուք, ֆ կենցաղավարող ընդ նմա, կամ ընտանեկից ։ Խրատ․ 8․ 9։ և Երեմ․ 14․ 1։ Իսկ մերթ կցորդ․ կամ կցուրդ կոչի այն տունն սաղմոսին, որ ՚ի միջոյ միոյ փոխի առեալ՝ ասի յեկեղեցւոջ ՚ի միոյ դասէն․ որում ՚ի միւսոյ դասէն կցի և յարի սկիզբն նոյնոյ փոխին․ և հետևաբար այլք մնացեալքն մինչև ցվերջն․ ... մինչ ՚ի կատարել փոխէն ասի կցորդ նշանեցաւն, կցեալ և յարի նմա ՚ի կարգաւ խմբին։ Բայց ՚ի հնումն կցորդ կոչէր նաև այն երգն․ զոր շարագրեալ քաղցր եղանակաւ երգէին ըստ օրինակի կցուրդ սաղմոսի։ Լամբրօն։

Կցորդագիր․ գրի․ իւ․ ից․ օք։ ‖ կցորդեալ դնօղ․ կմ՝ համատօղ․ և կմ՝ կցօղ և յարօղ։ Ըստ առաքելոյն քանի, որք զպաշտամունս աղօթից, երգոց, և այլոց նմանեաց եդին և յաւելին յեկեղեցւոջ, կոչին՝ կցորդագիրք արդարութեան պաշտամանս ։ Նարեկ․ ՚ի գովեստ առաքելոց։

Կցորդակից․ կցի․ աւ․ կմ՝ իւ․ աց․ օք։ ‖ հաղորդակից․ կմ՝ մասնակից․ կմ՝ ընկերակից․ կմ՝ զուգակից։ Նարեկ․ ՚ի գով․ առաքելոց։ և Լամբրօն։

Կցորդակցութիւն․ թեան։ ‖ հաղորդակցութիւն․ կամ մասնակցութիւն․ կամ ընկերակցութիւն․ ՚ի կամ կցորդութիւն ՚ի կենցաղավարութեան․ ՚ի բնակութեան, և յայլս։ Նարեկ․ ՚ի գով․ խաչին։

Digitized by Google

Կցորդեմ. եցի. եա՛. ել: (ներգործ.) || հա
ղորդել. կամ մասնակից առնել. կամ զուգակ
ցել: Լամբրոն: Իսկ մերթ՝ կցել. կամ յարել.
կամ յօդել. և կամ ընծայել: Նարեկ. կզ:
Կցորդութիւն. թեան: || հաղորդութիւն. կամ
մասնակցութիւն. կամ կցումն. և կամ յարումն:
Նարեկ. ղզ:
Կցուրդ: || տես զԿցորդն:

Կ Ք.

Կքեցուցանեմ. ցուցի. ցո. ել: (անցող.)
|| խոնարհեցուցանել. կամ կորացուցանել.
կամ թեքել. կամ կարկամեցուցանել:
Կքիմ. եցայ. եա՛ց. իլ: (ձայնակր.) || կորա
նալ. կամ թեքիլ. կամ կծկիլ. կամ խոնարհիլ,
և երբեմն զկուզ լինիլ. և կամ ընկճիլ: Նա
րեկ. ձէ:
Կքումն. ման. մամբ. մանց. մամբք: || կորա
ցումն. կամ թեքումն. կամ խոնարհումն. և
կամ կարկամութիւն: Նարեկ. ժը:
Կքրիմ. եցայ. եա՛ց. իլ: (ձայնակր.) || ձևա
նալ. ըստ թեքելոյ. կամ յերկիր զինջանելով
պատրաստիլ երբեմն զդարանամուտ՝ առ՛ի
յանկարծ 'ի վերայ յարձակիլ և ըմբռնել. որ
պէս կատուն 'ի յորսալն զմուկն: Եւ յայս
մանէ առեալ՝ երբեմն նշանակէ ջանալ և
նկրտիլ առ՛ի հասանել ումեք. կամ զինիլ ը
դէմ ուրուք. կամ թշնամի ձևանալ. և ըստ
այսմ առի զդիւէն 'ի գիրս Լամբրոն: Այն
քան ևս կքրի հալածել 'ի խորհուրդս. ըստ
ջանայ՝ և ձգտի: Եւ դարձեալ առի: Ամ
ծաշունչ գրոց ընդդէմ կքրել. ըստ զինիլ ը
դէմ ս. գրոց: և յայլուր ասէ. Ապստամ
բութ որդւոյս՝ թշնամի ընդդէմ կքրեցաւ.
ըստ որդւոցս ապստամբաց՝ թշնամի ձևացաւ.
կամ թշնամի լինելով ընդդէմ հարաւ:

Կ Օ.

Կօշեմ. եցի. եա՛. ել: (չեզոք.) || կանչել
ղայրագնամբ. կամ մռնչել. կամ գոչել. կամ
ձայնել: Երեմ. 31. 4:
Կօշիկ. կի. աւ. աց. օք: || ագանելիք ոտից կազ
մեցեալ 'ի կաշւոյ. որով մերթ նշանակի այն
որ զոտս ագանելն մինչև ցծունկս ծած
կէ: տամկ. չիզմէ: Իսկ մերթ նշանակի հա
ղաթափն. ըստ այն՝ որ կոչի երբեմն զորեխ
գիւղականաց. որով միայն ներքին կողմն
ոտից ծածկի. և ունի զփոկս. կամ զկապս,
որք 'ի ագանելն կապին 'ի վերին կողմն ո
տից. և 'ի բոկանալն լուծանին: Եւ կամ
նշանակի այն՝ որ զբոլոր ոտս կրնկամբքն
հանդերձ ծածկէ մինչև ցկոճն. ըստ մինչև
ցթօփուխն: տամկ. ջուտալ: Ելից. 3. 5: Յես.
5. 16: Մարկ. 1. 7: Մերթ ևս նշանակի մու
ճակն, որ ծածկէ զներքին կողմն ոտից. և
զկէս մասն վերին կողմանն. իսկ զկրունկն
մերկ թողու: տամկ. բաբուճ:
Կօշկակար: || տես զԿօշկակարն:

Հ

• է տառ բաղաձայն, որ պա
հանջէ բաղակցիլ ընդ ձայ
նաւորաց տառից ներգոր
ծութեամբ, կամ զօրութեամբ, զի
կարասցէ ելուզանել ըղ
ձայն. զոր օրինակ, հաւ.
հայկ: Բայց սակայն ոչ է
յայնց բաղաձայնից, որք ըստ
ինքեանց ամենևին զոչինչ հնչումն ունին.
վասն զի սա նաև 'ի միայնակ գոլն կարէ սկզ
բնաւորել զհնչումն ինչ նուաղ և կիսակա
տար. ուստի և կոչի կիսաձայն. որպիսիք
են և տառք այսոքիկ. զ. ժ. խ. շ. ս. և այլն:
Արդ՝ զտառս զայս՝ հ. անուանեմք՝ հօ. կամ
հօյ. առանց հնչեցուցանելոյ զտառն, յ:
Իսկ յարուեստի առոգանութեան ըստ հա
գագին է թաւ, ըստ հաստաձայն. որպիսիք
են և տառք այսոքիկ. խ. ք. թ. ց. չ: և այլն:
Վասն զի 'ի յարտաբերելն ընդ փողն մարդոյ,
հանէ զհաստ ձայն. որպէս յայտ է 'ի սոցանէ.
հաղբք. հունչ. հպարտ. և այլն: Ուստի և
անուանեալ կոչի հագագաձայն:
Դարձեալ. տառս այս յորժորջի և ընդորդ.
ըստ ընծակից, զի ունի զընծակցութիւն հնչման
ընդ տառից այսոցիկ. յ. և խ. ուստի և եր
բեմն փոխագրի ընդ նոսա. և այս մանաւանդ ընդ
խէ տառին. զոր օրինակ. նահապետ, և նա
խապետ: Ելից 6. 14: և 17. և 19. և 25: խահ,
և խախ: հարամանի, և խարամանի: Մծբն.
ժթ: հանութ, և խանութ: Աճգար. հապ
շիկ, և խափշիկ. 'Ի Հարց հարց. դ. հեռալ. և
խեռալ. 'ի Հարց հարց. ժե: հոյ, և խոյ: 2.
Մակ. 12. 15: հոյակապ. և խոյակապ: հապա
ղիք, և խապաղիք: Խորէն. բ. պր. 60. և այլն:
Իսկ երբեմն փոխագրի նաև ընդ ւիւն տա
ռին, ընդ որում ոչ է ընդորդ, զոր օրինակ,
հիւթ, և ւիւթ. Նարեկ. ղզ: հիւթական,
և ւիւթական. 'ի Շարականոցի: հիւծեալ. և
ւիւծեալ: Շնորհալին: հիւսել. և ւիւսել.
Շնորհալին: հիւսումն, և ւիւսումն. 'ի Ժամա
գրքին: հիւսեակ, և ւիւսեակ. Յոպբէ:
Դարձեալ. տառս այս՝ յամանց բառից եր
բեմն բառնի, և երբեմն դնի. որգոն. համ
բառնալ, և ամբառնալ: Ծննդ. 24. 63: և 27.
38: համբար. և ամբար: Ծննդ. 14. 11: 1. Մն
նաց. 28. 12: Համբարել. և ամբարել: Յոբ.
38. 23: Յուդիթ. 1. 18: համբարատակ, և ամբար
տակ: Նարեկ. դ: Խորէն. ա. պր. 15: հապա, և
ապա: 2. Մակ. 2. 17: և 16. 6: հարթչիլ, և
արթչիլ: Նարեկ. ժէ: և Մծբն. ժթ: հարօ
րանալ, և արօրանալ: Աճգար. և Նարեկ. 'ի
ձեռն" Երգոց: հաւագ, և աւագ: հաստատ, և

տւեալ : 4 · Թագ · 12 · 15 : և 22 · 7 : Հաստատել , և սաստեալ : Նարեկ · ծդ · և Լամբրոն : Հաստ քել , և սաստքել : 3 · Մակ · 6 · 4 : Հեպարքեաս , և եպարքեաս : Խորէն · բ · գլ · 57 : Ոսկէ · 1 · հոփ · լէ : Հուանել , և ունել · և այլն : Սոյնպէս և 'ի յատուկ անուանս այլազգականս · զոր օրինակ , Հեբրայեցի , և եբրայեցի : Ոսկէ · 1 · հոփ · Լ : 2 · Մակ · 7 · 31 : Հեղիաս , և Եղիաս : Նարեկ · կդ · և ղբ : Հերոնիմոս , և Երոնիմոս : Հիսպանիա , և Իսպանիա · և այլն :

Դարձեալ · տառս այս՝ է նաև նշան թուոյ · վա զի յորժամ գրի պատուով , Ծ այսմ օրինակի · Հ · նշանակէ զեօթանասունն , որ է եօթնիցս տասն :

Հ Ա.

Հաւաստի. տւոյ. եաւ. եաց. եօք: ‖ ստոյգ. կի՛ ճշմարիտ. կի՛ խոստովանելի: Նարեկ. ԽԶ. և Յն. որդւ: Իսկ մերթ դառնի մակբայաբար, և նշանակէ՝ հաւաստապէս, կամ ճշմարտապէս. կի՛ ստուգապէս: Խորէն. Թ. գլ. 1: և Նարեկ. ղԷ: Մերթ ևս նշանակէ, ճշմարտապատում. կի՛ հաւաստապատիմ. կի՛ ստուգութիւն և հաւաստութիւն պատմօղ. և ըստ այսմ ասի ՚ի գիրս Խորէն. Գ. գլ. 67. Լուսոյ ՚ի բարձանց և ՚ի հաւաստի արանց:

Հաւատ. ոյ. ով. ոց. ովք: ‖ է այն, որով զայն՝ զոր աչօք ոչ տեսանեմք. և զայն զոր ոչ շօշափեմք, հաւատամք, թէ է այն. այլ և մի առաւելութիւն այլոյ: Բայց հաւատն որ առ մեզ՝ է առաքինութիւն, որ հակեցուցանէ զկամս ՚ի հաւանութիւն այնց. որք յայտնեցան են մեզ յԱյ: Եբր. 11. 1: Մերթ ևս բառս հաւատ. նշանակէ զհաւատարմութիւն. ուստի 2. Մնաց. 31. 18: և 34. 12. յորս ասի՝ հաւատովք սրբեցին, կի՛ կային, իմանի՝ հաւատարմութեամբ: Ըստ այսմ է և 1. Մակ. 10. 27: 3. Մակ. 5. 18: և Աղ. 12. 17: Մերթ ևս առնուլ լինի փոխանակ հաստատութեան խղճմտանաց: Հռոմ. 14. 22: Իսկ մերթ առնուլի փոխանակ ուխտի: 1. Տիմ. 5. 12:

Հաւատագրոյժ. ատագրժի. ատ. աց. օք: ‖ գրօղ հաւատոյ, յս ուխտադրութեանց. կի՛ խոստատող հաւատարմութեան:

Հաւատալի. լւոյ. եաւ. եաց. եօք: ‖ այն՝ որ կարէ լինել հաւատալ. կամ որ հանդերձեալ է հաւատացեալ լինել. կամ որում արժան է հաւատալ: Իսկ 3. Մակ. 6. 20. ուր ասի՝ զհաւատալի զերծեալք լինին. իմանի. հաւատալիապար. կի՛ հաւատացեալս զերծեալք լինէին:

Հաւատակից. կցի. աւ. աց. օք: ‖ կցորդ Է ումեք ՚ի հաւատս. կի՛ ունողք զմի և զնոյն հաւատս, որպիսիք են երկու քրիստոնեայք: Մծբն. Է:

Հաւատակցութիւն. թեան: ‖ կցորդութիւն հաւատոյ. կի՛ ընկերակցութիւն ՚ի նոյն հաւատս: Խորէն. Գ. գլ. 65:

Հաւատամ. ացի. ա. ալ: (Ներգործ. և մերթ չէզոք.) ‖ հաւան ընծայել ումեք. կամ բանից նորա: Իսկ յածայնիւ՝ հաւատալն նշանակէ՝ ստորասել և հաւանիլ կամաք և մտօք այնմ, զոր ոչ կարէ ըմբռնել բնական պատճառաւ, և առաքինութեամբ և բանիւ: Ծննդ. 15. 6: Իսկ Հռոմ. 14. 2. ուր ասի, ոմն հաւատայ ուտել զամ, իմանի՝ խիղճ մտացն ճշմարտիւ ուտել, զի սիրտն քաջէ ուտել զամ: կամ ոմն համարի ոչ գոլ վնաս ուտել զամ: Մերթ ևս բառս հաւատալ՝ նշանակէ յանձնել ումեք. կամ աւանդել ումեք. կամ ընծայել: Խորէն. Գ. գլ. 42. և 58: Ը կամ ընձեռել: Խորէն. այսմ ևս իմանի՝ Գաղ. 2. 7. ուր ասի. թէ հաւատացեալ է ինձ աւետարան բանին անթլփատութեան. այս յանձնեցեալ է. և այլն:

Հաւատամասնեան. ի. եան. եաց. եօք: ‖ զհաւանութիւն մասանց հաւատոյ, բաղդատող և ստանձնաւղ, որպիսիք են հայրապետական ժողովոց. Նարեկ. ղԹ:

Հաւատարիմ. րմի. մաւ. այց. աց։ ‖ Ճշմարտութ իւր պահող. կամ անճնենգ. կամ ճշմարտախօս. կամ անխարդախ։ Առակ. 20. 6։ և Եբր. 11. 11։ Իսկ մերթ Ճշմարիտ. և հաւատալի. կամ հաւատացեալ. կամ հաստատուն։ Ծննդ. 42. 20։ 2. Մնաց. 6. 17։ 2. Մակ. 4. 34։ Իսկ մերթ նշանակէ՝ հաւատացեալ. և ըստ այսմ է Հռովմ. 3. 2։ 1. Տիմ. 3. 16։ և 2. Թեսաղ. 1. 10. յորս ասի՝ հաւատարիմ եղեն պատգամքն. կամ խորհուրդն. և վկայութիւն։ Իսկ մինչ ասի՝ հաւատարիմ գործել. խմանի՝ հաւատարմաբար գործել։ 3. Յովհ. 1. 5։ Իսկ մինչ ասի՝ խօսել զհաւատարմութիւն. խմանի՝ խօսել զբանս ճշմարիտս. կամ անենգս։ Առակ. 2. 12։

Հաւատարմութիւն յայտնեմ. յուցի. ցա. եւ։ (անց.) ‖ հաւատարիմ առնել. կամ ճշմարտել. կամ հաւատալ. և կամ հաստատել։ 2. Թագ. 7. 25։ 3. Թագ. 1. 36։

Հաւատարմութիւն. թեան։ ‖ մտերմութ. կամ անխարդախութ. կամ պահպանում խոստմանց. 1. Մնաց. 9. 22. և 26։ Իսկ մերթ ճշմարտութիւն. և կամ հաստատութիւն։

Հաւատացեալ. եցւ. ալ. ոց. ովք։ ‖ է անցեալ ժամանակին հաւատամ բային՝ որով նշանակի, հաւատս ընծայեալ։ Իսկ մերթ առանելի փոխանակ հաւատացողի. և ըստ այսմ խմանի՝ մինչ ասի՝ հաւատացեալքն այ. կամ քնի։ Խնդաց. 16. 26։ Առակ. 30. 1։ Գործ. 2. 44։

Հաւատացուցանեմ. ուցի. ցա. եւ։ (անցող) ‖ 'ի հաւատս ածել. կամ հաւանեցուցանել։ Ռամկ. անհաւատն։ 2. Մակ. 4. 34։

Հաւատաւոր. ի. աւ. աց. ոց։ ‖ ուխտաւոր. կամ ուխտապահ. և այսու խմանին կրօնաւոր կուսանքն. կամ զողջախոհութիւն ուխտող կանայքն. որք մենացեալ, և առանձնացեալ աղաւթական ծառայութ նն. ւթէ կոյս իցեն. և թէ ոչ։ Ռամկ. ձողաւոր. կամ հաւատաւոր։ Մծբն. Է։ և Աշխարհ.

Հաւասցեալ. եղւ. ալ. ոց. ովք։ ‖ սկզբնաւորեալ. կամ զակիզբն առեալ. և կամ սկսեալ։

Հաւաքարանութիւն. թեան։ ‖ Ձեռնարկութ. յորում երկու եղբարք միանան յերգաւորացուն Է մենեւս, այնու՝ զի 'ի յերկուս նա խադասութիւն ի օրենի միացան ի միճնորդեցելոյն, որովհետև է այս. քանզի է սիրելի. իսկ ած է քարի. ապաստանեմ ած է սիրելի։

Հաւաքարան. ի. աւ. աց. ոց։ ‖ տեղի հաւաքման. կամ ժողովարան։ Նոննի զԹ։

Հաւաքեմ. եցի. եա. եւ։ (ներգործ.) ‖ ժողովել. կամ կուտել. կամ քաղել։ Եզեկ. 2. 5։ Եզեկ. 29. 5։

Հաւաքումն. ման. մունք. մանց. մունս։ ‖ ժողովումն. կամ գումարումն։

Հաւերժ. ի. իւ. եց. իւք։ ‖ է բառ տաճկահայերէն. որ նշանակէ զկնամեան բառն, որոյ առաջին երկուքն մանկանք երկրայինք են. իսկ վերջինն՝ սուղ. որպիսիքն են այս. յօսկ... [illegible]

Հաւանեմ. եցի. եա. եւ։ (ներգործ.) ‖ անկանել. կամ սակեղն առնել իմիք. և կամ սիրել։ Իսկ մերթ առաձեռնեղեալ։

Հաւթազրամ։ ‖ Եղանէ սա 'ի պարսկական բառէս՝ հաւթ, որ է եօթն. ուստի հաւթազրամն նշանակէ զեօթն դրամն. կամ զեօթնեցն. զի զեօթն պղամ արծաթ առնին։ Խորէն. յաշխարհագրութեան։

Հաւորս. ի. աւ. աց. ոց։ ‖ որսորդ հաւուց. կամ որսացող զթռչունս. կամ զփետրաւորս կենդանիս։ Երեմ. 5. 26։ Ողբոց. 3. 52։ Աղ. Նոռ. 8. 1։

Հաւորսութ. թեան։ ‖ որսացումն հաւուց. կամ որսորդութիւն թռչնոց։ Խորէն. Գ. գլ. 8։

Հաւուհիք. եաց. եօք։ (անեզակ.) ‖ է անուն արանց առանձին միոյ. որք 'ի բաղձական լինելոյ. կամ զհաւս որսալոյ նախնեաց իւրեանց, անուանեցան այսպէս. զի հաւուհիք առաջարանի՝ զհաւս ունողք. կամ ըմբռնողք. կամ կալնողք։ Խորէն. Բ. գլ. 7։

Հաւպատիր. տրի. աւ. աց. ոց։ ‖ է թռչուն ինչ վայրի. որ յունարէն կոչի նէթիկօրաքս. որ թարգմանի գիշերագուշակ. զի ունի զնմանութ ինչ ագռաւու։ մարմինն 'ի բացուստ սեաւ երևի. իսկ յորժամ 'ի մերձուստ նկատել լինի. և մանաւանդ 'ի շող արեգական՝ կանաչախառն գունով փայլի։ ունի զմեծութ ընտանի հաւոյ. որոյ և ոտքն արծաթաձև հանգերձեն նման նմա։ Կտուց իւր է նեղ՝ երկայն՝ և կարմրագոյն։ Ըստ մեծի մասին ունի 'ի գլուխս իւրեանց զամենս փետուրս երկայնս որք 'ի գագաթանցն գեղ 'ի թիկունսն ձգին երկայնացեալք կամ իբրև զերփեր։ Ունեն զձուկն, զգորտս, զմորեխ, և զայլս այսպիսիս։ Բարձրաթռիչ լինին յոյժ. և ածեն զձուս երկուս երկուս. կամ երիս երիս. որոց և ամենք բնակին զբերթէ միշտ առ ջրովք. և 'ի մէջ շամբից. և հանեն զձագս իւրեանց զբարբառ ժայթքողի։ Ղևտ. 11. 17։ Իսկ ըստ ոմանց խմանի առ մեզ ռամկական ինչ թռչուն. որ ունի զնմանութ ագռաւնոյ. և զանձինս նման նոպաստակի. և ըստ այսմ Սաղմ. 101. 7. փոխանակ բառիս հաւպատիր՝ դնի 'ի մեզ բու. այս ըստ եօթանասնից, և ըստ այլոց դնի նեթիկօրաքս։

ՀԵ

Հեթանոսաբար. բար... ‖ Եթանոսաբար. այն. որ 'ի յերկիր է յանցաւորացեալ, որպիսիքն են Եգիպտացւոց յեզբէն Փայտի։ 2. Մակ. 15. 12։ Իսկ մերթ վարելնութեամբ. և նշանակէ՝ հեթանոսաբար. և ըստ այսմ ասի. հեթանոսաբար խօսել. կամ պաշտել. կամ հեթանոսաբար կեալ։ Ողբ. 1. Կորնթ. Է։

Հեգ. ի. իւ. եց. իւք։ ‖ մանուկ. կամ փոքրութիւն։ Իսկ մերթ հեգութիւն. որ է պնդութիւն մտաց ընդ մեծացելն. և աշխատութեան։ Իսկ մերթ նշանակէ թշուառ. կամ տառապեալ. կամ խղճալի։ Ողբ. 1. Կորնթ. ԻԷ։

Հեգեմ. եցի. եա. եւ։ (ներգործ.) ‖ հեգել զբառս. գնել. և առոգանել։

Հեգեմոն. կմ հեգեմոն. ի. աւ. աց. օք: || Է բառ յունական, որով նշանակի առաջնորդ, կամ իշխան. կամ հրամանատար. կամ դուքս:

Հեգեմոնիգէս: || իշխան. կամ նախարար. կամ հրամանատար: որպէս և հեգեմոնն: 2. Մակ. 13. 24: Զայսմանէ տե՛ս և 'ի բառարանի յատուկ անուանց:

Հեգենայ. ի. իւ. ից. իւք: || հեգ. կամ հեգումն. կամ հեգելի հնչմունք բառից: Խորէն. Գ. գլ. 52:

Հեգնական. ի. աւ. աց. օք: || ծաղրական. կամ այպանողական. կամ կատակողական:

Հեգնաւոր. ի. աւ. աց. օք: || տե՛ս. զհեգնողնաւոր:

Հեգնեմ. եցի. եա՛. ել: (Ներգործ.) || ծաղր առնել. կամ այպանել. կամ կատակել. կմ արհամարհել. և կմ յանդգն առնել: Նարեկ. կզ. և 'ի գործս առաք: Յոբ. 1. հոփ. լբ:

Հեգնութիւն. թեան: || այպանութիւն. կմ կատակութիւն. կմ արհամարհութիւն:

Հեզ. ոյ. ով. ոց. ովք: || քաղցր. կմ մեղմ. կմ քաղցրաբարոյ. կմ քաղցրաբարոյ, որ ոչ բարկանայ: Մատ. 5. 5:

Հեզաբանեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || հեզիկ բարբառով խօսիլ. կմ մեղմ, և անոյշ ձայնիւ խօսակցանել. կմ քաղցրել. ո՞րչ հան դիպեցաւ մանկաւոյ նահատակին կիւրակոսի, որ տղայական հեզիկ ձայնիւ խօսակցանեաւ զքն, ասէր. ես քրիստոնեայ եմ: 'Ի շարականս:

Հեզաբար: (մակբայ որակակ.) || հեզութեամբ. կմ մեղմաբար. կմ քաղցրաբար:

Հեզաբարոյ. ի. իւ. ից. իւք: || ընդհեզ բարս ունօղ. կամ քաղցրաբարոյ. և կամ սիրող հեզութեան:

Հեզահամբոյր. բուրի. իւ. ից. իւք: || հեզաբարոյ. կմ քաղցրաբարոյ. կմ հեզահոգի. և կամ սիրող հեզութեան. և ըստ այսմ ասի. այր հեզահամբոյր: Իսկ մերթ նշանակի հեզախառն. կամ հեզաբարոյական. և ըստ այսմ ասի. հեզահամբոյր հանդարտութիւն:

Հեզանամ. ացայ. ացիր. նալ: (չէզոք.) || հեզ, և հանդարտ լինել. կմ մեղմանալ. կմ քաղցրանալ:

Հեզանք. անաց. օք: (անեզական.) || հեզութիւնք. կմ քաղցրաբարոյութիւնք:

Հեզատարթ. ի. իւ. ից. իւք: || ունօղ ըղ հեզիկ շարժօղ սաղարթս. կամ որոյ տերեւքն անոյշ, և հանդարտ ձայնիւ, և շարժմամբ սասանին: Նարեկ. ղէ:

Հեզիկ: (նախդրիւ հոլովի.) || հեզ. կամ մեղմ և անոյշ: Իսկ մերթ իբրև զմակբայ վարի այսպէս. հեզիկ շարժիլ. հեզիկ բարբառիլ. և այլն. և նշանակէ՝ հեզութեամբ. կմ մեղմօրէն. կամ հանդարտ, և քաղցր կերպիւ: 'Ի շարս հարց. իդ:

Հեզութիւն. թեան: || քաղցրաբարոյութիւն. կամ քաղցրասրտութիւն. կամ հանդարտութիւն. կամ անյիշաչարութիւն: 1. Թագ. 12. 22: Գործ. 24. 4:

Հեթանոս. ի. աւ. աց. օք: || Է բառ յունական. որ թարգմանի ազգ, և նշանակէ զայլս ազգս, որք էին արտաքոյ ազգին իսրայէլի, և ոչ էին ծանօթ աստուծոյ, այլ և կոչեցեալ լինէին այլազգիք: Երեմ. 52. 5: Սաղմ. 149. 7: Մատ. 18. 17: Եւ յայսմանէ առեալ եկեղեցին զսն և լցէ անհաւատս, հեթանոս անուանեաց:

Հեթանոսաբար: (մկբյ որակակ.) || հեթանոսօրէն. ըստ կերպի, և ըստ սովորութեան հեթանոսաց: Գաղ. 2. 14:

Հեթանոսական. ի. աւ. աց. օք: || այն ամ, որ է հեթանոսի. կամ վերաբերի առ հեթանոս: 3. Յովհ. 1. 7:

Հեթանոսակիր. կրի. աւ. աց. օք: || այն՝ զոր հեթանոսք սովորաբար էին կրել յինքեանս. և կամ որ մինչդեռ 'ի հեթանոսաց ունեցեալ լինի. և ըստ այսմ ասի. հեթանոսակիր ցանկութիւն, կամ սխալ. և այլն: Աղթոն:

Հեթանոսութիւն. թեան: || հեթանոսական կրօն. կամ անաստուածութիւն. կամ մոլար և անկրօն ազգաց սովորութիւն: 2. Մակ. 4. 10. և 13:

Հեթեթ. ի. իւ. ից. իւք: || յարմար. կամ շարայար. կամ պատկանաւոր: Եւ ասի բղխի բառս անհեթեթ, որ նշանակէ զանյարմարն. և այլն:

Հելլէն: (նախդրիւ հոլովի.) || է անուն որդւոյն դեւկալիոնի, որ թագաւորեաց 'ի մէջ յունաց աշխարհին. և 'ի սմանէ յոյնք առհասարակ անուանեցան հելլէնք. կամ հելլենացիք: Իսկ մերթ նշանակէ զհեթանոսականն. կմ զյունականն. և ըստ այսմ ասի. հելլէն դպրութիւն. կմ հելլէն գրով. և այլն: Խորէն. Գ. գլ. 53:

Հելլենացի. ւոյ. ւով. ւոց. ւովք: || մերթ նշանակի յոյնն. կմ որ է յազգէն յունաց: Նարեկ. ղդ: Իսկ մերթ առեալ լինի 'ի բառիս հեթանոս. կմ անհաւատ: Յոբ. 1. հոփ. իէ. և իժ: Մերթ ևս նշանակի հելլենական. կմ յունական. և ըստ այսմ ասի. հելլենացի լեզու. հելլենացի գիր. և այլն: Խորէն. Գ. գլ. 53: և 'ի Վարս հարց. թ: Մերթ ևս առեալ լինի փոխանակ բառից ստեփանոսացի. որով նշանակի իմաստասէրն. կմ աղնոճականն. և կմ ճարտասանականն, և բանաստեղծականն: 'Ի վարս հարց. Է: և Լամբրոն: Իսկ երբեմն վարի մակբայաբար. որգոն. հելլենացի գրել. կմ հելլենացի խօսիլ. և նշանակէ՝ յունարէն. կամ յունական լեզուաւ: 'Ի վարս հարց. թ:

Հեծան. ի. աւ. աց. օք: || գերան, զոր բառ զուռ ամփոփ 'ի յատաստաղս տան գնեն, 'ի վրայ որոյ կաղմեն զյարկս տան. ըստ ըղ ծածքն: 3. Թագ. 6. 16: և 4. Թագ. 6. 5: Իսկ մերթ նշանակէ զբիրն. կմ զատոճար գանազանն: Նարեկ. Ժ. Ժբ: Եւ ըստ այսմ բղխի 'ի սմանէ միահեծանն, զոր տեսցես 'ի տեղւոջ իւրում: Բայց 'ի Նարեկ. զէ. ուր ասի առ քն. Զորէաց վերասին քոյինազէն. որ է հեծանաւս. իմանի խաչափայտն, որ է զէն քնի:

Հեծանահերձ. ի. իւ. ից. իւք: || զհեծան հերձօղ, ըղ գերանն ճեղքօղ. կմ կտրօղ: Մծբին.:

Հեծանածգութիւն. թեան: || Ձգումն, կամ տարածումն հեծանից, որք են գերանք: Իսկ մերթ շարքգերանաց տուաստաղին. կամ գերանք ձգեալք, զոր տարածեցեալք և շարեցեալք Է տանեօք. և կամ 'ի ծածքն տան: Ժողով. 10. 18:

Հեծանեմ. հեծայ. ծիր. անել: (չէզոք.) || Հեծանել, զոր 'ի վր ձիոյ, կամ յաւանակի նստել: ռամկ. հէծնէլ: Թագ. 22. 22. և 30: Դատ. 12. 14: Իսկ մինչ ասի՝ զհետ հեծանել. իմանի՝ հեծնլով 'ի ձի, կամ նստելով 'ի կառս՝ ընթանալ զհետ ուրուք: 3. Մակ. 2. 4: Եւ սորա կատարեալն, և հրամայականն փոխառեալ լինին 'ի հեծնում բայէն. տես և եդաւ:

Հեծանոց. ի. աւ. աց. օք: || Երեքմատնեայ, կամ հինգմատնեայ թիանման փայտ ի. որով զյարդն 'ի ցորենոյն բաժանեն երնելով: ռամկ. հօսէլի: Մատթ. 3. 12: և Ղուկ. 3. 17: Իսկ մերթ նշանակէ զքաղհն, կամ զթիւն երկրագործաց: Ոսկէ. 1. հատ. խն: և 'ի Ճառս հաւց. Ժթ:

Հեծեալ. ելոյ. ով. ոց. ովք: || Է ընդունելութիւն հեծանեմ, կամ հեծնում բայից, որով նշանակի առել նստեալ 'ի վր ձիոյ: Իսկ մերթ նշանակի նստողն 'ի վր երիվարի, կամ ուղտու. կամ ձիաւորն. և կամ վերելակն: Եսայ. 14. 9: 4. Թագ. 9. 17: և 2. Մակ. 3. 25: Իսկ ըստ որում ելանէ սա 'ի հեծել բայէն՝ նշանակէ զհեծեծեալն. և ըստ այսմ ասի 'ի շարականի, հեծեալ կոծին առ Քեզ անհաւատիցն:

Հեծելագունդ. գնդի. աւ. աց. օք: || Մերթ նշանակէ զհեծեալ զինուորաց գունդն: Իսկ մերթ զգումարեալն 'ի հեծելազօր մարտկաց. և Է այսմ ասի, հեծելագունդ զօրք:

Հեծելազօր. ի. աւ. աց. օք: կամ ու. ու: || Զօրք, որք հեծեալք են 'ի ձի. կամ ձիաւոր զօրք: Յուդիթ. 7. 2. և 6: և 1. Մակ. 10. 83: և 15. 41: Իսկ մինչ ասի՝ հեծելազօր երիվարք. իմանին՝ ձիքն, յորոց վր նստեալքն են զօրք պատերազմօղք: Յուդիթ. 6. 3:

Հեծելութիւն. թեան: || Հեծնուլն. զոր նստելն 'ի վր ձիոյ: Եւ մերթ նմանութբ ասի զելմանեն 'ի խաչ: Նարեկ. ղը: Ըստ այսմ խորհրդաբար՝ առեալ լինի և Ամբակ. 3. 8. ուր ասի, հեծելութիւնք քո, փրկութիւն եղև:

Հեծեծանք. անաց. օք: (անեզական.) || Հեծութիւն. կամ հեծեծումն: Նարեկ. Ժբ:

Հեծեծելի. լւոյ. եաւ. եաց. եօք: || Հառաչելի. կամ ողբալի: Եզեկ. 5. 15:

Հեծեծեմ. եցի. եա. ել: (չէզոք.) || Հեծելով հեծել. կամ վն ցաւոց, և թշուառութեց յոգւոց հանել. կամ ողբալով առեալ հառաչել. կամ հեկեկալ: Յոբ. 9. 27: Երեմ. 22. 23: Եզեկ. 21. 6:

Հեծեմ. եցի. եա. ել: (չէզոք.) || Հառաչել ցաւօք. կամ յոգւոց հանել. կամ հեկեկալ: Յոբ. 31. 38: Առակ. 28. 28: Ողբ. 1. 21: Իսկ մերթ՝ տքալ:

Հեծկլտամ. ացի. ա. ալ: (չէզոք.) || Յետ ուտելոյն յանկարծ յանկարծ 'ի վեր ստանուլ ստամոքսին: ռամկ. [illegible]. կմ հըճըկ անել:

Հեծնում. հեծայ. ծիր. նուլ: (ընդ միջ.) || տես զՀեծանել: 2. Թագ. 13. 29:

Հեծութիւն. թեան: || Հեծեծանք. կամ հառաչանք՝ ցաւօք. կամ արտասուօք հանդերձ: Ծննդ. 3. 16: Եսայ. 2. 24: Սաղմ. 6. 7:

Հեծունչ: (Նախդրիւ հոլովի.) || Հեծութիւն. կամ հեծումն. զի մասնիկս՝ ունչ, մերթ է փոխանակ՝ ումն, և ութիւն մասնկանցս: Լամբրոն:

Հեծուցանեմ. ծուցի. ծո. ել: (անցող.) || Նստուցանել 'ի վր ձիոյ. կմ ուղտու: ռամկ. հէծցնէլ: 3. Թագ. 1. 33:

Հեկեկամ. ացի. ա. ալ: (չէզոք.) || Հեծեծել. կմ հառաչել. կմ ընկրկելով զձայն հանել ընդ փողն յետ լալոյն. կամ նախ քան զլալն. 'ի Ճառս հաւց. Ժդ:

Հեկեկանք. աց. օք: (անեզական.) || Հեկեկումն. կմ հեծեծանք, 'ի Ճառս հաւց. Ժդ:

Հեղլակ. կմ հեղձակ. ի. աւ: || Հեղլադ. կմ հեղլադա, որ է լայնատարած գաւառ ինչ եւրոպիոյ. զոր և կոչեմք յունաստան: Իսկ այս գաւառ վն ունելոյն յինքեան զաթէնն քաղաքն, որ էր մայր ամ գիտութեց, և բարեպաշտութեց, յորջորջիւր 'ի բազմաց՝ մեծ և սքանչելի ս. Ատենի 'ի գիրս Ոսկէ. 1. հատ. ա. կոչի՝ մեծասքանչ հեղլադն:

Հեղանիւթ. ի. իւ. ից. օք: || տես 'ի ներքոյ զՀեղանուտ:

Հեղանուտ: (Նախդրիւ հոլովի.) || Հեղեղուկ. կմ հոսանուտ, զոր այն ամ, որ կարէ հեղանիլ. կմ հոսիլ. և կմ որ է ծորելի. որպիսի է ջուրն, իւղն. և այլք բազումք:

Հեղգ. ի. աւ. աց. օք: || Ծոյլ. կմ գանդաղկոտ. կմ ալդէրգ: Բայց Յակոբ. 3. 17. ուր ասի՝ գուա ես հեզգ. պարտի իմանիլ հեզ. կմ հեգ, որ է թշուառ. զի վրիպմամբ սպրգրեալ կայ 'ի նմա տառն՝ գ:

Հեղգաշարժութ: (Նախդրիւ հոլովի.) || Հեղգապէս, զոր յամրաբար. կմ դժուարաւ զոր հուպ, որպիսիք են քաղ և այլ մարմինք:

Հեղգաշուր: (Նախդրիւ հոլովի.) || Հեղգապէս. կմ յամրապէս. և կամ դժուարաւ լսօղ. կմ անսացող: Լամբրոն:

Հեղգամ. հեղգացայ. գա. ալ: (ընդ միջ.) || Ծուլանալ. կմ ալևորանալ. կմ գանդաղիլ: Ծննդ. 42. 1:

Հեղգանամ. ացայ. ցիր. ալ: (ընդ միջ.) || Նոյն է ընդ վերնոյն: Լամբրոն:

Հեղգամիտ. միտի. իւ. աց. օք: || Հեղգ և անյօժար սո՛ 'ի իմանալ զիր ինչ. կմ թմբնչ րամիտ. կմ բթամիտ: Ղուկ. 24. 25:

Հեղգութիւն. թեան: || Ծուլութիւն. կմ ծանրութիւն. կմ գանդաղկոտութիւն. կմ ալդէրգութիւն. և կմ զանցառութիւն: Երեմ. 48. 10:

Հեղեղ. ի. աւ. աց. օք: || Ծովացմունք ջրոց. կմ սաստիկ յորդութիւն և առատութիւն ջրոց՝ յանձրևոյ, կմ 'ի հալեցմանէ ձեանց յառաջացեալ: և ասի հեղեղ, զի հեղեալ և զեղեալ ծածկէ զերկիր: Ծննդ. 7. 7: Յոբ. 40. 18: Ամոս. 5. 24: Ղուկ. 6. 48:

Հեղեղամած. ծի. իւ. ից. իւք: || Հեղեղաւ ջուրց մածեալ. կմ պատեցեալ. կմ ընդ հեղեղաւ անկեալ: Ագաթ:

Հեղեղատ. ի. իւ. ից. իւք: || Հեղեղաւ

ջուրց սաստող, կամ հարուածող, և պատառող, որպիսի էր բարկութիւն այն, որ ժամանեաւ 'ի վ՟ ամբարշտաց՝ պատուհասեաց զնոս ջր- հեղեղաւն։ Ագաթ։

Հեղեղավայր. ի. իւ. աց. օք։ || հեղեղուտ վայր, կամ տեղի հեղեղատոր. կմ՟ բազմաջուր։ Նարեկ. ղթ։

Հեղեղատ. ի. աւ. աց. օք։ || ուղխ գետօրէն ընթացող. կմ՟ ձոր. և կմ՟ առու, ը՟ որ ջուրք անձրևաց, կմ՟ ձեանց հալեցելոց իբրև զհե- ղեղ հոսեալ գնան, որ բազում անգամ 'ի յամառան նուաղեալ ցամաքի։ 4. Թագ. 3. 16. և 17։ 3. Թագ. 17. 7։ Եսայ. 66. 12։ Ե- րեմ. 47. 2։

Հեղեղատեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) || հեղեղել. կմ՟ իբրև զհեղեղ լնուլ. և կմ՟ յոր- դել և ծածկել. և այս մերթ ասի զջուրց. Մծբն. ժթ։ և Ագաթ։ Իսկ մերթ նմանու- թե՟ զբազմութե՟ զօրաց, որք իբրև զհե- ղեղատ յորդեալ՝ գան և ծածկեն զերկիր, կմ՟ նուաճեն զոք և կոխան առնեն զնա։ Դանի. 11. 10. և 22։

Հեղեղեալ. ելոյ. ով. ոց. ովք։ || 'ի ներքոյ հեղեղաց ջուրց անկեալ. կմ՟ հեղեղաւ ա- պականեալ, կմ՟ ջնջեցեալ։ Իմաստ. 10. 4։

Հեղեղեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) || զհե- ղեղս առնել. կմ՟ իբրև զհեղեղ յորդել. կմ՟ բղխել զջուրս, և զայլս նմանս։ Լամբրոն։ և Ագաթ։ Իսկ մերթ հեղեղս յարուցանե- լով ծածկել զտեղի ինչ. և կմ՟ հեղեղօրէն 'ի վ՟ յարձակելով՝ կոխան առնել զերկիր. կմ՟ հարկանել. և ապականել։ Եւ այս մերթ ասի զջուրց։ 'Ի Ճառս հաւր. իզ։ Իսկ մերթ նմանութե՟ զարտասուաց, կմ՟ զմեղաց. և այլն։ Նարեկ. ժը. և խը։

Հեղեղուկ. եղկի. աւ. աց. օք։ || տես զՀե- ղանուտ։

Հեղինակ. ի. աւ. աց. օք։ || առաջին սկիզբն. կմ՟ առաջին առնող, կմ՟ հնարող իրի իմիք. կամ գործաւոր. կմ՟ կրօնի. կմ՟ արհեստի. և կմ՟ այլոց իրի։

Հեղձական. ի. աւ. աց. օք։ || հեղձուցանողա- կան. կմ՟ հեղձուցանող։ ռամկ. խեղդող։

Հեղձամահ. ի. իւ. լից. օք։ || խեղդամահ. կամ խեղդեցմամբ մեռեալ. որ կմ՟ լինի 'ի ջուրս. և կամ պարանաւ. և այլն։ Խորէն. գ. գլ. 22։

Հեղձամղձիմ. եցայ. եալ. իլ։ (Հայնակր.) || հեղձամուղձ լինել։ ռամկ. խեղդուիլ։

Հեղձամղձուկ. (Նախադրիւ հոլովի.) || 'ի փղձկ- մանէ, կմ՟ 'ի տագնապող նեղութէ. և կմ՟ յար- դելմանէ շնչոյն խեղդդեալ. կմ՟ տանջանօք հեղձեալ. և կմ՟ սաստիկ նեղեալ։ Նարեկ. ժը։ Խորէն. գ. գլ. 68։ Իսկ մերթ նշանակէ հեղձամուղձ առնօղն. և կմ՟ հեղձամղձա- կան. և ըստ այսմ ասի, հեղձամղձուկ տա- տակումն. կմ՟ նեղութիւն. կմ՟ հեղձամղձուկ մեքենայք. և այլն։

Հեղձամուղձ. մղձի. աւ. աց. օք։ || նոյն է ը՟ վերինոյն։

Հեղձանախանձ. (Նախադրիւ հոլովի.) || 'ի նա- խանձուէ հեղձուցեալ. կմ՟ նախանձու հեղ- ձուցանող։ Եւ մինչ ասի. հեղձանախանձ պայթումն. նշանակէ 'ի հեղձուցանող նա- խանձուէ յառաջացեալ պայթումն։ Մծբն. ժթ։

Հեղձանիմ. ձայ. ձիր. նիլ։ (Հայնակ.) || հեղ- ձեալ լինիլ. կմ՟ խեղդիլ։ Եւ մերթ նմա- նութե՟ դնի փոխանակ սաստիկ նեղելոյ. կմ՟ դժուարելոյ։ Թղթ. 2. հատ. Ճ.

Հեղձնում. հեղձայ. ձիր. նուլ։ (Ընդմիջ.) || հեղձանիլ. կմ՟ խեղդամահ լինիլ. կամ խեղդիլ։ Մարկ. 5. 13։

Հեղձուցանեմ. ձուցի. ձո. անել։ (անցող.) || արգելլով զշունչն սպանանել. կմ՟ հեղ- ձամղձուկ առնել. և կմ՟ խեղդել։ ռամկ. խեղդել։ Եւ այս յատկապէս ասի զկենդա- նեաց։ Նաւում. 2. 12։ Իսկ մերթ նմանու- թե՟ ասի զփշոց. կմ՟ զվատթար բանից, և զայլոց նմանեաց, որք իբրու խեղդեալ խանգարեն զգործեան, կմ՟ զբարի բանս։ Մատթ. 13. 7. և 22։ Ղուկ. 8. 7։ Մերթ և մինչ անտանելութե՟ ընկեն զկին ոք, և նե- հացուցանեն՝ ասի հեղձուցանել։ Դատ. 20. 5։

Հեղձուցեալ. ելոյ. ով. ոց. ովք։ || հեղձա- մղձուկ եղեալ. կմ՟ խեղդեցեալ։ Իսկ Գործ. 15. 29. ուր ասի՝ 'ի բաց կալ, կմ՟ զգուշա- նալ 'ի հեղձուցելոյ. իմանի՝ հրաժարիլն 'ի յուտելոյ զմիս խեղդեցեալ կենդանեաց։

Հեղձուցիկ. ցկի. աւ. աց. օք։ || հեղձեալ. կմ՟ խեղդեցեալ։ Մծբն. ժթ. և Կիւրղ. Եղէկ. դ։ Եւ մերթ ընդ բայի շարակցի այսպէս. հեղձուցիկ առնել. և նշանակէ հեղ- ձուցանել. կմ՟ խեղդամահ առնել։

Հեղյս. հեղուսի. սիւ. լից. իւք։ || բևեռ. կմ՟ գամ. որ զանդամանեալ իրս միաւորելով ամրէ։ Նարեկ. իե. և իժ։ Եւ մերթ հեղու- սումն. կմ՟ բևեռումն. կմ՟ սևեռումն. և կմ՟ բազմաց տարանջատ իրաց ը՟ միմեանս ագուցումն. կմ՟ միաւորմամբ պնդումն։ ռամկ. Նէյփէրճ։

Հեղուկ. կի. աւ. աց. օք։ || հեղանիւթ. կմ՟ հեղեղուկ. որ կարէ հեղանիլ որպէս ջուր. կմ՟ հոսանուտ։

Հեղում. հեղի. հեղ. ուլ։ (Ներգործ.) || [illegible] կմ՟ թա- կիր հոսեցուցանել. կմ՟ զեղուլ. կմ՟ թա- փել. կմ՟ լնուլ։ ռամկ. [illegible]։ Ծննդ. 9. 6։ Մատթ. 9. 17։ Մարկ. 14. 3։ Մերթ և առնէ լինի փոխանակ տարածելոյ. կմ՟ սփռելոյ։ 1. Թագ. 1. 15։ և Յոբ. 38. 38։ Եւ մերթ փո- խանակ ցրուելոյ։ Յուդթ. 15. 3։ Իսկ Եզեկ. 12. 22. ուր ասի՝ հեղան աւուրք. իմանի եր- կարեցան աւուրք. կմ՟ յերկարս ձգեցան։ Իսկ 'ի գիրս Խորէն. գ. գլ. 53. ուր ասի, հեղուլ զնոր կտակն 'ի հայ բան. նշանա- կէ դարձուցանել. կամ թարգմանել։

Հեղուսեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) || սևե- ռել. կմ՟ բևեռել. և կմ՟ զերկուս իրս ընդ միմեանս միաւորել, և պնդել բևեռօք. և կամ ը՟ իրեարս ագուցանել։ Նարեկ. զէ։ և Յն՟ ոդէ։

Հեղուսուած. ոյ. ով. ոց. ովք։ || հեղուսումն. կամ բևեռումն. կամ բազմաց ը՟ միմեանս յարմարումն, և ագուցումն. կամ ագուց- մամբ

մամբ սնդուսի ։ Խորէն․ ա․ գլ․ 15 ։

Հենգն ։ (Նախդրիւ հոլովի․) || այսին․ կամ կատակ․ և կմ ծաղր ։ Իսկ մերթ ը բայի շարակցի այսպ․ հենգն առնել․ և նշինկէ հենգնել․ յջ այպանել, կմ կատակել․ և այլն ։

Հենգնաւոր․ ի․ աւ․ աց․ օք ։ || այպանողական․ կմ կատակական․ և կմ ծաղրածական ։ Նորէկ․ զր ։

Հենգնեմ․ եցի․ եա․ ել ։ (Ներգործ․) || այպանել․ կամ կատակել․ կմ ծաղր առնել․ կմ պարսաւել․ կմ անարգել․ կամ Թշնամանել․ և կամ արհամարհել ։ Նորէկ․ ... և կ ։ Ոսկէ․ 1․ հտ․ ... ։

Հենում․ հենի․ հեն․ նուլ ։ (Ներգործ․) || հինել․ յջ պատրաստել զառէջս գործելի կտաւոյն, ուք յետոյ ընկրկեն կպին 'ի սալմինն, և տարածին 'ի գործիսն, և յարմարեցուցանին այնպէս, զի ընդ այնս անցուցանիցէ ստայնանկն զԹելն, և գործիցէ ։ Իսկ մերթ ստայնանկել․ կմ հիւսել․ կմ նիւԹել․ և կամ յօդել ընդ միմեանս ։ Նորէկ․ կը ։ Ոսկէ․ 2․ հտ․ ... ։

Հեշտ․ ի․ իւ․ ից․ իւք ։ || դիւրին․ կամ հանգստական․ կամ հեշտալի ։ Լամբրոն ։ Ոսկէ․ 2․ հտ․ ... ։

Հեշտագոյն․ գունի․ իւ․ ից․ իւք ։ || դիւրագոյն․ կամ փափկագոյն․ կամ առաւել հեշտացուցիչ ։ Ոսկէ․ 2․ հտ․ ... ։

Հեշտալի․ ւոյ․ եաւ․ եաց․ եօք ։ || լի հեշտուԹը․ և բերկրուԹը․ կամ հեշտացուցիչ, և կամ բերկրեցուցիչ ։ Երգոց․ 7․ 6 ։

Հեշտալիր ։ (Նախդրիւ հոլովի․) || լի հեշտուԹը․ կմ հեշտացուցիչ․ կամ զուարճալի․ և կամ ուրախալի ։

Հեշտալուր․ լրի․ իւ․ ից․ իւք ։ || այսպէս հոլովեցեալ նշանակէ զնա, որ հեշտուԹը, յջ դիւրաւ լսէ, և անսայ ։ Լամբրոն ։

Հեշտալուր․ լրոյ․ ով․ ոց․ ովք ։ || այսպէս հոլովեցեալ նշանակէ զայն՝ որ 'ի լսելեալ լինելն հեշտացուցանէ, և բերկրեցուցանէ զլսելիս․ և ըստ այսմ ասի՝ հեշտալուր երգ․ կամ ձայն․ կամ բան․ և այլն ։ Լամբրոն ։ Իսկ երբեմն նշանակէ զայն, որ հեշտեաւ․ կամ դիւրաւ լինի լսելի․ յջ հասկացեալ և իմացեալ․ կամ դիւրիմաց ։ Ոսկէ․ 1․ հտ․ ... ։

Հեշտախտութիւն․ Թեան ։ || ախտ հեշտութե․ և կամ մոլուԹի, որով ոք հեշտանայ 'ի յախտս մարմնականս ։ Յհ օրէ ։

Հեշտածին․ ծնի․ իւ․ աց․ օք ։ || դիւրածին․ յջ այն, որ դիւրաւ ծնեալ լինի, և յառաջանայ․ կամ արտադրի ։ Նորէկ․ է ։ Իսկ մերթ նշանակէ դիւրաւ ծնանող զկին ։

Հեշտական․ ի․ աւ․ աց․ օք ։ || ախորժ․ կամ հեշտալի․ կամ հանգստական․ կամ հեշտախտական ։

Հեշտանամ․ ացայ․ ցիր․ նալ ։ (Ընդմիջ․) || բերկրիլ․ կամ դիւրանալ․ կամ հանգստանալ․ կամ փափկանալ ։

Հեշտապատիր ։ (Նախդրիւ հոլովի․) || հեշտիկաւ պատրելի․ յջ նա, որ դիւրաւ պատրի և խաբի․ և ըստ այսմ ասի՝ հեշտապատիր է մարդկային բնութիւն ։ Իսկ մերթ նշանակէ դիւրաւ պատրողն․ կամ խաբողն ։

Հեշտապէս ։ (Մակբայ որակական․) || դիւրաւ․ կամ առանց դժուարութե ։ Իսկ մերթ նշանակէ հեշտութը․ կամ բերկրութը ։ Նորէկ․ ղզ ։

Հեշտասէր․ սիրի․ աւ․ աց․ օք ։ || սիրող դիւրութե, կամ հանգստեան ։ Մերթ ևս հեշտախտութե հետևող ։

Հեշտասիրութիւն․ Թեան ։ || սէր հեշտութե, և ցանկութե ․ կմ սէր դիւրութե մարմնոյ ։ Լամբրոն ։

Հեշտացուցանեմ․ ուցի․ ցո․ անել ։ (Անցող․) || դիւրացուցանել․ կմ հանգստացուցանել․ կամ փափկացուցանել ։

Հեշտեաւ ։ (Մակբայ որակական․) || հանգստեամբ, կմ դիւրաւ․ կմ դիւրութը ։ Լամբրոն ։ Ոսկէ․ 2․ հտ․ ... ։

Հեշտեմ․ եցի․ եա․ ել ։ (Ներգործ․) || դիւրել․ կմ հանգստացուցանել ։

Հեշտընկալ․ ի․ իւ․ ից․ իւք ։ || դիւրաւ ընկալնելի, կմ ընդունելի․ կմ դիւրաւ տանելի․ կամ դիւրաւ ըմբռնելի, և հասկանալի ։ Ոսկէ․ 1․ հտ․ ... ։

Հեշտին ։ (Նախդրիւ հոլովի․) || դիւրին․ կամ առանց դժուարութե ։ Ոսկէ․ 2․ հտ․ ... ։

Հեշտութիւն․ Թեան ։ || դիւրութիւն․ կմ հանգստութիւն․ կմ բերկրութիւն․ կմ փափկութիւն․ Աղաւ․ 17․ 1 ։ Եւ մերթ առեալ լինի առակ փոխանակ հեշտախտութե ։

Հեպարքոս․ ի․ աւ․ աց․ օք ։ || Խորէն․ բ․ գլ․ 57 ։ տես զԷպարքոսն ։

Հեռ․ ի․ իւ․ ից․ իւք ։ || խէթ․ կմ մախանք․ կմ հակառակութի, որով ոք չէ միաբան ը նմա սիրով ։ 1․ Մակ․ 8․ 16 ։ Հռով․ 1․ 29 ։ Գաղատ․ 5․ 20 ։

Հեռաբարոյ․ ի․ իւ․ ից․ իւք ։ || մախացող․ կմ զխէթ պահող․ կմ զոխակալութի, և զատելութի սիրող․ կմ որ ունի զբարս հակեալս 'ի հեռ և 'ի նախանձ ։

Հեռաբնակ․ ի․ աւ․ աց․ օք ։ || 'ի հեռի տեղւոջ բնակող ։ Իսկ մերթ նշանակէ զհեռաւորն․ կմ զհեռակայն ։ և ըստ այսմ ասի հեռաբնակ վայր․ և այլն ։ Նորէկ․ 'ի գովեստ ... ։

Հեռագնաց․ ի․ իւ․ ից․ իւք ։ || 'ի հեռաւոր տեղիս գնացող․ կմ 'ի տար աշխարհ գնացող ։

Հեռակայ․ ի․ իւ․ ից․ իւք ։ || տես զհեռաւոր ։

Հեռաձիգ․ ձգի․ իւ․ աց․ օք ։ || հեռի ձգող ։ Իսկ մերթ 'ի հեռի տեղիս ձգեալ․ կմ հեռակայ․ և կմ հեռաւոր ։ Նորէկ․ ղէ ։

Հեռամ․ ացի․ ա․ ալ ։ (Չէզոք․) || հեռ ունիլ․ կմ մախալ․ և կամ նախանձիլ ։

Հեռանամ․ ացայ․ ացիր․ անալ ։ (Ընդմիջ․) || հեռի լինել․ կմ 'ի բաց կալ․ կմ 'ի բաց գնալ ։ 1․ Մակ․ 7․ 30 ։ Առակ․ 17․ 13 ։

Հեռաստան․ ի․ աւ ։ || մերթ նշանակէ զբացակայ․ կամ զհեռակայ տեղին․ և ըստ այսմ ասի 'ի Նորէկ․ ղե․ փոխեցին յանհուն հեռաստան ։ Իսկ մերթ նշանակէ սոսկ զհեռաւորն․ կմ զհեռին ․ ըստ այնմ․ 2․ Օրին․ 29․ 22․ Օտարոտին՝ որ դայցէ յերկրէ հե

ռաստանէ։ Եւ՛ երբեմն բացառականն ըստ
բռ. վարի երբև զմակբայ տեղական. այս_
պէս. տեսանել ՚ի հեռաստանէ, կմ՛ կալ ՚ի
հեռաստանէ. և այլն. և նշանակէ ՚ի հե_
ռուստ. կմ՛ ՚ի հեռաւոր տեղւոջ։ Եսայ. 20.
21։ Երեմ. 49. 12։ Միքի. 5. 6։

Հեռաստանեայք. նայց. եաց։ (անեզական.) ‖ աշխարհք, կմ՛ տեղիք հեռակայք. կմ՛ բնակիչք հեռաւոր տեղեաց. և կմ՛ այնք, որք են յոյժ հեռիք և բացակայք։

Հեռացուցանեմ. ցուցի. ցո. անել։ (անցողական.) ‖ հեռի առնել. կամ ՚ի բաց կացուցանել. կմ՛ ՚ի հեռաւոր տեղիս ածել. և կամ տարամերժել։ ռամկօր. հէռըցնել։ Երեմ. 27. 10։

Հեռաւոր. ի. աւ. ալ. ք։ ‖ հեռակայ. կմ՛ հեռակաց. կմ՛ հեռաձիգ։ ռամկ. հէռու։ 2. Մնաց. 6. 36։ Յովէլ. 3. 8։

Հեռաւորութի. թեան։ ‖ հեռակայութի. կամ տարակայութի. կամ բացակայութի։ Նորէն. ՚ի գոլ. նոյին։

Հեռի։ (նախդրիւ հոլովի.) ‖ հեռաւոր. կամ հեռակայ։ ռամկ. հէռու։ Առակ. 7. 19։ Իսկ մերթ ընդ բայի չարակցի այսպէս. հեռի առնել. և նշանակէ՝ հեռացուցանել։ Սաղմ. 39. 12։. և կամ այսպէս. հեռի առնել. կամ հեռի լինել. և նշանակէ հեռանալ։ Սաղմ. 21. 2։ և 70. 12։

Հեռի։ (նախադրութի.) ‖ ՚ի բաց. կմ՛ ՚ի բացեայ.. ռամկ. հէռու։

Հեռութի. թեան։ ‖ նախանձաւորութի. կամ մախանք. կամ հակառակութի. կամ թշնամութի։ Միքի. թ։

Հեռուստ։ ‖ է մակբայ տեղական, որ ՚ի գործ ածի միշտ նախդրիւ այսպէս՝ ՚ի. այսպէս՝ ՚ի հեռուստ. և նշանակէ ՚ի հեռաստանէ. կամ ՚ի հեռաւոր տեղւոջէ։ 2. Կոր. 13. 10։ Իսկ մերթ վարի երբև զանուն, և նշանակէ հեռաւոր. կմ՛ հեռակայ. և ըստ այսմ առի 2. Եզր. 3. 13։ Եւ լսելի լինէր ձայնն մինչև ՚ի հեռաւոր տեղիս։ ըստ. այսմ ևս առի՝ ՚ի հեռուստ աշխարհէ. կամ ՚ի հեռուստ կողմանէ. և այլն։

Հեստ. ի. իւ. ից. իւք։ ‖ անհաւան. կամ անհնազանդ. կամ դիմադարձ. կամ խեռ. կամ ՚ի բանէ և ՚ի կանոնէ արտաքսող. և կմ՛ արհամարհող օրինաց և պատուիրանաց։ ՚Ի Ճառ. հարց. ը։

Հեստեմ. եցի. եա. ել։ (չէզոք.) ‖ խոտորել ՚ի բանէ և ՚ի կանոնէ. կմ՛ անհնազանդ լինել. կամ ոչ անսալ. կամ դիմադարձել. և կամ ապստամբելով ընդդիմանալ. և ըստ այսմ առի, հեստել ԱՆ. կամ հեստել պատուիրանաց. և բանից վերնագունի նարուք. և այլն։ Ղևտ. 26. 15։ Թուոց. 11. 20։ 1. Թագ. 12. 14։ Եսայ. 63. 10։

Հեստութի. թեան։ ‖ դիմադարձութի. կամ անհաւանութի. կամ խոտորումն ՚ի բանէ, և ՚ի կանոնէ. և կամ դարձուցումն թիկանց. կամ խեռութի. և կմ՛ ապստամբութի։ 2. Օրին. 31. 27։ և Փիլիպ. 1. 17։

Հեր. կամ հերք. ոյ. ովք։ ‖ չարիք. կամ

.. տանառեղ. ՚ի նշան ոտից քայլողաց. կամ գնացողաց զճանապարհս։ ռամկ. իզ։ Յօբ. 9. 26։ Դան. 14. 18։ Մերթ ևս նշանակէ զգնացս. կամ զքայլս. Նորէն. ժը։ և ըստ այսմ ելանէ ՚ի սմանէ բառս՝ հանդարտահետ. որ նշանակէ զհանդարտագնացն։ Նորէն. ՚ի գոլ. տառ.։ Եւ՛ ըստ այսմ երբեմն ընդ բայի չարակցի այսպէս. հետ առնել. և նշանակէ հետևիլ. ՚ի երթալ. կմ՛ ճանապարհ առնել։ ուստի Եսայ. 9. 1. ասէ տափ, վաղվաղակի հետ արա. խմեմ, վաղվաղակի երթ. և այլն։ Իսկ 2. Մակ. 4. 21. բառիւս, հետ նշանակէ՝ զինի, կմ՛ յետ։ Իսկ մերթ ընդ բայի չարակցի այսպէս, զհետ ունել ուրուք, կմ՛ զհետ մտանել. կմ՛ զհետ երթիլ. և այլն. և նշանակէ, հետամուտ լինել. կմ՛ պնդել զինի ուրուք։ ռամկ. էտեւէն ընկնել. Խորէն. գ. գլ. 9. և 44. և 55։ ըստ այսմ ևս զինի զհետ լինել. կմ՛ զհետ երթալ. և այլն, զորս տեսցես ՚ի տառն. զայ. զինի նախադրութեն զհետ։

Հետադայ. ի. իւ. ից. իւք։ ‖ այն՝ որ զհետ գայ. կամ որ զինի հետևի. և ըստ այսմ փոխանուանաբար հետևեալ բանն, ասի հետադայ բանս։

Հետազօտ. ի. իւ. ից. կմ՛ աց. օք։ ‖ հետազօտող. կմ՛ հետաքրքիր։ Իսկ մերթ ընդ բայի չարակցի այսպէս, հետազօտ լինել. և նշանակէ՝ հետազօտել. կմ՛ հետաքրքրել. և կամ հետախոյզ լինել։

Հետազօտեմ. եցի. եա. ել։ (ներգործ.) ‖ զհետ մտանել. կմ՛ պնդել զինի։ Իսկ մերթ զհետոն որոնել. կմ՛ քննել. կամ զիրաց սմանց ՚ի քննութեն մտանել. կմ՛ խուզել։ Նորէն. իը։ Յոբէլ. 1. հասա. իդ։

Հետազօտութի. թեան։ ‖ քննութի. կամ հետախուզութի. և կմ՛ որոնումն հետոց բանից. կամ խորհրդոց. և նմանեաց։ Իմաստ. 5. 16։

Հետախաղաղ։ ‖ ոչ հոլովի, այլ է բայի չարակցի այսպէս. հետախաղաղ առնել. և նշանակէ՝ զհետ նորին խաղաղացուցանել. ՚ի դադարեցուցանել. կմ՛ ոչ երևեցուցանել. և կամ զինն անհետ առնել. կմ՛ բառնալ՝ ջնջել և կորուսանել. և ըստ այսմ առի ՚ի գիրս. Միքի. ժթ. հետախաղաղ արասցէ զամ եղբարս իւր։ Իսկ 2. Մակ. 1. 19. ուր ասի զտեղին հետախաղաղ ծածկեալ, իմանի՝ հետակորոյս առնելով ծածկեալ. զի ոչ քահանայքն այնպէս ծածկեցին զվայրն, ուր հուրն տաճարին թագուցան, մինչ զի և հետքն ոչ մնասցին, որով կարծեսցէ ոք, թէ անգէտ իր լինէ դա։

Հետախոյզ. խուզի. իւ. ից. իւք. կմ՛ ոյ. օք։ ‖ զհետոս իրին խուզող. կմ՛ հետազօտող. և կամ մանրամասնաբար քննող և որոնող։

Հետախուզեմ. եցի. եա. ել։ (ներգործ.) ‖ զհետոս իրիք խուզել. կամ որոնել. կամ քննել. կամ հետազօտել։

Հետակորոյս։ ‖ ոչ հոլովի, այլ ընդ բայի չարակցի այսպէս, հետակորոյս առնել, և նշանակէ՝ զհետոն կորուսանել. կամ անհետ

առնել։

Digitized by Google

տանել. կամ բնաջինջ տանել: ռամկ. Էրէ կօրմազ. Եւ կամ այսպէս, հեռապնդոյս լինել, և նշանակէ՝ անհետ լինել. կմ՛ բոլորովին ջնջել:

Հետակորոյս: (Նախդրիւ հոլովի.) || զհետս իւրեան կորոյս, որով իմանի անհետ առնօղն. և կամ նա՝ որ զնշմարանս հետոցն ոչ թողու: Իսկ մերթ նշանակէ զայն՝ որոյ հետքն՝ կամ նշմարանքն են ՚ի բաց բարձեալք. և կամ որ է բոլորովին անհետ եղեալ:

Հետամուտ. մտի. տէ. տց. օք: || զհետ մտանօղ, որ ընդդէմ զկնի փախուցելոյն, կամ գնացելոյն՝ առ ՚ի հասանել նմա: ռամկօր. էփէճէն ընկօղ: Յես. 8. 20: և 1. Թագ. 30. 22: Իմաստ. 19. 3:

Հետամտիմ. եցայ. եայց. իլ: (Հայնակր.) || հետամուտ լինել. կմ՛ զկնի պնդել: ռամկ. էփէճէն ընկնիլ:

Հետայն: (մակբայ իսկոյնական.) || փութանակի. կմ՛ վաղվաղակի. կմ՛ իսկոյն: Խորէն. Գ. գլ. 13: Եւ յայսմանէ ելանէ բառն՝ նոյն հետայն, որ նշանակէ նոյնժամայն. կամ փութանակի:

Հետայոյզ. յուզի. զէ. զց. օք: || զհետս փախուցելոյն, կմ՛ թշնամւոյն յուզօղ, այսինքն որոնօղ՝ զհետ պնդելով. կմ՛ հետազօտօղ. և կամ հետախուզօղ: Խորէն. Բ. գլ. 34:

Հետապնդիմ. եցայ. եայց. իլ: (Հայնակր.) || պնդել զհետ ուրուք. կմ՛ հետամուտ լինել: ռամկ. էփէճէն վազել:

Հետ արաս: || տես զբառն հետ:

Հետարան. ի. աւ. աց. օք: || տեղի կոխելոյ ոտից. կմ՛ տեղի գնացից, կմ՛ հետոց ոտից: Նարեկ. ղթ:

Հետաքննին: (Նախդրիւ հոլովի.) || քննօղ, և որոնօղ զհետս ուրուք, և կմ՛ զընթացս բանից. կամ հետաքրքիր. կմ՛ հետախուզօղ. ՚ի Վարս հարց. Բ:

Հետաքննութիւն. թեան: || հետախուզութիւն. կմ՛ հետազօտութիւն, կմ՛ հետաքրքրութիւն:

Հետաքրքիր. քրի. րէ. րց. օք: || մերթ նշանակէ զքննօղն, և զորոնօղն ի և իցէ բանից. կմ՛ իրաց մանրախուզ: 2. Թես. 3. 11: և 1. Տիմ. 5. 13: Իսկ մերթ նշանակէ սակս զհարցաքննօղն, կմ՛ զհետախոյզն. այլ դատաւորքն մեր տեղեկանալոյ հարցաքննութեամբ հետաքրքիր լինին:

Հետաքրքրեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || հետաքրքիր լինել իրի իմիք, որ է քննել. կամ որոնել առ ՚ի իմանալ զայն:

Հետեւաբանութիւն. թեան: || հետեւմունք բանի. և կմ՛ բան, որով հետեւի մի իրն ՚ի միւսոյն. այլ հետեւի ՚ի բանական գոլոյն՝ ծի ծաղական գոլն. ՚ի բայց գոլոյն՝ է ժամանակաւ անկանելին. և այլն: ըստ այսմ և հետեւութիւն եզրակացութեանց՝ հետեւաբանութիւն կոչի:

Հետեւակ. ի. ած. ագ. ազ: || հետիոտս գնացօղ. այսինքն նա, որ առանց ձիոյ ոտիւք քայլելով գնայ ուրեք: ռամկ. եայան: Երեմ. 12. 37: և 2. Թագ. 15. 17: Իսկ մերթ նշանակէ զհետեւակազօրն: Յ. Թագ. 8. 4: Ի. Եփէր.

8. 52: Մերթ և նշանակէ զհետիոտական. և ըստ այսմ ասի ՚ի Խորէն. Ա. գլ. 17. Զմանէն ասել չամիրամայ, և զհետեւակ փախուստ: Բայց ՚ի Խորէն. Բ. գլ. 8. ուր ասի. ձգեալ ՚ի հետեւակաց. իմանի՝ հետեւակաբար. այսինքն հետեւակ գոլով. կամ հետիոտս գնալով: Իսկ մերթ այսու բառիւս նշանակի՝ հետեւօղն. կմ՛ զհետ գնացօղն. և ըստ այսմ ասի՝ ՚ի Նարեկ. ղզ. Խոյզ փրկչին հետեւակ: Մերթ ևս նշանակէ զհետեւանս. կմ՛ ըզ հետեւումն: Երբեմն ևս նշանակի սովոր պարզն, կմ՛ անպաճոյճն. և կմ՛ նուաստն, և արհամարհն: և ըստ այսմ է. 2. Մակ. 15. 39. ուր ասի՝ Ապաքէն հետեւակս ինչ, և տկարս ինչ խօսեալ իցէ: Մերթ ևս նշանակի այսու չարական ինչ, որ ասի յոմանս համդիսաւոր աւուրս յառաջքան զօրհնութիւն, և կոչեցաւ հետեւակ, իբր թէ պարզ, և սակ, զի ոչ ունի զևս խաղաղութեան, և ոչ զսկսուած:

Հետեւակագնաց. ի. աւ. աց. օք: || հետիոտս գնացօղ: ռամկ. եայան գնացօղ: Խորէն. Ա. գլ. 11:

Հետեւակազօր. ու. ու. ուց. կմ՛ աց. օք: || զօրք գնացօղ հետիոտս. այսինքն առանց հեծելոյ ՚ի ձի: ռամկ. եայան զօրք: Յուդիթ. 7. 2:

Հետեւակախումբ. խմբի. իւ.ից. իւք: || ՚ի հետեւակ զինուորաց խմբեցեալ, և գումարեցեալ. կամ այն, յորում եղեալ բազմութիւն է հետեւակ. և ըստ այսմ ասի՝ հետեւակախումբ զօրք:

Հետեւակամարտ. ի. իւ. ից. իւք: || հետեւակ մարտիկ. կմ՛ հետիոտս գնացօղ զօրական. որ ՚ի պատերազմին մարտնչի առանց ձիոյ:

Հետեւական. ի. աւ. աց. օք: || հետեւողական. կամ գնացողական. և կամ հետիոտական: Նարեկ. ժը:

Հետեւակիմ. եցայ. եայց. իլ: (Հայնակր.) || հետեւակ լինել. կմ՛ հետիոտս գնալ. կմ՛ ճանապարհորդել: ռամկ. եայան գնալ: Խորէն. Բ. գլ. 12:

Հետեւամարտ. ի. իւ. ից. իւք: || տես զՀետեւակամարտ: Խորէն. Ա. գլ. 23:

Հետեւանամ. ացայ. ցիր. անալ: (Ընդ միջ.) || հետեւիլ. կամ զհետ երթալ. ըստ այնմ Յոբ. Եւ ուղղեցես զիս ընդ նմին՝ հետեւանալ քեզ ՚ի յերկին:

Հետեւանք. անաց. օք: (անեզական.) || հետեւողութիւն. կմ՛ հետեւմունք. և կամ մի զկնի միոյ յաջորդութիւն: Խորէն. Բ. գլ. 1: Իսկ մերթ մանաւորաբար առեալ նշանակէ զպարագայս իրին. կամ զյատկութիւնս, և զպատահմունս, որք հետեւին նմա. և ըստ այսմ հետեւանք կոչի բառին թիւն, կմ՛ հոլովն. և մարդոյն գոլն երկոտանի. կամ ծիծաղական. և այլն:

Հետեւեցուցանեմ. ցուցի. ցու. նել: (անցող.) || հետեւօղ առնել. կմ՛ զկնի գնացուցանել: և կմ՛ ընթացուցանել: Նարեկ. ղթ:

Հետեւիմ. եցայ. եայց. իլ: (Հայնակր.) || զհետ երթալ: ռամկ. էփէճէն էրթալ: Նարեկ. ղէ: և Եփրեմ: Մերթ ևս նշանակէ սակս

գնալ․ կմ՛ երթալ։ Ղուկ․ հը․ և զէ։ և Լամբրոն։ Իսկ մերթ նշանակէ յառաջագայիլ․ կմ՛ եղանել միոյ բանի ՚ի միւսոյն։

Հետևողութիւն․ թեան։ ‖ Հետևումն․ կամ զհետ գնացումն․ կմ՛ յերկէ խնդէ յառաջադայութիւն։ Լամբրոն։ Եւ մերթ յարմարութիւն․ կմ՛ բաղադանութիւն․ և կմ՛ շարայարութիւն։ Յոհ․ 1․ հատ․ ժդ․ և ճդ։

Հետևութիւն․ թեան։ ‖ Հետևումն․ կմ՛ զկնի գնալն։ Եւ մերթ եղումն միոյ բանի ՚ի միւսոյն․ կմ՛ յարմարութիւն․ և կմ՛ բաղադանութիւն։ Յոհ․ 1․ հատ․ իդ։

Հետզհետէ։ (մակբայ յամրական․) ‖ սակաւ առ սակաւ․ կմ՛ փոքր փոքր․ ռամկ․ ֆէլ ֆէլ ըստ այնմ։ Յոհ․ 1․ հատ․ ճ․ Հետզհետէ յերկրէ վերացոյց։

Հետէ։ ‖ Է մասնիկ ինչ, որ միշտ յարի զկնի սմանց բառից․ և նշանակէ զշարունակ հետևումն․ որգոն․ ՚ի սկզբանէ հետէ․ քի՝ ՚ի սկզբանէ մինչև ցայժմ․ ռամկ․ [illegible] ՚ի վեր։ Յոհ․ 1․ հատ․ լզ։ ՚ի սամուէլէ հետէ․ քի՝ ՚ի սամուէլէ մինչև ցայժմ․ ռամկ․ [illegible] ՚ի վեր։ Յոհ․ 1․ հատ․ զ։ Ը այսմ է և 1․ Մակ․ 1․ 12։

Հետ ը հետ։ (մակբայ խոհեմնական․) ‖ Նոյն հետայն․ կմ՛ առժամայն․ կմ՛ անմիջապէս։ 2․ Մակ․ 4․ 10։

Հետի․ ւոյ․ եաւ․ իք․ եաց․ եօք։ ‖ հետևակ․ կմ՛ հետիոտս գնացօղ։ ռամկ․ [illegible]։ 3․ Մակ․ 1․ 1։ Իսկ մերթ վարի իբրև զմակբայ․ և նշանակէ հետիոտս գնալով․ կմ՛ հետևակ գոլով։ Մատթ․ 14․ 13։ Մարկ․ 6․ 33։ և ըստ այսմ երբեմն ՚ի գործածի․ հանդերձ նախդրիւ այսպէս․ ՚ի հետի․ ըստ այնմ․ Խորենն․ բ․ գլ․ 43․ որոց գխպեալ ՚ի հետի․ քի՝ հետիոտս գնալով։

Հետիոտս․ կմ՛ ՚ի հետիոտս․ (մակբայ․) ‖ Հետևակաբար․ քի՝ սոսկ ոտիւք քայլելով առանց ձիոյ։ ռամկ․ [illegible]։ Դատ․ 4․ 15։ 2․ Թագ․ 15․ 16։

Հեր․ ոյ․ ով․ աց․ ովք․ կմ՛ օք։ ‖ մազ․ կամ գէս․ կմ՛ ծամ։ Մատթ․ 10․ 30։ և Սաղմ․ 68․ 5։

Հերամբ։ ‖ Է գործիականն հերիւն բառիս․ ուստի զնշանակութիւն սորա տես անդ։

Հերապանծ․ ի․ իւ․ ից․ իւք։ ‖ Նա՝ որ առատութեամբ և գեղեցկութեամբ հերացն պարծի․ կմ՛ որ ունի զպանծալի և զգեղեցիկ հերս։ Իսկ մերթ նմանութեամբ առի զծառոց․ և նշանակէ զմիրսաւորն․ կմ՛ զսաղարթախիտն․ և կմ՛ զսաղարթալիցն։ Նարէկ․ Թ։

Հերատուկ։ (Նախդրիւ հոլովի․) ‖ վավաշոտ․ կմ՛ բղջախոհ․ կմ՛ լիրբ․ կմ՛ անամօթ․ և կմ՛ լկտի։ Եւ այս առի մանաւանդ զկանանց անառակութենէ հետևողաց։

Հերատուկիմ․ եցայ․ եայց․ իլ։ (Հայնակր․) ‖ Հերատուկ լինել․ կմ՛ պագշոտիլ․ կմ՛ բղջախոհանալ։

Հերատուանալ․ եցայ․ ով․ ոյ․ ովք։ ‖ Հերատուկեալ․ կամ հերատուկ լեալ․ քի՝ պագշոտեալ․ կմ՛ լրբացեալ․ կմ՛ բղջախոհացեալ։ Ցոպր․ բայց [illegible] թուին բառս այս յայս մին [illegible] յառաջադոյն եղեալ է հերատուկեալ, և յետոյ ՚ի սխալմանէ գրչաց եղեալ է հերատուեալ։

Հերարձակ․ ի․ աւ․ կմ՛ իւ․ աց․ օք։ ‖ Նա՝ որոյ գլխոյ հերքն են արձակք․ քի ոչ հիւսեալք․ կամ են ցրուեցեալք և ճապաղեցեալք։ 3․ Մակ․ 4․ 6։

Հերետիկոս․ ի․ աւ․ աց․ օք։ ‖ Նա՝ որ ՚ի ուղղափառ բանս հաւատոյ ունի զմոլորութիւն․ և կամակորութեամբ ջատագովեալ զայն՝ ընդդիմանայ սբյ եկեղեցւոյ։

Հերետիկոսութիւն․ թեան։ ‖ մոլորութիւն ՚ի ուղղափառ բանս հաւատոյ՝ հանդերձ կամակորութեամբ և ընդդիմացմամբ կաթուղիկէ եկեղեցւոյն քի։

Հերիսնութիւն․ կմ՛ հերեսիութիւն․ թեան։ ‖ հերետիկոսութիւն․ կմ՛ հերձուածողութիւն։ Կիւրղի եղծն․ զ։

Հերիսիովտ․ կամ հերեսիովտ․ ոտի․ այք․ աց․ օք։ ‖ հերետիկոս․ կմ՛ հերձուածօղ։ Կիւրղ եղծն․ զ․ և ե։ և Յոհ․ 1․ հատ․ ճ․ և ժդ։

Հերիւն․ կմ՛ հերուն․ հերան․ հերամբ․ անց․ ամբք։ ‖ Է գործիք ինչ երկաթեայ՝ սուր իբրև զասեղն․ որով ծակեն զկաշիս, և զայլս նմանս․ ռամկ․ հէրան․ կմ՛ [illegible]։ Ելից 21․ 6։ և 2․ Օրին․ 15․ 17։ Իսկ մերթ նշանակէ զմախաթն, որով զխորգ կարեն․ ՚ի լեզ․ հարց․ է։

Հերիք։ (Նախդրիւ հոլովի․) ‖ բաւական․ կմ՛ շատ․ որ և ռամկ․ ասի՝ հէրիֆ։ Լամբրոն։ Իսկ 1․ Մակ․ 16․ 3․ ուր ասի․ և դուք հերիք էք յամս իմ․ պարտի իմանալ․ հերիք էք յամս․ քի հասեալ էք ՚ի բաւական, և ՚ի լիակատար ամս․ կմ՛ կատարեալ չափահասակք էք։ Եւ զկնի՝ մինչ ասի, փոխանակ իմ․, և եղբօր իմոյ․ պարտի իմանալ․ ընդ փոխանակ իմ, և եղբօր իմոյ։

Հերիքանամ․ այայ․ ցիր․ անալ։ (ընդմիջ․) ‖ բաւականանալ․ կմ՛ շատանալ։

Հերկ․ ի․ իւ․ ից․ իւք։ ‖ Հերկումն․ կմ՛ վար․ կմ՛ ցել․ քի՝ պատառեալ երկիր իբրև զառու, զոր արօրաւ առնեն առ ՚ի սերմանել։ Երեմ․ 4․ 3։ Իսկ մինչ ասի՝ հերկս հարկանել, իմանի՝ հերկել, կմ՛ առուս բանալ առ ՚ի սերմանել։ Յոհ․ ՚ի նախերգանին։

Հերկագործ․ ծի․ աւ․ աց․ օք։ ‖ Հերկելով գործօղ․ կմ՛ երկրագործ, որ հերկէ զերկիր։ Իսկ մերթ նշանակի հերկեցեալն և գործեցեալն․ և ը այսմ ասի՝ հերկագործ երկիր։

Հերկագործեմ․ եցի․ եա․ ել։ (Ներգործ․) ‖ Հերկելով գործել զերկիր։ Նարէկ․ ՚ի գովեստն [illegible]։

Հերկագործութիւն․ թեան։ ‖ Հերկել, և գործել զերկիր․ կմ՛ հերկումն երկրի։

Հերկեմ․ եցի․ եա․ ել։ (Ներգործ․) ‖ վարել զերկիր, որ է արօրաւ առուառնել զարտորայս առ ՚ի սերմանել։ Եսայ․ 28․ 24։

Հերձախօսութիւն․ թեան։ ‖ խօսք․ կմ՛ բանք հերձուածոց․ կմ՛ բանք տարաձայնութեան։

Հերձակոտոր․ ի․ իւ․ ից․ իւք։ ‖ Հերձօղ և կոտորօղ․ կմ՛ հերձօղ և բաժանօղ։

Հերձանեմ․ հերձի․ հերձ․ ել։ (Ներգործ․)

|| Ճեղքել. կմ՛ հերձմամբ բաժանել. կամ պատառել: Ղուկ. 23. 45: Իմաստ. 18. 23: Ժողով. 10. 9:

Հերձամէտ. մտի. տաւ. աց. օք: || միտող հերձուածողութեան. և կմ՛ հերձուածս արկանող 'ի մէջ բազմութեան:

Հերձեմ. եցի. եա. եալ: (Ներգործ.) || տե՛ս զՀերձանել:

Հերձի. ւոյ. եաւ. եաց. եօք: || Է ծառ ինչ խծաբեր, որ հասանի 'ի մեծութիւն կաղնւոյ, և է հոտով նման բեւեկնւոյ: բերէ ընդ պտուղ երիցս 'ի տարւոջ, որ նախնեան զհասունանալն է շառագոյն. իսկ յետ հասանելոյն՝ սեւանայ: հատէ յնկեցնէ զխէժ ինչ. որ կոչի մաստաքէ, որ է ձուլթն, զոր 'ի բերան առեալ ծամեն: Եւ զի 'ի կաթիլ խէժին յայտմանէ ծառոյ՝ հերձեալ լինի կեղեւն իւր. վա այնորիկ ծառս այս կոչեցաւ հերձի, իբր թէ հերձելի, որ 'ի յունաց յորջորջի ակինոս: Դան. 13. 54:

Հերձիկ. ձկի. աւ. աց. օք: || հերձանող. կմ՛ պատառօղ. և կամ բաժանօղ: Իսկ մերթ նշանակէ զհերձուածօղն, կմ՛ զհերետիկոսն: Բայց մինչ ասի հերձիկ աղանդ, իմանի հերձուածողական աղանդն:

Հերձիք. ձեաց. եօք: (անեզական.) || հերձուածք. կմ՛ հերձուածողութիւնք:

Հերձոտեմ. եցի. եա. եալ: (Ներգործ.) || պատառոտել. կմ՛ 'ի բազում տեղիս կրկին մասմնոյ զհերձուածս առնել: ռամկ. պօքօտել. կմ՛ ճեղքոտել: 'Ի ճառս հայոց. ժէ:

Հերձուած. ոյ. ով. ոց. ովք: || հերձումն. կմ՛ ճեղքումն, կմ՛ պատառումն. և կմ՛ բաժանումն: Իսկ երբեմն հերձուած կոչի տարաձայնութիւն. կմ՛ երկպառակութիւն, որ լինի 'ի մէջ բազմութեանց, և բաժանէ ըզնա 'ի հակառակ կարծիս: Յով. 7. 43: Գործ. 23. 7: Իսկ մերթ նշանակէ զհերետիկոսութիւն, կմ՛ զաղանդն, որով ոք ուսուցանէ զնորահնար ինչ ընդդէմ կաթուղիկէ եկեղեցւոյ, և ճշմարտութեան, և մուծանէ զբաժանումն 'ի հաւատացեալս: Գաղ. 5. 20: և 2. Պետր. 2. 1:

Հերձուածողութիւն. թեան: || տե՛ս 'ի ներքոյ զՀերձուածութիւն:

Հերձուածութիւն. թեան: || հերձուածողութիւն. կմ՛ հերձուածք. և կմ՛ հերետիկոսութիւն: Նարեկ. ղա:

Հերձուածօղ. ծողի. աւ. աց. օք: || զհերձուածս մուծանօղ, կմ՛ զհերձուածս ունօղ, որով իմանի նա, որ ըստ նորահնար չար վարդապետութեան, կմ՛ ըստ այլոյ որոյ և իցէ մոլար իրի՝ բաժանէ զինքն. և զայլս յեկեղեցւոյն քէ: Մերթ ևս առնանի փոխանակ հերետիկոսի: Տիտ. 3. 10: և Խորէն. Գ. գլ. 30:

Հերձում. հերձի. հերձ. ուլ: (Ներգործ.) || տե՛ս զՀերձանել: Ահմ. 1. 13:

Հերու: (մկբյ ժամանակա.) || յանցեալ տարւոջ. որ և ռամկ. ասի հերու: 'Ի ճառս հայոց. Է:

'Ի Հերուն. հետէ: (մակբայ ժամանակակ.) յանցեալ ամէն մինչև ցայժմ. կմ՛ յանցեալ տարւոյն 'ի վեր: ռամկ. հէրչանց 'ի վեր: 2. Կոր. 8. 10: և 9. 2: Իսկ մերթ 'ի վաղուց հետէ. կմ՛ 'ի բազում ժամանակաց հետէ: ռամկ. շատոյցնէ: 'Ի ճառս հայոց. իզ:

Հերքեմ. եցի. եա. եալ: (Ներգործ.) || 'ի բաց վանել. կմ՛ 'ի բաց մերժել. կմ՛ հալածել: Նարեկ. ղզ:

Հեւամ. ացի. ա. ալ: (չէզոք.) || յառաւել աշխատութենէ. կմ՛ 'ի ցաւոյ հիւանդութեան զշունչն սակաւ սակաւ առնուլ. և կմ՛ ընդերկար երկար: որ և ռամկ. ասի հեւալ:

Հեփեստոս. ի. իւ: || է անուն չայ միոյ. որոյ պաշտօղքն ասէին՝ թէ է արարիչ, կմ՛ վերակացու հրոյ: Կիւրղի եղծ. է:

Հեք. հեքոյ. ով. ոց. ովք: || թշուառ. կամ ողորմելի. կմ՛ տառապեալ. կմ՛ վատաբախտ: ռամկ. խեղճ:

ՀԶ

Հզօր. ի. աւ. աց. օք: || զօրեղ. կամ զօրաւոր. կամ քաջ. կմ՛ արի: Եսայ. 6. 1: Յոբ. 19. 6:

Հզօրանամ. ացայ. ցեր. ալ: (չեզ. իրք.) || հզօր լինել. կամ զօրանալ. կամ զօրեղանալ: 1. Յով. 2. 14:

Հզօրապէս: (մակբայ որակական.) || զօրեղաբար. կամ սաստապէս. կմ՛ քաջապէս: Ահմ. 31. 17:

Հզօրեղ. ի. աւ. աց. օք: || կարի հզօր. կամ յոյժ զօրաւոր. կամ քաջազունեղ: 2. Մակ. 3. 26:

Հզօրեղապէս: (մակբայ որակակ.) || զօրեղապէս. կմ՛ յոյժ զօրաւորաբար, և կմ՛ մեծաւ քաջութեամբ: 'Ի Շարականոցի:

Հզօրեմ. եցի. եա. եալ: (Ներգործ.) || հզօր առնել. կամ զօրացուցանել. և կմ՛ պնդել և ամրացուցանել:

Հզօրիչ. րչի. աւ. աց. օք: || հզօր առնօղ. կմ՛ զօրացուցիչ: Սաղմ. 17. 19:

ՀԷ

Հէ: (միջարկութիւն կոչական. և մերթ աղաղական.) || ո՜հ. կմ՛ ո՜վ: 'Ի ճառս հայոց. ժը. և ժզ:

Հեգ. հեգոյ. կմ՛ հեգի. ով. աց. ովք: || թշուառ. կմ՛ ողորմելի. կմ՛ տառապեալ. կմ՛ վատաբախտ: Յով. Ոսկ. 1. հատ. ըէ:

Հէհ: (միջարկութիւն հեգնական.) || ե՛հ. կմ՛ վա՜հ:

Հէն. հինի. ինէ. ից. իւք: || յանկարծակի վերավազօղ զօրք. կմ՛ ասպատակիչք և գերօղք. կմ՛ աւազակօղք. և կմ՛ ծովու աւազակք: ռամկ. չէթէճի. կմ՛ ղուղլանչ: 2. Մնաց. 22. 1: Յոբ. 16. 10: և 25. 3: Իսկ մերթ նշանակէ զմարտն, կմ՛ զյարձակմանութիւն վերավազօղ զօրաց. կմ՛ զասպատակութիւն. և կմ՛ զաւազակութիւն եղուզակաց: Ծննդ. 49. 19: Խորէն. Բ. գլ. 56:

Հէնք. հինից. իւք: (անեզական.) || այլայն. կմ՛ ծանականք. կմ՛ խայտառակութիւն. կմ՛

քամահանք. և կմ՝ նախատինք: Նարէկ. հա:
Հէք. հիքոյ. ով. ոց. ովք: || տես զՀէգ: Խո-
րէն. ՚Ը. գլ. 68: և Նարէկ. խա. և լթ:

Հի

Հիանամ. ացայ. ցիր. ալ: (ընդ. միջ.) || ա-
պուշ մնալ. կմ՝ յափշտակիլ մտօք. կամ
զարմանալ. կմ՝ սքանչանալ: Դան. 4. 16:
Ղուկ. 24. 4:
Հիանշմար. ի. ից. իւք: || զՀիանալի նշ-
մարումն ունող. կմ՝ որոյ տեսութիւնն հիա-
ցուցանէ զմարդիկ: Նարէկ. ՁԲ:
Հիապատում: (նախդրիւ հոլովի.) || հիա-
նալի կերպիւ պատմօղ. կմ՝ զՀիանալիս ճա-
ռօղ: Երբ մերթ հիանալի եղանակաւ պատ-
մեցեալ:
Հիացումն. ցման. մամբ. մանց. մամբք: || ափ-
շութիւն. կմ՝ զարմացումն. և կամ սքանչա-
ցումն: Երգ. 6. 3. և 9:
Հիացուցանեմ. ցուցի. ցո. անել: (անցող.)
|| ափշեցուցանել. կամ զարմացուցանել.
կմ՝ սքանչացուցանել: Նարէկ. ՂԶ:
Հիքար: (շաղկապ մեկնական. և մերթ մկըն
հարցական.) || որդոն. կմ՝ զոր օրինակ. և
կմ՝ որպէս:
Հիգագոյն. գունի. ից. իւք: || Թշուառ-
ագոյն. կմ՝ վատաբախտագոյն. կմ՝ յոյժ
ողորմելի. և տառապեալ:
Հիգանամ. ացայ. ցիր. ալ: (ընդ. միջ.) || հէգ
լինիլ. ՚ի ողորմելի և վատաբախտ գոլ. կմ՝
թշուառանալ:
Հիգութիւն. թեան: || տես զՀէգութիւն:
Հիդրեայ. րէի. ից. իւք: կամ հիդրայ.
ի. ից. իւք: || է բառ յունական.
որով նշանակի ազգ մի օձի ջրային, որ
ունի զմարմն գեղեցկախայտուց. և զթոյն
չար: Դրամոյ յետոյ առասպելի. ուր հա-
լածեն զինքն. և արձակեալ ՚ի նմա ըմպան
հատ հինգ, վտանգէ զնա յոյժ: Զմանէ առ-
ասպելաբանեն բանաստեղծք, թէ է մի-
շապ հինգ բազմագլուխ, որ լինի ՚ի լիճն
լեռնայ ասացեալ. զորոյ ընդ հատանելն
զգլուխս, խկոյն ելանեն այլք նոյնչափ
թուով. և կմ՝ առաւել ևս: և այս առակ-
րի օրինակ զայնցանէ, զորս որչափ ոք
ջանայ յաղթութիւն ածել, այնչափ առա-
ւել վատթարանան:
Հիզան. (շաղկապ մեկնական. և մերթ մակ-
բայ հարցական.) || որպէս. կմ՝ որդոն.
կմ՝ զոր օրինակ:
Հիլոս. ի. ից. իւք: || է փոքրիկ կենդա-
նի ինչ ջրային, որ ՚ի ներքսն կոկորդելո-
ւոյն մտանէ ընդ բերանն ՚ի յորովայն նր,
և ուտէ զփորոտիսն. և ը նստոյ տեղին նր
արտաքս ելեալ փախչի:
Հիկէն: (շաղկապ մեկնական. և մերթ մակ-
բայ հարցական.) || որդոն. կմ՝ զոր օրինակ.
և կամ որպէս: Խորէն. ՚Բ. գլ. 62:
Հիճակ. ի. աւ. աց. օք: || մորտ. կամ կուճ.
կմ՝ վէճ: Երբ ՚ի ամանէ ծագի հիճեւն:
Հիճեմ. եցի. եա. ել: (չէզոք.) || կուճիլ.
կմ՝ մարտնչիլ. կմ՝ զաղմուկ յարուցանել.
և կմ՝ վիճիլ:
Հիմ. (մակբայ հարցական.) || ընդէր. կմ՝
վա՞ էր: ռամկ. ինչու: Թուոց. 11. 11:
Հիմէն. ենի. աւ. աց. օք: || է անօթ, կամ
չափ ինչ հեղեղուկ իրաց. ՚ի իւղոյ. ջրոյ.
և այլոց նմանեաց, որ տանի իբրու զհա-
զար ութն հարիւր եօթանասուն և եր-
կու տրամս. ՚ի զշռս հօխայ և կէս. կէս
մնևևին նոյն ընդ դորակին: Ելից. 30. 24:
Դարձեալ բառս՝ հիմէն, որ յունարէն.
և լատիներէն ասի՝ հեմինայ, է անօթ, կմ՝
չափ ինչ՝ որ տանի իբրու զհարիւր քսան
դրամ հեղուկ իրս:
Հիմն. հիման. ամբ. անց. ամբք: || ներքին
մասն շինուածոց՝ ՚ի վր որոյ կառուցեալ
հաստատի բոլոր շինուածն: ռամկ. թէմէլ:
3. Թագ. 5. 17: Եւ յայսմանէ առեալ նմա-
նութբ դնի և ս երբեմն փոխանակ սկզբ-
բան, կմ՝ արմատոյ: Իսկ 4. Թագ. 16. 18.
ուր ասի՝ հիմն աթոռոյն, իմանի՝ հասա-
կարճ սիւն շինեցեալ ՚ի տաճարին. ՚ի վր
որոյ հովանոց դ՛ր. ուստի՝ յորժամ թա-
գաւորն գայր ՚ի տաճարն, դնէին զաթո-
ռն անդ՝ ուր նստէր. և այս 4. Թագ. 23.
3: և 2. Մնաց. 34. 31. սիւն կոչի. ՚ի վր որոյ
դնիւր աթոռ:
Հիմնադիր. դրի. աւ. աց. օք: || զՀիմն դնօղ.
կմ՝ զհիմունս արկանօղ: Նարէկ. ՚ի գովեստ
առաքելոց:
Հիմնադրեմ. եցի. եա. ել: (ներգործ.) ||
զհիմն դնել. կմ՝ հիմնել. և կմ՝ ՚ի հիմանց
կանգնել: Նարէկ. ՂԲ. և ՚ի գով. խաչին:
Հիմնադրութիւն. թեան: || դնումն հիման.
կմ՝ հիմնարկութիւն. կմ՝ հաստատութիւն: Նա-
րէկ. ՚ի գով. խաչին:
Հիմնակարգեմ. եցի. եա. ել: (ներգործ.)
|| հիմնել և կարգել. կմ՝ առհմանադրել: իսկ
մերթ զհիմն արկանել. կմ՝ դնել զսկիզ-
բունս իրիք. և ըստ այսմ կարգելն զբնա-
բան ինչ առ ՚ի խօսիլ զնմանէ, ասի հիմ-
նակարգել:
Հիմնակարգութիւն. թեան: || դնումն և կար-
գումն հիման. և կամ կարգեցեալ և եդեալ
հիմն. և ըստ այսմ բնաբանքն, զորոց լինի
ճառ, կամ մեկնութիւն. ըստ որում են իբրև
զհիմն բանի, հիմնակարգութիւն կոչին: Ը.
կէ. 1. հոփ. Ժ:
Հիմնայատակ. (նախդրիւ հոլովի.) || այն,
որ քակեցեալ և աւերեալ լինելով՝ մինչև
ցհիմունս և ցյատակս հասուցեալ. և ըստ
կմ՝ քանդեցեալ. և յատակեցեալ. և ըստ
այսմ ասի՝ հիմնայատակ քաղաք. կմ՝ տուն.
և այլն:
Հիմնանամ. ացայ. ցիր. ալ: (ընդ. միջ.) || հի-
մնաւորիլ. կմ՝ հիմնիլ. կմ՝ ՚ի հիմանց կեր-
տիլ: Խորէն. ՚Բ. գլ. 29:
Հիմնարկեմ. եցի. եա. ել: (ներգործ. և
մերթ չէզոք.) || արկանել զհիմն շինուա-
ծոյ իրիք. և կմ՝ հիմնել: ռամկ. [illegible]:
2. Եզր. 3. 6: Նարէկ. հա:
Հիմնարկութիւն. թեն: || տես զՀիմնադրութիւն:

Հիմնադրկու. ոճի. ու. այ. գք: || զհիմն դնող. կամ զհիմն արկանող: և մերթ նմանութեամբ ա_ ռեալ նշանակէ զսկզբնաւորողն:

Հիմնայեղեալ. յեղայ. ով. ոց. ովք: || հիմամբ հաստատեցեալ. կամ հիմնեցեալ. կամ արմատացեալ: Նարէկ. 'ի գով. սուրբ:

Հիմնաւոր. ի. ու. այ. գք: || ունող զհիմն. կամ հիմնեցեալ: Իսկ մերթ հաստահիմն. կամ հաստատուն: Մերթ և գլխաւոր. կամ նախապետական:

Հիմնաւորեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || հիմնել. կամ հաստատել, և ամրել: Նարէկ. 'ի յիշատակագիրն:

Հիմնափայլեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || 'ի հիմանց փայլեցուցանել. կամ բոլորովին պայծառ առնել: 'Ի շարակնոցի:

Հիմնափոր. ի. իւ. եց. իւք: || փորող զտեղի հիմանն առ 'ի արկանել զհիմն. կամ նա՛ որ փորէ զհիմն իւրեք շինուածոյ առ 'ի կործանել զնա. և այլն: Մծբն. ժթ:

Հիմնեցուցանեմ. ցուցի. ցո. անել: (անցողակ.) || հիմնել. կամ հիմնաւորել. զի առաւել [illegible] է առ 'ի զարդ:

Հին. հնոյ. ով. ոց. ովք: || հնացեալ. կամ անցեալ. կամ մաշեալ. որ և ռամկօր. ասի, հին: Ղեւտ. 26. 10: Մարկ. 2. 21. և 22: Իսկ մերթ վաղեմի. կամ վաղնջական. և ըստ այսմ ասի. հին առասպել. կամ հին պատմութիւն. և այլն: 1. Թագ. 24. 14:

Հինաւուրց: (Նախդրիւ հոլովի.) || հնացեալ աւուրբք. կամ բազմաժամանակեայ: կամ յոյժ ծեր: Յոբ. 15. 10: և Դանիէ. 7. 9:

Հինգ. հնգի. իւ. իւց. իւք. կամ օք: || է թիւ բացարձակ. և նշանակէ զկէսն տասին. որ ռամկ. ասի՝ հինգ: Ղուկ. 9. 13:

Հինգամեակ: (Նախդրիւ հոլովի.) || այն իրն. կամ գործն. կամ պաշտօնն. և կամ այլ ինչ նըմանն, որ 'ի հինգ տարւոյն միանգամ լինի: 2. Մակ. 4. 18: Իսկ մերթ նշանակէ զայն. որ տևէ զհինգ ամս. և կամ է հնգամեայ:

Հինգամեան. մենի. իւ. եց. եւք: || հնգեմեան. այն, որ է հնգից ամաց: ռամկօր. հինկտարեան: Ղեւտ. 27. 5:

Հինգեմեան. ենի. իւ. եց. իւք: || Նոյն է ընդ վերնոյն: Ղեւտ. 27. 6:

Հինգերորդ. ի. ու. կամ իւ. աց. օք: || է թիւ դասական, որով նշանակի վերջինն հնգից դասաւորեցելոց. Երեմ. 1. 3: Իսկ մերթ է մակբայ. և նշանակէ՝ հինգերորդաբար:

Հինգերորդեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || զհինգերորդ մասն ցորենոյ. կամ այլոց ի և իցէ իրաց առնուլ: Ծննդ. 41. 34: Իսկ մերթ զհինգերորդ մասն տալ: Ծնն. 47. 26:

Հինգկանգնեան: (Նախդրիւ հոլովի.) || ըղ հինգ կանգուն բարձրութիւն. կամ երկայնութիւն ունօղ. և կամ որ հասանի 'ի չափ հինգ կանգնոյ: 1. Մնաց. 11. 23:

Հինգկնեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || հնգապատկել. կամ հնգիցս կրկնել: Ագաթ: Եւ մերթ առեալ լինի փոխանակ բազմապատկելոյ. կամ բազմիցս կրկնելոյ:

Հինգշաբաթեան: (Նախդրիւ հոլովի.) || այն՝ որ պարունակէ յինքեան զտեւողութիւն հնգից շաբաթուց. և ըստ այսմ ասի՝ հինգշաբաթեան ժամանակ: 'Ի Հար. հարց. Ե:

Հինգպատիկ. տկի. աւ. կամ իւ. աց. օք: և մերթ մակբայ քանակական: || հնգապատիկ, այս փոխանակ միոյն հինգ. կամ հինգ աստիճանաւ առաւել քան զմին: Խորէն. Բ. գլ. 85:

Հինգօրեայ. էի. իւ. եց. եւք: || այն՝ որ է հնգից աւուրց. կամ որ տևէ զհինգ աւուրս: Իսկ 2. Մակ. 10. 35. ուր ասի, իբրև օրն հինգօրեայ շաբաթուց լուսանալ կամէր. իմանի՝ հինգերորդ օր շաբաթուն:

Հինեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || զառեջս կտաւոյն, որ գործել պարտի՝ պատրաստել: Եւ այս մանաւանդ յաշխարհաբառ լեզուին 'ի գործածի. զի գրոց լեզուաւ ասի՝ հենուլ:

Հինինեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || շտապել. կա՛ տագնապել. կամ խուճապեցուցանել. այս փութացուցանել:

Հիպատ. կամ հիւպատ. ի. իւ. եց. իւք. կամ աւ. աց. օք: || տե՛ս զՀիւպատոս:

Հիպատոս: || տե՛ս զՀիւպատոս:

Հիպատոսութիւն. թեան: || տե՛ս զՀիւպատոսութիւն: Կիւրղի պարապմանց:

Հիպերէտ. կամ հիւպերէտ. ետի. աւ. աց. օք: || է բառ յունական, և նշանակէ սպասաւոր, կամ պաշտօնեայ. կամ ծառայօղ. և կամ փոքրաւոր: Խորէն. Գ. գլ. 14:

Հիպէս: (շաղկապ մեկնական. և մերթ մակբայ հարցական.) || որպէս. կամ զոր օրինակ. կամ որգոն:

Հիռ: (Նախդրիւ հոլովի.) || պտոյտ. կամ շրջանակ. կամ ծիր ի և իցէ իրաց, որ բոլոր առնու զնոքօք: Իսկ մերթ ընդ բայի շարակցի այսպէս. հիռ գալ. և նշանակէ. շուրջ գալ. կամ շրջիլ. և կամ շրջանակապատ առնել. ոնց առնէ երկինքն: Եւ կամ այսպէս. հիռ շրջանակել. և նշանակէ. շուրջ պատել. կամ շուրջանակի պարփակրել զինքը: Լամբր:

Հիռական. ի. աւ. աց. օք: || բոլորաշրջական. կամ շրջապատական. և կամ պտուտական:

Հիռամ. ացայ. ա. ալ: (ընդմիջ.) || պտուտել. կամ շրջանակել. կամ շրջապատել. կամ շրջել:

Հիր. հիրի. իւ. աց. օք: || Նոյն է սա ընդ բառիս՝ հիրիկ. որ մերթ նշանակէ զծիածանն. այս զծիրանի գօտին. և մերթ զխոտ ինչ բազմերանգ, և գեղեցկագոյն: Եւ յոյժ մանէ առեալ բառս հիր, երբեմն գնի փոխանակ ծիրանւոյ. և երբեմն փոխանակ այլ նմանագին կապուտակի. ըստ որում այսպիսի գոյնքս նկատեալ լինին 'ի ծիածանն: Աւասիկ Եզեկ. 23. 6. ուր ասի. Զգեցեալ հիրս՝ և կարմիրս. իմանի, ազնիւ կապուտակն, և կարմիրն: Իսկ Եզեկ. 27. 24. ուր ասի. հիր և կարմիր՝ և կապուտակ. նշանակի ծիրանի և կարմիր և կապուտակ:

Հիրիկ. րկի. աւ. աց. օք: || է բառ յունական, որով մերթ նշանակի աղեղն երկնից. այս ծիածանն: ռամկօր. ծիրանի գօտի: Իսկ մերթ խոտ ինչ անուշահոտ, որոյ արմատն

խսկ է հրաշալի, և զմարդն տախալէ՛ ի փոխաւ. Ունի զտերև պարարտ, և երկայնաձիգ, և բազմերանգ գունով փայլեալ իբրև զծիածան, որոյ վն խսկ կոչեցաւ հիրիկ: Զայս բոյս բազում անգամ քաղեալ 'ի գործ ածեն 'ի զանազան ծխանելիս, և 'ի դեղորայս. ոսկ և 'ի հնումն 'ի հանդերձանս իւղոյ օծման: Ելից. 30. 24:

Հիմանդ. ի. աւ. ազ. գք: ‖ ցաւագար. կմ ղուրկ յառողջութէ. կմ տկար. որ և ռամկ. ասի՝ հիւանդ. Մթ. 10. 8:

Հիմանդագին: (Նախդրիւ հոլովի.) ‖ հիմանդագոյն. կմ կարի հիմանդ: 2. Տիմ. 4. 20:

Հիմանդամիտ. մտի. իմ. ազ. գք: ‖ խօթամիտ. կմ տկարամիտ. կմ թմրեալ, և հեղգ միօք. և կամ դանդաղկոտ առ 'ի իմանալ: Եբր. 6. 12:

Հիմանդանամ. ացայ. ացիր. նալ: (ընդ միջ.) ‖ տկարանալ. կմ հիմանդ, և ցաւագար լինել. և կմ ախտանալ: Յոհ. 11. 3:

Հիմանդանոց. ի. աւ. ազ. գք: ‖ բնակարան ինչ, ուր հիմանդքն զետեղին առ 'ի խնամարկել: Խորէն. գ. գլ. 20:

Հիմանդաքայլ. ի. իմ. ից. իւք: ‖ նման հիմանդի քայլօղ. կմ յամրընթաց իբրև զհիմանդ. և կմ տկար և անզօր 'ի քայլելն: 3. Թագ. 4. 5:

Հիմանդոտ. ի. աւ. ազ. գք. կմ իմ. ից. իւք: ‖ հարեալ հիմանդութբ. կմ ցաւոտ. կմ ցաւագար: ռամկ. հիւանդոտ: Մակ. 1. 8:

Հիմանդութի. թեան: ‖ խօթութի. կմ ցաւագարութի. և կմ տկարութի: Յոհ. 5. 5:

Հիւթ. թոյ. ով. ոց. ովք: կմ իմ. ից: ‖ խոնաւութի ու և իցէ իրի: Իսկ մերթ նշանակէ զու և իցէ նիւթս. կմ զնիւթական իրս: 2. Թագ. 2. 26: և Նարեկ. ղէ: 'ի ձայնաց. թ: Եւ մերթ մինչ ասի՝ հիւթ երկրի՝ նշանակէ զմարմինն, կամ զզանգուածն երկրի, ք զհողն հանդերձ թանձրութբ, և խոնաւութբ, և խորութբ: Մթ. 13. 5: և Մրկ. 4. 5:

Հիւթական. ի. աւ. ազ. գք: ‖ նիւթական. կմ մարմնական: Յհ օրհն:

Հիւթականութի. թեան: ‖ նիւթականութի. կմ մարմնականութի: Նարեկ. ղ:

Հիւթանիւթ. ի. իմ. ից. իւք: ‖ հիւթ և նիւթ. կմ նիւթական իր. կմ հոլանիւթ, ք այն, որոյ նիւթն է 'ի հողոյ: Յհ օրհն: Կիւրղի Եղծ. Է:

Հիւթաւոր. ի. աւ. ազ. գք: ‖ նիւթաւոր. կմ մարմնաւոր. կամ հողեղէն: Նարեկ. հէ:

Հիւթեղ. ի. իմ. ից. իւք: ‖ այն, որոյ հիւթն է բազում և առատ. կամ որ է պարարտ. կամ մարմնեղ:

Հիւծ. ի. իմ. ից. իւք: ‖ հիւծեցեալ. կամ նիհարացեալ. և կմ հաշեալ և մաշեալ:

Հիւծագոյն. գունի. իմ. ից. իւք: ‖ առաւել հիւծեցեալ. կմ մաշեցեալ. կամ նիհարացեալ. և կամ վտատագոյն:

Հիւծիմ. եցայ. եաց. իլ: (Ձայնակր.) ‖ մաշիլ. կմ նիհարանալ. կամ ծիւրիլ. կմ վատիլ. կմ թալկանալ: Ոսկե. 2. հաս. ըէ:

Հիւծումն. ծման. մամբ. մանց. մամբք: ‖ մաշումն. կամ ծիւրումն. կմ նիհարացումն: Խորէն. գ. գլ. 46: Նարեկ. խը:

Հիւղ. ի. իմ. ից. գք: ‖ գուեհկական խուղ. կամ խրճիթ՝ շինեցեալ 'ի պարտիզի, ուր պարտիզպանքն պահեն զմրգս. կմ նշէն 'ի գիշերի: որ ռամկ. ասի աւածուխ: Սաղմ. 78. 1: Եսայ. 26. 18: Իսկ մերթ նշանակէ զհիւղէն, զոր առեցես զկնի:

Հիւղանակ: ‖ տես զհեղինակ:

Հիւղէ. կմ հիւլէ. ի. իմ. ից. իւք: ‖ է բառ յունական, որով նշանակի նիւթ. կամ տարր: Եւ մերթ մանրամաղ փոշին, կմ շամանդաղն, որ 'ի յօդն երևի 'ի շողն արեգական. ռամկ. հիւլէ:

Հիւղէական. ի. աւ. ազ. գք: ‖ այն հմ, որ հիւպատականի առ հիւղէս: Իսկ մերթ հիւղէական կոչին ոմանք փիլիսոփայք, որք զմակարդագործական անբաժանելի հիւղէս զնեն գոլ սկզբունս մարմնականաց իրաց:

Հիւղինակ. կմ հիւղանակ. ի. աւ. ազ. գք: ‖ տես զհեղինակ: Յհ օրհն:

Հիւպատեան: (Նախդրիւ հոլովի.) ‖ հիւպատոսական: Իսկ 'ի Խորէն. բ. գլ. 47. հիւպատոսի, իբրև զհիւպատեան հռոմայեցւոց, խմանի՝ իբրև զհիւպատոսն հռոմայեցւոց. կամ իբրև զհիւպատոսական ատենութի հռոմայեցւոց:

Հիւպատոս. ի. աւ. ազ. գք: ‖ է բառ յունական, որով նշանակի՝ բդեշխն, ք ծայրագոյն իշխանն. և կմ պետն, որ իշխէ իրագոյն իշխանն. և կմ իշխանաց մեծ հանրական ծերակուտին, կմ իշխանաց մեծ թագաւորութէ: 1. Մակ. 15. 16: Մերթ և ս նշանակէ զգլխաւոր դատաւորն քաղաքի. և կմ զիշխանն, որ առաքի ուրեք իբրև զփոխանորդ արքայի:

Հիւպատոսութի. թեան: ‖ բդեշխութի. ք ծայրագոյն իշխանութի, որ 'ի վր ծերակուտի. կմ իշխանաց թագաւորութի: Խորէն. գ. գլ. 21. և 22: Եւ կմ գլխաւոր իշխանութի. կմ դատաւորութի 'ի վերայ մեծ քաղաքի:

Հիւպերէտ: ‖ տես զհիպերէտ:

Հիւս. ոյ. իմ. ից. իւք: ‖ հիւսուածք հերաց. և կմ հիւսեցեալ գէսք. կմ հերք կանանց, զոր բազում անգամ յօրինել ակեման զարդուք՝ 'ի կախ թողուն զգլխոյ իւրեանց: Եզեկ. 7. 5: Եսայ. 3. 19: 1. Տիմ. 2. 9: և 1. Պետր. 3. 3: Իսկ մերթ նշանակէ ընկ հիւսուածն, կամ զյօրինուածն բանից, և հիւսուածն, կամ զյօրինուածն բանից, և այլոց իրաց: Լամբրոն: Մերթ և ս նշանակէ զմեծ գունդն ձեան, որ հոլովելով սահի 'ի բարձրաբերձ լերանց մինչև 'ի ստորոտն, և միանգամ անցանողացն է այն

Հիւսակ. ի. աւ. ազ. գք: ‖ հիւսեակ. ք հիւսեալ և յօրինեալ հերք գլխոյ կնոջ. կմ այլ մարդոյ: Ոսկե. 2. հաս. ի: Իսկ մերթ նշանակէ զհիւսուածս, կմ զյօրինուածս իրաց: Ի թէ հերաց իցէ, և թէ այլոց իրաց: Ոսկե. 1. հաս. ժէ:

Հիւսանեմ. հիւսի. ակր. եհիւս. սից. սցես. հիւս. կմ սեա. եալ: ‖ տես զհիւսել: Յո

դէն. 10. 3: և Եզեկ. 24. 17:

Հիւսեակ. եկի. ան. ացն. օք: || տե՛ս զՀիւ-սակ:

Հիւսեմ. եցի. եա՛. եալ: (Ներգործ.) || ընդ-միմեանս ագուցանելով շարամանել զհերս՝ կամ զժապաւէնս. և զայլս նմանս: ռամկ. հիւսել: Իսկ մերթ նշանակէ նիւթել. կամ յօդել. և կամ յօրինել: Խորէն. գ. գլ. 65: Նարեկ. զդ:

Հիւսիս. ոյ. ով: || է մին 'ի չորից կողմանց աշխարհի, որ է յաջակողմն արևելից, և հանդէպ հարաւոյ: Սաղմ. 88. 13: Ծնն. 13. 14: Իսկ մերթ հողմն հիւսիսային: Երգ. 4. 16:

Հիւսիսաբնակ. ի. աւ. աց. օք: || 'ի հիւսի-սային կողմն բնակող:

Հիւսիսախաղաց: (Նախդրիւ հոլովի.) || 'ի հիւսիսոյ խաղացեալ. որ եկեալ. կամ առ հիւսիս խաղացեալ. որ գնացեալ:

Հիւսիսական. ի. ան. աց. օք: || հիւսիսային. կամ 'ի կողմն հիւսիսոյ բնակող:

Հիւսիսակողմն. մանն. մանք. անց. անց: || կողմն հիւսիսոյ:

Հիւսիսային. այնոյ. ով. ոց. ովք: || այն ամ, որ վերաբերի առ կողմն հիւսիսոյ, որպիսի է հողմն, որ շնչէ 'ի հիւսիսոյ կողմանէ. կամ մարդիկք բնակեալք յայնմ կողման. և այլն:

Հիւսիսի. սոյ. եան: || հիւսիս. կամ հիւսի-սային կողմն: Այն զի ասա՛ է, յարի ոմն խորև զմանին վայելչական. որ ոչ այլայլէ զնշանակութիւն. այլ յայտ է 'ի բառէս յայս մանէ՝ արծիւ. որ բաղմիցս գրի արծուի: Եւ ըստ այսմ ասէ Նարեկ. 'ի ճէ. երգոցն. գնամ հիւսիսի. և ե՛կ հարաւ: Եւ 'ի Խորէնա. ե. գլուխ. 37. ասի. զհիւսիսեաւ շինէ քա-ղաքս: ըստ այսմ է և Զնկ. 1. 11: Թագաւ. 2. 25: Եզեկ. 40. 44. և այլն:

Հիւսկէն: (Նախդրիւ հոլովի.) || հիւսուա-ծոյ. կամ ընդ միմեանս ագուցեալ, և հիւ-սեցեալ. կամ շղթայագործեցեալ: Ելից. 28. 14. և 22: 39. 4. և 15. և 21:

Հիւսն. սան. սամբ. հիւսունք. սանց. սամբք: || արուեստաւոր, որ զփայտակերտս շինէ. ռամկ. [illegible]. կամ փողպաճի: 2. Թագ. 5. 11: Եսայ. 40. 19: և 44. 13: Մարկ. 6. 3: Իսկ Սիր. 38. 29. ասի. ասէ՝ հիւսն երկաթոյ, խմա-նի դարբինն, որ շինէ զերկաթեղէնս: Իսկ մերթ նշանակէ արուեստաւոր հիւսող և յօրինող բանից. և այլոց նմանեաց: Խո-րէն. Յ. գլ. 31:

Հիւսնեմ. եցի. եա՛. եալ: (չէզոք.) || զհիւ-սնութիւն առնել. կամ զհիւսնական արուեստ 'ի գործ ածել: Կորիւն. ... ժթ:

Հիւսնութիւն. թեան: || գործ հիւսնական. և կամ արուեստ հիւսան, որով կազմին փայ-տեղէն կերտուածք: ռամկ. փէօլէկնութիւն: Ելից. 31. 5:

Հիւսուած. ոյ. ով. ոց. ովք: || հիւսուածն. կամ յօրինուած. կամ յօդուած: Նարեկ. կէ:

Հիւսուածոյ. ոյէ. ին. ից. իւք: || հիւսեցեալ. կամ հիւսուածական: 'Ի Վարս հարց. կթ:

Հիւսում. հիւսման. հիւսմամբ. հիւսմունք. հիւսմանց: (Ներգործ.) || մերթ նշանակէ՝ հիւսել զհերս. կամ զթելս. և զայլս նմանս: Իսկ մերթ նշանակէ՝ յօդել. կամ յօրինել զբանս, և զայլս այնպիսիս: Յհ. ...:

Հիւսումն. ման. մամբ. մանց. մամբք: || ընդ-միմեանս ագուցմամբ շարամանութիւն հե-րաց. կամ թելից. կամ բանից, և այլոց նմանեաց:

Հիւր. ոյ. ով. ոց. ովք. կամ իւ. ից. իւք: || օտարական. կամ պանդուխտ ի-ջևանեալ 'ի տան այլոյ: ռամկօրէն մի-ւսաֆիր: 2. Թագ. 12. 4: Սաղմ. 38. 13: Որպէս և մարգարէն յիշեալ՝ որում եղև 'ի խորս ծովուն, որ ոչ էր իւր տեղի. այսպէս հիւր անդնդոց. ըստ գրի 3. Մակ. 6. 7:

Հիւրամեծար. ի. իւ. ից. իւք. կամ աց. օք: || մեծարանօք զհիւրս ընդունող. և կամ մեծարող. և յարգելի հիւր: 'Ի ճառս հարց. նզ:

Հիւրամեծարութիւն. թեան: || մեծարումն հիւրոց. և կամ մեծարանօք, և յարգութեամբ հիւրընկալութիւն:

Հիւրանոց. ի. աւ. աց. օք: || տեղի. կամ բն-նակարան լինել, ուր ընդունեցեալ լինին հիւրք:

Հիւրասէր. րասիրի. աւ. աց. օք: || սիրող հիւրից, կամ սիրով ընդունող զհիւրս: 2. Մակ. 6. 2: և 1. Տիմ. 3. 2:

Հիւրասիրութիւն. թեան: || սէր ընդունելոյ զհիւրս. կամ սիրով ընդունումն հիւրից: Հռովմ. 12. 13:

Հիւրընկալ. ի. իւ. աց. օք: || ընդունող 'ի տուն զհիւրս. կամ օթևանս առնող օտա-րաց: Աչգաւ:

Հիւրընկալեմ. եցի. եա՛. ել: (Ներգործ.) || ընկալնուլ. կամ ընդունել 'ի տուն իւր զհիւրս: 'Ի ճառս հարց. ժդ:

Հիւրընկալութիւն. թեան: || ընկալումն. կամ ընդունումն հիւրից:

Հիւրութիւն. թեան: || օտարութիւն. կամ պան-դխտութիւն, որով ոք օթևանի 'ի տան այ-լոյ: ռամկ. միւսաֆիրութիւն: Աչաւ. 20. 16:

Հիփոստազիզ. զզի. աւ. աց. օք: || է բառ յունական. որ թարգմանի՝ ենթադրե-ցեալ. որ 'ի ներքոյ եդեալ, որով նշանա-կի անհատ գոյացութիւն որ՛ ինչ և իցէ բնու-թեան. և զի այսպիսի գոյացութիւնս ենթա-կայ լինելով զնի 'ի ներքոյ պատահմանց, վս այսորիկ 'ի յունաց անուանեցաւ հի-փոստազիզ: Բայց երբեմն առեալ լինի մասնաւորաբար փոխանակ անձին, որ է անհատ գոյացութիւն բանական բնութեան: Սբն. Թովմա. 1. մասն. խնդ. 29. յօդ. 2:

Հիքացեալ. ելոյ. ով. ոց. ովք: || Թշուառա-ցեալ. կամ ողորմելի եղեալ. կամ աղքատացեալ:

Հիքանամ: || տե՛ս զՀիքանալ:

Հիքեմ. եցի. եա՛. ել: (Ներգործ.) || տա-ռապել. կամ աղքատանել. կամ նախատել. կամ անարգել:

Հիքութիւն. թեան: || Թշուառութիւն. կամ ո-ղորմելութիւն. կամ վտանգաւորութիւն: 'Ի ճառս հարց. ծզ:

ՀԼ

Հլու. (Նախդրիւ հոլովի.) || Հպատակ. կմ լսօղ. կմ անսացօղ. կամ հնազանդ: Աղաւէ. 21. 28: Իսկ մերթ նշանակէ զզգաստն. կմ զհեզն:

Հլութիւն. թեան: || Հլու լինելն. կմ հնազանդութիւն. և կմ լսողութիւն ձայնի հոգևոր, և մարմնաւոր հարց: Աշգաբ:

Հլուլ: (Նախդրիւ հոլովի.) || տե՛ս զՀլու:

ՀԾ

Հծծեմ. եցի. եա՛. եալ: (չեզոք.) || չչնչե. լով հարցանել զիրերարս. կամ խնդրել որոնմամբ զիր ինչ 'ի մէջ իւրեանց: ռամկ. փոփսալով հարցնել: Մարկ. 1. 27:

ՀՄ

Հմակեր. ի. աւ. աց. օք: || զհմուտ, և զգանեալ իւրս ուսօղ. որպիսիք են գաղանք. և կմ գազանային մարդիկ, որք ուտեն ըզ միս առանց եփելոյ:

Հմայեակ. կմ հմայեկ. եկի. աւ. աց. օք: || հմայելոյ գործիք. կմ կախարդական և հե. թանոսական բժժանք, զոր ոմանք յախ. մարաց, և յանհաւատից կախեն զպարա. նոցէ, կմ պահեն 'ի վր իւրեանց: ռամկ. համայիլ: Նարէկ. ղէ: Դարձեալ բառս հը մայեակ է անուն միոյ 'ի զօրավարացն վար դանանց, որ նահատակեցաւ:

Հմայեմ. եցի. եա՛. եալ: (չեզոք. և մերթ ներ գործ.) || դիւթել. թ գուշակել զապա. գայս 'ի ձեռն արտաքին նիւթոց. որգոն. 'ի ձեռն պղպջակաց ջրոց. կմ 'ի ձեռն հողմոյ. կմ 'ի ձեռն շարժման տերևոց ծա ռոց. կմ թռչման հաւուց. և այլոց սոյն. պիսեաց: Ղեւ. 19. 26: և 4. Թագ. 17. 17: Եզեկ. 21. 21: Սակայն Ծնն. 44. 5. ուր ասի հմայել բաժակաւ զհանապազորդն յոյժ. փոյ. ոչ իմանի մոգական արուեստիւ դիւ թելն, այլ հարմամբ բաժակի կեղծական գուշակութն. վն զի գիտելով նա զկարգ եղբարց իւրոց 'ի նստուցանելն զնս 'ի սե ղան, հարկանէր զբաժակն, և երևեցուցա նէր զինքն ըստ հնչման բաժակին նստու ցանել զնս կարգաւ. զոր ոչ գիտելով եղբայ րայցն համարելին թէ իբրև զինքեանս գիտութ հմայեր: Մերթ ևս բայիւս հմայել նշանակի 'ի նբ գլրս փորձել. թ անցեալ գործոյն ստուգապէս գիտել զիր ինչ. կմ փորձիւ հասու լինել: Ծնն. 30. 27: և 3. Թագ. 20. 33:

Հմայութիւն. թեան: || տե՛ս 'ի ներքոյ զՀմայք:

Հմայք. ից. իւք: (անեզական.) || հմայութիւն. որ է դիւթական գուշակութին ինչ ապագա. նեաց. զոր առնեն 'ի ձեռն նիւթական ի րաց, թ հայելով և քննելով զշարժումն օդոյ, կմ հողմոց. և կմ զդիրս և զգոյն լեր դին զենեալ կենդանեաց. զթռիչս և ըզ կռինչս հաւուց. և կմ զորպիսութիւս այ լոց իրաց. և ապա ըստ այնց նախապատ մէն զլինելոցն: յորում և բազում անգամ լինի կուսումն դիւաց, զի ցուցցեն զպատ նիսն: Թուոց. 23. 23: և 24. 1: 1. Թագ. 15. 23: Երեմ. 27. 9:

Հմուտ. հմտի. իւ. աց. օք: || տեղեակ. կմ խելամուտ. կմ վարժ. կմ գիտակ. կմ ա. ւոր: Ծննդ. 25. 27: և Թուոց. 24. 16:

Հմտագոյն. գունի. իւ.ից. իւք: || առաւել տեղեակ. կմ յոյժ հմուտ:

Հմտական. ի. աւ. աց. օք: || այն ամ. որ լի րաքերի առ հմուտս, թէ գործ իցէ, թէ բան, և թէ այլ ինչ: Իսկ մերթ ստոյգ հմտացեալ. կմ փորձ և խելամուտ. և կամ հանճարեղ: Նարէկ. ղթ:

Հմտանամ. ացայ. ցիր. ալ: (չեզոք.) || հմուտ լինել. կմ տեղեկանալ. կմ վարժիլ:

Հմտասէր. սիրի. աւ. աց. օք: || սիրող հմտութեան. և կմ ստոյգ հմտացեալ:

Հմտավարժ. ի. իւ. ից. իւք: || ստոյգ հմուտ և վարժ. կմ յոյժ հմտացեալ և վարժեցեալ: Նարէկ. 'ի գովեստ առաքելոց:

Հմտացուցանեմ. ցուցի. ցի. անել: (անցո. ղակ.) || հմուտ առնել. կմ տեղեկացուցա նել. և կմ վարժ և կիրթ առնել:

ՀՆ

Հնազանդ. դի. աւ. աց. օք: || հլու և վա ղեմի իրաց, կմ պատմութեանց գիտակ և տեղեակ: Իսկ մինչ ասի հնագէտ պատ մութեան, իմանի հնագիտական. կմ 'ի հնոց գիտացեալ վաղեմի պատմութիւն:

Հնագրութիւն. թեան: || գրուածք վաղեմի ի րաց, կմ պատմութեանց. և կմ հին և վաղե մի գրեցեալ ճառք և պատմութիւնք: Խորէն. ա. գլուխ. 18:

Հնազանդ. ի. իւ. ից. իւք: || հպատակ. թ նա որ զկամս իւր 'ի ներքոյ կամաց այլոց դնէ. և կմ ըստ կամաց այլոց առնէ զգործս. կմ որ է 'ի ներքոյ իշխանութեան այլոց ան կեալ: Հռոմ. 10. 16: 1. Պետր. 2. 13:

Հնազանդական. ի. աւ. աց. օք: || հնազան դելի. կամ այն ամ. որ վերաբերի առ հը նազանդութիւն. կմ առ հնազանդն:

Հնազանդեմ. եցի. եա՛. ել: (ներգործ.) || հնազանդեցուցանել. կամ հպատակ առ նել. կմ ընդ հնազանդութեամբ նուաճել: Սաղմ. 143. 2: և Իմաստ. 18. 22:

Հնազանդեցուցանեմ. ցուցի. ցա՛. նել: (ան ցաւ.) || հպատակ և հնազանդ առնել. կմ ընդ հնազանդութեամբ նուաճել: 1. Կորնթ. 15. 28:

Հնազանդիմ. եցայ. եա՛ց. իլ: (ձայնակր.) || 'ի ներքոյ կա. հպատակիլ. կմ զկամս իւր 'ի ներքոյ կա մաց այլոց դնել. և կմ զկամս այլոց կատա րել: Իմաստ. 14. 15: Մարկ. 1. 27:

Հնազանդութիւն. թեան: || հպատակութիւն. կմ կամաւորական նուիրումն կամաց առ 'ի կամիլ զայն, զոր հրամայօղն առաջարկէ: 1. Թագ. 15. 22:

Հնախօս. ի. իւ. ից. իւք: || զհնոյ ժամանա կէ, կմ զհնագոյն իրաց պատմօղ. կմ խօ սօղ: Իսկ մերթ նշանակէ հին և վաղեմի պատմիչն: Խորէն. ա. գլ. 5:

Հնախօսութիւն. թեն: || Ճառք. կմ բանք հին և վաղեմի

վաղեմի իրակութեանց․ կմ՛ պատմութեանց։ Եւ մերթ՝ հին և վաղեմի պատմութիւն, կամ Ճառ․ Խորէն․ Գ․ գլ․ 1։

Հնանամ․ ացայ․ ցիր․ ալ։ (ընդմիջ․) ‖ հին լինել․ կամ ընդերկար ունելով մաշիլ և մերձենալ յապականութիւն․ և կմ՛ ծերանալ։ Եբր․ 8․ 13։ և Ցեր․ 13․ 28։ Իսկ Եսայ․ 65․ 22․ ուր ասի՝ գործք ձեռաց նց հնասցին, է ոճ ինն․ որով իմանի յոյժ երկարատև լինելն։

Հնար․ կմ՛ հնարք․ ից․ իւք։ ‖ հնարագիտութիւն․ կամ այն, որ ՚ի ձեռն ուշիմութեան, կմ՛ խորագիտութեան ուրուք հնարի․ և լինի․ թէ բան ինչ․ թէ արհեստ, և թէ այլ ինչ գործ։ 2․ Մնաց․ 2․ 14։ Իսկ մերթ նլք․ կմ՛ Ճարակ․ գ Ճար։ Մերթ ևս նշանակէ զծածուկ նենգութիւն, կմ՛ զդաւաճանութիւն իմաստելոյ․ և կամ զխորամանկութիւն։ Եփես․ 6․ 11։ Մերթ ևս բառս հնար ընդ բայի շարակցեալ՝ նշանակէ զկարելին․ ունդ մինչ ասեմք․ եթէ հնար է․ իմանի՝ եթէ կարելի է։ Մատթ․ 26․ 39․ և 42։ Գործ․ 20․ 16։ Իսկ ՚ի Յհ ողբէն՝ ուր ասի՝ Այլ որ հնարգես անհնարից․ իմանի՝ հնարօղ․ կմ՛ Ճար անօղ։

Հնարագէտ․ գիտի․ ատ․ աց․ օք։ ‖ գիտօղ զհնարս․ և զելս այնպիսեաց իրաց, զորս կամի առնել․ կամ խորագէտ․ և կմ՛ խորամանկ։

Հնարագիտութիւն․ թեան։ ‖ գիտութիւն հնարից, որով ոք հնարէ զինչ․ կմ՛ հնարք․ կմ՛ խորագիտութիւն․ կմ՛ հանՃարեղութիւն։ Իմաստ․ 6․ 17։ և 14․ 12։ և 15․ 4։

Հնարագիւտ։ (Նախդրիւ հոլովի․) ‖ զհնարս և զՃարս գտանօղ․ կմ՛ հնարագէտ։

Հնարագործ․ ի․ իւ․ աց․ օք։ ‖ զհնարս գործօղ․ կամ հնարաւորիչ։

Հնարագիր․ գրի․ իւ․ աց․ օք։ ‖ հնարագործ․ կամ զհնարս կործանման դնօղ․ կամ որոգայթադիր։ Նարեկ․ ծճ։

Հնարագրութիւն․ թեան։ ‖ հնարագործութիւն․ կմ՛ հնարաւոր կործանման, և գայթակղութիւն․ կմ՛ որոգայթադրութիւն։ Նարեկ․ հէ․ և գա։

Հնարաւոր․ ի․ աւ․ աց․ օք։ ‖ կարելի․ կամ այն՝ որ կարէ լինել։ Մարկ․ 9․ 22։ և Ղուկ․ 18․ 27։ Իսկ մերթ նշանակէ զհնարս ունօղն․ կամ զհնարօղն։

Հնարաւորեմ․ եցի․ եա․ ել։ (Ներգործ․ և մերթ չեզոք․) ‖ հնարաւոր․ կմ՛ կարելի առնել․ և կմ՛ զՃարս․ և զհնարս գտանել։ Նարեկ․ Հ։

Հնարաւորիմ․ եցայ․ եաց․ իլ։ (ձայնաւոր․) ‖ ջանալ․ կմ՛ հնարս գտանել․ կմ՛ գուն գործել։ ՚Ի ճառս հարց․ ժթ։

Հնարաւորութիւն․ թեան։ ‖ հնարք․ կմ՛ հնարագիտութիւն․ կմ՛ Ճար։ Նարեկ․ զե։ Եւ մերթ կարելութիւն։ Խորէն․ Ա․ գլ․ 26։

Հնարեմ․ եցի․ եա․ ել։ (Ներգործ․) ‖ մերթ նշանակէ զհնար ինչ գործել․ կմ՛ հնարել․ և խոյ ագիտութեամբ գտանել զինչ առ ՚ի զերծ ծուցանել զոք․ կամ առ ՚ի չարչարել, և իմանալ ուրեք․ և կմ՛ մի այլ ինչ վախճանի։

Եսայ․ 1․ 10։ Եւ մերթ զգործ ինչ․ կամ զանօթ ինչ նորոյ․ պէս ձևացուցանել և ՚ի լոյս ածել․ կամ նորոգ կերտել․ ռամկօր․ ինճաց անել․ կամ ֆէյսաց անել։ Իմաստ․ 13․ 11։ Իսկ մերթ նշանակէ զՃար ինչ գտանել առ ՚ի առնել զինչ․ կամ ջանալ․ և կամ գուն գործել։ 3․ Թագ․ 2․ 7։

Հնարիմ․ եցայ․ եա․ իլ։ (հասարակ բայ․) ‖ հնարել․ կմ՛ խորագիտութեամբ․ և կմ՛ ջանիւք սրտի գտանել զհնարս․ կամ զգործ ինչ․ և կամ զբան ինչ։ Եսայ․ 46․ 5։ Երեմ․ 2․ 33․ ըստ այսմ է, և Գործ․ 7․ 19․ ուր ասի․ նա հնարեցաւ ազգին մերում․ գ եգիտ զհնարս տառապեցուցանելոյ ազիւսարկութեամբ․ և այլն։ Իսկ մերթ նշանակէ՝ հնարս գիտութեամբ, կամ փոյթ առնելով՝ նիւթել, կամ գործել զինչ։ Իմաստ․ 19․ 12։ Ողբ․ 2․ հոփ․ լթ։ Մերթ ևս նշանակէ՝ գուն գործել, կամ ջանալ, և կմ՛ նկրտիլ։ Շնորհալին։ Իսկ մերթ նշանակէ զգործ ինչ, կամ ըղ կերտուած ինչ յիմեքէ նիւթոյ կերպաւորել և կազմել․ կամ նորոգ ՚ի լոյս ածել։ ռամկ․ ինճաց ընել․ կամ ֆէյսաց անել։ Իմաստ․ 14․ 2։ Բայց Իմաստ․ 14․ 14․ ուր ասի․ վասն այնորիկ ՚ի կարՃոյ հնարեցաւ վախՃանն նց․ իմանի՝ սահմանեցաւ վաղվաղակի լինիլ վերջին նց։ Իսկ մերթ վարի իբրև զբայ գիմաւորակ, և նշանակէ՝ հնար լինիլ․ կմ՛ կարելի գոլ․ ըստ այնմ․ 2․ Մակ․ 9․ 1․ Եւ թէ հնարեսցի՝ զքաղաքն իսկ աւերել ջանայր․ գ եթէ հնար լիցի։ ըստ այսմ ևս Կիւրղի եղէմ․ ժգ․ ասի․ Եւ այն հնարեցաւ․ գ կարելի եղև։

Հնարիմաց․ ի․ իւ․ ից․ իւք։ ‖ հնարագէտ․ կմ՛ զհնարագործ միտս ունօղ․ կմ՛ խորագէտ․ և կմ՛ խորամանկ։ Լամբրոն։ Եւ մինչ ասի՝ հնարիմաց ատենջանք․ կմ՛ չարիք, իմանի՝ հնարագործականն, կմ՛ խորամանկականն։

Հնարին։ (Նախդրիւ հոլովի․ կմ՛ Ը բայի շարակցի այսպէս․ հնարին է․) ‖ և նշանակէ՝ հնարաւոր․ կմ՛ կարելի։ Կիւրղի եղէմ․ ժբ։

Հնարք․ ից․ իւք։ ‖ տես զհնար։

Հնացուցանեմ․ ցուցի․ ացի․ ել։ (անցող․) ‖ հնացեալ առնել։ Եբր․ 8․ 13։ Իսկ Յոբ․ 32․ 15․ ուր ասի՝ հնացուցին զբանս, է ոճ ինն․ որով իմանի լռեցուցանել զբանն․ կմ՛ իմանալ զանզօր գոլն բանից։

Հնգակատար․ ի․ իւ․ աց․ կմ՛ ից․ օք։ ‖ ունօղ զհինգ կատարս, գ զհինգ ծայրս․ կմ՛ զգլուխս։ Խորէն․ Գ․ գլ․ 62։

Հնգապատիկ․ տկի․ աւ․ աց․ օք։ ‖ տես ըղ հինգպատիկ։

Հնգեակ․ եկի․ աւ․ աց․ օք։ ‖ է զատական անուն թուոյ, որով նշանակի հինգն զատաբար․ կմ՛ պարունակօղն զհինգ թիւ։

Հնգեկան․ ի․ աւ․ աց․ օք։ ‖ հնգեակ․ կամ հնգեքին։ Աշգաւ։

Հնգետասան[...]ի․ իւ․ ից․ իւք։ ‖ է անուն բաղադրեալ թուոյ․ որով նշանակի տասն և հինգն։ Գործ․ 27․ 28։

Հնգետասաներորդ․ որդի․ իւ․ աց․ օք։ ‖ է դասական անուն թուոյ, որ նշանակէ

Digitized by Google

զվերըլինն հնդկաստանեին։

Հնգերեակ. ի. աւ. ից. օք։ || Հնգաւոր. կմ՝ պարունակող հնգից. կմ՝ հնգեակ։ Խորէն. յաշխարհագրութեն։

Հնգեքեան. կմ՝ եւ. եցուն. ունք։ (անեզական.) || է անձներական անուն թուոյ. և նշանակէ զիւրաքանչիւրն հնգից։

Հնդիկ. հնդկի. աւ. աց. օք։ || ան՛ս 'ի բառս բանի յատուկ անուանց։

Հնդկային. այնոյ. ով. ոյ. ովք։ || հնդկական։ Իսկ մերթ նշանակէ զհնդիկն. կամ զազգն հնդկաց։ Ոսկէ. 2. հոփ. ժթ։

Հնձակէզ. կիզի. իէ. լից. լիք. կամ օք։ || կիզող. կմ՝ այրող զհունձս։

Հնձան. ի. աւ. աց. օք։ || է մեծ անօթ ինչ. կմ՝ կազմուած իբն նման աւազանի, ուր ճմլի. կմ՝ կոխի խաղող, որ և ռամկօրէն հնձան. և տաշտկեր". շորայխանոյ։ Աւետ. 3. 10։ Մատթ. 21. 33։ Յայտ. 14. 19։ Բայց գետեղի է, զի յոմանս տեղիս կազմեն զհնձանն 'ի յայգեստանս իբրև զքառանկիւն մեծատակ, որ ունի զծածք 'ի վր իւր, և յամենայն կողմանց պատեալ որմովք բաց 'ի յառաջնոյ կողմանէ, որ բաց է գրեթէ կիսով չափ 'ի վերուստ, և ունի զպատուհան փոքր ինչ պառ'ի վայր ծծփեալ բռով, ուր լցեալ զխաղող, կոխեն զայն բազմութիւք մարդկանց երգելով զերգս յորդորակս. ոչ յեղի Երեմ. 48. 33։ Եւ այսպիսի հնձանք էին, ուր մտեալ օթեվանս կալան հոփի սեփեանքն։ Աւգոս։ ոչ և 'ի Շարաֆնոցի տանի. տնկեցաւք ուտուգութ 'ի հնձանս նոցունց։ Իսկ մերթ բառս հնձան ընդ բայի շարակցի այսպէս, հնձան հարկանել, և նշանակէ կոխել զխաղող 'ի հնձանի։ Ողբ. 1. 15։ Եսայ. 63. 3։

Հնձանահար. ի. աւ. աց. օք։ || հնձան հարկանող. որ կոխող. կմ՝ ճմլօղ զխաղող 'ի հըն ձանի։ Եսայ. 63. 2։

Հնձանայարկ. ի. աւ. աց. օք։ || հնձան շինեալ իբրև զյարկ. որ իբրև զտուն. կմ՝ զսենեակ, կորմէ ըհագոյն տապուա 'ի մեկնութե հնձան բառին։ Աւգոս։

Հնձեմ. եցի. եա. եալ։ (ներգործ.) || քաղել մանգաղաւ զցորեան. կմ՝ զգարի. և զայլս նմանս։ Ղեւտ. 19. 9։ Մատթ. 6. 26։ Մերթ և ս նմանութբ առեալ, նշանակէ սպանանել. կմ՝ ջարդել։ Ովս. 6. 5։

Հնոտի. ւոյ. ւով. եաց. օք։ || կարի հնացեալ և մաշեցեալ. կմ՝ հին, և պատառոտուն։ Եւ այս առի զանէ, կմ՝ զզգեստուց. և կմ՝ սկուտուց. և զայլոց նմանեաց. 'ի ձեռն հարց ա. է։

Հնոց. ի. աւ. աց. օք։ || շինուած ինչ՝ նման փռան, ուր հուր մեծագոյն վառի, և անդէն ապակեղէնք հալլին, և շինին. և կմ՝ աղիւսք թրծին. և այլք նմանք։ Ծննդ. 19. 28։ Դան. 3. 48։ Եզեկ. 9. 8։ Իսկ Թագաւոր. 25. 8. ուր առի եմուտ զհեռ առն խարայելացւոյ 'ի հնոցն, իմանի տեղին պոռնկութե. ուր այրեցեալ լինէին վաւաշոտքն բացով ցանկութե։

Հնչեմ. եցի. եա. եալ։ (չէզոք. և մերթ ներգործական.) || ձայն հանել. կմ՝ արձակել զհնչումն։ Իմաստ. 17. 17։ Մերթ և ս նշանակէ, հաչակել. կմ՝ հրատարակել. կմ՝ տարածել. կմ՝ լսելի առնել։ Ծննդ. 45. 16։ Եսայ. 12. 4։ և 1. Թեսաղ. 1. 8։ Իսկ Յոբ. 6. 13. ուր ասէ, ոչ եթէ և թագենայ. զի ուժգին հնչեցի 'ի հողմոյ, իմանի՝ զի ուժգին չէն չեցեալ լինելով 'ի հողմոյ հարցի, և չար ժեացի։ ...

Հնչեցուցանեմ. ցուցի. ցի. անել։ (անցող.) || հնչօղ առնել. կամ գոչեցուցանել. կմ՝ հարկանելով զհնչօղ գործի ինչ՝ առնել նմա հանել զհնչումն։

Հնչիւն։ (նախադրիւ հոլովի.) || հնչումն. կմ՝ ձայն՝ որ հնչեցեալ լինի։ Եզեկ. 28. 35։ և Եզեկ. 33. 6։

Հնչումն. ման. մամբ. մանց. մամբք։ || նոյն է ընդ վերնոյն։

ՀՈ

Հող. ոյ. ով. ոց. ովք. կմ՝ օք։ || խնամ. կմ՝ խնամածութիւն. կմ՝ փոյթ։ Մերթ և ս նշանակէ զզբաղմունս. կմ՝ զվարմունս մտաց։ ռամկ. փիւրքհող. կմ՝ խնամք։ Աւետ. 17. 12։ Իմաստ. 8. 9։ և Ղուկ. 21. 34։

Հոգաբարձ. ի. աւ. ից. օք։ || տես 'ի ներքոյ զՀոգաբարձու։ Նորէն. ըէ։

Հոգաբարձու. ձուի. աւ. աց. օք։ || հոգածող. կմ՝ զփոյթ ունող 'ի վր գործոյ իրիք. կամ խնամակալ. կամ մատակարար. կամ անօտս. և կամ վերակացու։

Հոգաբարձութիւն. թեան։ || հոգածութիւն. կամ խնամատարութիւն. կամ վերակացութիւն. կամ մատակարարութիւն. և կամ հոգաբարձութիւն։ Մծբն. ժ։ և Ոսկէ. 1. հոփ. ժէ։

Հոգած. ի. իւ. ից. իւք։ || հոգ տանող. կմ՝ խնամ տանող. կամ մեծամեծ ջանիւ խնամ տանող. կամ կաշառօղ. և բառ այսմ առի. Մծբն. ժ։ հոգի մող. և հոգած։ Իսկ մերթ նշանակէ հոգածող. կամ վարանօղ. կմ՝ տխրութբ մտածօղ և ցաւօղ։ ռամկ. փիւրքհողէն։ Աւետ. 14. 30։ և 47. 22։

Հոգածու. ծուէ. աւ. աց. օք։ || խնամ տանող. կմ՝ հոգ տանող. կամ խնամարկող։

Հոգամ. ացայ. ա. ալ. (չէզոքամիջ.) || հոգ տանել. կամ խնամ տանել. կամ փոյթ ունել. և կամ փոյթ ունելով պատրաստել ինչ։ Եզեկ. 5. 9։ Սաղմ. 118. 15. և 78։ 1. Պետր. 5. 7։ Մերթ և ս նշանակէ զբաղիլ և հոգ տանել. 1. Մակ. 17. զմտածութեամբ. կամ վարանիլ։ 1. Մակ. 17. 9։ Ղուկ. 12. 11։ Եւ կամ վարանելով տրտմել. կամ ցաւել։ ռամկօր. խոցիլ ընել։ Մատթ. 26. 37։ և Փիլիպ. 2. 26։ Իսկ մերթ նշանակէ խոկալ. կմ՝ խորհրդածել 'ի սրտի։ Իմաստ. 12. 22։

Հոգատարութիւն. թեան։ || խնամատարութիւն. կամ հոգածութիւն։ Ոսկէ. 2. հոփ. է։

Հոգարկեմ. եցի. եա. ել. (ներգործ.) || խնամարկել. կամ հոգածել. կմ՝ նախախնամել։ Լամբրոն։

Հոգարկութիւն. Թեան: || Խնամարկութիւն. կմ՛ հոգածութիւն: Իսկ մերթ նշանակէ՝ վարանմանն մտայուզութիւն. կմ՛ անձկութիւն: ռամկօրէն խռովքի: Նարեկ. լէ:

Հոգեգումար. ի. իւ. ից. իւք: || Հոգւոր գումար. կմ՛ հոգեւորապէս գումարեցեալ. և խմբեցեալ: Նարեկ. 'ի գովեստ առաքելոց:

Հոգեզարդ. կմ՛ հոգէզարդ. ի. իւ. ից. իւք: || Նա՛ որոյ հոգին զարդարեցեալ է առաքինութ. կմ՛ իմաստութ. և կմ՛ որ է պճնեցեալ շնորհօք հոգւոյն սբյ: Նարեկ. 'ի Ցեղապատկերին:

Հոգեզուարճ. կամ հոգէզուարճ. ի. իւ. ից. իւք: || Զուարճացուցանող հոգւոյ. կմ՛ որ է զուարճացեալ արտաքին, կմ՛ հոգւով:

Հոգեզրահ. ի. իւ. ից. իւք: || Զրահեցեալ հոգեւորապէս. կամ 'ի ձեռն շնորհաց, և առաքինութեանց զհոգին զրահաւոր առնող: Նարեկ. ղԹ:

Հոգելի: (Նախդրիւ հոլովի:) || Լի հոգւով սրբով. կամ հոգեկիր: Նարեկ. ղԹ:

Հոգելից. կմ՛ հոգէլից: (Նախդրիւ հոլովի.) || Լցեալ հոգւոյ իրօք. կմ՛ շնորհօք հոգւոյն սրբոյ լցեալ. և կմ՛ լի հոգւով սրբով: Նարեկ. Ձ:

Հոգեկան. ի. ու. ոց. օք: || Հոգեւոր. կմ՛ հոգեւորական: Նարեկ. խԶ. և Լամբրոն:

Հոգեկեցոյց: (Նախդրիւ հոլովի.) || Զհոգին մարդոյ կեցուցանող. կմ՛ հոգեշահ:

Հոգեկիր. կմ՛ հոգէկիր. կրի. աւ. աց. աք: || Կրող յինքեան զհոգին Սբ. կամ առնող զշնորհս հոգւոյն սբյ. և կմ՛ ընդունող յինքն զպարգեւսն սբյ հոգւոյն: Նարեկ. ՀԶ. և ղէ:

Հոգեկրօն. կմ՛ հոգէկրօն. ի. իւ. ից. իւք: || Զհոգեւոր և զառաքինական վարս ունող. կամ ըստ հոգւոյ կեցող. և կմ՛ որոյ վարքն և կեանքն շնորհօք հոգւոյն սբյ է զարդարեցեալ: Նարեկ. ղԹ:

Հոգեհանճար. ի. իւ. ից. իւք: || Ունող ըզ հանճար պարգեւեցեալ 'ի հոգւոյն սբյ. կմ՛ հանճարով հոգւոյն սբյ լցեալ: Նար. ՀԹ:

Հոգեճաշակ. ի. ու. ոց. օք: || Զհոգին Սբ ճաշակող. կմ ընդունող. և կմ՛ զշնորհս հոգւոյն Սբյ կրող: Նարեկ. 'ի գով. առաք:

Հոգեմասնեան. կմ՛ հոգէմասնեան. անեի. իւ. ից. իւք: || Մասնեան 'ի հոգւոյն սբյ կազմեցեալ. կամ գրեցեալ. և կամ գիրք՝ կրող յինքեան զպատգամս հոգւոյն սբյ: և այս առի նմանութեամբ զառաքելոյն քանի, վա լինելոյ նոյ ընդունարան շնորհաց. կմ՛ ազդեցութեանց հոգւոյն սբյ: Նարեկ. 'ի գովեստ առաքելոց:

Հոգեմարտ. կամ հոգէմարտ. ի. իւ. ից. իւք: || 'ի ձեռն մոլորական, կամ հերետիկոսական բանից՝ մարտնչող ընդդէմ հոգւոյն սբյ՝ ուրանալով զԱծութիւն, կամ զհաւասարութիւն նր, որպիսի էր մակեդոն. և համախոհք նր: Խորէն. գ. գլ. 30. և 33:

Հոգենկար. ի. իւ. ից. իւք: || 'ի ձեռն հոգւոյն սբյ նկարեցեալ, և ձեւացեալ. կամ հոգեւորապէս նկարեալ և ձեւակերպեալ: Նարեկ. ՀԷ:

Հոգենիւթ. կմ՛ հոգէնիւթ. ի. իւ. ից. իւք: || ունօղ զհոգիանիւթ:

Հոգենորոգ: (Նախդրիւ հոլովի.) || Զհոգի մարդոյ նորոգօղ: Իսկ մերթ նշանակէ՝ նորոգեցեալ. կամ լուացեալ հոգւով. բայց 'ի Նարեկ. Ճճ. ուր ասի՝ Աննապատաս արթնութ., հոգենորոգ զուարթութ. նշանակէ՝ հոգենորոգական զուարթութ: Մերթ եւս նշանակէ հոգւով սրբով նորոգելի. որպիսիք են մարմինք ննջեցելոց սբց: Նարեկ. ղէ:

Հոգենուագ. ի. իւ. ից. իւք: կամ աց. աք: || Հոգւով սրբով նուագօղ և երգօղ. որպիսի էր դաւիթ մարգարէն. կմ՛ հոգւով սրբով նուագեցեալ. որպիսի է սաղմոսն. և այլք նմանք: Լամբրոն:

Հոգեշահ. կամ հոգէշահ. ի. իւ. ից. իւք: || Շահօղ հոգւոյ. կմ՛ այն՝ որ է շահ և օգուտ հոգւոյ. որպիսիք են ածային բանք: Ոսկէ. 1. համ. Ի:

Հոգեշարժ. ի. իւ. ից. իւք: || Այն՝ որ ըստ հոգւոյ շարժի. և կամ այն՝ որ զհոգի մարդոյն շարժէ: Նարեկ. 'ի գով. խաչին:

Հոգեշնորհ. ի. իւ. ից. իւք: || 'ի հոգւոյն սբյ շնորհեցեալ, և պարգեւեցեալ. կմ՛ զշնորհս հոգւոյն սրբոյ ունող: Լամբրոն:

Հոգեշունչ. կամ հոգէշունչ. շնչի. իւ. ից. իւք: || 'ի հոգւոյն սբյ շնչեցեալ կամ ազդեցեալ. որպիսի է ածաշունչ գիրն: Նարեկ. ծը. և կզ: Եւ մերթ զներշնչումն հոգւոյն սրբոյ ընդունօղ: Նարեկ. 'ի գով. առաք: Իսկ մերթ նշանակէ զհոգին փչօղ:

Հոգեպահ: (Նախդրիւ հոլովի.) || Զհոգին մարդոյ 'ի մարմնի պահօղ. կամ զկեանս մարդոյ պահպանող. և այս առի զկերակրեզ. Նաղ. վԾ գլ. այնքան ուտելիքն, որքան բաւական է մարդոյ՝ զի կեցցէ. և մի մեռցի. կ չի հոգեպահ կերակուր:

Հոգեպայծառ. ի. իւ. ից. իւք: || Պայծառացեալ հոգւով. կամ զհոգեւոր պայծառութիւն ունօղ: Նարեկ. 'ի գով. առաք:

Հոգեպարգեւ. կամ հոգէպարգեւ. ի. իւ. ից. իւք: || 'ի հոգւոյն սրբոյ պարգեւեցեալ, կամ շնորհեցեալ: Նարեկ. Ը. և զզ: Իսկ մերթ զհոգին Սբ պարգեւօղ. կմ՛ ունօղ զպարգեւս հոգւոյն սրբոյ:

Հոգեպէս. (մակբայ որակական.) || Հոգեւորապէս. կամ ըստ հոգւոյ: 1. Կորն. 2. 14:

Հոգեսէր. սիրի. աւ. աց. աք: || Սիրօղ զփրկութիւն հոգւոյ մարդոյ: Նարեկ. կզ: և մերթ սիրօղ զհոգեւոր իրս. կամ զկենցաղավարութիւնս:

Հոգեսնունդ: (Նախդրիւ հոլովի.) || Հոգեւորապէս սնուցեալ. կամ զհոգեւորական սնունդ ունօղ: Նար. ղԹ:

Հոգետանջանութիւն. կամ հոգէտանջանութիւն. թեան: || Հոգւոր տագնապանութիւն. կամ հոգւոր տագնապութիւն. կամ մերձաւորութիւն: Նարեկ. 'ի տօնն եկեղեցւոյ:

Հոգերգօղ. գօղի. աւ. աց. աք: || Հոգւով սրբով երգօղ. կամ ներշնչմամբ հոգւոյն սրբոյ նուագօղ, և սաղմոսօղ. որպիսի էր սաղմոսերգուն դաւիթ: Լամբրոն. 'ի ձայն հարց.

Հոգեւոր. ի. ու. աց. օք: || Հոգեկան. կամ

հոգեղէն. և կմ այն՝ որ պատկանի հոգւոյ մարդոյն. որպիսիք են շնորհքն, կմ ածային օրէնքն. և այլք նմանք: Հռօմ. 1. 11: և 7. 14: Իսկ մերթ նշանակէ զհոգևորականն. կմ զհոգևորդատարն. և ըստ այսմ առնի զեկեղեցւոց. թէ զհոգևոր կերակուրն կերին: 1. Կոր. 10. 3. և 4: Եւ մերթ առնի զմարդոյ. և նշանակէ՝ ըստ հոգւոյ վարօղ. և կամ հոգևոր իրաց պարապօղ. կմ մատակարարօղ: 1. Կոր. 3. 1: Գաղ. 6. 1: Եւ մինչ առնի՝ մարմին հոգևոր, իմանի՝ կեցօղն հոգեկան կենօք. որպիսիք են մարմինք յարուցելոց սրբոց: 1. Կոր. 15. 44: Մերթ ևս բառս՝ հոգևոր, նշանակէ՝ հոգիաւոր. կմ զհոգի ունօղ:

Հոգեբուղխ: (Նախդրիւ հոլովի.) || տե՛ս զՀոգիաբուղխն:

Հոգեզարդ: || տե՛ս զՀոգեզարդն:

Հոգեզուարճ: || տե՛ս զՀոգեզուարճ:

Հոգելից: || տե՛ս զՀոգելիցն:

Հոգեխառն. կամ հոգեխառն: (Նախդրիւ հոլովի.) || այն՝ որ է միաւորեալ ը̃ հոգւոյ. և կմ որ ունի ընդ իւր զհոգի բանական, որպիսի է մարդկային մարմինն: Աճգար: Իսկ մերթ նշանակէ զհոգևորականն. կմ զկրօնաւորն, որոց գրեթէ հոգին և սիրտն ուրուք խառնեալ միանայ ընդ ումեք. և ը̃ այսմ առնի՝ հոգեխառն սնունդ: Աճգար:

Հոգեկիր: || տե՛ս զՀոգեկիրն:

Հոգեկորոյս. րուսի. իւ. ից. իւք: || կորուսանօղ հոգւոյ մարդոյն. որպիսի է մեղքն, կմ գեհ. և կմ զհոգին իւր կորուսանօղ. որպիսի է մեղանչօղ մարդն:

Հոգեկրօն: || տե՛ս զՀոգեկրօն:

Հոգեհանգիստ. գստի. իւ. ից. իւք: || հանգուցիչ հոգւոյ, կմ հանգիստ հոգւոյ: Եւ մերթ նշանակի սովորա. եկեղեցական ողորմութիւն. զոր առնեն ոմանք 'ի բարեպաշտից ամ ը̃ ամի վ̃ հոգւոց ննջեցելոց իւրեանց՝ ընծայելով և տալով աղքատաց ըլ կերակուրս. զի աղօթեսցեն վ̃ ննջեցելոց իւրեանց՝ ող̃ զի զերծեալ 'ի քաւարանէ՝ հանգիցեն ընդ ամա յարքայութիւն երկնից: և ըստ այսմ առնէ Շնորհալին 'ի Թուղթն՝ որ ընդդէմ մոլորութեանց ոմանց: Զինչ պատճառ միտաս դոյր 'ի հոգեհանգստեան առնելոյ:

Հոգեհրաշ. ի. իւ. ից. իւք: || հրաշալի, կմ զարմանալի ըստ հոգւոյ. կմ զհոգին մարդոյ հրաշալի առնօղ:

Հոգեմոն: || տե՛ս զՀոգեմոնն:

Հոգեպատում. կմ հոգեպատում: (Նախդրիւ հոլովի.) || հոգւով սրբով պատմեցեալ. և ճառեցեալ. կմ 'ի հոգւոյն սբյ ազդեցեալ, և ներշնչեցեալ. որպիսիք են բանք մարգարէից, կմ առաքելոց: Իսկ մերթ այն, որ ճառէ զհոգւոյ:

Հոգեմատեան: || տե՛ս զՀոգեմատեան:

Հոգեմարտ: || տե՛ս զՀոգեմարտ:

Հոգենիւթ: || տե՛ս զՀոգենիւթն:

Հոգեշահ: || տե՛ս զՀոգեշահն:

Հոգեպարար: (Նախդրիւ հոլովի.) || պարարօղ հոգւոյ. ք̃նա՝ որ տալով հոգւոյ զառատութիւն հոգևոր կերակրոյ. զօրացուցանէ. և պարարէ զնա:

Հոգեվար. կմ հոգեվար. ի. ու. աց. օք: || նա՝ որ է 'ի յետին կէտն կենաց՝ յորում գրեթէ հանէ և վարէ զհոգին. ք̃ աւանդէ զհոգին: Իսկ մերթ նշանակէ զհոգեվարութիւն. և ը̃ այսմ առնի՝ յերկարել 'ի հոգեվարսն. կմ աղօթել վ̃ եղելոցն 'ի հոգեվարի. և այլն: 'ի վերս հարց. Ճզ:

Հոգետես. կամ հոգետես. տեսի. իւ. ից. իւք: || զգաղտնի խորհուրդս, կամ զծածուկ կիրս հոգւոյ մարդոյն տեսանօղ. և կամ զթագուն և զներքակայ իրս հոգւով իմացօղ:

Հոգի. հոգւոյ. ւով. ւոց. կմ եաց. ւովք: || էակ մարմնաւոր կեցողաց, որ է 'ի նմ սկիզբն գոյից, և կենաց. և է երրեակ. ը̃ բանական. զգայական, և անկական: Արդ՝ յորժամ է բնական՝ բաղկացուցանէ զմարդն յորժամ զգայական՝ զանբան կենդանիս: Իսկ յորժամ է անկական՝ զտունկս և զբոյսս: Արդ՝ բանական հոգին զօրութ̃ պարունակէ յինքեան զզգայականն, և զանկականն: Բայց գիտելի է. զի բառս այս՝ հոգի՝ ը̃ բնաւորութեան լեզուի մերում ոչ միայն նշանակէ զբանական հոգին մարդոյ, այլ նաև զոր և իցէ զաննիւթ և զպարզ իմացական գոյացութիւն, որպիսի է Ած, և անէ նոյն հրեշտակք: ուստի ասի՝ Յօհ. 4. 24: Հոգի է Ած, և երկրպագուաց նր̃ պարտ է հոգւով, և ճշմարտութ̃ երկիրպագանել: Սոյնպէս և զհոգւոյն սրբոյ 'ի նոր կտակարանի գրի հոգի. ող̃ յայտ է Մատթ. 1. 18: Մարկ. 1. 8: Ղուկ. 1. 35: Յօհ. 1. 33. և յայլ բազում տեղիս: Նոյնպէս և 'ի հին կտակարանի 'ի բազում տեղիս. որգոն: Եսայ. 61. 1: և 63. 10: և այլն: Իսկ զհրեշտակաց պ̃ բոց գրի՝ Եբր. 1. 14: և այլն: Նոյնպէս և զչար հրեշտակաց, որք են դեւքն գրի. 2. Մնաց. 18. 20: և այլն: Իսկ զբանական հոգւոց մարդկան գրի՝ Ղուկ. 23. 46: և 2. Պետ. 2. 8: Յայտ. 6. 9: և այլն: Պարզեալ բառս հոգի, առեալ լինի նաև փոխանակ մտաց. որգոն: Եփես. 6. 18: Յայտ. 4. 2. և 17. 3. և այլն: Նոյնպէս և փոխանակ սրտի և կամաց: Մատթ. 5. 3: և Փիլիպ. 1. 27: և այլն: Նաև առեալ լինի փոխանակ զօրութ, կմ ուժոյ: ող̃ Եսայ. 11. 15: և Դանիէլ. 14. 35: Պարզեալ, առեալ լինի փոխանակ բոլոր մարդոյն: Գործ. 2. 41: և այլն:

Հոգիաբուղխ: (Նախդրիւ հոլովի.) || մերթ նշանակէ զբղխեցեալն 'ի հոգւոյն սբյ, կմ զյառաջ եկեալն 'ի հոգւոյ մարդոյն: Իսկ մերթ զնա՝ որ ունի զբղխումն շնորհաց հոգւոյն սրբոյ. կմ որ 'ի խօսելն և 'ի վարդապետելն առատապէս բղխեցուցանէ 'ի լսօղսն զշնորհս հոգւոյն սրբոյ. և ըստ այսմ առնի հոգիաբուղխ վարդապետ: Նարեկ. 'ի յիշատակագիր:

Հոգիագորով. ի. իւ. ից. իւք: || զհոգևոր գորով՝ և զգութ̃ ունօղ 'ի վ̃ր ումեք. կմ

աղէխարշ որոտիւն գոռոցող. կամ գթացող:

Հոգեխագրկեալ. գրկելոյ. ով. ոց. ովք: || սիրով սրտի, կամ սաստիկ անձուկ մտօք գրկող, և կամ գրկեցեալ: Նարեկ. 'ի գովեստ խաչին:

Հոգեխաղաղ. ի. իւ. եց. եւք: || անձն զհոգեխաղաղ: Նարեկ. ղզ:

Հոգեհրաշ. ի. իւ. եց. եւք: || հրաշալի եղեալ հոգւով. կամ զհրաշալի հոգի ունող: իսկ մերթ նշանակէ զմայելչացեալն. և զզարմանալի եղեալն 'ի ձեռն հոգւոյն սրբոյ:

Հոգեհանձիր. ձրի. իւ. եց. եւք: || զհոգին նոր պարգևող. կամ առիթ՝ զի շնորհեսցի յոյժ հոգին նոր, կամ պարգևն նոր: Նարեկ. 'ի տօնոն Եկեղեցւոյ:

Հոգեխանութ. ի. իւ. եց. եւք: || հոգենութ. որ հոգելից. կամ հոգևոր: Նարեկ. ղզ. և 'ի գովեստ խաչին:

Հոգեխաշունչ. շնչի. իւ. եց. եւք: || անձն զհոգեպնչունչն:

Հոգեխապայծառ: (Նախադրիւ հոլովի.) || պայծառացեալ հոգւով. կամ պայծառացուցիչ և լուսաւորող հոգւոյ: Նարեկ. 'ի տօնոն Եկեղեցւոյ:

Հոգեխատաւիղ: (Նախադրիւ հոլովի.) || նուագօղ և երգօղ 'ի ձեռն տաւղի՝ ազդեցութ'ն հոգւոյն սրբոյ. որպիսի էր դաւիթ մարգարէն: իսկ 'ի Նարեկ. ղզ. ուր ասի, հոգետաւիղ քնարահարութիւ, իմանի՝ հոգետաւղական, կամ հոգենուագական քնարահարութիւ:

Հոգեփացեալ. ելոյ. ով. ոց. ովք: || զհոգի նոր ընկալեալ. կամ հոգւով սրբով լցեալ. և կամ հոգեկիր եղեալ: Լամբրոն: և յԾՏ օրէ:

Հոգելընկալ: (Նախադրիւ հոլովի.) || զհոգին սուրբ ընկալեալ. և կամ հոգեկիր: Նարեկ. ղզ. և Լամբրոն:

Հոգունակ. ի. աւ. աց. աք: || ունօղ զհոգ և զփոյթ, և կամ հոգ տանող:

Հոլաթև. ի. իւ. եց. եւք: || անձն 'ի նորոց զհոլաթևեան:

Հոլաթևեան: (Նախադրիւ հոլովի.) || այն, որոյ թևն է հոլանեալ. այսինքն բացեալ. կամ տարածեալ: 'ի շարականս:

Հոլանի. նւոյ. եաւ. եաց. եօք: || բաց. կամ բացեալ. կամ անծածկոյթ. և կամ մերկ. և այս ասի գլխոյ. կամ զանձինէ մարդոյ. և զայլոց նմանեաց՝ յորժամ ոչ են պզօղեալք: ուստի Պաւղ. 13. 32. ուր ասի, հոլանի առնել, իմանի՝ զգլուխն բանալ. կամ մերկ առնել: իսկ 1. Կորն. 11. 13. ուր ասի հոլանի յաղօթս կալ. իմանի բացեալ գլխով:

Հոլանիմ. եցայ. եայ. իլ. (Ձայնակր.) || բացեալ լինիլ. կամ մերկանալ. կամ անծածկոյթ լինիլ: և ըստ այսմ հոլանիլ ասի՝ գլխիբաց լինիլն կանանց. կամ գոլն աղուէք առանց վերարկուի. և կամ միայն շապկաւ մնալն: ըստ այսմ իսկ և զայլոց նմանեաց: 2. Թագ. 6. 20: և 3. Մակ. 4. 6:

Հոլանութիւն. թեան: || բացումն. կամ անծածկոյթ գոլն. և կամ մերկութիւն:

Հոլորիմ. եցայ. եայ. իլ: (Ձայնակր.) || գալարիլ. կամ ժողովիլ. և կամ խմբիլ 'ի խոր-հուրդ. կամ առ 'ի առնել զիր ինչ: 'ի շարականս:

Հոլով. ի. իւ. եց. եւք: || թաւալումն. կամ գլորումն. կամ շրջումն: Նարեկ. խը: իսկ ըստ քերականաց նշանակի առ լաւ զանազան կերպիւ փոփոխումն նոյնոյ անուան 'ի սկիզբն, կամ 'ի վերջն:

Հոլովական. ի. աւ. աց. օք: || թաւալական. կամ գլորական: իսկ մերթ հոլովելի. կամ փոփոխելի. և կամ յեղեղուկ:

Հոլովեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || թաւալել. կամ գլորել. կամ շրջել: Դատ. 7. 13: Իմաստ. 17. 18: Աղմաղ. 2. 13: իսկ մերթ նշանակի՝ մի զկնի միոյ փոփոխել. կամ անցուցանել. կամ հասուցանել: և ըստ այսմ ասի զօրս՝ հոլովել զտարիս, և զժամանակս: Նարեկ. կը. և Լամբրոն: Եւ մերթ ըզկնի միմեանց հետևեցուցանելով յարել. կամ յօդել: և ըստ այսմ ասի՝ հոլովել զմի բանն, կամ զմի բառն զկնի միւսոյն: Խորէն. ա. գլ. 31: Լամբրոն: և կամ զմի տառն, կամ ըզհեգն զկնի այլոյ: Խորէն. գ. գլ. 52:

Հոլովեցուցանեմ. ցուցի. ցի. անել: (անցողակ.) || թաւալեցուցանել. կամ գլորեցուցանել: ուստի. Ագաթանգ. Աղմաղ. 2. 13: իսկ մերթ յեղաշրջել. կամ փոփոխել: Ոսկ. 1. հատ. դ:

Հոլովումն. ման. մամբ. մանց. ամբք: || թաւալումն. կամ գլորումն. կամ շրջագայութիւն: Նարեկ. ղզ: իսկ մերթ մի զկնի միոյ ընթացմամբ հասումն, կամ անցումն: Նարեկ. 'ի յիշատակարանն: Եւ մերթ յօդումն, կամ շարակցութիւն. և կամ լծորդումն այնց իրաց, որք մի զկնի միոյ հետևեին: Նարեկ. ղզ. և Լամբրոն:

Հոծ. ի. իւ. եց. եւք: || խիտ. կամ խտացեալ. կամ լի. կամ պատարուն. կամ կուռ. և կամ առատ: Խորէն. բ. գլ. 64. և Ագաթ:

Հոծախիտ: (Նախադրիւ հոլովի.) || հոծ և խիտ. կամ սաստիկ խտացեալ:

Հոծահիւթ. ի. իւ. եց. եւք: || զհոծ և ըզթանձր հիւթ ունօղ. կամ թանձրահիւթ:

Հոծեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || լնուլ. կամ պատարուն առնել. կամ խտացուցանել: Եւ մերթ կուել. կամ հաստատել. կամ ամրացուցանել. և այս ասի զուխտից, զսիրոյ, զշինուածոց, զպարսպաց. և զայլոց նմանեաց: Խոր. գ. գլ. 28: և Լամբրոն:

Հոծութիւն. թեան: || խտութիւն. կամ լիութիւն. և կամ թանձրամածութիւն: Եւ մերթ հաստատութիւն, և պնդութիւն:

Հոկտեմբեր. ի. իւ: || է միոն յերկոտասան ամսոցն հռոմայեցւոց, որ համեմատի նաւասարդ ամսոյն հայոց. և մարտիսեան ամսոյն եբրայեցւոց. և է տասներորդն սկսեալ 'ի յունվարէ:

Հող. ոյ. ով. ոց. ովք: || է միոն 'ի չորից տարերաց, որ զետեղեալ կայ 'ի մէջին տեղւոջ աշխարհի. յորոյ վր. քայլեմք. և է ըզ-նութիւն ցուրտ և չոր: Ծննդ. 3. 19:

Հողաբեր. ի. իւ. եց. եւք: || 'ի հողոյ բերեալ. այսինքն 'ի հողոյ յառաջացեալ: Ագաթ: իսկ մերթ նշանակէ զհող բերող:

Հողաբլուր. լրոյ. ով. ոց. ովք: || դէզ ինչ հողոյ իբրև զբլուր բարձրացեալ յերկրէ. կմ մեծագոյն կոյտ հողոյ իբրև զփոքր լեառն, որ կմ է բնական. և կամ 'ի մարդկանէ ա-րարեցեալ: Եսայ. 25. 2:

Հողաբոյս. բուսի. սւ. ից. իւք: || 'ի հողոյ բուսեալ. կամ հողածին: Նարեկ. ղթ:

Հողաբուսակ. ի. աւ. աց. օք: || 'ի հողոյ բուսեալ. կամ վերընձիւղեալ 'ի յերկրէ:

Հողագործ. ի. աւ. աց. օք: || երկրագործ. կամ գործօղ, և հերկօղ հողոյ, որ և ասի մշակ: Ծննդ. 9. 20: Երեմ. 51. 23: Ղուկ. 17. 7:

Հողագործութիւն. թեան: || երկրագործութիւն. կմ մշակութիւն: Երեմ. 51. 23:

Հողազանգուած: (Նախդրիւ հոլովի.) || 'ի հողոյ զանգեալ. կամ կազմեցեալ. կամ հողեղէն. և կմ հողանիւթ: Նարեկ. ձբ. և ղզ:

Հողաթաւալ. ի. իւ. ից. իւք: || Նա՛ որ ընդ հող, կամ ընդ երկիր թաւալի. և կամ հողով, և աղմով թաթաւեցեալ: Ագաթ:

Հողաթափ. ի. իւ. ից. իւք: || ագանելիք ոտից՝ կազմեցեալ 'ի կաշւոյ. որով մերթ իմանի այն՝ որ զբոլոր ոտն ծածկէ մինչև ցկոճն, որ է թօփուխն: ռամկօր. ֆօսդալ: իսկ մերթ իմացեալ լինի տրեխն գիւղականաց, կամ նման տրեխի կազմեցեալ կօշիկն, որ միայն զներքին կողմն ոտից ծածկէ, և ունի զխրացս, ք զկապս. որովք հողաթափքն կապեցեալ ամրացուցանին յոտս: Յեսու. 9. 5: Մարկ. 6. 9: և Գործ. 12. 8: մերթ ևս առեալ լինի բառս այս փոխանակ այնց ագանելեաց ոտից, զորս ագանին եկեղեցականքն յեկեղեցւոջ. և այնու ելանեն 'ի բեմն առ 'ի պատարագել. կամ առ 'ի սպասաւորել պատարագողին: Մերթ ևս առեալ լինի փոխանակ ագանելեացն այնոցիկ. որք կոչին բարձր կրնկամէք: ռամկօրէն ղունդուրայ:

Հողախառն: (Նախդրիւ հոլովի.) || խառն ը հողոյ. կմ հողով հանդերձ: 2. Մակ. 4. 41:

Հողախուշտ: (Նախդրիւ հոլովի.) || Նա՛ որ 'ի վր հողոյ ընկողմանեալ ննջէ. որ և ասի գետնախուշտ: իսկ մերթ նշանակէ զայն՝ որ է հողեղէն խշտի. ք անկողին: և ըստ այսմ 'ի Նարեկ. ղզ. գերեզմանն կոչի՝ հողախշտի հանգիստ:

Հողածին. ծնի. աւ. աց. օք: || 'ի հողոյ ծնեալ. ք 'ի հողոյ արտադրեցեալ, կամ յառաջացեալ: Իմաստ. 7. 1: Երեմ. 49. 33:

Հողածնեալ. նելոյ. ով. ոց. ովք: || 'ի հողոյ ծնեալ. կամ յերկրէ յառաջացեալ. և կմ հողեղէն: Նարեկ. հա:

Հողակեր. ի. աւ. աց. օք: || զհող ուտօղ. կամ որ հողով կերակրի, որպիսի է օձն:

Հողակերտ. ի. իւ. ից. իւք: || 'ի հողոյ կերտեցեալ, և շինեցեալ. որպիսի է աղիւսն: Մերթ ևս ասի զմարմնոյ մարդոյն, ըստ որում է կազմեցեալ 'ի հողոյ:

Հողակոյտ. կուտի. իւ. ից. իւք: || կոյտ. կմ դէզ հողոյ. կամ հողաբլուր. զոր երբեմն առնեն ըդէմ քաղաքի. ուր ելեալ բարձրանան, և անտի հարկանեն զքաղաքն առ 'ի առնուլ: Ամբ. 1. 10: իսկ մերթ նշանակէ զկուտեալն և զբարձրացեալն հողով. և ը այսմ ասի հողակոյտ բլուր: Նարեկ. ղզ:

Հողակուտ. ի. իւ. ից. իւք: || կուտ հողոյ, որ է կարծրացեալ գունտ հողոյ:

Հողահեղձոյց: (Նախդրիւ հոլովի.) || հողով հեղձուցեալ. կամ 'ի գետնի թաղելով. կամ 'ի ծոցս հողոյ արգելլով խեղդեցեալ: իսկ մերթ նշանակի հեղձուցանօղն զոք ընդ հողով:

Հողահմայ. ի. իւ. ից. իւք: || հմայօղ 'ի ձեռն հողոյ. ք Նա՛ որ ըստ գունոյ, և ըստ այլ որպիսութեց հողոյ գիւթելով գուշակէ զապառնիս: իսկ մերթ 'ի յոգնականին նշանակէ զհողահմայութիւն:

Հողահմայութիւն. թեան: || հմայութիւն. ք գիւթական գուշակութիւն ապառնեաց միջնորդութեամբ հողոյ:

Հողամաղ. ի. իւ. ից. իւք: || է թռչուն ինչ վայրի, որ ունի զմատունս կցեալս [illegible] մաշկաւ իբրև զբադ: կեայ 'ի ծովու, 'ի գետս, 'ի լիճս, և 'ի ճախճին տեղիս. ընկղմեալ զինքն 'ի ջուրս՝ ներքնալողակ լինի ը երկար ժամս: որսայ զձկունս, և ուտէ. և բազում անգամ կուլեալ զօձաձուկն՝ անյագաբար կլանէ. և իբրև ծանրանայ ստամոքսն՝ կենդանւոյն 'ի դուրս փախէ: Նստեալ երբեմն յերեսս ջուրց՝ պարզէ զթիթեւն ընդդէմ հողմոց. և նովաւ իբր առագաստիւ անաշխատ ընթանայ: Ջգայ 'ի ծովու զգալոց մորթն. և վասն այսորիկ աճապարեալ փախչի կարկաչմամբ յապահով տեղիս ծովեզերաց: իբրև աշխատի 'ի ծովու, ելեալ նստի յարեգդէմ տեղիս. և բացեալ զթևսն, և զոտսն, ցամաքեցուցանէ 'ի խոնաւութեց, զի թեթև թռչիցի: և մերթ իբրև ջերմանայ յարևու՝ թաւալի 'ի վր երկրի. և զհողն վեր 'ի վայր շրջէ. և իբր թէ մաղէ, յորմէ և կոչեցաւ 'ի մեզ հողամաղ: Նորա՝ բազումք են տեսակք թռչնոյս այսորիկ, որք ըստ մեծի մասին են նման բադու. բայց 'ի կտուցացն, որք են նեղք և սրածայրք. և ոմանց յոյժ երկայնք և սղոցաբերանք. և 'ի ծայրն թեք: որոց ոմանք ևս ունին զգլուխ բոլորաձև. և 'ի դագաթան զկատարս 'ի փետրոց: Բայց ը գունոյն լինին այլ և այլք հանգոյն բադուց: Ղևտ. 11. 17: 2. Օրէն. 14. 16:

Հողանամ. ացայ. ցիր. անալ: (ընդմիջ.) || հող լինիլ. կմ 'ի հող դառնալ: Եւ մերթ յերկիր կործանիլ. կմ խոնարհիլ. կամ ցածանալ:

Հողանիւթ. ի. իւ. ից. իւք: || այն՝ որոյ նիւթն է 'ի հողոյ. կմ հողեղէն: Նարեկ. հը:

Հողանիւթեայ. եի. իւ. ից. կմ թեայց. իւք: || Նոյն է ընդ վերնոյն:

Հողապատեան: (Նախդրիւ հոլովի.) || հողով պատօղ. կմ հողով պատեցեալ. կամ կազմեցեալ: և ըստ այսմ հողեղէն իրքն՝ հողապատեան կոչին: Ագաթ: Սոյնք և գերեզմանն՝ ը որում հողով շրջապատէ զմեռեալն, հողապատեան ասի: Նարեկ. կզ:

Հողացուցանեմ. ցուցի. ցո՛. անել: (անցող.) || 'ի հող փոխարկել. կա՛մ յերկիր դարձուցանել: Իսկ Յեսայ. 11. 13. ուր ասի՛ զքաղաքս հողացուցեալս ոչ այրեաց. նշանակէ՝ հողաբլրացեալս. այսինքն 'ի վիճ հողաբլրոց, կա՛մ լերանց կացուցեալս. և ամրացեալս: քանզի յեսու զքաղաքս 'ի բարձրաբերձ տեղւոջ շինեցեալս, և ամրացուցեալս ոչ այրեաց. այլ սպանեաց. զի առկաւ զօրօք կարէին առնուլ:

Հողեալ. եւլս. ով. ոց. ովք: || յերկիր կործանեալ. կա՛մ խոնարհեալ. կա՛մ անկեալ. և կա՛մ ընկեցեալ: 2. Մակ. 9. 8:

Հողեղէն. եղինի. աւ. աց. օք: || հողանիւթ. կա՛մ այն, որ է 'ի հողոյ եղեալ, թէ կենդանի իցէ, և թէ անկենդան: Իմաստ. 9. 15:

Հողմ. ոյ. ով. հողմք. կա՛մ հողմունք. ոց. ովք: || շօր և նուրբ գոլորշիք վերամբարձեալք յերկրէ 'ի յօդս. որք մղեալք յերկնային ազդեցութեանց ընթանան ուժգին. և զօդս հարեալ ամբոխեն, և վարեն: Եւ գլխաւորքն 'ի սոցանէ են երկոտասան, որոց չորքն շնչեն 'ի չորից կողմանց աշխարհի. այսինքն յարևելից. յարևմտից. 'ի հիւսիսոյ. և 'ի հարաւոյ. և կոչին՝ Ապելիոտ. Զեփիւռ. Ապարկտիաս. և Նոտոս: Իսկ մնացեալ ութքն շնչեն յաջմէ և յահեկէ իւրաքանչիւրոց վերոյասացելոց չորիցն. և անուանին՝ Կեկիաս. և Եւրոս: Լիփս՝ և արգեստէս: Թրասկիաս. և քորէաս: Եւրանոտոս. և Լիբանոտոս: որք 'ի տեղիս իւրեանց յիշատակեսցին: ռամկ. փոթ. կա՛մ հով. Դան. 3. 65: Իսկ Առակ. 9. 12: և 11. 29: յորս ասի՛ զհողմս արածել, իմանի՛ զանօգտութիւն հետևիլ. կա՛մ ընդունայն վաստակել: Դարձեալ. 'ի մի գիրս մինչ ասի. 'ի չորից հողմոց, կա՛մ ընդ չորս հողմս. և այլն. նշանակեն՝ չորս կողմունքն աշխարհի. այսինքն արևելք, արևմուտք, հիւսիս, և հարաւ: Եւ զի չորս գլխաւոր հողմունքն շնչեն 'ի չորից կողմանցս յայսցանէ, վասն այնորիկ առեալ լինին փոխանակ նոցա: Եզեկ. 37. 9: Դանի. 8. 8: Մատթ. 24. 31:

Հողմաբեր. ի. իւ. ից. օք: || բերօղ. կա՛մ պատճառօղ հողմոյ. և կա՛մ 'ի հողմոյ բերեալ. կա՛մ պատճառեցեալ:

Հողմախաղաղ: (նախադրիւ հոլովի.) || խաղաղ 'ի հողմոց. այսինքն այն, որ ազատ գոլով 'ի բռնութենէ հողմոց, ունի զխաղաղութիւն և զանդորրութիւն. որպիսիք են անդորրք նաւահանգստաց: Աղգոբ:

Հողմախառն: (նախադրիւ հոլովի.) || խառն ընդ հողմոյ. կա՛մ հողմով խառնեցեալ և լցեալ. և ըստ այսմ ասի՝ հողմախառն մրրիկ, կա՛մ գոլորշիք. և այլն: Աղգոբ:

Հողմակոծ. ի. իւ. ից. իւք: || 'ի հողմոց կոծեցեալ. այսինքն հարեալ և տատանեալ. կա՛մ 'ի հողմոց բաղխեցեալ. և ամբոխեալ:

Հողմակոծեմ. եցայ. եայց. ել: (ձայնակր.) || 'ի հողմոյ կոծիլ. այսինքն հարկանիլ. կա՛մ տատանիլ. կա՛մ բռնութեամբ 'ի հողմոյ վանիլ և ամբոխիլ. և կա՛մ ալէկոծիլ: Մարկ. 6. 48: Եբրէ. 13. 24: Յակ. 1. 6:

Հողմակոծութիւն. թեան: || կոծումն 'ի հողմոյ. այսինքն հարկանիլն 'ի հողմոյ. և կա՛մ ամբոխումն պատճառեցեալ 'ի հողմոց: Եւ մերթ նմանութեամբ առեալ՝ նշանակէ զխռովութիւն, կա՛մ զշփոթութիւն, զոր պատճառեն ո՛ և իցէ իրք: Լամբրոն:

Հողմահմայ. ի. իւ. ից. իւք: || հմայօղ և գուշակօղ 'ի ձեռն շնչմանն հողմոյ: Իսկ երբեմն 'ի յոգնականումն նշանակէ զհողմահմայութիւն:

Հողմահմայութիւն. թեան: || հմայութիւն. այսինքն դիւթական գուշակութիւն աստղագէտից 'ի ձեռն դէտսպիսեաց շնչմանց հողմոց:

Հողմահոս. ի. իւ. ից. իւք: || 'ի հողմոյ հասեցեալ. կա՛մ ցրուեցեալ. և կա՛մ որ դիւրաւ ցրուի 'ի հողմոյ. որպիսի է փոշին: Յոբէլ. խէ:

Հողմաձայն. ի. իւ. ից. իւք: || զձայն հողմոյ ունօղ. կա՛մ իբրև զհողմն ձայն արձակօղ:

Հողմաղաց. ի. իւ. ից. իւք: || աղօրի, որ 'ի հողմոյ շարժելով աղայ: ռամկ. Եէլ. փէյիրմէնի: Մերթ ևս նշանակէ զանձն. որ աղայ զընդեղէնս հողմաղացիւ:

Հողմաշարժ. ի. իւ. ից. իւք: || 'ի հողմոյ շարժեցեալ. կա՛մ որ 'ի հողմոյ շարժի, և տատանի. և անդ տարաբերի: Յոբ. 13. 25:

Հողմաշունչ. շնչի. իւ. ից. իւք: || շնչօղ, կա՛մ փչօղ զհողմ: Աղգոբ:

Հողմավար. ի. աւ. կա՛մ իւ. աց. օք: || 'ի հողմոյ վարեցեալ. կա՛մ վանեցեալ. այսինքն փչեցեալ: և կա՛մ որ 'ի հողմոյ վարի, և տատանի. որպիսի են տերևք. խոտիք. ամպք. և այլք նման: Յոբ. 13. 25: և 17. 1:

Հողմուռոյց. կա՛մ հողմուռուց. ի. իւ. ուցից. իւք: || 'ի հողմոյ ուռուցեալ. որպիսիք են հողմակոծեալ ալիք ծովու:

Հոմ. մի. իւ. ից. իւք: || միակ. կա՛մ մի. կա՛մ համ. կա՛մ կից: Եւ այս մասնականդ 'ի գործածի 'ի բաղադրութիւնս բառից, զոր տեղեացս գտնի: Իսկ մերթ նշանակէ՝ զհոմանունն:

Հոմաբան. ի. իւ. ից. իւք: || միաբան. կա՛մ համախոհ: Իսկ մերթ հոմանունաբանաբար խօսօղ զբանս:

Հոմադրի: || տե՛ս զՀամադրի:

Հոմախոհ: || տե՛ս զՀամախոհ:

Հոմախմբեմ. եցի. եա՛. ել: (ներգործ.) || տե՛ս զՀամախմբել:

Հոմախումբ: || տե՛ս զՀամախումբ:

Հոմածին. ծնի. իւ. աց. օք: || համածին. այսինքն 'ի միասին ծնեալ. որպիսիք են երկուորեակքն. և ըստ այսմ ասի 'ի Ծնունդ. ղէ. գլ. Յակոբայ. զերազանցն գտեալ զհոմածինն. այսինքն զեսաւ, որ ընդ նմա 'ի միասին ծնաւ:

Հոմանման: || տե՛ս զՀամանման:

Հոմանի. ւոյ. եաւ. եաց. եօք: || չար սիրով ընկերակցօղ կնոջ ամուսնոյ. 'ի գործ ածելով շաղաշարութիւն. կա՛մ սիրահար. այսինքն խաբեցեալ սիրով նորին՝ առ որ գիտէ սէրն իւր. և կա՛մ սիրելի: Եսայ. 57. 8: Եզեկի. 16. 32: Ովսէ. 2. 13:

Հոմանեմ. եցայ. եայց. ել: (ձայնակր.) || վաւաշոտիլ. կա՛մ պատշաճիլ. կա՛մ աղտեղ-

Digitized by Google

խորէն վարիլ։

Հոմանուանեմ. եցի. եա՛. ել։ (Ներգործ.) || Անուանակից առնել. կա՛մ զբաղդում իրս 'ի միմեանց բոլորովին տարբերս՝ նոյնով անուամբ անուանել. որպէս զգոսանուլն մարգոյն, նաև զալիս ծովուն՝ կոչել զօսանք։

Հոմանունութիւն. ութեան. ամբ. անց. ամբք։ || Համանունութիւն, այսինքն միանունութիւն. որ ըստ նոյնոյ հնչման զբաղդում իրս անաւակաւ տարբերս նշանակէ. որպիսի է բառս այս՝ ակն. որ նշանակէ զաչս. զգոհար քարն. և զգետան բղխումն ջրոց։ Իսկ մերթ նշանակէ զանուանակիցն. այսինքն զայն՝ որ ընդ ումեք ունի զնոյն անուն. որպէս երկու մարդիկ կոչեցեալք Ներսէս։ Լամբրօն։

Հոմանունակ. ի. աւ. աց. օք։ || Զմի և զնոյն անուն ունող ընդ ումեք. կա՛մ անուանակից։

Հոմանունակի։ (մակբայ որակական.) || Միանունաբար. կա՛մ համանունապէս. որպէս ասեմք մեռեալ մարդոյ՝ և կենդանի մարդոյ՝ համանունաբար ասին ասել։ զի թէպէտ անունն նոյն է. բայց նշանակեցեալքն տարբեր ըստ էութեան։

Հոմասեռ. ի. իւ. ից. իւք։ || Միասեռ. կամ համասեռ. այսինքն զմի և զնոյն սեռ ունող. որպիսի են մարդն, և առիւծն, որք ունին զնոյն սեռ. այսինքն զկենդանին։ Իսկ մերթ նշանակէ զհամազգին. այսինքն զայնս, որք 'ի միոյ ազգէ են։ Լամբրօն։

Հոմասեր. ի. իւ. ից. իւք։ || Այն, որ ունի ընդ ումեք զնոյն սէր, կա՛մ զնոյն սերունդ. և կա՛մ համազգի։

Հոմացեղ. ի. իւ. ից. իւք։ || Համատոհմակ. կա՛մ համացեղ. կա՛մ համազգի. կա՛մ որք 'ի նոյն նախնեաց ցեղէ, կա՛մ զարմէ են։ որպիսիք են արենակից ազգականքն։ Լամբրօն։ և Ոսկե. 2. Կոր. իզ։

Հոմերական. ի. աւ. աց. օք։ || Հոմերոսական. այսինքն այն՝ որ պատկանի Հոմերոսի. կա՛մ որ է Հոմերոսի. որպիսիք են տաղքն. կա՛մ բանաստեղծական բանքն նորա։

Հոմերաբանեմ. եցայ. ցիր. անալ։ (ընդմիջ.) || Իբրև զՀոմերոս լինել։ Իսկ մերթ նախագուշակող լինել. կա՛մ մարգարէանալ։ Մերթ ևս նշանակէ՝ կուրանալ. զի ելանէ 'ի յունական բառէն Հոմերոս. որ թարգմանի կոյր։

Հոմերապէս։ (մակբայ որակական.) || Իբրև զՀոմերոս. կա՛մ նման Հոմերոսի։ [illegible]։

Հոմերոս. կա՛մ Հոմերոն. ի. ին։ (անյողնական.) || Է անուն առն միոյ հելլենացւոյ՝ որոյ ծնողքն էին գերապանծ տաղասացք և երգեցիկք. որոց և սա զհետ երթեալ, եղև գերահռչակ բանաստեղծ. և արտադրեաց վիպասանս տաղս, և բանաստեղծական ճառս սքանչելի արուեստիւ։ Արդ՝ սա անուանեցաւ Հոմերոս, որ 'ի բարբառս յունաց՝ նշանակէ՝ կոյր. զի վասն վատաբախտութեան իւրոյ դիպեցաւ՝ երկոքումբք աչօք կուրացաւ։ Նարեկ. գծ։

Հոմիշխան. ի. աւ. աց. օք։ || Համիշխան. կա՛մ իշխանակից. այսինքն զմի և զնոյն իշխանութիւն ունող ընդ ումեք։ Խորէն. գ. գլ. 66։

Հոյ. ոյ. ով. ոց. ովք։ || Խոյ. այսինքն պատկերով մակեան կազմուած ինչ երկաթեայ, զոր հաստատեալ կախեն զբաղանէ, որ կանգնեցուցեալ կայ առ պարսպօք. և մեծաւ բանութեամբ քարշեալ զնա՝ թողլ տան. որ անհնարին թափով յետս դարձեալ հարկանէ, և քանդէ զպարիսպս։ Եւ կոչեցաւ սա հոյ, կա՛մ խոյ. զի կազմեցին ըստ նմանութեան գլխոյ խոյին. որ և 'ի հարկանելն զպարիսպս, իբրև զխոյ յետս գնայր. և յետոյ յառաջ վազէր։ 2. Մակ. 12. 15։

Հոյակապ. ի. իւ. ից. իւք։ || Ազնուական. կա՛մ հռչակաւոր. կա՛մ անուանի. կա՛մ համբաւաւոր. կամ փառաւոր. և կա՛մ շքեղ. և այս մերթ ասի զքաղաքէ, զապարանէ, և զայլոց շինուածոց։ Յեսու. 20. 9։ և 2. Մակ. 23։ Եզեկ. 26. 17։ Եւ մերթ զազգաց. զփառաւորաց, զիշխանաց և զայլոց փառաւոր և շքեղ իրաց. կա՛մ գործոց. որպէս գտնի 'ի գիրս Աստուածաշնչեան. և յայլ բազում տեղիս։

Հոյժ. ուժոյ. ով. ոց. ովք։ || Տե՛ս զԽիժն։

Հոյլք։ (Նախդրիւ հոլովի. անեզական.) || Բոյլք. կամ ջոկ. կա՛մ ժողով. կա՛մ խումբ։ Նարեկ. ղե։

Հոյն։ (Նախդրիւ հոլովի.) || Երկիւղ. կա՛մ արհաւիրք թշնամեաց. կա՛մ հաշակ ահից։ 1. Մակ. 3. 25։

Հոն. ի. ու. ոց. օք։ || Կարմիր և թթուաշ պտուղ ինչ նման ձիթապտղոյ, որ և ասի զողալ. ռամկ. ղըղըլճըխ։

Հոշական. ի. աւ. աց. օք։ || Տե՛ս զհոշականն։

Հոշեմ. եցի. եա՛. ել։ (Ներգործ.) || Կոչել. կա՛մ անուանել. և կա՛մ յորջորջել։

Հոպոպիք. եաց. եօք։ (անեզական.) || Տե՛ս զԽոպոպիք. զի նոյն է ընդ նմա. որպէս և բառքս այսոքիկ. հոյ, և խոյ. խարամանի, և հարամանի. և այլն։

Հոռի։ (Նախդրիւ հոլովի.) || Է անուն ամսոյն հայոց. որ պատասխանէ սեպտեմբերի ամսոյն հռոմայեցւոց։

Հոսակ. ի. աւ. աց. օք։ || Յարձակող, կա՛մ վերաւորող զոք. և կա՛մ յարձակումն, և վերաւորումն զօրաց։ Խորէն. ա. գլ. 10։


Հոսական. ի. աւ. աց. օք։ || Տե՛ս 'ի ներքոյ զՀոսանուտն։

Հոսանուտ. ի. իւ. ից. իւք։ || Հոսական. այսինքն այն՝ որ հոսի և գնայ. կա՛մ հեղեղուկ. և կա՛մ հեղանիւթ. որպիսի է ջուրն, իւղն, և այլ այսպիսիք։ Նարեկ. ծդ. և ղդ։ Եւ մերթ դնի փոխանակ անցաւոր. կա՛մ դիւրաանց բառից։ Շնորհալի։ և Լամբրօն։

Հոսանք. անաց. օք։ (անեզական.) || Առատութիւն, և յորդութիւն ջրոց. կա՛մ անձրևաց. որք հոսին. և հեղանին. կա՛մ հոսմունք, և գնացք ջրոց։ Յոբ. 38. 25։ և Երեմ. 17. 13։

Հոսելի. ւոյ. եաւ. եաց. եօք։ || Այն՝ որ կարէ հոսիլ. և կա՛մ հանդերձեալ է հոսեցեալ լինել։ Իսկ մերթ նշանակէ զգործեն. որով հոսեն զցորեան, զգարի՝ և զայլս նոր մանս՝ հողմոյն տալով զնա։ և ըստ այսմ

[illegible]



Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

առաւել յաշխարհաբառ լեզուաւ 'ի գործ ածի · զի գրոց լեզուաւ՝ հեծանոց · կամ հոսիչ կոչի ։

Հոսեմ · եցի · եա · ել ։ (Ներգործ ·) || հեղուլ · կմ ծորել · կմ թափել · ռամկ · վազցընել ։ Ամովս · 3 · 20 ։ Եւ մերթ նշանակէ 'ի բարձանց զեր ինչ 'ի վայր ձգել · կամ արկանել ։ 2 · Մակ · 1 · 16 ։ և 6 · 10 ։ և 14 · 43 ։ Մերթ և ս նշանակէ հողմոյն տալով զկառեցեալ ցորեանն, կմ գարին՝ մաքրել 'ի յարդէ · ռամկ · էրնէլ ։ Ամոս · 9 · 9 ։ Եսայ · 30 · 24 ։ Մերթ և ս նշանակէ ցրուել · կմ ցիր և ցան առնել ։ 3 · Թագ · 14 · 15 ։ Սաղմ · 1 · 4 ։ Իմաստ · 5 · 24 ։ Իսկ երբեմն նշանակէ՝ լոսել · կմ մանր փշրել ։ Մատթ · 21 · 44 ։ և Ղուկ · 20 · 18 ։

Հոսիչ · սչի · աւ · աց · օք ։ || հոսող · կմ ծորող · կմ փչող ։ Իմաստ · 11 · 19 ։ Եւ մերթ նշանակէ զհոսելին · կմ զհեծանոցն, որ է երեքմատնեայ · կամ հինգմատնեայ թիանման գործի, որով երկրագործքն զյարդն 'ի ցորենոյն բաժանեն երնելով ։ Ամոս · 9 · 9 ։

Հոսհոսիմ · եցայ · եաց · իլ ։ (Ձայնակր ·) || հոսելով հոսիլ · կմ զեղանելով զեղանիլ ։ Եւ այս մերթ նմանութեն առի զամբոխից, որք այսր անդր վազեն · կամ յարձակին ։ Սոփէ · 1 · հատ · Ե ։

Հոսիմ · եցայ · եաց · իլ ։ (Ձայնակր ·) || եղանէ սա 'ի ոսին բառէն · ոչ հարօրանայն 'ի արօր բառէն, ուստի հոսնիլն՝ նշանակէ, ոսնիլ · ք ոսին լինիլ · կմ հաշիլ և մաշիլ · կմ ցամաքիլ · և կմ գօսանալ ։

Հով · ու · ու · ուց · ուք ։ || զով · կմ ցուրտ · ռամկօր · պաղ · կմ Զէֆիւռ · Նարեկ · 'Ի մեկնութ Երգոցերգոյն ։

Հովահար · ի · աւ · աց · աւք ։ || բազմաձևամբ օդոյ հովացուցիչ · կմ զովացուցանող · որպիսի է էլփէղէն, որով հովացուցանէ ոք զդէմս իւր ։ Եւ մերթ առի զթռչոց կենդանւոյն որ շարժմամբն զովացուցանէ զսիրտն ։

Հովայ · (միջարկութին եղկական ·) || վայ վայ · կմ ոհ վայ ։ Մծբն · ԺԶ ։

Հովանամ · ացայ · ցիր · անալ ։ (ընդմիջ ·) || ցրտանալ · կմ զովանալ · և կմ գաղջանալ ։ ռամկ · պաղիլ ։ 'ի Հար հարց · Ձ ։

Հովանանամ · ացայ · ցիր · անալ ։ (ընդմիջ ·) || հովանի լինիլ · կմ հովանաւորել ։ Նարեկ · Հ ։ Մերթ և ս առնանի փոխանակ պաշտպանելոյ · ոչ և հովանի բառս՝ փոխանակ պաշտպանի դնի ։

Հովանացուցանեմ · ցուցի · ցա · ել ։ (անցող ·) || հովանի առնել · կմ տարածել 'ի վր ուրուք զամպս · կմ զվրան · և զայլս նմանս առ 'ի լինիլ հովանի ։ Յոբ · 36 · 28 ։

Հովանաւոր · ի · աւ · աց · օք ։ || տեղի · կամ տուն · և կմ ո և իցէ այլ իր, որ ունի 'ի վր իւր զհովանի, կմ զտանիս, թէ բազմութե ծառոց իցէ, և թէ այլով կերպիւ ։ Ամբ · 3 · 3 ։ Խորէն · Գ · գլ · 8 ։ Մերթ և ս նշանակէ այն՝ որ առնէ զհովանի · կմ հովանաւորողն ։ Թուոց · 24 · 6 ։

Հովանաւորեմ · եցի · եա · ել ։ (Ներգործ ·) || հովանի առնել ումեք · կմ 'ի վր ուրուք տարածեալ լինելով տուեր առնել նմա · ոչ առնեն հովանոցքն ։ Եւ մերթ պաշտպանել · կմ խնամարկել ։

Հովանի · ւոյ · եաւ · եաց · եօք ։ || ո և իցէ իր, թէ ամպ իցէ, թէ կտաւեղէն ինչ · թէ բարձրաբերձ շինուած իմն, և թէ ծառ ինչ, որ հանդէպ արեգական կալով՝ ըստուեր առնէ 'ի ներքոյ կացելոյն իւրոյ, և զովացուցանէ, առի՝ հովանի ։ Իբր թէ հովացուցիչ ։ Եսայ · 1 · 8 ։ Յովն · 4 · 5 ։ Մարկ · 9 · 6 ։ Մերթ և ս նշանակէ զտուներն ։ ռամկ · չատր ։ Սաղմ · 101 · 12 ։ Գործ · 5 · 15 ։ Մերթ և ս առեալ լինի փոխանակ պաշտպանի · ըստ այնմ Սաղմ · 90 · 14 ։ Հովանի եղէց նմ ։ Իսկ 3 · Թագ · 8 · 12 · ուր առի՝ հովանի լինիլ մգով, իմանի՝ հովանացեալ լինիլ մգով · կամ ծածկիլ մգով ։ Իսկ մերթ նշանակէ զհովանաւորութին · կամ զպաշտպանութիւնն ։ Սաղմ · 16 · 8 ։ և 35 · 8 ։ Եւ մերթ ընդ բայի շարակցի այսպէս · հովանի ունիլ · և նշանակէ հովանաւորել · կամ հովանի առնել ումեք ։ Եզեկ · 25 · 20 ։ և Թուոց · 10 · 34 ։

σκηνή , σκιά

Հովանոց · ի · աւ · աց · օք ։ || կազմուած ինչ կտաւեղէն · կմ կաշեղէն · և կմ յայլմէ նիւթոյ, որ հովանի առնէ իմիք՝ տարածեալ գոլով զնովաւ, կամ 'ի վր նր ։ Թուոց · 4 · 5 ։ Սատի և շքանոցն · կմ ծածքն, որ շինի 'ի վր կառաց, և այլոց նմանեաց, ընդ որում հովանի լինի բազմեցելոյն 'ի նմ . հովանոց կոչի ։ Եսայ · 66 · 20 ։ Մերթ և ս հովանոց ասի վերնայարկն, կմ տունն՝ բազում պատուհանօք շինեցեալ . ուր յամարանն նստին վասն զովանալոյ ։ ռամկ · քէօշկ ։ Եզեկ · 22 · 14 ։ Խորէն · Բ · գլ · 6 · և 87 ։

Հովանոցանամ · ացայ · ացիր · ալ ։ (ընդմիջ ·) || հովանանալ · կմ հովանի լինիլ ումեք ։ Ագաթ ։

Հովանոցեալ · ելոյ · ով · ոց · ովք ։ || այն, որ ունի 'ի վր իւր զհովանոց, թէ մարդ իցէ · թէ կառք · և թէ այլ ինչ ։

Հովանոցիկ · ցկի · աւ · աց · օք · || փոքրիկ հովանոց · կմ հովանի առնօղ կազմուած · որպիսի է տաղաւարն · կմ չատրիկն, զի շքանոյիկն, զոր ձեռօք կալնուն մարդիկ 'ի վր գլխոց իւրեանց առ 'ի պահպանիլ 'ի տապոյ ։ Սիրաք · 34 · 19 ։

Հովասուն ։ (Նախդրիւ հոլովի ·) || այն՝ յորում մերձ գտանի հովութի հողմոյ · կամ յորում յաճախ շնչէ զովացուցիչ հողմ · և ըստ այսմ առի՝ հովասուն տեղի ։ ռամկ · հավադար · կմ Զէֆիւռ ։

Հովացուցանեմ · ցուցի · ցա · նել ։ (անցող ·) || ցրտացուցանել · կմ զովացուցանել · կմ գաղջացուցանել ։ ռամկ · պաղեցնել ։

Հովեմ · եցի · եա · ել ։ (Ներգործ ·) || հովահարելով զովացուցանել ։ 'ի Հար հարց · ԺԹ ։

Հովիտ · վտի · աւ · աց · օք ։ || հարթ, և ընդարձակ վայր առ ստորոտով լերանց · կմ ցած, և խոնարհ տեղի լերանց իբրև զծործոր · և կմ ձոր ։ 1 · Թագ · 17 · 3 ։ Սաղմ · 64 · 14 ։

Digitized by Google

64. 14: Երգ. 2. 1:

Հովիւ. վուի. ուի. ուաց. ովք: || արածօղ ոչխա-րաց. և այծից. և այլոց անասնոց: ռամկ. չոբան: Ծննդ. 13. 7: Իսկ մերթ անդրադարձ բաբար առամանի փոխանակ առաջնորդաց. որք խնամածուք են ժողովրդեան: Եփես. 4. 11:

Հովուակից. կցի. աւ. կմ' իւ. աց. օք: || ըն-կեր հովուի. կմ' 'ի միասին հովուօղ հօտի. և այսու երբեմն իմանին հոգևոր առաջ-նորդքն. որք 'ի նոյնում իշխանութեան կարգի են միմեանց: Լամբրօն:

Հովուապետ. ի. աւ. աց. օք: || պետ. և իշ-խան հովուաց: Իսկ մերթ անդրաբերա-բար. առեալ՝ նշանակէ զգլուխն առաջ-նորդաց. որում յատկապէս՝ և ըստ բնութեան ուսածոյն նշանակի քս, որ է ծայրագոյն և բացարձակ իշխան ամ առաջնորդաց: 1. Պետր. 5. 4: Իսկ երկրորդաբար նշանակէին և եպիսկոպոսունք. կմ' քահանայապետք:

Հովուասէր. սիրի. աւ. աց. օք: || սիրօղ հով-ուին. կմ' հովուողին. իւրոյ. և ըստ այսմ է 'ի Շարականս. ուր ասի. Որ զառաջնա-պարգևն քո նշխարս ոչ խնայեցեր ընծայել. շանն հովուասիրի. զի ոչ խնայեցեր շնորհել քանանացւոյ կնոջն զփշրանս շնորհ բժշկու-թեան գաւթեր նր. որ քաղցրատութեամբ մեծա-մեծ պարգևացն զորս հաւնեցայր նախ շը-նորհել հրեից՝ է իբրև զնշխար. զի իբրև ըզ-փշրանս մանկանց փշրանաց հացին: Արդ կինն այս անուանեցաւ՝ շուն հովուասէր. զի մինչ 'ի քաղցր հովուէն քնէ շուն կոչեցաւ. զի յասկն՝ ոչ է բարեաց առնուլ զհաց մանկանց՝ և արկանել շանց. զի տուր քեզ. և նը-մանեաց քոց. ոչ դժգմնեցաւ. այլ յօժա-րութեամբ յանձն էառ զայն. և մեծաւ սի-րով յարեցաւ 'ի նա. որպէս հովուասէր շուն ն. ատ տէրն իւր:

Հովուեմ. եցի. եա. եւ: (Ներգործ.) || արա-ծել. կմ' խնամելով կառավարել զա-նասունս: Երգ. 1. 6: Եսայ. 40. 11: Մերթ և ա նշանակէ՝ խնամածելով կառավարել. կամ առաջնորդել: 1. Մնաց. 11. 2: և 17. 6: Մատ. 2: 6: Իսկ Սաղմ. 48. 15. ուր ասի. Մահ հովուեսցէ զնա. իմանի՝ կառավարեսցէ, զի կերիցէ զնա:

Հովուութիւն. թեան: || զովուն. կմ' ցրուութիւն. և ըստ այսմ ասի՝ հովութիւն հոգւոյ. կամ երկնիցի. կմ' ձանապարհի: ռամկ. դողալ. կմ' փչումն: 'ի վերս հողոյ. բզ:

Հովտամէջ. ի. իւ. ից. իւք: || ուղիօղ զմէջ հով-տի. կմ' հովտամիջին: Խորէն. Աշխ. 15:

Հովփալ: || տես զՀօփփալ:

Հոյ. ոյ. ով. ոց. ովք: || է որակութիւն հո-տաւէտ մարմնոց. զոր զգան միայն հոտոտե-լիքն, որ և ռամկօր ասի՝ հոտ: Երգ. 1. 2:

Հոտաբուրեան. ի. աւ. աց. օք: || տեղի բուրման անոյշ հոտոյ. և կամ բուրվառան: Խորէն. Բ. գլ. 39:

Հոտաւէտ. աւէտի. իւ. եց. եօք: || տես 'ի ներքոյ զՀոտաւոր:

Հոտաւոր. ի. աւ. աց. օք: || ուղիօղ հոտոյ. կամ հոտաւէտ:

Հոտաւէտեմ. ի. աւ. աց. օք: || հոտաւոր. կմ' հոտաւէտ:

Հոտախեմ. եցայ. եա. եւ: (Ձայնական.) || զարշա-հոտ լինիլ. կմ' նեխիլ: Յովհ. 11. 39:

Հոտոտելի. լւոյ. եաւ. եաց. եօք: || այն՝ որ կարէ հոտոտիլ. կմ' զոր պարտանիք հոտոտել:

Հոտոտելիք. եաց. եօք: (անեզական) || զգայա-րանք հոտոտելոյ. կմ' ռնգունք՝ որովք հո-տոտեմք: 1. Կորնթ. 12. 17:

Հոտոտեմ. եցի. եա. եւ: (Ներգործ.) || տես 'ի ներքոյ զՀոտոտիլ: Տօբ. 6. 19: Սաղմ. 113. 6:

Հոտոտիմ. եցայ. եա. կմ' եաց. իլ: (Ձայնակ.) || առնուլ զհոտն իրի իմիք: ռամկ. հոտոտել: Ծննդ. 8. 21: Տօբ. 8. 2: Իսկ մերթ առեալ լինի փոխանակ մերձ լինելոյ. կմ' հասելոյ. և ըստ այսմ իմանի՝ յորժամ ասի զնե-ծոյ. կամ զքեղձ՝ 'ի հուր հոտոտել: Դատ. 15. 14: և 16. 9:

Հոր. րոյ. ով. ոց. ովք: || երկեր փորագոյն փորեալ. ուր գտնել. կմ' պահել կարէ իր իմն. և կմ' գուբ. և ջրհոր. յորում բղխի ջուր յերկրէ. կմ' ուր կծանեն ջուրք անձ-րևաց: Ելից. 21. 33. և 34:

Հորդան: || ոչ հոլովի. այլ ընդ բայի շա-րակցի այսպէս. հորդան տալ. և նշանա-կէ՝ առաջնորդելով յառաջ խաղացուցա-նել. կամ յառաջ մղել. և կամ խրախոյս բառնալով. կմ' սաստելով շարժելև վարել զհօտս. կմ' զզօրս. և կմ' զբազմութիւն ամբո-խից: Սաղմ. 77. 52. Յն՝ որէ: Իսկ մերթ նշանակի. զգոյշ տալ զօրաց. և կմ' խրախ-ուսել յարձակիլ 'ի վր թշնամեաց:

Հորդեմ. եցի. եա. եւ: (Ներգործ.) || պար-րատել. կմ' մաքրել. կմ' հարթել. կմ' հա-րթել. և այս ասի զճանապարհէ. կմ' ըզ-գերձել. և այս ասի զճանապարհէ. կմ' ըզ-շաւղաց: Եսայ. 57. 14: և 62. 10:

Հուժկու: (Նախդրիւ հոլովի.) || հզօր. կմ' քաջ. կմ' ուժեղ. կմ' քաջայաղթ. կմ' զօրա-ւոր: Խորէն. Ա. գլ. 22: և Բ. գլ. 12:

Հունհայ: (Նախդրիւ հոլովի.) || է անուն ծ-խոտոյ միոյ շարականաց, որ ունի զայս ձև՝ ՛Ծ.

Հուռ: (Նախդրիւ հոլովի.) || անեծք. կմ' կիսանեծք. զի կիսատ եղեցեալ: որ և ռամկ. ասի. հայհոյ: Ելից. 12. 9: 1. Եզր. 1. 12: Իսկ մերթ նմանութեամբ առեալ. ասի զմարդոյ. և նշանակէ աննորդել. կմ' վայրենաբարոյ. և կմ' անընդել: Յոբ. 2. հատ. Լ:

Հուչ հուչ: (Միջարկութիւն մարմնական.) || ուհ ուհ. կմ' իշ:

Հուն: (Նախդրիւ հոլովի.) || անցք. որով կմ' նե նշանակի ցամաքագոյն տեղին գետոց. կմ' նե զագոյն տեղին լերանց. և այլոց ծանծաղաց. ընդ որ միայն կարէ անցանել մարդ՝ ձիով. կմ' հետախոտս դնալով: ռամկ. կէճիթ: Ծննդ. 32. 22: և Յեսու. 2. 7: Իսկ մերթ նշանակէ շափաւորութիւն. կմ' չափ. կմ' բան: ամ յոր ժամ ասի՝ զառակդրութեանց. թէ. ունիմ ըզ-հուն, իմանի՝ ունիլ զչափաւորութիւն. կմ' զչափ. և այլն: յորժամ և երբեմն բառս ան-հուն. որ է անբաւ. կմ' անչափ: Անկան:

Հուն. ոյ. ով. ոց. ովք: || տես զՀունտ: Անկան:

Հունեմ. եցի. եմ. ել: (չէզոք.) ‖ անցանել: ռամկ. անցնիլ: Եւ ստ ծագի 'ի բառէս՝ հուն. որ է անցք:

Հունձ. հնձոյ. ով. ոց. ովք: ‖ հասունա֊ցեալ ցորեան. կմ այլ ընդեղէն. որոյ հն ձեցման ժամանակն հասեալ է: Մատ. 9. 37: Ղուկ. 23. 10: Իսկ մերթ նշանակէ զհն ձումն ցորենոյ, և այլոց նմանեաց: Ծննդ. 45. 6: Յէսու. 3. 15:

Հունչ. հնչոյ. իւ. ից. իւք: ‖ է արմատ հըն չել բային. և նշանակէ զհնչումն. կամ զբարբառ: Աճգամ:

Հուշտ: (միջարկութիւն խորոխատական. կմ զայ րացական.) ‖ ըհ. կմ իշտ:

Հուպ: ‖ ոչ հոլովի. այլ ընդ բայի շարակ֊ցի այսպէս. հուպ լինիլ. և նշանակէ հպիլ. կմ մերձենալ. կմ շօշափել: ռամկ. ձօփիլ. կմ դպչիլ: Ծննդ. 3. 3: Կող. 2. 21:

Հուպ: ‖ նախադրութիւն, որ առնու զայրա֊կան հոլով. զոր օրինակ, հուպ նմա. կմ հուպ 'ի քաղաքն, և նշանակէ՝ մերձ. կամ մօտ. կմ առընթեր: Նարէկ. ղէ:

Հուպառհուպ: (մակբայ իսկոյնական.) ‖ տես 'ի ներքոյ Հուպ ը հուպ: Նարէկ. զէ:

Հուպ ը հուպ: (մակբայ իսկոյնական.) ‖ մերձ ընդ մերձ. կմ փոյթ ընդ փոյթ. կմ վաղվաղակի. կմ փութով: 2. Մակ. 2. 18: և 1. Կորն. 4. 19:

Հուսկ: (նախդրիւ հոլովի.) ‖ յետին: և ըստ այսմ փոխանակ ասելոյ յետին ծայրն. կմ եզրն. ասի հուսկ ծայրն. կմ հուսկ եզրն: Մերթ ևս յարի առ յոմանս բառս, և նը շանակէ զառաւել յետնութիւն. վն զի փո խանակ ասելոյ՝ կարի վերջինն. կմ յետնա գոյնեղն. ասի հուսկ յետինն: Այնպէս փոխանակ ասելոյ՝ կարի յետոյ՝ ասի հուսկ յետոյ:

Հուսկ յետոյ: (մկբյ դասական.) ‖ յոյժ յետոյ. կմ յետ ամենեցուն. կմ 'ի վերջն ամենե֊ցուն. ռամկ. ներա ետքը՝ Ծննդ. 33. 2: և 1. Կորն. 15. 8:

Հուր. հրոյ. ով. կմ հուրբ. ոց. ովք. կմ ուրբք: ‖ է մինն 'ի չորից տարերաց բարձրագոյն քան զայլ տարերս, և է բնութք ծայրա գոյն ջերմ և չոր, որ ունի զզօրութիւն այրե լոյ, և 'ի նիւթս օտարս լուսափայլէ, և կի զէ՝ ոչ մինչ վառէ զփայտ. կմ զմոմեղէն: ռամկ. կրակ: 1. Մակ. 1. 59:

ՀՊ

Հպատակ. ի. աւ. աց. օք: ‖ հնազանդ. կամ 'ի ներքոյ կանոնի հրամայողին կա֊ցօղ. կմ ստորադրեցեալ: 2. Կորն. 2. 9: Եբր. 13. 17: Եւ մերթ զհետ գնացօղ. կմ պա֊րապօղ գործոյ իմիք: Գործ. 6. 4:

Հպատականք. անաց. անօք: (անեզական.) ‖ հպատակութիւն. կամ հնազանդութիւն: Իսկ մերթ նշանակէ զպարապումն 'ի գործ ինչ. կմ զհողածութիւն. և կմ զխնամ, և զդար֊ման: Յոբէ. 2. հատ. Է:

Հպատակիմ. եցայ. եաց. իլ: (ձայնակր.) ‖ հնազանդիլ. կմ անսալ. կմ ընդ հնազան֊դութք կալ: Լամբրոն: Իսկ մերթ զհետ երթալ գործոյ իմիք, կմ պարապիլ 'ի գործ ինչ: 'ի ճառս հարց. եզ:

Հպատակութիւն. թեան: ‖ հնազանդութիւն. կամ լռութիւն ձայնի առաջնորդաց: Իսկ մերթ զհետ երթումն գործոյ իմիք. և կմ պարապումն 'ի գործ ինչ: 1. Կորն. 7. 35: Եւ մերթ սպասաւորութիւն, կմ պաշտօնա տարութիւն: Լամբրոն:

Հպատակօրէն: ‖ մերթ է մակբայ որակա֊կան, և նշանակէ՝ հպատակելով. կմ հնա֊զանդելով: Իսկ մերթ վարի իբրև գա֊նուն. և նշանակէ՝ հպատակական. կմ հը նազանդական. և ըստ այսմ ասի 'ի Նարէկ. 'ի գովս խաչին. հպատակօրէն ձևով պաշտե֊ցար. ք յարգեցար, և զծառայութիւն ըն կալար:

Հպարտ. ի. իւ. ից. կմ աց. օք: ‖ ամբար֊տաւան. կմ գոռոզ. և կմ յօժարօղ առ 'ի երևիլ, և համարիլ քան զայլս գերազանց: Եսայ. 2. 12: 2. Տիմ. 3. 2:

Հպարտաբան. ի. իւ. ից. իւք: ‖ հպարտու թք խօսօղ. կմ ամբարտաւան 'ի բանս. և կմ գոռոզաբան:

Հպարտաբանեմ. եցի. եմ. ել: (չէզոք.) ‖ հպարտ բանիւք վարիլ. կմ հպարտօրէն խօ սիլ. և կմ գոռոզութք ճառել զիմեքէ:

Հպարտագոյն. գունի. իւ. ից. իւք: ‖ յոյժ հպարտ. կմ սաստիկ ամբարտաւան, և գո ռոզ: Իսկ մերթ վարի իբրև զմակբայ, համգերձ ուէմ այսպէս, հպարտագոյնս. և նշանակէ՝ հպարտութբ. կմ ամբարտաւանօ րէն: 2. Մակ. 12. 14:

Հպարտանամ. ացայ. ցիր. ալ: (ընդմիջ.) ‖ ամբարտաւանիլ. կամ գոռոզանալ. և կմ ինքնահաւան լինիլ: 1. Տիմ. 3. 6:

Հպարտացուցանեմ. ցուցի. ացո. նել: (ան ցող.) ‖ հպարտ առնել. կմ գոռոզացու֊ցանել. կմ փքացուցանել: 4. Թագ. 18. 29: 2. Մնաց. 25. 19:

Հպարտութիւն. թեան: ‖ ամբարտաւանութիւն. կմ թիւր յօժարութիւն ուրուք առ գերա զանցութիւն իւր. և կմ խոտելով զայլս՝ հա ւանումն ինքեան: Եբր. 12. 1:

Հպաւոր. ի. աւ. աց. օք: ‖ մերձաւոր. կամ մերձակայ. և կմ մօտաւոր: Նարէկ. ձթ:

Հպաւորիմ. եցայ. եաց. իլ: (ձայնակրակ.) ‖ մերձաւոր լինիլ. կմ մերձենալ. և կմ մօ տիլ: Նարէկ. հա:

Հպիմ. եցայ. եաց. իլ: (ձայնակր.) ‖ մերձե֊նալ. կամ մօտիլ. կամ մատչիլ. կմ յարիլ: ռամկ. դպչիլ. կմ ձօփենալ: 2. Օրէ. 27. 5: 2. Թագ. 6. 16: Իմաստ. 4. 2:

ՀՌ

Հռետոր. ի. աւ. աց. օք: ‖ է բառ յունա կան. և նշանակէ զճարտասանն. կամ զքաջ ճառամաբանն. կմ զճոխաբանն: Խո֊րէն. գ. դր. 53: Եւ կմ զճարտարաբան իմաս տունն: Նարէկ. զէ:

Հռետորական. ի. աւ. աց. օք: || ճարտասա-
նական. կմ ճառամաբանական. կմ ճարտա-
րաբանական: 'Ի Հռով Հարց. ժբ. և ժե:
Հռետորութիւն. թեան: || արհեստ ճարտասանու-
թեամբ խօսելոյ. կմ ճարտասանութիւն:
Հռոգ. կմ Հռոք. ի. իւ. ից. իւք: || Թոշակ.
կմ ռոճիկ. և կմ վարձ, զոր տան վն ծա-
ռայութեան: Շնորհալւոյն:
Հռոգեմ. կամ Հռոքեմ. եցի. եա. ել: (Ներ-
գործ.) || Թոշակաւորել. կմ վարձատրել
զոք՝ տալով զռոճիկ:
Հռչակ. ի. աւ. աց. օք: || մերթ նշանակէ
զհռչակումն. կմ զձայն, և զաղաղակն ցն-
ծութեան, և պէսպէս հանդիսութե: 2. Թագ.
6. 15: և 1. Մնաց. 15. 28: Եւ մերթ նշանա
կէ զհամբաւն. կմ զլուր անուան ուրուք:
Ղուկ. 4. 37: և ըստ այսմ երբեմն ընդ բայի
շարակցի այսպէս. հռչակ հարկանել. և նը
շանակէ՝ հռչակել. կմ համբաւել. և կմ
տարածել զանուն, կմ զգործ ուրուք: ոպ
գրի Մարկ. 1. 45: և 2. Կոր. 2. 14:
Հռչակահամբաւ: (Նախդրիւ հոլովի.) || ըզ
հռչակաւոր համբաւս ունող. կամ մեծա-
համբաւ:
Հռչակաւոր. ի. աւ. աց. օք: || անուանի.
կմ համբաւաւոր. կմ երևելի, կմ հանդի-
սաւոր: Խորէն. Գ. գլ. 33:
Հռչակեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || հան
դիսացուցանել. կմ հրատարակել. կմ համ
բաւել. կմ զանուն, և կմ զգործ ուրուք
տարածել 'ի լսելիս մարդկանց: Լամբրոն:
Հռչակեցուցանեմ. ցուցի. եցո. նել: (անցող.)
|| հռչակաւոր առնել. կմ հրատարակել.
կամ հանդիսացուցանել. Լամբրոն: Ոսկէ.
2. հոփ. իէ:
Հռչակօրէն: (մակբայ որակական.) || հռչա-
կելով. կմ հանդիսապէս. կմ հրապարա-
կօրէն:

ՀՍ

Հսկայ. ի. իւ. ից. իւք: || յաղթանդամ.
կմ անձնանի. և կմ պարթև. որովք իմա
նին մարդիկք անդրքան զչափն մեծք և բար
ձրահասակք. քաջք և զօրաւորք. որոց կեր
պարանն զարհուրեցուցանէ զտեսօղս, որք
այլով լեզուաւ կոչին՝ ռափայ: Ծննդ. 6. 4:
1. Մնաց. 20. 7: Եսայ. 3. 2:
Հսկայազն. ազին. զամբ. անց. ամբք: || հըս
կայազուն. կամ հսկայակերպ. կամ քա-
ջազուն. և կմ քաջահզօր: Մծբն. ժա:
Հսկայազուն. զնի. կմ զնոյ. իւ. ից. իւք: || այն՝
որ է յազգէ, կմ 'ի զարմէ հսկայից. կմ որ
ունի զկերպարանս հսկայի. և կմ հսկայաձև:
Հսկայազօր: (Նախդրիւ հոլովի.) || զհսկայա
կան զօրութիւն ունող. կմ զօրաւոր՝ և քաջ
իբրև զհսկայ. կմ յոյժ մեծահզօր: Աճգոռ:
Հսկայակերպ: || տես զՀսկայաձև.
Հսկայաձև. ի. իւ. ից. իւք: || ունող զձև, կմ
զկերպարանս հսկայի. կամ յաղթանդամ,
կամ պարթև:
Հսկեմ. եցի. եա. ել: (չէզոք.) || արթուն
կալ. կմ տքնիլ: 1. Կորն. 16. 13: 1. Պետ. 5. 8:
Մերթ ևս հսկել առ 'ի առնելն զհսկումն
'ի նախատօնակս ոմանց տօնից. զոր տես-
ցես զկնի:
Հսկողութիւն. թեան: || տքնութիւն. կմ արթ
նութիւն. և կմ զգաստութիւն:
Հսկումն. կման. ման. մանց. մամբք: || արթ
նութիւն. կամ տքնութիւն. կամ առանց քնոյ
մնալն 'ի գիշերի: Իսկ մերթ հսկումն կո
չի արթուն մնալով զգիշերն ողջոյն՝ պա-
րապիլն աղօթից և օրհնաբանութեց յե-
կեղեցւոջն այ. ոպ յաճախ լինէր 'ի հսկումն
յոմանս նախատօնակս:
Հսկուն: (Նախդրիւ հոլովի.) || տքուն. կմ
հսկող. և կամ արթուն: Մծբն. ժթ:
Հսկող. ողի. աւ. աց. օք: || տքնող. կամ ար-
թուն. և կմ զգաստ: Իսկ 'ի խորագրու
գլխոց Նարեկին՝ յորս ասի՝ Նորին հսկողի՝
իմանի առնել՝ Նորին գրիգորի: Եւ զի բառս
գրիգոր՝ 'ի յոյն բարբառ զհսկողն նշանակէ՝
վն այնորիկ փոխանակ ասելոյ գրիգորի՝
ասացաւ հսկողի:

ՀՐ

Հրաբաժակ. ի. աւ. աց. օք: || հրեղէն բա
ժակ. կամ հրոյ բաժակ. և առնուլ լինի
անդրաբերաբար փոխանակ հրայրեցական
պատուհասից, կամ պատժոց: Ուստի ա-
սի 'ի շարականոցի. զաղդամացուց: Եւ զհրա
բաժակ դատնութե այրմանն ընկալեալ
սոդոմ: Եւ մինչ ասի՝ հրաբաժակ գինի
նշանակի՝ 'ի հրեղէն բաժակս լցեալ գինի
որով իմանի սաստկութի պատուհասից:
Աճգոռ:
Հրաբերան: (Նախդրիւ հոլովի.) || բերան
հրոյ. կմ զհրեղէն բերան ունող: իսկ եր
բեմն նմանութբ առեալ՝ նշանակէ զհրա
նիւթ փառաբանիչն. և ըստ այսմ ասի ըզ
հրեշտակաց. որք երբեմն կոչին հրեղէն բե
րան. ոպ ասացաւ 'ի բառն լեզու: Եւ ը
այսմ է 'ի Նարէկ. 'ի գոհ. խոս. ուր ասի զմե-
ածնէ. Քրոբէօրէն հրաբերան բղխող նը
շուլից. թ հանգոյն քրոբէից, որք են հրա
բերան. այսէ՝ հրանիւթ փառաբանիչ ըզ
խօղ, և ցայտօղ փնչողը լուսոյ:
Հրաբորբոք. ի. իւ. ից. իւք: || զհուր բորբո-
քող. կամ հանգոյն հրոյ բորբոքեցեալ. կմ
հրով վառեալ:
Հրաբուղխ. բղխի. իւ. ից. իւք: || մերթ նը
շանակէ զհուր բղխօղ: Իսկ մերթ նշանա
կի բորբոքմամբ բղխումն հրոյ. և ըստ այսմ
վարի սորա յոգնականն: Ոսկէ. 1. հոփ. խդ:
Հրաբուն: (Նախդրիւ հոլովի.) || նա՝ ո-
րոյ բնութիւն է 'ի հրոյ. կմ որ է բնութբ
հրեղէն: Եւ մերթ նմանութեամբ ասի
զհրեշտակաց, վն նուրբ, և անխիթ բնու
թե նց: 'Ի շարակնոցի:
Հրագոյն. գունի. իւ. ից. իւք: || ունող ըզ
գոյն հրոյ. կամ հրատեսիլ:
Հրագունակ. ի. աւ. աց. օք: || հրագոյն. կմ
հրանման. կամ հրակերպ:

Digitized by Google

Հրադեղ. դեղի. ու. ոց. օք: || զհուր դե-
ղօղ. կմ իբրեւ զհուր դեղացեալ, և բորբո-
քեցեալ:

Հրաղէն. ղինի. ու. ոց. օք: || մերթ նշանա-
կէ զհրեղէն զէնս: Իսկ մերթ զհրոյ զէնն.
Ք զայն, որոյ գործածումն է հրով. որ-
պիսի է հրացանն, որով ձգեն հրացեալ
գնդակս 'ի վր թշնամեաց: ռամկ. թիւֆէնկ.
կմ թօփ. և այլք նմանք: Մերթ եւս նշա-
նակէ տոլաւ ունօղն հրեղէն զինուց. և կմ
զինեալն հրով:

Հրազինեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || հրով
զինել. կմ հրացանաւ զինաւորել զոք ընդ-
դէմ ումեք:

Հրաժարիմ. եցայ. եար. իլ: (Հայնակր.) ||
'ի բաց կալ. կմ մեկնիլ. կմ յետս դառնալ.
կմ զատուիլ. կմ որոշիլ. կմ հեռանալ: Գործ.
18. 21: և 21. 6:

Հրաժեշտ. ի. իւ. ից. կմ աց. օք: || հրաժա-
րումն. կմ հեռացումն. կմ դարձ: Յոհէ. 1.
հոգ. Ա: Իսկ մերթ նշանակէ զհրամանն
հրաժարելոյ. և ըստ այսմ ասի. խնդրել.
կմ հայցել հրաժեշտ յումեքէ: Լամբրոն: և
Աճառ. Իսկ մերթ ընդ բայի շարադրի
այսպէս. հրաժեշտ առնուլ. և նշանակէ
հրաժարիլ. կմ 'ի բաց կալ. կմ յետս դառ-
նալ: Մծբն. ԺԹ: Եւ կմ այսպէս, հրա-
ժեշտ տալ. որով մերթ իմանի հրաժա-
րեցուցանել. կամ հրաժարելով 'ի բաց թո-
ղուլ. կմ 'ի բաց արձակել: 'Ի վերջ հարց. Ա:
Յոհէ. 'ի Նախերգ. և 1. հոգ. ԺԱ: Իսկ մերթ
իմացեալ լինի բացասութի տալ. կմ բա-
ցասական բանիւ վարիլ:

Հրալից. լցի. իւ. ից. իւք: || լցեալ հրով: և
մերթ լցօղ. կմ արկանօղ զհուր. և Ը այսմ
է Յոբ. 41. 20. ուր ասի, ծաղր առնէ ըղ
շարժումն հրալից. Ք զհուր արկանօղ շար-
ժումն: քանզի ոչ այժմ 'ի ձեռն թօփից.
կմ թիւֆէնկից ձգի հուրն. կամ հրացեալ
գնդակն ուրեք. նոյնպէս և 'ի հնումն էին
գործիք, զորս շարժելով արկանէին. կմ
ձգէին զհուրն ուրեք առ 'ի վառել. կամ
այրել. և կիզել:

Հրախաղաց. ի. իւ. ից. իւք: || հրով խաղա-
ցեալ. Ք հրով շարժեալ. կմ եկեալ: որպի-
սի լինելոց է գալուստն ՔՆ 'ի դատաստան:
Լամբրոն:

Հրախառն: (Նախդրիւ հոլովի.) || խառն Ը
հրոյ. կմ հրով խառնեցեալ:

Հրախառնար: (Նախդրիւ հոլովի.) || այն' որ
իբրեւ զհուր այրէ, բայց է զուրկ 'ի լու-
սոյ. կմ այն, որ է խաւարամած հուր:
Նարեկ. ղԵ:

Հրածախ. ի. իւ. ից. իւք: || հրով ծախե-
ցեալ. կմ սպառեցեալ. և կմ հրով ծախօղ,
և վառօղ: Լամբրոն:

Հրածին. ծնի. ու. ոց. օք: || 'ի հրոյ ծնեալ,
կմ արտադրեցեալ. կմ ծնանօղ, և պատճա-
ռօղ զհուր. ոչ է ամպն, յորմէ փայլատա-
կունք, կամ կայծակունք պատճառին:
Նարեկ. ղԵ:

Հրածորան. ի. ու. աց. օք: || իբրեւ զհուր
ծորեալ. կմ հեղեալ. կամ զհուր ծորօղ, և
հեղօղ. և այս ասի զհոգւոյն սրբոյ, որ ոչ
զհուր երեւեալ 'ի վերնատանն' ծորեաց և
եհեղ զլեզուս 'ի յառաքեալսն: 'Ի շարականս:

Հրակայծակ. ի. ու. այ. օք: || զհուր կայ-
ծակօղ. կմ ցայտօղ. կմ իբրեւ զհուր և զկայ-
ծակն խայթօղ, և կիզօղ. և այս մերթ նը-
մանութեա առի զուարթուցից. և զնմանեաց,
որք խայթեն, և այրեն: Նարեկ. կԹ:

Հրակատար. ի. իւ. ից. իւք: || զհրաբուղխ
կատարս ունօղ. որպիսիք են լերինք ոմանք,
յորոց գագաթանցն հուր բղխի:

Հրակերպ. ի. իւ. ից. իւք: || զկերպ, կամ
զնմանութի հրոյ ունօղ. կմ պայծառ, և
փայլուն իբրեւ զհուր. և կմ կարմրափայլ:
Նարեկ. ղԶ: Իսկ մերթ նշանակէ զձեւակեր-
պեցեալն 'ի հրոյ. և կմ զհրեղէնն: և այս
երբեմն նմանութեա առեալ ասի զհրեշտա-
կաց. և թէ ըէր, սէս' 'ի բանն բոցանիւթ,
ուր լիապէս առացաւ: Նարեկ. ձա:

Հրակերպեան: (Նախդրիւ հոլովի.) || ունօղ
զհրեղէն կերպարանս. կմ հրակերպ. և կմ
հրակերպական:

Հրակոծ. ի. իւ. ից. իւք: || մերթ նշանակէ
հրով կոծօղն. Ք նա' որ հրով. կմ հրաձը-
գութ հարկանէ, և պատուհասէ զոք: Իսկ
մերթ հրով կոծեցեալն. Ք հարուածե-
ցեալն, և պատժեցեալն:

Հրակոծեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) ||
հրով կոծել. կամ հրով հարուածել, և պա-
տուհասել:

Հրահալելի. լւոյ. եաւ. եաց. եօք: || ո՛ և իցէ
կարծր իր, որ յերկրէ ելանէ, և կարէ հա-
լել հրով, և ձուլիլ. որպիսի է պղինձն. կա-
պարն. արծաթն. ոսկին. և այլք նմանք:
ՅԾ ուրէ:

Հրահալելիք. եաց. եօք: (անեզակ.) || բովք.
կմ քուրայ, յորս հալեն, և մաքրեն ոսկի,
արծաթ. և այլք հալելի նիւթք: և Ը այսմ
ասի' զոսկին 'ի հրահալելիս արկանել. կմ
ոսկին 'ի հրահալելիս մաքրի: Լամբրոն:

Հրահան. ի. իւ. ից. իւք: || զհուր հանօղ.
կմ զկայծակունս հրոյ արձակօղ. և կամ
հրաբուղխ:

Հրահանգ. ի. իւ. ից. իւք. կմ աց. օք: || կր-
թութի. կմ վարժութի. կմ ուսումն: Խու-
րէն Ղ. գլ. 16: և ՅԾ ուրէ: Եւ մերթ ընտե-
լութի. կմ սովորութի. կմ կարգ. և կամ
սահմանումն: Լամբրոն: Իսկ մերթ հանդար-
տութի. կմ անխռովութի: Եւ ըստ այսո-
ցիկ նշանակութեց վարի յոգնականապէս:
Մերթ եւս նշանակէ կրթեցեալ. կմ վար-
ժեցեալ. կմ հանդարտեալ 'ի կրից. և կմ
զգաստ: 'Ի վերջ հարց. Ը. և ԺԶ:

Հրահանգեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) ||
կրթել. կամ վարժել. կմ ուսուցանել. կմ
սովորեցուցանել: Նարեկ. ՀԵ. և ղԶ: 'Ի վերջ
հարց. Ե: Իսկ մերթ կարգել. կամ սահմա-
նադրել: Եւ մերթ հանդարտեցուցանել.
կամ խաղաղացուցանել. կմ զիջուցանել.
և կամ սանձել զկիրս: 'Ի վերջ հարց. Գ. և ԺԱ:

Հրահանգիչ. գչի. ու. աց. օք: || կրթիչ. կմ

վարժիչ. և կամ ուսուցիչ: Իսկ մերթ կարգօղ. կամ սահմանադրօղ. և ըստ այսմ ասի՝ հրահանգիչ կարգաց եկեղեցւոյ: Լամբրօն: Մերթ ևս հանդարտեցուցանօղ. կմ զինջուցանօղ. և կմ սանձօղ:

Հրահանգութիւն. թեան: || կրթութիւն. կմ վարժութիւն. կմ ուսումն. կմ սովորութիւն. կմ կարգ. և կմ սահմանադրութիւն: Լամբրօն: Իսկ մերթ հանդարտութիւն 'ի կրից. կամ զգաստութիւն:

Հրահանք. հանից. իւք: (անեզակ.) || հուր հանօղ. և այսու նշանակի պողպատն, և քարն, որք բաղխեցեալ լինելով ընդ իրեարս հանեն զհուր: ռամկ. չախմախ: 'ի վերա հարց. իզ:

Հրահմայ. ի. իւ. ից. իւք: || հրով հմայօղ: Իսկ մերթ 'ի յոգնականումն նշանակէ զհրահմայութիւն. այ 'ի ձեռն շարժման, և որպիսութե հրոյ հմայութե, և գիւթութն:

Հրահոս. ի. իւ. ից. իւք: || զհուր հոսօղ. կմ նման հրոյ հոսեցեալ. կամ ծորեցեալ:

Հրահոսան. ի. իւ. ից. իւք: || իբրև զհուր հոսեալ. կմ հոսօղ զհուր: Եւ այս ասի նմանութե զհոգւոյն սրբոյ, որ որպ զհուր երևեալ 'ի վերնատանն, եհեղ, և հոսեաց զշնորհս իւր յառաքեալսն:

Հրաձև. ի. իւ. ից. իւք: || ըստ ձևոյ, կամ ըստ կերպի հրոյ. կմ հրանման. կամ հըրատեսիլ:

Հրաճաշակ. ի. ու. աց. օք: || զհուր ճաշակօղ. կմ ուտօղ: Իսկ մերթ նշանակէ զայն՝ որ է իբրև զհուր ճաշակելի. կմ որոյ ճաշակն է իբրև զհուր. և ըստ այսմ ասի. հըրաճաշակ բաժակ. որով իմանի հոգին սբ. որ իբրև զհրեղէն լեզու երևեալ 'ի վերնատանն՝ հանգեաւ յառաքեալսն: Նարեկ. Ճ:

Հրաճարակ. ի. ու. աց. օք: || հրոյ ճարակ եղեալ. որով իմանի հրով այրեցեալն, և ծախեցեալն:

Հրամայական. ի. ան. աց. օք: || հրամայողական. կմ պատուիրողական: Իսկ մերթ նըշանակի այն եղանակն բայի, յորում ցուցանի հրամայութն. որպէս մինչ ասեմք, սիրեա. և այլն:

Հրամայեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || հրաման տալ. կամ պատուիրել: Գործ. 15. 24: Մերթ ևս նշանակէ թոյլ տալ: ռամկ. փէրմիթ տալ: Մատ. 19. 8: Իսկ 3. Մակ. 4. 8. ուր ասի. Յորմ կողմանց թմբրեալք անձին ինչ հրամայել, և այլն՝ իմանի, յորմ կողմանց անկարացեալք գոլով զանձինս իւրեանց շարժել, մի՛ արասցեն զնենդունի ինչ 'ի նաւարկութեն. որպ դնի զկնի:

Հրաման. ի. աւ. աց. օք: || պատուէր. կամ բան հրամայեցեալ հպատակաց յիշխանաւորէ ումեքէ, զոր ոչ կատարօղքն պատժապարտք գտանին: Եւ բաժանի 'ի սատորասական. և 'ի բացասական: ռամկօր. էմր: Ելից. 20. 6: Ղևտ. 18. 26: Եւ մերթ նշանակէ զթոյլտուութին՝ զոր տայ ոք հպատակաց իւրոց առ 'ի առնել զինչ: ռամկ. փէրմիթ: Մատ. 8. 31: Ղուկ. 8. 32: Իսկ մերթ ընդ բայի շարակցի այսպէս. հրաման տալ՝ կամ հրաման հանել. և նշանակէ՝ հրամայել. կամ պատուիրել: 2. Մակ. 15. 30: Բայց մինչ ասի՝ հրաման տալ տանն. իմանի՝ կտակ առնել վս տանն. կմ կարգաւորել զինչս տանն, թէ որպ պարտին լինել զկնի մահուն: 2. Թագ. 17. 23: և 4. Թագ. 20. 1: և 1. Մակ. 9. 55:

Հրամանաբեկ. ի. իւ. ից. իւք: || բեկօղ, կմ զանց առնօղ զհրամանաւն այ. կմ վերնագունին: Իսկ մերթ նշանակի տծայլն. կամ թագաւորական հրամանաւ բեկեցեալն. այ սպանեցեալն: Կիւրղ. եզեկ. Ղ:

Հրամանաբեր. ի. իւ. ից. իւք: || զհրաման վերնագունին բերօղ առ հպատակսն. կմ պատգամաբեր: Աճգաբ:

Հրամանազանց. ի. իւ. ից. իւք: || անցանօղ զհրամանաւ վերնագունին. կամ զանցառնօղ հրամանաց:

Հրամանակատար. ի. իւ. ից. իւք: կամ աց. օք: || կատարօղ հրամանի. կամ հնազանդօղ. կամ զհրաման վերնագունին 'ի գործ դնօղ: Լամբրօն:

Հրամանակար. ի. աւ. աց. օք: || հրամանակալ. այ նա՝ որ կալնու, կամ ունի զիշխանութի հրամայելոյ. և կամ որ իբրև ինքնիշխան տր՝ հրամայելով տիրէ բազմաց, որ և ասի՝ հրամանատար: Արդ՝ գիտելի է. զի տառս այս. ր՝ բազում անգամ դնի 'ի տեղի՝ լ. տառի. որպ փոխանակ ասելոյ՝ կարգինալ. կմ համարակալ. ասի կարգինար. կմ համարակար: Ուստի և ասեն փոխանակ ասելոյ հրամանակալ. ասի հրամանակար:

Հրամանահան. ի. աւ. աց. օք: || հրաման հանօղ. կմ հրամանատու. և կամ հրամայօղ: Լամբրօն:

Հրամանատու. տուի. աւ. աց. օք: || տօղ զհրաման 'ի վերնագունեն, որպիսիք են պատուորք, կմ ծառայք:

Հրամանատար. ի. իւ. ից. իւք: || տանօղ, և կրօղ յինքեան զիշխանութի հրամայելոյ. և այսու մերթ իմանի ոգեան. կամ իշխանն հրամանատու. այ որ տիրաբար հրաման տայ. կամ հրամանաւ իւրով կառավարէ զբազմաւթն ինչ: Եսայ. 55. 4: Երեմ. 20. 1: Դանի. 6. 2: Իսկ մերթ իմանի տնտեսն, կամ վերակացուն տան մեծի ուրուք, որ հրամայելով կարգաւորէ զտունն: 3. Թագ. 4. 6:

Հրամանատու. տուի. աւ. աց. օք: || հրաման տուօղ. կմ հրամայօղ: Աճգաբ:

Հրամանատուր: (Նախդրիւ հոլովի.) || նոյն է ընդ վերնոյն: Նարեկ. Ճ:

Հրամանատրեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || գրով, կամ բանիւ հրաման տալ. և կամ հրամանաւ, և կամօք տալ, կամ աւանդել զինչ. կամ հրամայել: Նարեկ. ԼԷ. և ՂԷ:

Հրամանատրութիւն. թեան: || հրամանատրութին. կամ հրամայութին: Նարեկ. Կ:

Հրամաշխ. մշխոյ. ով. ոց. ովք: կամ իւ. աց. օք: || է անուշահոտ հիւթ ինչ թանձրամած, որ ելանէ 'ի մկնանման փոքրիկ կեն-

Digitized by Google

գանուոյ խմբէ. որ կոչի մուշկ. վասն զի առ-պարտով տուրս՝ գոյանայ բշտիկ ինչ լի ա-րեամբ. զոր մինչ հասանել չորացուցանեն՝ արիւն այն բուրէ զանուշահոտութիւն մեծ. և զայն բաղում անգամ հանել 'ի մաշկէն 'ի գործածեն 'ի պէսպէս օծանե-լիս, և 'ի գեղորայս, և յայլ իրս: Եւ այս երբեմն յանուն կենդանւոյն կոչի մուշկ: Բայց Խորենացին յաշխարհագրութեան՝ ան-ուանէ հրամուշկ՝ վասն կարմրութեան արեան բշտին, որ 'ի սկզբանն հրափայլ երևի:

Հրայրեաց. եցի. ու. այց. օք: || մերթ նշա-նակէ զայրեցեալն հրով. 2. Պետ. 3. 12: և Ղեւ. 10. 6: Մերթ ևս նշանակէ զհրայրե-ցութիւն. կամ զհրդեհն: ռամկ. խանձը: 3. Թագ. 8. 37: և ըստ այսմ է անեզականն: Երբեմն ևս նշանակէ զտեղին. ուր այրե-ցեալքն ամենք: Թուոց. 11. 3: 2. Օրին. 9. 22: Մերթ ևս նշանակէ զայրօղն հրով. կամ իբրև զհուր կիզօղն: Իմաստ. 19. 12:

Հրայրեցութիւն. թեան: || հրդեհ. կամ հրով այրումն շինուածոց. և այլոց նիւթոց: ռամկօրէն խանձը:

Հրանամ. ացայ. ացիր. նալ: (ընդ-միջ.) || հուր լինել. կամ նման հրոյ երևել՝ կա-րի ջերմանալով. և կարմրանալով. որպէս լի-նի ածուխն բորբոքեցեալ. և կամ երկաթն ջերմացեալ: Ժողով. 12. 11:

Հրանիւթ. ի. իւ. ից. իւք: || հրանիւթեայ. Է այն՝ որոյ նիւթն է հուր. կամ որ է հը-րեղէն, կամ լուսեղէն: և այս մերթ նմա-նութեամբ առնել, առ զհրեշտակաց: Նարեկ. 'ի փառսն եկեղեցւոյ: Իսկ մինչ ասի. հրա-նիւթ փոշի. իմանի պղտորն, զոր դնեն 'ի հրացանս առ 'ի բորբոքել:

Հրանիւթեայ. էի. իւ. ից. կամ թեայց. իւք: || նոյն է ընդ վերինոյն:

Հրանշոյլ. ուլի. իւ. ից. իւք: || զհրեղէն նը-շոյլ ունօղ. կամ հրափայլ. կմ հրացայտ: Նարեկ. դժ:

Հրաշ. ի. իւ. ից. իւք: || տես զհրէշ:

Հրաշաբանեմ. եցի. եա. ել: (ներգործ.) || հրաշալի կերպիւ խօսել. կմ սքանչելիս ե-ղանակաւ վարդապետել. կամ ճառել: Լամբրոն:

Հրաշագեղ. ի. իւ. ից. իւք: || ունօղ զհրա-շալի գեղ. կմ գեղեցկութիւն. կմ որ է յոյժ չքնաղ, և գեղեցիկ:

Հրաշագործ. ի. աւ. աց. օք: || գործօղ. կմ առնօղ զհրաշս. Է զայնպիսի իրս. որք են 'ի վեր քան զբնութիւն. կմ որք բնականա-բար ոչ լինին. որ և ասի սքանչելագործ: Իսկ մերթ նշանակէ զհրաշիւք գործե-ցեալն. կմ կատարեցեալն. և կամ զհրա-շալին:

Հրաշագործեմ. եցի. եա. ել: (ներգործ.) || հրաշիւք գործել, և առնել զինչ. կմ հրաշալի կերպիւ կատարել. և կմ սքանչե-լագործել: Նարեկ. ճ:

Հրաշագործութիւն. թեան: || սքանչելագոր-ծութիւն. կմ գործ սքանչելեաց. կմ հրաշք: Նարեկ. դժ:

Հրաշագէտ. գիտի. իւ. աց. օք: || գիտօղ. և նշմարօղ հրաշից. և սքանչելեաց. կմ նկա-տօղ հրաշալի գործոց: Զաք. 3. 8:

Հրաշազան. ի. իւ. ից. իւք: || հրաշակերպ. կմ հրաշական. կմ հրաշալի: Նարեկ. զժ: և Լամբրոն:

Հրաշազարդ. ի. իւ. ից. իւք: || հրաշիւք, կամ հրաշալի կերպիւ զարդարեցեալ. կմ սքանչելի զարդ ունօղ. և կմ հրաշալի:

Հրաշազարդեմ. եցի. եա. ել: (ներգործ.) || հրաշիւք զարդարել. կամ հրաշալի կեր-պիւ պճնել. կամ սքանչելի զարդուք պաճուճել:

Հրաշազարդութիւն. թեան: || հրաշալի զարդ. կմ սքանչանալի զարդարութիւն. կմ պճնութիւն: Նարեկ. պզ. և զղ:

Հրաշազննին. կմ հրաշազննելին: (Նախադրիւ հոլովի.) || զհրաշալի զննութիւն. կմ զքըն-նութիւն ունօղ. կամ այն, զոր 'ի քննելն, և 'ի հետազօտելն սքանչանամք. և կմ որոյ տեսութիւնն է հրաշալի: Նարեկ. զՃ:

Հրաշալի. լւոյ. եաւ. եաց. եօք: || սքանչե-լի. կմ լի հրաշիւք, և զարմացմամբ. կամ յոյժ զարմանալի: Յոբ. 2. հատ. իթ:

Հրաշալից: (Նախադրիւ հոլովի.) || նոյն է ընդ վերինոյն:

Հրաշալոյս: (Նախադրիւ հոլովի.) || զհրաշա-լի լոյս ունօղ. կմ որոյ լոյսն, և համբաւն հրաշացուցանէ՝ և զարմացուցանէ զմեզ: Իսկ մերթ նշանակէ զլոյսն հրաշից, կմ հրաշալի իրաց:

Հրաշակատար: (Նախադրիւ հոլովի:) || հրա-շալի կերպիւ կատարեցեալ. կամ զկատարմանա-լի շինուածս ունօղ: Նարեկ. զՃ:

Հրաշական. ի. աւ. աց. օք: || տես զհրա-շալի:

Հրաշակերպ. ի. իւ. ից. իւք: || տես զհրա-շազան:

Հրաշակերտ. ի. իւ. աց. օք: || հրաշալի կեր-տուած. կմ հրաշալի կերպիւ կերտեցեալ. կմ որ ունի զգործմանս սքանչելի յօրինուածս: Իսկ մերթ նշանակէ զհրաշագործն. կամ զմեծագործն. Է զայն ամ, որ վս սքանչելի գերազանցութեան իւրոյ հրաշացուցանէ ըզ-տեսօղս, կամ զլսօղս, թէ գործ իցէ, և թէ այլ ինչ: Յոբ. 4. 12: և 5. 9: և 34. 24: Մերթ ևս նշանակէ զառնօղն սքանչելեաց. և կամ զհրաշագործն:

Հրաշակերտեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || հրաշալի կերպիւ շինել. կամ սքանչելի կերտուածով յօրինել: Խորէն. աշ. պր. 15:

Հրաշակերտութիւն. թեան: || հրաշալի կեր-տուածն. կամ յօրինուածն. և կմ արուեստա-ւոր և չքնաղ կազմութիւն զարմանալի յօրի-նուածոց: Նարեկ. 'ի յիշատակարան:

Հրաշանամ. ացայ. ացիր. նալ: (ընդ-միջ.) || զարմանալ. կամ հիանալ. կամ սքանչա-նալ: 'ի շարականս:

Հրաշանշան. ի. իւ. ից. իւք: || զհրաշալի նը-շանս ունօղ. կամ զհրաշալի նշանս առ-նօղ. կամ հրաշակերտ: Նարեկ. 'ի փոխ[illegible]:

Հրաշանորոգ ։ (Նախդրիւ հոլովի ․) ‖ Նո֊րոգ և սքանչելի․ կմ՝ նորահրաշ․ և կամ ըղ հրաշս նորոգործօղ ։ Նարէկ․ ղէ․ Իսկ մերթ նշանակէ՝ հրաշալի կերպիւ նորոգօղ․ կմ՝ նորոգեցեալ ։ Իսկ ՚ի Նարէկ․ ժդ․ ուր ասի՝ նորոգեցեալ ․ Իսկ ՚ի Նարէկ․ ժդ․ ուր ասի՝ հրաշանորոգ արդարացուսցես․ իմանի՝ հը րաշալի կերպիւ նորոգելով արդարա֊ցուսցես ։

Հրաշանուն․ անուան․ ամբ․ անց․ ամբք ։ ‖ զհրաշալի անուն ունօղ․ կամ հրաշալի ան ուամբ յորջորջեցեալ ։ Նարէկ․ ծա ։ և ՚ի գովէսփ տատէնւոյ ։

Հրաշաշնորհ ։ (Նախդրիւ հոլովի ․) ‖ զհրա շալի շնորհս ունօղ ․ կմ՝ հրաշալի շնորհօք պճնեցեալ ․ կմ՝ հրաշալի, և շնորհալի ։ Նարէկ․ ղէ։

Հրաշապայծառ ։ (Նախդրիւ հոլովի․) ‖ ըղ հրաշալի պայծառութիւն ունօղ ․ կմ՝ յոյժ պայծառափայլ ։ Նարէկ․ ղդ ։

Հրաշապատիւ․ (Նախդրիւ հոլովի․) ‖ զհրա շալի պատիւ ունօղ ․ կամ հրաշափառ ։ Նարէկ ։

Հրաշապատում ։ (Նախդրիւ հոլովի ․) ‖ ըղ հրաշս պատմօղ ․ կմ՝ հրաշալի կերպիւ ճա֊ռօղ ։ Իսկ մերթ հրաշալի եղանակաւ պատ մելի ․ կմ՝ պատմեցեալ ։ Նարէկ․ ղթ ․

Հրաշավէպ․ վիպի․ իւ․ աց․ օք ։ ‖ զհրաշս․ կմ՝ զհրաշալի իրս վիպօղ․ և կամ հրաշալի կերպիւ պատմօղ զնմին ։ Իսկ մերթ նշա֊նակէ վիպեցեալն, կմ՝ պատմեցեալն հրա շալի եղանակաւ ։

Հրաշատ․ ի․ իւ․ ից․ իւք ։ ‖ հրաշքորոշ․ կմ՝ հրափայլ․ կմ՝ լի և ճոխ պայծառութեամբ․ և կմ՝ լցեալ հրաշալի նշուլիւք ։ և ըստ այսմ ա֊սի՝ հրաշատ լոյս ։

Հրաշատեսիլ ։ (Նախդրիւ հոլովի ․) ‖ զհրա շալի տեսիլ ունօղ ․ կմ՝ հրաշադէմ ․ կամ որոյ տեսութիւն է սքանչելի ։ Նարէկ․ ծա ։

Հրաշատեսիկ ։ (Նախդրիւ հոլովի ․) ‖ զհրա շալի տեսս ունօղ ․ կմ՝ որոյ տեսիլն հրաշա ցուցանէ զտեսօղսն ։ Իսկ մերթ մինչ ասի՝ հրաշատեսիկ տեսլեամբ, նշանակէ հրաշա լի ․ կամ հրաշափառ տեսլեամբ ։ Խորէն ․ ա ․ պր․ 25 ։

Հրաշացուցանեմ․ ուցի․ ացո․ ել ։ (անցող․) ‖ զարմացուցանել․ կամ սքանչացուցանել ։ Իսկ մերթ հրաշալի առնել․ կմ՝ սքանչելի երևեցուցանել ։ Լամբրոն ։

Հրաշաւոր․ ի․ աւ․ աց․ օք ։ ‖ յոյժ հրաշալի, կամ սքանչելի ։

Հրաշափայլ․ ի․ իւ․ ից․ իւք ։ ‖ հրաշալի կեր պիւ փայլօղ․ կամ ամենափայլ ։

Հրաշափառ․ ի․ իւ․ ից․ իւք ։ ‖ ունօղ զհրա շալի, կամ զգերազանցագոյն փառս ․ կմ՝ որ է յոյժ հրաշալի, և զարմանալի ․ կամ յոյժ փառաւոր ․ կամ փառահեղ ։ Լամբրոն ։

Հրաշափառագոյն ․ գունի ․ իւ ․ ից ․ իւք ։ ‖ յոյժ հրաշափառ ․ կմ՝ յոյժ փառաւորա֊գոյն, և կամ յոյժ գերապայծառ, և վսե մագոյն ։ Խորէն․ բ ․ պր․ 89։

Հրաշէկ, կամ հրաշեկ․ և կմ՝ հրաշեակ․ շեկի․ աւ ․ աց ․ օք ։ ‖ համագոյն հրոյ շէկ եղեալ․ ք ջերմանալով կարմրացեալ․ կմ՝ հրացեալ․ և կամ հրագոյն ։ Յովբ․ 1․ 15 ։ Նարէկ․ ըէ ։

Հրաշունչ․ շնչի․ իւ․ ից․ իւք ։ ‖ զհուր շնչօղ․ կամ որոյ շունչն իւրև զհուր ելանէ․ և այս ասի զգազանաց․ և զայլոց նմանեաց ։ Իմաստ․ 11․ 19 ։ Իսկ մերթ ասի զբարկացե֊լոց․ կամ զբարկութեան նոցին՝ առ ՚ի յայտ նել զկատաղութիւն նց ։ 3․ Մակ․ 6․ 24 ։

Հրաշք․ շեց․ իւք ։ (անեզական․) ‖ սքանչե լիք, ք գործք եղեալ ՚ի վեր քան զբնու թիւն, ըստ որ հրաշանան տեսօղքն․ որպի սի է կուրաց տեսանելն․ կմ՝ մեռելոց յառ նելն․ և այլն ։ որ և ռամկօրէն ասի հրաշք ։ Նարէկ․ ժէ ։ Մերթ և նշանակէ զմեծ իրս հրաշալի իրս․ կմ՝ զզարմանալեացն գործս ։ Նարէկ․ ղթ ։ Իսկ մերթ նշանակէ զհրէշն․ զոր տեսցես ՚ի վայր․ և ըստ այսմ սա վա րի և եզականաբար ։

Հրաշօրէն ։ (մակբայ․ որակական․) ‖ հրաշա պէս, կամ գերբնաբար ։ Իսկ մերթ վա֊ րի իբրև զանուն՝ և նշանակէ հրաշանման կամ հրաշալիան․ և կմ՝ հրաշալի ։ Նարէկ․ ղէ։

Հրաշեայ․ էի․ իւ․ ից․ իւք ։ ‖ ունօղ զհրէ֊ շէն, կամ զհրագոյն․ և զհրափայլ աչս։ Իսկ է սատանայն թագաւորի միոյ հայոց․ որ վասն ունելոյն զպայծառափայլ աչս․ կո չեցաւ հրաշեայ ։ Խորէն․ ա․ պր․ 21 ։

Հրապաշտ․ ի․ իւ․ ից․ օք ։ ‖ զհուր պաշտօղ․ կմ՝ կրակապաշտ ։

Հրապարակ․ ի․ աւ․ աց․ օք ։ ‖ մեծ և ընդար ձակ տեղի քաղաքին․ ուր ժողովին բազ մութիւնք մարդկանց ՚ի գործս իւր․ ասի․ և փողոց լեզուաւ ։ 2․ Թագ․ 21 ։ 12 ։ Զաք․ 8․ 4․ և 5 ։ Իսկ մերթ նշանակէ փողոցս․ կմ՝ զբա կոյն, ուր նստեալ կրպակաւորքն․ պարա ւաճառ վաճառեալ ։ Ղևտ․ 7․ 6 ։ Մարկ․ 7․ 4 ։ Իսկ մերթ զմեծ զա ւթեն․ կմ՝ զբակն սահմանաց․ կամ ․․․ և այլն ։ 2․ Եզր․ 10․ 9 ։ Մերթ և նշանակէ զարքունական դիւանն ․ կմ՝ զատարանն, ուր հասարակական ատեան կատարեալ ։ Փիլիպ․ 1․ 13 ։ Խորէն․ ․ պր․ 64․ և 65 ։ կոչի ․․․ ․ ժդ ։ Իսկ 1․ Մակ․ 1․ 15․ ուր ասի զի նեցին հրապարակս մեհենից․ իմանի՝ կեր հեան․ այսինքն ընդարձակ տեղին, ուր ու֊ ամենեքեան զհասարակ կրթութեանս․ կմ՝ վա֊ վաչտոնականս ։ Մերթ և բառս հրապա֊րակ, նշանակէ զհանդիսաւոր բազմութիւն ։ Խորէն․ բ․ մարդկանց․ կմ՝ զժողովուրդն ։ ․․․ պր․ 89 ։ ըստ այսմ է և ՚ի կանոնն հոխոմէնց․ ուր ասի․ ծնիւն մարգարէանցն զհրապա րակս ծերոց․ ք ծնեալ մանկամարդքն ըղ բազմութիւն ծերոց ։

Հրապարակագործ ։ (Նախդրիւ հոլովի․) ‖ ՚ի հրապարա֊կս գործօղ՝ կամ զբօլ տուօղ ․ Իսկ մերթ ընդ կծի․ կամ հանդիսապէս ։ Իսկ մերթ ըստ րայի շարունակ այսպէս, հրապարակաւ հաս տանել, և նշանակէ՝ հրապարակաւ․ և կմ՝ ամենեցուն կել․ կամ հրատարակել․ և ծանուցա֊նել․ և այլ ․․․ ․ ըստ ․․․ նել զբօլ ․․․ և կմ՝ զայլ լինել․ և նշա կմ՝ այսպէս՝ հրապարակագործ լինել

նակէ

նակէ՝ զքօթալեր համբաւոյ. կմ՛ ուրուց իրաց հրապարակելն. կամ զհռչակելն. և կմ՛ ըղ հանդիսանալն ուրուք: 'ի ձեռս հայց. Գ:

Հրապարակախօս. ի. իՙ. ից. իւք: || Հրապարակաւ խօսօղ առաջի բազմութեան մարդկանց. կմ՛ յայտնապէս խօսօղ. և կմ՛ ատենախօս: Առակ. 30. 31: Իսկ մերթ նշանակէ 'ի հրապարակի խօսեցեալն. և ըստ այսմ առի՝ հրապարակախօս վարդապետութիւն: Ոսկէ. 2. հատ. Ը:

Հրապարակախօսութիւն. թեան: || խօսք. կմ՛ բան՝ տուեցեալ 'ի հրապարակի. կմ՛ ատենաբանութիւն: Խորէն. Գ. գլ. 65:

Հրապարականախատ: (Նախդրիւ հոլովի.) || հրապարակաւ նախատեցեալ, և թշնամանեալ. կմ՛ առ հասարակ յամենեցունց կշտամբեցեալ: Շնորհալին: Իսկ մերթ նըշանակէ՝ հրապարակաւ նախատօղն զոք:

Հրապարականէծ: (Նախդրիւ հոլովի.) || անիծեցեալ և նզովեցեալ 'ի հրապարակէ, զի 'ի ժողովրդենէ. կմ՛ 'ի բազմութենէ մարդկան. և կմ՛ նա, որ հանդիսապէս և հրապարակաւ յամենեցունց նզովի և անիծանի: Առակ. 11. 26:

Հրապարակատես: (Նախդրիւ հոլովի.) || հրապարակաւ տեսեցեալ. կամ 'ի տեսութեն ամենեցուն եկեալ: Իսկ մերթ ընդ բայի շարակցի այսպէս, հրապարակատես առնել, և նշանակէ, հրապարակաւ տեսանելի առնել. կմ՛ հրապարակել. կմ՛ հրապարակօրէն յայտնել: Նարեկ. 'ի Մեկն. Երգոց:

Հրապարակաւ: (մակբայ յայտնական.) || յայտնապէս. կմ՛ առաջի բազմութեան մարդկան. կմ՛ հանդիսապէս: Գործ. 12. 21:

Հրապարակեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || յայտնել բազմութեան մարդկան. կմ՛ հռչակել. կմ՛ հանդիսացուցանել. կմ՛ յայտնի երևեցուցանել: Նարեկ. Գ. և ԿԵ:

Հրապարփակ. ի. իՙ. ից. իւք: || Հրով պարփակեցեալ. կմ՛ շրջապատեցեալ: Նարեկ. 'ի գանձս խաչին:

Հրապուրք. ուրաց. օք: (անեզական.) || հրապուրանք, զի համոզմունք առ չարն. կմ՛ չար և պատրողական յորդորմունք. և գրգռմունք. կմ՛ պատրանք համոզական բանիւք: 2. Մակ. 6. 21: Գաղատ. 5. 8: Իսկ մինչ առի՝ արբուցանել ումեք հրապուրս պղտորս, կմ՛ դժնեայս, իմանի՝ արբուցանել ումեք զգինի բեցուցիչ. կմ՛ զանզգայ առնօղ ըմպելիս. կմ՛ դեղս, զորպիսիս տան թոյլիչքն օձից, զի թմրեցուցեալ զնա, վարեսցեն 'ի գործ, զոր կամին: Ամբակ. 2. 15: Նարեկ. ԿԳ:

Հրապուրական. ի. աւՙ. աց. օք: || այն ամ, որ պատկանի առ հրապուրանս. կմ՛ առ չար յորդորումն. և կմ՛ պատրողական: Խորէն. Գ. գլ. 60:

Հրապուրանք. աց. օք: (անեզական.) || տե՛ս զՀրապուրս. զի նոյն է ընդ նմա: 1. Մակ. 1. 12:

Հրապուրեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || յորդորել առ չարն. և կմ՛ համոզել, կամ չար յորդորմամբ խաբել, և նենգել. կամ պատրել: Երեմ. 29. 8: Գործ. 6. 11:

Հրավառ. ի. աւՙ. աց. օք: || վառօղ. կմ՛ լուցանօղ զհուր: Եւ այս երբեմն յատկապէս առեալ՝ նշանակէ զկերուցիչն բաղանեաց. ռամկօր. քիւլհանճի: Մերթ ևս նշանակէ զվառեցեալն, կմ՛ զբորբոքեցեալն հրով. և ըստ այսմ առի՝ հրավառ կասկարայ: Եւ մերթ իբրև զհուր վառօղ և այրօղ. և ըստ այսմ առի՝ հրավառ բնութիւն:

Հրավառեալ. ելոյ. ով. ոց. ովք: || իբրև ըղ հուր վառեալ. կմ՛ հրաբորբոք:

Հրատ. ի. իՙ. ից. իւք: || կրակ. կմ՛ հուր վառեալ և բորբոքեալ. զոր լուցանեն գիշերով զփայտս, որ և առի՝ խարոյկ: Նարեկ. Զ: և Մծբն. Ժ: և 'ի ձեռս հայց. Ե: Եւ ըստ այսմ երբեմն ընդ բայի շարակցի այսպէս, հրատս արկանել. և նշանակէ՝ խարոյկ արկանել. կմ՛ զհուր լուցանել: ռամկօր. կրակ վառել: Երեմ. 7. 18: Իսկ մերթ նշանակէ ըղ տաստիկ տապն, կմ՛ զայրօղն և զլափօղն, և ըստ այսմ իմանի՝ մինչ առի՝ հրատ տենոլին, կմ՛ այր հրատ, և այլն. 'ի ձեռս հայց. Ը: Դարձեալ բառս հրատ. է անուն միոյն 'ի յեօթանց մոլորական աստեղաց, որ է մեծութբ հաւասար երկրիս, և է կարգաւ երրորդ 'ի մոլորական, սկսեալ յերևակէն, և կատարէ զյատուկ ընթացսն յերկուս ամս: Եւ յարմարապէս կոչեցաւ 'ի մեզ հրատ, զի է բնութբ ջերմ և չոր. վն որոյ և ունի զխառնակար ազդեցութիւս. գրգռէ զդեղին մաղձն, և 'ի հրահալելիս պատճառէ զպօղպատ:

Հրատախատ: (Նախդրիւ հոլովի.) || հրախատ, կամ բոցախատ: Մծբն. ԺԷ:

Հրատապ. ի. իՙ. ից. իւք: || իբրև զհուր տապացուցանօղ. կմ՛ զհրոյին տապս ունօղ: Լամբրօն:

Հրատարակ. ի. աւՙ. աց. օք: || հրատարակօղ. կամ հռչակօղ. կամ քարոզօղ. և ըստ այսմ առի՝ 'ի Յն որդէն՝ Սոփոնիայ հրատարակիլն, և անդեռոյ քարոզօղին: Իսկ մերթ նշանակէ զատեղին, ուր հրատարակի, կմ՛ հանդիսապէս ցուցանի ինչ, որպիսի է հրապարակին:

Հրատարակեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || յայտնի առնել. կմ՛ հռչակել. կմ՛ հրապարակել. կմ՛ քարոզել: Նարեկ. ՂԳ:

Հրատեսակ. ի. աւՙ. աց. օք: || հրակերպ. կմ՛ հրանման. և կմ՛ զորպիսութիւն հրոյ ունօղ:

Հրատեսիլ: (Նախդրիւ հոլովի:) || այն՝ որոյ տեսիլն, կմ՛ երևոյթն է նման հրոյ. կմ՛ հըրակերպ 'ի ձեռս հայց. Իղ:

Հրացայտ. ի. իՙ. ից. իւք: || զհուր ցայտօղ. կմ՛ փայլատակօղ. կմ՛ զկայծակունս արձակօղ. կմ՛ հրաբորբոք: 'ի շարականս:

Հրացան. ի. իՙ. ից. իւք: || զհուր ցանօղ, որով նշենկի պատերազմական կազմած, կմ՛ գործիք ինչ, որով 'ի հնումն մինչ պաշարէին քաղաք ինչ, ձգեցեալ ընկենին 'ի վր նր հրացուցեալ կայտառս երկաթից. և կմ՛ կպրաշաղախ նիւթք ինչանք: 1. Մակ. 6. 51: Այսօր և այժմ բօմբ, կմ՛ ղումպարայն, և կամ թիւֆէնկն, որովք ընկեցեալ լինին

Հրացեալ գնտակք․ Հրացանք կոչին ։ Մերթ եւ նշանակէ զՀրեղէն անզգայութիւնս․ կմ՝ զՀրահեռ կայծակունս ։ Եսայ․ 30․ 30։ Նար․ բէկ․ Հ։

Հրացանք․ ի․ իմ․ իւց․ իւք ։ կամ աց․ օք ։ || գործիք․ կամ պարտէզ․ կամ այլ ինչ․ որոյ ցանկն է հուր․ որպիսի եղեւ դրախտն աղամայ․ որ բացեղէն սրով շրջապատեցաւ ։ Նարէկ․ ղէ։

Հրացանութիւն․ թեան ։ || ցանութիւն․ կմ՝ անզգայութիւն հրոյ․ կմ՝ հրաձգութիւն կայծականց․ կմ՝ հրաղինաց․ եւ այլոց նմանեաց ։ Լամբրոն ։

Հրաւէր․ ւիրի․ աւ․ աց․ օք ։ || է արմատ հրաւիրել բային․ որով մերթ նշանակի հրաւիրօղն․ իսկ մերթ հրաւիրումն․ կմ՝ կոչումն ։ Նարէկ․ իը․ եւ Ճ։

Հրաւիրակ․ ի․ աւ․ աց․ օք ։ || հրաւիրօղ․ կմ՝ մեծապատիւ կոչող ։ Երեմ․ 31․ 6։ Նարէկ․ ղէ։

Հրաւիրանք․ ի․ աւ․ աց․ օք ։ || հրաւիրումն․ կամ մեծարմամբ կոչումն․ կամ նախասահմանեալ կոչեցին ։ Հռոմ․ 8․ 28։ Նարէկ․ ղէ։

Հրաւիրատու․ տուի․ աւ․ աց․ օք ։ || հրաւէր տուօղ․ այս հրաւիրօղ․ կմ՝ կոչօղ զոք ՚ի խրախճանս․ կմ՝ յուղարկութիւն․ եւ յայլս ինչս ։ ՚ի Շարականոցի ։

Հրաւիրեմ․ եցի․ եա․ եալ ։ (Ներգործ․) || մեծարմամբ կոչել զոք ՚ի խրախճան․ կմ՝ ՚ի խորհուրդ․ եւ կամ յայլ ինչ ։ Մատթ․ 22․ 3 ։ Մերթ եւ մինչ առ յաստուածայինն հրաւիրել․ նշանակէ նախասահմանել․ կամ նախակարգել ։ Եփես․ 1․ 11։ եւ Հռոմ․ 8․ 29։

Հրափայլ․ ի․ իմ․ իւց․ իւք ։ || իբրեւ զհուր փայլօղ․ կմ՝ հրոյ նման պայծառափայլ ։ Նարէկ․ ՚ի Գովեստ կուսին ։

Հրափորձ․ ի․ իմ․ իւց․ իւք ։ || հրով փորձեցեալ․ եւ կմ՝ հրով փորձօղ ։

Հրափորձական․ ի․ աւ․ աց․ օք ։ || հրով փորձողական․ կամ փորձօղ ՚ի ձեռն հրոյ ։ Նարէկ․ Է ։

Հրափորձութիւն․ թեան ։ || փորձութիւն․ կմ՝ քննութիւն իրի իմիք ՚ի ձեռն հրոյ ։

Հրդեհ․ ի․ իմ․ իւց․ իւք ։ || հրով այրումն տանց․ կամ արտորէից․ կամ այլոց իրաց սեփականաց․ որ եւ առի հրայրեացք ։ ռամկօրէն ճանգըն ։ Ելից․ 22․ 6։

Հրդեհակէզ ։ (Նախդրիւ հոլովի․) || հրդեհեցեալ եւ կիզեալ ։ իսկ մերթ ընդ բայի չարականցի այսպէս․ հրդեհակէզ առնել․ եւ նշանակէ․ հրով կիզել․ կմ՝ հրդեհ արկանելով այրել․ կամ բոցակէզ առնել ։

Հրդեհեմ․ եցի․ եա․ եալ ։ (Ներգործ․) || կրակ ձգելով այրել զքինուածս․ կմ՝ զայլս նմանս․ եւ կմ՝ հրով կիզել ։ 2․ Պետր․ 3․ 12։

Հրդեհումն․ ման․ մամբ․ մանց․ մամբք ։ || այրումն․ կամ կիզումն․ եւ կամ հրայրեցումն ։ Խորէն․ Գ․ գլ․ 68։

Հրեղէն․ ղինի․ աւ․ աց․ օք ։ || այն՝ որոյ նիւթն է ՚ի հրոյ․ կամ որ եղեալ է ՚ի հրոյ ։ Գաղատ․ 2․ 11։ Եւ այս մերթ նմանութեամբ ասի զՀրեշտակաց վա՛ն նուրբ եւ անմարմին բնութեան նց ։

Հրեշտակ․ ի․ աւ․ աց․ օք ։ || դեսպան․ կմ՝ պատգամաւոր․ եւ կմ՝ միջնորդ պատգամաբեր ։ ռամկ․ էլչի ։ Թուոց․ 20․ 14։ 1․ Մակաբ․ 7։ եւ 11․ 9։ Բայց բառս հրեշտակ՝ հասարակաբար առեալ՝ ՚ի սովորութենէ աստուածային մարմնոյն զօրացն երկնայնոց․ ուստի ՚ի հասարակի է անուն ամ զօրաց անմարմնոց ։ իսկ ՚ի մասնաւորի է անուն վերջադասին դասուն անմարմնին զօրաց․ եւ ըստ այսմ սա րաս յոգնականին միայն վարի ։ Մատթ․ 1․ 20։ Ղուկ․ 2․ 15։ Եբր․ 1․ 4։

Հրեշտակաբնակ․ ի․ աւ․ աց․ օք ։ || ընդ հրեշտակս բնակօղ․ կմ՝ կենցաղավարօղ ։ Եւ մերթ ասի զանեղէոյ․ ուր հրեշտակք բնակին ։ Լամբրոն ։

Հրեշտակագնացութիւն․ թեան ։ || զհնացն պատգամաւորաց․ կամ դեսպանաց առ ՚ի հաղորդ զինն ՚ի կողմանէ առաքողին․ եւ կմ՝ հրեշտակութիւն ։ Խորէն․ Ա․ գլ․ 14։

Հրեշտակագունդ․ գնդի․ աւ․ աց․ օք ։ || ՚ի հրեշտակաց գումարեցեալ․ կմ՝ խմբեցեալ․ կամ որ է խումբ եւ գումար հրեշտակաց ։ Աճգանք ։

Հրեշտակածանօթ․ ի․ իմ․ իւց․ իւք ։ || ծանօթ հրեշտակաց․ կմ՝ ծանօթ ուղխութեանց նց ։ Աճգանք ։

Հրեշտակական․ ի․ աւ․ աց․ օք ։ || տես ըն Հրեշտակային ։

Հրեշտակակերպ․ ի․ իմ․ իւց․ իւք ։ || տես ըն Հրեշտականման ։

Հրեշտակակից․ կցի․ աւ․ աց․ օք ։ || կցօղ․ կմ՝ ընկերան զհրեշտակս․ որպիսի է լուսաւոր յինքեան զհրեշտակս ը անեղէն երկինքն ։ Մերթ եւ նշանակէ ը վարս․ կմ՝ զորպիսութիւն հրեշտակակցօղն ։

Հրեշտակակրօն․ ի․ իմ․ իւց․ իւք ։ || ունօղ զկրօնս․ կամ զվարս հրեշտակի․ կմ՝ հրեշտակային ։ Աճգանք ։

Հրեշտակահանգէտ․ գիտի․ աւ․ աց․ օք ։ || հրեշտակակերպ․ կամ հրեշտականման ։ Նարէկ․ ղէ։

Հրեշտակային․ կային․ ով․ ոց․ ովք ։ || հրեշտակի․ կամ հրեշտակական․ այս այն՝ որ է հրեշտակի․ կամ որ վայելչաբար առ հրեշտակն․ կամ որ վայել է հրեշտակի ։

Հրեշտականամ․ ացայ․ ցիր․ ալ ։ (Ընդամիջ․) || եւ հրեշտականման եղանիլ․ կամ զվարս զկարգս հրեշտակի ունել ։ Աճգանք ։

Հրեշտականման ։ (Նախդրիւ հոլովի․) || ՚ի ձեռն որ վարուց ունօղ զնմանութիւն հրեշտակաց․ եւ տակի․ կամ որ է համեմատ հրեշտակաց․ կամ հրեշտակակերպ ։

Հրեշտակապար․ ի․ իմ․ իւց․ օք ։ || պարկաւ կեալ ՚ի հրեշտակաց․ որպիսի է անեղէն․ կմ՝ անձն՝ շուրջ զորով պարառնուն հրեշտակք ։

Հրեշտակապետ․ ի․ աւ․ աց․ օք ։ || գլուխ եւ պետ հրեշտակաց․ որպիսի է մեծն Միքայէլ ։ 1․ Թեսաղ․ 4․ 15։ Յուդայ․ 9։ իսկ մերթ ՚ի յոգնականին է անուն միոյ դասուն հրեշտակաց․ այս ութերորդ դասուն սեպհական ՚ի վերընթացդասէն ։

Հրեշտակատես․ ի․ իմ․ իւց․ օք ։ || տեսօղ հրեշտակաց ։ Աճգանք ։ իսկ մերթ

նշա-

Նշանակէ զհրեշտակութիւնն ։

Հրեշտակապետութիւն. ի. ան. ւոյ. ով։ ‖ Հրեշտակապետին լինել. կամ հրեշտակապետութեան. և կամ նա՝ որ ունի զիշխանութիւն և զառաջնութիւն հրեշտակի. որով իմանի կարգ դասուց հրեշտակութեանն. և [illegible]։

Հրեշտակատեսիլ. (Նախագրիւ հոլովի.) ‖ Նոյն է ընդ վերինոյն։

Հրեշտակատեսակ. (Նախագրիւ հոլովի.) ‖ Նոյն է ընդ վերինոյն։

Հրեշտակեմ. եցի. եա. եւ. (Ներգործ. և մերթ չէզոք.) ‖ Հրեշտակութիւն առնել. կամ հրեշտակութեամբ պատգամաւոր լինել. զպատգամս միոյն բերել առ միւսն. ամենայն. [illegible] անել։

Հրեշտակութիւն. թեան. ‖ Դեսպանութիւն. կամ նուիրակութիւն. կամ պատգամաւորութիւն։ Իսկ մինչ ասի՝ հրեշտակութիւն առաքել. իմանի՝ հրեշտակս կամ պատգամաւորս յղել առ անձն ոք։ Ղուկ. 14. 32։

Հրէաբար. (մակբայ որակական.) ‖ համանգոյն Հրէի. կամ ըստ կերպի Հրէի։ Գաղատ. 2. 14։

Հրէախօսումն. խօսքի. իւ. կց. իւք։ ‖ Հրէադաւանութիւն. կամ խօսելով և ժողովելով ի Հրէից. և ըստ այսմ ասի՝ հրէախօսումն դաւանութեան։ Բայց 'ի Նոննէ. դմ. ուր ասի՝ հրէախօսումն չար մոլեգնութեան, իմանի՝ հրէական։

Հրէական. ի. աւ. աց. օք։ ‖ այն ամ. որ հրէից է. կամ առ հրէայս պատկանի։ Տիտ. 1. 14։

Հրէայ. հրէի. իւ. կց. իւք։ ‖ անուն 'ի բազում բանի յառաջ անուանեալ։

Հրէարէն. (մակբայ որակական.) ‖ Լեզուաւ. կամ բարբառով հրէի. և ըստ այսմ ասի՝ խօսել հրէարէն։ 4. Թագ. 18. 26։ 3. Եզր. 13. 24։ Իսկ մերթ նշանակէ հրէաբար. զի ըստ կերպի և ըստ սովորութեան հրէից։ Գաղատ. 2. 14։

Հրէերէն. (մակբայ որակական.) ‖ Նոյն է ը վերինոյն։ Եսայ. 36. 11։

Հրէշ. կամ հրաշ. ի. իւ. կց. իւք։ ‖ ցուցանք. զի դարձ վերակեալ 'ի սովորական կարգէ բնութեան, որ զանխօսս հրաշագործութեանց, և 'ի զարմանս ածէ. և ըստ այսմ վարի յոգնականաւ։ Իսկ մերթ նշանակէ զցուցանս բնաւորութեան, որպիսի է այն մարդն, որ ունի զերկուս գլուխս. կամ զմի աչս, և զայն 'ի ճակատ իւր. և կամ զեղջիւր, և այլ անասնոց։ Այնպիսի հրէշք. կամ ծնունդք ասին, և լինին խառնածնաց կենդանեաց. որ այն՝ որ ունի զգլուխ ձիոյ, և զմարմին առիւծու. և կամ ըստ մասին նմանի ընձու. և ըստ մասին ձիոյ. և կամ որ ունի զմարմին մարդոյ, և զդէմս այծու. և այլն. և ըստ այսմ ասի 'ի լեզու հաւց. Ել. վայ քեզ աշխարհանդիպի, որ փոխանակ այն հրաշից երկնագործութեանց զցուցանս կենդանեաց։ ըստ այսմ և խորհրդոյն ըղ [illegible] խառնածնաց երբեմն կոչէ հրաշ. կամ հրէշ. որպէս 'ի գիրքն. Ի. գլ. 78։ և յաշխարհագրութեան։

Հրընկեց. կեցի. աւ. աց. օք։ ‖ զհնար արկեա նօղ. կամ զհնար ցանօղ։ Խորէն. Գ. գլ. 68։

Հրկէզ. կիզի. իւ. կց. օք։ ‖ Հրով կիզօղ։ Իսկ մերթ հրով կիզեցեալ. կամ այրեցեալ։ 3. Եզր. 2. 17։ Մերթ և ընդ բայի շարաւ ցի այսպէս, հրկէզ առնել. և նշանակէ՝ հրով կիզել. կամ այրել։ 1. Եզր. 1. 55։ Եւ կամ այսպէս՝ հրկէզ լինել. և նշանակէ՝ հրով այրիլ։ Խորէն. Գ. գլ. 33։

Հրկիզեմ. եցի. եա. եւ. (Ներգործ.) ‖ Հրով կիզել. կամ հրկէզ առնել. և այրել։ 1. Եզր. 1. 55։ և 3. Եզր. 1. 3։

Հրկիզութիւն. թեան. ‖ Հրով կիզումն. կամ հրայրեցութիւն. և կամ հրդեհ։ ամենակիզանելն։ Խորէն. Գ. գլ. 52։

Հրշտեմ. եցի. եա. եւ. (չէզոք.) ‖ զանգիտել. կամ զահի հարկանիլ. կամ զարհուրիլ. և կամ երկնչիլ։

Հրձանեմ. եցի. եա. եւ. (Ներգործ.) ‖ Հատանել. կամ խորտակել. և կամ 'ի բաղում մասունս հերձել և բաժանել։

Հրձիգ. (Նախագրիւ հոլովի.) ‖ հուր ձգօղ և այրօղ։ Եսայ. 42. 25։ Իսկ մերթ հրձգութիւն. կամ հրացայտութիւն։ Ողբ. 1. կարգ. խզ։ Եւ մերթ ընդ բայի շարակցի այսպէս, հրձիգ առնել. և նշանակէ՝ հուր ձգելով այրել. կամ հրդեհել։ Թուոց. 31. 10։ 4. Թագ. 8. 12։ Եւ կամ այսպէս՝ հրձիգ լինել, և նշանակէ՝ հրով այրել. կամ հրդեհիլ։ Տօբ. 14. 6. Եսայ. 9. 5։

Հրճուանք. աց. ղք։ (անեզական.) ‖ Հրճուանն. կամ ցնծութիւն. կամ զուարճութիւն։ Նարեկ. դմ։

Հրճուեմ. եցայ. եա. կամ եայց. իլ։ (Ձայնակ.) ‖ սրտիւ բերկրիլ. կամ ցնծալ. կամ ուրախանալ. կամ զուարճանալ.

Հրաս. ի. իւ. կց. իւք։ ‖ յանդգնութիւն. կամ յանդգնութիւն և գոռոզութիւն զանձն յառաջ մատուցանօղ. կամ խիզախօղ։ Իսկ մերթ նշանակէ՝ վէրք և անզգամ միջնորդն. զի նա որ արկանէ զչար սէրս և զխռովութիւն 'ի մէջ առաւելեաց։ Մերթ ևս նշանակէ հրապարակն, զոր ասեցեր զինի։

Հրապարակ. ի. աւ. աց. ղք։ ‖ քաղաք և արք զորք վերամբարձօղք 'ի պատերազմի. կամ նախապատակք քաղաք, որք դիմագրաւ լեալ 'ի պատերազմի՝ իբրև զհուր հատին, և 'ի մէջ յարձակին։ Խորէն. Ա. գլ. 10։ Իսկ մերթ հեծեալք. կամ առաջապահք. կամ քաջարիչ և կողոպտիչ բազմութիւն պատերազմողաց. և կամ յանդգուն յարձակումն զօրաց, կամ առաջապահաց։

Հրապարակեր. ձիոյ. աւ. աց. գք։ ‖ յանդգնօրէն, կամ մեծաւ համարձակութեամբ զանձն իւր յառաջ նուիրօղ. զի յառաջ մատուցանօղ և մղօղ. ով սովորութիւն է առնել նախահասակաց 'ի պատերազմի։ Եւ մինչ ասի՝ հրապարակեր դիրքն, իմանի, հրապարակն։

Հրապեմ. եցայ. եա. իլ։ (Ձայնակրական.) ‖ յանդգնաբար յարձակեցաւ իբրև զհուր 'ի վր դիմել. կամ առաւել համարձակութեամբ յարձակիլ։

Հրոսումն . ման . մամբ . մանց . մամբք : || Հրոսակութիւն . կմ իբրև զհուր 'ի վր յարձակումն , կամ ասպատակումն :

Հրոսող . սողի . իւ . աց . օք : || յանդգնութեք և համարձակութեք 'ի վր յարձակող . կամ ասպատակող :

Հրովարտակ . ի . աւ . աց . օք : || մերթ նշանակէ զթագաւորական գիրն . կմ զթուղթն , յորում պարտնական վճիռք . կմ հրամանք , և այլն : ռամկ. ֆէրման : 2. Մակ. 11. 14: Եսթ. 3. 13: Եսայ. 36. 3: Եւ մերթ նշանակէ զպատկօրինութիւն . ցմ զմասնաւոր և զպատկական շնորհն , զոր թագաւորն առնէ ումեք թղթով , և գրով : 1. Մակ. 2. 18: և 2. Մակ. 3. 2: Մերթ ևս նշանակէ զգիրքն օրական , 'ի յոր գրին եղեալ գործքն . և վճիռք յամենայնում աւուր 'ի թագաւորութեան : Եսթեր. 6. 1 : Իսկ 2. Մակ. 2. 24 . նշանակէ զնոյն գրգուկն մակաբայեցւոց , որ շարագրեցաւ :

Հրովարտակաւոր . ի . աւ . աց . օք : || զարքունական գիր , կմ զթուղթ , կմ զպատգամ ունող . և կմ տանող ուրեք . կմ տա. ոք : Նորէն. վթ :

Հրոտից : || է մին յերկոտասան ամսոցն հայոց , որ համեմատի յուլիս ամսոյն հռոմայեցւոց . և առ ամենեանն եբրայեցւոց :

Հ Օ

Հօբալ . ի . իւ . լից . լիք : || տես զհօփալ :

Հօհ : (միջարկութիւն հեգնական .) || իհ . կմ վահ :

Հօտ . հօտի . իւ . լից . լիք : || ջոկ . կամ երամ խաշանց : Ծննդ. 29. 2: Ամբակ. 3. 17: Իսկ երբեմն նմանութեք առեալ նշանակէ զՔի ժողովուրդն Քի : 1. Պետ. 5. 2: Բայց ըստ որում է սա արմատ հօտել բային , նշանակէ զկտրուքն , որ զկտրեցեալ և 'ի բաց ընկեցեալ ճիւղս յատեցելոյ որթոյն . քանզի ոչ կտրեն որթոց , առի հօտոց , այսպէս և կտրեցեալ ճիւղն՝ առի հօտ : Եզեկ. 15. 4:

Հօտաժողով . ի . իւ . լից . օք : || ժողովօղ և հաւաքօղ ցրուեալ հօտից : Մծբն. ժթ :

Հօտաղ . ոյ . աւ . աց . օք . կմ իւ . լից . լիք : || գործակից , կամ սպասաւոր հերկօղին զերկիր , որ գոլով պատանեակ նստի 'ի վր լծոց եզանց , և վարէ զնոսին , զի մաճկալն պարապեսցի կառավարել զարօրն , որով երկիրն հերկի :

Հօտապետ . ի . իւ . լից . կմ աւ . աց . օք : || գլուխ և պետ հօտից : Եւ այս մերթ առի նմանութեք զառաջնորդաց եկեղեցւոյ , որք են պետք հօտին Քի , որ է ժողովրդեան :

Հօտարած . ի . իւ . լից . իւք : || արածօղ և մնուցանօղ հօտից . կմ խաշանց : Մծբն. ժթ :

Հօտեմ . եցի . եա . եալ : (ներգործ .) || յատանել . կմ կտրել զճիւղս որթոց . զի պտղաբեր լիցի որթն . կմ զի մի խանգարեսցի այգին :

Հօտոտած . ոյ . ով . ոց . ովք : || հօտումն . ցմ յատումն . կմ կտրումն ճիւղոց որթոց : Իսկ մերթ նշանակէն կտրեցեալ և 'ի բաց ընկեցեալ ճիւղքն որթոյ , որք են ուռք :

Հօրաբարոյ . ի . իւ . լից . լիք : || զբարս , կմ զորպիսութիւնս վարուց հօր իւրոյ ունող : Խորէն. գ. գլ. 60. Իսկ մերթ նշանակէ զպատկացեալն բարուց , կմ բնութեն հօր . և կմ զհայրենականն : Ագաթ :

Հօրամոյն : (նախդրիւ հոլովի .) || քաջահայր , որ ունող զքաջ և զբարեբաստ հայր . կամ 'ի բարի և յազնիւ հօրէ ծնեալ : զի բառս՝ մոյն , նշանակէ զբարին , կմ զքաջն . և կմ զզուարթն : Եւ այս էր մականուն ինչ անտիոքայ արքայի՝ որդւոյ երեւելւոյն անտիոքոսի : 1. Մակ. 6. 17: և 2. Մակ. 10. 10:

Հօտոց . ոցի . աւ . աց . օք : || երկաթեղէն փոքրիկ գործի ինչ սուր , որով կտրեն զճիւղս որթոց , կմ կտրոց՝ որով յատանեն զայգի :

Հօրան . ի . աւ . աց . օք : || ջոկ . կմ երամ այծից , կամ ոչխարաց . և այլոց նմանեաց : Երգ. 4. 1: և Նորէն. խշ :

Հօրաքոյր . քեռ . քերբ . երց . երբք : || քոյրն հօր ուրուք : ռամկ. հօրքուր : Ղևտ. 18. 12: և 20. 19:

Հօրեղբայր . բօր . բարբ . արց . արբք : || եղբայր հօր ուրուք : ռամկօրէն հօրեղբօր : Ղևտ. 25. 49:

Հօրուտ . ուտի . իւ . լից . լիք : || է ծաղիկ ինչ գեղեցկատեսիլ , որ ունի զբազում շուշանաձև փոքրիկ գլուխս՝ 'ի ծայրն երկայն ձիգ բարակ բնոյ . և գրեթէ ըստ ամենայն նման այնմ ծաղկան , որ տաճկերէն կոչի՝ ղէօնլիւլ . բայց միայն գլուխք իւր մանր են և ոչ են ցիր և ցան , գունդ հաւաքեալ կան , և ոչ են ցիր և ցան շարեցեալք : Ոմանք զգոյն կապուտակ , և ոմանք զսպիտակ , ոմն և զկարմիր ունին : Իսկ հոտ իւրեանց է յոյժ քաղցր և զմայլելի , որով գրեթէ գերազանցեն քան զամ ծաղկունս : Եւ կոչի սա տաճկերէն սումբիւլ , կմ սումբիւլ չիչէկի : Ագաթ.

Հօփալ . կմ հոմփալ . ոյ . կմ ի . իւ . լից . լիք : կամ աւ . աց . օք : || է վայրի թռչուն ինչ , որ լինի փոքր ինչ մեծ քան զաղաւնի . որոյ և կերպարանն է նման աղաւնւոյ : Գունով լինի սպիտակ , խառնեալ և սևաւ : և ոմանք կապուտակ : Ըղձին երամովին . հանգչին 'ի վր ամ ծառոց . և երեխն յաճախ յաշնանային ժամանակի : ուտեն զընդեղէնս . նաև զթռչնատոր բայս ինչ . որ կոչի եբրայս . և վս յարմարութեն բնութեն իւրեանց ոչ ճչառեն :



Ձ

Ձ. Է տառ բաղաձայն. զի միշտ բաղաձայնի ընդ այլոց տառից, և առաջ ելուզա-նէ զձայն. որգոն ձայն. ձայլ. ձնձի. և այլն։ Բայց 'ի մէջ այլոց բաղաձայնից կոչի սա կրկնակ. վ՛զի ու-նի զզօրութն երկուց բաղաձայնից. որպիսիք են և տառքս այսոքիկ. ծ. ճ. չ. ջ. ց. և այլն։ Արդ՝ զտառս զայս. ձ. անուանեմք. ձայ. որ արտաբերի ծայրիւ լեզուի 'ի մէջ ատա-մանց. իսկ յառոգանական արուեստի ը հաղագին է միջակ. վ՛զի հնչումն նր ոչ է յոյր. կմ թաւ. իբրև զտառս զայսոսիկ. թ. խ. չ. ց. փ. և այլն։ Եւ ոչ լերկ. կմ նուրբ՝ իբրև զտառս. գ. ծ. չ. ս. տ. ր. և այլն։ այլ միջասահմանն է 'ի թաւութն, և 'ի լերկութն. որպ և տառքս այսոքիկ. բ. գ. դ. ժ. ձ։ և այլն։
Ճարճատեմ. եցի. եա. եալ: (Ներգործ.) || Զորս կերա. կամ զչոր փայտս. կմ՝ զխառնեցեալ մորթս, և զայլս նմանս կոտրատելով. կմ՝ պատառատելով ճայթեցուցանել. և կամ ճայթեցուցմամբ կոտրատել. և այլն, զոր լիապէս տեսցես 'ի ներքոյ:

Ճարճատիմ. եցայ. եա. իլ: (Հաշնակր.) || բռնութեամբ կոտրատելով, կմ՝ պատառատելով, և կմ՝ հերձատելով առեալ ճայթել. կմ՝ ճայթմամբ կոտրատիլ. կմ՝ պատառատիլ. և այլն. ոնց հանդիպի ոսկերաց. կամ չոր փայտից. յորժամ բռնաբար խորտակին. կմ՝ կոտորին: Եւ կմ՝ խառնեցեալ մորթոց, յորժամ սկսանին 'ի տեղիս տեղիս բռնութեամբ հերձանիլ: ռամկ. ճաթռտիլ. կմ՝ պատռիլ: Եւ մերթ նմանութեամբ առեալ նշանակէ՝ կոտորակմամբ. կմ՝ պատառմամբ մաշչել. կմ՝ կրճտել զատամունս 'ի վերայ ուրուք. ոնց առնեն մաքեդնեալ զորքն 'ի վերայ թշնամեաց. յորժամ անկանին 'ի ձեռս նց:

Ճարճատումն. տման. ման. մանց. մամբք: || կոտորատմամբ, կմ՝ պատառատմամբ. և կմ՝ հերձատմամբ յառաջ ճայթումն. և կմ՝ ճայթմամբ կոտրատումն. կամ պատառատումն. և այլն. զոր լիապէս տեսցես 'ի բային սորա ճարճատիլ:

Ճարմանգ. ի. աւ. աց. օք: կմ՝ իւ. ից: || Օղաձև ունելն անօթոց, ուստի կախեալ և բարձեալ լինին: ռամկ. ղուլբ: Եւ մերթ նշանակէ զկոթն. կմ՝ զմբռնելոյն որ և իցէ գործեաց, ուստի կալեալ 'ի գործածեն: ռամկօրէն՝ կոթ: Բայց յատկապէս նշանակէ զկապն. զորս կապեալ յառաջինքն. կմ՝ 'ի վերեղէն նիւթոյ, և կմ՝ 'ի կտաւեղինաց՝ այն զոն 'ի վ՜ր տարանջատա իրաց, առ'ի նոքօք շաղկապել զնոսա ընդ միմեանս: Եւ ըստ այսմ էին ճարմանդքն, զորս արար մովսէս 'ի կաղուտակէ. և հաստատեալ զնոսա յեզերս փեղկից խորանին, ընդդէմ 'ի ծայրս նց ասլոս, կամ ապընձի օղս, 'ի ձեռն որոց ճարմանդքն, և 'ի ձեռն ճարմանդացս փեղկքն ը միմեանս կցեալ, և ամրեալ միաւորէին: Ելից. 26. 4. և 5. և 10. և 11: և 36. 11. և 13: ըստ այսմ և օղակք. կմ՝ կոճակք. և այլք նմանք, որովք բազմամասանեայ իրք ընդ միմեանս կցին, ճարմանդք կոչին:

Ճարպ. ոյ. ով. ոց. ովք: || Եղ, կմ՝ գիրութ

մսոյ՝ կամ փորոտեաց կենդանեացն. ոպ թա-
ղանթոյ քայլոգին, որ թանձրացեալ կայ
'ի վր նց. ռամկ. եղ մսի. կամ ճարպ. և կամ
ճրագու: Ելից. 29. 13. և 22: Ղեւտ. 7. 23. և 30:

Ճարպալիր. լրի. իւ. եց. իւք: || Լի ճարպով.
ուստի մինչ ասի ճարպալիր մագաղաթ.
իմանի՝ ոչ բարւոք քերեալն՝ յորում տակա-
ւին եղ գոյ:

Ճարպապատարար: (Նախդրիւ հոլովի.) || պա-
տարուածեալ ճարպով. կամ որ ունի զպա-
տարուս ճարպոյ: Մծբն. ժթ:

Ճարպիկ. պկի. աւ. աց. օք: || արագ հնա-
րօղ զրուցօղ. կամ ճարտարաբան. կամ որ
ունի զպատրաստ, և զճարտար լեզու: Մերթ
և նշանակէ նա՝ որ յաջողակ և արագ է
'ի գործս:

Ճարպովին: (Մակբայ որակական.) || հանդերձ
ճարպովն. կամ 'ի միասին ընդ ճարպոյն:
Ելից. 29. 13. և 22:

Ճարտանակ. ի. աւ. աց. օք: || ունօղ ճար-
տարութիւն. կամ ճարտարական. կամ արուես-
տակէր. և կամ արուեստաւոր:

Ճարտասան. ի. աւ. աց. օք: || հռետոր. դ
գիտօղ արհեստի ճարտասանութեան. և կամ
նա. որ գեղեցկայարմար, և վայելուչ ո-
ճով, և պատշաճաւոր խօսի. կամ ճոռոմա-
ձայնք, և կամ ճարտարաբան. և ասացեալ ճար-
տասան. իբր թէ ճարտարասան. դ ճար-
տարութեամբ արտասանօղ զբանս. որ է յա-
տուկ հռետորաց: Նարեկ. ծզ: Խորեն. գ.
գլ. 53:

Ճարտասանական. ի. աւ. աց. օք: || հռետո-
րական. դ այն ամէն որ պատկանի ճարտա-
սանին. կամ ճարտասանութեան. կամ ճո-
ռոմական. կամ ճախարաբանական: 'Ի վերա-
հայոց. ժզ:

Ճարտասանութիւն. թեան: || է արհեստ ինչ
աղատական, որ ուսուցանէ մարդոյ գե-
ղեցկայարմար, և զարդապաճոյճ ոճով
խօսիլ. կամ արտաբերել. և կամ յօրինել
զբանս:

Ճարտավար. ի. աւ. կամ իւ. աց. օք: || է գոր-
ծիք ինչ երկաթեայ. որոյ ստորին կողմն
է երկճղի. և ծայրք ճղացն կից իրերաց.
յորոց միջոցին արկեալ զմելանն՝ քարշեմք
զգիծ ըստ ուղղութեան քանոնին, որ առ-
նմանաւ եդեալ լինի: Եւ ըստ այսմ ասա-
ցաւ ճարտավար, իբր թէ ճարտարավար.
դ ճարտար, և ուղիղ վարօղ զգիծս ՚ի երեսս
թղթոյ: ռամկ. ծիրկէր:

Ճարտար. ի. աւ. կամ իւ. աց. օք: || սաս-
տիկ հմուտ. կամ խելամուտ յարուեստի
իմիք. կամ յոյժ տեղեակ, և վարժ 'ի գոր-
ծել. կամ 'ի կազմել զինչ. և ըստ այսմ ասի.
ճարտար բժիշկ. ճարտար դպիր. կամ ճար-
տար թագիչ. և այլն: ռամկ. խիստ վարպետ:
Սաղմ. 57. 6: Եսայ. 8. 1: Մերթ և վարի սա
իբրև զգոյական. և նշանակէ զքաջահմուտ
արուեստաւորն, կամ արուեստաւորն:
Իմաստ. 14. 18: Եսայ. 19. 10: Գործ. 19. 24: Իսկ
մերթ նշանակէ զքաջ իմաստասէրն, կամ
հռետորն. կամ բանաստեղծն: Գործ. 17. 28:

Խորէն. գ. գլ. 53: Յոհէ. 1. հրտ. ա: Երբեմն
և վարի սա իբրև զմակբայ, և նշանակէ
յոյժ բարւոք. կամ յոյժ քաջ: ըստ այսմ
Յոհէ. 2. հրտ. Ե. Ածննդեան իսկ ճարտար
գիտակին:

Ճարտարաբան. ի. իւ. եց. իւք: || Ճարտա-
րապէս խօսօղ զբանն. կամ պերճախօս.
կամ ճոռոմաբան. կամ առատաբան. և կամ ճար-
պիկ: 1. Թագ. 16. 18: Գործ. 18. 24:

Ճարտարաբանութիւն. թեան: || Ճարտարու-
թիւն բանից. կամ ճարտարախօսութիւն. կամ
պերճաբանութիւն. և կամ գեղեցկախօսութիւն:

Ճարտարագործ. ի. աւ. աց. օք: || Ճարտար
'ի գործելն. կամ ճարտարութեամբ և քաջ ար-
ուեստիւ կազմօղ զինչ: Աճգոփ.: Իսկ մերթ
նշանակէ գործեցեալն 'ի ճարտարաց. և
կամ կազմեցեալն մեծաւ ճարտարութեամբ,
կամ արուեստիւ: Նարեկ. ղզ: և Աճգոփ:

Ճարտարագիտ. գիտի. աւ. աց. օք: || ճար-
տարութեամբ գիտօղ. կամ յոյժ բարւոք, և ըղ
գուշութեամբ հայեցօղ. կամ նկատօղ. որպէս
ակնեն զգաստ և զգոյշ գիտողն: Մծբն. ժթ:

Ճարտարախոյզ: (Նախդրիւ հոլովի.) || ճար-
տար խուզօղ. դ նա, որ յոյժ բարւոք ո-
րոնէ, կամ քննէ զինչ:

Ճարտարախօս. ի. աւ. աց. օք: || ճարտարա-
պէս խօսօղ. կամ ճարտասան. կամ ճարտարա-
բան. կամ գեղեցկախօս: Գործ. 24. 1: Իսկ
մերթ առեալ լինի փոխանակ լեզուան-
ւոյ. կամ շատախօսի: ըստ այսմ Մծբն.
ժթ: Ասէ ճարտարախօս արգասաւոր
ոչ կարէ:

Ճարտարախօսութիւն. թեան: || տես զՃար-
տարաբանութիւն:

Ճարտարահմուտ: (Նախդրիւ հոլովի.) ||
սաստիկ ճարտար և հմուտ. կամ որ ունի
զքաջ տեղեկութիւն իրիք արուեստի. կամ
մակացութեան, և այլոց նմանեաց:

Ճարտարաձիգ: (Նախդրիւ հոլովի.) || ճար-
տարութեամբ ձգօղ. դ նա՝ որ յոյժ հմտու-
թեամբ կամ արուեստիւ ձգէ. կամ տարածէ զինչ:
Եւ կամ ճարտարապէս ձգեցեալ. դ որ-
ձակեցեալ. կամ պարզեցեալ. և այլն:
Նարեկ. ղզ:

Ճարտարամիտ. մտի. իւ. աց. օք: || հանճա-
րեղ, և զօրաւոր մտօք. կամ սրամիտ. կամ
յոյժ խելամուտ, և հնարագէտ:

Ճարտարամտանամ. ացայ. ցիր. նալ: (Չէզոք.)
|| ճարտար լինել. կամ զճարտարութիւն ս-
տանալ:

Ճարտարանկար. (Նախդրիւ հոլովի.) || ճար-
տար նկարօղ. դ նա, որ յոյժ հմտաբար
և մեծաւ արուեստիւ նկարէ զինչ: Իսկ
մերթ նկարեցեալն ճարտարութեամբ. դ քաջ
արուեստիւ:

Ճարտարապետ. ի. իւ. կամ աւ. աց. օք: ||
պետ ճարտարաց, որով մերթ նշանակի
գլուխն հիւսանց, կամ որմնադրաց, որ հրա-
մայէ ... զձեւն շինուածոյ
... և զճարտարապետ-
եալ շինողաց ... այսմ շինել. և զճարտարապետ-
ութեան ... 2. Մակ. 2. 30:
Իսկ մերթ նշա-
Եսայ. 3. 3: 1. Կորն. 3. 10: Իսկ մերթ նշա-

նակէ

նակի ի և լոյս գլխաւոր, կամ երևելի արուեստ ագէտն. կամ արհեստից գործօղն: և ըստ այսմ առի՝ ճարտարապետ քարանց. կամ պղնձոյ. և այլն: 2. Թագ. 5. 11: 3. Թագ. 7. 14: Իմաստ. 14. 2: ըստ այսմ և մծ՝ ըստ որում իբրև գլխաւոր արուեստաւորաց՝ արար իմաստութիւն բոլոր զամ արարածս, կոչի ճարտարապետ նր: Իմաստ. 7. 21: և 13. 1: Եբր. 11. 10: Մերթ ևս նշանակին այնոքիկ, և գլուխք հաւատոյ. կամ իմաստասիրաց. և այլոց ուսմանց: Ոսկէ. 'ի նախերգ: Իսկ մերթ գնի առակ փոխաբանակ բառեկցա այսոցիկ, ճարտար. կամ քաղաքագէտ. և կամ գլխաւոր. և ըստ այսմ առի. ճարտարապետ դարբին. ճարտարապետ բժիշկ. ճարտարապետ դերձակ. և այլն: Ծննդ. 4. 22: և Շնորհ. հալին:

Ճարտարապետեմ. եցի. եա. ել: (Ներգործ. և մերթ չէզոք.) || զճարտարապետութիւն առնել. կամ արհեստագործել. կամ ճարտարութեամբ, և հանճարեղ արուեստիւ շինել, կամ կազմել զինչ: Ելից. 31. 4: և 35. 32: և 38. 23:

Ճարտարապետութիւն. թեան: || ճարտարապետական արհեստ. կամ ճարտարութիւն. և կամ արուեստաւորութիւն: Ելից. 35. 32:

Ճարտարասան. ի. աւ. աց. օք: || ճարտարութեամբ արտասանօղ իմիք. կամ ճարտարախօս. և կամ ճոռոմաբան: Եւ 'ի սմանէ համառօտելով ելանէ բառս ճարտասան:

Ճարտարավար: (Նախադրիւ հոլովի.) || ճարտարութեամբ վարօղ. որով մերթ նշանակի նա, որ մեծաւ հմտութեամբ յառաջ ընթացուցանէ, կամ կառավարէ զինչ: Եւ ըստ այսմ առի, ճարտարավար նաւավար: Իսկ մերթ նշանակի նա՝ որ ճարտարապէս հերկէ զերկիր:

Ճարտարեմ. եցի. եա. ել: (Ներգործ. և մերթ չէզոք.) || ճարտարութեամբ. կամ քաջահմուտ արուեստիւ հնարել, կամ նիւթել. և կամ կազմել զինչ: Իսկ մերթ նշանակէ՝ ճարտարութեամբ, կամ արուեստաբանութեամբ վարել. և կամ իմաստութեամբ խօսամանկել. կամ ճարտարասանութեամբ ձեռնարկել, կամ քննել, և խուզել: Ժողով. 7. 17:

Ճարտարմտութիւն. թեան: || ճարտարութիւն մտաց. կամ խորագիտութիւն. կամ արուեստագիտութիւն. կամ հնարագիտութիւն փիլիսոփայական. և կամ իմաստակութիւն: Կողոս. 2. 8:

Ճարտարութիւն. թեան: || արուեստաւորութիւն. կամ քաջ հմտութիւն յիմիք արհեստի. և կամ արուեստ: ռամկ. հնարագիտութիւն: Ելից. 28. 11: և 35. 35: Իմաստ. 13. 11: և 14. 4: Մերթ ևս նշանակէ վարդապետութիւն, կամ ընտրողագիտութիւն. կամ ուշիմութիւն. և կամ զգօնութիւն: 1. Կորնթ. 1. 17: և 2. 13:

ՃԳ

Ճգանք. անաց. օք: (անեզական.) || տե՛ս զճգունս:

Ճգնադրեայ. դեցի. իւ. լոյ. իւք: || զճգնութեան դրեցող, որով իմանի յանձն առօղն ճգնութեանց, կամ նեղութեանց, և չարչարանաց. և կամ ճգնաւորն: 'Ի շարակնոցի:

Ճգնադրեցիկ: (Նախադրիւ հոլովի.) || նոյն է ընդ վերնոյն: Խորէն. Ժ. դր. 89:

Ճգնակից. կցի. աւ. կամ իւ. աց. օք: || կցորդ, և ընկեր ումեք 'ի ճգնութեան. կամ որ ընդ ումեք 'ի միասին ճգնի, կամ չարչարի: Իսկ մերթ նշանակէ զպատերազմակիցն. կամ զմարտակիցն: Կիւրղի պարապմանց:

Ճգնարան. ի. աւ. աց. օք: || տեղի ճգնելոյ. և կամ բնակարան ճգնաւորաց:

Ճգնաւոր. ի. աւ. աց. օք: || անձն յանձին զճգնութիւն. կամ որ յօժարութեամբ կրէ ըզ տառապանս, և զչարչարանս, կամ որ ճգնելով գործէ զինչ: Նարեկ. ժդ: Մերթ ևս յատկապէս առեալ նշանակէ զկուսակրօնս, և զճգնօղ կրօնաւորն. որ կամաւորապէս խոշտանգելով զանձն իւր, 'ի գետնախշտութիւն, 'ի պահս, և 'ի յաղօթս, և 'ի մահացուցմունս վաստակէր յօժարութեամբ մարմնոյ իւրոյ, չարչարի վն Քի: Իսկ մերթ նը շանակէ զմարտիկն, կամ զպատերազմօղն յորում և իցէ մարտի. կամ պատերազմի: Նարեկ. կա: Կիւրղի Եղիշ. ժդ: Ոսկէ. 2. հատ. լե:

Ճգնաւորագոյն. գունի. իւ. ից. իւք: || սաստիկ ճգնաւոր. կամ առաւել ճգնօղ. կամ զնեղութիւն, և զչարչարանս մեծաւ ջերմեռանդութեամբ յանձնառօղ: Ոսկէ. 2. հատ. լդ:

Ճգնեմ. եցի. եա. ել: (է զօրութեամբ անցողական.) || ճգնեցուցանել. այսինքն չարչարել. կամ տառապեցուցանել. կամ նեղել: Իսկ մերթ սաստիկ ստիպել. կամ բռնադատել. կամ 'ի վիշտս, և 'ի վտանգս արկանել: և ըստ այսմ է Գործ. 19. 27. ուր առի. Եւ ոչ միայն այս ճգնէ զմեր կողմնս գալ 'ի յանդիմանութիւն. այսինքն ոչ միայն բռնադատէ, և 'ի վտանգս արկանէ զմեր կողմնս առ 'ի անկանիլ 'ի ծանականս, և 'ի յարհամարհանս: և այլն:

Ճգնիմ. եցայ. եաց. իլ: (Հայնական.) || չարչարիլ. կամ տառապիլ. կամ նեղիլ. և կամ ըզ վիշտս կրել 'ի մեծապէս պատերազմաց, կամ 'ի վերահասեալ թշնամութեանց: 1. Մակ. 5. 16: 1. Կորն. 15. 30: Մերթ ևս նշանակէ սաստիկ ջանալ. կամ դուն գործել. կամ փութալ զաշխատանօք. կամ տաժանիլ. և կամ քրտնաջան աշխատիլ: Գործ. 24. 16: 2. Տիմ. 4. 5: Իսկ մերթ յանձն առնլով զտառապանս պատերազմիլ, կամ մարտնչիլ 'ի վն Քի: Յուդայ. 3: Բայց մանաւորապէս առեալ, նշանակէ խարազանօք, գետնախշտութ, ծոմապահութեամբք, և այլովք այսպէս նեղութեամբք կամաւորապէս չարչարել. կամ ճնշել զանձն իւր վն Այ: Խոր. Բ. դպ. 49:

Ճգնողակից. կցի. աւ. կամ իւ. աց. օք: ||

կցորդ. կմ՛ ընկերութիւնք 'ի ճգնութեան. և կմ՛ 'ի միասին ճգնող: Լամբրոն:

Ճգնութիւն. թեան: || Չարչարանք. կմ՛ տառապանք. այլ՛ նեղութիւն. կմ՛ վիշտք. և կմ՛ պէտք փորձանք պատերազմաց, կմ՛ հալածանաց. և այլոց նմանեաց: 1. Մակ. 14. 29: 2. Մակ. 7. 6: 2. Թես. 1. 5: Իսկ մերթ ջանք. կամ քրտնաջան աշխատանք. և կամ հոգս նաև աշխատասիրութիւն: Խոսրէն. ա. պր. 2. և 15: Մերթ և նշանակէ զխոհեմութիւն. կմ՛ զպատերազմ. և կմ՛ զգօնութիւն մարմնոյ: Կոր. 2. 1: Իսկ մերթ մասնաւորաբար առ կրօնաւորս, նշանակէ զկամաւորական խստակեցութիւն. կամ զխոշտանգանս մարմնոյ, որք կրեն ճգնազգեաց կրօնաւորքն:

Ճգնումն. (Նախդրիւ հոլովի.) || Նոյն է ճ վերնոյն: Կիւրղ. Եղեկ. ժը:

Ճգունք. ճգանց. ամբք: || Է, ռմ. յոգնական ճիգն բառիս. և նշանակէ զճգնութիւն. կմ՛ զտառապանս. կմ՛ զվիշտս. և ըղ ձ վտանգս: Տօբ. 4. 4: և Եբր. 10. 32: Իսկ մերթ նշանակէ զպատերազմունս. կամ զծանր մարտս: Լամբրոն:

ՃԵ

Ճեղ. ի. իւ. ից. իւք: || Ճառագայթ, քր նա. որոյ գլուխն յառաջոյ կողմանէ է մաշեցեալ. կմ հերածուծ, և լերկ եղեալ: Ղևտ. 13. 41: Իսկ թէ այսպէս ասելի. պող: Ղևտ. 13. 41: Իսկ թէ այսպիսի ունիցի զբոլոր գլուխն մազթափ, կոչի կունտ. կամ կնտակ: Մերթ և նշանակէ սովոր ճիւղն, կամ, ոստն. բայց առաւել յաշխարհաբառ լեզուով 'ի գործ ածի: Իսկ 'ի գրաբառ լեզուով երբեմն մի միայն 'ի բարդութիւն, կմ՛ յածանցմունս. ունել 'ի բարդութիւնս, կմ՛ յածանցմունս բառից. որպ եռաճեղն. կամ ճեղկնակ: Իսկ մերթ ուրեք, ուրեք 'ի կիր առեալ լինի և 'ի չափաբերական բանս. որպ գնի յատմանաւորն հեթնում թագաւորի:

Ճեղատ: || Նոյն է ընդ ճաղատ բառին. վզ զի տառքս այսոքիկ. ա. և ե. բազում անգամ փոխադրին ը միմեանս. որպ յիշեցաւ 'ի մեկնութեան նց:

Ճեղգեմ. եցի. եալ. ել: (Ներգործ.) || տես զՃեղքեմ:

Ճեղեմ. եցի. եալ. ել: (Ներգործ.) || Ճեղքել. կամ պատառել. կամ հերձել, և 'ի ծունկս բաժանել:

Ճեղկնակ. ի. աւ. աց. օք: || ոսկեհունան ծառք. քր մետաքսախառն. ոսկեթելիւք հիւսեալ ժիւնիւլ. կամ ոսկի, զոր յօրինեն 'ի ծայր գաւազանի. կամ յերկիրս այլոց զարդուց: Բայց յառաջագոյն առեալ նշանակէ սովոր զարդ իւիք գլխոյ կանանց իբրև զապարօշ, որ 'ի միում կողմանէ առ եղերբն խիտ առ խիտ կախեալ ունի կարգաւ զբազում կարծ թելս մարգարտաշարս: կամ շղթայիկս ոսկեղէնս. կամ արծաթեղէնս, յորոց իւրաքանչիւրոյ ծայրսն հաստատեալ կան թիթեղունք լուսանձևք. կամ բոլորակաձևք. և կամ փոքրիկ ոսկիք,

'ի կապելի զարդուն զճակատաւ, կար դաւ շարեն 'ի վր նր մինչև ցծամելիսն: Եւ ըստ այսմ կոչեցաւ զարդս այս ճեղկնակ. իբր թէ ճեղունակ, զի 'ի նմա թելքն կամ շղթայիկքն ճեղճեղ կախեալ կան: ասի. ճղէր. և ատճիկլիքն ,, ենշխէլի: Եսայ. 3. 21:

Ճեղութիւն. թեան: || Ճաղատութիւն. քր մազաթափութիւն գլխոյ 'ի կողմանէ ճակատուն: ասի. փողւտի: Ղևտ. 13. 42. և 43:

Ճեղքեմ. եցի. եալ. ել: (Ներգործ.) || հերձանել. կամ պատառել. կամ ընդ մէջ յօշել: ասի. ճղքել: Դատ. 14. 6: 4. Թագ. 6: Գործ. 23. 10: Իսկ մերթ անջատել. կմ՛ բաժանել. կամ հերձուածս արկանել 'ի մէջ բազմութեան. և կմ՛ քակել զսէր, և ըղ միաբանութիւն: Ոսկե. 2. հոմ. լբ. և լէ:

Ճեղքումն. ճեղքեցի. եալ. ուլ: (Ներգործ.) || Նոյն է ընդ վերնոյն: Խոսրէն. բ. պր. 7:

Ճեմ: (Նախդրիւ հոլովի.) || Է արմատ ճեմել բային, որով նշանակի ճեմումն. կմ՛ ճեմելն բայլին, որով նշանակի ճեմումն. կմ՛ զգնացումն. որ է հանդարտ քայլիւք շրջելն: ասի. օլչաւ շրջելն: Մերթ նաև երբ առ երբև զմանկիկ ածանցականակերպ և գնի փոխանակ մասնիկանցս այսոցիկ. կան. կմ՛ այլն. որպ յայտ է 'ի բառիցս յորացանէ. երկնաճեմ. լուսաճեմ. ատրուշաճեմ. ոսկեճեմ. և այլն: զորս տեսցես 'ի տեղիս իւրեանց: Իսկ մերթ ընդ բայի շարակցի այսպէս. ճեմ առնել. և նշանակէ ճեմել: 3. Մակ. 5. 12:

Ճեմական. ի. աւ. աց. օք: || այն են, որ վերաբերի առ ճեմելն. և կմ՛ նշանակէ ըղ ճեմօղ. որ ճեմէ. և շրջի: Բայց յատկապէս առեալ է առ մականուն արիստոտելեանց փիլիսոփայից. քր այնց իմաստասիրաց որք էին 'ի համալսարանէն արիստոտէլի. և կմ՛ որք զհետ գնային կարծեաց նր 'ի բանս մակացութեանց: Եւ կոչեցան ճեմականք. իբրթէ ճեմօղք հետևողք. զի վր առանձին զարիստոտէլէ. թէ առ 'ի պայծառ պղատոնի վարդապետին իւրոյ 'ի ատեանն ուսուցանելն. զաշակերտս իւր 'ի շրջանակի թռո. այլ միշտ ճեմէր: Եւ յայսմանէ յաշակերտաց վարութեան կալեալ բազումք յաշակերտաց զհամբակս նր ճեմելով ուսուցանէին:

Լամբրոն:

Ճեմարան. ի. աւ. աց. օք: || առեղի ճեմելոյ. կմ՛ զբոսանաց: Եւ ըստ այսմ պարտէզ կմ՛ հրապարակք, ուր ճեմ առնել լինի մարդկան, ճեմարան կոչին: Իսկ մերթ իմաստութեան առնել տեղի զխաչին քնն. և զկուսեն մարխանց. ըստ որում եղեն և ճ զուտ մարզարան. թանկին այ: Նոր. կէ. գէ: և նշանակէ բանկոտի: Իսկ յատկապէս առեալ նշանակէ սովոր համալսարանն արիստոտէլի. որում վր այնորիկ, զի անդ 'ի պայծառ վարդապետն իւրոյ զհամբակս ճեմելով ուսուցանէր: Եւ յայսմանէ ասեցաւ թէ իւրն ճեմարան անուանել զհաշակերտ. և զհամբակաց համալսարանն. ըստ անդաղկ յամ կողմանց, ընթանալի զմայրն

մարդիկ յուսումն մանկութեէց: Խորէն. Գ. գլ. 61:

Ճեմարանօրէն: (մակբայ որակական.) || Համ գոյն ճեմարանի. կմ իբրև զճեմարան: Իսկ 'ի Նարեկ. ղդ. ուր ասի. ճեմարանօրէն արուեստիւ. իմանի իմաստասիրական, կամ ճարտարապետական արուեստիւ:

Ճեմելի. լւոյ. եաւ. եաց. եօք: || ասեղի. կմ որահ ճեմելոյ. և կամ ճեմարան: Յօբ. 41. 23: Իսկ մինչ վարի անեզականաբար այսր. ճեմելիք. եաց. նշանակէ զճեմումն. կմ զճեմս, որ է զգնացումն: Կիւրղ. Եզեկ. ժբ:

Ճեմեմ. եցի. եա. ել: (չէզոք.) || Համդարտ. կմ ծանր շարժմամբ շրջիլ. կամ գնալ: ռամկ. օլնայ ղարնել. կմ կեզինթի ընելու: Առակ. 30. 29: և Գաղ. 4. 26:

Ճեմեցուցանեմ. ցուցի. եցո. ել: (անցող.) || Համդարտ քայլիւք շրջեցուցանել. կամ տալ ումեք ճեմել: Իմաստ. 4. 2:

Ճեմիմ. եցայ. եաց. իլ: (ձայնակր.) || ճեմել. կմ շրջիլ. կմ համդարտ քայլիւք գնալ: և այս մերթ ասի զմարդոյ. և մերթ զաչաց. և զայլոց նմանեաց. որք շրջշրջելով շարժին: Մծբն. ժթ: Խորէն. Ա. գլ. 11: Կիւրղ. Եզեկ. ժբ:

Ճեմութիւն. թեան: || ճեմումն. կմ համդարտաքայլ շրջումն. և կմ գնացումն: Իսկ մերթ ընթացքն. կմ շարժումն քեզ ուրեն 'ի յօրինուածս բանից' ճեմութիւն կոչի: ըստ այնմ. Նարեկ. ղգ. 'ի չեզոքաց ոմանց ճարտարաց 'ի ճահ ճեմութեցն մայլ առաջին:

Ճենազն. ազնի. կմ ազնոյ. իւ. ից. իւք: || Նա' որ է յազգէն ճենաց. որպիսի էր մամգոն նախարարն, որ յաշխարհն հայոց պանդխտանայր. և սպան զապստամբ նահապետն ազգին սրկուններաց: Խորէն. Բ. գլ. 81:

Ճենճեր. ոյ. ով. ոց. ովք: կմ աց. օք: || ճարպախառն խոնաւութիւն մսոյ, որոյ 'ի յեփելն խարշեցմամբ 'ի սանի իբրև զփրփուր երևնէ, և դիզանայ յերեսս ջրոյն: Իսկ 'ի խորովելն հրով 'ի դուրս բղխեալ կիզի, և 'ի թանձրանալն ծուխ փոխարկի: ռամկ. ճէնճ. կմ ճոի ճէֆ: 2. Մակ. 7. 5: Նարեկ. ա: Իսկ մերթ նշանակէ զճենճերեալն. ՚ի զեփեցեալն երմակս ճենճերոյն: Եւ ըստ այսմ ողջակէզք, և զոհք մատուցեալք հրրով ճենճեր կոչեցեալ լինէին: Լամբրոն:

Ճենճերաւէտ: (Նախադրիւ հոլովի.) || լի ճենճերովք. և կմ լի ճենճերեալ զոհիւք:

Ճենճերեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || եփել զմիսն մինչև ցելումն ճենճերոյն. կմ եփելով տալ մսոյն հանել զճենճերսն: 1. Թագ. 2. 15. և 16: Եւ զի 'ի հնումն 'ի մատուցման զոհից. կմ ողջակիզաց զորս կատարէին հրով, միշտ ելանէր ճենճերն 'ի մսոյն, վն այսորիկ 'ի բազում տեղիս ածաշունչ գրոց' այսպիսի կերպիւ մատուցանելն զզոհ, ճենճերել կոչիւր. որպ 1. Թագ. 26. 19: և 4. Թագ. 16. 12: ըստ այսմ ճենճերել առացու սրբելն ոխերոյ արքայի ղքուրմսն 'ի վր սեղանոյ, զի էհան 'ի կեզեղն զնոսա' զճենճերս մարմնոյ նոցին: 4. Թագ. 23. 20: Մերթ և նմանութ առեալ նշանակէ տոչորել զսիրտ ուրուք, յորմէ իբրև զճենճեր ելանէ հառաչանքն: Նարեկ. ժբ:

Ճեպ. պոյ. ով. կմ իւ. ից. իւք. կմ ովք: || է արմատ ճեպել բային, որով մերթ նշանակի ճեպումն. ՚ի շտապ. կմ փութացումն. կմ սոխապումն. և կմ վաղվաղումն: 2. Մակ. 14. 43: 3. Մակ. 5. 15: Ողբ. 4. 6: Իսկ մերթ նշանակի ճեպեալ. կամ փութացողական. կմ սոխապողական: և ը այսմ ասի. ճեպ բանիւք. կմ ճեպ ընթացիւք. և այլն: Մերթ և ըստ բայի շարակցի այսպէս. ճեպ տալ. և նշանակէ, ճեպել. կամ փութալ. կմ երագել. և կմ յառաջադէմ լինել: Ոսկեր. հարց. իգ: Իսկ մերթ վարի իբրև զմակբայ. և նշանակէ, ճեպով:

Ճեպելի. լւոյ. եաւ. եաց. եօք: || շտապելի. կմ փութալի. կամ վաղվաղելի. և կամ սոխալելի: Իսկ մերթ հոգալի. կամ ջանալի. և կամ ջանիւք խնդրելի, և բաղձալի:

Ճեպեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || ճեպեցուցանել. ՚ի շտապեցուցանել. կամ փութացուցանել. կամ սոխալել. և կամ բուռն առնել: Մարկ. 6. 45: Եսայ. 22. 25: 2. Մակ. 9. 7: Դան. 11. 44: Մերթ և վարի իբրև չէզոքական. և յայնժամ նշանակէ' ճեպիլ. ՚ի շտապիլ. կամ փութալ. կմ սոխալիլ: Մծբն. ժդ: և Շնորհալին: Իսկ մերթ նշանակէ, զփոյթ ունիլ. կամ հոգալ. և կամ ջանալ: Ոսկէ. 1. հարց. լա. և լբ:

Ճեպեցուցանեմ. ցուցի. եցո. նել: (անցողակ.) || տես զճեպել: Ոսկէ. 2: հարց. իզ:

Ճեպիմ. եցայ. եաց. իլ: (ձայնակր.) || շտապիլ. կամ փութալ. կամ սոխալիլ. կմ ջանալ. կամ նկրտիլ: 2. Պետր. 1. 15:

Ճեպ 'ի ճեպոյ: (մակբայ երագական.) || ճեպ ընդ ճեպ. ՚ի փոյթ ընդ փոյթ. կամ արագ արագ. կամ սոխապմամբ և փութով. և կամ վաղվաղակի: ը այնմ. Մծբն. ժթ: ընթացուցանէ զնա ճեպ 'ի ճեպոյ:

Ճեպով. || է գործիականն ճեպ բառիս, որ երբեմն վարի իբրև զմակբայ, և նշանակէ փութանակի. կամ վաղվաղակի. կամ արագապէս:

Ճետ. ի. իւ. ից. իւք: || զաճառ. կամ սերունդ. կամ տոհմ. և կամ զարմ: ը այնմ Խորէն. Ա. գլ. 12: բառնալ ջնջել զամ ճետ տաշմանեալ յորանց քաջին հայկայ: Եւ 'ի սմանէ ծագի բառս' անճետ, որ 'ի սեղւոյ իւրում մեկնեցաւ:

Ճերմակ. ի. կամ ոյ. աւ. աց. օք: || սպիտակ. կամ ձիւնատեսիլ. որ և ռամկ. ասի ճէրմակ: և ըստ այսմ է 'ի Նարեկ. ղդ. ուր ասի հեծեալ 'ի ճերմակ երիվար:

Ճերոտ. կամ ճեռոտ. ի. ու. աց. կամ ից. օք: || ախտաւոր. կամ ախտաժէտ. և կամ հարեալ իմիք ապականութբ, և խանգարմամբ:

Ճերոտեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || ախ

...յանել · կամ անտառաժէտ առնել:
...թի · թեան: || անտառութիւն ·
...նառաժեռութիւն:

ՃԼ

...ներ · ի · ու · աց · օք: || կերեալ 'ի-
...ոյ · կամ որդնակեր · կամ ցեցակեր:
9 · 12:
| առ ու զՃճի: Նոբէլ · Է: և Ցն որդի:

ՃԽ

...ց · ի · ու · աց · օք: || ձայն փայտի ·
...ամ այլս իրի, յորժամ բեկանի, և
, և զփոքրիկ ձայն արձակէ: ռամ_
...ւն:

ՃՂ

... · Ճղան · ամբ · Ճղունք · կամ Ճղանք ·
...անց · ամբք · || է արմատ Ճղնիլ բային,
...նշանակի Ճղնութիւն · ...ամ ստառ_
... · կամ ճեղուածն · կամ վիշտ · և կամ
...գ: Եսայ · 14 · 1:
(նախադրիւ հոլովի ·) || կռինչ · կամ
...ղ, և մեղմ ձայն կենդանւոյ · որպիսի
...ճառոցն · զի Ճիռ Ճիռ ձայն հանեն
...ոց ոմանց · կամ ձագուց նց: և ըստ
...է Եսայ · 10 · 14 · ուր ասի՝ բանայցէ
...ան իւր, և Ճիկ հանիցէ:
...ղի · ու · կամ իճ · այ · օք: || Ճիւղ ծա
...կամ ծովուց, և գետոց · և այլոց նը
...աց: ռամկ · ճեղ · կամ ճող: Խորէն · յաղ
...գրութե · և Շնորհալին: Եւ 'ի սմանէ
...ի բառս երկճիղ, որ 'ի ասեղւոջ լու_
... մենեցաւ:
... Ճճույ · եաւ · եաց · եօք: || տես ըղ
...: Խորէն · յաշխարհագրութե:
... · կամ Ճիշտ · Ճշդի · իճ · ից · իւք · կամ
...վք: || է արմատ Ճշդել բային՝ որով
...ճ նշանակի Ճշգօղն · զի խնայօղն 'ի
...զիւն · կամ ուղիղն · կամ ժլատն · ռամ
...ն նէքէս · կամ պինդ: Մերթ ևս նշա
...ի Ճշգողականն · զի խնայողականն ·
... ժլատականն: Եւ ըստ այսմ ասի ·
... պնդիշտ, և զՃիշտ տուրս: Լամբրօն:
... մերթ նշանակի Ճշդութիւն · զի խնայութիւն
...ութս · կամ ժլատութիւն · և կամ ուշտուն
...: ռամկ · նէքէսութե · և ըստ այսմ ասի 'ի
...էլ · հԹ · ողորմութիւնք Ճշգով սերմա_
...ղք: Մերթ ևս նշանակէ ստուգուն ·
... հաւաստութե · կամ հոգանակութե ·
... զգոյշ քննութե, և հետազօտութե:
...Ճշոյ · իճ · ից · իւք: || ստուգիկ, և սուր
...ղակ · կմ ուժգին, և սուր գոչումն ·
... կականումն: 3 · Մակ · 1 · 10: և Պրոնի ·
26: Իսկ մերթ ընդ բայի շարակցի այս
... · Ճիչ առնուլ · կամ Ճիչ բառնալ · և
...մակէ Ճչել · կամ սուր, և ստուգիկ ձայ
... աղաղակել: 1 · Մակ · 13 · 45: և Երեմ · 4 ·
Եզեկ · 21 · 12:
... Ճռույ · ով · ոց · ովք · կամ իճ · այ · օք:

|| փոքրիկ մասն ոզկուղոյ · կամ փոքրիկ
ոզկոյզ, որ գտանի առ մեծամեծ ոզկու_
ոզկոյզ, որ ... զովք · կամ մնայ յայգւոջ 'ի վե՜ր ուռոց յետ
քաղելոյ զխաղողն: ռամկ · ճոթ: Եսայ · 65 ·
8: Աբդիւ · 5: Սոփոն · 3 · 7:

Ճիրան · ի · ու · Ճիրանք · կամ Ճիրանունք ·
աց · օք: || մագիլ · կամ որաձայր · և պատա
ռողական եղնգունք թռչնոց, կամ գազա
նաց, որ ըստ մեծի մասին առեալ լինի
հանդերձ մատամբք, և թաթիւք: ռամկ ·
ճէնկ: Նոբէլ · Հ: Սիրեն · Ժթ: Մերթ ևս
նմանութեթ առեալ Ճիրանք կոչին խայթո
ցաձև նուրբ եղնգունքն մնոց · մորախոյ ·
և այլոց ոմանց խայթօղ կենդանեաց:
Նոբէլ · ԿԸ:

Ճիրանաւոր · ի · ու · աց · օք: || ունօղ ըղ
Ճիրանս · կամ մագլաւոր: ռամկօր · ճէնկ
ատօղ:

Ճիճաղ · ոյ · կամ ի · իճ · ից · իւք · կամ ու ·
աց · օք: || խառնակերպ, և ահաւոր անա
սուն · կամ գազան, որ յանապատ տեղիս
մոլորեալ շրջի · որպիսիք են խառնածին,
և ցուցանքաւոր կենդանիք · կամ այծա_
մարդք · ձիացուլք · և այլք: Եւ ըստ այսմ
է 'ի գիրս Յովբ · 1 · հոգ · Ժ · ուր ասի: Ան
նուհետև ոչ գազան թունաւոր, և ոչ
անասուն անմիտ արժան է ասել · այլ Ճի
ճաղ ինչ փիւրակերպ, բիւրագոյն պխա
կացեալ · զի ցուցանքաւոր կենդանի ինչ
անհուրլի բիւրազան կերպարանօք պէսպէ
սացեալ, և այլանդակեալ: Բայց հատ
րակօրէն առնել նշանակէ զդեւս կերպարա
նեալս իձև պէսպէս գձուձակ · և ահա
լի կենդանեաց · որպիսիք են նոքա, որք
ըստ մասին առնուն զկերպարանս խոժո
ռադէմ, և զարհուրելի մարդկան, և ըստ
մասին գձնդակ այծեմանց · կմ որք ըստ
կիսոյն երեւին նման առիծու · իսկ ըստ
կիսոյն նման վիշապի, կմ անհուրլի ուղտու ·
և խառնաձայն գոչմամբ բարբառին իբ_
րև զմարդ: Եւ այսպիսիքս յաճախ զբնա
կութ կալնուն յանմարդաբնակ անապատս,
կմ 'ի լեռինս · որպիսիք էին նոքա, որք Է
ժամանակս ժամանակս երեւեցան սրբոյ
հօրն մերոյ Անտոնի աբբային: Երեմ · 50 ·
39: Մերթ ևս նշենկի սոխաւ՝ Ճըզմըղ և_
լեալ բարբառն · որպիսի է ձայնն Ճանճից,
պիծակաց · մեղուաց, և այլոց նմանեաց ·
ըստ այնմ · Յովբ · 1 · հոգ · ԻԷ · Ճանճից, և
մժեխաց, որք շուրջ թռուցեալ բզզեն,
և Ճիճաղ շառաչեն · այսինքն Ճըզմըղ ձայն
հանեն:

Ճիճաղաբարոյ · ի · իճ · ից · իւք: || գիճաբա
րոյ · կմ վայրենաբարոյ · կմ անասնաբա
րոյ · զի նա, որ կատաղութեթ, կմ չարու
թեթ, և կմ անզգամութեթէ նման կերպա
րանեալ գիճաց · կմ գձնդակ անասնոց:
Սակայն բառս այս բաղադրեալ անգամ հն_
բուամամբ առաջնոյ այբբէն՝ համառօտ · զի
փոխանակ ասելոյ՝ Ճիճաղաբարոյ, ասի
Ճիւղաբարոյ · որպէս գնի 'ի գիրս Աստուածգէ
ղոսի · և յայլ գրեանս:

Digitized by Google

Ճիճաղութիւն · թեան ։ || դիճաբարբառութիւն · կամ վայրենաբարբառութիւն · և կմ՛ անասնութիւն ։ Աշխար ։

Ճիւղ · ոյ · ով · ոց · ովք ։ կամ իւ · եց · օք ։ || ոստ, կմ՛ ստեղն ո՛ և իցէ ծառոց · կամ տընկոց, և կամ բուսոց ։ ռամկ. ճուղ · կմ՛ ճիւղ ։ Նարէկ. Հ. և ՂԶ ։ Իսկ մերթ նմանութեամբ առեալ ճիւղ կոչին երկայնացեալ մասունք ծովուց · գետոց, և այլոց նմանեաց, որք իբրև զճիւղս ծառոց անջատին 'ի նոցանէ ։ Խորէն · յաշխարհագրութեան ։ Մերթ ևս նմանութեամբ առեալ ասի զմասանց · ըստ այնմ Նարէկ. ՀԵ · Մի՛ թուլեացես 'ի ճիւղս երկրաստեղծ մասանցդ զգեստս գործոցս · քս մի՛ թուլեացես 'ի վ՛ր մասանց քոց, որք են ձեռաց քոց իբրև զճիւղս, և զոտս ։

Ճիւղաբարոյ · ի · իւ · եց · իւք ։ || տե՛ս զՃի ճաղաբարոյ ։

ՃԽ

Ճխամ · ացի · ճխա՛ · ալ ։ (չէզոք ·) || ցընծալ · կամ հրճուիլ · և կմ՛ խայտալ ։

ՃԿ

Ճկոյթ · ութի · իւ · եց · իւք · կամ · աց · օք ։ || փոքրիկ մատն ձեռաց, կմ՛ ոտից մարդոյ, որում հակադրի բոյթն ։

ՃՂ

Ճղակոտոր · ի · իւ · աց · օք · կմ՛ իւք ։ || ճիւղակոտոր · քս նա, որ կոտորէ, կմ՛ քշտէ զճիւղս ծառոց ։ Մերթ ևս ծառն, որոյ ճիւղն կոտորեցեալ է՝ ճղակոտոր ասի ։

Ճղճկէն · ճկենի · իւ · եց · իւք ։ || բաղադրի սա 'ի կէն մասնկանէս, և 'ի ճիւղ բառէս 'ի ձեռն կրկնեցման · զի ասի՝ ճղճկէն · իբր թէ ճղճղկէն · քս ճղճղաւոր · որով նշանակի ունօղն բազում ճիւղոց, և ստեղանց · կմ՛ որ 'ի բազում ճիւղս է անջատեցեալ · կմ՛ ճիւղ ճիւղ եղեալ · որպիսիք են ոմանք ծառք · կմ՛ ճանապարհք · և կմ՛ կղզիք · ուստի ասի, 'ի գիրս Խորէն · յաշխարհագրութեան · Անուն արեմտեայ կղզւոյն Նուսմիդաանիայ, և է զարմանահաւասարապէս ճղճկէն ։ ռամկ. ճուղճուղ · կմ՛ ճղճղած · կմ՛ փուշ փուշ ։

Ճղուղ · ճղղոյ · ով · ոց · ովք ։ || անիւ սայլի · կամ կառաց, և այլոց նմանեաց ։ ռամկ. Չէրխալէք ։

Ճղուփ · ճղփոյ · ով · ոց · ովք ։ || է տրմամ ճղփալ բայից · և նշանակէ զճղփիւն ։

Ճղփամ · ացի · փա՛ · ալ ։ (չէզոք ·) || ձայն հանել ջուրց ծովու, կմ՛ գետոց, և այլոց նմանեաց, յորժամ անկանի 'ի նա 'ի վերուստ իր ինչ ծանր ։ ռամկ. Շըփ անել · կմ՛ Շըփ ձայն հանել ։

Ճղփիւն ։ փման · ամբ · անց · ամբք ։ || ձայն հանումն ջուրց, որ պատճառի 'ի ծանր իրաց · յորժամ անկանին 'ի նա 'ի վերուստ ։ ռամկօրէն Շըփ ։

ՃՃ

Ճճի · ճճւոյ · ւով · եաց · եօք ։ || ❁ հասարակ անուն ինչ, որով նշանակին ամ թունաւոր, կմ՛ մանրամակար որդունք · զեռունք · սողունք · ցեցք · կմ՛ ժժմունք · և այլք նմանք · որպիսիք են նոքա, որք ապականեն զբոյսս · կմ՛ ուտելով ծախեն զփայտեղէնս, կմ՛ դոյանան 'ի փոր կենդանեաց · և կմ՛ որք ունին զլուսնիկ 'ի տաւոն · և կմ՛ պլծակք · մժեխք · մունք, և այլք նմանք ։ ռամկ. որդ · կմ՛ ղէօճէկ · և կամ սօղուլճան ։ Իմաստ. 11. 16 ։ և 16. 1 ։ և 17. 9 ։

Ճճեկեր · ի · աւ · կմ՛ իւ · աց · օք ։ || տե՛ս ըզ Ճըճեկեր ։

Ճճու · ճճուի · աւ · աց · օք ։ || տե՛ս զՃճի ։

Ճճուեմ · եցի · եա՛ · ել ։ (չէզոք ·) || հանել զպէսպէս ձայնս, կմ՛ չչիւնս ճճուաց · կմ՛ ճճեաց · որպ առնեն ոմանք կախարդք՝ պէսպիսեաւ կերպիւ չչնչելով ։

ՃՄ

Ճմլեմ · եցի · եա՛ · ել ։ (ներգործ ·) || սեղմելով տրորել · կմ՛ քամել · կմ՛ այնչափ ճնշել, մինչև մերձ լիցի 'ի լուծիլ · կամ 'ի տրորիլ · և ըստ այսմ ասի՝ ճմլել զխաղող · կմ՛ զպտուղս կոլոլոց, և այլոց անասնոց ։ Ծննդ. 40. 11 ։ Առակ. 30. 33 ։ Եսայ. 63. 3 ։ կմ՛ ճմլել զմարդ · կմ՛ զոտս · և կմ՛ զկզակ կենդանեաց ։ Թուոց. 22. 25 ։ Սաղմ. 31. 9 ։ 1. Մակ. 6. 46 ։ Եւ մերթ մինչ ասի՝ ճմլել զսիրտս · իմանի՝ հալել զսիրտս · կմ՛ գելուլ զաղիս · և կմ՛ աղեկտուր առնել ։ 3. Մակ. 4. 2 ։ և Ղուկ. 24. 32 ։

Ճմլեցուցանեմ · ցուցի · եցո՛ · ել ։ (անցող ·) || ճմլել · կմ՛ սեղմելով տրորել ։ Իսկ մերթ դալարեցուցանել զաղիս · կմ՛ աղեկտուր առնել ։ Եւ ըստ այսմ ասի · ճմլեցուցանել զսիրտ ։ Գործ. 21. 13 ։

Ճմուռ · ճմռոյ · ով · ոց · ովք ։ || է տեսակ ինչ կերակրոյ, զոր կազմեն թարմ հացիւ, և իւղով ։ Եւ աստացաւ ճմուռ, զի ճմլելով շինեն · վ՛ զի բրդեն զհացն 'ի բազում պատառս · և ապա արկեալ 'ի վ՛ր զիւղ · քս արդար եղ, խառնեն, և ճմլեն՝ մինչև հացն բոլորովին առգորի իւղովն · որ և ռամկօրէն ասի ճմուռ ։

Ճմրի · ճմրւոյ · եաւ · եաց · եօք ։ || անօրէն · կմ՛ ժանտ · կմ՛ չարաբարոյ · կմ՛ ամբարիշտ · և կմ՛ վատթար ։ Սակայն այս յոկանս գտանի յաշխարհաբառ լեզուն 'ի գործածի ։

ՃՆ

Ճնճղուկ · ճղկան · ամբ · ճնճղկունք · կամ ճնճղուկք · անց · ամբք · կմ՛ օք ։ || է հասարակ անուն ինչ, որով նշանակին ո՛ և իցէ փոքրիկ, և փափկափետուր թռչունք տկարք զօրութեամբ, որք համակաց 'ի տանիս բնակին · կմ՛ վանդակաւ պահին · և

ըն: տաճկ. ճնճուղ. կամ ղուշ: Տօբ. 2. 18: Սղմ. 83. 4: Մատթ. 10. 29:

Ճնշեմ. եցի. եա՛. ել: (ներգործ.) ‖ սեղմել. կամ ճմլել. և կամ քամել: տաճկ. սըխմագ. ըստ այսմ ասի 'ի գիրս Լամբրոն. Աշխէր զքաղաքն տառապեալ ճնշեալ արտաքսքինն: Այսպէս եւ ասի. նոր ճնշեալ ինի. կամ իւղ. եւայլն. դ նորակէս քամեալ: Նարեկ. ղդ: ըստ այսմ է և 3. Եզր. 13. ուր ասի. Եւ ճնշէի 'ի նեղութէ անցին առ պարապաւն. դ վն նեղ գոլոյ անցիցն. որ առ պարապաւն, ճնշէի. դ եղմեալ լինէի. այդ և 'ի վայր 'ի 15. տամն ասի. 'ի նեղութէն էի ճնշեալ 'ի պարսպէն. դ 'ի նեղ գոլոյ անցիցն պարսպին ձեղմեալ էի. կամ սեղմեալ լինէի: Եւ յայտնանիկ առնելով երբեմն եւ նշանակէ սեղմել. կամ նուաճել. կամ տառապեցուցանել. կամ զայրելով վշտացնել, և չարչարել: Եզեկ. 1. 12: Գործ. 14. 18: Սոփոն. 3. 19: 1. Կորնթ. 9. 27:

Ճնշումն. շման. ման. մանց. մամբք: ‖ սեղմումն. կամ սեղմմամբ տառապեցուցումն. կամ ճմլումն. և կամ քամումն: Նարեկ. 'ի գովէստ խաչին: Եւ մերթ նեղութիւն. կամ չարչարանք. կամ նուաճումն. կամ զսպումն. և կամ սանձահարութիւն վասնթար յանդգնութեանց մարմնոյ: Գաղ. 5. 23:

ՃՇ

Ճշգրիտ. գրտի. տիւ. տեաւ. տիւք. կամ ոյ. ոց: ‖ Ճշմարիտ. կամ ստոյգ. կամ իսկական. կամ հաւաստի: Նարեկ. ճն: Ոսկեբ. 1. կորնթ. խտ:

Ճշգրտաբան. ի. իւ. ից. իւք: ‖ Ճշմարտաբան. դ ճշմարտութե խօսող. կամ ճշմարտութե հաստատող:

Ճշգրտաբանեմ. եցի. եա՛. ել: (ներգործ.) ‖ Ճշմարտաբանել. դ ճշմարիտ խօսել. կամ պատմել. և կամ բանիւ հաստատել. կամ ցուցանել: Նարեկ. ղա:

Ճշգրտաբանութիւն. թեան: ‖ Ճշմարտաբանութիւն. կամ ճշմարիտ բան, և խօսք. և կամ հաւաստի ճառ: Նարեկ. ղդ:

Ճշգրտարար: (մակբայ առորակական.) ‖ տես զՃշգրտիւ: Լամբրոն:

Ճշգրտագործ. ի. իւ. ալ. օք: ‖ Ճշմարտագործ. դ ճշմարտապէս գործող. կամ նա, որ գործէ զինչ ըստ իսկական կերպին, կամ նախագաղափարին: Իսկ մերթ նշանակէ ճշմարտապէս գործեցեալն. և կամ ըստ իսկական ձևոյ իրիք արարեցեալն: և ըստ այսմ յօրինուածք պատկերաց. որք առնեն զնմանն նախատպին. յորոց մի նակէն, կոչին ճշգրտագործք:

Ճշգրտապատում: (Նախադրիւ հոլովի.) ‖ Ճշմարտապատում. դ ճշմարտութե պատմող, կամ ճառող: Իսկ մերթ նշանակէ ճշմարտապէս պատմեցեալն. կամ վիպասանեալն: Իսկ մինչ ասի ճշգրտապատումն գրել. նշանակէ ճշմարտաբանելով, կամ հաւաստեաւ պատմելով գրել: Նարեկ. 'ի գովեստ խաչին:

Ճշգրտեմ. եցի. եա՛. ել: (ներգործ.) ‖ Ճշմարտել. կամ ստուգել. կամ հաւաստել: Եւ կամ իսկութե նմանեցուցանել զի՛ իրն միւսոյն: Իսկ մերթ ճշգել. դ ճշգիւ քննել. կամ մանրամասնաբար հետազօտել զինչ առ 'ի ստուգիւ գիտել զուգութիւն, կամ զձիգն նր. և այլն: Թուոց. 23. 10:

Ճշգրտեցուցանեմ. ցուցի. ցո՛. նել: (անցողակ.) ‖ նոյն է ընդ միւսոյս:

Ճշգրտիւ: (մակբայ առորակական.) ‖ ստուգիւ. կամ հաւաստեաւ. կամ իսկապէս. կամ ըստ բնոյ ուղղութեան: Իմաստ. 13. 14:

Ճշգրտութիւն. թեան: ‖ Ճշմարտութիւն. կամ ստուգութիւն. կամ հաւաստութիւն. կամ իսկական նմանութիւն, և կամ յարմարութիւն: Լամբրոն: Իսկ մերթ հոգեւորական հետազօտութիւն. կամ մանրամասնական քննութիւն, և յայտնութիւն: 'ի Հոգւս Տեառն. իէ:

Ճշգրտագնեմ. եցի. եա՛. ել: (ներգործ.) ‖ Ճշգիւ գնել. դ ժլատութե. կամ խնայելով 'ի գրամս, և կամ ուժգին սակարկութե գնել զիր ինչ: Լամբրոն:

Ճշգեմ. եցի. եա՛. եալ: (ներգործ.) ‖ ստուգել. կամ խնայել. կամ ժլատութե: և ագահութե կալնուլ. կամ ունիլ. և կամ պահել զինչ: Առակ. 11. 26: և 2. Կորնթ. 9. 6: մերթ եւ նշանակէ՝ ստուգել. կամ հաւաստել. կամ ճշգիւ քննել. կամ հետազօտել: Սամ. 2. 29:

Ճշգիւ, և ճշտիւ. կամ ճշգով, և ճշտով: ‖ է գործիականն ճիշգ բառիս. որ վարի իբրև զմակբայ և նշանակէ՝ ճշգելով. դ խնայելով. կամ ագահութե. կամ ժլատութե: տաճկօր. նէքէրլարըզ: Նարեկ. ճժ: Իսկ մերթ հաւաստեաւ. կամ ստուգութե. կամ իսկապէս. և կամ ճշմարտիւ: Կիւրղ. Եղեկ. ժգ: Երբեմն եւ մեծաւ փութով. կամ հոգւոյ հետազօտութեամբ. կամ մանրամասնաբար քննելով. կամ յայտնելով. և կամ բացորոշելով: Լամբրոն. Նարեկ. ի: Խոսրով. պ. պր. 2: ըստ այսմ է 4. Թագ. 23. 35. ուր ասի. Ճշգով պահեցին զերկիրն, առ զարծաթն: դ ըստ հրամանացն փառաւոյ բացորոշելով առնձնացին երկրին՝ առ զարծաթն հարկին. որ է 'ի հարկին կոցուցանել զերկիրն:

Ճշգութիւն. կամ ճշտութիւն. թեան: ‖ ագահութիւն. կամ խնայութիւն. կամ ժլատութիւն. կամ աշտութիւն: Նարեկ. խե: Եւ մերթ ճշմարտութիւն. կամ ստուգութիւն. կամ հաւաստութիւն: Կիւրղ. Եղեկ. ժգ: Իսկ մերթ նշանակէ հոգւոյ քննութիւն. կամ մանրախոյզ որոնումն. կամ հետազօտութիւն. և ըստ այսմ է Դատ. 5. 15. ուր ասի. մեծամեծ ճշգութիւնք սրտի. որ 'ի 16. տամն կոչի հետազօտութիւն:

Ճշմարիտ. մարտի. տիւ. տիւ. տիւք: ‖ ստոյգ. կամ հաւաստի: 3. Թագ. 10. 6: Յովհ. 1. 9: Մերթ եւ նշանակէ զճշմարտախօսն. կամ զճշմարտապատմն: Յովհ. 3. 33: և 2. Կորնթ. 6. 8: Իսկ մերթ վարի իբրև զմակբայ. և նշանակէ ճշմարտութե. կամ ստուգիւ:

Digitized by Google

Ճշմարտաբան. ի. ին. ից. իւք։ || Ճշմարտախօս. որ նոյն է, որոյ բանքն, և խօսքն են ճշմարիտք. կամ որ զճշմարիտն խօսի. և կամ հաւատարիմ՝ ի բանս։ Նարեկ. ձե։

Ճշմարտագիտեր. գիտի. ին. աց. ացս։ || Ճշմարտութիւն գիտող զինքեան. և կամ ճանաչող զբովանդ զճշմարտութիւն. կամ զճշմարտիւն երկայ։

Ճշմարտադաւանութիւն. դաւանի. ին. ից. իւք։ || Սուրբ դաւանութիւն. կամ հաւատադաւանութիւն։ Իսկ մերթ խոստովանութիւն. կամ յայտնութիւն. և կամ պաշտօնադաւանութիւն։ Եւ ըստ այսմ երբեմն վարի իբրև զանուամբ, և այսպէս ճշմարտադաւանութիւն պատմել. կամ ճշմարտադաւանութեամբ մեկնել։ Պետր. 18. 26։ Ոսկէբ. 1. հասարակ։

Ճշմարտադարձ։ || տե՛ս զՃշգրտադարձ։

Ճշմարտադրեմ. եցի. եամ. ել։ (Ներգործ.) || Ճշմարտութեամբ. կամ հաւատարմութեամբ գրել զիրս խօսից. կամ գրով ճառել զճշմարտն. և կամ ստուգաբանելով ընդ գրով առ կանոնել զբանս ինչ։ Նարեկ. ղզ։

Ճշմարտադատ։ (Նախադրիւ հոլովի.) || Ճշմարտութեամբ դատող. կամ զճշմարիտս դատաստանս առնող։ Նարեկ։

Ճշմարտախօհ. ի. ին. ից. իւք։ || Խորհող զճշմարտութիւն. կամ ճշմարտապէս խոկացող. և կամ ունող զճշմարիտս, և զուղիղ խորհուրդս։

Ճշմարտախօս. ի. աւ. կամ ին. աց. օք։ || տե՛ս զՃշմարտաբան։

Ճշմարտածին։ (Նախադրիւ հոլովի.) || Ճշմարտապէս ծնեալ. կամ սուրբ պատահեալ. և կամ ունող զճշմարիտս ծնունդս, կամ ստացօղ ածս։ Նարեկ. 'ի Գող. խաչին։

Ճշմարտապատմութիւն. պատմի. ին. ից. իւք։ || Ճշմարտութեամբ պատմելն. կամ ճառելն. և կամ ճշմարտապէս պատմել ցուցանել. և ճառել ցուցանել։ Աճգոն։

Ճշմարտասէր. սիրի. աւ. աց. ացս։ || Սիրող ճշմարտութեան. կամ սիրով գիրկս արկանող ճշմարտին, և արդար բանից. կամ զօր ծառայ։ Լամբրոն։

Ճշմարտասիրութիւն. թեան։ || Սէր ճշմարտութեան. կամ սիրով փարելն զճշմարտութեամբ։ Խորէնաց. ա. գլ. 18։

Ճշմարտատես. ի. ին. ից. իւք։ || Տեսող զճշմարիտս տեսլեանց. և կամ նա, որ աչօք մտաց, իբրև տեսանէ զճշմարտութիւն ինչ։ Թիւ. 24. 4. և. 15։

Ճշմարտատեսիլ։ (Նախադրիւ հոլովի.) || Ճշմարտատես. կամ ունող զճշմարիտս, և զիւրս կամս տեսիլս. և զերկրաւորականս։ Նարեկ։

Ճշմարտատիպ։ (Նախադրիւ հոլովի.) || Ճշմարտապէս տպաւորեալ. և կամ ունող ըզ ճշմարիտս, նիշս, կամ օրինակս. կամ նմանութիւնս։ Նարեկ։

Ճշմարտեմ. եցի. եամ. ել։ (Ներգործ.) || Ըստուգել. կամ հաստատել. կամ ճշգրտել։ 2. Մակ. 2. 29։ Իսկ մերթ ճշմարտաբանել. կամ ճշմարտութեամբ ճառել. կամ հաստատել։ Խորէնաց. գլ. 5։

Ճշմարտիւ։ (մակբայ առաջադական.) || Ստուգիւ. կամ հաստատուն. կամ իսկա-

պէս։ Յոհան. 4. 42։

Ճշմարտութիւն. թեան։ || Ստուգութիւն. կամ հաւատարմութիւն. կամ ճշմարիտ, և արդար խօսք, կամ բան, և կամ գործք։ Ծնն. 24. 27։ Սաղմ. 5. 10։ և 14. 3։ Իսկ մերթ առնի ըստ փոխանակ ոյ, կամ ամբողջ հաւէ. որ ոչ միայն է անսուտ ճշմարտութիւն. այլ և անխիղճն. և ազնիւ ամ ճշմարտութեանց, և արդարութեանց։

Ճշտեմ։ || տե՛ս զՃշգրտել։

Ճշտութիւն. թեան։ || տե՛ս զՃշգրտութիւն։

ՃՈ

Ճոխ. ի. ին. ից. իւք։ || Մեծատուն. կամ բարեգաւանդ. կամ առատ. կամ լցեալ։ Նարեկ. զէ։ Իսկ մերթ ընչաւէտ. կամ հարուստ. կամ մեծատուն։ Մերթ և նշանակէ զիշխանս. կամ զմեծամեծս. կամ զաւագանիս։ 4. Թագ. 10. 6։ և Յոբ. 29. 9։ Իսկ մերթ նշանակէ զնա, որ ունի զիշխանութիւն 'ի գործել զինչ. կամ որ ազատութեամբ ձեռն երէց լինի 'ի գործ ինչ։ Եւ ըստ այսմ է Իմաստ. 12. 6. ուր ասի. Եւ զճոխս զծնողս անձանց անօգնականաց կամեցար կորուսանել. զի զձեռներէց ծնօղս զաւակաց անօգնականաց, որք յանդգնեցին զոհել զոր-դիս իւրեանց կամ, կամեցար կորուսանել. և այլն։

Ճոխաբան. ի. ին. ից. իւք։ || Մեծաբան. կամ ճոխամտաբան. կամ առատաբան. այն, որ ճարտասանական մեծաբանութեամբ. կամ ճոխ. և առատ զբանս իւր խօսի, և պատմէ զինչ։ Իսկ մերթ նշանակէ ամբարտաւան, որ բանիւք ճոխանայ 'ի վերայ այլոց. զի զիշխանութիւն, և զինքնապատուութիւն 'ի գործ ածէ. և ըստ այսմ է 1. Տիմ. 2. 12. ուր ասի. Այլ ուսուցանել կնոջ մարդոյ ոչ հրամայեմ. և ոչ ճոխաբան լինել քան զայր մարդ. զի և ոչ հրամայեմ բանիւք ճոխանալ 'ի վերայ առն. որ հեռանի 'ի յուսուցիչ լինելոյ, զոր նախ արգել։

Ճոխաբանեմ. եցի. եաս. ել։ (Ներգործ. և մերթ չէզոք.) || Ճոխաբանութեամբ խօսել. կամ ճառել, և կամ մեծաբանութեամբ պատմանել զինչ։ Իսկ մերթ մեծաբանել. կամ գոռոզական բանիւք վարել. և կամ բանիւք զիշխեցողութիւն 'ի գործածել 'ի վերայ ուրուք։

Ճոխաբար։ (մակբայ որակական.) || Մեծապէս. կամ առատապէս. կամ լիապէս։ Իսկ մերթ փառաւորապէս, կամ ընչաւէտաբար։ Մերթ և նշանակէ տիրաբար. կամ իշխանաբար. կամ հզօրեղապէս. կամ քաջապէս. և այսպէս է 'ի կանոնս հայրապետաց, ուր ասի. Ճոխաբար հեռանեցան լուսաւորչին ընդ պողոտայն. զի տիրապէս, կամ քաջապէս գնացին ընդ լուսաւորչին պողոտայն։ Իսկ 'ի կանոնս յարուցէ, ուր ասի զԲՇե. որ ճոխաբար յօժարութեամբ եկեալ 'ի նորոգումն եղծեալ մարդոյն. իմանի՝ ինքնիշխանաբար. կամ յորդառատ յօժարութեամբ։

Ճոխացեալ. գեալ. աւ. աց. օք։ || Ճոխացեալս

ւխօսող. կամ յայտ դխօսումն. կամ հմտու
թեամբ մանկացութեանց, և արուեստից:
Ճոխագոյն ∗ գոյնի. իմ. ից. իւք: || պերճա
գոյն. կամ առատագոյն. կամ լիագոյն:
Իսկ մերթ հարստագոյն. կմ՝ ազատագոյն.
կամ շքեղագոյն. կմ՝ փառաւորագոյն. 2.
Մակ. 13. 24:
Ճոխաձեմ: (Նախադրիւ հոլովի.) || մեծա_
բայլ. կմ՝ ցոփաքայլ. որ նա՝ որ հպարտ,
և ցոփ քայլիւք ձևէ. կամ մեծապատիւ չուէ:
Ճոխամիտ. մտի. իմ. աց. աք: || ամբող զմեծ,
և զզօրաւոր միտս. կամ առատամիտ. և կմ՝
ազատմիտ: Իսկ մերթ նշանակէ զզօրաւորամտութիւն.
կամ զմեծացեալն. և կմ՝ զամբարտաւանն:
Ճոխանամ. ացայ. ացիր. նալ: (Լծորդ.) ||
պերճանալ. կամ առատանալ. կամ լի և
պատուաւոր լինել: Իսկ մերթ հարստա_
նալ. կամ փառաւորանալ: Եւ մերթ նա
շանակէ բարձրանալ. կամ զինքն քան
զայլս վերնագոյն ցուցանել. կամ մեծա
բանել. կամ գոռոզանալ. և կամ բանսա
րկ եչել՝ 'ի վ՛ր ուրուք. Թուոց 16. 3:
Ճոխապատանջ: (Նախադրիւ հոլովի.) || Ճո
խութք պանծացեալ. կամ մեծապէս զար
դարեցեալ, և պճնեցեալ:
Ճոխացուցանեմ. ցուցի. ցի. եալ: (Անցո
ղակ.) || պերճացուցանել. կամ առատա_
ցուցանել. կամ լիացուցանել: Իսկ մերթ
հարստացուցանել. կմ՝ փառաւորացուցա_
նել: Մերթ և մեծարել, կամ պանծա
ցող առնել. կամ գոռոզացուցանել. և կմ՝
երկնեցող, և ուրող առնել:
Ճոխութիւն. թեան: || պերճութիւն. կամ ա_
ռատութիւն. կամ մեծութիւն. կամ հարստու
թիւն. կամ փառաւորութիւն: Ոսկէ. 1. հափ.
իա: Իսկ մերթ պերճութիւն. կամ նախապա
տուութիւն. և կամ իշխանութիւն: Խո
րէնա. գ. գլ. 67: Կիւրղի եղէծ. ժն. Եւ մերթ
առնեալ լինի 'ի չար կողմն. և նշանակէ
զբռնական իշխեցողութիւն. կամ զգոռոզու
թիւն. և կամ զամբարտաւանութիւն: Շնորհալին:
Ճողեմ. եցի. եմ. եալ: (Ներգործական.) || փե
տել զկէրթս կմ՝ քարշելով խլել զմազս. որպ
առնեն ումանք 'ի վ՛ր մեռելոց. և կամ յոր
ժամ լան. և կոծ են վա՛ սիրոյ թշուառու
թեն: Ոսկէ. 2. հափ. ժգ. 'ի ձեռն հարց. գ: Իսկ
մերթ նշանակէ առէպ առէպ քարշելով զմազ 'ի
մօրուաց, կմ՝ 'ի վարսից՝ թեւթել առնել.
կմ՝ յարդարել, որպ առնեն ոմանք՝ յորժամ
դադարեն 'ի գործոյ. կմ՝ մտածեն զինչ:
Ճողոպրել. եցի. եմ. ել: (Ներգործ.) ||
'ի բաց թափել. կմ՝ 'ի բաց կորզել. կամ
զերծուցանել. կմ՝ փրծուցանել. և կմ՝ ա_
զատել: 2. Մակ. 12. 35: Խորէնա. գ. գլ. 65:
Ճողոպրիչ: (Նախադրիւ հոլովի.) || 'ի բաց
կորզող. կմ՝ զերծուցանող. կմ՝ փրծուցա_
նող. և կմ՝ ազատող: Լամբրոն:
Ճոճեմ: (Ներգործ.) || տե՛ս զՃօճել:
Ճոճ. ի. իւ. ից. իւք: || 'ի մէջ ցորենոյն բու
սեալ վատթար ցորենանման հատն: Մերթ
և նշանակէ զմուշտակակարն. որ զմուշտակ
կարողն: ռամկօրէն փէրաճի:

Ճոպան. ի. աւ. աց. աք: || պարան. կմ՝ կա_
ռան, որ է տոռնար չուան, զոր 'ի գործ
ածեն նաւավարք. կմ՝ քարանակիրք. և այլք
նմանք: ռամկօր. հալաթ: Բայց յառակաւորա
առնեալ նշանակէ սա զգործն ինչ պատե
րազմական, զոր 'ի հնումն կարգէին 'ի կա
նոնիոյ, կմ՝ 'ի փոկն երկու զերկայն և զան
խախտելի պարան, որ 'ի միում ծայրին իւ
րում ունէր զխեղդ ինչ, զոր 'ի պատերազմի
արկեալ զանձամբք, կմ՝ զթիկամբք, և կմ՝
զպարանոցաւ թշնամւոյն՝ քարշելով զնն
դէպ զհամբոյց խեղդւին, և այս ամենա
րին ձեռօք քարշէն կորզէին զնա 'ի ձիոյն
առ 'ի ձերբակալ առնել. կմ՝ սպանանել:
Եւ այսպիսի էր Ճոպանն, զոր հարկ դեպ
ւեհօն հսկայաձև ուրքայն հոնաց զձիւոյ
ուսովք, և զամբիւ անթուելի մեծի հսկայից
որգապայ, որ ոչ ժուժեալ, զի քարշե_
ցէ զինքն դեղութեհան, փութացեալ ինք
նին դիմեաց շտապով 'ի վ՛ր նր. և հարեալ
երկաթի սուսերաւ՝ միջակտուր արար ըղ
նա հանդերձ երիվարաւն. որպ պատմէ
Խորէնացին. բ. գլ. 82:
Ճոպանաձիգ. ձգի. աւ. աց. օք: || ձգող ճո
պանաց, որով մերթ նշանակի նա, որ քար
շէ զպարանս: Իսկ մերթ արկանօղն զպա
տերազմական համբուցաւոր պարան ինչ
զանձամբ թշնամւոյն, զորմէ լիապէս ա_
սացաւ 'ի բառն Ճոպան: Անգոթ:
Ճոպանաւոր. ի. աւ. աց. օք: || նա՝ որ ու
նի, կմ՝ 'ի գործ ածէ զՃոպանս պատերազ
մական, որպիսի էր դեղուեհօն ուրքայն
հոնաց:
Ճոռոմ. ի. իմ. ից. իւք. կմ՝ աց: || Ճոխ, և
պերճ ճարտասանական զրուցիւք. կմ՝ ըղ
ճարպիկ, և զշքեղ բանս խօսող. և կամ
զեղեցիկ կերպիւ ճոխաբանող. և այսպ
սի զխօրդոյ, զեղջուէ, և զբանից: Լամբրոն:
Իսկ 'ի Դաւիթ. հմ. ուր ասէ՝ 'ի բազմա
ճոռոմս խօսիմ. և 'ի պատասխանատուու
թե պահու պատրանձեալ կարկիմ. նշանա
կէ՝ ճոռոմապէս, կմ՝ յոյժ ճոխաբան խօսել:
Ճոռոմաբան. ի. իմ. ից. իւք. կմ՝ օք: || պեր
ճաբան. կմ՝ ճոխաբան. և կմ՝ ճառող և ճար
պիկ լեզուաւ. կմ՝ բանիւք խօսող:
Ճոռոմաբանեմ. եցի. եմ. եալ: (Ներգործ.
և մերթ չէզոք.) || պերճաբանել. կմ՝ ճո
խաբանել. կմ՝ ճարտասանական ճոխ զրու
ցիւք վարել: Իսկ մերթ առնեալ լինի 'ի
չար կողմն. և նշանակէ՝ լեզուապարել. կմ՝
ճոխ բանիւք շատախօսել:
Ճոռոմանամ. ացայ. ացիր. անալ: (Լծորդ.
ձայն.) || ճոռոմ լինել. կմ՝ ճոխաբանել:
Իսկ մերթ նշանակէ մեծաբանել. կմ՝ մեծ
պարծիլ. կմ՝ գոռոզանալ. և կմ՝ պանծա_
լով ամբարտաւան լինել: Ոսկէ. 2. հափ. լթ:
Ճոռոմութիւն. թեան: || պերճութիւն. կամ
ճոխութիւն. կամ ճարտասանական ճոխ
զրոյց: Իսկ մերթ մեծաբանութիւն. կմ՝ մեծ
պարծութիւն. կմ՝ գոռոզութիւն, և ցոյց քա
ջութեն անձին հանդերձ պարծանօք:
Ճորտեմ. եցի. եմ. եալ: (Ներգործ.) || ճո

տորել. կամ ջարդել. և կամ 'ի բաղխումն հատուածս անջատել:

Ճորտ. ի. իմ. ից. իւք: || պաշտօնեայ, կամ սպասաւոր. կամ ծառայ: և ստ մանաւանդ յաշխարհաբառ լեզուով 'ի գործ ածի:

Ճոճապարարդ: || տես զՃիճապարարդ:

Ճուչ. ճչոյ. իմ. ից. իւք: || է արմատ ճչել բային. որ և լինի ճիչ. ուստի և արմատ զըկել բային երբեմն լինի զուրկ, և երբեմն զիրկ: սակայն բառս ճուչ նշանակէ զայն. զոր ինչ նշանակէ ճիչն. որ 'ի տեղւոջ իւրում մեկնեցաւ:

ՃՋ

Ճչեմ. եցի. եա. եալ: (չեզոք.) || ճիչ բառնալ. կամ բարձր և սուր ձայնիւ աղաղակել. կամ մեծագոչ, և սուր բարբառով կականել. որպէս հանդիպի կանանց, յորժամ վիշտ ցաւոյ, կամ ներքութեան իւիք ձայն բարձեալ գոչեն: Իմաստ. 19. 3: Երեմ. 9. 17: Յայտ. 12. 2: ըստ այսմ և ձայն բառնալով աղաղակելն ծիծռանց, և այլոց նմանեաց, ճչել ասի: Եսայ. 38. 14:

Ճչիւն: (նախադրիւ հոլովի.) || ճչումն. կամ ճիչ. որ է սաստիկ, և սուր աղաղակ:

Ճչօղ. ողի. աւ. աց. օք: || ճիչ բարձօղ. կամ սաստիկ, և սուր աղաղակօղ: Կիւրղի եղծ. թ:

ՃՌ

Ճռուռն. ճռռան. ճռռամբ. ճռռունք. կամ ճռուռք. անց. ամբք: || է ժըժմակ, կամ ճճի ինչ թեւաւոր, որոց ոմանք են նման մեծամեծ պիծակաց. ոմանք բզեզաց. և ոմանք մարախոց. բայց են մարմնով կարճք, և սաւառք: փոխանակ բերանոյ ունին 'ի կուրծս զխայթոց ինչ նման սրածայր լեզուի. որով ծծեալ ըզ ցօղս, և զնոտահոս խէժս ծառոց, սնանին, և կեան: Ցնանին 'ի գաղջ ամառան, և տեւեալ մինչև ցաշուն ամառնին: կառչին յաճախ զոստովք խժաբեր ծառոց, և մանաւանդ ստնձենեաց և ծիրանենեաց: Ունին զձայն սաստիկ սուր. և հնչումն սոր, որք 'ի տիրել սաստիկ ամառան սկսանին առ միջօրէիւ ճիչ բառնալ, և շարունակ ճչել. և 'ի վաստակելն սակաւ ինչ դադարեալ, դարձեալ սկսանին. որոց բարբառն հնչեցեալ ընդ օդն, և հասանի 'ի հեռաւոր տեղիս. և վասն այսորիկ ասի 'ի գիրս մեծին խոսրովու պատսաւորչէն մերմէ. Համբաւ սքանչելեաց նորա իբրև զձայն ճռռան յերկինս վերանայր: Սոյնպէս և ասի 'ի գիրս գրիգորի ծծաւ. անին. Ո՞վ եա ճռռան 'ի լռենջս զմանկանձնութիւնն. որ յորժամ արեգակն շարժմանն զմիջօրէն առնէ, երգէ. և հնչեցուցանէ զանտառն: ասամկորէն ճռէլ. և սաղմոսերգէն ճռճռ պէսճէլի:

Ճռպուռ. ի. իմ. ից. իւք. կամ ոյ. ով: || նամ' որոյ 'ի յաշխն դոյ ճխալ. այսինքն չորացեալ թարախանման հիւթ. որ մանաւանդ յաշխարհաբառ լեզուով 'ի գործ ածի:

ՃՍ

Ճսամ. ացի. ա՛. ալ: (չեզոք.) || է բայ ձայ[illegible]. որով նշանակի ճռու ձայն հանելն թռչնոց. կամ գրտանց. և կամ այլոց ո՛ և իցէ իրաց:

Ճռատեմ. եցի. եա. եալ: (չեզոք.) || տես զՃռնչել:

Ճռաքաղ. ի. իմ. ից. իւք: || քաղաք ըղճխոս. ք նա' ու յետ կթոց' կործանեալ ժողովէ զմնացեալ փոքրիկ ողկոյզս խաղողոյ. որք են ճռաթեքն: Միքի. 7. 1: Իսկ մերթ ընդ բայի չարակցի այսպէս. Ճռաքաղ առնել. և նշանակէ, զկնի կթելոյ զայգին' քաղել զմնացեալ ճխաւն, որով այգին բոլորովին մերկանայ: Ղեւտ. 19. 10: 2. Օրին. 24. 20: Եւ յայսմանէ առեալ՝ երբեմն եւս քաղելն զմնացորդս կթեցեալ ձիթաստաղոց, և այլոց նմանեաց, ասի. Ճռաքաղ առնել: Եսայ. 24. 13: Իսկ երբեմն նմանութիւն առեալ ասի զմարդկանէ. կամ զքաղաքէ. և այլն. որով մերթ նշանակի սպանանել զոմանս 'ի մնացորդաց զօրաց, որք կոտորեցան 'ի պատերազմի: Դատ. 20. 45: Իսկ մերթ նշանակի մերկացուցանել զոք' յափշտակելով զյետսին մընացուածս կողոպտեցել գոլից. և կամ յետ միանգամ կողոպտելոյն' գտանել, և միւս անգամ կողոպտել: Եսայ. 3. 12: Աբդ. 1. 5: Մերթ եւս նշանակէ' գերել զմնացորդս ժողովրդեան իբրեւ գերեցելոյ. ոչ տրար նաբուզարդան: Երեմ. 6. 9:

Ճռաքաղեմ. եցի. եա. եալ: (ներգործ.) || տես զՃռաքաղն' ա՛ որում է շարադրեալ ընդ բայի: Մծբն. ժթ:

Ճռաքաղութիւն. թեան: || քաղումն, և ժողովումն մնացելոց ճխաց խաղողոյ, զորս քաղեն յետ կթելոյ զայգին: Իսկ մերթ նմանութիւն առեալ նշանակէ ըղ յափշտակութիւն մնացորդաց ընչից ուրուք: Եւ կամ զմնացուածս յաղթութեան, զոր առնէ ոք սատակելով զմնացորդս յաղթեցեալ և կոտորեցեալ զօրաց. որոյ նախապետական յաղթութեան կոչի կթութք: և ըստ այսմ է Դատ. 8. 2. ուր ասի. ոչ ապաքէն լաւագոյն է ճռաքաղութիւն եփրեմի քան զկթութան աբիեզերայ: Քանզի արքն եփրեմի սպանեցին զՀեռա զօրացն մադիանացւոց փախուցելոց, և զոմանս 'ի նոցանէ սատակեցին, որ էր իբրև զճռաքաղութիւն. իսկ գեդէոն զբոլոր բանակս նոցա եհար, և զհանեաց որ էր իբրև ըղ կոտորեալ կութս: Բայց ասի նոյ այն լաւագոյն քան զյաղթութիւն գեդէոնի.

զի շխանան մագլխանացուաց աղբեր ճեպեր-տացանին:

Ճռինչ. ճռնչի. իւն. իւն. իւք: || ձայն ճռն-չոյ. կամ ճռճռածն անուոց. կամ ծղխ-ներ դրան. կամ թռչնոց. և այլոց ճը-ճռեաց:

Ճռուամ. ացի. ա. ալ: (չէզոքական.) Ճռալով ճռալ. կամ զճռինչս արձա-կել:

Ճռչամ. ացի. չա. ալ: (չէզոք.) || տես ներքոյ զճռնչել:

Ճռնչեմ. եցի. եա. ել: (չէզոք.) || ճռնչալ. ճռռալ. այ զճռռ ձայն հանել անուոց. բանից. աթոռոց. կամ ամանց թռչնոց. և այլոց նմանեաց: ՚Ի ձեռս հոգց. ժբ:

Ճռողական. ի. աւ. աց. օք: || այն ամե-նայն, որ վերաբերին առ ճռացումն. և մ առ ճռռ ձայնին: Իսկ մերթ նշանակի ճռացողն. կամ ունօղն զբնաւորութիւն հանե-լ զճռռ ձայն. որպիսիք են ոմանք թռչ-ունք. կամ կենդանիք:

Ճռուամ. ացի. ա. ալ: (չէզոք.) || տես ըզ-ճռնչել:

Ճռուամն. ուման. ման. մանց. մամբք: || տես զճռինչ:

Ճռուողեմ. կամ ճռճռուղեմ. եցի. եա. ել: (չէզոքական.) || փոքրիկ թռչնոց. կամ ճնճղկանց առնել ձայն հանելն. ճռվռա-լով, կամ ճռճռալով. որպէս. առնեն՝ յոր ժամ աշխատին ՚ի շինուածս բունոց իւ-րեանց. կամ յորժամ կայնու զնն ցնծու-թե ինչ. կամ բերկրութե սրտի: Լոմբեր: և Աշգար:

Ճռուօղ. կամ ճռճռուղօղ. ողի. աւ. աց. օք: || ճռվռալով, կամ ճռճռալով առնել ձայն հանօղ. կամ երգօղ. որ ասի զթռչնոց. կամ ճնճղկանց: Կիւրղի Եղէգ. թ:

ՃՐ

Ճրագ. ի. աւ. աց. օք: || պատրոյգ ե-դեալ ի եղով հանգերձ յանօթ ինչ. որ լուցեալ դնեն ՚ի վերայ աշտանակի. կամ ՚ի ճրագարանի. և կամ կախեն ա-ռեք: Ելից. 27. 20: Ղևտ. 24. 2. և 4: Թագ. 3. 2: Իսկ մերթ առեալ լինի փոխանակ ճրագարանի. որ է կազմուածն. յորում լուցանի ճրագ: 3. Թագ. 7. 49: 2. Մնաց. 4. 20: Երբեմն ևս նշանակի առհասարակ կանթեղ. կամ լապտեր. կամ մո-մեղէն. և այլք նմանք. որք լուցեալք լուսաւորեն զմարդիկ ՚ի գիշերի: Մատթ. 5. 15:

Ճրագափերան. ի. աւ. աց. օք: || բերան ճրագի. կամ ճրագարանի, ընդ որ լինուն եղ. և եդեալ զպատրոյգն՝ լուցանեն զճրագ: Իսկ Զաքար. 4. 12. նշանակէ զե-րեզմանս աստեղունեան աշտանակին. որք էր զբերանս արձակին ՚ի գնդոյն. զորմէ խաղաց ասացաւ ՚ի բանն ճաշակ. տես նգ:

Ճրագալոյց. լուցի. իւ. իւ. իւք: || լու-ցանօղ զճրագունս: Յանձորէն ճրագ լու-ցօղ: Մերթ ևս նշանակէ զլուցեալ ճը-րագն. որ լուսատու լինի մարդկան. և ըստ այսմ առի զուգզգակիտա վարդապե-տաց. ՚ի գիրս Մծբն. ժթ. Դուք էք աերման ցորենոյ. դուք էք ճրագալոյցք ճառագայթաւորք. այսինքն ճրագք լու-ցեալք, և պայծառ ճառագայթ պայծառա-ցեալք. և պայծառացեալք: Բայց մեք ասեմ ճրագալոյց ծայրագոյն տօնախմբութե. կամ ծննդեան. և կամ զատկի. նշանակէ նախըն-թաց օրն այնց տօնից. և առաջաւ ճրա-գալոյց. զի ընդ երեկս աւուրց այնոցիկ լուցանէին բազմութիւնք ճրագաց. և լինէին հանդիսաւոր նախատօնակք:

Ճրագակալ. ի. աւ. կամ ին. աց. օք: || կալնօղ զճրագս. որով մերթ նշանակի ճրագարանն. կամ աշտանակն. յորս դնեն զլին ճրագունս: ՚Ի ձեռս հոգց. ժդ: Իսկ մերթ մարդն, որ բառնայ ձեռամբ իւրով զճրագս:

Ճրագակիր. կրի. աւ. աց. օք: || կրօղ. կամ բարձօղ զճրագն. որպիսի է աշտանակն: Նարեկ. ղդ: Երբեմն ևս ճրագակիր ասին մարդիք, որք ունին՝ ՚ի ձեռս իւրեանց ըղ ճրագ. կամ զվառեալ մոմեղէնս:

Ճրագաձև. (նախդրիւ հոլովի.) || ունօղ զձև ճրագի. կամ ճրագարանի. և կամ այն՝ որ է կազմեցեալ ըստ ձևոյ կան-թեղի:

Ճրագարան. ի. աւ. աց. օք: || անօթ ինչ. կամ կազմուած ինչ ոսկեղէն, կամ այլ ձեղէն. և կամ յայլմէ նիւթոյ, ուր դնի եղ, և պատրոյգ, և վառի ճրագ: Ելից. 25. 37: Թագ. Յ. 2: Մերթ ևս նշանակէ զաշ-տանակն, յորում դնին ճրագք. կամ զի-աեղին մոմեղէնք: Յայտ. 1. 12:

Ճրագեան: (նախդրիւ հոլովի.) || ճրագա-ւոր. կամ ունօղ զճրագ: Բայց սա գրե-թէ միշտ ՚ի գործ ածի ՚ի բարդութեան բա-ռից այսպէս. բազմաճրագեան. որ ունօղ զբազում ճրագ: Եօթնաճրագեան. այ-ինքն ունօղ զեօթն ճրագունս. Մծբն. ժը. Այս տեսիլ եօթնաճրագեան աշտանակի:

Ճրագուն. ունի. աւ. աց. օք: || Ճարպ. փոր-ոտեաց. այ եղ. որ ելանէ ՚ի քաղըթէ և յաղեաց կենդանեաց: Եւ ասացաւ ճրա-գուն. զի բազում անգամ հալեալ կազմեն ՚ի նմանէ զճրագս. բայց առ աւանդել յու-խարհնաբար ընդունի ՚ի գործ ածի. վասն զի գրոց ընդունաւ կոչի սոյնս՝ ճարպ:

ՃՕ

Ճօճեմ. եցի. եա. ել: (ներգործ.) || զեր-կայն և զբարակ ձողն ՚ի միջոյն ցնցելով խաղացուցանել. որպէս առնեն պարա-բազմոզքն, յորժամ բռնեն հարեալ զմէջ մանուկ նիզակին ցնցեն զնա յաճախ, որով երկոքին ծայրքն նը՝ արագ արագ ելևէջս առնեն տատանեալ. խաղան: 2. Մակ. 11. 8: Եւ

մերթ

մերթ զայս երս այսպիսի կերպիւ շարժ-ելն, և ճկճկելն. ծօծել ասի: Իսկ եր-բեմն վարի սա չէզոքականապէս. և յայն ժամ նշանակէ զծօծիլն. զոր տեսցես 'ի ներքոյ:

Ծօծիմ. եցայ. եալ. իլ: (ձայնակր.) || Ցնց-մամբ խաղալն նիզակաց. և այլոց նմա-նեաց: Իսկ մերթ նշանակէ սիգալով ճե-մել. կամ զգնալ. և կամ կողմն 'ի կողմն անհամեստ շարժմամբ թեքթեքիլ. որպէս առնեն ոմանք 'ի կոքաճողաց. և կամ 'ի բամբռանահար խաղալկաց, որոց ուսքն միջովքն հանդերձ սաէպ սաէպ ելանեն և իջանեն. և ըստ այսմ ասի, ծօծիլ 'ի խաղալն: Մերթ ևս նշանակէ վեր 'ի վայր շարժիլն, կամ շըջիլն բբաց. որ ասի 'ի գիրս Մծբն. ժթ. Ծեմին ծօծին բիբք լսելեաց, այսինքն լսողաց: Իսկ երբեմն նշանակէ հանդարտ շարժմամբ ելանելով և իջանելով ընթանալն առ միմեանս ա-լեաց և կոհակաց. կամ ծփալն ջուրց ծո-վու, և գետոց:

Ծօղ. ի. իւ. ից. իւք: || Է տեսակ ինչ ղը-րանի. կամ պատերազմական զգեստու. զոր երբեմն կազմէին 'ի յեփեալ կաշւոյ. և օծեալ պէսպէս դեղովք չորացուցա-նէին. զոր ագուցեալ զինաճորաց՝ գնայ-ին 'ի պատերազմ, ընդ որ նետք, և այլք սլաքք դժուարաւ կարէին անցանել ըղ-մուա. յորոց և ոմանք զգէմ կալնուին սը-րոյ. և ըստ այսմ է այն, զոր ասէ ըղ-նորհալին յողբսն եդեսիոյ. Զրահա-ճորք, մկնդաւորք. ծօղիւք պատեալ ան-ձին բոլոր:

Ծօղանք. անաց. օք: (անեզակ.) || Նոյն է ը վերնոյն:

Ծօպան: || տե՛ս զԾոպան:

Ծօպանաւոր: || տե՛ս զԾոպանաւոր:

Մ

Մ. Է մինն 'ի բաղա-ձայն տառից. որ միշտ պահանջէ բա-ղակցիլ ը ձայնաւորաց ներ-գործութը, կամ զօրութը առ 'ի ելուզանել զձայն. որպ մեղկ. մղլին: Բայց 'ի մէջ բաղաձայնից կոչի սա ան-ձայն. վասզի 'ի միայնակ մնալն ամենևին ոչ կարէ արտաբերիլ. կամ զանկատար ձայն ինչ ելուզանել իբրև զկիսաձայն բաղա-ձայնսն. որք սկզբնաւորեն զնուաղ հըն-չումն ինչ. որպէս յիշեցաւ 'ի տառն կեն: Այլ զտառս զայս Ս, յորջորջեմք, մեն. որ արտաբերի բաղխմամբ շրթանց:

Իսկ յառոգանական արուեստի ըստ հա-գագին կոչի՝ սոսկ, ըն նուրբ. վասն զի ունի զհնչումն նրբաձայն, որպէս իքեն և տառք այսորիկ. գ. ծ. ն. շ. ս. ր. և այլն:

Դարձեալ՝ տառս այս կոչի ևս չթորդ, զի ունի զլծակցութի, կմ զներձաւորութի ը տառիցս այսոցիկ. բ. պ. փ. և այս ոչ ը բուն հնչմանն, այլ ըստ եղանակի արտա-բերմանն. քանզի որպ սոքա արտաբերին 'ի մէջ շրթանց, նոյնպէս և տառս, Ս:

Դարձեալ. է սա մինն 'ի չորից տառիցն, որք կոչին նայք. զորմէ տեսցի 'ի մեկ-նութե նայ բառին:

Դարձեալ. տառս այս երբեմն փոխադրի ընդ տառիս այսմիկ, ն. վն զի փոխանակ ասելոյ՝ անբիծ, անբծութի, անպակ. և այլն. ասի՝ ամբիծ. ամբծութի. ամպակ:

Դարձեալ՝ տառս այս՝ է ևս համարողական նշան, որ մինչ ունի 'ի վր իւր զպատուա-գիր այսպէս, Մ՞, նշանակէ զերկու հա-րիւրն:

ՄԱ.

Մագաղաթ. ի. իւ. ից. իւք: || Է սպիտակ մաշկ ինչ նուրբ իբրև զթուղթ, զոր առ-նեն՝ քերելով զմորթս գառանց. կամ ուլուց. և այլոց ոմանց կենդանեաց, որ իբրև մերձենայ 'ի հուր, ինքնին գալարի: Զսա 'ի հնումն 'ի գործ ածէին փոխանակ թղթոյ, գրելով 'ի վր նր զգիրս, յորմէ և բաղում անգամ կազմէին զպէսպէս մա-տեանս, և զգրեանս, որք տևէին ը երկար ժամանակս: Եսայ. 34. 4:

Մագաղաթեայ. թէի. իւ. ից. իւք: || Մա-գաղաթեղէն. այն, որ է կազմեցեալ 'ի մագաղաթէ, կամ որոյ նիւթն է մագա-

ղաթ:

ութ ։ Յայտ. 6. 14։ և Եսայ. 18. 2։

Մագիլ. գլի. աւ. այ. ոք։ || Ճիրան. զի եղնւնք հաւուց, և ոմանց գազանաց. որ եր կեն առեալ լինի հանդերձ մասամբքն. Նամիօրէն թռչնոյ ըղունգ. կամ ֆէնշէ։ Դանի. 7. 19։

Մագիստրոս. կմ մաքիստրոս. ի. աւ. այ. ոք։ || Է բառ լատինական, որ նշանակէ զիշխանն. կամ զվերին. որպիսիք են նախարարք. բդեշխք. գիմանապետք. դատաւորք։ և այլ ևս արքունի գործակալք, և դպրամանատարք, որք կառավարեն զքաղաքս կամ զգաւառս։ ռամկ. խան. կմ ֆողոյ. և այլն։ Ի ճառս հարց. Է. և ԺԷ։

Մագլաւոր. ի. աւ. աց. ոք։ || ունօղ զմագիլս, կմ զճիրանս։

Մագլեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) || տես ի ներքոյ զՄագլցել։ Ի ճառս հարց. ԻԳ։

Մագլցեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) || մագլցի հարկանել, և վիրաւորել. որով նշանակի ճանկս արկանելով ի գէմս, կամ ի ծնօտս՝ ցտել եղնգամբք. որպ առնեն մանկունք, կմ ոմանք ի կանանց ի սպաւելն, կմ յողբալն իւրեանց։ ռամկօրէն ճանկել։ Ոսկ. 2. հատ. ԺԶ։

Մագլցի։ (մակբայ որակակ.) || մագլօք. կմ ճիրանօք. և կմ ճանկօք. և ըստ այսմ աւի. մագլցի վիրաւորել. կմ ցտել. և այլն։

Մագնեստիս. տիսի. իմ. այ. ոք։ կմ մագնիս. ի. իմ. եց. իւք։ կմ աւ. այ. ոք։ || Է բառ այլազգական, զոր յոյնք կոչեն մակնեթիս. կամ մակնես. որով նշանակի ժառաւն. կմ խանդամանդն. որ է ազգ ինչ կարծրանիւթ և թխագոյն քարի, որ բնականաբար քարշեալ յինքն զերկաթ, ակինդ կալնու զնա։ Ունի ևս զկարողութիւն առ բևեռն հիւսիսային. Ուստի յորժամ մածանի նովաւ մի կողմն փոքրիկ երկաթոյ կողմնացուցին, միշտ դարձուցանէ զնա դէպ ի բևեռն յայն. որպ ասացաւ ի բառն կողմնացոյց։ ռամկ. մըլափըզ։ Եւ ի այսմ առեալ լինի ի Նորէլ. իսէ. ուր ասի. եթէ զնկարելոց տեսողին ի յարձան մագնեստիս վիմի։

Մագնիս։ || տես զՄագնեստիս։

Մագնիտ. նտի. աւ. աց. ոք։ || տես զՄագնեստիս։

Մազ. ոյ. ով. ոց. ովք։ կմ իզ. իւք։ || ա և իցէ հեր, կմ գէս, որ բուսանի ի գլուխ, կմ ի մարմին մարդոյ, կմ անասնոյ. թէ մի թել իցէ, և թէ բազում. որ և ռամկ. սաչ. մազ։ Ելից. 25. 4։ Ղեւ. 13. 4։ Մատ. 5. 36։

Մազագործ. ի. աւ. աց. ոք։ || մազման. կմ նա, որ գործէ զմազեղէնս. և կմ որ կազմէ ի մազից զգեստս, կմ զայլ ինչ իր։ Իսկ մերթ նշանակէ զգործեցեալն, կմ զկազմեցեալն ի մազից. և կմ զմազեղէնն։ Թուոց. 31. 20։

Մազածածուկ։ (Նախադրիւն հոլովի.) || մազիւք ծածկեցեալ. կմ թաւ հերովք լցեալ. որպիսիք են լանջք ոմանց մարդկանց։

Մազապուր։ (Նախադրիւն հոլովի.) || Նոյն է սա ամենևին ը մազապուրծ բառիս. վն զի եղանէ ի ապուր մասնկանէս, որ է արմատ ապրիլ բային, որ նշանակէ պրծանիլ, կմ ազատիլ. և ըստ այսմ աւի ի գիրս Խորէն. Բ. գլ. 12. Թողլով զզաւնձս, և զնորանն միայն կենդանի փախուցեալ մազապուր. զի միայն անձամբն հազիւ ազրելով. կմ պրծանելով։ ըստ այսմ են և բառքս այսոքիկ. մարդապուր. և անձնապուր, զորս տեսցես ի տեղիս իւրեանց։

Մազապուրծ։ (Նախադրիւն հոլովի.) || Եղանէ սա ի մազ բառէս. և ի պուրծ վանկէս, որ է արմատ պրծելոյն. ուստի բառիս մազապուրծ՝ նշանակի մազիւ ապրեալն. զի նա՝ որ անկեալ ի վտանգ ինչ, կմ ի ձեռս թշնամւոյն՝ հազիւ միայնակ անձամբն պրծանի ի նոցանէ. և իբր թէ միով մազիւ զերծանի։ 2. Օրին. 3. 6։ 2. Մակ. 11. 12։ 3. Մակ. 6. 29։ Մերթ ևս վարիսա իբրև զմակբայ. որգոն, մազապուրծ զերծանիլ, կմ փախչիլ. կմ մազապուրծ ճողոպրիլ. և այլն. և նշնկէ հազիւ պրծելով. կմ հազիւ զանձն միայն ապրեցուցանելով. կմ ազատելով։ 2. Մակ. 12. 35։ 3. Մակ. 5. 19։

Մազարօթ. կմ մազարովթ. այ. աւ. աց. ոք։ || Է բառ եբրայական յոգնական ձայնիւ. որով նշանակին շտեմարանք. կմ ներքինք, և կմ անջրպետութիւնք։ Իսկ մերթ մասնաւորապէս առեալ նշանակին սովաւ հարաւային համաստեղութիւնքն, որք են շուրջ զսուղակաւն, կմ զհակարջային բևեռաւն. յորոց ումն նկարի ի ձև գետնառիւծու, ումն սիրամարգի. ումն հնդբայի. ումն եռանկեան. և այլք ի ձևս այլոց կենդանեաց. կմ իրաց։ Յորս են և բազմութիւնք մեծամեծ և պայծառ աստեղաց, որք ամենևին ծածկեալ մնան ի բնակչաց անկելոյ ի կողմն արջային, կմ հիւսիսային բևեռին։ Եւ թ որում համաստեղութիւնս այսոքիկ թագուցեալք են ի տեսութէ բազմաց, ուստ և ի մէնջ, կոչեցան մազարօթ. զի շտեմարանք. իբրու թէ ներքինք և ծածուկք։ Յոբ. 38. 32։ Եւ ամենևին նոյն են ընդ մազարօթին, համաստեղութիւնքն այնք, որք Յոբ. 9. 9. կոչին շտեմարանք հարաւոյ։ Վն զի ի միում տեղւոջ եբրայական բանն պահի. իսկ ի միւսում տեղւոջ դնի թարգմանութիւնն. ուստ և յայլ բազում տեղիս Ածաշունչ գրոց հանդիպի այս։

Մազդեղն. եղան. ամբ. անց. ամբք։ || մազգաղն. զի աղն, կմ ազգ արմատոյ. կմ որ է ծնեալ ի ղօրմէ նր։ վն զի առ ժամանակօք կռապաշտութեն ամօրութեն էր զանձինս քաղս, և երջանիկս, և կմ զատեն նց՝ համարիլ սերեալս ի զարմէ չաստուածոց. կմ յերկնային լուսաւորաց. որգոն յարեգականէ. կմ յայլոց մոլորակաց. և ըստ այսմ մոլորութեն՝ բազումք ի հնումն անմտացեալք յանձինս իւրեանց՝ համարէին զինքեանս և զատենմ, կմ զազգս իւրեանց՝ յառաջացեալ յարամազդայ. որով մերթ նշանակիւր գլուխն ամ գեց.

և մերթ լուսնթագն ։ Զոր անուն՝ երբեմն սոսկ վն փառաց, կմ պատուոյ 'ի գործածէին՝ իմանալով այնու զդիւցազն, կմ զաշխարհակալ անձինս, և ազգս, և բստ այսորիկ նշանակութեց առեալ լինի 'ի գիրս Խորէն. գ. գլ. 17. և 36. և 55. յորս ասի. մազդեզանց քաջ, և բարձակից արեգական. կմ 'ի գեն մազդեզանց գարձուցանել ։ և այլն ։

Մազեղ. եղի. աւ. աց. օք ։ || ունօղ զթաւ մազս. կմ բազմութի մազից լցեալ. ռամկ. Տաղօփ. կմ Բիւյլիւ ։

Մազեղէն. գինի. աւ. աց. օք ։ || մազեայ. թ այն ամ, որ է 'ի մազից գործեցեալ, կմ կազմեցեալ ։ Ելից. 26. 7 ։ և Զաքար. 13. 4 ։ Իսկ մերթ առեալ լինի սոսկ փոխանակ քրձոյ. կմ մազագործ զգեստու. և ըստ այսմ իմանի մինչ ասի՝ զգենուլ զմազեղէնս ։

Մազխիլ. խլի. աւ. աց. օք ։ || մազքաշ. որ է գործիք ինչ իբրև զունելիս, որով կալեալ զթելս մազից երեսաց՝ կմ անգաց, և այլոց նմանեաց՝ քարշեն և 'ի բաց խլեն. ոմ և ձայն իսր ցուցանէ, զի կոչի մազխիլ. իբր թէ խլօղ մազից. ռամկ. Ճըմբաւրայ. կմ Ճըմպաւորայ. և կմ Տանդու ։

Մազման. մանի. աւ. աց. օք ։ || մանօղ ըզ մազս. կմ մանելով գործօղ զմազեղէնս ։

Մազնատեսակ. ի. աւ. աց. օք ։ || ունօղ զտեսակ, կմ զկերպ մազի. և կմ մազանման ։

Մաղասքէ. էի. իւ. ից. իւք ։ || է սպիտակ և թանձրամած հիւթ ինչ, որ իբրև զխէժ կաթիլ առ կաթիլ բղխի 'ի ծառոյն. որ կոչի հերձի ։ Զսա բազում անգամ 'ի բերան առեալ ծամեն, որ կակղեալ և լուծեալ՝ լնու զբերանն խոնաւութբ, և ըզ ճաշակելիսն անուշէ. և օգտէ ատամանց ։ Զսա և բժիշկքն 'ի գործածեն 'ի զանազան դեղորայս, յորս ունի զբազում օգտութիւն. ռամկօր. Ճաքի ։ Խորէն. յաշխարհագրութե ։

Մալեալ. ելոյ. ով. ոց. ովք ։ || է՛ ընդունելութն մալել բային. և նշանակէ մանրեալ. կմ փշրեալ. և կամ խորտակեալ ։ Բայց Ղեւ. 22. 24 ։ և 2. Օրին. 23. 1. նշանակէ զանատանն, կմ զմարդն, զորոյ ամորձիսն, թ զձուածսն լռսելով, և խորտակելով ներքինի արարեալք են զնս ։

Մալեմ. եցի. եա. ել ։ (Ներգործ.) || ջախջախելով մանրել. կմ փշրել. կամ մանր խորտակել. և կմ լռսել ։ Դան. 2. 40 ։ Նրէէ. 'ի Գոչ... ։ Իսկ մերթ ծամել. կամ ծամկել. և ըստ այսմ նա, որ զբանս ինչ խոկալով որոճայ. և իբր թէ ծամէ, և մանր լռսէ, ասի. մալել զնոսա. 'ի Հարց հարց. ժ ։

Մալխ ։ || տես 'ի ներքոյ զՄալուխ ։

Մալուխ. մալխոյ. ով. ոց. ովք ։ || ուղտ. որ է մեծ և բարձր կենդանի ինչ երկայնավիզ՝ և մեծամարմին, որ տաճկերէն կոչի տեվէ ։ Մատ. 19. 24 ։ Մարկ. 10. 25 ։ Ղուկ. 18. 25 ։ Մերթ ևս նշանակէ զկտաւանն, կամ զպտուէար պարանն նաւու, որպիսի է այն՝ որով նաւավարքն զխարիսխ արկանեն, կմ քարշեն ։ Եւ յայսմանէ առեալ՝ ասեն ոմանք, թէ 'ի վերոյ եդեալ տեղիսն, յորս ասի, դիւրին է մալխոյ ընդ ծակ ասղան մտանել, կամ անցանել, նշանակէ զպարանն ։ Սակայն առաջինն կարծիքն է հաւանականգոյն. զոր և հաստատեն մեծամեծ մեկնիչք ։ Մերթ ևս բառիւս մալուխ՝ նըշանակի ստեղն. թ բարակ և կարճ փայտն՝ զոր մուծանեն 'ի ծակ ինչ առ 'ի կապել 'ի նա զինչ. կմ մխեն ընդմէջ երկուց իրաց առ 'ի շաղկապել զնս. որպիսի է այն՝ յոր անցուցանեն զծայրս փոկից եզանց. և ընդ միմեանս միաւորեն զնս. ըստ այսմ իմս և զայլոց նմանեաց. ռամկօր. Տուղլա. կամ Չիւի ։

Մախաթ. ոյ. ով. ոց. ովք ։ || է ասղանման երկաթեայ մեծ գործի, որով զքուրձ կարեն ։ 'Ի Հարց հարց. Ե ։ Բայց սա մանաւանդ յաշխարհաբառ լեզուոջ 'ի գործ ածի. զի գրոց լեզուաւ կոչի թուակուռ ։

Մախաղ. ի. իւ. ից. իւք ։ || պարկ, որ է աման ինչ քառակուսի կազմեցեալ 'ի կաշւոյ. կմ յայլմէ նիւթոյ. զոր սովոր են բառնալ ընդ ինքեանս ճանապարհորդք վն դնելոյ 'ի նմա զպաշարս ճանապարհի. կմ զկահս իւրեանց, որպիսի է և այն՝ զոր կախեն հովիւք զգօտւոյ. ռամկ. Հէպէ. կմ Թօպրայ ։ 1. Թագ. 17. 40 ։ Յուդիթ. 10. 5 ։ Ղուկ. 9. 3 ։ Մերթ ևս նշանակէ զանօթ ինչ կազմեցեալ 'ի կարծր կաշւոյ. կմ 'ի փայտէ. յոր ճանապարհորդքն լցեալ զջուր բառնան ընդ ինքեանս ։ ռամկ. Մաթարայ. և ըստ այսմ ասի 'ի Հարց հարց. ժգ. էառ ծերն զմախաղն, և եբեր զնա լի ջրով ։

Մախամ. ացայ. ա. ալ ։ (Ընդմիջ.) || նախանձիլ. կամ յաչաղել. կմ ոխալ. կմ քինալ ։ Լամբրոն ։

Մախանք. աց. օք ։ (անեզ.) || նախանձ. կմ յաչաղանք. կմ ոխ. կմ քէն ։ Խորէն. գ. գլ. 24 ։ Լամբրոն ։

Մախացող. ցողի. աւ. կմ իւ. աց. օք ։ || ըզ մախանս ունօղ. կամ նախանձոտ. կմ յաչաղկոտ. և կմ ոխակալ ։

Մախեալ. ելոյ. ով. ոց. ովք ։ || է սա ընդունելութին մախալ բային, որ երբեմն վն պահանջման ոտից տաղաչափութե համառօտեալ գրի՝ մախեալ. փոխանակ գըրելոյ՝ մախացեալ, որ է նախանձեալ ։ ըստ այսմ. Յն օրհն. մախեալ ասէ առ 'ի չարէն. ընդ մեր պատիւն՝ որ յարարչէն ։

Մախիզ ։ (Նախդրիւ հոլովի.) || գարշ. կմ զազիր. կմ ատելի. կմ պիղծ ։

Մախիզ ։ || միջարկութի զզուանաց, զոր բարբառիմք, յորժամ գարշիմք յինքէ, որգոն. մախիզ, որչափ գարշ է ։

Մախր. մախեր. երբ. երց. երբք ։ կմ մախրի. իւ. ից. կմ աց. օք ։ || է շուառագոյն, կմ դեղնագոյն փայտ ինչ սաստիկ խժոռ և եղոռ, զոր հատանեն 'ի յարմառոց, կմ 'ի բնոց տերևաղուարձ ծառոցն կոչեցելոց ռամկական բարբառով՝ Չամ և Քաճ ,

որք են անեծանելք չամ ծառոյ։ Զայս փայտ հերձեալ չերտս չերտս՝ վառեն և 'ի գործ ածեն փոխանակ ճրագի. կմ՛ լուցկի. ոպ՛ և երբեմն առնեն լուցիկ հրոյ ։ ռամկօր. լուցկայ։

Մած ։ (Նախդրիւ հոլովի.) ‖ է արմատ մածելոյ բային. որով նշանակի մածեալ. իբ կից. կմ՛ յար. կմ՛ հուպ։ Եսայ. 28. 25։

Մածանիմ. մածայ. մածեալ. իր. իլ։ (Ձայն նակր.) ‖ շաղկապիլ. կմ՛ ընդ միմեանս միաւորիլ. ոպ՛ կուպր ՚ի փայտի. սուրն ընդ ձեռաց. քարինքն ընդ միմեանս 'ի ձեռն կրոյ. ատամունքն ընդ իրերաց առանձով. ըստ այսմ իմա և զայլոց նմանեաց։ ռամկ. կպչիլ։ Յոբ. 41. 14։ Մերթ ևս նշանակէ յարիլ. կմ՛ կցիլ. կմ՛ յենուլ. կմ՛ պատել զինէք. և կմ՛ 'ի վր զեղանելով, կամ յարձակելով ըմբռնել զինն, ոպ՛ յանկարծահաս երկիւղն զմարդն. և այլն։ Իմաստ. 17. 14։ Եբրէ. 13. 11։ Եբր. 12. 1։ Իսկ մերթ նշանակէ մակարդիլ. կմ՛ թանձրանալ 'ի հաստատուն զանգուած ինչ. ոպ՛ կաթն 'ի պանիր. արիւնն 'ի միս. և այլն։ Իմաստ. 7. 2։ և Շնորհալին։ Իսկ 3. Մակ. 5. 28. ասի՝ 'ի թաւ մածեալ կային, իմանի 'ի թաւ երկիրն, յի 'ի խստամէտ գետինն խոնարհելով՝ և յերկար 'ի վայր անկանելով՝ կցեալ կային։

Մածեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) ‖ տե՛ս զՄածուցանել։

Մածնում. ծեայ. ուցեալ. ծիր. նուլ։ (Է միջ.) ‖ մակարդիլ. կամ թանձրանալ. և կմ՛ թանձրնալով հաստատուն իրաց՝ կացուցանել զհաստատուն զանգուած ինչ, ոպ՛ հանգիւնպի կաթին, յորժամ լինի մածուն. կամ պանիր։ Սաղմ. 118. 70։ Մերթ ևս առեալ լինի փոխանակ մածանիլ բային ըստ ամ՛ նշանակութեանց նր։

Մածուցած. այ. ով. ոց. ովք։ ‖ յօդեմուցած. կմ՛ կազմուցած բաղկացեալ 'ի բազում մասանց ընդ միմեանս մածեցելոց. կմ՛ կցեցելոց, որպիսիք են կազմուածքն լաստից. կմ՛ նաւուց։ Նորէն. ձե։ Մերթ ևս նշանակէ զզանգուածս թանձրացեալս 'ի հեղանիւթ իրաց. և ըստ այսմ 'ի գիրս Նորէն. լը. Մածուցած կոչէ ջրեղէն կամարն. կամ հաստատութիւն, զոր ը ոմանց կարծեաց ած մածուցանելով 'ի ջրոյ, որ եղև իբրև զվարագոյր ընդ մէջ վերին և ներքին ջուրց. ուստի աստ անդ. նախ քան զկատուցանել զայդ մածուցած վերջնում վարագուրիդ. և այլն։ Մերթ ևս նշանակէ սոկաւ մածուածս. զոր առեալ զինի։

Մածումն. ծման. ծմամբ. ծմանց. ծմամբք։ ‖ շաղկապումն. կմ՛ ընդ միմեանս կցումն, և միաւորումն։ Իսկ 'ի Նորէն. ին. ասի՝ մածմունք ատխատակաչարք 'ի միաբանութեանց միմեանց անջատեցան, իմանին բազմամասնեայ կազմուածք կցեալք ընդ միմեանս։ Եւ մերթ նշանակէ զմակարդումն. կամ զթանձրացումն հեղեղուկ իրաց։

Մածուն. մածնոյ. նով. նոց. նովք։ ‖ կաթն մակարդիւ մածեալ, յի թանձրացեալ. որ և ռամկօրէն ասի՝ մածուն։

Մածուցանեմ. ցի. ծա. ել։ (անցող.) ‖ շաղկապել. կմ՛ ընդ միմեանս միաւորել. ոպ՛ զփայտակերտսն ընդ փայտակերտնի ատանձով. զմասունս շինուածոյ ընդ իրերաց կրով, կամ բևեռօք, զհրահալելիս շաղկապիչ նիւթով. և այլն։ ռամկ. կպցնել։ Եսայ. 44. 13։ Խորէն. ա. գլ. 15։ Բ. գլ. 87։ Մերթ ևս նշանակէ յարել. կմ՛ կցել. կմ՛ յեցուցանել. կմ՛ մակարդել. կմ՛ պատել։ Եբրէ. 13. 11։ Երբեմն ևս պատմարկել. կմ՛ դրոշմել զգանգակ ինչ 'ի վր նիւթոյ իրիք՝ մածուցանել ասի, ոպ՛ Եսայ. 39. 6։ 3. Թագ. 6. 32։ Մերթ ևս նշանակէ մակարդել. կամ թանձրացուցանել զհոսանուտ իրս 'ի թանձրանիւթ զանգուած ինչ. ոպ՛ զկաթն 'ի պանիր. զարիւնն 'ի միս. և այլն։ Յոբ. 10. 10։

Մակ ։ ‖ է մասնիկ ինչ բաղադրական, որ նշանակէ 'ի վր. կմ՛ վերին. կմ՛ կրկին. կմ՛ աւելի. կմ՛ մեծ. կմ՛ գեր. ոպ՛ տեսցի յասս ջեկայդ 'ի մեկնութեան բառիցն, որք բաղադրեցեալք են այսու մասնկաւք։

Մակաբաժանեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) ‖ կրկնաբաժանել. յի վերստին բաժանել. կամ յերկուս անջատել. կմ՛ երկատել։

Մակաբաժանումն. ման. մբ. մանց. մբք։ ‖ կրկին բաժանումն. կմ՛ երկատումն. կմ՛ յերկուս անջատումն։

Մակաբան. ի. իւ. ից. իւք։ ‖ 'ի վերոյ առացեալ. կմ՛ գրեցեալ բան։ Իսկ մերթ նշանակէ զնա, որ ճառեալ, կմ՛ գրեալ է զինն 'ի վերոյ, կամ յառաջագոյն։

Մակաբերեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) ‖ վերաբերել. յի 'ի վր բերել. կմ՛ 'ի միոյ բանէ զայլ ինն բան հետևեցուցանել. կմ՛ եզրակացուցանել։

Մակաբերութիւն. թեան։ ‖ հետևեցուցումն միոյ բանի 'ի գրութիւն միւսոյն. և կմ՛ եզրակացուցումն. և աստացաւ մակաբերութիւն. իբր թէ բերումն միոյ բանի 'ի վր միւսոյն. ոպ՛ երևի յայսմ բանի. Արեգակն ծագեցաւ. ապա ուրեմն տիւ է։

Մակաբնակ. ի. աւ. աց. օք։ ‖ վերնաբնակ. յի 'ի վերին տեղւոջ, կմ՛ 'ի բարձունս բնակող. և կմ՛ երկնաբնակ։

Մակագանչեմ. եցի. եա. ել։ (չէզոք.) ‖ վերագոչել. կամ վերաձայնել. և կմ՛ սաստիկ գանչել. կմ՛ աղաղակել։

Մակագաւիթ. գաւթի. աւ. աց. օք։ ‖ վերնագաւիթ. յի վերին գաւիթ։ Իսկ մերթ նշանակէ՝ մեծագաւիթն. յի այն, որ ունի զմեծ և զլայն գաւիթ. կմ՛ ընդարձակութիւն տեղւոյ. և ըստ այսմ է 'ի Նորէն. 'ի յիշատակարանն. ասէ ասի. ընդարձակ, և մակագաւիթ կանգնեալ սիւնատարածէր. յի մեծագաւիթ կամ լայնատարած սահմանաւ։

Մակագետ. գետոյ. աւ. աց. օք։ ‖ 'ի վերոյ անկանելով գետոց զկնի ոք, որ ասի զօրաց, որք զուգին մասնաւորապէս է

կնով։

կնոջ ։ Եւ յայսմանէ առեալ մակագէտ կոչի դեւն, որ երբեմն եղեալ 'ի կերպարանս առն՝ մտանէ առ կին ոք ըսկեըլով զնա շաղաշարութը ։ Որպէս և երբեմն մտեալ 'ի կերպարանս կնոջ՝ ենթակայ լինի առն ումեք 'ի գործ շաղաշարութե․ և յայնժամ անուանի դև մակագիտացեալ ։

Մակագիծ · գծի · իւ · ից · իւք ։ || մակագիր · կմ վերնագիր ։ Իսկ մերթ նշանակէ այն, յորոյ վերայ գիր ինչ է դրոշմեցեալ․ կմ տպաւորեալ․ և կմ որ 'ի մակերևոյթն իւր է գծեցեալ, կմ գրեցեալ ։ Նարէկ․ 'ի գով․ խաչին ։

Մակագիտեմ․ ացի․ եա․ եալ ։ (Ներգործ․) || 'ի վր անկանելով գիտել զկին ոք․ որ է մարմնաւորապէս զուգել, կմ շաղաշարել ընդ կնոջ ։

Մակագիր․ գրի․ ով․ կմ իւ․ աց․ օք ։ || մակագիծ ։ Բայց յատկապէս առեալ նշանակէ զվերնագիրս․ ոյ զայնս գիրս, որք գրին 'ի ճակատս, կմ 'ի վերին լուսանցս գրոց․ և կմ 'ի գլուխս գրուածոց․ և 'ի սկզբունս ճառից ։ ըստ այսմ մակագիր կոչին և այնք, որք գրին 'ի ճակատս շինուածոց․ կմ 'ի վր բարաւորի դրանց ։ և այլն ։

Մակագոյեղ․ ի․ աւ․ աց․ օք ։ || է հասարակ անուն ամ պատահական յատկութեանց, որք ստորոգին զնմանէ գոյացութեէ․ որպիսիք են այնք, որք ստորոգին զմիայնոյ․ բայց ոչ զնմէ․ ոպ բժիշկ․ փիլիսոփայ․ ծառայ․ և այլն, զմարդոյ միայնոյ ստորոգին, բայց ոչ զամ անհատից նր ։ Մերթ և մակագոյեղ կոչին ամ պատահմունք․ կմ պատահական էութիւնք․ որպիսի է սպիտակութիւն․ մեծութիւն․ ջերմութիւն․ և այլք նմանք ։ Արդ՝ անուանեցան սոքա մակագոյեղ, զի մակադրին 'ի գոյեղսն․ կմ զի յենուն 'ի վր գոյացութեց ։

Մակագոյեղուտ․ եղտի․ իւ․ ից․ իւք ։ || նոյն է ընդ վերնոյն ։

Մակագոյն․ գունի․ իւ․ ից․ իւք ։ || վերագոյն․ կմ վերնագոյն․ և կմ գերագոյն ։

Մակագրեմ․ եցի․ եա․ եալ ։ (Ներգործ․) || վերնագրել․ կմ գրել 'ի վր իրիք զգիրս․ կմ դրոշմել զմակագիրս ։ Մերթ և նշանակէ վերագրել․ ոյ 'ի վեր ընծայել․ կմ 'ի վեր հանել․ կմ վերացուցանել․ ըստ այնմ․ Յհ․ ոսկ․ Երրեակ տաւիղ վերաբերէ, զմարդկայն յերկինս մակագրէ ։

Մակագրութիւն․ թեան ։ || գրութիւն վերնագրոյ․ և կամ մակագիր ։ Իսկ մերթ նշանակէ զգրուածն, որ յաղագս երկնից․ և կմ զերկնային գիծս, և զծիրս, զորս դիտեն, և քննեն չափաբերապէս աստեղաբաշխքն ։ Խորէն․ Դ․ պր․ 62 ։

Մակադիտեմ․ եցի․ եա․ եալ ։ (Ներգործ․) || վերադիտել, որով նշանակի զվերինս դիտել․ կմ 'ի վեր նայել ։ Իսկ մերթ նշանակէ զաչս իւր 'ի վր ուրուք ունելով դիտել զնա․ կմ խնամ ունել 'ի վր նր, ոպ առնեն վերատեսուչքն ։

Մակադիտող․ տղի․ աւ․ աց․ օք ։ || վերադիտող․ կմ վերատեսուչ, որ ասի զառաջնորդաց, որք կացեալ 'ի վր ժողովրդեան՝ դիտեն, և հովուեն զնա ։ Եւ մերթ 'ի վեր հայող ։

Մակադիր․ դրի․ աւ․ աց․ օք ։ || մակադրող․ ոյ 'ի վր դնող․ կմ բարդող․ և կամ 'ի վերայ յաւելող ։ Իսկ մերթ նշանակէ մակադրեալն․ ոյ 'ի վր եդեալն․ կմ 'ի վր յաւելեալն, և կմ բարդեալն ։

Մակադրական․ ի․ աւ․ աց․ օք ։ || դերադրական․ կմ վերադրական․ ոյ այն ամ, որ 'ի վերայ իրիք եդեալ լինի ։ Եւ ըստ այսմ մակադրական կոչին ածական անուանք, որք ըստ ինքեանց 'ի բանի ոչ կայանան ։ այլ միշտ պահանջեն զենթակայ ինչ, զի մակադրեալ 'ի նմ բովանդակեսցեն զբանն, և հանգուսցեն զմիտս․ որպիսիք են անուանքս այսոքիկ․ բարի․ յաւիտենական․ անչափ․ և այլն ։

Մակադրեմ․ եցի․ եա․ եալ ։ (Ներգործ․) || վերադրել․ ոյ դնել, կմ կացուցանել, և կմ հաստատել զինչ 'ի վր իրիք․ ոպ ըզմարդն 'ի վր փայտի․ զճրագն 'ի վր աշտանակի․ զանունն 'ի վր մարդոյ․ և այլն ։ Նարէկ․ ղզ ։ և Լամբրոն ։ ըստ այսմ է և 'ի Նարէկ․ ժա․ ուր ասի մակադրեալ վեհին հրամանի․ ոյ հրամանին իւր 'ի վր եդեալ լինելով․ կմ 'ի վր գալուն ։ և այլն ։

Մակադրութիւն․ թեան ։ || վերադրութիւն․ ոյ 'ի վր դնումն․ կմ 'ի վր հաստատումն ։ և ըստ այսմ դնումն անուան 'ի վր ուրուք, մակադրութիւն կոչի ։ Լամբրոն ։

Մակալեզու․ ուի․ աւ․ աց․ օք ։ || վերին լեզու, որով նշանակի փոքրիկ լեզուակն այն, որ 'ի վերին կողման որկորոյ կենդանեաց՝ իբր 'ի ձեղուան նր հաստատեալ կայ ։

Մակալուսին ։ (Նախդրիւ հոլովի․) || տես 'ի ներքոյ զՄակալուսնեայ ։

Մակալուսնեայ․ նէի․ իւ․ ից․ իւք ։ || այն ամ, որ է 'ի վր լուսնի․ կմ 'ի վերոյ քան զլուսինն․ որպիսիք են կամարքն վեցից մոլորակաց մինչև 'ի լուսեղէն երկինքն, և որք 'ի նմ պարունակին, որոց ներհակքն կոչին ենթալուսնեայ ։

Մակալփեան․ ենի․ իւ ։ || ալփեայ մականուանեալ․ ոյ նա՝ որ երկրորդական անուամբ կոչի՝ ալփեայ․ ոյ որդի ալփէի, որ ասի զյակոբայ եղբօրէ տն․ ըստ այնմ Յհ․ ոսկ․ Յակոբոսի մակալփենին․ և Թօմայի երկուորեակին ։

Մակածական․ ի․ աւ․ աց․ օք ։ || վերածական․ կմ այն ամ, որ ածի, կմ բերի 'ի վր իրիք ։ Բայց յատկապէս առեալ մակածական կոչի ձեռնարկութիւն այն, յորում 'ի մասնականացն ցուցանեմք զընդհանրականս․ որպիսի է այս ։ Հպարտութիւն է չար․ բարկութիւն է չար․ նախանձն է չար, սոյնպէս և այլքն՝ որք պարունակին ընդ սեռական մեղաց․ ապա ուրեմն ամ մեղք է չար ։

Մակածեմ․ եցի․ եա․ եալ ։ (Ներգործ․) ||

՚ի վեր անել. կմ ՚ի վեր բերել: Իսկ մերթ նշանակէ անել զինչ ՚ի վ[ե]ր այլոյ. կմ զմակածութի առնել:

Մակածութիւն. Թեան: || վերածութիւն. կմ վերաբերութիւն: Բայց ըստ փիլիսոփայից մակածութին նշանակէ զմակածական ձեռնարկութին, որ է բան ինչ, յորում ՚ի մասնականաց ըստ բաւէս թուելեցելոց՝ մակածելով եզրակացուցանեմք զընդհանրականն. զոր օրինակ. պետրոս է բանական. պօղոս է բանական. յօհաննէս է բանական. ապա ուրեմն մարդն է բանական: Մերթ եւս բառս մակածութի՝ նշանակէ զմակածեալսն. կմ զմակածելիսն, որպիսիք են մասնաւորքն, որք պարունակին ՚ի ներքոյ ընդհանրականին:

Մակակացեալ. ելոյ. ով. ոց. ովք: || վերակացեալ. այ՛ ՚ի վերին տեղւոջ կացեալ. կմ ՚ի բարձունս զետեղեալ. որպիսիք են աստեղքն, որք կան յեթերս: Իսկ մերթ նշանակէ ՚ի վ[ե]ր կացեալ. կմ կայացեալ:

Մակակէտ. կէտի. իւ. ից. իւք: || է կէտ ինչ նման ստորակէտի, որ դնի ՚ի վ[ե]ր նախադրաց. զոր օրինակ. ՚ի սմա. ՚ի յերկինս. և այլն. ուստի ասացաւ մակակէտ. իբր թէ՝ մակադրելի կէտ:

Մակահնչեմ. եցի. եմ: ել: (չէզոք.) || վերահնչել. կմ վերագոչել. այ՛ սաստիկ հնչել. կմ մեծաձայն բարբառով գոչել:

Մակաձայնեմ: || տե՛ս զվերաձայնել:

Մակաձի. ձիոյ. ով. ոց. ովք: || վերընթեակ. որ է ձիաւոր. կմ հեծեալ. և ըստ այսմ ասէ. ՚ի Նոննոսին աբխազայ. որ զաւխորհէ. Մակաձիքն ուռզիին յիւրեանց վայրն ընթանան:

Մակաղ. ի. իւ. ից. իւք: || ժողով. կմ դադար. կմ հանգիստ հօտից, կմ խաշանց. և այլոց նմանեաց:

Մակաղատեղ. ի. իւ. ից. օք: || տեղի, ուր խաշինք. կմ հօտք մակաղին. այ՛ ժողովեալ ընկողմանին, կմ դադարեալ հանգչին. ուստի ասի՝ մակաղատեղ, իբր թէ մակաղելոյ տեղի. որպիսիքն են փարախք, կամ դադարք անասնոց՝ թէ ՚ի բացօթեայ տեղւոջ իցեն, և թէ ոչ: Եսայ. 35. 7: Երեմ. 33. 12: Միք. 2. 12: ըստ այսմ է և Եսայ. 65. 10. ուր ասի՝ Եւ եղիցին յանտառին մակաղատեղք հովուաց. այ՛ մակաղատեղք հօտից հովուաց:

Մակաղիմ. եցայ. եայ. կամ եալ. լիլ: (ձայնակր.) || խաշանց, կմ հօտից ժողովիլ և ընկողմանիլ. կմ դադարիլ. և հանգչիլ ՚ի դաշտավայրս. կմ ՚ի փարախս: Ծննդ. 29. 2: և Եսայ. 27. 10: Մերթ եւս ասի զգազանաց, և զժողովրդոց, յորժամ բան ըլինի զինոցանէ իբրև զխաշանց: ոպ Եսայ. 11. 6: Սոփոն. 3. 13: Կիւրղ ի Եզեկ. ա:

Մակաղոյթ. կմ մակաղօթ: || տե՛ս ՚ի բառս բանից յատուկ անուանց զբառն Մակեդօթ:

Մակամտածական. ի. աւ. աց. օք: || այն բան, որ վերաբերի առ մակամտածութին. կմ որ լինի մակամտածելով. կմ երևակայելով. որպիսի է եղջերուայծն, յարալեզն, և այլք պէսպէս անգոյ իրք. զորս մտօք և երևակայութեամբ հնարեմք, կմ ըմբռնեմք զնոյն իբրև զիրական ինչ:

Մակամտածութիւն. Թեան: || երևակայական մտածութիւն, որով զիր ինչ հնարեմք, կմ ըմբռնեմք: Եւ կմ խոկումն, որով խորհիմք ՚ի վ[ե]ր իրաց ոմանց ՚ի միտս մեր, և ՚ի տրամախոհութեան մերում:

Մական. ի. աւ. աց. օք: || գաւազան. կամ ցուպ. և ըստ այսմ փոխանունաբար առեալ՝ գաւազան զօրութիւն. կմ ցուպ հաստատութիւն, ասի մական զօրութիւն. կմ մական հաստատութիւն: Բայց մասնաւորապէս առեալ՝ մական կոչի ցուպն այն՝ զոր ը. մէջ կալեալ՝ արձակեն բռնութեամբ ՚ի վերայ միմեանց առ ՚ի հարկանել զխաղագունդն. ռամկ. ճիրիտ: Եւ կմ կարճ գաւազանն այն, որով հարեալ զծայր անպանման փայտի իբրև եղելոյ ՚ի վ[ե]ր երկրի ՚ի վեր սատացանեն զնա, և յետոյ մինչ դեռ յօդս տատանի՝ վաղվաղեալ կրկին հարկանեն, և թռուցանեն ՚ի հեռաւոր տեղիս. ռամկօր. չօմախ, որով չելին. կմ փողին խաղան: Խորէն. Գ. գլ. 55:

Մականախաղ. ի. իւ. աց. օք: || մականաւ խաղացող. կմ զմական ՚ի գործածող:

Մականական. ի. աւ. աց. օք: || այն՝ որ վերաբերի առ մականն. և կմ խաղն, որ մականաւ լինի: Խորէն. Գ. գլ. 55:

Մականամ. ացայ. ացիր. անալ: (ընդմիջ.) || վերանալ. կամ ամբառնալ. կմ վերաթևել:

Մականուանեմ. եցի. եմ. ել: (ներգործ.) || մականուամբ անուանել. այ՛ երկրորդական անուամբ յորջորջել. որպիսի է անուանելն զոք իմաստասէր. կամ եկեղեցական: և այլն. Յն. [illegible]:

Մականուն. ուան. ամբ. անց. ամբք: || վերանուն. այ՛ հատուածական անունն այն, որ յաւելեալ լինի ՚ի վ[ե]ր յատուկ անուանց ոմանց առ ՚ի ցուցանել զյատկութի ինչ՝ զոր ունին, որպիսի է բանաստեղծն, որով յորջորջին որդիքն զեբեդեայ. և կմ բառս լուսաւորիչ, որով անուանի սբ հայրն մեր Գրիգորիոս. և այլք նմանք:

Մականունութիւն. Թեան: || մականուանութիւն. կմ յորջորջութիւն մականուամբ. և կմ ունելն զմականունն: Իսկ մերթ գերանունութիւն. այ՛ գերազանց անուանակոչութիւն. կմ ունելն զպատուական անուն. որպիսի է անուանիլն արհեպիսկոպոսին քահանայապետ: Լամբրոն:

Մակասաստեմ. եցի. եմ. ել: || ՚ի վեր սաստել. կմ վերագոչել. կմ բացագանչել. և կմ սաստկական եղանակաւ վարիլ:

Մակասացութիւն. Թեան: || ՚ի վերայ ասելն. կմ ՚ի վ[ե]ր յաւելումն. կմ վերակրկնումն բանին: Իսկ մերթ նշանակէ զստորոգութին: Մերթ եւս մասնաւորապէս առեալ նշանակէ զգերասացութին. այ՛ զվեհատական, կմ զիշխանական ասութին. կմ զհրամանն:

Մակառնեմ. ացի. ա՛. ել: (Ներգործ.) ||'ի վե՛ր առնել. կա՛մ վերստին առնել. և կա՛մ ստորագել:

Մակարդ. ի. ու. աց. օք: կա՛մ իւ. իւ. իւք: || խախայ, որ է սպիտակ հիւթ ինչ մա֊կարդօղ, զոր հանեալ 'ի խախացայէ կաթն կեր գառանց, արկանեն 'ի մէջ եփեցեալ և եռացեալ կաթին, որով մակարդեալ մած նու. և լինի պանիր: ռամկ. պանրի մայա. ըստ այսմ մակարդ կոչի մասն ինչն մածնոյ, կամ այլ ինչ մակարդօղ նիւթոյ, զոր արկանեն 'ի մէջ եփեցելոյ կաթին. որով բոլոր կաթն յետ սակաւու թանձրանայ՝ և մածնանայ: Իսկ ըստ նմանութեան առեալ ասի և զայլոց իրաց. որք իբրև զմակարդ 'ի մէջ մը֊տեալ. կամ ընդ այլոց խառնեալ՝ որպիսու֊թեան իւրեանց՝ որակացուցանեն զնոս, և փո֊խարկեն զնոսին յայլ որակութիւն:

Մակարդակ. ի. աւ. աց. օք: || Եղանակ սա 'ի արդակ բառէս. որ է համասար: ուստի մա֊կարդակն նշանակէ՝ մակհամասար. կամ հարթ համասար. և կամ կոկ և տափարակ որպիսիք են թուղթք. դաշտք. և այլք բազումք: Բայց ըստ փիլիսոփայից նշանակէ սոսկ հարթ մակերևոյթն, ք լայնարձակ տարածու֊թեան հարթաձև իրաց՝ մտածեալ առանց խո֊րութեան, որպէս յիշեցաւ 'ի բառն խորութիւն:

Մակարդեմ. եցի. եա՛. ել: (Ներգործ.) || մակարդիւ զանգել և մածուցանել զեփեցեալ կաթն, որով փոխարկի 'ի պանիր. կամ 'ի մածուն. ռամկ. մայեէլ: Եւ յայսմանէ առեալ երբեմն նշանակէ խառնել զնիւթ ինչ ընդ հեղեղուկ իրաց, որ զնա որպիսութեամբ իւրով որակացուցեալ ըստ բոլորին այլայլէ, որպիսի է խառնելն ըզ մաղձ ընդ կաթին. զթոյն ընդ ըմպե֊լեաց. զներկ ընդ ջրոյ. և այլն: Նոյնէ. իք: Այսպէս յորժամ շնորհն 'ի վե՛ր եկեալ տեսականութեամբ բարեզարդութեամբ իւրով ըզ հոգիս. կամ զմիտս ուրուք՝ ասի մակարդել:

Մակացական. ի. աւ. աց. օք: || գիտնա֊կան. կամ ուսումնական, ք այն տամ, որ վե֊րաբերի առ գիտութիւն. կամ առ ուսումն:

Մակացեալ. ելոյ. ով. ոց. ովք: || բառս այս ըստ որում է անցեալն մակացել բային, նշանակէ՝ գիտացեալ. կամ ուսեալ. և կամ հմտացեալ և տեղեկացեալ արտաքին գի֊տութեանց և իմաստից: Ընդհանրն: Իսկ ըստ որում է անցեալն մականալ բային նշա֊նակէ՝ վերացեալ. կամ անջատեալ. և կամ վերաթևեալ:

Մակացելի. լւոյ. եաւ. եաց. եօք: || գիտե֊լի. կամ ուսանելի. և կամ այն՝ որ ընդունակ լինի գիտութեանց և ուսմանց, որպիսիք են տամ էակք:

Մակացեմ. եցի. եա՛. ել: (Ներգործ.) || գի֊տել. կամ ուսանիլ զբնական գիտութիւն. և կամ պարապիլ մակացութեանց:

Մակացոյց. ցուցի. իւ. ից. իւք: || ըստ նշանակէ զմակածութիւն, ք զճշմարտու֊թիւն. յորում ընդհանուրն. կամ հաստատուն ցուցանի 'ի ճշմարիտ թէ մասանց մասնաւորաց. այս՝ մարդն է զգայուն, առիւծն է զգայ֊ուն, ձին է զգայուն. և այլն, ուստի տամ կենդանին է զգայուն: Իսկ ըստ նշանակէ զնա, որ մակածելով ցուցանէ, ք թուե֊լով զիւրաքանչիւր մասնաւորս, եզրակա֊ցուցանէ 'ի նոցանէ զընդհանրականս:

Մակացու. ցուի. աւ. աց. օք: || գիտող. կամ ուսանող մակացութեանց. և կամ նա՛ որ է ուսմամբ տեղեկացեալ և հմտացեալ ար֊տաքին գիտութեանց. և կամ ուսումնական:

Մակացութիւն. թեան: || բնական գիտու֊թիւն. կամ ուսումն, զոր ուսանին մարդիկ 'ի հա֊մալսարանս ջանիւք և աշխատանօք, որպի֊սի է տրամաբանութիւն. բնաբանութիւն. և այլք բազումք: Եւ յայսմանէ առեալ երբեմն դնի փոխանակ ի և իցէ գիտու֊թեանց և ուսմանց. կամ հանճարոյ, և կամ իմա֊ստութեան: Առակ. 19.20: Սիրաք. 4.21: Արդ՝ ասացեալ սա մակացութիւն. իբր թէ մակկացուն, ք 'ի վերակացութիւն. կամ 'ի վե՛ր հասումն, զի որ գիտէ զինչ, հետևաբար վերահասու լինի այնմ:

Մակացուցանեմ. ցուցի. ցո՛. ել: (Անցող.) || վերածել. կամ վերացուցանել. կամ բարձ֊րացուցանել. կամ յարուցանել. և կամ տալ ումեք վերաթևել 'ի բարձունս:

Մակաւասար. ի. աւ. աց. կամ ից. օք: || Ե֊ղանակ սա 'ի հաւասար բառէս, որ ըստ նշանակէ զնոյնաչափն, կամ զհանգէտն. և ըստ զհաւասարակն, ուստի բառիս մակա֊ւասար երբեմն նշանակի հարթ հաւա֊սարն. կամ յոյժ հաւասարն. և կամ համա֊հանգէտն: Իսկ երբեմն նշանակի 'ի վեր քան զհաւասարակն. կամ գերքան զհաւա֊սարակն: Եւ այսու անուանեցաւ առ յոյնս սեռ ինչ անուան, որ յաւելեալ լինի 'ի վե՛ր հաւասարակ սեռին. վա՛ զի առ նոսին բազում ա֊նուանք, ըստ թռչնոց, և ամանց կենդանեաց, որք արական յօդիւ արամակայեալ՝ ասին և զիգաց. կամ իգական յօդիւ բաղկացեալ՝ ասին և զարուաց: Եւ ըստ որում այսպէս նշանակութեամբ են իբրև զհաւասարակս, բայց ըստ յօդիցն գերազանցեն քան զնա, կոչին 'ի նոցանէ՝ գերքան զհաւասարակ: Զոր լա֊տինացիք վա՛ խառնութեան սեռիցն անուա֊նեն խառնեալ: Բայց 'ի մեզ ոչ գոյ այս֊պիսի սեռ անուան:

Մակաքառակ. ի. ու. աց. օք: || ութն. կամ ութնեակ. և ասացեալ մակաքառակ. իբր թէ կրկին քառակ. զի յաւելլով 'ի վե՛ր քառակին զայլ քառեակ. որ է չորս. բաղ֊կացուցանէ զութնեակն:

Մակբայ. ի. իւ. ից. իւք: || է վեցերորդ մասն բանի, որ զեղանակս գործողութեանց և կրից նշանակէ, որպիսիք են այժմ. այ֊սօր. յայժմ. վաղվաղակի. և այլն: Արդ՝ ասացեալ մակբայ. իբր թէ վերա֊բայ, զի 'ի գործ ածիլն դնի 'ի վե՛ր բայից, որգոն, այսօր ծնաւ. վաղվաղակի կորեաւ. և այլն:

Մակբայական. ի. աւ. աց. օք: || ունօղ ըզ մակբայ. կամ մակբայիւ տրամակայեալ. որ պիսի է բառս այս, երբ եկեր:

Մակ֊

Մանկաբաշխ. ի. իւ. եց. իւք։ || Վերաբաշխ. Ջի այն ծառ, որ վերաբարեալ բաշխի երկնից. կամ բաժանեալ մի ըստ միոջէ։ Բայց յառաջ կայալէս առեալ նշանակէին առեալ այնք անուանք, որք այժմ կոչին մանկանաք, և նշանկէն զմանկաւորութիւն, կամ զարդամանբաշխութիւն։ Եւ բաժանին 'ի չորս մասունս. մի զի կամ նշանակեն զմին յերկուց. որպէս բանում միում. կամ զմին 'ի բազմաց. ոչ մին. ոչ. այլումն. այլոք. և այլն։ Եւ կամ զերկուսն մի ըստ միոջէ. ոչ երկաքանչիւր. կամ երկոքեան։ Եւ կամ զբազմութիւն միասին. ոչ իւրաքանչիւրն. կամ ամենեքեան։

Մանկաբեր. ի. իւ. եց. կամ աց. օք։ || Մանկաբերող. կամ 'ի վերայ ածող զմին, թէ եզական ցուցանելով իցէ, և թէ ոչ։ Եւ մերթ նշանակէ զմանկաբերեալն, կամ զածեալն 'ի վերայ։ Մերթ եւ 'ի յոգնականացն նշանակէ զմանկաբերութիւն։

Մանկադիր. դրի. աւ. ւոյ. օք։ || Վերադիր. Ջի այն՝ որ 'ի վերայ եդեալ լինի. և կամ 'ի վերայ յաւելեալ լինի. և ըստ այսմ ըստ քերականաց անուանն, որ դնի 'ի վերայ գոյականին՝ մանկադիր կոչի. որպիսի է և մանկադրականն, որ 'ի վերոյ մերկնեցաւ։

Մանկեղուս. եղան. իւ. եց. իւք։ || է բառ փիլիսոփայական, որով նշանակի այն ծառ, որ պատահաբար առընթեր զմիմեանս. կամ որ է արտաքոյ էութեան, և առհասարակ իրին զինչ և իցէ։ Եւ ի այսմ ծառ պատահմունք, և յատկութիւնք մանկեղուս ասին. քանզի է՝ մանկադրեալ 'ի յեղուսան, կամ մանկեղանող. զի այսպիսիքս գոլով արտաքոյ էութեան, իբր թէ յենուն 'ի վերայ գոյացութեան։

Մանկեսակ. ի. աւ. աց. օք։ || Վեց. կամ վեցեակ. և ասացեալ մանկեսակ. իբր թէ կրկին եռեակ. զի յաւելեալ 'ի վերայ եռեակին զայլ եռեակ՝ բաղկացուցանէ զվեցն։

Մանկերևոյթ. ութի. իւ. եց. օք։ || Արտաքին երևոյթ իրաց, որ ըստ փիլիսոփայից է տարածութեան քանակին յերկայն և 'ի լայն՝ մանածեցեալ առանց խորութեան։ Եւ բաժանի յերիս. Ջի 'ի մանկագրականն. 'ի կորնթիւս. և 'ի խոռոչիս։ Մանկագրականն է հարթ մանկերևոյթն. զոր դասականացն կոչէ գաւտային։ Կորնթիլն է մանկերևոյթն կամարակերպ կորացեալ մարմնոց։ Իսկ խոռոփիլն է մանկերևոյթ ծուցաւոր մարմնոց, յորս և տեղին պարունակի։ Արդ՝ կոչեցան առաջ մանկերևոյթ, իբր թէ վերին երևոյթ. զի հասարակօրէն արտաքին երեսք իրաց երևեին աչաց։

Մանկերևութանամ. ացայ. ացիր. նալ։ (Ը միջ.) || Մանկերևոյթ լինիլ կամ վեր 'ի վերայ երևիլ. կամ առ երեսս տեսանիլ։ Իսկ մերթ նշանակէ 'ի միում մանկերևութի, կամ տարածութեան մարմնոյ հաստատապէս գոլ, կամ երևիլ. ոչ բազմութեամբ անմոլար աստեղաց 'ի մանկերևութի աստղաշէկ երկնի։

Մանկերևութի. թեան։ || Մանկերևոյթ, կամ տարածութիւն. և կամ ընդարձակութիւն։

Նոէլ. ղէ։

Մանկընթացութիւն. թեան։ || 'Ի վեր ընթացումն. կամ համեմատ 'ի վեր ելումն, և 'ի վեր բերումն. որպիսի է անձրևոյ բարձրանալն ջրոց, որոյ ներհակն, Ջի յետս հանելով նուազումն, և խոնարհումն՝ կոչի անդրադարձութիւն, իբր թէ՝ անդրադարձութիւն. ուստի ասեն 'ի նոսայն ուղղակիները՝ որ զոհ[illegible]. կո հակաց մանկընթացութիւնք՝ և անդրադարձութիւնք զարդարք, և զգամութիւնք ծովացուցին, և զծով զամենեցուցին։

Մանկհաւատար. ի. աւ. աց. օք։ || Անհ զՄակաւատար։ Ընդհանրին յոլովն երևեալ։

Մանկյաւելում. յաւելլի. յաւել. ուլ։ (Ներգործ.) || Վերյաւելուլ. Ջի 'ի վերայ յաւելուլ. և կամ 'ի վերայ յարել. և կամ 'ի վերայ ածել։

Մանկշաղկապեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) || Զգօրակեր, կամ զղանդաղան խօս 'ի վերայ միմեանց դնելով շաղկապել. կամ շարակցել. և կամ զուգել, և յօդել. ոչ առանձինն 'ի ձեռն արտաքնական շաղկապին. զոր օրինակ. կամ եա խոստացայց, և գոււ ւմնի գիր. և կամ զուէ խոստացայ, և եա եղէց ունիցնիմ։

Մանկոյի. կուկի. աւ. աց. օք։ || Կուր, որ է փոքրիկ նաւ, զոր կապեալ լարիւ արտաքին առ մեծ նաւուք վերն առասաստութեան։ Առաջնորդաւ։ Գործ. 27. 16։ Խոսրէն. Գ. գլ. 30։ Մերթ եւ նշանակէ զոր և իցէ նաւակն. կամ նաւն։ Լամբրոն։ Արդ՝ կոչեցան առաջ մանկոյկ 'ի մանկ վաւնկէս. թ որում մանկաբերեալ շրջին 'ի վերայ երեսաց ջրոց։

Մանկոն. ի. աւ. աց. օք. կամ իւ. եց. իւք։ || Անս 'ի ներքոյ զՄանկոնատ։

Մանկոնատ. ի. իւ. եց. իւք. կամ աց. օք։ || Ծախող. կամ ձախորդ. կամ վատաբաղդ. կամ աղորմելի. կամ փծուն. և կամ անարգ։

Մանկտատութիւն. թեան։ || Գերատատութիւն. Ջի տատել առանկութեան. կամ գերազանցութիւն. զորպիսին ունէին գերադրականանունքն 'ի վերայ դրականաց, և բաղդատականաց անուանց։ Մերթ եւ նշանակէ առաւել վերատատութիւն. կամ վերադրումն. և կամ բաղդատելութիւն։

Մահ. ու. ու. ուց. կամ մահուանն. ամք. մահուանց. մահուամբ. ամբք։ || Մեռելութիւն, որ է լուծումն, կամ բաժանումն հոգւոյ 'ի մարմնոյ. կամ պակասութիւն կենաց. կամ կորուստ կենդանութեան։ Ծննդ. 2. 17։ Եբր. 2. 14։ Իսկ մերթ աղանդութիւն. կամ կորուստ. որում որ մահացուցանէ զմարդիկ. ըստ այնմ. 1. Մակ. 1. 25. Եւ գործեաց մահուանս անհնարինս, մինչև կորստեան։

Մահաբեր. ի. իւ. եց. իւք։ || Բերող կամ գործօղ մահու. կամ պատճառող մահուան կենաց. և կամ մահացուցիչ։ Թուոց. 18. 22։ Յոբ. 33. 23։ Իսկ Յակոբեայ. 3. 8. ուր գրեալ է թունիւք մահաբերին, արդարեւ իմանի՛ լի մահաբեր թունով։

Մահաբերաբար։ (Նախադրիւ հոլովէ.) || զմահաբեր բերման ումեք, կամ նա՛ որոյ բանիւք եղեալք 'ի բերմանց զմահ պատճառեն։

Իսկ մերթ նշանակէ զբերման մահու. ՚ի զեղջն, կամ զպատճառ մահուան. որպիսի է եւր ճանապարհին, ուր թէ որ հասցէ, ՚ի մահ անկանի. ըստ այնմ Ոսկէ. ՚ի հատ. ԼԸ. ընդ մահաբերական եւ ՚ի ճանապարհս ընթանամք. զի գնամք վազելով ՚ի ճանապարհն ընդ մահաբերական եւս։

Մահագիր. գրի. ու. կամ իւ. աց. օք։ || Գիր, կամ մուրհակ մահու։ Իսկ մերթ նշանակէ գրող զմահուանէ, կամ զմահաբեր խրատ, կամ վճռոյ։

Մահագոյժ. ուժի. իւ. ից. իւք։ || Գուժող մահու. զի նա՝ որ բերէ զգոյժ, կամ զբօթ մահուան. եւ ըստ այսմ առն՝ հրեշտակ մահագոյժ։ Նարեկ. հա։

Մահագործակ. ի. աւ. աց. օք։ || զմահ գործող, կամ զմահ պատճառող. եւ կամ մահացուցիչ։ Նարեկ. ղթ։

Մահագուշակ. ի. աւ. աց. օք։ || զմահ գուշակող. զի նա՝ որ նշանակէ, կամ ցուցանէ զմահ. եւ կամ մահաբեր։ Նարեկ. խը։

Մահադեղ. ի. իւ. ից. օք։ || դեղ մահու. զի թոյն՝ որով մահացուցանեն զմարդիկ։

Մահադդեստ. ի. իւ. ից. իւք։ || զդեստաւոր զմահ. եւ կամ կրող մահու. Իսկ մերթ նշանակէ զդեստաւորեալ զդեստուք մահու. որպիսիքն են մարմինք մեռելոց պարփակեալ պատանօք։ Իսկ ՚ի Նարեկ. ծը. ասէ՝ խղճեցես զերկրաւորս մահադդեստ պարփակեալ, խնամի մահադդեստականն։

Մահադեկոյց. ուցի. աւ. աց. օք։ || դեկուցանող մահու. կամ այն՝ որ գուշակէ, կամ ազդէ զմահ. կամ զկոտորած ճեռնաց։ Նարեկ. կղ։

Մահազէն. զինի. աւ. աց. օք։ || ունող ըզ զէն մահու։ կամ մահացուցանող զինուք՝ զինեալ. եւ կամ մահացուցիչ զինաւոր։ եւ ըստ այսմ առն՝ մարտիկ մահազէն. կամ կռճառք մահազինաց։ Նարեկ. խա. զա։ Իսկ մերթ նշանակէ զայն, որ է զէն մահու. կամ մահացուցիչ գործիք. եւ ըստ այսմ առն՝ առաւելր մահազէն։ Նարեկ. ղզ։

Մահածին. ծնի. աւ. կամ իւ. աց. կամ ից. օք։ || Ծնանող. կամ պատճառող մահու. կամ մահաբեր. եւ կամ մահառիթ. որպիսի է սատանայ, կամ մեղքն. եւ կամ պտուղն, զոր կերին նախաստեղծքն։ Յն որդի։ Աճգոռ։

Մահակ. ի. աւ. աց. օք։ || բիր. կամ հաստ եւ բիրտ գաւազան, որով հարկանեն զոք. եւ կամ խաչատակեն զինձ։ Յակոբ. սօֆայ. կամ բօյախոյ։ ՚ի Հռոմ հատ. ժԴ։ Մերթ եւս նշանակի տեղաւ փորձաքարն, զի այն քարն. յոր հարեալ զոսկի. կամ զարծաթ, փորձեն զսրբութիւն նց։ ռամկ. միհէնկ։

Մահակերպարան։ (Նախադրիւ հոլովի.) || ըզ կերպարանս մահու ունող. կամ մահուանս կերպացեալ. եւ կամ մահակերպ։ Նարեկ. ղէ։

Մահակիր. կրի. աւ. կամ իւ. աց. օք։ || կրող մահու. կամ ունող յինքեան զմահ. եւ կամ այն, որ պատճառէ զմահացուցումն. կամ զմեռելութիւն. եւ ըստ այսմ առն, մահակիր ձգումնք։ Նարեկ. ՚ի գովեստ խաչին։

Մահակից. կցի. ու. աց. օք։ || կցորդ մահու. կամ ՚ի միասին ընդ ումեք մեռանող. եւ կամ ընդ այլում զնոյն մահ ճաշակող։ Նարեկ. ղէ։

Մահահամբոյր։ (Նախադրիւ հոլովի.) || մահակիր. կամ մահակից. կամ մահացու. եւ կամ մահաբեր. եւ ըստ այսմ առն՝ մահահամբոյր պատուհաս. եւ այլն. Շնորհալին։

Մահահանգիստ։ (Նախադրիւ հոլովի.) || մահուանն հանգստացեալ. եւ կամ մահուամբ ննջեցեալ։ Իսկ մերթ նշանակէ զայն՝ որ վերաբերի առ հանգիստ, կամ առ ննջումն մահու. որպիսի է քունն ննջեցելոց. Ագ. ռովը։

Մահահանգոյն։ (Նախադրիւ հոլովի.) || այն, որ է հանգոյն մահու. կամ որ ունի զնման նութիւն մահուան, որպիսի է քունն, կամ նիրհումն։ Նարեկ. ժբ։

Մահահոտ. ի. իւ. ից. իւք։ || զհոտ, կամ զնշան մահու ունող. կամ մահահոր. եւ կամ մահաբեր. եւ ըստ այսմ առն. մահահոտ մեքենայ. կամ մահահոտ լուսանք, եւ զործողութիւն։ Շնորհալին։

Մահահրաւէր։ (Նախադրիւ հոլովի.) || հրաւէրող, կամ կոչող մահու. կամ ածող ՚ի մահ. եւ կամ մահաբեր։ Եւ ըստ այսմ առն. մահահրաւէր բարկութիւն. կամ մահահրաւէր թմբրութիւն։ Նարեկ. ղէ։ եւ Շնորհալին։

Մահաձիգ։ (Նախադրիւ հոլովի.) || ձգող յինքն զմահ. եւ կամ նա՝ որ ձգի, կամ գի. մէ ՚ի մահ, կամ ՚ի մահացու խոց. եւ ըստ այսմ առն. ձեռք մահաձիգ։ Նարեկ. ծդ։

Մահաձիր. ձրի. իւ. աց. օք։ || ձրող, կամ տուող մահու. կամ մահառիթ. եւ կամ մահաբեր։ Նարեկ. ղթ։

Մահամատոյց։ (Նախադրիւ հոլովի.) || զմահ մատուցանող, կամ պատճառող. կամ մահաբեր. կամ մահացուցիչ։ Նարեկ. խը։

Մահանամ. ացայ. ացիր. նալ։ (ընդմիջ.) || զմահ ճաշակել. կամ մահուամբ պակասել. եւ կամ մեռանիլ։ Նարեկ. ծե։ Ոսկէ. 2. հատ. թ։

Մահաշշունչ։ (Նախադրիւ հոլովի.) || ունող շշունչ, զի զշնչիւն, կամ զաղմուկ մահու. եւ կամ յայտուցանող զաղմուկ գալոյ մահուան։ Եւ մերթ նշանակէ զմահ չնչող. կամ մահաբեր. եւ կամ մահառիթ. եւ ըստ այսմ առն. մահաշշունչ հոտ գառնութեան։ ՚ի հին պարականոնք։

Մահաշունչ. չնչի. իւ. ից. իւք։ || զմահ չնչող, կամ պատճառող. կամ զթունաւոր եւ զմահացու շունչս ունող. եւ կամ մահաբեր. եւ ըստ այսմ առն. մահաշունչ գազան, կամ բերան. մահաշունչ հուր, կամ դառնութիւն։ Աճգոռ։

Մահապարտ. ի. իւ. ից. կամ աց. օք։ || պարտաւոր մահու, կամ արժանաւոր մեռանելոյ. եւ կամ նա՝ որ ՚ի մահ դատապարտեցեալ է։ Եւնդ. 22. 3։ եւ Մատթ. 26. 66։ Ա. Կորն. 4. 9։

Մահապարտիմ. եցայ. եաց. իլ։ (Չեզոք.) || մահապարտ լինել. զի պարտաւորիլ մահու, կամ ստանալ. եւ կամ ՚ի

մահ դատապարտիլ։ 2. Կորնթ. 6. 9։

Մահառիթ։ (Նախդրիւ հոլովի.) || առթօղ. կամ պատճառօղ զմահ. կամ մահաբեր և կամ մահածին. և ըստ այսմ ասի. մահառիթ պտուղ. մահառիթ շունչ. և այլն։ 'ի շարակնոցի։

Մահասատուէր. ի. ոէ. աց. օք։ || ունօղ զսատուէր մահու. կամ յորում է սատուէր մահուան, որպիսի է աշխարհս այս. կամ սատք կեանքս։

Մահատեսակ. ի. ու. աց. օք։ || ունօղ զտեսակ, կամ զերևոյթ մահու։ և կամ իբրև ըզ մահացուցիչ երևօղ։ Նարեկ. կէ։

Մահատիպ։ (Նախդրիւ հոլովի.) || ունօղ զտիպ մահու. կամ մահանկերպ. կամ մահանման. և կամ մահատեսիլ։ Նարեկ. ղէ։

Մահարար. ի. ու. աց. օք։ || պատճառօղ մահու. կամ սպանօղ. կամ մահաբեր, և կամ մահացուցիչ. 'ի Վարս հարց. Ժէ։ Յն. ոսկ։

Մահարձան. ի. ու. աց. օք։ || կոթող. այ մեծագոյն, և բարձրագոյն քար սիւնաձև, կամ բրգաձև կանգնեցուցեալ 'ի վր գերեզմանաց մեռելոց առ 'ի յիշատակ. և կամ առ 'ի պատիւ նց։ Նոյնպէս ասացաւ մահարձան. իբր թէ մահու, կամ մահացելոց արձան։ և ըստ այսմ է 'ի գիրս Խորէն. բ. գլ. 43. ուր ասի. Յիշեալ թէ խառնուած արշակունեաց է, հրամայէ դնել նր թաղել մահարձանօք. այ կանգնեցուցանելով 'ի վր զմահարձանս։ Եւ յայսմանէ առեալ, մահարձան կոչեցան քարաշէն բրգունքն, զորս կանգնեն 'ի վր պարսպաց. և յետ կոյս նր կալով մարտկացն՝ ապահովութբ ձգեն զնետս, կամ զհրացանս 'ի վր թշնամեաց. վն որոյ և երբեմն կոչի նետակալ. կամ մարտկոց։ Յոբ. 14. 1։ Եսայ. 21. 11։ և 23. 13։ Երեմ. 50. 15։ Մերթ ևս մահարձան կոչին այնք բրգունք, զորս չինեն վն զարդու 'ի վր պարսպաց ապարանից, կամ 'ի վր պալատաշինից, կամ գահոյից՝ գեղեցիկ յօրինուածովք յորմէ նիւթոյ և իցեն։ Խորէն. բ. գլ. 87։ Նարեկ. 'ի տաղումն եկեղեցւոյ։

Մահացան. ի. ու. աց. օք։ || ցանօղ. կամ արկանօղ զմահ, կամ զմահացու խոց, և կամ զմահ պատճառօղ։

Մահացու. ցուի. ու. աց. օք։ || մահացուցիչ. կամ մահաբեր. և կամ մահառիթ. և ըստ այսմ ասի. մահացու դեղ. թոյն. պտուղ. և այլն։ Մարկ. 16. 18։ Նարեկ. ղթ։ և 'ի գործոց առաքելոց. ըստ այսմ ևս իմանի մինչ ասի. մեղք մահացու, իբր թէ մահացուցիչ. զի պատճառէ զմահ հոգւոյ։ Մերթ ևս նշանակի սովոր գործիքն մահու. և ըստ այսմ, խաչն մահացու կոչի. որպ ասի 'ի կնունս վարդավառ խաչին. մահացուն 'ի կենաց առնու իւր զօրս վերելեակս. այ խաչն ընդունի 'ի քնէ, որ է կեանք՝ զգեծեալ զօրս. այ զհրեշտակս։ Մերթ ևս նշանակէ զմահկանացուն. կամ զայն, որ մեռանելոց է. որպիսի է մարմինն. կամ մարդիկ. և այլ անբան կենդանիք։ Նա

րէկ. կգ. կդ. և հթ։

Մահացուցանեմ. ցուցի. ացո՛նել։ (անցողական.) || մահուամբ կորուսանել. կամ մեռուցանել. և կամ սպանանել։ ռամկ. ձեռնել։ Նարեկ. ժէ։ Ոսկէ. 2. հատ. Է։

Մահացուցիչ. ցուցչի. ու. աց. օք։ || մահացուցանօղ. այ մահուամբ կորուսանօղ. կամ մեռուցանօղ. և կամ սպանօղ։

Մահաւոր. ի. ու. աց. օք։ || ունօղ յինքեան զմահ, կամ զընդունակութիւն մեռանելոյ. և կամ մահկանացու։

Մահաքուն։ (Նախդրիւ հոլովի.) || քուն մահու ննջեալ. որով մերթ իմանի մեռեալն. իսկ մերթ սաստիկ խորին քուն ննջեալն, որով իբրթէ 'ի քուն մահու մըտեալ է։ Մերթ ևս նշանակէ զայն, որ է քուն մահու. կամ որ զմահաբեր քունն պատճառէ։ ըստ այնմ Մ'ծէն. ժը. ո՜ քնեալդ մահաքուն։

Մահեթոյն. թունի. իւ. ից. օք։ || տես ըզ մահաթոյն։

Մահիկ. հկի. իւ. աց. օք։ || եղջերաձև լուսնի. կամ եղջերաւոր ձև նր. զորպիսի ունի յորժամ է հինգ, կամ վեց աւուր. և կամ եօթնօրեայ։ Եւ յայսմանէ առեալ երբեմն նշանակին սովոր ա և իցէ ձևք, կամ կազմուածք, որք նկարին, կամ շինին ըստ ձևոյ եղջերաւոր լուսնի. և ըստ այսմ մահիկ կոչեցաւ ոսկեղէն զարդ ինչ լուսնաձև յօրինեալ, զոր կախեն կանայք ոսկեղէն, կամ արծաթեղէն շղթայիւք ըզ պարանոցէ, և կամ կրեն 'ի գլուխս իւրեանց կախեալ զճակատաւ. որպ և ռամիկ ընդելուզանեն 'ի հանդերձս ոսկեհուռս։ և ըստ այսմ է՝ Եսայ. 3. 20։ Եւ այս զարդ Դատ. 8. 26. շանչանուն կոչի. զորմէ տես ցի 'ի տեղւոջ իւրում։ Ըստ այսմ մահիկ կոչի և լուսնաձև կազմուածն այն, որ հաստատեալ կայ 'ի մէջ եկեղեցական ճաճանչին։

Մահիճ. մահճի. ու. աց. օք։ (մանաւանդ յոգնականապէս 'ի գործածի. իբրև գոնեղական.) || ննջարան. որով իմանի ան կողնակալն. այ փեղեկեալն հանդերձ անկողնօք, որ իբրև զգահ բարձրանայ յերկրէ. ունի ընդ նովաւ կարգ. թագուցանիլ իմն. յոր և լինել երանելով ննջել. որպ յայտ է Ղուկ. 8. 16։ և Սաղմ. 131. 3։ Իսկ մերթ նշանակի անկողինն հանդերձ ծածկարանաւ բարձիւ, և այլ կազմածովք իւրովք. թէ ունիցի զանկողնակալ, և թէ ոչ։ ռամկ. փէօշէկ։ Ելից. 21. 18։ 1. Թագ. 19. 13։ Ղուկ. 5. 18։ Իսկ Մարկ. 7. 4. նշանակէ զբազմականս, որք կազմին իբրև գեր կայն և զինչ անկողնոյ, և արկանին զյատակաւ սենեկաց՝ յորս բազմէին հրէայքն 'ի յատակըն զհաց։ ռամկ. սէտիր։

Մահկանացու. ցուի. ու. աց. օք։ || ունօղ զմահացու բնութիւն, որով իմանի այն՝ որ ենթակայ է մահու. կամ որում պարտ է մեռանիլ. կամ մահուամբ ապականիլ. որպիսի է մարդն, կամ մարմին նորա։

Digitized by Google

Ղևտաց. 3. 13: Իմաստ. 7. 1: և Հռոմ. 6. 12:

Մահկանացութիւն. թեան: || մահկանացու գոլն. կամ բնաւորութիւն մեռանելոյ:

Մահճակալ. ի. իւ. աց. օք: || կողինք, կամ բարձօղ զմահիճս, որով մերթ նշանակէին ոտքն մահճաց. և կամ բոլոր անկողնակալն. Թ. փէրէվէզէն: Եւ մերթ նա՝ որ կալեալ պահէ, կամ բարձեալ տանի զմահիճս: Մերթ ևս նշանակէ սոյլս ընկողնեալն, կամ բառնեցեալն 'ի վ[եր]այ մահճաց. և Է այսմ է 'ի գիրս Կիւրղի ԷՖԴ. ԺԵ. ուր ասէ՝ մին չև լի լինել քաղաքամիջաց մահճակալ հի ճանգօք:

Մահողկուղեան: (Նախադրիւ հոլովի.) || այն՝ որ ունի, կամ բերէ զմահաբեր ող կոյզս. և ըստ այսմ ասի 'ի Նիւսէ. Է. Բարունակս ապականաբեր, և մահողկուղեան:

Մահուչափ: || մերթ վարի սա իբրև զմակ բայ. այսպէս. մահուչափ վիժեփինդրել. մահուչափ հնազանդել. և այլն, և նշանա կէ մահուամբ չափ. կամ մինչև 'ի մահ. և կամ մինչև ցժամանումն սպանանելոյ, կամ մեռանելոյ: Ղուկ. 5. 3: Փիլիպ. 2. 8: ըստ այսմ են և բառքս այսոքիկ. արեամբ չափ. միջամբ չափ. ուսով չափ. հնգիւ չափ. և այլք բազումք, զորս տեսցես 'ի բառն չափ: Իսկ մերթ վարի իբրև զանուն ան հոլով. և նշանակէ մինչև ցմահ պարտա ւորօղ. կամ մահացու. և կամ մահաբեր. որ պիսիք են մեծամեծ մեղք՝ որք սպանա նեն զհոգին. և ըստ այսմ ասի. 1. Յոհ. 5. 16. են մեղք՝ որք մահուչափք են:

Մահտարաժամ. ու. ու. ուց. ուք. կամ օք: || մահ հանդիպեալ մարդոյ յապաժամ ժամանակի. որպիսի է այն՝ որ պատահի մարդոյ 'ի մանկութեան. կամ յերիտասար դութեան: Բայց յատկապէս առեալ՝ նշա նակէ զժանտամահն. Փ զմահաբեր ախտն՝ որ 'ի ժամանակս ժանտ հանդիպեալ՝ ապա կանէ թունաւոր հոտով զօդն, և ժան տութեամբ իւրով հարեալ զմարդիկ յանխ նայ կոտորէ՝ ելուզանելով զձօծանեմանն ե լունդ ինչ յաղուամէջս. կամ յանութս. և կամ յայլ մասունս մարմնոյ: ռամկ. խամալէն: 'ի շարունակ:

Մաղ. ի. իւ. ից. իւք: || խարբալ. որ է գոր ծի ինչ ծակոտկէն, որով մաղեն զցորեան, կամ զալիւր, և զայլս նմանս. որ և ռամկ. ասի մաղ: Մերթ ևս նշանակէ զմոմեղէն և զնրբանիւթ զանօթն զայն, զոր կաղ մեն մեղուքն 'ի փեթակի բազմախորշ և վեցանկիւնի ծակոտեօք, որք կոչին բջիջք. ուր հաւաքեալ զհիւթս ծաղկանց՝ կազմեն զմեղր. որ մինչ լցեալ լինի մեղերբ, ան ուանի խորիսխ. Մծբ. ԺԹ:

Մաղականաւ: (Նախադրիւ հոլովի.) || աստ ուիկ, կամ ողորմելի եղանակաւ կառաչօղ. Փ դոչօղ և հառաչօղ. որպիսիք են ումանք 'ի ցաւեալքն հիւանդաց: Մերթ ևս մա ղականաւ ասի այն՝ որ լինի ուժգին և ողորմելի կառաչմամբ, Փ աղաղակաւ. և Է այսմ ասի մաղականաւ հիւանդութիւն:

Մաղաս. ոյ. ով. ից. ովք. կամ օք: || է մինն 'ի չորից հիւթոց. որով զբաղկանայ խառ նուած կենդանեաց. որոց առաջինն կոչի՝ մաղձ, որում տիրէ հուրն: Երկրորդն սև մաղձ. որում տիրէ հողն: Երրորդն ա րիւն. որում տիրէ օդն: Իսկ չորրորդն մաղաս. որում տիրէ ջուրն: Սա ունի է սա ռնութիւն գէճ և ցուրտ. որ ըստ բժշկաց է անհամ և սպիտակ արիւն: Եւ բաժանի 'ի բնականն, և յանբնականն. Բնականն է քաղցր՝ կամ առանց կծուութեան և թթու թեան, որ խառնեալ յերակս ընդ ա րեան՝ սնուցանէ մասնաւորապէս խոնաւ և ցուրտ մասանց: [illegible]. 1. հատ. իդ: Իսկ անբնա կանն է երկու. մինն թթու. կամ կծու. և է բնութիւն սաստիկ ցուրտ և ժանտ: Իսկ երկրորդն է աղի. որ ծնանի յապա կանութենէ քաղցր մաղասոյն: Լամբրօն. և Աղթ.: Մերթ ևս նշանակէ ապականութեանն թացեալ յանէլոյածն, կամ գիրան մերոյ ա սացեալ մաղասիկն՝ որ թորի արտաքս 'ի քթանոյ. կամ յընչից. ռամկօր. ... կամ խըլէ:

Մաղասակոտ. ի. աւ. աց. օք: || տե՛ս 'ի ներքոյ զՄաղասոտ:

Մաղասոտ. կամ մաղասակոտ. ի. աւ. աց. օք: || նա՝ որոյ խառնուածն առատացեալ է մաղա սով. Փ սպիտակ մաղձիւ. որ պատճառէ զգիճութիւն. և զցրտութիւն. ուստի այսպի սիքս լինին բնութեամբ հեղգ, և գանդաղ կոտ. և կազմուածով թոյլ և տկար. և Է արխատաւելի ունին զաւակաւ ընդունակու թիւն մակացութեանց:

Մաղատեսակ. ի. աւ. աց. օք: || ունօղ զըղ տեսակ, կամ զնմանութիւն մաղի. և կամ այն՝ որ ունի զծակոտիս իբրև զմաղ:

Մաղել. եցի. եա՛. եալ: (Ներգործ.) || խար բալել զցորեան. կամ զալիւր. և կամ զայլ մաղելի իրս, որով որոշին անպիտանիքն 'ի պիտանեաց. որ և ռամկ. ասի՝ մաղել: Եւ յայսմանէ առեալ՝ երբեմն մաղել ասի խիստ առ խիստ հարցուցանելն, կամ թօթա փելն զյօդուածիւ բազմութիւն իրի իմիք վերուստ 'ի վայր՝ թէ ընդ ծակոտիս մաղի իցէ, և թէ ոչ: Եսայ. 29. 5: Նշուէն. կը:

Մաղզմայն. կամ մաղզման. ի. աւ. աց. օք: || արծաթեղէն, կամ ոսկեղէն տափարակ և բոլորակ անօթ ինչ որբաղղան. յորոյ վ[եր]այ դնի նշխարն պարոյ պատարագին: Լամբրօն:

Մաղթանք. անաց. օք: (անեզական.) || ա ղաչանք. կամ խնդրուած. կամ հայցուած. և կամ պաղատանք: Մերթ ևս մաղթանք կոչին բանք աղաչանաց. կամ պաղատանաց. և ըստ այսմ ասի՝ յղեցին բազմութիւն ըղ մաղթանս. կամ զմիմեանց զինի գոյսին մաղ թանքն: Խորէն. Գ. գլ. 29. և 65: Այսպէս մաղթանք կոչեցան եկեղեցական աղօթքն, զորս ասէ սարկաւագն. ըստ որում են բանք աղաչանաց. կամ խնդրուածոց:

Մաղթեղջիւր: || տե՛ս 'ի բառարանի յատուկ անուանց:

Մաղթեմ. եցի. եա՛. եալ: (Ներգործ. և մերթ

չէզոք.) ‖ աղաչել. կմ՛ պաղատիլ. կմ՛ ա-
ղաչանօք խնդրել, կմ՛ հայցել: Խմտ. 13.
18: Խորէն. Գ. գլ. 27:

Մաղթիւն: (Նախդրիւ հոլովի.) ‖ մաղ-
թումն. կմ՛ մաղթանք: Իսկ 'ի գիրս Կոր
ղի ԷԷԹ. Գ. առեալ լինի փոխանակ գիռ
սի, որ է արամազդ. զորմէ առասպելա-
բանէին հեթանոսք, թէ սատակեալ ըզ-
նա աքիլլեւսի՝ մինչ կամէր զգի նր կողոպ
տել, փոխեցաւ 'ի կարապ թռչուն. և
վն այսորիկ ասէ սքն ստոէն, լուռ եղէց
փարթար զոր մաղթիւն արարն փոփո-
խութիս, ք լռեցից ասել զփոփոխումն
մաղթիւն չաստուածոյն 'ի կարապ թըռ-
չունն, որ 'ի մեղ սխալմամբ գրեալ կայ
արապ:

Մաղկատեմ. եցի. եա. ել: (չէզոք.) ‖ գո-
րովել. կմ՛ խանդաղատիլ. կմ՛ աղէխարշ լի-
նել. և կմ՛ 'ի գթոյ աղեաց ցաւել:

Մաղկատեցուցանեմ. ցի. եցո. ել: (անցո
ղական.) ‖ գորովեցուցանել. կմ՛ խան-
դաղատեցուցանել. կամ մորմոքեցուցա-
նել. և կմ՛ աղէխարշ առնել:

Մաղձ. ի. կմ՛ ոյ. իւ. եց. իւք: ‖ է հասա-
րակ անուն երկուց հիւթոյ կենդանւոյն.
որոց մինն է դեղին. իսկ միւսն սեաւ:
Յորժամ եդեալ լինի փոխանակ սևոյն,
միշտ ասի՝ սևամաղձ. զոր տեսցես 'ի տեղ
ւոջ իւրում: Իսկ յորժամ եդեալ լինի փո
խանակ դեղնոյն՝ ասի սոսկ՝ մաղձ. որ է
բնութիւ ջերմ և չոր. և 'ի տարերս համե
մատի հրոյ. և պատճառէ զբարկացողու
թիւ. և զանողորմութիւ. ուստի և երբեմն
առեալ լինի փոխանակ բարկութե: Արդ՝
բաժանի սա յերկուս, ք 'ի բնականն, և
յանբնականն. բնականն խառնեալ ընդ
արեան 'ի յերակս՝ սնունդ տայ ջերմ և
չոր մասանց մարմնոյ. որոյ մնացորդքն է
քրտանցն արտաքս հոսին ընդ ծակոտիս:
Եւ է սորա այլ տեսակ ինչ՝ որ ոչ ծա-
ռայէ սննդեան. այլ իբրև զգիրտ և զյա
ւելուած քամեալ յերակաց արեան՝ իջա-
նէ 'ի բշտիկն, որ կախեալ կայ զլերդէն.
և է դառն և ժանտ. որ մասնաւոր ան
ուամբ կոչի լեղի որ և 'ի բշտէ անտի իջեալ
'ի փորոտիսն վտարէ զկղկղանս, և ընդ նմ
ատխպով ելանէ արտաքս. ռամկ. ղաֆրայ:
Յօբ. 16. 14: Գործ. 8. 23: Իսկ անբնականն
ունի զբազմազան տեսակս, որք ըստ մե-
ծի մասին գոյանան 'ի խախացոցն 'ի կծու,
և 'ի դառն կերակրոց. և պատճառեն զպէս
պէս հիւանդութիւս և զախտս՝ մանաւանդ
ստամոքաց: Շնորհալին:

Մաղձադեղ. ոյ. ով. ոց. կամ եց. ովք: ‖
դեղ. զոր տան բժիշկք վն արտաքս վա-
րելոյ զաւելորդ մաղձն՝ որք պատճառեն
զխօթութիւն:

Մաղձամակարդ: (Նախդրիւ հոլովի.) ‖
մաղձիւ մակարդեցեալ. կմ՛ դառնութբ
մաղձին մածեալ, և տոգորեալ. ոճ հան
դիպի քմաց՝ կմ՛ բերանոյ ոմանց հիւան-
դաց:

Մաղձոտ. ի. իւ. եց. իւք. կամ աւ. աց. օք:
‖ Նա՝ որ ունի զմաղձային խառնուած.
կմ՛ որոյ մաղձն առաւելագոյն է քան զայլ
հիւթսն, որով բնականաբար դիւրաշարժ
լինի 'ի բարկութիւ: Իսկ շարժմամբ ա-
րագ. և մտօք սուր, և զուարթամիտ 'ի
գործել:

Մաղմաղեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) ‖
մաղելով մաղել. կմ՛ սակաւ մաղել: Իսկ
մերթ նշանակէ ծակոտել, կամ իբրև ըզ-
մաղ՝ բազում և խիտ ծակոտեօք լինել:

Մաճ. ոյ. ով. ոց. ովք. կմ՛ եց: ‖ է փայտ
ինչ երկայն, զոր ուղղակի կանգնելով՝ հաս
տատեն զատոյին ծայրն նր 'ի յետին կողմն
արօրին, ք փայտեղէն մեծ կազմուածոյն,
յորում է խոփն. իսկ 'ի վերին ծայրն ու-
նի զկեռ ինչ իբրև զմխոնիւոյ: Զայս ծայր
'ի հերկելն զերկիր՝ ըմբռնէ մաճակալն,
և կառավարէ զարօրն, զի մի թիւրեսցի:
Սիրաք. 38. 26: Ղուկ. 9. 62:

Մաճակալ. ի. աւ. աց. օք: ‖ Նա՝ որ 'ի հեր
կելն զերկիր՝ կալնու զմաճն, և կառա-
վարէ զարօրն: Եսայ. 61. 5: Նարեկ. ծդ:

Մաճակալութիւ. թեան: ‖ ըմբռնումն մա
ճոյ հանդերձ կառավարմամբ արօրին, ո-
րով հերկի երկիր: Լամբրոն:

Մաճառակ. ի. աւ. աց. օք: ‖ բլիթ պան-
րոյ՝ ք գլուխ պանրոյ, կմ՛ գնտաձև պա-
նիր: Իսկ մինչ ասի մաճառակ կաթին՝ իմա
նի բլիթն նորոյ պանրոյ կազմեցելոյ 'ի
կաթանէ, և ոչ 'ի մածնոյ: ռամկ. Պանը-
րի գլուխ: 1. Թագ. 17. 18:

Մաճառ. ի. աւ. աց. օք: ‖ զարկ բազկի.
ք մեծ երակն բազկին, որ ուժգին շար
ժի ընդ դաստակօք ձեռաց. զոր կալնլով
բժիշկք ճանաչեն զորպիսութիւ հիւան-
դին: ռամկ. Նապզ:

Մամուլ. մամլոյ. ով. ոց. ովք: ‖ կազմուած
ինչ փայտեղէն, կմ՛ երկաթեղէն, որ ու-
նի զերկուս հարթաձև կողմանս կար-
գեալս մի 'ի ներքոյ միւսոյ. կմ՛ դէմ ընդ
դէմ միմեանց, որք 'ի ձեռն սխնաձև ստա
մնաւոր գործեաց ագուցելոց ընդ ծակս
նց՝ շրջանակաւ ստամնաւորեալս՝ առ ի-
րեարս սեղմին առ 'ի ճմլել, կմ՛ պնդել
նուլ զայն, զոր 'ի միջոց նց մուծանեն:
ռամկ. Ճէնփէրէ, կմ՛ մէնկէնէ: Աշգոթ. և 'ի
Շարականոցի:

Մամուռ. մամռոյ. ով. ոց. ովք: ‖ տես ըզ-
Լոռ: 'ի Վարս հարց. Ը: և Լամբրոն:

Մամռամատ. ի. իւ. եց. օք: ‖ ելանէ սա 'ի
մամուռ բառէս, և 'ի մատ վանկէս, որ է
մերձ, կմ՛ յար, և կմ՛ կից. ոճ տեսցես զկնի
Ուստի բառիս մամռամատ նշանակի այն՝
որ կցեալ, կմ՛ յարեալ կայ 'ի մամուռս.
կմ՛ որ մածեալ և լցեալ կայ մամռովք.
որպիսիք են մամռոտ ջուրք, կմ՛ քարինք
ծովու: Իսկ 'ի Նարեկ. ծդ. ուր ասի մամ
ռամատ մահաբեր երկամբք. նշանակին մա
հաբեր վիշտքն խեղդեցման 'ի մամռոտ
ջուրս:

Մամռոտ. ի. իւ. եց. իւք: կամ աց. օք:

այն՝ որ առաստաղեալ է մամռովք, կամ որ բուսեալ ունի յինքեան զմամուռս․ որպիսիք են ոմանք քարինք կամ ցիցք ծովու․ և այլք բազումք․

Մամռիկ․ մամռկի․ աւ․ աց․ օք։ || Է բոյս ինչ ջրային, որ բուսեալ զորմովք և զծառովք սառնուտ տղմուտի և կոճէի․ ունի զանդրև խոտ՝ լայն և թանձր․ զոր զնեն 'ի մէջ խտղառնաց բացեկաց 'ի բազումս, կամ 'ի սրբանս, առ 'ի օգնել հնամաց հիւթոց․ որ և յանուն բուսոյն ելեալ կոչի մամռիկ․ գաղղ․ ...

Մամոնայ․ կամ մամմոնայ․ ի․ իւ․ եց․ իւք։ || Է բառ ասորւոց, որ թարգմանի՝ հարստութիւն, կամ փարթամութիւն․ կամ մթերք ընչից՝ և ստացուածոց․ և կամ գանձ ոսկւոյ և արծաթոյ։ Մատթ․ 6․ 24։ Ղուկ․ 16․ 9։

Մայթ․ ի․ իւ․ եց․ իւք։ || Ճեղք, կամ անցք այն՝ որ լինի քարամբք յերկուսին եզերս ճանապարհաց առկաւ ինչ բարձրագոյն քան զընթացս միջակատեացն, կամ քան զմիջին անցս․ ...

Մայիս․ ի․ իւ։ || Է անուն ամսոյ հաւասարեցեալ, որ հինգերորդ ամսոց է ամսոյն հայոց․ և սկզբան ամսոյն եբրայեցւոց։

Մայր․ մօր․ մարբ․ մարք․ մարց․ մարբք։ || Էգ ծնօղ, որ ծնանի զզաւակս․ ... Եւ այս յատկապէս ասի զառաջնականաց․ որպ․ Ծննդ․ 3․ 20։ Իսկ երբեմն երկրորդաբար առեալ ասի նաև զանբան կենդանեաց․ որպ զոչխարաց, զթռչնոց․ և զայլոց․ 2․ Օրին․ 14․ 21։ և 22․ 6։ Մերթ և մայր անուանին կանայքն, որ մայրենի սիրով խնամեն, կամ պաշտպանեն զոք․ թէև ոչ իցեն ծնօղք նոցա․ և ըստ այսմ դեբորա կոչեցաւ մայր իէլի։ Դատ․ 5․ 7։ Եւ մինչ ասի մայր լեզուաց, իմանի գլխաւոր, կամ սկզբնաւոր լեզու, յորմէ այլք են ... Եւ մինչ ասի մայր քաղաքաց, իմանի մայրաքաղաքն, զոր տեսցես 'ի տեղւոջ։

Մայրի․ րի․ իւ․ եց․ իւք։ || Է ծառ ինչ մշտականաչ երկար ուղիղ և ... ունի զարմանալի հոտ, ... և կարծրակեղև․ բայց փայտ նորա է ազնիւ, անփուտ, և հատուկ․ Յորմէ բազում անգամ հանեալ ... 'ի գործ առնեն յաղագս շինուածոց․ ունի ... նման ... կարծր՝ ... և փշոտ․ Մայրք ... բազմահատ ըստ ձևոյ պտղոյ ... որ կոչի կոնաձև․ իսկ այլք ասեն ... հատ հատ բոլորակաձև նման պտղոց մրտոյ, որք են կարմրագոյն և քաղցրահամք․ Արզ՝ բարձանի ծառս այս ... յերկուս տեսակս, որոց մինն է փոքր և յոյժ նման զկոյ, բայց միւսոյն ... ... է․ Իսկ միւսն է մեծ, որ ... է բարձրութեամբ հարիւր և երեսուն ոտից, և ... զառաւելութեամբ հնոց ... մարդոյ, և ... Արզ՝ լինին ... 'ի կիրառ․ ի կիպրոս․ 'ի լեռնին ... և մանաւանդ 'ի հռչակաւոր լեռանն լիբանանու, որ յաճախ ...

... ... Թագ․ 24․ 6։ Մաղք․ 28․ 5։ Եզեկ․ 31․ 8։ Դարձեալ բազում մայր երբեմն նշանակէ գերանս, կամ փայտս հատեալ 'ի մայրից։ 3․ Թագ․ 5․ 8։ 2․ Մնաց․ 1․ 15։ Եւ կամ այն, որ է շինեցեալ 'ի մայրի փայտէ։ 3․ Թագ․ 6․ 15։ Երգ․ 1․ 16։ և 8․ 9։

Մայրագիր․ գրի․ աւ․ աց․ օք։ || Գրեցեալ, կամ համարեցեալ 'ի մայր, որում նշանակի կենդան այն, զոր ունի որ ... ... զմայր․ և կամ ուղղագրի նոյն ... ։

Մայրական․ ի․ աւ․ աց․ օք։ || տես զՄայրենի։ Նարեկ․ 'ի գովեստ։

Մայրակեր․ ի․ իւ․ եց․ իւք։ || կերակրեցեալ և շինեցեալ 'ի մայրից։ Իսկ մերթ գոյա-կանաբար առեալ նշանակէ զկերակուրս կամ զշինուածս մայրափայտեայս, որպիսիք են տապարանք, և կամ պալատք, և այլք նմանք։ Երեմ․ 22․ 15։

Մայրամուտ։ (նախադրիւ հոլովի․) || մտեալ և պատեալ 'ի մայր փայտից, որպիսիք են ոմանք յորմոց, կամ յատակաց։

Մայրապետ․ ի․ իւ․ աց․ օք։ || պետ և գլուխ մարց, որում նշանակէ աբբայութիւն, որ ունի ընդ իշխանութեամբ իւրով զբազում հաւատաւոր կուսանս, և կառավարէ զնոսա։

Մայրաստան․ ի․ աւ․ աց․ օք։ || սպանանօղ մօր իւրոյ․ կամ մայրասպանող։

Մայրատառապանք․ ի․ աւ․ աց․ օք։ || տառապանք կրեցեալ 'ի մայրից․ ըստ այնմ․ Նարեկ․ 'ի ... ... Դրոշմ հիւանդ մայրատառապանք։ Իսկ մերթ վարի երբեմն ածական, և նշանակէ զայնոցիկ մայր տախտակաց, կամ շինեցեալն մայր տախտակօք․ և ըստ այսմ ասի մայրատառապանք կողմանց, կամ տապարանք․ և այլն։

Մայրափայտ․ ի․ իւ․ ից․ իւք։ || փայտ մայրից, թէ գերան իցէ, թէ տախտակ, և թէ այլ ինչ։

Մայրաքաղաք․ ի․ աւ․ աց․ օք։ || մայր քաղաքաց, որում իմանի գլխաւոր և մեծ քաղաքն, որ ունի շուրջ զիւրև զբազում փոքր քաղաքս, և հանգրուանս, և գիւղս․ որք են պարառեալ ընդ ձեռամբ նորա․ և ինքն երև զմայր խնամէ, և կառավարէ զնոսա, որպիսի է մեծն հռոմ․ կոստանդնուպոլիս․ վէնէտիկ․ և այլք բազումք։ Եսթ․ 9․ 19։ Խորէն․ Գ․ գլ․ 49։

Մայրաքաղաքացի․ ցւոյ․ եաւ․ եաց․ եօք։ || Նա, որ ծնեալ է, կամ բնակի 'ի մայրաքաղաքի։

Մայրենի․ նւոյ․ եաւ․ եաց․ եօք։ || մայրական․ կամ այն ամ, որ է մօր, կամ վերաբերի առ մայր․ և ըստ այսմ ասի մայրենի գութ, կամ կաթն․ կամ պատ․ և այլն։ Նարեկ․ 'ի գովեստ։ Խորէն․ Գ․ գլ․ 23։ Իսկ մերթ վարի գոյականաբար, և նշանակէ ազգն, կամ տոհմն, և կամ երկիրն մօր ուրուք, որպիսի է և բառն հայրենիք։ Խորէն․ Գ․ գլ․ 48։

Մայրի․ րւոյ․ եաւ․ եաց․ եօք։ || անտառ, կամ խիտ բազմութիւն ծառոց անկեալ 'ի լերինս․ կամ 'ի դաշտս․ և կամ վայրի անտառ՝ լցեալ բազմութեամբ ծառոց խիտ առ խիտ

անկեցելոց, թէ մայրք կցեն, թէ հաւանեք, և թէ այլք ծառք: ուսմն. տանն: 2. Օրէն. 19. 5: Յոբ. 38. 40: Սաղմ. 131. 6: Ըստ այսմ է և Երեմ. 26. 18: և Միք. 3. 12. յորս ասի՝ լեառն տանն տեղեցի եղիցի որպէս զանտառս մայրեաց. ցի եղիցի զմայրի անդէն թանձրախիտ ծառոց: Մերթ ևս նշանակէ զծերպս. կամ զխապարս լերանց. կամ զմորիս, և կամ զորջս. յորս բնակէին գազանք. կամ երէք: ուսմն. գաղղիերէն բառն. Անգ. 3. 4: Նաւում. 2. 11. և 12:

Մայրիփայտեայ. անէ. իմ. ից. իւք: || այն է, որ է կերտեցեալ. կամ շինեցեալ 'ի մայրի փայտից: Անգ.

Մայրօրինակ: (Նախադրիմ հոլովի.) || մայրաձևման. կամ մայրականերպ. կամ մայրենի. և կամ մայրական. ըստ այնմ. Նորէկ. 'ի գովեստին. Եւ հասարակին ծառայց աշխարհի մայրօրինակ անուանեալ ձայնեցար: Իսկ մերթ վարի որպէս զմանկունս. և նշանակէ մայրաբար. և կամ ոչ զմայր:

Մահ. ի. իմ. ից. իւք. կամ աց. օք: || մահունն. կամ ոլոր. կամ պատուհաս: Իսկ մերթ նշանակէ զսաստիկ ախտն, որ կայ յերկաս հետեւելոց երաց. կամ զտառապանս մարդոյ. և այլն: Մերթ ևս նշանակէ ըզ հիւանդն զայն, որ որպէս զմեզ պատեալ ունի զերեսս պաղոց, ոչ անտանելով 'ի մի խաղողոյ, և այլոց բաղմաց: ուսմն. գործ. փոսն: Իսկ մերթ ընդ բայի շարակցի այսպէս, մահ առնուլ, և նշանակէ պատուհասել. կամ ոլորել. կամ շիջել. և կամ շուրջանակի բերել:

Մահ: (Նախադրիմ հոլովի.) || է բառ եբրայական, որ եկանէ 'ի բառէս մանայ, որ է թուել. կամ չափել, և նշանակէ զմնասն. 3. Թագ. 10. 17. ուր ասի՝ երեք մնաք ոսկիք 'ի մի զէն. խմանի երեք մնասք ոսկիք. այլ զի մնասն եբրայական երբեմն առնեալ լինի փոխանակ յիսուն սկեղ. որ է երկու հարիւր տրամ, վասն այնորիկ երեք մանքն առնեն՝ վեցհարիւր տրամս. յորմէ յայտ է, թէ 'ի մի զէնն դայր հօթնայ և կէս՝ ոսկի: Եւ ըստ այսմ ամենևին նոյնանման երեք մանքն ընդ երեքհարիւր դահեկանաց, ցի սկեղաց առեալց ըստ արքունի համարոյ. քանզի մի արքունական սիկղն է երկու տրամ. և այսպէս երեքհարիւր սկեղքն, կամ դահեկանքն առնեն վեցհարիւր տրամս. ոչ առնեն և երեք մանքն. և վասն այնորիկ նոյնն՝ որ 'ի գիրս երրորդ թագաւորաց կոչի երեք մանք, 2. Մնաց. 9. 16. անուանի երեքհարիւր դահեկան: Պարզեալ՝ բառս մահ՝ առ եբրայեցիս նշանակէ՝ զինչ. կամ զինչ է: Որպէս Ելից. 16. 15. ուր ասի. Զինչ է այս, եբրայեցիքն ասեն մահ հու, որ զնոյն նշանակէ. Եւ զի որդիքն իսրայէլի 'ի յանապատին զմանանայն՝ տեսեալ ընկեր ցընկեր. մահ հու. ցի զինչ է այս. վասն այնորիկ անուանեցաւ. մանն. Ելից. 16. 31: Բայց աստ զայս մահ՝ քաղդէացիքն կոչեն մանանայ, որ է նոյն նշանակէ պարգև. կամ ընծայ. զոր անեցէս զինի: Եւ յայսմանէ առեալ առաւօտու թէ եղև՝ զմանն կոչել 'ի մեզ մանանայ. ոչ և ամենայն մանանայ: Սաստի որ 'ի 31. փոխն ասի՝ մահն, յետոյ 'ի համարն. 32. և 33. և 35. կոչի մանանայ. ուր եօթանասունքն. և այլք ամենայն պահեն զեբրայական բառն, մահն:

Մանանայ. ի. իմ. ից. իւք: || է բառ քաղդէացւոց, որ եբրայեցերէն կոչի մահն. ոչ 'ի մեր աւագաւ: Արդ՝ առհասարակ նշանակէ երկնաւոր կերակուրն այն՝ զոր փոխանակ հացի յամենայն առաւօտու տեղայր ամ շուրջ զբանակաւ որդւոցն իսրայէլի զամս քառասուն յանապատին: ըստ Մովսէսէ, և ըստ բոլորակութեանն էր նման գնձոյ. ցի [illegible]: Բայց ըստ գունոյն, և ըստ անուշութեանն էր նման եղեման, և սատրի: Բնական համ նորա էր որպէս զկարկանդակ մեղու, և իւղոյ. բայց ըստ ախորժման ճաշակողացն առայր և զայլ համս. վասն զի ըստ ձեւոյ չերլայպէս զամ համ ունէր յինքեան. ոչ ասի Իմաստ. 16. 20. և 21: Բնութիւն նորա էր զարմանալի, զի 'ի բացի միացեալ ջերմութեան արեգական հալէր. իսկ յեփելն 'ի պտուտան, կամ 'ի տապակի նաև 'ի բռնութէ հրոյ ոչ հալէր: Ելից. 16. 14. և 31. և 33: Թուոց. 11. 7. և 8. և 9:

Մանանեխ. մանանխոյ. կամ նեխի. ով. ոց. ովք: || է հատ ինչ որպէս զկուռ թզոյ, որ փոքրիկ է քան զամ հատս սերմանեաց. սակայն մինչ բուսանի՝ արձակէ զոստս մեծամեծս. և լինի որպէս զծառ: բնութիւն է սաստիկ ջերմ. ունի զհամ յոյժ բարկ. և պգնու. Մինչզի հաւեցուցանէ յաչաց զարտասուս, յորժամ ոք առնել ծամելով ուտէ զայն: Համեմիչ է կերակրոց. և ունի զբազում օգտութիւնս 'ի գեղորայս: Եւ յանուն իւր՝ մանանեխս կոչի նաև տանիկն, յորմէ արտադրի իւղն: ուսմն. հատորդ. Մատթ. 13. 31: և 17. 19: Մարկ. 4. 31:

Մանանաւշ. Նանուշոյ. ով: || է բղական անուն. որ նշանակէ զդուստրն, կամ զկինն Մանանու:

Մանաւանդ: (Նախադրիմ հոլովի.) || մանաւօդ. կամ պատուաւոր. կամ շրջանս առնօղ. և կամ շրջանակաւ դարձօղ: և ըստ այսմ ասի, մանաւանդ հողմ. մանաւանդ գործի. և այլն:

Մահ առնուլ. առի. ձևով: || անս 'ի բառն Մահ:

Մանաւանդ: (Նախադրիմ հոլովի.) || առաւել մանաւանդ. վասն զի մանաւանդ, և ըն յարելով երբեմն ոմանց յառաջ անուանց, նշանակէ զորոգելն, 'ի բառն հայ անուանական: Մերթ ևս նշանակէ առաւել այլ ու և ինչ էր. որ մանաւանդ է. կամ առ մանաւանդ վերջաբերի. որպէս է առնն. կամ ինչ քան զոր. և այլք նման:

Մանաւանդ: (Մակբայ նախընտրական.) || յաւէտ. կամ առաւել. կամ ևս առաւել: Գործ. 20. 35: 1. Տիմ. 2. 2:

Մանաւանդապէս: (մակբայ նախընտրական.) || առաւելապէս. կմ մանաւանդ:

Մանգաղ. ի. աւ. աց. օք: || է կիռ. գործիք ինչ երկաթեայ սուր բերանով, յոր ատամնացուցեալ զմեղեխ. գ դկոթ. հնձեն զոճ արտորէից. կմ զխոտեղէնս: Իւր առացաւ մանգաղ, իբրթէ մահ քաղ. գ մահ ատամնով քաղօղ. որ է յատուկ մանգաղաց: 2. Օրին. 16. 9: Յովէլ. 3. 13: Մարկ. 4. 29:

Մանգղիոն. գլոնի. աւ. աց. օք: կմ իմ. ից: || մեքենայ. կմ մեծ կազմուած հնարագիտական արուեստիւ շինեցեալ 'ի ձեռն գերանաց. կմ մեծամեծ երկաթից և փայտից, զոր կանգնեն առ պարսպօք պաշարեցելոց քաղաքին. և արկանեն նովաւ ըզ մեծամեծ քարինս, կմ զնետս 'ի ներքս 'ի քաղաքն. և կմ 'ի ձեռն հոյոց հարեալ կործանեն զպարիսպս նր. որպիսի է բաբանն, որ 'ի տեղւոջ իւրում մեկնեցաւ: 1. Մակ. 5. 30: և 6. 31. և 51:

Մանգղոյ. ի. իմ. ից. իւք: || նոյն է ը վեր նոյն. 2. Մակ. 12. 15:

Մանեակ. նեկի. աւ. աց. օք: || է զարդ ինչ, զոր կազմեն յոսկւոյ, կմ յարծաթոյ բոլորակաձեւ իբրեւ զօղ. գ իբրեւ պճղինս. և երբեմն ընդելուզեալ զնա ականգք պատուականօք, և մեծագին մարգարտօք արկանեն 'ի պարանոց վն զարդու. կմ վն իրիք քաջութե, զոր արարեալ է ոք. ոչ ամենեքին 'ի հնումն ոմանց իշխանաց. կմ քաջ արանց: Ծննդ. 41. 42: 1. Եզր. 3. 6: Դանիէ. 5. 29: Մերթ եւս առեալ լինի փոխանակ ո և իցէ օղաձև ըմբռնեալ. և կմ գործեաց. և այս մանաւանդ յորժամ շարակցի ընդ օղ բառին այսպէս. օղամանեակ. ռամկ. հալխայ. Ելից. 25. 12: Իսկ Եզեկ. 52. 21. ուր ասի. Իւր մանեակ յերկաթոյն կնգնոյ շուրջ զնովաւ. իմանի շրջանակն, կմ շրջապատն նր՝ որ սովոր է լարիւ, կամ թելով չափել. Բայց Ժող. 12. 6. ուր ասի. խորտակեսցի մանեակ ոսկւոյն, նմանաբանութբ առեալ լինի փոխանակ ոսկեգոյն մզնեաց ք մաշկաց, ուր պատեն զուղեղն իբրեւ զմանեակ:

Մանեկաձեւ. ի. իմ. ից. իւք: || ունօղ զձեւ մանեկի. կմ բոլորակ իբրեւ զմանեակ:

Մանեկաձեւութի. թեան: || լինելն 'ի ձեւ մանեկի. և կամ ձեւ անորոյ: Իւր յայտնա նէ մանեկաձեւութն կոչի նուրբ խայթոցն ճպռան. քառ որում ոլորէ զնա իբրեւ ըզ մանեակ:

Մանեկաւոր. ի. աւ. աց. օք: || ունօղ զմանեակ. և կմ որ ոսկենիւթ մանեկաւ զարդարեալ ունի զպարանոց իւր: Մծին. ժի:

Մանեմ. եցի. եա. ել: (ներգործ.) || նիւթել. ք ոլորել. կմ ոլորելով գործել ըզ թելս վիշոյ, մազից, բամբակաց, և այլոց նմանեաց որ և ռամկ. ասի ձոնել: Ելից. 26. 31: և 35. 26: Տօբ. 2. 19:

Մանէ: || է բառ քաղդէական, և թարգմանի չափեաց. կմ թուեաց: Դան. 5. 25:

Մանիշակ: || տես զՄանուշակ: Լ. Ծբրօն:

Մանկ. ի. իմ. ից. իւք: || հնարագէտ. կմ խելամուտ 'ի ճարտարել զինչ. և կմ հըմուտ հնարից, և այսպէս ծածուկ խաբէութեանց. և սա գրեթէ միշտ 'ի գործածի յարելով յայլ անուանս. ոպ յայտ է 'ի խորամանկ բառէս:

Մանկաբարձ. ի. աւ. կմ իմ. աց. օք: || բարձօղ մանկան. կմ նա, որ 'ի գիրկս իւր կըրէ զմանուկ: Բայց յատկապէս առեալ նշանակի սովաւ, ծնուցիչն. գ նա, որ 'ի ժամու ծննդեան օգնէ ծննդողին, առնլով նմա դիւրութի ծնանիլ զզաւակ. և զի զծնեալ մանուկն ընդ երանելն յարգանդէ ինքն բառնայ, վն այնորիկ անուանեցաւ մանկաբարձ: ռամկ. ըոյէէ: Ելից. 1. 19. և 20:

Մանկաբարոյ. ի. իմ. ից. իւք: || ունօղ ըզ բարս մանկան. կմ իբրեւ զմանուկ վարօղ. որ և ասի տղայաբարոյ:

Մանկաբեր. ի. աւ. աց. օք: || բերօղ մանկան. կամ մանկածին:

Մանկադոյն. դունի. իմ. ից. իւք: || տասճեղ մանուկ. կմ համբակագոյն. և կամ կրտսեր: Խորէն. Գ. գլ. 53:

Մանկազրաւ. ի. իմ. ից. իւք: || զրաւօղ մանկան. գ սպանող, կմ կոտորօղ մանկանց: Իսկ մերթ նշանակէ զրաւել 'ի մանկանց. գ նա, որ զրկեցեալ է 'ի մանկանց. կմ ոչ ունի զորդիս:

Մանկախել. ի. իմ. ից. իւք: || ունօղ զխելս մանկան. որով իմանի՝ անիմաստն. կմ անմիտն, և կմ անհանճարն:

Մանկածին. ծնի. իմ. ից. իւք: || ծնանօղ մանկան, կամ զաւակի:

Մանկական. ի. իմ. աց. օք: || մերթ նշանակէ զմանկաբարձն: իսկ մերթ զդայեակն. կմ զսնուցիչն. գ զնա, որ կաթամբ իւրով սնուցանէ զերեխայն, և զի այսպիսեաց յատուկ է կալնուլ 'ի գրկի զմանուկն. վն որոյ և կոչեցան մանկական: Եսայ. 49. 23:

Մանկակերտ. ի. իմ. աց. օք: || այն, որ է կերտեցեալ. կմ շինեցեալ 'ի մանկանց: Բայց յատկապէս առեալ նշանակի սովաւ ունօղն զհասակ մանկութե. և կամ զորպիսութի մանկական տիոց:

Մանկակոտոր. ի. իմ. ից. իւք: || կոտորօղ, կմ սպանանօղ մանկանց. ոպ եղեւ հերովդէս: Իսկ մերթ նշանակէ զնա, որոյ կոտորեալք են զաւակք:

Մանկամարդ. ի. աւ. աց. օք: || էգ մարդ, որ գտանի 'ի մանկութե. կմ յերիտասարդութե. և կամ չեւս է պառաւեալ: ռամկօր. կէնճ կին: 1. Տիմ. 5. 2. և 11. և 14: Տիտ. 2. 4:

Մանկամարզ. ի. իմ. ից. իւք: || մարզօղ. գ վարժող և ուսուցանօղ զմանկունս 'ի վարս բարիս, և 'ի քաղաքավարութիս. և կմ յարհեստ ինչ:

Մանկամիտ. մտի. իմ. ից. իւք: || ունօղ զմիտս մանկան. կմ տհաս միտս. կմ անհանճար. կմ անուսումն. և կմ անմիտ: Լ. Ծբրօն:

Digitized by Google

Մանկանամ. ացայ. ցիր. անալ. (ըստ դմին.) || մանուկ լինել. կամ տղայանալ։

Մանկապարտ. ի. աւ. աց. օք. || տղայահատօղ զմանկունս։

Մանկավարժ. ի. իւ. ից. իւք։ || Վարժօղ մանկանց. կամ դաստիարակ. կամ ուսուցիչ. և կամ վարդապետ։ Նիւրէն. ծա։

Մանկավարժեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) || Վարժել զոք 'ի մանկութենէ. կամ մնուցանելով կրթել, և ուսուցանել. և կամ առաջնորդել. որ և ասի դաստիարակել։ Նոննի. զթ. և Յհ. որդի։

Մանկատի. ակոյ. ով. ոց. ովք։ || Ունօղ ըզ տիս մանկան. կամ տիօք մանուկ. և կամ մանկահասակ։ Իսկ մերթ 'ի յոգնականն, ոճն նշանակէ զտիս. կամ զհասակս մանկան։

Մանկացուցանեմ. ցուցի. կացո. ցանել։ (անցող.) || մանուկ առնել. կամ մուծանել զոք 'ի մանկական տիս. կամ յորդիութիւն։ Ագաթ։

Մանկիկ։ (Նախդրիւ հոլովի.) | փոքրիկ մանուկ։ Իսկ մերթ վարի հեգն. զփաղաքշական անուն. և նշանակէ զի և իցէ մանուկ. կամ պատանի։ Տօբ. 10. 7։

Մանկութիւն. թեան. || մանկական տիք. կամ տղայութիւն. և կամ պատանեկութիւն։ Եւ յատկապէս առնուլ նշանակէ զերկրորդ հասակն մարդոյ. որ սկսանի յեօթներորդ ամէն, և եղերի 'ի չորեքտասաներորդ ամին։ Ծննդ. 44. 15։ Սաղմ. 24. 7։ Մարկ. 9. 20։ Մերթ և առնուլ լինի փոխանակ երիտասարդութեան. կամ նորահաս և ծաղկեալ հասակի։ ռամկ. ճէնճ-լիք։

Մանկուտ։ (Նախդրիւ հոլովի.) || մանկական. կամ տղայական. և կամ որ մանկանց պատշաճի. և ըստ այսմ ասի մանկուտ բարոյիւք. կամ մանկուտ խորհրդութեամբ։ Իսկ մերթ ասի զանեղէոյ, ուր գան բազմութիւք մանկանց. կամ ուր յաճախեն մանկունք։

Մանկտեակ։ (Նախդրիւ հոլովի.) || փոքրիկ մանկտի. կամ մանկիկք. և կամ ո՛ և իցէ մանուկ։ Մծբն. ժթ. և 'ի Վարս հարց. իզ։

Մանկտեայք. եայց. եօք։ (անեզական.) || մանկտի. կամ մանկիկք. և կամ մանկունք։

Մանկտի. ւոյ. եաւ. եաց. եօք. կամ ռամ. ռոյ. ռովք։ || է բառ յաճախական, որ եզական ձայնիւ դնի փոխանակ բազմաց։ Եւ զի նշանակէ զմանկունս. կամ զպատանեակս. ուստի երևի. 4. Թագ. 2. 23։ 1. Մակ. 5. 45։ Մատթ. 11. 16։ և 19. 14։ Ըստ այսմ է և Մարկ. 9. 36. ուր ասի որ միանգամ յայսպիսեաց մանկտւոյ ընկալցի յանուն իմ. զի որ ընկալցի զմին յայսպիսեաց մանկանց։ Մերթ և առնուլ լինի փոխանակ ծառայից. կամ սպասաւորաց. և կամ երիտասարդաց։ Դան. 14. 13. և Ծննդ. 14. 24։ 2. Թագ. 2. 14։ Յոբ. 1. 17։

Մաննայ. ի. իւ. ից. իւք։ || է բառ քաղդէացւոց. և թարգմանի ընծայ. կամ պարգև. կամ նուէր. և կամ տուրք։ 4. Թագ. 8. 8։ Երեմ. 41. 5։ և Բար. 1. 10։ Եւ կամ պատարագ. կամ զոհ։ 2. Մնաց. 7. 7։ Երեմ. 17. 26։ Եզեկ. 46. 7։

Մանուած. ոյ. ով. ոց. ովք։ || մանուածն, որ է պարուրելով գործելն զթելս։ Իսկ մերթ նշանակէ մանն ասուեն. կամ պարոյր. կամ շղթայատուածն. և կամ պատրատուածն։ Ելից. ա. գլ. 67. և ը. գլ. 37։ Իսկ մերթ նմանութեամբ առնուլ նշանակէ զպատուական. կամ զհնարաւորական հիւսուածս բանից. կամ զտորմ ծածկի խոնջնած բանին, կամ խորին միտսն։ ըստ այսմ Լամբրոն. Մանուածով բազմադարութեան զնոյն եղացանէ։ Այսպէս և ասի մանուածոյ բանից. կամ խորհրդոց. և այլն։

Մանուածաւոր։ (Նախդրիւ հոլովի.) || մանուածապատ. զի մանն ասելով ծառայէ. կամ նա՝ որ պատուաւերով. և շղթայիւ պատելով ասպած, կամ ափրով. ոչ լինելոյ կազմ 'ի ծակոն. կամ յասուեալ պատրուակաց։

Մանուածոյ։ (Նախդրիւ հոլովի.) || մանելով գործեցեալ. կամ ոլորածոյ. կամ հիւսուածոյ։ Ելից. 28. 14։ 2. Օրին. 22. 12։ Իսկ մերթ նշանակէ մանն առնուլ. կամ պատատեալ. և կամ շղթայաւորեալ։ Մերթ և նմանութիւն առնուլ նշանակէ զպատուականն. կամ զզեղեցկագեղեցիկն. և կամ զայսպէս հնարիւք թագուցեալն. և ը. այսմ ասի, սիրեն առնուլ զբանս պարզ. քան զմանուածոյս։

Մանուկ. մանկան. անք. անց. անբք։ || այն որ ունի զհասակ մանկութեան. և ը. այսմ որ սկսեալ 'ի յեօթներորդ ամէ մինչև 'ի չորեքտասաներորդ ամն հասակին կոչի մանուկ։ Եսայ. 8. 19։ Սաղմ. 112. 1։ Բայց մերթ նշանակէ զորդայն. կամ զերեխայն։ Ելից. 2. 6։ Իսայ. 9. 6։ 1. Թագ. 2. 2։ Եւ մինչ ասի մանուկ տղայ. իմանի, մատաղ կամ փոքրիկ տղայ։ Եսայ. 10. 19։ Դան. 13. 45։ Մերթ և առնուլ փոխանակ որդւոյ. կամ զաւակի։ Մարկ. 6. 3։ Իսկ մերթ փոխանակ երիտասարդի. կամ պատանեկոյ. կամ փոխանակ այնմ, որ ունի զնորահաս տիս. կամ է 'ի ծաղկեալ հասակի։ ռամկ. կէնճ. կամ կէնճ կըրիճ. 1. Մնաց. 12. 28։ 'ի Վարս հարց. ժէ։ Մերթ և առնուլ լինի փոխանակ ծառայի. կամ սպասաւորի. և կամ փոխանակ այնմ՝ որ է 'ի նուէրս կարգի։ 2. Մնաց. 34. 20։ Մատթ. 8. 6։ Յովհ. 21. 5։ Բայց մինչ ասի մանկունք առաքելական, իմանին փեսաւորքն. կամ ընտանեաց փեսայքն. և կամ նորա, որք պատկերք փեսայիցն և ելանեն առ պսակաւորութեան միասին և ելանեն 'ի յառագաստ, որ է անենեակ փեսայի և հարսին։ Մատթ. 9. 15։

Մանուշակ. ի. աւ. աց. օք։ || է փոքրիկ ծաղիկ ինչ. որ ունի զկապոյտ և զծիրանի գոյն. որ սակաւ ինչ բարձրացեալ յերկրէ. սփռի զերեսօք նը, ունի զհոտ անուշ և քաղցր. և ռամկ. ասի՝ մանուշակ, իսկ թէ անուշակ. ըստ գունոյն է կապուտակ. բայց յումեմն ասի լինել և ծիրանեգոյն. ճերմակագոյն. և դեղնականագոյն։ ռամկօրէն

ղենւոյն: Կիւրղ. Եզեկ. ԺԳ: Խոսրեն. յաղաւթ. հաւաքմանն է:

Մանր. մանունք. նրոյ. նրոց. նրոյ. նրոց: կամ մանունք. ունց: || է բառ յարաբերական, որ տայ զփոքրութիւն, և նշանակէ զփոքր բաներն. կամ զնուաղն և զնուրբն. ուստի մանր ձկունք. կամ մանկունք. մանր ալիւր. կամ փշրանք. և այլն: տանել. ծանր: Սաղմ. 103. 25: ըստ այսմ է և Իմաստ. Ե. 15. ասէ՝ իբրև զեղեամն 'ի մրրկէ հալածեալ մանր. որ է իբրև զմանր եղեամն. և այլն: Իսկ մերթ նշանակէ մանրամասնականն. կամ մի ըստ միոջէ մասնաւորութեանն: և ըստ այսմ տան՝ մանր առաջադասութիւն: Խոսրեն. ա. գլ. 3: Իսկ մերթ վարի իբրև զմակբայ. զոր օրինակ՝ մանր աղալ. կամ մանր խորտակել. կամ փշրել. և այլն, և նշանակէ 'ի փոքրիկ, կամ 'ի նուրբ մասունս տրոհել: Ելից 30. 8: 2. Մնաց. 34. 7: Իսկ մինչ ասի, մանր մանր կոտորել, իմանի 'ի բազում մանր մասունս: 2. Մակ. 15. 33: մերթ և նշանակէ մանրամասնաբար. կամ մի ըստ միոջէ. կամ մասնաւորապէս. ըստ այսմ. Խոսրեն. ա. գլ. 4: Քանզի տան այսպիսի մանր զմանրամասնութեանն:

Մանրադադր. ի. աւ. աց. ոք: || է գաւառի ինչ իբրև զկոյս մեծամեծ բաղկեալ. բնութեամբ է յոյժ քնքուշ և թռչնոց ... ուստի 'ի հասարակութեան զանազանս աղտոց՝ տան ճանաչել 'ի նմանէ. որով թռչի՝ և ոչ զգայ ըղ ջասս: Արիստոտէլէս և նշանակէր, զի ոչ նի զնէ մերկ մարդոյ կանգնեալ կացելոյ. մանրուանց աղտքն են սմանք՝ թէ ունի նաև զդէմս հանդերձ մարդոյ. ուստի և ախտաւորաց կոչէր զնա մարդակերպ. տաէս որոյ բայց նի անուանի են 'ի մեջ մարդկանութեան. այսպիսի անձօղ զնայ, կամ զարմանալ նման մարմնոյ մարդոյ: Արդ՝ ասանք 'ի մանրադադրաց քերեն զպատուհաս ... ոմանց խաբեբայիցքս հասքն են իբրև զաղտաւոր երկայն կապելիս, որ վերնոցիկոյս. Իսկ այլք տան զպատուհաս ... որք են հասարակ՝ և բռնաւորականք՝ զեղեցկատեսակ նման փոքրիկ խնձորոյ. բայց են անհամ և անախորժ ճաշակելեաց. որք և յանուան բառսն երկանց կոչին մանրադադր: Երգ. 7. 13: Պտղաբեալ. պտուղքս այսպիսի օգտեն քաղցրաւորութեան արդանոյ. զի թ բժշկաց լուծանեն զխաշանիս, մաքրեն զմեզերս իզին. և պատրաստեն 'ի յղութի. և այս մանրադադր իջեալ զառասա. ամ հասարակ արհաստել 'ի զերս կենդանեաց: Ուստի և ռաքէլ փափաքանօք խնդրեր զայն 'ի լիայէ առ 'ի յղանալ թի ամլութեան իւրոյ. Ծննդ. 30. 14. և 15. և 16: Նարեկ. կէ: Պիծղ՝ բայս այս՝ նախ քան զպտուղն իւրն զծաղիկ բերեցեալ և աղնեաւ նման ծաղկանց լեմնի և կիտրոնի. բայց ունի զկանթիկ երկայն. և նոյնով անուամբ կոչի մանրադադր: Աշխարհ:

Մանրախիճ: (Նախագրիւ հոլովի.) || այն՝ որ է մանր խիճ. կամ որ խառնեալ է փոքրիկ և մանր քարամբք. և ըստ այսմ ասի. մանրախիճ քարինք. կամ աւազ. և այլն: Յոբ. 8. 17: և Կիւրղ. Եզեկ. ԺԳ:

Մանրախոյզ. խուզի. իւ. եց. եաց: || զմանր իրս խուզօղ, կամ որոնօղ: Իսկ մերթ նշանակէ զնա՝ որ մանրամասնաբար, կամ մանաւանդ հետազօտութեամբ խուզէ. կամ քննէ. և կամ հետամտեալ լինի: Եւ մերթ նշանակէ զայն՝ որ լինի մանրամասնաբար խուզելով. և ըստ այսմ տան՝ մանրախոյզ շօշափումն. կամ քննութիւն: Նարեկ. ՂԲ: Իսկ մերթ վարի իբրև զգոյական, և նշանակէ զմանրամասնական խուզումն, կամ զհետազօտութիւն. ըստ այսմ Խոսրեն. Է. գլ. 79. մանրախուզիւ քննել՝ զատանս զհետազօտութեան երկրորդ յեկեղեցւոյ առն. և այլն:

Մանրախոտ. ոյ. ով. ոց. ովք: || մանր խոտ, կամ որ է մանրիկ փոքրիկ բոյս, որպիսի է զօմն, կնիւն. և այլն: Աշխարհ:

Մանրախուզեմ. եցի. եա. եւ: (Նորագործ.) || մանրամասնաբար խուզել. կամ հետազօտ քննութեամբ որոնել:

Մանրակարկատ: (Նախագրիւ հոլովի.) || զմանր իրս կարկատօղ. կամ Ը. մեծամասն կցօղ: Իսկ մերթ նշանակէ զկարկատեալն, կամ զյօդեալն 'ի մանր, և 'ի պատառատուածն, կամ յանկարգ նիւթոց. և ըստ այսմ նմանութեամբ տանել՝ տառյօգ, կամ մոլորական բանքն՝ մանրակարկատ կոչին: Սոփ. 1. հատ. Ը:

Մանրակծու: (Նախագրիւ հոլովի.) || մանր՝ կամ սուր խայթմամբ կծօղ. որ կսծեցուցանօղ, որպիսի է մժղուկն, կամ մժեխն: Եւ յայսմանէ առեալ մանրակծու կոչի նա, որ ծանր բանիւք խոցէ զսիրտն այլոց:

Մանրակորիզ: (Նախագրիւ հոլովի.) || ունօղ զմանր կորիզ. որ կուտ, որպիսի է թուզն:

Մանրակրկիտ: (Նախագրիւ հոլովի.) || մանր կրկտօղ, որով իմանի նա՝ որ մանր մանր ծամէ. կամ ուտէ զխիճն. և կամ նա՝ որ մանրամասնաբար, և մանրախոյզ քննութեամբ բոյէ և քրքրէ. կամ հետազօտէ զիր ինչ: Իսկ մերթ վարի իբրև զմակբայ. և նշանակէ մանր կրկտելով, կամ մանրամասնաբար հետազօտելով. կամ բացայայտելով. ըստ այսմ. Նարեկ. 'ի մէջն. եւթնց. ոչ լուսաւորիչն մեր յառաջապատուեալ զանձուցն մանրակրկիտ յանձնի թուէ:

Մանրամաղ. ի. իւ. եց. ոք: || յոյժ մանր, կամ կարի մանրիկ և փոքրիկ. և այս ասի զփոշեաց. կամ զհիւլէից, որք խաղան 'ի շողս արեգական. և զի յօդս իբրև զմանր և զբարակ ալիւր մաղին, որ տան և անգահանին, և թօթափին. վա այն մանրամաղ կոչեցան: Աշխարհ:

Մանրամասն: (Նախագրիւ հոլովի.) || ունօղ զմանր, և զնուրբ մասունս. կամ 'ի մանր մասունս փշրեցեալ, և անջատեցեալ: Իսկ մերթ տան զքննութեանց, կամ զպատմութեանց, որով խորամանկեալ մասունք, կամ որպիսու

թ՛կք իրքն մանր մանր քննին. կամ յայտ-նին. և յայտնապէս նշանակէ զմանրամասնա-կանն։ Լամբրոն։

Մանրամասնաբար։ (մակբայ.) || մանր մանր մասնատելով. կամ 'ի մանր մասունս բաժա-նելով։ Իսկ մերթ նշանակէ մի ըստ միո-ջէ. կամ ըստ իւրաքանչիւր մասանց. կամ մանրախոյզ քննութեամբ, և բացատրութեամբ. և կամ յատուկ յատուկ։ Խորէն. յաշխարհա-գրութ։ Իսկ մինչ ասէ՝ մանրամասնաբար պատմութիւն, իմանի՝ մանրամասնական։

Մանրամասնական. ի. աւ. աց. օք։ || տե՛ս զՄանրամասն։

Մանրամասնեայ. նէի. իւ. ից. իւք։ || տե՛ս զՄանրամասն։

Մանրապատում։ (Նախդրիւ հոլովի.) || մանրամասնաբար պատմօղ. կամ մի ըստ միո-ջէ ճառօղ։ Իսկ մերթ՝ մի ըստ միոջէ, կամ ըստ իւրաքանչիւր մասանց պատմեցեալ. կամ բացատրեցեալ. և ըստ այսմ ասի՝ ման-րապատում բան. Նորէէլ. 'ի Մեկն. Երգոց։ և Աղթամ։ Երբ մերթ վարի իբրև զմակ-բայ, և նշանակէ՝ մանր մանր պատմելով, կամ մանրամասնաբար ճառելով. և ըստ այսմ իմանի՝ մինչ ասէ՝ յայտնել և մանրապատ-ում գրել։ Խորէն. Բ. գլ. 6։

Մանրատունկ. տնկոյ. ով. ոց. ովք։ || մանր տունկ. կամ որ է մանր և փոքրիկ բոյս, որ զարգանայ 'ի խորս երկրի ոչ ձգէ։ Եզե-կէլ. 17. 5։

Մանրաքայլ։ (Նախդրիւ հոլովի.) || ու-նող զմանր քայլս. կամ որ մանր քայլիւք գնայ 'ի ճանապարհ։

Մանրաքննին։ (Նախդրիւ հոլովի.) || ըղ մանր և զթեթև իրս քննօղ. կամ ման-րամասնաբար հետազօտօղ, կամ հետաքր-քրօղ։ Իսկ մերթ մանրախուզական. կամ մանրամասնական. և ըստ այսմ ասի ման-րաքննին ստուգութիւն, կամ հարցուածք. 'ի Վարս հարց. Ժ։

Մանրեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) || 'ի մանր մասունս բաժանել. կամ մանր կոտո-րել. կամ փշրել. կամ խորտակել. և կամ ըռ-նել։ Ելից. 9. 25։ և 15. 7։ Դանիէ. 7. 19։

Մանրիկ։ (Նախդրիւ հոլովի.) || յոյժ մանր, կամ փոքրիկ. տամկ. Ճանըրըքիկ։ 4. Թագ. 2. 23։ և Կիւրղի Եկեղ. ԺԳ։

Մանրուած. ոյ. ով. ոց. ովք։ || մանրուք. կամ մանրեցեալ մասունք իրաց, որգան, յարդի, կամ մեղեղի. և այլոց բազմաց։ տամկ. Ճանըրըդ։ Աղ Ճռն. 9. 9։

Մանրոր. ի. իւ. ից. իւք։ || ածանցի առ 'ի մանր բառէս՝ և 'ի որ՝ մասնականէս. որպէս ոլոր են և բազում այսպիսիք, հատոր. բե-կոր, և նշանակէ զկարի մանր և գրեթէ մանրամասնականն. և ըստ այսմ ասի՝ խոյզք մանրորք։ Իսկ մերթ նշանակէ զմանրուածն. տամկ. Ճանըրըդ։

Մաշ։ (Նախդրիւ հոլովի.) || է արմատ մաշել բային. և նշանակէ զմաշեցեալն, կամ զհնացեալն. ըստ այսմ Մծբն. ԺԹ. ասէ են մաշ տիկք, և դզեալ պատառատունս։

Մաշարդոյ. ի. իւ. ից. իւք։ || է ախտ ինչ ժանտ՝ հաշիչ և մաշիչ. և մահացուցիչ իբ-րև պդալուկն։ Սա եռացուցանէ 'ի մար-մին մարդոյ զխապաշտարտս մարմաշեցու-ցիչս իբրև զկեղ բորոյ, որք 'ի քորելն ըստ ակայ՝ հերձանին և հոսեցուցանեն զչուր շարաւային. և այլք անդրէն 'ի տեղի նո-ծնանին։ 'Ի հին բժշկարանս։

Մաշարդայական. ի. աւ. աց. օք։ || այն ամ, որ վերաբերի առ մաշարդայն. և ըստ այսմ ասի՝ ախտ մաշարդայական։ Խոր. Գ. գլ. 46։

Մաշեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) || հա-շել. յթ սակաւ առ սակաւ վատնել. կամ ծախել. կամ հալելով սպառել. կամ ծե-րացուցանել. և կամ նիհարացուցանել. Սաղմ. 38. 12։ և 118. 139։

Մաշիկ. շկի. աւ. աց. օք։ || մուճակ. տամկ. Բաբուճ։

Մաշիմ. եցայ. եցաւ. իլ։ (Կրաւորակք.) || հա-շիլ. կամ վատնիլ. կամ ծախիլ. կամ ծերիլ. և կամ նիհարանալ։ Ղևտ. 26. 39։ Եզեկ. 33. 10։ 2. Մակ. 1. 31. և 32։

Մաշկ. ի. աւ. աց. օք։ || կաշի. կամ մորթ գաւանաց, ոչխարաց. և կամ այլոց անաս-նոց՝ քերեցեալ և մաքրեցեալ արհեստ-իւ, և չորացուցեալ 'ի կիրառութիւն պէտ-պէտս իրաց. Ելից. 39. 33։ Ղևտ. 13. 48։ Եբր. 11. 37։ Իսկ մերթ հասարակապէս առեալ, նշանակէ զոր և իցէ նուրբ, կամ բարակ մոր-թիկս, որք են զմարմնով. կամ զանդամօք կենդանեաց. և ըստ այսմ մաշկ ասի խորին օձի. մորթն հաւուց. ձկանց. կամ մար-դոյ. միջն աչաց. մզնիքն ուղղոյն. փոր-ոտիքն քերեալք, և չորացուցեալք. փո-ձուէոյն. և այլք բազումք։

Մաշկաթև. ի. իւ. ից. իւք։ || չղջիկ, որ է փոքրիկ թռչուն ինչ մկնանման, որ 'ի գի-շերի թռչի։ Երբ ասացաւ մաշկաթև, զի թևք նր են իբրև զմաշկ։ տամկ. Քէճէ գուշի։

Մաշկակար. կամ **Մաշկեկար**. ի. աւ. աց. օք։ || կարող և կազմող զմաշկեղէնս, որ-պիսի է կօշկակարն. կամ ճոնն, յթ փուրտիճի։

Մաշկահանդերձ. ի. իւ. ից. իւք։ || մաշկե-ղէն հանդերձ. կամ զգեստ արարեցեալ 'ի մաշկաց։ 'Ի Վարս հարց. Իէ։ Իսկ մերթ նշանակէ զզգեցօղն մաշկեղէն հանդերձից։

Մաշկեակ. կեկի. աւ. աց. օք։ || մաշկե-ղէն զգեստ. կամ 'ի մորթոյ խաշանց արա-րեալ վերարկու. կամ փիլոն։ 3. Թագ. 19. 13. և 19։ 4. Թագ. 2. 8. և 13։

Մաշկեայ. կէի. իւ. ից. իւք։ || տե՛ս զՄաշ-կեղէն։ Յովբ. 12. 15։

Մաշկեղէն. ղինի. աւ. աց. օք։ || այն ամ, որոյ նիւթն է մաշկ. կամ կազմեցեալ 'ի մոր-թոյ խաշանց. և կամ կաշեայ։ Ծննդ. 3. 21։ Ղևտ. 13. 53։ Մատթ. 3. 4։

Մաշկեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) || ըղ մաշկն, յթ զմորթն քերթել, և հանել։

Մաշուած. ոյ. ով. ոց. ովք։ || մաշեցեալ մասունք իրին. կամ մաշումն. կամ վատ-նումն. և կամ եղծումն. և ապականութիւն։ Աղթամ։

Մաշուէ ։ ‖ տե՛ս ՚ի բառարանի յատուկ անուանց ։

Մաշտիմ․ եցայ․ եա՛ց․ իլ ։ (ձայնակր․) ‖ մերկանալ ՚ի հերաց․ կամ Թափեցմամբ մազից լերկանալ, որով երևի մերկ մաշկն, որ հանգիտի գլխոյ ոմանց մարդկանց ։ Ղևտ․ 13․ 40․ և 41 ։

Մաշտոց․ ի․ աւ․ աց․ օք ։ ‖ ծիսարան, գի գիրք յորում գրեալ կան բանք աղօԹից, և կարգք արարողուԹեանց, որովք կատարին եկեղեցական խորհուրդք ։ Եւ կոչեցաւ մաշտոց՝ յանուանէ կարգադրողին գտողին դոյն ։

Մառախլամած ։ (Նախադրիւ հոլովի․) ‖ մառախլով մածեցեալ․ կմ Թանձրամած մԹուԹեամբ լցեալ․ և կմ մառախլապատ ։ Մծբն․ ժԹ․

Մառախլապատ․ ի․ աւ․ աց․ օք․ կմ իւ․ եց ։ ‖ մառախլով և միգով պատեցեալ․ կմ խաւարամած․ կամ յոյժ խաւարային ։ Ագաթ ։

Մառախլուտ․ կմ մառախղուտ․ ուտի․ իւ․ եց․ իւք ։ ‖ այն յորում յաճախ ծնանին, կմ լինին մառախուղք և միգք․ կմ մառախլապատ․ և կմ միգամած․ և բստ այսմ ասի, ՚ի դիւԹի և ՚ի մառախլուտ տեղիս մայրեաց ։ Խորէն․ Բ․ գլ․ 6 ։

Մառախլիմ․ կմ մառախղիմ․ եցայ․ եա՛ց․ իլ ։ (ձայնակր․) ‖ մառախլապատ լինել․ կմ նսեմանալ․ կամ խաւարիլ ։ Բստ այսմ, Մծբն․ ժԹ․ մԹացեալ՝ մառախլեալ է մարմինն ։

Մառախուղ․ խղի․ իւ․ եց․ կմ աց․ օք ։ կմ ոյ․ ով․ ոց․ ովք ։ ‖ մէգ․ որ բստ արիստոտէլի է փիջագոյն և մԹագոյն գոլորշի անծննդական՝ ջրոյ, քան զոգ Թանձրագոյն, և քան զամպ անօսրագոյն, որ ելեալ յերկրէ ցածի և սփռի իբրև զամպ բամպաղ մինչև զստորին մասամբք օդոյ, և զերեսօք երկրի, և պատճառէ զաղջամուղջ ։ Հասարակօրէն գոյանայ ՚ի գարնան և յաշնան յորս աւուրս խոնաւուԹիւնք և գէճ գոլորշիք ։ ռամկ․ մշուշ․ կմ փուս ։ 2․ Օրին․ 5․ 22 ։ 2․ Մնաց․ 6․ 1 ։ Եզեկ․ 34․ 12 ։ ՄերԹ և ա․ առեալ լինի փոխանակ մԹուԹեան, կմ աղջամղջին և կմ խաւարի ։ Յովէլ․ 2․ համ․ Բ ։

Մառան․ ի․ աւ․ աց․ օք ։ ‖ շտեմարան, գի համբարանոց և դիւետուն, ուր են տեղիք՝ յորս ամբարեն կերակրեղէնք, և պահեն ըմպելիք ։ ռամկ․ կէլար․ կմ ֆիլէր․ կմ մառանոյ ։ Իսկ մերԹ առեալ լինի փոխանակ ծածուկ, կմ ներքին սենեկի․ կմ գաղտնի և անկոյԹ տեղւոյ տան, կմ քաղաքի, և այլոց նմանեաց ։ Մծբն․ ժԹ․

Մառանապետ․ ի․ աւ․ աց․ օք ։ ‖ վերակացու, կմ տէր մառանաց, որ պատրաստէ և մատակարարէ զկերակրեղէնս և զըմպելիս ։ ռամկ․ ֆիլէրճի ։

Մառեխ․ եխի․ իւ ։ ‖ է բառ պարսկական․ որով նշանակի միջն յեօԹանց մոլորակաց, զոր հայերէն կոչեմք հրատ ։

Մառն․ մառին․ ամբ․ անց․ ամբք ։ ‖ մառայլ․ կմ աղջամուղջ․ կմ մԹուԹիւն․ կմ խաւար ։ Իսկ մերԹ նշանակէ զծածուկս, կամ ըզ գաղտնիսն ։

Մառամուտ ։ (Նախադրիւ հոլովի․) ‖ մտեալ և Թաղեալ ընդ մառամբ․ գի ծածկեցեալ խաւարաւ․ կմ աղջամղջին․ և կմ միգամած ։ Նարեկ․ ղդ ։

Մառասէր․ սիրի․ աւ․ աց․ օք ։ ‖ խաւարասէր, կմ որ սիրէ զմԹայլ․ կմ զաղջամղջին տեղի ։

Մառաչեալ․ ելոյ․ ով․ ոց․ ովք ։ ‖ լքեալ․ կմ ՚ի բաց Թողեալ․ կմ խափանեցեալ ։

Մասն․ մասին․ ամբ․ անց․ ամբք ։ ‖ հատուած․ կմ հատոր․ կմ կտոր ։ ռամկ․ փարչա ։ Ծննդ․ 14․ 24 ։ 1․ Թագ․ 9․ 23 ։ Եւ մերԹ նշանակէ զբաժինն, որ անկանի ումեք․ կմ զոր սեփականէ ոք ։ ռամկ․ փայ ։ Ծննդ․ 14․ 24 ։ և 43․ 34 ։ Ղևտ․ 6․ 17 ։ ՄերԹ և ա․ զվիճակն․ կմ զվիճակեալ ժառանգուԹիւն, և կմ զմասնակցուԹիւն․ որ է հաղորդուԹիւն ։ Կողոս․ 1․ 12 ։ Նարեկ․ խբ ։ Եւ երբեմն զկողմն․ կմ զկողմ․ ռամկ․ տէֆ․ կմ տէ ։ Թուոց․ 34․ 3 ։ և բստ այսմ փոխանակ առեալ՝ ՚ի կողմանէ մերմէ․ կմ ՚ի կողմանէ աղօԹից, ասի՝ մերով մասամբ․ կամ աղօԹից մասամբ ։ Խորէն․ Ա․ գլ․ 4 ։ և Գ․ գլ․ 49 ։ Այլ նաև փոխանակ առեալ՝ յայսմ, կմ յայդմ կողմանէ․ և կմ ըստ այսմ, և ըստ այդմ, ասի՝ յայսմ մասին․ կմ ՚ի մասին յայդմիկ․ այլ 2․ Կորն․ 3․ 10 և 9․ 3 ։ և 4 ։ ՄերԹ և ա նշանակէ զմասնատուուԹիւն, կմ զբաժանումն․ և կմ զբաշխումն ։ Եբր․ 2․ 4 ։ Իսկ մինչ ասի՝ խնդրել ՚ի պարգևի մասին, նշանակի՝ փոխանակ պարգևի, կմ իբրև զպարգև ։ ՚Ի շարականոջ ։

Մասնականն․ ի․ աւ․ կմ իւ․ աց․ օք ։ ‖ այն՝ որ մասին է․ կմ առ մասն պատկանի․ և կմ մասնաւոր ։

Մասնակից․ կցի․ աւ․ կմ իւ․ աց․ օք ։ ‖ կցորդ մասին․ կմ հաղորդակից․ կմ ժառանգակից․ և կմ բաժանորդ ։ ռամկ․ իշտիրաք ։ Նարեկ․ կը ։ և ՚Ի գործ․ կաՀն ։

Մասնակցիմ․ եցի․ եա՛․ ել ։ (Ներգործ․) ‖ մասնակից առնել․ կմ հաղորդակցել․ և կմ կցորդել ։ ռամկօրէն իշտիրաք առնել ։

Մասնակցութիւն․ Թեան ։ ‖ կցորդուԹիւն մասին․ կմ հաղորդակցուԹիւն․ կմ վիճակակցուԹիւն ։ ռամկ․ իշտիրաքլըք ։ Նարեկ․ Թ ։

Մասնատեմ․ եցի․ եա՛․ ել ։ (Ներգործ․) ‖ մասն մասն առնել․ կմ ՚ի բազում մասունս բաժանել․ և կմ պատառատել ։

Մասնաւոր․ ի․ աւ․ աց․ օք ։ ‖ այն ամն, որ վերաբերի առ մասն ինչ իրին, և ոչ առ բոլորն․ կմ պատկանի անձին, և ոչ ամենեցուն․ կմ սակաւուց ; և ոչ բազմաց․ որոյ ներհակն կոչի ընդհանրական, որ զամէն պարփակէ ։ Խորէն․ Գ․ գլ․ 10 ։ Յովէ․ 2․ համ․ Գ ։ Նարեկ․ ղԳ ։ Եւ յայսմանէ առեալ երբեմն մասնաւոր կոչի առանձնականն․ կմ սեպհականն․ կմ փոքրիկն․ կմ սակաւն․ և կմ նուազեալն ։ բստ այսմ Նարեկ․ կը․ Զոր արժանիս քուեալ, և կամ միոյ մասնաւոր

բարուոյ ։ Մերթ եւ նշանակէ զմանա-
կիցն, կամ զկցորդն, որք անկցի և 'ի բայն
իւր ։ Իսկ մերթ վարի որք զմակբայ. և
նշանակէ մասնաւոր իմիք, կամ ըստ մասին ։
և ըստ այսմ առի, հարկել մասնաւոր, կամ
մասնաւոր իմն. եթ հարկաւոր լինել մա-
սանց իմիք ։ Խորէն. բ. գլ. 23 ։ և գ. գլ. 11 ։

Մասնաւորապէս ։ (մակբայ որակական.)
‖ մասնաւոր կերպիւ. կամ մանրամասնա-
բար. և կամ յատկապէս ։

Մասնաւորեմ. եցի. եա. ել ։ (Ներգործ.) ‖
մասնաւորեց առնել. կամ հաղորդել. և կամ
կցորդել ։ ուստի՝ Խրհրդ. ... Աշխար. ։ և 'ի
կցորդել ։ Իսկ մերթ բաշխել. կամ մասս
ծածկել ։ Իսկ մերթ բաշխել. կամ մասս
կարգաւորել. և կամ տալով ումեք զինչ՝ հա-
ղորդ առնել զնա այնմ ։ Խորէն. ... ։ Ը
այսմ մասնաւորել կոչի տասանորդեն.
կամ 'ի գոյից, և յարգեանց զմասն ինչ հա-
նելով՝ տալն զբաժինն. ուստի. ... ։
ըստ այսմ, զոր առնէ ընդհանրապէս. 'ի ժամա-
նակի գինւոյն 'ի գինւոյ անտի մասնաւո
բերէք զբաժինն իմ ։ Մերթ եւ առնուլ
լինի փոխառնութեան ծառայելոյ, կամ սփռելոյ
զինն առ եմ մասունս ։ ըստ այսմ. Նո-
րէն. ժբ. Առ բնաւ սեռական մասնաւո-
րեալ զախտին տարածմունս ։

Մասնաւորիմ. եցայ. եցաւ. իլ ։ (Հաշիւ․)
‖ մասնակցիլ. կամ հաղորդիլ. և կամ կցոր-
դիլ ։ Իսկ մերթ ընդ մեկնաւ յօդիլ. կամ
կցիլ. կամ միաւորանիլ ։ Նորէն. ղբ. և 'ի գու-
կցել. կամ միաւորանիլ ։ Իսկ 'ի գիրս Խորէն. բ. գլ. 23. առ
առ․ ։ Իսկ 'ի գիրս Խորէն. բ. գլ. 23. առ
առի. Այս էրկ ակնելը հայոց մասնաւո
րել ընդ հարկաւ հաւասարեցուոյ. իմանի
ըստ մասին հարկաւոր լինելն ։

Մասնաւոյ. էի. իւ. եայք. եայց. կամ եւց.
իւք ։ ‖ առէող զմասն . կամ մասնաւոր . և
կամ մասնաւորական ։

Մասնիկ. նկի. աւ. աց ։ կամ մասնկան . ամբ.
անց. ամբք ։ ‖ փոքրիկ մասն՝ անդամոյ, կամ
մարմնոյ, և կամ այլոց իրաց ։ Խորէն. գ.
գլ. 60 ։ Ուստի մասնիկս կոչեցան և անհաշուն
յօդքն, որք յարին 'ի բառս. զի են փոք-
րիկ մասն, կամ հատուած բառի. թէ ա-
ծանցականականաց իցեն, և թէ այ. որ-
պիսիք են ութս. ական. եղէն. բար. է-
բէն. և այլն ։

Մաստաք. մաստաքոյ. ով. ոց. օվք ։ ‖ է սերմն
վարդի պատկնիլզն հանդերձ. որ ածե-
ցեալ և կարմրացեալ երկե խորն զշռաք,
ցի խորի զգլուխն. ուստի եւ առի ծա-
ւալ. կամ ծածկոյ ։ Եւ յայսմանէ առեալ
առի նաև զսերմանց այլոց բուսոց, որք
նման անին ձեւանան ։

Մատ ։ ‖ է սովորաբար մատնել բայլն, որով
նշանակի մատ. կամ մերձ. կամ կից. կամ յառ.
և կամ մօտ. յորմէ եղանէ բառս մասնա-
ւոր. որ 'ի վերոյ մեկնեցաւ ։ Մերթ եւ
մինչ առի. մատ հրամանին, նշանակի Ը
հնոց՝ անտանի ինչ միջամտութեան, որ այժմ
կոչի յարգարական. որպիսիք են տարա. հա-
մար. մղէ. օն, և այլն ։ Եւ կոչեցան առ
այս մատ հրամանին. զի 'ի գործածիլն

միշտ պահանջեն զմատուցումն, կամ զյառաջ
ածումն հրամայական բանից, և եղա-
նակաց ։

Մատակ. ի. աւ. աց. օք ։ ‖ էգն մեծ ա-
նասնոց. կամ գաղանաց. որպէս՝ ձիոց. է-
շոց. ուղտուց ։ Յոբ. 1. 3 ։ 3. Թագ. 4. 26 ։
և 10. 26 ։ Աշխա. 6. 13 ։ կամ առիւծուց.
ընձուց. արջուց. և այլոց նմանեաց. Յոբ.
4. 10 ։ Դանի. 7. 4 ։

Մատակախաղ. ի. իւ. կց. իւք ։ ‖ մոլեգին
ապաժանք ընդ մատակս խաղացող. ցշա
ղաշարող. կամ զուգակցող. որպիսի է ձի.
որ բորբոքեալ ցանկութեամբ շաղաշրջեալ,
խրխնջէ 'ի վերայ մատակ երիվարին ։ ուստի.
այրք ։ Երեմ. 5. 8 ։

Մատակարար. ի. աւ. աց. օք ։ ‖ վերակա-
ցու կերակրեղինաց, որում յանձնի պաշտօ-
նատարն մեծի ուրուք, որ հող տանել
պատրաստել զհաց, կամ զայլ կերակուրս,
և զմրգեղէնս, և բաշխել զնոսա ընտա-
նեաց ։ Ծննդ. 40. 1. և 17 ։ Եւ յայսմանէ
առեալ՝ երբեմն նշանակէ զոր և իցէ ան-
տեսուչ, կամ վերակացու, և կամ հոգաբարձու.
թէ 'ի հոգեւորս իցէ. և թէ 'ի մարմնա-
ւորս ։ Ղուկ. ... ։ և 'ի վերջ ... ժդ ։ Մերթ
եւ նշանակէ զպաշտօնեայն, կամ զմատա-
կարարողն խորհրդոյն բանից. կամ խորհր-
դարարողն ... 1. Պետ. 1. 12 ։ և
այլոց նմանեաց ։
Նորէն 'ի գուէ խօսի. և առ ։

Մատակարարեմ. եցի. եա. ել ։ (Ներգործ.)
‖ առնել. կամ բաշխել խորհրդաբանիլ ումեք
զկերակուրս, կամ զպատրաստեալն առ ման-
ուկ. և կամ հոգալով զայնս ուրուք գործա-
ծել. և կամ տնտեսել. որք առնեն մատակարարք,
և այլն ։ 2. Մակ. 1. 25 ։ Մծբն. ժդ ։
և անդէն ։
Մերթ եւ նշանակէ կառավարել. կամ պաշ-
տել զխորհուրդս եկեղեցւոյ. և կամ զպաշ-
տօնն, զոր ընկալեալ է ոք յԱյ, հաղոր-
դելով, զոր ընկալեալ է ոք յԱյ, հաղոր-
դել այլոց. քարոզելով, խրատելով, ա-
ղօթելով, կամ ծառայելով, և այլովք նման-
նելով ։ 1. Պետ. 4. 10. և 11 ։ Երբեմն եւ նշա-
նակէ՝ 'ի գործածել. կամ վարել. կամ եր-
նակէ՝ 'ի գործածել. կամ վարել. կամ
գել. և կամ արտադրել ։ 2. Պետ. 1. 5 ։
Յոհ. 2. ... ։

Մատակարարութիւն. թեան ։ ‖ վերակա-
ցութիւն արքունապալատեալ զկերակրոց. կամ
անթի. և կամ մատակարարութիւն, և բաշ-
խումն ։ Իսկ մերթ հոգաբարձութիւն. կամ
խնամակալութիւն. և կամ տնտեսութիւն ։
Մերթ եւ առնուլ լինի փոխանակ պաշ-
տօնէութեան. կամ պաշտօնատարութեան, և կամ
սպասաւորութեան ։

Մատաղ. ոյ. ով. ից. օք ։ ‖ Նոր՝ որ է 'ի փո-
քունս հասակի. կամ որ մնոյ նորահաս զօ-
րութեամբ, եթէ մարմնով, եթէ
բոյսն փափուկ, և մատղաշ է մարմնով, եր-
գահասցեալ. որպիսիք են փոքրիկ ման-
կունք. կամ փոքրիկ որթք. կամ գառն-
կունք ։ ուստի. Նորաղ. Ծննդ. 18. 7 ։ և 33.
13 ։ Սաղ. 68. 32 ։

Մատաղացուցանեմ. ցի. իւ. ոց. օք ։ ‖ Նոր, որ
մատաղ և փափուկ է մի գործով նորոգել
մատաղ և փափուկ է մի գործով մատաղացու-
ցանել. և ըստ այսմ առի մատաղացուցա-
նել ։

[illegible]

տենի․ կմ ընդ գրով արկանելն զկնի՝ անցուցանելով զնա 'ի մատեանս։ Իսկ մերթ առեալ լինի փոխանակ գրեցեալ մատենից․ կմ մեծամեծ գրեանց պատմութեց․ և այլոց նմանեաց․ ըստ այնմ․ Խոր․ Ն․ Գ․ դր․ 1։ Եւ ոչ մատենագրութիք գէոդորիհուայ են առ մեզ։

Մատենաւոր․ ի․ աւ․ աց․ օք։ || ունօղ ըղ մատեան․ կմ մատենական։ Իսկ 'ի գիրս Կիւրղի Եզնի․ Գ․ ուր ասի․ Այգ՝ մատենաւոր գիրք այս են․ իմանի մատենագրական, քթ պատմագրական․ որպիսիք են գիրք Թագաւորութեց, Մնացորդաց․ և այլն․ զորոց խօսի անդ։

Մատզիմ․ եցայ․ եաց․ իլ։ (Ձայնակր․) || ըմբռնիլ․ կմ խիթել զփայտ անշարժ մնալ անդամոց՝ Թմրեցմամբ և կապկեցմամբ ջըղւոց․ որպ հանդիպի ուեց, կամ սրունից մարդոյ՝ մինչ ընդ երկար կալնուլ զնն պարզեալ․ կմ պահել անշարժ, որպ և բազում անգամ տեսանեմք պատահիլ ձեռաց․ յորժամ յերկար ժամս խփեալ պահեմք զնն, մինչզի յետոյ հազիւ կարեն բացեալ լինիլ․ և ըստ այսմ էր մատզիլն ձեռաց ելէանանու զօրավարին դաւթի․ զի ընդ երկար կալնլով զսուրն 'ի ձեռին 'ի կոտորելն զայլազգիս՝ այնպէս փակեալ մնաց, և ընդ սրոյն մածաւ, մինչ զի երախակալն, քթ կոթն սրոյն ոչ կարէր կորզել 'ի ձեռաց նր․ ռամկ․ կռթիլ․ կմ բռնածիլ։ 2․ Թագ․ 23․ 10։

Մատզումն․ ման․ մամբ․ մանց․ մամբք։ || ըմբռնումն և անշարժութիւն անդամոց Թըմրեցմամբ և կապկեցմամբ ջլաց, որպ հանդիպի ձեռաց և սրունից․ զորմէ լիապէս ասացաւ 'ի բային մատզիլ։

Մատիմ․ տեայ․ իր․ իլ։ || նոյն է սա ընդ մատչիլ բային․ որպ զատիլն Ը զատչելոյն։ Սւատի 'ի գիրս Մծբն․ ժԱ․ ուր ասի՝ ըղ Թռչնոյ․ մատի քաղել․ իմանի՝ մատչի առ 'ի ժողովել զհատան ծուղակին։

Մատն․ մատին․ տամբ․ տանց․ տամբք։ || է անուն հնգեցունց եղնգնաւոր անդամոց ձեռաց և ոտից․ որք են իբրև ճիւղք նց․ ռամկ․ Տոփ։ Ելից․ 29․ 12։ 2․ Թագ․ 20․ 21։ Եւ 'ի սոցանէ մատունքն ձեռաց ունին զյատուկ անուանս․ զի առաջինն կոչի բութ։ Երկրորդն ցուցամատն, կմ մատնիչ։ Երրորդն միջամատն։ Չորրորդն մատանեմատն։ Իսկ հինգերորդն՝ ծկոյթ, կմ Ճկոյթ, որ և ասի փոքր մատն․ որպ գրի․ 2․ Մնաց․ 10․ 10։ Իսկ 'ի բանս չափու նշանակէ ըղ լայնութիւն միոյ մատին, որ ըստ երկրաչափից պարունակէ զչորս գարեհատս կողակիցս ըստ լայնութեն ընկողմանեալս․ որ է փոքր ինչ նեղագոյն քան զբնական մատն մարդոյ։ 3․ Թագ․ 7․ 15։ Երեմ․ 52․ 21։ Մերթ և առեալ լինի 'ի սբ գիրս փոխանակ կարողութեն, կմ զօրութեն, և կամ գործոյ․ որպէս և բազուկ ձեռն․ և ըստ այսմ իմանի Ելից․ 8․ 19․ ուր ասեն դէտքն փարաւոնի, մատն այ է այս, ցր զօրութեն, կմ գործ այ։ Իսկ 'ի Ղուկ․ 11․ 20․ ուր ասէ քս, մատամբն այ հանեմ ըղ դևս, իմանի՝ Թէ՝ զօրութիւն այ․ և Թէ հոգւին սբ։ Բայց ըստ երաժշտաց մատն կոչի ատամնան, կմ ատամնաւոր երաժշտն նուագարանաց, կմ նուագերգութեց՝ յօրինեցելոց ըստ չափու․ և ըստ այսմ ասի 'ի գիրս գանձ Թի փիլիսոփայքն․ Երաժիշտն զպատերազմականն նուագեր մատն, քթ զպատերազմական դայնակն։

Մատն։ || է արմատ մատնել բայից, որ Ը բայի չարակցի այսպէս․ մատն լինիլ․ և յայնժամ մերթ նշանակէ մատնիչ լինիլ․ կմ մատնել, ըստ այնմ Յհ․ ութ․ Թէպէտ և ոչ տիրականին․ այլ՝ մատն եղէ անձամբ անձին։ Եւ 'ի Նոբէն․ ԽԸ․ ասի․ կամաւորապէս մատն եղեալ բնութես։ Այսպէս է և 2․ Մակ․ 13․ 21․ ուր ասի՝ մատն և դաւաճան լինէր։ Իսկ մերթ նշանակէ մատնիլ․ կմ զուրկ և Թափուր գտանիլ։ և ըստ այսմ է Յոբ․ 2․ հատ․ Ճ․ ուր ասի՝ Յորժամ 'ի մերոց գործոց մատն լինիցիմք։

Մատնած․ ի․ իւ․ ից․ իւք։ || մատնեցեալ, կմ 'ի ձեռս տուեալ։ Իսկ մերթ զրկեցեալ, կմ վրիպեալ․ կմ պակասեալ․ և կմ Թափուր․ ըստ այնմ Յոբ․ 2․ հատ․ ԺԴ։ Զքահոյն յամ պատճառէ բարւոյ մատնած է։

Մատնահար։ || տես զՄատնեհար։

Մատնամատուխ։ (Նախդրիւ հոլովի․) || ըղ մատն իւր մխօղ 'ի ծակ փողին, կմ այլ ուրեք։ Իսկ 'ի Նոբէն․ Ը․ ուր ասի՝ մատնամատուխ զղուճանօք փախել, իմանի՝ զըղուճանօք, որ պատճառի 'ի մխելոյ զմատն 'ի փողն։

Մատնաչափ․ ի․ իւ․ ից․ իւք։ || ունօղ զչափ մատին, որպ մինչ ասի՝ մատնաչափ տարածութիւն։ Իսկ մերթ նշանակէ զչափն միոյ մատին։

Մատնատ․ ի․ իւ․ ից․ իւք։ || նա՝ որոյ փ մատն, կմ ամ մատունքն հատեալ են, կմ պակասեալք։

Մատնեալ․ ելոյ․ ով․ ոց․ ովք։ || է ընդունելութիւն մատնել բային, որով նշանակի մատնեցեալն, կամ չարաչար 'ի ձեռս տուեալն։ Իսկ 2․ Մակ․ 10․ 22․ առեալ լինի փոխանակ բառս մատնօղ, կմ մատնիչ։ զի ասի․ Սատակեալ զայնոսիկ որք այնպէս մատնեալք եղեն օրինաց, քթ մատնիչք եղեն։

Մատնեմ․ եցի․ եա․ ել։ (Ներգործ․) || ցուցանել․ կմ յայտնել դատաւորաց, կամ Թշնամեաց զԹագուցեալն․ և կմ յայտնելով զծածուկս ուրուք արկանել զնա 'ի ձեռս իշխանի կմ ոսոխի, զի կորուսցէ զնա․ մանաւանդ իբրԹէ մատնիւ։ Եւ ասացաւ մատնել՝ իբրԹէ մատամբ ցուցանել․ որպ բազում անգամ առնեն մատնիչքն։ Մտթ․ 10․ 21։ և 26․ 15․ և 16։ Եւ յայսմանէ առեալ երբեմն մատնել ասի՝ նաև տալոյ բանի մատնութե տալ զոք 'ի ձեռս Թշնամեաց, կմ գաւՃանաց առ 'ի կորուստ․ Ելից․ 23․ 31։ Ղևտ․ 26․ 25։ Մտթ․ 18․ 34։ Եւ կամ արկանելն զոք 'ի

կեր գազանաց, կմ 'ի սուր և 'ի մահ, և յայլ աղէտալէս նեղութիւնս. Սաղմ. 62. 11: և 73. 19: Մտթ. 24. 9: ըստ այսմ և թշուառն ումեք՝ անկանել 'ի չար ինչ, կամ յախտ ինչ, մատնել ասի. որպէս Եզեկ. 21. 13: Հռոմ. 1. 24. և 26. և 28: Իսկ 1. Կոր. 5. 5: և 1. Տիմ. 1. 20. յորս ասի՝ մատնել սատանայի, իմանի՝ բանադրել, որով անկանէր ոք 'ի ձեռս դիւին: Իսկ մինչ ասի՝ 'ի պարտութիւն մատնել, իմանի՝ չարաչար պարտել, կամ յաղթել: Երեմ. 51. 41: 2. Մակ. 10. 24: և 13. 23: Դիպեալ երբեմն 'ի կրաւորականոյն նշանակէ՝ զրկիլ. կմ թափուր լինել յիմիքէ բարւոյ:

Մատնեք. ի. իմ.ից. իւք: || Թանձրութիւն, կմ ստուարութիւն կողից մարմնոյ իրիք. որպ ծոցաւոր սեանց. կմ ձուլածու երկաթոց. և այլոց նմանեաց. և ըստ այսմ է 3. Թագ. 7. 15. ուր ասի՝ զպղնձի սեանցն. Եմ 'ի չորից մատանց մատնեքն. վասն զի սիւնքս այսոքիկ դատարկք էին իբրև ըղ խողովակ, և թանձրութիւն շրջապատ կողիցն, որ կոչի մատնեք, էր չորս մատնաչափ. և այս ասի նաև զստուարութէ մարմնոյ, որպ տախտակաց, և այլոց նմանեաց:

Մատնեհար. ի. աւ. աց. օք: || կնիք՝ կազմեցեալ 'ի մատանւոյն. և կմ մատանի, որ ունի 'ի վերայ իւր զկնիք, որով կնքեն զինչ:

Մատնեհարեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || կնքել զգիր ինչ մատնեհարաւ, կմ կնքով: տամկ. Մօհրէլ:

Մատնէշ՚նշի. ւա. ւոց. օք: || ցուցամատն, որ է երկրորդ մատն ձեռաց առընթեր բթին մատին:

Մատնութիւն. թեան. || չարաչար ցուցումն, կմ յայտնումն թաքուցելոյն, զի անկցի 'ի ձեռս դատաւորաց, կմ թշնամեաց առ 'ի կորուստ: Իսկ մերթ նշանակի առակ ասելն՝ կմ արկանելն զոք 'ի ձեռս թշնամեաց, կմ գազանաց. և կմ 'ի սուր՝ և 'ի մահ. և այլն. Մերթ և նշանակի զրկումն. կամ պակասութիւն. կամ լքումն. և կմ կորուստ: Իմաստ. 17. 11. և 14:

Մատնուամ. մատնեալ. իր. նալ: (Ընդ. միջ.) || Նոյն է ընդ մատչիլ բային, որպ պակնուլն ընդ պակչելոյն. փախնուլն ընդ փախչելոյն. զարթնուլն ընդ զարթչելոյն, և այլն: Ոսկեփ. 2. Մակ. 11. 8. ուր ասի՝ վասն եալ պատրաստեալ յառաջ մատնուցին. նշանակէ ասել յառաջ մատչէին:

Մատնատու. տուի. աւ. աց. օք: || մատնիչ. կմ մատնող. և ասացաւ մատնատու. եթէ թէ մատնամբ տուօղ. վն զի բազում անգամ մատնիչքն մատամբ ցուցանելով՝ տան զմատնեցեալն 'ի ձեռս թշնամեաց: 3. Մակ. 3. 16:

Մատնցոյց: (Նախդրիւ հոլովի.) || մերթ նշանակէ զցուցանօղն, կմ զյայտնօղն մատամբ, կմ զնա՝ որ ծառայ առնէ զոք չարաչար մատամբ մատանց, կմ ձեռաց իւրոց: Իսկ մերթ զմատամբ ցուցեալն. կմ զյայտնուածեալն.

և կամ զնշաւակ եղեալն: Յոբ. 34. 26: Մերթ ևս նշանակէ զայն, որ լինի չարաչար կատակմամբ. կմ խայտառակութբ. և ըստ այսմ ասի մատնցոյց նախատինք: 3. Մակ. 6. 22:

Մատոյց. տուցի. ցիս. տոյցք. ցից. ցիւք: || մատչումն. կմ ելք: Յես. 15. 7:

Մատուան. կմ մատուռ. մատուան. կմ մատրան. ամբ. մատրունք. անց. ամբք: || փոքրիկ եկեղեցի, յորում գոյ մի խորան վն պատարագելոյ: և կամ աղօթատեղի հանգերձ սեղանով: Լտ՚քրոն: Աճգոր. և 'ի վերահւոյ. իմ: Բայց երբեմն առեալ լինի փոխանակ տանի. կմ տանախմբութե. և ըստ այսմ ասի. տունք նմ մարտիրոսաց, զոր մատուռն կոչեմք:

Մատուցական. ի. աւ. աց. օք: || այն՝ որ վերաբերի առ մատուցումն, կմ առ մատչումն. կամ մատուցանելի. և կմ մատչելի: Աճգոր:

Մատուցանելի. լւոյ. եաւ. եաց. եօք: || այն՝ որ կարէ, կմ պարտի մատուցանել: Իսկ մերթ նշանակէ զմատուցանօղն. և ըստ այսմ է Ղևտ. 7. 18. ուր ասի. մի լինիցի ընդունելի մատուցանելեացն, զի մատուցանողացն: սոյնպէս է և Մաղ. 2. 12:

Մատուցանեմ. տուցի. տո. ել: (Անցող.) || Մերձեցուցանել. կմ յառաջ բերել. կմ ածել առ ոք: Ծննդ. 27. 25: Մտթ. 17. 15: և 19. 13: Իսկ մերթ ընծայել. կմ նուիրել. կամ տալ. և կմ պատարագել: Սաղ. 4. 6: և 28. 1. և 2:

Մատուցարան. ի. աւ. աց. օք: || ընծայարան, կամ տեղի, ուր լինի մատուցանել վերընկալուի ումեք զինչ. որպիսի է եկեղեցին, կմ խորանն, յորս լինի մատուցանել իւր զաղօթս. կմ զպատարագս: Մերթ ևս մատուցարան կոչի անօթն, որով ընծայի, կմ մատուցանի իր ինչ մեծի ումեք, որ և ասի նուիրանոց:

Մատչիմ. տեայ. տիր. չել: (Չէզոք.) || Մերձենալ. կմ մօտիլ. կմ հպիլ. կմ յառաջ գնալ: Մտթ. 8. 5: Մրկ. 14. 35: Իսկ մերթ նշանակէ մատուցանիլ. կամ ընծայիլ. և կմ նուիրիլ: Մղտ. 1. 11: Եբր. 9. 9: և 10. 8:

Մատռուակ. կամ մատրուակ. ի. աւ. աց. օք: || վերակացու, կմ մատակարար գինւոյ. և կմ նա, որ լցեալ զգինի 'ի բաժակն՝ մատուցանէ բազմելոցն 'ի սեղան: 3. Թագ. 10. 5:

Մատռուակեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || մատռուակութիւն առնել. կմ մատուցանել բազմականաց զբաժակ գինւոյ 'ի յարբումն. և կմ բաշխել կոչնականաց զըմպելիս: Ոսկէ. 1. հոգ. իմ: Իսկ մերթ նմանութբ առեալ՝ մատռուակել ասի բաշխելն, կմ տալն 'ի վայելել զոք և իցէ իրս որք գինւոյ նմանեցուցանին, որպիսի է սէրն. շնորհն. վարդապետութիւն. և այլն: Նար. բէ. Ճ: Աճգոր:

Մատռուակութիւն. թեան: || պաշտօն մատռուա-

προσενάγκειν

ռուՃակի. և կմ մատուցանելութիւն. յի բաշխումն գինւոյ ։

Մատուռնապետ. ի. աՃ. կմ [illegible]. գք ։ || պետ, կմ վերակացու մատրան, որ է երէց կամ դեկտ[illegible] 'ի կատարել զխորհուրդ պատարագի 'ի մատրան ։

Մատրուակ ։ || տե՛ս զՄատուռնակ ։ 2. Մնաց. 9. 4 ։

Մատրունք ։ || է սա յոգնականն մատուռն բառին, որ մեկնեցաւ 'ի վերոյ ։

Մար. րու. ու. ուց. ուք. կամ ի. ւն. եւ. եր ։ || է չափ հեղեղուց իրաց, ոՃ՝ գինւոյ, իւղոյ, ձէթոյ, և այլոց նմանեաց. որ ըստ ասմանն մբ գրոց տանի զմեծութեան հազար հինգ հարիւր քսան տրամ, որ առնէ լիտրու քսան և ինն հոխայ ։ Դանի. 14. 2։ Ամբակ. 3. 2։ Ղեւտ. 16. 6։ Յոհան. 2. 6։ Բայց երբեմն առեալ լինի քաս փոքր չափմանց. և յայնժամ տանի իբրև զեօթն հազար վեցհարիւր ութսուն տրամս, որ է իբրու տասն և ինն հոխայ. և ըստ այսմ երեք փոքր մարն գրեթէ հաւասարի երկուց մեծ մարուց ։ Եւ յայս միտս 2. Մնաց. 4. 5. ասի զպղնձի ծովն, թէ տանէր երիս հազար չափս մարս ։ Իսկ 3. Թագ. 7. 26. ասի զնոյնոյ, թէ տանէր իբրև երկու հազար մարս, որք են նոյն. քանզի 'ի գիրս մնացորդաց՝ գնի փոքր մարն. իսկ 'ի գիրս թագաւորաց մեծ մարն ։ Դարձեալ բառիս մար՝ նշանակէ ծնեալն յազգէն մարաց, Ճ քուրթեաց. զի որպէս, որ է յազգէն հայոց կոչի հայ, նոյնպէս և նա, որ է յազգէն մարաց՝ կոչի մար ։ Խորէն. Ա. պր. 35։

Մարագ. ի. աւ. աց. օք ։ || տուն. կմ շրջափակ տեղի, ուր պահին յարդք և խոտք 'ի կեր անասնոց ։ ռամկ. [illegible] ։

Մարախ. ոյ. ով. կմ աւ. ոց. ովք ։ || է փոքր կենդանի ինչ թևաւոր յազգէ զեռնոց. որ թռչի և ոստոստէ. և Ճարակեալ ծախէ զդալարիս. ուտէ զբազում տեսակս [illegible] 'ի [illegible] ։ Զօ[illegible] բաժանեալ լինի անհամար բազմութիւն. և թռուցեալ ծածկէ զերեսս երկնից բազում մրրկաւ ։ ռամկ. [illegible] և [illegible] ։ Ելից. 10. 4։ Յովէլ. 2. 11։ Առակ. 30. 27։ Իսկ Ժողով. 12. 5. ուր ասի. Եւ Ծաղկեսցի մարախն, նմանութիւն առեալ լինի փոխանակ որովայնի, Ճ որում իբրև զմարախ զնա, զոր գտանէ ծախէ և արտաքս թողէ ։

Մարաշխտ. մնի. իւ. աց. օք ։ || մոլեգնեալ մարդ. կմ անմիտ. կմ յիմար. կմ մոլի. և կմ դիւահար ։

Մարաձանթայ ։ || է սա երկու բառ՝ խառն 'ի բարբառոյ եբրայեցւոց և ասորւոց. վն զի ընթերցեալ լինի այսպէս, մարան աթայ, որ թարգմանի տէր մեր գայ, կմ տէր եկեսցէ ։ Եւ զայս եբրայեցիք բազում անգամ 'ի գործ ածէին 'ի նզովելն, կմ 'ի յանդիմանելն զոք, որով դնէին առաջի տէր եկեսցէ դատել և պատուհաս[illegible]

ակեւ զգեղ. ուստի նոյն էր առ. նա ասելն նզովեալ, կմ անիծեալ լիցի այս ոք, և ասելն մարան աթայ ։ Եւ ըստ այսմ առեալ լինի 1. Կորն. 16. 22. ուր ասի, եթէ ոք ոչ սիրէ զտր Յս, եղիցի նզովեալ մարան աթայ. յորում բառս նզովեալ՝ է թարգմանութիւն խնացուածոյ մարանաթայ բառին ։

Մարգ. ի. աՃ. աց. գք ։ || խոտ դալար բուսեալ 'ի դաշտի զուարՃացուցիչ աչաց, ուր բազում անգամ արածին խաշինք, և կերեւալ շուշան ծաղկունք ։ ռամկ. [illegible] ։ Լատ. [illegible] ։ 'Ի Հոբ. հուրց. Ձ ։ Իսկ մերթ մատանաբար առեալ նշանակէ զերկարեալ տե ղիս կանաչացեալ դալար խոտովք, որ ախոյք են ոմանք Ճախսեն տեղիք. կմ առուակք դետոց ։ 1. Մակ. 9. 42։ Իսկ Երեմ. 48. 32. ուր ասի, 'ի վն մարգաց քոց պարտակ խմանեալ մրգաց. զի պտղաբերք դր չաց ասպրեալ կայ 'ի նմա տաստ ։

Մարգագետին. տենւոյ. տեղ. ոց. տեղք ։ || խոտաւէտ դաշտ. կմ զուարՃալի տեղի լցեալ գեղեցիկ դալարեօք ։ Լատ. [illegible] ։ Յր [illegible] ։ Իսկ մերթ նշանակէ զերաշտ տեղիս, կմ զՃախճին վայրս՝ զուարՃացեալս դալարեօք և սիզովք ։ Եսայ. 19. 6։ և 33. 9։ և 35. 7։

Մարգարէ. ի. իւ. եւ. եւք ։ || նա՛ որ առաջէ ցուցանէ զապագայս. կմ ծածուկս. Եսայ. 39. 3։ Դան. 24. 25։ Դարձեալ բառս մարգարէ 'ի սբ գիրս երբեմն առեալ լինի փոխանակ նբ, առ որ լինին յայտնութիւնք այսպէս խորհրդական Ղյ. կամ գիտակ է ապայնոց. և ունի զընտանութիւն Ղյ. և բարեկամ օրինակի աբրահամ կոչի մարգարէ ։ Ծննդ. 20. 7։ Մերթ և առեալ լինի փոխանակ նբ, որ անմիջապէս ուսեալ 'ի հոգւոյն սրբոյ մարգարէանայ, կմ քարոզէ 'ի շինութիւն լսողաց ։ 1. Կորն. 14. 29. և 32. և 37։ Իսկ երբեմն առեալ լինի փոխանակ թարգմանչաց. և մեկնչաց. և ըստ այսմ առմանս կոչեցաւ մարգարէ մովսէսի. և ամենայն 'ի հնումն ասացեալ մարգարէք եկեղեցւոյ։ Ելից. 7. 1։ Կոր. 13. 1։ Երբեմն ևս առեալ լինի փոխանակ նբ, որք կրեալ 'ի հոգւոյն սրբոյ օրհնեն զԱծ երգովք. և այսպէս նուագարանօք ։ 1. Թագ. 10. 5. և 10. և 11։ և 19. 20։ Եւ յայսմանէ առեալ երբեմն և կցէ երգիչք, և նուագարանօք կոչեցեալ լինէին մարգարէք ։ 2. Մնաց. 35. 15։ Իսկ երբեմն առեալ լինի փոխանակ նբ, որք լիեալ յայսմ այլոյ մոլեգնին, և 'ի յափշտակութեան իւրեանց խօսին զիւ մտաց, ոՃ հանդերձեցալ առ մարդկան բանս. ոՃ [illegible] 1. Թագ. 18. 10։ Բայց տեղւոյն ուր ասի. Սաւուղ ասէ 'ի նոյնմէ իւրեանց. իսկ մարգարէ. նշանակէ ասե [illegible] և [illegible], որ և էր քարոզ։

Մարգարէապետութիւն ։ (Նախադրէ հայելի.) || ուղղոյ զպատրաստ մարգարէի. կմ [illegible] զմարգարէ բարբառով ։ Իսկ մերթ բար

բառնեցեալ 'ի մարգարէէ․ կամ մարգարէական հոգւով արտաբերեցեալ․ և կամ գուշակեցեալ։

Մարգարէագէտ․ գիտի․ աւ․ աց․ գք։ ‖ գիտող մարգարէից․ կմ մարգարէութեց, և կմ ճանաչօղ բերել զմարգարէ։ Աշխ։ Եւ մերթ գրոցեալ, կմ ճանաչեցեալ 'ի մարգարէէ։

Մարգարէադրաւ։ (Նախադրիւ հոլովի․) ‖ դրօշեալ մարգարէից, որով խմանի նա, որ կատարելով, կմ արտանաննելով զմարգարէս՝ պակաս առնէ զնա յաշխարհէ, որպէս նա էր մերձենն յերգարէ։

Մարգարէածանօթ։ (Նախադրիւ հոլովի․) ‖ ծանօթ, կմ ճանաչօղ մարգարէից․ և կմ մարգարէադէտ։ Իսկ մերթ ծանուցեալ, կմ յայտնեցեալ 'ի մարգարէէ․ և կմ այն՝ զոր ճանաչեն, և գիտեն մարգարէքն։ Նարեկ․ ղէ։

Մարգարէածին։ (Նախադրիւ հոլովի․) ‖ այն, որ է ծնեալ 'ի մարգարէէ․ և կմ է որդի մարգարէի։ Նարեկ ղէ։ Իսկ մերթ նշանակէ զծնանօղն մարգարէի․ որպէս էր ամուլն աննա, որ ծնաւ զսամուէլ մարգարէն։

Մարգարէակիր։ (Նախադրիւ հոլովի․) ‖ կրօղ, կմ տանօղ մարգարէից։ Իսկ մերթ նշանակի կրեալն, կմ տարեալն 'ի մարգարէէն․ և կմ այն՝ զոր ունի մարգարէն․ որպէս է մարգարէական հոգին։ Կիւրղի եղէկ․ ժը։

Մարգարէահրաշ։ (Նախադրիւ հոլովի․) ‖ հրաշացօղ ընդ մարգարէս․ կմ որ է բերել զհրաշալի մարգարէս․ և կմ որ զարմանալի կերպիւ մարգարէանայ։ Իսկ մերթ նշանակէ զայն, որ վերաբերի առ հրաշալի մարգարէս։ 'Ի շարականս։

Մարգարէաճառ։ (Նախադրիւ հոլովի․) ‖ բերել զմարգարէս ճառօղ․ կմ որ ճառէ զմարգարէից։ Իսկ մերթ նշանակի՝ ճառեցեալն, կմ գուշակեցեալն՝ 'ի մարգարէէ։ Նարեկ ղէ։

Մարգարէանամ․ ացայ․ ացիր․ նալ։ (Ընդ միջ․) ‖ ածային ապդեցութեամբ գուշակել զապագայս․ կմ խմանալ, և պատմել ըղ գաղտնիս։ 1․ Եզր․ 6․ 1։ Եզեկ 11․ 13։ Եւ յայտնանէ առնեալ երբեմն մարգարէանալ առի առակ յանձնէ բերմէ նախապատմելն․ կմ բերել զմարգարէ գուշակելն զապագայ ինչ․ և ըստ այսմ առի, Յովէլ․ 6․ 2․ մի՛ եւ դու աղիոր, զի մարգարէացար մեզ։ Բայց յոմանս գիրս երբեմն առնեալ լինի փոխանակ մեկնելոյ զՍբ գիրս․ կմ ուսուցանելոյ․ և քարոզելոյ ապդեցութեամբ հոգւոյն սրբոյ։ 1․ Կորն․ 14․ 1․ և 3․ և 4․ և 5․ և այլն․ որ զհետ։ Իսկ մերթ առնեալ լինի փոխանակ օրհնելոյ զած երգովք․ կմ նուագարանօք, 'ի ձեռն վերնային ապդեցութեան։ 1․ Թագ․ 10․ 5․ և 10։ և 19․ 20․ և 23․ և 24։ Այսպէս էր և մարգարէանալն եօթանասուն ծերոցն, և Եղդադայն, և Մովդադայն։ Թուոց հաւատացելոցն 'ի հնումն։ Թուոց․ 11․ 25․ և 27։ 1․ Կորն․ 11․ 4։ և 14․ 24։ Եւ յայտնանէ նաև մեծամեծ գործաւորեն առա մարգարէից զհաճոյ՝ ասացաւ մարգարէանալ։ 3․ Թագ․ 18․ 29։ Երբեմն և առնեալ լինի փոխանակ մոլեգնելոյ, և դիւահարելոյ, և զցնորական բանսպար բանելոյ ըստ չար ապդեցութեան դիւին․ և ըստ այսմ առի 1․ Թագ․ 18․ 10։ Եւ հարաւ այս չար յայն 'ի վ՛ր սաւուղայ․ և մարգարէանայր 'ի մէջ տան իւրոյ։ Իսկ երբեմն առնեալ լինի փոխանակ հրաշագործելոյ․ և ըստ այսմ առի․ Սիրաք․ 48․ 14։ Եւ մեռեալ մարմին նր մարգարէացաւ․ զըղ սքանչելիս գործեաց։

Մարգարէապետ․ ի․ աւ․ կմ իւ․ աց․ գք։ ‖ նա, որ է գլուխ, և պետ մարգարէից․ որպէս էր մովսէս մարգարէն։

Մարգարէաքարոզ։ (Նախադրիւ հոլովի․) ‖ բերել զմարգարէս քարոզօղ․ կմ որ քարոզէ զմարգարէից։ Իսկ մերթ քարոզեցեալ, կմ պատմեցեալ 'ի մարգարէէ։ Նարեկ․ 'ի գովս առաքելոց։

Մարգարէութիւն․ թեան։ ‖ պաշտօն մարգարէի․ կմ գուշակումն ապագայից ապդեցութեամբ հոգւոյն սրբոյ․ և կմ գիտութիւն, և յայտնութիւն գաղտնեաց։ 2․ Եզր․ 6․ 14։ 2․ Պետր․ 1․ 21։ Յայտ․ 11․ 6։ Իսկ մերթ նշանակէ զբանս․ կամ զպատգամս մարգարէից․ և կամ զմարգարէական քարոզութիւնն։ Մատթ․ 13․ 14։ 2․ Պետր․ 1․ 20։ Մերթ և 'ի նր գիրս նշանակէ զպաշտօն քարոզութեան․ կամ զվարդապետութիւն, զոր 'ի հնումն առնէին ոմանք ապդեցութեամբ հոգւոյն սրբոյ։ Հռոմ․ 12․ 6։ 1․ Կորն․ 12․ 10։ և 14․ 6։

Մարգարէուհի․ հւոյ․ ուոյ․ եաւ․ եաց․ եօք։ ‖ կին մարգարէի․ և կմ մարգարէացօղ կին։

Մարգարիտ․ րտոյ․ տով․ ոց․ օվք։ կմ ի․ իւ․ աց․ գք։ ‖ է սպիտակ գոհար ինչ բոլորակ, և փայլուն, և մեծագին։ և այնչափ գերազանցէ զնովք, որչափ առաւել բոլորակ, մեծ, և սպիտակ է։ Արդ՝ ծնանի սա 'ի ծոց խեցեմորթի իրիք ծովային, որ կոչի ոստրէ, յորմէ հանեալ զնա ծակեն, և 'ի զանազան զարդս 'ի գործ ածեն․ առաւել կանայք։ Յուդի 10․ 4։ Մատթ․ 13․ 45։ Յայտ․ 21․ 21։

Մարգարտազեղ։ (Նախադրիւ հոլովի․) ‖ ունօղ զեղ մարգարտի․ կմ գեղեցիկ, և մաքուր իբրև զմարգարիտ․ և կմ զարդարեալ, և վայելչացեալ մարգարտօք։

Մարգարտակապ։ (Նախադրիւ հոլովի․) ‖ մարգարտօք կապեցեալ, որով խմանի յերուսաղն, և ընդելուզեալն մարգարտովք։ 'Ի ճառս հարց․ ժէ։

Մարգարտահատ։ (Նախադրիւ հոլովի․) ‖ մարգարտայատն․ զարդարեալ, և զարդարեցել մարգարտովք։ և ըստ այսմ առի․ մարգարտահատ կօշիկ։ 'Ի ճառս հարց․ ժա։

Մարգարտայեռ։ (Նախադրիւ հոլովի․) ‖ նոյն է ընդ վերնոյն։ Յս ուրեք։

Digitized by Google

Մարգարտաշար ։ (Նախդրիւ հոլովի ․) ‖ նա, որ ունի շարեցեալ 'ի վզի իւր զմարգարիտս, կամ որ է ընդելուզեալ, և պաճուճեալ մարգարտովք ։ 'Ի վերս հարց ․ ժդ ։ Իսկ մերթ նշանակէ իբրև զմարգարիտս շարեցեալն, և կամ զյօրինեցեալն գեղեցիկ կարգաւ իբր շարիւք մարգարտի ․ և ըստ այսմ մարգարտաշար կոչին գեղեցկահիւս և արուեստաւոր շարադրութիւնք բանից ։ Իսկ մինչ ասի՝ մարգարտաշար հիւսել, առեալ լինի մակբայօրէն՝ և նշանակէ իբրև զմարգարիտս շարելով ․ կամ թուելով ։ 'Ի Նարեկացւոյ ։

Մարգարտաշարեմ ․ եցի ․ եմ ․ ել ։ (Ներգործ ․) ‖ մարգարտով շարել ․ կամ իբրև զմարգարիտս շարելով կարգել և յօրինել ։

Մարգարտատեսիլ ։ (Նախդրիւ հոլովի ․) ‖ ունող զտեսիլ մարգարտի ․ որով իմանի նա՝ որ գունով, պայծառութեամբ, և գեղեցկութեամբ նման է մարգարտի ․ և կամ նա՝ որ բոլորովին զարդարեցեալ գոլով գեղեցկափայլ մարգարտովք՝ իբրև զմարգարիտ երևի ։ Ի Նարեկացւոյ ։

Մարգարտատող ․ ի ․ իւ ․ ից ․ իւք ։ ‖ նոյն է ընդ մարգարտաշար բառին ․ վասն զի բառս տող, նշանակէ զշարն որ ասացի 'ի տեղւոջ իւրում ։

Մարգարտափայլ ։ (Նախդրիւ հոլովի ․) ‖ իբրև զմարգարիտ փայլող ․ կամ պայծառ և գեղեցիկ ըստ օրինակի լուսափայլ մարգարտի ։ 'Ի Նարեկ ․ ՟Ը ։

Մարգարտեայ ․ տէի ․ իւ ․ էից ․ իւք ։ ‖ մարգարտեղէն ․ կամ յօրինեցեալ մարգարտովք ․ և կամ մարգարտայերս ։ Խորէն ․ ՟Ա ․ գլ ․ 12 ։

Մարգարոտ ․ ի ․ իւ ․ ից ․ իւք ։ ‖ նման է սա 'ի բառս արօտ որ 'ի բարդութեան երբեմն նշանակէ զարածողն և երբեմն զարածեցեալն ։ Արդ և բառիս մարգարոտ՝ երբեմն նշանակի արածօղն զխաշինս 'ի մարգս ․ որպիսիք են հովիւք ։ Իսկ երբեմն նշանակի՝ արածեցեալն ․ և սնեալն 'ի մարգս ․ կամ 'ի խոտաւէտ դաշտս ․ և ըստ այսմ ասի՝ մարգարոտ եզինք ։

Մարգաց ։ ‖ է մինն 'ի հայկական ամսոց, որ համեմատի յունին ամսոյն հռոմայեցւոց ․ և թանուզ ամսոյն եբրայեցւոց ։

Մարդ ․ ոյ ․ ով ․ մարդք ․ ոց ․ ովք ։ ‖ է հասարակ անուն ադամայ և ամ ծննդոց նր ․ որով նշանակի բանական կենդանին ․ թէ արու իցէ, և թէ էգ ։ Ծննդ ․ 1 ․ 27 ։ Ելից ․ 22 ․ 31 ։ Իմաստ ․ 12 ․ 12 ։

Մարդաբնակ ․ ի ․ աւ ․ աց ․ օք ։ ‖ այն՝ որ բնակութեան լինի մարդկան ․ և կամ ուր բնակեն մարդիկ ․ որպիսի է աշխարհս այս ․ կամ քաղաքք ․ և շէնք ։

Մարդագերի ․ ւոյ ․ եաւ ․ եաց ․ եօք ։ ‖ մարդ գերեցեալ, կամ 'ի գերութիւն վարեցեալ ․ և ըստ այսմ մարդագերի կոչեցան գերեցեալ մանկունքն սիկիմացւոց ։ Ծննդ ․ 34 ․ 29 ․ վասն զի անդէն 'ի 25 ․ փոխ ․ ասի՝ թէ զամ արու կոտորեցին ․ որով իմանին չափահասակ արքն, որք թլփատեցեալք էին ․ իսկ զմանկունսն 'ի գերութիւն վարեցին ը̄ կանանց ։ Մերթ ևս նշանակէ զգերողն մարդկան ։

Մարդագին ։ (Նախդրիւ հոլովի) ‖ դրամով գնող զմարդ ․ որպիսի է վաճառականն որ գնեալ զգերիս սակաւ գնով ․ վաճառէ զայնս աւելի գնով ։ 2 ․ Մակ ․ 8 ․ 11 ․ և 25 ։ Իսկ մերթ նշանակէ զգինն, կամ զգնումն մարդոյ ․ և ըստ այսմ է 2 ․ Մակ ․ 8 ․ 34 ․ ուր ասի ․ Ջհազար վաճառականս 'ի մարդագին ածէր որդւոց հրէից ․ զի ածէր զվաճառականսն ընդ իւր 'ի գնումն որդւոց հրէից՝ յորժամ գերեսցին ։

Մարդագող ․ ի ․ իւ ․ ից ․ իւք ։ ‖ գողացող մարդոյ ․ կամ մանկան ․ ռամկ ․ մարդ գողցող ։ 2 ․ Օրին ․ 24 ․ 7 ։

Մարդադատիչ ․ տչի ․ աւ ․ աց ․ օք ։ ‖ դատիչ մարդոյ ․ կամ դատաստան առնող մարդկան ։ Իսկ մերթ նշանակէ զնա՝ որ աշխատանօք մաշատի ․ կամ գունն գայծելով մարմնի ը̄ մարդոյ ․ Նարեկ ․ 'Ի գովասանութեան ։

Մարդադարման ։ (Նախդրիւ հոլովի ․) ‖ դարմանեցեալ 'ի մարդկանէ ․ կամ դարմանող մարդոյ ․ և կամ կերակրող և սնուցանող մարդկան ։ Նարեկ ․ ՂԷ ։

Մարդադաւ ․ ի ․ աւ ․ աց ․ օք ։ ‖ դաւող մարդոյ ․ և կամ առնող զդաւաճանութիւն ինչ ումեք ․ Խորէն ․ ՟Բ ․ գլ ․ 36 ։

Մարդադաւան ․ ի ․ իւ ․ ից ․ իւք ․ կամ օք ։ ‖ դաւանող մարդոյ ․ և այս ասի զհերետիկոսաց, որք սոսկ մարդ դաւանեին զքս ։

Մարդադաւանութիւն ․ թեան ։ ‖ դաւաճանութիւն ․ զոր առնէ ոք նենգելով, կամ կողոպտելով և կամ յափշտակելով զմարդիկ ․ Խորէն ․ ՟Բ ․ գլ ․ 6 ։

Մարդադէմ ․ դիմի ․ աւ ․ աց ․ օք ։ ‖ ունող զդէմս մարդոյ ․ և կամ մարդակերպ ․ և ըստ այսմ ասի, մարդադէմ գազան ․ կամ մարդադէմ պատկեր ․ և այլն ։ Ագաթ ։

Մարդաթիւ ․ թուի ․ իւ ․ ից ․ իւք ։ ‖ թիւ մարդոյ ․ կամ թիւ իւրաքանչիւր անձանց ․ ուստի մինչ ասի՝ ըստ մարդաթուի, իմանի՝ ըստ թուոյ մարդոյ ․ կամ ըստ համարոյ իւրաքանչիւր անձանց ․ որ ․ ռամկօր ․ ասի՝ մարդ գլուխ ։ Ելից ․ 12 ․ 4 ։ Իսկ մերթ նշանակէ զթուօղն մարդկան ․ կամ զայն՝ որ հանդէս առնէ մարդակոյտ բազմութեան ։

Մարդախանձ ․ ի ․ իւ ․ ից ․ իւք ։ ‖ ամլորձի ․ կամ մոլեալ առ 'ի պատառել և ուտել զմարդ ․ կամ մարդածախ ․ և կամ մարդակեր ։ Եզեկ ․ 19 ․ 3 ․ և 6 ։ Եւ զայսմանէ տես զբառս խանձ ։

Մարդախիտ ։ (Նախդրիւ հոլովի ․) ‖ խտացեալ և խռնեալ բազմութեամբ մարդկան ․ և կամ յոյժ բազմամարդ ․ որպիսիք են սմանք 'ի քաղաքաց ․ կամ 'ի շինից ։ Խորէն ․ ՟Բ ․ գլ ․ 7 ։

Մարդախողխող ․ ի ․ իւ ․ ից ․ իւք ։ ‖ խողխողող ․ կամ սպանանող մարդոյ ։

Մարդախօշոշ ․ ի ․ իւ ․ ից ․ իւք ։ ‖ խօշոշող մարդոյ ․ որով նշանակի մարդասպանն ․ կամ մարդախողխողն ․ և կամ սիրողն սպանա-

նելոյ զմարդիկ։ 2. Մակ. 9. 28։

Մարդածախ. ի. իւ. եց. իւք։ || Այն, որ ծախէ կամ վաճառէ զմարդիկ ուտելով, կամ մահացուցանելով. ուստի մինչ ասէ՝ երկիր մարդածախ, իմանի երկիրն՝ ՚ի յոր բնակողքն վաղահաս մեռանին, և ծախին։ Թուոց. 13. 33։

Մարդածին. ծնի. իւ. աց. օք։ || Ծնունդ մարդոյ. կամ Նա՝ որոյ ծնունդն է սոսկ մարդ. և զայս բառ ՚ի գործածէին միայն Նեստորականքն։ քանզի ամբարշտաբար համարեալ զՔս լոկ մարդ, և ոչ ԱԾ և մարդ՝ զԾնօղ Նր մարդածին կոչէին, և ոչ ԱԾածին։

Մարդակազմութիւն. թեան։ || Կազմութիւն մարդոյ. կամ կազմուած մարդկային։ Իսկ յատկապէս առեալ՝ նշանակէ ասխա արուեստ կամ մակացութիւն, որով ուսեալ լինին հանդամանքն կազմուածոյ մարդոյն. կամ քննին, և ճանաչին մանրամասնաբար իւրաքանչիւր կազմուածք, և որպիսութիւնք նոցա։

Մարդակեր. ի. աւ. կամ իւ. աց. օք։ || Կերօղ զմիս մարդոյ. և կամ որ պատառելով ուտէ զմարդ։ Կիւրղ. Եզեկ. Է։

Մարդակերպ։ (Նախդրիւ հոլովի.) || Ունօղ զկերպ, կամ զնմանութիւն մարդոյ. կամ կերպարանեալ ՚ի ձև մարդկային։ Ագաթ. Խորէն. յաշխարհագ. Իսկ մերթ վարի մակբայօրէն, այսպէս. մարդակերպ շրջիլ. կամ մարդակերպ խօսիլ. և նշանակէ՝ ըստ կերպի մարդոյ. կամ իբրև զմարդ։ Ագաթ.

Մարդակոյտ։ (Նախդրիւ հոլովի.) || Այն՝ որ է կոյտ՝ և ժողով մարդկան, կամ յորում եղեալ ամբոխքն են մարդիկ. և ըստ այսմ ասի մարդակոյտ բազմութիւն։ Ոսկէ. 1. հոմ. Ը։

Մարդահաճ։ (Նախդրիւ հոլովի.) || Մերթ նշանակէ զմարդահաճոյն։ Իսկ մերթ զայն, որ պատահական մարդահաճոյից. և ըստ այսմ ասի՝ մարդահաճ ախտիւ գլորիլ։ Լամբր.

Մարդահաճոյ. ոյի. իւ. եց. իւք։ || Նա՝ որ ջանայ հաճոյանալ մարդկան առ ՚ի շահել զփառս, կամ զհամբաւ. և կամ զսէր մարդկային. և կամ նա՝ որ վա շահելոյ զհաճոյս մարդոյ առնէ զչար ինչ. կամ զհաճոյան նոյ ՚ի բաց թողու։ Սաղմ. 52. 6։ Եփես. 6. 6։ Կողոս. 3. 22։

Մարդահաճութիւն. թեան։ || Ջանք հաճոյանալոյ մարդկան առ ՚ի ստանալ զփառս, կամ զպատիւ. և կամ զսէր ՚ի նոցանէ ան_փոյթ առնելով զհաճոյսն նոյ. և կամ երեսպաշտութիւն. Խորէն. ՃՁ. պր. 67։ և Ոսկէ. 1. հոմ. ԺԹ։

Մարդահատակ։ (Նախդրիւ հոլովի.) || Ունօղ զհատակ մարդկային, կամ կերպարանեալ ՚ի ձև մարդոյ։ Ագաթ.

Մարդահարկ. ի. իւ. եց. իւք։ || Հարկ առեալ ՚ի վերայ ժողովրդեան, զի զայս_քան և զայնքան մարդ տայցեն յամ ցեղէ, կամ քաղաքէ, վա ծառայելոյ արքունական գործոց և պաշտօնէից. ուստի ասի՝ մար_դահարկն՝ իբր թէ մարդոյ հարկ. 3. Թագ. 5. 13։

Մարդահոյլ։ (Նախդրիւ հոլովի.) || Այն՝ յորում եղեալ հոյլքն, կամ բազմութիւնքն են մարդիկ. Նարեկ. ՂԶ։

Մարդաձև. ի. իւ. եց. իւք։ || Ունօղ զձև մարդոյ. կամ մարդակերպ։

Մարդամահ. ու. ամբ։ || Մահ. կամ կոտորած մարդոյ։ Մծբն. Դ. և ԺԹ։ Իսկ մերթ նշանակէ զմահացուցանօղն կամ զկոտորօղն մարդկան։

Մարդամարտան. կամ մարդամարտա. ի. իւ. աց. օք։ կամ եց. իւք։ || ՚Ի վր մարդոյ մոլեալ, որով մերթ նշանակի նա, որ սաստիկ ածեալ սիրով և անձնանուէր յարի ՚ի մարդ. և իբր թէ ՚ի սէր նորա թալկանայ և մաշի. [illegible] Իսկ մերթ նշանակի նա՝ որ ածի զարդարեալ սէր և զյօժարութիւն ՚ի գիշատել՝ ՚ի յուտել, և ՚ի ծախել զմարդ, որպիսիք են ոմանք ՚ի վայրագ և ՚ի գժնեայց գազանաց։ Խորէն. յաշխարհագրութէ։

Մարդամարտ. ի. իւ. եց. իւք։ || Մարտնչօղ ընդ մարդոյ, կամ ունօղ զթշնամութիւն ընդ մարդկան։ Խորէն. յաշխարհագրութէ։

Մարդամօտ։ (Նախդրիւ հոլովի.) || Այն որ է մօտ, կամ մերձ մարդոյ, կամ որ սիրէ ընտանեանալ և յարիլ մարդկան։ Իսկ մինչ ասէ՝ ՚ի մարդամօտ կեալ, իմանի՝ առ մարդ_կան, կամ ընդ մարդկան կեալ. այլ ասէ՝ ընտանի աղաւնիքն։ Ագաթ.

Մարդանամ. ացայ. ցեր. ալ։ (ընդգծէ.) || Մարդ լինիլ. կամ զնմանութիւն մարդկային առնուլ։

Մարդաշահ։ (Նախդրիւ հոլովի.) || Բարերար, կամ օգտակար շահօղ զմարդ. և կամ նա՝ որ զմարդասիրութեն ցուցանելով շահի և օգտեցուցանէ զմարդիկ։

Մարդաշատ։ (Նախդրիւ հոլովի.) || Բազմամարդ. կամ լի մարդկամբ. և կամ խռնեալ բազմութե մարդկան. 2. Մակ. 9. 14։

Մարդաշատութիւն. թեան։ || Շատութիւն կամ յոլովութիւն մարդկան. կամ մարդաշատ բազմութիւն։ Ագաթ.

Մարդաշէն։ (Նախդրիւ հոլովի.) || Այն՝ որ է շէն բազմութե մարդկան. կամ որ լի է շինուածովք և բնակչօք. որպիսի են բազմամարդ քաղաքք. 2. Մակ. 9. 17։ Մերթ և նշանակէ զայն՝ որ ՚ի մարդոյ է շինեցեալ։

Մարդաշնորհ։ (Նախդրիւ հոլովի.) || Ունօղ զշնորհս շահելոյ զմարդ. և կամ որ մարդասիրութե շինէ և օգտեցուցանէ զմարդիկ. և կամ մարդասէր։ ՚Ի Վարս հարց. ԺԱ։

Մարդաշուք։ (Նախդրիւ հոլովի.) || Ունօղ զշուք մարդոյ. կամ ըստ շքոյ մարդոյ. և կամ շուք մարդոյ. ՚Ի Վարս հարց. ԻԷ։

Մարդապաշտ. ի. իւ. եց. իւք։ || Նա՝ որ ըստ պաշտօնն այլ սոսկ մարդոյ մատուցանէ. և կամ զլոկ մարդն իբր զԱԾ պաշտէ։

Մարդապաշտութիւն. թեան։ || Պաշտօն, կամ մատուցանել որ սոսկ մարդոյ իբրև Այ. և կամ պաշտելն զլոկ մարդն իբր զԱԾ։

Մարդապետ։ (Մեկնող սովորականն.) || Իշ_

ՄԱՐ.

րև զմարդ. կմ մարդկօրէն. և կմ մարդա-
կերպ. Ագաթ.:

Մարդապուր: || Եղանէ 'ի պայուր բառէս՝ որ է արմատ ապրելոյն. ուստի բառիւս մարդապուր՝ նշանակի մարդն ապրեալ կմ զերծեալ անձամբ և ելթ առանց ամ ընչից. և կմ սոսկ զգլուխն ապրուցանելով առանց կահուց և կարասեաց. և թ այսմ վարի իբրև զմակբայ. զոր օրինակ, մարդապուր փախչիլ. կմ մարդապուր ձռ զապրիլ: 4. Թագ. 7. 7:

Մարդասէր. սիրի. աւ. աց. օք: || սիրող մարդոյ, կմ որ ունի զսէր և զգութ 'ի վր մարդոյ, կմ որդւոց մարդկան. կմ գորովասիրտ. կմ գթած, և ողորմած. և կմ բարեբարոյ. 2. Մակ. 13. 23: և 14. 37: Իմաստ. 1. 6: Իսկ մերթ նշանակէ զմարդասիրականն. և թ այսմ առի՝ կամս մարդասէրս. կմ մարդասէր խորհրդովք. և այլն: 2. Մակ. 14. 9: և 3. Մակ. 3. 9:

Մարդասիրագոյն. գունի. նէ. նց. նւք: || առաւել մարդասէր. կմ գթածագոյն. և կմ ողորմածագոյն. 2. Մակ. 9. 27:

Մարդասիրապէս: (մակբայ որակական.) || մարդասիրութբ. կմ սիրելով զմարդիկ. կմ գթածապէս. և կմ ողորմածաբար:

Մարդասիրեմ. եցի. եա. եւ: (չէզոք.) || ցուցանել զմարդասիրութիւն. կմ զսէր և զգութ. կմ գթալ. և կմ ողորմիլ. և ըստ այսմ առի՝ մարդասիրել յանձն ոք, կմ ումեք: Խորէն. բ. գլ. 7. և 80:

Մարդասիրութիւն. թեան: || սէր առ մարդիկ. կմ սերտ սիրելութիւն առ որդիս մարդկան. կմ բարեբարոյութիւն. կմ գթութիւն. և կմ ողորմութիւն: Եսթ. 16. 11: Գործ. 27. 3: և 28. 1:

Մարդասպան. ի. ան. աց. օք: || սպանանող մարդոյ. կմ որ անօրինաբար սպանանէ զմարդ. 1. Տիմ. 1. 9: 1. Յով. 3. 15:

Մարդավաճառ. ի. ան. աց. օք: || վաճառող մարդոյ. և կմ վաճառական, որ գնէ զմարդիկ դիւրագին. և վաճառէ ծանրագին: Եզեկ. 27. 13:

Մարդավար. ի. աւ. աց. օք: || երբեմն ծագի առ 'ի վարիմ բայէն. և յայնժամ նշանակէ զնա, որ վարի ընդ այլոց արժանաւոր և վայելուչ կենցաղավարութբ. ընծայելով իւրաքանչիւր ումեք զպատիւ և զյարգութիւն, ոպ անկն է. որ և կոչի քաղաքավար: Իսկ երբեմն ծագի 'ի վարեմ բայէն, և յայնժամ նշանակէ զայն, որ վարէ զմարդ, յն ծախելով, կմ վատնելով բառնայ, կմ կորուսանէ. և թ այսմ իմացեալ լինի՝ մինչ առի՝ երկիր մարդավար, իբր թէ՝ մարդածախ. Եզեկ. 36. 13. և 14:

Մարդավարութիւն. թեան: || քաղաքավարութիւն. կմ բարւոք և վայելչական կենցաղավարութիւն, որով ոք վարի ընդ մարդկան ըստ արժանեաց ազնուաբարոյութեան:

Մարդատեսիլ: (Նախդրիւ հոլովի.) || այն՝ որ է տեսլեամբ մարդոյ, կմ ունօղ զմարդկային կերպարանս և զնմանութիւնս. և կմ մարդակերպ: Ագաթ.:

Մարդատունկ. տնկոյ. ով. ոց. ովք: || մարդկեղէն տունկ. կմ բանաւոր բոյս, որ է մարդն: Ագաթ.: Իսկ մերթ՝ տնկեալ 'ի մարդոյ. ոպիսիք են ձեռատունկ ծառք:

Մարդացուլ. ցլու. ցլու. ցլուց. լօք: || նոյն է ընդ ձիացուլ բառին. այլ զի ձիացուլն ըստ առաջնոյ կողմանն է մարդակերպ, վն այնորիկ ոմանք կոչեցին զնա մարդացուլ:

Մարդեղուզ. լուզի. ան. աց. օք: || ծագեալ յեղուզակ բառէս, որ է ապատակող, կմ աւազակող: Ուստի բառիւս մարդեղուզ նշանակի եղուզակօղն մարդոյ. կմ մարդագողն, յն նա, որ յափշտակէ, կմ գողանայ զմարդիկ, թէ ծառայք լիցեն, և թէ ազատք. և տարեալ վաճառէ զնս իբրև զգերիս: 1. Տիմ. 1. 10: Եւ յայսմանէ սովորութիւն եղև մարդեղուզ կոչել զայնոսիկ, որք կեղծաւորութբ, կմ կերպարանեալ բանիւք շողոքորթելով զմարդն. կմ ըստ հաճոյից նց խօսելով գողանան զսիրտ նց առ 'ի խաբել. կմ առ 'ի որսալ ինչ 'ի նմանէ: և ըստ այսմ առի՝ 'ի Նարեկ. կ: Իբր մարդեղուզս կերպարանաւոր՝ զմարդահաճոյսն սակերս ցրուել մաղթեցից. յն ոչ մաղթեցից կեղծաւոր շողոքորթութ. և այլն:

Մարդեղուզեայ. զէի: || մարդեղուզական, կմ վերաբերի յն այն իմ, որ է մարդեղուզին, կմ վերաբերի առ մարդեղուզութիւն:

Մարդեղուզեմ. եցի. եա. եւ: (Ներգործ.) || գողանալ եղուզակաբար յափշտակել. կմ գողանալ զոք, և իբրև զգերիս վաճառել զնա: Իսկ մերթ նշանակէ պատրողական բանիւք շողոքորթել. կմ փաղաքշել. և կմ երեսպաշտութբ հրապուրել:

Մարդեղութիւն. թեան: || մարդ եղանիլն, կմ զբնութիւն մարդկային առնուլն. որ և ասի ներմարդութիւն. և այսոքիկ բառք վերաբերին միայն առ Որդին այ, որ վն մեր եղև մարդ: Ոսկէ. 1. հաւ. ժդ:

Մարդընդել. կմ մարդընտել: (Նախդրիւ հոլովի.) || ընտելացօղ մարդոյ, յն նա, որ դիւրաւ սովորի վարել ընդ մարդկան. և կմ սիրէ բնակել 'ի մէջ մարդկան, որպիսիք են ընտանի աղաւնիքն: Ագաթ.:

Մարդիկ. կմ մարդիկք. մարդկան. ամբ. կմ աւ: || բառս այս եզական ձայնիւ զրու-գունս ցուցանէ, զի նշանակէ զբազում մարդս, կամ զբազմութիւն մարդոց: Ծննդ. 6. 3: և 13. 13: Ղուկ. 12. 36: Իսկ մերթ առեալ լինի փոխանակ այնոցիկ, որք վարին ըստ մարդկային ապականեալ բնութե, կմ որք զհետ երթան յօժարութեց, կմ անկարգ հաճոյից մարմնոյ. և թ այսմ է 1. Կորն. 3. 3. և 4. յորս առի՝ ոչ ապաքէն ըստ մարդկան գնայք. կմ ոչ մարդիկք էք:

Մարդկաբար: (մակբայ որակական.) || տես զՄարդկօրէն:

Մարդկային. այնոյ. ով. ոց. ովք: || այն իմ,

որ

որ է մարդոյ. կմ վերաբերի առ մարդիկ, որպիսիք են խօսք, կմ գործք. և կմ իրք մարդկան:

Մարդկապէս: (մէջ. ոտականական.) || իբրև զմարդ. կմ մարդաձևերպ: Աշխ.

Մարդկասերմ: (Նախադրիմ հոլովի.) || յառաջացեալ 'ի սերմանէ մարդոյ. կմ սերեալ, և արտադրեցեալ 'ի մարդկանէ. ըստ այնմ Նոննի. զի՛. Զղարմ զաւակի մարդկասերմ բուսոյ:

Մարդկեղէն. ղէնի. աւ. աց. օք: || մարդկային, և կամ որ վերաբերի առ մարդն: Իմաստ. 12. 5: Յակ. 3. 7: 2. Պետր. 2. 16: Իսկ 1. Պետր. 2. 13. ուր ասի՝ հնազանդ լերուք ամ մարդկեղէն ստեղծուածոյ, իմանի ամ բանական ստեղծուածոյ, որք են մարդիկ:

Մարդկութիւն. թեան: || մարդկային բնութիւն: Իսկ մերթ մինչ ասի՝ ըստ մարդկութեան, իմանի՝ մարդկօրէն, կմ իբրև զմարդ: 1. Կորն. 9. 8: Գաղ. 3. 15: Իսկ երբեմն առեալ լինի փոխանակ բազմութեան, կմ յաճախութեան մարդկան. ըստ այնմ. Խորէն. բ. գլ. 39: Զմիջոց հովանին լնու մարդկութեամբ, և պայծառ շինուածովք:

Մարդկօրէն: (մէջ. ոտականական.) || մարդկապէս. կմ ըստ թէութեան մարդկան. և կմ իբրև զմարդ: Հռոմ. 6. 19: Իսկ մերթ վարի իբրև գոյական, և նշանակէ զմարդկայինն, կմ զմարդկեղէնն: Ոսկէ. 1. Կոր. ամ:

Մարդոյր: || Տ մարդոյ. և զայսմանէ տե՛ս զբառն Աստուծոյր:

Մարերի: || է միոյն յերկոտասան ամսոցն հայոց, որ համեմատի մայիս ամսոյն հռոմայեցւոց, և սիւան ամսոյն եբրայեցւոց:

Մարզ. ի. իւ. ից. իւք: || կողմն, կմ մասն երկրի, կամ աշխարհաց, որ անկանի ընդ միում կուսակալութեամբ: ըստ այնմ Աշխ. Անոր սմա ձեռն տուեալ յայնմ մարզէ, և յիւրեանց 'ի բուռն աշխարհէն: Ը այսմ եւ ասի 'ի հին պատմագիրս. Պատերազմ սատակել յայնմ մարզէ խաղաց. կմ Յայտ եղեալ 'ի կողմանց արաբացւոց. և յայնմ մարզէ Թուրքաստանի. սոյնպէս է և յայլ տեղիս: Եւ ըստ այսմ եղանէ 'ի սմանէ բառս՝ մարզպան, որ է կողմնակալ, զոր տեսցես զկնի: Բայց Ը ռամկ է սա առ մեր մեզ մարզել բային՝ նշանակէ զմարզութիւն, Տ զկրթութիւն, և կամ զվարժումն: Իսկ մերթ զկիրթն, կմ զվարժն. և ըստ այսմ ասի՝ այր մարզ՝ պատերազմի. կմ մարզ 'ի գործս իւր:

Մարզարան. ի. աւ. աց. օք: || վարժարան. կմ կրթարան. և կմ ուսումնարան:

Մարզեմ. եցի. եա՛. ել: (Ներգործ.) || հրահանգել. կմ կրթել. կմ վարժել. և կամ ուսուցանել: Յովհ. ոսկ. և Լամբր. Իսկ մերթ նշանակէ խրախուսել, կմ 'ի պատերազմ և 'ի հակառակութիւն գրգռել. և կմ մղել զոք 'ի մարտ. Ը. այնմ, Լամբր. Թշնամական մարզ՝ առ թշնամութիւն զմեզ մարզեցին:

Մարզիկ. զկի. աւ. աց. օք: || մարզեալ. Տ վարժ կմ կիրթ 'ի պատերազմ, և կմ յայլ արուեստս, և 'ի գործս: 1. Մակ. 11. 38:

Մարզիչ. զչի. աւ. աց. օք: || հրահանգիչ, Տ կրթիչ, կմ վարժօղ 'ի մրցմունս մարտից, կմ խաղուց, և այլոց նմանեաց. 2. Մակ. 4. 14: Նոննի. զի՛: և 'ի գոյն. աստ. Իսկ մերթ խրախուսօղ, կմ 'ի մարտ և 'ի թշնամութիւն գրգռօղ. ըստ այնմ Լամբր. Եւ 'զասնթշնամութիւն մարզիչ բանս սերմեցին:

Մարզպան. ի. աւ. աց. օք: || ընդհանրական սատրիկան մարզպանաց, Տ մարտիկ զօրաց. և կմ կողմնակալ, որ է նախարար մեծ կացուցեալ յարքայէ իշխան 'ի վերայ գաւառի միոյ. և կմ կարգեցեալ հրամանատար 'ի վերայ նախարարաց Թագաւորութեան, կմ կուսակալութեան: Խորէն. բ. գլ. 64. և 65: տե՛ս զսմանէ՝ զբառն մարզ:

Մարզպանութիւն. թեան: || ընդհանրական սատրիկանութիւն 'ի վերայ մարտիկ զօրաց, կմ կողմնակալութիւն, և կմ պետութիւն տուեալ առ՝ 'ի իշխել 'ի վերայ միոյ գաւառի, կմ կուսակալութիւն: 'ի հին պատմագիրս:

Մարթ: || 'ի գործ ածի իբրև դերբայական այսպէս, մարթ է. մարթ իցէ, և այլն. և նշանակէ պատշաճ է, կմ անկ է, կմ արժանէ. և կմ վայելէ: Գործ. 8. 37: 1. Կորն. 6. 12: Իսկ մերթ հնար է, կմ կարելի է: ռամկ. մումկին է. կմ ըլլալու է: Եսթ. 8. 26: Մատթ. 15: Յոհ. 3. 4:

Մարթանամ. ացայ. ցիր. ալ: (ընդմիջ.) || հնարաւորիլ. կմ կարօղ լինել. կմ զօրել. կմ կարել: ռամկ. կարենալ: 1. Մակ. 15. 21: 2. Մակ. 6. 28: 3. Մակ. 4. 15:

Մարթանք. անաց. օք: (անեզ.) || պատշաճաւորութիւն. կմ դիպօղ և յարմար կերպ. կմ հնարաւորութիւն. և կմ հնարք, որով դիւրութեամբ և յաջողութեամբ կատարէ ոք ըզգործ ինչ: ռամկ. փիւրսաթ. կմ առուլ: 2. Մակ. 14. 29: Մծբն. ժթ: Լամբր:

Մարթելի. լւոյ. եաւ. եաց. եօք: || կարելի. կմ հնարաւոր. կամ պատշաճաւոր. կմ պատկանաւոր. և կմ օրինաւոր. ըստ այնմ. 'ի Վարս հարց. բ. Եւ թէ մարթելի է առնել: Ըստ այսմ և ասի, մարթելի գործ. կմ խորհուրդ. և այլն:

Մարթեմ. ացի. ցեր. մարթացայ. ացեալ. ացից. ել: (չէզոք.) || Ըծորդի սա իբրև ըզդերանուն բային. և նշանակէ, կարել. կմ զօրել. զոր օրինակ. որք մարթեսցեն նենգել: Ոսկ. 1. Կոր. ժէ: 'ի նզոյէ անտոհմդոյ աստեղ ծանել մարթայ. Տ կարաց Կիւրղի եղծի. ժզ: Մարթասցես ինչ գրել. Տ կարասցես ինչ: Գործ. 25. 26: հնար իւն մարթել զտանել. Տ կարել գտանել: Աշխ.

Մարթիմ. եցայ. իլ: (ձայնակր.) || կարել. կմ կարօղ լինել. կմ կարելի գոլ. և կմ հնար լինել: 2. Մակ. 3. 6: Յոհ. 3. 9: 1. Յոհ. 2. 18:

Մարթեցուցանեմ. ցուցի. ցոյ. ել: (անցող.) || կարելի առնել. կմ հնարաւորել. կմ ձեռնհասուցանել. կմ պատշաճ և պատկան առ-

նել : Խորէն. ա. գլուխ. 26 :

Մարթութիւն. մարթութեան. ով. ոց. ովք : || կարելի. կամ հնարաւոր : Իսկ մերթ պատշաճաւոր. կամ վայելչական. կամ արժանաւորութի. Եփես. 16. 4. ուր առէ ՚ի չմարթութեանցն գովութիւն. իմանի ՚ի գովութիւնս անպատշաճից, կամ անարժանից, ի յայնց մեծութեանց, որոց նոքա ոչ են արժանի :

Մարի. ւոյ. եաւ. եաց. եօք : || էգ հաւ ընտանի, որոյ արուն կոչի աքաղաղ : ուսմկ. հավ : Աղուան. 30. 31 : Կիւրղի ե͞կ. գ͞ : Իսկ մերթ հասարակաբար առեալ նշանակէ զէգն ՚ի և իցէ հաւուց, կամ թռչնոց. որք ածեն ձու, և հանեն ձագս : Մծբն. ժ͞դ :

Մարմանդ. ի. ան. աց. օք : կամ իմ. ից. իւք : || զանազանելի այգեստանեայք, և դաշտաստանք ՚ի գեղեցիկ կողման երկրի. և կամ տեղի արևահայեաց՝ ջերմ : և ազնիւ զանազան ծաղկեալ բարեխառն օդով, ուր անկեն այգիք, և բուրաստանք, և դրախտք : և ըստ այսմ առէ, մարմանդք այգեաց, և բուրաստանաց. և կամ կարգել զմարմանդս՝ յայգիս, և ՚ի բուրաստանս : Խորէն. բ͞. գլ. 6 : և ՚ի հին պատճէնս : Ուստի և ՚ի գաւառս իմոյ հայաստանեայց փոխանակ ասելոյ, գնալ յայգեստանեայս. ասեն՝ երթալ ՚ի մարմանդս : Եւ յայսմանէ առեալ նաև այլ ՚ի և իցէ ջերմ և պտղաբերական կողմն երկրի, կամ քաղաքի, և այլոց նմանեաց՝ մարմանդ կոչի : և ըստ այսմ վրանաբնակքն, կամ երամակք կենդանեաց՝ յորժամ ՚ի դաշտն ձմեռան՝ չու արարեալ գնան ՚ի ջերմ երկիր. ասին երթալ ՚ի մարմանդս : ուսմկ. ...փէշ. կամ ...երիր : Սոյնպէս և պարտէզ և անտառաստանայց վայրքն մարմանդք կոչին. ըստ այնմ : Մծբն. ժա. Եւ առայ ձեռս զբարուաք, և զազնիւ տեղին ընդ մարմանդս խաշանց զերկիրն գնանի, որ է գետնամ :

Մարմանջ. ի. իմ. ից. իւք. կամ աց. օք : || է արմատ մարմանջել բային, որով մերթ նշանակի մարմանջումն : Իսկ մերթ նա՝ որ ունի զմարմանջումն : Մերթ ևս նշանակէ զմարմինս, կամ զկերպ, և զխառնուրդ, և զայլ բշտիկս մարմաջեցուցանողս :

Մարմանջանք. անաց. օք : (անեզականն.) || տե՛ս զՄարմանջումն :

Մարմանջեցուցանեմ. կամ մարմաջեցուցանեմ ցուցի. եցի. ել : (անցող.) || Եռացուցանելով խայթել, և գրգռել ՚ի քորել. այն առնէն բորբ, կամ կերպ. կամ խայթուածք ճճեաց. և այլ քննանք : ուսմկ. Եռսրթեւ, կամ կծօտեւ : Եւ յայսմանէ առեալ երբեմն ևս նշանակէ գրգռել զցանկութիւն վավաշոտութեան. կամ բորբոքել զոք ՚ի հեշտութիւն ասփողական աչօքն՝ և ուացուցանելով զարիւնն : ըստ այսմ ևս գրգռմամբ շարժելն զյօժարութիւնս արտին, կամ ակամբանց՝ առ հեշտալից բարեանց՝ մարմնջեցուցանել ասի : Մերթ ևս նշանակէ մորմոքեցուցանել. կամ կսկծեցուցանել. և կամ ցաւեցուցանել՝ այրելով. կամ խոցոտելով՝ զմարմինն, զախտ. կամ զանձն ոք : ուսմկ. խշխշեցնել : Ոսկէ. ա. հոգ. ի͞ :

Մարմանջեմ : || տե՛ս զՄարմաջել :

Մարմանջիւն. կամ մարմաջիւն : (Նախադրաւ հողովի.) || տե՛ս ՚ի ներքոյ զՄարմանջումն :

Մարմանջումն. կամ մարմաջումն. ջման. ման. մանց. մամբք : || Եռացումն մարմնոյ հանդերձ սուր խայթեցմամբ, որով բռնադատի ոք ՚ի քորել : ուսմկ. Եռս. կամ կծոտուք : Իսկ մերթ նշանակէ զգրգռումն վավաշոտութեան. և կամ զխառնումն ընդ այլս առնս ինչ, կամ առ մոլեկան գործ ինն, որք մեղկացուցանեն զախորժ գիջուն ընդ բունեն զմարդն յարս առաստանայի. և ըստ այսմ իմանի ՚ի Նորէն. խէ. ուր առէ. Զմարմնոջմունս գիշեր զմարդկայինս : Մերթ ևս նշանակէ զմորմոքումն. կամ զկսկծումն. և կամ զզգալն ցաւս վիրաց, կամ այրոյ, և այլոց նմանեաց : ուսմկօր. խշխշումն. կամ խշխշումն :

Մարմաջ : || տե՛ս զՄարմանջ :

Մարմաջանք. անաց. օք : (անեզ.) || տե՛ս ըզ Մարմանջումն :

Մարմաջեմ. կամ մարմանջեմ. եցի. եա. ել : (չէզոք.) || Եռալ մարմնոյ հանդերձ խայթուածով և սուր կսկծմամբ. որով առի ոք ՚ի քորել. այն հանդուրժել ՚ի բռնութէ, կամ ՚ի ծնանելն կերպոց. և կամ ՚ի խայթուածս ճճեաց : ուսմկ. Եռսր. կամ Եռսր ընթել : Իսկ մերթ նշանակէ զգրգռուելն վավաշոտութե. կամ զբորբոքելն անկարգ ընձից : Ըստ այսմ ևս բորբոքմամբ ցանկալն. կամ գրգռմամբ ձկտելն ընթերցող ՚ի լսել ախորժելեացն իրաց՝ մարմաջել առի : ՝. Տիմ. 4. 3 : Մերթ ևս նշանակէ մորմոքել. կամ կսկծել. և կամ այրեցմամբ, կամ խոցեցմամբ ցաւել : ուսմկօրէն խշխշել :

Մարմաջեցուցանել : || տե՛ս զՄարմանջեցուցանել :

Մարմաջողական. կամ մարմանջողական. ի. աւ. աց. օք : || այն, որ վերաբերի առ մարմաջումն. կամ որ պատճառէ զմարմաջմունս. և կամ մարմաջեցուցանող. և ըստ այսմ մարմաջողական կոչին երամակք ճանճ, կամ ճանճ, և այլոց նմանեաց, որք խայթածովք խայթեաց արկանեն ՚ի մարմին մարդոյ զեռացումն, և զկսկիծ. կամ զաստառիկ ցաւ : ուսմկօր. Եռսր 340զ. կամ կծոտօղ : Նորէն. կզ :

Մարմաջումն : || տե՛ս զՄարմանջումն :

Մարմառ. ի. իւ. ից. իւք : || է տեսակ ինչ մանր ուռուցից, որք ծնանին ՚ի մարմնի ՚ի ներքին ապականութէ՝ խառն զազրամամբ փոքրիկ մրջմանց խառն խառն երևին ՚ի վ͞ր մորթոյ երեսաց, կամ պարանոցի, և կամ այլոց մասանց կենդանեայն, որոց ար մատն է լայն, և ծայրն սուր, որք ՚ի քերելն, առն մարդոյ ղզալ իբրև ընմուզ խայթուածս մրջմանց. և ՚ի վ͞ր պարզին յամենայն լեզուս կոչեն զսա մրջիւն, այն է՛ի

զա...

զատուածս ինչ յաշխարհականս ընդունիլ մե-
րում կոչէին մրջմնոց, իբր թէ տեղի մրջմանց։

Մարմասուստ. ի. ու. ից. օք։ կամ իմ. ից. իւք։ ‖ այն, որ ունի 'ի մարմնի իւրում զմարմաւս, կմ՝ որոյ մարմինն ախտացեալ է մարմաւս կոչեցեալ ուռուցիւք. որպէս սէք են ոմանք մարդիկ, նաև անասունք, զորս արգելոյր օրէնքն մովսէսի մատուցանել պատարագ տն։ Ղևտ. 22. 22։ և Լամբրօն։

Մարմարեայ. էի. իմ. ից. իւք։ ‖ մարմա-րիոնեայ. այն՝ որ է 'ի մարմարիոնէ. կմ՝ որոյ նիւթն է մարմարիոն. որ հայերէն կոչի կճեայ։ ռամկ. մերմէռ շինած։ 'ի մարմ հարց. Ճաւ։

Մարմարիոն. ի. ու. ից. կմ՝ եց. օք։ ‖ է բառ յունական, որով նշանակի տեսակ ինչ ազնիւ և կարծրանիւթ քարի. զոր հայ երէն կոչեմք կիճ։ ռամկ. մերմէր։ Խորէն. յաշխարհագրութ։

Մարմարինեայ. կմ՝ մարմարոնեայ։ ‖ տե՛ս զՄարմարեայ։

Մարմին. մնոյ. ով. (ներգոյական)'ի մարմնի. ոց. ովք։ ‖ բառս այս ընդհանրապէս ա-ռեալ նշանակէ զի և էցէ մարմնաւոր գոյացութիւն, որ կարէ ընդ տեսութեա՛ անկա-նիլ. կմ՝ մարմնաւորապէս շօշափիլ. և ը այսմ մարմինն կոչին եմ երկնային գոյա-ցութիւնք նիւթականք. որպէս արեգակն. լուսին. և աստեղք։ Եւ եմ երկրաւոր գոյացութիւնք են թաղուածեայք. որպ՝ ատենք. հող. քար. երկաթ. և այլն։ 1. Կորն. 15. 37։ և 38. և 40։ Իսկ մասնաւորապէս առեալ, նշանակէ զբոլոր մեռելն կազմուածն մարդոյ, և այլոց կենդանեաց՝ հանդերձ եմ անդամովք, որ 'ի միասին ընդ հոգւոյ բանականի բաղկացուցանէ զմարդն. և ընդ հոգւոյ զգայականի զկենդանին։ Ծնն. 41. 2։ Յոբ. 10. 3։ 1. Կորն. 12. 12։ Երբեմն և դնի առակ փոխանակ գլխոյ. կմ՝ շաղգի։ ռամկ. լէշ։ 1. Թագ. 31. 10։ Յոբ. 13. 11։ Իսկ մերթ նշանակէ լոկ զմիսն. թէ մարդոյ իցէ, և թէ այլոց կենդանեաց։ Ծնն. 40. 19։ Եզեկ. 17. 5։ Մերթ և առեալ լինի փոխանակ բոլոր մարդոյ։ Ծննդ. 6. 12։ Եսայ. 40. 5։ Երբեմն և փոխանակ անբան, կմ՝ ընչաւոր կենդանեաց։ Ծննդ. 7. 15. և 16. և 21։ Մերթ և առնանի փո-խանակ մարմնաւորի. այ փոխանակ այնոր, որ ընկղմեալ գոլով յախտս և 'ի մոլութիւ մարմնոյ իբր թէ առակ մարմին է եղեալ։ Ծննդ. 6. 3։ Մերթ և մարմին կոչի եակա կամ իղձ. որոյ ներհակն է սուրբերն։ Կո-ղոս. 2. 17։ Իսկ մարմինն ըստ մաթէմաթի քայից առեալ՝ նշանակէ զլոկ քանակու-թիւն մարմնաւոր իրաց մտածեալ ըստ եր կայնութեան, ըստ լայնութեան, և ըստ խո-րութեան։

Մարմնագոյ. ի. իմ. ից. իւք։ ‖ ունօղ ըզ մարմնաւոր գոյութի. կամ մարմնաւոր գոյակ. որպիսիք են մարդիկ. և այլքս զանեք։ ըստ այսմ. Նարեկ. 'ի քարոզն Եկեղեց
ւոյ. մարմնագոյիցս հողիածիր։

Մարմնագունդ. գնդի. ու. աց. օք։ ‖ գունդ մարմնաւոր. կմ՝ 'ի մարմնաւորաց խմբե-ցեալ և գումարեցեալ։ Նարեկ. 'ի գովս ա-ռաքելոց։

Մարմնազգեցեալ. եցի. իմ. եց. իւք։ ‖ զգե-ցօղ մարմնոյ. կմ՝ զգեցեալ զմարմին. որով իմանի նա՝ որ առեալ է զմարմին. կմ՝ որ է մարմնացեալ։

Մարմնազգեստ։ ‖ նոյն է ընդ վերնոյն։

Մարմնազերծ. ի. իմ. ից. իւք։ ‖ այն՝ որոյ մարմինն է զերծեալ. այ եղծեալ. կմ՝ ապա կանեալ։ Բայց մասնաւորաբար առեալ նշանակէ զնա՝ որոյ ծննդական անդամն, և կմ՝ այլք մասունք մարմնոյն այնպ իսան զարեցեալք են, մինչ զի անբաւական է եղեալ առ որդեծնութի։

Մարմնածին. ծնի. իմ. աց. օք։ ‖ ծնանօղ զմարմին ինչ։ Իսկ մերթ ծնեալ ը մարմ նոյ։ Բայց մինչ ասի մարմնածին ծնունդ. իմանի՝ մարմնականն։ Աճգուն։

Մարմնակալ. ի. իմ. աց. օք։ ‖ տե՛ս զԹող փուրայ։

Մարմնական. ի. ան. աց. օք։ ‖ տե՛ս զՄարմ նեղէն։

Մարմնակեր. ի. ան. կմ՝ իմ. աց. օք։ ‖ ըզ մարմին մեռելոյ ուտօղ. կմ՝ գիշակեր։ Իսկ մերթ նշանակէ զնա, որ զմարմին իւր ուտէ։

Մարմնակից. կցի. ու. կմ՝ իմ. աց. օք։ ‖ կցորդ մարմնոյ. կամ զնոյն մարմին ունօղ ը ու-մեք. կմ՝ որք հաղորդին միմեանց 'ի միում մարմնի. և ըստ այսմ արեանառու ազգա կանք. կմ՝ այր և կին. և կմ՝ անդամք մարմ նոյ՝ ասին միմեանց մարմնակից։ Լամբրօն։ Աճգուն։ Ուստի և քրիստոնեայքն, ըստ ո-րում են խորհրդաւոր անդամք քի, և կցորդին ընդ միմեանս 'ի միում, և 'ի նոյն նում մարմնի, որ է եկեղեցին քի, ասին իրերաց մարմնակից։ Եփես. 3. 6։ և Լամբ-րօն։

Մարմնակործան։ (Նախադրիմ հոլովի.) ‖ կործանեալ մարմնով. և կմ՝ տապալեալ և անկեալ ըստ մարմնոյ։ Նարեկ. իՁ։ Իսկ մերթ նշանակէ զկործանօղն մարմնոյ։

Մարմնակոխ։ (Նախադրիմ հոլովի.) ‖ կոխ տօղ մարմնոյ. այ նա՝ որ չարաչար և աղի ողորմ տանջանօք խոշտանգէ, կմ՝ լլկէ, և իբր թէ մասն մասն յօշոտէ զմարմին ու-րուք։

Մարմնաձև։ (Նախադրիմ հոլովի.) ‖ ունօղ զձև մարմնաւոր. կմ՝ մարմնակերպ. և կմ՝ մարմնական. ըստ այսմ Լամբրօն։ Մարմ նաձև կերպարանօքն ցուցանեն զիմանալի խորհրդոյն զօրութիւն։

Մարմնաճաշակ. ի. ու. աց. օք։ ‖ մարմնա ւորապէս ճաշակելի. կմ՝ որ ունի զմարմ նաւոր ճաշակ. և կմ՝ այն՝ զոր ուտեն առ 'ի սնունդ մարմնոյ։ Նարեկ. 'ի գովս առաք։

Մարմնանալ. ացայ. ացիր. անալ։ (ընդ-միջ.) ‖ մարմին լինիլ. կմ՝ նիւթականու թիւ մարմնոյ թանձրանալ։ Մերթ և նը

շանակէ մարմնաւոր լինել. կամ զմարմին առնուլ։ Ոսկէ. 2. հատ. ԼԷ։

Մարմնապահ. ի. աւ. աց. օք։ || Պահապան մարմնոյ, կամ անձին մեծի ուրուք. որ և ասի անձնապահ. կամ թիկնապահ։

Մարմնապաշտ. ի. իւ. ից. իւք։ || Պաշտօղ մարմնոյ, որով մերթ իմանի նա՝ որ զմարմին իւր գգուելով և պարարելով ծառայէ նմա, և իբր թէ պաշտէ զնա։ Իսկ մերթ նշանակի նա՝ որ դաւանի՛ ի քն գոլ սոսկ մարմին մարդկային. և ոչ հոգի և միտք և աստուածութի՛ իբր թէ սոսկ մարմնոյ պաշտօն մատուցանէ. որպիսիք էին Ապողինարեանքն։

Մարմնապարար. ի. իւ. աց. օք։ || Պարարօղ մարմնոյ. և կամ որ սնուցանելով պարարացուցանէ զմարմին իւր. կամ այլոց։ Ագաթ։

Մարմնապէս։ (մակբայ որակական.) || Իբրև զմարմին. կամ մարմնաւորապէս. կամ ըստ մարմնոյ։ Նարէկ. 'ի գով. կուս։

Մարմնառու։ (Նախդրիւ հոլովի.) || զմարմին առօղ. կամ մարմնացօղ։ Իսկ մերթ նշանակէ զմարմնառականն. ցյ զայն իմ, որ վերաբերի առ առումն մարմնոյ. և կամ առ մարմնացումն. և ըստ այսմ ասի՝ մարմնառու անօրէնութե բանին։

Մարմնառութի. թեան։ || առումն մարմնոյ. կամ մարմնացումն. և այս ասի զմարդեղութէ բանին այ. որ էառ զմարդկայինն բնութի։

Մարմնասէր. սիրի. աւ. աց. օք. || Սիրօղ մարմնոյ. կամ մարմնական փափկութեց. և կամ սիրով զհետ գնացօղ մարմնաւոր՝ և ըղձ գայական զեղխութեց առ 'ի բաւել. և 'ի հանգստեան պահել զմարմինն։ Նարէկ. ղթ։ և 'ի ճառս հարց. իզ։

Մարմնասիրութի. թեան։ || Սէր մարմնոյ, կամ մարմնաւոր հեշտութեց, և փափկութեց։

Մարմնատակ. ի. աւ. աց. օք։ || Տե՛ս զայս 'ի բառն Մանրադոր։

Մարմնատեսակ. ի. աւ. աց. օք։ || Ունօղ զմարմնաւոր տեսակս և զորպիսութիս, կամ մարմնակերպ. և կամ մարմնանման։ Լամբրոն։

Մարմնատեսիլ։ (Նախդրիւ հոլովի.) || Տեսօղ զմարմնական տեսիլ. կամ մարմնով կերպացեալ. և կամ մարմնաւոր. և ըստ այսմ ասի՝ մարմնատեսիլ քերովբէ։ Նարէկ. Ճ։

Մարմնատիպ։ (Նախդրիւ հոլովի.) || Տպաւորեալ 'ի մարմնի. կամ ունօղ զտիպ, և զնմանութի մարմնոյ. կամ մարմնակերպ. և կամ մարմնանման։

Մարմնարան. ի. ած։ || Մարմնանիւթոյ տեղի. և այս ասի զկուսէն մարիամայ. ըստ որում որովայն նր եղև տեղի մարմնանիւթոյ որդւոյն այ։ Նարէկ. 'ի գով. կուսին։ և 'ի ժողով. խոսքին։

Մարմնաւոր. ի. աւ. աց. օք։ || Ունօղ մարմնոյ. կամ նիւթեղէն։ Իսկ մերթ նշանակէ զմարմնականն կամ զզգալին, և կամ զայն իմ որ մարմնոյ է, կամ մարմնոյ պատկանի. որպիսիք են ժամանակաւոր բարիք, կամ գոյք. զէնք. զգալի երևմունք. և այլք բազումք. որոց ներհակն կոչի հոգևոր։ Ղուկ. 3. 22։ Հռոմ. 15. 27։ 1. Կորն. 9. 11։ Մերթ ևս առեալ լինի փոխանակ նր, որ ըստ մարմնոյ վարի, կամ զհետ երթայ մարմնական յօժարութեց, և անսայ հաճոյից մարմնոյ և արեան իւրոյ. Հռոմ. 7. 14։ 1. Կորն. 3. 2. և 3։

Մարմնաւորութի. թեան։ || Մարմնաւոր գոլն, կամ մարմնականութի. կամ նիւթականութի. և կամ մարմնաւոր բնութի։ Ոսկէ. 1. հատ. ԺԶ։ Իսկ մարմնաւորապէս առեալ նշանակէ զմարմնառութին, կամ զմարդեղութի բանին այ։ Ոսկէ. 2. հատ. Զ։ Լամբրոն։

Մարմնաքնար։ (Նախդրիւ հոլովի.) || մարմնաւոր քնարաւ երգօղ. կամ զմարմնաւոր քնար ունօղ։ Իսկ մերթ նշանակէ զայն՝ որ երգի մարմնաւոր քնարաւ. կամ որ վերաբերի առ մարմնաւոր քնարն. և ըստ այսմ ասի՝ մարմնաքնար դաւթեան երգք։ Ագաթ։

Մարմնեղ. ի. աւ. աց. օք։ || զմեծ և զթանձր մարմին ունօղ. կամ որ է սառնէար, և պարարտ մարմնով։

Մարմնեղէն. ղինի. աւ. աց. օք։ || Այն՝ որոյ նիւթն է մարմին. կամ մսեղէն. կամ մարմնաւոր. և կամ մարմնական։ 2. Մնաց. 32. 8։ 2. Կորն. 1. 12։ և 3. 3։

Մարմնութի. թեան։ || Մարմնաւորութի. կամ մարմնառութի. և կամ մարդեղութի. ըստ այսմ Նարէկ. 'ի գով. կուս. գործի մարմնութե վեհին բնութե։

Մարութի. թեան. || Մոլորութի. կամ ա- լեգնութի։ Իսկ մերթ անմտութի. կամ յիմարութի. և կամ գրաստաբարոյութի։ Յարմատոյ առեալ ծագին բառքս՝ մարամիտ. և մարդամարտն։

Մարսեմ. եցի. եա. եալ։ (Ներգործ.) || զկերեալ կերակուրն եփելով 'ի ստամոքսի հալել և առ իւրաքանչիւր անդամս բաշխել. որ և ռամկ. ասի՝ ձորոէլ։

Մարսեվան. ի. աւ։ || Է մին յերկոտասանից ամսոցն եգիպտացւոց, որ համեմատի ամսոյն մի ամսոյն հայոց. և հոկտեմբեր ամսոյն հռոմայեցւոց։

Մարտ. ի. իւ. ից. իւք. կամ օք։ || է հասարակ անուն իմն, որով նշանակի ո՛ և իցէ կերպիւ մարտնչելն. կամ ո՛ և իցէ կռիւ, կամ պատերազմ, և կամ հակառակութի, թէ զինուք իցէ, թէ գանիւ, և թէ բանիւ. ռամկ. ճէնկ. Ծննդ. 13. 7։ 2. Մակ. 12. 11. և 36։ 2. Կորն. 7. 5։ Իսկ մերթ ընդ բայի շարակցի այսպէս. մարտ դնել. և նշանակէ մարտնչիլ, կամ մաքառիլ, և կամ պատերազմիլ. 1. Մակ. 6. 52։ և 11. 46։

Մարտ. ի. իւ։ || է մին յերկոտասանից ամսոցն հռոմայեցւոց, որ համեմատի արեգ ամսոյն հայոց. և նիսան ամսոյն եբրայեցւոց։ Եւ յայսմ ամսեան յաճախս յաւեալ լինին բռնաւոր հողմունք. աշխարհութիք. ծովու, մեծամեծ ամպրոպք. և փոթորիկք.

և ըստ

և թ այսմ վայելչապէս ստուգաբանի 'ի մե րում լեզուի. զի սա է մարտ, երբ թէ պա տերազմ և խռովութիւն:

Մարտադիր. դրի. իւ. աց. օք: || մարտ դը նող, թ մարտնչող, և կմ պատերազմող: Բայց մանաւորապէս նշանակէ սա զհան դիսադիրն. թ զհեղինակն մարտի, որպի սիք են նոքա, որք հրամայեն մարտկաց պատերազմիլ. զի զյաղթօղն պսակեսցեն. և ըստ այսմ ասէ Շնորհալին յողբուն եդե սիոյ. Ահա հասեալ է մարտադիրն. և յաղ թանակն է 'ի ձեռին:

Մարտածնույց: (Նախադրիւ հոլովի.) || ծնու ցանող մարտից. կմ նա՝ որ յարուցանէ զկռիւս և զայլապէս խռովութիւնս, և կմ աղմկարար: Մծբն. ժԹ:

Մարտական. ի. աւ. աց. օք: || այն ամ, որ պատկանի առ մարտն. և կմ պատերազ մական: Իսկ մերթ նշանակէ զմարտնչօղն. կմ զմարտիկն: Լամբրոն:

Մարտակաց. ի. աւ. աց. օք: || է տեսակ ինչ հարցական մակբայից, որ ցուցանէ ըզ նմանութիւն, կմ զհետազօտութիւն ճշգրտու թեան, որպիսիք են սոքա. որպէս. զինչպէս. զիարդ. որով կերպիւ. և այլն:

Մարտակից. կցի. աւ. աց. օք: || պատե րազմակից, թ կցորդ, կմ ընկեր ումեք 'ի պա տերազմին, կմ 'ի մարտնչելն ընդդէմ թշ նամեաց: Յեսու. I. 14: Իսկ մերթ նշա նակէ զնա՝ որ ընդ ումեք թշնամութբ մարտնչի, կմ զընդդիմամարտն, և կմ զպա տերազմօղ թշնամին ուրուք. և թ այսմ է 'ի բազում տեղիս 'ի գիրս Լամբրոնացւոյն. և 'ի Նարեկ. ղ. և ղթ: Մերթ ևս նշանակէ սակ զընկերօղն, կմ զօգնականն յոյ և իցէ գործառնութիւնս, կմ նեղութիւնս: Լամբրոն:

Մարտակուռ: (Նախադրիւ հոլովի.) || մար տնչելով կռուօղ. կմ զմարտ և զկռիւ առ նող: Իսկ մերթ նշանակէ զմարտն և ըզ կռիւն, կմ զընդդիմամարտութիւնն. ըստ այնմ Ոսկե. 2. հատ. ժզ. Յարձակեալ եր թամ 'ի բանս հակառակութեան, կմ 'ի մար տակուռ:

Մարտակցութիւն. թեան: || կցորդութիւն, կմ ընկերութիւն 'ի մարտի, և կմ օգնութիւն, զոր առնէ ոք ումեք 'ի պատերազմի: Իսկ մերթ նշանակէ զընդդիմամարտութիւնն, կմ զհա կառակութիւնն, զոր առնէ ոք ընդ այլում դէմ ընդդէմ մարտնչելով ընդ նմա: Մերթ ևս նշանակէ սոսկ զօգնականութիւնն, կմ զգործակցութիւնն. և կմ զմիաբանութիւնն. որով ոք միաբանի ընդ ումեք 'ի գործս, կմ 'ի բանս. և այլն: Նարեկ. 'ի գովս տառ. Ոս կե. I. հատ. իդ:

Մարտամերձ. ի. իւ. ից. իւք: || զմարտ և զպատերազմ ամբոխօղ, այսինքն յարու ցանօղ և գրգռօղ. և կմ 'ի մարտ և 'ի պա տերազմ գրգռեալ. և ըստ այսմ ասէ՝ մար տամերձ ժողովք չեդեան զօրուն. կմ մար տամերձս բազմութիւն զօրաց: 'Ի հին տպա գիրս: Իսկ մերթ նշանակէ զամբոխմունս. կմ զյուզմունս և զգրգռմունս մարտի. և կմ զմարտս և զկռիւս. և ըստ այսմ ասէ՝ բոմբիւն աղաղակի և մարտամերձի խմբոյ եղեան զօրուն. 'Ի հին տպագիրս:

Մարտան: (միջարկութիւն երանական.) || երանի. կմ վայ:

Մարտանակ: || տես զՄրցանակ:

Մարտասէր. սիրի. աւ. աց. օք: || սիրօղ մար տի, կմ պատերազմի. որպիսիք են ոմանք 'ի զինուորաց: Իսկ երբեմն նշանակէ ըզ սիրօղն կռուոյ, կմ վիճի և հակառակութեան: Լամբրոն:

Մարտացու. ցուի. աւ. աց. օք: || սուսեր. կմ վաղակաւոր. կմ թուր. և առաւել մարտացու, ըստ որում 'ի մարտի 'ի գործ ածի:

Մարտընտիր: (Նախադրիւ հոլովի.) || ընտ րօղ զմարտ, կմ զպատերազմ. և թ այսմ բազում անգամ ընդ բայի շարակցի այս պէս. մարտընտիր լինիլ. և նշանակէ ըն տրել, և յանձնառնուլ զմարտ պատերազ մի առ 'ի մարտնչիլ քաջութբ. զի յաղթօղ գտեալ առցէ զյաղթանակն 'ի հանդի սադրէն:

Մարտիկ. տկի. աւ. աց. օք: || մարտնչօղ. կմ պատերազմօղ: 2. Թագ. 24. 9: 2. Մնաց. 13. 3: 2. Մակ. 12. 23: Ըստ այսմ մարտիկ կոչին և ըմբիշքն, կմ բռնամարտիկքն, թ որում ընդ հակառակորդաց մարտնչին: 2. Մակ. 4. 14: 2. Տիմ. 2. 5: Իսկ Իմաստ. 16. 17. ուր ասի, մարտիկ արդարոց է աշ խարհս, իմանի՝ ջատագով և վրէժխնդիր է վն արդարոց:

Մարտիմ. տեայ. իր. իլ: (Ձայնակր.) || նոյն է ը մարտնչիլ բայիս, որպ մատիլն ը մատչիլ բայիս. զատիլն ը զատչիլ բայիս. և այլն. և թ այսմ ասի. վն բարեկարգութե մարտիլ: Եւ 'ի Նարեկ. ժը. ասի. Խորտակեա ան քննելին զմարտողին դիմեցմունս:

Մարտիրոս. ի. աւ. աց. օք: || է բառ յու նական, որ թարգմանի՝ վկայ. և 'ի մեզ սովորաբար նշանակէ զնահատակն, թ ըզ նա, որ վն վկայութե հաւատոյն քի, կմ վն ածային ճշմարտութե, չարչարանս ընդունի և մեռանի:

Մարտիրոսանամ. ացայ. ցիր. ալ: (ընդմիջ.) || վկայել. թ մարտիրոս լինիլ, որ է մեռա նիլ վն ճշմարտութե հաւատոյ: Խորէն. բ. գր. 31:

Մարտիրոսարան. ի. աւ. աց. օք: || տեղի. ուր մարտիրոսք մեռանին, կմ վկայեն, որ և ասի վկայարան: Նարեկ. ղդ:

Մարտիրոսութիւն. թեան: || վկայութե, որով նշանակի նահատակութիւն, թ տալն զանձն իւր 'ի մահ վն հաւատոյ, կմ յաղագս ած ային ճշմարտութե: Կիւրղի Եղծն. ժդ:

Մարտկոց. ի. աւ. աց. օք: || տեղի պատե րազմելոյ մարտկաց, որով նշնկի ամրոցն կմ աշտարակն, և կմ ամուր տեղին շինե ցեալ 'ի բերդի, կմ առ պարսպօք քաղա քին երբև զայն և զմեծ աշտարակս, ուր ապաստանեալ մարտիկքն, կռուէին ընդ թշնամիս: Տօբ. 13. 21: Երեմ. 5. 10. և 33. 4:

Եղծ. 4. 2: ըստ այսմ եւ մարտկոց կոչին պատնէշք, կամ ախոյեանք. նաեւ աշտարակաձեւ շինուածք կառուցեալք՝ ՚ի վր(այ) փղաց՝ եւ այլք. պատերազմական մեքենայք, յորս ամրացեալ պատերազմողաց՝ մարտնչին ը(նդ) քաղաքաց, կամ ամրոցաց՝ ձգելով ՚ի նմանէ զհրացանս, զռմբաքարս, զնետս, եւ զայլս սոյնպիսիս: 1. Մակ. 6. 37: Մերթ եւս նշանակէ զբերդունս, կամ զմահարձանս պարսպաց: Երգ. 8. 9:

Մարտնչիմ. մարտեայ. ոյր. իլ: (ձայնակր.) || մարտ դնել. կամ պատերազմիլ. կամ կռուիլ. եւ կամ հակառակիլ. թէ զինուք իցէ, թէ գանիւ, եւ թէ բանիւ: Եղեծ. 2. 13: 1. Մակ. 3. 17:

Մարտուցանեմ. տուցի. տո. եւ: (անցող.) || մարտնչող առնել. կամ պատերազմեցուցանել. կամ արկանել զոք ՚ի մարտ, եւ ՚ի կռիւ ընդ թշնամիս: ռամկ. ճէնկ ընել տալ: Սոփէ. 2. հատ. Լ:

Մարք: || տե՛ս ՚ի բառարանի յատուկ անուանց:

Մացառ. ի. առ. աց. օք: կամ իւ. իւց: || թանձրախիտ եւ անտառանման մայրի. եւ կամ անտառ փշալից եւ ցախ ծառոց, կամ թփոց, որք խիտ առ խիտ բուսեալք եւ աճեցեալք ՚ի լերինս եւ ՚ի դաշտս խափանեն զանցս ճանապարհաց, յորս մտեալ որջանան գազանք եւ երէք. եւ դողեալ ամրանան անառակք. ռամկ. օրման: Խորէն. Բ. գլ. 20: Ը այսմ է եւ ՚ի գիրս Մծբն. ԺԸ. ուր նմանութեամբ բազմախիտ հերքն թարթափից յերզօթելոյ՝ մացառք կոչին; զի ասի. Պաճուճեալ զանտառս արտեւանանցն. եւ սեւացոյց թխացոյց զմացառուն առ բբօքն: Իսկ ՚ի գիրս Կիւրղի Եղեն. Զ. ուր ասի, թէ օձք ընդ մացառս, եւ Է. քարածերպս մտեալ, նշանակեն ճեղքս. կամ նեղ միջոցս ծառատունկ փայտից, կամ թփոց. ընդ որս կըրթեալ օձից բնութիւն, մերկանան յանձանց զխորխն, փզձնացեալ մորթն: Մերթ եւս նշանակին առհաւ չորացեալ եւ ցախ ճիւղք ծառոց եւ թփոց, կամ բարակ եւ նրբածայր շերտք, կամ թելք փայտից. որք անջատին ՚ի նոցանէ ՚ի հերձիլն իւրեանց, որք եւ երբեմն մխին ՚ի ձեռս: Բայց Ը այսմ նշանակութեան մանաւանդ յաշխարհաբառ լեզուն ՚ի գործ ածի:

Մացառախիտ: (նախդրիւ հոլովի.) || առնող զխիտ մացառ, կամ անտառացեալ բազմութեամբ փշալից եւ ցախ ծառոց, եւ թփոց. եւ կամ անտառախիտ, եւ ըստ այսմ ասի՝ խիտ պատեալ եւ մացառախիտ անդաստան, կամ փշաբեր եւ մացառախիտ երկիր. ՚ի հին տպագիրս:

Մացառոտ. կամ Մացառուտ: (նախդրիւ հոլովի.) || նոյն է ընդ վերինոյն:

Մաքառիմ. եցայ. եաց. իլ: (ձայնակր.) || մարտնչիլ. կամ պատերազմիլ. կամ կռուիլ. կամ հակառակիլ: 1. Մակ. 11. 46. Լամբրոն:

Մաքառումն. ման. մամբ. մանց. մամբք: || մարտ. կամ կռիւ. կամ հակառակութիւն. եւ կամ ընդդիմաբանութիւն: ՚Ի շարականոցի:

Մաքառօղ. ողի. աւ. աց. օք: || մարտնչօղ. կամ կռուօղ. կամ հակառակորդ. եւ կամ ընդդիմաբանօղ: Մծբն. ԺԷ:

Մաքենի. ւոյ. եաւ. եաց. եօք: || ծագի ՚ի մաքի բառէս. ուստի եւ խոզենին ՚ի խոզ բառէն. ըստ որ բառիս մաքենի, նշանակէ մաքիկանն, կամ միսն մաքեաց. ցի եդ. ոչ խարաց:

Մաքի. ւոյ. եաւ. եաց. եօք: || էգ ոչխար. ՚ի յոր եղանեն խոյքն, որք են արուք նց: Ծննդ. 31. 10: 2. Օրէ. 32. 14: Սաղմ. 113. 4:

Մաքիլ: || տե՛ս զՄագիլ: Կիւրղի Եղեն. Թ:

Մաքման. ի. աւ. աց. օք: || է բառ այլազգական, որով նշանակի դաստառակ. եւ կամ մեծ թաշկինակ: ռամկ. փէշթիմէլ. կամ մահրամայ: Եւ կամ նշանակի սպիտակ զենջակն, զոր ՚ի բաղանիս առնուն ՚ի վերայ մերկ մարմնոյ իւրեանց. կամ որով զերեսս սրբեն: ռամկ. խաւլու: 4. Թագ. 8. 15:

Մաքուր. մաքրոյ. ով. ոց. ովք: կամ իւ. իւց. իւք: || որ ոչ ունիցի զաղտեղութիւն ինչ. կամ սուրբ. եւ կամ ամբիծ: ռամկ. թէմիզ: Յոբ. 15. 6: Իսկ մերթ զուտ. կամ յստակ. կամ վճիտ. եւ կամ անխառն: ռամկ. զուլալ: Եղեծ. 30. 35: 1. Մնաց. 28. 18: 2. Մնաց. 4. 20:

Մաքս. ի. իւ. իւց. իւք: || է տուրք ինչ, զոր վաճառականք ըստ համեմատութեան, եւ Ը չափու ունեցելոց վաճառացն տան մաքսաւորի քաղաքին, ուր բերեն, կամ տանին անտի զվաճառս: ռամկ. կէօմրիւկ: 1. Մակ. 13. 39: Հռոմ. 13. 7:

Մաքսայքին. այնոյ. ով. ոց. ովք: || այն տեղի, ուր վերակացեալ առ մաքսն. կամ առ մաքսաւորութիւն: Բայց ՚ի Յհ. ոսկեբ., ուր ասի՝ ՚ի անցանելն առ մաքսայինս. եսես նստեալ զմատթէոս. պարտի իմանալ առ մաքսանոց. որ եղեալ կայ ՚ի ձեռագիրն:

Մաքսանոց. ի. աւ. աց. օք: || տե՛ս զՄաքսատուն. Յհ. ոսկ.:

Մաքսապետ. ի. աւ. կամ իւ. աց. օք: || պետ եւ գլուխ մաքսաւորաց: Ղուկ. 19. 2:

Մաքսատուն. տան. տամբ. տանց. տամբք: || տուն, կամ տեղի, ուր նստէր մաքսաւորն առնուլ զմաքս, որ եւ կոչի մաքսանոց. ռամկ. կէօմրիւկ: Լամբրոն:

Մաքսատու. ուի. առ. աց. օք: || տե՛ս ընդ Մաքսաւոր:

Մաքսատուութիւն. թեան: || տե՛ս զՄաքսաւորութիւն:

Մաքսաւոր. ի. աւ. աց. օք: || առօղ զմաքս ՚ի վաճառականաց ըստ ուղղութեան վաճառացն, զորս բերեն ՚ի քաղաքն, կամ տանին ՚ի քաղաքէն: ռամկ. կէօմրիւկճի: Մատ. 9. 10: եւ 10. 3: Ղուկ. 18. 10: Բայց գիտելի է, զի առ ժամանակօք տէրութեան հռոմայեցւոց ատելի, եւ իբրեւ նշաւակեալ համբաւ մաքսաւորն ՚ի մէջ հրէից. եւ պատճառն էր՝ հրէից ազատ համարելն զինքեանս, մի այնուհետեւ ՚ի բաղում տեղիս ծառայութեան զորոց մաքսաւորքն դնէին ՚ի կարգս մեղաւորաց, եւ շարագործաց: տե՛ս Մատ.

11. 19: և 18. 19: և 21. 32:

Մաքսաւորութիւն. թեան: || պաշտօն, կմ գործ՝ առնլոյ զմաքս. և կմ մաքսատունն, որով նստեալ էր՝ ի մաքսատան՝ պահանջել զմաքս: Մաթ. 9. 9:

Մաքսեմ. եցի. եամ. ել: (Ներգործ.) || հանել զմաքս. կմ առնուլ մաքսաւորութեամբ զինչ. և կմ ընդ մաքսիւք արկանել: Բառ այսմ Նորէն՝ ի փոխ. առածելոյ. Զ[illegible] մը տալ պատի մաքսեցին:

Մաքրագործ. ի. աւ. աց. օք: || գործող ըղ մաքրութիւն. կմ մաքրող. և կմ սրբացուցանող:

Մաքրագործեմ. եցի. եամ. ել: (Ներգործ.) || մաքուր գործել. և կմ սրբել: Նորէն. 2:

Մաքրագործութիւն. թեան: || մաքրարարութիւն. կմ սրբագործութիւն. և կմ մաքրումն, և սրբումն: [illegible]:

Մաքրազարդ. ի. իւ. ից. օք: || մաքրութեամբ զարդարեցեալ. կմ մաքուր, և զարդարուն. կմ անարատ, և գեղեցիկ: Բռ այսմ Նորէն՝ ի փոխ. խօսին: 'Ի զանազան մաքրազարդ ակնաց:

Մաքրազարդեմ. եցի. եամ. ել: (Ներգործ.) || մաքրութեամբ զարդարել. և կամ մաքրելով պայծառացուցանել. և կմ յոյժ մաքրել, և սրբել: Նորէն. Ազգաբ.:

Մաքրածին. ծնի. իւ. ից. օք: || մաքրութեամբ, և սրբութեամբ ծնեալ զորդիս. և կմ որ ծնեալ է զմաքուր, և զսուրբ որդիս: Նորէն. 'Ի փոխ. առածելոյ: Իսկ մերթ նշանակէ զծնեալն մաքրութեամբ, և սրբութեամբ:

Մաքրական. ի. աւ. աց. օք: || այն՝ որ վերաբերի առ մաքուրն. կմ որ է մաքուր, և սուրբ: Նորէն. ղժ. և 2: Իսկ մերթ նշանակէ զմաքրողականն. կմ զմաքրողն, և զսրբողն: և ըստ այսմ գեղորայքն, զորս ըմպեն մարդիկ վասն մաքրելոյ զորովայնս 'ի վատթար հիւթոյն, կոչեն մաքրական դեղք: [illegible]: 'Ի վերջ Հատ. [illegible]:

Մաքրակենցաղ: (Նախդրիւ հոլովի.) || մաքրութեամբ, և սրբութեամբ կենցաղավարող. կմ զմաքուր, և զսուրբ վարս ունող. որպիսիք են սրբասէր կուսանք: Իսկ մերթ նշանակէ զայն, որ վերաբերի առ մաքուր կենցաղավարութիւն. կմ որ լցեալ է կենցաղավարութեամբ: Նորէն. ղժ. և 'ի փոխ. առածելոյ:

Մաքրակրօն. ի. իւ. ից. իւք: || ունող զմաքուր, և զսուրբ կրօնս. կմ սրբութեամբ մաքրեալ, և հոգւոյ կենցաղավարող. և կմ մաքրակենցաղ: Նորէն. ղժ. և 2:

Մաքրամտութեամբ: (Նախդրիւ հոլովի.) || մաքրութեամբ մտաւորութեամբ. և կմ սրբութեամբ մտաւորութեան. որպիսիք են աղօթքն արդարոց մտաւորութեան են:

Մաքրամիտ: (Նախդրիւ հոլովի.) || ունող զմաքուր և զսուրբ միտս, կմ որոյ միտքն է ազատ 'ի խառնակութենէ, և 'ի ննենգութենէ, և 'ի չար խորհրդոց:

Մաքրապայծառ. ի. իւ. ից. իւք. կմ օք: || մաքրութեամբ պայծառ. կմ պայծառակերպ: և կամ պայծառ, և զուարթ մաքրիւ, և սրբոց: և ըստ այսմ ասի մաքրապայծառ խորախորհրդութիւն: Իսկ մերթ մաքրութեամբ պայծառեցեալ. կմ ջերմապայծառեցեալ. և կմ մաքրութեամբ պայծառ, կմ զուարթ, և ըստ այսմ ասի մաքրապայծառ [illegible]: Նորէն. պէ:

Մաքրաշաւիղ: (Նախդրիւ հոլովի.) || զմաքուր, և զսուրբ շաւիղս ունող. կմ մաքրութեամբ շաւղացող:

Մաքրասէր. սիրի. աւ. աց. օք: || սիրող մաքրութեան, և սրբութեան:

Մաքրարան. ի. աւ. աց. օք: || տեղի մաքրութեան, կմ սրբութեան: Իսկ մերթ նշանակէ զմաքրարարն. զի զմաքուր առնողն, կմ ըղ մաքրողն, և զսրբողն: Նորէն. ղժ: [illegible] կոչեն [illegible] 'ի բաղարան:

Մաքրարար. ի. աւ. աց. օք: || մաքուր առնող, կմ մաքրող, և սրբող: Նորէն. ղժ:

Մաքրափայլ: (Նախդրիւ հոլովի.) || տես զՄաքրապայծառ:

Մաքրեմ. եցի. եամ. ել: (Ներգործ.) || մաքուր առնել. կմ սրբել. և կմ լուանալ: Ելից 29. 36:

Մաքրողական. ի. աւ. աց. օք: || այն, որ է մաքրող. կմ սրբիչ:

Մաքրութիւն. թեան: || յստակութիւն. կմ սրբութիւն. կմ անխառնութիւն. և կմ անբծութիւն: Եբր. 4. 11:

ՄԵ.

Մեդոպաք. ի. իւ. ից. իւք: || տես ըղ Մեդաւաք:

Մեղէն: (մակբայ տրամակական.) || մերօք. կմ մեք 'ի միջոյ: [illegible]. կմ [illegible]: 2. Եզր. 4. 3: Յոհ. 4. 42: Բայց 'ի գիրս Խորէն. Գ. գլ. 1. [illegible], մի՝ [illegible] 'ի մեղէն [illegible] 'ի գլխաւորաց, և 'ի պատմութեանց, նշանակէ [illegible]. մի՝ [illegible] 'ի բաց [illegible] 'ի մեր կողմանէ. կմ յանձնողութեամբ մերմէ:

Մելամաղձ. ի. իւ. ից. իւք: || ելանէ նա 'ի յունական բառէն մելան, որ նշանակէ սեաւ. [illegible] բառն մելամաղձ, նշանակէ սեաւ մաղձն. զորմէ [illegible] ցի 'ի մարմնոյ իւրում:

Մելան. ի. աւ. աց. օք: || է բառ յունական, որով նշանակի սեաւն; կմ թանաքն. և յայսմանէ առնուլ երբեմն նշանակէ ըղ թանաքն, և կմ զմուրն, որով գրեմք ըղ գիր. և [illegible] յունական [illegible] 'ի մեղ [illegible], որ [illegible] : 'Ի [illegible]:

Մեխանիկ. ի. աւ. աց. իւք: || է արուեստ [illegible] երկրէ, որ [illegible] 'ի [illegible]. կմ [illegible]: [illegible]:

ձև կաղնւոյ․ զի փնտախ․ կմ կտոյ ձիթապտղոյ։ Իսկ մինն է երկայն և բարակ իբրև զփողբերիկ բևեռ, կմ որդնակի․ զխարտբեկէ և հատալէտ․ ունի զխոյ զօրեղ և սուր, զոր ’ի գործ ածեն ’ի պէսպէս հանդերձանս կերակրոց և գեղորէից․ ռամկօր․ խուրէնճիւ։

Մեծ․ ի․ աւ․ ացս․ օք։ || առաւելեալ ըստ քանակութեն, որպ մինչ ասեմք․ վէմ մի մեծ․ կմ վիշապ մի մեծ․ և այլն։ 1․ Թագ․ 6․ 14։ Դտնի․ 14․ 22։ Երբեմն եա մեծ կոչի զարգացեալն հասակաւ․ կմ ժամանեալն ’ի չափ հասակի։ Ելից․ 2․ 11։ Իսկ մերթ ընդարձակ, կմ լայնատարած, որպ մինչ ասի․ դաշտ, կմ քաղաք մեծ․ և այլն։ Յեսու․ 1․ 4։ 1․ Մակ․ 5․ 52։ Յօն․ 3․ 3։ Երբեմն եա ընդերկար․ կմ երկարատև․ և ըստ այսմ ասի․ մինչև ցմեծ ժամս։ ’Ի Հարց հարց․ Թ․ և Աշխ․։ Իսկ մերթ կարի բազմացեալ․ կմ յաճախեալ թուով։ Ծնն․ 12․ 2։ Դարձեալ․ Նշանակէ եւ՝ սաստիկ․ կմ ուժգին․ կմ խիստ․ կմ ծանր․ կմ չարաչար․ և կմ անտանելի։ և ըստ այսմ ասի՝ երկիւղ, կմ ձայն մեծ․ չարչարանս, կմ կործանումն մեծ։ Յուդի․ 14․ 14։ Յծանն․ 1․ 5։ Մտթ․ 7․ 27։ և 28․ 2։ պատիժ, կմ տանջանք մեծ․ սաստ, կմ վիշտ մեծ․ և այլն։ Ծնն․ 4․ 13։ 1․ Մակ․ 9․ 56։ Յայտ․ 7․ 14։ Իսկ մերթ մեծարոյ․ կմ անուանի, կմ երևելի․ և կմ գերապանծ։ 1․ Եզր․ 1․ 5։ Եսայ․ 36․ 4։ Դտնի․ 13․ 64։ Եւ մերթ ճոխ․ կմ փառաւոր․ և կմ հարուստ։ Եփես․ 2․ 4։

Մեծաբաղձ։ (Նախադրիւ հոլովի․) || մեծապէս բաղձացող․ կմ սաստիկ փափագօղ։ Իսկ մերթ նշանակէ զմեծապէս բաղձալին․ կմ զսաստիկ տենչալին։ Եւ մինչ ասի՝ մեծաբաղձ պատուիրանք կմ տենչանք, նշանակէ մեծաւ բաղձանօք եղեալն։

Մեծաբան․ ի․ իւ․ ից․ իւք։ || մեծ, կմ ծանր բանիւք խօսօղ․ կմ բազմախօս, և կմ յաճախաբան։ Բայց յատկապէս բառս այս առեալ լինի ’ի չար կողմն, և նշանակէ զնա, որ զմեծամեծ և զամբարտաւանական բանս խօսի․ կմ գոռոզութեամբ և վերացեալ բանիւք ամբարտաւանի։ Սաղմ․ 11․ 4։ Իսկ մերթ վարի իբրև զմակբայ․ այսպէս․ մեծաբանս խօսիլ, և նշանակէ մեծաբանօրէն, կմ ամբարտաւանութեամբ։ Յօբ․ 15․ 11։ Իսկ 2․ Պետր․ 2․ 18․ ուր ասի, զմեծաբանս սնոտեաց բարբառեալ, նշանակէ բարբառելն զնոտի մեծաբանութիւնս։

Մեծաբանեմ․ եցի․ եա․ եալ։ (չէզոք․) || մեծ և վսեմ բանիւք խօսիլ․ կամ բազում և ծանր բանս բարբառել ընդդէմ ումեք։ ’Ի Հարց հարց․ Ժ․։ Բայց յատկապէս առեալ նշանակէ, մեծամեծս խօսիլ․ կմ բարբառել զբանս լի փքացմամբ․ և կմ ամբարտաւանօրէն պանծալ։ Յուդի․ 6․ 13։ Սոփ․ 10․ 18։ Երեմ․ 48․ 42։

Մեծաբանութիւն․ թեան։ || խօսք և բանք մեծամեծք, կմ գերազանցք և վսեմք․ և կմ յաճախաբանութիւն։ Լմբրօն։ Բայց յատկապէս՝ առեալ լինի ’ի չար կողմն, և նշանակէ զյանդգնական, կմ զամբարտաւանական բազմախօսութիւն, կմ զգոռոզամբարտաւանական պարծանս․ և կմ զանպատշաճութիւն․ որով ոք մեծամեծս խօսի զանձնէ իւրմէ․ կմ զխրոխտութիւն։ Յօբ․ 8․ 2։

Մեծաբարբառ։ (Նախադրիւ հոլովի․) || առնօղ զմեծ բարբառ․ կմ զսաստիկ աղաղակ․ և կմ մեծաձայն բարբառօղ և գոչօղ։ Լմբրօն։ Մերթ եա նշանակէ զայն, որ լինի մեծաւ բարբառով․ կմ սաստիկ ձայնիւ․ և ըստ այսմ ասի, մեծաբարբառ աղաղակ։ Նարեկ․ Ժ․ Իսկ մերթ վարի իբրև զմակբայ, և նշանակէ բարձրաձայն բարբառով․ կմ մեծագոչ ձայնիւ․ և ըստ այսմ ասի մեծաբարբառ աղաղակել․ կմ ձայնել։ Ծնն․ 39․ 15։ Նարեկ․ ղէ։ մեծաբարբառ խօսիլ․ կմ մռնչել․ և այլն։ Ոսկեբ․ Նախերգ։

Մեծաբոյս․ բուսի․ իւ․ ից․ իւք։ || ունօղ զմեծ բոյս, կմ բուսեալ և յոյժ մեծացեալ․ և կմ որ է մեծ բոյս։

Մեծագանձ։ (Նախադրիւ հոլովի․) || զմեծ գանձ կմ զբազում գանձս ունօղ․ և կմ յոյժ ճոխացեալ [illegible]։ 1․ Մակ․ 6․ 2։

Մեծագին․ գնի․ իւ․ ից․ իւք։ | մեծագոյն կմ առաւել մեծ․ և կմ սաստկագին։

Մեծագին․ գնի․ իւ․ ից․ իւք․ կմ գնոյ․ ով․ ոց․ ովք։ || ունօղ զմեծ և զծանր գին․ և կմ թանգագին։ ռամկ․ սուղ։ Մարկ․ 14․ 3։ Յօհ․ 12․ 3։ Իսկ մերթ նշանակէ զմեծ և զծանր գինն, և ըստ այսմ խնդրէ մինչ ասի, վաճառել․ կմ վաճառել զինչ մեծագնի․ իբր թէ մեծաւ գնով։ Մտթ․ 26․ 9։

Մեծագոյն․ գունի․ իւ․ ից․ իւք։ || առաւել մեծ․ և կմ մեծագին։

Մեծագոչ։ (Նախադրիւ հոլովի․) || զմեծ գոչիւն ունօղ․ կմ սաստիկ գոչօղ և հնչօղ․ կմ մեծաձայն․ և կմ մեծաբարբառ։

Մեծագործ․ ի․ աւ․ ացս․ օք։ || մեծագործի նա՝ որ վեհանձնութեամբ առնէ զմեծամեծս և զերևելի գործս ’ի յօգուտ հասարակաց․ կմ ի յիշատակ և ’ի պատիւ նախնեաց, կմ յետագայից իւրոց․ ոչ խնայելով ’ի ծախս, և ’ի յաշխատութիւնս․ որպիսիք են նոքա, որք կանգնեն զտաճարս․ կմ առնեն զմեծամեծ գատակերտս․ շինեն զպալատս․ կմ կամուրջս զկամարակս․ և այլն։

Մեծագործութիւն․ թեան։ || մեծագործու առնելն զմեծամեծ և զերևելի գործս, կմ կերտուածս, մի հասարակաց օգտի, կմ անուան․ կմ յաղագս յիշատակի և անուան, ’ի վեհանձնօրէն հոգալով զնոյն ծախս ’ի շարունակ։

Մեծագունութիւն․ թեան։ || առաւել մեծութիւն․ կմ վեհութիւն։ Իսկ մերթ նշանակէ զմեծագունութիւն․ զի զմեծագին, և զ[illegible] գագին գոլն․ և կմ զպատուականութիւն։ Ըստ այսմ Նարեկ․ ղդ․ Անուն իմ կոչեցեալ նշանակէ նախ է ներքնոցն մեծագունութեան։

Մեծադիրեմ․ եցի․ եա․ եալ։ (Ներգործ․) || զինքն մեծ դնել․ զի մեծ համարել․ կամ

մեծ վայելչանիւք։ Նոյէկ. ԺԷ։

Մեծադիր. դրի. իւ. ագ. օք։ || ունող ըղ մեծ դիրս. և կմ մեծակառոյց։

Մեծադէզ։ (Նախադրիւ հոլովի.) || մեծակոյտ. կմ մեծապէս դիզացեալ. կմ առաւելկ կուտակեալ և բարձրացեալ. և ըստ այսմ առնի՝ մեծադէզ ալիք։ Մծբն. ԺԹ։

Մեծազարմ. (Նախադրիւ հոլովի.) || ունող զմեծ զարմ. և կմ որ է յազնիւ տոհմէ. և կմ մեծազգի։

Մեծազգի. գւոյ. ով. եաց. եօք։ || այն՝ որ է 'ի մեծ և 'ի պայծառ ազգէ. կմ յերևելի տոհմէ. և կմ ազնուազարմ։

Մեծազօր. ի. իւ. եց. իւք։ || զմեծ զօրութիւն ունող. կմ կարի հզօր. և կմ առաւելկ զօրաւոր։ 3. Մակ. 5. 7։ Խորէն. Բ. գլ. 7։

Մեծաթև. (Նախադրիւ հոլովի.) || ունող զմեծ և զընդարձակ թև. ոպ՝ շահաւոր. որպիսիք են մեծամեծ թռչունք։ Եզեկ. 17. 3։

Մեծաթիւ. թուոյ. իւ. եց. օք։ || ունող ըղ մեծ թիւ. կմ բազմաթիւ. և կմ բազում։ 2. Մակ. 2. 25։

Մեծախոհ. ի. իւ. եց. իւք։ || ունող զմեծ խոհեմութիւն և զհանճար. կմ մեծ և խոհական միտք. կմ մեծախորհուրդ. և կմ քաջամիտ։ Լամբրոն։

Մեծախորհուրդ։ (Նախադրիւ հոլովի.) || մեծախոհ. կմ լայնամիտ. կմ մեծահոգի. կմ երկայնամիտ. և կմ համբերութեամբ տանող դժուարութեանց։ 'Ի Վարս հարց. Իջ։ և Լամբրոն։ Իսկ մերթ. նշանակէ զայն. որ պարունակէ յինքեան զմեծ և զխորին խորհուրդս՝ կմ զխորհրդաւոր իրս. որպիսիք են անէ ահագինն. անէ մարմնաւորութիւնք պատարագին. և այլք նմանք։ Նոյէկ. ՂԳ. և 'ի գուշ. առաւ.

Մեծախոսութիւն։ (Նախադրիւ հոլովի.) || այն բան, որ է մեծ խոսումն. կմ որ պարունակէ զմեծ բարձրութիւն. և կմ բարձրախոսութիւն։ Մծբն. ԺԱ։

Մեծախօս. ի. իւ. եց. իւք։ || տե՛ս զՄեծաբանն։ Խորէն. Գ. գլ. 68։

Մեծածախ. ի. իւ. եց. իւք։ || այն՝ որ մեծամեծ ծախիւք է կազմեցեալ. կմ բազում դրամոք պատրաստեալ. և կմ մեծագին։ և ըստ այսմ առնի, մեծածախ սեղան։ և այլն։

Մեծակ. ի. ու. աց. օք։ || ունող զմեծութի. կմ այն, որ ոչ է կարի մեծ։ ռամկ. ձևիւ։

Մեծակական։ (Նախադրիւ հոլովի.) || մեծապէս կականող. կմ նա՛ որ ուրուք առնել մեծապաշտ ձայնիւ լայ։ Իսկ մերթ նշանակէ զայն, որ մեծաւ կականաւ լինի և ըստ այսմ առնի՝ մեծակական ձայն, կմ հառաչանք. և այլն. Նոյէկ. Գ. և ԺԷ։ 'Ի Վարս հարց. ԺԳ։

Մեծականջ։ (Նախադրիւ հոլովի.) || ունող զմեծ ականջս։ Խորէն. յաղ. քերական։

Մեծակառոյց։ (Նախադրիւ հոլովի.) || զմեծածախ և զպայծառ շինուածս ունող. կմ մեծաշէն. և կմ հոյակապ։

Մեծակին։ (Նախադրիւ հոլովի.) || ունող զմեծ անձն. ոպ նա՝ որոյ անձն է մեծ։

Մեծակոյտ։ (Նախադրիւ հոլովի.) || մեծադէզ. կմ բազմակոյտ. կմ այն՝ որ է մեծ կոյտ. և կմ յոյժ դիզացեալ. և բարձրացեալ։ Մծբն. ԺԱ։

Մեծակուռ։ (Նախադրիւ հոլովի.) || տե՛ս ըղ Մեծագոչ։ Ովսէ. 1. հատ. ԺԳ։

Մեծահամբաւ. ի. իւ. եց. իւք։ || այն՝ որոյ համբաւն, կմ անունն է մեծ. կմ որ է յոյժ անուանի, և կմ գերահռչակ։

Մեծահանդէս։ (Նախադրիւ հոլովի.) || ունող զմեծ հանդէս. կմ մեծապէս հանդիսացեալ. կմ յոյժ փառաւոր և երևելի, և կմ գերահռչակ։

Մեծահանճար։ (Նախադրիւ հոլովի.) || ունող զմեծ հանճար. կմ յոյժ հանճարեղ. և միտացի։

Մեծահասակ. ի. աւ. աց. օք։ || այն՝ որոյ հասակն է մեծ. կմ յաղթանդամ. կմ մեծամարմին. կմ հսկայ, և այս առնի զմարդոյ, նաև զանասնոյ։ Խորէն. Բ. գլ. 54։ և Գ. գլ. 59։

Մեծահարկի։ (Նախադրիւ հոլովի.) || մեծապատիւ. կմ մեծայարգ, և կմ մեծարգոյ. և ըստ այսմ առնի՝ մեծահարկի մեծարանք։

Մեծահաց։ (Նախադրիւ հոլովի.) || բարերեց. կմ բազմախորտիկ. և այս առնի զսեղանոյ՝ զոր պատրաստեն մեծածախ և ազնիւ խորտիկօք, և համադամ կերակրովք։ Իսկ մերթ ընդ բայի շարակցի այսպէս, մեծահաց գործել, և նշանակէ՝ բազմազան և փափուկ խորտիկօք, և քաղցրաճաշակ ըմպելեօք յօրինել զպիտոյսն, կմ զսեղանս։ 2. Մակ. 2. 28։

Մեծահաւատ. ի. իւ. եց. իւք։ || ունող ըղ մեծ հաւատս, կմ որոյ հաւատն ընդարձակի առ բազումս, յորս ակնարկեալ հաւատալ այլք։

Մեծահզօր։ (Նախադրիւ հոլովի.) || տե՛ս ըղ Մեծազօր։

Մեծահոգի. գւոյ. ւով. ւոց. ւովք։ կամ եաւ. եաց. եօք։ || մեծախոհ. կմ մեծախորհուրդ՝ որ առնի զնոցանէ, որք միանգամայն վարին 'ի բարեպաշտութեան և 'ի քաղաքավարութեան. կմ իմաստունի և յանդուգնս. և ոչ անկանին իբրև զփոքրոգունսն 'ի ... փոփոխութեանց և հեշտութեանց. և ոչ համարին մեծ ինչ զխիղճսն, կմ զյաղթութիւնս. երկայնամիտ են 'ի կրել զնեղութիւնս և անյեղաշրջ 'ի զղջմանս։

Մերձակայ. ի. իւ. իւ. իւք: || մերձ կացող ումեք. կամ ընթերակայ, կամ մեր-ձաւոր. կմ մօտաւոր: Յն ոսկ: Ոսկէ. 1. հատ. խա:

Մերձակաց: (Նախդրիւ հոլովի.) || տե՛ս զՄերձակայ: Յն ոսկ:

Մերձանակ. ի. աւ. աց. օք: || այն՝ որ մերձեալ է. կմ 'ի մօտ հասեալ կայ. կմ մեր-ձակայ. և կմ մօտաւոր: Նարեկ. ձթ:

Մերձաւոր. ի. աւ. աց. օք: || այն, որ մերձ է, կմ ունի զմերձաւորութի ինչ. որով մերթ նշանակի մերձակայ. կամ մօտաւոր: Ե-րեմ. 23. 23: և 25. 26: Եզեկ. 6. 12: Եւ մերթ մերձեցող. և ըստ այսմ է Ղևտ. 10. 3. ուր ասի՝ 'ի մերձաւորս իմ սրբեցայց. յոր մեք երևեցայց 'ի քահանայս. և 'ի պաշտօնեայս իմ, պատժելով զպիղծս, և զանզգանակապուտս 'ինոցանէ: ըստ այսմ է և Աղոթ. 5. 5: ուր ասի. ոչք անդգամութե իշխուցանեն զմերձաւորս նր 'ի գթութս. յոր զմերձեցօղս 'ի պտղնիկ կենն. կմ յանդգնամութիւն պատկութե: Այնպէս Փող. 8. 8. մերձաւորք կոչին՝ մերձեցօղքն 'ի յամբարշտութիս: Իսկ մերթ նշանակի դրացին, կմ բնակակիցն: 3. Մակ. 3. 6: Եւ մերթ ազգականն, կամ որ է 'ի զարմէ և 'ի տոհմէ ուրուք: Ելից. 32. 27: Թուոց. 27. 11: և 35. 19: Մերթ ևս նշանակէ զընկերն. կամ զծանօթն. կամ զբարեկամս, և զսիրելին. Երգ. 5. 1: Ղուկ. 10. 36:

Մերձաւորարար. ի. աւ. աց. օք: || մերձաւորիչ. կամ մերձաւորեցուցիչ: Այն նա, որ մերձեցուցանէ զհեռաւոր ինչ: Իսկ մերթ նշանակի 'ի մեք գիրս մերձաւորին արեան. այ արեանառու ազգականն. որում անկ էր ըստ օրինացն մովսէսի՝ լինել զագարակն. կամ զկալուածս, զորս վաճառէր ոք յազգատոհմէ իւրմէ. կամ առնուլ ըզ կին ազգականին անորդի մեռելոյ՝ 'ի կանգնել զանուն նր, և այլն: Եւ առացաւ մերձաւորարար, կամ մերձաւորիչ. իբ-րու թէ՝ մերձաւոր սեպհականիչ. կամ յինքն ձգօղ և ժառանգօղ: ռամկ. հիւն-փոր: Հռութ. 4. 3:

Մերձաւորեմ. եցի. եա՛. ել: (զօրութք անցող.) || տե՛ս 'ի ներքոյ զմերձաւորեցու-ցանել: Ոսկէ. 1. հատ. ի:

Մերձաւորեցուցանեմ. ցուցի. ցա՛. ել: (անցող.) || մերձաւորել. այ մերձաւոր առ-նել. կամ մերձեցուցանել զոք առ ինքն, տանելով. կամ յորդորելով. կամ հրա-ւիրելով. և այլն: Իսկ մերթ 'ի մեք գիրս նշանակէ գնելով կամ ժառանգելով 'ի յինքն ձգել. կմ սեպհականել զկալուածս՝ և զժառանգութիս մերձաւորին. այ արեան առու ազգականին. կամ յինքն առնուլ զկին նր, յորժամ անորդի մեռանի. զի մի փոխեսցի ժառանգութին ցեղէ 'ի ցեղ. կամ զի մի կորիցէ անունն անորդի մեռելոյն: Հռութ. 4. 3:

Մերձաւորիմ. եցայ. եա՛ց. իլ: (ձայնակր.) || մերձաւոր լինել. կամ մերձենալ. և կմ հպիլ: Իսկ մերթ զուգակցիլ առն և կնոջ ընդ միմեանս մարմնաւորապէս: Եւ մերթ ազգական լինել. կմ ընտանենալ: Խորէն. գ. գլ. 55:

Մերձաւորիչ. րչի. աւ. աց. օք: || տե՛ս ըզ Մերձաւորարար: Ղևտ. 25. 25. և 26: Թուոց. 5. 8: Հռութ. 4. 3:

Մերձաւորութիւն. թեան: || մերձաւոր գոլն. կամ հպաւորութիւն. կամ մերձակայութի: Մերթ ևս նշանակէ ըշաղաշարութիւն. կամ զմարմնաւոր զուգութիւն առն և կնոջ 'ի գործ որդեծնութե: Ելից. 21. 10: և Ոսկէ. 1. հատ. իէ:

Մերձենամ. եցայ. ցիր. ալ: (ընդմիջ.)

մերձիլ, յի մերձ լինիլ. կմ մօտիլ. կամ հպիլ. տամկ. յօդիլ: Տիմոթ. 12. 11: Եւէկ. 34. 30: Մերթ եւս նշանակէ զզուգելն առն և կնոջ մարմնաւորապէս: Տիմոթ. 20. 4. և 6:

Մերձեցուցանեմ. ցուցի. ցո. ցանել: (ան ցողական.) || մերձաւորել. կմ մերձ առնել. կմ հպեցուցանել. և կմ մատուցանել: Սաղմ. 118. 150: Եսայ. 46. 13:

Մերձ ընդ մերձ: (մակբայ.) || մերձաւորապէս. կմ հուպ ընդ հուպ. կմ վաղվաղակի. կամ փութապէս. տամկօրէն շուտով: Հռովմ. 16. 20:

Մերձիմ. եցայ. եա. իլ: (Հայնակրական.) || տես զՄերձենալ: Սաղմ. 143. 5: Ահաւ. 3. 15:

Մերոյին: (Նախդրիւ հոլովի.) || երևնէ սա 'ի սեռականէ դերանուանս այսորիկ մեր. և նշանակէ մերոյին. կմ որ մերն է: Ղուկ. Ճ: Եւ զայամանէ տես և զբառն իւրոյին:

Մերունակ. ի. աւ. աց. օք: || ունօղ զմերն, կամ զպատականեալն առ մեզ: Իսկ մերթ նշանակէ զունեցեալն 'ի մենջ. կմ զմերայինն: ըստ այնմ Յս ոչէ. Ցորժամ մարմինն մերունակ, ծագի յերկնից ամ փայլակ:

Մեցամէջս. մէջի. իւ. եց. իւք: || երևնէ սա 'ի մէջ բառէս, որ է եղբ, կմ փառունի իւն նաւ երաց, և կմ բոլորս. և 'ի մէջս վանկէս, որ է իրր կրկնուտն նր. ուստի բառ. նիս մեցամէջս նշանակէ սաստիկ փակեցուցիչն. կմ սպականիչն. և կմ այն՝ որ 'ի յորդն և 'ի շարաւ դարձուցանելով ծախէ և վատնէ. և ըստ այսմ առե` հեւթ. կմ ցեց մեցամէջս: Եսայ. 50: 9:

Մեցոտիմ. եցայ. եայ. իլ: (Հայնակր.) || հարկանիլ 'ի փտութէ. կմ սկսանիլ փտել և ապականիլ. և կմ ցեցոտիլ: Ահգոբ:

Մեքենայից: (Նախդրիւ հոլովի.) || ընմե քենայիւք. կամ խորամանկ հնարիւք. և կմ լցեալ նենգութբ. և դաւաճանութբ: Ահգոբ:

Մեքենայ. ի. իւ. եց. իւք: || մանգղիոն, յի ճարտարահնար կազմուածք պատերազմիս կանք. զորս կանգնեն հանդէպ պարսպաց ամրոցաց. կմ քաղաքաց առ 'ի քանդել զմե ծամեծ քարինս. կմ հրացանս. և այլն. որպիսիքեն բաբանք. նետաձիգք. փայտակերտ ախոյեանք. աշտարակաձև շինուածք. էշ կոչեցեալ կազմուածք. և այլք բազումք. 1. Եղկ. 4. 4: 1. Մակ. 5. 30. և 34: և 13. 43. և 44: Սոյնպէս մեքենայ կոչին և այնք կերտուածք, զորս [illegible] 'ի վր պարսպաց, ամրոցաց, աշտարակաց, և կամ փղաց. զի ամրացեալ 'ի նմ [illegible] [illegible] [illegible]: 2. Մնաց. 26. 15: 1. Մակ. 6. 37: [illegible] մեքենայ կոչին արուեստաւոր կերտուածքն, զորս [illegible] [illegible]. կմ առ 'ի նորահնար կերպիւ շարժել զինչ. և կամ առ 'ի որսալ զինչ. յորո-

գայթս. և այլն: Ղուկէ. ծճ. ղ. ղէ: Իսկ Եւէկ. 28. 27. և 28. նշանակէ զմեքենաւոր անկուածս, յի զճարտարահնար գործուածս վակասին. ուստի նոյնն Եւէկ. 39. 18. և 19. կոչի անկուած: Մերթ եւս նշանակէ զհնարս. կմ զարուեստ. և կմ զդանս. Կիւրղի Եղծի. ժն: Իսկ մերթ նենգութ. կմ դաւաճանութի. կամ խորամանկութի. և կմ չարահնարութի: 3. Մակ. 4. 15: և 6. 17: Սոփե. 1. հատ. բ. և իբ:

Մեքենայագործ. ի. աւ. աց. օք: || գործօղ. կմ շինօղ մեքենայից: Իսկ մերթ նշանակէ զգործեցեալն, կմ զյօրինեցեալն ճար տար արուեստիւ, կամ հնարագիտական գործուածովք: Իմաստ. 15. 4: Մերթ եւս նշանակէ զմեքենայօղն, յի զնենգագործն, և կմ զդաւաճանօղն, որ գնէ մարգոյզ րոգայթս նենգութե:

Մեքենայեմ. եցի. եա. ել: (Ներգործ. և մերթ չէզոք.) || նիւթել զչարիս, կմ ըղ հնարս հնարել. կամ խորամանկել. կամ դաւաճանել: Եսթ. 16. 3. և 12. 3. Մակ. 5. 11:

Մեքենաւոր. ի. աւ. աց. օք: || ունօղ զմեքենայս, և զպէսպէս հնարագիտական գործիս և որոգայթս: Մծբ. Է: Իսկ մերթ մեքենայական. կմ նենգաւորական. և կամ դաւաճանական:

Մեքենաւորեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || մեքենայել: Իսկ մերթ նշէնկէ ճարտար արուեստիւ կազմել. կմ յօրինել. կմ գծ րել. և այլն. Ղուկէ ղէ:

Մեքենովլթ. այ. աւ. աց. կամ իւ. ք: || է բառ եբրայական, որով նշանակի խա րիսխ. կմ խարսխաձև պատուանդան. զոր դնէին 'ի ներքոյ սեանց. և կմ այլոց ծան րաբեռն կազմուածոց. և ըստ այսմ մե քենովլթ կոչեցան տասնեքին մեծամեծ մոյթքն անուաւորք. զորս արար սողո մոն 'ի ողնձոյ ակեսպէս զարդուք: 3. Թագ. 7. 27: և 30. և 34. և 35: Եւ զայսոսիկ մեք նովլթան եղ 'ի ներքոյ աւազանացն պղն ձոյ, որք էին մեծ և խոր աւազանք ողնձիք. յորս լուանային քահանայքն ըղ զոհս. 3. Թագ. 7. 38: 4. Թագ. 16. 17: Բայց 3. Թագ. 7. 42. առեալ լինի փոխանակ վեր նախարարխի սեան:

ՄԶ

Մզեմ. եցի. եա: ել: (Ներգործ.) || քա մել. կամ զհեղեղումն նիւթ ինչ հանել մեջ. կամ զհիւթ նորա յիմեքէ` ճմլելով. կմ ծծելով. կմ քամելով. կմ եփելով. և այլն. և ըստ այսմ առէ մզել կմ եփելով. և այլն. և ըստ այսմ առէ մզել 'ի սխալովս. մզել 'ի ջրածնէ. զօշարակա 'ի պտղոց. զարիւն յերակաց. զհատն 'ի մորթ տանեանց. և այլն: Ահգոբ: Ղուկէ. ղէ: Մերթ եւս նշանակէ զանել. կմ պարզել յամ մրրոյ և 'ի դրոշից. և ըստ այսմ առէ, իւղ, կմ գինի մզեալ. տամկ. օշարի աձել: Եւէկ. 29. 40: Թուոց. 28. 5: 3. Թագ. 5. 11: Մերթ եւ նշանակէ 'ի դուրս հանեցուցանել. կմ 'ի հն դուրս վայթել. և ըստ այսմ առէ

պատմօղիր զփողոտեաց ուրուք մի թէ՝ ի ձեռս քամեալ մզկին յորաւանէ անոր։

Մզկիթ. մզկթի. աւ. աց. օք։ || տաճար, կամ աղօթատեղի թուրքաց. ռամկ. ճամի. կամ ճէլիթ։ Ընդհանուր։

Մզղին. մզղնոյ. ով. ոց. ովք։ || է նուրբ մաշկն երեսաց անկից, զի գործեալ կաշեաց խաշանց, զոր հանեն 'ի նոցանէ. 'ի բաց քերելով զնորքին բրդատեսակ փափուկ նիւթս նց, որով միայն ինքն իբրև զթաղանդ ձուոյ. կամ իբրև զնրբանիւթ չար։ ռամկ. ճղ։ Երբ յորժամ կաշկակարքն զերիտս մառոտս 'անկից առ իւրաքանչիւրեալ' կարեն զնոյ, արկանելով մինչ զանոցն ընդ մէջ այսց մաշկաց, և բրդատեսակ նիւթոյ, որով կարեն ոչ երբեք յերեսս անկից, առ' մզղին կարել։ ռամկօրէն ճղ. կարել։

Մզղնաձև. ի. իւ. եց. իւք։ || տե՛ս զՄզղնատեսակ։

Մզղնատեսակ. ի. աւ. աց. օք։ || մզղնաձև. կամ մզղնակերպ. որ այն՝ որ ունի զկերպ, կամ զնմանութիւն մզղնոյ, կամ է իբրև զմզղին. որպիսի է փառ ձուոյն, զի նրբանիւթ մաշկն, որ պատէ զսպիտակուցն ձուոյ, նաև մաշկն աչաց, և այլ ընդմանք։

Մզնաձև. ի. իւ. եց. իւք։ || մզնատեսակ. կամ մզնակերպ. որ այն ամ, որ ունի զկերպ, և զնմանութիւն մզնեաց. կամ կազմեալ կայ իբրև զնուրբ մաշկն, որպիսի է մաշկն մեզեր, այսինքն մոմեղէն նրբանիւթ աղօթն. զոր չինեն մեղուքն 'ի մեղրամանոցս բազմանկիւն ծակոտեօք, յորս կազմեն զմեղր։

Մզնարհեստ. կամ մզնարուեստ. ի. իւ. եց. իւք։ || եղանէ սա 'ի միզն բառէն. և նշանակէ զարհեստաւորն. որ գործէ զմզղնաձև յօրինուածս, կամ զնրբանիւթ գործուածս։ Եւ կամ որ արուեստիւ 'ի բաց կորզէ 'ի անկից զմզղինսն նց։ Իսկ մերթ նշանակէ զարուեստագործեալն իբրև ըզմզնիս, կամ զմզնակերպսն. և ըստ այսմ մզնարհեստ կոչին թմբուկն լսելեաց, որ կազմեալ կայ 'ի նուրբ մաշկէ իբրև զփոքրիկ բուշտ. ըստ այնմ 'նպէլ. զչ. Մզնարհեստ ուժգնաբարբառ կազմուածոյ թմբկիս գործածութեան, և այլն։

Մզնիք։ || է յոգնականն միզն բառին. ուստի զնշանակութիւն սորա տե՛ս անդ։

Մզուռն. մզման. մամբ. մանց. մամբք։ || քամուռն, կամ հանումն հեղեղուկ իրաց յիւրեանց նիւթոյ։ Իսկ մերթ զտումն, կամ պարզումն 'ի մրրոյ, և յայլոց նմանեաց։

Մզսիթ։ || տե՛ս զՄզկիթ։

ՄԵ

Մէգ. միգի. աւ. աց. օք։ || մառախուղ. կամ աղջամուղջ. և կամ մթութիւն պատճառեցեալ 'ի շամանդաղէ. կամ յամպոյ. և կամ 'ի պակասութենէ լուսոյ։ ռամկ. ճղաղ. կամ փոշի։ Ծննդ. 10. 22։ Երեմ. 23. 12։ Գործ. 13. 11։ Իսկ մերթ առեալ լինի փոխանակ մէգ ասելոյ՝ ըստ այնմ. Սաղմ. 147. 16. գնէ զձիւն իբր զասր. և զմէգ իբր փոշի ցանեալ. ըստ այսմ է և 2. Պետր. 2. 17։ և յայլ բազում տեղիս։ ռամկ. փոշ։

Մեգալէ. էի. իւ. եց. իւք։ || է բառ յունական, որով նշանակի մեծ. կամ մեծահանճարեակ։ Աշխարհ։

Մեղ. մեղի. իւ. եց. իւք. կամ աց. օք։ || յանցուածք խոնարհութեան ընթացելոցն, զոր ընդդիմակէն մեղանք և մասնաւորք անցանելով 'ի բարեաց սովորութենէն, և անտի առ աստուած։ ռամկ. Ղևտ. 4. Թագ. 18. 27։ Եսայ. 36. 12։

Մեթաֆիզիկայ. է. իւ։ || է բառ յունական. որով նշանակի մակացութիւն ինչ. զոր հայերէն կոչեմք հանդերձաբանութիւն. զոր տե՛ս 'ի տեղւոջ իւրում գրեցաք։

Մէն. մենի. կամ մենի. իւ։ || մի. կամ մու. կամ եզակի. ռամկ. ճէկ։ Իսկ մերթ միայն. կամ միայնակ. ըստ այնմ. մի միոյն մենի ձեռնարկէ էջ. զի մի միոյն միայնոյ։ Աւետ. 1. հարց. Մէն չորս արձանս կանգներ. զի միայնակ չորս արձանս։ Աշխարհ։ Բայց սա ըստ մեծի մասին 'ի գործածի ընդ մի բառիս այսպէս. մէն մի, և նշանակէ մի մի. ըստ այնմ. Եւ եստուն նմա իւրաքանչիւր մէն միոյ. զի իւրաքանչիւրքն մի մի. Յոբ. 42. 11. Առին մէն մի դահեկան, զի առին իւրաքանչիւրքն մի մի դահեկան։ Մատթ. 20. 9։ Այսպէս է և 'ի գիրս Կիւրղի Եղէգ. զ. և 'ի ճառս հարց. իզ։ Բայց 3. Թագ. 4. 7. տուր առ. առաջ առծ իւ մէն մի ամիս 'ի տարւոջ. իմանի, առաջ առծ իւ յիւրաքանչիւրում ամսեան 'ի տարւոջ։ Վասն զի բառս մի, 'ի կրկնելն նշանակէ զիւրաքանչիւրն. որպէս ասացի 'ի բառն մի մի։

Մենատեսակ. ի. աւ. աց. օք. || միատեսակ, կամ միակերպ. և կամ միաձև։ Իսկ մերթ մերոյ իբրև զեզակերպ այսպէս, մենատեսակ առհամանել, և նշանակէ միով տեսակաւ, զի միով կերպիւ, և կամ միապէս։

Մենաւոր. ի. աւ. աց. օք։ || միաւոր. կամ միակի. կամ միայնակ, և կամ միակերպ. Կիւրղի Եղէգ. թ։

Մէջ. միջոյ. ով. միջաց. ովք. կամ օք։ || է այն, որ զհաւասար հեռաւորութիւն ունի 'ի ծայրիցն, և յեզերացն, որպէս ասի յաշխարհագրութեան Խորէն։ Իսկ մերթ նշանակէ ըզմիջին տեղին, կամ զմիջոցն, որ անկանի 'ի մէջ երկուց. կամ բազմաց իրաց. ռամկ. օրթան. կամ արասըն։ Ծննդ. 1. 6։ Թուոց. 16. 48։ Մարկ. 7. 31։ Ղուկ. 5. 19։ Եւ ըստ այսմ մէջ կոչին 'ի փիլիսոփայից այնք իրք, որք միջնորդ լինին ուսուցիչաց հասանելոյ 'ի դադարումն. որպիսի է օդն, որ զերծ ըզգիտողական առարկայս։ Մերթ եւս նշանակէ զմիջին մասն, կամ զհատուածն. և կամ զկէսն։ Ծննդ. 27. 5։ և 38. 4։ 2. Թագ. 10. 4։ Բայց մասնաւորապէս առեալ նշանակէ զառաջին մասն մարմնոյ. որ պարունակէ զգիրս ուսերս յօդուածոյ սրբանցն. և կոչէ 'ի ներքուստ մինչև յամօթն

երաստանաց · որոյ երկոքին կողմունքն յաջ և յահեակ սնանկուշտ կոչին : Յայս մասնս ածեալ լինի գօտի · և կապեալ ծածա- ծանելի · ռամկ. մէջ : Ծնն. 37. 34: 3. Թագ. 12. 10: Երեմ. 13. 2: Եզեկ. 8. 2: Բայց 2. Օրին. 28. 57. ուր ասի · կերիցէ զաղտն ե- լեալ 'ի միջոյ իւրմէ, խմանի ասել՝ 'ի ներ քին մասանց երանաց իւրոց : Դարձեալ- քին մասանց երանաց իւրոց : Դարձեալ բառս այս՝ մէջ՝ յօդեալ ընդ նախդրիս՝ ի, այսպէս, 'ի մէջ · կմ 'ի միջի, զնի երբեմն փոխանակ նախդրաց, ներ · 'ի · 'յ, ըստ ո- րում են ներդրոյականակերպք · և թ այսմ փոխանակ ասելոյ, 'ի ծովու · կմ 'ի ձեռ, ասի՝ 'ի մէջ ծովու, կմ 'ի միջի ձեռում: Եսայ. 15. 8. և 19: Ղուկ. 22. 27: Յօհ. 1. 26: Դարձ՝ երբեմն առ ընդ բայի շարակցի, և յայնժամ պէսպէս կերպիւ փոխէ զնշա- նակութիւն իւր, զոր տեսցես 'ի ներքոյ: Ընդ մէջ յօշել · կմ հերձանել · և կմ ը մէջ կարել : || ք հատանել 'ի միջացն, կմ անջատել 'ի միջին մասնէն յերկուս բա- ժինս · ռամկ. օրթայէն կէսել : Ծննդ. 15. 10: Դանի. 13. 55: Մատ. 24. 51: 'Ի մէջ առնուլ զտասամորդս, կմ զառակս՝ և կամ զկշտամբիչս : || ք յառաջբերել · կմ առաջի կացուցանել : ռամկ. մէյտան բէ- րել : 1. Մակ. 3. 49: Լամբրոն : Խորհուրդ 'ի մէջ առնուլ : || ք ընդ մի- մեանս 'ի խորհուրդ մտանել · կմ խորհր- դակցել · և կմ խորհել : Ծննդ. 37. 18: Փոյթ 'ի մէջ առնուլ : || ք զփոյթ յան- ձին ունել · կմ յանձն առնուլ զջանս և զճգնութիւն : 2. Պետ. 1. 5: և Լամբրոն : Անցանել · կմ կալ 'ի մէջ : || ք գալ և կանգնել 'ի միջի յերևելի տեղւոջ · կամ երևանել յասպարէս. ռամկօրէն օրթան գալ. կամ մէյտան ելնել · կամ մէյտան չընգ- նել : Եսայ. 50. 8: Մարկ. 3. 3: Ղուկ. 6. 8: Թ այսմ խմանի յորժամ ասի · կացուցանել 'ի մէջ : Գործ. 4. 7: 'Ի մէջ բերել · կմ 'ի մէջ ածել : || ք յա- ռաջ բերել · կմ յիշեցուցանել · և կմ յի- շատակել : Աշգար.

Մէջերկրեայք · եայց · եօք : || տե՛ս զՄիջեր կրեայք : Խորէն. Է · գլ. 14. և 61: և Յն որ դի :

Մէջօրեայ · էի · իմ · իւ · իւք : || միջօրեայ · ք այն ժամ, որ վերաբերի առ միջօրեայն · ք առ կէս օրն · և թ այսմ ժամանակն կէ ք առ կէս օրն · և թ այսմ ժամանակն կէ սօրական՝ միջօրեայ կոչի : Կիւրղի ԵԶէք. Թ. և Ժ: Իսկ մերթ նշանակէ զկէս օրն · որ և ասի՝ հասարակ օր : Նարեկ. ՂԷ: և Յն որդի :

Մէտ · միտի · իմ · իւ · իւք : կմ ա · աց · օք : || է արմատ միտել բային · որով նշանա- կի միտումն · ք հակումն · և կմ միտեցու- ցիչն · և ըստ այսմ մէտ կոչի յետին մաս նիկն տրամի · որպիսի է ցորեանն, կմ չոր բորդ մասն միոյ ցորենոյ · զոր դնեն 'ի մի թաթն կշռոյ, զի փոքր մի հակեցուս ցէ զնա առ 'ի զուգահաւասար չլինել ընդ միւսոյ թաթին : Աշխարհ. 16. 11: խնա. 11.

23: Եսայ. 40. 15: Եւ յայսմանէ առեալ նշանակէ երբեմն զչափն, կմ զուգանու- թիւն ծանրութեն կշռելի իրաց · թ այնմ 1. Մնաց. 28. 14: Եւ դաւիթ զմէտս կշռոցն նց · ք զչափ ծանրութեց նց : Եւ երբեմն գործածութիւն · կմ զձկտումն · և կմ զյար զյօժարութիւն · կմ զձկտումն · և կմ զյար ձակումն · ըստ այնմ Յովէ. 1. հատ. Է: Մէտ բարկութե նը կործանումն նորին : մերթ ևս զփոքրիկ տևողութի ժամանակի · որ պիսի է րոպէն · կմ վայրկեան մի · և կմ թերթել մի ական : ռամկ. Բոգիգէ : Կիւրղի Եղէկ. Ե: Դարձեալ նշանակէ առժա և այն, յոր միտէ իմն · և ըստ այսմ մէտ կո չի կեդրոնն երկրի, յոր դիմեն ամ ծա նունք · և կմ միջակէտն շրջանակին, յոր բերին ամ գիծք · ըստ այսմ խմա և զայ- լոց նմանեաց : Բայց սա երբեմն Է բայի շարակցի այսպէս · մէտ 'ի մէտ խոնար- հել · և նշանակէ՝ յայսկոյս յայնկոյս մի- տել · կամ ծանրահակ շարժմամբ երևելս տել · կամ ծանրահակ շարժմամբ երևելս առնել · ըստ այնմ Աշգար. Բարկացայտ ալեքն չեռնաձև կուտեին՝ մէտ 'ի մէտ խո նարհէին :

Մէց · մեցի · իմ · իւ · օք : || երր · ք փառ- թի · կամ ապականութի · կմ ցեց · և կմ թարախ, կամ ապականիչ ՃՃի, որ անկանի այլ զազիր ապականիչ ՃՃի, որ անկանի 'ի խոտս և 'ի դալար իրս · և նեխեցու- ցեալ զնա՝ 'ի յորդն, և 'ի թարախ փոխար կէ : Եսայ. 14. 11: և Կիւրղի · Եղէկ. ԺԷ: և Շնորհալին յուղբան Եդեսիոյ:

ՄԸ

Մըթեր : || տե՛ս զՄթեր :

Մըթին : || տե՛ս զՄթին : Նարեկ. ԽԷ:

Մըթնիմ : || տե՛ս զՄթնիմ :

ՄԹ

Մթագին : (նախդրիւ հոլովի ·) || կարի մթին · կմ սևագոյն · և կմ թխագոյն : 'Ի Վարս Հարց. ԺԹ:

Մթագնիմ · եցայ · եաց · իւ : (ձայնակր ·) || մթագին լինել · կմ թխանալ · կմ սևանալ : Իսկ մինչ ասի՝ զմտաց, կմ զաչաց, նշանա կէ խաւարիլ · կմ աղօտանալ · և կմ կուրա նալ : ռամկ. Ղարարմագ · կմ կուրնալ : 'Ի Վարս Հարց. Է:

Մթագոյն · գունի · իմ · իւ · իւք : || տե՛ս ըզ Մթնագոյն :

Մթայնին · այնոյ · ով · ոց · ովք : || տե՛ս ըզ Մթին : Նարեկ. ԾԵ:

Մթանամ · ացայ · ացիր · աւ : (ընդ միջ ·) || մթով պատել · կմ խաւարիլ · կմ նսեմա նալ · կմ աղօտանալ :

Մթար · ի · աւ · աց · օք : || մթին · կմ սևա · կմ թուխ · կմ նսեմ · կմ աղօտ :

Մթարիմ · եցայ · եաց · իւ : (ձայնակր ·) || մթանալ · կմ թխանալ · կմ աղօտանալ · կմ սևանալ · և կմ նսեմանալ :

Մթարութիւն · թեան : || մթութի · կմ սևու թի ·

թի. կամ թխութիւն. և կամ նսեմութիւն։

Մթեմ. եցի. եա՛. ել։ (Ներգործ.) || Քաղել. կամ կթել. կամ զեր ինչ ձեռամբ կորզելով կամ հանելով՝ յինքն առնուլ. և ըստ այսմ առի զամփոփանէ 'ի Մծբն. ժա։ 'Ի պիղծ գաղանէն եկն՝ մտաեաւ, մթեաց զմեղըն յինքն։

Մթեր. ի. իմ. ից. իւք. կամ աւ. աց. օք։ || Համբար. այսինքն ամբարեալ առատութիւնք ու֊տելեաց. և ըմպելեաց. ոչ ցորենոյ, ա֊լեր. ձիթոյ. կամ գինւոյ. և այլն։ Յոբ. 20. 21։ Երէ յայսմանէ առեալ մթերք կոչին յաճախութիւնք կերակրոց ինչ զգեստուց յու֊րովայնս. ըստ այնմ 'ի Հոր. հօրց. Ե։ Ո֊րովայն պարպառեալ՝ ոչ առէ շատ 'ի մը֊թերս իւր։ Մերթ ևս մթերք անուանեն գանձք ոսկւոյ, և արծաթոյ. և ա֊կանց պատուականաց. և կամ աւելորդ ա֊ռատութիւնք հարստութեանց։ 2. Մնաց. 24. 27։ Ղուկ. 12. 15։ և 21. 4։ Խորհն. ... պր. 23։ Սոյնպէս մթերք կոչին կոյտք, կամ գումարք աղխամաղխից, քարանց. փայ֊տից. կամ բազմութիւնք մեղաց. և այլոց իրաց՝ որք ամբարեալ պահին։ Իմաստ. 4. 20։ Դարձեալ՝ առեալ լինի փոխանակ մթերցորդաց. կամ մթերանոց։ 1. Մակ. 10. 41։ Ոսկէ. 1. հատ. ժդ։ Երէ երբեմն փոխա֊նակ մթերանոցի. կամ գանձարանի. որ֊պիսի է և բառս ամբար, կամ համբար։ 1. Մնաց. 28. 12։

Մթերածոյ. ոյի. իմ. իւ. իւք։ || Մթերեալ. կամ ամբարեալ. կամ որ ժողովեալ, և հա֊ւաքեալ կայ։ Մծբն. ժթ։

Մթերանոց. ի. աւ. աց. օք։ || Շտեմարան, ուր համբարեալ պահին մթերք գան֊ձուց. կամ կերակրեղինաց. որ և ասի համ֊բարանոց. կամ շտեմարան։ Խորհն. ... պր. 59։

Մթերեմ. եցի. եա՛. ել։ (Ներգործ.) || Համ֊բարել. որ է ժողովել, և գանձել զհամ֊բարս կերակրոց։ 1. Մակ. 6. 53։ Խորհն. ... պր. 32։ Երէ յայսմանէ առեալ՝ մթերել ասի զո՛ր և իցէ իր. գանձելն, կամ ժողո֊վելն. կամ կուտելն. և կամ պահելն. և ըստ այսմ ասի՝ մթերել զպարիս, կամ զպար֊տիս, կամ մթերել զդոհացողական օրհ֊նութիւն՝ 'ի սենեակս սրտին. և այլն։ Եբր. 9. 25։ Կիւրղ. Եզեկ. ժբ։ և Լամբրոն։

Մթին։ (Նախդրիւ հոլովի.) || Մթային, կամ խաւարային, կամ աղջամղջին. և կամ նը֊սեմ։ Եբր. 11. 8։ Յես. 15. 23։ Միքիա. 4. 8։

Մթխալ. ի. իւ. եօք։ || Է բառս արաբացւոց, որ թարգմանի ծանրութիւն, կամ կը֊շիռ։ Բայց մատենագրաց առեալ նշա֊նակի առաւել բացորոշեալ [illegible] ինչ ծան֊րութիւն, որ կրէ զքսան և չորս կուտեղ֊ջեր. որ է դրամ և կէս։ Երէ այսպէս եր֊կոտասան մթխալն առնէ զլիտր և առաւ֊տրամս. և ըստ այսմ է 'ի Հոր. հօրց. ժդ. ուր ասէ. ունկին երկոտասան մթխալ է. որ է ունց և տասն դրամամասն. իսկ թէ ասէ. երկոտասան մթխալն է ունց

և տասն դրամ ծանրութիւն. ռամկօրէն մխալ։

Մթնագոյն. գունի. իւ. իւ. իւք։ || Առա֊ւել մթին. կամ նսեմագոյն. կամ աղօտա֊գոյն. կամ առաւել նուաղեալ. և խամրա֊ցեալ։ Ոսկէ. 1. հատ. խդ։

Մթնակերպ։ (Նախդրիւ հոլովի.) || Թխա֊կերպ. կամ մթագոյն. կամ նսեմագոյն. և կամ աղօտագոյն։ Նարեկ. ղէ։

Մթնիմ. եցայ. եա՛ց. իլ։ (Ձայնակր.) || Մթա֊նալ. կամ նսեմանալ. կամ խաւարիլ. և կամ երեկոյանալ։ Ոսկէ. 1. հատ. խբ։

ՄԺ

Մժեխ. ի. աւ. աց. կամ ոյ. օք։ || Է փոք֊րիկ կենդանի ինչ թևաւոր նման մժղ֊կան. ունի զխայթոց նուրբ և երկայն. թռչի յօդս բզզելով. և նստեալ 'ի վերայ մարմնոյ արկանէ զխայթոց իւր 'ի խորս. և ծծէ զարիւն անդր։ Ունի զբազում տեսակս. որոց ոմանք են յոյժ մանրիկք՝ կոչեցեալք մանանաւոր անուամբ մնչւն։ Իսկ ոմանք են միջակք. և այլք յոյժ մեծք, և ժանտք. որք յաճախ գոյանան 'ի ճահիճս տեղիս. և 'ի գետափունս. որոց և խայթուածքն են թունաւորք։ Ռամկ. մոծակ. և տաճկերէն սիվրիսինէք։ Սաղմ. 104. 31։ Նա֊րեկ. կը։ Ոսկէ. 1. հատ. իը։

Մժեղ. եղան. ամբ. անց. ամբք։ կամ ի. աւ. աց. օք։ || Նոյն է ընդ վերնոյն։

Մժղուկ. մժղկան. ամբ. անց. ամբք։ կամ մժղկի. աւ. աց. օք։ || Է կենդանի ինչ թևաւոր՝ նման ճանճի։ Բայց մարմնովն է յոյժ փոքրիկ. և անօթ։ Ծնանի յաճախ 'ի հիւթոյ կոխածոյ խաղողոյ. [illegible]։ Եւ կամ արտաքրի 'ի քացախոյ. որ է շիրայ. յոր և բազմիցս իմքումն անկեալ. հեղձա֊նին։ Մատ. 23. 24։

ՄԻ

Մի. միոյ. 'ի միոյ. ով. կամ միով. 'ի միոջէ։ || Է բացարձականուն թուական. որով նշանակի մէն. կամ մու. կամ եզ։ Ռամկ. մէկ։ Ել. 25. 12։ Մարկ. 9. 4. ըստ այսմ է և Ղուկ. 5. 3. ուր ասէ. ել նա 'ի մի նաւուցն. այսինքն 'ի միոյ 'ի նաւուց անտի։ Երբեմն ևս առեալ լինի փոխանակ բառիս, միւս. ըստ այնմ. Ելից. 25. 19։ և լինիցին քերովբէքն մի 'ի միոջէ կողմանէ. և մի 'ի միւսմէ կողմանէ. այսինքն մի քերովբէն 'ի միոյ կողմանէ, իսկ միւս քերովբէն. 'ի միւսմէ կողմանէ։ Երբեմն ևս դնի փոխանակ բառիս՝ ոմն. ըստ այնմ Մատթ. 21. 33. այր մի էր տա֊նուտէր. այսինքն այր ոմն. ուր դնի Ղուկ. 20. 9։ ըստ այսմ է և Ղուկ. 15. 11. և Յովհ. 3. 1։ Մերթ ևս դնի փոխանակ մասնական ան֊ուանցս՝ իմն. կամ ինչ։ որպէս 2. Մակ. 12. 18։ Յովն. 1. 5։ Յովհ. 11. 38։ Երբեմն ևս ա֊ռեալ լինի փոխանակ բառիս՝ միայն։ Ժողով. 4. 10։ Մարկ. 2. 7։

Բայց երբեմն յորժամ ունի ընդ ինքեան զնախադիրս առ․ դնի փոխանակ բառիս իւրաքանչիւր․ զո՛ր օրինակ․ երկու խարիսխս առ մի սեան․ յն իւրաքանչիւրոյ սեան։ Ելից․ 26․ 19։ Զորրորդ դորակինը հինէր առ մի գառն․ յն վն իւրաքանչիւր գառին․ կամ ընդ իւրաքանչիւր գառին։ ռամկօրէն գառ գլուխ։ Ելից․ 29․ 40։ Տալ յիսուն սիկղ արծաթոյ առ այր մի․ յն իւրաքանչիւրոյ առն․ ռամկ․ մարդ գլուխ։ 4․ Թագ․ 15։ 20։ Իսկ երբեմն վարի իբրև զդասականն անուան թուոյ․ և նշանակէ առաջին․ կմ նախկին։ Ծննդ․ 1․ 5։ Թուոց․ 29․ 1։ Եզեկ․ 29․ 17։ ըստ այսմ է և Թուոց․ 1․ 1․ ուր ասի․ խօսեցաւ Տր ընդ Մովսէսի 'ի միում ամսեանն երկրորդի․ յն յառաջնում աւուր՝ ամսեանն երկրորդի։ ըստ այսմ և առեալ լինի երբեմն և 'ի բարդուածս․ զի փոխանակ ասելոյ․ առաջին օր շաբաթու․ յն եօթնեկին, ասի միաշաբաթ։ Ղուկ․ 24․ 1։ Երբեմն և վարի իբրև զդասական մակբայ․ և նշանակէ՝ նախ․ և Ա․ այսմ 'ի գործածի ընդ երկրորդ բառիս, այսպէս․ մի, զի կոյր էր․ և երկրորդ՝ զի աղքատ էր։ Նարեկ․ 'ի մեկնութեան երգոց։ Բայց թէ զինչ նշանակէ՝ մինչ ասի՝ մի մի․ կմ մի առ միոջ․ և կմ մի զմիով․ և այլն։ տե՛ս զՄի մին։

Մի՛։ || է մակբայ արգելողական․ զի միշտ ցուցանէ 'ի բանի զարգելումն գործոյ․ ըստ այնմ Մտթ․ 13․ 29․ Կամիս, զի քաղեսցուք զայն 'ի բաց․ և նա ասէ ցնա, մի՛։ Եւ սա ըստ այսմ գրեթէ միշտ յարի 'ի հրամայական եղանակս բայից․ զո՛ր օրինակ․ մի՛ մերձենար․ մի՛ ճաշակեր․ մի՛ հուպ լինիր։ Կողոս․ 2․ 21։ Մերթ և դնի փոխանակ բացասական մակբային՝ ոչ․ ըստ այնմ․ Մարկ․ 8․ 39։ որք մի՛ ճաշակեսցեն զմահ․ յն որք ոչ ճաշակեսցեն։ Սոյնպէս նշանակէ․ և 2․ Թեսաղ․ 3․ 10․ ուր ասի, որ ոչն կամիցի գործել, և կերիցէ մի՛․ յն և ոչ կերիցէ․ ռամկօր․ թող չուտէ։

Միաբան․ ի․ իւ․ ից․ իւք։ || ունօղ զմի կամս և զյօժարութի ընդ այլում․ կմ միախորհուրդ․ կմ համամիտ, կմ համաշունչ․ և կմ միաձայն։ Բայց Ելից․ 28․ 27․ ուր ասի յառգեմանն միմեանց միաբան․ նշանակէ՝ միասաբերան․ կամ համեմատ․ և կմ հաւասար։ Իսկ մերթ վարի իբրև զմակբայ․ և նշանակէ միով բանիւ և խորհրդով․ կմ միահամուռ․ և կմ ամենեքեան 'ի միասին․ առանց տարաձայնութե։ Թուոց․ 27․ 21։ Գործ․ 1․ 14։ և 5․ 12։

Միաբանական․ ի․ աւ․ աց․ օք։ || այն ամ, որ վերաբերի առ միաբանութիւն․ կմ որ լինի միաբանութբ․ և ըստ այսմ ասի՝ միաբանական ձայնիւ։ 'ի շարականս։

Միաբանակեաց․ եցի․ աւ․ աց․ օք։ || կեցող 'ի միաբանութե․ կմ որ վարէ զկեանս ընդ այլոց սիրով և միաբանութբ։ Բայց յատկապէս առեալ՝ ասի նա զկրօնաւորաց, կմ զաբեղայից․ որք կեան միաբան 'ի միասին 'ի միում հասարակութե․ Լամբրոն․ 'ի վերայ կարգ․ ժզ։

Միաբանամերժ։ (Նախադրիւ հոլովի․) || ամբոխող զմիաբանութիւն․ կամ խռովիչ միաբանութե․ կմ քակիչ և եղծիչ սիրոյ և համամտութե։ Մծբն․ ժթ։

Միաբանեմ․ եցի․ եա․ ել։ (Ներգործ․) || միաբան առնել․ կամ համաձայնեցուցանել։ Իսկ մերթ միաւորել․ կամ շաղկապել․ կմ 'ի մի ժողովել։ Եւ մերթ համամիտ և նման առնել։

Միաբանիմ․ եցայ․ եաց․ իլ։ (Ձայնակր․) || միաբան գոլ․ կամ միաձայնել ընդ միմեանս խորհրդով և բանիւ․ և կմ համաձայնել։ Գործ․ 23․ 20․ և 24․ 9։ Իսկ մերթ նշանակէ՝ միակցել․ կմ յարակցել։

Միաբանութիւն․ թեան։ || միաբան և համաշունչ գոլն․ կմ համախոհութի․ կմ միակամութի․ և կմ համաձայնութի սրտի։ Սաղմ․ 82․ 6։ Գործ․ 2․ 46։ Իսկ մերթ՝ համայարմար ձայնակցութե․ կմ ներդաշնակաւորութի՝ երգոց, և այլոց նմանեաց։ Դանի․ 3․ 5։ Մերթ և նշանակէ սովոր միաբանեալ ժողովն․ կմ ընկերութիւն բազմութե իւիք․ ո՛պ ասի 'ի կանոնն [illegible]․ թագաւոր երկնաւոր զմիաբանութիւն մեր օրհնեա։ Եւ յայսմանէ առեալ՝ միաբանութի կոչի իւրաքանչիւր հասարակութի կրօնաւորաց, յորում միաբան կամօք կեան ընդ միմեանս կրօնաւորքն։

Միաբարբառ․ (Նախադրիւ հոլովի․) || զմի և զնոյն բարբառ ունօղ ընդ ումեք․ կմ միաձայն․ կամ համաձայն։ Իսկ մերթ վարի մակբայապէս․ և նշանակէ՝ միով բարբառով․ կամ միաձայն գոչմամբ․ և ըստ այսմ ասի՝ միաբարբառ աղաղակել։ 1․ Մակ․ 3․ 50։

Միաբնակ․ ի․ աւ․ աց․ օք։ || բառս այս 'ի [illegible] որում եղանէ 'ի բնակիլ բայէն՝ նշանակէ 'ի միասին բնակօղ․ և կմ որ 'ի միում տեղւոջ բնակի։ Իսկ ըստ որում եղանէ 'ի բնութեան բառէն, նշանակէ զնա՝ որ դաւանի 'ի քս զմի բնութի, ուրանալով զերկութի բնութեցն․ որ է անաւանդելի հերձուած․ վն զի այսու մուծեալ լինի շփոթութի 'ի բնութիւնն քսի․ որ է հայհոյութի չար։ Այլ թէ ասասցեն հակառակորդքն, խոստովանիմք 'ի քս զմի բնութի անշփոթ, ամենևին խօսին զհակառակն անշփոթ․ զի թէ բնութիւնքն են անշփոթք, ապա թուրեմն ոչ են մի, այլ երկու։ Իսկ թէ ըստ նոցա ոչ են երկու, այլ մի, ապա թէ բնութիւնքն ոչ են անշփոթք, այլ շփոթեալք, զի հակառակն է նոյն ըստ նոցին դոլ մի և անշփոթ․ որովհետև անշփոթութիւն ըստ էութե իւրում պահանջէ զբազմութի․ ո՛պ և յայտ է։

Միաբոյս․ բուսի․ իւ․ ից․ իւք։ || 'ի միասին բուսեալ․ կմ 'ի միոյ բունոյ յառաջացեալ․ կմ զոյգ։ որպիսիք են երկու տունկք, կմ ծիլք։ Եւ յայսմանէ առեալ երբեմն նշանակէ զհամածնեալսն․ յն զնա՝ որ ծնեալ է ընդ այ-

լում

ղում՝ ՚ի միասին․ որպիսիք են երկոտասան առաքեալքն։ Նարէկ․ գլ․ Մերթ ևս առեալ լի նի փոխանակ բառիս ընդհանուր, կամ բնա ծին, և կամ բնական․ որպիսի է և բառս համաբոյս։

Միաբուն։ (Նախադրիւ հոլովի․) || Ունօղ ընդ այլում զմի և զնոյն բնութիւն․ կամ համաբնակից․ և ըստ այսմ առնեն զեր րորդութիւն միաբուն կոչել։ Յն ուղղ․ Իսկ մերթ միաբնական․ կամ համաբնական․ կամ միական․ և ըստ այսմ առի՝ միաբուն ինքնութիւն, կամ զօրութիւն ևս։ Ոսկէ․ 1․ հատ․ լէ։ Յն ուղղ․ և Աչգոն։ Մերթ ևս միակցորդ, կամ միախառն․ և կամ միաբան․ ըստ այսմ Նարէկ․ գլ․ ՚ի միաբուն զուգա պարութե անմահից փառաբանողաց։ Եւ մերթ միակերպ․ կամ միատեսակ․ և կամ միա ձեռ․ որպիսիք են բնութիւնք սերովբէից։ Նարէկ․ ՚ի գ․ լ․ առաւ։

Միագլխապետ․ ի․ աւ․ աց․ օք։ || միագլուխ պետ․ թ նա՝ որ յինքն բազմութիւն է ինքն իշխան էր․ կամ որ ընդհանրապէս իշ խէ բազմութեան իրիք․ և ըստ այսմ ընդհանրական իշխանն զօրաց, կոչի միա գլխապետ զօրավար։ Խորենացւոյն․ Է․ գր․ 6։

Միագլուխ․ գլխի․ աւ․ աց․ օք։ || ունօղ զմի գլուխ․ կամ զմի պետ։

Միագոյ․ ի․ իւ․ից․ իւք։ || համագոյ․ կամ միաբուն․ թ նա՝ որ ունի ընդ այլում զմի և զնոյն գոյութիւն, կամ բնութիւն․ և առի զա մենասուրբ երրորդութենէ։ Կիւրղի Եղէն․ ժդ․ Իսկ մերթ նշանակի առեալ գոյացեալն, կամ բաղկացեալն ՚ի մի բոլոր․ կամ միաղոյգ․ կամ միակազմ։ Նարէկ․ ՚ի յիշատակարանն։

Միագոյն․ գունի․ իւ․ից․ իւք։ || ունօղ զմի պարզ գոյն․ կամ միակի գունով որակա ցեալ։ Մերթ ևս նշանակի համագոյնն, թ որ միաբանի ընդ այլում ունելով զնոյն երանգ։ Իսկ մերթ միակերպ․ կամ միատե սակ․ և կամ միաձեւ։ Կիւրղի Եղէն․ ժդ։

Միագունակ․ (Նախադրիւ հոլովի․) || անս զՄիագունդ։ Յն ուղղ։

Միագունդ․ (Նախադրիւ հոլովի․) || ՚ի մի գունդ հաւաքեալ, և խառնեալ․ կամ ՚ի միա սին կացեալ․ և կամ համախմբութ։ Աչգոն։ Իսկ մերթ նշանակէ զայն, որ է մի գունտ․ կամ մի բոլոր գնդաձեւացեալ․ և ըստ այսմ ա սի ՚ի Յն ուղղն․ ՚ի շինող երկնից․ միատարր եւ միագունդ համանմանն։ Իսկ մերթ վա րի մասնաւորապէս, և նշանակէ, միաձայ նուռ․ կամ խմբովին․ կամ համաժողով բազ մութիւ․ և կամ բովանդակաւ ՚ի միասին։ 1․ Մակ․ 12․27․ և 50․ և 16․6․ Իմաստ․ 19․ 8։

Միադաշնեալ․ եղոյ․ ով․ ոց․ ովք։ || միաւորե ներբ։ թ միաբանակ կցեալ․ կամ որք միան գամայն միով կամօք զգեցեալ գզենս։

Միադաւան․ ալոյ․ եաւ․ եաց․ եօք․ || միաւ գէն․ թ նա, որ միաբանակ ընդ գէմ ունիք գկիսնեացն։ Իսկ մերթ նշանակի նա՝ որ Ը այլում ՚ի միասին վառի ՚ի գէն պատերազ մի․ և կամ նա՝ որ նշանակս զինուորեալ ՚ի

մարտ մեծ․ որով միակ երկուք ՚ի մէջ բազ մութեան զօրաց։

Միադաւան։ (Նախադրիւ հոլովի․) || զմի ինչ դաւանօղ։ Եւ այս առի յատկապէս զնո ցանէ, որք դաւանին զերրորդութեն զմի անձն միայն․ որպիսիք են Հրեայքն, և ամենայն հերետիկոսք։ Իսկ մինչ առի՝ միա դաւան օրհնաբանութիւն, նշանակի միա դաւանականն։ ՚ի Վարս հարց․ ՃԺ։

Միադեմ։ (Նախադրիւ հոլովի․) || ունօղ զմի դէմս․ որոյ ներհակն կոչի երկդեմ։ Իսկ մերթ միապատիկ․ կամ միակերպ․ և կամ միատեսակ․ սորա ներհակն կոչի բազ մադեմ։ Կիւրղի Եղէն․ Ղ․ Մերթ և ս վա րի իբրև զմակբայ, և նշանակէ առել․ ՚ի միոյ կողմանէ․ կամ միով կերպիւ․ ըստ այսմ, զոր առէ Շնորհալին․ ոչ միադեմ այլ երկոտ ակնք հայել ՚ի կրկնապատիկ բանս գրոց։

Միադրեմ․ եցի․ եա․ ել։ (Ներգործ․) || ՚ի միասին դնել․ կամ բաղադրել․ կամ միա ւորել։

Միադրութիւն․ թեան․ || դնումն ՚ի միասին․ կամ միակցութիւն․ կամ միաւորութիւն․ և կամ բաղադրութիւն։ Նարէկ․ գլ։

Միազարդ․ ի, իւ․ ից․ իւք։ || զմի զարդ ու նօղ․ կամ միակերպ ընդ այլում զարդարե ցեալ։ Իսկ մերթ նշանակէ զնա՝ որ միա ցեալ գոլով ընդ իմիք փառաւոր իրի զար դարեալ երևի։

Միազարդեմ․ եցի․ եա, ել։ (Ներգործ․) || միով զարդու զարդարել․ կամ միակերպ պաճուճել։ Իսկ մերթ նշանակէ միացու ցանելով, կամ յօդելով զինքն ընդ այլում շքեղ, և գերափառ իրի վայելչազարդ առ նել։ Նարէկ․ ՚ի Գոհ․ առաջ։

Միազգեաց։ (Նախադրիւ հոլովի․) || ՚ի մի զգե ցեալ․ կամ յարակցեալ․ և կամ բաղադրեալ։ Իսկ մերթ զոյգ և համեմատ․ կամ յար և նը ման․ և կամ միակերպ։ Մերթ ևս վարի իբրև զմակբայ, և նշանակէ ՚ի միասին․ կամ զոյգ ընդ ումեք։ Բայց երբեմն ընդ բային շարակցի այսպէս․ միազգեաց առնել, և նշանակէ ընդ միմեանս շարակայել․ կամ զուգակցել, և կամ բաղկացուցանել։ Ոսկէ․ 2․ հատ․ Ժ։

Միաթիւ․ թուոյ․ իւ․ ից․ իւք․ կամ օք։ || ունօղ զմի և զնոյն թիւ ընդ այլում․ կամ թուակից․ կամ զուգաթիւ։ Նարէկ․ ՚ի Գոհ․ առաջ։

Միաժողով․ (Նախադրիւ հոլովի․) || ՚ի միա սին ժողովեալ․ կամ միախմբեալ․ կամ միա գունդ։ 1․ Մակ․ 5․ 27․ և 38։

Միալեզու․ ուի․ աւ․ աց․ օք։ || ունօղ զմի և զնոյն լեզու․ կամ միով բարբառով խօ սօղ․ որպիսիք էին մարդիկ յառաջ քան զշինել աշտարակին։ Աչգոն։

Միախառն․ կամ միախառն․ ի․ իւ․ ից․ իւք։ || միախառնուած․ կամ զմի և զնոյն բան խօ սօղ․ և կամ համախոհ։ Աչգոն։

Միախորհ։ || անս ՚ի վեր զՄիախոհ։ ՚Ի Հարանցն։

Միախորհուրդ ։ (Նախդրիւ հոլովի․) ‖ զմի և զնոյն խորհուրդ ունող ընդ այլում․ կմ զնոյն խորհող․ կմ միախոհ․ և կմ համամիտ ։ Փիլիպ․ 2․ 2։

Միախումբ ։ (Նախդրիւ հոլովի․) ‖ տե՛ս ընդ Միագունդ ։ Նորէկ․ ղզ․

Միախառն ։ (Նախդրիւ հոլովի․) ‖ 'ի մի խառնեալ․ կամ 'ի միասին համախմբեալ․ և կմ ընդ միմեանս խառնեալ, և յօդեալ ։ Եւ ըստ այսմ երբեմն ընդ բայի շարակցի այսպէս․ միախառն պնդել․ և նշանակէ ընդ միմեանս խառնելով, կմ յօդելով կազմել․ կմ բաղկացուցանել ։ Ոսկե․ 2․ հատ․ ժ ։ Բայց երբեմն վարի մակբայօրէն․ և նշանակէ խառն բազմութեամբ․ կմ խմբովին․ կմ համագունդ, և կմ միանգամայն․ և ըստ այսմ առնի, միախառն կոչել․ կմ ժողովել․ միախառն գրկել․ կմ ընթանալ ։ և այլն ։ Եղեմ․ 1․ 15 ։ և 20․ 10 ։ Ոսկե․ 'ի Նախերգ ։

Միածին․ ծնի․ իւ․ ից․ օք ։ ‖ Նա՛ որ է միակ ծնունդ․ կմ միակ որդի․ կմ որ 'ի ծնողէն իւրմէ ինքն միայն է ծնեալ․ և ոչ ունի զայլ եղբայր ։ Յովհ․ 1․ 14․ և 18 ։ և 3․ 16 ։ Իսկ Իմաստ․ 7․ 22․ ուր ասի միածին, իմանի՝ միայնակ յոյժ յառաւելացեալն․ և վերաբերի առ հոգին սբ․ կմ առ իմաստութիւն՝ զոր գովէ ։ Մերթ և միածին կոչի նա՛ որ միայնակ ինքն է ծնեալ․ կմ առաւել սիրեցեալ 'ի բոլոր ստեղծուածոց իւրոց․ և ըստ այսմ 'ի գիրս Կիւրղի Երուս․ ժդ․ հաւն որ մինն․ որ է փիւնիկ, կոչի միածին ։

Միածիր ։ (Նախդրիւ հոլովի․) ‖ ունող զմի ծիր, կմ զմի գիծ, կմ որ միագիծ երկայնութեամբ տարածի և պատէ զինչ, և ըստ այսմ յարմարի ոք զանգապատան ինչ պարագծէ միակ ակօսիւ, իբրև միով բոլորակ գծիւ․ ասի՝ միածիր ակօսով շրջապատել զնա ։

Միակ․ ի․ իւ․ կմ աւ․ աց․ օք ։ ‖ մի, կամ միայնակ, և կմ սակ ։ Խորէն․ ճ․ ղը․ 1 ։ Նորէկ․ 'ի գովս խաչին ։

Միակամ․ ի․ աւ․ աց․ օք ։ ‖ ունող զմի և ըղ նոյն կամս ընդ այլում․ կմ համակամ․ կմ միախորհուրդ․ կամ միաբան ։ Ոսկե․ 1․ հատ․ իսա ։

Միակամութիւն․ թեան ։ ‖ միութիւն կամաց․ կմ համակամութիւն․ կամ միաբանութիւն․ և կամ համաձայնութիւն ։ Ոսկե․ 2․ հատ․ իզ․ և իր․

Միականն․ ի․ աւ․ աց․ օք ։ ‖ այն՝ որ վերաբերի առ մին․ կմ որ պատկանի միոյ․ և կմ միատարեալ ։ Իսկ մերթ նշանակէ միակ․ կամ միայնակ․ ըստ այնմ Նորէկ․ հա․ մի հայր՝ միայնոյն որդւոյ՝ միականն հոգւովն պատուածեալ ։

Միականի․ նաց․ եաւ․ եաց․ եօք ։ ‖ ունող զմի աչս, կմ որոյ մի աչքն է կոյր ։ Իսկ մերթ վարի իբրև ածական․ և նշանակէ ունելով զմի աչս, կմ միով աչօք․ ըստ այսմ․ Մատ․ 18․ 9․ միականի մտանել 'ի կեանս ։

Միականութիւն․ թեան ։ ‖ միականութիւն․ զի զուղն միականի ։ Իսկ մերթ նշանակէ ըղ միակութիւն․ կմ զմիութիւն․ և կմ զպարզութիւնն ։ Նորէկ․ հե․ և ղզ ։

Միակեաց․ կեցի․ աւ․ աց․ օք ։ ‖ միայնակ կեցող․ կմ միայնակ բնակող․ իսկ մերթ 'ի միասին կեցող ընդ այլում ։ Մերթ և նշանակի այն՝ որ լինի 'ի միասին կելով․ և ըստ այսմ առնի․ միակեաց վայելչութեն ազգայնութեն․ Աճգուտ ։ Բայց յառակապէս առեալ բառիս միակեաց՝ նշանակէին միայնակեացքն, կմ կրօնաւորքն, որք առանձնացեալ միայնակ բնակէին 'ի խորշիթս ։

Միակենցաղ․ ի․ իւ․ ից․ իւք․ կմ աց․ օք ։ ‖ 'ի միասին կենցաղավարող, կմ որ ընդ այլում 'ի միասին կեայ ։ Նորէկ․ 'ի գով․ առաք ։ Եւ մերթ միայնակ կեցող ։ Մերթ և նշանակէ զայն, որ կեայ միայն 'ի ցամաքի․ և կմ 'ի ջուրս, որոյ ներհակն կոչի երկակենցաղ ։

Միակերպ․ ի․ իւ․ ից․ իւք ։ ‖ Նա, որ ունի զմի կերպ․ կմ զմի տեսակութիւն․ կամ համանկերպ․ և կմ համաձև ։ Մերթ և վարի իբրև ածական․ և նշանակէ միապէս․ և կմ համանկերպապէս․ և ըստ այսմ ասի՝ միակերպ խօսել․ կմ միակերպ գծանել․ և այլն ։

Միակերպական․ ի․ աւ․ աց․ օք ։ ‖ այն՝ որ է միակերպին, կամ առ միակերպին պատկանի․ որպիսի է զգեստն․ կամ վարքն նը․ և այլն ։

Միակերպութիւն․ թեան ։ ‖ կեանքն․ կմ արբին 'ի միայնութեն, կմ միայնակեցութի ։ Լամբրոն ։

Միակի ։ (Նախդրիւ հոլովի․) ‖ միակ․ կմ միայնակ․ կմ միապատիկ․ և կմ միակերպ ։ Նորէկ․ ղզ․ և Յա․ որդ ։ Իսկ մերթ վարի իբրև ածական․ և նշանակէ միանգամ․ կմ միապէս ։

Միակին․ կնոջ․ կնաւ ։ ‖ Նա՛ որ ունի զմի կին ։ Իսկ մերթ նշանակէ զնա՝ որ միան գամ առեալ է զկին․ կմ միանգամ միայն է ամուսնացեալ ընդ կնոջ․ որոյ ներհակն կոչի երկկին․ կամ երկամուսին ։ Կիւրղ․ Եսայ․ ձ․

Միակշիռ ։ (Նախդրիւ հոլովի․) ‖ ունող զմի կշիռ․ կմ զմի ինչ կշռող ։ Իսկ մերթ նա՛ որ ունի ընդ այլում զմիակերպ ծանրութիւն, կմ որ է միաչափ․ կմ զուգակշիռ ։ Աճգուտ ։

Միակողմանի․ նայց․ եաւ․ եայց․ եօք ։ ‖ Նա՛ որ միայն զմի կողմն․ կմ զմի մասն ճանաչէ․ իսկ մերթ նշանակէ յայն կողմն․ նշանակէ զնա որ միայն զմի կողմն․ կմ յայլոց լքեալ․ կմ ... յ կողմն է 'ի բաց հատեալ․ կմ զատուցեալ․ կամ ո․ րոց մի բաղդակին թիւնաւորքն հանդերձ է խոտորեալ, կմ շաղաշլեալ ։ Մատ․ 15․ 30 ։ Ոսկե․ 2․ հատ․ ժ․

Միակողմն ։ (Նախդրիւ հոլովի․) ‖ միակողմ, որով մերթ իմանի, միակողմանին ։ Ռ այն․ ձոմ, որ է 'ի միում կողման կողմն ... մեք ։ Իսկ մերթ առակ մի կողմն ։ զամենայն

մէկ դիհ. կամ մէկ դին: և ըստ այսմ է Մծբն. ժա. և ժզ. յորս առնի թողուլ 'ի միակողմն. կմ դնել 'ի միակողմն անդ: ռամկ. մէկ դի դնել:

Միակոյս: (նախդրիւ հոլովի.) || նոյն է ընդ վերնոյն:

Միակուղի. ղւոյ. եաւ. եաց. եօք: || ունօղ զմի կուղ. կմ միապատիկ, որպիսի է ծաղիկն, որոց ունի զբաղում թերթս մի ըզմիով բարդեալս. կամ առասանն, որ ոչ է 'ի բազմապատիկ թելից ոլորեալ. կմ զգեստն, որ ոչ է 'ի բազում կտաւերանց ըզմիմեանց մածեցելոց կազմեցեալ: ըստ այսմ խմն և զայլոց նմանեաց: ռամկ. մէկ փոխ. կամ եաւընդղոֆ:

Միակուսեցուցանեմ. սեցուցի. ցն. ել: (անցող.) || մեկուսացուցանել. յ 'ի մի կողմն խոտորեցուցանել. կմ առանձնացուցանել. կմ 'ի բաց հրաժարեցուցանել, և կմ 'ի բաց առնուլ. Ըստ այսմ. Մծբն. ժթ. միակուսեցոյց զհրամանն 'ի նմանէ:

Միակրօն. ի. իւ.ից. իւք: || զմի և զնոյն կրօնս, կմ պաշտամունս ունօղ ընդ այլում. կմ որ համակամ և համամիտ սիրով կեայ ընդ ընկերս իւր, և կմ 'ի միասին կեցող և բնակող: Սաղմ. 67. 7: Նարէկ. 'ի յիշատակարանն: Մերթ ևս նշանակէ զմիակեացն, յ զնա, որ մնացեալ վարէ ըզկեանս յառանձնութե, որպիսիք են միայնակեացքն:

Միակրօնութի. թեան: || միութի կրօնից. կմ համաձայնութի կենցաղավարութեց. կմ միակամութի. և կամ միաբանութի: Լամբրօն: Իսկ մերթ նշանակէ զմիակեցութիւն, կմ զմիայնակեցական կեանս:

Միակցորդ: (նախդրիւ հոլովի.) || կցորդումեք 'ի մի և 'ի նոյն իրս. և կմ ընդ միմեանս կցորդեալ. կմ յարակից. և կամ միազոյգ. և ըստ այսմ առնի միակցորդ իպր հրգական, կմ միակցորդ հաւատարուն: Նարէկ. լզ. և խզ:

Միահաղոյն: (մակբայ ժողովական.) || երանէ սա 'ի մի բառէս, և 'ի հաղ անուանէս, որ է անգամ. ուստի բառիւս միահաղոյն նշանակի միանգամայն. կմ առհասարակ. և կմ բովանդակապէս. ռամկօրէն. մէկէն. կմ մէկփեղ. կմ մէկհէփէ: Նարէկ. զզ: Խորէն. գ. գլ. 31:

Միահաղորդ: (նախդրիւ հոլովի.) || տես զՄիակցորդ:

Միահամ: (նախդրիւ հոլովի.) || միակցորդ. կմ միակտուր. կմ որ է ամենևին մի և անբաժան: Ոսկէ. 1. հռոմ. ա: Զի միանկա՝ համ, 'ի շարժակցելն նշանակէ զկեց:

Միահամուռ: (նախդրիւ հոլովի.) || ծագի սա 'ի համուռ բառէս, որ է խումբ. կմ ժողով. ուստի բառիւս միահամուռ՝ նշանակի՝ միախումբ. կամ միագունդ. և կամ միախուռն: Իսկ մերթ վարի իբրև զմակբայ, և նշանակէ միագումար բազմութբ. կմ խմբովին. կմ միահաղոյն. կամ համօրէն, և կմ առհասարակ: Եւսէբ. 19. 8: Եսայ. 13. 4: Երեմ. 31. 8:

Միահանդերձ. (նախդրիւ հոլովի.) || ունօղ զմի հանդերձ: կմ միակի հանդերձիւ զգեստաւորեցեալ: Իսկ մերթ նշանակէ զնա՝ որ միայն զհանդերձս, և զզէնս ունի 'ի վր իւր, և ոչ զայլ կարասիս:

Միահաւան: (նախդրիւ հոլովի. և մերթ վարի իբրև զմակբայ.) || հաւանեալ և յօժարեալ 'ի նոյն իր. կմ միախորհուրդ. կմ միասիրտ. և կամ միաբան: 2. Մակ. 11. 8:

Միահաւատ. ի. իւ. ից. իւք.) || ունօղ զմի հաւատ. կմ որ մի և նոյն հաւատով վարի ընդ այլոց. կմ միակրօն: Աճգաբ:

Միահեծան. ի. աւ. աց. օք: || երանէ սա 'ի հեծան բառէս ըստ որում նշանակէ ըզգաւազանն. ուստի բառիւս միահեծան, նշանակի միագաւազանն. յ ունօղն միապետական իշխանութե, կմ համատարած տէրութե. և կմ ինքնակալն. և ըստ այսմ առնի. միահեծան թագաւոր, կմ իշխան, և կմ միահեծան լինել: Մծբն. ժթ: Աճգաբ: Իսկ մերթ նշանակի առաւել միապետականն, կմ համաշխարհականն. և ըստ այսմ խմանի, մինչ առնի. միահեծան իշխանութի. կմ միահեծան տէրութի. որ է միապետութի. կմ ինքնակալութի: Կիւրղի եղծ. գ. է. և ժն: Աճգաբ:

Միահետ: (նախդրիւ հոլովի.) || ունօղ ըզնոյն հետս. կմ ընթացակից, և կմ ուղեկից: Իսկ մերթ է մակբայ ժողովական, և նշանակէ 'ի միասին. կմ միանգամայն: ռամկօրէն մէկ հէփէ. ըստ այսմ, Ոսկէ. 1. հռոմ. իա. 'ի ծնահ էր տալ զօրէնսն. բայց ոչ միահետ և զշնորհսն: Այլ երբեմն բառս այս ըստ որում է մակբայ, վարի հանդերձ, ընդ. նախադրութեամբ այսպէս, ընդ միահետ. և զնոյն նշանակէ: Ըստ այսմ, Ոսկէ. 1. հռոմ. իզ: Այս էմ ընդ միահետ եղև. յ 'ի միասին, կմ միանգամայն:

Միահոմ. ի. իւ. ից. իւք: || միակցորդ. կմ յարակից. կմ զուգակից. և կմ միաւոր:

Միահոմիմ. եցայ. եայց. իլ: (ձայնակր.) || միանալ, կմ միաւորիլ. և կմ յարակցիլ: Աճգաբ:

Միահոմութի. թեան: || միակցութի. կմ յարակցութի. և կմ զուգաւորութի:

Միաձայն. ի. իւ. ից. իւք: || ունօղ զմի ձայն ընդ այլում. կմ ձայնակից. կմ համաձայն. կմ միաբան, և կմ միաբարբառ: Իսկ մերթ վարի մակբայապէս. և նշանակէ. միով ձայնիւ. կմ միանգամայն. կամ միաբանութբ. կմ 'ի մի բարբառ: Յովէլ. 13. 22:

Միաձայնեմ. եցի. եա. ել: (չէզոք.) || միաձայն բարբառիլ. կմ ձայնակցել. և կմ միաբանիլ: 'Ի շարականոցի:

Միաձայնիմ. եցայ. եայց. իլ: (ձայնակր.) || նոյն է ընդ վերնոյն:

Միաձայնութի. թեան: || միութի ձայնի, և բարբառոյ, կմ ձայնակցութի. կմ համաձայնութի. և կամ միաբանութի: Ոսկէ. 1. հռոմ. իբ:

[illegible]

միայնակեացքն բնակլին ։ 'Ի վերս հարց․ Է ։

Միայնակեցութիւն․ թեան ։ ‖ կեալն 'ի միայնութեան․ կմ՛ առանձնակեցութիւն․ և կմ՛ միանձնութիւն ։ Խորէն․ Գ․ գլ․ 47 ։

Միայնանամ․ ացայ․ ցի՛ր․ անալ ։ (ընդ․միջ․) ‖ միայն լինել․ կմ՛ միայնակ մնալ․ կմ՛ մենանալ․ կմ՛ առանձնանալ․ և կմ՛ մեկուսանալ ։ Երեմ․ 3․ 2 ։ Բարուք․ 4․ 12 ։ Խորէն․ Գ․ գլ․ 15․ և 53 ։

Միայնանոց․ ի․ աւ․ աց․ զք ։ ‖ տե՛ս զՄիայնարան ։

Միայնաստան․ ի․ աւ․ աց․ զք ։ ‖ միայնարան․ կմ՛ մենաստան ։ Աղգոբ ։

Միայնատեսակ․ ի․ աւ․ աց․ զք ։ ‖ տե՛ս ըղ Մենատեսակ ։

Միայնարան․ ի․ աւ․ աց․ զք ։ ‖ տեղի միայնանալոյ ։ Բայց մանաւանդ պէս առեալ նշանակէ զմենաստանն․ կմ՛ զմիայնակեաց բնակարանն թէ խրճիթ իցէ․ և թէ այլ տեղի ։ Խորէն․ Գ․ գլ․ 14 ։ և 'ի վերս հարց․ ԺԳ ։

Միայնաւոր․ ի․ աւ․ աց․ զք ։ ‖ միայնացեալ․ կմ՛ միայնակեաց․ և կմ՛ միանձն ։ 'ի վերս հարց․ Բ․ և ԺԹ ։ իսկ մերթ միայնական․ կմ՛ առանձնական, և կմ՛ միայնակ ։

Միայնաւորական․ ի․ աւ․ աց․ զք ։ ‖ միակեցական, կմ՛ առանձնական․ կմ՛ միական․ և կմ՛ սեպհական ։ Աղգոբ ։

Միայն զի ։ (շաղկապ բացառութեան․) ‖ միայն թէ․ կամ բայց միայն ։ Խորէն․ Բ․ գլ․ 87 ։ և Գ․ գլ․ 29 ։

Միայն ընդ միայն ։ (մակբայ զատական․) ‖ միայնակ․ կմ՛ միայն և եթ․ կամ առանձին․ և կմ՛ իսկոյն․ ռամկ․ ... և բառ այսմ ․ միայն ընդ միայն մնալ․ կամ միայն ընդ միայն առնել զնշանս ։ Ոսկէ․ 1․ հոփ․ Ը․ և ԽԱ ։

Միայն թէ ։ (շաղկապ բացառութեան․) ‖ տե՛ս Միայն զի ։

Միայնոյր ։ ‖ Ֆ միայնոյ․ և զայսմանէ տե՛ս զբառն առանցելոյր ։

Միայնուկ ։ (մակբայ զատական․) ‖ միայնակ․ Ը այսմ․ Մծբն․ ԺԶ․ միայն միայնուկ առանձինն էին ։

Միայնութիւն․ թեան ։ ‖ միայն գոլն․ կամ միայնակութիւն․ կամ առանձնութիւն․ և կմ՛ միայնակեցութիւն ։ 'Ի վերս հարց․ Ե ։

Միանամ․ ացայ․ ցի՛ր․ ալ․ (ընդ․միջ․) ‖ մի լինել․ կմ՛ զմիութիւն առնուլ․ որպէս հաւաքիլ բազմամբքն ։ Եւ յայսմանէ առեալ երբեմն նշանակէ միաւորիլ․ կմ՛ զուգաւորիլ․ և կմ՛ կցիլ ։ Նարեկ․ Իդ․ և ԿԷ․ բազում է և այն՝ որ առ 'ի շարադրոյ․ Յորժամ եկեղեցի հարսնացեալ միանայ ընդ փեսայիւ ։ իսկ մերթ նշանակէ զմիաբանելն բազմաց․ կմ՛ զհամաձայնելն ։

Միանգամ ։ (մակբայ քանականական․) ‖ և զանգամ․ կմ՛ 'ի միում նուագի ։ ռամկօր․ մէկ անգամմը․ կամ մէկ հեղմը ։ Սաղմ․ 61․ 12 ։ Եբր․ 9․ 27․ և 28 ։ Դարձեալ բազում անգամ բառս այս․ յորժամ գնի զկնի բառին որ․ ունի զզօրութիւն մասնական ան- ուՃանա․ օփ․ կմ՛ ինչ․ զ՛ր օրինակ․ և որք միանգամ լուեին զանուան նորա․ այսինքն և որ ոք լսեր զանուան նորա ․ Ա․ Մակ․ 8․ 12 ։ Զոր միանգամ կապեսցես յերկրի․ Ֆ զոր ոք կապեսցես յերկրի ։ Մատ․ 16․ 19 ։ Եւ որք միանգամ էին յաղագս քահանայութեան․ Ֆ որոց էր յաղագս քահանայութեան ։ Գործ․ 4․ 6 ։ Ը այսմ է և Մարկ․ 6․ 56 ։ և Գործ․ 4․ 34 ։ Եւ կամ այսպէս․ զամ զոր միանգամ կամիցիք․ Ֆ զամ զոր ինչ կամիցիք ։ Մատթ․ 7․ 12 ։ Եւ մերթ գնի առակաւ զարգաւ․ զ՛ր օրինակ ։ Եւ որ ինչ միանգամ արարին․ Ֆ և զոր ինչ արարին ։ Ա․ Մակ․ 8․ 3 ։

Միանգամայն ։ (մակբայ ժողովական․) ‖ համանգամայն․ կմ՛ միահաղոյն․ կմ՛ առ հասարակ․ և կմ՛ բովանդակապէս ։ ռամկօր․ մէկէն ։ Հռովմ․ 8․ 17 ։ Ա․ Կորն․ 15․ 6․ Մերթ եւ 'ի գործածի առ ընդ շաղկապին՝ և․ և ունի զզօրութիւն բաղհիւսական շաղկապին՝ նաև․ կմ՛ առ 'ի միասին և․ ռամկ․ հէմ․ որպէս․ միանգամայն և այլն ունէր, թէ տացի ինչ նմա ։ Գործ․ 24․ 26 ։ կմ՛ այսպէս․ միանգամայն և պատրաստեսջիր ինձ վանս ։ Փիլիմ․ 22 ։ Բայց երբեմն վարի առ իբրև զանուն․ և նշանակէ զբովանդակն․ կմ՛ զհամայնն․ ըստ այնմ Խորէն․ Բ․ գլ․ 57 ։ Եւ միանգամայն զօրականացն վաշտք․ Ֆ բովանդակ զօրականացն խումբք ։ և Գ․ գլ․ 33․ առ ի․ միանգամայն հարեալ և յիսուն հարք ։ Ֆ համայնքն էին հարիւր և յիսուն հարք ։

Միանձն․ անձին․ անք․ ունք․ անց․ ամբք ։ ‖ միայնակեաց․ կմ՛ մենազն, որ մենացեալ և առանձնացեալ միայնակ բնակի․ յորմէ և անուանեցաւ իսկ միանձն ։ Նարեկ․ ՀԶ ։ և 'ի վերս հարց․ Ի ։

Միանձնական․ ի․ աւ․ աց․ զք ։ ‖ այն ամ՛ զոր ունի միանձն․ կմ՛ որ միանձանց պատկանի ։ իսկ մերթ նշանակէ զկեցողն 'ի միանձնութեան․ կմ՛ զմիայնակեացն․ ըստ այնմ․ 'ի վերս հարց․ ԻԷ ։ Հայրն պօղոսնախ և առաջին էր միանձնականն ։

Միանձնանամ․ ացայ․ ցի՛ր․ անալ ։ (չ․միջ․) ‖ միանձն լինել․ կմ՛ միայնանալ․ կամ առանձնանալ․ և կմ՛ մենանալ ։ 'Ի վերս հարց․ Բ․ և ԺԹ․ և Լամբրօն ։ իսկ մերթ սերտ միաւորիլ ընդ միմեանս՝ մի անձն և մի հոգի լինել․ և կամ համաշունչ և համամիտ լինել ։ Լամբրօն ։

Միանձնութիւն․ թեան ։ ‖ միանձն գոլն․ կմ՛ միայնակեցութիւն․ կմ՛ առանձնութիւն ։ Լամբրօն ։ իսկ մերթ նշանակէ մի անձն և մի հոգի լինելն․ կմ՛ միաւորութիւն․ կմ՛ միաբանութիւն ։ Լամբրօն ։

Միանձնաւորութիւն․ թեան ։ ‖ տե՛ս զՄիանձնութիւն ։ Լամբրօն ։ և 'ի վերս հարց․ ԻԱ ։

Միանման ։ (նախադրբեան հոլովի․) ‖ նման միմեանց․ կմ՛ համանման․ կամ միակերպ ։ Ոսկէ․ 1․ հոփ․ ԽԴ ։

Միանուն․ նուան․ անք․ անց․ ամբք ։ ‖ ունող զմի և զնոյն անուն․ կմ՛ անուանակից․

և կամ համանուն ։ Իսկ մերթ նշանակէ ըզ համանունսն ․ այսինքն զայն, որ անուամբ նոյնա նայ ընդ այլում ․ բայց իրօք տարբերին ատար բերի , որպէս մարդկայինն և գազանին կոչին անուն ։

Միանունութիւն ․ թեան ։ || համանունութիւն ․ կամ անուանակցութիւն ․ և մերթ համանունութիւն , որ է ունելն տարբեր իրաց զնոյն անուն ։ Ոսկէ․ 1․ հատ․ Ժ՟Է՟։

Միաշաբաթ ․ ու․ կամ ի ․ ու․ ուց․ ուք․ կամ օք ։ || օր կիւրակէի , և կամ կիւրակէ ։ Ըրդ՝ կո չեցաւ սա միաշաբաթ, ըստ որում է նախ կին օր զկնի շաբաթ աւուր ․ կամ զի որում է առաջին օր միոյ շաբաթու , այսինքն եօթնեկի, որպէս և զերկրորդ օրն շաբաթու ան ուանեմք երկուշաբաթի ․ ըստ այսմ և զայլսն ։ Մարկ․ 16․2։ 1․ Կորն․ 16․ 2։

Միաշաբաթի ․ (Նախադրիմ․) || նոյն է ընդ միաշաբաթ բառիս ․ որպէս արծիւն և ար ծուի ․ առկոսն և առկոսի ․ Մատթ․ 28․ 1։

Միաշար ․ ի ․ իմ․ իւ․ իւք ։ || դասեալ ՚ի մի շար ․ կամ միայար ․ և կամ միակցորդ ։ Նարեկ․ ՚ի խորագիրն գովեստին։ Իսկ մերթ վարի իբ րև գոյական, և նշանակէ՝ ՚ի նոյն շար կար գելով ․ կամ շարունակ կարգաւ ․ և ըստ այսմ առի՝ միաշար գրել ․ կամ առնել ։

Միաշաւիղ ։ (Նախադրիմ հոլովի․) || ունօղ զմի և զնոյն շաւիղս՝ կամ վարս ընդ այլում․ կամ միակրօն ․ և կամ միաբան ։ Նարեկ․ ղ՟Ը՟։

Միաշունչ ։ (Նախադրիմ հոլովի․) || համա շունչ․ այսինքն միասիրտ ․ կամ միակամ․ կամ միա խորհուրդ ․ կամ միաբան ․ Նարեկ․ ՚ի Յիշատա կարան ։ և Աղթամ․ ։

Միաշնչութիւն ․ թեան ։ || համակամութիւն ․ կամ համախոհութիւն ․ և կամ միաբանութիւն ․ ո րով ոք լինի ընդ այլում իբր թէ մի հոգի ։ Լամբրոն ։

Միաչափ ․ ի ․ իմ․ իւ ․ իւք ։ || ունօղ զմի և զնոյն չափ ․ կամ հաւասար չափով ։ Յայտ․ 21․16։

Միապաշտօն ․ (Նախադրիմ հոլովի․) || զմի և զնոյն պաշտօն ընդ ունօղ ․ կամ որ մի և նոյն պաշտամամբ փառաւորի ․ և կամ միապէս պաշտեցեալ ։ Աղթամ․ ։ Իսկ մերթ նշանակէ զպաշտօնակիցն , այսինքն որ ընդ այլում վարէ զմի և զնոյն պաշտօնն ։

Միապաղաղ ։ (Նախադրիմ հոլովի ․) || միաս տանի , այսինքն միակտուր, որով նշանակի այն իմն, որ ոչ է բաղկացեալ ՚ի բազում մա սանց , կամ կտորոց ․ այլ է ըստ բոլորին շարունակ մի մարմին ․ կամ մի ձուլուած ․ որպիսիք են միակտուր սիւնք ․ կամ բրգա ձև քարուրք ․ և կամ վիմափոր աւազանք ․ և այլն ։ տաճկ․ տի–բէլի ․ կամ էէեէյարէ ։ Խորէն․ Գ․ դր․ 45։ Սոյնպէս միապաղաղ ասեն այնք ձորձք , որք իբրև զուռկան անկարուածով գործին , և ոչ ունին ՚ի ներքոյ իւրեանց մածեալ զայլ կապերտս ․ այլ են միակու ռի ․ այսինքն․ որպիսի էր անկար պատ մուճանն քրի ․ Ըստ այսմ իմա և զայլոց բաղ մաց ։ Ոսկէ․ 2․ հատ․ ԼԹ․ ։

Միապատիւ ։ (Նախադրիմ հոլովի ․) || զմի և զնոյն պատիւ ունօղ ընդ ումեք ․ կամ պատ ուակից ․ կամ համապատիւ ։ Նարեկ․ Հ՟Գ՟։

Միապար ․ ի․ իւ․ իւց․ իւք ։ || ՚ի միասին պարօղ ընդ այլում ․ կամ պարակից ․ կամ միակարգ ։ Իսկ մերթ նշանակէ զայն, որ լինի ՚ի միա սին պարելով ․ և ըստ այսմ առի՝ միապար երգակցութիւն ։ Նարեկ․ ղ՟Է՟։

Միապետ ․ ի ․ աւ ․ աց ․ օք ։ || պետ , որ միա համուռ տիրէ ազգի , կամ թագաւորութեան իմիք՝ ոչ գոլով կարգեցեալ ՚ընդ այլով ․ որպիսիք են ինքնակալ թագաւորք ։

Միապետական ․ ի ․ աւ ․ աց ․ օք ։ || այն իմն, որ վերաբերի առ միապետն , կամ առ միա պետութիւն ։

Միապետեմ ․ եցի ․ եա ․ ել ։ (չէզոք ․ և մերթ ներգործ ․) || միայնակ իշխել ․ և կամ տի րել միահամուռ ՚ի վերայ թագաւորութեան, կամ ազգի իրիք ․ Խորէն․ Գ․ դր․ 49։ Ըստ այսմ է և Ա․ դր․ 9․ ասր առի ․ Ըմբռնեալքն ըզ ձեռն ՚ի միապետել ՚ի վերայ ամ հսկայից ։ Իսկ մերթ նշանակէ ընդ միապետութեան արկանել ․ կամ ՚ի միապետական իշխանու թեան ածանել ․ և ըստ այսմ առի՝ միապետել զթագաւորութիւն ․ կամ զաթոռ հայրապե տական ․ և այլն ։

Միապետութիւն ․ թեան ։ || պետութիւն , կամ իշխանութիւն , յորում մի ոք առհասարակ իշխէ ՚ի վերայ բազմութեան , կամ թագաւորու թեան իրիք ․ որոյ ներհակն կոչի՝ բազմապե տութիւն , կամ յոգնապետութիւն ։

Միապէս ։ (մակբայ որակական ․) || մի և նոյն կերպիւ ․ կամ հաւասարապէս ․ կամ հա ւասարաբար ․ և կամ նմանապէս ։ ՚ի Հարց հաշ ուի ․ և Է՟։ Ոսկէ․ 1․ հատ․ Ժ՟Գ՟։

Միառմի ։ (մակբայ դասական ․) || մի ըստ միոջէ ․ կամ անձնեւրաբար ․ կամ իւրաքան չիւրաբար ․ տաճկ․ պիրէր պիրէր ։

Միասայրի ․ ռւոյ ․ եաւ ․ եայ ․ եօք ։ || սուր, որ ունի զմի բերան , կամ ՚ի միոյ կողմանէ միայն կտրէ , որոյ ներհակն կոչի երկսայ րի ․ 3․ Եզր․ 4․ 18։

Միասէր ․ սիրի ․ ռաւ ․ րաց ․ օք ։ || սիրօղ միու թեան ․ կամ միաբանութեան ․ և կամ սիրօղ մի ամեանց ։ Աղթամ․ ։

Միասիրտ ․ սրտի ․ տաւ ․ տաց ․ օք ։ || տես զՄիա շունչ ։ Աղթամ․։

Միասնական ․ ի ․ աւ ․ աց ․ օք ։ || ծագի առ ՚ի միասին մակբայէս , որպէս թէ ՚ի միասնա կան ․ ուստի նշանակի առհաւ այն իմն, զոր ունի ոք ընդ այլում ՚ի միասին , կամ որ հա սարակ է բազմութեան իմիք ․ և ըստ այսմ միասնական կոչի ուծութիւն, տէրութիւն, և կամ զօրութիւն երից անձանց ամենայնից ։ Նարեկ․ ձ՟Ը՟․ և ղ՟Է՟։ և ՚ի Յն որդին ։ Մերթ և նշանակէ զայն, զոր գործէ ոք ընդ այլում ՚ի միասին ․ կամ յարակցական ․ կամ միա բանական ․ և կամ միակցորդ ․ և ըստ այսմ առի՝ միասնական գործակցութիւն, զուգութիւն, միաբանութիւն, կեանք , և այլն ։ Նարեկ․ զ՟Է՟։ և Աղթամ․։ Բայց մասնաւորապէս առեալ առի զամենայնն երրորդութիւն , ըստ որում են երեք անձինքն ՚ի միասին անանջրպետ

զուգականութիւն, ամիճ և յամի միացեալք ընդ միմեանս բաց 'ի յառնչական հակադրութեանց, որոնք միայն զանազանին ։ Աղգոռ։ և 'ի շարականոցի ։

Միանունդ . սննդոյ . ով . ոց . ովք ։ || համանունդ . կմ սննդակից . ոք 'ի միասին սնանեալ և ապրող . կմ 'ի միասին սնեալ ։ Աղթոն։ Իսկ մերթ նշանակէ զայն, որ լինի 'ի միասին սնանելով . կմ ծագի 'ի սնանելոյն 'ի միասին ։ և ըստ այսմ առի միանունդ սէր ։ 3. Մակ. 5. 18։

Միաստանի . նւոյ . ով . եաց . եօք ։ || միապաղաղ . կմ միակտուր . ըստ այսմ Նարեկ. ղզ ։ Եւ իբր զմիաստանի վէմ քարկու զքողանդական յարմարեալ ։

Միաստանիք . ստանեաց . եօք ։ || սա երբեմն ծագի 'ի մի բառէս, և 'ի ստին անուանէս. և յայնժամ նշանակէ զազգ ինչ առանձնոց կանանց քաջ պատերազմողաց . որք նախ բնակէին յաշխարհն սկիւթացւոց առ տանայիս գետով, որ անջրպետէ զասիա յեւրոպիոյ ։ Իսկ յետոյ կալան ըզ բնակութիւն 'ի կողմանս կապադովկիոյ առ Թերմոդոնի գետով ։ Սոքա 'ի հնումն զօրացեալք՝ ընդ տէրութեամբ իւրեանց նուաճեցին զմեծ մասն ասիոյ ։ որք և յաղագս մնալոյ լինելոյ իւրեանց միշտ ապաղաթ, սպանանէին զամ արու զոր ծնանէին, բաց 'ի յամենայն, զորս թողուին վն որդէծնութեան ։ Արդ կոչեցան սոքա միաստանիք, իբրթէ զմի ստին ունողք, զի յերեխայութենէ խարէին զաջոյ ստինսն, զի մի լիցին նց արգել սրածութեան և նետաձգութեան . և վն այսորիկ 'ի յունաց կոչեցան ամազոնէս, որ թարգմանի՝ անստինք ։ Եւ այսպիսի միաստանիքեւ զէն եւ յաշխարհն լիբէացւոց՝ և եթովպիացւոց ։ Իսկ երբեմն եւս ծագի սա 'ի մակբայէս՝ 'ի միասին, և յանուանէս՝ տուն. և յայնժամ նշանակէ զբնակեալս 'ի միասին 'ի միում տան . կմ զնս, որք մի տուն եղեալ 'ի միասին կեան . և ըստ այսմ 2. Մնաց. 14. 15. միաստանիք կոչին ազգ ինչ եթովպացւոց՝ կմ արաբացւոց, որք վրանօք բնակէին 'ի միասին իբր 'ի միում համագրեանի . ընդ որս էին խաշինք և անդեայք բազում յոյժ ։ Եւ վն այսորիկ 2. Մնաց. 22. 1. անուանեին եբրայական բառիւ, ամիմազոնեայք . որ թարգմանի՝ վրանաբնակք և խաշնարածք ։

Միավանկ . կմ միավանդ . ի . իւ . ից . իւք ։ || ունող զմի վանկ . կմ բաղկացեալ 'ի միոյ վանկէ, որպիսիք են բառքս այսոքիկ . բակ . թակ . ծակ ։

Միավանք . նից . օք ։ (անեզ.) || միաբանաց կեցաց վանք . կամ մենաստան ։ Բայց 'ի վարս հարց. թ. է յատուկ անուն կուսաստանի միոյ ։

Միատարր ։ (Նախդրիւ հոլովի.) || 'ի միոյ տարրէ բաղկացեալ ։ Եւ մերթ 'ի միոջէ նիւթոյ կազմեցեալ . կմ միակտուր . և կմ միաստանի ։ և ըստ այսմ առի 'ի Յոհաննու 'ի գիրս երկնից, Միատարր եմ միագունդ համանման ։

Իսկ մերթ միացեալ և տարրացեալ, ոք թափանցեալ և արմատացեալ . կմ միաբուն . կմ միակերպ . կմ իսկական, և կմ հարազատ . և ըստ այսմ առի միատարր չմարտութիւն, կմ միութիւն . միատարր խաղաղութիւն . կամ միաբանութիւն . միատարր ձայն, կմ բարբառ ։ և այլն ։ Նարէկ. հա ։ և 'ի հին պտմագիրս ։

Միատարրեմ . եցի . եա . ել ։ (Ներգործ.) || միատարր առնել . ոք ընդ միմեանս խառնել . կմ շաղկապել . կմ յօդել . և կմ միացուցանել ։ ըստ այսմ Նարէկ. ղզ. Զայս ամ մասունս ըղձական ընդ խաչին հիւսեալ միատարրեցին ։

Միատեսակ . ի . աւ . աց . օք ։ || համատեսակ, ոք ունող է այլում զմի և զնոյն տեսակ . որ և ասի տեսակակից, որպիսիք են ամենայն մարդկան ։ Իսկ մերթ նշանակէ զունողն ընդ այլում զմի և զնոյն տեսիլ . կմ համագունատիպ . կմ համանման . և կմ համասեռ ։ Նարէկ. ժթ. և ղզ ։ Մերթ եւս նշանակէ զմիակերպն . կմ զայն , որ է մի պարզ ինչ առանց իրիք խառնութեան . և ըստ այսմ 'ի գիրս Յոբէ . 1. հատ. լա. Այ անյօդ և միատեսակ կոչի ։

Միատեսակարար ։ (Նախդրիւ հոլովի.) || միատեսակ առնող . կմ միաբանեցուցիչ . և կմ զերկպառակութիւնս և զհերձուածս բարձող . և ըստ այսմ առի 'ի գիրս Լամբրոն. վերապատուեցէք պտուղք՝ զմիատեսակարարն ։

Միատեսող . ողի . իւ . ից . իւք ։ || միապէս տեսող . կմ որ առհասարակ նկատէ, և տեսանէ զծածկեալս կամ զյայտնիս, և կմ զայլ ինչ ։ Նարէկ. ղթ ։

Միատեւակ ։ (Նախդրիւ հոլովի.) || միատեւող . կմ որ 'ի միասին է այլում տեւէ ։ Իսկ մերթ նշանակէ զայն, որ լինի 'ի միասին տեւելով . կմ համբերելով . և ըստ այսմ առի միատեւակ ժուժկալութիւն ։ Նարէկ. 'ի գով. խաչ ։

Միատնութիւն . թեան ։ || միատուն լինելն, կմ 'ի միում տան բնակութիւն . և կմ միակեաց համարակութիւն ։ Աղգոռ ։

Միատոհմ ։ (Նախդրիւ հոլովի.) || համատոհմ . կամ համազգի . և կմ համացեղ ։ Աղգոռ ։

Մի՛ արդեօք ։ (մակբայ երկբայական . կամ հարցական ։) || մի՛ գուցէ . կմ մի՛ թէ . ռամկ. ըլլայ թէ ։ 4. Թագ. 3. 13 ։ Գործ. 21. 38 ։ Մերթ եւս է սա տակ մակբայ բացասական, և նշանակէ, մի՛ բնաւ . կամ մի՛ երբէք . և կամ մի՛ ուրեմն . ըստ այսմ Յոբէ . 1. հատ. իդ. Մի՛ արդեօք հարցաքննեբ ։

Միացուցանեմ . ցուցի . ցո՛ . ել ։ (անցող.) || միացեալ առնել . կմ միաւորել . կամ կցել . և կմ շաղկապել ։ Նարէկ. ձ ։

Միաճոր . ի . աւ . աց . օք ։ || միաւորեալ . կմ միացեալ . և կմ յօդեալ ։ Նարէկ. ղթ. և ձ ։ և 'ի շարականոցի ։ Մերթ եւս միայն . կմ միակ . և կամ միական . ըստ այսմ Կիւրղի Երուսղ.

Թ. ռ՟ է, որ զմի միաւոր շունչն ընդ ա֊մենայն մարմին սփռէ։ Իսկ երբեմն նշա֊նակէ միայնաւոր. կամ միակեաց. որ֊պիսիք են առանձնակեաց կրօնաւորքն. և ըստ այսմ է 'ի գիրս Խորէն. Ե. ղր. 77. ուր ասի. Զհետ ընթանայ միաւորիու֊թեան, ցի միայնակեցի ուրուեմն. և այս 'ի ձեռագրին, զի 'ի տպագրեալն պակաս է բայն՝ ընթանալ։

Միաւորակ. ի. աց. աց. օք։ ‖ միաւորիչ. կամ միացուցանող։ Եւ երբեմն միաւո֊րեալ, կամ յարակից։ Իսկ մերթ՝ միայ֊նակ, կմ՟ միակ։

Միաւորական. ի. աւ. աց. օք։ ‖ այն ամ, որ վերաբերի առ միաւորն, կմ՟ առ միա֊ւորութիւն. կմ՟ միակամ. և կմ՟ եզական։ Իսկ մերթ միաւորող. կմ՟ միացուցիչ։

Միաւորեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) ‖ միաւոր առնել. կմ՟ միացուցանել. կամ շաղկապել. և կմ՟ միաբանել։

Միաւորիմ. եցայ. եաց. իլ։ (Կրաւորակ.) ‖ միանալ ընդ այլում. կմ՟ յարակցիլ. կամ յօդիլ. և կամ միաբանիլ։ Նոյն. 'ի գործ նոցին։ Բայց գիտելի է, զի բայս այսպէս կապէս առեալ նշանակէ զյօդիլն բազ֊մաց ընդ միմեանս առանց կորուսանելոյ զբազմաւորութիւն. որոյ ներհակն է միա֊նալն, զի ամենեքին բառնայ զբազմութիւն. և ըստ այսմ յարմարապէս ասեմք միաւո֊րիլ երկուց բնութեանցն քան 'ի միում ան֊ձին, քան միանալ, որովհետև 'ի միաւո֊րութեան երկուց բնութեանցն քնոց եղեւշփո թութիւն, և ոչ կորուստ։

Միաւորութիւն. թեան։ ‖ միաւորումն. կմ՟ միացումն. կմ՟ յարակցութիւն. և կմ՟ շաղկա պումն։ Եւ մերթ միաբանութիւն. կմ՟ միա ձայնութիւն. և կմ՟ յարմարութիւն։ Ոսկ. 2. հոփ. ա. և ժա։

Միափաղառական. ի. աւ. աց. օք։ ‖ այն, որ միապէս. կամ միանգամայն փաղառ֊նու, ցի ընդ նորա համաձայնեցեալ ունի զբազմութիւն ինչ. և ըստ այսմ սեռն՝ ըստ որում առ հասարակ զամենայն տեսակս և անհատս պարունակէ՝ միափաղառական կոչի։

Միափառ։ (Նախադրիւ հոլովի.) ‖ համա֊փառ, կամ փառակից, ցի զմի և զնոյն փառս ունող ընդ այլում։ Նոյն. 'ի գործ առաքելոց։

Միափերթ։ (Նախադրիւ հոլովի.) ‖ ունող զմի փերթ. կմ՟ կազմեցեալ 'ի միոյ փերթէ. և կմ՟ միակտուր։

Միաքարող։ (Նախադրիւ հոլովի.) ‖ զմի և զնոյն իր քարոզող. կմ՟ միապէս աւետարա նող։ Աճգոր։

Միգաչիս. չխի. իւ. աց. օք։ ‖ է կենդանի ինչ նենգաւոր, որ մեղմով գտեալ ըզ մարդ, թափէ 'ի նա զմահաբեր թոյնս իւր։

Միգախառն։ (Նախադրիւ հոլովի.) ‖ խառն միգով, կամ մառախլով, կամ աղջամղջ֊ջային մթութեամբ. և կամ խառնարանած։

Եսայ. 19. 16։ և Յմ՟ որդի։

Միգամած։ (Նախադրիւ հոլովի.) ‖ մածեալ միգով. կամ պատեալ մառախլով. և կմ՟ լինաւմութեամբ, և աղջամղջով։

Միգանամ. ացայ. ցիր. ալ։ (Ընդմիջ.) ‖ միգապատ լինել. կմ՟ մթանալ. կամ նսե֊մանալ։

Միգապատեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) ‖ միգապատ առնել. կմ՟ միգով պատել. կամ խաւարեցուցանել։

Միգապատ։ (Նախադրիւ հոլովի.) ‖ միգա մած. կմ՟ մառախլապատ. և կմ՟ աղջա֊մղջին։

Մի գուցէ։ (Մակբայ երկբայական.) ‖ մի՛ ի֊ցէ, կմ՟ մի՛ արդեօք. ռամկ. չըլլայ թէ։ 1. Մակ. 4. 60։ Բայց երբեմն 'ի գործ ածի նաև առանց մի բառին. և զնոյն նշանակէ. ոպ՟ 2. Օրին. 4. 23։ և 22. 1։ Առակ. 25. 17։

Միեւրով իւիք։ (Մակբայ բացատական.) ‖ մի՛ և մի իւիք. կմ՟ մի՛ իւիք կերպիւ. և կմ՟ մի՛ բնաւ։

Միեղինապէս։ (Մակբայ.) ‖ միապէս. կմ՟ միանգամայն. կմ՟ միահաւասար. և կմ՟ միա կերպարար։ Լամբրոն։

Միեղինութիւն. թեան։ ‖ մի՛ լինելն. կմ՟ միա ցումն. կմ՟ միակերպութիւն. և կմ՟ միակցու թիւն։ Լամբրոն։

Միեղջերու. ուէի. աւ. աց. օք։ ‖ է կենդա նի ինչ վայրի, որոյ մարմինն պարառե֊ցեալն համեմատ նմանի ձիոյ. իսկ գլուխն եղջերուի. ունի զառուտ իբրև զձարդի. ոտն ոմանց 'ի նոցանէ են նման ուղտու, կմ՟ եղ ջերուի. իսկ ոմանց՝ նման փղի։ Անդ չեցաւ սա միեղջերու, զի ունի ելեալ է մէջ ճակատուն զեղջիւր մի ուղիղ և պա ծայր և երկայն. որով և պատերազմի ընդ գազանաց, և Է. երէոց։ Անդ է ոսկր և քաշ կերպարանօք. որոց և բազմաց պա րանոցքն ծածկեալ կան քաշիւք. ռամկ. գէ֊րքոն։ Թուոց. 23. 22։ և 24. 8։ Սաղմ. 21. 22։ 91. 11։ Եւ ոպ՟ բազումք ասեն, ազգ կեն դանեաց համօրէն երբէք ըմբռնին. և ոչ ընտանի ընտելանան մարդկան. և ոչ նուա֊ճին ընդ ձեռամբ. և վս՟ այն ասի. Յոբ 39. 9։ Եթէ կամիցի՝ քեզ միեղջերուն ծա ռայել։

Մի՛ երբէք։ (Մկբյ բացասական.) ‖ մի՛ յի֊միք ժամանակի. կամ մի՛ բնաւ։ Սաղմ. 27. 1։ և 113. 2։

Մի և մի։ (Մակբայ բացասական.) ‖ ամե֊նևին մի՛. կմ՟ մի՛ բնաւ։ Ա այնմ։ Լամբրոն. մի և մի ոք պահեսցէ կենդանի զմահուանն 'ի նախնեաց 'ի մեզ սերմանեալ։

Միև մի իւիք։ (Մկբյ բացառ.) ‖ բնաւ մի իւիք. կմ՟ ոչ ինչ կերպիւ։ 2. Կոր. 6. 3։

Մի ևս։ (Մկբյ բացառ.) ‖ մի՛ այլ ևս. կմ՟ մի՛ վերստին. և կմ՟ մի՛ այսուհետև։ Մրկ. 11. 14։ Հռոմ. 6. 6։

Միզարգել. ի. լի. աց. օք։ ‖ նա, որ ունի զախտ 'ի գործիսն միզելոյ. որով արգելա նի 'ի գուրս վարել զմէզն։

Միզարգելութիւն. թեան։ ‖ ախտ, որով արգել

գել

գեղանի ոք 'ի միջի․ որ երբեմն հանգի պի մն գոյանալոյ խմբից 'ի գործիսն միջե լոյ ։ Եւ մերթ վասն այլոց նեղքին խան գարմանց ։

Միջեմ․ եցի․ եա․ եալ ։ (չէզոք․) || 'ի դուրս վարել զմէջն ։ ռմկ․ Չըլըօթէլ․ կմ՝ Չըհըօթ ընէլ․ 1․ Թագ․ 25․ 34։ 3․ Թագ․ 14․ 10։

Միջն․ մջին․ ամբ․ կմ՝ Նիճ․ մջնիք․ մջնեաց․ եօք ։ || Նրբանիւթ մաշկ․ կմ՝ Թաղանթ, որ իբրեւ զշար նուրբ պատէ զնիւ, կամ մածեալ կայ զերեսօք նոցա․ Եւ ըստ այսմ միջն կոչին մջլինք սեխից․ փուռ ձմէրոյ․ մաշկք աչաց․ եւ այլք սոյնպիսիք ։

Բայց մասնաւորապէս մջնիք անուանին երկոքին նուրբ մաշկքն, որք պատեալ ու նին զուղեղ գլխոց կենդանեաց․ որք 'ի յունաց, եւ 'ի լատինացւոց կոչին մէնինկքս ։

Մի ըստ միոջէ ։ (մակբայ դասական․) || Ե լանէ սա 'ի նախադրութենէս՝ ըստ, որ մինչ առանու զբացառական խնդիր, նշանակէ զկնի ։ ուստի մակբայիւս մի ըստ միոջէ՝ նշա նակի, մի զկնի միոյ․ կմ՝ զկնի միմեանց կար գաւ․ կմ՝ իւրաքանչիւրն մի առ մի ։ ռմկ․ Պէն ըմէնօ էփէսնէն․ կմ՝ Պիրըմէնօ էփէսէ ։ 2․ Թագ․ 15․ 18։ Յօհ․ 8․ 9։ Մերթ եւս նշանա կէ առնլու, մանրամասնաբար․ կմ՝ միառ մի․ եւ ըստ այսմ ասի․ մի ըստ միոջէ գրել, կմ՝ թուել․ եւ այլն ։ ռմկ․ փէճը 'նփէրը։ 'ի ձեռս հօրց․ ԺԳ։ Ատոթ։

Մի ըստ միոջէք․ մի ըստ միոջէց․ կամ էից․ էիւք ։ || Իւրաքանչիւրքն մի զկնի միոյ․ կմ՝ եւ այլքն ըստ կարգի․ Եւ ըստ այսմ փոխա նակ ասելոյ, իւրաքանչիւրոց մի զհետ միոյ թուեցելոց՝ ասի՝ մի ըստ միոջէց թուեցե լոց ։ Սոյնպէս փոխանակ ասելոյ զկնի ձա ռին, եւ այլքն կարգաւ, կմ՝ զհետ միմեանց՝ ասի ։ Եհ մի ըստ միոջէքն ։

Միթէ ։ (մակբայ հարցական․ եւ երկբայա կան․) || արդեօք․ կմ՝ արդաքէն ։ ռմկ․ աճապ․ կմ՝ Պէլքի ։ Ծննդ․ 18․ 14։ Յօհ․ 4․ 29։ Գործ․ 10․ 47։ Իսկ մերթ վարի առոկ իբրեւ զմակ բայ երկբայական առանց իրիք հարցման․ Եւ նշանակէ՝ Թերեւս, կմ՝ գուցէ․ կմ՝ եթէ ոչ ։ Եւ ըստ այսմ խմանի՝ մինչ ասի, մի թէ յեղաշրջեալ իցէ 'ի մտաց․ զի որպասցէ զայս ռմկ․ Պէլքէ խէնթ ըլլայ որ ըսէ ։ Եւ ըստ այսմ 'ի գործածի 'ի գիրս Լամբրոնացւոյն, եւ յայլ բազում տեղիս ։

Միթր․ մթրի․ ու․ աց․ օք ։ || Է բառ յունա կան․ որով նշանակի ձ եւ իցէ խոյր․ կամ թագ ։ Եւ 'ի մեզ ասվորաբար առեալ լի նի փոխանակ եպիսկոպոսական թագի ։

Մի՛ իմիք ։ (մակբայ բացասական․) || ոչ ինչ կերպիւ․ կմ՝ ոչ ինչ եղանակաւ ։

Մի լիցի ։ (մակբայ բացասա․) || քաւ լիցի․ կմ՝ մի եղիցի ։

Մի մի ։ || մերթ վարի սա իբրեւ զանուն․ եւ զնի փոխանակ իւրաքանչիւր բառիս․ ըստ այսմ Ծննդ․ 24․ 22։ Էառ այրն զգինուս մի մի ըստ զանձեկանի ձուլոյ․ այսինքն իւրաքան չիւրն ըստ զանձեկանի ձուլոյ ։ Մի մի եր կեան մի մի օր մատուցեն զընծայս․ այսինքն իւ րաքանչիւր 'իշխան յիւրաքանչիւրում ա ւուր․ Թուոց․ 7․ 11։ Տանէին մի մի 'ի նոցա նէ․ այսինքն իւրաքանչիւրքն 'ի նոցանէ ։ Յօհ․ 2․ 6։ ըստ այսմ եւս փոխանակ ասելոյ իւ րաքանչիւրոյն 'ի նոցանէ․ կմ՝ ըստ իւրա քանչիւրոյ ամանոյ․ ասի․ միոյ միոյ 'ի նոցա նէ․ կմ՝ ըստ միոյ միոյ ամանոյ ։ Յայտ․ 4․ 8։ Եւ 22․ 2։ Բայց 1․ Մակ․ 4․ 38․ ուր ասի՝ իբրեւ միոյ միոյ լերանց, բառս մի՝ մն զար դու կրկնի, զի նշանակէ ասել, իբրեւ 'ի միում 'ի լերանց․ կմ՝ իբրեւ 'ի վ՟ր միոյ լե րին ։ Իսկ մերթ զնի փոխանակ միմեանց բառիս․ ըստ այնմ․ մի առ միոջ դիմաթա ւալ կացուցանէր․ այսինքն հուպ միմեանց․ 1․ Մակ․ 5․ 34։ Մի զմիով անկանիլ․ այսինքն 'ի վ՟ր միմեանց անկանիլ․ կմ՝ 'ի միմեանց նաւա ձիլ ։ Մի զմիով եւեւեւս առնել․ այսինքն գե րազանցել, կմ՝ զօրաւորագոյն լինիլ քան զմիմեանս ։ Նարեկ․ ԻԵ։ Մի զմի կշռուցանել․ այսինքն զմիմեանս ։ 'ի ձեռս հօրց․ ԲՂ։ Աղաղա կէին մի առ մի․ այսինքն առ միմեանս ։ Եսայ․ 6․ 3։ Սոյնպէս փոխանակ ասե լոյ՝ զկնի միմեանց․ կամ 'ի ներքոյ մի մեանց․ ասի՝ մի զկնի միոյ․ կամ մի ընդ միով ։ Իսկ մերթ վարի իբրեւ զմակ բայ դասական․ Եւ նշանակէ ասել, առան ձին առանձին․ կմ՝ միայնակ միայնակ․ Եւ կմ՝ մի ըստ միոջէ ։ ռմկ․ Պէկ Պէկ․ Եւ ըստ այսմ ասի․ մի մի մատանել․ մի մի անցանել․ եւ այլն ։

Միմեանց․ առ միմեանս․ կամ 'ի միմեանս․ զմիմեանս․ 'ի միմեանց․ միմեամբք․ զմի մեամբք ։ (անեզական, եւ անուղղական․) || Ծագի սա 'ի բառէս՝ մի մի․ եւ նշանա կէ զերեսս․ որ ունի զփոխադարձական նշանակութիւն․ ռմկ․ Իրար․ կմ՝ Իրարու ։ Յոբ․ 41․ 8։ Մարկ․ 16․ 3։ Գաղատ․ 6․ 2։

Միմեանցասէր ։ (Նախդրիւ հոլովի․) || սի րող միմեանց․ կմ՝ որք հակադարձաբար զի րեարս սիրեն ։ Իսկ մերթ նշանակէ զայն, որով սիրեն զմիմեանս․ կմ՝ որ յառաջանայ 'ի սիրոյ իրերաց․ Եւ ըստ այսմ ասի․ Ոսկէ․ 1․ Կորնթ․ նշանակ միմեանցասէր բարուց ։

Միմոս․ ի․ աւ․ աց․ օք ։ || Է բառ յունական, որով նշանակի խեղկատակն․ այսինքն նա՝ որ զա բարս եւ զգործս այլոց անհամեստ շարժ մամբ կերպարանէ եւ խաղ առնէ, առ 'ի շարժել զհանդիսականսն 'ի ծաղր եւ 'ի խնդու թիւն ։ 'ի ձեռս հօրց․ Ի․ եւ ԺԶ ։

Միմք․ ոց․ ովք ։ || Ելանէ սա 'ի միմոս բառէն իբրեւ արմատ նր․ եւ նշանակէ զկա տակն, կմ՝ զծաղրն ։ Իսկ մերթ զմիմոսն, այսինքն զխեղկատակն ։

Մին ։ (Նախդրիւ հոլովի․) || մէն․ կմ՝ մի ։ ռմկ․ Պիր ։ Զաք․ 11․ 7։ Եւ Խորէն․ Բ․ գլ․ 33։ Նարեկ․ ԺԷ։ 'ի սմանէ ելանեն բառքս մինա ւոր, եւ մինանալ ։

Մինանամ․ նացայ․ ցիր․ ալ ։ (ընդ միջ․) || մի նանալ․ կմ՝ միայնանալ․ եւ կմ՝ մի լինիլ ։

Մինաւոր․ ի․ աւ․ աց․ օք ։ || մենաւոր․ կմ՝ միայնակ․ կմ՝ մի միայն ։ ռմկ․ Ձինակ․ կամ Ձէքէք ։ Աչգոթ․

Մինինայ. ի. ին. եց. իւք: || Մինինայ՝ որ է փոքրիկ ձկն ինչ. որ յատկապէս դրոց լեզուաւ կոչի երեկ: Շնորհալին յողբն Եդեսիոյ:

Մինչ: || Մերթ վարի առ իբրեւ զնախադ_րութիւն՝ պահանջելով զնախդիրն տրական. որգոն, մինչ 'ի առաւօտեան. մինչ 'ի յառաւօտ: և այլն: Եւ նշանակէ մինչեւ. ռամկ. ինչվան: 1. Մակ. 4. 15: և 12. 27: 2. Մակ. 13. 24: Իսկ մերթ վարի իբրեւ զմակբայ. և նշանակէ յորժամ. կամ մինչդեռ. կամ ցորչափ ժամանակ: ռամկ. երբ որ. կամ թանի որ. Ծննդ. 37. 2: Ելից. 13. 8: և 19: 9: 2. Մակ. 14. 10: ըստ այսմ է և Յոհ. 9. 4: ուր ասի, մինչ օր կայ. այսինքն մինչ դեռ տիւ է: Եւ մերթ նշանակէ մինչեւ: ռամկ. մինչեւոր. Ծննդ. 29. 8: Մատ. 14. 22: Մարկ. 6. 45: Մերթ ևս նշանակէ՝ մինչ զի: ռամկօր. որ. 3. Թագ. 17. 17: 2. Մակ. 14. 12: Մարկ. 1. 45: և 4. 37: 2. Կորն. 7. 7: Եւ մերթ առնուլ լինի փոխանակ շաղկապին՝ որով հետեւ. ըստ այնմ. Ղուկ. Ե: Զինչ է ինձ առկաւս և նուաստագոյնս յօդել. մինչ ան_ցեալ է ըստ քանակութեան: ռամկ. չի-նէ: Բայց երբեմն բառս այս կրկնելով ընդ_դէմ գերանուանց այսոցիկ՝ այս և այն, այս_պէս. մինչ այս՝ մինչ այն, անկանի 'ի մէջ բանից իբրեւ զմիջարկութիւն, և նշանակէ ասել. մինչ ամենեքեան զաղմկեալ էին. կամ մինչ ամենեքեան խռովեալ կային: Եւ ըստ այսմ է 'ի հին տպագիրս, և 'ի գիրս ագաթանգեղոսի, ուր ասի, Գոյժ աղաղակի ամբոխին թանձրանայր՝ մինչ այս, մինչ այն, նոցա հեծեծալք յիւրաքանչիւր յերի վարս՝ փախստական շինէին:

Մինչ դեռ: (Մակբայ ժամանակական.) || մինչ տակաւին. կամ այն ինչ. ռամկ. երբ որ. և այս բազմիցս ընդ յարիլն բայից, առնէ զնոյն իբրեւ զդերբայս ներգոյականս, զոր օրինակ, մինչ դեռ զայն խօսէր. այսինքն ընդ խօսելն, կամ 'ի խօսելն զայն: ռամկ. խօ_սելն ատեն. կամ խօսելէնին. Ղուկ. 11. 27:

Մինչդեռ տակաւին: (Մակբայ ժամանակական.) || այն ինչ տակաւին. կամ մինչ տա_կաւին. ռամկ. երբ որ փահոյ: Ղուկ. 24. 41:

Մինչեւ: || Նախադրութիւն որ պահանջէ զնախդիրն տրական. որգոն. մինչեւ յերկինս, մինչեւ 'ի դժոխս. և նշանակէ. մինչ: ռամկ. ինչվան: Մատ. 11. 23: 2. Կորն. 10. 14: Եւ մերթ է մակբայ, և նշանակէ՝ մինչդեռ. կամ ցորչափ. կամ յորժամ. կամ երբ. և կամ իբրեւ: ռամկ. թանի որ. կամ երբ որ: Ելից. 16. 3: 2. Թագ. 19. 18: Յուդիթ. 5. 21: Սաղմ. 103. 33: և 145. 2: Մերթ ևս նշանակէ՝ մինչ զի. 3. Մակ. 4. 4: Յեսու. 8. 22: Մարկ. 15. 5: Յոհ. 3. 16: Երբեմն ևս ունի զզօրութիւն առեալ ցորժամ. ռամկօրէն մինչեւոր: Ծնն. 24. 19: 2. Օրին. 22. 2: Սաղմ. 93. 13. և 15: Մերթ ևս ունի զզօրութիւն մակբայիս. կարի, կամ խիստ. ըստ այնմ Աշփ.: Եւ բարձր մինչեւ յոյժ. այսինքն կարի յոյժ: Այսպէս է և Սաղմ. 37. 7. ուր ասի՝ տառա_պեցայ և խոնարհ եղէ մինչեւ յոյժ. այս_ինքն կարի յոյժ. կամ խիստ:

Մինչեւ յե՛րբ. կամ մինչեւ ցե՛րբ: (Մակբայ ժամանակական.) || մինչեւ ցո՞ր ժամանակ. կամ ցորժամ: ռամկօր. թանի մէկ: Սաղմ. 12. 1: և 2. և 3:

Մինչ զի: (Շաղկապ պատճառական.) || մինչեւ. ռամկ. որ: Եւ այս գրեթէ միշտ պա_հանջէ յառաջքան զինքն զմակբայս զայս_պէս. այնպէս. այնքան. կամ այնչափ. և այլն. Եւ կամ խնդրէ յառաջքան զինքն ըզ_տարակուսն. կամ զյանձնառութիւն ինչ. զորօրինակ. այնչափ խռովեցան, մինչ զի ապացին, այսինքն մինչեւ ապացին. Ոսկ. 2. հոփ. ժը: Իմաստուն արարք զիս. մինչ զի 'ի գիշերի ևս խրատե_ցին զիս. այսինքն՝ մինչեւ 'ի գիշերի ևս: Սաղմ. 15. 7: Մինչ զի և զհաց ևս ոչ ժա_մանէին ուտել. այսինքն մինչեւ վասն յաճախութեան ժողովրդեանն ոչ կարէին և զհաց ուտել: Մարկ. 3. 20: ըստ այսմ է և Գործ. 19. 12: և Ղուկ. զԹ:

Մինչ չեւ: (Մակբայ ժամանակական.) || մինչ դեռ ո՛չ. կամ մինչ ո՛չ տակաւին. կամ նախ քան զի. կամ յառաջ քան զի: Ըստ այսմ Ծննդ. 2. 5: Մինչչեւ լեալ էր. ռամկ. թա_նի որ չէր եղեր. կամ փոխանակ ըլլալ իէն: Ըստ այսմ է և Ժողով. 12. 1. և 2: Յոհ. 1. 48:

Մինչ տակաւին: (Մակբայ ժամանակական.) || մինչդեռ. կամ մինչ դեռևս:

Միշտ: (Մակբայ ժամանակական.) || հա_նապազ. կամ յար. և կամ յամ ժամ. ռամկ. ամէն էտէր. կամ փոյխնոյ: Սաղմ. 94. 10: Իմաստ. 17. 10:

Միոմն. միոյ ուրուեմն: || մի ոք. կամ անձն մի. ռամկ. մէկ մը: Յոհ. 11. 49:

Միոյր: || այսինքն միոյ. և զայսմանէ տե՛ս զբառն Ասացելոյր:

Միոջայք. ոջայց. ոջովք. կամ ոջէք. էից. էիւք: || միակք. կամ անհատք. և կամ իւրա_քանչիւրք:

Միորձի. ւոյ. եաւ. եաց. եօք: || Եկանէ առ 'ի բառէս ամորձիք, որ է երկուորեակք. այսինքն ձուանքն մարդոյ, կամ անասնոց. ուստի բառիս միորձի նշանակէ միամորձին. այսինքն՝ որ ունի միայն ամորձի զմինն 'ի ձուանց իւրոց. իսկ զմիւսն պակաս. կամ հանեալ. և կամ ջախջախեցեալ: Ղեւ. 21. 20:

Միոք. միոյ ուրուք: || տե՛ս զմի ոմն:

Միջաբեկ. ի. աւ. աց. օք: կամ իմ. ից: || բեկեալ ընդ մէջ. որ մերթ առի զմար_դոյ, կամ զանասնոյ, որոյ մէջքն ջախջա_խեալ է: Իսկ մերթ առի զայլոց իրաց, որք 'ի միջին մասանէ բեկեցեալք են: Մերթ ևս նշանակէ զընդ մէջ բեկանօղն, կամ ըզ_խորտակօղն միջաց:

Միջադէտք: || տե՛ս 'ի բառարանն յատուկ անուանց:

Միջադրեմ. եցի. եալ. ել: (Ներգործ.) || 'ի մէջ դնել. կամ 'ի մէջ արկանել:

Միջակ. ի. աւ. աց. օք: || այն ամ, որ է 'ի մէջ երկուց հակադրեալ ծայրից. և ըստ այսմ միջակ կոչի այն՝ որ ոչ առաւել է, և ոչ նուազ. կամ որ ոչ սաստիկ քաղցր է. և ոչ ա-

տեկ դառն . կամ ոչ յոյժ երկայն , և ոչ յոյժ կարճ . և այլն : Յհ ոսկ: Ըստ այսմ և այնք տառք, որք ոչ թաւք են, և ոչ նուրբք, միջակ կոչին, որպիսի է տառս, գ՝ ՚ի մէջ տառից՝ բ. ն. փ: Այնպէս և հասակն երիտասարդութե, ըստ որում է ՚ի մէջ մանկութե, և ծերութե, միջակ ասի: Ըստ այնմ Յհ ոսկ:

Սա միջակին է խրատ մարդոյս,
յորժամ շարժի ախտիցն բոյս:

Մերթ ես առեալ լինի փոխանակ միջին տեղւոյ. և կամ պորտոյ երկրի. և ըստ այսմ ասի ՚ի կանոնն խաչին. որ կանգնեցաւ քառակերպն ՚ի միջակին. այս է ՚ի միջին տեղւոջ երկրի, որ է ըստ բազմաց գաւառն Եդեմի, ուր կանգնեցաւ քառաթեւ նշր խաչն:

Միջակաձայն. ի. իւ. ից. իւք: || ունօղ ըզ միջակ ձայն, կամ զմիջակ բարբառ: Իսկ մերթ նշանակէ զմիջակ ձայնս. կամ բարբառս:

Միջակային. այնոյ. ով. ոց. ովք: || միջական. այս այն ամ, որ վերաբերի առ միջակս, կամ որ ունի զմիջակութի. և ըստ այսմ միջակայինք կոչին նոքա, որք ոչ գըռեհիկք են, և ոչ պայազատք, կամ ոչ աղքատք են, և ոչ փարթամք: Նարեկ. Ղ:

Միջական. ի. աւ. աց. օք: || նոյն է ընդ վերնոյն:

Միջակավար. ի. աւ. կամ իւ. աց. օք: || միջակօրէն վարօղ, կամ միջական կերպիւ ՚ի կիր առեցեալ:

Միջակէտ. կէտի. իւ. ից. իւք: || միջին կէտ. որով մերթ նշանակի կեդրոնն ո և իցէ իրաց: Իսկ մերթ միակէտ նիշն, որ դնի ՚ի մէջ շարամանութե բանից, և ցուցանէ միջակ կերպիւ աւարտեալ զբանն. որ է այս (.):

Միջակոտր. ի. իւ. ից. իւք: || տես զՄիջաբեկն:

Միջակութի. թեան: || միջակ գոլն. կամ կայացումն ՚ի մէջ երկուց ծայրից. կամ բարեխառնութի. և կամ չափաւորութի:

Միջակտուր: (Նախդրիւ հոլովի.) || ընդ մէջ կտրեալ. կամ ընդմէջ կտրօղ: Բայց այս ըստ մեծի մասին ընդ բայի շարակցի այսպէս. միջակտուր առնել. և նշանակէ, ընդ մէջ կտրել: ռամկ. օրթայէն երկու ընել: կամ այսպէս միջակտուր լինիլ. և նշանակէ ընդ մէջ կտրիլ: ռամկ. օրթայէն երկու ըլլալ: Խորէն. ՟Բ. ղր. 82:

Միջահասակ. ի. աւ. աց. օք: || նա, որ է ՚ի միջակութե հասակի, կամ է միջակ հասակաւ: Իսկ մերթ նշանակէ զմիջակ հասակն. կամ զմիջակ տիս: ՚Ի վարս հարց. իղ:

Միջահատեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || կտրել ընդմէջ. կամ միջատել: Մերթ ես նշանակէ դադարեցուցանել զշարունակեալ ինչ ՚ի յընդմիջին. կամ արկանել ըզ դադարումն ՚ի մէջ սկսեալ բանից, խափանելով զշարունակութիւն:

Միջահատութի. թեան: || հատումն. կամ կտրումն ընդմէջ. կամ միջատութի: Եւ մերթ առեալ լինի փոխանակ դադարման, որ անկանի ՚ի մէջ խօսից, կամ շարունակութե ժամանակի. և այլոց նմանեաց:

Միջամատն. տին. տամբ. տանց. տամբք: || միջին մատն, որ է երկայն քան զայլ չորս մատունսն:

Միջամոյթ. մութի. աւ. աց. օք: || միջին մոյթ. այս միջին նեցուկ, կամ յենարան: ռամկ. մէջի փայախ:

Միջամութեալ. եւոյ. ով. ոց. ովք: || միջին մութիւ, այս նեցկաւ, կամ յենարանաւ հաստատեալ:

Միջամուխ: (Նախդրիւ հոլովի.) || ՚ի մէջ մխեալ. կամ ՚ի մէջ մտեալ. և կամ ՚ի կէս գործոյն հասեալ: Իսկ մերթ ընդ բայի շարակցի այսպէս. միջամուխ լինիլ. որով մերթ նշանակի մխիլ ՚ի մէջ, կամ մտանել ՚ի տեղի ինչ, կամ ՚ի բազմութի իմն. և ըստ այսմ իմանի մինչ ասի. միջամուխ լինիլ յաշխարհս. կամ յատորեաստան. կամ ՚ի հեթանոսս. և այլն: Խորէն. ՟Բ. ղր. 11. և 68: Իսկ մերթ նշանակէ՝ անկանիլ ՚ի մէջ գործոյ իրիք. կամ ձեռնամուխ լինիլ. կամ բուռն հարկանել. և կամ սկսանիլ. և ըստ այսմ ասի. միջամուխ լինիլ որսոյ. կամ ՚ի գործս սպանութե, և այլն: Խորէն. ՟Բ. ղր. 81: և Յհ ոսկ: Իսկ մերթ նշանակէ ՚ի մէջ մըտանելով իմիք իրակութե, տեղեկանալ. կամ հմուտ և ծանօթ լինիլ. և ըստ այսմ ասի ՚ի գիրս Աճգոր. զղուկասու աւետարանչէն. իրագէտ, և միջամուխ էր քննագործ իրացն կատարելոց: Իսկ թէ պիտոյ լիցի ներգործականն սոցա, ասի միջամուխ առնել, որպ դնի ՚ի գիրս Ոսկէ. 2. հատ. ժդ:

Միջամուտ. մտի. իւ. աց. օք: || նոյն է ընդ միջամուխ բառին: ուստի 2. Մակ. 1. 15: ուր ասի. երբև եղև միջամուտ սրահիցն, նշանակէ ասել: երբև եմուտ ՚ի մէջ սրահիցն. կամ ՚ի ներքս ՚ի սրահն անդր:

Միջապատ. ի. աւ. աց. օք. կամ իւ. ից: || պատօղ զմէջս: Իսկ մերթ նշանակէ զայնս՝ որք պատեն, կամ ածեն ընդ մէջ. և ըստ այսմ միջապատք կոչին սփածանելիք. գօտիք. զենջակք. և այլք նմանք:

Միջապինդ. կամ Միջապինտ: (Նախդրիւ հոլովի.) || պնդօղ զմէջս. կամ գօտեւորօղ զմէջս պնդապէս: Իսկ մերթ նշանակէ զայն, որով պնդին մէջք. կամ որ յառաջանայ ՚ի պնդելոյ զմէջս. և ըստ այսմ ասի միջապինդ ամրութի: Նարեկ. ղԳ:

Միջասահման: (Նախդրիւ հոլովի.) || այն՝ որ է ՚ի մէջ երկուց սահմանաց. որպիսի է միջոցն, կամ բնակիչքն, որք են ՚ի մէջ կոպարաց երկուց թագաւորութեց. կամ գաւառաց. և այլն: Եւ յայսմանէ առեալ բաղում անգամ նշանակէ զմիջակն, կամ զմիջակայինն, որպիսի է այն, որ ոչ կարի երկայն է, և ոչ կարի կարճ. և ըստ այսմ առէ Նարեկ. ՚Ի մէկն. երգոց: Աւեն զքրքմէն՝ թէ միջասահման է, ոչ կարի հով, և ոչ կարի ջերմ: Այնպէս ես փոխանակ առեալ, միջակօրէն առնել զբաժանումն, ա-

սի.

ռի. միջաստահման ասելն։ Մերթ և ս նշանակէ, զայն, որ է 'ի մէջ արկեալ. և կամ 'ի մէջ եդեալ. և ըստ այսմ առէ Նոննէ. 'ի մեկնութեան Եզեկ. միջաստահման է փորձն. այսինքն 'ի մէջ եդեալ կայ փորձառութիւն։

Միջամտեմ. եցի. եմ. ել. (Ներգործ.) ‖ Ի մէջ բաժանել. կամ 'ի միջոյ յերկուս անջատել։

Միջարկութիւն. թեան։ ‖ արկումն 'ի մէջ. կամ դրութիւն միջոցի. կամ անջրպետ. և կամ խտորոց։ Իսկ յատկապէս ասել նշանակէ զմինն 'ի մասանց բանի, որ զկիրս հոգւոյն նշանակէ. որպիսիք են սոքա. վաշ. ուշ. վայ. և կոչեցան սոքա միջարկութիւն, ըստ որում 'ի մէջ արկեալ լինին 'ի շարադրութիւնս բանից։

Միջերկնեայ. կնէի. իմ. եց. իւք։ ‖ այն՝ որ է 'ի մէջ երկնի. կամ վերաբերի առ միջին սաղի երկնից. Խորէն. յաշխարհագրութեան։

Միջերկրական. ի. աւ. աց. օք։ ‖ այն նոյն, որ է միջերկրեայ. կամ առ միջերկրեայս պատկանի. և ըստ այսմ միջերկրական կոչի սպիտակ ծովն. ըստ որում անցանէ ընդ մէջ աշխարհացն միջերկրեայց. զի բաժանէ յովկիանոսէ ընդ նեղուցն կադիտանու անցանէ առ աշխարհաւն իտալիոյ և յունաստանի, և փոքրին ասիոյ, և ժամանեալ 'ի նեղուցն կոստանդնուպօլսի՝ խառնի 'ի սեաւ ծովն։

Միջերկրեայք. կամ միջերկրեայք. եայց. եօք։ (անեզական.) ‖ միջին երկիրք. կամ միջին գաւառք. որով նշանակի իտալիա. յունաստան. կողմանք ասիոյ. սուրիա. և այլք երկիրք, և գաւառք անկեալք ընդ գծիւ սոցա։ Բայց մասնաւորապէս առեալ նշանակի առաւելապէս փոքրն ասիա, որ է յարևմտեան կողմն մեծին հայոց՝ անկեալ 'ի մէջ երկուց ծովուց, որոց մինն է սեաւ ծովն. իսկ միւսն սպիտակն, այն ինքն է միջերկրական ծով։ Այս ասիա 'ի յունաց կոչի անատօլիա. որ թարգմանի արևելք. ըստ որում կայ յարևելից կողմն յունաց աշխարհին. և 'ի տաճկաց կոչի անատօլու. և ըստ այսմ առեալ լինի 'ի գիրս Խորէն. ա. գլ. 7։ և բ. գլ. 13։ և գ. գլ. 5։

Միջին. ջնոյ. ով. ոց. ովք։ ‖ այն՝ որ է 'ի մէջ իրիք. կամ եդեալ կայ 'ի միջոցս երկուց իրաց. և կամ միջակ։ Ելից. 36. 33։ Երեմ. 39. 3։

Միջնաբերդ. ի. աւ. աց. օք։ ‖ միջին բերդ. կամ ամրոց 'ի մէջ քաղաքին շինեցեալ. որ և ասի դղեակ։ 1. Մակ. 4. 41։ և 6. 18։ և 13. 53։

Միջնածիրանի. նւոյ. եաւ. եաց. եօք։ ‖ մեծագին զգեստ կանանցի. կամ առնացի կազմեցեալ 'ի ծիրանւոյ, զոր զգենուին 'ի հնումն 'ի ներքոյ արտաքին հանդերձից, իբրև զպատմուճան. վա որոյ և կոչեցաւ միջնածիրանի. իբր թէ միջին զգեստ ծիրանի։ Եւ կամ նշանակէ զաղխիւ ձորձն որոյ միջին կողմն է յօրինեալ ծիրանեաւ։ Եսայ. 3. 22։

Միջնամուխ։ ‖ տե՛ս զՄիջամուխ։ Լամբր.

Միջնայարկ. ի. աւ. աց. օք։ ‖ միջին յարկ, որ է բնակարան, կամ սենեակ շինեցեալ 'ի մէջ ներքին և վերին բնակարանաց. կամ սենեկաց։ ռամկ. օրթայ խաթը։ Եզեկ. 42. 6։ և 41. 7։

Միջնանիւ. անւոյ. ով. ոց. ովք։ ‖ մերթ նշանակէ զմիջին անիւն. կմ զայն, որ 'ի մէջ այլոց անուոց զետեղեալ կայ. որպ առ սանիւք 'ի ժամացոյցս։ Մերթ և ս նշանակէ զմէջն, կամ զմիջին կէտն անուոյ. և ըստ այսմ է 'ի գիրս Կիւրղի Եզեկ. է. ուր ասի. եր կիրս առ երկինս այնչափ համեմատութեանն, որչ առ միջնանիւն. կմ որչ միջնանիւն, որ է միջին կէտն անուոյ, համեմատի շրջանակաց անուոյ։

Միջնաշաւիղ. ւղի. աւ. աց. օք։ ‖ տե՛ս զՄիջաշաւիղն։ Լամբր.

Միջնապարիսպ. րսպի. աւ. աց. օք։ ‖ միջին պարիսպ. և կամ որմ շինեցեալ 'ի մէջ այլոց որմոց։ Եւ մերթ ասի նմանութեամբ զայնց իրաց, որք իբրև զպարիսպ 'ի մէջ անկեալ արգել լինին իմիք։ Եփես. 2. 14։

Միջնատուն. տան. տամբ. տանց. տամբք։ ‖ միջին տուն. և կամ բնակարան, որ 'ի մէջ, և 'ի ներքոյ իւր ունի զայլ բնակարանս, կամ յարկս։ Ծննդ. 6. 16։

Միջնորմ. կամ միջնորմք. ղանց. կամ ույ. ումք։ ‖ միջին մասն որմոց. կամ միջին տեղին քամակաց, կամ թիկանց, ուր ընկալեալ լինի բեռն։ 2. Օրին. 32. 11։ Եւ առնեն նոյն է ընդ սմա բառս թիկնամէջ, որ լինի։ Սաղմ. 67. 14։ և 90. 4։

Միջնորդ. ի. աւ. կամ իւ. աց. օք։ ‖ նա՝ որ 'ի մէջ մտեալ երկուց անձանց, կամ կողմանց՝ պատճառ լինի կատարելոյ զիրակութի ինչ վերաբերեալ առնն. որպէս են բարեխօսք. դեսպանք. հաշտարարք. մատակարարողք օրինաց, կամ ուխտից, և դաշանց. և այլն։ Գաղ. 3. 19. և 20։ Եբր. 8. 6. և 12. 24։ Եւ յայսմանէ առեալ միջնորդ կոչի 'ի փիլիսոփայից մէջն, որ բերէ ընդ իւր զանուանս երկուց ծայրից. որպէս սուն, որ բերէ յաղս զանուանս գունոյ։ Սոյնպէս միջնորդք կոչին ձեռք և ոտնք, որովք հասու լինին իմանալեաց. և կամ միջ անկեալ տեսութիւնք ժամանակի։ Լամբր. և Կիւրղի Եզեկ. ժա։ Երբեմն և միջնորդ կոչին գործիք, որով առնեմք զինչ, որպէս իրն ձեռք. ուռն. գիրք աղօթից՝ որով խօսիմք ընդ այլ. և այլն։ Նարեկ. գ. զե։ և զէ։ Երբեմն և առեալ լինի փոխանակ անջրպետի. կամ խտրոցի. և ըստ այսմ 'ի գիրս Մծբնայ. միջնորդ կոչի հաւատս անկեալ 'ի մէջ ջուրցն վերնոց. և ներքնոց։ Դիրձ. առեալ լինի երբեմն 'ի տեղի միջնորդութեան. և յայսմ փոխանակ ասելոյ՝ միջնորդութեամբ անձին, կամ բանի, ասի միջնորդաւ անձին, միջնորդաւ բանի։ Նոնն. 'ի գորգ. կոչ. և 'ի մեկնութեան գիրք։

Միջնորդեմ. եցի. եա՛. ել։ (չէզոք. և մերթ ներգործ.) || միջնորդ լինել. կամ բարեխօսել. և կամ ՚ի մէջ մտանելով հաշտեցուցանել ՚ի խաղաղութիւն։ Լամբրոն։ և ՚ի ժամագրքի։ Իսկ մերթ նշանակէ միջնորդ առնել. կամ ՚ի մէջ դնել. և կամ ՚ի մէջ արկանել։ Եբր. 6. 17։ և Նարեկ. ՚ի փառաց խաչին. ըստ այսմ է և կն. ուր ասի. միջնորդեալ զկրկին հաստատութիւն. զի ՚ի մէջ արկեալ. կամ ՚ի մէջ մատուցեալ։ Իսկ մերթ նշանակէ ՚ի մէջ մտանել. կամ ՚ի մէջ անկանել. և կամ ՚ի մէջ կալ. ըստ այսմ. Նարեկ. գլ. միջնորդեալ երկնի և երկրի. զի կացեալ ՚ի մէջ երկնի և երկրի։ Այնպէս է և ՚ի գիրս Կիւրղի եղծ. ժա. ուր ասի. պիտոյ է ժամանակօք միջնորդել. զի պիտոյ է ժամանակի ՚ի մէջ անկանել։

Միջնորդութիւն. թեան։ || միջնորդ լինելն, կամ գործ միջնորդի. որպիսի է բարեխօսութիւն, հաշտարարութիւն. դեսպանութիւն. և այլն։ Իսկ մերթ առեալ լինի փոխանակ խտրոցի, կամ անջրպետութեան։ Մծբն. ժթ։

Միջնորմ. ոյ. ով. ոց. ովք։ || որմ կանգնեալ ՚ի մէջ երկուց որմոց. կամ շինուածոց. և կամ անջարպետ տեղեաց. ուստի ասի միջնորմ. իբր թէ միջին որմ։ և յայսմանէ առեալ երբեմն նշանակէ զոր ինչ անջրպետ, կամ կրպակն. և կամ խտրոց, որք անկեալք ՚ի մէջ երկուց իրաց՝ խափանեն զհաղորդութիւն միոյն ՚ի միւսոյն։ ռամկ. դէօշէ։ Եփես. 2. 14։ Նարեկ. գլ. և Լամբրոն։

Միջոց. ի. աւ. աց. ք։ || միջին տեղի. և կամ դատարկութիւն՝ անկեալ ՚ի մէջ երկուց իրաց. կամ ՚ի մէջ եզերաց նոյնոյ իրին։ Իսաւ. 15. 4։ 3. Թագ. 8. 64։ Յոբ. 34. 13։ Եզեկ. 40. 19։ Իսկ երբեմն նշանակէ զմէջն, որով մերթ իմանի տեղին, որ կայ ՚ի կեդրոնի. կամ զկեդրոնին։ ռամկ. օրթայ։ Խորէն. յաշխարհագրութեան։ Կիւրղի եղծ. ժդ։ Իսկ մերթ իմանի ներքին կողմն։ ռամկ. իչը։ ըստ այսմ Խորէն. գ. գլ. 9։ Արշաւեալ ՚ի միջոց աշխարհիս մեծաւ ամբոխիւ. զի ՚ի մէջ աշխարհիս. կամ յաշխարհս։ Երբեմն և նշանակէ ընդարձակութիւն. կամ լայնատարածութիւն. և կամ բացատութիւն տեղւոյ, և այլոց իրաց։ Նարեկ. գլ։ Իսկ մերթ երկայնութիւն. կամ ընդերկար տեւողութիւն ժամանակի. և կամ միջանկեալ ժամանակն։ Նարեկ. գլ. և ՚ի չինգշաբաթորեանն։ Մերթ և անջրպետն. կամ խտրոցն. որպիսի են երկինք ՚ի մէջ ննթալութեանս, և գնդակաց արքայութեան։ Յհ ոսկ։ Երբեմն և առեալ լինի փոխանակ խտրութեան. կամ տարբերութեան. և կամ տարաձայնութեան, որով իբր խտրոցաւ միոյն ՚ի միւսոյն զանազանի։ ըստ այսմ Նարեկ. գլ։ Մեծաւ միջոցաւ գերազանց գոլով քան զհամածինն։ Այնպէս է և Ոսկէ. 1. հատ. լա։ Իսկ մերթ նշանակէ զմիջնորդն. կամ զմիջինն իրս. որպէս ըղ բաժանութիւն անցելոյս ՚ի մէջ զարմի ուրուք։ Խորէն. ա. գլ. 30։ Երբեմն և նշանակէ զմիջահասութիւն. կամ զպարապումն. և կամ զկասումն և զդադարումն. ըստ այսմ Խորէն. ա. գլ. 2. Քանզի դատանին և միջոցք լեալ պատերազմաց։

Միջոցեմ. եցի. եա՛. ել։ (ներգործ. և մերթ չէզոք.) || միջնորդել։ Իսկ մերթ ընդմիջել։

Միջօրդ. ոյ. ով. ոց. ովք։ || օդ՝ որ է ՚ի մէջ քաղաքի, կամ տան, կամ սրահի. և այլն. և ըստ այսմ Եզեկ. 10. 18. ուր ասի, ելին փառքն տն ՚ի միջօրդոյ տաճարին, իմանի ասել. վերացան փառքն տն ՚ի յօդոյ, որ ՚ի մէջ դրան ներքնոյ սրահի տաճարին, որ էր քահանայից. Նաև Եզեկ. 9. 3։ և 10. 4. փոխանակ միջօրդոյ տաճարին. դնի օդ՝ որ ՚ի մէջ տաճարին։

Միջօր. միջաւուր. ուրբ. ուրց. ուրբք։ || միջօրեայ. կամ կէս օր։ Գործ. 26. 13։

Միջօրեայ. րէի. իւ. ից. իւք. || միջաւուր, որով նշանակի ժամանակն կէսաւուր. որ և ասի հասարակօր. ռամկ. կէս օր. կամ օրհասակ. Ծննդ. 18. 1։ և 43. 16։ 4. Թագ. 4. 20։ Եսայ. 58. 10։ Եւ երբեմն կէսօրականն, կամ այն ժամ, որ վերաբերի առ կէսօրն. ըստ այսմ. Յայս միջօրեայ տուընջեան ժամուս, զի ՚ի կէսօրական ժամուս տուընջեան։ Իսկ մերթ առեալ լինի փոխանակ հարաւոյ. ըստ այսմ ՚ի Նարեկ. գլ. ՚ի Թեման, որ ըստ ոմանց լեզուաց միջօրեայ կարդացեալ. զի հարաւ կոչեցեալ։ Եւ մերթ փոխանակ հարաւային բաժնի. ըստ այսմ Խորէն. ա. գլ. 15. ՚ի միջօրեայ կողմանէ դէպ ուղիղ առ երկինն նայելով։

Միս. մսոյ. ով. ոց. ովք։ || կակուղ գոյացութիւն մարմնոյ կենդանւոյ. կամ զենեալ անասնոց. որ և ռամկ. կօշթ ասի։ Եւեր. 12. 8։ 1. Թագ. 2. 13։

Միսթաղ. ու. աց. ք։ || է բառ եբրայական, որով նշանակի հանդերձապետն, զի վերակացուն հանդերձատան, կամ հանդերձից. 4. Թագ. 10. 22։

Միտակողմն. ման. ամբ. մունք. անց. ամբք։ || կողմն միտելի. կամ այն կողմն, յոր միտեն և հակին աշխարհաւերք, կամ այլ իրք. և ըստ այսմ ասի. Մծբն. ժէ. զդեկեղեայ. Միտեցաւ նա ՚ի միտակողմն աշխարհիս այսորիկ։

Միտեմ. եցի. կամ եցայ. եա՛. ել։ (չէզոք.) || հակել. կամ թեքել. կամ ՚ի մի կողմն խոնարհել, կամ յօժարել. և կամ զհետ ուրուք յարել. Եւեր. 23. 2։ Դատ. 9. 3։ 3. Թագ. 2. 28։

Միտեմ. եցի. եա՛. ել։ (զօրութ. անցողական.) || միտեցուցանել, զի հակեցուցանել, կամ յօժարեցուցանել. և կամ յանկուցանել. Ոսկէ. 1. հատ. մբ։

Միտեցուցանեմ. ուցի. ցո՛. անել։ (անցող.) || տե՛ս զՄիտել ըստ որում է անցողական։

Միտք. մտաց. մտօք։ (ըստ եզականին միայն ոչ ՚ի գործածի, այլ է բայի շարակցի. ոչ ՚ի սորբ.) || է իմացական զօրութիւն հոգւոյ՝ գերազանց քան զայլ ամ զօրութիւնս, որով միայն հնարէ խոկալ. և

խմանալ։ Եւ ասացաւ միտք՝ իբրեւ մի֊
տող. զի մինչ միտէ 'ի գլխաւորն ճանաչե֊
լեաց. Ղուկ. 13. 9։ Ղուկ. 24. 45։ Իսկ մերթ
առնուլ լինի փոխանակ իմացուածոյ, կամ
իմանալի նշանակութեանց բանին, և կամ փո
խանակ ճանաչման. կամ ուշիմութ։ Աղանդ.
1. 4։ 1. Կոր. 1. 10։ 1. Յով. 5. 20։ Մերթ ևս
դնի փոխանակ ծածուկ խորհրդոց, և դէ
տաւորութեանց. Հռով. 11. 34։ 1. Կոր. 2.
16։ Իսկ երբեմն առնուլ լինի փոխանակ
մտածութեանց և յօժարութեանց սրտի։ Ծննդ.
8. 21։ Եւ մերթ փոխանակ ուշոյ կամ զգաս
տութեան մտաց. Դան. 4. 31։ Երբեմն ևս ա֊
ռնուլ լինի փոխ սրտի. որպ 2. Մակ. 3. 16։
Եւ թէ զինչ նշենէ, մինչ ասէ՝ սրտի մտօք.
տես զՍրտի մտօք։ Դրձլ՝ երբեմն է բայէ
շարակցի, և նշանակութիւն նր պէսպէս կեր
պիւ. այսպէս. որպ տեսցես զկնի։

'Ի միտ առնուլ։ || Տր ըմբռնել մտօք, կամ
իմանալ. և կամ հաստատ լինել. ռամկ. հասկը
նալ։ Սաղմ. 32. 15։ Դան. 12. 8։ Մատ. 13. 13։
և 15. 10։

Միտ դնել։ || Տր ուշ դնել. կամ ուշիւ դի
տել. և կամ սրտի մտօք պարապել իմիք։
Ծննդ. 24. 21։ 2. Մակ. 9. 4։ 1. Տիմ. 4. 13։

Զմտաւ ածել. կամ ածել զմտաւ։ || Տր մտա
ծել. կամ խորհել. և կամ մտայոյզ լինել։
Իմաստ. 6. 16։ Եսայ. 44. 19։

'Ի մտի դնել։ || որով մերթ նշանակէ՝ յի
շել. կամ զմտաւ ածել։ 2. Մակ. 15. 8։ Իսկ
մերթ հաստատել զմիտ 'ի մտի. կամ յառա
ջադրել. և կամ վճռել։ ռամկ. միտք դնել։
3. Մակ. 1. 4։ Իմաստ. 8. 9։ Գործ. 20. 16։
Իսկ մերթ 'ի միտ առնուլ. կամ խելամուտ
լինել։ Եսայ. 42. 25։ Դան. 8. 5։

'Ի միտս լինել. կամ 'ի միտս դալ։ || Տր դառ
նալ 'ի յուշ իւր. կամ զգաստանալ. կամ յի֊
շել. և կամ զմտաւ ածել. Ղուկ. 15. 17։ Գործ.
12. 11. և 12։ Խորէն. Գ. գլ. 4։

Միրգ. մրգոյ. ով. ոց. ովք։ կամ աւ. աց.
օք։ || փափուկ և կակղակեղև պտուղ. որ
պիսի է ծիրանն, դամոն, կեռասն. և այլք
նմանք։ ռամկօրէն մէյվէ։ Եզեկ. 40. 10։
Նորէկ. դշ։

Միւռոն. կամ միւռոն. ի. աւ. աց. օք։ || Է բառ
յունական, որով նշանակի իւղ հո֊
տաւէտ օծանելիք, կամ անուշահոտ իւղք.
ըստ այնմ 'ի վերջ հարց. Է. փոխանակ անու
շահոտ խնկոցն և միւռոնացն, զոր հոտ֊
տեր յերկրի. և այլն։ Բայց մասնաւո֊
րապէս առնուլ նշանակի սուրբ հոտա֊
ւէտ իւղն, զոր կազմեն այժմապէս հայոց
դերձանօք 'ի զանազան անուշահոտ ծաղ
կանց. զոր և օրհնեալ ամի ամի հայրապե
տաց՝ բաշխեն յեկեղեցիս, առ 'ի դրոշմել
նովաւ զմկրտեալս. կամ օծանել դքահա֊
նայս, կամ զեկեղեցիս. և այլն։ ռամկ. մե֊
ռոն։ Նորէկ. դշ։ և Լամբրոն։

Միւս. միւսոյ. 'ի միւսմէ. կամ 'ի միւսոյ. ով.
ոց. ովք։ || այլն. կամ երկրորդն. Ը որում
մերձաւորին առ բառս այսուհետ մի. կամ
առաջին. զի նախ դնի միոյն, կամ առա֊
ջինն. և ապա հետևի. իսկ միւսն. ռամկ.
մէկալը։ Եւէր. 25. 29։ Ղուկ. 14. 19։

Միւսանգամ։ (մակբայ կրկնական.) || կըր
կին անգամ. կամ դարձեալ. կամ վերստին.
և կամ անդրէն. Ծննդ. 29. 35։ 2. Թագ. 5.
22։ և 6. 1։

Միւսհաղ։ (մակբայ կրկնական.) || նշանա
կէ զնոյն, զոր ինչ միւսանգամն. զի ծա֊
գի 'ի հաղ բառէս, որ է անգամ. և Ը այժմ
ասի 'ի հին պարսկերէն. միւսհաղ դարձեալ
պէսպէս քննութիւն 'ի մէջ բերել։

Միւսոն. ի. աւ. աց. օք։ կամ իւ. ից. իւք։
|| Է բառ այլազգական, որով նշանակի առ
ուեստաւոր յօրինուած ինչ, զոր կազմեն
զերեսօք որմոց 'ի փոքրիկ ապակենիւթ,
և քարակուռ քարանց, զորոց ոմանց զար
դաքին երեսն օծանեն ոսկեով. իսկ զայ
լոցն գունաւորեն պէսպէս երանգօք. և
ապա իւրա առ իւրա միաբանեալք շարե
լով յեռուն զօրինակ՝ կերպարանելով նոքօք
զազգիազգի նկարս, կամ ծաղկուածս, որպ
տեսանեմք պարարեալ յորմունս եկեղեց֊
եաց սրբոյն Սոփիայ, որ 'ի Կոստանդնուպօ
լիս. և սրբոյն Մարկոսի աւետարանչին,
որ 'ի Վենետիկ. և յայլ տեղիս։ Բայց եր
բեմն նշանակէն առհասարակ ապակենիւթ
քարինքն այսպիսեաց յօրինուածոց. ըստ
այնմ Սոկր. 2. հատ. ԼԷ. ոսկեղէն միւսոնս
ժողովելով՝ արկանէ շուրջ զորմովք. Տր զա
կեզօծ միւսոնս։

Միօրեայ. րէի. իւ. եց. իւք։ || այն ամ, որ
ունի զտեւողութիւն միոյ աւուր. կամ միօր
է՝ յորմէ հետէ արարածեալ է. և ըստ
այսմ ասի, միօրեայ երեխայ, կենդանի, ժա
մանակ, գործ. և այլն. ռամկ. մէկօրեան։ 'Ի
վերջ հարց. ինն։ և Լամբրոն։ Մերթ ևս նշանա
կէ զայն՝ որ տեւէ միայն զմի օր. և յետ
միոյ աւուր ոչ ևս մնայ. որպիսիք են ո֊
մանք 'ի զեռնոց, կամ 'ի ծաղկանց։ Իսկ
երբեմն վարի իբրև զմակբայ. և նշանակէ
զմի աւուր, զժամանակ միոյ աւուր. կամ զմի
օր. ըստ այնմ, Աղթան. զմիարդ հնար էր
տանել, կամ կալ միօրեայ 'ի խոր վիրա
պի անդ։

Միօրինակ։ (նախադրիւ հոլովի.) || զմի և
զնոյն օրինակ, կամ որպիսութիւն ունող. կամ
միակերպ. կամ միաձև. և կամ հաւասար։
Իմաստ. 6. 8։ Իսկ մերթ համեմատ. կամ 'ի
դէպ. ըստ այնմ Կիւրղի. Եզէկ. Ժ. ամենայ
նի միօրինակ ասէ տէրն. Տր այժմ բանին հա
մեմատ։ Մերթ ևս վարի իբրև զմակբայ.
և նշանակէ միով օրինակաւ. կամ միապէս.
և կամ հանգիտապէս։

ՄՂ.

Մղանեմ. եցի. եա. ել։ (չէզոք.) || մա֊
ղնուլ։

Մղձեմ. եցի. եա. ել։ (ներգործ.) || ըրդ
ժելով խեղդուկացուցանել զդէմս. կամ խո
ժռութեամբ շփել զայս և զերեսս, որպ առ
նեն զարթուցեալքն 'ի քնոյ. ըստ այնմ

'ի

'ի Վարս հարց. ԺԲ. 'ի քուն լինի դիւրաւ. մինչէ զերեսս, և ձգտէ զձեռս:

Մխ

Մխած. ի. ած. աց. օք: || մխեալ, որ հը րով կարծրացուցեալ, որ ասի զերկա թոյ, յորժամ ջերմաջերմ մխեն զնա 'ի ջուրն. և ըստ այսմ ասի, սակաւ մխածն նուազ հնչումն ունի: ռամկ. Չրթծ:

Մխախառն: || տես զծխախառն:

Մխեմ. եցի. եմ. ել: (ներգործ.) || մը խելով մուծանել զինչ, որպէս զասուրն 'ի մար մին, զբևեռն 'ի փայտ, զձեռն 'ի ծակ ինչ. և այլն: ռամկ. խօթէլ: Յոհ. 20. 27: Եւ մերթ ձգել. կամ արձակել. և կամ արկա նել. և ըստ այսմ ասի՝ մխել զձեռն յանձն ուք. կամ 'ի սկաւառակ. և կամ 'ի գործ ինչ: Ծննդ. 22. 12: Աղաւէ. 31. 17: Մատթ. 26. 23: Յոհ. 7. 44: Դարձեալ, նշա նակէ հրով կարծրացուցանել զերկաթ, զոր առնեն՝ ջերմաջերմ արկանելով զնա 'ի ջուր լոկ, կամ թունաւորեալ, որով ան բժշկելի խոցէ: Սաղմ. 119. 4: և Նարեկ. ՂԷ: Իսկ երբեմն արկանելով յարիւն թունա ւոր զեռնոց, կամ օձից. որպէս իժից, քար բից, և այլոց նմանեաց: ռամկ. Չօր փալ. կամ [illegible]. Ը այսմ Խորէն. Բ. գլ. 8. Զնիզակն իւր զբոլորատեգ, զոր արեամբ զեռնոց ասեն մխեալ է: Ը այսմ ասի 'ի Յոբ. Եւ զեռնական արեամբ մխեալ, մեղաւ զթափ ինն անցուցեալ: և յայսմ են երբեմն առեալ լինի փոխ խստացուցանելոյ. կամ կատաղեցուցանելոյ. Ը այսմ Յոբ. 18. 4. Եւ դու մխեալ ես բարկութ. որ կատաղեալ ես: Երբեմն ևս առեալ լինի փոխանակ ընդելոյ. կամ հաստատելոյ. ըստ այսմ 'ի Վարս հարց. ԽԶ. Մխեալ զմարմինդ նեղութ. և զսիրտդ երկիւղիւն Այ:

Մխիմ. եցայ. եայ. իլ: (ձայնակր.) || մտա նել. կամ 'ի ներքս խառնել. և կամ խրիլ. ռամկ. [illegible]. կամ [illegible]: Յես. 3. 15: և 2. Թագ. 11. 5: Իսկ մերթ միջամուխ լինիլ. կամ բուռն հարկանել. կամ մատչիլ. կամ յարիլ. և կամ դիմել: և ըստ այսմ ա սի, մխիլ 'ի բանս մատենից. կամ 'ի Ճառս ածաբանութե. կամ 'ի սէր ուրուք, և այլն: 2. Թագ. 2. 25: Աղգաթ: և Լամբրօն:

Մխիթար: (նախդրիւ հոլովի.) || մխի թարիչ. որ սփոփիչ. կամ փարատիչ ցաւոց և տրտմութեց, և կամ բարեյոյս բանիւք յորդորող: Եսայ. 40. 11: Նարեկ. Ղ: Իսկ մերթ մխիթարութի. կամ սփոփանք: 3. Թագ. 1. 4: Իմաստ. 8. 9: Մերթ ևս մխիթարական. կամ սփոփական: ըստ այսմ. 2. Թագ. 8. 21. Այսաւ մխիթար և քաջալեր բանիւ վա ռէր զնա: Բայց մինչ ասի՝ Մխիթար ինչ առնել մարդ, նշանակէ՝ փաղաքշական բա նիւ համոզել. կամ շողոքորթել. և կամ առ ընորհուկս խօսիլ: Յոբ. 1. հատ. Թ: Իսկ երբեմն է յատուկ անուն մարդոյ. և հո լովի Մխիթար. այ. աւ:

Մխիթարակից. կցի. աւ. աց. օք: || կցորդ ումեք 'ի մխիթարութե. կամ 'ի սփոփանս. և կամ յուրախութե: Հռով. 1. 12:

Մխիթարեմ. եցի. եմ. ել: (ներգործ.) || սփոփել. կամ արգահատել. որ 'ի սգոյ և 'ի տրտմութե հանդարտեցուցանել. և կամ զցաւ սրտի ուրուք բարի բանիւք փա րատել. Ծննդ. 37. 35: և 50. 21: Յոբ. 2. 11: Մերթ ևս քաղցր բանիւք յորդորել. կամ աղերսական եղանակաւ համոզել. կամ քաջալերել. և կամ խրախուսել. 1. Մակ. 12. 50: 1. Թես. 4. 1: 1. Տիմ. 6. 2: Տիտ. 2. 15:

Մխիթարիմ. եցայ. եայ. իլ: (ձայնակր.) || սփոփիլ. կամ մերկանալ յանձնէ զսուգ, և զտրտմութի. Ծննդ. 24. 67: 2. Թագ. 13. 39: Գործ. 20. 12: Բայց երբեմն 'ի սբ. գիրս առեալ լինի փոխանակ զինջանելոյ 'ի բար կութէ. կամ 'ի խստութէ. և կամ փոխա նակ սարջանալոյ, կամ փղձկելոյ. որպէս Դատ. 21. 6: 2. Թագ. 24. 16: և յայլս տեղիս:

Մխիթարիչ. թարչի. աւ. աց. օք: || մխի թարող. կամ սփոփիչ: Յոբ. 16. 2: Ողբ. 1. 16:

Մխիթարութի. թեան: || սփոփանք, կամ արգահատութի, որ է փարատումն սգոյ, և տրտմութե, և կամ ցաւոց սրտի: Սաղմ. 93. 19: 2. Կորն. 7. 4. և 7: Իսկ մերթ բարե ւէր բանիւք յորդորումն. կամ խրատ. և կամ քաջալերութի: 1. Թես. 2. 3: 1. Տիմ. 4. 13:

Մխմխանք. անաց. օք: (անեզական.) || մը խելով մտումն: Իսկ մերթ մատչելով մատչումն. կամ հպելով հպումն. և կամ սաստիկ յարումն. Ը այսմ Յոբ. 1. հատ. Ա. Առ քարինս անշունչս՝ անմռունչս՝ առ միմխանս նստիլ, որ կիրն մերձ նստիլ. և իբրթէ մխմխիլ 'ի նա. ուստի և յունարէն ասի սաստ. առ քարինս անշունչս մերձանիստ լինիլ:

Մխմխիմ. մխմխեցայ. եայ. իլ: (ձայնակր.) || մխելով մխիլ. որ մտանելով մտանել. կամ սաստիկ խրիլ: Իսկ մերթ մատչելով մատչիլ. կամ յարելով յարիլ. և կամ դիմե լով դիմել: ռամկ. [illegible]:

Մխոց. ի. ած. աց. օք: || մխումն. կամ մխելն զինչ 'ի խորս: ուստի 2. Թագ. 1. 21. ուր ասի զնէնմեայ, հրաման ետ մխոց առ նել և բերել, իմանի հրամայեաց մխումն առնել. որ մխել զգուլն 'ի ջրհոր անդր, և հանեալ զջուրն, բերել առ նա: Այս պէս և մխելն զայլ ո և իցէ իր 'ի տեղի ինչ, ասի մխոց առնել:

Մխուն: (նախդրիւ հոլովի.) || մխեալ, կամ մխած, որ ասի զերկաթոյ կարծրա ցուցելոյ, զորմէ ասացաւ 'ի բայն մխել: ռամկ. Չօր փամած: Լամբրօն:

Մխտապատ. կամ մղտապատ. ի. աւ. աց. օք: || մղտով պատեալ. որով իմացեալ լինի նմթով պաշարեալն, կամ միգամածն, և կամ մխաւարամածն. և Ը այսմ ասի. ըմբռնեցուցանել զմղտապատ այերս օդոց. կամ մղ տապատ լինիլ երկնից թխպովք ամպոց. կամ կաճառօք մարախաց զօրաժողով ե ղելոց. և կամ բազմութեամբք խուռ նարձակնեաից Ճակատելոց 'ի պատերազմ:

Digitized by Google

ըստ այսմ իմա և զայլոց նմանեաց. ռամ_ կօր. ձիով պարտ. կամ ձիընթաց. կմ՛ խոյ_ լանայ:

ՄԾ

Մծղնեայ. նէի. իէ. եց. իւք. || պայլե_ կեան. ք. փծագործ, կմ՛ պղծագործ, որովք նշանակին զազրագործքն այնոքիկ՝ որք գործեն զշնութիւն. կմ՛ զկուսապղծութիւն. և մանաւանդ նոքա, որք ընդդէմ բնութեան անօրինեն՝ 'ի պղծութիւս մարմնոյ Է էգ, և Է արու. և կմ՛ ընդ արուանատուամս: 'ի հին պարմագիրս:

Մծղնէութիւն. թեան: || պղծագործութիւն. կամ զազրագործութիւն, որ լինի 'ի յանառակութիւնս շնութեան, կմ՛ կուսապղծութեան, և մանաւանդ 'ի մեղսն, որք Է դէմ բնութեան:

ՄԿ

Մկան. ի. ու. մկանք. աց. օք. կմ՛ եօք: և կամ որ բուռագոյն է. մկան. ամբ. մկանունք. անանց. ամբք: || Է տեսակ ինչ մսոյ լցեալ բազմապատիկ նրբաթելք ջլօք և երակօք. և նկարդիւք. և պատեալ նր բարակ մաշկաւ: ունի գծայր տանձաձև և ջլային, որով խառնի յոսկերս. իսկ ըղ մէջ թաւ և սառնամ. որով մկնաձև է. բռնի. յորմէ և անուանեցաւ իսկ մկան. անդ և երբեմն կոչի մուկն: Արդ՝ սա է գործի շարժման, որ ըստ զանազանութեան, և ըստ բազմապատկութեան շարժման, է և ինքն զանազան և բազմապատիկ՝ սփռեալ ընդ ամ մասունս մարմնոյ: 'Ի գիրս [illegible]: Եւ յայսմանէ առեալ երբեմն եւս նշանակէ զփափուկ և զանուակը միսն, որ ձկնաձև թանձրացեալ կայ 'ի վերին մասունս բազկաց. կմ՛ 'ի յետին կողմն բարձից, և սրունից. և կմ՛ 'ի վր պարանոցաց թիկանց, և այլոց նմանեաց: ռամկօրէն [illegible]: Եւ երբեմն եւս նշանակէ զմսամն, զոր առեալ 'ի տեսլեան խորում. [illegible]. Ղեւտ. 7. 3: և 8. 25: և 9. 19: Մերթ եւս առեալ լինի փոխանակ երկուց մեծամեծ երակաց, որք ձգեալ կան յերկոսին կողմանս խաչափողին վերուստ 'ի վայր, առ որովք և ձայնն ելանէ:

Մկանաւոր. ի. ու. աց. օք: || ունող զմկան. կմ՛ լցեալ մկանամբք. ք. ջլապատ մսովք:

Մկանունք. անանց. կմ՛ աց. ամբք: (անեզական.) || կոհակք. կամ ալիք. կմ՛ զաամբք ծովու. և կմ՛ առապար երեւոյց ջուրց; ընդ որս նաւք ընթացեալ սահին: Արդ կոչեցան սոքա մկանունք. ըստ որում իբրև զմկանունս մասանց մարմնոյ ուռուցեալ կուտակին 'ի ծովու. ռամկ. [illegible]. կմ՛ [illegible]: Եսայ. 17. 12: և 18. 2: Մ. ծէն. [illegible]. 'Ի գու. [illegible]:

Մկանուտ. ի. ու. ից. իւք. կամ օք: || տես զՄկանաւոր

Մկթամ. ացայ. թմ. ալ: (ընդմիջ.) || տես զՄքթալ:

Մկնակ. ի. ու. աց. օք: || փոքրիկ մուկն: Բայց մասնաւորապէս առեալ մկնակ կու. չի այն ամ, յորմէ մուկն կերեալ է. կմ՛ յոր մուկն անկանելով և սատակելով պղծեալ է. ռամկ. [illegible]. կմ՛ [illegible]:

Մկնապիղծ: (նախդրիւ հոլովի.) || 'ի մկանց պղծեցեալ. որպիսի է կերակուրն, յոր անկեալ մուկն սատակի, և կամ զոր ծրտովք իւրովք աղտեղանէ: Ընդհանրն:

Մկնաքիս. քսի. իւ. աց. օք: || է կենդանի ինչ անմռ, որ ըստ մեծութեան է նման առնէ մկան. իսկ ըստ կերպարանացն նման աքիսի. ք. մկնհարանուկի, որ է կելինձիկն, որոց և նմանի բարուք. զի որկրամոլ և լիրբ է իբրև զաքիս. և գող իբրև զմուկն. յորմէ և վայելչապէս կոչեցաւ մկնաքիս: Կնճիթ սորա է իբր թէ մուկն և աքիս. և սորին կլոմին յոյժ երկայն և նուրբ. և ստորին կլոմին յոյժ կարճ քան զվերինն: [illegible] որ է առ ծո. տանիայ 'ի կղզին անդրմերձակայ. [illegible]: Ղեւտ. 11. 30:

Մկնդահար. ի. ու. աց. օք: || հարկանող զմկունդ. ք. զվահանն: Իսկ մերթ նշանակէ զայն, որ լինի հարկանելով զմկունդն. կմ՛ զմկնդամամբ լանջապանակն ուրուք. որ է երկաթի զրահ կրծոց. և ըստ այսմ [illegible]. մկնդահար մահ կոչի առ [illegible]. զորոյ զմկնդատակումն մորթիւ լինէր, [illegible] կերպ լանջապանակն հարեալ սպանին:

Մկնդաւոր. ի. ու. աց. օք: || ունող, կմ՛ կրող զմկունդ. կամ վահանաւոր. և կմ՛ ասպարաւոր: ռամկ. [illegible]: 1. Մակ. 9. 4:

Մկունդ. մկնդոյ. ով. ոց. ովք: կամ ի. ու. աց. օք: || վահան. կամ ասպար: ռամկ. [illegible]:

Մկունք: || է յոգնականն մուկն բառիս. որ երբեմն առեալ լինի փոխանակ մկանանց մարմնոյ. որպ երեւի 'ի վերոյ: 'Ի գիրս [illegible]:

Մկրատ. ի. իւ. եց. օք: || կտրոց. որ է գործի երկաթեղէն, որով կտրեն զհատագործ երկաթեղէն, որով կտրեն զհաս. ռամկօրէն [illegible]. և զայլ ինչ նման: ռամկօրէն [illegible]:

Մկրատատուն. տան. տամբ. տանց. ամբք: || տուն կամ տեղի, ուր դոյ ատաղձ, յորում մկրատն զերծեալ մնայ:

Մկրատարան. ի. ու. աց. օք: || նոյն է Է վերնոյն:

Մկրատեմ. եցի. եա. ել: (ներգործ.) || կտրեմ երկաթով զմորթիս, կամ զանօթս. լուծանել ջրով զմարմինս, կամ զանօթս. և կամ զայլ ինչ նման: Մատ. 3. 11: Յով. 1. 31: Բայց մասնաւորապէս առեալ նշանակէ լուծանելն զերեխայս յանուն ամենասուրբ Երրորդութեան հօր, և որդւոյ, և հոգւոյն սրբոյ. որով միայն հնար է մտանել յարքայութիւն. Մատ. 28. 19: Գործ. 8. 38:

Մկրտիմ. եցայ. եաց. իլ: (ձայնակրաւ.) || լուծանել լինել ջրով: ռամկ. [illegible]. Մարկ. 7. 4: Թագ. 5. 14: Յովհ. 12. 7: Բայց մերթ նմանութեամբ առեալ նշանա_

կէ 'ի սոյն գիրս, զչարչարելն, կամ զտանջելն մինչև 'ի մահ. որով գրեթէ ոչ արտաքսք թաթաւեալ լուանի։ Մատթ. 20. 22։ և Ղուկ. 12. 50։ Իսկ 1. Կորն. 15. 29. ասէ առ. Զինչ գործիցեն, որք մկրտիցին վասն մեռելոց, անդրադարձաբար նշանակի մեռանիլ, պահել, և աղօթել վասն ննջեցելոց։

Մկրտիչ. տչի. աւ. աց. օք։ ‖ մկրտօղ. կամ լուացօղ։ Մատթ. 3. 1։ Դիմ՛ է սա նախադասուկ անուն մարդոյ։

Մկրտութիւն. թեան։ ‖ լուացումն մարմնոյ. կամ կահից, և կարասեաց, և այլոց իրաց։ Մարկ. 7. 4. և 8։ Մատթ. 3. 7։ Բայց մասնաւորապէս առեալ նշանակէ զմին յեօթն խորհրդոց եկեղեցւոյ. յորում բնական ջրով լուանան զմարմին երեխայից յանուն Հօր և Որդւոյ, և Հոգւոյն սրբոյ. որով լինի թողութիւն մեղաց՝ սկզբնականաց, և ներգործականաց. և մկրտեցեալքն զարդարեալք շնորհօք Հոգւոյն սրբոյ՝ լինին ժառանգ արքայութեան երկնից։ Հռովմ. 6. 4։ Եփես. 4. 5։ 1. Պետր. 3. 21։ Բայց երբեմն անդրադարձաբար նշանակէ 'ի սոյն գիրս զչարչարանս, կամ զտանջանս, և զմահ. յորս ոչ արտաքս իբրով թաթաւեալ՝ իբրև թէ 'ի ջուրս լուացեալ լինի։ Մատթ. 20. 22։ Ղուկ. 12. 50։

ՄՂ.

Մղեղ. ի. իւ. ից. իւք։ կամ աւ. աց. օք։ ‖ ունդ. այն մանրունած, կամ փոշի յարդից. կամ կեղևանաց չըջապատողաց զցորեանս, որք 'ի կալսին ցորենոյ մանրին, և յերկիր թօթափին։ Եսայ. 5. 24։

Մղեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) ‖ վարել. կամ ուժով 'ի բաց մերժել, կամ յառաջ տանիլ։ ռամկ. հրել. կամ դրդել։ Թիւ. 35. 20. և 22։ Բայց մինչ ասի. Մղել զպատերազմ. կամ զմարտ պատերազմի. նշանակէ, 'ի գործ դնել. կամ տալ պատերազմ. և կամ պատերազմել։ 1. Մակ. 9. 22։ Առակ. 20. 18. և 24. 6։

Մղձկիմ. եցայ. եաց. իլ։ (Հայցական.) ‖ հեղձամղձուկ լինել. կամ վասն անհնարին նեղութեան հեղձանիլ. կամ պայթիլ. որպէս հանդիպի կրքեան անկելոցն յանհնարին տագնապ, կամ որք կատաղին. և հալին իններ քսաւոր ախտիւ լինչ. ռամկ. խղդիլ. կամ ճաթիլ. և ըստ այսմ սահի, հեղձեալ մղձկիլ 'ի նախանձուէ. կամ մղձկիլ 'ի խորհրդոց իւր։ Բայց յատկապէս սահ զսրտէ, այսպէս. տաղտկութիւն, կամ թոյլն զառանցութեան մղձկեալ սրտին. կամ առ մղձկեալ սրտին ոչ ժուժել. և կամ մղձկեալ սրտիւ թափել զթոյնս յանձն ոչ. և այլն. Նարեկ. ի. և կէ։ և 'ի հին տպագրեալս։

Մղձուկ. ձկի. աւ. աց. օք։ ‖ է սաստիկ մղձկիլ բայէն. որով մերթ նշանակի մղձկումն. այն հեղձումն. կամ պայթումն սրտի։ Իսկ մերթ մղձկեալ. այն հեղձեալ. կամ պայթուցեալ սրտիւ։

Մղոն. ի. աւ. աց. օք. ‖ է չափ տարածութեան տեղւոյ, որով նշանակի ութ նաւպարեզն, այն հազար երկրաչափական քայլն. որ ըստ հասարակ քայլից մարդկան է երկուհազար քայլափոխ, և փոքր ինչ աւելի։ Բայց եթէ չափեսցի սա դրկաւ, այն ղուլաճով, յայնժամ մի մղոնն պարունակէ զութն հարիւր երեսուն և չորս գիրկս. որ է ընթացք երրորդ մասին միոյ ժամու։ ռամկ. մղ. Մատթ. 5. 41։ Արդ՝ այս է հասարակ մղոնն, որ և կոչի իտալական. վասն զի են և այլք մասնաւորք, որք ըստ այլ և այլ տեղւոյ՝ այլ և այլ կերպիւ չափին, բայց յայնժամ ունին զյատկացուցիչս. այն մղոն ալամանաց. մղոն գաղղիացւոց. և այլն։ տե՛ս և զբառն Մղոն։

Մղոնախաղաց։ (Նախդրիւ հոլովի.) ‖ միոնաւ խաղացօղ. այն յառաջ գնացօղ. կամ մղոն ընդ մղոն յառաջացօղ։ Իսկ մերթ նշնկէ զայն, որ լինի մղոն առ մղոն յառաջ գնալով. կամ զմղոնս թուելով. և ըստ այսմ սահի. մղոնախաղաց տանաչափութեն։

Մղտագոյն. գունի. իւ. ից. իւք։ ‖ թխագոյն. կամ նսեմագոյն. և կամ մթագոյն։

Մղտագունութիւն. թեան։ ‖ թխագունութիւն. կամ սևութիւն. կամ նսեմութիւն. և կամ մթութիւն։

Մղտանամ. ացայ. ցիր. անալ։ (Ընդունիչ.) ‖ մթանալ. կամ նսեմանալ. և կամ խաւարիլ. և ըստ այսմ սահի 'ի հին տպագրեալս, Մղտացաւ օդս ընդ ամ աշխարհ. ռամկ. մթըննալ։

Մղտապատ. ‖ տե՛ս զՄխտապատ։

Մղտափարատ։ (Նախդրիւ հոլովի.) ‖ փարատօղ մղտոյ. այն մթութեան, կամ աղջամղջի, որպիսին է արեգակն։ Նարեկ. 'ի ժիւփոխարանն։

Մղօն. կամ մղոն. ի. իւ. ից. իւք. ‖ նշանակէ սա 'ի մղել բայէն. որպէս և կարօնն 'ի կարել բայէն. և նշանակէ մղումն։ Եւ մերթ ընդ բայի շարակցի այսպէս, մղօն տալ. կամ մղօն տալ. և նշանակէ մղել. ռամկ. հրել։ և ըստ այսմ սահի 'ի հին տպագրեալս. Մղոն տուեալ ընկեց զոմն 'ի վայր յերիվարէն։

ՄՆ

Մնամ. ացի. ա. ալ։ (Չէզոք.) ‖ կալ. կամ զկայ առնուլ. և կամ լինիլ 'ի տեղւոջ իմիք. Գործ. 15. 34։ և 19. 22։ Իսկ մերթ թողանիլ. կամ յաւելանալ յիմիքէ։ Ելից. 10. 15. և 19։ և 12. 10։ Մերթ ևս մնացական լինիլ. կամ յարակայիլ. և կամ տևել, և ոչ անցանել։ Սաղմ. 110. 3։ Եփես. 1. 11։ Երբեմն ևս նշանակէ սպասել. կամ ակն ունել. և ըստ այսմ իմանի մինչ ասի, մնալ ումեք. Տոբ. 2. 2։ և 5. 9։ Գործ. 10. 24։ տե՛ս և 'ի բայն Կամ։

Մնաս. ի. իւ. ից. իւք։ ‖ է անուն քաշմութեան դրամոյ. և է կշիռ. մին յունական, որ ըստ ծանրութեան է հարիւր տրամ. իսկ ըստ արժողութեան իբր ութսուն տասանն մնա-

չիք, որ փոխանակ զանքանքն․ Ղուկ․ 19․ 13։ Իսկ մնասն է եբրայական, որ թէ էջէ ար ծանթեայ, ըստ ծանրութեան է վաթսուն սիկղ արծաթոյ, որ առնէ երկուհարիւր քառասուն դրամ։ Այլ ըստ արժողու թեան է քառասուն և չորս մնաչէլ, որ դա տաւ․ 1․ Եզր․ 5․ 45․ 3․ Եզր․ 7․ 7։ Այլ դայս է հասարակ առաւելն եբրայական մնա սին։ Բայց քանզի ոչ նշանակէ սա զան սակ ինչ դրամոյ, այլ զկշիռ․ վն այնո րիկ առեալ լինի և այլով հաշուէիւ, քան զի երբեմն մի մնասն երեւալ լինի փոխա նակ քսան, կմ քսան և հինգ սիկղաց։ Եւ երբեմն փոխանակ յիսուն սիկղաց, ող ասացաւ ի բանն մնն։ Իսկ երբեմն փո խանակ եօթանասուն սիկղաց․ և ըստ այսմ առեալ լինի Եզեկ․ 45․ 12․ ուր ասի, քսան սիկղ․ և քսան և հինգ սիկղ, և ի քսան և հինգ սիկղէ եղիցի ձեզ մնասմի։ Իբր թէ ասէ․ եօթանասուն սիկղն եղիցի ձեզ մնաս մի․ վն զի գնէ երիցս քսան, և երկիցս հինգ, որք յայտնապէս առնեն զեօթա նասուն։

Մնացական․ ի․ աւ․ աց․ օք։ ‖ մնացօղ․ կմ կայուն․ կմ տևողական․ և կմ մշտական։ Խորէն․ բ․ գլ․ 77։ Յոհն․ 1 ․ հատ․ լէ։

Մնացորդ․ ի․ աւ․ կմ իւ․ աց․ օք։ ‖ մնաց ուած, որ մնացեալ իցէ․ կմ այն՝ որ մնայ յետոյ․ կմ յաւելուած․ և կմ նշխար։ Յուդիթ․ 15․ 8։ Յովէլ․ 1․ 4։ Հռոմ․ 9․ 27։ Եւ յայտնանէ երկու մատեանք ծաւալեալ գր րոց կոչեցան գիրք մնացորդաց․ ըստ ո րում՝ ի նմ ձառի զիրաց մնացելոց՝ ի պատ մութեանց գրոց թագաւորաց։

Մնացուած․ ոյ․ ով․ ոց․ ովք։ ‖ մնացորդ․ կմ յաւելուած․ ռամկ․ մնացած։ Թուոց․ 16․ 14։ և 36․ 37։ Իսկ 1․ Մնաց․ 29․ 15․ նշանա կէ զմնացումն․ կմ զյամեցումն․ և կմ ըզ տեւողութիւն։

Մնացուցանեմ․ ցուցի․ ցո․ ցանել։ (անցո ղական․) ‖ թողուլ զմնացուածս․ կամ մնացական առնել։ Նարեկ․ խը․ ՚ի վերջ հուրց․ է։

Մնեմեայ։ ‖ անս զբանն Երեմիէ։

Մնով․ մնոց։ ‖ անս․ զՄուն։

Մնջեմ․ եցի․ եա․ ել։ (չէզոք․) ‖ ձայն հա նել նմ աղաւնւոյ, կմ տատրակի, որ է ող բագին, և հեծեծական։ Եւ ասացաւ մնջ չել, իբր թէ ոչ զմնչանս ձայնել, որ հա նել զձայն իբրև զնն, որք խափեն չըթամբք արձակեն զմեղմ ձայն․ որում յոյժ նման է ձայն աղաւնւոյ, և տատրակի․ Եսայ․ 38․ 14։ Եզեկ․ 7․ 16։ Նաւում․ 2․ 7։

Մնջումն։ (Նախադրիւ հոլովի․) ‖ մնջումն, որ ձայն հանումն աղաւնւոյ։ Յն որրի։

ՄՇ

Մշակ․ ի․ աւ․ աց․ օք։ ‖ աշխատաւոր, որ կայանալ լինի ՚ի վարձու վն երկրագոր ծութե․ և կմ հողագործ․ որ նա՝ որ գոր ծէ զանդաստան, կմ զայգի՝ հերկելով և տրամանելով․ կմ անկելով՝ և քաղելով․ և այլն։ ռամկօրէն էրինճի․ կմ չիֆթճի․ կմ պախճաւան։ 1․ Եզր․ 4․ 6։ Մատթ․ 20․ 8։ Յակ․ 5․ 7։

Մշակագործ․ ի․ աւ․ աց․ օք։ ‖ մշակօղ․ կմ երկրագործ։

Մշակագործեմ․ եցի․ եա․ ել։ (Ներգործ․) ‖ մշակել․ ըստ այսմ Լամբրոն․ առանկոբա նաւորս մշակագործեն։

Մշականոց․ ի․ աւ․ աց․ օք։ ‖ տեղի ուր ըզ նակէն մշակք, կմ ուր կան երկրագործք առ՝ ի կալեալ լինիլ ՚ի վարձու։

Մշակեմ․ եցի․ եա․ ել։ (Ներգործ․) ‖ գոր ծել զերկիր․ կամ դարմանել զտունկս․ և կմ զայլ մշակութիւն առնել․ և ըստ այսմ ասի՝ մշակել զերկիր, զայգիս, ըզ տունկս, կմ զորթս․ և այլն․ Նարեկ․ ժէ․ և ղթ․ և Շնորհալին։ Եւ յայտնանէ առեալ մշակել ասի մատակարարելն, կամ պաշ տելն զեկեղեցական խորհուրդս, և կամ քարոզել ժողովրդեան զբանն այ․ ըստ այսմ Աչգաթ․ Զբանս բժշկական օգտակար աց և մարմնոց մշակեմք։ ըստ այսմ և Յոհէ․ 2․ հատ․ լբ․ ասի՝ զանապատականաց․ եղեալք ՚ի մեղաց՝ զանէրս մշակեն, այսինքն կարարեն կամ՝ ՚ի գործ ածեն։

Մշակութիւն․ թեան։ ‖ գործ․ կմ պաշտօն մշակի․ և կամ երկրագործութիւն։ ՚ի վերջ հուրց․ բ։ Եւ յայտնանէ առեալ զնոյն փո խանակ մատակարարութեան, կմ անմեռո թեան, և կամ պաշտամանց հոգւոց, և ա ռաջնորդաց։ Յոհէ․ 2․ հատ․ ժբ։ ՚ի վերջ հուրց ժդ։ Աչգաթ։

Մշկահոտ։ (Նախադրիւ հոլովի․) ‖ անոյշ զհոտ մշկոյ․ կմ իբրև զմուշկ զանուշահոտ ութիւն բուրօղ․ ռամկ․ միսկի հոտ անոյշ։

Մշտաբար։ (մակբայ․) ‖ մշտնջենաւո րաբար․ կամ ՚ի մշտնջենական ժամանա կաց հետէ։ Յն որրի։

Մշտաբացիկ։ (Նախադրիւ հոլովի․) ‖ միշտ բացօղ։ Իսկ մերթ այն, որ միշտ բացեալ լինի․ կամ որ միշտ ՚ի բաց կայ։ Մերթ և ս նշանակէ զայն, որ վերաբերի առ մըշ տական բացումն․ և կմ լինի միշտ բանա լով․ և ըստ այսմ ասի՝ մշտաբացիկ թա փանցանցութիւնք։ Նարեկ․ ղթ։

Մշտաբոյծ։ (Նախադրիւ հոլովի․) ‖ միշտ բուծանօղ․ կմ սնուցանօղ։ Իսկ մերթ միշտ բուծեալ․ կմ որ միշտ սնեալով սնանի։ Նարեկ․ ձղ։

Մշտաբուղխ։ (Նախադրիւ հոլովի․) ‖ միշտ բղխօղ յինքենէ զհեղուկ ինչ․ և ըստ այսմ ասի մշտաբուղխ աղբիւր, կամ աղբերք և այլն։ Լամբրոն։ Իսկ մերթ այն որ միշտ բղխի և հոսի․ որպիսի է ջուրն, կամ ա ռիւծն յարատեւ բղխեալ յինքէ։ Լամբրոն և Աչգաթ։

Մշտագեղեցիկ։ (Նախադրիւ հոլովի․) ‖ այն որ միշտ խնամարաւ և մթով պայծառ կայ․ կմ յորում է միշտ գեղեցկութիւն․ որպիսի է գը ժոխքն։ Իսկ մերթ նշանակէ զայն, որ լի նի ՚ի մշտնջենական գեղեցկութեան, կամ յանմեղ

խաւարի։ Ըստ այնմ, Նարէկ. ժէ. ընդ աչաց֊ ուէացն նեղելոց մշտադիտէր խարխափանօք։

Մշտադալար. ի. իւ. ից. իւք։ ‖ այն՝ որ է միշտ դալար. կամ որ ունի զմշտակայ կանաչութիւն. և կմ անթառամ։

Մշտադատ։ (Նախդրիւ հոլովի.) ‖ միշտ դատող. կմ հանապազ դատեցեալ. և կմ որ լինի մշտակայ դատմամբ։ Նարէկ. հ։

Մշտազեղ։ (Նախդրիւ հոլովի.) ‖ Նա, որ միշտ զեղու յինքենէ զինչ. և կմ որ միշտ զեղանի, կմ ծորեալ հոսի. և ըստ այսմ ասի. մշտազեղ արտասուք։ Լամբրոն։

Մշտախաղաց։ (Նախդրիւ հոլովի.) ‖ միշտ խաղացող. որով մերթ նշանակի նա, որ միշտ խաղուց պարապի։ Իսկ մերթ նա, որ միշտ յառաջ խաղայ. կամ հանապազ շարժի, կմ փոփոխի. և ըստ այսմ ասի. մշտախաղաց միտք. կմ կարգ. և այլն։

Մշտախոհ. հի. իւ. ից. իւք։ ‖ միշտ խորհող. կմ հանապազ զմտաւ ածող, և քննող։

Մշտածին. ծնի. իւ. ից. օք։ ‖ Նա, որ միշտ ծնանի զինչ։ Եւ մերթ նա, որ միշտ ծընեալ լինի. կմ արտադրի. և կմ յառաջագայի։ Նարէկ. գլթ։

Մշտակայ. ի. իւ. ից. իւք։ ‖ այն որ՝ միշտ կայ. կմ յարակայ. կմ յարամնաց. և կմ մշտնջենական։ Յհ. ոսկ։

Մշտակայլակ։ (Նախդրիւ հոլովի.) ‖ ունող զմշտահոս կայլակս. զր կաթիլս. կմ մշտաբուղխ. և կմ մշտահոս։ Նարէկ. 'ի գովէստ առաքելոց։

Մշտակառոյց։ (Նախդրիւ հոլովի.) ‖ միշտ կառուցանող. կմ կազմող։ Իսկ մերթ այն, որ միշտ կառուցեալ, կամ հաստատեալ կայ. և կմ որ ունի զմշտնջենաւոր ամրութիւն։ ըստ այնմ. Նարէկ. հէ. մշտակառոյց հիմամբ զսա հաստատէ։

Մշտակատար։ (Նախդրիւ հոլովի.) ‖ միշտ կատարող. կմ միշտ կատարեալ. կմ որ հանապազ կատարի։

Մշտակարկառ։ (Նախդրիւ հոլովի.) ‖ միշտ կարկառող. զր մատուցանող, կմ ընդարձակող. և մերթ միշտ կարկառեալ. զր է արձակեալ, կմ յառեալ։ և ըստ այսմ յորժամ ոք զաչս իւր միշտ սեւեռեալ ունի յանձն ոք, ասի. մշտակարկառ 'ի նա հարեալ զակն։

Մշտակիր. կրի. աւ. աց. օք։ ‖ միշտ կրող, կամ բարձող յինքեան զինչ։ Իսկ մերթ միշտ կրեցեալ. կմ բարձեալ. կմ որ միշտ յիմիք տարեալ լինի։ Նարէկ. լդ։

Մշտակոխ։ (Նախդրիւ հոլովի.) ‖ միշտ կոխող. կմ միշտ ոտնակոխ առնող։ Իսկ մերթ այն, որ միշտ կոխի, կմ միշտ կոխան ոտից լինի. որպիսիք են արքունի ճանապարհք։ Լամբրոն։

Մշտահայց։ (Նախդրիւ հոլովի.) ‖ միշտ հայցող. կամ այն՝ զոր միշտ հայցեն, և խնդրեն։ Իսկ մերթ նշանակէ զայն, որ լինի անդադար հայցելով. կմ որով զինչ միշտ հայցեմք. և ըստ այսմ ասի. մշտահայց մաղթանք. կմ աղօթք։ Լամբրոն։

Մշտահարուստ։ (Նախդրիւ հոլովի.) ‖ Նա՝ որ է միշտ հարուստ. կմ որ ունի ըզ մշտնջենաւոր հարստութիւն։ Նարէկ. դ։

Մշտահեղ։ (Նախդրիւ հոլովի.) ‖ տես ըզ Մշտահոս։

Մշտահոս. ի. իւ. ից. իւք։ ‖ միշտ հոսող զհիւթ ինչ. կմ որ միշտ բղխի, և հոսի։ Եւ մինչ ասի, մշտահոս բղխել, նշանակի՝ միշտ հոսելով բղխել։ Լամբրոն։

Մշտահոսութիւն. թեան։ ‖ մշտակայ հոսումն. կմ յարակայ բղխումն։ Նարէկ. ղդ։

Մշտահոտ։ (Նախդրիւ հոլովի.) ‖ միշտ բուրող զհոտ. կմ որ է միշտ հոտաւէտ։

Մշտամատոյց։ (Նախդրիւ հոլովի.) ‖ միշտ մատուցանող։ Եւ մերթ այն, որ միշտ մատուցանի, կմ ընծայի, և ըստ այսմ ասի՝ մշտամատոյց աղօթք։ Նարէկ. հա։

Յարանուանեմ. եցի. եա. եղ: (Ներգործ.) || անուանել, կմ յորջորջել զինչ այնպիսի անուամբ՝ 'ի յարանուանօղ տեսակէ խօսքէ, որգոն, 'ի չքաւորութէ չքաւոր. 'ի զօրութէ զօրաւոր. և այլն: Իւ կամ 'ի նախադաղափար անուանէ ինչէ, որպ 'ի պօղոսեան. 'ի յերկնից՝ երկնաւոր. և այլն:

Յարանուն. ուան. ուամբ. անց. ամբք: || է բառ փիլիսոփայական, որով նշանակի անուն կմ եզրն՝ որ յիմեքէ տեսակէ յարանուանի զիտողէ ումե զկոչումն՝ բղխելով 'ի նմանէ ը նոյն ումե զկոչումն՝ բղխելով 'ի նմանէ ը ձայնիւն և ըստ կրին, որպ 'ի սպիտակութէ սպիտակ. յիմաստութէ իմաստուն. և այլն: Սոյնպէս և ըստ քերականաց են անուանք յարանուան յորջորջին. ը ցական անուանք յարանուան յորջորջին. որ 'ի ուրուք բղխեն՝ 'ի նախադաղափարաց. որպ 'ի հերակլեայ՝ հերակլեանք. 'ի յաքքայէ աքքայեանք. 'ի տնէ տնրական. և այլն:

Յարանուանապէս. կամ յարանուանաբար: (մակբայ.) || ըստ զյարանուն. կմ յարանուանելով:

Յարաշարժ. ի. իւ. ից. իւք: || յարաժամ շարժօղ. կմ միշտ շարժուն և երերուն. և կմ այն՝ որ բնաւ ոչ ունի զհաստատունութի: Նարեկ. հէ:

Յարաշարժեմ. եցի. եա. եղ: (Ներգործ.) || յարաժամ շարժել. կմ միշտ փոփոխել:

Յարաշեշտ. ի. իւ. ից. իւք: || այն՝ որ միշտ շեշտի. կմ միշտ շեշտեալ 'ի գործածելի. որ այնի է մակբայն մի: Իսկ մերթ նա՝ որ միշտ շեշտէ. կմ զշեշտ 'ի գործածել: Իսկ ըստ հնոց ոմանց նշանակի սովոր բառն այն, որոյ վերջին թեր վանկն է շեշտաւոր. կամ ձայն. զոր և կոչեն յարաշեշտաւոր, կամ թէ յարաշեշտաձայն. որպ այս կուլեր:

Յարապարոյկ. ունկի. աւ. աց. օք: || այն՝ որ յար պարունակի. կամ միշտ պարունակեալ: որպիսի է մակբայս զինչ կաւ վարի: Մերթ ես նշանակի այն՝ որ յարի իւր բառին. կմ 'ի պարունակութիւն: Իսկ ըստ հնոց ոմանց նշանակի սովոր բառն, որ միով վանկիւ յառաջ քան զվերջին վանկն պարունակեալ. որպ այս բանեցէք:

Յարապատուղ: (Նախդրիւ հոլովի.) || միշտ պտուղ բերօղ. կմ միշտ ունօղ զպտուղ 'ի վերայ իւր: Նարեկ. 'ի մեկն. երգոց:

Յարատացեմ. եցի. եա. եղ: (Ներգործ.) || յար տանել. կմ միանգամայն տանել. ընդունել: Իսկ մերթ սոսկ տանել. ընդունել:

Յարատանիմ. եցայ. եաց. ից: (ձայնակր.) || տես զՅերատանիլ:

Digitized by Google

Յարատև: (Նախդրիւ հոլովի·) || յարաժամ ևեթ· կմ մշտատև· և կամ մշտընջենաւոր:

Յարատևանամ· ացայ· ացիր· անալ: (ընդ. միջ.) || տե՛ս զՅարատևել:

Յարատևեմ· եցի· եա՛· ել: (չէզոք·) || մշտատևել· կմ մինչև ցվախճան կալ մնալ:

Յարատևութիւն· թեան: || հանապազ տևողութիւն· կմ խաղաղ կալն և մնալն:

Յարատոկ· տոկի· իւ· ից· իւք: || մշտատապաւորեալ· կմ տապաւորող: Իսկ մերթ համանման· կմ համահանդերձ· և կամ համատոկ:

Յարացոյց· ցուցի· իւ· ից· իւք: || օրինակ· կմ նմանութիւն· կմ ձև· կմ գաղափար· և կմ նախատիպ· Լամբրօն· և Յն ոսկի: Ըստ այսմ յարացոյց կոչին և իդէայքն, որ է գաղափար ըմբռնեալ ի միտս արուեստաւորին· ըստ որոյ նմանութեան առնէ զարտաքրեալ գործն: Իսկ ըստ փիլիսոփայից առեալ՝ է անուն ինչ ձեռնարկութեան, յորում՝ ի միոյ· կմ ՝ի միւսոյ նմանեաց զնմանն մակաբերեմք· որպիսի է այս· արբեցութիւն կորոյս զաղէքսանդր· ապա ուրեմն և զքեզ կորուսցէ, եթէ ոչ զգուշասցիս ՝ի նմանէ:

Յարգ· ի· իւ· ից· իւք: || է արմատ յարգել բային· որոյ մերթ նշանակէ՝ յարգոյ· կմ յարգելի· և կամ պատուական: Իսկ մերթ արժողութիւն· կմ գին· և կմ շահ· ուստի և յարգելն նշանակէ շահեցուցանել: 1· Թագ· 13· 21:

Յարգահատեմ: || տե՛ս զԱրգահատեմ:

Յարգանք· անաց· օք: (անեզական:) || յարգութիւն· կմ շուք· կմ պատիւ· և կմ մեծարանք: ռամկ· շնորհք: Ղուկ· ԼԴ· ԽԶ· և ԾԹ:

Յարգաւոր· ի· աւ· աց· օք: || պատուաւոր· կամ պատուելի:

Յարգաւորեմ· եցի· եա՛· ել: (Ներգործ·) || յարգաւոր առնել· կմ մեծարել· կամ պատուել· և կմ շուք դնելով փառաւորել: Ղուկ· ՀԵ:

Յարգաւորութիւն· թեան: || յարգոյութիւն· կմ մեծայարգութիւն· կմ պատիւ· և կամ մեծարանք: Ղուկ· ԾԶ· և ՂԶ:

Յարգեմ· եցի· եա՛· ել: (Ներգործ·) || շուք դնել· կմ մեծարել· և կամ պատուել· Ղևտ· 6· 8: Գործ· 5· 13: Մերթ և մեծ վարկանիլ· և կամ համարիլ· ըստ այնմ Ղուկ· ԾԶ· Այլ դու բարերար՝ յարգես և զգուանիլ՝ զքեզ՝ բանական անկենդանութեան, այսինքն համարիմ բանական լինիլ առ կենդանութիւն: Այսպէս և 1· Մնաց· 27· 24· ուր ասի· ոչ յարգեցաւ ՝ի գիրս բանից աւուրց Թագաւորին Դաւթի, յա ոչ համարեցաւ, կմ ոչ կարգեցաւ: Մերթ և նշանակէ վարել, կամ ՝ի գործ դնել· և կմ ՝ի գործ ածել· ըստ այնմ ՝ի Ճառս ...· ծզ· ոչ բարձրք յարգեր զգործ եկեղեցւոյն: Այսպէս զարծածն, կմ զդրամն ՝ի գործածելով շահեցուցանելն յարգել ասի· ռամկ· բանեցնել: Ղուկ· 19· 13: Ղուկ· ԽԶ· ՁԳ: Իսկ երբեմն նշանակէ գործել· կմ կատարել· ըստ այնմ Ոսկ· 1· հատ· ԽԹ· Այլ ինքն անձամբ իւրով յարգէր, և ինքեամբ ՝ի գլուխ հանէր զամ: Ըստ այսմ է և ՝ի Յոբ ոսկին, ուր ասի· մարգարէից բանքն յարգեին, առաքելոցն վճարեին:

Յարգի: (Նախդրիւ հոլովի·) || յարգոյ· կմ նախելի· կմ պատուական· և կամ ազնիւ· ըստ այնմ Ոսկ· 1· հատ· ԼԲ· յարգի և մեծ եմք քան զձեզ: Իսկ մերթ՝ յարգող· կմ մեծարող· և կմ մեծ համարող· և ըստ այսմ ասի· Ոսկ· 1· հատ· Բ· Ն՛ր միայն յարգի լինիցուք վկայութեան, ա յարգօղ լինիցուք:

Յարգոյ· ի· իւ· ից· իւք: || յարգելի· կամ մեծարելի· կմ ազնիւ· կմ պատուական· կմ երևելի· կմ մեծավարկ· և այս ասի զմարդոյ, զգործոյ, զբանից, զաւուրց, զպտղոց· կմ զարդեանց· և զայլոց նմանեաց: Մծբն· ԺԹ: Խորէն· Գ· գլ· 51: Ոսկ· 1· հատ· ԽԸ: և Լամբրօն: Մերթ և պիտանի· կմ շահեկան· և կմ արդիւնաւոր: Իսկ մերթ յարգօղ, ա նա՝ որ ՝ի գործածելով զարծաթ, կմ զդրամն՝ շահեցուցանէ· որպիսիքն են վաճառականք· Մծբն· ԺԹ: Եւ բաստ այս երբեմն և գրի արգոյ: Աղթոն: և ի Շարականս:

Յարգութիւն· թեան: || տե՛ս զՅարգանք:

Յարգունեմ· եցի· եա՛· ել: (Ներգործ·) || հաստատել· կմ պնդել:

Յարգունութիւն· թեան: || հաստատութիւն, կմ պնդութիւն:

Յարդ· ի· իւ· ից· իւք: || մանրուածք հընձեալ և չորացեալ եղեգանց ցորենոյ· գարւոյ, և այլոց նմանեաց· զոր արկանեն ՝ի կեր գրաստուց, կմ խառնեն ընդ շաղախս· և կմ ՝ի զանդուածս աղիւսոյ· ուր առնէին հրէայքն յայնժամ կղերութիւն փարաւոնի: ռամկ· յարդ· և տաճկերէն սաման: Ծննդ· 24· 25: Ելից· 5· 7· և 11· և 12:

Յարդարեմ· եցի· եա՛· ել: (Ներգործ·) || հանդերձել· կմ պատրաստել· կամ կազմել· կմ յօրինել· և կմ կարգել· 2· Մակ· 15· 20: Զաք· 10· 3: Մատթ· 12· 44· Իսկ մերթ՝ ներգործել· կմ առնել· և կմ գործել: ռամկ· ընել· կմ շինել: Ոսկ· 2· հատ· ԽԷ· ԼԺ· ԼԳ: Երբեմն և առեալ լինի փոխանակ ՝ի լոյս ածելոյ· կմ արտադրելոյ· և կմ հնարելոյ· ըստ այնմ Խորէն· Բ· գլ· 63· Այլ հերձուած յարդարեաց յինքենէ· ա հնարեաց:

Յարդարիչ· րչի· աւ· աց· օք: || յարդարօղ· ա հանդերձօղ· կմ յօրինօղ· կմ կազմօղ· և կմ կարգաւորօղ: Խորէն· Գ· գլ· 5: Իսկ մասնաւորապէս առեալ յարդարիչ կոչի մկրատն ճրագի, ը որով յարդարէ ըզծայր պատրուգին: ռամկ· ճրագի մաղաս· կմ ...: Ելից· 37· 17:

Յարդգող· ի· իւ· կմ աւ: || է լայնածիր շրջանակ ինչ՝ յարաժամ երևեալ յերկինս ՝ի պայծառ գիշերի, որ իբրև զամպ անօսր

և ապխտակ՝ ճանապարհ գործեալ՝ ձգի 'ի հարաւ կուսէ դէպ 'ի հիւսիս՝ խոտորնակի ընկողմանելով. և ձևէ զկենդանակերպից գօտին 'ի յաղեղնաւորն և 'ի յերկաւորն: Արդ՝ առ ըստ ճշմարտագոյն կարծեաց բնախօսից՝ է թանձրագոյն և լուսընկալ աստղանոծ մառանք համատաւթե. և կմ անհամար բազմութիման րիկ աստեղաց, որք յաղագս սաստիկ հեռաւորութե և խտութե և խառնելոյ 'ի միմեանս ճառճանչիցն երևին շարունակել ընդ միմեանս, և արձակեն զլոյս աղօտ՝ սպիտակ իբրև զկաթն. վն որոյ ոմանք կոչեցին զսա ծիր կաթին: Այլ 'ի մեզ անուանեցաւ յարդգող. կամ մանաւանդ՝ հետք յարդգողի՝ վն առասպելացն, զոր պատմեն զվահագնէ նախնւոյն հայոց: Քանզի ասեն, թէ սա գողացեալ 'ի խիստ ձմեռան զյարդ շաւ 'ի բարշամայ նախնւոյն ասորեստանեայց՝ փախչէր. և 'ի փախչելն թօթափումածք յարդից զճանապարհօքն սփռեալ՝ գործէլին հետս. և զի երկնային կաթնածիր շաւղանակն նման էր այնմ հետոց, և իբր թէ էր նոյն հետք. (ոմն ոմանք 'ի կռապաշտից առասպելաբանէին, համարելով զնա յարդիւքն հանդերձ յերկինս փոխուցեալ. և անդ 'ի փախչելն հետս գործեալ.) վն այնորիկ կոչեցաւ 'ի նախնի բնախօսից, հետք յարդգողի՝ իբր թէ շաւիղ վահագնի գողացողի զյարդ:

Յարեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || կցել. կմ մածուցանել. կմ միաւորել. կմ մերձեցուցանել. և կմ յանկուցանել: Եւնթ. 19. 4: և 1. Մակ. 2. 67:

Յարեցուցանեմ. ցուցի. ցո. անել: (անցող.) || նոյն է ընդ վերնոյն: Խորէն. բ. ղր. 34: և Աշգար:

Յարեւանամ. ացայ. ացիր. անալ: (չէզ.) || նոյն է ընդ բայիս յարել. ոմն և հետևանալն ընդ բային հետևել. և ըստ այսմ ասի. ուղին լինէ յարեանայ բայից. յն ուղին պարագայք յարելն, կմ զհետ երթալն բայից:

Յարընթաց: (Նախդրիւ հոլովի.) || յարաժամ ընթացող. կմ միշտ վազող: Նարեկ. 'ի գով. առաքելոց:

Յարթմնի: || է առ նախդրիւ տրականն. կմ ներգոյականն արթմնի բառին, որ է արթնութի. ըստ այսմ Շնորհալին. որք 'ի մեղաց անկեալ ադմի. 'ի քուն մահու են յարթմնի. յն յարթնութե. կամ արթուն գոլով ըստ մարմնոյ:

Յարիմ. եցայ. եայց. իլ: (Հայնակ.) || կցիլ. կմ միաւորիլ. կմ մերձենալ. կմ զհետ երթալ ումեք. և ըստ այսմ ասի՝ յարիլ միոյ իրի 'ի միւսն. կմ յարիլ 'ի կախարդս. կմ 'ի մեկուսս և կմ յարուցեալ ասաւորութք: ումն. հշիւ. կմ Խանութիւ ըլլալ: Ղևտ. 19. 31: Թուոց. 36. 7: Ղուկ. 15. 15: Գործ. 9. 26: Եւ յայսմանէ առեալ՝ յարել՝ ասի յեր լինէ կուռելն. յն կպչելն. կմ 'ի միոյ 'ի միւսն փոխելով՝ յեցեալ մնալն. ոմն յարեցաւ բարբառուն

Ներեմանոյ 'ի գետեղի: 4. Թագ. 5. 27:

Յարկ. ի. աւ. աց. օք: || տուն. կմ բնակարան: Յոբի. 2. 16: Իմաստ. 9. 15: Եսայ. 22. 16: Իսկ մերթ մասնաւորապէս առեալ՝ նշնկէ զապարանս, կմ զպալատս. ումն. սարայ. Առակ. 30. 28: 'ի վերայ կարգ. ժդ: Երբեմն և զխորանն, կամ զտաղաւարն: ումն. չատր: Ելից. 39. 32: և 40. 2: Սաղմ. 17. 12: Բայց երբեմն յարկ կոչին իւրաքանչիւր դստիկոնքն տանց, կմ սենեակք դստիկոնաց. և ըստ այսմ ասի, առաջին, կմ միջին, և կմ երրորդ յարկ: ումն. փօնդ խուն: 3. Թագ. 6. 8: Եզեկ. 41. 7: Դարձ. երբեմն և նշանակէ զձեղունն. յն զծածկոյթն, որով տունք. կմ այլք բնակարանք ծածկին առ 'ի պահպանել բնակչաց նց յանձրևոյ. և 'ի ցրտոյ. և յայլոց այնպիսեաց: ումն. պան ծածք: Ծննդ. 19. 8: Մարկ. 2. 4: Ղուկ. 7. 6: Այսպէս և 'ի հնումն ծածկոյթ խորանին, կամ սեղանոյն յարկ կոչեցաւ. ըստ որում էր նց իբրև զձեղուն: Ելից. 37. 26: Եզեկ. 40. 43:

Յարկած. ի. իւ. ից. իւք: || պատահար. կմ դիպուած. և կմ փորձանք: ըստ այնմ. Շնորհալին. Անմեղ աղայոց զոլ պահպան, 'ի յարկածիցն դիւականն: Սակայն բառս այս հասարակօրէն գրի՝ արկած. և տառն յ՝ է նախդիր. ոմն երևի 'ի Նորէն և յայլ բազում տեղիս:

Յարկածածուկ: (Նախդրիւ հոլովի.) || յարկաւ ծածկեցեալ. որով մերթ նշանակի այն, որ ունի 'ի վր իւր զձեղուն. յն զծածք. և ըստ այսմ ասի՝ յարկածածուկ բնակարան, կմ փողոց: Իսկ մերթ նա՝ յորոյ վր վիճեալ յարկ բնակարանին՝ ծածկեալ է զնա: Բայց մինչ ասի՝ յարկածածուկ սատակումն. իմանի՝ մահ, որ պատճառի 'ի ծածկեալ մնալոյ 'ի ներքոյ փլուզեալ յարկաց: 'ի հին դպրութե:

Յարկանեմ. յարկի. յարկեալ. յարկցէ. յարկեա. ել: (Ներգործ:) || յարկաւ ծածկել զտունս, կմ զայլ բնակարանս. և կմ կազմել 'ի վր շինուածոց զձեղունս. յն ըն ծածքս: 3. Մնաց. 34. 11: և 2. Եզր. 6. 4: Բ այսմ է և Եսայ. 14. 11. ուր ասի՝ 'ի վր քո որդն յարկցի. յն որդն յարկ և ծածկոյթ լիցի: Բայց Յոբ. 8. 15. ուր ասի յարկանել ձեռին նր, իմանի 'ի արկանելն ըն ձեռն իւր. զի տառն յ՝ նախդիր է, և ոչ բնական:

Յարկացուցեմ. եցի. եա. ել: (Ներգոր.) || ծագիսս 'ի կացուցանել բայէն, ոմն յարաացեալն 'ի առնուլ բայէն. և նշնկէ յար կացուցանել. կմ մերձ կցուցանել: Իսկ մերթ առեալ ցանել. կմ տանել. կմ ցուցանել. և կմ յայտնել. և ըստ այսմ փոխաբերական յարկալոյ, զդիտացութե յայտնէ, ասի յարկալոյ՝ ծնեալ ցոյց: Այսպէս փոխաբերական առեալ՝ ցուցանել, և կմ զներգործութե, և ըն զելիս առնել. և կմ կիրս ցուցանել, ասի յարկացուցել:

Յարկաւոր. ի. աւ. աց. օք: || ունօղ զյարկ. յն այն, որ 'ի վր իւր տարածեալ ունի

զձեղուն, ՚ի գծանգ, որպիսիքեն ձեղուանոր տունք, կամ փողոցք։

Յարկաւորութիւն. թեան։ || յարկաւոր գոլն, կմ ունիլն զյարկ, ՚ի գծանգ՝ տարածեալ ՚ի վ(ե)ր(այ) իւր, որով կատարի տունն։ Եւ յայսմանէ առեալ երբեմն նշանակէ զմի և նոյն ծածկոյթ, կմ կատարումն, և կմ ըն(կե)րումն. ըստ այնմ Նարեկ. Թ. երբ զգլխաւորեալ յարկաւորաւն չարուն գործոց։

Յարկեալ. ելոյ. ով. ոց. ովք։ || ծածկեալ՝ յարկաւ, ՚ի ձեղունամբ, և կամ յարկանը մեծ իրօք։ ռամկ. ծածկով գոցած։ Ոսկէ. 2. հատ. Ժբ։ Նարեկ. ղդ։

Յարհօրիմ. եցայ. եա՛ց. իլ։ (ձայնակր.) || յարհաւէրս անկանիլ, կամ տագնապիլ. կմ զանգիտել. և կմ երկնչիլ, և սոսկալ։

Յարձակ. ի. աւ. աց. օք։ || է արմատ յարձակիլ բային, որով նշանակի յարձակեալն, ՚ի վերայ վազելն. կամ ՚ի վ(ե)ր(այ) դիմօղն։ Իսկ մերթ վարի իբրև զմիշտ, կրկնեցմամբ այսպէս, յարձակ յարձակ խաղալ, և նշանակէ՝ յայսկոյս յայնկոյս քա֊ ջութբ յարձակելով դիմել։ ռամկ. այդին անդին ուր տալ անել։ 1. Մակ. 9. 9։

Յարձակիմ. եցայ. եա՛ց. իլ։ (ձայնակր.) || դիմել. կմ ՚ի վ(ե)ր(այ) վազել. և կմ արշաւանմամբ պնդել զհետ ուրուք։ 2. Օրին. 11. 4։ 2. Մակ. 12. 35։ Երեմ. 50. 24։

Յարձակ յարձակ։ || տե՛ս զՅարձակ։

Յարձակումն. կման. ման. մանց. մամբք։ || դիմեցումն. կմ ՚ի վ(ե)ր(այ) վազումն. և կմ ուժգին ընթացք։ Յոբ. 18. 21։ Նարեկ. Ձ։

Յարձակուրդ։ (Նախդրիւ հոլովի.) || Նոյն է ընդ բառին յարձակումն. այդ խառնուրդն ընդ բառին խառնումն։

Յարմար. ի. իւ. ից. իւք. կմ օք։ || պատշաճ. կամ պատկան. կմ շարայար. կմ համեմատ։ ռամկ. ույղուն։ Նարեկ. խ։ Իսկ ՚ի Նարեկ. ՚ի հոգոյն ենեց. ար ասի, ամօղ ՚ի յարմար գլխին կատարումն, նշանակի ՚ի յարմարութիւն. կմ ՚ի յաջողութիւն։

Յարմարագոյն. գունի. իւ. ից. իւք։ || պատշաճագոյն. կմ պատեհագոյն. կմ համեմատագոյն, և կմ վայելչագոյն։ Ոսկէ. 1. հատ. իբ։

Յարմարագրեմ. եցի. եա՛. ել։ (Ներգործ.) || յարմար և պատշաճ կերպիւ գրել. և այս մերթ ասի զատակից և զբանից, որք ըստ առողջմտութեան, և ըստ իսկական տառից գրին. իսկ մերթ զայլոց իրաց, զորս յարմար և վայելուչ կերպիւ գրեմք։ Նարեկ. ղէ։ և ՚ի գովս. առաք։

Յարմարագրութիւն. թեան։ || յարմար և պատշաճ կերպիւ գրումն։ Իսկ մասնաւորապէս առեալ նշանակէ զարուեստն զայն, որով զուղղագրական բառս գրեմք, և յարմարեմք ըստ իսկական տառիցն։

Յարմարադրութիւն. թեան։ || յարմար դրութիւն, կամ յարմարումն, և կազմումն։ Նարեկ. ղթ։

Յարմարաթռիչ։ (Նախդրիւ հոլովի.) || յարմար և վայելուչ կերպիւ թռչօղ. կմ գեղեցիկ թռուցմամբ սլացօղ։ Նարեկ. ղէ։

Յարմարական. ի. աւ. աց. օք։ || յարմարեալ. կմ պատշաճաւոր. կմ պատկանաւոր. և կմ վայելչական։ Նարեկ. ձ։ Ոսկէ. 2. հատ. իե։

Յարմարանք. աց. օք։ (անեզ.) || յարմարութիւն. կմ վայելչութիւն, և կմ պատկանաւորութիւն։ Իսկ մերթ յարմարումն. կմ կազմութիւն. կամ յօրինուած. և կմ շարամանութիւն։ Խորէն. ա. գլ. 31։

Յարմարավէտ։ (Նախդրիւ հոլովի.) || յարմար և վայելուչ կերպիւ վիմօղ։ Իսկ մերթ պատշաճ, կմ գեղեցիկ կերպիւ վիմեցեալ, ՚ի պատմեցեալ։ Նարեկ. ղթ։

Յարմարապէս։ (մակբայ որակական.) || յարմարութեամբ, կամ պատկանաւոր կերպիւ. կմ պատշաճապէս. և կմ վայելչաբար։ Ոսկէ. 1. հատ. իթ։

Յարմարաւոր. ի. աւ. աց. օք։ || ունօղ զյարմարութիւն. կմ պատշաճաւոր. կմ պատկանաւոր. կմ վայելչական, և կմ համեմատ։ Նարեկ. ղէ։

Յարմարեմ. եցի. եա՛. ել։ (Ներգործ.) || յարմար և պատկան առնել. կմ պատշաճեցուցանել. կմ ճահաւորել. կմ համեմատել. և կմ նմանեցուցանել։ ռամկ. ույղուր գը ընել։ Իսկ մերթ համեմատ կարգաւ ը միմեանս յօդել. կմ զուգել. կմ միաւորել. կմ կազմել, և կմ յօրինել։ Խորէն. բ. գլ. 68։ Նարեկ. ձգ։ Բայց մինչ ասի՝ յարմարել զքնարս, նշանակէ պատրաստելն զնա առ բարեկարգ հնչումն։ ռամկ. փիլղէն փալ։

Յարմարեցուցանեմ. ուցի. ցո՛. ել։ (անցող.) || Նոյն է ընդ վերնոյն։ Նարեկ. իէ։

Յարմարոստեան։ (Նախդրիւ հոլովի.) || զյարմար, կմ զբարեձև, և կմ զգեղեցիկ ոստս ունօղ. և այս ասի զծառոց, կմ ըղձ տնկոց։ Իսկ մերթ նմանութիւն առեալ ասի եւ զմասանց մարդոյ, ըստ որում են ձեռաց նր իբրև զոստս։ Նարեկ. իզ։

Յարմարութիւն. թեան։ || տե՛ս զՅարմարումն։ Նարեկ. Կ. և ղէ։

Յարմարումն. ման. մամբ. մանց. մամբք։ || յարմարութիւն, այսինքն պատշաճումն. կամ համեմատութիւն. կմ յարակցութիւն. կմ յօդումն, և կմ յօրինումն։ Եզեկ. 7. 1։ Իսկ մինչ ասի՝ յարմարումն քնարի, նշանակի պատրաստութիւն նր առ ներդաշնակաւոր հնչումն։ ռամկ. փիլղէն փալը։

Յարութիւն. թեան։ || ՚ի վեր ելումն, կամ կանգնումն, կմ յոտն կալն։ Սոփոն. 3. 8։ Բայց յատկապէս առեալ նշանակէ զդարձումն ՚ի մահուանէ ՚ի կեանս, կմ ՚ի մեռելութենէ ՚ի կենդանութիւն։ 2. Մակ. 7. 14։ 1. Կորն. 15. 12։ Իսկ մինչ ասի՝ օր յարութեան. իմանի կիւրակէն. ըստ որում ՚ի նմին աւուր յարեաւ քն տէրն մեր։

Յարուցանեմ. ուցի. յարո՛. ել։ (անցող.) || կանգնեցուցանել. կմ հանել. այլ զընկղմեալն յանկողնոյ, զանկեալն ՚ի գետնոյ, կմ ՚ի գբոյ, և այլն. Մատ. 3. 9։ և 12. 11։ Մարկ. 1. 31։ Իսկ մերթ զարթուցանել

զԻնքեանս ։ ռամկ. ոբնիշնէւ ։ Մատթ. 8. 25։ Մերթ ևս զրգռել. կմ բորբոքել. կամ շարժել. և կամ պատճառել. և ըստ այսմ առն, յարուցանել զոգի ուրուք, կմ զհողմս, կմ զմրրիկ, կմ զխռովութիւն, կմ զհալածանս, և այլն ։ 1. Եզր. 2. 2։ Գործ. 13. 50։ և 14. 2։ Իսկ մերթ մասնաւորապէս առեալ՝ նշանակէ 'ի մահուանէ 'ի կեանս դարձուցանել, և կմ զմեռեալս կենդանս ցուցանել։ Յօհ. 12. 17։ Եբր. 11. 19։

Յաւակն. նի. նէ. նց. նք ։ || բարձրայօն. կմ յանդուգն. կամ լիրբ. կմ անամօթ. և կմ ժպիրհ ։

Յաւակնիմ. եցայ. եայց. իլ ։ (Չէզոքակր.) || բարձրայօն լինել. կմ յանդգնել. կմ լրբել. կմ անամօթանալ. և կամ ժպրհել ։ Նոբէլ. լէ ։

Յաւակնութիւն. թեան ։ || բարձրայօնութիւն. կմ լրբութիւն. կմ յանդգնութիւն. և կմ ժպրհութիւն ։ Նոբէլ. խէ ։

Յաւանակ. ի. աւ. աց. օք ։ || յովանակ. ձագ էշոյ ։ ռամկ. էշու քուռակ ։ Ծննդ. 49. 11 ։ Յովհ. 12. 14 ։ Մատթ. 21. 2 ։

Յաւատ ։ || է նախդրիւ տրականին բառիս՝ աւատ. որ է հաւատ. կմ հաւատարմութիւն ։ Այդ՝ մարի սա երբեմն նախդրիւն հանդերձ իբրև զմակբայ. և նշանակէ՝ հաւատով. կմ հաւատարմութեամբ. և կմ անխարդախապէս ։ ըստ այսմ. 4. Թագ. 12. 15. ոչ առնէին համար արանցն, զի յաւատ գործէին ։

Յաւելաբան. ի. իւ. ից. իւք ։ || աւելի քան զպատշաճն խօսօղ. կմ աւելորդաբան. և կմ շատախօս ։

Յաւելաբանեմ. եցի. եա. ել. (Չէզոք. և մերթ Ներգործ.) || աւելի քան զպատշաճն խօսել. կմ աւելորդաբանել. և կմ շատախօսել ։

Յաւելաբանութիւն. թեան ։ || բան, կամ խօսք աւելի քան զպատշաճն. կմ աւելորդաբանութիւն. և կմ շատախօսութիւն ։ Նոբէլ. զա ։

Յաւելագոյն. գունի. իւ. ից. իւք ։ || առաւելագոյն. կմ բազմագոյն. և կմ ճոխագոյն ։ Սոփ. 2. հատ. ժթ ։

Յաւելադրեմ. եցի. եա. ել ։ (Ներգործ.) || տես զԱւելադրել ։

Յաւելանամ. ացայ. ցիր. նալ ։ (ընդմիջ.) || յաւելեալ լինել. կմ առաւելանալ. կմ բազմանալ. և կմ աճել ։ ռամկ. աւելնալ ։ Ժող. 1. 18 ։ Գործ. 5. 14 ։

Յաւելուած. ոյ. ով. ոց. ովք ։ || յաւելումն. կմ առաւելութիւն. կմ աւելորդուն. կմ զեղումն. և կմ յաւելեալ իրն. Եզեկ. 47. 13 ։ Մատթ. 12. 34 ։ Յով. 1. 21 ։ Իսկ Ղեւտ. 19. 25. ուր ասի. յաւելուած ձեզ լիցին. իմանի՝ յաւելցին ձեզ ։

Յաւելում. յաւելի. ել. ուլ ։ (Ներգործ.) || բարդել 'ի վր. կմ առաւելուլ. կմ առաւտացուցանել. կմ աճեցուցանել. կմ աստուածացուցանել ։ ռամկ. աւելցնել. կմ շատցնել ։ 2. Թագ. 12. 8 ։ 4. Թագ. 20. 6 ։ Մատթ. 6. 27 ։ Մերթ ևս առնուլ լինի մինչ կրկնելոյ զնոյն, զոր միանգամ ասաց. կմ արար ։ և ըստ այսմ իմանի, մինչ ասի, յաւել մարգարէանալ. կմ խօսել ։ յաւել ըմպել. կմ մեղանչել. և այլն ։ Թուոց. 11. 25 ։ Դատ. 4. 1 ։ Եսայ. 7. 10 ։ Մարկ. 14. 25 ։

Յաւելում. յաւելայ. յաւելից. կմ յաւելայց. յաւելցես. ցի. լիր. լուլ ։ (Չէզոք.) || յաւելեալ լինել. կմ առաւելանալ. կմ բազմանալ. և կմ սաստկանալ ։ 2. Մակ. 8. 1 ։ Մերթ ևս նշանակէ, անցանել 'ի կողմն ուրուք. կմ յարել յանձն ոք, կմ 'ի բազմութիւն իւր ։ Եսայ. 1. 10 ։ 1. Մակ. 2. 43 ։ Թուոց. 18. 2 ։ ըստ այսմ ևս իմանի, մինչ ասի. մեռաւ, և յաւելաւ առ ժողովուրդ իւր, կմ առ հարս իւր. և այլն ։ Ծննդ. 25. 8 ։ և 35. 29 ։ և 49. 32 ։

Յաւելումն. լման. մամբ. մանց. մամբք ։ || տես զՅաւելուած ։

Յաւետազուարթ ։ (Նախդրիւ հոլովի.) || ունող զմշտնջենական զուարթութիւն, կմ զերկրութիւն ։ Իսկ մերթ մշտադալար. և կմ այն, որ միշտ և յաւէտ կանաչացեալ և տերևովք զարդարեալ կայ ։ և ըստ այսմ ասի. ծառ. կմ տունկ յաւետազուարթ ։ Ոսկէ. 1. հատ. իէ ։

Յաւէտասանամ ։ || տես զՅաւէտասանալ ։

Յաւերժ ։ || տես զՅաւէրժ ։

Յաւերժական. ի. աւ. աց. օք ։ || յաւէժական. կմ մշտնջենական. և կմ յաւիտենական ։ Բայց մինչ ասի յաւերժական հարսունք. նշանակէ՝ զյաւերժահարսունս. զոր տեսցես զկնի ։ Պղատ. Ճիւղ ։

Յաւերժահարսունք. սանց. սամբք ։ || է ա. նուն առասպելական արարածոց անտ. նութեան, զորս կոչեն քաջս ։ Այդ՝ զա ցանէ ասեն ունել զգեղեցկութիւն 'ի բնէ, և թէ՛ բնութեամբ ոչ սատանայ ուսմամբ ։ և թէ՛ բնութեամբ դերասայոյն քան զմեզ. յորմէ և յաշխարհս բառ. լեզուով մերում անուանեցան՝ յաւերժահարսունք. բառս զորս կոչեցան յաւերժահարսունք. ... և երբեմն յաւերժական հարսունք. թէ ևս ըստ որում առասպելաբանեն, թէ ևս քա կանայք յաւէրժ հարսնացեալք ։ Բայց այլք կոչեն զնա յաւերժահարսունք ոչ վն իգական բնութեան, այլ զի յաւերժ ըստ հարսանիս առնեն 'ի մէջ իւրեանց, մշտ ցնծալով պէսպէս խնճոյիւք, թմբկօք, և նուագարանօք. վն որոյ և ասեն, թէ են արիւ և էգ, և միշտ ծնանին, և մեռանին. Այլ պաշտօնեայք և կոչէին մանկանացուք ։ Այլ դա թէ է սուտ, և առասպելեալ վաղեմի հեթանոսաց, որք ոչ ճանաչելով զճշմարտութիւն, և զդեւս՝ հնարէին մինչ նոյն զայլազան անգիտացածին արարածս ։

Յաւերժանամ. ացայ. ցիր. նալ ։ (Չէզ.) || յաւերժական լինել. կմ մշտնջենաւորել. կմ միշտ կալ և մնալ. և կմ յարատևել ։

Յաւէժ ։ (մկբյ ժամանակ.)) միշտ. կմ հանապազ. կմ յարաժամ ։ Իսկ մերթ մանաւանդ. և նշանակէ՝ յաւիտենական ։ իբրև զանուն. և նշանակէ՝ յաւիտենական ։

կան. կմ՛ մշտնջենաւոր. և ըստ այսմ սակի՝ յաւէժ կենդանութիւն. յաւէժ երգաձայնութիւն. և այլն: Նարեկ. ղզ: Աշգահ:

Յաւէժաբար: (մկբյ ժամանակի.) || մշտնջենաւորաբար. կմ՛ յաւիտենականաբար. և կմ՛ միշտ և յաւէտ. 'ի շարականոցի:

Յաւէժական. ի. աւ. աց. օք: || տե՛ս զՅաւերժական: 'ի շարականոցի:

Յաւէտ: (մակբայ ժամանակի.) || յաւէժ. կմ՛ միշտ. կմ՛ հանապազ. և կմ՛ 'ի յաւիտեան: Նարեկ. խա. հզ. ղզ: Իսկ մերթ՝ մանաւանդ. կմ՛ առաւել. կմ՛ ևս քան զևս. Նարեկ. ըզ. և ղէ: Մերթ ևս՝ յոյժ. կամ կարի. կմ՛ սաստիկ. կմ՛ ամենևին: Նարեկ. պ. ձ. ղզ: Բայց երբեմն վարի իբրև զանուն, որ է յաւէրժն. և նշանակէ՝ յաւիտենական. կմ՛ մշտնջենաւոր: Եւ մերթ առաւելն, կմ՛ բազում: ըստ այնմ, Նարեկ. ղժ: գոյցն զյաւէտն պարունակէ:

Յաւէտախաղաց: (նախդրիւ հոլովի.) || միշտ խաղացող. իսկ երբեմն մշտաշարժ, կմ՛ մշտաբուղխ. կմ՛ որ միշտ 'ի վր գայ. կմ՛ առէպ հանդիպի. և ըստ այսմ սակի՝ յաւէտախաղաց շնորհ. կմ՛ արկածք. և այլն: Խորէն. գ. գլ. 62:

Յաւէտախնամ: (նախդրիւ հոլովի.) || յաւէտ խնամող. կմ՛ միշտ նախախնամող:

Յաւէտախոյզ. խուզի. իւ. ից. իւք: || միշտ խուզող. այսինքն որոնող. կմ՛ հետազօտող: Իսկ մերթ միշտ որոնեցեալ. կմ՛ քննեցեալ:

Յաւէտակից. կցի. աւ. կմ՛ իւ. աց. օք: || յաւիտենակից. կմ՛ մշտնջենակից, այսինքն, որ ունի ընդ ումեք զմի և զնոյն յաւիտենականութիւն, կմ՛ մշտնջենաւորութիւն:

Յաւէտահրաշ: (նախդրիւ հոլովի.) || միշտ հրաշալի. կմ՛ յոյժ սքանչելի. և կմ՛ մեծահրաշ: Նարեկ. ըէ:

Յաւէտայոյզ. յուզի. իւ. ից. իւք: || միշտ յուզող. կմ՛ շարժող. և կմ՛ վրդովող: Իսկ մերթ միշտ որոնող. կմ՛ քննող: Մերթ ևս միշտ շարժեցեալ. կմ՛ վրդովեալ. և կամ որոնեցեալ:

Յաւէտանամ. կմ՛ յաւէտանամ. ացայ. ցիր. անալ: (ընդմիջակերպ.) || յաւէրժանալ. կմ՛ մշտնջենաւորիլ. Լամբրոն: Իսկ մերթ առաւելուլ. կմ՛ յաճախել:

Յաւէրժ. կմ՛ յաւերժ: (մակբայ ժամանակական.) || յաւէտ. կմ՛ միշտ. կմ՛ հանապազ: Եսթ. 16. 4:

Յաւէրժ. կմ՛ յաւերժ. ի. իւ. ից. իւք: || յաւէրժական. կմ՛ յաւիտենական. ըստ այնմ Խորէն. գ. գլ. 10. Կործանեալ գայ 'ի վր քո էնէլ յաւէրժ իւք քաջօք հսկայիւք մրցողք: այսինքն յաւիտենական, կամ անմահ քաջաղն հսկայիւք. վն զի առ ժամանակօք կռապաշտութե դիւցազնեայս, և զհսկայս յաւիտենականս, և անմահս կոչէին. լ, Հ գիտելի է, զի բառս այս յաւէրժ՝ է նոյն ընդ յաւէժ բառին. այլ և յաւէրժականն ընդ յաւէժական բառին. վն զի տառս՝ ր՝ մուծեալ լինի ի նմ իբր առ ի զարդ, որպիսիք են և այլք բառք բազումք:

Յաւէրժանամ: || տե՛ս զՅաւէրժանալ:

Յաւիտեան. տենի. իւ. տենից. կմ՛ տեանց. իւք: || Ծագի սա 'ի յաւէտ բառէն, որ է միշտ. ուստի բառիւս յաւիտեան՝ նշանակի մշտնջենաւորութիւն. կմ՛ յաւիտենականութիւն. և կմ՛ անվախճան տևողութիւն. Գործ. 15. 18: Նարեկ. ղզ: Մերթ ևս նշանակէ զդարս. կմ՛ զհարիւրաւոր ամս, որք կոչին մասնաւոր յաւիտեան: 1. Կորն. 10. 11: Եբր. 9. 26: Իսկ երբեմն զսկիզբն ժամանակաց. կմ՛ զառաջին ժամանակս. և ըստ այսմ փոխանակ ասելոյ՝ իվաղ ժամանակաց. կմ՛ 'ի վաղնջուց. և կմ՛ 'ի սկզբանէ, ասի յաւիտենից. որպէս Ծնն. 6. 4: Ժող. 1. 10: Եփես. 3. 20: Ղուկ. 1. 70: Մերթ ևս առեալ լինի փոխանակ աշխարհի. կմ՛ կենցաղոյս. և կմ՛ փոխանակ ամ ժամանակաւորաց՝ որք են 'ի կենցաղումս: Ժող. 3. 11: Եբր. 1. 2: և 11. 3: Եւ բեմն ևս փոխ կենցաղականասիրութե. կմ՛ կենցաղավարութե: Եփես. 2. 2: Բայց մինչ ասի 'ի յաւիտեանս բանից՝ յաւիտեանս յաւիտենից. կմ՛ յաւիտեան. և յաւիտեանս յաւիտենից. է ոճ իմն, որով նշանակի աւել. յամ յաւիտեանս. կմ՛ յամ պարագա ժամանակաց մի զկնի միոյ յաջորդեցելոց: Սաղմ. 10. 16: և 44. 18: Յայտ. 5. 13: [illegible]ձեալ: բառս այս երբեմն վարի իբրև ըզ մակբայ և նշանակէ՝ յաւիտենականաբար. կմ՛ մշտնջենաւորապէս. և կմ՛ մինչև ցյաւիտեան. և ըստ այսմ իմանի՝ մինչ ասի կեալ. կմ՛ թագաւորել յաւիտեան. կմ՛ ոչ ուտել զմիս յաւիտեան. և այլն: Ծննդ. 3. 22: Իմաստ. 6. 22: 1. Կորն. 8. 13: 'Իբրև. երբեմն ևս յոգնական սեռականն առեալ զնի փոխանակ բառիս յաւիտենական. կմ՛ մշտնջենաւոր. որպ 1. Մակ. 2. 51: Սաղմ. 23. 7: և 75. 5: Ժող. 12. 5: Յովն. 2. 7: ըստ այսմ է և 3. Մակ. 7. 11. առ ասի. որ յաւիտենիցն է փրկիչ իմոյ. այսինքն որ է յաւիտենական փրկիչ իմ:

Յաւիտենադիր. դրի. իւ. աց. օք: || 'ի յաւիտենից եղեալ և սահմանեալ. և կմ՛ այն, զոր դնէ ոք՝ զի կացցէ մինչև ցյաւիտեան. և ըստ այսմ սակի՝ յաւիտենադիր ուխտ: Աշգահ:

Յաւիտենական. ի. աւ. աց. օք: || այն՝ որ ունի զյաւիտենականութիւն. կամ յաւիտեան տևէ. կմ՛ մշտնջենաւոր. և կմ՛ անվախճան. Ծննդ. 9. 13: Եսայ. 3. 15: Մատ. 25. 46:

Յաւիտենականութիւն. թեան: || մշտնջենաւորութիւն. կմ՛ անսկիզբն և անվախճան տևողութիւն. զոր Էութիւն և ինքնակէն միայն ած ունի: Իսկ ըստ ածաբանից յաւիտենականութիւն է առանցումն անառարկելի կենաց բովանդակին միանգամայն և կատարեալ. տե՛ս և զբառն մշտնջենաւորութիւն:

Յաւուրական. ի. աւ. աց. օք: || նոյն է ընդ բառին աւուրական. ուստի 'ի Նարեկ. իա. առ ասի երկինք աւուրական. յայ

օրինակս գրի՝ յաւուրղական։

Յափլափեմ. եցի. եա՛. եղ։ (Ներգործ. կմ՝ չէզոք.) || տե՛ս զբայն ափլափեմ. որ է խարխափել։ վն զի տառն՝ յ, ոչ է բնական. այլ նախդիր. զի ասի. Ե՛ւ յափղափելն իւրեանց՝ ծեծէին զմիմեանս. փ՛ 'ի ափլափելն։

Յափշտակեմ. եցի. եա՛. եղ։ (Ներգործ.) || 'ի բաց կորզել. կմ՝ բռնութբ քարշելով տանել. և կմ՝ խլել։ Գործ. 21. 21։ Սաղմ. 7. 3։ Յօհ. 6. 15։

Յափշտակութի. թեան։ || բռնութբ առումն. կմ՝ 'ի բաց խլումն. և կմ՝ կողոպտումն։ Ղուկ. 11. 33։ Եբր. 10. 34։ Մերթ. ևս առնել լինի փոխանակ յափշտակեցեալ ընչից. կմ՝ որսոց և աւարաց, և այլոց նմանեաց։ Յօբ. 29. 17։ Եսայ. 3. 14։ Նաւում. 2. 12։

Յափսիթերս։ || ծագի սա 'ի ափն բառէս՝ և 'ի թեր անուանէս, որ է թերթ, կամ թաթ. ուստի ասի՝ յափսիթերս. իբր թէ յափս, և 'ի թերս. փ՛ 'ի մը ափից ձեռաց և թաթից ոտից. և ըստ այսմ երթալն, կմ՝ քայլելն իբրև զորքստանի 'ի մը ձեռաց և ոտից՝ ասի՝ յափսիթերս գնալ. ռամկ. չորս ոտնէ քալէլ։ 1. Թագ. 14. 8։ Սոյն պէս և խաղալն՝ անկանելով 'ի մը թաթից ձեռաց և ոտից՝ կոչի՝ յափսիթերս խաղալ։ 1. Թագ. 21. 13։

Յափրանամ. ացայ. ացիր. անալ։ (Չէզոք.) || վն սաստիկ յագելոյն զզուէլ. կմ՝ տաղտկանալ. և կմ՝ գարշիլ. և յետս կալ։ որպ հանդիպի մարդոյ յորժամ սաստիկ խմո՛ղէ զորովայնն կերակրովք. կմ՝ ընդերկար պարապի պղծութեց մարմնոյ. կմ՝ ժամանակէ յերկար զստացուած ինչ։ ըստ այսմ իմա և զայլոց նմանեաց։ ռամկ. պըխտիլ, ըւռուլ. Թուոց. 14. 31։ Եզեկ. 23. 17։

Յափրացուցանեմ. ցուցի. ցո՛. անել։ (Անցող.) || զզուեցուցանել. կմ՝ տաղտկացուցանել սաստիկ յագեցութբ։ ռամկ. պըխտըցընել։

ՅԵ

Յեգուց. կմ՝ յեգուցն։ (Մակբայ ժամանակական.) || յայգուցն. կմ՝ ընդ առաւօտն։ ռամկ. առտուընէն։ 'ի վաղը հարցը։ Բայց 'ի Ժթ. ուր ասի, և 'ի յեգուցն օր վախճանեցաւ, նշանակէ՝ 'ի վաղուէան աւուրն. կմ՝ 'ի վաղիւն։ Սակայն բառս այս մանաւանդ յաշխարհաբառ լեզուոջ 'ի գործածի. զի առաւել բարւոք է ասել՝ յայգուցն, քան յեգուց։

Յելից։ || է բացառականն ելք բառիս, որ 'ի գիրս Խորենացւոյն, յաշխարհագրութեան 'ի բոլոր աշխարհի վարի իբրև զնախադրութի, այսպէս, յելից կալով գաւառին. կմ՝ ափ րինկոյ. և այլն։ և նշանակէ յարևելից կալով. կմ՝ յարևելեան կողմն գոլով։

Յելուզակ. ի. աւ. աց. օք։ || ելուզակ. փ՛ հէն. կմ՝ ապստամբող աւազակ. և կմ՝ նոքա որք ապստամբեալք յիմեքէ թագաւորու թէ 'ի լերինս ճղանեն, և իբրև զհէնս յարձակեալ 'ի մը աշխարհաց նր՝ հարկանեն, կողոպտեն, և գերեն։ Նաև զկապուտանս և զայլ անցաւորս լերանց և զաւռտաց՝ աւար հարկանեն. ռամկ. Թէտէլիք, կմ՝ ճէլալի։ Խորեն. Գ. գլ. 13. և 14. և 15։ և Գ. գլ. 45։

Յելուզակաբար։ (Մակբայ որակական.) || իբրև զյելուզակ. կմ՝ հանգոյն ապստամբող աւազակաց. ռամկ. Թէտէլիպէս. կմ՝ ճէլալիի պէս։ Խորեն. Գ. գլ. 44։

Յելուզանեմ. յելուզի. յելոյզ. կամ յելուզեա՛. անել։ (Ներգործ.) || ընդելուզանել. կմ՝ յաւուլ. և ըստ այսմ ասի յելուզանել զակունս պատուականս 'ի թագս ևլն։ 'ի հին տպագիրս։ Իսկ մերթ նշանակէ սակ՝ ելուզանել. որ է հանել։

Յեհ։ (Միջարկութի հեգնական.) || հահ. կամ իհ։

Յեղադարձ. ի. իւ. իւք։ || անդրադարձ. կմ՝ փոխադարձ. կմ՝ ներհակ. և կմ՝ հակառակ։

Յեղադարձական. ի. աւ. աց. օք։ || փոխադարձական. կամ անդրադարձական. և կմ՝ ներհական։ Իսկ 'ի յՈսկէ. 2. հատ. ԻԸ. ուր ասի, և օրինակն յեղադարձական, իմանի՝ կերպն, կմ՝ նշանն յանդիմանական։

Յեղադարձիմ. ձայ. ձիր. ձիլ։ (Ձայնակր.) || անդրէն 'ի նոյնն դառնալ. կմ՝ փոխադարձիլ. կմ՝ յեղաշրջիլ. և կմ՝ փոխարկիլ։ Ոսկէ. 2. հատ. ԻԵ։

Յեղական. ի. աւ. աց. օք։ || փոփոխական. կամ այլայլական. կմ՝ հակադարձական. և կմ՝ ներհական։ Լամբրոն։

Յեղակարծ. ի. իւ. իւք։ || յանկարծական. կմ՝ անակնունելի. կմ՝ տարադէպ. կմ՝ անպատրաստ. և ըստ այսմ ասի՝ 'ի յեղակարծ ժամանակի, կմ՝ յեղակարծ ժամու. և այլն։ Յն որբ։ Այլ երբեմն ակզբնատառն տորա՝ յ, ընու և զանեղի նախդիր, զի փոխանակ ասելոյ՝ 'ի յեղակարծ ժամանակի, կմ՝ 'ի յեղակարծ ժամանակի, ասեմք՝ յեղակարծում ժամու. յեղակարծ ժամանակի, որպիսի են այլ բազում բառք, որք յիշեցան 'ի մեկնութե տառս ուխտ՝ յ։ 1. Մակ. 5. 28։ Ոսկէ. 1. հատ. ԽԱ։ և Շնորհալին։ Բայց ոմանք յաղագս անհմտութեան նախդիր վարելոյն տորա, զակզբնատառն՝ յ, կարծեն լինել նախդիր, և ոչ բնական։

Յեղակարծիմ. եցայ. եա՛ց. իլ։ (Ձայնակր.) || յանկարծակի լինիլ. կմ՝ յանկարծակի երևիլ ուրեք։ Բայց մինչ ասի՝ յեղակարծեալ ժամանակ, կմ՝ ժամ, իմանի՝ յանկարծական։

Յեղանակ. ի. աւ. աց. օք։ || նոյն է ը՛ բառին եղանակ ըստ ամ նշանակութեց նր. Խորեն. Ա. գլ. 15։ Նարեկ. 'ի փորձ էջերոյ։ Իսկ ըստ որում է սա արմատ յեղանակութեան. կել բային՝ նշանակէ զյեղանակութեան զոր տեսցես զկնի։

Յեղանակաւոր. ի. աւ. աց. օք։ || յեղանակելի, փ՛ փոփոխելի. կամ այլայլելի,

և կամ

և կամ յեղաշրջելի։ Նարեկ. ծա։ Իսկ մերթ եղանակաւոր։

Յեղանակեմ. եցի. եա. եալ։ (Ներգործ.) || յեղափոխել, յօ փոփոխել. կմ այլայլել. կմ շրջել. կմ փոխարկել. կմ դարձուցանել։ Նարեկ. իը. կը. հէ. ղը։ Իսկ մերթ ըղ նոյնն քաղցրիկ կրկնել. կմ յամ ուրեք 'ի մէջ բերել։ Իսկ մերթ եղանակել, յօ նուագել. կմ երգել. կմ. օրհներգութ դրուատել։ Նարեկ. հզ. և հը։

Յեղանակիլ. եցայ. եցաւ. իլ։ (Ձայնակր.) || փոփոխիլ. կմ այլայլիլ. և կմ յայլ ևմն փոխարկիլ. Նարեկ. հթ. դ. և ղը։

Յեղանակիչ. կչի. աւ. աց. օք։ || փոփոխօղ. կմ այլայլօղ. կմ յեղաշրջօղ. և կմ դարձուցանօղ։ Նարեկ. ձը։ Իսկ մերթ եղանակօղ, յօ երգօղ, կմ նուագօղ։

Յեղանակութիւն. թեան։ || յեղանակումն, յօ փոփոխութիւն. կմ այլայլութիւն. կմ յեղափոխութիւն. և կմ անդրադարձութիւն. Իսկ մերթ՝ եղանակումն, կմ նուագումն. կմ եղանակաւոր բարբառ։ Նարեկ. ժը։

Յեղանակումն. մման. մամբ. մանց. մամբք։ || տե՛ս զՅեղանակութիւն։

Յեղաշրջեմ. եցի. եա. եալ։ (Ներգործ.) || յեղափոխել, յօ փոխարկել. կմ փոփոխել. կմ այլայլել. և կմ անդրէն դարձուցանել։ Նարեկ. կէ։ Լամբրօն։

Յեղափոխ. (Նախադրիւ հոլովի.) || փոփոխ. կմ փոփոխական. կմ շարժական. և կամ այլայլելի. Լամբրօն։ Իսկ մերթ անդրադարձ. կմ հակադարձ. և կմ ներհակ։

Յեղափոխեմ. եցի. եա. եալ։ (Ներգործ.) || տե՛ս զՅեղաշրջել։ Յհ ոսկի։ և Ոսկե. 2. հատ. իը։

Յեղափոխութիւն. թեան։ || փոփոխութիւն. կմ յեղաշրջումն. կմ փոխարկումն. կմ այլայլութիւն. և կմ փոփոխմանցն. 'ի հին պարածոյից։ Իսկ մերթ անդրադարձութիւն. կմ հակադարձութիւն. և կմ ներհակութիւն։

Յեղափոխումն. մման. մամբ. մանց. մամբք։ || նոյն է ընդ վերնոյն։

Յեղեմ. եցի. եա. եալ։ || տե՛ս զՅեղուլ։

Յեղեղեմ։ || տե՛ս զՅեղյեղեմ։ Նարեկ. թ։ և Լամբրօն։

Յեղեղուկ. ղկի. աւ. աց. օք։ || տե՛ս զՅեղյեղուկ։ 3. Մակ. 5. 22։

Յեղեղուան։ || տե՛ս զՅեղյեղուկ։ Նարեկ. 'ի գովեստ առաքելոց։

Յեղեղումն։ || տե՛ս զՅեղյեղումն։ Լամբրօն։

Յեղեղօղ։ || տե՛ս զՅեղյեղուկ։

Յեղլի. (Նախադրիւ հոլովի.) || է ապառնին կրաւորական ընդունելութե յեղում բային. և նշանակէ՝ փոփոխելի. կմ այլայլելի. և այլն։

Յեղծ. կամ յեղձ. և կմ յեղց. ի. իւ. եց. || ըն. կմ չափ. կմ աստառ. և կմ յաւել։ 'Իսմանէ ծաղկեալ խառնոյեղծ. կամ խառնայեղծ։

Յեղմ. (Նախադրիւ հոլովի։ և մերթ վարի իբրև գոյական.) || մեղմ. կմ հանդարտ. և. ըստ այսմ առաք յեղմ առնել. կմ յեղմ եռացուցանել։ 'Ի Ճառս հարցն։

Յեղմնի։ || է նախադրիւ ածական. կմ ներգոյական բառս՝ եղմնի. որ 'ի տեղւոջ իւրում մեկնեցաւ. 4. Թագ. 6. 8։

Յեղյեղեմ. եցի. եա. եալ։ (Ներգործ.) || փոխարկել. կմ փոփոխել. կմ դարձուցանել. կմ շրջշրջել. և կմ այլայլել. Նարեկ. ղը։ և Լամբրօն։ Եւ յայսմանէ առեալ երբեմն մատենագրաց նշանակէ թարգմանել. կմ թարգմանաբար բացատրել։ Նարեկ. ղթ։ Մերթ ևս նշանակէ զնոյնն յաճախ կրկնել. կմ առէպ յիշել. կմ անդադար 'ի մէջ բերել. Նարեկ. կա։ և Լամբրօն։ և Ոսկե. 2. հատ. լը։

Յեղյեղուկ. եւկի. աւ. աց. օք։ || փոփոխական. կմ այլայլելի. կմ գլխրադարձ. կմ գլխրափոփոխ. կմ անկայուն և անհաստատ. և կմ որ յամ առմթից և պատահարաց շարժի և շրջշրջի։ Առակ. 17. 20։ Լամբ. Առակ։

Յեղյեղում. յեղլի. յեղեալ. յեղուլ։ (Ներգործ.) || նոյն է ընդ յեղյեղել բայիւն ըստ ամ նշանակութե։ Յոբ. 37. 10։ Ոսկե. 2. հատ. ա. և ժը։

Յեղյեղումն. ղման. մամբ. մանց. մամբք։ || փոփոխութիւն. կմ յեղաշրջումն. կմ փոխարկումն. և կմ փոխադարձութիւն։ Նարեկ. հզ. ղը։ Իսկ մերթ՝ յաճախ կրկնումն նոյնոյ բանի. կմ առէպ յիշումն, և 'ի մէջ բերումն։

Յեղում. յեղլի. յեղ. ուլ։ (Ներգործական.) || փոխել. կամ շրջել. կմ դարձուցանել. և կմ փոխադրել։ Նարեկ. ղը։ Սոյնպէս և թարգմանելն զբանս 'ի միոյ լեզուէ յայլ լեզու, ըստ որում է փոխել, յեղուլ կոչի։ Ըստ այսմ. Խորէն. ա. գլ. 1. Ջգիր գիտնաց այլոց ազգաց յեղուլ 'ի յոյն բան։ ըստ այսմ է և բ. գլ. 63։

Յեղումն. ղման. մամբ. մանց. մամբք։ || փոխումն. կամ փոփոխութիւն. կամ այլայլութիւն. կմ դարձուցումն. կմ շրջշրջումն։ Նարեկ. ղը։ և Լամբրօն։

Յեղփոխուկ։ (Նախադրիւ հոլովի.) || տե՛ս զՅեղյեղուկ։

Յենարան. ի. աւ. աց. օք։ || տեղի, կմ գործի յենլոյ. կմ նեցուկ. ռամկ. փայտ։ Սիրաք. 49. 17։

Յենում. յեցայ. յեցիր. ուլ։ (Ընդ. միջ.) || յարակցել, կամ հպելով հաստատել յումեքն. կամ ուժով իւրով անկանել 'ի վերայ ուրեք. ռամկ. փայանիլ ըլլալ. կամ կռթնիլ։ Դատ. 16. 29։ Եսայ. 36. 6։ Եզեկ. 29. 7։ Եւ յայսմանէ առեալ երբեմն նշանակէ առակ յարիլ. կամ մերձենալ. ըստ այսմ. Դատ. 16. 29. ըմկալ, և պատմագրութեան, որ յեցեալ կայ 'ի ձեռն։ Եւ մերթ հաստատիլ. կամ ապաւինիլ. և կամ կալ և մնալ։ ըստ այսմ. 3. Մակ. 3. 11. 'ի հպարտութիւն ամբարտաւանութեան յեցեալ։ Մերթ ևս ապաւինիլ. կամ պատսպարիլ. և կամ յանգչել։ Յոբ. 27. 8։ Հռոմ. 2. 17։ Բ... մինչ առաջ. յեցեալ 'ի ծերութիւն. նշանակի չքաւոր

[illegible]

որ հանդէպ առաջոյ կողման նշ. ռամկ. Նէփէ դին. Եզեկ. 33. 23: 2. Մնաց. 4. 4: Եւ մերթ յետոյք կոչի երասանն, որ է նըստոյ տեղին: Իսկ մինչ վարի հանդերձ նախդրիւ այսպէս. առ՚ի յետոյս. զառ՚ի յետոյս. յառ՚ի յետոյս, նշ՚կէ զայն՝ որք են յետոյս, կմ որք կան ՚ի յետին կողման ուրուք. ռամկ. Նէփէ Եղօծը. կմ Նէփէ Ւէցօծը. և ըստ այսմ է Փիլիպ. 3. 13. ուր ասի. Զառ՚ի յետոյսն մոռացեալ եմ, և ՚ի յառաջադէմսն նկրտեալ:

Յետ որոյ: || զկնի, կմ յետ այնորիկ. կմ ապա: Խորէն. ա. գլ. 4. և 8: և գ. գլ. 60.

Յետուստ: (Նախադրութիւն. որ պահանջէ զհոլովն սեռական.) || ՚ի յետ կուսէ. կմ ՚ի յետին կողմանէն: ռամկ. Նէփէ դէէն. կմ Չէփէ դէէն: Եզեկ. 26. 22: Երգ. 2. 9: Եւ երբեմն վարի իբրև զմակբ. տեղական այսպէս՝ յետուստ ընթանալ. կմ յետուստ արգելել. և նշանակէ զհետ. կմ ՚ի յետին կողմանէն. ռամկօր. Էփոէն: Եւ մերթ իբրև զմակբայ դասական. և նշանակէ՝ հուսկ յետոյ. կմ յետ ամենեցուն. և կմ յետոյ: ՚ի հին պատմագիրս: Իսկ երբեմն վարի իբրև զանուն, և նշանակէ զյետոյսն. կմ զյետին կողմն. և ըստ այսմ նմոյ տեղին յետուստ կոչի. Եզեկ. 13. 22. և 26: Նաւում. 3. 5: մերթ ևս նշանակէ առանց զյետինն. ըստ այսմ Խորէն. բ. գլ. 82. ձգէ յետուստ կողմանն ձաւ. այսինքն դէպ յետին կողմանն. կմ դէպ ՚ի յետին կողմն:

Յետուստ ուրեմն: (մակբայ.) || յոյժ յետոյ. կմ հուսկ յետոյ. կմ անագան. և կմ զկնի. Կիւրղի Եղէնի. բ: տես զկերեմն:

Յետս: (մակբայ տեղական.) || յետ կոյս. կմ ՚ի թիկունս կոյս. կամ ընդ կրունկն. ռամկ. Չէփ. կմ Չէփի դին: Ծննդ. 49. 17: 1. Թագ. 4. 18: Սաղմ. 34. 4: ըստ այսմ և խմանի՝ Ծննդ. 9. 23. ուր ասի՝ զերեսս իւրեանց յետս ընդդէմ ունէին, այսինքն զդէմս իւրեանց ունէին յետ կոյս ընդդէմ երեսաց հօր իւրեանց: Մերթ և նշանակէ ՚ի բաց. և յայս իմաստ՝ մինչ ասի՝ յետս կալ յումեքէ: Իսկ Երեմ. 7. 24. ուր ասի՝ և եղեն յետս, և ոչ յառաջ. իմանի. եղեն յետնեալ՝ և ոչ յառաջացեալ: Դրկ՝ երբեմն բառս այս վարի կրկնելով այսպէս՝ յետս յետս. և յայնժամ ցուցանէ զյաճախութին ներգործութե. զի նշանակէ ստէպ ստէպ յետս. կմ ստէպ ստէպ ՚ի թիկունս կոյս. և յայս իմաստ՝ մինչ ասի, յետս յետս գնացին. կմ յետս յետս չոգան: ռամկ. կօրէնի Նէփոէ Նէփոէ գիտալ: Ծննդ. 9. 23: Յոհ. 18. 6.

Յետսագոյն. գունի. իւ. ից. իւք: || այն որ է առաւել յետս. կմ յետնագոյն. և կմ յետնեալ: Իսկ մերթ վարի իբրև ըղ մակբայ. և նշանակէ՝ առաւել յետս. և ըստ այսմ ասի. յետսագոյն մնալ: ՚ի հին պատմագիրս:

Յետսամիտ. մտի. իւ. աց. օք: || յետնեալ մտօք. կամ ձախորդ մտաց վրիժակեալ. կմ անարգամիտ. կամ յիմար: Իսկ մերթ նաև հակամիտ. կամ հակառակամիտ. կմ մետեալ, և հակեալ յընդդէմն. և կամ խոտորնակ. և այս ասի զմարդոյ, զխորհրդոյ. զբանից. և զայլոց բազմաց. 3. Մակ. 3. 15:

Յերազանամ. ացայ. ցիր. ալ: || տես զերազանալ: Եսայ. 56. 10:

Յերազեմ. եցի. եա. եալ: (Ներգործ. և մերթ չէզոք.) || յերազի տեսանել զտեսիլ ինչ, կամ զերևոյթ իմն. և կամ յերազանալ: ռամկ. Երազ տեսնել: Եւ յորժամ այսու կերպիւ երևի ումեք տեսիլ ինչ՝ ասի յերազիլ նմա. այսինքն Երեմ. 23. 25. երազ յերազեցաւ ինձ, այսինքն տեսիլ երևեցաւ ինձ յերազի:

Յերազմոյն: (Նախդրիւ հոլովի.) || երազուտ, որ ասի զտեղւոյ՝ ուր լինի յաճախ երազել. կամ ուր ստէպ զերազ տեսանեն. որպէս հանդիպէր ՚ի հնումն քրմաց և կախարդաց, և սուտ մարգարէից, որք ընդ հովանաւոր ծառովք. կմ յայլ սահմանեալ տեղիս՝ ՚ի քուն լինէին, զի յայտնեսցին ինքեանց ՚ի դիւաց տեսիլք զապագայից առ՚ի յայտնել ժողովրդեանն. Աշգաբ:

Յերասանամ. ացայ. ացիր. ալ: (Չէզ.) || երազափորձ լինել, այսինքն կրել զսերմնահոսութիւն յերազի. կմ յանկողնի: Բայց աս ըստ մեծի մասին ՚ի գործ ածի այսպէս՝ յերասանալ յագելապէս. կամ յերասանել յագելաբար. և նշանակէ կրել զհոսումն սերման՝ ՚ի վերայ ձիոյ յարշաւելն նր, որ հանդիպի վն թուլութե միջաց. կմ յաղագս սաստիկ ջերմանալոյն յուղեւոր երանաց. և կմ սակաւալիղծ երևակայմանց, որոց տեղի տայ այնպիսի հեծեալն: Սա դրի ևս յերասանիլ. որպէս եդաւ ՚ի վերոյ:

Յերասանիմ. եցայ. իր. իլ: (Ձայնակր.) || նոյն է ընդ վերնոյն:

Յերբ: (միոյ Ժամական.) || յորժամ. կամ առ երբ. կմ յորում ժամու:

Յերբեմն: (մակբայ Ժամական.) || տես Երբեմն:

Յերեամ: || տես զերեամ:

Յերխուրեմ. եցի. եա. եալ: (Ներգործ.) || յարմարել. կամ պատշաճել. կամ յարդարել. կամ յօրինել. կամ հանդերձել. և կամ պատրաստել. և այս ասի զբանից, զերգոց, զհնչմանց, պչլոց. զմարդկանց, և զայլոց բազմաց: Աշգաբ: և Լամբրոն:

Յերխուրումն. րման. մամբ. մանց. մամբք: || բաղադանութիւն. կամ բարեկարգութի. կմ յարմարումն. կամ յօրինումն. կամ կազմութի և պատրաստութի: Նարեկ. խ. և Լամբրոն:

Յերկար. ի. աւ. աց. օք: || երկար. կամ երկարատև. և կամ երկարեալ. և յայս ասի՝ յերկար ժամանակ. յերկար հիւանդութի. կամ ապաշխարութի. և այլն: Խորէն. բ. գլ. 29: Ոսկէ. 1. հայ. խա. Իսկ մերթ վարի իբրև զմակբ, և նշ՚կէ երկարապէս. կմ ընդերկար: ՚Ի Հարց հարց. իզ: Խորէն. գ. գլ. 12:

Յերկարագոյն · գունք · նէ · նց · նաց ։ ‖ Աւաւ-
ելի՛ յերկար · կմ՝ երկարագոյն ։ Իսկ մերթ
վաղել. խորել. զմանկանց , և նշանակէ յերկար
ժամանակս · կամ ընդ երկար · և կամ եր-
կարատեւս ։ 1 · Մակ · 17 · 17 ։ 3 · Մակ · 5 · 9 ։

Յերկարակեցեայ · կեցէ · ու · այ · ոց ։ ‖ յեր-
կար կեցող · կամ է երկար աւուրց · կամ
երկարատեւ · և կամ երկարամեանց ։ Աղթք ։

Յերկարակեցութիւն · թեան ։ ‖ կեանք · կամ
աւուրքն ընդերկար · կմ՝ երկարատեւութիւն ։

Յերկարաձգեմ · եցի · եա՛ · ել ։ (Ներգործ ·)
‖ յերկարաձիգ առնել · կամ ընդերկարել ·
և կամ յերկար ժամանակս անեցուցա-
նել ։ Նորբէ · ձա · և զԹ ։ 'ի Հայս հարց · ժԹ ։
Եւ մերթ յապաղեցուցանել ։

Յերկարաձգութիւն · թեան ։ ‖ յերկար ձգումն ·
կամ ընդերկարութիւն · կամ երկարաձիգ անե
լութիւն · կամ յերկար յամեցումն · և կամ
յապաղումն ։ Նորբէ ։ ՇԷ ։

Յերկարաձիգ ։ (Նախադրիւ հոլովի ·) ‖ ընդ
երկար ձգեալ · կամ յերկարեալ · և կամ
երկարատեւ · և ըստ այսմ առ՝ յերկարա-
ձիգ ժամանակս, կամ անընդհատ, և այլն ։
Նորբէ · 'ի Փիլիպեցւոց ։ Իսկ մերթ յապաղեալ ·
կամ անժամանեալ ։

Յերկարանամ · ացայ · ացեր · ալ ։ (Ընդմիջ ·)
‖ ընդերկարիլ · կամ ընդերկար անել · և
կամ կալ մնալ յերկար ժամանակս ։ Աղ-
աւթ · 12 · 7 ։ Խորէն · Գ · գլ · 68 ։

Յերկարապատանք ։ (Նախադրիւ հոլովի ·) ‖ տե՛ս
զՅերկարագոյն ։

Յերկարաւոր · ի · աւ · աց · աք ։ ‖ զերկարու-
թիւն ունող · կամ երկարաձիգ · և կմ՝ երկա-
րատեւ ։ Իսկ մերթ զերկայն և զլայն մե-
ղաց ունող · կմ՝ ընդարձակեալ, և կմ՝ հե-
ռաւոր ։ 3 · Թագ · 7 · 9 ։

Յերկարեմ · եցի · եա · ել ։ (Ներգործ ·) ‖ Եր-
կարել ։ որ երկար առնել · կմ՝ երկարացու-
ցանել · և կմ՝ յերկար անեցուցանել ։ առակս ·
Երկնել ։ Աղաւթ · 1 · 24 ։ Ժողով · 8 · 13 ։ Մարկ ·
12 · 40 ։ Իսկ մերթ ժամանակէ 'ի ժամա-
նակ արկանել · կմ՝ յապաղել · և կմ՝ դադարե-
լով յամեցուցանել ։ առակս · աստղցրնել ։ Յո-
բէ · 2 · 6 ։ Երեմ · 15 · 15 ։ Եզեկ · 12 · 25 ։ մերթ
եւս զերկարութիւն տալ · կմ՝ զերկար մեկնա-
ձգել · և կամ ընդարձակել ։ Եսայ · 6 ·
12 ։ և 26 · 15 ։

Յերկարորդէ · գոյն · ով · եաց · ովք ։ ‖ յերկա-
րաշունչ, որ ունող զերկարատեւ շունչ, կմ՝
որ յերկարէ 'ի բարբառելն զառումն ընդայ ·
ըստ այսմ Խորէն · Գ · գլ · 54 · ժողովեալ մեծ
կոչմա մեծամեծաց և յերկարաբանս ։

Յերկարութիւն · թեան ։ ‖ երկարութիւն · կմ՝
երկարաձգութիւն · կմ՝ երկարատեւութիւն · և
կմ՝ ընդարձակութիւն ։ Խորէն · Գ · գլ · 67 ։ 'ի
Հայս հարց · ԽԳ ։

Յերկնուստ ։ (Մակբայ ·) ‖ յերկնից · կմ՝ 'ի
վերուստ · առակս · Երկնէն · 'ի Հայս հարց · Ժ ։

Յերկուանամ · ացայ · ցեր · նալ ։ (Ընդմիջ ·)
‖ երկուանալ · կմ՝ երկմտել · կմ՝ տարակու-
սել · և կմ՝ յերկուսս ընդունել կասկածել ·
առակս · շիվիկ եղել ։ Խորէն · Ժ · գլ · 4 ։

Ռուբէ · 1 · հարց · Է · և ԺԲ ։

Յերկնչանք · նանց · ցք ։ (անեզական ·) ‖
երկմտութիւն · կմ՝ երկմտութիւն · կմ՝ տարա-
կուսանք · և կմ՝ կասկած ։ առակս · շէք ։
Ռուբէ · 2 · հարց · ԺԹ ։

Յեր մերայ ։ ‖ յո՛յժ մերայ · կմ՝ յոյժ մօտ ։
Յոբ · 38 · 6 ։ առ և զբաշն՝ Եր ։

Յեց ։ ‖ յեցեալ · կմ՝ կեց · կամ մօտ ։ ըստ
այսմ 2 · Թագ · 18 · 4 · Եկաց արքայ յեցա
դրանն ։

Յեցանիմ · մամ · եւ · եց · եաց ։ ‖ յեցեալ 'ի
միասին եւր · կամ յամառեալ ։ Իսկ մերթ
ունող զհաստատութիւն միտս · կմ՝ հանդար-
տամիտ · կմ՝ անվրդով և խաղաղ սրտիւ ։
ըստ այսմ Մծբնեցի · ակը երկայնամիտ,
յեցամիտ, և անդորրամիտ ։

Յեցուկ ։ ‖ տե՛ս զՆեցուկ ։

Յեցուցանեմ · ցուցի · ցի · անել ։ (անցող)
‖ տալ ունել յենուլ · և կմ՝ յեցեալ ա-
նել ։ առակս · պայծառերեւ ընել · կամ կռթն-
ցնել ։ Աղաւթ · 5 · 19 ։ և Վարդան ։

ՅԷ

Յէ՛ ։ (Միջարկութիւն բացականչական · կմ՝
կոչական ։) ‖ ո՛վ · կմ՝ ո՛ · կմ՝ ով ։

ՅԸ

Յըստակ · ի · աւ · աց · աք ։ ‖ տե՛ս զՅստակ ։
Եզեկ · 11 · 10 ։

Յըստակագոյն ։ ‖ տե՛ս զՅստակագոյն ։

Յըստակամիտ ։ ‖ տե՛ս զՅստակամիտ ։

Յըշտող · ի · եւ · եց · եաց ։ ‖ ժպիրհ · կմ՝ լիրբ ·
կմ՝ անամօթ · և կմ՝ անպարկեշտ ընդդէմ
Մծբնեցի · ժգ · Եւ զաւակ լինել պատուական
յըշտող · որ պատուաւոր և լիրբ · ապա
փոխել մի 'ի վերայ նոցին զլբ լիրբ և պար-
տաւէ ։

ՅԹ

Յթեղձ · կմ՝ յիղձ ։ ‖ տե՛ս զՅեղձ ։

Յթիմար · ի · աւ · աց · աք ։ ‖ անմիտ · կամ
անհիմար · կմ՝ անխոհեմ · կմ՝ խելառ ·
և կամ ցնորեալ միտօք ։ առակս · խենթ · կմ՝
խեւ ։ Եսայ · 32 · 6 ։ Մատ · 5 · 22 ։ և 25 · 2 ։

Յթիմարանկարգեայ ։ (Նախադրիւ հոլովի ·) ‖ կմ՝
մարդ կորուսանող · կմ՝ զխելս եղծանող բժիշկ
բարբառօք ։ Իսկ մերթ յթիմարեալ կար-
ծեալ · կմ՝ անմտաբան եղեալ ։ Աղթք ։

Յթիմարանամ · ացայ · ցեր · անալ ։ (Ընդմ ·)
‖ տե՛ս զՅթիմարիլ ։ Եսայ · 19 · 11 ։

Յթիմարարար · ի · աւ · աց · աք ։ ‖ յիմար ա-
նող · կմ՝ յիմարեցուցիչ · և կմ՝ ցնորեցու-
ցիչ ։ Նորբէ · ԼԳ ։

Յթիմարեցուցանեմ · ցուցի · ցի · անել ։ (ան-
ցող ·) ‖ խելագարեցուցանել · կմ՝ անմտա-
ցուցանել · կմ՝ ցնորեցուցանել · և կմ՝ մո-
լորեցուցանել ։ առակս · խենթեցնել · կամ
խեւցնել ։ 3 · Թագ · 21 · 25 ։ Յոբ · 5 · 13 ։ Իսկ
մերթ ապշեցուցանել · կմ՝ յիմար առնել
ցուցանել ։

Յիմարիմ. եցայ. եա՛ց. իլ: (Հայնակր.) ‖ յիմար լինիլ. կմ անմտանալ. կմ խելա գարիլ. և կմ ցնորիլ մտօք: ռամկ. խենթէ նալ. կմ խենթանալ. 2. Մակ. 5. 17: Երեմ. 4. 9: Իսկ մերթ ուշադնայց լինիլ. կմ ընդար մանալ զգայութեամբք: ռամկ. ծուրնալ: Գաղ. 8. 17: Մերթ ևս ափշիլ. կմ ապուշ մը նալ. կմ հիանալ. և կամ անդր քան ըզ չափն զարմանալ, որով գրեթէ ուշն բառ նի: 3. Թագ. 10. 5: Յուդիթ. 15. 1: Գաղ. 2. 1:

Յիմարութիւն. թեան: ‖ խելագարութիւն. կմ մոլեգնութիւն. կմ անմտութիւն. կմ ափշու թիւն. և կմ յափշտակութիւն մտաց. ռամկ. խենթութիւն. կմ խենդութիւն: Սաղմ. 59. 5: Երեմ. 5. 30: Տեսլ. 3. 9: Ծննդոց.

Յինունք. յինանց. ամբք: ‖ աւուրք, կամ ժամանակք պենտէկոստէից, որք սկսեալ 'ի զատկէ՝ աւարտին մինչև ցհոգեգա լուստն: Այսք՝ կոչեցան յինունք. իբր թէ՝ յիսունք, զի են յիսուն աւուրք:

Յիշաչարութիւն. թեան: ‖ յիշումն չարեաց կրեցելոց. կմ նախանձ վրէժխնդրութ. և կմ քինախնդրութիւն պատճառեցեալ 'ի յիշելոյ զկրեալ չարիս. և կմ ոխակալու թիւն: 'Ի ճառս հարց. գ:

Յիշատակ. ի. աւ. աց. օք: ‖ յիշումն. կամ յիշատակումն: 2. Մակ. 7. 20: Իմաստ. 11. 13: Ղուկ. 22. 19: Իսկ մերթ՝ յիշելիք, իմ այն իրն, զոր 'ի տեսանելն, կմ 'ի լսելն շարժի ոք 'ի յիշել զանցեալ ինչ: Ելից. 12. 14: և 13. 9: Սաղմ. 110. 4: և յայսմանէ ա ռեալ յիշատակ կոչի՝ ընծայն, զոր տան եկեղեցեաց, առ 'ի յիշել նոքօք 'ի յաղա գայս: Դիմ. յիշատակ կոչին տօնք, իմ որում 'ի նմա յիշատակումն լինի սրբ. կամ առաքինութեանց նց. 'ի Շարակնոցն: Երբեմն ևս նշանակէ զյիշեցուցումն, կմ զազգա րարութիւն: 2. Պետ. 1. 13: Իսկ երբեմն զյիշատակարանն, կմ զօրաօրական անցս գրելիս 'ի յիշատակարանի առ 'ի յիշել զնո յետագայից: 2. Թագ. 8. 16: 4. Թագ. 18. 18: Ուստի և պաշտօնեայն այսպիսեաց յի շատակարանաց կոչի՝ յիշատակաց գպիր: 1. Մնաց. 18. 15: Եւ մերթ զյիշողութին. կմ զյիշողական զօրութիւն, յորում պա հին յիշելիքն: ըստ այնմ Ոսկ. 1. հատ. ա. Մի՛ ինչ իցէ՝ որ պրծանիցի 'ի յուշոյ յի շատակաց:

Յիշատակագիր. գրի. աւ. աց. օք: ‖ գիր յիշատակաց. կմ գրուած, զոր վն յիշա տակի գրեն. որպիսի է այն. զոր առնեն յաման գիրս ծանուցանելով 'ի նմա զնա՝ որ ըեալ է պատճառ յօրինման մատենին: Նարեկ. 'Ի յիշատակագիրն:

Յիշատակագրութիւն. թեան: ‖ յիշատակե լով գրումն. կմ գրուած յիշատակի ան ցելոց. և կմ յիշատակարան: Նարեկ. զլ:

Յիշատակարան. ի. աւ. աց. օք: ‖ գրուածք, յորում զպէսպէս անցս, կմ զհանդիպեալ գործս գրեալ պահեն վն յիշելոյ. կմ զի յապագայս ընթերցեալ յիշատակեսցեն զնն. որպիսիք են արքունական արձանա գիրք, կմ զխնամագիրք: ռամկ. փէրթէրխ: 1. Եզր. 2. 22. և 26: 2. Եզր. 4. 15: և 5. 17: Մերթ ևս նշանակէ զյիշատակագիրն, որ եդեալ լինի 'ի վախճանի գրոց. յորում յիշատակին իրք ինչ պատկանեալ առ մը ճարումն մատենին, կմ ճառին, և կմ առ յօրինողն նց. որ եդեալ կայ 'ի յն որդին. և 'ի վերջն նարեկին: Իսկ երբեմն նշա նակէ զյիշելիքն. կմ զյիշատակիչն: Նա րեկ. իե. և 'ի գոհ. առաք: Այսպէս և 3. Եզր. 2. 5. հայրենի դամբարանքն, կմ գերեզ մանք՝ յիշատակարան կոչին. ըստ որում նոքօք յիշին նախնիք ուրուք: Իսկ մինչ ասի՝ յիշատակարան սրտի, նշանակէ յի շողութիւն. կմ յիշողական զօրութին, ուր դանձին յիշելի իրքն:

Յիշատակաւոր. ի. աւ. աց. օք: ‖ ունօղ զյիշատակ. կմ այն՝ որ յիշի. որպիսիք են տօնք մեռեալք, զորս յիշեն քահանայքն 'ի պատարագի: Լամբրոն:

Յիշատակեմ. եցի. եա՛. ել: (Ներգործ.) ‖ 'ի յիշատակ ածել. կմ յիշել. և կամ յի շեցուցանել: ռամկ. միտ բերել. կմ միտ յը գել: Թուոց. 10. 9: Իմաստ. 2. 4: Խորէն. ա. պր. 14:

Յիշատակութիւն. թեան: ‖ յիշատակումն. կմ յիշումն:

Յիշելիք. եաց. եօք: (անեզական.) ‖ յի շատակիչ. կմ յիշատակ. իմ այն իրն, զոր տայ ոք այլում առ 'ի յիշել նորա զինքն. ըստ այնմ 'ի ճառս հարց. ժդ. Եա զմատա նին, և ասէ, պահեա զյիշելիքս զայս:

Յիշեմ. եցի. եա՛. ել: (Ներգործ.) ‖ 'ի յուշ ածել. կմ յիշատակել. որ ռամկ. ևս ասի յիշել: Ծննդ. 8. 1: Տոբ. 4. 1: Ղուկ. 17. 32:

Յիշեցուցանեմ. ցուցի. ցո՛. անել: (անցող.) ‖ յուշ առնել ումեք. կմ 'ի յիշատակ ա ծել. կմ յիշելով ծանուցանել, և 'ի յայտ բերել: ռամկ. յիշեցնել. կմ միտ ձգել: Ծնն. 41. 9: 2. Պետ. 1. 12:

Յիշեցուցանող. ողի. իլ. աց. օք: ‖ յիշե ցուցիչ. իմ յուշ առնօղ. կմ 'ի յիշատակ ածելով ազդ առնօղ: Խորէն. բ. պր. 7:

Յիշողական. ի. աւ. աց. օք: ‖ այն ամ, որ առ յիշողութիւն պատկանի: Իսկ մերթ առեալ լինի սոսկ փոխանակ յիշեցուցիչ զօրութեան. կմ յիշողութեան:

Յիշողութիւն. թեան: ‖ յիշատակումն. կմ յիշումն. և կմ յիշատակ: Խոր. բ. պր. 7: և Լամբրոն: Իսկ 'ի գիրս Խորէն. ա. պր. 20: ուր ասէ՝ գրեցան իւրեանց յիշողութեանց 'ի վերակացուաց, իմանի ասել, գրեցին վերակացու գպիրքն յիւրեանց յիշատա կարանս: Բայց մասնաւորապէս առեալ նշանակէ սոսկ զմին 'ի ներքին զգայու թեանց՝ որ է զօրութիւն ինչ հոգւոյ, յորում դանձեալ պահին զխառնուրդութիւնք անցա կաց անցեալ իրողութեանց, որոց միջնորդու թեամբ յիշեմք զանցեալսն:

Յիշոց. կմ յիշոցք. աց. օք: ‖ հայհոյութիւն աղտեղի բանիւք. որով հայհոյեն զկնոջ անս ամբարիշտ և գռեհիկ մարդիկ. և

[illegible]

[illegible]

ՅՂ.

Յղանամ. ացայ. ցիր. ալ։ (Ներգործ.) || Սաղմն առնուլ. կամ սաղմնաւորիլ. որով լինի երկաց ծնանիլ զզաւակ։ Ծննդ. 4. 1։ Դատ. 13. 3։ Ղուկ. 1. 31։

Յղարկաւոր. աւորի. աւ. աց. ըք։ || Յղող. կամ յուղղի արկանող. և կամ յուղարկաւոր։ ռամկ. ղրկող. կամ ճամբող։ Իսկ մերթ յղե- ցեալ. կամ առաքեցեալ։

Յղարկեմ. եցի. եալ. ել։ (Ներգործ.) || Յղել. կամ յուղարկել։ ռամկ. ղրկել։

Յղացեալ. ելոյ. ով. ոց. ովք։ || Յղանեցեալ. կամ սաղմնաւորեցեալ։ Իսկ մերթ յղա- ցող. և Ըստ այսմ է Երգ. 3. 4։ և 8. 2. յորս ասի, ՚ի սենեակ յղացելոյն զիս. Տ յղա- ցողին զիս։

Յղացումն. ցման. մամբ. մանց. մամբք։ || Սաղմնաւորութիւն. կամ յղանալն զզաւակ. և կամ յղութիւն։ Նարեկ. ՀԵ։

Յղացուցանեմ. ցուցի. ացո՛. ել։ (անցողա.) || Առնել ունել յղանալ. կամ պատճառ լինել յղութեան ուրուք։ ՚ի Վարս հարց. ԽԷ։

Յղեմ. եցի. եա՛. ել։ (Ներգործ.) || Առա- քել. կամ յուղարկել։ ռամկ. ղրկել։ Տօբ. 8. 14։ Ղուկ. 15. 15։

Յղի. յղւոյ. յղւով. եաց. եօք։ || Էգ՝ որ ընկալեալ զսերմն՝ յղացեալ է. և ունի ընդ զաւակ յորովայնի. ռամկօր. ծանր։ Ելից. 21. 22։ Ամովս. 1. 13։ Մատթ. 24. 19։

Յղկեմ. եցի. եալ. ել։ (Ներգործ.) || Մաշե- լով, կամ քերելով, և կամ շփելով՝ կոկել. կամ ողորկել. և կամ ընդէն փայլուն առնել. որպէս հիւսունք զփայտս. քարտակոփք զվէմս. ոսկերիչք զպղնձաթելեղէն և զոսկեղէն կազ- մուածս. ընտրողք ծովու զքարինս. Ըստ այսմ խոնս և զայլոց բաղդմանց։ ռամկ. փէրէլէլ. կամ պաղէլով տաշել. կամ ակնէփէլել. կամ ճիլայ փալ։ Լամբրոն։ Իսկ յաբերաբանէ առեալ եր- բեմն նշանակէ ՚ի բաց ձգելով յմեքէ ըզ խոշորսն, կամ զվատթարսն. և կամ զայլ ազգ պղծութիւնս՝ վայելչացուցանել, և կամ յօրի- նել և զարդարել. և պայծառացուցանել։ Երբեմն և մանրել. կամ ջախջախել. կամ կո- տորել. և կամ սպանանել։

Յղկութիւն. թեան։ || կոկութիւն. կամ ողոր- կութիւն. և կամ փայլողութիւն պատճառեալ ՚ի մաշելոյ. կամ ՚ի քերելոյ. և ՚ի շփելոյ։ ռամկ. փիլալիք. կամ ճիլայ։

Յղութիւն. թեան։ || յղացումն զաւակի. և կամ յղացեալ լինելն ՚ի մօրէ։ Ովսէ. 9. 11։

Յղփագոյն. գունի. իւ.ից. իւք։ || առաւել լիագոյն. կամ առատագոյն. և կամ ճոխա- գոյն. որով ոք դիւրութեամբ պարապաւոր. կամ հեղձանի։

Յղփանամ. ացայ. ցիր. ալ։ (Չէզ.) || Առա- ւել լցեալ լինիլ. կամ առատանալ. և կամ ճոխանալ. մինչ դիւրութեամբ մերձ լինիլ ՚ի հեղ- ձանիլ։ Յուդիթ. 15. 7։ Եսայ. 16. 4։ Ե- րեմ. 31. 24։

Յղփանէր. ներէ. աւ. աց. ըք։ || Յղփող յղ

Յղփութեամբ, կամ լիութեամբ. և կամ առատ- ութեամբ վայելելով մարմնաւոր բարեաց. որոյ եր խորտակաւէր մեծատունն։ Յն գրէ։

Յղփացուցանեմ. ցուցի. ցո՛. ել։ (անցողա- կան.) || կարի յոյժ լցուցանել. կամ առա- տացուցանել. և կամ ճոխացուցանել. և առաւել առատութեան լիութեամբ հեղձու- ցանել։ Մծբին. Ժ Թ. ՚ի վարս հարց. Ե։

Յղփութիւն. թեան։ || առաւել լիութիւն. կամ առատութիւն. կամ յղփանալն. և կամ ճոխու- թիւն ու և ինչ իրաց, որով ճոխացեալն դիւ- րութեամբ առաւելութեան պարապաւոր և հեղ- ձանի. Եզեկ. 16. 49։ Յն գրէ։ և Լամբրոն։

Յղքեմ։ || տես զՅղկեմ։

ՅՈ

Յո։ || Է առ Նախնիսն տրամախոհն դերան- ուանս՝ ու. և նշանակէ, առ ու. կամ առ ով։ Բայց երբեմն վարի իբրև զմակբայ տեղական. և նշանակէ՝ յուր տեղի. կամ ուր։ Ծննդ. 16. 8։ Ղուկ. 17. 36։ Յոհ. 21. 18։ որ և երբեմն գրի յով. Ըստ այսմ Յոհան. 14. 5. ոչ գիտեմք յով երթաս։

Յոբելեան. բելինի. իւ. կամ յոբելեաւ. եաց. եաւք։ || Է բառ եբրայական, որով նշանա կիւր առ հրէայս ամն յիսներորդ, որ էր նշ ոք և նուիրեալ. զոր և տօնէին մե- ծահանդէս ցնծութեամբ ազգ. առնելով Է ամ երկիրն խաղաղանց եղջերեայ փողովք։ Նարեկ. ՂԲ։ Յայսմ ամի գաւառացոց իւրա- քանչիւր ոք յազգ և ՚ի ժառանգութիւն իւր. և ազատութիւն առնէր գերեաց և ծառայից. և ՚ի բաց թողուր զամ, զոր կալեալ ու- նէր յայլմէ։ Վասն և այսպիսի յոբելեանս կոչիւր բաղումն անդամ ամ թողութե. որպէս Ղևտ. 25. 28։ և 27. 17։ Եւ յայսմանէ ա- ռեալ յոբելեան կոչիւր նաև փողն, զոր հարկանէին յամին թողութե։ Յես. 6. 3. և 4։ Եւ կամ ձայնքն փողոց և նուագարա նաց և երգոց, որք լինէին յայնմ ամի. կամ հնչէին համագիւղաբէս իբրև զբարբառ փո ղոյ և երգոց յոբելեան տարւոյն։ 1 Մնաց. 15. 28։ Դրոշմ. երբեմն առեալ լինի վեհին ու և իցէ յիսներորդ ամի, կամ յիսներորդ ա- մաց։ Նարեկ, ՚ի յիշատակարան։ Երբեմն և առեալ լինի առակ փոխանակ ազատութե. և ըստ այսմ ասի զքնէ. մանաւանդ իբրև առաւ յոբելեան գերութե ազգին մարդ- կան։ ՚ի գիրս ճգնին խորհրդոց։ Եւ առ հա- սարակ յոբելեան կոչի այն ամ որ է գերա գոյն, կամ պանծալի. և կամ հռչակաւոր. որպէս մինչ ասեմք, յոբելեանն հանդիսաւորու- թե. յոբելեան ցնծութե. կամ բարութե. և այլն։

Յոգն. կամ յոգի։ (Նախդրիւ հոլովի.) || Բազում. կամ յոլով. կամ առատ. կամ ճոխ. և կամ առաւել. և ըստ այսմ ասի ՚ի գիրս Թծծին խորհրդոց. Երախտաւորահատուցող լինել ալ յոգն մեղաց, և յաճախս ներողութեան։

Յոգնաբերդուն։ (Նախդրիւ հոլովի.) ||

զինջեալն ։ ռամկ. արթնցնել ։ Մտթ. 8. 25։ Մերթ եւ զրգռել. կամ բորբոքել. կամ շարժել. եւ կամ պատճառել. եւ ըստ այսմ սակս, յարուցանել զօգնութիւնս, կամ զհողմն, կամ զմրրիկ, կամ զխռովութիւն, կամ զհալածանս, եւ այլն ։ 1. Եզր. 2. 2։ Գործ. 13. 50։ եւ 14. 2։ Իսկ մերթ մասնաւորապէս առեալ՝ նշանակէ 'ի մահուանէ՝ 'ի կեանս զարթուցանել. եւ կամ զմեռեալս կենդանացուցանել ։ Յօհ. 12. 17։ Եբր. 11. 19։

Յաւակն. նի. նէ. նց. նւք ։ ‖ բարձրայօն. կամ յանդուգն. կամ լիրբ. կամ անամօթ. եւ կամ ժպիրհ ։

Յաւակնիմ. եցայ. եայց. իլ ։ (ձայնակր.) ‖ բարձրայօն լինել. կամ յանդգնել. կամ լրբել. կամ անամօթանալ. եւ կամ ժպրհել ։ Նորէն. լծ։

Յաւակնութիւն. թեան ։ ‖ բարձրայօնութիւն. կամ լրբութիւն. կամ յանդգնութիւն. եւ կամ ժպրհութիւն ։ Նորէն. խն.

Յաւանակ. ի. աւ. աց. օք ։ ‖ յովանակ. կամ ձագ իշոյ ։ ռամկ. իշու փոքրիկ ։ Ծննդ. 49. 11։ Յովհ. 12. 14։ Մտթ. 21. 2։

Յոգունք. կմ. յոգունք. յոգունց. ունքք։ || բազումք. կմ. յոլովք. կմ. շատք. և ըստ այսմ առն, զյոգունս բարւոքանել. կմ. յոգունց տեառնաց. կմ. բամբասանս յոգունս. և այլն։ Նոնն. Թ. ծե. և զթ։ և Լամբրոն։

Յոգւոց հանեմ. եցի. անել։ (չէզոք.) || հառաչել. կմ. հեծել. որ և ասի յոգւոց հանել. ռամկ. ախ ընել։ 3. Մակ. 6. 24։ Սաղմ. 30. 11։ Յոբ. 1. 8. և 11։

Յոգւոց հանել։ || նոյն է ընդ վերնոյն։ Իմաստ. 5. 3։ Եզեկ. 13. 18։

Յոգւոց հանութիւն. թեան։ || յոգւոց հանելն. կմ. հառաչանք. և կմ. հեծութիւն։ Խոր. ք. ա. 25։

Յոդ. ոյ. կմ. ի. իւ. ից. իւք։ || բազուկ. կմ. շուշ. կմ. յօդուած։ 1. Մնաց. 12. 29։ և 2. Մնաց. 30. 18։ Նոնն. դք։

Յոլովագոյն. գունի. իւ. ից. իւք։ || բազմագոյն. կմ. յաճախագոյն. կմ. առաւելագոյն. 1. Մնաց. 24. 4։ Իսկ մերթ վերբերբերու զմակբայ. և նշանակէ յոլովագոյնս.

կմ՛ յաճախակի. և կմ՛ բազմիցս: Յոբէ. 2. հար. լը:

Յոլովախօսութիւն: (Նախադրիւ Յոլովի.) || տե՛ս զԲազմախօսութիւն. Լամբրօն:

Յոլովածին: (Նախադրիւ Յոլովի.) || տե՛ս ըզ Բազմածին: Խորէն. ա. գլ. 11:

Յոլովակեր. ի. աւ. աց. օք: || զյոլովս կե_րող. կմ՛ բազմակեր. և կմ՛ շատակեր:

Յոլովակերութիւն. Թեան: || բազմակերութիւն. կմ՛ յաճախակերութիւն:

Յոլովակի: (մակբայ.) || յոլով անգամ. կմ՛ բազմիցս. կմ՛ յաճախակի. և կմ՛ ստէպ: Յոբէ. 1. հար. խա. խզ. լբ: Մերթ եւս վա_րի իբրև զանուն. և նշանակէ բազմա_գոյն: և կմ՛ յաճախ:

Յոլովաձեռն: (Նախադրիւ Յոլովի.) || տե՛ս զյոգնաձեռն: Խորէն. գ. գլ. 45:

Յոլովամեղծ: (Նախադրիւ Յոլովի.) || ա_նօղ զյոլով մեղծս. ք ղուրանս. կմ՛ որ պատ_ճառէ զբազում և զառատ մուրս մածեալս 'ի յատատաղս, կմ՛ 'ի ծխնելոյզս. ք՛ի Եի_րին. որպիսիք են ծուխք այրեցեալ նիւ_թոց ամանց: Նարեկ. խը:

Յոլովանամ. ացայ. ցի՛ր. անալ: (չէզոք.) || բազմանալ. կմ՛ աւելանալ. կմ՛ առա_տանալ. և կմ՛ ճոխանալ: ռամկ. շատնալ. կմ՛ էօշլնալ: Խորէն. գ. գլ. 62:

Յոլովանգամ: (մակբայ.) || բազում ան_գամ. կմ՛ բազմիցս. և կմ՛ յաճախակի: Յո_բէ. 1. հար. իբ: և 2. հար. իժ:

Յոլովացուցանեմ. ցուցի. ացո՛. անել: (ան ցող.) || տե՛ս 'ի ներքոյ զՅոլովեմ:

Յոլովեմ. եցի. եա՛. ել: (Ներգործ.) || բազ_մացուցանել. կմ՛ յաճախեցուցանել. կմ՛ ճոխացուցանել. և կմ՛ առաւելուլ. և յոր_դել. ռամկ. շատցնել. կմ՛ էօշլցնել: Ագաթ: 'ի վերջ հարց. Ե:

Յոլովիցս: (մակբայ.) || տե՛ս զՅոլովան_գամ:

Յոլովութիւն: || բազմութիւն. կմ՛ յաճախու_թիւն. կմ՛ առատութիւն. կմ՛ յորդութիւն. և կամ ճոխութիւն: 2. Մնաց. 31. 10. և 18: Վի_ռղ. 1. 18:

Յոլովուստեք. կմ՛ 'ի յոլով ուստեք. (մակ_բայ տեղական.) || 'ի բազում տեղեաց. կմ՛ 'ի բազում տեղիս: Յոբէ. 1. հար. Ը. և լբ:

Յոլովուրեք: (մակբայ տեղական.) || 'ի բա_զում տեղիս. ռամկօրէն շատ տեղ. Յոբէ. 1. հար. իդ:

Յոխորտ. ի. իւ. ից. իւք: կմ՛ աց. օք: || խը_րոխտ. կմ՛ խեղախող. կմ՛ ստապատիկ վստահ, և աներկիւղ. կմ՛ յոյժ քաջ, և անհարկու, որոյ ներհակն է ակարն, և երկչոտն, և ընկճեալն: ըստ այսմ. Յոբէ. 2. հար. Ը. յոր ժամ տեսից զորս այժմ երկչոտս՝ յանկարծակի յոխորտս, և համարձակս եղեալ: ըստ այսմ է և 'ի գիրս Լամբրօն:

Յոխորտաբան. ի. իւ. ից. իւք: || այն՝ որ խրոխտ և անհաւատ է բանիւք, կմ՛ որ մե_ծաբանելով և լեզուեցողութեամբ խօսի. և կմ՛ պոռոտաբան:

Յոխորտաբար: (մակբայ.) || խրոխտալով. կամ խիզախելով. կամ յանդգնութեան եւ_խեցողութեամբ. և կամ անհեղ քաջութեամբ: Խորէն. գ. գլ. 58:

Յոխորտամ. ացի. տա՛. ալ: (չէզոք.) || խը_րոխտալ. կմ՛ խիզախել. կմ՛ անհարկու կարո_ղութեամբ սպառնալ. ըստ այնմ. որ 'ի յոգ_նագուն ձեռնոյ. Զայս առաւել յոխորտա_ցեալ. զմեզ որսայքն գազանացեալ:

Յողդողդ. կամ յողդողդ. ի. աւ. աց. օք: || խախուտ. կմ՛ անհաստատ. կմ՛ անկայուն. կմ՛ գլխապաշարժ. և կմ՛ երերուն: և այս աւելի զմարդոյ. զմտաց. զխոհականոյ. ըզ հիմանէ. զաւազոյ. և զայլոց իրաց: 2. Պետ. 2. 14: և 3. 16: Յ՛ուրդի: Լամբրօն:

Յողդողդեմ. կմ՛ յողդողդեմ. եցի. եա՛. ել: (Ներգործ.) || անկայուն. և անհաստա_տանել. կմ՛ խախտել. կմ՛ դղրդել. կամ շարժել. և կմ՛ տատանեցուցանել: Լամբր: Երէ՛ մերթ՝ վարել. կմ՛ վարանեցի տա_նել. և կմ՛ 'ի տեղւոջէ 'ի տեղի փոխել: ռամկ. փէլքէն քոփէլ. կմ՛ փէրփրիլի ընել: Նա_հում. 3. 10: Իսկ մերթ՝ վրդովել. կմ՛ ա_փոխել. կմ՛ անհանդիստ առնել. և կամ զսկնդութիւն սրտի ուրուք կորուսանել. և ըստ այսմ ասի. 'ի բազմապատիկ, կամ 'ի առաջնական մարտէն յողդողդեալ. և կմ՛ յաղօթս կալ ցնդեալ մտօք, և յողդո_ղեալ մարմնով: Լամբրօն: 'ի վերջ հարց. Ե. և ժը:

Յողդողդութիւն. Թեան: || խախտումն. կամ դղրդումն. կմ՛ անհաստատութիւն. և կմ՛ անկայունութիւն:

Յողդողդուն: (Նախադրիւ Յոլովի.) || տե՛ս զՅողդողդ: Մծբն. ժԹ:

Յոյժ անկանիմ. կայ. անկի՛ր. կել: (Հարմար.) || 'ի վեր ողանց անկանիլ. կմ՛ զլի ձեռն ե_դեալ զծնօտիւ, անկանիլ 'ի վեր միոյ կող_ման: ռամկ. փօղին վրայ ընկնիլ: Իսկ մերթ առաւել լինել փափկանալ անփոյթ կալ. կմ՛ անհոգ լինելոյ: Ըստ այսմ Յոբէ. 2. հար. ժդ. 'ի բարկանալ տեր քում, զու յոյժ ան_կանիս, և ոչ գողաս:

Յոյն կամ. կացէ. կա՛ց. կալ: || յանդուղն կալ. ք 'ի վեր ողանց կալ. որով նշանակէ զթի_կունս իւր ամենք, և անձնիվայր կալնուլ. կմ՛ խաստապարանոցութիւն և անհնազան_դութիւն յաւնանիլ, և ոչ զիջանիլ. և կմ՛ գոռոզանալ: 3. Մակ. 3. 12:

Յոյզ. կմ՛ յոյզք. յուզից. իւք: || է արմատ յուզելոյ բային. և նշանակէ, յուզումն. որով մերթ խռնցեալ լինի զանանումն. կմ՛ հետազօտութիւն, և կմ՛ քննութիւն: Նարեկ. 'ի Յ՛ոնն. Եզտ. 'ի վերջ հարց. ժդ: և Ագաթ: Իսկ մերթ՝ վրդովմունք. կմ՛ աղմուկ. կմ՛ խառ_վութիւն. և կմ՛ ամբոխումն: 2. Մակ. 14. 15: Նարեկ. Թ. Խորէն. ա. գլ. ...

Յոյժ: (մակբայ յաճախական:) || ծայր_ առ 'ի բառէս՝ յոյժ. և նշանակէ՝ կարի. կմ՛ ստատիկ: ռամկ. խիստ: Ծննդ. 1. 31: Յե_սու. 9. 24:

Յոյժգին. կամ յուժգին: || տե՛ս զ[illegible]_գին:

Digitized by Google

Յոյժ յոյժ ։ (մակբայ յաճախական ․) || Կարի յոյժ ․ կմ եւս քան զեւս ․ կմ անդր քան ըզ չափն ։ Ծննդ․ 7․ 19։ և 30․ 43։

Յոյլ ․ յուլի ․ լիւ ․ լեց ․ լեաք ։ || Է արմատ յուլանալ բային, որով նշանակի յամրաշարժն, և դանդաղելոյն ․ կմ ալեւորդն ․ և կմ ծոյլն ․ Գործ․ 3․ 17։ և Աչգաց ։

Յոյն ։ || զօրեղ ․ կմ քաջ ․ և կմ ճարտար յիմաց գիտուն, կմ արուեստաւոր ։ Իսկ մերթ զօրութիւն ․ կմ քաջութիւն, կմ քաջահմտութիւն ․ և կմ ճարտարութիւն ։ Դիտելի է առ և անուն ազգի, զորմէ յիշատակս առնելոց 'ի բառարանի յատուկ անուանց ։

Յոյս ․ յուսոյ ․ ով ․ ոց ․ ովք ։ || ակնկալութիւն, որով ոք ակն ունի հասանելոյ բարւոյ իմիք ։ համմ ․ ապաստան ։ Փ․ Օրէն․ 9․ 4։ Կորնթ․ 16․ 19։ Եւ մերթ ապաւէնութիւն ․ կմ ապաստանութիւն ։ 2․ Օրէն․ 33․ 12․ և 28։ Ողբ․ 2․ 18։ Իսկ ըստ որում է սա Աստուածաբանական առաքինութիւն, նշանակէ զանկերկբայ ակնկալութիւն հանդերձեալ երանութեան յառաջիկայ 'ի շնորհացն այ, և 'ի գործելի գործոց ․ և ըստ այսմ աստուածաբանի յոյսն առ ․ զիտելաւ լինել ուստի բարձեալ լինի ծանրութիւն առաքինութեանց ․ զի ոչ ոք ստանէր զժուժարութեանց եղելոց 'ի յառաքինութիւնս, եթէ ոչ ունիցէր զյոյսն երանութեան ։ 1․ Կորն․ 13․ 13։ Բայց երբեմն յոյս կոչի յուսալի իրն ․ կմ առարկայն յուսոյ ․ որպիսի է Այ ․ կմ երանութիւն ։ Սաղմ․ 70․ 5։ Տիտ․ 2․ 13։ 1․ Պետ․ 1․ 3․

Յոր ․ յորի ․ կմ յորոյ ․ իւ ․ եց ․ կմ աց ․ օք ։ || ստացեալ ․ կմ ստուար ․ կմ թանձր ․ կմ թաւ ․ կմ գէր ․ և կմ լի ․ և այս առի զմարդոյ ․ զանասնոց ․ զծառոց ․ զանտից ․ և զայլոց 'իրաց ։ համմ ․ հաստ ։ Խորէն․ Գ․ գլ․ 59։ Մերթ եւս առի զատուրց ․ որք թանձրաձայն, կմ թաւաձայնք են, որպիսիք են ստքա․ թ․ խ․ չ։ Բայց գիտելի է ․ զի երբեմն բառս այս է սեռական հարցական անուանս ով ․ և սեղբնատառանն ոչ է ըընակեան ․ այլ նախադիր ։ ըստ այնմ ․ Յոր ձորձոյ մէր առաջեցի ․ այս 'ի մէր որոյ ձորձոյ ։ Ղեւտ․ 6․ 27։ Յո՞ր արգանդէ ելանէ սառն, այս 'ի յորդանդէ ո՞յր ․ կմ որո՞յ ։ Յոբ․ 38․ 29։ յոր ձեռն գայցէ ․ կմ մատնեսցի ․ այս 'ի ձեռն որոյ ։ Մատթ․ 18․ 7։ և 26․ 24։

Յո՞ր ասկի ։ (մակբայ հարցական ․) || 'Ի պատճառս ո՞յր ․ կմ առկս ո՞յր ․ կմ վա՞ս էր ։ Ողբէ․ 1․ հարց․ ԺԱ։

Յորդորակ ․ ոյ ․ ով ․ ոց ․ ովք ․ կամ եց ․ եաւք ։ || Է թռչուն ինչ անտառ, որ ունի զկենդան տատրակի ․ կմ լորամարգի ։ Կտուց իւր է նուրբ, և երկայն ։ Ունի զերանգ մոխրագոյն ․ կմ թխագոյն ․ բայց թեւքն, և տուտն են խայտ ։ 'Ի գլուխ իւր ունի զկատար աղաճարատաձև փետրալից, և խայտախարիւ ․ այս խաղաղութեան ․ զոր երբեմն ընդարձակէ, և երբեմն ամփոփէ ։ Բնակի յանձաւս 'ի գերեզմանս, և յաղբանոցս, և զզուարճանս աղբով մարդոյ, յորմէ և շինէ զբոյն իւր ․ սնուցանէ զորդիս իւր որդամբք աղբեաց, և պէսպէս ճճեօք ․ որովք և լինին նեխեալք ։ Ուտէ և զխաղող անյագ՝ մինչև ցնորի ոմ զարբեալ ։ 'Ի ծերանալն դարմանեն զնա ձագքն իւր՝ անյապաղ հոգալով զնա պէտսն ։ համկոր ․ ճռճռուլ ։ Ղեւտ․ 11․ 19։ 2․ Օրէն․ 14․ 18։ Զաքար․ 5․ 9։

Յոռանամ ․ ացայ ․ ցիր ․ աւ ։ (ընդմիջ․) || յոռի, կմ խոտան լինել ․ կամ վատթարանալ ․ կմ անարգանալ ․ և կմ քամահրելի և արհամարհելի գոլ ։ Եսայ․ 33․ 19։ [illegible]

Յոռեակ ․ եկի ․ աւ ․ աց ․ օք ։ || յոռի ․ կմ խոտան ․ կմ անարգ ․ և կմ արհամարհելի ։ Ըստ այսմ Ողբէ․ 1․ հարց․ ԺԱ․ այսու յառեկաւէք ․ և զծուռ և խոտարհ հանդերձիւ ․ այս յոռի և անարգ հանդերձիւ, կմ կերպարանօք ։

Յոռի ․ ռւոյ ․ ռեաւ ․ ռեաց ․ ռեօք ։ || վատթար ․ կմ խոտան ․ կմ անարգ ․ կմ արհամարհ ․ և կմ անպիտան ։ համմ ․ գէշ ․ կմ չար ։ Ղեւտ․ 27․ 10։ և 12․ և 33։ Յոհ․ 2․ 10։ Իսկ մերթ անախորժ ․ կմ անդիւր ։ Ողբէ․ 2․ հարց․ ԼԲ։

Յոռոտաբան ․ կմ յառոտաբան ․ ի ․ իւ ․ եց ․ իւք ։ || յոռացեալ բանիւք ․ որով նշանակի չարախօսն ․ կմ ճոխաբանն ․ և կմ ճառամախօսն ։

Յոռութիւն ․ թեան ։ || վատթարութիւն ․ կմ ժանտութիւն ․ կմ խոտանութիւն ․ կմ անարգութիւն ․ և կմ քամահրելի և անարգելի գոլն ։ 1․ Թագ․ 29․ 10։

Յոսին ։ (Նախադիր հոլովի ․) || ցամաքային, կմ երկրային ․ և այս առի զկենդանեաց, որք շնչեն և կեան միայն 'ի ցամաքի, որպիսիք են ոմանք դորտունք ․ կրիայք ․ կոկորդիլոսք ․ և այլք նմանք, որոց ներհակքն կոչին ջրայինք ։ Ըստ այնմ Ղեւտ․ 11․ 29․ ուր 'ի թուելն զպիղծ սողունս երկրայինս, առի, և տիտեղն յոսախն ․ նշանակի կոկորդիլոսն ցամաքայինն, և ոչ ջրայինն ։ Եւ բառս այս գրի եւս ոստին ․ որպիսիք են և այլք բազում բառք ․ որք երբեմն յիով գրին ․ և երբեմն առանց յիոյ ․ ոմ ասացաւ 'ի մեկնութեան Յի տառին։

Յովազ ․ ի ․ իւ ․ ից ․ իւք ։ կմ ազ ․ օք ։ || Է մեծ գազան ինչ յազգէ գայլոց՝ խայտաբղետ երբև զինձ ․ որ ունի բնութիւն յոյժ չար և անհնարին ։ Նշանակի և ոմն առ մատակ ինձն, այս էգ ընձառիւծն ․ որ լինի մարմնով ըստուար, և բարուք դժնդակ՝ և կատաղի յոյժ ․ որոյ բարկութեան ոչ ոք կարէ ընդդէմ կալ ․ մանաւանդ յորժամ սնուցանէ զկորիւնս ։ Ովսեայ․ 5․ 14։ և 13․ 7։ 'Ի Վարս հարց․ Ծ․ և ԻԶ։

Յովանակ ․ ի ․ աւ ․ աց ․ օք ։ || յաւանակ ․ որ է քուռակ իշոյ ։ Դատ․ 10․ 4։

Յովտ ․ ի ․ իւ ։ || Է բառ յունական ․ որով մերթ նշանակի շեշտ ․ կմ կէտ ։ Իսկ մերթ մին 'ի քսան և չորից գրոցն յունաց ․ որ է Ի բարբառոյ մե՛ր կոչի՝ իօթայ ․ ըստ որում համամատի 'ի մեզ տառս յի ․ կամ ինի ։ Այս յովտ ըստ յոյնս է փոքրիկ քան զամենայն

գիրս ․

գիրս. զի որոյ և երբեմն առնել ընկնի փոխանակ զուղղութեան՝ և չնչին նոցա : ոչ կարի է և առ. երրայեցին գիրն խօս. որ և է նշ յի. կմ ինի : Արդ՝ Մատթ. 5. 18. մինչ առի՝ յոդա մի ոչ անցցէ յօրինացն և 'ի մարգարէիցն , առաց Քն երրայեց_ ւոց բարբառովն խօս մի. զոր յոյն թարգ_ մանն. զի նշանութեն առուին՝ դարձոյց 'ի յոյն լեզու իօթայ մի. յորմէ 'ի մեզ թարգ_ մանեցաւ յոտա, 'ի բաց եդեալ զայբ առուն զի վայելուչ արտաբերութեն :

Յոտն կամ. կացի. կաց. կալ : (չէզոք.) || յառնել. կմ կանգնիլ : ռամկ. ոտից վերայ ելնել. կմ կենալ : Մ.ի.իա 2. 10 : Գործ. 5. 6 : և 26. 30 :

Յոտնկացութիւն. թեան : || յոտնկալն. կմ կանգնումն :

Յորդ. ի. իւ. իւց. իւք : || առատ. կմ կարի յոյժ և զեղուն. կմ յոյժ բազմացեալ, և առաւելեալ : և այս առի զգետոց, կամ զջրոց. զարտասուաց. զանձրեւոյ. զհրոյ. և զայլոց նմանեաց : Ելից. 8. 7 : Նարեկ. կդ : Աւ_ գոս : Յն օրդն : Իսկ մերթ վարի իբրև ըզ մակբայ յաճախական, և նշանակէ առա_ տապէս. կմ յուլովակի. և կամ սաստիկ յոյժ. ոչ մինչ առի յորդ բղխել. կամ յորդ արտասուել. և այլն : Իսկ մերթ առի զձայնից. կմ զհնչմանց. և նշանակէ մեծաձայնելն. կմ սաստկաձայն. և կմ ուժ գին հնչող. ռամկ. կլոր :

Յորդաբորբ : (Նախդրիւ հոլովի.) || յորդ. և առատ բորբիւ, իբր խառնարան և մթով. կմ կարի նսեմացեալ և մթացեալ : Իսկ մերթ առատացեալ տապով, կմ սաստիկ կիզիչ և այրիչ. և ըստ այսմ առի յորդա_ բորբ ջերմութիւն կմ բոց. և այլն : 'ի հին. պատմագիրս :

Յորդաբուղխ : (Նախդրիւ հոլովի.) || յորդ բղխող. կմ առատաբուղխ. կմ առատահոս : Նարեկ. կը : և Աւգոս :

Յորդագնաց : (Նախդրիւ հոլովի.) || տե՛ս զՅորդախաղաց :

Յորդագոյն. գունի. իւ. իւց. իւք : || առա_ տագոյն. կմ ճոխագոյն. կմ առաւելա_ գոյն. և կմ սաստկագոյն : Իսկ մերթ վա_ րի իբրև զմակբայ, և նշանակէ առատա պէս. կմ առաւելապէս. և կմ սաստկա_ պէս : Խորէն. բ. գլ. 42 : Աւգոս :

Յորդագութ : (Նախդրիւ հոլովի.) || ու_ նող զյորդ գութ, կմ զառատ գութ. կմ բազմագթութ. և կմ գթառատ : Մծբն. ժթ :

Յորդաւէտ : (Նախդրիւ հոլովի.) || յորդ ընթացիւք գնացող և հոսող. որպիսիք են յորդագնաց ջուրք : Աւգոս :

Յորդախաղաց : (Նախդրիւ հոլովի.) || յոր դութեամբ խաղացող, իբր առատապէս բղխող և գնացող. կմ սաստիկ առատութեամբ հոսող. կմ յորդագնաց. և կմ առատա_ բուղխ : Լամբրոն :

Յորդախօս. ի. իւ. իւց. իւք : || առատախօս. կմ ճոխաբան. և կմ պերճաբան :

Յորդահեղեղ : (Նախդրիւ հոլովի.) || հե_ ղեղօրէն յորդեալ և առատացեալ. կամ յորդահոս. և կմ առատաբուղխ. և ըստ այսմ առի. յորդահեղեղ անձրև, կմ ջուր : 'ի հին պատմագիրս :

Յորդահոս. ի. իւ. իւց. իւք : || տե՛ս զՅոր_ դախաղաց : Լամբրոն :

Յորդահոսան : (Նախդրիւ հոլովի.) || տե՛ս զՅորդախաղաց : Նարեկ. կը : և Լամբրոն :

Յորդահոսիմ. եցայ. եաց. իլ : (Չեզոք.) || յորդութբ հոսիլ. կմ յորդառատ գնա_ ցիւք ընթանալ : Յն օրդին :

Յորդաձայն. ի. իւ. իւց. իւք : || ուժգին, կմ մեծաձայն հնչող. կմ սաստկաձայն. և կմ բարձրաձայն : ռամկ. կլոր ձայն ունող :

Յորդանէս. նիսայ. աւ : || է անուն մեծի գետոյն պաղեստինոյ. որ հասարակօրէն կոչի՝ յորդանան. զոր անցեալ 'ի բաղարաց նի յատուկ անուանց : Նարեկ. 'ի փոխ. առակ :

Յորդապէս : (մակբայ որակական.) || առա տապէս. կմ առաւելապէս :

Յորդառատ : (Նախդրիւ հոլովի.) || յորդ և առատ, կմ ճոխագոյն. և կմ յաճախա_ գոյն : Լամբրոն : Մծբն. ժթ :

Յորդելանկ. ի. աւ. աց. օք : || է բառ առ_ ղաչափական, որ առի զհնչմանց, կմ զձայ նից. որք յորդ ելանեն, իբր մեծաձայն. կմ ուժ հնչեն. և կմ շեշտակալ արտա_ բերին :

Յորդեմ. եցի. եա. ել : (Ներգործ.) || առա տացուցանել. կմ յաճախեցուցանել. կմ բազմացուցանել. կմ ճոխացուցանել. և կմ սաստկացուցանել : Իսկ մերթ սաստիկ առատութբ բղխեցուցանել. կմ յորդա_ ռատ բղխմամբ հոսեցուցանել. ըստ այսմ. Յովէ. 3. 18. Եւ բլուրք յորդեսցեն զկաթն : Մերթ և առնուլ ընկնի փոխանակ բղ_ բղխելոյ. կմ սաստիկ վառելոյ. և ըստ այսմ առի 'ի գիրս Աւգոսի. 'ի գութ խնամոցն հոր յորդեաց ջերմոյն գնոյն : Իսկ մերթ վարի առ չէզոքականաւ. և նշանակէ յորդիլ. զոր անցցես զլխի : Եզեկ. 47. 5 : Մծբն. ժթ : Ոսկէ. 1. հոգ. ժա : Աւգոս :

Յորդեռանդն : (Նախդրիւ հոլովի.) || յոր դեալ և եռացեալ. կմ յորդառատ և բոր բոքեալ. կմ յոյժ եռանդուն. և կմ ջեր մեռանդն. և ըստ այսմ առի. յորդեռանդն սիրով խնամել զոք :

Յորդեգնաց : (Նախդրիւ հոլովի.) || յոր դագնաց. կմ յորդաբուղխ. և կմ յորդա հոս. և ըստ այսմ առի. գետ յորդեգնա_ ցաց. Աւգոս :

Յորդիմ. եցայ. եաց. իլ : (Չեզոք.) || յորդ առատանալ. կմ յաճախել. կմ աճիլ. և կմ սաստկանալ : և ըստ այսմ առի. յոր դիլ գետոց. կմ հեղեղաց. անձրևաց. կմ ստացուածոց. ակնից. կմ հրոյ և այլն : Յեսու. 20. 40 : Եսայ. 30. 28 : և 66. 12 : Դանի. 7. 10 : Մերթ և նշանակէ յորդութբ բղ խել. կմ առատութբ հոսիլ. որ հանդի պի գետոց. Եսայ. 32. 2 : Իսկ մերթ առ նի և ծաւալիլ. կմ մեծապէս հնչել. և ըստ այսմ առի. յորդիլ հնչմանց. կամ

բանից, և այլոց նմանեաց. ռամկօր. լու-
ծեալ. Ղւկ. 5. 15: Երբեմն եւ առեալ ըն-
նի փոխանակ բորբոքելոյ. կմ վառելոյ. ըստ
այնմ՝ Նոննի. դժ. 'ի փափագ գթութեն սի-
րոյ յորդեցան. տ. վառեցան:

Յորդոր. ի. ին. ից. իւք: || յորդորումն. կմ
համոզումն. կմ յօժարեցուցումն առ ինն.
և կմ խրախոյս: Իսկ մերթ յորդորեալ.
կմ հակամիտեալ. կմ համոզեալ և յան-
կուցեալ առ ինն: ըստ այնմ Ոսկէ. 2. հռվ.
լե. Առ հողեղէնսն ամ նմանապէս ման
կացուցանէին յորդորք. տ. առ ամ հողե-
ղէն իրս հակամիտեալք, և յանկուցեալք,
նոյնով կերպիւ մանուկ լինին: Երբեմն
եւ նշանակէ յորդորական. ըստ այնմ. 'ի
շարականսն. յորդոր ածնիս ձեր յիշատակ,
արեան սրբոյ հեղման վասն. տ. յորդո-
րական յիշատակ ածնից վասն հեղման
արեան ձերոյ լցցի առ մեզ իբրև զնբ պա-
տարագ. որ յարի զինի: Մերթ եւ մտա-
դիւր. կմ յօժար. կմ պատրաստ. և կմ
ինքնակամ. ըստ այնմ Աչգոբ. իսկ եթէ
զձեզ յորդոր և յօժար տեսանիցեմք: ըստ
այսմ եւ ասի. յորդոր սիրով, կմ մտօք.
յորդոր սրտիւ. կմ յորդոր կամաւորու-
թբ. և այլն: Երբեմն եւ յորդ. կմ յա-
ճախ. և կմ առէպ. և ըստ այսմ փոխա-
նակ ասելոյ, արագ ասել զինն. ասէ՛ յոր-
դոր ասել. ռամկ. գնոյն ասել:

Յորդորակ. ի. աւ. աց. օք: || յորդորումն.
կմ յորդորական բան. և ըստ այսմ յոր-
դորակ կոչին խրատականն, և յորդորեցու-
ցիչ բանքն, որք իբրև զեզրակացութիւն,
կմ պտուղ տասացուածոց, և վարդապե-
տութեց՝ հետևեին 'ի վախճանի. որպէս եդեալ
կայ յաւարտս իւրաքանչիւր ճառից մեկ-
նութեն յոհաննու ոսկեբերանին: Սոյնպէս
յորդորակ կոչեցան տմանք երգք արևա-
գալին՝ որ գոլով նշ իբրև զհետևութիւն
նախընթաց երգոցն. որպիսի է Անեզա-
ննելին ամեն, որ հետևի Լոյս արարիչ լու-
սոյն:

Յորդորական. ի. աւ. աց. օք: || համոզա-
կան. կմ խրատական. և կմ յորդորիչ, և
յօժարեցուցիչ. Լամբրն: Իսկ մերթ խրա-
խուսական. կմ շարժողական. և կմ ջեր-
մեռանդական: և ըստ այսմ ասի 'ի շարականն
վկանաց գովեստոյն. յօրինել քեզ երգս
յորդորականս, և ներբողեանս:

Յորդորամիտ. մտի. ին. աց. օք: || յօժարա-
միտ. կմ յօժարակամ. և կմ յօժարող. և
հաւանող. և ըստ այսմ ասի. յորդորա-
միտ առնել զոք 'ի հաւատս. և կմ յայլ ինչ:

Յորդորեմ. եցի. եա. ել: (ներգործ.) || խրա-
տական, կմ քաջալերական բանիւք մղել
զոք 'ի գործ ինչ. կմ համոզել. կմ դրդել.
կմ գրգռել. և կամ յօժարեցուցանել:
Պ. 1. 14: Աչաւ. 6. 3: 2. Կորն. 9. 2: Իսկ
մերթ առնկել, կմ շարժել: ըստ այնմ
Խորէն. Գ. գլ. 9. Այսպիսի գինեածն՝ 'ի
փոխուսս յորդորեաց զթշնամին: Մերթ
եւ նշանակէ յորդել. կմ յաճախեցուցա-
նել. և կմ բազմացուցանել: և ըստ այսմ
ասի 'ի գիրս Աչգոբ. յորդորեցին գունդս
գունդս հաւատացելոց, և զամ երկիր լը-
ցին: Իսկ Եզեկ. 21. 20. նշանակէ հորդել.
կմ յարդարել:

Յորդորեցուցանեմ. ցուցի. եցո. ել: (ան-
ցողակ.) || նոյն է ընդ յորդորել բային.
որ և զատանելն է զատուցանել բային:

Յորդորեցուցիչ. ցուցչի. աւ. աց. օք: ||
յորդորիչ. այսինքն համոզօղ 'ի բարին. կմ
յօժարեցուցանօղ. կմ խրախուսօղ. և կմ
քաջալերօղ: Խորէն. Գ. գլ. 68.

Յորդորիմ. եցայ. եաց. իլ: (ձայնակր.) ||
յօժարիլ. կմ հակամիտել. կմ մտադիւր
սրտիւ յարիլ յինն. և ըստ այսմ ասի.
յորդորիլ յերկիւղն, և 'ի սէրն այ. կմ 'ի
առաքինութիւնս. և 'ի չարութիւն. և այլն:
'ի չարս հարց. ժթ: ըստ այսմ է 'ի գիրս Ոսկէ.
1. հռվ. լը. սուր ասի. մի անմտաբար յոր-
դորեսցուք ունել զայն, որ ոչ է մեզ. տ.
մի անմտութբ յօժարեսցուք ունիլ:

Յորդորիչ: || տես զՅորդորեցուցիչ:

Յորդորութիւն. թեան: || տես 'ի ներքոյ ըղ
Յորդորումն:

Յորդորումն. րման. մամբ. մանց. մամբք: ||
յորդորական բան. կմ համոզումն. կմ
յօժարեցուցումն. և կմ բորբոքումն 'ի
բարին. Եբր. 10. 24: Ոսկէ. 2. հռվ. իե: ըստ
այսմ է. և այն. Ես եւ տառել զյորդո-
րումն սիրոյ պարգևել մեզ խնդրեմք. տ.
զբորբոքումն սիրոյ: Եւ կմ այս. տպաւո-
րեալ միայն զմեզ է ամ բարեգործու-
յորդորմունս. տ. բորբոքմունս: Իսկ մերթ
յորդութիւն, կմ յաճախութիւն. և կմ զեղումն:

Յորդութիւն. թեան: || առատութիւն. կամ
յաճախութիւն. կմ յոլովութիւն. կմ առա-
տին աճումն, և զեղումն. և կմ յորդա-
տաս բղխումն. Իմաստ. 17. 17: Եզեկ. 47. 3:
Նոննի. լա:

Յորժամ: (մակբայ ժամանակ.) || յորում
ժամու. կմ երբ: ռամկ. երբ-որ. կմ երբ.
Ծնունդ. 17. 11: Յովհ. 21. 18:

Յորձ. ի. ին. ից. իւք: || որձ. կմ արու ա-
նասուն, որով նշանակի արու ոչխարն,
կմ գառն. Ովս. 5. 6:

Յորձախաղ: (նախդրիւ հոլովի.) || ուժող
զյորձանս խաղս. կմ որ պատճառի 'ի խո-
րին յորձանաց, տ. յորդութեց ջուրց. և
ըստ այսմ ասի. յորձախաղ անդունդ. կմ
ալիք. և այլն: Աչգոբ.

Յորձանուտ. ուտի. ին. աց. օք: || տեղի ի ծո-
վու, կմ 'ի գետս, ուր յորձանք ջուրց սաս-
տիկ բռնութբ ընթանան: Եւ կմ ջուրք յոր-
ձանաց ծովային՝ կմ գետային գիտեալք
բուռն ընթացիւք ընդ տպա ի վայր. որ-
պիսի է այն, որ անցեալ ընդ նեղուցն կոս-
տանդնուպօլսի խառնի 'ի սպիտակ ծովն.
ռամկ. անդնդը. Լամբրն: և 'ի հին պատմա-
գիրս: Եւ յայսմանէ առեալ յորձանուտ
կոչին երկու ձանծաղ և ժայռուտ տե-
ղիքն առ ափամբն ծովուն ափրիկոյ, որք
յոյժ վտանգաւորք են նաւորդաց. քան-

զի տանին 'ի ծոց խուժեանց լեռնացեալ զզառաղմագէզ կոյտս աւազոյ. և առ նոքօք 'ի տեղիս տեղիս ղանգուածս ջրոց ։ Եւ լերկ յառնեն հողմք և ալեկոծութիւնք՝ վաղ վաղակի առաջին յանդունդս լցեալ լեռնացուցանեն զնա. և 'ի լեռնացեալ անդեան անդունդս բանան. յորմէ և բազմաց գակ ծովու վեր 'ի վայր շրջեալ ահագին յորձանօք եռանէ և խժանէ ։ Վն որոյ եթէ դէպ լիցի նաւուց անկանել անդր՝ խորտակեալ լինին յանդունդս, և կմ խորտակին 'ի յաւազուտան ։ Գործ. 27. 17 ։ տե՛ս և 'ի բառապաշն յատակ անուանց ։

Յորձանք. անաց. գք ։ (անեզ.) ‖ սրընթաց և յորդառատ հոսանք ջրոց. և կմ հեղեղանման սաստիկ ընթացք, կմ յորդութիւք ջուրց ։ և ըստ այսմ սաւ՝ յորձանք գետոց, կմ հեղեղատաց. յորձանք ուղխից, կամ հեղեղաց. և այլն ։ Երեմ. 50. 44 ։ Եզեկ. 47. 5 ։ Յոբ. 1. հատ. խա. Եւ մերթ առեալ լինի սակ փոխանակ ուղխից. կմ յորդառատ վտակաց ։ ռամկօր. ռէլ. ըստ այնմ Խորէն. հռ. գր. 10. ուր յորձանք լինէ սաստիկ ընդ զառ 'ի վայր հեղեալ ։ Իսկ մերթ մանաւանդ յորձանք կոչին ջուրք ոմանց նեղուցաց ծովու, որք բազում անգամ յասուցին անդորրէն դարձ արարեալ սաստիկ բռնութբ ընթանան, մինչև զնաւս վարեալս սաստկաշունչ հողմովք՝ յետս ընկրկեալ ընդ ճնշեանց տանին ։ 'Ի գէօր գոր գորի ձեռաբանին ։

Յորմէհետէ ։ ‖ մակբայ ժամանակական, որ ունի զզօրութիւն ասելոյ. յորմէ ժամանակէ. կմ յետ որոյ. և կմ յորժամ. ռամկ. քանի որ. կմ երբ որ ։ Ծնն. 5. 23 ։ Ելից. 44. 7 ։ Ղուկ. 13. 25 ։

Յորմլային ։ ‖ նոյն է ընդ որմլային բառին. որ յարմարեալ ընդ սուրատ բառին. որպէսք են և այլ բազում բառք. զորոց ասացաւ 'ի մեկնութեն յ. տառին. Յ. Է. 15. 35 ։ և Յ ^ն^ տառի ։

Յորմլայնապարար ։ (նախադրիւն հոլովի.) ‖ պարարող զորմլային իւր. որով նշանակի սաստիկ որկրամոլն. կմ չարաչար պարարօղն 'ի յուտել և 'ի յըմպել ։

Յորջ ։ ‖ տե՛ս զՅորջ ։ Յ ^ն^ տառի ։

Յորջորջեմ ։ ‖ տե՛ս զՅորջորջեմ ։ Խնասր. 13. 10 ։

Յորջորջակ ; ի. աւ. աց. գք ։ ‖ յորջորջեալ. կմ անուանի. կմ հռչակաւոր ։

Յորջորջանք. անաց. գք ։ (անեզ.) ‖ յորջորջումն, ոյք անուանումն. կմ կոչումն ։ Նար. ղէ ։ Եւ Կիւրղի Եղէմ. Է. ուր սաւ՝ հայր կոչել յորջորջանօք. խմանի՝ կոչմամբ. կմ անուամբ միայն, և ոչ ըստ իսկութե ։

Յորջորջեմ. եցի. եա. ել ։ (ներգործ.) ‖ անուանել. կմ կոչել. կմ կարդալ զոք անուամբ իւիք ։ Խորէն. աշ. գր. 3 ։ և բ. գրոց. 77. և 85 ։

Յորջորջութիւն. թեան ։ ‖ տե՛ս զՅորջորջանք ։ Նարեկ. ղէ ։

Յորջորջումն. ման. մամբ. մանց. մամբք ։ ‖ տե՛ս զՅորջորջանք. Նարեկ. ղէ ։ Խորէն. բ. գր. 60 ։

Յորսայ ։ ‖ է արմատ յորսայսել բային. որ ընդ բայի շարակցի այսպէս. որկանել, կմ ընկենուլ զոք յորսայս, և նշանակէ, 'ի մէջ թեկանց, կմ երեսաց արկանելով տարածել. ուր առնէին 'ի հնումն ոմանց պատժապարտից, հարկանելով յերկիր զխոր ցեցս դէմ յանդիման հեռի 'ի միմեանց. և սաստիկ քարշմամբ ուժգնիւս պնդէին զձեռս և զոտս նց 'ի ցիցան առ 'ի լուծանել զյօդուածսն. կմ 'ի խզզատել զմարմինս ։ Եւ այսպիսի կերպիւ յորսայս որ կանեսլն զոք, կոչի նա արկել. կմ պնդել յորսայս. Աւգոս ։ Գիրք. երբեմն յարի 'ի բայս այսպէս. յորսայս կալ. կմ յորսայս անկանիլ. և նշանակէ 'ի մէջ երեսաց անկեալ տարածիլ. կմ անկեալ տարածիլ 'ի մէջ թիկանց ։ 'Ի գրոց հարց. իզ ։ Եւ յայս մանէ առեալ երբեմն նոքա, որք անմանեն անփոյթ եղեալ զիմեքէ՝ յանհոգս նստին, և երբուլթէ ընկողմանեալ նիջեն, նստին, և երբութէ ընկողմանեալ նիջեն. ասեն նմանութբ՝ յորսայս կալ ։

Յորսայսեմ. եցի. եա. ել ։ (ներգործ.) ‖ յորսայս ընկենուլ. կմ տարածել արկանել. և կմ զգետնել ։ ռամկ. Երեսին. կմ գետնին վրայ փռել. կմ գետնի վրայ զինքն փռել ։ Նարեկ. լէ ։

Յուզախնդիր ։ (նախադրիւն հոլովի.) ‖ յոյզ և խնդիր առնօղ. կմ յուզօղ և որոնօղ. որ և սակ խուզարկու ։ ռամկ. քննօղ. կմ բնգօրոցի. և կմ բնգօրոցի. ըստ այնմ Աւգոս. 'ի կողմանս կողմանս յուզախնդիրք եղանէին ։

Յուզակ. ի. աւ. աց. գք ։ ‖ յուզօղ. որով մերթ նշանակի խնդրակ, ոյք որոնօղ. կմ հետապնդօղ. և կմ քննօղ ։ Իսկ մերթ մ հետամտօղ. կմ խռովօղ ։ և կմ յուզեալ և մ դողօղ. կմ խռովօղ ։ և ըստ այսմ սաւ՝ յուզակ ալեկոծեալ. և ըստ այսմ սաւ՝ յուզակ ալեկոծեալ. Աւգոս ։ Եւ մերթ դրդօղ. կմ բորբոքիչ. ըստ այնմ Կիւրղի Եղէմ. ժբ. Ամ խունկք յուզակք ցանկութեց ։

Յուզարկու. ուի. ուէ. աց. գք ։ ‖ խուզօղ. կմ հետամտօղ. և կմ որոնօղ ։ Իսկ մերթ կմ հետամտօղ. և կմ որոնօղ ։ Իսկ մերթ վրդովիչ. կմ խռովարար. և կմ զաղմնկիչ. ըստ այսմ սաւ. զօրական յարուցանօղ. և ըստ այսմ սաւ, զօրական յուզարկու. Խորէն. գ. գր. 68 ։

Յուզեմ. եցի. եա. ել ։ (ներգործ.) ‖ խուզել. կմ որոնել. կմ հետամտել. և կմ քննել ։ ռամկ. քննել. Ծննդ. 31. 33. և 34 ։ և 44. 12 ։ Յեսու. 1. 7 ։ Մերթ և վրդովել. կմ խռովել. կմ աղմկել. և կմ սասանել. կամ ըստ տեղել. կմ շարժելով ամբոխել զծով. կամ ըստ այսմ շարժել, շարժելով ամբոխել զծով. 2. Մակ. 14. 6 ։ ջուրս. որ է շարժել. 3օհ. 5. 3. և 4 ։ և 6. 18 ։ Երբեմն և գրգռել. կմ բորբոքել. և կմ շարժել ։ ըստ այսմ Մարկ. 15. 13 ։ Դարձեալ. աղաղակիւն յուզեալքս 'ի քահանայապետից, ոյք կէին յուզեալք 'ի քահանայապետից ։ Սոյնպէս գրգռեալք յիշխանացն քահանայից ։ Սոյնպէս եւ սաւ՝ յուզել զկռիւ. զպատերազմ. 2. Մակ. 13. 4 ։ Աղոտ. 26. 21 ։ 1. Տիմ. 1. 4 ։ Իսկ 'ի

գեղօ Մծբնայ ԺԹ. ուր ասէ՝ Յուղէք զուղ_ ղծով և զկամուրջ՝ առնել եկամուտ մի. խմանի՝ վէր 'ի վերայ դարձուցանել՝ Ջանդարհ առնելով: ասած. նեքսենն 'ի վերայ ընէլ:

Յուզումն. ման. մանք. մանց. մամբք: || Սրանուումն. կմ խուզումն. և կմ քննութիւն: Իսկ մերթ խառնութիւն. կմ վրդովումն. կմ աղմուկ. կմ գրգռութիւն. և կամ շարժումն: Նարեկ. Խ. և Հ:

Յուժգին: || տես զՍուժգին:

Յուժգնակի: || տես զՍուժգնակի:

Յուլաբար: (մակբայ որակ.) || Ծուլութ. կմ ալքերդութ. և կմ գանդաղանօք: Խորէն. Գ. գլ. 60:

Յուլանամ. ացայ. ացիր. ալ: (ընդամիջ.) || յոյժ լինել. կմ ծուլանալ. կամ հեղգանալ. և կմ ապերդանալ. Եսայ. 22. 30: և 2. Թես. 3. 11:

Յուլիս. ի. իւ: || Եւթներորդ ամսոյն հռոմայեցւոց անուանեալ 'ի յուլիանոսէ. որ համեմատի հռոմայեցւոց ամսոյն հայոց. և այլ ամսոյն եգիպտացւոց:

Յուլութիւն. թեան: || Ծուլութիւն. կմ ալքերդութիւն. և կմ հեղգութիւն: Սոկր. 1. հատ. Թ:

Յուղարկաւոր. ի. աւ. աց. օք: || յուղարկող. ըստ նաև՝ որ յուղի արկանէ զոք զնալով ընդ նմա սակաւ ինչ. և կմ մինչև ի տեղի Ջանապարհակից լինելով. զոր երբեմն առնէին առ 'ի պատիւ գնացելոյն. և մերթ մի պահպանութիւն. կմ օգնութիւն: ասած. Ճանբորդ. 1. Եզր. 8. 52:

Յուղարկաւորեմ. եցի. եա. եալ: (ներգործ.) || տես զՅուղարկել:

Յուղարկաւորութիւն. թեն: || յուղարկումն. կմ յղումն. կմ առաքումն ուրուք 'ի տեղի ինչ՝ ուղեկից լինելով ընդ նմա սակաւ մի. զորմէ լիագոյն ասացաք 'ի բայն յուղարկել: ասած. Ճանբեւը: Իսկ մասնաւորապէս առնել նշանակի առնլաւ հանդէսն Թագաւոն մեռելոց, յորում առնել բազմութիւն մարդկան զգէն, գագաղօք, և պէսպէս սպասուք և հանդերձանօք. կմ խնկօք և մոմեղինօք, և այլովք պատրաստութեամբք սահմանին զնա 'ի գերեզմանն: 2. Մնաց. 16. 14: և 21. 19:

Յուղարկեմ. եցի. եաւ. եալ: (ներգործ.) || յուղի արկանել. որով նշանակի հանել զոք 'ի Ջանապարհ, գնալով ընդ նմա սակաւ ինչ, կմ մինչև ցվախճան առ 'ի մեծարանս. կմ առ 'ի պահպանութիւն: ասած. Ճանբեւ. Ծննդ. 12. 20: և 18. 16: 1. Եզր. 4. 47: Գործ. 20. 38: Իսկ մերթ նշանակէ առաքել. կմ ասել: ասած. ղըրկել: Թուոց. 35. 25: Իմաստ. 19. 2: Բարուք. 4. 11: Բայց մինչ ասէ՝ յուղարկել 'ի կորուստ. կմ յապականութիւն. և այլն, նշանակէ արկանել: 3. Մակ. 6. 3: Ոսկ. 1. հատ. Ա: Իրք, մասնաւորապէս առնել. նշանակէ մեծաւ հանդիսիւ զթաղումն առնել զոք 'ի գերեզմանն. կմ մեծաւ յուղարկաւորութեամբ տանել և թաղել: [illegible] և Ոսկ. 2. հատ. ԼԹ: [illegible] և 2. Մակ. 4. 50. ուր ասէ՝ ա_

ռատապէս սրտացաւութեամբ հանդերձեցեալ զնա, և յուղարկեցին: տես զայսմանէ ընդ բայն հանդերձել:

Յուղարկու. ուի. աւ. աց. օք: || տես զյուղարկաւորն:

Յուղարկումն. կման. մանք. մանց. մամբք: || տես զՅուղարկաւորութիւն: Խորէն. Բ. գլ. 88: և Գ. գլ. 67:

Յուղեւորիմ. եցայ. եաց. իլ: (հայնակր.) || յուղի անկանել. կմ Ջանապարհորդել. և կմ գնալ ընդ Ջանապարհ ինչ: ասած. Ճամբայ ելլել: Խորէն. Գ. գլ. 60:

Յուղեգնաց. ի. իւ. եաց. իւք: || Նա՝ որ յուղի անկեալ գնայ. կմ ուղեւոր. և կմ Ջանապարհորդ: ասած. Ճամբորդ:

Յուղեգնացութիւն. թեան: || յուղի եւանկեալ գնալն. կմ ուղեւորութիւն. և կմ Ջանապարհորդութիւն:

Յուղեկարկ. ի. աւ. աց. օք: || յուղի արկանող. կմ յուղարկաւոր. և կմ յուղարկաւորութիւն. և բազմայամ ասէ՝ յուղեկարկ եղեալ ընդ ումեք. Խորէն. Բ. գլ. 50:

Յումմէ: || է բացառականն բառիս, ո. կմ ով. և նշանակէ յորմէ. կմ ուստի. 2. Մակ. 5. 8: Եբր. 3. 17:

Յումեք: || է նախդրիւ բացառականն բառիս ումեք. զոր տեսցես 'ի տեղւոջ իւրում:

Յունական. ի. աւ. աց. օք: || այն որ է յունաց. կմ առ յոյնս վերաբերի, որպէս ասի հելլենական. Եզեկ. 46. 16: և 50. 16:

Յունակէց: || տես զՅօնակէց:

Յունապ. ի. իւ. եց. իւք: կմ աց. օք: || է պտուղ ինչ կարմրագոյն փոքրիկ երկայն ընդ ձիթապտուղ, որ ունի զհամ քաղցր և ախորժելի: Զսա երբեմն չորացուցեալ 'ի գործածեն 'ի դեղորայս. ասած. յունապ: Սորին անուանք յորջորջի և ծառն, որ ունի զտերև նման ձիթենւոյ. և զտատասկս և ոստերսն, և այլանդակս տես ընդ ահա: ասածօրէն յունապ ծառ. 'ի վերոյ հարցս իք:

Յունաստր. ստրի. աւ. աց. օք: || ստրուկ յունաց. կմ հելլենացւոց: Խորէն. Ա. գլ. 1:

Յունաստան. ի. աւ. աց. օք: || աշխարհ յունաց. կմ երկիր՝ ուր բնակեն յոյնք: ասած. Հոռոմստան: տես և 'ի բառարանի յատուկ անուանց:

Յունարէն: (մակբայ որակական.) || յոյն բարբառով. կմ յունական լեզուաւ: ասած. հոռոմերէն: Ղուկ. 23. 38: Յով. 19. 20: Մերթ և մերթ երկայն զանուն. և նշանակէ յունական, կմ հելլենական. և բազմայամ ասէ յունարէն լեզուաւ. կմ յունարէն բարբառով: Իսկ մինչ ասէ յունարէն գիտել. նշանակէ գիտելն խօսել յունաց լեզուաւ: Գործ. 21. 37:

Յունիկ: || տես զՅօնիկ:

Յունիս. իսի. իւ: || Է վեցերորդ ամսոյն հռոմայեցւոց. որ համեմատի մարգաց ամսոյն հայոց, և թոտիայ ամսոյն եգիպտացւոց:

Յունվար. ի. աւ. կմ իւ: || է առաջին ա_

միոյ հաօմայեցւոց· որ համեմատի արաց ամսոյն հայոց · և սեբաթ ամսոյն եբ-րայեցւոց։

Յունք · ունից · օք։ (անեզական ·) || յօնք· ռամկ· ընփուծ։ 'ի Հայր. հարց. Ջ. և Ժա. և Ժջ։

Յուշ։ || Է արմատ յիշել բային · ոռ և զուրկն զկել բային · և նշանակէ զյիշումն · բայց սա միայնակ 'ի գործ ոչ ածի· այլ ընդ-սա բայի շարակցի այսպէս · յուշ առնել · և նշանակէ՝ յիշեցուցանել · կմ ազդ առ-նել · կամ զեկուցանել · 2· Մակ· 8· 19։ Իմաստ· 12· 2։ Եսայ· 63· 7։ Եւ կամ այս-պէս · յուշ լինիլ · և նշանակի 'ի յիշումն գալ · և կմ յիշիլ։ ռամկ· Միտը ընկնիլ · կմ միտը գալ · և ըստ այսմ փոխանակ ասելոյ՝ յիշեմ · եցի · եցից · և այլն · ասի՝ յուշ լի-նի ինձ · յուշ եղեն ինձ · յուշ լիցի ինձ։ 1· Մակ· 6· 12։ Յոբ· 21· 6։ Այնպէս փոխա նակ ասելոյ յիշեցեր · եսցես · յիշեա · և այլն, ասի՝ յուշ եղև քեզ · կմ յուշ լի-ցին քեզ։ Սաղմ· 73· 18։ Եսայ· 43· 26։ և 44· 21։ և ըստ այսմ փոխանակ ասելոյ՝ յիշէ · յիշեաց · յիշեսցէ · և այլն։ ասի՝ յուշ լի-նի նմա · յուշ եղեն նմա · յուշ լիցի նմա։ 1· Մակ· 10· 5։ 2· Մակ· 10· 6։ Բարուք· 3· 23։

Յուշ ածեմ· յուշ ածի · յուշած · ել։ (Ներ գործ ·) || 'ի յիշատակ բերել · կմ յիշե-ցուցանել · կմ յիշելով ումեք զինչ՝ զե-կուցանել · ռամկօր· Միտը բերել · կմ միտը կուցանել · ռամկօր · միտը ձգել։ Նարեկ· 'ի մեկն· Երգոց։

Յուշարարութի · թեան։ || յիշեցուցումն · կմ ազդարարութի · կմ զեկուցումն։ Ոս-կէ· 1· հատ· ժէ։

Յուշիկ ։ (մակբայ յամրական ·) || յամր · կմ մեղմով · կմ անադան · ըստ այսմ 'ի Հայր. հարց· իջ· իսկ ծերն յուշիկ ուտէր։ ըստ այսմ և ս ասի՝ յուշիկ գնալ · յուշիկ ըն-թեռնուլ · կմ յուշիկ բարբառել · և այլն · ռամկ· կամաց։

Յուշկապարիկ · րկի · աւ · աց · օք։ || Է խառ նակերպ և ցուցանքաւոր կենդանի, որ ըստ բանաստեղծից է այլ և այլ · զի ոմանք միջոյ 'ի վեր են մարդակերպ - և միջոյ 'ի վայր իշաձև · զոր յոյնք և լատինք անուա նեն՝ օնօջենթաւռոս։ Եսայ· 13· 22։ և 34· 14։ Իսկ ոմանք են կիսոյ 'ի վեր մարդակերպ · և կիսոյ 'ի վայր ձիաձև · զորս յատկապէս կոչեմք ձիացուլ։ Զոյգանէ առասպելա բանեն բանաստեղծք, թէ են բնութ մար դիք, որք յանդգնեալ մոլին 'ի հարսանիսն պերիթեայ որդւոյ իքսիոնին՝ յափշտակել զհարսն նր, զորս թեսէաս բարեկամն պե րիթեայ՝ և լապիթեայքն՝ որք էին բնա-կիչք թեսաղիոյ՝ մարտ եդեալ փախստա կան արարին, կոտորելով զբազումս 'ի նո ցանէ։ Եւ զայս առասպել խորենացին յօ րինակ բերէ մարտի իշխանին տրդատայ· գիրք · բ· պր· 60 · ուր ասէ · Անդ էր տե սանել զլապիթեայցն և զյուշկապարկացն կռիւս 'ի վր պերիթեայ հարսանեացն ։ Գ·րճլ, ոմանք 'ի յուշկապարկացս յայս-ցանէ են ջրայինք, որք ունին 'ի միջոյ 'ի վեր զկերպարանս կուսի, և 'ի միջոյ 'ի վայր զձև ձկան, զորս մաւնաւոր անուամբ յոր ջորջեմք համբարու · և ըստ այսմ առեալ լինի 'ի գիրս առակինաց · մաս · բ· յղփոփերս · գլ· Ժ ։ Գ·րճլ՝ յուշկապարիկ կոչին նաև ցուցանքաւոր վիշապք, կմ կոկորդիլոսք, և ըստ այսմ է 'ի Հայր. հարց· իջ· ուր ասի, Սա երբեմն յուշկապարկի միում սաստ-եաց, որ եւանէր, և ապականէր զանդաս տանս ։ տես և 'ի վերջն բառիս միջնա-տախիծ ։

Յուռանամ · ացայ · ցիր · ալ։ (ընդ միջ ·) || յօրանալ · կմ ստուճարանալ · կմ բազմա-նալ · և կմ զօրանալ։ Եւսեբ· 1· 7։

Յութեմ · եցի · եա · ել։ (Ներգործ ·) || կազմել, կմ շինել զյուռութս, յր զկա-խարդական ծրարս և փաթոյթս, զորս ո-մանք յանձառաց յանձինս իւրեանց կա-պեալք, յուսան պահպանիլ նոքօք 'ի փոր ձութե · կմ զերծանիլ 'ի հիւանդութեց ։ Եւ ըստ այսմ ասի · Կիւրղի եղծ· ր· Եւ մի զոր յուռութենն ինչ՝ և ընդ անձն կա պեն մերձեցուսցես 'ի քեզ։

Յութի ։ (Նախդրիւ հոլովի ·) || ջրարբի և բերրի · յր յոյժ բեղմնաւոր · կմ արգա և բերրի · ըստ որում Ծնն. 13· 10։ Իսկ մերթ յորդ, կմ առատ, և կմ ... ըստ այսմ Նարեկ· կԴ· քրտունքն յուռ թի արեամբն զանգեալ։

Յուռոտաբան։ || տես զՅուռոտաբան,

Յուռութ · յուռթի · իւ · ից · իւք ։ || ծրար կախարդաց, կմ կախարդական փաթոյթ, կմ հանդոյց, որով բաղում անգամ սա տանայական արուեստիւ դիւթքն, կամ անզգամ պառաւունքն կախարդեն զմար դիկ · ոյք և ոմանք 'ի հեթանոսաց, և յախ մարաց կապեն յանձինս իւրեանց առ 'ի պահպանիլ 'ի փորձանաց, կմ ազատիլ 'ի հիւանդութեց ։ Նարեկ· կԴ · և ղԴ ։ Մերթ ևս նշանակեն սոսկ պէսպէս յօրինուածք կազմեցեալք յուսոյ, կմ յարծաթոյ, և կմ յայլոց հրահալելեաց, զորս 'ի հնումն կռապաշտք յօրինէին 'ի պատիւ կռոց, դէ րոշմելով 'ի նոսա զանուանս և զպատկերս նց, զորս և երբեմն կախարդէին դիւա-կան բանիւք. զի լիցին նոքեանց պահպա նիչք 'ի փորձանաց · որպիսիք են փոքրիկ արձանակունք, կմ լուսինք վահանք սուրբ· կմ սպասք, կմ քաժակք, և այլն ։ ռամկ· Թիլիսմ ։ Խորէն· ա· պր· 17։ Նարեկ· հԵ։

Յուռութուլունք · ուլանց · ամբք ։ (անեզ·) || ծագի սա յանուանէս յուռութ, և 'ի բառէս ուլունք, ըստ որում նշանակէ ըզ մանեակս, կմ զմանեկաձև զարդս · ուստի բառիս յուռութուլունք՝ նշանակի մա-նեկաձև մեծ յօրինուած ինչ շղթայա-կերպ, կմ հիւսուածոյ, ունօղ 'ի վր իւր զաղմանման ոսկեղէն, կմ արծաթեղէն ... Զայս յուռութս, որք 'ի վերոյ մեկնեցան։ Զայս պխի յուռութուլունս կապէին 'ի հնումն հեթանոսք կախէին զպարանոցաց իւրեանց

առ 'ի

տա՛ ՚ի շորդ. բայց երբեմն ընծայեալ նուէր րէին կռոց. զորս կախէին յորմունս. և ՚ի սեղան մեհենից տա՛ յիշատակ և ՚ի փառս կռոց: 2. Մակ. 12. 40.

Յուսաբեկ. ի. աւ. աց. օք: կմ իւ. եց: || Նա որոյ յոյսն է բեկեալ, կմ կտրեալ. որով իմանի յուսահատն:

Յուսադիր. դրի. իւ. աց. օք: || յուսադրող. կմ յուսացուցիչ. և կմ քաջալերող. Նոննէ:

Յուսադրական. ի. աւ. աց. օք: || այն՝ որ վերաբերի առ յուսադրութիւն, և ըստ այսմ սաի, յուսադրական բանք. կմ քաջալերութիւն: Իսկ մերթ յուսադրող. կմ յուսացուցիչ. և կմ քաջալերող: Նոննէ. իէ:

Յուսադրեմ. եցի. եա. եալ: (Ներգործ.) || յոյս տալով զօրացուցանել. և կմ քաջալերել. և կամ յուսացուցանել:

Յուսադրութիւն. թեան: || յուսացուցումն. կմ քաջալերութիւն: Նոննէ. խը. և ղա:

Յուսալի. լւոյ. եաւ. եաց. եօք: || յուսալիք. զի ըստ յուսոյ. կմ յուսալից: Իսկ ըստ որում է առ ակնածի ընդունելութեան յուսոյ բարւին, նշանակէ զայն՝ որ պարտի յուսացեալ լինել:

Յուսալիր: (Նախդրիւ հոլովի.) || տե՛ս ընդ Յուսալի:

Յուսալից: (Նախդրիւ հոլովի.) || տե՛ս ընդ Յուսալի: Ագաթ.

Յուսական. ի. իւ. աց. օք: || այն՝ որ վերաբերի առ յոյսն, կմ յուսացողական, և կմ յուսալի: Նոննէ. կ:

Յուսակորոյս: (Նախդրիւ հոլովի.) || կորուսելոց զյոյս իւր. կմ զրկեցեալ ՚ի յուսոյ, և կմ յուսահատ: Ագաթ.

Յուսակտուր: (Նախդրիւ հոլովի.) || հատանող յուսոյ. կմ անյոյս առնող. կամ յուսահատեցուցիչ: Նոննէ. կէ: Իսկ մերթ յուսահատ, կմ անյոյս: ռամկօր. յուսահատ. Լամբրոն:

Յուսահատ. ի. իւ. եց. եօք: || հատեալ, կմ պակասեալ ՚ի յուսոյ. կմ յուսակորոյս, և կմ անյոյս: Նոննէ. կթ. Լամբրոն: Իսկ մերթ յուսահատական. կամ վհատեցուցիչ. Նոննէ. խ:

Յուսահատական. ի. աւ. աց. օք: || այն ինչ որ վերաբերի առ յուսահատութիւն. կմ անյոյս առնող. և կմ յուսահատեցուցիչ: Նոննէ. ժբ:

Յուսահատեմ. եցի. եա. եալ: (Ներգործ. ան.) || յուսահատեցուցանել. կմ անյոյս առնել. և կմ վհատեցուցանել:

Յուսահատեցուցանեմ: || նոյն է ընդ վերնոյն.

Յուսահատիմ. եցայ. եայ. իլ: (Հոմանիշ) || հատանիլ, կմ պակասիլ ՚ի յուսոյ, կմ անյոյս լինիլ. կմ վհատիլ, և կմ լքանիլ: ռամկ. յոյսը կտրել: Նոննէ. ճը:

Յուսահատութիւն. թեան: || հատումն ՚ի յուսոյ. կմ անյուսութիւն, կմ վհատութիւն, և կմ լքումն: Նոննէ. ճը. և Լամբրոն:

Յուսամ. ացայ. ցիր. ալ: (ընդ. մէջ. որ եր գերիր փոխի իբրև ներգործ.) || յուսա-

նել. որով մերթ նշանակի. ակնունել. կմ ակն կալել. և ըստ այսմ սաի Խորէն. գ. գլ. 57. Անձին և զօր յուսայրին, և զօր ա՛ն յուսայրին: և ՚ի գլ. 63. սաի, ոչ յապաղէին յուսալով զկանգնումն զօրերմին, զի անձն ունելով կանգնեցմանն: Իսկ մերթ ապաւինել. կմ ապաստանել: Սաղմ. 21. 5: և 40. 10: Եսայ. 31. 1:

Յուսանամ. ացայ. ացիր. ալ: (ընդ. մէջ.) || նոյն է ընդ վերնոյն:

Յուսապատար: (Նախդրիւ հոլովի.) || լի, կմ պատարեալ յուսով. և կմ յուսալից: ՚Ի Շարականս:

Յուսացուցանեմ. ուցի. ուցն. ել: (անցող.) || յոյս տալ ումեք. կմ յուսադրել. կամ ապաւինեցուցանել. կմ ապաստան առնել. և կմ քաջալերել: 4. Թագ. 18. 30: Սաղմ. 118. 49: Եզեկ. 28. 15:

Յուսօղ. ողի. ով. ոց. օք: || Նոյն է ընդ բառս յուսացող. որ և որսօղն ընդ բառին որսացող: ՚Ի Շարականս:

Յուրասատ: || տե՛ս զՄարասատ:

Յուշն: || զգուշս զայս. և զգուշացեալն ՚ի սմա նէ տե՛ս ՚ի բառն յուշն, և ՚ի յետագայ բառ դութիւնս նր. ոչ՝ զյուշնաթիւնս ՚ի յուշնաթիւնս. զյուշնականն, ՚ի յուշնականն. և այլն:

ՅԱ

Յատակ. ի. աւ. աց. օք: կամ իւ. եց: || մաքուր. կմ վճիտ. կմ անխառն. և կմ ջինջ: ռամկ. զուտ. կմ բէլլիւ: Յոբ. 11. 15: և 33. 3: Եզեկ. 34. 18: Եւ յայսմանէ առեալ երբեմն նշանակէ՝ պարզ. կմ յայտնի. կմ մեկին: Եւ մերթ պարզապէս, կմ յայտնապէս. ըստ այնմ. Նոննէ. գէ. Ջուր և զանիէլ ապրեաց մեզ յատակ:

Յատակագոյն. կմ յըստակագոյն. գունի. իւ. ից. իւք: || մաքրագոյն. կամ վճտագոյն. կմ ջինջագոյն. և կամ սրբագոյն: Իսկ մերթ պարզագոյն. կմ յայտնագոյն. կմ բացայայտագոյն: Խորէն. Թղ. 11:

Յատակամիտ. մտի. իւ. աց. օք: || ունող զյատակ և զմաքուր միտս. կմ որ և անբիծ մտօք. և կմ պարզամիտ: Իսկ մինչ սաի յատակամիտ մտօք. իմանի անարատ. և անբիծ մտօք. Մծբն. ժէ:

Յատակամտաբար: (մակբայ որակի.) || յատակ և մաքուր մտօք. կմ անբծութեամբ սրտի. կմ պարզամտաբար. և սրբութեամբ: Նոննէ. գէ:

Յատակապատում: (Նախդրիւ հոլովի.) || յատակութեամբ, և պարզութեամբ պատմօղ. կմ որ պարզ և յայտնի պատմէ զիրս ինչ: Եւ մերթ յատակ և պարզ բանիւ պատմեցեալ, և կմ յայտնաբանեալ: Իսկ մինչ սաի. յատակապատում առնել զբան ինչ. իմանի բացայայտաբար պատմել. կմ պարզաբանել: Ագաթ.

Յատակապար. կմ յըստակապար. ի. իւ. եց. եօք: || յորդ յատակ, և անխառն. կմ

մաքրագոյն․ կմ՛ վճիտագոյն․ և կմ՛ զուա_
դոյն։ Իսկ մերթ պարզագոյն․ կմ՛ յայտ_
նագոյն․ և կմ՛ պայծառագոյն։ Ըստ այնմ
Կիւրղի եղծ․ է։ Այլ յստակատպաս
տեղիս հօր՝ որդւոյն միայն պատշաճ է։
Բայց գիտել է․ զի բառս՝ ոչ․ սակայն
զոչինչ նշանակէ․ այլ՝ մնանէ ՚ի բաղադ_
րութեն իբրև զմասնիկ ինչ․ որ երևի և
՚ի բառն սուտակապատ։

Յստակատես․ ի․ աց․ աց․ օք։ Յստակ և
պարզ տեսանօղ․ կմ՛ համարձակահայեաց․
և կմ՛ սրատես։

Յստակատեսութիւն․ թեան։ Յստակ և պարզ
տեսողութիւն․ կմ՛ պայծառութիւն տեսանե․
կմ՛ սրատեսութիւն։ Նորէն․ ՚ի Թէն․ Երգոց։

Յստակեմ․ եցի․ եա․ ել։ (Ներգործ․) Յս
տակ առնել․ կմ՛ զտել․ կմ՛ մաքրել․ և կմ՛
որբել․ Լատին․ յուռիէլ․ կմ՛ բէնիդիրէլ։

Յստակութիւն․ թեան։ Մաքրութիւն․ կմ՛ վճիտու
թիւն․ կմ՛ զտութիւն․ և կմ՛ անբծութիւն։ Իմաս․
7․ 24։ Նորէն․ իէ։ Իսկ մերթ՝ պարզութիւն,
կմ՛ յայտնութիւն․ և կմ՛ բացայայտութիւն։

ՅՕ

Յօդ․ ի․ իւ․ ից․ իւք։ Է արմատ յօդել
բային․ որով մերթ նշանակի՝ շարակցու
թիւն․ կմ՛ կցորդութիւն․ և կմ՛ յօդուած ան_
դամոց։ Լատ․ անդամոց խաղը։ 3․ Մակ․ 2․
10։ Յոբ․ 41․6։ Եզեկ․ 37․ 7։ Դանի․ 5․6։ Իսկ
մերթ յօդից․ կմ՛ միացուցիչ իրն․ և ըստ
այսմ ամ կապք․ կմ՛ շաղկապք՝ յօդք կո_
չին։ Որպէս՝ ասէ, յօդ միաբանութե․ խա
ղաղութե․ և կմ՛ սիրոյ․ և այլն․ Եփես․ 4․3։
Եւ յայտնանէ յօդ անուանին նաև ամ ա_
ռնաք․ զի կոճուկք․ կմ՛ ջիլք, և ներարգք․
և միջանունք․ և այլք նմանք, որովք ոսկր
ընդ ոսկերս և մասն ընդ մասին յօդեալ
միաւորին։ Աղաւ․ 24․ 22։ Կողոս․ 2․ 19։ Եբր․
4․ 12։ Սոյնպէս առ քերականս յօդ կոչին
տառքն, որք դնալով բառս Ը միանոնա
յօդեն․ որպէս․ ս․ դ․ ն․ մերձոն՝ բացա_
յայտիչք․ ակնարկաւորք․ աղէշխարհաք։ Գաւ
ռեալ՝ յօդ անուանին գիւտողականն տառքն՝
ս․ դ․ ն․ Ըստ որում յօդեն, և յարեն ՚ի վերջն
բառից․ որպէս, հայրս․ հայրդ․ հայրն։ Եւ
և յօդ կոչին ամ մասնկունք, որք յարեալ
յօդին ՚ի բառս․ որպիսիք են ածանցականս
նախերդաքս՝ ապ․ տային․ ակ․ զոր օրինակ․ չէ
ջանուա․ ասնդանչին․ խնդրակ։

Յօդալլուծ ելուծի․ աւ․ աց․ օք։ Լուծեալ
՚ի յօդից․ կմ՛ նա, որոյ իւրաքանչիւր ան
դամքն՝ ՚ի յօդուածոց իւրեանց լուծեալ
և թուլացեալ են․ որով ոչ կարէ յառնել․
կմ՛ կանգնեալ կալ, որպիսիք են անդամա
լուծքն․ ՚ի հին տպագրի։

Յօդակապ․ ի․ իւ․ ից․ իւք։ կամ աւ․ աց․
օք։ Կապ յօդից․ կմ՛ շաղկապ․ կմ՛ բա_
ղադրող, և առ հասարակ այն ամ, որ մնա
նելով ՚ի մէջ բաժանելեաց, կմ՛ տարան_
ջատ իրաց՝ յօդէ, և միաւորէ զնոսն ընդ մի_
մեանս։ Լատին․ ՚ի ճազուել ֆէկլու։ Իսկ մերթ

յօդիւ միաւորեալ․ կմ՛ շաղկապեալ․ և կմ՛
շարամանեալ, և յօրինեալ․ և ըստ այսմ ա_
ռի․ յօդակապ անդամք․ կմ՛ յօդակապ բար
առնութիւն․ և այլն․ Նորէն․ ղդ։ և Աղօթ։

Յօդակապութիւն․ թեան։ Յօդումն, և կա
պումն․ կմ՛ շաղկապումն կմ՛ բաղադրու
թիւն․ կմ՛ միաւորութիւն․ և կմ՛ շարամանու
թիւն։ Լամբրոն։

Յօդանամ․ ացայ․ ացիր․ նալ։ (Ընդ․ Միջ․) Յ
յօդաւորիլ․ կմ՛ յօդելի լինիլ․ կմ՛ կազմիլ․
և կմ՛ կերպաւորիլ։ Իսկ ՚ի Խորէն․ Ք․ղր․61․
ուր ասի․ յօդանայր ճեմարանին վերծա_
նութիւն․ նշանակէ՝ շատ լինիլ․ կմ՛ տե_
ղեկանալ դպրութեան։

Յօդապատ․ ի․ իւ․ աց․ օք։ Յօդիւ պատ_
եալ․ կմ՛ յօդեալ և միաւորեալ․ և կմ՛ Բ
միմեանս յարմարեալ, և բաղադրեալ․ որ
պիսիք են անդամք մարմնոյ․ Մծբն․ ժա։
Աղօթ։ Իսկ մերթ այն՝ որ լինի յօդելով․
կմ՛ շաղկապելով․ և ըստ այսմ ասի, յօդա
պատ արդութիւն։ Ոսկէ․ 1․ հռով․ ժա։ Բայց
մինչ ասի՝ յօդապատ համառաւել, վարի
իբրև զմակբայ, և նշանակէ՝ յօդիւք կցե
լով և շաղկապելով ասդել։ Ոսկէ․ 1․ հռով․ Է։

Յօդապատեմ․ եցի․ եա․ ել։ (Ներգործ․)
յօդապատ առնել․ կմ՛ յօդաւորել։

Յօդատեսակ․ ի․ աւ․ աց․ օք։ Ունօղ զան
սակ յօդից․ կմ՛ զնմանութիւն յօդուածոց․
և կմ՛ այն, որով ոք իբրև յօդիւք․ կմ՛ շաղ
կապաւ միաւորէ զնոսն, կմ՛ միաւորի ընդ
այլում։ Նորէն․ ղզ։

Յօդացուցանեմ․ ցուցի․ ցո․ անել։ (Անցա
ռական․) Յօդաւորել․ կմ՛ յօդել ի միանել․
և կմ՛ յօդել․ և ըստ այսմ ասի՝ մարմնա
ւոր գործեօք յօդացուցանել զհոգին։ Լամբ։

Յօդաւոր․ ի․ աւ․ աց․ օք։ Ունօղ զյօդս․
կմ՛ յօդիւք կցեալ և միաւորեալ․ և կամ
՚ի բաղում մասանց յօդեալ և շաղկապեալ։
Նորէն․ ղզ․ ղթ․ և ՚ի գովեստ․ Իսկ մերթ յօդե
լի, կմ՛ կցելի․ և կմ՛ շաղկապելի․ և ըստ այսմ
ձայնք և բարբառք մարդկան յօդաւոր ա_
սին․ զի կարեն տառիւք յօդիլ և կազմիլ
և զկատարեալ բան կազմել։ Մերթ և
նշանակէ ունօղ բաղադրութեան․ կմ՛ յար
մար և ճահաւոր․ ըստ այնմ Նորէն․ ՚ի Թէն․
Երգոց․ Պատշաճանիս բանիցն հարցաց
յօդաւորս և պատշաճաւորս առնէ։

Յօդաւորական․ ի․ աւ․ աց․ օք։ Այն ամ
որ վերաբերի առ յօդաւորութիւն․ կմ՛ յա
րակցական․ կմ՛ միաւորական․ և կմ՛ յար_
մարական։ Իսկ մերթ յօդաւորող․ կմ՛ շա
րամանող․ և կմ՛ կերպաւորող։ և ըստ այսմ
ասի՝ յօդաւորական շրթամբք կարգալ ա_
ռած․ Նորէն․ ճե։

Յօդաւորապար․ կմ՛ յօդաւորապէս։ Յօդա
ւորութեամբ․ ցի շաղկապմամբ․ կմ՛ միա
ւորմամբ․ կմ՛ շարամանութեամբ․ և կմ՛ բաղադ_
րութեամբ։ Նորէն․ ճղ։

Յօդաւորեմ․ եցի․ եա․ ել։ (Ներգործ․) և միա
յօդաւոր առնել․ կամ յօդել․ և կամ շաղկապել․
կել․ կմ՛ յարակցել․ և կամ շաղկապել․
Իսկ մերթ բաղադրանել․ կմ՛ յարմարել․

և կամ պատուշաճաւորել։

Յօդաւորութիւն. թեան։ || ունելն զյօդս. կամ շարակցութիւն. կամ միաւորութիւն. և կամ շարամանութիւն։ Իսկ մերթ բաղադանութիւն. կամ բաղադրութիւն. կամ յարմարութիւն. և կամ ճահաւորութիւն։

Յօդեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) || կցել. կամ յարել. կամ միաւորել. կամ զուգել. և կամ կազմել։ Եփես. 2. 21։ և 4. 16։ Եւ մերթ շարամանել. կամ յարմարել. կամ նիւթել. և ըստ այսմ ասի. յօդել զբանս, կամ զառասպելս. և կամ զպատճառանս ինչ։ Խորէն. Բ. գլ. 70։ Ոսկէ. 1. հռով. ԻԷ։ Իսկ 'ի վերջ հարցմ.։ ուր ասի, ակաւ նշանիւք յօդէին միմեանց՝ զոր պարան էր գործել, իմանի ազդելն, կամ զեկուցանելն։

Յօդուած. ոյ. ով. ոց. ովք։ || յօդումն, կամ շաղկապումն, կամ բաղակցութիւն. կամ շարամանութիւն, և կամ յօրինուած բանից, և այլոց նմանեաց. Նարեկ. հէ. գլ.։ և Լամբրոն։ Իսկ մերթ կերտուած. կամ շինուած. ըստ այնմ Նարեկ. 'ի թուղթն Եկեղեցւ։ Հաստատեցեր զյօդուած տապանին։ Բայց մանաւանդ առեալ՝ նշինելին տկար յօդքն, զի իւրաքանչիւր մասունքն անդամոց, և այլոց իրաց, որք ընդ միմեանս յօդին և շաղկապին, և կամ նշանակեն տեղիքն, ուր այսպիսի մասունքս յօդեալ միաւորին ը իրերաց. որպիսի է բազկին արմունկն, և ձեռաց՝ դաստակն. և մատանց՝ իւրաքանչիւր խաղալեքն։ Նարեկ. 'ի գովս. առաքել. և Յն ուրդ։ Եւ յայսմանէ առեալ երբեմն եւ յօդուածք կոչին մասունք ճառից, կամ մեծամեծ տապանաց։ Այսպէս և երկոտասան առաքելական հաւատամքին յօդուածք կոչեցան, ըստ որում են երկոտասան մասունք յօդեալք ընդ միմեանս։

Յօդուածացաւութիւն. թեան։ || ցաւ. կամ ախտ յօդուածոց մարմնոյ, որով իւրաքանչիւր յօդքն լուծեալ ցաւին, և կամ կապեալ կծկին։

Յօժանդակեմ. || տե՛ս զՕժանդակել։ Լամբ.։

Յօժար. ի. իւ. ից. իւք. կամ այ. օք։ || յօժարել. կամ 'ի սրտէ կամեցող. և կամ պատրաստ սրտիւ առ ինչ։ Մատթ. 26. 41։

Յօժարադոյն. գունի. իւ. ից. իւք։ || առաւել յօժար, և կամ պատրաստադոյն սրտիւ։ 2. Մակ. 15. 10։ Իսկ մերթ վարի իբրև զմակբայ, և նշանակէ՝ յօժարութ, կամ յօժար սրտիւ, և կամ կամակար մտօք։ 2. Կորն. 8. 17.

Յօժարակամ։ (Նախդրիւ հոլովի.) || ունող զյօժար կամս. կամ յօժարասիրտ, և կամ յօժարամիտ։

Յօժարական. ի. աւ. աց. օք։ || այն ամ, որ վերաբերի առ յօժարութիւն. կամ որ յօժարութեան լինի. կամ յօժարամիտ, և կամ մտադիւր. և ըստ այսմ ասի՝ յօժարական համբերութիւն. կամ յօժարական կամք. և այլն։ Լամբրոն։

Յօժարամիտ. մտի. իւ. աց. օք։ || ունող ըզ յօժար միտս. կամ յօժարեալ սրտիւ, կամ որ սրտի մտօք կամի զինչ, և կամ յօժար և պատրաստ։ 1. Մնաց. 29. 14. և 17։ Իսկ մերթ յօժարական, և ըստ այսմ ասի՝ յօժարամիտ կամօք, յօժարամիտ սրտիւ. և կամ յօժարամիտ բաղձանօք։ Նարեկ. Թ. և Լամբրոն։

Յօժարամտիմ. եցայ. եաց. իլ։ (Ձայնակրական.) || յօժարամիտ լինել. կամ ինքնակամ յօժարել։

Յօժարամտութիւն. թեան։ || յօժարութիւն սրտի. կամ յօժարութիւն. կամ անդրժմամբ հակումն առ ինչ. և կամ մտադիւրութիւն։ Նարեկ. ղէ։

Յօժարասէր. սիրի. աւ. աց. օք. || սիրով յօժարող. կամ յօժարակամ. և կամ յօժարամիտ։

Յօժարափոյթ։ (Նախդրիւ հոլովի.) || ունող զյօժարական փոյթ. կամ յօժարութեան ջանացող. և կամ յօժարամիտ։ Իսկ մերթ վարի իբրև զմակբայ, և նշանակէ՝ յօժարական փութով. կամ յօժարամիտ սրտիւ. ըստ այնմ. Մծբն. ԺԹ. Արդ նա հատանէ յօժարափոյթ անցանելն ը փորձ հանդիսից։

Յօժարեմ. եցի. եա. ել։ (Զօրութեամբ անցողական.) || տե՛ս զՅօժարեցուցանել։ 'ի վերջ հարցմ. Է։

Յօժարեցուցանեմ. ցուցի. ցո. ել։ (Անցողակ.) || յօժար առնել զոք, կամ հաճեցուցանել. և կամ համոզել։ Կիւրղ. Եղնկ. ԺԹ։

Յօժարընթաց։ (Նախդրիւ հոլովի.) || յօժարութեամբ ընթացող. կամ յօժարամիտ սրտիւ դիմող։ Նարեկ. 'ի թուղթն Եկեղեցւոյ։ և Լամբրոն։

Յօժարիմ. եցայ. եաց. իլ։ (Ձայնակր.) || ունել զյօժարութիւն սրտի առ ինչ, կամ անդրժել. կամ կամել, և կամ հաճել։ Ծննդ. 21. 6։ Եսայ. 35. 5։ Ղուկ. 1. 1։

Յօժարութիւն. թեան։ || հակումն սրտի, կամ անդրժումն. կամ կամակարութիւն. և կամ մտադիւրութիւն։ 2. Մակ. 6. 28։ Երեմ. 30. 24։

Յօն. կամ յօնք. յօնից. իւք. կամ աց. օք։ || բազմամաւ և կարճ հերք բուսեալք կամարաձև 'ի վերայ երկուց դարևանդաց աչաց, որք կարգին ի բնութէ 'ի պաշտպանել զաչս յերայ, որք անկանին 'ի վերուստ։ ամփ. ընտրեալ։ Ղևտ. 14. 9։ Եսայ. 3. 16։ Խորէն. Բ. գլ. 39։ Իսկ մերթ առեալ լինի փոխանակ բարձրայօնութեան, կամ գոռոզութեան, ըստ որում բազում անգամ 'ի յօնսն երևին նշանք ամբարտաւանութեան։ Նարեկ. ԽԷ։

Յօնակից. կցի. իւ. աց. օք։ || Նա՛ որոյ յօնքն կիցք են միմեանց 'ի վերին կողմանէ ընդ դաց։ Սա գրի և յօնակից, ողջ և յօնքն, գրի յունք։

Յօնեալ. ի. աւ. աց. օք։ || ունող զթաւ յօնս՝ կամ որոյ յօնքն են առաւելք և խիտք։

Յօշատեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) || յօշելով յօշել. կամ կոտորել. կամ մանատել. և կամ քակտելով բաժանել ըստ իւ-

րաքանչիւր մասանց, կամ անդամոց. և այս ասի վմաց անասնոց, և մերթ նաև զայլոց իրաց: Ղևտ. ի. և իզ:

Յօշարակ: || տե՛ս զՕշարակ:

Յօշեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || կոտորելով բաժանել. կամ զմասն 'ի մասնէ հատանել որոշել, և կամ անդամ անդամ հատանել, որպ առնեն մսագործքն ընդմէջ կտրելով, կամ ըստ իւրաքանչիւր մասանց հատանելով զզենեալ անասունս: Ծննդ. 15. 10: Ելից. 29. 17: 1. Թագ. 11. 7:

Յօշատեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || տե՛ս զՅօշատեմ: Յմ որէ:

Յօշոտած. ոյ. ով. ոց. ովք: || յօշեցեալ. որ կոտորեցեալ անդամք. կամ մասունք: Ելից. 29. 17: Երեմ. 34. 18: Եզեկ. 24. 4:

Յօտ. ի. իւ. եց. իւք: || է արմատ յօտել բային, որով նշանակի յատեալն, որ 'ի բաց կտրեցեալ ճիւղն որթոց. կամ արմատենեաց, և այլոց նմանեաց:

Յօտեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || յատանել, կամ կտրել զաւելորդ ճիւղս որթոց, արմատենեաց, և այլոց նմանեաց: ռամկ. պատուաստել: Ղևտ. 'ի Ծնն. Եբր. : 'ի Հար. հարց. Թ: և Լամբրոն:

Յօր: || է արմատ յօրանալ բային, որով նշանակի յօրն, զոր տեսցես 'ի տեղւոջ իւրում:

Յօրանամ. ացայ. ացեր. աւ: (ընդմիջ.) || ստոէարանալ. կամ Թաէանալ. կամ գիրանալ. և կամ պարարտանալ: 2. Օրին. 32. 15: Երբեմն ևս փափկանալ, կամ հեշտանալ, կամ խենեշանալ. և կամ անառակել. և ըստ այսմ ասի յօրանալ 'ի գիճութիւն մարմնոյ. կամ 'ի խաղս. 'ի զարդս, 'ի փառս, և 'ի մեծութ կենցաղոյս. և կամ յօրանալ ձիովք և ջորւովք. կամ սնգաւքայլ երիվարօք. և այլն: Շնորհալին. և Լամբրոն: ըստ այսմ է և Յոբ. 18. 3. ուր ասի: Եւ վաճառականք նր զօրութեն յօրանալոյ մեծացան, որ 'ի զօրութէ, կամ 'ի յաճախութէ յօրացման նր, այսէ հեշտութեց, կամ խենեշութեց, և անառակութեց նր: Մերթ ևս նշանակէ յօրգիլ. կամ սաստիկ ձգձգանալ, և կամ լցեալ լինել. որպ այնմ Մծբն. ԺԹ. Դատարկացեալք և սնացեալք 'ի շնորհաց. յօրացեալք և յղփացեալք ստոր: Երբեմն ևս բռնանալ. կամ զօրանալ. կամ հաստատուն պնդիլ յիմք: Մծբն. ԺԹ: Իսկ երբեմն մեծամտել. կամ փքանալ. և կամ գոռոզանալ: Լամբրոն:

Յօրանչ. կամ յօրանջ. ի. իւ. եց. իւք: || յօրանջումն. կամ որոշաալն. որ այնմ 'ի Հար հարց. Ը: Թէ զայ յօրանջ անասնայնէս. պնդեսն զկլթունսդ մարդկայնես:

Յօրանչեմ. կամ յօրանջեմ. եցի. եա. ել: (չէ զոք.) || որոշաալ. որ ուժգին բանալ ըզբերան իւր տախտեալ 'ի մեղմական զօրութէ ոգեաց Թմբեցուցչաց. կամ քնաբերից. ռամկ. Եբեծլեալ: Լամբրոն:

Յօրացուցանեմ. ցուցի. ցո. անել: (ան. ցողակ.) || ստոէարացուցանել. կամ Թաէացուցանել. կամ գիրացուցանել. և կամ պարարտացուցանել: Մերթ ևս հեշտացուցանել. կամ փափկացուցանել. կամ խենեշացուցանել. և կամ ցոփ և անառակ առնել: Եւ մերթ յօրգել. կամ սաստիկ ձգձգացուցանել. կամ յղփացուցանել: Երբեմն ևս զօրացուցանել. կամ հաստատուն առնել: Իսկ երբեմն փքացուցանել. կամ գոռոզացուցանել:

Յօրինեմ. եցի. եա. ել: (Ներգործակ.) || ճարտար արուեստիւ կազմել. կամ շինել. կամ կերտել. կամ դրուագել. և կամ ձևացուցանել. Ելից. 25. 33: Երգ. 8. 9: Իմաստ. Ժ. գլ. 39: Իսկ մերթ բարեկարգութբ առնել զինչ, կամ գործել, կամ իրակել, և կամ կատարել: 2. Կորն. 9. 11: Յակ. 1. 3: Ուղեւ. 1. նարւ. լէ: Մերթ ևս պատրաստել. կամ հանդերձել. կամ յարդարել. կամ զամենայն ինչ իւր հոգալով կատարելագործել զնա: 2. Մնաց. 29. 35: Տօբ. 7. 9: 1. Մակ. 14. 34: Եւ մերթ զարդարել. կամ պաճուճել. և կամ պճնել: Յուդիթ. 16. 10: Երբեմն ևս բարեձև վայելչութբ զինչ կարգել. կամ 'ի տեղւոջ իւրում կացուցանել. կամ զետեղել. և կամ յարմարել: Ելից. 40. 17. և 21: Եզեկ. 16. 14: Իսկ երբեմն շարադրել. կամ շարամանել. և կամ գեղեցիկ կարգաւ յօդել. և ըստ այսմ ասի յօրինել զբանս. կամ զերգս. կամ զգիրս. և զայլս նմանս: Սաղմ. 111. 5: և 'ի շարականս հոգևոր:

Յօրինուած. ոյ. ով. ոց. ովք: || արուեստաւոր և գեղեցկագարդ կազմուած. կամ կերտուած. և կամ դրուագ: 3. Թագ. 6. 9: Իմաստ. Ժ. գլ. 39: Իսկ մերթ յօրինումն. կամ կազմութիւն. կամ յարդարումն. կամ բարեկարգ սահմանադրութիւն: 2. Մնաց. 4. 7. և 20: Եզեկ. 42. 15. և 20: Մերթ ևս զարդ. կամ պաճուճանք. և կամ պճնումն: Իսկ երբեմն բարեյարմար շարամանութիւն. կամ հիւսուած. կամ շարադրութիւն. և կամ յօրինեալ ճառ:

Ն

Ն. է տառ բաղաձայն, որ 'ի քերականաց թուեալ լինի ընդ անձայն տառս. զի 'ի միայնակ արտաբերելն ոչինչ կերպիւ կարէ սկզբնաւորել զձայն, որ առաջանէ 'ի տառն՝ ն։ Արդ՝ զտառս զայս՝ անուանեմք նու. որ արտաբերի ամփոփմամբ շրթանց։ Այլ յարուեստ առոգանութեան է սա ըստ հագագին տառս. իբր նուբբ. որպիսիքեն և սոքա. ղ. ծ. ս. ր. և այլն։ Դարձեալ, երբեմն փոխադրի ընդ տառիս՝ մ. զի փոխանակ ասելոյ անբան, անբիծ. անպակ. անբարիշտ. ասեմք, ամբան. ամբիծ. ամպակ. ամբարիշտ։ Երբեմն ևս մտանէ 'ի բառս ոմանս թարմատարութեամբ. կամ իբրու առ 'ի զարդ. որգոն. բաղբաջանք և բաղբանջանք. բաղբաջել և բաղբանջել, մարմաջ և մարմանջ. մարմաջեցուցանել և մարմանջեցուցանել. պատանդ և պանտանդ. պղակուար, և պղակունդր. չիգղ, և չինգղ. և այլն։
Դարձեալ. է սա և նշան համարողական. զի յորժամ գրի պատուեալ այսպէս՝ Ն, ցուցանէ զչորս հարիւրն։ Երբեմն ևս է նախդիր հոլովակերպ իբրև զտառս՝ յ. և յարելով յանուանս՝ կազմէ զտրական, զբացառական, և զներգոյական, զոր օրինակ, նաղօտս, ներկայնէ. նեղէ. ննթակայոջ. ներկոցունց. իբր յաղօտս. յերկայնէ, յեղէ, որ է 'ի մէջ. յենթակայոջ. յերկոցունց։ Եւ երբեմն 'ի գործ ածի 'ի միասին ընդ նախդիրս 'ի. որպէս և յին. որգոն, 'ինիմէքէ, իբր յիմէքէ։ Բայց սակայն հազիւ երբէք պարտ է 'ի գործ ածել զնախդիրս զայս. վասն զի ծանրաւոր և անհեթեթ առնէ զբանն. և կորուսանէ զքաղցրութեն շարագրութեց. վասն որոյ և 'ի գիրս նախնեաց հազիւ ուրեք գտանի, և այն 'ի բանս տաղաչափականս, կամ փիլիսոփայականս. որպէս և յայտ է հնագէտ վերծանողաց 'ի Գիրս Պտղ. Փիլոնեայն։ Դարձեալ, է սա մին 'ի դիմորոշական տառից՝ ս. դ. ն. որք և կոչին յօդ. զի յօդեալ 'ի բառս՝ որոշեն զնոսա մին 'ի յերից դիմաց. որպէս ս առ առաջին դէմն. դ առ երկրորդն. իսկ նուն առ երրորդն։
Նոյնասերմն․ ման․ մամբ․ մանք․ մանց․ մամբք։ || 'ի նոյնոյ սերմանէ յառաջացեալ․ կմ՛ ունօղ զնոյն սերունդ․ կմ՛ համազարմ․ և կամ համատոհմ։ Խորէն․ Գ․ գլ․ 65։

Նոյնաքաղաք։ (Նախդրիւ հոլովի․) || համաքաղաք․ կմ՛ համանման․ և կմ՛ նոյնակերպ։

Նոյնգունակ։ (մակբայ․) || նոյնպէս․ կմ՛ նոյնով կերպիւ․ կմ՛ ըստ այնմ օրինակի․ Իմաստ․ 7․ 3։ Խորէն․ Ա․ գլ․ 3։ և Նարէկ․ 'ի Ծննդեան երգոց։

Նոյն ընդ նոյն։ (մակբայ իսկոյն․) || նոյն ժամայն․ կմ՛ վաղվաղակի․ կամ փոյթ ընդ փոյթ․ և կմ՛ իսկոյն։ Խորէն․ Գ․ գլ․ 60։

Նոյն ժամայն։ (մակբայ իսկոյնակ․) || 'ի նոյնում ժամու․ կամ առժամայն․ կամ իսկոյն․ կմ՛ վաղվաղակի։ ռամկ․ անմիջապէս․ կմ՛ բերան․ կմ՛ շուտով։ Մարկ․ 1․ 10․ և 12։ Ղուկ․ 24․ 33։

Նոյնհանգունակ։ || տե՛ս զՆոյնգունակ։

Նոյնհետայն։ (մակբայ իսկոյնակ․) || անմիջապէս զկնի այնորիկ․ կմ՛ առժամ վաղվաղակի․ կմ՛ նոյնժամայն․ կմ՛ փութով․ և կամ 'ի սուղ ժամանակի։ Փիլիպ․ 2․ 23։ Խորէն․ Բ․ գլ․ 25․ և 62․ և Գ․ գլ․ 50։ Ըստ այնմ է և 2․ Մակ․ 12․ 27․ ուր ասի՝ նոքա նոյն հետայն արշաւեցին 'ի քաղաքն միամաւր։ Բայց աստէն 'ի վրիպմանէ տպագրութեան եղեալ կայ՝ նոյն հետոյն։

'ի Նոյն հետէ։ || յայնմհետէ․ կմ՛ յետ այնորիկ։ ռամկ․ անկէ ետեւ․ կմ՛ անկէ 'ի վեր։ Խորէն․ Ա․ գլ․ 26․ 'ի խորագիրն։

Նոյնպէս։ (մակբայ որակական․) || նոյնով կերպիւ․ կմ՛ այնպէս․ և կմ՛ նմանապէս․ ռամկ․ անպէս․ կմ՛ անանկ․ 2․ Օրին․ 20․ 15։

Նոյն օրին։ (մակբայ իսկոյնա․) || 'ի նոյնում աւուր․ կմ՛ յայնմ աւուր։ ռամկօր․ անօրը։ 2․ Օրին․ 24․ 15։ և Աղաւ։

Նոյնօրինակ։ (մակբայ․) || նոյնով օրինակաւ, կամ ըստ նոյնոյ կերպի, և կմ՛ նմանապէս։ Իսկ մերթ նոյնպէս․ կմ՛ այնպ․ որում պատասխանէ մակբայս՝ ոչ։ Աղագաւ Լուսեր․ 'ի Հոռս հարց Գ․ Բայց գիտել է․ զի բառս այս երբեմն վարի հանդերձ նախդրիւ այսպէս, զնոյնօրինակ․ և նշանակութիւն իւր ոչ այլայլի․ ըստ այնմ․ Իմաստ․ 18․ 11․ զՆոյնօրինակ տանջեալք․ որ նոյնով կերպիւ․ Եւ Եփես․ 4․ 17․ ասի, Մի՛ ևս ձեզ զնոյնօրինակ գնալ, որ և այլք հեթանոսք․ որ մի՛ ևս նոյնպէս կենցաղավարել։ Այնպէս է և Իմաստ․ 14․ 17․ ուր ասի, Զպատկերն տեսլեան զնոյնօրինակ քանդակեալ դրօշեցին․ որ զհեռաւոր կերպարանս մարդոյ ըստ նոյն նմանութեան և ձեւոյ քանդակեալ դրօշեցին։ Բայց երբեմն է սա անուն, և նշանակէ նոյնակերպ․ կմ՛ նոյնպիսի․ և ըստ այնմ ասի նոյնօրինակ տեսիլ․ կմ՛ պատմուճան․ և այլն։

Նոր։ || է սեռականն գերանուանս՝ նա․ և նշանակէ նորա, կմ՛ նորին․ որոյ տրականն լինի՝ նմա, և գործիականն նովաւ․ և ըստ այսմ ասի՝ նոր որդի․ նոր կերպարանն․ որ նորա որդին․ նորա կերպարանն։ ռամկօրէն անոր։

Նոցա։ || է յոգնական սեռականն գերանուանս նա, և նշանակէ նոցա, կմ՛ նոցին․ Սիրաք․ 12․ 6։

Նովաւ։ || տե՛ս 'ի բառն Նա։

Նովիմբ։ || է գործիականն գերանուանս նա, և նշանակէ նովաւ․ կմ՛ նովին։ Ա[illegible] 20․ 14․ որպէս երբեմն յոգնականաւս տարածեալ ք, այսպէս․ նովիմբք․ և նշանակէ նոքօք․ կմ՛ նոքիւք։ Իմաստ․ 11․ 17։

Նովատար։ || տե՛ս զՆուատար։

Նովատու։ || տե՛ս զՆուատու։

Նոր․ այ․ ով․ ոց․ ովք։ || նորոգ․ որ այնմ, կմ՛ ոչ է 'ի որ տակաւին 'ի նորութեան է, կմ՛ որ չէ հնացեալ՝ որ և գործ ածեալ․ և կմ՛ չէ է հնացեալ․ [illegible] ռամկ․ ասի՝ նոր․ Յես․ 9․ 13։ Վերջ․ 15․ 13։ Իսկ մերթ նորահաս․ և ըստ այնմ խոնարհ՝ մինչ ասի՝ յաւանակ նոր․ կմ՛ պատանի, որ է նոր։ Զաք․ 9․ 9։ Եւ մերթ նորին, որ է նոր։ Ըստ այնմ բանհաս պտուղ, կամ արմտիք․ և ըստ այսմ ասի, յամենայն նորոց, որ նորեաց, որով խմանի նիւթն ամփոփ, ըստ որում յայնմ ամենայն հասանելին նորահաս արմտիքն։ Ղևտ․ 23․ 15․ և 16․ և Պարալիպոմ․ Բայց 1․ Թագ․ 23․ 15․ և 16․ և 19․ յորս ասի, նստէր 'ի մայրն լերինն Զիփ, որ նոյն է նորում․ կամ չորքան 'ի նորն, նշանակէ անուն մայրաքաղաքի [illegible] նապատին Զիփայ 'ի սահմանս ցեղին Յուդայ առ բլրովն եքեղատու․ Զայսմանէ լատինք անուանեցին անտառ․ իսկ եօթանասունք հեղլեն բարբառով կոչեցին կենաւոր, որ թարգմանի՝ նոր, յորմէ և 'ի հնոյ [illegible] գարձուցաւ նոր։ Իսկ 2․ Կոր․ 4․ 4․ ուր ասի՝ նորոգ ած աշխարհիս այսորիկ կուրացոյց զմիտս, պարտի խմանել զորօրինակ զաստուածն կուրացուցոյ։ Իրաւ է բառս այս [illegible]

բեմն 'ի գործածի կրկնելով այսպէս, նոր նոր ; և նշանակէ զնորանորն , զոր ասա֊ ցես 'ի սնորև : 3. Մակ. 5. 11:

Նորա աղագաւ : (շաղկապ պատճառ.) || ասեա զՆորին աղագաւ : Ոսկէ . 2. համ. լԱ:

Նորաբեր . ի . իւ . ից . կմ՝ աց . ովք : || Նորոգ բերեալ . կմ՝ նորապէս առեալ . կմ՝ բաղ բոջեալ : Աճգաբ : Իսկ մերթ՝ նորաստի բերող . կմ՝ արտադրող . և կմ՝ որ նորոգ առաջինին :

Նորաբողբոջ : (Նախադրիւ հոլովի .) || Նո֊ րոգ բողբոջեալ . կմ՝ որ նորապէս է բու֊ սեալ և ծաղկեալ : Իսկ մերթ անդրա֊ բերաբար առեալ նշանակէ նորոգ ծը֊ նեալ . կմ՝ նորահաս . և կմ՝ մատաղ ; որ երբ թէ տակաւին է 'ի ծաղկի հասակին : 'ի Լուսինոսի :

Նորաբոյս . բուսի . իւ . ից . իւք : || Նորոգ բուսեալ , կմ՝ ընձիւղեալ : Իսկ մերթ նը մանութեան առեալ նշանակէ զնորածինն , կմ՝ զմատաղն , կմ՝ զնորոգ ծաղկեալն 'ի հասակի , որ և կոչի գեռաբոյս :

Նորաբուսիկ : || ասեա զՆորաբոյս :

Նորագիւղ . գեղջ . գիւղիւ . ից . ովք : || Նոր գիւղ . կմ՝ նորոգ շինեցեալ աւան : Իսկ մերթ է յատուկ անուն գեղջ 'ի վաղն֊ ջականի :

Նորագիւտ . ի . իւ . ից . իւք : || Նորոգ գը֊ տեալ , կմ՝ 'ի ձեռս բերեալ . կմ՝ նորապէս հնարեալ : Աճգաբ : և Լամբրոն : Իսկ մերթ նորապէս գտանող , և 'ի ձեռս բերող . կմ՝ նորոգ հնարող :

Նորագործ . ի . իւ . աց . ովք : || Նորոգ գործե֊ ցեալ . կմ՝ նորապէս արտադրեցեալ , և կազմեցեալ . կմ՝ նորաստեղծ . և կմ՝ նորա֊ հնար : Իմաստ. 11. 19: Նարեկ . ղԶ: Իսկ մերթ վարի երբեմն զմակբայ , և նշանակէ նոր գործելով . կմ՝ նորոգ կազմելով : և ըստ այսմ առի նորագործ ճարտարապետել :

Նորալուր . լրի . իւ . ից . իւք : || այսպէս հո֊ լովեցեալ նշանակէ զլուր , որ նորապէս լուեալ է զինն . կմ՝ յուշիկն նր նոր բոր֊ բոք է հասեալ :

Նորալուր . լրոյ . ով . ոց . ովք : || այսպէս հո֊ լովեցեալ նշանակէ զձայն , որ նորապէս է լսեցեալ . կմ՝ է նոր ինչ լսելի . և ըստ այսմ առի նորալուր բան , կամ ձայն . և այլն :

Նորածին . ծնի . իւ . ից . ովք : || Նորոգ ծնեալ . կմ՝ նորապէս արտադրեցեալ և 'ի լոյս ե֊ կեալ . կմ՝ մատաղածին . և կմ՝ գեռածին : ռամկ . նոր ծնած : Նարեկ . ղԶ:

Նորածնեալ . ելոյ . ով . ոց . ովք : || Նոյն է Ճ վերնոյն : 'ի Շարակնոցի :

Նորակազմ : (Նախադրիւ հոլովի .) || Նորոգ կազմեցեալ , կմ՝ շինեցեալ . կմ՝ որոյ կազ մուածն է նոր :

Նորակերպ . ի . իւ . ից . իւք : || ունօղ ըզ նոր կերպ , կմ՝ զանսովոր օրպիսութիւն . կմ՝ նորաձև . կամ նորատեսիլ : Խորէն . յուշ . խորհրդոց .

Նորակերտ . ի . իւ . ից . իւք : || Նորոգ կեր տեցեալ . կամ նորաշէն . և կամ նորա֊ կազմ : Յն որդի :

Նորակնունք : || Նորակնիք . զի նորոգ ստեղ ծինք , կմ՝ նորոստ կնքեցեալ , որոց մերթ նշանակի նորոգ մկրտեցեալն : 'ի ճառս հայրե : Իսկ մերթ նորապէս օծեալն և կնը֊ քեալն 'ի քահանայ :

Նորակտակ : (Նախադրիւ հոլովի .) || Ծա֊ գի սա 'ի կտակ բառէն , որ է արմատակա տեղոյն . այլ և կտակ . սատի բառիւս նորակտակ նշանակի՝ նորոգ կտակեալ , զի մանրեալ և մաշեալ : Եւ մերթ նորոգ տան ջեալ . կմ՝ նորահնար կերպիւ չարչարեալ , որպիսիքեղեն 'ի հնումն բազմաչարչարնա հասակք : Եւ յայսմանէ առեալ նաև այն՝ որ պէսպէս նորահնար պարսաւանօք , և կսկծելի թշնամանօք նախատակած լինի . և երբ թէ գիշատի , նորակտակ կոչի . և ըստ այսմ երբեմն վարի սա երբեմն զմակ֊ բայ . ըստ այնմ Խորէն . թ . գր . 23 : Քանզի նորակտակ ծանակեցաք յաշխարհիս յայս միկ . զի նորահնար պարսաւանօք՝ և կսկծե լի քամահանօք ծանակեցաք :

Նորակտուր : (Նախադրիւ հոլովի .) || Նորոգ կտրեալ . կմ՝ նորապէս հատեալ : Իսկ մերթ նորոգ կտրող . կմ՝ հատանող :

Նորակրօն . ի . իւ . ից . իւք : || ունօղ զնոր կրօնս , կմ՝ զնորահնար հաւատս :

Նորակրօնաւորութիւն . թեան : || Նոր կրօնա ւորութիւն . կմ՝ նորագիւտ կրօն , կմ՝ նո֊ րահնար պաշտօն . կմ՝ աւելորդապաշտու թիւն . և կմ՝ ունայն պաշտօնասիրութիւն . և ըստ այսմ է Իմաստ . 14 . 14 . ուր ասի զկռա պաշտութենէ , Նորակրօնաւորութիւն մարդ֊ կան եմուտ յաշխարհս , զի ունայն պաշտօ նասիրութիւն մարդկան :

Նորահաս . ի . իւ . ից . ովք : || Նորոգ հասեալ . որ մերթ առի զպտղոց , և նշանակէ՝ նո֊ րոգ հասունացեալ . կմ՝ կանխահաս . ռամկ . նոր հասած . կմ՝ բուրքանդարայ : Իսկ մերթ ըզ մարդոյ , զանասնոց , զանկոց , և զնման֊ եաց . և նշանակէ՝ նորոգ ժամանեալ 'ի չափ հասակի . կմ՝ ծաղկեալ մանկութիւն . կմ՝ նորաբողբոջ . և կմ՝ մատաղ : 'ի Լուսինոսի :

Նորահաւատ . ի . իւ . ից . իւք : || Նորոգ ե֊ կեալ 'ի հաւատս . կմ՝ նորապէս հաւատա֊ ցեալ . որ և կոչի դեռահաւատ : Աճգաբ :

Նորահնար : (Նախադրիւ հոլովի .) || Նորոգ հնարեցեալ . կմ՝ նորապէս ստեղծեցեալ . և 'ի լոյս ածեալ :

Նորահրաշ : (Նախադրիւ հոլովի .) || ասեա զՆորանշան : Խորէն . թ . գր . 33:

Նորահրաւէր : (Նախադրիւ հոլովի .) || Նորոգ հրաւիրեալ . կմ՝ նորապէս կոչեցեալ : Իսկ մերթ՝ նորոգ հրաւիրող :

Նորաձայն . ի . իւ . ից . իւք : || այն՝ որոյ ձայնն կմ՝ լուրն է նոր , կմ՝ նորահնար , կամ ոչ լուեալ յառաջ . և կմ՝ ամենևին օտար և անսովոր . որպիսիք են աղանդաւոր բանք , կմ՝ վարդապետութիւնք հերձուածողաց , զորս 4նարեն յանձանց իւրեանց : 1 . Տիմ . 6 . 20: և Կիւրղի եղծ . ժԶ:

Նորաձայնութիւն . թեան : || Նորութիւն ձայ֊

նից, կամ բանից. կամ նորահնար վարդապետութիւն. զորպիսիս հնարեն հերետիկոսք ըստ թելադրութեան մտաց իւրեանց:

Նորաձեւ. ի. իւ. ից. իւք: || Ունօղ զնոր ձեւս, կամ զնոր կերպս. կամ նորոգ ձեւացեալ. կամ կերպարանեալ: Յն. ... Իսկ մերթ առեալ լինի փոխանակ բառիս՝ նորահնար. կամ այլանդակ. կամ այլազան. կամ օտար, և անսովոր. և ըստ այսմ առնի՝ նորաձեւ օրէնք. կամ նորաձեւս ինչ առնել, կամ խօսել. ոմն առնեն հերետիկոսք: Յն. ... և Լամբր:

Նորաձեւանամ. ացայ. ացիր. անալ: (ընդ. միջ.) || Նորաձեւ լինել. կամ նորաձեւութիւն վարել. և կամ արտաքոյ հասարակաց սովորութեան երեւել՝ նորահնար և օտար կերպիւ վարելով՝ ի բանս կամ ի գործս: Լամբրոն:

Նորաձեւեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || Նորաձեւ առնել. կամ նոր հնարել. կամ յանձնէ խորհել զնոր ինչ սահմանել արտաքոյ հասարակ սովորութեան. ոմն առնեն հերձուածողք՝ հնարելով զնոր հաւատս: Պարապմանց:

Նորաձեւիմ. եցայ. եայց. իլ: (Կրաւորական.) || Տե՛ս զՆորաձեւանալ: Պարապմանց:

Նորաձեւութիւն. թեան: || Նորութիւն ձեւոց, կամ կերպից. կամ նորահնար սովորութիւն. կամ օտար և անսովոր կարգ, կամ վարդապետութիւն: Լամբրոն:

Նորաճաշակ. ի. աւ. աց. օք: || Նորոգ ճաշակօղ. կամ նորապէս ճաշակեցեալ: Իսկ մերթ՝ զնոր ճաշակս. կամ զնոր համս ունող. և կամ համեղաճաշակ: Իմաստ. 16. 2:

Նորամարզ. ի. իւ. ից. իւք: || Նորոգ մարզեցեալ, այս կրթեցեալ. կամ որ դեռևս է ի կրթութեան. կամ նորավարժ. և կամ համբակ: 'Ի ճառս հարց. Ե:

Նորամուտ. մտի. իւ. ից. իւք: || Նորոգ մտեալ. կամ նորապէս մուտ արարեալ. և ըստ այսմ նորամուտ կոչի համբակն. Ի՛ց որ նոր մտանէ 'ի յուսումն, և 'ի վարժումն: Նաև նորահաւատն. ըստ որում նորոգ է մտեալ 'ի կրօնս քրիստոնէից: Այնպէս նորամուտ կոչի հարսն. որ նորապէս է մտեալ 'ի հարսնութիւն, կամ 'ի յառագաստ ընդ փեսային: 3. Մակ. 1. 11:

Նորայ. կամ նորայն. այով. նորայք. այց. կամ այոց. զնորայս. կամ զնորայսն. այովք: || Բղխի սա 'ի դերանուանէս նա՝ և նշանակէ զայն ամ, որ նորա է. կամ պատկանի ի յերրորդ դէմս եզական. ուստի. անորը. կամ անոր ունեցածը: Եւ ըստ այսմ առնի՝ զնորայն պաշտել. կամ նորայքն իմ են. կամ անհաղորդ 'ի նորայոցն. և այլն: Ընդհանուրն: Լամբրոն: Յովէ. 2. հատ. Լէ: և Պարապմանց:

Նորայարկ. ի. աւ. աց. օք: || Այն, որ է նոր յարկ. կամ որ բնակի 'ի նոր յարկի: Իսկ մերթ նորոգ յարկեալ, այս նորապէս ծածկեցեալ:

Նորայեղ. այնայ. ով. ոց. ովք: || Ածանցի սա 'ի սեռական դերանուանէս, նորա. ոմն և իւրեանցայինն 'ի դերանուանէս իւ-
րեանց. և նշանակէ զայն, զոր ինչ նշանակէ բառս՝ նորայ. Ըստ այսմ. Նոնէն. խբ. ոչ և ս'ի նորայենոց անտի ինչ կրեսցէ. այս 'ի նոյ եղելոցն. կամ յայնցանէ, որք նորա են. ուստի. անորը. կամ անորինները. կամ անոր ունեցածը:

Նորանամ. ացայ. ացիր. անալ: (ընդ. միջ.) || Նոր լինել. և կամ նորոգիլ: Յն. ...

Նորանշան: (Նախադրիւ հոլովի.) || Նորահրաշ. այս այն ամ որ մի նորութեան, կամ մն նորատեսակ տեսլեան հրաշագործութեանց. կամ զարհուրեցուցանէ զտեսօղս. և ըստ այսմ նորանշան կոչին ամ գործք նոր զգան չեղելոց. կամ նոր իրք ցուցանիքսութը, կամ հրաշալիք, կամ անլուրք, կամ ոչ երբէք տեսեալք. և կամ որք են արտաքոյ ամ կարծեաց և մտաց մարդկան. զոր յոյնք կոչեն փառատոքսօս, կամ փառատոքսօն. և ըստ այսմ առնի՝ նորանշան ինչ ցուցանել. կամ նորանշան առնել զհարուածս սարուք: Թուոց. 16. 30: և 2. Օրէն. 28. 59: Եւ կամ նորանշան մահ. նորանշան սքանչելիք. և այլն: Իմաստ. 16. 17: և 17. 9: և 19. 5:

Նորանշոյլ: (Նախադրիւ հոլովի.) || Այն որ ունի զնոր նշոյլս. կամ արձակէ զնորոգ ճառագայթս. կամ նոր և սքանչելի ճառագայթ. թիւք լուսաւորեալ: Նոյնի. զզ:

Նորանոր: (Նախադրիւ հոլովի.) || Է անուն կրկնեալ 'ի բառէս նոր. որ եղական ձայնիւ նախ առնի պարտուց, և նշանակէ զնոր, կամ զնորագոյնս, կամ աղգի աղգի: ռամկ. նոր նոր: 2. Մակ. 9. 6:

Նորաշէն. շինի. իւ. ից. իւք: || Նորոգ շինեցեալ. կամ նորակերտ: ռամկ. նոր շինած: 2. Օրէն. 20. 5:

Նորապարգև: (Նախադրիւ հոլովի.) || Պարգեւօղ, կամ ունօղ զնոր պարգևս: Իսկ մերթ նոր պարգևեցեալ. կամ նորոգ շնորհեցեալ: Աղթաւ:

Նորասէր. սիրի. իւ. աց. օք: || սիրօղ նորոց. կամ նորութեանց: Իսկ մերթ նորոգ սիրօղ. կամ նորապէս սիրեցեալ. կամ սիրով ընկալեալ: 3. Մակ. 4. 5:

Նորասահեղծ. ի. իւ. ից. իւք: || Նորոգ ստեղծեցեալ. կամ նորապէս արարեալ: Յն. ...

Նորասահեղծեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || Նորապէս առնել: Նորոգ սահեղծանել. կամ նորապէս առնել: 'Ի Շարականս:

Նորատեսանիլ: (Նախադրիւ հոլովի.) || Տե՛ս ըն Նորանշան: 1. Եզր. 6. 9: Իմաստ. 19. 5:

Նորավարժ. ի. իւ. ից. իւք: || Տե՛ս զՆորամարզ:

Նորատեսիլ: (Նախադրիւ հոլովի.) || Այն որոյ տեսիլն կամ երևոյթն է նոր, կամ յորոյ տեսիլն կամ երևոյթն նոր. կամ նորաձեւ. ուշադրոյն ոչ տեսեցեալ. կամ նորանշան: 3. Մակ. 7. 2:

Նորատի. տւոյ. ով. ոց. ովք: || Ունօղ զնոր մանկութիւն. ըստ հասակ տիոց. կամ պտղասակ մանկութեան. կամ երիտասարդական տիովք ծաղկեալ: Խոսրէն. ..., ... 12:

Նորատունկ. տնկոյ. ով. ոց. ովք: || ...

Մատաղատունկն ը նմ նշանակութՆ ։ Յոբ. 14. 9։ Սաղմ. 127. 3։ Եսայ. 5. 7։ Վարի սա երբեմն իբրև զմակբայ այսպէս, նորատունկ բղխիլ. և նշանակէ՝ նորաբողբոջ լինիլ. կմ նորոգ բողբոջելով ընձիւղիլ. կմ յարմարոյ ծագիլ ։ Եսայ. 27. 6։

Նորատուր ։ (Նախդրիւ հոլովի.) || տուօղ զնոր պարգևս՝ կմ զնոր իրս ։ Իսկ մերթ՝ նորոգ տուեալ. կմ նոր պարգևեցեալ ։ Ագաթ ։

Նորացոյց ։ (Նախդրիւ հոլովի.) || նորատեսիլ. կմ նորանշան ։ Ագաթ ։

Նորացուցանեմ. ցուցի. ցն. նել ։ (անցող.) || տես զՆորել ։ 'Ի շարակնոցի ։

Նորափառ. ի. իւ. աց. օք ։ || ունօղ զնոր կրօնս. կմ զնորահնար հաւատ. և կամ զնորաձև կարծիս 'ի բանս հաւատոյ. որ ասի զչարափառաց ։ Իսկ մերթ՝ նորափառ. կմ նորապարծ, որ միշտ ցանկայ նոր փառաց. ըստ այնմ Յհ ոսկ. Զբարկութն տրտմականին, և զնորափառ պերճ հպարտին ։

Նորափառութիւն. թեան ։ || նոր կրօն. կամ օտար հաւատ. կմ նորահնար դաւանութիւն, կմ վարդապետութիւն. որ և ասի՝ չարափառութիւն ։ Իսկ մերթ՝ նորափառութիւն. կմ նորապարծութիւն ։ Լամբրոն ։

Նորափետուր ։ (Նախդրիւ հոլովի.) || նոր փետրովք փետրաւորեալ. կմ զնորաբոյս փետուրս ունօղ ։ Իսկ մերթ նշանակէ ըզ նոր փետուրս. և ըստ այսմ երբեմն վարի սա իբրև զմակբայ այսպէս, նորափետուր զարդարիլ. և նշանակէ նոր փետրովք զարդարիլ, և այս ասի յատկապէս զարծուոյ. զի յորժամ սա ծերանայ, և աչքն վատին, գտեալ զընդարձակ աղբիւր, ուղիղ գծիւ վերանայ 'ի նմանէ մինչև ցերրորդ կամարն օդոյ, ուր տապով արեգական և օդոյ սկսանի փարատիլ մէգն աչաց, և ինքն ջեռուցեալ մերձ 'ի յայրումն՝ գահավէժ առնէ զինքն յաղբիւր անդր. և երիցս ընկղմեալ 'ի ցուրտ ջուրսն, փութով գնայ 'ի բոյն իւր. ուր ծածկեցեալ 'ի մէջ թևոց ձագուց իւրոց, ընդ քիրտն մտանէ. և սկսանին հին փետուրքն թօթափիլ, և նորք բուսանիլ. և արտաքսին զըրտուլթն ջրոյն ջերմութիւն 'ի ներքս զօրանայ, և բնութիւն նորոգի. և յայս միտս ասի Սաղմ. 102. 5. նորոգեսցի որպէս արծուոյ մանկութիւն քո ։ Եւ Եսայ. 40. 31. ասի՝ նորափետուր զարդարեսցին իբրև զարծուիս ։ Եւ յայսմանէ առեալ յորժամ ոք նորոգ շնորհիւ, կմ նորոգ բանիւ, կամ կատարելութբ պճնի, ասի՝ նորափետուր զարդարիլ ։ 'Ի շարակնոցի ։ Մերթ և անդրաբերութբ նորափետուր կոչին ևս իցէ նոր զարդք, կմ նոր ծածկոյթք. ը այնմ, Զարդարեցեր զթևզերս 'ի զգեստ լուսափայլս և նորափետուրս ։ 'Ի շարակնոցի ։

Նորեկ. ի. աւ. աց. օք ։ || նորոգ եկեալ 'ի տեղի ինչ, կմ 'ի կրթութիւն, և կմ 'ի կրօնաւորութիւն ։ 'Ի Վարս հարց. ժը ։ Սոյնպէս և եկամուտքն, ը որում են նորոգ եկեալ 'ի քրիստոնէական հաւատս՝ կոչին նորեկք ։ Կիւրղի Եղիշ. ժը ։

Նորեմ. եցի. եա. ել ։ (Ներգործ.) || նորացուցանել. կմ նոր առնել. և կմ նորոգել ։ 'Ի Վարս հարց. ժդ ։

Նորընծայ. ի. իւ. ից. իւք ։ || նորոգ ընծայեալ, կմ նուիրեալ. ըստ այնմ Նարեկ. հա. գրեսցես աղօթս մշտամատոյց զայս նորընծայ տառ ։ Իսկ մերթ մասնաւորապէս առեալ նորընծայ կոչի նորահաւատն, ը որում է նորոգ ընծայեցեալ 'ի քրիստոնէական կրօնս՝ թէ մկրտեցեալ իցէ, և թէ միայն երախայացեալ ։ Ագաթ ։ Լամբրոն ։ Մերթ և նշանակի սովաւ նորոգ նուիրեալն յեկեղեցական աստիճանս, որպ 'ի քահանայութիւն ։ Սոյնպէս նորընծայ կոչին առ. կրօնաւորս նոքա, որք նորոգ են եկեալ և մտեալ 'ի կրօնաւորութիւն, և դեռ ևս կրթին 'ի նորընծայարանի ։

Նորընծայարան. ի. աւ. աց. օք ։ || տեղի նորընծայից, որ յատկապէս առեալ նշանակէ զընակարան, ուր նորընծայքն կրօնաւորաց բնակին՝ և կրթին ընդ դաստիարակաւ ։

Նորի. րւոյ. եաւ. եաց. եօք ։ || պտուղ նորահաս, ը նորոգ հասունացեալ ։ ռամկ. Թարգմանոց ։ Եւ յայսմանէ առեալ մասնաւորապէս նորի կոչին նորոգ հասեալ արմտիքն, որ է ցորեան, կմ գարի, և այլք արդիւնք երկրի ։ Յես. 5. 11։ Սոյնպէս է և Թուոց. 28. 26. ուր օրն պէնտէկոստէից կոչի օր նորեաց, ը նորահաս արմտեաց. ըստ որում օրէն էր հրէից յայնմ աւուր մատուցանել զպտուղ կազմեալս յառաջնոց արդեանց, ը 'ի կանխահաս ցորենոյ ։

Նորիմաց ։ (Նախդրիւ հոլովի.) || նորոգ իմացօղ. կմ իմացեալ. և կմ նորապէս իմանալի, և կմ այն, որ նորոգ հնարի 'ի մտաց ։ Ագաթ ։

Նորին աղագաւ ։ (շաղկապ պատճառ.) || վն այնորիկ. կմ սակս այնորիկ ։ ռամկօր. անոր համար ։

Նորոգ ։ (Նախդրիւ հոլովի.) || նոր. կամ նորագոյն. կմ դեռևս եղեալ. կմ արդէն նախկան ։ 3. Մակ. 4. 5։ Նարեկ. ղէ։ Կիւրղի Եղիշ. ժը ։ Իսկ մերթ նորահաս. կմ կանխահաս ։ ռամկօր. Թաղէ. կամ Թարգմանոց. Շնորհալին ։ Եւ մերթ վարի իբրև զմակբայ, և նշանակէ նորոգապէս. կմ նորանոր. կամ արդէս. կմ դեռևս ։ 2. Օրին. 24. 5։ Նարեկ. ղէ։ Յհ ոսկ ։

Նորոգանուագ ։ (Նախդրիւ հոլովի.) || նորոգ նուագեալ. կմ եղանակեալ. կմ նորապէս երգաբանեալ ։ Նարեկ. ղէ ։

Նորոգապէս ։ (մակբայ.) || նորոգ կերպիւ. կմ նորապէս. կմ դեռևս. կմ դարձեալ միւսանգամ ։ ռամկ. նորանոց ։ Լամբրոն ։ ըստ այսմ է և 2. Մակ. 14. 36. ուր ասի. պահեա զայս նորոգապէս զսրբութիւն տաճար քո, ը զայս նորապէս սրբեալ տաճար քո ։

Նորոգատուր ։ (Նախդրիւ հոլովի.) || նո֊

րոգ առնող. կամ պարգեւող իմիք: Իսկ մերթ՝ նորոգ առնելոյ. կմ՝ նոր պարգեւեցելոյ: Աճգուռ:

Նորոգեմ. եցի. եա. եալ: (Ներգործ.) || Նորոգ առնել. կմ՝ նորացուցանել. կմ՝ զհին նուազեալն 'ի նորոգութիւն դարձուցանել: ռամկօր. նորգնել. կմ՝ նորէլ: 1. Մակ. 12. 1: Սաղմ. 102. 5: Եսայ. 41. 1: Իսկ մինչ ասի՝ նորոգել զոգիս. կամ զհոգիս, նշանակէ՝ տալ ուժ զհոգին առնուլ. կմ՝ հանգուցանել: Յոբ. 1. հատ. Է: Մերթ եւս մինչ ասի, նորոգել զանձն, իմանի զգաստացուցանել զինքն. եւ կմ՝ ժրանալ: Յոբ. 2. հատ. ԼԳ:

Նորոգութիւն. թեան: || Նորոգումն. կմ՝ նորացուցումն. կմ՝ նորութիւն. եւ կմ՝ դարձումն յառաջին ողջութիւնս: 1. Մակ. 12. 17: Տիտ. 3. 5: Իսկ մերթ արծարծումն ոգւոյ. կմ՝ հոգի առնուլն, եւ կմ՝ զգաստութիւն, եւ ըստ այսմ ասի՝ նորոգութիւն հոգւոյ, կմ՝ անձին:

Նորոգումն. ման. մամբ. մանց. ամբք: || Նոյն է ընդ վերնոյն: Հռովմ. 6. 4:

'ի Նորումս: (մակբայ ժամանակական.) || 'ի նոր օրէնս. կմ՝ 'ի նոր դարուս. կմ՝ 'ի ներկայումս. եւ կմ՝ յայժմուս: ռամկ. հիմիկս: Նարեկ. 'ի տաղն ծննդեան:

Նորուն: || է սեռականն դերանուանն նա, եւ նշանակէ նորա, կամ նորին. կմ՝ այնորիկ: ռամկ. անոր: Թագ. 28. 7: Յուդիթ. 1. 14: եւ 8. 2: Սաղմ. 18. 7:

Նորօրինակ: (Նախդրիւ հոլովի.) || Նորակերպ. կմ՝ նորատեսիլ. կմ՝ նորահրաշ. եւ կմ՝ նորանշան: Կիւրղ. ծննդ. ժԲ: Իսկ մերթ է մակբայ, եւ նշանակէ, նոր կերպիւ, կմ՝ նորաձեւ:

Նոցայ. կմ՝ նոցայն. նոցայով. ցոյք. ցոյց. կմ՝ ցոյից. զնոցայսն. նոցայովք: || Ծագի սա 'ի սեռականէ դերանուանս նոքա, եւ նշանակէ զնոցայինն, յն զայն ինչ, որ նոցա է, կմ՝ պատկանի յերրորդ դէմս երկուցն. ռամկ. անոնցը. կմ՝ անոնց եղածը. կմ՝ անոնց ունեցածը. եւ ըստ այսմ ասի՝ նոցայն պաշտամամբն. կմ՝ նոցայոց իշխանութեանց, կմ՝ զնոցայսն մեծեանս հրաժիգ առնել. եւ կմ՝ իւրս, եւ նոցայքն: Խորէն. Ա. գլ. 26: եւ Բ. գլ. 22: եւ Գ. գլ. 65: Նարեկ. Ծ: Ըստ այսմ է. եւ Յոբ. 2. հատ. ԼԲ. ուր ասի. ոչ իւրով ձեռօքն միայն գործէ, այլ եւ նոցայովքն:

Նոցային. այնոյ. ով. ոց. ովք: || Ածանցի 'ի սեռականէ դերանուանս նոքա. որպէս իւրեանցայինն 'ի դերանուանէս իւրեանց. եւ նշանակէ զայն, զոր ինչ բառս նոցայ, որ 'ի վերոյ մեկնեցաք: Լամբրոն: Կիւրղ. ծննդ. Գ. ԺԳ:

Նոցանօք: || Նոցայիւովք. կմ՝ նոքօք: Թագ. 3. Մակ. 7. 12. ուր ասի անցելոց կացելոց միայն նոցանօքն. պարտ իմանել՝ նոցա նուագն: Քանզի 'ի հնումն փոխանակ տառիս Օ, 'ի գործածէին զվանկս ու. զոր օրինակ. աւրհնեալ. հաւր. որ է օրհնեալ. հօր: Վն որոյ կարծելով ոմանց զբառս նոցա

նուագն, իբրեւ զմի բառ, եւ վանկն ու, եղեւ փոխանակ տառիս Օ, գրեցին նոցանօքն:

Նոցունց: || է սեռականն յոգնական դերանուանս, նոքա. եւ նշանակէ նոցին. կմ՝ նոցա. եւ կմ՝ այնոցիկ: Եւէդ. 36. 38: Թագ. 3. 36: Գործ. 2. 11:

Նու. նուոյ. ով. կմ՝ ու. նուաց. ոց. ովք. կմ՝ նուանք. անց. ամբք: || է անուն իգական, եւ առնչական, որով նշնիկ հարսն, յն կին որդւոյ ուրուք, որ երբեմն անչափահաս առ սկեսրայրն. եւ ըստ այսմ առայ կին արքահամա կոչի նաեւ Թամար հարսն: Ծննդ. 11. 31: ըստ այսմ է եւ Ղեւ. 18. 15: Տոբ. 11. 18: Իսկ երբեմն առնչանայ առ սկեսուրն. եւ ըստ այսմ հռութ անուանի նաեւ Նոյեմեայ, որ էր սկեսուր նորա: Հռութ. 1. 6: Այսպէս եւ Միք. 7. 6. ուր ասի. յարիցէ նաեւ 'ի վերայ սկեսրի իւրոյ: ռամկ. հարս:

Նուագ. ի. աւ. աց. օք: || Եղանակաւոր ձայն նուագարանաց. կմ՝ նուագումն. կամ անուշ եղանակութիւն. եւ կմ՝ երգ: Աճ. 5. 23: Խորէն. Ա. գլ. 5: Նարեկ. ՂԳ: Իսկ մերթ երգաբանութիւն. կմ՝ ներբող. կմ՝ օրհներգութիւն: Նարեկ. ԺԵ. եւ ՀԵ. եւ ՂԳ: Մերթ եւս եղանակ, կմ՝ հանգամանք, կմ՝ որպիսութիւն. կմ՝ կերպ: Լամբրոն: Իսկ երբեմն նշանակէ, անգամ. կմ՝ հեղ. եւ այս 'ի գործածի բազմապատիկ կերպիւ, զոր տեսցես 'ի ներքոյ:

Զառաջին նուագն, կմ՝ յառաջնում նուագի: || Յն յառաջին անգամն. կմ՝ 'ի նախկին հայլին. եւ կմ՝ զառաջինն: ռամկ. առջի հեղը: 1. Մակ. 6. 6: Եզր. 16. 7: Խորէն. Գ. գլ. 32:

'Ի միում նուագի. կամ յեօթներորդում նուագի: || Յն 'ի միում հեղի. կմ՝ յեօթնե րորդ անգամին: Յոբ. 33. 14: Յես. 6. 16: Խորէն. Բ. գլ. 79.

Զօրացոյ զկնգզայս եւ զմի նուագ: || Յն յայս անգամ եւս. Դատ. 16. 28:

Ոչ հանդուրժեցաւ ինչ յետ միոյ նուագին: || Յն զկնի միոյ հեղին. կմ՝ բաց 'ի միանգամ ընդդիմանալոյն: Խորէն. Գ. գլ. 8:

Թէեւ առ մի նուագ բերկրեալ մնայցեմ: || Յն 'ի միում նուագի. կմ՝ 'ի միանգամ տեսլեան: Նարեկ. ԻԶ:

Երկու երեք կատարեցին 'ի մի նուագ: || Յն միանգամայն: Կիւրղ. ծննդ. Ը:

Խնդրեաց յայս առ մի նուագ: || Յն առ անգամ մի. կմ՝ միանգամ: Աճգուռ:

Իւրաքանչիւր նշանակի առկայս ընդունակ. կմ՝ կթղայ. կմ՝ սկիհ. եւ կմ՝ բաժակ: ռամկ. գաւաթ. կմ՝ բաժ: 1. Մակ. 11. 58: (Եբրայեր. ներեալն): Խորէն. Բ. գլ. 44: Եւ մերթ ի եւ իցէ անօթ պատուական. այն սպասք. կմ՝ արծաթեղէն սկուտղք. սկաւառակք. բուրվառք. խնկանոցք. պատառաքաղք. եւ այլք նմանք: 1. Մակ. 11. 58. (ըստ այլ ներեալն): եւ 2. Մակ. 4. 39: Իսկ երբեմն նշանակի պահ. կմ՝ ժամ. եւ ըստ այսմ է

Digitized by Google

3. Մակ. 5. 9. ուր ասի իբրև յերկարաձգոյն նուագքն զբանիւք անկանէին. զի իբրև ընդ երկար պահս, կամ ժամս անցանէին ՚ի խօսակցութիւնս խրախճանականս:

Նուագածու. ծուի. աւ. աց. օք: || քնարահար երգիչ. կամ ոև լցէ երգեցիկ. կամ գուսան. կամ երաժիշտ. ռամկ. սազէնդէ. կամ Էրգ ընող: Դիոն. 5. 11:

Նուագարան. ի. աւ. աց. օք: || գործիք. կամ կազմուած նուագելոյ. կամ երգելոյ. որ և ասի երգարան. որպիսի է քնարն, որ բինգն. թմբուկն. բամբիռն. ծնծղայն. և այլք նմանք: ռամկ. սազ: 2. Թագ. 6. 5: 1. Մնաց. 6. 32: և 15. 16: Դան. 3. 7: Մերթ և նուագարան կոչի գիրքն կամ թուղթն, յորս գրեալ կան նուագք. զի եղանակաւոր երգք. որպիսի է սաղմոսարանն գաւթի. և շարականոցն մեր: Նորէնի. իա. և կա: ըստ այսմ և գիրքն Նարեկացւոյն՝ ըստ որում պարունակէ զպէսպէս բանս օրհնութեան իբրև զնուագս՝ այս՝ նմանութեամբ նուագարան կոչի: Նորէնի. կէ:

Նուագեմ. եցի. եա. ել: (Ներգործական.) || քաղցրանուագ ձայնիւ հնչեցուցանել զնուագարանս. կամ երգել. կամ եղանակել. կամ երաժշտական երգօք օրհնել: ռամկ. սազ չալէլ. կամ երգել: Թագ. 21. 17: 4. Թագ. 3. 15: 1. Մնաց. 16. 5: Յայտն. 15. 14: Իսկ Սաղմ. 136. 6. ուր ասի՝ թէ ոչ նախ նուագեցից զքեզ սկիզբն ուրախութեան, նման՝ եթէ ոչ նախամեծար առնելով ձայնեցից, կամ կոչեցից զքեզ սկիզբն ուրախութեան իմոյ:

Նուագերգ. ի. աւ. աց. օք: || նուագերգու. կամ երգիչ: Իսկ մերթ նուագերգութիւն. կամ երգ. և այս մանաւանդ ՚ի յոգնականումն:

Նուագերգու. ուի. աւ. աց. օք: || տես ընդ Նուագածու:

Նուագերգութիւն. թեան: || քաղցրանուագ երգ. կամ նուագումն. կամ երգաբանութիւն. կամ սաղմոսերգութիւն. և կամ օրհներգութիւն: Նորէնի. հը. և զը:

Նուազ: (մակբայ քանակական.) || սակաւ. ինչ: ռամկ. բիչ մը:

Նուազ. ուազի. իւ. ազունք. կամ ազք. ից. իւք: || սակաւ. կամ պակաս. կամ դոյզն. կամ դուզնաքեայ: ռամկ. բիչ: Ղևտ. 26. 22: Սաղմ. 108. 8: 1. Պետր. 3. 20:

Նուազեմ. եցի. եա. ել: (զօրութեամբ անցողակ.) || տես զՆուազեցուցանել:

Նուազեցուցանեմ. ցուցի. ցո. անել: (անցողակ.) || նուազ առնել. կամ սակաւացուցանել. և կամ պակասեցուցանել: Նորէնի. ծա:

Նուազիմ. եցայ. եաց. իլ: (ձայնակր.) || սակաւանալ. կամ պակասիլ. և կամ սպառիլ. ռամկօր. պակսիլ. կամ հատնիլ: Ծննդ. 47. 15: Սաղմ. 11. 2: և 106. 38: Իսկ մերթ՝ նուազիլ. կամ լքանիլ. կամ հաշիլ. կամ վհատիլ: ռամկ. թուլնալ. կամ զօրութենէ ինկնալ. կամ խոնջիլ: Եսայ. 53. 3: ՚ի վերս հարցն. ժը:

Նուազութիւն. թեան: || սակաւութիւն. կամ պակասութիւն. և կամ չքաւորութիւն: 2. Օրին. 28. 20: Սաղմ. 101. 24:

Նուաղ. ի. իւ. ից. իւք: || Է արմատ նուաղիլ բային. որով մերթ նշանակի նուաղեալ. զի թափեալ ՚ի զօրութենէ, կամ լուծեալ և լքեալ. և կամ թալկացեալ: Նորէնի. հզ: Իսկ մերթ հիւծեալ. կամ մաշեալ. կամ վատեալ. և կամ տկարացեալ: Նորէնի. իա: Երբեմն և նուաղ. կամ պակաս. և կամ սակաւ: ըստ այսմ Յն ոգւոյ, զօղեալ սարսելն զատեալքն ՚ի խաղ. ազգան տկար ձայնիւ նուաղ. զի նուազ ձայնիւ: Իսկ մերթ աղօտ. կամ նսեմ. կամ մթին. և ըստ այսմ ասի. նուաղ լոյս. կամ ճաճանչ. և այլն: Իսկ մինչ ասի զտառից, նշանակէ՝ նուրբ, զի ունօղ զբարակ հնչումն. որպիսիքն են տառք. զ. ծ. ս. ր. և այլն:

Նուաղաձայն: (նախդրիւ հոլովի.) || նա՝ որոյ ձայնն է նուաղեալ. և կամ ունի զնուրբ կար և զանազան ձայն: Իսկ մինչ ասի զտառից, նշանակէ զնրբաձայնն. զի զայն, որ զնուրբ ձայն հանէ. ուպ տառս. զ. ձ. ն:

Նուաղեմ. եցի. եա. ել: (զօրութեամբ անցողական.) || տես ՚ի ներքոյ զՆուաղեցուցանել: ՚ի վերս հարցն. ժզ:

Նուաղեցուցանեմ. ցուցի. ցո. անել: (անցողական.) || թափել զոք ՚ի յուժոյ. կամ լքուցանել. կամ վհատեցուցանել. և կամ թալկացուցանել: Իսկ մերթ՝ հաշել և մաշել. կամ վատեցուցանել. կամ նիհարացուցանել, և կամ տկարացուցանել: ռամկ. փափկցնել: Մերթ և՝ նուաղեցուցանել. կամ պակասեցուցանել. և կամ սպառել: Խորէն. գ. պբ. 6. Իսկ մերթ՝ աղօտացուցանել. կամ նսեմացուցանել. և կամ մթացուցանել: Աղգաթ:

Նուաղիմ. եցայ. եաւ. իլ: (ձայնակր.) || թափիլ ՚ի յուժոյ և ՚ի զօրութենէ. կամ լուծեալ լքանիլ. կամ թալկանալ. կամ նքթիլ. և կամ ուշաթափ լինիլ: ռամկ. ոտքը թափիլ. կամ ծուրիլ: Սաղմ. 72. 26: և 76. 4: Աղաղ. 10. 20: ըստ այսմ է և Ծննդ. 47. 13. ուր ասի. Եւ նուաղեցաւ երկիրն եգիպտացւոց, զի ՚ի սովէն նքթեցան. կամ թալկացան մարդիկ երկրին եգիպտացւոց: Իսկ մերթ թուլանալ ՚ի սաստկութենէ. կամ անզօրանալ: ռամկ. թուլնալ. և ըստ այսմ ասի ՚ի շարականոցի. Աղեղըն հզօրաց նուաղեցան: Մերթ և հաշիլ. կամ ծիւրիլ. կամ վատիլ. և կամ տկարանալ ի տեսանելոյ. և ըստ այսմ ասի՝ նուաղիլ աչաց: Սաղմ. 68. 4: Եսայ. 38. 14: Ողբ. 4. 16: Երբեմն և աղօտանալ. կամ նսեմանալ. կամ մթանալ. և կամ խաւարիլ. ուպ մինչ ասի՝ արեգակն, կամ լուսաւորն նուաղեցաւ: Կիւրղի Եղիշ. ժզ: Իսկ մերթ նուաղիլ, կամ պակասիլ. կամ սակաւանալ. և կամ սպառիլ. ռամկ. պակսիլ. կամ հատնիլ. և ըստ այսմ ասի, նուաղիլ գետոց. կամ ջրոց, և կամ աւուրց: Ծննդ. 21. 15: Սաղմ. 89. 9: Եսայ. 19. 5: Եզեկ. 24. 10: կամ նուաղիլ ճշմարտութեան, կամ բազմութեան,

կմ՛ լռեալ: Սաղմ. 11. 2: և 106. 39: Յոբ. 29. 24: Սոփոնիա և Եբր. 2. 1. ուր ասի՝ մի՛ երբեք նուաղեսցուք, յն. զառածեսցուք. որ է պակասեսցուք յածայլն բանիցն:

Նուաճ. ի. իւ. ից. իւք: || Նուաճեալ. որ ՚ի ներքոյ իշխանութեան անկեալ. կմ՛ յաղթահարեալ. և կմ՛ ընկճեալ:

Նուաճեմ. եցի. եա. ել: (ներգործակ.) || բռնամբ ՚ի ներքոյ ձգել. կմ՛ ընդ իշխանութեամբ իւրով արկանել. կմ՛ ընկճել. կմ՛ յաղթահարել. կմ՛ հնազանդեցուցանել: Թուոց. 32. 22: 2. Մակ. 4. 9: Յոբ. 40. 23: Եւ յայսմանէ նուաճել ասի ածելն զոք ՚ի խոնարհութիւն. կմ՛ ՚ի հեզութիւն. և այլն. ըստ այնմ Լմբրոն. Զհպարտացեալն վարուցխոտովութեան նուաճել ՚ի խոնարհութիւն: Իսկ մերթ զսպել. կմ՛ սանձահարել. և կմ՛ ճնշել. Յակ. 3. 3: Մերթ եւս ընդ ձեռամբ ունել. կմ՛ գրաւել. կմ՛ յինքն ձգել. կմ՛ յանկուցանել. և կմ՛ յինքն ժողովել: 1. Մակ. 10. 52: 2. Մակ. 8. 1. և 6: 3. Մակ. 3. 13. և 15: ըստ այսմ է և ՚ի գիրս Լմբրոն. ուր ասի, նուաճէ զկամս մեր, որ յինքն ձգէ. կմ՛ նուաճեսցուք միով հոգւով առ հայր, որ ձգեսցուք:

Նուաճումն. թեան: || բռնամբ ՚ի ներքոյ արկումն. կմ՛ ընկճումն. կմ՛ յաղթահարութիւն. կմ՛ ածելն ի հնազանդութիւն. կմ՛ ՚ի խոնարհութիւն. և այլն: Եւ մերթ ստորակայութիւն. կմ՛ ստորադրութիւն. և կմ՛ ենթարկութիւն Նարեկ. ձ: Իսկ մերթ՝ զսպումն. կմ՛ սանձահարութիւն. և կմ՛ ճնշումն: Մերթ եւս ընդ ձեռամբ ունելն. կմ՛ գրաւումն. կմ՛ սեփականութիւն. և կմ՛ ստացուած: և ըստ այսմ է Եփես. 1. 14: Իսկ մերթ՝ յանկուցումն, կմ՛ ձգումն առ ինքն. կմ՛ յարումն. կմ՛ մատչումն: Եփես. 2. 18: և 3. 12: ըստ այսմ է և 2. Մակ. 14. 30. ուր ասի. Եւ զօրէն սորին նուաճումն, որ հանդերձ յայլատեսակ դիմօք վարելոյն էր և նուաճումն, այս է մատչումն և յարումն նկանօրայ առ յոյժ, ... ոչ ՚ի ներքոյ կրկնելով յայտ առնէ զայս:

Նուամ. ացի. ա. ալ: (չէզոք.) || մլաւել. որ է ձայն արձակելն կատուին. և ըստ այսմ ասի Հաղէկին իբրև զկուն. և նուամային ոչ կատու: ռամկ. մլաւ ընել:

Նուաստ. ի. իւ. ից. իւք: || խոնարհ. կամ տրուպ. կմ՛ կրտսեր. կմ՛ անարգ. և կամ չնչին: ռամկ. ցած:

Նուաստախոհ. ի. իւ. ից. իւք: || զնուաստ իրաց խորհող. կամ որոյ խորհուրդն է նուաստ և անարգ. կմ՛ ոկարամիտ. և կմ՛ տղայամիտ: Իսկ մերթ խոնարհամիտ. կմ՛ խոնարհաբարոյ: ...

Նուաստական. ի. աւ. աց. օք: || խոնարհական. կմ՛ կրտսերական. և կմ՛ անարգական. Նարեկ. ՚ի գովեստ ...:

Նուաստանամ. ացայ. ացիր. ալ: (ընդ. միջ.) || նուաստ լինել. կմ՛ խոնարհիլ. կմ՛ կրտսերանալ. կմ՛ ցածնուլ. և կմ՛ անարգ լինել: ՚ի նշուրհնոցի:

Նուաստացուցանեմ. ցուցի. ցո. անել: (ան ցող.) || նուաստ, կմ՛ նկուն առնել. կամ խոնարհեցուցանել. կմ՛ ցածուցանել. և կմ՛ անարգ յուցանել: Լմբրոն:

Նուաստութիւն. թեան: || նուաստ գոլն. կմ՛ յետնորդութիւն. կմ՛ կրտսերութիւն. կամ անարգութիւն. և կմ՛ խոնարհութիւն:

Նուարտան. ի. աւ. աց. օք: կմ՛ իւ. ից: || ծածկոյթ կազմեալ ՚ի կտաւոյ, կմ՛ ՚ի մազեղինաց, կմ՛ ՚ի մաշկաց, և կմ՛ ՚ի հրաշալեաց. զոր ՚ի վերայ իւրեք արկանելով, կմ՛ մածելով, և կմ՛ պատելով ծածկեն զնա, ռամկ. ծածկոց: Ելից. 26. 7: և 27. 3: Թուոց. 3. 26: և 4. 6. և 8: ըստ այսմ է և Թուոց. 16. 38. ուր ասէ. Արասցես զբուրվառս գրուանգս կուածոյս՝ նուարտանս սեղանոյն. քանզի հայեալ զնա մատուցին կը տանաւ ՚ի Թեթեւս լայնս. և նոքօք պատեցին զսեղանն ողջակիզաց ՚ի վր մատենոյ պատուհասոյն, որով պատեցեալ էր ՚ի կաղմին:

Նուէր. նուիրի. աւ. աց. օք: || ընծայ. կմ՛ պատարագ, զոր նուիրեն ումեք, կմ՛ քահանայի, և այլոց մեծամեծաց: Ծննդ. 35. 14: Ելից. 36. 3: Թուոց. 15. 10: Ըստ այսմ է և Եբր. 9. 2. ուր ասի՝ հաց նուիրաց. քանզի էր սա հացն առաջաւորութեան. որ ը. բռամ նուիրիւր ում՝ կոչիւր հաց նուիրաց: Ոչ և երբեմն, կմ՛ երբաւծն անուանոց ըստ որում որոշիւր ՚ի գործոց առ ՚ի նուիրումն, կոչիւր՝ երբաւծ, կմ՛ երբ նուէրի, կմ՛ նուէր բաց: Ելից. 29. 27: Ղեւտ. 7. 34: և 10. 14: Բայց 3. Թագ. 14. 24: և 15. 12. յորում ասի զնուէրս նուէրքեղոյն յերկրին. կմ՛ երբայ զնուէրս յերկրէն, նշանակեն կադեսիմն, որով անուանէ ՚ի գիրս զնա, որք նուիրեալ զանձինս իւրեանց ախորժակեալ, կմ՛ տարրայ, և կմ՛ բաղհաղու, և այլոց կուռ առ ՚ի պատրապել գարշ շաղաշարութեց, յորոց ոմանք էին էգք, և ոմանք կզացեալք: Սոքա ունէին զտունս յանտառս և ՚ի գա րատանս. ուր և երբեմն առ ժամանակք կռապաշտութեան ՚ի սրահի տան տն, ուր ձգեալ զառագաստս. և զգեցեալ զգեստ մուճակս սահմանեալս առ այս գործ, մե տանէին. և ՚ի ծածուկ խաղանդին: 4. Թագ. 23. 7: տես և զկադեսիմս ՚ի բառա րանի յատուկ անուանց:

Նուիրակ: || տես ՚ի ներքոյ զՆուիրակ:

Նուիրակ. նուիրակի. աւ. աց. օք: || Նուիրակ, որ է բեր նարօյս բանիցար ինչ, որ բնութեն լինի ՚ի զեհամ. կծող, և գաղճ. ունի զաւերելոյն պարարտ, փայլուն, և երկճղի ծայրին իւ րև դեղեղու օձի. ուտի և առաջերէն կոչի Նըլուռ Եաւսպէ: Զայս բանիցար ըստ մեծի մասին ժողովեալ չորացուցանեն. և առ այս խարշեալ քամեն զջուրն, որով դառ նութեանն թափին, և լինի ուտելի:

Նուիրաբեր. ի. աւ. աց. օք: || բերող կամ մատուցանող նուիրաց. կմ՛ ընծայաբեր. և կմ՛ պատարագաբեր: Ելից. 36. 3:

Նուիրագործ. ի. աւ. աց. օք: || սանող զնուիրումն. կամ նուիրող. կամ ըն-

ծայօղ. և կամ մատուցանօղ:

Նուիրագործեմ. եցի. եա՛. ել: (Ներգործ.) || տանել զնուիրումն. կմ՛ նուիրել. և կմ՛ զպատարագ մատուցանել: Լամբրոն:

Նուիրագործութիւն. թեան: || գործ նուիրելոյ. կմ՛ նուիրումն. կմ՛ ընծայումն, և կմ՛ մատուցումն: Լամբրոն:

Նուիրակ. ի. աւ. աց. օք: || Նուիրօղ. կամ ընծայօղ. և կմ՛ նուէր և ընծայ: Նարէկ. 'ի գով. տուփ: Իսկ մասնաւորապէս առեալ նշանակէ առաւել պատգամաբերն, կմ՛ հրեշտակն, որ առաքի 'ի պետաց, կամ 'ի մեծամեծաց առ թագաւորութիւն ինչ, կմ՛ առ անձն ոք՝ հոգալ ինչ 'ի դիմաց նց, կմ՛ զպատգամս նոցին մատուցանել և նուիրել անձնցին, առ որս առաքի, յորմէ և կոչեցաւ նուիրակ, իբր թէ նուիրօղ պատգամաց. որպիսիք են դեսպանք թագաւորաց, կմ՛ քահանայապետաց. կմ՛ այսպաստ_ ւորք գաւառաւորաց, և այլոց բազմաց: ռամկ. էլչի. կմ՛ խօսք տանօղ բերօղ. կմ՛ ճահ սէօր: Գործ. 16. 35. և 38: Մերթ ևս նուիրակ կոչին սուրհանդակքն, որք առաջի թագաւորաց ընթանան, կմ՛ առաքեն ու_ րեք հասուցանել շտապով զհրովարտակս, կմ՛ զպատգամս: ռամկ. չափէր:

Նուիրական. ի. աւ. աց. օք: || այն ամ՛, որ վերաբերի առ նուէրս, կմ՛ զոր արժան է նուիրելոյ. կմ՛ նուիրելի. և կմ՛ նուիրեալ և օրհնեալ. որպիսիք էին 'ի հնումն անասունքն արուք կատարեալք, և անարատք: Նարէկ. 'ի գով. տուփ: Եւ յայտնա_ նէ առեալ՝ նուիրական կոչի ։ և իցէ սրբազան իր, որպիսիք էին 'ի հնումն եղջեւրեայ փողքն, զորս հարկանէին 'ի յոբելեական ամին. ուստի և կոչիւր փող յոբելեանի, կմ՛ առակ յոբելեան: Յեսու 6. 3. և 4. և 8. և 13:

Նուիրակատար: (Նախդրիւ հոլովի.) || կատարօղ նուիրաց. կմ՛ նուիրօղ. և կմ՛ պատարագօղ: Լամբրոն:

Նուիրան. ի. աւ. աց. օք: || Նուիրումն. կմ՛ ընծայումն. կմ՛ նուէր. և կմ՛ պատարագ: Նարէկ. հն: Սոյնպէս և եկեղեցին՝ յորում է տուն նուիրման պատարագաց, կոչի՝ յարկ նուիրանաց: 'ի ճառընտիր:

Նուիրանոց. ի. աւ. աց. օք: || անօթ, յորում եդեալ զնուէրս՝ ընծայեն ումեք. և ըստ այսմ առ հրէայս՝ նուիրանոց կոչէին ըմպանակն. կմ՛ սկիհն, և կմ՛ այլ ինչ անօթ նման սոցա, յորում նուիրէին այ զգինի. զձէթ, և զարիւն զոհից՝ հեղլով զնա առ եղջերբ սեղանոյն 'ի պատարագն: Ելից. 25. 29: և 37. 16: Թուոց. 4. 7: 1. Մնաց. 28. 17: Ուստի փոխանակ սափորա_ բեմն եդեալ լինի 'ի յանձնաշունչ գիրս ըն_ կէց. ոմ 1. Մակ. 1. 23:

Նուիրապետ. ի. աւ. աց. օք: || պետ նուիրագործութեան. կմ՛ գլխաւոր պաշտօնեայ նուիրելոյ զընծայս. կմ՛ զպատարագս, որ պիտի է 'ի նորումս քահանայապետն, կմ՛ եպիսկոպոսն: Իսկ մերթ պետ նուիրա_ կաց. կամ գլխաւոր նուիրակ:

Նուիրատու. տուի. աւ. աց. օք: || տուօղ նուիրաց. կմ՛ ընծայից. և կմ՛ պատարագաց: Շնորհալին:

Նուիրեմ. եցի. եա՛. ել: (Ներգործ.) || ձօնել. կմ՛ ընծայել. կմ՛ պատարագել. և կմ՛ մատուցանել զինչ այ 'ի նուէր. որով լինի իրն սրբ, կմ՛ սրբազան: Ծնն. 35. 14: Ելից. 25. 29: և 29. 24: Եւ յայտնանէ առեալ նուիրել՝ առաւել մատնելն սրբոյն պօղոսի 'ի մահ. զոր ուրեմն նուիրեալ ընծայեաց այ 'ի նուէր: Փիլիպ. 2. 17: և 2. Տիմ. 4. 6: Սոյնպէս և որդիքն իէլի ասացին նուիրել բելփեգովրայ, որ էր կուռք զազրագործութե, ըստ որում մատուցին նմա զանձինս իւրեանց 'ի պաշտօնեայս, և 'ի ծառայս՝ պարապել գարշ խառնակութեց ըստ պղծալից օրինաց նց. վն որոյ և այսպիսիքս կոչեցեալ լինէին կադէշիմք, որ թարգմանի նուիրեալք. կմ՛ նուէրք: Թուոց. 25. 3. և 5: Դրձլ՝ երբեմն նշանակէ սոսկ աւանդել. կմ՛ արկանել. և կմ՛ մատնել. և ըստ այսմ ա_ սի, նուիրել զոք մահու. կմ՛ տանջանաց. կմ՛ 'ի բերան առիւծու. կմ՛ 'ի սուր. և կմ՛ յաշխատանս. և այլն: Նարէկ. խբ:

Նուիրումն. ման. մամբ. մանց. մամբք: || գործ նուիրելոյ, որ է ընծայումն. կամ մատուցումն: Նարէկ. խդ:

Նուկի. նուկեայ. եաւ. եաց. եօք: || է չափ ծանրութե, որ պարունակէ զերկուհա_ րիւր տրամս, որ է կէս հօխայ:

Նում: || տես 'ի բառն նայր:

Նումիզմանակ. ի. աւ. աց. օք: || Նախագըլուխ. կմ՛ գահերէց. և կմ՛ նախարար:

Նունուֆար. կմ՛ նօնուֆար. ի. աւ. աց. օք: || է բառ արաբական. որով նշանակի հասարակ ծաղիկ ինչ գնտագլուխ. որ ունի տերեւս մեծ և բոլորակ. բուսանի 'ի ջուրս ափանց գետոց՝ և լճից, և յաղտաղտուկս: Ոմանք 'ի սոցանէ լինին դեղին. և ոմանք կապուտակ: տաճկերէն նիլուֆէր ըինէի: Դրձլ՝ նունուֆար կոչի՝ յակինթ ծաղիկն. որ ունի զբազում մանրիկ գլուխս շուշանաձեւս նման հորուստ ծաղկան, յորոց ոմանք լինին կապուտակ. և ոմանք սպիտակ: տաճկերէն սիւմպիւլ:

Նուշ. նշոյ. ով. ոց. ովք: || պտուղ նշենւոյ. որ է ազգ ինչ կաղնոյ, որոյ միջին է քաղցր իբրև զկորիզ ծիրանոյ: որ և ռամկ. պատ՝ նուշ. և տաճկերէն պատէմ:

Նուռն. նռան. ամբ. անց. ամբք: || է գեղեցիկ պտուղ ինչ գնտակակերպ, և կարմրակեղև. որ ունի 'ի մէջ իւր զբազում հատս գեղեցկաշարս. և թթուանթթուա_ նեալս: ռամկ. նառ: Թուոց. 13. 24: Երգ. 6. 6:

Նուախայ. ի. իւ. եց. իւք: || է բառ տրա_ բացւոց, որով նշանակի զաղափարն, կմ՛ օրինակն, որ եդեալ լինի առաջի աչաց, զի հայելով 'ի նա՝ ըստ այնմ օրինակեսցեն զինչ: Սոյնպէս նուախայ կոչին գըրուածքն, յորս գրի կերպն կազմելոյ զինչ. կմ՛ կանոնն դարմանելոյ իմիք, որպէս է

թուղթն՝ զոր առոյ բժիշկն՝ գրելով 'ի նմա դանուած դեղորէից, կամ զկերպ կառավարելոյ զհիւանդն ։

Նուախսայատակես ։ (Մակբայ.) || Իբրև ըղ նուախսայ. կամ հանգոյն նուախսայի. և կամ ըստ զկանոն. ըստ այնմ Ցծ. ոտէ. Սա ոչ գիտնոց այլ տաղաչափակես. մանկանց առնել նուախսայատակես ։

Նուրադէն. կամ նուրադեն ։ (Նախդրիւ հոլովի.) || Ծագի առ յայլազգական բառէս նուր, որ է լոյս, և յանուանէս դին, կամ դեն, որ է հաւատ. ուստի բառիւս նուրադին, կամ նուրադեն նշանակի լուսահաւատն, քրիստոնեայ լուսաւոր հաւատոյ, կամ որոյ հաւատն է իբրև զլոյս, գոլով անուանեալ հեռի 'ի մոլորութեանց. որպիսին է ուղղափառ քրիստոնէութիւն ։

Նուրբ. նրբի. կամ ոյ. իւ. եց. իւք ։ || Բարակ. կամ անօսր. և կամ անգայտ. որպէս հակադրի ստուարին. կամ թանձրին ։ և ըստ այսմ ասի՝ նուրբ փայտ. կամ ասեղ. նուրբ աղիւք. կամ օդ. և այլն ։ Իսկ մերթ նեղ. կամ անձուկ. և ըստ այսմ ասի՝ նուրբ ճանապարհ. կամ անցք ։ Մծբն. ժթ ։ Մերթ և սուր. այն՝ որ վս նրբութեան, կամ անմարմնութեան թափանցէ՝ 'ի խորս իրին, կամ ընդմիմանէ ընդ նմ. որպէս ասի՝ նուրբ հոգի. կամ միտք ։ Իմաստ. 7. 22. և 23 ։ Լամբրն ։ Մերթ և խրթին. կամ խորին, կամ մթին. և ըստ այսմ ասի՝ նուրբ խորհուրդ. կամ բան ։ Նուրբ խնդիր. կամ նկարագիր ։ Նարեկ. խրատ. և Լամբրոն ։ Բայց մինչ ասի զաստուծոյ՝ նշանակէ զբարւոք հնչումն ուսմանց. որպէս առ. Դ. Ծ. Ա ։ Իսկ մերթ վարի իբրև գոյական, և նշանակէ նրբութի. կամ խրթնութիւն. կամ սուր բանիւ. և կամ համառօտիւ ։ Ոսկէ. Ա. հափ. ի՞ ։

Նոցանք. նոցունց. նոցանց ։ || Է յոգնական գերանուանս նա՝ որ երբեմն 'ի գործածի 'ի բանաստեղծից. և նշանակէ՝ նոքա. կամ նոքին ։ Իսկ մերթ նոցայինք. այն՝ այնք, որք նոցա են. կամ առ նո վերաբերին ։

Նոքինեք ։ || Է գործիականն յոգնական գերանուանս նոքա. և նշանակէ նոքօք, կամ այնոքիւք ։ Իմաստ. 11. 6 ։ Եզեկի. 33. 16 ։

Նոքումբք ։ || Է գործիականն յոգնական գերանուանս նոքա, և նշանակէ նոքօք, կամ նոքիմբք ։

Ն, Պ

Նպաստ. ի. իւ. եց. իւք ։ || օգնութիւն. կամ յաջողութիւն. կամ գործակցութիւն. կամ օգուտ. և կամ շահ. Երեմ. 41. 7 ։ Գործ. 18. 27 ։ Ոսկէ. 'ի Նախերգանս ։ Իսկ մերթ Նպաստաւոր, զոր տեսցես 'ի նմանս ։ Մերթ և ընծայ. կամ պարգև. կամ ձիրք ։ և ըստ այսմ ասի. Մծբն. ժթ. զբազմականաց հարստութեանց. Պատարագանեցեն զօժիտս՝ և ըզ նպաստս ։ Տաւմկօր. Բերենէ. կամ տուրք ։ Եւ մերթ ընդ բայի շարակցի այսպէս ։ Նպաստ մատուցանել. և նշանակէ՝ նպաստաւոր լինել. զոր տեսցես զկնի ։ Կիւրղի Եղէկի. Ա ։

Նպաստամատոյց ։ (Նախդրիւ հոլովի.) || զնպաստ մատուցանօղ. կամ նպաստաւոր. և կամ օգնիչ ։ Կիւրղի Եղէկի. Բ ։ Իսկ մերթ ընծայատուր. կամ նուէրաբեր. կամ պարգևատու ։

Նպաստաւոր. ի. աւ. աց. օք ։ || Նպաստող. այն օժանդակ. կամ ձեռնտու. կամ օգնական. կամ գործակից. կամ զօրացուցիչ. և կամ օգուտ և շահ տուօղ ։ Իմաստ. 5. 8 ։ Նարեկ. ղղ ։ Իսկ մերթ՝ զընծայս, կամ զօժիտս տուօղ ։

Նպաստաւորեմ. եցի. եա. ել ։ (Ներգործ. և մերթ չեզոք.) || Նպաստաւոր լինել. այն օգնել. կամ օժանդակել. կամ ձեռնտու լինել. կամ գործակցել. և կամ օգնել ։ Եւ յայս մանէ առնել երբեմն զնի փոփոխման կամ զուգելոյ. կամ հաստատելոյ. ըստ այնմ. Ոսկէ. 1. հափ. ի՞. Զայն և առ նպաստաւորել կամեցաւ. այն յօժարեցաւ հաստատել ։ Իսկ մերթ նշանակէ զընծայս առ կամ զնուէրս մատուցանել ։ Նարեկ. ղղ ։

Նպաստաւորիմ. եցայ. եաց. իլ ։ (Ձայնակր.) || Նպաստաւոր լինել. կամ նպաստ մատուցանել. կամ օգնել ։ Իսկ մերթ ընծայել զընծայս. կամ մատուցանել զնուէրս. և ըստ այսմ է 2. Եզր. 2. 68. ուր ասի. Եւ 'ի խանիք նախահարանց նպաստաւորեցան 'ի տուն տն, այն մատուցին զընծայս 'ի տաճարն ։ որպէս երևի 'ի 29. համարէն ։

Նպաստաւորութիւն. թեան ։ || օժանդակութիւն. կամ օգնութիւն. կամ ձեռնտուութիւն. կամ գործակցութիւն. կամ զօրացուցումն. և կամ յառաջացուցումն իրիք գործոյ. ըստ այնմ. Եւսեբ. ։ 1. Եզր. 5. 45 ։ և 6. 29 ։ Նարեկ. 'ի փի նաւէ երգոց ։ Իսկ մերթ ընծայ. կամ նուէր. և կամ պարգև ։ 1. Եզր. 8. 15 ։

Նպաստեմ. եցի. եա. ել ։ || տե՛ս զՆպաստաւորել ։

Նպատակ. ի. աւ. աց. օք ։ || նշաւակ. այն նշան. կամ տեղի նշանաւորեալ. ուր գիտի նետաձիգն ձգել զնետն ։ Իմաստ. 5. 12. և 22 ։ Ողբ. 3. 12 ։ Եւ յայսմանէ առնուլ նը շանակէ զի և իցէ վախճան. կամ սահման, և կամ առաջի եդեալ կէտ. յորս ուղղին գի և կամ տառապութիւնք. կամ գործողութիւնք, և կամ ընթացք մարդկան իբրև 'ի նպատակ ։ Նարեկ. Կ ։ և Լամբրոն ։ Մերթ և նշանակէ զա ղաւաղար. կամ օրինակ, որ գնի առաջի ուսուցանելի. իբրև զհայելի ։ Նարեկ. 'ի գովէ խաչի ։ Իսկ մերթ նպատակ կոչի յաղթանակի. կամ բարեկիրն. ըստ որում է վախճան բարի և յաղթութեան ։ Աէգտ. ։

Նպար. ի. իւ. եց. իւք ։ | պաշար. կամ կեր. ակուրկերակուր ։

Նպարակ. ի. աւ. աց. օք ։ | պաշար. կամ ճանապարհի. և կամ կերակրեղէնք. զորս ճանապարհորդք բառնան ընդ ինքեանս ի ճանապարհի ։ Տաւմկօրէն Զաւէրտ Ազիայ ։ Երեմ. 40. 5 ։

Նպարակուտոր. ի. աւ. աց. օք ։ || առնօղ ըզ նպա-

նպարակս, յիբրաձող 'ի վե՛ր լեր զողաշարս ճանապարհի. որպէս, զհաց, կամ զայլ կերակս: Ծննդ. 45. 23:

Նպարավաճառ. ի. աւ. աց. օք: || վաճառող նպարաց. որով նշանակի նա, որ վաճառէ 'ի կրպակի զցամաք կերակրեղէնս, կամ զչոր պտղեղէնս, եւ զայլս նմանս: ռամկ. բախալ:

Նպարեմ. եցի. եա. ել: (ներգործ.) || Նըպարս տալով մնուցանել, կամ կերակրել:

ՆՌ

Նռնագոյն. գունի. ից. ից. իւք: || ունող զգոյն նռան. կամ կարմիր եւ գեղեցիկ երբեւ գունոյն:

Նռնակերպ: (նախդրիւ հոլովի.) || ունող զկերպ, կամ զնմանութիւն նռան. եւ կամ որ է երբեւ գունոյն:

Նռնաձեւ. ի. ից. ից. իւք. կամ աց. օք: || այն ձեւ, որ ունի զձեւ, եւ զնմանութիւն նռան, եւ կամ նռնակերպ: Ելից. 28. 34: Իսկ մերթ նշանակէ զյօրինուածս, կամ զկազմուածս ձեւացեալս երբեւ գունոյն: Ելից. 28. 33: եւ 39. 24: 3. Թագ. 7. 18. եւ 42:

Նռնենի. նեայ. եաւ. եաց. եօք: || ծառ որ բերէ զնուռն: ռամկ. նառի ծառ: Թուոց. 20. 5: Երգ. 6. 10: Եզեկ. 19. 10:

ՆՍ

Նսեմ. ի. ից. կամ աց. ից. իւք: || աղօտ. կամ մթին. կամ խաւարին: Իսկ մերթ՝ մութն. կամ մայլ. եւ կամ խաւար: Ըստ այսմ. Խորեն. Բ. գլ. 43. Նսեմաւ 'ի վե՛ր դիտականցն բանակելին. յի մթով գիշերին:

Նսեմական. ի. աւ. աց. օք: || այն՝ որ է աղօտ. կամ մթային. եւ կամ խաւարային: Յհ. տեղի:

Նսեմանամ. ացայ. ցեր. ալ: (ընդմիջ.) || մթանալ. կամ աղօտանալ. կամ խաւարիլ. եւ կամ խաւարաւ եւ միգով պատիլ: Միք. 3. 6: Յօհ. 6. 17:

Նսեմանուն: (նախդրիւ հոլովի.) || ունող զնսեմ անուն. կամ որոյ անունն խաւար է: Նարեկ. 'ի գովեստ առաքելոցն: Իսկ մերթ այն, որ ունի զանարգ անուն:

Նսեմատեսեր: (նախդրիւ հոլովի.) || Նսեմ ացեալ տեսերաւ. կամ խաւարային. եւ կամ աղջամղջին: Նարեկ. ղդ:

Նսեմացուցանեմ. ցուցի. ցո. ել: (անցող.) || մթացուցանել. կամ աղօտացուցանել. կամ խաւարեցուցանել. եւ կամ միգամած առնել: 'ի Շարակնոցի:

Նստարան. ի. աւ. աց. օք: || տեղի նստելոյ. կամ աթոռ. եւ կամ գահ: ռամկօր. օթուրախ:

Նստիմ: նստայ. նիստ. իլ: (ձայնակր.) || բազմիլ 'ի վե՛ր երկրի. կամ 'ի վե՛ր նստարանի իրիք, որ եւ ռամկ. ասի՝ նստիլ: Ծննդ. 43. 33: Եւ յայնմանէ հետեւեալն 'ի գրաստս, նստիլ ասի, Մատթ. 21:7: Իսկ մերթ բնակիլ. կամ բնակել. եւ կամ կալ եւ մնալ ուրեք: 2. Օրէ. 1. 46: 2. Թագ. 11. 1: Ղուկ. 24. 48: Մերթ եւս դադարել. կամ հանգչել. եւ կամ զկայ առնուլ: ռամկ. խօնմիշ ըլլալ: Գործ. 2. 3:

Նստոյ տեղի. ղւոյ. ւոջ. եաւ. եաց. եօք: || երդատան: եւ ասացաւ նստոյ տեղի. ըստ որում այնու մասամբ նստին 'ի նստարանս: Ահգաբ:

Նստուցանեմ. ուցի. ո. ել: (անցող.) || բազմեցուցանել. կամ հեծուցանել: ռամկ. նստեցնել: 3. Թագ. 21. 9. եւ 12: Իսկ մերթ դադարեցուցանել. կամ լռեցուցանել. եւ կամ հանդարտեցուցանել. Ըստ այսմ. Ոսկ. 2. հռով. ժե. Վ՛ս որոյ հարկ է անդրէն զբանս նստուցանել: Իսկ մերթ՝ զիջուցանել. կամ ցածուցանել. եւ կամ խոնարհեցուցանել. ըստ այսմ 'ի գիրս պիտոյից, ոչ է պարտ 'ի խոնարհագոյնն նստուցանել զմիտսն: Մերթ եւս բանակեցուցանել. կամ բնակեցուցանել զոմն ուրեք:

ՆՐ

Նրան. ի. աւ. աց. օք: || լայնաբերան սուր. կամ վաղակաւոր. եւ կամ սուսեր: ռամկ. սաբըր. կամ թուր: 'ի հին պատմագիրս:

Նրբաբան. ի. ից. ից. օք: || նա՝ որոյ բանքն են նուրբ, եւ խորին. եւ կամ որ նրբութեամբ խօսի:

Նրբաբար: (մակբ.) || նուրբ կերպիւ. կամ նրբուն: Իսկ մերթ՝ մեղմով. կամ հնարիւք. ռամկօր. կամացուկ. կամ [illegible]. ըստ այսմ Մծբն. Ժթ. նրբաբար մտանէ ընդ որդիս մարդկան:

Նրբախոյզն: (նախդրիւ հոլովի.) || նրբութեամբ կամ 'ի խորս թափանցելով զննող. կամ մանրամասնաբար քննող: Իսկ մերթ նրբութեամբ զննեցեալ. կամ նուրբ քննելի. կամ սաստիկ խրթին, եւ խորին, որում հազիւ կարէ ոք նրբաբար զննելով հասու լինել:

Նրբախօս. ի. ից. ից. իւք: || տես զնրբաբան: 'ի վարս հարց. Է:

Նրբական. ի. աւ. աց. օք: || այն ձեւ, որ վերաբերի առ նուրբս. կամ նրբին. եւ կամ անտեսական: Իսկ մերթ՝ անձկական. կամ այն, որ է նեղ եւ անձուկ. եւ ըստ այսմ ասի նրբական հետք, կամ ճանապարհ: Նարեկ. ղէ:

Նրբահայեաց. եցի. աւ. աց. օք: || նրբութեամբ հայեցող. կամ նկատող. կամ զնուրբս եւ զխորինս քննող եւ տեսանող. կամ սրատես. եւ կամ սրամիտ:

Նրբաձայն. ի. ից. ից. իւք: || ունող զնուրբ ձայն. կամ նա՝ որոյ բարբառն է բարակ եւ նուաղ: ռամկ. բարակ ձայն ունող: Ելից. 4. 10: եւ 6. 30:

Նրբանամ. ացայ. ցեր. ալ: (ընդմիջ.) || տես զնրբիլ:

Նրբաշար. ի. ից. ից. իւք: || 'ի նուրբ թելս շարեցեալ: Իսկ մերթ ունող զնուրբ շարս. կամ որ է նրբութեամբ շարեցեալ, կամ շարադրեցեալ. եւ ըստ այսմ ասի՝ նրբաշար բան: Բայց երբեմն ասի զմտաց. յորոյ վե՛ր անցուցեալ շարն է նուրբ:

Digitized by Google

Նրբափողոց. ի. աւ. աց. օք: || ուռօղ գետղոց նուրբ. ք անձուկ. կմ որոյ անցքն է նեղ. և Ը այսմ ամի նրբափողոց գաւեհ. կմ պողոտայ: ռամկ. նեղ սօխախ ուռօղ:

Նրբաքննին: || տե՛ս զՆրբաքննին:

Նրբենի. նւոյ. եաւ. եաց. եօք: || Նրբական. կմ նրբացեալ. և կմ նուրբ և անօսր:

Նրբիմ. եցայ. եա՛ց. իլ: (ձայնակր.) || Նուրբ լինել. կմ նրբանալ. կմ անօսրանալ: ռամկ. բարկընալ: Իսկ մերթ զնրբութն միայ 'ի գործածել. և կմ նրբաբանութբ վարել:

Նրբիմաց. ի. իւ.ից. իւք: || Նրբամիտ իմացօղ. կմ նրբահայեաց. կմ սրամիտ: Իսկ մերթ ամի զիրաց, կմ զբանից. որք նուրբ մտօք իմացեալ լինին. կմ որք դժուարալուծք, և խրթինք են առ 'ի իմանալ:

Նրբին: (նախդրիւ հոլովի.) || Նրբական. կմ նուրբ. կմ դժուարիմաց. կմ խրթին:

Նրբութի. թե: || բարակութն. կմ անօսրութն. կմ անգայտութն: Իսկ մերթ՝ նրբահայեցութն. կմ սրութն. կմ խորութն. կմ խրթնութն. և կմ մթութն. ոպ մինչ ասի՝ նրբութն խորհրդոց. կմ աստուածածնոց. կմ միտաց. և այլն: Նաւուխ. զե: և Լամբրոն:

Նրեան: || տե՛ս զՆրեան:

ՆՔ

Նքթեցուցանեմ. ցուցի. ցո. ցանել: (անցող.) || անսուաղ, կմ քաղցեալ պահելով նուաղեցուցանել. կմ թալկացուցանել. և կմ լքուցանել:

Նքթի. թւոյ. եաւ. եաց. եօք: || նքթեալ. կմ 'ի քաղցու նուաղեալ. կմ թալկացեալ:

Նքթիմ. եցայ. եա. իլ: (ձայնակր.) || յանսուաղութէ. կմ 'ի քաղցու նուաղիլ. կմ թալկանալ. և կմ անզօրանալ. և լքանիլ: ռամկ. յանօթութէն մարմրիլ, կամ սիրտը մարիլ: Ծնն. 25. 29. և 30: Մատթ. 15. 32: Մարկ. 8. 3:

Նքողիմ. եցայ. եա՛ց. իլ: (ձայնակր.) || նոյն է ընդ վերնոյն: Թւոց. 11. 6: և 1. Թագ. 30. 13:

Նքողեցուցանեմ. ցուցի. ցո. անել: (անցող.) || տե՛ս զՆքթեցուցանել:

ՆՕ

Նօթ. ի. իւ. ից. իւք: || Է աղնիւ և ընտիր տեսակ ինչ սուրբի, կամ կարմիր ներկոյ, որ ելանէ յերկրէ իբրև զկոշտս հողոյ. նշենկի սոլաւ և ընտիր ներկ ինչ կարմրագոյն, որ գտանի 'ի բոլս արծաթոյ ընդ մետկի, ք ընդ ձիւծայի, զոր հանեալ իբրև զաճառ կարմիր, լաւեն մանր, և ողողեն յամանի, որով ողոշեալ 'ի կղկղանաց սուզի 'ի յատակ անօթոյն. ռամկ. սինճիրֆ, կամ սիւլիւմէն: Սա 'ի հնումն կոչիւր 'ի կատապաշտից դոյն դեղ, զի խառնեալ ընդ սպիտակի՝ ներկէին նովաւ զդէմս պատկերին արամադիպայ, որով վարդագոյն՝ և լիր կենդանի երևէր. վն որոյ զներկս զայս որբազան համարեալ, օծանէին սովաւ զյաղթօղ մարտիկան, զի զօրացին 'ի պատերազմ. ոպ նաև յաձախ նկարէին այսու զտաճարս, զապարանս, կմ զնաւս, և զայլինչ մանս: Յայսմանէ մոլորեալ և յանկեալ ապքայ յուդայ նկարեաց նօթիւ զվերատուն իւր հովանոց. վն որոյ և յանդիմանեցաւ: Երեմ. 22. 14: Իսկ, նօթ կոչիւ պակէնման նիւթն, որով յօրինեն 'ի մի արծաթեղինաց և ոսկեղինաց զկերտուածս, ք զմինէ: Երբեմն և նշենակի սոլաւնութն, որ 'ի վերոյ մեկնեցաւ:

Նօթի. թւոյ. եաւ. եաց. եօք: || անսուաղ. կմ սովեալ. և կմ քաղցեալ: ռամկ. անօթի: 1. Մակ. 3. 17: Մատթ. 15. 32: Մարկ. 8. 3:

Նօթձեմ. կմ նաւթձեմ. եցի. եա, ել: (ներգործ.) || գուշակել. կմ ծանուցանել. կմ քարոզել. կմ աւետարանել. և կմ խրատանել: Լամբրոն: Իսկ մերթ՝ ազդել. կմ ներգործել. կմ տածել. և կմ դարմանել. Ը այսմ Լամբրոն. Եւ յետ գոյութեն դարձեալ նովին խնամօքն նաւթձէ:

Նօմիկոս: || տե՛ս զՆոմիկոս: 'ի վերոյ հոլ. ժզ:

Նօնուփար: || տես զՆունուփար:

Նօսր. սեր. սերբ. սերց. սերբք: || նուրբ. կմ անդայտ. կմ բարակ: Բայց աս մանաւանդ յաշխարհաբառ լեզուիդ 'ի գործածի. զի գրոց լեզուաւ անօսր կոչի:

Նօտար. ի. աւ. աց. օք: || Է բառ լատինկան, որ ծագի առ նն 'ի նշանագրելոյ. և նշանակէ զքարտուղարն. կմ զգրագիրն, որ զասացեալսն յայլոց արագ արագ 'ի ձեռն պէսպէս նշանագրաց, կմ համառօտ գրուածոց ընդ գրով արկանէ: Եւ յապմանէ առեալ նօտար, յորջորջին սև եկեղեցական գիրք հասարակաց. կմ քարտուղարք իշխանաց, դատաւորաց. քահանայապետից, և այլոց նմանեաց, որք զբանս հրամայելոյ 'ի նոցանէ գրեն: Ուստի և դպիրք որք կարգեալ քեն արքունի հրամանաւ գրել զմուրհակս, կմ զկտակս, նօտար անուանին: ռամկ. խաւճէ:

Նօտարեմ. եցի. եա. ել: (ներգործ.) || ըն գրագրութն առնել. կմ գրել զնօտարկան գիր. և կմ գծագրել զնոյն իսկ իր:

Նօտոս. կմ նոտոս. ի. իւ: || է հողմ ինչ հարաւային, զորմէ լեառպէս տասցու 'ի մեկնութե եւրանօտոս բառին:

Նօտր. տրի. իւ. ից. իւք: || է մին 'ի հնգից տեսակաց գրոց, որ դիւրին է 'ի գրել քան զմն տեսակս տառից. ուստի համարակօրէն սովաւ վարին սուսեմասերք, որպիսիք են ռոքա. ռ. բ. գ. դ. և այլն:

Շ.

Շ. Է մին 'ի բաղաձայն տառից, որ և կոչի կիսաձայն. վն զի 'ի միոյ Նակ արտաքերելն սկըզբնաւորէ զկիսատ, և զանկատար հըն չումն ինչ. որպիսիք են և սոքա. զ. ժ. խ. ս. և այլն։

Արդ՝ պատու զայս ատամնաձայն՝ ... որ արտաքերի ընդ մէջ ատամանց. ոպ և սէն։ Իսկ 'ի յատուգանական արտաձայնի ըստ հագագին է առակ. ք Ներքաձայն. ոպ են և սոքա. Ծ. ս. տ. և այլն։

Դրձլ՝ կոչի սա և կրկնակ. ըստ որում ունի զզօրութիւն կրկին տառից, ք երկուց սէից։ Եւ են սա՝ անուանի լծորդ. զի ունի զլծակցութիւն, ք զմերձաւորութիւն ձայնի ը տառից. ս. և չ. և մանաւանդ ը սէին. ը որում և բազում անգամ փոխադրի. զոր օրինակ. սատախձան. և շատախձան։ սատախձանաւոր, և շատախձանաւոր։ սատուած, և շատուած։ Իսկ յայսմանէ յաշխարհաբառ լեզուէս սեամն արտաքերի շէմ. և Ներհակաբար շամչն՝ սամչ։ Սոյնպէս համդիպի և յայլազգական բառս. զոր օրինակ. սաւառ. և շաւառ։ սարուհեայ. և շարուհեայ։ սեղով. և շեղով։ սիմոն. և շիմոն. կմ շմաւոն։ Բայց երբեմն փոխադրի Նաև ընդ տառին՝ ժ. որգոն աժդահակ. և աշդահակ։ աժխոյժ. և աշխոյժ։ Նժդեհ. և Նշդեհ։ Նժդեհել. և Նշդեհել։ Մերթ և ս ընդ տառին՝ ց. զոր օրինակ. վեց. և վեշ։ վեցատասն. և վեշտասան։ վեցապատիկ. և վեշապատիկ։

Դարձեալ՝ է սա և Նշան համարողական. վն զի միշտ ունի 'ի վերայ իւր զպատիւ այսպէս. Շ՛. Նշանակէ զհինգհարիւր։

ՇԱ.

Շաբաթ. ու. 'ի շաբաթէ. ու. ուց. ուք։ Ձ|| Է բառ եբրայական. որ թարգմանի. հանգիստ. և կամ դադարումն 'ի գործոյ. և ըստ այսմ անվար. և անգործ մնալն երկրի, կմ դատարկութիւն նր 'ի բնակչաց, կոչի շաբաթ նր։ Ղևտ. 26. 34։ 2. Մնաց. 36. 21։ Իսկ մասնաւորապէս առեալ Նշանակի առաւ եօթներորդ օրն իւրաքանչիւր եօթնեկաց, զոր հրամայեաց ած եբրայեցւոց սրբել. ք ոչ առնել զնա՝ դադարելով յամ ծառայական գործոց։ Ելից. 20. 8։ և 31. 13։ Բ. Օրէն. 5. 15։ Ը այսմ է և Գործ. 1. 12. ուր ասի. որ է մերձ յԵրուսաղէմ ըստ շաբաթու ճանապարհի. ք ըստ ճանապարհի շաբաթ աւուր, որ էր եօթն, կմ ութն հարիւր քայլ. քան զոր աւելի ոչ էր օրէն հրէից գնալ յաւուր շաբաթու։ Եւ մն հանգիստ այլոր աւուր, շաբաթ, կմ հանգիստ կոչեցան առ հրէայսն տօնք. կմ հանգստեան աւուրք. ոպ Ղևտ. 23. 15. և 24. և 32։ Իսկ մերթ բոլոր եօթնեակն. ք եօթն աւուրքն շաբաթու. ոպ և սովորութիւն է 'ի մեզ։ Ղուկ. 18. 12։ Երբեմն և ս շաբաթ անուանիւր իւրաքանչիւր եօթներորդ ամ. Ը որում յայնմ ամի ըստ օրինացն երկիրն շաբաթանայր. ք հանգչէր. զի 'ի նմա ոչ վար, և ոչ հունձ լինէր. և ոչ կութ ինչ. Նաև շաբաթ կոչէր այսպիսի եօթնամեայ հանգիստն երկրի։ Ղևտ. 25. 2. և 4։ 1. Մակ. 6. 49։ Դարձեալ. առ եբրայեցիս 'ի շաբաթէ անուանեալ լինէին իւրաքանչիւր աւուրք եօթնեկին. ոպ սովորութիւն է և 'ի մեզ. զի առաջին օրն կոչի միաշաբաթ, կմ միաշաբաթի։ Երկրորդն՝ երկուշաբաթի։ Երրորդն երեքշաբաթի. և այլն։ Դրձլ՝ բազում անգամ 'ի Նր գիրս բառս շաբաթ՝ վարի իբրև անեզական. զի փոխանակ ասելոյ՝ զօր շաբաթու. կմ յաւուր շաբաթու. ասի։ շաբաթուց։ ոպ Ելից. 20. 8։ 1. Մակ. 9. 34։ Գործ. 13. 14։ Դրձլ՝ Ղևտ. 16. 31։ և 23. 32։ յորս ասի. շաբաթ շաբաթուց. Նշանակի՝ գերագոյն շաբաթն, կամ գերբաղանց տօնն, յորում օրէն էր ամենևին դադարել 'ի գործոյ. Նաև 'ի պատրաստելոյ զկերակուր. և 'ի լուացանելոյ զհնուր. և այսպիսի էր իսկական շաբաթն. և օրն քաւութեան։

Շաբաթախնդիր։ (Նախդրիւ հոլովի.) || Խնդրող շաբաթուց, կմ հրէական տօնից. ք նա, որ ըստ սովորութեան հրէից պէսպէս խորանօք պաշտէ զշաբաթս։ Իսկ մերթ Նշանակէ զայն, որ լինի խնդրելով զշաբաթս. կմ յորում աւանդի խորուն շաբաթուց. և ըստ այսմ ասի, շաբաթախնդիր կրօնք։ Կիւրղ. Եզեկ. Դ։

Շաբաթամուտ. մտի. իւ. ից. օք։ || Մտանող 'ի շաբաթու 'ի մէջն ինչ, կմ 'ի պաշտօնս իւր. որպիսիք էին 'ի հնումն քահանայք, և ղևտացիք, որք յամ շաբաթու մտանել 'ի տաճարն՝ սպասաւորէին անդ զեօթնեակ մի. և ապա 'ի միւսում շաբաթու ելանէին և մտանէին այլք փոխանակ նց։ 4. Թագ. 11. 5։ Իսկ մերթ շաբաթամուտ կոչի սպասաւորութիւն, կմ պաշտօնն միոյ եօթնեկի. յոր մտանէին պաշտօնեայքն շաբաթէ 'ի շաբաթ. ոպ օրէն էր տանել քահանայից՝ և ղևտացւոց ըստ վերոյասացեալ կերպին. 4. Թագ. 11. 7. և 9։ Երբեմն և ս շաբաթամուտ յորջորջի երեկոյն ուրբաթու, ըստ որում 'ի նմա սկսանի ոք մտանել 'ի շաբաթ. ոպ և Նախընթաց երեկոյն կիրակէի, կոչի կիրակամուտ։

Շաբաթանամ. ացայ. ացի՛ր. անալ: (չէզոք.) || հանգչել. կամ դադարել 'ի գործոյ. կամ պարապորդ լինել. և կամ դատարկանալ: Եւլից. 16. 30. Ղևտ. 26. 35. 2. Մնաց. 36. 21:

Շաբաթապահ. ի. իւ. աց. օք: || պահօղ շաբաթու, կամ զհրէական ծէսս, դադարելով յամ գործոց: Իսկ մերթ նա, որ պահէ զօրէնս ինչ. կամ կաղնու զպաշտօն իւր յաւուր շաբաթու, և կամ 'ի միում եօթնեկի: Մերթ ևս նշանակէ պահպանութիւն. կամ սպասաւորութիւն միոյ եօթնեկի, յոր մտանէին պաշտօնատարքն յամ. շաբաթու. որպիսիք էին 'ի հնումն քահանայք, և ղևտացիք, որք շաբաթէ 'ի շաբաթ մտանէին, 'ի պաշտօն սպասարկեն: 2. Մնաց. 23. 4: Իսկ մերթ նշանակէ զայն, որ լինի պահելով զշաբաթս. կամ յորում պատուիրի պահուն շաբաթուց. և ըստ այսմ ասի՝ շաբաթապահ կրօն: [illegible]

Շաբաթապահք. հոց. օք: (անեզական.) || պահք միոյ շաբաթու. այս միոյ եօթնեկի. որպիսիք էին պահքն ամծածնի. որդոյն յակոբայ. և այլն: տաճկ. չիլլէ թութ:

Շաբաթացուցանեմ. ացուցի. ացի. անել: (անցող.) || հանգուցանել. կամ դադարեցուցանել 'ի գործոյ. կամ դատարկացուցանել. և կամ պարապորդ առնել: 1. Եզր. 1. 58: Իսկ Ղևտ. 23. 32. ուր ասի, շաբաթացուսջիք զշաբաթս ձեր. իմանի՝ շաբաթանալով, այս, դադարելով 'ի գործոյ պահեսջիք զշաբաթս:

Շաբաթաւոր. ի. աւ. աց. օք: || պաշտօնեայ. կամ պահապան, որ զշաբաթ մի ամբողջ կատարէ զպաշտօն ինչ. և կամ պահպանէ զտեղի ինչ, և սպասաւորէ. և այլք 'ի տեղի նր յաջորդեն: 1. Մնաց. 26. 12:

Շաբաթումն. թման. մամբ. մանց. մամբք: || շաբաթացումն. այս հանգիստ. կամ դադարումն 'ի գործոյ. կամ պարապորդութի. և կամ դատարկութի: 1. Եզր. 1. 58: Եբր. 4. 9:

Շագանակ. ի. աւ. աց. օք: || է պտուղ ծառոյ կաղնոյ. այս կարծրակեղև պտուղ, պատեալ թփաւորն կեղևանօք, որ արտադրի 'ի փոր շաղից պատեհանս իբրև [illegible]: Զսա [illegible] բառիւ կոչեմք շահ. [illegible] տաճկ. քէստանէ: [illegible]

Շագար: || տես զՇաքար:

Շագարաբուղխ: || տես զՇաքարաբուղխ:

Շալակ. ի. աւ. աց. օք. || թիկունքն մարդոյ. յո որում են ընթակայ բեռինն, շալակ կոչին: Նաև 'ի վերայ թիկանցն դնելով բառնալն զոք՝ շալակել ասի: Իսկ ձեռաւ. շալակ կոչին և նոյն անօթք, կամ կազմուածք, յորս եղեալ զինչ՝ շալակեն. և ըստ այսմ շալակ անուանեցաւ վերարկուն, զոր լցեալ ազխով պատանեալն եղիսէի շալակեաց, և բերել եարկ 'ի սան եփոցին: 4. Թագ. 4. 39. Այլև պատարագաւորք. կամ գանձաւորք. և այլք նմանք. որովք շալակեն, կամ բառնան զինչ, շալակ կոչին. և ըստ այսմ ասի. 2. Մակ. 9. 8. [illegible] Զնա յերկիր հալեալ շալակաւ զ[illegible] լեցուցանէին. այս պատգարակաւ ածէին այսր, և անդր: Իսկ ըստ գրոգրաց շալակ յողջողջին որբադրութիւնք, որք դնին 'ի մէջ տողից 'ի վերայ բառից:

Շալակաւոր. ի. աւ. աց. օք: || շալակօղ. կամ նա, որ բարձեալ ունի 'ի շալակս իւր զբեռն ինչ: Իսկ ըստ գրոգրաց շալակաւոր ասին այնք տառք, կամ բառք, որք 'ի վերայ իւրեանց ունին զշալակս, այս զորթագրութիւնս:

Շալակեմ. եցի. եա. ել: (ներգործ.) || բառնալ զինչ շալակաւ. կամ 'ի վերայ երկոցունց թիկանց առնլով. այլ առնեն բեռնակիրք: տաճկ. շալկէլ:

Շահ. ու. աւ. ուց. ուք: կամ ի. իւ.ից. իւք: || արդիւնք առացեալ 'ի վաճառականութէ. կամ 'ի վաճառուց: տաճկ. քեար: Իմաստ. 14. 2: և 15. 12: Եւ յայսմանէ առեալ երբեմն շահ կոչի, և իցէ օգուտ, կամ շահեցեալ պտուղ. կամ շահաւէտութի. և կամ օգտակարութի. Կորն. 16. 16. և 19: Փիլիպ. 1. 21. և 3. 7: Իսկ մերթ նշանակէ զշահեցեալ ստացուածս. կամ զմեծութիւնս: Յոբ. 1. 11: Բայց ըստ որում է սա բառ պարսկերէն, նշանակէ՝ Թագաւոր. կամ արքայ:

Շահաբեր. ի. աւ. աց. օք: || բերօղ կամ պատճառօղ զշահս, կամ արդիւնաբեր. կամ շահաւէտ, և կամ օգտակար: Առակ. 31. 14:

Շահադաւակ. ի. աւ. աց. օք: || շահեցեալ զաւակ. կամ ստացեալ պտուղ որովայնի. և յայսմանէ առեալ [illegible] հաստատուն կոչին և իցէ արդիւնք շահից. որք իբրև զզաւակ յառաջ գան յիմեքէ գործոյ. ըստ այնմ Առակ. Այն ունին շահադաւակ գտանել 'ի վաճառականութեն ծոց անտի:

Շահաժողով. ի. իւ. ից. օք: || ժողովօղ զշահս, կամ զարդիւնս, և կամ զստացուածս ընչից:

Շահախնդիր: (նախդրիւ հոլովի.) || խնդրօղ բաղձանօք զշահս. կամ զօգուտս:

Շահական. ի. աւ. աց. օք: || տես զՇահեկան: Մծբն. ժթ:

Շահականացու. ցուի. աւ. աց. օք: || տես զՇահեկան: Մծբն. ժա:

Շահապ. ի. աւ. աց. օք: || տէր. կամ պետ. և կամ վերակացու գաւառաց. կամ աշխարհաց, և այլոց նմանեաց: Առակ.: Իսկ [illegible] ասեալ նշանակէ՝ գանձապետ. այս վերակացու արքունական գանձուց, և ամ մալից, և ծախուց: տաճկ. խազնէտար: 3. Թագ. 4. 6: Հռով. 16. 23:

Շահապետ. ի. իւ. աց. օք: || շահապ. կամ վերակացու. կամ տէր, որ ունի զերկիրն իշխանութի. և ըստ այսմ ասի զայ. շահապ 'ի պետ գերեզմանաց. ըստ որում ունի 'ի վերայ ամ մեռելոց, և զորս կամի կենդանի առնէ: Առակ.:

Շահաւէր. աւրի. աւ. աց. օք: || աւրօղ շա-

Digitized by Google

հէց. կամ խնդրող զօգուտ անձին ։

Շահասիրութիւն. թեան ։ || սէր շահուց, կամ օգտութեան անձին ։

Շահաստան. ի. իւ. աց. օք ։ || տեղի, կամ բնակարան շահաց. այսինքն թագաւորաց. և ըստ այսմ ոմանք իցէ թագաւորանիստ քաղաք՝ շահաստան կոչի ։ Իսկ մատենագրաց այս առնուլ նշանակաւորապէս երկրորդ եկ յառաջն, այն ինչն է թէմիչ. և այս մի ամենայնիւ, զի վաճառականք առնուլ եղեւ 'ի շահէ ունելով. և 'ինչ զոր գողս կողոպտած, և նման նոյն, անուանեցաւ շահաստան ։

Շահաստանութիւն. թեան ։ || շահաստանի գործ. կամ նման, և տեղի թագաւորութեան ։ և ըստ այսմ է 'ի գիրս Խորէն. Գ. գլ. 26. ուր ասէ՝ Դուք արքայախնամակերտեալք, որք առաջին էք ոչ շահաստանութեամբ՝ ասեմ. այլ 'ի մանկութեան վարժութեան. զի առաջին էք ասեմ, ոչ պատուով շահաստանի գոլով քաղաքին ձերոյ. այլ ըստ որում է մտօք և ախոյեան ձանձ պարծողութեամբ իմոյ ։ Բայց ըստ որում ծագի առ 'ի հայկական բառէն՝ շահ, որ է օգուտ, յայնժամ նշանակէ զշահատացութիւն. կամ զորպիսութիւն հանճարոյ այլոց 'ի ձեռն փութաջանութեանց, կամ երեւակայութեանց. որ և ասի մարդաձաճութիւն. կամ մարդեղութիւն ։ և ըստ այսմ իմանի՝ մինչ ասի. Մէ 'ի շահաստանութեամբ եղեւ՝ մի շահաստանութեան որգայր. այլ 'ի գիտնալ ազգաց ։

Շահավաճառ. ի. աւ. աց. օք ։ || վաճառական, այն նա, որ պատրաստելով առուր և առուտութեան վաճառաց, առնէ զշահս. կամ հաւաքէ զարդիւնս ։ ռամկօր. պէզիրկեան ։ Յովհ. 18. 15 ։ Ոսկե. 1. հատ. խա ։ Իսկ մարթ շահավաճառութեամբ. զի շահ եղեալ 'ի վաճառման, և 'ի տուրք և առութեան, կամ շահաւէտ վաճառ. և կամ վաճառականութեան. որ է պէզիրկենութիւն ։ 2. Օրին. 33. 19 ։ 1. Տիմ. 6. 5. և 6 ։

Շահավաճառութիւն. թեան ։ || տե՛ս 'ի վերոյ 'ի բառն շահավաճառ ։ Նարեկ. կթ ։ Լամբրոն ։

Շահատակ. ի. աւ. աց. օք ։ || տե՛ս զՆահատակ ։

Շահատակեմ. եցի. եա՛. եալ ։ (չէզոք.) || շահատակիլ. կամ նահատակիլ. կամ խիզախ ընդ նահատակ յարձակիլ, կամ դիմել ։ և ըստ այսմ է. 3. Մակ. 4. 9. ուր ասի. Զի անտեսցուն համարձակ իցէ տեսանել զորս յայնկոյս յայսկոյս շահատակեն. զի ամ զի զկոտորած հրէիցն հնար իցէ համարձակ տեսանել ամենեցուն, որք յայնկոյս յայս կոյս դիմեն, այս է, որք արտաքուստ յարձակեալ գան 'ի քաղաքն. և 'ի քաղաքէնն ելեալ գնան այլուր ։

Շահատակիմ. եցայ. եա՛ց. իլ ։ (ձայնակր.) || տե՛ս զՆահատակիլ ։ Խորէն. Բ. գլ. 10. և 25 ։ և Գ. գլ. 82 ։

Շահատակեան ։ (Նախադրիւ հոլովի.) || շահատակութիւն. կամ նահատակութիւն. և կամ խրախոյսք, և ձայնք յարձակման նահատակաց, և հեծելոց. և այլն ։ Նաւում. 3. 2 ։

Շահատակութիւն. թեան ։ || տե՛ս զՆահատակութիւն ։

Շահարար. ի. աւ. աց. օք ։ || առնող շահս. կամ շահաւէտ վաճառս. կամ շահող 'ի տուրք առութեան, կամ շահաբեր. և կամ օգտակար ։ Նարեկ. ծզ ։

Շահացանկացող. ի. աւ. աց. օք ։ || տե՛ս ըզ Շահախնդիր ։

Շահաւէտական. անի. ով. աց. ովք ։ || շահաւէտ եղեալ. կամ տացեալ զմեծ շահս. կամ մեծապէս օգտեալ, և շահեալ ։ Ագաթ ։

Շահաւէտ. ետի. իւ. եց. իւք ։ || պատճառող զբազում շահս. կամ շահաբեր. կամ օգտակար. և կամ պտղաւէտ ։ Նարեկ. 'ի գոլ. առաքելոց ։

Շահաւոր. ի. աւ. աց. օք ։ || շահաւէտ. կամ օգտակար ։ Խորէն. Ա. գլ. 2 ։ Իսկ մարթ նշանակել ամենայն տեսակ ինչ ինչոց, կամ ծախս ընելեաց, որ լինի 'ի հնդկաց. Խորէն. յառաջաբանէ ։

Շահաւորագոյն. գունի. իւ. իւք ։ || տե՛ս 'ի ներքոյ զՇահեկանագոյն ։

Շահեկան. ի. աւ. աց. օք ։ || շահաւէտ. կամ օգտակար. կամ պտղաւէտ. կամ արդասաւոր. և կամ բեղմնաւոր ։ Եզեկ. 6. 7 ։ և Ագաթ ։

Շահեկանագոյն. գունի. իւ. իւք ։ || շահաւէտագոյն. կամ օգտակարագոյն. կամ արդիւնաւորագոյն. կամ առաւել բեղմնաւոր, և արդասաւոր ։ Ոսկե. 2. հատ. Է ։

Շահեկանացու. ցուի. աւ. աց. օք ։ || տե՛ս զՇահեկան ։ Մծբին. ժթ ։

Շահեկանութիւն. թեան ։ || շահաւէտութիւն. կամ օգտակարութիւն. կամ արդասաւորութիւն. և կամ բեղմնաւորութիւն ։ Նարեկ. զե ։ և Լամբրոն ։

Շահընծայ. ի. իւ. իւ. իւք ։ || ընծայող. կամ բերող շահից. կամ շահաւէտ. կամ օգտակար. և կամ բեղմնաւոր ։

Շահընծայութիւն. թեան ։ || ընծայումն, կամ մատուցումն շահուց. կամ շահաբերութիւն. կամ օգտակարութիւն. և կամ արդասաւորութիւն ։ Նարեկ. ղզ ։

Շահիմ. եցայ. եա՛. կամ եա՛ց. իլ ։ (հասարակ բայ.) || առնուլ զշահս 'ի վաճառականութէ, կամ 'ի գործոց արուեստի. և այլն ։ ռամկ. քեարայ ընել. կամ քեարիլ ։ Ծնն. 34. 10 ։ Իմաստ. 15. 12 ։ Մատթ. 25. 16 ։ Իսկ մարթնաւորել, կամ ունել խնդրեան զիմն, կամ արդիւնաւորիլ. և կամ օգտիլ ։ Սաղմ. 78. 11 ։ Մարկ. 16. 26 ։ Փիլիպ. 3. 8 ։ Մերթ և ա մինչ ասի՝ շահիլ զանձն ուք. իմանի՝ օգտեցուցանել. կամ 'ի բարին դարձուցանել. կամ հանել 'ի չարեաց՝ յորս կայ, որ և ռամկ. ասի՝ շահիլ ։ Ղևտաց. 25. 13 ։ Մատթ. 18. 15 ։ 1. Կորն. Թ. 19. և 20. և 21 ։

Շահպալուտ. կամ շահբալուտ. ի. իւ. իւք ։ || է բառ. այլազգական, որով նշանակի շագանակ ։ ռամկ. քէսթանէ ։

Շաղ. ի. իւ. իւք ։ || Նուրբ անձրև. կամ բարակ ցօղ. կամ խոնաւութիւն. որ 'ի յօ-

գոյն իջանէ 'ի վ[երա]յ երկրի ։ Յոբ. 38. 28։ Իսկ մերթ է սա մասնիկ բաղադրական. և նշանակէ՝ փաղ. կմ՛ համ. կմ՛ կից. կմ՛ յար. և կմ՛ շուրջ. զորս տեսցես 'ի յառաջիկայդ։

Շաղաբաղեմ. եցի. եամ. ել։ (Ներգործ.) || բաղակցել. կմ՛ շարակցել. կմ՛ ը միմեանս յօդել. և կմ՛ շաղկապել։ Իսկ մերթ բաղդել. կմ՛ սատայօդել. և կմ՛ բարուրել. և կմ՛ զուգոյն պատճառանս յառաջ բերել։

Շաղախ. ոյ. ով. ոց. ովք։ || կաւ. կմ՛ խառնեալ հողոյ, և ջրոյ. կմ՛ ջրոյ և կրոյ. զոր 'ի գործածեն որմնադիրքն 'ի շինուածս որմոց, կմ՛ պարսպաց ։ ռամկ. չամուռ ։ Ծննդ. 11. 3։ Իսկ մերթ շաղախեալ. կմ՛ թաթաւեալ. և այս մանաւանդ 'ի բարդութեան. որպէս՝ արիւնաշաղախ. արտասուաշաղախ. և այլն ։ Իսկ 'ի գիրս Կիւրղի եղէնի. Թ. ուր ասի. Մի՛ գուցէ 'ի ձեզ շաղախ ինչ ներկ֊ ուեալ, խմանի՝ աղտեղի ինչ ներկուեալ. կմ՛ բիծ. կմ՛ արատ։

Շաղախումն ։ ('ի յեզական. նախդրիւ. իսկ 'ի յոգնական. նից. նիւք.) || համախառնումն. կմ՛ զուգախառնումն. կմ՛ շարակից. և կամ շաղկապեալ։ Իսկ 'ի յոգնականին երբեմն նշանակէ համախառնութիւն. կմ՛ շաղաշարութիւն. կմ՛ շարակցութիւն. կմ՛ շաղկապութիւն. և կմ՛ միաւորութիւն։ և ըստ այսմ ասի 'ի հին պատմագիրս. գրէ պորփիւրոս 'ի յերկրորդ բանին շաղախմանց. այսինքն շարակցութեանց. կմ՛ միաւորութեանց։

Շաղախեմ. եցի. եամ. ել։ (Ներգործ.) || շաղախս մածել. կմ՛ ծեփել. որպ մինչ ասի շաղախել զորմս. կմ՛ զկղմինտրս ։ ռամկ. չամուռ ծեփել։ Իսկ մերթ թաթաւել. և կմ՛ թաթախել ։ ռամկ. թաթխել. կմ՛ պլշտել(?)։ ըստ այսմ. Ծննդ. 37. 27. Եւ ձեռք ձեր մի՛ շաղախեսցին 'ի նմա. այսինքն մի՛ թաթաւեսցին յարեան նր ։ Մերթ և ս պղծութիւն իմն պղծել. կմ՛ ապականել. և կմ՛ աղտեղել ։ ռամկ. մրոտել(?)։ Թուոց. 35. 33։ Սաղմ. 105. 39։ Երեմ. 3. 9։ Եւ երբեմն և ս շաղել. կմ՛ պատել. կմ՛ փաթութել. և կմ՛ պատատել։ ռամկ. պլլել. կմ՛ ծալլել(?)։ ըստ այսմ Յոբ. 18. 8. Անկցի ոտն նր յորոգայթ, և շաղախեսցի 'ի թակարդի. այսինքն պատատեսցի. որ է պլլուիլ։

Շաղակրատ. ի. իւ. աց. կմ՛ ից. օք։ || շաղփաղփաբան. կմ՛ ունայնախօս. կմ՛ ցոփաբան. կմ՛ առասպելաբան. կմ՛ բարբանջող. և կմ՛ զատայօդ և զանոտի բանս ասեղծանող(?)։ Նորէկ(?). Ճշ։ և ըն։

Շաղակրատանք. աց. օք։ (անեզակ.) || շաղփաղփութիւն. կմ՛ ընդունայն, և անպատշաճ խօսք. կմ՛ ցոփաբանութիւն. կմ՛ առասպելք. կմ՛ բարբանջմունք, և կամ սատայօդութիւնք լեզուին ։ Լամբրոն ։

Շաղակրատեմ. եցի. եամ. ել։ (չէզոք.) || շաղփաղփել. կմ՛ ունայնաբանել. կմ՛ ցոփաբանել. կմ՛ առասպելել. և կմ՛ բարբանջել։ Լամբրոն ։ և Շնորհալին ։

Շաղակրատութիւն. թեան։ || տես զՇաղակրատանք։

Շաղամաթ. ի. իւ. ից. իւք։ || թեղան. կմ՛ թել. զոր փաթթութեալ 'ի փոքրիկ եղեգունս, և անցուցեալ 'ի կկոցս, այսինքն 'ի մագոգս՝ անկանեն նոքաւ զկտաւեղէնս։ Եւ կմ՛ թել՝ որով հիւսեն զգանկապսն(?). այսինքն զշօրապս, և զայլս նմանս ։ ռամկօր. կումաշ թել. կմ՛ չօրուպ թելը։ Ծննդ. 14. 23։

Շաղամանեմ. եցի. եամ. ել։ (Ներգործ.) || տես զՇարամանել։

Շաղաշար. ի. իւ. աց. օք։ || շարակից. կմ՛ յարակից. կմ՛ զուգակցեալ. կմ՛ բաղակցեալ. կմ՛ շաղկապեալ. և կամ շարադրեալ։ Իսկ մերթ՝ շարադրութիւն. կմ՛ շարակցութիւն։ Բայց մասնաւորապէս առեալ, շաղաշարք կոչին մա- դասութիւնք, կմ՛ մասունք՝ որոց շարակցութեամբ բաղկանան բառք, և բանք։

Շաղաշարեմ. եցի. եամ. ել։ (Ներգործ.) || շարայարել. կմ՛ շարակցել. կմ՛ բաղակցել. և կմ՛ շաղկապել։ Իսկ մերթ՝ շարամանել. կմ՛ շարադրել. և կմ՛ յօդել։

Շաղաշարիմ. եցայ. եցաւ. իլ։ (Ձայնակր.) || շարակցիլ. կմ՛ յարիլ. կմ՛ կցիլ. կմ՛ միաւորիլ. կմ՛ շաղկապիլ։ Լամբրոն։ Իսկ մասնաւորապէս առեալ նշանակէ զուգիլ ը միմեանս արուին և իգին ըստ մարմնոյ։

Շաղաշարութիւն. թեան։ || շարայարութիւն. կմ՛ շարակցութիւն. կմ՛ զուգակցութիւն. կմ՛ շաղկապութիւն. իսկ մերթ՝ շարամանութիւն. կմ՛ շարադրութիւն։ Եւ մասնաւորապէս առեալ՝ նշանակէ զզուգաւորութիւն, կմ՛ զմերձաւորութիւն ընդ միմեանս արուին, և իգին։

Շաղաշարումն. րման. մամբ. մանց. մամբք։ || շաղաշարութիւն, որ է շարամանութիւն. կմ՛ շարահիւսութիւն. և այլն ։ և ըստ այսմ է 'ի Նարեկ. ԺԶ. ուր ասի. Քան զմոլոր բեւեռանն(?) շինուած վրանին վկայականին բեհեզազանգուեալ, կարմրայարկար շաղաշարման, այսինքն շարամանութեան, կմ՛ շարահիւսման, և բանս. վն զի խորանն վկայութեան, և բանք իւր էին 'ի կարզուած կահք, և կարասիք իւր էին 'ի կարմրակերպ(?) նիւթեղէնս, ուր մինչեւ(?) միոյ մանեկոյ, և 'ի բեհեզոյ նիւթեղէնս. որ իբր բազում անգամ յիշի 'ի գիրս ելից։ Իսկ մերթ մասնաւորապէս առեալ նշանակէ զզուգութիւն արու և կնոջ։

Շաղաշուտ ։ (Նախդրիւ հոլովի.) || խենէշ. և կամ կմ՛ ցոփ. կմ՛ անառակ. կմ՛ զեղխ. և կամ փափկասէր ։ 'ի հին պատմագիրս։

Շաղաշտիմ. եցայ. եցաւ. իլ։ (Ձայնակր.) || անառակենաշանալ(?). կամ ցոփանալ. կմ՛ անառակ լինել. կմ՛ զեղխիլ. կմ՛ փափկասէր լինել։

Շաղաշտութիւն. թեան ։ || ծագի առ 'ի բա- ռէս շաղաշուտ. և նշանակէ՝ խենէշութիւն. կմ՛ ցոփութիւն. կմ՛ անառակութիւն. կմ՛ զեղխութիւն. և կմ՛ փափկասիրութիւն ։ 'ի հին պատմագիրս ։

Շաղապատիմ. եցայ. եցաւ. իլ։ (Ձայնակր.) || շաղիլ, և պատիլ. կմ՛ պարատուել զի- նքը. կմ՛ պատատիլ. կմ՛ փաթթուիլ. կմ՛ յարիլ։ 'ի Չորս հարց. Թ. 'ի բանն Ներսէսի։

Շաղաճաշուրթն ։ (Նախդրիւ հոլովի.) || որով ունող զշրթունս ցոփս և թխրս. որով նենգմանի խեղաթիւրն լեզուաւ. կմ՛ նեն- գաւորն՝ բանիւ, կմ՛ որ պատրուակաւ, և

խորա

խորամանկութ խօսի. և կմ նա, որ ցոփի և զեղխէ ՚ի բանս իւր: Առակ. 19. 1:

Շաղափ. ոյ. ով. եց. իւք: || Ծակիչ երկաթեղէն՝ ագուցեալ ՚ի փայտեայ կաղամախս. զոր աղեղամբ պտուտեալ, ծակեն նովաւ զփայտեղէնս, կմ զկապիճսն ՚ի հրահանգելոյ: ռամկ. [illegible]. Երբեմն յայտնանէ առեալ երբեմն նշանակէ զծակիչն զայն, զոր հիւսունք ՚ի ձեռս կալեալ առեն պտուտեն, և այնու ծակեն զփայտեղէնս. և ըստ այսմ տասցաւ շաղափ, ըստ որում շաղի ՚ի յարկս հիւսանաց: ռամկ. [illegible]:

Շաղեմ. եցի. եմ. եալ: (Ներգործ. որոյ կրաւորականն բազմիցս վարի իբրև զձայնս կրականն.) || պարուրել. կմ պատատել. կմ փաթթութել. և կամ պարառանդել: ռամկօր. [illegible]: Առակ. 5. 22: Իսկ մերթ շաղկապել. կմ միաւորել. կմ յարել: Մերթ ևս շաղախել. կմ թաթաւել. կմ մածանել. և կմ զանգել: ռամկ. [illegible]: 2. Պետր. 2. 20: Երբեմն ևս մինչ առի. շաղել ՚ի հոգս, կմ ՚ի ծուփս, և ՚ի զբաղմունս, նշանակէ՝ պատալել: կամ զբաղել. և կամ ըմբռնել ՚ի հոգոց, և ՚ի զբաղմանց:

Շաղիղ. ղղի. իմ. աց. օք: || գէշ. կմ դի. որ է մարմին մեռեալ կենդանեաց: ռամկ. լէշ: Եսայ. 21. 34:

Շաղկամեմ. եցի. եմ. եալ: (Ներգործ.) || ՚ի մի ժողովել. կմ հաւաքել. և կմ բովանդակել: ռամկ. [illegible]:

Շաղկամութիւն. թեան: || ՚ի մի ժողովումն, կմ հաւաքումն. և կմ բաղկացումն:

Շաղկապ. ի. իմ. եց. իւք: կմ աւ. աց. օք: || միաւորիչ. կմ յօդիչ. է այն բառ, որ ՚ի մէջ մտեալ յօդէ, և միաւորէ զ միմեանս զերկուս, կմ զբազում իրս, որ առի զսի բոյ. զձայնմանդաց. և այլն: Նորէկ. զի: և ՚ի Գող. [illegible]: և Լամբր: ըստ այսմ է և ՚ի [illegible] առի. Չորեքնիւթեայ ընութիւն խառնեալ, շաղկապ զշունչն ՚ի մէջ եդեալ. զի եդեալ զհոգին շաղկապ ՚ի մէջ չորեքնիւթեայ զանդուածոյ մարմնոյ: Երբեմն յայտնանէ առեալ շաղկապ կոչի այն մասն բանի, որ շաղկապէ զ միմեանս զայլ մասունս բանի, նաև զբանս. որպիսիք են սոքա. և. իսկ. զի. ուրեմն. և այլն:

Շաղկապեմ. եցի. եմ. եալ: (Ներգործ.) || ընդ միմեանս շաղկելով կապել. կմ միաւորել. կմ կցել. կմ յօդել. կմ շարամանել. և կմ բաղադրել: ռամկ. [illegible]: Նորէկ. [illegible]. և [illegible]: Ոսկէ. 2. հռոմ. [illegible]:

Շաղկապութիւն. թեան: || կապակցութի. կմ շարակցութի. կմ միաւորութի. կմ շարամանութի. և կմ խառնուած: Նորէկ. [illegible]: և Լամբր:

Շաղկապումն. պման. մանք. մանց. մամբք: || Նոյն է ընդ վերինոյն: Լամբր:

Շաղղակեր. ի. աւ. աց. օք: || ուտող զշաղիղս. կմ զմիս դիականց. և կմ գիշակեր: ռամկ. [illegible]: Լամբր:

Շաղղակերութիւն. թեան: || ուտելն զշաղիղս, կմ զմիս դիականց: կմ գիշակերութի: ռամկ. [illegible]: Խորէն. [illegible]. 56:

Շաղումն. ղման. մանք. մանց. մամբք: || պարուրումն. կմ պատումն. կամ փաթթութումն. և կմ պարառանդումն: Իսկ մերթ շաղկապումն. կամ միաւորութի. կմ յօդումն. և կմ շարակցութի: Երբ մերթ շաղախումն. կմ թաթաւումն. կամ զանգումն. և կմ մածումն:

Շաղփաբանութիւն. թեան: || Նոյն է ընդ շաղփաղփաբանութե. որ մի քաղցրահնչութե համառօտմամբ ՚ի գործածի. ոպ երևի ՚ի [illegible]: և Ոսկէ. 1. հռոմ. [illegible]:

Շաղփաղփ. ի. իմ. եց. իւք: || ցնորական. կմ առասպելական. կմ բարբանջողական. կմ խեղկատակական. և կմ աղձատական. և ըստ այսմ առի՝ շաղփաղփ բանք. կամ շաղփաղփ առասցուածք. կմ շատախօսութիք. և այլն: ռամկ. [illegible]: Իսկ մերթ շաղփաղփող. կմ բարբանջող. կմ ցնորեալ. կմ խեղկատակ: Մծբն. թ: Երբեմն ևս անյարմար. կմ անհեթեթ. կմ անշարայար. և կամ անկարգ, և այլանդակ: ռամկ. [illegible]: և ըստ այսմ առի ՚ի գիրս Ոսկէ. ՚ի [illegible]: Քանզի շաղփաղփ գայ լեզուն ասորի ՚ի մերս լեզու:

Շաղփաղփաբան. ի. իմ. եց. իւք: || խօսող զշաղփաղփ բանս. կմ շաղակրատ. կամ առասպելաբան. կմ բարբանջող. և կամ յիմարաբան:

Շաղփաղփաբանութիւն. թեան: || տե՛ս ըղ Շաղփաղփութիւն:

Շաղփաղփանք. անաց. օք: (անեզ.) || տե՛ս զՇաղփաղփութիւն: Ոսկէ. 2. հռոմ. [illegible]: Կիւրղ. [illegible]:

Շաղփաղփեմ. եցի. եմ. եալ: (չէզոք.) || ըղ շաղփաղփ, և զառասպել բանս խօսել. կմ բարբանջել. կմ շաղակրատել. կմ առասպելաբանել. և կմ ցնորել ՚ի բանս: ռամկ. [illegible]:

Շաղփաղփութիւն. թեան: || աղձատանք բանից. կամ ցնորք. կմ առասպելք. կամ բարբանջմունք. կմ խեղկատակութի. և կմ յիմարական զրոյց: ռամկ. [illegible]: Ղուկ. 24. 11: Ոսկէ. 1. հռոմ. [illegible]: Իսկ մերթ՝ անյարմարութի. կմ անհարթութի. և կմ այլանդակութի:

Շաղփաղփումն: (Նախընթաց հոլովի.) || ըստ շաղփաղփութ. կմ ցնորական. կմ առասպելական. կմ բարբանջողական. և կամ խեղկատակական: ըստ այնմ Լամբր. Ուստի մեզ եթէ ոպ ընկալցուք զշաղփաղփումն դաւանութե: Իսկ մերթ շաղփաղփող. կմ բարբանջող:

Շամանդաղ. ի. աւ. աց. օք: կմ իմ. եց: || մէգ. կմ մառախուղ: ռամկ. [illegible]. կմ [illegible]: Իմաստ. 2. 4: Նորէկ. [illegible]: Երբեմն յայտնանէ առեալ շամանդաղ կոչի նուրբ մթու

թիւն, որ կիզանէ յայգս ամանց կերպս զմեգ․ և կամ ապաւորեալ երկնի յերեսս լուսնին իբրև զբիծս։ Իսկ մերթ մուայլ․ կամ աղ֊ջամուղջ․ և կամ խաւար։ Երբեմն և ա֊ռեալ լինի յամանց փոխաբերական մանրամաղ փոշեաց, որք երևին ՚ի շող արեգական։ ռամկ․ պէրէ։

Շամբ․ ի․ իմ․ ից․ իւք։ || եղեգնուտ․ կամ անտառ եղեգան, որ է խիտ բազմութիւն եղեգանց բուսեալ իբրև զմայրիս․ ուր և բնակին գազանք, և երէք․ որ և կոչի ե֊ղեգնաշամբ։ ռամկ․ ղամըշլըխ․ կամ ղամըշլը օր֊ման։ Խորէն․ Գ․ գլ․ 37․ և 55․ և 59։ Նարեկ․ ՚ի վերայ հողոյ․ ժամ։

Շամբեակ․ ի․ աւ․ աց․ օք։ || փոքր շամբ․ կամ ո և իցէ անտառ եղեգանց։ ՚ի վերայ հողոյ․ ժամ։

Շամբաւէտ․ ւէտի․ աւ․ աց․ օք։ || ախորժ շամբից․ կամ որ ախորժէ բնակել ՚ի շամբս․ իբր յանտառս եղեգանց։

Շամբշական․ կամ շամշական․ ի․ աւ․ աց․ օք։ || այն՝ որ է շամբուշ․ կամ մոլի․ կամ կասա֊ ղի․ և կամ ամեհի․ Ե այլում․ Յայսմ․ Սայլ շինուցին զՋանն վարեալ․ ՚ի շամշական ձի ընթացուցեալ։

Շամբշիմ․ կամ շամշիմ․ եցայ․ եաց․ իլ։ (ձայն նակիր) || յիմարիլ․ կամ անմտանալ․ կամ մոլիլ․ կամ ցնորիլ․ և կամ կատաղիլ։ ՚ի հին տպագրիս։ ըստ այսմ է և ՚ի գիրս Ճծին խորոզեաց․ ուր ասի․ խեղդամահեալք, և նը֊ման շամշեցուցին խօսքն։ Իսկ յայսմանէ ա֊ռեալ երբեմն նշանակէ պագշոտիլ․ կամ վաւաշոտիլ․ կամ բղջախոհ տռփանօք մո֊լիլ ՚ի կին իգին, կամ հոմանեայն։ Ե այլում Խորէն․ Բ․ գլ․ 60․ Յինքն քարշեալ ՚ի բազ մականն՝ շամշեալ վաւաշէր։

Շամբշութիւն․ կամ շամշութիւն․ թեան։ || յիմարութիւն․ կամ մոլեգնութիւն․ կամ անմտութիւն․ կամ խելա֊ ռութիւն․ և կամ տխմարութիւն։ Իսկ մերթ՝ շամբշութիւն կոչի պագշոտութիւն․ կամ վա֊ւաշոտութիւն․ ըստ որում է մոլեգնութիւն հոգւոյ, և մարմնոյ։ Խորէն․ Ա․ գլ․ 14։ և Բ․ գլ․ 20։

Շամբուշ․ բշոյ․ կամ ի․ իմ․ կամ ամ․ աց․ օք։ || յիմար․ կամ մոլի․ կամ անմիտ․ կամ տխմար․ և կամ խելառ․ և Ե այլում ասի․ շամբուշ հոգւաբարձու․ կամ շամբուշ այր․ և կամ շամբուշ միտք․ և այլն։ ռամկ․ խէնթ․ կամ խէմ։ ՚ի հին տպագրիս։ Իսկ մերթ՝ շաղ֊փաղփ․ կամ ցնորական․ կամ յիմարական․ կամ յայժ անդէպ, և անտեղի․ որպ մինչ ասի․ շամբուշ խմաստութիւն․ շամբուշ ատու֊թիւն․ կամ շամբուշ խնձութիւն առասցեալդ։ ռամկ․ դէլի։ Կիւրղի պորտագանաց․ և ՚ի գիրս Գրիգորի մծղնէին։ Բայց երբեմն մանաւ ասպազէս շամբուշ կոչին վաւաշոտքն, կամ պագշոտքն․ ըստ որում մոլեգնեալք և յի մարեալք են ՚ի կանայս իգին․ և կամ հոմանի֊ եայն իւրեանց։

Շամբոտ․ ի․ աւ․ աց․ օք։ || տե՛ս ՚ի ներքոյ զՇամբուտ։

Շամբուտ․ ի․ իմ․ ից․ իւք։ || շամբաւէտ, որ ասի զաւեղւոյ․ ուր գոյ բազմութիւն շամ

Շ Ր.

բից, իբր անտառաց եղեգանց․ որ և կոչի եղեգնուտ։ ռամկ․ ղամըշլըխ։

Շամղեռակ․ ի․ աւ․ աց․ օք։ || է տեսակ ինչ ծաղկան։ Աշգանդ։

Շամշական։ || տե՛ս զՇամբշական։

Շամշիմ։ || տե՛ս զՇամբշիլ։

Շամփուր․ բոյ․ րի․ աւ․ կամ իմ․ աց․ օք։ || շամփ րոյ, որ է սամարագի․ Ե այլում․ Մծղ֊ նեայ, որք ժողովեալ բերէն մանրամասն հարուստքն թրի շամփրի կոչեցին։

Շամփրայցի․ ցւոյ․ ւով․ ւոց․ ւովք։ || աս֊ տուածային․ իբր նոյն՝ որ է ՚ի սամարիայ․ կամ բը մարացի․ իբր նոյն՝ որ է ՚ի սամարիայ․ և կամ ունի զկրօնս նոցին ՚ի սամարիա․ և կամ ունի զկրօնս սամարացւոց։ 1․ Մաք․ 3․ 10։ Կիւրղ․ եղէն․ Ժ․ և Ժգ։ Իսկ մերթ նշանակէ զսամարա֊ կանն․ կամ զայն, որ սամարացւոց է, կամ ՚ի սամարացւոց կողմն․ և ըստ այսմ ասի․ շամփրայցի լեզու․ շամփրայցի պատառ շամփրայցի լեզու․ և այլն։ Մերթ և վասն իբրև կալ․ և այլն։ Մերթ և վասն իւր զմակերայ․ որպէս․ շամփրայցի խօսք․ և նը զմակերայ․ որքան․ շամփրայցի խօսք, և նը շանակէ՝ սամարացւոց լեզուաւ, կամ բար բառով։

Շամփրութիւն․ թեան։ || գոյն շամփրայցի․ կամ կրօն սամարացւոց․ ըստ այնմ Կիւրղ եղէն․ Գ․ Գուցէ երբեք ՚ի շամփրութիւն․ կամ ՚ի հրէութիւն կործանեսցես։

Շամփուր․ փրոյ․ ով․ ոց․ ովք։ || երկայնա֊ ձիգ, և սրածայր գործի երկաթեղէն, յոր հարեալ զմիս խորովեն։ որ և ռամկ․ ասի շամփուր․ կամ փեղարի շիշ։ Խորէն․ Գ․ գլ․ 37։

Շամփրեմ․ եցի․ եա․ եա։ (Ներգործ․) || հար֊ կանել զմիսն ՚ի շամփուր։ ռամկ․ շիշէ գեչիրմէք․ կամ շիշն անցնել։ Իսկ մերթ նմանութ֊ եամբ․ կամ շիշն անցնել։ Իբր մերթ նմանա֊ բար առեալ, հարուածն զորս ՚ի գեղարդն՝ խոց առնել, հարուածն զորս ՚ի գեղարդն։ ռամկ․ զմիս ՚ի շամփրոյ, շամփրել ասի։ ռամկ․ զմիս ՚ի շամփուր, շամփրել ասի։ Խորէն․ Ա․ գլ․ 28․ ասպետին ընդ։ ըստ այնմ Խորէն․ Ա․ գլ․ 28․ Նիւղակաւ ոչ ջուր հերձեալ զերկաթի հանդերձն շամփրել զաժդահակ յեռանդ֊ ձակ ռեկ Նիւղակին։

Շանագլուխ․ գլխոյ․ ով․ ոց․ ովք։ կամ ի․ աւ․ աց․ օք։ || այն, որ ունի զգլուխ շան․ կամ որ է շանց գլուխ։ Բայց մանաւանդ կամ որ է շանց գլուխ։ Բայց մանաւանդ ասես սեռեալ է առ անուն մարդկանց և գազանաց, որք են յաշխարհս ցուցանքաւոր մարդկան, որք են յաշխարհ հնդկաց, կամ եթովպացւոց, որոց բնակ մարմինն է մարդոյ․ իսկ գլուխն, և ձայն իբրև շան։ ՚Ի սոցանէ էր մեծ վկայն քնի քրիստոփոր․ մկրտիչ հաւատ, քնի քրիստափոր․ որ ՚ի մնէ կոչի և զարհուրելի տեսլեամբ։ որ ՚ի նմէ կոչի ցեալ մկրտեցաւ ՚ի բարբառ հայր֊ ցեալ մկրտեցաւ ՚ի բարբառ յամա֊ ռէն անօրինաց․ և անուանեցաւ յամա֊ կան բարբառով՝ քրիստոփոր․ որ թարգ մանի, քրիստոսակիր։ Իսկ դարձ տան գխո նարհեցին ի բանն․ ըստ․ ուր ասէ զմաս ներէ․ Այլն իւր զարմանահրաշ որհնութ լուսոյ՝ զզարհուրանս շանագլխաց տ֊ կաւլեթիսար՝ քրիստոնեան արարեալ ա֊ ռնամբ քո կերպ։ Մերթ և նշանակէ անամօ֊ թաւ կերպ ինչ եգիպտացւոց՝ անամօթ ձեռն շանագլուխ․ զի անուանք, որ կոչեցաւ և շանագլուխ, կոչ վն վարելոյն նր շամբ ՚ի պատերազմի, կող մէ էին զգլուխ նր Եօթնեակ գլխոյ շան։

Շանազգեաց · զգեցի · իՀ · աց · օք ։ || զգե_ ցող · զանձամբ զենութիւն, կմ զբարս շան · և կմ՝ շնաբարոյ ։ Իսկ մերթ նշանակէ զայն, զոր կրեն յմիջեանս շունք · կմ շնական, և կմ շնային ։ և ըստ այսմ առի շանազգեաց ըկեռութիւն, կմ կատաղութիւն, կմ բարք · և այլն ։ Ադգան ։

Շանակնճիթ · ճթի · ու · աց · օք ։ || ունօղ զկնճիթ շան · զի նա՝ որոյ ցռուկն, կամ բոլոր բերանն հանդերձ ատամամբք, և ծնօտիւքն է իբրև շան ։ Խորէն · յաշխարհագրութեան ։

Շանաձանձ · ի · իՀ · ից · իւք · կամ օք ։ || է տեսակ ինչ ճանճ, և լերբ ձանձից, որ կառչեալ ՝ի մարմինն կենդանեաց, չարաչար խայթէ, և ծծէ զարիւն ։ Այսքա մանա_ ւանդ լինին ՝ի շունս, զորոց մանաւանդ այնս զականջսն չարաչար խայթոտելով կոտեն, մինչև բազում անգամ վէրսք, և արեամբ լցեալ փտեցուցանեն զնա · յորմէ և անուանեալ կոչեցան շանաձանձ · իբր թէ՝ ձանձ շան ։ Ելից · 8 · 21 · և 22 · և 31 ։ Սաղմ · 77 · 45 ։ և 104 · 31 ։

Շանդ ։ || տես 'ի ներքոյ զՇանթ ։

Շանթ · ի · կմ ոյ · իՀ · ից · իւք ։ || հրացեալ, և կայծակնացայտ երկաթ ։ կմ հրաբորբոք նիւթ երկաթոյ, կմ պղնձոյ, և նմանեաց · և ըստ այսմ առի · շանթիՀ դրոշմել զձիս կամ ուրուք · և կմ կոխել զշանթս երկաթոյն · կամ նմանիլ շանթոյ երկաթոյ · և այլն ։ ռամկօրէն կրակ կրած · կամ [illegible] եղած երկաթ ։ 'Ի Հայր հայց · Ք · և Ժ ։ Իսկ մերթ նշանակէ զկայծակն, որ է ջերմ, և չոր գոլորշիք խուռն փա_ կեալ 'ի մէջ թանձրացեալ ամպոց · որ պայթեալ արեգական, կմ սաստիկ շարժ_ մամբ հրով բորբոքեալ յարձակի 'ի բաց սաստիկ թափով · որ և երբեմն հասեալ յերկիր իբրև զհրեղէն հոսանս, կիզէ և լափէ զամ ։ Սա բազում անգամ անցանէ ի խոր զհրաբորբոք նիւթ ինչ իբրև զսեպ կարծ րացեալ 'ի քար, կմ յերկաթ, որով քանդէ, և խորտակէ զամ ընդդիմահարս · և յառակապէս ասելս այս շանթ կոչի ։ Յոբ · 38 · 35 ։ Նորէն · Ղ · և 'ի Գոճ [illegible] 'ի ձեռս հայց · իՂ ։ Մերթ ևս շանթ անուանին բորբոքեալ խարոյկք · կմ կայծակունք հրոյ, և կմ հրացայտ փայլատակմունք · զի խոշ_ րմբոս · որք հատանին 'ի բոցոյ հրոյ · կմ 'ի նշոյլք · և կամ 'ի հրացեալ նիւթոյ ։ Յոբ · 41 · 10 ։

Շանթահար · ի · աւ · աց · օք ։ || հարեալ 'ի շանթէ · զի 'ի կայծականէ · որ և առի՝ կայծակնահար ։ ռամկ · կայծակը զարկած ։ Խորէն · Գ · գլ · 37 ։ Իսկ մերթ ընդ բայի շարակցի այսպէս · շանթահար լինել · և նշանակէ՝ 'ի շանթէ հարկանել · կմ կայծակամբ հարեալ մեռանիլ, և կործանիլ ։ Խորէն · Գ · գլ · 16 ։

Շանթառանդն ։ (Նախդրիւ հոլովի ·) || շանթեռանդն · զի շանթիւք, կմ հրեղէն հոսանօք եռացեալ, կմ բորբոքեալ · որպիսիք են կայծակունք, որք յերկնուստ 'ի յուղմանց ամպոց արձակին ։ Մծբն · ճէ ։

Շանթեռանդն ։ || Նոյն է ընդ վերնոյն ։

Շանթիք · կմ շանդիք · կմ շանդիկ · թեաց · եօք ։ (անեզ) || ծաղիկս 'ի բաժակս շանթոյն և մարդիկն · կմ մարդկայն 'ի բաժակս մէջ · և նշանակէ զհրացեալ երկաթս, կմ զկայծակունս ։ 'Ի Գիրս Գրիգորի Տղայութեան ։ ըստ այսմ է և Կիւրղի Երզնկ · Ղ · ուր ասի, շանդիկ ևս 'ի մէջ դեռ նշ հանեալ · զի կայծակունքս անկեալք 'ի մէջ կաւոց նշ ։

Շանգին · գնոյ · նով · նովք ։ || գին շան · որով մերթ նշանակէ զգինն վաճառ_ ակցելոյ շան · կմ վարձն, զոր առնուն յաղագս տալոյ այլոց զարուն շան հաբեանց 'ի խառնակիլ ընդ էգ շան մը սերելոյ 'ի նմանէ զկորիւն նման նմա ։ Եւ մերթ նշանակէ վարձն շնացեալ կնոջ, կմ հրապարակական բոզի, որ իբրև զշուն ընդ որոց և իցէ խառնակի ։ 2 · Օրին · 23 · 18 ։

Շաչեմ · եցի · եա · ել ։ (չէզոք ·) || շառաչել · զի ահեղ դղրդմամբ, կմ թնդմամբ, և կմ բազխմամբ ձայն արձակել, կմ տալ զբարբառ · և կմ հնչել ։ ռամկ · խըշըրտը հանել · և ըստ այսմ առի՝ շաչել · կմ շառաչել կառաց · անուոց · երիվարաց · հրացանից · զինուց · վիմաց · կայծականց · որոտմանց · ջրոց · կմ մարդկանց աղմկելոց · և այլն ։ Երեմ · 47 · 3 ։

Շաչիւն ։ (Նախդրիւ հոլովի ·) || շառաչիւն · զի սաստիկ դղրդմամբ · կմ բազխմամբ ձայն արձակումն · կմ հնչումն կառաց, և այլոց, որք եդան 'ի վերոյ 'ի շաչել բային · ռամկ · խըշըրտըլը ։ Դատ · 5 · 16 ։ 1 · Մակ · 6 · 41 ։ 2 · Մակ · 5 · 3 ։ Նաւում · 3 · 2 ։

Շաչումն · չման · մամբ · մանց · ամբք ։ || Նոյն է ընդ վերնոյն ։

Շապիկ · պկի · աւ · աց · օք ։ || ձորձ ներքին միապաղաղ · զի մեկ խաթէն, որ զգեցեալ լինի անմիջապէս 'ի վ՛ր մերկ մարմնոյ ։ ռամկ · շապիկ · Մատ · 5 · 40 ։

Շառ · ի · իՀ · ից · իւք ։ || կարմիր · կմ խարտեաշ, որ է դեղին հակեալ 'ի կարմրութիւն ։

Շառագին ։ (Նախդրիւ հոլովի ·) || կարմրագին · կմ կարմրագոյն · և կամ կարմրաւէտ ։

Շառագունեմ · եցի · եա · ել ։ (զօրութեամբ անցողակ ·) || տես զՇառագունեցուցանել ։

Շառագնեցուցանեմ ։ || տես զՇառագու_ նեցուցանել ։

Շառագունիմ ։ || տես զՇառագունիլ ։

Շառագոյն · գունի · իՀ · ից · իւք ։ || կարմրագոյն · կմ կարմրերանգ · և կմ խարտեաշ հակեալ 'ի կարմրութիւն ։ Ծնունդ · 25 · 25 ։

Շառագունեցուցանեմ · ցուցի · եցո · ել ։ (անցող ·) || կարմրացուցանել · կմ կարմրագոյն առնել · և ըստ այսմ ամաչեցուցանելն զոք պատճառել 'ի դէմս նր ըղ կարմրութիւն ամօթոյ, առի՝ շառագունե_ ցուցանել ։ 'Ի Գիրս Գրիգոր Տղայութեան ։

Շառագունիմ · եցայ · եա · իլ ։ (Համանակիր ·) || շառագոյն լինել · կմ կարմրերանգ գունով զգածել · և կամ կարմրանալ ։ ռամկ ·

կարմրէր ։ Մատթ. 16. 3։ 'Ի ծով հաղոյ. Ին։ Եւ յայտնանէ առեալ՝ շառագունիլ առի յամօթոյ կարմրանալն. կմ կարմրանալով պատկառելն. և կմ սոսկ ամաչելն ։ Յոբէ. 1. հատ. Ին։

Շառաչիղ. չղի. իւ. աց. օք ։ || Մեծ հատոր աղի ձևացեալ իբրև զմեծամեծ քարինս խարախաց սեպից. որ վն սաստիկ խոնութեն մասանց յոյժ ծանր, և դժուարաշարժ լինի, զոր և մինչև խարտակեալ ըստեն երկանաքարօք. տաճկերէն տաշ փուղա. կամ խաղճայ փուղա. և Թ այսմ է 'ի Եզեկիա Աճգաբ. ուր ասի զորդարայ արքայէն. եւ կապել շառաչիղս աղի 'ի վր ողին Նր. զի 'ի վր քամակի էր ստորաբ չին մերոյ ։

Շառաչեմ. եցի. եա. եւ։ (չէզոք.) || տես զՇաչել։ Երեմ. 47. 3։ Իսկ 'ի գիրս Յոբէ. 1. հատ. Իբ. ուր ասի զձանձից, և զմժեխաց. Շուրջ թռուցեալ բզզեն, և ճիճաղ շառաչեն. նշանակէ ճռռմբել ձայն արձակելն. ոճ ասացաւ 'ի մեկնութեն ճիճաղ բառին ։

Շառաչիւն ։ (Նախդրիւ հոլովի.) || տես ըզ Շաչիւն ։ 1. Մակ. 6. 41։ 2. Մակ. 5. 3։

Շառաչումն. չման. մամբ. մանց. մամբք ։ || տես զՇաչիւն ։ Իմաստ. 16. 16։ Երեմ. 51. 16։

Շառաւեղ. ղի. աւ. աց. օք ։ || տես զՇառաւիղ ։ Լամբրոն ։

Շառաւիղ. ղի. աւ. աց. օք ։ || բողբոջ. կմ ստա նորաբոյս. կմ ստեղն. կմ մատղանակ. և կմ ճիւղ ։ ռամկ. Ֆիլիզ. կմ ճեղ. և կմ ճող ։ Թուոց. 17. 8։ Սաղմ. 79. 12։ Իմաստ. 4. 5։ Եզեկ. 31. 3։ Իսկ մասնաւորապէս առեալ նշանակէ զգաւազանն բղխեալ յարմատոյ. կամ զմատաղ, և զնորաբողբոջ ստունկն, զոր կորզեալ, և հատեալ՝ տնկեն յայլ տեղ, զի տուռ լիցի. և կմ պատուաստատն յասաս ստարա ։ ռամկ. Ֆիդան ։ Իմաստ. 4. 3։ Յոբ. 4. 12։ Եւ յայտնանէ առեալ երբեմն նմանութբ շառաւիղ կոչին զաւակք, կամ որդիք ուրուք ։ 'Ի շարականս ։ Դրձ՝ նշանակէ սովոր ճաճանչ, կմ նշոյլ. և կմ ճառագայթ. զի ոճ բողբոջն 'ի բուսոյ. այնպէս և ճաճանչն 'ի լուսոյ, կմ 'ի լուսաւորաց ծագի. ըստ այնմ Եզեկ. հն. ոչ արեւան երակաց ընթացք, այլ լուսոյ վերնոյն շառաւիղք ։ ռամկօրէն շօհլ. կմ շէօհլէ ։

Շառաւիղեմ. եցի. եա. եւ ։ (Ներգործ. և մերթ չէզոք.) || բողբոջեցուցանել. կմ ընձիւղել. կմ բուսուցանել. և կմ բերել զբերս իւր ։ Եզեկ. Է. և Ժփ ։ Իսկ մերթ ճաճանչել. կմ ճառագայթել. և կմ ծագել ։ մերթ և բողբոջիլ. կմ ընձիւղիլ. կմ բուսանիլ ։ Եւ երբեմն նմանութբ առեալ նշանակէ ծննդեամբ յառաջանալն. կմ բխիլն յումեքէ, կմ 'ի զարմէ, և 'ի տոհմէ ուրուք ։ Յն որդի ։

Շատ ։ (յեղականնոցն Նախդրիւ հոլովի. բայց 'ի յոգնականն ոչ. շատք. տից. իւք ։) || բազում. կմ յոլով. կմ յաճախ. և կմ երկար. որ և ռամկ. աւելի չոք ։ Ծննդ. 24. 25։ և 29. 7։ և 33. 9։ ըստ այսմ է և 2. Մակ. 14. 30. ուր ասի. Շատ զօրք ընդ միմեանս շփոթեալ. զի զբազում անձինս ։ Այսինքն է և 3. Մակ. 3. 3. ուր ասի. վն այսորիկ շատից յաչաց եղանէին. զի բազմաց ատելի լինէին ։ Մերթ և ոս նշանակէ բաւական, կմ բաւ ։ ռամկ. հեյլի ։ Առակ. 30. 15։ Բայց սա ըստ այսմ յաճախակի ընդ բայի շարակցի այսպէս, շատ է. կմ շատ լիցի. և այլն. և նշանակէ՝ բաւական է. կմ բաւական լիցի ։ Թուոց. 16. 3։ Մատթ. 6. 34։ Ղուկ. 3. 14։

Շատ ։ (մակբայ քանակական.) || բազում, կմ յաճախ. կմ ընդերկար. և ըստ այսմ ասի՝ շատ ուտել. կամ շատ խօսիլ ։ Ժողով. 5. 11։

Շատադրոյց. ուցի. իւ. եց. իւք ։ || տես ըզ Շատախօս ։

Շատախօս. ի. իւ. ից. իւք ։ || շատադրոյց. կմ բազմախօս. կմ յաճախաբան. և այս ասի զնոցանէ, որք ունայնութբ, կմ մտ լեգնաբար խօսին զբազումս. կմ զերկար բանս ։ Առակ. 10. 19։ Մատթ. 6. 7։

Շատախօսութիւն. թեան ։ || տես զՇատախօսութիւն ։

Շատակեաց. կեցի. իւ. աց. օք ։ || երկայնակեաց. կմ բազմաժամանակեայ. կմ յերկար ժամանակս ապրող ։ Աճգոբ ։

Շատակեր. ի. իւ. աց. օք ։ || Նա, որ աւել քան զչափն ուտէ. կմ բազմակեր. և կմ որկրամոլ ։ ռամկ. չոք ուտօղ ։ Խորէն. Ա. դպր. 11։

Շատակուլ ։ (Նախդրիւ հոլովի.) || Նա, որ որկրամոլութբ զբազումս կլանէ. կմ որ ունի զանյագ որովայն. և կմ յոյժ շատակեր, որ գրեթէ իբրև զգազան զեկեալն 'ի բերան իւր կլանէ ։

Շատահանճար ։ (Նախդրիւ հոլովի.) || բազմահանճար. կմ յոգնահանճար. և կմ յոյժ հանճարեղ, և գգօն ։ Խորէն. Ա. դպր. 19։

Շատանամ. ացայ. ացիր. նալ ։ (ընդունակ.) || բաւականանալ. կմ բաւական համարիլ. կմ գոհ լինել. և ոչ ևս խնդրել զայլ ինչ ։ և կմ լիանալ ։ ռամկ. խանահաթ ընէլ ։ Մր. 3. 10։ 1. Տիմ. 6. 8։ 3. Յովհ. 10։

Շատաշրջիկ ։ (Նախդրիւ հոլովի.) | տես զԲազմաշրջիկ ։

Շատաջուր ։ (Նախդրիւ հոլովի.) || բազմաջուր. զի այն, որ ունի զբազում ջուրս. կմ ուր գոն բազում աղբերակունք. և կմ ջրարբի ։ ռամկ. ջրօխ ։ Խորէն. Գ. դպր. 59։

Շատացուցանեմ. ցուցի. ացի. եւ ։ (անցողակ.) || բազմացուցանել. կմ յաճախել ։ Իսկ մերթ բաւական առնել. և կմ առ ումեք լիանալ, կմ գոհ լինել ։

Շատիմ. եցայ. եաց. իլ ։ (ձայնակրաւ.) || տես զՇատանալ ։ Յոբէ. 1. հատ. Է ։ Կիւրղ. Եղէն. Ժփ ։

Շատխօս ։ || տես զՇատախօս ։

Շատխօսութիւն. թեան ։ || շատախօսութիւն. կմ լեզուանագարութի. կմ ունայնաբանութի.

Digitized by Google

և կամ բարբանջմունք։ 3. Յօհ. 10։ Խորէն. բ. գլ. 89։ և Լամբրօն։

Շատրուան. ի. աւ. աց. օք. կամ ովք։ || է աւազան ինչ բոլորակաձև՝ կազմեցեալ վայելուչ յօրինուածովք, որ ունի 'ի մէջ իւր զգեղեցկագործութեամբ ծորակս ծակոտս՝ կանգնեալ ուղղորդ. ընդ որոց ծակոտիսն 'ի վեր ցայտեալ ջուրն՝ բարձրանայ, և անդրէն 'ի վերուստ շրջանս առեալ թափի յաւազանն. ուր տեսանեմք շինեալ 'ի զուարճալի դրախտս, կամ 'ի հրապարակս ապարանից, և նմանեաց։ և ըստ այսմ է 'ի գիրս Խորէն. ա. գլ. 25. ուր ասի զարքունեաց թագաւորին։ Եւ զնոյն ինքն գեղեցիկ, և բազմագոյն յօրինեալ շատրուանովք։ ռամկ. շատրուան։

Շար. ի. իւ. ից. իւք։ || տող. կամ մի զկնի միոյ շարունակ յաջորդութիւն. կամ կարգ. կամ դաս. և կամ շարակարգութիւն։ և ըստ այսմ ասի. 'ի շար առաջնոյն յաւելուլ. կամ 'ի մի շար դասել. կամ 'ի շարս կարգի թագաւորաց. և այլն։ ռամկ. շար։ Խորէն. բ. գլ. 26։ Նարեկ. իբ. ղդ. ղթ. և 'ի գով. տառ։ Մերթ ևս նշանակէ զշարոցն. որ զշարեցեալ բազմութիւն իրեք. ուր մինչ ասի. երեք շարք մարգարտաց, կամ ակեաց. և այլն։ տաճկերէն փիլի։ Նարեկ. իբ։ Եւ յայտմանէ առեալ երբեմն նշանակէ զգումարտակս բազմութեան ամաց. կամ զդարս. և կամ զյաջորդութեան մի. ըստ այնմ Խորէն. ա. գլ. 3. Թագաւորեաց ազօրուս շարս տասն. որ իբրու տասն դարս։ Մերթ ևս նշանակէ զնրբանիւթ գործուած ինչ, որ վն սաստիկ նրբութեան իւրոյ՝ զեղեալն 'ի ներքոյ իւր երևեցուցանէ. յորմէ և բազում անգամ կազմեն զմաղս. որ և ռամկ. ասի շաղ. և տաճկերէն ...։ 'ի Գիրս Գրիգորի ...։ Դիմայ՝ բառս այս երբեմն վարի իբրև զմասնիկ բաղադրական. և նշանակէ համ. կամ յար. կամ կից. և այլն. զորս տեսցես յառաջիկայդ։

Շարաբանեմ. եցի. եա. ել։ (չէզոք.) || կարգաւ, կամ ոճիւ խօսիլ. կամ տրամաբանել. և կամ շարահիւսելով արտասանել զբանս։

Շարաբարդեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) || 'ի վերայ միմեանց բարդել. կամ համակուտել։ Եւ յայտմանէ շարաբարդել ասի շարելն տպագրողաց զկապարեայ գիրս։

Շարագիծ. գծի. իւ. աց. օք։ || տես 'ի ներքոյ զՇարագիր։

Շարագիր. գրի. իւ. աց. օք։ || նա, որ գրելով շարագրէ զբանս։ Իսկ մերթ վիպասան. կամ պատմաբան, որ զպատմութիւնս ժամանակին իւրոյ կարգաւ, կամ շարունակաբար գրէ։ Մերթ ևս նշանակէ ըզ գրուածս շարագրութեանց. կամ պգրեալ շարադրութիւնս։ Եւ մերթ շարագիր կոչին նշանագիրք տառից, որք են այբուբենք։ Խորէն. գ. գլ. 52։

Շարագծեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) || յօրինել զշարագիծս. կամ շարադրել ըզ բանս. կամ վիպասանել. և կամ ճառել։

Շարագրած. ի. իւ. աց. օք։ || բան շարագրեալ, կամ շարադրեցեալ. կամ շարագրութիւն. և կամ գրուածք բանից։ 'ի Գիրս ...։

Շարագրածութիւն. թեան։ || շարագրութիւն. կամ շարադրութիւն. և կամ գրուածք բանից։

Շարագրեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) || շարագրելով գրել. կամ ըստ կարգի շարամանելով զբանս ընդ գրով արկանել. ուր առնեն վիպասանք. կամ յօրինօղք մատենից, կամ բանից։ Խորէն. ա. գլ. 5. և 11։ և բ. գլ. 89։

Շարագրութիւն. թեան։ || գրուած. կամ շարադրութիւն. և կամ շարամանութիւն բանից։ Խորէն. ա. գլ. 31։ և գ. գլ. 1։ Մերթ ևս ըզ բովք առանցեալ վիպասանութիւն, կամ պատմութիւն, և կամ ճառ։ Իսկ մերթ շարագրութիւն կոչին շարագիրք, կամ նշանագիրք տառից. որ այբուբենքն։ Նարեկ. ղդ։

Շարադաս. ի. իւ. ից. իւք։ || կարգաւ դասեալ. կամ ըստ կարգի դասաւորեալ. և կամ շարակարգեալ։

Շարադասեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) || ըստ կարգի դասել. կամ կարգաւ դասաւորել. կամ շարակարգել. և կամ 'ի շարս կարգի դնել։ Խորէն. ա. գլ. 8։

Շարադրեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) || շարելով դասել. կամ կարգաւ դնել. կամ ըստ կարգի զետեղել։ Յն ...։ Իսկ մերթ շարակցել. կամ բաղադրել. կամ բաղկացուցանել. և կամ բարդել։ Նարեկ. ղդ։ մերթ ևս արտադրելով գրել, կամ յօրինել ըզ բանս. ուր առնեն ուսումնականք։ Նարեկ. թ. և ղդ։

Շարադրութիւն. թեան։ || կարգաւ դնումն. կամ զետեղումն. և կամ շարակարգութիւն։ Իսկ մերթ շարակցութիւն. կամ շարայարութիւն. կամ բաղադրութիւն. կամ շարամանութիւն։ Երբեմն ևս շարագրեալ բան, կամ գրուած։ Լամբրօն։

Շարազոյգ. զուգի. իւ. ից. իւք։ || համազոյգ. որ 'ի միասին զուգեալ. կամ լծակցեալ. և կամ շարադասեալ։

Շարազուգեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) || շարազոյգ առնել. կամ շարալծել. կամ լծակցել. և կամ համադասել։

Շարալծեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) || նոյն է ընդ վերնոյն։

Շարալրական. ի. աւ. աց. օք։ || համալրացուցիչ. կամ լրացուցիչ. և կամ կատարիչ. և ըստ այսմ իմանի. մինչ ասի. տարբերութիւնքն շարալրականք են սեռից։ 'ի Գիրս ...։

Շարած. ի. իւ. ից. իւք։ || շարեցեալ իր։ Իսկ մերթ շարուածք. կամ շարումն. կամ շարակարգութիւն. և կամ շարադրութիւն. և ըստ այսմ ասի՝ շարածք ոսկւոյ. կամ շարածք բանից. և այլն։ Խորէն. ա. գլ. 2։

Շարակայիմ. եցայ. եաց. իլ։ (Ձայնակր.) || մերձակայիլ. կամ շարակցիլ. և կամ շարայարիլ։

Շարակայութիւն. թեան։ || մերձակայութիւն.

կամ շարայարութիւն. և կամ շարակցութիւն։

Շարական. ի. աւ. աց. օք։ || Երգ. կամ տաղ. կամ Նուագ. և ըստ այսմ 'ի գիրս եկեղեցւոյ շարական կոչի՝ որք պարզապէս են. զի սա ի Յարմարեցաւ չափաւոր ձայնիւ, և եղանակ շարականին։ Իսկ մասնաւորապէս անուանեալ շարական կոչի անուանք իմն երգա_ ժողովական երգոց եկեղեցւոյ, որք ըստ մե ծի մասին Ներսէսին փոխան ընդ սաղմո սացն դաւթի. ոմն և յայտնէ։ Այդ՝ ան ուանեցան այսպէս շարական. երրեք շարք ական. մի զի եղանակաւոր բանքն երգե ցեալ շարս ականց գեղեցկայարմար կարգաւ շարեալ կան 'ի նմ. ուստի և գիրքն սոցա կոչի շարակնոց, որ է տեղի շարից ականց. ըստ որում և տեղին մարգարտաց կո չի մարգարտոց։

Շարակարգեմ. եցի. եմ. ել։ (Ներգործ.) || կարգաւ շարել. կամ ըստ կարգի դասել. կամ կարգաւորել. կամ սահմանել. և կամ շա րադրել։ Նոննի. ձը։

Շարակարգութիւն. թեան։ || կարգաւ շա րումն. կամ ըստ կարգի դասաւորութիւն. կամ կարգաւորութիւն. և կամ շարադրութիւն։

Շարակնոց. ի. աւ. աց. օք։ || գիրք. յորում գրեալ կան շարականք, որ եկեղեցական երգք. որպէս ըսացաք 'ի բառն շարական։

Շարակցեմ. եցի. եմ. ել։ (Ներգործ.) || Է միմեանս կցել. կամ միաւորել. կամ շարայա րել. կամ յօդել։

Շարակցութիւն. թեան։ || ընդ միմեանս կը ցումն. կամ շարայարութիւն. կամ միաւորու թիւն. և կամ շաղկապումն։

Շարահիւսեմ. եցի. եմ. ել։ (Ներգործ.) || ընդ միմեանս հիւսել. կամ շարամանել. կամ շարայօդել. և կամ շարադրել։

Շարահիւսութիւն. թեան։ || ընդ միմեանս հիւսումն. կամ շարամանութիւն. կամ շարայա րութիւն. և կամ շարակցութիւն։

Շարահիւսումն. ման. մամբ. մանց. մամբք։ || Նոյն է ընդ վերինոյն։

Շարաման. ի. իւ. եց. իւք։ || շարամանեալ. կամ շարահիւսեալ։ Իսկ մերթ շարամա նող. կամ շարահիւսող։

Շարամանութիւն. թեան։ || ընդ միմեանս մա նումն. կամ շարահիւսութիւն. կամ բաղակցու թիւն. կամ շաղկապումն. և կամ շարադրու թիւն։ Լամբրոն։

Շարամանեմ. եցի. եմ. ել։ (Ներգործ.) || ընդ միմեանս մանել. կամ ոլորել։ Իսկ յայս մանէ առեալ երբեմն նշանակէ շարահիւ սել. կամ շարակցել. կամ շաղկապել. կամ յօդել. և կամ շարադրել։ Նոննի. իփ։ և Կիւ րղի պարապմանց։

Շարամերձիմ. եցայ. եաց. իլ։ (Չէզոքակր.) || մերձիլ, և յարիլ. կամ մերձենալ. և կամ հպիլ։

Շարամերձութիւն. թեան։ || մերձեցումն և յարումն. կամ մերձաւորութիւն. կամ մերձա ւորութիւն. և կամ շարակցութիւն։

Շարայար. ի. իւ. ից. իւք։ || այն՝ որ յարի յայլս. կամ շարակցեալ. կամ յարմար և պատ շաճ։ Իսկ մերթ շարայարող. կամ շարակ ցող. և կամ յարմարող։

Շարայարեմ. եցի. եմ. ել։ (Ներգործ.) || յայլ ինչ յարել. կամ մի զկնի միոյ յարել. կամ յարակցել. կամ յօդել. և կամ յարմարել։ Խորէն. Բ. գլ. 72։

Շարայարմամբ։ (Նախդրիւ հոլովի.) || շար ունք յարմարեալ. կամ համեմատաբար։

Շարայարմարեմ. եցի. եմ. ել։ (Ներգործ.) || բարւոք յարմարել. կամ պատկանել. կամ վայելչացուցանել. և կամ համեմատել։ Նոննի. ղէ։

Շարայարութիւն. թեան։ || տե՛ս զՇարակ ցութիւն։

Շարայօդ։ (Նախդրիւ հոլովի.) || Է միմեանս բարեկարգութեամբ շարեալ և յօդեալ. կամ շարակցեալ. և կամ շաղկապեալ. և Է այսմ ասի, շարայօդ անդամք։

Շարայօդեմ. եցի. եմ. ել։ (Ներգործ.) || ընդ միմեանս բարեձեւութեամբ շարել և յօ դել. կամ շարադրել. կամ շարակցել. և կամ շաղկապել։

Շարատուումն. ման. մամբ. մանց. մամբք. || տե՛ս 'ի ներքոյ զՇարատուութիւն։

Շարատուութիւն. թեան։ || 'ի միասին տուումն. կամ պարտատուութիւն։

Շարաւ. ոյ. ով. ոց. ովք։ || Ժահր. կամ ժա հահոտութիւն. կամ նեխեալ արիւն. և կամ թարախ։ Յոբ. 6. 7։ և 17. 11։ Յովէլ. 2. 20։ ըստ այսմ է և Իմաստ. 11. 19. ուր ասի Ըլ գազանաց. Հոտեցուցիչս շարաւոյ. ծուխ խօսս 'ի բերանոյ զծխալից շունչս թո նաւոր ժահրից։

Շարաւահոտ. ի. իւ. եց. իւք։ || բուրող զհոտ շարաւոյ. կամ ժահահոտ. կամ զով զհոտ բաւհոտ. և կամ գարշահոտ. և ըստ այսմ ասի՝ շարաւահոտ խղճմտանք. կամ ձորձ. կամ կերակուր, և այլն։ Նանիկ. Յաճախա հոգ. Նախոց. կամ հոգւոյ։ Ս.ծբն. ժա։ Մերթ և ևս նշանակէ զհոտն շարաւոյ. կամ զժա հահոտութիւն. Նանիկ. Յաճախա հոգ։ և ըստ այսմ ասէ, 'ի բաց մերժել զշարաւահոտ յիմարէ։ Աշգոլ։

Շարեմ. եցի. եմ. ել։ (Ներգործ.) || 'ի շարս դնել. կամ մի զկնի միոյ դասել. և կամ կարգել. և ըստ այսմ զբազում մար գարիտս ըստ կարգի զետեղել 'ի թելս կամ 'ի մէջ այլոյ իրիք, շարել ասի։

Շարընթանամ. ացայ. ացիր. ալ։ (ընդ. միջ.) || համընթաց լինել. կամ ընկերակ ցել. կամ զուգակցել. և ըստ այսմ յա ջողել. կամ զուգադիպել. և ըստ այսմ յա ջողութեամբ ...

Շարընթաց. ի. իւ. ից. իւք։ || շարժիլ, կամ կար գաւ ընթացող. և կամ համընթաց։

Շարժ. ի. իւ. ից. իւք։ || է. արմատ շար ժել բայից. և նշանակէ շարժումն. կամ խլրտումն. կամ երերումն. և կամ դող. և

ըստ

ըստ այսմ առի 'ի Ճառս հաւը. խզ. Մինչ ոչ գոյր յիս զօրութիւն, և ոչ շարժ մի ուրէն. զի փոքր ինչ շարժումն ուրեք: Իսկ մերթ նշանակէ առհասարակ գետնաշարժն, որ է սասանութիւն երկրի. և այս մանաւանդ յաշխարհաբառ ըմբռնիլ. զոր բազումք 'ի ռամկաց կոչեն՝ ծանծ:

Շարժադրոյն. գունի. նէ. նց. նւք: || սաստկել շարժումն. կմ որ գեր 'ի վերոյ քան զայլս շարժի, կամ շարժմամբ յառաջէ: Իմաստ. 7. 24:

Շարժական. ի. աւ. աց. օք: || այն, որ մերձաբերի առ շարժումն: Իսկ մերթ շարժուն. կմ շարժելի. և կմ տեղափոխելի:

Շարժահիմն. (Նախադրիւ հոլովի.) || ունող զշարժումն, և զերերուն հիմն. կամ որոյ հիմունքն խախուտ և անկայունքեն: Իսկ մինչ առի. շարժահիմն յողդողդիլ՝ նշանակէ 'ի հիմանց շարժելով խախտիլ. Ագաթ:

Շարժառիթ. առիթի. իւ. ից. իւք: || առիթ, կամ պատճառ շարժման. և կամ շարժօղ:

Շարժարան. ի. աւ. աց. օք: || տեղի, ուր լինի շարժումն: Իսկ մերթ նշանակէ ըզ գործին շարժելոյ. կմ զշարժիչն: Եւ ըստ այսմ առի 'ի Նարեկ. ճէ. զոյ. Հոգի երեսաց. զօրութիւն գիմաց. շարժարան շըրթանց. զի շարժիչ շրթանց: ըստ այսմ է և բառս բացարան, որ երբեմն նշանակէ զբացօղն:

Շարժելի. լւոյ. եաւ. եաց. եօք: || այն՝ որ կարէ շարժիլ. կմ շարժական. կամ փոփոխական:

Շարժեմ. եցի. եալ. ել: (Ներգործակ.) || տալ ումեք շարժիլ. և ըստ այսմ շարժել առի խախտելն. կմ դրդուելն, կմ տեղափոխելն. և կամ երերեցուցանելն. Յօբ. 16. 5. և 6: Մատ. 23. 4: Իսկ մերթ առեալ լինի փոխաբերական յորդորելոյ. կամ դրդուելոյ. և կմ զարթուցանելոյ զոք առ ինչ:

Շարժիմ. եցայ. եաց. իլ: (Ձայնակր.) || ունել զշարժումն. կմ տեղափոխիլ. կմ դրդուիլ. կմ խախտիլ. և կմ երերիլ: Աղաղ. 30. 21: Եսայ. 40. 20: Իսկ մերթ գըրգռիլ. կմ բորբոքիլ. և կմ զարթնուլ առ ինչ: Բայց ըստ փիլիսոփայից շարժիլ առի ոչ և եթէ կերպիւ փոփոխիլն. կմ այլայլիլն. և կամ յառաջանալն 'ի միոյ առ միւսն. որպէս յանկերպութէ 'ի կերպաւորումն. կմ յանկատարութէ 'ի կատարելութիւն. և այլն:

Շարժուն. (Նախադրիւ հոլովի.) || շարժումն. կմ երերումն: Յոբ. 39. 23:

Շարժլեմ. եցի. եալ. ել: (Ներգործ.) || ցնցելով ուժգին շարժել. կամ սաստիկ դողացուցանել. և կմ լքել. որպէս ասեն զեզ լուսնոտաց 'ի սաստիկ մոլեցուցանելն զնոսա: 2. Մակ. 4. 1: Մարկ. 9. 19: Ղուկ. 9. 42: Եւ յայսմանէ առեալ երբեմն գնի փոխաբերական սաստիկ յուզելոյ, կմ դրդուելոյ զոք առ ինչ. և ըստ այսմ է 'ի գիրս Ղևտերծ. ուր առի զդլէէն. Եւ ըստ այսմ մասին շարժլեալ փորձէ զնեզ:

Շարժողական. ի. աւ. աց. օք: || այն ամ որ մերձաբերի առ շարժօղն. կմ առ շարժումն: Իսկ մերթ՝ շարժական. կմ ունող զզօրութիւն շարժելոյ. և կմ շարժուն: Նարեկ. խա:

Շարժողութիւն. թեան: || շարժելութիւն. կմ շարժումն. և կմ շարժուեալ: Նարեկ. ժը:

Շարժուեալ. ոյ. ով. ոց. ովք: || շարժումն. կմ շարժութիւն: Իսկ մերթ եղանակ. կմ որակութիւն շարժելոյ ուրուք, կմ առնելոյ նոր զինի. և ըստ այսմ առի 'ի Ճառս հաւը. ժզ. Եւ տեսաց զնոս գործ շարժուածոց նորա: ռամկ. շուրծուածքը:

Շարժութիւն. թեան: || շարժողութիւն. կմ շարժումն. կմ դրդումն: Նարեկ. ժը. իը. և խը: և 'ի Ճառս հաւը. ը:

Շարժումն. ժման. ման. մանց. մամբք: || շարժիլն. կամ դրդուելն. կմ երերումն. կմ յուզումն և ամբոխումն. և կամ դըր դումն: Յոհ. 5. 4: Իսկ մասնաւորապէս առեալ նշանակէ գետնաշարժն, զի սասանութիւն, կմ դողացումն երկրի, որ պատահի 'ի գոլորշեաց՝ և 'ի հողմոց խանձեցելոց 'ի խորոց երկրի. որք մինչ անօթափեցեալք բանութիւ այսր անդր յարձակին առնել ինքեանց ելս, շարժեն զերկիր. մի որոյ և 'ի տեղիս տեղիս լինին պատառուածք. ընդ որս արտաքսեն զին գին յօդս: ռամկ. շուրծ. կմ ծանծ: 3. Թագ. 19. 11: Զաք. 14. 5: Մատ. 28. 2: Իսկ ըստ փիլիսոփայից շարժումն կոչի ոչ և եթէ փոփոխութի, կմ այլայլութիւն. և կմ յառաջացումն 'ի միոյ առ միւսն. որպէս 'ի տեսականէ առ տեսակ. կմ 'ի չերմութէ առ ցըրտութիւն. և այլն:

Շարժուն. ի. իւ. ից. օք: || ունօղ զշարժումն. կմ շարժօղ. կմ շարժական. և կամ շարժելի: Ծննդ. 7. 14. և 21: Իմաստ. 7. 24: Մատ. 11. 7: ըստ այսմ է և Ղուկ. 6. 38. ուր առի. առէք, և տացի ձեզ չափ շարժուն. զի չափ շարժական, որով իմացեալ լինի սաստիկ ռատատն. վասնզի մինչ չափն շարժուն է, զբազումս տանի. որպէս յայտ է 'ի քոռն ցորենոյ, զի յորժամ ըզ յերկար ցնցելով շարժէ զնա, ընդունի յինքն զբազումս ցորեանս: Իսկ մինչ առի առաջին շարժումն, նշանակէ ըստ փիլիսոփայից առաջին պարունակն երկնից, որ զետեղեալ կայ ընդ արփային երկնիւ, որ է հրեղէն երկինն. և պարունակէ 'ի ծոց իւր զայլ ամ պարունակսն: Արդ՝ կոչեցաւ սա առաջին շարժումն, ըստ որում է նախկին 'ի շարժման. վասնզի սա յառաջ քան զամ շարժեալ պտտի 'ի ներքոյ հըրեղէն երկնի. և անչափ երագութ յամ. ում աւուր վարէ ընդ իւր զամ պարունակսն յարևելից յարևմուտս:

Շարխատ. ի. իւ. ից. իւք: || է տեսակ ինչ վաշխառու. կմ տոկոսակաց, զոր առնուն 'ի փոխատուեալ իրաց. որպէս 'ի կերակրոց. կմ

'ից

'ի ցորենոյ. 'ի գինւոյ. 'ի ձիթոյ, և յայ-
լոց նմանեաց՝ պահանջելով աւելի քան
զտուեալն իւրեանց. որգոն, տան 'ի փոխ
զտասն կշիռս մթոյ. կմ՝ զուլթն մարս ձի-
թոյ. և յետոյ մ՟ փոխատուութե ա-
նուն զերկոտասան կշիռս, և զտասն մարս.
կամ յառաջքան զհունձս 'ի փոխ տան ա-
մէք զորս քառ ցորենոյ՝ այսու դաշամբ՝
զի զկնի հնձոց մճարեսցէ նա զհինգ քառս
ցորենոյ: տաճկերէն օւինէ: Ղևտ. 25. 37:
և 2. Օրին. 23. 19: Ըստ այսմ շարիատ կո-
չէին զամ տոկոսիք, զորս առնուն անօրէ-
նաբար անդրքան զչափն աւելի. կմ՝ ար-
տաքոյ քան զսովորական կերպ վաշխա-
ռուաց. թէ յայտնապէս իցէ, և թէ պա
տրուճակաւ. կմ՝ նենգութը. և այլն: տաճ
կերէն լուբլու ձամէլէ:

Շարոց. ի. ու. աց. գք: || 'ի թելս. կմ՝ յաս
զանիս շարեցեալ բազմութիք նիւթական
իրաց, որգոն, մարգարտաց, ոսկեաց, կմ՝
թզոյ. և այլոց բազմաց. տաճկեր. փիշէ:
Բայց մասնաւորապէս առեալ նշանակէ
տովաւ տեսակ ինչ կտտայ, զի անուշէ-
ղէն կերակրոյ, զոր կազմեն 'ի քաղցրոյ.
զի 'ի շիրայէ. քանզի եփեալ զնա ընդ ա-
լեր՝ թանձրացուցանենն և ապա շարեն յաս
խանիս զմէջն ընկզոյ՝ կմ նշոյ՝ յաձախ 'ի կաս
տայ անդր ընկղմենն և հանեն զնմ, մինչև
պատեալ ամախնեն քաղցրաւն ընկոյն իւ-
րև զերկայն մոմեղէնս, որ և ռամկ. կոչի՝
շարոց: Սրապխիր է և այն, որ տաճկերէն կո
չի [illegible]. կմ՝ [illegible]:

Շարունակ. ի. ու. աց. օք: || զշարունօղ.
կմ՝ շարեալ. և կմ՝ ըստ կարգի դասաւո-
րեալ. և ըստ այսմ 'ի Յն այնպէս՝ առաեղքն
երկնից շարունակ կոչին: Իսկ մասնաւո
րապէս առեալ նշանակէ զանհատն և զան
բաժանն. զի զոյն ամ, որ ոչ ունի յին-
քեան զհատումն և զբաժանումն, այլ
զկատարեալ շարակցութի մասանց: Եւ
ըստ այսմ 'ի փիլիսոփայից՝ շարունակ կո
չի քանակն, որոյ մասունքն առ մի սահ-
ման շարամերձին, զի եզր ընդ եզր մեր-
ձեալ շարակցին, և կացուցանեն զմի ինչ
անընդհատ, որգ զմարմին, զմակերևոյթ,
և զգիծ: [illegible]: Իսկ մերթ
վարի առ մակբայօրէն, և նշանակէ շա-
րունակաբար, զի առանց միջահատութե.
կմ՝ անընդմիջաբար. կմ՝ մի զկնի միոյ շա-
րակցելով. կամ յաջորդեցուցանելով. և
այլն. Նոր[illegible]:

Շարունակեմ. եցի. եա. եւ: (Ներգործ.) ||
շարունակ առնել. կամ շարունակաբար
յաջորդեցուցանել. և կմ՝ մի զկնի միոյ շա
րակցել: Իսկ մերթ շարել. կմ՝ շարակար
գել. և կամ ըստ կարգի դասաւորել:

Շարունակիմ. եցայ. եաց. իլ: (Ձայնակր.)
|| շարունակ լինել. կմ՝ շարակարգիլ. կմ՝
շարադասիլ. կմ՝ շարակցիլ. կմ՝ շաղկապիլ.
և կմ՝ միանալ: Նոր[illegible]. ըստ այսմ է և
'ի ղշ. ու. ասի. որգ զէութն երկուց տա
բաղուց 'ի մի կերպարան շարունակեցան.
եք որգ երկատեսակ ...'ի մի բոլոր շարակ
ցեցան. կմ՝ շաղկապեցան:

Շարունակութի. թեան: || շարունակ գոլն.
կամ անընդհատ հետևութի. կմ՝ շարա-
կարգութի. և կմ՝ շարակցութի:

Շաւիղ. ւղի. իւ. աց. օք: || հետք. որք եղ
ջան ոտից տպաւորեալ յերկրի. և կամ
նշմարանք գնացից մնացեալ 'ի ձանապար
հի: ռամկօր. իզ. կմ՝ [illegible]: Առակ. 30. 19:
Իմաստ. 5. 10: Իսկ մերթ առեալ լինի փո
խանակ գնացից, կմ՝ ուղւոյ, և կմ՝ ճանա
պարհի: ռամկ. [illegible]: Յոբ. 28. 7: Սաղմ.
17. 46: Առակ. 1. 15:

Շափիղայ: || տես զՇափիւղայ: Եսայ. 54.
11: Ողբ. 4. 7: Եզեկ. 9. 2: Յայտ. 21. 19:

Շափիւղայ. կմ՝ Շափիղայ. ի. իւ. իւ. իւք: || է
անուն ինչ պատուական երկնագոյն երան-
գաւէ, որ ունի 'ի վը իւր ափեալ զբա-
զում շիթս ոսկեգոյնս: Գտանի և այլա
ծիրանագոյնն, որ ըստ բազմաց է ընտիրն
քան զամ: Արդ՝ այսպ են երկու տե-
սակք. որոց միոյն է իբրև զկիձ անթա-
փանցիկ. և սա է մի 'ի տեսակաց ականցն,
զորս լատինք կոչեն լաձուռուս, կմ՝ լա-
ձիուս, և տաճիկք՝ լաճիվէրտ: Եւ յայս
մանէ շափիւղայ անուանին և այլ ակն-
ցէ տեսակք լաճիվէրտի, որք ըստ մեծի
մասին ունին զոսկեգոյն երակս, և ձիւս:
Իսկ միւս տեսակն է իբրև զյակինթ թա
փանցիկ, պայծառ, և գեղեցիկ, որ առ
նախնեօք ունէր զայնչափ համարումն,
մինչզի անուանեալ լինէր գոհար գոհա-
րաց. վն որոյ և թագաւորք կրէին զնա
յապարանջանս և 'ի մատնեակս իւրեանց:
Արդ՝ այս ակն ըստ բժշկաց օգնէ զա-
սուն, բարձրասուն զամենայն հիւանդ,
վանէ զսևամաղձն, մեղմէ զխարտ թա
նոյ, և արգելու զհոսումն արեան: Ելից
24. 10: և 39. 11: Եզեկ. 1. 26:

Շաքար. ի. աւ. աց. օք: || է հիւթ ինչ մեղ
րատեսակ ամենևին քաղցր՝ արտադրեցեալ
յեղեգանս իբրև զխիժ սպիտակ: Սակայն
մուք. արեգական եփեցեալ յեղեգանն
յայնոսիկ, մինչոյ 'ի գնդակս փոխա-
ձևս և քարանիւթս, մինչզի առատանք
բեկանեն զնա, որպ և սառնապատութի
նմ 'ի հայ բարբառ ցուցանէ զայս, զի ա-
սի շաքար, իբր թէ՝ սա քար: Արդ՝ լի
նի սա 'ի Հնդիկս, յարաբիոյ, 'ի կղզեա
նի և գիպտոսի. 'ի կիպրոս, և այլուր. բայց
պատուականագոյն է քան զամենեսեան
հնդկայինն: Զոր և ժողովեալ յեղեգանց
հալեն, և ձուլեն 'ի մէջ աղամկեաց, որպէ
երբեմն փշրեն 'ի փոշիս. և 'ի գործածեն
'ի պէսպէս հանդերձանս կերակրոց, և 'ի
դեղորայս: ռամկ. [illegible]: Խորէն. աշխար-
հագրուէ: և 'ի [illegible]:

Շաքարաբուղխ: (Նախդրբէ հոլովի.) || բղ.
խօղ կմ՝ արտադրօղ զշաքարս, և այսմ
շաքարաբուղխ կոչի եղէգն, ուստի շա-
քարն ելանէ: որ ռամկ. [illegible]:

ՇԴ

Շդառ. ի. աւ. աց. ազ: || առաջնակ. կմ մնաստակալ խեռ: ռամկ. Նարոնոյ. կմ ցեն ընող հողոյ:

ՇԵ

Շեղ. ի. իւ. ից. իւք: || է արմատ շեղիլ բային, որով միրթ նշանակի շեղեալ. ծ խոտորեալ. կմ վրիպեալ, և կմ սխալեալ: Իսկ միրթ՝ շեղումն, ծ վրիպումն, կմ սխալումն, և կմ խոտորումն: Եւ 'ի ամանէ ծաղի բառս՝ առ 'ի շեղ: Բայց 'ի Յոբ ուղղ, ուր աւի, ոչ նկատեմ յիս գեբանին, որպէս լինիմ յայլում շեղին. նշանակի շեղն, զոր ակացես 'ի աեղւոջ փորում:

Շեղեմ. եցի. եա. ել: (ղորութիւն անցող.) || շեղեցուցանել. ծ վրիպեցուցանել, կմ խոտորեցուցանել. և կմ թիւրել:

Շեղեցուցանեմ. ցուցի. ցն. ել: (անցող.) || նոյն է ընդ վերնոյն:

Շեղիմ. եցայ. եաց. իլ: (ձայնակր.) || վրիպիլ. կմ խոտորիլ. կմ հակիլ. կմ թիւրիլ. և կմ սխալիլ: Լամբրոն:

Շեղջ. ի. իւ. ից. իւք: կմ ոց. օվք: || կոյտ. կմ դէզ արմտեաց, կմ պտղոց. յորդեից. դիականց, ոսկւոյ և արծաթոյ. և այլն: 2. Մնաց. 31. 6. և 7. և 9: Յոբ. 5. 26: Երգ. 7. 2:

Շեղջակոյտ. կուտի. իւ. ից. իւք: || շեղջ և կոյտ. կմ դէզ 'ի վր դիզի, կմ կոյտ 'ի վր կուտի: Իսկ միրթ շեղջակուտեալ. կմ դիզեցեալ և բարդեցեալ:

Շեղջակուտեմ. եցի. եա. ել: (ներգործ.) || շեղջաշեղջ կուտել. կմ կոյտ 'ի վր կուտի բարդել. կմ դիզելով դիզել. և ըստ այսմ յորժամ ղք բազմութիւն մեղաց իւրեանց մեծամեծ շեղջիւք է ծածկեցեալ, կմ ծանրաբեռնեալ՝ ասի՝ շեղջակուտեալ մեղք: 2. Տիմ. 3. 6:

Շեղջաշեղջ: (նախդրիւ հոլովի.) || շեղջ 'ի վր շեղջի պարզեալ. կմ շեղջակուտեալ. և կմ կոյտ կոյտ դիզեցեալ և ըստ այսմ ասի շեղջաշեղջ դէզ հնձոց, կմ ցորենոյ, և այլն: Սա վերի և աւելի գմակրայ, և նշանակէ՝ շեղջ շեղջ. կմ կոյտ կոյտ: ռամկ. ... Խորհ. 18. 23:

Շեղջեմ. եցի. եա. ել: (ներգործ.) || զցաբեալ, և կմ ղայլ ինչ իր կուտել. կամ բարդել. և կմ շեղջ շեղջ դումարել: ռամկ. ...: Նարեկ. կ:

Շեղտամեղա: (նախդրիւ հոլովի.) || ցափ. կմ խենէշ. կմ անձնական. և կմ պատշաճաւ կան: ռամկ. ... կմ ... և ըստ այսմ ասի՝ շեղտամեղա այր. կմ շեղտամեղա աղանմիտք. և այլն:

Շեղտամեղութ: || նոյն է ընդ վերնոյն:

Շեշտ. ի. իւ. ից. իւք: || յոյժ սուր, կամ ուղիղ և սրածայր. կմ սրութիւն թափանցող. կմ նուրբ. և կմ սաստիկ. և ըստ այսմ ասի. շեշտ սլաք, կմ նետ. շեշտ լեառն. շեշտ հարումն. շեշտ հնչիւն. և այլն: Եւ քաջամանէ առեալ երբեմն նշանակէ զօ և իցէ սլաքաւոր զէնս. որպիսի է նետն, աշտեայն, երկսայրաձիր դաշնակն. որ է ֆինճալ. կմ շամփրաձև զէնն, որ է շիշ: Իսկ 'ի քերականութեան. և յերաժշտաց շեշտ կոչի առանձ ինչ հնչման պարունակեալ ընդ ուղղակաւ, յորում ձայնն 'ի վեր առնի, և սուր ելանէ, որով անուանի և նշան նր յորջորջի, որ է այս. ՛: Գրիգոր վարի սա երբեմն մակբայօրէն. և նշանակէ՝ ուղիղ յարձակմամբ. կմ սուր մխեցմամբ, կմ սրապէս. կմ արագապէս. և կմ խակոյն: ըստ այնմ Խորէն. ա. գլ. 10. Շեշտ ընդ մէջ թիկանցն թափանցեալ ելաւ՝ յերկիր անկանի սլաքն. ծ սուր մխեցմամբ, կմ արագութեամբ մտեալ նետն ը կուրծսն, ելանէ ընդ թիկնամէջս: Սոյնպէս ասի և 'ի Յոբ ուղղն. Չկայնալիճն լի քարշեալ. և շեշտ կրծիցն զթափանցեալ. ծ և զնետն արագէս, կմ արագութեամբ թափանցեալ ընդ կուրծսն: ըստ այսմ է և այս. Շեշտ ընդ մէջ ձեղքէր վարելոց զամուր գլխանոցն. ծ խակոյն ձեղքէր ընդ մէջ զսաղաւարտն. 'ի հին պարծագիրս:

Շեշտակի: (մակբայ երադական) || սրանդ. կմ սուր թափանցմամբ. կմ փութանակի, կմ արագագոյն. և կմ խակոյն: ըստ այնմ Նարեկ. ղթ. Չերկիր բաժանեաց նշանաւ խաչին շեշտակի, քան թէ մախես ըղծովն պաւաղանաւն: ծ արագագոյն քան զմովսէս: ըստ այսմ ևս ասի՝ շեշտակի որոշիլ 'ի միմեանց. կմ շեշտակի անցանել. հատանել. ձեղքել. և այլն: ռամկօրէն ... կմ ... 'ի հին պարծագիրս:

Շեշտանշան. ի. իւ. ից. իւք: || նշան շեշտի, որ դնի 'ի վր շեշտաձայն տառից. որ է այս. ՛: Իսկ միրթ նշանեցեալ շեշտիւ. որպիսի է այս բառ. ցի՛ց:

Շեշտանշանեմ. եցի. եա. ել: (ներգործ.) || շեշտիւ նշանել զբառս. կմ զտառս. ըստ առնելոյ քերականաց:

Շեշտաւոր. ի. աւ. աց. ազ: || ունօղ զշեշտ. կմ շեշտիւ վարօղ. և կմ շեշտեալ: Բայց մասնաւորապէս առեալ նշանակի սուրնն՝ որ 'ի գործ ածէ զսլաքաւոր գործիս. որպիսիք են նետաձիգք. կմ կրօղք երկսայրաձիր դաշնակաց. և կմ շամփրաւորք. որք ռամկ. կոչին ... կմ ... և ըստ այսմ ասի 'ի հին պարծագիրս. վառեալ պատրաստեալ զաղեղնաւորս զշեշտաւորս, և զսուսերաւորս: Սոյնպէս և 'ի գիրս Խորէն. ա. գլ. 23. ասի. Եւ շեշտաւորքն 'ի սուսերս, և 'ի նիզակս վառեալք:

Շեշտեմ. եցի. եա. ել: (ներգործ.) || շեշտ առնել. ծ սրածայր առնել. և կմ սրացուցանել. և ըստ այսմ ասի. լերինք շեշտեալք. ծ սրացեալք. կամ շեշտել զնիզակս զբրդունս. ծ սրածայր առնել: միրթ ես սրապէս հարկանել. կմ սուր մխմամբ

թափանցեցուցանել. կմ փութանակի ան
ցուցանել. և կմ վաղվաղակի հատանել.
ով մինչ ասի՝ շեշտեալք տագնապաւ ըղ
ձլիւքս ընդ կուրծս զըրահաւորս. կմ իբրև
տապարօք շեշտեալ զծառ. ՚ի վայրկեան
կի հատեալ: ՚ի հին տպագրիս: Իսկ ըստ
քերականաց նշանակէ՝ շեշտիւ արտաբե-
րել, կմ ՚ի վեր սաստել զձայնն ՚ի յար-
տաբերութե. ով մինչ ասի. եւ այսդ պիղծ
՚ի գմանէ:

Շեշտոլոր. ի. իւ. ից. իւք: || Է բառ քերթո
ղական, որ ասի զետուից, ոյք յաւալուր ի-
րեանց ունին զշեշտն՝ որ պարունակի ընդ
ոլորակաւ. ով սուքա. սահմն. ջոլեր. այլ
կել. և այլն:

Շեշտալորակ. ի. աւ. աց. օք: || Նոյն է ընդ
վերնոյն:

Շեշտումն. տման. մամբ. մանց. մամբք: ||
սրապէս թափանցեցուցումն. կմ շեշտիւ
արտաբերութիւն: Բայց յատկապէս առեալ
նշանակի եղերումն ՚ի սուր. կմ սրութի.
և կմ սուր ծայր. և ըստ այսմ է ՚ի գիրս
Խորէն. ա. գլ. 11. ուր ասի զբրգաձև լեռ
նէ խիճքէ. թէ ըստ առորանիցն, երկքօ
րեիւ քաղաքաւոյան շրջապատեալ ձա
նապարհաւ. և առ փոքրփոքր ՚ի շեշտումն
անկեալ. ո՛ սակաւ առասակաւ ՚ի սուր ծայր
եղերեալ. կմ իբրև զբուրգ սրացեալ:

Շերամ. ոյ. ով. ոց. ովք: || Է որդն ինչ նը
ման թրթրոյ. նա է յառաջադոյն սերմն
ինչ մանր իբրև զկորեակ, զոր ՚ի գարնան
ծրարեալ ՚ի վարշամակի արկանեն ՚ի ծոց.
կմ յայլ տեղի ինչ ջերմուկ. ուր ջերմա
ցեալ՝ սկսանի կենդանանալ. և յորդն ձևա
նալ. և ապա կերեալ զմատաղ տերև թը
թենւոյ՝ մեծանայ. մինչև բազումք հասա
նեն ՚ի չափ ձկութի, որ է փոքր մատն:
Արդ՝ իբրև լնուն սոքա զհասակս՝ հիւսեն
զմարմնովք իւրեանց ՚ի բազմանպատիկ նուրբ
թելից զպարկ ինչ հանգոյն երկայնաձիգ
ձուոյ, և փակին ՚ի նմա իբրև ՚ի տափի: ՚ի
սոցանէ զոմանս շարեալ ՚ի թեզանի կա-
խեն ուրեք, որք ըստ ժամանակին թևա-
ւորեալք իբրև զթիթեռն՝ արտաքս ելա-
նեն, զորս ժողովեալ արկանեն յաման ինչ՝
ուր ծրտելով արտաքրեն զսերմն: Իսկ ըղ
մնացեալսն հեղձուցեալ ջրով՝ արկանեն
զպարկսն ՚ի ջերմաջերմ ջուր. կմ յեռա-
ցեալ թան մածնոյ, և ՚ի խառնելն զնո
գործւօք, թելքն ծայրս արձակեալ՝ սկսա
նին լուծանիլ. զորս ժողովեալ փաթու
թեն ՚ի վր գործեաց, և առնեն կարժս,
և այնք կոչին մետաքս, որ է ապրշում:
տաճկ. ապրշմ որդ:

Շերեփ. ի. իւ. եց. իւք: || Է գործի ինչ խո
հարանի իբրև զմեծ, և զընդարձակ գըր
գալ. որով հանեն ՚ի սանէ զարգանակ.
և կմ ՚ի գործածեն յայլ ինչ նման սմին:
Բայց սա մանաւանդ յաշխարհաբառ լե
զուիս ՚ի գործ ածի:

Շերտ. ի. իւ. եց. իւք: || հատուած փայտ-
տի ձեղքեցելոյ ընդ առկէս. ո՛ ընդ եր-
կայնութեն. և կմ փայտ՝ հերձեալ կմ կը
տորեալ ձիւղից ծառոց, զոր այրեն ՚ի վա
ռարանի: տաճկերէն՝ օթուն չուպուղը: 3.
Թագ. 18. 33. և 34: Եւ յայսմանէ առեալ
երբեմն շերտ կոչին և ևս իցէ հատուածք ա
տոց. կմ երկայն փայտք գերանաց, և այ
լոց նմանեաց. և ըստ այսմ ՚ի Նորէնկեղ.
խաչափայտն քնի կոչի շերտ տաշեցեալ:
Եւ ՚ի ղթ. շերտ անուանի հատուածն փայ
տի նոյեան տապանին. որ շնորհեցաւ ա
քոյն յակոբայ: ըստ այսմ է և Ծնն. 30.
37. ուր ասի. գաւազան շերտ դալար,
ընկուզի, և սօսւոյ. ո՛ գաւազանս դալար՝
հատուած ոստոց ընկուզի և սօսւոյ. զ՛ո գի
եօթանասնիցն զնեն առա սթխացին.
որ ծաղկի ՚ի սթխրաքս բառէն. որ է ըստ
յունաց շերտ. կմ փայտ նեաւ. կմ բան
գեղարդեան. և այլն: Սերթ և շերտ կո
չին իւրաքանչիւր մասնիկք սեխի, կմ խն
ձորոյ, և այլոց նմանեաց, հատեալք եր
կայն, և նեղ: տաճկ. տիլիմ:

Շերտաւոր. ի. աւ. աց. օք: || ունօղ զշերտ.
որով մերթ նշանակի նա՝ որ ունի զհատուածս
փայտի. կմ քրաւոր. և կմ մահակաւոր,
որ է սօփալը: Իսկ մերթ այն, որ ունի ըղ
տիլիմ: և ըստ այսմ ասի՝ շերտաւոր պտուղ
որպիսի են սեխք:

Շերտեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || շերտ
շերտս հերձանել զփայտ, կմ հատանել
զպտուղս. և այլն: տաճկ. օտուն եարմաք. կմ
պթուղը տիլիմ տիլիմ կէսմէք:

Շեփոր. կմ շիփոր. ի. կմ ոյ. իւ. ից. իւք:
|| Է բառ եբրայական, և նշանակէ զփող,
զոր հարկանեն ի պատերազմի. կմ յերեւ
ըի հանդէսս: տաճկ. զուռնայ. ըստ այսմ
Աղգաւ. ՚ի շեփոր եղջերաւոյ տալ նմա պատ
գամս պատուէրանաց. ո՛ փողով եղ.
ջերոյ: Եւ ՚ի Մծբն. ժն. ասի. լսեալ
ձայն շեփորայ. ո՛ փողոյ:

Շեփորայ. կմ շիփորայ. ի. իւ. ից. իւք: ||
շեփոր, որ է փող. ըստ այնմ Մծբն. ժէ.
երագափոյթ որոտմամբքն սաստկաձայն
շեփորայիցն. ո՛ փողոցն: և ՚ի գիրս Աղգաւ.
ասի՝ որոտընդոստ ահագնագոչ շեփորայիւք
այս է՝ փողովք:

Շ, Է

Շէկ. շեկի. աւ. աց. օք: || խարտեաշ. կմ
դեղին. Խորէն. յաշխարհագրութե:

Շէն. շինի. իւ. ից. օք: կմ շինու. ու. ուք:
|| բնակաւոր տեղի. և կմ կոչմն եր
կրի, ուր գոն բնակութիւնք մարդկան. և
արտորայք, և պարտէզք, և գիւղօրայք, ո-
րոյ ներհակն է անապատն. և կմ անշէն:
Եսայ. 16. 35: Աղթան. 8. 26: Իսկ մերթ առ
զանեղւոյ, կմ զքաղաքէ, որ է ՚ի բարւոք շի-
նութե, կմ ՚ի բարեկարգութե շինու-
ծոց և բնակութեց, որոյ ներհակն է աւե
րեալն, և անմարդաբնակ եղեալն: 1. Մակ.
8. 15: Զաք. 7. 7: ըստ այսմ է և Եսայ. 27.
10. ուր ասի. և որ ՚ի շէնն մնացէ. ո՛ որ
՚ի

՚ի շինութենէ մնացեալ իցէ, կամ որ շէն կայցէ։ Իսկ երբեմն նշանակէ գիւղ. կամ գիւղաքաղաք։ ռամկ. գեղ. կամ խասապայ։ Մատթ. 14. 15։ Մարկ. 8. 27։ Երբեմն և ՚ի շինումն. կամ շինուած։ ռամկ. շէնք։ Ոսկ. 1. հատ. իը։

Շի

Շիքող. կամ շինքող. շքեղ. եղբ. եղաց. օք։ || Ճարմանդ. կամ աղխ. որով եզերքըն զգեստուց է մետաքսեա շաղկապին։ ռամկ. ղօճով. կամ լօֆօսոփ։ Բայց յատկապէս առեալ նշանակէ սա զանազան ինչ փառաւոր կոճակաց, կամ շափառասաից, զորս կազմեին յոսկւոյ, կամ յոսկեթելից ճարտարս և շքեղ յօրինուածովք։ և շնորհէին թագաւորք ազգականաց իւրեանց, կամ մեծամեծ բարեկամաց առ ՚ի կրել զնա ՚ի կուրծս պատմուճանաց. կամ ՚ի կամարս մէջաց՝ ՚ի նշան մեծի ազատութե. կամ մտերիմ գոլոյ արքայի։ 1. Մակ. 10. 89։ և 14. 44։ ըստ այսմ է և 1. Մակ. 11. 58. ուր ասի. ետ նմա իշխանութի արկանել ծիրանիս. և իշխել կրել նշան շքեղ. զի և կարօղ լինել կրելոյ զնշան շքեղ. որ է սեռականն շիքող բառիս։ Բայց առաւել մերկայմամբ եգեալ կայ՝ նշան շքել։

Շիթ. շթի. իւ. ից. իւք։ || կայլակ. կամ կաթիլ. և կամ կաթուած. ռամկ. պուտ. կամ ճաթը։ Յոբ. 36. 27։ Եսայ. 40. 15։ ՚ի Հայր. հայրց. իզ։ Իսկ մերթ նմանութեբ շիթ կոչին փոքրիկ մասունք բանից. կամ այլոց իրաց։ Յոբ. 26. 14։

Շիթեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) || խայթուցանել հարկանելն ճանճից. կամ պիծակաց. մժեխաց. մեղուաց, և այլոց այսպիսեաց, որ և ասի խայթել. ռամկ. կծել։ ՚ի Հայր. հայրց. իզ։

Շիլ. շլի. իւ. ից. իւք։ || Թեքակն. զի նա որոյ աչքն է թիւր, կամ կողմնակի. սաստի նայել ուղիղ և համարձակ ոչ կարէ տեսանել զայն՝ զոր կամի. որ և ռամկօր. ասի շիլ. կամ շաշ։ Եւ կամ նշանակէ՝ կոյր ճառեսն այն, որ վասն սաստիկ նուաղութե ականն՝ զտեսանելն իւր յաչաց հալեցուցանէ. և սակս անեսանէ։ ռամկօր. հաճլաւր։ Ղեւտ. 21. 20։ ՚ի սմանէ ծագի բայս շլանալ. ուստի և ժրանալն. ՚ի բառէն ժիր։

Շիկագոյն. գունի. իւ. ից. իւք։ || առաւել շէկ. կամ խարտեաշագոյն. և կամ դեղնագոյն։

Շիկաթան. ի. իւ. ից. օք։ || շէկ թան. զի դեղնագոյն պայուր. որպիսի է այն, զոր կազմեն ՚ի կրնձոյ, և ՚ի մեղրէ, և ներկեն քրքմով, զի զաֆրանով։ ռամկօր. զէրտէ։ Մովսէսեան Ծննդ. 25. 30. Թանն սաղներայ կոչեցաւ շիկաթան, մի խարտեաշ գունոյ սպասն. կամ զի ներկեալ էր ընա յակօք շիկագոյն համեմիւք։

Շիկահերմիր. մրոյ. ով. ոց. ովք։ || կարմրագոյն խարտեաշ. կամ կարմիր հակեալ ՚ի շէկութեն, կամ ՚ի դեղնութե. որպիսի է գոյն հրոյ, կամ թուրինջոյ. Ելից. 26. 14։ ուստի Ելից. 36. 19. կոչի սոյնս սոսկ կարմիր։

Շիկաշէր. ի. աւ. աց. օք։ || ունօղ զշէկ հեր։ ռամկ. դեղին մազ ունօղ։

Շիկանամ. ացայ. ցիր. անալ։ (Ընդմիջ.) || շէկ լինել. կամ խարտեաշանալ. կամ դեղնագունով փայլել. և ըստ այսմ խմանի, մինչ ասի, շիկանայ գինին ՚ի յապակւոջ։

Շիկափոկ. ի. իւ. ից. իւք։ || շիկագոյն փոկ. կամ այն, որ է շէկ ըար, կամ դեղնին ջուան, և ըստ այսմ ասի, շիկափոկ պարան։ Խոր. Բ. պր. 47։

Շիկնիմ. եցայ. եա. իլ։ (Հայնակր.) || շէկ լինել. կամ խարտեաշանալ. և կամ դեղնագոյն գոլ։ Իսկ մերթ շառագունիլ. կամ կարմրանալ. որ մերթ ասի զերկաթոյ, կամ զայլոց հրահալեաց, յորժամ հրանան։ ՚ի Հայր. հայրց. իզ։ Իսկ մերթ զմարդոյ, յորժամ զամօթի հարկանի. և յայսմանէ առեալ երբեմն շիկնիլ ասի, ու և իցէ կերպիւ ամաչելն, կամ պատկառելն։ ըստ այսմ Լամբրօն. դու Բ. քնի խաչեալդ ոչ շիկնիս՝ բացախիս ՚ի նմանէ լինիլ։

Շիղ. շղի. իւ. ից. օք։ || նոյն է ընդ բառիս շիւղ. ուստի և ճիղն ընդ բառիս ճիւղ։ ՚ի Գիրս Ծծին խորհրդոց։

Շիղաբեր։ || տես զՇիւղաբեր։

Շիղջ. շղջի. աւ. աց. օք։ || շեղջ. կամ կոտակ. և կամ ժողով ջուրց, և նմանեաց։ Նարեկ. ժէ։ Եւ ՚ի սմանէ ծագի բառս ջրշեղջ։

Շիճուկ. շճկի. աւ. աց. օք։ || է թթու ջուրն մածնոյ. կամ սպասկանեաւ կաթին՝ և այլոց նմանեաց։ ՚ի սմանէ ծագի բայս շճիլ. զոր տեսցես ՚ի տեղւոջ իւրում։

Շինած. ոյ. ով. ոց. ովք։ || շինուած. կամ կերտուած. ռամկ. շէնք։ 1. Եզր. 5. 63։

Շինական. ի. աւ. աց. օք։ || գիւղական. կամ գեղջուկ. կամ երկրագործ. և կամ ռամիկ։ ռամկ. գեղացի։ Խորէն. Բ. պր. 7։ Նարեկ. Փ։ ՚ի Հայր. հայրց. Ի։

Շինականագոյն. գունի. իւ. ից. իւք։ || առաւել գռեհիկ. կամ առաւել ռամիկ. և կամ գեղջկագոյն։ ռամկ. հովիւ. և աւաճ. էօղլան։ Իսկ մերթ է մակբայ. մանաւանդ մինչ ասի՝ շինականագոյնս. և նշանակէ գռեհկութբ, կամ գեղջկաբար. կամ տմարդութբ. և կամ ըրտութբ։ ռամկ. հովիւ հովիւ։ 2. Մակ. 14. 30։

Շինակեաց. կեցի. աւ. աց. օք։ || կեցող ՚ի շէնս, կամ բնակօղ ՚ի գիւղօրէս. ռամկ. գեղը կեցօղ։ Ագաթ.։

Շինամէջ. միջի. իւ. աց. օք։ || միջին տեղի շինից. կամ շինուածոց. և ըստ այսմ ասի ազանիլ ՚ի շինամէջս. կամ հասանիլ ՚ի շինամէջ քաղաքին. և այլն։ Ագաթ.։

Շինանիստ։ (Նախդրիւ հոլովի.) || շէնք գիւղօրէից. կամ շինուածք քաղաքաց. կամ աւանաց, և այլոց նմանեաց, յորս է նիստ բնակութե մարդկան։ և ըստ այսմ ասի ծովեզերեայ շինանիստ. կամ ապականել զշինանիստ քաղաքաց և աւանաց. և այլն։ Ագաթ.։ և ՚ի հին պարգմագիրս։ Իսկ մերթ նը

շանակէ զբնակեալն 'ի շէնս:

Շինիգղ: || տես զՇինիգղ: 1. Մակ. 10. 89:

Շինեմ. եցի. եա. ել: (ներգործ.) || կերտել. կամ կառուցանել. և կամ կազմել զի՛ նորաձեւ. ռամկ. եա շինել: Ծննդ. 4. 17: և 8. 20. Մատ. 7. 26: Իսկ մերթ դնի փոխանակ առնելոյ. կամ գործելոյ: Ծննդ. 2. 22: Մերթ եւ նմանութբ առեալ նշանակէ՝ բարեզարդել. կամ զարդացուցանել 'ի բարիս. կամ օգտեցուցանել. և կամ շահեցուցանել. Գործ. 9. 31: 1. Կորն. 8. 1: և 14. 4. և 17: Բայց 1. Կորն. 8. 10. ուր ասի. Ոչ ապաքէն շինիցի ուտել զզոհելոյն. նշանակէ՝ յորդորել. կամ հրապուրել ընդդէմ խղճի մտաց:

Շինուած. ծոյ. ով. ոց. ովք: || կերտուած. կամ կազմուած, այս բոլոր կառուցմունք տանց. տաճարաց. քաղաքաց. և այլոց նըմանեաց. ռամկ. շէնք. և տաճկերէն եափու: Եզեկ. 40. 2: Մատ. 24. 1 Իսկ մերթ շինութիւն. կամ կերտութիւն: 1. Մնաց. 26. 27: Եւ այսմանէ առեալ երբեմն դնի փոխանակ շինութեան. այս շահի. կամ օգտի: 1. Կորն. 14. 12. և 26: Եփես. 4. 16:

Շինութիւն. թեան: || շինուածն. կամ կերտուածն Բայց յատկապէս առեալ նշանակի սովորե շէն գոլն երկրի. կամ քաղաքի. որ է լինելութիւն, և բարեկարգութիւն բնակութեանց, և շինուածոց. և բազմութիւն բնակչաց, և յաջողութիւն ամ բարեաց նց: 1. Թեսաղ. 5. 3: Մերթ եւ առեալ լինի փոխանակ շինելոյ զայլս. կամ փոխանակ օգտի, և կամ շահու: Հռոմ. 14. 19: և 15. 2: 1. Կորնթ. 14. 3. և 5:

Շիշ. շշի. իւ. ից. իւք: || է անօթ ինչ մեծագին կազմեալ 'ի ապակէ իմիք ազնուի կճոյ, որ կոչի եղնգնաքար. զի ունի ըզգոյն եղնգան մարդոյ: Զսա 'ի հնումն շինէին նեղափոր բերանով, և տանձաձև, առանց իրիք ճարմանդի, այս ղուլփի: և այն չափ քերէին զնա ճախարակաւ. մինչև լինէր նուրբ և անօսր իբրև զապակի. վասն որոյ և դիւրաւ բեկանիւր: 4. Թագ. 21. 13: Մատ. 26. 7: Մարկ. 14. 3: Ղուկ. 7. 37: Եւ յայսմանէ առեալ շիշ կոչին ամ և իցէ ամանք իւղոց, և մեծագին ըմպելեաց. թէ լիցեն կազմեցեալ յապակւոյ, թէ յախճապակեաց. այս 'ի ճենաճէնէ. կամ 'ի չինիէ. և թէ յայլմէ նիւթոյ:

Շիշակ. ի. աւ. աց. օք: || ծնունդ խոյոյ և մաքւոյ. որ է գառն. կամ նորահաս ոչխարն. ուր և ծնունդն ցլու, և կովու կոչի մոզի, որ է զուարակ:

Շիջանիմ. շիջայ, ջիր. իլ: (ձայնակր.) || դադարել 'ի լուցմանէ. կամ պակասել 'ի վառմանէ. որ ասի զճրագաց. զհրոյ. զլուցայ. և զնմանեաց: ռամկ. մարիլ: Առակ. 31. 18: Եսայ 66. 24: Եզեկ. 20. 47: ըստ այսմ և դադարելն լուսոյ 'ի գոյութէ, կամ 'ի պայծառութէ՝ շիջանել ասի: Յոբ. 18. 5: Առակ. 13. 9: և 20. 20: Մերթ եւ նմանութբ առեալ լինի փոխանակ բայիս կործել, կամ ապականել կամ ջնջել. կամ ամենեւին բառնալ 'ի միջոյ: և ըստ այսմ ասի. շիջանել պարծանաց. փառաց. ամբարտաւանութե. հօգւոյ. կամ մարդոյ. և այլոց նըմանեաց: Իմաստ. 2. 3: Եսայ. 43. 17: մերթ եւ զիջանել. կամ հանդարտել. և կամ դադարել. ոպ մինչ ասեմք. շիջանել սրտմտութե. ծարաւոյ. եռանդեան. և այլն: 4. Թագ. 22. 17: Եզեկ. 7. 20:

Շիջանուտ. նուտի. իւ. ից. իւք: || շիջանելի. կամ այն, որ կարէ շիջանել, որպիսի է հուր կենցաղոյս: Աճգաբ: և 'ի Շարակնոց:

Շիջելափառ: (նախդրիւ հոլովի.) || նա, որոյ փառքն, կամ համբաւն պարծանաց շիջեալ է. այս պակասեալ. կամ բնաջինջ եղեալ: Յոբ. 30. 8:

Շիջուցանեմ. ջուցի. ջո. անել. (անցողակ.) || 'ի լուցեալ գոլոյ դադարեցուցանել. կամ 'ի վառմանէ պակասեցուցանել: ռամկ. մարել: 2. Մնաց. 29. 7: Եսայ. 42. 3: Իսկ մերթ անդրադարձաբար առեալ՝ նշանակէ կորուսանել. կամ ջնջել. կամ 'ի միջոյ բառնալ. և կամ խափանել զփառս՝ կամ զպարծանս, կամ զպարգևս հոգւոյն սրբոյ. և այլն: Եփե. 14. 9: 1. Թեսաղ. 5. 19: Ըստ այսմ է և 2. Թագ. 21. 17. ուր ասի. և ոչ շիջուցես զճրագդ իէլի. այս զի մի կորուսցես զփառս. կամ զվայելչութիւնս իէլեան տոհմին. որ էր դաւիթ. կամ թագաւորութիւննք: Մերթ եւ զիջուցանել. կամ հանդարտեցուցանել: և կամ դադարեցուցանել զսրտմտութե. կամ զեռանդն սիրոյ. և կամ զծարաւ. և այլն: Երգ. 8. 7: Եբրէ. 4. 4:

Շիր. շրի. իւ. ից. օք: || կաթն, որ կթի 'ի սահանց. և ըստ այսմ ծագի 'ի սմանէ բառս հաւշըրակ. որ է կաթնակեր: Իսկ մերթ շիր կոչին ամ և իցէ օշարակք. կամ հիւթք քամեալք 'ի պտղոց. ոպ 'ի խաղողոյ. 'ի թթոյ. 'ի հատից նռան. և այլն: ռամկ. շէրէ:

Շիրիկ. շիրկի. աւ. աց. օք: || իւղ հանեալ 'ի շուշմայէ. այս 'ի սուսամէ. որ է քան ըզձէթ նուաստ. և ճաշակելեաց ծանր: ռամկ. շըրըղան:

Շիրիմ. րմի. աւ. աց. օք: || գամբարան, որ է տապան, կամ գերեզման: Ծննդ. 23. 6. և 20: 2. Մակ. 12. 39. Մատ. 23. 29:

Շիրմաւոր. ի. աւ. աց. օք: || ունօղ զշիրիմ. այս զգերեզման. կամ եղեալ 'ի գամբարանի. կամ 'ի տապանի: Նարեկ. ղթ:

Շիճանք. ճնաց. նօք: (անեզական.) || աղխարութիւն. կամ աղաղութիւն. կամ ատող, և տրտմութիւն:

Շիմարանք. նաց. նօք: (անեզ.) || վարանք. կամ տարակուսութիւն. կամ տարակուսանօք տարտամ մնալն: ռամկ. [illegible]:

Շիմարիմ: || տես զՇմարել:

Շիւղ. ի. իւ. ից. օք: կամ ոյ. ով. ոց. ովք: || շիղ. որ է բարակ ծայրիկ ճիւղոց. կամ եղեգնիկ խոտոյ. կամ ժեռ յարդեց. և կամ ասղնաձև նուրբ մանունիկ փայտի. և այլք

Digitized by Google

նմանք. որք գիւղաւ հոսհոսին, և վարին 'ի հողմոյ: ռամկօր. չէգ: Մատթ. 7. 3. և 4: Ղուկ. 6. 41. և 42: Մերթ ևս շիւղ կոչին փոքրիկ, և բարակ ձիւղք. կմ՛ ոստք. զոր ոլխոխ եբեր աղաւնին առ Նոյ: Ծննդ. 8. 11:

Շիւղաբեր. ի. իւ. եց. կմ՛ ալ. ալք: || բերող, կմ՛ ածօղ զշիւղս. որպիսի է Թռչունն, 'ի շինելն զբոյն:

Շիւղագէտ. գիտի. աւ. ալ. օք: || գիտօղ. կմ՛ նկատօղ զշիւղս. որ առի զնոցանէ, որք զշիւղանման փոքրիկ յանցանս եղբօրն տեսանեն՝ զանց առնելով զգերանաձև մեղօք իւրեանց: Լամբրծ:

Շիփոր: || տես զՇեփոր:

Շիփորայ: || տես զՇեփորայ:

ՇԼ

Շլագոյն. գունի. իւ. եց. իւք: || առաւել շէլ: ռամկ. խէթ շաշի. կմ՛ խէթ չէլ: Բայց հասարակօրէն նշանակէ սովոր աղօտագոյն. կմ՛ նսեմագոյն, կմ՛ մթագոյն, կմ՛ թխագոյն, և կմ՛ սևագոյն: և այս ասի զլուսաւորաց, կմ՛ զաչկաց, զարծաթոյ, զպղնձոյ. զարամից, և զայլոց գունաւորաց: Ղևտ. 13. 4. և 6. և 21. և 26. և 56:

Շլամիտ. մտի. իւ. աց. օք: || ունօղ զշլացեալ միտս. որով նշանակի կոյրն մտօք. կմ՛ անմիտ. կմ՛ յիմար. և կմ՛ ապիմար: ռամկ. ղաշխէր. կմ՛ խենթ: Մեթբն. ժ:

Շլամտութիւն. թեան: || շլացութիւն մտաց. կմ՛ անմտութիւն. կմ՛ յիմարութիւն. և կմ՛ ապիմարութիւն: ռամկօր. ղաշխնութիւն. կամ խենթութիւն:

Շլանամ. ացայ. ցիր. անալ: (ընդ. միջ.) || շէլ լինել. կմ՛ կուրանալ. կմ՛ միգապատ լինել աչաց. կամ խաւարիլ տեսանելեաց: ռամկ. շաշի, կմ՛ [illegible] ըլլալ. կմ՛ աչքէ խաւարիլ ըլլալ. և կմ՛ կուրնալ. Յէր. 17. 7: և Եսայ. 44. 18: Իսկ յայսմանէ առեալ, երբեմն նշանակէ աղօտանալ. կմ՛ նսեմանալ. կմ՛ մթանալ. կմ՛ թխանալ. և կամ սևանալ. և ըստ այսմ ասի շլանալ լուսաւորաց երկնից. կմ՛ ոսկւոյ. կմ՛ արծաթոյ. և կմ՛ այլոց փայլուն. և պայծառ իրաց. ռամկ. մթննալ. կմ՛ սևնալ: Ողբ. 4. 1:

Շլացութիւն. թեան: || շէլ գոլն. կմ՛ մէգ և մառախուղ աչաց, կմ՛ մթագնութիւն տեսանելեաց. և կմ՛ կուրութիւն. թէ աչաց իցէ, և թէ մտաց: 2. Օրին. 28. 28: 4. Թագ. 6. 18: Իմաստ. 19. 16: որ Ծննդ. 19. 11. կոչի բացորձակապէս կուրութիւն: Իսկ մերթ ո՛ և իցէ նսեմութիւն. կմ՛ մթութիւն, կմ՛ թխութիւն. և կմ՛ սևութիւն:

Շլացուցանեմ. ցուցի. ցո՛. անել: (անցող.) || շէլ առնել. կմ՛ մթագնել զաչս. կամ կուրացուցանել: Իսկ մերթ խաւարեցուցանել. կմ՛ նսեմացուցանել. կմ՛ թխացուցանել. և կմ՛ սևացուցանել: ռամկ. կուրցնել. կմ՛ մթնցնել. կմ՛ սևցնել: Իմաստ. 4. 12: և Կիւրղի Եղծն. ժդ:

Շլոտոս. ի. իւ. եց. իւք. կմ՛ աւ. աց. օք: || է բառ յունական. որ 'ի բարբառս նց կոչի քլոռոս. այս և բառս՝ արդէն յոլովոյն 'ի նո ածքի. և այսպէս անուանեալ շլոտոս. նշանակի ունօղն զգոյն գալար խոտոյ, կմ՛ կանաչ. կմ՛ քլքմագոյն, և կմ՛ ծծմբագոյն: ռամկ. կանանչ. կմ՛ փօփխի. կամ [illegible]: Յայտ. 6. 8:

Շլոր. որոյ. ով. ոց. ովք: || է ազգ ինչ պտղողս, որ և կոչի գամմոն: ռամկ. ալուչ:

Շլորենի. նւոյ. եաւ. եաց. եօք: || ծառ շլորոյ: ռամկ. ալուչի ծառ:

Շլութիւն. թեան: || տես զՇլացութիւն: Կիւրղի Եղծն. ժէ:

ՇԿ

Շկահեմ. եցի. եա՛. ել: (չէզոք.) || հանել զշկահիւնս. կմ՛ զշաչիւնս. և կմ՛ զձայն ցնցման: ռամկ. խժժալ. կմ՛ խըժխըշոց հանել:

Շկահիւն: (նախդրիւ հոլովի.) || շառաչիւն. կր ձայն դղրդման, կմ՛ թնդման. և կմ՛ հայթման եղեալ 'ի քարշմանէ ակեղանց, կմ՛ 'ի շարժմանէ սռնակաց. 'ի ձօձմանէ նիզակաց, կմ՛ յարձակմանէ զօրացաց. կմ՛ յընթացմանէ ոտից. և կմ՛ 'ի ցնցմանէ ո՛ և իցէ իրաց: ռամկ. խժժոց. կմ՛ խըժխըշոց: 2. Մակ. 5. 3:

Շկահուած: || նոյն է ընդ վերնոյն:

ՇՂ

Շղագիր. գրի. իւ. եց. օք: || գիր գրեցեալ շեղով. կմ՛ շղանման գրչաւ. և յայսմանէ առեալ շղագիր կոչի նօտր գիրն՝ գրեցեալ բարակ իբրև զշիւղ՝ զորպիսիս գրեն երբեմն ուսումնականք:

Շղաշատեա. տեաց. իւ. եց. օք: || նրբագոյն և շառագոյն տեռ. կր կարմրագարդ քօղ, կմ՛ արտաքին ծածկոյթ հանդ. 'ի գործել 'ի սաստիկ նրբանիւթ թելից մետաքսի, կմ՛ բեհեզոյ. զոր արկանէին կանայքն եբրայեցւոց զգլխով. կամ զանձամբք իւրեանց՝ յորժամ յամենան 'ի հրապարակ ելանէին. զորոյ եզերս երբեմն նկարէին ոսկեհուռն կիտուածովք իբրև զփեղկութանի. որով զարդարիւր բոլոր անձն նց. որպիսի է այժմ քօղն հարսանց. նաև նրբանիւթ. և մեծագին սաւանն, զոր մեծազգի կանայք արկանեն զանձամբք իւրեանց: Յուդիթ. 16. 10. Եսայ. 3. 23:

Շղթայ. ի. իւ. ից. իւք: || երկաթեղէն կապանք գործեցեալ յօղից ընդ իրեարս աղխեցելոց. ռամկօր. զինջիլ: 3. Մակ. 4. 8: Ամբ. 5. 3: Գործ. 12. 7. Այնպէս շղթայ կոչին ոսկեղէն, կմ՛ արծաթեղէն զարդքն, որք կազմին իբրև զբարակ լարս 'ի մանրէկ օղից ընդ միմեանս ագուցելոց. որպիսիք են այնք, զորոց կախեն զփոքրիկ ժամացոյցս. կմ՛ զայլ ինչ նման:

Շղթայագործ. ի. աւ. աց. օք: կմ՛ իւ. ից. իւք: || արուեստաւոր, որ գործէ զշղթայս:

Digitized by Google

թայս։ տամկ. զինճիլճի։ Իսկ մերթ նշա-
նակէ զգործեալն իբրև զշղթայ. կամ զկապ
մեռլոյն շղթայակերպ հիւսմամբ. և ըստ
այսմ կապքն տախտակին զատասաանի,
ըստ որում կազմեցան յոսկւոյ շղթայօրէն
հիւսմամբ՝ շղթայագործ առացան։ Ելից.
28. 22. և 24. և 25. և 30։ ըստ այսմ և 2.
Մնաց. 3. 16. շղթայագործ անուանեցան
պղնձեղէն զարդք ինչ գործեալք շղթայօ
րէն, կամ վանդակակերպ հիւսմամբ. ո-
րովք շրջապատեալք էին գլխոյակս սեանց՝
կարգ առ կարգ կախելով զնո, ընդ որոց
միջոցն իբրև ընդ ծակս վանդակաց երև-
էին վայելուչ յօրինուածք խոյակացն։
որպ յայտ է 3. Թագ. 7. 17. և 18։ Մերթ
և շղթայագործ կոչին յօրինուածքն քան-
դակեալք ՚ի վ՚ր տախտակի. կամ այլոց նիւ
թոց, յորս աղխաղխեն ընդ միմեանս ձևք
ընդ ձևոց, կամ օղք ընդ օղից համագոյն շղ
թայի։ 2. Մնաց. 3. 5։

Շղթայակերպ. ի. ին. ից. իւք։ ‖ ունօղ ըզ
կերպ և զնմանութիւն շղթայի. կամ համագոյն
շղթայից։

Շղթայատար. ի. ին. ից. իւք։ ‖ շղթայա-
շար. որ ՚ի շղթայս շարեալ. որպ և փոխա-
նակ ասելոյ՝ մարգարտաշար. ասի մար-
գարտատող. զարմն ընկգոյն առացի ՚ի
բառն տող. և տողել։ Իսկ մերթ շղթայ
ագործ. կամ շղթայակերպ։ ըստ այսմ խօ-
րէն. Ք. գլ. 45. Եւ այնուհետև շղթայատար կա
րիւք երևեցանել վերուստ ՚ի վայր. որ շղ
թայագործ պարանաւ։

Շղթայեմ. եցի. եա. եալ։ (Ներգործ.) ‖ աղխ
աղխել. կամ օղ ընդ օղի ագուցանել. և
կամ շաղկապել ընդ միմեանս զբաղմութիւն
ինչ իբրև զօղս շղթայից։ Մերթ և նը
շանակէ՝ կապել զոք շղթայիւք. կամ պըր
կել յերկաթեղէն կապանս։ տամկ. զինճի-
ռէ զուրմէք։

Շղթայօրէն։ (Մակբայ. և մերթ վարի իբ-
րև զածական.) ‖ շղթայաձևս. կամ համագոյն
շղթայի. և կամ շղթայակերպ։ տամկ. զին
ճիլ իպէի. կամ զինճիլլէմէ։

Շղոմնպար։ ‖ տե՛ս զՇղոմնարար։ Խորէն.
Բ. գլ. 57։

Շղումարարոյ. ի. ին. ից. իւք։ ‖ տե՛ս զՇղո
ղոմնարարոյ։ ՚ի հին տպագիրս։

Շղաբարարոյ. ի. ին. ից. իւք։ ‖ ունօղ
զքարս դիւաձայնօղս. կամ սիրող զդաւփշտա
կութիւն, կամ զկոպտաբարս. և կամ զժնէաբա
րոյ։ ՚ի հին տպագիրս։

Շ Ճ

Շճիմ. եցայ. եայց. իլ։ (Ձայնական.) ‖ ծա
գէ սա ՚ի շիճճայ բառէս, որ է մածեալ
թթու ջուրն. ուստի բառս չճիլ՝ նշա
նակէ արարականելով՝ կամ նեխելով ՚ի ջուր
լուծանիլ, կամ ջրանալ. որպ շճեալն լինի
անպիտան. որպ համադխալի կաթին, կամ մած
նոյ. կամ մեղու, և այլոց նմանեաց։ տամկ։
սուզէլմէք, կամ խըւէլմէք չըլչըմէք։ Յոբ. 21. 24։

Շ Մ

Շմոր. որոյ. ով. ոց. ովք։ ‖ է տամկա շմ
մորել բային, որով նշանակի մոլար.
կամ սխալ. և կամ վրիպեալ։ Եւ կամ մոլո-
րութիւն. կամ սխալանս. և կամ վրիպանս։
Իսկ մերթ խառնեալ. կամ աղմկեալ. կամ
վրդովեալ։ Մերթ և խառնութիւն. կամ
վրդովմունք. և կամ աղմուկ։ և ըստ այսմ ա-
սի ՚ի հին տպագիրս. Սա կալաւ ընդ հը-
ռովմայեցիս շմոր մեծ, որ զմեծ խառնակ։

Շմորեցուցանեմ. ցուցի. ցո. եալ։ (անցող.)
‖ մոլորեցուցանել. կամ վրիպեցուցանել.
և կամ ՚ի սխալանս արկանել։ Իսկ մերթ վրդո
վել. կամ խառնել. և կամ աղմկել։

Շմորիմ. եցայ. եայց. իլ։ (Ձայնակր.) ‖ մո
լորիլ. կամ վրիպիլ. և կամ սխալիլ։ Իսկ մերթ
խառնիլ. կամ վրդովիլ. կամ ամբոխիլ. և կամ
աղմկիլ։

Շմորութիւն. թեան։ ‖ մոլորութիւն. կամ վրի
պակ. և կամ սխալանս։ Իսկ մերթ վրդովք.
կամ աղմուկ. և կամ խառնութիւն։

Շ Ն

Շնաբարոյ. ի. ին. ից. իւք։ ‖ ունօղ ըզ
բարս, կամ զբնութիւն շան, որով մերթ
նշանակի մոլեալն ՚ի գործ շնութեան. կամ
սաստիկ վաւաշոտ. կամ մաշեալ ՚ի զազիր
գործս աղտեղութեան։ Եւ մերթ
կատաղի. կամ գժնեայ. կամ ժանտաբարոյ.
կամ լիրբ, և անամօթ։ 1. Թագ. 25. 3։

Շնակ. ի. ու. աց. օք։ ‖ տե՛ս զՇնիկ։

Շնական. ի. աւ. աց. օք։ ‖ շնային, որ այն
ամ, որ շանց է, կամ առ շունս վերաբե-
րի. և ըստ այսմ ասիան այն, որով զք
չափ ուտէ, ոչ յագի, այլ միշտ քաղցեա
իբրև զշուն, կոչի շնական քաղց։ Բայց
մանաւանդ որպէս առեալ է առ անուա-
նադրաւոր փիլիսոփայից. որոց հետևողքն
էր անտարբերութեան։ Սոքա մերժելով զբա-
րութիւս բնական, և զարուեստս առա-
սուականս՝ միայն ըստ լինելով մերկ բա
րոյական փիլիսոփայութեան։ Օրէնք որ նչ
պարապել յանձնս զկրթութեան առաքի
նութեանց, մինչև ոչ համարէին ամօթ իւ
րև զշուն հրապարակաւ խառնակիլ ընդ
կանանց։ Իսկ զմարդիկ շնային կոչա-
կանութեան՝ ծաղրելով մոլութեանց խածանելոյ։ Եւ յ
ղագս այսր անուանեալ եղեն ՚ի յոյն
բարբառ կինիկօս. և ՚ի մեզ շնականք. իբր
թէ շնաբարոյք, առնելով զայս անուն նախ.
՚ի համալսարանէն անախտեանց նոցին.
ւոյն իւրեանց, որ կոչիւր շնասարգենն։
՚ի գիրս շաճիկ քրեկոփոցին։ և գեղեցիկ տես
իւնին։

Շնամ. ացայ. ցիա. ալ։ (ընդ. Չիք) ‖ խառ-
նակիլն ընդ միմեանս զարշապար առոյ
անձանեաց, որպ կանանցն ամ ընդ ա-
րամբի կնոջ. կամ կնոջ արամբիւոյ է այն
կանանցաց։ որոց միոյն թէև ազատ իցէ.
տակս.

տակաւին խառնակիլն ինչ է շնալ: Արդ՝ այս առեալ լինի 'ի շանց. քանզի ասի շը-նալ. իբր թէ շուն լինել. ըստ որում ա-մօթութիւն շանց ոչ խորշել զզուգակիցս, այլ խառնակիլ ընդ որոց և իցէ: Եզեկ. 20. 14: Երեմ. 29. 23: Ովս. 4. 13: Մերթ և ս-նմանութբ առեալ 'ի սբ գիրս՝ շնալ ասի թողուլն հաւատացելոց զԱծ, և պաշտելն զկուռս. և այս՝ ըստ որում խօսեցեալ են ընդ հաւատով. ոճ կին՝ առն: Երեմ. 3. 9: Եզեկ. 23. 37:

Շնառ. ի. ին. ից. իւք: || Նա, զոր խածեալ է կատաղած շունն, որոյ ժահրն ձգեալ զի ընդ արեան մարդոյ, և թունաւորեալ զայն հասուցանէ նմա զբաղում վտանգս, ոճ և զկատաղութիւն ապառնանէ, եթէ ոչ անմի-ջապէս դարմանեսցեն զխածուածն: Մերթ և նշանակի ասմամբ ուխտօղն զառս, ՚ի պղտորիս շանց. և կմ շնաբարոյն:

Շնասարգեան. ենի: || Է անուն համալսա-րանի երկք, որ էր յատտիկէ, յորմէ յա-ռաջեցաւ անուանեալն հեզենիակն շնա-կան փիլիսոփայից: Արդ՝ կոչեցաւ առ շնասարգեան 'ի սպիտակ շանէ միոջէ. զոր մէ առասպելաբանեն հեթանոսք, թէ 'ի մատուցանելն դիցուհւոյ զզոհս՝ յափշտա-կեալ շանն այնորիկ զազդերն զոհին, եած յայս համալսարան:

Շնացող. ողի. ին. աց. օք: || գործող զշնու-թիւն: Ղեւտ. 20. 10: Առակ. 30. 20: Իսկ եր-բեմն նմանութբ առեալ ասի զնոցանէ, որ թողեալ զԱծ՝ որում խօսեցեալ են հա-ւատով՝ յարին 'ի կուռս. կմ 'ի սէր աշ-խարհիս. և կամ 'ի մեղս: Մատթ. 12. 39: Յակոբ. 4. 4:

Շնթեմ. եցի. եա. եալ: (Ներգործ. և մերթ չէզոք.) || ողոքել. կմ փաղաքշել. կմ շո-ղոքորթել. կմ 'ի շնորհունս խօսել, ոճ առ-նեն ոմանք մեծատանց. կմ իշխանաց, առ 'ի ընդունել ինչ 'ի նոցանէ. ® այնմ 'ի վերա հայցէ. Միայնակեաց խրատուն, զպա-կասուն որովայնին հայցէ և զբոլ մտայն լնու, և ոչ շնթէ իբրև մեծատան, զի և ոչ շողոքորթէ զմեծատունն առ 'ի ընդու-նել ինչ 'ի նմանէ: Եւ յայլ օրինակս ասի. Եւ ոչ ողոքէ զմեծատունս: Ուստի առ-տէն բառս՝ Իէըն, է աւելորդ. ոճ յայտ է և 'ի յունականէն:

Շնիկ: || Շնակ, որ է փոքր շուն: Բայց սա է յատկապէս անուն համաստեղութեան, զոր անուանես 'ի բառն, Շուն:

Շնխաղող. ի. ին. ից. իւք: || Է պտուղ ինչ բոլորակ ըստ մեծութեան մանր սխտորն, կակուղ և փափուկ և ջրայլն նման խա-ղողոյ, լինի սպիտակ, կարմիր, դեղին, և սեաւ: Բուսանի 'ի թուփ խոտոյ. ունի զբազում օգտութիւն 'ի դեղորայս. որ և ուռի. ասի՝ Շնխաղող. ®Շան խաղող: և տաճ կերէն փեօբել խաղխալլա:

Շնորհ. ի. ին. կմ աւ. աց. օք: (մանաւանդ վերին յոգնականապէս.) || ձիր. կմ պար-գև. կմ ողորմութիւն. կմ երախտիք. և կմ բարերարութիւն: Ծննդ. 24. 49: Ղուկ. 6. 32. և 33: Հռոմ. 11. 29: Իսկ մերթ ընդունե-լի կմ հաճելի լինելն, և կմ սիրելի գոլն ումեք: Ծննդ. 39. 21: Ելից. 11. 3: Տոբ. 1. 13: Գործ. 2. 47: ըստ այսմ և առեալ լի-նի 'ի բազում տեղիս 'ի սբ գիրս, մինչ ա-սի, եթէ գտի շնորհս յաչս քո. կմ առա-ջի քոյ. իբր թէ, եթէ հաճոյ եմ քեզ. կմ եթէ սիրես զիս. ոճ Ծննդ. 6. 8: և 18. 3: և 30. 27: 2. Թագ. 14. 22. և այլն: Իսկ մերթ վայելչութիւն. կմ շքեղութիւն. կամ փառաւորութիւն, և կամ պայծառութիւն: Եսթ. 15. 17: Երբեմն և գթութիւն. կամ օգտութիւն. կմ քաղցրութիւն սիրոյ, և կմ քերկրութիւն սրտի, որպիսի է այն, որ պատ-ճառի 'ի բանից հոգեխաղութեան և շնորհա-զարդ վարդապետաց: Եփես. 4. 29: ըստ այսմ է և 'ի Յո օրհնեն ասի. Այլ միշտ խօսել կամիւ քոյին, 'ի շնորհ 'ի շահելս ըստ կմն: Մերթ և աղնուութիւն. կմ այն որ առիթ ժելլի առնէ զկին. և ըստ այսմ քաղցր ձա-շակն կերակրոց, կմ ըմպելեաց՝ կոչի շը-նորհ նց: 2. Մակ. 15. 40: Իբրև նշանա-կէ, գոհութիւն. կմ շնորհակալութիւն: Հռոմ. 6. 17: 1. Կորն. 15. 57: 2. Կորն. 2. 14: և 8. 16: Եւ մերթ՝ մարդահաճութիւն. կմ երես-պաշտութիւն. և կմ ակնառութիւն. որով ոք շնորհունս առնէ ումեք: Ոսէէ. 2. հատ. ժը. և լա: Իսկ ըստ աստուածաբանից շնորհք կոչի ամայն օգնականութիւնն առեալ աստ-ծուածոց վերի՝ առ 'ի պատրաստել զմեզ 'ի յընդունելութիւն սրբականական շնորհաց: Եւ կմ սրբականական պարգևն հեղեալ յմզ 'ի հո-գին. որով արդարանամք մք. որ և կոչի հաճոյարար: 1. Կորն. 15. 10: 2. Կորն. 6. 1: Իսկ երբեմն ընդ բայի շարակցի, ոճ տես ցես զկնի:

Շնորհ ունիմ. շնորհ կալայ. կալայց. կա-լեալ. կալջիր. շնորհ ունիլ: || գ գոհա-նալ. կմ գոհութիւն մատուցանել. և կմ շնորհակալ լինել: 2. Մակ. 3. 33: և 9. 20: 3. Մակ. 5. 10: 1. Տիմ. 1. 12:

Շնորհս առնել ումեք: || գ զհաճոյական ինչ առնել ումեք. կմ վարել ® հաճոյից և ® ախորժման ուրուք. և կմ շնորհունս առնել: ռամկ. խաթըր խօշ անել. կմ խաթ-րը նայել: Գործ. 24. 27: և 25. 9: Ոսէէ. 1. հատ. իէ:

Շնորհաբաշխ: (Նախադրիւ հոլովի.) || բաշ-խօղ. կմ մատակարարօղ շնորհաց. կամ պարգևատու: Նարեկ. 'ի գովէսփ առաք. և Լամբրօն:

Շնորհաբաշխութիւն. թեան: || բաշխումն շը-նորհաց. կմ պարգևատուութիւն: Նարեկ. ժէ: և Լամբրօն:

Շնորհագիր. գրի. իւ. աց. օք: || գրօղ. կմ ձառօղ զշնորհաց: Իսկ մերթ գրեալ շնոր-հօք հոգւոյն սրբոյ. կմ որ շնորհաւլի հոգ-ւով, կմ արուեստիւ գծագրեցեալ է: Ագաթ:

Շնորհագիւտ: (Նախադրիւ հոլովի.) || գտօ-նօղ զշնորհս յայ. կմ առաջի ուրուք. կմ շնորհալի. և կմ պարգևաշարդ: Ագաթ:

Digitized by Google

Շնորհագործ. ի. աւ. աց. օք։ || Գործօղ. կմ՛ պատճառօղ զշնորհս. կմ՛ շնորհաբեր. կմ՛ շնորհապարգեւ ։ Ագաթ։

Շնորհազարդ. (Նախդրիւ հոլովի.) || Զարդարեալ շնորհօք. կմ՛ աշխնեալ բազմապատիկ շնորհօք. կմ՛ պարգեւօք եւ բարերարութեամբ. եւ կմ՛ շնորհալի։ Նարեկ. դզ։ եւ ՚ի գործ. առաք.

Շնորհազարդեմ. եցի. եա՛. եալ. (Ներգործ.) || Շնորհազարդ առնել. կմ՛ այնպէս պարգեւօք եւ բարերարութեամբ զարդարել։ Նարեկ։

Շնորհալի. || Տե՛ս զՇնորհազարդ։

Շնորհալից. (Նախդրիւ հոլովի.) || Լցեալ շնորհիւ. կմ՛ լի այնպէս կատարելութեամբ եւ բարերարութեամբ. կմ՛ գերազանց. կմ՛ չքնաղ. եւ կմ՛ ազնիւ եւ վայելուչ ։ Լամբրօն։ եւ Ագաթ։

Շնորհալոյս. (Նախդրիւ հոլովի.) || Շնորհօք լուսաւորեալ. կմ՛ շնորհալի, եւ պայծառ. կմ՛ գեղեցիկ եւ լուսափայլ. կմ՛ գեղապանծ. եւ կմ՛ չքնաղ. եւ ըստ այսմ առի ՚ի Նարեկ. ՚ի գործ. խոս. զամենայն ծովային բերմանց շնորհալոյս մարգարիտ ։

Շնորհակալ. (Նախդրիւ հոլովի.) || Նա՛ որ շնորհ ունի ումեք. կմ՛ ընկալեալ է յումեքէ զբարերարութիւն ։ Իսկ մերթ գոհացօղ ։ Բայց առ հասարակօրէն ընդ բային շարադրի այսպէս. շնորհակալ լինիլ. եւ նշանակէ ընդունիլ յումեքէ զերախտիս. կմ՛ զընկալեալ բարերարութեան խոստովանիլ. եւ կմ՛ գոհանալ։ Ղուկ. 24. 3։ Խոր. Ենովք. ում. դր. 5։ Իսկ 3. Մակ. 5. 15. Նշանակէ գոհ լինիլ. կմ՛ գովելով զծառայութեանց արարեալ իւրեանց վաշ կարգալ։ ասմկ. խօսնիք եւլ. կմ՛ ոգեւորելով ըսել։

Շնորհակալեմ. || Շնորհակալ լինիլ. կմ՛ գոհանալ։

Շնորհակալիմ. || Նոյն է ընդ վերնոյն ։

Շնորհակալիք. (անեզական. Նախդրիւ հոլովի.) || Շնորհակալութիւն. կմ՛ գոհութիւն. եւ ըստ այսմ փոխանակ ասելոյ, շնորհակալ լինիլ. ասի՛ շնորհակալիս առնել. Իսկ այսմ է եւ բառս Ճառագայթք, որ նշանակէ զՃառագայթութիւն։

Շնորհակալու. ուի. աւ. աց. օք ։ || Նա՛ որ կալնու, կմ՛ ունի յինքեան զշնորհս. կամ շնորհալից. կմ՛ բարեշնորհ ։ Ղուկ. 11. 16։ Իսկ մերթ ընդունօղ յումեքէ զերախտիս։ Բայց յատկապէս առեալ նշանակէ շնորհակալ լինօղ, այնա՛ որ գովելով զերախտաւորին խոստովանի զընկալեալ բարերարութիւնս, եւ գոհանայ զբարերարէն ։

Շնորհակալութիւն. թեան ։ || Ունելն յինքեան զշնորհս, կամ ընդունումն երախտեաց ։ Բայց յատկապէս առեալ նշանակի ստացեալ խոստովանութիւնն ընկալեալ բարերարութեանց. կմ՛ գոհութիւն. եւ կմ՛ երախտագիտութիւն ։ Ղուկ. 28. 23։ Նարեկ. ղէ։ Խորէն. ատ. դր. 25։

Շնորհակարգ. (Նախդրիւ հոլովի.) || Շնորհօք կարգաւորօղ. կմ՛ պարգեւօք հոգւոյն սրբոյ կարգեցեալ. եւ կմ՛ շնորհալի կերպիւ կարգաւորեալ ։

Շնորհակարգեմ. եցի. եա՛. եալ. (Ներգործ.) || Շնորհօք կարգաւորել. կմ՛ շնորհալի կերպիւ կարգել ։

Շնորհակարգութիւն. թեան ։ || Շնորհօք կարգումն. կմ՛ շնորհալի կարգաւորութիւն ։

Շնորհաձիր. (Նախդրիւ հոլովի.) || Շնորհատու. կամ պարգեւատու ։ Նարեկ. ղ. եւ ՚ի յիշատակարանին ։

Շնորհանորոգ. (Նախդրիւ հոլովի.) || Ունօղ զնորոգ շնորհս. կմ՛ շնորհօք նորոգեալ. կմ՛ ծրիւք շնորհաց կազմեցեալ, եւ յօրինեալ։ Նարեկ. ՚ի գործ. խոս.

Շնորհաշառաւիղ. (Նախդրիւ հոլովի.) || Ունօղ զշնորհալի, կմ՛ զգեղեցիկ շառաւիղս, իբր բարունակս, կմ՛ ոստս ։ Նարեկ. ղկ։

Շնորհաշաւիղ. (Նախդրիւ հոլովի.) || Ունօղ զշնորհալի շաւիղս, կմ՛ կենցաղավարութիւն։ Նարեկ. ՚ի գործ. առաք.

Շնորհաշուք. (Նախդրիւ հոլովի.) || Շնորհազարդ շքով աշխնեալ. կմ՛ գերազոյն շքնորհօք զարդարեալ. կմ՛ բարեշնորհ. եւ կմ՛ գերապայծառ ։ Նարեկ. ՚ի գործ. խոս. եւ ղթ։

Շնորհապատար. (Նախդրիւ հոլովի.) || Պատարուն եղեալ շնորհօք. կմ՛ շնորհալից. կմ՛ բարեշնորհ. եւ կմ՛ յոյժ չքնաղ. եւ գեղեցիկ. որպիսիք են ոմանք արուեստաւոր յօրինուածք ։ Նարեկ. ղե ։

Շնորհապարգեւ. (Նախդրիւ հոլովի.) || Պարգեւօղ զշնորհս. կմ՛ նուիրօղ ընծայից. եւ կմ՛ պատարագաց ։ Նարեկ. ՚ի գործ. առաք.

Շնորհապարտ. ի. իւ.ից. իւք ։ || Պարտական շնորհակալութեան. կմ՛ պարտական գոլ առ շնորհակալութիւն իւրոց երախտաւորացն իւրեանց։ Իսկ մերթ արժանի շնորհաց. կմ՛ արժանաւոր շնորհակալութեան, եւ ընդունելոյ զգոհութիւնս եւ երախտեաց իւրոց. ըստ այսմ ՚ի վերայ այլոց։

Տ. Շնորհապարտս համարիմ զձեզ ։

Շնորհավաճառ. ի. իւ. աց. օք ։ || Վաճառօղ զշնորհս հոգւոյն սրբոյ. որ առի ըստ ըմբռնումն եկեղեցական իշխանութեանց, որք զեկեղեցական իշխանութիւնս վաճառեն, Նարեկ. հոգեւոր արծաթով մատակարարեն ։ Լամբր։

Շնորհավաճառութիւն. թեան ։ || Վաճառումն շնորհաց հոգւոյն սրբոյ. կմ՛ մատակարարութիւն եկեղեցական խորհրդոց առնելով զարծաթ. որ եւ ասի սիմոնականութիւն ։ Լամբրօն ։

Շնորհատու. ուի. աւ. աց. օք ։ || Տուօղ շնորհաց. կմ՛ պարգեւատու ։

Շնորհատուութիւն. || Տե՛ս զՇնորհատուութիւն։

Շնորհատուր. (Նախդրիւ հոլովի.) || Շնորհատու. կմ՛ շնորհօք տուեալ. կմ՛ շնորհեալ, եւ պարգեւեալ. Նարեկ. ղդ ։ եւ Ագաթ.

Շնորհատրութիւն. թեան ։ || Տուրք շնորհաց. կմ՛ պարգեւատուութիւն. կմ՛ բարերարութիւն. եւ կմ՛ երախտաւորք ։ Նարեկ. իթ։

Շնորհաւոր. ի. աւ. աց. օք ։ || Ունօղ ըզշնորհս. կմ՛ շնորհալի. կմ՛ շնորհազարդ. եւ կմ՛ ընտիր, եւ քաղց ։ ըստ այսմ Խորէն. եւ կմ՛ զանձնական. ում. շնոր. դ. դր. 54. Կոչեալ զանձնական շնորհաւոր թարգմանն ։

Շնորհաւորեմ. եցի. եա՛. եալ ։ (Ներգործ.) || Շնորհաւոր առնել. կմ՛ լցուցանել շնոր-

հօք. կամ շնորհաղարդել. և կամ խիլայել: Նորէն. ղդ։

Շնորհեմ. եցի. եա՛. ել: (Ներգործ.) ‖ պարգևել. կամ ընձեռել. և կամ տալ: 2. Մակ. 3. 31: և 7. 22: Մարկ. 15. 45: Ղուկ. 7. 21: Մերթ և՝ թողուլ. կամ ներել: 2. Կոր. 2. 7: և 12. 13: Եփես. 4. 32: Իսկ մերթ ՚ի լոյս ածել. կամ արտադրել. և կամ գոյացուցանել: ըստ այնմ. ՚ի շարակնոցի. Շնորհեա բանաւոր կենդանի մարդ ՚ի հողոյ. յի՞ արտադրեա ՚ի հողոյ բանաւոր կենդանի, որ է մարդ: Մերթ և ս նշանակէ՝ շնորհունակս առնել. կամ երախտաշատութիւն գործել. կամ ասել զինչ: ռամկ. խաթրը հայել. կամ խօշամէտի խօսիլ: Ոսկէ. 1. հատ. ք:

Շնորհընկալ: (Նախադրիւ հոլովի.) ‖ ընդունող զշնորհս. կամ շնորհակալ. կամ շնորհալից. և կամ շնորհապարտ: Նարէկ. ղէ: ՚ի Գործ. ՚ի յիշատակագիրն: Իսկ մերթ շնորհակալու. կամ գոհացող. ըստ այնմ Լամբրոն. Բոլորովն սրտիւ բացեալ զգերանս՝ շնորհընկալ լիցուք նմին:

Շնորհունակ: (Նախադրիւ հոլովի.) ‖ շնորհ. և կամ մասնաւոր պարգև ինչ արարեալ ումեք արտաքոյ հասարակաց կարգի, զոր ոմանք կոչեն յատկօրինութիւն. որպիսի էր յօհաննու մկրտչի սրբելն յարգանդէ: Բայց սա հասարակօրէն ՚ի գործածի ընդ բայի շարակցելով այսպէս. շնորհունակս խօսիլ. կամ առ շնորհունակս ասել զինչ. և յայն ժամ նշանակէ երախտաշատութիւն ըստ հաճոյից ուրուք խօսիլ, կամ ասել: ռամկօր. խօշամէտի խօսիլ. կամ խաթրը համար ըսել: Եղիշ. 12. 24: Ոսկէ. 1. հատ. լա: և 2. հատ. լբ: Այսու կերպիւ և ս վկայութիւն տալն՝ առի՝ առ շնորհունակս վկայել: Ոսկէ. 1. հատ. լթ: Եւ կամ այսպէս. շնորհունակս առնել ումեք. և նշանակէ՝ մարդահաճութիւն առնել ումեք ըստ հաճոյական ինչ. կամ գործել. կամ ասել զինչ ըստ կամաց ուրուք առ ՚ի հաճոյանալ նմա: Ոսկէ. 1. հատ. ժէ. և խոս: ըստ այսմ է և ՚ի Ճառս հոգւ. իէ. ուր ասի փութայր մատնել զնա՝ շնորհունակս ինչ կամելով առնել անօրէն իշխանացն: ռամկ. աչքը մտնելու համար: Իսկ մերթ վարի երբեմն զանակեայ, որպէս. շնորհունակս տալ ումեք զինչ. և նշանակէ շնորհունակս առնելով. կամ մարդահաճութիւն. և կամ ակն առնելով: ռամկ. խաթրը նայելով. կամ խաթէր համար: Լամբրոն:

Շնութիւն. թեան: ‖ քնութիւն շան. կամ շնաբարոյութիւն: Բայց յատկապէս առեալ նշանակի սովոր գարշ խառնակութիւն մարմնոյ՝ արարեալ ընդ լծակից օտարաց. զոր մէ լիագոյն ասացաք ՚ի մեկնութիւն շնալ բայիս: Իմաստ. 2. 2: Մատթ. 15. 19: Յովհ. 8. 3: Իսկ երբեմն ՚ի Սբ. գիրս առեալ լինի փոխանակ թողլոյ զԱծ, և յարելոյ ՚ի կուռս. կամ ՚ի սէր աշխարհի. և կամ ՚ի մեղս. ըստ որում ասէ խափանի հաւատոյն, որով խօսեցեալ քեն. ոյ հաւատացեալքն, ոչ կին՝ ասէ Երեմ. 13. 27:

Շնչաբերեմ. եցի. եա՛. ել: (Չէզոք.) ‖ տալ. և առնուլ զշունչն. կամ շնչել: ռամկօրէն շունչ առնել:

Շնչախառն: (Նախադրիւ հոլովի. և մերթ մակբայ.) ‖ խառնեալ շնչով. կամ խառն ընդ շնչոյ. և կամ լիք շնչով, և ձայնիւ, և ոչ ՚ի սրտէ. ըստ այնմ, ՚ի Ճառս հոգւ. բ. Գունան խմնդէ յոյժ փափկած, որք շնչախառն առեն, թէ քեզ: ռամկ. կէս բերնէ:

Շնչական. ի. աւ. աց. օք: ‖ այն ամ, որ վերաբերի առ շունչն. կամ առ մարմինն, և արիւն. կամ մարմնական. և կամ մնեղէ: և ըստ այսմ վարվարութեան կոչի շնչական մեղք: Իսկ մերթ նա, որ ունի զընդունարութիւն շնչելոյ. կամ շնչաւոր. կամ շնչօղ. կամ կենդանի: Նարէկ. ժը:

Շնչակեաց. կեցի. իւ. աց. օք: ‖ միայն շընչով կեցող. կամ զշունչ ունող. կամ շնչաւոր. և կամ շնչական: Ագաթ:

Շնչահան. ի. իւ. կամ աւ. աց. օք: ‖ հանող զշունչ. կամ շնչօղ: Բայց յատկապէս առեալ նշանակի սովոր ծախն, ընդ որ շունչն, կամ օդն ել և մուտ առնէ. ուստի՞ ունին ականջն քաղցրոյ. կամ անօթքն գինւոյ. ըստ Փիլոնի. և այլք նման: ռամկ. նէֆէսլիք:

Շնչանամ. ացայ. ացիր. նալ: (Չէզոք.) ‖ ստանալ զշունչ, կամ զոգի. կամ հոգեւորիլ, և կամ կենդանանալ. և այս ասի զաղմէն. կամ զանշնչացելոյ. կամ զմեռելոյ. և զայլոց նմանեաց: Լամբրոն: Կիւրղի Երուսաղէմի. ժբ:

Շնչասպառ: (Նախադրիւ հոլովի.) ‖ սպառող զշունչս. կամ անշունչ առնող: Իսկ մերթ նա՝ որոյ շունչն սպառեալ է, կամ անշնչացեալ. և կամ սպառեալ ՚ի կենաց: Մերթ և ս շնչասպառ կոչի այն. յորում շունչն ուրուք սպառի, կամ կեանքն զրկի: և ըստ այսմ ասի ՚ի Նարէկ. ՚ի յիշատակարանն. Շնչասպառ. և կենդանանարոգ առաւօտեան յարութեան. յի անցաւոր կենցաղոյս, յորում ոմանց շունչն սպառի մահուամբ, և ոմանց կենդանութիւն նորոգի ծննդեամբ:

Շնչարգել. ի. իւ. եց. կամ աց. օք: ‖ նա, որոյ շունչն արգելեալ և փակեալ կայ: Իսկ մասնաւորապէս առեալ նշանակէ զնա, որ ունի ՚ի փողս իւր զախտ շնչարգելութեան:

Շնչարգելութիւն. թեան: ‖ է ախտ ինչ փողոց կենդանեաց, որոյ անցքն վատթար հիթումբ խափանի. ուստի լինի արգելումն շնչոյ, որով բազումք խեղդեցեալ մեռանին:

Շնչաւոր. ի. աւ. աց. օք: ‖ ունող զշունչ և զոգի. կամ շնչօղ. կամ կենսունակ. և կամ կենդանի: 3. Թագ. 15. 29: Մերթ և ս առեալ լինի փոխանակ այնր՝ որ կեայ ըստ կական, և զգայական կենօք՝ կարօտ գոլով կերակրոց և ըմպելեաց, և անկանելով ՚ի ներքոյ այլոց բնական կրից. որպիսի է մարմինն մեր յառաջ քան զյարութիւն: 1. Կոր. 15. 44. և 46: Իսկ մերթ առեալ լինի փոխանակ նի, որ ըստ մարմնոյ կեայ.

և ըստ մարմնոյ խորհի՝ հետևելով զգայական ցանկութեանց. և մարդկեղէն իմաստութեանց: 1. Կոր. 2. 14. Յուդայի. 19: Երբեմն և ա շնչաւոր կոչի անասնականն, կամ մարմնականն. ի այն ժամ, որ մերապարի յաւ մարմնոյն և արեան. կամ առ հեշտութեան մարմնոյ. որպիսի է ուտելն և ըմպելն, և խնճնեշանական ՝ի վաւաշութիւնս: Յակ. 3. 15:

Շնչաւորական :(Նախդրիւ հոլովի.) || կատօք և հաւաքօք զշնչաւորս: Իսկ մերթ կոյս շնչաւորաց. և կամ այն, որ է ժողով կենդանեաց. և ըստ այսմ առի շնչաւորական բազմութիւն: Մերթ և առի զանգուած, ուր կուտեալ և հաւաքեալ կան շնչաւոր կենդանիք: Նորէն. գծ:

Շնչաւորեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || շնչաւոր առնել. կամ տալ ուժք զշունչ, և զոգի. կամ հոգևորել. և կամ կենդանացուցանել: Կիւրղի Եզեկիէլ. Թ:

Շնչափող. ի. կամ ոյ. իւ. ից. իւք: || խռչափող, որ է առձառապատ փողն կենդանեաց, զորմէ կախեալ կան թոքք, և ըստ արդն իբրև ՝ի կախաղանէ. զորոյ զվերին ծայրն շօշափէ մականեպուն. ի վերին ըմպանակն: Սորդ՝ կոչեցաւ սա շնչափող. զի ը այն ՝ի հովահարելն թոքոց՝ լինի տարեաւութիւն շնչոյ: ռամկ. խռչափ. կամ խռխուխ: Շնորհալին: Բայց ՝ի գիրս Կիւրղի Եզեկ. դ. և ժը. դնի փոխանակ թոքոց:

Շնչելոյզ. լուզի. աւ. աց. օք: || ելուզանող. կամ հանող զշունչ. և կամ շնչահան. և ըստ այսմ մեքենայն, յորմէ ՝ի ձեռն գործեաց արտաքս հանի օդն, կամ շունչն, առի շնչելոյզ մեքենայ:

Շնչեմ. եցի. եա. ել: (Չէզոք.) || տալ և առնուլ զշունչ. կամ զօդ յինքն ձգել. ռամկ. շունչ առնել: Յոբ. 1. հատ. ժա: ՝ի Հուրահարց. ժզ: Իսկ մերթ փչել. կամ հնչել հողմոց՝ և այլոց նմանեաց: Սաղմ. 147. 18: Երգ. 4. 16: Մատ. 7. 25: Մերթ և նշանակէ ներգործել. կամ ազդել. և կամ ներշնչել: Յոհ. 2. հատ. լը: ըստ այսմ է և ՝ի Շարակնոցն. ուր առի զհոգւոյն սրբոյ. վասն զի շնչէ ուր կամի՝ որքան առօրժէ: Իսկ մերթ նը շանակէ շչել. կամ փչել վեշապաց, կամ օձից, և այլոց նմանեաց:

Շնչերակ. ի. աւ. աց. օք: || երակ շնչոյ. կամ ոգեաց, զորմէ լնագոյն առացաւ ՝ի բառն նեարդ:

Շնչումն. չման. մամբ. մանց. մամբք: || տալը և առութիւն շնչոյ, կամ օդոյ: Իսկ մերթ փչումն, կամ հնչումն հողմոց, և այլոց նմանեաց: Մերթ և շշումն. կամ փչացումն օձից, առղնոց, վիշապաց, և այլոց նմանեաց: Իմաստ. 17. 9: Իսկ մերթ ներգործութիւն. կամ ազդումն. և կամ ներշնչումն:

Շնորոր. ի. իւ. աց. օք: || է փոքրիկ թռչուն ինչ պարապոր, որ ճնճղուկ ՝ի Ջուրս. կերպարանօք նման է բադու. բայց ունի ըղ գոյն կարմիր:

ՇՇ

Շշնջեմ. եցի. եա. ել: (Չէզոք.) || զշշնջիւն արձակել. կամ քրթմնջել. կամ փսփսալ, և նուաղ ձայնիւ խօսիլ. մինչ զի հազիւ լսելի լինիցի բարբառն. որպէս հանդիպի յորժամ գաղտ, կամ յունկանէ խօսիցէ: ռամկ. փսփսալ. կամ փսփսալ: 2. Թագ. 12. 19: Ըստ այսմ և բարբառելն զանիբաւ բանսարկութեանց, կամ բամբասանաց բառ ուրուք լինի գաղտ. կամ քրթմնջելով. առի շշնջել: Իմաստ. 1. 8:

Շշնջիւն: (Նախդրիւ հոլովի.) || շշնջումն. կամ քրթմնջիւն. կամ հնչիւն ցած, և նուաղ բարբառոյ. որպիսի է այն, որ ՝ի գաղտ խօսիլն ուրուք լսելի լինի իբրև զանշան շշնջոց ինչ: ռամկ. փսփսոց. կամ փսփսոց: Իմաստ. 1. 10. և 11:

Շշնջումն. ջման. մամբ. մանց. մամբք: || Նոյն է ընդ վերինոյն:

Շշուկ: (Նախդրիւ հոլովի.) || աղմուկ. կամ վրդովմունք. և կամ չարաչար շփոթք. որք յառնեն ՝ի բազմութեան, կամ ՝ի քաղաքի, և կամ ՝ի տան, յորժամ մի ինչ յանկարծ հասա. կամ անակնկալ պատահումն. բախեալ դղրդեն, և լինին ձայնք և շշնջիւնք, և թնդիւնք: ՝ի այսմ ՝ի Հոբ. Եթէ եղև շշուկ և շփոթ ՝ի մէջ նոցին: Եթէ մինչ այսպիսի աղմուկս լինի մի միաբանութեան, առի շշուկ մահու. 1. Թագ. 5. 6: Իսկ ՝ի Նորէն. իա. առեալ լինի ըստ բառաբանութեան փոխանակ դիմադրող սրտակոծութեանց և տագնապանաց հոգւոյ: Իսկ նէ ծագի բառս՝ չարաշշուկ. զոր առեալ ՝ի ամեղունդ իսրայէլ:

Շշունջ. շշնջոյ. ով. ոց. ովք: || նոյն ըն Շշնջիւն:

ՇՈ

Շող. ոյ. ով. ոց. ովք: || ճառ. կամ լոյս. և կամ հեղող ջերմութիւն: ռամկ. շող. կամ փայլ:

Շողանամ. ացայ. ցիր. անալ: (Չէզոք.) || այրել ՝ի տօթոյ. կամ տապանալ. կամ տաքանալ ջերմանալ, և իբր այրիլ տապով. որ հանդիպի բաղանեաց, կամ եւկէզ եղելոց: ռամկ. շողին. կամ վառիլ. կամ խեղդ փափուկ:

Շողիմ. եցայ. եաց. իլ: (Համանակ.) || Նոյն է ընդ վերինոյն:

Շողի. գւոյ. եաւ. եաց. եօք: || գողարկ. ուշ. որ և ռամկ. առի շողի. կամ գոլորշի. մառ կերպէն ուրուք: Նորէն. խը: Իսկ մերթ պիղծ ծխոյ, կամ փչումն, և կամ շնչումն. ը այսմ Աղթամ. Համաձայնատառ շողի հոգւոյն ել, որ առեալ է զմարդկեղէն յաւելութիւն անել:

Շողխամեղ. մեղի. աւ. աց. օք: || անօղ զմեղ խառնարանեալ շողեաց, կամ գոլորշեաց. և կամ նանուխ զանգեալ մատամբ շողեաց և ծխովք, և մառախղեք: Նորէն. ճէ:

Digitized by Google

Շոգլիք. լեաց. եօք: (անեզ.) || տե՛ս զՇոգլի:

Շոգմոգ. ի. իմ. իւ. իւք: || Նա՝ որ շնչելով, կմ գաղտ չարախօսելով՝ քակէ զբարեկամս 'ի բարեկամաց, կմ զսիրելիս 'ի սիրելւոյն՝ սերմանելով 'ի մէջ նց զտարաձայնութիւն և զատելութիւն. որ և ասի քսու. կմ քսող: Հռոմ. 1. 29: Յակոբ. 12. և 16: Եւ յայտնանէ առեալ երբեմն գնի փոխանակ բարբանջողաց, կմ լեզուանագարաց: Իսկ մերթ նշանակէ՝ շողոքորթ, կմ փաղաքշօղ. և կմ նա՝ որ քաղցր, և մարդահաճոյական բանիւք հրապուրէ զոք առ իւր: Երբեմն և նշանակէ՝ շոգմոգական. կմ քսմսական. կմ շողոքորթական. և ըստ այսմ ասի, 'ի չար և 'ի շոգմոգ լեզուաց հրաժարիլ: 'Ի ճառս հաւաք. ժա. 'Ի ճառն Ներսէսի: Իսկ 'ի Յիշ ոգւոյն առեալ լինի փոխանակ շոգմոգութեան. ուր և բառն բառն փոխանակ բամբասանաց. զի ասի. Եւ զարատանչն ընդ բամբասանսն. զպղծ միջինն ընդ շոգմոգսն:

Շոգմոգեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || շնչելով, կմ չարախօսելով արկանել ըզ տարաձայնութիւն և զատելութիւն 'ի մէջ մը տերմաց և բարեկամաց. որ է գործ քըսմսաց: Իսկ մերթ՝ բարբանջել. կմ շաղփաղփել. և կմ լեզուանագարել: ռամկօրէն խենճանալ խօսիլ: 'Ի գիրս Գրիգորի մագիստրոսին: Մերթ ևս շողոքորթել. կմ փաղաքշել. կմ շողոքորթական բանիւք համոզել. և կմ հրապուրել: 'Ի հին պատմագիրս:

Շոգմոգութիւն. թեան: || քսութիւն. կմ քսմսութիւն, որ է գաղտ չարախօսութիւն. կմ բանսարկութիւն. որով քակին 'ի միմեանց բարեկամք և սիրելիք: Լամբրօն: Իսկ մերթ բարբանջմունք. կմ շաղփաղփութիւն. և կմ լեզուանագարութիւն: ռամկ. խենճ ուշինք խօսք. կմ [illegible]: Մերթ ևս շողոքորթութիւն, կմ փաղաքշանք, և կմ շողոքորթական հրապուրանք: 'Ի հին պատմագիրս:

Շող. ոյ. ով. կմ իւ. իւ. իւք: || լոյս. կամ ճաճանչ. և կմ նշոյլ. ռամկ. շող. կմ շէօղլէ. և այս յատկապէս ասի զճառագայթից արեգական, որ ընդ պատուհանս և ընդ ծերպս 'ի ներքս մտանեն և ծագեն զիւէլք. յորս և երևին մանրամասն փոշիք հիւլէից. որպիսի է և ճառագայթն, որ յերկնից է պատառեալ առնոյց յերկիր ճաճանչէ: Իսկ մերթ ընդ բայի շարակցի այսպէս. շող արձակել. և նշանակէ շողալ. կամ լուսափայլիլ: Կիւրղի եղծիք. ժե:

Շողազարդ. ի. իմ. իւ. իւք: || շողիւ զարդարեալ. կմ լուսազարդ. և կմ պայծառափայլ: Մծբն. ժթ:

Շողակաթ. ի. իմ: || կաթուցեալ շողոյ, ցյ հեղումն, կմ հոսումն լուսոյ: Եւ այսպէս անուանեցաւ, ուր եստես Լուսաւորիչն մեր 'ի տեսլեան զլոյս մեծ հոսեալ յերկնից. և ընդ նմին անչափ զօրս լուսեղինաց. ուր և հրամանաւն նոյ կառուցաւ տաճար. և կարգեցաւ կատարել ամ յամէ զտօնն նաւակատեաց նր. և վս այսորիկ տաճարս այս՝ և տօն նր՝ անուանեցան տաճար և տօն Շողակաթի: 'ի Շարականաց:

Շողամ. ացի. ա. ալ: (չէզոք.) || շողս արձակել. կմ փայլմամբ ծագել. կմ ճառագայթել. կմ փայլատակել, և կմ փայլիլ. ուպ հանդիսի սուսերաց, և այլոց պայծառ և փայլուն իրաց. յորժամ շարժին հանդէպ արեգական: ռամկօր. բռլբլալ: Նաւում. 3. 3: Յոբ. 39. 23: Աճգող: Իսկ մերթ տապանալ. կմ սաստիկ ջեռնուլ 'ի տօթոյ. կմ 'ի հրոյ:

Շողապէս: (մակբայ.) || իբրև զշող. կմ նման շողոյ. և կմ հանգոյն լուսոյ, որ ը ծերպս ծագի: Խորէն. գ. գլ. 67:

Շողացուցանեմ. ցուցի. ցի. անել: (անցող.) || զլոյս փայլատակել. կմ լուսափայլ առնել: Իսկ մերթ շողշողեցուցանել. զոր տեսցես զկնի: Լամբրօն: Մերթ ևս տապացուցանել. կմ սաստիկ ջեռուցանել. կմ հրացուցանել. և ըստ այսմ ասի՝ հրով շողացուցանել զերկաթ. և այլն: Աճգող: և 'ի հին տաղարանս:

Շողգամ. ի. իմ. իւ. օք: || շաղգամ, որ է գնդակաձև արմատ բանջարոյ իւրք, որ ունի զնմանութիւն ճակնդեղի. բայց է սպիտակ. զոր և յաճախ եփեալ ուտեն մարդիկ: որ և ռամկ. ասի շողգամ: և տաճկերէն շալղամ:

Շողիմ. եցայ. եա. իլ: (ձայնակր.) || յարձակիլ լուսոյ. կմ ծագիլ. կմ ճաճանչել. և կմ շողալ: Նարեկ. 'Ի գովս խաչ: Իսկ մերթ տապանալ. կմ սաստիկ ջեռնուլ. կմ հրանալ: և ըստ այսմ ասի շողեալ երկաթ:

Շողիւն: (Նախդրիւ հոլովի.) || արձակումն շողոյ. կամ փայլատակումն. և կմ փայլումն: և այս ասի՝ թէ զլուսոյ. և թէ զփայլումն՝ և զպայծառ իրաց. ուպ ըզ սուսերաց, կմ զգլխոց. և այլն. 2. Մակ. 5. 3: Խորէն. ա. գլ. 23: Իսկ մերթ տապացումն. կմ ջերմութիւն. և կմ հրացումն: Աճգող:

Շողշողեմ. եցի. եա. ել: (չէզոք.) || շողալով շողալ. կմ յաճախ փայլատակել. և կամ փայլփայլել. ուպ հանդիսի սուսերաց, յորժամ հանդէպ արեգական ձեռօք շրջշրջին: ռամկ. բռլբլալ: Նարեկ. ղէ: Իսկ մերթ է սա զօրութբ անցողական, և նշանակէ շողշողեցուցանել. զոր տեսցես զկնի:

Շողշողեցուցանեմ. ցուցի. ցի. անել: (անցող.) || յաճախ շրջշրջելով փայլատակեցուցանել. կմ փայլեցուցանել. ուպ առնեն սուսերաց, կմ հայելեաց. և կմ պայծառ անօթոց. յորժամ հանդէպ արեգական ձեռօք առեալ շարժեն: ռամկօրէն բռլբլընել:

Շողշողիմ. եցայ. եաց. իլ: (ձայնակր.) || տես զՇողշողել:

Շողոմաբարոյ. ի. իմ. իւ. իւք: || ունօղ ըզ բարս շողոմողի, ցյ քաղցր բանիւք ողոքօղ. կմ փաղաքշօղ. և կմ նա՝ որ միշտ քաղցր բանիւք շողոքորթէ զայլս: Իսկ մերթ նշանակէ այն՝ որ լինի շողոմելով, ցյ ողոքելով, կմ փաղաքշելով. և ըստ այսմ

ասի՝

ասխ՝ շողոմաքարոյ շոգմոգութիւն, կմ հրա պուրանք: 'ի հին տպագրիս:

Շողոմասէր · սիրի · աւ · աց · օք: || սիրող շողոմութեան · կմ շողոքորթութեան · կմ որ ունի գլխովտարութիւն և զբօսու շողոմելոյ, իբ քաղցր բանիւք շողոքորթելոյ · և այլն:

Շողոմարար · ի · աւ · աց · օք: || առնող զշողոմութիւն, իբ նա՝ որ ամբքական և գգուանական բանիւք ողոքէ, կմ փաղաքշէ, և կմ շողոքորթէ զոք · զի մեղկեալ զսիրտ նր, որսասցի 'ի կամս իւր · որպ առնեն խաբեբայք և սուտսկատարայք: Այնպէս շողոմարար կոչի այն՝ որով ոք առնէ զայսպիսի շողոքորթութիւնս · և իբ այսմ առի՝ հը բառութիւր 'ի շողոմարար շոգմոգեալ բանից: 'ի հին տպագրիս:

Շողոմել · եցի · եա · ել: (Ներգործակ ·) || քաղցր, և գգուանական բանիւք ողոքել · կմ փաղաքշել · կմ շողոքորթել · և կամ մեղկել զսիրտ ուրուք · որպ առնեն կեղծաւորք, և խաբեբայք, կմ սուտակապատք · որ և ասի երբեմն զշնոց, յորժամ շողոքորթական շարժմամբք յանկուցանեն զինքեանս զսիրտ մարդոյ: ըստ այնմ 'ի վեր հարց · ՟Է · Քանզի և շուն շողոքորթէ շողոմելով 'ի ժողովս:

Շողոմութիւն · թեան: || քաղցր, և գգուանական բանիւ ողոքումն · կմ փաղաքշութիւն · կմ շողոքորթութիւն · և կմ մեղկումն սրտի: 'ի հին տպագրիս:

Շողոքորթ · կմ շողոքորդ · ի · իւ · ից · իւք: կմ աց · օք: || նա՝ որ գգուանական, և քաղցր բանիւք, և շարժմամբ մարդկելուղէ, կմ գովասանէ, և մեծարէ զոք · որ և ասի փաղաքուշ · կմ փաղաքշող: Նարեկ · խը · և ղ:

Շողոքորթել · կմ շողոքորդել · եցի · եա · ել: (Ներգործ ·) || փաղաքշել · իբ գգուանական, և ողոք բանիւք մարդկելուզել · կմ անոյշ լեզուաւ, և քաղցր դիմօք, և հաճոյական շարժմամբք առ երեսս գովասանել · կմ մեծարել զոք առ 'ի մեղկել զսիրտ նր, և յանկուցանել յինքն, որպ առնեն խաբեբայք, և մարդելորսք: Իսկ ըստ առի զշանց, և զայլոց ոմանց կենդանեաց, յոր ժամ ախորժարար, և սիրալիր շարժմամբք խաղալով բծնիւն, և զտուկք փարին առ 'ի ձգել զոք 'ի սէր իւրեանց: 'ի վեր հարց · ՟Է:

Շողոքորթական · ի · աւ · աց · օք: || այն ամէն, որ վերաբերի առ շողոքորթութիւն · կմ առ շողոքորթն · և կմ փաղաքշական:

Շողոքորթութիւն · թեան: || փաղաքշութիւն, որ է գործողութիւն շողոքորթաց · կմ շողոքորթելն, զորմէ ըստ գոյն ասացաւ 'ի վերոյ:

Շոմին · շոմնի · իւ · ից · իւք: || է բանջար ինչ պիտանի, որ և կոչի ծնել · ունի զտերև եր կայն իբրև զակացնջն սխտորոյ, որոց ոմանք են ընտանիք · և ոմանք վայրենիք: Բնութ է գէճ, և ցուրտ · ուստի և է օգտակար չոր և ջերմ բնութե: Զսա խարշեալ · կմ տապա կեալ կաղմեն կերակուրս: ռամկ · ... :

Շոյտ · շուտի · իւ · ից · իւք: || փոյթ · կամ արագ: կմ յանկարծ · կմ ժիր · և կմ ձարպիկ: ռամկ · շուտ · կմ չուտ: Առակ · ՟ԻԲ · 29: Խորէն · ՟Բ · ղբ · 49:

Շոպել · եցի · եա · ել: (Ներգործ ·) || կոր զել · կմ փրծուցանել · և կմ ձողոպրել · և ըստ այսմ առի 'ի հին տպագրիս · 'ի լոյս ընծայեալն 'ի նորացանէն շոպեալ ձողոպրէր: ռամկ · ... · կմ ... : Իսկ ըստ նշանակէ յափշտակել · կմ կողոպտել · և կմ կապտել: ռամկ · խլել · կմ թռցնել:

Շոպշոպել · եցի · եա · ել: (Ներգործ ·) || է յաճախականն շոպել բայիս, և նշանակէ՝ շոպելով շոպել · իբ աստ և անտի քարշելով կորզել, և ձողոպրել: Իսկ ըստ չարաչար յափշտակել · կմ կողոպտել:

Շոպռել: || տես զՇոպել:

Շոր · ոյ · ով · ոց · ովք: || ձորձ · կմ զգեստ · կմ հանդերձ · և կմ ինչ լցէ կտաւեղէն: ռամկ · շոր:

Շորապան · ի · աւ · աց · օք: || վերակացու շորոց · կմ հանդերձեղինաց · որ և ասի հանդերձապետ:

Շորատուն · տան · տամբ · տանց · տամբք: || հանդերձատուն · իբ տեղի ուր հաւաքել պահին շորք, կմ հանդերձք:

Շորթ · ի · իւ · ից · իւք: || երանգ կմ թոյր իբ գոյն: Բայց սա մանաւանդ 'ի գործ ածի 'ի բարդութեան, որպ և թոյրն · որդն · դեղնաշորթ · կարմրաշորթ · և այլն: իսկ ըստ որում է սա արմատ շորթել բայիս, նշանակէ զշորթեալն · կմ զշորթումն · զոր տեսցես զկնի:

Շորթել · եցի · եա · ել: (Ներգործ ·) || կոր զել · կմ փրծուցանել · կմ զերծուցանել · կմ 'ի բաց բառնալ · կմ յափշտակել · և կմ կողոպտել · և այս առի զպատրաստ · կմ զըմբռնեցելոց · կմ զընչից, և զառացեալ ծոց · և այլն: ռամկ · քրքնել · կմ խլել · կմ թռցնել: Կիւրղի եղեկ · ժա:

Շորթումն · թման · ման · մանց · մամբք: || կորզումն · կմ զերծուցումն · կմ յափշտակումն · և կմ կողոպտումն:

Շուայտ · ի · իւ · ից · իւք · կմ օք: || զեղխ 'ի կերակուրս · կմ անառակ · որ պարարի շուայտութեամբ · կմ որ մատնեալ է զանձն իւր 'ի յուտել, և 'ի յըմպել · իսկ ըստ պատգամ · կմ վավաշոտ · կմ գիջա ... · և կմ մոլեալ 'ի պղծութիւնս մարմնոյ: Պօղոս՝ շուայտ կոչի շուայլն · կմ մոլեալ զինքս 'ի խեղդութեան մարմնոյ:

Շուայտաբարոյ · ի · իւ · ից · իւք: || նոյն է ընդ վերինն:

Շուայտիլ · եցայ · եայց · իլ: (Չեզոք ·) || զեղխել շուայտութեամբ · կմ անառակել 'ի կերակուրս · և կմ որկրամոլութեամբ պարարիլ յաճախ ուտելով, և ըմպելով, մինչև ծանրանալ, և թմրիլ զգայութեամբ: 'ի վեր հարց · ՟ԻԶ: Իսկ ըստ պատգամ · կմ վավաշոտիլ · կմ մատնել զանձն մարմնական պղծութեան: Աերթ և շուայլել · կմ մոլել զինքս իւր 'ի պէսպէս խեղդութեան

մարմնոյ : ըստ այնմ. Դաւթէ ծղ. վաճառական վաճառէ · շահարար շուայտանայ · Բ. շը- ռայլ · կամ մսխօղ :

Շուայտասէր · ի · աւ · աց · օք : || սիրող շուայտութեան, յր անառակութեան ուտելոյ եւ ըմպելոյ, եւ վաւաշոտելոյ · կամ նա՝ որ սիրէ զշուայտութիւն, եւ զխենեշութիւն · եւ կամ շուայտաբարոյ : 'ի հին տառագիրս :

Որդնահարութիւն․ թեան ։ || որդնահար լինելն․ կամ որդնոտիլն ։

Որդնապարար ։ (Նախադրիւ հոլովի․) || պարարող որդանց․ կամ որ սնուցանելով բաւէ զորդունս ։ ՚ի վերս հաւր․ իմ ։

Որդնեռաց ․ (Նախադրիւ հոլովի․) || այն՝ յորում յաղագս ապականութեան, կամ նեխութեան իւրոյ՝ եռան որդունք․ կամ որ եռացուցեալ բղխէ զորդունս․ և ըստ այսմ ասի․ որդնեռաց մերան․ կամ շրթունք․ կամ մարմին․ և այլն ։ ՚ի հին պարփագիրս ։

Որդնիմ․ եցայ․ եաց․ իլ ։ (Ձայնակր․) || որդնահար լինիլ․ կամ նեխիլ, և ապականիլ մինչև յեռացումն որդանց ։ տամկօր․ ւրդնոփիլ ։

Որեան․ որեանայ․ ով․ ոց․ ովք ։ կամ որեանք․ եանց․ եամբք ։ || որեար․ ջ արք ։ և ըստ այսմ ասի ՚ի հին պարփագիրս․ Զայլսև ոմանս ազատազգունդ որեանս ծամին ասպարէզին ։ ըստ այսմ են և բառքս՝ գորեան, նշեան․ և այլն, զորոց տեսցես ՚ի տեղիս իւրեանց ։

Որեար․ կամ որեարք ։ (Նախադրիւ հոլովի․) || արք․ ջ արու մարդիկ․ և ըստ այսմ ասի ՚ի գիրս Աճգրի․ զհաստատութիւն մերմ․ Անդր այնուհետև և զարշակունեաց տոհմի որեարս՝ ՚ի վարժս վարդապետութեան պարապեցուցանէր ։ ըստ այսմ ոճի է և բառս փարձնեար, զորմէ ՚ի տեղւոջ իւրում գրեցաւ ։

Որզան ։ (Չաղկապ մեկնական ․) || որզոն, կամ որպէս․ կամ հիւեն․ կամ զոր օրինակ․ տամկ․ ինչպէս ։ Իսկ մերթ է մակբայ․ և նշանակէ՝ ուր․ կամ ըստ որում․ տամկ․ ինչ որ․ ըստ այսմ Խորէն․ Գ․ գլ․ 29․ Նոցա խառնութիւն ՚ի սոցա խաղաղութեան․ որզան վախճան միայն՝ միաւոյն լինելոյ սկզբունք, զի այլ ապականութեան միայն միաւոյն լինի ծնունդ ։

Որ զինչ ։ || զի զոր ինչ ։ Եզեկ․ 6․ 13։ և 1․ Մակ․ 3․ 34։ Յով․ 2․ 5։ տե՛ս ՚ի մեկնութեան տառիս՝ Ս ։

Որ էն ։ || տե՛ս ՚ի տառն՝ Է ։

Որթ․ ու․ ւու․ ուց․ ուք․ կամ ւք ։ || ծնունդ կովու, որ ՚ի ծնէ մինչև ցկատարումն տարւոյն որթ անուանի՝ թէ արու իցէ, և թէ էգ ։ տամկ․ հօրթ ։ Ծննդ․ 18․ 7։ Միք․ 6․ 6։ Մաղաք․ 4․ 2։ Իսկ յետ միոյ տարւոյ եթէ արու է, կոչի արջառ․ կամ զուարակ ։ տամկ․ ձօղի ։ Ծննդ․ 20․ 14։ Ելից․ 29․ 1։ Իսկ թէ էգ է, անուանի երինջ ։ 1․ Թագ․ 6․ 7։ Պարարեալ․ որթ կոչին և զաւակք երէոց․ այլ եղջեր․ մեղջերուաց, և այլոց նմանեաց ։ Երգ․ 2․ 9․ և 17։ Իսկ Ովս․ 10․ 5․ ուր ասի՝ որթուն տանն յովնայ, նշանակի ձուլածոյ կուռք ինչ կերպարանեալ ՚ի ձև որթու, կամ երնջու, զոր պաշտէր իէլ ։

Որթ․ ոյ․ ով․ ոց․ ովք ։ || թուփ, կամ տունկ խաղողոյ․ տամկ․ ասմա․ կամ փէյնէ ։ Եզեկ․ 6․ 10։ Եսայ․ 5․ 2։ Մատթ․ 26․ 29։ Որթն․ նշանակէ առհասարակ վայրի բոյս ինչ նման վայրի

որթոյ ․ որ իբրև զգգմնի արձակէ յա-
ճախ զշիւղս ․ և բերէ զպտուղ գնտակա
կերպ՝ ամենևին նման գգմոյ ․ բայց է սաս
տիկ դառն և ժահատ և [illegible] ․ յորմէ
կազմեալ զդեղորայս՝ ջամբեն մարդոյ առ
՚ի մաքրել զզօրացեալ մաղասն ։ Զայս այլ
տուղ անուանեմք աղախ , թէ յաղագս
դառնութեանն , և թէ յաղագս բռն-
սոյն , որ կոչի ութ ։ 4 ․ Թագ․ 4 ․ 39 ․ Դար-
ձեալ ․ Նշանակէ ուռ , որ է ճիւղ թփոյ
խաղողոյ ․ և այս թէ իցէ ՚ի տունկն , և
թէ ՚ի բաց հատեալ ՚ի տնկոյն ։ ռամկօր ․
[illegible] ճուղ , կամ չուբ ։ Սաղմ․ 79 ․ 12 ։ Դա
նի․ 3 ․ 46 ։ Կիւրղի եղեմ․ [illegible] ։ Երբեմն ևս նը
շանակէ կողով ․ կամ կողովի ․ ռամկ․ [illegible] ․
կամ [illegible] ․ և [illegible] այսմ ասի [illegible] ․
Ա՛ռ դու երկուս յեղբարց հանդերձ եր-
կու որթովք և փայտատովք ։ [illegible] յայլուր
ասի ․ Առէք ՚ի ձեռս ձեր երկուս և որթս ։
Սոյնպէս է և ՚ի Խորէն․ [illegible] գլ․ 27 ․ ուր ասի
զանդեայ մանկանց գերելոց ․ Զորս թա
փեալ մեծին ներսեսի հրամայէ կրել որ-
թովք ՚ի գամ մի ։ ըստ այսմ առեալ լի-
նի և Սաղմ․ 80 ․ 7 ․ ուր ասի ․ ՚ի բաց արար
՚ի բեռանց զթիկունս նր , և զձեռս նորա
յորթ և ՚ի թի ծառայելոյ , ք՞ ՚ի յաշխատա
լոյ կողովով և թիով ։

Որթատունկ ․ տնկոյ ․ ով ․ ոց ․ ովք ։ || տունկ
որթոյ , որ է թուփ խաղողոյ ։ Մծբն․ ժբ ։

Որթի ․ կամ օրթի ։ || է բառ յունաց՝ իգա-
կան սեռիւ ․ որոյ արականն լինի՝ որթոս ․
և չէզոքն որթոն ․ և նշանակէ՝ ուղիղ ․ կամ
կանգուն ․ և կամ վերամբարձ ։ Ուստի և
ուղղափառն ը նց կոչի ուրթոդոքս ։ Արդ՝
բառս այս որթի , որ և գրի որթիւ , և օր-
թիւ , ՚ի գործածի ՚ի մեզ ՚ի ժամերգութե ,
և ՚ի պատարագին՝ յառաջքան զաւետա-
րանն , մինչև է առեալ խաղաղութիւն ,
որով ազդեցութն լինի ժողովրդեան՝ ու-
ղիղ կալ ․ կամ ուղիղ իմաստութբ ունկն
դնել բանից աւետարանին ։ Ուստի և
յոյնք յայսմ խմբի տեղւս ասեն ․ սոփիա որ
թի ․ ք՞ իմաստութի ուղիղ ։

Որթիւ ։ || Նոյն է ընդ վերնոյն ։

Որթոդոքս ։ || է բառ յունական , և թարգ-
մանի՝ ուղղափառ ․ կամ ուղղադաւան ։
Կիւրղի [illegible] ․ խէ ։

Որթոց ․ ի ․ աւ ․ աց ․ օք ։ || է բառ ածանցա
կան ․ [illegible] և ծաղկոցն , և դարբնոցն ․ և
նշանակէ զտեղին , ուր տնկեալ կան բազ
մութիւք որթոց , որ է այգի ։ Իսկ մերթ
զտեղին , ուր դադարին ջոկք որթուց ,
որ է գոմ ։

Որի ․ որւոյ ․ եաւ ․ եաց ․ եօք ։ || է թռչուն
ինչ խայտափետուր ․ մեծամարմին ․ դա-
նաքարոյ ․ յափշտակօղ ․ և գիշատիչ ․ որ և
է կեռակտուց , և պատերազմասէր յոյժ ։
Զսա այլով անուամբ կոչեմք բազէ ․ որ
ունի զբաղում տեսակս , զորս ըստ մեծի
մասին կալեալ պահեն յաղագս որսոյ ։
ռամկ․ փօղան ․ կամ շահին ․ և կամ [illegible] ։ 2 ․
Օրէն․ 14 ․ 14 ։

Որիզ ․ որիզոյ ․ ով ․ ոյ ․ ովք ։ կամ ի ․ աւ ․ աց ․
օք ։ || է ունդ ինչ ըստ ձևոյ ցորենոյ փոք
րագոյն քան զնա ․ գունով սպիտակ ․ զոր
ռամկօրէն կոչեմք բրինձ ։ Աճգատ ։

Որիշ ։ (Նախադրիւ հոլովի ․ և մերթ վարի
ռմ զնախադրութե պահանջօղ զբացառա
կան ․) || որոշ ․ ք՞ որոշեալ ․ կամ զատեալ ․
կամ հեռացեալ ․ կամ օտար ․ կամ ՚ի բացեայ ․ և
կամ մեկուսի ։ ռամկ․ ղայր ։ Մծբն․ ժբ ։ և
Լամբրօն ։ Իսկ մերթ այլ ․ կամ տարբեր ․ կամ
արտաքոյ ․ կամ զանազան ։ ռամկօր․ [illegible] ։
Աճգատ ։ Լամբրօն ։ և Ոսկէ․ 1 ․ հատ․ ժը ։

Որկանս ։ || է սա երկու բառ , և տառն ս է
դիմորոշական , որովք նշանակի ասել ․ որք
կանս՝ ք՞ որք այժմ կան ․ կամ գոն յաշխար
հի ․ և կամ ներկայքս ․ որում հակադրին
հանդերձեալքն ։ ռամկ․ [illegible] ․
կամ [illegible] ։ Հռոմ․ 8 ․ 38 ։ 1 ․ Կորն․ 3 ․ 22 ։

Որկէն ։ (շարկապ մեկնական ․ և մերթ [illegible] ․)
|| որգոն ․ կամ որպէս ․ կամ զոր օրինակ ։

Որկոր ․ ոյ ․ ով ․ ոց ․ կամ ից ․ ովք ։ || ներքին
փող կենդանեաց , որ սկսեալ ՚ի կոկորդէն՝
ձգի ընդ երկայնութե պարանոցին մինչև
՚ի վայր ․ ընդ որ կերակուրն և ըմպելին ի-
ջանեն ՚ի ստամոքսն ․ ուստի և բազում ան-
գամ առեալ լինի փոխանակ որկորստութե ,
կամ որկրամոլութե ։ ռամկ․ [illegible] ։ 3 ․ Մակ․
7 ․ 7 ։ Խորէն․ [illegible] գլ․ 11 ։

Որկորաժետութիւն ․ թեան ։ || տես զՈրկո-
րաժէտութի ։

Որկորաժէտ ․ ժետի ․ իւ ․ ից ․ իւք ։ կամ աւ ․
աց ․ օք ։ || որկրամոլ ․ ք՞ նա՝ որ ունի զախտ
որկորոյ , կամ շատակերութե ․ և կամ որ մե
լեալ է ՚ի յուտել և ՚ի յըմպել ․ ռամկ․ [illegible] ։ Իսկ մաս
[illegible] ․ տաճկերէն [illegible] ։
[illegible] առեալ ․ նշանակի [illegible]
դայլօղի ․ ք՞ նա՝ որ ագահութբ , և ան-
կարգ ցանկութբ յարձակի ՚ի վր կերակ
րոյ , և իբր գազանաբար ուտէ ։

Որկորաժէտութիւն ․ կամ որկորաժետութիւն ․
թեան ։ || ախտ որկորոյ ․ կամ որկրամոլու
թի ․ և կամ անկարգ և գազանական եղա
նակ ուտելոյ ․ զորմէ լիագոյն ասացաւ ՚ի
բառն որկորաժէտ ․ ռամկ․ [illegible] ։

Որկորամոլ ։ || տես զՈրկրամոլ ։

Որկորեալ ․ ելոյ ․ ով ․ ոց ․ ովք ։ || Նա՝ որ բոլո
րովին մատնեալ է զանձն իւր յախտ որ-
կորոյ ․ կամ՝ որկորաժէտ ․ և կամ որկրամոլ ․
որ և ասի որկորեայ ․ ռամկ․ [illegible] ։ Իսկ
մերթ նա՝ որ ունի զլայնածաւալ կոկորդ
և բերան ․ որով նշենկի՝ [illegible] զանդամն
բերան ․ կամ [illegible] , որով խայ-
թէ և խածանէ զնա որ ․ բամբասելով ․
նախատելով , կամ թշնամանելով ․ և այլով
կերպիւ ։ ըստ այնմ․ Ոսկէ․ 2 ․ հատ․ [illegible] ․ [illegible]
զունանի կոչեցեալ , և որկորեալ ցասմօղ ։

Որկորեայ ․ էի ․ իւ ․ ից ․ իւք ։ || Նոյն է ընդ
վերնոյն ։

Որկորուտ ․ րատեան ․ եամբ ․ եանց ․ եամբք ։
կամ որկորատի ․ իւ ։ || ծագի սա ՚ի յորկոր
բառէս ՚ի ձևոյն ածանցական մասնկանս ․
[illegible] ․ որ է [illegible] ․ կամ [illegible] ․ ուր յայտ է

'ի սոցանէ. գալուստ. փախուստ. Թագուստ. և այլն։ Ըստ այսմ բառիւս որկորութեան՝ նշանակի որկրամոլութիւն. կմ՛ որկորածութիւն. կմ՛ շռայլութիւն կերակրոց։ ռամկ. գէշ պօղազութիւն։ և ըստ այսմ առն. Ջերմանիա աշխարհ անարգել որկորամոլք։ Այսպէս և 'ի Յուդայի. սուր ասի. Զորկորասիկան և զպոռնկին. այս զախտ որկրամոլութեան, և պոռնկութեան։

Որկորաախտ։ || տե՛ս զՈրկրամոլել։

Որկորասութիւն. թեան։ || ածանցի առ 'ի բառէս որկորուստ. որ և յանուանէս հան գիստ, հանգստութիւն. և նշանակէ որկրամոլութիւն. կմ՛ որկորածութիւն. ռամկ. գէշղօղազութիւն։ 3. Մակ. 6. 26։ Առակ. 28. 7։ Կիւրղի Եղիշէի. գ։ Ոսկէ. 2. հատ. ժգ։

Որկրամոլ. ի. իւ. իւ. իւք։ || որկորամոլ. այն է՛ որ ունի զմոլութիւն որկորասութեան. կմ՛ որկորածէտ. և կմ՛ որովայնամոլ։ ռամկ. գէշղօղաղ. կմ՛ շիշղօղաղ։

Որկրամոլել. եցայ. եա՛ց. իլ։ (ձայնակրաւ) || որկրամոլ լինել. կմ՛ որկորածութեամբ ուտել. և կամ շռայլել։ ռամկ. գէշ ղօղաղ ըլլալ։

Որկրամոլութիւն. թեան։ || մոլութիւն որկորոյ. կմ՛ ախտ շատակերութեան. կմ՛ որկորասութիւն. կմ՛ շռայլութիւն. որ է անկարգ ցանկութիւն զեղխութեան կերակրոյ, որով լինի որ գայթակղի և անառակ։ Խոսրէն. ժ. գլ. 21։ և Լամբրոն։

Որձ. ի. իւ. իւ. իւք։ || արու. որոյ ներհակն կոչի՛ էգ։ և այսպէս զկենդանեաց, կմ՛ զանասնոց. որպ զձիոյ կմ՛ զեզն. զանդեոյ. զխոզանց, և զհաւուց։ որ և ռամկ. կոչի որձ. և տաճկերէն. էրքէք։ Մակաբ. 1. 14։ Իսկ մերթ առի անդրադարձաբար և զայլոց իրաց. որպ զքարանց, և ցուցանէ զատուածակ կարծրութիւնն. կմ՛ զծառոց, և ցուցանէ 'ի նոսա զնմանութիւն ինչ արուի. Ը որում կամ անպտուղք են. կմ՛ զուրկք 'ի գեղեցկութենէ. և այլն։

Որձակ. ի. ու. աց. օք։ || աքաղաղ. կմ՛ խոյ նակ։ և առաջաւ որձակ, ըստ որում է որձ 'ի հաւս, և զուգորդ որձոյ համեմատ ցուցանէ. ռամկ. խօրօզ։

Որձակոտոր։ (Նախդրիւ հոլովի.) || կոտոր եալ որձից. այս արուաց։ Իսկ մերթ ընդ բայի շարակցի այսպէս. որձակոտոր առնել զազգ ինչ. կմ՛ զատեալ ինչ. և այլն. և նշանակէ զարուսն 'ի նոցանէ կոտորել։ 'Ի հին. պատմագիրս։

Որձամոլ. ի. ա. աց. օք։ || արուամոլ. այն է՛ որ պղծութեամբ և մոլեալ է յարուաց գիտութեան. կմ՛ որ զնոյն զհետ սոդոմական պղծութեանց խառնակեցեալ է արուաս։

Որձաքար. ի. ու. աց. օք։ կմ՛ ամբ. անց. ամբք։ || որձ քար, այս արու քար, որով նշանակի կարծրութիւն և ապառաժային վէմն. և կմ՛ ապառաժն. ռամկ. որձ քար. կմ՛ սեաւ քար. և ըստ այսմ առի Մծբն. թ. սիրտս որ խստացեալ է իբրև զորձաքար։ Իսկ մերթ նշանակէ զորձաքարեայ, այն զայն՝ որ է քար որձ, կմ՛ ապառաժային. ըստ այնմ 1. Մակ. 10. 11. Շինեցէք զպարիսպ շուրջ 'ի չորեկուսէ յորձաքար վիմաց, այս 'ի չորեքկուսի որձաքարեայ վիմաց։ Ը այսմ առեալ լինի և 'ի գիրս Խորէնեայ. բ. գլ. 7. և 39. և 87. յորս ասի՛ բուռն հարկանել զորձաքար վիմաց. կմ՛ շինել որձաքար վիմօք. և այլն։

Որձաքարեայ։ (Նախդրիւ հոլովի.) || այն՛ որ է կազմեալ կամ շինեցեալ յորձաքար վիմաց. կմ՛ որոյ նիւթն է որձաքար. որպէսիք են ոմանք յամրոցաց։ Իսկ մերթ այն, որ է որձ քար, այս ամուր կարծրանիւթ, կմ՛ ապառաժային քար. և ըստ այսմ առի, վէմ որձաքարեայ։ Խորէ. բ. գլ. 39։

Որմ. ոյ. ով. որմք. կմ՛ որմունք. ոց. զորմս. կմ՛ զորմունս. ովք։ || շրջապարսպ կանգնեալք զկողմամբք սենեկաց, տանց, ապարանից, տաճարաց, և այլոց նմանեաց, որովք որոշի մի շինուածն 'ի միւսոյն. ռամկ. պատ։ Ղևտ. 14. 37։ Եսայ. 59. 10։ Եզեկ. 13. 15։ Բայց մինչ ասի որմ բռնեալ, նշանակի կեղծաւորն, որ արտաքուստ կերպարանեալ բարեօք պճնի՝ որպ որմ բռով. և 'ի ներքուստ է վատթար և աղտեղ։ Գործ. 23. 3։

Որմադիր։ || տե՛ս զՈրմնադիր։

Որմածն. ոյ. ով. աց. ովք։ || անուն շրջապատեցեալ որմով. և կմ՛ պարսպեալ վայր. և ըստ այսմ առի, որմածք արգելոցաց. կմ՛ բանտից. և այլն։ ռամկ. պատ փակած տեղ. կմ՛ պատով գոցած տեղ։ 'Ի հին պատմագիրս։

Որմայեց. ի. իւ. իւ. իւք։ || յեցեալ յորմն. և այս առի զմարդոյ, որ զթիկունս իւր յորմն առնէ։ ռամկ. պատը կռթնող։ Իսկ մերթ պղպջից, կմ՛ զանթոռոց, և զայլոց նմանեաց, որք զորմովք կառուցեալ. կմ՛ մածուցեալ կան. ռամկ. պատը կռթնցած։ 1. Թագ. 20. 25։

Որմաշէն. շինի. իւ. իւ. օք։ || շինօղ որմոյ. կմ՛ որմնադիր։

Որմարգել. ի. իւ. իւ. իւք։ || նա՛ որ արգելեալ փակէ զոք որմով։ Իսկ մերթ նա՛ որ արգելեալ փակեալ կայ 'ի մէջ որմոց։ Եսայ. 31. 9։ ըստ այսմ որմարգել կոչի և նա, զոր յաղագս մեղապարտութեան իւրոյ եդեալ 'ի նեղ ծերպս որմոց՝ շարեն զնովաւ քարինս. ուր և մեռանի։

Որմեմ. եցի. եա՛. ել։ (Ներգործ.) || ծածկել սա յորմ բառէն. որպ պարսպել 'ի պարիսպ բառէն. և նշանակէ զորմ կանգնել. կմ՛ որմով պատել. և կմ՛ զորմ հիւսելով խնուլ զերդս, կմ՛ զմուտս. և զայլ ինչ նման։ ռամկ. պատ փակել. կմ՛ պատով գոցել. և ըստ այսմ խմանի՛ մինչ ասի՛ արգելել 'ի լոյս միում, որմեաց զդուռն։

Որմզդական. ի. ան. աց. օք։ || այն ամ, որ վերաբերի առ որմիզդ. կմ՛ դիւցազնական. կմ՛ քաջեան. և կմ՛ նուէրական. և Ը այսմ առի՛ որմզդական տաճար. որմզդական

հուր. կամ խնձոյք, և այլն։ Խորէն. Բ. գլ. 74։ և 'ի հին պատմագիրս։ Բայց մասնաւորապէս առեալ 'ի գործ ածի առ ընդ հաւիս դիք, այսպէս, որմզդական դիք. որմզդական դից. և այլն. որով մերթ նշանակի դիոս, յօ արամազդ. զոր մոլորեալ հեթանոսք համարէին յերկնից ծնեալ, ուստի և անուանէին զնա ոլիմպիացի, յօ երկնային. վն որոյ և անտիոքոս զտաճարն երուսաղէմի, ըստ որում անուանիւր տաճար երկնաւորի, հրամայեաց նուիրել յանուն դիոսի ոլիմպիացւոյ. 2. Մակ. 6. 2։ Այս՝ դիոս կոչիւր եւ հիւրասէր, յօ որում սիրով ժողովէր զհիւրս, և զպանդուխտս 'ի պանդոկ իւր. այլև վանատուր՝ ըստ որում տայր նդ վանս բնակութեան։ Յանուն սորա նուիրեցաւ և տաճարն սամարացւոց, որ էր 'ի գարիզին, զորմէ յիշատակ ասասցի 'ի բառն վանատուր։ Իսկ մերթ բառիւն՝ որմզդական դիք, նշանակի բաքոս՝ կոչեցեալ 'ի հայ բարբառ սպանդարամետ, զոր ընդարձակ տեսցես 'ի տեղւոջ իւրում. 2. Մակ. 14. 33։ և 3. Մակ. 2. 14։ Տօն պաշտաման սորա դիպիւր 'ի նահանջ ամսեան երեք յունաց, որ երբեմն երբեմն մուծեալ լինէր ընդ մէջ մարտի և ապրիլի. որպիսի էր առ եբրայեցիս ամիսն, վէ ադար։ Եւ կամ բացարձակ հանդիպէր յամսեանն ահեկանի, որ է ապրիլ. և վն այսորիկ բազում անգամ փոխանակ ասելոյ յամսեանն նահանջի, կամ ահեկանի, ասի՝ յորմզդական տօնին։ տե՛ս 2. Մակ. 11. 21. և 38։

Որմզդական քաղաք։ || Է անուն լիւդդեայ քաղաքին. որ 'ի պաղեստին 'ի վիճակի ցեղին եփրեմի. և կոչեցաւ որմզդական քաղաք՝ վն լինելոյ նդ յատամանէ կայսեր որմիզդ չըղ. կամ յաղագս դիւցազնական գոըսն իւրոյ, կամ բնակչաց նդ։ Եւ յայս միտս յոյժ անուանեն զնա դիոսպօլիս, որ է քաղաք դիոսի, յօ որմզդի. Կիւրղի Եղեմ. ժե։

Որմզդուխտ. դխտոյ. տէ։ || դուստր որմզդի, որ էր քոյր պարսից արքայից շապհոյ, զոր եւ ունէր կնութեան ամբարշտին մեհրուժանայ։ Խորէն. Գ. գլ. 36։ տե՛ս և 'ի բառն խոսրովդուխտ։

Որմ զորմայն. (մակբայ տեղական.) || յորմոյ յորմ. յօ եւմից որմոյ 'ի միւսն. կամ ընդ իւրաքանչիւր որմն. ռամկօր. պատէ 'ի պատ. ըստ այնմ. Կիւրղի Եղեմ. Բ. Զի մի կարացեալ՝ առ խարխափել որմ զորմայն՝ 'ի մէջ կաց հանդերձ շրջիցին. յօ խարխափելով յորմոյ յորմ շրջիցին 'ի խնդիր բժշկաց։

Որ միանգամ։ || տե՛ս 'ի Միանգամ.

Որմիզդ. մզդի. աւ։ || դիւցազն. կամ քաջ. կամ ազատ. կամ մեծ։ Աճառ. Եւ յայսմանէ առեալ առ ժամանակօք կուապաշտութեան որմիզդ կոչէին հեթանոսք զդիս թարեանց յ պատուէ նդ. և մանաւանդ զԶ դիոս զհայրն չաստուածոց. որ է արամազդ. Կիւրղի Եղեմ. Վ։ Իսկ երբեմն բառս այս է յատուկ անուն մարդոյ։ Խորէն. Դ. գլ. 4։

Որմնադիր. դրի. իւ. աց. օք։ || կառուցանող որմոյ, որ ասի զարհեստաւորէն, որ զքարինս, կամ զկղմինտրս մի զմիով թ՛ կարգի դնելով և շաղախով մածուցանելով կանգնէ զորմունս, կամ զպարիսպս։

Որոգայթ. ի. իւ. ից. իւք։ || Թակարդ. որով նշանակի ամ ազգ հնարագիտական գործեաց, կամ հնարագործ դաւաճանութեց. որով որսացեալք լինին դաղանք. թռչունք, ձկունք. կամ ըմբռնին սոյք ընթացուղաց. և կամ որով գթեն. և անկանին մարդիկ 'ի գուբ, կամ 'ի փորձանս ինչ. և այլն։ ռամկ. փուղանի։ Սաղմ. 139. 6։ Երեմ. 5. 26։ Ամովս. 3. 5։ Մերթ եւ առեալ լինի փոխանակ. պատերազմական մեքենայից. յորոց արձակեալ լինին 'ի վերայ թշնամեաց նետք և ըռումբք. կամ՝ պէսպէս հրացանութիւնք. և այլն։ 2. Մակ. 10. 30։

Որոգայթադիր։ (Նախդրիւ հոլովի.) || զորոգայթս դնող. յօ նա, որ հնարիւք կառուցանէ ումեք զթակարդս, զի որսասցի զնա, որպիսիք էին որսորդք։ Եւ յայսմանէ առեալ՝ ո՛և իցէ դաւաճանողք. կամ նենգողք և կամ դարան գործողք, որոգայթս դիրք ասին. որպիսի էր ըմբռնողքն. կամ մարդիկ թշնամիք միմեանց։ Աճառ։ Լամբրոն։ Իսկ մերթ նշանակի որոգայթաւոր, յօ այն, որով ոք անկանի յորոգայթ. կամ ըմբռնի 'ի կամս թշնամւոյն. ռամկ. ծուղակ. և ըստ այսմ երկայրաբանութեն կոչի՝ որոգայթադիր բան. ըստ այնմ Ոսկե. 2. հատ. ԺԵ. Յայժմ ժամ հարցանէրս առաքէին, որոգայթադիր բանս արկանելով նմա, յօ Յսի։

Որոգայթաւոր. ի. աւ. աց. օք։ || նա՝ որ ունի, կամ 'ի գործ ածէ զորոգայթս որսալ զոքս ինչ. որպիսիք էին որսորդք։ Իսկ մերթ ասի զանխլու. կամ զերէ, յորում թագուցեալ կայ որոգայթ, կամ որով ոք որոգայթեալ, կամ դաւաճանեալ լինի. տաճկեր. ճախախնարաւէք։

Որոգայթեմ. եցի. եա՛. ել։ (Ներգործ.) || յորոգայթս արկանել. կամ թակարդիւ ըմբռնել. կամ որսալ. կամ դաւաճանել. և կամ նենգելով պատրել։ Լամբրոն։

Որոճ. ի. իւ. ից. իւք։ || որոճումն, որ է վերստին ծամումն կերակրոյ, զորմէ յիշատակ տեսցես 'ի բայն որոճել։ Իսկ մերթ անդրադարձաբար առեալ՝ նշանակէ մտածոյզ քննութեն. կամ խորհուրդ. և կամ խոկումն սրտի. և ըստ այսմ իմանի մինչ ասի որոճել զբանս գրչականս։ Եւ մերթ մանրապատում բացատրութի. կամ մեկնութի բանից. որով իբր թէ ծամեալ վարդապետական բանիցն ջամբին տհաս ունկնդրացն առ 'ի դիւրաւ ճաշակել զնս, և օգտել։ Լամբրոն։ Իսկ մերթ Է բայի շարակցի այսպէս, որոճ ածել. և նշանակէ որոճել։

Որոճաբար։ (մակբայ որակական.) || որոճելով. յօ առնել ծամելով. կամ խոկալով.

ռով. և կմ հանդոյն ոտնձռելը ։ Նարեկ. ՚ի մեկն. երգոց ։

Որոճալից ։ (նախադրիւ հոլովի.) ‖ սաստիկ որոճեալ. և կմ յոյժ մանր ծամծեալ, կմ ծամեցեալ ։ Ուստի և անդրադարձաբար՝ որոճալից կոչի բանն, որ յոյժ մանրամասնաբար բացատրի. կմ մեկնի. և իբր թէ ծամծեալ դնի ՚ի բերան լսողաց. ըստ այսմ. Նարեկ. ՚ի մեկն. երգոց. Այս ցուցանէ զմանրապատում որոճալից վարդապետութեան բանս ։ Դիմել. վարի երբեմն իբրև զմակբայ. և նշանակէ սաստիկ որոճելով. կմ մանրամասնաբար բացատրելով. ռամկօր. մէկիկ մէկիկ մեկնելով. ըստ այսմ. Նարեկ. ՚ի մեկնութեան երգոց. Որոճալից մանրէ զբանս սրբ գրոց ։

Որոճային . այնոյ. ով. ոց. ովք ։ ‖ որոճական. կմ որոճօղ. որպիսիք են ոմանք յանասնոց ։ ըստ այսմ. Խորէն. Պ. դր. 59. Եւ ընծայեն իւր երեք կճղակաբաշխիւք, և որոճայնովք ։

Որոճամ . ացի. ա. ալ ։ (չէզոք.) ‖ տես ՚ի ներքոյ զՈրոճել ։ Ղեւտ. 11. 5. և 6. և 7 ։

Որոճեմ . եցի. եա. ել ։ (չէզոք և մերթ ներգործ.) ‖ վերստին ծամծել. յդ զկերակուր ՚ի փորը պարկէ արկոյին ՚ի բերան ածել. և անդրէն սակայ ծամծել. կմ ծամել և ծամել ։ և այս ասի զխաշանց. զուղտուց, զնապաստակաց, կմ զճագարաց. և այլն ։ Ղեւտ. 11. 3. և 4. և 26 ։ 2. Օրէն. 14. 7. և 8 ։ Իսկ մերթ անդրադարձաբար առեալ նշանակէ՝ մտայոյզ քննութիւն, կմ խորին մտածութիւն խոկալ, կմ խորհիլ ։ ըստ այսմ Եսայ. 59. 13. Որոճեցաք ՚ի սրտէ մեր ըզբանս անիրաւութեան ։ ըստ այսմ և խմանի մինչ ասի. որոճեն զորոճս դիմականս, յդ խորհին զդիմական խորհուրդս ։ Մերթ և մանրամասնական բացատրութիւն յայտնել ։ ռամկ. մէկիկ մէկիկ մեկնել ։

Որոճութիւն . թեան ։ ‖ տես ՚ի վերոյ զՈրոճ ։ Նարեկ. ՚ի մեկն. երգոց ։

Որոճումն . ճման. մամբ. մանց. ամբք ։ ‖ տես զՈրոճ ։

Որոճօղ . ողի. իւ. աց. օք ։ ‖ որոճացօղ. յդ նա, որ որոճայ, որպիսիք են խաշինք ։ 2. Օրէն. 14. 6 ։

Որոմն . ման. մամբ. մունք. մանց. մամբք ։ ‖ է սերմն, և անպիտան հատ իբրև գնտաձև՝ մանր իբրև գդինձ, որ բուսանի ՚ի մէջ ցորենոյ իբրև ապականիչ նր ։ Այսու անուամբ յորջորջի և բոյս նր, որ նման է սիզոյ, կմ կարճ բուսոյ գարւոյ. ռամկ. որոմ ։ Մատ. 13. 25. և 26. և 30. և 36 ։ Եւ յայսմանէ առեալ նաև այլ ոմանք իցէ վասն թար հատ, կմ ոտսակ փշոյ. որ բուսանի ընդ ցորենոյ. կմ ընդ գարւոյ, և խառնեալ ապականէ զհացն. որոմն կոչի ։ Աճառ.

Որոմնացան . ի. իւ. իւ. իւք ։ ‖ ցանօղ, կմ սերմանօղ որոմանց ։ իսկ երբեմն նմանութիւն առեալ լինի փոխանակ նր. որ աղանդս զհերձուածս, կմ զերկպառակութիւն ՚ի մէջ բազմութեան ։ Լամբրոն ։

Որոյ տողադարձ . (շաղկապ պատճառական.) ‖ յաղագս որոյ. կմ վն այնորիկ. ռամկ. անոր համար ։ Իսկ մերթ է մակբայ հարցական. և նշանակէ յինչ սակս. կմ վն էր. ռամկ. որու համար. կմ ինչու համար ։

Որոնեմ . եցի. եա. ել ։ (ներգործ.) ‖ յուզել. կմ խնդրել. կմ հետապնդել. կամ քննել ։ ռամկ. փնտռել. կմ փնտռել ։ Ղեւտ. 14. 36 ։ 4. Թագ. 10. 23 ։ Եզեկ. 43. 12 ։

Որոնումն . նման. մամբ. մանց. մամբք ։ ‖ յուզումն. կմ հետապնդութիւն. կմ զննումն. և կմ քննութիւն ։

Որոշ ։ ‖ նոյն է ընդ բառիս Որեշ. ըստ ամ նշանակութեանցն ։ Աճառ.

Որոշակի ։ (մակբայ զատական.) ‖ որոշաբար. կմ ՚ի բացեայ. կմ մեկուսի. կմ ուրոյն. ռամկ. զատ ։ և ըստ այսմ ասի, կալ, կմ ընթանալ որոշակի ։ Իսկ մերթ բացորոշաբար. կմ յայտնապէս, և կմ առանց իրիք ծածկութեան, կմ շփոթութեան ։ ռամկ. փէյլափէ փէյլափէ ։ Եւ ըստ այսմ երբեմն վարի իբրև զանուն անհոլով, և նշանակէ որոշեալ. կմ բացորոշ. կմ բացայայտ ։ և ըստ այսմ խմանի, մինչ ասի. որոշակի բանիւ խօսիլ. կմ ունել զորոշակի հաւատ ։

Որոշեմ . եցի. եա. ել ։ (ներգործ.) ‖ զատուցանել. կմ բաժանել. կմ անջատել. կմ որոշել. և կմ անջրպետել ։ ռամկ. զատել ։ Եսայ. 59. 2 ։ Գաղ. 2. 12 ։ Մերթ և զանազանել. կմ տարբերել. կմ մեկնել ՚ի մէջ բարւոյ, և չարի, և կմ խտրոցել ։ Ղեւտ. 11. 47 ։ Ժողով. 3. 18 ։ Իսկ մերթ բացորոշել. կմ ընտրել. կմ դատել. և ըստ այսմ ասի, որոշել ումեք զբաժին. կամ զկրօնաւորս, և զդատաստանս. և կմ որոշել զոք ՚ի գործ ինչ. այն ՚է քարոզութեան. կմ յառաքելութեան, և այլն ։ 2. Մնաց. 19. 10 ։ Մաղաք. 2. 3 ։ Գործ. 13. 2 ։ Հռոմ. 1. 1 ։ Իսկ Աճառ. 3 Բ. 9. ուր ասի. որոշեամ զաղքատս, և զանանկս. իմանի՝ զկրաւորս ընտրելով դատեամ զաղքատն. կմ իրաւ արար աղքատին, և անանկին ։ Իսկ մերթ առեալ լինի փոխանակ ՚ի բաց հանելոյ. կմ վտարելոյ, և ըստ այսմ ասի. Գործ. 18. 2. որոշել զոմ հրէայս ՚ի հռոմայ ։

Որոշիչ . շչի. աւ. աց. օք ։ ‖ որոշումն առնօղ. կմ որոշօղ. և կմ զատօղ ։

Որոշողութիւն . թեան ։ ‖ տես ՚ի ներքոյ զՈրոշումն ։

Որոշումն . շման. մամբ. մանց. մամբք ։ ‖ զատուցումն. կմ անջատումն. կամ բաժանումն. և կմ անջրպետութիւն ։ Եբր. 4. 12 ։ Մերթ և՝ զանազանութիւն. կմ տարբերութիւն. կմ խտրութիւն. և կմ աչառութիւն. Յոհ. 1. կաթ. Ժ. Ե ։ Իսկ մերթ՝ ընտրութիւն. կմ դատաստան. կմ բացորոշութիւն. կամ սահմանադրութիւն. և կմ կարգումն ։ Թուոց. 19. 2 ։ 2. Մնաց. 8. 14 ։

Որոշս ։ (նախադրիւ հոլովի.) ‖ տես զՅօրանջ ։

Որոշտամ . ացի. տա. ալ ։ (չէզոք.) ‖ տես

զծօրանիշել:

Որոջ. ի. ու. աց. օք: կամ իւ. ից. իւք: || Էգ գառն, թէ նորածին լիցի, և թէ տարևոր: Ծննդ. 21. 28: Ղևտ. 5. 6: Թուոց. 6. 14: 2. Թագ. 12. 3: Իսկ մերթ առեալ լինի փոխանակ ո՛ և լիցի արու գառանց, թէ մեծ լիցեն, և թէ փոքր: ուստի Ծննդ. 30. 40: Ղևտ. 23. 18: Եսայ. 53. 7: Երեմ. 46. 4. և 11:

Որովայն. ի. իւ. ից. իւք: || ընդունարան փորոտեաց. որ և կոչի փոր. կամ արգանդ: Ծննդ. 30. 2: Յոբ. 32. 19: Երեմ. 4. 19:

Որովայնածետութիւն. թեան: || ախտ խնձողելոյ զորովայն իւր ուտելեօք. կամ որովայնամոլութիւն. կամ որկրամոլութիւն. և կամ որկորածետութիւն: Սոփե. 1. հոգ. խոհ:

Որովայնածէտ. ծետի. իւ. ից. իւք: կամ ու. աց. օք: || ունող զախտ որովայնի. այն նա' որ ունի զմոլութիւն ըմպելոյ, և պարարելոյ զորովայն իւր կերակրովք. որ և ասի որովայնամոլ. կամ որկրամոլ:

Որովայնակոչ. ի. իւ. աց. օք: || այս հարցուկ. կամ գէ, որ մտեալ 'ի մարմին մարդոյ' իբրև զգիւթ պատասխանի տանէ հարցանողաց իւրոց: Եւ առաջաց որովայնակոչ, զի առկողութիւն էր այսր դիւէ ի յորովայնէ մարդոյ, և միանգամայն կանանց վհկաց' կոչել. զի ձայն տալ 'ի գուշակութիւն սատանայից. քանզի 'ի կարդալն զնա' նախ մռմռջէին նմ քաղցրաձայն երգս, և յետ առնելու բերկրիւր' սկսանէր զամբարիշտան զայնոսիկ ասպետացուցանել. և կամ հարեալ զնա մոլեգնութեամբ զդեանէր, և փրփրեցուցանէր. և ապա յորովայնէ նոյ պէսպէս շշնջմամբք արձակէր զբարբառս խուժադուժս, և նենգալիս, և գուշակէր զրդմաութիւն նոյ: Եւ յայսմանէ առեալ, նաև վհուկքն, ըստ որում յորովայնէ նոյ խօսէր դևն, առացեալ լինէին որովայնակոչ: Եսայ. 8. 19:

Որովայնամոլ. ի. իւ. ից. իւք: || տես զՈրովայնածէտ: Լամբրոն: և 'ի Հարց հարցմ. նս:

Որովայնամոլութիւն. թեան: || տես զՈրովայնածետութիւն: 'ի Հարց հարցմ. նս: և Սոփե. 1. հոգ. խմ:

Որովայնապաշտ. ի. իւ. ից. իւք: || պաշտող որովայնի իւրոյ, որպէս նշանակէ' որովայն ասելն. կամ որկորածէտն. ըստ որում առաքեալքս զնա ինչ մն որովայնի առնելով' իբրև զնմ պաշտեն զնա:

Որովայնապարար. ի. իւ. աց. օք: || պարարօղ որովայնի. կամ նա' որ պարարալի որովայնամոլութեամբ, կամ որկորածէտ. և կամ որկրամոլ: Սոփե. 1. հոգ. խոհ: Իսկ մերթ այն' որ լինի պարարելով զորովայնն. կամ հնարէ 'ի պարարելոյն զմարմին, և ըստ այսմ առեալ' որովայնապարար հեշտութիւն: Նարեկ. կղ:

Որովհետև: (շաղկապ պատճառական.) || և քանզի. կամ փոխանակ զի. կամ մն զի. ռամկ. [illegible]: Ծննդ. 16. 2: և 18. 31: 1. Կորն. 1. 22:

Որոտ. ի. իւ. ից. իւք: || որոտումն. այն գոռացումն ամպոց. ըստ այսմ 'ի Հարց հարցմ. նս. Եւ եղեն կայծակունք, և շանթք և որոտք:

Որոտալ. ացի. ալ. ալ: (չեզոք.) || արձակել ամպոց զահագին բարբառս. որ պատճառի 'ի ջերմ և 'ի ցուրտ գոլորշեաց. զի սոքա երբեմն իբրև զհրանիւթ փոշիս, եւ իբրև զգործուածս փակեալ 'ի մէջ թանձրամածութեան և խոնաւ ամպոց' բորբոքին առաջով արտգակացն, և կամ ուժգին շարժմամբք իւրեանց. և ապա պատոթիկ բռնութեամբ և պայթմամբ պատառեալ զամպս' 'ի բաց արձակին, որոց ձայնքն որոտումն կոչին. և արձակելն զձայնն' որոտալ. ռամկ. գոռալ: Բայց մինչ զիջն տակ որոտալ, խմանի' պատճառելն զորոտումն: 1. Թագ. 7. 10: Սաղմ. 17. 14: և 28. 3: և 76. 19:

Որոտընդոստ: (նախադրիւ հոլովի.) || այն' որ բռնութեամբ բարբառոյ թնդեցուցանելով ըստոստուցանէ զլսողս. որպիսիք են դնդանք զօրավարաց' յարձակելոյն 'ի հրացանից. կամ մեծաբարբառ փողք. ըստ այսմ Աւետ. որոտընդոստ աշխարհագոյշ շեփորայինքն, փողովք: Իսկ մերթ այն' որ յանկարծ' ընդոստնու. կամ 'ի վեր ելանէ. կամ յանկարծադէպ. կամ յանկարծակական. և կամ երագաշարժութ. և ըստ այսմ առեալ. յորոտընդոստ յարուցեալ զօրաց ձայնալ. կամ 'ի ժամանակի զարթնումնայնոյն որոտընդոստ լինելին բայք: Աւետ: Իսկ երբեմն վարի մակբայաբար, և նշանակէ' յանկարծ ընդոստնելով. կամ իսկոյն 'ի վեր յառնելով. կամ փոյթ ընդ փոյթ. և կամ վաղվաղակի. ըստ այսմ, Շնորհալին յողբսն Եդեսիոյ. Որոտընդոստ վերաբերեալք. յանկարծակի վերերեւելք:

Որոտընդոտ: (միջ.) || որոտալով և որոտալով. կամ յաճախ գոռալով. կամ մի զկնի միոյ զորոտումն առնելով. տաճկ. կիւրիւլտիւ կիւրիւլտիւ. կամ կիւմբիւրտէ կիւմբիւրտէ: և ըստ այսմ առեալ' որոտընդոտ բարբառելով. կամ որոտ ը որոտ զարհուրեցուցանելով. և այլն: Բայց 'ի գիրս Աւետ. նշանակ, հասեալք առ պաշտօնս որոտընդոտ որոտք. է սխալագիր գրչաց. զի պիտոյ է, որոտընդոստ. ուստի գնի 'ի ծաղկոցն, եւ 'ի յողբսն Շնորհալւոյն, 'ի յիշելն զնոյն բանին արտաքոյ թարգմանեցուցելոյ:

Որոտումն. ման. մամբ. մանց. մամբք: || գոռումն, որ է ահագին բարբառ ամպոց' հնչեալ իբրև զպատասխան երագընթաց կայծակաց: ռամկ. Երկնից գոռալը: Եսթ. 11. 5: Եսայ. 29. 6: Յօհ. 12. 29: տես և զՈրոտալ:

Որոր. ի. իւ. աց. օք: կամ որ. || է թռչուն ինչ ծովային' գիշատիչ և գաղտնապարտոյ. զոր այլով անուամբ կոչեն ճայ: ռամկ. [illegible]: Ղևտ. 11. 16:

Որ ոք. որոյ ուրուք. և այլն: || ով որ: ռամկ. ով որ: Եզեկ. 21. 16: և 30. 33:

Որչափ. կամ որչափք: (մակբայ քանակ.) || որ չափ. կամ որքան:

Որչափն: (մակբայ քանակ.) || նոյն է ընդ վերինոյն. թէպէտ սոքա հազիւ 'ի գործ ածին:

Որչափ: (մակբայ քանակ.) || որքան. կամ քանի: ռամկ. ինչ չափ: Սաղմ. 102. 12: 2. Կորն. 1. 20: Յայտ. 18. 7: Իսկ երբեմն առնի

զզօրութ բառնիս՝ իբրև. կամ իբրև. և կամ Ը չափու։ Ղևտ. 6. 26։ Յես. 3. 4։ Եսայ. 29. 6։ ըստ այսմ է և 3. Թագ. 17. 12. ուր ասի. բայց եթէ որչափ բուռն մի ալեր՝ ի սափորի. յը բայց միայն իբրու բուռն մի. կամ ըստ չափու միոյ բռան։ ռամկ. բռանչը չափ։ Իսկ մերթ վարի իբրև դանուն. և նշանակէ որքանն. կամ զքանին. Ը այսմ Յոբ. 2. կարգ. ԼԸ. տես՝ ի ձեռն որչափից անէ պատասխանի, յը որքան կերպիւ, կամ եղանակաւ. ըստ այսմ են և սոքա. որչափ և կարիցեն բառնալ. յը զորչափ ինչ կարիցեն։ Ծննդ. 44. 1։ որչափ ինչ արկանիցէ. կամ որչափ ինչ գործեաց, յը զորքան ինչ։ ռամկ. ինչ ջերքեր. կամ ինչ որ։ Ելից. 21. 22։ 2. Կորն. 7. 11։ Որչափ ժամանակս, կամ որչափ աւուրս. յը ցորքան. 2. Օրին. 1. 46։ Հռովմ. 7. 1։

Որչափ ևս։ || որչափ ևս առաւել. կամ քանի առաւել։ ռամկ. ինչ ջերքեր չափ։ Մատ. 6. 23։

Որչափութիւն. թեան։ || որքանութիւն. կամ քանիսնութիւն. և կամ քանակութիւն. ռամկ. ինչ ջերքեր ըլլալը։ Յոբ. 2. կարգ. ԽԸ։

Որչափ քան։ (շաղկապ միջնական.) || իբրև թէ. կամ իբրու թէ։ ըստ այսմ. 2. Մակ. 12. 16. Զինէր ինքն որչափ քան զերկուս վտաւանս. յը իբրու թէ երկուս վտաւանս։

Որպակ։ (շաղկապ. և մերթ մակբայ.) || որբար. կամ որքան. կամ որգոն. և կամ որպ. ռամկ. ինչպէս։

Որպէս։ || Նախադասութիւն, որ պահանջէ ըղ հոլովս հայցական. և նշանակէ՝ իբրև. մըդան, որպ զմայլա ըրկանոնաւ. կամ որպ զոչխար. և այլն։ ռամկ. ոչխարիպէս։ Սաղմ. 91. 13։ և 43. 22։ Բայց երբեմն առնու առ ըղ խնդիր ըստ խնդրոյ բային, յոր յարի. զոր օրինակ. ոչ որպ մարդոյ՝ այ ապաւնալէք. կամ մանին՝ ի քաղաք անդ՝ որպ ՚ի կալուած իւրեանց. կամ փախուցեալ ՚ի նոցանէ որպ յօձից. կամ բնակէր ՚ի անդուղին յայնմիկ որպ ՚ի տան. և այլն։ Յուդի. 8. 15։

Որպէս։ || մակբայ որակական. որ երբեմն բացարձակ վարի. իսկ երբեմն առնչական ընդ մակբայս՝ նոյնպէս. կամ այնպէս, և նշանակէ, զոր օրինակ. կամ ըստ որում. կամ ըստ որոյ կերպի։ ռամկ. ինչպէս. կամ ինչպէս որ։ Սաղմ. 126. 4։ Հռովմ. 3. 8. և 10։ և 5. 19։ Նոյնպէս է և 1. Մակ. 12. 45. ուր ասի. որպ ՚ի ձեռն ընցի. յը որպ և հնար իցէ. կամ Ը որում կարելի եղիցի։ Իսկ մերթ է հարցական. կամ զարմացական. և նշանակէ զիարդ. կամ որով կերպիւ. կամ որով եղանակաւ։ ռամկ. ինչպէս. կամ ինչպէս։ Մատ. 6. 28։ Ղուկ. 10. 26։ ըստ այսմ է և Սաղմ. 13. 4. ուր ասի. որպ ոչ ծանիցեն. յը զիարդ ոչ ծանիցեն, որով իմանի ասել. այս՝ ծանիցեն։ Իսկ երբեմն է ժամանակական. և նշանակէ՝ յորժամ. կամ երբ. կամ մինչ։ ռամկ. երբոր։ ըստ այսմ Սաղմ. 80. 6. վկայութիւն յովսեփու. զոր եդ ընդ նմա, որպ ելանէրն յերկրէն եգիպտացւոց. յը յորժամ ելանէր։ ըստ այսմ է և 2. Մակ. 1. 18։ Սաղմ. 126. 2։ և 130. 1։ Իսկ երբեմն վարի իբրև դանուն, և նշանակէ ինքնին։ Մարկ. 13. 19։ Գործ. 26. 29։ ըստ այսմ է և Դատ. 9. 33. ուր ասի։ Եւ արասցես Ը սա, որպ ինչ գտցէ ձեռն քո. յը զորպիսի ինչ հնար գտցէ. կամ զոր ինչ և գտցէ ձեռն քո։ ռամկ. ինչոր ձեռնէդ գայ։

Որպէս։ (շաղկապ պատճառական.) || որպ զի. կամ զի. ռամկ. որ. Ը այսմ Սաղմ. 118. 7. խոստովան եղէց քեզ Տր. որպ ուսայց զիրաւունս քո. յը որպ զի ուսայց։ Ը այսմ է և Տօբ. 4. 20. Սաղմ. 9. 15։ և 29. 13։ և 50. 6։ Բայց Սաղմ. 70. 15. ուր ասի. որպ ոչ թէ. իմանի՝ իբր ոչ եթէ. կամ ոչ որպ թէ։

Որպ և է. կամ որպ և իցէ։ (մակբայ.) || զիարդ և իցէ. կամ որով կերպիւ և իցէ. կամ թէ այսպ, և թէ այնպ. որ և ասի. ապաքէն ցասպս։ ռամկ. ինչոր ըլլայ. կամ ինչոր է. կամ թէ աստանից, թէ անտի։ 1. Մակ. 7. 35։ 2. Մակ. 14. 3։

Որպ զի. (շաղկապ պատճառական.) || զի. ռամկ. որ։ ըստ այսմ, որպ զի ընկեցի երկնուց նա՝ ի ձեռ. կամ որպ զի մի՝ մեղայց. որպ զի ուսայց. և այլն։ Ելից. 20. 20։ 2. Մնաց. 6. 31։ Սաղմ. 118. 11։ և 71։ Բայց յամ ուրեք յաճախելն զշաղկապս զայս՝ անհեթեթ առնէ զշարադրութիւնս, մանաւանդ մինչ յարի ՚ի ստորադասական եղանակս բայից. այլ թէ պիտոյ ընկնիցի՝ հնուք զաւզի նորա աներկայթ եղանակաւ. որպ առատնեւք յաճախ ՚ի գիրս նախնեաց, քանզի փոխանակ ասելոյ. հրամայեաց որպ զի մի՝ արգելուցուն զնա. կամ եհան զնա, որպ զի երթայցեն ; վայելչաբար ասի, հրամայեաց մի արգելուլ զնա. եհան զնա՝ երթալ։ Ծննդ. 11. 31։ Յովբ. 12. 6։ Իսկ մերթ նշանակէ՝ մինչ զի. ըստ այսմ Մատ. 8. 28։ որպ զի չէր հնար անցանել ումեք Ը այն ճանապարհ. յը մինչ զի չէր հնար։ ըստ այսմ է և Յօբ. 42. 16։ Խորեն. Բ. գլ. 27։ և Գ. գլ. 61։

Որպէս զի։ (մակբայ որակական.) || որպ. կամ որպ և. կամ ըստ որում։ ռամկ. ինչպէս. կամ ինչպէս որ. 2. Մնաց. 1. 12։ 3. Մակ. 7. 4։ Իսկ մերթ՝ թէ որպ. 1. Մակ. 4. 35։ ըստ այսմ է և 2. Մակ. 1. 11. ուր ասի. որպ զի զիարդ ՚ի մարտ պատերազմի պատրաստեալ կայք. յը թէ որպ և զիարդ։ Մերթ և առեալ ընդ փոխանակ մակբայիս՝ զի այնպէս։ 3. Մակ. 7. 1։ Դարձեալ բազում անգամ ևս նշանակէ՝ որքան. կամ որչափ. և ըստ այսմ վարի առ մանաւանդ ՚ի բանս զարմացականս. ըստ այսմ Սաղմ. 65. 3։ որպ զի ահեղ են գործք քո. յը որչափ ահեղ են։ ըստ այսմ է և Սաղմ. 35. 8։ և 91. 6։ և 118. 103։ Հռովմ. 11. 33։ Իսկ մերթ վարի որպ ըղ նախադասութիւն. և նշանակէ իբրև. կամ իբրու։ Սաղմ. 70. 7։

Որպէս զի թէ։ || իբրև թէ. կամ իբրու թէ։ ռամկ. ասիկի րէ։ Սաղմ. 93. 9։

Որպէս թէ։ (մակբայ. և մերթ շաղկապ միջնական.) || իբրև թէ, կամ իբրու թէ։ ռամկ. ասիկի րէ. Թուոց. 22. 37։ 1. Կորն. 4. 18։ և 5. 1։

Digitized by Google

Որպիսանամ. ացայ. ցի՛ր. անալ։ (ընդմիջ.) || որպիսի լինել. կամ այսպիսի և այնպիսի գոլ. և կամ որականալ։

Որպիսացուցանեմ. ցուցի. ցո՛. անել։ (անցողական) || որպիսի առնել. կամ որակացուցանել։

Որպիսի. ւոյ. եաւ. եաց. եօք։ || ածանցի առ 'ի բառէս որպէս. և նշանակէ զինչպիսի. կամ զայն, որ է այսպիսի, և այնպիսի։ տամկ. ինչպէս։ 2. Կոր. 10. 11։ և 12. 20։ ըստ այսմ և այն՝ որ ունի զորակութիւն, կամ զնմանութիւն իրիք, որպիսի կոչի. վա՞ղի փոխանակ առելոյ՝ որոյ նմանն ոչ եղև, առանց որպիսի ոչ եղև։ Ելից. 9. 18։ Դանիէ. 12. 1։ Մատթ. 24. 21։ Իսկ մերթ վարի հարցականապէս. և նշանակէ՝ որգունակ։ տամկ. ինչպէս։ և ըստ այսմ առի որպիսի ինչ էն. կամ որպիսի գրով. կամ զո՛րպիսի ջգնուն. և այլն։ Գաղատ. 6. 11։ Կողոս. 2. 1։ Յակ. 4. 15։

Որպիսութիւն. թեան։ || որպիսի գոլն. կամ որակութիւն. կամ եղանակ. կամ կերպ. և կամ այն, որով իմն առի այսպիսի և այնպիսի. և ճայամ առի 'ի ճարտասանութեան պէտս գլուխ ա. յ. Աստուց որքանութեան. առանց որպիսութեան. ցն առանց մարմնաւորի որակութեան։

Որջ. ոյ. ով. ոց. ովք։ || խշտի. կամ մորի. ցն բոյն վայրի գազանաց, ուր որջացեալ ըբ նակկին. Երեմ. 12. 9։ Մատթ. 8. 20։ Ղուկ. 9. 58։

Որջանամ. ացայ. ցի՛ր. անալ։ (ընդմիջ.) || որջ առնելով ինքեան զանգի ինչ, բնակիլ. և կամ բոյն դնելով բնականալ ուրեք. որ և առի բունիլ. և այս առի զվի շապաց, և զայլոց գազանաց. տամկ. բառ նէլ։ 'Ի Վարս հարց. իզ։ Եւ յայտմանէ առեալ, առի և զայլոց իրաց. որպէս, զմրգոյ, զգիճաց, զմահու, և զնմաններաց. և նշ. կէ. ամփոփելով, կամ դարանելով, և կամ զկայ առնլով 'ի տեղւոջ իմիք բնակել. կամ զետեղեալ նըստիլ։ Խորէն. Բ. գլ. 74։ և 'ի հին պատմագիրս։

Որջացուցանեմ. եցի. եա՛. ել։ (Ներգործ.) || յորջս առուցել. ցն զօղեցուցանել. կամ դարանեցուցանել. և կամ բնակեցուցանել. և ըստ այսմ առի գազանք որջացուցեալք ի մորիս. կամ 'ի խշտիս հանգստեան։ Եւ յայտմանէ առեալ երբեմն նշանակէ՝ առակ թագուցանել. կամ պատսպարել. և կամ ամփոփել զի՛և իցէ իր. որպէս ինչ առի՝ որջացուցեալ կեղծաւորութիւն. կամ խորհուրդ. և այլն։ տամկ. ծածկել. կամ պահել։

Որս. ոյ. ով. ոց. ովք։ || կենդանի որսացեալ. կամ որսալն. տաճկերէն. աւ։ Ծննդ. 27. 7. և 25։ Ղևտ. 17. 13։ Նաւում. 2. 12։ Իսկ մերթ առեալ լինի փոխանակ երէոց։ Ըստ այսմ 'ի Վարս հարց. Ը. կերանք նոր էին իբրև վայրի ինչ որսոյ։ Մերթ և ս նշանակէ՝ որսացումն։ Ծննդ. 27. 30։ Ղուկ. 5. 4. և 9։ Եւ երբեմն առեալ լինի փոխանակ Թակարդից. կամ որոգայթից։ Սաղմ. 34. 8։ Իսկ երբեմն Է բայի շարակցի այսպէս. յորս ածել. և նշանակէ. արձակել զնետս զկնի որսոյ. կամ առ 'ի հարկանել զնպատակ ինչ

խրբրև զորս։ 1. Թագ. 20. 20։

Որսակ։ (մակբայ քանակաւ. և մերթ շաղկապ միկնական.) || ծառի առ 'ի բառէս ուէս, որ է չափ. ուստի բառիս որսակ նշանակի՝ որչափ, կամ որքան։ տամկ. ինչ ղըտար. կամ ղըլլաց։ Իսկ մերթ՝ որքան. կամ ա՛շ։

Որսական. ի. աւ. աց. օք։ || այն շան, որ վեբաբերի առ որս։ Իսկ մերթ որսացող. կամ որսորդ, որ է ա՛շխ. և այս մանաւանդ առի զորսացող Թռչնոց. կամ զձկանց. և կամ զգազանաց. և ըստ այսմ Թազին՝ կոչի շուն որսական։

Որսակից. կցի. իւ. աց. օք։ || կցորդ ումեք յորսս. կամ ընկեր որսոյ. և կամ 'ի միասին որսացող։ Ղուկ. 5. 7. և 10։

Որսակրոս. ի. իւ. աց. օք։ || է անուն այնց ձկանց, որք իբրև զանատունս խառնաճաբակս՝ սովորեն որոճալ 'ի ջուրս յաջևյահեակ շարժելով զծնօտսն։

Որսամ. որսացայ. ացայց. որսա՛. ալ։ (Ներգործ.) || հնարիւք կամ գործեօք ըմբռնել զկենդանիս, որպէս զերէս, զԹռչունս, զձկունս, և այլն։ տամկ. բռնել։ Ծնն. 27. 3. և 33։ Ղևտ. 17. 13։ Ովսէ. 4. 18։ Եւ յայտմանէ առեալ՝ որսալ առի նենգութեամբ, կամ խորամանկութեամբ 'ի ձեռս արկանել զոք, կամ կալնուլ, և կամ Թակարդել։ Սաղմ. 93. 21։ Մարկ. 12. 13։

Որսայս։ || տե՛ս զՅորսայս։ 'Ի Վարս հարց. իզ։

Որսանք. անաց. օք։ (անեզ.) || որսացումն, որ է ըմբռնումն կենդանեաց։ Իսկ մերթ նշանակէ զգործիս որսալոյ. որպիսիք են Թակարդք. կամ որոգայթք. ըստ այնմ 'ի Վարս հարց. Զ. 'ի յետագիրն. լինին մեզ կարԹք պատրաստելով 'ի մահ, որպէսք բազմապատիկք 'ի կորուստ։

Որսորդ. ի. աւ. աց. օք։ || արհեստաւոր՝ որ որսայ զկենդանիս, որպէս զերէս, զԹռչունս, զձկունս, և այլն։ տամկ. ավճի։ Երեմ. 16. 16։ Եզեկ. 47. 10։ Ողբոց. 3. 5։ Իսկ մերթ անդրադարձաբար առեալ՝ առի զնմանէ, որ հնարիւք զոք ինչ առնու 'ի բերանոյ ուրուք կամ զկի ինչ առ ինքն ձգէ. և ըստ այսմ առի 'ի գիրս Խորէն. Բ. գլ. 49. զորս ջէն ամբաստայ. Ասնէր հասակ անդամոց՝ համեմատ քաջութեան, և առաքինութեան ոգւոյն որսորդ։

Որսօն. ի. իւ. ից. իւք։ || որսացումն. կամ որս։ Իսկ մերթ որսացող, կամ որսորդ. և ըստ այսմ առի 'ի հին պատմագիրս, կացուցանել Թիկնապահս, և այլ որսօնս իւրեանց։

Որստարագ։ || տե՛ս 'ի ներքոյ Որստարագան։

Որստարագան։ (շաղկապ միկնական. և մերթ մակբայ.) || որստարագ. կամ որքան. կամ զ'ի որքինակ. կամ որգան, կամ որչ. տամկ. ինչպէս։

Որցեմ. եցի. եա՛. ել։ (Ներգործ.) || կորզել. կամ յափշտակել. կամ Թափել. կամ հանել. և կամ ձգել։ տամկ. խլէլ. կամ քաշէլ. կամ քէշ նէլ։ և ըստ այսմ առի՝ 'ի հին պատմագիրս. 'ի պարծանս գովեստից ազգիս մերոյ միտք

իմ որցեալ, զիս բերէ գեղերիլ 'ի ներքո ղուծին • ք միայն իմ յաղթահարեալ • կամ ձգեալ : և զնին ասի • 'ի մեծաղագրութե՛ որ տաքս զինքն որցեալ, ք տրտաքս երկաթել կամ հանեալ :

Որփէոս • կմ որփեոս • ի • իէ : || է բանաստեղծ ումն Թրակիացի, որ ընծայեալ ըղ քնար 'ի հօրէն իւրմէ ապողոնեայ՝ եղև այն չափ հռչակաւոր նուագածու, մինչ զի առասպելաբանէին զնմանէ հեթանոսք, թէ 'ի նուագել իւրում շարժէր զանասունս և զվէմս • և կառեալ կայեր զընթացս գետոց, և ընդարմացուցեալ նուաճէր զգազանս ամենայն : Զամանէ պատմեն, թէ եբեւ 'ի խինջոյս աղէքսանդրի կայսեր մակեդոնացւոց նուագել պատերազմական եղանակաւ այնչափ ոգևորել նորա նուագ, մինչև ոչ կարացել աղէքսանդրի հանդուրժել, նոյն ժամայն 'ի հանդիսի անդ առեալ զհանեալ 'ի պատերազմ խրախուսէր :

Որփիական • ի • աէ • աց • օք : || այն ամ, որ է որփէոսի, կմ յորփեոսէ սրբագրեցել, կմ որինագրեցեալ • և ըստ այսմ ասի՝ որփիական երգք, կմ աւանդութիւն • և այլն • 'ի Բռուզին ուրբոփէջի, որ ըղոխարհէ :

Որքան • որքանոյ • որքանք • նից • նօք : || որչափ • կմ քանի • և ըստ այսմ ասի՝ զորքանս կորուսին • կմ 'ի ձեռն որքանից, և այլն : Իսկ մերթ որքանութիւն • կմ որչափութիւն • ըստ ալ նմ • Նարեկ • իզ • Զկորստեան խորս չափելով, զորքանն երբեք ոչ գտի :

Որքան : (մակբայ քանակական •) || որչափ • կմ քանի : ռամկ • որչափ • կմ ինչ ղըփոր : Ժո ղո 9• 10 : Նարէկ • հէ : և 'ի Գուղ խօսին :

Որքանիք • եաց • եօք : (անեզ •) || որքանք • կմ քանիք • կմ քանի քանիք • ըստ այնմ 'ի Հրո հարց • Որքանիք եղեն ախտք յանձին, այնքանիք տիրեն նմա : Եւ զկնի այսր, որքանիք կամեցան չարիս առնել նա հալածանաց որոց : ռամկ : նէչէ նէչէ մարդիկ :

Որքանութիւն • թեան : || որչափութիւն • կամ քանիսնութիւն • կմ քանակութիւն : ռամկ • ինչ ըը քաղծուլը : Ըստ այնմ Նարէկ • ղզ • Զորքանութիւն երկայնաչափութեան յայտ արարեալ • ք զոր չափութիւն և 'ի շարժմանց ասի՝ զհնգեսուն, Առանց որքանութեան • առանց որպիսութեան, ք առանց քանակութեան, և որակութեան : Իսկ մատենագրաց առեալ լինի փոխանակ չափոյն, որոց պարզագոյն վարօղքն չափաբերական արուեստիւ • որպիսիք են երկրաչափք, կմ թուաբանք • Ըստ այնմ Ոսկէ • 2 • տիմ • ժէ • որք չափաբերութ և որքանութ զբաղեսին :

Որքին • ոյ • ով • ոց • ովք : || տես զՈրքիւն :

Որքինոտ • կմ որքիւնոտ • ի • իէ • ից • իւք : || ունօղ 'ի մարմնի զորքիւն • կամ նա, որոյ մորթն ապականեալ է որքիւն ախտիւ : Ղևտ • 22• 22 :

Որքիւն • ոյ • ով • ոց • ովք : կմ իէ • ից • օք : || է տարածական ախտ ինչ մարմնոյ, որ ըղ մորթ մարդոյ խաաշացուցել, սասանիկ մար

մաշեցուցանէ, ք կեռացնէ պատճառելով յաճախ զնթեփս 'ի դէմս, 'ի կուրծս • 'ի ձեռս • և յոտս • որք 'ի քերելն թօթափին • և անդրէն այլք 'ի տեղի նց դոյանան : Անասնոց առաւել և անբան կենդանեաց, որպէս խոզինք • երինջք, և այլք : ռամկ • հէրփուն :

Որքինոտ : || տես զՈրքինոտ :

ՈՒ

Ու : (շաղկապ բաղհեւստական •) || եւ • բայց սա յաշխարհաբառ լեզուէ 'ի գործածի • իսկ 'ի գրաբառ լեզուէ 'ի կիրառել լինի 'ի չափաբանս տաղաչափաց • նաև 'ի բարդութիւնս, և 'ի յարակցութիւնս բառից, որպ • այրուձի • տարուբեր • լոյսլոյս • ութ ու տասն • եօթնուտասնեերորդ • երրու • ք իւր և • և այլք բազումք : Գրիգ • վարի սա բազում անգամ իբրև զմի տառ • և յայնժամ երբեմն 'ի գործածի որպ զկապականայն հնչելով իբրև զլ • որգոն • զուարթ • նուագ • կմ հայցուած • խայծուած : Իսկ երբեմն 'ի գործածի իբրև զձայնաւոր • զոր օրինակ, լուր • հուր • կմ ուրախ • ուղղիչ • և Ըստ այսմ բազում անգամ փոխագրի ը առ ի ս • որպ գողուն և գողօն • գործունեայ և գործօնեայ • կոչունք և կոչօնք • մուրատ և մօրատ • ուժիտ և օժիտ • ուղերձ և օղերձ • ոտունք և ոտօնք • և այլն :

Ուահ : (միջարկութիւն հեգնական •) || վահ • կմ հահ :

Ութ • կմ ութն • ութնից • կմ ութից • ութիւք : || է թիւ բացորձակ • որով նշանակի երկիցս չորսն : ռամկ • ութը : Ելից • 26• 25 : Թուոց 7• 8 : Դ • Թագ • 22• 1 :

Ութաղեայ : (նախդրիւ հոլովի •) || ունօղ զութն աղխս • կմ բաղկացեալ յութն լարից • և այս ասի զքնարաց • և զայլոց նմանեաց : ռամկ • ութը թէլլի սազ :

Ութամեանեայ : || տես զՈւթնամեանեայ :

Ութամեան • մենի • իէ • ից • իւք : || նա, որ է ութից ամաց • կմ ութ ամ է, յորմէ հետէ ծնեալ է կմ եղեալ : ռամկ • ութը տարուան : Իսկ մերթ այն, որ առէ միայն զամս ութն • կմ եղեալ է յութն ամս • և կմ պատկանի ութից ամաց : Բայց եբեւ վարի մասնաւորէն, և նշենկէ, յութն ամնից հետէ • կամ ութն ամօք : Ըստ այնմ Գործ • 9• 33 • Ութամեան գնիւր 'ի մահիճս անդամալոյծ : ռամկ • ութը տարուան 'ի վեր • կմ ութը տարուան պէրի :

Ութամեայ : (նախդրիւ հոլովի •) || նոյն է ընդ վերնոյն :

Ութեմեան : || տես զՈւթամեան :

Ութերորդ • ի • աւ • աց • օք : || է թիւ դասական, որով նշանակի վերջինն ութից ըստ կարգի դասեցելոց : Ղևտ • 1• 59 : Յայտ • 21• 20 : Բայց Սաղմ • 6• 1 : և 11• 1 • յորս ասի, վն ութերորդացն • կմ 'ի վն ութերորդացն • բացայայտ ութերորդ ըստ առման եբրայեցւոց նշանակի ութաղեայ սաղմոսարանն • ք զութ աղխս կմ լարս ու

նոյ քնարն․ ուստի ասելով․ սաղմոս վՂ, կամ ՚ի վՂ ութերորդացն․ կամի ասել, սաղմոս երգելի ութաղեաց քնարաւ։

Ութերորդեմ․ եցի․ եա․ ել։ (նեոքաղ․) ‖ ութնիցս կրկնել․ կամ ութնպատիկ առնել։ իսկ մերթ զութերորդ մասն կրել առնուլ․ կամ տալ․ որպիսիք են և բազմաց այսոքիկ, եօթներորդել․ և հնգերորդել․ որք ՚ի տեղիս իւրեանց մեկնեցան։

Ութեւտասան։ ‖ տե՛ս զՈւթուտասան։ 2. Եզր. 8. 18։

Ութեւտասներորդ։ ‖ տե՛ս զՈւթուտասներորդ։ 1. Եզր. 1. 22։

Ութեւտասնեքեան․ կամ նեքին․ եցունց․ եքումբք։ (անեզական․) ‖ տե՛ս զՈւթուտասնեքեան։

Ութիցս․ կամ ութնիցս։ (մակբայ քանակ․) ‖ ութնապատիկ։ ռամկ. ութը հեղ։

Ութն։ ‖ տե՛ս զՈւթ։ 1. Մնաց. 24. 4։ և 29. 7։ Եզեկ. 40. 37։

Ութնապատիկ։ ‖ տե՛ս զՈւթնպատիկ։

Ութներորդ։ ‖ տե՛ս զՈւթերորդ։ 2. Մնաց. 11. 21. և 38։ Եզեկ. 43. 27։

Ութնեքեան․ կամ նեքին․ նեցունց․ նեքումբք։ (անեզ․) ‖ է թիւ անձնական, որով նշանակի իւրաքանչիւրն ութից․ կամ ութն մի ըստ միոջէ։

Ութնմեամեայ․ նէի․ իւ․ եաց․ եաւք։ ‖ ունօղ զութ ամսուն․ կամ բաղկացեալ յութից ամաց։

Ութնուտասներորդ։ ‖ տե՛ս զՈւթուտասներորդ։ 4. Թագ. 22. 3։ Երեմ. 32. 1։

Ութնպատիկ․ տկի․ տաւ․ կամ իւ․ ից․ օք։ ‖ է թիւ կրկնական․ որ երբեմն վարի իբրև գոյական, և նշանակէ՝ ութ իցս կրկնել։ իսկ երբեմն իբրև ածական, և նշանակէ փոխանակ միոյն ութն․ կամ ութ առաւձանաւ աւելի քան զմին։ և ըստ այսմ խօսնի, մինչ ասի, ութնպատիկ հատուցանել։ ռամկ. ութը ղաթ։

Ութուտասան․ անք․ ից․ իւք։ ‖ է թիւ բացարձակ․ որով նշանակի ութուտասան․ ցի ութևտասն, որ բաղկանայ յերրեակ վեցից։ ռամկ. տասնը ութը։ Ղևտ. 13. 4։ և 11։

Ութուտասանպատիկ․ տկի․ տաւ․ ից․ օք։ ‖ է կրկնական թիւ, և նշանակէ զութուտասն անգամ կրկնեալն։ իսկ մերթ վարի իբրև գոյական, և նշանակէ՝ փոխանակ միոյն ութուտասան․ կամ ութուտասան անգամ աւելի քան զմին։ ռամկ. տասնը ութը ղաթ։

Ութուտասաներորդ․ ի․ աւ․ աց․ օք։ ‖ տե՛ս զՈւթուտասներորդ։

Ութուտասն․ նից․ նիւք։ ‖ տե՛ս զՈւթուտասան։ Գործ. 3. 14։ Ղևտ. 13. 16։

Ութուտասներորդ․ ի․ աւ․ աց․ օք։ ‖ է թիւ դասական և նշանակէ զվերջինն ութուտասնից դասաւորեցելոց։ 4. Թագ. 1. 17։ Գործ. 3. 1։

Ութուտասնեքեան․ կամ ութուտասանեքեան․ կամ քին․ նեցունց․ նեքումբք․ (անեզական․) ‖ է թիւ անձնական․ որով նշանակի իւրաքանչիւրն յութուտասնից․ կամ ութուտասանքն մի մի։

Ութսնապատիկ․ տկի․ տաւ․ ից․ օք։ ‖ է թիւ կրկնական․ և նշանակէ՝ ութսնիցս կրկնել։ իսկ մերթ վարի մակբայօրէն․ և նշանակէ փոխանակ միոյն ութսուն․ կամ ութսուն առաւձանաւ աւելի քան զմին։ ռամկ. ութսուն ղաթ։

Ութսնաւոր․ ի․ աւ․ աց․ օք։ ‖ պարունակող ութսնից․ կամ որ ունի ըստ իւրեւ զութսունս։ իսկ մերթ նշանակէ զութսնապատիկն․ այլ ասացեալ զբանաւս հարիւրաւոր։

Ութսնեակ․ եկի․ աւ․ աց․ օք։ ‖ է թիւ հաւաքական․ և նշանակէ զութսունն համար։ իսկ մերթ նշանակէ ութսնաւոր․ կամ ութսուն․ որպիսիք են և բազումք, երրեակ․ եօթնեակ․ հնգեակ․ և այլն։

Ութսներորդ․ ի․ աւ․ աց․ օք։ ‖ է թիւ դասական․ և նշանակէ զվերջինն ութսուն թուոց դասեցելոյ։ 2. Մակ. 1. 10։

Ութսնեքեան․ կամ եքին․ եցունց․ եքումբք։ (անեզ․) ‖ է թիւ անձնական, որով նշանակի իւրաքանչիւրն յութսնից․ կամ ութսունն մի ըստ միոջէ։

Ութսնիցս։ (մակբայ քանակական․) ‖ ութսուն անգամ։ ռամկ. ութսուն հեղ։

Ութսուն․ սնից․ սնիւք։ ‖ է թիւ բացարձակ, որով նշանակի՝ ութնեակ տասն․ կամ ութնիցս տասն․ ուստի ասի՝ ութսուն․ իբրու թէ՝ զութս ուն․ ցի զութն տասունս ունօղ։ որ և ռամկ. ասի ութսուն։ Ելից. 7. 7։ Սաղմ. 89. 10։

Ութօրեայ․ օրէի․ իւ․ օրեայք․ կամ օրեաք․ եից․ իւք։ ‖ նա, որ է ութից աւուրց, կամ որ ութ օր է, յորմէհետէ ծնեալ է։ ռամկ. ութօրական։ Ծննդ. 17. 12։ իսկ մերթ այն, որ առնէ միայն պահուրս ութ․ կամ որ յետ ութ աւուր ոչ ևս կայ․ և ըստ այսմ ասի, ութօրեայ հանդէս․ կամ ութօրեայ կերակուր․ և այլն։ Մերթ ևս նշանակէ՝ զութօրականն, ցի զայն տօն, որ վերապահի ութ աւուրս։ իսկ երբեմն առնի զաւուրս ութն․ կամ զութերորդ օրն․ ըստ այնմ․ Ցնորդ․ ըստ նախահարցն մեր ասեակն, Թլփատեցաք յութօրէին։

Ութօրէք․ էից․ իւք։ ‖ է յոգնակիւն ութօրեայ բառիս, որ երբեմն մանաւանդ առեալ նշանակէ զութօրեայ հանդէսս տօնից․ կամ զութն աւուրս այսպիսի հանդիսից․ յորս շարունակ տօնախմբութիւն լինի ՚ի պատիւ տօնեցելոյն․ որպիսի է տօնն ծննդեան քրիս․ հոգեգալստեան․ զատկի․ և այլն։

Ուժաւոր․ ի․ աւ․ աց․ օք։ ‖ պերճացեալ ուժով․ կամ ուժեղ․ կամ զօրաւոր․ և կամ հզօր․ ըստ այնմ խրատ․ Գ․ ՚ի մէջ բազմակոյս հանդոյցից ուժաւորաց։

Ուժգին։ (նախդրիւ հոլովի․) ‖ ածանցի ՚ի բանէս՝ ոյժ․ որպէս մարմին ՚ի բանէն մարմ․ և նշանակէ ուժեղ․ կամ զօրաւոր․ կամ բռնաւ․ և կամ սաստիկ․ և ըստ այսմ ասի ուժգին աղաղակ․ կամ զա

չուամն. ուժգին բազմամբ. կամ ըկկանօք. ուժգին հողմն, կամ չարժութն. և այլն: ռամկ. ուժով. կամ խիստ. կամ ամուր: Յես. 6. 20: Երեմ. 5. 7: Նարեկ. իը. ծդ. և ղէ: Իսկ երբեմն է մակբայ յաճախական. և նշանակէ սաստկապէս. կամ յոյժ յոյժ. կամ չարաչար. կամ ուժգնութբ. կամ բռնութբ. և ըստ այսմ առի. ուժգին զայրանալ. կամ գոչել. ուժգին առնուլ. կամ թօթափել. ուժգին արտասուել. կամ հնչել: և այլն: ռամկ. խիստ. կամ ուժով. կամ զօրաւոր: 1. Թագ. 2. 16: 3. Եզր. 4. 1: և 5. 13: 2. Մակ. 12. 18: Յայտ. 6. 13: Եւ ըստ այսմ երբեմն վարի առ հանդերձ անէւ. այսպէս. ուժգինս հնչել. ուժգինս ընթանալ. և այլն: Նարեկ. ա. և ծե: Բայց Յես. 6. 8: և 3. Թագ. 19. 11. փոխանակ բառիս՝ ուժգին, վրիպմամբ տպագրուեալ եղեալ կայ յուժգին. որ՝ ի բուն օրինակին ոչ է այնպէս:

Ուժգնաբար: (մակբայ որակական.) || ուժգնութբ. կամ սաստկապէս. կամ հզօրեղապէս. կամ սաստիկ ջանիւք և փութով: Ոսկե. 2. հատ. իզ:

Ուժգնաբարբառ: (Նախդրիւ հոլովի.) || ուժգին բարբառօղ. կամ զուժգին ձայն արձակօղ. կամ բարձրաձայն. կամ մեծաձայն. և կամ որ ուժգին կարէ թնդալ և հնչել. որպիսի է թմբուկին ականջաց: Նարեկ. ղէ:

Ուժգնագոյն. գունի. իւ. իւց. իւք: || առաւել ուժգին. կամ սաստկագոյն. կամ ուժեղագոյն. կամ բռնագոյն, որ է զօրաւոր: Խորէն. բ. գլ. 7: և Ոսկե. 1. հատ. իզ:

Ուժգնակի: (մակբայ յաճախական.) || ուժգնութբ. կամ սաստկապէս. կամ բռնութբ. կամ թափով. և կամ խստութբ: ռամկ. ուժով. կամ զօրաւոր: Նարեկ. ժէ: և Յն. որդ: և Լամբրօն: Իսկ մերթ վարի անուանաբար. և նշանակէ ուժգին. կամ սաստկագոյն. և կամ բռնագոյն: և ըստ այսմ առի. անձրևք ուժգնակիք. կամ ուժգնակի բազմամբ. ուժգնակի արտասուօք. և այլն: Նարեկ. ժն: և Յն. որդ:

Ուժգնահնչակ: (Նախդրիւ հոլովի.) || ուժգին հնչօղ. կամ մեծաբարբառ. կամ բարձրաձայն. և կամ բարձրագոչ. և այս առի զփող. զթմբկաց. զձայնէ. զօդոյ. և այլն: Նարեկ. ղզ:

Ուժգնապէս: || տես զուժգնակի ըստ ո_րում է մակբայ:

Ուժգնապիրկ: (Նախդրիւ հոլովի:) || ուժգին պրկօղ. կամ սաստիկ պնդօղ. ռամկ. ուժով կապօղ: Եւ մերթ ուժգնակի պրկեալ. կամ սաստիկ պնդեալ: ռամկօր. ուժով կապած: Երբեմն և այն, որով ուժգին պրկի. կամ պնդի. և ըստ այսմ առի ջիլք ուժգնապիրկք: Նարեկ. ղզ:

Ուժգնասիրտ: (Նախդրիւ հոլովի.) || սիրտն զզօրաւոր և զաներկիւղ ունօղ. կամ արի սրտիւ. և կամ քաջասիրտ: Խորէն. գ. գլ. 65:

Ուժգնութիւն. թեան: || սաստիկ ոյժ. կամ զօրութիւն. կամ կորովութիւն. կամ հզօրեղութիւն. կամ բռնութիւն. և կամ թափ: 2. Օրին. 8. 17: Յոբ. 12. 16: Եբր. 2. 7: Երեմ. 23. 10:

Ուժեղ. ի. աւ. աց. օք: || ունօղ զմեծ և ըղ սաստիկ ոյժ. կամ զօրեղ. կամ յոյժ զօրաւոր. և կամ կորովի: Խորէն. բ. գլ. 54. և 60: գ. գլ. 40:

Ուժեղակ. ի. աւ. աց. օք: || զուժեղութիւն ունօղ. կամ սաստիկ զօրաւոր. կամ հզօրեղ, կամ բուռն. կամ քաջ, և արի. և այս առի զմարդոյ. զմիջամանէ. կամ զմարտէ. և այլն: 'ի հին տպագրեալս:

Ուժեղութիւն. թեան: || սաստիկ և մեծ ոյժ. կամ ուժգնութիւն. կամ զօրեղութիւն. կամ կորովութիւն. և կամ բռնութիւն: Խորէն. բ. պրակ. 7:

Ուժեմ. եցի. եա. ել: (չէզոք. և մերթ ներգործ.) || զօրել. կամ բաւել. կամ ժուժել. կամ զդէմ ունել. ռամկ. կրնալ. կամ դիմանալ. կամ դէմ դնել. ըստ այնմ. Խորէն. բ. գլ. 7. ոչ և պարսիկք վս ռազմիցս առաջ կի՝ հարիւր և քսան փղոյ ուժել առեն: Իսկ մերթ մղել. կամ վարել. կամ ուժով արձակել զինչ. ոչ՝ զնետս. կամ զաշտէն 'ի նպատակն. և ըստ այսմ առէ Լամբրոնացին 'ի ներբողեանն հոգւոյն սրբոյ զգիրէն. Եւ ոչ զմերենայն 'ի նպատակն ուժել ժը պրկել. այ 'ի նպատակն վարել, կամ արձակել:

Ուժխտ: || նոյն է ընդ բառիս օժխտ. որպէս և ուղերձն ընդ բառին օղերձ: Մծբն. ժթ:

Ուժնդակ. ի. աւ. աց. օք: || ուժեղ, կամ սաստիկ զօրաւոր. կամ քաջակորով. և կամ պերճացեալ բուռն զօրութբ. և ըստ այսմ առի. հսկայ ուժնդակ: Յայսմաւուրն:

Ուժտեմ. եցի. եա. ել: (ներգործ.) || տես զՕժտել:

Ուլ. ու. ուլք. ուց. ուք: կամ ոց. օք: || ծնունդ այծեաց. որ է նորածին զաւակ այծու. թէ արու իցէ, և թէ էգ: ռամկ. եւ ասի ուլ. կամ այծու ձագ: Ծննդ. 27. 9: Ղևտ. 1. 10: Եսայ. 11 6: ըստ այսմ և ձագք այծեմանց ուլ կոչին. ոչ Երգ. 4. 5: և 7. 3:

Ուլենի. նւոյ. եաւ. եաց. եօք: || այն մորթ, զոր ուլքն ունին. կամ որք յուլուց յառաջգան. և ըստ այսմ ուլենի կոչի մորթ, կամ մաշկ ուլու. և կամ մորթ նր. ըստ այնմ. Ծննդ. 27. 16. Եւ զուլենիսն արկ 'ի բազուկս նր. ա զմորթս. կամ զմաշկն ուլուն էարկ զբազկօք նր:

Ուլիմպիատ: || տես զՈլիմպիատ: Կիւրղի Եղիշ. ժբ:

Ուլն. ուլան. ուլամբ. ուլունք. անց. ամբք: || պարանոց. կամ վիզ: ռամկ. վիզ. կամ պօ_ղազ: Ղևտ. 5. 8: Սաղմ. 128. 4: Խորէն. բ. գլ. 45: Իսկ երբեմն առեալ լինի փոխանակ առաջին կողման պարանոցին. ուր թամբաձև ոսկրն է: ռամկօրէն կէրդան. Մերթ ևս նշանակի առլաւ մանեկաձև զարդ ինչ պարանոցի, կազմեալ յոսկեայ, կամ յարծաթոյ, և յեռեալ ականիք պատուականօք, և մարգարտօք. և

այամ ա միանաւանգ յոգնականաւք
ի։ ռամկ. ճղնոց. և տաճկերէն. կէրփան
Երգ. 7. 1։ Խորէն. ա. գլ. 17։ Նարէկ. 'ի
կոււ։ և 'ի մեկն. Երգոց։ Այնպէս և ու-
ք կոչին այնք վզնոցք, զորս շարեն 'ի
ւնից, այ 'ի սլուանձուխաց։ և կամ կազ
յայլոց նմանատ նիւթոց. և այսմ
'ի Գիր. Աղգաթ. զմիոյ ընկերէ հուխի
կանց. ունէր արուեստ ապակագոր-
թե, առնել ուլունս ապակեղէնս. այ
լուանձուխէ շարած կերպանկլելոց։ Եւ
լուր ասի, որք ուլունս արկանեն վա
ց, կամ վա հմայութեց. և այլն։ Եր-
ն և ուլունք կոչին փոքրիկ գունա-
ն հատք ապակեղէնք՝ ծակեալք իբ-
զմարգարիտս, յորոց կազմեն զայհսա
ւքս։ ռամկ. հնչուն. և տաճկեր. [illegible]
։ (միջարկ. եղկական. կամ մարմնքական.)
-հ. կամ իշ։

...ւոր. ի. աւ. ացս. օք։ || տես զՈւղխա
։ Իսկ 'ի գիրս Խորէն. բ. գլ. 24. ուր
է. զի ուխտաւորք յատակացն գիւղա-
ն կարգեացեն առ ոչինչ համարել
ւնի ասել. ուղխօրէն կամ հեղեղաբար
ծայցող ջուրքն կարգեցին, առ 'ի ոչ
նել զմիւս. ինչ։

... ի. ին. իւց. իւք։ || Հաստատուն խոս
...մն՝ արարեալ ընդ այլում, կամ 'ի նորոգել նմա զխոստ
...առ 'ի առնել զգործ ինչ 'ի պատուիրեն
...6. 2։ և 30. 3։ Մակ. 1. 14։ Իսկ մերթ
...ն, կամ պայման, զոր դնէ ոք ընդ այ-
...մ. ռամկ. [illegible]։ Ծննդ. 17. 7։ և 26. 28։ 2.
... 14. 21։ Եւ մինչ ասի, ուխտ աղի,
...նակի դաշն հաստատուն, անեղծ, և
...նջենաւոր. և այս առեալ լինի յանա
...ականութենէ, և յերկար տեւողութե-
ն, զոր պատճառէ աղն։ Թուոց. 18.
2. Մնաց. 13. 5։ Դարձեալ՝ ուխտ
...ի երբեմն ուխտեալ իրն, զոր պարտի
հատուցանել այն։ Սաղմ. 55. 12։ Եւ յայս
...նէ առեալ նմանաւորապէս ուխտան-
...նի ուխտեալ զոհն, կամ ողջակէզն. կամ
...ատարագն։ Թուոց. 29. 39. Սաղմ. 19. 4։ [illegible]
...ամ է և Առակ. 7. 14. ուր ասի. ուխտ
...ղաղութե են ինձ այսօր. այ զխաղա-
...կան զոհս մատուցեալ եմ այսօր։
...արձեալ՝ առեալ լինի երբեմն փոխա-
...կ նշանաց ուխտի, կամ դաշանց։ Ծննդ.
... 10։ Երբեմն և փոխանակ աղօթից,
... պաղատանաց, և կամ խնդրուածոց։
Մակ. 13։ 12։ Առակ. 15. 8։ և 28. 9։ ըստ
...ամ է և 1. Թագ. 2. 9. ուր ասի, տայ
...ուխտս ուխտաւորի. այ զխնդրուածս՝ զոր
...ուխտեալն խնդրեաց։ Իսկ երբեմն փա-
...ռք. կամ բաղձանք, և կամ եռանդն սրտի.
ըստ այսմ ասի՝ ուխտիւք խնդրել. կամ
...խտիւք զանձ աղաչել. և այլն։ Հռովմ.
... 3։ և 'ի ծանոթ [illegible]։ ըստ այսմ է և Ոսկեբ.
[illegible]. ուր ասի։ Ցանկալի, և անձ
...ալի, և ուխտիւք խնդրելի։ Մերթ և
...ռմանի փոխանակ [illegible] կտակի. կամ
...նաց և պատուիրանաց։ 4. Թագ. 23. 2։

Սաղմ. 49. 16։ Առակ. 2. 17։ Երբեմն և փո
խանակ արոց. կամ արքունական մտից.
որք գան 'ի հարկից. կամ 'ի մաքսից և յայլոց
նմանեաց։ 1. Մակ. 15. 5։ Դարձեալ՝ բա
ղում անգամ նշանակէ սովոր բազմութի,
կամ ժողով. կամ խումբ. և կամ միաբանու
թի. զոր օրինակ. Զմայրն հանդերձ ուխ
տիւք պատկերովք. այ պատկաւոր բազ-
մութ։ Նարէկ. 'ի [illegible]։ Պարս
պեալ պահեա զուխտս հաւատացելոց.
այ զբազմութիւն հաւատացելոց։ [illegible]
Կարգաւորութի ուխտի միայնակեցաց,
այսինքն բազմութեան միայնակեցաց։
'ի Հար. հարց. [illegible]։ և Շնորհալին. Չէ պարտ
կրօնաւորին յուխտ կանանց մտանել. այ
'ի ժողովս կանանց։ 'ի Հար. հարց. [illegible]։ Ըստ
այսմ և մինչ ասի. ուխտք եկեղեցւոյ.
կամ ամ ուխտք քահանայութե սբ եկեղեց-
ւոյ. նշանակի՝ ժողովն, կամ բազմութիւն
եկեղեցականաց սկսեալ 'ի քահանայէ մին
չև 'ի յետին դպիրն, որք և կոչին կղերի
կոսք։ Աղգաթ։ Եւ սոքա երբեմն կոչին
սոսկ՝ ուխտի մանկունք. կամ մանկունք ուխ
տի։ [illegible] 'ի գիրս Կիւրղի [illegible]

Ուխտադիր. դրի. րի. աց. օք։ || ուխտադր
նող. որով մերթ նշանակի ուխտաւորն.
այ նա, որ ուխտեալ է զուխտ ինչ այ,
խոստանալով նմա պարտալ աղօթից.
կամ ժուժկալութեց. [illegible] հրաժարել 'ի
գինւոյ. և ոչ ածիլել զհերս իւր, զորմէ
լիագոյն տեսցես 'ի բառն ուխտաւոր։ Ե-
[illegible] 45. 14։ Դատ. 18. 18։ և 21. 23։ Եւ
մերթ նշանակի դաշնադիրն. այ նա, որ
հաստատեալ է ընդ ումեք զդաշինս, որ
և ասի դաշնաւոր։ ռամկ. [illegible]։ Եր
բեմն և ուխտադիր կոչի նա, որ ուխ-
տիւք խնդրէ. այ մեծապարգ տենչանօք
կամի, և հայցէ զինչ. Եզեկ. 22. 27։

Ուխտադրուժ. դրժի. ին. ից. իւք։ || դր-
ժող ուխտից. այ նա, որ ոչ կատարելով
զուխտն արարեալ այ, նենգէ, կամ ստէ,
որ և ասի՝ ուխտազանց։ ռամկ. [illegible]
[illegible]։ Իսկ մերթ նա՝ որ ոչ պահէ
Ուռն. ուռան. ուռամբ. ուռունք. ուռանց. ամբք։ || Կռան երկաթեղէն, կմ փայտե-ղէն, թէ մեծ իցէ եւ թէ փոքր։ ռամկօր. չէքիճ. կմ մուրճ. կմ Տօքմախ։ Դատ. 4. 21։ Յոբ. 41. 20։ Եսայ. 41. 7։ Երեմ. 10. 4։ Իսկ մերթ նշանակէ՝ սեպ. իբր որոճայր փոք-րիկ գործի, զոր հարկանեն ընդ ճեղք-ուածս, կմ ընդ ծակս իրիք, որ եւ կոչի մա-լուխ։ ռամկ. չիւի։ եւ ըստ այսմ առ 'ի գիրս Ագաթ. զարդարանս ոտքայէն. եւս հը-րամեան արկանել կապիճս երկաթիս 'ի ծունկս նը. եւ վարել ուռամբ սատակաւ. իբր հարկանելով մխել ընդ մէջ կապճաց եւ ծնգացն զհաստ սեպս առ 'ի յօշել զը-ծունկսն։

Ուռնած. ի. աւ. աց. օք։ կմ իւ. ից. իւք։ || Ածող զուռն, իբր Նա՝ որ համբառնայ զուռն, եւ անդրէն ածէ 'ի վը կռանելի իրին. որպիսիք են դարբինք. որք շուր-ջանակի կացեալ հարկանեն ելեւէջիւք ըզ հրացեալ երկաթն. կմ զպղինձն։ եւ ըստ այսմ առ 'ի հին պատմագիրս. ուր զմրճա-ւորս քարահատաց. կմ իբրեւ ուռնածս. որք պատեն զշանթս հրացայտս, մինն առ-նոյր, եւ միւսն իջանէր։

Ուռնահար. ի. աւ. աց. օք։ || Տե՛ս զկռա-նահար։

Ուռնաւոր. ի. աւ. աց. օք։ || Ուռնօղ. կմ 'ի գործածող զուռն. կմ ուռամբ հարկա-նօղ. որ եւ առ ի ուռնած. կմ կռանահար։ ռամկ. չէքիճ ջուրնօղ։

Ուռնում. ուռուցայ–ուռուցեալ. ուր. նուլ։ (ընդ. միջ.) || Այտնուլ. կմ ուռուցեալ լի-նել. կամ ուռուցմամբ առաճարանալ. եւ կմ բարձրանալով գիզանալ։ ռամկ. ուռիլ. կմ ուռեցուցորիլ։ Իմաստ. 4. 19։ Ղուկ. 8. 23։

Գործ. 1. 18։

Ուռոյցք. ուցից. իւք։ (անեղակ.) || Տե՛ս զՈւռուցումն։

Ուռուցանեմ. ուցի. ու՛. անել։ (անցող.) || Այտուցանել. կամ միջովք պարարտա-ցուցանել. կմ ուռուցմամբ առաճարացու-ցանել, կմ գիզանել։ ռամկ. ուռեցնել. կմ ուռեցուցորել։ Թուոց 5. 22. եւ 27։

Ուռուցիկ. ցկի. աւ. աց. օք։ || Ուռու-ցեալ. կամ ուռուցանող. եւ կամ այն, ո-րով իր ինչ ուռնու. եւ ըստ այսմ առ ի. ուռուցիկ պղպջակ. կմ խաղաճարտ. ու-ռուցիկ միջացուցն, կամ փուք. եւ այլն. ռամկ. ուռեցած. կմ ուռեցնօղ։ Բայց եր-բեմն առ ի առ զհողմոց. եւ նշանակէ՝ մըր-կալից եւ փոթորկիչ. եւ զի յատուկ է այսպի-սի փչմանց ուռուցանել զծով, յարուցա-նելով զմեծամեծ ալիս. վն որոյ վայելչա-պէս կոչին ուռուցիկ։ Եւ ը այսմ է հողմն, որ կոչի յունական բարբառով եւրակիւ-լոն. իբր եւրոս ալեսաս, եւ մրրկածին, որ չնչէ յարեւելից, կմ ըստ ոմանց 'ի գը-ծէն, որ անկանի 'ի մէջ արեւելեան, եւ հիւ-սիսային կողմանց։ Գործ. 27. 14։

Ուռուցումն. ցման. մամբ. մանց. մամբք։ || Այտուցումն. կմ ուռոյց. եւ կմ պարարտ-ութիւն պատճառեալ 'ի միջոյ. կմ 'ի խճճ-ղելոյ. եւ այլն։ ռամկ. ուռեցք. կմ ուռեց-նօղիւք։ Թուոց 5. 21։

Ուս. ուսոյ. ով. ոց. ովք։ || Երկոքին մա-սունք մարդկային մարմնոյ կացեալք յաջ-մէ, եւ յահեկէ պարանոցին. զորոց եւ կա-խեալ կան բազուկքն։ որ եւ ռամկ. առ՝ ուս։ Իսկ յունարէն օմոս, յորմէ եւ տաճիկք կոչեն՝ օմուզ։ Ելից. 12. 34։ Դատ. 16. 3։ Յոբ. 31. 22։ Մերթ եւս ուս կոչի այն մասն զգեստուց, որ զուսն ծածկէ։ Ելից. 39. 18։ Իսկ երբեմն նմանութե ուս անուանին այնք կերպարանք. որք կազմեալ կան յի-միք համագոյն ուսոյ. որպիսիք էին չորե-քին մասունք մեքենոյթեայ. իբր խարի-խաց, որք ձուլեալ կային 'ի չորեսին կող-մունս նը. որովք իբրեւ ուսովք 'ի վեր բար-ձեալ լինէին աւազանք։ 3. Թագ. 7. 30. եւ 34։ Սոյնպէս եւ երկոքին մասունք որմոց, որք յերկոսին կողմունս դրանց կանգնեալ կան, կոչին ուսք դրան։ Եզեկ. 40. 48։ Իսկ 3. Թագ. 7. 2. ուս յորջորջին զերեկողմանց փայտք ինչ եդեալք 'ի վը գլխոց սեանց, յորոց վը ձգեալ լինէին գերանք շինուա-ծոց իբրեւ զերան 'ի վը ուսոց։ Բայց եր-բեմն առեալ լինի առ ի փոխանակ կող-մանն շինուածոց. եւ ըստ այսմ է 3. Թագ. 7. 39. ուր առ ի եդ զմեքենոյթան յուսոյ տանն յաջմէ. իբր զերեկողեաց յաջմէ կողմա-նէ տաճարին։

Ուսանիմ. ուսայ. ի՛ր. իլ։ (Համառօտ բայ.) || Ստանալ զգիտութե. կմ վարժիլ յուս-մունս, կամ յարուեստս. կմ 'ի միտ առ-նուլ. կմ գիտել. կմ տեղեկանալ. եւ կմ սովորիլ։ ռամկ. սորվիլ. կմ սորվել։ Սաղմ. 105. 35։ Մատթ. 9. 13։ Յով. 7. 15։

Ուսանող. ի. ան. աց. օք։ || տե՛ս զՎակաս։ Լամբրօն։

Ուսանիմ։ || տե՛ս զՈւսանիմ։ Աղթամ։

Ուսումն. ուսման. մամբ. մանց. մամբք։ || ուսուցումն մանկացուցթեց. և արուեստից. կամ տեղեկութիւն օրինաց և իրաւանց. կամ գիտութիւն. կամ վարժութիւն. և կամ սովորութիւն. 2. Մակ. 4. 12։ Առակ. 2. 17։ Երեմ. 13. 21։ Իսկ մերթ ուսուցումն, կամ վարդապետութիւն, կամ բանք, զորս ուսուցանէ ոք։ Մարկ. 11. 18։ Եբր. 13. 9։ Ըստ այսմ առնուլ լինի և՛ 'ի խորագիրն Սաղմ. 59. 1. ուր ասի, առ ուսումնն, Ց ի վն ուսուցման. կամ յաղագս ուսուցանելոյ։

Ուսումնական. ի. ան. աց. օք։ || այն ամ որ վերաբերի առ ուսումն. և կամ գիտնական։ Իսկ մերթ նա, որ պարապի ուսմանց և մանկացուցեց. որ և ասի ուսումնասէր։ Բայց մինչ ասի ուսումնական գիտութիւն, նշանակի՝ մաթեմաթիկայն, որ հայերէն կոչի չափաբերութիւն, զորմէ ասասցի 'ի տեղւոջ իւրում. Արդ՝ ասացաւ սա ուսումնական, Ց սորում որք կամին հասու լինիլ այնմ, կարօտին ուսուցման վարդապետի։

Ուսումնականութիւն. թեան։ || աշխատասէր պարապումն ուսմանց, և մանկացուցթեց, կամ ուսումնասիրութիւն. կամ քաջ վարժութիւն ուսուցանելոյ։ Իսկ մերթ քաջ ընդունակութիւն ուսման. կամ գերազանց քըննաճարութիւն ուսանելոյ։

Ուսումնակից. կցի. աւ. կամ իմ. աց. օք։ || ընկեր ուսման. կամ 'ի միասին ուսանող։ 'Ի Վարս հարց. Ժ՟Դ։ և Լամբրօն։

Ուսումնասէր. սիրի. աւ. աց. օք։ || սիրող ուսման. կամ ջանիւք պարապող մանկացութեց. կամ աշխատասիրող 'ի գիտութիւնս. կամ ուսումնական. և կամ գիտնական։ Խորէն. Ա. գլ. 5։ Կիւրղ. Եղծ. Գ. և Ժ՟Դ։ Աղթամ. և Լամբրօն։

Ուսումնասիրական. ի. ան. աց. օք։ || այն ամ, որ վերաբերի առ ուսումնասէրն, կամ առ ուսումնասիրութիւն։

Ուսումնասիրութիւն. թեան։ || սէր ուսմանց. կամ փափագ ուսանելոյ. կամ հետամնդառ պարապումն մանկացուցթեց. կամ ուսումնականութիւն. և կամ գիտնականութիւն։ Խորէն. Բ. գլ. 72։ Ոսկե. Ա. հատ. ԻԳ։ և 'Ի Վարս հարց. Ժ՟Դ։

Ուսումնավարժ. ի. իմ. ից. իւք։ || վարժող զանձն իւր 'ի յուսմունս. կամ վարժեալ 'ի մանկացութեանս. կամ ուսումնասէր. և կամ ուսումնական։

Ուսումնատեաց. տեցի. իմ. աց. օք։ || ատեցող ուսմանց. կամ անգոսնող մանկացութեց և գիտութեց։ Խորէն. Ի. գլ. 89։

Ուսումնարան. ի. ան. աց. օք։ || տեղի ուսման, որ և ասի դպրոց։

Ուսուցանեմ. ուսուցի. ուսո՛. եալ։ (ներգործ.) || վարժել զոք 'ի գիտութիւնս, կամ յարուեստս. կամ հասու առնել ուսմանց. կամ տեղեկացուցանել. կամ սովորեցուցանել. և կամ վարդապետել։ Համմ. ուսուցանել. կամ սորվեցնել։ Դուտ. 3. 2։ Սաղմ. 118. 26։ Մարկ. 4. 1։

Ուսուցիչ. ցչի. աւ. աց. օք։ || ուսուցանող. կամ վարդապետ. կամ վարժապետ. կամ կրթիչ և խրատիչ։ Համմ. սորվեցնող. կամ վարպետ։ Մատթ. 23. 8. և 10։

Ուսուցչապետ. ի. աւ. աց. օք։ || պետ ուսուցչաց. կամ գլխաւոր ուսուցիչ. և կամ վարդապետ։

Ուսուցող. ի. իմ. աց. օք։ || տե՛ս զՈւսուցիչն։ Խորէն. Գ. գլ. 57։

Ո՛ւստ։ (մակբայ տեղական, որ վարի հարցականապէս.) || ուստի՞. կամ յուստի՞. կամ յորմէ՞ տեղւոջէ։ Համմ. ուրկէ. կամ ո՞ր տեղոյ։ և ըստ այսմ մանաւանդ վարի սա յարակցեալ ընդ այլ մակբայս. զո՛ր օրինակ. Ուստ ուստեմն. կամ ուստ ուստեք. Ց ուստի և յորմէ՞ տեղւոջէ։ Ոսկե. 1. հատ. ԻԱ։ Իսկ երբեմն 'ի գործ ածի իբրև զմասնիկ բացառականացուցիչ. և առնի զայլ և այլ զօրութիւն. որգոն. Այլուստ, Ց յայլուստեք. կամ յայլմէ տեղւոջէ։ Համմ. ուրիշ տեղոյ։ 'Ի վերուստ, Ց 'ի վերին կողմանէ։ Համմ. վերէն։ 'Ի հեռաստ, կամ 'ի բացուստ. Ց 'ի հեռի կամ 'ի բացագոյն տեղւոջէ։ Համմ. հեռուանց։ Յերկնուստ, Ց յերկնից։ Յաստուծուստ, Ց յԱյ։ Յամենուստ, Ց յամէ, կամ յամենից։ 'Ի մօտուստ, Ց 'ի մօտոյ։ Դարձեալ բառս այս երբեմն վարի իբրև զմասունք, և նշանակէ զուստի գոլն. ըստ այնմ Խորէն. յառաջաբան. Զամենեցուն զուստն և զգիւտսն յայտնելով։

Ուստեմն։ (մակբայ տեղական.) || նոյն է ընդ բառիս ուստեք. ըստ այնմ Ոսկե. 'ի նախերգ. Ընդուստ ուստեմն 'ի վերուստ խօսի ընդ մեզ. և ոչ աստուստ յաշխարհէ։ Վ՜զի մասնիկն՝ եմն, բազում անգամ դնի փոխանակ մասնկանն՝ եք. որպ փոխանակ ասելոյ՝ երբեք, կամ ուրեք, ասի՝ երբեմն. կամ ուրեմն. զորս տեսցես 'ի տեղիս իւրեանց։

Ուստեք։ (մակբայ տեղական. որ ունի Ց ինքեան զզօրութիւն բացառականի.) || յիմեքէ տեղւոջէ. կամ յիմեքէ կողմանէ. կամ իմեք կերպիւ. և կամ յումեքէ։ Համմկօրէն մէկ տեղէ մը. կամ մէկ տեղէ մը. և կամ մէկէ մը։ և ըստ այսմ խնդրի՝ մինչ ասի. Ոչ գոյր ուստեք նմա պատերազմ. կամ ոչ ուստեք են բանքդ այդ. կամ ոչ ուստեք է իշխանութիւն. եթէ ոչ յԱյ. 2. Մնաց. 14. 6։ 3. Եզր. 6. 8։ Հռոմ. 13. 1։ ըստ այսմ եւս ասի՝ Երկիւղ, կամ օգուտ չիք ուստեք. կամ չգտանելով ուստեք պատճառս. և այլն։ Յոբ. 21. 9։ Երեմ. 46. 11։ Դանիէ. 6. 5։ Բայց երբեմն վարի սա հարցականապէս. և նշանակէ՝ ուստի. կամ յորմէ՝ տեղւոջէ, որգոն. Զի՞ ուստեք ասեն մարգարէս, թէ իցեմ, Ց զի՞ ոք. և ուստի՞։ Մարկ. 8. 27։ Սոյնպէս մինչ ասի՝ ուստ ուստեք, նշանակի՝ ուստի և յորմէ՞ տեղւոջէ։ Ոսկե. 1. հատ. ԻԱ։ Իսկ մերթ վարի կրկնելով այսպէս, ուստեք ուստեք.

և նշանակէ 'ի տեղւոյ տեղւոյ. կամ 'ի զանազան վայրաց, և 'ի պէսպէս կողմանց։ Աղօթ. Եւ կամ այսուրեք, ոչ ուստեք այլ ուստեք, և նշանակէ՝ ոչ յայլմէ իմեքէ տեղւոջէ. կամ ոչ այլուստ ամենևին. և կամ յոչինչ կողմանէ։ Ոսկէ. 1. հռոմ. ա։ Երբեմն եւս 'ի գործածի յարեալ յայլս բառս. որգոն.

Յամ ուստեք։ || Ի յամ տեղւոջէ. կամ յամ կողմանէ. կամ ամ կերպիւ. և կամ ամենևին։ Ոսկէ. 1. հռոմ. իզ։

Յայլ ուստեք։ || Ի յայլմէ տեղւոջէ. կամ յայլմէ իրէ. և կամ յայլուստ։ Ոսկէ. 1. հռոմ. ը։

Յոլով ուստեք։ || Ի 'ի բազում տեղեաց. կամ 'ի բազում կողմանց. կամ բազմազան կերպիւ։ Ոսկէ. 1. հռոմ. իդ. և իզ։ և 2. հռոմ. թ։

Ուստի՞։ (մակբայ հարցական.) || յորմէ՞ տեղւոջէ. կամ յորո՛ց վայրաց։ ռամկ. ուսկի՞. 4. Թագ. 5. 25։ և 6. 27։ Յոհ. 3. 8։ Իսկ երբեմն նշանակէ՝ յորմէ՝ իրէ. կամ յորմէ՝ սկզբնէ. կամ յորմէ՝ պատճառէ. և կամ յորոց պատճառաց։ ռամկօր. ինչէն։ Յոհ. 1. 48։ Ղուկ. 1. 43։ Յակ. 4. 1։ Մերթ եւս գնի փոխանակ յարաբերական դերանուանս, յորմէ. կամ յուսմէ. և կամ յորոց։ Ծննդ. 3. 19։ և 3. Մակ. 6. 14։ Ղուկ. 8. 38։ Երբեմն եւս վարի առակ իբրև զանուն. և նշանակէ զուստն. կամ զուստի գոլն. և կամ զանեղծն, յորմէ գայ ոք. ըստ այնմ Կիւրղի եղծն. ժդ. Իբր ոչ եթէ չգիտեմ զուստին։ Եւ ըստ այսմ երբեմն 'ի գործածի առ հոլովմամբ. ըստ այնմ Կիւրղի եղծն. ժզ. Սուգ առնել անխիմ զուստիոյն. Ի զուստիէն. կամ 'ի վեր ուստի գալըստն։

Ուստի։ (շաղկապ պատճառական.) || Վա՛ս որոյ. կամ յայսն սակս. կամ Նորին աղագաւ։ ռամկ. ատոր համար։ Իմաստ. 12. 23։ Խորէն. Բ. գլ. 78։ և Գ. գլ. 57։ Նարեկ. գէ։

Ուստ ուստեմն։ || տե՛ս 'ի Ուստ։

Ուստ ուստեք։ || տե՛ս 'ի Ուստ։

Ուստր. տեր. երր. երաց. երրք. կամ րօք։ || Արու զաւակ. կամ որդի արու։ ռամկ. մանչ։ Ծննդ. 35. 17։ 1. Թագ. 4. 20։ Բայց բառս այս ըստ մեծի մասին 'ի գործ ածի ընդ դուստր բառին. այսինքն՝ ուստր և դուստր. ուստերս և դստերս. ուստերօք և դստերօք. և այլն։ ռամկ. մանչ ու աղջիկ։ Ծննդ. 5. 10. և 13։ Եզեկ. 10. 9։ Իմաստ. 9. 7։

Ուտելի. լեաց. եաւ. եաց. եօք։ || այն ամ, որ կարէ ուտիլ. կամ զոր օրէն է ուտել. կամ կերելի. և կամ ճաշակելի։ Ղևտ. 11. 47։ 2. Մակ. 2. 11։ Յոբ. 33. 20։ Իսկ մերթ առնել լինի առակ փոխանակ կերակրոց. ըստ այնմ Խորէն. Բ. գլ. 21. Այլ ուտելեաց և ըմպելեաց պարապելով։

Ուտեմ. կերի. կամ կերայ. կեր. ուտել։ (բայ պարտական. Ներգործ.) || Ճաշակել, որ է առնուլ զկերակուր 'ի ստամոքս մարմնոյ. որ և ռամկ. կուշի ասեն։ Ծննդ. 2. 16։ Ղևտ. 10. 17։ Իսկ մերթ առնել լինի փոխանակ ծախսելոյ, կամ մաշելոյ, և կամ վատնելոյ. և ըստ այսմ առի, ուտել հրոյ զծախելի նիւթս. կամ ժանկոյ զհրահանգելիս. և այլն։ Ղևտ. 10. 2։ Դատ. 9. 20։ Բայց առ րա հրամայականն կերէ՛ք. բազում անգամ գրի կերայք։ տե՛ս Ղևտ. 10. 12. և 18։ Աղօթ. 9. 5։ Մատթ. 26. 26։ և այլն։

Ուտեստ. ի. իւ. ից. իւք։ || Ծագի աստ 'ի յուտել բայէն. ուր և պահեստ 'ի պահել բայէն 'ի ձեռն մասնկանս եստ. որ է ամն։ Ուստի բառիւս ուտեստ՝ նշանակի ուտելին. կամ կերուածն. ռամկօրէն. ուտելիք։ Իսկ մասնաւորապէս առնել նշանակի ամլաւ ուտելիք. կամ կերելիք. և կամ մուսք կարգեալ ուտել 'ի կերակուր. և ըստ այսմ առի, ուտեստք համբարոց եւր գից. կամ ազատ ուտելիք զանեղի իմնչ յուտեստ. և այլն։ ռամկօր. աղրէնէ. կամ աղրսոյ. առաձիերէն կէւլինմ։ 2. Մակ. 4. 30։ և 'ի հին պարփոգիրս։ Սոյնպէս ուտեստ կոչին ու. ձինք. կամ պարգևքն, որք նշանեն ուտեք յարքունուստ, կամ յիշխանէ ամ ըստ ամէ. կամ ամիս ըստ ամսոյ. և կամ օր ըստ օրէ, առ 'ի կեալ նովաւ։ ռամկ. թայինն։

Ուտիճ. ուտիճի. աւ. կամ իւ. այ. օք։ || երր. Ի փտութիւն. կամ սայականիչ հիւթ, որ ստ. տակաւ ստակաւ ուտելով ծախէ զիրս. մա. որոյ և կոչեցաւ իսկ ուտիճ, իբրթէ՝ ուտիչ և ծախիչ. որպիսի է ժանգն հրահանգելեաց։ Մատթ. 6. 19. և 20։ Սոյնպէս ուտիճ կոչի և ժանգն բռւսոց, որ է փտուն անկեալ 'ի նմ յապականեցեալ հիւթոյ. որով բազում անգամ հարեալ լինին ոճք ցորենոյ, կամ գարւոյ. որոց հասկքն դոսացեալք փշրին 'ի փոշի. ուստի և կոչին ուտաճահալք։ Մերթ եւս առհասարակ ուտիճ կոչի ո՛և իցէ ճճի, կամ որդն. և կամ զեռունն, որ ուտելով ծախէ զիրս, որպիսի ս՛ի է թրթուրն, ցեցն. որդն պտղոց. կամ անկոց. և այլն։

Ուտիչ. տչի. իւ. աց. օք։ || ուտող. կամ կեր. րող։ Իսկ մասնաւորապէս առնել նշանակի սովաւ ուտիճն ըստ ամ նշանակութեցն։ Նարեկ. զէ։

Ուտձահալ։ (Նախադրիւ հոլովի.) || յուտ. ձէ հալեալ. Ի կերեալ, և ծախեալ. զոր մէ ըստ հագոյն ասացաւ 'ի բառն ուտիճ։ Նարեկ. ծէ։

Ուր։ (մակբայ տեղական.) || երբեմն վարի առ յարաբերելով զանեղին, և նշանակէ՝ յորում. կամ յոր. որգոն ըստ 'ի տեղւոջէն, ուր էր. Ի յորում էր. Ծնն. 21. 17։ Սաղմ. 131. 7։ Յամ երկրէ, ուր մերժեցի զնոսա, Ի յոր մերժեցի. Երեմ. 23. 3։ և 24. 9։ Իսկ երբեմն 'ի գործածի բացարձակապէս. կամ հարցականապէս. և նշանակէ՝ յորում տեղւոջ. կամ յոր տեղի. ռամկ. ուր փէր. կամ ուր փէր. ուր. զոր օրինակ. ո՛ւր ես. ո՞ւր հովուես. կամ ուր գինեսցուք լինիցին. և այլն։ Ծնն. 3. 9։ Աղօթ. 23. 30։ Երգ. 1. 6։ Իսկ երբեմն առնել լինի փոխանակ բառիս մինչ. կամ որովհետև. կամ փոխանակ զի. կամ՝ և այն զի։ Գործ. 13. 53. 2. Պետ. 2. 11։ Յակոբ. 9։ ըստ այսմ է և 1. Կորնթ. 3. 3. ուր առ. ուր և արդ են իսկ 'ի ձեզ հեռ. և նա-

խանձ, ՚ի որովհետեւ եւ այժմ խակ են ՚ի ձեզ. կամ փոխանակ զի տակաւին են ՚ի ձեզ: Իսկ ՚ի Հայր հարց. Ժ՟Է. յորում ասի. ո՛ւր, եւ ուստի եկն անխծեալ աղքատս այս՝ է ո՛չ իմն, որ ռամկ. ասի. ո՞ւր էր որ ե-կաւ: Դիրծն՝ է սա մինն ՚ի տասանց ստորո-գուէից, որ է պատահումն ինչ ծագեալ ՚ի մար-մնաւորս ՚ի պարագրուէ տեղւոյ. եւ կմ է գոլն ՚ի տեղւոջ. որոյ տեսակք են վեցք. ՚ի վեր ՚ի վայր. յառաջ. յետոյ. յաջ. եւ յահեակ:

Ուրագ. ի. աւ. աց. օք: || է գործիք ինչ հիւսանց, որ ունի զերկաթ լայնաբերան, եւ սուր. որով տաշեն զփայտ. որ եւ ռամկ. ասի ուրագ. եւ տաճկերէն քէսէր: Եսայ. 44. 12: Բայց 1. Մնաց. 20. 3. ուր ասի. սղո-ցեաց սղոցօք, եւ ուրագօք երկաթեօք, ա-ռեալ լինի փոխանակ քերանաց. որ է ... փչն. կմ ճանկն երկաթեայ: Վն զի արար դաւիթ զբազում կամնասայլս անուա-ծոյս, յորոց ոմանք ունէին զշրջանակս ան-ւոցն պատեալ սղոցաբերան երկաթովք. վն որոյ եւ անուանեցան սղոցք: Իսկ ոմանք քերանաձեւ երկաթի սուր կարկնածովք. եւ զհաւաքաթացեալս սփռեալ ընդ երեսս դաշտի, ընթացոյց ուժգին զսայլսն ՚ի վրն, որովք, իբր սղոցօք եւ քերանօք ջար-դեալք սատակեցան. եւ վն այսորիկ. 2. Թագ. 12. 31. ասի զարգանէ. եդեալ զնոսա ընդ սղոցաւ, եւ ը՟ քերանօք երկաթեօք. ՚ի ՚ի ներքոյ սղոցաց, եւ քերանաց. որպէս է եւ Ա՟ճնաւոյ. 1. 3. ուր ասի. կարէին զայլս սղոցօք երկաթեօք: Այլ զի քերանքն ու-նէին զբերանս նման ուրագի, վն որոյ կո-չեցան ՚ի մեզ ուրագ:

Ուրախ: (Նախդրիւ հոլովի.) || խրախ. կմ զուարճ, կմ բերկրեալ. եւ կմ խնդալից: Բայց սա բառ մեծի մասին ՚ի գործածի շարակցելով ընդ բայի այսպէս. ուրախ առնել. եւ նշանակէ. ուրախացուցանել, կմ բերկրեցուցանել: Սաղմ. 18. 9: եւ 42. 4: Առակ. 10. 1: Եւ կմ այսպէս. ուրախ լի-նիլ. եւ նշանակէ. ուրախանալ. կմ բեր-կրիլ. կմ խնդալ: Դատ. 9. 19: Եսայ. 9. 3: Ղուկ. 15. 23: Բայց երբեմն մինչ ասի. ու-րախ լեր, նշանակի կերպ ինչ ողջունի, որով մաղթեալ լինի ողջունեցելոյն կեն-դանութի, եւ ուրախութի, ը՟ նմին եւ ձմ բարեւ: Եւ ը՟ այսմ է Ղուկ. 1. 28. ուր ասէ հրեշտակն ցկոյսն. ուրախ լեր բերկրեալ. իբրթէ՝ ողջոյն ընդ քեզ. կմ ողջ լեր: Վն որոյ եւ փոխանակ ասելոյ ՚ի նամակս. ողջոյն քեզ ՚ի տր. ասեմք, խնդալ ՚ի տր. ոտն եդաւ ՚ի տեղւոջ բարեւ:

Ուրախալի: (Նախդրիւ հոլովի.) || տես ՚ի ներքոյ զՈւրախալիր:

Ուրախալիր: (Նախդրիւ հոլովի.) || ուրա-խալից. ՚ի լցեալ ուրախութբ, կմ լի բեր-կրութբ. եւ կմ բոլորովին խնդացեալ, եւ զուարճացեալ: Յն. ...:

Ուրախալից. լցի. իւ. ից. իւք: || Նոյն է ը՟ վերինոյն: Նարեկ. ՚Ի մէջն. Երգոց:

Ուրախակից. կցի. աւ. կամ իւ. աց. օք: || կցորդ ուրախութե, եւ խնդութե ուրուք. կմ ընկեր խրախութե. կմ ՚ի միասին խրա-խացող. եւ կմ խրախճանակից: Փիլիպ. 2. 18: Յովհ. 12:

Ուրախակցիմ. եցայ. եա՛ց. իլ: (Հայնակր.) || ուրախակից լինիլ. կմ խնդակցիլ:

Ուրախակցութի. թեան: || կցորդուի ու-րախութե. կմ ընկերութի խրախութե. եւ կմ խնդակցութի:

Ուրախամիտ. մտի. իւ. աց. օք: || տես զԽրա-խամիտ: Սաղմ. 112. 9:

Ուրախանամ. ացայ. ացի՛ր. ալ: (ընդմիջ.) || ուրախ լինիլ. կմ խնդալ. կմ զուարճա-նալ. կմ բերկրիլ: ռամկ. խնտալ: Սաղմ. 149. 2:

Ուրախարար. ի. աւ. աց. օք: || ուրախ առ-նող. կմ ուրախացուցիչ:

Ուրախացուցանեմ. ցուցի. ցո՛. եալ: (անցող.) || ուրախ առնել. ՚ի բերկրեցուցանել. կմ զուարճացուցանել. եւ կմ խրախացուցա-նել: ռամկ. խնտացնել:

Ուրախութի. թեան: || խնդութի. կմ բեր-կրութի. կմ զուարճութի. եւ կմ հրճուանք: Սաղմ. 29. 12: Առակ. 21. 15:

Ուրանամ. ացայ. ացի՛ր. անալ: (Ներգործ.) || ժխտել. կմ ուրանալ. կմ բացասել. եւ կամ բացասութի տալ՝ ասելով. ոչ ճանաչեմ. ոչ մերձեցայ. ես ոչ եմ. եւ այլն: ռամկ. [illegible] կմ [illegible]: Իմաստ. 12. 27: եւ 16. 16: Ղուկ. 8. 45: Յոհ. 1. 20: Երբ յայտմանէ առեալ երբեմն եւս նշանակէ ոչ ը՟նդունիլ. կմ ոչ կամիլ. կմ ոչ հաճիլ. եւ կմ հրաժա-րիլ: ռամկ. [illegible]: Իմաստ. 17. 9: Գործ. 3. 13: Եբր. 11. 24: Ը՟ այսմ եւս առեալ լինի ՚ի փի-լիսոփայից. վն զի փխնկ ասելոյ ոչ ը՟նդունիմ, ասեն՝ ուրանամ: Իսկ մատենագրացն առեալ, նշենի սովար մերժելն ուրուք զընկալեալ հաւատն, կմ զՏեղլինակն նր. որպէս է ա-սելն քրիստոնէի, քն ոչ է ած. կմ ոչ է բնական որդի այ. եւ կմ սուտ է հաւատ նր: Մատթ. 10. 33: Եւ 1. Յոհ. 2. 22: Երբ յայտմանէ առեալ՝ բոլորովին ՚ի բաց թողուլն զինքն, կմ զհաճոյս իւր, ասի ուրանալ զանձն: Մատթ. 16. 24:

Ուրանոր: (մակբայ տեղական.) || ուր. կմ ուր ուրեք. կմ յորում տեղւոջ. կմ յոր վայր. եւ այս երբեմն յարաբերէ զնախըն թաց տեղին. կմ ՚ի գործածի բացարձա-կապէս. որգոն, ուրանոր ահաւասին նախա-տակութիս ցուցեալ. կմ ուրանոր եւ կամի ցիս: Խորէն. Գ. գլ. 46: եւ Ոսկէ. 2. հատ. ըԹ: Իսկ երբեմն առնչանոյ ը՟ մակբայիւ անդ, կմ անդանոր. զոր օրինակ, ուրանոր հո-գւոյն ած, անդ հայր եւ որդի. կմ ուրանոր վաճառեաս զձեռագործդ՝ զիս անդ դիր. եւ այլն: ռամկ. ուր որ. կմ ուր որ: Նարեկ. ՚Ի մէջն. Երգոց: Եւ ՚ի Հայր հարց. Ժ՟Է:

Ուրասս: (Նախդրիւ հոլովի.) || ծաղկաս ՚ի բայէս ուրանալ ՚ի ձեռն մանկանն՝ տապ. որ երբեմն ունի զզօրութե մանկանն՝ օղ. ը՟ այնմ 2. Մակ. 12. 5. խրեւ զդաստեղւ, ՚ի իւ-րեւ զդացող եղեւ: Ուստի բառիւս ուրասս՝ նշենի ուրացողն: Բայց սա գրեթէ միշտ

է բայի շարակցի այսպէս . ուրաստ լինել . կմ. ուրաստ կալ . և նշանակէ ուրանալ , յն. ժխտել . կմ. զլանալ . կմ. բացասել . որպիսի է ասելն , ոչ հանապազ գձեզ . ոչ տամ . ոչ է հնար . և այլն : ռամկ. ինչէոր ընել . կմ. ըն- ընել : Եւ այսմ ժն. ուրիշ . հօր առաջին և հրեշ- տակաց , յուրաստ լինել վն նոցին : Եւ այսմ և ա ասի՝ յուրաստ կալ Է գէմ խնդրուածոց . կմ. յուրաստ լինել հրամայողին . և այլն : Մծբն. ժբ : Ոսկէ. ա. հռոմ. ժ : Իսկ մերթ նշանակէ ոչ իմանալ . կմ. ոչ կամել . կմ. հրաժարել . և կմ. 'ի բաց կալ . ռամկ. ըռալ . կմ. չէ ըսել : և Եւ այսմ ասի՝ յուրաստ կալ 'ի խոսկալոյ . կմ. յուրաստ լինել 'ի մոլութեանց : Այնպէս և ուրանալն դքն , կմ. զնա , ասի ուրաստ լի- նել նմա , կմ. 'ի նմանէ : Կիւրղ. եղեմ. է . և ժա : Եւ բառս այս՝ որ 'ի վերոյ եղելոցն յայտ է , բազում անգամ գրի՝ ուղղ . որպի- սիք են և այլ բազում բառք , որք յիշեցան 'ի մեկնութեան՝ տառին :

Ուրաստական . ի . աւ . աց . օք : || Ուրացողա- կան . կմ. ապուստական . և կմ. բացասական , որպիսիք են եղերք այսոքիկ , ոչ հարոտ , ոչ ննջող . կմ. անչափ . անսահման . և այլն :

Ուրար . ի . աւ . կմ. ամ. . աց . օք : || է տեսակ ինչ եկեղեցական զգեստուց երկայն և նեղ՝ զոր արկանէ քահանայն շպարանոցաւ 'ի նշան լինելոյ լծակցի Քնի և տարկանաւորն զահեակ ուսովն՝ 'ի նշանակ բառնալոյ ըղ- բեռն օրինաց փրկչին : Լամբրօն :

Ուրացութիւն . թեան : || Ժխտումն . կմ. զլացումն . և կմ. բացասութիւն : Իսկ մերթ ոչ ընդու- նումն . կմ. ոչ հաւանումն . և կմ. հրաժա- րումն : Բայց մասնաւորապէս առեալ նշա- նակէ ստլաւ 'ի բաց մերժումն ընկալեալ հաւատոյն . որ է առ քրիստոնեայս ասելն՝ թէ Քն ոչ էԱծ . կմ. ոչ է ճշմարիտ՝ հա- ւատն նր :

Ուրացումն . ման : || Նոյն է ընդ վերնոյս .

Ուրացող . ցողի . իւ . աց . օք : || Ուրաստ լի- նող . կմ. նա , որ ուրանայ զինչ : Բայց մաս- նաւորապէս նշնկի ստլաւ նա , որ 'ի բաց հրաժարի 'ի դաւանելոյ՝ կմ. յընկալեալ հաւատոյն՝ և 'ի կրօնէն , ուրանալով զհե- ղինակն նր , որ եղեն առ քրիստոնեայս ամբարիշտն յուլիանոս , և պորփիւրոս : տաճկերէն մուրթատ :

Ուրափայ . կմ. զուրափայ . ի . իւ : || է բառ սիլաւգական , որով նշնկի կենդանի ինչ վայրի . զոր ապանիացիք և իտալացիք կոչեն ճիրաֆայ : իսկ գաղղիացիք ժիռաֆֆէ . և այլք ոմանք սաֆառաթ : Արդ՝ գտանի սա յաշխարհն եթովպիոյ , և առ սահմա- նօք նր . որոյ գլուխն հանդերձ ականջօքն և պարանոցաւն և գաւազաւն է իբրև ուղ- տու : Իսկ ոտքն է կճղակաւոր , և թաթա- հերձ հանդոյն եզին : Առաջին կողմն է բարձր նման ուղտու : Իսկ յետին կողմն է ցած որ իշոյ : Ունի 'ի գագաթան զեր կուս եղջիւրս հանդոյն այծեաց : Իսկ մորթն է խայտ իբրև յովազու , կմ. ընձու , վն ո- րոյ և կոչի 'ի հայ բարբառ ընձուղտ , որ և երբեմն անալութ . կմ. զանալութ : Թիկ- թև է մարմնով , և արագընթաց առիւծ յոյժ : Իսկ ըստ արժողութեն թանգարանի : Ըստ պատկերի ասոր նկարի համաստեղու- թեն ինչ առ հիւսիսայինն բևեռաւն , որ բաղ- կանայ 'ի քսան և ութն աստեղաց :

Ուրբաթ . ու . ու . ուց . ուք : || Վեցերորդ օրն եօթնեակին , որում յաջորդէ շաբաթն : Օրս այս յունարէն կոչի պարասկեւի , որ թարգմանի պատրաստութիւն . կմ. կազմութիւն . և այս վն այնորիկ . զի յայնմ աւուր օրէնք էր հրէից պատրաստել զկերակուրս . և զայլ ինչս վն աւուր շաբաթու : Մատթ. 27 . 62 : Մարկ. 15 . 42 : Յօհ. 19 . 14 :

Ուրբաթալէզ . կմ. ուրբաթալեզ . լեզի . իւ . աց . օք : || Զուրբաթ օրն լիզող , և ջնջող . որով նշանակի նա , որ ոչ պահէ զօր ուր- բաթուն՝ հրաժարելով 'ի մսոյ , և 'ի նմա- նեաց : ռամկօր . ուրբաթը որբօղ : Իսկ մերթ առեալ լինի փոխանակ լուծման պահոց ուրբաթու . և ըստ այսմ ասի 'ի գիրս Շնոր- հալւոյն . որք և առ ձեզ բազում են գտա- նելիք յայլոց . որք ուրբաթալեզն , և ոչ խոստովանելին զմեզս , և այլն :

Ուրեմն : (շաղկապ մակաբերական .) || Ա- պա . կմ. արդ . կմ. վն որոյ : ռամկ. փէքէնտի : Ծննդ. 26 . 9 : Իմաստ. 5 . 6 : Եբրէ. 4 . 10 : Գործ. 10 . 33 : Եւ Ը այսմ երբեմն 'ի գործածի 'ի միասին Է բառիս՝ ապա . այսպէս . ապա- ուրեմն . և զնոյն նշանակէ : որպ. Յօբ. 35 . 16 . Մատ. 17 . 25 : Հռոմ. 10 . 17 : Իսկ մերթ առաջինն . կմ. իսկ . և կմ. արդարև . որ է տաճկերէն պէշգէլէ . որգուն . Զի հա- ւատուք ուրեմն պահեսն զօրէնս . յն հաւա- տութեմբ իսկ : 2 . Մակ. 8 . 36 : Ուրեմն ոչ ընդունելոցի հրաշակերտս 'ի նմանէ . յն ա- ռաջինն ոչ ընդունելոցի : Յօբ. 4 . 12 : ընկե- ցայ ուրեմն յերեսաց աչաց քոց , յն արդա- րև ընկեցայ : Սաղմ. 30 . 23 : Ապա և ջուրք ուրեմն ընկլուզին զմեզ : յն ապա և ջուրք արդարև : Սաղմ. 123 . 4 : Եւ այսմ է և Հռոմ. 4 . 19 . ուր ասի . Զհարիւրամենիւք ուրեմն էր . յն շուրջ զհարիւր ամօք իսկ էր . կմ. համեալ իսկ էր գրեթէ 'ի հարիւր ամն :

Ուրեմն : (մակբայ տեղական .) || Ուրեք . կմ. 'ի տեղւոջ ինչ . և կմ. 'ի տեղի ինչ : ռամկ. պիր եէրտէ . և Է այսմ ասի՝ սկսեալ ասելոյ՝ ասաց ու- րեք մարգարեն . կմ. ասէ ուրեք քն . և այլն . ասի՝ ասաց ուրեմն . ասէ ուրեմն : Ոսկէ. 1 . հռոմ. ը . և ժա : Կիւրղ. եղեմ. իբ : և Լամբրօն : Եւ յայսմանէ առեալ փոխանակ ասելոյ՝ անդէն , կմ. անդանօր . և կմ. յայն վայր . ասի՝ անդ ուրեմն . կմ. անդր ուրեմն : ռամկ. հոն փէրտէ . կմ. օրտէղէ : Խո- րէն. բ. գր. 89 : 'ի վերայ հարցոյ. : Այնպէս փոխանակ ասելոյ՝ աստէն . կմ. աստանօր . և կմ. յայս տեղի . ասի՝ աստ ուրեմն : Խորէն. ա. գլ. 4 : բ. գլ. 7 . և 31 : Իսկ երբեմն վարի սա իբրև զանուն . որ և ուրեքն . և յայնժամ մերթ դնի փոխանակ հոլովական անուանս՝ յինն . կմ. յինչ . որպէս՝ բնակիլ՝ կմ. երթալ 'ի տե- ղի ուրեմն . կմ. 'ի վայրս ուրեմն . յն 'ի տե-

Digitized by Google

զի ուրեք. կմ 'ի վանք ուրեք. որ է 'ի տե-
ղի իմն. կմ 'ի վանք ինչ. 'ի Վրք հարց. ճ.
ժբ. ժէ. և ճ: Սոյնպէս է և Ղևտ. 18. 2. ուր
ասի 'ի ձեռագիր, նաև 'ի փոքրատիպ՝ ա-
տարանս. Դատաւոր մի էր 'ի քաղաքի ու-
րեմն. ք՝ 'ի քաղաքի ուրեք. որ է ասել, 'ի
քաղաքի իմիք: Ես. 17. 12. ասի. մինչ գե-
տանէր 'ի գետոց ուրեմն. ք՝ 'ի գետոց ու-
րեք. որ է 'ի գետոց ինչ: Իսկ երբեմն զնի
փոխանակ հոլովական անուան՝ ուրումն,
և ուրուք. կմ ումեմն, և ումեք: Օ այնմ 'ի
Վրք հարց. ժգ. Ծեր ոմն բնակէր ը եղբօր
ուրեմն. ք՝ ը եղբօր ումեմն. կմ ընդ եղբօր
ումեք: և 'ի գիրս Գրիգոր Տղայէ. ասի.
Ճառագայթ՝ ուրեմն է ճառագայթ. և
կերպարանն՝ ուրեմն է կերպարան. ք՝ ու-
րումն է ճառագայթ. ուրումն է կերպա-
րան: Դիտել. զասս այս երբեմն յարելով
յամանս մասունս բանի՝ ցուցանէ զերկա-
բայագուշթէ ժամանակի. կմ զաստուածու-
թիւն:

Անապան ուրեմն: || ք յոյժ անապան. կմ յապաժամեան պահու. և ըստ այսմ ասի. դրել, կմ զալ. կմ ճանաչել՝ անապան ուրեմն: ռամկ. խիստ ուշ. կամ ուշ ուշ: տաճկերէն կէճ-փէնիկէճ: Լամբրոն:

Այլ ուրեմն. կամ յետոյ ուրեմն: || ք հուսկ յետոյ. կմ զկնի ամի: ռամկ. խիստ էտև. կմ խիստ յետոյ: Յօբ. 3. 1: Խորէն. ա. գլ. 17. և 22:

Ուր ուրեմն: || ք հազիւ երբեք. զոր լիա գոյն տեսցես 'ի կարգի ուրում:

Վաղ ուրեմն: || ք յոյժ վաղագոյն. կմ յոյժ կանխաւ. կմ վաղնջուց. և կմ յառաջագոյն. ռամկ. առաջնէ. կմ շաղանցնէ, կմ շուտով: Խորէն. ա. գլ. 5:

Վերագոյն ուրեմն. կմ վերագոյնն ուրեմն: || ք յոյժ վերագոյն. կմ կանխաւ 'ի վերոյ. և կմ 'ի վեր անդր: Խորէն. ա. գլ. 20:

Ուրեք: (մակբայ տեղական.) || 'ի տեղւոջ իմիք. կմ 'ի տեղի ինչ. ռամկ. տեղ մը: Ղևտ. 31. 21: Մաթ. 15. 24: Իսկ մերթ վարի ըզ բև զանուն. և զնի փոխ բառիս՝ իմիք. զոր օրինակ. 'ի տեղւոջ ուրեք. կմ յանկեան ուրեք. և այլն. Ղևտ. 11. 1: Գործ. 26. 26: Եւ երբեմն յարելով ը այլմ բառս ունի զզօրութիւն բառիս՝ երբեք. կմ բնաւ. որգոն, ուր ուրեք թէ չիք. ք հազիւ երբեք: Ոչինչ ուրեք կարեմ նմանեցուցանել. ք ոչ երբեք իմիք կարեմ նմանեցուցանել. կմ բնաւ ոչ կարեմ նման առնել իմիք: Խորէն. գ. գլ. 37: Իսկ երբեմն յարելով յետական բայս՝ եղեալ լինի փոխ մակբայիս՝ երբեմն, որգոն. է ուրեք. որ բանիւ մնաց. և է, զի ձեռն դնէ, ք երբեմն բանիւ կատարէ. և երբեմն ձեռս դը նէ. էր ուրեք, զի կամէր զանձնիշխան կամանց. ք երբեմն կամէր, և այլն: Բայց Ղևտ. 7. 20. ուր ասի. Յետ բազմաց աւուրց թէ ուրեք գայցէ 'ի տուն իւր. իմանի՝ ա. ռել. թէպէտ գայցէ. կմ հազիւ եկեսցէ:

Ուրեք ուրեք: (միջոց տեղական.) || 'ի տեղիս տեղիս. կմ յամանս վայրս. ռամկօր. տեղ տեղ: Խորէն. ա. գլ. 1:

Ուրկանոց. ի. ած. աց. օք: || տեղի, ուր ուրուականք բնակին. կմ բնակարան գողոց:

Ուրկանամ. ացայ. ցիր. ալ: (ը միջ.) || ուրուկ լինել. կմ ախտանալ ախտիւ գողութեան:

Ուրկութիւն. թեան: || գողութիւն, որ է բորոտութիւն չար, և անբժշկելի, և փոխադրական. ո-րով անդամք մարդոյ ապականեալ փտին, և պատճառեն զանտանելի նեղութիւն: Սովաւ յաճախ ախտանան հասարակական պոռնիկք, և անկեալքն ը նն. որ և այլով բարբառով կոչի եւրոպական ախտ. զոր տեսցես 'ի տեղւոջ իւրում: ռամկօր. ֆրէնկ ....: Խորէն. բ. գլ. 57:

Ուրձանակ. ի. աւ. աց. օք: || ուռճացեալ. կմ բարգաւաճ. կմ բեղմնաւոր, և պտղաբեր. կմ ճոխ. և կմ յղփացեալ բարեօք:

Ուրոյն: (մակբայ զատական.) || 'ի զատ. կմ 'ի բաց. կմ որոշակի. կմ առանձին. և կմ միայնակ: ռամկ. զատ. կմ պաշխայ. և կմ պաշխամայ: Ծնն. 30. 40: Յովհ. 20. 7: Իսկ մերթ է նախադրութիւն, որ պահանջէ զբացառական, և նշանակէ մեկուսի. կմ բացառ, և կմ հեռի. ռամկ. զատ: ըստ այսմ Ղուկ. 9. 17. ուրոյն յառաւօտուն յաղջամղջիկ: և 'ի Վրք հարց. ժէ. ասի. ուրոյն կալով 'ի մարդկանէ: Բայց երբեմն վարի իբրև զանուն. և նշանակէ առանձնական. կմ տարբեր. կմ որոշեալ. և կմ զատեալ. Օ այնմ Նարեկ. ճ. Ոգի տիրական. ուրոյն կերպարան: Եւ 'ի Աւգոս. ասի. Եւ այլքն 'ի նմանէ ուրոյնք:

Ուրոյնանամ. ացայ. ցիր. ալ: (ընդ միջ.) || ուրոյն լինել, ք մենանալ. կմ մեկուսանալ. կմ միայնանալ. կմ առանձնանալ. և կմ զատուցեալ մեկնիլ: ռամկ. մինակ կենալ. կամ պաշխամայ ըլլալ: 'ի հին պարծագիրս:

Ուրոյնութիւն. թեան: || միայնութիւն. կմ առանձնութիւն. կմ տարբերութիւն. և կմ որոշումն. Օ այնմ Նարեկ. լդ. Եւ երից տրոհումն՝ ուրոյնութիւն եւ կամացն:

Ուրոյն ուրոյն: (մակբայ զատական.) || զատ զատ. կմ որոշ որոշ. կամ միայնակ միայնակ: ռամկ. պաշխայ պաշխայ:

Ուրուագ. ի. իւ. իւ. իւք: || հզօր. կմ զօրեղ. կամ ուժգին, և կամ պինդ:

Ուրուագեմ. եցի. եա. ել: (ներգործ.) || զօրացուցանել. կմ կազդուրել. և կամ պնդել. և ըստ այսմ ասի զպղծոյն նետորէ՝ ուրուագեալ 'ի դիւաց:

Ուրուագութիւն. թեան: || զօրութիւն. կմ զօրեղութիւն. կմ ոյժ. կմ սաստկութիւն. և կմ կազդուրումն:

Ուրուական. ի. աւ. աց. օք: || այն ամ, որ միայն զարտաքին երևոյթն, կմ զատուերն իրիք ունի, և ոչ զէութիւն. և ը այսմ ուրուական կոչի ոև իցէ ստուեր. կամ տիպ. կմ նմանութիւն. կմ ձև. և կմ օրինակ. Օ այնմ. երևեալքն ոչ են ճշմարտութիւն, այլ ճշմարտութեան՝ ուրուականք: 'ի Գիրս Գրիգորի Տղայէն: Իսկ 'ի Նարեկ. ղզ. ասի. Զուրուականին տեսակ իրօրէն ճշ գրաւաբանեցայ: Եւ 'ի Լամբրոն. ասի՝ Զփր

կուռս, նոցին նշանակէր ուրուականօքն ա-
ռակաց, ըստ նմանութեան առակաց։ Եւ զինի
փոխանակ ասելոյ՝ համառօտակ մարդկան
պատկեր. ասի, համառօտ մարդկան ուր-
ուական։ Եւ յայսմանէ կանոնեալ ուրուականն
կոչին անկատար և խաւար գործուածք լուսոյ.
ըստ որում. են [illegible] պատկեր կատարեալ յուրս
նուածոցն։ ռամիկ. [illegible]։ Նաեւ կուռք, կմ
գրօշակք. ըստ որում են առաջք և [illegible], և
իբրեւ առաջք [illegible]. Աւգոս. և Նեփր. [illegible]
[illegible]։ Իսկ մերթ վարի ածականաբար. և
նշանակէ կռապաշտական. կմ դիցական.
կմ դիւական. կմ զզուական. և կմ ունայ
նական. և ըստ այսմ առի՝ ուրուական իրք.
պղծութիւնք, գործք. և այլն։ Նուէկ. հա.
հէ. զճ։ Իսկ մերթ երևութական. կամ
առասպելական. կմ անգոյական. և կմ սուտ
նայելն։ ըստ. այնմ Լամբր. Քանզի պատ
կեր են ուրուականքս աննիւթ իցն։

Ուրուածայն. ի. իւ. ից. իւք։ կմ աց. օք։ ‖ ուրուականս, ըստ դիւական բարբառով. կմ այն՝ որ է ուրուական ձայն. կմ ունայնաձայն. և կմ [illegible] ըստ այնմ Նուէկ. զճ. ոչ հեթանոսօրէն ուրուածային հնչմանն։

Ուրուածաձեւ. աձևի. իւ. աց. օք. ‖ ուրուական ձեւք. կմ դիւաձև. կմ չարաձև. և կմ չարախորհուրդ։ Իսկ մերթ ունայնաձև. կմ ունայնախոհ. կմ ունայնամիտ. ըստ նմ՝ որոյ միտքն և խորհուրդքն, և նմ բաղ-ձանք իւր զհետ երթան ունայնութեան։

Ուրուանամ. ացայ. ցիր. ալ։ (Ձմկջ.) ‖ ուրուական լինիլ. որով մերթ նշանակի երևութանալ. կմ պատկերանալ. կմ ձևանալ. և կմ կերպարանիլ. Իսկ մերթ առասպելանալ. կմ ունայնանալ. կմ [illegible] լինիլ։ Երբեմն և դիւանալ. կմ դիւաբարոյ լինիլ. կամ ժանտանալ. և կմ դաժանանալ։

Ուրուապաշտ. ի. իւ. ից. իւք. կամ օք։ ‖ պաշտօղ զուրուականս, կմ զնմանս պատկերս. կմ դիցապաշտ. կմ կռապաշտ. և կմ դիւապաշտ. Իսկ մերթ նշանակէ զայն, որ լինի ի ուրուապաշտութեան, կմ հետևի՝ ի պաշտօնս զկուռս և զդևս. և ըստ այսմ ասի, ուրուապաշտ թշնամութիւնք։ Աւգոս.։

Ուրուապաշտական. ի. աւ. աց. օք. ‖ այն ամ, որ է ուրուապաշտից. կմ որ վերաբերի առ դիւապաշտս՝ կմ առ կռապաշտս։

Ուրուապաշտութիւն. թեան. ‖ պաշտօն դիւական. կմ առասպելական պատկերաց. կմ կռապաշտութիւն. և կմ դիւապաշտութիւն։

Ուրուապէս. (մակբայ որակական.) ‖ պատկերօրէն. կմ ըստ կերպարանաց. կմ առասպելաբար. և կմ ոչ ըստ ճշմարտութեան։ Իսկ մերթ՝ հանգոյն դիւց. կմ ըստ կռապաշտից. կմ դիւապէս. կմ կատարօրէն. և կամ դժնէաբար։ Եւ մերթ՝ ունայնապէս. կմ ընդունայնաբար. կմ անմարապէս. և կմ աննշանաբար։ Նուէկ. ղթ։

Ուրուկ. ուրկի. ու. աց. օք։ ‖ գազի, ըստ նմ՝ որ ունի զախտ կեղևանդական, որ է ուրուական։ Խորէն. ք. պր. 20։ և ի հար. հարց. ժդ։

Ուրուք. է. իւ. իւ. ից. իւք։ ‖ է թէ զանձն իւր

մնձ գաղափարարարոյ և յախշտակող. ունի զնմանութեան բաղէի. աւաղ զդէշ անյագա-բար։ Թէշնամի է ձագուց ընտանի հաւուն. զորոյ յանձնարծ՝ ի վերուստ յարձակի՝ յանկարծակի։ Բայց մա յաշխարհաքականն լինի ՚ի գազանածի. զի զսոյ լսողութեան կոչի՝ ցնն։ առանձնաբար լալոյն։

Ուրուրեմն. (մակբայ յամրական.) ‖ հա զիւր երբեք. կմ հազիւ հաղ. կմ յոյժ դժուարաւ. կմ յոյժ ցանցառակի. և կամ յոյժ անուղղակի. և ըստ այսմ ասի ուր ու-րեմն ապրեալ՝ ի ծերութեան. կմ ուրուրեմն հեծութեան ակիզբն արար պատուելոյ. կմ յարեաւ՝ ի անկանութենէ. և այլն։ ռամիկ. ձօրով. կամ ձօրով ձօրով. կմ ուշով։ Աւգոս։ Խորէն. աշխ. 5։ ՚ի հար. հարց. ճք։

Ուր ուրեք. (մակբայ տեղական.) ‖ ուրեմ նօր. կմ յորում տեղւոջ. ռամիկ. ուր որ. կմ ուր տեղ որ։ ՚ի Գիրս դատին ճիլէ։ Իսկ մերթ ուրեք ուրեք. կմ ՚ի տեղիս տեղիս Մերթ ես հազիւ երբեք. կմ հազիւ հաղ. կմ յոյժ դժուարաւ. և ըստ այսմ խնանի՝ միանգամ ուր ուրեք բժշկի ախտս, կմ մղուենա այս, ՚ի Գիրս ծնունդէց. ծնն. Է. գւ. զ։

ՈՓ

Ոփազ. ազի ‖ անուն ՚ի բառարանի յատուկ անուանց։

Ոփելեթին։ ‖ անուն ՚ի բառարանի յատուկ անուանց։

ՈՔ

Ոք. ուրուք. ումեք. յումեքէ. ամենայն. իմեք. իմեքէ։ ‖ է մասնական անուն, որով նշանակի ամն. կմ մի ամն. և կմ միոն՝ ի բազմութէ անբաւանդորոշապէս։ ռամիկ. մէկ մը։ և այս երբեմն ՚ի գործածի միայն նակ. ոքոն. եթէ զէշ ուրուք փարեցի. կմ յաղթահարեցի զոք ՚ի ձէնջ. կմ թէ զրկեցի զոք։ 1. Թագ. 12. 3։ Իսկ մերթ վարի յարակցով ընդ այլ բառս, ոքոն. Ամն ոք, ըստ. նմ. անձն. կմ ամ մարդ։ 2. Թագ. 20. 12։ Իւրաքանչիւր ոք, ըստ իւրաքանչիւր անձն. կմ ամ մարդ. Յով. 1. 14։ Այլ ոք, ըստ այլ մի. կմ այլ ոմն. կմ մ և կայ մի։ Ղեւտ. 1. 2։ Ոչ ոք, ըստ և ոչ միոք. կմ և ոչ մի անձն։ Յով. 3. 2։ Ըստ այսմ են ա-սի, անձն ոք. որ ոք. որպիսի ոք. և այլն։ Ղեւտ. 5. 15։ Յով. 1. 24։

Ոքող. ի. իւ. իւ. իւք. կմ աց. օք։ ‖ եկեղան, որ է աւետեալ իւր ամուրդ վիշտ, որ գտանի յանդէր դի և յանտառաշատ տեղիս։ Բուսանի գնդա կաւկերպ իբրեւ զապուշոդն, և երբ իւր զերեկսիք երկրի ոսկի գիր շալից ոզն ի փողրիկ, որ բազում անգամ կոխելէ յանցաւորաց, Ճնշի և անպի տան լինի։ Եւ ըստ այսմ ասի 2. Մնաց. 25. 18. ողոքն յզեաց առ մայրին Լիբանանու. (և ըստ կնիք.) անհա անցին գազանք, և կոխեցին զնա զեկղան. ըստ ասելոյ կոխելով ամենեւին Ճնշե ցին զոքողն։ Եւ այսպես 4. Թագ. 14. 9. կոչի ակեղան. ոսկ և անտառածի յանձին. զաւ ատս հայրապետանեայց աշխարհաքան լեզուաւ։

Չ

Չ. է մինն 'ի բաղաձայն տառից, որ 'ի քերականութեան ունանի կրկնակ, և որում ունի զզօրութիւն երկուց բաղաձայնից բարբառակցաց իւրոց. վ֊ի զի երկու Տ՛ 'ի միասին եդեալ՝ արտաբերին՝ որպ. Չ:

Արդ՝ ըստաս զայս անուանեմք չայ, որ արտաբերի բացմամբ բերանոյ: Իսկ յարուեստի ատոգանութեան ըստ հաշուին է խաժ, յն Թ֊ա֊. վ֊ի զի ունի զՀաստ հրն չուամն:

Դիրձլ կոչի սա ընթրդ. վ֊զի ընթակցի հնչմամբ ը տառիցն Ջ. և Ճ. և մանաւանդ ընդ Ջէին, որում յոյժ մերձաւոր է ձայնիւ. վ֊ որոյ և բազում անգամ փոխադրի ընդ նմա, զոր օրինակ, խոռոչ, և խոռոջ: գողգոչել, և գողգոջել: կարկաչել, և կարկաջել: հաչել, և հաջել: յորանչել, և յորանջել. և այլն:

Դիրձեալ յարելով սա բազում անգամ 'ի բառս, վարի իբրև զմկըն բացասական. և նշանակէ, ոչ. զոր օրինակ. չամաչել. չարժել. չպագանել, չտալ, յն ոչ ամաչել, ոչ արժել, ոչ պագանել. ոչ տալ: Եւ կամ ունի զզօրութիւն բացասական մասնկանս՝ ան. զոր օրինակ, չընակեալ. չաճառալի, չպէտ. յն անբնակ. անհաճառալի. անպէտ:

Երբեմն և ունի զզօրութիւն բառիս, ոչ ինչ, որգոն, նախանձեցուցից զնս չազգաւ, յն ոչինչ ազգաւ: 2. Օրին. 32. 21: Մերթ և ունի զյոժ անուանս, անարժան, կամ սուտ. որգոն. չերկնաւորս. չքահանայապետ. չերէց. յն անարժան կամ սուտ եպիսկոպոս. սուտ քահանայապետ. և այլն:

Դիրձլ է սա նշան համարողական. վ֊ զի յորժամ 'ի գործածի պատուաւորով այսպէս, Չ̃. ցուցանէ զեօթն հարիւրն:

ՉԱ

Չազգ. չազգի. ու. աց. օք: ‖ այն, որ ոչ է ազգ. կմ որ է ոչինչ ազգ: 2. Օրին. 32. 21.

Չակերտ. ի. ու. աց. օք: ‖ է գիծ ինչ աննշան, որ ունի զայս ձև. ՛: Արդ՝ կոչեցաւ սա չակերտ, իբրթէ կերտուիչ չայի՝ զի մինչ յաւելեալ լինի 'ի ստորին ծայրն սորա տուտ ինչ գրոյ՝ կերտէ զտառս՝ չ:

Զայս գիծ բազում անգամ դնեն գրաւ գէրք 'ի վ֊ բառի, կմ բանի, որ արտաքոյ 'ի լուսանցս գրոյ է. կամ 'ի կարգէն վրիպեալ կայ, առ 'ի ցուցանել, թէ պարտ է զայն 'ի ներքս մուծանել. կմ 'ի կարգի իւրում զետեղել: Եւ յայսմանէ առեալ՝ չակերտ կոչի նաև այլ ոսպնի և ևցէ նըշան, որ յաղագս այսր պատճառի դնի 'ի վ֊ բառի, կամ բանի:

Չամամ. ոյ. ով. ոց. ովք: կամ ու. աց. օք: ‖ է բոյս ինչ պիտանի, որ ունի զեր կուս տեսակս. մինն է վայրի. իսկ միւսն ընտանի, զոր սերմանեն յանդաստանս, կմ 'ի պարտէզս, և աճեցեալ բարձրանայ 'ի չափ միոյ, կամ երկուց կանգնոց. արձակէ զբաղուկ և զխոնաւ ծիւղս թաւս. և զտերևս մանուանս նման սամիթի. յն փո բուղթուոի: Բերէ զսերմն բոլորակ յաձախութեբ, որպ և սամիթն. որոց և ոմանց ունդն է նման շուշմայի, յն սուսամի, որք ամենեքին կոչին յանուն բուսոյն չաման: Բնութիւն է ջերմ և չոր. և ունի ոս պատճառէ զդեղնութիւն 'ի դէմս մարդոյ՝ եթէ ուտիցի յաճախ առգործեալ գինւով: Զմատղ և զդալար տերև սորա քաղեալ և չորացուցեալ՝ աղան մանր, և լինի դեղին և փոշետեսակ նիւթ ինչ իբրև զհինայ, զոր 'ի գործ ածեն 'ի կերակուրս. որպ և եր բեմն թրջեալ ը այլոց համեմոց՝ մածուցանեն 'ի փերթս ապխտոց առ 'ի համեմել զնս. որ և ռամկ. կոչի չաման. և սաճկերէն: Եսայ. 28. 25. և 27: Մատ. 23. 23:

Չամիչ. չամչոյ. ով. ոց. ովք: կամ ին. ից. իւք: ‖ խաղող չոր, զոր ողկուզօրէն չորացուցանեն յարեգակն տեղիս. կմ 'ի գաղջ փուռն՝ յաւաջագոյն սրսկելով յողկոյզն զձէթ. կմ ընկղմելով զնս 'ի մաքուր ջուր մոխրոյ, որպ և երբեմն միայն զկոթ իւս ողկուզոցն կիսաբեկ առնելով թողուն 'ի վ֊ որթոյն՝ ուր ինքնին չորանայ, որ և ռամկ. կոչի չամիչ: Թուոց. 6. 3: 3. Թագ. 14. 3: 1. Մնաց. 12. 40:

Չամոքեալ. ելոյ. ‖ ոչ ամոքեալ. զորոյ ըզ նշանակութիւնն տես 'ի Ամոքել բային: Եբր. 4. 2:

Չամչահատ. ի. ից. իւք: ‖ հատ չամչոյ, թէ զատեալ ից է յողկուզոյ, և թէ ոչ:

Չամչեայ. չէի. ին. ից. իւք: ‖ չամչեղէն կամ կազմեալ 'ի չամչոյ: Իսկ մերթ մասնաւորապէս առեալ նշանակէ զողկոյզն չամչոյ, թէ մի միայն իցէ, և թէ երկու, կմ բազում կապեալ 'ի մի շարոց: ռամկ. չամչի հող: 1. Թագ. 30. 12: և 2. Թագ. 16. 1:

Չամչեղէն. ղինի. ու. աց. օք: ‖ այն ամ, որ է կազմեալ 'ի չամչոյ. կմ որոյ նիւթն է չամիչ. որպիսի է խօշափն. և ոմանք յանուշեղէն կերակրոց, որք կոչին կատայ: Յոբ. 3. 1:

Չամպ: ‖ տես 'ի ներքոյ զՉանապարհ:

Չանապարհ. ի. ին. ից. կամ աց. օք: ‖ սարուկ. կմ ունանկ. կմ սառապեալ. և կամ նկուն: ռամկօրէն խեղճ: Իսկ մերթ

անարժան · կմ անարգ · կմ խոտան · կմ չնչին · կմ վատթար · և կմ ժանտ ։

Չանարգադուրդ ։ (Նախագրիւ հոլովի ·) || է ածանցական ելեալ 'ի բառէն չանարգադ · և 'ի մնացականէն՝ ուրդ, և նշանակէ տուաւելը սարսուկ · կմ աղքատագոյն · կմ անանկագոյն · և կմ սաստիկ նկուն ։ Իսկ մերթ անարգագոյն · կմ վատթարագոյն · կմ ժանտաժուտ · կմ յոյժ չարահաճան · ըստ այնմ 'ի հին պարմագիրս · Առնմա ապա գխեմեալ չոճէին չանարգադուրդ նանրայլեղու հայհոյիչք ։

Չանարգատեսիլ ։ (Նախագրիւ հոլովի ·) || աղքատաձև · կմ ունօղ զկերպարանս տառապելոյ · կմ տնանկի · և կմ որ է յոյժ նկուն և տնանկելի ։

Չանարգել ։ (Նախագրիւ հոլովի ·) || տե՛ս 'ի վերոյ զՉանարգագ ։

Չանկաւոր · ի · աւ · աց · օք ։ || է տեսակ ինչ ախտի, որ պատահաւ 'ի յայրեցած արենէ մայծեղան, յորժամ զեղանի առատաւ 'ի լեարդն, և միայ անդ ։

Չանձնել ։ || ոչ առնել ։ ռամկ․ չընել ։ Ծննդ․ 26․ 29 ։

Չաստուած · ստուծոյ · ով · ոց · ովք ։ || ոչ ած · կմ սուտ ած · և այսու անուանեն պաշտօնեայք ճշմարտին ած զդիս, կմ ըղ կուռս հեթանոսաց · ըստ որում համարին ածք, և ոչ են ։ 2․ Օրէն․ 32․ 21․ Երեմ․ 5․ 7 ։

Չաստուածուհի · հւոյ · եաւ · եաց · եօք ։ || էգ չաստուած · կամ կուռք իգական · որ պէտ էր աստարովթ · կմ ափրոդիտէ ։

Չար · ի · աւ · աց · օք · կմ եօք ։ || այսպէս հոլովեցեալ, է անուն ածական · և նշանակէ ժանտ · կմ անօրէն · կմ ապիրատ · կմ ամբարիշտ · կմ եղեռնագործ · և կմ մեղի ։ Առակ․ 28․ 5 ։ Մատթ․ 5․ 45 ։ և 25․ 26 ։ Իսկ մերթ՝ յոռի · կմ վատթար · կմ անարգ · կմ վնասակար · կմ ժանտաբեր · և ըստ այսմ ասի՝ չար ծառ, կմ պտուղ · չար երկիր, կամ տեղի · չար ջուր, կմ հողմ · և այլն ։ Թուոց․ 13․ 20 ։ և 20․ 5 ։ 4․ Թագ․ 2․ 19 ։ Մատթ․ 7․ 17 ։ Իսկ մերթ՝ չարաչար · կամ դժնեայ · կամ կատաղի · և կմ դիւահարին ։ և ըստ այսմ իմանի՝ մինչ ասի՝ պատահօք չարեօք · կմ գազան չար · մահ չար · և այլն ։ Ծննդ․ 12․ 17 ։ և 37․ 33 ։ Եւոք․ 13․ 7 ։ Եզեկ․ 14․ 21 ։ Մերթ ևս նշանակէ, պակասաւոր · կմ աղքատաւոր · և ըստ այսմ կոչի աչքն, կոչի ակն չար ։ Մատ․ 6․ 23 ։ Մերթ ևս ձախողակ, կմ վշտադին · կմ Թշուառաւոր · և կմ լի չարեօք · և ըստ այսմ ասի, որ կմ ժամանակ չար ։ Սաղմ․ 40․ 2 ։ և 48․ 6 ։ Ժողով․ 9․ 12 ։ Ամովս․ 5․ 13 ։

Չար · ի · կմ ոյ · եաւ · կմ աւ · չարիք · եաց · եօք ։ || այսպէս հոլովեցեալ է գոյական անուն · և նշանակէ, չարութիւն · կմ ամբարշտութիւն · կմ անօրէնութիւն · կմ չար գործք · և կմ չար իր ։ և ըստ այսմ առնուլ լինի յեզականոջն ։ 1․ Մակ․ 1․ 11 · ուր ասի, 'ի նոցանէ բղխեաց արմատ չարի · յ չարութեան · կմ անօրէնութեան ։ Այսպէս և իմանի, մինչ ասի · և արար չար առաջի տն · կմ հատուցանել չար փոխանակ բարւոյ · և այլն ։ 3․ Թագ․ 16․ 30 ։ Սաղմ․ 108․ 5 ։ ըստ այսմ է և Ծննդ․ 3․ 5 ։ և 8․ 21 ։ Եսայ․ 5․ 20 ։ Իսկ 'ի յոգնականոջն եղեալ լինի․ 1․ Մակ․ 1․ 10․ և 55 ։ յորս ասի · լցին զերկիր չարեօք ։ ըստ այսմ է և Երեմ․ 38․ 9 ։ Մատ․ 12․ 35 ։ Հռոմ․ 1․ 30 ։ Իսկ մերթ նշանակէ՝ նեղութիւն · կմ վիշտ · կմ փորձանք · կամ չարչարանք · կմ Թշուառութիւն · և կամ վնասք, և տոյժք · ըստ այնմ Ժողով․ 5․ 12 · Մեծութիւն պահեալ ունիք՝ առ 'ի նմանէ չարոյ իւրում · յ վս վնասու իւրոյ ։ Սոյն պէս է և Մատ․ 6․ 34 · ուր ասի · շատ է աւուրն չար իւր ։ Բայց ըստ այսմ մանաւանդ վարի առ 'ի յոգնականոջն՝ չարիք, եաց · որպ 1․ Մակ․ 1․ 12 ։ և 3․ 42 ։ 2․ Թագ․ 19․ 7 ։ Ամովս․ 3․ 6 ։ Եւ մերթ չարաչար հարուած · կմ պատիժ · կմ պատուհաս ։ 4․ Թագ․ 21․ 12 ։ Երեմ․ 11․ 11 ։ ըստ այսմ է և այն, որ ասի Մատ․ 21․ 41 · Զչարսն չարեաւ · կամ չարաւ կորուսցէ · յ զչարագործսն չարաչար պատժովք, և պատուհասիւք կորուսցէ ։ Իսկ երբեմն առեալ լինի փոխանակ սատանայի · կմ դիւի · յ այնմ Մատ․ 13․ 19 · Գայ չարն, և յափշտակէ ։

Չարաբախտ · կմ չարաբաղդ · ի · իւ · եց · իւք ։ || ունող զչար, կմ զԹշուառ բախտս · կմ վատաբախտ · և կմ դժբախտ ։ ռամկ․ [illegible] ։

Չարաբախտութիւն · Թեան ։ || վիճակումն չար բախտի · կմ վատաբախտութիւն · և կմ դժբախտութիւն ։

Չարաբան · ի · իւ · եց · իւք ։ || այն, որոյ բանն է չար · կմ չարախօս · կմ բամբասող · և կմ անիծաբան ։

Չարաբանական · ի · աւ · աց · օք ։ || չարախօսական · կմ վատաբանական · կմ բամբասողական · և կամ այն, յորմէ ելանեն բանք չարք, կմ Թիւրք · որպիսիք են բանք հերձուածողաց ։ Նորէկ․ Ճ ։

Չարաբանեմ եցի · եա · ել ։ (չէզոք․ և մերթ ներգործ․) || չարախօսել · յ զչարիս խօսել զայլմէ · կմ ամբաստանել · և կմ բամբասել ։ ռամկ․ չար խօսիլ · կամ [illegible] ։ Խորէն․ Գ․ գլ․ 64 ։

Չարաբանութիւն · Թեան ։ || վատաբանութիւն · կմ չարախօսութիւն · կմ բամբասանք · և կմ ամբաստանութիւն ։ Նորէկ․ Գ ։

Չարաբաստ · ի · իւ · եց · իւք ։ || չարաբախտ · կմ չարաշուք · և կմ Թշուառ · յ այնմ Յս որդի · Եւ կամ յերկուս որդիս զմեն, ըստ նետարի չարաբաստին ։

Չարաբաստաբիկ ։ (Նախագրիւ հոլովի ·) || նոյն է ընդ վերնոյն ։

Չարաբաստութիւն · Թեան ։ || տե՛ս զՉարաբախտութիւն ։

Չարաբարոյ · ի · իւ · եց · իւք ։ || ունող զչար բարս, կմ վատ · կմ ամբարիշտ · կմ ապիրատ · կմ չարայոյզ · և կամ չարախոր_

հաւրդ։ Առակ. 19. 19։ Ոսկե. 1. հափ. ից։ և Յո. ...։ Իսկ մերթ այն՝ որ չարաբարոյութ լինի. և ըստ այսմ սաս. չարաբարոյ հընարք։

Չարաբարոյութիւն. թեան։ || չարութ բարուց. կամ վարուց. կամ ամբարշտութ. կամ ժանտաբարոյութ. կամ չարայուզութ. և կամ ապիրատութիւն. 3. Մակ. 7. 2։ Հռով. 1. 29։ Ոսկե. 1. հափ. ից։

Չարաբարութիւն. թեան։ || Ծագի սա՝ ի բաւէս չարաբարք, և նշանակէ զչարաբարութիւն. ըստ այնմ Ոսկե. 2. հափ. ժա. Զի ափխեբրան լինիցի հրէիցն չարաբարութիւն։ ըստ այսմ է և Առակ. 16. 18. յոմանս օրինակս։

Չարաբարք։ (Նախդրիւ հոլովի. անեզական.) || տե՛ս ի վերոյ զՉարաբարոյ։ Իմաստ. 3. 12։ և Կիւրղի Եզեկ. ժզ։

Չարաբեկ։ (Նախդրիւ հոլովի.) || չարաչար բեկեալ, կամ կոտորեալ, և կամ տանջեցեալ. և ըստ այսմ սաս. չարաբեկ լինիլ՝ ի սրոյ. կամ ի սովու. և կամ՝ ի գազանաց։ 'ի հին պատմագիրս։

Չարաբեր. ի. իւ. ից. կամ աց. օք։ || ունող զչար, կամ զվնասակար բերս. և կամ չարապտուղ. որպիսիք են ոմանք՝ ի տնկոց։ Իսկ մերթ բերող չարեաց. որ նա՝ որ պատճառէ զչարիս. և կամ առիթ լինի վնասուց, կամ թշուառութեց։ ըստ այնմ՝ ի ձեռս հարց. ժդ. ուսանի՛ եկն անիծեալ աղքատասյա, և չարաբերս տանս այս։

Չարաբերան. ի. իւ. իւ. իւք։ || ունող զչարախօս բերան. կամ չարաբան. կամ բամբասօղ. և կամ չարաչար ամբաստանօղ։ Հակերծ։

Չարաբուն։ (Նախդրիւ հոլովի.) || ունող զբնութ չար. կամ բնութ հակեալ 'ի չարիս. կամ որ է ակնդրն, և սրամտա չարի։

Չարագան։ (Նախդրիւ հոլովի.) || չարաչար տրբեալ զգան. կամ սաստիկ գանիւ. կամ ուժգին հարուածեալ, կամ պատուհասեալ։ ռամկ. խիստ ծեծած. կամ պատուհասած։ 2. Մակ. 3. 38։

Չարագաւառեալ։ (Նախդրիւ հոլովի.) || նա՝ որ է 'ի չար, կամ 'ի վնասակար գաւառէ. կամ որոյ ծնգունդն է յանարգ նահանգէ։

Չարագին։ (Նախդրիւ հոլովի.) || չարագոյն. կամ սաստիկ չար։ Իսկ մերթ՝ չարագնեալ. որ նա՝ որ է կրեալ զանծանօթ չարիս. կամ սաստիկ տառապեալ և չարչարեալ. և կամ վշտագին։ Եւ մերթ վարի եղբ. զմակերպ, և նշանակէ՝ չարաչար. կամ դժնդակապէս. և կամ ուժգին, և սաստիկ։ ռամկ. չար՝ 'ի պտուր. կամ խիստ. և ըստ այսմ սաս. չարագին հարուածել, կամ կոտորել. չարագին տառապեցուցանել, կամ կորուսանել. չարագին սպանել, կամ տանջել. և այլն։

Չարագլուխ. գլխոյ. աւ. աց. օք։ || Նա՝ որ է գլուխ չարաց. կամ ակնդրն չարեաց. կամ գլխաւոր 'ի չարագործութիւնս. և

կամ ամենաչար։ 'ի ձեռս հարց. ժգ։

Չարագնիմ. եցայ. եալ. իլ։ (Ձայնակր.) || չարագին լինիլ. կամ սաստիկ չարանալ. և կամ յոյժ ժանտանալ։ Իսկ մերթ՝ չարաչար տառապիլ. կամ նեղիլ 'ի չարեաց. կամ վշտագնիլ. կամ ցաւագնիլ. և կամ չարչարիլ պէսպէս վշտօք։ Զաքար. Ժ. 2։

Չարագնութիւն. թեան։ || չարագին գոլն. կամ սաստիկ չարութիւն։ Իսկ մերթ չարաչար նեղութիւն. կամ չարակրութիւն. կամ տառապանք. կամ խոշտանկանք. և կամ վշտագնութիւն։

Չարագոյն. գունի. իւ. ից. իւք։ || առաւել չար. կամ չարագին. և կամ չարաչար։

Չարագոյն. գունոյ. ով. ոց. ովք։ || ունող զվնասակար գոյն. կամ որոյ գոյնն է տգեղ. և զազիր։ Մծբն. ժա։

Չարագործ. ի. աւ. կամ իւ. աց. օք։ || գործօղ չարեաց. որով մերթ նշանակի՝ և իցէ ժանտագործ. կամ անօրէն. կամ ամբարիշտ. կամ ապիրատ. և կամ մեղաւոր։ Առակ. 12. 4։ Իսկ մերթ մասնաւորապէս առեալ՝ իմանի ոճրագործն. որ նա՝ որ ընդդէմ հասարակաց գործէ զանիրաւութիւն ինչ. որով ըստ իրաւանց դատապարտի 'ի մահ. որպիսիք են սպանողք. աւազակք. գողք. և այլն։ 3. Մակ. 6. 10։ Ղուկ. 23. 32։ 1. Պետ. 2. 14։

Չարագործեմ. եցի. եա. եալ։ (Չէզոք.) || առնել զչարագործս. կամ վարել չարագործութ. կամ նիւթել զչարիս. և կամ խորամանկել։

Չարագործութիւն. թեան։ || չարագործ գոլն. կամ գործելն զչարիս, կամ գործք չարեաց. կամ ապիրատութիւն. և կամ խորամանկութիւն։ 2. Մակ. 14. 22։ և Ոսկե. 2. հափ. Ե։

Չարագրգիռ. (Նախդրիւ հոլովի.) || գրգռօղ 'ի չարիս. կամ չարաչար հրապուրօղ. կամ չարայոյզ։ Եւ կամ նա՝ որ չարաչար գրգռի 'ի չարագործութիւն. կամ որ է կատաղի. կամ ցասմնոտ։ 'ի ձեռս հարց. իզ։

Չարադատ. ի. իւ. ից. օք։ || չարաչար դատող. կամ զչար դատաստան առնող. կամ որ անիրաւութեամբ դատէ։ Եւ մերթ չարաչար դատեցեալ։

Չարադատիչ. ատչի. աւ. աց. օք։ || չարաչար՝ կամ անիրաւութեամբ դատող։

Չարադատութիւն. թեան։ || չարաչար դատողութիւն. կամ չար դատաստան. և կամ անիրաւ դատաստան։

Չարադեւ. դիւի. աւ. աց. օք։ || ունող յինքեան զչար դեւ. կամ հարեալ 'ի չար դիւէն. որպիսիք են մոլեգին դիւահարքն։ Իսկ մերթ չար կամ ժանտ դեւ. ըստ այնմ Յո. ...։ ստամբակեալ իմ չարադեւքն. ... և յանդգնած առ նոքին։

Չարադէմ. դիմի. աւ. աց. օք։ || ունող զչար, կամ զդժնդակ դէմս. կամ որոյ անձն երեւոյթն է զարհուրելի. կամ խոժոռադէմ. կամ ձաղանդէմ. և կամ ահեղ. և զարհուրելի։ 'ի ձեռս հարց. ժզ։

Չարադիւթ. ի. իւ. ից. իւք։ || չար դիւթ. կամ չարաչար դիւթօղ. կամ չարա[illegible]. և

կամ չարամտութ : 'Ի ճառընտիրն :

Չարադիւութիւն . թեան : || չարաչար դիւութիւն . կմ դիւահարութիւն . և կմ դիւացին ժանտութիւն : Իսկ մերթ առեալ ընի փոխանակ գժնդակ թշնամոյն կմ չարաչար ողորմելութեն , քան որում այսպիսի նկքս յատուկ են դիւաց , և դիւաբարոյ անձանց : 'Ի Գիրս Գրիգորի Մագիստրոսին :

Չարազգած . ի . իւ . իւ . իւք : || զգածեալ չարեօք , որ և ասի չարազգեաց :

Չարազգեայ . էի . իւ . իւ . իւք : || տե՛ս ըղ Չարազգի :

Չարազգեաց . եցի . իւ . իւ . իւք : || զգեցօղ զանձամբ զչարիս . կմ պատեալ չարեօք . կմ չարանիր . և կմ մեղսամակարդ :

Չարազգի . գւոյ . եաւ . եաց . եօք : || Նա՛ որ է՛ 'ի չար , կմ 'ի խոտան ազգէ . կմ վատազգի . կմ անազնիւ :

Չարաթոյն : (Նախադրիւ հոլովի .) || ունող զչար , կմ զժանտ թոյնս . կամ սաստիկ թունաւոր . որպիսիք են ոմանք յիժից . և 'ի թունաւոր գազանաց : Աշխարհ : Իսկ մերթ չարաթոյն կոչին ոմանք 'ի հողմոց , կամ յօդոց , և կմ 'ի հաւոց , որք ժանտաբեր հիւթով ապականեալ ապականեն զօդ , յոր հարկանին : Աշխարհ : Մերթ և ս անդրաբերաբար առեալ ասի զչար մարդոյ , կմ զկեղծէ , և զբանից , որք չարութբ իւեք իւր մահաբեր թունովք ապականեն զայլս : Ոսկեբերանին : և Լամբրոն : և 'Ի վարս հարց . իդ :

Չարաժողով . ի . իւ . իւ . իւք : || ժողովօղ չարաց , կմ նա , որ հաւաքէ զչարիս յանձն իւր . և կմ չարաչար ժողովեալ :

Չարաժողով . ոյ . ով . ոց . ովք : || չար ժողով . կամ չար բաղմութիւն հաւաքեալ 'ի գործ ինչ :

Չարալեզու : (Նախադրիւ հոլովի .) || ունօղ զչար , և զխառնակ լեզու . կմ չարաբան . և կմ չարախօս :

Չարալիր : (Նախադրիւ հոլովի .) || լցեալ չարութբ . կմ լի չարեօք :

Չարալլուկ . լլկի . աւ . աց . օք : || չարաչար լլկեալ . կմ տանջեցեալ . և կմ դժնէաբար կատաղեալ և մոլեգնեալ . որպիսիք են ոմանք յայսահարաց . կմ 'ի նախանձոտաց և կմ 'ի սրտմտողաց : Ասորեցւոց և գինեհարեալն , ըստ որում գինւով մոլեգնին . կմ' մասնաւոր ընկեցեալ տատանին , տանին չարալլուկք 'ի գինւոյ . Եզեկ. 23 . 9 : Մերթ և ս վարի իբրև զմակբայ . և նշանակէ չարաչար լլկանօք . կմ չարաչար տանջանօք . ըստ այնմ . Լամբրոն . ոչ ապաքէն անհնարին պատժովք չարալլուկ զառնամանս մտանիցէ :

Չարախնամ : (Նախադրիւ հոլովի .) || չարա չար խնամօղ . կմ որ ունի յինքեան զհոգս չարեաց . կմ որոյ փոյթն է հնարաւորեալ 'ի չարիս . և կմ չարասէր . և ըստ այսմ ասի զմտօք չարախնամ . կամ այլք չարախնամ : Նարեկ. ծէ :

Չարախնդաց . (Նախադրիւ հոլովի .) || խնդացօղ 'ի չարիս . և ուրախացօղ 'ի վշտս չարեաց այլոց . որպիսիք են նախանձոտք . կմ չարասէրք :

Չարախնդիր . դրի . աւ . աց . օք : || խնդրօղ կմ մաղթօղ զչարիս . կմ որ 'ի խնդիր լինի չարեաց : Իսկ մերթ այն , որ է չար խնդրիր . և ըստ այսմ ասի , չարախնդիր հայցուած :

Չարախոհ : || տե՛ս զՉարախորհ :

Չարախոհութիւն . թեան : || չար խորհուրդ . կմ չար խոկումն . կմ չարամտութիւն . և կմ չարակամութիւն :

Չարախորհ . ի . իւ . իւ . իւք : || խորհօղ չարեաց . կմ որոյ սիրտն է լի չարեօք և նենգութեամբ . կմ չարամիտ . կմ չարակամ . և կմ չարասէր : Նարեկ. ըէ : և Յհ ոսկ :

Չարախորհուրդ : (Նախադրիւ հոլովի .) || չարախոհ . կմ որ խոկայ զչարիս : Իսկ մերթ ունօղ չար խորհրդոյ , և կմ չարխրատ :

Չարախտավատ : (Նախադրիւ հոլովի .) || չարաչար ախտիւք , կմ տառապանօք վատնեալ , և կորուսեալ : Եւ մերթ չարաչար ցաւօք , և տանջանօք վատնօղ և կորուսանօղ . կմ սաստիկ դժնդակ . կմ յոյժ դըժնեայ . ըստ այնմ 'ի հին տաղարանիս . Ոչ աղբեցաւ 'ի չարախտավատ , և 'ի խարդաւանական մահուն տագնապաց : և զկնի սակ . Իսկ այլք չարախտավատ զանձնութբ մահու ասպատակալք :

Չարախտավոր : (Նախադրիւ հոլովի .) || չարաչար ախտիւք կմ կրիւք վարօղ . կմ չարասէր . կմ չարանիւթ . և կմ չարաբարոյ . և ըստ այսմ ասի 'ի հին տաղարանիս . Չարախտավոր մտօք սկսանէին զամենակալեան անեղական սրտին տալ ձաղանս :

Չարախրատ . ի . իւ . իւ . իւք : || տուօղ ըղ չար խրատս ումեք . կմ խրատեցեալ 'ի չարիս :

Չարախրատութիւն . թեան : || չար խրատտուութիւն . կմ չարաչար խրատունն . կամ չար խորհրդատուութիւն :

Չարախօս . ի . աւ . աց . օք : || խօսօղ զչարիս . որով մերթ նշանակի բամբասօղ . կամ պարսաւօղ . կմ այպանօղ . կմ զրպարտօղ . և կմ անիծանօղ : Սաղմ. 43 . 17 : Հռոմ. 1 . 30 : Իսկ մերթ՝ ամբաստան . կմ ամբաստանօղ . որ զանձկատանօք հրապարակելով զչարիս ուրուք առաջի դատաւորի , կմ մեծի ուրուք իշխանի 'ի նմանէ խնդրէ 'ի նմանէ զպատժապարտութիւն կմ զկապանսն : Գործ. 23 . 30 : Իսկ մերթ Ը բայի չարախօսել , այսինքն չարախօս լինել . կմ չարախօս կալ զումեքէ . և նշանակէ չարախօսել . կամ ամբաստանել : Սաղմ. ճէ . կմ ձէ . կմ ձէ . . . . Սաղմ. 70 . 13 : Ղուկ. 23 . 2 : Յոհ. 5 . 45 : Բայց երբեմն առեալ ընի փոխանակ բամբասարկուին , կմ սատանայի , որ է զբանս չարախօսաց : Յոբ. 4 . 7 :

Չարախօսեմ . եցի . եա . եք : (չէզոք . և մերթ ներգործական .) || խօսիմ զչարիս զումեքէ . կմ բամբասել . կմ պարսաւել . կմ այպանել . կմ զրպարտել . և կամ անիծանել : Ժողով. 7 . 23 : Մար. 7 . 10 : Իսկ մերթ՝ ամբաստան լինել . կմ ամբաստանել : Սաղմ.

Digitized by Google

[illegible] ընել. Առակ. 18. 17. Մատ. 12. 10. և 27. 12. Ղուկ. 23. 10.

Չարախօսութիւն. թեան. ‖ Խօսիլն զչար. կմ՛ չարաբանութիւն. կմ՛ բամբասանք. կմ՛ բանսարկութիւն. կմ՛ պարսաւանք. և կմ՛ անէծք. 2. Կորն. 12. 20. Իսկ մերթ ամբաստանութիւն, զոր մատուցանեն չարախօսքն զումեքէ առ մեծ ոք՝ 'ի համբաւումն վրէժխնդրութեան. ռամկօր. [illegible]. Յես. 18. 29. 1. Տիմ. 5. 19.

Չարակամ. ի. աւ. աց. օք. ‖ Ունօղ զչար կամս. և կմ՛ կամեցօղ զչարիս. կմ՛ չարասէր. կմ՛ չարամիտ. կմ՛ չարաբարոյ. և կմ՛ չարացեալ. Առակ. 17. 11. և 19. 6. Յոբ. 21. 27.

Չարակամութիւն. թեան. ‖ Չարութիւն կամաց. կմ՛ չար կամք. կմ՛ չարասրտութիւն. կմ՛ չարամտութիւն. և կմ՛ թշնամութիւն. Եսթեր. 16. 6.

Չարական. ի. աւ. աց. օք. ‖ Նոյն է առ Ը բառիս չարակն, այլ և չղջիկանն, ընդ բառին՝ չղջիկն. Եւ 'ի սմանէ ծագի բայս չարականել. Առակ. 23. 6.

Չարականել. եցի. եա՛. ել. (չէզոք. կմ՛ ներգործ.) ‖ Ծագի սա 'ի չարական բառէս, որ է չարակն. ուստի և չարակնելն. նշանակէ զչար ակնել. Ը այսմ. Ոսկէ. 2. հարց. որ ընդ չար ակն է՝ բերել ունի չարախօսս. և բազում չարականօղս. զի չարակնօղն, որ է նախանձօղ. Սոյնպէս և Մատ. 3. 9. ուր ասի. Եւ չար ակնելով չարականեր. զի նախանձալից աչօք հայելով հայիք. կամ խնայելով խըրնայէք 'ի տատանորդս. և յօժարութիւն. Բայց առանց վերափոխման եղեալ կայ չարականել.

Չարականօղ. ‖ տե՛ս զՉարականել.

Չարակեղ. ի. իւ. եց. եւք. ‖ Չար կեղ. զի ժանտ խոց, որով նշանակի ժանտատեսակն, որ ծնեալ յապականութենէ արեան՝ յաւելուծս, կամ յախտակս, և յայլ մասանց մարմնոյ. յանտեղնոյ կոտորէ զմարմին. ռամկ. խոխտահոլ. 'ի հին տպագիրն.

Չարակեղա. ի. իւ. եց. եւք. ‖ Ունօղ զչար, կմ՛ զգազիր կեղաս. կմ՛ չարաչար տառապեալ. և կմ՛ սաստիկ գարշ և այրեծ. և ըստ այսմ ասի՝ չարակեղա բարք. կմ՛ միտք. և այլն. 'ի հին տպագիրն.

Չարակիր. կրի. աւ. աց. օք. ‖ տե՛ս զՉարաբերող.

Չարակն. ակնի. ին. եց. եւք. ‖ Ունօղ զչար և զժանտ ակն. որով մերթ նշանակի մախացօղն. կմ՛ նախանձօտն. ըստ որում յատուկ է այսպիսեաց դժնեայ աչօք հայիլ 'ի բարիս այլոց՝ և դառնանալ 'ի նոյն. մինչ զի երբեմն չարութիւն հիւանդութեան աչացն վնասէն զհայեցեալս իրաց. ռամկ. քախիլօղ. կմ՛ խախանձը եղօղ. և կմ՛ նազար ունօղ. Ոսկէ. 1. հարց. Իսկ մերթ ժլատ. կմ՛ ագահ. որ նախանձալից աչօք ակն արկանէ յինչս իւր. և մախայ ընդ նա, որք հաղորդին բարեաց իւրոց. ռամկ. նէքէս. Առակ. 28. 22. ըստ այսմ է և Առակ. 23. 6. ուր ասի՝ մի ուտեր զհաց ը. առն չարականի, զի չարակնի.

Չարակնեալ. նեի. իւ. եց. եւք. ‖ տե՛ս ըզՉարակն.

Սանեղբայր. բօր. արք. արց. արբք ։ || եղ_ բայր սանուն. և ըստ այսմ սանեղբայր կոչին միմեանց երկու սանք միաւորեցեալք 'ի նոյնոյ կնքահօրէ. ըստ որում հոգևո_ րապէս ծնանին 'ի նմանէ իբրև 'ի միոյ ծնո_ ղէ ։ Եւ և սանեղբայր անուանին բնա_ կան եղբարք սանոց ։ Շնորհալին ։

Սանձ. ի. իւ. եց. իւք ։ || Է կազմուած ինչ յերկաթոյ, կմ յայլմէ նիւթոյ, որ ա_ ծեալ լինի 'ի բերան ձիոյ. առ 'ի սանձել և նուաճել զնա ըստ կամաց հեծելոյն. որ և երբեմն առեալ լինի հանդերձ ե_ րասանաւ, որ զերեսօք նր ածի ։ ռամկ. կէմ. կմ ղանտըրմայ ։ Յոբ. 30. 11 ։ Սաղմ. 31. 9 ։ Յակ. 3. 3 ։

Սանձաբեկ. ի. աւ. աց. օք ։ կմ իւ. եց ։ || բեկանող սանձի, որպիսիք են ամենք խս_ տերախ երիվարք ։ Իսկ մերթ սանձիւ բե_ կեալ, կմ ճմլեալ ։ Բայց երբեմն Ը բայի շարակցի այսպէս, սանձաբեկ առնել, և նշանակէ սանձիւք ճնշել. կմ չարաչար նուաճել. և կմ զխստապարանոցութիւն փշրել. և այս ասի զկամակոր երիվարաց, և մերթ նմանութբ զանհաւան և զխստա_ մարդոյ ։

Սանձակալ. ի. իւ. աց. օք ։ || տե'ս զերա_ սանակալ ։ Նարեկ. ծԳ ։

Սանձակոտոր. ի. իւ. եց. կմ աց. օք ։ || կո_ տորող սանձի, որպիսիք են ամեհի երի_ վարք, որք խածատելով խորտակեն զսանձն ։ Նարեկ. իԲ ։

Սանձահարեմ. եցի. եա. ել ։ (Ներգործ.) || սանձիւ հարստահարել. կմ ընդ բռամբ ածել զերիվարս ։ Եւ յոյժմանէ առեալ նշանակէ յաղթահարել. կմ զսպել. կմ նուաճել. և կմ ճնշել. և ըստ այսմ ա_ սի' սանձահարել զորովայնութի. զլեզուն. զմարմինն. զԹշնամիս. և այլն ։ Յակ. 1. 26 ։ և 3. 2 ։ Խորէն. Բ. գր. 3 ։ և Գ. գր. 68 ։

Սանձահարութի. թեան ։ || սանձահարումն՝ որ է սանձիւ նուաճումն երիվարաց ։ Իսկ մերթ յաղթահարութի. կմ զսպումն. և կմ ճնշումն ։

Սանձարկու. կուի. իւ. աց. օք ։ || սանձ ար_ կանող, զի նա, որ դնէ զսանձ 'ի բերան ձիոց, կմ որ սանձէ զերիվարս ։ Իսկ մերթ անդրադարձաբար առեալ՝ նշանակէ սան_ ձահարող. կմ զսպող. կմ նուաճող. կմ որ զանհնարութի իրիք Է կանոնաւ ար_ կանէ. և ըստ այսմ ասի' սանձարկու լե_ զուի, կամ ախտից. և այլն ։ Նարեկ. Զ ։

Սանձարկութի ։ || տե'ս զՍանձահարութի ։

Սանձարձակ. ի. աւ. կմ իւ. աց. օք ։ || այն, որոյ սանձն, կմ երասանակն է արձակեալ. կմ 'ի բաց թողեալ ։ Եւ յոյժմանէ առեալ նշանակէ ցոփ. կմ զեղխ վարուք. կամ անսաստ. որ յամ մոլութիս մատնեալ է զանձն իւր ։

Սանձեմ. եցի. եա, ել ։ (Ներգործ.) || սանձ արկանել. կմ սանձ 'ի բերան դնել ձիոց առ 'ի անսալ հեծելոյն ։ Իսկ մերթ սան_ ձահարել. կմ զսպել. կմ նուաճել. և կմ ճնշել ։ ըստ այսմ Նարեկ. 'Ի գոչ. առատ. Եւ զմիշտայն ապստամբ հզօր մեքենայիւ բանեցին սանձեցին ։

Սանն ։ (Նախդրիւ հոլովի.) || զօրութի. կմ կարողութի. և կմ ույժ ։ 'Ի սմանէ ե_ լանէ բառս՝ իմեղսանն. զոր տեսցես 'ի տեղւոջ իւրում ։

Սանտր. կմ սանդր. սանտեր. տերք. երց ։

երբեք ։ կմ ի. իւ. ից. օք ։ || գործի ինչ ոսկերեղէն. կմ փայտեղէն, որ ունի զպարս նուրբ, և երկայն ատամունս, որով սանտրեն զհերս գլխոյ, կմ մօրուաց. և կմ որով գզեն զբուրդ. և այլն. ռամկ. եւս սաւ՛ տանփր։

Սանտրեմ. կմ սանդրեմ. եցի. եա. ել ։ (Ներգործ.) || սանդրիւ յարդարել զհերս. որ և ռամկօր. սաւ՛ տանփրել։

Սապատ. ի. աւ. աց. օք ։ կմ իւ. ից. || կողով. ցց անօթ հիւսուածոյ, ուր արկեալ զկանխանելի իրս առնուն զԹիկամբ. կմ բառնան 'ի վերայ ձիոյ՝ և կմ յայլ պէտս 'ի գործ ածեն ։ ռամկ. սէֆէթ. Բայց մանաւանդ Եորաջէս առեալ. նշանակէ տոկուն կողով փաշն հիւսուածոյ տապալանակն զարգացեալ, և այլոց նմանեաց. ռամկ. սէֆէթ սեփաւ ։ Եսայ. 3. 26։

Սապատակ. ի. աւ. աց. օք ։ || է անուն նուաղական. կմ փաղաքշական, որով նշանակի փոքրիկ սապատն. կմ ո՛ և իցէ տեսակ սապատից ։ ռամկ. սէֆէթճիկ. կմ սէֆէթ.

Սապատաձեւ. ի. իւ. ից. իւք ։ || ունօղ զձեւ սապատի ։ ռամկ. սէֆէթի ճեւանեղ.

Սապատաւոր. ի. աւ. աց. օք ։ || ունօղ զսապատ. կմ սապատաւոր պարապօղ վաճառաց, որպիսիք են վաճառօղք պտղոց, և խոտեղինաց. կմ նորա՛ որք նստեալ առաջի սապատի, կմ սեպտանոյ, հանդերձ առարարե տանեն զվաճառականութիւն։ Կոչի եւ Եղէնի. Ի։

Սապատոզն. ոզին. ամբ. ոզինք. զանց. ամբք ։ կմ ոզք. ից. իւք ։ || նա՛ որոյ ողն՝ ցի Թի կուզքն, կմ քամակն սապատաձեւ է ուռուցեալ, որով Թիկունք և պլանգաւկի բոլոր մարմինն ։ ռամկ. կուզ. տաճկերէն գամպուր ։ Ղևտ. 21. 20։ Իսկ մեկնիչ նմանուԹ առեալ ըննի փոխանակ այնր ամնի, որ իբրև ըղ սապատ կամ գնդակ 'ի վեր ուռուցեալ կայ. որպիսիք են ընդգանակաւորք մարմինք. կմ ձեռք նց, որք յառաջապէս կոչին կորնԹիք ։ ոչ առաջաւ 'ի տեղւոջ իբրու մ։

Սապէս ։ (մակբայ.) || այսպէս. կմ այնպէս. ռամկ. սապէս. կմ սանց ։ Խորէն. Բ. գլ. 7։ և Գ. գլ. 4. և 29։ և Յ...։

Սապր. ապրի. իւ. ից. իւք. կմ օք ։ || հիւԹ հալուէի. քանզի հալուէէն է խոտ ինչ նըման բուսոյ շուշմայի. ցց ասաւդ. որ ունի զտերև Թանձր և պարարտ յոյժ. զոր քամեալ, և ոտիւք կոխեալ՝ քամեն զհիւԹն. և արկեալ զայն 'ի Թաղարս՝ դնեն յարեւու. ուր ջերմուԹբ մածեալ և Թանձրացեալ չորանայ՝ և լինի իբրև զխիժ գունոյ յոյժ. և այն կոչի սապր. ոչ և երբեմն յանուն բուսոյն լերդոյ անուանի հալուէէ. մանաւանդ յորժամ փոխանակ ծխանելեաց գընի ։ Արդ՝ ունի սա զբազում տեսակս՝ որոց ոմանք են սեաւ՝ կարծր՝ և պարշահոտ. և ոմանք են վատԹարք։ Իսկ ոմանք են խառնեալ, կմ չարագոյն. և յամաչահոտ. նաև դիւրափշրելի. և այսպիսիքս են ազնիւ, զոր յաճախ 'ի գործածեն 'ի բժշկական դեղօրայս. ոչ և 'ի հնդկա՞ 'ի

դխապատութիւն. զի ունի զզօրութիւն պահելոյ զդէշս 'ի նեխուԹէ, և 'ի խիտուԹէ և յորդանց. վս որոյ և զմարմինն ան տա վաւ պատեցին յախսեր և նիկոդիմոս ։ Յովհ. 19. 39։

Սառակինոս ։ || տե՛ս զՍարակինոս ։

Սառիմ. եցայ. եայ. իլ ։ (Հայնաբերական.) || տե՛ս զՊաղիլ։

Սառն. սառին. ամբ. կմ նիւ. անց. ամբք ։ || պաղ, որ է ջուր, կմ հիւթ 'ի ցրտոյ ձմերայնոյ պաղեցեալ. ցց կարծրացեալ և քարացեալ, որով երևի ջինջ և պայծառ հանգոյն ակն ձանի. ցց ապակի. վս որոյ և երբեմն առեալ լինի փոխանակ նր՝ հետևելով յունական բառին՝ քրիստալլոս, որ զերկաքնն խակ նշանակէ ։ ռամկ. պուզ։ Թուոց. 11. 7։ Յոբ. 38. 29։ Դանի. 3. 69։ Յայտ. 4. 6։ Եւ յայտնանէ առեալ երբեմն սառն կոչի կարկուտն. բառ որում է անձրևս առուցեալ յօդս, և իբրև զպատառս քարեղէնս արկեալ յերկիր. ըստ այսմ Սաղմ. 147. 17. Արկանէ զսառն ոչ պատառս ։

Սառնագոյն. գունի. իւ. ից. իւք ։ || ունօղ զգոյն սառին. կմ սառնատեսակ։

Սառնակառոյց ։ (Նախադրիւ հաւլքի.) || կառուցանօղ. ցց կարծրացուցանօղ սառին, կմ արտադրօղ սառնամանեաց. և կմ սառեցուցիչ. և բառ այսմ սաւ. ձմեռն սառնակառոյց ։ Խորէն. Դ. գլ. 68։

Սառնակերպ. ի. իւ. ից. իւք ։ || ունօղ ըղ կերպ, կմ զօրախառութիւն սառին, կմ սառնանման. և կմ սառնատեսակ. որպիսի էր մանանայն ։ Իմաստ. 19. 20։

Սառնահալ ։ (Նախադրիւ հաւլքի.) || հալօղ և լուծանօղ սառին. կմ որ ունի յինքեան զսառն կիսահալ. կամ անձնեալ հեղեղ կեալ. որպիսիք են ջուրք ամանց գետոց։

Սառնամած ։ (Նախադրիւ հաւլքի.) || մածեալ սառամբ. կմ սառնապատ։

Սառնամածեալ. եալոյ. ոյ. ովք ։ || սառն մած լեալ. կմ սառնամանեօք պատեալ և պաշարեալ։ Լամբրոն։

Սառնամանիք. եաց. եօք ։ (անեզական.) || ծաղի սա 'ի պատեա սառն, իբրև յօդնական նշ. ոչ և 'ի ներքին բառեն սերմանիքն. և նշանակէ զխիտ և զԹանձր սառինս. կմ զանհնարին սառոյցս՝ տիրեալ ամի, որով գետԹէ և քարինք սառուցեալ պաղին ։ Յոբ. 37. 10։ Նարէկ. Հ։ Խորէն. Ա. գլ. 10. և 25։

Սառնամանուտ ։ (Նախադրիւ հաւլքի.) || լի սառնամանեօք. կմ յորում են յաճախ սառոյցք. և կմ սաստիկ ցուրտ և սառուցիչ։

Սառնանամ. ացայ. ցիր. անալ ։ (ընդմիջակերպ.) || սառիլ. կմ պաղիլ ։ ռամկ. պուզ լիմէք։ Լամբրոն։ Իսկ մեկնիչ սաստիկ ցրտանալ. կամ. հօժանալ. և բառ այսմ սաւ՝ սառնանալ 'ի ձերոյն ոչ ։ ռամկօր. պաղիլ։ Լամբրոն։

Սառնատեսակ ։ (Նախադրիւ հաւլքի.) || տե՛ս զՍառնակերպ ։

Սառնապատ. ի. աւ. աց. օք. կմ իւ. ից ։ ||

Digitized by Google

պատեալ սառամբ. կամ պաշարեալ սառ_ նամանեօք. և կամ սառնամանած: ԱՃգուն:

Սառնապատրոյց: (Նախդրիւ հոլովի.) || սա_ ռուցիչ ջրոյ՝ ի սառն. կամ պատճառաւ ըղ սառնամանեաց. և կամ սաստիկ ցրտացու_ ցիչ: ռամկօր. պղն պէս պաղեցնող. և ըստ այսմ առնի. սաստիկ սառնապատրոյց հողմ: Իսկ մերթ սառնացեալ. կամ սաստիկ ցրտացեալ: ռամկ. պաղ կտրած. և ը այսմ առնի՝ սառնապատրոյց սիրտ:

Սառնասէր. սիրի. աւ. աց. օք: || սիրող սա ռին. կամ ախորժող զսառնամանիս. կամ սառնամանութեան. և կամ ցրտասրտոյց. և ը այսմ առնի. սառնասէր սիրտ: Նարեկ. ձա:

Սառնայոյզ: (Նախդրիւ հոլովի.) || սառ_ ցանող, կամ խրող՝ ի սառն. կամ սառուցեալ և խրեալ՝ ի սառնամանիս: Իսկ մերթ սա_ ռամբք զինն սուզանող, այսինքն ծածկող. կամ սառնապատ առնող. և կամ ցրտասառոյց: և ըստ այսմ առնի. սառնայոյզ եղանակ՝ կամ սառնամանիք. և այլն: 'Ի հին տաղա_ գիրս:

Սառնատես. ի. իւ. ից. իւք: || տե՛ս 'ի ներքոյ զՍառնատեսակ:

Սառնատեսակ. ի. աւ. աց. օք: || այն՝ որ ու_ նի զտեսակ. կամ զնմանութիւն սառին. կամ որ է հանգոյն ական վանի: ռամկօր. պղնձ պէս. կամ պիւլլօրիպէս: Յայտ. 21. 11:

Սառնատեսիլ: || տե՛ս զՍառնորակ:

Սառնացրտութիւն. թեան: || ցրտութիւն սառին. կամ ցրտագին սառոյց. և կամ սառուցիչ ցուրտ: Նարեկ. ղբ:

Սառնորակ. ի. աւ. աց. օք: || սառնակերպ. կամ սառնատեսակ:

Սառնորակերպ: || տե՛ս զՍառնակերպ:

Սառնում. սառեայ. ռիր. ռուցեալ. նուլ: (Էմիչ.) || տե՛ս զՍառնանալ: Նարեկ. ժԹ:

Սառոյց. ուցի. իւ. ից. իւք: (մանաւանդ վարի յոգնականապէս.) || է արմատ սա ռուցանելոյ բային, և նշանակէ զսառուց_ մունս. կամ զսառուցանողական ցրտութիւն սառնամանեաց հանդերձ:

Սառուցանեմ. ուցի. ռ. եալ: (անցող.) || պաղեցուցանել. այսինքն զջուրս, կամ զձիւնս ցրտութեամբ կարծրացուցանելով քարացու_ ցանել. որով լինի երկրն զաղալակի:

Սառչիմ. սառեայ. ռիր. ռուցեալ. չիլ: (ձայ նակոր.) || նոյն է ընդ բային սառնում, որ զորթչիլն ընդ բային զորթնում. և նշա նակէ սառիլ. կամ սառնանալ. ռամկօրէն պաղ կտրիլ. կամ պաղիլ. և ըստ այսմ առնի, սառչիլ՝ ի սառուցմանէ անօրէնութեան:

Սառուսու: || տե՛ս զՍարասու:

Սառուսամ: || տե՛ս զՍարասամ: 'Ի վարս հարց. ժԹ:

Սասան: (Նախդրիւ հոլովի.) || սասանեալ. այսինքն սարսափեալ. կամ դողացեալ: Իսկ մերթ սասանումն. այսինքն սարսափումն. կամ դո_ ղումն: և ըստ այսմ առնի. սասեղծեան զա ղանք յահ, և 'ի սասան ամբարիշտ մարդ_ կան:

Սասանեմ. եցի. եա. նել: (զօրութ. անցող.) || սասանեցուցանել. զոր տեսցես զկնի:

Սասանեցուցանեմ. ցուցի. եցի. եալ: (անցո ղակ.) || շարժել. կամ տատանեցուցանել. կամ սարսեցուցանել. կամ դողացուցանել: Նարեկ. ժԹ: Իսկ մերթ խախտել. կամ դղըր դել. կամ շարժել: 2. Մնաց. 33. 8:

Սասանիմ. եցայ. եալ. իլ: (ձայնակ.) || շարժ ըիլ. կամ տատանիլ. կամ սարսիլ. կամ դո_ ղալ. կամ դղրդիլ. և կամ խախտիլ: և ը այսմ առնի. սասանիլ լերանց. հիմանց. երկրի. ծովից. գնացից. կամ մարդոյ. ռամկ. [illegible]. և այլն: Սաղմ. 15. 8: և 17. 8: և 113. 7: Նաւում. 1. 5:

Սասանութիւն. թեան: || երերումն. կամ սարսումն. կամ դողումն. կամ դըրդ_ ումն. և կամ խախտումն. Սաղմ. 54. 23: և 120. 3: Իսկ մանաւանդ առեալ նը շանակէ զերկրաշարժն. որ է շարժումն երկրի: ռամկ. ձած: Մատ. 24. 7:

Սասանումն. նման. մանը. մանց. մամբք: || տե՛ս զՍասանութիւն: Խորէն. Փ. պր. 68:

Սաստ. ի. իւ. ից. իւք: || սաստկական, և խիստ ձայնիւ, և կշտամբական հրամանաց մամբ հրամայումն 'ի լռել. կամ խրատ_ խումն. կամ սպառնալիք. և կամ յանդիմա_ նութիւն: ռամկ. հէյ: Սաղմ. 103. 7: 2. Կոր. 7. 11: Տիտ. 2. 15: Իսկ մերթ՝ սաստկութիւն. կամ բռնութիւն. կամ իշխեցողութիւն. կամ բուռն որոյ: 3. Թագ. 6. 15: և 7. 8: Ովսէ. 1. հատ. Ը: Երբեմն ևս նշանակէ զպատուհասն: 2. Մակ. 6. 30: ըստ այսմ է և այն՝ թշչել զհարուածեալսն՝ ի դիւահարսն սաստիցն. այսինքն 'ի դիւահարական պատուհա_ սիցն. 'ի Շարականն: Մերթ ևս ընդ բայի շարակցի այսպէս. 'ի սաստ մատչիլ ընդ ումեք. և նշանակէ սաստել. կամ սաստիւ խօսել և կամ կարգել: ռամկ. հէյել. կամ սէրտ խօսիլ: Ովսէ. 1. հատ. ԻԷ:

Սաստեմ. եցի. եա. ել: (չէզոք.) || խստու թիւ, կամ իշխեցողութեամբ հրամայել ումեք. զի կարկեսցի. կամ խրատել. կամ սպառ_ նալ. և կամ յանդիմանել: ռամկ. հէյէլ. կամ ... և այս յատկապէս լինի առ բա նաւորս. այլ առ անբանս. և առ դևս: Թուոց. 16. 13: Ղուկ. 19. 39: Յուդայ. 9: Իսկ մերթ լինի նաև առ անբանս, և առ ան_ զգայս, որպիսիք են գազանք. ծով. հողմ. և այլն: Սաղմ. 67. 31: Նաւում. 1. 4: Մարկ. 4. 39:

Սաստիկ: (Նախդրիւ հոլովի.) || խիստ. կամ ուժգին. կամ հզօր. կամ զօրաւոր. և կամ յորդ: և ըստ այսմ առնի, պատերազմ. կամ կոծ սաստիկ. հողմ, կամ ջուր սաստիկ. անձրև, կամ սով սաստիկ. և այլն: Ծննդ. 50. 10: Ելից. 10. 19: և 15. 10: 2. Թագ. 3. 1: 3. Թագ. 18. 2: Իսկ մերթ բուռն, կամ խը րոխտ. կամ ամեհի. և կամ դժնդակ: ռամկ. զօրլը: և ըստ այսմ առնի. այր սաստիկ. կամ առիւծս սաստիկս: Թագ. 13. 29: Իմաս. 11. 18: Մերթ ևս վարի մակբայաբար. և նշանակէ սաստկապէս. կամ ձեռապէս. կամ չարաչար. և կամ յոյժ: ռամկ. խէյլ: Իմաս. 4. 3:

Սատակագին: (Նախդրիւ հոլովի.) || առաւել սատակիչ. կմ սատակագոյն. և կամ ուժգնագոյն: Իսկ մերթ վարի մակբայաբար. և նշանակէ սատակապէս. և կամ կարի ուժգնակի:

Սատակականիծ: (Նախդրիւ հոլովի.) || անէծս զԴատանականիծ: Նարեկ. խը:

Սատակահոտ: (Նախդրիւ հոլովի.) || այն՝ յորում հնչէին հոտք սատակիչք: և ըստ այսմ առի. սատակահոտ. տեղի, կմ լեառն. և այլն:

Սատակաձայն: (Նախդրիւ հոլովի.) || ունող զձայն սատակիչ. կմ ուժգին հնչող. կմ բարձրագոչ. և կամ մեծաբարբառ: ռամկ. ուժով ձայն հանող. կամ անօրէն կանչող: Մծբն. ժէ:

Սատականամ. ացայ. ացիր. նալ: (Ընդ. մէջ.) || խստանալ. կմ ուժգնանալ. կմ զօրանալ. կմ առաւելանալ. և կմ բռնանալ: և ըստ այսմ առի. սատականալ սովու. կմ ջրհեղեղ: Ծննդ. 7. 19: և 43. 1: Սատականալ ձայնի. կամ պատերազմի. կմ բանի. և այլն: Ելից. 19. 19: 2. Թագ. 24. 4: 4. Թագ. 3. 26: Իսկ մերթ անհնանալ. կմ զայրանալ. կամ ցասնուլ. և կմ ՚ի սաստկութիւն բարկութեան բրդել: ռամկ. խստանալ ըլլալ: Իմաստ. 16. 24: Նարեկ. իէ: Եւ Ոսկեբ. 2. հռով. ժդ. առի. ոչ ներէ սատականալ. կմ բարկանալ:

Սատակապատահանք: (Նախդրիւ հոլովի.) || սատակութիւն պատահմանց. կամ բռնութիւն պատահմանց բերեալ. և կմ խստութիւն, և ծրշ դիւէ պատահմանց. և ըստ այսմ առի. սատակապատահանք դատաստանի. կամ սատակապատահանք հատուածոյ: ՚Ի Հյոց հայրա. իէ:

Սատակապէս: (Մակբայ որակի.) || նման ընդ Սատակիչն, ըստ որում վարի մակբայաբար: Ճառընտ. Ա. ճը. 32.

Սատակաստատու: (Նախդրիւ հոլովի.) || սատակիչ սատակելի. կմ յոյժ սաստկալի. և կամ կարի անհաւատ:

Սատակացուցանեմ. ցուցի. ուցա. եալ: (Ներգործ.) || սատակիչ առնել. կմ խստացուցանել. և կմ առաւելուլ: 1. Մակ. 2. 35. և 38: Իսկ մերթ անհնազանդեցուցանել. կամ զայրացուցանել. և կմ բարկացուցանել:

Սատակութիւն. թեան: || խստութիւն. կմ ուժգնութիւն. կմ զօրեղութիւն. կմ առաւելութիւն, և կմ բռնութիւն: 2. Օրին. 3. 24: Եսայ. 11. 15: Դան. 14. 35: Իսկ մերթ խիզախութիւն. կմ անհնութիւն. կմ ապստամբութիւն. կմ պատմութիւն. և կմ ցասումն: 3. Մակ. 5. 1. և 9: Նարեկ. ղա. և ձ:

Սատակ. ի. աւ. կմ ով. աց. օք: || է արմատ սատակել բային, որով նշանակի սատակեալ. և ըստ այսմ առի. դժնդակ մահ ունօղ սատակ լինել: Իսկ մերթ սատակիչ. կմ մահացուցիչ. և ըստ այսմ առի ՚ի սատակ նախանձուէ. կմ սատակ գեղով. և այլն: Ոսկեբ. 1. հռով. խէ: Մերթ եւս սատակութիւն. և ըստ այսմ առի՝ ածել ՚ի վճ զչարաչար սատակս, կմ հասանել ՚ի սատակ կորստեան:

Սատակամահ: (Նախդրիւ հոլովի.) || չարաչար մահուամբ սատակել: Իսկ մերթ ընդ բային չարակցի այսպէս. սատակամահ առնել. կմ սատակամահ կորուսանել. և նշանակէ դժնդակ մահուամբ սատակել. կմ չարաչար սպանմամբ ՚ի մէջ բառնալ: Եւ կմ այսպէս, սատակամահ լինել. կմ սատակամահ կորնչել. և նշանակէ, դառն մահու սատակել. կմ բառնալ ՚ի մէջ. 2. Մակ. 9. 28:

Սատակեմ. եցի. եա. եալ: (Ներգործ.) || սատակամահ առնել. կմ չարաչար սպանանել. կմ կոտորել. և այս է մեծի մասին առի զչարաց. կմ զանօրինաց. և կմ զպղծոց. ռամկ. ոտքէ ջնջել: Թուոց. 20. 25: Յուդթ. 14. 8: 1. Մակ. 8. 11:

Սատակիմ. եցայ. եալ. իլ: (Ձայնակր.) || սատակամահ լինել. կմ չարաչար մեռանել. կմ դառնապէս վախճանիլ. և կամ չարչարանօք զրկիլ ՚ի կենաց. և այս առի զչարաց, զանօրինաց, և զպղծոց: ռամկ. ոտքէլ: Ելից. 30. 33: Սաղմ. 82. 11: Իմաստ. 16. 5: Իսկ մերթ ՚ի ձեռս գիրս առի նաև ընդ բարեաց. կմ զբարեաց. յորժամ դառն ըստ կանոն մեռանիցին. ոչ սովորական, կմ պատահման լինելով. և այլն: Ծննդ. 34. 30: և 45. 11:

Սատակիչ. կչի. ուէ. աց. օք: || սատակամահ առնող. կմ չարաչար սպանանող. կմ դառնապէս չարչարանօք կոտորող: ՚Ի նշանակ. նոյն. Սոյնպէս և 1. Կոր. 10. 10. սատակիչ կոչի նախանձայոյզ հրեշտակն, ըստ որում չարաչար կոտորէր զգայլեան եէլն յանապատին վն տրտնջմանցն:

Սատակումն. կման. մամբ. մանց. անէք: || սատակելն. կմ չարաչար մահ:

Սատակչական. ի. աւ. աց, օք: || սատակիչ զանկան. կմ կորուսանողական: Նարեկ. խը:

Սատան. ի. աւ. աց. օք: || է բառ եբրայական, որ թարգմանի հակառակորդ. կամ դիմադարձ. և կամ ընդդիմամարտ: 3. Թագ. 11. 14: և 23: և 1. Մակ. 1. 38: Սոյնպէս և 2. Կոր. 12. 7. գծեն, կմ բանսարկուն կոչի հրեշտակ սատան, ըստ որում է հրեշտակ հակառակօղ մարդկան. զորմէ տեսցես ինքնըստ ՚ի բառն սատանայ:

Սատանայ. ի. իւ: || Նոյն է ընդ Սատան բառին, որ թարգմանի հակառակ. կմ ընդդիմադարձ: Վասն զի Մատթ. 16. 23. ասէ առ Պետրոս. Երթ յետս իմ սատանայ. նշանակի ՚ի բաց կաց յինէն ով հակառակ: Բայց մասնաւորապէս առնել սատանայ՝ կոչի սադայէլն, կմ բանսարկուն. ըստ որում է հակառակորդ, և հրեշտակաց. և մեզ, և մեր բարեաց: Յոբ. 1. 6: Մատթ. 4. 5: և 25. 41:

Սատանայական. ի. աւ. աց. օք: || այն ամ որ սատանայի է. կամ որ վերաբերի առ սատանայ. և կմ դիւական. Նարեկ. հ. և. ճը.

Սատանայակիր. կրի. իւ. աց. օք: || կրող սատանայի. կմ զոր բանսարկուն յինքեան

կրէ․ կմ սատանայական․ և ըստ այսմ աւր՝ սատանայակեր բարք։ Աւգոստ։

Սատանայակուր։ (Նախագրիւ հոլովի․) ‖ այն ոմ, որ կերակուր եղեալ է սատանայի․ կմ որ հարուածեալ է ՚ի սատանայէ, կմ զոր բանտարկուն է սատանակեալ և կորուսեալ․ և ըստ այսմ աւր՝ սատանայակուր և գիճամոլ ազգ։ Աւգոստ։

Սատանայապաշտ․ ի․ իւ․ ից․ իւք։ ‖ պաշտօղ սատանայի․ և կմ գիճապաշտ։ Իսկ մերթ նշանակէ զկերպարերեալն առ սատանայական պաշտօնն․ կմ զայն, որով պաշտօն մատուցանի գիճին․ և ըստ այսմ աւր․ սատանայապաշտ սպասաւորութիւն։ Աւգոստ։

Սատար․ ի․ աւ․ աց․ օք։ ‖ գործունեայ․ կմ գործաւոր․ կմ արբանեակ․ կմ սպասաւոր․ և կմ մշակ․ ուստի․ բանուոր։ Ըստ այսմ․ Մծբն․ Ժա․ Նմ սատարք, որք վաստակեցին ՚ի չինուածի անդ՝ զվարձս ընդունէին։ և ՚ի ԺԹ. աւր, սատարքն վարձուորք վաստակեցին յայգւոջ անդր․ այսինքն մշակքն։ Այնպէս և 1. Մակ․ 3.6. արբանեակքն, կմ գործօղքն չարութեան, կոչին սատարք անօրէնութեան։ Իւր յայսմանէ առեալ երբեմն ևս նշանակէ զատորոյնանին՝ որով խմանի և առրին, ըստ որում գործէ զատայինս։ ուստի․ ըանակողոր․ կամ ճանաղոր։ Երեմ. 38.12։ Դարձեալ նշանակէ՝ օգնական․ կմ նպաստ․ կմ ձեռնտու․ կմ օժանդակ․ և կմ ընկերսիլ։ ուստի․ Յարփըլմեի․ Ըստ այնմ յոտանաւորն հեթմոյ, յինձ ողջալս լինիլ սատար, այսինքն նպաստ։ ըստ այսմ է և ՚ի Լամբրոն․ ՚ի բաղձմ փրկչի։ Իւր ևս նշանակէ սպասաւորութիւն․ կմ մշակութիւն, և կմ օգնութիւն․ ըստ այնմ Մծբն․ ԺԷ։ որոյ ակար է սատար յայգւոջ, զկնորկեալ առնու ըզ վարձս իւր, այսինքն որոյ ակար է մշակութիւն։ և ՚ի Խորէն․ Բ․ գլ․ 28․ աւր․ Սատարս նմա առնել ՚ի ձեռն խորհրդոյ ումեմն․ այսինքն օգնութիւնս տալով, որ է առնել, օգնելով․ կամ նպաստելով։

Սատարեմ․ եցի․ եալ․ ել։ (Ներգործ․) ‖ գործել․ կմ արբանեկել․ կմ սպասաւորել․ և կմ աշխատիլ ՚ի գործ ինչ։ ուստի․ բանել։ Եսայ․ 36. 2։ Աւգոստ։ Իւր յայսմանէ առեալ ստացականեալն, նաև մշակելն զերկիր, և զայգիս, սատարել կոչի։ Իսկ մերթ նշանակէ օգնել․ կմ նպաստել․ կմ ձեռնտու լինիլ․ և կմ ՚ի թիկունս հասանել։ ուստի․ Յարփըլմ ընել։ Խորէն․ Բ․ գլ․ 69։

Սատարութիւն․ թեան։ ‖ գործաւորութիւն․ կմ արբանեկութիւն․ կմ աշխատանք․ կմ սպասաւորութիւն․ և կմ մշակութիւն։ ուստի․ բանիլը․ կմ բանուորութիւն։ Երեմ․25.14։ Աւգոստ։ Իսկ մերթ ստացականութիւն, որ է ղուխա լուխն։ Երբեմն և օգնականութիւն, կմ նպաստութիւն․ կմ օժանդակութիւն․ կամ ձեռնտուութիւն․ և կմ միջնորդութիւն։ Խորէն․ Ե․ գլ․76․ և Գ․ գլ․ 12․ և 50։ Աւգոստ։ Լամբրոն։ Բայց մինչ աւր՝ սատարութեան բանից, նշանակէ հաստատութիւն բանից։

Կիւրղի պարապմանց։

Սատափ․ ի․ կմ ոյ․ իւ․ ից․ իւք։ ‖ խեցեմորգարտաց, որ է ամերանիւթ բունն խեցեմորթի երեք ծովային՝ ձևացեալ իբրև զատուփ տափարակ՝ յորոյ ծոցսն գոյանան բազմութիւնք մարգարտաց։ ուստի․ սէտէֆ։ Ներքին կողմն խեցւոյս այսորիկ մարգարտանման փայլէ․ վն որոյ բազում անգամ կազմեն ՚ի նմանէ զպէսպէս մեծագին յօրինուածս, որք ուստի․ կոչին սէտէֆ-ի-էօրի։ Բայց երբեմն սատափ կոչի բոլոր խեցեմորթս այս մարգարտածին։

Սատեր․ ի․ աւ․ աց․ օք։ ‖ է դրամ ինչ, որոյ ծանրութիւն է չորս դրամ․ և եթէ իցէ արծաթեղէն, արժէ զսաթրուն և ուկ․ փողս, այսինքն մտակս, որ առնէ իբրու մի ղոլաթայ։ Ծննդ․ 20. 14։ և 23. 15։ Ելից․ 21. 32։ Մատթ. 17. 26։ Բայց արտաքոյ մծաչունչ գրոց սատեր կոչի նաև ղոլաթայն, որ է կինաւուն փող։ տե՛ս և զՍիկղ։

Սատուր․ տրոյ․ ով․ ոց․ ովք։ ‖ տե՛ս զՍակր։

Սատր․ տրոյ․ ով․ ոց․ ովք։ կմ ի․ իւ․ ից․ օք։ ‖ մշեղէն․ կմ ապրշմեղէն նրբագոյն գործուածք․ զոր բազում անգամ նկարեն ասղնեգործութ. ՚ի ծայրսն․ կմ յեզերսն։ ուստի․ [illegible]․ կմ [illegible]։

Սատրապ․ ի․ աւ․ աց․ օք։ ‖ է բառ պարսկական, որ թարգմանի նախարար․ ՚ի հին պատմագիրս։

Սատրեմ․ եցի․ եալ․ ել։ (Ներգործ․) ‖ սարով հարկանել․ կմ կարասել․ կմ ասեղնամանել զինս։ ուստի․ ղըյնօյ ընել․ կմ ղըձոյ փաշէլ։

Սատրինճ․ րինճոյ․ ով․ ոց․ ովք։ ‖ է անուն խաղու ինչ, զոր խաղան պէսպէս կարծեօք և նշխարք՝ զանազան կերպիւ շարժելով և այլայլելով զնա․ որոյ և գործիքն այսու անուամբ յորջորջին։ ուստիօր․ սադրանճ։

Սար․ ոյ․ ով․ ոց․ ովք։ կմ իւ․ ուց․ ուք։ ‖ բարձրաւանդակ տեղի․ որով նշանակին լերինք․ բլուրք․ գահք և դարք յանդուածոց ծովու և գետոց․ և կմ գլուխք այսպիսեաց բարձանց․ որոց ներհակք են կոչին սորք և ձորք։ ուստի․ լեռ․ կմ ըէրան տէփէ։ Թուոց․ 34.4։ Յես․ 15.2. և 5. և 18.19։ Յուդթ․ 3. 14։ Իւր յայսմանէ առեալ երբեմն նշանակէ զգլուխն, կմ զակառն ղօրաց, և այլոց բազմութեանց։ ուստի․ [illegible] գլուխ․ կմ [illegible]։ ՚ի հին պատմագիրս․ Դարձեալ նշանակէ սուղաւ կանգ և կարասիք, և կմ կազմածք պատերազմի․ նաւուց․ ձիոց․ և այլոց նմանեաց․ և ըստ այսմ աւր՝ դատարկ և թափուրք ՚ի սարուց պատերազմի․ կմ չնորհել ամէք զերկիւղս սարօքն հանդերձ․ ՚ի հին պատմագիրս։ Բայց յեկեղեցական պաշտամունս սարք կոչին խրախճանեալք հասուցեալ [illegible] նմանաց շարականաց․ ըստ որում են նոցա իբրև զգլուխս․ որպիսի է օրհնութիւն․ ողորմեայն․ որ երկնից․ մանկունք․ և այլն։ և ըստ այսմ է ՚ի փոխարէնն․ սարաւր

Հարց՝ զչողակաթելն սասմ իւր սարօքն. և այլն։ տե՛ս և 'ի բառարանի յատուկ անուանց։

Սարակ. ի. աւ. աց. օք։ || փոքր սար. կամ գագաթ լերանց, և բլրոց։ 'Ի հին տպագրս։

Սարակ. ի. աւ. աց. օք։ || մառան երկնար, որ է եգ. ձի։ տաճկ. խըրրան։

Սարակինոս. ի. աւ. աց. օք։ || է անուն ըն նախնեաց երջանիկին արաբիոյ, որք յառաջագոյն կոչեցեալ լինէին հագարացիք. և յետոյ անուանեցան իսմայելացիք. ըստ որում յառաջեկին յիսմայելէ որդւոյ հագարայ աղախնոյն սառայի։ Բայց անուանեցան սարակինոսք 'ի քաղաքէն սարակայ՝ կամ սարակինեայ որ յարաբիա։ Բայց ոմանք ասեն կոչիլ սարակինոս 'ի սառայէ առնելով զէն հագարու. և թէ զի սարդ, տե՛ս 'ի բառարանի յատուկ անուանց 'ի բառն Ագարացիք։ 'Ի Հար. կարդ. ժէ։

Սարասպիս. կամ սերապիս. բառաւիայ. եաւ։ || է անուն կռոց. զոր պաշտէին եգիպտացիք բազում զոհիւք և պատարագօք։ Սա էր եզն ինչ նշանաւոր, զոր համարէին որդի աստուածոյ յարուցեալ 'ի մեռելոց 'ի կերպարանս եզին։ Խորեն. Բ. գլ. 62։

Սարաս. ի. իւ. ից. իւք։ || կերպ. կամ ձև. կամ օրինակ. կամ նմանութիւն։ ռամկ. ճարդ. և ըստ այսմ առնի. խարբել պատկան սարասիւ. կամ ձգգրտել ասցին սարասօք. կամ ըստ սարասի անապատականաց. և այլն։ Նարեկ. ղէ. և ղթ. և Կոմիտաս։

Սարասանդ. ի. աւ. աց. օք։ || ծագի սա 'ի բառէս սար. որ է գլուխ. կամ գահ։ ուստի բառեւս սարասանդ նշանակէ գլխաւոր. կամ գահաւանդ. որք մեկնեցան 'ի տեղիս իւրեանց։

Սարասանդակ. ի. աւ. աց. օք։ || երևելի յանուանէս՝ սար. այն և բարձրաւանդակն 'ի բառէս բարձր. և նշանակէ զայն՝ զոր ինչ սարասանդն։ Աճգտ.

Սարդ. ի. իւ. եց. իւք։ || է զեռուն ինչ բազմոտանի, որ նիւթեալ 'ի թանձրամած նիւթոյ որովայնին զթելս նուրբս անկանէ զոստայնս զատուատարօք, և զոր մանս իբրև զուռկան. կամ ոստ զբաղլարակ ցանց առ 'ի որսալ զճանճս. և զայլ ճճիս։ ռամկ. ծամառակ. կամ ծամբոջ։ Յոբ. 8. 14։ Սաղմ. 38. 12։ Առակ. 30. 28։ Եսայ. 59. 5։ Որոշել է սա ծառ ինչ մշտադալար, որ ունի ըղ մլայլն և գանազան արծեն նման արմանոյ լևանի, և բերէ պտուղ հանդոյն ձիթապտղոյ։ Զայս ծառ յունական բառաւ կոչեմք դաբնի. ռամկ. Դեֆնէ։ Եւ նշէնկի առլաւ ծառն եղևին՝ զոր տնկեցես 'ի տեղւոջ իւրում։ Եսայ. 41. 19։ և 60. 13։ Եզեկ. 31. 8։

Սարդենատեր. ի. աւ. աց. օք։ || 'ի սարդենեաց տերեւալ. կամ յառաջացեալ. և կամ որոյ նիւթն է սարդենի. յ 'ի դաբնեայ. և ըստ այսմ առնի՝ սարդենատեր պսակաւք։ Նարեկ. զէ։

Սարդենի. նւոյ. եաւ. եաց. եօք։ || նոյն է ընդ սարդ բառին, այն և մրտենին ընդ մուրտ բառին։ Բայց երբեմն առեալ լինի փոխանակ ոստոց սարդի. և կամ փոխանակ կազմեցելոյն 'ի փայտէ սարդից. և ըստ այսմ առնի՝ սարդենի մահակ։ ռամկ. Դեփնիի ճաղ. կամ Դեփնէէ չիւպի։

Սարդիոն. կամ սարդիոնիւն. և կամ սարդիոն. ի. աւ. աց. օք։ || է քար ինչ ազնիւ գունով կարմիր իբրև զմիս. որոյ են երկու տեսակք. մինն է անթափանցիկ՝ երևեալ իբրև զմսագոյն ազնիւ գոյլափառ. որ 'ի գործիլն գեղեցիկ փայլէ, զոր և յաճախ ագուցանեն 'ի մատանիս քանդակեալ 'ի նմա զգիր։ ռամկ. Լէլնի։ Իսկ միւսն ունի զթափանցկութիւն, և զպայծառութիւն. և է առաւել կարմրագոյն և մեծագին քան զառաջինն։ ռամիօր. կարմիր ագէգին։ Այրդ՝ ասէնս այս գոյանայ 'ի խոռոչս վիմաց. և ըստ բժշկաց օգնէ պալարաց, և վիրաց՝ որք 'ի սրոյ. խափանէ զբղխումն արեան։ Առաջադրի 'ի կողմանս բաբելոնի և ըլեգեաց. և մանաւանդ 'ի սարդոնիայ կղզին, յորմէ և անուանեցաւ իսկ սարդիոն. այն ասեն բազումք։ Ելից. 35. 9։ Առակ. 25. 11։ Յայտ. 4. 3։ և 21. 20։

Սարդիոնիւն։ || տե՛ս 'ի վեր Սարդիոն։ Տօբ. 13. 22։

Սարդիօն։ || տե՛ս Սարդիոն։ Ելից. 28. 17։ և 39. 10։ Եզեկ. 28. 13։

Սարգաւղ. գուլս. ով. ոց. ովք։ || շուանն ոլորեալ 'ի մազից այծեաց, կամ ձիոց. և նմանեաց։ ռամկ. շուաղ։

Սարեակ. րեկի. աւ. աց. օք։ || թռչուն, որ է թռչուն ինչ սրակտուց և խայտաբղետ փետուր. և ունի բնաւորապէս ձայնս քաղցրս, կամ սուրբ։ ռամկ. զմնարդ. ուսնի զմեծութի փոքրեկ մարմնոյ, ունի զունդս, զպատուոյս, զձինիս։ Նաև զգէշ։ Այրդ՝ բնակին առաւել յաճախ 'ի յանտառս. և մանաւանդ 'ի թթենաստանս. չուեն երամովին. և երբեմն այնչափ բազմութ և գրոհիւ, մինչև պատեն զերեսս երկնից իբրև զամպս. և ապականեն զշարժելն իբր և սատակել մրրկի. ունին զթշնամութի մեծ ընդ մարախս. վն որոյ 'ի բազմանալն նց, և 'ի ծածկել զերկիր, կմ զօդս, սոքա 'ի հետուստ 'ի վր յարձակելով կոտորեն զնոսա։ և 'ի խմառակիլ միոյ խմբին, այլք յառաջեն 'ի գործ նց։ ռամկ. սարէն. և տաճկ. Պըղըրճըխ։ 'Ի հին բժշկարանն։ Պարձէլ. սարեակ կոչի թռչուն ինչ սրակտուց՝ սեաւ իբրև զագռաւ. իսկ մեծութբ և կերպարանօք նման սարեկին. մարմնով երկայն և նուրբ։ Երդէ քաղցրաձայն՝ գեղգեղելով զբարբառ իւր հագագաձայնութ բնակելն մարդ։ տաճկ. Ղըրըխ Բաւսամօտ։

Սարեմ. եցի. եա. եալ։ (չէզոք.) || խիղախել, կմ խրոխտալ. կմ սպառնալ. կամ դղրդել. և կմ մահչել 'ի վր ումեք։ Մծբն. 'Ի ձեռն գողոցն ձագաց։ Եւ 'ի Նարեկ. զթ. սար առնի. իբրև կենդանի զօրեղ՝ մոլուն սատակման սարեաց. դի սպառնացեալ։

Սարեւանդ ։ || տե՛ս զՍարաւանդ ։

Սարիք . սարեաց . եօք . (անեզական .) || տառ֊ ուղնք . կմ՛ կայծակնք . և կմ՛ կայծ . ըստ այնմ Խորէն. Ա. գլ. 31. Կապել զնա սարեօք այղն ձեօք ։ և 'ի վերջ հարց. Է . առնի , որ շուն , որ կապեալ լիցի սարեօք ։

Սարկաւագ . ի . աւ . ագունք . կմ՛ ագք . աց . օք ։ || պաշտօնեայ ժամարարին , որ է վեց երորդ աստիճանաւոր 'ի կղերիկոսական կարգի . որ անմիջապէս սպասաւորէ քահանային 'ի ժամու պատարագելոյ , և հրամայէ կիսասարկաւագաց և դպրաց . և ժողովրդոց . ըստ որում է նշ սար , փ գլուխ . և կարգաւ քան զնս աւագ . ոմ֊ և սուրբգրաբանութիւն անուանեն ցուցանէ . քանզի ասացաւ սարկաւագ , 'իբր թէ սար և աւագ ։ Փիլիպ. 1. 1 ։ 1. Տիմ. 3. 8. և 12 ։

Սարկաւագակից . կցի . իւ . աց . օք . || կց֊ ցորդ , կմ՛ ընկեր 'ի սարկաւագութեան . կմ՛ որ 'ի միասին ընդ այլում կատարէ զպաշ֊ տօն սարկաւագին 'ի ժամ սբյ պատարա֊ գին ։ Լամբրօն ։

Սարկաւագանոց . ի . աւ . աց . օք ։ || տեան֊ դատուն . կմ՛ սրբատուն ։ և ասացաւ սար֊ կաւագանոց . ըստ որում անդ բազմութիւնք սարկաւագաց զգեցուցանեն զժամարարն ։ 'ի վերջ հարց. Ը ։

Սարկաւագապետ . ի . աւ . աց . օք ։ || պետ սարկաւագաց . կմ՛ գլխաւոր սարկաւագ . որում յանձնեալ լինին գերագոյն պաշ֊ տօնք եկեղեցւոյ՝ քան այլոց սարկաւա֊ գաց ։ Խորէն. Գ. գլ. 67 ։

Սարկաւագարան . ի . աւ . աց . օք ։ || տե՛ս ընդ Սարկաւագանոց ։

Սարկաւագութիւն . թեան ։ || պաշտօն սար֊ կաւագի . կամ վեցերորդ աստիճան եկե֊ ղեցական կարգի , որոյ ունողն կոչի սար֊ կաւագ ։

Սարկաւագուհի . հւոյ . եաւ . եաց . եօք ։ || կին սարկաւագի ։ Բայց երբեմն առեալ լի֊ նի փոխանակ աբբայուհւոյ . որ է կին կարգեալ աբբա 'ի վր֊ հաւատաւոր կա֊ նանց բնակելոց 'ի մենաստանի ։ 'ի վերջ հարց. Զ. և Թ ։

Սարմատ ։ || տե՛ս զՍօրամատ ։ Խորէն. յաշ֊ խարհագրութեան ։

Սարմատացի . ցւոյ . ւով . ւոց . ւովք ։ || տե՛ս զՍօրամատ ։ Խորէն. յաշխարհագրութեան ։

Սարմատիա . իոյ . աւ . ։ || է լայնատարած գաւառ ինչ , որ անջատի յերկուս , որոց մինն է յեւրոպիոյ բաժանեալ 'ի միւսմէն տանաւխս գետով . և այժմ կոչի պոլոնիա֊ այն լինելէ՝ լեհաստան ։ Իսկ միւսն է յա֊ սիոյ առ կասպից ծովուն , որ այժմ ան֊ ուանի թաթարստան , ուր բնակին մըկ֊ ուէլ և չէրքէզ թաթարքն , և այլ ազգք թաթարաց ։ Խորէն. յաշխարհագրութեան ։

Սարոյ . ի . իւ .ից . իւք ։ || է ծառ ինչ դա֊ ղին փայտիւ , այլով անուամբ կոչեցեալ Թեղօշ ։ Եսայ. 41. 19 ։ Եզեկ. 31. 8 ։ Զաքար. 11. 2 ։ Բարձեալ սարոյ կոչի և ծառն գի , զոր տեսցես 'ի տեղւոջ իւրում ։ 2. Մնաց. 2. 8 ։ Եսայ. 44. 14 ։

Սարսափ . ոյ . իւ . եց . իւք ։ || սարսափեալ . փ սաստկեալ , կմ՛ դողացեալ ։ Իսկ մերթ սարսափումն , կմ՛ դողումն . և ըստ այսմ առնի յաւելեալ 'ի սարսափ անօրինաց . կմ՛ դո֊ ղացեալ անհնարին սարսափիւք ։

Սարսափելի . լւոյ . եաւ . եաց . եօք ։ || սոս֊ կալի . կմ՛ սարսելի . և կմ՛ զարհուրելի ։ Նարեկ. Ծա ։

Սարսափեցուցանեմ . ցուցի . ցո . անել ։ (ան ցողք.) || սաստկեցուցանել . կմ՛ սարսեցու֊ ցանել . կմ՛ դողացուցանել . և կմ՛ սոսկա֊ ցուցանել ։ ռամկ. դողացնել ։

Սարսափիմ . եցայ . եաց . իլ ։ (ձայնակր.) || սաստկիլ . կմ՛ սարսիլ . կմ՛ դողալ . կամ սարսել . և կմ՛ սոսկալ . և ըստ այսմ ա֊ սի . սարսափիմ տանել . կմ՛ սարսափիլ 'ի ցր֊ տոյ . և այլն ։ 'ի վերջ հարց. ԻԷ ։

Սարսափիւն ։ (Նախագրիւ հոլովի ։) || տե՛ս 'ի ներքոյ զՍարսափումն ։

Սարսափումն . փման . ման . մանց . մամբք . || սաստկութիւն . կմ՛ սարսումն . կամ դո֊ ղումն . կմ՛ սարսուռ . և կմ՛ սոսկումն ։ Խորէն. Գ. գլ. 24 ։

Սարսեմ . եցի . եա . ել ։ (չեզոք.) || տե՛ս ընդ Սարսիմ . Սաղմ. 75. 9 ։

Սարսեցուցանեմ . ցուցի . ցո . անել ։ (անցո֊ ղակ.) || տե՛ս զՍարսափեցուցանել ։

Սարսիմ . եցայ . եաց . կմ՛ եա . իլ ։ (ձայնակր.) || սաստկիլ . կմ՛ սարսափիլ . կմ՛ դողալ . կմ՛ սոսկալ . և կմ՛ դողմամբ զարհուրել . և ըստ այսմ առնի՝ սարսել երկիր , կմ՛ մար֊ դոյ . և այլն ։ Իմաստ. 8. 15 ։ Յովէ. 2. 19 ։

Սարսուռ . կմ՛ սարսուռ . սռոյ . ով . ոց . կմ՛ ից . ովք ։ || է տեսակ սարսռալ բայից . և նշանակէ սարսռումն . փ անհնարին դո֊ ղումն . կմ՛ սարսափումն մարմնոյ՝ պատ֊ ճառեցեալ 'ի սաստիկ ցրտոյ տենդին . կմ՛ սառնամանեաց ձմերան , և կմ՛ 'ի ջերմ հուրանաց ։ ռամկ. դողի դող ։ 2. Օրին. 28. 22 ։ Նարեկ. Փ ։ և 'ի Մծբն. ժէ. առն Եւ կայր զնա սաստիկ սառնամանիք ։

Սարսռամ . ացայ . ա . սարսռացեալ . ալ ։ (Է֊ միջ.) || սաստիկ սարսափիլ . կմ՛ դղրդա֊ նի հարկանիլ . և կմ՛ պաղել 'ի սաստկութէ սառնամանեաց , կմ՛ տենդին , և կմ՛ եր֊ կիւղի ։ ռամկ. դողի դող տալ ։ 1. Եզր. 9. 6 ։

Սարսռելի . լւոյ . եաւ . եաց . եօք ։ || սարսա֊ փելի . կմ՛ սոսկալի . և կմ՛ զարհուրելի ։

Սարսռեցուցանեմ . կմ՛ սարսռացուցանեմ . ցուցի . եցո . անել ։ (անցողակ.) || սաս֊ տիկ սարսափեցուցանել . կմ՛ դողացուցա֊ նել զոք սառնամանեաց , կմ՛ տեն֊ դին . և կամ երկիւղիւ և զարհուրանօք ։ ռամկ. դողի դող տալ ։

Սարսռիմ . կամ սարսռիմ . եցայ . եաց . իլ ։ (ձայնակր.) || տե՛ս զՍարսռալ ։ 'ի վերջ հարց. ԺԹ ։

Սարտնում . սարտեայ . տիր . տուցեալ . նուլ ։ (ընդմիջ.) || խեթիւ , կմ՛ աւելու թիւն , կմ՛ երկիւղիւ , և կմ՛ չարութեան յանձ

քէ թափել, կամ մեկնել, կամ որոշել. և կամ 'ի բաց հրաժարել՝ հատանելով զհամ հաղորդութե՛ն ։ ռամկ. ջէփ փաղըծել. կամ ղոփածել ։ և ըստ այսմ առի. սարանուլ կնոջ յառնէն. ծառայն 'ի տնէն. մարդոյ 'ի չար շաւղաց, կամ 'ի հրամանաց. և այլն ։ Դիտ. 19. 2։ Նոբէլ. խը. և կդ։ Մծբն. ժը։ Եւ յայսմանէ առեալ մասնաւորաբար մեկնելն 'ի առնէն՝ սարանալ առի ։ ռամկ. ծծէ նփէլ ։

Սարառուցանեմ. տուցի. տու. եալ ։ (անցող.) || յիմէքէ 'ի բաց թափել, կամ 'ի բաց մեկնել. կամ որոշել. և կամ խոպան բաժանել՝ զորմէ լեռագոյն առեալ 'ի բայն սարանուլ ։ Իսկ մերթ մասնաւորապէս սարառուցանել առի՝ հատանելն զերեխայն 'ի առնէն, ըստ որում մեկնեն զնա 'ի կաթնկերութէ ։ ռամկ. ծծէ նփէլ ։ 'Ի Հայր հարց. ժգ։

Սարիֆեայ. ի. իւ. եաց. իւք ։ || ձող գաւազանաձև հարեալ յերկիր. 'ի ներքոյ որոյ առ 'ի լինիլ նմա նեցուկ. ոստ առնեն յայգիս որթեւէրայս. հաստատելով զկարս քանչիւր որթոյն. կամ զուտն յայսպիսի ձողս ։ ռամկ. սարֆինայ, կամ ասմայի փայտի ։

Սարևան. ի. աւ. աց. օք ։ || պատուստակալ անկողնոյ, ծ սպիտակ ափուց գործեալ 'ի ձեղոյ, կամ 'ի բամպակէ, զոր արկանեն զանկողնով, և ընկողմանին 'ի վր նր. ռամկ. չարշաֆ ։ 'Ի Հայր հարց. ժգ։ Իսկ մերթ նշանակէ զծածկոյթն, զոր արկանեն կանայք զգլխով, կամ զգալար մարմնով յելանելն 'ի հրապարակ, որ և կոչի կողպատ ։ ռամկ. ղնուրսի. կամ եաշմախ ։

Սաւանանաթև. ի. իւ. եաց. իւք ։ || այն, որոյ թևքն են սաւանանեալք. կամ որ զթևսն թօթափէ, կամ բազխէ առ 'ի թռչել. որպիսիք են սերովբէքն, զոր եռես եզեկիէլ մարգարէն ։ 'Ի շարականս ։ Իսկ մերթ վարի իբրև զմակբայ, և նշանակէ՝ սաւանանելով զթևս. ըստ այնմ 'ի հին պարտոճիրս. իբրև զործուէի սաւանանաթև ոլորգենալ յօգս ։

Սաւանանձայն ։ (նախդրիւ հոլովի.) || ձայն սաւանանման թևոց. կամ որ զձայնս տըրձակէ սաւանանելով զթևսն ։

Սաւանանեամ. նայցայ. ցեր. ալ ։ (ընդմիջ.) || տես զՍաւանանել ։ Նոբէլ. զզ։

Սաւանանմանն ։ (նախդրիւ հոլովի.) || համագոյն սաւանանելոյ. կամ որոյ թևքն, կամ բազմաչքն շարժին իբրև զսաւանանեալ թևս թռչնոց ։

Սաւանանեմ. եցի. եա. եալ ։ (չեզոք.) || բանալով զթևս թօթափել, կամ շարժել զնա 'ի թռչել. կամ զթևս առեալ բազխել զկողիւք, կամ ընդ միմեանս առ 'ի թռանել, որ և ասի թևածել, կամ թևահարել, ոմ առնեն ձագք հաւուց 'ի ջանալն թռչիլ թերակատար թևօքն. և կամ աքաղաղք 'ի ըմպանելն խօսել. ըստ այսմ իմա և զայլոց հաւուց, կամ թռչնոց ։ Եզեկ. 1. 23. և 24։ Նոբէլ. զա։

Սաւանանութի. նման. մամբ. մանց. մամբք ։ || սաւանանելն, որ է թօթափումն. կամ բազխումն թևոց 'ի թռչիլ. կամ թևածութի. և կամ թևահարութի ։ Նոբէլ. զզ։

Սափիրայ. ի. իւ. եաց. իւք ։ || է բառ այլազգական, և նշանակէ զակն ինչ պատուական, որ 'ի մեզ յատկապէս կոչի շափիւղայ ։

Սափիրական. ի. աւ. աց. օք ։ || շափիւղական. կամ շափիւղանման. և կամ զարդարեալ շափիւղայ ակամբ ։

Սափոր. ոյ. ով. ոց. ովք ։ || կուժ. կամ թակոյկ, որ է խեցեղէն անօթ ինչ երկայնաձիգ՝ կազմեալ երկուքումբք կամ միով ունկամբ՝ անձուկ բերանով, և մեծ փորով. վն որոյ և ասացաւ սափոր, իբր թէ սա է փոր ։ ռամկ. փէսփի ։ Ծննդ. 24. 14։ Դատ. 7. 16։ Մարկ. 14. 13։ Սոյնպէս սափոր կոչեցաւ ոսկեղէն անօթն մանանային, ըստ որում էր շինեալ 'ի ձև սափորոյ ջուրց ։ Ելից. 16. 33։ Եբր. 9. 4։ Դոյնձ՝ է սա չափ ինչ հեղանութ իրաց, որ առնու զմօտ մի, կամ իբրու քսան և ինն հօխայ ։ 3. Թագ. 5. 11։ և 7. 38։ Եսայ. 5. 10։ Եւ եւս նշանակէ առաւել չափ ինչ հեղոյ, և այլոց նմանեաց՝ որ առնու զերեք հօխայ. կամ փոքր ինչ պակաս, որ առնէ աստ քսան. վն զի մի քը սեստն է հարիւր քսան դրամ ։ Եզեկ. 45. 14։

Սափրեմ. եցի. եա. եալ ։ (ներգործ.) || վարսավիրել. կամ փոքրել զհերս ։ ռամկ. ածիլել. կամ Ճրաշ ընել ։ Լամբրոն ։

Սափրիչ. փրչի. աւ. աց. օք ։ || սափրող. կամ վարսավիրող ։ ռամկ. ածիլող. կամ դէլլագ ։

Սափրողական. ի. աւ. աց. օք ։ || այն ածելի, որ վերաբերի առ սափրողն. կամ առ սափրումն ։ Բայց մասնաւորապէս սափրողական կոչի արհեստն սափրելոյ զհերս ։ ռամկ. դէլլագլըգ ։

Սափրող ։ || տես զՍափրիչ ։

ՍԳ

Սգալի. սգալւոյ. եաւ. եաց. եօք ։ || Լի սգով, կամ ողբալի, և կամ տրտմալի ։

Սգամ. ացայ. սգա. կամ ացիր. ալ ։ (չեզոք և մերթ ներգործ.) || սուգ առնուլ. այսինքն ցաւով և տրտմութե՛ զգածիլ, կամ ողբալ 'ի վր մահու, կամ կորստեան իրիք, և կամ յաղագս մեծի ինչ վտանգի, ցուցանելով զթախծութի 'ի դիմս, 'ի զգեստս, 'ի կերակուրս, և յայլ գործս ։ ռամկ. սուգ ծպնել ։ Յոբ. 14. 22։ Սաղմ. 77. 63։ 1. Կոր. 5. 2։

Սգայուն. սգայնոյ. ով. ոց. ովք ։ || սգաւոր, կամ սգացող ։

Սգայունական. ի. աւ. աց. օք ։ || սգաւորական. կամ սգացողական. կամ աշխարողական. և կամ տրտմական. և ըստ այսմ առի՝ սգայունական վարք ։ 'Ի Հայր հարց. իզ ։

Սգաստական. ի. աւ. աց. օք ։ || այն ամ, որ է երևեցուցիչ սգոյ, և տրտմութե. կամ սգաւորական, կամ աշխարողական. և ըստ այսմ առի՝ զգենուլ, կամ փոփոխել զզգաստական հանդերձս ։ Լամբրոն ։

Սգացողական ։ || տես զՍգայունական ։

Սգաւոր. ի. աւ. աց. օք: ‖ սուգ ունօղ. կմ ողբացօղ: Եսայ. 61. 3: Մատ. 5. 4: Իսկ մերթ առեալ լինի փոխանակ բառիս՝ սգա ւորական. կմ սգացողական. ըստ այնմ Խորէն. գ. գլ. 68. բարբառել բան տխրա կան, և սգաւոր: Այսպէս է և Եւսեբ. 33. 4. ուր ասի. Եւ լուեալ ժողովրդեանն զբանն զայն չար, սուգ առին սգաւորօք, յմ սգաւորական հանդերձիւք. և այլովք նշանօք սգոյ:

Սգաւորական: ‖ տես զՍգայունական:

Սգուն. սգման. մամբ. անց. ամբք: ‖ սգա ցուցումն. կմ սուգ. ի այնմ Յովբ. 16. 21. Լաց ցեն նոքա 'ի սգման մինչև յաւիտեան:

ՍԵ

Սեամք. սեմոց. ովք. կմ օք: (վարի խարև անեգ.) ‖ քարեղէն, կմ փայտեղէն շրջանակ մուտից դրանց, որով մերթ նշանա կի ստորին դրանդն, զոր կոխելով երթևե մուտս առնեմք ընդ դուռն: ռամկ. վարե շէմ. 1. Թագ. 5. 4. և 5: Եզեկ. 46. 2: Իսկ մերթ նշանակին երկուքին դրանդիքն կանգնեալք 'ի մուտս դրան աստի և անտի, որք ունին յինքեանս զծղխնիսն: ռամկ. դրանդիքն էն: և տաճկ. օճայ: Ելից. 12. 7. և 22. և 23: Եզեկ. 43. 8:

Սեաւ. սևոյ. ով. ոց. ովք: ‖ Թուխ, մթին, որ ունի զխաւարային գոյն, որպիսի է ածուխն. կմ ագռաւն, որում հակադրի սպիտակն: ռամկ. սև: Երգ. 1. 4: և 5. 11: Զաք. 6. 2:

Սեաւմաղձուտ. ի. իւ.ից. իւք: կմ տւ. տց. օք: ‖ Նա, որոյ սևամաղձն առաւել է քան զայլ հիւթսն. կմ որոյ խառնուածն է սևամաղձային. վն որոյ այսպիսիքս լինին ըստ մեծի մասին տրտումք. դաժանք, և սիրօղք առանձնութեան: ռամկ. խորչող սևսրտոտ:

Սեբաստացի. ցւոյ. ւով. ւոց. ւովք: ‖ 'ի սեբաստիայ ծնեալ և սնեալ. կմ բնակիչ սեբաստիոյ: ռամկ. սեվասցի:

Սեբաստեան. տենի. իւ: ‖ սեբաստական, կմ յառաջացեալ 'ի սեբաստիոյ, և ըստ այսմ ասի՝ սեբաստեան ծնունդ. սեբաս տեան ժողովուրդ. և այլն: Իսկ մերթ նը շանակէ զսեբաստացին: Եւ զայսմանէ տես և 'ի բառարանի յատուկ անուանց:

Սեբաստիա. տիոյ. կմ այ. եաւ: ‖ է վաղե մի և հռչակաւոր քաղաք ինչ ասիոյ 'ի փոքր հայաստան՝ առ ալիս գետով, որ ռամկօր. սվազ անուանի:

Սեգ: ‖ տես զՍէգ:

Սեթևեթ. ի. իւ.ից. իւք: ‖ յօրինել. կմ պաճուճել. և կմ զարդարել: Իսկ մերթ յօրինուած. կամ պաճոյճ, և կմ զարդ. և ըստ այսմ մանաւանդ սովոր յոգնականն վարի:

Սեթևեթեմ. եցի. եա. ել: (ներգործ.) ‖ յօրինել. կմ յարդարել. կմ պաճուճել. և կմ զարդարել. և ըստ այսմ ասի, սե թևեթել զբանս, կամ զձևս, և այլն:

Ողբ. 'ի Նախերգ. և 'ի հին տպագրին: Եւ յայսմանէ առեալ՝ սեթևեթիլ ասի զար դարիլն զինուք, կմ սպառազինիլն, և ըստ այսմ ասի 'ի հին տպագրին զզօրաց. Այր ընդդէմ սրածառեալ, սեթևեթեալ երիթային:

Սեթևեմ: ‖ նոյն է ընդ վերնոյն: Ողբ. 1. հատ. ա:

Սելաւ. սելայի. իւ. ից. իւք: ‖ է բառ յու նական, որ թարգմանի փայլակն. կամ ճաճանչ. և կմ լոյս: Բայց յատկապէս առեալ նշանակի տոլաւ աղգ ինչ օդային երևմանց, որ է յոլովութի հրոյ վառեալ յօդս. որոյ երկու են տեսակք. մինն յան կարծակի ստոուցեալ երագընթաց յար ձակմամբ երկայնի յօդս, և ունայնանայ, որ և ասի՝ աստղ. իսկ միւսն վառեալ միայ յօդս ընդ երկար, և մինչ 'ի սմանէ ըստ միոյ կողման ծայրք արձակին՝ կոչի աստղ գիսաւոր: 'Ի Բուղին տրեխօտհէր, որ ղուշխուրհէ:

Սեխ. կմ սեղխ. ի. իւ. ից. իւք: կամ ոյ. ով. ովք: ‖ պտուղ ինչ նման ձմերուկ. դդմոյ. որ ունի զգոյն դեղին, զմարմին մեղրա համ, և զկորիզ փառաձև, յորոց և սմանք լինին գնտակաձև և շերտաւորք: որ և ռամկ. ասի՝ ղաւուն: և տաճկերէն ղաւուն: Թուոց. 11. 5:

Սեխենի. կմ սեղխենի. նւոյ. ւով. եաց. եօք: ‖ բոյս սեխից, որ ունի զտերև մեծ, և զճիւղ երկայնաձիգ՝ տարածեալ հան գոյն դդմենւոյ: Իսկ երբեմն նշանակի սե խենատանին, զոր տնկեցեն զկնի: Թուոց. 20. 5: Եսայ. 1. 8:

Սեխենստանի. կմ սեղխենստանի. նւոյ. եաւ. եաց. եօք: ‖ ընդարձակ վայր պարտի զայ. և այլոց տնկեաց, լցեալ բազմու թբ սեխենեաց: ռամկ. ղաւունլուխ: Կինոք ղի Եղէմ. ժգ:

Սեկ. ի. իւ. ից. իւք: ‖ մաշկ այծեաց գոր ծեալ, և թ արուեստի յօրինեալ. յորմէ կաղմեն զերեսս մուճակի. և յայլ պէտս 'ի գործ ածեն: ռամկ. եւ սէկ: և տաճկեր. սախտեան, կմ սախտիեան:

Սեկափերթ. ի. իւ. ից. իւք: ‖ մերթ սե կի, որ է թերթն մաշկաց այծեաց:

Սեղան. ոյ. ով. ոց. ովք: ‖ Ճաշարան. գծ. արձակ կազմած՝ ընդունօղ կերակրոյ, առ որով բազմիմք 'ի ճաշել. կմ յընթրել. որ և ռամկ. ասի՝ սէղան: և տաճկեր. սոֆրայ: Դատաւ. 1. 7: 2. Թագ. 9. 7: Մատթ. 15. 27: Իսկ մերթ առեալ լինի փոխանակ կերա կրոյ եդելոյ 'ի սեղանի: Սաղմ. 77. 19: Եսայ. 21. 5: Դարձեալ նշանակի զոհարանն. յմ բեմն, ուր զոհ մատուցանի: Ծննդ. 8. 20: Ելից. 27. 1: Եւ յայսմանէ առեալ՝ սեղան կոչի նաև Սբ բեմն, ուր մատչի պատա րագ մարմնոյ, և արեան Տն: Երբեմն և սեղան անուանին կերտուածք շինեցեալք խարև զգահաւորակ. կմ ոտք զբեմբ. յո րոց վր եդեալ լինին խաչնկք. կմ նուէրք. որպիսի էր ստանաւոր սեղանն տաճարին.

զետեղեալ զինի վարագուրին։ Ելից. 25. 23. և 30։ Եւ կմ՝ սփռեալ լինին ՚ի վերայ նորա գրանք, կմ՝ ինչք եդեալք ՚ի վաճառ. և կմ՝ յորոց վերայ գրեն զգիր։ ռամկ. ֆեշփոխ փայ։ Մատ. 21. 12։ Մրկ. 11. 15։

Սեղանազերծ. ի. իւ. ից. իւք։ || սեղանակալութեան. կմ՝ սեղանակողոպուտ. վասն զի ծագի ՚ի զերծանել բայէն, որ երբեմն նշանակէ մերկել. կմ՝ կողոպտել։ 2. Մակ. 4. 42։

Սեղանակալութիւն. թեան. թեամբ։ || կողոպուտ մը սեղանոյ. կմ՝ սրբազան տեղւոյ. որով նշանակի նա՝ որ յանդգնեալ կողոպտէ, կամ գողանայ ՚ի տաճարէ, և յայլ նուիրեալ տեղւոջէ զինչ, կմ՝ զանօթս իրս. որպէս զսպասս եկեղեցւոյ, կամ զզարդս. կմ՝ զկերպարանս. կմ՝ զպատկերս. և այլն։ Եւ յայսմանէ առեալ՝ սեղանակալութեան կոչի նա, որ տալականէ, կմ՝ բռնաբարէ զնուէր րեալս. որպէս որ չարութեամբ քանդէ զտաճարս. բառնայ զսրբութիւն եկեղեցւոյ, զրկէ. հարկանէ, կմ՝ սպանանէ զեկեղեցականս, և զկրօնաւորս. կմ՝ պղծէ զնուէր րեալս կրօնաւորական ուխտիւ, և այլն։ Լամբրօն։ և ՚ի Գիրս հոգւոյ. ձառն. 5. գլ. 29։ Նորա՝ զդատս զայս յոյնք կոչեն. յեռօսի լօս. որ սպռւղաբանի սրբազան իրաց կողոպտիչ։ Իսկ լատինք անուանեն՝ սաքրի լէկուս. որ սպռւղաբանի կորզիչ, կմ՝ գողացող սրբազան իրաց. զոր ոմանք ՚ի նորոցս թարգմանեցին սրբապիղծ։

Սեղանակալութիւն. թեան։ || կողոպտումն, կմ՝ գողութիւն մը իրաց ՚ի նուիրեալ տեղւոջէ, որպէս ՚ի տաճարէ, կմ՝ յեկեղեցւոյ. ՚ի մը գանձանակէ. և այլն։ Եւ յայսմանէ առեալ երբեմն սեղանակալութիւն կոչի ոև լցէ ապականութիւն. բռնաբարութիւն. ևլն. կմ՝ զրկումն մը եկեղեցւոյ. կմ՝ սրբազան իրաց. և կմ՝ նուիրեալ անձանց. զոր ոմանք ՚ի նորոցս կոչեն սրբապղծութիւն։

Սեղանակից. կցի. աւ. կմ՝ իւ. աց. օք։ || կըցորդ, կմ՝ ընկեր սեղանոյ. ռամկ. Ճէհ ուեղանէ ագտօղ. կմ՝ ղուծմուգայ։

Սեղանակողոպուտ. պտի. իւ. ից. իւք։ || նոյն է ընդ սեղանակալութեան բառին. ըստ այնմ Յովհ. 2. հափ. իւ. որն զմատուցելոյն ասել լուեալ զսեղանակողոպտին և զգողոյն։

Սեղանանենգ։ (Նախդրիւ հոլովի.) || սեղանազերծ. կամ սեղանակալութեան։ Նար. բէհ. խն։

Սեղանապետ. ի. աւ. աց. օք։ կմ՝ իւ. ից։ || պետ. կմ՝ վերակացու սեղանոյ. և կամ մատակարար։

Սեղանատուն. տան. տամբ. տանց. տամբք։ || տուն, կմ՝ տեղի՝ ուր սեղան կազմեալ ուտեն զհաց։

Սեղանաւոր. ի. աւ. աց. օք։ || ամիօղ առաջի իւր զսեղան. կմ՝ որ սեղանով է կազմեալ և յօրինեալ. որպիսի են ոմանք ՚ի տեղեաց։ ռամկ. թաշլը օճաղ ուտօղ. կմ՝ օճաղով շինած։ Բայց մանաւորապէս ասեալ նշանակէ սոխաւ լումայափոխն. կմ՝ հատավաճառն. ըստ որում դնէ առաջի

իւր զսեղան, յո զգէնչիթպեան. և ՚ի վերայ նորա փոխանակէ զմանր դրամս ընդ մեծաց. կմ՝ զմեծս ընդ մանրունց. և կմ՝ զայս ազգ դրամոյ ընդ այն ինչ ազգակի. որ և բազում անգամ առնու յաւելուածս զդրամս տոկոսօք. և այս խնդրուղաց առաւելեալ վաշխիւք. վն որոյ և կոչի վաշխառու։ ռամկ. սառաֆ. կմ՝ ձառլըճըճը։ Մատ. 25. 27։ Ղուկ. 19. 23։ Եւ յայսմանէ առեալ սեղանաւոր կոչին նոքա, որք ընկալեալ ՚ի վարդապետաց զբանն այդ՝ յարգեն, և արծարծեն զնա ՚ի գործ դնելով։ Լամբրօն։ ըստ այսմ է և ՚ի շարականոցն. ուր ասի. որ զհաւատառացեալ արծաթ բանին ՚ի քէն՝ արկ ՚ի սեղանաւորս յոգիս մարդկան։

Սեղանաւորեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) || զկերակուրս ՚ի սեղան արկանել, կմ՝ յօրինեալ դնել առաջի. կմ՝ մատակարարել. և կմ՝ տնտեսել. և ըստ այսմ ասի՝ սեղանաւորել զկերակուրս. որ և երբեմն ասի զմեծային բանից, և զնմանեաց, որք կերակուր նմանեցուցանին։ Լամբրօն։ և ՚ի հին պատմագիրս։

Սեղեխ. ի. աւ. աց. օք։ կմ՝ ով. ից. իւք։ || տարփածու, կմ՝ տռփոտ. յն նա՝ որ հարեալ ՚ի սէր կնոջ կմ՝ առն ուրուք՝ միաբանի ընդ նմա գարշաբար խառնակիլ ըստ պարապոյ ժամի. որ և կոչի հոմանի։ Եզեկ. 16. 33. և 34։ Խորէն. բ. պր. 60։ և դ. պր. 55։

Սեղեխաբար։ (մակբայ որակակ.) || իբրև զսեղեխ. կամ նման սեղեխի։ Խորէն. գ. պր. 68։

Սեղխ։ || նոյն է ընդ բառին՝ սեխ. որ է ղաւուն։ Մծբն. ժմն. վն զի բազում անգամ տառս՝ ղ. մուծանի և բառնի ՚ի բառս. յոր ժամ դնի նախքան զխէ. որպ յայտ է ՚ի սացանէ՝ աղխ, և ախ. ուղխ, և ուխ. ծղխնի, և ծխնի. դխմաբաղխ, և դխմաբախ. և այլն։

Սեղխենի։ || տես զՍեխենի։

Սեղխենոց. ի. աւ. աց. օք։ || տես զՍեխեստանի։ Բարսղ. 6. 69։

Սեղխեստանի։ || տես զՍեխեստանի։

Սեղմ։ (Նախդրիւ հոլովի. և մերթ վարի իբրև ածական.) || ճնշեալ. կմ՝ ամփոփ. կմ՝ խիտ, և անցրիւ մասամբք։ և այսպէս զերկրէ, և զմարմնոյ, և զնմանեաց։ ռամկօրէն ըխըմտժ. կմ՝ ըխըւ. ՚ի Գիրս մեծին խորհրդոյ։

Սեղմեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) || ճնշել. կմ՝ ամփոփել. և կմ՝ խիտ առնել։ ռամկ. ըխըմել. և կմ՝ ըխըւ ընել։ Իսկ մերթ՝ պնդել. կմ՝ ամրացուցանել. կմ՝ հաստատել. և ըստ այսմ ասի՝ սեղմել զդրանդեան փեղկս։ 1. Մակ. 5։ 47։

Սենեակ. նեկի. աւ. աց. օք։ || խուց. կամ խուղ շինեալ ՚ի տան, կմ՝ յայլ բնակութիւնս. ուր հասարակօրէն անկողինս արկանեն, և ննջեն, և հագուստ զպէտս անձին։ ռամկօրէն օտայ։ Ծննդ. 43. 30։ Ելից. 8. 3։ Մատ. 6. 6։

Սենեկապան. ի. աւ. աց. օք։ || պահապան կմ՝ սպասաւոր սենեկի մեծայարգոյ ան-

ձանց.

ձանց. և կամ սեննեկապետ: 1. Եզր. 3. 4:

Սեննեկապետ. ի. աւ. կամ իմ. աց. օք: || պետ. կամ վերակացու սենեկի արքայի. կամ պալատ մեծամեծաց. և կամ սենեկապան: Յուդիթ. 14. 8: Գործ. 12. 20: Խորէն. գ. գլ. 22:

Սեպ. պյ. ով. սեպք. կամ սեպեր. սեպոց. ովք: կամ իմ. ից. իւք: || սար բարձր՝ ապառաժուտ՝ և որոգայթն. կամ հաստատուն ապառաժ. կամ ժայռք վիմաց՝ բրգաձև յերկրէ բարձրացեալք. որ գտանի 'ի պատառուածս լերանց և ծործորաց. յորս անհնարին է մարդոյ ելանել: տաճկերէն եար. ըստ այնմ Խորէն. գ. գլ. 45. Եւ առաջի դրաց այրին սեպեր ուղորդ. Սոյնպէս և 'ի թարգմանութիւնն Լամբրոն. ասի. Թէ ոչ էր ծործոր քարանձաւացն պատառեալ, և սեպս հատեալ: Եւ գլխի ասի՝ Զերանց պատառուածի ծործորն, և զսեպոցն ամրութիւն եա Թռչնոցն տեղի պատսպարման: Եւ յայսմանէ առեալ երբեմն նշանակէ՝ զփոքրիկ գործի ինչ փայտեղէն, կամ երկաթեայ, սուր ծայրիւ, և լայն գլխով, զոր մխեն ուրեք իբրև ցցից, կամ հարկանեն ընդ ճեղքուածս փայտից առ 'ի հերձանել զնա. և այլն. ռամկ. չիւի:

Սեպանամ. ացայ. ացիր. ալ: (ընդ միջ.) || սեպ լինել. կամ բրգաձև որանալ: ռամկ. սիւրի օլմագ: Եւ մերթ՝ սեպով պնդել. կամ ամրանալ: ռամկ. չիւիով ամրցնել: Իսկ մերթ նմանութեամբ առեալ նշանակէ՝ յոյժ վերանալ. կամ բարձրանալ. կամ վսեմանալ. և կամ յաղագս բարձրութեան անմատոյց լինել. և ըստ այսմ ասի՝ Աստուածային գործութիւն է բարձրացեալ՝ սեպացեալ՝ անհասանելի բնութեան պարագծոց:

Սեպեմ. եցի. եա. եալ: (ներգործ.) || սեպով պնդել. կամ սեպմել. և կամ ամրացուցանել: ռամկ. չիւիով ամրցնել:

Սեպհական. ի. աւ. աց. օք: || ծագի 'ի բառեն՝ սեպուհ. զի առ սեպհական, որ թէ՝ սեպուհեկին. ուստի նշենկի առլաւ վսեմին. կամ վեհական. կամ գերապանծ. կամ ընտիր. և կամ իբրև զսպասաւորական ինչ անձին սատացեալ. կամ զրաւեալ և յատկացուցեալ. ըստ այնմ 'ի Շարականոջ. Զխորհուրդ սեպուհոյ սեպհական փառաց՝ մարդարէին ծանուցեալ: ըստ այսմ է և Եսայ. 19. 5: 2. Օրէն. 7. 6: Տիտ. 2. 14: Եւ յայսմանէ առեալ երբեմն նշանակէ մասնաւոր, կամ յատուկ. կամ առանձնական. կամ իւրական. և կամ ինքեան բուն: Ծննդ. 48. 2. 2: 1. Մակ. 13. 53: Նարեկ. ձէ: Բայց երբեմն գրի սա սեփհական. որ և կարապետ՝ կարգի: Խորէն. ա. գլ. 4: և գ. գլ. 20: Յորմէ և երբեմն 'ի բաց եղեալ զտառն՝ հ. գրեմք սեփական. ըստ այնմ Աճառ. Զձեր սեփական պալհատն 'ի ձեզ դարձուցից:

Սեպհականեմ. եցի. եա. եալ: (ներգործ.) || սեպհական առնել. զի յատկացուցանել. կամ իւրացուցանել. կամ յինքն ձգել. և կամ գրաւել: Նարեկ. ձէ: Սոփեր. 1. հատ. խա:

Սեպհականութիւն. կամ սեփհականութիւն. թեան:

|| սեպհականումն. զի յատկացուցումն. կամ իւրացուցումն: Իսկ մերթ առեալ լինի փոխանակ սեպհականէն իւրաց. կամ սեպհական ստացուածոց: 'Ի Գիրս Գրեգորի Տղայն:

Սեպհականումն. նման. ման. մանց. մամբք:

|| նոյն է ընդ վերնոյն:

Սեպուհ. սեպուհոյ. ով. ոց. կամ եաց. ովք: և կամ աւ. աց. օք: || վսեմ. կամ գերամբարձ. կամ գերազանց. և կամ վեհ. ըստ այնմ. Նարեկ. զէ. Զկրկնակ նախապարութեան սեպուհն աղաւաղ: Իսկ մերթ գոյականաբար առեալ նշանակէ զազնիւս ազգաւ, և տոհմիւ. կամ զազատս. կամ զպատրիկս: ռամկօր. պէյզատէ: Նարեկ. գ: Պարձեալ է անուամբ լերին միոյ հայաստանեայց, որ 'ի դիւցազին դարանակալեաց. ուր էր այրն մանկեալ. յորում ճգնէր ոք հայրն մեր գրիգորիոս հրաշալի ճգնութեամբ. ուր և վախճանեալ ամփոփեցաւ 'ի հողմնոց. որ պատմէ Խորէն. բ. գլ. 88:

Սեռ. ի. իւ. ից. իւք: || ազգ. կամ ցեղ. կամ զարմ. և են այսմ ասի. սեռ մարդկային. սեռ հայոց. կամ յոյնաց, և 'ի սեռէ դաւթի: ռամկ. աւգ. կամ ոյնուլէ: Յայտ. 22. 16: Յն որտի: և Լամբրոն: Իսկ մերթ նշանակէ զանասունս իւրաց. ռամկ. նոյ. կամ պօյմը: Նարեկ. ղթ: Յն որտի: և Լամբրոն: Իսկ երբեմն առեալ լինի փոխանակ որակութեան. կամ բնութեան. և կամ բնածին խառնուածոյ. ըստ այնմ 'ի Հայր հարց. ժզ. Իր բարեյօդ մարմնով, և առողջ, և ցամաք սեռիւ: Մերթ և նշանակէ սովորական սեռին արուին, և իգին. և ըստ այսմ անուանի ինչ 'ի քերականաց ասի ըստ սեռին արական, յոր ժամ զարուն նշանակէ. որպէս հայր. այր. արջառ: Իսկ իգական, մինչ զիգն ցուցանէ. որգոն մայր. կին. երինջ: Եւ յայսմանէ առեալ դնին սեռք նաև 'ի բայս. վն զի բայ ինչ յորժամ զներգործելն ցուցանէ, ասի ըստ սեռին ներգործական. Բայց յորժամ զկրելն յայտնէ, կոչի ըստ սեռին կրաւորական: Պարձեալ՝ ըստ փէլիսոփայից սեռ կոչի առաջինն 'ի հինգ ձայնիցն պորփիւրի. որ է ընդհանուր ինչ. զոր ստորոգեմք զբազմաց տեսակաւ տարբերեցելոց. և պարունակէ զիւրև զտեսակս իբրև բովոր զմասունս. որպէս կենդանին զմարդ, զառիւծ, զձի, և այլն: ծառն՝ զտանձենի, զձիթենի. և այլն:

Սեռական. ի. աւ. աց. օք: || այն ամ, որ վերաբերի առ սեռն. կամ ազգային. կամ տոհմային. կամ որ է 'ի նոյնոյ սեռէ: Յն ոռ. դի: Եւ յայսմանէ առեալ սեռական կոչի ըստ քերականաց երկրորդ հոլովն, յորում երբեմն 'ի ցուցանելն զսեռն ուրուք՝ վարիմք այսու հոլովիւ. որգոն. 'ի սեռէ դաւթի:

Սեռականագոյն. գունի. իւ. ից. իւք: || առաւել սեռական. կամ որ է գերագոյն սեռ. և կամ ընդհանրագոյն 'ի բանի սեռի. և ըստ այսմ սեռականագոյն սեռ կոչին տասն ստորոգութիւնքն արիստոտելի.

Digitized by Google

ըստ որում պարունակեն ընդ ինքեամբք զբազում ստորինագոյն սեռս. որպէս գոյացութիւնն՝ զմարմին, զբոյս, զկենդանի: 'Ի Գիրս Պիտոյից Փիլիսոփայից:

Սեռակնաձեւ: (Նախդրիւ հոլովի.) || Ծագի սա 'ի բառէս սեռն, որ է վճիռ, կմ պայծառ, և յանուանէս ակն, որ է գոհար քար. ուստի բառիւս սեռակնաձեւ, նշանակի այն ինչ, որ ունի զձեւ, կմ ըղ նմանութիւն պայծառ ական. և ը. այսմ երկինքն կոչին սեռակնաձեւ, կամ համառօտմամբ՝ սեռաձեւ. ըստ որում են պնդակալ, և պայծառ, և թափանցիկ իբրև զվճիռ անդամանդ. կմ զի ըստ կարծեաց հնոց, ծածուցեալ կան 'ի ջրոյ իբրև յակն վանի, զի իբրու [illegible]. և ը. այսմ է 'ի ճառըն [illegible], տալ ասի. Զերկինս գործականեցեր անձառապէս ջրային սեռաձեւ. զի գործեցեր 'ի ջրոյ սեռակնաձեւ: Սոյնպէս սեռակնաձեւ կոչի 'ի Տօմարին ոք խաչն, ըստ որում ունի զձեւ, և զոսկի շափիւղայ ական, որ երևեցաւ ընդ ոսկւոյ տն 'ի Բիւզանդիոն 'ի ձեւ արփւոյ, որ է քառակուսի յօրինակ քառաթեւ ոք խաչին. որպէս ասի 'ի Տօմարին. Երևեցաւ այլափառնման ակն պատուական 'ի ձեւ խաչին: Բայց ոմանք զբառս զայս համեն յանուանէս՝ սեռական, իբր թէ սեռականաձեւ, զի ընդհանրաձեւ. և խաչն կոչի այսպէս, ըստ որում ունի զձեւ ընդհանուր աշխարհի, որ է քառակուսի. կամ զի ձեւանայ 'ի դէմս ընդհանուր քրիստոնէից: Բայց առաջինն է իսկագոյն:

Սեռակոտոր. ի. իւ. ից. իւք: || կոտոր. կմ մասն սեռի. և ըստ այսմ սեռակոտոր կոչի տեսակն, ըստ որում պարունակի ընդ սեռիւ իբրև զմասն: Իսկ մերթ՝ բազմասեռ. կմ բազմապիսի. և կմ ազգիազգի. ըստ այնմ. Նոննի. ղզ. Սեռակոտոր այլայլակ գունովք 'ի պէսպէս մասանց արհեստիւ կապեալ:

Սեռաձեւ. ի. իւ. ից. իւք: || Է համառօտեալն սեռակնաձեւ բառիս, որ մեկնեցաւ 'ի վերոյ: որպէս կառաձեւն՝ կառակնաձեւ բառիս, որ նշանակէ զունօղն զձեւ կառակնի. այսինքն [illegible]. կամ [illegible] հնաանց:

Սեռարքունեան: (Նախդրիւ հոլովի.) || Ունօղ զարքունական սեռ, զի զազգ. կմ զտոհմ. կմ սերեալ յարքունական կարգէ. և կամ թագաւորացն: Շնորհալին:

Սեռն. սեռին. ամբ. անց. ամբք: || յատակ. կմ մարմնոյ. կմ ոք. կմ անկիւն. կամ պորտ. և կմ քիմք: ռամկ. ղրուփ. կմ Ըէմիղ: և ըստ այսմ ասի. սեռն տեսութ. սեռն սիրով. սեռն բնութե. սեռն, և անկերպան մտաց տեսութե. և այլն: Նոննի. ժ. և ղզ: և 'ի Յիշատակարան: և 'ի Դիոնիս. Երգոց: Իսկ մերթ՝ անխարդախ. կամ աննենգ. կմ հաւատարիմ. և ըստ այսմ ասի. սեռն առաքինութե. և այլն: Նոննի. ղգ: Դարձեալ, նշնկի ամաւ [illegible] փայտն, յորոյ ծայրին անցուցեալ կան անիւք կառաց. և սայլից. որ յատկապէս կոչի՝ լծասեռն. ռամկօրէն սոյնի ոէս: Սերտ. 33. 5:

Սեռնտեքաւ. կմ սեռնապէս: (մակբայ որակական.) || յատակաբար, կմ մաքրապէս. կմ առանց խառնակութե. և կմ պարզութե: 'Ի Գիրս Պիտոյից Փիլիսոփայից:

Սեռոյր: || զի սեռի: տես զբառն առոցելոյր:

Սեր. ի. իւ. ից. իւք: || սեռ. կմ ազգ. և կամ տոհմականութիւն մարդոյ. կմ կենդանեաց, բուսոց, պտղոց. և այլն: Նոննի. ղթ: Իսկ մերթ միանուանապէս առեալ, նշանակէ զցեղն արական և իգական, կամ զսաղբերումն արուէին և իգլին: և ըստ այսմ իմանի՝ մինչ ասի. մանուկս ունի՝ յայտնէ զսեր իգլին: Դարձեալ՝ նշանակի սակաւ պարարտութիւն մածեալ յերես կաթին եփեցելոյ, զոր թերթս թերթս անջատեալ 'ի նմանէ, արկանեն յաման, և ուտեն: ռամկ. եւս ասի՝ ոէր. և տաճկերէն ղայմախ. ըստ այնմ 'ի գիրս Մծբն. ժթ. Սրքաեն անցեալ սեր, [illegible] ապականեալ ղայմախ:

Սերաւուր: (Նախդրիւ հոլովի.) || յոյժ ազգս լսելի եղեալ. կմ ընդ ամ տեղիս հռչակեալ. և կամ աշխարհալուր: ռամկ. ամէնուրէն լսած եղած:

Սերական. ի. աւ. աց. օք: || այն ինչ, որ վերաբերի առ սերն. կմ որ յայտնէ զսերն արուէին և իգլին. և ըստ այսմ ատականքն արուաց և իգաց. կոչին սերական անդամք:

Սերանամ. ացայ. ցի՛ր. ալ: || տես զՍերիլ: Մծբն. ժէ:

Սերատեսակ. տեսի. իւ. ից. իւք. կմ աւ. աց. օք: || Է բառ յունական, որ թարգմանի եղջերուաճար, և ամենայն նշանակի օձ ինչ ժանտ, որ հայերէն կոչի եղջերուիլ, զի ունի 'ի վր ճակատուն զերկու. կմ ըղ չորս եղջիւրս համգոյն եղջեր այծի: Մարմինն է յոյժ սաստիկ, և երկայնութիւն իբր երկու կանգունն. իսկ գոյն մարմնոյն է իբր աւազոյ: Լինի սա յաշխարհն եթովպացւոց. թաղի բոլոր մարմնովն յաւազուտս, և զեղջիւրսն արտաքոյ կացուցեալ խաղացուցանէ. և 'ի հաւաքիլն թռչնոց 'ի վր եղջերացն իբրև 'ի վր ոստոյ արտաքս ստատուցեալ ըմբռնէ զնս: Պարսն գործէ անցաւորաց 'ի ճանապարհի. վասն որոյ և կոչի օձ պարանակալ. յարձակի յանկարծ 'ի վր ձիաւորաց, և նախ հարեալ զպարշապարս երիվարացն՝ յերկիր կործանէ. և ապա ընդ անկանելն հեծելոց՝ 'ի վր հասանէ, և խայթէ զնս: Իսկ տեղին խայթուածոյ ուռուցեալ խստանայ իբրև զգլուխ բեւեռոյ. ընդ նմին ականեն շրմանեալ տեսանին [illegible] օձահարացն, և զգաբծին ստատիկ ցաւօք յօդք երանաց և ծնգաց, և նիքեանք ուշաթափեալ խելային: Ալտրովանդ. Գիրս Է. գլ. Գ.

Digitized by Google

Սերաւփին. կմ սերափիմ: (Նախդրիւ հոլովելի.) || սերովբէ. կմ սրովբէ: Նարեկ. ղԺ:

Սերգեւիլ. || տես զՍերկեւիլ:

Սերեկ. ի. ին.ից. իւք: կմ աց. օք: || ծած կոյթ կազմեցեալ 'ի քերեալ և 'ի չորացուցեալ քաղցրացուցեալ, կմ մաշկաց. զոր ածել զքերանով անօթոց իւղոյ, կմ մեղու, և այլոց նմանեաց. կապեն 'ի փակելն զբերանս անօթոց: Եւ յայսմանէ առեալ նաև ձըգտեալ մաշկ.ք Թմբկաց' սերեկ կոչին:

Սերեկեմ. եցի. եմ. ել: (Ներգործ.) || սերեկաւ, դ.ն. մաշկաւ փակել զբերանս անօթոց: Թուոց. 19. 15:

Սերեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || զարմ 'ի զարմէ ծննդեամբ յառաջ ածել, և ծաւալել. կմ մի 'ի միոյ ծնուցանելով աճեցուցանել. կմ բազմացուցանել: Եզեկ. 36. 12: ըստ այսմ է և 'ի Խորէն. ա. գլ. 61. ուր ասի. Ջնէլ 'ի նմանէ պատանիս չորս' այդ սերէ:

Սերիմ. եցայ. եաց. իլ: (Ձայնակր.) || մի 'ի միոյ ծնանելով յառաջ գալ. կմ յորդւոց յորդիս յումեքէ յառաջանալ. և կմ յաջորդական ծննդեամբ աճել. և ծաւալիլ. և ըստ այսմ' ասի ղազգէ, կամ զանձնէ ումեքէ' սերեալ 'ի նահապետաց, կմ յայն ինչ զարմէ. կմ յայս անուն մարդոյ: Այն պէս ևս ասի սերիլ հարց յորդիս. կամ կենդանեաց 'ի ծնունդս իւրեանց: Խորէն. ա. գլ. 22: և բ. գլ. 7. և 65: Մծբն. Ժէ:

Սերկ: (մակբայ ժամանակական.) || այսօր. կմ յայսմ աւուր: ռամկ. աօր:

Սերկեան: (Նախդրիւ հոլովելի.) || այսօրեան. կմ այսօրական, դ.այն. որ վերաբերի առ այս օրս. կմ որ յայսմ աւուր լինի: ռամկ. աօրուան. և տաճկերէն պէօյլէնտէն: և ըստ այսմ ասի' սերկեան ծնունդ. կմ պատահաս. կմ 'ի սերկեան աւուրս, որ է առել յայսմ աւուր: ռամկ. աօր: 'ի ճաշոցն:

Սերկեւիլ. կմ սերգեւիլ. ւլի. ւոյ. աց. օք: || է գեղնագոյն պտուղ ինչ գնտակաձեւ' որ ըստ մեծի մասին լինի խորտաբորտ: Եւ են սորա երկու տեսակ.ք. մին քաղցր. և միւսն թթուաշ: ռամկ. և. սէրկէւիլ: և տաճկերէն այվայ: Մծբն. Թ: Խորէն. յաղ խորհրդ: Բայց երբեմն նշանակի առհասարակ ծառն այսորիկ պտղոյ. որպէս և երբեմն խնձոր կոչեսցի զխնձորենին: ռամկօր. այվայի ծառ: Աշխարհ:

Սերմանահան. ի. աւ. աց. օք: || սերմանիչ. կմ սերմանօղ. դ.ն. մշակ արկանօղ սերմանց յերկիր. և ասացեալ սերմանահան, ըստ որում հանէ 'ի շտեմարանաց, կմ բառնայ 'ի գոգոյն' զսերմանիս 'ի սերմանել, դ.ն 'ի ցանել յանդաստանս, յորմէ և կոչի սերմանացան, իբր թէ ցանօղ սերմանց: ռամկ. էքինճի: Մատ. 13. 4: և 2. Կորն. 9. 10:

Սերմանամատոյց: (Նախդրիւ հոլովելի.) || մատուցանօղ սերմանեաց. կմ այն, որ տայ, կմ արտադրէ յինքենէ զսերմանս. որպէս սեքեն բոյսք ցորենոյ. գարւոյ, և այլոց սերմնեաց: Նարեկ. 'ի գոհ. առաք:

Սերմանանամ. ացայ. ցիր. ալ: (ընդ.միջ.) || սերմանաւորիլ. կմ 'ի սերմն գալ. կամ սերմն կապել. ռամկ. հունդ կապել: Ոսկոր Եսայ. 9. 31: ուր ասի' Էր կտաւն սերմանացեալ էր, իմանի ասել. բոյսն վշոյ սերմնաւորեալ էր, կմ 'ի սերմն եկեալ, որ հանդիպի 'ի հասունանալն նր:

Սերմանացան. ի. ին. ից. իւք: || տես զՍերմանահան: Մատ. 13. 18: Ղուկ. 8. 5:

Սերմանացեալ. ցելոյ. ով. ոց. ովք: || սերմնաւորեալ. կմ 'ի սերմն հասեալ: ռամկ. հունդ կապած:

Սերմանաւոր. ի. աւ. աց. օք: || ունօղ ըզ սերմն, կմ բերօղ սերման. և կմ սերմանելի: Խոր. ճ. գլ. 59:

Սերմանաւորեմ. եցի. եմ. ել: (Ներգործ.) || սերմանաւոր առնել. կմ 'ի սերմն բերել: ռամկ. հունդ կապել տալ:

Սերմանաւորիմ. եցայ. եաց. իլ: (Ձայնակ.) || սերմանաւոր լինիլ. և կմ սերմանանալ: ռամկ. հունդ կապել:

Սերմանաքաղ. ի. ին. աց. օք: || քաղօղ սերման. դ.ն. նա' որ ժողովէ զսերմանիս' հնձելով, կամ զԹօԹափեալ հատս սերմանց հաւաքելով: Իսկ մերԹ նշանակի հաւ ինչ անարգ և գօշաքարոյ' կերպարանօք նմանատարաւոր, որ Թ բնածին բարուցն միշտ հետամուտ լինի քաղել զԹօԹափեալ հատս սերմանց, յորմէ և էառ զանունն: Եւ յայսմանէ առփոխուԹի եղև 'ի հնումն սերմանաքաղ կոչել զաղքատս և զանարգս' կմ զպատասալեալս 'ի մարդկանէ, որք յաղագս չքաւորուԹե ժողովէին 'ի հրապարակս ըզ հատս ցորենոց ԹօԹափեցելոց 'ի քրձոյ. զի կերիցեն և կեցցեն: Եւ յայս միտս ո. մանք 'ի փիլիսոփայից սերմանաքաղ կոչեցին զերանելին պօղոս' համարելով զնա անարգ բարբանջօղ որ. իբրև զմի 'ի գ.ձեց կաց. Գործ. 17. 18: Յոյնք կոչեն զսա սփէռմօլօկօս, որ նշանակէ զսերմանաքաղն' համանգամայն և զսերմանաբանն, այսինքն զսերմանօղն շաղփաղփ բանից, որ է չաղ փաղփաբան:

Սերմանելի. լւոյ. եաւ. եաց. եօք: || այն ամ. որ կարէ սերմանիլ. կմ յորմէ կարէ յառաջ գալ սերմն 'ի սերմանել. որպիսիք են սերմանաւոր բոյսքն: Ծննդ. Ա. 29:

Սերմանեմ. եցի. եմ. ել: (Ներգործ.) || 'ար կանել յերկիր զսերմն. կմ սերմանաւո. րել: և ըստ այսմ ասի' սերմանել զսերմն. կմ սերմանել զերկիր, զանդաստանս. և այլն: ռամկ. ցանել: Ծննդ. Ա. 11: և 47. 23: Եսայ. 23. 10:

Սերմանիք. նեաց. նեօք: (անեզական.) || ծաղի սա 'ի սերմն բառէն. որպ սառնամանիքն 'ի սառն բառէն. և նշանակէ զնոյն ինչ սերմն, զոր սերմանեն յերկիր. կմ որ յերկրէ արտադրի: Ղևտ. 26. 16. և 20: Եսայ. 30. 23: Մարկ. 4. 31:

Սերմանիք. || է յոգնականն բառիս սերմն, զոր տեսցես 'ի նմին բառ:

Սերմն. սերման. մամբ. մունք. կամ մանց. անց. ամբք: || սերմանելի նիւԹ, յորմէ

արտադրի նմանն ըստ անտակին. որպի-
սի է ցորեանն. կմ գարին, և այլ ունդք.
զորս սերմանեն։ տամկ. հանփ. և տաճկերէ-
թօխում։ Ծննդ. 47. 23։ Սաղմ. 125. 6։ Մատ.
13. 24։ Այնպէս և հատք պտղոցն ա-
կեալք ՚ի պտուղս. կամ ունդք պարփա-
կեալք ՚ի ծաղկունս և ՚ի խոտս, սերմն
կոչին. ըստ որում են սկզբունք սերմաց
այնց՝ յորոց արտադրին. Ծննդ. 1. 11. և
12. և 29։ Իսկ երբեմն առհասարակ սերմն
անուանին ո՛ և իցէ արդիւնք երկրի. կմ
արմտիք. և կմ ունդք. և այլք հատք. ըն
որում կարեն սերմանել։ Ելից. 16. 31։ 1.
Թագ. 8. 15։ 3. Թագ. 18. 32։ Երբեմն ևս
նշանակի սոյլաւ հիւթն արուութե, զոր սեր
մանէ արուն յարգանդ իգին առ ՚ի ծննդ։
Ծննդ. 38. 9։ Ղևտ. 12. 2։ և 15. 16։ Իսկ մերթ
առեալ լինի փոխանակ զաւակի. ըստ ո-
րում ՚ի սերմանէ յառաջանայ։ Ծննդ. 21.
13։ Եսայ. 1. 4։

Սերմնակաթ. ի. իւ. ից. իւք։ || Նա՛ որ ու-
նի զախտ սերմնակաթութե. զի որոյ սերմն
հանապազորդ կաթէ, կմ ծորէ ակամայ,
որ պատահի ՚ի տկարութէ բնութե, կմ
՚ի թուլութէ զապաղական զօրութե. ոչ
ուսուցանէ գալենոս։ Ղևտ. 15. 4. և 6։
Թուոց. 5. 2։ 2. Թագ. 3. 30։

Սերմնակաթութիւն. թեան։ || հանապազորդ
զեան կաթելն կմ ծորումն սերման ա-
րուէին ընդդէմ կամաց իւրոց. որ պատ-
ճառի յախտէ բնութե. ոչ ասացաւ ՚ի
բանն սերմնակաթ։ Իսկ երբեմն անդրա
բերաբար առեալ նշանակէ զցոփութի կե
ղունապարութե, որով ոչ գրեթէ վն ախ
տին զբանին ակամայ է բերանն արտաքս
հանէ, ոչ սերմնակաթն զսերմն. և ըստ
այսմ իմանի ՚ի Նիւսէ. խն. ուր ասի՝ Զբա
նին սերմնակաթութիւն։

Սերմնաւորութիւն. թեն։ || ընդունումն սերման
արուէի. կմ սաղմնաւորուի. և կմ յղութե։

Սերումն. րման. մամբ. մանց. մամբք։ || տես
՚ի ներքոյ զՍերունդ։

Սերունդ. ընդեան. եամբ. եանց. եամբք։
կմ ընդոյ. ով. ոց. ովք։ || սերումն, զի մին
՚ի միոյ ծննդեամբ յառաջ ածումն. կամ
ծնանելով աճումն, կմ ծաւալումն։ Աղ-
գաբ։ Իսկ մերթ նշանակէ սերեալ զարմ.
կմ տոհմ, կմ զաւակ։ տամկ. ոճախէ։ Ը
այնմ Խորէն. ա. գլ. 26. Սերունդք արշօքի
թագաւորի են։

Սերտ. ի. իւ. ից. իւք։ (Իսկ մերթ վարի իբ
րև զմակբայ.) || կուռ. կմ հաստատուն.
կմ կայուն. կմ ամուր. և կմ թանձր և
խիտ. և ըստ այսմ ասի սերտ հաւատք.
կմ երկիր. կմ կարկուտ. կմ սերտ ՚ի բա
րիս. տամկ. պինդ. կմ սէրթ. կմ սըխը. ՚ի Գիրս
Յեծին խորհրդոց։ Եւ յայտմանէ առեալ սերտ
կոչի նա՝ որ հաստատուն առեալ ունի ՚ի
միտ զգրուածս։ տամկ. էզպէր։ Իսկ մերթ՝
բուն. կմ մտերիմ. կմ հարազատ. կմ հա
ւատարիմ։ և կմ անկեղծ. և ըստ այսմ ա-
սի սերտ բարեկամ. սերտ որդի. սերտ գի
տուն. և այլն։ տամկ. խաս։ Ոսկէ. 2. հատ. ժդ։
Մերթ ևս՝ մտադիւր. կմ խնքնակամ. կմ
յօժարամիտ. կմ ներքին և ջանադիր. և ըս
այսմ ասի սերտ սէր, կմ սիրտ, կմ կամք.
և այլն։ 1. Պետ. 4. 8։ Ոսկէ. 2. հատ. լդ։ ՚ի Վարս
հարց. ժդ։ Իսկ մերթ՝ ճարտար. կմ սաստիկ.
և կմ բուռն. զոր օրինակ սերտ հաստա
տութի. կմ զօրութի. կմ արշաւանք։ և
կմ այսպէս. սերտ հաճառել. սերտ ու-
սանիլ. սերտ հարկանել. և այլն։ Ոսկէ. 2.
հատ. ը։ և ՚ի հին պարծագիրս։ Երբեմն ևս ա-
ռատ. կմ ճոխ. կմ պարարտ. ըստ այնմ ՚ի
Վարս հարց. ժգ. Հողմն հիւսիսի բուծանէ
զարդիւնս սերտս։ Իրձն՝ սերտ կոչի գա-
ւազանն, և կմ այլ ինչ իր, որ ոչ ունի ըղ
խորտաբորտս, կամ զխոչս և զխութս. այլ
է ողորկ, կմ կոկ, և հարթ։ տամկ. դուզ։
Դարձեալ գործիականն սորա երբեմն վա
րի իբրև զմակբայ. որպէս, սերտիւ սիրել
զմիմեանս. սերտիւ լսել ՚ի գրոց. սերտիւ
աղօթել. կմ ուսանիլ. և այլն. և նշանա
կէ՝ սերտութբ, զի մտադիւր սրտիւ. կամ
սրտի մտօք. կմ քաջաջան փութով. և այլն։
տաճկերէն ճանիկէօյնիւլէն։ 1. Պետ. 1. 22։
Ոսկէ. 2. հատ. ժը։

Սերտեմ. եցի. եա. եալ։ (Ներգոր.) || հաստա
տել. կմ պնդել. և կմ արմատացուցանել.
և ըն այսմ ասի անմահ և անապական սերտել
զմարդն. և կմ սերտել զգայթուռս, կմ զհի
մունս. և այլն։ Եւ յայսմանէ առեալ՝ սեր
տել ասի ՚ի միտ ածումն պարապոյութեա
գրուածոց. ըն որում այսու ՚ի յիշողութե
ապաւորեալ հաստատեմք զնա։

Սերտիմ. եցայ. եա՛ց. իլ։ (Ձայնակ.) || հաս
տատիլ. կմ ամրանալ. կմ պնդիլ. կմ ար
մատանալ. և կմ բնաւորիլ. և ըն այսմ ասի
յընկերախորուի սերտիլ. և կմ սերտել հաս
տատիլ ՚ի հաւատս։ ՚ի Վարս հարց. ժը։ և ՚ի Գիրս
Պիտոյից անյաղթ։ Այնպէս և ՚ի Խորէն. բ. գլ. 88.
ասի՝ Յորժամ սերտեալ. հիմնեցան հա-
ւատք կողմանցս այսոցիկ։

Սերտութիւն. թե։ || հաստատութի. կմ կա
յունութի. կմ ամրութի. կմ պնդութի. և կմ
բնաւորութի։ Լամբրոն. և Պարապմանց։ Իսկ
մերթ՝ խստութի. կմ կարծրութի. կամ
խտութի. որոյ ներհակն է անդայտնութին.
տամկ. պէրկլիք. կմ սէրթլիք. ՚ի Գիրս Պիտոյից
Ֆիլոնի։ Երբեմն ևս՝ մտերմութի. կմ հա
րազատութի. կմ սատագութի. կմ հա-
ւատարութի։ Մերթ ևս մտադիւրութի.
կմ յօժարութի սրտի։ Եւ երբեմն՝ քա-
ջութի. կմ սաստկութի. և կմ բռնութի։
Դարձեալ՝ ճոխութի. կմ առատութի.
կմ պարարտութի։ Եւ երբեմն՝ ողորկու-
թի. կմ հարթութի։

Սերովբէ. կմ սերոբէ. ի. իւ. ից. իւք։ || է
բառ եբրայական, անուանեալ ըստ նչ սե
րափիմ. ոչ գրի երբեմն և ՚ի մեզ. Նիւսէ.
ղզ։ Արդ՝ թարգմանի սա կիզիչ. կամ
ջեռուցիչ. և կմ հրացայտ։ Եւ սոյլաւ ա-
նուանի առաջինն յիննեակ դասուց հրեշ
տակաց. այլ և խորաքննիչք անհասքն ՚ի

նոցանէ. և այս յաղագս գոլոյ բնութեն նց անախտ, զուարթ, երագաթռիչ, և բոր բոքեալ սիրով: Եսայ. 6. 2, և 6: Բայց եր բեմն 'ի բարգութեան առեալ լինի փոխա նակ ո՛ և իցէ հրեշտակաց, թէ որում են հրաբուն. կմ հրանիւթ:

Սերովբէագաւութիւն: || տե՛ս զՍրովբէագա_ ութիւն:

Սերովբէագոչ. կամ սրովբէագոչ: (Նախ_ դրիճ հոլովի.) || այն՝ զոր սերովբէն գո չեցուցանէ, կմ հարկանէ, որպիսի է փողն հնչեցուցեալ 'ի հրեշտակէն յաւուրն յետնում:

Սերովբէագումար: || տե՛ս զՍրովբէագումար:

Սերովբէագունդ. կմ սերոբէագունդ: (Նախ դրիճ հոլովի.) || գունդ սերովբէից. կմ այն՝ որ է գունդ սրովբէական, կմ հրեշտա կական. և ըստ այսմ առի. տեսանել ըզ սերովբէագունդս, և կմ սերովբէագունդ ջոկք, կմ դասք: 'ի Շարակնոցն:

Սերովբէական: || տե՛ս զՍրովբէական:

Սերովբէամաքուր: || տե՛ս զՍրովբէամաքուր:

Սերովբէապար: || տե՛ս զՍրովբէապար:

Սերովբէատես: (Նախդրիճ հոլովի.) || տե սանող սերովբէից, որպիսի էր Եսայի մար գարէն: 'Ի Վարս հարց. ի՛մ:

Սերովբէատիպ: (Նախդրիճ հոլովի.) || ու նող զտիպ, կմ զտեսիլ սերովբէի. կամ սերովբէանման. կմ հրեշտակակերպ. և կմ սերովբէական: Լամբրոն:

Սերովբէափառ. կմ սերոբէափառ: (Նախ դրիճ հոլովի.) || սերովբէիւք փառաւոր. կմ 'ի հրեշտակաց պարփակեալ. կմ պա րունակեալ. և ըստ այսմ առի՝ սերովբէա փառ դուռն դրախտին: 'Ի Շարակնոցի:

Սևագիր. գրոյ. ով. ոց. ովք: կմ գրի. իւ. աց. օք: || սևական գրեալ. կմ ունող ըզ սեաւ գիր: Եւ մերթ՝ գրող սևական. կմ որ գրէ զսեաւ գիրս: Երբեմն ևս նշանա կէ զգիրս. կամ զնկարս. և կամ զդեղս սեաւս: Ոսկ. 1. հռոմ. ժդ:

Սևափոյն. գունի. իւ. ից. իւք: || այն, որ է առաւել սեաւ: ռամկ. խնկափայ:

Սևագոյն. գունոյ. ով. ոց. ովք: || նա՝ որ ունի զսեաւ գոյն: ռամկ. սև գուն ունող:

Սևագունդ. (Նախդրիճ հոլովի.) || սևազ գեստ գունդ. կամ այն՝ որ է սևացեալ խումբ. կմ յորում եղեալ բազմութիւն են խաւարայինք: Ագաթ:

Սևադեղ. ոյ. ով. ոց. ովք. կմ օք: || սեաւ դեղ. կմ ներկ. և կմ սևակ. թք մելան. ռամկ. սև պօյա. կմ մուրէքէպ:

Սևազգեստից. զգեստի. իւ. ից. իւք: || տե՛ս 'ի ներքոյ զՍևազգեստ:

Սևազգեստ. ի. իւ. ից. իւք: կմ օք: || զգե ցեալ զսեաւ զգեստ. կմ զգեստաւորեալ սևագոյն հանդերձիւ, որ և առի՝ սևազ գեստ: ռամկ. սև լաթ հագնող: Խոր. ե. գլ. 57:

Սևաթոյր: (Նախդրիճ հոլովի.) || ունող զսեաւ գոյն. կմ թխագոյն: Լամբրոն: և 'ի Հին պարգևագիրս: Իսկ մերթ՝ սևատեսիլ. կմ սևայլին. կմ խաւարամած. և ըստ այսմ առի. սևաթոյր գոյն. սևաթոյր տխրութի. և այլն: 'Ի Հին պարգևագիրս:

Սևաթորմի: (Նախդրիճ հոլովի.) || սեաւ դեղով թրմեալ, թէ թացեալ, կմ խառն_ ակեալ: Եւ յայսմանէ առեալ նշանա_ կէ, ապականեալ սեաւ գունով. կմ սևա_ մած. կմ խաւարատեսիլ. և կմ թխագոյն. և թէ այսմ առի՝ սևաթորմի ազգաւ. կմ զգեստ. և այլն: 'Ի Գիրս Դէծիդ խորհրդոց:

Սևակ. ի. աւ. աց. օք: || սեաւ դեղ. կամ մուր. թէ մելան, որով գրեալ լինի գիր. ռամկ. մէրէքէպ. կմ մուրէքէպ: Երեմ. 36. 18:

Սևակն. ական. իւ. ից. իւք: || ունող զսեաւ ակն. կմ որոյ աչքն է սևագոյն:

Սևակուշտ. ի. իւ. ից. իւք: || սեաւ կուշտ հա ղոյ, կմ երկրի:

Սևակոշտիլ. եցայ. եալ. իլ: (Չէզոքաբայ.) || ունել զսեաւ կուշտ. կմ սեաւ կոշտիւք ըն ցեալ լինել. և ըստ այսմ առի երկիր՝ կմ հող սևակոշտեալ: Ագաթ:

Սևամազ. ի. իւ. ից. իւք: || ունող զսեաւ մազ. կմ ղթուխ վարս: ռամկ. սև մազ ու նող: Իսկ մերթ սևագոյն հեր: ռամկ. սև մազ:

Սևամած. ի. իւ. ից. իւք: || մածեալ սևու թբ. կմ բոլորովին սևացեալ:

Սևամաղձ. ի. իւ. ից. իւք: || է մին 'ի չորից հիւթոց կենդանւոյն՝ կոչեցեալ յու նարէն մելամաղձ. է բնութե ցուրտ և չոր. և 'ի տարերս համեմատի հողոյ. պատճառ է խմորդն զպատմութեան. զգաժանութե. զախրականութեան. զդանդաղկոտութեան. և զզուելի բարս: բաժանի 'ի բնականն. և յանբնականն: Բնականն է պինդանի, որ է արեան ստորեալ յերակսն՝ սնունդ տալ ցրտոյ և չոր մասանց. ոչ՝ ոսկերաց, և աճառաց, և կնճաքաց: Իսկ սորա է ան պակ ինչ՝ որ ոչ օգտէ մնուգեան, այլ իբ րև զյանէլուծանս արեան իջանէ յերա կաց 'ի փայծաղն. և անտի ըստ պիտոյից հեղանի 'ի խափուացսն. և անդ վճարեալ զգործ իւր՝ թողի 'ի կղկղանս. և առաւել քօք համակերձ եղանէ արտաքս: Իսկ անբը նականն ունի զերիս տեսակս, որք դոյա նան յապականութենէ, կմ 'ի դրժից չորից հիւթոցն, և պատճառեն զպէսպէս ախտս և ցաւս ագարութիւ յորմէ և այսպիսի ախտքս կոչին սևամաղձք: ռամկ. խարայ սէվտայ: Ո նէ. I. հատ. իա:

Սևամորթ. ի. իւ. ից. իւք: || ունող զսեաւ մորթ. կմ թխամորթ:

Սևային. այնոյ. ով. ոց. ովք: || թխային. կմ խաւարային. և կմ սևացեալ:

Սևանամ. ացայ. ցիր. ալ: (Ընդմիջ.) || սեաւ լինել. կամ թխանալ. կամ մթանել: ռամկ. սևնալ: Եզեկ. 1. 5:

Սևաստոս. կմ սևաստաս. ի. աւ. աց. օք: || է բառ յունական, որ թարգմանի չքեղ. կմ գերապատուիճ. կմ մեծափառ: Եւ այս անուն 'ի վաղ ժամանակս սեպհական էր հռոմէական կայսերաց, զոր երբեմն հա ղորդէին յաղագս պատուոյ սիրելեաց. և մերձաւորաց իւրեանց. ապա ժամանակօք շնորհաւորյն՝ շնորհեցաւ 'ի յունաց ար-

քայլէն՝ օձին իշխանին հայոց ։ 'Ի հին պարճագիրս ։

Սեաւատտասութիւն. թեան ։ || Նախատպատաճառութիւն սեւաւորի. կմ՛ պատճէն սեւատոպական ։

Սեւեռ. ի. ու. աց. օք ։ || բեւեռ. կմ՛ հեղոյս ։ ռամկ. գամ. Իսկ մերթ բեւեռումն. կմ՛ հեղուսումն. և ըստ այսմ մանուանց վարի յոգնականաւորս ։

Սեւեռագոյն. գունի. իւ. իւ. իւք ։ || Անգագոյն. կմ՛ ամրագոյն. և կմ՛ հաստատագոյն ։

Սեւեռակալ. ի. իւ. իւ. իւք ։ || սեւեռօք կապօղ. կմ՛ բեւեռօք պնդօղ ։ Իսկ մերթ՝ կապեալ, կմ՛ պնդեալ սեւեռամամբ. կմ՛ այն տեղ, որով իցէ սեւեռեալ. կմ՛ հաստատեալ կապի, և պնդի ։ Նարեկ. ղզ ։

Սեւեռապէս ։ (մակբայ որակական.) || բեւեռելով. կմ՛ սեւեռելով. կմ՛ պնդապէս. կմ՛ հաստատապէս ։ Նարեկ. ղէ ։

Սեւեռեմ. եցի. եա. եալ ։ (Ներգործ.) || բեւեռել. կմ՛ հեղուսել. և կմ՛ պնդել ։ ռամկ. գամել. կամ՛ ամրցնել ։ Նարեկ. զթ. և 'Ի շարականս ։

Սենի. նւոյ. եաւ. եաց. եօք ։ || զգեստ, կմ՛ պարեգօտ՝ հիւսեալ 'ի սեւերեայ սրմայ ։ 'Ի վարս հարց. ը ։

Սեւորակ. ի. ու. աց. օք ։ || ունող զսեւ որակ. կմ՛ սեւագոյն ։ ռամկ. սեւ գոյն ունօղ ։ Ըստ այսմ Շնորհալի. յաղագս Նեղեսիոյ. Ջրաբն գլորեն զսեւորակ. ձգեն կայծիր ծովուն յատակ ։

Սեւութիւն. թեան ։ || սեւ գոյն. կմ՛ որակութիւն սեւ գունոյ ։

Սեսաթ ։ || անուն 'ի բառն սաթ ։ Խորէն. յաշխարհագրութեան ։

Սեփական ։ || տես զՍեպհական ։ Ագաթ. և Լամբրոն ։

Սեփականեմ ։ || տես զՍեպհականել ։ Նարեկ. ժզ ։

Սեփականութիւն ։ || տես զՍեպհականութիւն ։ Նարեկ. 'ի Մեկն. Երգոց ։

Սեփհական ։ || տես զՍեպհական ։

Ս Է

Սէգ. սիգի. կմ՛ ոյ. ու. աց. օք ։ || է առժամ սիգալ բայից. որով նշանակի նա՝ որ քաջալանջ մարմնով, և խրոխտ անձամբ, և գնացիւք ցուցանէ զգոռոզութիւն, կմ՛ զամբարտաւանութիւն. որպիսիք են քաջքն 'ի զօրականս. և պարապորտք 'ի հասս ։ Ագաթ. ։ Եւ յայսմանէ առեալ երբեմն նշանակէ առանց գոռոզ. կմ՛ ամբարտաւան. կմ՛ բարձրամիտ. և կմ՛ խրոխտ, և յանդուգն ։ 2. Մակ. 7. 9 ։ Խորէն. բ. գլ. 50 ։ Երբեմն և՝ գերապանծ. կմ՛ քաջ, և երեւելի. և կմ՛ պանծալի ։ և ըստ այսմ առի. սէգ ուժգնութիւն, Լամբրոն ։

Սէզ. սիզոյ. ով. ոց. օք ։ || է տեսակ ինչ խոտոյ, որ բերէ զբոյս ցորենոյ նմանութեամբ բերելով խիտ առ խիտ կապէ զծուծն՝ ցզօղունն. և 'ի սերմնանալն բերէ հասկս նմանութեամբ ։ Բնութ է տարածական. բուսանի յաճախ 'ի մարգագետինս. և յայլ վայրի տեղիս ։ Լինի Ճարակ խաշանց, և նամ գրաստուց ։ ռամկ. չայիր ։ 2. Օրին. 32. 2 ։ Եսայ. 9. 18 ։ Ովս. 10. 4 ։

Սէթ ։ || տես 'ի բառդարանի յատուկ անուանց ։

Սէթեան ։ (Նախդրիւ հոլովի.) || այն, որ է սեթայ. կմ՛ վերաբերի առ սէթ ։ և ըստ այսմ առի. սեթեան ազգ, կմ՛ որդի, և այլն ։ Մծբն. ժգ ։

Սէր. սիրոյ. ով ։ || Ներգործութիւն սիրելոյ. կմ՛ սիրելութիւն. որ է եռանդն ախորժանաց հոգւոյ, որով սիրօղն բերի առ սիրելին ։ Եւ բաժանի 'ի բնական. որպիսի է սէր ծնողաց, կմ՛ բարեկամաց. և այլն ։ 2. Թագ. 1. 26 ։ Յոհ. 15. 13 ։ Եւ 'ի գերբնականն, որպիսի է սէրն Այ, և ընկերաց ։ Հռոմ. 5. 5 ։ 1. Կորն. 13. 4 ։ Իբրեւ՝ սէր կոչի՝ կերակուրն. կմ՛ խրախճանն պատրաստեալ ումեք 'ի նշան սիրոյ, որպիսի էր 'ի հնումն ագապն, զոր պատրաստէին քրիստոնեայքն յեկեղեցւոջ՝ ուտել զկնի հաղորդութեան առ հասարակ մեծատանց, և աղքատաց, տէրանց, և կանանց՝ համեստութեամբ, և երկիւղածութեամբ ։ Յուդայի. 12 ։ Այսպիսեաց եա առեալ լինի փոխանակ կերակրոց, կամ ողորմութեանց ։ 'Ի վարս հարց. ը. և ժգ. և յայլ տեղիս, յորս առի, ուտել զսէր. կմ՛ ահա սէր իմ ընդ իս. և կմ՛ արասցուք սէր ։

Սէրաբերեալ. եւոյ. ով. ոց. ովք ։ || սիրով վառեալ. կմ՛ սիրաբորբոք լեալ. և կամ բոցակէզ տենչանօք տոչորեալ. և կմ՛ կարօտեալ ։

Սէրափէ. կմ՛ սէրաբէ. և կմ՛ սերափիմ ։ (Նախդրիւ հոլովի.) || վառեալ սիրով. կմ՛ սիրաբորբոք. կմ՛ սիրալիր ։ և ըստ որում եղանէ 'ի սերափիմ բառէն՝ նշանակէ սերովբէական ։ Նարեկ. ղզ ։

Ս Թ

Սթափեմ. եցի. եա. եալ ։ (Ներգործ.) || տես զՍթափեցուցանել ։

Սթափ. կմ՛ ըսթափ. ի. իւ. իւք ։ || ըզգաստ. կամ՛ լուրջ. կամ՛ արթուն, կամ՛ զուարթ ։ ռամկ. այեզ ։ Իսկ մերթ՝ յօժար. կմ՛ պատրաստ. կմ՛ դիւրահան ։ Ըստ այսմ Նարեկ. խզ ։ Առ կեանս փոյթ. առ ողջմութիւն սթափ ։ Երբեմն և՝ զօրացեալ. կմ՛ ժիր. կմ՛ ալիքս. և կմ՛ հաստատուն ։ Ըստ այսմ 'Ի վարս հարց. իզ. Գնաց յեկեղեցին ծարաւն. և սթափ եղեւ առաջ իմ ։

Սթափեցուցանեմ. ցուցի. եցի. եալ ։ (Անցող.) || զգաստացուցանել. կմ՛ ըսթափեցուցանել. կմ՛ արթուն առնել. կմ՛ զուարթացուցանել. և կմ՛ զուարթնացուցանել. որով փարատի տրտմութիւն, և աշխոյժութիւն. և այլք նմանք, զորս պէտ է տեսանել ։ 1. Եզր. 4. 31 ։

Սթափիմ. եցայ. եաց. իլ ։ (Ձայնակ.) || ըզ

պատուանալ. կմ լռելեալ. կմ արթուն լինել. և կմ զուարթանալ: ռամկ. այցելնալ: և ըստ այսմ սաստ. սթափիլ 'ի գինւոյ. կմ յարբեցութենէ: Ծնն. 9. 24: 1. Թագ. 25. 37: Յովէլ. 1. 5: Եւ կմ սթափիլ 'ի քնոյ, 'ի թմբրութենէ, 'ի տրտմութենէ, և կմ 'ի ծուլութենէ և այլն: 3. Թագ. 21. 7: 1. Կոր. 15. 34: 2. Տիմ. 2. 26:

ՍԻ

Սիգ. կմ սիգք. սիգի. աւ. աց. օք: || Ընտանի մեղմ հողմոյ. կմ օդ քաղցրաշունչ. և կմ սառն հողմ: Նորէն. Լբ: Աճգտ: Լամբրոն: 'ի շարականս:

Սիգամ. ացայ. կամ ացի. ա՛. ալ. (ընդ. ակբ.) || խրոխտ անձամբ և փառացի գնացիւք ճեմել. կմ իշխանական գնալ շարժուածովք շրջիլ. ոտն առնելն քաղքալանք, կմ ամբարհաւաճ իշխանք. կմ ապաղաղք, և նժոյգ երիվարք: Առակ. 30. 31: Նորէնք: Աճգտ:

Սիգաճեմ: (Նախադրիւ հոլովի.) || տե՛ս ընդ Սիգաքայլ:

Սիգաճեմեմ. եցի. եա՛. ել: (չեզոք.) || սիգաճեմ լինել. որ սիգալով շրջել. Ըստ այնմ Լամբրոն. Սրբախօսցիր փեսայ բերկրելով, յեկեղեցի սիգաճեմելով:

Սիգաշարժ. (Նախադրիւ հոլովի.) || Նա՛ որ սիգալով շարժի, որ սաստ զմարդոյ, զա քաղաքէ, զալեաց ծովու. և այլն:

Սիգաքայլ. (Նախադրիւ հոլովի.) || սիգալով քայլող. կմ խրոխտ և գնացող ընթացիւք ճեմող. կմ քաղքալանք մարմնով. և վստահ անձամբ շրջող. և ըստ այսմ սաստ սիգաքայլ տուիք ճեմել. կամ սիգաքայլ երիվարք յորձանաւ: Ընծայուն:

Սիգնայք. այից. այիւք: || է յոգնականն լատինական բառիս սիգնում, որ է նշան: Աճգտ:

Սիգնում. կմ սիգնոն. ոնի. ամբ. աց. օք: || է բառ լատինական, որ թարգմանի նշան. կմ նշանակ. ըստ այնմ Խորէն. Բ. 80. Ձիաւորն սատակելոյ արարեալ սիգնում: Այնպէս և 'ի Նորէնք. ռզ. սաստ գերեվարեալ զուղէշ սիգնոնի քում շառաւիղի:

Սիգութիւն. թեան: || սեռ. գոյն. կմ սիգացումն. կմ ամբարհաւաճութիւն. կմ բարձրայօնութիւն. և կմ գոռոզութիւն: Մծբն. Թ:

Սիգոն. ի. իւ. կմ աւ. ից. իւք: || է բառ այլազգական, որով երբեմն նշէնի քաղաք ինչ [illegible] տեսցես 'ի բառարանի յատուկ անուանց: Իսկ մերթ պատառական. կմ սիփոնց, թէ 'ի կտաւէ իցէ, թէ 'ի կաշուոյ և թէ յայլմէ նիւթոյ. ռամկ. ծոռոց. Ըստ այնմ 'ի Զօրն հարց. Ճ. Բերէք վաղվաղակի զսիգոն ինչ, և ածուեցէք: և զնի սաստ, զամ ակունսն ափուեաց 'ի վէճ սիգոնիւն:

Սիզաբեր. ի. իւ. ից. կմ աց. օք: || բերող զսեզ. կմ արտադրող սիզոյ, որ կոյներ: Իսկ մերթ՝ բերեալ. կմ արտադրեալ 'ի սիզոյ:

Սեղաբերիմ. եցայ. եա՛ց. իլ: (Հայհուակր.) || զերրիլ. կմ արտադրիլ 'ի սիզոյ. որ կոյներ. որպիսի է որդն ինչ այխաանի, յորմէ կազմեն զկարմիր ներկս: Ծնանի առ յա բարբառեան զանազան հայաստանեայց 'ի յարմատոյ սիզոյ: Խորէն. յաշխարհագր:

Սիզաբոյս. բուսի. իւ. ից. իւք: || բուսանող սիզոյ. որ կոյներ: Իսկ մերթ այն, որ է բոյս սիզոյ. և ըստ այսմ սաստ՝ սիզաբոյս խոտ, կմ բանջար: Աճգտ:

Սիթաղխո. ի. իէ. ից. օք: || է օձ ինչ սաստ սակ խայտաճամուկ, և գեղեցկագոյն. բը նութ է յոյժ ջերմ. մինչ զի 'ի ժամանակս ձմեռային շրջի 'ի ցրտութիւն սառնամանեաց: Ուստի զգեցուցին յայնց, և զաղդեցութիւն վիպասանէր. վն զի զհայեցողս իւր գեղեցկախոյթ գունով ցոյցանէր [illegible] նաւորէ, և սքանչանաց:

Սիլլաբայ: || տե՛ս զՍիղաբերայ: Խորէն. Գ. կր. 53:

Սիկ: || տե՛ս զՍիգ:

Սիկարեան: ('ի յեզակական նախադրիւ հոլովի. իսկ 'ի յոգնականսն. եանք. եանց.) || Ծագի սա 'ի լատինական բառէս սիկա, որ է դաշոյն, որ կինժալ, զոր սիկեայք պահէին 'ի ծածուկ առ իւրեանս՝ յաղագս զաղտ խոցելոյ զմարդ: Ուստի բառիս սիկարեան նշանակի նա՝ որ զայսպիսի գործ նակս կրէ յիւրեանս, կմ ոտխեմք յարձակի 'ի սպանանել զոք: Եւ յայսմանէ առեալ սիկարեան կոչի ամ զինակիր ավազակ [illegible] կմ [illegible] Գործ. 21. 38:

Սիկղ. սկեղ. 'ի սկեղէ. սկեղաւ. աց. օք: || է բառ եբրայական, որով նշանակի սասակ ինչ դրամոյ, զոր յունական բառիւ կոչեմք սատեր, և հայկական բառիւ գահեկան: Արդ՝ սա ըստ ծանրութեան էր կէս ունկի, որ չորս տրամ. յորմէ և անուանի չորեքդրամեան: Իսկ ըստ գնոյն, եթէ էր արծաթեղէն, արժէր [illegible] և ուղ փողս, որ է [illegible] Իսկ եթէ էր ոսկեղէն, արժէր զութն. կմ զերօթն և կէս մառշիլ [illegible] Թուոց 3. 47: 1. Թագ. 9. 8: և 13. 21: Եզեկ. 45. 12: Դարձեալ՝ բառս այս [illegible] Եսայ. 30. 23: 1. Թագ. 17. 5. և 7: Եզեկ. 4. 10: Բայց գիտելի է, զի սիկղն թէ ըստ սրբոյ դրամ, և թէ ըստ որում չափ ծանրութեան, էր կրկին առ եբրայեցիս. Մին կոչիւր սիկղ սրբութեան, և միւսն սիկղ արքունական, կամ քաղաքական: Արդ՝ [illegible] այլ [illegible] լինէր մինն սիկղ սրբութեան, [illegible] ըստ որում 'ի [illegible] որբուսալ պահէիւր [illegible] Իսկ միւսն արքունական, կմ քաղաքական, [illegible] 'ի քաղաքի [illegible] այլայլիւր: և ըստ այսմ սիկղն [illegible]

թէ գրեթէ նշանակէր զարդարութիւն, և զանթերին. իսկ սիկղն արքունական, կմ՝ քաղաքական՝ զթերատն. կմ՝ զսրբարականն: Բայց ըստ այլոց սիկղն արքունեթ՛ եր չորս դրամ. և արքունականն երկու: Ելից. 30. 24: և 38. 24: Ղևտ. 5. 15: 2. Թագ. 14. 26:

Սիղեղ. կմ՝ սիղեխ. եղի. ու. այ. օք: || տե՛ս զՍիղեխ. Կիւրղ. Եղէմ. Գ:

Սիղեղաւոր. կամ սիղեխաւոր. ի. ու. այ. օք: || ունօղ զսեղեխ, կմ՝ զհիւանդին. ծ ըղ սխրաւոր: Իսկ մերթ սեղեխական, կմ՝ վավաշոտական. կմ՝ անառակական. և ը այսմ առն՝ սիղեղաւոր խորհուրդ:

Սիղեփ. ի. ու. այ. օք: || գերման հաց. կմ՝ դրոշակ հաց, որ է բլիթ, կմ՝ նկանակ հաց: ռամկ. սօմուն. 'ի Վարս հարց. Ժ:

Սիղիկոն. կմ՝ սիլիկոն. ի. ու. այ. օք: || է բառ այլազգական, որով նշանակի աղնիւ ներկ ինչ կարմիր. զոր հայերէն կոչեմք նօթ. տաճկ. սիւլիւէն:

Սիղորայ. կմ՝ սիղորայ. կմ՝ սիւղորայ. ի. ին. իւ. իւք: || է բառ յունական, որ թարգմանի փողառութիւն. կմ՝ վանկ. և կմ՝ բար բառ: Նարեկ. գէ: և 'ի հին տումարս: և 'ի Գիրս Գրիգորի Տաթևացւոյ. Սրբ՝ աս գրի ը յունաց սիւլլաբայ. այլ երբեմն և 'ի մեղ: Խորէն. Գ. գլ. 53: զոր և մերթ գրեմք՝ սողորայ. Նարեկ. 'ի Գող. առաք: Եւ 'ի Գիրս քաջ թէ. քերական. առն, յօգնեալ է արծուէն. սողորայիւք:

Սիմոնական. ի. ու. այ. օք: || Նա՝ որ առնէ զսիմոնականութիւն, ծ վաճառէ, կամ գնէ զսրբութիւն ինչ, կմ՝ զհոգևորականութիւն ընդ արծաթոյ. այլ որ արծաթով ձեռնադրէ զոք 'ի քահանայս. կմ՝ արծաթոյ առնու զքահանայութիւն: Եւ կմ՝ զեկեղեցական մասն զինչ 'ի վաճառ. կմ՝ ընչիւք առանձնայ իշխեսն. որ և անուանի չնորհավաճառ: Այլ սիմոնական կոչին այսպիսիքս 'ի սիմոն մոգէն, որ մատոյց ինչս առաքելոց առ 'ի առնուլ 'ի նոցանէ զհոգևոր իշխանութիւն:

Սիմոնականութիւն. թեան: || գնումն, կամ վաճառումն սրբութեանց ինչ, կմ՝ կարգաւորեցելոց ընդ արծաթոյ, որ և կոչի չնորհավաճառութիւն:

Սին: (Նախդրիւ հոլովի.) || թափուր. կմ՝ ունայն. կմ՝ թարմատար. կմ՝ զուրկ 'ի լինելութէ, 'ի պտղոյ, 'ի պարարտութէ, և յայլոց նմանեաց. և ըստ այսմ առն՝ սին պտուղք. սին տաղաղութիւն. սնոտի աչք և աղաղակ անգատան. և այլն: ռամկ. պօշ. կմ՝ բոշ: Նարեկ. բէ. Ճն: և Լամբր: 'ի սնանէ ծաղիկ բարս սնանիլ. և բառս սնոտի:

Սինեալ. ելոյ. ով. ոց. ովք: || սին եղեալ. կմ՝ սնացեալ, ծ ունայնացեալ, կմ՝ թափուր լեալ 'ի պարարտութէ և 'ի լինելէ. և այլն. ըստ այսմ ՍՀ գիրս. սերմանիքն ապաղանք և սինեալք:

Սինագովայ. ի. իւ. ից. իւք. || է բառ յունական, որ 'ի հայ բարբառ թարգմանի՝ ատեան:

Սինէգրիոն. ի. իւ. ից. իւք: || է բառ յունական, որ 'ի հայ բարբառ թարգմանի՝ ատեան:

Սինլքեր. կմ՝ սինլքոր. ի. ու. այ. օք: || ածանցի առ մասնկամբս՝ որ. ուժ և քեհ կորն՝ և հատորն. և նշանակէ՝ սին լեալ, ծ ինքն զգիրա մնացեալ յինքեան. կմ՝ յետին մնացորդ, և կմ՝ խոտան և անարգ մնացուածք, որք են սնոտի և ոչինչ են. և ը այսմ առն՝ սինլքերք ժողովրդեան, կմ՝ քաղաքին. սինլքորք զօրաց, կմ՝ աղտ ղոց, քարանց, ընդոց, և այլն: ռամկ. փէսխէնտի. կմ՝ սօնղգալը: Երեմ. 41. 10: և 52. 15: Եղեկ. 14. 22: Իսկ մերթ առնելի նի փոխանակ բառիս՝ յետնորդ. կմ՝ յետնեալ. կմ՝ արհամարհ. և կմ՝ խոտան. ը այնմ Լամբրոն. Եւ սինլքորս ծնունդ քոյոյ արգանդի, ցանկացայ անդրանկաց դատուն կայանի: Եւ յայսմանէ առեալ՝ մասնաւորապէս սինլքեր կոչի յետնորդ և խոտան մասն, զոր մնացորդք, կամ վաճառականք թողեալ 'ի պատուական մասանն, վաճառեն 'ի միասին. տաճկեր. հուրտափալայ:

Սինլքեալ. ելոյ. ով. ոց. ովք: || նոյն է ընդ վերինոյն: Երեմ. 39. 9:

Սինլքոր: || տե՛ս զՍինլքեր: Լամբրոն:

Սինկղ. սնկեղ. եղբ. եղաց. ուք: || է չուան ծովային. զորմէ պատառ ունիլ զերիս գլուխս:

Սինկղիտոսկոս. ի. ու. այ. օք: || է բառ յունական, որով նշանակին խորհրդանիշեր իշխանքն, կմ՝ նախարարքն ծերակուտին:

Սինկղիտոս. կմ՝ սինկղիտոս. ի. ու. կմ՝ իւ. այ. օք: || է բառ յունական, որով նշանակի ծերակոյտն. կմ՝ նախարարք ծերակուտին. և կմ՝ ժողով խորհրդականաց: Խորէն. Բ. գլ. 19. և 30: և 'ի Վարս հարց. Ժ: և Լամբրոն:

Սինկղիտոսութիւն. թեան: || նախագահութիւն. կմ՝ գահերիցութիւն սինկղիտոսի: Լամբրոն:

Սինձ. սնձոյ. ով. ոց. ովք: || մերթ նշանակէ զատոյնձ: ռամկ. ծաղիկ. Շնորհալին: Իսկ մերթ զբանջար ինչ պարարտ. որ ունի զտերև նեղ և երկայն և դառն. բուսանի ընդ երկիր. չուրջանակի ծաղկելով ըղ տերևսն նման ատամանց առիւծի, ծ առիւծոյ: կերեալ լինի անհամ. նաև պէսպէս կերպիւ եփելով: ռամկ. ..:

Սիսեռն. սիսեռան. սեռ. անց. սեռք. կմ՝ օք: || է փոքրիկ, ունդ ինչ. գնտակաձևէ նման ոլոռան. որոց ունանք սպիտակ լինին. և ունանք սև: ռամկ. ... և տաճկ. նօխուտ: Զսպիտակն այսպիսի ընդոյ երբեմն խածղեն 'ի բովս. զոր կոչեմք մաշկ. սիսռան. ռամկ. լէպլէպի:

Սիղաքոյ. ի. ին. իւ. իւք. || է բառ յու-

Սիրաբողբոջ. ի. իւ. ից. իւք: || բողբոջե-ցուցանող, կմ ծնուցանող սիրոյ. և կամ բողբոջեալ և ընձիւղեալ 'ի սիրոյ:

Սիրալի: || տես 'ի ներքոյ զՍիրալիր:

Սիրալիր: (Նախադրիւ հոլովի.) || լի սիրով. կմ լցեալ ախորժանօք սիրոյ. կմ յոյժ սի-րելի: Լամբրօն:

Սիրական. ի. աւ. աց. օք: || սիրեցեալ բա-րեկամ. և այս մանաւանդ վարի յաշխար-հաբառ լեզուոջ. զի գրոց լեզուաւ կոչի սիրելի:

Սիրակարկաջ: (Նախադրիւ հոլովի.) || սի-րով կարկաջօղ, կմ աղաղակօղ. և կմ այն՝ որ լինի սիրալիր աղաղակաւ, կմ ձայնիւ:

Սիրակից. կցի. աւ. կամ իւ. աց. օք: || կը-ցորդ, կմ ընկեր սիրոյ. որպիսիք են մի-մեանց երկու սիրելիքն. կմ երկու ոմանք. որք 'ի միասին սիրեն զանձն ոք: Նարէկ. 'ի Թէկն. Երգոց:

Սիրահար. ի. աւ. աց. օք: || հարեալ 'ի սէր ուրուք, այն՝ որ վավաշոտական, կամ անկարգ սիրով ուրուք է խոցեցեալ:

Սիրամարգ. ի. աւ. աց. օք: || է հաւ ինչ բնութեամբ գոռոզ և նախանձոտ. մեծութիւն նորա է հնդիկ հաւուն, այլ հինգ թռչնո-ղոյն. բայց մարմինն է գեղեցկատեսիլ. և գնացիւք սիգաճեմ. ունի 'ի գլուխ իւր զկատար գեղեցիկ. փետուրք իւր են կա-րի գեղեցկախայտուց և փայլուն. մանա-ւանդ որք բուսեալ կան 'ի տուտն, որ է երկայն և բազմափետուր. զոր բազում անգամ յանդիման արեգական կացեալ շրջանաձեւ տարածանէ. որոց փետուրքն ազգի ազգի գունովք փայլեալ՝ արձա-կեն զպէսպէս ճաճանչս զմարմանցուցիչս աչաց. բայց եգն սորա է տգեղ տեսլեամբ և զուրկ յայսպիսւոյ տեսանէ: տաճկերէ. թաւուսղուշ: 3. Թագ. 10. 22: 2. Մնաց. 9. 21:

Սիրամարգաշատ: (Նախադրիւ հոլովի.) || ունօղ զբազմութիւն սիրամարգաց. կմ ուր լինին բազում սիրամարգք: Խորէն. Բ. գլ. 78:

Սիրայ. ի. իւ. ից. իւք: || սփռոց հեռա-ցեալ 'ի պղտորոյ, կմ 'ի տերևոյ արմաւե-նեաց, և յայլոց նմանեաց. զորս սփռեմք 'ի վերայ յատակի: ռամկ. խալը: 'Ի Վարս հարց. Գ. Դ. ժա. և ժդ:

Սիրայլն. այնոյ. ով. ոց. ովք: || այն՝ որ սա-ւերն վերաբերի. և կմ սիրելի: Բայց եր-բեմն սեռականն սորա վարի փոխանակ բառիս՝ սիրուն. ըստ այնմ 'ի շարականս. Իսկ քոյդ սիրայնոյ ծծարեալ և ոգեշահ. այն իսկ քոյդ բանք են սիրուն, ոգեշահ. և այլն:

Սիրայորդոր: (Նախադրիւ հոլովի.) || սիրով յորդորօղ զոք: Իսկ մերթ բորբոքօղ ըզ սէր. կմ սիրով յորդորեցեալ և եռացեալ. և կմ եռանդնոտ. և ըստ այսմ ասի, սիրա յորդոր ջերմութիւն:

Սիրապատար. (Նախադրիւ հոլովի.) || պա-տարուն սիրով. կմ սիրալիր. կմ ունօղ զառատութիւն սիրոյ: Նարէկ. ղթ:

Սիրատունունդ: (Նախադրիւ հոլովի.) || սւ-նօղ զսիրալիր սնունդ. կմ սիրով և մեծա-գգուանօք սնեալ:

Սիրատուր: (Նախադրիւ հոլովի.) || տւօղ զսուրբ և զաստուածիկ սէր, կմ սիրով սրացեալ, այսինքն սլացեալ. և կմ այն՝ որ լինի սիրալիր յարձակմամբ: Նարէկ. ղէ:

Սիրատարփ. ի. իւ. ից. իւք: || սիրով տար-փացօղ, կմ ցանկացօղ: Մերթ ևս սիրով տարփացեալ. կմ սիրելի և տարփալի:

Սիրատենչ: || տես 'ի ներքոյ զՍիրատենչական:

Սիրատենչական. ի. աւ. աց. օք: || սիրով տեն-չացօղ, կմ փափաքօղ: Իսկ մերթ՝ սիրե-լի և տենչալի. կմ սիրուն և փափաքելի: Նարէկ. ղէ:

Սիրարկու. ուի. աւ. աց. օք: || արկանօղ սիրոյ. կմ պատճառ սիրելւոյ: Նարէկ. ձբ:

Սիրելի. լւոյ. եաւ. եաց. եօք: || է ապա-նին ընդունելութիւն սիրոյ բային, որով նշանակի այն՝ որ պարտի, կմ կարէ սի-րիլ: Իսկ մերթ նաև զոր յոյժ սիրէ ոք, կմ որ է 'ի սէր և 'ի շնորհս իւր. և կմ սի-րեցեալ: ռամկ. սէվգիլի: Սաղմ. 59. 7: Մարկ. 9. 6: և 12. 6: Բայց բազում անգամ եդեալ լինի փոխանակ ընդունելութեան սիրօղ. կմ փոխանակ նր, որ սիրէ զոք. և ըստ այսմ է Սաղմ. 5. 12: Ղուկ. 6. 32: 1. Կորն. 2. 9: Յակ. 1. 12: և յայլ բազում տեղիս: Սոյն պէս են և բառքս այսոքիկ. ածելի, կրելի, հանելի. բառնալի. և այլք բազումք. զորս տեսցես 'ի տեղիս իւրեանց:

Սիրելութիւն. թեան: || ածանցի 'ի սիրել բայէն, որպէս լինելութիւն 'ի լինել բայէն. և նշանակէ ներգործութիւն սիրոյ. կմ սի-րողութիւն, և կմ սէր: Խորէն. Խ. գլ. 23: Գ. գլ. 57: Ոսկէ. 1. հռով. ժբ. և ժդ:

Սիրեմ. եցի. եա՛. ել: (Ներգործ.) || զսէր ունել առ անձն ոք. կմ սիրով բերիլ առ իմն. որ և ռամկ. սավ՝ մէկնէլ: Ծննդ. 29. 30: Մատթ. 10. 37: Իսկ մերթ՝ ախորժել. ըստ այնմ Ծննդ. 27. 4: Արա ինձ խորտիկս՝ որպէս և ես սիրեմ: Բայց գիտելի է, զի ան-ցեալն բայիս այսորիկ ոչ միայն 'ի կրա-ւորականումն, այլ և երբեմն 'ի ներգործա-կանումն 'ի գործածի, եթ վասն այսպէս. սիրեցեալ. ըստ այնմ Խորէն. Բ. գլ. 88: սի-րեցեալ զկերպն, և զյամբոյն: Ըստ այսմ են և անցեալքս այսոքիկ. առեալ, ընկե-ցեալ, խօսեցեալ. և այլն:

Սիրընթաց: (Նախադրիւ հոլովի.) || սիրով ընթացօղ. կմ սիրով ընկերակցօղ ումեք. և կմ սիրակից. և ըստ այսմ ասի, ոչ զատիլ 'ի սիրընթաց մտերմութենէ:

Սիրիչ: (Նախադրիւ հոլովի.) || սիրօղ. կմ նա, որ սիրէ: Աձգաթ.

Սիրուհի. հւոյ. եաւ. եաց. եօք: || կին սի-րելի. կմ սիրեցեալ, և կմ սիրօղ ուրուք: Շնորհալին:

Սիրուն: (Նախադրիւ հոլովի.) || սիրելի. կմ արժանի սիրոյ, կմ սիրեցեալ. և կմ աղ-նիւ: 1. Տիմ. 6. 2: Իսկ 1. Տիմ. 6. 18. ուր ասի. առատս սիրունս, իմանի առատա-սէրս. այսինքն սիրօղս առատապաշտութեան. և

կամ յօժարութիւն բաշխօղս առատ տրոց։

Սիրունակ. ի. աւ. աց. օք։ || ունօղ զսէր. կամ սիրուն. և կամ սիրելի։

Սիրտ. սրտի. իւ. եց. իւք։ || է հարկաւորագոյն մասն ինչ 'ի կենդանիս զետեղեալ 'ի մէջ փորոտեաց, և պատեալ շուրջանակի ճարպով. ունի զկազմուած բրգաձև. է առաջին գործարան կենաց, և աղբիւր ամ շնչերակաց. և բնածին ջերմութեան. նաև սկիզբն ամ կենդանական ոգեաց և շարժմանց։ 2. Թագ. 17. 10։ և 18. 14։ Տօբ. 6. 5։ Բայց բազում անգամ առեալ լինի փոխանակ մտաց, կամ հոգւոյ, և կամ բաղձանաց նր։ Ծննդ. 17. 17։ Ելից. 36. 8։ Սաղ. 107. 2։ Մտթ. 15. 19։

Սիւան։ (Նախադրիւ հոլովի.) || է բառ ասորւոց, որով նշանակի ամիս ինչ եբրայական, որ համեմատի մարտի ամսոյն հայոց. և մայիսի ամսոյն հռոմայեցւոց. Բարուք. 1. 8։

Սիւկ. կամ սիւք։ || տե՛ս զՍիք։

Սիւղոբայ։ || տե՛ս զՍիղղոբայ։

Սիւն. սեան. եամբ. կամ սիւնիւ. 'ի սեանէ. սեանց. ամբք։ || մոյթ, կամ նեցուկ տանց, կամարաց, և այլոց կերտուածոց` շինեալ երկայնաձիգ իբրև զուղիղ բուն ծառոյ։ ռամկ. տան. կամ փէրէկ. Դատ. 16. 26։ 3. Թագ. 7. 3։ տե՛ս 'ի բառն հեծ։

Սիւնաբնակ. ի. աւ. աց. օք։ || 'ի սիւնս բնակօղ. կամ 'ի վր սեան կեցօղ. և կամ սիւնակեաց։

Սիւնակ. ի. աւ. աց. օք։ || փոքր սիւն. կամ սիւնաձև նեցուկ. և այս թէ բոլորակ իցէ, թէ քառանկիւնի, և թէ տափարակ։ Ելից. 35. 11։ և 26. 16. և 17. և 18։ և 35. 11։

Սիւնական. ի. աւ. աց. օք։ || սիւնային, կամ որ առ սիւնս վերաբերի։ Իսկ մերթ սիւնակեաց. կամ սիւնաբնակ։ 'Ի Հարս հարց. ժթ։

Սիւնակեաց. կեցի. աւ. աց. օք. || 'ի վերայ սեան կեցօղ, կամ զկեանս վարօղ։ 'Ի Հարս հարց. ժթ. և իզ։

Սիւնաձև։ (Նախադրիւ հոլովի.) || ունօղ զձև սեան, կամ ձևացեալ իբրև զսիւն. կամ սիւնակերպ. և կամ սիւնանման։ Աճգատ։

Սիւնամուտ. մտի. իւ. եց. օք։ || մտանօղ 'ի սիւն. կամ սիւնակեաց. և կամ սիւնաբնակ. 'Ի Հարս հարց. ժթ.

Սիւնեզրոյն. կամ սիւնէզրոյն. ի. աւ. աց. օք. || է բառ յունական, որ թարգմանի նշանակ. կամ համապատիկ. որպիսի է դաւանութիւն հաւատոյ, որ գրեալ և աւանդեալ լինի իբրև զկանոն հաւատացելոց։ Կիւրղի պարապմանց. իը։

Սիւնհոդոս. ի. աւ. կամ իւ. աց. օք։ || է բառ յունական, որ թարգմանի ժողով. կամ գումար. և կամ հաւաքումն. և այս յատկապէս առի. եկեղեցական ժողովոյ. որ գումարի 'ի պէտս սահմանադրութեանց հաւատոյ, կամ հերքման աղանդոց չերծուածողաց. ընդ եղև 'ի դարս դարս առ նախնեօք։ Նարէկ. զզ։ և Լամբրոն։

Սիւնհոդոսական. ի. աւ. աց. օք։ || այնամ, որ վերաբերի առ սիւնհոդոս. կամ ժողովական. և կամ գումարական։ Աճգատ։

Սիք։ || տե՛ս զՍիգ. Լամբրոն։ և 'Ի Հարս հարց. ժէ. 'Ի չէտագիրն։

ՍԼ

Սլահ։ || տե՛ս զՍլէհ։

Սլանամ. ացայ. ցիր. անալ։ (ընդ. միջ.) || սրանալ. այսինքն սրաթռիչ լինել. կամ արագաթև թռուցմամբ սաւառնել յառաջադէմ մտնել. կամ խոյանալ. կամ վերաթռչել. և կամ թռանիլ։ ռամկ. սուր, կամ [illegible]։ Սաղմ. 17. 11։ Իմաստ. 5. 11։ Երէմ. 49. 22։ Ամբակ. 1. 8։

Սլաք. ի. աւ. աց. օք։ || սրածայր խոցօտիչ գործի, զոր 'ի բացուստ ձգեն. կամ 'ի մերձաւոր մխեն 'ի պատանել զոք. որպիսի է նետն. աշտէն. այսինքն խէշտն. գեղարդն. շեշտն. այսինքն շիշն. և այլք նմանիք։ Սաղմ. 54. 22։ Առակ. 25. 18։ Նարէկ. զէ։ ըստ այսմ է և 'ի Խորէն. ա. գր. 10. ուր ասի. Եւ ընդ մէջ թիկանցն թափանցիկ լեալ` յերկիր անկանի սլաքն. այսինքն երկաթեայն նետն, ոչ կայլ անդ։

Սլաքալէզու. զուի. աւ. աց. օք։ || ունօղ զլեզու սուր իբրև սլաք. որպիսի է օձն։ Բայց մերթ անդրադարձաբար առեալ առ զնենգաւորաց. կամ զրպարտողաց, որք լեզուօք իւրեանց իբրև սլաքօք խոցեն ըզմարդիկ։ Մծբն. ժթ։

Սլաքաւոր. ի. աւ. աց. օք։ || ունօղ զսլաքս. կամ որոյ ծայրն է իբրև զսլաք. և կամ սրածայր։ ռամկ. սուր ծայրանօղ. կամ [illegible]։

Սլէհ. ի. իւ. ից. իւք։ || է բառ այլազգական. որով նշանակին կահք, և կազմածք պատերազմականաց. և կամ զէնք։ տաճկերէն։ Աճգատ։ և 'Ի հին պատմագիրս։

ՍԽ

Սխալ։ (Նախադրիւ հոլովի.) || սխալումն. կամ վրիպակ. և կամ մոլորութիւն։ ռամկ. ղալաթ։ Գործ. 27. 9։ Իսկ մերթ սխալեալ. կամ վրիպեալ. և կամ մոլորեալ. ռամկ. ղալաթ։

Սխալագոյն. գունի. իւ. եց. իւք։ || առաւել սխալ. կամ վրիպագոյն. և կամ թիւրագոյն։

Սխալակ. կամ սխալսակ. ի. աւ. աց. օք։ || սխալօղ. կամ վրիպօղ. կամ գթօղ. կամ դանդաչօղ. և կամ ցնորեալ. որպիսիք են նոքա, որք 'ի շուայտութեան, և յարբեցութեան աշխեալք` գայթեն 'ի գայթելս գնան. մոլորին, և գլորին։ ռամկ. գլորվելով։ և ըստ այսմ է Եսայ. 24. 20. ուր ասի. իբրև զարբեալն, և սխալակ գլորեսցի։

Սխալական. ի. աւ. աց. օք։ || սխալօղ. կամ վրիպական. կամ մեղանչական. և կամ մոլորական։ Նարէկ. հթ. և ղէ։

Սխալակիմ. կամ սխալակիմ. եցայ. եաց. իլ։ (ձայնակք.) || սխալիլ. կամ վրիպիլ. կամ

փթել. կմ դանդաչել. և կմ ցնորիլ: ռամկ. գլուփելն: Ըստ այնմ 'ի նկն պտտմանցն. Յոր ժամ արբեցաւ, սխալականցաւ:

Սխալանք. անաց. օք: (անեզ.) || սխալումն. կմ վրիպումն. կմ մոլորումն. կմ գլթումն. և կմ սայթաքումն: Խորէն. ը. աշ. 72:

Սխալացի: (մակբայ. որակ.) || սխալմամբ. կմ մոլորութբ. և կմ վրիպակաւ: Իսկ մերթ վարի իբրև գանուն. և նշանակէ սխալական. և կմ սխալօղ: Լամբրօն:

Սխալեմ. եցի. եա. ել: || մերթ վարի իբրև զօրութբ անցողական. և նշանակէ՝ սխալեցուցանել: Իսկ մերթ իբրև չէզոք. և նշանակէ՝ սխալիլ: Մատ. 15. 14:

Սխալեցուցանեմ. ցուցի. եցն. ել: (անցողակ.) || 'ի սխալանս արկանել. կմ թիւրել. կմ մոլորեցուցանել: ռամկ. զլորեցնել. կմ ծուլցնել. կամ ծռել: Իսկ մերթ վրիպեցուցանել. կմ շեղեցուցանել. և կմ 'ի բաց խուսեցուցանել. որ է առաջապուրծ ընել: Երբեմն և սահեցուցանել. կմ գթեցուցանել. և կմ սայթաքեցուցանել: ռամկ. սահեցնել. կմ գլորցնել:

Սխալիմ. եցայ. եան. իլ: (ձայնակր.) || անկանիլ 'ի սխալանս. կմ թիւրիլ. կմ տրտուղիլ. կմ մոլորիլ. և կամ մեղանչել: ռամկ. զլորիլ. կմ ծուլրիլ: Յոբ. 18. 7: Իմաստ. 6. 10: Երեմ. 22. 21: Իսկ մերթ՝ վրիպիլ. կմ շեղիլ. կամ 'ի բաց անկանիլ 'ի կարգէ. 'ի թուոյ. 'ի նպատակէ, և այլն: և ըստ այսմ իմանի՝ մինչ ասի. ոչ սխալեցաւ բնաւ յաւարէն. կմ 'ի բանիցն. և կմ արջառ ոչ սխալեցաւ 'ի ծննդենէ. և այլն: Յեսու. 21. 45: 1. Թագ. 30. 19: Յոբ. 21. 10: Մերթ և սահիլ. կմ գթել. և կամ սայթաքել. և ըստ այսմ ասի. սխալել ոտից. և այլն: 2. Օրին. 32. 35:

Սխալող. ի. աւ. աց. օք: || սխալական. կմ գայթող. կմ գթող: և ըստ այսմ ասի. կապել ընդ սխալող մարմնոյ. կմ այր սխալող: 'ի Գիրս Ծծին խոստովանութ:

Սխալումն. լման. մամբ. մանց. մամբք: || տե՛ս զՍխալանք: Նարեկ. ժե. և հթ:

Սխաղակ: || տե՛ս զՍխալակ:

Սխաղակիմ: || տե՛ս զՍխալակիմ:

Սխար: || տե՛ս զՍղար:

Սխարեմ: || տե՛ս զՍղարեմ:

Սխուր. սխրոյ. ով. ոց. ովք: || գին. կամ արժողութիւն. և կմ վարձ. և ըստ այսմ ելանէ 'ի սմանէ բառս՝ շանսխուր, որ է գին շան: Իսկ մերթ զարմանք. կմ սքանչելիք. և կամ հրաշք. և ըստ այսմ ելանեն 'ի սմանէ բառքս. սխրանալ. սխրագործ. և այլն:

Սխրագործ. գործի. իւ. աց. օք: || սքանչելագործ. կմ հրաշագործ. և կամ նշանագործ: ռամկ. հրաշք գործօղ: Աճառ: Կիւրղ. Եզեկ. 'ի Բառգիրս. առ խոստովանութ:

Սխրալի. լւոյ. եաւ. եաց. եօք: || ծագէ 'ի սխուր բառէս. և նշանակէ՝ լի սխրանօք. կմ սքանչելի. կմ հիանալի. կամ հրաշալի. և կամ նաղելի: Նարեկ. իը. և ղէ: Յա ուրէ: և Լամբրօն:

Սխրանամ. ացայ. ացիր. աւ: (ընդոծէ.) || հրաշանալ. կմ սքանչանալ. կմ հիանալ. և կմ զարմանալ: Նարեկ. 'ի Մեկն. Երգոց: և Լամբրօն:

Սխրանք. անաց. օք: (անեզական.) || զարմանք. կմ հիացումն. կամ սքանչելիք. և կմ հրաշք:

Սխրատարած: (Նախադրիւն հոլովի.) || սքանչելատեսակ. կմ հրաշալիքս. կմ զարմանալի. և կմ հրաշափառ: Նարեկ. ղէ:

Սխրացուցանեմ. ցուցի. ացն. ել: (անցող.) || սքանչացուցանել. կմ հիացուցանել. կմ հրաշացուցանել: ռամկ. զարմացնել:

Սխրելի. լւոյ. եաւ. եաց. եօք: || սխրալի. կմ զարմանալի. կամ նաղելի: Ըստ այսմ Շնորհալին. յաղթեն Եղեկիայ: Ով հրամայէ մեծ իշխանին. կմ սխրելի թագաւորին:

Սխրիմ. եցայ. եան. իլ: (ձայնակր.) || նուաղիլ. կմ հիւծիլ. կմ մաշիլ: և ըստ այսմ ասի. 'ի պակասութենէ կերակրոյ նուաղեալ սխրիլ մարմնով: ռամկ. զլացանիլ: Բայց ըստ ոմանց ելանէ սա 'ի սխուր բառէս, և նշանակէ սխրանալ. որ 'ի վերոյ մեկնեցաւ:

Ս Կ

Սկախառն: (Նախադրիւն հոլովի.) || տղմախառն. կմ մրրախառն. և կմ խառնեալ աղտեղութբ, որք լինանեն 'ի յատակս ջուրց, և այլոց նմանեաց. և ըստ այսմ ասի. սկախառն ջուր. կմ ըմպելիք. առաջ. և այլք նմանք: ռամկ. լղոսխ խառնած: Նարեկ. ծգ:

Սկահ. ի. իւ. ից. իւք. կմ աց. օք: || սկիհ. կմ կթղայ. և կմ փոքրիկ սկաւառակ ըմպելեաց: ռամկ. գաւաթ. կմ ֆինճան. և կմ թասակ: և յայսմանէ առեալ սկահ կոչի և եղէ. զարդ յօրինեալ 'ի ձև սկհոյ, կամ ամփոփեալ բաժակի, զորս ունէին աշտեղունքն աշտանակին, զոր տեսար մեզ ասէս: Ելից. 25. 31:

Սկահակ. ի. աւ. աց. օք: || փոքրիկ սկահ. կմ սկիհ վայելչուչ: ռամկ. դդերթասակ. կմ գաւաթ:

Սկահաձև. ի. իւ. ից. իւք: || ունօղ զձև սկահի. ըստ գաւաթի. կմ թասի: Բայց երբեմն գոյականաբար առեալ նշանակէ զյօրինուածս կերպարանաց 'ի ձև սկահի, որպիսիք էին զարդքն, ունէին աշտեղունքն աշտանակին հին օրինաց, որք և դրուագ նման ընկուզոյ, առաջին՝ սկահաձևք ընդուզաքարդք: Ելից. 25. 33: և 34. և 37. 19:

Սկայ. ի. իւ. ից. իւք: || նոյն է ընդ բառին հսկայ. ոսկ. ուժեղ ընդ բառին հսկայ, և ամբարին ընդ բառին հսկամբար, և այլք բազումք, որք 'ի մեկնութիւն, հ. տառին եղան: Ծննդ. 6. 4: Թուոց. 13. 34: Յոբ. 26. 5:

Սկայաբար: (մակբայ.) || հսկայաբար. կմ իբրև զհսկայ: Խորէն. ը. աշ. 82:

Սկայագործ. ի. իւ. աց. օք: || ունօղ զգործ կմ զզաւրութիւն հսկայի. կմ որ գործէ զգործս

իբրև

խորհ. զհսկայ: Իսկ մերթ նշանակէ զգոր ծեալն 'ի հսկայէ. և յայսմանէ առեալ՝ ըս կայագործ կոչին ամ մեծամեծ՝ և անձոռնի կերպարանք: 'Ի հին պարփագիրս:

Սկայազօր: || տես զհսկայազօր:

Սկայազուն: || տես զհսկայազուն: Մծբ. Ը:

Սկանամ. ացայ. ցէր. անալ: (ընդ. միջ.) || սկախառն լինել. կմ՝ մօրանալ. կմ՝ աղմա նալ. կմ՝ մրրանալ. և կմ՝ լսեալ լինել դր ակաց և ազատութիւնք. որք ելանեն 'ի հա սանուստ իւրեաց. որպ 'ի Ջրոյ. կամ յրմկե լեաց. և այլն. ռամկ. ւղղփ. կմ՝ Բէւմ խա ղէն. կմ՝ ւրտոշ ւշոմկ. և ըստ այսմ ասի 'ի Ճառս ինչ. երկիր անկասպ և անտրէութ ջրով սկացեալ:

Սկայընթաց: (Նախդրիւ հոլովի.) || ունօղ զընթացս հսկայի. կմ՝ խոյս զհսկայընթա ցող. կմ՝ քաջընթաց. և կամ արընթաց: Նորէէ. 'Ի գոհ. առատ:

Սկաւառակ. ի. աւ. աց. օք: || անօթ կազ մեալ 'ի ձև խոր սկտեղ, որով եդեալ լի նի կերակուր 'ի սեղան, զոր և կոչեմք ալը նակ: ռամկ. տեփսի. կմ՝ Թապսի. 3. Թագ. 7. 50: Մատ. 23. 25: և 26. 23: Իսկ մերթ նշանակէ զըմպանակն ձևացեալ 'ի կերպ փիքքիկ և բոլորակ տաշտի, կմ՝ կոնքի, և կմ՝ անպատուանդան և ձանձաղ բաժա կի. ռամկ. Թաս. կմ՝ փէասէ: 2. Եզր. 1. 10: 3. Եզր. 7. 70: Յովք. 15. 7. Եւ յայսմանէ առեալ՝ սկաւառակ կոչի տաշտաձև ոսկրն կառափոյ, որ 'ի ներքուստ պարունակէ զուղեղն. և արտաքուստ ծածկի հերովք. ըստ այնմ Խորէն. Ե. պր. 84. Հարկանի յու մեմնէ սակերբ (Թամթըրով) գլուխն, և վերացուցեալ մասն ինչ յոսկերէ սկա ւառակին, պակաս գտաւ բոլորումն գա գաթան:

Սկեմ: || տես զհսկեմ: Մարկ. 13. 33:

Սկեսուր. սրի. աւ. կմ՝ րէ. աց. րօք: || է անուն ընդհանուր և առանձնական, զի սկեսուր կոչի հարսին՝ մայր առն նր. ռամկ. կէյնար: Հռութ. 1. 14: Տօբ. 10. 12: Մատթ. 10. 35:

Սկեսրայր. սկեսրառն. սրամբ. սկեսրարք. սկեսրարանց. ամբք: || է սրականն և առն ձական անուն. վմ զի սկեսրայր կոչի հար սին՝ այր սկեսրի նր. որպ և ձայն բառին հնչէ. Ծննդ. 38. 13. և 25: 1. Թագ. 4. 19: Տօբ. 10. 12:

Սկեսրեայ. րէի. իւ. իւց. իւք: || նոյն է ընդ վերինս: Ա. Թագ. 4. 21. և 22:

Սկզբնաբոյս: (Նախդրիւ հոլովի.) || 'ի ըս կզբանէ բուսեալ. կմ՝ նախաբոյս. կամ ղեռաբոյս. և կմ՝ նորաբոյս. որ է փէօրճէ. կմ՝ ժաթղաշ. և ըստ այսմ ասի. սկզբնա բոյս հրասիկ պատանեկաց: Նորէէ. զէ:

Սկզբնագիր. գրի. աւ. աց. օք: կմ՝ ոյ. ով. աց. ովք: || 'ի սկզբանէ գրեալ. կմ՝ 'ի ըս կզբանէ գծագրեալ: Իսկ մերթ սկզբնա կան գիր. կամ բնագիր:

Սկզբնաթիւ: (Նախդրիւ հոլովի.) || 'ի ըս կզբանէ թուեալ. կմ՝ 'ի սկզբան թուօղ: Իսկ մերթ ասի՝ որ յառաջքան զայլս թուէ

եալ լինի. կմ՝ սկիզբն և գլուխ համարի. և կմ՝ միշտ քան զայլս նախադասի՝ գոլով գլ խաւոր, կմ՝ երեւելի. և ըստ այսմ ասի 'ի Նորէէ. 'Ի գոհ. առատ. զմեզն պետրոսէ. սկզ բնաթիւն և նախամեծարն կեփաս:

Սկզբնաժառանգ: (Նախդրիւ հոլովի.) || 'ի սկզբանէ ժառանգօղ. կմ՝ առաջին սեպ հականօղ: Իսկ մերթ 'ի սկզբանէ ժառան գեալ. կմ՝ յառաջագոյն առացեալ և վայե լեալ: Նորէէ. ղզ:

Սկզբնալոյս. (Նախդրիւ հոլովի.) || 'ի ըս կզբանէ լուսաւորեալ. կմ՝ յառաջնմէ լու սաւորօղ: Իսկ մերթ սկզբնական, կամ առաջին լոյս. կմ՝ նախկին լուսաւորութի: Նորէէ. ծզ: և 'Ի գոհ. խաւսն:

Սոկզբնածին. (Նախդրիւ հոլովի.) || 'ի սկզ բանէ ծնեալ. կմ՝ նախ գոյացեալ. կմ՝ յառաջքան զայլս արարածեցեալ: Իսկ մերթ նախածին. կմ՝ անդրանիկ: Նորէէ. լզ:

Սկզբնական. ի. աւ. աց. օք: || այն ամ, որ վերաբերի առ սկիզբն. կամ սկզբնաւոր. կմ՝ նախկինական. կմ՝ գլխաւոր. և կմ՝ առա ջին: Նորէէ:

Սկզբնահայր. հօր. հարբ. հարց. հարբք: || սկզբնական հայր. որով մերթ նշանակի նախահայր, որպիսիք եղեն ադամ. նոյ. և այլն: Նորէէ. հը. և ղզ: Իսկ մերթ հեղի նակ. կմ՝ գլուխ և առաջնորդ իրիք, և ըստ այսմ ասի. սկզբնահայր սկսոյ, բարեաց, կմ՝ չարեաց. և այլն: Նորէէ. լա. հզ. և վ. և Յովհաննու: Այսպէս և աբրահամ զի որում եղև հեղինակ հաւատացելոց՝ կոչի սկզբ նահայր հաւատոց: Նորէէ. հա:

Սկզբնաձեռն: (Նախդրիւ հոլովի.) || նոյն է ընդ բառիս նախաձեռն, որ 'ի տեղւոջ իւրում մեկնեցաւ: Բայց 'ի Նորէէ. 'Ի փա ռըն էկեղեցւոյ. ուր ասի. որ յսկզբնա ձեռն յառաջակարգաց զայս կերպարան ի րի հաճեցար լինել, վարի նախդրիւ հը րև զմակբայ. և նշանակէ 'ի սկզբանէ. կմ՝ յառաջագոյն:

Սկզբնաձիր: (Նախդրիւ հոլովի.) || 'ի սկզ բանէ ձրեալ, Թ պարգևեալ, կմ՝ շնոր հեալ: Իսկ մերթ՝ 'ի սկզբանէ շնորհօղ, կմ՝ պարգևօղ: Նորէէ. հը. և ղզ: Մերթ և ա սկզբնական, կմ՝ առաջին ձիր:

Սոկզբնամայր. մօր. մարբ. մարց. մարբք: || սկզբնական, կամ առաջին մայր, որ և ասի նախամայր: Իսկ մերթ՝ կին հեղինակ. կամ գլուխ իրիք. ըստ այնմ. Նորէէ. զ. Պատուեցաւ և կինն պտղնիկ սկզբնամայրն ապաշխարողաց:

Սկզբնամեծար: (Նախդրիւ հոլովի.) || 'ի սկզբանէ մեծարեալ. կմ՝ նախամեծար. և կմ՝ նախապատիւ: Նորէէ. 'Ի գոհ. խաւ սափէլոց:

Սկզբնաներհակ: (Նախդրիւ հոլովի.) || 'ի սկզբանէ ներհակօղ. կմ՝ առաջին հակա ռակօղ. և կմ՝ նախկին թշնամի. որպիսի է դևն՝ բարսոյն քոյ: Նորէէ. լէ:

Սկզբնաշաւիղ: (Նախդրիւ հոլովի.) || տես զնախաշաւիղ: Նորէէ. 'Ի գոհ. խաւս. և առատ:

Սկզբնաշնորհ. ի. իմ. ից. իւք: || սկզբնաձիր. կմ նախապարգև. կմ յառաջագոյն քան զայլս ընդունօղ. կմ մատակարարօղ շնորհաց: Նարէկ. ձը:

Սկզբնաչար. ի. աւ. աց. օք: || սկիզբն. կմ հեղինակ չարեաց. կամ որ ըստ ծնին ունի զչարութիւն. և կմ գլխաւոր և սկզբնական չար: Լամբրօն:

Սկզբնապատիւ: (Նախդրիւ հոլովի.) || ըստ կզբնամեծար. կմ նախապատիւ: Նար. ղթ:

Սկզբնապատճառ: (Նախդրիւ հոլովի.) || սկզբնական պատճառ. կմ առաջին արարող: Նարէկ. կն:

Սկզբնապար: (Նախդրիւ հոլովի.) || 'ի ըս կզբանէ. կմ յառաջագոյն ածօղ. կմ ըս կիզբն պարու. և կամ պարագլուխ: Նարէկ. ղէ:

Սկզբնաստեղծ: || տե՛ս զՆախաստեղծ: Նարէկ. ղդ:

Սկզբնատիպ. տպի. իմ. իւ. իւք: || սկզբնական տիպ. կմ նախագաղափար, որէ առաջին օրինակ, ըստ որոյ նմանութ կերպանայ պատկերն. կմ արտագրի այլինչ իր: Խորէն. յառաջաբանութէ: և Յն որբ: Իսկ մերթ 'ի սկզբանէ տպաւորեալ. կմ նախագաղափարեալ. և կամ նախանկարեալ. որպիսիք են տնօրէնութիքն քն օրինակեալք 'ի հնումն: Նարէկ. Ճ. և ղթ.

Սկզբնարար. ի. աւ. աց. օք: || սկիզբն առնօղ. կմ հեղինակ. և կմ գլուխ և առաջնորդ. և ըստ այսմ ասի սկզբնարարն բարեաց Յն. կմ սկզբնարար կուսից ու եսեծածին: Նարէկ. ղը. և 'ի գով. կուս: Իսկ մերթ 'ի սկզբանէ արարեալ. կամ նախնական. և կմ առաջին. և ըստ այսմ ասի սկզբնարար ուրախութի: Աղգաթ:

Սկզբնաւոր. ի. աւ. աց. օք: || ունօղ ըսկիզբն. կմ սկսեալ: Աղգաթ: Իսկ մերթ ըսկզբնական. կմ նախնական. կմ առաջին: Նարէկ. ժ. և ժա: Եւ մերթ գլխաւոր. կմ երևելի:

Սկզբնաւորեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || սկզբնաւոր առնել. կմ ընդ սկզբամբ տարկանել: Իսկ մերթ սկիզբն առնել իմիք: կմ սկսանիլ: ռամկ. պաշլամիշ: Նարէկ. ղջ. և 'ի գով. առաք:

Սկզբնաւորութիւն. թե: || տե՛ս զՍկզբնութիւն:

Սկզբնեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || ըսկզբնաւորել. կմ սկսանիլ: ռամկ. պաշլամիշ: Նարէկ. գ:

Սկզբնութիւն. թեան: || սկզբնաւորութի. կմ սկսումն. և կմ սկսուած: Իսկ մերթ գլխաւորութի. կմ նախապետութի. կմ նախապատուութի: Յն որբ:

Սկի. սկւոյ. ւով. եաց. եօք: || տե՛ս զՍկիհ:

Սկիզբն. սկզբան. ամբ. անց. ամբք: || այն ժամ, յորմէ սկզբնաւորի իմն. և ըստ այսմ նախկին գիրն ասի սկիզբն տառից. պատճառն սկիզբն գործոց. անդրանիկն սկիզբն որդւոց. երեխայրին սկիզբն պտղոց. առաջինն 'ի յամիս սկիզբն ամսոց. և այլն: Ծննդ. 49. 3: Ելից. 12. 2: Սաղմ. 77. 51: Իսկ

մերթ սկզբնաւորութի. կմ սկսումն. կմ գլուխ. և կմ առաջք. որոց ներհակն ասի վերջ. կմ կատարած: Ծնն. 10. 10: Բ. Օրին. 11. 12: Երեմ. 28. 1: Երբեմն և ընդ բայի շարակցի այսպէս. սկիզբն առնուլ. կմ սկիզբն առնել. և կմ այսպէս. սկիզբն կալնուլ. կմ սկիզբն արկանել. և նշանակէ՝ սկզբնաւորել, և սկզբնաւորիլ. կամ սկսանիլ. և սկսեալ լինել: ռամկ. պաշլամիշ: Յեսու. 3. 7: Երեմ. 25. 29: Եզր. 2. 3: Բայց երբեմն բացառականն սորա վարի իբրև զմակբայ. զոր օրինակ 'ի սմանէ էնե, զկնի իսկ և իսկ բառին:

Սկիհ. սկհոյ. ով. ոց. ովք: || սկահ. ջր կթղայ. կմ բաժակ. և կմ սկաւառակ ըմպելեաց: ռամկ. գաւաթ. կմ թաս. և կմ ֆինճան: Ծննդ. 44. 2. և 5: ըստ այսմ և 1. Մակ. 1. 23. սկիհ կոչին այսպէսի անօթք, որովք զգինի. կմ զձէթ, և կմ զարիւն զոհից նուիրէին ոյ՝ հեղլով զնա առ եղջերօքն սեղանոյն: Եւ յայսմանէ առեալ սկիհ կոչի 'ի նորումս ուխտեղէն, կմ արծաթեղէն բաժակն; յորում սրբագործեալ զգինին 'ի Ճշմարիտ արիւն քի:

Սկիւռ. կմ սկուռ. սկռոյ. ով. ոց. օք: || գաւհիճ. կմ պաշտօնեայ սպանանօղ չարագործաց: ռամկ. ճէլլատ: Դարձեալ՝ է սա անուն քարի իմիք, որ ունի զզարմանալի բնութի. զի ամբողջ արկեալ 'ի ջուր ոչ ընկղմի, այլ շրջի յերեսս ջուրց իբրև զսունկ, ջր իբրև զմանեակ: բայց եթէ փշրեսցի, և 'ի ջուր արկցի՝ վաղվաղակի սուզանի 'ի յատակս իբրև զկապար:

Սկնդիկ. դկի. աւ. աց. օք: || տե՛ս 'ի ներքոյ զՍկնդունկ:

Սկնդունկ. կմ սկնտունկ. դկի. աւ. աց. օք: || ծաղի սա 'ի բառէս սկունդ՝ 'ի ձեռնունածաղկան մանկանց՝ ուղ. և նշանակէ զխոտ, կմ զանարգ սկունդն. ջր շուշն, թամամ 'ի հին պարսիկ լր. Առաջի մեծամեծաց իմոց յանդիմանեաց զիս իբրև սկնտունկ մի, ջր իբրև զանարգ շուն մի: Դարձեալ՝ սկն դունկ կոչի կինն լքեալ. կմ 'ի բաց թողեալ յառնէն, որով լինի անտէրունջ, և անզաւակ, և իբրև զմերժեալ սկունդ անարգ, և թշուառ. յորմէ և անուանեցաւ սկնդունկ: ռամկ. պօշանմիշ էրքէ. կամ երէսէ յգած կին: Եսայ. 54. 1: Գաղ. 4. 27:

Սկունդ. սկնդի. աւ. աց. օք: || շուն սեպհական, զոր պահեն 'ի տան. կմ ձագերցուցանեն զհետ: որպիսի է փինօն, և այլք նմանք, Շնորհալին: Եւ 'ի սմանէ եկանէ բառս սկնդունկ:

Սկուռ: || տե՛ս զՍկիւռ:

Սկուտղ. սկտեղ. եղբ. եղաց. եղբք. կմ օք: || անօթ բոլորակ, և տափարակ դրգեալ տակաւին ինչ. որպիսի է այն, յորոյ վր դնեն զկերակուրս, կմ զըմպելիս, և մատուցանեն ումեք: ռամկ. բէչիթ: Մար. 14. 8: Մարկ. 6. 25. և 28:

Սկսանիմ. սկսայ. սկսայց. սկսցի. սկսցուք. սկսեալ. իլ: (Համաօրական բայ.) || սկիզբն

առնել. կամ սկզբնաւորել, և սկզբնաւորիլ: ռամկ. սկսիլ. կամ պաշլամաք: Գործ. 13. 5: Ղուկ. 13. 26: 2. Կոր. 3. 1:

Սկսանիմ. սկսայ. եր. ուլ: (Ներգործ.) || սկսանիլ. կամ սկզբնաւորել: ռամկ. պաշլամաք: Մծբն. ԺԹ:

Սկսումն. սյ. ով. ից. ովք: || սկսումն. կամ սկզբնաւորութիւն. և կամ սկսեալ իր: Յճ ուրէ:

Սկսուածն. ման: || նոյն է ընդ վերինոյն: Ըն. 1. հոփ. ա:

ՍՂ.

Սղալ: || տե՛ս զՍխալ:

Սղալական: || տե՛ս զՍխալական: Հոռ. բէկ. իե:

Սղակի: (մակբայ որակական.) || ծայրի 'ի բառէս՝ սուղ. և նշանակէ սղապէս. որ է սղելով. կամ կարճելով. և կամ նուազաբար:

Սղալիմ: || տե՛ս զՍխալիմ: 'ի Գիրս Դատ. ԺԻ Լեւոնփոյին:

Սղամ. ացի. ա. ալ: (չէզոք.) || սուղել. կամ ջնջել. կամ կոճչել զեռնոց, ատղոց, ձեռաց, և այլոց նմանեաց: ռամկ. ըուըըը լոլէ. կամ ճըդ յան հանել:

Սղանամ. ացայ. ացեր. ալ: (Չէզ.) || սղել. քսուել լինիլ. կամ նուազել. կամ կարճել. և կամ պակասիլ: ռամկ. խորճըլմագ. կամ պախիլ:

Սղար. ոյ. ով. ից. օք: || պաշարումն քաղաքի. կամ շուրջ պատումն:

Սղարեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || պաշարել զքաղաք. կամ զամրոց. և զայլ ինչ նման:

Սղացուցանեմ. ցուցի. ացի. ել: (անցող.) || սուղ առնել. կամ նուազեցուցանել. կամ կարճել: ռամկ. խորճըցնել:

Սղիմ. եցայ. եաց. իլ: (ձայնաւոր.) || տե՛ս զՍղանալ:

Սղոխ. կամ սողոխ. ի. իմ. ից. իւք: || գունդ չէր ելեալ 'ի խոնաւ իրաց. ոմ՝ 'ի ջրոյ. կամ յօշարակաց եփեցելոց, և յայլոց նմանեաց, որք 'ի ջուր լուծեալ չխթ չխթ ի_ջանեն. և յայսմանէ նաև ցօղք. և եղեմանք իջեալք յօդոյ՝ սղոխ կոչին: ռամկ. պոսող: Խորէն. Գ. պր. 62:

Սղոց. ի. աւ. կամ իմ. ոց. օք: || խիզար, որ է առամնաւոր գործի ինչ երկաթեղէն, որով հատանեն զփայտ. կամ զայլ ինչ նման՝ առ 'ի լինիլ սուղ. ո կարճ. կամ ա_նօսր. յորմէ և կոչեցաւ սղոց՝ խիթ է գործի սղոցուցիչ. ոմ և հատիչ գործին կո_չի հատոց: ռամկ. եւս տղոց. կամ փէոփէրէ: Եսայ. 10. 15: Իսկ եթէ զինչ նշանակէ. 2. Թագ. 12. 31: 1. Մնաց. 20. 3: Առ Եբր. 1. 3. յորս ասի. արկանել զժողովուրդն ընդ սղո_ցաւ. կամ կարել զշխս սղոցօք երկաթեօք, տե՛ս 'ի բառն ուրադ:

Սղոցաբերան: (Նախադրիմ հոլովի.) || ունող զբերան առամնաւոր նման սղոցի:

Սղոցաձև. ի. իմ. ից. իւք. || ունող զձև սղո_ցի. կամ ձևացեալ իբրև զսղոց՝ ունելով զատուք առամանսն. որպիսիք են անիւք կամնասայլից պատեալք սղոցաբերան եր կաթօք. զորմէ լինապէս ասացաւ 'ի բառն կամնասայլ: Եսայ. 41. 15:

Սղոցեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || սղո_ցաւ կարել. կամ հատանել: ռամկ. փէոփէ_րէով կէսէլ: Իմաս. 13. 11: Ղեւտ. 13. 59: Եբր. 11. 37: Այնպէս և սղոցաձև անուամբ ջար դեալ զմարդիկ՝ սղոցել ասի. տե՛ս 1. Մնաց. 20. 3:

Սղոցի. ցւոյ. եաւ. եաց. եօք: || է տեսակ ինչ կաղնւոյ, որ բերէ զպտուղ սպիտակ՝ և կարծրակեղև. ամենեւին նման երկայն և մեծ փնդխի. բայց ոչ լինի կերեալ. այլ 'ի գործ ածի 'ի ներկարարս, և 'ի խաղա խորդաց՝ կոչեցեալ 'ի բարբառս տաճկաց՝ բաղամութ: Արդ՝ փայտ ծառոյս այսորիկ է յոյժ կարծր, և դժուարադարձելի. իսկ եղերք տերևոյն են սղոցաձև առամնաւո րեալք. յորոց առեալ զանուն՝ բոլոր ծառն յորջորջեցաւ սղոցի: Զայս ծառս յոյնք կոչեն փալինօս, որ և առ նոյն ծաղի 'ի սղո_ցելոյ: ռամկ. բոլամութի ծառ: Ղեւտ. 13. 58:

ՍՄ

Սմբակ. ի. աւ. աց. օք: || կճղակ. որ է_ղունգն ձիոց, և այլոց համանման կեն_դանեաց, որ երբեմն առեալ լինի համ_դերձ թաթիւքն, որով կոխեն: Եսայ. 5. 28: Եզեկ. 26. 11: Բայց մինչ ասի՝ առ սմ բակ պղտորել, նշանակի ոտիւք ժխորել. կամ աղտոտել. որ պուլանըգլըշ ընել. Եզեկ. 32. 2:

Սմբակակոխ. (Նախադրիմ հոլովի.) || սմբա կաց կոխան եղեալ: ռամկ. չըղնախ: Բայց սա ըստ մեծի մասին ընդ բայի շարադ_րի այսպէս. սմբակակոխ առնել. և նշա նակէ՝ սմբակաց կոխան առնել. կամ առ ոտն կոխել. կամ առ աթուր համարել: ռամկ. չըղնախ անել. և այս ասի զձիոց: Իսկ մերթ նմանութեամբ զզօրաց. կամ զբանակա րաց. և այլն. ըստ այնմ Խորէն. Ա. պր. 12. Նիւքար ոմն այր հսկայ և պատերազմա սէր՝ սմբակակոխ արարեալ զաշխարհն հայոց:

Սմբակահար: (Նախադրիմ հոլովի.) || այն, որ առնի զհար, կամ զօրութեամբ իրի կոխե ցելոյ սմբակօք ձիոց. կամ խաչանց. որպէս ասի է ջուրն սմբակօք պղտորեալ. ըստ այնմ Մծբն. Ժ. Ջուրս պղտորեալս 'ի ձեռն զսմբակահարս՝ ըմպէին:

Սմբատ. տայ. աւ: || է անուն քաջ զօրա պետի հայոց՝ որդւոյ Բիւրատայ Բագրա_տունւոյ, որ եղև դայեակ արտաշիսի հայ ոց արքայի. և արար զբազում գործս քա ջութեան 'ի պատերազմունս: Խորէն. Բ. պր. 34. և 43. և 44:

Սմբատաւանի. նայ. եաւ: || կին. կամ դուստր սմբատայ. և է սա յատկապէս անուն միոյն յերկուց դստերաց քաջին սմբատայ, որոց միումն կոչէին սմբատանոյշ: Խորէն. Բ. պր. 34:

Digitized by Google

Սմին իրի։ (շաղկապ պատճառական.) || առ որին ասացեալ. կմ վն այսորիկ. ռամկ. ասոր համար. Խորէն. գ. պր. 48։

ՍՆ

Սնակուշտ. կշտի. իւ. ից. իւք։ || միջին մասն երկոցունց կշտից կայացեալ անմիջապէս 'ի վր գլխոյ սափորակութեանց ազդերը. և 'ի ներքոյ վերջին ոսկերց կողից, որ բաժանեալ սնգամ 'ի յանկարծ հարկանելն՝ պատճառէ զանշնչութիւն, որ և մերձ առնի իւր քեան զերիկամունսն։ Այլ՝ կոչեցեալ սա սնակուշտ, զի սնն կուշտ. ըստ որում է ամենևին թափուր յոսկերաց։ ռամկ. պօշ պէօյրէկ։ 2. Թագ. 2.23։ և 3.28։ և 20.10։

Սնանամ. ացայ. ցէր. ալ։ (ընդ. միջ.) || ծառ գի 'ի սին բանս, և նշանակէ՝ ունայնանալ. կմ դատարկանալ. կմ թափուր լինել. կմ սնոտի գոլ։ ռամկ. պօշփէլ. կմ պօշալ. կմ բօշ ըլլալ։ Ըստ այսմ Մծբնեցի. Դատարկացեալք և սնացեալք 'ի շնորհաց։ Այսպէս և Ածեր. 3. 17. յամենայն օ րինակս սալմոսարանաց առի. Զիթե նիք սնացին, զի թափուր լիցին 'ի բե րոյ. կմ 'ի պտղոց։ որոյ փոխան յայլ օրի նակս գնի. սառեցէք Ձիթենւոյ. զորմէ տասցի 'ի տակս բայիս։

Սնանիմ. սնայ. սնիր. իլ։ (ձայնակ.) || սնուցա նանել. կմ բուծանիլ. կամ կերակրով զարգանալ. և կմ ուռելով կեալ։ ռամկ. աղըլ։ Եզե. 16. 2։ Ղուկ. 4.16։ Գործ. 7.20։

Սնապարծ. ի. իւ. ից. իւք։ || 'ի սնոտիս պարծող. կմ որ զհետ լինի ունայն պար ծանաց, և կամ որ յանկայ ունայն փառ աաց մարդկան, յորմէ և կոչի սնափառ։ ռամկ. Փօշ պօշ։ Գաղ. 5.26։ Խորէն. գ. պր. 68։

Սնապարծիմ. եցայ. եայ. իլ։ (ձայնակր.) || 'ի սնոտիս պարծիլ. կմ ընդունայն պարծ ծալ. և կմ սնափառել։ ռամկ. Փօշ պօշ լըն մը ըլլալ։

Սնապարծութիւն. թեան։ || սնոտի պար ծանք. կմ յանկութիւն ընդունայն պարծա նաց, և փառաց. և կմ սնափառութիւն։ Փի լիպ. 2. 3։

Սնավաստակ։ (նախադրիւ. հոլովի.) || 'ի սնո տիս վաստակօղ. կամ ընդունայն աշխատօղ. և կմ զլացեալ։ ռամկ. պօշ փէշ աշխա տօղ. կմ հօգնօղ։ Իսկ մերթ այն, որ լինի սնոտի վաստակօք. կմ որոյ վաստակն և ջանն է ընդունայն և անօգուտ. և ըստ այսմ առի՝ սնավաստակ գործ. կմ սնա վաստակ աշխատութիւն, կամ աշխատութիւն։ Աճգոյն։

Սնարք. րից. րիւք։ (անեզական.) || կողմն գլ խոյ. կմ տեղին առ գլխով. և կմ գլուխ. որոյ ներհակն կոչի ոտնք. և ըստ այսմ փոխանակ ասելոյ՝ կալ 'ի կողմն գլխոյն, կմ գնել ընդ գլխով. առի ընդ սնարս, կմ ընդ սնարիւք։ ռամկ. Գլխուն դին. կմ Գլխուն քովը. կմ Գլխուն տակը։ Ծննդ. 28. 11։ 1. Թագ. 3. 8։ Յովհաննու. 13. 8։ Սոյնպէս

փոխանակ ասելոյ 'ի կողմանէ գլխոյն, առի 'ի սնարից։ ռամկ. Գլխուն դին. կամ Գլխուն վերի։ 1. Թագ. 26. 7։ 3. Թագ. 19. 6։ Յհ. 20. 12։ Իսկ յայսմանէ առեալ նշանակէ երբեմն զերդեալն ընդ սնարս որպիսի է բարձն, կմ այլ ինչ նման, յո րոյ վր դնելոք զգլուխ առ 'ի հանգիստ. և ըստ այսմ առի Ցայանաստան, ոչ գտա նել բնաւ տեղի սնարաց. և ոչ սնարս գլխոյ. զի և ոչ բարձ։ Երբեմն և սնարք կոչի լայն յենարանն դահոյից առընթեր զորմով, յոր յենու՝ բազմեալն թիկամբք և գլխովն, յորմէ և հոռ. զանունն։ Երգ. 3. 10։

Սնացուցանեմ. ցուցի. ացէ. ցանել։ (ան ցող.) || ունայնացուցանել. կմ դատար կել. կմ թափուր՝ և կմ սնոտի առնել. ռամկ. պօշ. պօշալթ. կմ պօշ ընել։

Սնափառ. ի. իւ. ից. իւք։ || ցանկացօղ սնո տի փառաց. որպիսի է նա, որ ջանայ որ սալ զփառս և զպատուութիւն 'ի մարդկանէ։ Խորէն. գ. պր. 68։

Սնափառիմ. եցայ. եայ. իլ։ (ձայնակր.) || սնափառ լինել. կմ ցանկալ սնոտի ու նայն փառաց։

Սնափառութիւն. թեան։ || սնոտի փառք. կմ ցանկութիւն ընդունայն փառաւորութեանց և պատուութեանց։ Խորէն. գ. պր. 64։ Ոսկե. 1. հատ. ժդ. և ի։

Սնգոյր. գուրի. աւ. ալ. ոք։ || Ներկ կարմիր. և ըստ այսմ սնգոյր կոչի սառողն և նօթն. այսինքն սպիտակն. նաև այլ ինչ կարմրագոյն դեղոյ. կամ ներկոյ, զոր կանայքն 'ի կարմրերանգ բուսոյ իմիքէ ծա ղկանց, որով ներկեն զերեսս. և զգեղ ոսկերաց. նաև լեալ կանայք զդէմս առ 'ի կարմրագեղ առնել զանձն երեսացն. երեսաց Իմաստ. 13. 14։ Երեմ. 23. 40։

Սնգուրեմ. եցի. եալ. ել։ (Ներգործ.) || սն գուրաւ ներկել, կմ գունաւորել։

Սնգուրիմ. եցայ. եայ. իլ։ (ձայնակր.) || սնգուրաւ ծածկիլ, կմ գունաւորիլ. և ըստ այսմ առի 'ի գիրս Մծբն. ժթ. ընդ ...։ Սնգուրեցաւ յերեսանիւրս։

Սնգուրագործ. ի. իւ. աց. օք։ || գործօղ, կմ կազմօղ սնգուրաց. և կմ գեղազարդ։ Իսկ մերթ նշանակէ զգործեալն, կամ զսնգու րեալն սնգուրաւ։

Սնդիկ. կմ սնտիկ. տկի. աւ. աց. օք։ || հանք ինչ արծաթագոյն, լարծառն և շար ժուն. և իբրև ջրային հոսանուտ. իսկ կշռոյն ծանր յոյժ. որ 'ի հուր մերձեցեալ փոխարկի 'ի ծուխ. զարշահոտ և վնասա կար։ առնլ Հեղեղիկեալ զթիթեղանս ... ասոյ՝ ոսկեղօծ առնեն ... և 'ի գործ առնեն բժիշկք 'ի դեղս ... ... Թ։ ռամկ. Ճիվա։

Սնգոյն. ի. իւ. ից. իւք։ || ... կմ սնոյ. որ և առի ... Լամբռն.

Մնդուկ. դկի. աւ. այ. օք: || տապանակ. կմ արկղ: 'Ի Հին Կտակ. Է: Բայց սա մանաւանդ յաշխարհաբառ լեզուոջ 'ի գործածի:

Մնդուս. դսի. աւ. այ. օք: || է տասյն ինչ նրբաթել գործեալ 'ի մաշնառեսակ աղնիւ մետաքսէ, ծ յապրշմէ: Արդ՝ ունի սա զերկուս տեսակս. միոյն առէջքն են 'ի նրբաթել վշոյ, և թելանքն 'ի մետաքսէ, յորմէ բազմիցս կազմեն զշապիկս առ 'ի փափկութիւն. և այս մանաւանդ պատշաճապէս կոչի բեհեզ: Իսկ միւսն է սոսկ 'ի մետաքսէ, որ է առաւել նրբագոյն, և իբր թափանցիկ. վ՞ գի զեղեալսն 'ի ներքոյ իւր յայտնի երևեցուցանէ: Զսորա եղերսն երբեմն նկարեն պէսպէս նկարուք: 'Ի սմանէ կազմեն զքօղս, և զբազմազան ծածկոյթս. որպէս զասւան, զոր արկանեն զանձամբ հանդերձ կուսանք, և մեծափի կանայք պճնելով զինքեանս 'ի գլխոյ մինչև ցածրունս. և ի̄ այսմ է Եզեկ. 16. 10. ուր ասի. Ածի ընդ մէջ քո զբեհեզ. և արկի զքեւ մնդուս: ռամկ. [illegible]. կմ [illegible]:

Մնդական. ի. աւ. աց. օք: || այն ծառ, որ վերաբերի առ մնունդն. կամ որով մնանի կենդանին: և ըստ այսմ ասի՝ մնդական զօրութիւն: Մերթ ևս նշանակէ զմնանօղն. որ և մինչ ասի ծննդական, երբեմն իմանի՝ ծնանօղն:

Մնդակից. կցի. աւ. կմ իճ. աց. օք: || կցորդ մնդեան. կմ 'ի միասին մնեալ ընդ այլում. և կամ ընկեր ուտեաց 'ի սեղանէ մնդեան. որ և ասի դայեակորդի. կամ համշիրակ. և այս ասի զմարդոյ. և մերթ նմանութ. նաև զայլոց իրաց, որք ընկերանան ուտեաց 'ի մանկութենէ, կմ 'ի բնէ իբրև զմնդակից: 3. Թագ. 12. 8: 2. Մնաց. 10. 8: Նոր Կտ. ղթ:

Մնոտի. տւոյ. տւով. տւոց. տւովք: կմ տեաւ. եաց. եօք. կմ իւք: || ածանցեալ 'ի բառէս 'ի նն. որ հնոտին 'ի բառէս՝ հին. և նշանակէ՝ ունայն և չինչին. կմ ընդ վայր՝ և սուտ. և կմ խոտանելի անշահ: ռամկ. բոշ: Թուղ. 21. 5: 2. Մակ. 7. 34: Յակ. 2. 20: Բայց երբեմն վարի իբրև գոյական. և նշանակէ զնանիր և զչինչին իրս. կմ զնանրութի, և զունայնութիւն. Եսայ. 20. 7: 3. Թագ. 16. 2. և 13: 2. Մնաց. 11. 15: Աղոթ. 21. 6: Եւ յայսմանէ առեալ՝ դնի երբեմն փոխանակ կռոց, ըստ որում են ունայն և սուտ պաշտելիք: Երեմ. 44. 9: Դարձեալ երբեմն նախադրիւ տրականն սորա 'ի յոգնակնոյն վարի իբրև զմակբայ, և նշանակէ 'ի նանիր. կմ ի̄ վայր. կմ վայրապար. և կմ 'ի զուր. որգն. 'ի մնոտիս վաստակել. 'ի մնոտիս խրատել, կմ 'ի մնոտիս կացուցանել զերեսն. և այլն: ռամկ. բոշ փէ դը: Ղևտ. 26. 16: Ովս. 4. 16: Նոր Կտ. կթ: Յոհ. 1. հատ. իա: Եւ ըստ այսմ երբեմն ևս վարի անմնանականն սորա. ի̄ այսմ Յով. 1. հատ. իթ. Անլ գիտեմ. զմնոտի

խօսիմ, ծ ընդ վայր. կմ 'ի զուր:

Մնոտիաբարբառ: (նախդրիւ հոլովի.) || բարբառօղ զմնոտի իրս. կմ որ յաւաշ բերէ զմնոտի բաղբաղայս կամ պատճառանս: ռամկ. [illegible]. կմ [illegible]: Իսկ մերթ նշանակէ զայն՝ որ է մնոտի բարբառ. կմ կեղծեալ ունայն և չինչին բաղբաղայնք. և ի̄ այսմ ասի՝ մնոտիաբարբառ պատճառանք: Շնորհալին:

Մնոտիագործ: (նախդրիւ հոլովի.) || գործօղ. կմ առնօղ մնոտեաց. կմ որոյ գործն՝ կմ կատարումն է մնոտի. և ի̄ այսմ ասի մնոտիագործ պաշտամունք: Աղթար:

Մնոտիաժողով: (նախդրիւ հոլովի.) || ըզմնոտիս ժողովօղ: Իսկ մերթ ընդ վայր ժողովեալ. կմ որոյ ժողովն է մնոտի և չինչին. որպիսիք էին միաբանեալքն 'ի գործ բաբելական աշտարակին: Նոր Կտ. ձ:

Մնոտիապատիր: (նախդրիւ հոլովի.) || մնոտի և պատիր. կմ մնոտեօք պատրօղ. ծ ունայն իրօք խաբօղ. և ըստ այսմ ասի՝ մնոտիապատիր դէք. կմ աշխարհ. և այլն: ռամկ. [illegible]: Շնորհալին: Իսկ մերթ մնոտի և նանիր իրօք հրապուրեալ՝ և պատրեցեալ: ռամկ. [illegible]:

Մնոտիապատճառ: (նախդրիւ հոլովի.) || 'ի զուր պատճառօղ. կմ զմնոտի իրս հաստատօղ. կմ կազմօղ: Իսկ մերթ ունօղ մնոտի պատճառից, կմ յօրինուածոց. կմ որոյ կազմուածն, կմ հիւսուածն է մնոտի և չինչին. որպիսիք են մնարգ և նուաստ երգք, կմ բանք: Նոր Կտ. դ:

Մնոտիասէր. սիրի. աւ. աց. օք: || սիրօղ մնոտեաց. կմ ունայնութեանց: Իսկ մերթ այն՝ որոյ սէրն է մնոտի, կմ որ փարեալ և պատեալ կայ զմնոտեօք. և կմ լի է նանրութեամբք և ունայնութեամբք. և ըստ այսմ ասի՝ մնոտիասէր կեանք, կմ հեշտութիւնք: Նոր Կտ. ղդ:

Մնոտիմ. եցայ. եալ. իլ: (ձայնակր.) || մնոտի լինել. կմ նանրանալ. կմ ունայնանալ: ռամկ. [illegible]: 4. Թագ. 17. 15:

Մնունդ. մնդեան. եամբ. եանց. եամբք: կմ մնդոց. ովք: || է բայածական՝ ծագեալ 'ի մնալ բայէն, որ մերթ առեալ լինի ներգործաբար, և նշանակէ զմնուցումն, որ է բուծումն. կմ կերակրմանք դարմանումն և զարգացուցումն: Ի̄ այսմ 'ի Շարականի. Բարձեր զանհաւան բնութիւն 'ի գիրկս քո մնդեամբ: Իսկ մերթ առեալ լինի կրաւորաբար. և նշանակէ ըզմնանումն, կմ զմնալն. և ըստ այսմ իմանի մինչ ասի. մնունդ առնուլ. կամ ունել զմնունդ քաջ: և այլն: 2. Մակ. 6. 23: Այլ [illegible] է ևբառս ծնունդ, որ մեկնեցաւ 'ի տեղւոջ իւրում:

Մնուցանեմ. ուցի. անի. ել: (անցողակ.) || մնունդ տալով պահել. կմ բուծանել. և կամ կերակրելով զարգացուցանել: ռամկ. [illegible]: Եւեր. 2. 7. Գործ. 7. 1:

Digitized by Google

Սնուցիչ. սնուցչի. աւ. աց. օք: || սնուցանօղ, որ է կերակրելով դարմանօղ և զաւր դացուցանօղ. և կմ դայեակ:

Սնտիկ: || տե՛ս զՍնդիկ:

ՍՈ

Սոդոմ. կմ սոդոմն: || է անուն քաղաքի, զոր տեսցես 'ի բառարանի յատուկ անուանց:

Սոդոմացի. ցւոյ. ւով. ւոց. ւովք: || ընա կիչ սոդոմայ: Իսկ մերթ առեալ լինի փո խանակ բառիս՝ սոդոմական. և ըստ այսմ ասի՝ սոդոմացի հուր, կմ լեզու. և այլն: Մերթ ևս վարի իբրև գոյականաց. և նշանակէ՝ լեզուաւ կմ բարբառով սոդոմացւոց. և ըստ այսմ ասի՝ սոդոմացի խօսիլ. կմ բարբառիլ. և այլն.

Սոդոմնայք. այց. կմ այից. նայիւք: (անե զական.) || սոդոմացիք. կմ սոդոմականք՝ որ ասի զբնակչաց սոդոմայ, և զամ նոցա նմ, որք հրով և ծծմբով կորեան: Եւ յայսմանէ առեալ սոդոմնայք կոչին գա տապարտեալքն. կամ մահու պարտուհա սեալքն:

Սոխ. ոյ. ով. ոց. ովք: կմ խւ. խց. խւք: || է բոյս ինչ պարտիզաց. որ յարմատս իւր արտադրէ գլուխ ինչ գնտակակերպ կծու համով, և բարկ հոտով. որ և յանուա նէ բուսոյն իւրոյ յորջորջի՝ սոխ: ուամկ. ևս սոխ: Թուոց. 11. 5: Մծբն. ժա:

Սոխակ. ի. աւ. աց. օք: || է թռչուն ինչ վայրենի, որ կրէ 'ի գլուխ իւր զԹագ՝ 'ի փետրոյ, որ է ճղաւ: ունի զկարճ տուտ, և զերկայն, և զսուր կտուց. և զեր կայնաձիգ սրունս իւր կռնկան. մար մնոյն է երկնագոյն. և ոմանք խայտաձև տուփ. կտուցն սրունիւքն հանդերձ է կար միրագոյն. վա որոյ յոյնք և լատինք կո չեն զնա պորփիւրիոն. զ ծիրանագոյն. և ոմանք անուանեն հաւալուսն՝ յաղագս նմանութե իւիք, զոր ունի ընդ նմա: Չկե րակուր իւր ոչ երբէք ուտէ յայտնի. կմ առանց լուծանելոյ զինքն 'ի ջուր. զամ պտտոտս կերակրոյն մի մի յառաջագոյն Թանայ ջրով. և ապա միով ոտամբ իւր ձեռաք 'ի բերան իւր արկանէ: Բնութե է յոյժ ողջախոհ. ոչ երբէք խառնակի հր բապարակաւ ը զուգակցին: 'Իտան սնու ցեալ զգայ զամ վավաշոտական շարժ մանս և զգործս բնակչացն. գարշի յոյժ 'ի տեսանելոյ զխառնակութի առն և կնոջ. և Թէ դէպ լիցի տեսանել, ամ ջանիւք գուն գործեալ սպանանէ զինքն: Ղևտ. 11. 18: 2. Օրին. 14. 17:

Սոկրատեան: ('ի յեղականում նախադրիւ հո լովի. իսկ 'ի յոգնականում լինի՝ եանք. եանց.) || այն՝ որ է սոկրատայ, կամ զոր ունի սոկրատէս. որպէս մինչ ա սի՝ սոկրատեան մակացութիւն. սոկրա տեան հանճար. և այլն: Իսկ մերթ նշա նակէ զաշակերտն, կամ զհետևօղն սոկ րատայ. որպէս մինչ առեմք փիլիսոփայ ոմն սոկրատեան:

Սոկրատէս. սոկրատայ. կամ սոկրատեսի. տաւ: || է մեծահանճար փիլիսոփայ ոմն աԹենացի, որդի սոփրոնիսկոսի քանդա կագործի. սա էր գերահռչակ յիմաստա սիրական մակացութիս, և բարոյական գիտութեց գտիչ և սերիչ: Եղև փորգա պետ պղատոնի. և 'ի բազում գործս հա սարակաց երևելի յոյժ. զոր 'ի ծերութեն ամբաստանեալ յաղագս արհամարհելոյ զդիսն՝ 'ի մահ դատապարտեցին. և դե ղակուր արբուցեալ բարձին յաշխարհէ. զոր մէ լիագոյն տեսցես 'ի բառն մոլախինդ: Խորէն. բ. գլ. 89:

Սոկրատայք: || սոկրատեսի. կմ սոկրատայ: 'Ի գիրս դատոյ քինին: տե՛ս 'ի բառն Աշա ցելոյ:

Սողամ. ացոյ. ա. ալ: (ընդ միջ.) || տե՛ս ըն Սողիլ: Լամբրոն:

Սողացուցանեմ. ցուցի. ցո. անել: || տե՛ս զՍողեցուցանել:

Սողեցուցանեմ. ցուցի. եցո. նել: (անցող.) || տալ ումեք սողիլ. կմ սողոսկեցուցա նել. և կմ զեռացուցանել: ռամկ. սողցը նել: Կիւրղի եէնի. ժբ.

Սողիմ. եցայ. եաց. իլ: (հայնաժէր.) || ընդ երկիր սահելով գնալ. կմ 'ի վ ը որովայ նին դետնաքարշ լինելով յառաջ խաղալ: և կմ զեռալ. և այս ասի զամենայն կեն դանեաց. ոտք՝ զօձից, և զայլոց սողնոց: ռամկ. սողալ: Ծննդ. 1. 26. և 28: և 7. 8: Մի քիա. 7. 17: Իսկ մերթ ասի նաև զկարճոտն կենդանեաց. որպիսիք են մողէսք, կոկո դիլոսք. և այլք զեռունք: Ղևտ. 11. 29: Մերթ ևս սողիլ ասի յերեսս 'ի վայր ան կանելով ընդ երկիր շփիլն. կամ Թաւա լիլն: ըստ այսմ 3. Մակ. 1. 10. Անդ՝ քա հանայքն անկանէին առաջի սեղանոյն. և աղաչէին զած: ռամկ. գետինը փոռըիլ: Պոռնկլ սող դիլ. կմ սահիլ. և կմ 'ի բաց անկանիլ 'ի մեքէ. որպիսի է և բայս՝ սողալ. ըստ այսմ Լամբրոն. առաջացաւ մարդն 'ի կամացն և յօրինացն: ռամկ. սահիլ:

Սողնակ. ի. աւ. աց. օք: || է տեսակ ինչ աղխից դրան կազմեալ 'ի փայտէ, կամ յերկաԹոյ իբրև զկարճ գերան. կմ դա տաւար ձող. զոր արկանեն ընդդէմ փա կեալ դրան առ 'ի ամրութի. զսա 'ի բա նալ դրան, մղեն, և մուծանեն 'ի ծակ որ մոյն. և 'ի փակելն՝ դարձեալ 'ի դուրս քար շեն. և այսպէս դրկեԹէ միշտ յայսկոյս յայնկոյս սողէ. վն որոյ և անուանեցաւ իսկ սողնակ, իբրև Թէ սողացօղ: ռամկոր. սիւրկիւ. և ըստ այսմ ասի՝ յաջնամապրն. փա կեցաւ դրանն առանց նգի, և սողնակի:

Սողնահար. ի. աւ. աց. օք. || հարեալ 'ի սող նաց. որպիսի է նա, զոր խայԹէ օձն, կմ կարիճն. և այլն:

Սողոբայ: || տե՛ս զՍիզզոբայ: Ճորէկ. 'Ի գով. առաքելոց:

Սողոմոն. կմ սողոմոնի. ի. իւ: || սողոմոն. զոր տեսցես 'ի բառարանի յատուկ անուանց:

Սողոմոնեան : (Նախադրբեմ հոլովի ·) || սողոմոնական · ք այն ամ, որ է սողոմոնի · կմ զոր շինեալ է սողոմոն արքայն իէլի : Նոյէէ · իէ · և ղէ :

Սողոսկեցուցանեմ · ցուցի · եցո · ել : (անցողակ ·) || տալ ումեք սողոսկել :

Սողոսկիմ · եցայ · եա՛ց · իլ : (Ձայնակր ·) || սողալով սողալ · կամ յառաջ, և երթալ սողիլ : ըստ այնմ, 'ի Վարս հարց · իէ · Նոյնժամայն վիշապն մեծ սողոսկեալ եկն անկաւ 'ի ծոցն կարմիր : Երբ յայտմանէ առեալ երբեմն նշանակէ՝ սողալով լպրծել, կմ սահել · և կմ սպրդել : ռամկ · զոյնի ըլլալ · կմ ֆէոէլէ ըլլալ : և թ այսմ իմանի մինչ սան · Յածայնն փառաց անուն սողոսկեալ անկաւ 'ի խոնարհ · կմ սողոսկել մտանել 'ի ներքս · և այլն :

Սողոսկում : (Նախադրբեմ հոլովի ·) || տեղի, ուր լինի սողոսկել, կմ սահել · և կամ լպրծում : որ է ռամկօր · սահնակ : Իսկ մերթ նշանակէ՝ սողոսկող · և կմ յաճախ սողացող :

Սողուն, սողնոյ · ով · ոց · ովք : || անուն, կմ կարճոտն կենդանի, որ սողայ, կամ զեռայ 'ի վր լանջաց, որպիսի է օձն · մողէսն · հողային որդն · ք սողուաճանն · և այլք բազումք · որք և կոչին զեռունք : Ծննդ · 1 · 24 · և 30 : Ղևտ · 11 · 29 : Իմաստ · 11 · 16 : Դարձեալ նշանակէ ամէն կեղ ինչ չարաւալի, ապականիչ արեան, որ ծնանի 'ի մարմնի 'ի զեղմանէ մաղձին, և ճաբակ գտեալ սողայ ընդ մերձակայ մասունս, յորմէ և անուանի սողուն · իբր թէ սողացող : Սա բազում անգամ ապականեալ զանդամս մարդոյ մինչև ցոսկերսն մաշէ, և ծախէ · և թ այսմ է 'ի Վարս հարց · իէ · ուր ասի · Նյր մի սողուն ցաւով. և գօսացեր ոտիւք կմեցաւ գնալ առ ոգին :

Սոճի · ճւոյ · եաւ · եաց · եօք : || է ծառ ինչ բարձր, և մեծ՝ նման սօսւոյ · ունի զտերև նեղ, և սուր նման նոճւոյ · և տայ ըղ պտուղ մեծ, և կարծր, և իբր փայտեղէն նման պտղոյ փշատենւոյ՝ կոչեցեալ կոնոն : ռամկ · չամ ծառ : Երբ է սորա այլ տեսակ ինչ ազնիւ · զոր կոչեմք թեղօշ : 'Ն Գէրս դա՛ճրի ֆըլըֆօֆ :

Սոյզ · սուզի · իւ · ից · իւք : || է արմատ սուզանել բային · որով մերթ նշանակի սուզումն · ք ընկղմումն, կամ ընկլուզումն : Իսկ մերթ՝ սուզեալ · կմ ընկղմեալ : Երբեմն ևս նշանակէ զտեղին թագստի, և ըստ այսմ սոյզք կոչին որջք · անձաւք · խշտիք · բոյնք · և այլն : Երբ ըստ այսմ ծագին 'ի նմանէ բառքս՝ քողարկել · որջասուզել · և այլն :

Սոյն · սոյնոյ · ով · ոց · ովք : || է ցուցական դերանուն · և նշնկէ այս · ռամկ · աս : Ծննդ · 18 · 14 : Յէս · 11 · 6 : 2 · Մակ · 14 · 46 :

Սոյնհետայն : (մակբայ ·) || անմիջապէս ըղ նին այսուհետև · կմ ապա վաղվաղակի · կմ նոյնժամայն · կմ փութով : Խորէն · գ · գլ · 29 :

Սոյն օրինն : (մակբայ ժամանակական ·) || 'ի սմին աւուր · կմ այսօր : Հռութ · 3 · 18 :

Սոյնօրինակ : (մակբայ որակական ·) || ըստ այսմ օրինակի · կմ սովին կերպիւ · կմ սոյն գունակ · և կմ սոյնպէս : ռամկօրէն սոր պէս · կմ ասանկ · կմ ասպէս : 3 · Մակ · 6 · 24 : Ոսկէ · 1 · Կորն · իբ : Ազգաբ · Իսկ մերթ վարի բերբև զանուն, և նշանակէ՝ սոյնպիսի · կմ այսպիսի · և ըստ այսմ ասի՝ սոյնօրինակ անցք, կմ պատահմունք · և այլն :

Սոր : || է սեռականն դերանուանս սա, և նշանակէ սորա · կամ այսորիկ : Դարձեալ նշանակէ սոր · կմ սորումն, ք հոսումն : Երբ մերթ՝ որջնթաց : և թ այսմ ծագի 'ի սմանէ բառս որշաւասոյր :

Սոնիճ · սոնճի · իւ · ից · իւք : || է սեռ ունդ ինչ մանր · որ տաճկերէն կոչի չօրէկ օթի : Բայց սա մանաւանդ յաշխարհաբառ լեզուով 'ի գործ ածի, զի գրոց լեզուաւ կոչի արջնդեղ :

Սոնք · ի · աւ · աց · օք : || ստուար · կմ թաւ · կմ յոյր · կմ գէր · և կմ լի : ռամկ · հաստ : Դարձեալ է սա բառ տաղաչափական, որով նշանակի եռավանկ բառն, որոյ երեքին վանկերն ևս են երկարք · որգոն, յօ՛ժանէ՛ս, է՛մպէ՛ս, օ՛րհնութեա՛ն, և այլն :

Սոնքամ · կամ սոնքամ · ացայ · ա՛ · ալ : (չէզոք ·) || ստուարանալ · կմ յօրանալ · կմ գիրանալ · և կմ թանձրանալ : ռամկօր · հաստընալ · կմ թանձրնալ · կմ գիրնալ : Լամբրոն : Երբ յայտմանէ առեալ՝ երբեմն նշանակէ՝ գոռոզանալ · կմ ամբարտաւանիլ · կմ բռնանալ · և կմ խրոխտալ : ռամկօր · խօտօզլամիշ ըլլալ : 'Ի Կեն պատմագիրս :

Սոնքանամ · ացայ · ցիր · ալ : (ընդմիջ ·) || նոյն է ընդ վերնոյն :

Սոնքացուցանեմ · ցուցի · ացո · ել : (անցողակ ·) || ստուարացուցանել · կմ յօրացուցանել · կմ գիրացուցանել · և կմ թանձրացուցանել : ռամկ · հաստցնել · կմ թանձրցնել · կմ գիրցնել :

Սոպոռ · սոպեռ · երբ · եռաց · կմ երց · երբք : || բիրտ · կմ անմարդի · կմ վայրենաբարոյ · կմ թանձրամիտ : ռամկ · կոպիտ · կմ խօշոր · կմ զռապան :

Սոջա : || է յոգնական սեռականն դերանուանս սա · որով նշանակի սոցա · կմ սոցին : Սէրաք · 37 · 19 :

Սոսինձ · սոսնձոյ · ով · ոց · ովք : կմ ից · իւք : || է նիւթ ինչ խժային և թանձրացեալ, եփեալ 'ի թացեալ և 'ի նեխեալ կաշւոյ եզանց, և ցլուց, և այլոց նմանեաց · զոր 'ի բաց առեալ 'ի հրոյ · և հալեալ 'ի հատորս հատորս չորացուցանեն : Երբ ապա 'ի պէտս լինելն վերստին թրջեալ հալեն հրով · և մածուցանեն նովաւ զկտորս փայտեղէն կերտուածոց, և այլոց նմանեաց · ռամկ · թութխալ : Եսայ · 44 · 13 :

Սոսնձեմ · եցի · եա · ել : (Ներգործ ·) || սոսնձով մածուցանել · կմ շաղկապել : ռամկ · թութխալով կպցնել · կմ թութխալլամիշ ընել :

Սոսկ · ի · իւ · ից · իւք : և մերթ մակբ : || լոկ · կմ միայն · կմ պարզ · կմ մերկ · կմ թա_

վրայ, և կամ զուրկ․ զոր օրինակ
հաց սոսկ ուտել․ զոսկերսն ցուցանել
սոսկ․ կամ ոչ էր տուն, այլ սոսկ օր, որ
պարզ օր ։ Սոյնպէս և ա՛ռ սոսկ բարբառ
ելև՝ սոսկ կարդալ․ և այլն ։ Յոբ․ 33․21։
Եւ Ոսկէ․ 1․ հափ․ Ժէ․ ուր ասի․ որք սոսկ
են 'ի մտաց, որ Թափուր, կմ զուրկ են ։
Մերթ և նշանակէ սոսկ և հեշտական, որ
էսյանն․ ըստ որում է միայնակ․ ոչ ունե
լով ընդ իւրև զձի․ ըստ այնմ 'ի գիրս դատ.
Բէ ․․․ մականիք ռազմին, և սոսկքն յե
րևանց վայրին ընԹանան ։ Դրարձեալ ը
քերականաց նշանակէ զնուագն, որոյ ներ
հակն կոչի խառն, կմ Թառ ։ և ըստ այսմ
ասի սա զատուկ, և զհնչմանց, որոյ և
նշանն անուանի սոսկ, որ է այս ՝ ։ Դրար
ձեալ ըստ որում է սա արմատ սոսկալ
բային, նշանակէ զսոսկումն ։ Իսկ մերԹ
սոսկալի․ կմ քստմնելի․ և ըստ այսմ ծա
գի 'ի սմանէ բառս՝ սոսկալիԹևար ։

Սոսկադդայն․ գոյնի․ ին․ ից․ իւք ։ || առա
ձել սոսկ․ կմ պարզադդայն․ կմ միակա
գոյն ։ Իսկ մերԹ առաւել սոսկալի․ կմ
բոլորովին զարհուրելի ։ Աշխ․

Սոսկալի․ լւոյ․ եաւ․ եաց․ եօք․ || սարսա
փելի․ կմ քստմնելի․ կմ ահարկուելի․ կամ
զարհուրելի ։ Իմաստ․ 8․ 15։

Սոսկական․ ի․ աւ․ աց․ օք ։ || այն՝ որ է
սոսկ․ կմ անխառն․ կմ անապակ․ ըստ
այնմ, բաշխեա զհացդ մաքրական, զա
րիւնդ ըմպել առա սոսկական ։ Իսկ մերԹ
հեշտական․ կմ ռամկական․ զմինչ ․ռամիկ․
էսյան ։ և ասին սոսկական, ըստ որում
սոսկ գնան, զօրով առանց ձիոյ, որոց հա
կադիր ձիավարժն․ կմ հեծեալն ։ Նոր էլ․
Ժ․ և Լամբրոն․ Դարձեալ՝ սոսկական կոչին
նորա, որք ոչ են ազնիւք, և կմ ոչ են եկեղե
'ի պատիւ ինչ․ կմ կարգեալք յիշխանու
Թեն իմն, այլ են գեղջուկք, կմ խաժա
մուժ ժողովուրդք․ ըստ այնմ Նոր էլ․ հա․
Հերքեալ՝ ի մէնից՝ սոսկականացն սարգ խմ
և 'ի Ձ․ ասէ․ սոսկականօքն քաղաքացւովք
որ քաղաքացւովք, որք են ազնիւք ։ Մերթ
և նշնէ սոսկալի․ կմ զարհուրելի ։

Սոսկամ․ ացայ․ ա․ ալ ։ (չէզոք․) || քստմն
նիլ․ կմ սարսռիլ․ կմ սարսափիլ․ կամ
ահիւ սարսիլ․ կմ զարհուրիլ զօրուԹբ ։
ռամկ․ վախնալ դողալ․ կմ մարմնի փշաւ
ռիլ․ 3․ Մակ․ 6․ 15։ Իմաս․ 7․ 15։

Սոսկայլն․ այնոյ․ ով․ ոց․ ովք ։ || տե՛ս ըզ
Սոսկական ։

Սոսկապէս ։ (մակբայ․) || սոսկ․ կմ միայ
նակ․ ռամկ․ առանձին ։ Իսկ մերԹ՝ պարզապէս․
կմ առանց իրիք զանիք․ կմ մեկ 'ի մեկոյ․
կմ անհոգաբար․ ռամկօր․ հանաբեղ․ ըստ
այսմ Ոսկէ․ 1․ հափ․ Ժդ․ Ոչ կամի, զի սոսկա
պէս լուիցուք․ այլ բաղում զգուշուԹբ․
և 'ի Ծ․ ասէ, ոչ սոսկապէս, և ոչ 'ի քաղա
մասանելով հասոր ինչ լիցի գտանել զ ․․․
նչ ։ Դարձեալ՝ նշանակէ սոսկալի կերպ
արիւ․ կմ հիանալի օրինակաւ ։ և այսմ
'ի ․․․ ․․․ քաղաքաց փա

խաղնակիցին՝ սոսկապէս համբերելով ։

ՍոսկալիԹևար ։ (Նախադրիւ հոլովի․) || ձեԹ
խարի սոսկալի․ որ նա՝ որ զն անձառելի մե
ծուԹիւն է անհասելի, և սքանչելի, որ
պէս էր քերովբէից նկարն ։ և ըստ այսմ
ասի 'ի Նարեկ․ ղէ․ Զարհուրական զօ
րութեան սոսկալիԹևար, քննեն որով
րեալ անհասանելի քո կերպն ։

Սոսկացուցանեմ․ ցուցի․ ացոյ․ եալ ։ (անցող․)
|| տե՛ս զՍարսափեցուցանել ։

Սոսկումն․ կման․ մանց․ մամբ ։ ||
քստմնումն․ կմ սարսռումն․ կմ սարսա
փումն․ կմ ահ, և երկիւղ դողուԹբ հան
դերձ ։ 2․ Մակ․ 3․ 17։ Աշխ․ 1․ 11։ Նա
ւում․ 2․ 10։

Սոլ․ ու․ 'ի ասլու․ կմ 'ի սալէ․ ու․ կմ ոլ․
ուց․ ուք․ կմ ովք ։ || ազատուԹեան հացի․
և այլոց կերակրոց պատրաստելով առ հասա
րակ 'ի քաղաքի, կմ 'ի Թագաւորութե․ և
կմ ընդ տու երկիր․ յորժամ պատմական
ազգումն մարդկան․ ով և երբեմն մահ ։
ռամկ․ ղըԹլըխ ։ Ծննդ․ 41․30։ և 43․1։ Եսայ․
16․3։ Իսկ մերԹ առաւել լինին փոխաբանակ
քաղցով․ կմ անսուազուԹե ։ ռամկ․ անօԹուԹի ։
'ի Ճառս հարց․ հայ։

Սովաբեկ ։ (Նախադրիւ հոլովի․) 'ի սովէ բե
կեալ, որ կոտորեալ, կմ մեռեալ․ և կմ
սովալլուկ ։ Իսկ մերԹ ընդ բային շարակ
ցի․ այսպէս․ սովաբեկ առնել․ և նշանա
կէ սովով բեկանել․ որ կոտորել, կմ ծա
խել․ և կմ սաստկուԹբ սովու, կմ քաղ
ցու նեղել, և մաշաշչեցուցանել ։ 2․ Օ
րին․ 8․ 3։

Սովալլուկ․ ըլկի․ աւ․ ալ․ կմ կց․ օք ։ || 'ի
սովէ ըլկեալ, որ սաստիկ նեղեալ, և չար
չարեալ ։ Իսկ մերԹ ընդ բային շարակցի
այսպէս․ սովալլուկ առնել․ և նշանա
կէ սաստկուԹբ սովու ըլկել․ կմ սատա
պեցուցանել ։

Սովամահ․ ի․ ին․ ից․ օք ։ || 'ի սովէ մահա
ցեալ, որ մեռեալ․ կմ սովաբեկ․ և կամ
սովալլուկ ։ 2․ Թագ․ 3․ 30։ Կիւրղի Եղեկ․
Ժ․ը․ Իսկ մերԹ ընդ բային շարակցի այսպ․
սովամահ առնել․ և նշանակէ սովով կո
տորել, կմ սպանանել․ կմ սովով սաստիկ
նեղել, կմ ըլկել ։ Աշխա․ 10․ 3։ Երբեմն
և վարի իբրև զմակբայ․ և նշանակէ՝ մա
հուամբ սովու․ կամ 'ի սովէ մեռանելով․
կմ սովաբեկ լինելով ։ և ըստ այսմ ասի․
սովամահ կորնչիլ․ կմ մեռանիլ, և այլն ։
Ղուկ․ 15․ 17։ Իսկ մերԹ նշանակէ սաստ
կուԹբ սովու մահացուցանելով․ կմ սպա
նանելով, որպիսիք ասենք․ սովամահ կո
րուսանել, կմ սպանանել ։

Սովամահիմ․ եցայ․ եա․ իլ ։ (ձայնակիր․) ||
սովամահ լինել․ կամ 'ի սովէ մեռանիլ,
կմ մահացուցիչ սաստասաշիլ ։ 1․ Մակ․ 13․49։

Սովեցուցանեմ․ ցուցի․ եցո․ եալ ։ (անցող․)
|| սով առնել․ սովել․ կմ սովալլուկ առ
նել ։ Նոր էլ․ ԺԹ ։

Սովիմ․ եցայ․ եաց․ իլ ։ (ձայնակիր․) || ըմ
բռնիլ 'ի սովէ․ կմ կրել զսով․ կմ սովա

շրուկ լինել. և կմ քաղցնուլ յոյժ: ռամկ. խիստ անօթենալ: Ծնն. 41. 55: 'ի վարս հարցոյն:

Սովոր. ի. իւ. ից. իւք: || ունօղ սովորութե. կմ ունակացեալ իւիք. կմ կիրթ. կամ վարժ. և կամ ընտել: 1. Թագ. 17. 40: Մակ. 10. 1:

Սովորաբար: (մակբայ որակական.) || սովորեալ գոլով, կմ հասարակ սովորութբ. կամ ըստ բուն սովորութեն: Խորէն. Գ. գլուխ. 51:

Սովորական. ի. աւ. աց. օք: || այն ամ, որում ոք է սովորեալ. կմ զոր համապազորդ առնէ. և կմ ընտելական. և ըստ այսմ սաս՝ սովորական կրօն, կմ օրհնաբանութի: Խորէն Գ. գլ. 65: Նարեկ. 'ի գովեստ խաչին:

Սովորակի: (մակբայ որակական.) || սովորաբար. կամ ըստ սովորութեն: Կիւրղի 'ի Թուղթն առ կայսրն: իսկ մերթ վարի երբեմն անհոլով. և նշանակէ զսովորականն: 'ի հին պարտագիրս:

Սովորեցուցանեմ. ցուցի. եցո. ցանել: (անցող.) || սովոր առնել. կմ ունակացուցանել. կմ վարժել. կմ ընտելացուցանել: ռամկ. սորվըցնել: Ողբ. 1. հատ. Է:

Սովորիմ. եցայ. եայց. իլ: (հոյնակր.) || սովոր լինել. կմ ունականալ իւիք. կմ վարժիլ. և կմ ուսանել: ռամկ. սորվիլ. կամ վարժուիլ ըլլալ: Ողբ. 1. հատ. ԼԷ:

Սովորոյթ. ութի. իւ. ից. իւք: || սովորութի. և ըստ այսմ սաս՝ հնացեալ սովորոյթն օրէնք է և հաստատագոյն երբեմն զբնութի: Վնզի յոգս՝ այն. դնի փոխանակ մասնկանս՝ ութի. որգոն, աւագոյթ. ծածկոյթ. համբոյթ. որ է՝ աւագութի. ծածկութի. համբոյութի:

Սովորութի. թեան: || բարք. կմ ունակութի իրիք գործոյ. կմ վարժութի. և կմ ընտելութի: Ծնն. 24. 1: Իմաստ. 14. 16: Ղուկ. 4. 16: իսկ մերթ նշանակէ զկրօնս. ըստ այնմ Խորէն. Գ. գլ. 67. Երկնայնոցն զոր դարեալ սովորութիւք, զի կրօնիւք:

Սոր. սորոյ. 'ի սորոյ. կմ 'ի սորէ. ոց. ովք: || խոռոչ երկրի. կմ անձաւք ընդ երկրաւ. կմ վիհ. կմ խորխորատ. և կմ ծոր. և առաջաւ սոր. ըստ որում որ ինչ անկանի 'ի վերուստ սորի և հասի 'ի ՚նա: ռամկ. գետնի տաղարայ. կմ գետնի մէջ տաղարայ. կմ խորունկ փոս: Եսայ. 2. 19: Երեմ. 48. 28: Նարեկ. Խ: Մծբն. Ե: իսկ մերթ սորումն, որ է հոսումն: Դարձեալ սոր կոչի տեղին, կմ ծակն, ուստի սորի ինն. որպիսի է հոգաաւաձև, զի խուղխաձև կաղմուածն, յորմէ հասի ցորեանն 'ի յաղօրիս. և ըստ այսմ սաս՝ Ադորիքն 'ի սորէն ջուսնին զաղուննն, զի զաղալի ունգան:

Սորամուտ. մտի. իւ. ից. իւք: || մտանօղ 'ի սորս, կմ 'ի խորոչս և 'ի խորս երկրի. ռամկ. գետնի տաղարան մտնօղ: ԱՀգամբ:

Սորեակ. րեկի. աւ. աց. օք: || է փոքրիկ և աղնիւ ունգ ինչ գեղնագոյն նման կորեկի, յորմէ կազմեն զԹան. և մերթ ազան և 'ի գործ ածեն 'ի բաղում ախտս. որ է յատենս գաճառս կոչեն գուեհիկք ռուբին:

Սորեկ. ի. աւ. աց. օք: || է բառ եբրայական, որով նշանակի տեսակ ինչ գինւոյ որ ընտիր էր, որ բերէր աղնուագոյն մածամբծս և աղկուտ՝ յոյժ. նոճաղև փոքրիկ, և իբր ոչինչ: Եսայ. 5. 2: Մծբն. ԺԷ:

Սորեմ. եցի. եա. ել: (ներգործ.) || տես զՍորեցուցանել:

Սորեմ. եցի. եա. ել: (չէզոք.) || 'ի վայր հոսել. կմ թորել. կմ ծորել. և կմ հեղանել. որպէս 'ի կրծոյ. աղբերն 'ի մաղէն. արտասուքն յաչաց. ջուրն 'ի յանօթոյ. և այլն: ռամկ. բաթել. կմ ձորել. և կմ ձաղել: 'ի վարս հարց. Ժ: իսկ մերթ անդրադարձեալ նշանակէ բաղմութբ յարձակիլ, կմ արշաւել և կմ վաղելով անկանիլ 'ի տեղի ինչ. և ըստ այսմ սաս՝ սորել զօրաց 'ի դարանէն. կմ իվր թշնամեաց. և կմ սորել բաղմութե 'ի յայրս. 'ի ծործորս. 'ի յապաստանարանս. և այլն: ռամկ. դուրս բաթել. կմ ներս բաթել. կմ վրայ բաթել: Երեմ. 4. 29: և 'ի հին պարտագիրս: Դարձեալ նուաղել. կմ հիւծիլ. կմ մաշիլ. կմ ծխրել. և կմ վատիլ: ռամկ. պղտոռնալ. կմ փուճնել: և ըստ այսմ սաս՝ սորել աչաց մարդոյ, կմ անասնոց, որ հանդիպի վս սաստիկ քաղցու, կմ հիւանդութե. կմ սակս յաճախ տրտմութե և արտասուաց. և այլն. 2. Օրին. 28. 65: 1. Թագ. 2. 33: Երեմ. 14. 6:

Սորեցուցանեմ. ցուցի. եցո. ցանել: (անցող.) || հոսեցուցանել. կմ հոսել. ռամկ. բաթել. կմ ձաղեցնել: իսկ մերթ անդրադարձեալ նշանակէ յարձակեցուցանել. կմ վաղեցուցանել զբաղմութի ինչ 'ի տեղի ինն. ռամկ. վրայ բաթել. կմ ներս բաթել: Երբեմն և նուաղեցուցանել. կմ հիւծել. կմ մաշել. և ըստ այսմ սաս՝ սորեցուցանել զաչս, զորոց չխնայդոյն սասացաւ 'ի բանն սորել: Ղևտ. 26. 16:

Սորնջան. ի. աւ. աց. օք: || է բեր ինչ նման չանհրալուտի, զի ձէապանէն. որ արտադրի յարմատոյ իրիք բուսոյ, կամ ծաղկան. բնութբ է ջերմ և չոր. և ունի զբաղում օգտութիս 'ի բժշկականութե: Եւ են սորա երեք ազգք. մին լինի սեաւ. միւսն կարմիր. և երրորդն սպիտակ, որ է աղնիւն. և լինի յաճախ յեգիպտոս:

Սորումն. սորման. ման. մանց. ամբք: || 'ի վայր հոսումն. կմ թորումն: իսկ մերթ՝ յարձակումն. կմ վաղելով անկումն 'ի տեղի ինչ: Երբեմն և նուաղումն. կմ հաշումն. և կմ ծխրումն աչաց. զորոց չխապէս տեսցես 'ի բայն սորել:

Սորուն: || է սեռականն դերանուանս սա. և նշանակէ՝ սորին. կմ սորա: Նարեկ. ՀԵ: Ողբ. 1. հատ. Ե. և ԺԲ:

Սորսորեմ. եցի. եա. ել: (ներգործ.) || է յաճախականն սորել բայիս, և նշանակէ՝ սորելով սորել. և կամ յաճախ սորեցուցանել:

ցանել։ ռամկ. Թօքթէճէլ. կամ վարժեցնել։

Սորսորիմ. եցայ. եայց. իլ։ (Ձայնակր.) || է բայ յաճախական, որով նշանակի սորե֊ լով սորիլ. կամ Թօթափելով Թօթափել. կամ հօսհօսիլ. և կամ Թորթորիլ. ոմն ա֊ ւասն 'ի քերձոյ. որդունքն յաչաց. զորքն 'ի բանակէն. և այլն։ ռամկ. Թօքթէլ. կամ վարժել։ 2. Մակ. 9. 9։ 'Ի հէն պարտեգիրս։

Սոցայլին. այնոյ. ով. ոց. ովք։ || ածանցի 'ի սեռականէ գերանուանն սոքա. և նշանա կէ, սոցայք. զոր տեսցես զկնի։ Ը այսմ ածանցին և բառքս այսոքիկ նոցայլին. նո֊ րեանցայլին. և այլն։

Սոցայք. սոցայց. զսոցայս. 'ի սոցայց. սո֊ ցայօք։ Ն այն ամ, որ սոցա է. կամ սոցա պատկանի։ ռամկ. պունոցը. կամ սունց ունե֊ ցածը. կամ սունց եղածը։ 'Ի Գիրս Պատճէն Ճէ ւեխոֆայէն։

Սոցունն։ || է յոգնական սեռականն գերա նուանն սա. և նշանակէ սոցին. կամ սոցա։ ռամկ. սունց։ 3. Մակ. 6. 12։

Սոճաղեցուցանեմ. ցուցի. եցի. ցանել։ (անցող.) || Նոճաղեցուցանել. կամ նքթե ցուցանել. կամ նքողեցուցանել։ ռամկօր. անօթեցնել։

Սոճաղիմ. եցայ. եայց. իլ։ (Ձայնակր.) || Նոճաղիլ. կամ Նոճաղիլ. կամ նքթիլ. կամ նքողիլ. ռամկ. անօթենալ։ 'Ի սմանէ ծագի բառս անսոճաղ, որ է քաղցեալ. կամ սո֊ վեալ. և կամ նօթի։ վն զի վանկս, ան, աստէն ոչ է բացբարձական, այլ սաստա կական, որպէս է և բառս անարի. որ երբեմն նշանակէ արի, կամ սաստիկ և հզօր. կամ բուռն. ոմ գնի 'ի գիրս Խորէն. գ. պր. 9։ և 'ի Յովհաննէ, և յայլուր։

Սոճարիմ. ի. աւ. ւաց. օք։ || է բառ եբրայ ական, որ Թարգմանի ժանտ, կամ պժն֊ դակ. և կամ սաստիկ յուռի և չնաշխարհ. ըստ այնմ Երեմ. 29. 17. Եւ արարից զնո իբրև զԹուզ ժանտ սոճարիմ։ Եւ աստէն ժանտ բառն է Թարգմանութիւն սոճարիմ բառին. ոմ և Մատ. 21. 15. ուր ասի, ով սաննայ օրհնութի, յետին բառն է Թարգ մանութի առաջնոյն։

Սուգ. սգոյ. ով. ոց. ովք։ || է արմատ սը գալ բային. որով մերԹ նշանակի ողբա֊ ցումն, որ է տրտմութի և ցաւ երևեալ 'ի գլխն, 'ի զգեստս, 'ի կերպս, յողբս և յար տասուս, և յայլ սոյին նմանս, որ և ռամկ. սաւ ասի. Ծննդ. 37. 35։ և 50. 11։ Յով. 4. 9։ Իսկ մերԹ նշանակի ողբալի. կամ տրտմա կան։ ըստ այնմ Սովէ. 1. հոփ. ժե։ Զինչ ողբալի քան զայս, և սուգ։ ՄերԹ ևս ընդ բայի չարակցի այսպէս. սուգ ա֊ ռնել. կամ սուգ առնուլ. և նշանակէ սը գալ։ Ծննդ. 37. 34։ 1. Թագ. 15. 35։ և 16. 1։ Երեմ. 6. 26։

Սուզական. ի. աւ. աց. օք։ || այն ամ, որ սուզանի. և կամ ընկղմեալ։ Եւ մանաւանդ բաղձս առեալ ասի սա զհնակարճային բևեռ ռեն' ըստ որում 'ի մէնջ սուզանի, թ սոր մնալով քան զխոտագունան մեր ծածկի 'ի

մէնջ. որպիսի է և հարաւային արջային բևեռն, զոր մեք յայտնի տեսանեմք։

Սուզանեմ. սուզի. սոյզ. ել։ (Ներգործ.) || ընկղմել. կամ ընկլուզանել. և կամ 'ի խորս իջուցանել։ ռամկօր. պաթըրմըշ անել։ Եւ յայսմանէ առեալ, երբեմն նշանա֊ կէ' Թագուցանել. կամ ծածկել։ և կամ աներևոյթ և անհետ առնել։ ռամկօր. պա հել։ Ողբոց. 26. 26։

Սուզանիմ. եցայ. եայց. իլ։ (Ձայնակր.) || 'ի խորս իջանել. կամ ընկղմիլ. կամ ընկլուզա նիլ։ ռամկ. պաթմըշ ըլլալ։ Փոխաբերեալ նշա նակէ' Թաքչիլ. կամ աներևոյթ և անհետ լինիլ. և կամ կորնչիլ. ըստ այնմ Խորէն. գ. պր. 51. որք սուզեալք զօղեալ էին յան յայտ տեղւոյ։ Եւ 'ի Նորէն. ի է. ասի, եթէ ուժգին ակնարկեալ սուզանիմ։

Սուզեմ. եցի. եալ. ել։ (Ներգործ.) || տես 'ի վերոյ զՍուզանեմ։

Սուին։ (Նախդրիւ հոլովի.) || աշտէ, որ է զէն ինչ սլաքաւոր կազմեալ իբրև ըղ փոքր և զկարճ գեղարդն, զոր ձեռամբ ձգեն 'ի վերայ Թշնամւոյ. և յայսմանէ ա֊ ռեալ նշանակէ և զո՛ և իցէ նիզակ. կամ տէգ։ ռամկ. խըշթ. կամ մըղրախ։ Երգս. 2. 4։ Խորէն. ա. պր. 5։ Մծբն. ժե։

Սուլեմ. եցի. եալ. ել։ (Չէզոք.) || սուլել. որ է շչել։ ռամկ. ըսլըխ չալել։

Սուղ. սղոյ. ով. ոց. ովք։ կամ ի. իւ. եց. օք։ (և մերԹ մակբայ.) || գոյզն. կամ սա֊ կաւ. կամ փոքր. կամ կարճ. և ըստ այսմ ասի. սուղ ինչ ժամանակ. կամ ընԹացք. կամ սուղ ինչ կուշտ. և կամ սուղ ինչ զանազանել, կամ բնախօսել. և այլն։ Խորէն. գ. պր. 51։ Սովէ. 1. հոփ. իը. և լե. և Լամբրոն. Փոխաբերեալ' սուղ կոչի ըստ քերականաց տառն, որոյ հնչումն ոչ է երկար. այլ կար ճառօտ. որպիսիք են սոքա. ե. ո. ւ. որոյ և նշանն յարքորքի ոսկին անուանի, որ է այս. ˘։ Իսկ երաժիշտք, կամ տաղաչափք սուղ կոչեն զբառն, որ սղելով. կամ կարճ հնչմամբ արտաբերի. վն որոյ և զայնպի սիսն. գրեն սղիմ. այսպէս. Ա՛նականքն հայր, առաջին ըղյա։ Փոխաբերեալ. բառս այս երբեմն յարելով 'ի նախդիրս առ, այս պէս, առ սուղ ինչ. վարի իբրև զմակբայ. և նշանակէ առ փոքր մի. կամ առ սակաւ ինչ. կամ առ սակաւ սակաւ։ ռամկ. ալէզ ձըլ։ Սովէ. 1. հոփ. լե։

Սուղաչաճառ. ի. իւ. եց. իւք։ || ամօղ ըղ սուղ, կամ զնուճազ հասարա. և կամ սակա֊ ւահասարատ։

Սուղեմ. կամ սուղզեմ. եցի. եալ. ել։ (Չէ֊ զոք.) || սուլել, կամ շչել. ռամկ. ըսլըխ չալել. և ըստ այսմ ասի զմարդոյ կամ զաղ նոց' սուղել ձայնիւ. կամ սուղելով և կամ շչելով լինել զօգս։

Սուն։ (Նախդրիւ հոլովի.) || գամն. կամ խուռն. և կամ գոյզն, որ է սակաւ. կամ նուճազ։ ռամկ. ֆէչ։ 'Ի հէն ֆէրաֆիլտոպէ։

Սունակ. ի. ան. աց. օք։ || մանրակ, կամ բեկր. և կամ գնտապակուկ հեծան, զոր 'ի ձեռս առեալ 'ի հնումն գնայքն 'ի պատա

բազմ և վարէին նովաւ երբ զհնուք՝ հար
կանելով, և ջարդելով, և սպանանելով.
և ասացաւ սունակ, երբ թէ սեւնակ.
ռամկ. ռոփայ. կմ ըշէրփէրփէ. կամ Բօյախայ:
ըստ այնմ Մծբն. Ժե. Սուսերօք. և սու-
նակօք, և նիզակօք մարտնչէին:

Սունակօթ. ի. իւ. ից. իւք: || ամանցի սա
'ի բառէս սունակ. ով թմաթն 'ի բառէս
թօն. և նշանակէ զմեծ սունակն. կամ
զոր ևս լցէ տեսակ սունակի, որ է ռօփայ. կմ
Բօյախայ: Եզեկ. 39. 9:

Սունաւոր. ի. աւ. աց. օք: || սունակաւոր.
ք ունօղ. կմ կրօղ 'ի ձեռս իւր զսունակ.
և կմ սունակաւ վառեալ 'ի պատերազմ:
տաճկ. ռօփալը: Աշխարհ: 'ի հին պատմագիրս:

Սունդարուն. կմ սունդարին. ի. աւ. աց.
օք: || է բառ լատինական, որ ըստ նշ կո
չի, սուտաբուսեալ. և նշանակէ՝ թաշկի-
նակ, կմ դաստառակ, որով սրբեմք զքր
տինս երեսաց. կմ յարդարեմք զանձս.
և այլն: ռամկ. Մէնտիլ: Կիւրղ. Եզեկ. Ժ:

Սունկ. սնկոյ. ով. ոց. ովք: || է սնդամանման
բոյս ինչ անդայտ և փափուկ. որ երբև
զարդաթօրեալ յաւելուած բղխի յերկ-
րէ, 'ի ծերպից քարանց, 'ի ծառոց, և 'ի
նմանեաց. որք ըստ մեծի մասին են վա
հանաձևք: ունի զբազում տեսակս, որոց
ոմանք են անշահք և անվնասակարք. և
ոմանք թունաւորք, և վնասակարք: իսկ
այլք են անպիտանք. և ուտելիք. զորս քա
ղեալ խորովեն. կամ եփեալ համեմեմք
ուտեն 'ի տանի. ռամկ. Մանթար: Դարձեալ
նշանակի սունկ ստորոտ կեղև ինչ կաղն
ւոյ. ք բաղմանոյ ծառոյ. որ լինի բնութ
կակուղ և թեթև, զոր ձկնորսք յեղերս
ցանցից շարեն. և կօշկակարք 'ի կրնկունս
կամ 'ի ներքանս հողաթափից ագուցա-
նեն. որ և այլն. ռամկ. կուշի՝ Մանթար: Դրձլ
սունկ կոչի տեսակ ինչ ծակոտկէն և թե
թև քարի, որ գտանի յանձաւս յափունս
ծովու կամ գետոց. տաճկ. սյունգեր:
Եւ ևս սունկ անուանի այլ ինչ կե-
ղև, որ երբև զյաւելուած արեան. կմ
մաղասոյ՝ սնդամանման 'ի վեր բղխեալ ե-
րևի յերեսս, կմ 'ի պարտէզս մարդոյ:

Սուսեր. երի. կմ ոյ. աւ. աց. օք: կմ երք.
երբք: || վաղակատար. կմ սուր. զոր 'ի
գործածեն պատերազմօղք 'ի կոտորել զզ
թշնամիս. որոց ոմանք են միասայրի. և
ոմանք երկսայրի: ռամկ. Քլըճ: 2. Մակ. 15.
15: Երեմ. 31. 2. Սոփոն. 2. 12:

Սուսերահար. ի. աւ. աց. օք: || սուսերաւ
հարկանօղ. կմ կոտորօղ: ռամկ. Քըլըճ վուր
նօղ: իսկ մերթ՝ սուսերաւ հարեալ. կմ
սպանեալ: ռամկ. Քլըճ վուրուլմուշ: և ըստ այսմ
առէ՝ սուսերահար լինել: Խորէն. Ճ. Գլ. 73:

Սուսերաձիգ. ձգի. աւ. աց. օք: || ձգօղ
սուսերի. կմ նա՝ որ քարշէ զսուր 'ի պա
տենից առ 'ի հարկանել. և կմ որ ածէ զզ
սուր 'ի վերայ մարդկան առ 'ի կոտորել:
ռամկ. Քլըճ չէքէն: Դատ. 20. 35: 4. Թագ.
3. 26:

Սուսերամերկ. ի. աւ. աց. օք: || մերկացու
ցանօղ զսուսեր. կամ նա՝ որ հանէ 'ի
վր թշնամեաց զսուր 'ի պատենից: ռամկ.
Քլըճ չէքէն: Դատ. 8. 10: 2. Թագ. 24. 9: Իսկ
մերթ նա՝ որ կրէ 'ի ձեռին զսուր մերկ.
և ըստ այսմ երևեսի վարք երբև զմակբայ.
որգոն. սուսերամերկ մտանել. և նշանա
կէ մերկ սուսերաւ. կմ մերկեալ սրով.
տաճկեր. ...: Դարձեալ՝ նշանակէ
զայն, որ լինի մերկ սուսերաւ, կմ առ
մերկ սուսերն վերաբերի, և ըստ այսմ
առի՝ սուսերամերկ արշաւանք:

Սուսերաւոր. ի. աւ. աց. օք: || ունօղ. կմ
կրօղ զսուսեր. կմ սուսերաձիգ. ռամկ.
Քըլըճլը: 1. Մնաց. 21. 5: Եզեկ. 38. 4:

Սուսր. ի. իւ. ից. օք: || է կարմիր ներկ ինչ
մթագոյն՝ յառաջացեալ 'ի տեսակէ իմե-
քէ կարմիր հողոյ. և է երբև դդխարափշե
լի կոշտս. որով և հիւսունք դրոշմեն 'ի
վր փայտեղինաց զգիծս կարմրագոյնս:

Սուտ. ստոյ. ով. ոց. ովք: || թափուր 'ի
ճշմարտութենէ. կմ որ ոչ է ստոյգ. որպի
սի է այն՝ որ անուանի այս ինչ. կմ այն
ինչ. կմ այս ասէ, և այն առնէ. և ոչ ունի
զիսկութիւն անուանն. և ըստ այսմ ասեմք,
սուտ գրամ, սուտ համբաւ. սուտ մար-
գարէք. սուտ վարդապետք. և այլն: Եւ-
Ղեկ. 23. 1: Մատթ. 24. 24: և 1. Յովհ. 4. 1: Իսկ
մերթ նշանակէ ստաւաց. կմ ստախօս.
ռամկ. եալանճը. կմ սուտ խօսօղ. և ըստ այսմ
յանձնս 'ի գործածի 'ի ս. գիրս. որպէս Սաղ.
61. 10: և 115. 11: Առակ. 12. 22: 1. Տիմ. 1.
10: Յայտ. 21. 8: ըստ այսմ իմացեալ լինի
և Յովհ. 8. 44: ուր ասի զսատանայէ. սուտ
է և հայր նր. ք ստախօս է, նաև հայր
ստութե, այսինքն՝ հեղինակ ստութե: Դար
ձեալ վարի սա երբեմն գոյականաբար,
և յայնժամ նշանակէ զբանս ստութե. կմ
զստութիւն. որպէս մինչ ասեմք, հեղինակ ստոյ.
կամ խօսել զսուտ, և այլն: Յոբ. 5. 7:
Դարձեալ վարի սա երբև զմակբայ. և
նշանակէ ստաբար. կմ ստութեամբ. կմ ստե
լով: Երեմ. 7. 9: և 27. 15: և 29. 23: Մաքք.
5. 11: Բայց մինչ առի՝ 'ի սուտ հանել զք.
նշանակէ՝ սուտ ածել. կմ ստութեան յան-
ցանել: ռամկ. սուտ հանել. կմ սուտ ցել:
Խորէն. Ե. Գլ. 40: ըստ այսմ մինչ առի՝ 'ի
սուտ ելանել՝ նշանակէ՝ սուտ լինել. կմ
ստութեան երևիլ: ռամկ. սուտ ելնել. կամ
սուտ ըլլալ:

Սուտակ. ի. աւ. ակ. օք: || է պատուական
ակն ինչ կարմրագոյն՝ այլով անուամբ կո
չեցեալ կարկեհան, որ 'ի տեղւոջ իւրում
մեկնեցաւ: Ծննդ. 2. 12: Տօբ. 13. 21: Դար
ձեալ սուտակ կոչի պատուական ակն ինչ
կոչեցեալ հայերէն մեղեսիկ, և յունարէն
ամեթօս, որ ունի զգոյն կարմիր՝ նման
կարկեհանի: տաճկեր. լաալ: Եզեկ. 28. 19:
և 39. 12:

Սուտաւ. ի. աւ. աց. օք: || ստօղ. կմ ստա
խաւ. կմ խաբեբայ. և ըստ այսմ առի՝ 'ի
հին պատմագիրս, 'ի սուտաւ և 'ի բանսարկու

մարդկանէ։ Եւ 'ի սմանէ ծագի բառս սուտակարապաս։

Սուտակարապաս. ի. իւ. ից. կամ աց. օք։ ‖ մարդահաճոյ. կամ մարդելոյզ. յհ նա՛ որ խօսի զինչ առ շնորհուկս, կամ երեսպաշտութիւ, և սուտ պաճուճանօք. առ 'ի որսալ զհաճոյս այլոց. կամ առ 'ի խաբել զոք. և ըստ որում տպաւորիչ սուտ է քերթութիւնն վարի մարդկանց. և այսպէս կոչեցաւ սուտակարապաս։ ռամկ. խօշամէթի խօսօղ։ Աղթուի. 26. 22։ և 28. 23։ Խոսրէն. ը. գլ. 57։ և ժ. գլ. 60։ Իսկ մերթ մարդելուզական, կամ շողոքորթական. և կամ այն առ, զոր մարդահաճոյքն առնեն, կամ խօսին առ 'ի որսալ զոք. և ըստ այսմ առ 'ի սուտակարապաս գովութիւն. կամ բան. և այլն։

Սուտակարապասեմ. եցի. եալ. ել։ (ներգործ.) ‖ մարդելուզել. կամ շողոքորթել. կամ առ շնորհուկս խօսել. և կամ երեսպաշտութի առնել։ ռամկ. խօշամէթի խօսիլ։

Սուտակարապասութիւն. թեան։ ‖ մարդահաճութի. կամ մարդելուզութի. կամ երեսպաշտութի. և կամ սուտ շողոքորթութի։

Սուր. սրոյ. ով. ոց. ովք։ ‖ վաղանակաճոր. կամ սուսեր։ ռամկ. ճմուր։ Ծննդ. 34. 25։ 1. Թագ. 25. 13։ Եզեկ. 3. 8։ Իսկ մերթ ընդհան րապէս առեալ նշանակէ զամ զօրութեան և հատանող գործիս կամ երկաթոյ. և ըստ այսմ սուր կոչի դաշնակն. դանակն. ածելին. նշտրակն, զմելին, և այլ մանրք սոցա։ Ծնն. 22. 10։ Յեսու 5. 2. և 3։ Եսայ. 7. 20։ Դնել նշխէ զսայրն. յհ զսրել և զհատու բերանն սուսերաց. և ըստ այսմ խմացեալ լինի, մինչ ասի, 'ի սուր սուսերի. կամ սրով սուսերի սպանանել. կամ կոտորել։ Ծննդ. 34. 26։ Յեսու. 10. 28. և 30։ 1. Թագ. 22. 19։ ըստ այսմ և բանսի մինչ ասի 'ի սպառ սուսերի մաշել։ Աճգոյն։ Իսկ երբեմն ընդ բայի շարակցի այսպէս, ը սուր հանել, և նշանակէ սրով սպանա նել. կամ պատերազմ առնել։ ռամկ. Քըլըճ չէքմէք. կամ Քըլըճ անդըրմէք։ 1. Մակ. 12. 48։

Սուր։ (նախդրիւ հոլովիւ.) ‖ է սրեմատ ուրել բային, որ վարի ածականաբար, և նշանակէ ունօղ սրութի. կամ սրեալ. կամ սրածայր. և կամ կարի հատու, որ և ռամկ. ասի՝ սուր. կամ կեսկին։ և ըստ այսմ ասի՝ սուսեր կամ ածելի սուր. նետք, կամ ծայր սուր. և այլն։ Սաղմ. 51. 4։ և 56. 5։ Եսայ. 49. 2։ Ը այսմ է և 2. Մակ. 5. 11. սուր ասի՝ էառ զքաղաքն 'ի սուր սայր սուսերի, յհ 'ի սրեալ և 'ի հատու բերան սուսերի։ Իսկ երբեմն ասի սա զմտաց, կամ զմարդոյ, և նշանակէ, նրբամիտ խմաստունք, կամ սրամիտ, որ 'ի խորս խոյսն վաղվաղակի ընդմտա նէ. ըստ այսմ Իմաստ. 8. 11. Մանուկ սուր գտայց 'ի դատաստանի։ Դարձեալ ասի զաչաց, և զականջաց. և նշանակէ սրա տեսանող և լսօղ։ Երբեմն և ասի զձայնէ, և նշանակէ զնուրբն, և զսաս տիկն։ ռամկ. ինչ։ Եւ և ասի զհամոյ. և զայլոց նմանեաց. և նշանակէ սաստիկ. կամ բարկ, որ խայթելով մտանէ ընդ քիմս։ ռամկ. կծու։ Դարձեալ է սա անուն էբրայեցական խաղի, որ ունի զայս ձև. '։

Սուրամ. ացի. սուրամ. ալ։ (չէզոք.) ‖ սուրալ. կամ սողալ. կամ զեռալ։ և ըստ այսմ ասի 'ի Խորէն. ա. գլ. 10. զզօրացն բեւրոյ. Ցանե և ցիր յանդուգն յարձակմամբ ընթերեալ ընդ երկիրն սուրալով։

Սուրբ. սրբոյ. ով. ոց. ովք։ ‖ մաքուր. կամ անխառն. կամ յստակ. և կամ զուտ. և ըստ այսմ ասի մաքուր, կամ կատարեալ սուրբ. ոսկի, կամ արծաթ սուրբ. և այլն։ ռամկ. բէլիզ. կամ ֆաք. կամ խալիս. և կամ զուրու։ Ելից. 25. 17. և 24։ Աղթուի. 14. 4։ Մատթ. 27. 59։ Դարձեալ, նշանակէ անմեղ. կամ արդար. և կամ ածարեալ։ Մատթ. 27. 52։ Մարկ. 6. 20։ Երբեմն և սրբեալ. կամ նուիրեալ. կամ սեպհականեալ այ. և կամ հաղորդեալ ածայնոց. որպ մինչ ասի՝ արուքն որք են լինելոցն. կամ օրն որ եղիցի. ըստ այսմ և ասի զտեղւոյ, կամ զտաճարէն այ, և կամ զբեմէ, որ մասնաւորապէս կոչի քաղաք սբ։ Ելից. 3. 5։ և 12. 16։ և 13. 12։ Մատթ. 27. 53։ Դարձեալ՝ սուրբ անուա նեն մասնաւորապէս երանեալքն, որք յերկինս, զորս տօնեմք յերկիր։ Եւ և 'ի հնումն սուրբ անուանէին զհաւա տացեալս, կամ զքրիստոնեայս, ըստ որում էին սրբեալք հաւատովք, և բարի գործովք, և ամբծութբ հոգւոյ։ Հռովմ. 1. 7։ 1. Կորնթ. 6. 2։ 2. Կորնթ. 9. 1։ Փիլիպ. 1։ Իսկ երբեմն ընդ բայի շարակցի այսպէս, որք առնել. և նշանակէ սրբել. կամ սրբա ցուցանել։ Յօհ. 17. 17։ Եւ մերթ որ գով ցուցանել։ Թուոց. 20. 12։ և 27. 14։ Դար ձեալ. բազում անգամ բառս այս փոխի 'ի վերացեալ. և զնշանակութի իւր ոչ փոխէ. զոր օրինակ. Եւ եղիցին սրբութե ք սբք։ Ելից. 40. 9։ Ջհասրբութեան. ք սբք են։ Ելից. 29. 33։ Եւ կամ այսպէս. սէ զի սրբութե. պատմութեան սրբութե. կամ ածութն սրբութե. որ է սեղան. տեղի որ պատմութեան որ. և այլն։ Ելից. 15. 13։ և 29. 29։ և 30. 25։ ըստ այսմ հանդիպին և այլոց ածականաց. որգոն. բան յաւիտ. կամ ոսկու հղութե. որ է՝ բան յաւի. կամ ոսկու հղական։ ըստ այսմ խմա և զայլոց բազմաց. որք յաճախեն 'ի բարբառս մեր։ 1. Թագ. 29. 10։ 2. Մակ. 7. 21։

Սուրբընկալ։ (նախդրիւ հոլովիւ.) ‖ ընդու նօղ սրբոց. կամ որ յինքն ընկալեալ ու նի զսբ իրս։ որպիսիք են արկեղք. կամ տապանակք, յորս մարմինք սրբոց եդեալ լինին։ Աճգոյն։

Սուրհանդակ. ի. աւ. աց. օք։ ‖ կարապետ։ յհ նա՛ որ առաջի կառաց, կամ երիվարաց մեծի ուրուք ընթանայ ուժգին վազե լով։ ռամկ. շաթըր։ 1. Թագ. 8. 11։ 2. Թագ. 15. 1։ 3. Թագ. 14. 28։ Դարձեալ՝ սուր հանդակ կոչին ծիր և քարընթաց պաշտօ նեայք թագաւորաց՝ կամ իշխանաց և կամ քաղաքաց, որք առաքին փոյթընթաց որ

շաւա

շաւառնոցք հասուցանել ուրեք զնամակս, կմ զպատգամս ինչ: ռամկ. ֆէյէլ. կմ ասել. 2. Մնաց. 30. 6. և 10: Աստեղ. 6. 11: և 24. 34:

Սուրհանդակօրէն: (մակբայ. և մերթ ա_նուն.) || իբրև զսուրհանդակ. կամ հանգոյն կարապետի, կամ սուրհանդակա_նման. կամ սուրհանդակակերպ. և ըստ այսմ ասի՝ սուրհանդակօրէն ընթանալ. կմ սուրհանդակօրէն երագամամբ յառաջ խաղալ: ռամկ. սայէի պէս. Նարեկ. ղէ:

Սոփեստ. ի. իէ. ից. իւք: կմ աց. օք: || է բառ յունական. որով նշանակի՝ իմաստ. կմ իմաստութիւն. կմ ճարտարութիւն. կմ բանաստեղծութիւն. և կմ յօրինուած գե_ղապանծ բանից: Նարեկ. ղզ. և 'ի յիշատա_կագիրս: Դարձեալ նշանակէ զսոփեստէսն. որ է իմաստուն. ըստ այնմ 'ի Վարս հարց. ժՁ. Խօսէաք ընդ սոփեստին փիլիսոփի:

Սոփեստական. կամ սոփիստական. ի. աւ. աց. օք: || իմաստնական. կմ իմաստասէ_րական. կմ ճարտարական: Իսկ մերթ՝ իմաստակական:

Սոփեստէս. տեսի. իէ. ից. օք: || իմաստուն. կմ իմաստասէր. և կմ ճարտարապետ ի_րիք արուեստի՝ կմ մակացութե. և այլն: 'Ի Վարս հարց. Ճ: Դարձեալ առեալ լինի փո_խանակ բառին՝ իմաստակ:

Սոփեր. ի. աւ. աց. օք: || է բառ եբրայա_կան, որով նշանակի՝ գիրք. կմ մատեան. կմ գրուած. և կմ Ճառ. և ըստ. այսմ 'ի Նարեկ. ձբ. և 'ի յիշատակարանս. գիրք նարե_կացւոյն սոփեր կոչի: Սոյնպէս է և ղթ. և 'ի Գող. տատեպէն. ուր ասի՝ սոփերք հոգե_մատեանք ծածկութե խորհրդոյ էին:

Սոփեր. այ. աւ: || նոյն է ընդ սոփեր բա_ռին. զոր տեսցես 'ի բառարանի յառուկ անուանց: Նարեկ. ղթ. և 'ի Գող. հատին:

Սոփիայ. ի. իէ. ից. իւք: || է բառ յունա_կան, որ թարգմանի՝ իմաստութիւն. յորմէ և իմաստունն կոչի սոփեստէս:

Սոփիկոսայ. ի. իէ. ից. իւք: || տե՛ս զՍո_փեստէս:

Սոքիմէք: || է յոգնական գործիականն դե_րանուանս՝ սա. և նշանակէ սոքօք: Նա_րեկ. Ժ:

Սոքումբք: || նոյն է ընդ մերմոյն:

ՍՊ

Սպաթար. ի. աւ. աց. օք: || անձնապա_հապետ. կամ. սպարապետ. տաճկերէն. սէրասքէր:

Սպահ. ի. իէ. ից. իւք: || նոյն է ընդ սպայ բառին՝ որ է գունդ. կմ զօրք. և ըստ այսմ է. 1. Մակ. 8. 20. ուր ասի՝ Յուդայ մա_կաբէ՝ և որ ընդ նմա հրէաստանեայց:

Սպահական. ի. աւ. աց. օք: || այն որ է զօրաց. կմ առ զօրս վերաբերի. կմ զի_նուորական:

Սպայ. ի. իէ. ից. իւք: || ազգարագունդ. կմ խումբ զօրականաց. կմ զօրք. և կամ հեծեալ: տաճկ. ասկէր. կմ ասուար: 1. Մակ. 12. 6: Ըստ այսմ է և 'ի Խորենե. Բ. գլ. 45: և Դ. գլ. 39. յորս ասի. Հասանէ սպայ ծանր 'ի սահ_մանս հայոց: կամ մտեալ 'ի Թեսաղոնիկէ հանդերձ սպայիւն, ք զօրօքն: Եւ 'ի Գիրս Կիւրղի Եղէն. Թ. ասի՝ Սպայ զօրացն բազ_մաց, որ շուրջ զնովաւ պատեալ կային. ք խումբ զօրացն:

Սպայազօր. ի. աւ. աց. օք: || զօրք սպայից. և կմ հեծելազօր: 'Ի հին պատմագիրս:

Սպայակոյտ: (Նախդրիւ հոլովի.) || կոյտ կմ խումբ սպայից: Իսկ մերթ կուտեալ. կմ խմբեալ 'ի զօրաց. կմ հեծելագունդ. և կմ հեծելազօր. և ըստ այսմ ասի՝ սպայս կոյտ զօրք, կմ գունդ: 'Ի հին պատմագիրս:

Սպայապետ. ի. իէ. աց. օք: || սպարապետ. կմ զօրապետ: տաճկերէն՝ սէրասքէր:

Սպանակ. ի. աւ. աց. օք: || սպանող. կմ սա_տակող. կմ կոտորող: Բայց մատենագրա_պէս առեալ նշանակի սովաւ չափ ինչ եգիպտացւոց. որով որոշէին զժամանս անդաստանաց. և պսակածանեցաւ սպա_նակ, վն բազում սպանութեանցն. քանզի 'ի ծովանալն նեղոսի ողողեալ խառնակէր զժամանս արտորէից նց, և մինչ 'ի ցա_մաքիլն որոշէին զնոսա, լինէին բազում կռիւք, և սպանութիւնք. յորմէ ստիպեալ հնարեցին չափ ինչ. զոր գինի նուա_զուէ ջուրց՝ զանդաստանօք արկեալ՝ գը_տանէին զիւրաքանչիւր զժամանս. և զի յա_ղագս սպանութե հնարեցաւ. վն այնո րիկ կոչեցին զնա՝ սպանակ. սմ գնի 'ի Գիրս Պտղոմէի Քենսորինոսի:

Սպանանեմ. սպանի. սպան. Նանել: (Ներգործ.) || մահացուցանել. կամ զրկել 'ի կենաց: ռամկ. սպաննել. կմ մեռցնել: Ծննդ. 4. 14: Ելից. 20. 13: Իսկ մերթ առեալ լի_նի մատնաւորապէս փոխանակ զենլոյ: ռամկ. մորթել: Ելից. 29. 20: Ղեւտ. 1. 5: և 3. 2:

Սպանդ. ի. իէ. ից. իւք: || ածանցի 'ի սպանա_նեմ բայէն. սմ երանգն 'ի եւալ բայէն, 'ի ձեռն մասնկանս՝ անդ. որ է ում. սատի բառիւս սպանդ նշանակի սպանումն. կմ զենումն. և կմ զոհումն: և ըստ այսմ ածիլն 'ի սպանանելն, կմ 'ի զենանելն. ա_սի. 'ի սպանդ վարել: Եսայ. 53. 7: Երեմ. 11. 19: Եւ յայսմանէ առեալ երբեմն նշա_նակէ զոհ, կմ պատարագ, որ 'ի յանաս_նոց: 2. Թագ. 6. 13: Եւ մերթ գանգա_տունք, կմ նուէրք, որք 'ի կերակրոց, կմ մանուածանդ 'ի յըմպելեաց նուիրեալ լի_նէին նմ, կմ դից: Եզեկ. 14. 17: Եսայ. 45. 17: Յովէլ. 1. 9: և 2. 14. ըստ այսմ է և բառս զոհ, որ նշանակէ զպատարագն 'ի յանաս_նոց. և յայնմանէ առեալ նաև զայլ նուէրս:

Սպանդանոց. ի. աւ. աց. օք: || սպանդա_րան. ք տեղի, ուր զենուն զանասունս 'ի վաճառել. և կմ ուր վաճառեն զմիս զենեալ անասնոց. վն որոյ և ասացաւ սպանդանոց, իբրթէ տեղի սպանդեցեա_նասնոց: ռամկօրէն՝ սալխանայ: 1. Կորնթ. 10. 25:

Սպանդարամետ. ի. ից. || Որմզդական դիք. որ է կուռք ինչ, զոր յոյնք կոչեն դիոնի_ սոս. և լատինք բաքոս. կամ լիբեր. [illegible]: Զամենին առասպելաբանէին հեթանոսք նախ յղացեալ 'ի սեմելեայ. և 'ի կայ ծոցկին հօր [illegible] նր փոխել յերանս գիսոսի, և ապա ըստ ժամանակին ծնա_ նիլ 'ի սեմելէ. ուստի և կոչի որդի դիո_ սի: Զաս դասեցին 'ի կարգս չաստուածոց յաղագս բազմադիմի գործոցն քաջութե, որ և կարդացեալ լինի չաստուած շռայ_ լութեան, և արբեցութեան. զի 'ի տօնի նր, զոր յոյժ մեծահանդէս կատարէին, հա_ մարձակութի էր ամենեցուն ըստ հաճոյից իւ_ րեանց խնճղչանալ 'ի գիրոս, և 'ի գինեա_ րբելս. ուտել, և ըմպել. կաքաւել, և խաղալ և ընդ միմեանս դարշապար խառ_ նակիլ: Յայսմ տօնի լինէին մեծամեծ սպանդք անասնոց. վս որոյ և կուռքն այս կոչեցաւ 'ի մեզ սպանդարամետ. և հան_ դէս տօնին իւրոյ սպանդարամետական պաշտամունք, որ հանդիպէր յամսեանն ահեկանի, զորմէ լիադոյն ասացաւ 'ի բառն որմզդական: 2. Մակ. 6. 7:

Սպանդարամետական. ի. աւ. աց. աք: || այն տօն, որ է սպանդարամետին. կամ առ սպան դարամետ կուռքն վերաբերի. և ըստ այսմ հանդէս տօնի նր կոչի սպանդարամետա_ կան պաշտամունք: 2. Մակ. 6. 7:

Սպանդարան. ի. աւ. աց. աք: || տե՛ս զՍպան_ դանոց:

Սպանդունիք. եաց. եօք: (անեզական.) || է ցեղ ինչ նախարարութեց հայոց. և այսպէս կոչեցան. վս ունելոյ նախնեաց իւրեանց զպաշտաման արքունի սպանդից, և զենարա նաց: Խորէն. բ. գլ. 7:

Սպանիա: || տե՛ս 'ի բառարանի յատուկ ա_ նուանց:

Սպանիացի. ցւոյ. ւով. ւոց. ւովք: || տե՛ս զՍպանոս: 1. Մակ. 8. 3:

Սպաննեալ. ելոյ. ելով. ոց. ովք: || սպանեալ. այ մահացուցեալ. կամ զրկեալ 'ի կենաց: Սաղմ. 78. 11:

Սպաննութիւն: || տե՛ս զՍպանութիւն:

Սպանող, կամ սպանօղ. ողի. իւ. աց. օք: || սպանանօղ. այ նա, որ սպանանէ, կամ խող խողէ զոք. կամ մարդասպան. և կամ պատ րաստ 'ի հեղուլ զարիւն: Առակ. 22. 13: և 26. 13:

Սպանոս. ի. աւ. աց. օք: || սպանիացի. այ բնակիչ սպանիոյ. որ է աշխարհ 'ի վերջին սահմանս եւրոպիոյ: Կիւրղ. եղեմ. ժդ:

Սպանութիւն. թեան: || սպանումն. այ խող խողումն. կամ մահացուցումն. և կամ զրկելն 'ի կենաց: և սա ըստ մեծի մասին առեալ լինի փոխանակ մարդասպանութեան: ուղ Ելից. 22. 2: Մարկ. 7. 22: Հռոմ. 1. 29:

Սպանումն. մանն. մամբ. մանց. մամբք: || սպանութիւն. կամ խողխողումն. կամ զենումն: Սաղմ. 43. 12. և 22: Իսկ մերթ սպանման_ նիլն. կամ մահ. կամ կոտորած: ռամկ. ջարդ: Ելից. 5. 3:

Սպառ: || է արմատ սպառել՝ բայից, որով նշանակի սպառուած. այ վախճան. կամ կատարած. կամ աւարտ. և այլն: Բայց սա գրեթէ միշտ 'ի գործածի նախդրիւ՝ այսպէս. ի սպառ. որով մերթ նշանակի մինչև ցսպառումն. կամ մինչև ցվախճան. կամ մինչ 'ի կատարած. և կամ յաւէտ: Սաղմ. 102. 9: Մատ. 24. 13: Յօհ. 13. 1: Իսկ մերթ բոլորովին. կամ ըստ ամի. և կամ բնաւ: Սո_ փոն. 3. 6: Մերթ ևս նշանակէ 'ի վախճա նի. կամ 'ի կատարածի. կամ հուսկ յետոյ: Առակ. 2. 3: ըստ այսմ է և Ծննդ. 46. 4. ուր ասի. Եհան ից զքեզ 'ի սպառ. այ 'ի կա տարածի աւուրց. որ և կարէ իմանիլ՝ ը ամի. կամ բոլորովին:

Սպառազէն. զինի. աւ. աց. օք: || խաղաղ զինեալ, որով իմանի զօրական. կամ քաջ զինուորն վառեալ ամ պատերազմական զինուք. և կամ նահատակ, որ սպառազի_ նեալ անձամբ մտանիցէ՝ ասպարէզ 'ի մէջ իւր զաղեղ, զհրացան, զնիզակ, զսուսեր, և զայլս նմանս: ռամկ. սիլահլը: Ելից. 14. 7: 3. Թագ. 16. 9: 1. Մակ. 5. 22: Երբեմն ևս նշանակէին սովոր սպառազինեալ քաջ զինակիրքն, կամ հանդերձապետք թագա ւորաց, և այլոց մեծամեծաց, որք ունէին յատկապէս զմեծ նախապատուութիւն. և փառաւորին ընդ ատեանս դահճապետին: 3. Թագ. 9. 22: 4. Թագ. 9. 25: և 15. 25: Բայց երբեմն վարի սա ածականապէս, և յայնժամ նշանակէ սոսկ զսպառազի_ նեալն. ուղ մինչ ասի. այր սպառազէն. հեծեալք սպառազէնք. և այլն: 1. Մակ. 6. 35: 2. Մակ. 10. 29: Եզեկ. 13. 4:

Սպառազինեմ. եցի. եսցէ. ել: (Ներգործ.) || խաղաղ զինել. այ բոլորովին վառել զի_ նուք. կամ յօրինել զոք զինուք պատե րազմի 'ի մէջ ուրուք:

Սպառազինիմ. եցայ. եսցի. իլ: (Կրաւորական.) || խաղաղ զինիլ. այ բոլորովին զինու վա_ ռիլ. կամ ամ պատերազմական զինուք յօ_ րինիլ: Եւ յայսմանէ առեալ բազում ան գամ նշանակէ մեծաւ քաջութեամբ զինուո_ րիլ 'ի մէջ ուրուք. կամ զինու պատերազ մի ելանել 'ի մէջ. ըստ այսմ Խորէն. բ. գլ. 85: և գ. գլ. 12. ընդդէմ դարեհի սպառա զինեցաւ: Եւ 'ի գիրս Ողբ. 1. համ. Ը ասի Զոր իմացեալ ասկերիտն սպառազինե_ ցաւ 'ի մէջ նր:

Սպառազինութիւն. թեան: || պաշտպան սպա ռազինելոյ. կամ զինուորութիւն. և կամ նահա տակութիւն: Բայց յատկապէս առեալ նշանակէ սովոր առհասարակ ամ զէնս, որովք զօրականք կամ նահատակք 'ի գլխոյ մինչև ցոտս վառին, կամ սաղաւարտ, երկաթէ, զրահք, աշտանակք, նետք, և այլք նմանք զի_ նեալք. պատերազմի 'ի մարտ պատերազմի: ռամկ. սիլահ [illegible]: 2. Թագ. 2. 21: Յուդթ. 9. 6: Ղուկ. 11. 22: Եփես. 6. 11:

Սպառանամ. ացայ. ացիր. ալ: (Չեզոք.) || սպառիլ. կամ վերջանալ. կամ պակասիլ. Ը այսմ Լամբրոն. Եւ սպառասցելոցս 'ի սիրոյ

մերկ

մերկ՝ և յայտնի ցուցանեմ։

Սպառացուցիչ. ցուցչի. աւ. աց. օք։ || Սպառիչ, կմ մերկացուցիչ. կմ ապականեցուցիչ. և կամ ծախիչ. ըստ այնմ Եփրեմի. Թուէեր զսպառացուցիչ ախտն հերձուածոյն։

Սպառեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) || Սպականեցուցանել. կմ մերկացուցանել. կմ զօրհնութիւն յինքեան։ ռամկօր. հատցնել. Ծննդ. 43. 2։ 2. Օրին. 32. 23։ Մակաբ. 10. 23։ Իսկ մերթ վատնել. կմ ծախել. կմ կորուսանել։ ռամկ. դոյ ընել. 2. Թագ. 22. 5։ 2. Մակ. 13. 21։ Ղուկ. 15. 14։

Սպառընթաց։ (Նախդրիւ հոլովի.) || 'ի սպառ ընթացող. այն որ մինչև 'ի վախճան ընթանայ. կմ յաւարտ իրիք գնէ։

Սպառնալիք. եաց. եօք։ (անեզական.) || սպառնացումն. այն խիզախմամբ խոստումն պատժի պատուհասի. կմ դժնդակ մեծացուց, և չարեաց. և կմ բանք ահարկուք բարբառեալք 'ի վր ուրուք։ Առակ. 17. 10։ և 19. 12։ 1. Պետ. 2. 23։

Սպառնամ. ացայ. ացիր. նալ։ (ընդ. միջ.) || խիզախելով և խիստ սպառնալով 'ի վերայ ուրուք՝ խոստանալ պատուհասել. կամ պատժել զնա. և կմ զդառնալի ինչ հասուցանել նմին։ Ծննդ. 27. 42։ Եսայ. 66. 14։ Գործ. 4. 17։

Սպառնացումն. ցման. մամբ. մանց. մամբք։ || տե՛ս զՍպառնալիք։

Սպառնութիւն. նման. մանք. մանց. մամբք։ || տե՛ս զՍպառնալիք։ Յոհ. 2. հատ. ժա։

Սպառուած. ոյ. ով. ոց. ովք։ կմ ի. իւ. եց. օք։ || սպառումն. կմ ապականութիւն. կմ վատնումն. կմ ծախումն. և կմ կորուստ։ իսկ մերթ վախճան. կմ կատարած. կմ աւարտ. և կմ վերջ։ 4. Թագ. 19. 23։ 3. Եզր. 3. 21։ Դատաւորաց. և այլն։ Եւ մերթ՝ գագաթն. կմ կատար. կմ ծայր. կմ ծայրք և կմ եզր։ Խորէն. ա. գլ. 29 Յոհ. 1. հատ. ժա։ և Լամբրոն։

Ստորոգութի․ թեան․ || ստորոգումն․ կմ ստորոգելն, որ է ստորասական դրութի եզեր ՚ի վ՛ր իրիք ։ Բայց մասնաւորապէս առեալ նշանակէ սովոր տասն գերա գոյն սեռքն արիստոտէլեան․ որք պարու նակեն ՚ի ներքոյ իւրեանց զբաղում զընդ միմեանս սեռս, մինչև ցվերջին տեսակն, որոց անուանքն են սոքա․ գոյացութի․ քա նակ․ որակ․ առ ինչ․ ուր․ երբ․ կալ․ ու նել․ առնել, և կրել ։ Արդ՝ անուանե ցան սոքա ստորոգութիւնք․ իբրթէ ստո րոգելիք․ քանզի ամ ինչ, որ ստորոգի մ իմեքէ, է միոյն ՚ի սոցանէ, կմ պարունակի ընդ միոյն սոցին ։ ՚Ի Գիրս Գոմբի անշաղբին ։

Ստորոգօղ · օղի · իւ · աց · օք ։ || Նա՝ որ ստո րոգէ · կմ զստորոգութեանց ճառէ․ և Ը այսմ է ՚ի Յն․ որդին, ասի սա․ Ոսկ ստո րոգօղն արիստոտէլ, տասն բանիւ զգօղն էր, թ էակի ։

Ստորոտ · ի · ով · կմ իւ · ից · իւք · կմ աց․ օք ։ || ստորին մասն · կմ ստորին ծայր ամ ի րաց · և Ը այսմ ստորոտ լերին կոչի լեռ նոտն, որ է արմատ լերին ։ ռամկ․ չէտան փայ․ կմ չէտան էթէկ ։ Ելից․ 19․ 17։ և 24․ 4։ և 32․ 19։ Խորէն․ գ․ գլ․ 59։ Այնպէս աստ իսկ հանդերձից անուանին քղանցքն, կմ ստորին եզերքն զգեստուց․ ռամկօր․ էթէ․ ըստ այսմ իմա և զայլոց ։ Ելից․ 28․ 33։ Եսթեր․ 15․ 6։ Եսայ․ 3․ 16։

Ստորոտաքարշ․ (Նախդրիւ հոլովի․) || Նա՝ որ զստորոտս հանդերձից իւրոց երկայ նեալ ընդ երկիր քարշէ, ոպ առնեն ոմ նասէր և խնծէշ կանայք ն գռռոզական զը նացինք բեկբեկելով ՚ի շրջելն ։ Մերթ

եւ նշանակէ զայն, որ լինի քարշելով ընդ երկիր զստորոտս հանդերձից։ Ըստ այսմ Կիւրղի Եղիշ. ժը. Թուեցաւ՝ ՚ի բաց ընկեցեալ լինել ինձ ձեմելիք ստորոտաքարշք. ըստ ձեմեցմանց ստորոտաքարշք։

Ստորուստ: || է մակբայ տեղական՝ որ ՚ի գործ ածի նախդրիւ. այսինքն՝ ՚ի ստորուստ. եւ նշանակէ՝ ՚ի ստորէ, ըստ ՚ի ստորին կողմանէ. կամ ՚ի ներքուստ: ռամկ. տակէն. կամ ներքեւէն. եւ կամ վարէն: Նարեկ։

Ստուար. ի. աւ. աց. օք: || Թաւ. կամ թանձր. եւ կամ սաստկացեալ մարմնեղութեամբ. որոյ ներհակն կոչի նուրբ. կամ անօսր: եւ ըստ այսմ ասի՝ ստուար այր. կամ մատն. պարան. վէմ. եւ այլն: ռամկ. հաստ: 3. Թագ. 12. 10: Նարեկ. կդ. ՚ի վերջ հատոր. լդ: Եւ մերթ անդրադարձաբար առեալ՝ ասի զզօրաց, կամ զգնդից զօրականաց. եւ նշանակէ՝ մեծ. կամ բազում. կամ յոլով. 1. Մակ. 4. 30: Խորեն. գ. գլ. 50: Բայց ըստ քերականաց, կամ ըստ տաղաչափից նշանակի ստուար թաւաձայնն. կամ թանձրաձայնն. որ ասի զատուից. որպիսիք են սոքա. թ. խ. չ:

Ստուարաբուն: (նախդրիւ հոլովի.) || ունող զստուար բուն. եւ այս մերթ ասի զծառոյ, որոյ կոճղն՝ յորում հաստատեալ կան ոստք եւ ճիւղք՝ է թաւ. ըստ հաստ: Իսկ մերթ զնիզակէ, եւ զայլոց նմանեաց, որոց երկայն փայտքն հաստք են:

Ստուարագոյն. գունի. իւ. ից. իւք: || առաւել ստուար. կամ թաւագոյն. եւ կամ թանձրագոյն: ռամկ. խիստ հաստ:

Ստուարակարկառ: (նախդրիւ հոլովի.) || ստուար կարկառով, կամ թեւով կարկառեալ, կամ կարկառօղ: ռամկ. հաստ եզերօք, կամ հաստ [illegible] նկարեալ. կամ [illegible]: Եւ յայտմանէ առեալ նշանակէ երրեակն զլօղեալն, կամ զկապմունքն ՚ի ստուար, կամ ՚ի մեծամեծ մասանց: Նարեկ. ՚ի ձեռագրաց:

Ստուարաձեռն: (նախդրիւ հոլովի.) || ունող զստուար ձեռն. կամ որոյ ձեռքն են թանձր եւ մարմնեղ: ռամկ. հաստ ձեռք ունող: Իսկ մերթ՝ ստուարազօր, որ է մեծազօր. կամ բազմազօր. եւ կամ սաստիկ հզօր. եւ բազմամբոխ. եւ ըստ այսմ իմանի մինչ ասի՝ ստուարաձեռն գունդ: Ըստ այսմ են եւ բառք՝ յոյնաձեռն կամ բազմաձեռն. զորս տեսցես ՚ի տեղիս իւրեանց:

Ստուարաման: (նախդրիւ հոլովի.) || մանող զթելս, կամ զստուարս ստուարս: Իսկ մերթ մանեալ՝ ՚ի ստուար թելից. որպէս մինչ ասի՝ ստուարաման չուան, կամ պարան. եւ այլն.

Ստուարանամ. ացայ. ցիր. ալ: (ընդ. միջ.) || ստուար լինել. կամ յօրանալ. կամ թաւանալ. կամ թանձրանալ. ռամկ. հաստնալ. կամ թանձրնալ: 2. Օրէն. 32. 15: Երեմ. 5. 27: եւ Լամբրոն:

Ստուարապատ. ի. աւ. աց. օք: || պատող. կամ պատեալ ստուար նիւթովք. կամ ըստ

ուարութեամբ. եւ կամ որ ստուարացեալ եւ թանձրացեալ կայ: Աճգոր:

Ստուարատերեւ: (նախդրիւ հոլովի.) || ունող զստուար տերեւ. ըստ հաստ ճիւղս, եւ կամ հաստ բուն. որպիսիք են ոմանք ՚ի ծառոց: Նարեկ. թ:

Ստուարացուցանեմ. ցուցի. ացի. ել: (անցող.) || ստուար առնել. կամ յօրացուցանել. կամ թաւացուցանել. եւ կամ թանձրացուցանել: ռամկօրէն հաստցնել. կամ թանձրցնել:

Ստուգաբան. ի. իւ. ից. իւք: || Նա՝ որոյ բանն է ստոյգ. կամ ստուգութեամբ խօսօղ. եւ կամ ճշմարտաբան. եւ ըստ այսմ ասի ստուգաբան վարդապետ. կամ ստուգաբան պատմութիւն. ռամկ. ճշմարիտ խօսօղ. կամ շիտակ զրուցօղ. ՚ի հին տպագրեր: Իսկ մանաւորապէս առեալ, նշանակէ զստուգաբանօղն բառի, զոր տեսցես ՚ի ներքոյ:

Ստուգաբանեմ. եցի. եա. ել: (ներգործ. եւ մերթ չէզոք.) || ստուգութեամբ խօսել. կամ ճշմարիտ ասել: Իսկ մերթ ստուգել. կամ ճշգրտել. կամ յայտնել. կամ մեկնել. եւ կամ մանրամասնաբար ծանուցանել. եւ ըստ այսմ է ՚ի գիրս Լամբրոն. ՚ի բազում տեղիս. այսինքն. Աղաղակեցէք առ ձեզ փրկիչ մեր. որ ստուգաբանի՝ առ ձեզ Յի. ըստ որ մեկնի: Եւ Ոսկէ. 1. հատ. լ. ասի. Ստուգաբանէ աւետարանիչս զնորին տեղւոյն. ըստ մանրամասնաբար ծանուցանէ: ըստ այսմ է եւ 1. հատ. խը. եւ 2 հատ. դ: Իսկ 2. հատ. ձէ. եւ ձթ. առեալ լինի փոխանակ ճշգրիտ հոգալոյ, զի ասի. Այնքան յանդգնութիւն գործելով զնորա աւուրն, կամ յաղագս տեղւոյն ստուգաբանելին: Բայց մանաւորապէս առեալ նշանակի սովոր ստուգել, կամ ցուցանել զնշանակութիւն բառի ՚ի հնչմանէ նորա, կամ ՚ի նշանակութենէ մասանց նորա, զոր օրինակ ցուցանեմք զթշուառութիւն, եւ զաղէտս աշխարհի ՚ի նորին անուանէ. զի ասի՝ աշխարհ, իբր թէ աշխարր. ըստ ողբ, եւ կոծ, եւ լալումն: Նարեկ. ձղ:

Ստուգաբանութիւն. թեան: || ստոյգ խօսք. կամ ճշմարտաբանութիւն: Իսկ մերթ ճշգրտութիւն. կամ ստուգացուցումն. եւ կամ մեկնաբանութիւն: Բայց մանաւորապէս առեալ նշանակէ՝ ստուգումն կամ ցուցումն նշանակութեան բառին ՚ի հնչմանէ, կամ ՚ի ձայնէ նորա. այսինքն մինչ ասեմք. աղաչանէին կոչեցաւ աղաչարել. իբր թէ աղա աշխարել. զի է աշխարումն զլինի մեզանէ լոյս: Լամբրոն:

Ստուգագէտ. գիտի. իւ. աց. օք: || ստուգապէս գիտօղ. կամ նա՝ որ ստուգութեամբ գիտակ է իմիք: Իսկ մերթ այն, որով ըստ գիտէ ճանաչի. կամ որ ստուգագէտ իմացուած: ՚ի հին տպագրեր:

Ստուգագիր. գրի. աւ. աց. օք: || ստուգութեամբ գրող. կամ ստուգիւ գրեալ. կամ որոյ գրուածն է ստոյգ, եւ անսուտ: Նարեկ. գլ:

Ստուգագոյն · գունի · իւ · ից · իւք ։ || ամ՛ս զճշմարտագոյն ըստ ամ՛ նշանակութեանց ։ Գործ · 24 · 22 ։

Ստուգահաւատ ։ (Նախդրիւ հոլովի ·) || ունող զճշմարիտ հաւատս · կամ որոյ կրօնքն են ստոյգ , և անմոլար · ուղղափառ · որպիսի է ազգն քրիստոնէից ։ 'ի հին պատմագիրս ։

Ստուգապէս ։ (մակբայ ստորադասական ·) || ստուգութեամբ · կամ ճշմարտիւ · կամ իսկութեամբ · կամ հաւաստեաւ · և կամ յիրաւի ։ ռամկօր · իրաւցնէ ։ Մծբն · ժթ ։

Ստուգատես · տեսի · իւ · աց · օք ։ || ստուգութեամբ տեսանող իմիք · կամ նա՛ որ տեսանէ զիմն ըստ իսկութեան նր ։

Ստուգատեսութիւն · թեան ։ || ստոյգ , կամ անվրէպ տեսութիւն · կամ պարզ նկատումն ։ Նարէկ · 'ի Մեկն · Երգոց ։

Ստուգեմ · եցի · եա՛ · ել ։ (Ներգործ ·) || ճշմարտել , կամ ճշգրտել · և կամ հաստատել · որովք մերթ նշանակի ճշմարիտ առնել · կամ ստոյգ յուցանել · կամ հաստատել · և կամ յայտնել ։ Լամբրօն ։ և Կիւրղի եղծմ · ժզ ։ Իսկ մերթ ստուգիւ տեղեկանալ · կամ ճշմարտապէս գիտել · և կամ մանրամասն քննութեամբ հաստատ լինիլ ։ ռամկ · փնտըն'իփէ ղը իմանալ ։ 1 · Մակ · 13 · 2 ։ 2 · Մակ · 12 · 40 ։ Մտթ · 2 · 7 ։ Դարձեալ' նշանակէ ստուգաբանել · զոր տեսցես 'ի վերոյ ։ Լամբրօն ։

Ստուգիւ ։ (մակբայ ստորադասա ·) || նոյն ընդ Ստուգապէս ։

Ստուգութիւն · թեան ։ || ճշմարտութիւն · կամ հաւաստութիւն · կամ արդարութիւն · կամ իսկութիւն ։ Գործ · 25 · 26 ։ Հռօմ · 9 · 1 ։

Ստուեր · ի · աւ · աց · օք ։ || հովանի իրիք մարմնոյ , որ է պակասութիւն նշուլից արեգական · կամ լուսնի , և այլոց լուսատուաց' պատճառեցեալ յօդս 'ի դիմահարութենէ լինելոց , կամ ծառոց , և այլոց նմանեաց · վասն որոյ և պատկերք այսպիսեաց դիմահարաց' միշտ երևին 'ի վերայ գետնոյ · կամ այլոյ իրիք մարմնոյ' մթագին տեղեամբք · որք և կոչին ստուերք ։ ռամկօր · շուք ։ Յոբ · 9 · 36 ։ 4 · Թագ · 20 · 9 ։ Իմաստ · 5 · 9 ։ Իսկ երբեմն անդրադարձաբար առնել լինի փոխանակ ձևոց , կամ օրինակաց · և կամ հետոց իսկական իրաց · և ըստ այսմ հին օրէնքն կոչին ստուեր նոր օրինացս ։ Կողոս · 2 · 17 ։ Եբր · 10 · 1 ։

Ստուերագիծ · գծի · իւ · աց · օք ։ || ստուերագիր , զոր տեսցես զկնի ։ Իսկ մերթ ստուերակերպ գծագրութիւն , կամ այն , որ է ստուեր , և ձև ճշմարտութեան իրիք ։ Նարէկ · ղէ ։

Ստուերագիր · գրի · աւ · աց · օք ։ || նա՛ որ գծագրէ զպատկեր ինչ ստուերակերպ գծիւք , որով իբրու արկանի միայն հիմն պատկերին · և սովաւ անուանի նաև այսպիսի ստուերական պատկերս ։ Իսկ մերթ ստուերագիր կոչի պատկերահանն · կամ նկարիչն · ըստ որում նկարագրէ զպատկերս , որք են իբրու ստուերք ճշմարիտ իրաց · և կամ զի ընու զնկարսն պէսպէս ստուերատեսական ստուերօք , որովք երևեցուցանէ 'ի վերայ տափարակ մարմնոյ զխորութիւն , կամ զբարձրութիւն · զհեռաւորութիւն · կամ զմերձաւորութիւն · և այլն ։ Իմաստ · 15 · 4 ։ Մերթ և նշանակի այն , որ է գիր ստուերական · կամ ստուեր , և նշմարանք · և կամ ձև , և պատկեր ։ Եւ այնմ Նարէկ · 'ի Գով · առաքել · 'ի ստուերագիր տառս մովսիսեան ։ Եւ Ոսկէ · 1 · հար · ժզ · հին կտակն կոչի ստուերագիր նորոյ կտակին ։ Այնպէս և Կիւրղի եղծմ · է · տալի · Չիք ինչ բնաւ ամենևին այլ կամաց ինչ ստուերագիր · զի ստուերակերպ նշմարանք · որ է [illegible] ։

Ստուերագրեմ · եցի · եա՛ · ել ։ (Ներգործ ·) || ստուերագիրս առնել · կամ պէսպէս ըստուերակերպ գծիւք նկարել · որպէս առնեն պատկերահանք 'ի արկանելն զհիմն պատկերաց ։ Եւ յայսմանէ առեալ երբեմն նշանակէ սոսկ' նկարագրել · կամ պատկերել · կամ օրինակել · և կամ ձևացուցանել · և ըստ այսմ ասի · զայս ինչ , կամ զայն ինչ յանձն իւր ստուերագրել · կամ օրինաւոր զոհիւք ստուերագրել զհանդերձեալսն · և այլն ։ Լամբրօն ։ և 'ի Գիրս Գրիգորի Ծծմբանին ։

Ստուերագրութիւն · թեան ։ || ստուերակերպ գիր , կամ նկար · և կամ ստուերագիր ։ Իսկ մերթ նկարագրութիւն · կամ օրինակ · կամ նմանութիւն · և կամ ձև իրիք ։

Ստուերադիր · դրի · իւ · աց · օք ։ || ստուերակերպ եդեալ · կամ որ ստուերանման է իբրև զստուեր ճշմարտութեան իրիք · և ըստ այսմ ստուերադիր կոչի հին օրէնքն ։ [illegible] ։

Ստուերախառնոյց ։ (Նախդրիւ հոլովի ·) || նա՛ որ խառնու 'ի ստուերս · կամ ընդ տեսանելն զստուերս' յետս ընդ դառնու · և ըստ այսմ ասի' ստուերախառնոյց ձի , կամ գրաստ ։ ռամկ · շէքէն խուրքուն եղող ։

Ստուերած · ոյ · կամ ի · իւ · աց · օք ։ || ըստուերացումն · կամ ստուերացուցիչ · և կամ խաւարեցուցիչ ։ և ըստ այսմ ստուերածք կոչին մէգք և մառախուղք , կամ պատրուակք աչաց , որովք կուրանան , կամ շլանան աչք ուրուք · ըստ այնմ 2 · Թագ · 20 · 6 · Անկցէ ստուերած 'ի վերայ աչաց մերոց , որով նշանակի այլաբանօրէն արկանելն զոք 'ի վտանգս կորստեան · կամ 'ի չարիս և 'ի մեծամեծ փորձանս ։ ռամկ · ղէկլայի հանդիպեցնէլ ։

Ստուերական · ի · աւ · աց · օք ։ || այն ամ , որ ունի զնմանութիւն ստուերի , կամ մածեալ կայ ստուերաւ , կամ որ է ստուեր և պատկեր իրիք ։ և ըստ այսմ ասի 'ի Նարէկ · 'ի Գովեստ · լինէր համբուրանակից ըստուերականն սինայի ։ Այնպէս և 'ի Շարակնոցի , ասենք հին օրինացն ստուերական կոչին ։

Ստուերակերպ ։ (Նախդրիւ հոլովի ·) || այն՛ որ ունի զկերպ , կամ զնմանութիւն ստուերի · և կամ է իբրև զստուեր · ըստ այնմ 'ի Շարակնոցի · Որ զստուերակերպն այսօր ճշմարտապէս կատարեաց , որ է հին օրէնքն ։

րենքն ։ Իսկ մերթ վարի իբրեւ զմակբայ՝ եւ նշանակէ՝ ըստ կերպի ստուերի, կամ որպէս զստուեր ։ ռամկ. շուքի պէս ։

Ստուերամած. ի. իւ. ից. իւք ։ || Մածեալ ստուերաւ. կմ՝ մթագնեալ. կմ՝ խաւարամած. եւ կմ՝ աղջամղջին. եւ ըստ այսմ առի՝ ստուերամած անդունդ. կմ՝ խաւար. եւ այլն ։ Ագաթ. եւ ՚ի շարականոցն ։

Ստուերանամ. ացայ. ցեր. ալ ։ (ըստ միջ.) || ստուերակերպ գոլ. կմ՝ նսեմանալ. կմ՝ խաւարել. կմ՝ եղծանիլ ՚ի վայելչութենէ. կմ՝ իբրեւ զստուեր անյայտանալ. եւ կամ անհետ լինիլ. եւ ըստ այսմ առի՝ ստուերանալ օդոյ, կմ՝ աչաց, պատուէրանաց, եւ այլոց նմանեաց ։ Նարեկ. դժ ։ եւ Լամբրոն ։

Ստուերանիստ. նստի. իւ. աց. օք ։ || Նստող ՚ի ստուերս. կմ՝ բնակող ՚ի խաւարի. եւ ըստ այսմ նմանութեան ստուերանիստ կոչին նստեալքն ՚ի խաւարի անգիտութեան, կմ՝ մոլորութեան. որպիսիք էին հեթանոսք ։ Ագաթ. եւ ՚ի շարականոցն ։

Ստուերատեսակ. ի. աւ. աց. օք ։ || ունող զտեսակ ստուերի. կմ՝ ստուերակերպ. եւ կմ՝ խաւարատեսիլ. զի որոյ տեսիլն է մթին եւ նսեմ. եւ ըստ այսմ ստուերատեսակ կոչի լուսինն, ըստ որում աղօտ է լոյս նր. կմ՝ մանաւանդ ըստ որում միշտ պակասի ՚ի լուսոյ, եւ նսեմացեալ երեւի ։ ՚Ի շարականոցն ։

Ստուերացուցանեմ. ցուցի. ացի. ել ։ (անց.) || ՚Ի ստուեր դարձուցանել. կամ ստուերաւ ծածկել. կմ՝ մթացուցանել. կմ՝ նսեմացուցանել. եւ կմ՝ խաւարեցուցանել. եւ ըստ այսմ առի՝ ստուերացուցանել զլոյս, կմ՝ զարեգակն, կմ՝ զաչս. եւ այլն ։ Նարեկ. Ե. եւ Ժ ։ Խորէն. Բ. գլ. 12 ։

Ստունգանեմ. կմ՝ ստունկանեմ. եցի. եա. ել ։ (չէզոք. եւ մերթ ներգործ.) || ծագի ՚ի բաւականութենէ, եւ ՚ի նախապատութենէ՝ ըստ. զի առի ստունգանել՝ իբրթէ ըստ ունկն անցուցանել, որպէս կազմին եւ բաղկացեալ այլոքն՝ ստանձնել. եւ սագանել ։ Իսկ առի բայիւս՝ ստունգանել՝ նշանակի առ պախտ առնել զլուեալն. կմ՝ զանց առնել զհրամանաւն. կմ՝ անփոյթ լինել ՚ի կատարել զպատուէրս, եւ կմ՝ ոչ անսալ ։ ռամկ. բանը անկըճէն անցընել. կմ՝ ծփին լսել ։ Եսայ. 65. 12 ։ եւ ՚ի շարականոցն ։ Բայց փոխեալ է, զի բայս այս ՚ի վարկեն նիւթով՝ գրեթէ միշտ պահանջէ զտրական, որգոն. ՚Ի ստունգանել հրամանի քո տր ։ ՚ի շարականոցի ։ Ստունգանէ պատուէրանացն մր ։ Ընդհանուր ։ Ստունգանել հօրն խմէյ, երկին չեմ ։ ՚Ի վարս. հարց. իզ ։ Պարզեալ առեալ լինի երբեմն փոխանակ բայիս՝ անփոյթ լինել. կմ՝ անտես առնել. եւ կմ՝ ոչ ունել զհոգս զինչքէ. ըստ այնմ, Առակ. 1. 13. Ստունգանեցեր ՚ի կլանել ամբարշտի զարդարն, այս անփոյթ եղեր. եւ ոչ առացեր ինչ ։ ռամկօրէն. սուս կեցիր ըլլալ. կմ՝ հանգիստ ըլլալ ։

Ստունգանողութիւն. թեան ։ || Պախտ առնելն զլուեալսն. կմ՝ զանցառութիւն հրամանաց. կմ՝ չանսացութիւն. եւ կմ՝ անլսողութիւն ։

Ստունգանութիւն. մանն ։ || Նոյն է ընդ վերոյն ։

Ստռոբիլոս. կմ՝ ստրոբիլոս. ի. աւ ։ || Է տեսակ ինչ մրգի, որ ՚ի խորոց երկրի արտաւսէ ընդ ՚ի վեր բուսեալ յարձակման ։ ՚Ի Բուղխն արխոպոփ. որ վաշխարհիկ ։

Ստրատեղատ. ի. իւ. ից. իւք ։ || Է բառ յունական, որ թարգմանի զօրապետ. կմ՝ զօրավար. եւ կմ՝ զօրագլուխ ։ ռամկ. սէրասքէր ։ Խորէն. Բ. գլ. 36. եւ 48. եւ 57 ։

Ստրատեղատութիւն. թեան ։ || Իշխանութիւն ստրատեղատի. կմ՝ զօրապետութիւն. եւ կմ՝ զօրավարութիւն ։ ՚Ի վարս հարց. ժդ ։

Ստրատիոտիկոն. կմ՝ ստրատիոտիկին. գիրին. իւ. ից. իւք ։ կմ՝ աւ. աց. օք ։ || Է բառ յունական, որ ՚ի մեզ թարգմանի՝ պատարանք ստրատեղատի. կմ՝ տուն զօրականաց, կմ՝ զինակրութեան ։ Խորէն. Բ. գլ. 85 ։

Ստրկածին. ծնի. իւ. աց. օք ։ || Ծնեալ ՚ի ստրկէ. կմ՝ որդի ստրկի. եւ կմ՝ նա՝ որոյ զաւակն է ստրուկ ։ Նարեկ. ղզ ։

Ստրկամեծար ։ (նախդրբեմ հոլովի.) || Մեծարեալ ՚ի ստրկէ ։ Իսկ մերթ մեծարող ստրկաց, կմ՝ նուաստ եւ անարգ անձանց. Նարեկ. Է ։

Ստրկային. այնոյ. ով. ոց. ովք ։ || այն ինչ, որ ստրկաց է. կմ՝ առ ստրուկս վերաբերի. եւ կմ՝ ծառայական ։ Նարեկ. ղզ ։

Ստրկանամ. ացայ. ցեր. ալ ։ (ըստ միջ.) || ստրուկ լինել. կմ՝ ընդ ստրկութեամբ անկանիլ. կմ՝ ՚ի ծառայութիւն մտանել. եւ կմ՝ նուաստանալ ։ ռամկ. քէօլէ ըլլալ. կմ՝ ծառանալ ։ Առակ. 27. 8 ։ եւ Լամբրոն ։

Ստրկութիւն. թեան ։ || Նուաստեալ պատուաւորութիւն. կմ՝ նուաստագոյն ծառայութիւն. եւ կմ՝ չնչին նուաստութիւն ։ 1. Թագ. 25. 41 ։ 1. Մակ. 2. 11 ։ Մծբին. ժդ ։

Ստրուկ. ստրկի. աւ. աց. օք ։ || անարգ եւ նուաստ ծառայ, կմ՝ պատուաստոր. եւ կմ՝ ընդ ոտիւ անկեալ ընդ տրութեամբ մեծի ուրուք իբրեւ զգերի, կամ որպէս զարծաթագին ։ ռամկ. եսիր. կմ՝ քէօլէ ։ Ծննդ. 44. 33 ։ Ղեւտ. 25. 39 ։ 1. Թագ. 8. 14 ։ Երեմ. 2. 14 ։

Ստրջանամ. ացայ. ցեր. ալ ։ (ըստ միջակ.) || ապաշաւել. կմ՝ զղջալ. եւ կմ՝ ՚ի զղջումն գալ ։ ռամկ. փօշմանիլ. կմ՝ փօշման ըլլալ ։ Ծննդ. 6. 6 ։ եւ Ագաթ ։ Իսկ յայսմանէ առեալ նշանակէ եւ ցաւիլ ՚ի սրտէ. կամ մորմոքել մինչեւ ցարտասուս. եւ կմ՝ փղձկել. եւ այս թէ՝ յաղագս ապաշխարանաց սրտին, թէ վն այլոց զոր աղէտից. եւ թէ առեւս այլոց ողորմ պատահարաց. որպէս ստրջացեալ խաւհեալ յարտասուաց եսաւայ. որդիքն յակոբայ յաղագս չարեացն դինայի. Աահարոն ՚ի բանից մովսէսի. եւ ազգայինք յերեմեայ, եւն ։ Ծննդ. 27. 38 ։ եւ 34. 7 ։ Ղեւտ. 10. 3 ։ 3. Թագ. 21. 27. եւ 29 ։

Ստրջանք. անաց. օք ։ (աներկականն.) || Ստրջացումն. կմ՝ ապաշաւանք. կմ՝ զղջումն ։

ռամկ. խուլխմութիւն: Իսկ մերթ ցաւ 'ի սր տի. կմ. մորմոքումն մինչև ցարտասուել. և կմ. փղձկումն:

Ստրջացուցանեմ. ցուցի. ացո. ցանել: (ան ցող) || ապաշաւեցուցանել. կմ. զղջացու ցանել. կմ. 'ի զղջումն ածել: Եւ կմ. մին չև ցարտասուս մորմոքեցուցանել. կամ փղձկեցուցանել: ռամկ. փոշիմանցնել: Ոսկէ. 1. հատ. լգ:

Ստորակ. ի. աւ. աց. օք: || տե՛ս զՍտորաքս: Միք. 24. 21:

ՍՐ

Սրագլուխ. գլխի. աւ. աց. օք: կմ. գլխոյ. գլխով. ոց. ովք: || այն՝ որոյ գլուխն է սուր. կմ. սրագագաթն. և կմ. սրածայր: Խորէն. գ. գլ. 19:

Սրագոյն. գունի. ին. ից. իւք: || առաւել սուր. կմ. սաստիկ սրեալ. իսկ մերթ ա ռեալ լինի փոխանակ բառիս՝ սաստկա գոյն. կմ. ուժգնագոյն. կմ. առաւել բոր բոքեալ, կմ. վառեալ: ըստ այնմ Ոսկէ. 2. հատ. խա. Մ'ին սրագոյն, (ֆ սերտօր.) և մին քաջասէս. (ֆ յօհաննէս.)

Սրագործ. ի. աւ. աց. օք: || գործօղ սրոյ. կմ. կազմօղ սուսերաց: ռամկ. ղըլըճճը. կմ. պուլակճը: Իսկ մերթ նա՝ որ գործէ սրով, կմ. սուր գործեօք. և ըստ այսմ սրագործ կոչին մանգաղք, հիւսունք, անդամահատ բժիշկք. որք են ձեռնահար. և այլն: Մերթ ևս նշանակէ զգործեալն սրով, կմ. սուր գործեօք, ոմ՝ ուրագաւ, քերանօք, դը րօվք, և այլովք նմանեօք. ըստ այնմ Նա րեկ. ղզ. Չեմնաձուլեցին տապարատաշ սրագործ արձանի:

Սրագործութիւն. թեան: || գործողութիւն սրոյ. կմ. սրով հատումն: Իսկ մերթ՝ ա րուեստ սրագործի. կամ գործելն զսու սերս: ռամկ. ղըլըճճըութիւն. կմ. պուլակճըլըք: Բայց երբեմն մանաւանդ նշանակէ զվտանգ, կմ. զգործ սրագործ բժշկի ֆ ձեռահի, որ է հատումն անդամոց, կմ. մարմնոյ 'ի բուժել զախտս: ռամկ. ճէրահութիւն: ըստ այնմ Նարեկ. խէ. Ոչ կարօտա նաս սրագործութեան ըստ երկրաւորս գե ղատուութեան:

Սրազէն. զինի. աւ. աց. օք: || զինեալ սրով. կմ. վառեալ սուսերօք:

Սրազինեալ. ելոյ: || նոյն է ընդ վերնոյն:

Սրաթև. ի. ին. ից. օք: || սուր երագամիտ վերաթևօղ. և կմ. սրաթռիչ. և ըստ այսմ սաւ՝ սրաթևահաւ, կմ. արծուի. և այլն: Խորէն. գ. գլ. 5. և 47:

Սրաթռիչ. թռչի. աւ. աց. օք: || սուր ե րագամիտ թռչօղ. կմ. սաստիկ արագ ըլու ցօղ. և կմ. սրընթաց. և ըստ այսմ սաւ՝ արծուի թեթևաթև՝ և սրաթռիչ. կմ. սրաթռիչ թևօք ընդ աւդ վազել: Ոս կէ. 1. հատ. իա:

Սրալից. լցի. ին. ից. իւք: || լցեալ սրովք. և կամ լի սայրասուր քերանօք, կմ. գոր ծեօք. որպիսիք են սմանք անիւք սան ջանապատեաց:

Սրախողխող. ի. ին. ից. իւք: || սրով խող խողեալ, կմ. կոտորեալ: Բայց սա ըստ մեծի մասին ընդ բայի շարակցի այսպ. սրախողխող առնել. և նշանակէ՝ սրով խողխողել, կմ. կոտորել. և կմ. 'ի սուր սու սերի ջարդել: և կմ. այսպէս՝ սրախողխող լինել. և նշանակէ՝ սրով խողխողիլ, կմ. մեռանիլ 'ի շարժմունս: Իսկ մերթ վարի բերև զմակբայ, և նշանակէ սրախողխող առնելով. ըստ այնմ 'ի հին պատմագիրս. Յան կունայ սրախողխողելով կոտորեցին զնա:

Սրածութիւն. թեան: || ածումն կմ. ձգումն սրոյ. կմ. սրաշարժութիւն. և կմ. կոտորած, զոր առնեն 'ի սուր սուսերի ջարդելով զմարդիկ: ռամկ. չիւր: Մատ. 24. 7: Մարկ. 13. 8: Ղուկ. 21. 11:

Սրակն. ական. ին. ից. իւք: || ուժօղ զսուր ակն. կմ. սրատես:

Սրակնութիւն. թեան: || սրութիւն ական. և կմ. սրատեսութիւն:

Սրակոխ: (Նախդրիւ հոլովի.) || կոխան եղեալ սրոյ. կմ. 'ի սուր մաշեալ: Իսկ մերթ ընդ բայի շարակցի այսպէս սրա կոխ առնել. և նշանակէ՝ ընդ սրով ար կանել. կմ. 'ի սուր մաշել. և կմ. սրածու առնել: 'ի հին պատմագիրս:

Սրակուռ: (Նախդրիւ հոլովի.) || սրով կռօղ. կմ. սրով կոտորեալ: Իսկ մերթ սր ակուռ կոչի այն՝ որով կոփի հին սրա ները, և հեր սրով. և ըստ այսմ սաւ՝ սրակուռ խածանաք հատանել զունչս կմ. զլեզուս:

Սրահ. ի. ին. ից. իւք: || գաւիթ, ֆ հրա պարակ շինեալ առաջի սենեկաց՝ կամ տանց, կմ. տաճարաց՝ և այլոց նմանեաց. յոր նախ մտանէ եկեալն, և ապա անտի 'ի ներքս. և այս թէ՝ յարկաւ ծածկեալ իցէ՝ և թէ անյարկ. ֆ անծածկ. որպիսիք են բազումք 'ի տաճարին գաւթաց: ռամկ. սոֆայ. կմ. Բէհլիզ. և կմ. բակ, որ է տաշլու: Եզեկ. 27. 9: 4. Թագ. 20. 4: Մատ. 26. 3:

Սրահակ. ի. աւ. աց. օք: || սրահ. կմ. գա ւիթ. և կմ. հրապարակ իրիք շինուածոյ: ռամկ. սոֆայ. կմ. Բէհլիզ. կմ. բակ. կամ մէյտան: 2. Մակ. 13. 15: Եզեկ. 38. 18. [illegible] զին Եզեկալն. ըի յայտ. ֆան էրկիրս փոյ: Բայց ձեալ նշանակի սոյնա [illegible], կմ. վարագոյրն, որով պատեալ լինի տեղի ինչ իբր որմովք. կմ. անջրպետ [illegible] զին՝ կմ. մի իրն 'ի միասին [illegible] և ծածկի յաչաց: ռամկ. փէրտէ: և Թ այսմ է 'ի գիրս Աշխարհ. ուր սաւ զնոյ. Փակեալ զերկինս՝ իբր սրահակաւ իմն յինքն վա րագուրեալ: ըստ այսմ է և ս Եզեկ. 26. 36: և 35. 18: և 39. 34: և 38. 18. (Երկիր որ հոլն). յորս սաւ՝ առնել զսրահակն 'ի կա պուտակէ և 'ի ծիրանւոյ. և այլն. որք յայտ ուր յայտնապէս կոչին վարագոյրք կա ռապատք. ոմ Եզեկ. 35. 15: և 36. 37: և Թուոց. 4. 25. և 32:

Սրահակաձև։ (Նախդրիւ հոլովի․) || ունող ձև, կամ նմանութիւն սրահակի, այսինքն սրահին՝ կամ շրջապատ առագաստի։ Իսկ մերթ վարի իբրև զմակբայ, և նշանակէ իբրև շրջապատող առագաստ․ կամ համագոյն վարագուրի, որ պատէ զինչ․ ըստ այնմ Ահգոլի․ Մէգ և մառախուղ սրահակաձև շուրջ զերամբն պատեալ։

Սրահայեաց․ եցի․ աւ․ պաց․ օք։ || Նա՝ որ ունի զաչս հայեցուածս, կամ սրայեսնիզ կատէ․ և կամ սրատես․ Նարէկ․ ՚ի Մեկնութ․ Երգոց։

Սրամահ․ ի․ իմ․ ից․ իւք։ || սրով մահացուցեալ․ կամ սրով մեռեալ․ և կամ սրախողխող։ ռամկօր․ Բրօղ, կամ պանծող մեռած։ 2․ Թագ․ 3․ 30։ Իսկ մերթ ըստ գրոցս չարակցի այսպէս․ սրամահ առնել․ և նշանակէ սրով սպանանել, կամ կոտորել։ Մերթ ևս վարի մակբայօրէն․ և նշանակէ՝ սրով մեռանելով․ կամ սրոյ մահուամբ․ և ըստ այսմ առի, սրամահ սատակիլ, կամ կորնչիլ․ և կամ սրամահ սատակել, կամ կորուսանել․ և այլն։

Սրամերկ․ || տե՛ս զՍուսերամերկ։ ՚Ի Ճառ հարց․ ժող․

Սրամիտ․ մտի․ իմ․ աց․ օք։ || Նա՝ որ սուր է մտօք․ կամ զնրբիմաց միտս ունի․ և կամ սրագամիտ։

Սրամտութիւն․ թեան։ || սրութիւն մտաց․ կամ սրագամտութիւն․ կամ նրբիմացութիւն։

Սրայարձակ։ (Նախդրիւ հոլովի․) || սրով ՚ի վերայ յարձակեալ։ Իսկ մերթ նա՝ որ սուր երագամամբ յարձակի, կամ փութէ․ որ և ասի սրընթաց։

Սրանամ․ ացայ․ ցիր․ անալ։ (ընդ միջ․) || սուր լինիլ․ կամ սրիլ։ Իսկ մերթ նշանակէ սլանալ․ կամ սրաթռիչ լինիլ․ կամ թռանիլ․ և կամ խոյանալ․ որ է խոյացեալ ընթանալ․ ըստ այնմ Նարէկ․ Ի․ Իբրև զհաւ փայլակնի սրացայ․ ՚ի նախանձ իմ սաստկութեան։ Իսկ յայտ մանէ առեալ երբեմն նշանակէ ՚ի բաց թռչիլ․ կամ ՚ի բաց մեկնիլ․ կամ հեռանալ․ և կամ փախչիլ․ և ըստ այսմ առի ՚ի Նարէկ․ խԸ։ Զխորդ որոյցս մերձաւորին․ և ՚ի հԾ․ ասի․ սրացաւ, տեղի եւս կցորդութեան։ Այնպէս առեալ լինի և Ը․ և հԾ։ Սուրբ՝ գիտելի է․ զի սա է սլանալ բայն, որ ՚ի բանաստեղծից վի՞ վայելչութեան գրի սրանալ, փոխագրելով զտառն լ․ ՚ի ր․ որպէս յաճախ գտանեմք և յայլ բառս, զի գրեմք զհամարակալն՝ համարակար․ զհրամանակալն, հրամանատար․ զկալուածեան, կալուածար․ և այլն։

Սրանշմար։ (Նախդրիւ հոլովի․) || սրոյն նշմարող․ կամ սրութեամբ նկատող․ կամ սրատես, կամ նրբահայեաց․ և կամ նրբիմաց․ և ըստ այսմ առի՝ սրանշմար ունել զտեսութիւն։

Սրաշարժ․ ի․ իմ․ ից․ իւք։ || Նա՝ որ զսուր շարժէ, կամ ածէ ՚ի վերայ ուրուք․ կամ ՚ի գործ ածող սուսերաց։ Իսկ մերթ այն, որ սուր երագամամբ շարժի․ կամ սրընթաց․ և կամ սրաթռիչ․ ըստ այնմ Նարէկ․ կԷ․ որ զյորդահոսանս ջրոյն սրաշարժ վայրէկութեան ՚ի թեթևասն առաքեցեր։

Սրաշարժութիւն․ թեան։ || շարժումն սրոյ․ կամ սպանութիւն։ Իսկ մերթ՝ սուր և արագ շարժումն․ կամ սրընթացութիւն։

Սրավառ․ ի․ աւ․ աց․ օք։ || սրով վառեալ, կամ զօրագարեալ, և կամ զինեալ։

Սրավառիմ․ եցայ․ եաց․ իլ։ (Ձայնակր․) || սրով վառիլ․ կամ զինիլ․ և կամ սրով սուսերի ՚ի դիմի հարկանիլ։

Սրավառութիւն․ թեան։ || սրով վառումն․ կամ զինումն․ և կամ սպառազինութիւն։

Սրավար․ ի․ աւ․ աց․ օք։ || Նա՝ որ զսուր վարէ, այսինքն ածէ ՚ի վերայ ուրուք․ կամ ՚ի կիր արկանէ․ որ և ասի սուսերաձիգ։ ռամկ․ Քաշ գաշող․ ըստ այնմ ՚ի հին տաղմաց․ Հեծելազօրք՝ և ոտիկայք՝ և սրավարք ՚ի միասին հորդան առնէալք։ Իսկ մերթ այն, որ սուր ընթացիւք յառաջ վարի․ այսինքն յառաջ գնայ․ որ և ասի սրընթաց․ կամ սրաթռիչ․ և ըստ այսմ ասի՝ սրավար նժոյգ․ կամ երիվար։ սրավար կայծակունք․ կամ այլք․ և այլն։ Ահգոլի։ և ՚ի հին տաղմաց։ Մերթ ևս նշանակէ՝ սուր ընթացմամբ վարող․ այսինքն յառաջ խաղացուցանող․ կամ յառաջ տանող, և ըստ այսմ ասի՝ սրավար թևակօք գընալ նաւուց, կամ նաւորդաց։ ՚ի հին տաղմաց։ Երբեմն ևս վարի իբրև զմակբայ այսպէս․ սրավարս ընթանալ․ կամ սրավարս խօսիլ․ և նշանակէ՝ սուր ընթացմամբ, կամ սրընթաց վազելով․ կամ շուտափոյթ շտապով․ և կամ հապճեպի։ ռամկ․ Չըփիքղէս․ կամ շուտ շուտ․ կամ աճապարանօք․ Ահգոլի։

Սրավարիմ․ եցայ․ եաց․ իլ։ (Ձայնակր․) || սուր երագամամբ վարիլ․ այսինքն յառաջ խաղալ․ կամ յարձակիլ կամ դիմել։ ռամկ․ Նէտ պէս վազել։ և ըստ այսմ առի․ իբրև զորածնի սրավարեալ խոյանալ․ կամ սրավարեալ գալ հասանել վաղվաղակի։ ՚ի հին տաղմաց։

Սրավարութիւն․ թեան։ || սուր արշաւանք․ կամ սրընթացութիւն․ կամ արագաշարժութիւն․ և կամ շուտափութութիւն։

Սրատես․ ի․ իմ․ ից․ կամ աց․ օք․ կամ իւք։ || Նա՝ որ ունի զսուր տեսութիւն․ կամ որ սուր է ՚ի տեսանել զինչ, որպիսիք են քաջատես մարդիկ․ կամ աչք։ Յոպոբ։ Իսկ մերթ նմանութեամբ առեալ նշանակէ՝ սրամիտ․ կամ նրբիմաց․ և կամ հանճարեղ։ ըստ այնմ Լամբրոն․ Այնքան առաջի սրատես իմաստնոց շնայլել, այսինքն քբել։

Սրատեսութիւն․ թեան։ || սուր տեսութիւն․ կամ նրբահայեաց տեսողութիւն․ և կամ քաջատեսութիւն։ Իսկ մերթ սրամտութիւն։

Սրացուցանեմ․ ցուցի․ ցուցանել։ (Ներգործ․) || սրել․ կամ սուր առնել։ Իսկ մերթ՝ սլացուցանել․ կամ թռուցանել։

Սրբազան․ ի․ իմ․ ից․ իւք։ || սրբասուրբ․ այսինքն Նա՝ որ Տէր Տէր․ առեալ օրհնէ զնա․ կամ երեքսրբեան ձայնիւ բարեբանէ զնա․ որպիսիք են սերովբէքն յերկինս․ կամ հա

ւառացեալք յերկրի ։ Նարեկ․ ղթ․ և ՚ի Յն ոսկին ։

Սրբաբանեմ․ եցի․ եա․ ել ։ (Ներգործ․) ‖ սրբասացութեամբ օրհնել․ կմ երկնաբարբառ օրհներգութեամբ բարբառել ։ Նարեկ․ ձ․ Մծբն․ ժթ․ և Լամբրօն ։

Սրբաբանութիւն․ թեան ։ ‖ սրբասացութիւն․ կմ սրբերգութիւն․ կմ երկնաբարբառ օրհնաբանութիւն․ որպիսի է երգն Սրբ ամէն ։ Նարեկ․ ղդ ։

Սրբաբեհեզ ։ (Նախդրիւ հոլովի) ‖ այն՝ որ է կազմեալ ՚ի սրբ՝ և ՚ի մաքուր բեհեզոյ․ կմ որոյ նիւթն է բեհեզ սրբափայլ․ և ըստ այսմ առի՝ սրբաբեհեզ պատմուճան ։ Նարեկ․ ղդ ։

Սրբագոյն․ գունի․ իւ․ ից․ իւք ։ ‖ առաւել սբ․ կմ առաւելագոյն․ կմ մաքրագոյն․ կմ յատկագոյն․ և կմ վեհագոյն ։ Ղուկ․ 1․ Հաւ․ եռ ։

Սրբագործ․ ի․ իւ․ աց․ օք ։ ‖ սբ գործող․ կմ սրբարար․ և կմ սրբացուցիչ ։

Սրբագործեմ․ եցի․ եա․ ել ։ (Ներգործ․) ‖ սբ առնել․ կմ սրբացուցանել․ և կմ մաքրագործել ։ Նարեկ․ ՚ի գովս առաք ։

Սրբագործութիւն․ թեան ։ ‖ սրբարարութիւն․ կմ սրբացուցումն․ և ըստ այսմ ՚ի գիրս Լամբրօնացւոյն , սրբագործութիւն կոչին քահանայագործութիւնքն․ ըստ որում նոքօք սրբին ժողովուրդքն ։

Սրբագումար․ ի․ աւ․ աց․ օք ։ ‖ գումարող սրբոց․ կմ հաւաքող սրբուհեաց ։ Իսկ մերթ գումարեալ ՚ի սրբոց․ կմ որոյ գումարն է սբ․ կմ որ վերաբերի առ ժողովս սրբոց ։ Նարեկ․ ղդ ։

Սրբագունդ․ գնդի․ աւ․ աց․ օք ։ ‖ այն՝ որ է գունդ սբց․ կմ որոյ գունդն է սբ․ և կմ սրբագումար․ և ըստ այսմ առի՝ սրբագունդ դասք առաքելոց ։ Նարեկ․ ՚ի գովեստ առաք ։

Սրբագրեմ․ եցի․ եա․ ել ։ (Ներգործ․) ‖ սրբութեամբ , կմ անսխալապէս գրել ։ Բայց յատկապէս առեալ նշանակէ սակաւ՝ ըղ գրուածս , կմ զբանս սրբել ՚ի սխալանաց , կմ ուղղել ՚ի թիւրութեանց ։

Սրբագրութիւն․ թեան ։ ‖ սրբելն զգրուածս ՚ի սխալանաց․ կմ ուղղելն զբանս ՚ի թիւրութեանց ։

Սրբազան․ ի․ իւ․ ից․ իւք ։ ‖ հաղորդ սրբութեանց․ կմ սրբեալ․ կմ նուիրեալ այ․ կմ ծառայեալ․ և կմ սբ , և երկնային․ և ըստ այսմ առի․ սրբազան աշակերտք քի․ կմ առաքինորդք․ և կամ սրբազան անուն․ պիտութիւն․ և այլն ։ Նարեկ․ ՚ի գով․ առաք․ և Լամբրօն ։

Սրբազգեստ․ ի․ իւ․ ից․ իւք ։ ‖ զգեցեալ զսբ զգեստ․ որով մերթ նշանակի նա , որոյ հանդերձքն են մաքուր , և պայծառ ։ Իսկ մերթ նա , որ արկեալ է զանձամբ զսրբազան ձորձս․ որպիսիք են քահանայք․ կմ մկրտեալ երախայք , որք սպիտակազգեստ զգեստ կոչին ։ Նարեկ․ ղթ․ Մծբն․ ժթ ։ Մերթ և առ նշանակէ զսրբազգեստն ․ զի զնա , որ կրէ յՈւրեան զգրրութիւն ։ ըստ այսմ են և բանք այսպիսիք․ խնկարկեաց․ ամպազգեստ․ և այլք նմանք , զորս տեսցես ՚ի տեղիս իւրեանց ։

Սրբազնագիրք․ գրոց․ ովք ։ (անեզական) ‖ սրբազան գիրք․ կմ սբ մատեանք․ որպիսի են հին , և նոր կտակարանք ։ Լամբրօն ։

Սրբազնագործ․ ի․ իւ․ աց․ օք ։ ‖ գործող սրբազան իրաց․ կմ կատարող սրբազան խորհրդոց․ որպիսի է քահանայն , որ և ասի սրբազնակատար ։

Սրբազնագործեմ․ եցի․ եա․ ել ։ (Ներգործ․) ‖ սրբազան գործել․ կամ սբ առնել․ և կմ սրբացուցանել ։ Իսկ մասնաւորապէս առեալ նշանակէ զքահանայագործելն , զոր տեսցես ՚ի տեղւոջ իւրում ։

Սրբազնագործութիւն․ թեան ։ ‖ սրբարարութիւն․ կմ սրբացուցումն․ և կմ քահանայագործութիւն․ ըստ այնմ Լամբրօն , Որ ՚ի ձեռն մարմնոյ , և արեան սրբազնագործութիւն գան ։

Սրբազնազարդ ։ (Նախդրիւ հոլովի) ‖ ունող զսրբազան զարդս․ կմ սրբութբ զար դարեալ ։ Նարեկ․ ղդ ։

Սրբազնական․ ի․ աւ․ աց․ օք ։ ‖ այն ամ , որ վերաբերի առ սրբազանս , կմ որ է սրբազան․ և կամ ամենական ։ Նարեկ․ ՚ի գով․ խաչին ։

Սրբազնակատար ։ (Նախդրիւ հոլովի) ‖ տես զՍրբազնագործ ։ Աւգուս ։

Սրբազնեալ․ ելոյ․ ով․ ոց․ ովք ։ ‖ սրբազան եղեալ․ կամ սրբեալ , և կամ նուիրեալ ։

Սրբալոյս ։ (Նախդրիւ հոլովի) ‖ այն՝ որ ունի զսբ , և զմաքուր լոյս․ կմ որոյ լոյսն է անստուեր․ կմ բոլորովին պայծառ ։ Իսկ մերթ նշանակէ զայն , որ առիթ լինի ծագման սրբազան լուսոյ․ կմ որ սրբէ և լուսաւորէ․ և ըստ այսմ առի ՚ի Նարեկ․ ղդ․ Սրբալոյս իւղ մեռոնի ։

Սրբական․ ի․ աւ․ աց․ օք ։ ‖ այն ամ , որ պատկանի սրբոց․ կամ ունող սրբութբ․ կմ որ է սբ , և մաքուր ։ ըստ այնմ․ Նարեկ․ ՚ի Մեկն․ Երգոց․ Սրբական վարս պիտոյանայր մեզ ։ Այսպէս և ՚ի գիրս Կիւրղի Եղիշ․ ժբ․ սրբակրօն արքն՝ սրբական կոչին ։

Սրբակրօն․ ի․ իւ․ ից․ իւք ։ ‖ ունող զսբ կրօնս , կմ զամբիծ վարս․ և կմ սրբութբ կենցաղավարող ։

Սրբակցորդ ։ (Նախդրիւ հոլովի) ‖ կցորդ սրբութեան․ կմ հաղորդ սբ իրաց․ և կմ սրբազան ։ Նարեկ․ ղդ ։

Սրբահամ ։ (Նախդրիւ հոլովի) ‖ ունող ըղ սբ , կմ զազնիւ համ․ կմ այն , որ է յըստակ՝ համեղ , և քաղցր․ և ըստ այսմ առի․ սրբահամ ջուր ։ Աւգուս ։

Սրբահետ ։ (Նախդրիւ հոլովի) ‖ ունող զսբ հետս , կմ շաւիղս․ կմ որոյ ընթացքն կմ վարքն են սրբազանք ։ Իսկ մերթ սրբահետ կոչի այն , որ ածէ զմարդն ընդ սբ

հետս. կմ որով հեռակայք, և գնամք 'ի մեր վայրս: և ըստ այսմ ասի. սրբահետ սանդուխք երկնաւորս: Նարեկ. ղե:

Սրբաձայն. ի. իւ. ից. իւք: || սրբասաց, կմ սրբաբան. կմ նա, որ զերեքսրբեանն, կմ զսրբասացութիւն բարձր ձայնիւ երգէ:

Սրբաձայնեմ. եցի. եա. եւ: (Ներգործ.) || սրբաբանել բարձրաձայն երգով: Ը այնմ 'ի վերս հարց. ի. Զխորհուրդ երեքսրբեան օրհնութիւն սրբաձայնեն:

Սրբաձայնութիւն. թեան: || բարձրաձայն սրբասացութիւն. կմ սրբաբանութիւն:

Սրբամասն: (Նախադրիւ հոլովի.) || ունող զմեր մասն, կմ զմեր վիճակ. կմ մասնակից սրբութեց. կմ ժառանգող մեր խրաց:

Սրբամասնութիւն. թեան: || մասնակցութիւն սրբութեց. կմ ժառանգութիւն մեր խրաց: Իսկ մերթ սրբազան բաշխմասնութիւն. կմ մեր վիճակ: Նարեկ. 'ի տօնըն խաչին:

Սրբամատոյց. տուցի. աւ. աց. օք: || մատուցանող մեր խրաց. կմ նուիրող սրբութեց: Իսկ մերթ մատուցեալ 'ի մեր խրս. կմ նուիրեալ սրբութեց. կամ ուր լինի մատուցումն սրց. և կմ սրբազան. և ը այսմ ասի. սրբամատոյց աթոռ. կմ սեղան: Նարեկ. ղէ: Մերթ ևս նշանակէ զմատուցեալն սրբութիւն: ըստ այնմ Աշգաղ. Սրբամատոյց կանոնաւք քրիստոսական հաւատոյ:

Սրբամաքուր: (Նախադրիւ հոլովի.) || մեր և մաքուր. կմ սրբեալ և մաքրեալ:

Սրբամիտ. մտի. իւ. աց. օք: || ունող զմեր միտս, կամ որ ամբիծ, և անխարդախ է մտօք:

Սրբամտիմ. եցայ. եւց. իլ: (Ձայնակր.) || սրբամիտ լինիլ. կմ մեր լինիլ մտօք, կմ սրտիւ: Աշգաղ:

Սրբամտութիւն. թեան: || սրբութիւն մտաց. կմ ամբծութիւն սրտի. և կմ ուղղամտութիւն. 'ի հին պարսնագիրս:

Սրբան. ի. աւ. աց. օք: կամ ով. ովք: || երբեմն ածանցի սա 'ի սբ բառս. որպէս կուսանն 'ի կոյս բառէն. և նշանակէ ըզ սրբականն. կմ սուրբ զմեզ. սպ կուսանն՝ սուրբ զկոյսն. ըստ այնմ Աշգաղ. Հանդերձ պարկեշտասէր սրբանուհի հռիփսիմեաւ. սբ սրբուհի հռիփսիմեաւ: Իսկ մերթ ածանցի 'ի սրբել բայէն. սպ իշխանն յիշխել բայէն. և նշանակէ զերասանն, սբ զնոստոյ տեղին. և ըստ այսմ ասի՝ սրբան, իբրթէ սրբիչ. կմ տեղի սրբելոյ. զի յառուկ է նմա սրբել զորովայնն 'ի բաց վարելով զ իւրն զյաւէտլուծանս կերակրոյ. և ըստ այսմ 'ի գիրս Մծբնայ. ժա. բազում անգամ ասի. Կերակուր յորովայն երթայ, և անտի ընդ սրբանն արտաքս անկանի:

Սրբանամ. ացայ. ացիր. նալ: (ընդ.միջ.) || սբ լինիլ. կմ սրբել. կմ նուիրիլ. և կմ գրիլ 'ի սրբութիւն: Ղեւտ. 20. 3:

Սրբանուագ: (Նախադրիւ հոլովի.) || նուագօղ սրբասացութիւն. կմ երգօղ սրբաբանութիւն: Իսկ մերթ նա՝ որ նուագէ զերգս մեր, կմ որով նուագին մեր երգք. և ըստ այսմ ասի՝ սրբանուագ ձայն:

Սրբանուէր: (Նախադրիւ հոլովի.) || նուիրող սրբութեց՝ կմ մեր ընծայից, որպիսի է քահանայն: Իսկ մերթ նշանակէ զնուիրեալն սրբութիւն. կմ զվերաբերեալն առ մեր նուէրս. և կմ սրբազան. և ըստ այսմ ասի՝ սրբանուէր առաքելութիւն, կմ աւրասարուք. և այլն: Նարեկ. ձ. և ղա:

Սրբասահման: (Նախադրիւ հոլովի:) || սահմանեալ 'ի սրբութիւն. կմ որ կայ 'ի մեր սահմանս՝ կմ տեղիս. կմ որոյ սահմանք տեղւոյն են մերք: Նարեկ. ղէ:

Սրբասաց: (Նախադրիւ հոլովի.) || սրբաբան, սբ նա՝ որ ասելով մեր մեր, երգէ, կմ օրհնէ: Իսկ մերթ նշանակէ՝ սրբաբանական. և ը այսմ ասի՝ սրբասաց ձայն: Նարեկ. 'ի գով. խաչ: Երբեմն ևս առեալ լինի փոխանակ սրբասացութեան. և այս մանաւանդ 'ի յոգնականսըն: Նարեկ. 'ի գով. խաչ:

Սրբասացութիւն. թեան: || սրբաբանութիւն. կմ սրբերգութիւն. որով ք նշանակի՝ երեքսրբեան օրհներգութիւն, կմ մեր ածն, յորում երիցս յիշատակեմք զբառս՝ մեր, առեալ զայս 'ի սերովբէից, որք ըստ առաջեան եսայեայ մարգարէին օրհնէին զած մեծաբարբառ գոչելով, սբ, սբ, սբ տր զօրութեց: Նարեկ. ղզ. և Լամբրոն: Բայց մասնաւորապէս առեալ նշանակի սովորական ինչ եկեղեցական երգոց, զոր նուագեմք զկնի քարոզին. Մի սբ յերեխայից: Եւ կոչեցան սրբասացութիւն վն երիցս կրկնելոյ 'ի նմա մեր բառիս. որպիսի է՝ Ով է սբ տր ածն, կամ Հրեշտակային կարգաւորութիւն:

Սրբասէր. սիրի. աւ. աց. օք: || սիրող սրբութե, կմ մաքրութե. և կմ ողջախոհական ամբծութե: Նարեկ. ղզ. և Յն ոսկ:

Սրբասնեալ. սնելոյ. ով. ոց. ովք: || սրբութբ սնեալ. կմ սրբակրօն. կմ մաքրակենցաղ, և կմ 'ի սրբութիւն մեծացեալ. և ըստ այսմ ասի՝ սրբասնեալ մարգարէ, կմ կանայք, սրբասնեալ մարմին, հոգի, ձեռք. և այլն: Նարեկ. լզ. հէ. ղզ. և 'ի գով. խաչ:

Սրբասնունդ: (Նախադրիւ հոլովի.) || ունող զմեր սնունդ. կմ սրբութբ սնեալ. որ և ասի սրբասնեալ: Նարեկ. զզ. և 'ի գովէստ առաքելոց: Իսկ մերթ վարի իբրև գոյական, և նշանակէ մեր սննդեանն. ը այնմ Յն ոսկ. սրբասընունդ սնեալ նոցին, նոքա կրօն ոչ զոհեցին:

Սրբավայելուչ: (Նախադրիւ հոլովի.) || վայելուչ սրբոց. կմ այն՝ որ վայելէ. կմ պատշաճի սրբազան տեղւոյ:

Սրբատաշ: (Նախադրիւ հոլովի.) || քաջ սրբեալ և տաշեալ. կմ յղկ հղկեալ և փայլեալ. և կմ կոփեալ և պայծառացեալ. և ըստ այսմ ասի՝ սրբատաշ վէմ, կամ ակունք. և այլն: ռամկ. ծիլաւը:

Սրբատուն. տան. տամբ. տանց. տամբք: || աւանդատուն, ուր մտեալ ժամապարն

զդենու զգեստ սրբոյ պատարագին. և աստ
ցաւ սրբատուն, ըստ որում է տանուտէրա
զան զգեստուց, կմ. պէսպէս նը. կահուց
և կարասեաց:

Սրբատուփ. տփոյ. ով. ից. օք: || տուփ սր
բութե, որ է խփաւոր անօթն, ուր պա
հի մարմին տն:

Սրբարան. ի. աւ. աց. օք: || տեղի սրբոց,
կմ. սրբելոյ և մաքրելոյ. և կմ. քաւարան.
և ըստ այսմ սրբարան կոչի տաճարն. կմ.
եկեղեցին. կմ. նը. խորանն. և կմ. ընծայ
արան խորանին. և այլն: Նարէկ. ծա. հե. և
ղզ: և Լամբրոն: Եւ յայտնանէ առեալ սր
բարան յոլովոյն և նը. Աճածինն, թ ո
րում եղև տաճար. սրբութե բանին այ:
Նարէկ. ՚ի գովս. կուսին:

Սրբարար. ի. աւ. աց. օք: || նը. սրբող. կմ.
սրբացուցիչ. կմ. սրբօղ. և կամ մաքրօղ:
Լամբրոն:

Սրբացուցանեմ. ցուցի. ցոյ. անել: (ան
ցող.) || նը. առնել. կմ. սրբագործել: Իսկ
մերթ ՚ի կարգս նըց դասել. կմ. նը. հան
գստացուցանել:

Սրբափայլ: (նախդրիւ հոլովի.) || մաքրա
փայլ. ծ սրբութե և մաքրութե փայլեղ.
կմ. նը. և պայծառ. և կմ. չքեղ և գերա
պանծ. և թ այսմ ասի՝ սրբափայլ զգեստ,
կմ. ակունք. սրբափայլ կրօնք, կմ. աղօթք.
և այլն: Նարէկ. ՚ի գովս. կուսին: և ՚ի շարականոց:

Սրբեալ. ելոյ. կմ. եցելոյ. ով. ոց. ովք: ||
մաքրեալ. կմ. յազատեցութե ՚ի բնաց մեր
կացեալ: Իսկ մերթ սրբագինացեալ. կմ.
նուիրեալ. և կմ. այ սեպհականեալ. և
ըստ այսմ 1. Թագ. 7. 16. քաղաքք և սահ
մանք ինչ երկրին հղե սրբեալ կոչեցան,
ըստ որում էին նուիրեալք ածպաշտութե.
և սահմանեալ տեղի զոհից և պատարագաց
տեառն այ: Սոյնպէս և Ղևտ. 25. 1.
սրբեալք անուանին երեխայրիքն, կամ
առաջինք պտղոցն երկրի, թ որում էին
սեպհականեալք այ: Բայց 3. Թագ. 8. 8.
առեալ լինի փոխանակ բառնալեաց, որք
են լծակքն, որովք բարձեալ լինէր տա
պանակն. և այս երևի. 2. Մնաց. 5. 9. ուր
փոխանակ սրբաեդեալ լինի՝ բառնալեք:
Այլ լծակքս այսոքիկ կոչեցան սրբեալք.
ամ և 3. Թագ. 8. 7. անուանին սրբութիք,
ըստ որում էին գործիք սրբութե, և սր
բազանք: Եւ կամ յաղագս եբրայական
բառին, որ համանգամայն զորբն, և զլծակն
նշանակէ:

Սրբեղ. ի. ին. ից. իւք: || սրբագունեղ. կմ.
կարի սրբագոյն. Սերատ. 44. 4:

Սրբեմ. եցի. եա. ել: (ներգործ.) || նը. և
անաղտ առնել. կմ. մաքրել. և կմ. յստա
կել. որ և ռամկ. ասի՝ որբել. կմ. թէմզըլէլ:
Թուոց. 19. 13: 1. Յոհ. 3. 3: Յայտ. 22. 11: թ
այսմ է և Ելից. 19. 10. և 14: և Յես. 7. 13.
յորս ասի՝ սրբել զժողովուրդն, որ լի
նէր տալով նմ լուանալ զհնդերձս և զմար
մինս, և հրաժարելն յամուսնական անկող
նոյ, և յայլ պղծութե: Դարձեալ նշա
նակէ՝ անմեղ և անպարտ առնել. կամ
արդարացուցանել: Ելից. 20. 7: Թուոց. 14.
18: Երբեմն և սրբացուցանել, ջինջ գը
րել. կմ. սրբազան առնել. և կմ. կարգել
զինն, զի լիցի նուիրեալ. և թ այսմ ասի
ղմոյ՝ սրբել զեօթներորդ օր արարչուե:
Ծննդ. 2. 3: Բայց մինչ զմարդոյ ասի՝ սր
բել զօր. շաբաթուն, նշանակի նը. պա
հել. կմ. լերկ զնուիրեալ ունել՝ հրաժա
րելով ՚ի ծառայական գործոց, և պարա
պելով ածային պաշտամանց: Ելից. 20. 8:
Դարձեալ՝ սրբել ասի՝ նուիրելն զինն
այ՝ որոշելով և սեպհականելով զայնն,
որով և լինի նը. և ըստ այսմ իմացեալ
լինի՝ մինչ ասի՝ սրբել ան զլինեալ տունն՝
կմ. զանդրանիկս. և կմ. զերբուծն ՚ի յա
նասնոց: Ելից. 13. 2: և 29. 27: և 2. Մնաց.
2. 4: կմ. սրբել ան զարծաթ և զոսկի, կմ.
զանօթս ոսկեղէնս և արծաթեղէնս. և
այլն: Դատ. 17. 3: 4. Թագ. 12. 18: 1. Մնաց.
18. 11: Դարձեալ նշանակէ վարսամիրկել.
կմ. գերծուլ: ռամկ. ածիլել. կմ. թրաշ ընել:
Դատ. 7. 20: Երբեմն և՝ յստանել. կամ
յօտել: ռամկ. պատտել ընել: Յոհ. 15. 2:
Բայց մինչ ասի՝ ՚ի բաց սրբել զինն, նշա
նակի՝ մաքրելով ՚ի բաց քերել. կամ ՚ի
բաց հանել. և կամ ՚ի բաց բառնալ: 2.
Օրին. 26. 13: և 1. Կորն. 5. 7:

Սրբերգեան. եանի. եաւ. եից. եօք: || այն ամ,
որ վերաբերի առ սրբերգութիւն. կամ
յորում նուագեալ լինի երգն սրբասացու
թե. և ըստ այսմ ասի, սրբերգեան ձայ
նիւ, կմ. փառաւորութե օրհնել զած: Իսկ
մերթ նուագող սրբերգութե, կմ. սրբա
բան. որպիսիք են սերովբէք, կամ եր
գողքն զնը ածն: Նարէկ. կդ. Մերթ և
նշանակէ զսրբերգութիւն, կմ. զսրբասա
ցութիւն, որ և ներբողեանն զներբողումն,
և այս մանաւանդ ՚ի յոգնականումն:

Սրբերգենութիւն. թեան: || ծագիսա ՚ի սր
բերգեան բառէս, և նշանակէ զսրբերգութիւն,
ծ զերգն սրբասացութե, կմ. զսրբաբա
նութիւն. որով մերթ նշանակի սրովբէա
կան նուագն, նը նը նը տր զօրութեց:
Նարէկ. ղը: Իսկ մերթ երեքսրբեան երգն
զոր երգեմք, ծ նը ածն: Լամբրոն:

Սրբերգութիւն: || նոյն է ընդ վերնոյն: Լամ
բրոն:

Սրբիչ. բչի. աւ. աց. օք: || սրբօղ. կամ մաք
րօղ: Իսկ մասնաւորապէս առեալ նշանա
կէ զածելին, որով ՚ի բաց սրբեն ՚ի գլլ
խոյ. կմ. ՚ի ծնօտից ածեցեալ հերքն. յոր
մէ և անուանեցաւ իսկ սրբիչ: ռամկ. ա
ծլիլ, և տաճկերէն ուստուրայ: Թուոց. 6. 5:
Եզեկ. 5. 1:

Սրբութիւն. թեան: || մաքրութիւն. կմ. անաղ
տութիւն. կմ. քաւութիւն: ռամկ. թէմիզլիք:
Ղևտ. 12. 6: Ղուկ. 2. 22: Եբր. 1. 3: Իսկ մերթ
ամբծութիւն հոգւոյ. կմ. անմեղութիւն. և
կմ. արդարութիւն: Եփես. 4. 24: 1. Թես. 3.
13: Դարձեալ՝ սրբութիւն կոչին նը իրք.
և ըստ այսմ երբեմն սրբութիւն յոլովոյն

խորանն՝ վկայութեան՝ ըստ որում էր երբեմն ղոտուն և զուարճար սրբեալ էր, ուր և լինէր սրբութիւն մեղաց երբեմն յեկեղեցւոջ: Ելից. 25. 8: և 28. 29. և 35: Արդ՝ պարտ է գիտել, զի խորանս այս ունէր զերիս մասունս, որոց ներքագունիցն եւս 'ի Սբ գիրս անուանի սրբութիւն. Առաջին մասն էր ներքին՝ յատկապէս անուանեալ սրբութիւն սրբութեանց. կմ սրբութիւն սրբոց: Ելից. 26. 33. և 34. ուր պետակեալ կայր տապանակն կտակի, ուր և ամի ամի մտանէր քահանայապետն օրինաւոր հանդերձանօք. և այս անուանի սրբութիւն: Ղևտ. 16. 2: Երկրորդ մասն էր արտաքոյ սրբութեան սրբութեանցն՝ անջրպետեալ 'ի նմանէ վարագուրաւ. աստ էր սեղանն խնկոց, և հացն առաջաւորութեան. և աշտանակն լուսոյ. ուր մըտանէին միայն քահանայքն. և այն ընդառաւօտս՝ և ընդ երեկոյս՝ 'ի ծխել զխունկ. և 'ի հանդերձել զճրագարանսն. և սա սրբութիւն կոչի Ելից. 26. 33: Իսկ երրորդ մասն էր առաջի վերոյասացելոցն երբեմն զգաւիթ անյարկ՝ անջրպետեալ ցած որմով յերկուս մասունս. յորոց առաջնումն էր սեղանն ողջակիզաց. և աւազանն պղնձի. և այս էր սրահ քահանայից, ուր մըտանէին մատուցանել զզոհս. և կատարել զողջակէզսն: Իսկ 'ի յետնումն յընդարձակ. և 'ի լայնածաւալ վայրին՝ էր կայան ժողովրդեան. զի անդ կայր բազմութիւն յաղօթս. և նայեցեալ ընդ ցած անջրպետ որմոյն՝ տեսանէր զզոհսն, զորս մատուցանէին քահանայքն: Արդ՝ սա սրբութիւն յորջորջի Ղևտ. 12. 4. ուր ասի զկնոջէ, որ նորոգ է ծնեալ զզաւակ. Յամ ինչ սբ նա մի՛ մերձենայցէ. և 'ի սրբութիւն մի՛ մտցէ: Այլ այս ամ տարբերութիւն տեղւոյ ոչ միայն էր 'ի խորանին վկայութեան. այլ և 'ի տաճարին Սողոմոնեան, և 'ի զօրաբաբելեան տաճարին. վս զի ամէն նման նմա շինեցան. բաց 'ի հոյակապ, 'ի մեծակառոյց, և 'ի քարակերտ շինութենէն: Դարձեալ՝ սրբութիւն կոչի սրբեալ ժառանգութիւն. կմ՝ սբ ժողովուրդն, որպիսի էր 'ի հնումն եկեղեցին հրէից: Սղմ. 113. 2: Մերթ եւս սրբութիւն անուանին ոսկի և արծաթ՝ և պղնձոյ ակունքն, և անօթք ոսկեղէնք և արծաթեղէնք սրբեալք, կմ որոշեալք և նուիրեալք այ. և այսմ իմանի մինչ ասի, տարան 'ի ներքս զսրբութիւնս դաւթի: 3. Թագ. 7. 51: 4. Թագ. 12. 18: 2. Մնաց. 15. 18: Եւ յայսմանէ առեալ սրբութիւնք կոչին ընծայք կմ նուէրք որոշեալք՝ կմ մատուցեալք՝ այ. տով և լինին սբք. Ելից. 28. 38: Եւ եւս սրբութիւնք յորջորջին բանք աւետարանին, և վարդապետութիւնք հաւատոյ, նաև խորհուրդ մարմնոյ և արեան տն, որում հաղորդին 'ի սբ սեղանն: Մատ. 7. 6: Բայց 3. Թագ. 8. 7. ուր ասի, ծածկեցին քրովբէքն զտապանակն, և զսրբութիւն նր 'ի վերուստ, նշանակին բազմաձևեքն տապանակին, որք էին ըծակքն ագուցեալք ընդ օղամանեակս՝ ոտն դնել 2. Մնաց. 5. 8: զորմէ ընդարձագոյն տեսցես 'ի բառն սրբեալ: Բայց գիտելի է, զի բառս այս բազում անգամ վարի կրկնելով ըստ այսմ օրինակի. սրբութիւն սրբութեանց. կմ սբ սրբութեանց. և յայնժամ նշանակէ՝ ամենասբ. կմ եւս քան զեւս սրբագոյն. և կմ գեր 'ի վերոյ սրբեալ. և նուիրեալ. և ըստ այսմ ասի զկահուց, և զկարասեաց խորանին վկայութեան. կմ սեղանոյ նր. Եղիցի սրբութիւն սրբութեանց. սոյնպէս ասի և զխնկոյ հանդերձանաց, և զնշխարէ զոհից. և զնմանեաց. լինել 'ի սրբութիւն սրբութեանց. կմ սբ սրբութեանց: Ելից. 30. 10. և 29. և 36: և 40. 11: Ղևտ. 2. 3: տես զայսմանէ և յաւուրս բառին սուրբ: Իսկ թէ զինչ նշանակէ՝ մինչ ասի՝ սիկղ սրբութեան, տես 'ի սիկղ բառն:

Սրբուհի. հւոյ. եաւ. եաց. եաք: || է անուն իգական, և նշանակէ զսբ կին: Նարեկ. ձ: և 'ի գործ. կոչ:

Սրեղջիւր. կամ սրեղջեւր. եղջեր. երբք. աց. օք: || ունօղ զսուր եղջիւր. կմ որոյ եղջիւրքն են ծայրասուր: Խորէն. յաշխարհագրութեան:

Սրեմ. եցի. եա. ել: (ներգործ.) || սուր առնել զգործի ինչ, կմ զայլ ինչ նման, առ 'ի փութանակի հատանել. կմ ծակել. կմ ընդմտանել. և այլն: ռամկ. եւ սրել. 2. Օրին. 32. 41: Սաղմ. 139. 4: Իմաստ. 5. 21.

Սրընթաց. ի. իւ. ից. իւք: || սուր ընթացող. կմ սրաթռիչ արագամամբ վազօղ. կմ երագընթաց. և այս ասի զմարդոյ, զկենդանեաց, զգետոց, և զայլոց:

Սրընթացութիւն. թեան: || սրաթռիչ ընթացք. կմ արագ արշաւանք, և կմ երագընթացութիւն:

Սրիկայ. ի. իւ. ից. իւք: || նա՝ որ անգործ է, և դատարկաշրջիկ՝ պարապեալ անառակութեանց և յափշտակութեանց, որ և 'ի ծածուկ կրէ զսուր, և 'ի դէպ լինելն՝ յարձակի 'ի սպանութիւն, տն և ստուգաբանութիւն բառին ցուցանէ, զի ասի սրիկայ, իբր թէ սուր 'ի նմա կայ. կմ սրի կայ, որ սրոյ սպասեալ միայ: ռամկ. հոլովոյ. կմ ճոճոյ, կմ աւազակ: Դատ. 9. 4: և 11. 3: Խորէն. ա. գլ. 7:

Սրիկոն. ի. ան. ոց. օք: || ներկ ինչ կարմիր կազմեալ 'ի նօթէ, որ 'ի սիւղիոնէ, և 'ի սան դիքս կոչեցեալ կարմրոյ: Նման է յոյժ սինոպեանի՝ որ է սիւղիոնն. վս որոյ և բազում անգամ խաբէ զտեսօղսն: Խորէն. յաշխարհագրութեան:

Սրիմ. եցայ. եայց. իլ: (Հայնակր.) || սուր լինել. կամ սրածայր դառնալ: ռամկ. սրուիլ. կմ սուր ըլլալ. կմ՝ խորամանկ ըլլալ: Եզեկ. 21. 9. և 10:

Սրինգ. սրնգի. աւ. ից. գք. || եղեգնաձև նուագարան. և այսու երբեմն նշանակի եղեգնափողն, թէ մեծ իցէ, և թէ փոքրրիկ, զոր կազմեն յեղեգանէ. կմ յայլմէ նիւթոյ՝ բազմաձայն ծակաւեք, և 'ի բերան առեալ հարկանեն փչելով. ռամկոր.

նայ. կամ զառամ. կամ սընըրգընեայ. և կամ փխափխակ. Դանիէ. 3. 5: Իսկ երբեմն նշանակէ երգեհոնաձև փոքրիկ նուագարանն, զոր կազմեն բազում մանրիկ եղեգամբք մի զկնի միոյ կարգաւ շարեցելովք, զոր 'ի բերան ածեալ հարկանեն այսր և անդր տարաբերելով: ռամկ. Տըրխալ: Աղ Ճանփ. 5. 23: և 6. 5: Կոչեցեալ՝ սրինգ կոչի երաժշտական տիկն, կամ այլ ինչ նուագարան նման նմա. ըստ որում անուի սեռեալ յինքեան զբազում եղեգնաձև կազմուածս, զորոց զմինն 'ի բերան առեալ հարկանեն իբրև զեղեգնափող. և միւսքն արձակեն զձայն քաղցր ըստ շարժուածոց մատանցն սրնգահարին: ռամկ. փնձոր. կամ փնչար. և տաՃկ. Տուլում: Զայս երբայեցիքն կոչեն նապլոն կամ նեպէլ. զոր ոմանք Թարգմանեն սաղմոսարան. ըստ որում նմա բազում ան գամ նուագէին զսաղմոսս. կամ ըստ սրինգ նոյ ունէին զնմանութիւն ինչ սաղմոսարանի: 1. Թագ. 10. 5: 2. Թագ. 6. 5: 2. Մնաց. 5. 12: 1. Մակ. 4. 54:

Սրիչ: (Նախդրիւ հոլովի.) || սրող, կամ նա՝ որ սրէ:

Սրնգահար. ի. աւ. աց. օք: || հարկանօղ սրնգայ: ռամկ. նայ, կամ փխափխակ, կամ Տըրխալ չալող:

Սրովբէ. կամ սրօբէ: || տե՛ս զՍերովբէ: 'ի շարականս:

Սրովբէագաւանիութիւն. կամ սրօբէագաւանիութիւն: (Նախդրիւ հոլովի.) || այն՝ որ է սրովբէական գաւթի. կամ ուր հոյլք սրովբէից պարեն. և ըստ այսմ տափ, սրովբէագաւթիւթ սրահ սխմինի: Նարեկ. ղԹ:

Սրովբէագոչ: || տե՛ս զՍերովբէագոչ:

Սրովբէագումար. կամ սրօբէագումար: (Նախդրիւ հոլովի.) || այն՝ որ է գումար սերովբէից. կամ գումարեալ 'ի սերովբէական դասուց. և կամ որ վերաբերի առխումբս սերովբէականս, կամ հրեշտակականս: Նարեկ. ղԹ.

Սրովբէագունդ. կամ սրօբէագունդ: (Նախդրիւ հոլովի.) || տե՛ս զսերովբէագունդ: Աղվան:

Սրովբէական. կամ սրօբէական. ի. աւ. աց. օք: || այն՝ որ է սերովբէից. կամ վերաբերի առ սերովբէս. որպիսի է ձայնն. կամ օրհներգութիւն նց. և այլն: 'ի շարականս:

Սրովբէամաքուր. կամ սրօբէամաքուր. (Նախդրիւ հոլովի.) || մաքրեալ և սրբեալ 'ի սերովբէից. որպիսի եղև եսայի մարգարէն: Իսկ մերթ մաքուր իբրև զսրովբէ, կամ ունօղ սրովբէական մաքրութե: Նարեկ. 'ի Գով. առաքելոց:

Սրովբէապար. կամ սրօբէապար: (Նախդրիւ հոլովի.) || պարառեալ 'ի սերոբէից. կամ զոր պարփակեալ պահեն սերովբէք:

Սրովբէատիպ. կամ սրօբէատիպ: || տե՛ս ըղ Սերովբէատիպ: Նարեկ. ղԴ. և Լամբրոն:

Սրովբէափակ. կամ սրօբէափակ: || տե՛ս ըղ Սերովբէափակ: 'ի շարականս:

Սրոց. ի. աւ. աց. օք: || գործիք սրելոյ ըղ

սուր. որպիսի է յեսանն. կամ երկաթեայ սրիչն մսագործաց: ռամկօր. դըզէյ. կամ ձառաք:

Սրուակ. ի. աւ. աց. օք: || չիշ. փ փոքրիկ անօթ իւղոյ, կազմեալ անձուկ բերանով յապակւոյ, կամ 'ի քարէ. և կամ յոսկերաց, և 'ի նմանեաց, ընդ որոյ բերանն կաթէ իւղն շիթ առ շիթ: 1. Թագ. 10. 1: 4. Թագ. 9. 1: Յովդի. 10. 5:

Սրութի. Թեան: || սուր հատողութի. կամ սրածայր եղելութն: Իսկ մերթ առեալ լինի անդրադարձաբար փոխանակ նրբութե, կամ սուր ըմբռնողութե մտաց:

Սրունգն. կամ սրունկն. սրնգան. ամբ. սրնգունք. անց. ամբք: || տե՛ս զՍրունք:

Սրունկն: (Նախդրիւ հոլովի.) || բարձի սա 'ի սուր բառէս. և 'ի ունկն անուանեա. և նշանակէ ունօղ սուր ունկան. կամ որոյ լսելիքն են սուր, որով 'ի հեռուստ քաղցրագոյն լսէ զձայնս. ըստ այսմ կոչի նեխէի. թ: Թերևս ընդդէմ ոք գայցէ ինձ 'ի սրունկն լսողաց անտի:

Սրունք. նից. օք: (անեզական.) || ոլոքն հանդերձ մսովք. որ է մասն ինչ մարմնոյ, որ սկսեալ 'ի ծնգաց ձգանի մինչև ցկոճն. ռամկօր. իթ ցիօխոււխն. կամ ցԹաԹս ոտից: ռամկօր. ձանէր: 2. Օրէն. 28. 35: Եսայ. 47. 2. Դան. 2. 33: Գործ. 3. 7:

Սրսկապան. ի. աւ. աց. օք: || տապարատ, փ ներքին սենեակ հարսին և փեսային, ուր շղջապատեալ լինին գահոյք նց վարագուրօք, յոր և մտանեն երկոքին 'ի նոր լծել. ըստ այնմ 1. Մակ. 1. 28: Եւ հարսանց եղեն արգելանք սգոյ՝ սրսկապանք բերեանց. Եւ 'ի Խորէն. թ. գլ. 71: ասի. թէ 'ի ներքնագոյն սրսկապանի խորանին աւեն զպղութի մօր: Եւ յայսմանէ առեալ սրսկապան կոչին և այլ առանձնական, կամ ներքին սենեակք. որպէս սկզ բազում չինեալ կային առ տաճարաւ յաղագս քահանայից, ուր և կահ ք կարասիք և գանձք պահեալ լինէին: 1. Մնաց. 26. 16: Մերթ և առեալ լինի սոսկ փոխանակ վարագուրի. որ և առագաստ: և ըստ այսմ Թուոց. 3. 31. սրսկապան կոչի վարագոյրն, զոր ձգէին 'ի սեանէ 'ի սիւն առաջի սրբութե սրբութեցն 'ի խորանին վկայութե. որով և 'ի չուելն որդւոցն իսրայէլի պատեալ լինէր տապանակն. որ երևի Ելից. 26. 33. և 34: և Թուոց. 4. 5:

Սրսկեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || ցնցուղել ինչ ցօղել, կամ ցանել զնճիք. որ մէտկաւ զարիւն. մատամբ գլխաւ. և այլն. ռամկօր. ըըրըըրմէ: Ելից. 12. 22: Ղևտ. 6. 27: Եբր. 9. 21:

Սրսկիչ. կչի. աւ. աց. օք: || սրսկօղ. կամ նա՝ որ սրսկէ: ռամկ. ըըրըըրենօղ: Իսկ մասնաւոր բառս առեալ նշանակէ զգործին սրբարկելոյ, զոր բանաձևութեամբ կոչեմք մշտիկ:

Սրսկումն. կման. մամբ. մանց. մամբք: || սրսկելն, որ է ցօղումն, կամ ցանումն հասմանու իւրոց. որ Ջրոյ, արեան. և այլն: ռամկ.

ռամկ. [illegible]։ Յոհ. 19. 9. և 13։

Սրտաբեկ. ի. իմ. աց. օք։ || յոյժ փշրեալ սրտիւ. կմ սաստիկ երկուցեալ. կմ կարի յոյժ զանգի հարեալ, որով գրեթէ սիրտն յանկարծակի բեկանի. ցս հերձանի. կմ պայթի. վն որոյ և անուանեցան սրտաբեկ. ըստ այնմ Աւգոս. Նոյնպէս և պահապանացն սրտաբեկ, ոգէսպառ 'ի քաղաքն անկեալ։ Իսկ մերթ նշանակէ զարհուրեցուցիչ սրտի, կմ պակուցանողական. կմ սաստիկ ահաւոր։ և ըստ այսմ առի. սրտաբեկ հնչումն. կմ բան։ Նարեկ. իէ։ Իսկ մերթ այն՝ որ հեռի է 'ի սրտաբեկութէ. կմ 'ի սաստիկ երկիւղէ. և ըստ այսմ առի՝ սրտաբեկ արգահատութիւն. կմ աղաչանք։ Նարեկ. կէ։ Դարձեալ՝ երբեմն ընդ բայի շարակցի այսպէս. սրտաբեկ առնել. և նշնկէ սրտաբեկել. կմ զարհուրեցուցանել։ Եւ կմ այսպէս. սրտաբեկ լինել. և նշանակէ սրտաբեկիլ. կմ սաստիկ զանգի հարկանիլ. կմ ահիւ տագնապիլ։ ռամկ. [illegible]. կմ [illegible]։ 2. Մակ. 7. 39։

Սրտաբեկեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) || սրտաբեկ առնել. ցս կարի զարհուրեցուցանել զոք սրտիւ. կմ ահիւ տագնապեցուցանել։ ռամկ. [illegible]. կամ [illegible]։

Սրտաբեկիմ. եցայ. եաց. իլ։ (Հայնակր.) || սրտաբեկ լինել. ցս զարհուրիլ սրտիւ. կմ սաստիկ երկնչիլ. կամ զանգի հարկանել, որով իբրթէ յաղագս սաստիկ երկիւղին սիրտ մարդոյ բեկանի։ ռամկօր. [illegible]։ Յն [illegible]։ և 'ի շարականս։

Սրտաբեկութիւն. թեան։ || անհնարին զարհուրանք սրտի. կմ արհաւիրք. կմ ահաբեկութիւն. և կմ սաստիկ երկիւղ, որով ոք գրեթէ մեռանի։ Նարեկ. ձ։

Սրտագէտ. գիտի. աւ. աց. օք։ || գիտող սրտի. ցս նա՝ որ զնոյն խորհուրդս, և զխորս սրտի, կմ մտաց նկատէ. գիտելով զնոյն ծածուկ խորհուրդս, և գիտաւորութիւնս նց. և այսպիսի է միայն Ած։ Գործ. 15. 8։ Եւ այսմ է կ. 1. 24. ուր առի. դու տր՝ սրտագէտ ամի. այսինքն գիտող սրտի ամենեցուն։

Սրտաթափ. (Նախդրիւ հոլովի.) || Նա՝ որոյ սիրտն թափի. կմ որ զսիրտ իւր ունի թափեալ. որով մերթ նշնկի զսիրտն 'ի սրտէ, կմ 'ի քաջութէ. և կմ երկչոտն. ռամկ. [illegible]. կմ [illegible]։ ըստ այնմ Լամբրոն. Եղև իբրև զաղաւնի միամիտ սրտաթափ, որոյ ոչ իցէ սիրտ։ Իսկ մերթ սրտաբեկն, որոյ սիրտն գրեթէ յերկիւղէն 'ի բաց կորզի։ ռամկ. [illegible]։ Եւ այնմ Աւգոս. Սրտաթափ եղեալ զարհուրեցաւ։ Նոյնպէս և 2. Մակ. 12. 22. առի. Աչագանքն [illegible] սրտաթափս անդէն, ցս սրտաբեկս առնէր։ Երբեմն ևս նշանակի նա, որոյ սիրտն հալի, և մաշի. կմ աղեխարով լինի. և կամ որ 'ի կսկիծ անկեալ դժուարի յաղագս

զուարկ մնալոյ 'ի բարերացն յորս աչք վայելէին, և կմ սակս ընդ երկար անկեալ լինելոյ անյուսալւոյն։ Լամբրոն։

Սրտաթափութիւն. փման. մամբ. անց. ամբք։ || Թափումն սրտի, որով մերթ նշանակի պակասութիւն քաջութեն սրտի. կմ երկչոտութիւն։ Իսկ մերթ՝ սրտաբեկութիւն. որ է զարհուրանք սրտի։ Մերթ ևս նշանակի հալումն և մաշումն սրտի. կմ աղեխորովութիւն. կմ կսկիծ, և կմ թախծութիւն ոգւոյ։

Սրտալիր. (Նախդրիւ հոլովի.) || լի սրտիւ. կմ լցուցիչ սրտի. և ըստ այսմ առի՝ սրտալիր ուրախութիւն։ Լամբրոն։

Սրտակալ. (Նախդրիւ հոլովի.) || տես ըզ կալթոգին։

Սրտակէզ. (Նախդրիւ հոլովի.) || կիզող. կմ այրող սրտի, կմ կիզեալ, և այրեցեալ սրտիւ. և կմ աղեխորով։

Սրտակիզեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) || կիզել, կմ այրել զսիրտ. կմ աղեխորով առնել, կամ ձմլեցուցանել զսիրտ. և կմ մղմղեցուցանել։ ռամկօր. [illegible]։

Սրտակտուր. (Նախդրիւ հոլովի.) || Նա՝ որոյ սիրտն յաղագս ցաւոյ, կմ կսկծման, սաստիկ ձմլի, և իբրթէ կտրատի. կմ հալեալ, և մաշեալ սրտիւ. կմ աղեկտուր. և կմ աղեխորով։ Լամբրոն։

Սրտակրանք. անաց. օք։ (անեզական.) || է մաշկ ինչ, որ յամ կողմանց պատեալ ունի զսիրտն, և 'ի ծոց իւր ունի 'ի տափ կրեզիա, յորմէ և կոչեցաւ սրտակրանք, իբրթէ կրող սրտի։ Ընդ մէջ սորա, և սրտին կայ այնչափ միջոց, որչափ բաւական է ըզ արձակելոյ, և ամփոփելոյ սրտին։ Յայսմ միջոցի գոյ հեղուկ ինչ իբրև ջուր՝ առնել 'ի բնութէ առ զովացումն տապոյ սրտին։

Սրտաձմլեալ. ելոյ. ով. ոց. ովք։ || Նա՝ որոյ սիրտն է ձմլեալ. կմ որ աղեկտուր է եղեալ։ Իսկ մերթ առեալ լինի սակ փոխանակ բառիս ձմլեալ. կմ փղձկեալ. և կմ մորմոքեալ։ ըստ այնմ Լամբրոն. Յարտասուս հարեալ պատասխանեն 'ի սրտաձմլեալ սրտէ զբանս։

Սրտամաշ. ի. իւ. ից. իւք։ || մաշող. կմ չարչարող սրտի։

Սրտային. այնոյ. ով. ոց. ովք։ || սրտական. ցս այն՝ որ սրտին է, կմ առ սիրտն վերաբերի. և մերթ սրտեայ, որ է սրտոտ.

Սրտանամ. ացայ. ացիր. ալ։ (Ընդմիջ.) || վաւիլ, կմ բորբոքիլ սրտիւ 'ի սէր ռաբունք. կմ խանդակաթ լինել. և կմ կաթոգնել. որով ոք բաղձալով սրտիւ յափշտակի 'ի սիրելին իւր, ոչ գիտելով զայլ ինչ, բայց միայն զնա սիրել. և սիրովն նմ զմայլիլ։ Իսկ մերթ սրտեայ լինել. կամ ստանալ զսիրտ, և զոգի։ ռամկ. [illegible]. կմ [illegible]։

Սրտապինդ. կմ սրտապնդա. պնդի. իմ. ից. իւք. || Նա՝ որոյ սիրտն է պնդեալ. կամ որ զսիրտ իւր հաստատեալ ունի. կմ քա

ջալերեալ. կմ համարձակեալ. և կմ անվեհեր: ըստ այնմ Լամբրոն. Աչք միայն սրտապնդութ լեցուք 'ի ճաշակելն. և զկնի սան. Որ սրտապնդութ լինի 'ի բազմապատիկ ներգործութիւնս թշնամւոյն՝ փրկի 'ի նմնէ:

Սրտապնդեմ. կմ սրտապնդանեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || սրտապինդ առնել. կմ զօրացուցանել զսիրտ. և կմ քաջալերել: ռամկ. սիրտ տալ: 2. Մակ. 7. 21:

Սրտապնդիմ. կմ սրտապնդանիմ. եցայ. եայց. իլ: (Չէզոք.) || սրտապինդ լինել. կմ քաջալերիլ. կմ զօրանալ. կմ աներկիւղ համարձակիլ: ռամկ. սիրտ առնուլ: Լամբր:

Սրտապնդութիւն. կմ սրտապնդատութիւն. թեն: || պնդութիւն, կմ հաստատութիւն սրտի. կմ քաջալերութիւն. և կմ համարձակութիւն:

Սրտառուչ: (Նախդրիւ հոլովի.) || այն ինչ, որ զսիրտ ուրուք առնու. եթ յինքն ձգէ. կմ փղձկեցուցանէ. և կմ 'ի գութ շարժէ. և յայտնանէ առեալ երբեմն նշանակէ՝ մտադիւր. կմ յօժարամիտ. կամ ջերմեռանդ. և կմ եռանդնոտ. և ըստ այսմ ասի. խնդրել զինչ սրտառուչ կամօք, կմ պաղատանօք. և կմ աղաղակել առ ոք սրտառուչ ձայնիւ: Լամբրոն: Իսկ մերթ նշանակէ զնա, որ առնու զինչ 'ի սիրտ. և ըստ այսմ 'ի միտ առնուլն, կմ զգալն, ասի սրտառուչ լինել: ըստ այնմ Մօկէ. 1. հատ. ժէ. Եւ ոչ այսպէս սրտառուչ եղեն, վն այսորիկ հարկեցան դարձեալ զնոյն առնել:

Սրտատես. ի. աւ. աց. օք: || տեսող սրտի. եթ նա՝ որ զծածուկ խորհուրդս մտաց իմանայ. և այս կամ ինքնին, որպիսի է միայն ած. և կմ յայտնութ, որպիսիք են հոգեւորս հարք: 'Ի Վարս հարց. ժթ:

Սրտատրոփ: (Նախդրիւ հոլովի.) || ծագի 'ի բայէս տրոփել. որ է թնդմամբ ոստնուլ. վն որոյ բառիս սրտատրոփ նշանակի նա՝ որոյ սիրտն յաղագս մեծի ցնծութեան, կմ ցանկութեան. և կմ երկիւղի 'ի վեր ոստնու, կմ խաղայ: ռամկ. [illegible] ընօղ. կամ [illegible] ընիօղ: Իսկ մերթ վարի իբրև զմակբայ. և նշանակէ՝ տրոփմամբ, կամ ընդոստմամբ սրտի: ռամկ. [illegible] ընելով. կմ [illegible] ընելով: ըստ այնմ Յհ̃ որդւ. Փափաքեցի սրտատրոփ. եւ որ ընտանեաց բարեաց ամփոփ: Բայց բառս այս յոմանս օրինակս գրի սրտատոփ, որ է սխալանք, ոնց յայտ է 'ի ձեռագրէն. նաև 'ի չափէ ոտիցն:

Սրտացաւ. ի. իւ. աց. օք: || ցաւ սրտի: Իսկ մերթ նա՝ որ ախտացեալ է ցաւովք սրտի: 'Ի Վարս հարց. ժա:

Սրտացաւութիւն: || տես զՍրտացաւութիւն: 2. Մակ. 4. 49: և 14. 8:

Սրտացուցանեմ. ցուցի. ացի. ել: (Անցող.) || վառել զոք սրտիւ 'ի սէր իւր. կմ խանդակաթ և կաթոգին առնել, որով ոք ըզ սիրտն ուրուք յինքն յափշտակէ՝ գերելով զնա խորհուրդս և ախորժակս նր, ոնց առնեն նոքա, որք գեղեցկութեամբ աչաց և դիմաց աւելի լինին այլոց հարկանել 'ի սէր իւրեանց: և ըստ այսմ է Երգ. 4. 9. ուր ասի՝ Սրտացուցեր զմեզ քոյր իմ հարսն, սրտացուցեր զմեզ միով ակամբ քով: Դարձեալ նշանակէ սրտեայ առնել. կմ արկանել յանձն ոք զսիրտ, կմ զոգի մատեալ: ռամկ. սիրտ տալ: և ըստ այսմ մեկնէ զբառս զայս 'ի ճառս երգոց երգոյն՝ գրիգոր նիւսացին: Նոյնպէս և գրիգոր նարեկացին 'ի մեկն. Երգոց. ուր ասէ. Բարեկամք փեսային ասեն, սրտացուցեր զմեզ. եթ ոգի ետուր մեզ և սիրտ:

Սրտացուցիչ. ցչի. աւ. աց. օք: || սրտացուցանող. եթ վառող և տոչորող զոք սրտիւ 'ի սէր իւր. կմ խանդակաթ առնող: Իսկ մերթ՝ սրտեայ առնող. կամ քաջալերող: ռամկ. [illegible]:

Սրտեայ: (Նախդրիւ հոլովի.) || ունող սիրտի. կմ քաջասիրտ. և կմ սրտեղ. և ըստ այսմ ասի այր սրտեայ, և ուժեղ. կամ դող սրտեայ և անձնեայ: ռամկ. [illegible]. կամ [illegible]: Խորէն. բ. գլ. 60: և գ. գլ. 40:

Սրտեղ. ի. աւ. աց. օք: || նոյն է ընդ վերնոյն:

Սրտեղանամ. ացայ. ցեր. ալ: (Ընդմիջ.) || սրտեղ լինել. կմ քաջանալ սրտիւ. և կմ սրտապնդիլ: ռամկ. [illegible]: 'Ի հին պարականոնս: [illegible]

Սրտեղութիւն. թեան: || արիութիւն սրտի. կմ քաջասրտութիւն: ռամկ. [illegible]:

Սրտեռանդն: (Նախդրիւ հոլովի.) || ունող զեռանդն սրտի. կամ ջերմեռանդն, կմ եռանդնոտ. կմ յոյժ փափաքող. ըստ այնմ Նարէկ. 'Ի մեկն. Երգոց. Նայեցեալ յան արժանութիւն իմ, և 'ի սրտեռանդն կամսն հայցողին:

Սրտի դիւր: || է սա երկու բառ 'ի գործածեալ 'ի միասին, որով նշանակի՝ դիւրութիւն սրտի, եթ հանգիստն. կմ հեշտ անդորրութիւն սրտի, որով ոք միշտ մնայ 'ի բերկրութեան, և յուրախութեան: ռամկ. [illegible]. Փիլիպ. 2. 19:

Սրտի մտօք: || է սա երկու բառ շարակցեալ որ վարի իբրև զմակբայ, և նշանակէ՝ բոլորով սրտիւ, կմ յամ սրտէ. կմ կամակար մտօք. կմ ամ յօժարութ. և կմ հոգւով չափ: ռամկ. [illegible]: և ըստ այսմ ասի, սրտի մտօք մարտնչիլ. կմ 'ի թիկունս հասանիլ: 1. Մակ. 8. 25: և 12. 51: 2. Մակ. 4. 37. Սրտի մտօք աղաղակել. կմ զգործ ինչ գործել. և այլն: Եզեկ. 25. 15: Յովէլ. 1. 14: Կող. 3. 23:

Սրտմտական. ի. աւ. աց. օք: || ցասմնական. կամ զայրացական: Իսկ մերթ՝ սրտմտող. կամ դժնդակ. կամ դժնեայ: ռամկօր. [illegible]:

Սրտմտեմ. եցի. եա. ել: (Չէզոք.) || նոյն է ընդ սրտմտիլ բային: ըստ այնմ Եսայ. 37. 29: Եւ սրտմտութի քո, զոր սրտմտեցեր, եթ որով սրտմտեցար:

Սրտմտեցուցանեմ. ցուցի. եցի. ել: (Անցող.)

|| տալ ումեք սրտմտիլ. կմ 'ի սրտմտութիւն շարժել: ռամկ. սրդողցնել:

Սրտմտիմ. եցայ. եա՛ց. իլ: (ձայնակրաւ.) || ցասնուլ. կմ սաստիկ զայրանալ. կմ չարաչար բարկանալ՝ յաղագս եռալոյ արեան շուրջ զսրտիւն. որով խռովի կատաղի ոք: ռամկ. խէթ սրդողիլ. կմ էօֆքէլէնմիշ ըլլալ: Գործ. 9. 30: 4. Թագ. 23. 26: տե՛ս զտարբերութիւն սորա 'ի բառն սրտմտութիւն:

Սրտմտութիւն. թեան: || ցասումն. կմ սաստիկ զայրացումն. կմ բորբոքեալ բարկութիւն. և կմ կատաղութիւն: և ասի սրտմտութիւն, երբ թէ՝ մտումն 'ի սիրտ. վն զի միշտ 'ի սիրտ սրտմտեցելոյն մտանէ զայրացեալ հուր բարկութեն, և սաստկանայ եռանդն արեան, որով երբ թէ փրփրեալ մոլեգնի: ռամկ. խէթ սրդող: Սաղմ. 6. 2: Առակ. 15. 1. և 27. 4:

Սրտմտող. ողի. ղն. աց. ղք: || ցասմող. կմ բարկասիրտ. կմ կատաղի. և կմ մոլեգին, որպիսիք են ոմանք յամեհի ձիոց:

Սրտնեղիմ. եցայ. եա՛ց. իլ: (ձայնակր.) || նեղիլ սրտիւ. կմ բարկանալ. կմ զայրանալ:

Սրտնեղութիւն: || տե՛ս զՆեղսրտութիւն: Նար. լէ:

Սրտնիմ. եցայ. եա՛ց. իլ: (ձայնակ.) || սրտմտիլ. կմ նեղսրտիլ. ռամկ. սրդողիլ. կմ նեղանալ. և ըստ այսմ ասի 'ի Թուղթն շնորհալւոյն, Պատրաստական սասցաւ, վն որոյ սրտնեցաք:

Սրտնութիւն. թեան: || սրտմտութիւն. կմ սրտնեղութիւն: ռամկ. սրդող: Լամբրոն. 'ի ճաղում փեղկս.

Սրտոտ. ի. ից. իւք: || սրտեղ. կմ սրտեայ: Բայց այս մանաւանդ յաշխարհաբառ ընդունիլ 'ի գործ ածի:

Սրտցաւաբար. կմ սրտացաւաբար: (մակբայ.) || 'ի սրտէ ցաւելով. կմ ցաւովք սրտի. կմ ցաւակցաբար: ռամկ. կոկծալով: ըստ այսմ Նարէկ. 'ի մէկն. երգոց. Սրտացաւաբար հոգ տանիլ:

Սրտցաւութիւն. թեան: || ցաւ սրտի. կամ կսկծանք. կմ մորմոքումն, և կմ ցաւակցութիւն, որով ոք ցաւի 'ի սրտէ յաղագս թշուառութե իրիք: 2. Մակ. 4. 36: 3. Մակ. 4. 11. և 12:

Սրօբէ: || զայս բառ, և զբարդութիւնս սորա տե՛ս 'ի բառն Սրովբէ, և 'ի բարդեալսն նր, որք դասեալ կան զկնի նորին:

Սրօնք. օնից: (անեզակ.) || տե՛ս զՍրունք: 'ի Վարս հարց. իգ:

Ս Փ

Սփածանելի. լւոյ. եաւ. եաց. եօք: || այն իմ, որ սփածեալ լինի, կմ ածի զմիջով. և ըստ այսմ սփածանելի կոչի զենջակն, կմ այլ ինչ նման, զոր ածեն ընդ մէջ 'ի սպասաւորութե, կմ 'ի մերկ գոլն: ռամկ. քէմէրպէնտ. կմ քէշէիր: Ծնն. 3. 7: Երեմ. 13. 1: և 2. և 11: Երբեմն և ս սփածանելի կոչի վերարկուն, զոր արկանեն զանձամբ. կամ որով պատեն զանձինս իւրեանց՝ իբրու զենջակաւ զմէջս: ռամկ. չուխայ. կմ եաղմուրլուխ: Յոհ. 21. 7:

Սփածանիմ. սփածայ. ծիր. իլ: (ձայնակ.) || ընդ մէջ ածել զզենջակ, կմ զայլ սփածանելի: ռամկ. ղուշանմիշ ըլլալ: Յոհ. 13. 4: Իսկ մերթ՝ շրջապատել զանձն սփածանելեաւ իմիք. կմ զգածիլ զանձամբ զսփածանելի ինչ. որպ՝ զքուրձ, կմ զայլ ինչ նման: Եզեկ. 7. 18: Եսայ. 13. 1:

Սփածեցուցանեմ. ցուցի. ցո՛. ել: (անցա.) || տալ ումեք սփածանիլ. կմ ածել ը մէջ ումեք զսփածանելի ինչ: ռամկ. ղուշանտըրմըշ ընէլ. 'ի Վարս հարց. ի: Նշանակէ և ս զածելն ը մէջ իւր զսփածանելի. և ըստ այսմ ասի սփածեցոյց զզենջակն ը մէջ իւր. ռամկ. ղուշանմիշ ըլլալ:

Սփածումն. ծման. ման. մանց. մամբք: || ածելն ընդ մէջ զսփածանելի: Իսկ մերթ շրջապատումն անձին սփածանելեաւ իմիք, և կմ պատիլն քրձով, կմ այլով իմիք նմանեաւ:

Սփածուցանեմ. ծուցի. ծո՛. ել: || տե՛ս ըզ Սփածեցուցանել:

Սփիւռ. կմ սփիռ: (Նախդրիւ հոլովի.) || է արմատ սփռել բային. որ երբեմն նշանակէ սփռեալ. կմ տարածեալ. կմ ծաւալեալ. և կմ ցրուեալ: Ըստ այսմ Նարէկ. 'ի [illegible]. Ընդարձակ և մեծապատիւ կանոնս սփիւռ տարածէր. յ՛ սփռել տարածէր: Ըստ այսմ և ս ասի սփիւռ և տարած լոյս՝ կմ բազմութի. և կմ սփիւռ կղզիք: 'ի Թուղթն [illegible], որ [illegible]: Իսկ մերթ առեալ լինի փոխանակ բառիս՝ սատարաբաշխ. կմ առատաձեռն. ըստ այնմ 'ի հին պատմագիրս. ընծայեցուցանել սփիւռ ծախիւք ըզ տաճար բարձրելոյն: Դարձեալ՝ երբեմն վարի սա 'ի յոգնականումն երկրորդ գոյական. և նշանակէ՝ սփռումն. կմ ծաւալումն. և կմ ցրուումն. և յայսմանէ առեալ սփիւռ կոչին ազգք. կմ գաւառք, և կմ սահմանք բնակութե ընդ ամ տեղիս սփռեալք. զոր օրինակ. Ցրուեցես զնս 'ի սփիւռս, յ՛ 'ի գաւառս սփռեալս ընդ տիեզերս: Երեմ. 15. 7: Միթէ 'ի սփիւռս հեթանոսաց երթայցէ, յ՛ 'ի սփռեալ ազգս հեթանոսաց: Յոհ. 7. 35: Ըստ այսմ է և 1. Պետ. 1. 1: Սոյնպէս և սփռեալ բազմութիւնք բառից, քարանց, դրամոց, վանօրէից, և այլոց նմանեաց՝ սփիւռք կոչին:

Սփոփանք. անաց. օք: (անեզական.) || սփոփութիւն, յ՛ զովացումն նեղեալ սրտի, կմ դիւրութիւն վշտացեալ հոգւոյ. և կամ մխիթարութիւն: Նարէկ. զդ: և Յհկ. 1. հաւ. իթ: Իսկ մերթ փարատումն, և կմ ցածուցումն կրից. և ըստ այսմ ասի սփոփանք սգոյ, բարկութե. և այլն:

Սփոփեմ. եցի. եա՛. ել: (ներգործ.) || զովացուցանել զսիրտ ուրուք 'ի տառապանաց. կմ դիւրել նեղեալ հոգւոյ, կամ սրտապնդել. և կամ մխիթարել: Ծննդ. 50. 21:

50. 21: և 1. Թես. 2. 12: Իւ յայտմանէ ա_ռեալ նշանակէ փարատել. կամ դիմուցա_նել, և կամ ցածուցանել զկիրս ինչ. որպ մինչ ասի' սփոփել զսուգ սրտին, կամ ըզ խռովութիւն. կամ զտրտմութիւն. և այլն: Ոսկէ. 1. հատ. լէ: և 2. հատ. Ժ: և Յմ որդի:

Սփոփութիւն. թեան: || տես զՍփոփանք: 1. Կորն. 14. 3: Փիլիպ. 2. 1:

Սփռեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || տա_րածել. կամ ծաւալել. կամ ցրուել. և կամ ցիր և ցան արկանել. և այս ասի զկտա_ւեղինաց. զմարդկանէ, զհաւուց, զհողմոց, զհամբաւոյ. և այլն: ռամկ. ֆռէլ. կամ ցեր_ուցան ընել. Ծննդ. 9. 19: Յոբ. 38. 24. Մատ. 25. 24: Իւ յայտմանէ առեալ արկանելն զհայցուածս առաջի ուրուք' սփռել ասի: Սաղմ. 101. 1:

Սփռիչ. սփռչի. աւ. աց. օք: || սփռօղ. կամ նա' որ տարածէ: ռամկ. ֆռօղ: Բայց մա_նաւորապէս առեալ նշանակէ զգործին սփռելոյ' կամ պարզելոյ զինչ. և ըստ այսմ սփռիչք կոչին երկայն ձողիք. ի որրէ+. յորս սփռին կտաւեղէնք, կամ այլ ինչ նը_ման: Սոյնպէս սփռիչք ասին պարզու_նակք, կամ առանցք փայտեղէնք, և եր_կաթեղէնք. և կամ ծինիք, և այլք հա_մանման գործիք արու և էգք, որք ը մի_մեանս ագուցեալք շաղկապեն զատարանջա_նս. որդան. զախնակս, կամ զփեղկս տախ_տակաց, որովք շաղկապեալքն առ միմեանս եկեալք սփռին, ի պարզին, կամ տարա_ծին 'ի լայնութիւն, յորմէ և այսպիսի շաղ_կապք նոյնպէս կոչին սփռիչք: Ելից. 26. 17: և 36. 22:

Սփռումն. ռման. մամբ. մանց. մամբք. || տարածումն. կամ ցրումն. և կամ ցանումն:

Սփրիդ. կամ սփրիթ. րդոյ. ով. ոց. ովք: կամ րդի. աւ. ւոց. օք: || է բառ յունական, և նշանակէ' զամբիւղ. կամ սակառի. կամ այլ ինչ անօթ հիւսեալ 'ի պրտուէոյ, կամ 'ի կնիւնէ, և կամ 'ի տերևոյ արմաւենւոյ, և այլոց նմանեաց: ռամկ. զէմպիլ: 'Ի Վարդ. ԺԹ. և ԺԸ: ըստ այսմ է և ԺԸ. ուր ա_սի. գործեաց զսփրիդ, և եդ 'ի նմա զմանուկն. ի ղութփ:

ՍՔ

Սքանչանամ. ացայ. ացիր. ալ: (ընդ միջ.) || լցեալ լինել սքանչացմամբ. կամ հրա_շանալ. կամ հիանալ. կամ զարմանալ: Ղուկ. 2. 48: Գործ. 2. 7: Իսկ մերթ նշանակէ զսքանչելի լինել. կամ զարմանալի երևել: ըստ այնմ Նարեկ. Սքանչացաւ յիսդուտութիւն. զօրացաւ. և ոչ կարեմ հանդար_տել: ըստ այսմ է և Ոսկէ. 1. հատ. լէ. ուր ասի' որ յայն սքանչանայ պատուէիւ. ի սքան_չելի լինի պատուէով:

Սքանչանի: (Նախդրիւ հոլովի.) || ածան_ցի 'ի սքանչանալոյ 'ի ձեռն անէ մասն_կանս. որպիսիք են և բառքս այսոքիկ, գո_վանի, արժանի, ձմեռանի, ընդունանի. և այլն. և նշանակէ' սքանչելի. կամ հրաշա_լի. և կամ զարմանալի. և ըստ այսմ ասի' Նարեկ. ղԹ. սքանչանի Թիւրակէս, կամ ար_ուեստ. և այլն:

Սքանչանիմ. իս. իմք. իք. ին: (Ձայնակր.) || է բայ պակասաւոր. զի ունի միայն զներ_կայն սահմանականին. և նշանակէ սքան_չանալ. կամ զարմանալ. ըստ այնմ Ոսկէ. 1. հատ. լէ. Ոչ սոցա զհետ, այլ զհետ որ_բոցն սքանչանի, ի սքանչանայ: Իսկ մերթ նշանակէ սքանչացեալ լինել. կամ սքանչե_լի երևնիլ. որպիսի է և բառս ստացանիլ, որ նշանակէ ստացեալ լինել: Նարեկ. ղԹ:

Սքանչանք. անաց օք: (անեզական.) || սքան_չացումն, որ է հրաշացումն. կամ հիա_ցումն. և կամ զարմանք: 'Ի Գիրս Դաւթի Փիլիսոփայի.

Սքանչացումն. ցման. մամբ. մանց. մամբք: Նոյն է ընդ վերնոյն:

Սքանչացուցանեմ. ցուցի. ացի. անել: (ան ցող.) || սքանչելի առնել. կամ հրաշացու_ցանել. կամ զարմացուցանել: ռամկօրէն ղարմացնել:

Սքանչելագեղ. ի. աւ. աց. օք: || ունօղ զսք_անչելի գեղ, կամ որ հիանալի է գեղեցկու_թբ. և կամ հրաշագեղ: Աղուս:

Սքանչելագործ. ի. իւ. աց. օք: || գործօղ սքանչելեաց. կամ նշանագործ. և կամ հրա_շագործ: 'Ի Շարականոցի: Իսկ մերթ' գոր_ծեալ, կամ եղեալ սքանչելապէս. կամ սքան_չացուցիչ. կամ հրաշափառ. և ըստ այսմ ասի' սքանչելագործ կերպարանս. բժշկու_թիւն. յարութիւն. և այլն: 'Ի ճառագիրսն:

Սքանչելագործեմ. եցի. եա. ել: (Ներգոր_ծակ.) || գործել զսքանչելիս. կամ առնել զհրաշս: Ոսկէ. 1. հատ. ԺԴ: Իսկ մերթ ըս_քանչելեօք գործել զինչ. կամ սքանչելի կերպիւ առնել. և կամ հրաշագործել:

Սքանչելագործութիւն. թեան: || տես զհրա_շագործութիւն:

Սքանչելազօր: (Նախդրիւ հոլովի.) || ունօղ զսքանչելի զօրութիւն. կամ որոյ կարողութիւն է գերահրաշ: Իսկ մերթ' ունօղ սքանչելի զօրաց. կամ որոյ զօրքն են հրաշալի:

Սքանչելակերպ: (Նախդրիւ հոլովի.) || ու_նօղ զսքանչելի կերպ. կամ զհիանալի կեր_պարանս. կամ որ հրաշափառաւ է տեսլեամբ. և կամ ահեղակերպ: Աղուս:

Սքանչելահրաշ: (Նախդրիւ հոլովի.) || սքան_չելի և հրաշալի. կամ գերահրաշ. կամ զարմա_նահրաշ. և կամ հրաշափառ: Նարեկ. ՀԵ:

Սքանչելաշուք: (Նախդրիւ հոլովի.) || ու_նօղ զսքանչելի շուք. ի պատիւ. կամ սքան_չելափառ. և կամ հրաշափառ: Նարեկ. ԳԶ:

Սքանչելապայծառ: (Նախդրիւ հոլովի.) || այն' որ սքանչելի է պայծառութբ. կամ ունի զհրաշալի պայծառութիւն. և կամ ան_նմանպայծառ: Նարեկ. ՃԶ:

Սքանչելապատուամ: (Նախդրիւ հոլովի.) || սքանչելապէս պատուօղ. կամ սքանչելեաց Ճառօղ: Իսկ մերթ սքանչելապէս պատ_մեցեալ. կամ որոյ պատմութիւնն է սքանչե

Digitized by Google

լի. և ըստ այսմ ասի՝ աւանդութիւն սքանչելապատում։

Սքանչելապէս։ (մակբայ որակական.) ‖ սքանչելեօք. կմ սքանչացմամբ. կմ սքանչելի կերպիւ. և կմ հրաշալի եղանակաւ։ Սաղմ. 44. 5։ և 75. 5։

Սքանչելատես։ (Նախդրիւ հոլովի.) ‖ տեսանող սքանչելեաց, կմ սքանչելի տեսլեանց՝ որպիսիք էին մարգարէքն։ Իսկ մերթ՝ ունող զհրաշալի տեսութիւն. կամ զզարմանալի տեսիլ. որպիսիք են ոմանք ՚ի շինուածոց, կամ ՚ի դիմաց, և այլն։ Նարէկ. ծա։

Սքանչելատեսակ։ (Նախդրիւ հոլովի.) ‖ այն՝ որոյ տեսակն է սքանչելի. կմ որ է հրաշալի տեսլեամբ. և ըստ այսմ ասի. սքանչելատեսակ կերտուած, դէմք. դեղ. և այլն։ Նարէկ. ՚ի Մեկն. Երգոց։

Սքանչելատեսիլ։ (Նախդրիւ հոլովի.) ‖ նոյն է ընդ վերինոյն։ Նարէկ. ղզ։

Սքանչելատեսիկ։ (Նախդրիւ հոլովի.) ‖ տե՛ս զՍքանչելատեսակ։ Ագաթ։

Սքանչելատիպ։ (Նախդրիւ հոլովի.) ‖ ունող զտիպ սքանչելի. կմ սքանչելատեսակ. և կմ հրաշալի տեսլեամբ։ Լամբրոն։

Սքանչելարար. ի. աւ. աց. օք։ ‖ արարող սքանչելեաց. կմ հրաշագործ. և կմ նշանագործ։ ռամկ. հրաշք գործօղ։ Դատ. 13. 19։

Սքանչելարմատ։ (Նախդրիւ հոլովի.) ‖ ունող զսքանչելի արմատ, կմ որ բուսեալ է ՚ի սքանչելի արմատոյ. և ըստ այսմ ասի՝ սքանչելարմատ շառաւիղ։ Նարէկ. հզ։

Սքանչելարուեստ։ (Նախդրիւ հոլովի.) ‖ ունող զսքանչելի արուեստ. կմ որոյ արհեստն է յոյժ զարմանալի. և կմ սքանչելահնար։ Իսկ մերթ այն, որ լինի սքանչելի արուեստիւ. կմ սքանչելահրաշ. և կմ զարմանասքանչ. և ը՟ այսմ ասի՝ սքանչելարուեստ հրաշք, կմ նշան։ Նարէկ. ղզ։ և ՚ի Գովեստ խաչին։

Սքանչելափառ։ ‖ տե՛ս զՀրաշափառ։ Նարէկ. ծա։

Սքանչելի. լւոյ. եաւ. եաց. եօք։ ‖ լի ըսքանչացմամբ. կմ սխրալի. կմ հրաշալի. կմ հիանալի. և կմ զարմանալի։ Դատ. 13. 18. Յոբ. 37. 5։ Իմաստ. 16. 17։

Սքանչելիք. եաց. եօք։ (անեզ.) ‖ սքանչելի գործք. կմ հրաշք. և կմ նշանք արարեալք յԱյ. կմ ՚ի սրբոց նր ՚ի վեր քան զկար բնութե. վա որոյ յատուկ է այսպիսեաց ածել զմարդիկ ՚ի սքանչանալ։ Ելից. 3. 20։ Սաղմ. 77. 32։ Մատ. 21. 15։

Սքանչելուղէշ։ (Նախդրիւ հոլովի.) ‖ ունող զսքանչելի ուղէշ, ք զշիւղ։ Իսկ մերթ այն, որ է սքանչելի ուղէշ. կմ շառաւիղեալ ՚ի հրաշալի ուղեշէ. և ըստ այսմ ասի. ՚ի Նարէկ. ղզ։ Սուրբն սքանչելուղէշ բարունակին։

Սքանչումն. չման. մամբ. մանց. մամբք։ ‖ սքանչացումն. կմ զարմացումն։ Նարէկ. ՚ի Մեկն. Երգոց։

Սքեմ. սքեմի. աւ. աց. օք։ ‖ է բառ յունական, որով նշանակի՝ ձև. կմ տեսակ. կմ կարգ. կմ վայելչութիւն. և կմ զարդ։ Իսկ մերթ ձորձ. կմ հանդերձ. կմ ծածկոյթ. կմ քօղ. և կմ դիմակ. որ է սաւան։ Բայց ՚ի բարբառս մեր սովորութիւն է ՚ի գործածել զսա միայն փոխանակ կրօնաւորական, կմ կղերիկոսական զգեստուց, որպէս գնի ՚ի Վարս հարց. ը. և իզ։ և ՚ի Լամբրոն.

Սքեմաւոր. ի. աւ. աց. օք։ ‖ ունող զսքեմ, ք. զկրօնաւորական զգեստ։

Սքօղեմ. կմ սքողեմ. եցի. եա. եալ։ (Ներգ.) ‖ քօղ արկանել զինչ. կմ քօղով ծածկել. և կմ պատրուակել։ 1. Կոր. 11. 6։ Եւ յայսմանէ առեալ երբեմն նշանակէ պարածածկել. կամ պարփակել. պահել. և ըստ այսմ իմանի մինչ ասի՝ հրեշտակական թևօք սքօղեալ պահել։ Մերթ և՛ թաքուցանել. կմ գաղել։

Սքօղումն. կամ սքողումն. ղման. մամբ. մանց. մամբք։ ‖ քօղարկութիւն. կմ քօղով ծածկումն. և կմ պատրուակումն։ Իսկ մերթ՝ պարածածկումն. կամ պարփակեալ պահումն. և կմ պաշտպանութիւն։ ըստ այսմ Նարէկ. ՚ի Գով. Խաչին. Հրեշտակական թևոցն սքօղմամբ ցանկ արկեալ պահեսցէ։

ՍՕ

Սօսէր. ի. աւ. աց. օք։ ‖ ագանելիք ոտից, որ է կօշիկ. կմ հողաթափ. և կմ մուճակ. և ըստ այսմ ասի, սօսէր արձակել, կմ ոտի ագանել յոտս, կմ լուծանել զկապս սօսերաց։ Բայց սա մանաւանդ յաշխարհաբառ լեզուիս ՚ի գործածի։

Սօսւոյ. կմ ի. իւ. եաց. իւք։ ‖ կաղամախի. որ է տունկ ինչ սաստախիտ, զորմէ ՚ի տեղւոջ իւրում ասացաւ։ Եսայ. 41. 19։ Դրժ՝ նշանակէ զծառ ինչ բարձր՝ ընդարձակ, տերևախիտ, և հովանաւոր յոյժ, որ ունի զբուն երկայն. և զկեղև կակուղ և թեթև. իսկ զփայտն նման կաղնւոյ։ տերևքն են մեծ և լայն ձևացեալ իբրև զթաթ բացեալ ձեռին մարդոյ, որպիսիք են տերևք ոմանց որթոց։ Բերէ զպտուղ գնտակաձև կերպ և բրդալից պատեալ արտաքուստ փշովք հանդոյն շահպալուտի, ք. ֆէսթանէն։ ռամկ. չընար։ Եսայ. 44. 14։ և 60. 13։

Սօս. ի. իւ. լոյ. իւք։ ‖ է արմատ սօսափիւն բային, որք խօսին խուսափիւն բային, և նը նշանակէ՝ սօսափելի. կմ սոսկալի. կմ ահաւոր. կմ խորին, և այլք. և ը՟ այսմ ասի ՚ի հին տառանգիրս. բարձում երկնաւոր սօսն և ահապարանոցս պատրաստեալ։ Եւ յայսմ ասի. էր նա այր սօս ՚ի գնացս իւր։ Դարձեալ է անուն մարդոյ։ Խորէն. ա. գլ. 19։

Սօսանուէր։ (Նախդրիւ հոլովի.) ‖ նուիրեալ ՚ի սօսիս. և այս է անուն որդւոյ Արայեան արքայի, զոր յաղագս նուիրելոյ

դից յանտառս սօսեաց, անուանեցին սօսանուէր, ուր և երբեմն սօս: Խորէն. ա. գլ. 19:

Սօսատարաս: (Նախդրիւ հոլովի.) || ունօղ զսաղարս, կամ զկերպ, կամ զնմանութիւն սօս ծառոյն, կամ ընձաւին, կամ որ է հանդոյն սօսեաց բարձրացեալ. կամ վսեմացեալ: յոր մի առեալ երբեմն նշանակէ սօսկ՝ վսեմ և գերազանց: Նարեկ. ղզ:

Սօսաւէին: (Նախդրիւ հոլովի.) || սօսափիւն, որ է սարսափումն: Իսկ մերթ գղրդիւն. կամ ձայն շարժման տերևոյ: և ըստ այսմ է 'ի գիրս Խորէն. ա. գլ. 19. ուր ասի, Ջորոց զսաղարթուցն սօսաւէին հանդարտ:

Սօսափիմ. եցայ. եայց. լիլ: (Ձայնակր.) || սարսափիլ. կամ սարսռիլ. կամ սասանիլ. և կամ դողալ:

Սօսափիւն: (Նախդրիւ հոլովի.) || սարսափումն. կամ սարսռումն. կամ սասանութիւն. և կամ դողումն: Իսկ մերթ՝ թնդիւն, կամ դղրդիւն. կամ խոխոջիւն ջրոյ. կամ ձայն խարխափման տերևոց, և կամ հնչիւն օդոյ՝ որպիսի է այն, զոր լսէ ոք յանմարդաբնակ անապատի. կամ 'ի լռին տեղւոջ, և սոսկացեալ սօսափի, յորմէ և վայելչապէս այսպիսի ձայնս կոչեցաւ սօսափիւն. Ըստ այսմ Յոբ. 4. 16: Ոչ էին կերպարանք առաջի աչաց իմոց. բայց միայն օդ՝ և սօսափիւն լսէի:

Սօսի. սօսւոյ. ւով. կամ եաւ. եայ. եօք: || սօսեղէն, կամ այն ծառ, որոյ նիւթն է սօս. կամ որ կազմեցեալ է 'ի սօսէ: ասմկ. չնարի ճայթէն շինած: Նշանակէ և ս զծառն սօս, ուր և բառս նոճի, երբեմն նշանակէ զնոճեղէնն, և երբեմն զնոճն: Ծննդ. 30. 37: 3. Եզր. 8. 15:

Սօսինաթագ: (Նախդրիւ հոլովի.) || սօսափմամբ թագուցեալ. կամ պճնեալ. և կամ որ սարսափմամբ ծածկէ զինքն:

Սօսիւն: (Նախդրիւ հոլովի.) || տե՛ս զՍօսափիւն:

Սօսոյք: (անեզական.) || սօսք. կամ բազմութիւն սօս ծառոց. զի վանկս՝ ոյք է յոգնականս ցուցիչ. զոր ընտակէս տեսցես 'ի բառն գործոյք: Եզեկ. 31. 8:

Սօրամատ. կամ սաւրամատ. ի. աւ. աց. օք: || սարմատացի, կամ բնակիչ սարմատիոյ, որք էին լէհք, նաև ազգք թաթարաց: Կիւրղ. Եղեմ. ժզ: և 'ի հին տպագիրս:

Սօփեր: || տե՛ս 'ի բառարանի յատուկ անուանց:

Վ.

Վ. է մինն 'ի բաղաձայն տառից՝ կոչեցեալ 'ի քերականաց կիսաձայն, զի 'ի լինելն միայնակ՝ կարէ զկիսակատար և զթոռոտ հնչումն ինչ սկզբնաւորել ըստ օրինակի տառիցս՝ զ. ժ. խ. շ. ռ. ս. և այլն. զորոց ընագոյն ասացաւ 'ի տեղիս իւրեանց:

Արդ՝ զտառս զայս անուանեմք Վեվ, որ հնչէ ընդ բերանն ատամբ ձայնիւ. վզ եդեալ լինի յոմանց ընդ թաւ տառն անկեալս 'ի ներքոյ հագագին, որք են ա. քա. թ. խ. չ. ց. ք. և այլն:

Դարձեալ, ունի սա զծորդութիւն ձայնի ընդ տառիս՝ ւ, յորմէ գրեթէ միայն թաւուք տարբերի. վզ և երբեմն փոխադրի ը նմա 'ի սովորական բառս. որգոն վավաշ, և վաւաշ. վավաշել, և վաւաշել. օթեվան, և օթեւան. իջեվան. և իջեւան. և այլն:

Դարձեալ՝ բազում անգամ տառս այս յայլազգական բառս առակցեալ ընդ տառին, ո. գնի 'ի տեղի. օ. վզ զի փխկ ասեն ըն՝ ղօտ. մօսէս. յօաթամ. յօսիայ. յօսէփ. և այլն: ասեմք ղովտ. մովսէս. յովաթամ. յովսիայ. յովսէփ: Մանաւանդ զի 'ի բնիկ բառս վայելչագոյն արտաբերի ուն, քան օն. զոր օրինակ, մովսբ. քան մօսբ. աւովզ. քան աւօզ. երկրով. քան երկրօ. սրբով. քան սրբօ: Որոց և ոմանք ընդ գրիլն տառին՝ օ, շփոթին ընդ հայկական բառի, ոչ մինչ անունն ով, գրիօր: Դարձեալ 'ի տառս՝ Վ. երբեմն յայլազգական բառս 'ի դրադարձ թարգմանութեան փոխադրի ը բէնի. ոչ և բէնն ընդ վեւի. որոյ պատճառն է, զի 'ի բարբառս յունաց գիր՝ β, որ է՝ պ. երբեմն արտաբերի իբրև զբեն, և երբեմն ոչ զվեւ. ուստի և 'ի մեզ ըստ այլ և այլ հնչման նշ ուրեք ուրեք նոյն տառն այլ և այլ թարգմանի. և վզ այսորիկ զբառս զայս՝ βορέας, որ է պոռէաս. երբեմն գրեմք՝ բօրէաս. և երբեմն վօւէաս: Այնպէս զբառս՝ βασιλέος, որ է պասիլէոս. ուրեք ուրեք գրեմք վասիլէոս, և ուրեք ուրեք բասիլէոս, յորմէ և համառօտմամբ ծագի անունն՝ բարսեղ: Իւ յայսմանէ առեալ փոխանակ ասելոյ սեղէեսարոս, ասեմք սեղբեստրոս:

Դարձեալ. է սա և նշան թուոյ՝ որ մինչ վարի պատուով. այսպէս. Վ. ցուցանէ զթիւն՝ երեք հազար:

Վ Ր

Վագերաձի : (Նախդրիւ հոլովի .) || է կենդանի ինչ խառնակերպ . որ ունի զնմանութիւն ձիոյ . նաև վագեր . յորմէ և անուանեցաւ վագերաձի , իբրև թէ՝ վագերանման ձի : Խոբէն . յաշխարհագրութ :

Վագր . վագեր . երբ . եբք . աց . օք : || է գազան ինչ դժնդակ՝ որընթաց յոյժ : Ունի զմորթ խայտաբղէտ . կերպարանօք և մեծութեամբ նման է մեծամեծ գայլոց . ոտք և բազուկք են լերկ զինձ . կմ մանաւանդ ահ գոյգոյ սուտուր մարմնով , և դժնդակ գլխով . որոյ ցռուկն է կեռ՝ և բերան իբրև զկոճղ : գիշատեն և ուտեն զմ և լցէ կենդանիս . յաղթեն բազում անգամ և փղաց : չարաչար գիշատեն զսեառ մարդիկ . բայց ՚ի սպիտակս ամենևին ոչ մերձենան : ՚ի լսել զձայն թմբկի՝ կատաղին . և յախտէ ցասմանն սասամնավէր առնեն զինքեանս : Աստուծիկ սիրեն զկորիւնս իւրեանց . վն որոյ յորժամ յափշտակեն ըզնս որսորդք՝ անհնարին դաղանութեամբ արտին զհետ նց . և չիք հնար զերծման , բայց եթէ ՚ի բաց ընկենուլ զմին ՚ի կորեանց . ոտք և առնեն որսորդքն . զոր խանդակաթ գթովք յորջս լուրեանց տարեալք՝ անդրէն արշաւեն զերծուցանել զայլսն . և իբրև գտանեն զյափշտակօղն ՚ի նաւ մըտեալ , այնչափ կատաղին , մինչ զի զամ ինչ՝ որ առ ծովեզերբն կայցէ՝ վեր ՚ի վայր դարձուցանեն : Գտանին առաւ ՚ի հնդիկս յեթովպիայ , և ՚ի հիւրկանիայ , և յայլ տեղիս ամանս : Խոբէն . յաշխարհագրութ :

Վազեմ . եցի . եա . ել : (չէզոք .) || վազս առնուլ . կմ արշաւել . և կմ ընթանալ : որ և ռամկ . ասի՝ վազել : 1 . Թագ . 25 . 23 : Տօբ . 6 . 2 : Եսայ . 35 . 6 : Բայց մինչ ասի՝ վազել զերեք , նշանակէ՝ շուրջանակի վազս առնուլ . կմ ՚ի վր ընթանալ . և կմ ՚ի վերուստ արշաւել , որ է վրայէն վազել : ըստ այսմ Խոբէն . Գ . պր . 40 . Այլ նա հասեալ վազեաց զեփրատաւ . դ ենփրատայ վրայէն : Իսկ մերթ նշանակէ ՚ի բաց ստանալ . կմ ՚ի բաց փախչել . և կմ ՚ի բաց ստրանալ յայնմանէ՝ ընդ որոյ ձեռամբն , կմ հոլանեաւն էր յառաջագոյն . ըստ այսմ . Ովս . 7 . 13 . Վայ նց . զի վազեցին զինև . դ ՚ի բաց ստաեան յինէն : Եւ Լամբրոն . Վայ մեզ , զի վազեցաք զքեզ : ըստ այսմ խնամն մինչ ասէ՝ վազել մարդոյ զպատուիրանաւ . ձըկանց , կամ թռչնոց՝ զգործեաւ . և այլն : Նարեկ . խե :

Վազվազեմ . եցի . եա . ել : (չէզոք .) || է բայ յաճախական . ոտք և սաստկական . և նշանակէ յոլոր անդր վազս առնուլ . կմ սէպ վազել . և կմ արշաւելով արշաւել . ռամկ . վռնվռել . կմ վռնվռտել : Գործ . 14 . 9 :

Վազք . վազից . իւք : (անեզական .) || վազումն , որ է արշաւանք . և կմ ուժգին ընթացք կենդանեաց և այլոց իրաց : Խոբէն . Գ . պր . 40 : Նարէկ . խա . կզ : Իսկ մերթ ընբայի չարակցի այսպէս , վազս առնուլ . և նշանակէ՝ վազել . կմ արշաւել : Յօբ . 39 . 25 : Ովկէ . 1 . հոմ . խա : ՚ի վեր հոգց . իզ :

Վաթարեմ . եցի . եա . ել : (ներգործ .) || վթարել . կմ աղաւաղել . կմ տապալանել . կմ եղծանել . և կմ անպիտանացուցանել . և ը այսմ ասի Ովկէ . 1 . հոմ . իդ . Զեկեղեցի մտաէ . Ջինչ վաթարեաց զապացեալն ՚ի նմանէ . այլ միայն անհնարին համարեցաւ :

Վաթարիկ . րկի . աւ . աց . օք : || վատթար . կմ յոռի . կմ չնչին . կմ եղծեալ . կմ խանգարեալ : Ովկէ . 1 . հոմ . ը :

Վաթեմ . եցէ . եա . ել : || տես զՎայթել : Աճգռ :

Վաթսնամեայ . կմ վաթսնեմեայ . էի . իւ . եց . իւք : || տես ՚ի ներքոյ զՎաթսնամեան :

Վաթսնամեան . կմ վաթսնեմեան . ենի . իւ . եց . իւք : || նա՝ որ է վաթսուն ամաց . կմ վաթսուն ամ է՝ յորմէ հետէ վարէ ըզ կեանս : ռամկ . վաթսուն տարեկան : Ղևտ . 27 . 3 . և 7 : 1 . Տիմ . 5 . 9 : Իսկ մերթ նշանակէ զայն , որ տևէ զվաթսուն ամս . կմ եղեալ է յամս վաթսուն . և կմ վերաբերի առ վաթսուն տարիս . և ըստ այսմ ասի՝ վաթսնամեան չինուած , կմ ժամանակ . և այլն :

Վաթսնապատիկ . ակի . աւ . աց . օք : || է թիւ կրկնական , որով նշանակի վաթսուն անգամ կրկնեալն : Իսկ մերթ վարի իբրև զմակբայ . և նշանակէ փոխանակ միոյն վաթսուն , կմ վաթսնիցս աւելի քան զմին : ռամկ . վաթսուն քաթ :

Վաթսնաւոր . ի . աւ . աց . օք : || ունօղ ըզ վաթսուն . կմ պարունակօղ վաթսնից . և կմ վաթսնապատիկ : Մատ . 13 . 8 :

Վաթսնեակ . եկի . աւ . աց . օք : || է թիւ զասական . և նշանակէ զվաթսունն որոշակի . իսկ մերթ՝ վաթսնաւոր . կամ սակ վաթսուն . որպիսիք են և բառքս՝ բիւրեակ . երրեակ . եօթնեակ . և այլն :

Վաթսնեմեայ : || տես զՎաթսնամեան :

Վաթսնեմեան : || տես զՎաթսնամեան :

Վաթսներորդ . ի . աւ . կմ իւ . աց . օք : || է անուն դասական թուոյ , որով նշանակի վերջինն վաթսնից դասակարգեցելոց : 1 . Մակ . 10 . 1 . և 21 :

Վաթսունքեան . կմ սունքին . եցուն . կամ եցունց . ումբք : (անեզական .) || է թիւ անձներական . որով նշանակի խմբաքանչիւրն ՚ի վաթսնից . և կմ վաթսունն մի մի :

Վաթսնիցս : (մակբայ քանակ .) || վաթսուն անգամ : ռամկ . վաթսուն հեղ :

Վաթսուն . սնից . իւք : || է թիւ բացարձակ . որով նշանակի վեցիցս տասն . ոտք և տասնապատութ իւք ցուցանէ . զի ասի՝ վաթսուն . իբրև թէ վեցասուն . դ վեց տասնեակս ունօղ : Ծննդ . 25 . 26 : Մատ . 13 . 23 :

Վափ : (միջարկութ ցաւակցակ .) || աւաղ . կմ ափսոս :

Վախճան . կմ վաղճան . ի . աւ . աց . օք : || կատարած . կմ աւարտ . կմ վերջ . կմ եզր :

տաճկ. սօնը: Ծննդ. 49. 1: Եզեկ. 7. 6: Եբր. 1. 2: Յերեկոն եւ՝ խաւար զբաւական. կմ՛ ընջունան. կմ՛ ծախուման. եւ կմ՛ սպառուման: Երեմ. 18. 7. եւ 9: Եզեկ. 20. 17: Իսկ մերթ՝ վախճանուման. կմ՛ ելք ՚ի կենաց. եւ կամ մահ: Իմաս. 2. 16: եւ 4. 17: Տօբ. 14. 13: Մակ. 2. 14: Դարձեալ. վախճան հուշի բազմութեան ինչ բովանդակ. որ ռամկօր. սոնի. ինչ կայ չկայ. ըստ այնմ Աշխար. 1. 15. Զվախճանն կարթեաւ կորզեաց, զի զբովանդակ հօրն ձկանց. եւ կմ՛ զնմ ձկունս: Իսկ երբեմն վարի իբրեւ զմակբայ այսպէս. ՚ի վախճանի. եւ նշանակէ ՚ի զբաւեւ ման. կմ՛ հուսկ յետոյ. եւ կմ՛ ՚ի վերջոյ քան զնմ: տաճկ. սօնը սօնղանտայ: Աշխար. 23. 32: Իմաստ. 3. 17: Եւ կմ՛ այսպէս՝ մինչեւ ՚ի վախճան. կմ՛ ցվախճան. եւ նշանակէ խաղաւ. կմ՛ բոլորովին. եւ կմ՛ ամենեւին: Դան. 3. 19: Դարձեալ մասնաւորապէս առեալ նշանակէ առաւելն ՚ի չորից պատճառաց. վն որոյ լինի ինն. կմ՛ առ որ կարգի իրողութիւն ինչ. ոպ վախճան դեղոյ է առողջութիւն: տանն՝ բնակութիւն: կերակրոյ՝ պահելն զկենդանի. իսկ պահելոյ զկենդանի՝ պաշտօնն ած, եւ ինքն ած: Արդ՝ յառակումն այսպիսի վախճանիս է լինիլ ՚ի դիտաւորութեան յառաջագոյն քան զնմ պատճառս. վն որոյ եւ վաղագոյն ճանաչի քան զնն. ոպ եւ աստուածաբանութիւնն նորա յայտնէ զայս. զի առի վախճան, իբրեւ վաղճան, զի վաղագոյն ճանաչեցեալ: Յայտ. 1. 17:

Վախճանական. ի. աւ. աց. ազ: || այն նմ, որ առ վախճանն վերաբերի, կմ՛ զվախճանն ցուցանէ. օրինակի է մինն ՚ի չորից պատճառաց:

Վախճանեմ. կմ՛ վաղճանեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || ՚ի վախճան հասուցանել. կմ՛ կատարել. կմ՛ աւարտել. կմ՛ զտաւել. եւ կմ՛ վերջացուցանել. եւ ըստ այսմ առի՝ վախճանել զխօսելն. կմ՛ զմաքրելն, կամ զբանս իւր. եւ այլն: ռամկ. ըմընցնել. կմ՛ վերջացնել: Ծննդ. 17. 22: Ղեւտ. 16. 20: 2. Մնաց. 34. 8: Իսկ մերթ՝ սպանել. կամ խաղաղ վառնել. կմ՛ բնաջինջ առնել. եւ կմ՛ ՚ի միջոյ կորուսանել: ռամկ. հատցնել. կմ՛ [illegible] ընել. կմ՛ կորսընցնել: 1. Թագ. 15. 18: 2. Մնաց. 18. 10: Երեմ. 10. 25: Բայց մինչ առի՝ զկատարած իւր վախճանել. նշանակէ զկեանս իւր աւարտել. կամ մեռանել: ռամկօր. մեռնիլ: 2. Մակ. 13. 8:

Վախճանեցուցանեմ. եցուցի. եցոյ. անել: (անցող.) || պատճառ լինել վախճանելոյ. կմ՛ աւարտելոյ զինն: Իսկ մերթ՝ տալ ումեք վախճանել. կմ՛ մահացուցանել. կմ՛ սպանանել: ռամկ. մեռցնել: Գործ. 5. 26: Խորէն. ա. պր. 18:

Վախճանիմ. կմ՛ վաղճանիմ. եցայ. եաց. իլ: (Չէզոք.) || կատարիլ. կմ՛ աւարտիլ. կմ՛ եզերիլ. կմ՛ վերջանալ: ռամկ. ըմընանալ: Կոչ. 3. 3: Իսկ մերթ՝ սպառիլ. կմ՛ կորնչիլ. կմ՛ ապականելով ջնջիլ ՚ի միջոյ: Յոբ. 14. 8: Բայց մասնաւորապէս առեալ նշանակէ աւարտել զկեանս իւր. կմ՛ մեռանիլ. եւ այսպէս առի զբարեաց. կմ՛ զարբոց: Ծննդ. 50. 16: Յեսու. 1. 6: Յէս. 1. 1. եւ 2: Իսկ ուրեք ուրեք նաեւ զչարաց, կմ՛ զպղծոց. եւ կմ՛ զանարգաց: Եւլոգ. 4. 19: Ղեւտ. 16. 1: Աշխար. 15. 10: Դարձեալ՝ նշանակէ՝ լուծանիլ. կմ՛ փոխարկիլ միոյ իրի յայլ իր. ըստ այնմ Ոսկէ. 1. հատ. ժթ. Անդ զոր դնէին, հրոյ կերակուր լինէր, եւ յաջիւն վախճանէր, զի ՚ի մոխիր փոխարկիւր:

Վախվախեմ. եցի. եա. ել: (Չէզոք.) || փոքր մի համարձակիլ, եւ փոքր մի երկնչիլ. կմ՛ երկիւղիւ կասկածիլ. եւ կմ՛ զանգիտել: ռամկ. վախվխել: ըստ այնմ ՚ի վարս հարց. ԻԶ. Ընդէ՞ր տարակուսիս եւ զանգիտես եւ վախվախես.

Վախք. խց. ՚ի վախից. կմ՛ ՚ի վախս. իւք: || երկիւղ. կմ՛ ահ. կմ՛ արհաւիրք. եւ կմ՛ կասկածք տարակուսի: ռամկ. վախ: ըստ այնմ ՚ի հին տաղագրէ: Զնմ վախս եւ զբաղայն՝ ՚ի բաց ՚ի խորհրդոց նր վարեալ: Եւ ըստ այսմ ծագի՝ ՚ի բառս բայս վախվախել. ոպ եւ ՚ի ռամկական բարբառս մեր՝ բայս վախնալ. կմ՛ վախել: Դարձեալ նշանակի առաւել բարձրաբերձ եւ զառ ՚ի վայր տեղին. որով խմացեալ լինէին դարք, կմ՛ դահք, կմ՛ արտեւանք լերանց. եւ այլք բարձունք. ընդ որս անկեալքն ուժգին հոլովմամբ վիժէին: ռամկ. [illegible]. կմ՛ [illegible]. ըստ այնմ Լամբրոն. ՚ի վախսան հարթութեան, եւ անզգամութեան կործանի: Այսպէս եւս իմանի՝ մինչ առի, Յորժամ հովիւն ՚ի վախս շրջի, նմ հօտն ՚ի վայր թօթափեալ զհուրովին երթան: Եւ յայսմանէ առեալ փոխանակ առելոյ՝ գահավէժ առնել. առի՝ ՚ի վախից մղել. կամ հասել. եւ կմ՛ ՚ի վախէ քարավէժ արկանել. եւ այլն: ռամկ. ուչուրումէն վար նետել. կմ՛ վիրէն վար ձգել. ՚ի վարս հարց. Ե: Ոսկէ. 1. հատ. Ե. եւ Է: Այսպէս փոխանակ առելոյ՝ գահավէժ լինել, առի՝ ՚ի վախից մղիլ. կմ՛ հասիլ. եւ կմ՛ ՚ի վախից անկանիլ: Լամբրոն: Ոսկէ. 1. հատ. ԼԶ:

Վակասակ. ի. աւ. աց. ազ: || հաստուն. կմ՛ հաստատեցեալ. կմ՛ որ յաղագս հաստատութեան է գիշերաշխաշխա, կմ՛ գլխաւորութեան ընկ. որպիսիք են հասեալ եւ չորացեալ օրանք. զի դէզք հնձեալ ցորենոյ: Երեմ. 51. 33: Եւ յոյսմանէ առեալ վակասակ կոչի այն նմ, որ իբրեւ զապաքինման դիրաւ փիփոր, կմ՛ բեկանի: ռամկ. [illegible]:

Վակաս. ի. իւ. ից. իւք: կմ՛ աց. ազ: || ուսանոց, որ է զարդ ինչ եկեղեցական իբրեւ զկիսաշրջանակ՝ հաստատեալ յեզր վարշամակին. զոր քահանայք եւ եպիսկոպոսունք արկանեն զպարանոցաւ ՚ի ժամ պատարագին. որ երկոքին ծայրիւքն յեցեալ ՚ի վր ուսոյ՝ ծածկէ զբոլոր ծոծրակն, զի զընդունելն ժամարարին: Լամբրոն: Բայց ՚ի

Digitized by Google

հին օրէնս վակաս կոչիւր մինն 'ի զգեստուց քահանայապետին՝ յօրինեալ 'ի գունագոյն նիւթոց ոսկեհուռն անկուածով բեհեզ զծածանչաւուխտ: Ունէր սա զձև բաճկոնի, ցՙ ղըղոնի, զի զբովանդակ անձն զգեցօղին պատեալ իջանէր մինչև ցմէջն՝ կմ ցերանս: Այլ կազմուած նր էր միաստանի, ցՙ միակտուր․ և ոչ ունէր զպատառուածս 'ի լանջան․ բայց միայն զմիջոց ինչ քառանկիւնի, առ 'ի զետեղել 'ի նմա զտախտակն դատաստանաց: Իսկ օձիքն նր, ցՙ եախան՝ ը որ մուծանէր զզգեցօղն զգլուխ՝ բաժանեալ կայր յերկուս ը էր կարին ուսոյն տկանակապս, որք յետ առանձնելոյ՝ աղխեալ լինէին ընդ միմեանս ճարմանդիւ, ցՙ ղոֆմայիւ․ և այսպէս գրեթէ վակասն բաժանեալ էր 'ի վերուստ յերկուս մասունս, ցՙ 'ի յառաջին և 'ի յետին․ և յայս միտս ասի Ելից. 28. 7. Երկու վակասք ընդ միմեանս խառնեալք: Այդ՝ զայս հանդերձ ագանէր քահանայապետն 'ի վր տմ զգեստուց․ վս որոյ և եբրայեցերէն կոչի՝ եփուտ, որ թարգմանի վերարկու: Բայց բառս որում արկեալ լինէր սա զուսովք և զլանջօք՝ կոչեցին զնա ոմանք լանջանոց, և այլք ուսանոց․ յոր մէ և 'ի մէջ անուանեցաւ վակաս: Ելից. 25. 7: և 28. 4: և 29. 5: և 35. 9: 1. Թագ. 21. 9:

Վակասակիր․ կրի․ իւ․ աց․ օք: || կրող վակասի․ և կմ վակասաւոր: Աղթոն:

Վակասաւոր․ ի․ աւ․ աց․ օք: || ունող զվակաս․ կամ կրող 'ի վերայ իւր զեփուտ: Մծբն. ժԹ:

Վակժոյժ: (Նախդրիւ հոլովի․) || աղաժոյժ․ կմ անժոյժ․ և կամ անհամբեր: տաճկ. [illegible]:

Վահ: (միջարկութիւն հեգնական․ զարմացական․ և եղկական․) || ահ․ կմ վախ․ կմ ո՛․ կմ բա՛րէ: Մատ. 27. 40: Մարկ. 15. 29:

Վահագն․ գնի․ ով: (անյագն․) || է անուն որդւոյ քաջին Տիգրանայ՝ արքային հայոց՝ որ սպան զաժդահակ զարքայն մարաց․ Այս վահագն բազում դիւցազնական քաջութիւ՝ հերակլեայ նմանեալ դասեցաւ 'ի շարս դից, զորոյ զպատկերն կանգնեալ յՕն վրաց՝ պաշտէին զնա բազում զոհիւք: 'Ի սորա անուանէ յորջորջէին ըստ վանդակ զարմ նր վահունիս, իբրթէ վահագնի որդիս: Խորէն. ա. գլ. 30: և բ. գլ. 7: Դարձեալ նշանակէ սոսկ զեր ինչ անուանի, զոր յոյնք կոչեն հերակլես․ և լատինք հերքուլէս, որ էր հսկայ անհամ՝ ծնեալ յարամազդայ, ցՙ 'ի դիոսէ, զոր յաղագս բազում երևելի քաջութեանց ծածացուցեալ՝ պաշտէին հեթանոսք․ և մանաւանդ տիւրացիք․ վս որոյ և կոչիւր կուռք տիւրացւոց: 'Ի պատիւ սորա կատարէին զտօն ինչ մեծահանդէս անուանեալ ոլիմպիա, զոր տեսցես 'ի տեղւոջ իւրում: 2. Մակ. 4. 19: Այդ՝ անուանեցաւ սա 'ի մէջ վահագն․ յաղագս վահունեաց քրմապետաց, զի տեսեալ սոցա ըզ պատկեր հերակլեայ բերեալ յաշխարհս մեր, և լուեալ զքաջութիւն նր, համարեցան․ թէ վահագն նախնին իւրեանց է․ վս որոյ տարեալ զնա մեծաւ փառօք կանգնեցին 'ի տարօն 'ի բուն գաւառն իւրեանց անուանելով զնա վահագն․ և յայսմանէ սովորութիւն եղև զհերակլէս․ կմ զհերքուլէս՝ վահագն յորջորջել: Խորէն. բ. գլ. 11: Դարձեալ՝ է անուն համաստեղութե իմիք հիւսիսայնոյ, որ նկարի 'ի ձև մարդոյ 'ի ծունր իջելոյ․ ունի 'ի ձեռին զլախտ․ և զթիկամբքն զմորթ առիւծու․ զետեղեալ կայ զվիշապ համաստեղութեամբ․ և բաղկանայ 'ի վաթսուն և չորս աստեղաց: Զսա յոյնք կոչեն հերակլես․ լատինք՝ հերքուլես․ և արաբացիք՝ աղգեթէս:

Վահան․ ի․ աւ․ աց․ օք: || ասպար․ կամ մկունդ, որ է զէն ինչ՝ որով պահպանեն պատերազմօղք զանձինս 'ի ռմբաց թշնամւոյն: ռամկ. գալխան: 2. Մնաց. 9. 15: 1. Մակ. 6. 39: Եփես. 6. 16: տես և 'ի բառն նիզակ: Դարձեալ․ է սա անուն մարդոյ՝ և հոլովի, վահանի․ նայ․ նաւ:

Վահանադրօշ: (Նախդրիւ հոլովի․) || ունօղ զվահան, և զդրօշ, ցՙ ղըղայրախ․ կմ վահանակիր․ և կմ վահանաւոր: ըստ այսմ 'ի հին տօմարս․ Խորենացին զվահանադրօշս, որք յանդուգն արշաւանօք պատրաստէին 'ի պատերազմ:

Վահանակ․ ի․ աւ․ աց․ օք: || վահանիկ․ ցՙ փոքրիկ վահան: ռամկօր․ պէշիկ գալխան: Աղթոն: Դարձեալ՝ վահանակ կոչին տմ սալիք, կմ ճարմանդք, ցՙ ղոֆմայք՝ շինեցեալք 'ի ձև փոքրիկ վահանի․ որպիսիք էին այնք, զորս հաստատեաց մովսէս 'ի ծայրս վերջիցն, ցՙ շղթայարգոյ ոսկեղէն կապիցն՝ կցեցելոց յերկուսին անկիւնս տախտակին դատաստանաց․ զորս 'ի ժամ զգեստաւորելոյ քահանայապետին՝ աստի և անտի արկանէին յօղսն հաստատեալս 'ի յուսս վակասին, ցՙ եփուտին․ որով կախեալ մնայր զլանջօք նր տախտակն դատաստանաց: Ելից. 28. 13. և 14: և 39. 16. և 17: Դարձեալ․ վահանակ կոչին մանրիկ և բոլորակ հատուածք թիթղանց․ որպիսիք են այնք, զորս կարեն 'ի քօղ հարսանց․ կմ շարեն 'ի վերջս ձեղենակաց․ ռամկ. ֆուլ:

Վահանակիր․ կրի․ իւ․ աց․ օք: || կրող վահանի, որով մերթ նշենի վահանաւորն, ցՙ նա՝ որ ունի, կմ 'ի գործ ածէ զվահան: ռամկ. գալխանլը: 1. Մնաց. 12. 24: Իսկ մերթ նա՝ որ բառնայ զվահան մեծի ուրուք առաջի նր, զի 'ի ժամու պիտոյից տացէ նմա: 1. Թագ. 17. 41:

Վահանակից․ կցի․ աւ․ կմ իւ․ աց․ օք: || նա՝ որ ընկերակցի ասպարաւ վահանաւորի ումեք 'ի պատերազմի: Եւ յայսմանէ առեալ՝ վահանակից կոչի ո՛և իցէ զօրավիգ․ կմ օգնական, թէ 'ի պատերազմի իցէ, և թէ յայլս մեծամեծս և յաշխատանս: որպիսի է և բառն՝ նիզականակից: Լամբրոն:

Վահանաձուկն. ձկան. ամբ. անց. ամբք: || է ձուկն ինչ տափարակ և բոլորակ՝ ի ձև վահանի. յորմէ և կոչեցաւ վահանաձուկն: տաճկերէն. ղալխան պալըղը:

Վահանակալ: (Նախդրիւ հոլովի.) || վահանաւ վառող. որ զինող: Իսկ մերթ վահանաւ վառեալ. որ զինեալ՝ ՚ի պատերազմի. ռամկ. ղալխանլը: ՚ի հին պատմագիրս:

Վահանաւոր. ի. աւ. աց. օք: || ունող, կամ ՚ի գործ ածող զվահան. և կամ վահանակիր: ռամկ. ղալխանլը: 1. Մնաց. 12. 34: 2. Մակ. 13. 2: Եզեկ. 23. 24:

Վահանափակ. ի. իւ. աց. օք: || վահանաւ պարփակեալ. կամ պատսպարեալ. զի ՚ի հնումն վահանաւոր զօրքն յառաջ անցեալ ՚ի պատերազմի՝ խիտ առ միմեանս կալով՝ պատէին շուրջանակի զբանակն. և ապա զվահանսն առ գլխովք իւրեանց ընդդէմ թշնամւոյն կալեալ՝ իբրև զպղնձի, կամ զերկաթի պարիսպ, ՚ի բաց վանէին զնետսն արձակեալս ՚ի թշնամեաց. և այսպիսի կերպիւ պարփակեալ բանակն, կամ զօրքն, կամ այլ ինչ նման՝ վահանափակ կոչի: Խորէն. գ. գլ. 37: Իսկ պարփակելն, կամ պատսպարելն՝ ասի վահանափակ առնել, և պատսպարիլն՝ կոչի վահանափակ լինիլ: ՚ի հին պատմագիրս: Դարձեալ՝ նշանակէ զվահանաւորն, կամ զմկնդաւորն: ըստ որում յատուկ է այսպիսեաց վահանաւ պատսպարել զանձինս իւրեանց: ՚ի հին պատմագիրս: Նոյն է ընդ սմա անուանելն՝ բառս ասպարափակ:

Վահեվահեան: (Նախդրիւ հոլովի.) || վահագնեան. որ այն է, որ է վահագնի նախնւոյն վահունեաց. կամ որ վերաբերի առ հերակլէս հռչակաւոր դիւցն. որպիսի էր մեհեանն կանգնեալ ՚ի տարօն ՚ի պատիւ նր: Աշգաթ:

Վահունիք. եաց. եօք: (անեզական.) || է ցեղ, կամ զարմ ինչ յազգս հայոց՝ սերեալ ՚ի վահագնէ որդւոյ քաջին տիգրանայ: յորմէ և կոչեցան վահունիք: Խորէն. բ. գլ. 7:

Վահրատիմ. եցայ. եաց. իլ: (ձայնակր.) || Նոյն է ընդ բային վեհերատիլ, զի ասի վահրատիլ. իբրև թէ՝ վեհրատիլ, որ վեհերոտ լինիլ: Սիրաք. 11. 12:

Վաղ. ու. ու. ուց. ՚ի վաղուց: || կանուխ. կամ յառաջագոյն, կամ վաղնջական. և ըստ այսմ ասի, յաւուրս վաղու, կամ ՚ի վաղ ամանակաց. կամ ՚ի վաղուց ժամանակաց, որ է շուտուցմէ: Փիլիպ. 8. 12: Բայց երբեմն վարի ըստ յոգնականին գոյականաբար. և նշանակէ զհին դարս, կամ զառաջին աւուրս, և կամ զկանուխ ժամանակս. ըստ այնմ Խորէն. ա. գլ. 31. Զկարի վաղուց նշ իրս ասասցի յայտնեմ. որ զիրս յոյժ կանուխ ժամանակաց. որ է ասել. զիրս վաղնջականս: Եւ ըստ այսմ վարի երբեմն յոգնականն առաւ իբրև զմակբայ. որպէս, վաղուց ծնանիլ. կամ ՚ի վաղուց կոչել. կամ գուշակել. և այլն. և նշանակէ՝ ՚ի վաղուց հետէ. զոր տեսցես ՚ի նեղքդ: Աշգաթ: և Լամբրօն:

Վաղ: (մակբայ ժամանակական, կամ երադական.) || կանուխ, կամ յառաջ ժամանակաւ, կամ կանխագոյն: ռամկ. տուաջ: Մարկ. 15. 44: և Աշգաթ: Իսկ մերթ վաղ վաղակի, կամ փութանակի, կամ երագութեամբ: ռամկօրէն շուտով. կամ թէզով: 1. Մակ. 1. 20: և 6. 27: Եւ ըստ այսմ ծագի ՚ի սմանէ բառս վաղվաղ, յորմէ և վաղվաղակին:

Վաղաբարբառ: (Նախդրիւ հոլովի.) || վաղագոյն բարբառող, կամ կանխաւ խօսող, կամ պատմօղ: Իսկ մերթ կանխաւ բարբառեցեալ, կամ գուշակեցեալ. և կամ նախասաց. Նարէկ. ղզ:

Վաղագոյն. դունի. իւ. իւ. իւք: (Իսկ մերթ մակբայ.) || կանխագոյն, կամ նախագոյն, կամ յառաջագոյն, ՚ի գիրս Դաւթի անյաղթին: Իսկ մերթ՝ արագագոյն, կամ վաղվաղագոյն, և կամ փութանակի: ռամկ. շուտով: Եբր. 13. 19:

Վաղագաս: || տես զնախագաս:

Վաղադասական. ի. աւ. աց. օք: || նախադասական. կամ այն՝ որ յառաջագոյն դասի, կամ կարգի քան զայլս:

Վաղադասել: || տես զնախադասել:

Վաղաղեկոյց: (Նախդրիւ հոլովի.) || վաղագոյն զեկուցեալ. կամ նախ զեկուցանող. կամ նախագուշակ, և կամ կանխատես: Նարէկ. ղզ:

Վաղաթարշամ. (Նախդրիւ հոլովի.) || վաղագոյն թարշամօղ, կամ կանխաւ թարշամեցեալ, և կամ վաղվաղակի թառամօղ: ռամկ. շուտ թառմօղ: Յոբէ. 1. հատ. ը:

Վաղակատար. || տես զնախակատար:

Վաղակաւոր. ի. աւ. աց. օք: || սուր. կամ սուսեր. կամ նրան. և կամ դաշոյն. և ըստ այսմ ասի՝ մերկացուցանել զվաղակաւորն ՚ի պատենից. կամ զաշն ՚ի վաղակաւորն հատանել. և այլն: ռամկ. Բուր. կամ ղըլըճ: Երեմ. 50. 42: Եզեկ. 21. 3. և 4: Խորէն. գ. գլ. 55: Իսկ մերթ վարի առ իբրև զածական. և նշանակէ՝ սուսերաւոր, կամ սուսերաձիգ. և ըստ այսմ ասի՝ վաղակաւոր դահիճք, կամ արանց նիզակաւորաց, և վաղակաւորաց: ռամկ. Բըլաւոր: ՚ի հին պատմագիրս:

Վաղահաս. ի. իւ. իւ. օք: || կանխահաս, կամ նախահաս. ռամկ. տառաջ հասնող: Իսկ մերթ երագահաս, կամ փոյթ ժամանող: ռամկ. շուտ. կամ թէզ հասնող:

Վաղահասիկ: (Նախդրիւ հոլովի.) || տես զՎաղահաս. Մծբն. ժթ:

Վաղահասուկ: (Նախդրիւ հոլովի.) || տես զկանխահաս: Եսայ. 28. 4: Ովս. 9. 10: Խորէն. գ. գլ. 40:

Վաղահոգակ: (Նախդրիւ հոլովի.) || տես զնախահոգակ: ՚ի հին պատմագիրս:

Վաղամահ: (Նախդրիւ հոլովի.) || տես ՚ի նեղքդ զվաղամեռիկ:

Վաղամեռիկ: (Նախդրիւ հոլովի.) || վաղ կամ կանուխ մեռանող, որ և ասի վաղամահ:

մանց: Իսկ մերթ ընդ բայի չարակցի այսպէս. վաղամեռիկ լինիլ, և նշանակէ՝ վաղագոյն, կմ փութագոյն մեռանիլ. կմ նախ քան զլինելն զհասակ իւր՝ կորուսանել զկեանս: ռամկ. շուտ մեռնիլ. կմ կէնծ մեռնիլ: Իմաստ. 14. 15:

Վաղայ: (միջարկուծ եղկական.) || եղուկ, կմ աւաղ. ըստ այնմ Մծբին. ԺԹ. վայ վաղայ և այնմ, որ ընդ նմա խօսիցի. որ ռամկ. ասի, վայ մեղուկ:

Վաղայարոյց: (Նախդրիւ հոլովի.) || վաղ յառնող, կմ կանուխ յարուցեալ: Բայց սա գրեթէ միշտ ընդ բայի չարակցի այսպէս, վաղայարոյց լինիլ. և նշանակէ յառնել 'ի վաղորդեայն, կմ կանխել Ը առաւօտն, և կմ յառաջել քան զհասարակ ժմ առաւօտուն, կմ աճապն: ռամկ. կանուխ ելնել. 1. Թագ. 29. 10: 4. Թագ. 8. 21:

Վաղանցիկ: (Նախդրիւ հոլովի.) || տե՛ս 'ի ներքոյ զՎաղանցուկ:

Վաղանցուկ: (Նախդրիւ հոլովի.) || այն՝ որ վաղվաղակի անցանէ, կմ ապականի և կորնչի: և Ը այսմ ասի՝ վաղանցուկ ցաւ՝ կմ խոռ. և այլն: ռամկ. շուտով անցնող:

Վաղասասան: (Նախդրիւ հոլովի.) || վաղագոյն սասանեալ, կմ յառաջագոյն դողացեալ, և երերեալ:

Վաղասասանական: (Նախդրիւ հոլովի.) || Նոյն է ընդ վերինոյն: Նորէկ. ղԷ:

Վաղարկեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || յօրէ յօր արկանել, կմ յամեցուցանել զգործ ինչ, զոր յառկապէս կոչեմք յապաղել: ռամկ. օրէ օր ձգել.

Վաղարկութիւն. թեան: || յօրէ յօր արկումն, կմ յամեցուցումն իրիք գործոյ, և կմ յապաղումն:

Վաղաւեր: (Նախդրիւ հոլովի.) || վաղվաղակի աւերեալ, կամ կանխաւ քանդեցեալ, և ապականեալ. և կմ նախ քան զկատարումն եղծեալ և քայքայեալ, որպիսի էր աշտարակն բաբելոնի: Աճգաբ:

Վաղափոխիկ. || տե՛ս 'ի ներքոյ զՎաղափոխուկ:

Վաղափոխուկ: (Նախդրիւ հոլովի.) || նա, որ վաղագոյն փոխի, կմ վաղվաղակի փոփոխի, և այլայլի:

Վաղափուլ: (Նախդրիւ հոլովի.) || վաղագոյն փլեալ, կմ որ վաղվաղակի կործանեալ աւերի. որպիսի էր աշտարակն բաբելոնի: Շնորհալին:

Վաղերբ: || է գործիականն բառս վաղ, զոր անցեալ 'ի կարգի խօսումք:

Վաղ եւս: || տե՛ս զՎաղուց եւս: 'ի վերոյ հոլով. իզ:

Վաղ ընդ փայթ. (մակբայ երկրաչական.) || փայթ ընդ փայթ, կմ արագ արագ. կմ վաղվաղակի. և կմ փութանակի: ռամկ. շուտ շուտ, կմ շուտով, կամ իսկոյն: 'Ի հին պատմագիրս:

Վաղ իմն: (մակբայ ժամանակական.) || վաղ աւուրն, կմ 'ի վաղուց հետէ: ռամկ. շատոնց, կամ շատոնցմէ: ըստ այնմ Ոսկե. 2. հարփ. Ը: Վաղ իմն էք հեռացեալ յայս, և 'ի հաւատոց նը:

Վաղիւ. վաղուէն, 'ի վաղուէ. կմ վաղիւն. վաղուեան, ողջ ամիս, ամսեան: || վաղ, ուեան օր. Ը այսր աւուր հետեւեալ օրն: ռամկ. վաղը. և Ը այսմ փոխանակ ասելոյ. զվաղուեան օրն, կմ վն վաղուեան աւուր, ասի՝ զվաղիւն, կմ վն վաղուէին, որ է վաղուան համար: Ղեւ. 23. 15: Մատ. 6. 34: Յակ. 4. 14: Գործ. 23. 11. և 20: Այնպէս 3. Մակ. 5. 10. փոխանակ ասելոյ. 'ի վաղուեան աւուրն, կմ 'ի վաղիւն պատրաստեցի, ասի՝ զվաղուէի օրն: ռամկ. վաղը: Իսկ երբեմն վարի իբրև զմակբայ, զոր տեսցես զկնի:

Վաղիւ, կմ վաղիւն: (մակբայ ժամանակական.) || 'ի վաղուեան աւուր, կմ 'ի հետեւեալ աւուրն: ռամկ. վաղը: Ելից. 8. 23: և 19. 10: 2. Օրին. 6. 20: 1. Կորն. 15. 32.

Առ Վաղիւ: (մակբայ ժամանակական.) || Նոյն է ընդ վերինոյն: Ելից. 8. 10: և 17. 9: և 32. 5:

'Ի Վաղիւ. կմ 'ի վաղիւ անդր: (մակբայ ժամանակ.) || Նոյն է ընդ վերինոյն: Յոհ. 1. 29. և 35: Գործ. 25. 22. և 23:

Վաղճան: || տե՛ս զՎախճան: Աղուան. 20. 21: Ոսկե. 1. հարփ. ԺԸ:

Վաղճանական: || տե՛ս զՎախճանական:

Վաղճանեմ: || տե՛ս զՎախճանեմ: 1. Թագ. 15. 18.

Վաղնջուց: || ծագի 'ի բառէս՝ վաղ՝ իբրև զյոգնակի սեռական նը, և նշանակէ՝ վաղնջական, կմ վաղեմի, և կմ հին աւուրց. և ըստ այսմ ասի, վաղնջուց կանոն, կմ զրոյց. վաղնջուց ժամանակաց, կմ դարուց. զվաղնջուց գիրս, կմ պատմութիւն. և այլն: ռամկ. հին ժամանակուան: Նորէկ. իէ. և զԷ: Խորէն. Ա. գլ. 23: և Բ. գլ. 48. և 52: Իսկ երբեմն վարի իբրև զմակբայ այսպէս. վաղնջուց սահմանեալ, կմ գրեալ. 'ի վաղնջուց գուշակել, կմ եղեալ. և նշանակէ՝ 'ի վաղ ժամանակաց, կմ յառաջին դարուց, կմ կանխաւ: ռամկ. շատոնցմէ: Խորէն. Գ. գլ. 19:

'Ի Վաղնջուց: || տե՛ս զՎաղնջուց, Ը որում է մակբայ:

'Ի Վաղնջուց հետէ: (մակբայ ժամանակ.) || տե՛ս 'ի վաղուց հետէ: Աճգաբ:

Վաղորդայն. դայնի. կմ դայնոյ. 'ի վաղորդայնէ. իւ. կմ ով: || տե՛ս զՎաղորդեայն: Ովս. 6. 4: և 13. 3: Նորէկ. կէ. և զԷ:

Վաղորդեայն: (Նախդրիւ հոլովի.) || այգ, կմ առաւօտ: Ծննդ. 1. 8. և 13. և 19: Դան. 8. 14: Իսկ մերթ վարի մակբայօրէն, այսպէս, վաղորդեայն առ պատերազմ. կմ յառնել 'ի վաղորդեայն անդր, և այլն. և նշանակէ՝ ընդ առաւօտն. կմ յառաւօտուն: ռամկօր. վաղուօք. կամ առտուանց: Ծննդ. 24. 54: 1. Մակ. 3. 58:

Վաղորդեան. դենի. իւ. 'ի վաղորդենէ: || Նոյն է ընդ բառին վաղորդեայն, որ է առաւօտ. ըստ այնմ Նորէկ. ԽԹ. 'ի վաղոր

Digitized by Google

գենէ առէնջեանն առ մուտս արևուն։ Թ այսմ է և Սաղմ. 45. 6. ուր ասի. ՚ի վաղորդ գենէ մինչև ՚ի վաղորդեան։ որ յոմանս փոքր սաղմոսարանս ասի, ՚ի վաղորդայնէ մինչև ՚ի վաղորդայն. ցն յառաւօտէ յառաւօտ։

Վաղուէեան։ (Նախդրիւ հոլովի.) ‖ վաղնջական. կմ վաղեմի, Թ այսմ ՚ի շարականս. Որ զվաղուէեան աւուր դատմութե լեզուոյն քաղցրացուցեր զձայնակ։ Դարձեալ՝ է սա և առաւօտեան բառիս՝ վաղէմն. զորմէ ՚ի տեղւոջ իւրում ասացաւ։

Վաղուեա, կմ վաղուց եա։ (մակբայ ժամանակակ.) ‖ կարի վաղուց. կմ յոյժ կանխաւ. կմ ՚ի վաղ ժամանակաց, և կմ վաղնջուց։ ռամկ. շատոնցմէ։ Մարկ. 11. 21։ Ղուկ. 10. 13։

Վաղուրեմն։ (մակբայ ժամանակականան.) ‖ յոյժ վաղագոյն, կմ ՚ի վաղուց, կմ կանխաւ, և կմ յառաջագոյն։ ռամկ. շատոնցմէ. կմ շատոնց։ Խորէն. ա. գլ. 5. և 21։ ՚ի վերս հարց. ժա։ և Լամբրոն։ տե՛ս ՚ի բառն Որեմն։

Վաղուց. կմ ՚ի վաղուց։ ‖ տե՛ս ՚ի բառն Վաղ. ըստ որում է անուն։

Վաղուցհետէ։ ‖ տե՛ս ստորև ՚ի վաղուց հետէ։ Իմաստ. 11. 15։ և ՚ի վերս հարց. իզ։

՚ի Վաղուցհետէ։ (մակբայ ժամանակ.) ‖ ՚ի վաղ ժամանակաց և այսր. կմ ՚ի վաղնջուց հետէ, կմ յառաջին դարուց. և կմ կանխաւ։ ռամկ. շատ առջենէ ՚ի վեր, կմ շատոնցմէ. կմ առաջուց։ Եսայ. 48. 7։ Գործ. 26. 5։ Նարեկ. զէ։ ՚ի վերս հարց. ժթ։

Ընդ վաղուց։ ‖ Նոյն է ընդ վերնոյն։ Իմաստ. 19. 15։

Վաղվաղ։ (մակբայ ժամանակ.) ‖ կարի վաղ. կմ վաղվաղակի, կմ փութապէս, կմ արագ արագ։ ռամկ. շուտ շուտ, կմ թեզ թեզ. կմ [illegible]։ Սաղմ. 147. 15։ Իսկ մերթ վարի իբրև զանուն. և Նշանակէ՝ վաղվաղօղ, կմ փութացօղ. և կմ երագ։ ռամկ. աջպորցօղ. կմ շուտ։ Դարձեալ՝ վաղվաղ կոչի այն՝ որ վաղվաղակի անկանի, կամ դիւրաւ կործանի յաղագս անհաստատ լինելոյն. ըստ այսմ Կիւրղի Եզեկ. Գ. տեսար և վաղվաղ երևեցուցէ զհաւատս։

Վաղվաղագոյն. գունի. իւ. իցս. իւք։ (և մերթ մակբայ.) ‖ երագագոյն, կմ փութագոյն։

Վաղվաղակ. ի. աւ. աց. օք։ ‖ տե՛ս զՎաղվաղուկ։ Առակ. 12. 19։

Վաղվաղակի. (մակբայ երագական.) ‖ փոյթ ընդ փոյթ, կմ փութանակի, կմ երագապէս. և կմ առժամայն։ ռամկօր. շուտով. կմ թեզով. կմ թեզմը. Ծնն. 15. 4։ Մատ. 3. 16։

Վաղվաղեմ. եցի. եա. եւ։ (չէզոք.) ‖ վաղվաղակի դիմել ՚ի գործ ինչ, կմ շտապել. կմ ճեպել. կմ երագել, և կմ փութալ։ ռամկ. աջպորել։ Սաղմ. 30. 3։ և 105. 13։ Առակ. 13. 11։ և 20. 25։

Վաղվաղկոտ. ի. աւ. աց. օք։ կամ իւ. իւ. իւք։ ‖ տե՛ս զՎաղվաղուկ։ Սիրաք. 19. 4։

Վաղվաղուկ։ (Նախդրիւ հոլովի.) ‖ վաղվաղակ, ցն վաղվաղօղ. կմ երագօղ. կմ փութացօղ. և կմ նա՝ որ ունի զշտապողական բարս։ ռամկ. աջպորցօղ. կմ թեզիլ։ Առակ. 21. 5։ Իսկ մերթ վարի իբրև ըղ մակբայ. և Նշանակէ վաղվաղակի. քստ այնմ ՚ի վերս հարց. իզ. Ջեռ մի՝ վաղվաղուկ յուրուք վ՚ի ձեռն դնիցեմ։

Վաղր. վաղեր. երբ. երաց. վք։ ‖ տե՛ս ըղ Սակր։ Խորէն. բ. գլ. 43։ և ՚ի հին պատմագիրս։

Վաղրաւոր. ի. աւ. աց. օք։ ‖ տե՛ս զՍակրաւոր։ ՚ի հին պատմագիրս։

Վաղքայլ։ (մակբայ ժամանակ.) ‖ կարի վաղագոյն. կմ յոյժ կանուխ. զի ծագի ՚ի բառէս քայլ, ըստ որում է մակբայ յաճախական. Թ այսմ Ղուկ. 24. 1. Վաղքայլ ընդ առաւօտն եկին ՚ի գերեզման. ցն յոյժ կանուխ ընդ առաւօտն. որ է ընդ արշալուսին։ ռամկ. առաւօտանց կանուխ։ տե՛ս ՚ի բառն քայլ։

Վաճառ. ի. աւ. աց. օք։ կամ ու. ու. ուց. ուք։ ‖ է արմատ վաճառել բային. որով մերթ Նշանակէ վաճառումն։ ռամկ. ծախելը։ Ղևտ. 25. 27. և 29։ 1. Մակ. 13. 49։ 2. Մակ. 5. 14։ Իսկ մերթ վաճառելի իր. և կմ այն ամ, զոր գնեն և վաճառեն. որպիսիք են արմտիք. կմ կերակուրք. զգեստք. կալուածք տեղւոյ. և ամ այլ ապրանքք վաճառականաց։ ռամկ. ծախելու, կմ գնելու բան. կմ [illegible]. կմ [illegible]։ Ծննդ. 42. 1։ Ղևտ. 25. 14։ 3. Թագ. 10. 31։ Առակ. 3. 14։ Իսկ երբեմն վաճառեալ իր. կմ ինչք, զոր արծաթոյ գնեալ են. ռամկ. ծախուած, կմ գնուած բան։ Ծննդ. 42. 19. և 33։ Ղևտ. 25. 25. և 28. և 33։ Դարձեալ Նշանակէ՝ գին. կմ գնումն։ Առակ. 23. 20։ Ոսկէ. 2. հատ. ժթ։ Կիւրղի Եզեկ. զ։ Եւ մերթ վաճառականութիւն. կմ առևտրութիւն վաճառականաց։ ռամկ. ալըշվէրիշ. կմ [illegible]։ 1. Մակ. 13. 42։ Եզեկ. 27. 13։ Մատ. 22. 5։ Դարձեալ Նշանակէ զվաճառանոցն. կմ զշուկայն, որ է հրապարակ գնելոյ և վաճառելոյ. և կմ զտօնավաճառն, որ է հանդէս վաճառականաց. որք ՚ի տեղիս տեղիս հաւաքեալ առնեն սահմանեալ ժամանակաւ զվաճառականութիւն. և Թ այսմ մանաւանդ վարի սորա յոգնականն։ ռամկ. չարշը. կմ պազար. կմ բանայիր։ Եսայ. 23. 17։ Եզեկ. 27. 12. և 14։ Ոսկէ. 2. հատ. լզ։ ՚ի վերս հարց. ժզ։ Իսկ երբեմն ընդ բայի շարակցի այսպէս. վաճառ լինիլ. և Նշանակէ՝ վաճառելի լինիլ. կմ վաճառուիլ։ ռամկ. ծախուիլ։ ՚ի Գիր Գրիգորի Աստուածաբանին։ πρᾶσις.

Վաճառաժողով. ոյ. ով. ոց. ովք։ ‖ ժողով վաճառականաց, որք ժողովեալ ուրեք առնեն զվաճառս։ ռամկօր. պազար. կամ բանայիր։

Վաճառական. ի. աւ. աց. օք։ ‖ առնօղ զվաճառականութիւն. ցն նա՝ որ պարապի առևտրութեն վաճառաց. որպիսիք են նաւաքաւ, որք վնասս յերկրէ յերկիր ածեն՝ յաղագս վաճառելոյ և շահելոյ զնոսա։ ռամկ.

Digitized by Google

պէզիրկեան ։ Ծննդ. 37. 28։ Եսայ. 23. 2։ Յայտ. 18. 3։ Իսկ երբեմն նշանակէ առնել զվաճառօղն ։ ռամկ. բան ծախօղ ։ Եզեկ. 7. 13։ Մատթ. 25. 9։ Մարկ. 11. 15։ Եւ յայսմանէ առեալ մասնաւորապէս վաճառական կոչի գինէվաճառն. կմ պանդոկապետն ։ ռամկ. մէյխանաճի ։ Եսայ. 1. 22։ Դարձեալ, նշանակէ զնա, որ դնոյցեալ 'ի վաճառս' գնէ զպէտս իւր, և ըստ այսմ վաճառական կոչին տնտեսք մեծամեծաց, որք հոգան զամ պէտս տերանց իւրեանց ։ տաճկե. պազարճիպաշի. կմ վէքիլխարճ։ Տոբ. 1. 13։ Դարձեալ. վաճառական կոչին նա' որ վն շահի ընչից պարապի գործոյ իմիք. և ըստ այսմ նոքա, որք յաղագս օգտի անձանց իւրեանց քարոզեն զածային բանն, ասին վաճառական լինել բանին այ ։ 2. Կորն. 2. 17։

Վաճառականութիւն. թեան ։ || վաճառական գոլն. կմ գործ վաճառականին ։ ռամկ. պէզիրկեանութիւն ։

Վաճառակից. կցի. աւ. կամ իւ. աց. օք ։ || կցորդ, կմ ընկեր ուրեք 'ի վաճառականութեան. կմ 'ի միասին պարապօղ տուրև առութեան վաճառաց ։ ռամկ. մէկ տեղ պէզիրկեանութիւն ընող. կմ մէկ տեղ ծախօղ. և կմ օրթախ ։ 3. Մակ. 3. 6։

Վաճառակուր ։ (Նախդրիւ հոլովի.) || չարաչար վաճառեցեալ. կմ մատնեալ 'ի չարաչար վաճառումն. և ըստ այսմ նոքա, որք գերեալք 'ի թշնամեաց բանաբարին և վաճառին, ասին վաճառակուր լինել ։ 'ի հին տպագիրս 'ի բազում տեղիս ։ Իսկ մերթ նշանակէ չարաչար վաճառօղ, կամ մատնօղ 'ի չարաչար վաճառումն. ըստ այսմ Յն որդի, վաճառակուրս անգին գանձին, մն յաղագման որովայնին ։ և զնա ի ասի զլու գայէ. Վաճառակուր գող եղկելին, կորոյս զշահն ընդ վաճառին ։

Վաճառանոց. ի. աւ. աց. օք ։ || տեղի վաճառաց. կմ ուր լինի գնել և վաճառել, որ և տանի շուկայ ։ ռամկօր. չարշը. կմ պազար ։

Վաճառաշահ. ի. իւ. ից. իւք. || շահավաճառ, որ է վաճառական. կմ շահ վաճառաց. և կմ վաճառականութիւն ։ Իսկ մերթ վաճառաշահ կոչի տեղին, ուր լինի վաճառաշահութիւն, կմ կայմի տնտեսավաճառ' ջք բանայէր ։ Եզեկ. 27. 3։ Երբեմն ևս ընդ բայի չարակցի այսպէս. վաճառաշահ լինել. և նշանակէ զվաճառականութիւն առնել. կմ գնել և վաճառել. և կմ շահել զինչն իւրեան' թէ 'ի վաճառս իցէ, և թէ ոչ ։ ռամկ. ճաստըլիլ ։

Վաճառաշահութիւն. թեան ։ || շահ' որ լինի 'ի գնելոյ, և 'ի վաճառելոյ. կամ շահաւէտ վաճառ. և կամ վաճառականութիւն ։ Ոսկէ. 1. համ. ԺԷ ։ Լամբրոն ։ և 'ի վարս հարց. Ե ։

Վաճառապետ. ի. աւ. աց. օք ։ կմ իւ. ից ։ || պետ վաճառականաց. կմ գլխաւոր վաճառական ։ ռամկօրէն. պէզիրկեան պաշի ։ Մծբն. ԺԹ ։

Վաճառատեղի. ղւոյ. եաւ. եաց. եօք ։ || տես զՎաճառանոց ։

Վաճառատուն. ի. աւ. աց. օք ։ || տես զՎաճառանոց ։ Լամբրոն ։

Վաճառափողոց. ի. աւ. աց. օք ։ || փողոց վաճառաց, որ է վաճառանոց. կմ շուկայ ։ ռամկ. չարշը ։ Շնորհալին ։

Վաճառեմ ։ եցի. եա. ել ։ (Ներգործ.) || տալ զինչ այլում գնոյ արծաթոյ ։ ռամկ. ծախել ։ Ծննդ. 37. 28։ Մատթ. 13. 44։ Գործ. 4. 34։ Եւ յայսմանէ առեալ երբեմն նշանակէ' մատնել զինչ 'ի ձեռս այլոց ։ ըստ այսմ 1. Թագ. 23. 7. Վաճառեաց զնա Ած 'ի ձեռս իմ ։ Եւ Եսթ. 7. 4. տաի. Վաճառեցաք 'ի կորուստ ։ ըստ այսմ է և 2. Օրին. 32. 30։

Վաճառումն. ման. մամբ. մանց. մամբք ։ || տալն այլում զիր ինչ գնոյ արծաթոյ ։ ռամկ. ծախելը ։

Վայ. ոյ. ով. վայք. ոց. ովք ։ կմ ի. իւ. ից. իւք ։ || եղկութիւն. կմ աւաղումն. կմ կոծ ողբոց. կմ աղէտք. և կմ թշուառութիւն. ռամկ. ևս վայ. Մատթ. 23. 29։ Յայտ. 9. 12։ և 11. 14։ Եւ Ոսկէ. 2. համ. ԺԸ. տաի' վայ 'ի վր վայոյ լինելոյ թ թշուառութիւն 'ի վր թշուառութեան ։

Վայ ։ (միջարկութիւն եղկանք.) || աւաղ. կմ եղուկ. և կմ ափսոս ։ ռամկ. ևս վայ ։ Արդ՝ սա երբեմն վարի բացարձակ, որգոն. վայ, ոյք ելանեն. կմ վայ' որ տայ ցնայր իւր ։ Եսայ. 31. 1։ և 45. 10։ Իսկ մերթ յարի 'ի տրական հոլովս, զոր օրինակ, վայ ինձ, վայ քեզ. և այլն ։ Թուոց. 21. 29։ Մատթ. 11. 21։ Եւ մերթ 'ի պարառականն, զոր օրինակ, վայ զինև, կմ վայ զնովաւ. և այլն ։ Դարձեալ' վարի երբեմն էական բայիւ, այսպէս. վայ է ինձ, վայ է նմա, և այլն ։ Յոբ. 10. 15։ 1. Կորն. 9. 16։ Եւ ևս երբեմն վարի կրկնելով այսպէս' վայ վայ. և նշանակէ զյաճախութիւն վայոց ։ ռամկ. վայ ձէղուն ։ Եզեկ. 16. 23։ Յայտ. 18. 10։

Վայել ։ || ոչ հոլովի, այլ վարի իբրև զգի մաղուրդ ընդ բայի չարակցելով այսպէս' վայել է, վայել էր. և այլն ։ և նշանակէ' վայելուչ է. կմ պատշաճ է. կմ անկ է ։ ռամկ. լայէխ է. կամ փիտիշէր է ։ Իսկ 'ի յոգնականումն հոլովի' վայելք վայելից. զոր տեսցես 'ի կարգի իւրում ։

Վայելեմ. եցի. եա. ել ։ (Ներգործ. կմ չէ զոք.) || հեշտութեամբ ժառանգել. կմ փափկանալով ունել զբարի ինչ. և կմ բերկրութեամբ և զմայլմամբ 'ի կիր առնուլ զհեշտալի ինչ ։ ռամկ. պէֆ+ պէֆյայ ընել. կամ տահաբ խապուլլանմիշ ըլլալ ։ 1. Կորն. 7. 31։ 1. Տիմ. 4. 3։ Արդ՝ բայս այս ըստ մեծի մասին պահանջէ զներգոյական խնդիր, այսպէս. վայելել 'ի բարութեան. կամ 'ի նորաճաշակսն. և այլն ։ Տիտ. 3. 8։ Իմաս. 2. 6։ և 16. 3։ Եւ մերթ նաև զբացառականն, որ գոն, 'ի պտղոյ, կմ 'ի սեղանոյ տանի վայելել ։ 1. Կորն. 9. 13։ 2. Տիմ. 2. 6։ Երբեմն ևս զգործիականն. ըստ այնմ 1. Կորն. 9. 12. Եթէ այլք ձեռամբ իշխանութեանս վայելեն ։ Եւ Ոսկէ. 1. համ. ՀԷ. տաի' Զինչ զբանիչելի

է փառք 'ի մարդկանէ , որով մանկունք կաքաւիչք վայելէին : Դարձեալ, վարիսա երբեմն իբրև զգիմաղարկ · զոր առեալս զկնի :

Վայելեցուցանեմ · եցուցի · եցո · անել : (անցող ·) || տալ ումեք վայելել · կմ՛ պատճառ լինել վայելելոյ : Նարեկ · 'Ի Ծննդ · Երգոց : Իսկ մերթ նշանակէ՝ վայել առնել · կմ՛ վայելուչ գործել : ռամկ · վայելի անել :

Վայելէ · վայելէր · վայելեն · և այլն : (դիմազուրկ ·) || վայելչանայ · կմ՛ պատշաճի : կմ՛ յարմարի · և կամ անկ է : ռամկ · վայելի է : Սաղմ · 32 · 1 : Առակ · 19 · 10 : Եբր · 2 · 10 : և 7 · 26 :

Վայելուճած · ոյ · ով · ոց · ովք : || այն նոյն, որ վայելեալ լինի յումեքէ · կմ՛ վայելք · և կմ՛ վայելչութի : 'Ի Հարս հարց · Ե : Իսկ մերթ վայելումն, որ է հեշտալի ժառանգութիւն երկիր : ռամկ · վէֆֆ · կմ՛ ոէֆայ : 'Ի Գիրս թագ Բն · անյադ Բին :

Վայելուչ : (Նախդրիւ հոլովի ·) || այն նոյն, որ վայելէ ումեք · կմ՛ պատշաճ · կմ՛ յարմար · և կմ՛ պատկան : ռամկ · վայելի : Իսկ մերթ գեղեցիկ · կմ՛ շքեղ · կմ՛ շքնաղ · կմ՛ ազնիւ · և կմ՛ պատուական : ռամկ · աղուոր · կմ՛ օրուն : 2 · Թագ · 23 · 1 : Սաղմ · 127 · 3 : Իմաստ · 13 · 11 :

Վայելչաբար : (մակբայ որակակ ·) || վայելուչ կերպիւ · կմ՛ գեղեցկապէս · կմ՛ յարմարաբար · կմ՛ արժանապէս · և կմ՛ յիրաւի : Ոսկէ · 2 · հռով · ԽԹ :

Վայելչագեղ : (Նախդրիւ հոլովի ·) || գեղեցկութ՟ վայելչացեալ · կմ՛ ունող զվայելուչ գեղ · և կմ՛ չքնաղագեղ : Նարեկ · 'Ի գով · առաքելոց :

Վայելչագեղութիւն · թեան : || վայելուչ գեղեցկութիւն · և կմ՛ չքնաղ գեղ :

Վայելչադիտակ : (Նախդրիւ հոլովի ·) || տես զԳեղեցկադիտակ :

Վայելչագոյն · գունի · իւ · իւք · իւք : || առաւել վայելուչ · կմ՛ գեղեցկագոյն · կմ՛ պատշաճագոյն · և կմ՛ յարմարագոյն : Ոսկէ · 2 · հռով · ԼԹ :

Վայելչագոյն · գունոյ · կմ՛ ի · իւ · իւ · իւք : || ունող զվայելուչ գոյն · կամ զազնիւ երանգ :

Վայելչազարդ : (Նախդրիւ հոլովի ·) || տես զԳեղեցկազարդ :

Վայելչազարդեմ · եցի · եա · ել : (Ներգոր ·) || վայելչազարդ առնել · կմ՛ գեղազարդել :

Վայելչական · ի · աւ · աց · օք : || այն նոյն, որ է վայելուչ · կմ՛ վայելչակերպ · կմ՛ պատշաճաւոր · և կմ՛ յարմարագոյն : Խորէն · Ք · ար · 62 : Նարեկ · ղէ :

Վայելչականութիւն · թեան : || վայելչական գոլն · կմ՛ վայելչութիւն · և կմ՛ գեղեցկութիւն : Նարեկ · 'Ի Ծննդ · Երգոց :

Վայելչակերպ : (Նախդրիւ հոլովի ·) || տես զՉքնաղակերպ : Նարեկ · ղԹ :

Վայելչակից · կցի · աւ · կմ՛ իւ · աց · օք : || կցորդ ումեք 'ի վայելչութե · կմ՛ ունող ընդ այլում զնոյն վայելչութի : 'Ի Գիրս Գրիգ · [illegible]

Վայելչահասակ : (Նախդրիւ հոլովի ·) || ունող զվայելուչ հասակ · կմ՛ որոյ դիրք մարմնոյն են գեղեցիկ :

Վայելչահիւս : (Նախդրիւ հոլովի ·) || տես զԳեղեցկահիւս :

Վայելչանամ · ացայ · ցիր · անալ : (Ընդմիջ ·) վայելուչ լինել · կմ՛ շքեղանալ · և կմ՛ գեղեցկանալ : Իսկ մերթ՝ վայելել ումեք · կմ՛ պատշաճիլ · և կմ՛ յարմարիլ : ռամկ · վայելի ըլլալ · ըստ այնմ Ոսկէ · 1 · հռով · ԻԵ : Ը որում և որով հօր փառք վայելչանայ , քո վայելէ :

Վայելչավառ : (Նախդրիւ հոլովի ·) || այն նոյն, որ վայելչապէս վառի · կմ՛ գեղեցկափայլ : Աղթոբ :

Վայելչատերև : (Նախդրիւ հոլովի ·) || ունող զվայելուչ տերև, կմ՛ զգեղեցիկ սաղարթ : Նարեկ · ղԶ :

Վայելչացուցանեմ · ացուցի · ացո · անել : (անցող ·) || վայելուչ առնել · կմ՛ գեղեցկացուցանել · և կմ՛ գեղեցկազարդել : 'Ի շարականոցն :

Վայելչափայլ : (Նախդրիւ հոլովի ·) || տես զԳեղեցկափայլ :

Վայելչութիւն · թեան : || շքեղութիւն · կամ չքնաղութիւն · կմ՛ գեղեցկութիւն, և կմ՛ գեղազարդութիւն : Սաղմ · 25 · 8 : Իմաստ · 5 · 17 : 1 · Կորն · 7 · 31 : Իսկ մերթ վայելչանալն ումեք · կմ՛ պատշաճողութիւն · կմ՛ յարմարութիւն : Երբեմն և ս վայելք · կմ՛ վայելուճածք · և կամ վայելումն : Կիւրղէ Ծննդ · ԺԶ : Եւ 'ի Ղ · ասի · Զորս տէր հաստատեաց 'ի վայելչութիւն հաւատացելոց , քո 'ի վայելումն :

Վայելք ·ից · իւք : (անեզական ·) || վայելուճածք · կմ՛ վայելումն · և ըստ այսմ ասի՛ եւ մեզ տր զաշխարհս 'ի վայելս · կմ՛ պատրաստեաց զմարմնաւորս 'ի վայելս հաւատացելոց · և այլն : Շնորհալին : և Լամբրոն : Իսկ մերթ նշանակէ զվայելելն իրս · կամ զվայելչութիւս · և ըստ այսմ ասի · վայելք աշխարհի · կմ՛ տարփանք վայելելոյն արքայութե · և կմ՛ սատանայ զվայելս անտեսից : Նարեկ · ԺԲ · և Ղ · և ՂԶ : և 'Ի Գովնուս : Լամբրոն :

Վայեմ · եցի · եա · ել : (չէզոք ·) || վայ կարդալ · կմ՛ վայ դոչել : ռամկ · վայ ընէլ · կմ՛ վայ կանչել : 4 · Թագ · 6 · 5 : 'Ի Հարս հարց · ԺԳ ·

Վայթեմ · եցի · եա · ել : (Ներգործ ·) || 'ի վայր հեղուլ · կմ՛ յերկիր հոսել : ռամկ · վարթափել · կմ՛ վար թափել : Ըստ այնմ 'ի հին թարգմանիչս · 'ի վայր զփորոտին վայթեալ սատանայէր :

Վայթիմ · եցայ · եայց · իլ : (Ձայնակր ·) || 'ի վայր հեղանիլ · կմ՛ յերկիր հոսել · և ըստ այսմ ասի՝ վայթիլ որովայնի, կմ՛ լոյս : ռամկ · վարթափիլ · կմ՛ վար թափիլ : 2 · Թագ · 20 · 10 : և 'Ի հին թարգմանիչս :

Վայթիւն : (Նախդրիւ հոլովի ·) || վայթումն , այս 'ի վայր հեղումն · կմ՛ յերկիր հոսումն :

Վայթումն · թման · մամբ · մանց · մամբք : || Նոյն է ընդ վերնոյն :

Digitized by Google

Վայլումն: (Նախագրիւ հոլովի.) || վայումն. դ վայ կարդացումն. կամ վայ գոչումն: ռամկ. վայնասուն: Իսկ մերթ՝ եղկութիւն. կմ աշխարումն. կմ թշուառութիւն, և կմ աղէտ:

Վայր. ի. աւ. աց. օք: կմ իւ. ից. իւք: || տեղի: ռամկ. փեղ: 2. Մակ. 10. 14: և 12. 21: Սաղմ. 22. 2: Եւ մերթ միջոց ժամանակի. կմ պահ: Եւ ըստ այսմ երբեմն յարի 'ի բառս ինչ, և զնշանակութիւն իւր պէսպէս կերպիւ այլայլէ. զոր օրինակ:

Յայսմ վայրի: || դ աստ. կմ աստէն. և կմ յայսմ պահու: ռամկ. հոս. կմ աս փեղը. կմ աս տեղս. 2. Մակ. 9. 11: և 15. 40:

Մինչև ցայս վայր: || դ մինչև ցաստ. կմ մինչև ցայժմ. կմ մինչ ցայժմ: ռամկ. ինչուան հոս: 1. Մնաց. 9. 18: Երեմ. 51. 64:

'Ի մի վայր: || դ 'ի միասին. կմ միահետ. կմ 'ի մի տեղի: ռամկօր. մէկ փեղ: 1. Մակ. 5. 27: Խորէն. գ. գլ. 58:

Յոր վայր և երթիցես: || դ ուր և գնայցես: ռամկ. ուր որ երթաս: Մատթ. 8. 19: Ղուկ. 9. 57: Դարձեալ նշանակէ զկողմն: ռամկօրէն դի: և ըստ այսմ փոխանակ ասելոյ զաշաց՝ յայս կողմն, և յայն կողմն շրջշրջիլ, ասէ՝ զվայրօք յածիլ: ռամկօրէն աստին անդին պտըտիլ: Առակ. 17. 24: Իսկ երբեմն նշանակէ սահման. կմ կէտ, ուր ժամանակաւ՝ դադարումն լինի յընթացից, և 'ի նմանեաց: ըստ այնմ 1. Մակ. 6. 11:

Յոր վայր նեղութեց հասանիս, դ յոր սահման: Բայց մանաւանդ որպէս ասէն, վայր կոչին դաշտք, և ամ բաց և անշէն տեղիք լերանց, հովտաց, ագարակաց, և այլոց նմանեաց. յորս եղեալքն վայրենիք կոչին: ռամկ. եապան փեղ: Ծննդ. 2. 5: Ղևտ. 26. 20: Եզեկ. 39. 10: Մատթ. 6. 30: Եւ յայսմանէ առեալ՝ փոխանակ ասելոյ՝ դաշտն, կամ մեղր վայրենի, ասէ՝ 'ի վայրէ. ոչ փոխանակ ասելոյ՝ արհամարհեցի, ասէ յարհամարհեայ: 3. Մակ. 4. 8: Ողբ. 1. հատուած: Իսկ 2. Մակ. 9. 23. ուր ասէ. բայց և յայն վայր հայեցայ. նշանակէ յայն իր՝ կմ յայն բան: Դարձեալ նշանակէ ստորև՝ ստոր. և այս 'ի բարդութե. և 'ի յունականն զնախդիրս, 'ի, այսպէս, 'ի վայր: ոչ տեսցես 'ի ներքոյ:

'Ի Վայր: (վերի նորին ըմակբայ.) || 'ի ստոր. կմ 'ի խոնարհ. կմ յերկիր. և ըստ այսմ ասէ 'ի վայր քարշել. կմ 'ի վայր արկանել: ռամկ. վար: 2. Մակ. 12. 35: Յոբ. 9. 27: Իսկ Եսայ. 23. 8. ուր ասէ. Մի՞թէ 'ի վայր ինչ էր. նշանակէ ասել, միթէ ստորակայ, կամ նուաստ ինչ էր:

'Ի Վայր և 'ի վեր: || տես 'ի բառն վեր 'ի վայր:

Վայր մի. կմ առ վայր մի: (մակբայ ժամանակական.) || փոքր մի. կմ սակաւ մի ժամանակ: ռամկ. քիչ մը. կմ պահ մը: Հռութ. 4. 1: Տոբ. 5. 9: և 11. 14:

Վայրաբեր. ի. իւ. աց. օք: || բերող, կմ հակեցուցանող 'ի վայր. ռամկօր. վար բերող:

Իսկ մերթ բերեալ, կմ հակամիտեալ 'ի վայր. և կմ վայրահակ: ռամկ. վար ինկած. կմ վար ծռած: Մերթ և ըստ բայի շարակցի այսպէս, վայրաբեր լինել. և նշանակէ վայրաբերել:

Վայրաբերեմ. եցի. եալ. եա. ել: (Ներգ.) || բերել, կմ ածել 'ի վայր. կմ 'ի վայր խոնարհեցուցանել. և կամ իջուցանել: ռամկ. վար բերել: Նարեկ. ձէ. և կթ:

Վայրաբերիմ. եցայ. եաց. իլ: (Ձայնակր.) || 'ի վայր բերիլ. կմ 'ի վայր գնալ, և կմ իջանել: 'Ի շարականս: և 'ի վարս հարց. Ժ: Իսկ մերթ վայրահակ լինել. կմ 'ի վայր խոնարհիլ:

Վայրաբնակ. ի. աւ. աց. օք: || բնակող 'ի վայր, դ 'ի ստորին տեղւոջ. կմ յերկրի. որոյ ներհակն կոչի՝ վերնաբնակ: ռամկ. վարը բնակող. կամ վարը նստող: Իսկ մերթ նշանակէ զնա, որ բնակի 'ի վայրի, դ յանշէն տեղիս լերանց, կմ դաշտաց. և կմ յանապատս: Դարձեալ նշանակէ ըզ բնակարանն կազմեցեալ 'ի վայրի. կմ 'ի բացի. որպիսիք են խըշեմանք, որք յանապատս. և ըստ այսմ վարի առրա մանաւանդ յոգնականն. 1. Մնաց. 17. 5: Բայց մինչ ասէ՝ վայրաբնակ տեղի՝ նշանակէ անշէն տեղին. կմ անապատն: ռամկ. եապան փեղ:

Վայրաբնակիմ. եցայ. եաց. իլ: (Ձայնակ.) || 'ի վայր բնակիլ. կմ ունել զբնակութիւն 'ի ստորին տեղւոջ: 'Ի շարականս:

Վայրագ. ի. աւ. աց. օք: || ագանող 'ի վայրի, դ բնակող յանշէն տեղիս, կմ շրջող յանապատս, որ և ասի վայրենակեաց: ռամկ. եապան փեղ բնակող. կմ լեռները նստող. և կմ լեռնցի: Ծննդ. 16. 12: և 25. 27: Եւ յայսմանէ առեալ՝ երբեմն նշանակէ վայրենաբարոյ. կմ վայրենամիտ. կամ [illegible]. կմ խստասիրտ. և կմ անգութ և անողորմ. Ըստ այնմ Շնորհալւոյն յողբումն եդեսիոյ. Քանզի զփարատեալն եգիպտացին, խուժ և վայրագ սրտիւ եղեր:

Վայրագամիտ. մտի. իւ. աց. օք: || յօժարեալ 'ի վայրագութիւն. կմ վայրենասէր. կմ վայրենաբարոյ. կմ գազանամիտ. կմ խուժադուժ. և կմ անգութ և անողորմ: ռամկ. եապանի. կմ խօշէաք. կմ զալըմ:

Վայրագայիմ. եցայ. եաց. իլ: (Ձայնակր.) || 'ի վայր գալ. կմ վայրաբերիլ. կմ իջանել: ըստ այնմ 'Ի Գիրս Ծծին Խոսրովու: Նոյնպէս և մաղաղջն վայրագայիլ սախալին:

Վայրագանամ. ացայ. ացեր. ալ: (ընդմիջ.) || ագանիլ 'ի վայրի. դ 'ի բաց և յանշէն տեղւոջ, կմ յանապատի. և կմ վայրենակեաց լինել: 'Ի հին պատմագիրս: Իսկ մերթ վայրենաբարոյ լինել. կմ գազանանալ. կմ դժնդականալ. կմ վայրենանալ. և կմ բրտանալ: ըստ այնմ 'Ի վարս հարց. Ը: Հերգելոյն վայրագացեալ երկար զարխուծու, դ վայրենացեալ:

Վայրագասուն: (Նախագրիւ հոլովի.) || որ նեալ 'ի վայրի ագանելով. կմ կեցեալ

և զարգացեալ 'ի լերինս՝ և յանապատս․ որպիսիք են գազանք․ կամ երէք ։ Նարէկ. խզ ։

Վայրագաւիթ․ գաւթի․ աւ․ աց․ օք ։ || սաստ րին գաւիթ, զոր շինեն առաջի շինուա ծոց շրջապատեալ որմով, որ ըստ մեծի մասին է անյարկ, այլ բաց և անծածք ։ ռամկ. բօլ ։ Եզեկ. 47. 1 ։

Վայրագնաց ։ (Նախդրիւ հոլովի․) || գնա ցօղ ընդ լերինս․ կմ ընդ անապատս, կմ վայրենակեաց ։ Իսկ մերթ՝ ունօղ զվայ րենի գնացս․ կմ վայրենաբարոյ․ կամ ցոփակեաց, և կմ գժնէաբարոյ ։ Յայսմ աւուրս ։

Վայրագութիւն․ թեան ։ || վայրենակեցութիւն, կմ վայրենաբարոյութիւն․ կմ գազանութիւն․ կմ գժնդակութիւն․ կմ սոսկութիւն․ և կմ բրտութիւն ։ Նարէկ. ժա. ը. հա. և ղբ ։ Լամբրոն ։

Վայրախօս․ ի․ աւ․ աց․ օք ։ || տե՛ս զՎայրա պարախօս ։

Վայրակախ ։ (Նախդրիւ հոլովի․) || 'ի վայր կախեցեալ․ կմ վայրահակ ։

Վայրակեաց ։ || տե՛ս զՎայրենակեաց ։

Վայրակոր ։ (Նախդրիւ հոլովի․) || տե՛ս 'ի ներքոյ զՎայրահակ ։

Վայրահակ ։ (Նախդրիւ հոլովի․) || 'ի վայր հակօղ․ կմ յերկիր կորացուցանօղ ։ Իսկ մերթ՝ 'ի վայր հակեալ․ կմ 'ի վայր թեքեցեալ ։ ռամկ. վար ծռած ։

Վայրահայեաց ։ (Նախդրիւ հոլովի․) || 'ի վայր հայեցօղ․ կմ նա՝ որ 'ի խոնարհ նայի ։ ռամկ. վար նայօղ ։

Վայրանցեալ․ ելոյ․ ով․ ոց․ ովք ։ || 'ի վայր անցեալ․ կմ 'ի ստորև գտեալ․ կմ ստո րակարգեալ․ և կմ իջեալ ։

Վայրապար ։ (մակբայ․ և մերթ վարի իբ րև զանուն․) || ընդ վայր․ կմ ընդ ու նայն․ կմ զուր․ կմ տարապարտուց ։ ռամկ. ֆուճ․ կմ պօշ փէշըր․ և կմ նաֆիլէ ։ Հռօմ. 13. 4 ։ Յոբ. 1. 26 ։ և 4. 5 ։ Իսկ մերթ՝ լոկ․ կմ սոսկ․ կմ միայն․ և կամ անուամբ և եթ ։ ռամկ. սալթ ։ Ոսկէ. 1. հատ. իա. և իգ. և խգ ։ ըստ այսմ է և Իմաստ. 16. 27. ուր ասի, Ձիւն որ 'ի հրոյն ոչ ապականիւր, վայ րապար 'ի դոյզն ճառագայթից արեգա կան ջեռեալ հալիւր․ այլ լոկ արեգական ճառագայթիւք ։ Երբեմն և՝ աւելորդ․ կմ անհարկի․ և կմ անպիտան ինչ․ ըստ այնմ Ոսկէ. 1. հատ. ը. Եւ զոր վայրապար պարտ էր ունիլ, ա՞յլ զկարեւոր իրս պատ ուէեւք ։ Դարձեալ նշանակէ հարևանցի․ կամ վեր 'ի վերոյ․ կմ ըստ գլխովին․ կմ անզգուշութեամբ․ կմ անհոգաբար․ և կմ անխոհեմաբար ։ ռամկ. ըէճէ+էլի․ կմ ըտտափ ջէլէլէնէ․ կմ հաճախօղը ։ Ղևտ. 21. 4 ։ Թուոց. 4. 20 ։ Ոսկէ. 1. հատ. ժբ. ժդ. ժզ ։ ըստ այսմ է և 2. հատ. է. ուր ասի. Զի վայրապար ձեռօք առնուլն՝ նշան է աներկիւղութեան, այլ անզգոյշ ձեռօք առնուլն ։

Վայրապարախօս ։ (Նախդրիւ հոլովի․) || վայրապար խօսօղ․ կմ ունայնաբան․ կմ դատարկաբան․ և կմ բարբանջօղ ։ ռամկ. ֆուճ, կմ պօշ փէշը խօսօղ ։ ատաձկ. լաֆզադան ։ Մծբն. ժթ ։

Վայրասահ․ ի․ իւ․ ից․ իւք ։ || 'ի վայր սա հօղ․ կմ 'ի վայր անկանօղ ։

Վայրասուն ։ || տե՛ս զՎայրագասուն ։ Մծբն. ժզ ։

Վայրավատին ։ (Նախդրիւ հոլովի․) || խախ տեալ․ կմ դրդուեալ․ կմ տատանեալ, կմ անկայուն, կմ անհաստատ ։ ռամկօր. խախուտ, կմ ըէմըլըին, կմ փէփէրէին ։ և ը այսմ սաի 'ի ճառս ինչ․ Հաշտեալ եմ ը քեզ տատանեալք, և տատանեալք, և վայրավատինք ։ և զնոյն ասի՝ տատանե ցաւ 'ի ձեռն որդւոցն, և վայրավատին եղև 'ի ձեռն մհկացն ։ Իսկ մերթ՝ այար և անդր ընկեցեալ․ կմ խանգարեալ և ցն դեալ․ կմ շփոթ և անկարգ․ և կմ խառ նափնդոր․ ռամկ. խարաս․ կմ աշտն ճնու թուռ․ և ը այսմ սաի՝ 'ի ճառս ինչ․ Ցիր և վայրավատին կայ տմ, խառն հանդերձք․ և զէնն, և ոսկին, և արծաթն․ և այլն ։

Վայրարկու․ ուի․ աւ․ աց․ օք ։ || 'ի վայր ար կանօղ․ կմ 'ի վայր ընկեցօղ ։ ռամկօր. վար ջգօղ ։ Իսկ մասնաւորապէս առեալ նշա նակէ՝ զերասանս, որ է նառոյ տեղին, ըստ որում ընդ նա 'ի վայր թօղեն յա ճեւուածք որովայնին ։ ռամկ. նափոսյ փէշը՝ ըստ այնմ Յմ․ որդէն․ Նախատանաց լցեալ տանջեալ, ընդ վայրարկուն փողով հո սեալ ։

Վայրափակ ։ (Նախդրիւ հոլովի․) || փա կօղ զվայր, այլ զտեղի, կմ պարփակեալ 'ի տեղւոջէ, կմ պարագրեալ. կմ սահմա նաւոր ։ 'Ի շարականս ։

Վայրաքարշ ։ (Նախդրիւ հոլովի․) || 'ի վայր քարշօղ. կմ 'ի վայր հակեցուցանօղ, և կմ յանարգս և 'ի նուաստս յօժարեցուցանօղ. որպիսի է աշխարհ, և տմ հեշտութիւնք ։ 'Ի վարս հարց. իղ ։

Վայրաքարշութիւն․ թեան ։ || 'ի վայր քար շութիւն, կմ 'ի վայր հակումն, կմ յօժարու թիւն առ երկրաւորս, կմ իղձք հակեցու ցիչք յանարգ փափկութիւնս կենցաղոյս․ և ըստ այսմ սաի՝ մարմնական վայրաքար շութիւն ։ Լամբրոն ։ Եւ յայսմանէ առեալ երբեմն նշանակէ՝ անարգութիւն, կմ նուաս տութիւն, կմ խոնարհութիւն, և կմ յառա թիւն․ ըստ այնմ Ոսկէ. 1. հատ. ժգ. Բայց դու մի՛ իրս արհամարհ վայրաքարշութեան համարիր ։

Վայրեկութիւն․ թեան ։ || 'ի վայր եկումն․ կմ 'ի վայր հոսումն, կմ զառ 'ի վայր ըն թացք ջրոց և նմանեաց ։ Նարէկ. կբ ։

Վայրենաբարոյ․ ի․ իւ․ ից․ իւք ։ || ունօղ զվայրենի բարս․ կմ ունեալ բրտութիւն 'ի վայրի տեղւոջ, կմ որոյ կենաքն են զա զանական, կամ խուժադուժ, կմ գժն դակ, կմ սոսկ, և կմ ամարդի ։ ռամկօր. ւէհշի․ կմ կոպիտ ։ Նարէկ. խզ ։ և Շնորհալին ։

Վայրենագոյն․ գունի․ իւ․ ից․ իւք ։ (իսկ մերթ վարի իբրև զմակբայ․) || առաւել վայրենի, կմ գազանագոյն, կմ գժնդա կա-

կարգոյն. և կմ ժամանակոյն: 3. Մակ. 7. 3: Կիւրղի եղեմ. ժն:

Վայրենական. ի. աւ. աց. օք: || առ'ս զՎայրենի: Նարեկ:

Վայրենակեաց. կեցի. իմ. աց. օք: || 'ի վայրի կեցող, կմ զվայրենական վարս վարող. կմ 'ի լերինս և յանապատս բնակող, որ և ասի՝ վայրագ: ռամկ. լեռնըննող, կմ լեռնցի:

Վայրենակեր. ի. աւ. աց. օք: || կերող զվայրենի գազանս, կմ որ ուտէ զերէս: Խորէն. յաղխարհագր:

Վայրենամիտ: (Նախդրիմ հոլովի.) || առ'ս զՎայրագամիտ: Աշգաւե:

Վայրենանամ. ացայ. ացեր. աւ: (ընդմիջ.) || վայրենի լինել, կմ գազանանալ, կմ դժնդականալ. կմ ժանտանալ. և կամ խիստ և բիրտ լինել: ռամկ. լեռնցի, կամ նողեփ, կմ եաղանի ըլլալ: 2. Մակ. 13. 9: և 'ի Հարս հարց. ժը: Ոսկե. 1. հար. իե:

Վայրենուրեա: (Նախդրիմ հոլովի.) || Նա՝ որ ունի զվայրենի երեսս, կմ զդժնդակ դէմս, կմ դժնէատեսիլ, և կմ չարադէմ: Նարեկ. ժը:

Վայրենի. ենւոյ. եաւ. եաց. եօք: || այն ամ, որ լինի, կմ գտանի 'ի վայրի. ք յանշէն տեղիս. ոչ 'ի դաշտս, 'ի լերինս, յանապատս. և այլն. որոյ ներհակն կոչի ընտանի. ռամկ. եաբանի. և ըստ այսմ ասի՝ վայրենի ծառ, կմ մեղր, և այլն: Յօբ. 30. 7: Մատ. 3. 4: և 6. 28: Հռոմ. 11. 24: Եւ յայս մանէ առեալ երբեմն ևս նշանակէ վայրագ. կմ դժնդակ, կմ ամեհի, և կամ խիստ, ռամկօր. վաւշի. և ըստ այսմ ասի՝ վայրենի գազան, կմ ազգ, կմ բարք. և այլն: Յօբ. 5. 22: Եսայ. 13. 21: Նարեկ. իե: Երբեմն ևս սոսկ, կմ բիրտ, կմ այլանդակ, կմ անշնորհ, կմ անկարգ, և կամ խոպան: ռամկ. նողեփ, կմ եօղան, կմ խարաղ: ըստ այնմ Խորէն. ա. գլ. 8. Եւ ոչ այլ ինչ օրինաւոր, այլ խառն 'ի խառն ամ, և վայրենի:

Վայրենութիւն. թեան: || վայրենի գոլն, կմ վայրենաբարոյութիւն. կմ գազանութիւն, կմ դժնդակութիւն, կմ սոսկութիւն, և կմ աղմարդութիւն: ռամկ. լեռնցի ըլլալը. կմ նողեփութիւն, կմ ղալընձութիւն: Նարեկ ժե: և 'ի Գէորգ Գրիգորի ոծափ:

Վայրժեար. կմ վարժեար: (Նախդրիմ հոլովի.) || ծառի 'ի բառէս վարժ, 'ի ձեռն մանկանս եար, որ է յաղնակամապացուցիչ, ոչ յայտ է 'ի բառէս բարձինեար: Ունակ նշանակեն սովոր վարժք. կմ վարժիչք. և կմ վարժապետք. ըստ այնմ 'ի հին պարմաագիրս, ընդոր զերկիրն ծածկեաց վանիւք, և գնէր անդ վայրժեար. ուր առանձ 3, գնի առ 'ի զարդ, ոչ 'ի բազում տեղիս ասացած:

Վայրիկ: (Նախդրիմ հոլովի.) || փոքր վայր, կմ փոքրիկ տեղի: ռամկ. պզտիկ տեղ: Իսկ մերթ՝ փոքր պահ, կմ դոյզն ժամանակ. և ըստ այսմ գրեթէ միշտ վարի առ ընդ այլում բառի, զոր տեսցես 'ի ներքոյ: 'Ի սմանէ ծագի բառս վայրկեան, ող գիցի 'ի ստորև:

Վայրիկ մի: (մակբայ ժամանակ.) || փոքր մի ժամ, կմ սակաւ մի ժամանակ. ռամկ. թէւնդը, կմ պահնը: ըստ այնմ Կիւրղի եղեմ. կ. վայրիկ մի անուս:

Վայրիկ մի ևս: (մակբայ ժամանակակ.) || փոքր մի ևս, կմ սակաւիկ միւս ևս: ռամկ. թէւ հուց որ. ըստ այնմ 'ի Հարս հարց. իզ. Իսկ սատանայ եա պատասխանի, թէ վայրիկ մի ևս՝ և շահեալ էր իմ զքո կործանումդ:

Վայրկեան. կենի. իմ. ից. իւք: || ծագի սա 'ի բառէս՝ վայրիկ՝ ըստ որում ցուցանէ զժամանակն, և նշանակէ՝ զփոքրիկ մասնիկն ժամանակի, կմ քթթել մի ական, կմ րոպէ, և կմ մէտ, որ է կէտ ժամանակի. ռամկ, անիմարթ մը. կմ Թարթէ: Նարեկ. կը: և Աշգաւե: Իսկ մերթ վարի իբրև ըղ մակբայ այսպէս. վայրկեան մի թաքչել ուրեք, կմ մնալ վայրկեան 'ի հրահանգս, և այլն. և նշանակէ՝ վայրիկ մի, կմ դոյզն ինչ ժամ, և կմ փոքր մի ժամանակ: ռամկ. Թարթէմը, կմ թէւմը, կմ կսօրմը: Խորէն. գ. գլ. 34. և 62: Եւ կամ այսպէս, 'ի միում վայրկենի, կմ 'ի վայրկեան ժամանակի, և կմ 'ի վայրկենի ժամանակի. և նշանակէ՝ 'ի միում րոպէի, կմ 'ի քթթել աչաց, կմ յական թօթափել, կմ խակոյն, և կմ առ ժամայն: ռամկ. Տէ Թարթէին մէջ, կմ անտահաբ: Յես. 13. 22: Իմաստ. 18. 12: Ղուկ. 4. 5: Ոսկե. 1. հար. իթ: ըստ այսմ ևս նշանակէ երբեմն 'ի ներգոյականով: ըստ այնմ. Ոսկե. 1. հար. իա. Ջամ 'ի վայրկենի 'ի մէջ բերել:

Վայրկենական. ի. աւ. աց. օք: || այն ամ, որ վերաբերի առ վայրկեանն, կամ որ վայրկեան մի տեւէ և անցանէ. և կմ րոպէական:

Վան. անայ. աւ: || անուն քաղաքի: Բայց մինչ հոլովի. ի. իմ. աց. օք. նշնէ վանք. ըստ այնմ Մծբն. ժթ: Արար զմեզ մանկունս վանի իւրոյ, ք վանաց իւրոց: Այլ աս ըստ այնմ հայլիմ 'ի գործածի. վանի հասարակօրէն վարի իբրև զանեզական. այսպէս. վանք. աց. օք: զոր տեսցես 'ի կարգի իւրում:

Վանական. ի. աւ. աց. օք: || բնակող 'ի վանս. կմ վանականեաց. և ըստ այսմ վանական կոչին ամ աբեղայք, կմ կրօնաւորք, և կմ միայնակեացք: ռամկ. վանքը կեցող, կմ հաբեղայ: Նարեկ. ղզ: Խորէն. գ. գլ. 52: Ընորհալին: Բարձեալ նշանակի սովոր վանահայրն, որ է առաջնորդ վանաց: Նարեկ. ա. 'Ի խորագիրն: և 'ի Հարս հարց. իզ:

Վանականութիւն. թեան: || վանական գոլն, կմ աբեղայութիւն. կմ կրօնաւորութիւն: Եւ կմ վանահայրութիւն, որ է առաջնորդութիւն վանաց: Նարեկ. ղզ:

Վանակեաց. կեցի իմ. աց. օք: || Նա՝ որ կեայ

Digitized by Google

'ի վանս. կամ բնակել 'ի մենաստանս. որպէս սոքա են կրօնաւորք:

Վանակից. կցի. աւ. կամ ից. աց. օք: || Կը ցորդ կամ ընկեր վանաց. կամ բնակող 'ի միասին ընդ ումեք 'ի նոյն վանս. կամ բնա կակից. և կամ օթեվանակից: տաճկ. մի_ սաֆիրտաշ. կամ օթաքտաշ: Մծբն. ժթ:

Վանակն: || տե՛ս զՎանս:

Վանահայր. հօր. հարբ. հարք. հարց. արբք: || Հայր վանաց, կամ վանականաց, որ է առաջնորդ կրօնաւորաց:

Վանապան. ի. աւ. աց. օք: || պահապան վա նաց, կամ իշխեվանաց: տաճկեր. օդապաշը. կամ խանճի. կամ խանանի ղէֆճի: Եւ յայս_ մանէ առեալ վանապան կոչին պահա_ պանք տան բնակարանաց, կամ կահից և կա րասեաց, և տան ընչից, զորս տան 'ի ձեռս նոցա պահել: ռամկ. փաւն, կամ ըէճէխճիլէրի պա հող: 1. Թագ. 17. 22: և 30. 24:

Վանապետ. ի. աւ. կամ ից. աց. օք: || պետ վանաց, կամ առաջնորդ մենաստանի:

Վանատուր. տրի. աւ. աց. օք: || Նա՝ որ տայ ումեք զվանս, կամ զօթեվանս 'ի բնակել. որպիսիք են հիւրընկալք, կամ պանդոկա պետք: ռամկ. օթախ փոխօղ: Բայց մանաւա ւորապէս առեալ՝ է սա մականուն որ_ մզդական դիցն, որ արամազդայ, որ է դիոս. ըստ այնմ Աշգոյ. 'ի ժամանակի նոր պարզոց տօնին հիւրընկալ դիցն վա_ նատրի: Արդ կոչեցաւ սա վանատուր, ոչ և հիւրասէր. զի յաղագս լինելոյ խնա մակալ և պաշտպան հիւրոց և պանդխ_ տաց՝ սիրով ժողովեալ զնոսա՝ տայր վանս բնակութեան: Վն որոյ և անօրինքս իւրև լուեալ զլինելն սամարացւոց պանդխտաց՝ և եթէ հիւր յերկրի իւրեանց՝ հրամայեաց զտաճարն նոց, որ չլինել կայր 'ի լեառն գարիզին՝ նուիրել յանուն այսր չաստուծոյ. իբր զի ըստ բնակչացն լինիցի և տաճն նոց. և այսպէս մինչ առաւ. 2. Մակ. 6. 2. որք 'ի գարիզին էին, որպէս որք զտեղին բնա_ կեալ նստէին՝ հիւրասէր որմզդական դից վանատրի. այս, իսկ զտաճարն՝ որ 'ի գա_ րիզին էր, վն պանդխտս լինելոյ բնակ չաց տեղւոյն, հրամայեաց անուանել յա նուն հիւրասիրին և վանատրին արա_ մազդայ:

Վանդ: || տե՛ս զՎանդ: 'Ի հին. փէրրանտօնու_ թեան:

Վանդանման. կամ վանկանման: (Նախադրիճ հոլովի.) || ունօղ զնմանութիւն վանդի, մ_ ձայնի, կամ փաղառութէ:

Վանդեմ: || տե՛ս զՎանկեմ: 'Ի հին փէրրանտո_ նութէ:

Վանդակ. ի. աւ. աց. օք: || Կերպարանած շի_ նեցեալ 'ի փայտէ, կամ յերկաթոյ, և 'ի նմանեաց՝ Ը օրինակի գործուածոյ ուռ_ կանի. կամ կանկարայի. որպիսիք են այնք՝ որովք փակեն զմուտս պատուհանաց, և դրանց. և կամ պատեն զսրահս. կամ զայլ տեղի ինչ: ռամկ. ղաֆէս. կամ փրտաղէն. կամ պարմախլըխ. 1. Մակ. 13. 29: Եզեկ. 8. 16: Եւ յայսմանէ առեալ վանդակ կոչեցաւ ա_ կնապատ նուճարտանն, որ ծածկոյթն էր կակալ սեղանոյն. որ որպէս կազմեալ էին ըստ ուռկանակերպ՝ առ. 'ի նշուցա_ նել ընդ ծակտիս նո 'ի վայր զմոխիր այ րեցեալ խնկոցն. որք եղեալ լինէին բուր վառու 'ի վն նռ: Ելից. 30. 3: Սոյնպէս վանդակ անուանեցաւ պղնձեղէն զահա_ւորակն սեղանոյ ողջակիզաց. Ը որում կազմեալ կայր ըստ օրինակի կանկարայի՝ կամ ցանցի ձկնորսաց. և նշուցել 'ի խարս սեղանոյն. յորոյ վն եդեալ լինէին դէնել անտառուկքն իւր 'ի տափարակ տաշտի. և բոցով հրոյն՝ որ 'ի տակէ սեղանոյն ընդ ծակտիս վանդակին 'ի վեր ցոլանայր, ող ջակիզեալ լինէին: Ելից. 35. 16: Իսկ 3. Թագ. 7. 17. և 42: և Երեմ. 52. 23: Նշանակէ զզարդ ինչ պղնձեղէն յօրինեալ վանդա_ կակերպ շղթայագործիւք. զոր կարգ առ կարգ կախեալով պատէին զսրահին եր_ կուցունց սեանցն. ընդ որոց ծակտիս յօ րինուածք նռնաձեւիցն երեւէին իբր որ_ տաքս անկեալ: Դարձեալ. վանդակս չին և բնակարանք հաւուց, կամ ձկնց կանց, ըստ որում վանդակակերպ գոր_ ծեն զնս: ռամկ. հաւու, կամ ղուշի ղաֆէս: Դարձեալ նշանակէ զտակառին, որ է կո ղով, կամ զամբիւղ. զորս հիւսեն իբր վան դակեալով: ռամկ. սէփէթ. կամ զէմպիլ: Գործ. 9. 25: և 2. Կորն. 11. 33:

Վանդակագործ. ի. աւ. աց. օք: || Նա՝ որ գործէ, կամ շինէ զվանդակս: ռամկ. ղա_ ֆէսճի, կամ փրտաղէն շինօղ: Իսկ մերթ գոր ծեալ, կամ շինեցեալ վանդակօք, կամ իբ_ րև զվանդակ. որպէս մինչ առի գործ, կամ դուռն վանդակագործ: ռամկ. ղաֆէսլի գէ շինած. կամ ղաֆէսլի: Ելից. 38. 4: Բայց երբեմն գոյականաբար առեալ նշանա_ կէ զվանդակաձև կազմուածս. կամ զվան դակս. որպիսիք էին զարդք սեանց տա ճարին, զորոց ասացաւ 'ի բառն վանդակ: 2. Մնաց. 4. 12. և 13:

Վանդակակապ. ի. իւ. ից. իւք: || վանդա_ կօք կապեցեալ, կամ կազմեցեալ. կամ վանդակագործ. և կամ վանդակապատ: ռամկ. ղաֆէսլի: Գ. Մակ. 6. 37:

Վանդակակերպ. ի. իւ. ից. իւք: || ունող զկերպ վանդակի. կամ շինեցեալ իբրև զվանդակ. և կամ կազմեցեալ վանդակօք: ռամկօր. ղաֆէսլի գիպի. կամ ղաֆէսլի: Ելից. 27. 4:

Վանդակաձև: (Նախադրիճ հոլովի.) || Նոյն է ընդ վերնոյն:

Վանդակապատ. ի. աւ. աց. օք. կամ իւ. ից: || պատեալ, կամ կազմեալ վանդակաւ. կամ զարդարեալ վանդակակերպ յօրինուածով. և ըստ այսմ առի՝ վանդակապատ պատուհան, կամ պատկեր. դուռն. և այլն: ռամկ. ղաֆէսլի. կամ փընճէրէլի պարմախ. կամ փրտաղէնով շինած: Դատ. 5. 28: 1. Մակ. 13. 29: Եզեկ. 41. 16: Բայց սա երբեմն վա րի իբրև գոյական. և յայնժամ նշանա

կէ զվանդակակերպ կազմեալս․ և ըստ այսմ վանդակապատք կոչին վանդակք պատուհանաց՝ կմ վերնատանց, պատշգամ_ բաց, դաւթաց, դրանց, խելից նաւուց, որպ ղուխնի ղըլին, որ արտաքուստ երևի վայելչութ յօրինուածով։ Եւ այսմ իմն և պայլեաց նմանեաց։ ռամկ․ խաֆէս, կմ ձիւ_ նձնըրէ․ կմ փրտաղըն։ Դատ․ 3․23։ 4․Թագ․ 1․2։ Երգ․ 2․9։ Նորէկ․ իե։ Սոյնպէս նաև վանդակակերպ բնակարանք հաւուց կմ ձնձղկանց վանդակապատք անուանին․ ռամկ․ հասա, կմ դուշի խաֆէս։ Դարձեալ․ մանաւանդ որպէս վանդակապատ յարձոր_ ջին զարդք երկոցունց սեանց տաճարին, զորոց ըմագոյն ասացաւ 'ի բառն վան_ դակ։ 3․Թագ․ 7․18․ և 41։ 2․Մնաց․ 3․16։ Երեմ․ 52․22։

Վանդակաւոր․ ի․ աւ․ աց․ օք։ || ունօղ ըղ վանդակ․ կմ վանդակաւ շինեցել։ ռամկ․ խաֆէսլի։

Վանդակեմ․ եցի․ եա․ ել։ (Ներգործ․) || վանդակապատ առնել․ կամ վանդակաւ կազմել․ և կամ վանդակակերպ կապիւք պնդել զինին, որպ՝ զգեռնինս, կմ զայլ ինչ նման։ ռամկ․ խաֆէս հիւսել․ կմ խաֆէսով գոցել․ և կամ խաֆէսի նման լաւանով կապել։ Եզեկ․ 27․24։

Վանեմ․ եցի․ եա․ ել։ (Ներգործ․) || հեր քել․ կմ մերժել․ կմ հալածել․ և կամ փախուցանել։ ռամկ․ քովուլել․ կմ +ըշել․ 2․Թագ․ 8․1։ Սաղմ․ 117․11։ իսկ մերթ մար_ տնչիլ․ կմ մաքառիլ․ կմ հակառակիլ․ և կմ կռուիլ։ ռամկ․ ծէնկ ընել․ և Եւ այսմ սալ՝ վանել ընդ առիւծս․ կմ ընդ թշ նամիս․ և այլն։ 'Ի վարս հարց․ Է։ և Լամբրօն։ Եւ յայսմանէ առեալ ձեռօք և ոտիւք 'ի մորս մտանելն ընդ արուի, կամ ի գէ ու'ի քարշել զնա 'ի շաղաշարութ, վա_ նել ասի։ ռամկ․ ուլուշմիշ ըլըշ․ կմ ուլաշմիշ ըլըշ։ Եւ այսմ 'ի վարս հարց․ ժե․ իբրև եսես զնա, փակեաց 'ի վր նր զդուռն, և սկսաւ վանել ընդ նմա։ Դարձեալ նշանակէ՝ նկուն առնել․ կմ ընկճել․ կմ նուաճել․ կմ յաղթելով խորտակել զզօրս, կմ զթշ նամիս․ և այլն։ Դատ․ 3․30։ և 11․33։ և 20․35։ 1․Մնաց․ 20․4։

Վանէք։ || ծագի սա 'ի բառէս՝ վանք իբրև զյոգնական նր, որպ և ներքեւն 'ի բա_ ռէն՝ նեարդ․ և նշանակէ զբազմութիւն վանաց, այ օթևվանաց․ կամ բնակարա_ նաց․ ըստ այնմ 'ի վարս հարց․ ժա․ Շփո_ թեն զմեզ մերձակայ վանքերս, որ են շուրջ զմեօք։

Վաներայք․ այից․ իւք։ (անեզա․) || ծագի սա 'ի բառէս՝ վաներ, որ է վանք․ ուս_ տի բառիւս վաներայք՝ նշանակի՝ վանո րայք, զոր առեցես զկնի։ 'Ի հին պատ_ մագիրս։

Վաներէց․ երէցու․ ու․ ցանց․ ամբք։ || ե_ րէց վանաց, այ պետ, կմ գլուխ բնակա րանաց, կմ տանց․ և կմ տանուտր։ ռամկ․ փանըրէր․ կմ օտաղաչի։ Յայսմաւուրս։

Վանի։ || 'ի գործածի սա 'ի միասին ը՛ ան ուանս՝ ակն իբրև զմի բառ ըստ այսմ օ_ րինակի․ ակն վանի․ ական վանի․ կամ ւոյ․ ակամբ վանի․ կմ եաւ։ ակունք վա նեայք․ ականց վանեայց․ կմ ականց վա նեաց․ ակամբք վանեօք․ և նշանակէ ըղ քար ինչ թափանցիկ և լուսապայծառ ըստ նմանութեն մաքուր սառին։ Աբդ՝ սա ը բազմաց է հւթ ինչ իբրև զջուր, որ 'ի խորս երկրի, կմ 'ի ծերպս և 'ի խո_ ռոչս ապառաժից սառեալ ցրտութբ սա_ ռուցեալ կարծրանայ, և այնպէս երկա րաւն ժամանակաւ զգենու զբնութ քարի, և լինի անլուծանելի հանգոյն բազմա_ գունի ական, այ +էհրէպզրի․ որ 'ի խժոյ, կմ 'ի ձիւթոյ իմեքէ քարանայ։ Եսայ․ 54․ 12։ Եզեկ․ 1․22։ Նորէկ․ զգ։ Այսու այս վանի է ամենեին նման մաքուր և սառնատեսակ ապակւոյ, այ պիլլօրի․ յորմէ և սովորու թեան ոմանց զպիլլօրն կոչել՝ ակն վանի։

Վանիչ․ վանչի․ աւ․ աց․ օք։ || վանօղ․ այ հա լածօղ․ կմ փախուցանօղ։ Եւ մերթ՝ մար տնչօղ․ կմ կռուօղ։ Երբեմն և ընկճօղ․ կմ նուաճօղ․ և կմ մարտիւ խորտակօղ զթշնամիս։ Նորէկ․ ղե։

Վանկ․ կմ վանգ․ ի․ իւ․ ից․ իւք։ || ձայն, կմ հնչիւն․ կմ բարբառ․ ըստ այնմ Նո_ րէկ․ ղե․ ոչ մեղմութբ մեղմական վանկի․ այ ձայնի, կմ հնչման։ Եւ Եւ այսմ ծա գի 'ի սմանէ բառս ոսկեվանկ, որ է ոս_ կեձայն․ այ գեղեցկաձայն։ Եւ անուանս փափկավանկ, որ է փափկաձայն։ Բայց ըստ քերականաց նշանակէ զփաղառութին որ է բաղկացութեն ձայնորդաց, այ բաղա ձայն սառից՝ ընդ ձայնաւորաց, որ կա_ րէ միով հնչմամբ արտաբերիլ։ որպիսիք են տրքա․ կար․ սէր․ սուրբ։ Եւ վն այ սորիկ խաբրքանչիւր ձայնաւոր տառք, Եւ որում չեն բաղկացել 'ի բաղում տառից՝ ոչ կարեն ասիլ վանկ․ բայց ըստ որում կարեն արտաբերիլ միով հնչմամբ․ որպ սա քա ա․ է․ օ․ կոչին վանկ։ ուստի և հինգե տաէին զձայնաւոր տառս՝ պիտակապէս վանկ․ այ անյատկապէս, կմ ապավարա_ բար։ 'Ի հին +էրականոնէ։

Վանկեմ․ կմ վանգեմ․ եցի․ եա․ ել։ (Ներ_ գործ․ և մերթ չէզոք․) || ձայնել․ կմ հն չել․ կմ բարբառիլ․ և ըստ այսմ ասի՝ վան կել փողոյ, օդոյ․ քարանձաւայ․ և այլն։ ռամկ․ ջան հանել։ Բայց ըստ քերականաց նշանակէ՝ փաղ առնուլ․ կմ հեգել․ այ զմի տառն յարել 'ի միւսն, որով կատարի վանկ․ և ըստ այսմ բառս հաւ ասի՝ վան կեալ յերից տառից։ 'Ի հին պատմագիրս։

Վանկիւն․ կմ վանգիւն։ (Նախդրիւ հոլո_ վիլ․) || հնչիւն․ կմ բարբառ․ և կմ ձայն։ ռամկ․ ջան։

Վանորայք․ էից․ էիւք։ (անեզական․) || բազմութին վանաց, կմ մենաստանաց, որ է բնակարան կրօնաւորաց։ ռամկ․ վան_ +էր։ Խորէն․ գ․ գլ․ 67։ 'Ի վարս հարց․ իզ։ և Լամբրօն։ անէս զբառն կաղորայ։

Digitized by Google

Վանորեայք ։ || Նոյն է ընդ վերնոյն ։ Շնորհալին ։

Վանք. վանաց. ոք ։ կմ՛ կց. իւք ։ (անեզ.) || բնակարան. կմ՛ կայան մարդոյ. կմ՛ տուն. և կմ՛ յարկ, ուր մեծամեծք բնակեն ։ ռամկ. օճախ ։ 1. Թագ. 17. 54։ Յօհ. 18. 28։ Գործ. 1. 13։ Իսկ մերթ՝ օթեվան. կմ՛ իջեվան ։ ռամկ. ղօնախ ։ 1. Թագ. 1. 18։ Ղուկ. 22. 11։ Երբեմն ևս հիւրանոց. կամ օտարանոց. և կմ՛ տեղի՝ ուր պանդուխտք, կմ՛ եկք ուխտին ընդունելութե. Գործ. 21. 16։ և 28. 23։ Փիլիմոն. 22։ Խորէն. գ. գլ. 20։ Իսկ երբեմն խրճիթ, կմ՛ խուղ, և կմ՛ տաղաւար հովուաց, շինականաց. մրգապահաց, և այլոց նմանեաց ։ ռամկ. խուղիկ ։ Եզեկ. 33. 12։ Խորէն. բ. գլ. 34։ Դարձեալ, նշանակէ զոմ. կմ՛ փարախ ։ ռամկ. ագըլ. 2. Թագ. 7. 8։ և 1. Մնաց. 17. 7։ Իսկ մասնաւորապէս առեալ նշանակէ զմենաստանն. կմ՛ զկրօնաստանն, որ է բնակարան կրօնաւորաց. որ և ռամկ. կոչի վանք ։ Խորէն. բ. գլ. 77։ 'Ի Վարս հարց. բ. և Ե։

Վանօրեայք ։ || տես զՎանորեայք ։ Շնորհալին։

Վա՜շ. (միջարկութի երանական. կմ՛ գովողական.) || օ՛հ ։ ռամկօրէն աֆերիմ ։ և ըստ այսմ առի. վաշ, պաշտօնեայդ իմ քաջ. կմ՛ վա՜շ քեզ ծառայ հաւատարիմ ։ Բայց հասարակօրէն է սա միջարկութի խընդական. կամ հեշտական ։ և նշանակէ՝ ո՜հ. կամ ո՜ւհ. ռամկօրէն օխ. և ըստ այսմ վարի երբեմն բացարձակ. և երբեմն յարելով 'ի հոլովս. զո՛ր օրինակ վաշ. զի կործանեցաւ. կամ վաշ ինձ, զի ջեռայ, կմ՛ յագեցայ. և այլն ։ Յօբ. 31. 29։ Եսայ. 44. 16։ Դարձեալ, վարի սա իբրև զմիջարկութի զարմացական. և նշանակէ. ո՜վ. կմ՛ բա՜րէ. կմ՛ վա՜հ ։ ռամկ. հայ հայ. ըստ այնմ Ոսկ. 2. հափ. Զ. վա՜շ նը՞ անմտութեն. ա՞յ բա՜րէ ։ Եւ 'ի Գիրս տօնից անյաղթին. առի. վա՜շ արարչականին բնութե. ա՞յ ո՜վ բնութե արարչին մյ։

Վաշխ. ի. իւ. ից. իւք. կմ՛ ուց. օք. || է տոկոսեաց վարձ, կմ՛ շահ դրամոյ, զոր պահանջէ յումեքէ վաշխառուն յաղագս տալոյ նմա զդրամ իւր 'ի փոխ. և ըստ այսմ դրեթէ վաշխն է պտուղ, զոր ծնանի արծաթն 'ի փոխ տուեալ. վն որոյ և երբեմն յունական բառիւ կոչեմք զնա տոկոսիս. որ Թարգմանի՝ ծնունդ ։ ռամկօր. ֆայիզ ։ Ղևտ. 25. 36։ Սաղմ. 71. 14։ Եզեկ. 18. 13։

Վաշխահաւաք ։ (Նախդրիւ հոլովի.) || հաւաքող վաշխից. կմ՛ ժողովող տոկոսեաց ։ ռամկ. ֆայիզ ժողվող։

Վաշխառու. ուի. աւ. աց. օք ։ || առօղ զվաշխ. այ Նա՝ որ յաղագս տալոյ այլոց զդրամ իւր 'ի փոխ՝ առնու 'ի նոցանէ ըզվարձս, կմ՛ զշահս, որ է անիրաւութի ։ ռամկ. ֆայիզճի ։

Վաշխառութի. թեան ։ || վաշխառու գոլն. կմ՛ առումն վաշխից. և կմ՛ պահանջումն տոկոսեաց՝ յաղագս փոխատուութեան ։ ռամկօրէն. ֆայիզճութիւն. և կամ ֆայիզ առնելը ։ Յն ուրէ։

Վաշխասէր. սիրի. աւ. աց. օք ։ || սիրող վաշխից. կամ տոկոսեաց ։ ռամկ. ֆայիզ սիրօղ։

Վաշխավաճառ. ի. աւ. աց. օք ։ || վաճառօղ վաշխուց. կմ՛ տոկոսեաց ։ Իսկ մերթ՝ վաշխիւ վաճառօղ, կամ Նա՝ որ տայ տոկոսեօք զդրամ 'ի ձեռս այլոց. ռամկ. ֆայիզճի ։ Ս. Ծբն. ԺԹ։

Վաշխատեաց. տեցի. իւ. աց. օք ։ || առօղ վաշխուց, կմ՛ Նա՝ որ զբաղի 'ի վաշխառութեն ։ ռամկ. ֆայիզ առօղ։

Վաշխեմ. եցի. եա՛. ել ։ (Ներգործ. և մերթ չէզոք.) || զդրամս իւր վաշխիւ տալ ումեք. կմ՛ յաղագս փոխատուութե առնուլ զվաշխս ։ ռամկ. ֆայիզով փող. կմ՛ ֆայիզ առնել։ և ըստ այսմ առի՝ դահեկանս վաշխել. կմ՛ խաբեն, վաշխեն, և գողանան. և այլն ։ 'Ի Վարս հարց. բ. և Ժ։

Վաշխօղ. ողի. աւ. աց. օք ։ || Նա՝ որ վաշխէ զդրամս իւր, այ վաշխիւ տայ այլոց ։ ռամկ. ֆայիզճի ։

Վա՜շ վա՜շ ։ (միջարկութի խնդական. հեշտական. երանական. և զարմացական.) || ո՜հ ո՜հ. կմ՛ ո՜ւհ ո՜ւհ. կմ՛ բա՜րէ բա՜րէ ։ և ըստ այսմ առի՝ վաշ վաշ կարդալ. կմ՛ վաշ վաշ առնել. կմ՛ վաշ վաշ անձանց մերոց ։ ռամկ. օ՛խ օ՛խ. կմ՛ հայ հայ ։ Յօբ. 39. 25։ Սաղ. 34. 25։ Եզեկ. 6. 11։

Վաշտ. տու. ու. ուց. ուք ։ կմ՛ ի. իւ. ից. իւք ։ || կարաւան, այ զօր. կմ՛ գունդ զինուորաց. և կմ՛ ջոկք զօրականաց որոշեալք 'ի միմեանց ըստ դրօշու. ըստ ատեկանի. և ըստ պէսպէս պաշտամանց զինուորութե. զոր տաճիկք կոչեն պէօլիւք. կամ մասնաւանդ՝ օճախ ։ Խորէն. բ. գլ. 57. և 61։ Եւ 'Ի հին պարզագիրս, առի, Ոչ լինէր համդէպ դրօշու դրօշու, վաշտուց վաշտուց. այ օճախներուն ։

Վաշտական. ի. աւ. աց. օք ։ || Նոյն է Է բառիս՝ վաշտ, այ զօրականն Է բառին զօր ։ 'Ի հին պարզագիրս։ Եւ 'ի Խորէն. բ. գլ. 43. առի. Բայց սմբատայ գիշերայն եկեալ առկաւ վաշտականաւ. այսինքն սակաւ զօրու ։

Վառ. ի. իւ. ից. իւք ։ || վառեալ. կմ՛ լուցեալ. և ըստ այսմ առի՝ վառ լապտեր. կամ վառ և բորբոք կայծակն ։ ռամկօրէն ևս՝ վառ. կմ՛ վառած ։ Խորէն. յառաջաբանութե ։ և Ոսկէ. 2. հափ. Զ։ Իսկ մերթ փայլեալ. կմ՛ փայլուն ։ Երբեմն ևս վառումն. ըստ այնմ Յն ուրէ. Եւ չիջանի բոցն՝ որ 'ի վառ ։ Եւ մերթ փայլումն. և ըստ այսմ ընդ բայի շարակցի այսպէս. վառ առնուլ. և նշանակէ վառիլ. կամ փայլիլ։ Դարձեալ. նշանակէ փառաւորապէս պայծառ զարդ. կմ՛ պաճոյճ, և կմ՛ կազմած շքեղ յօրինուածոց, որով զարդարեալ լինի իմն. և ըստ այսմ առի, Ոսկեզօծ, կմ՛ չքնաղ վառիւք զարդարել զինչ. և կմ՛ տալ ումեք զպատմուճան և զվառս թագաւորաց ։ 'Ի հին պարզագիրս, բազում ան

գամ։ Դարձեալ. է սա մինն յութն ձայնից երաժշտական երգոց, յորում յաճախեն բթային եղանակք. զոր որպէս և յոյնք կոչեն զսա վառիս, որ թարգմանի բութ։

Վառապան։ || տե՛ս զՎարապան. Մծբն. ժզ։

Վառարան. ի. աՆ. աց. օք։ || տեղի ուր՝ վառեալ լինի հուր. և է այսմ կրակեալն՝ ուր խարոյկ արկեալ՝ եփեմք զկերակուր՝ կմ՛ զջեռոցս, և զնմանիս այդ, վառարան կոչի։ ռամկ. օճախ։ Նարեկ. իզ. և 'ի գործքսն առաքելոց. և 'ի Շարականս։

Վառեալ. ելոյ. ով. ոց. ովք. կմ՛ օք։ || լուցեալ. կմ՛ բոցով բորբոքեալ։ ռամկ. վառած։ Իսկ մերթ՝ զինուք զարդարեալ. կմ՛ սպառազինեալ. կմ՛ զինուորեալ։ ռամկ. սիլահլանմիշ եղած։ Թուոց. 31. 5։ 3. Թագ. 22. 10։ Ղուկ. 11. 21։ Եւ յայսմանէ առեալ երբեմն նշանակէ զզինուորն յօրինեալ զինու. կմ՛ զսպառազէնն։ 1. Մակ. 9. 39. և 40։

Վառեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) || լուցանել. կմ՛ բոցով բորբոքել։ ռամկ. վառել։ Իսկ մերթ նմանութեամբ առեալ՝ նշանակէ զզէն զգեցուցանել. կմ՛ զինուք զարդարել. կմ՛ սպառազինել. և կմ՛ զինուորել։ ռամկ. սիլահլանմիշ ընել։ Թուոց. 31. 3։ 2. Մակ. 15. 11։ Իմաս. 5. 18։

Վառեցուցանեմ. եցուցի. եցո. ել։ (անցող.) || նոյն է ընդ վերնոյն։ 2. Մակ. 4. 40։

Վառիմ. եցայ. եաց. իլ։ (Ձայնակր.) || 'ի վառ լինել. կմ՛ լուցանիլ. կմ՛ բոցով բորբոքիլ։ ռամկ. վառիլ։ Ելից. 3. 2։ Սաղմ. 117. 12։ Եսայ. 50. 11։ Իսկ մերթ փայլիլ. կմ՛ լուսափայլ լինիլ. ըստ այնմ 'ի Շարականսն. Վարդագոյն վառեալ ծաղիկ 'ի նուրբ մոռաննի բուրաստանի։ Եւ մերթ նմանութեամբ առեալ նշանակէ՝ զէն զգենուլ. կմ՛ զինուք զարդարիլ. կմ՛ սպառազինիլ. կմ՛ զինուորիլ։ ռամկօր. սիլահլանմիշ ըլլալ։ Թուոց. 32. 17։ 1. Մակ. 3. 58։ 1. Պետ. 4. 1։

Վառումն. ման. ման. մանց. մանք։ || լուցումն. կմ՛ բորբոքումն բոցով։ Նարեկ. ղա։ Եւ մերթ փայլումն. կամ շողումն։ Իսկ մերթ՝ զինուք զարդարումն. և կամ զինումն։

Վառուածոյ. ծոյ. ով. ոց. ովք։ || վառումն. կմ՛ փայլումն։ Իսկ մերթ՝ զզենուլ զզէն. կմ՛ զինուորութիւն. կմ՛ սպառազինութիւն. և կմ՛ զէնք՝ որով ոք վառի. ըստ այնմ, Խորէն. բ. գլ. 79. Զփորձ առեալ զաստուածութեան սկային, և կուռ վառուածոյն, զի և սաստիկ սպառազինութեան։

Վառվառիմ. եցայ. եաց. իլ։ (Ձայնակր.) || վառելով վառիլ. կմ՛ թրթռալով վառիլ. կմ՛ փայլփայլիլ. կմ՛ շողշողել։ ռամկ. վառվռիլ։

Վառօղ. կմ՛ վարօղ. ի. իՆ. ից. իւք։ || է անուն փոքր ինչ արուեստական, յոր ընդ մերձենալն հրոյ, նոյն ժամայն բորբոքել վառի յօդս, այլ և ձայն իւր հնչէ։ Սովոր վարին պատերազմօղք 'ի ձգել զնռումս հրացանից։ ռամկ. փարոս։

Վաւիլեւկոս. կամ վաւիլեւկոյ. ի. իՆ. ից. իւք։ || է բառ յունական, որ թարգմանի արքայիկ, որով նշանակի օձ ինչ չար՝ զոր հայերէն կոչեմք քարբ։ 'ի վերս հարց. Ն։

Վաւն։ (նախադրութիւն, որ պահանջէ զսեռական.) || յաղագս, կմ՛ սակս. և կմ՛ 'ի պատճառս։ ռամկ. համար։ Ծնն. 12. 13։ և 20. 11։ Յոհ. 11. 42։ Իսկ մերթ նշանակէ 'ի ձեռն. կմ՛ միջնորդութեամբ. զոր օրինակ, կալայց վն նր զանմահութիւն, այս միջնորդութեամբ նր։ Իմաս. 8. 13։ Յուցեալ վաւն յայնմ ժամու ծառայոյ, այս 'ի ձեռն ծառայոյն՝ որ յայնմ ժամու։ Իմաս. 11. 9։ և 16. 7։ Վն զինուոյ արդարութեան, այսինքն 'ի ձեռն զինուոյ։ 2. Կորն. 6. 7։ Ըստ այսմ վարի յաճախ 'ի ժամագիրքն, ոմն այն, վն մատուցեալ սբ և անմահ պատարագիս. այս 'ի ձեռն սբ պատարագիս։ Վն խաչի քոյ պատուականի, այս 'ի ձեռն։ Վն սրբուհւոյ ածածնին որ ընկալ զաղաչանս մեր. այս միջնորդութեամբ սբ ածածնին։ Դարձեալ բազում անգամ յարելով սա 'ի բառս՝ մեղք, այսպէս, վն մեղացն, զվն մեղացն, առ 'ի վն մեղացն. և այլն. վարի իբրև զմի բառ, և նշանակէ զզոհն, որ յաղագս մեղաց։ Ելից. 29. 36։ Ղեւտ. 6. 25։ Սաղմ. 39. 7։

Վն այն։ (շաղկապ պատճառական.) || վն այնր. կմ՛ վն այնորիկ։ ռամկ. անոր համար։ 'ի վերս հարց. Ժզ։

Վն այդորիկ։ (շաղկապ պատճառական.) || յաղագս այդորիկ։ ռամկ. ատոր համար։ Երեմ. 18. 13։

Վն այնորիկ։ (շաղկապ պատճառական.) || սակս այնորիկ. կամ յաղագս այնորիկ. ռամկ. անոր համար։ Ծննդ. 19. 22։ Հռոմ. 4. 16։

Վն այսորիկ։ (շաղկապ պատճառական.) || յաղագս այսորիկ. կմ՛ սակս այսորիկ. և կմ՛ սորին աղագաւ։ ռամկօր. ասոր համար։ Հռոմ. 1. 26։ Կողոս. 1. 9։

Վն զի։ (շաղկապ պատճառական.) || քանզի. կմ՛ զի։ ռամկ. զէրէ։ Երգ. 1. 5։ Մատ. 18. 32։ Հռոմ. 1. 19։ Իսկ Մատ. 23. 14. ուր ասի. Վն զի ամենայն զատաստան ընդունիցիք, խմանի վն այսորիկ զի. կմ՛ այդ զի։

Վն է՞ր։ (մակբայ հարցական.) || վն ո՞յր. կմ՛ ընդէ՞ր. կմ՛ յո՞յր սակս։ ռամկ. որո՞ւ համար. կմ՛ ինչո՞ւ համար։ Յոհ. 1. 8։ տե՛ս զմակբայն Ընդէ՞ր։

Վն ո՞յր։ (մակբայ հարցական.) || վն է՞ր. կմ՛ ընդէ՞ր։ ռամկ. ինչո՞ւ համար։ Ղամբրոն։

Վն որոյ։ (շաղկապ պատճառական.) || ուստի. կմ՛ վն այնորիկ. կմ՛ յայն սակս. և կմ՛ նմին իրի։ ռամկ. անոր համար։ Հռոմ. 1. 24։ Եփես. 3. 13։ Եբր. 6. 1։ Բայց սա բազում անգամ վարի իբրև զյարաբերութիւն հանգերձ խնդրովն, և նշանակէ որոյ վն, կմ՛ որոյ աղագաւ. կմ՛ որոց պատճառաւ. և կմ՛ սակս որոց։ ռամկ. որուն համար. կմ՛ ինչ բանի համար. ըստ այնմ Տոբ. 7. 9. Արդ խօսեաց դու, վն որոյ խօսէիրն 'ի ճնգնի անդ։ ըստ այսմ է և Ղեւտ. 6. 5։ Կողոս. 3. 5։ 1. Տիմ. 1. 7։

Վաստակ. ոյ. ով. ոց. օք. կամ օք: (բաղդատ անգամ վարի իբրև անեղական.) || աշխատանք. կամ աշխատական գործ, որում պարապին գործաւորք, ոմն մշակք. հովիւք. և նմ արուեստաւորք: Ծննդ. 29. 27: Սաղմ. 103. 23: Առակ. 16. 26: Իսկ մերթ երկք, կամ աշխատութիւն. կամ ձգնութիւն. կամ տաժանումն. կամ խոնջումն. և կամ լքումն, որով ոք թափի 'ի զօրութենէ յաղագս բազում աշխատելոյ: ռամկ. հոգնիլը: Թուոց. 23. 21: Սաղմ. 24. 18: և 72. 5: Ժողով. 1. 3: Դարձեալ, վաստակ կոչի աշխատանօք շահեցեալ իրն. որ և ռամկ. ասի՝ [illegible]. կամ [illegible]. և այս 'ի գործ ածի բացարձակ՝ և ոչ ընդ բայի շարակցելով. վն որոյ ոչ է պարտ փոխանակ ասելոյ շահիլ. ասել՝ վաստակ առնել, զի է գռեհկական: Սաղմ. 77. 46: և 127. 2: Առակ. 3. 9: Ժողով. 2. 10: Իսկ մերթ նշանակէ վաստակեալ. ծ. աշխատեալ. կամ տաժանեալ. կամ խոնջեցեալ. և կամ լքեալ 'ի զօրութենէ: ռամկ. հոգնած: ըստ այսմ Յուդիթ. 13. 2. Քանզի էին ամենեքեան խոնջք և վաստակք: և յոյժ մանէ առեալ փոխանակ ասելոյ՝ վաստակիլ՝ ասի՝ վաստակ լինել: ռամկ. հոգնիլ: Եսայ. 45. 14: և 47. 15:

Վաստակաբեկ: (Նախդրբեմ հոլովի.) || 'ի վաստակոց բեկեալ, ընկճեցեալ. կամ վաստակօք չարչարեալ. և կամ աշխատանօք խաշտանկեալ և լքեալ: ռամկ. խիստ հոգնած. կամ [illegible]: Իսկ մերթ ընդ բայի շարակցի այսպէս. վաստակաբեկ առնել. և նշանակէ սաստիկ վաստակեցուցանել: կամ ծանր աշխատանօք լքել և նուաճել. ռամկ. աշխատցընելով [illegible] ընել: Ագաթ.:

Վաստակակից. կցի. աւ. կամ իմ. աց. օք: || կցորդ, կամ ընկեր ումեք 'ի վաստակս. կամ Է այլում 'ի միասին աշխատող: ռամկ. մէկ տեղ աշխատող. կամ բանող: 1. Կորն. 16. 16:

Վաստականուէր: (Նախդրբեմ հոլովի.) || վաստակօք նուիրեալ. կամ աշխատանօք և ձգնութեամբ անձին ընծայեալ: Նարեկ. ձբ:

Վաստակասէր. սիրի. աւ. աց. օք: || սիրող վաստակոց. կամ աշխատասէր. կամ ձգնասէր. և կամ ժրաջան: տաճկեր. խայրէթլի. կամ [illegible]: Ագաթ.:

Վաստակաւոր. ի. աւ. աց. օք: || ունօղ յանձին զվաստակս. կամ վաստակող. կամ աշխատաւոր. կամ ձգնազգեաց. և կամ նա՝ որ յանձն առեալ զնեղութիւն պարապի գործոյ իմիք: ռամկ. աշխատող. կամ բանող: Եզեկ. 16. 23: Սաղմ. 87. 16: Հռոմ. 16. 12:

Վաստակեմ. եցի. եա. ել: (չէզոք.) || տես 'ի ներքոյ զՎաստակիլ: Ծննդ. 29. 27: Ժողով. 2. 20: Եփես. 4. 28:

Վաստակիմ. եցայ. եաց. իլ: (ձայնակր.) || աշխատիլ. կամ աշխատանօք գործել զինչ: ռամկ. աշխատիլ. կամ բանիլ: Սաղմ. 126. 1: Իսկ մերթ՝ տաժանիլ. կամ խոնջիլ. կամ լքանիլ 'ի բազում աշխատանաց: ռամկ. հոգնիլ. կամ յոգնած ըլլալ: Սաղմ. 6. 7: 1. Մակ. 10. 81: Առակ. 4. 12: Յոհ. 4. 6:

Վաւաշ. կամ վաւաշ. ի. իմ. ից. իւք: || վաւաշոտական. կամ պագշոտական. և ըստ այսմ ասի՝ վաւաշ խորհուրդ. կամ ցանկութիւն. և այլն: Իսկ մերթ վաւաշոտ. կամ բղջախոհ. ըստ այսմ. Խորէն. ա. դր. 14: Վաւաշն այն՝ և բորբոքմանն Շամիրամ:

Վաւաշեմ. կամ վաւաշեմ. եցի. եա. ել: || (չէզոք.) || առնել զգործ վաւաշոտի. կամ վարիլ վաւաշոտական շարժմամբք. կամ պագշոտիլ. և կամ բղջախոհիլ: Եւ ըստ այսմ վաւաշոտաբար վանեցին ընդ կնոջ. [illegible], վաւաշել ասի: ըստ այսմ Խորէն. բ. դր. 60: Բուռն հարեալ 'ի կինն՝ շամշեալ վաւաշէր:

Վաւաշոտ. կամ վաւաշոտ. ի. իմ. ից. իւք: կամ աւ. աց. օք: || ունօղ զվաւաշ խորհուրդ. կամ բղջախոհ. կամ պագշոտ. կամ ցանկասէր. կամ լկտի, որ է [illegible]: Յն [illegible]: և Լամբրոն: Իսկ մերթ՝ վաւաշոտական. կամ պագշոտական. և կամ բղջախոհական. և ըստ այսմ ասի՝ վաւաշոտ վարք. կամ սիրտ: Խորէն. ա. դր. 16:

Վաւաշոտիմ. կամ վաւաշոտիմ. եցայ. եաց. իլ: (ձայնակր.) || վաւաշոտ լինիլ. կամ պագշոտիլ. և կամ բղջախոհիլ:

Վաւաշոտութիւն. կամ վաւաշոտութիւն. թեան: || վաւաշոտ գոլն. կամ պագշոտութիւն. կամ բղջախոհութիւն. կամ գարշ ցանկութիւն: 'Ի գիրս [illegible]:

Վատ. ի. աւ. աց. կամ ից. օք: || վատթար. կամ յոռի. կամ ժանտ. կամ չար: ռամկ. գէշ. կամ [illegible]: Ծննդ. 37. 18: ըստ այսմ է և 2. Մակ. 7. 34. ուր ասի. Այլ դու ապիրատ վատ արանց. ամ վատթար, կամ չար 'ի մէջ մարդկան: Դարձեալ՝ բաղդատ անգամ նշանակէ ծոյլ. կամ հեղգ. կամ պղերգ. և կամ գործատեաց. ռամկօր. թէմպէլ: Առակ. 6. 6. և 9: և 13. 4: և 22. 13: Մատթ. 25. 26:

Վատաբախտ: || տես զՉարաբախտ:

Վատաբախտութիւն. թեան: || տես զՉարաբախտութիւն: 'Ի գիրս [illegible]:

Վատազգի: || տես զՉարազգի:

Վատազգութիւն. թեան: || վատազգի գոլն. կամ լինելն 'ի վատթար ազգէ. կամ անազնուութիւն: Ոսկէ. 2. հաբ. ժդ:

Վատախորհուրդ: || տես զՉարախորհ: Մծբն. ժէ:

Վատակերպ. ի. կամ ոյ. իմ. ից. իւք: || ունօղ զվատթար կերպ. կամ զյոռի կերպարանս. կամ որ ունի զտգեղ տեսիլ: ռամկ. [illegible]: Խորէն. բ. դր. 60:

Վատահամբաւ. ի. իմ. ից. իւք: || չարահամբաւ. կամ անհամբաւ: ռամկ. [illegible]:

Վատահամբաւեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || վատահամբաւ առնել. կամ ապականել զանուն ուրուք. ռամկ. [illegible] անունը [illegible] ընել. կամ [illegible] ընել:

Վատաձայն: || տես զՉարաձայն:

Վատամարմին: (Նախդրբեմ հոլովի.) || ունօղ զվատթարեալ մարմին. կամ որ է ակար մարմնով. կամ անզօր անձամբ. որոյ ներհակն կոչի քաջամարմին: ռամկ. [illegible]

Վատանամ. ացայ. ացիր. ալ: (ընդ միջ.) || վատթարանալ. և կմ չարանալ: ռամկօր. գէշնալ: Իսկ մերթ ծուլանալ. կմ պղերգանալ. կմ հեղգալ: ռամկօր. բէճրէշնալ. կմ խուշէնմիշ ըլլալ: Պրակ. 18. 9:

Վատանշան: (Նախդրիւ հոլովի.) || ունօղ զվատթար նշան. կմ վատթարութ՟ն նշանաւոր. կմ վատահամբաւ. և ըստ այսմ ասի՝ այր վատանշան: Կիւրղի Եղէմ. գ. և ՚ի հին պապմագիրս:

Վատանուն: (Նախդրիւ հոլովի.) || ունօղ զչար անուն. կմ վատահամբաւ. և կամ չարահամբաւ: ռամկ. աննամը աճըրծ: Կիւրղի Եղէմ. գ. և Յճ ործէ:

Վատաշնորհ: (Նախդրիւ հոլովի.) || վատեալ ՚ի շնորհաց. կմ անշնորհ. կմ վատաբախտ. և կմ եղկելի: ռամկ. ողորմուկ. կմ նոախուռդէն: ՚Ի Ճառս հարց. ժե:

Վատառողջ: (Նախդրիւ հոլովի.) || անառողջ. կմ զգածեալ ցաւագարութ՟բ. կմ որ ոչ է առողջարար. այլ վնասակար՝ յղէս լինելոյ վատթարացեալ. և ըստ այսմ ասի վատառողջ քիմք, կմ օդք. ՚Ի գիրս ատոքինութեանց:

Վատասիրտ. սրտի. իւ. աց. օք: || ունօղ զսիրտ վատեալ ՚ի զօրութէ. կմ զանգիտօղ. կմ երկչոտ: ռամկ. Հալխիպ: Պրակ. 7. 3: 1. Մակ. 3. 56: Մակ. 8. 26:

Վատասնունդ: || տե՛ս զՉարասնունդ:

Վատասրտիմ. եցայ. եա՛ց. իլ: (Հայնակր.) || վատասիրտ լինիլ. կմ երկչոտիլ. կամ զանգիտել. և կմ երկնչիլ: ռամկ. Հալխիպ ըլլալ. կմ Հախնալ: 2. Մակ. 8. 13: Խորէն. գ. գլ. 17: և Լամբրօն:

Վատասրտութի. թեան: || վատութի սրտի. կմ երկչոտութի: ռամկ. Հալխիպութի:

Վատափառ. ի. աւ. աց. օք: || ունօղ զվատթար փառս. կմ զվատ համբաւ. և կմ չարափառ:

Վատափառութի. թե: || վատափառ գոլն: կմ վատթար փառք. կմ չար համբաւ. և կամ չարափառութի: ՚Ի գիրս ճառբի անյաղթին:

Վատեմ. եցի. եա՛. ել: (Ներգործ.) || վատթարացուցանել. կմ յոռի և խոտան առնել: ռամկ. գէշցնէլ: Իսկ մերթ՝ անզօրացուցանել. կմ տկարացուցանել. կմ նիհարացուցանել. կմ նուաղեցուցանել. և կմ պակասեցուցանել: ռամկ. փճրցնէլ. կմ խառցնել. և կմ պակսեցնել: Եսայ. 17. 13: Նարէկ. ծ: Բայց երբեմն վարիաս չէզօքականապէս, և նշանակէ՝ վատիլ, զոր տես ցես զհնի: 2. Օրէն. 34. 7: Մառ. 3. 11:

Վատթար. ի. աւ. աց. օք: || վատ. կմ յոռի. կմ անարգ. և կմ խոտան: ռամկ. գէշ. կմ նոանաւնէն: Յոբ. 5. 4: Իմաստ. 13. 14: 1. Կորն. 11. 17:

Վատթարագոյն. գունի. իւ. ից. եաք: || առաւել վատթար. կմ յոռեգոյն: Իմաստ. 15. 19:

Վատթարազգի. գւոյ. եաւ. եաց. եօք: || նա՝ որ է ՚ի վատթար ազգէ. կմ յանարգ զարմէ. կմ վատազգի. և կամ անազնիւ: Խորէն. բ. գլ. 60:

Վատթարական. ի. աւ. աց. օք: || այն ամ, որ է վատթար. կմ պարսաւելի. կմ յոռի. և կմ խոտան. ըստ այնմ Նարէկ. ծզ. ՚ի վեհագունիցդ կողմանց էր ուրեք արգեօք, զի էի. իսկ ՚ի վատթարականացդ մասանց՝ եկն երբեմն եհաս՝ զի եղէ:

Վատթարանամ. ացայ. ացիր. անալ: (ընդ միջ.) || վատթար լինիլ, կմ յոռանալ. և կմ վատանալ: ռամկ. գէշնալ: Նարէկ. կէ: Լամբրօն: Իսկ մերթ անզօրանալ. կմ տկարանալ. կմ նկուն լինիլ. կմ նուաղիլ. և կմ ընկճիլ, ըստ այնմ Աղգաբ: Յաղջկանէ միջէ պարտեալ վատթարանայր: Եւ կմ անարգիլ. և կմ թշնամանիլ:

Վատթարատես. ի. աւ. աց. օք: || նա՝ որոյ աչաց տեսութիւն է վատթար. կմ որոյ աչքն են վատեալք. կմ որ ոչ կարէ պարզ և յստակ տեսանել. որոյ ներհակն ասի՝ քաջատես: ռամկ. շաշփնօղ: Իսկ մերթ տեսանօղ զվատթարս, կամ զյոռի իրս: ռամկ. գէշ բան տեսնօղ:

Վատթարացուցանեմ. ացուցի. ացո. անել: (անցող.) || տե՛ս ՚ի ներքոյ զՎատթարել:

Վատթարեմ. եցի. եա՛. ել: (Ներգործ.) || վատթար առնել. կմ յոռեցուցանել. կմ վատացուցանել. և կմ խանգարել: ռամկ. գէշցնէլ: Իսկ մերթ՝ անզօրացուցանել. կմ տկարացուցանել. կմ նկուն առնել. և կմ նուաճել. և ըստ այսմ ասի՝ վատթարել զթշնամիս. կմ փախուցանել զհակառակորդն վատթարել. և կմ ՚ի պարտութի մատնել և վատթարել: 1. Մակ. 11. 55: 2. Մակ. 13. 23: Եւ Խորէն. գ. գլ. 47. ասի՝ Յայտնեցաւ ՚ի վատթարել թագաւորութե արշակունեաց, իբ է, ՚ի տկարանալ, կմ ՚ի նուաճիլ: Բարձեալ նշանակէ, յամօթ առնել. կմ խայտառակել. կմ անարգել. կմ թշնամանել. և կամ բաժանել աղարտել: ռամկօրէն ըռզիլ անել: Յուդի. 1. 11: և ՚ի գիրս Գրիգորի ածաբանին: Եւ Ոսկէ. 2. հռով. զ: ուր ասի՝ Տեսանեն և զնա ուրքէին, և ոչ բանիւք վատթարելով վարէին:

Վատթարիմ. եցայ. եա՛ց. իլ: (Հայնակր.) || տե՛ս զՎատթարանալ:

Վատթարութի. թեան: || յոռութի. կամ վատութի. կմ խոտանութի. կմ անարգութի: 1. Կորն. 6. 7: Նարէկ. կե: Իսկ մերթ անզօրութի. կմ տկարութի. կմ նկուն լինելն. և կմ նուաճութի: Երբեմն և խայտառակութի. կմ թշնամանք: ռամկ. ռէզիլութի:

Վատժոյժ: || տե՛ս զՎակժոյժ:

Վատիմ. եցայ. եա՛ց. իլ: (Հայնակր.) || վատթարանալ. կմ յոռանալ. կմ խոտանանալ. և կմ անարգ լինիլ: ռամկ. գէշնալ: Իսկ մերթ անզօրանալ. կմ տկարանալ. կմ նիհարանալ. կմ հիւծիլ. կմ նուաղիլ. և կմ պակասիլ ՚ի կատարելութէ իւ-

քէ. և Թ այսմ առի՝ վատիլ 'ի սովու, կմ 'ի շնորհաց. վատիլ ոտից. կմ մարմնոյ. կմ ծառոց. և այլն: ռամկ. զայիֆլէնմէք. կմ չափուզլէնմէք: Եզեկ. 34. 29: Յմորբի: և Ընոքաւէն: Եւ յայսմանէ առեալ պակասիլն աչաց 'ի տեսանելոյ. կմ մԹարելն լուսոյ նո՝ վատիլ առի: ռամկ. [illegible]: Ծննդ. 27. 1: 1. Թագ. 4. 15: 3. Թագ. 14. 4:

Վատկանամ. ացայ. ացիր. ալ: (Ընդ միջ.) || վատուկ լինիլ. որ է աղքատանալ. և կմ անանկանալ: ռամկ. [illegible]:

Վատկութիւն. Թեան || անանկութիւն. կամ աղքատութիւն. և կմ չքաւորութիւն:

Վատնական. ի. աւ. աց. օք: || վատնելի. կմ վատնեալ. և կմ սպառօղ: Նարէկ. [illegible]:

Վատնեմ. եցի. եա. ել: (Ներգործական.) || ծախել. կամ մսխել. կամ ընդ վայր ցրուելով սպառել. և Թ այսմ առի վատնել զինչս, զմարդ. զերկաթ. զհանդերձ, և այլն: ռամկ. [illegible]. կմ [illegible]: Ղուկ. 15. 13: և 16. 1: Ոսկէ. 1. հատ. [illegible]: Եւ յայսմանէ առեալ երբեմն նշանակէ սոսկ՝ ցրուել. կմ ցիր և ցան առնել: ռամկ. [illegible]. կամ [illegible]: ըստ այնմ Սծբն. Ժդ. կերիցեն 'ի մէջ հեԹանոսաց. ուր վատնեցի զնա: ըստ այսմ է և Եզեկ. 34. 12. ուր առի՝ Յաւուր յորում իցէ մէգ և մառախուղ 'ի մէջ խաշանց իւրոց վատնելոց, դ ցրուեցելոց:

Վատնիչ. նչի. աւ. աց. օք: || վատնող, դ ծախող. կամ մսխող. և կմ ցրուօղ: ռամկ. [illegible]. կմ [illegible]: Նարէկ. [illegible]:

Վատնումն. նման. մամբ. մանց. մամբք: || ծախումն. կամ մսխումն. և կմ ցրուելով սպառումն իրէք: ռամկ. [illegible]: Իսկ մերԹ առի՝ ցրուումն. կմ ցրումն:

Վատաշուէր. ի. աւ. աց. օք: || վատաշնորհ. կմ վատախորհուրդ. կամ վատԹար բարուք. կմ եղեռնագործ. և կմ ժանտաժուտ: ռամկ. [illegible]. կմ [illegible]. ըստ այնմ Խորէն. Գ. գլ. 37. Ձերբակալ առնէ զվատաշուէրն յեզեր շամբին:

Վատութիւն. Թեան: || վատԹարութիւն. կմ յոռութիւն. կմ անարգութիւն. և կմ խոտանութիւն: ռամկ. [illegible]: 2. Մակ. 7. 16: Ոսկէ. 'ի Նախերգ: Իսկ մերԹ վատասրտութիւն. կմ երկչոտութիւն. կմ Թուլամորթութիւն: ռամկ. [illegible]: 1. Մակ. 4. 32: և 9. 10: Առակ. 19. 15: Երբեմն և՝ հեղգութիւն. կմ ալարգութիւն, և կմ ծուլութիւն: ռամկ. [illegible]: Փիլոն. 10. 18:

Վատուժ: (Նախդրիւ հոլովի.) || վատեալ 'ի յուժոյ. կմ անզօր. կամ տկար, և կմ անբաւական. և ըստ այսմ առի՝ այր վատուժ և անհմուտ. կամ վատուժ աշակերտ, կամ կենդանի: Նկիւս Մագիստրոս. [illegible]:

Վատուժագոյն. գունի. ին. նց. նւք: || առաւել վատուժ. կմ տկարագոյն, և կմ անզօրագոյն: Նկիւս [illegible]:

Վատուժութիւն. Թեան: || վատուժ գոլն. կամ տկարութիւն. և կամ անզօրութիւն:

Վատուկ. վատկի. աւ. աց. օք: || անանկ. կմ աղքատ. կամ չքաւոր. և կմ տառապեալ: 'ի սմանէ ելանէ վատկութիւն, և վատկանալն:

Վար: (Նախդրիւ հոլովի.) || է արմատ վարել բային, և նշանակէ հերկ. կմ հերկումն, և կմ սերմանումն. ըստ այնմ. Ծննդ. 45. 6: Եւ այլ հինգ ամ, յորս ոչ լինիցի վար, և ոչ հունձ: Իսկ մերԹ է բայի շարակցի այսպէս, 'ի վար արկանել. և նշանակէ վարել, կմ 'ի գործ արկանել. և կմ վարիլ իւիք. ըստ այնմ Լամբրօն. Զասողականն 'ի վար արկեալ վարդապետական բան՝ խրատէր և ուսուցանէր:

Վարագոյր. գուրի. աւ. կմ իւ. աց. օք: || քօղ. կմ առագաստ, որ է անջրպետ ինչ կախեալ օդից առաջի սրահից. կմ խորանաց, պատուհանաց. դրանց, և այլոց նըմանեաց, զոր ըստ պիտոյ լինելոյ երբեմն տարածեն, և երբեմն ժողովեն քարշելով զնա ընդ պարզունակն, որ է գաւազանաձև երկայն ձողն: ռամկ. [illegible]. և [illegible]: Ելից. 26. 33: և 40. 3: Ղևտ. 4. 6: Մատ. 27. 51: Եւ յայսմանէ առեալ՝ մասնաւորապէս նշանակէ զծածկոյԹն, զոր արկեալ շուրջանակի զգահոյիւք, կմ զմահճօք՝ առագաստ կազմեն առ 'ի ննջել: ռամկ. [illegible]: Յուդիթ. 10. 19: և 13. 19:

Վարագուրաձիգ. ձգի. աւ. աց. օք: || նա՝ որ զվարագոյրն ձգէ, դ քարշելով տարածէ. կմ ժողովէ: ռամկ. [illegible]: Իսկ մերԹ նշանակէ վարագուրաւ ձգեալ. դ շրջապատեցեալ. և ըստ այսմ վարագուրաձիգ կոչի սրսկապանն, որ է տադաստ, և կամ առանձնական սենեակն, որպիսիք բազումք լինեալ կային զտաճարաւ յաղագս բնակելոյ անդ քահանայից, և պահելոյ զգանձս կարասւոյ, կմ ինչս տաճարին: և Թ այսմ է 1. Մակ. 4. 38. և 57. յորս առի. Տեսին զվարագուրաձիգս խաԹարեալս. կմ զարդարեցին զվարագուրաձիգսն:

Վարագուրեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || վարագոյրս արկանել. կմ վարագուրաւ ծածկել. կմ առագաստել. կամ պատըուհանել. և կմ Թագուցանել: ռամկ. [illegible]. կմ [illegible]. և կմ [illegible]:

Վարազ. ու. ու. ուց. ուք: կմ ի. աւ. աց. օք: || կինճ, որ է խոզ վայրենի: ռամկ. [illegible]: Խորէն. Բ. գլ. 11: և Գ. գլ. 38: և [illegible]:

Վարազաթև: (Նախդրիւ հոլովի.) || նա՝ որ ունի զԹևս յեղեալս փշաձև մազից վարազաց. կմ որոյ Թևոց փետուրքն են խառնեալ [illegible]: Իսկ մերԹ նըշանակէ [illegible] Թևս. ըստ այնմ Սծբն. Է. Տեսի զի Թափեցան վարազաթեւք նը:

Digitized by Google

Վարազախառն: (Նախդրիւ հոլովի. և մերթ վարի իբրև զմակբայ.) ‖ խառն ընդ վարազուց, կամ ընդ վայրենի խոզից: Իսկ մերթ վարազանման. կմ վարազակերպ. և կմ համգոյն վայրենի խոզի, կմ դաղանի: 2. Մակ. 11. 11:

Վարազակերպ: ‖ տես զՎարազանման:

Վարազային. այնոյ. ով. ոց. ովք: ‖ տես ըզՎարազենի:

Վարազանման: (Նախդրիւ հոլովի.) ‖ նըման վարազի. կմ համգոյն վայրենի խոզի. և կմ վարազակերպ: Խորէն. յաղթարհագ:

Վարազաջեղ. ի. իւ. աց. օք: ‖ ուռօղ ջըջեղ վարազու. կամ որոյ ջիլքն են սաստիկ խիստ, և իբր վայրենի խոզի: Իսկ մերթ նշանակէ զայսպիսի խիստ և վարազային ջիլս. ըստ այնմ Մծբն. ժթ. Զօրացեալ յօրացեալ են վարազաջեղք չարին:

Վարազացուցանեմ. ացուցի. ացո. ել: (անցող.) ‖ իբրև զվարազ առնել. կմ վարազօրէն 'ի վր յարձակեցուցանել. կմ գազանացուցանել. կմ դժնդակացուցանել. և կմ ժանտացուցանել: Ոսկե. 1. հատ. [illegible]:

Վարազենի. նւոյ. ենաւ. եաց. եօք: ‖ վարազային. կմ այն ամ, զոր ունի վայրենի խոզն. կմ որ 'ի նմանէ յառաջ գայ. և ըստ այսմ մասնաւորապէս վարազենի կոչի միսն, կմ մորթն վարազու:

Վարազօրէն: (մակբայ.) ‖ ըստ օրինակի վարազի. կմ իբրև զվայրենի խոզս, և կմ վարազակերպ: 'Ի հին պատմագիրս:

Վարակեմ. եցի. եա. ել: (Ներգործական, որոյ կրաւորականն բազմիցս վարի իբրև ձայնակր.) ‖ զգածել. կմ պատել. կամ շաղել. կմ պարաւանդել. կմ մածանել. և կմ լինել. և ըստ այսմ ասի, վարակել ցաւօք. յանցանօք. ստամբք. քրձօք. կմ հերօք. և կմ վարակեալ 'ի մեղս. յորոգայթս. 'ի կապանս. և այլն: Յօբ. 30. 14: Առակ. 28. 18: Իմաստ. 13. 13: Նարեկ. [illegible]:

Վարակեցուցանեմ. եցուցի. եցո. ել: (Ներգործ.) ‖ տես 'ի վեր զՎարակեմ:

Վարակումն. կման. մամբ. մանց. մամբք: ‖ զգածումն. կմ պատումն. կմ շաղումն. կմ առգորումն. և կմ լցումն վիրօք, կամ ստամբք. և այլն:

Վարան. կմ վարանք. աց. օք: (վարի մանաւանդ իբրև զանեզական.) ‖ վարանումն, որ է տարակուսանօք հոգալն զնմքէ. կմ տատանումն մտաց. և կմ աղմուկ սրտի յաղագս ոչ գտանելոյ զելս իրաց. և կմ տարակուսութի. և առասցաւ վարան, ըստ որում սովոր միտք մարդոյ միշտ վարի այսր և անդր: ռամկ. [illegible]. կմ [illegible]. կմ [illegible]: Յուդիթ. 7. 12. և 25: 2. Մակ. 14. 42: Ոսկե. 1. հատ. [illegible]: Եւ յայսմանէ առեալ երբեմն նշանակէ ապշութի մտաց. կամ ցնորք, որով ցնդին միտք մարդոյ, և ոչ գիտէ զինչ խօսի. որ լինի բազում անգամ արբեցողաց: ռամկ. [illegible]: Առակ. 23. 29: Իսկ երբեմն է բայի շարակցի այսպէս, 'ի վարանս մտանել. և նշանակէ վարանիլ, զոր տեսցես զկնի: 3. Մակ. 5. 23: Ոսկե. 1. հատ. [illegible]:

Վարանակամ: (Նախդրիւ հոլովի.) ‖ ունող զկամս, կմ զմիտս վարանեալս. կամ որ ունի զանհաստատ սիրտ:

Վարանական. ի. աւ. աց. օք: ‖ այն ամ, որ վերաբերի առ վարանումն. կմ վարանեցուցիչ. կմ վարանելի. և կմ վարանեալ: Նարեկ. [illegible]: Եւ յայսմանէ առեալ՝ վարանական կոչի տեսակ ինչ մակբայի, որ 'ի գործ ածի 'ի վարանիլն, որպիսիք են աքա. գէթ. գոնէ. և այլն: 'Ի հին քերականութե:

Վարանեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) ‖ վարել. կմ քարշելով տանիլ. և կմ բռնութբ ածել: ռամկ. [illegible]. կմ [illegible]: Առակ. 7. 21: Եւ 'ի Հարց. [illegible]. ուր ասի. Վարանեալ յայլոց ազգաց՝ եկն խոստովանեցաւ, կամ վարեալ 'ի դիւաց: Իսկ մերթ նշանակէ դարան գործել. կմ դաւաճանել. և կմ նենգել: և ըստ այսմ ասի վարանել զոք 'ի ճանապարհի, կամ յայլ իրս: 1. Մակ. 5. 4: Իմաս. 14. 24: [illegible]. 7: Դարձեալ նշանակէ վարանեցուցանել. զոր տեսցես զկնի:

Վարանեցուցանեմ. ցուցի. ցո. անել: (անցող.) ‖ 'ի վարանս արկանել. կմ տատանեցուցանել տարակուսանօք զմիտս ուրուք. կմ աղմկել զսիրտս տարակուսութբ և շուարմամբ: ռամկ. [illegible], կմ [illegible]. կմ [illegible] ընել փալ: Լամբրոն:

Վերանորոգեմ. եցի. եա՛. ել: (ներգործ.) || վերստին նորոգել. կմ' 'ի նորոգութիւն ածել. կմ' զխանգարեալն յառաջին որպիսութիւն դարձուցանել: 'Ի Շարականս:

Վերանուիրեմ. եցի. եա՛. ել: || տե՛ս զՎերընծայել:

Վերանստիմ. տայ. տեալ. իլ: (ձայնակր.) || նստիլ 'ի վր. և կմ' բազմիլ. և ը այսմ ասի՝ վերանստեալ յաթոռ. կմ' 'ի վիմի. և կմ' յաւանակի: 'Ի Շարականս:

Վերանցեալ. ելոյ. ելով. ելոց. ելովք: || 'ի վեր անցեալ. կմ' վերակարգեալ. կմ' գերազանցեալ. և կմ' գերագոյն: 'Ի Գիրս Դիոն-Բի անուանցն:

Վերաշրջական. ի. աւ. աց. օք: || այն՝ որ շրջի 'ի վերին տեղւոջ. կմ' վերաբերի առ վերին շրջանս. որպիսիք են թաւալմունք կամարաց երկնից. և յայսմանէ առեալ երբեմն նշանակէ՝ երկնային. կամ վերնական, կմ' գերակայ. ըստ այսմ Նարէկ. ղդ. վերաշրջական՝ հրաշափառ խորհրդոյ պատկեր:

Վերաչափութիւն. թեան: || չափումն վերնոց, կմ' երկնայնոց. ո՛պ՝ աստեղաց, երկնային պարունակաց, կմ' բարձրութե օդոյ: Խորէն. յաշխարհագրութէ:

Վերաչուեմ. եցի. եա՛. ել: (չէզոք.) || 'ի վեր չուել. կմ' փոխիլ 'ի բարձունս. և կամ վերանալ. ըստ այսմ Նարէկ. 'ի գով. խաչին. Թևօք թեթևութե հոգւոյն սլացեալ յիմանալեան վերաչուեցեր:

Վերապատուէլի. լւոյ. եաւ. եաց. եօք: || մեծագոյն յարգութե պատուելի. և կմ' մեծայարգոյ:

Վերապատուեմ. եցի. եա՛. ել: (ներգոր.) || գերապատուել, ք գերագոյն մեծարանօք պատուել. կմ' յոյժ յարգել. և կամ մեծապէս փառաւորել: Յհ ոսկ: և 'ի Շարականս:

Վերառաքեմ. եցի. եա՛. ել: (ներգործ.) || 'ի վեր առաքել. կմ' վերընծայել. կամ յղել: ռամկ. վէր ղրկել: 'Ի Շարականս:

Վերառեալ. ելոյ: || 'ի վեր առեալ. կամ 'ի վեր ընկալեալ. կմ' վերացուցեալ. կամ բարձրացեալ. և կամ բարձեալ: 'Ի Շարականս:

Վերառուցեմ. եցի. եա՛. ել: (ներգործ.) || 'ի վեր առնուլ. կմ' վերացուցանել: Ոսկէ. 'Ի Վերջաբանութեան:

Վերասահմանեմ. եցի. եա՛. ել: (ներգոր.) || 'ի վերին. կմ' 'ի նախկին ժամանակաց սահմանել. կմ' կարգել. և կմ' նախանկարել: Նարէկ. ղզ:

Վերասլանամ. ացայ. ացի՛ր. անալ: (ընդ. միջ.) || 'ի վեր սլանալ. կմ' վերաթռչել. և կմ' թռչելով վերանալ: ռամկ. վէր թռչիլ: Նարէկ. 'ի յիշատակարան: և Յհ ոսկ:

Վերաստեղծեմ. եղծի. ծեր. եա՛. ել: (ներգործ.) || վերստին ստեղծանել. կմ' վերստին կազմել, կմ' ձևացուցանել: 'Ի Շարականս: Իսկ մերթ հնարել: ըստ այսմ 'ի Գիրս Դաւթի անյաղթին. Որչափ ինչ մերս վերաստեղծէ մտածութիւն:

Վերաստեղծում. ստեղծի. ծեր. ուլ: || նոյն է ընդ վերնոյն:

Վերաստեղնեմ. եցի. եա՛. ել: (ներգործ.) || 'ի վեր, կմ' վերստին ստեղնել. ք բողբոջեցուցանել, կմ' բուսուցանել:

Վերասքօղեմ. եցի. եա՛. ել: (ներգործ.) || արկանելով 'ի վերայ զծածկոյթ ինչ սքօղել. կամ շրջապատելով ծածկել: Նարէկ. ղզ:

Վերատեսուչ. սչի. աւ. աց. օք: || նա՛ որ վերակացու լեալ՝ տեսչութի առնէ՝ կմ' վերադիտող. կմ' հոգաբարձու. կմ' խնամակալ. և կմ' պաշտպան: Նարէկ. 'ի գով. առաքելոց: և Լամբրոն: Իսկ մերթ տնտես՝ կմ' մատակարար: Նարէկ. ծզ:

Վերատրական. ի. աւ. աց. օք: || վերատրեալ. կմ' որ վերատրի, ք հատուցանի: Իսկ մերթ վերատրող. կմ' հատուցանող. և կամ տուօղ իւրաքանչիւրոց ըստ պատշաճի: 'Ի Գիրս Գրիգորի Ածաբանին:

Վերատրեմ. եցի. եա՛. ել: (ներգործ.) || վերստին տալ. կմ' անդրէն դարձուցանել. և կամ հատուցանել: Մերթ ևս 'ի վր ածել. և կմ' յաւելուլ: Սակայն բայս այս հազիւ երբեք 'ի գործ ածի:

Վերատրութիւն. թեան: || վերստին տալն. կմ' հատուցումն: Իսկ մերթ 'ի վր յաւելումն. կամ յաւելուած: 'Ի Գիրս Գրիգորի Ածաբանին:

Վերարկեմ. եցի. եա՛. ել: (ներգործ.) || ը վերարկուաւ արկանել. կմ' սքօղել. կամ ծածկել. ը այսմ Նարէկ. եր. Հանճարեղքն վերարկեսցեն զամօթս իւրեանց:

Վերարկու. կուի. աւ. աց. օք. ‖ Այն զգեստ, զոր արկանեն ՚ի վերայ առ ՚ի ծածկել. և ըստ այսմ ծածկարան անկողնոյն՝ կոչի վերարկու նորա։ ռամկ. եօրղան։ ՚ի Գիրս Ծննդոց։ Սոյնպէս և ծածկոյթն, զոր արկանեն կանոյք զանձամբ, կամ զգլխով՝ վերարկու ասի. ըստ այնմ Ռութ. 3. հատ. Է. Կին յոր ժամ բաց գլխով կանգնի՝ վաղվաղակի վերարկու արկանէ զխուացն։ ռամկ. Գլխու ծածկոց։ Ըստ այսմ և հանդերձն, զոր արկանեն ՚ի վերայ ձիոց ընդ թամբիւք նոցա, վերարկու անուանի։ ռամկօրէն. Չուխօզ։ Բայց մասնաւորապէս վերարկու կոչի ձորձն, զոր արկանեն մարդիկ զանձամբք իւրեանց առ ՚ի ծածկել. և մանաւանդ այն, զոր առնուն ՚ի վերայ պարեգօտին, զի կոչոյին՝ իբրև զվերջին ագանել իք։ ռամկ. Վերայի լաթ. կամ Լացապայ. կամ Եաղմուրլուխ. կամ Փէրաճի. և այլն։ Եզեկ. 22. 27։ Սաղմ. 101. 27. և 103. 6։

Վերարկութիւն. թեան։ ‖ ՚ի վերայ արկումն ըզգեստու. կամ այլ ինչ իրի. կամ ագանումն. և կամ ծածկութիւն։ Նարեկ. ԺԸ։

Վերարձակութիւն. թեան։ ‖ ՚ի վեր արձակումն. կամ առաքումն. կամ ՚ի վեր գնացումն. կամ ՚ի վեր ելումն. և կամ հանումն։ և ըստ այսմ ասի՝ վերարձակումն աւուրց. կամ շնչոյ։ Նարեկ. կա. և ձբ։

Վերացեալ. ելոյ. ով. ոց. ովք։ ‖ ամբարձեալ. կամ բարձրացեալ։ Բայց ըստ փի լիսոփայից նշանակի առաւել այն զգեստ, որ մեկնեալ և զատուցեալ է յնիւթականէն, որ ունի զանեալ, որպէս ներհակաբար թանձրացեալ կոչի այն զգեստ, որ նշանակի ենթակայիւն հանդերձ. և ըստ այսմ վերացեալ անուանեսցի զատեալ. արդարութիւն, մարդկութիւն. անձնաւորութիւն. և այլն։ Իսկ թանձրացեալ՝ զայսպիսիք. արդար. մարդ. անձն։

Վերացումն. ցման. մամբ. մանց. մամբք։ ‖ ՚ի վեր ելումն, կամ բարձրացումն. և կամ համբարձումն։

Վերացուցանեմ. ացուցի. ացո. անել։ (ան ցող.) ‖ ՚ի վեր առնուլ. կամ ամբառնալ զինչ. կամ բարձրացուցանել, կամ բառնալ. և կամ ՚ի բաց բառնալ։ ռամկ. վերցնել։ 4. Թագ. 2. 1։ և 6. 7։ Եսայ. 53. 11. և 12։ Իսկ յայս մանէ առեալ ՚ի վերաքաղելով ասացեալն զարմիւն նաւուն, ասի՝ առաւաստ վերացուցանել։ ռամկօր. Եէլքէն բանալ։ ՚ի Ճառընտր. ԺԴ։

Վերափոխեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) ‖ ՚ի վեր փոխել, կամ ՚ի բարձունս տանել, և կամ բարձրացուցանելով յերկինս տանիլ։ ՚ի Ճառընտր։

Վերափոխիմ. եցայ. եաց. իլ։ (Ձայնական.) ‖ փոխիլ ՚ի վեր, կամ փոխադրիլ ՚ի բարձունս, կամ յերկինս։ ՚ի Ճառընտր։

Վերափոխումն. խման. մամբ. մանց. ամբք։ ‖ փոխումն ՚ի վեր, կամ փոխադրութիւն ՚ի բարձունս, կամ յերկինս։

Վերաքարոզ։ (Նախադրիւ հոլովի.) ‖ քարոզող, կամ հռչակող. ըստ այնմ Ոսկ. 1. հատ. ԼԷ. Բազում համարձակութիւն է բանն և վերաքարոզ լինելոյ՝ բարեգործին։

Վերաքարոզեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) ‖ Մեծապէս կամ յայտնապէս քարոզել, կամ հռչակել. և կամ հրատարակել։ ռամկ. չափ ընել։ Նարեկ. ՚ի Գովք. խաչ։ և Ոսկ. 1. հատ. ԼԷ։

Վերբերական. ի. աւ. աց. օք։ ‖ վերաբերական. կամ այն զգեստ, որ վերաբերի առ ինչ. կամ որ վերաբերէ զեր ինչ. և կամ վերբերիչ։ Բայց ըստ հին քերականաց վերբերական կոչին անուանք, որք բերեն, կամ ցուցանեն զնմանութիւն, կամ զհաւասարութիւն. որպէս, որքան. այսպիսի. այնչափ. այսքան։

Վերբերիչ. րչի. աւ. աց. օք։ ‖ վերաբերող. այս ՚ի վեր բերող, կամ ՚ի լոյս ածող, կամ յայտնի ցուցանող։ Իսկ մերթ ՚ի վերայ իւր բարձող, կամ կրող. և ըստ երկուցս ևս նշանակի այն, որ ասի ՚ի ճառընտրն զՔ(րիստո)ս հրաշակերտն սահակայ. Վերբերիչ վարուց բարեաց։

Վերբերութիւն։ ‖ Նոյն է ընդ բառին վերաբերութիւն, այսինքն պարզամտութիւն ընդ բաւուին պարզամտութիւն։ Նարեկ. ՀԷ։

Վերբերումն։ ‖ տես զՎերաբերումն։ Նարեկ. ՚ի Գովք. խաչին։

Վերբերող. ողի. իւ. աց. օք։ ‖ Նոյն է ընդ բառիս վերբերիչ, որ է ՚ի վեր բերող, կամ ՚ի լոյս ածող։ Իսկ կամ բարձող, կամ կրող. ըստ այնմ ՚ի ճառընտր. բերելով զբոլորեցուն զվերբերողդ, այս կրելով յինքեան զբարձողդ ամի, որ է որդին միածին։

Վերելակ. կամ վերելեակ. ակի. աւ. աց. օք։ ‖ ՚ի վեր ելանող, կամ ամբարձող։ Իսկ յայս մանէ առեալ մասնաւորապէս նշանակէ զհեծեալն, կամ զձիաւորն. ըստ որում յայտնի է նմա ելանել յերիվար։ ՚ի Ճառընտր։ Սոյնպէս և քա՝ ըստ որում ելեալ բազմեցաւ ՚ի վերայ խաչին, այսինքն հեծեալն ՚ի վերայ երիվարի, այլաբանութեամբ վերելեակ կոչի։ Իսկ ևս վերելեակ ասի նաւաստուն. զի որում ելեալ մտանէ ՚ի նաւ. Դարձեալ նշանակէ զգործիս ՚ի վեր ելանելոյ, կամ զվերելս. և ըստ այսմ առ եկեղեցականս վերելեակ կոչեն սաղմոսքն պարտանակէնք յաւիտենորդ կանոնին, ըստ որում բաւական ՚ի նոցանէ են սաղմոսք աստիճանաց, իբր թէ վերելից։ Դարձեալ, ՚ի հնումն պայծառ սաղմոսասացաւ ՚ի վերայ աստիճանաց եկեղեցւոյ. իբր ՚ի վերայ վերելից. յորմէ և կոչեցան վերելեակք։

Վերելակեմ. եցի. եա. ել։ (Չէզոք.) ‖ վերելակ լինել, կամ ՚ի վեր ելանել։ ռամկ. վեր ելլել. և ըստ այսմ ասի՝ ամբարձեալ կոչեցեալ ՚ի պատուհանն, կամ յայլ տեղի ինչ. ՚ի հեծ աղաւնակերս։ Իսկ մերթ հեծանել, կամ ելեալ նստիլ ՚ի ձի, կամ մտանել ՚ի նաւ։ ռամկ. հեծնել։ ՚ի հին պատմագիրս։

Վերելեակ։ ‖ տես զՎերելակ։

Վերելք. ելից. իւք։ (անեզական.) ‖ ՚ի վեր ելումն, կամ ճանապարհ ՚ի վեր ելանելոյ.

Նարեկ.

Նարեկ. խը։ և Շնորհալին։ և Լամբրոն։

Վերերգեմ. եցի. եա՛. ել։ (Ներգործ.) || երգել 'ի վեր, կամ վերապատմելով նմանագել ումեք զօրհնութիւնս, և կամ երգաբանել. 'ի շարականս։

Վերերեւիմ. եցայ. եա՛ց. իլ։ (Հայնակր.) || 'ի վեր երեւիլ, կամ 'ի վեր ելանել, կամ բուսանիլ, և կամ բղխիլ։ Նարեկ. կե. և ղէ։

Վերերեւոյթ. ութի. իւ. ից. իւք։ || վերին, կամ արտաքին երեւոյթ. կամ երեւք իրաց, որ և կոչի մակերեւոյթ. և ըստ այսմ առ՝ գտանել միայն զվերերեւոյթն. 'ի գիրս Տօ-ւոբէնց։ Իսկ մերթ վարի իբրև զմակբայ, և նշանակէ առ երեսս, կամ ոչ 'ի ներքուստ և 'ի սրտէ, և կամ վեր 'ի վերոյ, ըստ այնմ 'ի Հոր հարց. իա. Զանեցի կաւոյն վերերեւոյթ, և ակամայ։

Վերընդունակ. ի. աւ. աց. օք։ || 'ի վերայ իւր ընդունօղ, կամ բարձօղ. կամ 'ի վեր ունօղ, կամ 'ի վեր բարձօղ. և ըստ այսմ 'ի Նարեկ. ղզ. խաչն կոչի վերընդունակ քն։

Վերընդունիմ. իլ։ || տես զՎերընկալնում։

Վերընծայեմ. եցի. եա՛. ել։ (Ներգործ.) || 'ի վերընծայել. կամ մատուցանել 'ի բարձունս. և կամ նուիրել։ Նարեկ. ղթ։

Վերընկալ. ի. աւ. աց. օք։ || 'ի վեր իւր ընկալնօղ. կամ 'ի վեր բարձօղ. և կամ յինքն կրօղ. և ըստ այսմ խաչն, և որք ծածկին ասին վերընկալք քն։ Աճգոբ։ և 'ի շարականս։

Վերընկալնում. ընկալայ. կա՛լ. նուլ։ (Ներգործ.) || 'ի վեր ընկալնուլ. կամ կալնուլ. և կամ ունիլ. ըստ այնմ. Նարեկ. 'ի գովս առաք. Զընակութիւն վեհին զփակեալս վեր ընկալայք։

Վերընկալուչ։ (Նախդրիւ հոլովի.) || վեր ընկալ. կամ ընդունակ, և կամ ընդունօղ. և ըստ այսմ առ, վերընկալուչ լինել ապականաց, կամ փառաց։ 'ի հին պատմագիրս։

Վերընձիւղեմ. կամ վերընծիւղեմ. եցի. եա՛. ել։ (Ներգործ։) || 'ի վեր ընձիւղել. կամ 'ի վեր բողբոջել։

Վերընձիւղիչ։ (Նախդրիւ հոլովի.) || 'ի վեր ընձիւղօղ. կամ բողբոջօղ. և կամ 'ի վեր բուսուցանօղ։ Նարեկ. 'ի գովս առաք։

Վերընձիւղումն. կամ վերընծիւղումն. ղման. մամբ. մանց. մամբք։ || 'ի վերընձիւղումն. կամ 'ի վեր բողբոջումն։ Լամբրոն։

Վերին. վերնոյ. վերնումն. ով. ոց. ովք։ || այն տեղ, որ 'ի վերոյ է, կամ վերնային. և կամ վերնագոյն. որոյ ներհակն կոչի ստորին։ ռամկ. վէրի։ Ծննդ. 40. 17։ 2. Օրէն. 24. 6։ Իսկ մերթ եթերական. կամ երկնային. և կամ երկնաւոր։ Կողոս. 3. 2։ Նարեկ. հէ։ Բայց մինչ առ՝ զվերինն ներքին առնել, և զներքինն վերին, նման է վեր 'ի վայր շրջել։ ռամկ. ներքեւ վրայ ընել։ 2. Մակ. 9. 8։

Վեր 'ի վայր։ (մակբայ.) || 'ի վեր և 'ի վայր. կամ առ և անդ. կամ յամ տեղւոջ. և կամ յամ ուրեք։ Ոսկէ. 1. հատ. է։ Եւ 1. հատ. ժէ. առ. որ զյօղհանն ես երանելի վեր 'ի վայր շրջեցէ. թէ յամ ուրեք 'ի մէջ բերէ։ ըստ այսմ ոճի է, և 1. հատ. իժ. ուր առ, 'ի վեր և 'ի վայր զվկայութիւնս տարաբերէք։ տաճկ. Եօգարը աշաղը։ Գործել բաղում անգամ վարի առ ընդ բայի այսմ, վեր 'ի վայր շրջել. կամ վեր 'ի վայր կործանել. և նշանակէ զվերին կողմն ստորին առնել. որով բազում անգամ նշանակի ամենևին խանգարել, շփոթել. և ապականել զնա։ ռամկ. ներքեւ վրայ ընել։ Ոսկէ. 1. հատ. ը։

Վեր 'ի վերոյ։ (մակբայ.) || առ վերին կողմամբ, կամ առերեսաք. կամ մակերեւութաբար. և կամ ոչ 'ի խորս իջանելով. և ըստ այսմ առ՝ վեր 'ի վերոյ արկանել զհնձն. կամ զարմատս. և կամ վեր 'ի վերոյ տնկել, սերմանել. և այլն։ ռամկ. Էրէօւէն։ Ոսկէ. 2. հատ. է։ Եւ յայսմանէ առեալ երբեմն նշանակէ՝ հարևանցի՝ կամ վերերեւութաբար. կամ առանց ունելոյ զփոյթ. կամ ոչ 'ի սրտէ և ոչ իսկութե, այլ իբր առաւօք. և ըստ այսմ առ, վեր 'ի վերոյ ողջունել, խօսիլ. կամ յարգել. և կամ վեր 'ի վերոյ և ակամայ առնել զգործ ինչ։ ռամկ. Էրէսանը. կամ ճըրնճըղը։ 'ի Հոր հարց. ժա։ Իսկ երբեմն վարի իբրև զանուն, և նշանակէ զայն, որ լինի առաւկանէ, կամ որ է հարևանցի. կամ վերերեւութական. և կամ կեղծական։ ռամկ. [illegible]. և թէ այսմ առ, վեր 'ի վերոյ բանիւք խնդալ, կամ գովել. և այլն։ 3. Մակ. 3. 11։

Վերլուծական. ի. աւ. աց. օք։ || այն ինչ, որ վերլուծանէ, կամ յորում իմն վերլուծեալ լինի. թէ բաժանի 'ի մասունս, որպիսիք են ըստ փիլիսոփայից տանիք 'ի նախադասութեանց, կամ 'ի ձեռնարկութեանց. ոպ այս, մարմին մարդոյ բաժանի 'ի միս, յոսկերս, 'ի ջիլս, յերակս, և 'ի ներարգս. իսկ արձանդ այդ ոչ բաժանի. յապարբեմն ոչ է մարմին մարդոյ։ 'ի գիրս տրամբ. անդաղբին։ Իսկ մերթ մեկնական, կամ բացատրական։

Վերլուծանեմ. լուծի. եա՛. ել։ (Ներգործ.) || զբաղադրեալ ինչ լուծանել, կամ բաժանել 'ի մասունս, որպէս՝ զմարմին մարդոյ յոսս, 'ի ձեռս, 'ի գլուխ, և այլն։ Եւ կամ ըստ փիլիսոփայից զառաջարկութիւնս, թէ զնախադասութիւնս 'ի յեզերս, որք են բառքն։ 'ի գիրս տրամբ. անդաղբին։ Գործել՝, նշանակէ՝ մեկնել, կամ պարզել, և կամ բացատրել։ Յնորդին։

Վերլուծեմ. եցի. եա՛. ել։ (Ներգործ.) || նոյն է ընդ վերնոյն։

Վերլուծութիւն. թեան։ || լուծումն, կամ բաժանումն բաղադրեցելոց 'ի մասունս, ոպ մարմնոյ 'ի չորս տարերս, և տարերաց 'ի նիւթ՝ և 'ի տեսակ. 'ի գիրս տրամբ. անդաղբին։ Իսկ մերթ՝ մեկնութիւն, կամ բացատրութիւն, և կամ պարզաբանութիւն։ 'ի գիրս տրամբ. անդաղբին։

Վերծանեմ. եցի. եա՛. ել։ (Ներգործ.) || քաջ ծանօթանալով հասու լինել ընթերցուածոց, կամ բարւոք ընթերցմամբ առեղեկանալ գրոց. ըստ այնմ՝ Նարեկ. ղթ. Զի

որ ընթերցցի, և վերծանիցէ զայս պատճէն տառի, հոգւով քով լցցի: Եւ յայսմանէ առեալ յաճախ նշանակէ ընթեռնուլ, կմ՛ արուեստաւոր և քաջ ընթերցմամբ արտաբերել զշարագրութիւն գրոց. ռամկ. խօրդալ: Յհ օրհն: և 'ի Գիրս Թծին խոսրովու:

Վերծանութիւն. թեան: || քաջ ծանօթութիւն ընթերցուածոց, կմ՛ գրոց, կմ՛ ընթերցողութիւն, կմ՛ դպրութիւն: Խորէն. գ. գլ. 61: Իսկ մերթ ընթերցումն, կմ՛ անվթար արտաբերութիւն շարագրութեանց գրոց: Լամբրօն: և 'ի Գիրս Թծին խոսրովու:

Վերծանօղ. ողի. իւ. աց. օք: || քաջ ծանօթացօղ գրոց, կմ՛ ընթերցօղ: ռամկ. խօրդացօղ: Յհ օրհն: Եւ Նորէկ. Իը. ուր ասի՝ բանիւ մաղթանաց վերծանողաց այսմ մատենի ազօրմեմ:

Վերձեմեալ. ելոյ. ով. ոց. ովք: || 'ի վեր ձեմեալ, կմ՛ վերաչուեալ. կմ՛ վերասլացեալ: 'Ի Շարականոցի:

Վերմ. ի. իւ. եց. օք: || վերին, կմ՛ վերնական, և կմ՛ վերնային: 'Ի սմանէ ծագի բառս՝ վերմակ, ոմ 'ի բառէն դէմ, դիմակ: Նաև բառս՝ վերմնբարձ, ոմ 'ի լծոյ լծնբարձ:

Վերմակ. ի. աւ. աց. օք: || ծածկարան անկողնոյ, որ է ծածկոյթն, զոր 'ի մտանելն յանկողին՝ առնումք 'ի վր մեր, յորմէ և կոչեցաւ վերմակ, որ ստուգաբանի վերին: ռամկ. Եօրղան:

Վերմնբարձ. կմ՛ վերմնբարձ: || տես զՎերամբարձ: 'Ի Հին պատմագիրս:

Վերյուղարկեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || 'ի վեր կմ՛ 'ի վերուստ՝ յուղարկել. և կմ՛ 'ի վր առաքել: Նորէկ. ղե:

Վերնաբերձ: (Նախդրիւ հոլովի.) || վերամբարձ. կմ՛ բարձրաբերձ. կմ՛ բարձրաւանդակ, և կմ՛ բարձրադիտակ:

Վերնաբնակ: || տես զՄակաբնակ:

Վերնագաւառ. ի. աւ. աց. օք: || վերին գաւառ, կմ՛ վերնագոյն աշխարհ: 'Ի հին պատմագիրս: ըստ այսմ և 1. Մակ. 3. 37: և 6. 1. Վերնագաւառ կոչէին նկատմամբ երկրին յուդայ՝ աշխարհքն, որք յայնկոյս Եփրատայ:

Վերնագիր: || տես զՄակագիր. Խորէն. ա. գլ. 8:

Վերնագնաց: (Նախդրիւ հոլովի.) || 'ի վեր գնացօղ. կմ՛ 'ի բարձունս շրջօղ. և կամ երկնագնաց:

Վերնագոյն. գունի. իւ. եց. իւք: || առաւել վերին, և կմ՛ վերագոյն: ռամկօրէն [illegible]:

Վերնադիտակ. ի. աւ. աց. օք: || զվերինս դիտօղ. կամ զերկնայինս նկատօղ: Իսկ մերթ՝ բարձրադիտակ, զոր անուցեն 'ի տեղ ոչ իւրում:

Վերնադուռն. դրան. դրամբ. անց. ամբք: || վերին դուռն. կմ՛ մուտք կարգեցեալ 'ի վերնագոյն տեղւոջ: ռամկ. Վէրէ դուռ: Պ. արձեալ, վերնադուռն կոչէին ատհանքն, ք այնք դրունք, որք առաջի մեհից պարսպաց քաղաքի կախեալ կան պարանօք. կմ՛ շղթայիւք. և ատայան վերնադուռն, թ որում սովորութիւն է զօտա 'ի ամենջեան իջուցանել 'ի վր առաջիկայ խրամին, որով լինի իբրև զկամուրջ. և 'ի գիշերի վերացուցանել, որով փակին մուտքն ընդէմ յարձակմանց թշնամեայն: Զայսպիսի դրունս կարգէին 'ի հնումն նաև առաջի մեհից բանակաց, և մանաւանդ 'ի բերան անդնդային գբոյ. ք դանդաղայուն, ուր արկանէին զմեծեղեան կալանաւորս, յորմէ և երբեմն բոլոր գուբն վերնադուռն անուանիւր, իբր թէ՝ ամնօղ վերամբարձ դրան. և թ այսմ է Երեմ. 20. 2. և 3. յորս ասի. Արկել զնա 'ի վերնադրանն. կմ՛ եհան 'ի վերնադրանէ անտի: որպիսի է և 29. 26. ուր ասի, տացես ըզնա յարգելան վերնադրանդն. ք վերնադրանըդ. զի ն տառն վրիպմամբ է մտեալ: Պ. արձեալ՝ վերնադուռն անուանին գանաձև փակքն մեհից կրպակաց, կմ՛ վերելից սանդղոց, և կմ՛ ձեղունայանից, զորս 'ի բանալն՝ 'ի վեր ամբառնան, և 'ի փակելն 'ի վայր իջուցանեն: որք և անուանին սահանք, ըստ որում 'ի ժամ փակելոյն 'ի ստորև սահին: ռամկ. փափանք. կմ՛ փէփէնք:

Վերնաթռիչ: (Նախդրիւ հոլովի.) || 'ի վեր թռչօղ. կմ՛ 'ի բարձունս թռանօղ. և կմ՛ յերկինս սլացօղ: ռամկ. վէր Թռչօղ: Նորէկ. 'ի գով. խաչին:

Վերնալոյս: (Նախդրիւ հոլովի.) || ունօղ զվերնային, կմ՛ զերկնային լոյս. կմ՛ 'ի վերուստ լուսաւորեցեալ. և կմ՛ գերբնական լուսով ճոխացեալ: Նորէկ. ղդ:

Վերնախաղ. ի. իւ. եց. օք: || է խաղ ինչ երաժշտական, որ ուղիղ ելեալ՝ սկսանի 'ի վերնակողմանն ճկճկելով խաղալ. յորմէ և կոչեցաւ վերնախաղ. որ է այս. [illegible]:

Վերնախարխախ. խարխախի. աւ. աց. օք: || վերին խարխախ. զոր գնեն 'ի գլուխ սեան. զսա բուն անուամբ կոչեմք խոյակ: ռամկ. անգլուխ: Երեմ. 52. 18:

Վերնախնամ: (Նախդրիւ հոլովի.) || ունօղ յանձն զվերնային խնամս. կմ՛ 'ի վերուստ խնամեցեալ. կմ՛ աստուածային նախախնամութեան պաշտպանեցեալ: Իսկ մերթ այն ամ, որ վերաբերի առ վերին, կամ երկնային խնամս. կմ՛ որով ոք յայս նախախնամի. և թ այսմ նախախնամական հոգաբարձութիւն այս՝ կոչի վերնախնամ տեսչութիւն: 'Ի Շարականոցն:

Վերնական. ի. աւ. աց. օք: || վերնային. կմ՛ վերին: Իսկ մերթ՝ եթերական, կմ՛ երկնային. և կմ՛ երկնաւոր. որպիսի են հրեշտակք, և ամ զարդք երկնից: Նորէկ. Իը. և ղդ: Մծբն. ժդ:

Վերնակառոյց: (Նախդրիւ հոլովի.) || կառուցեալ 'ի վերին տեղւոջ, կամ կարգեցեալ 'ի բարձունս. և կմ՛ որոյ կառուցմունքն են երկնայինք. որպիսի է խորանն երկնից: Շնորհալին յողբն Եդեսիոյ:

Digitized by Google

Վերնակենցաղ: (Նախդրիւ հօլովի.) || կենցաղավարօղ ըստ վերնոց, կամ ունօղ ՚ի յերկրի զերկնային կենցաղավարութի՛ւ, և կմ որոյ վարքն է նման երկնայնոց, որ և ասի՝ երկնակենցաղ: ռամկ. հէնէշփէլիքլէ կեցօղ: Նարեկ. ծա:

Վերնակողմն. ղման. մանէ. մանց. մանէք: || վերին կողմն. կմ վերին կոյս: ռամկ. վէրի դէն: 3. Թագ. 4. 8: Իսկ մերթ՝ վերին սահման, կմ վերին երկիր. և ՟Է այսմ 2. Թագ. 9. 23. վերնադաճառքն, որք յայնկոյս Եփրատայ՝ վերնակողմն կոչին: Մերթ և նշանակէ զայն, որ է վերին կողմն, կմ որ է ՚ի վերին կողման. ռամկ. վէրի դէն եղածը. և ՟Է այսմ ասի՝ չու առնել ՚ի վերնակողմն կուսէ. կմ քանդել զվերնակողմն մեքենայսն:

Վերնահօս: (Նախդրիւ հօլովի.) || ՚ի վերուստ հոսեալ. որով մերթ նշանակի՝ գահավէժն. որ մեկնեցաւ ՚ի տեղւոջ իւրում: Իսկ մերթ՝ հեղեալ ՚ի բարձանց. կմ զեղեալ ՚ի յերկնից, որ և ասի՝ երկնահոսան, որպիսիք են շնորհ.ք: Նարեկ. ծբ:

Վերնաձեմ: (Նախդրիւ հօլովի.) || ձեմօղ ՚ի վերին տեղւոջ. կմ շրջօղ ՚ի վերնակողմն կոյս. և կմ երկնաձեմ:

Վերնամարտ. ի. իւ. ից. օք: || մարտնչօղ ԸԴ վերնոց, կմ մարտուցեալ ՚ի վերնայնոց: Իսկ մերթ այն ՟Է, յորում լինի մարտնչիլ, կմ հակառակիլ ընդ վերնականաց, կմ ընդ վերնոյն, ՟Է, ընդ ՟Այ. և ՟Է այսմ ասի՝ վերնամարտ մտածումն, կամ խորհուրդ. և այլն: Նարեկ. ղա:

Վերնամարտութի. թեան: || մարտ ընդ վերնականաց. կմ հակառակութի ընդ վերնոյն ՟Այ. որ է անօրէնութի: Նարեկ. ծա:

Վերնամիցանակ: (Նախդրիւ հօլովի.) || ընդունօղ ՚ի վերնոյն ՟Այ զմիցանակ, ՟Է ըզյաղթանակ կմ պսակեալ յաստուծուստ երկնային բրաբիոնիւ: Իսկ մերթ այն՝ որ է նշան յաղթութեն կանգնեալ ՚ի վերնագոյն տեղւոջ՝ իբրև զարձանագիր: ըստ այնմ Նարեկ. ղԴ. լիցի նշանակ վերնամիցանակ այս պարգևի: Գործեալ՝ նշանակէ զմիցօղն, կմ զմարտնչօղն ընդ վերնոյն, կմ ընդ վերնականացն: որ և ասի՝ վերնամարտ:

Վերնայարկ. ի. աւ. աց. օք: || վերին յարկ, ՟Է վերին դահլիճն, և կմ բնակարան, որ ունի ՚ի ներքոյ իւր շինեալ զմի, կմ զբազում յարկս, ՟Է, ղաթս, որ և կոչի վերնատուն: ռամկ. վէրի ղաթ: Երեմ. 22. 13: Եզեկ. 41. 7: ըստ այսմ և վերին կայանքն երկնից, որ առ ջրեղէն կամարաւ՝ ըստ որում է աշխարհիս իբրև զվերնատուն, նմանութբ կոչի վերնայարկ: Սաղմ. 103. 3: Եւ յայսմանէ նաև իւրաքանչիւր կամարքն երկնից՝ ըստ որում են վերինք՝ առ հասարակ վերնայարկ.ք անուանին: ԱՃգաբ: Իսկ մերթ նշանակէ զձեղունն, որ է ծածկոյթ տան, և նմանեաց՝ կառուցեալ ՚ի վերայ որմոց: ռամկ. տան ծածը: ՚Ի հին տպագրեալս:

Գործեալ երբեմն վարի առ իբրև զածական, և նշանակէ զայն, որ է ՚ի վերին յարկին, կմ զոր ունի վերին յարկն, և ըստ այսմ ասի՝ վերնայարկ սրահ, կամ կամար. և այլն: ռամկոր. վէրի ղաթը եղածը: Նարեկ. հե. և ղԴ. և ՚Ի փարդն Եկեղեցւոյ:

Վերնային. այնոյ. ով. ոց. ովք: || տես ըզ Վերնական: Նարեկ. հե. և զա:

Վերնանշոյլ: (Նախդրիւ հօլովի.) || ունօղ զնշոյլ վերնային լուսոյ, կմ երկնային ճառագայթիւք պայծառացեալ, և կմ վերնալոյս: Նարեկ. ղԴ:

Վերնաշարժ. ի. իւ. ից. իւք: || ունօղ զշարժումն ՚ի վերուստ. կամ շարժեցեալ ՚ի բարձունս:

Վերնաշաւիղ: (Նախդրիւ հօլովի.) || այն՝ որոյ շաւիղն է ՚ի բարձունս. կմ որով գնացեալ լինի ՚ի յերկինս. և ըստ այսմ ասի՝ վերնաշաւիղ սանդուխք: Նարեկ. զէ: Իսկ մերթ՝ երկնակենցաղ. կմ երկնակրօն:

Վերնապարգև: (Նախդրիւ հօլովի.) || ունօղ զվերնային, կմ զածային պարգևս. կմ ածային շնորհօք զարդարեցեալ: Իսկ մերթ ՚ի վերուստ պարգևեցեալ. կմ յաստուծուստ շնորհեցեալ. և ըստ այսմ ասի, վերնապարգև օգնականութի: Նարեկ. ղե:

Վերնատուն. տան. ամբ. անց. ամբք: || վերին տուն. կմ վերին յարկ. որ է բնակարան շինեալ ՚ի վր միջնատան, կմ ներքնատան: ռամկ. վէրի տուն. կամ վէրի ղաթ: Ծննդ. 6. 16: Տօբ. 3. 25: Ղուկ. 22. 12:

Վերնատունօղ. ողի. իւ. աց. օք: || ՚ի վերուստ տունօղ. կմ երկնային պարգևատու. որ ասի միայն զ՟Այ: Նարեկ. ղԴ: և ՚Ի ժամագիրսն:

Վերնափեղկ. ի. իւ. ից. իւք: կմ աց. օք: || վերին փեղկ. կմ ունօղ վերնոյ փեղկի: Բայց մասնաւորապէս առեալ նշանակի առլաւ մինն ՚ի չորից նուճարանաց, ՟Է ծածկութից՝ մաշկեան մեծակառոյց տաղաւարին, որք տարածեալ.ք ՚ի վերուստ՝ ծածկէին զնա իբրև զյարկ: Առաջինն էր կազմեալ ՚ի բեհեզոյ, ՚ի կապուտակէ, ՚ի ծիրանւոյ, և ՚ի կարմրոյ արուեստաւոր անկուածով, ՚ի տասն փեղկից վրանաձև, ուստի Ելից. 26. 1. կոչի խորան տասն փեղկեան. ՟Է վրանաձև ծածկոյթ ունօղ տասն փեղկս: Երկրորդն էր ՚ի մազէ այծեաց՝ գործեցեալ իբրև զքուրձ՝ մետասան փեղկիւք. և տարածեալ ՚ի վերուստ ՚ի վր առաջնոյն. վՐ որոյ Ելից. 26. 7: և 40. 17: և Թուոց. 4. 25. կոչի սոյնս վերնափեղկ: Երրորդն էր ՚ի շիկակարմիր մորթոյ այծեաց, որ արկեալ ՚ի վր քրձեղէն վերնափեղկին՝ վիժեալ լինէր, ՟Է հասեալ լինէր ՚ի խոնարհ. և վՐ այն. Ելից. 26. 14. կոչի՝ վիժակ: Իսկ չորրորդն էր կազմեցեալ ՚ի կապուտակ մորթոյ, որ տարածեալ կայր ՚ի վերուստ ՚ի վր այլոց երեցն, զորս իբրև ծածկոյթ ծածկութից պահպանէր ՚ի յանձրևոյ. և յայլոց պատահարաց: ՎՐ որոյ կոչի ՚ի 14. տանն ծածկեալք:

Վերնատ.

Վերնոտ. ի. ով. աց. օք: || վերնային. կամ վերնական. և ըստ այսմ վերնոտք կոչին այսքն պիղծք, որք բնակին 'ի խաւարչուտն կայանս օդոյ. ըստ այնմ, Կիւրղի Եղեմ. դ. ապա ելեալ 'ի վ՛ր տանեաց՝ զվերնոտ դևսն կոչէր: Պարզեալ վերնոտ կոչին ոմանք 'ի լուսնոտաց, որք չարաչար լլկին: Վ՛րդ ոմանք 'ի սոցանէ, որք 'ի լրման և 'ի նորման լուսնի՝ դառնապէս հիւանդացեալ 'ի մահիճս տառապին: Իսկ ոմանք կատաղեալ՝ յիմարաբար զա և զնա հարկանեն, և խորտակեն, և գործեն զոր ինչ ոչ է արժան: Եւ այլք յանկարծակի ցնորեալք, և յերկիր կործանեալք՝ չարաչար շարժլին, և փրփրին, և կրճտեն զատամունս: Իսկ այլք այլով իւիք ախտանան՝ իւրաքանչիւր ըստ աճման, և ըստ նուազման լուսնի. քանզի իջնելով լուսնին խոնաւութիւնն, 'ի լրմանն և 'ի նորին աճեցուցանէ՝ և յուզէ սաստիկ զխոնաւ հիւթսն մարդոյ զսևամաղձն և զմաղասն, և նոքօք վրդովէ զուղեղն, յորոյ աղմկելն սկսանի մարդ ցնորիլ, և 'ի պէսպէս ախտս անկանիլ. որում և բազում անգամ գործակից լինի դևն: Արդ՝ ախտաժէտքս այսոքիկ ըստ որում կրեն 'ի լուսնոյ՝ առ հասարակ լուսնոտ, կամ լուսնահար կոչին: Իսկ մանաւանդ որպէս նոքա, որք յերկիր անկեալ ցնորին, և արձակեն ընդ բերանն զփրփուրս, որք են ճենճերք սևամաղձին, վերնոտ անուանին, իբր թէ 'ի վերին ազդեցութենէ լուսնի կրօղք: ռամկ. խօսյլու. կմ՛ ճաղաջուրըլու: 'ի կանոնսն Եղիշէի:

Վերնոտիմ. եցայ. եա՛ց. իլ: (Հայնակր.) || վերնոտ լինիլ. կմ՛ ախտանալ զախտ վերնոտութե: ռամկ. խոսյլ. կմ՛ ճաղաջուրըլը բոնիլ:

Վերնոտութի. թեան: || Է տեսակ ինչ լուսնոտութե, որով ախտացեալքն ըստ աւուր մանեալ ժամանակի ամսոյ ցնորեալ յերկիր անկանին, և ընկնն՝ փրփուրս արձակելով 'ի բերանոյ. զորմէ ըստ այդոյն տեսցես 'ի բառն վերնոտ: ռամկ. խոսյ. կամ ճաղաջուրըլը:

Վերոդեմ. եցի. եա՛. եւ: (Ներգործ.) || 'ի վեր անդր, կմ՛ վերատին՝ ոգել. մ՛ ասել: Իսկ մերթ 'ի վ՛ր ասել. կմ՛ զումեքէ խօսիլ ինչ. կմ՛ ստորոգել:

Վերոգրեմ. կամ վերոյգրեմ. եցի. եա. եւ: (Ներգործ.) || 'ի վերոյ գրել. կմ՛ 'ի վեր անդր գծագրել: Լամբրոն:

'ի Վերոյ. (Նախադրութի, որ պահանջէ զսեռականն.) || 'ի վ՛ր. կամ 'ի վեր քան: ռամկ. Հըս: ըստ այնմ. Ծննդ. 1. 7. 'ի մէջ ջրոյն. որ էր 'ի ներքոյ հաստատութե. և 'ի մէջ ջրոյն՝ որ 'ի վերոյ հաստատութե: Իսկ մերթ վարի իբրև զմակբայ տեղականն. և նշանակէ՝ 'ի վեր անդր. կմ՛ վերագոյն, ոչ մինչ ասել, զորս 'ի վերոյ նը շանագրեցաք: Բայց երբեմն վարի անուանաբար իբրև զբացառական 'ի վեր բառախս, և նշանակէ 'ի վերնոյ: ըստ այնմ Եսայ. 36. 19. Արար զարտախուրակն 'ի վերոյ կողմանէ:

'ի Վերոյ քան: (Նախադրութի, որ պահանջէ զհայցականն.) || 'ի վեր քան. կմ՛ վերագոյն քան, կմ՛ գեր 'ի վերոյ քան, ոչ մինչ ասել, 'ի վերոյ քան զերկինս. կմ՛ 'ի վերոյ քան զնա. որ է անկից վէր: Ծննդ. 18. 2: 4. Թագ. 25. 28: Սաղմ. 8. 2:

Վերունակ. ի. աւ. աց. օք: || 'ի վեր ունող զինչ. կմ՛ վերընկալ. կմ՛ վերամբարձակ: ռամկ. վէր բռնօղ: Եւ յայսմանէ առեալ մանուածորաց վերունակ կոչին խեչակք. կմ՛ սարփինայք, ըստ որում զոստս ծառոց և զուռս որթոց՝ նեցուկ լինելով 'ի վեր կալնուն: ռամկ. փայտ:

'ի Վերուստ. կմ՛ վերուստ: || տե՛ս 'ի տառն Ի լինի 'ի կարգի բառում:

Վերջ. ի. իւ. ից. իւք: կմ՛ ոյ. ով. ոց. օք: || աւարտ, կմ՛ կատարած. կմ՛ վախճան. և կմ՛ զրաւ: տաճկ. սօն. ըստ այնմ Խորէն. գ. գլ. 47. Տեսեալ թէ 'ի վերջ է հասեալ թագաւորութեն հայոց: Իսկ մերթ՝ սառ րատ. կմ՛ եզր. կմ՛ ծայր: ռամկ. գէնար. կմ՛ ծոր. և ըստ այսմ վերջք անուանին ամ՛ ծոպք, ճեղենակք. և այլ ամ՛ բազմաթել ծայրք. կմ՛ բազմաճիւղ զարդք, որպիսիք են այնք, որք 'ի յետոյս, կմ՛ 'ի կատարս գլխանոցաց, կմ՛ սաղաւարտից՝ ագուցանին: ռամկ. փուլըս. կմ՛ փիւսկիւլ. կմ՛ ճղու: ըստ այնմ Խորէն. ա. գլ. 10. Գլխանոց ագուցեալ երկաթի նշանաւորս վերջօք. մ՛ ունող զնշանաւոր ճղոյս: ըստ այսմ վերջք կոչին նաև մազնատեսակ թելք կախեալք զախից. և զարմանոց. և այլն: Եւ յայսմանէ առեալ՝ Եսայ. 28. 14. և 22. և 30: և 39. 15. և 17. վերջ կոչին երկոքին ասկեթել կապքն հաստատեալք յերկոսին ծայրսն տախտակին դատաստանաց գործեալ շղթայակերպ հիւսմամբ օղ ընդ օղ շարամանելով. և իւր ծաղիկ ընդ ծաղկին հիւսելով. և վ՛ր այսորիկ անուանին ամ՛ մանուածոյ, հիւսակէն ծաղկէ՛, և շղթայագործ. զորմէ տեսցես և 'ի բառն վանհանակ: Եսայ. 28. 22. և 24: Պարզեալ՝ նշանակէ զվերջին կողմն. կմ՛ զվերջին մասն. և կմ՛ զյետին ծայրն, որպիսի է 'ի յանդաստանս՝ տուտն. որոյ ներհակն ասի՝ առաջ. կամ գլուխ: ռամկ. յէփի տէհ. կմ՛ յէփի ծոյր: Եսայ. 9. 14. և 15: Յովէլ. 2. 3. և 20: ըստ այսմ է և Յես. 10. 19: և 2. Օրին. 25. 18. ուր ասի. Եւ կոտորեաց զվերջն քո. մ՛ կոտորեաց զվերջին մասն պատերազմող զօրուն քո: Պարզեալ՝ նշանակէ զստորին կողմն կմ՛ զէջան 'ի խորս. և ըստ այսմ Խորէն. գ. գլ. 53. վերջ կոչի փորուածս, կմ՛ գրոշմ գրոց հայոց. զի ասի. Ոչ 'ի ձևան՝ վերջք գծլին ունէր քայլն. այլ ոչ 'ի միափուլ ձևան զփորուածս գրոց ընդունէր ինքն քարն: Զորմէ յայտնապէս ասի Յայսմաւուրս. Փորուածս գրին՝ ոչ 'ի ձևան ապաւորէր 'ի վ՛ր վիմին, որ էր հրաշական: Պարզեալ

Digitized by Google

ընդ բայի շարակցի այսպէս, վերջ առնուլ. և նշանակէ՝ վերջանալ. կամ աւարտիլ, կամ զրաւէլ: ռամկ. ըմընալ. կամ հատնիլ: Բայց երբեմն վարի առ խորև ըզ մակբայ, զոր տեսցես գլխի:

'Ի Վերջ: || յ՝ յետս. կամ 'ի բաց: ռամկ. յեփ: ըստ այսմ Խորէն. ա. գլ. 13: 'Ի յՃռագիրն. ընդդէմ պատահեալ տիգրանայ՝ արգելեալ 'ի վերջ նահանջէ. այսինքն յետս նահանջէ:

'Ի Վերջէ: || յ՝ 'ի վերջին կողմանէ. կամ 'ի թիկանց կուսէ. և կամ յետուստ. որոյ ներհակն կոչի յառաջոյ: ռամկ. Եփնէ տէն կամ Եփնէն: ըստ այսմ 1. Մնաց. 17. 7. Առի զքեզ 'ի վերջէ վանաց հովուաց. յ՝ առի 'ի վանաց 'ի վերջին կողմանէ հօտից. կամ թէ՝ 'ի յարածելոյ զհօտս. զի որ արածէ զխաշինս, գնայ զկնի նոց: Իսկ մերթ 'ի վախճանի. կամ զկնի. և կամ յետոյ, որոյ ներհակն առի՝ 'ի սկիզբն. կամ յառաջ. և ըստ այսմ առի՝ 'ի վերջէ դասել. ընթեռնուլ. գալ, մտանել. և այլն: ռամկ. Վէրջը. կամ Եփն: 'Ի Գիրս դատի անյաղթին:

'Ի Վերջկոյս: (մակբայ տեղական.) || յետ կոյս. կամ դէպ յետին կողմն. կամ 'ի թիկունս կոյս. և ըստ այսմ առի՝ 'ի վերջկոյս նահանջել զոք: 'Ի հին պտմագիրս:

'Ի Վերջս: || նոյն է [illegible] 'ի վերջէ: Գրոց անյաղթին: Եւ 'ի Սոփ. 2. հատ. խը. ուր առի, 'ի վերջս քան զամենեսեան գըրեաց, յ՝ զկնի ամենեցուն, որ է՝ հուսկ յետոյ:

Վերջադաս. ի. իէ. լից. լեք: || 'ի վերջն դասեալ. կամ զկնի կարգեալ. և կամ յետադրեցեալ:

Վերջադասեմ. եցի. եա՛. ել: (ներգործ.) || 'ի վերջս դասել. կամ զկնի զետեղել. կամ ստորակարգել. և կամ յետադրել:

Վերջադարձ: (նախդրիւ հոլովի.) || 'ի վերջ դարձեալ. կամ ընդ կրունկն շրջեալ. և կամ յետս դարձող: ռամկ. յեփ դարձող. կամ յեփ դարձօղ:

Վերջադարձիմ. եալ. իլ: (ձայնակր.) || վերջադարձ լինիլ. կամ յետս դառնալ. կամ ընդ կրունկն գնալ: ռամկ. յեփ դառնալ: և ըստ այսմ առի 'ի ճառս ինչ, 'ի յարութէն առ ծնունդն վերջադարձիլ անկարելի է:

Վերջադարձութի. թեան: || յետս դարձումն. կամ 'ի թիկունս կոյս դառնալն:

Վերջակացութի. թեան: || յետս կացումն կամ 'ի բաց կացումն. կամ հեռացումն յիմեքէ. և կամ 'ի բաց հրաժարումն: Ըստ այսմ Խորէն. ա. գլ. 6. Ի վերջակացութե աղգականացն դժգմեալ:

Վերջամնաց. մնաց. իէ. աց. օք: || 'ի վերջս մնացեալ. կամ յետոյ մնացող. կամ որ զկնի է եկեալ ուրեք: ռամկ. յեփ նէր էլօղ: Իսկ մերթ հետամնաց. յ՝ նա որ դանդաղ զկնի ուրուք: ռամկ. Եփէնէն ընկնօղ:

Վերջանամ. ացայ. ցիր. անալ: (չեզոք.) || 'ի վերջ հասանիլ. կամ աւարտիլ. և կամ զրաւէլ: ռամկ. ըմընալ. կամ հատնիլ: Իսկ մերթ յետս կալ. կամ 'ի բաց մեկնիլ. կամ հրաժարիլ. կամ կասիլ. և կամ արգելեալ լինիլ: ռամկ. յեփ կենալ. կամ դադրիլ: Եւ ըստ այսմ առի՝ վերջանալ յընթացից. կամ 'ի յօգնելոյ. և կամ 'ի կատարելոյ զխնդրուածս. և այլն: Նարեկ. ժդ: և 'ի Մեկնութե Երգոց: և 'ի հին պտմագիրս: Իսկ մերթ պակասիլ. կամ նուազիլ. կամ զրկիլ. և կամ դատարկիլ: և ըստ այսմ խմանի մինչ առի՝ վերջանալ 'ի ճշմարտութենէ. 'ի մեծութենէ. 'ի շնորհաց. և կամ 'ի բարեաց. և այլն: Լամբրոն: և 'ի շարականս:

Վերջապահ. ի. աւ. աց. օք: || պահօղ ըզ վերջս. յ՝ նա որ զհետ գնալով, կամ ըզ կնի կալով պահպանէ զվերջին կողմն զօրաց. քաղաքի. նաւուց. ճանապարհաց, և այլոց նմանեաց. զի մի դաւ ինչ գիպեսցի. ուստի որ զառաջին պահէ, առաջապահ կոչի. իսկ որ զկողմանսն. կողմնապահ: ռամկ. յեփի տէն պահօղ: Յեսու. 6. 9:

Վերջատանջ. ի. իէ. լից. օք: || է անուն առ ողջախոհական, որով նշանակի եռավանկ բառն, որոյ երկու առաջին վանկքն՝ աղօտք են. յ՝ սուղք, կամ կարճք ըստ հնչման: Իսկ վերջին վանկն է երկար. որպի սիք են սոքա: խօրխօրամ. խէրէհէշ. գինէհէմ:

Վերջացուցանեմ. ցուցի. ացի. ել: (անցողակ.) || 'ի վերջ հասուցանել. կամ աւարտել. և կամ զրաւէլ: ռամկ. վէրջացնել. կամ ըմընցնել. և կամ հատցընել: Իսկ մերթ՝ յետս կացուցանել. կամ 'ի բաց հրաժարեցուցանել. և կամ արգելուլ զոք յիմեքէ: մերթ և՝ պակասեցուցանել. կամ զրկել. և կամ դատարկել: ըստ այսմ 'ի Վարս հարց. ինչ. Յորպիսի պայծառ քաղաքէ զիս վերջացուցեր. յ՝ զրկեցեր:

Վերջաւոր. ի. աւ. աց. օք: || վախճանաւոր, կամ աւարտելի. և կամ զրաւելի: Իսկ մերթ այն բառ, որ ունի զվերջս, յ՝ զատորոտս, կամ զեզերս. և կամ զթելս կախեալս զինքենէ. ռամկ. ըշնտէֆլի, կամ սաչախլը: Եւ ըստ այսմ վերջաւոր կոչին բառ ծոպք, որք յաղագս զարդու կախեալ կան յեզերս իրիք: ռամկ. սաչախ. կամ ֆիրանկ: Ըստ այսմ Աւգոս. Վերջաւորս փողփողեալս նշանակաց, և ոսկեզօծեալ մետաքսիւք: Այնու վերջաւոր կոչին ծոպաւորք. յ՝ թէլլի. կամ մանուածանդ ըշնտէֆլի. որք 'ի ստորոտս հանդերձից յետեալ լինին 'ի ներքուստ. զորս 'ի հնումն յօրինէին ոսկեզարդ անկուածով, և պաճուճանօք: Սաղմ. 44. 14:

Վերջընթեր. ի. իւ. աց. օք: || այն բառ, որ կայ առընթեր վերջնոյն. յ՝ մերձ, կամ հուպ յետնոյն. և ըստ այսմ վանկն, որ անմիջապէս յառաջէ քան զվերջին վանկն, վերջընթեր կոչի: Այսպէս նա՝ որ անմիջապէս կացեալ է 'ի վերոյ քան զվերջինն յիմիք բազմութէ՝ վերջընթեր առի, որև ծոյլ առի. մանաւանդ՝ մինչ զատեղայ սաւր: ռամկ. Վէրջէն Եղածին տէրլէն:

Վերջին.

Վերջին . վերջնոյ . ով . ոց . ովք : ‖ այն ձմ, որ կայ 'ի վերջս . և կմ յետին . որոյ ներ հակն առի' առաջին . ռամկ . վերջի . կամ ջերջի : 2 . Թագ . 23 . 1 : Յայտ . 1 . 8 . Իսկ մերթ վերջացեալ . կմ յետնեալ . և կմ ծայրա գոյն 'ի յառաջ, կմ 'ի թշուառութն . և ըստ այսմ առի վերջին չարաբարոյութի' կմ անմտութի . վերջին տնանկութ . թշ ուառութի . դառնութի . և այլն : Նարեկ . իէ : Ոսկե . 1 . հատ . իէ :

Վերջնական . ի . աւ . աց . օք : ‖ վերջագոյն, կմ վերջին . և կմ յետին : Նարեկ . ծ : Իսկ մերթ' ծայրագոյն . կմ սաստիկ աղգ . աւ, և ներգործող . յորոյ ներգործելոյն գրե թէ ոչ ոք զերծանի, որպիսիք են ամանք օձառք, կմ կեղտահանք, որք զբիծս' որ չափ և իցեն սաստիկ ծրդեալք յիմիք, հեր քեն, թ 'ի բացհանեն . ըստ այնմ Նարեկ . ղթ . Քանզի ոչ վերջնականօք աձառովք, (թօձառովք) հերքի . և ոչ յընդդիմակ ցէ ուժգքէ ողողեալ արտաքս ելանէ :

Վերջնաւոր . ի . աւ . աց . օք : ‖ այն ձմ, որ կայ 'ի վերջին կողման, կմ 'ի վերջին մասին . կմ վերջնական . և կմ վերջին : Նարեկ . իէ :

Վերջոտ . ի . իւ . աց . օք . կմ ից . իւք : ‖ վերջաւոր, կմ վերջնական . և կամ վերջին : ռամկ . յետինը . և տաճկե . սօնղուտը : Իսկ մերթ 'ի վերջ դարձեալ . կմ յետս շրջեալ . կմ ընդ կրունկն գնացեալ : ռամկօր . յետ դարձած . կմ յետ դարձող :

Վերջոտիմ . եցայ . եաց . իլ : (ձայնական .) ‖ վերջանալ, կմ վերջին լինել . և կմ յետ նիլ : Իսկ մերթ 'ի վերջ գնալ . կմ յետս դառնալ . և կմ ընդ կրունկն շրջիլ . և կմ ընկրկիլ : ռամկ . յետ դառնալ : ըստ այնմ Խորէն . Յ . գլ . 10 . 'ի նոյն բլուր, ուստի էջն, վերջոտեալ ելանէ :

Վերջու : (մակբայ դասական . կմ տեղական .) ‖ 'ի վերջոյ . կմ զկնի . և կմ յետոյ : ռամկ . յետը . կմ ետև . ըստ այնմ Նարեկ . 'ի Ղկն . Երգոց . վերջու ուսեալք, և ըզ մտաւ ածեալք զխնամն իւրեանց : Ը այսմ կերպանայ և մակբայն' յառաջու :

Վերստին : (մակբայ կրկնական .) ‖ ծագի սա 'ի բառէս' վերուստ . այլ անդադարձին 'ի բառէն անգուստ . և նշանակէ' անդրէն . կմ դարձեալ . և կմ միւսանգամ : տաճկ . եէնէ : Յոհ . 3 . 3 : Եբր . 6 . 6 : 1 . Պետ . 1 . 3 :

Վերտ . ի . իւ . ից . իւք : ‖ շղթայագործ, թ . գործեցեալ իբրև զշղթայ . կմ շինեցեալ շղթայակերպ հիւսմամբ աղխաղխելով Է միմեանս զբազում օղս . կմ թելս . և այս աւի ղզրահից . կմ զգինուորական պահպանակաց . և զնմանեաց, զոր օրինակ, զզենուլ զրահս վերտս . կմ վառիլ վերտ պահպանակօք . և այլն : 1 . Թագ . 17 . 5 : Խորէն . Բ . գլ . 82 :

Վերտառանամ . ացայ . ացիր . անալ : (ընդ մէջ .) ‖ վերագրել . կմ մակագրել . և կմ արձանագրել :

Վերտառեմ . եցի . եա . ել : (ներգործ .) ‖ ծագի սա 'ի բառէս' տառ, որ է գիր . առ ռի նշանակի սովաւ վերագրել . կմ մակագրել . և կմ արձանագրել : Իսկ մերթ' առ ուժեք զանուն պատուոյ գրով, կմ բանիւ, և կմ յորինել զներբողեանս :

Վերտառութիւն . թեան : ‖ վերագրութի . կմ մակագրութի . և կմ արձանագիր . և ըստ այսմ վերտառութի կոչի ձմ վերնագիր, կմ մակագիր . զոր դրոշմեն յարձանի . կմ 'ի թղթի . և կմ 'ի ձակատ մատենից . մա նաւանդ յորժամ յօրինեալք իցեն առ 'ի յիշատակ . կամ 'ի պատիւ ուրուք : Եւ յայսմանէ' տալ վերտառութի յորջոր ջի ձմ անուն պատուոյ տուեալ ումեք . կմ ներբողեան յօրինեալ 'ի գովեստ ու րուք : 'ի ձառս դաւթի անյաղթին, որ գիտ ցեն : և Ոսկե . 'ի վերջաբան : և 'ի հին տերքանոն .

Վերտեմ . եցի . եա . ել : (ներգործ . և մերթ' չէզոք .) ‖ կազմել զվերտս . կմ գործել զնմն շղթայակերպ հիւսմամբ . և կմ աղխաղ խել . թ զբազմութի ինչ մի զկնի միոյ իբրև զօղս շղթայից յիրեարս աղխել . կամ ա դուցանել . և կմ կապակցել : Եւ յայս մանէ առեալ վերտել առի բազմութն մարդ կան կազմել զպարս' ձեռս զձեռամբ, կմ զգօտւով արկանելով . որով իբրև զշղթայ աղխաղխեալ երևին . և ըստ այսմ առի' Մծբն . Ժ6 զորդւոյն Նէլի պարելոյ առա ջի որթուն . Մեծախաւմբ ժողովովք խա ղային վերտեցին' առաջի որթագլխոյն : Դարձեալ, նշանակէ ագուցանել զզրահս վերտս :

Վերօրհնեմ . եցի . եա . ել : (ներգործ .) ‖ 'ի վեր, կմ 'ի յերկինս օրհնել . կմ գեր 'ի վերոյ օրհնաբանել . և կամ վերապա տուել :

Վեց . ից . իւք : ‖ է անուն բացարձակ թուա կայ . որով նշանակի' երկիցս երեքն . որև ռամկ . ալտի' վեց : Ծննդ . 16 . 16 : և 30 . 20 : Եւ թիւս այս կոչի կատարեալ . զի հա ւասար է մասանց իւրոց . և 'ի նոցանէ բաղ կանայ : Վն զի մասունք վեցին են եր րեակն . երկեակն . և միակն . որոցվեհան հա ճասարապէս միայն 'ի սոսա բաժանի . զոր օրինակ . 'ի յերկու երրեակ . 'ի յերեք եր կեակ . և 'ի վեց միակ : Արդ' երրեակ . եր կեակն . և միակ յայտնապէ բաղկացուցանեն զվեց . և այս, թէ ըստ լինելեանց . և թէ ըստ բազմապատկութե . ըստ լինելեանց, զի սո քա երեքին բարդեալք 'ի մի միմեանց' առնեն վեց : Իսկ բազմապատկութբ' զի երկիցս երրեակն է վեց . երիցս երկեակն է վեց : Վեցիցս միակն է վեց : Եւ այսպէ բաղկանայ 'ի մասանց իւրոց . և է թիւ կատարեալ : 'ի Գիրս դաւթի անյաղթին :

Վեցախորշ . ի . իւ . ից . իւք : ‖ ունօղ զվեց խորշս . և կամ վեցանկիւնի : Իսկ մերթ նշանակէ զվեց խորշս . կմ զվեց անկիւնս : 'ի Գիրս Գրիգորի Նիւսացւոյ :

Վեցանկիւնի : (Նախադրիւ հոլովի .) ‖ այն որ ունի զվեց անկիւնս . կմ բաղկացեալ 'ի վեց անկեանց : ռամկ . վեց քէօշէ ոլան :

Վեցապատիկ . պատկի . աւ . կմ իւ . աց . օք ‖ է թիւ կրկնական, որով նշանակի վե-

ցեցս կրկնեալ։ Իսկ մերթ վարի իբրև ըղ մակբայ. և նշնկէ փոխանակ միոյն վեց. կամ վեց աստիճանաւ աւելի քան զմին. և ըստ այսմ առի՝ վեցապատիկ հատուցանել։ ռամկ. վէց խափ։

Վեցդանդեան. ենի։ || արժօղ զվեց դանգս, այսինքն դքսան և եօթն փողս, որպիսիք են ոմանք ՚ի դրամոց։ Խոսրէն. յաղ. խորհրդ։

Վեցդարեան։ (Նախդրիւ հոլովի.) || պարունակօղ զվեց դարս. կամ այն ժամ, որ պատկանի վեցեկ դարուց աշխարհի. և ըստ այսմ առի. վեցդարեան ժամանակ։ Ագաթ.

Վեցեակ. եկի. աւ. կամ իէ. աց. օք։ || Է անուն զատական Թուոյ. որով նշանակի վեցն զատաքար. կամ պարունակօղն վեցից։ Եւէ մերթ վեցերորդ մասն։ ՚Ի Գիրս թուաբի անյաղթին։

Վեցեկի։ (մակբայ քանակ.) || վեցիցս, կամ վեցանգամ։ Իսկ մերթ վարի իբրև զանուն. և նշանակէ՝ վեցեակ, կամ վեցապատիկ։ և Թ այսմ առի՝ վեցեկի շարժումն, որ է ՚ի վեր, ՚ի վայր, յառաջ, յետոյ, յաջ. և յահեակ։

Վեցերորդ. ի. աւ. աց. օք։ || Է անուն դասական Թուոյ, և նշանակէ զվերջինն վեցից ըստ կարգի դասեցելոց։ Ծննդ. 1. 31։ և 30. 19։ Իսկ մերթ առեալ լինի գոյականաբար փոխանակ վեցիր մասին ու և եցէ իրաց. ըստ այսմ Եզեկ. 45. 13։ զատանիցէք զվեցերորդ չափուն, կամ զվեցերորդ արդուէի։

Վեցեքեան. կամ վեցեքին. եցուն. կամ ունց. քումբք։ (անեզական.) || Է անուն անձնական Թուոյ. որով նշանակի իւրաքանչիւրն ՚ի վեցից, կամ վեցն մի առ մի։ Ելից. 25. 33։ Գործ. 11. 12։

Վեցթևեան։ (՚ի յեզակ՝. Նախդրիւ. իսկ ՚ի յոգնականումն. եանք. եանց.) || ունօղ ըղ վեց Թևս. կամ Թռչօղ վեց Թևիւք. որպիսիք էին սերովբէքն, որք երևեցան մարգարէին։ ՚Ի շարականոցն։

Վեցիշեան։ (՚ի յեզական. Նախդրիւ. իսկ ՚ի յոգնականումն՝ եանք. եանց.) || ունօղ ըղ վեց էջս, կամ բաղկացեալ ՚ի վեց էջից։ Բայց մասնաւորապէս առեալ նշանակի աղյաւ օրինակ ինչ Ածաշունչ գրոց՝ արարեալ յՈրոգինեայ. մն զի առ ՚ի բացատրութիւն Թարգմանութեան եօթանասանից՝ աշխատասիրեալ ՚ի լոյս էած զերիս մասեանս Սբ. գրոց։ Զնախկինն կոչեաց քառիշեանս. զի զիւրաքանչիւր երեսս Թղթոյն բաժանեաց ՚ի չորս չորս էջս, յառաջնումն եդ զԹարգմանութիւն եօթանասանից, յերկրորդումն զակիւղասայն. յերրորդումն զսիմաքոսին. իսկ ՚ի չորրորդումն զթէոդիտոնին։ Զերկրորդ մասեանն յորջորջեաց վեցիշեանս, զի զերեսս Թղթոյն անջատեաց ՚ի վեց էջս. յառաջնումն եդ զբնաբանն եբրայեցւոց՝ եբրայական գրով. յերկրորդումն զետեղեաց զնոյն բնագիրն հել

լենական տառիւ. իսկ ՚ի միւսցեալ չորս էջսն զետեղեցոյց մի զկնի միոյ կարգաւ զչորեսին վերոգրեալ Թարգմանութիւնս. և զայս գիտէ լամբրօնացին ՚ի Գիրս Մեկն. պատարագին. ուր ասէ. Եօթանասունքն զայս այսպէս Թարգմանեցին. իսկ ՚ի վեցիշեանսն այսպէս է գրեալ։ Բայց յետոյ եդ լրո որոգինէս և զայլ երկու Թարգմանութիւնս. և զի առաջնորդք նց անանուն էին, յորջորջեաց զնս հինգերորդ, և վեցերորդ արտադրութիւն, զորս յաւելեալ ՚ի վՁ վեցիշեանցն զիւրաքանչիւր ՚ի մասնաւոր էջս՝ կազմեաց զայլ մասեան անուանեալ զնա ութիշեանս։

Վեցիր։ (Նախդրիւ հոլովի. և մերթ մակբայ դասական.) || վեցերորդ, կամ վեցերորդաբար։ ըստ այսմ են և սոքա. երկիր. երիր. չորիր. և հնգիր. որ է երկրորդ. երրորդ. և այլն։ ՚Ի հին. ձեռին։

Վեցիցս։ (մակբայ քանակական.) || վեցանգամ. կամ վեցեկի։ ռամկ. վէց հեղ։ Յօբ. 5. 19։

Վեցկի։ (Նախդրիւ հոլովի. և մերթ մակբայ.) || ծագի սա յանուանէս՝ վեց. որ բառս նախկի՝ ՚ի բառէն՝ նախ. և նշանակէ զայն, զոր ինչ վեցեկի։ տե՛ս և ՚ի բառն այլ։

Վեցձեռնի։ (Նախդրիւ հոլովի.) || ունօղ զվեց ձեռինս, որպիսիք են ոմանք հրէշք. կմ ցուցանքաւոր կենդանիք. Խոսրէն. յաղ. խորհրդրութեան։

Վեցոտանի. նւոյ. եաւ. եաց. օք։ || ունօղ զվեց ոտս, որ ասի յատկապէս զոմանց կենդանեաց, կամ զզեռնոց։ Իսկ մերթ Նմանութիւ զսեղանոյ, զաթոռոյ. և զայլոց նըմանեաց, որք ունին ՚ի ներքոյ իւրեանց ըղ վեց բառնալիս նման վեցից ոտից։

Վեցապատան։ || տե՛ս զՎեշտապատան։ Յոփոնածոյն հեթնոյ բանգամորին։

Վեցօրեայ. էի. իէ. եայք. էից. իւք։ || Նա՛ որ է վեցից աւուրց. կամ որ վեց օր է, յոր մէ հետէ եղեալ է, կամ ծնեալ։ ռամկ. վէցօրեան։ Իսկ մերթ այն՝ որ եղեալ է ՚ի վեց աւուրս։ ռամկ. վէց օրեան մէջ եղած։ և Թ այսմ առի՝ վեցօրեայ գործք այ։ Ոսկ. 1. հապ. իա։ Դարձեալ, նշանակէ զայն, որ տևէ միայն զաւուրս վեց, և ապա դադարի։ և Թ այսմ առի՝ վեցօրեայ հանդէս. կեանք. և այլն։ ռամկ. վէցօր տևօղ։ մերթ և՛ վեցօրական. զի այն ժամ, որ վերաբերի առ վեց աւուրս։ Ագաթ.

Վ. Օ.

Վզանոց. ի. աւ. աց. օք։ || զարդ մանեկաձև կախեալ զվզէ. բայց սա մանաւանդ յաշխարհաբառ լեզուէն ՚ի գործածի. զի գրոց լեզուաւ ասի՝ ուլունք. կամ քառամանեակ. և այլն։

Վզանեմ. վզեցի. եա. եմ. (Ներգործ.) || խոնարհեցուցանել. կամ կորացուցանել. և կամ Թեքել։ ռամկ. ծռր ծռել։ Իսկ մերթ ՚ի սոոր իջուցանել. կամ ՚ի վայր արկանել։

Digitized by Google

կմ կործանել. և կմ գահավէժ առնել: ռամկ. վար ձգել:

Վզանիմ. վզեցայ. եա. իլ: (ձայնական.) || խոնարհիլ. կմ կորանալ. և կմ թեքիլ: ռամկ. վար ծռիլ: Իսկ մերթ 'ի վայր իջանել. կմ անկանիլ. կմ գահավէժ լինիլ. ռամկ. վար ընկնիլ. և ըստ այսմ ասի 'ի Յճ՜ ոդին զարտասուացուցայ արքայէն. ըստ ո_ րում և նա սակաւ կեցեալ 'ի խորափիտ ինչ անդ վզեալ: Զորմէ ասի Խորէն. բ. գլ. 58. Անկանի 'ի խոր իմն մեծ. և խորա սոյզ լեալ անհետի. այս անհետ լինի:

Վզանութիւն. թեան: || տես 'ի ներքոյ զՎզա նումն:

Վզանումն. նման. ման. մանց. մամբք: || խոնարհումն. կմ կորացումն. կամ թե_ քումն: ռամկ. վար ծռիլը: Իսկ մերթ 'ի սոոր իջումն. կմ անկումն. կմ կործա_ նումն. և կմ գահավիժումն: ռամկ. վար ընկնիլը:

Վզեան. վզենի. իմ. ից. իւք: || մետաղ. կամ տոյժ. որ և ասի վզենակ. ըստ այնմ 'ի հին տպագրեալ. բազում պատերազմունս և մը զեանս հասուցին հռոմայեցւոց: Եւ զկնի ասի. Եւ բազում տուգա հայոց թագա ւորին ընդ կորստեան՝ և վզենին նր. այս փո խանակ մնասուն: 'Ի սմանէ ծագի բառս՝ ղէան. այս տաշխն 'ի բառէն սատաշխն. զոր 'ի գործածէ Լամբրոն: ըստ այնմ 'ի մեկն. լմ. Սաղմոսին, փոխն. 6. Յորժամ ամբարտա_ ւան կամօքս ընդդէմ մեր ղինի, կմ այլ ինչ թեթև ղեան առնէ. այս վղեանս առ նէ: Զատ ռամկօր. կոչեմք՝ ղէն. այս ըղ սեան. սև:

Վզենակ. ի. աւ. աց. օք: || ածանցի սա 'ի բառէս՝ վզեան. այս 'ի բառէն՝ լեառն լեռ նակ. ուստի նշանակէ սովաւ՝ մետաղ կամ տոյժք. կմ ծախք. կամ վասնումն, որ է կորուստ ընչից. ռամկ. ղէն. և ըստ այսմ Ոսկէ. 2. հռոմ. իա. ասի զդրամոյ. Ոմանք 'ի ցանկութենս և յարբեցութիւնս վատնեն. իսկ այլք այսպիսի վզենակօք (այս վասնմամբ ընչից) առնեն զապաստաւորութիւն չարեին: Եւ 'ի 2. հռոմ. լը. ասի, 'Ի պարապելոյ ցան կութեն յառաջ գան ծանականք, և թշնա մանք. այլ և վզենակ.ք: որ փոքր մի 'ի ներ քոյ կոչի՝ ծախս: Դարձեալ. վզենակ կո_ չին դրամքն, զորս ծախեն 'ի պէտս ինչ. ռամկ. խարճ. ըստ այնմ 'ի հին տպագրեալ. Յարքունուստ առնել զվզենակս չխնայէ տաճարին:

ՎԷ

Վէգ. կմ վէք. և կամ վէգ. վիգի. աւ. աց. օք: կմ՝ իմ. ից. իւք: || կաղ. կմ վէճ. կմ կռիւ. և կմ հեռ. որ է հակառա կութիւն: ռամկ. ճէնկ. կմ փասայ: և ըստ այսմ երբեմն ընդ բայի շարակցի այսպէս. 'ի վէգ գալ. և նշանակէ՝ կագել. կմ հակա ռակիլ. կմ 'ի կռիւ կալ. ռամկ. դէմ կե_ նալ. կմ դէմ դնել. և կմ ճէնկ ընել: 1. Մակ. 6. 59: Եւ 'ի հին տպագրեալ. ասի՝ Եւ շատ 'ի վէգ եկեալ յամառէր այրն: 'Ի սմա_ նէ ծագի բայս վիգել. նաև անունն՝ զօ_ րավիգ: Դարձեալ՝ նշանակի սովաւ ակի ինչ քառակողմեան՝ ելեալ 'ի յօդից ծնգաց կճղակաբաշխ անասնոց, որ 'ի յետլինս. և 'ի կողմս. և յայլ նմանիս այլ՝ է մեծ, զոր կո չեմք՝ կոռ. տաճկե. փօղուճ: Իսկ 'ի խաշինս և 'ի նմանիս նը՜ է փոքրիկ. և այս յատկա պէս անուանի վէգ, որով սովորութիւն է մանկանց խաղալ. և 'ի խաղսն վիգել՝ և կա գել. յորմէ և անուանեցաւ վէք. իբր թէ կագ և կռիւ: տաճկեր. աշըխ: Արգ՝ եր_ կրաքինն 'ի չորից կողմանց սորա՝ բնաւո_ րեալք են 'ի նստիլ. զորոյ զմինն՝ որ ձան ձաղ ծոցաւորեալ կայ՝ կոչեմք՝ ծիլ. ռամկ. եա՝ ծիլ. և տաճկ. տըշ. կմ չէք. իսկ զմիւսն ամփն հակադրեալ. որ է իբր տափարակ՝ ան ուանեմք՝ դամ. կմ դոյլ. ռամկօր. փոլ. և տաճկ. խոռ. կմ փերփ: Բայց զմին յայլոց երկուց կողմանցն, որ է թիապաթեկ ուռա ցեալ. յորջորջեմք՝ պոռ. ռամկօր. բէք. և տաճկ. բէօք: Իսկ զկողմն զմիւսդիմակ սո րա. որ է խոռոչաձև փոսորակել, կոչեմք՝ կից: ռամկ. գող: և տաճկե. չէք: 'Ի ըմ՜՝ 'ի նմանութէ սորա առեալ՝ վէք կոչին խո րխորք. կմ նեցուկք չորեքկուսիք. կմ խո րանարդք. այս համակողմեան քառակուսիք. ռամկ. +խուրուխ:

Վէժ. վիժի. իւ. ից. իւք: || է արմատ վի_ ժել բային, որով նշանակէ վիժումն. այս 'ի վայր հոսումն. կմ սահումն. և ըստ այսմ վարի սա յոգնականապէս: իսկ մերթ վի_ ժեալ. այս 'ի վայր հոսեալ. կմ սահեալ: և ըստ այսմ ասի, Ջուրս յորդս, և վէժս: 'ի սմանէ ծագին բառքս վիժակ. քարա. վէժ. կմ գահավէժ:

Վէճ. վիճի. իւ. ից. իւք: || է արմատ վի_ ճել բային, և նշանակէ՝ վիճումն. կամ ճել բային. և նշանակէ՝ հակառա_ կագ. կմ հակաճառութիւն. կմ հակառա կութիւն. և կմ կռիւ, զոր առնեն ընդ մի_ մեանս բանիւ. կմ դատաստանաւ: տաճկ. մուճատէլէ. կմ փասայ: Ոսկէ. 2. հռոմ. ժ. և լբ:

Վէմ. վիմի. աւ. աց. օք: || քար. որպիսի է կիճն, սալն, ապառաժն. գայլախազն, և այլ նոյն տեսակ քարի, թէ գործեալ իցէ և թէ անգործ. կմ թէ տակաւին ոչ հա_ տեալ 'ի լերանց: Ծննդ. 28. 18: Յոբ. 38. 38: Յօհ. 8. 59: Բայց ուրեք ուրեք եդեալ է նի նաև փոխանակ գոհար ականց. այս այն Եզեկ. 10. 1. Ահա 'ի վէմ հաստատուն իբր վէմ շափիղայ ական: Դարձեալ. վէմ կո չի անդրադարձաբար առաքեալն պետրոս, ըստ որում եղև առաջին քար հիման որոյ եկեղեցւոյ, հաստատեալ անշարժելի յա մենազօր աջոյն քրիստոսի. վն որոյ և եկեղեցին որ ըստ անուան խոստման բանին շինե_ ցաւ 'ի վէմ այսր վիմի, մնայ անյողդողդ և անշարժ: Մատ. 16. 18:

Վէպ. վիպի. աւ. աց. օք: || է արմատ վի_ պել բային. և նշանակէ՝ վիպումն. կմ վիպասանութիւն. կմ ճառ. կմ զրոյց. և կմ

Digitized by Google

աստացուածք. և ըստ այսմ ասի՝ պատմել զվէպ ինչ. կմ՝ արձանագրութեամբ զիմն 'ի վէպս. կմ՝ ցուցանել զերգոց վիպաց շարայարութիւն. և այլն: Խորէն. ա. գլ. 2: և գ. գլ. 68: Յովհ. 1. հոփ. գ: Աճգոր: Իսկ մերթ ընդ բայի շարակցի այսպէս՝ վէպս ասել. և նշանակէ՝ վիպել. կմ՝ պատմել. ըստ այնմ 'ի հին պատմագիրս. Եւ ոմանք այլաբանաբար զրուցաց վէպսասան, ցայլապէս պատմեն զզրոյցսն:

Վէս. վիսի. աւ. աց. գք: || գժնեայ. կամ դաժան. կմ՝ անընդել. կմ՝ անհնի. կամ ըմբոստ. կմ՝ խրոխտ. և կմ՝ գոռոզ: ռամկ. ուէրբ. կմ՝ նախս: 2. Տիմ. 3. 3: Խորէն. գ. գլ. 68: Նարեկ. ծ: Մծբն. ժթ:

Վէսական. կմ՝ վիսական. ի. աւ. աց. գք: || գժնեական. կմ՝ դաժանական. կմ՝ ըմբոստական. կմ՝ խրոխտական. և կմ՝ գոռոզական. ըստ այնմ Խորէն. գ. գլ. 50. ըմբոստացաւ խոսրով, և խրոխտամամբ վէսական պատասխանեաց, ցգոռոզական խրոխտմամբ պատասխանի ետ:

Վէտ. վիտի. աւ. աց. գք: || ցտութիւն. կամ հատութիւն. և կմ՝ պատառուածք. զոր առնեն սրով 'ի բազուկս, կամ 'ի սրունս, և յայլ անդամս ինչ առ 'ի քաջ երևիլ. կմ՝ առ 'ի պատիւ ուրուք. և կմ՝ 'ի ցուցումն ցաւոց և տրտմութեան, որով սգան զոք. ով առնէին 'ի հնումն հեթանոսք 'ի վր մեռելոց. և այժմ առնեն ոմանք յամբարշտաց 'ի փառս սատանայի: ռամկօր. նաշ: Ղևտ. 19. 28: Եւ այսպիսի կերպիւ ցտելն կմ՝ հերձանելն զանդամս, ասի՝ վէտս հատանել: ռամկօր. նաշ բանալ: Ղևտ. 21. 5: Դարձեալ նշանակէ գէզ. կմ՝ կոյտ. առՃ կերէն էշըն. ըստ այնմ Մծբն. ժբ. Բարձեալ ունէին ջուրք 'ի վր վէտ վէտ մկանանց: Եւ 'ի ժգ. ասի՝ Աւլիք կուտակեն վէտք վէտք:

Վէր. վիրի. աւ. աց. գք: || տեղի 'ի մարմնոջ վիրաւորեալ 'ի հարուածոց, թէ նորոգ իցէ՝ և թէ հին և թարախեալ: ռամկ. եարայ: Եսայ. 21. 25: Դատ. 3. 22: Առակ. 20. 30: Եւ յայսմանէ առեալ նշանակէ և սովաւ կեղն, որ է խոց ծնեալ 'ի մարմնի 'ի ներքին ապականութենէ. որ և առ ռամկ. կոչի եարայ: Ղուկ. 16. 21: Դարձեալ առնել լինի երբեմն փոխանակ հարուածոց. ըստ այնմ Նարեկ. զէ. Մերժեցի սովաւ յանդոյն պաղատանական արօրադրութեց մերոց սահմանաց վէրք քասանիչք, և հոյլք մորմոքեցուցիչք: Իսկ մերթ ընդ բայի շարակցի այսպէս. վէրս 'ի վր դնել. և նշանակէ վիրաւորել. կմ՝ խոցոտել: Ղուկ. 10. 30: Դիմել վէրք կոչի մորթն բրտացեալ և խստացեալ խոշորութեք հանապազորդ աշխատանաց, զորպիսիս տեսանեմք 'ի կնձիթախոզից. և 'ի պարանոցս եզանց. նաև 'ի ձեռս մշակաց. ով և երբեմն 'ի ծռունկս յաճախ ծնրադրողաց, զոր ոմանք կոչեն գետնախոց: ռամկ. նասըր. ըստ այնմ 'ի Գիրս Գրիգորի Տաթևացւոյ. Զվէրս ծնգաց և զգ

պահս, և զգետնախշտութիւնս ունելով: Եւ զկնի դարձեալ ասի՝ Աղօթք, արտասուք. վէրք ծնգաց. հառաչումն 'ի խորոց 'ի վեր առաքեալ:

Վէք: || տե՛ս զՎէգ:

Վ-Թ

Վթար. ի. աւ. աց. գք: || վնաս. կմ՝ եղծումն. և կմ՝ աւերումն: Իսկ մերթ խախտումն. կմ՝ այլայլութիւն. կմ՝ պակասութիւն. կմ՝ արատ. և կմ՝ բիծ, որ է չէփէ. կմ՝ չէրէ: Երբեմն և սխալումն. կմ՝ վրիպումն. կմ՝ սայթաքումն. և կմ՝ գթումն: ըստ այնմ Յովհ. 1. հոփ. թ. հայեացի ընդ անատուճս ընտանեցեալս. և այլ ոչինչ լինիցի նմա վթար, ցայնուհետև ոչ լինիցի նմա սխալումն 'ի յուսոյ. իբր թէ ասէ, անվրէպ յուսացի ուղղել զանձն: Դարձեալ՝ վնասեցեալ. կմ՝ աղարտեալ. և կմ՝ խանգարեալ: Եւ մերթ խախտեցեալ. կմ՝ այլայլեալ. կմ՝ պակասեալ. և կմ՝ արատաւորեալ: Երբեմն և սխալեալ. կմ՝ վրիպեալ. կմ՝ սայթաքեալ: 'ի սմանէ ծագի բառս՝ անվթար, որ է անվնասելի, և ըստ այսմ ասի՝ անվթար սաղաւարտ. զրահ. գործի. և այլն: ռամկ. ղէրէմէզ [illegible]: Աճգոր: Եւ մերթ անխախտ. կմ՝ անայլայլ. կմ՝ ամբողջ. կմ՝ անպակաս. և կմ՝ անարատ. և ըստ այսմ ասի՝ անվթար պահել զկանոնս, կմ՝ զուխտս. և կմ՝ անվթար և անքակտելի մնալ հաւատոյ: Նարեկ. Ժ: Երբեմն և անսխալ. կմ՝ անվրէպ. կմ՝ անմոլար. և ըստ այսմ ասի, անվթար զճանապարհն վճարել. կմ՝ անվթար արտաբերել զբանս. և այլն: ռամկ. շիփթ: 'ի հին [illegible]:

Վթարեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || վնասել. կմ՝ եղծանել. և կմ՝ աւերել: ռամկ. [illegible]: Իսկ մերթ խախտել. կմ՝ այլայլել. կմ՝ պակասեցուցանել. և կմ՝ արատաւորել: ռամկ. [illegible]: Մերթ և սխալեցուցանել. կմ՝ վրիպեցուցանել. կմ՝ սայթաքեցուցանել. և կմ՝ գթեցուցանել:

Վթարութիւն. թեան: || տե՛ս զՎթար:

Վթարումն. րման. մամբ. մանց. մամբք: || տե՛ս զՎթար:

Վ-Ի

Վիգախաղաց. ի. աւ. աց. գք: || խաղացող զվէգ. կմ՝ զնարդ վիգիւ: ռամկ. [illegible]:

Վիգեմ. եցի. եա. ել: (Չէզոք.) || 'ի վէգ գալ. որով նշանակէ՝ կաքել. կմ՝ վիճել. կմ՝ կռուել. կմ՝ հակառակիլ. և կմ՝ մաքառիլ: ռամկ. [illegible]:

Վիգիմ. եցայ. եաց. իլ: (Ձայնակր.) || նոյն է ընդ վերնոյն:

Վիզ. վզի. իւ. աց. գք: || ուլն. կմ՝ պարանոց. որ և ռամկ. ասի՝ վիզ. կմ՝ [illegible]. ըստ այնմ Խորէն. բ. գլ. 76. Որ զվզէ և եթ կալեալ յաղթէր:

Վիթխար. ի. աւ. աց. օք։ || տե՛ս 'ի ներքոյ զվիթխարի։

Վիթխարի. բւոյ. եաւ. եաց. եօք։ || անձնանի, որ այն ամենայն, որ 'ի սեռի իւրում է առաւել քան զչափն մեծ. և յաղթ. մինչ զի զարհուրեցուցանէ, կամ հիացուցանէ զտեսօղսն. և ըստ այսմ արք մեծահասակք և յաղթանդամք՝ վիթխարի կոչին. ըստ այնմ Խորէն. ա. գլ. 8. Ազգ հսկայից անհեթեթք և վիթխարիք։ Եւ բ. գլ. 7. ասի. Այր վիթխարի հասակաւ և ուժով։ Այնպէս և մեծամեծ և ահագին վիշապք, կամ կէտք՝ վիթխարի ասին։ Յայսմաւուրքն։ ըստ այսմ նաև լերինք լայնատարածք, և բարձրաբերձք վիթխարի անուանին. ըստ այնմ Լամբրօն. 'ի Ներբողեանն. Անկարացեալ զվիթխարեաւ զանցանել լերամբ։

Վիթխարութիւն. թեան։ || անձնանութիւն. որ չափազանց մեծութիւն. կամ զարհուրելի մեծ քանակութիւն. և կամ հսկայութի. զօրավիւր ունին ամանք 'ի մարդկանէ, կամ 'ի գազանաց, և 'ի լերանց։ Նարէկ. գլ.։

Վիթոյն. կամ պիւթոյն. ոյնի. կամ ոյնեայ. կամ ոյնիայ. աւ։ || Է բառ յունական, որով նշանակի ըստ առասպելաց հեթանոսաց վիշապ ինչ վիթխարի ծնեալ 'ի փտութէ երկրի՝ զկնի հեղեղացն՝ եղելոց առ Դևկալիոնիւ, 'որ յապողոնեայ նետահար լեալ սատակեցաւ։ Բայց մասնաւորապէս առեալ նշանակի սովաւ այս հարցուկ, որ է դև դիւթական. ըստ այնմ Կիւրղի Եղէմ. ժե. Եւ կամ առացեալ զվիթոնինեայ հարցուկ դիւեն. հարթէ՝ ասէ, զպատմութիւն վիթոնինի, որ թարգմանի հարցուկ դև։

Վիժակ. ի. աւ. աց. օք։ || ծագի 'ի բայէս վիժել, որ դիտակն 'ի բայէն դիտել. և նշանակէ՝ վիժօղ, վայթօղ. կամ 'ի վայր հոսօղ։ ուամկ. ջրթօղ. կամ ծափօղ։ Եւ մերթ այն՝ որ վայթի. կամ 'ի վայր հոսի. ուամկ. ջուր ջրուղէ. և ըստ այսմ ասի բղխեցուցանել ջուրս վիժակս. կամ սորսորեալք որդունք վիժակք։ Եւ յայսմանէ առեալ, վիժակ կոչի ծածկոյթն, որ արկեալ զխճիք, և իբր վիժեալ զնովաւ ծածկէ զնա՝ որպիսի էր երրորդ ծածկոյթն խորանին վկայութեան՝ գործեալ 'ի չիկակարմիր մորթոյ։ Ելից. 26. 14։ և 35. 11։ և 36. 19։ Եւ կամ չորրորդ ծածկոյթն այնր խորանի պարարեալ 'ի մորթոյ կապուտակէ, զորոց ը կարգի ասացաւ 'ի բառն վերնափեղկ։ ուամկ. ծածկոց։ Ելից. 39. 33։ Իսկ ձեռն նշանակէ վիժումն, որ է վայթումն. կամ 'ի վայր հոսումն. կամ բղխումն. և կամ հոսանք. ըստ այնմ Նարէկ. կը. Որ զկարծրանիւթ վէմն անապատին՝ 'ի վիժակս վտակաց հոսեալ բղխեցեր։ և 'ի ըթ. ասի, 'ի տեսանելեաց աչաց արգարացուցիչ արտասուաց վիժակս վայրաբերեաց։

Վիժած. ի. աւ. աց. օք։ || սաղմն վիժեալ, որ տհաս զաւակ յառաջ քան զժամանակն յարգանդէ արտաքս ձգեալ, որ երբեմն է մեռեալ, և լուծեալ. և երբեմն կենդանի։ ուամկ. ևս վիժած։ Թուոց. 12. 12։ Ժողով. 6. 3։ և Լամբրօն։ Զսա երբեմն անուանեմք սոսկ վիժեալ, նաև երբեմն անցուցեալ. ըստ այնմ Յոբ. 3. 16. Կամ իբրև զանցուցեալն, որ ելանէ յարգանդէ մօր իւրոյ. որ իբրև զվիժածն։

Վիժանեմ. եցի. եա. ել։ (ներգործ.) || նոյն է ը բայիս վիժել. որ զանգանելն ը բային զանգել. և հերձանելն ընդ բային հերձել։

Վիժանք. անաց. օք։ (անեզ.) || վիժումն, որ է հոսանք. կամ յորձանք. և ըստ այսմ ասի՝ վիժանք ջուրց, կամ գետոց կամ որդանց. և այլն։ 'ի ճառն Դաւթի անյաղթին, որ գիտակէ։

Վիժեմ. եցի. եա. ել։ (ներգործ.) || վայթել. կամ 'ի վայր հոսել. և կամ արկանել. և ըստ այսմ ասի՝ վիժել զջուրս. կամ զքարինս. և այլն։ ուամկ. ջրթել. կամ ծափել։ Ի հին տպագրեալն։ Եւ յայսմանէ առեալ մասնաւորապէս վիժել ասի անցուցանելն զզաւակ, որ է տհաս արտաքս ձգել ըստ սաղմն. ուամկօր. ևս վիժել. կամ փուճ ցգել. ըստ այնմ 'ի Գիրս Գրիգորի Տաթևացւոյ. իմանալ ժամս յղւոյ յղուին, և վտանգս վիժելոյ։

Վիժիմ. եցայ. եալ. իլ։ (ձայնակր.) || վայթիլ. կամ թափիլ. և կամ 'ի վայր հոսիլ. և կամ անկանիլ։ ուամկ. ջուր ջրթիլ. կամ ջուր ջրուիլ. կամ ջուր ծափիլ. և ըստ այսմ ասի՝ վիժիլ ջուրց 'ի վերուստ, քարանց յերկնից, փրփրոյ, կամ թուքոյ 'ի բերանոյն, և այլն։ Կիւրղի Եղէմ. թ. Յովհ. որդի։ և 'ի հին տպագիրս։ Իսկ մասնաւորապէս առեալ՝ նշանակէ՝ արտաքս անկանիլ սաղմին 'ի յարգանդէ. ուամկ. փուճ անցնիլ։

Տարր. տարեր. 'ի տարրէ. երբ. երց. կմ երաց. երբք. կմ երօք: ‖ է պարզ մարմին՝ սկիզբն բաղկացութե նիւթական և ապականացու էակաց, յոր և իբրև յառաջին սկիզբն լուծանին ամ մարմնաւորք՝ յապականիլն իւրեանց: Եւ են այսպիսի մարմինք քառեակ, ք հուր. օդ. ջուր. և հող: 'Ի ծամագիրս: Դարձեալ. դնի փոխանակ սկզբան. և ըստ այսմ Կողոս. 2. 8. տարերք աշխարհի կոչին սկզբունք աշխարհական մակացութեց և իմաստասիրութեց՝ ուսուցեալք յաղանդաւոր փիլիսոփայից: Սոյնպէս և Գաղ. 4. 3. և 9. տարերք անուանին հրէական խորութիւնք աւուրց, ամսոց, և ժամանակաց, և պէսպէս արարողութիւնք մովսէսեան օրինաց, ք որում էին իբրև զսկզբունս այբուբենից նկատմամբ նոր օրինաց: Դարձեալ, նշանակէ տարրեղէն էակ. կմ ոև իցէ նիւթական իր. ք այնմ Նարէկ. կթ. Զոր 'ի փոքունց տարրէ անարգէ զմեծնէ ուսանել: ըստ այսմ յաճախակի 'ի գրեանս Լամբրոնացւոյն՝ տարր յորջորջին ճաշակելի իրք. կմ մսեղէն. կմ քարինք. փայտք. նաև շինուածք, և այլն: Դարձեալ, տարրական էակութի. կմ գոյացութի. կմ նիւթականութի: և ք այսմ ասի տարր արարածոց կամ գոյից. Նարէկ. ձբ. և զդ: ըստ այսմ իմանի և խա. ուր ասի. 'ի տարր գոյից, և յեզր ծագաց աշխարհի, ք ես դու յէակութե գոյից, և յամ ոլորտս տիեզերաց: Եւ յայսմանէ առեալ՝ տարր անուանի գոյութի ժամանակի, որ է ներկայն՝ կայացեալ անբաժանելի կէտիւ. որ է իբր թէ անգոյ. ք այնմ Նարէկ. ծե. Տարր ժամանակիս յանէից. անցեալն անյայտ, և ապառնին կարծողական: ըստ այսմ է և 'ի խդ: Դարձեալ՝ էութի. կմ յատկութի. կմ հանգամանք. կմ որպիսութի, և կմ կերպարան. ըստ այնմ Աճգար. Եւ տարր մրգոյն 'ի նմանէ որոշ. ք էութի. կմ կերպարանն: և 'ի Նարէկ. ղէ. ասի, Զտարր արկածից մահու երկիւղին, ք զհանգամանս: Դարձեալ. տարր կոչին ամ նիւթք. կմ հիւթք. և ըստ այսմ ասի՝ տարր մարմնոյ. կմ ապականացու. գործեաց. ըմպելեաց. և այլն: Լամբրոն: Եւ ևս՝ տարր յորջորջին արտաքրութիւնք. կամ բերք. և կամ ծնունդք. ըստ այնմ Լամբրոն. Անուամբ այսուհետև զանշնչից տարրն՝ նիւթ զգեստուց, ք զբերս բուսոց: Դարձեալ՝ վարի սա իբրև զմասնիկ ածանցականակերտ. զոր տեսցես 'ի բառն ընդարձակատարր:

Տարրական. ի. աւ. այ. օք: ‖ այն ամ, որ վերաբերի առ տարերս. կմ բաղկացեալ 'ի տարերաց. կմ տարրեղէն. և կմ նիւթական: Աճգար:

Տարրանամ. ացայ. ցիր. ալ: (ընդմիջ.) ‖ տարր լինիլ. կմ 'ի տարր փոխարկիլ: Իսկ մերթ էանալ. կմ գոյանալ. և կմ ներգործիլ. ըստ այնմ Յո[illegible]. բոպէից քառից տարերք, որ տարրացան: Դարձեալ. նշանակէ բնաւորիլ. կամ արմատանալ. կմ միախառնիլ. կմ միակցիլ. և կմ միա-

Digitized by Google

նալ. և ըստ այսմ սաստ. տարրանալ ան-
գամոց 'ի գլուխն, սաստ 'ի ծառն, զօրու-
թե 'ի մարմինն, կենդանոյ 'ի հանդերձս, սի-
րելւոյ 'ի սիրեցեալն, կմ մարդոյ 'ի հան-
դէս բարեպաշտութե. և այլն: Լամբր.:
Մերթ ևս՝ մխել. կմ ընդմտանել. կմ
թափանցել. և կմ թաղել 'ի խորս. ռամկ.
ծածուկ մտնել. կամ ներկերն ըլլալ. և կմ մէջը
թաղուիլ: և ըստ այսմ սաստ. տարրանալ 'ի
խորս, 'ի ներքս 'ի սիրտ. կմ 'ի մարմին իրիք.
և այլն: 'Ի Գիրս Գրիգ. տղթ.:

Տարրապաշտ. ի. իւ. աց. կմ ից. օք: || պաշ-
տօղ տարերաց. կմ տարրեղէն իրաց. որ-
պիսիք էին կռապաշտք:

Տարրապէս: (մակբայ որակական.) || իբ-
րև զտարր. կմ հանգոյն տարեր: Յճ ոբէի:

Տարրացուցանեմ. ացուցի. ացո. անել: (ան-
ցող.) || 'ի տարր փոխարկել. կմ 'ի տա-
րերս լուծանել: Իսկ մերթ՝ էացուցա-
նել. կմ գոյացուցանել. և կմ հաստատել
զէակ ինչ: Դարձեալ՝ բնաւորել. կամ
արմատացուցանել. կմ բաղակցել. կամ
միացուցանել. և կմ միաւորել. և ը այսմ
սաստ 'ի ճառս ինչ. զանոնաւոր ժողովել է, և
տարրացուցեալ 'ի միասին: Մերթ ևս՝
նշանակէ տալ իմիք մխել, կմ ընդմտա-
նել. կմ թափանցեցուցանել. և կմ թա-
ղել 'ի խորս. ռամկ. ինչվան ծածուկ մտնել.
կմ ներկերն ընել. և կմ մէջը թաղել:

Տարրաւոր. ի. աւ. աց. օք: || ունօղ զտարր.
կմ տարրական. և կմ տարրեղէն: Աճգոր.:

Տարրեղէն. ղինի. աւ. աց. օք: || այն ամ.
որոյ նիւթն է տարր. կմ որ եղեալ է 'ի
տարերաց. և կմ նիւթական: Աճգոր. և
'Ի Շարականս:

Տարրեմ. եցի. եա. ել: (զօրութե անցող.)
|| տե՛ս զՏարրացուցանել:

Տարրիչ. րչի. աւ. աց. օք: || տարրացուցիչ.
ք՛ 'ի տարր փոխարկող: Իսկ մերթ՝ էա-
ցուցիչ. կմ գոյացուցիչ. և կմ հաստիչ.
ըստ այնմ Նարեկ. ձգ. Երևեցուցիչ երե-
ւոյթի, տարրիչ խաւարի: Դարձեալ բնա-
ւորիչ. կմ արմատացուցիչ. և կմ միաւո-
րիչ. Իսկ մերթ՝ մխիչ. կմ թափանցե-
ցուցիչ. և կմ 'ի խորս թաղօղ: ռամկօր.
ծածուկ մտնօղ. կմ ներկերն ընօղ. և կամ
մէջը թաղօղ:

Տարրիմ. եցայ. եա՛ց. իլ: (ձայնակր.) || տե՛ս
զՏարրանալ:

Տարրութի. թե: || տարրական բնութի.
իսկ մերթ՝ էակութի, կմ գոյութի, և
կմ էութի. ըստ այնմ Նարեկ. ղգ. Աստղ
ամենահնարիչ երկնակշիռ տարրութեց, ք եր-
կուց հակակաց էակութեց, ոչ՝ ամառային
և ձմեռային. տուընջեան և գիշերոյ, ցր-
տոյ և տօթոյ. և այլոց նմանեաց. որոց
պատճառն է աստղն. ք արեգակն: տե՛ս
և 'ի բառն երկնակշիռ: Դարձեալ նշանակէ՝
տարրումն, զոր տեսցես զկնի:

Տարրումն. րման. մամբ. մանց. մամբք: ||
'ի տարր փոխարկումն. կմ էացումն. և
կմ գոյութի: Մերթ ևս բնաւորումն, կմ
արմատանալն յիմիք. կմ միակցութի, կմ
զուգախառնութի, կմ միաբանութի, և
կմ միաւորութի: 'Ի Նին ԺԵրոյին: Երբեմն
ևս՝ մխումն. կմ թափանցումն. և կմ 'ի
խորս թաղումն:

Տարփալի. լւոյ. եաւ. եաց. եօք: || տենչալի,
կմ ըղձալի, կմ ցանկալի, և կմ փափաքե-
լի: Նարեկ. 'Ի գով. խաչ:

Տարփածու. ուի. աւ. աց. օք: || տարփա-
ցօղ. կմ ցանկացօղ. և ըստ այսմ տար-
փածու կոչի սեղեխն, կմ հոմանին: ռամկ.
սիրօղը: Իսկ մերթ՝ տարփալի, ք նա՛ ո-
րում ոք տարփիայ վաւաշ տարփանօք, կմ
սիրահարեալ է ընդ նմա: ըստ այնմ Խս-
րէն. ա. պր. 14. Խնդրել 'ի մէջ գեղեկանցն
անկելոց զըղձալին իւր, և զտարփածուն:

Տարփամ. ացայ. ա. կմ ացիր. ալ: (ընդ.մէջ.)
տենչալ, կմ բաղձալ, կմ ցանկալ, կամ
ըղձալ, և կմ փափագել: 'Ի Շարականս:

Տարփանք. անաց. օք: (անեզական.) || տեն-
չանք, կմ բաղձանք, կմ ցանկութի. և կմ
փափաքք: Խսրէն. ա. պր. 31: Նարեկ. ժ. ղէ:

Տարփաւոր. ի. աւ. աց. օք: || նոյն է ընդ
բառիս տարփածու: Խսր. բ. պր. 13. և 60:

Տարփեմ. եցի. եա. ել: (չէզոք.) || տե՛ս
զՏարփալ:

Տարփողեմ. եցի. եա. ել: (չէզոք.) || առ-
բաձայն փողել, ք այլազան բարբառով
աղաղակել, կմ այլամիտ բանս քարոզել, և կմ
զօտար ինչ բարբառելով աւետարանել.
ըստ այնմ 'ի Շարականս: Եւ տեսեալ զք
բովքէն վերանասեալ 'ի վիմին տարփողե-
լով սրբուհւոյն. վն զի մագդաղենացւոյն
որ զքո ընդ մեռեալս խնդրէր, նա գո-
չելով ասէր, չէ աստ, այլ յարեաւ: Բայց
աստէն 'ի տպագրեալ շարականս գնի
տայր փողելով, որ է վրիպումն, ոչ յայտ
է 'ի ձեռագրաց, յորս յայտնապէս գրի
տարփողելով:

Տարփութի. թեան: || տե՛ս զՏարփանք:
Խսրէն. բ. պր. 85:

Տարփումն. փման. մամբ. մանց. մամբք: ||
տե՛ս զՏարփանք: Նարեկ. 'Ի գով. խաչ: Յճ
ոբէի: և Լամբր.:

Տարքուն: || տե՛ս զՏքուն:

Տարօղ. ողի. իւ. աց. օք: || տանօղ. կամ
կրօղ. և կամ բարձօղ: Նարեկ. 'Ի գովէսս
խաչին:

Տարօրինակ. ի. աւ. աց. օք: || անօրինակ.
կմ աննման, կմ անզուգական. ը այնմ,
Նարեկ. զթ. Անունակն նիւթոյ յանցանաց
տարօրինակն մարմնաւորաց:

Տաճարեմ. եցի. եա. ել: (ներգործ.) || ամ-
փոփել, կմ հաւաքել, կմ ժողովել, և կմ
առ իւրն ձգել: ռամկ. ժողվել. ըստ այնմ
Լամբրօն. Իբր այնքն ամփոփեալք յաւուրն ան-
քն տաճարելն: և 'ի հին պատմագիրս, ամ.
և 'ի մի փարախ ուղղափառ եկեղեցւոյ տա-
ճարեցին. ք հաւաքեցին:

Տաճիկ. տաճկի. աւ. աց. օք: || է նշանա-
ւոր ազգ ինչ, որ այլով անուամբ կոչի սառ-
մնարան, կմ կիթառ. զորոց. առաջս 'ի

տեղիս բերեանց: 3. Թագ. 10. 12: 1. Մակ. 3. 45: Դան. 3. 5:

Տափ. ի. իւ. իւց. իւք: || տափարակ գետին, կամ դաշտ. 'ի հին տպագրիր: 'ի մեանէ ծագի բառս՝ տափան, և անուն տափակողմն:

Տափակաքիթ: (Նախադրիւ հոլովի.) || Նա՝ որոյ քիթն է տափարակ, և իբր թէ 'ի վայր ճնշեալ, որով դէմք մարդոյն երևի տգեղ: ռամկ. պաթով տըթ ունող: Խորէն. Բ. գլ. 7: և յաշխարհագր:

Տափակողմն. գման. մանը. մանց. մամբք: || կողմն տափից, կամ տափարակ վայրաց. և ըստ այսմ տափակողմն կոչին կողմանք, կամ տեղիք դաշտայինք: տաճկ. օվայ: 1. Մակ. 3. 40: և 5. 52:

Տափան. ի. աւ. աց. օք: || ցաքան. այսինքն է գործի ինչ երկրագործաց, որոյ են երկու տեսակք. մինն է մեծ կազմեցեալ գերանաձև 'ի տասնէար փայտէ, և 'ի ներքուստ իբրև զարմուխ տատամնաւորեալ երկաթի ժանեօք, յորոց և ոմանք ունին յերկուսին կողմունս երկայնեալ թևս 'ի փայտէ. զորոց զմիջոցսն լնուն խառնովք. փշալից: Արդ՝ զայս ածեալ 'ի վերայ հերկեալ և սերմանեալ անդաց՝ վարեն եզամբք իբրև զսարոյս. որ մանրեալ զկոշտսն հարթ հաւասար տափարակէ զհերկեն՝ անդաստանն: Իսկ միւս տեսակն է փոքր՝ շինեալ իբրև զքաց երկայն մեղեխաւ. որոյ 'ի սաստին ծայրն հաստատեալ կայ փայտ ինչ տափարակ իբրև զմեծ և զլայն թաթ. սովառեալ հարկանելով տափարակեն զսերմանեալ հողս պարտիզաց: ռամկ. եւս փաճան:

Տափանեմ. եցի. եա. եալ: (Ներգործ.) || տափանաւ հարթել զերեսս երկրի սերմանեցելոյ: ռամկ. փաճնել:

Տափարակ. ի. աւ. աց. օք: || հարթաձև. կամ հարթ հաւասար. և կամ այն, որ ոչ է ուռուցեալ, կամ ոչ է գնդակացեալ. այլ ունի զերեսս մակերևակս. որպիսիք են տախտակք. կամ դաշտային տեղիք: ռամկ. պաթով: Ղուկ. 6. 17: Իսկ գոյականաբար առեալ նշանակէ հարթ տեղի. կամ դաշտավայրն. և կամ դաշտ. տաճկեր. օվայ. ըստ այնմ Խորէն. Բ. գլ. 6. Գումն զերկուս տափարականն անտառախիտս հանդերձ լերամբքն կազմելով: Եւ 'ի հին տպագրիս. տափ. Գնաց 'ի հաշտենից տափարակն: ըստ այսմ է և 1. Թագ. 17. 20. զորմէ տեսցես և 'ի բառարանի յատուկ անուանց:

Տափարակեմ. եցի. եա. եալ: (Ներգործ.) || տափարակ առնել. կամ հարթել: ռամկ. օր. պաթլըշնել:

Տաք: (Նախադրիւ հոլովի.) || Ջերմ, կամ ջեռուցեալ. և այս վարի յաշխարհաբառ լեզուով. զոր ոմանք ուրեք ուրեք 'ի գործ ածեն նաև 'ի բարբառս գրոց. ըստ այնմ Խորէն. Գ. գլ. 37. Մինչդեռ շամփուրն տաքն էր իբրև զհուր, եդ 'ի գլուխն մեհրուժանայ:

Տաքութիւն. թեան: || Ջերմութիւն. կամ տապ. ը այնմ Ոսկ. 1. Կորն. ...: Ջերմն յերկար, և տաքութիւն անչափ:

Տաքսիմատ. ի. իւ. իւց. իւք: կամ աց. օք: || պաքսիմատ, որ է պէքսիմէթ. որ յաճախ 'ի գործ ածի 'ի Վարս հարց. Ժ՞Դ. խա: Բայց երևի թէ գրելն զսա տաքսիմատ 'ի սխալմանէ աղաւաղութենէ եղեալ. զի է սա պաքսիմատ բառն. յոր փոխանակ տառին, պ, ապրգեալ է, տ. որպէս է և բառս՝ խոզքորակ. որ ուրեք ուրեք գրի խոչքորակ:

ՏԳ

Տգեղ. ի. իւ. իւց. իւք: կամ աց. օք: || զուրկ 'ի գեղոյ. կամ գարշելի տեսլեամբ. և կամ զազրատեսիլ: ռամկ. չիրքին: Ծննդ. 41. 27: Առակ. 11. 25: Իսկ մերթ՝ գարշ. կամ զեր. կամ աղտեղի. և կամ վատթար. ռամկ. գէշ. կամ ճոնգրա: Եփես. 4. 29:

Տգեղագոյն. գունի. իւ. իւց. իւք: || առաւել տգեղ. կամ զազրագոյն տեսլեամբ: Խորէն. Գ. գլ. 23:

Տգեղանամ. ացայ. ացիր. աւ: (ընդմիջ.) || տգեղ լինել. կամ պակասիլ 'ի գեղոյ. կամ գարշելի լինիլ տեսլեամբ. կամ զազրանալ. և կամ աղտեղանալ: ռամկ. չիրքիննալ. կամ գէշնալ: Յոբ որդի:

Տգեղութիւն. թեան: || տգեղ գոյն, կամ զըկումն 'ի գեղոյ. կամ գարշութիւն տեսլեան. կամ զազրութիւն. և կամ աղտեղութիւն:

Տգեղծ: (Նախադրիւ հոլովի.) || տխեղծ. կամ յոյժ տգեղ. կամ զազիր. և կամ գարշ: ըստ այնմ 'ի Վարս հարց. Ի՞Ը. Զոր ինձ առեալ զնմ տգեղծ է:

Տգէտ. տգիտի. իւ. աց. օք: || զուրկ 'ի գիտութենէ. կամ անգէտ. կամ տխմար: Գործ. 4. 13: Հռոմ. 1. 13: և 11. 25:

Տգիտաբար: (Մակբայ որակական.) || որ գիտութեամբ. կամ անգիտութեամբ. և կամ տխմարաբար:

Տգիտաբարոյ. ի. իւ. իւց. իւք: || ունող ըզ բարս սիրողս տգիտութեան. կամ որ զգածել է անգիտութեամբ. և կամ տգէտ և տխմար: 'ի Գիրս Մեծին խորհրդոց:

Տգիտանամ. ացայ. ացիր. նալ: (ընդմիջ.) || տգէտ լինել. կամ անգիտանալ. և կամ տխմարանալ: 2. Մնաց. 16. 9:

Տգիտանք. անաց. օք: (անեզական.) || տես 'ի ներքոյ զՏգիտութիւն. Կիւրղի եղծ. Է:

Տգիտութիւն. թեան: || անգիտութիւն. կամ պակասութիւն գիտութեան. և կամ տխմարութիւն: Եփես. 4. 18:

ՏԵ

Տեառնագաւառ: (Նախադրիւ հոլովի.) || գաւառ տեառն. կամ այն՝ որ լինի 'ի գաւառեան տեառն. և ըստ այսմ փողն, որ հարկանի 'ի գաւառեան քննութեան 'ի գաւառաւան, տեառնագաւառ կոչի: Ը այնմ Աշխարհ. Դրիցեն 'ի սիրտս տեառն երկրի սպառել տեառնագաւառ փողոյն:

Տեառնագիր. գրի. իւ. աց. օք։ || գիր. կմ նկար տն. և ըստ այսմ խաչանիշ կնիքն, զոր 'ի խաչակնքելն գրոշմեմք 'ի դէմս մեր, կմ 'ի վր այլոց իրաց. տնագիր կոչի. ը որում է նկարագրութիւն նշանի տն մերոյ յի քի. յորմէ և սովորութիւն եղև զխաչակնքելն կոչել տնագրել. ոչ տեսցես զկնի։ Իսկ մերթ տնագրական. կմ տնագրեալ. և կմ խաչակնքեալ. ըստ այնմ Նոննի. ղէ։ Չգայական գիմօք սքօղելովք. և տնագիր երեսաց մեր գեղովք։

Տեառնագրական. ի. աւ. աց. օք։ || այն ծմ, որ լինի տնագրելով. կամ խաչակնքելով։

Տեառնագրեմ. եցի. եա՛. ել։ (. Ներգործ.) || առնել զնշան խաչին 'ի վր իրիք. կամ խաչակնքել. և կմ խաչակնքելով օրհնել. և ըստ այսմ ասի՛ տնագրել զդէմս. կմ զյարկս. կմ տնագրել զջուր. կամ զան դաստան. որ լինի խաչիւ և աւետարանաւ. և այլն. Նոննի. ժը. և ղէ։ Եւ 'ի Վարուց. ը. ասի. Եւ տնագրէի զնշան խաչին 'ի վր երեսաց իմոց։ Բայց ոմանք 'ի նորոց գնեն զսա փոխանակ բառիս՝ նուիրել. կմ ընծայել. և կամ մատուցանել։ տե՛ս զստուգաբանութիւն սորա 'ի բառն տնագիր։

Տեառնագրութիւն. թեան։ || դրոշմելն զխմ նշանաւ խաչին. կմ խաչակնքումն. և կմ օրհնութիւն իրիք հանդերձ խաչակնքելով։ Նոննի. ղծ. և ղէ։

Տեառնակողմն. ղման. ման. մանք. մանց. մամբք։ || տիրական, կմ ծծային կողմն. կմ այն ծմ, որ վերաբերի առ ծծ, կմ պատկանի ծծային պաշտամանց, և օրինաց. և ըստ այսմ անհնազանդութբ գնալն ընդ ծյ. կմ ընդ պատուիրանաց նր, աւ սի՛ խեռութբ վարել 'ի տնակողմն, կամ 'ի տնակողմն կոյս, որ է նոյն. զի կոյս բառս՝ յաւելեալ լինի առ 'ի զարդ. ոչ և յայլուր փոխանակ ասելոյ՝ ծծակողմն. ա սի՝ ծծակողմն կոյս։ 2. Օրին. 9. 7. ը այսմ է և 'ի 24. ուր ասի. Հեստեալ կայիք 'ի տնակողմանն։

Տեառնանման. (Նախդրիւ հոլովի.) || նը ման տն, կմ այն՝ որ վերաբերի առ տրն մեր յս քս. որպիսի է խաչն նր։ Աճգամ։

Տեառնընդառաջ. ի. իւ. || է հանդէս քա ռասնօրեայ գալստեան տն 'ի տաճարն. և ասացեալ տեառնընդառաջ, ըստ որում յայսմ աւուր սիմէօն ծերունին ազդեցու թբ հոգւոյն սրբյ ել ընդ առաջ տն, և ըն կալեալ զնա 'ի գիրկս իւր՝ օրհնեաց զծծ։ ռամկ. տէրընտառ։

Տեղ. ոյ. ով. ոց. ովք։ կմ. ի. իւ. եաց. իւք։ || է արմատ տեղալ բային, և նշանակէ՝ անձրև յորդ, և սաստիկ, զոր և կոչեմք տեղատարափ, ոչ և մերթ՝ սոսկ՝ տարափ. ռամկ. տօղանախ։ 2. Մակ. 10. 36։ Եւ 'ի Խոր էն. ը. գլ. 47. ասի, անդրաբերութբ. Տեղ ոսկի՝ տեղայր 'ի փեսայութեան արտաշէ սի, ը ոսկեղէն յորդ անձրև. որով այլա բանի ախտութիւն գաղձկանաց 'ի գուռն առ Ճարին, ոչ անդ պատմի։ Պրձլ՝ նշէկէ՝ տեղի, կմ վայր. և ըստ այսմ վարի առ յաշխարհաբառ լեզուոյ. Թէպէտ ուրեք ուրեք գտանեմք 'ի գործածեալ 'ի գիրս Լամբրօն". ոչ այն. մատնելով 'ի վերին տեղն 'ի խորանն սբ։

Տեղագիր. գրի. իւ. աց. օք։ || նա՛ որ գրէ զտեղւոյ՝ ըստ կերպին, որ ասացի 'ի տե ղագրութիւն։

Տեղագրեմ. եցի. եա՛. ել։ (Ներգործ.) || գը րել զտեղւոյ, կմ առնել զտեղագրութիւն։

Տեղագրութիւն. թեան։ || գրութիւն տեղւոյ, որով նշանակի գրելն զսահմանաց զանա զան տեղեաց, ըստ դրից, ըստ չափուց, և ըստ այլոց պայմանաց, ոչ առնեն աշ խարհագիրք։ Խորէն. յաշխարհագրութե։

Տեղադրեմ։ || տե՛ս զՏեղեադրեմ։

Տեղաշերծ։ (Նախդրիւ հոլովի.) || նա՛ որ յումեքէ զտեղի ինչ զերծանէ, ը կողոպ տէ, կմ յափշտակէ։ ռամկ. ուրիշի տեղը խափշող։ Եւ կմ նա՛ յորմէ տեղին յա փշտակեցեալ է։ Դարձեալ՝ նշանակէ ըղ նա, որ զինս 'ի տեղւոջէ իւրմէ զերծա նէ, ը հանէ. և ը այսմ բառնալն զինս 'ի տեղւոջէն, և կմ վարելն զոք՝ ասի՝ տեղաշերծ առնել։ ռամկ. տեղէն վերցնել, կմ սիւրկիւն անել։ Երբեմն եւս նա՛ որ 'ի տեղւոջէ իւրմէ բառնի, կմ վարի, և կմ աքսորի, տեղաշերծ ասի։ ռամկ. տե ղէն վերցուած. կմ սիւրկիւն եղած։ Լամբր։

Տեղաշերծեալ. ծելոյ. ով. ոց. ովք։ || 'ի տեղւոջէ իւրմէ զերծեալ, ը հանեալ. կմ 'ի բաց անկեալ. և կամ վարեալ։ ըստ այնմ 'ի հին պարտնագիրս. Զորս միանգամ գտանէին տեղաշերծել և մնացել յեաս, Ճարակ սրոյ առայրին։

Տեղակալ. ի. աւ. աց. օք։ || նա՛ որ կալնու զտեղի ինչ՝ բնակելով 'ի նմա. որ և ասի բնտեղակալ. և ըստ այսմ ասի 'ի Գիրս ս տուերին. Զի լինիցի յարմարութիւն տեղւոյն և տեղակալին։ Եւ մերթ աթոռակալ. կմ փոխանորդ. և կմ յաջորդ։ Իսկ մաս նաւորաբ առեալ նշանակէ զպետն, կմ զիշխանն, որ ունի ընդ իւրև զտեղի, կմ զսահման ինչ թագաւորութե, և կառա վարէ զնա տիրաբար. զոր և կոչեմք կուսա կալ, կմ կողմնակալ. 1. Եզր. 2. 16։ և 3. 2. և 14։ և 4. 47։

Տեղակալեմ. եցի. եա՛. ել։ (Ներգործ.) || կալնուլ 'ի բնակութիւն զտեղի ինչ. կմ ու նիլ ընդ իշխանութբ զվայր իմն։ ռամկ. տեղ բռնել։ Իսկ մերթ տալ ումեք կալ նուլ զտեղի ինչ. կմ հաստատել 'ի տեղ ւոջ. կմ զետեղել. և կմ կայացուցանել. ռամկ. տեղաւորել. ըստ այնմ 'ի Գիրս ստու երին. Հաճանէ, որ տեղակալէ զարդարն 'ի ճշմարտութիւն, և զճշմարտութիւնն 'ի նմ։ Եւ 'ի Գիրս ճառուց, ասի՝ ակրն տեղակալի 'ի գեղեցիկն, ը զետեղի, կմ կայանայ։

Տեղակալութիւն. թեան։ || կալնուլն զտեղի 'ի բնակութիւն։ Եւ մերթ՝ աթոռակալութի.

կամ փոխանորդութիւն. կամ յաջորդութիւն: Իսկ մերթ՝ ունելն ընդ իշխանութեամբ զտեղի, կամ զգաւառ ինչ. կամ պետութիւն տեղակալի. և կամ կուսակալութիւն:

Տեղակ. ի. աւ. աց. օք: || փոքր կամ նուազ տեղի. և կամ ո՛ և իցէ վայր: ռամկ. փէղէկ: 'Ի Վարս հարց. Է:

Տեղամ. ացի. ացից. ացիս. ցի. տեղա՛. ալ: (չէզոք.) || անձրևել. կամ գալ անձրևոյ և նմանեաց: Յոբ. 11. 6: Իսկ մերթ վարի ներգործաբար. և նշանակէ զանձրևս ածել, կամ իջուցանել: Ծննդ. 2. 5: Յովէլ. 2. 23: Եւ յայտնանէ առեալ տեղալ ասի՝ անձրևանման հոսելն յերկնից զկարկուտ, զձիւն, զեղեամն. զոք և զմանանայն: Ել. 9. 18. և 23: և 16. 4: Սոյնպէս նաև իջուցանելն յերկնից զհուր, զծծումբ, և զայլ ինչ նման՝ տեղալ ասի: Ծնն. 19. 24: Սաղմ. 10. 7:

Տեղանք. անաց. օք: (. անեզական.) || տեղիք. կամ վայրք: ռամկ. փէղէր:

Տեղապահ. ի. իւ. աց. օք: || պահապան, կամ վերակացու տեղւոյ:

Տեղապահութիւն. թեան: || պահպանութիւն, կամ վերակացութիւն տեղւոյ. և կամ տեղակալութիւն:

Տեղատարափ. ոյ. ով. ոց. ովք: կամ ի. իւ. ից. օք: || տեղ և տարափ, որովք նշանակի յորդ և սաստիկ անձրևն՝ նաև ձիւնաբերն, որ է ձիւն յորդ տեղացեալ: ռամկ. տաղանախոս կամ խուղուր խուշխաշ յաղմ: 2. Օրին. 32. 2: Ոսկէ. 1. հատ. լէ: և Լամբրոն: Իսկ մերթ նշանակէ՝ տեղացումն տարափոյ. այսինքն յորդ անձրևոյ, կամ ձեան. և կամ լեռնաքանչիւր հատք անձրևաց, ձեանց, և նմանեաց. Ըստ այնմ Ոսկէ. 2. հատ. ա. օրչափ 'ի սկզբանէ աշխարհի մինչև ցայսօր շիթք անձրևաց, և տեղատարափ ձեան, և ոլոռն կարկտի յերկնից այսր իջեալ է: Բայց երբեմն վարի սա իբրև զմակբայ. և նշանակէ՝ հանգոյն տեղւոյ և տարափոյ, այսինքն յորդ անձրևոյ: ռամկ. տաղանախոս պէս. ըստ այնմ Լամբրոն. Եւ ես նա բազմագիմի զնետս մունխս չարին տեղատարափ խաղացեալ: Դարձեալ. երբեմն սա փոխադրութեամբ առանց գրեալ լինի՝ տաղատարափ. այս կեղակարծն՝ կաղակարծ. երեխայրին՝ երախայրի. և այլն. ըստ այնմ Ոսկէ. 2. հատ. ժբ. իսկ 'ի ձմերայնի յորժամ անձրևք և ձիւն և տաղատարափ արգել լինիցի:

Տեղատուութիւն. թեան: || Ծաղի սա 'ի բառէս՝ տեղատուութիւն. որպէս յառաջատութիւն յանուանէս յառաջատուութիւն. և նշանակէ զտեղի տալն յիմեքէ, որ է խոյս տուումն, կամ մեկնումն, կամ հրաժարումն. և կամ հեռացումն: Իսկ մասնաւորապէս առեալ տեղատուութիւն ասի, նուազելովն 'ի բաց մեկնելն, կամ ցամաքելն ջուրց. զորմէ լեզուոյն տաացա 'ի բառն մակընթացութիւն: 'Ի գիրս պասքի անյաղթին:

Տեղափոխ: (Նախդրիւ հոլովի.) || փոխող տեղւոյ, կամ փոխադրող զինքն յայլուր: Իսկ

մերթ՝ փոխեալ 'ի տեղւոջէն. կամ փոխադրեալ յայլուր. և ըստ այսմ երբեմն Ը բայի շարակցի այսպէս՝ տեղափոխ լինիլ. և նշանակէ փոխել զտեղին իւր. կամ ելեալ 'ի տեղւոջէն գնալ յայլուր. Ըստ այնմ Աշգուբ. Ոչ աստեղք զկարգ իւրեանց անցանեն. և ոչ լերինք տեղափոխ լինին:

Տեղափոխեմ. եցի. եա՛. ել: (Ներգործ.) || փոխել զինքն 'ի տեղւոջէն. կամ փոխադրել զոք յայլուր: 'Ի Շարականս:

Տեղափոխութիւն. թեան: || փոխումն տեղւոյ. կամ ելումն 'ի տեղւոջէն. և կամ փոխադրութիւն, որով ոք գնայ յայլ ուրեք. Իսկ մերթ փոխանորդութիւն. կամ տեղակալութիւն. և կամ յաջորդութիւն: 'Ի հին բառագիրս:

Տեղեադրեմ. եցի. եա՛. ել: (Ներգործ.) || դընել 'ի տեղւոջ. կամ զետեղել. և կամ կայացուցանել: ռամկօր. փէղանորէլ. ըստ այնմ Խորէն. Գ. գլ. 59. Անդ տեղեադրեաց ըզ քաղաքն:

Տեղեակ: (Նախդրիւ հոլովի.) || հասու, կամ գիտակ. կամ հմուտ. կամ խելամուտ. և կամ կիրթ: ռամկ. վախուֆ. և ըստ այսմ ասի՝ տեղեակ գող ճանապարհի, կամ պատերազմի, կամ մակացութեան: Տոբ. 5. 7: 2. Մակ. 8. 9: 2. Պետ. 2. 12: Եւ կամ տեղեակ լինիլ խօսելոյ, կամ զկենաց, և զվարուց ուրուք. և այլն: Եսայ. 33. 19: Գործ. 26. 4:

Տեղեամ. տեղեաս. եայ. տեղեայի. եայիր. եայր. ղացի. ացեր. եաց. ղացեալ. ացիր. (աներևոյթն) տեղեալ: || Նոյն է ամիւ Ը բառին տեղալ. այն առեամն ընդ բային առեմ, և փրփրեամն ընդ բային փրփրեմ: Սաղմ. 77. 24: Յոբ. 5. 17: ըստ այսմ է և Յոբ. 38. 25. ուր ասի՝ Ո՞ պատրաստեաց ըզ հոսանս սաստիկ անձրևոյ՝ և զճանապարհս ամպրոպաց տեղեալ յերկնից, այսինքն տեղալ յերկնից:

Տեղեկանամ. ացայ. ացիր. ալ: (Ընդմիջ.) || տեղեակ լինիլ. կամ գիտակ գոլ. կամ ուսանիլ. կամ հմտանալ. և կամ կրթիլ: ռամկ. վախուֆ ըլլալ: Առակ. 15. 14: Կողոս. 2. 2:

Տեղեկութիւն. թեան: || հմտութիւն. կամ խելամտութիւն. և կամ կրթութիւն: ռամկ. վախուֆութիւն. կամ ԽԷԲԷՐլուքն:

Տեղեսեր. սիրի. աւ. աց. օք: || սիրող տեղւոյ, կամ կայանի իւրում:

Տեղի. ղւոյ. կամ տեղւոջ. 'ի տեղւոջէ. կամ 'ի տեղւոյ. եաւ. եաց. եօք: || վայր. կամ եալ. կամ կայան. ռամկ. փէղ: Ծննդ. 13. 3. և 4: Ել. 3. 5: Իսկ երբեմն՝ մուտ. կամ կաճառ ունից. զոր խնդրէ ոք գտանել: Եբր. 8. 7: Դարձեալ. եդեալ լինի փոխանակ բառիս ժամանակ. կամ պարապ. կամ առիթ. կամ միջոց, որ առեալ լինի ումեք. զի կարասցէ առնել զայս ինչ, կամ զայն. և Ը այսմ իմանի՝ մինչ ասի, տալ ումեք տեղի ապաշխարութեան, կամ զղջման, և կամ առնուլ կամ գտանել տեղի պատասխանւոյ. և այլն: Իմաստ. 12. 10: Գործ. 25. 16: Ոսկէ. 2. հատ. իէ: Երբեմն և՝ գիտութիւն. կամ

հաճաւորութիւն. և կամ յարմարութիւն. տաճկ. միւնասիպլիք: և ըստ այսմ առնի բան, կամ ի-մացուած արտաքոյ տեղւոյ. կամ ոչինչ խօ-սիլ առանց տեղւոյ. զոր և կոչեմք՝ անտե-ղի. տաճկ. միւնասիպսիզ. կամ ոչէն: 'ի գիրս գրիգորի նիւսացւոյն: Դարձեալ՝ երբեմն նախ-դրիւ տրականն, կամ ներգոյականն սորա վարի իբրև զնախադրութիւն. և նշանակէ փոխան. կամ փոխանակ. զի՛ր օրինակ. Եւ եղև աղիւսն 'ի տեղի քարի. և կուպր 'ի տեղի շաղախոյ: Ծննդ. 11. 3: Եւ 1.Մակ. 2. 65. Նա ձեզ լիցի 'ի տեղւոջ հօր. այսինքն փոխանակ հօր: Երբեմն ևս վարի սա կրկ-նելով այսպէս. 'ի տեղիս տեղիս. կամ 'ի տե-ղեաց տեղեաց. և նշանակէ 'ի զանազան տեղիս. կամ 'ի պէսպէս տեղեաց: 1.Մակ. 12. 2. և 4: Եւ կամ այսպէս. տեղի 'ի տեղւոջէ. կամ տեղւոջէ 'ի տեղի. և նշինկէ 'ի միոյ տեղւոյ 'ի միւսն. կամ այսր և անդր: ռամկօր. փէրէ փէր: Յոբ. 2. 9: Դարձեալ՝ բազում ան-գամ յարի սա 'ի բայս. և առանայ զայլ և այլ նշանակութիւնս. զորս տեսցես 'ի ներքոյ:

զՏեղի առնուլ: || Այսինքն զեկայ առնուլ. կամ մնալ 'ի տեղւոջ. և կամ կալ ուրեք՝ խա-փանելով զգնացս իւր: ռամկ. կէնուլ. կամ կանգնիլ. Մարկ. 10. 49: Ղուկ. 2. հատ. ԻԷ: 'ի ձեռ. հարց. Ժբ: Իսկ մերթ առնէ զդադա-րել. կամ հանդարտիլ. կամ կասիլ. և կամ լռել: ռամկ. տուրիլ. ըստ այնմ Ղուկ. 1. հատ. ԺԷ. Եւ այսու կարծեմք զտեղի առ-նուլ քարոզութեան:

Տեղի տալ. կամ տալ տեղի: || Այսինքն թոյլ տալ. կամ թողացուցանել. կամ ներել. կամ ոչ կալ հակառակ. և կամ զիջանել: և ըստ այսմ առնի՝ տեղի տալ միմեանց. կամ տալ տեղի բարկութեան. կամ քինու. և այլն: Հռոմ. 12. 19: Ղուկ. 2. հատ. Է: 'ի ձեռ. հարց. Թ: Իսկ մերթ ընդունիլ. կամ հաւանիլ. կամ անսալ. և կամ հպատակիլ: ռամկ. խօշ ձուէլ: Ղուկ. 2. հատ. ԻԹ: Նաև երբեմն նշանակէ՝ խոյս տալ. կամ 'ի փախուստ դառնալ. կամ 'ի բաց մեկնիլ. կամ հրաժարիլ. և կամ հեռանալ. և ըստ այսմ իմանի, մինչ ասի. տեղի տան ախտութիւնք. կամ չարիք. կամ երկուցեալ տեղի ետուն 'ի նմանէ. և այլն: ռամկօր. ֆախըլիլ. կամ առաջուտէն ըլլուլ. կամ կըրդիլ. կամ հեռանալ: Ահնոլս. 7. 12: Նարեկ. խոս. ԿԳ. և ԶԶ: և Լամբրոն: Իսկ մերթ՝ զանց առնել. կամ անտես առնել: ռամկ. ալչ խէյէլ: ըստ այնմ Լամբրոն. տեսեալ իմաստուն առաջ-նորդաց՝ եթէ 'ի բարւոք աւանդութեն չարին զմեքենայս իւր թաքոյց, տեղի ետուն 'ի նմանէ. այսինքն զանց արարին զաւանդութն՝ ոչ պահանջելով զկատարումն նորա:

Տեղոյք. ոյից. իւք: (անեզական.) || տեղիք. ռամկ. փէրլէր. մի զի մասնիկս՝ ոյք է յոգնա-կանացուցիչ. որպէս յայտէ 'ի սոցանէ. բաշ-խոյք. բարոյք. գործոյք. ժամոյք. և այլն: Դարձեալ՝ նշանակէ զայն, որ տեղւոյն է, կամ 'ի տեղւոջ կայ, և կամ առ տեղին վե-րաբերի. որպէս և մինչ ասեմք, ստառածոյքն, իմանամք զայնս՝ որք նոյն են, կամ առ նա վերաբերին:

Տեղումն. ղման. մամբ. մանց. մամբք: || Տե-ղացումն, կամ անձրևումն. կամ իջումն յերկնից ձեան, կարկտի, եղեման, և այ-լոց նմանեաց: Բայց մասնաւորապէս ա-ռեալ նշանակի առլատ տեղն, որ է տա-րափ. այսինքն յորդ և սաստիկ անձրև. ռամկ. սաղանախ. և ըստ այսմ ասի 'ի գիրս դաւթի անյաղթին. Տեղումն է, որ ունի քան զանձ-րև շիտ հաղքագոյն, (այսինքն յորդագոյն) ըս-տէպ թօթափմամբ բերեալ 'ի վր երկրի:

Տեղւոյր: || Է երկրորդ սեռականն բառիս տեղի, կերպացեալ ըստ հնոց, որպիսիք են և այլք բազումք, զորոց ասացաւ 'ի բառն աստեղոյր: Եւ սա ներգոյական լինի մինչ վարի նախդրիւ այսպէս, 'ի տեղ-ւոյր, որ է 'ի տեղւոջ: 'ի հին քերականէ:

Տենդ. կամ տենտ. ի. իւ. ից. իւք: || Է ախտ ինչ տապացուցիչ, զոր այլով անուամբ կոչեմք ջերմն: ռամկ. ջէրմ. կամ սըթմայ: Մարկ. 1. 31: Նարեկ. ԿԸ:

Տենդոտ. ի. իւ. ից. իւք: || Ունօղ զտենդ, կամ ախտացեալ ջերմամբ. զոր և կոչեմք ջերմնոտ: ռամկ. ջէրմոտ: և տաճկ. սըթմալը:

Տենդոտիմ. եցայ. եա՛ց. իլ: (ձայնակր) || ախտանալ տենդիւ. կամ տապանալ ջեր-մամբ: ռամկ. ջէրմոտիլ. կամ սըթմայ ըլլուլ:

Տենչ. ի. իւ. ից. իւք: || տե՛ս զՏարփանք:

Տենչալի. լւոյ. եաւ. եաց. եօք: || տարփե-լի. կամ ցանկալի. և կամ փափաքելի: Նա-րեկ. ԼԸ:

Տենչամ. ացայ. ա՛. ալ: (ընդ միջ.) || տե՛ս զՏարփալ: Իմաստ. 19. 11:

Տենչանամ. ացայ. ացի՛ր. ալ: (ընդ միջ.) || նոյն է ընդ բայիս տենչալ. որպէս ցանկալին ընդ բային ցանկանալ. և ըղձալին ընդ բային ըղձանալ: 'ի գիրս դաւթի անյաղթին:

Տենչանք. անաց. օք: (անեզ.) || տե՛ս զՏար-փանք: Իմաստ. 16. 2: Նարեկ. ԶԳ. և ԶԸ:

Տենչութիւն. թեան: || տենչանք. կամ տեն-չումն: Նարեկ. ԽԵ:

Տենչումն. չման. մամբ. մանց. մամբք: || տե՛ս զՏարփանք: Յհ. ոսկ:

Տենտ: || տե՛ս զՏենդ: Մծբն. ԺԵ:

Տենտոտ: || տե՛ս զՏենդոտ:

Տեռ. ի. իւ. ից. օք: || Ծագի սա 'ի յունա-կան բառէս՝ տեռախտոս, և նշանակէ ըղ-նրբանիւթ աղնիւ ծածկոյթն գործեցեալ իբրև զքօղ հարսանց. զոր մեծազգի կա-նայք արկանեն զգլխովք, և զանձամբք իւրեանց յելանելն արտաքս 'ի տանէն: ռամկ. բիւրիւնճիւք: Ծննդ. 38. 14: Եւ 'ի խորէն. ա. գլ. 25. ասէ. Կին մի ծիրա-նազգեստ՝ երկնագոյն ունելով զիբրև տեռ:

Տեռատես. ի. իւ. ից. իւք. կամ աց. օք: || է բառ յունական, որ ասի զմանկանց, որք ախտացեալք են բաղխմամբ աքեան. մի զի օրէնք են կանացի բնութեն՝ յայնժամ հասա-նել՝ յորում ընդունակք են յղութե, յայն ժամանակն բղխել արտաքս ընդ ստքական անդամն զդաշտանն, այսինքն զգալաշ և զկեա-

ռակոր

տակաւր յաւելուածս արեան առէեցելոյ 'ի բնութէ 'ի պէտս ողջենութեան ։ Բայց ոմանք 'ի կանանց ախտանալով 'ի ներքուստ՝ հանապազորդ բղխեն զայսպիսի արիւն՝ ոչ սպառելով ահմանեալ ժամանակի բըղնութեան ։ Արդ՝ զայսպիսիս անուանեմք տեռատես, որ և զարս՝ որք ախտանան հանապազորդեան ծորմամբ սերման, անուանեմք սերմնահոսութ. Ղեւտ. 15. 33. Մատթ. 9. 20.

Տեռատեսական. ի. աւ. աց. ոք ։ ‖ այն կին, որ տեռատեսին է. կմ առ տեռատեսն վերաբերի ։

Տեռատեսութիւն. թեան ։ ‖ ախտ տեռատեսական, որ է ցաւագարութիւն ինչ կանանց, որով արտաքոյ կարգի բնութէ ծորեն զարիւնս, այլ առաջաւէ 'ի բազում տեռատես ։ Մարկ. 5. 25. Ղուկ. 8. 43.

Տես. ոյ. իւ ։ (սորա յոգնականն հազիւ 'ի գործ ածի.) ‖ տեսութի. կմ նկատումն. և կմ հայեցուած. և ըստ այսմ առի՝ ցանկալ տեսոյ աչողաց. կմ գալ 'ի տես իրիք. կմ ձգել 'ի տես աչաց. և այլն ։ համ. փէտ ։ Ղեւտ. 13. 12. 3. Թագ. 4. 3. Նարեկ. ղէ. և 'ի Գող. խոսուն ։ Իսկ մերթ՝ տեսիլ. կմ երևոյթ ։ համ. փէտ ։ Նարեկ. ղէ.

Տեսակ. ի. աւ. աց. ոք ։ ‖ տեսութի. կամ տեսիլ. կմ երևոյթ. կմ գեղ. որով երևելի լինի ինչ. և առի զմարդոյ, զշինուածոյ, զպտղոյ, և զայլոց իրաց ։ համ. փէտ ։ Եզեկ. 5. 15. Նարեկ. խալ. ի. ծէ. Ոսկէ. 2. հաւատ. ծ. Եւ ըստ այսմ իմացուածքն իրիք տեսակ կոչին, ըստ որում են իմանալի տեսութի. ըստ այնմ 'ի Վարս հարց. Ճ. Է. տեսական բանսև ուժեղ, տեսակս ունի խոր և զօրեղ ։ Դարձեալ՝ ցոյց, կմ ցուցակ. կմ նշան. և կմ օրինակ ։ Նարեկ. կ. և հԹ. և Լամբրոն ։ Դարձեալ՝ տարազ. կմ կերպ. կմ ձև. կմ պատկեր. կմ կերպարան. և կմ նմանութի ։ համ. Էսքանդ. կմ Փիլիսք ։ Նարեկ. խդ. ղդ. և ղէ ։ Ոսկէ. 1. հաւ. ժէ ։ և Լամբրոն ։ Դարձեալ՝ ազգ. կմ ցեղ. և կմ սեռ իրաց, և ըստ այսմ առի՝ տեսակք յանցանաց, ախտից, կենդանեաց, և այլն. համ. նոյ. կմ պէս ։ Նարեկ. կը. և Լամբրոն ։ ըստ այսմ կ և 'ի շարականս, ուր առի, կէտք և ամ կայտառք, որք տեսակք են բանաւոր հօտի, այս կայտառք, և որք ազգք են բանաւոր հօտի, որք են մարգիկ ։ Դարձեալ՝ տեսակ անուանին իմիք զանազան մասունք նը. և ըստ այսմ եր կրատսան. ժամք առէնքեան ասին տեսակ նը. ըստ այնմ Նարեկ. 'ի Գող. առաքելոց. Եւ տեսակ առուրց առէնքեան երկոտասան ։ Դարձեալ՝ ըստ քերթողաց տեսակ կոչին ազգք անուանց նախագաղափարաց և ածանցականաց, զորոց տեսցես 'ի քերականութեան ։ Դարձեալ՝ ըստ փիլիսոփայից տեսակ կոչի առաջին ներգործութիւն նիւթոյ, որ առայ նմա զգոյութի ամէն կերպարանելով զնա. վս որոյ և երբեմն կոչի կերպական տեսակ ։ 'Ի Գիրս պիտ. անյաղթին ։ Եւ և տեսակ անուանի 'ի փիլիսոփայից՝ ընդհանրական բնութիւն վերացեալ յամ եզակութեանց. և անհատականութեանց. և այսէ մինն 'ի հինգ ձայնից պորփիւրի, որ ստորոգի զբազմաց թուով տարբերեցելոց 'ի ներքուստ զինչ ։ 'Ի Գիրս պիտ. անյաղթին ։ Զայսպիսի տեսակս ասէր պղատոն ըստ ինքեան կացեալ, անստեղծ, անեղծ, և մշ յաւիտենականս, որ է անտեղի. վս որոյ ասի 'ի Գիրս Գիտ. Վանեան իմն պղատոնի զտեսակն ։

Տեսակաբար. կմ տեսակապէս ։ (մակբայ որակական.) ‖ տեսութբ. կմ երևելաբար. կմ ցուցակապէս. և կմ կերպաւորաբար ։ Լամբրոն ։ Իսկ ըստ փիլիսոփայից նշանակէ ասել՝ իբրև զտեսակ. կմ ըստ որում տեսակ, և կմ տեսականապէս ։

Տեսակագործ. ի. իւ. աց. ոք ։ ‖ տեսակաւորիչ. կմ կերպացուցիչ. և կմ տեսակարար ։

Տեսակագործեմ. եցի. եա. եալ ։ (Ներգործ.) ‖ տեսակացուցանել. այս կերպացուցանել. կմ կերպաւորել. ըստ այնմ Խորէն. Բ. ղբ. 50. Եւ տիկ տեսակագործեալ ուռուցմամբ, այս տիկ կերպացուցեալ՝ ուռուցանելով զմարմին ։

Տեսակագործութիւն. թեան ։ ‖ տեսակաւորութի. կմ տեսակացուցումն, և կմ կերպաւորութի ։

Տեսական. ի. աւ. աց. ոք ։ ‖ տեսանելի, կմ երևելի. և կմ զգալի. և ըստ այսմ առի զոյ, պատճառ տեսականաց և աներևութից. կմ որ իմանալեաց և տեսականաց ։ Նարեկ. լդ. խէ. և ձդ. Իսկ մերթ՝ մտաւորական, կմ իմացական. և կմ աննարմնական ։ Նարեկ. 'ի Գող. խոսուն ։ Եւ յայտնապէս առեալ՝ տեսական կոչի կեանքն կմ վարքն, որով ոք առանձնացեալ պարապի մտաւորական տեսութեանց, աղօթից և ընթերցուածոց. և այնպէս ներքին կրթութեանց, որպիսիք էին կեանք անապատականաց ։ Լամբրոն ։ և Յն ործ ։ Այնպէս տեսական անուանին իմաստութիւնքն, կամ գիտութիւնքն, որք վերաբերին առ ներգործութիւնս մտաց. կամ որոց գլխաւոր վախճանն է ճանաչումն ճշմարտութեան. որպիսի է մակացութիւն բնաբանական, և համարողաբանական. և այլք նմանք. որոց ներհակքն կոչին գործնականք ։ 'Ի Գիրս պիտ. անյաղթին. և Յն ործ ։ Դարձեալ նշանակէ տեսանող. կմ նկատող. և ըստ այսմ տեսական կոչին աչքն, կմ միտքն. և այլն ։ Նարեկ. լէ. Դարձեալ՝ ըստ որում ծագի ասահմանութեամբ 'ի բառէս տեսակ, այլ ներհականն 'ի բառէն ներհակ, նշանակէ ըզ տեսակականն. այս վերաբերեալն առ տեսակս, կմ զայն՝ որ ունի յինքեան զբան տեսակի՝ և ոչ նիւթոյ. և ըստ այսմ տեսական պատճառ կոչի նա, որ պատճառէ զինչ՝ էակութեամբ իւրով տեսակաւորելով զնա. կամ ինքնին տեսակ լինելով նմա. որպիսի է մարդոյ՝ հոգին ։

Digitized by Google

Տեսականապէս: (մակբայ որակական.) || ըստ տեսակին. կամ ըստ տեսականութեան, ք ըստ այնմ բանի, որ տեսական է յիմիք. որոյ ներհակն կոչի՝ նիւթականապէս:

Տեսականեմ. եցի. եա՛. ել: (ներգործ.) || նոյն է ընդ բայիս՝ տեսակացուցանել. ք այնմ Նարեկ. ղք. Զոր երկին տամ բարձանց ոչ զօրէ տանիլ՝ 'ի փոքր գոյս տեսականեցեր, ք կերպացուցեր, կամ էացուցեր:

Տեսականութիւն. թեան: || տեսական գոլն. կամ տեսողութիւն. կամ տեսութիւն. կամ տեսիլ. կամ երեւոյթ. և կամ ցոյցք: Նարեկ. հճ: Իսկ ըստ փիլիսոփայից տեսականութիւն կոչին իւրաքանչիւրում իրի տեսական կատարելութիւնքն, որք դիմաբաժանին ընդ նիւթականութիւն:

Տեսակապէս: || տե՛ս Տեսակաբար:

Տեսակարար. ի. աւ. աց. օք: || տեսակացուցիչ. կամ կերպացուցիչ. կամ կերպաւորօղ: Իսկ ըստ փիլիսոփայից տեսակարար կոչի այն, որ կացուցանէ զինչ յիմիք տեսակի. կամ տայ ստանալ զտեսակ. և ըստ այսմ յատկել տարբերութիւն կոչի տեսակարար. ըստ որում նմաւ ստանայ իրն զտեսակ համաբնաբանական, ք մէթաֆիզիքական. վն զի անասունն ունի զտեսակ անասնային, յաղագս լինելոյ տարբերութեն նը անասնական: Եւ մարդն ունի զտեսակ մարդկային՝ յաղագս գոլոյ տարբերութեն նը՝ բանաւորական: 'Ի գիրս Դաւթի անյաղթին:

Տեսակարարութիւն. ութե. աւ. աց. օք: || նոյն է ընդ վերինոյն: 'Ի գիրս Դաւթի անյաղթին:

Տեսակացուցանեմ. ացուցի. ացո. անել: (անցող.) || ածել զինչ 'ի ցուցականութիւն, կամ կերպացուցանել. կամ կերպաւորել. կամ գոյացուցանել, և կամ հաստել: ռամկ. էրեւան հանել: ըստ այնմ 'Ի գիրս գրիգ. տղ. բան. Յորժամ կամեցաւ, զիմանալի սեռս տեսակացոյց: Իսկ մերթ՝ կացուցանել 'ի տեսակի:

Տեսակաւոր. ի. աւ. աց. օք: || ունօղ զտեսակ. կամ կերպաւոր. և կամ ձեւացեալ:

Տեսակաւորեմ: || տե՛ս զկերպացուցանել:

Տեսակոյր: || ք տեսակի: տե՛ս զբան Ասացելոյս: 'Ի գիրս Դաւթի անյաղթին:

Տեսանելի. ելւոյ. եաւ. եաց. եօք: || այն՝ որ կարէ, կամ հանդերձեալ է տեսանիլ. և կամ այն՝ որ տեսանի: Իսկ մերթ նշանակէ տեսանօղ. որգ և ունելին ունօղ. հանելին հանօղ. կրելին կրօղ. և այլն: 2. Մակ. 3. 17: և Սոփ. 'ի նախերգ.

Տեսանելիք. եաց. եօք: (անեզ.) || տեսողական զօրութիւն. կամ գործարան տեսանելոյ. և ըստ այսմ տեսանելիք կոչի աչքն:

Տեսանեմ. տեսի. տե՛ս. սանել: (ներգոր.) || ընդ տեսութեամբ արկանել. կամ աչօք ըմբռնել: ռամկ. փէսնել: Ծննդ. 18. 2: Ելից. 32. 19: Իսկ մերթ՝ հայել. կամ նկատել. կամ դիտել. կամ ուշ դնել: ռամկ. նայել. կամ փնտռել: 3. Թագ. 21. 29: Յով. 2. 22. և 24: և 3. 3: Երբեմն ես գիտել. կամ ճանաչել. և կամ իմանալ: ռամկ. գիտնալ: Ծնն. 8. 8: 2. Օրին. 32. 39: Երբեմն՝ ես զգաստ լինել. կամ զգոյշ կալ: ռամկ. զգուշ կենալ. կամ ուշադրութիւն ընել: Ելից. 4. 21: Եբր. 8. 5: Դարձեալ տեսանել կոչի երեւակայելն. կամ յերեւակայութեն նկարեալ ունելն զինչ. և ք այսմ սակս տեսանել տեսիլս սուտս. կամ երազ տեսանել. որ է յերազել: Ծնն. 37. 5. և 6: Դարձեալ վերաբերի սա երբեմն առ այլ զգայութիւնս. զի տեսանել կոչի զգալն զինչ ճաշակելեօք, կամ հոտոտելեօք, կամ շօշափելեօք. և այլն: Սաղմ. 33. 9: Դարձեալ՝ տեսանել ասի հոգալն, կամ գտանելն. և կամ պատրաստելն զինչ: ռամկոր. ճարէլ: Ծննդ. 22. 8: Ելից. 18. 21: Թուոց. 27. 16: Դարձեալ՝ աներեւոյթն սորա, որ և այլոց բայից՝ վարի բազում անգամ իբրև զանուն այսպէս. տեսանել. ոյ. ով. և նշանակէ տեսութ. կամ տեսիլ. և կամ երեւոյթ. և ըստ այսմ ասի՝ այր խուժադուժ տեսանելով. կամ գեղեցիկ հայելով, և շքեղ տեսանելով, ք տեսլեամբ: 2. Մակ. 4. 40: և 15. 12: Եւ Յես. 22. 10. ասի՝ սեղան մեծ տեսանելով. ք երեւութիւ:

Տեսանողագուշակ: (նախդրիւ հոլովի.) || գուշակեալ 'ի տեսանողէ, ք այն՝ որ նախապատմէ. կամ նախածանուցեալ լինի 'ի մարգարէէ: Նարեկ. 'Ի գով. առաք:

Տեսանողական. ի. աւ. աց. օք: || տեսողական, ք այն՝ որով տեսանի իմն, կամ որ վերաբերի առ տեսութիւն: Իսկ մերթ՝ նա՝ որ տեսանէ. կամ տեսանօղ. ըստ այնմ. Նարեկ. խա. Ո՞վ կուչեցոյց տեսանողական, մթացուցեալ զլոյս, որ յիս: և 'ի ծծթ. ասի, Տեսանողականքն աչօք չունին պէտս առաջնորդի: Դարձեալ՝ նշանակէ՝ մարգարէական:

Տեսանողութիւն. թեան: || տեսողութիւն, կամ տեսութիւն, և կամ տեսիլ: Նարեկ. 'Ի մեկն. երգոց:

Տեսանօղ. ողի. իւ. աց. օք: || նա՝ որ տեսանէ, որ և ասի տեսօղ. որպէս ոտասացողն՝ ոտօղ: Իսկ երբեմն տեսանօղ կոչի մարգարէն. ըստ որում տեսանէ զԸՂ տեսիլս յԱյ: 1. Թագ. 9. 9: 2. Մնաց. 33. 18: ԱՀնովկ. 7. 12:

Տեսարան. ի. աւ. աց. օք: || տեղի՝ ուստի տեսանեն, կամ նկատեն զինչ. որպիսի է 'ի բերդս՝ դիտանոցն, իսկ 'ի նաւս՝ խելքն. ք ղըլն, կամ թակաղաղն գլխոյ կայմին. ք չանախըլըխն: Նարեկ. ին: Եւ յայսմանէ առեալ մասնաւորապէս տեսարան կոչի կրկէսն, կամ թէատրոնն, ուր տեսանէին զխաղս հանդիսականս: Զսա առ ժամանակօք հնոց կերտէին բազում յարկօք 'ի ձև կիսաբոլոր շրջանակի. յորոյ յարկսն ուրեք ուրեք առնէին զնորատեսիլ խաղարկութիւնս, կամ կաքաւմունս, ուրեք ուրեք նուագէին զերգս ներգաշնակաւորեալս. իսկ յայլ ուրեք քանատեղեաք որ

տասանեկին զՏեառնընդառաջութիւն զանարգա_ ցուցիչս, որպէս և երբեմն բանաստեղծական բանիւք մեծարանց 'ի գիրս Հարկանէին, ըստ օրինակին, զոր առնեն 'ի տաճիկս՝ առ_ տալքն: Նարեկ. լա: Խորէն. ա. գլ. 85: 'Ի ճառս հաւտ. ձէ: Գործածեալ՝ նշանակէ՝ զտառա_ կայն տեսանելոյ. և ըստ այսմ տեսիլքն, կամ իրքն՝ զորս տեսանեն 'ի կրկէսս, և 'ի թէատրոնս, տեսարան անուանին. տաճկ. սէյիր ընէլի. ըստ այնմ 'ի շարականս. քան զի տեսարան եղեն հրեշտակաց և մարդ_ կան. որ տեսիլ եղեն: Երէ ևս նշանակէ՝ զգործին տեսանելոյ. և ըստ այսմ երբեմն տեսարան կոչի դիտակն, որ փէւրղիանն: Իսկ երբեմն զգայարան աչաց, կամ ակն. որպէս և երբեմն առիթն տեսութեան: Նարեկ. ձգ. զէ: Յոհ. սրբ: և 'ի ճառս հաւտ. 'ի նախերգ:

Տեսաւոր. ի. աւ. աց. օք: || ունող զտես, կամ տեսանելի, կամ երևելի, և կամ զգալի՝ ըստ այնմ Լամբրոն. Զմիտս. և զմեծութիս տեսաւորիս արհամարհեաց:

Տեսաւորիմ. եցայ. եալ. իլ: (ձայնակր.) || տեսանելի լինել. կամ տեսանիլ. կամ ե_ րևիլ. և կամ յայտնիլ: տաճկ. գէօրիւնմէք. կամ էրիւան էլլէլ: Նարեկ. ղզ. և ղթ:

Տեսաւորիչ. որչի. ած. աց. օք: || տեսաւո_ րանող, կամ 'ի տեսութիւն ածող. կամ երևե_ ցուցիչ, և կամ յայտնիչ: տաճկ. էրկնող, կամ էրիան հանող: Նարեկ. 'ի գովեստ խաչին:

Տեսաւորութիւն. թեան: || տե՛ս զՏեսութիւն: Նարեկ. լե. հը. և ղզ:

Տեսիլ. տեսլեան. եամբ. եանց. եամբք: || տեսութիւն, կամ տեսակ, կամ երևոյթ, և կամ ցոյցք: տաճկ. փէօր: Եզեկ. 24. 10: Իմաստ. 11. 20: Դնդ. 13. 25: ըստ այսմ է և 19. 27. ուր ասի՝ Մի՛ տպականեցէք զտեսիլ մա_ րմնոց ձերոց, որ զերևոյթ ոչ՝ ըստ օրի_ նակի հեթանոսաց. զի սովորութիւն էր ո_ մանց 'ի նոցանէ փորրել զծայրս մորուաց երեսանց զրեթէ մինչև ցստորոտս ականջաց. կամ շուրջանակի զմեջ վերին ծայ_ րիցն գերծուլ 'ի ձև փոքրիկ կուլակի. ո_ րով տեսիլ մորուացն արատաւորիւր, յորմէ և խնքեանք կոչէին յապաւեալ զերեսօք: Գործածեալ՝ տեսիլ կոչի՝ տե_ սութիւնն, կամ երևումն, որ լինի յա_ նուրջս, կամ յերևակայութեան, և կամ 'ի հոգ_ ւոջ, յորմէ և երազքն տեսիլ կոչին: Ծննդ. 20. 3: Թուոց. 12. 6: Դան. 4. 2. և 10: Գոր_ ծեալ՝ երեսք, կամ պատկեր, կամ կերպա_ րան, և կամ գեղ: տաճկ. սուրէթ, կամ ֆիս_ ղէթ: Ծննդ. 41. 2: Սաղմ. 44. 3: Իմաստ. 14. 17: Երբեմն ևս ձև, կամ կերպ. կամ նմանութիւն. ըստ այնմ 'ի շարականս. Պորփիւրեալ պատմիւր լեառն սուրբ յն գերեզորի տեսլեամբ կար_ մրեղայ. որ ըստ նմանութեան կարմրեղայ լե_ րին: Գործածեալ՝ տեսիլ կոչի տեսանելի իրն, կամ այն ամ, զոր տեսանեն 'ի տեսա րանս. և 'ի կրկէսս, և այլն: տաճկ. սէյիր ընէ լու բան: 2. Մակ. 5. 26: և Ա. Կորն. 4. 9:

Տեսողական|| տե՛ս զՏեսանողական: Նար. հէ:

Տեսողութիւն. թեան: || տե՛ս զՏեսանո_

ղութիւն: Նարեկ. գ. և ձ:

Տեսութիւն. թեան: || տեսանողութիւն, որ տե սողութիւն, կամ նկատումն, կամ դիտումն: Նարեկ. զէ: և 'ի ճառս հաւտ 'ի նախերգ: Իսկ մերթ՝ տեսիլ, կամ երևոյթ: տաճկ. փէօր. և ըստ այսմ ասի՝ անքննական տեսութիւն, կամ տեսութիւն մարգարէից, և այլն: Խո_ րէն. ա. գլ. 80: և 'ի շարականս: Գործածեալ՝ խմացումն, կամ Ճանաչումն, և կամ ըմբռ_ նումն. ըստ այնմ Ոսկէ. 'ի վէրչաբան. 'ի մէր գոլով սորայս մակացութեան քան զմերս տե սութիւն: Երբեմն ևս՝ գիտութիւն, կամ ու_ սումն, և կամ մակացութիւն, ըստ այնմ Խո րէն. գ. գլ. 68. Աշակերտք նախ քան զտե սութիւն մտաւորականք: և 'ի գիրս պիտոյից ան_ յաղթին ասի՝ Պղատոնական տեսութեամբ խո_ րհրդոց և դժուարոց, որ մակացութեամբ պղա_ տոնի: Երբեմն ևս Ճառ, կամ մեկնութիւն, և կամ քննութիւն. և ըստ այսմ խմանի՝ մինչ ասի, առնել զտեսութիւն աղօթից, կամ մակացութեանց, կամ բաժանել զմատեանն 'ի նախերգանս, 'ի տեսութիւն, և 'ի յորդո րակ. կամ առաջիկայ տեսութիւն վարուց. և այլն. 'ի գիրս պիտոյից անյաղթին: 'ի ճառս հաւտ 'ի նախերգ: և Լամբրոն:

Տեսուն: (նախդրիւ հոլովիւ.) || ունող ըզ տեսութիւն. կամ տեսանելի. և կամ տեսիլ:

Տեսուչ. տեսչի. աւ. աց. օք: || տեսող, կամ դիտող, կամ նկատող: տաճկ. փէօրնող. կամ նայօղ: Եսայեա. 16. 4: Իսկ մերթ՝ ակնածող 'ի վերայ, որ է վերակացու, կամ վերատեսուչ, կամ խնամակալ, կամ հոգաբարձու, կամ վերակացու. և կամ պաշտպան, որպիսիք են հո_ վիւք, եպիսկոպոսունք, կամ առաջնորդք. և 'ի վերայ ամենայն ազգ: տաճկ. կէօզճի, կամ հոգ տանող: Եսայ. 15. 5: Գործ. 20. 28: Ա. Պետր. 2. 25:

Տեսչութիւն. թեան: || տեսողութիւն, կամ դի_ տողութիւն, և կամ նկատումն, որով ոք դի տէ զգործս ուրուք: Իսկ մերթ՝ ակնա_ ծութիւն, կամ նախախնամութիւն, կամ խնամակալ ութիւն, կամ հոգաբարձութիւն, կամ վերակա ցութիւն, և կամ կառավարութիւն: տաճկ. կէօզճիւլիք: Իմաստ. 14. 3: և 17. 2: Նարեկ. զէ: Խորէն. ա. գլ. 28:

Տեսող. ողի. իւ. աց. օք: || նոյն է ընդ բա_ ռին տեսանող. որպէս որսող ընդ բառին որսացող: Յոհ. սրբ:

Տետր. տետրի. երբ. երաց. երբք: կամ որ ըս տագոյն է. տետրի. իւ. ից. իւք. կամ գք: || ծալք սա 'ի յունական բառէս տետրա տին, որ է չորրեակ. կամ քառապատիկ. կամ չորեքկուսի. և կամ քառակուսի. և ըստ այսմ ծալք 'ի ամենայն բանս տետրակու_ սուց: Այլ՝ յայտնապէս առեալ, տետր_ րաբար տետր կոչէ 'ի մեզ թերթերն թըղ թոյ, որ տպագրացն ծալեալ քառանկիւ նի 'ի բազում թերթս. թէ չորեքկուսի իցէ. և թէ ութելի. կամ պակաս. որպիսի է այն, զոր ուսումնականք կազմեն 'ի գըր ելոյ. և տպագրօղք 'ի յօրինել նոցին ըզ մատեանս:

Տետրակ. ի. աւ. աց. [illegible]։ || փոքր տետր։

Տետրա[illegible]. [illegible]։ || Քառանկիւնի, կամ քառակուսի [illegible]։ ռամկ. [illegible]. և ըստ այսմ ասի՝ 'ի տե[illegible] [illegible]։

Տերեւ. ոյ. ով. ոց. ովք ։ || տե՛ս զՍաղարթ։ Ծնն. 3. 7։ Ղեւտ. 26. 36։ Մատ. 21. 19։

Տերեւաբեր. ի. իւ. ից. կամ աց. ացք։ || բե- րող, կամ արտադրող զտերեւ. կամ բուսու- ցիչ սաղարթից. որպիսիք են ծառք. կամ բոյսք։ ռամկ. եափրախ բէրօղ. կամ եափրախ [illegible]։ Աշգաբ։

Տերեւազարդ. ի. իւ. ից. իւք։ || զարդարեալ տերեւովք. կամ պճնեալ սաղարթիւք. որ և ասի տերեւափթիթ։ ռամկ. եափրախով զարդարուած։

Տերեւազգեաց. եցի. իւ. ից. իւք։ || տե՛ս 'ի ներքոյ զՏերեւազգեստ։

Տերեւազգեստ. ի. իւ. ից. իւք։ || զգեստա- ւորեալ տերեւովք. կամ զգեցեալ զծած- կոյթ 'ի սաղարթից. որպիսիք են նախա- ստեղծքն, և ոմանք յանապատականաց։ ռամկ. եափրախ հագնօղ։ Իսկ մերթ փոխա- բերութեամբ ասի զանկոց. և նշանակէ ծած- կեալ, կամ զարդարեալ տերեւովք։ Բայց երբեմն [illegible] և նշանա- կէ՝ սաղարթիւք զգեստաւորելով, կամ տերեւովք ծածկելով. և ըստ այսմ ասի՝ [illegible]. տերեւազգեստ [illegible] զմերկութեան [illegible]։ Աշգաբ։

Տերեւալի։ (Նախադրիճ հոլովի.) || տե՛ս զՏե- րեւալից։

Տերեւալիր։ (Նախադրիճ հոլովի.) || տե՛ս 'ի ներքոյ զՏերեւալից։

Տերեւալից։ (Նախադրիճ հոլովի.) || լցեալ տերեւովք. կամ լի սաղարթիւք. ռամկօր. եափրախով [illegible]։ Մարկ. 11. 13։ Նարեկ. [illegible]։

Տերեւաթափ. ի. աւ. աց. ացք։ || այն՝ որոյ տե- րեւքն թափին, կամ որոյ սաղարթքն են թօթափեալք. որպիսիք են ծառք յաշ- նան. ռամկ. եափրախը թօքած։ Եսայ. 1. 30։ Իսկ մերթ թափօղ զտերեւս ծառոց, կամ բուսոց։ ռամկ. եափրախը թօքօղ։ Ըստ այսմ Խորէն. Գ. գլ. 37. [illegible] յանուանէ տերեւաթափաց [illegible] թափօղ զտերեւս յանուանէ։

Տերեւախիտ։ (Նախադրիճ հոլովի.) || ունօղ զտերեւս խիտս. կամ թանձրացեալ սաղար- թիւք. որպիսիք են տերեւալից ծառք։ ռամկ. [illegible] եափրախ ունօղ։ Ղեւտ. 23. 40։ և [illegible] յաղագս [illegible]։

Տերեւապատ. ի. աւ. աց. օք։ || տերեւովք պատեալ. կամ սաղարթիւք [illegible]։ ռամկ. եափրախով [illegible]։ Իսկ մերթ՝ տե- րեւովք [illegible]. կամ սաղարթիւք [illegible]։ ռամկ. եափրախով [illegible]։ Աշգաբ. և [illegible]։

Տերեւասաղարթ։ (Նախադրիճ հոլովի.) || տե- րեւովք սաղարթեալ. կամ զտերեւս արձա- կեալ. և կամ տերեւազարդ. ըստ այսմ [illegible] 'ի տերեւասաղարթ [illegible]։

Տերեւատ. ի. իւ. աց. ացք։ || է տերեւ [illegible], նման տերեւոյ ձիթենւոյն, որ է բը- նութեամբ ջերմ և չոր. 'ի գործ ածի [illegible] 'ի գեղորայս. [illegible] 'ի բաց [illegible] ջուրն [illegible] յորովայն մարդոյ. զոր թէ [illegible] 'ի չափ [illegible]։

Տերեւափթիթ։ (Նախադրիճ հոլովի.) || տե՛ս զՏերեւազարդ։

Տերեւընկէց։ (Նախադրիճ հոլովի.) || տե՛ս ըզ Տերեւաթափ։ Աշգաբ։

Տերեւիմ. եցայ. եցաւ. կամ եայ. եալ. իլ։ (ձայնաւոր.) || տերեւս արձակել. կամ տե- րեւովք զարդարել. որ և ասի սաղարթել. և ըստ այսմ ասի. տերեւել ծառոց. կամ [illegible]։ ռամկ. [illegible] կամ եափրախ հանել։ Աշգաբ. և 'ի շարականս։ Եւ 'ի Մծբն. [illegible] Սուրբ [illegible], և տե- րեւեալ [illegible] տերեւեցաւ։

Տեր[illegible]։ || տե՛ս 'ի [illegible] անուանց։

Տեւակ. ի. աւ. աց. ացք. || տե՛ս 'ի ներքոյ ըզ Տեւական։

Տեւական. ի. աւ. աց. ացք։ || այն՝ որ տեւէ. կամ որ ընդդէմ կայ. կամ մնացական. և կամ կայուն։ ռամկ. դիմացօղ. կամ դիմացկուն։ Ըստ այսմ 'ի [illegible] Եւ տեւական [illegible]։

Տեւականութիւն. թեան։ || տեւողութիւն. կամ տեւումն. կամ մնացականութիւն. կամ ժուժ- կալութիւն. և կամ համբերութիւն։ Նարեկ. [illegible]։

Տեւկութիւն. թեան։ || տե՛ս զՏեւականութիւն. 'ի Գիրս [illegible]։

Տեւեմ. եցի. եա. եալ։ (չէզոք.) || կալ, մնալ. կամ տանել. կամ ժուժկալել. կամ համբերել։ ռամկօր. դիմանալ. կամ [illegible]։ Ա. Կորն. 13. 7։ և [illegible]։ Խորէն. Գ. գլ. 64։

Տեւողութիւն. թեան։ || տե՛ս զՏեւականութիւն։

Տեւումն. [illegible]։ || տե՛ս զՏեւականութիւն։

Տ Զ.

Տզ[illegible]աձև։ (Նախադրիճ հոլովի.) || ունօղ զձև տզրկի. [illegible] կամ ձևացեալ իբրև զտզրուկ. որպիսիք են [illegible]։ Խորէն. [illegible]։

Տզրկանման։ (Նախադրիճ հոլովի.) || ունօղ զնմանութիւն տզրկի. կամ [illegible] տզրկաց։ ռամկ. [illegible]։

Տզրկանամ. [illegible]։ ([illegible]) || տզրուկ լինել. կամ ստանալ զնմանութիւն տզրկի։

Տզրուկ. տզրկի. աւ. աց. օք։ || է՝ [illegible] որ [illegible]. [illegible] թէ [illegible] 'ի մարմին մարդոյ [illegible] ըզ

տիկ. ռամկ. եւս փչղոյն. և ռամկ. ոխոխոյ։ Աղուաց. 30. 15։

Տզրկօրէն։ (մակբայ.) ‖ Ըստ օրինակի տզրկի. կմ խիստ զալրդրութեամբ։ ռամկ. ոխունխնի պէս։

ՏԷ

Տէգ. տիգի. աւ. աց. օք։ ‖ գեղարդն. կմ նիզակ, որ է ձող սրաքամօր, զոր ընկել կամենալ արձակեն 'ի վերայ թշնամեաց. կամ ձեռամբ մխելով հարկանեն զնոսա. 'ի խոցել և 'ի սպանանել։ ռամկօր. ծղրոխ։ 2. Մակաբ. 10. 30։ Յոբայ. 16. 14։ Յեսուայ. 19. 34։ Իսկ երբեմն տէգ կոչի սլաքն նիզակի, և նմանեաց, որ է սայրասուր երկաթ նշ։ Յոբ. 41. 21։ Բայց մինչ առի 'ի տէգս նիզակաց, է ոմն խին, որով նշանակի ասել, 'ի բազմութիւն գեղարդեանց, և այլոց զինուց։ 2. Մակ. 5. 11։ և 10. 24։ 3. Մակ. 3. 9։ և 6. 4։ Իսկ Յոբ. 16. 10. ուր՝ ասի տէգսք աչաց խաղաց 'ի վերայ իմ, առեալ լինի անզգրաբերաբար փոխանակ զժնեայ հայեցուածոց. որովք գրեթէ յաչաց մարդոյ յարձակին սլաքք զժնդակութեան։ ռամկօրէն խոլոտ հայուածք։

Տէգընկեցութիւն. թեան։ ‖ ընկեցումն տէգի, կմ ձգումն նիզակի. և կմ արձակեալ ձգելոյ զտէգս։

Տէգընկէց։ (Նախադրիւ հոլովի.) ‖ ընկեցող զտէգ, ո՛ նա՛ որ արձակէ 'ի վր ուրուք զգեղարդն առ 'ի հարկանել. կմ որ ձգէ 'ի վեր զնիզակ, և ապա աճապարեալ արտաքս ակռն ըմբռնէ զնա. ինչ յաճախ առնեն յաշխարհս արեւելից պատանութք իշխանաց 'ի խաղալն ընդ միմեանս։ ռամկ. ծղրախ նետող. կմ ծղրախ խաղցող։ Իսկ մերթ՝ ասի զայնմանէ, յորում ընկեցեալ լինի տէգ ըստ վերաստացեալ կերպին. որպիսի է հանդէան, կմ խաղն տէգընկեցութե։ 2. Մակ. 4. 14։ Դարձեալ՝ տէգընկէց կոչի այնչափ միջոց տեղւոյն, ուր կարէ ժամանել ընկեցեալ տէգն. Ըստ այսմ վարի և նետաընկէցն, զոր տեսցես 'ի տեղւոջ իւրում։

Տէր. տեառն. 'ի տեառնէ. տերամբ. տեարք. տերանց. կմ տեարց. ամբք։ ‖ Նա՛ որ ունի զտէրութիւն. և ըստ այսմ տր կոչի ունօղն, կմ ստացականօղն ստացուածոց։ ռամկ. եա՛ֆ. և ռամկ. տանող։ Ելից. 21. 28։ և 22. 8. և 12։ Մատ. 20. 8։ Իսկ մերթ նա՛ որ ունի ընդ իւր զծառայս, կմ զհնազանդեալս։ ռամկ. աղայ։ Աղուաց. 17. 2։ Կող. 3. 22։ և 4. 1։ Երբեմն կա նա՛ որ 'ի վարձու ունի զոք. կմ խրբ զմեծ ոք վարձուք առ յուսմունք գործել ինչ։ Տոբ. 2. 19։ Դարձեալ տր կոչի կնոջ այրն, ըստ որում տիրէ նը մա։ Ծննդ. 18. 12։ և 1. Թագ. 1. 8։ Իսկ մերթ տր անուանի իշխանն, կմ պետն, և կամ տիրօղն։ Ծննդ. 27. 29։ և 42. 30։ Դրժել բազում անգամ վարի սա խրբ զանուն յարգականն, որով առնոր եւս վն պատուոյ տր յորջորջել զմեծ ոք, թէ՛ և ոչ ի ցենջ ընդ նմա։ ռամկ. պարոն. և ռամկ. էֆէնտի։ Ծնն. 23. 6։ և 24. 18։ Եւ յայսմանէ տր անուանին նաև հրեշտակք։ Ծնն. 19. 2։ Դան. 10. 16։ Զաք. 1. 9։ Բայց մասնաւորապէս առեալ դնի սա փոխանակ այն, որ գեր 'ի վերոյ քան զամ ունի զտէրութի. վն որոյ և անուանի տր տերանց։ Ծնն. 11. 5։ Ելից. 7. 1։ Եսայ. 8. 1։

Տէրութիւն. թեան։ ‖ տիրական նախապատուութի. կմ գահերիցութի. կմ պետութի. և կմ իշխանութի։ 1. Մակ. 8. 24։ Սաղ. 102. 22։ Դան. 11. 5։ Իսկ մասնաւորապէս առեալ՝ է սա անուն միոյ 'ի յինն եակ դասուց հրեշտակաց. որք և պետութիւն, և այս մանաւանդ 'ի յոգնակականն. Եփես. 1. 21։ Կող. 1. 16։

Տէրունական. ի. աւ. աց. օք։ ‖ տէրունեան. ցայն ամ, որ է տն. կմ որ վերաբերի առ տր. և կմ տիրական. և ըստ այսմ ասի՝ տէրունական տօն. կմ յայտնութի. կմ բան. և այլն ։ Նարեկ. Է. և Հ. Լամբրոն։ և 'ի Շարակնոցն։

Տէրունատուր։ (Նախադրիւ հոլովի.) ‖ այն՝ որ է տուրք տէրունի. կմ տուեալ 'ի տնէ՝ և կմ պարգեւեալ յտյ։ ըստ այնմ 'ի հին պարագիրս. Տէրունատուր կերակրոյն ուրախ լինէին։

Տէրունեան։ (Նախադրիւ հոլովի.) ‖ տե՛ս ըզ տէրունական. Նարեկ. Է։ և 'ի Շարակնոցն։

Տէրունի. նեայ. նով. նեաց. նովք։ ‖ տէրունական. կմ տէրունեան։ Նարեկ. Ժ. և Ժա։ Եւ ըստ այսմ տք ածածինն ըստ որում է նուիրեալ տն, կմ մանաւանդ զի է մայր տն իւր՝ տէրունի կոչի. ըստ այնմ 'ի Շարակնոցն. Զանարատն աթոռան, զոր պատրաստեալ է քեզ տէրունեայ. իբրթէ՝ տէրունեան մօրդ։

ՏԺ

Տժգոհ. ի. իւ.ից. իւք։ ‖ անզգոհ. կմ տրտնջող. և կմ տրտնջմամբ անշնորհակալող. ռամկ. ճժգոհացող։ ըստ այնմ Լամբրոն. որքան տժգոհ լինի զնոցանէ։

Տժգոհամ. ացայ. ացիր. ալ։ (Չէզոք.) ‖ տե՛ս զՏժգոհիլ։

Տժգոհեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) ‖ տե՛ս 'ի ներքոյ զՏժգոհիլ։

Տժգոհիմ. եցայ. եցաւ. իլ։ (Ձայնակր.) ‖ տժգոհ լինել. կմ տրտնջել. և կմ գանգատել։ ռամկ. ճժգոհել։ Յճ ոսկի։

Տժգոհութիւն. թեան։ ‖ անզգոհ լինելն. կմ տրտունջ. և կմ գանգատ։ ռամկօր. ճժգոհանք։

Տժգոյն։ ‖ տե՛ս զԴժգոյն։

Տժգունիմ. եցայ. եցաւ. իլ։ (Ձայնակրաբ.) ‖ տե՛ս զԴժգունիլ։ Լամբրոն։

ՏԻ

Տի։ (շաղկապ բաղդատական. կմ արտահական.) ‖ իսկ. կմ այլ. կմ բայց. կմ եւ. 'ի ամանէ ծագի շաղկապս՝ տի նա. զոր

տես_

տեսցես 'ի կարգի նորուն։ Իսկ մերթ վարի նորին զմակրայ, և նշինկէ մանաւանդ. կմ առաւել. կմ սաստիկ. և կամ կարի յոյժ ։ Եւ ըստ այսմ երբեմն վարի առ նորև զմանինկ. և 'ի յարիլ 'ի բառս՝ ցուցանէ զառաւելութիւն ինչ. ոպ տեսցես յանուանս՝ տիեզերք. և տիկին ։ Երբեմն ևս վարի նորև զմիջարկութիւն սպառնական. զի դնի 'ի գլուխ բանի 'ի սպառնալն. զոր օրինակ՝ տի, կայ՝ մնա՛ լինա՛ գործօղդ չարեաց. զի ածից 'ի վ(ե)րայ քո սուր և սով և մահ ։ 'ի հին [illegible]։ Դարձեալ՝ է առ անուն, և նշանակէ զհաստակն. և ը այսմ վարի յոգնականապէս. բայց ուրեք ուրեք գտանի և եզական. ըստ այնմ Լամբրոն. Միրալի ամենեցուն՝ մանկական տիոյն երևէր յառաջադիմութիւն։ տե՛ս զՏիքն ։

Տիբերական . ի . աւ . աց . օք ։ || այն՝ որ վերաբերի առ Տիբերիս, կմ առ Տիբերիա մայրաքաղաքն Գալիլեացւոց, որ 'ի ցեղին Զաբուղոնի. և ըստ այսմ ծովակն սորա կոչի՝ ծով Տիբերական ։ 'ի Շարականս ։

Տիգաբուն . բնոյ . ով . ոց . ովք ։ || բուն տիգի, փ փայտ նիզակի. զոր և կոչեմք նիզակաբուն ։ ռամկ. մզրախի կօթ. կմ մզրախի փափ։ Եզեկ. 39. 9։

Տիգախոց . ի . իւ . ից . իւք ։ || տիգաւ խոցօղ ։ ռամկօր. մզրախով զարնօղ։ Իսկ մերթ՝ տիգաւ խոցեցեալ, որպէս էր ամենատէր կող տն ։ ռամկօր. մզրախով զարկած ։ 'ի Շարականս ։

Տիգահոս ։ (Նախադրիւ հոլովի.) || հոսեցեալ 'ի վէրաց բացելոց տիգաւ, փ նիզակաւ. ըստ այնմ Յհ. Օձն. Եւ տիգահոս արեան կողին, կենաց վտակ մեզ բղխողին ։

Տիգաւոր . ի . աւ . աց . օք ։ || ունօղ զտէգ, կմ կրօղ զնիզակ, կամ զինեալ գեղարդեամբ ։ ռամիկ. մզրախլը ։ 1. Մնաց. 12. 24։ Երեմ. 6. 23։ Գործ. 23. 23։ Իսկ 1. Մակ. 6. 30. ուր ասի՝ 'ի ձեռն տիգաւոր. իմանի, 'ի ձեռս իւր ունօղ զտէգ ։

Տիգեայ . գէի . իւ . տիգեայք, կամ տիգէք. էից . իւք ։ || տիգաւոր, կմ նիզակաւոր. ուստի 2. Մակ. 13. 15. ուր ասի, առնոյր զարս տիգէս, նշանակէ՝ արս տիգաւորս, որ է մզրախլը ։

Տիգեմ . եցի . եա՛ . ել ։ (Ներգործ.) || տիգաւ հարկանել, կամ նիզակաւ խոցել ։ ռամկ. մզրախով զարնել։ Իսկ մերթ նորև ըղնիզակ բևեռել զինն, կմ սևեռեալ կանգնել. և կամ տալ ցցուելով. ըստ այնմ 'ի հին պարսմունքիւ. Միրագարդ մօրուքն 'ի ծընօտս գեռևս էր տիգեալ, և ընձիւղեալ. փ ցցուեալ և բողբոջեալ ։

Տիգրան . այ . աւ ։ || է անուն երից Թագաւորաց հայոց. որոց առաջինն կոչի մեծ և հուժկու ։ Խորէն. Ա. գլ. 22. և 23։ Երկրորդն միջին, որ արշաւեաց զօրօք յաշխարհն պաղեստինացւոց ։ Խորէն. Բ. գլ. 13։ Իսկ երրորդն յորջորջի վերջին, որ է եղբայր տիրանայ ։ Խորէն. Բ. գլ. 61.

Տիգրանակերտ . ի . իւ . աց . օք ։ || կերտեցեալ 'ի տիգրանայ. կմ կերտուած տիգրանայ. և ըստ այսմ յատուկ անուամբ տիգրանակերտ կոչեցաւ ոստանն, կմ քաղաքն, զոր շինեաց մեծն տիգրան՝ մականուանեալ հուժկու ։ ռամկ. փերփեդին։ Խորէն. Ա. գլ. 29։ և Գ. գլ. 26 ։

Տիգրանակերտեայք . եայց . եօք ։ || բնակիչք տիգրանակերտ քաղաքին, որք և կոչին տիգրանակերտեցիք ։ ռամկօր. փերփեդեցիք։ Խորէն. Գ. գլ. 26։

Տիգրանակերտեցի . ցւոյ . եաւ . եաց . եօք ։ || բնակիչ տիգրանակերտի, կմ որ ծնեալ և սնեալ է 'ի տիգրանակերտ քաղաքի ։ ռամկ. փերփեդեցի ։ Խորէն. Գ. գլ. 26։

Տիգրանուհի . հւոյ . եաւ ։ || քոյր մեծին տիգրանայ, որ եղև կին աժդահակայ մարաց արքային ։ Խորէն. Ա. գլ. 23։

Տիզք . տզաց . զօք ։ (անեզական.) || [illegible] . կմ լանջք. ըստ այնմ 'ի հին պարսմունքիւ. Զմեռուեալս լայնին զախդան հատեալս, զի րեսս պատառեալս ։

Տիգօղ . ի . իւ . աց . օք ։ || տիգաւ հարկանօղ, կմ նիզակաւ խոցօղ. որպէս էր զինուորն, որ զկող տն նիզակաւ եհար ։ ռամկ. մզրախով զարնօղ ։ 'ի Շարականս ։

Տիեզերաբնակ . ի . աւ . աց . օք ։ || բնակօղ 'ի տիեզերս, կամ բնակիչ տիեզերաց. և կմ այն՝ որ վերաբերի առ տիեզերական բնակութիւն ։

Տիեզերագլուխ . գլխի . աւ . աց . օք ։ || տե՛ս զԱշխարհագլուխ ։

Տիեզերագումար ։ (Նախադրիւ հոլովի.) || տե՛ս զԱշխարհախումբ ։

Տիեզերագրաւ ։ (Նախադրիւ հոլովի.) || գրաւօղ զտիեզերս, կմ ընդ իշխանութեամբ նուաճօղ զաշխարհս ։ Եւ մերթ՝ պարփակօղ տիեզերաց, կամ պարունակօղ զամ ծագս երկրի. ըստ այնմ Նարեկ. գլ. [illegible] ծով մեծ տիեզերագրաւ՝ բոլոր էից գոգ ։

Տիեզերագրութիւն . թեան ։ || տե՛ս զԱշխարհագրութիւն ։ Խորէն. յաշխարհագր ։

Տիեզերադաւ ։ (Նախադրիւ հոլովի.) || դաւօղ տիեզերաց. կմ դաւաճանօղ ամ աշխարհի, և կամ խաբօղ բնակչաց երկրի ։ Նարեկ. Գ ։

Տիեզերալոյս ։ (Նախադրիւ հոլովի.) || այն՝ որ է լոյս տիեզերաց, կմ որով ծագի լոյս աշխարհի, կմ լուսաւորիչ ամ ծագաց երկրի. որ և կոչի աշխարհալոյս. և ըստ այսմ ասի, տիեզերալոյս վարդապետ, կմ բան կմ տեղի ։ և այլն ։ Նարեկ. ՂԶ ։ Ոսկ. Ա ։

Տիեզերալուր ։ (Նախադրիւ հոլովի.) || տե՛ս զԱշխարհալուր ։ Նարեկ. ՂԶ ։ և 'ի Շարականս ։

Տիեզերախոս ։ (Նախադրիւ հոլովի.) || խօսօղ ընդ տիեզերս, կմ խօսեցեալ ընդ ամ աշխարհ. կմ քարոզեալ 'ի համօրէն աշխարհի, որպէս է ամ առաքեալն։ [illegible]

Տիեզերածաւալ ։ (Նախադրիւ հոլովի.) || տե՛ս զՏիեզերատարած ։

Տիեզերակալ ։ || տե՛ս զԱշխարհակալ ։ Խորէն. Բ. գլ. 85։ Նարեկ. 'ի Քիւ. Եկեղ ։

Տիեզերակալութիւն . թեան ։ || տե՛ս զԱշ-

խարհակալութիւն: Խորէն. Բ. գլ. 12:

Տիեզերական. ի. աւ. աց. օք: ‖ այն ամ, որ վերաբերի առ տիեզերս, կմ պատկանի ամ աշխարհի. կմ աշխարհական. կմ ընդհանրական. և կմ համատարած. և ըստ այսմ տիեզերական կոչի տանսն, յորում աշխարհ ամ գայ 'ի դատաստան առաջի Քնի: Սոյնպէս տիեզերական ասի ժողովն. կմ սինհոդոսն, յորում հաւաքին եպիսկոպոսունք յամ աշխարհէ, կմ յորում լինի ընդհանրական գումարումն հանդիսականաց ժողովոյն, որպիսիք են չորս առաքելեան սինհոդոսք: Լամբրօն: Եւ յայսմանէ տիեզերական մայրաքաղաք աստցաւ կոստանդնուպօլիս, ըստ որում էր նիստ տիեզերակալ կայսերաց. կմ զի էր ընդունարան եկամտից ամ աշխարհի. զի գրեթէ յամ երկրէ երթևեկութք լինէին 'ի նմա: Խորէն. Գ. գլ. 57:

Տուփ. տփոյ. ով. ոց. ովք։ || անօթ խեփեւոր. յոր արկեալ պահեն զինչ. որպէս ըղ կերլիս. զծխանելիս. զգրամս. կամ զա-կունս, և զայլ ինչ նման։ տաճկ. գուտի։ Եւ յայսմանէ առեալ տուփ կոչեցաւ ևս ինչ ստատուց հին օրինաց՝ կազմե-ցեալ իբրև զանօթ բուրվառի. կամ իբրև զինկանոցս, և կամ նման գեղեցկայարմար ամանաց, յորս արկանէին 'ի պահեստ ըղ ծխանելի խունկս. զի զոհաբերս. և կամ նորօք գնէին զկնդրուկ 'ի վր Հացիցն առ-աջաւորութե. որովք և երբեմն մատու-ցանէին զնուէրս 'ի հասանելու ժամոց։ Ե-լից. 25. 29։ Թուոց. 7. 14։ 3. Թագ. 7. 50։ Դար-ձեալ, տուփ կոչին արտաքին պատեանք մատենից, որք են իբր անօթք կազմեցել տետրիցն։ տաճկ. [illegible]. կամ [illegible]. ըստ այնմ 'ի Հռովմ հայր. ժգ. Ա. ոսկի. և գործեալ զտուփ աւետարանի։ Դարձեալ, տուփ անուանին աղխեալք. կամ խորանք դրոշմեալք գծիւք 'ի վր Թերթից Թղթոյ խորշս խորշս. թէ բոլորակ իցեն. թէ քառանկիւնի. և թէ այլով ձևով. ուր կան տպաւորեալք 'ի տումարս. և 'ի Ձիւզա-գրութիւնս պատկերն. որոց և իւրաքանչիւր խորշքն. զի խանէներն, տուփ անուանին։ Շնորհալին։

Տուփան. ի. ան. աց. զք։ || տե՛ս զՏուփիչ։

Տուփեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) || տուփ չափ հարկանել. զի ծեծել. կամ Թակել. և կամ կոփել. և ըստ այսմ ասի. տուփել գործեօք զտախտակ. կամ Թակիւ զկտաւ. կռանաւ զհրահալելիս. ոտիւք զերկիր. կամ զգլուխ ուրուք. և կամ զայլ կոխելի ինչ։ Ասի և հարկանելով կոխելն զա պաւխտա՝ տուփել ասի. ըստ այսմ խիմս և զայլոց նմանեաց։ տաճկ. դօքմէք. կամ թի-ռ թի-ռ ծէծէլ, և կամ պասթըրմաք։

Տուփիչ. տուփչի. աւ. աց. զք։ || տուփան. զի գործի տուփելոյ, կամ ծեծելոյ. և ըստ այսմ տուփիչ կոչի Թակն. կամ բաղկածև փայտն Թակչաց. բիրն, Ջաղացան, սանդղհարան, կռանն, և այլք նմանք։

Տուփիւն։ (Ներգործէ. հոլովի.) || տուփումն զի տուփելն հարումն, կամ ծեծելն, և կամ Թակելն. որ և ասի, կոփիւն։

Տուփումն. փման. ման. մամբ. մանց. մամբք։ || նոյն է ընդ վերնոյն։

ՏՊ

Տպագիր. գրի. աւ. աց. զք։ || տպօղ ըղ գիրս, կամ նա, որ դրոշմէ զտառս. որպէս են ուքերն նոցա, որք միով հարկանեն զպատկեր գրոց 'ի վր Թղթոյ։ տաճկ. պասմաճը։ Իսկ մերթ տպագրեալ, զի տպելով գրեցեալ. և կամ տպաւորեալ. և ըստ այսմ ասի, տպագիր մատեան, որ է պասմայ գիթապ։

Տպագրեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) || տպելով գրել, կամ տպաւորել զգիրս. կամ միով դրոշմել զտառս։ տաճկ. կիթապ պասմայ էտմէք. կամ պասմէք։

Տպագրութիւն. Թեան։ || տպելով գրումն, կամ տպաւորութիւն գրոյ, և կամ միով դրոշմումն տառից։ տաճկ. պասմայ։

Տպաւորեալ. ի. եւ. աց. զք։ || ունօղ զդրոշմս տպաւորեալս 'ի վր իւր, կամ փայլելուչ տպաւորութե զարդարեալ. որպիսիք են սուրբք յանկէնկալ մատենից։ Իսկ մերթ՝ գեղեցիկ տպիւք զարդարօղ. և կամ յորս նոզ զփայլելուչ տպաւորութիւն 'ի վր իւր։

Տպաւորութիւն. Թեան։ || զարդ, կամ պաճոյճ տպաւորեալ յիմիք. կամ գեղազարդ տպաւորութիւն, զի նշանակերպք, ձևք, և ե-րևոյթք ազգի ազգի փայլելութեց յորս նկարեալ 'ի վր իւիք. ըստ այնմ 'ի հին պատ-մագիրս. Պատրաստեալ Թագ յակւոյ, և 'ինմա յեռեալ մարգարտասատ տպաւոր-ութիւնս։

Տպաւորն։ || տե՛ս 'ի ներքոյ զՏպաւորիչն։ Ելք. 28. 19։ Յայտ. 21. 20։

Տպաւորիչ. կամ տպաւորիչն. ի. աւ. աց. զք։ || է ակն ինչ պատուական՝ Թափանցիկ, և ճաճանչեղ, զոր ընդ շողշողելն ուրուք առ-նչուլինք արեգական՝ գերադոյն քան զայլ ակունս փայլատակէ։ ունի զկերպն ա-ռակս, մինն է կանաչ, կամ երկնագոյն, և կամ ապակեգոյն. տաճկօր. փօզան փուր-ոհակ. միւսն է ոսկեգոյն, կամ չիկագոյն, որ ունի յինքեան զշաճիլս ինչ կանաչոյ. կամ կապու-տակի. տաճկ. դէլլինօնէլլէան. է սոյն և այլ ազգ ինչ, որ ըստ այլ և այլ գունոյ և շար-ժումաց՝ գրեթէ արձակէ զնշոյլ ամ գունոյ։ Արդ՝ ակնս այս լինի քանակաւ մեծագոյն քան զամ գոհարս, մինչև գտաւ երբեմն առ. հնովք տպաւորն ինչ չորեք-կանգնեան, յորմէ քանդակեցին արձան Արսինոէ կնոջ Պտղոմեայ Եղբայրասիրի, որ հաստատեցին բագնումն։ Այլ ազգե-ցութիւն սորա է զարմանալի. զի ոչ պատ-մեն. զհանդուցանէ զեռանդն բորբոքեալ ջերոյ. ազդէ ընդդէմ վերնոտութե, և լուս-նոտութե, և ցասմնոտութե. և տրտմու-Թե, այլ և ինքն ցանկական խլրտմանց, ոչ և անառակութե, ըստ օրինակի պա-զէհիրին, որ ազդէ ընդդէմ ժանտախտին.

ի խոնարհմանին ։ Եսայ. 28. 17։ Սաղմ. 118. 127։ Եզեկ. 28. 13։

Տպանամ. ացայ. ցէր. ալ։ (ընդամիջ.) || որ պաւորել. կմ դրոշմել. կամ նկարել. կմ ձեւանալ. և կմ կերպանալ. և ըստ այսմ առն՝ տպանալ պատկերին 'ի վը դրամոյ. կըն քոյն 'ի վը մոմոյ, արատոյ յանձն ոք. և կմ զօրութե ոչ յերի իմիք. և այլն։ Որոց կոչին։ և Լամբրօն. իսկ մերթ օրինակել. կմ գաղափարել. կամ նախանկարել. և կմ ձեւով և նմանութը դուշակել. և ըստ այսմ առն՝ անօրէնութեցն քն տպանալ առնա հայեցօքն, կմ առ մարգարէիւք։

Տպարան. ի. աւ. աց. օք։ || տեղի, ուր լի- նի տիպ գրոց. և կմ տուն տպագրութե։ ռամկ. պասմայի ԽԷՆՆԷՆ։

Տպացուցանեմ. ցուցի. ցն. ել։ (անցող.) || տես զՏպաւորել։

Տպաւոր. ի. աւ. աց. օք։ || ունող զտիպ. կմ տպեցեալ. և կմ տպագրեալ։ ռամկ. փողած. կմ պասմայ։ իսկ մերթ տպաւորա կան. կմ տպողական. և կմ տպագրական։ Երբեմն եւս ձեւական, կմ պատկերական. կմ օրինակական. և կմ գաղափարական. ըստ այնմ Սոկր. 1. հատ. իզ. տե՛ս և զտպա ւոր տառերին զազգականութիւն առ Ք՛ չ մարդութիւն։ Դարձեալ՝ նշանակէ՝ մեր ձաւոր. կմ նմանաւոր. կմ համապատական։ ռամկ. ՏԷՊԻ։

Տպաւորագոյն. գունի. իւ. աց. օք։ || տաւ ւէլ տպաւոր. կմ նմանագոյն. կմ մեր- ձաւորագոյն. կմ յայտնագոյն. և կմ ե- րեւելագոյն։ ռամկօր. խիստ ՏԷՊԻ. կմ ՏԷՊԻ ՏԷՊԻՆ։ Նոնն. և 'ի գիրս գէրգ. ՃԺՀՏԱՆՆԵՆ։

Տպաւորեմ. եցի. եա. ել։ (ներգործ.) || զիր ինչ յիմիք տպել. կմ դրոշմել. և ըստ այսմ առն՝ տպաւորել զպատկեր 'ի դրամի. կմ զյիշատակս իրիք 'ի միտս մարդոյ։ ռամկ. պասմայ ընել. կմ պաքէր կոխել։ Խորէն. Գ. գլ. 51։ և 'ի գիրս գէրգ. Ճժագ։ իսկ մերթ՝ յեռուլ. կմ ստեղել. և կմ ազդեցանել։ ռամկ. կէյֆէր ընել. ըստ այնմ Եսայ. 28. 11։ Զերկոտին տկանս տպաւորեալս ստա- ւով. զի յեռեալս, կմ ազդեցեալս յուսկի կապիճս, զի թափէին։ իսկ մերթ՝ ձեւացու- ցանել. կմ կերպագրուցանել. կմ կերպա րանել. և կմ կազմակերպել. որպ առնէ բանգակագործն զյիմայսին տաշելով։ ռամկ. Եօղուն ԲԷՐԷՆ։ Իմաստ. 13. 13։ Երբեմն եւս՝ օրինակել. կմ գաղափարել. կմ նախա- նկարել. և կմ ձեւով և նմանութբք գու- շակել. և ըստ այսմ իմանի՝ մինչ ասի. տպաւորեալ զխորհուրդ անօրէնութեն քն. կմ զփրկութե հեթանոսաց յոմանս ունականին պետրոսի. և այլն։ Նարեկ. ղդ։ և 'ի Լամբրոնացին։

Տպաւորութիւն. թեան։ || տպաւորելն. կմ տպումն. կմ տիպ. և կմ դրոշմ։ ռամկ. պասմայ. կմ փանղայ։ Նարեկ ղդ։ իսկ մերթ՝ տպաւորեալ ձեւ, կմ ստուեր. կմ պատկեր. և կմ նմանութիւն. ըստ այնմ խորէն. Բ. գլ. 87։ Եւ ծաղկաց գիր տպաւորութեն նա

չի։ Դարձեալ՝ ձեւացումն. կմ կերպա- ւորութիւն. կմ կերպարանումն. և կմ նկա րագրութիւն։

Տպեմ. եցի. եա. ել։ (ներգործ.) || հարկա նել յիմիք զտիպ. կամ դրոշմել զձև. և կմ տպաւորել։ ռամկ. եւս փոնել. կմ պաս- մայ ընել։

ՏՌ

Տռփածու։ || տե՛ս զՏարփածու։

Տռփական. ի. աւ. աց. օք։ || տարփա- կան. կմ ցանկական. և կմ վավաշոտա- կան։ Խորէն. Ա. գլ. 14։ իսկ մերթ տռփա կան։ տռփող. կմ ցանկացող, և կմ վավաշոտ։ 'ի հին ԹՆՐԱԿԵՆՆԷ։

Տռփամ. ացայ. փա. կմ ցէր. ալ։ (ընդամիջ.) || տարփալ. կմ ախտաժել. և կմ ցանկալ։ և այս ըստ մեծի մասին առեալ լինի 'ի չար կողմն։

Տռփանք. անաց. օք։ (անեզ.) || տարփանք. կմ չար բաղձանք, կմ վավաշոտական ցան կութի։ Խորէն. Բ. գլ. 46։ ըստ այսմ և 'ի հին հայոց. Եզ. առե, ցանկացաւ նմա 'ի գործ տռփանաց։

Տռփեմ. եցի. եա. ել։ (չէզոք.) || տե՛ս ըՆ Տռփալ։ 'ի հին տպագրութիւնս։

Տռփոտ. ի. իւ. աց. օք։ || տե՛ս զՏռփող։

Տռփութիւն. թեան։ || նոյն է ընդ բառին տռփանք։ 'ի հին հայոց. Եզ.

Տռփող. փողի. իւ. աց. օք։ || տռփացող. կմ չարաչար բաղձացող. կմ վավաշոտաբար ցանկացող. և կմ տռփածու։ 'ի հին հայոց. Եզ.

ՏՏ

Տտիպ. կմ տրտիպ. տտպի. աւ. աց. օք։ || ունող զհամ տտպութե. կմ տտպող։ ռամկ. ԲԷՐԱՆԸ ԲՈՒԶՈՒ. կմ խոնարող. կմ զինուորն ընող. և կմ ծամածոդ։ 'ի գիրս գրոց անդրանիկ։

Տտուն. տտնոյ. ով. ոց. ովք։ || տտուտ. զի պտղ ածի. կմ թաքնոյ. և այլն։ և ըստ այսմ առն 'ի գիրս գէրգ. Ճժագ. զսկսանմարդէն. Եւ զատուտն բոլորակաբար շուրջ կացու ցանէ զոսկեձաձանչն։ Եւ Յոբ. 40. 26. ասի. Մի բարձցեն թեւք մի 'ի տտնոյ նը։ զի 'ի տտունէ նը։ Դարձեալ՝ տտուն կո. չին քղանցք. կմ դրօշակք հանդերձից. ըստ որում են նշ իւրև զանձս։ ռամկ. ՔԷՏԷ։ Թուոց. 15. 38։ 1. Թագ. 15. 27։ և 24. 5. և 12։ Եւ յայտնանէ նաև ծայրք մ և կցէ կապեներքինաց տտուն անուանին։ ռամկ. Քուշակի ծայր. կմ լաթի պոչ. ըստ այնմ Գործ. 10. 11։ Եւ զչորեցունց տտնոց կապեալ անօթ ինչ իբրև կտաւոյ մեծի. զի 'ի չորից ծայրիցն կապեալ։

Տտպեմ. եցի. եա. ել։ (ներգործ.) || զտիպն մարգոյ բարկ համով կծանել. կմ ակռ ամրագելոյ լեզուն կապէկ. ռամկ. գալարել. որպ առնէ ցգէն կարկէ. և կմ զի պտղոյն. կմ պտղախէրն. զի չոյն. ռամկ. ոմանք 'ի կամկ և 'ի թթու պտղոց։ ռամկ. ԲԷՐԱՆԸ ԲՈՒԶՈՒ. կմ խոնարել. կմ դիզչին ընել.

և կմ

և կամ ծամծմցնել։

Տապութիւն. կմ տըտապութիւն. թեան։ || է համ ինչ անկեալ ՚ի մէջ դառնութեան, և թթուութեան, և կծուութեան, որ զքիմս մարդոյ տապէ։ ռամկ. բերանը ղզելը. կմ դէմը ընելը. կմ ծամտոտութիւն։ ՚Ի հին բժշկարանն։

ՏՐ

Տրակ. ի. աւ. աց. օք։ || Նամակ. կամ թուղթ, զոր գրեն առ անձն ոք։

Տրական. ի. աւ. աց. օք։ || այն ձև, որ կարէ տրել. կմ տալի. և կմ տուեալ։ Իսկ ըստ քերականաց նշանակի սովաւ երրորդ հոլովն. որ բաժանի յերկուս, ցի ՚ի վերջահոլովն. և ՚ի նախդրիւն. և ասացեալ սա տրական, ըստ որում տալն միշտ զայսպիսի հոլովս պահանջէ. զոր օրինակ. տային նմա. կմ տուեալ ՚ի ձեռս նորա. և այլն։ ՚Ի հին քերականսն։

Տրամ. ոյ. ով. ՚ի տրամի. ոց. ովք։ || հաստատուն, կմ հաստատալինա, կամ ամրակուռ, և կմ սերտ և պինտ։ ռամկ. ամուր, կմ ուժ։ Ըստ այսմ ՚ի Վարս հարց. ից. Եգիտ, գիր ՚ի վերայ տրամ գետնոյ։ Եւ ՚ի հին պատմագիրս. ասի, Ջուրզի ինչ տրամ, յոյժ կարծր, ուռամբ երկաթի հատանէր։ Իսկ մերթ Ճշմարիտ, կմ ստոյգ. կմ ճիշդ, կմ զգուշութեամբ քննեցեալ, և կմ մանրամասն հետազօտեալ։ Եւ ըստ այսմ վարի մատենանդ ՚ի յարակցելն ընդ բառս, ոչ տեսցես ՚ի ներքոյ։ Երևել է սա մասնիկ բաղադրական. և ՚ի բաղադրիլն ընդ բառից նշանակէ՝ տար, կմ այսր և անդր. և կմ այսպէս և այնպէս. և այլն. ոչ տեսցես յառաջիկայ բառսդ։ Դարձեալ՝ է սա չափ ինչ ծանրութեան, որ կշռէ զվաթսուն և զչորս հատս ցորենոյ, որք առնեն զվեշտասան կորիզս եղջեր, ցի քեղեւորայնոցն կոչի։ Այլ սա ՚ի բարբառս գրոց մատենանդ դրամ կոչի՝ քան տրամ, յորմէ և բարդին բառքս երկդրամեան, և դրամս կշիռ։

Տրամաբան. ի. իւ.ից. իւք։ || Ճշգրտաբան, կմ Ճշգաբան, ցի նա՝ որ հետազօտ բանիւք ձեռնարկելով ամենի զհետ իրիք ՚ի հաստատել, կմ որ քաջութեամբ մտաց յընդհանրական սկզբանց եզրակացուցանէ ըզ մասնաւոր ինչ. կմ ՚ի մասնաւորաց զընդհանրական իմն, որ առարկի գիտութեան, կմ կարծեաց. և ըստ այսմ տրամաբան կոչին վիճաբանքն, և մասնաւորապէս մակացուքն տրամաբանութեան, ցի նոքա՝ որք ուսեալք են զմակացութիւն լօճիգային, կմ պարապին լօճիգական մակացութեան։

Տրամաբանական. ի. աւ. աց. օք։ || այն ձև, որ վերաբերի առ տրամաբանս, կմ առ տրամաբանութիւն. կմ վիճաբանական, և կմ լօճիգական։ ՚Ի հին քերականսն։

Տրամաբանեմ. եցի. եա. ել։ (չէզոք.) || տըրամաբան լինել, ցի Ճշգիւ ձեռնարկելով խօսիլ զիմեքէ. կմ մանրամասն հետազօտել քննել զբան ինչ. կմ վիճաբանել, և կմ հակաճառել. ոչ առնեն պարապօղքն տրամաբանական մակացութեան։ ՚Ի Գիրս առաքինութեանց։

Տրամաբանութիւն. թեան։ || գործ տրամաբանից. կմ զրոյց տրամաբանական, կմ եզրակացութիւն ընդհանրական իրողութեան՝ ելուզեցեալ ՚ի մասնաւոր սկզբանց։ ՚Ի Գիրս առաքինի։ Բայց մասնաւորապէս առեալ նշանակի սովաւ տրամաբանական մակացութիւն՝ կոչեցեալ հելլեն բարբառով լօճիգայ, որոյ փոյթն է ուսուցանել զհանգամանս քաջ տրամաբանելոյ. ուստի Ճառէ զսահմանէ, զբաժանմանէ, և զձեռնարկութենէ, որք են գործիք տրամաբանելոյ։ ՚Ի Գիրս Դաւթի անյաղթին։

Տրամագիծ. գծի. իւ. իցօք։ || գիծ ուղղաձիգ, որ զձևս յերկուս հաւասար մասունս բաժանէ. զոր և կոչեմք տրամաչափ. և ըստ այսմ ՚ի քառանկեան գիծքն, որք ձգին խոտորնակի յանկիւնէ յանկիւն անցանելով անսայթաք ընդ միջակէտն՝ կոչին տրամագիծք նը, որք են երկու. մինն, որ ՚ի վերին աջակողմեան անկիւնէ ձգի ՚ի ստորին ձախակողմեանն. իսկ միւսն, որ ՚ի վերին ձախակողմեան անկիւնէ ձգի ՚ի ստորին աջակողմեանն. այսպէս ։ Իսկ ՚ի բոլորակին տրամագիծ կոչի ուղղական գիծն, որ սկսեալ ՚ի կէտէ խաբէ շրջանակին՝ ձգի ուղղորդ ՚ի հանդիպահակեաց կէտն՝ անցանելով անվրէպ ը կեդրոնն. և ըստ այսմ գրեթէ յամբաւս բազմանան տրամագիծք ՚ի բոլորակն. վն զի անհամարք են կէտքն, յորոց կարեն սկսանիլ։ Դարձեալ՝ բազում անգամ վարի սա ածականաբար, և նշանակէ զուղիղն տրամագծին, կմ զկայացեալն տրամագծիւ. և ըստ այսմ չորքքին ծայրք կողմանց քառանկեան կոչին տրամագիծ անկիւնք։ ՚Ի Փիլիսոփ. Պորփիւրի։ Իսկ մերթ նըշանակէ զեղեալսն, կմ զկայացեալսն ՚ի տրամագիծս, կմ յանկիւնս տրամագծից. որպիսիք են նախադասութիւնք եդեալք ՚ի չորեսին անկիւնս փիլիսոփայական աղիւսակաց. ՚Ի Փիլիսոփ. Պորփիւրի։

Տրամագծութիւն. թեան։ || ծրագրութիւն, կմ կարգ տրամագծից. և ըստ այսմ ձգումն տրամաչափ գծից, կմ կարգումն իրիք ՚ի տրամագիծս, կմ տրամագծօրէն, տրամագծութիւն ասի։ ՚Ի Գիրս Դաւթի անյաղթ։

Տրամադրական. ի. աւ. աց. օք։ || կարգադրական. կմ սահմանադրական. և կամ հաստատական։ Իսկ մերթ՝ պատրաստական. կմ որակական. և կմ զգածողական։

Տրամադրեմ. եցի. եա. ել։ (ներգործ.) || կարգել. կմ կարգադրել. կմ սահմանադրել. կմ յարդարել. կմ անօրինել։ Լատ. բրծ։ Իսկ մերթ՝ զետեղել. կմ կացուցանել. և կմ հաստատել. Ըստ այսմ Յն [illegible]. Յորոյ հիման մէջ հաստատեալ, անշարժաբար տրամադրեալ։ Երբեմն և՝ պատրաստել. կմ տրամակայել. կմ որակա-

ցուցանել. կմ՝ արտայայտել. և կմ՝ զգածել. ըստ այնմ 'ի Գիրս Տառմբի անյաղթին. Մեծ է զօրութիւն երաժշտականին պէսպէս կը րիւք ըմբռնելով զհոգին, և տրամադրելով:

Տրամադրութիւն. թեան : || կարգադրութիւն. կմ՝ բարեկարգութիւն. կմ՝ անօրէնութիւն. և կմ՝ յարդարումն. ըստ այնմ 'ի Վարս հարց. իմ. Տեսեալ զտրամադրութիւն վայելուչ ըստ կրօնաւորութեանն՝ զարմանայր: Իսկ մերթ՝ զետեղումն. կմ՝ կացուցումն. կմ՝ կայացումն. և կմ՝ հաստատութիւն: Երբեմն և՝ պատրաստութիւն. կմ՝ տրամակայութիւն. կմ՝ ուղղութիւն. և կմ՝ զգածումն. ըստ այնմ 'ի հին Փէրոյեան. Արուեստիւս այսուիկ փոփոխին կիրք մարդկան՝ պէսպէս տրամադրութեամբք: Դարձեալ՝ ըստ հին քերականաց տրամադրութիւնք կոչին սեռք բայից. ըստ որում նոքօք ցուցանի ներգործութիւն և կրաւորութիւն, հասարակութիւն, և չէզոքութիւն, որք են որպիսութիւնք ինչ բայից: 'Ի հին Փէրոյեան:

Տրամագիծ. գծի. իւ. ից. իւք: || կողմնագիծ, կամ կողմնական գիծ գծոյ. և ըստ այսմ տրամագծոյս կոչեմք զգիծս, որք երկու երկու ձգին 'ի չորեսին կողմանս ☐ քառանկեանց, զոր օրինակ:

Տրամախիտ. (Նախդրիւ հոլովի.) || ծագի 'ի բառէս՝ փրան. որ է ամուր. կմ՝ հաստատուն. ուստի նշնկի սովա. ամրախիտն. կմ՝ անդադար. կամ սերտ, և կարծր: ուամկ. խիտ ամուր. կմ՝ ուժով, նեղինք: ըստ այնմ 'ի Գիրս Ծննդոց. Ծառն Ը. Գլ. Ժ. Դարձոյց զտրամախիտ տեղին 'ի ծակոտկէն իւրն աճարկու, որ փափարկեաց:

Տրամախոհ. ի. իւ. ից. իւք: || հաստատախորհ. կմ՝ նա՝ որ ոչ է յեղյեղուկ խորհրդով. և կմ՝ Ճշմարտախոհ: Իսկ մերթ՝ մտախոհ. կմ՝ բազմախոհ. կմ՝ խոհական. կմ՝ մտավարժ. կմ՝ միտացի: ըստ այնմ 'ի հին Փոփոխգիրս. Ճողովէ մանկունս տրամախոհս, քաջաուշեղս:

Տրամախոհական. ի. աւ. աց. գք: || այն ամ, որ վերաբերի առ տրամախոհութիւն. կմ՝ որ 'ի տրամախոհութենէ լինի:

Տրամախոհութիւն. թեան : || խորհուրդ մըտաց. կմ՝ ներտրամադրեալ բան. կմ՝ մըտախոհութիւն. և կմ՝ խոհականութիւն. և ըստ այսմ իմանի, մինչ ասի, յայտնել ըզ տրամախոհութիւն մտաց. կմ՝ զեղուլ 'ի բառս զտրամախոհութիւն իւր. և այլն: 'Ի հին Փէրոյեան: Դարձեալ՝ է սա մին 'ի ներքին ըզգայութեանց, որ ըմբռնէ և որոշէ զմտաւոր գիտաւորութիւնս, որ զբաւնս ելուզելս 'ի յերևակայեալ տեսակաց. այս է՝ պատկերաց. որպիսիք են սոքա. ճշմարտութիւն և օգտակարութիւն. անիրաւութիւն և բարերարութիւն. բարեկամութիւն և թշնամութիւն. և այլն: Արդ՝ այս զգայութիւն թէ՝ յանբանս, և թէ 'ի բանականս առհասարակ կոչի կարծողական, կմ՝ ըստ հնոց կարծիք. Իսկ նոյնն 'ի մարդն մտանաւո-

րապէս անուանի տրամախոհութիւն. ըստ որում վճարէ զգործ իւր 'ի մարդիկ մտախոհութեամբ. կմ՝ մակաբերութեամբ իմիք. վասն որոյ և անուանի բան մտանաւոր: Բայց ոմանք մանաւանդ 'ի հնոց՝ տարբերեն ըզ տրամախոհութիւն 'ի կարծողական զօրութենէ դնելով զնա ամենեքին այլ զգայութիւն. և պաշտօն տան նմա բաղադրել ը միմեանս զերևակայեալ պատկերան՝ ելուզանելով 'ի նոցանէ զերրորդ ինչ, որ՝ 'ի պատկերէ լեռին՝ և ոսկւոյ կերպացուցանել զոսկեղէն լեառն. և այլն: 'Ի Գիրս Գռեբի անյաղթին. և Ցցին տուղէրի:

Տրամակայեմ. եցի. եա. եալ: (Ներգործ.) || շուրջ կացուցանել. կմ՝ արկանել 'ի կողմն իրիք. կմ՝ զետեղել. և կմ՝ կայացուցանել: Իսկ մերթ՝ բաղկացուցանել. կմ՝ տրամադրել. և կմ՝ իւիք զգածել:

Տրամակայիմ. եցայ. եայց. իլ. (Չեզոքաբ.) || կալ շուրջ զիւիք. կմ՝ անկանիլ 'ի կողմն իրիք. կմ՝ զետեղիլ. կմ՝ կայանալ. և ըստ այսմ ասի՝ տրամակայիլ առ երկրաւ իւիք. կմ՝ 'ի մէջ այսր և այնր կողմանց. կմ՝ ծովուց. և այլն: 'Ի Գիրս Գռեբի անյաղթին: Իսկ մերթ բաղկանալ. կմ՝ տրամադրիլ. կմ՝ զգածիլ իւիք. և ըստ այսմ ասի զբառից՝ տրամակայիլ յօգիւ. կմ՝ զմակբայանակ բայից՝ տրամակայիլ մակբայիւ. և այլն: Երբեմն և մածանիլ շուրջ զիւիք. կմ՝ վերադրիլ. կմ՝ վերաբերիլ. և կմ՝ պատկանիլ: 'Ի հին Փէրոյեան:

Տրամակայութիւն. թեան : || շրջակայութիւն. կմ՝ անկումն 'ի կողմն իրիք. կամ զետեղումն. և կմ՝ կայացումն: Իսկ մերթ՝ բաղկացութիւն. կմ՝ տրամադրութիւն. և կմ՝ զգածումն իւիք:

Տրամանդիւն. կմ՝ տրամանկիւն. եան. եամբ. եանց. եամբք: || անկիւն տրամադծից. կմ՝ տրամագիծ. և կմ՝ այն, որ զետեղեալ կայ 'ի տրամաչափ անկիւնս. որպիսիք են համօրէն նախադասութիւնք եդեալք խոտորնակի յանկիւնս փիլիսոփայական տրամաբանակաց: 'Ի Գիրս Գռեբի անյաղթին:

Տրամանդիւնի. կմ՝ տրամանկիւնի: (Նախդրիւ հոլովի.) || բաղկացեալ 'ի տրամանկեանց. կմ՝ զետեղեալ 'ի տրամանկեան. կմ՝ ունող զտրամաչափ անկիւնս. և կամ տրամանկիւն: 'Ի Գիրս Գռեբի անյաղթին: Իսկ մերթ՝ նշանակէ զվերաբերեալն առ տրամանկիւնս, կմ՝ առ տրամագիծս:

Տրամանկիւն: || տե՛ս զՏրամանդիւն:

Տրամանկիւնի: || տե՛ս զՏրամանդիւնի:

Տրամաչափ: || նոյն է ընդ բառիս՝ տրամագիծ ըստ ամ նշանակութեանցն: 'Ի Յիսնոփ Պորփիւրի:

Տրամաչափութիւն. թեան: || տե՛ս զՏրամագծութիւն:

Տրամաստական. ի. աւ. աց. գք: || տարրուշական. կմ՝ բաժանական. կմ՝ անջատական: 'Ի Գիրս Գռեբի անյաղթին:

Տրամատեմ. եցի. եա. եալ: (Ներգործակ.) || տարրորոշել. կամ 'ի բաց անջատել. կմ՝

բաժանել. և կամ զատանել. ռամկօրէն ճեղքել՝ բաժնել. կամ զատել։

Տրամատութիւն. թեան։ || տարորոշութիւն, կմ՝ ՚ի բաց անջատումն. կմ՝ բաժանումն. և կմ՝ զատումն։

Տրամորոշեմ. եցի. եա՛. ել։ (Ներգործ.) || նոյն է ընդ բայիս տրամատել. ԹԷ այնմ Լամբրօն. Տրամորոշին յերկս հատուածս. ՚ի հոգի. ՚ի բան. և ՚ի խօսս։

Տրապիզ. պիզի. աւ. աց. օք։ || է բառ յունական. և նշանակէ զսեղանն՝ որպիսի և իցէ։ ՚Ի հին պատմագիրս։

Տրապիզիտ։ (Նախդրիւ հոլովի.) || է բառ յունաց եղեալ ՚ի բառէն տրապիզ. և նըշանակէ զսեղանաւորն. ռամկ. սառաֆ. ԹԷ այնմ Լամբրօն. Զաւանդ արծաթոյ տն իւրոյ ոչ ծրարել ՚ի վարշամակի, այլ տալ ՚ի տրապիզիտս։

Տրգալ։ || տե՛ս զՏրգալ։ ՚Ի հին [illegible]։

Տրդատուհի. հւոյ. ւով։ || կին տրդատայ արքային հայոց. որ է աշխէն տիկինն։

Տրեխ. ի. իւ. ից. իւք. կմ՝ օք։ || կօշիկ, կմ՝ հողաթափ գեղջկաց, որ է հատոր ինչ կաշւոյ ձևեալ ըստ ներբանից ոտից, զոր ագանելին խրացիւք, որք են կապք նց։ ռամկ. չարըխ. ըստ այնմ Շնորհալւոյն. Լսեմք զոմանց՝ եթէ հասարակաց զգեստուք, և ապտեղեալ տրեխօք ելանեն ՚ի բեմն սբ։

Տրեխաւոր. ի. աւ. աց. օք։ || ունօղ ըզ տրեխ. կմ՝ ագուցեալ տրեխիւք. և կամ կօշկաւոր։

Տրեխաւորեմ. եցի. եա՛. ել։ (Ներգործ.) || տրեխաւոր առնել. կմ՝ տրեխս ագուցանել. և կմ՝ կօշկաւորել։ ռամկ. չարըխ հագցնել։ ՚Ի հին պատմագիրս։

Տրեմ։ || ծագի սա ՚ի բառէս տուր. ռմկ ըլ րելն, յանունանէս տուր. և նշանակէ տալ։ Բայց սա ՚ի գործածի ՚ի բաղադրութիւնս բառից, որգոն, փառատրել. փոխատրել. վարձատրել. և այլն։ Իսկ միայնակ կամ ոչ երբէք վարի. և կմ՝ հազիւ ուրեք երաւորականն իբրև զգիմաւորկ. այսպէս. տրի նմա. տրիւր աղքատաց. և այլն։ ռամկ. փրտիլ։

Տրիբուն։ (Նախդրիւ հոլովի.) || է բառ լատինացւոց. որ ըստ նց կոչի Թռիպունուս, և նշանակէ ատենակալ. կմ՝ ժողովրդապետ. կմ՝ մագիստրոս. և կմ՝ կոմս, որ է արքունի գործակալ։ Կիւրղի պատմ։ և ՚ի հին պատմագիրս։

Տրիբունական. ի. աւ. աց. օք։ || այն, որ պատականի ատենակալի. կմ՝ ժողովրդապետական. կմ՝ մագիստրական. և կամ բդեշխական։

Տրիտաւր։ (Նախդրիւ հոլովի.) || տուրք տուեալ փոխանակ ընկալեալ տրոց. կմ՝ դարձ փոխարինի. կմ՝ փոխադարձ հատուցումն. և կմ՝ փոխարէն. տաճկերէն ձախտրդէն։ Սաղմ. 115. 12։

Տրմլութիւն. թեան։ || տրմուղ գոլն. կմ՝ անվարժութ դրաստու. զորմէ ըլագոյն տեսցես ՚ի բառն տրմուղ։

Տրմուխ. մխոյ. ով. խց. կմ՝ աւ. աց. օք։ || է մեքենաւոր բաղմաժամնի գործիք ինչ պարախիզպանաց, որով հարթեալ զերկաս հերկեցելոյ երկրին մաքրեն ՚ի խճից։

Տրմուղ. տրմղի. իւ. ից. իւք։ կմ՝ աւ. աց. օք։ || ծագի ՚ի մասնկանէս՝ տուր. կմ՝ տը, որ է՝ ան, և ՚ի բառէս մուղ. ուստի նշանակէ անմուղ. ցոչ մղեալ ՚ի գործ ինչ. կմ՝ ոչ վարեալ ՚ի յաշխատիլ. և կմ՝ անկիրթ ՚ի գործել. և ըստ այսմ մասնաւորապէս տրմուղ կոչին գրաստքն, որք յաղագս անուրահասս լինելոյ չեւև են սովորեալք ՚ի մտանել ընդ բեռամբ. կմ՝ նորահաս անասունք, որք տակաւին անսովորք են ՚ի քարշել զլուծ։ Երեմ. 31. 18։ Յն ւրդի։ և ՚ի հին պատմագիրս։ Սոյնպէս տրմուղ ասի պատանոցն անսանձ, որ ոչ է կիրթ ՚ի մտանել ընդ լծով. և ըստ այսմ ասի ՚ի ճառս ինչ. Ո՛չ ՚ի նեղքըս լծոյ զտրմուղ վիզս. ցի՞ արկ կմ՝ մայծ ՚ի նեղքըս, և այլն։ Բայց երբեմն վարի սա կրկնաւածով. այսպէս, տրմուղ կրմուղ, և զնոյն նշանակէ. ըստ այնմ Կիւրղի Ներէն. Ժը. Հեծեալ է ՚ի վր յաւանակի տրմղի կրմղի։ Եւ փոքր մի զկնի ասի՝ Թագաւորն Յն նստաւ ՚ի վր տրմղի կրմղի յաւանակի։ Եւ այս է որ իմն, զոր և յայլ բաղում բառս գտանեմք. զոր օրինակ, սալասալուռ, աղխամաղխ. խուժամուժ. ժանտաժուտ. և այլն։ որպէս են բաղումք և յաշխարհաբառ լեզուոյ. որգոն, հացուման, ժախուխախ. սուր մուր. և այլն։

Տրոհ. ի. իւ. ից. իւք։ || տրոհեալ. կամ որոշ. կմ՝ զատ. և կամ մեկուսի. ՚Ի հին [illegible]։

Տրոհական. ի. աւ. աց. օք։ || անջատական. կմ՝ բաժանական. և կմ՝ զատական։ Յն ւրդի։ ըստ այսմ տրոհական կոչի տեսակ ինչ շաղկապի, ըստ որում ՚ի շաղկապելն զբառս, կմ՝ զբանս՝ տրկանէ ՚ի մէջ զտրոհումն, զո՛ր օրինակ՝ կամ՝ արարէք զծառն բարի, և զպտուղ նր բարի. կամ արարէք զծառն չար, և զպտուղ նր չար։

Տրոհեմ. եցի. եա՛. ել։ (Ներգործ.) || բաժանել. կմ՝ անջատել. կմ՝ որոշել. կմ՝ զատանել. և կմ՝ ՚ի բաց մեկնել։ և ԹԷ այսմ ասի՝ տրոհել յիմքեանս. կմ՝ զմինն ՚ի միւսոյն. և կմ՝ զցանն յանձնէ. և այլն։ ռամկ. բոժնել. կմ՝ զատել։ Խորէն. Բ. գլ. 59։ Նարեկ. խը. և կը։

Տրոհիմ. եցայ. եայց. իլ։ (Ձայնակր.) || բաժանիլ. կմ՝ անջատիլ. կմ՝ որոշիլ. կմ՝ զատանիլ. կմ՝ մեկնիլ. և կամ հրաժարիլ։ ռամկ. բոժնուիլ. կմ՝ զատուիլ։ Նարեկ. ժը. խդ. և հդ։

Տրոհիչ. հչի. աւ. աց. օք։ || բաժանօղ. կմ՝ որոշիչ. կմ՝ զատիչ։ ռամկ. բոժնօղ։

Տրոհութիւն. թեան։ || տրոհումն. կմ՝ բաժանումն. կմ՝ անջատումն. կմ՝ որոշումն. և կմ՝ զատումն։ Իսկ ըստ քերականաց է սա մինն յերից պարագայից վերծանութեն, որք կոչին ենթադատութիւն. առոգանու

թի · և արահութիւն · արդ՝ ըստ այսմ արտ հութիւն է արտաքսատաւոր բաժանումն բա ռից, կամ բանից, զոր պարտի առնել վեր ծանօղն պէսպէս շնչառութիւ 'ի ձեռն զա նազան կէտադրութեանց : 'Ի հին քերակա_նութիւն :

Տրոհումն · ման · մանը · մանց · մամբք : || Նոյն է ընդ վերնոյն :

Տրորեմ · եցի · եալ · ել : (Ներգործ.) || յաղ կել · որ ճմլելով, կամ լուսելով, և կամ ան_տացուցանելով քայ քայել · կամ տապա նել զլին · ուր՝ զմիս · կամ զմարմին · կամ ըզ վերս · և այլն : ըստ այնմ Մծբն. է · Ջեռն ջեռնուցու յանդամս նց · և տրորեսցին վերք խարեանց : Եւ 'ի հին պարփակիր ա_սի՝ Եւ տրորեալ գոգոց նց , 'ի վայր քա մեալ մղէին : ըստ այսմ և 'ի ճառս ինչ · ա_սի · Բուրեաց անուշահոտութի 'ի նախ հատեալ և տրորեալ մարմնոյն : Բայց ու րեք ուրեք 'ի գործ ածեն զսա ոմանք փո խանակ շաղախելոյ · ըստ այնմ 'ի գիրս ճո ւոթեց · ճառն. ա. գլ. ը. Որքան ոք առաւել լուծանայ զանօթ խեր 'ի ջախջխիս, այնքան առաւել տրորէ 'ի ցեխն :

Տրուպ · տրպի · աւ · աց · օք : || յոյժ փա_նաքի · կամ գծուծ · կամ նուաստ · կամ չնչին · և կամ յետնեալ · և ըստ այսմ ասի՝ տրուպ լինել բազմութեան խոլք · կամ տրուպ այր · տրուպ կենդանի · և այլն : ռամկ. չոծ : 1. Կորն. 15. 9 : Եփես. 3. 8 : Նարեկ. ժէ : Եւ 'ի գիրս գրիգորի ածաբանին ասի · Փոքունք մեք, և 'ի տրպաց եկեալք :

Տրոփ · ի · իւ · ից · իւք : || տե՛ս զՏրոփումն :

Տրոփական · ի · աւ · աց · օք : || Թնդական · և ընդոստական · և կամ դղրդական · ըստ այնմ 'ի հին պարփակ · 'ի տրոփական դոփ_ման է ոտից թնդեալ տանիքն փլուզել 'ի վայր անկանէր :

Տրոփեմ · եցի · եալ · ել : (չէզոք ·) || Թնդ_մամբ ոտնուլ · կամ ոտնելով դղրդել · ուր հանդիպի երկրի՝ յորժամ յանկարծ վա_զեն, կամ կաքաւեն 'ի վերայ նորա : Եւ կամ որ_տալ, մինչ յանկարծ երկնչի · կամ զայլ նո րագոյն անցս կրէ : ռամկ. տըփել · կամ տօփ անել կամ թափթփոց հանել :

Տրոփիւն : (Նախդրիւ հոլովի ·) || տե՛ս 'ի ներքոյ զՏրոփումն :

Տրոփումն · փման · մանը · մանց · մամբք : || Թնդմամբ ոտնումն · կամ ընդոստ դղրդ_դիւն · ռամկ. տըփ · կամ տօփ · կամ թափթ_փոց : ըստ այնմ Նարեկ. ղա · Աղաղակեսցեն բերկրալիր բերանով 'ի ծափս ձեռին , 'ի տրոփմունս կայթելոյ կաքաւման ոտին :

Տրպագոյն · գունի · իւ · ից · օք : || առաւել տրուպ · կամ նուաստագոյն , կամ կրսերա գոյն · և կամ յոյժ յետնեալ · 'ի գիրս ...եանց ...

Տրպանամ · ացայ · ացէր · ալ : (ընդմիջ.) || տրուպ լինել · կամ նուաստանալ · կամ սար_կանալ · և կամ յետնորդ լինել :

Տրպութիւն · թեան : || նուաստութիւն · կամ կրսերութիւն · և կամ յետնորդութիւն :

Տրտմագին : (Նախդրիւ հոլովի ·) || տալ ...ել տրտում · կամ տրտմագոյն · և կամ տխ րագոյն : Առակ. 26. 23 : և Յհ ոսկ :

Տրտմագոյն · գունի · իւ · ից · իւք : || Նոյն է ընդ վերնոյն : Կոչն. 1. 10 :

Տրտմազգեաց · զգեցի · իւ · ից · օք : || զգե_ցող զանձամբ զտրտմութիւն · կամ զգածեալ տրտմութեամբ · և կամ տրտմեալ և տխրեալ : Յհ ոսկ : և 'ի շարականս : Իսկ մերթ՝ տրտմալի · կամ տրտմական · և կամ տրտմարար : Ըստ այնմ 'ի շարականս · Ազատեցեր զմարդն 'ի տրտ մազգեաց փայտէն :

Տրտմազգեստ : || Նոյն է ընդ վերնոյն :

Տրտմական · ի · աւ · աց · օք : || Թախծական · կամ տխրական · և կամ այն ամ, որ վերա_բերի առ տրտմութիւն : Իսկ մերթ՝ տրտ_մօղ · կամ տրտմեալ · և կամ տրտմազգեաց · ըստ այնմ 'ի Շարականս · Ջերմ տառա_պեալ հայրն փառաց՝ հրաւիրատուք տրտ մականաց :

Տրտմակից · կցի · աւ · կամ իւ · աց · օք : || կից ցորդ ումեք 'ի տրտմութեան , կամ ընկեր 'ի տրտմելն · և կամ 'ի միասին տխրօղ : Եսայ. 51. 19 : Յհ ոսկ : և Լամբրոն :

Տրտմակցորդ : (Նախդրիւ հոլովի ·) || տե՛ս 'ի ներքոյ զՏրտմահաղորդ :

Տրտմահաղորդ : (Նախդրիւ հոլովի ·) || տրտմակից · կամ տխրակից : Իսկ մերթ մա ծեալ տրտմութեամբ · կամ լցեալ տխրանօք · կամ տրտմագին · և կամ տրտմազգեաց · և ըստ այսմ ասի՝ տրտմահաղորդ չարչարանք : 'ի Շարականս :

Տրտմարար · ի · աւ · աց · օք : || տրտում առ_նօղ · կամ տրտմեցուցիչ · և կամ տխրեցուցիչ : Յհ ոսկ :

Տրտմեցուցանեմ · եցուցի · եցո · անել : (ան ցողակ ·) || տրտում առնել · կամ տխրեցու ցանել · և կամ զգածել սգով : 2. Կորն. 2. 2. և 5 : Եփես. 4. 30 :

Տրտմեցուցիչ · ցչի · աւ · աց · օք : || տե՛ս ըզՏրտմարար :

Տրտմիմ · եցայ · եայ · իլ : (ձայնակր.) || տր տում լինել · կամ տխրել · կամ թախծել · և կամ սգով զգածիլ : ռամկ. ևս փրթել : Ծնն. 4. 5 : Մարկ. 6. 26 : 2. Կորն. 2. 4 :

Տրտմութիւն · թեան : || տխրութիւն · կամ թախ ծութիւն · և կամ զգածումն սգովք և ցաւովք : Ծննդ. 3. 16. և 17 : 2. Կորն. 2. 1. և 3 :

Տրտնջեմ · եցի · եալ · ել : (չէզոք ·) || գան_գատողական բանիւ և զայրագին սրտիւ մեղադրել ումեք, որպէս թէ անիրաւի յանձն իւր · և այս թէ լինիցի առան_ձին · և թէ 'ի լսել ականջաց այլոց : Ա սի առաքելոյ 'ի գանգատելոյ, 'ի քամահ անելոյ · և յամբաստանելոյ · զի գանգա_տելն է դատապարտեալ արտիւ ցուցանել այ լոց զանիրաւութիւն ուրուք՝ արարեալ իւ քեան : Բամբասելն է սակս խօսել այլոց զչարիս կամ զմեղս ուրուք՝ իբր յայտնե_լով : Իսկ ամբաստանելն է չարախօսել զումեքէ յատենի մեծաց առ 'ի առնել նը մա զիրաւունս յատենէն իւրմէ : Եւ է

16. 2. և 8: Թւոց. 16. 41: Մատթ. 20. 11:

Տրտնջիւն. (Նախդրիւ հոլովի.) || տե՛ս ըզ Տրտունջ՝ ըստ առաջին նշանակութեան: Թւոց. 17. 10:

Տրտնջողութիւն. թեան: || տրտնջիւն. կամ տրտնջումն: 'Ի ճառս հարց. ը:

Տրտնջումն. ջման. մամբ. մանց. մամբք: || Նոյն է ընդ բառին Տրտնջիւն:

Տրտնջող. ողի. իւ. աց. օք: || տանօղ զտըրտունջս զումեքէ. կամ ունօղ զբարս տրտնջելոյ: Յուդայի. 16:

Տրտում. (Նախդրիւ հոլովի.) || տըրտմեալ. կամ թախծեալ. կամ տխուր. կամ զգածեալ սգովք, և ցաւովք. Ծնն. 40. 7: Սաղմ. 41. 6:

Տրտունջ. (Նախդրիւ հոլովի.) || տրտնջումն. կամ տրտնջիւն, որ է գանգատողական բանիւ և դառնացեալ սրտիւ արտաբերեալ մեղադրութիւն, զոր խօսի ոք զումեքէ յաղագս զրկելոյ նր զինքն. այլ թէ ոչ տարբերի 'ի գանգատանաց. 'ի բամբասանաց, և յամբաստանութեէ, տե՛ս 'ի բայն տրտնջել: Ելից. 16. 8: Թւոց. 14. 27. և 17. 5: Իսկ մերթ նշանակէ տրտնջօղ. և ըստ այսմ ընդ բայի շարակցի այսպէս. տրտունջ լինել. և նշանակէ տրտնջել. ըստ այնմ. 1. Մակ. 11. 39. Զօրքն ամ տրտունջ են զդեմետրեայ. ք տրտնջեն: Եւ Կիւրղի Եղիշ. ժը. ասի, Մի՛ ոք տրտունջ լիցի զտանուտէրբն. ք մի՛ ոք տրտնջեսցէ:

Տրցակ. ի. աւ. աց. օք: || խուրձ, ք կապեալ բազմութիւն եղէգանց, գաւազանաց, նետից. և այլոց նմանեաց. ռամկ. փէտէ ղամիշի, կամ չըպուխի, կամ նէթի, ըստ այնմ 'ի ճառս հարց. իզ. Առի տրցակ մի եղէգն. կամ եղեգան: Եւ զկնի ասի. Զորսն ժողովեցին զեղէգունս, և արարին տրցակ:

Տրցակեմ. եցի. եա. եալ. (Ներգործակ.) || տրցակ առնել. կամ կապել 'ի խուրձս զեղէգունս, կամ զգաւազանս. ռամկ. փէտէ կոտել. կամ փէտէլէմիշ ընէլ. և ըստ այսմ ասի, Յայսմաւուրս. Տրցակեալ զեղէգն՝ եդին 'ի մնարան մակարայ:

Տրփամ. ացայ. ցեալ. ալ: (Ընդմիջակ.) || տարփալ. կամ ուռճալ. որ է ցանկալ: Խոր. ԵՐ. գլ. 60: Եւ 'ի հնն պտղմոֆիլոս, ասի, Համբաւ ցանկութեան անուշան տրփեալ լինէր: Դարձեալ, նշանակէ՝ ակարաբար և երբեմն զմեռեալ առնել զառաքինութեան շնչոյ. ոչ առնեն նոքա, որք կիսամեռք են: ռամկօր. եա փըճուն. ըստ այնմ Յայսմաւուրս. Միայն տրփեալ շնչովն. և այլ ոչ գոյր 'ի նմա նշան կենդանութեան:

Տրփական: || տե՛ս զՏարփական:

Տ Ք

Տքնիմ. եցայ. եալ. իլ: (Հայնակրաւորակ.) || տքուն լինել. ք ոչ ննջել. կամ արթուն կալ. և կամ հսկել, առ 'ի պահպանել զինչ. և կամ առ 'ի վճարել զգործ ինչ: ռամկօրէն ուէքընմաք. կամ արթուն կենալ: 2. Թագ. 12. 21: Սաղմ. 101. 8: և 126. 1: Եփես. 6. 18: Եւ յայսմանէ առեալ տքնիլ ասի ըզ դատտ կալն. կամ զգուշանալ. կամ մեծապէս հոգալ. կամ ժրաջան վաստակել. և կամ ոգւովք չափ պնդիլ զհետ իրիք՝ ոչ խնայելով 'ի ջանս, և ոչ 'ի քունս: ռամկ. ալըխ կէնալ. կամ հոգ ունիլ. կամ խիստ չալըշմիշ ըլլալ: Առակ. 8. 34: Իմաստ. 6. 16: Եբր. 13. 18:

Տքնութիւն. թեան: || տքուն գոլն. կամ արթնութիւն. և կամ հսկումն: 2. Կորնթ. 11. 27: Իսկ մերթ՝ զգաստութիւն. կամ զգուշութիւն. կամ փոյթ. կամ վաստակ. և կամ ժրաջան աշխատութիւն. ռամկ. ջահտ. ըստ այնմ Խոր. Ա. գլ. 5. Շնորհակալ և մերոյս տքնութեան և ջանից լինիցիս ով ուսումնասէր դու:

Տքուն. (Նախդրիւ հոլովի.) || անքուն. ք նա՝ որ ոչ մտանէ 'ի քուն. կամ արթուն. կամ զգաստ: ռամկօրէն ուէքընաօղ. կամ ալըխ:

Տ Օ

Տօթ. ոյ. ով. ոց. ովք: || տապ ամառայնոյ, որ է սաստիկ ջերմութիւն արեգական՝ տիրեալ օդոյ, որ զկենդանիս՝ և ըզ բոյսս տապացուցանէ. ռամկօրէն ըօղ. կամ տըրտաճան փաք: Դանիէ. 3. 67: Մատթ. 20. 12: Յայտ. 7. 16: Եւ ներգոյականն սորա լինի 'ի տօթի. որպէս և այլոց բազմաց անուանց, որք անկանին ընդ հոլովմամբ՝ Աթոռ, աթոռոյ, որգոն, 'ի գըրի. 'ի թղթի. 'ի տղմի. 'ի մարմնի. և այլն: Յոբ. 24. 24: Երեմ. 36. 30: Բարուք. 2. 25:

Տօթագին: (Նախդրիւ հոլովի.) || սաստիկ զօրացեալ տօթով. կամ այն՝ յորում սաստ կացեալ է տօթն, և կամ յոյժ տապացեալ. և ըստ այսմ ասի. տօթագին ժամ. օր, լոյս. տապ. կամ տեղի. և այլն: ռամկօր. խիստ ըօղ. կամ խիստ փաք: Եսայ. 18. 4: և Շնորհալին: Իսկ մերթ վարի երբեմն զմակբայ. և նշանակէ սաստիկ տօթով. կամ մեծաւ տապով. և ըստ այսմ ասի, տօթագին շնչել:

Տօթաժամ. ու. ու. ուց. ուք: || ժամ, յորում է տօթ. կամ ժամանակ, յորում տիրեալ ունի զօդս տապ արեգական, որպիսի է հասարակ օրն յամառան: ռամկօրէն ըօղըան ափէնը: 2. Թագ. 4. 5: Մծբն. Ժ: և 'ի ճառս հարց. իզ:

Տօթախարշ: (Նախդրիւ հոլովի.) || խարշեալ 'ի տօթոյ. կամ կիզեալ 'ի տապոյ ա-

րեգական ։ ռամկօրէն շուշմայրած ։ 'Ի Վարս հարց. Խէ։

Տօթանամ · ացայ · ացի՛ր · անալ ։ (ընդ.միջ.) || տօթով ջերանիլ · կմ̃ ամառնային տա֊ պով պաշարիլ · և կմ̃ տապանալ յամառայ նի ։ ռամկ. շոգել։ Առակ. 25. 13։

Տօմար ։ || տե՛ս զՏումար ։ 'Ի շարակնոցն ։

Տօմարագէտ ։ || տե՛ս զՏումարագէտ ։

Տօմարագիտական ։ || տե՛ս զՏումարագի֊ տական ։

Տօմարական ։ || տե՛ս զՏումարական ։

Տօն · ի · իւ · ից · իւք ։ || խնճոյք , կմ̃ հանդէս , որ է ցնծալից պաշտամունք հասարակաց , զոր կատարեն խմբեալ բազմութք՝ պա֊ րապ տալով գործոյ ։ ռամկօր. Դիւննէյ ։ և այս ընդհանրապէս առեալ առ ի զամե֊ նայն խնճոյից · որպիսիք են հանդէսք թա֊ տերաց · կամ տեսարանաց , խրախճա֊ նաց · և այլոց պէսպէս պաշտամանց ։ 2. Մակ. 6. 7։ Ովսէ. 1. հտ. Ը.։ ըստ այսմ է և 'Ի Վարս հարց · Ժ̃. · ուր ասի · Արաս֊ ցես մեզ տօն 'ի գալուստ ծերոյս · ի̃ խը֊ րախութի սեղանոյ ։ ռամկօրէն · Զիաֆէթ ։ Իսկ մասնաւորապէս առեալ առ ի զըր֊ բազան հանդիսից · որպիսիք են տօնա֊ խմբութիւնքն , զորս կատարեմք 'ի պատիւ Այ̃ · և կամ սրբոց նորա ։ ռամկօրէն եւ՝ փօն ։ Ելից. 5. 1։ և 10. 9։ Ղևտ. 23. 2։ Կո֊ ղոս. 2. 16։

Տօնախմբեմ · եցի · եա՛ · ել ։ (Ներգործակ.) || հանդիսիւ կատարել զտօն · և կմ̃ տօ֊ նել · և ըստ այսմ ասի , տօնախմբել զօր , կմ̃ զյիշատակ ուրուք · և կմ̃ զտօն ինչ ։ ռամկ. փօնէլ ։ Ագաթ ։ և 'Ի շարակնոցն ։

Տօնախմբող · ողի · աւ · աց · օք ։ || տօնախմ֊ բօղ · կմ̃ տօնօղ ։ Շնորհալին ։

Տօնախմբութիւն · թեան ։ || մեծաշուք հան֊ դէս · կմ̃ հանդիսաւոր խնճոյք · և կմ̃ հան դիսական տօն ։ Լամբրօն ։

Տօնական · ի · աւ · աց · օք ։ || տօնախմբա֊ կան · կմ̃ խնճոյական · և կմ̃ հանդիսա֊ կան · և ը̃ այսմ ասի՝ տօնական աւուրք ։ Ագաթ ։

Տօնակից · կցի · աւ · կմ̃ իւ · աց · օք ։ || կցորդ֊ ումեք 'ի տօնս · կմ̃ ընկեր 'ի տօնելն · կմ̃ 'ի միասին տօնախմբօղ · և կմ̃ խրախակից ։ Իմաստ. 19. 15։

Տօնահրաման ։ (Նախդրիւ հոլովի ·) || հը֊ րաման տօնի · կամ պատուէր տօնախմ֊ բելոյ ։ Իսկ մերթ նա , որ հրամայէ առ֊ նել զտօնս · կամ հրամայեալ 'ի տօնել · և կամ այն , յորում լինի հրամայումն տօ նելոյ · և ը̃ այսմ ասի · տօնահրաման կարգ ։ Ագաթ ։

Տօնասէր · սիրի · աւ · աց · օք ։ || սիրօղ տօ֊ նից , կմ̃ տօնախմբութե ։

Տօնավաճառ · ի · աւ · աց · օք ։ || հանդիսա֊ ւոր ժողով վաճառականաց՝ գումարեալ ընդ ժամանակս ժամանակս 'ի հրապա֊ րակս քաղաքաց , կամ 'ի սահմանս նոցա · ուր զբազմազան ազխամազխս արկեալ 'ի վաճառ՝ պարապին տուրևառութեանց , անգործ և անաշխատ ցնծալով 'ի վաճառս իւրեանց · և իբրթէ տօնախմբելով · վն̃ որոյ և հանդէս նոցա կոչեցաւ տօնա֊ վաճառ , անուանեալ 'ի յունաց՝ բանէկիրիս , այսինքն ամենախումբ ։ յորմէ և տա ճիկք յորջորջեն զայս՝ Բանայիր ։ Իմաստ. 15. 12։

Տօնացոյց · ցուցի · իւ · ից · օք ։ || գիրք , որ ցուցանէ զկատարումն տօնից ըստ կարգի ամսոց , կմ̃ աւուրց ։

Տօնելի · ելւոյ · եաւ · եաց · եօք ։ || տօնիւ պատուելի · կմ̃ արժանի տօնելոյ · կամ հանդիսաւոր · կմ̃ երևելի · կմ̃ գովելի · և կամ սբ̃ · և ըստ այսմ ասի՝ օր տօ֊ նելի · կմ̃ տեսակ տօնելի · և այլն ։ Նարեկ. խը̃ . և կէ̃ ։

Տօնեմ · եցի · եա՛ · ել ։ (Ներգործական ·) || տօնիւ պատուել · կամ տօնս կատարել ։ և կամ տօնախմբել ։ ռամկօր. եւ փօնէլ ։ Ելից. 12. 14։ Ղևտ. 23. 39։

Տօսախ · ի · իւ · ից · իւք ։ || է տունկ ինչ մշտա կանաչ , և սաղարթախիտ · որ ունի ըզ կեղև կարծր և ողորկ · իսկ զփայտ դեղ նագոյն , խստանիւթ և ծանր յոյժ , մինչ զի ընդ անկանիլ նորա 'ի ջուր , վաղվա֊ ղակի սուզանի 'ի յատակս ։ Բերէ զտե֊ րև թաւ , կարծր՝ մանր , և իբր բակլայ֊ աձև՝ նման մրտենւոյ · բայց է ծանրա֊ հոտ · վասն որոյ և հոլանի անկոյն սորա է մեռասակար ։ Արդ՝ սորա երկու են տե սակք , մինն ածեցեալ՝ լինի իբրև ըզ֊ թուփ · և սորա փայտն է նուաստ , և իբր անպիտան · իսկ միւսն լինի ծառ · որոյ փայտն է անփուտ և մեծագին · յոր մէ շինեն զպէսպէս յօրինուածս՝ քանդա կագործս , կմ̃ ճախարակեալս · և այլն ։ ռամկ. չիմշիր ։ Եսայ. 41. 19։ Խորէն. յաշխար հագրութե ։ և Ագաթ ։ Դարձեալ՝ տօսախ կոչի և սոսկ փայտն սորա , յորմէ չի նեն ինչ · զոր և ռամկօրէն չիմ֊ շիր կոչեմք ։ 'Ի Գիրս Պիտո֊ ից Անյաղթին ։

Ր

Ր · է տառ բաղաձայն, անուանեալ՝ րէ · որ 'ի մէջ բառից յաճախ 'ի գործածի · բայց 'ի սկզբունս ո՛չ հայիմ երբէք · վ՛ն որոյ և սակաւք են 'ի մեզ բառք սկզբնաւորեալք րէ տառիւ · և որք են, կ՛մ այլազգականք են · և կ՛մ առ հարկի բանադատութ՛բ հանեալք յայլոց բառից · ո՛պ 'ի բառէն՝ երամ, րամ · և յանուանէս՝ խրախ, րախ · և այլն · և յայս միտս առ 'ի Յ՛ն ուղղէն · Րէն՝ տառ չէ բանի սկսուած, այլ ակամայ բանաբարած ։

Դարձեալ՝ տառս այս կոչի՝ 'ի քերականաց՝ կիսաձայն · զի 'ի միայնակ արտաբերելն կարէ ելուզանել զթերատ և զնուաղ հնչումն ինչ · որպիսի է և տառս՝ շ · կամ ս · և այլն ։ Եւ ևս յարմարեալ առոգանութ՛ե կոչի ըստ հագագին սուղ, ջ՛ նուրբ · զի յարտաբերելն ելուզանէ զհնչումն բարակ · ո՛պ և սոքա · զ · ծ · ն · և այլն ։

Դարձեալ՝ կոչի լծորդ, զի լծակցի ձայնիւ ընդ տառիս՝ ռ · վ՛ն որոյ և ուրեք ուրեք փոխադրի ընդ նմա 'ի բառս սովորականս, զո՛ր օրինակ, ռամկական, և րամկական · յախուռն, և յախուրն · կառակնաձև, և կարակնաձև · ոռնագործ, և որձագործ · ջեռանիլ, և ջերանիլ · և այլն ։ Եւ յայսմանէ առեալ գրեթէ միշտ փոխադրի յայլազգական բառս ընդ տառին՝ ռ · զի փոխանակ ասելոյ, աբռահամ, բոսոռ · իսռայէլ · և այլն, ասեմք՝ աբրահամ, բոսոր, իսրայէլ ։ Դարձեալ՝ փոխադրի բազում անգամ նաև ընդ տառիս՝ լ · ո՛րգոն, համարակալ, և համարակար · հրամանակալ, և հրամանակար · կարդինալ, և կարդինար · սլանալ, և սրանալ · ըստ այսմ ևս փոխանակ ասելոյ՝ բէլխալ, ասեմք՝ բէլխար ։ Զայս փոխադրութ՛ի գտանեմք և յաշխարհաբառ լեզուոջ · զի յոմանս գաւառս սովորութ՛ի է զլին տառս անցեալ ժամանակաց բայից՝ փոխել 'ի րէ · զո՛ր օրինակ · կերերեմ, տեսերես, նստերէ, զոր յայլ գաւառս արտաբերեն լինիմ, ըստ այսմ օրինակի, կերելեմ, տեսելես, և այլն ։ Եւ ևս յաճախակի մուծեալ լինի սա 'ի մէջ բառից առ 'ի զարդ · վ՛ն զի ասեմք բաժին, և բարժին · գորշապահանգ, և գորշապարհանգ · դաշունակալ, և դարշունակալ · դաժանութ՛ի, և դարժանութ՛ի · տաժանումն, և տարժանումն · տարապահակ, և տարպապահակ · ըստ այսմ և 'ի բայս · զո՛ր օրինակ · բաժանել, և բարժանել · գրուհագել, և գրուհարգել · կծել, և կործել · պահել, և պարհել · պաշարել, և պարշարել · տաժանիլ, և տարժանիլ ։

Դարձեալ՝ է սա համարողական նշան · ո՛պ և այլք տառք · որ 'ի գրելն պատուով այսպէս, ր՟ · նշանակէ՝ հինգ հազար ։

ՐԱ

Րաբուն · ոյ · իւ · եաց · օք ։ ‖ է համառօտեալն բառիս՝ ռաբբունի, որ է վարդապետ իմ, կ՛մ վարդապետ ։ Նարէկ · Ճ ։ և 'ի Շարականս ։

Րաբունաբար ։ (մակբայ որակական ·) ‖ իբրև զրաբունի · կամ վարդապետական իշխանութ՛բ, և կ՛մ վարդապետօրէն · ռամկ · վէրթապէթինէ · 'ի Շարականս ։

Րաբունական · ի · աւ · աց · օք ։ ‖ ռաբբինական, կ՛մ վարդապետական, կ՛մ ուսուցչական, և կ՛մ վարժապետական ։ 'ի Շարականս ։

Րաբունանամ · ացայ · ացիր · ալ ։ (ընդ միջ ·) ‖ րաբունի լինել, կ՛մ ստանալ զանուն րաբունւոյ, և կ՛մ վարդապետանալ ։ ռամկ · վէրթապէթ ըլլալ ։

Րաբունապետ · ի · աւ · կամ իւ · աց · օք ։ ‖ պետ րաբունեաց, կ՛մ գլուխ վարդապետաց, կամ երևելի վարժապետ · 'ի Վարս հարց · իշ ։

Րաբունի · կ՛մ րաբբունի · նւոյ ։ ‖ տե՛ս ըզ Րաբուն ։ Յօհ · 20 · 16 ։ Նարէկ · 'ի քարոզ խաչին ։

Րաբունօրէն ։ (մակբայ որակական ·) ‖ տե՛ս զՐաբունաբար ։ 'ի Վարս հարց · ա ։ և 'ի Շարականս ։

Րաղ · ի · իւ · եց · իւք ։ ‖ նիհար, կ՛մ նուաղ · կ՛մ դոյզն · և կ՛մ սակաւ ։ ռամկօր · ինչ · և սաստկ · ծիղլի ։

Րախ · ի · իւ · եց · իւք ։ ‖ խրախ · կ՛մ ուրախ · և կ՛մ զուարճ ։

Րախական · ի · աւ · աց · օք ։ ‖ ուրախական, կ՛մ խրախական · կ՛մ զուարճական · և կ՛մ խնդական ։

Րախանամ · ացայ · ացիր · ալ ։ (ընդ միջ ·) ‖ խրախանալ · կ՛մ ուրախանալ · և կ՛մ խնդալ ։ 'ի Շարականս ։

Րախատիպ · տպի · իւ · եց · իւք ։ ‖ ունող զուրախական տիպ, կ՛մ զտեսիլ, կ՛մ որոյ դէմքն են զուարճ ։

Րախարար · ի · աւ · աց · օք ։ ‖ խրախարար · կ՛մ ուրախարար, և կ՛մ զուարճացուցիչ ։

Րախացուցանեմ · ացուցի · ացո · անել ։ (ներգ ·) ‖ խրախացուցանել · կ՛մ ուրախացուցանել, կ՛մ զուարճացուցանել ։ ռամկ · խնդացնէլ ։

Րախճական · ի · աւ · կ՛մ իւ · աց · օք ։ ‖ րախճանական, ջ՛ այն ձայն, որ վերաբերի առ խրախճանս, կ՛մ խրախական, կ՛մ ուրախական · և ըստ այսմ 'ի ծանօթութ՛ս հրաւիրումն կոչնականաց 'ի խրախճանս Թագաւորին՝ կոչի րախճական ձայն ։

Րախճան · ի · աւ · աց · օք ։ ‖ խրախճան, ջ՛

սեղան բազմախորտիկ՝ և մեծահաց: ռամկ. զիաֆէթ: Նարեկ. ղշ: և 'ի Ճառընտրի ենէդէջառ: Իսկ մերթ՝ րախացող, կամ խրախացող. և այլն, որք տաացան 'ի բառն՝ խրախճան:

Րախճանագոյն · գունի · ին · ից · ւոք: || խը րախագոյն, կամ ուրախագոյն, և կամ զուարճագոյն:

Րախճանական: || տե՛ս Րախճական:

Րախճանամ · ացայ · ցի՛ր · անալ: (ընդ.միջ.) || տե՛ս զխրախճանալ:

Րախճանաւոր: || տե՛ս զխրախճանաւոր:

Րախճանութիւն · թեան: || տե՛ս զխրախճանութիւն:

Րակերտ · ի · աւ · աց · օք: || ծաղի՛կ 'ի բառէս՝ րաբուն · որք ըղձակերտն յանուանէս՝ իղձ · և նշանակէ՝ վարդապետող, կամ վարդապետ · ըստ այնմ Յճ ոյէի ·

Րակերտ՝ էին արարչութե ·
Եւ փրկական տնօրէնութե:

Րակերտական · ի · աւ · աց · օք: || րաբունական, կամ վարդապետական, և կամ ուսուցչական:

Րակերտեմ · եցի · եա · ել: (ներգործ.) || վարդապետել · կամ ուսուցանել: ռամկօրէն · տըրիլէշնել:

Րակերտութիւն · թեան: || վարդապետութի · կամ ուսումն:

Րամ · ի · իւ · ից · իւք: || երամ, կամ ժողով, կամ խումբ, և կամ դաս: ռամկ. պէօլիւք 'ի շարականս: Իսկ 'ի Յճ ոյէին · ուր ասի, բամ աւետեաց ձայնի լինի · թէև բնութն ձայնի չունի · ասել լինի փոխանակ բառիս, ժողովող, կամ քարոզող, կամ հնչակող:

Րամեալ · ելոյ · ով · ոց · ովք: || ժողովեալ, կամ հաւաքեալ, կամ բովանդակեալ, և կամ բովանդակ · ըստ այնմ 'ի ծննդեան · Րամեալ բոլորդ քո մարմին՝ սաստիկ էառ ըղ հարուած գանին · որ բովանդակ, և բոլոր մարմինդ · կամ այսպէս · բոլոր մարմնոյ րամեալ էառ, որ հաւաքեալ ընկալաւ զհարուածս: Ը այսմ և 'ի շարականս ասի · րամեալ մարդկան ազգ ժողովլին · որ բովանդակ մարդկան ազգ:

Րամեմ · եցի · եա · ել: (ներգործ.) || ժողովել, կամ հաւաքել · կամ խմբել, կամ գումարել, և կամ բովանդակել: ռամկ. ծողվէլ · կամ եէթիլ ընել: Յճ ոյէի: և 'ի շարականս: Իսկ մերթ ամփոփել, կամ յանկուցանել · և կամ առ իւն ձգել · ըստ այնմ 'ի շարականս · րամեալ զհոգի, և զմարմին դարձեալ 'ի սէր փեսային, որ դարձեալ ամփոփել · կամ ձգել 'ի սէր, և այլն:

Րամիկ: || տե՛ս զՌամիկ:

Րամկական · ի · աւ · աց · օք: || ռամկական · որ գեղջկական: Իսկ մերթ՝ խառնիճաղանճ · և կամ խաժամուժ · ըստ այնմ 'ի Շարակնոցն · րամկական խումբ հաւատոց, և երբեմնից թէև ընդ վերեւ · երբեմն ասէ, խառնիճաղանճ ամբոխն զօրաց էր հաւատք երկրաւոր և վերոյ, որք ընդ քաղ զօրապետութեան նահատակեցան:

Րաքանամ · ացայ · ացի՛ր · ալ: (ընդ.միջ.) || զօրանալ · կամ զօրաւոր լինել:

ՐԵ

Րենական · կամ րեննական · ի · աւ · աց · օք: || ծծական · կամ ծծային · զի ծագի 'ի բառէս՝ որ էն · կամ էնն · որովք նշանակի ծծ · ըստ որում է տիրապէս էն, և էից էակ, պարունակեալ զամ անսպառ գիծ էութեան իւրով · ուստի և փոխանակ կոչելոյ զէէն՝ ծծատես, յորջորջեալք րենատես · Սոյնպէս փոխանակ ասելոյ՝ ծծայեն կան անուանք պատուեալ · կամ ծծայեն լուսոյն տեսօղ · ասի րենական անուանք · րենական լուսոյն · Յճ ոյէի: ըստ այսմ րենական լուսոյն, բարի 'ի ձեռագիրս, րեննական և 'ի շարակնոցն ասի 'ի ձեռագիրս, րեննական լուսով լցեալ արիացեալք քաջն արտակ:

Րեննատես · կամ րեննատես · ի · իւ · աց · օք: || ծծատես · որ է տեսանող ծծյ · Ը այսմ 'ի շարակնոցն · րեննատեսն իէլի սիրով որ բոյն 'ի մեզ խնայեա · ուր 'ի ձեռագիրն գնի՝ րեննատեսին:

Րեսեմ · եցի · եա · ել: (ներգործ.) || տե՛ս Րոտել: 'ի վարս հարց. Բ:

Րետոր: || տե՛ս զՀռետոր · 'ի հին քերականաց:

ՐՈ

Րոպէ · ի · իւ · ից · իւք: || է բառ յածեալ արտաքերեալ ըստ նշ ռօպէ, կամ ռօփի · զոր 'ի հայ բարբառ կոչեմք մեա · որ է մի․ զոր 'ի հայ բարբառ կոչեմք մէտ · որ է միջոր... ժամանակի · կամ վայրկեան: և ը այսմ մասնաւորապէս րոպէ կոչի վաթսուներորդ մասն միոյ ժամու: ռամկօրէն · տագիգէ: Դարձեալ՝ է սա համառօտեալն բառիս Եւրոպէ · որ Եւրոպիա · որ է մին յերից մասանց աշխարհի անկեալ 'ի կողմն արեւմտից՝ առ երի ասիոյ · ըստ այնմ Նարեկ. 'ի փոխ առ երի ասիոյ · Սկզբնաւորեալ զպարսկականն տոհմէից · Սկզբնաւորեալ զպարսկականն խուժաց զկիրճ՝ րոպէին հանդերձ զկողմն ասիոյ, որ զափրիկէ հանդերձ եւրոպէին և զաշխարհն ասիոյ: Եւ յայնժամէ առեալ րոպէ կոչեմք անբացորոշաբար զաև իցէ մասունս, կամ կողմանս աշխարհի, և նմանեաց · ըստ այնմ Յճ ոյէի · րոպէից քառից տարերք · որ չորից կողմանց աշխարհի տարերք: Իսկ մերթ սոսկ զաշխարհ, կամ զաշխարհ · ըստ այնմ Նարեկ. 'ի փոխ խաչին և 'ի գոծ. հասուն · րոպէից յոգնաթիւ մասանց բերկրութե: Եւ 'ի Ճ. ասի 'ի րոպէից մաքրմամբ, և ազատարար · որ ամ պէից մաքրմամբ, և ազատարար · որ առեալ զերաց սրբիչ և ազատիչ · Ը այսմ առեալ լինի և 'ի շարակնոցն, ուր ասի՝ րոպէից աշ գականն զտիւն արար գեղեցկութեամբ · որ է զտիւ՝ կամ զլոյս արեգական աշխարհիս զերեկեղեցւոյ չերրակերպ մթնացոյց:

Րոպէական · ի · աւ · աց · օք: || մնատական · կամ վայրկենական · կամ առժամանակեայ: Դարձեալ տիեզերական · կամ աշխարհական:

Րոպէացոյց · ցուցի · իւ · ից · օք: || ցուցա

նօղ բուլէի, կամ վայրկենի · որպիսիք են
նիշքն ժամացուցին, որք յայտնեն զիւ-
րաքանչիւր կէտ ժամուն : ռամկ. Թոփի-
գէն շըշնօղ:

Րոտեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || ժողո-
վել · կմ հաւաքել · կմ գումարել · կամ
բովանդակել · և կմ ընդունիլ : ռամկօր.
ծողվէլ · ըստ այնմ Նարեկ. ճ. և 'ի փառօ-
խուժէն, և Եկեղեցւոյ · րոտել վերստին ըզ
մերժեալս առ 'ի քէն · ըստ այսմ և 'ի ծա
նոգիրսն · րոտեա զաշակերտս բարձից երկ-
նայնոց · ք ժողովեա զաշակերտս յերկ-
նային երամս : Իսկ մերթ 'ի մի յօդել ·
կմ միաւորել. և կմ միացուցանել · ըստ
այնմ Յն ոսկի · րոտեալ մարմինս իմ ը̅
հոգւոյս, ք 'ի միաւորել մարմնոյ իմոյ ը̅
հոգւոյս : Երբեմն ևս ամփոփել · կմ նա-
հանջել · կմ 'ի բաց առնուլ · և կմ բառ-
նալ · ըստ այնմ Յն ոսկի' րոտեա զերկուս
Թախծական, զոր մահ մանկանն ձեզ ծը-
նան : Դարձեալ նշանակէ մաղթել · կմ
հայցել · և կմ խնդրել : ռամկօր. աղաչել-
ողել. ըստ այնմ Նարեկ. 'ի գովեստին · րո
տեմք 'ի քէն աղերսիւ բանի, որ ես քաղց
րալուր դրաւ աշխարհի : Դարձեալ' հա
ճել · կմ հաւանել · և կմ յօժարել :

Րոտին : (Նախդրիւ հոլովի ·) || ընչին · կմ
փանաքի · կմ գծուծ · կմ նուաստ · կմ
անարգ · և կմ խոտան : ռամկ. ...: 'ի ծա
նոգիրսն :

Րոտումն · ման · մանք · մանց · մամբք : || ժո
ղովումն · կմ հաւաքումն · և կմ բովան-
դակութիւն : Իսկ մերթ' մաղթումն · կամ
հայցուած · և կմ խնդրուած : Դարձեալ
հաճութիւն · կմ հաւանութիւն · կմ յօժա-
րութիւն · կմ մտադիւրութիւն · և կմ ան-
ընդդիմակ լսողութիւն · ըստ այնմ 'ի Շա-
րականս · րոտմամբ սրտիւք յարուցեալ,
այսինքն · յօժարութբ կմ մտադիւրութբ
սրտի :

Րուպ · ի · իւ · ից · իւք : || դոյզն · կմ դուզ
նաքեայ · կմ նուազ · կմ սակաւ : ռամկ.
փիչ · և տաճկե. ճիղէի · կմ ճիղէճէ :

Րոգ · ի · իւ · ից · իւք : || գործարան մանելոյ
վլուշ, և զայլ ինչ նման · զոր ըստ մեծի
մասին կազմեն աշտանակաձև : տաճկ. եօ
րէքէ : Բայց այս 'ի գործածի մանաւանդ
դուեհկական լեզուաւ · զի 'ի բարբառս գը
րոց կոչի աղեկատ · և ըստ այսմ ասի այ
լաբանութբ, 'ի Գիրս Թուոց անյաղթին · Թելն'
որ գործեալ և պարապեալ, զանցեալն
նշանակէ · որ գեռ մանեալ լինի' ըզ
ներկայս · և որ տակաւին յաղէ-
կատն է' զապառնին · ք որ սա
կաւին փաթուեալ
կայ 'ի վերայ ե...
րեքէին :

Ց

Ց · Է տառ բաղաձայն և
կոչեցեալ 'ի քերականաց
կրկնակ · զի ունի զզօրու
Թիւ կրկին ըծորդակից տա
ռից, ք է, երկուց ծայ-
ից · որպէս և չէն երկուց
ձէից : Արդ' զտառս զայս
անուանեմք ցոյ · կմ ցօ ·
որ արտաբերի 'ի մէջ շըթանց ամփոփ-
մամբ բերանոյ : Իսկ յառօգանական ա-
րուեստի ըստ հաշուին է խաժ, ք Թաւ.
որ է հաստ · զի 'ի հեգս բառից հաստա-
ձայն հնչէ ըստ օրինակի տառիցս · Թ · չ ·
ջ · ք · և այլն :

Դարձեալ անուանի սա ըծորդ տառ · վս
զի կցորդի ձայնիւ ընդ տառիցս' ծ · ձ · զ ·
ս · ուստի և երբեմն փոխադրի ընդ նս ·
զոր օրինակ · փից, և փիծ · յեղց, և յեղծ ·
կմ յեղձ · քարց, և քարձ · և այլն : ըստ
այսմ և ընդ զայի · զոր օրինակ, ելուզա
նել, և ելուցանել · ընդելուզանել, և ըն
դելուցանել · փլուզանել, և փլուցանել :
Եւ յայսմանէ առեալ' փոխանակ ասելոյ'
ընկլուցանել · ասեմք ընկլուզանել : Եւ
ևս' է սա նշան համարողական, որ մինչ վա
րի պատուագրով' այսպէս · ց̅ · նշանակէ
վեց հազար : Դարձեալ' է սա նախդիր հո
լովակերտ · որ 'ի գործածի փոխանակ նախ
դրացս' 'ի · յ · առ · ընդ · և այլն · և յարի
յոմ բառս' թէ ձայնաւորք իցեն սկզբնա
տառքն, և Թէ բաղաձայնք : Արդ' սա
կազմէ զնախդրիւ տրական · զոր օրինակ ·
առ' ցտր · հարցին ցնա · մինչև ցօրս յայս,
Ծննդ. 4. 13: Մատթ. 17. 10: 1. Մրկ. 8. 10:
Սոյնպէս է և Մատթ. 7. 9. ուր ասի, ո՞վ
իցէ 'ի ձէնջ մարդ, ցոր խնդրիցէ որդի
իւր հաց, ք առ որ պաղատելով հայցիցէ
սա' լինքեան զհաց : ըստ այսմ է և Ղուկ.
11. 11. ուր ասի · Ցո՞ ոք 'ի ձէնջ հայր խնդ
րիցէ որդի իւր ձուկն · ք առ ո՞րպիսի
ոք հայր պաղատելով խնդրիցէ որդի իւր.
և այլն : Իսկ ուրեք ուրեք կազմէ և զներ
գոյական ուղղականավերջ · ըստ այնմ 'ի
Գիրս Թուոց անյաղթին · Ցասել բանաւո-
րին, կե'ր · ք 'ի յասելն, կմ ընդ ասելն,
ռամկ. ...: ըստ այսմ փոխանակ ա-
սելոյ' յորքան ժամանակս, ասի' ցորքան,
... 'ի կարգի իւրում : Դարձեալ'
բազում անգամ ունի զզօրութիւն նախա-
դրութեան' մինչև յ, կմ մինչև 'ի, զոր օրի-
նակ, ոչ եհաս նմա ցառաւօտն ցայնոսիկ,
ք մինչև յայնս առաւօտս : ռամկօր. ...

ք խոնարհամիտն ։ Եսայ. 28. 17։ Սաղմ. 118. 127։ Եզեկ. 28. 13։

Տպանամ. նացայ. ցե՛ր. ալ։ (ընդ.միջ.) ‖ տը-պաւորիլ. կամ դրոշմիլ. կամ նկարիլ. կամ ձեւանալ. եւ կամ կերպանալ. եւ ըստ այսմ առնի տպանալ պատկերին ՚ի վր գրամոյ. կնքոյն ՚ի վր մոմոյ, արտոյ յանձն ոք. եւ զօրութեան այլոյ ինչ. եւ այլն։ Հոգւոյ կամ Հոգւոյն։ եւ Նոյնքն. իսկ մերթ օրինակիլ, կամ գաղափարիլ. կամ նախանկարիլ. եւ կամ ձեւով եւ նմանութ. գուշակել. եւ ըստ այսմ առնի անօրէնութեանցն քն տպանալ առնա հայեցողքն, կամ առ մարգարէիւք։

Տպարան. ի. աւ. աց. գք։ ‖ տեղի, ուր լի-նի տիպ գրոց. եւ կամ տուն տպագրութե։ ռամկ. պասմայ թէրխանայ։

Տպացուցանեմ. ցուցի. ցի. եալ։ (անցող.) ‖ տե՛ս զՏպաւորել։

Տպաւոր. ի. աւ. աց. գք։ ‖ ունող զտիպ. կամ տպեցեալ. եւ կամ տպագրեալ։ ռամկ. պասմայ։ Իսկ մերթ տպաւորա-կան. կամ տպողական. եւ կամ տպագրական։ Երբեմն եւս ձեւական. կամ պատկերական. կամ օրինակական. եւ կամ գաղափարական. ըստ այնմ Ոսկ. 1. հոփ. իզ. տե՛ս եւ զտպա-ւոր տառերին զազգականութիւն առ ճշ-մարտութիւն։ Դարձեալ՝ նշանակէ՝ մեր նման. կամ նմանաւոր. կամ համեմատական։ ռամկ. դէյլէ։

Տպաւորագոյն. գունի. իւ. աց. գք։ ‖ առա-ւել տպաւոր. կամ նմանագոյն. կամ մեր-ձաւորագոյն. կամ յայտնագոյն. եւ կամ ե-րեւելագոյն։ ռամկ. խիւփ դէյլէ. կամ դէյլէ-րէջլիսի։ Նարեկ. եւ ՚ի գիրս գէղգ. ոտանաւորնին։ դէյլէնայ։ Նարէկ. եւ ՚ի գիրս գէղգ. ոտանաւորնին։

Տպաւորեմ. եցի. եա. եալ։ (ներգործ.) ‖ դրո-շել յինչ տպել. կամ դրոշմել. եւ ըստ այսմ առնի՝ տպաւորել զպատկեր ՚ի գրամս. կամ զկնիքն ՚ի մոմս մարդոյ։ ռամկ. պասմայ ընէլ. կամ պասէր խօսել։ Խոսրէն. Գ. գլ. 51։ եւ ՚ի գիրս գէղգ. ոտանաւ։ Իսկ մերթ՝ յեռուլ. կամ սեւեռել. եւ կամ աղուցանել։ ռամկ. կէյփէրմէկ ընէլ. ըստ այնմ Եսայ. 28. 11։ Զերկոտին ակնանս տպաւորեալս ռոկ-եալ. ք յեռեալս, կամ ագուցեալս յասպ-կաւիճս, ք թուղթս։ Իսկ մերթ՝ ձեւացու-ցանել. կամ կերպացուցանել. կամ կերպա-րանել. եւ կամ կազմակերպել, որպէս առնի քանդակագործն զպատկերս տաշելով։ ռամկ. խօրպան ընէլ։ Իմաստ. 13. 13։ Երբեմն եւս օրինակել. կամ գաղափարել. կամ նախա-նկարել. եւ կամ ձեւովք եւ նմանութեամբ գու-շակել. եւ ըստ այսմ իմանի՝ մինչ առնի տպաւորել զխորհուրդ անօրէնութեան քն. կամ զփրկութիւն հեթանոսաց յօրինակս ուրկանին պետրոսի. եւ այլն։ Նարեկ. ղգ։ եւ ՚ի Շարականս։

Տպաւորութիւն. թեան ։ ‖ տպաւորելն. կամ տպութիւն. կամ տիպ. եւ կամ դրոշմ։ ռամկ. պասմայ. կամ փասմայ։ Նարեկ. ղգ։ Իսկ մերթ՝ տպաւորեալ ձեւ, կամ տեսիլ. կամ պատկեր. եւ կամ նմանութիւն. ըստ այնմ Խոսրէն. Բ. գլ. 87։ Եւ ծագեաց լոյս տպաւորութիւն խաղ

ուն։ Դարձեալ՝ ձեւացումն. կամ կերպա-ւորութիւն. կամ կերպարանումն. եւ կամ նկա-րագրութիւն։

Տպեմ. եցի. եա. եալ։ (ներգործ.) ‖ հարկա-նել յինչ զտիպ. կամ դրոշմել զձեւ. եւ նել յինչ զտիպ. կամ դրոշմել զձեւ. եւ կամ տպաւորել։ ռամկ. եւս փըսել. կամ պաս-մայ ընէլ։

ՏՌ

Տռփածու ։ ‖ տե՛ս զՏռփածու։

Տռփական. ի. աւ. աց. օք։ ‖ տռփա-կան. կամ ցանկական. եւ կամ վավաշոտա-կան։ Խոսրէն. ա. գլ. 14։ Իսկ մերթ տռփա-կան։ Կամ ցանկացող, եւ կամ վավաշոտ։ ՚ի հին Խէրսոնիտաէ։

Տռփամ. ացայ. փա. կամ ցե՛ր. ալ։ (ընդ.միջ.) ‖ տարփալ. կամ տենչալ. եւ կամ ցանկալ. եւ այս ըստ մեծի մասին առեալ լինի ՚ի չար կողմն։

Տռփանք. անաց. գք։ (անեզ.) ‖ տարփանք. կամ չար բաղձանք, կամ վավաշոտական ցան կութիւն։ Խոսրէն. Բ. գլ. 46։ ըստ այսմ եւ ՚ի կռութիւն ՚ի չարս հայոց. իզ. առնի, ցանկացեալ նման ՚ի գործ տռփանաց։

Տռփեմ. եցի. եա. եալ։ (չէզոք.) ‖ տե՛ս ըզ Տռփալ ։ ՚ի հին տառադարձիր։

Տռփոտ. ի. իւ. աց. գք։ ‖ տե՛ս զՏռփող։

Տռփութիւն. թեան ։ ‖ նոյն է ընդ բառին տռփանք ։ ՚ի չարս հայոց. է։

Տռփող. փողի. իւ. աց. գք։ ‖ տռփացող. կամ վավաշոտաբար չարաչար բաղձացող. կամ վավաշոտաբար ցանկացող. եւ կամ տռփածու։ ՚ի չարս հայոց. ժգ։

ՏՍ

Տախալ. կամ տըլախալ. տախալի. աւ. աց. գք։ ‖ ունող զհամ տտպութ. կամ տտպող։ ռամկ. բէրանը բուռող. կամ խըռոտող. կամ պռկաղջիզ ընող. եւ կամ ծամծմող։ ՚ի գիրս ջրային մնացորդին։

Տտուն. տտնոյ. ով. ոց. ովք։ ‖ մուտ. ք այրող թանի. կամ թեքնոյ. եւ այլն։ եւ ըստ այսմ առնի՝ ՚ի գիրս գէղգ. ոտանաւ. զանկրամանէգուն. երէ զատտուն բոլորակաձեւ շուրջ կացու-ցանէ՝ զոսկեշամանդն։ Եզ. Յոբ. 40. 26. առնի. Մէ բարձցէն թեփ մի ՚ի տտնոյ նը. Դարձեալ՝ տտուն կո-չի ՚ի տտանէ նը։ Դարձեալ՝ տտուն կո-չին քղանցք. կամ զգոչակք հանդերձից. ըստ որում են նշ բերն զտտնս։ ռամկ. Թուոց. 15. 38։ 1. Թագ. 15. 27։ եւ 24. 5. 6։ Եզ. յայտնանէ նաեւ ծայրք ձեւ կցէ եւ 12։ Եզ. յայտնանէ նաեւ ծայրք ձեւ կցէ կտտեցելինաց տտուն անտէնանին։ ռամկ. ըստ այնմ Գործ. լմին ծոր. կամ լմին պոչ. ըստ այնմ Գործ. 10. 11։ Եզ. զչորեցունց տտնոց կապեալ անօթ ինչ երկն կտաւոյ մեծի. ք ՚ի չորից ծայրիցն կապեալ։

Տտպեմ. եցի. եա. եալ։ (ներգործ.) ‖ զգեստ մարդոյ բառիլ համով կծանել. կամ տըղ-մոյ գոլ կնճռել. կամ պապրկել. որպէս առնէ ցեխն կորկէ. կամ պապրկել ք բերան. եւ կամ ք սորդան. կամ պատրկել. ք բերան. եւ կամ ք տանձոյն. կամ պապրկել ք բերան. եւ կամ ՚ի խակ եւ ՚ի թթու պտղոց։ ռամկ. բերանը բուռել. կամ խըռոտել. կամ պռկաջիզ ընել. եւ կամ

և կամ ձանձրացնել։

Տտպութիւն. կմ տըտպութիւն. թեան։ || է համ ինչ անկեալ 'ի մէջ դառնութեան, և թթուութեան, և կծուութեան, որ զքիմս մաքրոյ տապէ։ ռամկ. Բէրանը ղըզւելը. կմ ղըժող մըն ընելը. կմ ձանձրութիւն։ 'Ի հին բժշկարանն։

ՏՐ

Տրակ. ի. աւ. աց. գք։ || Նամակ. կամ թուղթ, զոր գրեն առ անձն ոք։

Տրական. ի. աւ. աց. գք։ || այն ձայն, որ կարէ տրել. կմ տալի. և կմ տուեալ։ Իսկ ըստ քերականաց նշանակի պտղաւ երրորդ հոլովն. որ բաժանի յերկուս, այս 'ի վերջահոլովն. և 'ի նախդրբիւն. և ասացաւ սա տրական, ըստ որում տալն միշտ զայսպիսի հոլովս պահանջէ. զոր օրինակ. տային նմա. կմ տուեալ 'ի ձեռս նորա. և այլն։ 'Ի հին քերականն։

Տրամ. ոյ. ով. 'ի տրամի. ոց. ովք։ || հաստատուն, կմ հաստատակեաց, կամ ամրակուռ. և կմ սերտ և պինդ։ ռամկ. ամուր, կմ ողջ։ Ըստ այսմ 'ի Վարս հարց. ի՛ջ. Եգիտ, գիր 'ի վերայ տրամ գետնոյ։ Եւ 'ի հին պարսկագիրս. ասի, Ջուղի ինչ տրամ, յոյժ կարծր, ուստի երկաթի հատանէր։ Իսկ մերթ ճշմարիտ, կմ ստոյգ, կմ ճիշդ, կմ զգուշութեամբ քննեցեալ, և կմ մանրամասն հետազօտեալ։ Եւ ըստ այսմ վարի մանաւանդ 'ի յարակցելն ընդ բառս, որպէս տեսցես 'ի ներքոյ։ Եւ և' է սա մասնիկ բաղադրական. և 'ի բաղադրելն ընդ բառից նշանակէ՝ տար, կմ այսր և անդր. և կմ այսպէս և այնպէս. և այլն. որպէս տեսցես յառաջիկայ բառս։ Դարձեալ՝ է սա չափ ինչ ծանրութեան, որ կշռէ զվաթսուն և զչորս հատս ցորենոյ, որք առնեն զվեշտասան կորկոտ եղջեր, այս +ելէնօպօլսօսն խօսք։ Այլ սա 'ի բարբառս գրոց մանաւանդ գրամ կոչի՝ քան տրամ, յորմէ և բարդին բառքս երկդրամեան, և դրամակշիռ։

Տրամաբան. ի. իւ. ից. իւք։ || Ճշգրտաբան, կմ ճշգաբան, այս նա՝ որ հետազօտ բանիւք ձեռնարկելով պնտի զհետ իրիք 'ի հաստատել, կմ որ քաջութեամբ մտաց յընդհանրական սկզբանց եզրակացուցանէ ըզմասնաւոր ինչ. կմ 'ի մասնաւորաց զընդհանրական իմն, որ առարկի գիտութեան, կմ կարծեաց. և ըստ այսմ տրամաբան կոչին փիլիսոփայքն, և մասնաւորապէս մակացուքն տրամաբանութեան, այս նոքա՝ որք ուսեալք են զմակացութիւն լոճիկայն, կմ պարապին լոճիկական մակացութեան։

Տրամաբանական. ի. աւ. աց. գք։ || այն ձայն, որ վերաբերի առ տրամաբանս, կմ առ տրամաբանութիւն. կմ փիլիսոփայական, և կմ լոճիկական։ 'Ի հին քերթան։

Տրամաբանեմ. եցի. եա. եալ։ (չէզոք.) || տրամաբան լինել, այս ճշգիւ ձեռնարկելով խօսել զինչ. կմ մանրամասն հետազօտեալ քննել զբան ինչ, կմ փիլիսոփայել, և կմ հակաճառել. որպէս առնեն պարապողքն տրամաբանական մակացութեան։ 'Ի գիրս առաքինութեանց։

Տրամաբանութիւն. թեան։ || գործ տրամաբանից. կմ զրոյց տրամաբանական, կմ եզրակացութիւն ընդհանրական իրողութեան ելուզեցեալ 'ի մասնաւոր սկզբանց։ 'Ի գիրս առաքինութ։ Բայց մասնաւորապէս առեալ նշանակի սովաւ տրամաբանական մակացութիւն՝ կոչեցեալ հելլէն բարբառով լոճիկայ, որոյ փոյթն է ուսուցանել զհանգամանս քաջ տրամաբանելոյ. ուստի ճառէ զսահմանէ, զբաժանմանէ, և զձեռնարկութենէ, որք են գործիք տրամաբանելոյ։ 'Ի գիրս Դաւթի անյաղթին։

Տրամագիծ. գծի. իւ. ից. օք։ || գիծ ուղղաձիգ, որ զձև յերկուս հաւասար մասունս բաժանէ. զոր և կոչեմք տրամաչափ. և ըստ այսմ 'ի քառանկեան գիծքն, որք ձգին խոտորնակի յանկիւնէ յանկիւն անցանելով անսայթաք ընդ միջակէտն՝ կոչին տրամագիծք նր, որք են երկու. մինն, որ 'ի վերին աջակողմեան անկիւնէ ձգի 'ի ստորին ձախակողմեանն. իսկ միւսն, որ 'ի վերին ձախակողմեան անկիւնէ ձգի 'ի ստորին աջակողմեանն. այսպէս ։ Իսկ 'ի բոլորակն տրամագիծ կոչի ուղղական գիծն, որ սկսեալ 'ի կէտէ իմեքէ շրջանակին՝ ձգի ուղղորդ 'ի հանդիպահայեաց կէտն՝ անցանելով անվրէպ ընդ կեդրոնն. և ըստ այսմ գրեթէ յամբաւս բազմանան տրամագիծք 'ի բոլորակն. վն զի անհամարքն են կէտքն, յորոց կարեն սկսանիլ։ Դարձեալ՝ բազում անգամ վարի սա ածականաբար, և նշանակէ զտանօղն տրամագծին, կմ զկայացեալն տրամագծիւ. և ըստ այսմ չորեքին ծայրք կողմանց քառանկեան կոչին տրամագիծ անկիւն։ 'Ի Էւկլիդ. երկրաչ։ Իսկ մերթ նշանակէ զեղեալն, կմ զկայացեալն 'ի տրամագիծս, կմ յանկիւնս տրամագծից. որպիսիք են նախադասութիւնք եղեալք 'ի չորեսին անկիւնս փիլիսոփայական աղիւսակաց. 'Ի Էւկլիդ. երկրաչ։

Տրամագծութիւն. թեան։ || ծրագրութիւն, կմ կարգ տրամագծից. և ըստ այսմ ձգումն տրամաչափ գծից, կմ կարգումն իրիք 'ի տրամագիծս, կմ տրամագծօրէն, տրամագծութիւն ասի։ 'Ի գիրս Դաւթի անյաղթ։

Տրամադրական. ի. աւ. աց. գք։ || կարգադրական. կմ սահմանադրական. և կամ հաստատողական։ Իսկ մերթ՝ պատրաստական. կմ դրական. և կմ զգածողական։

Տրամադրեմ. եցի. եա. եալ։ (ներգործ.) || կարգել. կմ կարգադրել. կմ սահմանադրել. կմ յարդարել. կմ անօրինել։ Լտն. Բրձն։ Իսկ մերթ՝ զետեղել. կմ կացուցանել. և կմ հաստատել. Ըստ այսմ Յհ. ոսկ. Յորոյ հիման մէջ հաստատեալ, անշարժ տրամադրեալ։ Երբեմն և՝ պատրաստել. կմ տրամակայել. կմ որակա-

ցուցանել · կամ այլայլել · և կամ զգածել · ըստ այնմ 'ի Գիրս պատճէնի անյաղթին · Մեծ է զօրութիւն երաժշտականին պէսպէս կը րիւք ըմբռնելով զհոգին, և տրամադ-րելով :

Տրամադրութիւն · թեան : || կարգադրութիւն · կամ բարեկարգութիւն · կամ տնօրէնութիւն · և կամ յարդարումն · ըստ այնմ 'ի Ճառս հոգե-լից · Տեսեալ զտրամադրութիւն վայելուչ ըստ կրօնաւորութեանն զարմանայր : Իսկ մերթ՝ զետեղումն · կամ կացուցումն · կամ կայացումն · և կամ հաստատութիւն : Երբեմն և՝ պատրաստութիւն · կամ տրամակայութիւն · կամ որակութիւն · և կամ ըզգածումն · ը այնմ 'ի հին փերթին · Առաւելապէս այսուհետև փո փոխին կերպք մարդկան՝ պէսպէս տրամա դրութեամբ : Դարձեալ՝ ըստ հին քերակա նաց տրամադրութիւնք կոչին սեռք բայից · ըստ որում նոքօք ցուցանի ներգործութիւն և կրաւորութիւն, հասարակութիւն, և չէզո քութիւն, որք են որպիսութիւնք ինչ բայից : 'ի հին փերթին :

Տրամաշիւղ · շուղի · իւ · ից · իւք : || կողմնա շիւղ, այն է կողմնական գիծ շիւղ · և ը այսմ տրամաշիւղս կոչեմք զգիծսն, որք երկու երկու ձգին 'ի չորեսին կողմանս □ քառանկեան, զոր օրինակ :

Տրամախիտ : (Նախդրիւ հոլովի ·) || ծագի 'ի բառէս՝ փրամ · որ է ամուր · կամ հաստա-տուն · ուստի նշնկի սովոր ամրախիտն · կամ պնդակազմ · կամ սերտ, և կարծր : ռամկ · խիտփ ամուր · կամ սըխ, նայինփ : ըստ այնմ 'ի Գիրս ծննդոց · հասն ը · գլ · ժզ · Դար ձայց զտրամախիտ տեղին 'ի ծովակ իմն ահարկու, ի փոխարկեալ :

Տրամախոհ · ի · իւ · ից · իւք : || հաստատամ խորհ · կամ նա՝ որ ոչէ յեղյեղուկ խորհր դով · և կամ ճշմարտախոհ : Իսկ մերթ՝ միա խոհ · կամ բազմախոհ · կամ խոհական · կամ միտավարժ · կամ միացի : ըստ այնմ 'ի հին պատմագիրս · Ժողովէ մանկունս տրամա-խոհս, քաջաբանս :

Տրամախոհական · ի · աւ · աց · օք : || այն ամ, որ վերաբերի առ տրամախոհութիւն · կամ որ 'ի տրամախոհութենէ լինի :

Տրամախոհութիւն · թեան : || խորհուրդ մը տաց · կամ ներտրամադրեալ բան · կամ մը տախոհութիւն · և կամ խոհականութիւն · և ըստ այսմ իմանի, մինչ ասի, յայտնել ըզ տրամախոհութիւն մտաց · կամ զերլուլ 'ի բազում զտրամախոհութիւն իւր · և այլն : 'ի հին փեր թին : Դարձեալ՝ է սա մին 'ի ներքին ըզ գայութեանց, որ ըմբռնէ և որոշէ զմտաւո-ւոր պիտաւորութիւնս, ի զբանս եւ զուգէլս 'ի յերևակայեալ տեսակաց, այս է՝ պատ կերաց · որպիսիքն են որքա · միատակարու թիւն և օգտակարութիւն · անիրաւութիւն և բարերարութիւն · բարեկամութիւն և թշնա-մութիւն · և այլն : Արդ՝ այս զգայութիւն թէ յանբանս, և թէ 'ի բանականս առ հասարակ կոչի կարծողական, կամ ը հնոց կարծիք · իսկ նոյնն 'ի մարդն մանաւա-

րապէս անուանի տրամախոհութիւն · ըստ որում վճարէ զգործ իւր 'ի մարդիկ մտա խոհութեամբ · կամ մակաբերութեամբ իմիք · վա որոյ և անուանի բան մասնաւոր : Բայց ոմանք մանաւանդ 'ի հնոց՝ տարբերին ըզ տրամախոհութիւն 'ի կարծողական զօրու թենէ դնելով զնա ամենևին այլ զգայու-թիւն · և պաշտօն տան նմա բաղադրել ը միմեանս զերևակայեալ պատկերսն՝ ելու զանելով 'ի նոցանէ զերրորդ ինչ, ո՞ 'ի պատկերէ լերին՝ և ոսկւոյ կերպացուցա նել զոսկեղէն լեառն · և այլն : 'ի Փիլոն պատ ճէի անյաղթին · և Թէքին ուղղեփի :

Տրամակայեմ · եցի · եա · եալ : (Ներգործ ·) || շուրջ կացուցանել · կամ արկանել 'ի կողմն իւրք · կամ զետեղել · և կամ կայացուցանել : Իսկ մերթ՝ բաղկացուցանել · կամ տրամա դրել · և կամ իմիք զգածել :

Տրամակայիմ · եցայ · եա · իլ : (Չէզոք ·) || կալ շուրջ զիմիք · կամ անկանիլ 'ի կողմն իւիք · կամ զետեղիլ · կամ կայանալ · և ըստ այսմ ասի՝ տրամակայիլ առ երկրաւ իմիք · կամ 'ի մէջ այսր և այնր կողմարաց · կամ ծո վուց · և այլն : 'ի Գիրս պատճէնի անյաղթին : Իսկ մերթ բաղկանալ · կամ տրամադրիլ · կամ զգածիլ իմիք · և ըստ այսմ ասի զբա ռից՝ տրամակայիլ յօդիւ · կամ զմակբայու թեց՝ նախ բայից՝ տրամակայիլ մակբայիւ · և այլն : Երբեմն և մածանիլ շուրջ զիմիք · կամ վերադրիլ · կամ վերաբերիլ · և կամ պատ կանիլ : 'ի հին փերթին :

Տրամակայութիւն · թեան : || շրջակացութիւն · կամ անկումն 'ի կողմն իւրք · կամ զետե-ղումն · և կամ կայացումն : Իսկ մերթ՝ բաղ կացութիւն · կամ տրամադրութիւն · և կամ զգա ծումն իմիք :

Տրամանդիկան · կամ տրամանկիւն · եան · եամբ · եանց · եամբք : || անկիւն տրամագծից · կամ տրամագիծ · և կամ այն, որ զետեղեալ կայ 'ի տրամաչափ անկիւնսն · որպիսիք են համառօտ նախադասութիւն եդեալք խո-տորնակի յանկիւնս փիլիսոփայական ա-պիւսակաց : 'ի Գիրս պատճէնի անյաղթին :

Տրամանդիկնի · կամ տրամանկիւնի : (Նախ դրիւ հոլովի ·) || բաղկացեալ 'ի տրամանկեան-կեանց · կամ զետեղեալ 'ի տրամանկեան · կամ ունող զտրամաչափ անկիւնս · և կամ տրամանկիւն : 'ի Գիրս պատճէնի անյաղթին : Իսկ մերթ՝ նշանակէ զվերաբերեալն առ տրամանկիւնս, կամ առ տրամագիծս :

Տրամանկիւն : || տե՛ս զՏրամանդիկան :

Տրամանկիւնի : || տե՛ս զՏրամանդիկնի :

Տրամաչափ : || նոյն է ընդ բառիս՝ տրամա գիծ ըստ ամ նշանակութեանց : 'ի Եւկլիդեայ պարբերութի :

Տրամաչափութիւն · թեան : || տե՛ս զՏրամա-գծութիւն :

Տրամատական · ի · աւ · աց · օք : || տարրորո-շական · կամ բաժանական · կամ անջատական : 'ի Գիրս պատճէնի անյաղթին :

Տրամատեմ · եցի · եա · եալ : (Ներգործակ ·) || տարորոշել · կամ 'ի բաց անջատել · կամ

բաժանել. և կամ զատանել. ռամկօրէն ճէրմէկէ բօժնել. կամ ղոփել:

Տրամատութիւն. թեան: || տարորոշութիւն, կմ 'ի բաց անջատումն. կմ բաժանումն. և կմ զատումն:

Տրամորոշեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || Նոյն է ընդ բայիս տրամատել. ¶ այնմ Լամբրօն. Տրամորոշին յերիս հատուածս. 'ի հոգի. 'ի բան. և 'ի խօսս:

Տրապիզ. պիզի. աւ. աց. օք: || է բառ յունական. և նշանակէ զսեղանն՝ որպիսի և իցէ: 'Ի հին ձեռագիրս:

Տրապիզոն: (Նախդրիւ հոլովի.) || է բառ յունաց ելեալ 'ի բառէն տրապիզ. և նըշանակէ զսեղանաւորն. ռամկ. սառաֆ. ¶ այնմ Լամբրօն. Զաւանդ արծաթոյ տն իւրոյ ոչ ծրարել 'ի վարշամակի, այլ տալ 'ի տրապիզոնս:

Տրգալ: || տես զՏրգալ: 'Ի հին. Ֆէրաղան:

Տրդատունի. հւոյ. ւով: || կին տրդատայ արքային հայոց. որ է աշխէն տիկինն:

Տրեխ. ի. իւ. ից. իւք. կմ օք: || կօշիկ, կմ հողաթափ գեղջկաց, որ է հատոր ինչ կաշւոյ ձևեալ ըստ ներբանից ոտից, զոր ագանին խրացիւք, որք են կապք նց: ռամկ. չարըխ. ըստ այնմ Շնորհալւոյն. Լսեմք զոմանց՝ եթէ հասարակաց զգեստուք, և աղտեղեալ տրեխօք ելանեն 'ի բեմն սբ:

Տրեխաւոր. ի. աւ. աց. օք: || ունօղ ըզ տրեխ. կմ ագուցեալ տրեխիւք. և կամ կօշկաւոր:

Տրեխաւորեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || տրեխաւոր առնել. կմ տրեխս ագուցանել. և կմ կօշկաւորել: ռամկ. չարըխ հագցնել: 'Ի հին ձեռագիրս:

Տրեմ: || Ծագի սա 'ի բառէս տուր. տալըր ըելն, յանձնանես տուր. և նշանակէ տալ: Բայց սա 'ի գործածի 'ի բաղադրութիւնս բառից, որգոն, փառատրել. փոխատրել. վարձատրել. և այլն: Իսկ միայնակ կամ ոչ երբէք վարի. և կմ հաշիւ ուրեք կրաւորականն իբրև զգիմաւորկ. այսպէս. տրի նմա. տրիւր աղքատաց. և այլն: ռամկ. փրօ[illegible]էլ:

Տրիբուն: (Նախդրիւ հոլովի.) || է բառ լատինացւոց. որ ըստ նց կոչի թռիպունուս, և նշանակէ ատենակալ. կմ ժողովրդապետ. կմ մագիստրոս. և կմ կոմս, որ է արքունի գործակալ: Կէորճի պարոն: և 'Ի հին ձեռագիրս:

Տրիբունական. ի. աւ. աց. օք: || այն, որ պատկանի ատենակալի. կմ ժողովրդապետական. կմ մագիստրական. և կամ բդեշխական:

Տրիտուր: (Նախդրիւ հոլովի.) || տուրք տուեալ փոխանակ ընկալեալ տրոց. կմ դարձ փոխարինի. կմ փոխադարձ հատուցումն. և կմ փոխարէն. տաճկերէն ճաւապլըք: Սաղմ. 115. 12:

Տրմլութիւն. թեան: || տրմուղ գոլն. կմ անվարժութիւն գրատառ. զորմէ լինադոյն տեսցես 'ի բառն տրմուղ:

Տրմուխ. մխոյ. ով. խց. կմ աւ. աց. օք: || է մեղեխաւոր բազմաժամանի գործիք ինչ պարախըզպանաց, որով հարթեալ զերեսս հերկեցելոյ երկրին մաքրեն 'ի խճից:

Տրմուղ. տրմղի. իւ. ից. իւք: կմ աւ. աց. օք: || Ծագի 'ի մասնկանէս՝ տըր. կմ տր, որ է՝ ան, և 'ի բառէս ման. ուսոյի նշանակէ անմուղ. յը ոչ մտեալ 'ի գործ ինչ. կմ ոչ վարեալ 'ի յաշխատանս. և կմ անկիրթ 'ի գործել. և ըստ այսմ մասնաւորապէս տրմուղ կոչին գրատառք, որք յաղագս անուրահաս լինելոյ չևևս են սովորեալք 'ի մտանել ընդ բեռամբ. կմ նորահաս անասունք, որք տակաւին անսովորք են 'ի քարշել զլուծ: Երեմ. 31. 18: Յն ուղղ: և 'Ի հին ձեռագիրս: Այսպէս տրմուղ ասի պարանոցն անասնոյ, որ ոչ է կիրթ 'ի մտանել ընդ լծով. և ըստ այսմ ասի 'ի ճառս ինչ. Արա 'ի ներքոյ լծոյ զտրմուղ վիզս. ք արկ կմ մտօ 'ի ներքոյ, և այլն: Բայց երբեմն վարի սա կրկնաւածով. այսպէս, տրմուղ կրմուղ, և զնոյն նշանակէ. ըստ այնմ Կէորգի Եղէմ. ժը. Հեծեալ է 'ի վր յաւանակի տրմղի կրմղի: Եւ փոքր մի զկնի ասի՝ Թագաւորն Յն նստաւ 'ի վր տրմղի կրմղի յաւանակի: Եւ այս է ոճ խմն, զոր և յայլ բազում բառս գտանեմք. զոր օրինակ, ասպառասպուռ, աղխամաղխ. խուժամուժ. ժանտաժուտ. և այլն: որպիսի են բազումք և յաշխարհաբառ լեզուէս. որգոն, հացուցմաց, ժախումախ. սուրմուր. և այլն:

Տրոհ. ի. իւ. ից. իւք: || տրոհեալ. կամ տրոշ. կմ զատ. և կամ մեկուսի. 'Ի հին. Ֆէրաղանուէ:

Տրոհական. ի. աւ. աց. օք: || անջատական. կմ բաժանական. և կմ զատական: Յն ուղղ: ըստ այսմ տրոհական կոչի տեսակ ինչ շաղկապի, ըստ որում 'ի շաղկապելն զբառս, կմ զբանս տրկանէ 'ի մէջ զտարոհումն, զոր օրինակ՝ կամ արարէք զծառն բարի, և զպտուղ նր բարի. կամ արարէք զծառն չար, և զպտուղ նր չար:

Տրոհեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || բաժանել. կմ անջատել. կմ որոշել. կմ զատանել. և կմ 'ի բաց մեկնել: և ¶ այսմ ասի՝ տրոհել յինքեանս. կմ զմիննն 'ի միւսոյն. և կմ զցաւն յանձնէ. և այլն: ռամկ. բօժնել. կմ ղոփել: Խորէն. բ. գլ. 59: Նարեկ. խը. և կբ:

Տրոհիմ. եցայ. եաց. իլ: (Ձայնակր.) || բաժանիլ. կմ անջատիլ. կմ որոշիլ. կմ զատանիլ. կմ մեկնիլ. և կամ հրաժարիլ: ռամկ. բօժնուիլ. կմ ղոփուիլ: Նարեկ. ժդ. իդ. և հը:

Տրոհիչ. հչի. աւ. աց. օք: || բաժանօղ. կմ որոշիչ. կմ զատիչ: ռամկ. բօժնօղ:

Տրոհութիւն. թեան: || տրոհումն. կմ բաժանումն. կմ անջատումն. կմ որոշումն. և կմ զատումն: Իսկ ըստ քերականաց է սա միննն յերից պարագայից վերծանութեան, որք կոչին ենթադասութիւն. առոգանու

թի․ և տրոհութիւն․ արդ՝ ըստ այսմ տրո հութիւն է տրոհեստաւոր բաժանումն բա ռից, կամ բանից, զոր պարտի առնել վեր ծանողն պէսպէս նշանաւութբ՝ ի ձեռն զա նազան կէտադրութեանց ։ 'ի հին քերակա_ նութէ ։

Տրոհումն․ ման․ մամբ․ մանց․ ամբք ։ ‖ Նոյն է ընդ վերնոյն ։

Տրորեմ․ եցի․ եա․ ել ։ (Ներգործ․) ‖ յաղ կել․ ք ճմլելով, կամ լուսելով, և կամ ախ_ տացուցանելով քայ քայել․ կամ ապակա նել զլին․ որ՝ զմիս․ կամ զմարմին․ կամ ըղ վէրս․ և այլն ։ ըստ այնմ Մծբն․ Է․ Ջեռն ջեռնուցու յանդամս նց․ և տրորեցին վէրք խոցեանց ։ Եւ 'ի հին պարփոգիրս ա_ սի՝ Եւ տրորեալ գոգոց նը, 'ի վայր քա մեալ մզէին ։ ըստ այսմ և 'ի ճառս ինչ․ ա_ սի․ Բուրեաց անուշահոտութի 'ի նախ հատեալ և տրորեալ մարմնոյն ։ Բայց ու րեք ուրեք 'ի գործ ածեն զսա ոմանք փո խանակ շաղախելոյ․ ըստ այնմ 'ի գիրս ծո ղովէ․ ճառն․ ա․ գ․ ը․ Որքան ոք առաւել լռեանց զանօթ իւր 'ի ճախճիլս, այնքան առաւել տրորէ 'ի ցեխն ։

Տրուպ․ տրպի․ աւ․ աց․ օք ։ ‖ յոյժ փա_ նաքի․ կամ գծուծ․ կամ նուաստ․ կամ չնչին․ և կամ յեանեալ․ և ըստ այսմ ասի՝ տրուպ լինել բազմութե լոյսք․ կամ տրուպ այր․ տրուպ կենդանի․ և այլն ։ ռամկ․ ցած ։ 1․ Կորն․ 15․ 9 ։ Եփես․ 3․ 8 ։ Նարեկ․ ժե ։ Եւ 'ի գիրս գրիգորի ածաբանին ասի․ փղձունք մեք, և 'ի տրպաց եկեալք ։

Տրոփ․ ի․ իւ․ ից․ իւք ։ ‖ տես զՏրոփումն ։

Տրոփական․ ի․ աւ․ աց․ օք ։ ‖ Թնդական․ և ընդոստական․ և կամ դղրդական․ ըստ այնմ 'ի հին պարփոգ․ 'ի տրոփական գոփ_ մանէ ատոցն թնդեալ տանցն՝ փլուցեալ 'ի վայր անկանէր ։

Տրոփեմ․ եցի․ եա․ ել ։ (չէզոք․) ‖ Թնդ_ մամբ ստանել․ կամ ստնլով դղրդիլ․ որ հանդիպի երկրի՝ յորժամ յանկարծ վա_ զեն, կամ կաքաւեն 'ի լՐնր ։ Եւ կամ որ_ ափ, մինչ յանկարծ երկնչի․ կամ զայլ նո րագոյն անցս կրէ ։ ռամկ․ տըրըփ ընել․ կամ տօփ անել․ կամ թօխթօրօ հանել ։

Տրոփիւն ։ (Նախագրիւ հոլովլ․) ‖ տես 'ի ներքոյ զՏրոփումն ։

Տրոփումն․ փման․ մամբ․ մանց․ մամբք ։ ‖ Թնդմամբ ստումն․ կամ ընդոստ դղրդ_ դիւն․ ռամկ․ տըրըփ․ կամ տօփ․ կամ թօխթօ_ րօց ։ ըստ այնմ Նարեկ․ ղգ․ Աղաղակեցին բերկրալիր բերանով 'ի ծափս ձեռին, 'ի տրոփումն կայթելոյ կաքաւման ոտին ։

Տրպագոյն․ գունի․ իւ․ ից․ օք ։ ‖ առաւել տրուպ․ կամ նուաստագոյն, կամ կրսերա գոյն․ և կամ յոյժ յեանեալ․ 'ի գիրս դաւթի անյաղթին ։

Տրպանամ․ ացայ․ ացեր․ ալ ։ (ընդմիջ․) ‖ տրուպ լինել․ կամ նուաստանալ․ կամ սար_ կանալ․ և կամ յեանօրդ լինել ։

Տրպութիւն․ թեան ։ ‖ Նուաստութի․ կամ կրտսերութի․ և կամ յեանորդութի ։

Տրտմագին ։ (Նախագրիւ հոլովլ․) ‖ տաղ ճել տրտում․ կամ տրտմագոյն․ և կամ ախ րագոյն ։ Աղաւ․ 26․ 23 ։ և Յճ ոսկի ։

Տրտմագոյն․ գունի․ իւ․ ից․ իւք ։ ‖ Նոյն է ընդ վերնոյն ։ Իւանի․ 1․ 10 ։

Տրտմագնեաց․ զնեցի․ իւ․ ից․ օք ։ ‖ զզե_ ցող զանձամբ զտրտմութի․ կամ զգածեալ տրտմութբ․ և կամ տրտմեալ և ախրեալ ։ Յճ ոսկի ։ և 'ի շարականոցն ։ Իսկ մերթ՝ տրտմալի․ կամ տրտմական․ և կամ տրտմարար ։ Ը այնմ 'ի շարականոցն․ Աղաղակեցեր զմարդն 'ի տրտ մագնեաց փայտէն ։

Տրտմագնեստ ։ ‖ Նոյն է ընդ վերնոյն ։

Տրտմական․ ի․ աւ․ աց․ օք ։ ‖ Թախծական․ կամ ախրական․ և կամ այն ժամ, որ վերա_ բերի առ տրտմութիւն ։ Իսկ մերթ՝ տրտ_ մող․ կամ տրտմեալ․ և կամ տրտմագնեաց․ ըստ այնմ 'ի Շարականոցն․ Ջձեզ տաս_ քեաց հայրն փառաց՝ հրաւիրատուք տրտ մականաց ։

Տրտմակից․ կցի․ աւ․ կամ իւ․ աց․ օք ։ ‖ կը ցորդ ումեք 'ի տրտմութե, կամ ընկեր 'ի տրտմելն․ և կամ 'ի միասին ախրող ։ Եսայ․ 51․ 19 ։ Յճ ոսկի ։ և Լամբրոն ։

Տրտմակցորդ ։ (Նախագրիւ հոլովլ․) ‖ տես 'ի ներքոյ զՏրտմահաղորդ ։

Տրտմահաղորդ ։ (Նախագրիւ հոլովլ․) ‖ տրտմակից․ կամ ախչակից ։ Իսկ մերթ մա ծեալ տրտմութբ․ կամ լցեալ ախրանօք․ կամ տրտմագին․ և կամ տրտմագնեաց․ և Ը այսմ ասի՝ տրտմահաղորդ չարչարանք ։ 'ի Շարականոցն ։

Տրտմարար․ ի․ աւ․ աց․ օք ։ ‖ տրտում առ նող․ կամ տրտմեցուցիչ․ և կամ ախրեցուցիչ ։ Յճ ոսկի ։

Տրտմեցուցանեմ․ եցուցի․ եցո․ անել ։ (ան ցողակ․) ‖ տրտում առնել․ կամ ախրեցու ցանել․ և կամ զգածել սգով ։ 2․ Կորն․ 2․ 2․ և 5 ։ Եփես․ 4․ 30 ։

Տրտմեցուցիչ․ ցչի․ աւ․ աց․ օք ։ ‖ տես ըղ Տրտմարար ։

Տրտմիմ․ եցայ․ եաց․ իլ ։ (Հայցական․) ‖ տը տում լինել․ կամ ախրիլ․ կամ թախծիլ․ և կամ սգով զգածիլ ։ ռամկ․ նեղ քաշել ։ Ծնն․ 4․ 5 ։ Մարկ․ 6․ 26 ։ 2․ Կորն․ 2․ 4 ։

Տրտմութիւն․ թեան ։ ‖ ախրութի․ կամ թախ ծումն․ և կամ զգածումն սգովք և ցաւօք ։ Ծննդ․ 3․ 16․ և 17 ։ 2․ Կորն․ 2․ 1․ և 3 ։

Տրտնջեմ․ եցի․ եա․ ել ։ (չէզոք․) ‖ գան_ գատողական բանիւ և զայրագին սրտիւ մեղադրել ումեք, որպէս թէ անիրաւէր յանձին իւր․ և այս թէ լինիցի առան ձին․ և թէ 'ի լուր ականջաց այլոց ։ Ուս տի տարբերի 'ի գանգատելոյ, 'ի բամբա սելոյ․ և յամբաստանելոյ․ զի գանգա տելն է դատախազել արտիւ ցուցանել այ լոց զանիրաւութիւն ուրուք՝ արարեալ իւ քեան ։ Բամբասելն է ասել խօսել այլոց զչարիս կամ զմեղս ուրուք՝ երբ յայտնե լով ։ Իսկ ամբաստանելն է չարախօսել զումեքէ յատենի մեծաց առ 'ի տանել նը մա զպատուհաս յատենէն իւրմէ ։ Եւ...

16. 2. և 8: Թուոց. 16. 41: Մատթ. 20. 11:

Տրտնջիւն: (Նախադրիւ հոլովի.) || տե՛ս ընդ Տրտունջ՝ ըստ առաջին նշանակութեան: Թուոց. 17. 10:

Տրտնջողութիւն. թեան: || տրտնջիւն. կամ տրտնջումն: 'Ի վերս հարց. ժ:

Տրտնջումն. ջման. ման. մանց. մամբք: || Նոյն է ընդ բառին Տրտնջիւն:

Տրտնջօղ. ողի. իւ. աց. օք: || ամբօղ զտրտունջս զումեքէ. կամ ունօղ զբարս տրտնջելոյ: Յուդայի. 16:

Տրտում: (Նախադրիւ հոլովի.) || տրտմեալ. կամ թախծեալ. կամ տխուր. կամ զգածեալ սգովք, և ցաւովք. Ծննդ. 40. 7: Սաղմ. 41. 6:

Տրտունջ: (Նախադրիւ հոլովի.) || տրտնջումն. կամ տրտնջիւն, որ է գանգատողական բանիւ և գանձացեալ սրտիւ արտաբերեալ մեղադրութիւն, զոր խօսի ոք զումեքէ յաղագս զրկելոյ նո՛ զինքն. այլ թէ ոչ տարբերի 'ի գանգատանաց, 'ի բամբասանաց, և յամբաստանութէ, տե՛ս 'ի բայն տրտնջել: Ելից. 16. 8: Թուոց. 14. 27. և 17. 5: Իսկ մերթ նշանակէ տրտնջօղ. և ը այսմ ընդ բայի շարակցի այսպէս. տրտունջ լինիլ. և նշանակէ տրտնջել. ըստ այնմ. 1. Մակ. 11. 39. Զօրքն նմ տրտունջ են զդեմետրեայ. այն որ տրտնջեն: Եւ Կիւրղի Եղէնի. ժդ. ասի, Մի՛ ոք տրտունջ լիցի զտանուտերէն. այն մի՛ ոք տրտնջեսցէ:

Տրցակ. ի. աւ. աց. օք: || խուրձ, այն կապեալ բազմութիւն եղեգանց, գաւազանաց, նետից. և այլոց նմանեաց. ռամկ. փէտփէ ղամիշի, կամ չըպուխի, կամ նէտի, ըստ այնմ 'ի վերս հարց. իզ. Առի տրցակ մի եղէգն. կամ եղեգան: Եւ զկնի ասի. Զոգան ժողովեցին զեղեգունս, և արարին տրցակ:

Տրցակեմ. եցի. եա՛. ել: (Ներգործակ.) || տրցակ առնել, կամ կապել 'ի խուրձս զեղեգունս, կամ զգաւազանս. ռամկ. փէտփէ կաղէլ. կամ փէտփէլէմէք ընէլ. և ըստ այսմ ասի, Յայսմաւուրս. Տրցակեալ զեղէգն՝ եդին 'ի մնարան մակարայ:

Տրփամ. ացայ. փեա՛. ալ: (Ընդմիջակ.) || տարփեալ. կամ ասփեալ. որ է ցանկալ: Խորէն. ի. գլ. 60: Եւ 'ի հին պատմութիւնս, ասէ, Համբաւ ցանկութեան անուան տարփեալ լինէր: Դարձեալ, նշանակէ՝ տկարաբար և երբեմն զմեռեալ առնել զառաքինութիւն չնչոյ. որպէս առնեն նոքա, որք կիսամեռք են: ռամկօր. եա՛ փէչսլ. ըստ այնմ Յայսմաւուրս. Մեռայն տարփեալ չնչումն. և այլ ոչ զայր 'ի նմա նշան կենդանութեան:

Տրփական: Վ. տե՛ս զՏռփական:

Տ Ւ

Տւքնիմ. եցայ. եա՛ց. իլ: (Ձայնակրաւ.) || տքուն լինիլ. այն ոչ ննջել. կամ արթուն կալ. և կամ հսկել, առ 'ի պահպանել զինչ. և կամ առ 'ի վճարել զգործ ինչ: ռամկօրէն ուեքընաուլ. կամ արթուն կենալ: 2. Թագ. 12. 21: Սաղմ. 101. 8: և 126. 1: Եփես. 6. 18: Եւ յայտմանէ առեալ տքնիլ ասի ըզ գաստ կալն. կամ զգուշանալ. կամ մեծապէս հոգալ. կամ ժրաջան վաստակել. և կամ ոգւովք չափ պնդել զհետ իրիք՝ ոչ խնայելով 'ի ջանս, և ոչ 'ի քունս: ռամկ. այքը կենալ. կամ հոգ տանիլ. կամ խիստ չալըշմիշ ըլլալ: Առակ. 8. 34: Իմաստ. 6. 16: Եբր. 13. 18:

Տքնութիւն. թեան: || տքուն գոլն. կամ արթնութիւն. և կամ հսկումն: 2. Կորնթ. 11. 27: Իսկ մերթ՝ զգաստութիւն. կամ զգուշութիւն. կամ փոյթ. կամ վաստակ. և կամ ժրաջան աշխատութիւն. ռամկ. ջահտ. ըստ այնմ Խորէն. ա. գլ. 5. Շնորհակալ եմ մերոյս տքնութեանց և ջանից լինիցիս ով ուսումնասէր դու:

Տքուն: (Նախադրիւ հոլովի.) || անքուն. այն նա՝ որ ոչ մտանէ 'ի քուն. կամ արթուն. կամ զգաստ: ռամկօրէն ուեքընացող. կամ այքը:

Տ Օ

Տօթ. ոյ. ով. ոց. ովք: || տապ ամառային, որ է սաստիկ ջերմութիւն արեգական՝ տիրեալ օդոյ, որ զկենդանիս՝ և զբոյսս տապացուցանէ. ռամկօրէն շոգ. կամ տնըռանըն փափ: Դանի. 3. 67: Մատթ. 20. 12: Յայտ. 7. 16: Եւ ներգոյականին սովոր լինի 'ի տօթի. որպէս և այլոց բազմաց անուանց, որք անկանին ընդ հոլովմամբս՝ Աթոռ, աթոռոյ, որդոն, 'ի գըբի. 'ի թղթի. 'ի տղմի. 'ի մարմնի. և այլն: Յոբ. 24. 24: Երեմ. 36. 30: Բարուք. 2. 25:

Տօթագին: (Նախադրիւ հոլովի.) || սաստիկ զօրացեալ տօթով. կամ այն՝ յորում սաստկացեալ է տօթն, և կամ յոյժ տապացեալ. և ըստ այսմ ասի. տօթագին ժամ. օր, լոյս. տապ. կամ տեղի. և այլն: ռամկօր. խիստ շոգ. կամ խիստ փափ: Եսայ. 18. 4: և Շնորհալին: Իսկ մերթ վարի երբեմն զմակբայ. և նշանակէ սաստիկ տօթով. կամ մեծաւ տապով. և ըստ այսմ ասի, տօթագին չնչել:

Տօթաժամ. ու. ու. ուց. ուք: || ժամ, յորում է տօթ. կամ ժամանակ, յորում տիրեալ ունի զօդս տապ արեգական, որպէս որ է հասարակ օրն յամառան: ռամկօրէն շողան տաքէնը: 2. Թագ. 4. 5: Մծբն. ժ: և 'ի վերս հարց. իզ:

Տօթախարշ: (Նախադրիւ հոլովի.) || խարշեալ 'ի տօթոյ. կամ կիզեալ 'ի տապոյ ա-

րեգական ։ ռամկօրէն շողշողուն ։ 'Ի Հար. հարց. ի՛ :

Տօթանամ. ացայ. ացիր. անալ ։ (ընդ միջ.) || տօթով ջերանիլ. կմ՛ ամառնային տա_ պով պաշարիլ. և կմ՛ տապանալ յամարայ նի ։ ռամկ. շոգիլ ։ Աշոտ. 25. 13 ։

Տօմար ։ || տե՛ս զՏումար ։ 'Ի շարակնոց ։

Տօմարագէտ ։ || տե՛ս զՏումարագէտ ։

Տօմարագիտական ։ || տե՛ս զՏումարագի_ տական ։

Տօմարական ։ || տե՛ս զՏումարական ։

Տօն. ի. իւ. ից. իւք ։ || խնճոյք, կմ՛ հանդէս, որ է ցնծալից պաշտամունք հասարակաց, զոր կատարեն խմբեալ բազմութիւն ժո_ ղովրդեան տալով գործոյ ։ ռամկօր. գինեթ. և այս ընդհանրապէս առեալ ասի զամե_ նայն խնճոյից. որպիսիք են հանդէսք թա տերաց. կամ տէաւրանաց. խրախճա_ նաց. և այլոց պէսպէս պաշտամանց ։ 2. Մտ. 6. 7 ։ Ովբ. 1. հոգ. լա ։ ըստ այսմ է և 'Ի Հար. հարց. ժա. ուր ասի. Արամ_ ցես մեզ տօն 'ի գալուստ ծերոյս. ցի խը րախութիւն սեղանոյ ։ ռամկօրէն. մէճլիս ։ Իսկ մասնաւորապէս առեալ ասի զըն_ բաղան հանդիսից. որպիսիք են տօնա_ խմբութիւնքն, զորս կատարեմք 'ի պատիւ Ա. յ. և կամ սրբոց նորա ։ ռամկօրէն եւ՛ փօն ։ Ելից. 5. 1 ։ և 10. 9 ։ Ղեւտ. 23. 2 ։ Կո_ ղոս. 2. 16 ։

Տօնախմբեմ. եցի. եա՛. ել ։ (Ներգործակ.) || հանդիսիւ կատարել զտօն. և կմ՛ տօ_ նել. և ըստ այսմ ասի, տօնախմբել զօր, կմ՛ զյիշատակ ուրուք. և կմ՛ զտօն ինչ ։ ռամկ. փօնել ։ Աշոտ. և 'Ի շարակնոց ։

Տօնախմբու. ոէի. աւ. աց. օք ։ || տօնախմ_ բօղ. կմ՛ տօնօղ ։ Ընորհալին ։

Տօնախմբութիւն. թեան ։ || մեծաշուք հան_ դէս. կմ՛ հանդիսաւոր խնճոյք. և կմ՛ հան դիսական տօն ։ Լամբրօն ։

Տօնական. ի. աւ. աց. օք ։ || տօնախմբա_ կան. կմ՛ խնճոյական. և կմ՛ հանդիսա_ կան. և ըստ այսմ ասի՛ տօնական աւուրք ։ Աշոտ ։

Տօնակից. կցի. աւ. կմ՛ իւ. աց. օք ։ || կցորդ_ ութիւն 'ի տօնս. կմ՛ ընկեր 'ի տօնելն. կմ՛ 'ի միասին տօնախմբօղ. և կմ՛ խրախակից ։ Իմաստ. 19. 15 ։

Տօնահրաման ։ (Նախադրիւ հոլովի.) || հր_ րաման տօնի. կամ պատուէր տօնախմ_ բելոյ ։ Իսկ մերթ նա, որ հրամայէ առ_ նել զտօնս. կամ հրամայեալ 'ի տօնել. և կամ այն, յորում լինի հրամայումն տօ նելոյ. և ըստ այսմ ասի. տօնահրաման կարգ ։ Աշոտ ։

Տօնասէր. սիրի. աւ. աց. օք ։ || սիրօղ տօ_ նից, կմ՛ տօնախմբութեան ։

Տօնավաճառ. ի. աւ. աց. օք ։ || հանդիսա_ ւոր ժողով վաճառականաց՝ գումարեալ ընդ ժամանակս ժամանակս 'ի հրապա_ րակս քաղաքաց, կամ 'ի սահմանս նոցա. որք զբազմազան ապրանս արկեալ 'ի վաճառ՝ պարապին առուրեւտուրութեանց,

անդորր և անաշխատ ցնծալով 'ի վաճառս իւրեանց. և իբրև տօնախմբելով. վա սորոյ և հանդէսն նոցա կոչեցաւ տօնա_ վաճառ, անուանեալ 'ի յունաց՝ պանեկի րիս, այսինքն ամենախռնումն ։ յորմէ և տա ճիկք յորջորջեն զայն՝ բանայիր ։ Իմաստ. 15. 12 ։

Տօնացոյց. ցուցի. իւ. ից. օք ։ || գիրք, որ ցուցանէ զկատարումն տօնից ըստ կարգի ամսոց, կմ՛ աւուրց ։

Տօնելի. ելւոյ. եաւ. եաց. եօք ։ || տօնիւ պատուելի. կմ՛ արժանի տօնելոյ. կամ հանդիսաւոր. կմ՛ երևելի. կմ՛ գովելի. և կամ սք. և ըստ այսմ ասի՛ այր տօ_ նելի. կմ՛ տեսակ տօնելի. և այլն ։ Նարեկ. խբ. և կա ։

Տօնեմ. եցի. եա՛. ել ։ (Ներգործական.) || տօնիւ պատուել. կամ տօնս կատարել ։ և կամ տօնախմբել ։ ռամկօր. եւս փօնել ։ Ելից. 12. 14 ։ Ղեւտ. 23. 39 ։

Տօսախ. ի. իւ. ից. իւք ։ || է տունկ ինչ մշտա կանաչ, և սաղարթախիտ. որ ունի եղ կեւլ կարծր և ապիտակ. իսկ զփայտ դեղ նագոյն, խստանիւթ և ծանր յոյժ, մինչ զի ընդ անկանիլ նորա 'ի ջուր, վաղվա_ ղակի սուզանի 'ի յատակս ։ Բերէ զտե_ րև թաւ, կարծր՝ մանր, և իբր բակլայ. աձև՝ նման մրտենւոյ. բայց է ծանրա_ հոտ. վասն որոյ և հալածանի անկոյն սորա է մխասակար ։ Արդ՝ սորա երկու են տե սակք, մինն ամեցեալ՝ լինի իբրև եղ_ թուփ. և սորա փայտն է նուրբ, և իբր անպիտան. իսկ միւսն լինի ծառ. որոյ փայտն է անփուտ և մեծագին. յոր մէ շինեն զպէսպէս յօրինուածս՝ քանդա կագործս, կմ՛ Ճախարակեայս. և այլն ։ ռամկ. չիմշիր ։ Եսայ. 41. 19 ։ Խորէն. յաշխար հագրութեան ։ և Աշոտ ։ Դարձեալ՝ տօսախ կոչի և սակ փայտն սորա, յորմէ շի նեն ինչ. զոր և ռամկօրէն չիմ_ շիր կոչեմք ։ 'Ի Գիրս գաղ_ թի անդաղթին ։

Ր

ՐԷ տառ բաղաձայն, անուանեալ՝ րէ. որ 'ի մէջ բառից յաճախ 'ի գործ ածի. բայց 'ի սկզբունս ոչ հազիւ երբէք. վն որոյ և սակաւք են 'ի մեզ բառք սկզբնաւորեալք րէ տառիւ. և որք ենն, կմ այլազգականք են. և կմ առ հարկի բռնադատութբ հանեալք յայլոց բառից. ոճ 'ի բառէն՝ երամ, րամ. և յանուանէս՝ խրախ, րախ. և այլն. և յայս միտս ասի 'ի Յն ութէն. Րէն՝ տառ չէ բանի սկսուած, այլ ակամայ բռնաբարած:

Դարձեալ տառս այս կոչի՝ 'ի քերականաց՝ կիսաձայն. զի 'ի միայնակ արտաբերելն կարէ ելուզանել զթերատ և զնուազ հնչումն ինչ. որպիսի է և տառս՝ շ. կամ ս. և այլն: Եւ ևս յարաճեմական առոգանութե կոչի ըստ հազագին սուկ, ք նուրբ. զի յարտաբերելն ելուզանէ զհնչումն բարակ. ոճ և սոքա. գ. ծ. ն. և այլն:

Դարձեալ կոչի ըծորդ, զի ըծակցի ձայնիւ ընդ տառիս՝ ռ. վն որոյ և ուրեք ուրեք փոխադրի ընդ նմա 'ի բառս սովորականս, զոր օրինակ, ռամկական, և րամկական. յախուռն, և յախուրն. կառակնաձև, և կարակնաձև. ոճռագործ, և ոճրագործ. ջեռանիլ, և ջերանիլ. և այլն: Եւ յայսմանէ առեալ գրեթէ միշտ փոխադրի յայլազգական բառս ընդ տառին՝ ռ. զի փոխանակ ասելոյ, աբռահամ, բոստ. խոռայէլ. և այլն, ասեմք աբրահամ, բոսր, խորայէլ: Դարձեալ փոխադրի բազում անգամ նաև ընդ տառիս՝ լ. որգոն, համարակալ, և համարակար. հրամանակալ. և հրամանակար. կարդինալ, և կարդինար. սլանալ, և սրանալ. ըստ այսմ ևս փոխանակ ասելոյ՝ բելխալ, ասեմք՝ բելխար: Զայս փոխադրութե գտանեմք և յաշխարհաբառ լեզուող. զի յոմանս գաւառս սովորութիւն է զլիւն տառս անցեալ ժամանակաց բայից՝ փոխել 'ի րէ. զոր օրինակ. կերերեմ, տեսերես, նստերէ, զոր յայլ գաւառս արտաբերեն լիւնիւ, ըստ այսմ օրինակի, կերելեմ, տեսելես, և այլն: Եւ ևս յաճախակի մուծեալ լինի սա 'ի մէջ բառից առ 'ի զարդ. վն զի ասեմք բաժին, և բարժին. գործապահանգ, և գործապարհանգ. դաշունակալ, և դարշունակալ. դաժանութի, և դարժանութի. տաժանումն, և տարժանումն. տարապահակ, և տարապարհակ. ըստ այսմ և 'ի բայս. զոր օրինակ. բաժանել, և բարժանել. գրոհագել, և գրոհագրել. կածել, և կործել. պահել, և պարհել. պաշարել, և պարշարել. տաժանիլ, և տարժանիլ:

Դարձեալ՝ է սա համարողական նշան. ոճ և այլք տառք. որ 'ի գրելն պատուով այսպէս, ր. նշանակէ՝ հինգ հազար:

ՐԱ.

Րաբուն. ոյ. իւ. ից. օք: || է համառօտեալն բառիս՝ ռաբբունի, որ է վարդապետ իմ, կմ վարդապետ: Յովհ. Ի: և 'ի Շարականս:

Րաբունաբար: (մակբայ որակական.) || իբրև զռաբունի. կամ վարդապետական իշխանութբ, և կմ վարդապետօրէն. ռամկ. [illegible]. 'ի շարականս:

Րաբունական. ի. աւ. աց. օք: || ռաբբիական, կմ վարդապետական, կմ ուսուցչական, և կմ վարժապետական: 'ի Շարականս:

Րաբունանամ. ացայ. ացեր. ալ: (ընդմիջ.) || րաբուն լինել, կմ ստանալ զանուն րաբունւոյ, և կմ վարդապետանալ: ռամկ. [illegible]:

Րաբունապետ. ի. աւ. կամ իւ. աց. օք: || պետ րաբունեաց, կմ գլուխ վարդապետաց, կամ երևելի վարժապետ. 'ի Հօր. հարց. լիշ:

Րաբունի. կմ րաբբունի. նւոյ: || տես ըզ Րաբուն: Յօհ. 20. 16: Նոյնէ. 'ի [illegible]:

Րաբունօրէն: (մակբայ որակական.) || տես զՐաբունաբար: 'ի Հօր. հարց. [illegible]: և 'ի Շարականս:

Րազ. ի. իւ. ից. իւք: || նիազ, կմ նուազ, կմ գոյգն. և կմ սակաւ: ռամկօր. [illegible]. և [illegible]:

Րախ. ի. իւ. ից. իւք: || խրախ. կմ ուրախ. և կմ զուարճ:

Րախական. ի. աւ. աց. օք: || ուրախական, կմ խրախական. կմ զուարճական. և կմ խնդական:

Րախանամ. ացայ. ացեր. ալ: (ընդմիջ.) || խրախանալ. կմ ուրախանալ. և կմ խընդալ: 'ի Շարականս:

Րախատիպ. ապի. իւ. ից. իւք: || ունօղ զուրախական տիպ, կմ զտեսիլ, կմ որոյ դէմքն են զուարճ:

Րախարար. ի. աւ. աց. օք: || խրախարար. կմ ուրախարար, և կմ զուարճացուցիչ:

Րախացուցանեմ. ացուցի. ացոյ. անել: (անցող.) || խրախացուցանել. կմ ուրախացուցանել, կմ զուարճացուցանել: ռամկ. [illegible]:

Րախճական. ի. աւ. կմ իւ. աց. օք: || րախճանական, այն ամ, որ վերաբերի առ խրախճանս, կմ խրախական, կմ ուրախական. և ըստ այսմ 'ի [illegible] հրաւիրումն կոչնականաց 'ի խրախճանս թագաւորին՝ կոչի րախճական ձայն:

Րախճան. ի. աւ. աց. օք: || խրախճան, ք

տեղան բազմախորտիկ՝ և մեծահաց: ռամկ. չիֆթէլի: Նոննէ. ղշ: և 'ի Տուրուն հինչինչուն: Իսկ մերթ՝ բախտացող, կամ խրախճացող, և այլն, որպէս առաջաւէ 'ի բառն՝ խրախճան:

Րախճանագոյն. գունի. իէ. ից. իւք: || խր բախտագոյն, կմ ուրախագոյն, և կմ զուարճագոյն:

Րախճանական: || տես Րախճական:

Րախճանամ. ացայ. ցիր. անալ: (ընդ.միջ.) || տես զխրախճանալ:

Րախճանաւոր: || տես զխրախճանաւոր:

Րախճանութիւն. թեան: || տես զխրախճանութիւն:

Րակերտ. ի. աւ. աց. օք: || ծագի 'ի բառէս՝ րաբուն. որ ըղձակերտն յանուանէս՝ իղձ. և նշանակէ՝ վարդապետող, կմ վարդապետ. ըստ այնմ Յհ ՟ուրէ.

Րակերտ՝ էին արարչութեան.
Եւ փրկական տնօրէնութեան:

Րակերտական. ի. աւ. աց. օք: || րաբունա-կան, կմ վարդապետական, և կմ ուսուցչական:

Րակերտեմ. եցի. եա. ել: (ներգործ.) || վարդապետել. կամ ուսուցանել. ռամկօրէն. ուրվէրնէլ:

Րակերտութիւն. թեան: || վարդապետութիւն. կմ ուսումն:

Րամ. ի. իէ. ից. իւք: || երամ, կմ ժողով, կմ խումբ, և կմ դաս: ռամկ. ախըրնա. 'ի շարականս: Իսկ 'ի Յհ ՟ուրէն. ուր ասի, րամ աւետեաց ձայնի լինի. թէև բնութիւն ձայնի չունի. առեալ լինի փոխանակ բառիս, ժողովող. ցք քարոզող. կամ հռչակող:

Րամեալ. ելոյ. ով. ոց. ովք: || ժողովեալ, կմ հաւաքեալ, կմ բովանդակեալ, և կմ բովանդակ. ըստ այնմ 'ի ճառընտրին. Րամեալ բոլորդ քո մարմին՝ սաստիկ էառ ըղձ հարուած փանիւն. ցք բովանդակ, և բոլոր մարմինդ. կմ այսպէս. բոլոր մարմինդ րամեալ էառ, ցք հաւաքեալ ընկալաւ զհարուածս: Ըստ այսմ և 'ի շարականս ասի. րամեալ մարդկան ազգ ժողովլին. ցք բովանդակ մարդկան ազգ:

Րամեմ. եցի. եա. ել: (ներգործ.) || ժողովել, կմ հաւաքել. կմ խմբել, կմ գումարել, և կմ բովանդակել: ռամկ. ծոպլէ. քմ էէքէն ընէլ: Յհ ՟ուրէ: և 'ի շարականս: Իսկ մերթ ամփոփել, կմ յանկուցանել. և կմ առ ինն ձգել. ըստ այնմ 'ի շարականս. րամեալ զհոգի, և զմարմին դարձեալ 'ի սեր փեսային, ցք դարձեալ ամփոփել. կմ ձգել 'ի սեր, և այլն:

Րամիկ: || տես զՌամիկ:

Րամկական. ի. աւ. աց. օք: || ռամկական. ցք գեղջկական: Իսկ մերթ՝ խառնիճաղանճ. և կմ խաժամուժ. ըստ այնմ 'ի Շարականս. րամկական խումբ հաղարաց, և երեսնից թիւ ընդ վեցեց. երրթէ ասէ, խառնիճաղանճ ամբոխն զօրաց էր հազար երեսուն և վեց, որք ընդ քաջ զօրապետացն նահատակեցան:

Րաքանամ. ացայ. ացիր. ալ: (ընդ.միջ.) || զօրանալ. կմ զօրաւոր լինել:

ՐԵ

Րենական. կմ րեննական. ի. աւ. աց. օք: || ածական. կմ ածային. զի ծագի 'ի բառէս՝ որ էն. կմ որ էնն. որով նշանակի ած. ըստ որում է տիրապէս էն, և էից էակ, պարունակեալ զամ անպարագիծ էութիւ իւրով. ուստի և փոխանակ գոչելոյ զէէն՝ ածատես, յորջորջեմք րենատես: Այնպէս փոխանակ ասելոյ՝ ածական անուամբ պատուեալ. կմ ածային լուսոյն տեսող. ասի՝ րենական անուամբ. րենական լուսոյն: Յն ՟ուրէ: ըստ այսմ րենական լուսոյն. և 'ի շարականս ասի 'ի ձեռագիրս, րեննական լուսով լցեալ արեգականն քաջն արտակ:

Րենատես. կմ րեննատես. ի. իէ. աց. օք: || ածատես. որ է տեսանող այ. ըստ այնմ 'ի շարականս. րենատեսին իմլը սիրով սրբոյն 'ի մեզ խնայեա. ուր 'ի ձեռագիրս գրի՝ րեննատեսին:

Րեւտեմ. եցի. եա. ել: (ներգործ.) || տես Րոտել: 'ի վերջ հատոր. Բ:

Րետոր: || տես զճարտասան. 'ի հին տետրակնէն:

ՐՈ

Րոպէ. ի. իէ. ից. իւք: || է բառ յունաց, արտաբերեալ ըստ նշ ռօփէ, կմ ռօփի. զոր 'ի հոյ բարբառ կոչեմք մէտ. որ է միջոր 'ի հոյ բարբառ կոչեմք մէտ. որ է միզոր, կմ հակումն: Եւ մերթ կէտ ժամանակի. կմ վայրկեան: և ըստ այսմ մասնաւորապէս րոպէ կոչի վաթսուներորդ մասն միոյ ժամու: ռամկօրէն. տագիգէ: Գրաբարեալ՝ է առ համառօտեալն բառիս՝ եւրոպէ, ցք եւրոպիա. որ է մին յերից մասանց աշխարհի անկեալ 'ի կողմն արեւմտից՝ առ երի ասիոյ. ըստ այնմ Նոննէ. Իսկ Եւրոպէ... Սկզբնաւորեալ զպարսկականն խուժաց զմբխա՝ րոպէիւ հանգերձ զկողմն ասիոյ, ցք զափրիկէ հանդերձ եւրոպէիւ ասիոյ, և զաշխարհն ասիոյ: Եւ յայսմանէ առեալ րոպէ կոչեմք անբացորոշաբար զօ, և իցէ մասունս, կմ կողմանս աշխարհի, և նմանեաց. ըստ այնմ Յն ՟ուրէ. րոպէից քառից տարերք, ցք չորից կողմանց աշխարհի տարերք: Եւ մերթ առնի զաւեզերս, կմ զաշխարհս. ըստ այնմ Նոննէ. 'ի տօրակ խուլի. և 'ի գոյն. րոպէից յոգնամթիւ մասանց բերկրութիւն: Եւ 'ի Ճ. ասի՝ րոպէից մարզիւն, և ազատարար. ցք ամէն զերաց սրբիչ և ազատիչ. Ըստ այսմ առեալ լինի և 'ի շարականս. ուր ասի՝ րոպէից արեգական զարդն արար գիշերանման. ցք գաւառն զարդն զխոր՝ կմ զբոլոր արեգական աշխարհնաց շերաւորեալ մթնացոյց:

Րոպէական. ի. աւ. աց. օք: || մէտական. կմ վայրկենական. կմ ժամանակեայ: Գրաբարեալ եւրոպական. կմ աշխարհական:

Րոպէացոյց. ցուցի. իէ. ից. օք: || ցուցանող

նօղ բոպէի, կամ վայրկենի. որպիսիք են նիշքն ժամացուցին, որք յայտնեն զիւ-րաքանչիւր կէս ժամուն: ռամկ. Բաթի-ֆէն ջըջնօղ:

Րոտեմ. եցի. եմ. եալ: (Ներգործ.) || Ժողովել. կմ հաւաքել. կմ գումարել. կամ բովանդակել. և կմ ընդունիլ: ռամկօր. Ժողվել. ըստ այսմ Նարեկ. Ձ. և 'ի Քարոզս խաւէն, և Էկեղեցւոյ. րոտել վերստին ըղ մերժեալս առ'ի քեն. ըստ այսմ և 'ի Ճաշոցի. րոտեա զաշակերտս բանից երկնայնոց. եւ ժողովեա զաշակերտս յերկնային երամս: Իսկ մերթ 'ի մի յօդել. կմ միաւորել, և կմ միացուցանել. ըստ այսմ Յն տօնի. րոտեալ մարմինս իմ ընդ հոգւոյս, եւ 'ի միաւորիլ մարմնոյ իմոյ ընդ հոգւոյս: Երբեմն եւս ամփոփել. կմ նահանջել. կմ 'ի բաց տանել. և կմ բառնալ. ըստ այսմ Յն տօնի՝ րոտեա զերկուսն Թախծական, զոր մահ մանկանն ձեզ ծընեաւ: Դարձեալ նշանակէ մաղթել. կմ հայցել. և կմ խնդրել: ռամկօր. աղաչել աղէլ. ըստ այսմ Նարեկ. 'ի գովեստին. րոտեմք 'ի քէն ալերսին բանի, որ ես քաղց բոլուր գրաւ աշխարհի: Դարձեալ՝ հաձել. կմ հաւանիլ. և կմ յօժարիլ:

Րոտին: (Նախդրիւ հոլովի.) || Ընչին. կմ փանաքի. կմ գծուծ. կմ նուաստ. կմ անարգ. և կմ խոտան: ռամկ. ջաճ: 'Ի Ճաշոցին:

Րոտումն. ման. մանը. մանց. մամբք: || Ժողովումն. կմ հաւաքումն. և կմ բովանդակութիւն: Իսկ մերթ՝ մաղթումն. կամ հայցուած. և կմ խնդրուած: Դարձեալ հաճութիւն. կմ հաւանութիւն. կմ յօժարութիւն. կմ մտադիւրութիւն. և կմ անընդդիմակ լսողութիւն. ըստ այսմ 'ի Շարականին, րոտմամբ սրտիւք յարուցեալ, այսինքն. յօժարութեամբ կմ մտադիւրութեամբ սրտի:

Րուպ. ի. իւ. ից. իւք: || Դոյզն. կմ դուզնաքեայ. կմ նուազ. կմ սակաւ: ռամկ. ֆիչ. և տաճկ. ճիղիթ. կմ ճիղիթճէ:

Րոք. ի. իւ. ից. իւք: || Գործարան մանելոյ զվուշ, և զայլ ինչ նման. զոր ըստ մեծի մասին կազմեն աշտանակաձև: տաճկ. չըքըրէ: Բայց այս 'ի գործածի մանաւանդ գուեհկական լեզուաւ. զի 'ի բարբառս գըրոց կոչի աղեղն. և ըստ այսմ առի այլաբանութք, 'ի Գիրս Պիտոյից անդրադարձին. Թելն՝ որ գործեալ և պարապեալ, զանցեալն նշանակէ. որ գեռ մանեալ լինի՝ ըղ ներկայս. և որ տակաւին յաղեկանն է՝ զապառնին. եւ որ առ կաւին փաթութեալ կայ 'ի վերայ կո-րէքէին:

Ց

Ց. Է տառ բաղաձայն և կոչեցեալ 'ի քերականաց կրկնակ. զի ունի զզօրութիւն կրկին ընթրդակից տառից, այսինքն, երկուց ծայից. որպէս և Ջէն երկուց ձէից: Արդ՝ զտառս զայս անուանեմք ցօ. կմ ցօ. որ արտաբերի 'ի մէջ շրթանց ամփոփմամբ բերանոյ: Իսկ յառողանական առնելոյ ըստ հայադիին է խաժ, այսինքն. որ է հաստ. զի 'ի հեգս բառից հաստաձայն հնչէ ըստ օրինակի տառից. Թ. Հ. Ջ. Ք. և այլն:

Դարձեալ անուանի սա ընթրդ տառ. վն զի կցորդի ձայնիւ ընդ տառից՝ Ծ. Ձ. Զ. Ս. Սատի և երբեմն փոխադրի ընդ նա. զոր օրինակ. փից, և փիծ. յեղց, և յեղծ. կմ յեղձ. քարց, և քարձ. և այլն: ըստ այսմ և ընդ Զայի. զոր օրինակ, ելուզանել, և ելուցանել. ընդելուզանել, և ընդելուցանել. փլուզանել, և փլուցանել: Եւ յայսմանէ առեալ՝ փոխանակ ասելոյ՝ ընկլուզանել. ասեմք ընկլուցանել: Եւ ևս՝ է սա նշան համարողական, որ մինչ վարի պատուանգրով՝ այսպէս. Ց. նշանակէ վեց հազար: Դարձեալ՝ է սա նախդիր հոլովական. որ 'ի գործածի փոխանակ նախդրացս՝ 'ի. յ. առ. ընդ. և այլն. և յարի յամ բառս՝ թէ ձայնաւորք իցեն սկզբնատառքն, և թէ բաղաձայնք: Արդ՝ սա կազմէ զնախդրիւ տրական. զոր օրինակ. ասէ ցնոր. հարցին ցնա. մինչև ցօրս յայս, Ծննդ. 4. 13: Մատթ. 17. 10: 1. Մակ 8. 10: Այսպէս է և Մատթ. 7. 9. ուր ասի, ով իցէ 'ի ձէնջ մարդ, ցոր խնդրիցէ որդի իւր հաց, այսինքն առ որ պաղատելով հայցիցէ տալ իւրեան զհաց: ըստ այսմ է և Ղուկ. 11. 11. ուր ասի. Ցո՞ ոք 'ի ձէնջ հայր խնդրիցէ որդի իւր ձուկն. այսինքն առ ո՞ր պիտի ոք հայր պաղատելով խնդրիցէ որդի իւր. և այլն: Իսկ ուրեք ուրեք կազմէ և զներգոյական ուղղականավրէքը. ըստ այսմ 'ի Գիրս Պիտոյից անդրադարձին. Ցասել բանաւորին, կե՛ր. այսինքն 'ի յասելն, կմ ընդ ասելն, ռամկ. ըսէնինի: ըստ այսմ փոխանակ ասելոյ՝ յորքան ժամանակս, ասէ՝ ցորքան, որպէս տեսցես 'ի կարգի իւրում: Դարձեալ՝ բաղում անգամ ունի զզօրութիւն նախադրութեան՝ մինչև յ, կմ մինչև 'ի, զոր օրինակ, ոչ եհաս նմա ցաւուրսն ցայնոսիկ, այսինքն մինչև յայնս աւուրսն: ռամկօր. ինչվան

անօրէնը: Դատ. 18. 1: Մինչև ցքսան և մի օր ամսոյն՝ ցերեկոյ. այսինքն մինչև յերեկոյ. ռամկ. հինգշաբթի իրիկուն: Ելից. 12. 18: Եւ կերիջիք ցայգ, այսինքն մինչև 'ի յայգիլ: Ղևտ. 25. 19: և 26. 5: Կանգնել զնշան խաչին ցօր տալոյ նշ հոլին, այսինքն մինչև յօրն տալոյ: Խորէն. գ. գլ. 83: Ցմեծ ժամս, այսինքն մինչև յերկար ժամս: Աճգող: ըստ այսմ են և բառքս՝ ցայժմ. ցայնժամ. ցայսօր, կամ ցայս վայր. ցարդ ևս. ցորչափ. և այլք նմանք. զորս տեսցես 'ի կարգի իւրեանց: Եւ ևս՝ բազում անգամ յարելով սա 'ի վերջս անուանց ոմանց՝ առնէ զնոյն յոգնակի սեռականս. որգոյն, առաջոյ. ջուրց. ախոյեանց. ապագայց. հանուրց. և այլն:

ՑԱ

Ցախ. ի. իւ.ից. իւք: || մացառ, այսինքն անտառ փշալից, թանձրախիտ. և կխառ գօս ծառոց, և թփոց: Իսկ մերթ չորացեալ ճիւղք, կամ շերտք ծառոց՝ և թփոց, և կամ խռիւք: ռամկ. չոր: Բայց մասնաւորապէս ցախ կոչի թուփ մի անարգ, որ ունի զաւերև երկայն, և նրբագոյն իբրև նոճի, որոյ և ճիւղքն բուսանին նուրբ նուրբ՝ կարճը և փշատեսակ: 'ի սմանէ կազմեն զաւել անարգ, զոր ռամկօրէն կոչեն՝ ցախ ավել: Զայնս և ոմանք 'ի ձկնորսաց այրեն յորսս ձկանց: տաճկերէն գօռունգ:

Ցախեմ. եցի. եա. ել: (ներգործ.) || տափանել, այսինքն տափանաւ հարթել զակօսս, և ատամնաւ՝ ցախել. զի որում 'ի բազում գաւառս հայաստանեայց ցախիւք տափանեն. զի կապեն զնիւ տափանին զցախս. որով զի ընդ խորտակել գերանին զկոշտսն, ցախիւքն հարթ հաւասար կոկեսցեն զերեսս հողոյ: 'ի գիրս ձեռին կոտրոյ:

Ցած: (Նախդրիւ հոլովի.) || խոնարհ. կամ նուաստ. կամ գծուծ, և կամ անփառացի: ռամկ. ևս՝ ցած. և ըստ այսմ առ 'ի ցած բը նութիւն, կամ առհմ. և այլն: Ոսկե. 1. հատ. իզ: Իսկ մերթ զիջանող, կամ խոնարհամիտ, կամ հեզ, կամ մեղմ, կամ հանդարտ, կամ անխռով միտք, և կամ զգաստ. և այս առ 'ի զմարդոյ, զբարուց, զսրտէ, և կամ զգալեաց. տաճկ. ալչագ կէօյիւլլիւ, կամ խաւնէ. որոց և ներհակքն կոչին սրտմտող, կամ կատաղի: 1. Տիմ. 3. 2: Տիտ. 1. 8: Մծբին. ժթ:

Ցածագոյն. գոյնի. իւ. իւ. իւք: || առաւել ցած, կամ խոնարհագոյն. կամ նուաստագոյն. ըստ այսմ Ոսկե. 2. հատ. ժ. միշտ 'ի ցածագոյնս իմանէր զբարձրագոյնն: Իսկ մերթ՝ առաւել զիջանող, կամ առաւել խոնարհամիտ, կամ հեզագոյն, կամ մեղմագոյն:

Ցածնում. ցածեայ. ցածիր. ուցել. նուլ: (ընդմիջ.) || ցած լինիլ. կամ 'ի վայր խոնարհիլ. կամ 'ի ստոր իջանել. և ըստ այսմ առ 'ի ցածնուլ ամբարձեալ ձեռաց. կամ բարձրացեալ իրաց. որպէս ժողովոց. ջուրց. ուռուցից. և այլն. ռամկ. ցածնալ: Ծնն. 8. 8. և 11: և 'ի ճառս հարց իզ: Իսկ մերթ՝ զիջանել, կամ մեղմանալ, կամ թուլանալ, կամ հանդարտիլ, և կամ խաղաղիլ. և ըստ այսմ առ 'ի ցածնուլ ալէկոծութեան, կամ հողմոց, և խռովութեանց, և կամ ցածնուլ 'ի բարկութենէ, 'ի վրէժխնդրութենէ, 'ի փրփրացմանէ. և այլն: ռամկ. ****, կամ ****: Ելից. 32. 12. և 14: 4. Թագ. 24. 4: Դրմն՝ խոնարհիլ սրտիւ, կամ հեզանալ. և կամ զգաստանալ: ռամկօր. ****:

Ոսկե. 1. հատ. լդ:

Ցածութիւն. թեան: || խոնարհութիւն, կամ զիջումն, կամ հանդարտութիւն, կամ մեղմութիւն, կամ հեզութիւն, և կամ զգաստութիւն: Գործ. 26. 25: 1. Տիմ. 2. 11: Տիտ. 3. 2:

Ցածուն: (Նախդրիւ հոլովի.) || նոյն է ընդ բառին ցած, որ զօրութիւն ընդ բառին զօրութ. ուստի նշանակի սոյնպէս խոնարհ. հեզ. հանդարտ. զգաստ. և այլն. ըստ այսմ Յն ***. Ցածուն առեալ խոնարհամիտ, լեր առ ընկերան բարեմիտ: ըստ այսմ է և Տիտ. 2. 2. և 5. և 6. յորս առ 'ի զծերոց, կամ զերիտասարդաց՝ ցածունս լինիլ: Եւ 'ի ճառս հարց. ա. առ 'ի խօսիլ զբանս երկիւղիւ և ցածունս:

Ցածուցանեմ. ուցի. ցածո. անել: (անցողակ.) || 'ի վայր խոնարհեցուցանել, կամ 'ի ստոր իջուցանել. որպէս զձեռս 'ի տարածմանէ. զբերան 'ի գրմանէ. և այլն: ռամկ. ***, կամ ***: 3. Թագ. 13. 30: Իսկ մերթ՝ զիջուցանել. կամ մեղմացուցանել. կամ թուլացուցանել, կամ հանդարտեցուցանել, և տեցուցանել, կամ խաղաղացուցանել, և կամ դադարեցուցանել. և ըստ այսմ առ 'ի ցածուցանել զալիս, կամ զսրտմտութիւն, ըզ զազանութիւն, զհպարտութիւն, կամ զատատ կացեալ ձայնս: Թուոց. 25. 11: 3. Մակ. 1. 13: և 5. 10: Սաղ. 28. 10: Եւ կամ ցածուցանել զպատիժս, զպատերազմ, զկռիւ, կամ զախտս, և այլն: 1. Մակ. 13. 47: Սաղմ. 93. 13: Առակ. 15. 18: Եւ յայսմանէ առնել նշանակէ հաշտեցուցանել, կամ հաճել զմիտս ուհաշտեցուցանել, կամ հաճել զմիտս ուրուք, և կամ քաղցրացուցանել զոք. և ըստ այսմ առ 'ի, ցածուցանել զերեսս ուրուք. կամ զանձն ոք. և այլն: Ծննդ. 32. 20: Ելից. 32. 30:

Ցականիմ. նեցայ. եաց. իլ: (ձայնակր.) || տռճալ, կամ տնանկանալ, կամ աղքատանալ կամ նուաստանալ, և կամ թշուառանալ. ըստ այսմ Խորէն. գ. գլ. 68. Զով արտասուեցից, զհէնքն իմ մանուկ, եթէ զիս թափուր 'ի հօրենի մնացեալս՝ խնամոյ և ցականեալս:

Ցամ. ոյ. ով. ոց. ովք: || հառ, մանաւանդ մինչ նեխեալ իցէ:

Ցամաք. ի. աւ. աց. օք: || երկիր չոր. որոյ ներհակն կոչի ծով. կամ գետ: ռամկ. ևս ցամաք. և տաճկ. ***: Ծննդ. 1. 9: Ելից. 4. 9: Սաղմ. 65. 6: Իսկ մերթ վարի առ կանոնաւոր և նշանակէ՝ ցամաքեալ. կամ

Digitized by Google

խոնաւճահուրկ. և կմ՛ չոր. և ըստ այսմ սահ՝ ցամաք երկիր. ցամաք պտուղ. ցամաք կը տաւ. և այլն։ Եբր. 11. 29։

Ցամաքաթռիչ։ (Նախդրիւ հոլովի.) || թռչօղ՛ի ցամաք. կմ՛ սլացօղ ը երկիր. որ պիսիք են ամանք՛ի թռչնոց, և կմ՛ նաւք, որք ընթացեալք ուժգին հողմով դիմեն ՛ի ցամաք։

Ցամաքակէտ։ (Նախդրիւ հոլովի.) || կէտ, կը սահման, կմ՛ բացորոշ տեղի ցամաքի, յոր դիմէ հասանիլ իմն։ Աշխար.։

Ցամաքային. ային. ոյ. ոց. ովք։ || այն ամ, որ վերաբերի առ ցամաքն, կամ որ կայ ՛ի ցամաքի. և կմ՛ երկրային, զոր և կոչեմք ստոյն, որպիսիք են կենդանիքն, որք հակադրին ջրայնոց։ Իմաստ. 19. 18։ Նոբէլ.վշ։ Իսկ մերթ՝ ցամաքեղէն. կմ՛ չորեղէն. կը այն ամ, որ զուրկ է ՛ի խոնաւութէ. որ պիսիք են պաքսիմատք, չամիչք, պապղա_ տխտք, և այլք նմանք։ ըստ այսմ ՛ի ձեռս հարց. ... Զարդարեսցի սեղան քո չոր և ցամաքային կերպք։

Ցամաքաչափ։ || տես զերկրաչափ։

Ցամաքաչափութիւն։ || տես զերկրաչափութիւն. Խորէն. յաշխարհագր։

Ցամաքեցուցանեմ. եցուցի. եցո. նել։ (անցող.) || ցամաք առնել. կմ՛ քամել ՛ի խոնաւութեց. կմ՛ խոնաւահուրկ առնել. կմ՛ չորացուցանել. և կամ ցամաքեցուցանել։ ռամկ. ցամքեցնել. կմ՛ չորցնել։ Յես. 2. 10։ 2. Թագ. 17. 19։ Եզեկ. 17. 24։

Ցամաքընթաց. (Նախդրիւ հոլովի.) || ընթացօղ ՛ի ցամաք. կմ՛ գնացօղ ՛ի ցամա_ քի։ ռամկ. ցամքէն՝ կմ՛ խուրային ճամբով։

Ցամաքիմ. եցայ. եայց. իլ։ (Ձայնակր.) || ցամաք լինիլ. կմ՛ քամիլ ՛ի խոնաւ հիւթոց. կմ՛ խոնաւահուրկ լինիլ. կմ՛ չորանալ. և կմ՛ ... . և ըստ այսմ սահ՝ ցամա_ քիլ երկրի կմ՛ գետոց. ... . խոտոց. և այլն։ ռամկ. ցամքիլ. կմ՛ չորնալ։ Ծննդ. 8. 7։ Յոբ. 14. 11։ Եզեկ. 37. 4։

Ցամաքութիւն. թեան։ || ցամաքումն. կամ ցամաքիլն ՛ի խոնաւ հիւթոց. կմ՛ խոնաւահուրկ լինիլն. և կմ՛ չորութիւն։ Դատ. 6. 37. և 39։ Իմաստ. 19. 7։

Ցամաքուտ։ (Նախդրիւ հոլովի.) || ունօղ զցամաքութիւն. կմ՛ ցամաքեալ. կմ՛ չոր. և կմ՛ անջրդի. և ըստ այսմ սահ՝ ցամաքուտ վայր. կմ՛ երկիր. և կմ՛ ընդ ցամաքուտս գնալ. և այլն։ ռամկ. չոր ... . կմ՛ ... ՛ի ձեռս հարց. ...։

Ցանոտ. ի. աւ. ոց. օք։ || հոտեալ. կամ նեխեալ։ ռամկ. հոտած։

Ցանոտիմ. եցայ. եայց. իլ։ (Ձայնակր.) || հոտիլ. կմ՛ նեխիլ։

Ցանոտութիւն. թեան. || գարշահոտութիւն. կմ՛ ժահահոտութիւն. և կմ՛ նեխութիւն։

Ցայգ. ոյ. ով. ոց. ովք։ || գիշեր. որ է ժամանակ մնալոյ յերեկոյէ և կատարելոյ մինչև ցայգ. ... . Այլ սա ըստ մեծի մասին վա րի ... զանազան այսպէս, զցայգ. և նշանակէ ՛ի գիշերի. կամ գիշերային. որոյ ներհակն է՝ զցերեկ։ ռամկ. գիշերով։ Ծնն. 31. 40։ Ելից. 13. 21։ 1. Թագ. 14. 36։ Ղուկ. 2. 37։ Իսկ մերթ վարի սա գիտնորոշական տառիւ այսպէս, զցայգս, և նշանակէ՝ ՛ի գիշերիս. կամ յայսմ գիշերի։ Յես. 2. 2։ 2. Թագ. 17. 1։ Դիտել՝ է սա նախդրիւ տրական բառիս այգ, զոր օրինակ. մինչև ցայգ, և նշանակէ՝ մինչև ցառաւօտ։

Ցայգանամ. ացայ. ացեր. անալ։ (Չեզ.) || ցայգ լինիլ. կմ՛ ժամանել գիշերոյ. և կմ՛ գիշերանալ։ ռամկ. գիշեր ըլլալ։

Ցայգապաշտօն. ի. իւ. ից. իւք. կմ՛ ցայ_ գապաշտամանք. անց. ամբք։ || կատարօղ զպաշտօն գիշերոյ. կմ՛ զպաշտամունս գի շերային ժամերգութեց, և աղօթից։ Իսկ մերթ՝ նշանակէ զգիշերային պաշտօնն. կմ՛ զկատարումն գիշերային աղօթից, կմ՛ ժամերգութեց. և այլն։ ըստ այսմ ՛ի հին պատմագիրս. Եւ յայնմ գիշերի ցայգապաշ տօն մեծ եղև։ և յայլուր սահ՝ Այսպէս քա րոզ առաքեալ, զի միաբան ՛ի հսկումն ցայ գապաշտամանց եկեսցին։

Ցայգութիւն. թեան։ || ժամ ցայգոյ. կամ գիշերային ժամանակ. և ըստ այսմ ծո_ րումն արութեն՝ ըստ որում լինի ՛ի քուն գիշերոյ, կոչի ցայգութեն բղխումն. զոր այլով անուամբ կոչեմք՝ երազախողձութիւն։ 2. Օրին. 23. 10։

Ցայթ։ || տես զՑայտ։

Ցայթեմ։ || տես զՑայտեմ։

Ցայթիմ։ || տես զՑայտիմ։

Ցայթումն։ || տես զՑայտումն։

Ցայժմ։ (մակբայ ժամանակական.) || մին չև ցայժմ. կմ՛ մինչև յայս ժամանակս։ ռամկօրէն. մինչև հիմայ։ Ծննդ. 18. 12։ Ես_ թեր. 16. 23։

Ցայնժամ։ (մակբայ ժամանակական.) || մինչև յայնժամ. կմ՛ մինչև ցայն ժամա_ նակն. և կմ՛ տակաւին յայնմ ժամանակի։ ռամկ. մինչև անտեղը. կմ՛ փակոյ ան ժամա նակը։ ըստ այսմ Խորէն. ... 22. Զի ցայն ժամ կենդանի էր։

Ցայսվայր։ (մակբայ.) || մինչև յայս վայր. կմ՛ մինչև ցայսր։ ռամկօր. մինչև հոս։ 2. Մակ. 7. 42։

Ցայսօր։ (մակբայ.) || մինչև ցայսօր. կամ մինչև ցօրս յայս։ ռամկ. մինչև այս օրը։ Ծննդ. 22. 14։

Ցայտ. ի. իւ. կամ ցայտք. ից. իւք։ (Իբր անեղական.) || ցայտումն. կը ոստումն, կմ՛ ցնդումն ծորելի իրաց. և կմ՛ ցայտել շիթք հեղեղուկ հիւթոց։ ռամկ. ...։ Իսկ մերթ ՛ի բաց արձակումն կայծա_ կանց, կամ ցայթումն լուսոյ. և կամ ծագումն։

Ցայտեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) || սա_ ստկագոյն ցնդել զհոսանուտ իրս. կամ արձակել զկայծակունս. զորմէ լիագոյն տեսցես զկնի։ ռամկ. ... Իսկ մերթ՝ զլոյս արձակել. կմ՛ ճառագայթել. և կամ ծագել։ ըստ այսմ Լամբրոն. Ցայ

տեսա՛ կրկին շնորհ լուսափայլութեան ։

Ցայտիմ. եցայ. եայց. իլ ։ (Ձայնակրակ.) || ստանալով ցնդիլ. կմ ՚ի բաց արձակիլ հեղուկ նիւթոց յիմքէ, ոպ ցայտի արիւնն յերակէն, գինին ՚ի տակառէն. քաղցուն ՚ի հնձանէն. ջուրն ՚ի ծորակէն. և այլն ։ ռամկ. ցռբկէլ ։ 4. Թագ. 9. 33։ Եւ յայսմանէ առեալ՝ ցայտիլ ասի՝ արձակիլն կայծականց ՚ի շանթէ. ք ՚ի հրացեալ երկաթոյ. կմ ՚ի հրոյ. և կմ ՚ի կայծաքարէ. և այլն ։ ըստ այսմ բարդի ՚ի սմանէ հրացայտն, և փայլակնացայտն ։ Երբեմն և՛ ծագիլ, կմ ճառագայթիլ. յորում գրեթէ լսյան իբրև զկայծակունս շանթից ՚ի բաց արձակի ։

Ցայտութիւն. թեան ։ || տե՛ս զՑայտ ։

Ցայտումն. տման. տմամբ. տմանց. տմամբք ։ || տե՛ս զՑայտ ։

Ցան. ի. իւ. ից. իւք ։ || է արմատ ցանել բային. և նշանակէ ցանումն. կմ սերմանումն. և կմ սերմն. ըստ այնմ Աւգոս. Սերմանել զսերմանիս օգտակար ցանից ։ Սոյնպէս և ասի՝ ցանս առնել. կամ ՚ի ցանս արկանել, որ է ցանել ։ Բայց սա ըստ մեծի մասին վարի ընդ բառիս ցիր՝ ըստ այսմ օրինակի. ցանեցիր. զոր տեսցես ՚ի կարգի իւրում ։

Ցանգ. ցանգոյ. ով. ոց. ովք ։ || որմ գեղջկական՝ արարեալ ՚ի մացառաց, կմ ՚ի փշոց. ոպ և մերթ յաղիւսոց. կմ ՚ի քարանց շարեցելոց առանց շաղախոյ. որպիսիք են այնոքիկ, զորս կանգնեն շուրջանակի զայգեստանեաւք, և զպարտիզաւք, և զարտորէիւք. և զտեղիս նմանեաւք ։ ռամկ. ցանկ ։ Առակ. 24. 31։ Եսայ. 5. 2։ Մատթ. 21. 33։ Բայց Ղուկ. 14. 23. ուր ասի. ել ՚ի ճանապարհս և ՚ի ցանգս, եդեալ լինի փոխանակ բառիս գիւղ, կմ ագարակ ։ ըստ որում սովորութիւն է սոցա ցանգով պատել ։ Իսկ Ծննդ. 38. 29. առեալ լինի նըմանութիւն փոխանակ աղտի որովայնի, որ է ծննն. ք մաշկեղէն պարկն, որով սաղմն իբր ցանգով պատեալ փակի յորովայն մօրն, և ՚ի ծնանիլն խրամատէ զայն. ք պատառէ. ոպ արար փարէս ՚ի յառաջելն իւրում քան զեղբայր իւր զզարա՝ ՚ի ծնընդեանն. վն որոյ ասաց ծնուցիչն. զի՞ է զի՛ խրամատեցաւ վն քո ցանգ ։ տե՛ս և զՑանկ ։

Ցանգ ։ (մակբայ ժամանակական.) || միշտ. կմ յար. կմ յաւէտ. կմ հանապազ. կմ յամ ժամ ։ ռամկ. ամէն ժամ. կմ փոյզմոյ ։ Եսայ. 57. 16։ Ղուկ. 22. 28։ Եբր. 10. 1։

Ցանգեմ. կմ ցանկեմ. եցի. եա. ել ։ (Ներգործ.) || ցանկով պատել. կամ ցանկս կանգնել շուրջանակի. ոպ առնեն այգեստանեայց ։ Աւգոս. Եւ յայսմանէ առեալ երբեմն նշանակէ պարապել. կմ շրջապատել. կմ պարփակել. կմ շուրջ պարունակել. և կմ պատրուակել ։

Ցանեմ. եցի. եա. ել ։ (Ներգործ.) || ցանեցիր արկանել. կմ ցրուելով սփռել. և ըստ այսմ ասի, ցանել զմոխիր. զփոշի. զխիճ. և այլն ։ ռամկ. ևս՝ ցանել ։ Ելից. 32. 20։ Սաղմ. 147. 16։ Դանի. 14. 13։ Եւ յայսմանէ առեալ մասնաւորապէս նշանակէ սրսկել. որ ասի զհեղուկ նիւթոց. որպէս՝ զջրոյ. զարեան. և այլն ։ ռամկօրէն. ցըցընել. կմ սըրսկել ընել ։ Ելից. 29. 21։ Ղեւ. 4. 6։ Եզեկ. 36. 25։ Իսկ մերթ սերմանել. որ է արկանել զընդեղէնս յերկիր ։ Մատթ. 13. 25։

Ցանեցիր ։ (Նախդրիւ հոլովի.) || վարի իբրև զմի բառ. և նշանակէ՝ ցիր և ցան. ք աստ և անդ ցրուեցեալ. կմ այսր և անդր սփռեալ. կմ ցրիւ անկեալ. և կմ ցնդեալ. ռամկ. փուրմափուրուն. կմ փուշունը. կմ ցնդած. ըստ այնմ Խորէն. Ա. գլ. 10. Երևեցաւ և նա բազմութիւն անկարգ հսկայից ամբոխոյն բեկեալ ցանեցիր ։ և ՚ի հին պատմագիրս ասի. Այսորիկ ցանեցիր ընդ բոլոր եկեղեցիս հայաստանեայց ։ Իսկ մերթ ընդ բայի շարակցի այսպէս. ցան և ցիր կացուցանել. կմ ցանեցիր արկանել. կմ ցանեցիր սփռել. և նշանակէ՝ ցիրևցան առնել. ք աստ և անդ ցրուել. կմ այսր և անդր ցրել. և կմ սփռել ։ ռամկ. փուրմա և փուրուն ընել. կմ փուշուն յընել ։ Աւգոս. և ՚ի հին պատմագիրս ։

Ցանկ ։ || Նոյն է ընդ բառին ցանգ, որպէս գանկն ը՟ բառին գանգ. ուստի երբեմն վարի իբրև զմակբայ. և նշանակէ՝ միշտ. կմ հանապազ ։ Ոսկ. 2. հատ. ք. է ։ Իսկ մերթ իբրև զանուն. և նշանակէ զգեղջկական որմն. ոպ ասացաւ ՚ի վերոյ ։ Փիլոն. 10. 8. Եզեկ. 2. 14։ Եւ յայսմանէ առեալ փոխաբերաբար ցանկ կոչին ն և իսկ շրջապատք. կմ պարունակք. կամ պատրուակք. ըստ այնմ Կիւրղի Եղիշ. Թ. ն է, որ զփափկութիւն աչացն՝ արտաքնոցն ցանկով զգուշացեալ փակեաց ։ Եւ ՚ի գիրս Գրիգորի Տաթեւացւոյ. ասի, իմացար զկարգ բազմաստեղացդ. և կմ զցանկ հայկին. ք զպատրուակ հայկին. ոպ դնի Յոբ. 38. 31։ Դարձեալ, ցանկ կոչին ցուցակք գրոց, յորս երևին բովանդակութիւնք գլխոց. կմ քաղուածոց բանից մատենին ։ Դարձեալ ընդ բայի շարակցի այսպէս. ցանկ արկանել. և նշանակէ. ցանգել. կմ պարսպել. ըստ այնմ Նարեկ. ՚ի գովեստ. Հրեշտակական թևոցն պաշտպանութեամբ ցանկ արկեալ պահեսցէ ։

Ցանկագոյն. կմ ցանգագոյն. գունի. իւ. ից. իւք ։ (և մերթ իբրև զմակբայ.) || յաճախագոյն. կմ յորդագոյն. և կմ առաւել ։ ըստ այնմ Խորէն. Ա. գլ. 1։ ՚ի քաղդէացւոց, և յասորեստանեայց մատենից ցանկագոյն են մեր իրք. ք յաճախագոյն են ։

Ցանկալի. լւոյ. եաւ. եաց. եաւք ։ || ըղձալի. կմ անձկալի. կմ բաղձալի. և կամ տարփալի ։ Սաղմ. 18. 11։ Երգ. 1. 6։ Դան. 9. 23։

Ցանկական. ի. աւ. աց. աւք ։ || բաղձական.

կմ տենչական, և կամ տոփական. որպէս սէր է զօրութիւն ցանկալոյ. և կմ վավաշոտական հեշտութիւն: Նարեկ:

Ցանկամ. կացայ. կա. ալ: (ընդ. մի.) || Նոյն է ընդ բային ցանկանալ. այն ըղձալն է բային ըղձանալ: Ղուկ. 21. 26: Փիլիպ. 1. 23:

Ցանկանամ, ացայ. ացիր. անալ: (ընդ. մի.) || ըղձանալ. կմ տենչալ. կմ բաղձալ. և կմ տոփալ. և այս երբեմն առեալ լինի 'ի բարի կողմն. այն Ծննդ. 31. 30: Փիլիպ. 6. 2: Իմաս. 8. 8: Իսկ երբեմն 'ի չար կողմն. այն Ելից. 20. 17: Ղուկ. 21. 10: Հռովմ. 13. 8:

Ցանկապատ. ի. իւ. աց. օք: || ցանկով պատող. կամ ցանկօղ: Իսկ մերթ՝ ցանգով պատեալ. և կմ ցանգեալ. և ըստ այսմ առի. ցանկապատ այգեստանեայք:

Ցանկապատատ. (Նախդրիւ հոլովի.) || պատող ցանկոյ. կմ որ խրամատէ զցանգս այգւոյ:

Ցանկասէր. սիրի. աւ. աց. օք: || ցանկացող, և սիրօղ. կմ մեծապէս սիրով տրփացող. ըստ այսմ Լամբրոն. պատուէրսն էին յոյժ ցանկասէր: Բայց յատկապէս առեալ Նշանակի տռփասիրողն զարշ ցանկութեց. կմ հեշտասէր. կմ վավաշոտ. և կմ բղջախոհ: 2. Տիմ. 3. 4: Խորէն. ը. պր. 60. և 85: Նարեկ. լը:

Ցանկասիրութիւն. թեան: || ցանկական սիրելութիւն. կմ սէր ցանկութեան. կմ հեշտասիրութիւն. կմ վավաշոտութիւն. և կմ բղջախոհութիւն: Նարեկ. 'ի Մեկն. Երգ:

Ցանկասփիւռ. (Նախդրիւ հոլովի.) || սփռեալ 'ի ցանկս, կմ ճապաղեալ և տարածեալ զցանկօք: Իսկ մերթ՝ ցանկութեամբ սփռեալ. կմ միշտ եռացեալ. և ըստ այսմ առի՝ ցանկասփիւռ տռփականութիւն: Ոսկէ. 'ի Վերջաբանութ:

Ցանկատեսակ. (Նախդրիւ հոլովի.) || ունող զցանկալի տեսակ. կմ զըղձալի տեսիլ. կմ այն, որոյ երեւոյթն 'ի ցանկութիւն բերէ զմարդն. որպիսիք են ոմանք 'ի ծաղկանց, կմ յանօթից. և այլն: Նարեկ. 'ի Մեկն. Երգոց:

Ցանկող. ի. ու. աց. օք: || ցանկացող. կմ տոփօղ. և կմ վավաշոտ:

Ցանկորդ. ի. ու. աց. օք: || ցանկացող. կմ տենչացող. և կմ փափաքօղ:

Ցանկորդեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || ցանկորդ, այսինքն ցանկացող առնել. կմ ձգել զոք 'ի ցանկութիւն իրիք. և կմ պատճառ լինիլ տենչալոյ:

Գործոյ է սա մին ՚ի չորից տառից . քանզի ունի զձայնակցութիւն ընդ տառիցս այսոցիկ . բ . պ . ուստի և ուրեք ուրեք փոխագրի ընդ նոսա , որպէս . ջաղբ , և ջաղփ . խարխաբել , և խարխափել . փաղխար , և բախտար . փաղակցել , և բաղակցել . գերփել , և գերբել . և այլն : Սոյնպէս և ընդ պ գծին , զոր օրինակ . կարապ , և կարափ . պոր , և փոր . պայքար , և փայքար . ռուպ , և ռուփ . սեպհական , և սեփհական և այլն :
Գործոյ՝ փոխագրի ընդ տառիս Ֆ , ՚ի բառս այլազգականս . զի փոխանակ ասելոյ . Ֆանուէլ . Ֆարէս . Ֆառաւոն . Ֆիլիսոփայ . Ֆիլիպպոս . և այլն . ասեմք . փանուէլ . փարէս . փարաւոն . փիլիսոփայ . փիլիպպոս : Գործոյ է սա և թուականշան . վասնզի մինչ վարեմք զնա պատուով այսպէս . փ : նշանակէ զինն հազար :

Փ Ա

Փագամ : || տե՛ս զՓանգամ :
Փաթաթ . ի . աւ .ից . օք : || փաթաթանք . զոր առեցես ՚ի ներքոյ : Իսկ մասնաւորապէս առեալ նշանակէ զգործի ինչ բոլորակ և տափարակ իբրև զփոքր բարձիկ . յորոյ վր արկեալ զլոշս՝ հարկանեն զներքսին կողիւք թոնրին , առ ՚ի մածանիլ և եփիլ : ռամկ . ևս քոլոբ :
Փաթաթանք . անաց . օք (անեզ .) || փաթոյթ . ՚ի փաթութումն . կամ պատումն . և կամ պարուրումն : Իսկ մերթ պատառոց . կմ պատան . և կամ ծրար : ռամկ . քոլոց :
Փաթաթեմ . կմ փագագեմ . եցի . եա . ել : (Ներգործ .) || պատատել . կմ պարուրել . կմ փաթութել . ռամկ . քոլոլել . կմ դըլըլել . ըստ այնմ ՚ի վարս հարց . Ե . ընդ էր փաթաթեցեր զձեան քո : Եւ Ոսկէ . 2 . հար . ժդ . սա : Եւ ոչ փաթաթի յուսականս

տեւոյ պտղնկին ։

Փաթեթ. կմ փաթեթա. ի. ին. ից. իւք։ || յուռութ, ըթ փաթոյթ դիւթական, զոր կախարդք, և մնոտեանք անզգամ պառաւ ճոճնք արկանեն 'ի տուն ուրուք, կմ թաղեն առ ակղեաւ իէլք, յաղագս կախարդելոյ զայս անուն, կմ զայն անուն մարդ. և կմ զինչս նր. և ըստ այսմ ասի 'ի ճառ_ ջոյն. Արբեցէ՛ք 'ի ձէնջ զագահութիւն, և զկ կանացի փաթեթոն, և զկախարդասար դեղատուութիւն։

Փաթոյթ. ութի. ին. ից. իւք։ || է արմատ փաթութել բային, և նշանակէ զփա_ թաթանքն։

Փաթութանք։ || տե՛ս զՓաթաթանք։

Փաթութ. ութի. ին. ից. իւք։ || է խաղ ինչ երաժշտական, որ ունի զայս ձև. Ծ։

Փաթութեմ։ || տե՛ս զՓաթաթել։

Փաթութումն. թման. ամբ. անց. ամբք։ || տե՛ս զՓաթաթանք։

Փալաքուշտ. բշտի. ին. ից. ըք։ || միջարան կենդանւոյ։ ռամկ. խուլաֆուշտ։ Եւ սա մանաւանդ յաշխարհական ըեպուճով 'ի գործ ածի. զի 'ի բարբառս գրոյ կոչի՝ փամ_ փուշտ։

Փաղանգ ։ || տե՛ս զՓաղանգ։ Լամբրօն։

Փախնում. փախեայ. խիր. ուլ։ (ընդ.միջ.) || նոյն է ընդ բայիս փախչիլ, որպ թագ_ նուլն ընդ բային թագչել։ Նարեկ. խառ։

Փախուստ. խստեան. եամբ. եանց. եամբք. կմ խստի. իւ։ || փախչելն, որ է արշա_ ւանօք 'ի բաց գնալն յերեսաց ուրուք։ Յես. 8. 20։ 1. Մակ. 9. 45։ Իսկ մերթ ընդ բայի շարանկցի այսպ, 'ի փախուստ դառնալ. կմ 'ի փախուստ մտանել, և նշանակէ, փախչել. կամ հալածական գնալ։ Թուոց. 21. 29։ Երէմ. 49. 24։ Եւ կմ այսպ, 'ի փախուստ դարձուցանել, և նշանակէ՝ փախուցանել. կմ հալածել։ ռամկ. ֆախցնէլ։ 2. Մակ. 4. 42։ և 11. 12։ և 12. 22։

Փախուցանեմ. ուցի. փախո՛. անել։ (անցողակ.) || 'ի փախուստ դարձուցանել. կմ հալածել. և կմ վանել։ ռամկ. ֆախըցընէլ։ 2. Մակ. 10. 15։

Փախչիմ. փախեայ. փախիր. փախուցեալ. չել։ (ձայնակր.) || 'ի փախուստ դառնալ. կմ խոյս տալ. և կմ տեղի տալ։ ռամկօր. եւս ֆախչէլ։ Եսայ. 2. 15։ և 14. 25։

Փախստական. ի. աՃ. աց. օք։ || տե՛ս զՓախստեայ։ Իմաստ. 17. 2։ Յոբ. 4. 7։

Փախստեայ. ստէի. ին. էից. իւք։ || 'ի փա_ խուստ դարձող. ըթ փախչող. կամ փա_ խուցեալ. և կամ հալածական։ Իմաստ. 19. 3։ Իսկ մերթ Է բայի շարանկցի այս_ պէս, փախստեայ լինել. կմ փախստեայ գնալ. և նշանակէ 'ի փախուստ դառ_ նալ. կմ փախչել։ Ղեւտ. 26. 17։ Յուդիթ. 15. 4։ 1. Մակ. 1. 40։ և 5. 5։

Փակ. ի. ին. ից. իւք. կմ ոք։ || այն ձոյլ, ո_ րով փակի ինչ. և ըստ այսմ փակ կոչեն փա կանք դրանց, զոր տեսցես զկնի. 3. Եզր. 3. 14։ ըստ այսմ փակ ասեն խեցք ծա_ կուց, կմ արգելք բերանոյ, և նմանեաց. ուստի և տառքն, որք 'ի յետուստ փա_ կեն դրով, և ոչ են բացարձակ իբրև ըղ տառն՝ է. ո. և օ. ասին փակ ունել. որ_ պիսիք են ասքա, այբ. բեն. ինի. և այլն։ 'Ի հին քերակին։ Դարձեալ՝ նշանակէ՝ փա կեալ. և ըստ այսմ իմանի մինչ ասի՝ պա տուհան փակ։ Իսկ մերթ ընդ բայի շա րանկցի այսպէս, փակ արկանել, և նշանէ պնդել փականաւ. և կմ փակել։ ռամկօր. գոցէլ։ 3. Եզր. 7. 3։

Փակագիր. գրի. ին. աց. օք։ || գիծ ինչ նշա նակեալ բաղկացեալ 'ի բազում տառից կցե լոց ընդ միմեանս, որպիսի է այս՝ Նն որ է Ներսէս։

Փակակալ. ի. աՃ. աց. օք։ || ունօղ զփա_ կանս իրիք. կմ վերակացու փականաց. և ըստ այսմ փակակալ կոչի՝ դռնապանն եկեղեցւոյ. կմ եկեղեցպանն. ըստ որում կրէ զբանալիս տաճարին։ Մծբն. ժթ. և 'ի Հոռոմոց. ժդ։ Սոյնպէս և Ն. պետրոս առաքեալն ըստ որում ունէր զփականս արքայութեան՝ կոչի՝ փակակալ երկնից. ըստ այնմ Կիւրղի Եգիպ. ժն. Զառաջակացն ա_ ռաքելոց՝ փակակալն երկնից պետրոս զան դամալոյծն բժշկեալ յարուցանէր։

Փակաղակ. ի. աւ. աց. օք։ || փականք, ըթ սողնակ, կմ նիգ, կմ աղխ. և այլ ինչ նը մանն, որով փակեմք զդրունս. ռամկօրէն [illegible], կմ [illegible], և կմ [illegible]. Երգ. 5. 6։ և 'Ի հին քերակ՝։ Իսկ մանաւանդ փակաղակ կոչի փոքրիկ կազմածն առեալ փակաղակ կոչի փոքրիկ կազմած ինչ փայտեղէն, զոր հաստատեն առ է_ զերբք փեղկից դրանց կմ պատուհանից, և այլոց նմանեաց՝ հեղուսելով զնա ընդ մէջ անհաստատ քակոււ. զոր 'ի բանալ և 'ի փակել փեղկիցն՝ մատամբ դարձու_ ցանեն։ ռամկ. մանդալ։

Փականք. անաց. օք։ (անեզական.) || փա կարան. ըթ գործի. փակելոյ. և ըստ այսմ փականք կոչի սողնակն, կմ նիգն, աղխն, կղպեղն. և այլք նմանք, որովք փակեն կուղպն. և այլք նմանք, որովք փակեն դրունք, կմ մուտք. և այլն։ ռամկ. [illegible], կմ [illegible], կմ [illegible], և կմ [illegible]. 3. Եզր. 3. 3։ Յոբ. 38. 10։ Իսկ մանաւանդ ըստ ս_ ռաւելոյ փականք կոչի բանալին. ըստ որում նովաւ բանամք և փակեմք զդրունս, և զայլ նմանիս նց։ ռամկ. [illegible]։ Եսայ. 22. 22։ Մատթ. 16. 19։ Յայտ. 1. 18։ և 20. 1։

Փակարան. ի. աւ. աց. օք։ || նոյն է ընդ վերնոյն։

Փակեղակ. ի. աւ. աց. օք։ || եզրափակել. ըթ բան, կմ այլ ինչ իր, որ դնել 'ի վախ_ ճանի իրիք՝ եղեալ փակէ զնա, որպի_ սիք են հաստատեալ աղօթք, որք յա_ ւարտ իրիք բանի ասացեալ լինին։

Փակեմ. եցի. եա. ել։ (ներգործ.) || փակ արկանել, կմ փականաւ պնդել, կմ խափա նել, և կմ արգելու ելից և մտից արկանել՝ իմուտ իրիք։ ռամկօրէն [illegible] գոցէլ։ Ծնն. 7. 17 և 19. 10։ Մատթ. 6. 6։ Իսկ մերթ պաշարել պաշարել յինքն, կմ արգելեալ ունել զոք

'ի

'ի շրջափակ տեղւոջ. կամ շրջապատել, և կամ պարփակել: ռամկ. խօխօթել ընել: և ըստ այսմ ասի. Փակել զմարդիկ 'ի քաղաքս, կամ 'ի բանտս. զձկունս 'ի յուռկանս. զթռչունս 'ի ծուղակս. և կամ զառեալս ինչ առհմանօք. և այլն: 1. Թագ. 23. 7: Յոբ. 38. 8: Ղուկ. 5. 6: Եւ յայսմանէ առեալ տալն, կամ մատնելն զմարդ 'ի ձեռս ուրուք՝ փակել ասի: 1. Թագ. 23. 20:

Փակեղն. կեղան. ղամբ. ունք. անց. ամբք: || պատառ գլխարկի, որ է երկայնաձիգ պատառ իմն, զոր 'ի կազմածս արևելից պատառեն զխուրիմ. կամ զգգալկաւ: ռամկ. քօլէղ. և տաճկեր. սարըխ: 'Ն Հօրս հարց. Է: Պորձ՝ փակեղ կոչի դաստառակաձև, կամ թաշկինակաձև երկայն պատառն, զոր կանայք և ոմանք 'ի մանկանց արկանեն զգլխով. կամ կապեն նովաւ զճակատ, և զգլուխ իւրեանց: ռամկ. գլխու չեմպեր. կամ եէմենի. և կամ չաչան: 'Ն Հօրս հարց. Թ: և Յայսմաւուրս:

Փաղ: || է մասնիկ բաղադրական, որ 'ի յարիլն 'ի բառս ունի զզօրութիւն մասնկանցս համ. կամ հոմ. կամ յար, կամ կից. զոր և կոչեմք բաղ:

Փաղաղեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || այրել. կամ կիզանել. կամ տոչորել. և կամ տապացուցանել. ըստ այնմ Լամբրօն. Զաշխարհ ամ արեգակն փաղաղէ: Եւ 'Ն Գիրս Գրիգորի Տղաբանին. ասի. Անէ զբաբելոնական հնոցին զկիզս. որ շուրջանակի փաղաղէր: Իսկ մերթ ուտել, կամ լափել, կամ ծախել, և կամ ճարակել. և Ը այսմ ասի 'Ն ճառս ինչ. Զանազան ախտիցն յոլովութիւն, ընդ մարմին փաղաղեալ ապականիցէ. Ք ընդ մարմին ճարակեալ, այսէ՝ ծախելով սպառեալ:

Փաղաղումն. ղման. ման. մանց. մամբք: || այրումն, կամ կիզումն, և կամ տոչորումն: Իսկ մերթ՝ ուտումն, կամ լափումն, կամ ծախումն, և կամ ճարակումն:

Փաղանգ. ի. աւ. աց. օք: || է բառ յունաց արտաբերեալ ըստ նց՝ Ֆալանգս. որով նշանակի յօդ մատանց. և ևս առդ ինչ մարդի, Ք մանրաղակի: Բայց մանաւանդ որպէս փաղանգ կոչիւր առ մակեդոնացիս գունդ ինչ հետևակազօր ընտիր պատերազմնաց՝ գումարեալ յութն հազար զօրականաց, որ 'ի ճակատուն մարտի ձևանայր քառանկիւնի, կամ ալաքաձև դրիւք, տեղատեղեալ 'ի նմա այր ընդ առն, ոտն ընդ ոտին. ասպար ընդ ասպարի առ՝ ելլ նիլ իբրև զպարիսպ անխախտելի: Եւ յայսմանէ առեալ փաղանգ կոչի ամ բանակ, կամ գունդ. կամ խումբ. կամ հոյլք. և կամ բազմութիւն, թէ զօրաց իցէ, և թէ ոչ. ըստ այնմ. Նարէկ: կե. Զխաւարասիրացն փաղանգս լուսեղինացն զինուց ապրեցի. Ք մատնեցի: Եւ Օձնեց. 2. հատ. Ժէ. Զամ փաղանգս մոլեացն սոքա յաղթահարեցին: ըստ այսմ և ս ասի. փաղանգ վշտասաղկանաց, թշնամեաց. գազանաց. խորհրդոց. և այլն: ռամկ. ճէօմ_

հիւրա: Լամբրօն. և Կիւրղէ պարապմանց: Պաղաձեալ՝ նշանակի սովաւ գազան ինչ խայտաբղէտ. զոր հայերէն կոչեմք, ինձ: ռամկ. ղօֆլան: Բայց ըստ այսմ ոչ է սա բառ յունական: 'Ն հին բժշկարանն:

Փաղանգամուշկ. մշկոյ. ով. ոց. ովք: || է խեժ ինչ արտադրեալ 'ի հնդիկս. զոր ոմանք 'ի բժշկաց կոչեն ձարխոտ. որ ըղ քարն գոյացեալ 'ի մարդն հալէ. և զարգելեալ մէզն արտաքս վարէ. օգտէ և ցաւոց կրծոց, և երիկամանց, և թանձրամած խլտոց, Ք պալղամաց. Խորէն. յաշխարհագրութեն:

Փաղանշան. ի. աւ. աց. օք: || համանշան. կամ նոյնանշան, Ք զնոյն իր նշանակող. որպիսիք են սուր. սուսեր. և այլն:

Փաղանշանեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || համանշանել, և կամ նշանակել յիմիք ըղ մասնաւոր ինչ:

Փաղանուն. անուան. ւամբ. անց. ամբք: || է բառ փիլիսոփայական, որ երբեմն առեալ լինի ներգործաբար. և յայնժամ նշանակէ զայն, որ փաղանուանէ. և ըստ այսմ փաղանուն կոչի անունն, որոյ ձայնն հասարակ է բազմաց. և ըստ ձայնին նշանակութիւն 'ի նոյ ամենեքին զոյգ և հաւասար. զոր օրինակ, կենդանին կոչի փաղանուն. զի նոյնով հնչմամբ ստորոգի զմարդոյ, զձիոյ, զարջառոյ. և զնմանեաց. և ըստ հասարակութե հնչմանն նշանակէ 'ի նոյ և զնոյն. Ք զբան կենդանութե: Այսպէս մարդն յորջորջի փաղանուն, զի նոյնով ձայնիւ ստորոգի զպետրոսէ, զպօղոսէ, զյօհաննէ, և զնմանեաց. և ըստ նոյնութե ձայնին ցուցանէ 'ի նոյ և զնոյն բան, Ք զէութի մարդկային: Ը այսմ իմա և զայլոց: Իսկ երբեմն առեալ լինի կրաւորաբար. և յայնժամ նշանակէ զփաղանուանեցեալն, կամ զայն՝ որ փաղանուանի. և Ը այսմ փաղանունք կոչին յարիստոտէլէ՝ այնոքիկ որոց անունն հասարակ է, և Ը անուանն բան էութեն նոյն յամի. զոր օրինակ փաղանունք կոչին արջառ, ոչխար. երիվար. և նմանք սոցին. ըստ որում ունին անուն հասարակ զկենդանին. և ըստ հասարակ անուանն և զնոյն հասարակ էութի. Ք զկենդանութի: 'Ն Գիրս ստորոգութե անյաղթի: Բայց ըստ քերականաց փաղանուն կոչին փաղանշան անուանք. Ք այնոքիկ, որք զանազան ձայնիւ զնոյն նշանակեն, յորմէ և կոչին նոյնանշանք, որպիսիք են սուր. խարբ. սուսեր. մարտացուց. վաղակաւոր. նրան. և այլն: 'Ն հին քերականութե:

Փաղանուանաբար. կամ փաղանունապէս: || տես զփաղանունակն 'Ն Գիրս ստորոգութե:

Փաղանուանեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || անուանել զինչ փաղանունութեք, Ք Ը նոյն հասարակ անուամբ և էութե. և ըստ այսմ ասի, կենդանին փաղանուանէ զմարդ, զպասկուռն, զոնգղն, զցին, և զնմանիս սոցա. զի ամենեքին սոքա միեղինապէս կոչին կենդանի:

Digitized by Google

Փաղանունաբար: (մակբայ որակական.) || տես 'ի ներքոյ զՓաղանունակի: 'Ի Գիրս Դաւթի անյաղթին:

Փաղանունակի: (մակբայ որակական.) || իբրև զփաղանունս. կմ փաղանունաբար. այ ըստ նոյնոյ անուան և նշանակութե. և կմ ըստ նոյնոյ հասարակ էութե. 'Ի Գիրս Դաւթի անյաղթին:

Փաղանունութիւն. թեան: || փաղանուն գոլն. կմ խնկութե փաղանուանն, որ է հասարակութի նոյնոյ անուան և էութե, զոր ունին բազումք:

Փաղառեմ. եցի. եա. ել: (Նորագործ.) || ծագի յանուանէն փաղառու. այս առնառէն 'ի բառէն առնառու. և նշանակէ՝ յարառացել. կմ համահաւաքել. և կմ 'ի միասին առնուլ: Իսկ մերթ՝ բաղադրել. կմ բաղկացուցանել. կմ յօդել. և կմ հեգել. և ըստ այսմ առի՝ փաղառել զանուանս վանկիւք, կմ տառիւք. և այլն. 'Ի հին քերականէ:

Փաղառու. առէի. առ. աց. օք: || փաղառող. այ նա՝ որ յարառոցէ. այս է միանգամայն առնու, կմ համահաւաքէ: Իսկ մերթ բաղադրող. կմ բաղկացուցանող. կմ յօդող. և կմ հեգող:

Փաղառութիւն. թեան: || վանգ. կմ հեգ, այ ձայն, որ միով հնչմամբ արտաբերի 'ի բերան մարդոյ: Արդ՝ սոքա երկքեան նոյն են ըստ նշանակութե, բայց ըստ կերպի նշանակելոյ զանազանին, զի նոյն ձայնն կոչի վանկ. այ բարբառ, ըստ որում միով հնչմամբ արտաբերեալ լինի: և հեգ՝ ըստ որում խառնուած գրոց հեգի: և փաղառութի, ըստ որում 'ի տառից փաղառեալ լինի. այ բաղկանայ: Յայսմանէ և յոյնք կոչեն զվանկն սիլլաբայ. զոր երբեմն գրեմք սիղոբայ, կմ սուղաբայ. որ [illegible] փաղառութիւն, կմ համահաւաքումն: 'Ի հին քերականէ:

Փաղաքշաբար: (մակբայ որակական.) || շողոքորթաբար, կմ մարդելուզաբար, և կմ ողոքանօք: 'Ի հին պատմագիրս:

Փաղաքշական. ի. աց. աց. օք: || շողոքորթական. կմ մարդելուզական, կմ ողոքական. և կմ [illegible]: 'Ի հին պատմագիրս:

Փաղաքշանք. անաց. օք: (անեզական.) || շողոքորթութի. կմ մարդելուզութի. և կմ ողոքանք: Յոբ. 1. Կորնթ. իբ: և Լամբրօն:

Փաղաքշեմ. եցի. եա. ել: (Նորագործ.) || շողոքորթել. կմ մարդելուզել. կմ [illegible], և կմ ողոքել: Նարեկ. Ժ: Յոբ. 1. հատ. իը: և 'ի [illegible] ժ[illegible]:

Փաղաքշութիւն. թե: || տես զՓաղաքշանք:

Փաղաքշումն. ման. մամբ. մանց. մամբք: || տես զՓաղաքշանք:

Փաղաքուշ. քշի. աց. աց. օք: || Է արմատ փաղաքշել բային. և նշանակէ շողոքորթող. կմ մարդելուզ. կմ [illegible]. և կմ ողոքող: և ըստ այսմ առի 'ի [illegible] փաղաքուշքն և կատակերգքն:

Փաղեմ. կմ փաղղեմ. եցի. եա. ել: (Նորագործ.) || փաղառել. կմ հաւաքել. կամ ժողովել. կմ բովանդակել. ըստ այնմ Դաւթի անյաղթին. Կենդանին զամ տեսակս իւր միանգամ փաղցեալ ունի յինքն: Իսկ մերթ բաղադրել. կմ բարդել. կմ յօդել. և կմ յարել:

Փաշխար: || նոյն է ընդ բառին բաշխար ըստ տմի: 1. Մակ. Ժ. 51:

Փաղհիւսեմ. եցի. եա. ել: (Նորագործ.) || բաղհիւսել. այ շարահիւսել. կմ շարայօդել. կմ շարամանել. և կմ միաւորել:

Փաղփաղեմ. եցի. եա. ել: (չէզոքական.) || փայլփայլել. կամ պսպղել. կամ շողշողել կամ փայլատակել. և կմ ճաճանչել: ռամկօր. [illegible]. կմ [illegible]. և կմ [illegible]: ըստ այնմ Նարեկ. 'Ի [illegible]. Յանձնառողութ գեղեցկութեան պաճուճեալ փաղփաղեալ: Եւ 'ի հին պատմագիրս, ասի. փաղփաղէր մարմինն 'ի բարձրէն՝ զի՛ր օրինակ ձիւն սպիտակութեամբ: Դարձեալ նշանակէ՝ պղպջել՝ կմ ընձիւղել. կմ պարկել. և կմ բուսանել. ըստ այնմ 'ի հին պատմագիրս. Զեւս էր փաղփաղեալ բողբոջել մրգաբերքեայք մորմացն:

Փաղփաղիմ. եցայ. եցաւ. իլ: (Ձայնակր.) || տես զՓաղփաղեմ:

Փաղփաղիւն. (Նախադրիճ հոլովի.) || փայլփայլումն, կամ շողշողումն. կամ փայլատակումն. և կամ ճաճանչումն: ռամկօրէն. [illegible], կամ [illegible]. կամ [illegible]: Իսկ մասնաւորապէս առեալ նշանակի [illegible], այ փայլուն նիշքն ախտեալ զերեսօք կերպասոց. կմ պաղպաջակաց իմն բաղմնշանից մանուածոց այլեւայլ գունոց, զոր մանաւանդ կոչեմք պաղպաջ. ռամկ. [illegible]. կմ [illegible]:

Փաղփաղուն: (Նախադրիճ հոլովի.) || պաղպաջուն, կմ շողշողուն, կմ փայլփայլուն. ռամկ. [illegible]:

Փաղփիմ. եցայ. եցաւ. իլ: (Ձայնակր.) || փայլել. կմ փայլատակել. կմ ճաճանչել. և կմ պայծառանալ: Իսկ մերթ՝ գեղեցկանալ, կմ հեշտանալ. կմ փափկանալ. և կմ զուարճանալ. ըստ այնմ Լամբրօն. [illegible] 'ի կանանց գեղեցկութի փաղփել:

Փաղփիւն: (Նախադրիճ հոլովի.) || տես ըզՓաղփումն:

Փաղփխնափայլ: (Նախադրիճ հոլովի.) || փաղփուն և փայլուն. կամ փաղփաղուն. կմ ամենափայլ. կմ շքեղափայլ. և կմ գեղապայծառ. և ըստ այսմ առի փաղփխնափայլ ծաղիկ. պսակ. անօթ. և այլն:

Փաղփումն. փման. մամբ. մանց. մամբք: || փայլումն. կմ շողիւն. կմ ճաճանչ. կմ պայծառութի. և կմ շքեղութի. և ըստ այսմ առի փաղփումն ականց. զգեստուց. անօթոց. գունոց. և նշանաց: ռամկօր. [illegible]. կամ [illegible]. և կմ [illegible] 'Ի Գիրս [illegible]:

Փաղփուն. (Նախդրիւ հոլովի.) || փայլուն. կմ լուսափայլ. կմ պայծառ. կմ շքեղ. և Թ այսմ առի փաղփուն զգեստ. կմ անօԹ. և այլն: Լամբրոն.

Փամբիւն. || տե՛ս զԲամբիւն: Խորէն. Ա. պր. 30:

Փամփուշտ. փշտայ. ով. ոց. ովք: || մաշկեղէն պարկ զետեղեալ է որովայնին կենդանեաց յառաջոյ կողման. ուր քամեալ հաւաքին ամ խոնաւուԹիւք միզի. և անտի Թ ժամանակին արտաքս վարին: Զառ յաճախակի կոչեցեալ յանասնոց փչեն. և զերբամն արկեալ պայԹուցանեն. կամ յայլ պէտս 'ի կիր արկանեն: ռամկ. խարխբուշտ. կամ հալաբուշտ. ըստ այնմ 'Ի հին տաղարանիցս. Զփամփուշտ արջառոյ փչեն, և ընկենուն 'ի նա հատ կորեկի: 'Ի ձկ[illegible] փամփուշտ կոչի մասնաւորապէս պատառ ինչ Թղթոյ ուժգնապինդ, լցեալ վառօդիւք, ընդ պարուԹով, յոր ընդ մերձենալն հրոյ՝ բորբոքի. և պայԹուցեալ ահագին ձայն հանէ: ռամկ. Փիշէնկ: Երբ է սորա այլ տեսակ ինչ կոչեցեալ փամփուշտ ամբար ձաձիգ. կմ օդաԹռիչ. զի 'ի մերձեցուցանելն զնա 'ի հուր, շտապաւ սլանայ 'ի բարձունս. և անդէն պայԹուցեալ. և 'ի կայծակունս ցնդեալ. կանԹեղաբորբոք վառմամբ իջանէ յերկիր: ռամկօրէն. հաւայՓիշէնկի:

Փայլ. (Նախդրիւ հոլովի.) || փայլուն. կմ փայլումն. ըստ այնմ Նարէկ. 'Ի գովեստ առաքելոց. ինքն զփայլ մաքուր փայլական:

Փայլած. ոյ. ով. ոց. ովք: || փայլումն. կմ շողիւն. զի մանեկեան ած, բաղում անգամ վարի փոխանակ մանկանա՝ ածի. կմ ածի. ուր փոխանակ ասելոյ՝ կատարումն՝ ասեմք՝ կատարած: 'Ի Գիրս Գրիգ. Տղայ[illegible]:

Փայլածեմ. եցի. եմ. եմ: (չէզոք.) || փայլածիւն արձակեմ. կամ փայլատակեմ: ռամկ. Փալփլալ. կմ պլպլալ:

Փայլածիւն. (Նախդրիւ հոլովի.) || փայլատակումն. կմ փայլումն. կամ Նշոյլ. և կամ պայծառուԹիւն. և յայսմ անուն տեսեալ Նոյն պայծառանք մոլորութեանց, որք են փայլումն Նոցա, փայլածիւն կոչին: Ղևտ. 13. 38. և 39:

Փայլածու. ուի. աւ. աց. օք: || փայլատակող. կմ փայլուն. կմ ճառագայԹաւոր. և կմ լուսափայլ. և ըստ այսմ Յոբ. 37. 21. փայլածու կոչին լուսապայծառ և ճառագայԹեալ երկինք. կմ օդք: Իսկ մասնաւորապէս առեալ Նշանակի առաւ մին յեօԹանց մոլորակաց. որ կոչի 'ի յոյն բարբառ Երմէս. 'ի լատին բարբառ՝ Մերքուրիուս. իսկ 'ի պարսիկ լեզու՝ Ատարիտ: Մարմինն է փոքր քան զԵրկ աստեղս. իսկ բնուԹիւն փոփոխական. զի ըստ մոլորական՝ ընդ որոց ուղեկցի, յեղյեղի և այլայի: Ձեռնեալ 'ի վերոյ քան զլուսինն. և 'ի վերուստ Թուեալ՝ մերձաւորագոյն է 'ի մոլորակս. և ծածկի 'ի տեսուԹենէ աչաց. զի մօտ է ճառագայԹիւք արեգական, որք

խափանեն զտեսանել Նմա: Համեմատեալ մեծուԹեան երկրի փոքր գտանի քան զնա երկերեք և կիսնուաստանանգամ: Կատարէ զըն ԹացսիՒր Է արեգական 'ի շրջման միոյ տարւոյ: Իբրև բարեխառն սեամաղձից. բնաւորէ զանիշեալս Է աղդեցուԹ իւրով 'ի ճարտարաբանուԹին, և 'ի խորագիտուԹին: Իսկ 'ի հանգս երկրի պատճառէ ըղձմտիկ, որ է ծիծառ: Յն որդի: և 'ի Գիրս Ծննդ. Թի ասացեալն:

Փայլակայծակ. (Նախդրիւ հոլովի.) || ըղ կայծակունս փայլատակող. կմ փայլակնացայտ:

Փայլակեմ. եցի. եմ. եմ: (չէզոք. և մերԹ Ներգործ.) || տե՛ս զՓայլատակեմ: Յն որդի: 'Ի Գիրս Գրիգ. Տղայ:

Փայլակիր. կրի. աւ. աց. օք: || կրող. կամ ունօղ զփայլումն. կմ փայլուն. և կամ լուսափայլ:

Փայլակն. լական. ամբ. անց. ամբք: (մանաւանդ վարի առաս եղակամն. իսկ Թէ յոգնականն պէտոյ լիցի, դնի փայլատակունք. տականց: || բոց անօսր փայլատակեալ 'ի մէջ ամպոց՝ յանկարծական շող շողմամբ. և այս պատճառի 'ի բորբոքմանէ և 'ի ծծմբաւնիւԹ շոգեաց, որք մի ոյ բուրեալ կան 'ի պէտայէս խոռչս ամպոց. երբ 'ի փախչումն, ընդ որս խառն ընդ Թանձրաց հուր պատճառեցեալ 'ի չերմուԹէ, և 'ի ուժգին շարժմանէ, յանկարծակի լուցանին երբև զվառօդ, Թ խաղողաշուրս, և փայլատակեալ ցնդին յօդս. Այլ եԹէ լցեալ տեղս խիտ և հոծ. զբաղեալ 'ի բուռն փախչուԹեամբ՝ ուժգնակի պայԹուցեալ զնո. 'ի զօրութս զեղանին. և ընդ այն զերկի նշ լինի անհեղ բարբառ, որ կոչի որոտումն: Իսկ եԹէ ոչ՝ անբարբառ և եԹ փայլատակեն. որպէս լինի և այլոքիկ, որք յաճախ տենչեայն ամ Նեղերանիւք երկնից ստիպել առեալ վառեալ շողշողին: ռամկ. Փայլուն. և տաճկ. Շիմշէկ. 2. Օրին. 32. 41: Իսայ. 10. 6: Մտթ. 24. 27: Բայց երբեմն առեալ լինի փոխանակ կայծականն ամպոց, որ է հրացանուԹի Ձուեալ յերկնից զկնի փայլատակման: ռամկ. կայծակն. և տաճկ. Եըլտըրըմ: և ըստ այսմ ծագի և անուն փայլակնահարն, որ է կայծակնահար: Իսկ երբեմն փոխանակ կայծականց հրոյ և Նմանեաց: ռամկ. կայծ. ըստ այնմ 'Ի Գիրս Գրիգ. Տղայ. Զփայլակն տիրոց շիջուցանել:

Փայլակնակերպ. (Նախդրիւ հոլովի.) || տե՛ս զՓայլակնատեսիլ: Շնորհալին:

Փայլակնահար. (Նախդրիւ հոլովի.) || փայլակամբ հարկանող. կմ փայլատակմամբ շլացուցանող. և մերԹ կայծակնահար. և կմ շանԹահար: ռամկօր. կայծակը զարկած: 'Ի հին տաղարանիս:

Փայլակնաձև. (Նախդրիւ հոլովի.) || ունօղ զնմանուԹին փայլականն. կմ երևեալ իբր և զփայլակն, կմ փայլակնակերպ, և կմ փայլակնատեսիլ: Նարէկ. ոյ. և 'Ի շարականս:

Digitized by Google

Փայլակնեմ. ացայ. ացի՛ր. ալ. (Ձայն.) || փայլակն լինել, կամ փայլակնաձեւ փայլել. կմ փայլատակել, և կմ ճառագայթիւք պայծառանալ. և ըստ այսմ ասի, փայլակնացեալ հուր, կմ մարմին. և այլն։ 'Ի շարականս. և 'ի Վարս հարց. իմն։

Փայլակնանման. (Նախդրիւ հոլովի.) || տե՛ս զՓայլակնաձեւ։ Նարեկ. ղզ։

Փայլակնանշոյլ. (Նախդրիւ հոլովի.) || որ ձայկօղ զփայլակնաձեւ նշոյլս, կմ փայլել 'ի ձեւ փայլական. կմ բոցանշոյլ, կմ պայծառափայլ, և կմ լուսապայծառ. և ըստ այսմ ասի. փայլակնանշոյլ ակն։ Նար. ղզ։

Փայլակնատեսիլ. (Նախդրիւ հոլովի.) || ունօղ զտեսիլ փայլական. կմ երեւեալ իբրև զփայլակն, և կամ փայլակնաձեւ. 'Ի Վարս հարց. իմն։

Փայլակնացայտ. (Նախդրիւ հոլովի.) || որ ձայկօղ զփայլատակունս. կմ ցոլացուցանօղ զնշոյլս, և կմ ճառագայթարձակ. և ըստ այսմ ասի, փայլակնացայտ լոյս. գալուստ. դէմք. և այլն։ Լամբրոն. և 'ի Շարականս։

Փայլակնընթաց. (Նախդրիւ հոլովի.) || ընթացօղ իբրև զփայլակն, կմ ցոլացեալ նման փայլական։ Նարեկ. ղզ։

Փայլատակեմ. եցի. եմ. ել. (չէզոք. և մերթ ներգործ.) || փայլատակունս արձակել, կմ յանկարծ թռուցմամբ փայլփայլել, կմ ճառագայթել, և կմ ծագել. ռամկօր. ֆոյլաւ ԵԼԼԵԼ. կամ ֆուլխլալ։ 1. Մակ. 6. 39։ Սաղ. 143. 6։ Եզեկ. 1. 4։ Ղուկ. 17. 24։

Փայլատակեցուցանեմ. եցուցի. եցոյ. ել. (անցող.) || տալ փայլատակել, կմ արձակել զփայլատակմունս, և կմ ցոլացուցանել։ 2. Թագ. 22. 15։ Իմաստ. 11. 19։

Փայլատակումն. կման. մամբ. տակմունք. մանց. մամբք. || յանկարծական թռուցմամբ փայլումն, կմ արձակումն հրոյ. կմ ցոլմունք. կմ փայլիւն. կմ ճառագայթ. և կմ ճաճանչ ստուգեալ, թէ լուսոյ իցէ, թէ հրոյ, և թէ պայծառութեան։ 1. Մակ. 6. 39։ Յոբ. 41. 9։ Ածբան. 3. 11։ Դատար ձեռաւ՝ յաճախական նշանակի առնուլ փայլակն, որ 'ի վերոյ մեկնեցաւ. և այսու նը շանակութ. մանաւանդ վարի յոգնականն սորա. ռամկ. ֆոյլաւ. տաճկ. շիմշէկ։ Եզեկ. 19. 16։ Յայտ. 4. 5. և 8. 5։ և 11. 19։ Բայց գիտելի է. զի յոգնականն սորա ըստ մեծի մասին համառօտմամբ վարի. զի փոխանակ ասելոյ փայլատակմունք. մանց. տակմունս, ասեն. փայլատակունք. տակունց, կմ տակաց. տակունս. ըստ որում յաճախ երեւի 'ի գիրս նախնեաց։ Սաղմ. 96. 4։ Իմաստ. 5. 22։ Եբրէ. 10. 13։ Պետ. 3. 73։

Փայլատակունք. կանց. կամբք. || է յոգնական բառիս՝ փայլատակումն. տե՛ս 'ի վերոյ ասացեալ 'ի մեկնութեան նորա։

Փայլեմ. եցի. եմ. ել. (չէզոք.) || փայլել, որ է շողալ, կմ փայլատակել, կմ ճաճանչել, և կմ պայծառանալ։ Ընդհանուր։ իսկ մերթ վարի ներգործաբար. և նշանակէ. փայլեցուցանել։

Փայլեցուցանեմ. եցուցի. եցոյ. ել. (անցողակ.) || տալ փայլել, կմ փայլումն տանել. կմ ճառագայթել, և կմ պայծառացուցանել։ ռամկ. ֆայլէշթիլ. կմ ծիլայ փոլ։ Նարեկ. ղզ։ և Լամբրոն։

Փայլիմ. եցայ. եայց. իլ. (Համանակր.) || տե՛ս զՓայլեմ, ըստ որում վարի չէզոքաբար։ 'Ի շարականս։

Փայլիւն. (Նախդրիւ հոլովի.) || փայլումն, կմ շողիւն. կմ փայլատակումն, կմ լոյս ցոլացեալ, կմ ճաճանչ. և կմ պայծառութիւն։ 2. Մակ. 5. 3։ Եզեկ. 21. 15։ Նաւ. 3. 3։

Փայլուած. ոյ. ով. ոց. ովք. || փայլիւն, կմ փայլումն. ըստ այսմ Նարեկ. ղզ. իբրև ըզ փայլուած լուսանկար բոցոյ։

Փայլումն. || տե՛ս զՓայլիւն։

Փայլուն. փայլնոյ. ով. ոց. ովք. || ունօղ զփայլումն, կմ փայլօղ. կմ լուսափայլ, և կմ պայծառ։ Ղեւտ. 13. 19. և 38։ Մարկ. 9. 2։ Բայց մինչ ասի՝ պղինձ փայլուն, նշանակէ՝ արոյր. և կոչեցաւ այսպէս, ըստ որում է իբրև յազգէ պղնձոյ. և 'ի գործիլն՝ ոսկեգոյն փայլատակէ. ռամկ. դեղին պղինձ. և տաճկ. փիրինճ։ 3. Թագ. 7. 45։ Եզեկ. 40. 3։

Փայլունակ. ի. աւ. աց. օք. || տե՛ս զՓայլուն։ Նարեկ. իզ։

Փայլփայլեմ. եցի. եմ. ել. (չէզոք. և մերթ ներգործ.) || նոյն է ընդ բայիս շողշողել. ըստ ամ նշանակութեանցն։

Փայլփայլիմ. եցայ. եայց. իլ. (Համանակր.) || փայլելով փայլել, կմ յաճախ փայլել, և կամ շողշողել. ռամկօր. ֆունկլալ. կամ պսպղալ։

Փայլփայլումն. լման. մամբ. մանց. մամբք. || յաճախ փայլումն. կմ փայլատակումն. կմ շողշողումն։

Փայծաղն. ծեղան. ամբ. ծեղունք. ծեղանց. ամբք. || է փորոտի ինչ թխագոյն կակամբք. գեղագոյն և սպնգանման. զետեղեալ առ երի որովայնին 'ի ձախակողմն կողս, յանդիման լերդին. կազմուածով է տափարակ 'ի մէջ, 'ի ձեւ թաթին, խորոփեալ 'ի միջին կողմանէ իբրև զակն, որով կից և մօտ կայ խախացոցին. իսկ 'ի միւսմէ կողմանէն է կորնթարդ, ըստ տաշտաձեւ կորանեցեալ, որով մերձի 'ի կողս։ Արդ՝ է սա մթերանոց հիւթոց սեաւմաղձին. զոր ձգէ յինքն 'ի լերդէն, ուր գոյանայ հիւթն այն. որոյ զնրբագոյն մասունսն ծախէ 'ի սը նունդ իւր. և զմնացորդսն, որք են թթու, արկանէ ընդ անցս ինչ 'ի խախացոցն, ուր լուծանեն զխաշոր մասունս կերակրոյ, և յորդորեն զախորժանս ուտելեաց. զի բանան զերշտակն. ռամկ. ֆոծէլ. և տաճկեր. փալաղ։ Յոբ. 1. հայ. իզ։

Փայտ. ի. իւ. ից. իւք. || նիւթ փայտեղէն, որ է իբր մարմին ծառոյ, և այս թէ հատեալ և գործեալ իցէ. և թէ տնկեալ 'ի ծառս. ռամկ. ֆոփ։ Ծնն. 6. 14։ և 22. 3։ Ելից. 25. 5։ Բայց երբեմն եդեալ լինի

փոխանակ ծառոյ, կամ տնկոյ: Ծննդ. 1. 12. և 29: Ժողով. 2. 5: Երբեմն և փայտ կոչին հասարակ անուամբ ամ պտղաբերք փայտեղէնք, որպիսիք են կաղամախք. կաղինք, և նմանք սոցա: Ծննդ. 40. 22: Եզեկ. 16. 18: Եւ յաղօթսն Երեմիայ. 13: Պտղոյ մինչ առ ի փայտ բուղոյ, խմանի, բուզաբեր ծառոյ՝ որպիսի է ձիթենին, կամ բալասանն, և այլք նմանք: Եսայ. 41. 19: Իսկ մինչ առ ի փայտ խնկոց, նշանակէ՝ խնկաբեր ծառս, կամ անուշահոտ տունկն, որպիսի է նոճն. թեղօշն. մայրն. և այլք նմանք: Յայտ. 18. 12:

Փայտաբեր. ի. ից. կամ աց. օք: || բերող. կամ կրող փայտի: ռամկօրէն ֆոփ բէրօղ: Յեսու. 9. 21:

Փայտագործ. ի. ից. աց. օք: || գործող. կամ շինօղ փայտեղինաց: Իսկ մերթ՝ գործեցեալ. կամ շինեցեալ փայտիւք. և ըստ այսմ առի փայտագործ պատկեր. կամ տապանակ. և այլն: Աճգում:

Փայտակերպ. ի. աց. աց. օք: կամ ից. ից: || կերպեցեալ, կամ շինեցեալ ՚ի փայտից. կամ փայտեղէն. և ըստ այսմ առի. փայտակերպ լաստ. կամ գործի. և այլն: ռամկ. ֆոփ է շինած: Թուոց. 31. 20: Նարեկ. ղզ: և ՚ի Գուշկանին: Իսկ մերթ վարի երբեմն զգայական. և նշանակէ զկերպարանս ՚ի փայտից. կամ զփայտեղէն կազմուածս. որպիսիք են ոմանք տունք. կաշք. կամ անօթք. և այլն: 1. Մակ. 1. 33: 3. Մակ. 5. 23: Եզեկ. 6. 6: Եզեկ. 41. 25: Իսկ ՚ի շարական՝ նոցն, որ առի. Տարբերեղէն փայտակերպն. նշանակէ քառաթև նշ խաչն. ըստ որում էր կերպեցեալ ՚ի փայտէ:

Փայտակերպիկ. (Նախադրիճ հոլովի.) || փայտեղէն կերպուածիկ. կամ նուաստ և աղքատ կազմուած փայտի: Աճգում:

Փայտակոյտ. կուտի. ից. ից. իւք: || կուտող, կամ դիզող զփայտ: Իսկ մերթ՝ կոյտ, կամ դէզ փայտի. և կամ փայտ կուտեալ: ռամկ. ֆոփի դէզ: Եսայ. 30. 33:

Փայտակտուր. ի. ից. ից. իւք: || կտրօղ փայտի, ոք նա՝ որ երթեալ հատանէ ըզփայտ յանտառէ, և ածէ ՚ի շէնս. կամ որ զբերեալ փայտս հերձանէ, և ջարդէ առ ՚ի այրել: ռամկ. ֆոփ կըրօղ. կամ ֆոփ ճեղքօղ. և տաճկ. օտունճիտարն: 2. Օրէն. 29. 11: Յեսու. 9. 21. և 27:

Փայտահատ. ի. ից. աց. օք: || հատանող փայտի. կամ փայտակտուր: ռամկօր. ֆոփ կըրօղ: Իսկ մանաւանդ յատկապէս առեալ՝ նշանակի սովոր գործին հատանելոյ զփայտ. և ըստ այսմ փայտահատ կոչի կացինն. կամ տապարն. սղոցն. և այլն. ըստ այնմ ՚ի Վարդանայ. խա. Եւ ես եառ նզ անօթս, և փայտահատս, և բրիչս:

Փայտահար. ի. ու. կամ ից. աց. օք: || հարկանող զփայտ. ոք նա՝ որ զնացեալ յանտառ հատանէ զփայտ, որ և առի՝ փայտակտուր: ռամկ. ֆոփ կըրօղ: Եսայ. 10. 15: և 14. 8: Եզեկ. 46. 22:

Փայտապարկ. ի. ից. աց. օք: || ունօղ զփայտեղէն յարկ. կամ զփայտակերպ ձեղուն: ռամկ. ֆոփէ ծածք ունօղ: ՚ի հին պարմանգիրս. Իսկ մերթ յարկ փայտեղէն. կամ փայտակերպ տուն:

Փայտանալ. ացայ. ացիր. ալ: (չեզոք.) || փայտ լինել. կամ ՚ի փայտ փոխարկիլ: Իսկ մերթ նմանութեամբ առեալ՝ նշանակէ տառանանալ, որով լինի ոք իբրև զփայտ: ռամկ. ֆոփնալ. կամ ֆոփ կըտրիլ: ըստ այնմ Մծբն. Ժ. ՚ի տուէ արևակէզ լինէր ՚ի խորշակէ, և զցայգ ՚ի ցուրտ փայտանայր:

Փայտապաշտ. ի. ից. ից. օք: || պաշտօղ ըզփայտ. կամ նա՝ որ պաշտօն մատուցանէ փայտի իբրև այ. որպիսիք էին ոմանք ՚ի կռապաշտից:

Փայտապաշտութիւն. թեան: || պաշտօն տուեալ փայտի. և կամ պաշտամունք, զոր ընծայէին փայտակերպաց իբրև այ. որ է կռապաշտութիւն: Աճգ-ք:

Փայտատատան. ի. աց. աց. օք: || տեղի, ուր կան յաճախութիւնք փայտից:

Փայտատ. ի. ու. աց. օք: || տապար. կամ կացին. և առաջանէ փայտատատ. ՚ի բերեթէ փայտահատ. զի նովաւ սովորութիւն է հատանել զփայտս: ռամկ. պալթայ: 2. Օրէն. 19. 4: 1. Թագ. 13. 20: Եսայ. 10. 15: Պարզեալ նշանակէ բրիչ, կամ գործի երկաթեղէն կըռածոյ. որով բրեն զերկիր. և ըստ այսմ առի, բրել զգետին փայտատաւք և բահիւք. և այլն: ռամկ. ֆէտրաֆ. և տաճկերէն. ղազմայ: Աճգում: Շնորհալին: և ՚ի Վարդանայ. խզ:

Փայտեայ. տէի. ից. ից. իւք: || տե՛ս ՚ի ներքոյ զՓայտեղէն:

Փայտեղէն. ղինի. աւ. աց. օք: || այն ամ, որոյ նիւթն է փայտ. կամ որ շինեցեալ է ՚ի փայտէ. և կամ փայտակերպ: ռամկ. ֆոփէ: Ղևտ. 11. 32: և 15. 12: Թուոց. 35. 18:

Փայփայական. ի. աւ. աց. օք: || գգուողական. կամ ողջագուրական. կամ գորովական, կամ խնամարկական. և կամ տածողական:

Փայփայանք. անաց. օք: (անեզ.) || գգուանք. կամ ողջագուրմունք. կամ գթասիրութիւն. կամ գորովական խնամարկութիւն. կամ դարման. և կամ տածումն:

Փայփայեմ. եցի. եա՛. ել: (Ներգործ.) || գըգուել. կամ ողջագուրել. կամ գորովել. կամ գթասիրել. և կամ գորովագութ սրտիւ դարմանել. և կամ տածել. և ըստ այսմ առի. փայփայել ծնողաց զմանկունս. կամ խանաց զժողովուրդս. հոգաբարձուաց զհիւանդս. և այլն: ռամկ. օխշամիշ ընել. կամ ունող պէտ ընել. կամ հոգ տանել: Մաղ. 3. 17: Խորէն. Գ. գլ. 68:

Փայփայումն. յման. մամբ. մանց. մամբք: || տե՛ս զՓայփայանք:

Փայքար: || տե՛ս զՊայքար: ՚ի հին պարմանգիրս:

Փանաք. ի. ից. ից. իւք: || նոյն է ընդ բառին փանաքի, ոչ վրիթխարն ընդ բառին վրիթխարի. ըստ այնմ ՚ի հին պարմանգ.

Digitized by Google

'ի փարթամս, և 'ի փանաքն զնոյն կշիռ միապէս պահանջէին ։

Փանաքանամ . ացայ . ացիր . ալ ։ (ընդ.միջ.) || փանաքի լինել, որ է գծծանալ . կամ նուաստանալ . կմ տկարանալ . կմ անարգանալ . և կմ ունայն լինել ։

Փանաքապէս ։ (մակբայ .) || նուաստաբար . կմ տկարաբար . կմ անարգաբար . և կամ աղքատօրէն . ըստ այնմ Լամբրոն . Այս_ քան իմանալիք փանաքապէս յաղագս այ ։

Փանաքի . քւոյ . եաւ . եաց . եօք ։ || գծուծ . կմ նուաստ . կմ տկար . կմ չնչին . կմ ա_ նարգ . և կամ ունայն . և ըստ այսմ ասի, փանաքի այր . կմ միտք . կմ իմաստք . կմ արուեստ . կմ գործ . և այլն ։ ռամկ . ցած . Նարէկ . գլ ։ Լամբրոն ։ և 'ի հին թերգման ։ Իսկ միրթ՝ աղքատ, կմ չքաւոր . կմ անինչ . և կմ տառապեալ ։ ըստ այնմ Լամբրոն . Ը որում և հարկ արքունի 'ի փանաքեաց և 'ի փարթամաց հաւաքի ։

Փանաքիմաց ։ (նախդրիւ հոլովի .) || ունօղ զփանաքի իմացումն . կամ որ է նուաստ իմացութեան . կմ տկարամիտ . և կմ աղքատամիտ . և ըստ այսմ ասի, այր, կմ միտք փանաքիմաց ։ Լամբրոն ։

Փանաքիմացութիւն . թեան ։ || փանաքի իմացումն . կմ նուաստ հանճար . կմ տկարամտութիւն . և կմ աղքատամտութիւն ։ 'ի հին թարգմանիչս ։

Փանաքութիւն . թեան ։ || գծծութիւն . կամ նուաստութիւն . կմ տկարութիւն . կմ անարգութիւն . և կմ ունայն գոլն ։ Լամբրոն ։

Փանդամ . կամ փադամ . ի . աւ . աց . օք ։ || կողպակ, որ ծածկոյթ գլխոյ կանանց, որ երբեմն կախի 'ի մեծ պատառէ, և ծածկանէ մինչև ցոտս ։ ռամկ . [illegible], կմ [illegible] ։ Իսկ երբեմն 'ի փոքր պատառէ և հասանէ մինչև ցմէջս ։ ռամկօր . [illegible] ։ Պարզեալ՝ մանաւանդ որպէս փանդամ կո_ չի պատառն ձևացեալ իբրև զդատապ_ րակ, զոր 'ի գաւառս ինչ ածեն կանայք զկզակօք . և զբերանովք իւրեանց յելա_ նելն 'ի հրապարակս . ռամկ . [illegible] ։

Փանդիռն . փանդռան . ամբ . փանդռունք . անց . ամբք ։ կմ փանդիռ, և կամ փան_ դիռ . փանդռի . աւ . աց . օք ։ || է տեսակ ինչ քաղցրաբարբառ փողոյ, զոր կալեն 'ի հրահանգելեաց օձատարաց գաղարեալ, և հարկանեն 'ի մարմնի պատերազմի, և կմ յերկելի խնջոյս, ոչ և երբեմն 'ի հնումն 'ի հանդէս մեռելոյ ։ ռամկօր . [illegible], կմ [illegible] . ըստ այնմ Աճգոյ . Հզօր հազարապետութեամբ պարգևեցաւ վեշապա_ դլուխ փողս և փանդռս բարձրաբար_ բառս ։ և 'ի հին թարգմանիչս ասի . Զմեռելոյ լալին փողովք և փանդռովք ։

Փանդռահար . ի . աւ . աց . օք ։ || հարկա_ նօղ փանդռան, որ 'ի նա՝ որ արհեստիւ հն չեցուցանէ զփանդիռն ։ ռամկ . [illegible] ։ 'ի հին թերգման ։

Փապ . ի . աւ . աց . օք ։ || նոյն է ընդ բառիս փապար . ուր տեսն ընդ բառին փապար ։ Յո [illegible] ։

Փապար . ի . աւ . աց . օք ։ || պատառուած, կմ փորուած բացեալ 'ի բունս ծառոց . կմ 'ի վէմս ժայռից . և կմ 'ի լերինս, և 'ի նմանիս սոցա, զոր և կոչեմք խոռոչ, կմ ծերպ ։ ռամկ . [illegible] ։ Եսայ . 7 . 19 ։ Յեր . 2 . 7 ։ Եբր . 11 . 38 ։ Բայց սա երբեմն գրի փապ, և զնոյն նշանակէ . ըստ այնմ Աճ_ գոյ . Պինեմ զքեզ 'ի փապ վիմիդ ։ Եւ 'ի Յո [illegible] ասի . Ցուցէք զկետոյս քո խոր հրդին, թագուցելոյն 'ի փապ վիմին .

Փապարեմ . եցի . եա . ել ։ (ներգործ .) || փա_ պարս բանալ, կմ պատառուածս տանել, կմ գոգել, կմ փոսորակել, և կմ խոռա_ չացուցանել ։ ռամկ . [illegible] ։ Եւ յայսմանէ առեալ նշանակէ և՝ վիրաւորել, կամ խոցել, և կմ խոցս տանել 'ի ձեռս, կմ յառա [illegible] ։ ռամկ . [illegible] ։ Բայց երբեմն վարիս չէզոքաբար [illegible], զոր տեսցես զկնի 'ի բայն փապարիմ ։

Փապարիմ . եցայ . եաց . իլ ։ ([illegible]) || փապար լինել, կմ խոռոչիլ, կմ գոգիլ, կմ փոսորակիլ, և կմ խոցոտիլ ։ ռամկօր . [illegible] ։ Իսկ միրթ պատառիլ, կմ վիրաւորիլ, կմ խոցս [illegible], որ խոշոր և սաստիկ [illegible] ։ ռամկ . [illegible] ։ Ը այնմ 2 . Օրին . 8 . 4 . Հանդերձք քո ոչ մաշեցան 'ի քէն, և ոտք քո ոչ փապարեցին, որ ոչ փապարեցան ։

Փառ . ի . իւ . ից . իւք ։ || մաշկ՝ որ փարեալ պատի զիմիք . և ըստ այսմ փառ կոչին թաղանթք ձուոց, կմ հատից նռնոց ։ Այնպէս փառ անուանին և ծիծն աչաց, որ է մաշկեղէն պարկն . որով ծնանին երե_ խայն . ըստ այսմ իմն և զայլոց ։ Ցայտն_ [illegible] ։ Պարզեալ՝ փառ կոչի երգ ինչ եկեղեցական յօրինեալ բազմանիչ [illegible], և հատուածեալ իբրև զտունս մի [illegible], զոր նուագէին առ նախնեօք 'ի [illegible] մեծահանդէսս տօնս յերեկոյեան ժամուն զկնի սաղմոսելոյ, և յառաջ քան զ[illegible] զուարթն, որպէս է . Բարեբանեալն . կմ Երկրպագեալն, և կմ Եկայք ժողո_ վուրդք ։ Սորեք [illegible] ժամուն [illegible] և յառաւօտեան ժամուն [illegible] ընդ կանոնագլխոյն, որպէս է երգն այն որ սկսանի Հաւատամ ։

Փառաբան . ի . իւ . ից . իւք ։ || բանիւ փա_ ռաւորօղ, կամ օրհնաբան, և կամ գո_ վաբան ։

Փառաբանակից . կցի . աւ . կմ իւ . աց . օք ։ || կցորդ, կմ ընկեր ումեք 'ի փառաբա_ նելն, որպիսիք են միմեանց հրեշտակք և [illegible], և ըստ մարդիկ 'ի փառաբանութեան [illegible] ։ [illegible] 'ի [illegible] զքեզ հրեշտա [illegible] կաց, լինել [illegible], և փառա_ կաց [illegible] ։ Իսկ միրթ [illegible] լինել կցա_ բանակից ։

ռաւո

ճորաբար, և նշանակէ զկցորդն ումեք 'ի փառաբանելն, կմ զնա՝ որ ընդ այլում 'ի միասին փառաբանի. որպիսիք են միմեանց հայր և որդի և հոգի սբ. Եւ այնմ 'Ի շարականս. Փառաբանակից հօր որդի, որ մի մեր խաչեցար:

Փառաբանարան. ի. աւ. աց. օք: || տեղի՝ ուր լինի փառաբանութիւն. և ըստ այսմ եկեղեցին կոչի փառաբանարան: Դիտել նշանակէ՝ գործի փառաբանելոյ, և ըստ այսմ փառաբանարան անուանի բերանն, կմ լեզուն, ըստ որում նովաւ փառաբանեմք զած. ըստ այնմ Նարեկ. ժը. Զփառաբանարան հաստատածոյ կերպիս՝ ամրափակ խցմամբ ամփացոյց:

Փառաբանեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || փառաւորել բանիւք, կմ փառատրել. և կմ օրհնաբանել: Յն ուղղի:

Փառաբանութիւն. թեան: || փառատրութիւն, կմ օրհնաբանութիւն: 'Ի շարականս:

Փառագիր. գրոյ. ով. ոց. ովք: || գլխագիր մեծ, և փառաւոր, որ դնի 'ի գլուխ փառաքից սաղմոսաց, կմ 'ի սկիզբն գլխոց այլոց գրոց, զոր բազում անգամ նկարեն 'ի ձև ծաղկան, կմ թռչնոյ, և նմանեաց:

Փառադիր. դրի. իւ. աց. օք: || տես զՓարադիր:

Փառադրեմ: || տես զՓարադրեմ:

Փառադրութիւն: || տես զՓարադրութիւն:

Փառազարդ. ի. իւ. ից. օք: || զարդարեալ փառօք, կմ շքեղազարդ, կմ պայծառազարդ, և կմ փառացի: Նարեկ. 'Ի գովէստ խաչին:

Փառազարդեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || զարդարել փառօք, կմ շքեղազարդել, կմ պայծառազարդել, և կմ փառացի առնել: Նարեկ. ղե. և 'Ի գով. խաչ. և այլուր:

Փառազարդութիւն. թե: || փառաւոր զարդ, կմ զարդարիլն փառօք, կմ շքեղազարդութիւն, և կմ պայծառազարդութիւն: Նարեկ:

Փառազն: || տես զՓարազուն:

Փառազնատեսակ: (Նախդրիւ հոլովի.) || ունօղ զտեսակ, կմ զնմանութիւն փառազնի, կմ փառացի տեսլեամբ, և կմ շքեղատեսիլ: [illegible]

Փառազուարճ: (Նախդրիւ հոլովի.) || զուարճացեալ փառօք. կմ զուարթացեալ փառաւորութեամբ. կմ փառահեղ. և կմ յոյժ փառացի:

Փառազուն: || տես զՓարազուն:

Փառակենցաղ: (Նախդրիւ հոլովի.) || փառօք կենցաղավարօղ. կմ ունօղ զփառաւոր կենցաղավարութիւն, կմ նա՝ որ կեայ 'ի փառս: Իսկ մերթ առի զտեղւոյ, ուր լինի փառօք կենցաղավարել. և ըստ այսմ առի՝ փառակենցաղ դրախտ:

Փառակից. կցի. աւ. կմ իւ. աց. օք: || կցորդ ումեք փառօք, կմ ունօղ ընդ այլում զմի և զնոյն փառս, և կմ 'ի միասին փառաւորեալ: 'Ի շարականս:

Փառահեղ. (Նախդրիւ հոլովի.) || ունօղ զահեղ փառս. կամ զհզանալի փառաւորութիւն. կմ մեծափառ: կմ գերափառ. և կմ յոյժ փառացի. և ըստ այսմ առի՝ այր մեծաշուք և փառահեղ: Յայսմաւուրս:

Փառամոլ. մոլի. իւ. ից. կմ աց. իւք: || մոլեալ 'ի սնոտի փառս, կմ որ ունի զմոլութիւն փառասիրութեան. և կմ նա՝ որ ախտ զհետ սնափառութեան: Խորէն. գ. գլ. 63: Յն ուղղի: և Լամբրոն:

Փառամոլիմ. եցայ. եաց. իլ: (Հայնակր.) || փառամոլ լինիլ. կմ հետամուտ լինիլ զհետ սնոտի փառաց, կմ չարաչար սիրել զփառս:

Փառամոլութիւն. թեան: || մոլութիւն փառասիրութեան. կմ սէր սնոտի փառաց. և կմ սնափառութիւն: Խորէն. գ. գլ. 89:

Փառապատուեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || փառօք պատուել. կամ փառաւորելով մեծարել:

Փառասէր. սիրի. աւ. աց. օք: || սիրօղ փառաց. կմ փառամոլ. և կմ ամբարհաւաճ: Լամբրոն:

Փառասիրութիւն. թեան: || սէր սնոտի փառաց, կմ փառամոլութիւն. Ոսկէ. 1. հոմ. ժե. և ժթ:

Փառատրեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || տալ զփառս, կմ փառօք մեծացուցանել. և կամ փառաւորել: Նարեկ. ձէ. և 'Ի գով. խաչին:

Փառատրութիւն. թեան: || տալն զփառս, կմ փառօք մեծացուցումն. և կմ փառաւորութիւն: Նարեկ. ղե:

Փառացի: (Նախդրիւ հոլովի.) || փառաւոր. կմ փառահեղ. կմ շքեղ, կմ գերապանծ. և կմ գերապայծառ: Յայսմաւ:

Փառաւանացեան: || տես զՓարազուն: 'Ի հին տոմարագիրս:

Փառաւոր. ի. աւ. աց. օք: || փառացի, կմ փառազարդ. կմ գերապանծ. կմ շքեղ. և կմ երևելի: 1. Թագ. 22. 14: Իմաստ. 3. 15: Եսայ. 5. 14: Իսկ մերթ ընդ բայի շարակցի այսպէս, փառաւոր առնել. և նշանակէ փառաւորել: Սաղ. 85. 9: Մատթ. 9. 8:

Փառաւորագոյն. գունի. իւ. ից. իւք: || առաւել փառաւոր. կմ շքեղագոյն. և կմ գերագոյն: Բ. Մնաց. 11. 21:

Փառաւորակից. կցի. աւ. կմ իւ. աց. օք: || կցորդ ումեք 'ի փառաւորութեան. կմ փառաբանակից. և կմ փառակից: 'Ի Գիրս Գրի [illegible]:

Փառաւորեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || փառաւոր առնել. կմ փառատրել. կամ շուք դնել. և կամ մեծացուցանել: 1. Թագ. 2. 30: Մատթ. 5. 16:

Փառաւորեցուցանեմ. եցուցի. եցի. անել: (անցող.) || փառաւորել. կմ փառաւոր առնել. կմ շքեղացուցանել. և կմ պայծառացուցանել: 1. Մակ. 14. 15:

Փառաւորընկալ: (Նախդրիւ հոլովի.) || փառաւորապէս ընկալօղ. կմ որ ընդունի 'ի վր իւր զփառաւորս. և ըստ այսմ առի, փառաւորընկալ սեղան. որպիսի է

խորանին սը։ Աճգոնե։

Փառաւորիչ. րչի. աւ. աց. գք։ || փառաւո-րող. կմ փառատրող. կմ շուք գնող. և կմ մեծացուցանող. 1. Թագ. 2. 30։

Փառաւորութիւն. թեան։ || փառաւոր գոլն. կմ փառազարդութիւն. կմ շքեղութիւն. և կմ գերապատուութիւն։ Թուոց. 23. 21։

Փառունակ. ի. աւ. աց. գք։ || ունող փա-ռաց. կմ փառաւոր։

Փառք. ռաց. գք։ (անեզական.) || գովասա-նական համբաւ հնչեցեալ զումեքէ յա-ղագս գերապանծ գործոց, կմ կատարե-լութեանց նր. և յայսմանէ առեալ, փառք կոչի առ հասարակ ամ փառաւորութիւն, կմ պայծառութիւն, կմ պատիւ. կմ մեծա-րանք. և կմ պարծանք։ Ծնն. 45. 13։ Սաղմ. 8. 6։ Աճառկ. 3. 35։ Մատ. 6. 29։ Դարձեալ փառք կոչի մեծութիւն, կմ փարթամութիւն. կմ ընչաւէտութիւն. և այլ ամ, որով ոք փառաւորի, և սքանչելի լինի։ Ծնն. 31. 1. և 16։ Դարձեալ 'ի սբ. գիրս փառք տն ասի, լուսափայլ և բոցաճաճանչ տեսիլն, ընդ որում էր և երևեալ հուր. և ըստ այսմ իմանի՝ մինչ ասի՝ եկին փառք տն, կմ փառք տն լցին զտունն. և այլն։ Ել. 40. 32։ Ղևտ. 9. 23։ 3. Թագ. 8. 11։ Եզեկ. 44. 4։ Դարձեալ՝ փառք կոչին առ աստուածաբանս խորաքննիչս գուշակայք. ըստ որում ամփոփութիւն է 'ի վճարել նոցա ասել. փառք հօր, և որդւոյ. Յորմէ առեալ և զատուածն՝ որք 'ի սկիզբն գուբղայից գրե-նին՝ փառաբանս կոչեմք։ Իսկ եւս մինչ ասի փառաց 'ի փառս բարձրանալ. նշանակէ. 'ի միոյ փառաւորութէ 'ի միւսն անցանել. կմ 'ի բարձրագոյն փառս վերանալ. և կմ գեր 'ի վերոյ փառաւորիլ։ 'Ի Նարեկացին։

Փասիան. ի. աւ. աց. գք։ || է հաւ. ինչ ազ-նիւ կոչեցեալ յոմանց աքաղաղ վայրի. ունի զմեծութիւն աղաւնւոյ. և կմ մար-գոյ. ծ ընտանի հաւուն, որոց և ց իմիք նմանի կերպարանօք։ է պիսակ. կմ խայ-տաբղէտ. իսկ միսն պարարտ և փափուկ իբրև զկորամարգաց, և կաքաւուց. վն ո-րոյ և առ հնովք էր սա 'ի մեծի համարի. պատրաստեալ 'ի խորտիկս արքայավայե-լուչ սեղանոյ։ Ունի զագռաւ երկայնաձիգ գունագունակերպ արձակեալ։ Խորեալ ըղ-գլուխ իւր 'ի հող՝ համարի բովանդակ զանձն իւր թագուցեալ. վն որոյ և ոչ հոգայ փախչել յերեսաց հետամտաց իւ-րոց՝ մինչև 'ի վր հասեալ յափշտակեն ըզ-նա։ Լինի յաճախ առ փասիս գետով. այն է փիսոնիւ. յորմէ և կոչեցաւ փասիան. իբր թէ հաւ փասիսեան. ըստ այնմ Խո-րէն. բ. գլ. 78. Որք հասարակաց կերակուր ասեն զառ մեզ պատուականն, և սակա-ւուց ճաշակելիս զփասիան և զայլս. ծ և զկարապն։

Փաստ. ի. իւ. ից. իւք։ || պատճառ՝ զոր բե-րեմք 'ի մէջ առ 'ի հաստատութիւն. կմ առ 'ի ցոյց իրիք. և այս է բանն, զոր արտա-յայտէ՝ վասնզի. ուստի տարբերի 'ի սմանէ բառս՝ պատճառ, իբրև ընդհան-րական 'ի մասնաւորէ. զի պատճառն նը-շանակէ նաև զարարողին սկիզբն. բայց ոչ փաստն։ ռամկ. սպաթէ. 'Ի վարս հարց. բ։ Եւ 'ի հին պատմագիրս, ասի. Փաստս իրա-ւախոհեմ, կմ բանականս 'ի մէջ ածանել. կմ անտեղի գալ և առանց իմիք փաստից։

Փաստաբան. ի. իւ. ից. իւք։ || տե՛ս զՊատ-ճառաբան։

Փաստաբանական։ || տե՛ս զՓաստաբանական։

Փաստաբանեմ. եցի. եա՛. եալ։ (նեոգործ.) || նոյն է ընդ բայիս պատճառաբանել, որ է պատճառս տալ. և այլն։ ռամկօր. ճաքքանոյ բէրէլ. ըստ այնմ Լամբրոն. Զակա-րութեն փաստաբանելոյ խրագութեն մեծի յանձնառութե։

Փաստաբանութիւն. թեան։ || տե՛ս զՊատ-ճառաբանութիւն։ Լամբրոն։ և 'ի հին պտմգ։

Փաստառական. ի. աւ. աց. գք։ || այն՝ որով առեալ և ընդունեալ լինի փաստ։

Փաստաւոր. ի. աւ. աց. գք։ || ունող ըզ-փաստ, կմ բերող փաստի. և կմ փաստա-բան։ Իսկ մերթ փաստիւ ցուցեալ. կմ փաստիւք անկեալ 'ի ներքոյ մեղապար-տութե. և կմ պարտաւոր. և ըստ այսմ ասի 'ի նորոց ինչ. Լինիլ բազում ամբաս-տանաց կմ մեղադրանաց փաստաւոր։

Փաստաբանական. ի. աւ. աց. գք։ || փաստա-բանական, ծ պատճառաբանական, կամ այն՝ որով փաստ բերեալ լինի. և ըստ այսմ փաստաբանական կոչի 'ի հնոց պա-տճառական շաղկապն։ 'Ի հին քերականութե։

Փաքուստ. քսի. իւ. ից. իւք. կմ օք։ || շաղա-կրատ. կմ շաղփաղփական, կմ բարբանջօղ. կմ վայրախօս. և կմ շատախօս։ ռամկօր. լաֆազան. կմ չէնէսազ, և կմ չօփագոս։ 1. Տիմ. 5. 13։

Փաքսեմ. եցի. եա՛. եալ։ (չեզոք.) || շաղա-կրատել. կմ շաղփաղփել. կմ բարբան-ջել. և կմ շատախօս լինել. և ըստ այսմ ասի 'ի ռամկ. ինչ. Մի իբրև զթշնամի փաքսեսցէ։

Փաքսութիւն. թեան։ || շաղակրատանք, կմ շաղփաղփութիւն, կմ բարբանջմունք, կմ վայրախօսութիւնն, և կմ շատախօսութիւնն։ ռամկ. լաֆազանլըգ, կմ չէնէսազլըգ, և կմ ... խօսք խօսել։

Փառ։ || տե՛ս զՓառ, ըստ որում նշանակէ զմաշկն։

Փարաջ։ || տե՛ս զՓարաջք։

Փարադիր. դրի. իւ. աց. գք։ || գնող. կամ արկանող շուրջ զինքեան զփառ, ծ զմաշկ պարունակիչ. և յայսմանէ առեալ փա-րադիր կոչի ընդհանրապէս ամ թագան-թաքուցիչ, կմ ծածկապատող. կմ պարփա-կիչ, կմ յարաբարդող. և կմ սուղարկիչ։ Իսկ մերթ թագանթաքուցեալ, կմ ծած-կեալ, կմ պարփակեալ. կմ յարա-բարդեալ, և կմ սուղարկեալ։

Փարադրական. ի. աւ. աց. գք։ || թագան-թաքուցական, կմ ծածկապատական, կմ պարփակողական։ Իսկ մերթ յարաբարդ-

Digitized by Google

կան, կամ առակագրական, և կամ յաւելուածական:

Փառագրեմ. եցի. եա՛. ել: (Ներգործ.) || փառաւորել. որ փառօք ծածկել, կամ թաղանթապատել: Իսկ մերթ՝ շրջապատել. կամ շուրջ պարունակել, կամ պարփակել: Երբեմն և յարաբարդել, կամ յարադրել, կամ 'ի վերյ յաւելուլ:

Փառագրութիւն. թեան: || փառաւորութիւն, որ փառօք ծածկումն, կամ թաղանթապատութիւն: Իսկ մերթ՝ շրջապատութիւն, կամ պարփակումն: Երբեմն և յարաբարդութիւն, կամ յարադրութիւն, և կամ վերյաւելումն:

Փառաղ. ի. իւ. ից. իւք: || խուզան, որ գործիք խուզելոյ. և ըստ այսմ փառաղ կոչի կայացն, կամ մկրատն: ռամկ. Տ-խոռ:

Փառազումն. զման. մամբ. մանց. մամբք: || աղմուկ. կամ խառնակութիւն, կամ վրդով. և կամ շփոթք:

Փառազուն. ազնի. իւ. ից. օք: կամ ոյ. ով. ովք: || փառազուն. որ սերեալ 'ի փառաւոր ազնէ, կամ վեհազն կամ քաջազն, կամ իշխանազուն, և կամ ճոխ իշխանական պերճութեամբ, և զօրութ. որպիսիք են իշխանք մեծամեծք. և նէգք: տաճկ. պէյզ-տէ. կամ [illegible]. Պրատ. 5.7: Պրար ձեալ է սա բառ եբրայեցւոց կոչեցեալ ըստ նդ̃ փերազոն, կամ փերազիմ. ռդ̃ և երբեմն փերազոթ, և նշանակէ աւան, կամ ագարակ, և կամ շէն. ռդ̃ և 'ի գիրս հնոց գտանեմք թարգմանեալ. վն̃ որոյ Պրատ. 5.7. ուր ասի. Պակասեցան փառազունք բնակեալք 'ի մէջ իւրեւ՝ ոմանք համարեալ զայն բառ եբրայական՝ առեն նշանակել զաւանս, որք յերեսաց զօրացն ոսոխաց ցրուեալ և քանդեալ պակասեցան. Սակայն առաջինն առաւել պատշաճագոյն է. և համեմատ եօթանասնից. յորոց թարգմանեցաւ մերս: Ուստի և ասի 'ի բնագրին՝ բնակեալք. որով ցուցանի, թէ փառազունքն՝ անձինք են:

Փառելի. լւոյ. ւով. եաց. եօք: || նոյն է ընդ բառին փարելի. ռդ̃ երանելին, ընդ բառին երանելի: Մծբն. ժէ:

Փարախ. ի. իւ. ից. իւք: || գոմ հօտից, կամ գաւիթք խաշանց. որ է շրջափակ տեղի, ուր ոչխարք. կամ այծք հանգչին. և գոմանի գտանեն. յորմէ առեալ և եկեղեցին. ըստ որում է առաւ բանաւոր հօտին՝ նմանութեամբ փարախ կոչի: ռամկօրէն աղըլ: Խորեն. գ. գլ. 68: Յոհն. ւ. հատ. իա: և Լամբրօն:

Փարահ. ի. իւ. ից. իւք: || պատասխանի. կամ պատասխանատուութիւն:

Փարամ. || տես զՓարաղ:

Փարատ. ի. իւ. ից. իւք: || փարատեալ, որ 'ի բաց ցրեալ. կամ մերժեալ, կամ հեռացեալ. և կամ ջնջեալ 'ի միջոյ: Իսկ մերթ՝ 'ի բացեկաց, կամ հեռու. կամ մեկուսի. և կամ որոշ. և ըստ այսմ ասի, փարատ կացուցանել զոք 'ի չարեաց. կամ փարատ յատոր խորհրդոց: ռամկ. ղաթ. կամ ճիւտէ. և կամ հէրա: Լամբրօն:

Փարատեմ. եցի. եա՛. ել: (Ներգործ.) || 'ի բաց ցրել, կամ հերքել, կամ հալածել, կամ ջնջել, և կամ 'ի բաց բառնալ: ռամկ. փարփրնել, կամ փէճ ընել: և ըստ այսմ ասի. փարատել զմէգս. զտրտմութիւն, զցաւս, և զնեղութիւն. կամ փարատել յումեքէ ըզճանճս, և զմարախս. և այլն: Ելից. 8.29. և 31: և 10.17: Յոբ. 16.7: Իսկ մերթ՝ 'ի բաց կացուցանել, կամ զերծուցանել, կամ ազատել, և կամ թափել. զոր և կոչեմք փարատեցուցանել. ըստ այնմ Աղթոր. Զերկիր զառաջինն 'ի ջրոցն փարատեցուցեալ:

Փարատեցուցանեմ. եցուցի. եցո. ել: (անցողակ.) || նոյն է ընդ բային փարատել. ուստի փոխանակ ասելոյ՝ փարատեաց ըզցաւս, կամ զտրտմութիւն. ասեմք, փարատեցոյց: Եսայ. 38.14: և 'ի Յոբ: տես 'ի բային հատանել:

Փարատիմ. եցայ. եա՛ց. իլ: (Ձայնակր.) || 'ի բաց ցրիլ. կամ մերժիլ, կամ հերքիլ, կամ բնաջինջ լինիլ. կամ բառնիլ 'ի միջոյ: ռամկ. փարփրիլ. կամ փէճ ըլլալ: Իսկ մերթ 'ի բաց կալ. կամ հրաժարիլ. կամ մեկնիլ. կամ խոյս տալ: ռամկօր. սաքընմիշ ըլլալ: և ըստ այսմ ասի՝ փարատիլ մարդոյ, կամ ամբոխից յումեքէ: 2. Մակ. 14.44: Ոսկէ. 2. հատ. իթ:

Փարաւաթանամ. ացայ. ցիր. ալ: (ընդմիջ.) || գիրանալ. կամ յօրանալ, և կամ ստուարանալ: ռամկ. գիրնալ:

Փարաւոն: || տես 'ի բառարանի յատուկ անուանց:

Փարաւոնեան: (Նախադրիւ հոլովի.) || փարաւոնական. որ այն ամ, որ փարաւոնի է. կամ առ փարաւոն վերաբերի. և ըստ այսմ ասի՝ փարաւոնեան զօրք, կամ գործք. և այլն: Աղթոր:

Փարաք. կամ փարագ. ի. իւ. ից. իւք: || ընպիրշ. կամ պագշոտ. կամ վավաշոտ. կամ լկտի. և կամ բղջախոհ: ռամկօր. էփէքուրդ: 'ի հին [illegible]:

Փարաքումն. քման. մամբ. մանց. մամբք: || ըմբշութիւն. կամ պագշոտութիւն. կամ վավաշոտութիւն. կամ բղջախոհութիւն. և կամ լկտութիւն: ռամկ. էփէքուրդլուք: Կոչէկ. խե:

Փարաքիմ. եցայ. եա՛ց. իլ: (Ձայնակր.) || ըմբշիլ. կամ պագշոտիլ. կամ վավաշոտիլ. կամ բղջախոհանալ. և կամ լկտիլ: ռամկօր. էփէքուրդ ըլլալ:

Փարաքութի. || տես զՓարաքումն:

Փարելի. լւոյ. եաւ. եաց. եօք: || այն ամ, որ կարէ փարեցեալ լինիլ. կամ գիրկս առ կանելի: Եւ յայսմանէ առեալ նշանակէ բաղձալի անգամ տենչալի, կամ նազելի. կամ սիրելի. և կամ գերապանծ. ըստ այնմ 'Ի շարականին. Փարելի բարբառ ընդ իմ, էլի էլի առ հայր գոչէր: Եւ 'ի ճառ հարց-ժ ռ̃. ասի. Հարսն 'ի թագաւորական առնեն էր. և փեսայն փարելի և սիրելի

Թագաւորին ։ Դնաջնեալ՝ նշանակի սո֊
վոր՝ ընչանին, որ աղտեղի և պատառա֊
տուն շորեղէնն, որով սրբեն զաղտե֊
ղեալ ձեռս․ կմ անօթս, և կմ մաքրեն
նովաւ զյատակ փռանց առ՚ի արկանել
զհաց, և ասացաւ փարելի, ըստ որում
պատառեալ փարին ՚ի նոսա աղտեղութիք։
ռամկօր․ ընճոց․ կմ ճորփիլ։ 1․ Կորնթ․ 4․ 13։
Բայց ըստ Թարգմանութեան ասորւոց․ և
Յունաց մեկնչաց՝ նշանակի սովոր զոհն
քաւութեան․ որ էր առ հեթանոսս անար
գական յոյժ․ քանզի էր սա պատարագ
՚ի մարդկանէ․ զի մինչ քաղաք ինչ անկա
նէր ՚ի պատուհաս իմն սակս յանցանաց
առնուին զմիոք յանարգաց․ և մարդա֊
կոյտ բազմութբ շրջեցուցեալ զնա ընդ
բոլոր քաղաքն, Թքանէին ՚ի նա․ խիճս ար
կանէին, հայհոյէին, և զայլ անհամար ա֊
նարգանս առնէին նմա․ Իբրզի չարիքն
քաղաքին կուտեսցին ՚ի գլուխ նը․ և ա֊
պա յանկարծակի արկեալ զնա ՚ի ծով՝ հեղ
ձուցանէին․ և զոմանս սրախողխող առ֊
նէին․ առ՚ի հաշտ առնել այնուէիկ զդիս․
և այսու եղկելին այն լինէր իբրև զըն֊
ջան հասարակաց՝ անարգ և խայտառակ
յոյժ, յորմէ և կոչեցաւ փարելի․ և յայս
միտս առակելով ասի․ 1․ Կորն․ 4․ 13․ Ա֊
ռակ նշաւակի եղաք մք աշխարհի, ամե
նեցուն փարելի լինիլ մինչև ցայժմ։

Փարեմ․ եցի․ եա․ ել։ (Ներգործ․) ‖ պա֊
րուրել․ կմ պարփակել․ կմ շուրջ պա֊
րունակել․ և կմ շրջապատել․ ըստ այնմ
՚ի Հարց հոյս․ Է․ Եթէ ունիցիս սենեակ,
որ փարեսցէ զքեզ, մի՛ շինեսցես այլ մե
ծագոյն։

Փարենթազիզ․ զզի․ աւ․ աց․ օք։ ‖ է բառ
յունական, որ ըստ նշ արտաքերի՛ փա֊
ռէնթեզիզ, և Թարգմանի ՚ի հայ բար֊
բառ՝ միջարկութիւն․ կմ միջադրութիւն․ և
կմ խարոց․ որպիսի է հատուածեալ բանն՝
որ անկանի ՚ի մէջ շարունակեալ Ճառից․
վն որոյ առ՚ի որոշութն՝ սովորութիւն է փա
կել զայն լուսնաձև, և կամ եղնգնաձև
գծիւ, որ է այս․ ( )։

Փարթամ․ ի․ աւ․ աց․ օք։ ‖ մեծատուն․ կմ
ընչաւէտ․ և կմ հարուստ։ ռամկ․ զէնկին։
Նարեկ․ ծթ։ Լամբրոն։ Իսկ մերթ՝ Ճոխ․ կմ
առատ․ և կմ լցեալ․ և ըստ այսմ ասի՛
փարթամ պտղովք․ կամ իմաստութբ․
և այլն։

Փարթամագոյն․ գունի․ իւ․ ից․ օք։ ‖ առա
ւել փարթամ․ կմ Ճոխագոյն․ և կմ առա
տագոյն։ ՚Ի Գիրս Գրիգ․ Տղայական։

Փարթամանամ․ ացայ․ ացիր․ ալ։ (Ընդ֊
միջ․) ‖ փարթամ լինիլ․ կմ հարստանալ։
կմ Ճոխանալ․ և կմ առատանալ։ ռամկ․
հարուստնալ։ Նարեկ․ Ժ։

Փարթամաշնորհ։ (Նախդրիւ հոլովի․) ‖
փարթամ շնորհօք․ կմ ունօղ զառատ շը
նորհս․ կմ շնորհալի․ և կմ շնորհաշարդ։
՚Ի Հին բառագիրս։

Փարթամացուցանեմ․ ացուցի․ ացո․ անել։
(անցող․) ‖ փարթամ առնել․ կմ հարս
տացուցանել․ կմ Ճոխացուցանել․ և կմ
պերՃացուցանել։ ռամկ․ հարստացնել։

Փարթամացուցիչ․ ցչի․ աւ․ աց․ օք։ ‖ փար
թամացուցանօղ․ կմ հարստացուցանօղ․ կմ
Ճոխացուցիչ․ և կմ մեծացուցիչ։ Խորէն․
Պ․ գլ․ 68։

Փարթամութիւն․ թեան։ ‖ մեծութիւն, կամ
հարստութիւն․ կմ Ճոխութիւն․ և կմ յղփու
թիւն ստացուածոց, և այլոց բարեաց․
Նարեկ․ ՚Ի Գործ․ Կոտ։ Սոփեր․ 1․ Հռով․ Խը։

Փարթար։ (Հայկազն. վարանական․) ‖ գո
նէ․ կմ գեթ։ ռամկ․ գոնէ։ ՚Ի Հին բառից։

Փարիմ․ եցայ․ եաց․ իլ․ կմ ել։ (Հաղորդակցի․)
‖ ընդունելով զդէք տարածեալ բազկօք
պատել զնովաւ․ կմ գիրկս արկանել․ և
կմ գրկախառն խանդաղատել։ ռամկօր․
ճամբուրել, կմ քիքով գուրգուրել։ Աստուած. 5․ 20։
և ՚Ի շարականս։ Իսկ մերթ առեալ լինի փո
խանակ բայիս՝ ընդգրկել․ կմ յիմքն ըն֊
դունիլ․ կմ ախորժիլ․ և կմ սիրով պա
րապիլ իմիք․ և ըստ այսմ ասի՛ փարիլ
զգործով․ կմ զկրթութբ իւիք․ և կամ
փարիլ յազնուական մտածութիւնս։ Խո֊
րէն․ Գ․ գլ․ 8։

Փարուած․ ծման․ մամբ․ անց․ ամբք։ ‖ գր֊
կելով պատելն․ կամ գիրկատրկութն․ և
կմ ընդգրկութն։

Փարսախ․ ի․ իւ․ ից․ իւք․ կմ օք։ ‖ է չափ
Ճանապարհի միոյ ժամու՝ կոչեցեալ և փար
սանգ, որ պարունակէ վտաւանս, որ սա
պարէզ՝ քան և չորս, որք առնեն զերիս
մղոնս։ ըստ այնմ Խորէն․ յաշխարհագրութ․
Եւ փարսախն երեք մղոն է։ Նոյն է գրե
թէ ընդ սհա և լէկայն, որ է փարսախ
գաղղիացւոց, որ Ֆրանկուաց։ Բայց գի
տելի է, զի Ե այլ և այլ աշխարհաց՝ այլ
և այլ է փարսախն․ ուստի և ոմանք կո֊
չեն զնա երկուսն վտաւանս․ որ է երրո
չորս մղոն։ Իսկ այլք քառասուն․ և այլք
ոմանք վեթսուն։ Այլ սակայն հասա֊
րակագոյն է առաջինն, զորմէ գրեցաք։

Փարսանգ․ ի․ աւ․ աց․ օք։ ‖ նոյն է Է վեր
նոյն։ ՚Ի Գիրս տաղ․ ծան․ Պ․ գլ․ 19։

Փափագ․ ոյ․ ով․ ոց․ ովք։ ‖ փափագանք․
որ տենչանք․ կմ բաղձանք․ և կմ իղձք․ և
այս է ներհակ տռփանաց․ զի սա միշտ
ասի զանմեղ ցանկութէ․ իսկ տռփանքն
զմեղանչականէն, կմ զզազրութեան․ և Ե
այսմ ասի՛ փափագ ծարաւոյ՝ կմ կերա֊
կրոյ․ ուսման․ տեսութե․ և այլն։ Խորէն․
Բ․ գլ․ 67։ և Պ․ գլ․ 53․ և 57։ Նարեկ․ ղԷ։ Իսկ
Իմաստ․ 11․ 4․ ուր ասի՛ տուեալ նց չուր
յապաշաւ վիմէն, և փափագ ծարաւոյ
՚ի խիստ վիմէ, է աձ իմն, որով նշանակի
կատարութն, կմ լցումն փափագանաց ծա
րաւոյ․ զի տային զցանկութիւն ուրուք, է
կատարել զըղձանս նը։

Փափագակից․ կցի․ աւ․ կմ իւ․ աց․ օք։ ‖
կցորդութիւնք ՚ի փափագանս․ կմ ընկեր փա
փագելոյ․ և կմ ՚ի միասին բաղձացող նոյ
նոյ իրի։ ՚Ի Գիրս Գրիգ․ Տղայական։

Digitized by Google

Փափագանք. անաց. օք: (անեղակ.) || տե՛ս զփափագ:

Փափագեմ. եցի. եա. եւ: (չէզոք.) || տե՛ս զփափագել: Սաղմ. 118. 20: Երգ. 2. 3:

Փափագիմ. եցայ. եաց. իլ: (ձայնաւոր.) || տենչալ. կմ բաղձալ. և կմ ըղձալ. և այս միշտ վարի 'ի մաքուր և յանմեղ իրս. ոչ՛ տափական յանմաքուրս: Սաղմ. 41. 2: 2. Կոր. 5. 2: 1. Պետ. 2. 2: Նու. ՑՕԴՆԱ.

Փափագումն. գման. մանց. մանց. մամբք: || տե՛ս զփափագ:

Փափաքք: || տե՛ս զփափագ:

Փափաքանք. անաց. օք: || տե՛ս զփափագ:

Փափաքեմ: || տե՛ս զփափագեմ:

Փափաքիմ: || տե՛ս զփափագիմ: Խորէն. Գ. գլ. 62:

Փափկալի. լւոյ. եաւ. եաց. եօք: || լի փափկութք. և կմ հեշտալի:

Փափկակեաց. կեցի. աւ. աց. օք: || փափկութք կեցօղ. կմ պարարօղ հեշտութե:

Փափկաձայն. ի. իւ. ից. իւք: || ունօղ փափուկ ձայնի. կմ Նա՝ որոյ ձայնն է թուլագոյն. ոք մեղմ և անոյշ. որոյ ներհակն կոչի՝ խստաձայն. կմ սաստկաձայն: ռամկ. Հանդարտ ձայն ունօղ: Խորէն. Գ. գլ. 54:

Փափկամորթ. ի. իւ. ից. իւք. կմ աց. օք: || ունօղ զմորթ փափուկ. կմ զմարմինն նուրբ և կակուղ. որպիսի են մատաղ մանկունք. և Նմանք նց: 'ի Յայսմաւուրս: Իսկ մերթ թուլամորթ. կմ փափկակեաց. և կամ հեշտութեց պարարօղ:

Փափկանամ. ացայ. ցիր. ալ: (ընդմիջ.) || փափուկ լինել. կմ կակղանալ. կմ մեղմանալ. և կմ քաղցրանալ: ռամկօր. կակղնալ. կմ Յըմշագմ ըլլալ: Իսկ մերթ յօրանալ, որ է հեշտանալ. կմ գիրանալ. և կամ վայելել 'ի գրգանս. կմ բերկրել հեշտալեօք. և կմ զմայլել յախորժանս անձին: ռամկ. վէֆէյ ընել: Սաղմ. 36. 11: Աղաւ. 29. 21: Երեմ. 44. 17:

Փոյթ. փութոյ. ով. ոց. ովք ։ ‖ հոգ. կամ խնամ. կամ հոգաբարձութին. կամ ջան. և կամ ջանութեն առ գործ ինչ ։ տաճկեր. հա_ ճէթ. կամ չալըշ իշմաք. 12. 13 ։ Հռով. 12. 11 ։ 2. Կորն. 7. 12 ։ Իսկ մերթ՝ փոյթութեան. կամ փութացող. կամ վաղվաղակի. կամ եռանդ_ նեան. և կամ շոյտ ։ ռամկ. աչքաբաց. կամ չալըք. կամ չևիկ. ըստ այսմ Լամբ. Վերապատուելեաց փոյթք զանդուլեն ։ Իսկ ՚ի Խոր. փ. գլ. 68. ա_ սի՝ Աշակերտք հեղգք առ ՚ի յուսումն, և փոյթք առ ՚ի վարդապետել ։ Երբեմն եւ փութացուցանողական. կամ վաղվաղա_ կան. և կամ երագական. և ըստ այսմ ասի, փոյթ ընթացք. կամ պատասխանի, և այլն ։

Փոյթ առնեմ ։ ‖ հոգ ածել. կամ խնամ ունել. կամ հոգաբարձութ առնել. կամ ջանիւ մի տել զնեա իրիք. և կամ հոգալ ։ ռամկօր. հոգ տանիլ. կամ մտախոյհել ընել. կամ հոգածել ընել ։ 1. Եզր. 2. 20 ։ Սաղմ. 100. 4 ։ Տիտ. 3. 8 ։

Փոյթ 'ի մէջ առնուլ. կմ փոյթ ունիլ. կալայ. կալեալ. և այլն: || նոյն է ընդ վերնոյն: 2. Պետր. 1. 5: Յուդայի. 3:

Փոյթ է: || վարի իբրև զխնամողութիւն. որպէս. քեզ զի՞ փոյթ է. քո դու ընդէր հոգաս զայդ. կմ զի՞նչ պէտք են քեզ հոգալ ըդ: ռամկ. սէնէ նէ. կմ նէյէ հաճաթը է: Յոհ. 21. 22: Կամ այսպէս. ոչինչ է փոյթ քեզ. քո դու ոչ հոգաս ինչ. կմ փոյթ ինչ ոչ ունիս: ռամկ. հոգ չունիս. կամ հաճաթըդ չէ: Ղուկ. 10. 40: ըստ այսմ և իմանի մինչ ասի, փոյթ է նմա. փոյթ լիցի նմ. որ է առել. հաճաթն է. հաճաթը ըլլայ. և այլն: 1. Մակ. 14. 42: Յոհ. 12. 6:

Ընդ փոյթ: (մակբայ երագա.) || փութանակի. կմ փութապէս. ըստ այնմ Ոսկէ. 1. հար. ժթ. ընդ փոյթ ընթացաւ առ Նաթանայել:

Փոյթեռանդն: (նախդրիւ հոլովի.) || ունող զեռանդնոտ փոյթ. կմ յոյժ հոգանակ. կմ ջերմեռանդն. և կմ եռաբորբոք. և ըստ այսմ ասի՛ փոյթեռանդն աշակերտ. կմ փոյթեռանդն յօժարութիւն. կամք. խնձք, և այլն. 'Ի [illegible] հոլոյ:

Փոյթընդոստ: (նախդրիւ հոլովի.) || փոյթ ընդ փոյթ ընդոստնող. կմ այն՝ որ երագ երագ ոստնու: ռամկ. թէզթէզ ցաթլօղ:

Փոյթ ընդ փոյթ: (մակբայ երագական.) || ձեպ ընդ ձեպ. կմ երագ երագ. կմ փութանակի. և կմ վաղվաղակի: ռամկ. չապ չապ. կմ թէզթէզ. կմ [illegible]. և ըստ այսմ ասի՛ փոյթ ընդ փոյթ հասանել. կմ ազդանել. կմ անցանել. և այլն: Խորէն. Բ. գլ. 68: և Գ. գլ. 45. և 67:

Փոյթընթաց: (նախդրիւ. և մերթ միչյ.) || վաղվաղընթաց, կմ երագընթաց. և կմ սրընթաց: ռամկ. չապ գօշօղ. կմ չէվիկ:

Փոշետեսակ. կմ փոշէտեսակ. ի. աւ. աց. օք: || ունող զտեսակ, կմ զկերպ փոշւոյ. կմ մանր և բարակ իբրև զփոշի. և ըստ այսմ ասի՛ փոշետեսակ նիւթ, մանրուած, և այլն: 'Ի Գիրս Գրիգ. Տղայոց:

Փոշի. շւոյ. ով. եաց. եօք. կմ աւք: || մանրամաղ մասունք չորացեալ հողոյ, կմ մաշուածոց իրաց, որք 'ի վերայ միւսն յօդս վերացեալ և գիզացեալ, միգատեսակ ցրին դին: ռամկ. եա թօզի. և տաճկ. թօզ: Յոբ. 21. 18: Գործ. 22. 23: Եւ յայսմանէ առեալ փոշի կոչին ամ փոշետեսակ մանրուածք ծխանելեաց, ներկոց, խարտուածոց, և այլոց իրաց: Երգ. 3. 6: 2. Օրին. 9. 21: տե՛ս և զհրանիւթ:

Փոշոտ. ի. իւ. եց. իւք: || ծածկեալ 'ի փոշեաց. կմ լի փոշւովք: ռամկ. եա թօզլու:

Փոշոտիմ. եցայ. եաց. իլ: (ձայնակր.) || փոշոտ լինել. կամ 'ի փոշեաց ծածկիլ: Աշգար:

Փոշոտութիւն. թեան: || փոշոտ գոլն. կմ լցեալ լինելն փոշւով:

Փոշտանկ. ի. աւ. աց. օք: || նա՛ որոյ ամօթ ձլքն մնացեալք են փոշտանկութեամբ. որ և կոչի աղէթափ: ռամկ. աղիֆըճար էկած: և տաճկ. փէզէզէ: Յայսմաւուրն:

Փոշտանկիմ. եցայ. եաց. իլ: (ձայնակր.) || փոշտանկ լինել. կամ ախտանալ զախտ փոշտանկութեն: ռամկ. աղիֆը ճոր գօլ. կմ փէզէզէ ըլլալ:

Փոշտանկութիւն. թեան: || է ախտ ինչ ուռուցիչ ամորձեաց. քանզի երբեմն յաղագս բնութեան աշխատանաց. կամ վասն ախտաժետութեան բնութե՛ն լուծանին, կմ պատառին թաղանթք փորոտեաց. և յայն սակս առ սակաւ սակաւ վայթին աղիքն, կմ թաղանթք նոցա 'ի պարկ ամորձեացն. և ուռուցեալ պարպատեցուցանեն զնա: Եւ է սորա այլ տեսակ ինչ, որ զջրատեսակ հիւթս վայրաքերեալ 'ի նոյն պարկն, լնու 'ի մասնաւոր անօթ ինչ մաշկեղէն գոյացեալ 'ի նմա արտաքոյ կարգի բնութե: ռամկօր. փէզկէնլիքի: 'Ի Գիրս [illegible]. Բ. Գլ. 20:

Փոս. ոյ. ով. կմ ի. իւ. ից. իւք: || փոսեալ տեղի. կմ գուբ. կմ խորխորատ. կմ վիհ. և կմ խրամ. և ըստ այսմ ասի՛ փապարք փոսից. կմ փոսք խորոց. և կմ փոս գործել առ սահմանօք թագաւորութեան, կմ զպարսպօք քաղաքին. և այլն: ռամկ. եա խօր. կմ չուխուր. և կմ խէնտէկ: Եզեկ. 26. 8: Նարեկ. խ: Խորէն. Բ. գլ. 74: և Գ. գլ. 32: Եւ յայսմանէ առեալ՝ փոս կոչին ձորք, կմ խորացեալ առուք, ընդ որս ընթանան ջուրք գետոց: Եսայ. 27. 12:

Փոսացուցանեմ. ացուցի. ացո. անել: (անցող.) || տե՛ս զփոսել: Աշգար:

Փոսաւոր. ի. աւ. աց. օք: || ունող զփոս. կմ փոսեալ: ռամկ. չուխուրլու:

Փոսեմ. եցի. եա. ել: (ներգործ.) || փոս գործել. կմ փորելով խորացուցանել. և ըստ այսմ ասի՛ փոսել զերկիր, կմ զվէմս. ռամկօր. չուգուրէլ, կմ [illegible]: Խորէն. Բ. գլ. 53: և Աշգար:

Փոսորակ. ի. աւ. աց. օք: || ձանձաղ փոսացուցեալ. կմ որ սակաւիկ ինչ է խորեալ և փոսեալ: ռամկօրէն. չուխուր. կամ չուգուր:

Փոսորակեմ. եցի. եա. ել: (ներգործ.) || փոսորակ առնել. կմ ձանձաղ փոսացուցանել. և կմ փոքր մի փոսել: ռամկօր. [illegible]:

Փոսորակութիւն. թեան: || փոսորակ գոլն. կմ ձանձաղ փոսաւորութիւն:

Փոսուռայ. կմ փոսուրայ. ի. իւ. ից. իւք: || է թեւաւոր ձկն ինչ փոքրիկ, որ թռչի յօդս 'ի գիշերի. ունի 'ի տատան իւրում զլոյս աղօտ՝ կանաչագոյն փայլեալ. տաճկեր. [illegible]: 'Ի հին պատմագիրս:

Փոր. ոյ. կմ փորի. ով. 'ի փորի. ոց. ովք: || որովայն՝ յորում պարունակին կան ամ փորոտիք. և յայսմանէ առեալ փոր կոչին միանգամայն ամ ընդերք իբր առնլով զպարունակեալն փխանակ պարունակողին: ռամկ. եա գար: Յոբ. 41. 6: Սաղմ. 50. 12: և 108. 23: Եւ եա փոր կոչին ծոցք, կամ

խորշքաեղեաց, կմ կողմունք աշխարհաց. և այլն։ ռամկօր. ոէմի. ըստ այնմ 'ի հին պարափակէրս. Եւ զայլ գերութիւնս կողմանց կողմանց, փորի փորի, զաշխարհի աշխարհի՝ ածին ժողովեցին 'ի նախաձեռն։ 'Ի փոր ձեալ՝ նշանակի սովաւ թռչուն ինչ սալի սակ, և երգեցող, կերպարանօք նման սագի, կթ ղազու, զոր երբեմն կոչեմք պոր, և այլով անուամբ կարապ. սա ունի զորովայն մեծ և ընդարձակ, և իբր թէ բոլորովին է փոր. յորմէ և եառ զանուն. զսա յոյնք կոչեն քեքնոս, և լատինք չիկնոս։ ռամկ. խուխու. և տաճկ. [illegible]. 2. Օրէն. 14. 16։ Եւ 'ի գիրս գրիգորի [illegible] նին. ասէ. Ուստի և փորոյ աղքատկցութիւն երգոց։

Փոր. ի. իւ. ից. իւք։ || Է ձուկն ինչ ծովային, որոյ գլուխն է մեծ՝ կարծրանիւթ, բազմանկիւնի, և բոլորովին փշալից։ գոյն նր է թուխ. ունի զթևս բաղումս և ժանտափուշս, հարկանէ, և թոռնաւորէ զմերձեցեալսն յինքն, մինչև ուռուցանել, և ցաւովք վտանգել զմարդն. կեայ արտաքոյ ջրոյ ընդերկար, և մեռանի դժուարաւ։ Ոմանք 'ի սոցանէ են մեծ իբր կանգնաւ յերկայնութիւն, և աւելի ևս, որք գտանին 'ի կարմիր ծովն։ Իսկ այլք փոքր, իբր քլաւ, կմ թզաւ։ Զայս ձուկն անուանեմք և կարմիր ծովային, որք և յոյնք և լատինք սքօրփիոս, կամ սքօրփիոնիս. յորմէ և տաճիկք յորջորջեն զսա [illegible]։ 'Ի հին բժշկարանս։

Փորագրեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) || Փորելով գրել. կմ քանդակել. և թ այսմ ասի. փորագրել զբան ինչ յարձանս, կմ 'ի տախտակս պղնձիս, և կմ փորագրել զարձանս, և զնմանիս. Խորէն. գ. գլ. 68։ Նարեկ. կդ. և ղդ։ և Լամբրօն։

Փորագրութիւն. թեան։ || Փորելով գրումն. կմ քանդակումն, և կմ քանդակ։

Փորանկած։ || Նոյն է ընդ բառիս՝ փորանկեալ. ըստ այնմ Շնորհալին յողբսն Եդեսիոյ. Եւ զպատմուճանս պատառած, որ 'ի վերուստն փորանկած։

Փորանկեալ. ելոյ. ով. ոց. ովք։ || Ծագի սա 'ի բայէս անկանել, որ է հիւսել զթել. և յանուանէս՝ փոր. որ է խորու պարկ փորոտեաց. և յայսմանէ առեալ փորանկել կոչեմք զայն [illegible]. զոր հիւսեալ են 'ի թելից ուռկանաձևաց 'ի ձև միակառոյց պարկի. որպիսիքեն ոմանք 'ի զանկապանաց, կթ 'ի ցրողից, և կմ 'ի հանդերձից։ Արդ՝ ըստ այսմ էր և պատմուճանն, կթ շապիկն տն մերոյ յիսի քսի. անկեալ ճարտարութ 'ի յօձեաց մինչև ցպճղունս ըստ բոլորին. ուստի կոչի՝ 'ի վերուստ փորանկեալ ամենևին։ ռամկ. բօտ հուստծ։ Յովհ. 19. 23։

Փորանոց. ի. աւ. աց. օք։ || տեղի, ուստի փորելով հանեն զհրահանգելիս, և զայլ հանքս. զոր և կոչեմք բովս. կմ մետաղս։ ռամկ. մադէն։ 'Ի ամանէ ծագի բառս՝ պղնձափորանոց, որ է բովք պղնձոյ։ ռամկօրէն. պղնձի մադէն։

Փորեզիկ. կմ փորեզիկ։ || Տես զՓերեզակ։

Փորեմ. եցի. եա. ել։ (Ներգործ.) || բրել. որ է գործեալ իւիք զերկիր, կմ զորմ, և զայլ ինչ նման խորել՝ 'ի գուբս առաւել զփոր ուածոյ. ռամկ. եա՝ կազել։ Եսայ. 5. 2։ Եզեկ. 26. 8։ Մատթ. 25. 18։ Դարձեալ՝ նշնկէ՝ պարել, որ է օյնել անել։

Փորձ. ոյ. ով. կմ իւ. ից. իւք. կմ ովք։ || փորձեալ. կթ 'ի փորձառութիւնս մտեալ. կամ 'ի փորձանս անկեալ. կմ զփորձ առեալ, և կմ փորձիւ տեղեկացեալ։ ռամկօր. [illegible] [illegible] ընկած. կմ [illegible], և կմ [illegible]։ Եբր. 4. 15։ Իսկ մերթ՝ քըններեալ. կմ մաքրեալ, կմ անխառն. և կմ զուտ. և ըստ այսմ ասի, ոսկի, կմ արծաթ փորձ։ ռամկ. խալիս նղծ, կմ խալիս, կմ խաս. և կմ ղուրու։ 3. Թագ. 10. 18։ Զաք. 11. 13։ Երբեմն և՝ ընտիր, կմ ազնիւ, կմ պատուական, և կամ նբ. ըստ այնմ 'Ի ձեռն հարց. թ. լսել բարւոյ և փորձ վարդապետին հօրն ամենայ։ Եւ Ոսկէ. 2. հաւ. խբ. ասէ. կարող են առնել զմեզ պայծառս և փորձս։ Մերթ և՝ փորձառուեալ. կմ հետազօտեալ, կմ հաստատեալ. և կմ ցուցեալ։ Իմաստ. 1. 3։ Դարձեալ նշանակէ փորձութիւն, կմ արկածք, կամ նշանակէ փորձութիւն, կմ արկածք, կամ [illegible], և կմ կիրք տանջանաց. Թշուառութիւն, և նմանեաց. և ըստ այսմ ասի փորձ մահու, կմ բարկութեան. փորձ անիծից, սրոյ, հրոյ. և այլն։ ռամկ. [illegible]։ Իմաստ. 18. 20. և 25։ Նաջանք, կմ պէլայ։ Իմաստ. 18. 20. և 25։ [illegible] 'ի շարախոյն։ Իսկ մերթ՝ փորձառութիւն, կմ փորձառական հմտութիւն. որ է հմտութիւն, կմ [illegible]։ 2. Կոր. 13. 3։ Եւ Ոսկէ. 1. հաւ. ժե. ասէ. 'ի փորձոյ, որ յառաջ է քան զգեղ՝ ուսիր։ և Կիւրղ 'ի [illegible]. ա. ասէ. Զայս բան 'ի փորձոյ գի տաց, թ փորձառութիւն։ Դարձեալ՝ նշանակէ՝ քննութիւն, կմ փորձելն զինչ. որ նշանակէ զհրահանգելիս 'ի բովս առ 'ի գիտել զորպէս ութիւն նր։ Ղևտ. 27. 21։ Իսկ երբեմն է բայի շարակցի, զոր տեսցես զկնի։

Փորձ առնել։ || թ փորձել, կմ 'ի փորձութիւնս արկանել։ Ղևտ. 16. 29։

զՓորձ առնուլ։ || թ ձեռնամուխ լինելով գիտել զորպիսութիւն իրիք. կմ զհամ առնուլ. և կմ փորձելով տեղեկանալ։ տաճկ. [illegible]։ Եւ սա երբեմն վարի բայ արձակ. ըստ այնմ Եբր. 2. 18. որով ինքն չարչարեցաւ զփորձ առեալ։ Իսկ երբեմն վարի խնդրով, և պահանջէ զսեռական՝ յաւելլով զնախդիրս, զ. և 'ի խնդրոյն իւր. զոր օրինակ, զփորձ առեալ զատակութեան ակային. կմ զայգորիկ առեալ զփորձ անձին։ Խորէն. բ. գլ. 79։ և Լամբրօն։ Զորոյ զփորձ առեալ եգիպտացւոցն՝ ընկղմեցան. կմ զտանջանաց և զգանից զփորձ առին. իբր թէ զփորձ տանջանաց և գանից առին։ Եբր. 11. 29. և 36։ ըստ այսմ ոճի է և բայս զփորձ առնուլ. զորմէ 'ի տեղւոջ իւրում գրեցաւ։

Digitized by Google

Փորձ տեսանել: || Տր առնել զփորձառութիւն, կմ փորձել, և կմ քննել զինչ, ըստ այնմ Առակ. 25. 4. Փորձ տես զանփորձ արծաթոյ, Տր տես զփորձն անփորձ արծաթոյ, որ է ասել. փորձեա զանփորձ արծաթն՝ արկանելով զնա 'ի բովս. կմ կռանելով 'ի վ՛ր սալի. և այլն:

Փորձ փորձել: || Տր փորձելով փորձել. կմ զփորձ առնուլ: 2. Մկ. 13. 18:

Փորձաբար: (մակբայ որակական.) || փորձելով. կամ յաղագս փորձելոյ: 'Ի Հռչ. հարց. Բ:

Փորձակից: (Նախադրիւ հոլովի.) || ընդ փորձութեան. կմ լցեալ փորձանօք. կմ ամենևին զփորձառեալ:

Փորձական. ի. աւ. աց. օք: || այն տեղ, որ է փորձ. կմ փորձեալ, և կմ փորձառական: Ոսկէ. 2. հատ. ԼԳ:

Փորձակից. կցի. աւ. կմ իւ. աց. օք: || կցորդ փորձութեան ուրուք. կմ ընկերօղ ումեք 'ի փորձանս. կմ օգնական փորձանաւորաց: Լամբրոն:

Փորձանակից. կցի. աւ. կմ իւ. աց. օք: || կցորդ փորձանաց ուրուք. կմ կրեալ ԷԸ ումեք զնոյն փորձանս. և կմ փորձակից: Լամբրոն:

Փորձանաւոր. ի. աւ. աց. օք: || ունօղ զփորձանս. կմ անկեալ 'ի մէջ փորձանաց, և կմ տառապեալ 'ի փորձանս: ռամկ. ֆորչանի մէջ ընկնօղ. կամ փորձանքը ֆորչանք էկած: Եբր. 2. 18:

Փորձանք. անաց. օք: (անեզական.) || փորձութիւն. կմ պատահար. կմ դժնդակ դիպուած. կմ տառապեցուցիչ վիշտք. և կմ ձախորդութիւնք. և աստցան փորձանք, ըստ որում սոքօք փորձի մարդ: ռամկօրէն ֆորչանք, կմ դար. և թաձկ. պէլայ: 2. Օրին. 7. 19: Գործ. 4. ԲՅ: Յոբ. 1. 12: 'Ի բ՛ձլ՝ նշանակէ՝ փորձառութիւն. կամ փորձունս իրիք. ըստ այնմ Ոսկէ. 2. հատ. ԺԷ. Աշակերտքն ոչ գիտէիցեն 'ի ձեռն այսր փորձանաց. Տր այսու փորձառութեամբ:

Փորձառական. ի. աւ. աց. օք: || այն տեղ, որ վերաբերի առ փորձառութիւն. կամ զփորձ առեալ. և կմ փորձական:

Փորձառու. ուի. աւ. աց. օք: || զփորձ առօղ. կամ փորձիւ հմտացօղ. և կամ փորձօղ:

Փորձառութիւն. թեան: || զփորձ առնուլն, կմ փորձիւ տեղեկութիւն. և կմ փորձ:

Փորձասէր. սիրի. աւ. աց. օք: || սիրօղ փորձութեան, կմ յօժարեալ 'ի փորձել. որպէս սէ է դևն: Ծն ուղղի:

Փորձաքար. ի. իւ. աց. օք: || տես 'ի բառն Մահակ:

Փորձեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || ըզ փորձ առնուլ. կմ տեսանել զճաշակ իրիք, որ է համը փէսնէլ. կմ չէշնի առնել. իսկ մերթ բանիւ, կմ գործով իմիք քըննել զոք, առ 'ի գիտել զուղղութիւն նր, կմ թէ զինչ կայ թաքուցեալ 'ի նմա. և այլն: Այլ այս երբեմն է անզանազան, կմ բարի. և ըստ այսմ փորձեն մարդիկ զայնս, զորս կամին ընտրել: Ղուկ. 2. 1: 1. Թէս. 5. 21: ըստ այսմ է և փորձելն Աստուծոյ զմարդ, և այն ոչ առ 'ի գիտել զուղղութիւն նր, այլ առ 'ի յայտնի երևեցուցանել. կմ զի շահեսցի ինչ մարդ 'ի փորձելոյ անտի: Ծննդ. 22. 1: Ելից. 20. 20: Իմաստ. 3. 5: Իսկ երբեմն է անտեղի, կմ չար. և ըստ այսմ է փորձելն անօրինաց զՏն. որով ձեռնարկեն յիմն առ 'ի ճանաչել, թէ դի տէ՝, կմ կարէ՝ առնել զայս ինչ, և զայն ինչ: Ելից. 17. 2. և 7: Իմաստ. 1, 2: Եւ յայս մանէ առնեալ փորձել ասի՝ արկանելն զոք 'ի փորձանս, կմ պատրաստելն ումեք ըղ վտանգս չարի, առ 'ի յանցուցանել. կամ առ 'ի չարաչար որսալ զնա. և ըստ այսմ Ած զոչոք փորձէ, այլ միայն դևն, կամ արբանեակք նր: Մտթ. 22. 18: 1. Կորն. 7. 5: Յակ. 1. 13. և 14: Դարձեալ փորձել ասի՝ մարդկելն զհրահանգելիս 'ի բովս, ըստ որում այնու քննեալ ճանաչեն զուղղութիւն նց: ռամկօր. խալլ ընէլ. և ըստ այսմ ոսկին, կմ արծաթն զտեալ և մաքրեալ՝ ասի փորձեալ 'ի հրոյ. կմ յերկրէ. Տր 'ի հողոյ. և յամ անմաքրութենէ: ռամկ. խալէս, կամ զուտ. և կմ խաս: Սաղմ. 11. 7: Յայտ. 3. 18:

Փորձիչ. ձչի. աւ. աց. օք: || փորձօղ. կամ նա՝ որ փորձէ. Տր քննէ զոք առ 'ի ճանաչել, թէ որպիսի է. կմ որ մարդկէ զհրահանգելիս 'ի բովս, որ է խալճի: Երեմ. 6. 27: Բայց մասնաւորապէս փորձիչ անուանի սատանայ, ըստ որում միշտ փորձէ ըղ մարդիկ՝ որսալ զնս 'ի չար կամս իւր: Մտթ. 4. 3:

Փորձութիւն. թեան: || երբեմն առեալ լինի սա ներգործաբար, և նշանակէ զփորձելն, կմ փորձանք, կմ պատահար, և կմ ձախորդութիւն: ռամկ. դար. կմ պէլայ: Սաղմ. 17. 30: և 94. 9: Մտթ. 6. 13: 1. Կորն. 10. 13: Իսկ մերթ կրաւորաբար, և նշանակէ ըզ փորձիլն, կմ զփորձեալ լինիլն: Ըստ այնմ Եբր. 11. 17: Մատոյց Աբրահամ 'ի փորձութեան իւրում զԻսահակ պատարագ:

Փորոն. ի. իւ. ից. իւք: || է բառ յունական և լատինական. և նշանակէ՝ փողոց. կմ հրապարակ. և կմ տաճար: ռամկօր. Ճեփանէ: Խորէն. Բ. գլ. 85:

Փորոտեմ. եցի. եա. ել: (չէզոք. և մերթ ներգործ.) || ծագի 'ի բառէս փորոտի, ուստի նշանակէ՝ տոլաւ, 'ի փորոտեաց զլխոյ 'ի բաց արձակել. կմ արտաքս վիժել. և կմ զգայութել. որպէս առնեն ոմանք 'ի նորանշան գազանաց՝ հուր շնչելով դժընդակ գոռալ. Տր գոռացմամբ. կմ մռնչմամբ: ըստ այնմ Իմաստ. 11. 19: Արձակել 'ի վ՛ր գազանս անծանօթս, կմ հրաշունչս փորոտոցս գոռութ:

Փորոտի. տւոյ. տով. կմ եաւ. եաց. եօք: || ածանցի 'ի բառէս փոր, որ կարօտին 'ի բառէս կալ, և նշանակէ՝ ըղ ներքին մասունս փորոյ կենդանւոյն. և ըստ այսմ փորոտի կոչին առհասարակ ամ ա-

Digitized by Google

զիք, երիկամունք. քաղիրթ, փայծաղն, լեարդ. թոք. սիրտ. և նմանք սոցա: Ելից. 12.9: և 29.17: Ղեւտ. 3.3: և 8.16:

Փորուած. ոյ. ով. ոց. ովք: || Նիւթք ելեալք 'ի բաց՝ 'ի փորելոյ. որ և մանրուած կոչեմք զմասունսն, որք ելանեն 'ի մանրելոյ: Դարձեալ՝ նշանակէ փորեալ տեղի. կմ. փոսեալ միջոցք. կմ. ծոցաւոր դատարկուն, և կմ. փոսք ոսկերց իրաց: Եզեկ. 43.14: Խորեն. Բ. գլ. 36: Իսկ մերթ փապարք ծառոց, կմ. խոռոչք լերանց, և նմանեաց: ռամկօրէն խուղուխ. կմ. օյուքլը: Յոյնաձայնութիւն: Երբեմն եւս նշանակեն իւրաքանչիւր խորշք, կմ. ծոցաւոր տեղիք խեղապատակին, կոչեցեալք յատկապէս փորք, յորս զետեղեալ կան բեր 'ի սենեկի՝ մասունք ուղղոյ գլխոյն: 'Ի Գիրս ծնն. և ուղղերփ. Զ. Գլ. 11: Դարձեալ՝ փորուած յոլորոլին յորինուածք ձևացեալք 'ի վմ. երկք փորելով. որք և բուն անուամբ կոչին գլուածոց. կմ. փորոք: ռամկօր. օյմայ. կմ. խուէմ:

Փորք. ի. րէ. րց. րաց: || Նոյն է ամենեւին ընդ բառին փորուած՝ բաց 'ի յառաջնոյ նշանակութենէ. վմ. որոյ փորք կոչին առհասարակ ամ. փոսք. խոռոչք. փապարք. խորշք խեղապատակաց, և այլք նմանք. ըստ այնմ 'ի Գիրս սաղմ. ծնն. Բ. գլ. Խ. Բազումք 'ի թաչնոց մեռանին 'ի ձմերային 'ի փորս ծառոց. կմ. 'ի խուղուխս: Եւ յայլուր ասի, 'ի մէջ բոլորաշրջն, այսէ՝ ծլին, փորք է, կմ. զօզէ, կմ. խուղուխ է: Դարձեալ փորք կոչի կապիճն աչաց, և կմ. գուհար ական, որ է բուղէյի: Եւ եւս փորք յորջորջեմք զգոգաւորս, կմ. զկազմուածս չինելս գոգեալով: ռամկ. խոխում: Եւ կմ. զնստուածս 'ի խոր՝ տարածեալ երկաթի գործեօք: ռամկ. չէօփուրթի:

Փորքարար. ի. աւ. աց. օք: || առնօղ զփորքս, կմ. զփորուածս: Բայց մասնաւորապէս նշանակէ զդրօշագործն, կմ. զնա՝ որ երկաթի գրչաւ յորինէ զնկարս 'ի վմ. հրահանգելեաց: ռամկ. խուէմ…:

Փոցխ. փոցել. եղբ. եղաց. եղք: կմ. փոցխի. իւ. իւ. օք: || տես զՏրմուխ:

Փութագնաց: (Նախադրիւ հոլովի.) || փութանակի գնացող. կմ. երագընթաց. և կմ. երագոտքայլ: ռամկօր. … կամ …:

Փութաջեմ: (Նախադրիւ հոլովի.) || Նոյն է ընդ վերնոյն:

Փութամ. ացայ. թա. կմ. ացիր. աւ: (ընդ միջ.) || Ջեպել. կմ. շտապել. կամ երագել. և կմ. վաղվաղել: ռամկօր. …: Ծնն. 18.6: և 24.18: Ելից. 9.19: Իսկ մերթ փոյթ ունիլ. կմ. հոգալ. կմ. ջանալ. և կմ. նկրտիլ: ռամկ. … կմ. …: Գաղ. 2.10: Եփես. 4.3: 2. Պետր. 1.15: Այլ մինչ ասի՝ փութալ փութայր, որ նշանակէ՝ փութալով փութալ, կմ. կարի շտապիլ: ռամկօր. …: Կիւրղի. Եղէ. ԺԷ:

Փութամահ: (Նախադրիւ հոլովի.) || փութանակի մահացեալ. կմ. վաղվաղակի մեռանող: ռամկ. …: Իսկ մերթ փութապէս մահացուցանող. կամ այն որով որ վաղվաղակի մեռանի: ռամկօր. …: և ըստ այսմ ասի, փութամահ …: կամ …: 'Ի հին …:

Փութանակի: (մակբայ երագ.) || փութապէս. կմ. վաղվաղակի. կմ. երագաբար, և կմ. շտապով: ռամկ. … կմ. …: Ելից. 12.11. և 33:

Փութարար. ի. աւ. աց. օք: || փոյթ առնող. կմ. ինամածու. կմ. հոգաբարձու. և կմ. տնտեսող: ռամկօր. …: ըստ այնմ Ղուկի …: կարգեալք իւրաքանչիւր ախոռոյեցն փութարարք: Իսկ մերթ՝ փութացուցանող. կմ. շտապող: ռամկ. …:

Փութապէս: (մակբայ երագական.) || տես զփութանակի: Սաղմ. 77.33: Ղուկ. 1.39:

Փութացուցանեմ. ացուցի. ացո. անել: (անցող.) || տալ ումեք փութալ. կամ ձեպեցուցանել. և կմ. շտապեցուցանել: ռամկ. …: Ծնն. 18.7: և 19.15:

Փութաքայլ: (Նախադրիւ հոլովի.) || տես զփութագնաց:

Փութով: || է գործիականն բառին փոյթ. որ երբեմն վարի իբրև զմակբայ. և նշանակէ՝ փութանակի: Խորէն. Գ. գլ. 57:

Փութութիւն. թեան: || փութացումն. կմ. հոգածութիւն. կմ. ջան: ռամկ. … կմ. …:

Փուլ. փլոյ. ով. ոց. ովք: || է արմատ փլանելոյ բային, և նշանակէ փլեալ. կմ. կործանեալ. և աւերեալ: Իսկ մերթ նշանակէ զփլածս, զոր տեսցես 'ի վերայ. և ըստ այսմ ասի՝ բնակիլ 'ի փուլս. և 'ի գաթափորս մտանել: Յոյնաձայնութիւն:

Փուլոս. ի. իւ. աց. աւք: || է բառ յունական. որ թարգմանի յոլովամեղծ. կմ. ծխալից. որ … և ըստ այսմ փուլոս անուանի տեսակ ինչ փոթորկի, կմ. մանուանդ կայծական, որ յարձակեալ յամպոց ծուխս և մրրկատե… ասկ փոշիս բերէ ընդ իւր. 'Ի Գիրս … թի …:

Փուղձ. փղձոյ. ով. ոց. ովք: || խոնաւ. կմ. դէզ. կամ թացեալ. զոր և կոչեմք աղբակ, և կմ. թուրմ: ռամկ. … կմ. …: Դարձեալ բազում անգամ վարի առ գոյականաբար. և նշանակէ զհիւթս խոնաւ. կմ. զխոնաւութիւն, որք գտանին յիմիք:

Փունդ. փնդոյ. ով. ոց. ովք. կմ. իւ. իւ. իւք: || է անօթ. կմ. աման ինչ: Մծբ. ԺԲ:

Փունջ. փնջոյ. ով. ոց. ովք: կմ. փնջի. իւ. իւ. իւք: || պսակ, կմ. բազմութիւն ծաղկանց կապեալ 'ի մի՝ իբրև զմտենիկ. զոր յաճախ ըմբռնեն մարդիկ 'ի ձեռս առ 'ի հոտոտել ումեք. և ըստ այսմ ասի՝ փունջ մանուշակաց. կմ. վարդից. և այլն: ռամկ. … կմ. … կմ. …: Եւ յայսմանէ առեալ՝ փունջ կոչին և բազմութիւնք մա-

Digitized by Google

զից, կամ Թեւոց ոչ և իցէ իրաց, որք հա_ճախեալք և 'ի մի կապեալք՝ լինին իբրև զծառս. գր իբրև զփնջիւս, զորպիսիս ու_նին 'ի մէջ իւրեանց և ոմանք 'ի բուսոց, կամ 'ի ծաղկանց, որպ մեղրուկն ։ Փոքր փունջ կոչին տերևապատ գլուխք եղե_գանց արմատեաց, կամ այլոց բուսոց՝ ա_ռեալ հանդերձ բնովքն, յորոց արձակին հասկք, կամ ծաղիկք. և այլն ։ Ծննդ. 41. 35. և 22։

Փուշ. փշոյ. ով. ոց. ովք ։ || Բոյս, կամ Թուփ՝ փշաբեր. որով և անուանին իւրաքան_չիւր սուրքն այսպիսի բուսոց, որք խո_ցեն զմերձեցեալն 'ի նա. որպիսիք են և այնք սուրք, որովք լցեալ կան ոզնիք. ձկանք, պատատեանք շագանակին. գր քէս տանէին. և այլն ։ ռամկ. եա փուշ ։ Ծնն. 3.18: Մատթ.8.7: Մարկ.27.29: Փոխաբերեալ՝ Ը երաժշտաց փուշ կոչի խազ ինչ, որ ու_նի զայս ձև, ՛ ։

Փուշաբերական. ի. աւ. աց. ացք ։ || անձնապահ. կամ Թիկնապահ. ըստ այնմ 'ի հին պաշտօ_նէից. Պահէին զնա 'ի մէջ ապատադուսող փուշաբերական զօրացն. կամ 'ի նոյն գունդ փուշաբերականաց եառն զարշակ ։

Փուռն. փռան. ռամբ. ռանց. ամբք ։ || Վա_ռարան մեծ՝ շինեցեալ զմերեթաձև յարկաւ՝ կղմնատերօք և կրօք, կամ կաւեղք. յոր ար_կեալ եփեն զհաց, կամ զկարկանդակս. և այլն ։ ռամկ. ֆուռ. և տաճկ. ֆռուռն ։ 'Ի վերս հաբց. ժե։ Եւ տարբերի առ 'ի հնո_ցէ. զի 'ի հնոցի Թրծեն զաղիւս, կամ հա_լեն զապակիս. և կամ լուցանեն զհուր 'ի ջեռուցումն բաղանեաց. և այլն ։ Նաև ոչ է հարկ հնոցին ունիլ զգմբեթայարկ ձեղուն. զի Թէև 'ի վերոյ կողմանէ իցէ բաց, տակաւին հնոց կոչի. որպիսիք են այնոցիկ, յորս այրեն զկիր, կամ գործեն զկղմինտր ։

Փուտ. փտոյ. ով. ոց. ովք ։ || Է արմատ միր_ախր բայլին. և նշանակէ փտեալ, կամ հա_րեալ 'ի փտուԹէ. և կամ յապականուԹի գարձեալ. և կամ խարխուլ. և ըստ այսմ ասի՝ փուտ փայտ, տիկ, ընկոյզ. և այլն ։ ռամկ. եա՛ ճուռ, կամ ճքոռծ. և տաճկ. չիւ_րիւք ։ Յոբ. 41. 18։ և 'ի Գիրս Թրէգ. ծանօթ։ Եւ յայսմանէ առեալ փուտ կոչի վատ_Թար և անկարգ շառաւիղն, որ անկարգ աւելորդուԹեւ բղխի զարմատովք ծնկաց. և փոքր ինչ մնացեալ չորանայ. զոր ռամկ. կոչեմք ֆէն. Ը այնմ Իմաստ. 4. 3. 'ի փուտ շառաւիղաց մի՛ տացի արմատս 'ի խորս ։ Փոխաբերեալ՝ նշանակէ փտուԹի. կամ ապա_կանուԹի. ըստ այնմ Ղևտրօն. Անօրէնութեան ... ցաւք. և 'ի ցաւոցն փուտ գոր_ծի, գր փտուԹի լինի 'ի մարմնի ։ Եւ եա փուտ անուանեմք զփտեալ և ղապակա_նեալ անդամն մարմնոյ, կամ ատաղձոց. և այլն ։ ռամկ. ֆիւրուծ փէշը. և ըստ այսմ ասի 'ի ... ինչ. Զփուտն յապականեալ մարմ_նոյ հատանել և ընկենուլ պարտ է ։

Փուք. փքոյ. ով. ոց. ովք ։ || շունչ արձա_կեալ յիմիքէ. կամ փչումն. կամ շնչումն. և կամ հողմ ։ ռամկ. նէֆէս. կամ փուֆ. ըստ այնմ Տօնացոյց. Զ. Գլ. 16. 'ի փքոյ բերա_նոյ բորբոքի հուրն ։ ըստ այսմ է և Յոբ. 7. 7. ուր ասի, Յիշեա, զի փուք են կեանք իմ ։ Իսկ մերԹ նշանակէ փքացումն. կամ այտումն. և կամ ուռոյց. ըստ այնմ Ղևտ_րօն. Զփուք հպարտուԹեն յանդուգա_նել, գր զինջուցանել ։ Եւ յայսմանէ առեալ փուք կոչին մանրիկ նիշք բղխեալք զմոր ԹովքմարմՆոյ, և իբր բուշտ բուշտ ամբո_խեալք, որք առ երեսօք փոխեն զգոյն մոր Թոյ. բայց 'ի ներքս ոչ ունին զապականու_Թին. և իբրԹէ են սոսկ բշտիկք. կամ բիծք 'ի տոցինէ. ոմանք սպիտակք են, և ոմանք Թուխք. կամ շառագոյնք. որք և երբեմն խաղան 'ի տեղւոջէ 'ի տեղի ։ ռամկ. ցափ ... ։ Ղևտ. 13. 39։ Փոխաբ. փուք կոչի մանրաւորապէս հողմն վարեալ արտաքս յորովայնէ կեն_դանեոյն ընդ երաստանսն ։ Յայտնաբար ։

Փուքք. փքոց. ովք ։ (Վարի աներզականա_բար.) || գործի մաշկապատ՝ կազմեալ շնչահանիւ, որ յընդարձակելն ձգէ 'ի ներքս զօդս, և ուռնու. և յամփոփելն վարէ զնոյն արտաքս ուժգին փչելով, և զեջանէ. վա որոյ և յատուկ է արծարծա_նել ռավաւ զհուր. որպ ունեն խոհակերք. կամ դարբինք. և արծաթագործք ։ ռամկ. ֆուքս. և տաճկ. ... ։ Յոբ. 32. 19։ Ես_այ. 54. 16։ Երեմ. 6. 29։

Փոփոխ ։ (Նախդրիւ հոլովի.) || փոփոխա_կան. կամ յեղաշրջական ։ Իսկ մերԹ փո_խաբերական. կամ անդրադարձական. և կամ փոխարինական. և ըստ այսմ ասի՝ փո փոխ մարտ. ընԹացք. տուրք. սէր. և այլն ։ Խորէն. Բ. գլ. 57։ Փոխաբերեալ երբեմն վարի իբրև զմակբայ. և նշանակէ փոփոխապէս. կամ յեղափոխութբ. և կամ փոխարկմամբ ։ Երբեմն եա փոխաբերա_բար. կամ հակադարձաբար. և կամ փոխա_նակաւ ։ ռամկ. ... ։ և ըստ այսմ ասի՝ փոփոխ մարտնչիլ. փոփոխս հարկա_նել. կամ մատուցանել. և այլն ։ Եսայ. 30. 32։ Խորէն. Ա ։

Փոփոխական. ի. աւ. աց. ացք ։ || փոփոխելի. կամ յեղաշրջելի. կամ որ միշտ փոփոխի, և այլայլի. որ և ասի՝ յեղյեղուկ ։

Փոփոխեմ. եցի. եա. ել ։ (Ներգործ.) || ը միմեանս փոխել. կամ փոխարկել. կամ յե_ղափոխել. կամ այլայլել. և կամ դարձու_ցանել ։ ռամկ. ... ։ Ծննդ. 48. 14։ Յոբ. 12. 20. և 24։

ՓոփոխուԹի. Թեան ։ || տես 'ի ներքոյ ըղ Փոփոխումն ։

Փոփոխումն. խման. մամբ. մանց. մամբք ։ || ընդ միմեանս փոխումն. կամ փոխարկու_Թի. կամ յեղափոխուԹի. կամ այլայլումն. և կամ դարձուած ։ Իմաստ. 7. 18։

Փոքր. փոքու. 'ի փոքունց. ու. ունց. ումբք. կամ փոքեր. երք. երց. երբք ։ || Նուազ քա_նակաւ. կամ դոյզն. կամ խուն. որոյ ներ հակն ասի մեծ ։ ռամկ. ... ։ Ծնն. 1. 16։

Սաղմ. 41. 7: Իսկ մերթ կրատեր. կմ փոք֊
րիկ հասակաւ. և կմ մանուկ: Ծնն. 19.
11: Երբեմն եւս սակաւ. կմ նուազ. կմ
արհամարհ. և կմ խոտան: ռամկ. ցիւ. կմ
չոծ: Թուոց. 16. 13: և 22. 18: 1. Թագ. 15. 17:

առ. Փոքր փոքր: || տե՛ս Փոքր փոքր:

Փոքրաբան. ի. իմ. ից. իւք: || սակաւաբան.
կմ նուազաբան. կմ համառօտաբան. յա
նա՛ որ կարճ խօսի. կմ պակասագոյն քան
զոր արժանն է՛ պատմէ. և կմ այն՝ զորմէ
համառօտ, կմ պակաս քան զոր պարտն
է՛ ճառեալ լինի. և ըստ այսմ առի՝ այր
փոքրաբան. կմ փոքրաբան նախախնա֊
մութիւն. և այլն: ռամկ. կարճ խօսօղ: Գրի֊
գոր. ածաբան:

Փոքրաբանեմ. եցի. եա. ել: (Ներգործ. և
մերթ չէզոք.) || համառօտիւ խօսիլ. կմ
կարճ ի կարճոյ ճառել. և կմ պակաս քան
զարժանն պատմել: ռամկ. կարճ խօսիլ. ըստ
այնմ՝ 'ի հին պարծօգիրս. Բայց զմարմնոյն
յառակութիւն երբէք ոչ խորշի փոքրաբա֊
նել մեզ:

Փոքրաբանութիւն. թեան: || սակաւաբանու֊
թիւն. կմ նուազաբանութիւն. կմ համառօ֊
տաբանութի. և կմ խօսք պակաս քան զար֊
ժանն. 'ի Գիրս Գրիգ. ածաբ'ս:

Փոքրագոյն. գունի. իմ. ից. իւք: || առա֊
ւել փոքր. կմ նուազագոյն. կմ պակա֊
սագոյն. և կմ փոքրիկ: ռամկօր. խիստ պզ֊
տիկ. կմ պզտիկ:

Փոքրախել: (Նախդրիւ հոլովի.) || ունօղ
զփոքր խելս. և կմ տկարամիտ:

Փոքրահասակ. ի. աւ. աց. օք: || ունօղ ըզ
փոքր հասակ. կմ կարճ դրակաւ. զոր և
կոչեմք կարճահասակ: ռամկ. պօտուռ: 'Ի
Վարս հարց. ժե:

Փոքրահոգի. գւոյ. ւով. եաց. ւովք: || տե՛ս
'ի բառն Փոքրոգի:

Փոքրավայելուչ: (Նախդրիւ հոլովի.) || պա֊
կասեալ 'ի վայելչութենէ. կմ անվայելուչ.
կմ խոտան. կմ անարգ. և կմ նուաստ.
և ըստ այսմ առի՝ փոքրավայելուչ զգեստ.
կմ միտք. բան. և այլն: ռամկ. չոծ: 'Ի
Գիրս Գրիգ. ածաբ. և պարապմանց:

Փոքրատեսակ. ի. աւ. աց. օք: || ունօղ ըզ
փոքր տեսակ. կմ զանձուկ ձև. և կամ
փոքրիկ տարածութիւն. ըստ այնմ 'ի հին
պարծօգիրս. Զմիայարանն փոքրատեսակ
լինն էր չինեալ:

Փոքրաւոր. ի. աւ. աց. օք: || փոքրիկ եղեալ.
կմ փոքրկացեալ. և կմ նուաստացեալ:
Իսկ մանաւորապէս առեալ փոքրաւոր
կոչի՝ տարրականն, կմ սպասաւորն, և կմ
աշակերտն, որ զհետ շրջեալ վարդապե֊
տի ուսումք՝ հպատակութիւն մատուցանէ
նմա, որոյ ներհակն կոչի մեծաւոր, կմ
վարդապետ:

Փոքրեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || գեր֊
ծանել. կմ վարսավիրել: ռամկ. ածիլել.
կմ Բրոշ ընել. և տասցաւ փոքրել, ըստ
որում հերք մարդոյ գերծմամբ փոքրին,
յա կարճին. կմ զի գլուխ նո 'ի բաց թա֊
փելով զթանձրութի հերաց՝ իբրթէ փոքր֊
կանայ. և յայս միտս երբեմն առի, փոք
րել զհերս, որպ Ծննդ. 41. 14: 2. Թագ. 14.
26: 1. Կորնթ. 11. 6: Իսկ երբեմն առի՝ փոք
րել զգլուխ, որպ Գործ. 18. 18:

Փոքրընկալ: (Նախդրիւ հոլովի.) || նա՛ որ
զփոքր, կմ զսակաւ ինչ ընդունի յինքն.
կմ սակաւուց պարունակօղ, կամ անըն֊
դունակ մեծամեծաց. և կմ տկար և անզօր.
և ըստ այսմ առի՝ փոքրընկալ անօթ որ
ափ, որով իմանի՝ տկար միտքն:

Փոքրիկ. րկան. ամբ. քրկունք. անց. ամբք:
|| առաւել փոքր, կմ փոքրագոյն. կմ նուա
զագոյն, և կմ նուաստագոյն: ռամկ. պզտիկ.
Ծնն. 19. 20: Սաղմ. 113. 13: Մատթ. 10. 42:

Փոքրիմաց: (Նախդրիւ հոլովի.) || փոքր,
կմ նուազ իմացմամբ, կմ պարունակօղ
զնուաստ իմացուածս. կամ տկար հան֊
ճարով. և ըստ այսմ առի՝ փոքրիմաց միտք.
կմ բան:

Փոքր ինչ: (Մակբայ. և մերթ անուն.) ||
դոյզն ինչ, կմ խուն ինչ. կմ սակաւիկ մի:
ռամկ. ցիւ մը: Եզեկ. 3. 4: Թուոց. 16. 9:

Փոքր 'ի շատէ: (Մակբայ.) || սակաւ ինչ 'ի
բազմաց. կմ մասամբ իմիք, և ոչ բոլո֊
րովին. կմ ըստ մասին, և ոչ ըստ ամենայն,
և կմ փոքր մի. և ըստ այսմ առի. փոքր
'ի շատէ գիտել, կամ մարգարէանալ. և
այլն: ռամկ. շատէն ցիւ. և տաճկ. [illegible]
տուն: Հռոմ. 11. 25: 1. Կորն. 13. 9: 2. Կորն.
1. 14: և 2. 5: Իսկ մերթ՝ դաւանաբար. կմ
սակաւուք. և կմ համառօտիւ: 1. Պետ. 5. 12:

Փոքրկանամ. ացայ. ացիր. ալ: (Չէզոք.)
|| փոքրիկ լինել, կմ նուազել քանակաւ,
կմ սակաւանալ, և կամ նուաստանալ:
ռամկ. պզտիկնալ: 1. Մնաց. 17. 17:

Փոքրկացուցանեմ. ցուցի. ացո. նել: (ան֊
ցող.) || փոքրիկ առնել. կմ նուաստա֊
ցուցանել:

Փոքրկութի. թե. || փոքրիկ գոլն. կմ նուազութի
քանակին, կմ սակաւութի, կմ նուաստութի:
ռամկ. պզտիկութի: Բարուք. 2. 29: Նարեկ. [illegible]

Փոքր մի: || տե՛ս զՓոքր ինչ: Աղաւ. 6. 10:
Յովհ. 16. 16:

Փոքր մի եւս, կմ փոքր միւս եւս: (Մակբայ.)
|| սակաւիկ մի եւս, կմ սակաւիկ միւս եւս:
ռամկ. ցիւ մնաց որ. կմ ճաղ մնաց որ. ըստ այնմ
Սաղմ. 93. 17: և 118. 87. Փոքր մի եւս կարօ֊
տանէին զիս: Եւ 'ի Վարս հարց. ժդ. առի. Փոքր
միւս եւս արգելեալ էի գալ այսր: Բայց
յայսպիսի ոճս բազում անգամ վերջի սա
յաւելեալ շաղկապս՝ և. որպիսի է. և
մակբայս. սակաւիկ մի եւս, կմ սակաւիկ
միւս եւս. զոր օրինակ. փոքր մի եւս. և մեռեալ
էր. կմ փոքր միւս եւս՝ և հեղձամղձուկ լի֊
նէին: Դարձեալ՝ նշանակէ՝ սակաւ մի եւս,
կմ սակաւ ինչ եւս, կմ այլ եւս վայր մի:
ռամկ. ցիւ մը տակաւին, կմ ցիւ մըն ալ
ըսին: Եսայ. 28. 10: Եբր. 10. 37: Եւ ըստ
այսմ երբեմն վերջին սա. ընդ բառին՝ ժա
մանակ. և զնոյն նշանակէ, որպէս. փոքր
միւս եւս. ժամանակ լոյս ընդ ձեզ է: Յովհ.

12. 35: Այսու նշանակութեամբ 'ի գործ ա_
ծի երբեմն և մակբայս՝ սակաւիկ մի ևս,
կամ սակաւիկ միւս ևս:

Փոքրագնեմ. եցի. եա. եւ: (Ներգործ.) || փոք
րոգի առնել, կամ թեթևացուցանել, և
կամ դիւրել: ռամկ. պզտիկցնել:

Փոքրոգի. գւոյ. ւով. եաց. եօք: || կարճա
միտ, կամ նեղասիրտ: ռամկօր. ստորոտ:
Բայց յատկապէս առեալ նշանակէ զփոք
րահոգին, այսինքն՝ որ ոչ ունի զմեծասրտու
թիւն, կամ որ յաղագս տկարամտութեան՝ յետ
իրաց չարեաց, և այլայլի. 'ի յաղթողութիւնս
առժամեայն բարձրանալով. և 'ի ձախողա_
կութիւնս վաղվաղակի ընկճելով. որոյ ներ_
հակն կոչի՝ մեծահոգի: Եւ յայսմանէ ա_
ռեալ փոքրոգի կոչի տկարն և անկատարն
յիմիք. որգոն 'ի արամաբանութեան, կամ
յիմաստութեան, կամ 'ի հաւատս. և այլն:
ըստ այնմ Յն. որդ. Անհամախմբով դայ
թակղեցին, որ փոքրոգիք յիմաստս էին:
Իսկ մերթ թեթևն, կամ դիւրաբառնա_
լին. և ըստ այսմ առի. փոքրոգի բեռն,
կամ ամոլ, և այլն: Մատթ. 11. 30: Երբեմն
ևս՝ թեթևացեալ, կամ դիւրացեալ, և կամ
անգործացեալ: ռամկ. բեթեւցած. ը այնմ
'Ի գիրս Մծին Խոսրովա: Եւ գիշերաւն՝ փոք
րոգի յիւրաքանչիւր կրից և աշխատութեանց
լինին:

Փոքրութիւն. թեան: || տե՛ս զՓոքրկութիւն:

Փոքր փոքր: (մակբայ.) || գոյզն գոյզն. կամ
սակաւ սակաւ. և կամ մեղմ մեղմ. և ըստ
այսմ առի. փոքր փոքր յայտնել, կամ յի_
ճեցուցանել: ռամկ. քիչ քիչ, կամ կամաց կա
մաց: Մոկէ. 1. հատ. իզ: և Լամբրօն:

Փ Չ

Փչեմ. եցի. եա. եւ: (չէզոք. և մերթ ներ
գործ.) || արձակել զփուք ընդ բերանն՝
կամ ընդ մեքենայ. ինչ. և կամ 'ի բաց շնչել:
ռամկ. ևս փչել: Իմաս. 15. 11: Եզեկ. 21. 31:
Իսկ մերթ՝ հնչել հողմոց, կամ շնչոյ. և
նմանեաց: Եզեկ. 37. 9: Խորէն. գ. գլ. 8. և
37: Դարձեալ՝ մինչ առի. փչել զոգի. իմա
նի, աւանդել զհոգին, կամ մեռանիլ: ռամկ.
մեռնիլ: ըստ այնմ Խորէն. ա. գլ. 10. Եւ
այսպէս ջախջախեալն տիտանեան փչէ զոգին:

Փչիւն: (նախադրիւ հոլովի.) || փչումն, որ
է արձակումն փքոյ. կամ շնչումն: Կիւրղէ
Եզեկ. ժգ:

Փչողական. ի. աւ. աց. օք: || այն ամ, որ
փչէ, կամ որով լինի փչումն:

Փչողութիւն. թեան: || փչելն, կամ փչումն, և
կամ շնչումն:

Փչումն. չման. ման. մանց. մամբք: || տե՛ս
զՓչիւն:

Փ Ռ

Փռանգ. կամ փռանկ. և կամ փրանկ. գի. աւ.
աց. օք: || է բառ այլազգական. որ թարգ.
մանի ազատ: Արդ՝ նշանակին առլաւ.
գերմանացիք. կամ բնակիչք գերմանիոյ: և
անուանեցան այսպէս, յաղագս բռնաւ մար
տիւ ազատելոյ զանձինս ձեռանց 'ի խիստ
ծառայութենէ հռովմայեցւոց: Սոքա 'ի հը
նումն զօրացեալք մտին և 'ի գաղղիա. և
յայնմանէ սովորութիւն եղև և գաղղիա_
ցւոց կոչել փռանգս: ռամկօր. Ֆռանկօղլու.
Խորէն. յաշխարհագրութ: Եւ 'ի սոցանէ ա_
ռեալ այժմ փռանգս կոչեմք առհասարակ
զամ բնակիչսն Եւրոպիոյ, որք զգեստուք
կցորդին գաղղիացւոց, և գերմանացւոց.
ռամկ. Ֆռէնկ. Լամբրօն: տե՛ս և 'ի բառարա
նի յատուկ անուանց:

Փռանգացի. ցւոյ. ւով. ւոց. ւովք: || բնա_
կիչ փռանգիոյ, զոր տեսցես 'ի բառարա
նի յատուկ անուանց: Իսկ մերթ՝ փռան
գական, կամ այն՝ որ արտաքոյ 'ի փռան_
գիայ. և ը այսմ առի. փռանգացի քար.
կամ սովորութիւն, և այլն: Կիւրղէ. ղզ:

Փռանգամ: || տե՛ս զՓռանչեմ: 'Ի հին պատմա_
գիրս:

Փռանկամ. ացի. կա. ալ: (չէզոք.) || նոյն է
ամիճ ընդ բայիս՝ փռանչել: Եսայ. 13. 8: և
'Ի գիրս Մովսէ. Մամ. ա. գլ. 21:

Փռանչահամայ. ի. իւ. ից. իւք: || հմայօղ փը
ռնչմամբ, այսինքն՝ որ գուշակէ զապագայս
'ի փռանչելն մարդոյ, որպիսիք են գիւթքն՝
որք 'ի փռանկալն ուրուք ընդ առաւօտ՝
ասեն, զնա յայնմ աւուր բարւոյ հան_
դիպել. եթէ ընդ երեկոյս՝ չարի. իսկ
եթէ ոք կիսանկատար փռանչեսցէ. ասեն՝
զնա՝ վրիպել 'ի բախտէն, որ մերձեալ
էր նմա. ըստ այսմ խմա և զայլոց նմա_
նեաց, որք սուտք են, և առասպելք:

Փռանչահամայութիւն. թեան: || հմայումն, այսինքն
դիւթական գուշակումն ապառնեաց կամ
գաղտնեաց 'ի ձեռն փռանչման, զորմէ 'ի
վերոյ ասացաւ. 'Ի գիրս Մովսէ. Մամ. բ.
գլուխ. 37:

Փռանչամ. ացի. չա. ալ: (չէզոք.) || նոյն է ը
բայիս՝ փռանչել. այլ խնխնջալն ընդ բայիս
խնխնջել:

Փռանչեմ. եցի. եա. եւ: (չէզոք.) || փռըն_
չիւնս արձակել, որ է յանկարծական ցնց
մամբ գլխոյ, և հնչմամբ ձայնի 'ի բաց ար
ձակել զշունչ վիքոյ ընդ ռնգունս, որ պատ
ճառի 'ի բռնանալոյ խոնաւութեան վանել ըզ
նուրբ գոլորշիս, որք հաւաքեալ պահին
'ի փորոքս ուղղոյ գլխոյն, ուր ասէ զա_
կէնոս: ռամկ. փռնգտալ: Յոբ. 41. 9: Եւ
'ի ձայնէ սորա առեալ փռանչել ասի՝ մռ_
մռալն, կամ մռնչելն, կամ գոռալ, կամ կա
կանել, և կամ գռուժել: ըստ այնմ Կիւրղէ
Եզեկ. է: Փռանչեն 'ի ժողովս խոզեանց 'ի
վր ձոն, և 'ի վր քնոյ. այսինքն մռմռան, կամ
մռնչեն: ըստ այսմ վարի, և փռանկալն.
զոր օրինակ, փռանկայցեն այր ընդ ընկե_
րի, այսինքն գոռայցեն, կամ գռուժեսցեն ող
բովք, կամ ցաւուք. և այլն: Եսայ. 13. 8:
Դարձեալ՝ փռանչել կոչի խնձելն, և ը
այսմ առի. Յոբ. 39. 25. պղնձոյ վաշ վաշ
կարդայ վասն առնլով և փռանչելով, այսինքն

և խոնջելով. ըստ այսմ է և փանգալն, զոր օրինակ, ասա երկվարն վազս առել փանգալով. ՚ի հին պարծոգիրս։

Փանջիւն։ (Նախադրիւն հոլովի․) || փանջումն. կմ փնջելացումն, որ է ֆունգացումն։

Փաշատամ. ալի. ամ. ատել։ (ընդ միջակ․) || տե՛ս զՓանջել։

ՓՍ

Փսալքա. կմ փսալտա. ի. աւ. աց. օք։ || է բառ յունաց, որ ըստ նշ արտաքերի փսալթեա, և նշանակէ սաղմոսերգու. կմ սաղմոսասաց, և կմ երգեցիկ։ ռամկ. սող մօս ըօշ։ 1. Եզր. 8. 5. և Լոմբրօն։

Փսալտութիւն. թեան։ || սաղմոսերգութիւն, կմ նուագ սաղմոսաց, և կմ երգեցողութիւն. ըստ այնմ ՚ի հին պարծոգիրս։ Եւ ա_ ռաւել ևս հնոյն ընկեր փսաղտութիւն կը թանաց։

Փսխաթ. կմ փսխադ. ի. աւ. աց. օք։ կամ իւն. ից. իւք։ || է բառ հելլենացւոց. որ ըստ նշ յորջորջի փսխաթօս. և նշանակէ զփուոցն հիւսեալ ՚ի պղտոյէ, և ՚ի նման ւոյ։ ռամկ. խսիր։ ըստ այնմ ՚ի ձեռս հարց. Դ. և Ժ Է. իւրև երեկոյ եղև, մի փսխաթ էարկ ՚ի ներքոյ նշ։ իսկ մերթ զամբիւղ. կմ սակառի, զոր հիւսեն ՚ի տերևոց ար_ մաւոյ. և յայլոց նմանեաց։ ռամկօր. զէմ պիլ. ըստ այնմ ՚ի ձեռս հարց. Ժ. Առեալ փսխադ ծակ, և լցեալ զայն աւազով եդ ՚ի վերյ թիկանց իւրոց։

Փսխաթեայ. կմ փսխադեայ. էի. իւն. ից. իւք։ || տե՛ս ՚ի ներքոյ զՓսխաթի։

Փսխաթի. թւոյ. եաւ. եաց. եօք։ || ծագի ՚ի բառէս փսխաթ. որ կերպարանի ՚ի բաւ ւէն կերպաս, և նշանակէ զկապմեցեալն ՚ի փսխաթէ. կմ զհիւսեցեալն ՚ի նիւթոյ փսխաթի։ ռամկ. խսրէ։ և ըստ այսմ փը սխաթի կոչի զգեստն արարեալ յարմա_ ւենւոյ. ըստ այնմ ՚ի ձեռս հարց. Ժա. Ու_ նէր նա զգեցեալ փսխաթի. և զկնի մեկ նի՛ առնելով. զի զհիւսեալ տերև յարմա_ ւոյ։ նոյն է ընդ սմա և փսխաթեայն. ըստ այնմ ՚ի ձեռս հարց. Ի. առնուք ինձ զփսխադեայ զգարձդ զայդ։

Փսխած. ի. աւ. աց. օք։ || փսխումն. և կմ փսխեցեալ նիւթ. ռամկ. ֆոխոսունք։ Առակ. 26. 11։ 2. Պետ. 2. 22։

Փսխեմ. եցի. եալ. ել։ (Ներգործ․) || զկե_ րեալն ՚ի ստամոքսոյ անդրէն ընդ բե_ րանն ՚ի դուրս վայթել. կմ ժայթքել. ռամկ. եւս ֆոխել. Առակ. 25. 16։ Յայտ. 3. 16։

Փսպենի. նւոյ. ւով. կմ եաւ. եաց. եօք։ || տունկ փսպղոյ։ ռամկ. Ֆըսթըխ ծառ։

Փսպուղ. պղոյ. ով. ոց. ովք։ || է պտուղ ինչ կարծրակեղև բուսեալ կոնոնաձև. և պատկացեալ խորշս խորշս. յորոց յետ քանզիւրսն պարունակի որդնաձև բեր ինչ պարարտ, և. ազխոտակ, կմ կանաչ պար_ փակեալ ՚ի փեծեկաց. զի յաւելանիւթ կեղևոց. և յառաջացեալ սա անուանի փս տուղ։ որոյ է և տեսակ ինչ, որ ընկոյզն տաձև իւրև զգինձ։ ռամկ. Ֆըստըխ։

ՓՏ

Փտեմ. եցի. եալ. ել։ (զօրութիւնք անցողա կան.) || փտեցուցանել. զի տալ նեխել փտել. և կմ ապականել։ ռամկ. չուրը_ տել։ Յոբ. 40. 7։

Փտեցուցանեմ. ցուցի. եցո. անել։ (անցո ղակ.) || նոյն է ընդ վերնոյն։

Փտիմ. եցայ. եաց. իլ։ (Չայնակր․) || սոս նալ զխտութիւն. որ է ՚ի ներքուստ ապա կանել փայտի, մսոյ, կմ պտղոց, և նմա_ նեաց։ ռամկ. չուրիւլ։ Յոբայ. 16. 18։ Սաղ. 37. 6.

Փտութիւն. թեան։ || ապականութիւն անկեալ ՚ի փայտս. կմ ՚ի պտուղս, ՚ի միս, յոսկր. և այլն։

ՓՐ

Փրանկ. կամ փռանգ։ || տե՛ս զՓռանգ. Լամբրօն։

Փրթած. ի. իւն. ից. իւք։ || փրթեալ մասն. կամ ՚ի բաց ոստեալ կտոր։ Դարձեալ, տեղի, ուստի փրթեալ և ՚ի բաց անկեալ է ինչ. և ըստ այսմ փրը թածք կոչին խոռոչք. կամ ծերպք. կամ փապարք. և այլք նմանք. ՚ի հին թարգմա_ նութեան։

Փրթանիմ. փրթայ. անիր. անիլ։ (Չայ_ նակրական․) || փրծանիլ. կմ պրծանիլ. և կմ զերծանիլ յիմեքէ. կամ ՚ի ձեռաց ուրուք. և այլն։ ռամկ. ֆըրթիլ. կմ ազա_ տիլ։ Լամբրօն։

Փրթուած. ոյ. ով. ոց. ովք։ || տե՛ս զՓր_ թած. ՚ի հին թարգմ։

Փրթուցանեմ. ուցի. փրթո. անել։ (ան_ ցողական․) || կորզել. կմ փրծուցանել. և կամ զերծուցանել։ ռամկ. ֆըրթել. կմ ազատել։

Փրծանիմ. փրծայ. իր. անիլ։ (Չայնակր․) || զերծանիլ. կամ ճողոպրիլ. կամ պրծա_ նիլ. և կամ փրթանիլ։ ռամկօր. ազատիլ. կամ ֆըրթիլ։ Յոբայ. 39. 4։ Առակ. 11. 8։ Գործ. 27. 44։

Փրծուցանեմ. ծուցի. ծո. անել։ (անցո_ ղական․) || պրծուցանել. կամ զերծու ցանել. կամ ճողոպրեցուցանել. և կամ փրթուցանել։ ռամկօրէն. ազատել. կամ ֆըրթել։

Փրկագործ. ի. իւն. աց. օք։ || գործօղ փր_ կութեան. կմ փրկարար. կմ աղատարար. և կմ փրկիչ. և ըստ այսմ սաց, փրկա_ գործ մարմինն և արիւնն տն. կմ փրկագործ չարչարանք տն. և այլն։ Նարեկ. ՚ի թարգմ խաչին։ և Առգոն։

Փրկագործեմ. եցի. եալ. ել։ (Ներգործ․) || գործել զփրկութիւն. կմ փրկել։

Փրկագործութիւն. թեան. || գործ փրկու թեան. կամ փրկարարութիւն. և կմ փրը_ կութիւն։

Փրկական. ի. աւ. աց. օք: || Փրկչական. կմ՛ փրկագործական. կմ՛ փրկաւէտ. և կամ փրկարար. և ըստ այսմ առի. փրկական մարմինն տն. կմ՛ փրկական բաժակ. և այլն: Նարէկ. լդ: և 'ի շարականս:

Փրկանակ. ի. աւ. աց. օք: || Ապառէն փրկութեն, կամ գործի փրկելոյ. և կամ առիթ փրկանաց. և ըստ այսմ սուրբ ածածինն կոչի՝ փրկանակ կենաց. և մեք խաչն փրկանակ հաշտութեն: Նարէկ. խը. և կը: Այնպէս և 'ի չէ. փոխանակ առե֊լոյ, փրկական գործի խաչի, առի՝ խաչին փրկանակ: Դարձեալ՝ փրկանակ կոչի վըս տաճարանն, կամ ապառէնն յուսոյ փր֊կութեն. ըստ այնմ Նարէկ. ծա. իբր լոյս հրդով՝ ապաստանմբութեն զյուսոյն փրկա֊նակ կարեալ:

Փրկանաւոր. ի. աւ. աց. օք: || Լի փրկա֊նօք. կամ փրկական. և կամ փրկարար: Նարէկ. լդ. և լզ:

Փրկանաւորեմ. եցի. եա. ել: (Ներգործա֊ծական.) || փրկել. կամ ազատեցուցա֊նել: ռամկօրէն. ազատել. և ըստ այսմ առի 'ի Ճառս կէ. որով գթացեալ, փր֊կանաւորեաց զմեզ արեամբ միածնին իւրոյ:

Փրկանիւթ. (Նախադրիճ հոլովի.) || Նիւ֊թօղ փրկութեան, կամ այն, որ է գոր֊ծի փրկելոյ. և կամ փրկանակ. ըստ այնմ Նարէկ. ղզ. Մատուցաւ 'ի փրկանիւթ չո րեքկերպեան անօթս խաչիս:

Փրկանք. անաց. օք: (անեզական.) || Ծա֊գի 'ի բայէս փրկել. որպէս դժրանքն 'ի բայէն դժրել. և նշանակէ՝ փրկու֊թիւ. և կամ ազատութիւն. ըստ այնմ. Սաղմ. 48. 8. ոչ տայ զգինս փրկանաց: Բայց մասնաւորապէս առեալ նշանակէ սո վաւ գինն փրկութե, յն գրամն, կմ տուրքն, զոր ընծայէ մարդ՝ ուժեք յաղագս ազատե լոյ զանձն իւր 'ի պատուհասէ իմիքէ. որպ 'ի մահուանէ, կամ 'ի պատժոյ, 'ի գե֊րութե, 'ի ծառայութեէ. և 'ի նմանեաց: ռամկ. գին, կմ ֆտէ: Ելից. 21. 30: և 30. 12: Թուոց. 35. 31. և 32: Մատթ. 16. 26: ըստ այսմ փրկանք կոչի այսպիսի գինս, յորժամ լինի յաղագս ազատութե այ֊լոց. որպէս Ղևտ. 19. 20: Թուոց. 18. 16: Մարկ. 10. 45: Դարձեալ՝ փրկանք անուանին և տուրքն, զոր տան յա֊ղագս զերծուցանելոյ զանէլի ինչ, կամ վն դարձուցանելոյ յետս զվաճառեալ ինչ. և այլն: Ղևտ. 25. 24. և 26 և 29:

Փրկարան. ի. աւ. աց. օք: || տեղի, ուր լինի փրկութիւ. կմ ուր գործի ազատու֊թի: իսկ մերթ գործի փրկութե. կմ այն, որով լինի փրկել. և կմ փրկական: Նա֊րէկ. իթ:

Փրկարար. ի. աւ. աց. օք: || առնօղ փրկու֊թե. կմ փրկագործ. և կմ ազատարար: ռամկ. ֆրկօղ. կմ ազատօղ:

Փրկաւէտ. ւէտի. իւ. ից. իւք: || Լի փրկու֊թբ. կմ փրկական. և. կմ փրկագործ:

Փրկեմ. եցի. եա. ել: (Ներգործ.) || Ձե֊ռնարկել. կմ զերծուցանել. կամ ազատե֊ցուցանել. և կմ փրծուցանել: ռամկօ֊րէն. ազատել: Սաղմ. 43. 8: Դանիէ. 3. 88: Մատթ. 14. 36: իսկ մերթ՝ ապրեցուցա֊նել. կամ կեցուցանել: Յօհ. 3. 17. Ե֊փես. 2. 8: Դարձեալ մասնաւորապէս ա֊ռեալ նշանակէ՝ փրկանս տալով գնել. կմ գինս հատուցանելով առնուլ. կամ 'ի ձեռաց թափել: ռամկօրէն. ֆտէ տալով գնել: և ըստ այսմ իմանի՝ մինչ առի. փր֊կել զանդրանիկս մարդկան. կամ անաս֊նոց. և կամ զվաճառեալ իրս: Ելից. 13. 13: և 34. 20: Ղևտ. 25. 25: Թուոց. 18. 15: իսկ երբեմն ներհակաբար փրկել ա֊սի, ընդ փրկանօք արկանելն. կամ փրը֊կանս առնլով 'ի բաց թողուլն զինն. և ըստ այսմ խօսելով տր ՃԷ ահարոնի հրա֊մայէ փրկել զանդրանիկս ժողովրդեան, կմ անասնոց: Թուոց. 18. 15. և 17:

Փրկիչ. փրկչի. աւ. աց. օք: || փրկօղ. որ է ազատիչ. կմ կեցուցիչ. և կամ փրկանօք գնօղ: ռամկօրէն. ազատօղ: Դատ. 3. 9: Տիտ. 2. 10:

Փրկութենաբեր: (Նախադրիճ հոլովի.) || բերօղ փրկութե. կմ պատճառ կենդա֊նութե. կմ փրկագործ. և կամ փրկա֊րար, որպիսիք են Տնօրէնութիւնք քն: Նարէկ. 'ի մեկն. երգոց:

Փրկութենագործ: (Նախադրիճ հոլովի.) || գործօղ փրկութե. կմ փրկարար, որպի սի է քն. կմ սբ մարմին և արիւն նր: 'ի հին պատմագիրս:

Փրկութենակիր: (Նախադրիճ հոլովի.) || կրօղ փրկութե. կմ նա՝ որ տանի յին֊քեան զփրկական ինչ: Նարէկ. ղբ:

Փրկութիւն. թեան: || փրկագործութիւն. կամ ազատութիւն. կամ կեցութիւն. և կամ կենդանութիւն: Ծննդ. 45. 5: Դատ. 15. 18: Գործ. 27. 34: Եւ յայսմա֊նէ առեալ զոհ փրկութե կոչեցաւ առ֊հրէայս պատարագն. զոր մատուցանէին յուխտէ, կամ ի կամաց՝ յաղագս զերծ֊ման 'ի չարեաց, կամ սակս կենդանու֊թեան, յաջողութե, և նմանեաց: Ելից. 24. 5: Ղևտ. 3. 1: և 19. 5: Եւ այս երբեմն կոչի սոսկ փրկութիւն, որպ Ելից. 20. 24: Թուոց. 29. 39:

Փրկչական. ի. աւ. աց. օք: || այն նոյն, որ պատկանի փրկչին. կամ փրկողական, կմ փրկական. և կամ կենսական. և ըստ այսմ առի՝ փրկչական վարդապետութիւ. խրատ. կամք. և այլն: Յովէ. 1. հար. Նը. և ԼԸ:

Փրկչավայելուչ: (Նախադրիճ հոլովի.) || այն՝ որ վայելէ փրկչին. կմ որ պատշա֊ճի փրկագործողին քն: Նարէկ. գդ:

Փրփուր. փրփրոյ. ով. ոց. ովք: || յառեր֊ուած խոնաւ հիւթոց՝ 'ի յեռացմանէ, կամ ի յուզմանէ արտաքս զեղուլ, ձեռն֊ձերակերպ անօսրացեալ և գիջացեալ. որպէս տեսանեմք յերեսս հոսանուտ հե֊

թոց, 'ի բերան խեցեմորթից․ և վերնատաց․ ֆր․ խուդյուլուր։ ռամկօրէն եւ՛ ֆէֆուր։ Լատ․ Լամբրոն։

Փրփրածին։ (Նախադրիմ հոլովի․) ‖ ծնեալ, կամ արտադրող զփրփուր։ Իսկ մերթ ծնեալ 'ի փրփրոյ․ և ըստ այսմ փրփրածին կոչի ափրոդիտէ․ զի առասպելաբանէին հեթանոսք արտադրեալ զնա 'ի ծովային փրփրոյ։

Փրփրակերպ։ ‖ տե՛ս զՓրփրատեսակ։

Փրփրամ․ ացի․ րա․ ալ։ (չէզոքական․) ‖ տե՛ս զՓրփրեմ։ Մարկ․ 9․ 19։ և Աճգոյք։

Փրփրատեսակ․ ի․ աւ․ աց․ օք։ ‖ ունօղ ըզ տեսակ, կամ զորպիսութիւն փրփրոյ․ կամ փրփրակերպ․ և կամ փրփրանման։ Դոմբէ անշաղքին։

Փրփրեամ․ եայի․ եայր։ ‖ է բայ պակասաւոր․ որպէս և տեսեամն, և անկեամն, և նշանակէ փրփրալ․ կամ փրփրել։ Նաւե Մարկ․ 9․ 19․ ուր ասի՛ Եւ անկեալ յերկիր թաւալէր և փրփրայր, յայլ օրինակս գնի՛ փրփրեայր։

Փրփրեմ․ եցի․ եա․ եալ։ (չէզոք․) ‖ փըրփուրս արձակել․ կամ լուծանել 'ի փըրփուր։ ռամկօր․ ֆէֆէրլէ։ Մարկ․ 9․ 17։ Իսկ մերթ վարի ներգործաբար․ և նշանակէ փրփրեցուցանել․ կամ 'իբաց արձակել զփրփուրս, կամ զայլ ինչ նման փըփրոյ։ Յուդայի․ 13։ և 'ի գիրս Գրիգոր․ ածա բանին․ ասի՛ զնոր գինւոյ․ Զցխատեսակ աղտեղութիւնն յինքենէ արտաքս փըրփրէ։

Փրփրեմ․ ի․ իմ․ ից․ իւք։ ‖ է բոյս ինչ ուտելի․ որ ունի զտերև նշաձև, թանձր և պարարտ։ ռամկօրէն եւ՛ ֆէֆէրէմ․ կամ ֆէրֆէր․ և տաճկերէն․ սէմիզօթու։ 'Ի հին Բժշկարան։

Փրփրեցուցանեմ․ եցուցի․ եցո․ անել։ (անցող․) ‖ տալ ումեք փրփրալ․ կամ պատճառ լինել փրփրելոյ։ ռամկօր․ ֆէֆէրդէնէլ։ Ղուկ․ 9․ 39։

Փրփրիմ․ եցայ․ եաց․ իլ։ (ձայնակր․) ‖ փրփրալ․ կամ փրփրել։

Փրօտոփոն։ ‖ է բառ յունական․ և նշանակէ դէմք․ կամ երեսք․ և կամ անձն։

Փ Ց

Փցուն։ (Նախադրիմ հոլովի․) ‖ փանաքի․ կամ գձուձ․ կամ խոտան․ և կամ անարգ․ և կամ արհամարհ։ ռամկ․ ցած․ կամ գէշ։ Խորէն․ ա․ գլ․ 31։ և բ․ գլ․ 7։ և 'Ի գիրս Դատաստանաց անջողքին։

Փ Ք

Փքալի։ ‖ տե՛ս 'ի ներքոյ զՓքալիր։

Փքալիր։ (Նախադրիմ հոլովի․) ‖ լցեալ փքով․ կամ լի փքախառն շնչով։ ռամկօր․ փչոտած։ 'Ի գիրս Ճառընտրի։

Փքալից։ ‖ նոյն է ընդ վերնոյն։

Փքախառն։ (Նախադրիմ հոլովի․) ‖ խառն ընդ փքոյ․ կամ խառնեալ շնչովք․ կամ հողմովք։

Փքամ․ ացայ․ ացիր․ ալ։ (ընդամիջ․) ‖ փըքանալ․ զոր տեսցես զկնի։ Իսկ մերթ՝ գոռոզանալ․ կամ մեծաբանել․ և կամ մեծպարծիլ․ և ըստ այսմ ասի, մեծամեծս փքալ։ 2․ Մակ․ 9․ 4։ Աճգոյք։ և 'Ի հին պատմագիր։

Փքանամ․ ացայ․ ացիր․ անալ։ (ընդամիջակ․) ‖ փքով լցեալ լինել․ կամ այտնուլ․ և կամ ուռուցեալ լինել։ ռամկօրէն․ փչուիլ։ Եւ յայսմանէ առեալ փըքանալ ասի՛ բարձրամտիլն․ կամ ամբարտաւանիլ․ կամ գոռոզանալ․ և կամ հըպարտանալ․ որով գրեթէ ոք պատիմ ուռուցեալ պարպատի․ և ըստ այսմ ասի, փքանալ 'ի զամիլն, կամ փքանալ անձամբ ընդ փառս աշխարհի․ և այլն։ Նարեկացին․ Ը։ Ոսկէ․ Ա․ հատ․ ԺԸ։ և 'Ի Վարհարց․ Ա։

Փքացումն․ ցման․ մամբ․ մանց․ մամբք։ ‖ լցումն փքով․ կամ այտումն․ և կամ ուռուցումն։ Իսկ մերթ՝ բարձրամտութիւն․ կամ գոռոզութիւն, և կամ ամբարտաւանութիւն։

Փքին․ փքնոյ․ ով․ ոց․ ովք․ կամ օք։ ‖ բառիասր, որ է երկքթեւեան պաք, զոր արկանեն աղեղամբ 'ի խոցել զթշնամիս, կամ 'ի հարկանել զնպատակ․ զսա կոչեմք այլով անուամբ նետ։ Ա․ Թագ․ 20․ 20․ և 21․ և 22։

Փքոցուռոյց։ (Նախադրիմ հոլովի․) ‖ ուռուցեալ փքովք․ կամ այտուցեալ օդա լիր շնչովք․ և կամ ուռուցանող փքոց, այսինքն փչոցի․ և այլոց նմանեաց։ Աճգոյք։

Փ Օ

Փօրէզլիկ․ էզլկի․ աւ․ աց․ օք։ ‖ տե՛ս ըզ Փուրեզակ։

Ք

Ք · Է տառ բաղաձայն, անուանեալ 'ի քերականաց եանձայն, զի հնգոյն տառիցս գ · դ · պ · տ · ամենեւին զուրկ է 'ի ձայնէ, ոչ կարելով սկզբնաւորել զանէ զան կատար և զնոճազ հնչումն ինչ՝ բաբախմամբ շրթանց, կմ հնչեցմամբ փողոյ:

Արդ՝ յորջորջեմք զսա հեգիր՝ +է · որ արտաբերի ընդ քիմս մարդոյ · վն որոյ և 'ի հին քերականաց կոչի քմակից տառ: Այլ յարոճեստի առոգանութե ըստ հագագին է թաւ, զի ելուզանէ զհնչումն բռտոճար՝ իբրև զսոսա · թ · խ · չ · ց · փ: Դարձեալ, է սա մին 'ի լծորդ տառից · զի ունի զլծակցութի ձայնի ընդ տառիցս՝ գ · ջ · և խ: ուստի և ուրեք ուրեք փոխադրի ընդ նն · զոր օրինակ թաքուստ և թագուստ · հէք, և հեգ · սիք, և սիգ · հուոք, և հուոգ · պռոյք, և պռոյգ · կմ թաքչիլ, և թագչիլ · ձեղքել, և ձեղգել · հեքանալ, և հիգանալ · սոնքալ, և սոնգալ · պռուքել, և պռուգել · և այլն · ըստ այսմ և ը̄ ջէնի · զոր օրինակ · քարոս, և կարոս · ծամքել, և ծամկել · յղքել, և յղկել · պապքիլ, և պապկիլ · և այլն: Իսկ ընդ Խէի փոխադրի մանաւանդ յայլազգական բառս, որգոն · խաւան, և քաւան · ռախար, և ռեքեր · ախայար, և աքայար:

Դարձեալ, է սա և նշան թուոյ, ոպ և այլք տառք · վն զի մինչ գրեմք զնա պատուով, այսպ, ք̄ · ցուցանէ զինն հազար: Այլ յաղագս պատուի՝ ք · պարտ է գիտել · զի սա առ նախնեօք վերջին էր յայբուբենս · վն զի տառքս, օ, և ֆ, որք դասեալք կան այժմիկ զկնի քէին, առ ժամանակօք հնոց ոչ էին 'ի միջի · ոպ ասասցի 'ի մեկնութե նց: Եւ վն այսորիկ յամ այբուբենական յօրինուածս նախնեաց, սկսեալ լինի յայբ տառէն, և աւարտեալ յանգի 'ի +էն · ոպ երևի 'ի Յն ողբն յԱյբն առաջինն · և յԱյբն անսկիզբն: և 'ի շարականսն · յԱյսօր անճառն, և յԱյսօր զուարճացեալք, ըստ այսմ զաւմեսս յաճախ 'ի ծանօթութն · և 'ի Նարէկ · ըշ̄:

Ուստի և փոխանակ գրելոյ, ես եմ այբ, և օ · թ առաջին և վերջին · գրէին հինքն՝ այբ, և քէ · ըստ այնմ 'ի Գիրս Ճծին խոսրովու · Ինքն է սկիզբն և կատարած · ոպ ասէ 'ի յայտնութեն յովհաննէսի · ես եմ այբ · և ես եմ քէ: Եւ ըստ այսմ հաշուէի վարեալ նախնիքն մեր, յորջորջէին զնշանագիրս հայկազեան բարբառոյս երեսուն և վեց · ըստ այնմ Յն ողբի:

Ըստ մակնեան արժանացեալ,
զածագիծ տառս ընկալեալ·
Երիւք տասամբք վեցիւք յանգեալ,
արեգական ելիւք չափեալ:

ՔԱ

Քաղամ · ի · իւ · ից · օք: Է բոյս ինչ ուռելի, որ աճեցեալ գնտոնոյ 'ի գըլուխ: տաճկ · լահանայ: Այլ այս 'ի գործ ածի 'ի ռամկական լեզուոջ, զի 'ի բարբառս գրոց կոչի՝ կաղամբ:

Քած · ի · իւ · ից · իւք: Էգն շան, կմ գայլոյ, և այլոց գազանաց, զոր մանաւանդ գրաբառ լեզուաւ կոչեմք մատակ · 'ի հին +էրպինոյքն:

Քածաւարեմ · եցի · եա · ել: (Ներգործ ·) 'ի բաց կորզել՝ կամ մնասել զերկռորիսն անասնոց, որով լինին անընդունակ ծննդեան · ռամկ · յօճանքը հանել · կմ խոպել:

Քածաւարոտ · ի · իւ · ից · իւք · կմ ու · աց · օք: արու, որոյ երկռորիքն, կմ երկոքին ձուանքն կորզեալք են 'ի բաց 'ի պարկէն իւրեանց · որով կենդանին կորուսեալ ըզ զօրութի արութե իւրոյ՝ լինի իբրև ըզ քած · ոպ և ձայն բառին հնչէ: ռամկօր · յօճանքն հանած · կմ հայանները հանած · կմ հայանները ճզմուցած · և կմ խոպած: Ղեւտ · 22 · 24:

Քակեմ · եցի · եա · ել: (Ներգործ ·) արձակել զկապս, կմ զկարգանս, և զնմանիս սոցա, որ և ռամկ · ասի, քակել: Իսկ մանաւանդ առեալ նշանակէ զշինուածս 'ի մասունս լուծանել · կամ քանդել · և կմ աւերել, որոյ ներհակն ասի, շինել: ռամկ · եւս քակել: Եսայ · 23 · 24: Ղեւտ · 11 · 35: Ղուկ · 12 · 18: Եւ յայսմանէ առեալ քայքայելն վանդամս, քակել ասի: Թագ · 5 · 22 · և 27: և 1 · Մակ · 9 · 55: Դարձեալ, ազատել · և կմ եղծանել · կմ ապականել · և կմ ջնջել, և կորուսանել · և ըստ այսմ ասի · քակել զպարծանս, զգործս, զսէր · և այլն: Ոսկ · 1 · կոր · ը̄: Դարձեալ՝ նշանակէ՝ 'ի բաց անջատել · կամ 'ի բաց մեկնել · կմ բաժանել · և կմ մերժել · և ըստ այսմ ասի, քակել զընտանիս 'ի միմեանց · կմ զաղքատն 'ի բարեկամէն · և այլն: Առակ · 18 · 1: Մատթ · 10 · 35:

Քակոր · ոյ · ով · ոց · օվք: կամ ի · իւ · ից · օք: կու · կմ արտաթորեալ կղկղանք անասնոց · ոպ արջառոց · ցլուց · և նմանեաց, զոր 'ի բնեղեն տեղիս զանգուածս աղաղեալ յարդիւ հարկանեն զորմովք վայրագաւաթուց, և 'ի չորանալն 'ի բաց կորզեալ ամփոփեն առ 'ի այրել 'ի պէտս ինչ · և այսպիսի զանգուածքս իսկ քակոր կոչին: ռամկ · Թէզէ · կմ ոճիար · Եզեկ · 4 · 15:

Քակուռն · կման · մամբ · մանց · մամբք: արձակումն կապից · կմ կարգանաց · և նըմանեաց:

մանեաց ։ ռամկ. փոշէլը ։ Իսկ մերթ՝ քան-
դումն. կամ աւերումն. կամ եղծումն. և
կամ ապականութիւն ։ ռամկ. աւէլը ։

Քակտեմ. եցի. եա. ել ։ (Ներգործ.) ‖ է բայ յաճախական. և նշանակէ՝ չարաչար քակել. կամ քանդելով քանդել. կամ քայքայել. և կամ աւերել ։ Յոբ. 20. 28 ։ Երեմ. 4. 7 ։ Սաղ. 24. 2 ։ Իսկ մերթ՝ պատառել. կամ ցրուել. և կամ ցրել ։ և ըստ այսմ ասի, քակտել զբազմութիւն ինչ ։ Գործ. 5. 36 ։ Դարձեալ, քակտել ասի, լուծանելն, կամ մերժելն զբազմութիւն ինչ յիմեքէ. որպէս զմարդիկ ՚ի հաւատոյ ։ 1. Տիմ. 4. 1 ։

Քակտիչ. կտչի. աւ. աց. օք ։ ‖ չարաչար քակող. կամ քայքայիչ. կամ քանդիչ. և կամ աւերիչ ։ ՚Ի շարակնոցն ։ Իսկ մերթ՝ պատառիչ. կամ ցրուող ։

Քակտումն. տման. ման. մանց. մամբք ։ ‖ չարաչար քակումն, կամ քանդումն. կամ աւերումն. և կամ քայքայումն ։ Թուոց. 5. 21 ։ Իսկ մերթ՝ ցրուումն. կամ ցրումն ։ Դարձեալ, եղեալ լինի երբեմն փոխանակ ընդդիմանալութեան՝ քակտող ։ Որպէս ՚ի շարակնոցն. Եւ անիծիցն եղեր քակտումն ։

Քահանայ. ի. իւ. ից. իւք ։ ‖ պաշտօնեայ նուիրեալ Աստուծոյ ՚ի մատուցանել զպատարագ, և ՚ի քաւել զժողովուրդն, որպէս և ստուգաբանութիւն յայտ առնէ, զի ասի քահանայ, իբր թէ՝ քահէ նա, այսինքն քաւէ նա. որ է սրբել ։ Եւ յայս միտս ասի ՚ի Գիրս Լամբրոնի. Քահանայ ըստ մերումս պատշաճել լեզուի՝ մաքրող և սրբիչ անուանի ։ Արդ այսպիսիք էին ՚ի հնումն որդիքն Ահարոնի, և ՚ի նորումս երիցունքն՝ որք ունին զիշխանութիւն պատարագելոյ զգառն Աստուծոյ ՚ի պատիւ հօր ամենակալի, և սրբել զժողովուրդն ՚ի տգիտութենէ՝ քարոզութեամբ, և ՚ի մեղաց՝ խոստովանութեամբ. ընդ նոսին կատարել և զայլ խորհուրդս եկեղեցւոյ ։ ռամկ. Տէրտէր, կամ Փէրփէր ։ Ելից. 19. 22 ։ Ղևտ. 1. 5 ։ Եբր. 7. 23 ։

Քահանայագործեմ. եցի. եա. ել ։ (Ներգ.) ‖ առնել զգործ քահանայի. և ըստ այսմ քահանայագործել ասի սրբացուցանելն զնուիրեալ հացն ՚ի մարմին Քրիստոսի. և զգինին ՚ի արիւն նորա. կամ մատուցանելն զպատարագ. կամ նուիրելն զնա Աստուծոյ քահանայական պաշտամամբք, և կամ կատարելն զեկեղեցական խորհուրդս ։ Լամբրոն. և ՚ի պատարագամատոյցն ։

Քահանայագործութիւն. թեան ։ ‖ գործ քահանայի, որ է մատուցումն պատարագաց, և կամ սրբացուցումն նուիրեալ հացին ՚ի մարմին Քրիստոսի. և գինւոյն ՚ի յարիւն. և կամ մատակարարութիւն եկեղեցական խորհրդոց, կամ քարոզութիւն բանին Աստուծոյ. և այլն ։ Լամբրոն. և ՚ի Գիրս Շնորհալւոյն ։

Քահանայական. ի. աւ. աց. օք ։ ‖ այն ամ, զոր ունի քահանայն, կամ որ վերաբերի առ քահանայն, կամ առ քահանայութիւն ։ ՚Նարեկ. Գ ։

Քահանայանամ. ացայ. ացիր. անալ ։ (Ընդմիջ.) ‖ քահանայ լինել, կամ նուիրիլ ՚ի քահանայութիւն. որով առնուն զիշխանութիւն մատուցանել Աստուծոյ զպատարագ, և վճարել զայլ պաշտամունս քահանայի ։ Ելից. 28. 1 ։ և 31. 10 ։ Թուոց. 3. 3 ։ Իսկ մերթ նշանակէ քահանայագործել, կամ կատարել զքահանայական պաշտօն, որ է զոհել. կամ խունկ արկանել. և այլն ։ Ղուկ. 1. 8 ։

Օծանել․ օծի․ օծ․ անել ։ (Ներգործ․) || իւղով, կամ այլով իւիք պարարտ հիւ թով մածանել զինչ՝ որպէս զմարմին, զգըլուխ, զկարասի, զկերպրս․ և այլն․ ռամկ․ եաղ սուրել․ կմ եաղ սուրել ։ Ելից 29․ 2 ։ և 30․ 33 ։ 2․ Թագ․ 1․ 21 ։ Մատթ․ 6․ 17 ։ Եւ յայսմանէ առեալ օծանել ասի՝ սակեղօծ առնել զհրահանգելիս, կամ արծաթազօծ զպղնձեղէնս․ և այլն․ ռամկօրէն․ եալ֊ դըղընել ։

Օծարար․ ի․ աւ․ աց․ օք ։ || օծանող․ կմ օծիչ ։ Իսկ մասնաւորապէս առեալ՝ օծարար կոչի նա՝ որ զհրահանգելիս սակեղօծ առնէ ։ ռամկօրէն եալդըղճի ։

Օծեալ․ օծելոյ․ ով․ ոց․ ովք ։ || իւղով, կմ դեղով, և կամ այլ ինչ պարարտ հիւթով մածեալ ։ Եւ յայսմանէ առեալ օծեալ կոչին թագաւորք, քահանայք, մարգարէք, և նմանք նց․ ըստ որում ՚ի կարգելն զնս յիշխանութիւն օծանեն իւղով ։ 1․ Թագ․ 24․ 7 ։ Սաղմ․ 131․ 10 ։ Եսայ․ 45․ 1 ։ Եւ Թ այսմ մասնաւորապէս օծեալ անուանի Քս տէրն մեր, զորմէ ըստ ագոյն ասացաւ ՚ի բանն՝ Քրիստոս ։ Ղուկ․ 2․ 11 ։

Օծել․ եցի․ եա․ եղ ։ (Ներգործ․) || տես զՕծանել ։

Օծիչ․ օծչի․ աւ․ աց․ օք ։ || տես զՕծող ։

Օծութիւն․ թեան ։ || օծումն, կմ իւղով, կմ այլ ինչ համանման հիւթով մածանումն ։ Ելից․ 29․ 21 ։ և 30․ 31 ։ և 31․ 11 ։

Օծումն․ օծման․ մամբ․ մանց․ մամբք ։ || Նոյն է ընդ վերնոյն ։ Ելից․ 25․ 6 ։ և 29․ 7 ։ Ղևտ․ 7․ 35 ։

Օծող․ ողի․ աւ․ աց․ օք ։ || օծանող․ կամ նա՝ որ օծանէ ։ ՚ի շարագիրս ։

ՕՁ

Օձ․ ի․ իւ․ իցւ․ իւք ։ || սողուն ժանտ՝ զանազանաձև․ խորամանկ բնութբ, և նենգաւոր բարուք․ ունի զլեզուն ատաւկս․ որոց յօդուածք են թունաւորք և մահացուցիչք ։ ռամկ․ եա՛ լան ։ Ծննդ․ 3․ 1 ։ Թուոց․ 21․ 6 ։ Մատթ․ 10․ 16 ։

Օձաբարոյ․ ի․ իւ․ ից․ իւք ։ || ունող ըզ բարս օձի, որով իմանի խորամանկն, կմ նենգաւորն ։ ռամկօրէն մէնէֆիքէօռ․ կամ ֆիթնէ ։ Եւ մերթ՝ խածատող զայլս․ և չարարարն ։

Օձաբնակ․ ի․ աւ․ աց․ օք ։ || բնակող ՚ի մէջ օձից ։ Իսկ մերթ ասի զտեղւոյ, ուր բընակին օձք ։ Յճ որդի ։

Օձադէմ ։ (Նախդրիւ հոլովի․) || ունող ըզ դէմս օձի, կամ որոյ երեսքն են օձակերպ․ կմ ժանտատեսիլ, և կամ դժնէհայեաց ։

Օձախառն ։ (Նախդրիւ հոլովի․) || խառն ընդ օձի, կմ խառնեալ օձիւք ։ Իսկ մերթ այն՝ որ լինի խառն կալով ընդ օձս․ և ըստ այսմ ասի, օձախառն բնակութիւն ։ Աւգոբ ։

Օձակերպ․ ի․ իւ․ ից․ իւք ։ || տես զՕձաձև ։

Օձակուլ ։ (Նախդրիւ հոլովի․) || նա՝ որ կլանէ զօձս, կմ կլլման առնէ ատից ըզ գլուխս օձից ։ ռամկ․ օյ քովըչ ։ Նարեկ․ ՚ի գովս․ ատոնի ։

Օձահալած ։ (Նախդրիւ հոլովի․) || հալածող, կմ փախուցանող օձից ։ ռամկօր․ օյ քաչըրօղ ։ Իսկ մերթ հալածեցեալ յօձից ։ ռամկ․ օյէն քաչըղ ։

Օձահար․ ի․ աւ․ կմ իւ․ աց․ օք ։ || հարեալ յօձէ, կմ խայթեցեալ յօձից ։ ռամկօր․ օյը խայմըշ ։ Թուոց․ 21․ 8 ։ Առակ․ 23․ 32 ։

Օձաձև ։ (Նախդրիւ հոլովի․) || ունող ըզ ձև օձի, կմ օձակերպ, և կամ օձանման ։ ռամկ․ օյն պէս ։ Կիւրղ․ Եզեկ․ ժբ ։

Օձամանակ · ի · իւ · ից · իւք ։ || Ժամանակով է օձի, որպիսի է եղջերուն. կամ արտաքինն, և այլն ։ ռամկ. օձու հին շապիկ ։ Բժշկ. ձեւոյ է առ տեսակ ինչ մարախոյ, որ է ունելով բազում ոտքով մարմինքն ընդ օ- ձի, յորմէ և անուանեցաւ օձամանակ ։ Ղեւտ. 11. 22 ։ տես 'ի բառսն խարագուլ, և ջորեակ ։

Օձայօրք ։ (Նախդրիւ հոլովի ·) || յօձաքաղ օձից. զի նա՛ որ հեռանալով եղեւ, որո- նէ զօձս ։ ռամկ. օձ ճնօղ ։

Օձապատիկ ։ (Նախդրիւ հոլովի ·) || պատ- րեցեալ. կամ խաբեցեալ յօձէ ։ ռամկօր. օձէն խաբուած ։ իսկ մերթ այն, որ լինի պատրանօք օձին, կամ օձաբարոյ դիւին · և ըստ այսմ առն · օձապատիր խաբէու- թիւ ։ Նարեկ. 'ի մեկնու- եւ երգոց ։

Օձաջամբ ։ (Նախդրիւ հոլովի ·) || այն՛ որ ջամբեալ լինի ուտելով յօձէ · կամ որ կերել լինի 'ի մարդոյ ջամբամբ օձաձեւ դիւին · որպիսի էր մանկութիւն պառաւին ։ 'Ի գիրս մեծին խորհրդոց ։ իսկ մերթ այն, որով ջամ- բէ ուտել օձն զերկրային ինչ · և ըստ այսմ առն · օձաջամբ պատրանք · 'ի շարականացն ։

Օձառապատ · (Նախդրիւ հոլովի ·) || տես զՕձաձեւ ։

Օձաքառակ ։ (Նախդրիւ հոլովի ·) || տես զՕձաձեւ ։

Օձիք · օձեաց · եօք ։ (անեզական ·) || եւթ պատ- ճառոյ հանդերձից, որ է ծակն, կամ շր- ջանակն ծակին, ընդ որ մուծանեմք զգ- լուխ 'ի զգեստուցն ։ ռամկ. եախայ ։ Ելից. 28. 32 ։ և 39. 21 ։ 1 · Սամ. 2. 14 ։

Օձումն ։ || տես զՕձանել ։ Նարեկ. 45 ։ և 'ի հին կտակարանէ ։

ՕՂ

Օղ · ոյ · ով · ոց · կամ իւ ։ ից · իւք ։ || գոր- ծի մանեկաձեւ կազմեցեալ 'ի հրահան- գելեաց, և յայլոց նիւթոց · որպիսիքն են այնք, յորոց կազմին շղթայք, կամ որք շա- րեալ կան 'ի վերին եզերս վարագուրաց, և կամ զոր հանդերձ իբրեւ անց ունին ականջքն · յոր անցանեն իբրեւ յեզս · ըստ այսմ է- մա, և զայլոց ։ ռամկ. հալխայ ։ Ելից. 26. 11 ։ և 28. 24. և 28 ։ և 39. 19 ։

Օղալամբ · ի · աւ · աց · օք ։ || լամբ օղոյ, զի միջոց ծակուց օղից, յոր մտանեն լծակք, կամ այլ ինչ նման · զոր և կոչեմք ագուցս ։ ռամկ. հալխայի ծակ ։ Ելից. 30. 5 ։

Օղամանեակ · նեկի · աւ · աց · օք ։ || մանեակ օղոյ, որով նշանակի մեծ օղն, կամ ո և է- ցէ տեսակ մանեկաձեւ օղոյ ։ ռամկ. հալ- խայ ։ Ելից. 25. 12. և 15 ։ և 27. 4 ։

Օղարկեմ · եցի · եա · եւ ։ (Ներգործ ·) || օղ ընդ օղ արկանել, կամ օղիւք անցուցանել և կամ աղխաղխել ։

Օղեգործ · ի · իւ · աց · օք ։ || կազմօղ օղոյ · զի որբեկացուցիչ ընկերելեաց ։ ռամկօր. ըստ իւր հանօղ. կամ դոյօղն ։

Օղերձ · ի · իւ · ից · իւք ։ || ուղերձ, զի ըն-

ծայ, կամ նուէր. կամ պատարագ. որ առ- աքերձեալ լինի ումեք ։

Օղերձեմ ։ || տես զՈւղերձել ։ Եզեկ. 16. 33 ։ և 'ի գիրս առաքինութեանց ։

Օղի · օղւոյ · եաւ · եաց · եօք ։ կամ ըով · ըովք ։ || տես զՕղի, որ է արբեցուցիչ ըմպելի ։ Երեմ. 13. 4 ։ Ղուկ. 1. 15 ։

ՕՃ

Օճառ · ի · աւ · աց · կամ ից · օք ։ || օճառ- գործութիւն, կամ նշանակէ, կամ ձեւոյ պայծառութիւն, կամ օճառութիւն ։ և կամ պայծա- ռութիւն · ռամկօրէն եւրգնի · կամ նոր պայծառութիւն · ըստ այսմ Սոփ. 1. հար · ժա · Մի միայն օճառ վերականգնութեան, որ անդէն իցէ ։ Գործածեալ նշանակէ արդարութիւն · կամ ար- դիւնք · կամ մաքրութեան գործք, և կամ մաք- րութիւն · ըստ այսմ 'ի կին պայծառութիւ- նամբ ։ Սեծաւ պատուով և բարի օճառաւ ըն- դունի զնա, զի բազմ մաքրութեամբ ։ Եւ զարդարեալ բանիւք և բա- րի օճառաւ զնա ամենայն յորդորութեան ։ ըստ այսմ առն և յայլում · Զօճառօրէն բա- նիւք ազգացն զօրութեանց և քաղցրութեանց ։ և բազում բարի օճառիւք, զի արդարոց դրեալ է շարժող բարեբարութեանց ։

Օճառ · ի · աւ · աց · օք · || զանազանեալ կազ- մեցեալ 'ի զանազան խառնուածոց նիւթոց որով մինչ լուանան զմարմինն ինչ այն- տառապեցուցանէ և մաքրէ · յորմէ առեալ օճառ կոչի մանկանց որպէս նման այն ըստ օճառ կոչի սիրել 'ի մեծութ- եան պատառութեանն, որ եկեալ լինի 'ի մտաց խառն ուղիղ, կամ ճարպոյ · որով լուանան զհանդերձս · կամ գձեռս, և զմանուկ ինչ ։ ռամ- կօր. սապոն ։ Երեմ. 2. 22 ։ Մաղաք. 3. 2 ։ Գործածեալ՝ նշանակէ հանդերձանք, կամ պայծառութիւն · կամ սպասս · կամ կազ- մած, և կամ կարասի ։ ռամկ. ջահազ · կամ բնաբանութիւն · կամ գործք · ըստ այսմ 'ի սր- բոց գործոց · Բազում ճոխոյք օճառիւ օ- ճառ այլ նման, զի կազմութեան կազ- մածոյ ։ ըստ այսմ յաճախ վարի և 'ի մտաց ։ Նարեկ. ըստ այսմ կը · Օճառք անշաւանի լի զինուց իմն պատուականութեանց · ևս, եւ այն, որ 'ի համար հանդերձից զինուցն օ- ճառոց, զի հանդերձանաց ։ և զինուցն · Եւ ճառաց օճառ պատանեկութեան, զի կազմած ։ Գործածեալ, նշանակէ նորութիւն · կամ օժանդակութիւն · կամ պայծառութիւն · և կամ հնար գործոյ ։ ռամկ. եարաղ · կամ նոր · ըստ այսմ Աստուծոյ Բազում աշխատութեան վարեալ զաշխարհն բարեաց օճառ ինչ պատճառ ։

Օճիռ · կամ օճիր ։ || տես զՈճիր ։ 'Ի գիրս ծագիրս ։

Օճրագործ · կամ օճռագործ ։ || տես զՈճրա- գործ ։

ՕՆ

Օն: (միջարկութիւն յորդորական.) || ա՛յ, ղէ՛. կամ հապա. և ըստ այսմ սախ, օ՛ն արիք. օ՛ն եկայք. և այլն: ռամկ. դէ. կամ հայդէ: Մարկ. 14. 42: Յովհ. 11. 16: և 14. 31: Իսկ միւսն վերջ սա ընդ բայիս առեալ, այսպէս, օն առեալ. և զնոյն նշանակէ. ըստ այնմ Ղուկ. 'ի Վեհափառ երգոց. Քանզի զայնպիսի ուշ կուրացուցաք, օն առեալ յերկրորդն դիմեցուք. զի ունէ յերկրորդն դիմեցուք: Եւ 'ի գիրս Լամբր. սախ, Ասեմ զի մի՛ անծանօթ 'ի քննողաց՝ սորա զօրեմ լիցի, օն առեալ խուռն ինչ յիշատակեսցուք. զի ունի խուռն ինչ:

Օն անդր: (մակբայ բացատական.) || 'ի բաց անդր. կամ քաւ լիցի. ըստ այնմ Ոսկէ. 1. Կոր. Է. և ԼԷ. Ոչ մի՛ անկարութեան գնէ ըղ բանին, օն անդր: և 2. Կոր. ԺԴ. սախ. Գործս և [illegible] ոչ մի՛ մարդաբերից սուրց, օն անդր: Գրիգոր՝ նշանակէ առաւել անդր. կամ անդրադարձն եւ. և ըստ այսմ սախ 'ի հին ճառս ինչ. Որչափ եւս առաւել 'ի վերն, որ օն անդր է քան զամենայն այլութիւն. զի որ անդրագոյն է քան զամ այլայլութիւն: Դարձեալ՝ նշանակէ՝ եւս առաւել. կամ եւս քան զեւս. ըստ այնմ 'ի հին պատմագիրս. արքայական կամաւորք, և որպիսական ըղ ձեռքս ոչ կարացեն օգնել. օն անդր և ոչ [illegible] և հայոց:

Օն և օն: (մակբայ որակական.) || այսպէս և այնպէս. ըստ այնմ Ղուկ. իԹ. Ձեռագիր ոչ զբազմաց ունիեցաւ 'ի մէջ օն և օն գրեալ ցեւ [illegible] բարեգութ: Եւ ըստ այսմ յա[illegible] վարի սա 'ի Ռու գիրս, [illegible] զերեքբարբառական. [illegible] այսպէս և այնպէս [illegible] քեզ. և զայս նշանակէ օն և օնն: 1. Թագ. 3. 9: 3. Թագ. 2. 23: և 19. 2: 4. Թագ. 6. 31:

ՕՇ

Օշ: (միջարկութիւն երանական.) || երանի. կամ վաշ: ռամկ. էրնէկ. և տաճկեր. [illegible]. և ըստ այսմ սախ, օշ քեզ: 'ի հին [illegible]:

Օշակ. ի. ա. աց. աք: || է խիժ ինչ [illegible], որ է [illegible] ջերմ և չոր: 'ի հին բժշկարանս:

Օշատեմ: || [illegible]. Դեղեր Գրէք. [illegible]:

Օշարակ. ի. աց. աք: || [illegible] մեղր 'ի պտղոց. կամ 'ի խոտոց. և յայլոց [illegible]. և այս թէ պարզ լիցի. և թէ յօրինեալ այլազգ հանդերձանօք. [illegible] կամ 'ի մեղ[illegible] կամ 'ի շաքարէ. կամ 'ի հիւթոց մրգաց, և 'ի [illegible]. ռամկ. շէրպէթ: Երգ. 8. 2: Ղուկ. Ն. [illegible] երգոց:

Օշարակագործ. ի. իւ. աց. ըք: || Նա՛ որ գործէ զօշարակս. կամ կազմէ զանոյշ ըմպելիս: ռամկ. շէրպէթճի:

Օշթէ: (միջարկութիւն երանական.) || երանի թէ. կամ վաշթէ. ռամկօրէն. էրնէկ թէ: Սաղմ. 118. 5:

Օշինդր. կամ օշինտր. դրի. իւ. ից. կամ աց. աք: || է խոտ ինչ կանաչ յոյժ դառն. [illegible] ունի զտերեւ [illegible] նման տերևոց [illegible]. ծաղիկ դեղնագոյն. և ունի զզանազան օգտութիւնս 'ի դեղորայս. զոր այլազգական բառիւ կոչեմք աբսինթ: ռամկ. [illegible]: Ղուկ. Ճ. և հձ:

Օշկայ. ի. իւ. ից. իւք: || բուրդ կաղնւոյ, զոր 'ի գործածեն 'ի [illegible]: 'ի հին բժշկարանս:

Օշ օշ. կամ յօշ յօշ: || ծագի 'ի բայէս օշտել. և նշանակէ հատուած հատուած. կամ մասն մասն. ռամկ. կտոր կտոր. կամ փշուր փշուր. ըստ այնմ Յայսմաւուրս. [illegible] կացին օշ օշ զմարմինս որդւոյն իւրոյ:

ՕՍ

Օսլայ. ի. իւ. ից. իւք: || ալիւր նուրբ կազմեալ 'ի յուղոյ թրջեալ և [illegible]ցուցեալ ցորենոյ: ռամկ. նիշաստայ:

ՕՏ

Օտար. ի. ա. աց. աք: || այն ամ, որ այլոց է. կամ առ այլս վերաբերի. կամ անմերձաւոր. կամ անծանօթ. և կամ անընտանի. և ըստ այսմ սախ, օտար տուն. կամ [illegible] երկիր. և այլն: ռամկօր. եապանճը: Ելից. 2. 22: և 23. 13: Սաղմ. 57. 4: Ղուկ. 23. 27: Իսկ միւսն՝ օտարազգի. կամ օտարական. կամ պանդուխտ. և կամ հիւր: ռամկ. [illegible]. կամ ղարիպ: Իմաստ. 19. 14: Մատթ. 25. 35: Դարձեալ, նշանակէ 'ի բացեայ. կամ հեռի. և կամ մեկուսի. ըստ այնմ Ոսկէ. 'ի Նախերգ. Անձամբ զանձինս [illegible] հոգևորագոյն սրբութեան օտարս կացուցանիցեք:

Օտարաբար: (մակբայ որակական.) || օտար կերպիւ. կամ այլազան եղանակաւ. կամ անընտանեաբար. կամ անսովորապէս. և կամ խստաբար: Եզեկ. 28. 21:

Օտարադէմ. դիմի. աւ. աց. օք: || ունող զօտար դէմս. կամ զայլազան երեսս. որով նշանակի այլանդակն. կամ գժնեայն դիմօք:

Օտարազգի. գւոյ. աւ. եաց. եօք: || Նա՛ որ է յօտար ազգէ. կամ յօտար ցեղէ. կամ այլազգի. կամ եկամուտ. զի նա՛ որ եկեալ խառնի յայլ ազգս: Ելից. 29. 33: Թուոց. 18. 4: Եսայ. 56. 3:

Օտարազն. ազնի. իւ. ից. իւք: || նոյն է ընդ վերնոյն: Ղուկ. կէ:

Օտարալեզու. զուի. աւ. աց. աք: || ունող զօտար լեզու. կամ օտար բարբառով խօսող. որպիսի է այլազգին:

Digitized by Google

Օտարածին. ծնի. ին. աց. օք: || Ծնեալ յօտարէ. կմ ծնունդ օտար ազգաց. կմ օտարազգի. և կմ այլազգի: Ծնդ. 17. 12: Յօբ. 15. 19. Եսայ. 61. 5: Եզեկ. 44. 9:

Օտարախառն: (Նախդրիւ հոլովի.) || Խառնեալ ընդ օտար իրի. կամ շփոթեալ ընդ օտարաց: Իսկ մերթ խառնակեալ ընդ օտար զուգակցի. կմ շաղաշարեալ ընդ այլատեսակ կենդանեաց. որպէս է հայր. կմ մայր ջորւոյ: Իսկ երբեմն վարի իբրև ըզ մակբայ. և նշանակէ՝ ընդ օտարի խառնելով. կմ ընդ այլասեռ կենդանեաց զուգակցելով. ուստի Ղեւտ. 19. 19. ուր ասի՝ Զանասուն քո օտարախառնս մի՛ խառնիցես, նշնկէ ասել. մի՛ խառնակեցուցես՝ կմ մի՛ զուգեցուցանես ընդ օտարատեսակ կենդանեաց:

Օտարական. ի. աւ. աց. օք: || Այն՝ որ է օտար, կմ օտարաց. կմ այլազգան. և կմ օտարոտի: Ծննդ. 30. 32: Ղեւտ. 9. 18: Իսկ մերթ օտարազգի, կմ օտարածին. կամ պանդուխտ. և կմ հիւր: ռամկ. եաբանճի. կմ ղարիպ: 2. Մնաց. 6. 33:

Օտարակերպ. ի. իւ. իւ. իւք: || Ունօղ զօտար կերպ. կմ այլակերպ. և կմ այլազան: ռամկ. պաշխաթիւոս:

Օտարակողմ. կմ օտարակողմն: (Նախդրիւ հոլովի.) || Այն՝ որ է օտար կողմն. կմ է յօտար կողման. և կմ վերաբերի առ օտար կողմունս. և ըստ այսմ սաի, օտարակողմն կոյս: 2. Մակ. 10. 24:

Օտարաձայն. ի. իւ. իւ. օք: || Ունօղ զօտար ձայնս, կմ զօտար բարբառս. և կմ նա՝ որ անծանօթ խօսիւք բարբառի. և ըստ այսմ սաի, օտարաձայն ազգ. կմ լեզու. և այլն: ռամկ. ուրիշ լեզու յան ունօղ. կամ ուրիշ բարբառ խօսօղ: Ահգոն: Իսկ մերթ այն՝ որ է օտարոտի իմացմանց տեղ. կմ այլալեզու լեզու. կմ տարաձայն. և կմ անհամաձայն, և ըստ այսմ սաի՝ օտարաձայն միաձայն, և ըստ այսմ սաի՝ օտարաձայն բան, խորհուրդ, ուսումն. և այլն: 2. Մակ. 14. 26: Եբր. 13. 9: Կիւրղ. Եղեմ. Ժ:

Օտարամահ: (Նախդրիւ հոլովի.) || Օտար կերպիւ մահացեալ. կմ անսովոր մահուամբ մեռեալ. և կմ դժնդակագոյն վախճանեալ: 'Ի հին տաղագիրս:

Օտարամուտ. մտի. աւ. աց. օք: || Յօտար աշխարհ մտեալ. կմ զօտար մուտս արարեալ: Իսկ մերթ՝ յօտար կողմանէ, կմ արտաքուստ մտեալ. կմ եկամուտ. և կմ օտարական. ըստ այսմ Մծբն. ԺԵ. Զի՛ք 'ի նմա սէր օտարամուտ:

Օտարանամ. ացայ. ցիր. անալ: (Ընդ միշ.) || Օտար լինել. կմ անծանօթ գալ. կամ օտարական ցուցանել զանձն իւր: ռամկ. կօր. եաբանճի ըլլալ: Ծննդ. 42. 7: Իսկ մերթ այլազան լինել. կմ այլանդակիլ. կմ դժնդականալ: Երեմ. 2. 21: Երբեմն և 'ի օտարութիւն հեռանալ. կմ պանդխտութիւն հրաժարիլ. և կմ նժդեհանալ: ռամկ. ղարիպ ըլլալ: 2. Մակ. 5. 9: Ղեւտ. 27. 8: 2. Կորն. 5. 6:

Օտարանոց. ի. աւ. աց. օք: || Տեղի, ուր բնակին օտարքն, կմ պանդխտանոց. և կմ հիւրանոց: ռամկ. խարիպխանայ. կմ մուսաֆիր խանայ: Խորեն. Բ. գլ. 20: և 'ի հին հարց. ԵՂ:

Օտարասէր: (Նախդրիւ հոլովի.) || Տե՛ս 'ի ներքոյ զՕտարասիրիմ: Մծբն. ԺԲ. և ԺԵ:

Օտարասերմ: (Նախդրիւ հոլովի.) || Յառաջացեալ յօտար սերմանէ. կմ ունօղ զօտար սերումն. կմ օտարազգի. և կամ այլասեռ. և ըստ այսմ սաի՝ օտարասերմ ազինք: Նարեկ. 'Ի տարածն Ելեզարու:

Օտարասէր. սիրի. աւ. աց. օք: || Սիրօղ օտարաց. կմ նա՝ որ սիրով ժողովէ զպանդուխտս. և կմ հիւրասէր: 1. Պետ. 4. 9:

Օտարասիրութիւն. թեան: || Օտարասէր գոլն. կմ սէր օտարաց, և պանդխտաց. և կամ հիւրասիրութիւն: Եբր. 13. 2:

Օտարատեաց. եցի. իւ. աց. օք: || Ատեցօղ օտարաց. կմ պանդխտաց, և հիւրոց: ռամկ. եաբանճին, կմ խարիպը ատօղ:

Օտարատես: || Տե՛ս զՕտարատեսուչ:

Օտարատեսակ. ի. աւ. աց. օք: || Ունօղ զօտար տեսակ. կմ օտարակերպ. կմ այլակերպ. և կմ այլազան: Նարեկ. ԶԹ:

Օտարատեսութիւն. թեան: || Աչս կառուցումն յինչս այլոց. կմ սեւեռումն ուշոյ 'ի ստացուածս այլոց՝ առ 'ի ձգել զնա յանձն իւր: ռամկ. ուրիշին բանին աչք տնկելը:

Օտարատեսուչ. ուչի. աւ. աց. օք: || Տեսուչ օտարին, ՟ նա՝ որ աչն կառուցեալ դիտէ յինչս օտարաց. կմ զուշ իւր հաստատեալ ունի 'ի ստացուածս այլոց՝ խարդելով յինքն կորզել զնա: ռամկ. ուրիշին բանին, կմ ունեցածին աչք տնկօղ. կմ աչք դիկօղ: 1. Պետ. 4. 15:

Օտարատեսչութիւն. թեան: || Օտարատեսուչ գոլն. կմ տեսչութիւն օտարականաց, կմ պանդխտաց և հիւրոց: Իմաստ. 19. 12:

Օտարատունկ. անկոյ. ակ. ոց. ակք: || Օտար, կմ այլազան տունկ: Իսկ մերթ ունօղ զօտարակերպ, կմ զայլանդակ տնկանօղ, կմ զայլանդակ ատամնկանօղ զօտարակերպ, կմ զայլանդակ տնկանօղ, կմ զայլանդակ տնկանօղ, կմ զայլանդակ տնկանօղ, կմ զայլանդակ տնկանօղ, կմ զայլանդակ տնկանօղ. և կմ զժանտացեալ թուփս, և բոյս. և ըստ այսմ սաի. օտարատունկ այգի: Մծբն. ԺԶ:

Օտարացեղ. ի. իւ. իւ. իւք: || Այն՝ որ է յօտար ցեղէ. կմ օտարազգի. կմ օտարոտի. և կմ օտարակերպ. և ըստ այսմ սաի, օտարացեղ ազգ. ձայն. բարբառ. և այլն: Նարեկ. Կ. և 'Ի Գով. տառ:

Օտարացուցանեմ. ացուցի. ացո՛. նել: (Ան ցող:) || Օտար, կմ անծանօթ առնել. կմ յօտարութիւն արկանել. կմ պանդխտութիւն հեռացուցանել. և կմ 'ի բաց հրաժարեցուցանել 'ի տեղւոյ, կամ յընտանեաց, կամ 'ի խերոյ. և այլն: Յես. 22. 25: 2. Մակ. 5. 9:

Օտարացուցիչ. ցուցչի. աւ. աց. օք: || Օտարացուցանօղ. կմ օտարութիւն հեռացուցանօղ. և կմ նժդեհութիւն հրաժարեցուցանօղ: Իսկ մերթ՝ ափշեցուցիչ. կմ յափշտակիչ մտաց. և կմ նորանշան իմն. որ յա- զաքս նորութեան և անլուր գոլոյն հիացու-

ցանէ զմարդ․ որպիսիք են նորալուր կը րօնք․ կմ վարդապետութիւնք․ ըստ այնմ Գործ․ 17․ 20․ Օտարացուցիչս իմն բերես ՚ի լսելիս մեր։

Օտարափառ։ (Նախդրիւ հոլովի․) ‖ ունօղ զօտար, կմ զայլազան կարծիս, կմ զդա_ւանութիւնս ՚ի բանս հաւատոյ, որ և ասի այլափառ․ և ըստ այսմ օտարափառս կոչին նմ հերձուածողք, և հերետիկոսք։ տես և ՚ի բառն Ուղղափառ։

Օտարին։ (Նախդրիւ հոլովի․) ‖ ածանցի ՚ի բառէս օտար․ որպ խաւարինն ՚ի բառէս խաւար․ և նշանակէ օտարոտի․ զոր տես ցես ՚ի ներքոյ։

Օտարիտ։ ‖ Է բառ պարսկական․ և նշա_նակէ զմոլորակ ինչ․ զոր հայերէն կոչեմք փայլածու․ որպ և յոյնք հերմէս․ կմ երմէս։

Օտարոտի․ տւոյ․ ով․ ւոց․ ովք․ կամ եաց․ եօք։ ‖ այն՝ որ է օտար․ կմ այլա_զան․ կմ օտարական․ կմ անծանօթ․ և կմ անընդել․ և ըստ այսմ ասի, օտարոտիս համարիլ․ կամ օտարոտի օրէնք, լեզու․ ծնօղ․ և այլն։ ռամկ․ օտար․ կմ եաբան_ճի։ Ծննդ․ 31․ 15։ և 35․ 2։ 1․ Մակ․ 1․ 46։ Գործ․ 17․ 18։

Օտարութիւն․ թեան։ ‖ այլազանութիւն․ կմ անծանօթութիւն․ և կմ անընդելութիւն։ ռամկ․ եաբանճըլըք։ Իսկ մերթ՝ օտարականութիւն․ կմ պանդխտութիւն․ կմ նժդեհութիւն․ և կմ հիւրութիւն։ ռամկ․ ղարիպլըք։ Խորէն․ Գ․ պր․ 68։ Մերթ և՝ հեռացումն․ կմ մեր ժումն․ ըստ այնմ Նարէկ․ հէ․ Օտարու_թիւ նմին դիցն գրօշելոյ։

Օտարուսումն․ սման․ սմամբ․ մունք․ մանց․ մամբք։ ‖ ունօղ զօտար ուսումն․ կմ զօ տարոտի ինչ ուսուցանօղ․ կմ զայլազան ինչ վարդապետօղ․ որպիսիք են ոմանք յաղանդաւորաց, որք օտարաձայն ինչ՝ և նորալուր իմն քան զվարդապետութիւնն քն ջա նան մուծանել յեկեղեցին։ 1․ Տիմ․ 1․ 3։

Օտարուստ։ (մակբայ տեղական․) ‖ յօտար տեղւոջէ․ կմ յօտարակողմ կուսէ․ կամ յայլուստ․ և կմ արտաքուստ։ ռամկ․ ուրիշ տեղէ․ կմ դրսէն։ Կիւրղի Եզեկ․ Ճ։

ՕՐ

Օր․ աւուր․ յօրէ․ աւուրբ․ աւուրք․ աւուրց․ աւուրբք։ ‖ չափ՝ միանգամ հոլովման ա_ռաջնոյ շարժունի․ և կմ չափ տուօրեայ շր ջանի արեգական, որ է տևողութի քան և չորս ժամուց՝ բաժանեալ ՚ի տիւ և ՚ի գի շեր։ Եւ տարբերութի սորա է երրեակ․ քանզի է օր, որ բնական է․ և է՝ որ սովո րական․ և է՝ որ օրինական։ Բնական օրն սկսանի յառաւօտէ, և աւարտի ՚ի միւս առաւօտն։ սովորականն սկզբնաւորի ՚ի կիսոյ գիշերոյ, և կատարի ՚ի միւս կէս գիշերն։ Իսկ օրինականն սկիզբն առնու յերեկոյէ, և զրաւէ ՚ի միւս երեկոյն․ և ըստ այսմ վարէին հրէայք զաւուրս ըստ օրինաց․ յորմէ և կոչեցան այսպիսի ա_ւուրքս օրինականք։ ռամկ․ կա, օր։ Ծննդ․ 1․ 5․ և 8։ և 8․ 6։ Իսկ մերթ եդեալ լինի փոխանակ տուընջեան․ իբրև բոլոր՝ փո_խանակ ազնիւ մասին։ ռամկ․ ցորէկ․ ըստ այնմ Յօհ․ 9․ 4 և 11․ 9․ ո՞չ երկոտասան ժամ է աւուր, այսինքն տուընջեան։ Սակայն ըստ այսմ հաւաքիւ ՚ի գործ ածի․ զի լաւ է ասել․ իբրև որպէս լուսոյ՝ և որպէս տուըն ջեան, քան որպէս աւուր․ որպ և յայտ է։ Դարձեալ առեալ լինի անբացորոշաբար փոխանակ ժամանակի․ և այսմանաւանդ ըստ յոգնականին։ Եսայ․ 7․ 1։ Երեմ․ 1․ 2։ և 3․ 16։ Եւ ևս բազում անգամ ՚ի հոլո_վելն, կմ ՚ի յարելն ՚ի բառս ինչ՝ այլայլէ զնշանակութի իւր ըստ այլ և այլ կերպիւ, զոր տեսցես ՚ի ներքոյ։

Օր ընդ օր։ ‖ այսինքն ընդ մէջ ոմանց աւուրց․ կմ յաւուրս ոմանս․ և կմ յիւրաքանչիւ_րում աւուր։ ռամկ․ պաշըօր․ կմ ամէն օր։ ՚Ի կանոնսն աջին Եղիշէի։

Օր ընդ մէջ։ ‖ այսինքն միջոց տալով զմի օր․ և ըստ այսմ ասեմք․ օր ընդ մէջ ուտել, կմ պահել․ յորժամ զմի օր ուտեմք, կամ պահեմք, և զմիւսն ոչ։ ՚Ի Վարս հարց․ Գ․ ժա․ և ժէ։

Օր ՚ի յօր։ ‖ այսինքն ՚ի միոյ օրէ ՚ի միւսն․ կմ յաւուրց յաւուրս։ ռամկ․ օրէ օր։ Ըստ այնմ Նարեկ․ Եւ մի՛ օր ՚ի յօր յերկարաձգեսցես։

Օր յօրէ։ ‖ այսինքն յօրէ օր․ կմ օր ըստ օրէ։ Եսթեր․ 3․ 7։

Օր հասարակ։ ‖ այսինքն հասարակ օր․ կմ մի_ջօրեայ․ ռամկ․ օրհարակ։ 3․ Եզր․ 8․ 3։ Սաղմ․ 36․ 6։ Խորէն․ Գ․ պր․ 40։

Օր քան զօր։ ‖ այսինքն ՚ի միում աւուր առա_ւել քան ՚ի միւսում․ կմ աստիճանաբար առաւելլով յաւուրս։ ռամկօր․ օր տանըր վրայ․ և ըստ այսմ ասի, օր քան զօր մե_ծանալ, կմ պատուիլ․ օր քան զօր չարա_նալ, կմ դառնանալ։ և այլն։ Յովէլ․ 16․ 28։ Ողբ․ 2․ հատ․ Ի։

Աւուր գնացս տափ, և աւուր գնացանոտի։ ‖ այսինքն միոյ աւուր ճանապարհ յայսմ կողմանէ, և միոյ աւուր յայնմ կողմանէ։ Թուոց․ 11․ 31։

Աւուր աւուր։ ‖ այսինքն յիւրաքանչիւրում աւուր․ կմ օր ըստ օրէ։ ռամկօր․ ամէն օր։ Թուոց․ 28․ 24։

Յետ աւուրց։ ‖ այսինքն զկնի ոմանց աւուրց․ կմ յետ ժամանակաց ինչ։ Ծննդ․ 4․ 3։

Աւուրց յաւուրս․ կմ յաւուրց յաւուրս։ ‖ այսինքն ձգտեալ ՚ի յաւուրց ՚ի յաւուրս․ կմ յամ աւուրս․ կմ յիւրաքանչիւր ա_ւուր․ և կմ օր ըստ օրէ։ ռամկ․ ամէն օր։ 1․ Մնաց․ 12․ 22։ Իսկ մերթ՝ ըստ նմ սահ_մանեալ աւուրց․ կմ շարունակ յամ կար_գեալ ժամանակս, կմ ամս։ Ելից․ 13․ 10։ Դատ․ 11․ 40։ և 17․ 10։ և 21․ 19։ Եւ ըստ այսմ գնալն եղկանայ ՚ի սելով յիւրաքանչիւր սահմանեալ ժամանակս տօնից, որպ զատ_կին, պէնտէկոստէին, և տաղաւարահա_րաց, ասի՝ ելանել անդր աւուրց յաւ_ուրս։ 1․ Թագ․ 1․ 3։

Յաւուրս. կմ զաւուրս ։ || Գ ընդ երկայն աւուրս. կմ յերկար ժամանակս. և ըստ այսմ իմանի՝ մինչ ասի. աւուրց՝ յաւուրս է, կմ սուղ առի զաւուրս. կմ ցաւք որ առի իմոյ զաւուրս. և այլն ։ 3. Եղբ. 1. 4։ Սաղմ. 12. 2։ Եզեկ. 12. 7։ Դան. 10. 14։

Նոյն օրին, կմ առ օրին ։ || Գ 'ի նմին աւուր, կմ անդէն յայնմ աւուր, և կամ վաղվաղակի 'ի նոյն պահուն առընթերեան, կմ գիշերոյ ։ ռամկ. ան օրը, կմ ան աւուրը մէջ. ըստ այնմ Յոբ. 1. հատ. ժը. ոչ նոյն օրին 'ի միում ժամու անդ զթուլսն ուսուցանէին ։ Եւ Մծբին. ժե. ասի, Թողից զնա իբրև մանուկ ծնեալ առ օրին յարգանդէ ։ ըստ այսմ է և 1. Մակ. 10. 50։

Օրաբեր. ի. իւ. ից. կմ աց. օք ։ || բերող աւուր, կմ պատճառող առընթերեան. և ըստ այսմ ասի, լոյս օրաբեր ։ Աղգ. Բ.

Օրագիւտ. ի. իւ. ից. իւք ։ || գտանող աւուր ։ իսկ մերթ գիւտ աւուր. և ըստ այսմ ընդ բայի շարակցի այսպէս. օրագիւտ առնել. և նշանակէ զահմանեալ օր ինչ գտանել ։

Օրաթիւ. թուի. իւ. ից. օք ։ || թուող, կմ համարող զաւուրս ։ ռամկ. օրը համրող ։ իսկ մերթ թիւ, կմ հաշիւ աւուր ։ ռամկօրէն օր համրանքը ։ ըստ այնմ 1. Եզր. 1. 2. Կարգեալ կացոյց զքահանայս ըստ իւր օրաթուէին, որ ըստ ամենայն սահմանեալ թուոյ աւուրց, յորս պարտէին ծառայել պաշտամանական ։ ըստ այսմ է և Ղեւ. 25. 29. ուր ասի. օրաթուէ լիցին փրկանք նր, որ ըստ թուոյ իւրաքանչիւր աւուր առնուլ ։

Օրախնդիր. խնդրի. աւ. կմ իւ. աց. օք ։ || խնդրող զաւուրս. կմ որոնող զժամանակ. կամ խարող աւուրց. ռամկօրէն. օր փնտռող. կմ օր հնարող. կմ [illegible] ընող ։

Օրածին. ծնի. իւ. աց. օք ։ || ծնանող աւուր, կմ արտադրող առընթերեան, որ ասի զարեգակնէ ։

Օրակշիռ ։ (Նախդրիւ հոլովի.) || կշռող. կմ չափող աւուրց, կամ որ պատճառէ զհաւասարութիւն աւուր, որ ասի՝ զարեգակնէ. Նարեկ. 'ի յիշատակարան ։

Օրահաս ։ || տես զՕրհաս ։ 3. Մակ. 5. 9։ և 6. 22։ Կիւրղի Եղէմ. Փ։

Օրամուտ. մտի. իւ. ից. իւք ։ || մտանող յաւուրեայ պաշտօն, կմ 'ի ծառայութիւն միոյ աւուր ։ իսկ մերթ նա՝ որ մտանէ 'ի սպասաւորութիւն աւուրց միոյ ամսոյ, կմ շաբաթու. և 'ի վճարել օրաթուէին՝ ելանէ անտի, յաջորդելով այլոց պաշտօնէից 'ի նոյն ։ Դարձեալ՝ 'ի յոգնականին նշանակէ զպաշտամունս աւուրց միոյ ամսոյ, կամ շաբաթու, յոր մտանեն փոխանակաւ պաշտօնեայք 'ի սպասաւորել. որպիսիք էին բաշխմունք 'ի թիկնապահ զինուորացն դաւթի, և ամ դասուց քահանայից. և ղեւտացւոց սպասաւորին ։ 1. Մնաց. 28. 1. և 13. և 21։ 2. Մնաց. 35. 4։

Օրան. ի. աւ. աց. օք ։ || չէզք որոյից, որ է դեղ հնձեալ ցորենոյ՝ կմ գարւոյ, և նմանեաց, զոր սփռեալ ընդ կամնասայլիւ կասուն. Եւեն. 22. 6։ Յովէ. 15. 5։ Երեմ. 51. 33։ Աբակ. 2. 13։

Օրաշար. ի. աւ. աց. օք ։ || ունող շար օր. կմ որոյ աւուրքն են ձախորդք. և լի դժոնութեամբ ։ իսկ մերթ գոյականաբար վարեալ՝ նշանակէ զչար, և զձախորդ օրն. ըստ այնմ Յոբ. 1. հատ. Գ. իսկ որք անատանողոյնք իցեն, նոքա բնաւ զօրաշար ժամաշար պարտ չարեացն եղելոցն դնիցեն, որ որք անմտագոյնքն են՝ զպարտաւորութիւն գործեցեալ չարեացն՝ օրաշարի և ժամաշարի դնեն, այս է, 'ի վերայ չար աւուր և չար ժամու ։ ուստի յարէ ընկնի. այլ ոչ ժամու չարի, և ոչ գիւէ չարի. և այլն ։

Օրացոյց. ցուցի. իւ. ից. իւք ։ || ցուցանող աւուր. և ըստ այսմ օրացոյց կոչի մանաւորապէս գրուածն, որ ցուցանէ զաւուրս տարւոյ, կամ ամսոյ, և կմ լուսնի ։

Օրաւոր. ի. աւ. աց. օք ։ || առօրեայ. այսինքն նա՝ որ է միոյ աւուր. կմ զի օր տեւէ և անցանէ. կմ օրական. և կմ առժամանակեայ. ռամկօրէն մէկ օրուան. կամ օր մը դիմացող. ըստ այնմ Յարէն. ըթ. Սաղմոն ծառուցման յարակայքն և օրաւորին ։

Օրեմ. եցի. եա. եալ ։ (Ներգործ.) || սարուբերել զօրօրոցս, կմ զմանուկն օրօրցել ։ ռամկ. եա օրէլ.

Օրէն. օրինի. կամ օրէնք. օրինաց. նօք ։ (իբրև անեզական.) || պատուէրան. կմ հրաման՝ առեալ բազմութեան իբրև զկանոն, ցուցանել նշ 'ի գործս զհանդերձեալն առ 'ի առնել, և զառաջադէպսն առ 'ի հրաժարել. և բաժանի 'ի բնականն, 'ի քաղաքականն, 'ի յեկեղեցականն, և յածայինն ։ ռամկօրէն եա՝ օրէնք ։ Եւէն. 16. 4. և 28։ և 24. 12։ 2. Օրին. 1. 5։ Եւ յայտմանէ առեալ օրէնք կոչին առ հասարակամենայն սահմանադրութիւնք. կմ կանոնք, կամ սովորմունք, կամ կրօնք. կամ ծէսք ։ ռամկօրէն ադէթ. և ըստ այսմ ասի՝ օրէն զատկի, զոհից, նաւակատեաց, ախտաւորաց, խորութեց, բորոտութեանց. և այլն. Եւէն. 12. 43։ և 30. 21։ Ղեւ. 7. 11։ և 13. 59։ Թուոց. 6. 13։ իսկ մերթ կարգ, կմ սովորութիւն, կամ բնաւորութիւն, և կամ բարք. ըստ այնմ Ղուկ. 1. 9. ըստ օրինի քահանայութեան եհաս նմա խունկ արկանել, որ ըստ կարգի քահանայութեանն ։ Եւ Յոբ. 1. հատ. Գ. ասի՝ Օրէնք են բարւոք աշակերտաւոր վարդապետաց, որ սովորութիւն է ։ Եւ 'ի Յրաւնոյ ասի՝ Ջծնեալն այսօր օրինօք ըղնութեան, որ ըստ սովորութեան բնութեան ։ ըստ այսմ է և 3. Մակ. 4. 13։ Դարձեալ նշանակէ՝ օրինակ. կամ կերպ. կմ համդամանք. և կամ պայմանութիւն. ռամկօր

Digitized by Google

էօրինէի. կամ Եսրդ. ըստ այնմ 2. Մակ. 7. 41. Եւ մայրն երանելի 'ի նոյն օրէնս կատարեցաւ, Նովին օրինակաւ, կմ այնու կերպիւ. ըստ այսմ և ասի՝ բազում օրինօք հակառակիլ ումեք. կամ ցուցանել զօրէնս ուսանելոյն, այսինքն զհանգամանս: Ոսկ. 1. հոփ. ժը: և 'ի Գիրս Գրիգորի Եծ...: Դարձեալ՝ օրէնք կոչին իրքն. որք պարտին հատանել ումեք ըստ արդար օրինաց: զոր և կոչեմք իրաւունս, որպիսիք են տուրքն ընծայեալք իշխանաց 'ի սարկաւագաց յաղագս խնամելոյ զնոսա, կմ վն իշխանական պետութե նոցին: 1. Մակ. 15. 8: Դարձեալ՝ օրէնք կոչին ամենասուրբ հաղորդութիւնն. ըստ այնմ 'ի Ճառ հարց. իզ. Ոչ յումեքէ օրէնս էառ նա, այլ հրեշտակ ած առեալ 'ի սեղանոյ՝ տայր նմա. Եւ դարձեալ առ անդ. 'ի միում կիրակէից յետ օրինացն կցորդութե՝ խնդրեաց զգրաստ: և ըստ այսմ ևս ասի 'ի Գիրս կանոնաց. խնդրել օրէնս, կմ տալ օրէնս, կամ արժան լինիլ օրինաց. և այլն: Դարձեալ 1. Մակ. 10. 30. և 38. յորս ասի՝ յերիցն օրինաց, կամ զերիս օրէնս, եդեալ լինի փոխանակ երից նահանգաց, կմ գաւառաց. և այս յաղագս յունական բառին՝ նոմոս, որ զօրէնս, համանգամայն և զնահանգս նշանակէ:

Օրէն, կմ օրէնք կանանց: || կիրք դաշտանեաց, որով յիւրաքանչիւրում ամսեան հասեն կանայք զյաւելուածս ինչ արեան, որ առեալ լինի նոցա 'ի բնութենէ 'ի պէտս որդեծնութե. վասն որոյ յորժամ դադարի բղխումն այս, և նոքա դադարեն 'ի ծննդոց. և ըստ այսմ գոյն կանանց յայտարարի հիւր. ասի լինիլ 'ի կանանց օրինի, կամ 'ի կանանց օրէնս: Ծննդ. 18. 11: և 31. 35:

Օրէն է: || վարի իբրև զդիմաղութե. և նշանակէ, սովորութե է. կմ իրաւ է. կմ պարտ է. և կմ արժան է: ռամկ. ճայիզ է: Տօբ. 2. 21: Դան. 6. 12. և 19:

ըստ **Օրինի**. կմ օրինօք: (վարի իբրև ըղմակբայ.) || օրինաւորապէս. կմ ըստ արժանեաց. և կամ ըստ որում պարտն է: ռամկօրէն. ինչպէս որ պէտք է. կմ ինչպէս որ ճայիզ է: 2. Մակ. 10. 27: 2. Տիմ. 2. 5:

Օրէնսգէտ. գիտի. իւ. աց. օք: || գիտող զօրէնս. կամ գիտակ օրինաց. և կամ տեղեակ իրաւանց և կանոնաց: Առակ. 24. 8:

Օրէնսդիւտ. ի. իւ. ից. իւք: || գտանող օրինաց, կմ վերահասու օրէնսդրութեց և իրաւանց. ըստ այնմ Լամբրոն. ընկալաւ բուք զխորհրդականացն եղբր դպրի օրէնսդիւտի:

Օրէնսդիր. դրի. իւ. աց. օք: || դնող, կմ հաստատող օրինաց, կմ կարգող օրինական իրաւանց և արդարութեց: Ելից. 24. 12: Սաղմ. 9. 21: Յակ. 4. 12:

Օրէնսդրութի. թեան: || դնումն. կամ կարգումն օրինաց, կմ օրինադրութի, և կամ հաստատեալ օրէնք. կամ սահմանադրութի. և կամ կանոնադրութիւն: Հռոմ. 9. 4:

Օրէնսուսոյց: (Նախդրիւ հոլովի.) || ուսուցանող օրինաց, կմ վարդապետ օրինադրութեց, և իրաւանց: Գործ. 5. 34: Լամբրոն. և Աճուռ. իսկ մերթ այն՝ որ լինի ուսուցմամբ օրինաց. և ըստ այսմ ասի. Նորոգել զժողովուրդս օրէնսուսոյց խորհրդով:

Օր ըստ օրէ. կամ օր ըստ օրէն. (մակբայ ժամանակական.) || ծագի 'ի բառէս ըստ, որ 'ի առնուլն զբացառական՝ նշանակէ ըզկնի. ուստի բառս օր ըստ օրէ, նշանակէ՝ օր զկնի աւուր, որով իմանի յիւրաքանչիւր աւուր, կամ շարունակ յամ օր, և կամ զորհանապազ: ռամկօրէն. ամէն օր. և ըստ այսմ ասի. օր ըստ օրէ խօսիլ, կամ մատուցանել, կամ ժողովել: Ծննդ. 39. 10: Ելից. 16. 5: Ղևտ. 23. 37: Եւ կմ օր ըստ օրէ հաստատել. տալ. բողբոջիլ. ապականիլ. և այլն: Թուոց. 30. 15: 4. Թագ. 25. 30: Սաղմ. 60. 9:

Օրըստօրէ: (Նախդրիւ հոլովի.) || այն ամենայն, որ լինի յամենայն աւուր, կմ օր ըստ օրական, կմ հանապազօրեայ, և կմ հանապազորդեան. և ըստ այսմ ասի. ժողովել. կմ տալ զօր ըստ օրէ կերակուրն, կմ որոշել յօր ըստ օրէ պաշտամունս. և կմ գործք օր ըստ օրէք. ռամկ. ամէն աւուր, կմ ամէն օրուան: Ելից. 16. 4: 1. Մնաց. 23. 6: Ղուկ. 11. 3:

Օրթի. կմ օրթիւ: || տես զՈրթի: 'ի ձեռնագիրսն:

Օրինագիր. գրի. իւ. աց. օք: || օրէնսդիր, կմ կանոնագիր. կմ սահմանագիր: Ոսկ. 1. հոփ. իզ: Յոհ. որդ.: և Լամբրոն: Եւ մերթ օրինադրական, կամ օրինադրեալ, և կմ սահմանեալ օրինօք, և ըստ այսմ ասի, օրինագիր կրօնք: 2. Մակ. 6. 23: Իսկ երբեմն ընդ բայի շարակցի այսպէս, օրինագիր լինիլ. և նշանակէ՝ օրինադրել: ըստ այնմ 2. Մակ. 14. 38. Զանխառն զանապական օրէնսն օրինագիր լինէր հրէութեն, այսինքն օրինադրէր բազմութե հրէից:

Օրինադրական. ի. աւ. աց. օք: || այն ամ որ վերաբերի առ օրինադիրն, կմ առ օրինադրութիւն. կմ սահմանադրական, և կմ կանոնական:

Օրինադրեմ. եցի. եա. ել: (Ներգործակ.) || դնել, կամ հաստատել զօրէնս, կամ սահմանադրել, կմ կարգել, կամ կանոնել, կմ տնօրինել, կմ կարգաւորել. և ըստ այսմ ասի, օրինադրել մարդոյ զճանապարհ կենաց. և կամ օրինադրել ըզտօնս, զքաղաքս, զժողովուրդս, և այլն: Եբր. 8. 6: Խորէն. բ. գլ. 7. և 21: և Յոհ որդի:

Օրինադրութի. թեան: || տես զՕրէնսդրութի: Աճառ. 31. 27: Իմաստ. 2. 11:

Օրինազանց. ի. իւ. ից. իւք: || զանց առնող զօրինօք, կմ յանցաւոր օրինաց, կմ

պատուիրանազանց : ռամկ. օրէնք չլահօղ :
Յակ. 2. 9: Լամբր: և Յհ. ոսկ :

Օրինազանցութիւն. թեան : || զանցառութիւն օրինաց, կմ յանցաւորութիւն, և կմ պատուիրանազանցութիւն :

Օրինակ. ի. աւ. աց. օք: || գաղափար, կմ յարացոյց, կմ նկարագիր, և կամ տիպ. ըստ որոյ լինի իմն. և ըստ այսմ ասի՝ օրինակ գրոց, կմ կազմուածոց. և կմ տալ ումեք զօրինակ ինչ բարի: տաճկերէն. էօրնէկ. կմ խալիփ. կմ ռէսմ: Ելից. 25. 40: 1. Մնաց. 28. 20: Յօհ. 13. 15: Իսկ մերթ առակ. կամ ձև. կամ պատկեր. և կամ առուէտրագիր: 1. Կորն. 13. 12: Եբր. 1. 1: և 8. 5: Դարձեալ՝ կերպ. կմ եղանակ. կմ սարատ, և կամ որպիսութիւն. տաճկերէն. թարզ. զոր օրինակ. Այսու օրինակաւ. կամ օրինակաւս այսուիկ: || Դ այսու կերպիւ. կմ ըստ այսմ սարատի: 2. Մակ. 11. 16: Աղոտ. 9. 11:
Զնոյն օրինակ գնալ: || Դ նոյնով կերպիւ. կամ ըստ նմին եղանակի: Եփես. 4. 17:
Գրել. կամ առաքել թուղթ զայս օրինակ. կամ օրինակ զայս: || Դ ըստ այսմ կերպի. կմ այսու սարատիւ: 1. Եզր. 2. 16: Խորէն. ա. պր. 7: և բ. պր. 29: ըստ այսմ իմացեալ լինի և 2. Մակ. 7. 7. ուր ասի՝ իբրև առաջինն զօրինակ զայս յաշխարհէ փոխեցաւ, Դ այսու կերպիւ:
Ըստ թագաւորն յայն օրինակի զբանս իւր մերկանայր: || Դ այնու կերպիւ. կմ նովին եղանակաւ: 3. Մակ. 6. 19: Սոյնպէս և ս նշանակէ, մինչ ասի՝ ըստ նմին օրինակի: Եսայ. 21. 31: Յովսէփ. 8:

Օրինակագիր. գրի. իւ. աց. օք: || գրող զօրինակս. կմ օրինակօղ 'ի բուն գրոց. որպիսիք են ոմանք 'ի դպրաց:

Օրինակական. ի. աւ. աց. օք: || գաղափարական. կմ տպաւորական. և կմ այն տամ, որ օրինակ է իմիք: Նարեկ. ճ:

Օրինական. ի. աւ. աց. օք: || այն տամ, որ օրինաց է. կմ առ օրէնս վերաբերի. որպիսիք էին գառինքն, որք զոհեալ լինէին 'ի հին օրէնս, կմ ժողովուրդք, որք պահէին զօրէնսն մովսէսի: 'ի շարակնոցն: Սոյնպէս օրինական կռիւ կոչին վէճք, կամ խնդիրք արարեալք դհին օրինաց, կմ ըզ վերաբերեցելոցն 'ի հին օրէնս: Տիտ. 3. 9: Դարձեալ նշանակէ. օրէնսգէտ. կամ օրէնսուսոյց. և կմ վարդապետ օրինաց: Ղուկ. 15. 25: և 11. 46: Տիտ. 3. 13:

Օրինակատար: (Նախդրիւ հոլովի.) || կատարիչ, կմ լցուցիչ օրինաց: Աճգոյն.

Օրինակեմ. եցի. եա. ել: (Ներգործական.) || գաղափարել. կմ տպաւորել. կմ ձևացուցանել. և կամ օրինակաւ դուշակել: Լամբրոն: և 'ի շարակնոցն: Իսկ մերթ օրինակ տալ. կմ օրինակ ցուցանել. և կամ օրինակ կարգել զմի ինչ միւսոյն. ըստ այսմ 'ի շարակնոցն. որ 'ի կէտսն վերադարձի բընութեան դարձմամբ յորդանանու օրինակեցեր. Դ զօրինակ վերստին դարձման բընութեան մերոյ 'ի կէտսն եառոք :

Օրինակի աղագաւ: (վարի իբրև շաղկապ մեկնական.) || 'ի պատճառս օրինակի. կմ զոր օրինակ: ռամկ. ինչպէս :

Օրինակ իմն: (վարի իբրև շաղկապ մեկնակ.) || զոր օրինակ. կամ որգոն. և կմ հէքար: Օրինակ իմն՝ ըստ այնմ Խորէն. ա. պր. 28. Օրինակ իմն՝ որպէս ջուր՝ հերձեալ շամփրէ զծածկամահուկ: Ես. գ. պր. 37: և բ. պր. 82. ասի՝ Օրինակ իմն՝ իբրև 'ի գետեցիկ ցանցորդէ լի ձըկամբք յերկիր թօթափեալ ցանցոյն՝ կայտառային յերեսս երկրի :

Օրինակիր. կրի. իւ. աց. օք: || կրող, կամ ունօղ օրինաց. կամ օրինապահ: 1. Մակ. 2. 67:

Օրինակութիւն. թեան: || օրինակումն. կմ տպաւորութիւն. կամ կերպաւորութիւն. և կմ նմանութիւն: Նարեկ. լգ. և զթ.

Օրինապահ. ի. իւ. աց. օք: || պահօղ օրինաց. կամ պահպանօղ հրամանացն Այ: Աճգոյն.

Օրինապատուեմ: (Նախդրիւ հոլովի.) || պատուօղ զօրէնս, կամ ճանաչեալ յօրինաց.

Օրինաւոր. ի. աւ. աց. օք: || ունօղ զօրէնս. և կամ օրինաւ կամ անկեալ ընդ օրինօք. որոյ մնացեալ ընդ պահ: ըստ այնմ Աճգոյն. իսկ օրինօք, զի զօրինաւորսն փրկեսցէ: Իսկ մերթ օրէնսգէտ. կմ օրէնսուսոյց. ըստ այնմ Ղուկ. 14. 3. Ասէ ցօրինաւորսն և ցը փարիսեցիս: Դարձեալ՝ նշանակէ օրինաւորական. կամ իրաւացի. կմ պատշաճաւոր. և կմ վայելչական: ռամկ. ճէէէ. կմ լայեխ. և ըստ այսմ ասի, օրինաւոր ամօթ. աղօթք. սրբութիւն. օրէնք. և այլն: 3. Մակ. 1. 11. և 14: և 2. 10: և 4. 13: Եւ մերթ զգաստ, կամ ողջախոհ. և կմ բարեկրօն. և ը այսմ ասի՝ կուսանն հաւատարիմ և օրինաւոր: Խորէն. բ. պր. 79: Դարձեալ՝ բաղդատ անգամ դոյականաբար վարեալ օրինաւորք կոչին օրինական ձևք, և նմանութիւնք. և այլ տամ, որ կայ ընդ օրինօք. ըստ այնմ կիւրղի եղէմ. ժդ. տօնին իսկ զատկաց՝ որ յաւուր եղեւ. ժդ. տօնն իսկ զատկաց՝ որ յաղթէ ընդ օրինաւորացն էր. այսինքն ընդ օրինական ձևոց: ըստ այսմ է և Եբր. 9. 23. օրինակաց օրինաւորացն ասէ. Հարկ էր օրինաւորացն ասէ. և սոքօք սրբել. Դ օրինականն նմանութեանց. և տան եղելոց ընդ օրինօք, որք էին խորանն վկայութեան. հինկտակն. և տամ ժողովուրդ հին օրինաց :

Օրինաւորագոյն. գունի. իւ. իւ. իւք: || առաւել օրինաւոր. կմ իրաւագոյն. կմ պատշաճագոյն. 'ի արգարագոյն. և կմ պատշաճագոյն :
Գէրո գէրգէրի թիթռանին:

Օրհոզ. ի. աւ. աց. օք: || կոյս աղջիկ. կմ մանկամարդ. որ չեղեալ է ամուսնացեալ, մանկամարդ. որ ընկերաւ. որպիսիք են նոքա, որք ընկերաւանն ընդ հարսին, որոց ներհականն կոչին պառանդք. կմ երիտասարդք: Թագաւ. 36. 8: Եփես. 6. 7: Եսայ. 47. 1: Ովբ. 1. 18:

Օրկանոց. || տես զՕրկանոց: 'ի հին պատմագիրս :

մոգիցս ։ և 'ի գիրս կանոնաց ։

Օրհաս, կմ օրահաս․ ի․ ու․ աց․ օք ։ || Ճակատագիր մահու, կամ ճակատագրական պատահար՝ հասեալ 'ի վերայ ուրուք, յորմէ ըստ առասպելելոց հեթանոսաց՝ չէր զերծումն․ ըստ այնմ Կիւրղի Եղէկ․ Գ․ Ոչ ծննդեանցք, ոչ բախտիւք, և ոչ օրահասօք վարեալ ։ Եւ յայսմանէ առեալ օրհաս կոչի 'ի վերայ հասեալ արկած մահուն, կմ մահացու պատահարն, և կամ մեռանելոյ փորձանքն, կամ ժամանակն, որ վճռեալ և հաստատեալ է յերկնուստ, կամ յարարչէն՝ հասանել ումեք 'ի լքանել առհմանին եդելոյ ։ ռամկ․ էճէլ․ կամ ծորդուն ճռնելու ատէնը․ ըստ այնմ Շնորհալւոյն․ Հաստատեալ էր 'ի միտս եղանել յաշխարհէ, եթէ օրհաս մահուն ոչ էր կանխեալ, թ եթէ էճէլը չէր եկեր ։ Եւ դարձեալ․ ասէ․ ոչ ժամանեաց յառաջագս օրհասին մահու կանխելոյ․ թ էճէլը գալուն համար ։ ըստ այսմ են ասի՝ այսու և այնու օրհասաւ մեռանել, կմ անցուցանել զօրհասաւ, կմ զմահաբեր զօրհասի ժամանակն․ և կմ զօրհասն ։ 2․ Մակ․ 13․ 7։ 3․ Մակ․ 4․ 7։ և 5․ 4։ և 7․ և 13։

Օրհասական․ ի․ ու․ աց․ օք ։ || Ճակատագրական․ կմ այն ամենայն, որ վերաբերի առ օրհասն, կամ առ պատահարս մահու․ և կամ մահաբեր արկած, որ է էճէլ․ ըստ այնմ Յն ոսկի․ Պատասխանի ոչ ընկալեալ, օրհասականն փութացեալ։ Դարձեալ նշանակէ զնա, որում ժամանեալ է օրհաս մահու, կմ անկեալ է ընդ օրհասաւ ։ ռամկ․ էճէլը եկօծ ։ և թ այսմ հոգեվարքն, որք հասեալք են 'ի մեռանիլ, օրհասական կոչին․ ըստ այնմ Եսայ․ 59․ 10․ իբրև օրհասականք ընդ ողխոջանայցեն, թ իբրև հոգեվարք յոգւոց հանիցեն ։

Օրհասարակ ։ || տես զնի բառիս՝ Օր ։

Օրհնաբան․ ի․ իւ․ ից․ իւք ։ || օրհնաբանօղ, կմ բարեբանօղ, և կմ գովաբանօղ, որ է բանիւ բերանոյ գովօղ ։ Նարէկ․ ղե․ կը․ և 'ի գող․ կասին ։

Օրհնաբանութիւն․ թեան ։ || բան օրհնութե․ կմ գովաբանութիւն․ և կմ բարեբանութիւն ։

Օրհնաբանեմ․ եցի․ եա․ ել ։ (Ներգործ․) || օրհնութեամբ գովասանել, կմ բարեբանել, կմ գովաբանել, և կմ օրհնել ։ Յն ոսկի ․ և 'ի շարականս ։

Օրհնաձայն․ ի․ իւ․ ից․ իւք ։ || օրհնօղ ձայնիւ, կամ մեծաձայն գովաբանօղ ։ Իսկ մերթ այն՝ որ լինի ձայնիւ օրհնութե, կամ մեծաձայն բարեբանութեա․ և ըստ այսմ ասի․ օրհնաձայն գոհաբանութիւն ։ Նարէկ․ հե ։

Օրհնաձայնեմ․ եցի․ եա․ ել ։ (Ներգործ․) || ձայնիւ օրհնել, կմ մեծաձայն բարեբանել․ և կմ գովաբանել ։

Օրհնաձայնութիւն․ թեան ։ || ձայն օրհնութե․ կմ մեծաձայն բարեբանութիւն ։

Օրհնանուն ։ (Նախդրիւ հոլովի․) || ունօղ զանուն օրհնեալ, կամ որոյ անունն է բարեբանեալ ։ Նարէկ․ 'ի տաղն խաչին ։

Օրհնառաք ։ (Նախդրիւ հոլովի․) || առաքօղ օրհնութե․ կամ մատուցանօղ զգովաբանութիւն ։ Իսկ մերթ օրհնութեա առաքեցեալ․ կամ բարեբանելով վերընծայեալ․ և կմ այն՝ որով առաքի օրհնութիւն․ և ըստ այսմ ասի․ օրհնառաք ընծայ, բուրվառ, կմ ձայն, և այլն ։ Նարէկ․ զջ․ և 'ի գող․ կասին ։

Օրհնեմ․ եցի․ եա․ ել ։ (Ներգործ․) || տալ զօրհնութիւն․ կմ կարդալ 'ի վե ուրուք ըղձ բանս բարեբաստութե 'ի նշան շնորհազարդելոյ զնա․ և ըստ այսմ ասի զմ օրհնել զստեղծուածս, Ծննդ․ 1․ 22։ և 9․ 1։ և 12․ 3։ 2․ Օրին․ 7․ 13։ Իսկ մերթ բարգաւաճեցուցանել, կմ արդասաւորել․ և կամ լնուլ բարեօք․ ըստ այնմ Ծննդ․ 30․ 27․ Օրհնեաց զիս ած յոտին քում ։ Եւ 39․ 5․ ասի․ օրհնեաց տր զտուն եգիպտացւոյն ։ Իսկ մերթ՝ նշանակէ մաղթել ումեք զբարիս․ որպ՝ զերկայնութիւն կենաց, զարդասաւորութիւն բարեաց․ ըղ յաջողութիւնս, զշնորհս, զփառս, և զգերծումն յամենայն պատահարաց չարաց․ և ըստ այսմ օրհնեն ստեղծուածք զստեղծուածս․ որպ՝ հարք զորդիս․ առաջնորդք զհնազանդեալս․ աղքատք զողորմածս․ և այլն ։ ռամկոր․ են, օրհնել․ Ծննդ․ 27․ 27։ և 48․ 15։ Եբր․ 11․ 20։ Դարձեալ՝ օրհնել ասի, շնորհաւորելն զոք յաղագս բարեբաստութե իւիք գտանելոյ նմա․ և ըստ այսմ օրհնեցին զդաւիթ ծառայքն նորա յաղագս թագաւորելոյն սողոմոնի․ 3․ Թագ․ 1․ 47։ Եւ են օրհնել ասի, ողջունելն յարգութե, կամ տալն զողջոյն մաղթելով զբարիս, և ըստ այսմ օրհնեաց յակոբ զփարաւոն․ մելքիսեդ զդաւիթ․ և յեսու զյովնադաբ․ և այլն ։ Ծնն․ 47․ 7։ 2․ Թագ․ 6․ 20։ 4․ Թագ․ 4․ 29։ և 10․ 15։ Երբեմն են օրհնել կոչի գոհանալն․ կամ շնորհակալ լինելն զումեքէ ։ 2․ Թագ․ 14․ 22։ 2․ Օրին․ 8․ 10։ Դարձեալ նշանակէ՝ գովել, կամ գովաստել․ կմ բարեբանել․ կմ մեծացուցանել․ և կամ փառաւորել․ և ըստ այսմ ասեմք, օրհնել զած ։ Տօբ․ 12․ 6։ Սաղմ․ 34․ 18։ և 68․ 31։ Դան․ 3․ 57։ Եւ են նշանակէ՝ երգել, կմ նուագել, կամ ներբողել, և կամ երգօք բարձրացուցանել ։ Ելից․ 15․ 1։ Դատ․ 5․ 1։ Մատթ․ 26․ 30։ Յայտ․ 5․ 9։ Դարձեալ՝ օրհնել ասի, քահանայագործելն, կամ սրբացուցանելն․ և ըստ այսմ ասեմք, օրհնել եպիսկոպոսաց զնուիրեալս, և քահանայից զպատարագ նուիրանաց մարմնոյ և արեան տն ։ 1․ Կորնթ․ 10․ 16։ Եւ են առ եկեղեցականս նշանակէ՝ ասել զկարգեալ օրհնութիւն, կմ զաղօթս ձայնիւ, և ըստ այսմ իմանի, մինչ աղաղակէ սարկաւագն առ ժամարարն, օրհնեա տէր ։ Դարձեալ՝ 'ի սբ գիրս օրհնել ասի իբր

հեզնութեան, անխծանելն, կամ հայհոյելն: 3. Թագ. 21. 10. և 13: ըստ այսմ է և Յոբ. 1. 11: և 2. 5. յորս ասի, եթէ ոչ յերեսս քո օրհնեսցէ զքեզ, իբր թէ՝ եթէ գէթ յանդիման ոչ անիծցէ, կամ հայհոյեսցէ զքեզ, ես այսպէս և այնպէս եղէց:

Օրհներգ. ոյ. ու. աց. օք: ‖ երգ օրհնութեան, կամ օրհնաբանութիւն, և կամ սաղմոսերգութիւն: Նարեկ. կա:

Օրհներգու. գուի. աւ. աց. օք: ‖ երգօղ օրհնութեան, կամ երգով օրհնօղ, կամ օրհնաբան, և կամ սաղմոսանուագ: Յճ-ոբեր:

Օրհներգութիւն. թեան: ‖ երգ օրհնութեան, կամ օրհնութիւն երգոց. կամ օրհնաբանական գովասանութիւն. և կամ երգաբանութեան: Նարեկ. ղէ: և Լամբրոն:

Օրհնիչ. նչի. աւ. աց. օք: ‖ օրհնօղ, կամ տուօղ օրհնութեան: Ծննդ. 12. 3:

Օրհնութիւն. թեան: ‖ բանք բարեբաստութեան կարգացեալ ՚ի վ՟ր ուրուք առ ՚ի նը շանակ պձնազարդելոյ զնա բարեօք. և ըստ այսմ է օրհնութիւն, զոր տայ ած սնեղծուածոց. Ծննդ. 28. 4: Սաղմ. 3. 9: Առակ. 10. 6. իսկ մերթ բարգաւաճումն. կամ բեղմնաւորութիւն. կամ արգասաւորութեան. և կամ լիութեան բարեաց. որ լինի ՚ի վերայ ուրուք. կամ ՚ի վերայ տան, կամ ընչից նր: տաճկեր. պէրէքէթ: Ծննդ. 39. 5: Ղևտ. 25. 21: Սաղմ. 128. 8: Գործածեալ՝ օրհնութիւն կոչի ընծայն. կամ պատարագն. և կամ պարգևն. ռամկօրէն. փէշքէշ: Ծննդ. 33. 11: 1. Թագ. 25. 27: 2. Կորն. 9. 5: Գործածեալ՝ նշանակէ զմաղթանս բարեաց, զոր մաղթէ ոք ումեք. որոյ ներհակն կոչի՝ անէծք: ռամկօրէն. օրհնէնք: Ծննդ. 27. 12. և 35: 2. Օրին. 11. 26: Երբ եւ նշանակէ՝ գրուած. կամ գովութեան. կամ բարեբանութեան. կամ մեծացուցումն. և կամ փառաւորութիւնս: Սաղմ. 9. 15: և 55. 12: Եսայ. 12. 2: Մատթ. 21. 16: Գործածեալ՝ նշանակէ՝ օրհներգութեան. կամ երգաբանութեան. կամ նուագ. և կամ երգ, զոր եղանակեն բերանով. կամ նուագարանօք. որպ՝ քնարաւ, և նմանեօք: Ելից. 15. 1: Թուոց. 21. 19: 2. Օրին. 31. 19: Սաղմ. 150. 3: Երբեմն եւ օրհնութեան կոչի քահանայագործութիւնն. կամ սրբագործութիւն. և կամ սրբացուցումն. որով օրհնեն եպիսկոպոսունք զնուիրեալս յաստուծոյ. կամ ժամարարքն զպատարագն ի մարմին և յարիւն որդւոյն ած: 1. Կորն. 10. 16:

Օրոց: ‖ տես զՕրօրոց:

Օրուկ. օրկի. աւ. օրկունք. աց. օք: ‖ նոյն է ընդ բառին ուրուկ. որպ օղերձն է բառին ուղերձ: ՚ի հին պարսիկս: իմանէ ածանցի բառս՝ օրկանոց. որ է ուրկանոց:

Օրօրոց. ի. աւ. աց. օք: ‖ տապանակաձև կամ տաշտաձև կազմուած, ուր եդեալ զերեխայն՝ օրեն: ռամկօր. օրոց. և տաճկ. պէշիկ:

ՕՑ

Օցանեմ. եցի. եա. եալ: (Ներգործ.) ‖ բաժանել. կամ որոշել. կամ անջատել. և կամ ՚ի բաց զատուցանել հատանելով զհաղորդութիւն: ռամկօրէն. զատել. կամ ջոկել ընել. ըստ այսմ ՚ի շարականն. Զմիաբանութիւնս մեր օրհնեա. զի մի՛ ոք օցանել ՚ի բանաւորաց՝ եղջէ արտաքս: Եւ յոյժ անոր. ասի զգիւէն. Սա է՝ որ հրապուրէ, և օցանէ ի Քրիստոսի աւանդիցն: իսկ մերթ՝ քեցել. կամ փուակել. և կամ պառակտել. որ է՝ ցիր ու ցան ընել. և ըստ այսմ ասի. օցանել զհօտս, զեկեղեցիս, զմիաբանութիւնս, զզօրս. կամ զմիտս. և այլն: Նարեկ. կ: և ՚ի Թէոդ. Քրթ. Թեպ. մերթ և երկպառակեցուցանել. կամ քակտել ՚ի միմեանց. և կամ հերձանել տարաձայնութիւ: ռամկ. փոխօս փոխօս ընել: ըստ այսմ Ոսկէ. 2. Տիմ. լէ. ուսնչ այնպէս պայթակղեցուցանէ զամենեսեան, որպ օցանելն, և ձեղքել:

Օցումն. ման. մամբ. մանց. մամբք: ‖ բաժանումն. կամ չարաչար որոշումն. կամ փետակումն. կամ պառակտումն. կամ երկպառակութիւն. և կամ հերձուած:

Օցօղ. ողի. իւ. աց. օք: ‖ բաժանօղ. կամ քեցօղ. կամ փետակօղ. կամ պառակտօղ. և կամ երկպառակեցուցանօղ: Նարեկ. ժդ. և խը: և Լամբրոն:

ՕՓ

Օփրանա. կամ օփրանթ. և կամ օփռանթ: ‖ է բառ լատինացւոց՝ տրամաբերեալ ըստ նց օֆֆէռթօռիում, որով մերթ նը շանակի՝ ընծայարանն, ց տեղին՝ ուր ամ բարեաց պահին ընծայք: իսկ մերթ՝ պատարագն. կամ տուրքն ընծայեալք ՚ի ժողովրդենէ ՚ի ժամ նուիրելոյ քահանային զպատարագ. ըստ այսմ Լամբրոն. Այնն ըղ հաւատացեալքն յետ աւետարանին. և ապա օփռանթ առնեն ժողովուրդն: Եւ զինչ ասի. Զինչ է օփռանթ. և ապա մեկնի լինել ընծայ:

Փ

• կմ Փ • է տառ բաղաձայն՝ դասակարգեալ ՟Ը՟ կիսաձայն տառս ։ վ՟Ը՟ կարէ զանկատար՝ և զկիսատ ձայն ինչ սկզբնաւորել՝ 'ի մէջ շրթանց Փչմալէս ։

Արդ՝ արտաբերիսս հեգիւ՝ Փէ ։ որ ելուզանէ ընդ հնչումն թաւ ։ ուստի և յարմարեալ աւոգանութե ըստ հաղագին անկանի ընդ թաւաձայն տառիւք ։

Այլ գիրս այս՝ ոչ և յայտ է Ներհունաց ամենևին թարմատար է 'ի բարբառս մեր, և անծանօթ 'ի Նախնեաց ։ քանզի չիք մեր և ոչ մի բառ ։ կմ միվանկ, որ ունիցի զհնչումն սորա ։ վ՟Ը՟ և սքն Մեսրոպ՝ որ զամ հանգամանս հայկազեան բառից՝ և հնչմանց քաջ ծանեաւ, ոչ հնարեաց զայսպիսի ինչ նշանագիծ ։ Եէ թէ ուրեք ուրեք պիտոյ լինէր 'ի թարգմանութե այլազգական բառից, վարել լինէր տառիւն՝ փիւր ։ և ասկս այսորիկ փխկ ասելոյ՝ Փաղանգ ։ Փարսախ ։ Փիլիսոփայ ։ ստեՓաննոս ։ Փորտունատոս ։ և այլն ։ ասեմք, փաղանգ ։ փարսախ ։ փիլիսոփայ ։ ստեփաննոս ։ փորտունատոս ։

Այլ սակայն ոմանք 'ի յետին ժամանակս տեսանելով զայլս ազգս ։ ոչ՝ զարաբացիս ։ զլատինացիս ։ զհելլենացիս, և զնմանիս սոցա ։ զի ունին առանձին զայսպիսի տառ, հնարեցին զնշանագիծս զսյս ։ Փ ։ կմ Փ ։ առեալ զայն 'ի յունական Փէէս ։ Փ ։ և այս 'ի գործածի միայն յոմանս այլազգական, կամ ռամկական բառս ։ ոչ ։ Փար ։ Փարտ ։ Փշալ ։ լՓել ։ և այլն ։ որպիսիք են և առ լատինս տառքն՝ k ։ կաՓՓայ ։ և y ։ իՓսիլօն ։ որք են տառք հելլենացւոց ։ զորս 'ի գործածեն լատինք միայն 'ի գրելն զինչ բառս ՟Ը՟ նոցին հնչման ։ տե՛ս զտառն՝ Քէ ։

Փ Ա

Փաթաղանտ ։ ի ։ իմ ։ ից ։ իւք ։ ‖ է բառ այլազգական ։ որով նշանակի անդրէ կազմն փոշտանկաց, ձ աղէթափից ։

Փանիտ ։ Նտի ։ իմ ։ աց ։ օք ։ ‖ է բառ այլազգական ։ և նշանակի ազգ ինչ շաքարոյ ։ որոյ ազնիւն լինի յոյժ յստակ ։

Փար ։ ի ։ իմ ։ ից ։ իւք ։ ‖ է բառ այլազգական ։ որ թարգմանի 'ի հայ բարբառ՝ մուկն ։

Փարտ ։ ի ։ իմ ։ ից ։ իւք ։ ‖ է բառ արաբացւոց ։ որ ըստ Նշ արտաբերի՝ Փէրտ ։ և նշանակէ՝ զանգւածս թիմն, զոր հայերէն կոչեմք՝ կոճատ ։ ռամկ ։ Ֆէք ։ ոչ և զզոյգն՝ դար ։ զոր արաբացիք անուանեն՝ ձեօզ, որ է ւէՓք ։

Փ Ի

Փիլիքական ։ կմ Փիզիգական ։ ի ։ աւ ։ աց ։ օք ։ ‖ տե՛ս զԲնաբանական ։

Փիզիքայ ։ կմ Փիզիգայ ։ ի ։ իմ ։ ից ։ իւք ։ ‖ է բառ յունական ։ որ թարգմանի՝ բնական ։ և սովաւ նշանակի մակացութի ինչ, զոր հայերէն կոչեմք, բնաբանութի ։

Փիզիքապէս ։ կմ Փիզիգապէս ։ (մկբյ որակակ ։) ‖ բնաբանօրէն ։ կմ ըստ մակացուե Փիզիքային, որով բունն իրաց քննի ։

Փ Լ

Փլասկի ։ կւոյ ։ ւով ։ եաց ։ եօք ։ ‖ է բառ խառնական, որով նշանակի շիշ ինչ գինւոյ երկայնափող՝ կազմեալ յապակւոյ ։ զոր բազում անգամ պատեն ծիւղովք ։ ռամկօր Գիւշխոյ ։

Փլօրին ։ ի ։ իմ ։ ից ։ կմ աց ։ օք ։ ‖ է բառ խառնական ։ և նշանակէ զոսկի դահեկանն ։

Փ Շ

Փշամ ։ ացի ։ ա ։ ալ ։ (չէզոք ։) ‖ ձայն արձակել վիշապաց ։ կմ օձից ։ և այս 'ի գործածի յաշխարհաբառ լեզուով ։ զի գրոց լեզուաւ ասի, շչել ։

Փ Ո

Փռանկ ։ կմ Փռանգ ։ ի ։ աւ ։ աց ։ օք ։ ‖ տե՛ս զՓռանք ։ Լամբր ։ և 'ի հին պտտմագիրս ։

Փ Ր

Փրեր ։ կմ Փրեր ։ ի ։ աւ ։ աց ։ օք ։ ‖ է բառ գաղղիացւոց ։ ձ Փռանկաց՝ ծագեալ 'ի լատինական բառէս՝ Փռաթեռ, որ թարգմանի 'ի հայ բարբառ՝ եղբայր ։ Աշգաւ ։

ՎԱԽՃԱՆ

National. Bibliothek Wien

Digitized by Google

Digitized by Google

Österreichische Nationalbibliothek
+Z164552402
Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google